ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1917-1921 ԹԹ.

ԵՊՀ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1917-1921 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ս 504

Տպագրվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ

Սիմոնյան Ա. Հ.
Ս 504 Զանգեզուրի գոյամարտը (1917-1921 թթ.)/ Ա. Հ. Սիմոնյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2017.- 1096 էջ:

Պատմագիտական հետազոտությունների, մամուլի նյութերի և արխիվային փաստաթղթերի լայն ընդգրկմամբ մենագրության մեջ անդրադարձ է կատարվում Զանգեզուրի հայության հերոսական գոյամարտին, որը նա 1917-1921 թթ. մղել է թուրք-ազերի զավթիչների, ռուսական 11-րդ Կարմիր բանակի և Խորհրդային Ադրբեջանի զորամասերի դեմ հանուն իր ազատության՝ դրանով իսկ ձախողելով գավառն Ադրբեջանին ենթարկելու բոլոր փորձերը: Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի անբաժան մաս կազմեց լեռնավայրի հայության աներևակայելի տոկունության և անձնազոհ պայքարի շնորհիվ: Աշխատության մեջ համակողմանիորեն լուսաբանված է Զորավար Անդրանիկի, Գարեգին Նժդեհի, Արսեն Շահմազյանի, Արշակ Շիրինյանի վճռական դերը նշված ժամանակաշրջանում հայկական գավառում ծավալված գոյամարտի տարիներին:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2237-7

© Սիմոնյան Ա., 2017
© ԵՊՀ հրատարակչություն, 2017

ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Նվիրում եմ հորս՝ ակադեմիկոս
Հրաչիկ Սիմոնյանի հիշատակին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի համար բախտորոշ 1917-1921 թվականների պատմության մեջ առանձնակի տեղ է գրավում Հայաստանի Զանգեզուրի գավառի գոյամարտը:

Զանգեզուրի 1917-1921 թթ. իրադարձությունները մշտապես եղել են հայ պատմագիտության ուշադրության կենտրոնում թե՛ մեզանում և թե՛ Սփյուռքում: Դա պատահական չէ, քանի որ լեռնավայրը, գտնվելով Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունների կիզակետում, նշված ժամանակաշրջանում դարձել էր արյունահեղ բախումների ասպարեզ:

Զանգեզուրի հայությունը կենաց ու մահու պատերազմի էր դուրս եկել իր երկրին սպառնացող ադրբեջանական ու թուրքական հրոսակների և հետագայում նրանց աջակցող Կարմիր բանակի զորամասերի դեմ: Թեև ուժերն անհավասար էին, բայց նա փայլուն հաղթանակներ տարավ իր կազմակերպվածության և հերոսական խոյանքների շնորհիվ:

Զանգեզուրցիների համառ կռիվներում տարած հաղթանակները ճակատագրական նշանակություն ունեցան Հայաստանի համար. խափանվեց լեռնավայրը հայերից դատարկելու և այն Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու թուրք-ազերիների նպատակը, որի իրականացման դեպքում Հայաստանը կկտրվեր հայության նկատմամբ համակրանք տածող հարևան Պարսկաստանից և կպարփակվեր խիստ աննպաստ սահմանների մեջ՝ շրջապատված թուրքական երկու թշնամական պետություններով և հայության հանդեպ անկայուն ու փոփոխակի վերաբերմունք դրսևորող Վրաստանով:

Զանգեզուրի հայկական մնալն անգնահատելի նշանակություն ունեցավ նաև այն տեսանկյունից, որ 1921 թ. Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Կարմիր բանակի զորամասերից հալածված մեծ թվով պետական, կուսակցական և հասարակական գործիչներ, բազմաթիվ հայ մտավորականներ հնարավորություն ունեցան լեռնավայրի վրայով անարգել անցնելու Պարսկաստան և փրկվելու սպասվող հաշվեհարդարից:

Զանգեզուրի պատմության՝ խնդրո առարկա ժամանակահատվածի համակողմանի ուսումնասիրումը և լուսաբանումը ունեն ոչ միայն գիտական-

ճանաչողական, այլև արդիական հրատապ մեծ նշանակություն:

Աշխատության արդիականությունը պայմանավորված է ներկայումս Այսրկովկասի երեք երկրների և հատկապես Հայաստանի ու Ադրբեջանի միջև ստեղծված դժվարին փոխհարաբերություններով: Ինչպես 1917-1921 թթ., ներկայումս նույնպես Այսրկովկասը նման է եռացող կաթսայի, որն ամփոփում է վիճահարույց ազգամիջյան հակամարտություններ և տարածքային խնդիրներ:

Զանգեզուրյան 1917-1921 թթ. գոյամարտը զուգորդվել էր ցարիզմի ու Ժամանակավոր կառավարության տապալմանը և Ռուսաստանում բոլշևիզմի հաղթանակին: Մեր օրերում պատմական Հայաստանի Զանգեզուր–Արցախ հատվածի հայության պայքարը ադրբեջանական զավթիչների դեմ համընկավ ԽՍՀՄ թուլացմանը և փլուզմանը: Պատմական տարբեր ժամանակահատվածներում ռուսական այս երկու կայսրությունների քայքայումը երկու դեպքում էլ նպաստեց ազգային անկախ պետական միավորների ստեղծմանը: Այսրկովկասում հայ-ադրբեջանական լարված հարաբերությունների պայմաններում և՛ առաջին, և՛ երկրորդ պարագայում ծագեց արյունալի զինված հակամարտություն՝ հիմքում ունենալով տարածքային չլուծված հարցեր: Եթե առաջինում ադրբեջանական զավթիչների դեմ մղվող պայքարում հայկական կողմից հիմնական ծանրությունն իրենց վրա էին վերցրել զանգեզուրցիները, ապա երկրորդ դեպքում՝ արցախցիները:

1917-1921 թթ. Զանգեզուրի պաշտպանությունը իրականացնում էին կամավորական զինված ջոկատները: Մերօրյա Արցախյան ազատամարտի օրերին նույնպես զանգեզուրցիներից կազմակերպվեցին տասնյակ կամավորական ջոկատներ, որոնք Արցախում միացան ադրբեջանական զավթիչների դեմ կռվող մարտիկներին և հերոսության ու անձնուրացության բազում օրինակներ տվեցին:

Ներկայումս հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը առաջնահերթ կարևորություն ունի, որին մեծապես կարող է նպաստել այն հարուստ փորձը, որ ձեռք է բերվել զանգեզուրյան գոյամարտի օրերին: Իսկ այդ փորձը թելադրում է անմիջական հակահարված տալ Արցախի և Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի ամեն տեսակի ոտնձգություններին ու նկրտումներին:

Սույն աշխատության հեղինակի նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացնել թուրք-ադրբեջանական զավթիչների և նրանց աջակից Կարմիր բանակի զորամասերի դեմ Զանգեզուրի հայ բնակչության 1917-1921 թթ. հերոսական գոյամարտը, վեր հանել դրա պատմական նշանակությունը և այդ նպատակով՝

1. շեշտադրել այն հարցերը, որոնք անբավարար չափով են լուսաբանված պատմագիտական գրականության մեջ,
2. գրականության, մամուլի և արխիվային փաստաթղթերի ու նյութե-

րի լայն օգտագործմամբ վեր հանել զանգեզուրյան գոյամարտի պատճառները, ցույց տալ լեռնաշխարհի ներքին կացությունը, դրա շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, ծավալված դիվանագիտական պայքարը,

3. բացահայտել Զանգեզուրում ազգային հարցի բարդությունը, գավառի ազերի և քուրդ բնակիչների շրջանում հակահայկական քարոզչություն կազմակերպելու և նրանց հակահայ պայքարի մեջ ներգրավելու ուղղությամբ Ադրբեջանի կառավարության ջանքերը,
4. ուսումնասիրել 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Զանգեզուրում ստեղծված իրավիճակը, գավառի բաժանումը հայկական և մուսուլմանաբնակ մասերի, ընդգծել գավառի ազգային խորհրդի ստեղծման նշանակությունը, ներկայացնել Այսրկովկաս ներխուժած և Բաքվի ուղղությամբ արշավող թուրքերի ահագնացող վտանգը երկրամասի հայ բնակչության համար,
5. նկարագրել Զորավար Անդրանիկի Հարվածող զորամասի և Շուշվա գնդի մուտքը Զանգեզուր, գավառի ինքնապաշտպանության կազմակերպումը, պայքարը օսմանյան զավթիչների և մուսավաթական հրոսակների դեմ 1918 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին,
6. հետազոտել անգլիացի գաղութարար ուժերի կողմից Այսրկովկասի օկուպացումը, ընդգծել նրանց հայավնաս քաղաքականության պատճառները, Արցախին օգնության շտապող հայկական ուժերի ռազմերթի խափանումը անգլիացիների կողմից և դրա ծանր հետևանքները երկրամասի հայ բնակչության համար,
7. վերլուծել Արցախն ու Զանգեզուրը ծնկի բերելու անգլո-ադրբեջանական ձեռնարկները 1919 թ. հունվար-ապրիլ ամիսներին, անգլիացիների խարդավանքները Արցախում և Զանգեզուրում, Զորավար Անդրանիկի՝ գավառից հեռանալու պատճառներն ու դրա ծանր հետևանքները, գեներալ Շատլվորթի ագրեսիվ հայակեր քաղաքականության նպատակները, արյունալի կռիվները 1919 թ. ամռանը և Ղարաբաղի ժամանակավոր ենթարկումը Ադրբեջանին,
8. նկարագրել 1919 թ. սեպտեմբեր-նոյեմբերյան կռիվները, մուսավաթական բանդաների ջախջախման գործում Արսեն Շահմազյանի և Արշակ Շիրինյանի դերակատարությունը,
9. ներկայացնել Գարեգին Նժդեհի ղեկավարած զորքերի հաղթական կռիվները 1919 թ. նոյեմբեր-1920 թ. մարտ ամիսներին, նրա առանձնահատուկ զորավարական տաղանդն ու կազմակերպչական ձիրքը,
10. վերլուծել հայ-ադրբեջանական դիվանագիտական առճակատումները 1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1920 թ. ապրիլ ամիսներին,
11. քննարկել Շուշիի կործանման պատճառները, ուսումնասիրել ռուս-

թուրքական գաղտնի համաձայնագրով Ադրբեջանի խորհրդայնացման և դրա հետևանքով Այսկովկասում նոր քաղաքական վիճակ առաջանալու պատմությունը,

12. վերլուծել Զանգեզուրը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու խորհրդային իշխանությունների շահագրգռվածության դրդապատճառները, մեկնաբանել Հայաստանի Հանրապետության կառավարության դիվանագիտական ջանքերը՝ ադրբեջանական ռազմակալումից հայկական գավառը պաշտպանելու համար,
13. ուսումնասիրել Զանգեզուրի քաղաքացիական իշխանությունների և զինվորական հրամանատարության կազմակերպչական, քաղաքական և քարոզչական հսկայական աշխատանքը բնակչության և զինյալների շրջանում,
14. հատուկ ուշադրություն դարձնել Զանգեզուրի իշխանությունների և հարևան Իրանի փոխհարաբերությունների, տնտեսական կապերի և ռազմական համագործակցության լուսաբանմանը,
15. կարևոր տեղ հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության և Զանգեզուրի իշխանությունների՝ հաճախ ոչ հարթ փոխհարաբերությունների վերլուծությանը,
16. քանի որ 1920 թ. մայիսից սկսած զանգեզուրյան կռիվների հակամարտողները մի կողմից գավառի պաշտպաններն էին, իսկ մյուս կողմից՝ Կարմիր բանակի զորամասերը, ադրբեջանական կարմիր ասկյարների, թուրք-օսմանյան գնդի, մուսուլմանական անկանոն հրոսակախմբերի ուժերը, ուստի աշխատության մեջ անհրաժեշտ ենք համարել տալ 11-րդ Կարմիր բանակի զորամասերի՝ հայկական գավառ ներխուժելու, նրանց մղած կռիվների, գավառի պաշտպանների հերոսական դիմադրության, ապա՝ 1920 թ. վերջերին բոլշևիկներին գավառից դուրս մղելու մանրամասն պատմությունը,
17. ցույց տալ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Երևանի և Գորիսի իշխանությունների փոխհարաբերությունները, Ա. Մյասնիկյանի՝ Հայաստան գալուց հետո Զանգեզուրը Խորհրդային Հայաստանին խաղաղ ճանապարհով միավորելու ուղղությամբ հանրապետության կառավարության թափած ջանքերը, Զանգեզուրի դեմ Կարմիր բանակի հետագա ռազմական գործողությունները,
18. արխիվային նորահայտ փաստաթղթեր շրջանառության մեջ դնելով՝ ներկայացնել գոյամարտի եզրափակիչ փուլի դեպքերը, Զանգեզուրից Պարսկաստան գաղթած զանգվածների կրած տառապանքները, նրանց հայրենիք վերադարձնելու ուղղությամբ Խորհրդային Հայաստանի կառավարության ձեռնարկած միջոցա-

ռումները, որոնց շնորհիվ Արաքսն անցած փախստականների շուրջ 90 տոկոսը հայրենադարձվեց:

Գրքում նկարագրված ռազմական գործողությունների տարածքային սահմանները ընդգրկում են Զանգեզուրի բոլոր չորս շրջանները՝ բուն Զանգեզուր (Գորիս), Սիսիան, Կապան (Ղափան) և Մեղրի, ինչպես նաև Վայոց ձորը, մասնակիորեն՝ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը: Հետազոտության տարածքային սահմանները ներառում են նաև Պարսկաստանի Ատրպատականի և Մակուի նահանգները:

Աշխատությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1917 թ. մինչև 1921 թ. վերջերն ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ մինչև Զանգեզուրից Իրան անցած փախստականների հիմնական մասի հայրենադարձությունը:

Հատուկ անդրադարձ է կատարվել Զանգեզուրում տեղի ունեցած կռիվների բնույթի պարզաբանմանը:

1918 թ. սկզբներից մինչև 1920 թ. հուլիս ամիսը Զանգեզուրի հայերն իրենց գոյությունը պաշտպանում էին գավառն այսպես կոչված Ադրբեջանին միացնելու ձգտող թուրքական զավթիչների և մուսավաթական հրոսակների դեմ մղած ազգային-ազատագրական արյունալի կռիվներով: 1920 թ. ապրիլի վերջին՝ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, այնտեղից Զանգեզուրի վրա հարձակվեցին ռուսական Կարմիր բանակը և բոլշևիկյան դիմակ հագած Խորհրդային Ադրբեջանի կարմիր ասկյարները: Թեև պատմական գրականության մեջ առաջ է քաշված այն տեսակետը, թե այդ զորքերի՝ 1920 թ. հուլիսի սկզբին Զանգեզուր մտնելուց հետո այնտեղ տեղի են ունեցել քաղաքացիական տնական կռիվներ, սակայն նման պնդումը չի համապատասխանում իրականությանը:

Սովորական կռիվներն իրենց բնույթով բոլորովին տարբեր են քաղաքացիական կռիվներից. եթե առաջին դեպքում գործ ունենք տարբեր պետությունների կանոնավոր բանակների միջև տեղի ունեցող պատերազմի հետ, ապա քաղաքացիական կռվի երկու կողմերում զինված առճակատում է տեղի ունենում միևնույն երկրի, նույն ժողովրդի, նույն ազգի տարբեր հատվածների միջև:

Ելնելով այդ կռիվների հիմնական ու տարբերիչ առանձնահատկություններից՝ մենք սխալ ենք համարում Զանգեզուրի գոյամարտի 1920 թ. հուլիս-1921 թ. մարտ ժամանակահատվածը քաղաքացիական պատերազմ որակելը, քանի որ երկու կողմից կռվում էին ոչ թե նույն երկրի քաղաքացիներ, ինչպես դա տեղի էր ունենում, ասենք, Ռուսաստանում, այլ տարբեր ազգերի քաղաքացիներ: Ճակատի մի կողմում միայն հայեր էին, իսկ մյուս կողմում՝ ռուսներ, ադրբեջանցի թուրքեր, տաճիկներ և այլազգիներ: Զանգեզուրում հայ բնակիչների մի մասը այս ժամանակաշրջանում զանգվածաբար չէր կռվում մյուս մասի դեմ (բացառություն էին մի քանի հարյուր հայ կոմու-

նիստները և նրանց համակիրները, որոնք պայքարում էին հնարավորինս շուտ խորհրդային իշխանություն հաստատել գավառում):

Իրավիճակը միանգամայն այլ էր 1921 թ. ապրիլ-հուլիս ամիսներին, երբ պայքարը վերածվեց քաղաքացիական կռիվների:

Ե՛վ խորհրդային, և՛ հակախորհրդային պատմագրությունը գովերգում էր քաղաքացիական պատերազմը և նրա հերոսներին, ըստ որում, ինչը բացասական ու մերժելի էր, վերագրում էին «թշնամուն», ինչը դրական՝ իրենց: Բնական է, որ նման մոտեցումների պայմաններում ընթերցողների համար դժվար է, եթե չասենք՝ անհնարին, ճիշտ կողմնորոշվել, հասու լինել ճշմարտությանը:

Իրականում, սակայն, քաղաքացիական պատերազմը՝ այդ մեծագույն ողբերգությունը, անմարդկային էր իր էությամբ, սարսափելի՝ իր անհաշտությամբ ու անզիջողությամբ, անբարոյական՝ եղբայրական արյուն թափելու հետևողականությամբ ու կրքով:

Ելնելով այս ընդհանուր մոտեցումից՝ փորձել ենք պատմական եղելությունները քննության ենթարկել հնարավորինս անկողմնակալ դիրքերից՝ հրաժարվելով այս կամ այն գործող ուժերին կամ գործիչներին անհարկի պիտակներ կպցնելուց, «թշնամի» կամ «բարեկամ» որակելուց: Քաղաքացիական պատերազմի ամիսներին երկու կողմերում միմյանց դեմ կռվել են հայեր, որոնց ղեկավարները առաջնորդվում էին տարբեր գաղափարախոսություններով ու տարբեր ըմբռնումներով, «հայրենասերի» ու «դավաճանի» խնդիր չկար, այլ կար ստեղծված ահավոր կացությունից, վտանգներով լի վիճակից իրենց ժողովրդին դուրս բերելու տարբեր ուղիների և եղանակների ընտրության հարց: Հայ ազգային ուժերը՝ ՀՅ դաշնակցության գլխավորությամբ, հարազատ ժողովրդի փրկությունը տեսնում էին հայրենիքի անկախ գոյության մեջ: Հայ բոլշևիկները Հայաստանի համար ելք էին համարում երկրում խորհրդային իշխանության հաստատումը, հայ ժողովրդի ապագան տեսնում Ռուսաստանի կազմում կամ նրա հետ միության մեջ: Ինտերնացիոնալիզմի բոլշևիկյան ըմբռնումը հակառակ էր անկախության պայքարին նախանձախնդիր ուժերի իղձերին ու ձգտումներին: Ազգային պետականությունը պաշտպանող քաջազուն զավակներն արյան գնով հաստատում էին այն ճշմարտությունը, որ անանց ու բացարձակ է Ազատ հայրենիքի գաղափարը, որ ժողովուրդը կարող է իր ազգային նպատակներին հասնել միայն անկախ պետականության պայմաններում:

Պատմական եղելությունները անկողմնակալ քննել չի նշանակում հանդես գալ կողքից անտարբեր դիտողի դերում: Գոյամարտի ընթացքը լուսաբանելիս ամեն կոնկրետ դեպքում անաչառ վերաբերմունք ենք դրսևորել պատմական այս կամ այն իրադարձությանը, քաղաքական և ռազմական գործիչների գործունեությունը գնահատելիս միշտ ելակետ ենք ունեցել այն, թե տվյալ գործողությունը կամ արարքը որքանով է բխում հայ ժողովրդի

ազգային-հավաքական շահերից: Երբ Կարմիր բանակը Զանգեզուր էր գալիս՝ խնդիր ունենալով գավառը միացնել Խորհրդային Ադրբեջանին, ապա իրենց անկախությունը պաշտպանելու համար զանգեզուրցիների հերոսամարտերը երիցս արդարացի էին, ազատագրական: Իսկ երբ արդեն պարզ էր դարձել, որ Զանգեզուրը հաստատապես միանալու է Խորհրդային Հայաստանին, լավ սպառազեն Կարմիր բանակի զորքերին զանգեզուրցիների հետագա դիմադրությունն այլևս արդարացված չէր:

Զանգեզուրի կռիվների բնութագրմանն իր մոտեցումն է դրսևորել նաև Գարեգին Նժդեհը: Զանգեզուրի ազգային-ազատագրական պայքարը քաղաքացիական կռվի վերածվելու մասին Նժդեհն առաջին անգամ հարևանցիորեն արտահայտվել է 1921 թ. սեպտեմբերին ՀՅԴ Թավրիզի (Վրեժի) կենտրոնական կոմիտեին ներկայացրած իր հաշվետվության մեջ[1]:

Հետագայում գրած իր հոդվածներից մեկում նա շեշտում էր, որ 1920 թ. հուլիսից մինչև 1921 թ. ապրիլի սկիզբը, այսինքն, երբ Փետրվարյան ապստամբությունից հետո ստեղծված «Հայրենիքի փրկության կոմիտեի» զորքերը թողեցին Երևանը և հազարավոր փախստականների հետ ուղղություն վերցրին Զանգեզուր, լեռնավայրում մղված կռիվները քաղաքացիական չէին, քանի որ այդ ամիսներին հակառակորդի «բանակների մեջ էին ռուսը, լատիշը, հրեան, լեզգին, վրացին, թուրքը, թաթարը՝ մի ամբողջ Բաբելոն»: Նույն հոդվածում մի այլ խնդրի առնչությամբ նա կրկին ընդգծում էր, որ այդ ժամանակաընթացքում «մենք եղբայրասպան կռիվներ չենք վարել, **լեռնաշխարհը քաղաքացիական պատերազմ չէր տեսել** (ընդգծումը մերն է: – *Ա. Ս.*): Մենք կռվել էինք թաթարի, թուրքի և սրանց օգնության փութացած կարմիր ռուսի դեմ: Եվ եղել էինք մեր հարվածների մեջ ազատ սրանց նկատմամբ»[2]: Ցավոք, զանգեզուրցի պաշտպանները ստիպված ընդհարվել են նաև ակամայից «կարմրած» հայերի հետ, որոնք եկել էին, «անշուշտ, ոչ կռվելու և հաղթելու, այլ մեզ զրկելու անխնա հարվածելու հնարավորությունից»[3]:

Հետո Նժդեհն ավելի է որոշակիացրել այդ խնդրի վերաբերյալ իր տեսակետը: «Այժմ (1921 թ. ապրիլ-հուլիս ամիսներին: – *Ա. Ս.*) հայն էր կազմում թշնամու ուժերի առաջամարտիկը, որին պարտության մատնելու համար չպիտի կարողանայինք գործի դնել մեր ուժանակային պայթուցիկ տակառները, մեր լեռների ժայռերը, մեր ռազմավարության տարերային ձևերը... մեր վճռականությունը:

Հանուն հայ ժողովրդի գոյության պաշտպանության զենք բարձրացնող-

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 328-363:

[2] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 131:

[3] Նույն տեղում:

ները չպիտի կարողանային մեր վարած գոյամարտին տալ եղբայրասպան բնույթ:

«Մի՛ կրակեք, մենք էլ ենք հայ».– ահա սյունեցու բազուկը անդամալուծող ճիչը:

«Մենք էլ ենք հայ»,– կանչում էին կարմիր ճակատներից Սյունիքի դեմ զոռով քշված Երևանի հայերը:

Թշնամին գիտակցորեն կռիվներին տվել էր քաղաքացիական, եղբայրասպան բնույթ, համոզված, որ նման կռվի համար իր նետած ձեռնոցը չպիտի կարողանանք վերցնել»[1]:

Նժդեհը համոզված էր, որ Զանգեզուրի դեմ Կարմիր բանակի ռազմական գործողությունները սադրել են բոլշևիկյան կառավարության մեջ գտնվող թուրքասերները, հատկապես տրոցկիստները՝ ի հաճույս պանթուրանականների:

1955 թ. մարտի 30-ին աքսորավայրից՝ Տայշետից, Երևան հարազատներին գրած նամակում Նժդեհը նշել է, որ «տրոցկիստները, որպեսզի Մոսկվային մոլորության մեջ գցեն, Զանգեզուրի ինքնապաշտպանությունը ներկայացրին որպես քաղաքացիական պատերազմ: Այդ առասպելը նրանք հորինել էին գոյություն չունեցող «գաղափարախոսական բախման» պատասխանատվությունը Զանգեզուրի բնակչության ուսերին բարդելու նպատակով: Չափազանց անլուրջ կլիներ խոսել 1918-1920 թվականներին Զանգեզուրում գաղափարախոսական բախման մասին, երբ հայ բնակչության ֆիզիկական գոյությունը վտանգի մեջ էր»[2]:

1921 թ. Փետրվարյան ապստամբությունից և հատկապես նրա պարտությունից հետո, երբ բոլշևիկյան զորքերը ապրիլի 2-ին վերագրավեցին Երևանը, այն բանից հետո, երբ Սյունիքի ինքնավարության փոխարեն կյանքի կոչվեց Լեռնահայաստանը, այդ ժամանակից սկսած՝ Զանգեզուրի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, նրա գոյապատերազմը աստիճանաբար փոխվեցին քաղաքացիական կռվի, որը տևեց մինչև հուլիսի 12-ը: Այս փուլում Զանգեզուրի զինյալների դեմ համատեղ կռվում էին ոչ միայն ռուսները, Ադրբեջանի թուրքերը և տարբեր ազգությունների պատկանող կարմիր զինվորներ, այլև Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը՝ իր հայ զինվորներով: Այլ խոսքով՝ հայը սկսել էր կռվել հայի դեմ:

Պետք է ասել, սակայն, որ նույնիսկ այդ փուլում կռիվները Զանգեզուրում դժվար է դասական իմաստով քաղաքացիական համարել. դրանք քաղաքացիական կարելի է կոչել վերապահումով: Այս փուլում Լեռնահայաստանի դեմ թեև կռվում էր նաև Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը,

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 131:

[2] «Հանրապետական» (Երևան), 1996, դեկտեմբեր, թիվ 11 (111):

բայց ավելի մեծ ուժ էր Զանգեզուրի վրա եկող ռուսական բանակը՝ իր բազմազգ կազմով:

Որոշ վերապահումներով ընդունելի է Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո ստեղծված Փրկության կոմիտեի պաշտոնական օրգան «Ազատ Հայաստան» թերթի հետևյալ դիտարկումը. «Եթե ուզենք ճիշտ խոսել, պիտի ասենք, որ ներկա կռիվը քաղաքացիական չէ, թեև դրան այդ կերպարանքը ուզում է տալ մեր թշնամին: Հայ ժողովուրդը բանակների չի բաժանված: Նա ինքն իր ամբողջությամբ կռվում է դրսից եկած թշնամու դեմ, որ հաջողել է իր ետևից բռնի քաշել միամիտ հայերի մի խումբ...»[1]:

Ի մի բերելով քաղաքացիական պատերազմի մասին իր մտքերը՝ Նժդեհը առանձնացրել է հետևյալ մի քանի առավել բնորոշ հատկանիշները:

Սովորական պատերազմում ռազմաճակատը կամ կրակի գիծը, որտեղ ընդհարվում են կանոնավոր բանակները, հրամանատարության անելիքները գոնե ժամանակի որոշակի հատվածում համեմատաբար հեշտ է որոշել: Քաղաքացիական կռվի դեպքում դժվար է երկար ժամանակի համար ծրագրել գործողություններ, քանի որ իրադարձությունները զարգանում են հարափոփոխ կերպով, անսպասելի շրջադարձերով: Եթե թշնամի բանակների բախման ժամանակ բնակչությունը հիմնականում «դիտողի» դերում է, ապա քաղաքացիական կռվի դեպքում չեզոքներ չեն լինում և չեն կարող լինել: Քաղաքացիական կռվի ելքը մեծապես պայմանավորվում է հասարակական խմբավորումների փոխհարաբերություններով, ժողովրդական զանգվածների շահագրգռությամբ: Քաղաքացիական պատերազմում աննախընթաց նշանակություն են ստանում բարոյական ազդակները. կռվի բախտը հաճախ վճռում են իրազեկումը և քարոզչությունը: Ռազմական գործողություններն ընդունում են գլխավորապես մանևրային բնույթ և զարգանում են փոթորկալից: Քաղաքացիական պատերազմում այս կամ այն կողմի տարածքային, անգամ զգալի կորուստը նվազ նշանակություն ունի, քան այդ լինում է սովորական պատերազմներում: Կռվի մեջ մտած կողմերի կատարյալ անհաշտելիությունը քաղաքացիական կռիվներին հաղորդում է աննախընթաց համառություն, դաժանություն և այլն[2]:

Վերջապես, չենք կարող նորից չշեշտել վերևում հիշատակած կարևոր հանգամանքը. 1921 թ. մայիսի 9-ին Ա. Մյասնիկյանի՝ Հայաստան գալուց հետո Զանգեզուրը Խորհրդային Հայաստանին միացնելու ուղղությամբ նրա արած պաշտոնական հայտարարություններն ու այդ ուղղությամբ հանրապետության նորաստեղծ Ժողկոմխորհրդի կոնկրետ գործողությունները սույն աշխատության հեղինակին հիմք են տվել եզրակացնելու, որ արդեն 1921 թ. մայիսի վերջերին հնարավոր է եղել զանգեզուրյան կռիվներին վերջ

---

[1] «Ազատ Հայաստան», 1921, 1 մարտի:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ,** Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 75-76:

տալ՝ բանակցությունների միջոցով ավարտին հասցնելով մայր երկրի հետ Լեռնահայաստանի միավորումը: Երբ արդեն պարզ էր դարձել, որ Զանգեզուրը հաստատապես միանալու է Խորհրդային Հայաստանին, ինչպես արդեն ասվել է, սպառազեն Կարմիր բանակի զորքերին զանգեզուրցիների հետագա դիմադրությունը մայիսի երկրորդ կես, հունիս և հուլիսի առաջին կես ժամանակահատվածում այլևս արդարացված չէր: Պայքարը շարունակվեց ևս երկու ամիս՝ պատճառ դառնալով նոր, անիմաստ զոհերի:

«Լեռնահայաստանի գոյամարտը» հոդվածաշարում, որը 1923 թ. սեպտեմբերից սկսած տպագրվել է «Հայրենիք» (Բոստոն) ամսագրում, Զանգեզուրի հայության ազատագրական պայքարի օրինակով Գարեգին Նժդեհն այսպես է կարևորել ընդհանրապես ինքնապաշտպանական կռիվների պատմական նշանակությունը.

«Թերևս միայն ազգերի ֆիզիկական ինքնապաշտպանության բարդ գործը կռիվն է, որի հետ չի կարելի փորձեր կատարել՝ առանց փորձանքի ու արնոտ պատժի: Մեր ամեն մի սխալը կռվադաշտում թշնամին մեր արյունով է սրբագրում: Կռվի՝ մարդկային ամենից պատասխանատու գործողության էությունը յուրացվում է միայն պատերազմների պատմության և պատմական հուշերի բազմակողմանի ուսումնասիրությամբ: Ահա թե ինչ տեսակետից այս կամ այն ժամանակաշրջանի անցքերի նկարագրություններն իրենց խոշոր արժեքն ունեն գալիք սերունդների համար:

Ընդունելով, որ պատերազմը մի մշտական չարիք է, որ եղել է, կա և պիտի մնա, և որ գուցե դարերն ու մարդկային բարոյական մշակույթը կարողանան մեղմացնել նրա բնույթը միայն, փոխել նրա ձևերը, բայց վերացնել՝ երբե՛ք, կուզեի, որ մեր ժողովուրդը ևս, որ արևի տակ իր անկախ անկյունն ունենալու ձգտումն ունի, պարտադրորեն յուրացնի կռվի բարդ արվեստը, որ եղել է և կմնա մանավանդ մեզ նման փոքր ազգերի ինքնապաշտպանության միակ միջոցը»[1]:

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, թիվ 11, էջ 71:

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ

Զանգեզուրը Հայկական լեռնաշխարհի գեղեցիկ անկյուններից մեկն է, որը տարածվում է Հայաստանի Հանրապետության հարավարևելյան մասում:

Լինելով պատմական Սյունիքի մի մասը՝ լեռնավայրը ներկայումս ընդգրկում է նրա երբեմնի 12 գավառներից 6-ը՝ Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Զորք, Կովսական և Արևիք: Այդ գավառների ընդհանուր տարածքը այժմ մոտավորապես համապատասխանում է Սիսիանի, Գորիսի, Կապանի և Մեղրիի նախկին վարչական շրջաններին, այսինքն՝ Սյունիքի մարզին:

Զանգեզուրը բնորոշվում է մակերևույթի խիստ մասնատվածությամբ: Այստեղ իրար են հաջորդում բարձրաբերձ լեռներն ու խորունկ կիրճերը, արագահոս գետերն ու շառաչուն ջրվեժները, ժայռերի ստորոտներում ծվարած կանաչ դաշտերը և ամեհի անդունդները:

Արևմուտքում՝ հյուսիսից հարավ (միջօրեականի ուղղությամբ), մոտ 130 կմ երկարությամբ ձգվում է Զանգեզուրի, իսկ արևելքում՝ Արցախի լեռնաշղթան: Հյուսիսից երկրամասը երիզող լեռնաշղթան սկսվում է Սյունիքի բարձրավանդակից և ձգվում մինչև Վայոց ձոր: Զանգեզուրի և Արցախի լեռնաշղթաների հարավային ստորոտներով սրընթաց հոսում է Արաքս գետը, որն այստեղ՝ լեռնային զանգվածներում, իր բուռն հոսանքով ստեղծել է Մեղրու և Խուդափերինի՝ գրեթե ուղղաձիգ ժայռերով կիրճերը: Իր համար ճանապարհ բացելով Մեղրու կիրճով՝ Արաքսը Զանգեզուրի լեռնաշղթան կտրել է Ղարադաղի լեռներից, որոնք հարևան Իրանի տարածքում ձգվում են արևելքից արևմուտք:

Զանգեզուրի լեռնային եզրապատումը պաշտպանության համար հիանալի բնական ամրություն է: Զանգեզուրյան լեռները հազարամյակներ շարունակ հուսալի պատսպարան են եղել այդ վայրերի բազմաչարչար, բայց խիզախ բնակչության համար: Ավելին՝ իր գետերի հոսանքներով ու լեռներով ներկայանալով որպես աշխարհագրական ամբողջություն՝ Զանգեզուրը բնական ամուր բերդ է, որը Հայաստանը պաշտպանել է արևելքից դարեր շարունակ ներխուժող հրոսակախմբերից:

Զանգեզուրյան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը Կապուտջուղն է (3906 մետր), որը Հայաստանի Հանրապետությունում Արագածից հետո երկրորդ բարձր լեռն է: Մյուս գագաթներից նշանավոր են Սալվարդը, Խուս-

տուփը, Կազբելը, Օքուզարաթը, Ալանգյազը, Կոմբախը և 3000-3500 մետրի հասնող մի քանի այլ բարձրություններ:

Լեռնային բարդ տեղանքի պատճառով Զանգեզուրն ունի տարաբնույթ կլիմա: Նրա բարձրադիր մասերում անգամ ամռանը տեղ-տեղ կարելի է հանդիպել ձյան հետքերի: Բարձր լեռներում և դրանց շրջակա տարածքներում ամռանը զով է, իսկ ձմռանը՝ բավականաչափ ցուրտ: Շատ ավելի տաք է Զանգեզուրի հարավը, հատկապես Մեղրու հովիտը:

Զանգեզուրի քարքարոտ տարածքը ակոսում են սրընթաց գետերը, լեռներից գահավիժում են ջրվեժները: Ամենամեծ գետը Որոտանն է, որն ունի 179 կմ երկարություն: Սկիզբ առնելով պատմական Սյունիքի Ծղուկ գավառի (Սիսիանի շրջանի) հյուսիսային սարերից, հոսելով շրջանի միջով՝ այն Դարբաս (Դարաբաս, նախկինում՝ Ըղուերծ) գյուղի մոտով անցնում է Գորիսի շրջան: Այնուհետև Տաթևի վանքի ստորոտում գտնվող շրջակա քարափներից բխող հանքային ջրերի աղերից կազմված «Սատանի կամրջի» տակից դուրս գալով՝ Որոտանը մտնում է Հալիձորի խոր կիրճը, հետո սահանքներով ու աստիճանաձև անկումներով անցնում Շինուհայր և Խոտ գյուղերի ներքևում գտնվող այգիներով:

Զանգեզուրի գետերից հայտնի է նաև Ողջին (Կապանի շրջան): Ավելի փոքրերից է Մեղրի գետը: Լեռների բարձրադիր լանջերին կան շատ մանր լճեր, որոնք կարևոր նշանակություն ունեն արոտային անասնապահության համար: Բազմաթիվ են հորդաբուխ աղբյուրները, որոնցից մի քանիսն ունեն բուժիչ հատկություն: Դրանցից են Տաթևի հանքային աղբյուրները, որոնք վաղնջական ժամանակներից հայտնի էին հատկապես հոդացավեր ու մաշկային հիվանդություններ բուժելու հատկություններով: Զանգեզուրի հողատարածքի զգալի մասը ապառաժոտ է, բայց կան նաև երկրագործության և այգեգործության համար նպաստավոր ընդարձակ շրջաններ (Որոտան և Ողջի գետերի հովիտները): Լեռնավայրի բարձրադիր մասերը ծածկված են ալպյան և ենթալպյան ճոխ բուսականությամբ: Հյուսիսում գերիշխում են մարգագետիններն ու տափաստանները, իսկ հարավում՝ անտառը: Առավել տարածված են անտառի չորասեր ծառատեսակները: 19-րդ դարի վերջին գավառում անտառներն զբաղեցնում էին 155000 դեսյատին տարածություն[1]:

Լեռնային բարձրավանդակի միջին գոտում աճում են բազմապիսի ծառեր: Փայտանյութը միշտ օգտագործվել է որպես վառելիք և շինանյութ Գորիսի, Կապանի և այլ բնակավայրերի շինարարության համար:

Զանգեզուրի՝ Արցախին հարող տարածքը կոչվում է միջնատարածք: Այստեղ իրարից ոչ հեռու, կողք կողքի գտնվում են երկու խոշոր ու երկար ձորեր: Դրանք շատ տեղերում կտրտված են անառիկ կիրճերով, անանցա-

[1] Տե՛ս Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՎՊԿՊԱ), ֆ. 22, ց. 3, գ. 162, թ. 17:

նելի քարափներով, անտառապատ լանջերով, բայց ունեն նաև ծաղկառատ ու կանաչ ոչ մեծ դաշտեր, մեղմ ձորահովիտներ՝ զուլալ ու պաղ ջրերով:

Ձորերից մեկը Զաբուղի ձորն է, որ սկիզբ է առնում միջնատարածքից հյուսիս-արևմուտք ընկած ամենամեծ սարի՝ Քաչալ դաղի (Ճաղատասար, Լիսագոր) արևելյան մասից՝ այսպես կոչված Քոսա մեչիդ լեռան կողքից: Այս վայրերի աղբյուրներից սկիզբ առնող բազում գետակներ, միանալով իրար, ստեղծում են ջրառատ հոսանք, որը սրընթաց անցնում է Զաբուղ ձորի միջով՝ հյուսիսից հարավ:

Մյուսը Հագարի (Աղավնո) երկար ու ձիգ ձորն է: Սրա վերնամասերում Գյոզալդարա կոչվող սարերի լանջերից հոսում են տասնյակ գետակներ, որոնք, միանալով իրար, կազմում են Ագարա (Աղավնո, Հագարու) էլ ավելի ջրառատ և մեծ գետը: Հոսելով Մինքենդ (հին հայկական Մննի) գյուղի միջով՝ այդ գետը մոտ քառասուն կիլոմետր գրեթե ուղիղ ընթացքով անցնում է հյուսիսից հարավ: Հազարամյակների ընթացքում, ողողելով իր աջ ափը, Ագարան առաջացրել է բարձր, գահավեժ թեքություններ: Այդ ափում խոր ձորերին հաջորդում են ոչ մեծ կիրճերը: Ագարան իր մեջ է առնում Զաբուղ գետը և սրընթաց շարունակում առաջանալ դեպի հարավ: Նրա արևմտյան կողմից՝ Գորիսի Որոտանի կիրճից դուրս եկող Որոտան հզոր գետը (որը այնուհետև կոչվում էր Բարգուշատ) կարճատև վազքից հետո Քնդադիք (հին հայկական Քևտատիկ, Կնդադիխ կամ Գավդադրդ) գյուղից ցած միանում է Ագարա գետին: Միացյալ գետը ձորերն ի վար գնում ու խառնվում է Արաքսին, որն էլ, ափերի ժայռերը մաշելով, աղմուկով գնում է դեպի Կասպից ծով:

Մինչև Արաքսին միանալը գետն անցնում է բարեբեր մի հարթավայրով, որը ավարտվում է դեպի Ագարա և Բարգուշատ նայող գահավեժ լանջերով: Այդ տարածքը շրջակա բնակիչների համար միշտ եղել է հացի առատ շտեմարան: Այս միջնատարածքում էին գտնվում Կովսական, Հաբանդ, Քաշունիք, Քաշաթաղ, Ծարա երկիր գավառները:

Զանգեզուրի բոլոր շրջաններում չկա մի բնակավայր, որտեղ չլինեն հին ջրանցքների ու ջրամբարների հետքեր: Ջուրը հողագործության ամենաանհրաժեշտ պայմանն էր այս երկրամասում, և անցյալում դա քաջ գիտակցում էին ոչ միայն տեղացիները, այլև օտար նվաճողները:

Հին և միջին դարերում Զանգեզուրը Հայաստանի բնական հարստություններով առավել աչքի ընկած տարածքներից էր: Այստեղ հնագույն ժամանակներից հայտնի են եղել գունավոր մետաղների, հատկապես պղնձի հանքեր: Պղնձաքարի մշակումը հիմնականում կատարվում էր տարբեր չափերի «բովերում»:

Ուշ միջնադարում՝ թուրք-թաթարական արշավանքներից հետո, Զանգեզուրի հայերը տափարակներից քշվեցին լեռների նեղ կիրճերը և ստիպված եղան իրենց վարելահողերի մեծ մասը նվաճել բնությունից՝ հատելով ան-

տառները: Նոր յուրացված հողերը հիմնականում օգտագործվում էին հացահատիկային կուլտուրաների մշակման համար:

Զանգեզուրում պահպանված են ամենատարբեր ժամանակների բազմապիսի հնություններ ու հուշարձաններ՝ նախամարդու քարայր-կացարաններ, ժայռապատկերներ, կիկլոպյան ամրոցների և բնակավայրերի հետքեր, բրոնզեդարյան իրեր, տարբեր երկրների ու ժամանակների մեծաթիվ դրամներ, քաղաքների, ավանների ու հզոր բերդերի ավերակներ, հնադարյան վանքեր, տաճարներ ու եկեղեցիներ: Պատմաբանի, հնագետի, զբոսաշրջիկի համար հետաքրքրություն են ներկայացնում Ուխտասարի ժայռապատկերները, հին Գորիսի ու Խնձորեսկի քարայր-կացարանները, Կապանի շրջանի Բաղաբերդի, Հալիձորի, Գեղվա, Զեյվայի, Եղվարդի, Կռաթաղի, Շհարջիկի (Քաղաքիկ) բերդերը, Սյունիքի արքունական դամբարանատուն Վահանավանքը, Կապան քաղաքի ավերակները, Երիցավանքը, Սիսիանի շրջանի Շաղաթ գյուղաքաղաքի շինությունների մնացորդները, Սառնակունքի գանձը, Զորաց քարերը, Տոլորսի հնամենի բնակավայրն ու դամբարանադաշտը, Սյունի վանքը և այլն: Զանգեզուրի սիրտը կազմող Որոտան գետի անդնդախոր կիրճի շուրթերի սեպաձև ապառաժներին կառչած են վանքեր, կամուրջներ, բերդեր: Դրանցից նշանավոր են Տաթևի վանքը, գրչության կենտրոն Որոտնա բերդը (18-րդ դարի առաջին տասնամյակներին Դավիթ Բեկի և նրա զինակիցների ազատագրական պայքարի կենտրոններից մեկը), Հարանց անապատը, Ծիծեռնավանքը, Թովմա առաքյալի, Որոտնա վանքերը, Թանգու կամուրջը և այլն*:

---

* Սյունյաց աշխարհի աշխարհագրական պայմաններին, նրա պատմությանը, բնակչության զբաղմունքին, նիստ ու կացին են նվիրված մի շարք աշխատություններ (տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, **Ս. Լիսիցյան**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1936, **Ստեմել**, Սյունիքը-Սիսական (թռուցիկ ակնարկ), «Հայրենիք», 1956, փետրվար, թիվ 2, էջ 29-37, **Խ. Ավետիսյան**, Զանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում, Երևան, 1963, **Ք. Պետրոսյան**, Քարանձավից դեպի լույս, Երևան, 1966, *նույնի՝* Լեռնաշխարհի վերածնունդը, Երևան, 1973, **Տ. Սահակյան**, Սյունիքը XIII-XV դարերում, Երևան, 1973, **Ս. Ումառյան**, Սյունիքը դիցարան, Երևան, 1981, **Ա. Լալայան**, Զանգեզուրյան դրվագներ 1917-1921 թթ., Երևան, 1985, **Հ. Առաքելյան**, Սիսիան, Երևան, 1987, **Ս. Հախվերդյան**, Գորիսի պատմություն, Գորիս, 1996, **Ս. Խաչատրյան**, Լեռնահայաստան, Երևան, 2003 և այլն): Զանգեզուրի հնությունների ու ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությանը ևս նվիրված են մի շարք աշխատություններ (տե՛ս **Ս. Մնացականյան**, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1956, **Ս. Բարխուդարյան**, Դիվան հայ վիմագրության, Երևան, 1960, 2-րդ պրակ, **Գ. Գրիգորյան**, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, «Լրաբեր», 1970, թիվ 10, *նույնի՝* Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դդ., Երևան, 1973, *նույնի՝* Ս. Օրբելյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, թիվ 4, *նույնի՝* Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, **Г. Григорян**, Очерки истории Сюника IX-XV вв., Ереван, 1990, **Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան**, Սյունիքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2001 և այլն):

Զանգեզուրցին դարերի ընթացքում ապրել է իր ուրույն կենցաղով, նիստուկացով, տեղի բնապայմանների համաձայն՝ ստեղծել և հաջորդ սերունդներին է փոխանցել իր արհեստագործական տաղանդի յուրօրինակ արգասիքները՝ տղամարդկանց ու կանանց հագուստներ (չուխա, անդրավարտիք, գույնզգույն գուլպաներ, շալեր և այլն), գորգեր ու կարպետներ, կավից, փայտից ու մետաղից պատրաստած բազմազան առարկաներ և այլն:

Կանանց տարազներից խիստ տիպական էր վերնազգեստ-քուրքը, որը տեղի բնակիչներն անվանում էին «քուլք»: Նրբորեն պատրաստված այդ զգեստը կարված էր մուգ կարմիր գույնի թավշյա կտորից, եզրերը և թևաբերանները զարդարված էին կանաչ մետաքսյա ժապավենաերիզով և մոտ 10 սանտիմետր լայնության աղվեսի մորթիով: Կաշվե գոտիների վրա ամրացված էին արծաթյա խաչանման, բուսական և աստղաձև զարդեր, ճարմանդ, որի ծայրը ներկայացնում էր երկգլխանի արծիվ: Դրանք պատրաստում էին տեղի արծաթագործ վարպետները: Նույն վարպետների ձեռքի աշխատանք էին նաև գլխի հարդարանքի մասերը, քունքազարդ բոժոժները՝ ամրացված կանաչ մետաքսյա կտորից եռանկյունաձև կարված ականջակալների վրա: Քունքազարդերը զուգաթելի եղանակով պատրաստված սնամեջ գնդիկներ էին:

Գորգերը և կարպետները Զանգեզուրում գործում էին ձեռքով, գորգագործական հաստոցի կամ տորքի վրա, բուսական ներկերով ներկված գունավոր բրդաթելերով: Դրանք գործածվել են որպես սփռոցներ, վրանների ծածկոցներ, գործվածք-զարդեր՝ պատից կախելու համար:

Գորգերն ունեին երկրաչափական ոճավորված բուսական նախշեր, վիշապանախշեր, որոնք նախկինում կապված են եղել ջրի պաշտամունքի հետ, երկգլխանի կենդանիների ու մարդկանց ուրվագծային պատկերներ և արևը խորհրդանշող աստղաձև նախշեր: Զանգեզուրցի վարպետները լիովին բավարարում էին տեղի բնակչության տնային-կենցաղային առարկաների պահանջմունքները: Լայն տարածում ունեին տարբեր չափերի ու ձևերի պղնձյա թասերը, սարինջները, ջուր խմելու ամանները, կժերը: Նախշազարդ կուժը պատրաստվում էր դրվագման եղանակով. այն դրսի կողմից պատված էր շեղանկյունաձև նախշերով, իսկ բռնակը զարդարված էր հատիկավոր նախշազարդերով: Բազմազան էին կավից ու փայտից պատրաստված իրերը, տնայնագործական առարկաները, գյուղատնտեսական գործիքները՝ մանգաղ, գերանդի, լծասարքեր և այլն: Տեղում էին պատրաստվում ջրաղացների սարքերը (բացի ջրաղացքարերից, որ բերվում էին Արցախից՝ Գանձասարից), ձիթհանների, մրգի մշակման և գինի պատրաստելու, բրուտագործական արհեստանոցների գործիքներն ու դրանց մասերը:

* * *

Հին է Զանգեզուրի պատմությունը, հարուստ՝ բազում հերոսական դրվագներով:

Զանգեզուրը Սյունյաց (կամ Սիսական) աշխարհի առավել ընդարձակ մասն էր: Սյունիքը տակավին 3-4-րդ դարերից հանդես էր գալիս որպես Մեծ Հայքի ամենահզոր նախարարություն, որի տիրակալները հայոց արևելյան սահմանագլխի կուսակալները և արքունի զորքերի հրամանատարներն էին: Սյունյաց նախարարությունն իր տրամադրության տակ ուներ 19400 այրուձի, շատ ավելի, քան հայոց նախարարություններից որևէ մեկը: Հիմնականում դա էր պատճառը, որ Սյունյաց նախարարը հայոց արքունիքում զբաղեցնում էր առաջին աթոռը:

Հայաստանում Արշակունյաց թագավորության անկումից հետո Սյունյաց նախարարական տունը, շնորհիվ ռազմաքաղաքական հզորության, իր տիրույթների սահմաններում շարունակում էր պահպանել կիսանկախ կարգավիճակ:

Սյունյաց իշխանական տան անդամներից յուրաքանչյուրն ուներ իր ընդարձակ կալվածքները: Իշխանանիստ կենտրոնը սկզբնական շրջանում եղել է Ծղուկ գավառի (Սիսական, Սիսիան) Շաղաթ գյուղաքաղաքը (այժմյան Սյունիքի մարզի Սիսիանի շրջանի Շաղաթ գյուղի մերձակայքում), որը նաև Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստն էր 4-րդ դարի վերջերից մինչև 9-րդ դարը: Շաղաթ գյուղաքաղաքը պատահական չէր ընտրված Սյունյաց իշխանության և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր կենտրոն: Այն գտնվում էր երկրամասի կենտրոնում՝ առևտրական տարանցիկ ճանապարհների հանգույցում, որոնցից մեկը տանում էր դեպի Վայոց ձոր և Այրարատ, իսկ մյուսը՝ Նախիջևան և Վասպուրական: 9-րդ դարում Սյունիքի գահանիստ կենտրոնը Շաղաթից տեղափոխվել է Վայոց ձորի Եղեգիս գյուղաքաղաք:

10-րդ դարից Սյունիքի կրթական, գրչական և նկարչական կենտրոնը դարձավ ճարտարապետական գլուխգործոց Տաթևի վանքը*, որը գտնվում է Տաթև գյուղի մոտ՝ երեք կողմերից զառիվեր լանջեր ունեցող մի գեղատեսիլ սարահարթի վրա: Վանքի գլխավոր տաճարը՝ Պողոս-Պետրոսը, կառուցվել

---

* Տաթևի վանքը ավերվեց իր կառուցման օրից 1000 տարի անց՝ 1931 թ. երկրաշարժից: Տաթևի տաճարային համալիրին են նվիրված «Տաթև» գրական-բանասիրական, կրոնաբարոյագիտական, պատմափիլիսոփայական տարեգրքի մի քանի գրքերում զետեղված հոդվածները, որոնցում կան պատմական ու մշակութային մի շարք տեղեկություններ: Տարեգիրքը կազմել և տպագրության է պատրաստել Հալեպի հայոց թեմի առաջնորդ Արտավազդ վրդ. Սյուրմելյանը: Լույս է տեսել 6 ծավալուն գիրք: Առաջին գիրքը հրատարակվել է 1925 թ. Կ. Պոլսում, մյուսները՝ Հալեպում, ամեն տարի՝ մեկը: Առաջին գրքում տպագրված է **Գնել եպսկ. Գալամքերյանի** «Տաթեվու վանքը» ուսումնասիրությունը (էջ 34-41), երկրորդում (1926 թ.)՝ «Սյունյաց դպրոցը» հոդվածը, վեցերորդում (1930 թ.)՝ **Արտակ եպսկ. Սմբատյանի** «Համառոտ պատմութիւն Տաթեվու վանքի» հոդվածը և այլն: «Հրազդան» հրատարակչությունը տպագրել է **Ս. Զիլֆուղարյանի** «Տաթև» հանրամատչելի աշխատությունը (Երևան, 2003):

է 11 տարվա ընթացքում՝ 895-906 թթ., այն հետագա դարերում մի քանի անգամ նորոգվել է:

Մայր տաճարին կից կառուցվել են նաև ամբարանոցներ (պահեստներ), գործատներ (արհեստանոցներ), գրատներ, սրբատներ, հոգևորականների բնակության համար խուցեր, Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների համար առանձնացված դամբարան և այլն:

Ճարտարապետական առումով Տաթևը մի բարդ համալիր է: Նրա պատերի վրա կան բազմաբովանդակ ու նուրբ քանդակներ, վիմական արձանագրություններ:

Առանձնապես մեծ վարպետությամբ են կատարված գլխավոր՝ արևմտյան մուտքի կամարի աղեղի քանդակները:

Տաթևը միջնադարյան Հայաստանի խոշոր դպրոցներից և մշակութային կենտրոններից էր. նրա մատենադարանի հարուստ պահոցներում կար ավելի քան 10000 ձեռագիր:

Սյունիքի մետրոպոլիտությունն ուներ 47 սեփական և 670 հարկատու գյուղ, Տաթևի միաբանությունը 9-րդ դարում ուներ 1000 միաբան:

10-րդ դարում Սյունիքում տեղի են ունենում տարածքային վարչաքաղաքական նկատելի փոփոխություններ: Նախկինում Սյունիքի մեջ մտնող Գեղամա լճի ամբողջ ավազանը՝ Գեղարքունիք և Սոտք գավառները, անցնում է Բագրատունյաց տերերին: Դրա սահմաններից դուրս է մնում նաև Երնջակ գավառը, իսկ Նախիջևանը մտնում է մե՛րթ Սյունիքի, մե՛րթ Վասպուրականի մեջ՝ երբեմն դառնալով կռվախնձոր:

970 թվականին Սյունիքում կազմավորվեց Բագրատունիների գերագույն իշխանությանը ենթակա ավատական մի իշխանություն՝ Սյունիքի կամ Կապանի (նաև Բաղաց) թագավորությունը, որն ընդգրկում էր Սյունյաց աշխարհի մեծագույն մասը: Մատենագրական աղբյուրների համաձայն՝ Սյունիքի թագավորությունն ուներ 43 բերդ, 48 վանք և 1400 գյուղ:

10-րդ դարի վերջերին Սյունիքի թագավորության կենտրոնը Եղեգիսից տեղափոխվեց Կապան քաղաք, որը գտնվում էր այժմյան Կապան քաղաքից մոտ 7 կիլոմետր արևմուտք՝ Կապան–Քաջարան խճուղու ճանապարհին՝ Ողջի գետի բարձրադիր աջ ափի անտառապատ ու գեղատեսիլ վայրում: Կապանն առաջին անգամ հիշատակվել է 5-րդ դարի վերջերին, սակայն քաղաք է դարձել 10-րդ դարում: Միջին դարերում Կապանը Սյունիքի միակ քաղաքն էր, եթե չհաշվենք ժամանակ առ ժամանակ Սյունիքի կազմում գտնվող Նախիջևան քաղաքը: Սյունյաց մայրաքաղաքը հյուսիսից և հարավից պաշտպանված էր Ողջի գետի անդնդախոր ձորով ու Մեղրու անմատչելի լեռներով, արևմտյան կողմում գտնվում էին Բաղակու քար և Բաղաբերդ ամրոցները, իսկ հարավարևելյան կողմը պատված էր ամրակուռ պարիսպներով: Կապանը ավատական ոչ մեծ քաղաք էր, հավանաբար 15-20 հազար բնակչությամբ: Այստեղ, հայերից բացի, բնակվում էին նաև որոշ թվով հրեաներ, որոնք

ունեին իրենց առանձին թաղը՝ Ջհտաթաղը: Կապանի թաղամասերից մեկը կոչվում էր «Խնձորի գլուխ»:

Կապանի թագավորության գոյության շուրջ 200 տարիների ընթացքում երկիրը հիմնականում ապրել է խաղաղ կյանքով, արձանագրել տնտեսական ու մշակութային նշանակալի վերելք: Ավատական այդ թագավորությունը իր հզորության գագաթնակետին հասավ 11-րդ դարի առաջին տասնամյակներին՝ Սյունյաց Սմբատ Բ թագավորի (1040-1051) գահակալության տարիներին:

11-րդ դարի վերջերից Սյունիքը ստիպված էր համառ մարտեր մղել սելջուկյան հորդաների դեմ: 1103 թ. սելջուկներն ավերեցին Կապան քաղաքը, որից հետո Սյունիքի թագավորության կենտրոն դարձավ Բաղաբերդ ամուր բերդը, որը կոչվում էր «հոյս եւ ապաւէն՝ Սիւնեաց աշխարհի»: Սելջուկները շարունակեցին իրենց հարձակումները և մեկը մյուսի հետևից գրավեցին Սյունիքի բերդերը, իսկ 1170 թ. զավթեցին և ավերեցին թագավորության վերջին հանգրվանը՝ Բաղաբերդը, հրկիզեցին այնտեղ եղած 10 հազարից ավելի արժեքավոր ձեռագիր մատյանները: Բաղաբերդի անկումով պատմության ասպարեզից վերացավ Սյունիքի թագավորությունը:

Ինչ վերաբերում է Կապան քաղաքին, ապա այն մի քանի դար շարունակում էր իր գոյությունը՝ որպես սովորական բնակավայր, ապա իսպառ վերացավ: Կապան անունը Ղափան արտաբերմամբ հետագայում դարձավ շրջանի, երկրամասի անուն:

1211 թ. հայ-վրացական միացյալ զորքերը Զաքարյանների գլխավորությամբ, Օրբելյան ու Պռոշյան Սյունյաց իշխանական տների եռանդուն մասնակցությամբ ազատագրում են Սյունիքը:

Քաղաքական իշխանությունը միջավատական մրցապայքարում աստիճանաբար անցավ Օրբելյաններին: Իրենց կառավարման տարիներին նրանք վարեցին ներքին և արտաքին ճկուն քաղաքականություն: Դրա շնորհիվ ժողովուրդը տևական ժամանակ զերծ մնաց ավերիչ ասպատակություններից ու օտար հարկահանների կամայականություններից, որով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին մշակութային առաջընթացի համար: Օրբելյան ամենաերևելի իշխաններից էր հմուտ դիվանագետ Սմբատ գահերեցը (1253-1273):

1236 թ. թաթար մոնղոլները գրավեցին Սյունիքը: Մոնղոլական արշավանքների ժամանակ Օրբելյաններին հաջողվեց Սյունիքը դարձնել միայն մոնղոլական մեծ խաներին ենթակա «ինջուական» երկրամաս և այն զերծ պահել ավերածություններից ու կողոպուտից*:

---

* 1299 թ. Սյունյաց տոհմի պատմագիր, Սյունիքի մետրոպոլիտ, նախաթոռ արքեպիսկոպոս **Ստեփանոս Օրբելյանը** Նորավանքում ավարտել է «Պատմութիւն տանն Սիսական» կամ «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը (այն առաջին անգամ հրատարակվել է

1386-1400 թթ. Սյունիքը նվաճվեց Լենկ Թեմուրի հորդաների կողմից:

16-րդ դարի սկզբներից Սյունիքն ապրում էր իր պատմության ամենածանր ժամանակներից մեկը: Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև սկսվեցին երկարատև, արյունալի պատերազմներ, որոնց գլխավոր թատերաբեմերից մեկը դարձել էր Հայաստանը: Համայն հայ ժողովրդին, այդ թվում՝ Սյունիքի հայությանը, այդ պատերազմները բերեցին անլուր դժբախտություններ ու տառապանքներ:

1555 թ. և 1639 թ. պայմանագրերով Հայաստանը բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Արևելյան Հայաստանը (այդ թվում՝ Սյունիքը) անցավ Պարսկաստանի տիրապետության տակ:

Չնայած պարսիկների դաժան քաղաքականությանը՝ Սյունիքի որոշ հատվածներում իրենց գոյությունը կարողացան պահպանել հայկական իշխանությունների մնացորդները՝ մելիքությունները, որոնք հետագայում խոշոր դեր խաղացին մեր ժողովրդի մղած ազատագրական պայքարում:

Հնագույն ժամանակներից մինչև ուշ միջնադար Զանգեզուրի՝ Արցախին հարող տարածքները (միջնատարածք) բնակեցված էին միայն հայերով, դրանց հարյուրավոր բնակավայրերի անունները բացառապես հայկական էին:

Ի սկզբանե լինելով հայաշխարհ և հայաբնակ՝ միջնատարածքն ունեցել է հերոսական պատմական անցյալ: Սրա դերն առանձնապես կարևորվեց 9-րդ դարից սկսած: Սյունյաց իշխանները և Արցախի Առանշահիկները, հերոսական դիմադրություն ցուցաբերելով արաբներին, մեծ ավանդ ունեցան հայոց պետականության վերականգնման գործում: Միջնատարածքի արևմտյան մասը վերամիավորվեց Սյունիքի թագավորությանը (970-1170), իսկ արևելյան մասը մնաց Առանշահիկների տան կազմում:

12-րդ դարում՝ անգամ Սյունյաց թագավորության անկման օրերին, չփոխվեց տարածքի էթնիկական նկարագիրը:

Տարածաշրջանը մասամբ հայազրկվեց միայն 17-րդ դարի սկզբին՝ Շահ Աբասի ավերիչ տեղահանությունների հետևանքով: Նույն ժամանակ էլ սկսվեց տարածաշրջանի աստիճանական բնակեցումը մահմեդական վաչկատուն և տարածագում ցեղերով: Սակայն այդ պայմաններում անգամ հայերը կազմում էին բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ պահպանելով իրենց կիսանկախ վիճակը:

17-րդ դարի վերջերին հայերի կոտորածների և արտամղման հետևանքով էլ ավելի ստվարացավ մահմեդականների թվաքանակը: Ալիք առ ալիք այստեղ հաստատվեցին հատկապես Պարսկաստանից տեղահանված դա-

---

Փարիզում 1859 թ., ապա՝ Մոսկվայում 1861 թ. և Թիֆլիսում 1910 թ.): Աշխատությունը՝ «Սյունիքի պատմություն» վերնագրով, աշխարհաբար թարգմանել և ընդարձակ ծանոթագրություններով հրատարակության է պատրաստել **Ա. Աբրահամյանը** (Երևան, 1986 թ.):

բաչոխլու և քոլանի քրդական ցեղերը: Այդ ամենի հետևանքով շեշտակի պակասեց հայ բնակչության տեսակարար կշիռը: Հայերի մեծ մասը բռնագաղթվեց Պարսկաստանի խորքերը, մյուս մասը, թողնելով հարազատ վայրերը, բնակություն հաստատեց Արցախում և Զանգեզուրի արևմտյան (հայաբնակ) մասերում, իսկ շատերը կրոնափոխ եղան. քրդացան կամ թուրքացան:

Օտարամուտ ցեղերը վերջին դարերի ընթացքում փոխեցին գյուղերի ու գյուղաքաղաքների, լեռների ու կիրճերի, անտառների ու գետերի, գավառների ու գավառակների տեղանունները:

Այսպես՝ Տրտու գետի ձախ (արևմտյան) ափին գտնվող Քարվաճառ (կամ Շար) գավառակը ստացավ Քելբաջար անունը, Հագարու գետի ձախ (արևելյան) և աջ (արևմտյան) ափերի տարածքները զբաղեցրած Քաշաթաղը վերանվանվեց Աբդալար (Լաչին), իսկ Բարգուշատ գետի ստորին հոսանքների ձախ (հյուսիսարևելյան) ափին տարածվող Խոժոռաբերդը (Կուբաթլի) և Ողջի գետի ստորին հոսանքների մոտ գտնվող Կովսական գավառը ստացան Զանգելան անունը:

Քրդերը բնակություն էին հաստատել Քելբաջար և Աբդալար (Լաչին) գավառակներում, ապա տարածվել նաև Կուբաթլուի և Զանգելանի լեռնային մասերում: Վերջին երկու գավառակների ցածրադիր վայրերը զբաղեցնում էին թուրքերը:

Կարևոր էր Սյունիքի դերը հայ ազատագրական շարժման մեջ: Նրա զանգեզուրյան տարածքի առաջավոր ներկայացուցիչները, Սիսիանի մելիքական տոհմի ներկայացուցիչ Իսրայել Օրին և նրա հետևորդները մեծ ջանքեր գործադրեցին Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը թուրք-պարսկական լծից ազատագրելու համար: Հայաստանի ազատագրության գաղափարը Օրին հանեց համահայկական շրջանակներից՝ լայն քննարկման հարց դարձնելով եվրոպական և ռուսական արքունիքներում:

Միաժամանակ զանգեզուրցիները եռանդագին նախապատրաստվում էին ապստամբության:

Դավիթ Բեկի (ծնունդով Գորիսի Շինուհայր գյուղից)[1] գլխավորությամբ 1722 թ. Սյունիքն ապստամբեց և արցախցիների հետ ուս ուսի կռիվ սկսեց մահմեդական զավթիչների դեմ: Ազատագրական շարժումը 18-րդ դարի առաջին քառորդի վերջերին վերաճեց կենաց ու մահու պատերազմների: Կենտրոն ունենալով Հալիձորի* բերդը՝ Դավիթ Բեկը հիմնականում մղեց

[1] Տե՛ս Մատենադարանի ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր 7429, թթ. 30-31, **Խ. Բարսեղյան**, Այսպես ապրեցին, Երևան, 1985, էջ 7-8:

* Զանգեզուրի բնատարածքում նախկինում կար երկու Հալիձոր բերդ, որոնցից մեկը, որը հիշատակվում է 10-րդ դարից, համարվում էր Սյունիքի թագավորության հայտնի բերդերից մեկը, գտնվում է այժմյան Գորիսի շրջանում՝ Հալիձոր գյուղի դիմաց՝ շրջապատված մրգատու այգիներով ու թավուտ անտառներով: Մյուս Հալիձորը Կապանի Հալիձորն է, որի ավերակնե-

հարձակողական կռիվներ: Զինված հայ գյուղացիները մի շարք ճակատամարտերում ջարդեցին արտաքին նվաճողներին և 1727 թ. ազատագրեցին Սյունիքի մեծ մասը՝ մեծ Կապանը:

Թշնամիների դեմ տարած հաղթանակից հետո Սյունիքը հռչակվեց հայկական ինքնուրույն իշխանություն, որի գոյության հետ ստիպված հաշտվեց Պարսկաստանը: Սյունիքը օժտված էր ինքնիշխանության բոլոր հատկանիշներով. Դավիթ Բեկը նույնիսկ կտրում էր սեփական դրամ*:

Դավիթ Բեկի մահվանից հետո օսմանյան բանակները ներխուժեցին Սյունիք: Նրան փոխարինած Մխիթար Սպարապետի գլխավորությամբ թուրքերի դեմ տեղի ունեցան արյունալի կռիվներ: Մխիթար Սպարապետի դավադրական սպանությունից հետո հայերի դիմադրությունը աստիճա-

---

ը գտնվում են Կապան քաղաքից 3-4 կիլոմետր դեպի արևմուտք՝ Ողջի գետի բարձրադիր աջ ափին՝ նույնպես շրջապատված մրգատու այգիներով և անանցանելի անտառներով: Ոմանք այդ երկու Հալիձորները շփոթել են իրար հետ և Դավիթ Բեկի աթոռանիստն ու հանգրվանը համարել ոչ թե Կապանի, այլ Որոտան ձորի Հալիձորը, որը Դավիթ Բեկի ժամանակներում վաղուց արդեն դադարել էր բերդ լինելուց և երբեք նրա աթոռանիստը չէր եղել:

* Դավիթ Բեկի ղեկավարությամբ զանգեզուրցիների ազատագրական պայքարին է նվիրված Ղուկաս Սեբաստացու աշխատությունը, որը տարբեր վերնագրերով հրատարակվել է մի քանի անգամ (տե՛ս Ընտիր պատմություն Դավիթ-Բէգի եւ պատերազմաց Հայոցն Խափանու, Վաղարշապատ, 1871, Վենետիկ, 1978, Երևան, 1988, Դավիթ-Բեկ կամ պատմություն ղափանցոց, Վիեննա, 1978, Երևան, 1992 և այլն): Այս թեմայով աշխատություններ են գրվել նաև հետագայում (տե՛ս **Մ. Թելունց**, Հայ իրավաքաղաքական, պետաիրավական միտքը Հայաստանի ազատագրման ծրագրերում: Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարը 1722-1730 թթ. և Հայկական պետականության վերականգնման ջանքերը, Երևան, 2003, **Ա. Այվազյան**, «Ղափանցվոց պատմություն». հավաստիությունն ու կառուցվածքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, թիվ 1 (134), էջ 85-100, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., նույն տեղում, 1991, թիվ 2 (133), էջ 102-114, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին, նույն տեղում, 1991, թիվ 1, էջ 93-100, Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, նույն տեղում, 1990, թիվ 4 (131), էջ 63-80, Դավիթ-Բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները, նույն տեղում, 1990, թիվ 3 (130), էջ 76-85, 1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ), նույն տեղում, 1990, թիվ 2 (129), էջ 119-134, *նույնի՝* The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal (Yerevan: Center of Policy Analysis, American University of Armenia, 1997), VI+87 pp., with a map and table, The Secret Meeting of Armenians on Lim Island in 1722 (Concerning The Possible Involvement of Western Armenians in an All-Armenian Liberation Movement), in Ja'nos M. Bak and Pe'ter Banyo', eds., Issues and Resources for the Study of Medieval Central and Eastern Europe (Budapest- Cambrige, MA: Department of Medieval Studies, Central European University and the Committee on Centres and Regional Associations of the Medieval Academy of America, 2001) pp. 59-68; 13.1. Iran & the Caucasus, vol. 5 (Tehran: International Publications of Iranian Studies, 2001), pp. 85-92, Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսը (1715-1725) և հայ ազատագրական շարժումը, «Էջմիածին» (պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան), 2002, թիվ 6-7 (հունիս-հուլիս), էջ 68-76, Demographic Situation in Karabakh in the 1710-1720s, Armenian Mind (journal of the National Academy of Sciences of Armenia), 2001, vol. 5, № 1-2, pp. 66-73, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, 2003, 343 էջ):

նաբար թուլացավ, և թուրքերը ի վերջո վերացրին Սյունիքի անկախությունը:

Սյունիքը, որոշ ժամանակ թուրքական լծի տակ գտնվելով, թուրք-պարսկական պատերազմից հետո կրկին ենթարկվեց Պարսկաստանի տիրապետությանը:

19-րդ դարի սկզբներին՝ 1805 թ., Սյունիքի Կապան–Գորիս հատվածը ազատագրվեց պարսկական լծից և միացավ Ռուսական կայսրությանը: Դա հաստատվեց Գյուլիստանի 1813 թ. պայմանագրով, իսկ տասը տարի անց, երբ կազմվեց Ղարաբաղի հայկական պրովինցիան, Զանգեզուրը ընդգրկվեց դրա կազմում: Ռուսական իշխանությունը գիտեր, որ հայոց հինավուրց, միմյանց հարևան Ղարաբաղը և Սյունիք-Զանգեզուրը էթնիկական կազմով միևնույն նահանգներն են, ուստի դրանց ընդգրկեց վարչական մեկ միավորի մեջ:

Ռուսաստանին միանալուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծեցին Զանգեզուրի տնտեսության առաջադիմության համար:

1868 թ. վարչատարածքային ռեֆորմով կազմվեց Զանգեզուրի գավառը՝ Կապանի, Մեղրու, Գորիսի, Սիսիանի և Սյունյաց լեռներից արևելք ընկած Կովսականի (Զանգելան), Խոժոռաբերդի (Կուբաթլու) և Քաշաթաղի (Լաչին) գավառակներից (շրջաններից): Գավառը մտցվեց Ելիզավետպոլի նահանգի մեջ, իսկ գավառային կենտրոն դարձավ Գորիս գյուղը (պատմական Զագեձոր, բարբառով՝ Կյորես կամ Շեն), որը Զանգեզուրի մեծ գյուղերից մեկն էր:

1823 թ. տվյալներով Զանգեզուրի բնակչության թիվը հասնում էր 10625-ի, որից 7635-ը հայեր էին: 1832 թ. Զանգեզուրի բնակչության 53%-ը (9679 մարդ), 1855 թ. 63,6%-ը (23940 մարդ), 1873 թ. 75,3%-ը (36908 մարդ) և 1886 թ. 68,8%-ը (52830 մարդ) հայեր էին[1]:

Ռուսական կայսրության 1897 թ. առաջին մարդահամարի տվյալներով Զանգեզուրի գավառի բնակչության թվաքանակը հասնում էր 59207-ի, որի 67,9%-ը հայեր էին, իսկ 1908 թ. գավառի բնակչության թվաքանակը հասնում էր 69939-ի, որի 62,8%-ն էին կազմում հայերը[2]:

Հին Գորիսի՝ որպես գավառային կենտրոնի ընտրությունը պատահական չէր: Այն գտնվում էր ճանապարհային հանգուցակետում և տեղավորված էր քամիներից պաշտպանված գոգավորության մեջ: Մաքուր օդն ու սառնորակ ջրերը բնակության հարմար պայմաններից էին: Գյուղը բաղկացած էր ժայռափոր կառուցվածքներից, աստիճանաձև դասավորված գլխատների համակառույցներից: Կենտրոնում եղել է մի հասարակ, հին եկեղեցի,

---

[1] Տե՛ս **Г. Саркисян**, Население Восточной Армении в XIX – начале XX в. Этнодемографическое исследование, Ереван, 2002, с. 91, 94, 107, 122, 128:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 132, 145: Զանգեզուրի բնակչության թվաքանակի վերաբերյալ 1886 և 1897 թթ. տվյալները բերված են նաև Գ. Չուրսինի աշխատության մեջ, բայց դրանք, մեր կարծիքով, թերի են (տե՛ս **Г. Чурсин**, Армяне Зангезура, Тифлис, 1931, с. 229):

Մելիք-Հուսեինյանների դղյակը: Այնտեղ են գտնվել նաև իջևանատները և համբավավոր շուկան:

Զանգեզուրի գավառը կազմվելուց երկու տարի անց՝ 1870 թ., հին Գորիսի հանդիպակաց հարթության վրա հիմնադրվեց Գորիս քաղաքը՝ որպես գավառային վարչական կենտրոն, որն այդ կարգավիճակում մնաց մինչև Հայաստանի խորհրդայնացումն ու Ինքնավար Սյունիքի հռչակումը (1920 թ. դեկտեմբեր): Այդ ժամանակ Զանգեզուրի գավառապետն էր մի գերմանացի ռուս պաշտոնյա՝ Պֆելլեր ազգանունով, որը գերմանական փոքր քաղաքների օրինակով կազմեց Գորիս քաղաքի հատակագիծը: Այն կյանքի կոչվեց նոր գավառապետի՝ Ստարիցկու և նշանավոր գորիսեցի Մանուչար բեկ Մելիք-Հուսեինյանի ջանքերով[1]: Քաղաքատեղը, որն ընկած էր լեռնային ընդարձակ փոսորակում՝ ծովի մակերևույթից 1300 մետր բարձրության վրա, ըստ հատակագծի՝ բաժանվեց թաղամասերի՝ ուղիղ փողոցներով ու ծառուղիներով՝ կենտրոնում ունենալով մի լայն ծառաստան այգի[2]:

Լքելով հին Գորիսը (Կյորեսը)՝ տասնյակ ունևոր ընտանիքներ հաստատվեցին նոր բնակավայրում: Ունևորներն ապրում էին այգիներով շրջապատված իրենց երկհարկանի նորակառույց առանձնատներում՝ «իմ տունը իմ բերդն է» սկզբունքով:

Գավառի վարչական կենտրոն դառնալուց հետո Գորիս քաղաքը դժվարությամբ էր վերածվում Զանգեզուրի տնտեսական և մշակութային լիարժեք կենտրոնի, որովհետև չուներ տնտեսական գրավչություն, ինչպես, օրինակ, Կապանի պղնձահանքերը, չուներ հարմար ճանապարհներ, ինչպես հարևան Նախիջևանի գավառի հարթավայրային ճանապարհները, որոնցով համանուն կենտրոնը կապվում էր գավառի բոլոր մասերի հետ: Եվ, վերջապես, Գորիս քաղաքը Զանգեզուրի մյուս շրջանային կենտրոնների համեմատ չուներ անհրաժեշտ այն մակարդակը, ինչը, ասենք, ուներ Շուշի քաղաքը ոչ միայն համանուն գավառի, այլև ողջ Արցախի համար:

Գտնվելով առևտրական տարանցիկ ուղիների խաչմերուկում՝ Զանգեզուրի գավառի վարչական, տնտեսական և մշակութային կենտրոն Գորիսը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ապրում էր աշխույժ կյանքով: Հարուստ վաճառական Միրումյանը Գորիս քաղաքի միջով աղմուկով հոսող լեռնային Վարարակ գետակի վրա (այն Քարահունջի կիրճով սլանում էր դեպի հարավ՝ ընդառաջ գնալով կատաղի դղրդյունով անցնող Որոտան գետին) 1898 թ. կառուցել էր հիդրոէլեկտրակայան: Դարասկզբին քաղաքի «արդյունաբերական» ձեռնարկություններն էին՝ լիմոնադի փոքրիկ «գործա-

---

[1] Տե՛ս **Ե. Լալայեան**, Զանգեզուրի գաւառ: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, հատոր Բ, Զանգեզուր, Թիֆլիս, 1899, էջ 27, **Ստեմել**, Սյունիքը-Սիսական (թռուցիկ ակնարկ), «Հայրենիք», 1956, փետրվար, թիվ 2, էջ 35:

[2] Տե՛ս **Ստեմել**, Սյունիքը-Սիսական (թռուցիկ ակնարկ), «Հայրենիք», 1956, փետրվար, թիվ 2, էջ 35:

բանը», սայլաշինական, օճառ եփող, փայտ և կաշի մշակող արհեստանոցները, երկու-երեք բրուտանոցները, որտեղ պատրաստում էին կուժ, կուլա և կավե գավաթներ, որոնք գնում էին գյուղերից քաղաք եկողները: Գործում էին մի քանի ոսկերչական կետեր, որտեղ զարգյարները (ոսկերիչներ) պատրաստում էին կանացի զարդեր, գոտիներ և այլն: Ավելի ուշ քաղաքում սկսել էր գործել կոճակներ արտադրող փոքր «գործարանը»:

Գորիս քաղաքով էին անցնում Նախիջևանից Շուշի և Մեղանից (Կապան) Շուշի տանող քարավանային ճանապարհները: Առևտրական գործարքներից, կապալառությունից ու վաշխառությունից, մանուֆակտուրայի (գործվածքեղենի) վաճառքից և միջնորդ գործունեությունից դրամ էին հավաքում և հարստանում քաղաքի այսպես կոչված «բեյ»-երը:

Գավառային վարչական կենտրոնի կարգավիճակը նոր կառուցվող Գորիս քաղաքին տալիս էր մի շարք առավելություններ: Այստեղ էին հաստատվել ցարական գավառային հիմնարկները: Ռուս չինովնիկների և աստիճանավորների թվական աճին զուգընթաց կարիք էր զգացվել կառուցել ռուսական եկեղեցի, բացել դպրոց: Քաղաքում լույս էր տեսնում «Գավառ» անունով թերթը, գործում էր դրամատիկական թատրոն, առաջացել էր քաղաքային դաս: Իսկ Գորիս քաղաքի դիմաց գտնվող հին Գորիս գյուղի բնակչությունը շարունակում էր կառչած մնալ հազարամյա բնակավայրի «քերծերին»՝ ապրելով ծանր, չարքաշ կյանքով:

Զանգեզուրի մյուս կարևոր բնակավայրը Կապանի հանքերի բանավանն էր, որը կոչվում էր նաև Ղաթարի* պղնձահանքեր: Դա Զանգեզուրի միակ արդյունաբերական հանգույցն էր:

Հայկական Զանգեզուրի գյուղատնտեսության զարգացման համար պայմանները միշտ սուղ են եղել հիմնականում սակավահողության պատճառով:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Զանգեզուրում գյուղն այնպիսին էր, ինչպես եղել էր հարյուրամյակների ընթացքում: Գյուղը աղքատ էր, տնտեսությունը՝ նախնական, գյուղացիների հագուստը՝ տնայնագործական: Գյուղացիները կտրված էին աշխարհից: Դրա պատճառը հիմնականում գավառի անանցանելի լեռներն էին, որոնց կիրճերում բույն էին դրել գյուղերը:

Զանգեզուրի չորս շրջանները՝ Գորիսը (բուն Զանգեզուր), Սիսիանը, Կապանը և Մեղրին, իրենց ռելիեֆով և բնակլիմայական պայմաններով խիստ տարբեր էին, հետևապես խիստ տարբեր էին նաև հողից ստացված արդյունքները:

---

* «Ղաթար» պարսկերեն բառացի նշանակում է «քարավան», «գնացք» կամ «շարժում»: Բայց «Կապանի հանքեր» անվան «Ղաթար» տարբերակը կապ չունի դրա հետ: Հավանաբար անունը ծագել է բարձրում գտնվող Կատար կոչվող բարձրագագաթ սարի անունից:

Գորիսի շրջանում հիմնականում մշակում էին հացահատիկային մշակաբույսեր և կտավատ: Հացաբույսի պահանջը մեծ էր, որովհետև գյուղացին հիմնականում ցամաք հացով էր սնվում[1]:

Խոշոր և մանր անասունների գլխաքանակը գյուղացիական տնտեսություններում մեծ չէր, քանի որ ձմռանը դժվար էր լինում անասուն պահել ձմեռային արոտավայրերի խիստ պակասի պատճառով: Հողի մշակությունը, ինչպես ամբողջ գավառում, Գորիսի շրջանում նույնպես կատարվում էր նախնադարյան եղանակներով և հասարակ գործիքներով:

Համեմատաբար ընդարձակ էին Սիսիանի շրջանի հողատարածքները, ուստի այստեղ գավառի մյուս շրջանների համեմատությամբ հացահատիկի արտադրությունը բարձր էր: Բայց Սիսիանում էլ կային գյուղեր, որոնք տառապում էին սակավահողությունից: Օրինակ՝ եղել է դեպք, երբ Սիսիանի Լծեն գյուղում որոշել են կառուցել դպրոցի մի համեստ շենք, բայց շենքի կառուցման համար տեղ չի գտնվել. ոչ ոք չի համաձայնվել իր աննշան հողակտորից մաս հատկացնել: Ստիպված դպրոցի շենքի հիմքերը գցել են գերեզմանոցին հատկացված տարածքում[2]:

Սակավահողությունից տառապում էին ինչպես Սիսիանին անմիջապես հարող բուն Զանգեզուրի (Գորիսի) շրջանը, այնպես էլ հատկապես Կապանի և Մեղրիի շրջանները:

Պատմական հանգամանքների բերումով թուրք-ազերի ազգաբնակչությունը գրավել էր Կապանի հարթավայրերի ամենաջրարբի, հողաշատ ու բերրի մասերը: Օրինակ՝ Կապանի Վերին Հանդ գյուղից մինչև Հանքերը մի հայկական գյուղ չկար, բայց տարածքի ողջ երկայնքով ցաքուցրիվ ընկած էին թուրքական մանր գյուղերը՝ բինաները: Նման գյուղերով լեցուն էին Գեղվա և Գետաթաղի ձորերը:

Երկրագործությունից չստանալով ապրուստի բավարար միջոցներ՝ Կապանի ժողովուրդը հողագործությանը հատկացրել էր երկրորդական տեղ և իր աշխատանքը կենտրոնացրել անասնապահության վրա: Հին ժամանակներից այդտեղ ազգաբնակչության զբաղմունքների մեջ առաջնային էին խաշնարածությունը և ձիաբուծությունը, ինչպես նաև՝ կաթնատնտեսությունը:

Մեղրիի շրջանի հողաշատ ու բերրի մասերը և բեգական լավ հողերը գրավել էին թուրքերը:

Իր աշխարհագրական դիրքով ու բնությամբ Մեղրիի շրջանը Զանգեզուրի ամենալեռնոտ մասն է համարվում: Այստեղ լեռները մեծ մասամբ բարձրալանջ մերկ ժայռեր են, զուրկ արոտից և, հետևապես, անասնապա-

---

[1] Տե՛ս **Ց. Խոջա-Էյնաթեանց**, Գիւղական ցաւեր, «Մուրճ», 1898, թիւ 2-3, էջ 256:

[2] Տե՛ս «Գրական թերթ», 1972 թ., թիվ 18, 28 ապրիլի:

հության համար ոչ պիտանի: Միայն Մեղրի գետի ճյուղերի վերնամասերը՝ Լիճք–Տաշտուն–Կալեր գյուղերի շրջանները, կարելի է անվանել անասնապահական շրջաններ, որովհետև դրանք հարուստ են կանաչազարդ արոտներով: Այսպիսով՝ շրջանը այդ տեսանկյունից ներկայացնում է իրարից խիստ տարբերվող մասեր: Տափարակ տեղերում, այսինքն՝ Արաքսի հովտին մոտ վայրերում, համեմատաբար զարգացել էին այգեգործության, գինեգործության, շերամապահության մշակույթները, իսկ շրջանի չորս գյուղերի՝ Մեղրիի, Ալիդարայի, Նուվադիի և Լեհվազի գյուղացիները զբաղվում էին նաև բամբակագործությամբ, մինչդեռ լեռնային մասերում առավելապես զբաղվում էին հացահատիկի մշակությամբ ու անասնապահությամբ: Որպես լեռնային շրջան՝ ակոսված բազմաթիվ ձորերով, զուրկ ոռոգման պայմաններից, հաճախակի ենթակա բնության պատահարներին՝ տարածքն իր սակավահողությամբ ու ցածրորակ վարելահողերով չէր կարող լրացնել տեղական հացի պաշարը:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց տարեցտարի վատթարանում էր Զանգեզուրի գյուղացիության վիճակը: Աստիճանաբար խորանում էր նրա քայքայման գործընթացը՝ հողասակավության, ծանր հարկերի, վաշխառուական կապիտալի զարգացման պատճառով[1]:

1862 թ. ցարական կառավարության օրենքի համաձայն (այդ օրենքը համատարած էր Ռուսական կայսրության մեջ)՝ Զանգեզուրի լավագույն հողերը հատկացվել էին բեգերին ու խաներին, որոնց գերակշիռ մասը թուրքեր էին: Այդ թվականից սկսած՝ հայ և թուրք-ազերի գյուղացիները տառապում էին փոքրիկ «միապետերի» ձեռքին: Մի կողմում ընչազուրկ գյուղացիական զանգվածներն էին, մյուս կողմում՝ սակավաթիվ փոքր ու մեծ կալվածատերերը՝ բեգերն ու խաները[2]:

Ցարական կառավարությունը, փոխանակ ազատ տարածքներից այդ հողերի իսկական տեր-տիրականներին բաժին հաներ, Ռուսաստանի ներքին նահանգներից ռուս մուժիկներ էր գաղթեցնում այնտեղ կամ գերմանացիներով ու մոլոկաններով բնակեցնում[3]:

Թշվառ վիճակում էր հատկապես չքավոր գյուղացին, որը, հողի պակասությունից դրդված, ստիպված էր հող վարձակալել հողատերերից, որի մշա-

---

[1] Տե՛ս **Ա. Քալանթար**, Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», 1890, թիվ 12, էջ 1708, **Յ. Խոջա-Էյնաթեանց**, Գիւղական ցաւեր, «Մուրճ», 1897, թիվ 11-12, էջ 1552:

[2] Տե՛ս **С. Заварян,** Экономические условия Карабага и голод 1906-1907 гг., изд. Армянского культурного союза в Баку, СПб., 1907, с. 7-10, **Վ. Մինախորեան,** Խորհրդային Հայաստանի անասնապահությունը, «Հայրենիք», 1925, ապրիլ, թիվ 6 (30), էջ 70-71:

[3] Տե՛ս «Հնչակ», 1908 թ., թիվ 6-7, հունիս-հուլիս:

կումից վերցրած արդյունքը շատ հաճախ ամբողջովին տալիս էր պարտատիրոջը, իսկ ինքը՝ դառնում բատրակ:

Զանգեզուրի աշխատավոր գյուղացիների հողակտորները չնչին էին, ուստի հույսը մնում էր պետական հողերից օգտվելը: Բայց այստեղ էլ նրանց դիմաց կանգնում էին հողատերերը՝ իրենց անհագ ախորժակով, որոնք ձեռք էին գցում նաև պետական հողերը՝ իբրև սեփականություն:

1885 թ. Զանգեզուր է եկել ռուս ապագա խոշորագույն քիմիկոս Ս. Պ. Զելինսկին՝ հանձնարարություն ունենալով ուսումնասիրել, թե այդտեղ որքան արդյունավետ են օգտագործվում պետական հողերը: Ուսումնասիրության արդյունքները նա ամփոփել ու զեկուցագրով ներկայացրել էր վերադաս մարմիններին: Զեկուցագրում նշված էր. «... Զանգեզուրում շատերը հողատիրական իրավունքներ ձեռք բերելու համար միջոցների ընտրության մեջ խտրություն չեն դնում: Կասկած չկա, որ առաջիկա դատական սահմանազծման ժամանակ պետական կալվածքների մեծ մասը կվիճարկվի, և, հավանաբար, պետությունը շատ բան կկորցնի, քանի որ նրա կողմում ոչինչ և ոչ ոք չկա, իսկ հակառակորդների կողմում են բազմաթիվ կեղծ վկաներ ու կեղծ փաստաթղթեր»[1]:

Եվ, իրոք, խոշոր ու մանր հողատերերը բոլոր արդար ու անարդար միջոցներով Զանգեզուրում պետությունից խլում էին վիթխարի հողատարածություններ: Գյուղացիներն ամենուրեք դիմադրություն էին ցույց տալիս կալվածատերերին: Սակայն հաշտարար դատավորները գրեթե միշտ վճիռներ էին կայացնում պետության հակառակորդների օգտին:

1885 թվականին Զանգեզուրում եղած 68,443 դեսյատին վարելահողերից 30 տարի հետո պետության ձեռքին մնացել էր միայն 4,018 դեսյատին: Այսպիսով՝ ավելի քան 64000 դեսյատին պետական հող անցել էր կալվածատերերի ձեռքը[2]:

Գյուղացիությունը տանջվում էր ցարական ստրաժնիկների, ուրյադնիկների, պրիստավների ձեռքին: Սրանք հարկերն ու տուրքերը հավաքում էին պատժիչ ջոկատների միջոցով: Ցարական իշխանությունների հենարանը գյուղի «զոռբաները», քյոխվաները, ազդեցիկ պաշտոնյաներն էին, որոնք հաճախ հափշտակում էին գյուղացիների հողերը:

Առանձին գյուղերում կալվածատիրական դաժան շահագործման դեմ ըմբոստացած գյուղացիությունը հրաժարվում էր «պարտքերը» վճարելուց: Ցարական պաշտոնյաները փորձում էին գյուղացիների նկատմամբ ձեռք

---

[1] **С. Зелинский,** Экономический быт государственных крестьян в Зангезурском уезде Елисаветпольской губернии.- Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, том IV, Тифлис, 1886, с. 64.

[2] Տե՛ս **Н. Гейдаров,** В горах Зангезура, Воспоминания о годах борьбы за победу и укрепление советского строя. Азербайджанское государственное издательство, Баку, 1968, с. 20:

առնել վարչական միջոցներ, սակայն դա ավելի էր սաստկացնում գյուղացիների ըմբոստությունը:

Զանգեզուրի գյուղացու հիմնական սննդամթերքը հացն էր: Հացով ամենապահով շրջանը գավառում Սիսիանն էր: Բայց նույնիսկ այստեղ գյուղերի մի մասի (Բռնակոթ, Լոր, Գետաթաղ) ստացած բերքը բավականացնում էր միայն 5-6 ամիս, և գյուղացիները հացի իրենց պաշարը լրացնում էին՝ անասունների վաճառքից ստացած գումարով հացահատիկ գնելով: Ինչ վերաբերում է սակավահող բուն Զանգեզուրի (Գորիս), Կապանի և Մեղրիի շրջանների գյուղացիներին, ապա նրանց միայն 1/10 մասն էր սնվում մաքուր ցորենով, մնացածները հիմնականում սնվում էին գարիով, կորեկով, կարտոֆիլով: Ամբողջ Կապանում ազգաբնակչության 70%-ը, հոկտեմբեր ամսից սկսած, ուներ միայն 2-3 ամսվա հացի պաշար, 20%-ը ընդհանրապես ոչինչ չուներ և ապրում էր օրավարձ աշխատանքի փոխարեն ստացած հացով, և միայն 10%-ն էր, որ ապահովված էր 6-12 ամսվա հացի պաշարով[1]:

Ամեն տարի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Կապանի մի շարք հայկական գյուղերից գյուղացիները ստիպված գնում էին հարևան Զանգելան՝ տափաստանի թուրքերի համար չալթուկի հունձ անելու: Սովորաբար, իբրև վարձ, այդ հնձվորները ստանում էին 10-15 խրձից մեկը: Զանգելանից Կապան մտած բրինձն ու ցորենը կազմում էին տարեկան 2-3 հազար փութ, որը եղած պահանջի համեմատ մի աննշան բան էր[2]:

Պատահական չէ, որ սովը գյուղական բնակչության հիմնական զանգվածների ուղեկիցն էր: 1906 թ. աշնանն անցկացրած հաշվառման տվյալներով Կապանի շրջանի 32 գյուղերում 20 հազար մարդ (բնակչության 37%-ը) կարիք ուներ օգնության: Սիսիանի շրջանում օգնության կարիք ուներ հաշվառված 14 գյուղերի բնակչության 23%-ը, որոնց 8%-ը (1/3) սովյալներ կամ մուրացկաններ էին, իսկ 15%-ը (2/3)՝ չքավորներ: Արդյունքում, բուն Զանգեզուրի 16 գյուղերում հաշվառված 22,5 հազար բնակիչների 9,6%-ը (ավելի քան 3000 շունչ) սովյալներ էին[3]:

Գյուղացին կքած էր ամենատարբեր պարտքերի ծանրության տակ: Նրանցից յուրաքանչյուրը հողի վարձակալության հարկերի պատճառով միջին հաշվով պարտք ուներ 83 ռուբլի: Վաշխառուից վերցրած 100 ռուբլու համար գյուղացին պարտավոր էր տարեկան վճարել 20-24 %: Քանի որ մեծ մասամբ գյուղացիները հնարավորություն չէին ունենում պայմանավորված ժամկետում վերադարձնելու իրենց պարտքը, ապա վաշխառուն, պարտքի վճարումը հետաձգելով ևս մեկ տարի, տոկոսները գումարում էր ոչ թե

---

[1] Տե՛ս **Հ. Զավարյան,** նշվ. աշխ., էջ 71:

[2] Տե՛ս **Վ. Ղազախեցյան, Ռ. Գրիգորյան**, Երկու զեկուցագիր Զանգեզուրի հարավային շրջանների պատմական անցյալից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 1, էջ 149:

[3] Տե՛ս **Հ. Զավարյան,** նշվ. աշխ., էջ 67:

պարտքի գումարին, այլ տոկոսներին՝ ամբողջ նախորդ տարվա համար: Այս ամենը գյուղացուն դատապարտում էր մշտական ստրկության, կիսաքաղց գոյության[1]:

Դրությունը ծանրացնում էր նաև այն, որ հայ գյուղացին մշտապես ենթարկվում էր երկրամասում գործող թուրք և քուրդ ավազակների և ավազակախմբերի ավերիչ հարձակումներին: 19-րդ դարի 90-ական թվականներին Նախիջևանի և Զանգեզուրի հայերին ահի մեջ էր պահում, այսպես կոչված, «դաչաղ» Նաբիի ավազակախումբը[2]:

Բժշկական օգնության իսպառ բացակայության հետևանքով զանազան հիվանդություններից ամեն տարի գյուղերում վաղաժամ մահանում էին հարյուրավոր մարդիկ: Բուն Զանգեզուրի Խնձորեսկ գյուղում, որն ուներ 1000 ծուխ, 1906 թ. մի քանի ամսում տիֆից մահացել են 300 երեխա և 50 մեծահասակ, նույն ժամանակ Կապանի Եղվարդ գյուղում (120 ծուխ)՝ 37, Ազարակում (130 ծուխ)՝ 15 մարդ և այլն[3]: Այդ ամենին ավելանում էին վարչակազմի անօրինական գործողությունները, հատկապես կազակների կողմից պարբերաբար իրականացվող էկզեկուցիաները (պատժամիջոցներ):

Այսպես, 1906 թ. դեկտեմբերի վերջին բուն Զանգեզուրի Շինուհայր գյուղում սպանվեց գյուղապետը: Քննիչը չկարողացավ պարզել սպանության դրդապատճառները և գտնել հանցավորներին, որի համար հատուցեց տեղի անմեղ բնակչությունը: Շինուհայր ուղարկվեցին մոտ 100 կազակներ, որոնք 20 օր շարունակ իրենց ձիերով հանդերձ այստեղ ապրում էին գյուղի հաշվին: Գյուղացիները կազակներին պետք է տրամադրեին իրենց ունեցածչունեցածից: Հարկ եղած դեպքում մթերքների նշանակալի մասը նրանք ստիպված էին գնել հարևան գյուղերից կամ Գորիս քաղաքից: 20 օր մնալով գյուղում, ծախսելով գյուղացիներից հարկադրաբար վերցրած 2000 ռուբլու արժողությամբ մթերքը՝ կազակները հեռացան գյուղից՝ սպանվածի ազգականների օգտին գյուղացիներից վերցնելով ևս 2000 ռուբլի կանխիկ գումար[4]:

Չնայած այդ դժվարություններին՝ Զանգեզուրի գյուղացիները իրենց արդար վաստակով ապրող, բարձր բարոյականության տեր մարդիկ էին:

Զանգեզուրի բնակչության ծանր վիճակը աղետալի դարձավ 1905-1906 թթ.՝ Այսրկովկասում թուրք-հայկական ընդհարումների ժամանակ:

---

[1] Տե՛ս **Հ. Զավարյան,** նշվ. աշխ., էջ 55-56:

[2] Տե՛ս «Մուրճ», Զանազան լուրեր, 1896, թիվ 3-4, էջ 529, Զանազան լուրեր, 1897, թիվ 7-8, էջ 1138-1139, **Ց. Խոջա-Էյնաթեանց**, Գիւղական ցավեր, «Մուրճ», 1898, թիվ 2-3, փետրվար-մարտ, էջ 258-260, **Ա. Քալանթար**, Ներքին տեսություն, 1906, «Մուրճ», թիվ 2, էջ 153, **Ե. Իշխանյան,** Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երևան, 1999, էջ 65-79, **Գ. Առաքելյան**, Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում, Երևան, 2003, էջ 77-78:

[3] Տե՛ս **Հ. Զավարյան,** նշվ. աշխ., էջ 67:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 81:

Կռիվներն ընդգրկեցին նաև Զանգեզուրը: Գավառի հայերը և թուրքերը, բաժանվելով երկու թշնամական բանակների, սկսեցին թալանել, հալածել, կոտորել միմյանց: Երկրագործը թողեց արորը և զենք վերցրեց, հովիվը ոչխարներն արածեցնելու փոխարեն կանգնեց դիրքերում, կինը, թողնելով տնտեսությունը, զբաղված էր կռվողներին ուտելիք և փամփուշտ հասցնելով: Գտնվելով մշտական վտանգի առջև՝ գյուղացին գնդակների սուլոցի տակ հողը հերկում էր հապշտապ, ցանքը կատարում ուշացումով, միայն այն ժամանակ, երբ հնարավոր էր լինում: Այգիները բարձիթողի վիճակում էին, անասունները՝ զուրկ կերից ու անհրաժեշտ խնամքից: Մարդիկ դադարեցին աշխատանքի մասին մտածել. ամբողջ եռանդը, բոլոր մտքերն ուղղված էին նրան, թե ինչպես պաշտպանվեն թշնամուց, ինչ միջոցներով պահպանեն կյանքը[1]:

Թուրք-հայկական ընդհարումների ծանր հետևանքները տևական եղան, և դրանք իրենց զգացնել տվեցին մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Թուրք-հայկական ընդհարումների պատճառները քննելու համար Նիկոլայ 2-րդի հատուկ հանձնարարականով Բաքու մեկնեց սենատոր Ալեքսանդր Կուզմինսկու ղեկավարած հանձնախումբը, իսկ փոխադարձ թշնամանքին վերջ դնելուն ուղղված իրական միջոցներ մշակելու նպատակով 1906 թ. փետրվարին փոխարքա Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հայ և թուրք պատգամավորների համաժողով: Հայ պատգամավորները ընդհարումների պատճառների թվում մասնավորապես նշում էին քոչի առկայությունը[2]: Համաժողովը, սակայն, որևէ ազդեցություն չունեցավ. այն չնպաստեց թշնամանքը վերացնելուն:

Հողագործական անկանոն աշխատանքների, բանող անասունների թվի նվազման պատճառով գործածության մեջ եղած գութանները և արորները շարքից դուրս էին գալիս, ինչն էլ 1907-1914 թթ. բերում էր ցանքատարածությունների հետագա կրճատման: Շարունակվում էին խարխլվել գյուղացիության տնտեսական ուժերը, ավելանում էին ընչազուրկների, գյուղական պրոլետարների շարքերը:

Գետաշեն գյուղում ծնված և Գորիի ուսուցչական սեմինարիան ավարտած Սարգիս Մուսայելյանը (ապագա հայտնի բոլշևիկ, Հայաստանում 1920 թ. մայիսյան խռովության ղեկավարներից մեկը) 1911 թ. Նուխիի ուսումնարանից տեղափոխվել էր Գորիս և ուսուցչություն էր անում քաղաքի ռուսա-

---

[1] Զանգեզուրում 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումների մասին մանրամասն տե՛ս **Հ. Սիմոնյան**, Ազատագրական պայքարի ուղիներում, հատոր առաջին, Երևան, 2003, էջ 462-472 և հատոր երկրորդ, Երևան, 2003, էջ 26-40: Տե՛ս նաև «Հնչակ»,1908, թիվ 6-7, հունիս-հուլիս:

[2] Տե՛ս **Ե. Ս.**, Ներքին տեսութիւն, «Մուրճ», 1906, փետրվար, թիվ 2, էջ 135-172:

կան դպրոցում, միաժամանակ աշխատակցում Ելիզավետպոլում (Գանձակ) 1912-1914 թթ. հրատարակվող «Յուժնի Կավկազ» թերթին: Մոտիկից ծանոթանալով գավառի բնակչության, հատկապես գյուղացիության դառը վիճակին՝ նա այդ թերթի էջերում տպագրել է մի շարք հոդվածներ՝ «Մրրիկ» կեղծանունով: 1912 թ. փետրվարին տպագրած «Հեռավոր Զանգեզուրից» հոդվածում նա գավառի կալվածատերերին մեղադրում էր գյուղացիներին անողոք ու անխիղճ շահագործելու համար: «Երկրագործության համար պիտանի պետական հողերի պակասի պատճառով,– գրում էր Ս. Մուսայելյանը,– գյուղացիները ստիպված են հող վարձակալել մասնավոր կալվածատեր-հողատերերից, որոնք նրանց ենթարկում են ամեն տեսակ ստորացումների»[1]:

Գավառի հողերի մեծ մասը թուրք բեկերի սեփականությունն էր, բայց հայ կալվածատերերը նույնպես ունեին ընդարձակ հողատարածքներ: Օրինակ՝ Օրբելյանները (Խուդա-Բաղիշ Սուլթանը, Սամսոն բեկը) տիրում էին Լոր, Լիզին, Սվարանց, Քյուրդլար, Ալիլյար գյուղերին և մասամբ Տաթև գյուղին: Բրնձի դաշտերով և մրգատու այգիներով հարուստ Դեմիրչիլար և Դոնդարլու գյուղերը պատկանում էին կապանցիներ Քալանթարովներին և Եփրեմ բեկ Աղախանովին՝ Ագարակ գյուղից[2]:

Առաջվա պես ընչազուրկներից շատերը դիմում էին արտագնացության՝ օտարության մեջ բախտ որոնելու: Կապիտալիստական հարաբերությունների արմատավորմանը, սակավահող գյուղացիների թվի մեծացմանը զուգընթաց տարեցտարի ավելանում էր Զանգեզուրից հեռացողների թիվը: Եթե 1884 թ. 10 ամսում Զանգեզուրից արտագնա աշխատանքի էր մեկնել 2925 մարդ[3], ապա 1900 թ. միայն Գորիսի շրջանից՝ 1100 մարդ: Ընդ որում՝ այս տվյալները վերաբերում էին ուղևորման անձնագրեր ունեցող անձանց: Մինչդեռ շատ տարագիրներ մեկնում էին արտագնա աշխատանքի առանց անձնագրերի[4]: Օտար քաղաքներ մեկնողները, որպես կանոն, հայրենի գյուղում թողնում էին ընտանիքի անդամներից մեկ-երկուսին՝ օջախի ծուխը վառ պահելու համար:

Գավառը մեծ թվով աշխատուժ էր մատակարարում հատկապես Բաքվի նավթարդյունաբերությանը: Ջևանշիրի, Ջաբրայիլի, Շուշիի, Ղազախի, ինչպես նաև մերձվոլգյան նահանգների, Հարավային (պարսկական) Ադրբեջանի և Դաղստանի գյուղացիների հետ զանգեզուրցիները ողողում էին Բաքուն և աշխատանք որոնում[5]:

---

[1] Տե՛ս “Южный Кавказ”, 1912, № 92:

[2] Տե՛ս **Н. Гейдаров,** նշվ. աշխ., էջ 18-19:

[3] Տե՛ս **С. Зелинский,** նշվ. աշխ., т. I, 1886, с. 103:

[4] Տե՛ս **Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան**, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 50:

[5] Տե՛ս **Ա. Քալանթար**, Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», 1890, թիվ 11, էջ 1539, 1543, թիվ 12, էջ 1707-1708:

«Գաղթող զանգեզուրցին,– գրում էր «Հնչակ» թերթը,– հենց առաջին քայլից մտնում է Բաքու՝ Բալախանի այդ ոսկե աշխարհը, աշխատավոր դասակարգի սպանդանոցը ... ուր հազարավոր երիտասարդներ, մաշելով իրենց ֆիզիկական ուժը, կորցնելով ամեն ընդունակություն, կա՛մ զոհ են գնում մեքենաների ճանկերին, կա՛մ կմախք դարձած՝ հայրենիք ընկնում՝ արյուն թափելով ... անիծում այն սև օրը, որ հայրենիքից ոտք դուրս դրեց, որովհետև ինքը ոչինչ չի շահել, իսկ իր կյանքի զոհողությամբ շահել է տվել միայն բուրժուային…»[1]:

Նավթահանքերում նավթաքաշ բանվորների, յուղողների, խառատների, հորատողների և մյուս բանվորների մի մասը բաղկացած էր զանգեզուրցիներից: Զանգեզուրի նախալեռնային և լեռնային գյուղերում (թե՛ հայկական և թե՛ ադրբեջանական) չկար ոչ մի չափահաս մարդ, որ մի քանի տարի աշխատած չլիներ Բաքվի նավթահանքերում կամ գործարաններում: 1902 թ. գավառի միայն Խնձորեսկ գյուղից Բաքվում աշխատում էր 1300-ից ավելի մարդ: Զանգեզուրից Բաքու գնացած գյուղացիների մի մասը ընդհանրապես տուն չէր վերադառնում՝ համալրելով պրոլետարիատի շարքերը: Սակայն մյուս մասը, 1-3 տարի աշխատելով և փոքրիկ գումար ետ գցելով, վերադառնում էր հարազատ գյուղ[2]:

Զանգեզուրի գյուղացիներին կարելի էր հանդիպել կայսրության ուրիշ մասերում՝ Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում և այլուր:

1884 թ. տվյալներով Զանգեզուրի բնակչության 28-30%-ը արտագնա աշխատանքի էր մեկնում[3]:

Օտար տեղերում աշխատանք գտած զանգեզուրցի գյուղացիները վաստակած գումարով հազիվ կարողանում էին պահպանել իրենց գոյությունը և որոշ գումար տնտեսել գյուղում մնացած հարազատներին օգնելու համար:

Գորիս քաղաքում հրատարակվող «Գավառ» թերթը 1910 թ. փետրվարի 21-ին տպագրել էր Հայկ Բժշկյանցի հոդվածն այն մասին, թե նյութական ինչպիսի անտանելի ծանր պայմաններում էին ապրում գյուղերից Բաքու գնացած և նավթահանքերում աշխատանք գտած գյուղացիները:

Ինչպես արդեն նշեցինք, գավառի միակ արդյունաբերական հանգույցը Կնարանի կամ Ղաթարի հանքերն էին: Այստեղ լեռնարդյունաբերության ռահվիրաներ էին ռուս մաքսային ծառայող Յակով Ռոզովը, որն իր գործունեությունը սկսել է 1846 թ., և հույն Խարլամպի (Ուստա Ալավերդի) Կոնդու-

---

[1] «Հնչակ», 1908, թիվ 6-7, հունիս-հուլիս:

[2] Տե՛ս «Մշակ», 1902 թ., թիվ 196, 6 սեպտեմբերի, **Ա. Ա.,** Բաքւա նաւթաշրջանից, «Մուրճ», 1899, թիվ 7-8, էջ 907-908, **Ե. Լալայեան**, Զանգեզուրի գաւառ: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, հատոր Բ, Զանգեզուր, Թիֆլիս, 1899, էջ 54-56, **Н. Гейдаров,** նշվ. աշխ., էջ 24:

[3] Տե՛ս **Վ. Խոջաբեկյան**, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978), Երևան, 1979, էջ 63:

րովը, որը 1850 թ. հիմնել էր առաջին պղնձաձուլարանը, տարիներ հետո՝ նաև երկրորդը: Ուգուրչայ գետի մոտի և Հալիձորի տարածքի այս երկու գործարանները, որոնք հետագայում աշխատեցնում էին Կոնդուրովի երկու զավակները (Ա. և Գ. Կոնդուրով եղբայրներ)[1], օրինակ հանդիսացան պղնձաձուլական նոր գործարաններ կառուցելու համար: Մեկը մյուսի հետևից շարք մտան Գ. Կոնդուրովի, Նապոլեոն Ամատունու, Ա. Մելիք-Ազարյանցի, Քրիստափոր և Սաֆրազ Մելիք-Փարսադանովների, Խաչատուր Նազարբեկյանցի (Նազարբեկովի) և Բեգլար բեկ Միրզանի, Կարապետ և Հովհաննես Խոջամիրյան եղբայրների, Մ. բեկ Մելիք-Կարակոզովի, Լազարև եղբայրների գործարանները: Ուգուրչայ գետի մոտ՝ բեկերից վարձակալած մասնավոր հողերի վրա, հայտնի մեծահարուստ Ալեքսանդր Մելիք-Ազարյանցը կառուցեց Հանքերի ամենամեծ գործարանը և այն անվանեց «Սյունիք»: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հանքերում գործում էր 6 պղնձաձուլարան, որոնք բոլորն էլ աշխատում էին ջրային շարժիչներով[2]:

Ինչ վերաբերում է հանքերին, ապա Ղաթարի շրջանում դրանք 19-րդ դարի վերջին գրավում էին 248 դեսյատին տարածություն: Հանքատերերը հայեր էին, հույներ ու ֆրանսիացիներ:

Տարեցտարի ավելանում էր հանքերի ու պղնձաձուլարանների արտադրանքը: Եթե 1858 թ. ձուլվել էր միայն 2485 փութ սև և մաքուր պղինձ, 1887 թ.՝ 15000, 1898 թ.՝ 31246, ապա 1900 թ. Ղաթարի շրջանի պղնձաձուլարանները միասին արտադրել էին մոտ 50000 փութ մաքուր պղինձ[3]: Ըստ որում, նշված բոլոր գործարաններից ամենաառաջավորը, որն ինչ-որ չափով հագեցված էր ժամանակի տեխնիկայով, Ա. Մելիք-Ազարյանցի «Սյունիք» գործարանն էր: Ուստի պատահական չէ, որ հին սարքավորումներով մնացած 5 գործարաններում 1900 թ. ձուլվել էր ընդամենը 11000 փութ պղինձ, իսկ «Սյունիք» գործարանում 197430 փութ հանքաքարի մշակումից՝ 38840 փութ[4]: «Սյունիք» գործարանում հանքաքարի ձուլումից ոչ միայն բարձրորակ պղինձ էր ստացվում, այլև անջատվում էր ոսկի և արծաթ[5]: Նշենք նաև, որ Կապանի

---

[1] Տե՛ս **М. Шостак,** Современное состояние медных рудников и заводов в Зангезурском уезде Елизаветпольской губернии, Тифлис, 1904, с. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 10, ինչպես նաև Список фабрик и заводов Российской империи, 1910 год, Москва, Санкт-Петербург, Варшава, 1910, с. 948, **О. Карапетян,** Краткий очерк развития горного дела на Кавказе. Тифлис, 1901, с. 13-14, **И. Каспарова**, Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961, с. 64, 130, **Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 23-24, 30, **Ա. Հայրապետյան**, Կապանի հանքարդյունաբերության պատմություն, Երևան, 2003, էջ 15-20:

[3] Տե՛ս հետևյալ աղբյուրները՝ **М. Шостак,** նշվ. աշխ., с. 6, **Ց. Կարապետեան,** Տնտեսական հարցեր. Կովկասի պղնձի արդիւնաբերութիւնը, «Մուրճ», 1903, թիվ 5, էջ 179, **С. Заварян**, նշվ. աշխ., էջ 46:

[4] Տե՛ս **М. Шостак,** նշվ. աշխ., էջ 12:

[5] Տե՛ս նույն տեղում:

հանքերը ոչ միայն պղնձի, այլև ոսկու ու արծաթի ավելի բարձր պարունակություն ունեին, քան գերմանացիներին (Սիմենս եղբայրներին) պատկանող Կեդաբեկի հանքերը[1]: Կապանում արդյունահանվող հանքաքարի մեջ պղնձի պարունակությունը հասնում էր 35%-ի[2]:

Շնորհիվ պղնձի մեծաքանակ արտադրության՝ 20-րդ դարի սկզբին Կապանը հայտնի էր դարձել ոչ միայն ամբողջ Այսրկովկասում, այլև Ռուսաստանում:

Բանվորների ընդհանուր թիվը Կապանի պղնձահանքերում տարիների ընթացքում անընդհատ տատանվում էր (տե՛ս ստորև բերվող աղյուսակը). նրանց 1/5-ը կազմում էին պարսկահպատակ թուրքերը (ադրբեջանցիները), իսկ 4/5-ը՝ տեղացի հայերը և ադրբեջանցիները՝ մոտավորապես հավասար թվով[3]:

Բանվորների թվաքանակը Զանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ [4]

տարեթիվ	հանքերի թիվը	հանքափոր-ների թիվը	պղնձաձուլական գործարանների թիվը	ձուլող բան-վորների թիվը	բանվորների ընդհանուր թիվը
1888	16	228	5	435	663
1890	22	890	5	181	1071
1895	17	784	5	345	1129
1900	9	278	5	116	394
1905	24	765	4	170	935
1910	17	1529	3	154	1683
1916	-	1653	2	203	1856

Պարսկահպատակները հանքերում աշխատում էին ձմռան և գարնան ամիսներին, իսկ ամռանը վերադառնում էին հայրենիք՝ դաշտային աշխատանքներ կատարելու: Նույնպիսի սեզոնային աշխատանք էին կատարում հանքերին մերձակա հայ և թուրք գյուղերի բնակիչները: Այդ պատճառով ամռան ամիսներին հանքերն ու գործարանները կանգ էին առնում[5]:

Պղնձարդյունաբերության վերելքը երկրում չէր բարեփոխում բանվորների սոցիալ-տնտեսական թշվառ դրությունը:

---

[1] Տե՛ս **М. Шостак,** նշվ. աշխ., էջ 12:

[2] Տե՛ս Всеподданнейший доклад министра государственных имуществ по горной части на Кавказе 1883 г., СПб., 1884, с. 8, **О. Карапетян**, Краткий очерк развития горного дела на Кавказе, с. 14:

[3] Տե՛ս **М. Шостак,** նշվ. աշխ., էջ 16:

[4] Տե՛ս **Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 246-251:

[5] Տե՛ս **М. Шостак,** նշվ. աշխ., էջ 16, նաև՝ ՌԴ ՊԿՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 316, թ. 113, **Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 80-81:

Անտանելի էր հանքափորների կյանքը: Մութ ու խոնավ խորշերում նրանք օրական աշխատում էին 12-14 ժամ: Հանքախորշերը մշտապես լցվում էին ջրով, որը բանվորները հանում էին՝ տիկերի մեջ լցնելով և մեջքին բարձելով: Օրենքով նախատեսված էր հանքահորերը լուսավորել ձեթի կանթեղներով, որոնք համեմատաբար քիչ էին մուր թողնում, բայց գործարանատերերը դա համարում էին ավելորդ շռայլություն և օգտագործում էին միայն սև նավթով վառվող կանթեղներ: Արդյունքն այն էր լինում, որ մութ լաբիրինթոսից դուրս գալուց հետո հանքափորի բերանից ժամեր շարունակ մրուր էր թափվում: Հանքախորշերից մեջքով դուրս բերած հանքաքարը գրաստներով (ջորի, ձի) տեղափոխվում էր գործարաններ:

Ծայրահեղորեն ծանր էր նաև գործարաններում աշխատող բանվորների վիճակը: Սրանց աշխատաժամերը նույնպես օրական տևում էին 14 և ավելի ժամ, վարձատրությունը մոտավորապես նույնն էր, ինչ հանքափորներինը: Ըստ որում՝ Պարսկաստանից եկած բանվորները տաժանակիր աշխատանքի դիմաց ստանում էին 30-60 կոպեկ, իսկ տեղացիները՝ փոքր-ինչ ավելի՝ մինչև 80 կոպեկ[1]:

Հանքափորները և գործարանների բանվորները ապրում էին գետնափոր կեղտոտ կացարաններում՝ 20-25 հոգով տեղավորվելով մի «սենյակում»: Չնչին զանցանքների համար բանվորները ենթարկվում էին ծեծի ու տուգանքների, իսկ անհնազանդության որևէ նշան ցուցաբերելիս անմիջապես հեռացվում էին աշխատանքից: Հանքերում չկար գործարանային տեսչություն, իսկ բանվորներին հովանավորող օրենքների մասին այստեղ անգամ պատկերացում չունեին: Եթե բանվորները աշխատանքի ժամին զրկվում էին աչքից կամ ոտքից, գործարանատերը կամ կառավարիչը նրանց վախեցնում էր՝ ստիպելով լռել կամ բավարարվել մի քանի տասնյակ ռուբլիներով: Դառնալով անաշխատունակ՝ բանվորները՝ որպես ծանր բեռ, ընկնում էին աղքատ հարազատների ուսերին: Վիրավոր բանվորների 35%-ը 1908 թ. տվյալներով դարձել էր լրիվ կամ մասնակի անաշխատունակ[2]: 1909 թ. տվյալներով հանքերի բանվորների շուրջ 40%-ը փոքրահասակներ ու դեռահասներ էին[3]:

Ըստ օրենքի՝ գործարանատերերը պարտավոր էին իրենց միջոցներով բանվորների երեխաների համար դպրոցներ բացել, մինչդեռ Կապանում խոսք անգամ չկար բանվորական դպրոցների մասին: Իհարկե, միամտություն կլիներ սպասել, որ գործարանատերերը, որոնք բանվորներին հարբստահարում էին նաև վերջիններիս տգիտության պատճառով, կաշխատեին

---

[1] Տե՛ս **Ց. Կարապետեան**, Տնտեսական հարցեր. Կովկասի պղնձի արդիւնաբերութիւնը, «Մուրճ», 1903, թիվ 5, էջ 180, Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 2912, թ. 81, գ. 3308, թ. 94, գ. 3780, թ. 97, գ. 3901, թ. 76, **М. Шостак,** նշվ. աշխ., էջ 16:

[2] Տե՛ս Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4100, թթ. 45-46, գ. 4602, թ. 24-25:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 4602, թ. 4, 7:

նրանց համար դպրոցներ բացել և արթնացնել նրանց գիտակցությունը՝ վառելով ջահեր շրջապատի խավարում:

Ա. Մելիք-Ազարյանցի, Խ. Նազարբեկովի և Ա. ու Գ. Կոնդուրով եղբայրների երեք առավել խոշոր գործարաններից ոչ մեկում չկար բաղնիք, չնայած անտառափայտը հենց ձեռնարկությունների չորս կողմերում էր:

Նախատեսված էր, որ ամեն մի գործարան պետք է ունենար իր բժիշկը, բժշկի օգնականները և հիվանդանոցը: Բայց Կապանի գործարանատերերը միասին գոնե մի բժիշկ չէին պահում: Նշված երեք գործարաններին «սպասարկում» էր միայն մեկ բուժակ, որին մեկ սենյակ էլ չէին տալիս ծանր հիվանդներին պառկեցնելու համար: Եվ դա այն դեպքում, երբ հսկայական էին գործարանատերերի շահույթները: Այսպես, 100 փութ հանքաքարի արդյունահանումը ձեռնարկատերերի վրա նստում էր 80 ռուբլի, իսկ այդ հանքաքարի ձուլումը՝ 55 ռուբլի, այսինքն՝ 100 փութ հանքաքարի վրա կատարած ամբողջ ծախսը կազմում էր 135 ռուբլի:

100 փութ հանքաքարից Կապանի գործարաններում ստացվում էր միջին թվով 15-20% կամ 16 փութ մաքուր պղինձ, որը 1905 թ. գներով (փութը 19 ռուբլի) կազմում էր 304 ռուբլի, որից 169 ռուբլին գործարանատերերի մաքուր եկամուտն էր: Ստացած պղնձի արժեքի 1/10 մասը հանքարդյունաբերողները վճարում էին հողատերերին, իսկ ձեռնարկատիրական մաքուր եկամուտը կազմում էր մինչև 152 ռուբլի կամ հանքաքարի մեկ փթից՝ 1 ռ. 52 կոպ.:

1906 թ. դեկտեմբեր ամսին Կապանի երեք գործարաններում (Ա. Մելիք-Ազարյանցի, Կոնդուրովի և Խ. Նազարբեկովի), որոնք ունեին 1200 բանվոր (ածուխը և պղինձը փոխադրողներին չհաշված), միջին թվով օրական ձուլվում էր 1500 փութ հանքաքար: Դժվար չէր հաշվել, որ ամեն օր այդ գործարաններում արտադրվող պղնձի 4560 ռ. ընդհանուր արժեքից 2250 ռուբլին ստացել էին երեք հանքարդյունաբերողները, դրանից 225 ռուբլին մտել էր տեղի մի քանի հողատերերի ու միջնորդների գրպանը, իսկ մնացած 2000 ռուբլին բաշխվել էր 4000 հոգու՝ 1200 բանվորների և 1800 փոխադրողների միջև: Այսպիսով՝ մեկ բանվորի օրական միջին աշխատավարձը կազմում էր 50 կոպեկ, իսկ մեկ ձեռնարկատիրոջ օրական շահույթը միջին թվով՝ 50 ռուբլի[1]:

Կապանի հանքեր այցելած Սիմոն Զավարյանը՝ Դաշնակցության ականավոր ղեկավար գործիչներից մեկը, տեղում ականատես լինելով բանվորության թշվառ վիճակին, գրել է. «Բանվորն այստեղ շահագործվում է՝ ինչպես ոչ մի տեղ Ռուսաստանի և ոչ մի անկյունում»[2]: Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած 3-4 տարիներին արձանագրվել էր մի հետաքրքիր

---

[1] Տե՛ս **С. Заварян**, նշվ. աշխ., էջ 19:

[2] Նույն տեղում, էջ 46:

երևույթ. մի կողմից Զանգեզուրից հեռանում էին, մյուս կողմից հեռացողներից շատերը վերադառնում էին հայրենի օջախները: Այդ շրջանում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան Զանգեզուրի տնտեսական կյանքում, հատկապես Կապանի պղնձահանքերի շրջանում:

Ֆրանսիական մոնոպոլիաների տնօրինության տակ գտնվող «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերությունը», որին պատկանում էին Ալավերդու հանքարդյունաբերական շրջանի գրեթե բոլոր պղնձահանքերն ու գործարանները, 1908 թ. Զանգեզուրի կապիտալիստներից գնեցին որոշ ձեռնարկություններ և ընդարձակեցին պղնձի արտադրությունը: Հետագա տարիներին ֆրանսիացի կապիտալիստները աստիճանաբար իրենց ձեռքը վերցրին նաև արդյունաբերական մյուս ձեռնարկությունները և նոր ձեռնարկություններ հիմնելու նպատակով հողեր գնեցին գյուղական համայնքներից: Հին հանքերի հետագա շահագործումը ֆրանսիացիներին ձեռնտու չէր, որովհետև չէին ցանկանում հավելյալ ծախսեր կատարել և նոր տեխնիկա ներդնել[1]: Օրինակ՝ բանվորների աշխատանքի պայմանները փոքր-ինչ բարելավելու և արտադրողականությունը բարձրացնելու համար անհրաժեշտ էր հանքահորերում ներդնել վագոնիկներ, բայց դա չէր մտնում օտարերկրյա կապիտալիստների հաշվարկների մեջ: Դրա փոխարեն առաջվա պես բանվորները պղնձաքարը հանքահորերից դուրս էին բերում կողովներով: Հանքերից քիչ թե շատ բարվոքը Ղաթարի հանքերն էին, որտեղ պղնձաքարը հանքախորշերից դուրս էր բերվում վագոնիկներով: Առաջվա պես ոչ ոք չէր մտահոգվում հանքահորերում ու գործարաններում տեխնիկական անվտանգության ապահովման հարցերով:

Ճիշտ է, Զանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ ֆրանսիական կապիտալի ներթափանցումից հետո որոշ չափով բարելավվեց բանվորների վիճակը (նրանց սկսեցին ապահովագրել, դժբախտ պատահարներից տուժելու դեպքում վարձատրել և վճարել նպաստներ), բայց, միևնույնն է, բանվորների դրությունը մնում էր ծանր[2]:

Դարասկզբի համեմատ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Կապանի պղնձահանքերում և ձուլարաններում բանվորների թիվը զգալիորեն կրճատվել էր: 1912 թ. այնտեղ աշխատում էր շուրջ 1000 բանվոր, որոնց մի մասը նորից Պարսկաստանից եկած թուրքեր էին: Չնայած պակասել էր բանվորների թվաքանակը, բայց պղնձի արտադրությունը ոչ միայն չէր պակասել, այլև զգալիորեն ավելացել էր: Ղաթարի շրջանի պղնձագործարանները 1914 թ. միասին արտադրել էին 85000 փութ մաքուր պղինձ՝

---

[1] Տե՛ս **М. Шостак,** նշվ. աշխ., էջ 7, **Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 31:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 195, ց. 1, գ. 288, թ. 89, **Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 101:

1900 թ. 50000 փթի դիմաց[1]: Արտադրության ավելացման հիմնական պատճառը հանքերում ու գործարաններում տեխնիկական որոշ ներմուծություններն էին:

Առաջվա նման Զանգեզուրի և Ալավերդու պղնձահանքերն ու պղնձաձուլարանները առաջնակարգ նշանակություն ունեին Ռուսական կայսրության ողջ տարածքում: 1913 թ. դրանք, միասին վերցրած, տվել են կայսրության մաքուր պղնձի պահանջարկի ավելի քան 12%-ը: Կապանի արդյունաբերական հանգույցն ուներ ավելի շատ արտադրանք տալու հնարավորություններ, բայց խանգարում էր այն, որ այդ հանգույցը երկաթուղային մոտակա կայարանից (Եվլախից) գտնվում էր 235 վերստ հեռավորության վրա: Սկզբում պղնձի խմբաքանակները Եվլախ էին տեղափոխվում ուղտերով, ձիերով ու ջորիներով, հետագայում նաև՝ սայլերով:

Զանգեզուրում կապիտալիստական հարաբերությունների աստիճանական զարգացումը եթե մի կողմից առաջ էր բերում գյուղացիական լայն զանգվածների սեփականազրկում և սոցիալական շահագործման ուժեղացում, ապա մյուս կողմից մեծապես նպաստում էր, որ գավառի փակ բնատնտեսությունը հաղորդակցվում էր համառուսաստանյան տնտեսությանը, դառնում դրա մասը: Այդ առաջադիմական գործընթացն իր հետ անխուսափելիորեն բերում էր բնակչության կուլտուր-կենցաղային և կրթական մակարդակի ընդհանուր վերելք:

Կապանի պղնձահանքերի ու գործարանների արտադրանքի անընդհատ ավելացումը և մաքուր պղինձը երկաթուղային ամենամոտ կայարան շտապ հասցնելու անհրաժեշտությունը պահանջում էին լրջորեն մտածել Կապան–Գորիս–Շուշի–Եվլախ մշտական ճանապարհի մասին: Մասնավորապես անբարեկարգ և խիստ բարձիթողի վիճակում էր այդ երկար խճուղու Կապան–Գորիս հատվածը: Դրա բարեկարգման համար աշխատանքներ էին տարվել դեռևս 1870-ական թվականներից, բայց դրանք լայն ծավալ ստացան ավելի ուշ՝ 1900-1904 թթ., երբ գավառի գյուղացիությունը ձրիաբար տարիներ շարունակ կոռի կարգով (անվարձ) աշխատեց այդ կառույցի վրա: Չափազանց բարդ ռելիեֆով անցնող Կապան–Գորիս հատվածը 1904 թ. լիովին պատրաստ էր և միացել էր Գորիս–Շուշի–Եվլախ խճուղուն: Միաժամանակ Կապանի հանքերից դեպի Զաբրայիլ խճուղային ճանապարհ էր կառուցվել՝ հանքերի պղնձի արտադրանքը այնտեղից նույնպես մոտակա երկաթուղագիծ հասցնելու համար:

1890-ական թվականներից գավառում միջգյուղական ճանապարհները քիչ թե շատ բարվոք վիճակի բերելու որոշ աշխատանքներ էին կատարվել: Չնայած դրան՝ դարասկզբին Կապանի և Մեղրիի շրջանների գյուղերի մեծ

[1] Տե՛ս «Ուրբաթ», 1990, 12 հոկտեմբեր:

մասը զուրկ էր հաղորդակցության կանոնավոր ճանապարհներից: Գորիսի շրջանում ևս շատ գյուղեր իրար հետ կապված էին կածաններով, եթե հաշվի չառնենք Կապան–Եվլախ խճուղու Գորիս քաղաք–Քարաշեն–Տեղ հատվածը և Գորիս քաղաք–Սիսիան խճուղին, որը, սակայն, չէր անցնում բնակավայրերով: Ինչ վերաբերում էր Սիսիանին, ապա այստեղ՝ շրջանի որոշ մասերում, համեմատաբար հարթ մակերևույթի շնորհիվ գյուղերից շատերը կապված էին քիչ թե շատ տանելի միջգյուղական ճանապարհներով:

Զանգեզուրի տնտեսական ու մշակութային նկատելի առաջընթացով էր պայմանավորված նաև կապի միջոցների նկատելի զարգացումը: 1874 թ. Գորիս քաղաքում սկսեց գործել գավառում առաջին փոստային կայանը: Ամսվա որոշակի օրերին Շուշիից Գորիս էր բերվում փոստը[1]: Կապանից, Սիսիանից և Գորիսից ժամանած փոստատարները փոստային կայանին էին հանձնում իրենց բերած նամակները, դրամական փոխադրումներն ու ծանրոցները և ստանում իրենց շրջանների հասցեներով ստացված փոստը՝ հասցեատերերին հանձնելու համար: Փոստից օգտվելու այդ ձևը Զանգեզուրում տևեց ավելի քան 16 տարի: 1890 թ. Թիֆլիսի փոստ-հեռագրական օկրուգի պետի հրամանով Գորիս քաղաքում բացվեց փոստի բաժանմունք: Երեք տարի հետո՝ 1893 թ., Շուշի քաղաքից անցկացվեց հեռագրալար: Փոստի բաժանմունքում տեղադրվեց «Մորզե» տիպի հեռագրական ապարատ, և այն վերանվանվեց փոստ-հեռագրական բաժանմունք[2]:

Փոստի և հեռագրի մուտքը Զանգեզուր խոշոր իրադարձություն էր բնակչության տնտեսական և մշակութային կյանքում:

1904 թ. կապի բաժանմունք բացվեց Կապանի հանքերում: Փոստը Կապան–Սյունիք–Չայզամի–Շուռնուխ–Գորիս ուղիով և հակառակ ուղղությամբ առաքվում էր հիմնականում գրաստով կամ շալակով, երբեմն էլ՝ սայլով: Ինչ վերաբերում էր Սիսիանի շրջանին, ապա այստեղ փոստային ծառայությունների ծավալը խիստ դանդաղ էր աճում. այստեղ փոստի բաժանմունք բացվեց խորհրդային կարգեր հաստատվելուց հետո: Նույնն էր վիճակը Մեղրիում, որն իր փոստը ստանում էր Օրդուբադից: Միայն 1916 թ. Մեղրի գյուղում բացվեց փոստի բաժանմունք:

1911 թ. շահագործման հանձնվեց Գորիս–Կապան հեռագրագիծը, և Հանքերի փոստի բաժանմունքում նույնպես դրվեց «Մորզե» ապարատ, որից հետո բաժանմունքը սկսեց կոչվել փոստ-հեռագրատուն: Կապանը հեռագրով կապվեց ոչ միայն Զանգեզուրի կենտրոն Գորիսի, այլև Շուշիի, Գանձակի և Ռուսաստանի մի շարք քաղաքների հետ:

Մեսրոպյան գյուտից սկսած՝ հին-հին դարերում բազմաթիվ դպրոցներով

---

[1] Տե՛ս **Ռ. Կոստանյան**, Զանգեզուրում կապի զարգացման պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, թիվ 2, էջ 253:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 254:

հարուստ Զանգեզուրը 19-րդ դար էր թևակոխել՝ ունենալով հատ ու կենտ ծխական դպրոցներ:

Ռուսական կայսրության հետ Արևելյան Հայաստանի միավորումից հետո վիճակն սկսեց աստիճանաբար փոխվել, և դպրոցական կրթությունը կարևոր տեղ գրավեց հայոց հասարակական կյանքում:

Զանգեզուրը, որքան էլ աշխարհագրականորեն մեկուսացված էր Հայաստանի մյուս մասերից, չէր կարող դուրս մնալ այդ ընդհանուր առաջընթացից: 1852 թ. ռուսական տիրապետության պայմաններում բացեց Զանգեզուրի առաջին թեմական մեկդասյա դպրոցը, որին հաջորդեցին ուրիշները: Այդ դպրոցներն իրենց բովանդակությամբ ու ենթակայությամբ բաժանվում էին երեք խմբի՝ պետական, ազգային-ծխական և մասնավոր:

1897 թ. վիճակագրական տվյալների համաձայն՝ 1870-1897 թթ. Զանգեզուրի գավառում գործում էին 15 պետական դպրոցներ՝ Գորիս քաղաքում, Խնձորեսկում, Շինուհայրում, Կուբաթլիում, Տաթևում (բուն Զանգեզուրի շրջան), Շիկահողում, Արծվանիկում, Գյուտկումում (Կապանի շրջան), Շաղաթում, Ղարաքիլիսայում, Բռնակոթում, Բազարչայում, Անգեղակոթում (Սիսիանի շրջան), Մեղրիում, Կալադարասիում[1]: Բոլոր պետական դպրոցներում դասավանդումը տարվում էր ռուսերեն, թեև ռուս աշակերտների թիվը (բացի Բազարչայից) կարելի էր մատների վրա հաշվել: Պետական դպրոցներում ուսումը վճարովի էր և բավական թանկ: Ուսման բարձր որակով և աշակերտների առաջադիմությամբ առանձնանում էր գավառային կենտրոն Գորիս քաղաքի պետական դպրոցը, որտեղ սովորում էին ոչ միայն հայ, այլև թուրք և ռուս աշակերտներ: Այս դպրոցում են կրթվել բազմաթիվ պետական, կուսակցական, մշակույթի և գիտության նշանավոր գործիչներ, որոնք շատ բարձր են գնահատել այդ ուսումնական հաստատության դերն իրենց կյանքում: Այսպես, նրանցից մեկը՝ Ն. Հեյդարովը, տարիներ անց գրել է. «Մեր ընտանիքի համար շատ դժվար էր տարեկան տասը ռուբլի վճարել ուսման վարձ: Բայց, չնայած բոլոր դժվարություններին, մենք այնուամենայնիվ դպրոցն ավարտեցինք, տարրական կրթություն ռուսաց լեզվով ստացանք: Ադրբեջանական շատ գյուղերում ռուսերեն գրագետ առաջին մարդիկ եղել են Գորիսի դպրոցի սաները»[2]:

Ավելի մեծ թիվ էին կազմում ծխական դպրոցները, որոնք գործում էին գավառի գրեթե բոլոր գյուղերում՝ Տեղ, Խնածախ, Քարահունջ, Խնձորեսկ, Քարաշեն, Նյուվադի, Շվանիձոր, Շաքի, Շինաթաղ, Մեղրի, Սիսիան, Ախլաթյան, Բռնակոթ և այլն: Ինչ վերաբերում էր մասնավոր դպրոցներին, ապա դրանք սակավաթիվ էին:

---

[1] Տե՛ս **Ա. Գրիգորյան,** Նախասովետական Զանգեզուրի դպրոցական կյանքից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, թիվ 2, էջ 245-246:

[2] **Н. Гейдаров**, նշվ. աշխ., էջ 16.

1870-1896 թթ. Զանգեզուրում դպրոցաշինության բավական աշխույժ տարիներ են եղել: Բայց 1896 թ. ցարական կառավարության կարգադրությամբ փակվել են հայկական ծխական դպրոցները, այդ թվում՝ Զանգեզուրում, իսկ 1898 թ. բռնագրավվել է փակված դպրոցներին պատկանող ամբողջ գույքը՝ դատարկված դպրոցական շենքերում ռուսական դպրոցներ բացելու նպատակով: Հակահայկական գործողությունների բարձրակետը եղավ այն, որ Նիկոլայ 2-րդ ցարի 1903 թ. հունիսի 12-ի հրամանագրի համաձայն՝ հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավվեց: Այդ բոլոր հակամարդկային գործողությունները, որոնք հետապնդում էին ռուսացման նպատակ, հանդիպեցին հայության (այդ թվում՝ զանգեզուրցի հայերի) ուժգին դիմադրությանը: Արդյունքում ցարական կառավարությունը 1905 թվականին՝ ռուսական առաջին հեղափոխության օրերին, նույն Նիկոլայ 2-րդի՝ 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագրի համաձայն, ստիպված եղավ թույլ տալ վերաբացել փակված դպրոցները: Զանգեզուրում ոչ միայն դրանք վերաբացվեցին, այլև հիմնվեցին նոր դպրոցներ, ավելացավ աշակերտների և ուսուցիչների թիվը: Օրինակ՝ 1906 թ. վերաբացված Տաթևի ծխական եռամյա երկսեռ դպրոցում 1914-1915 ուստարում սովորում էր 120, Սիսիանի Բռնակոթ գյուղի ծխական դպրոցում նույն տարում՝ 153 աշակերտ, Քարահունջի ծխական դպրոցը իր վերաբացման հինգերորդ տարում՝ 1910 թ., ուներ 89 աշակերտ, իսկ Խնձորեսկի պետական դպրոցը նույն տարում՝ 155 աշակերտ[1]:

19-րդ դարի կեսերից սկսած՝ Զանգեզուրի հայության վրա դրական մեծ ազդեցություն են գործել արցախահայության մշակութային կյանքի բուռն վերածնունդը, հատկապես Շուշի քաղաքի աննախընթաց առաջադիմությունն ու ծաղկումը: Այստեղի բարձրակարգ ուսումնական հաստատությունները և հատկապես հռչակավոր թեմական դպրոցը առատ լույսի աղբյուրներ են եղել նաև զանգեզուրցիների համար. առավել աչքաբաց, ուսումնասեր զավակները կրթվելու էին մեկնում այնտեղ և վերադառնալով իրենց բնակավայրերը՝ մեծապես նպաստում էին գավառի բնակչության մշակութային-կրթական մակարդակի բարձրացմանը:

Առաջին համաշխարհային պատերազմը նոր արհավիրքներ բերեց պատերազմող երկրների ժողովուրդներին: Հայ ժողովրդին վիճակվեց ամենաահավորը. թուրք ոճրագործ պետության կողմից նրա արևմտյան հատվածը ենթարկվեց ցեղասպանության, իսկ արևելյանը նույն թուրք ռազմամոլների՝ Այսրկովկաս ներխուժելու օրերին կանգնեց ֆիզիկական լիակատար բնաջնջման սպառնալիքի առջև: Զանգեզուրի հայ բնակչությունը նույնպես կրեց պատերազմի բոլոր դառնությունները: Մի քանի հազար զանգեզուրցի հայ երիտասարդներ զորակոչվեցին բանակ, որոնց մեծ մասը նետվեց արևմտյան ռազմաճակատ: Գյուղական շատ ընտանիքներ, զրկված լինելով աշխատող

[1] Տե՛ս **Ա. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 249-250:

ձեռքերից, չէին կարողանում վար ու ցանք անել և մատնվել էին սովի ու թշվառության: Դրան ավելացել էր և այն, որ 1918 թ. սկզբներից Կապանի հանքերում դադարեցվել էին աշխատանքները, քանի որ հանքերը լցվել էին ջրով:

Այսպիսով՝ 1917 թ. դրությամբ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը զբաղեցնում էր բավական ընդարձակ տարածություն՝ 7892 քառ. կիլոմետր: Գավառի մեջ էին մտնում Սիսիանի, Գորիսի, Կապանի, Մեղրիի, Զանգեզուրի, Կուբաթլուի և Լաչինի շրջանները: Այդ տարածքի վրա նույն թվականին եղել է 2222 դեսյատին կալվածք, 1939 դեսյատին այգի, 115224 դեսյատին վարելահող, 3250 դեսյատին խոտհարք, 84625 դեսյատին անտառներ և թփուտներ, 130258 դեսյատին արոտներ, 141277 դեսյատին ամառային արոտավայրեր և 17249 դեսյատին այլ հողատարածքներ[1]: Այդ ժամանակ Զանգեզուրի բնակչության թիվը շուրջ 150000 էր, որից 100000-ը հայեր էին[2]:

Զանգեզուրում ապրող ժողովրդի մասին Վրացյանը այսպես է արտահայտվել. «Ժողովուրդը՝ քաջ, համարձակ և ազատասեր՝ տարի գլուխ կռվում է բնության հետ՝ իր հացն ապահովելու համար...

Շնորհիվ աշխարհագրական դիրքի, դաժան բնության ու տնտեսական աննպաստ պայմանների՝ զանգեզուրցին դարերի ընթացքում... վարժվել է չարքաշ ապրելակերպի: Նրա մեջ զարգացել է աշխատասիրությունը, ամրացել կամքը, կազմվել ու պնդացել է սերը դեպի ազատ ու անկախ կյանքը: Նա սովորել է ավելի ապավինել իր բազուկին ու հրացանին, քան դրսի ուժին և այս հատկության շնորհիվ դժվարությամբ է համակերպվել բռնության և հաջողությամբ դիմադրել դրսից եղած հարձակումներին: Իր խրոխտ լեռներին և իր հոգու արիությանն է պարտական զանգեզուրցին, որ տաճիկ-ադրբեջանական բոլոր կատաղի ճիգերը՝ Զանգեզուրը նվաճելու, անցան անհետևանք»[3]:

---

[1] Տե՛ս **Н. Гейдаров**, նշվ. աշխ., էջ 3, Известия Азербайджанского центрального статистического управления, № 3 (5), Баку, 1922, с. 7:

[2] Տե՛ս Lá République arménienne et ses voisins. Questions territorales. Par la délégation de la République arménienne, Paris, 1919, p. 16, Armenia. Political and Ethnic Boundaries 1878-1948. Editor Anita L. P. Burdett, Archive Editions, London, 1998, p. 434, 442, 479, 524.

[3] Նույն տեղում, էջ 150:

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ 1917 Թ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

1917 թ. փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, և ցարը տապալվեց: Կազմավորվեց ժամանակավոր իշխանություն՝ իշխան Գ. Լվովի գլխավորությամբ: Իշխանության առանձին մարմին դարձավ նաև բանվորների և զինվորների պատգամավորների Պետրոգրադի խորհուրդը: Այսպիսով՝ երկրում հաստատվեց երկիշխանություն:

Հեղափոխության հաղթանակի լուրը շուտով հասավ ազգային ծայրամասեր: Գնալով բուռն իրադարձություններ էին ծավալվում նաև Այսրկովկասում: Ինչպես Ռուսական կայսրության մեջ ամենուր, այստեղ նույնպես պատերազմի և խաղաղության խնդիրները զուգորդվել էին հողի և ազգային ազատության համար մղվող պայքարին: Աննախընթաց բուռն գործունեություն ծավալած քաղաքական կուսակցությունները և հոսանքները[1] աստիճանաբար քաղաքական ցնցումների մեջ ներքաշեցին բնակչության նորանոր զանգվածների:

Քանի որ Թիֆլիսը Կովկասի փոխարքայության կենտրոնն էր, ուստի քաղաքի դուման հանձն առավ դիմել Ժամանակավոր կառավարությանը՝ խնդրելով ստեղծել երկրամասի ղեկավարման հատուկ մարմին[2]:

Նիկոլայ 2-րդի գահընկեցության լուրն այնքան անակնկալ էր, որ առաջին օրերին Զանգեզուրում ոչ ոք չէր հավատում: Եվ երբ այն հաստատվեց, սկսեցին երկարատև բուռն խրախճանքներ հատկապես Գորիս քաղաքում: Բոլորը սպասում էին իրենց կյանքում աննախադեպ փոփոխությունների: Գավառի միակ բանվորական միջավայրում՝ Կապանի հանքերում, 1917 թ. մարտին ձևավորվեց բանվորական պատգամավորների առաջին խորհուրդը, որի փաստացի նախագահն էր տեղի հեռագրիչ, բոլշևիկ Լևոն Ղազարյանը[3]: Նույն գործընթացները տեղի էին ունենում նաև Արցախում,

---

[1] Տե՛ս **Ց. Մելիքեան,** Արեան ճանապարհով, «Հայրենիք», 1924, նոյեմբեր, թիվ 1 (25), էջ 73, **Ա. Գիւլխանդանեան**, Անդրկովկասը և Բագուի դէպքերը, «Հայրենիք», 1967, հունվար, թիվ 1, էջ 36-38, **М. Туманян**, Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ереван, 2012, с. 41-42:

[2] Տե՛ս **С. Сеф,** Революция 1917 года в Закавказье. Документы, материалы, Тифлис, 1927, с. 63-64:

[3] Տե՛ս «Փայլակ», Շուշի, 1917, 5 ապրիլի, «Մշակ», 1917, թիվ 55, 14 մարտի, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 326-327, «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք երկրորդ, Երևան, 1966, էջ 600-603, **Վ. Մելիքյան**, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997, էջ 55, 57, **Ս. Սողոմոնյան**, Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, Երևան, 1958, էջ 7:

բայց ավելի բուռն ու լայնածավալ: 1917 թ. մարտի կեսերին Շուշիում ստեղծվեցին բանվորների, գյուղացիների ու զինվորների պատգամավորների առաջին խորհուրդները, որոնք մի քանի ամիս անց միավորվեցին, և կազմվեց բանվորների, գյուղացիների ու զինվորների՝ Շուշիի խորհուրդը[1]:

Մարտի 9-ին Ժամանակավոր կառավարությունը որոշում ընդունեց Այսրկովկասյան հատուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ) ստեղծելու մասին, որի մեջ մտան Պետական դումայի հինգ անդամներ՝ Վ. Խարլամովը (նախագահ), կադետներ Մ. Պապաջանովը, Մ. Ջաֆարովը, սոցիալիստ-ֆեդերալիստ Կ. Աբաշիձեն և մենշևիկ Ա. Չխենկելին[2]:

Մարտի 17-ին ՕԶԱԿՈՄ-ը կարգադրություն հրապարակեց, համաձայն որի՝ Այսրկովկասում ստեղծվեցին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ, որոնց գլուխ կանգնեցին կոմիսարները: Զանգեզուրում այդ բոլոր մարմիններում ղեկավար դիրք գրավեցին ՀՅ դաշնակցության Սյունիքի կոմիտեի նշանակած մարդիկ և մուսավաթական վերադաս մարմինների կողմից երաշխավորված թուրքեր և քրդեր[3]:

Այսրկովկասյան կոմիտեի հատուկ նպատակը և հիմնական խնդիրները հրապարակվեցին 1917 թ. մարտի 18-ին բնակչությանն ուղղված կոչում: Այնտեղ նշվում էր, որ կոմիտեն կազմավորվել է Ժամանակավոր կառավարության կողմից՝ «Անդրկովկասյան երկրամասի հետագա կարգավորման, նաև Կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով գրաված մարզերում քաղաքացիական ղեկավարման կազմակերպման նպատակով: ... Համապետական նշանակություն ունեցող հարցերը, այն է՝ ազգային, եկեղեցական, ագրարային, բանվորական, կարող են իրենց վերջնական լուծումը ստանալ միայն Սահմանադիր ժողովում: Պատերազմը պետք է շարունակվի մինչև հաղթական վախճանը»[4]:

ՕԶԱԿՈՄ-ը նաև հայտարարեց, որ «Անդրկովկասը շարունակում է մնալ Ռուսական կայսրության անբաժան մասը»[5]:

Հեղափոխությունից հետո առաջին իսկ շաբաթների իրադարձությունները ցույց տվեցին, որ Այսրկովկասի երեք հիմնական ազգությունների՝ հա-

---

[1] Տե՛ս «Փայլակ», Շուշի, 1917, 9, 12, 16, 19 մարտի, **Վ. Մելիքյան**, նշվ. աշխ., էջ 19, 35, 55, **Հ. Աբրահամյան**, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա, 1917-1923, Երևան, 2003, էջ 11-13, **Մ. Սողոմոնյան**, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, թիվ 1, էջ 113-114:

[2] Տե՛ս **Շ. Սեֆ**, նշվ. աշխ., էջ 78-83, **Վ. Մելիքյան**, նշվ. աշխ., էջ 30-31, **Գ. Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 12:

[3] Տե՛ս **Ա. Աստուածատրեան,** Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 10, էջ 46, **Վ. Մելիքյան**, նշվ. աշխ., էջ 31-32:

[4] ՎՊԿՊԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 845, թ. 1, **Վ. Մելիքյան,** նշվ. աշխ., էջ 31-32:

[5] Նույն տեղում, թ. 2, **Վ. Մելիքյան,** նշվ. աշխ., էջ 31-32:

յերի, վրացիների և կովկասյան թաթարների (հայտնի են նաև կովկասյան թուրքեր, ադրբեջանցիներ, ազերիներ անուններով) տնտեսական և հատկապես քաղաքական ձգտումները ոչ միայն չեն համընկնում, այլև հակոտնյա են[1]: Դա նկատելի էր երկրամասի բոլոր նահանգներում և գավառներում, այդ թվում՝ Զանգեզուրի գավառում:

Երկրում և Այսրկովկասում տեղի ունեցող քաղաքական ցնցումները, տնտեսական փլուզումը, շարունակվող արյունահեղ պատերազմը իրենց անմիջական անդրադարձն էին ունենում նաև Զանգեզուրի գավառում: Հետզհետե վատթարանում էր ոչ միայն գավառի բնակչության տնտեսական վիճակը, այլև արագորեն լարվում էին ազգամիջյան հարաբերությունները[2]:

Երկրամասում շերտընդմեջ ապրող հայերը և թուրքերն ունեին խիստ տարբեր քաղաքական ձգտումներ: Իրենց հավատակիցների հետ համերաշխ և հայերի հետ մշտական հակասությունների մեջ էր նաև Զանգեզուրի կազմում գտնվող, այդ գավառի և Լեռնային Ղարաբաղի արանքում ընկած, հարավից հյուսիս խոր ձորերով ու բարձրաբերձ լեռներով ձգվող նեղ տարածքում (միջնամասում) բնակվող քուրդ բնակչությունը:

Լաչինի շրջանի քուրդ բնակչության մի զգալի մասը, չունենալով ո՛չ բերրի հողեր, ո՛չ էլ ձմեռային լավ արոտավայրեր, սովորաբար աշնանը անասունների հետ քոչում էր ցածրադիր Ղարաբաղ: Դեպի հետ՝ Լաչին, քրդերը վերադառնում էին մայիսից ոչ շուտ և բարձրանում էին Սիսիանի սարերը: Լաչինի և Կուբաթլուի շրջաններում քրդերը աղքատիկ հողակտորների և հողազրկության պայմաններում չէին կարողանում ապահովել տանելի կյանք:

Գյուղատնտեսության բնույթի վրա էլ ավելի մեծ չափով ազդում էր քոչվորական կյանքի ավանդույթը, երբ թուրքն ու քուրդն ամբողջ ընտանիքով ու տնտեսությամբ փոխադրվում էին այնտեղ, որտեղ անասունները կեր ունեին: Դա էր թուրքերից ու քրդերից շատերի նստակյաց չդառնալու և հողագործությամբ չզբաղվելու պատճառը: 1850-ական թթ. տվյալներով Այսրկովկասում 45000 քոչվոր ընտանիք կար[3]:

---

[1] Տե՛ս **Ա. Ահարոնեան**, Աւարայրի ոգեկոչումը, «Հայրենիք», 1931 հուլիս, թիվ 9 (105), էջ 106-111, **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, օգոստոս, թիվ 8 (378), էջ 44-45, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1957, օգոստոս, թիվ 10, էջ 42-44:

[2] Տե՛ս **Ս. Մելիք-Եօլչեան**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», 1925, թիվ 12 (36), էջ 124, **Ե. Իշխանեան**, Դէպքերը Ղարաբաղում, «Հայրենիք», 1933, սեպտեմբեր, թիվ 11 (131), էջ 85, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1957, օգոստոս, թիվ 8 (378), էջ 44-45, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 10, էջ 46:

[3] Տե՛ս **Լ. Սարգսեան,** Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում, Թիֆլիս, 1905, էջ 28-29, **Ա. Աբեղեան**, Կովկասի ժողովուրդները, «Հայրենիք», 1924, հոկտեմբեր, թիվ 12, էջ 57, **С. Зелинский,** նշվ. աշխ., էջ 17, **В. Худадов**, Закавказье (Историко-экономический очерк), М.-Л., 1926, с. 90, **Գ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 76:

Դեռևս 19-րդ դարում քրդերի մի զգալի մասը Լաչինի և Կուբաթլուի շրջաններում սկսել էր խշեմներից դուրս գալ դեպի դաշտերը, մշակել մրգատու ծառեր, աճեցնել շերամ, զբաղվել զանազան արհեստներով: Երկրագործները մշակում էին ցորեն, գարի, կորեկ, բրինձ: Ավելի ցածրադիր վայրերի այգիներում աճում էին ծիրան, դեղձ, տանձ, կեռաս, բալ և այլն[1]:

19-րդ դարի վերջին երկրամասի միջնամասի տարածքում բնակվում էր քուրդ բնակչության հոծ զանգված: 1905-1906 թթ. Այսրկովկասում թուրքհայկական ընդհարումների ժամանակ այնտեղ դեռ մնացած հայկական գյուղերի (Մինքենդ, Հարար և այլն) մեծ մասը թուրքերի և քրդերի կողմից ենթարկվեց բազմաթիվ հարձակումների՝ արյունալի հետևանքներով: Հետագա տարիներին այդ տարածքից դուրս մղվեցին հայերի վերջին մնացորդները, և շրջանը կոչվեց Քուրդիստան:

1886 թ. տվյալներով քուրդ և եզդի բնակչությամբ գյուղերի թիվը հասնում էր 113-ի: Ըստ որում՝ Զանգեզուրի գավառում դրանք 91-ն էին, մյուսները գտնվում էին Ջևանշիրի (13), Ջաբրայիլի (8) և Արեշի (1) գավառներում[2]: 1897 թ. տվյալներով, Ելիզավետպոլի նահանգում քրդերի թիվը 3042 էր, սակայն սրանք միայն այն քրդերն էին, որոնք դեռևս խոսում էին իրենց մայրենի լեզվով[3]: Քրդական բնակչության մեծ մասն այստեղ վաղուց արդեն խոսում էր աղավաղված թուրք-ազերի լեզվով: Ինչ խոսք, հետագա 20 տարիներին քրդերի թիվը մեծապես աճել էր, քանի որ քուրդ, ինչպես և թուրք ընտանիքներում ծնունդը բարձր էր: Սակայն հարկ է նշել, որ տեղի էր ունենում նաև քրդերի զանգվածային ձուլում մեծամասնություն կազմող թուրք-ազերի բնակչությանը[4]: «Իրենց կեանքի եղանակով, պարապմունքով, ընտանեկան և հասարակական նիստ ու կացով,– գրում էր հետազոտողը,– այստեղի (Զանգեզուրի: – *Ա. Ս.)* քրդերը թաթարներից չեն տարբերուում. չկայ տարբերութիւն նոյնիսկ նրանց դէմքի և հագուստի մէջ»[5]:

Միջնատարածքի թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերում լիիշխան տերեր էին մուսուլմանական բեգերն ու աղալարները, ամենուրեք տեղաբաշխված էին մուսավաթական զինված ջոկատներ՝ հիմնականում թուրք հրամանատարների գլխավորությամբ:

---

[1] Տե՛ս **Н. Гейдаров**, նշվ. աշխ., էջ 6:

[2] Տե՛ս Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа. Елисаветпольская губерния, Тифлис, 1888, с. V, **Գ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 69:

[3] Տե՛ս Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., том LXIII. Елисаветпольская губерния, СПб., 1904, с. 2-3, 62-63:

[4] Տե՛ս **Է. Ռեկլիւ**, Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը, Ուրմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթ. Էջմիածին, 1890, էջ 57-58, **Լ. Սարգսեան,** նշվ. աշխ., էջ 28-29, **С. Зелинский,** նշվ. աշխ., էջ 14:

[5] **Ե. Լալայեան**, Զանգեզուրի գաւառ: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, հատոր Բ, Զանգեզուր, Թիֆլիս, 1899, էջ 57:

Մի կողմից՝ թուրք և քուրդ, մյուս կողմից՝ հայ բնակչության միջև հողի և մանավանդ ամառային արոտավայրերի համար տևական հակամարտությունները Ժամանակավոր կառավարության այսրկովկասյան վարչության՝ ՕԶԱԿՈՄ-ի թույլ իշխանության պայմաններում խորանում և վտանգավոր ծավալներ էին ընդունում:

Անիշխանությունը և խառնակչությունները թուրքերի ու քրդերի համար ստեղծել էին թալանի, սպանությունների և առևանգումների բարենպաստ միջավայր[1]:

1917 թ. ապրիլ-մայիսից Զանգեզուրի թուրքական գյուղերում կազմավորված ավազակախմբերը հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա: Գողություններն ու անկարգությունները, ճանապարհներին հայերի սպանությունները պարբերական բնույթ էին կրում[2]: Այդ պայմաններում Զանգեզուրի հայերին ոչինչ չէր մնում անել, քան դիմել ինքնապաշտպանության, ինչպես 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումների ժամանակ: Քանի որ Ժամանակավոր կառավարության՝ Զանգեզուրի վարչությունը, ըստ էության, անգործության էր մատնված, ուստի գավառի հայության պաշտպանության հոգսը հիմնականում իր վրա վերցրեց ՀՅ դաշնակցության տեղի կոմիտեն:

Վերջինս բազմիցս դիմել էր գավառի հայերին, որ օգտագործեն հնարավոր բոլոր միջոցները՝ զենք ձեռք բերելու համար: Նկատի առնելով, որ ոչ բոլոր գյուղացիները հնարավորություն ունեին զենք գնելու, գյուղական կոմիսարների վրա պարտականություն դրվեց՝ ամեն կերպ աջակցելու չունևոր գյուղացիներին: Եվ դա պետք է արվեր հնարավորինս արագ, քանի որ թուրքերը հետզհետե ավելի լկտի էին դառնում, հայկական գյուղերի վրա հարձակվում էին ամբողջ խմբերով, քշում ու տանում էին հոտերը և նախիրները:

1917 թ. մայիսին, օրինակ, խուժելով Կապանի Զեյվա (Դավիթ Բեկ) գյուղ, թուրքերը սպանեցին բնակիչներից մի քանիսին: Ոմանք փախան, իսկ մի մասը ապաստան գտան եկեղեցում՝ սպասելով իր վախճանին: Առաջին պահին գյուղի շփոթված երիտասարդները, ի մի գալով և հարմար դիրքեր գրավելով, սկսեցին ուժգին դիմադրել կողոպտիչներին: Միաժամանակ շտապ սուրհանդակ ուղարկեցին Կապանի հանքեր՝ օգնության խնդրանքով:

---

[1] Տե՛ս **Ա. Աբեղեան**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1924, սեպտեմբեր, թիվ 11, էջ 128-129, **Վ. Մինախորեան**, Խորհրդային Հայաստանի անասնապահությունը, «Հայրենիք», 1925, ապրիլ, թիվ 6 (30), էջ 72, **Ա. Աբեղեան**, Մենք եւ մեր հարեւանները, «Հայրենիք», 1928, օգոստոս, թիվ 10 (70), էջ 115, **Դ. Անանուն**, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատոր երկրորդ, Էջմիածին, 1922, էջ 34, **Ե. Սարգսեան**, Երեւանը 1917 թուականին, «Հայրենիք», 1950, թիվ 9 (296), էջ 95:

[2] Տե՛ս «Զանգ», 1917, թիվ 8, 1 դեկտեմբերի, «Աշխատանքի դրօշակ», 1917, թիվ 15, 15 դեկտեմբերի, **Ա. Գիւլխանդանեան**, Անդրկովկասը և Բագուի դէպքերը, «Հայրենիք», 1967, հունվար, թիվ 1, էջ 40:

Հանքերում հենց նոր ստեղծված զինված ջոկատը՝ Գերասիմ Աթաջանյանի գլխավորությամբ՝ շտապեց Զեյվա, փակեց գյուղից դուրս եկող ճանապարհները, պատժեց գյուղում իրենց խժդժությունները շարունակող թուրքերին, որոնք գլխակորույս փախան՝ թողնելով մեծ թվով սպանվածներ ու թալանը:

Նշված դեպքը մեծ հուզում առաջացրեց Կապանի հայության մեջ: Միաժամանակ դա ահազանգ էր առ այն, որ զավառի հայ բնակչությունը իրավունք չունի անհոգ մնալու և պարտավոր է զենքով պաշտպանել իր օջախն ու պատիվը:

Զեյվայի արյունոտ միջադեպը, բարձրացնելով Կապանի հայերի զգոնությունը, միաժամանակ տեղի թուրք բնակչության մեջ առաջ բերեց ակնհայտ անհանգստություն: Երկյուղ կրելով հայերի վրեժխնդրությունից՝ Կապանի թուրքական մի քանի գյուղերի բնակիչներ, թողնելով իրենց բնակավայրերը, հեռացան Զանգեզուրի թուրքաբնակ շրջաններ: Հեռանալով նրանք հրդեհում էին սեփական տները՝ հայերին ջարդարարության մեջ մեղադրելու համար:

Զեյվայի դեպքը Կապանում և Զանգեզուրի հայկական մյուս բնակավայրերում արագացրեց ինքնապաշտպանական խմբերի ստեղծումը: Առաջին ջոկատները ձևավորվեցին Կապանի շրջանում: Խմբերի կազմակերպման համար գյուղերում հրավիրվեցին հավաքներ, որոնց ընթացքում զենք գործածել իմացող գյուղացիներին բացատրվեց սեփական բնակավայրերի պաշտպանության անհրաժեշտությունը: Կապանի ամեն գյուղ հանձնարարություն ստացավ ունենալու իր զինված ջոկատը՝ մեծ կամ փոքր: 20-40 տարեկան տղամարդիկ ընդգրկվեցին այնպիսի խմբերի մեջ, որոնք ցանկացած պահի պետք է հասնեին նաև հարևան գյուղերը, իսկ 40 տարեկանից բարձր տղամարդիկ պարտականություն ունեին հսկելու միայն իրենց գյուղերը*:

1917 թ. օգոստոսի 30-ին Թիֆլիսում կազմավորվեց Հասարակական անվտանգության այսրկովկասյան հատուկ կոմիտե, որը Խորհուրդների երկրամասային կենտրոնի աջակցությամբ 1917 թ. նոյեմբերի 14-ին (Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո) ընդունեց որոշում Այսրկովկասյան կոմիսարիատի ստեղծման վերաբերյալ: Նոյեմբերի 15-ին Այսրկովկասյան հատուկ կոմիտեն լուծարվեց: Նորաստեղծ Այսրկովկասյան կոմիսարիատի կազմում ընդգրկվեցին վրաց մենշևիկներ Ե. Գեգեչկորին, Ա. Չխենկելին, Ղ. Տեր-Ղազարյանը, դաշնակցականներ Գ. Տեր-Ղազարյանը, Խ. Կարճիկյանը, Հ. Օհանջանյանը, մուսավաթականներ Մ. Զաֆարովը, Խուդադաթ բեկ Մելիք-Ասլանովը, Ֆ. Խան-Խոյսկին, Խ. Խասմամեդովը, վրաց սոցիալիստ-ֆեդերալիստ Շ. Ալեքսեև-

* Զեյվա գյուղի դեպքերի և Կապանում ինքնապաշտպանական խմբերի ստեղծման մասին տվյալները քաղել ենք Գերասիմ Աթաջանյանի կենսագրությանը նվիրված՝ նրա որդու ձեռագիր աշխատությունից, որը պահվում է մեր անձնական արխիվում:

Մեսխիևը, էսէռներ Դ. Դոնսկոյը, Ա. Ներուչևը: Այսրկովկասյան կոմիսարիատի նախագահ դարձավ Եվգենի Գեգեչկորին[1]:

Այսրկովկասյան կոմիսարիատը հայտարարեց, որ ինքը ժամանակավոր իշխանություն է և «իր առջև նպատակ է դնում բնակչության ամենակենսական պահանջների իրականացումը. կարգավորել ֆինանսական համակարգը, փրկել ժողովրդին և բանակը սովից, բարելավել տրանսպորտի և ճանապարհների վիճակը, ապահովել հասարակական կարգուկանոն, սահմանել վերահսկողություն արտադրության և բաշխման գործում, անհապաղ ստեղծել դեմոկրատական հողային կոմիտեներ, որոնց վարույթին հանձնել ուղելային, եկեղեցական և ուրիշ մասնավոր խոշոր կալվածքները և, որոնք կմշակեն հողային օրենք Սահմանադիր ժողովի համար»[2]: Կոմիսարիատը հայտարարեց նաև, որ կկարգավորի ազգամիջյան հարաբերություններն Այսրկովկասում և անմիջապես զինադադար կստորագրի ռազմաճակատում:

Մինչ այդ Այսրկովկասի հայաբնակ վայրերում ազգային կյանքը կազմակերպելու համար ստեղծվեցին ազգային խորհուրդներ: Հոկտեմբերի սկզբին Թիֆլիսում ստեղծվեց Հայոց ազգային խորհուրդ, որը որոշակի դերակատարություն ունեցավ հայ հասարակության կազմակերպման գործում:

1917 թ. օգոստոսի 15-ին համազանգեզուրյան գործադիր կոմիտեն գավառի ներքին կյանքը կանոնավորելու, կառավարման ոլորտում ծագած անհետաձգելի խնդիրները լուծելու համար ստեղծեց չորս հոգուց բաղկացած դիվան, իսկ Մեսրոպ բեկ Սարատիկյանին նշանակեց գավառապետ[3]:

Թեև 1917 թ. մայիսին Զեյվայի վրա կատարած հարձակումից հետո թուրք-ազերիները մի ամբողջ տարի (մինչև 1918 թ. մայիս-հունիսը) չհամարձակվեցին հայկական բնակավայրերի վրա նման զանգվածային զինված հարձակում գործել, բայց շարունակում էին թալանել կամ սպանել պատահական հայ ճամփորդների, առևանգել անասունների հոտեր[4]:

Ցարական կառավարությունը Կովկասի թուրք-թաթարներին բանակ չէր զորակոչում: Դրա դիմաց թուրք տղամարդիկ որոշակի տուրք էին վճարում պետությանը: Օգտվելով այն բանից, որ զենք բռնելու ընդունակ հայ տղամարդկանց զգալի մասը մարտնչում էր ռազմաճակատներում՝ թուրքերը զբաղվում էին ավազակությամբ, թալանով, թաքուն սպանություններով՝

---

[1] Տե՛ս «Հորիզոն», 1917, 14 նոյեմբերի, “Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии”, Тифлис, 1919, с. 4-8, **Эльде**, Закавказье и единая Россия, Ростов на Дону, 1919, с. 7, **Գ. Գալոյան,** նշվ. աշխ., էջ 18, **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 31:

[2] «Հորիզոն», 1917, 18 նոյեմբերի:

[3] Տե՛ս **Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան**, նշվ. աշխ., էջ 201:

[4] Տե՛ս **Ա. Գիլիխանդանեան**, նշվ. աշխ., էջ 40, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 327:

մշտական սարսափի մեջ պահելով Զանգեզուրի ու Ղարաբաղի հայ գյուղերի խաղաղ բնակիչներին:

Կապանի Շրվենանց գյուղի դպրոցի ավագ ուսուցիչ Գեդեոն Տեր-Մինասյանը (հետագայում՝ Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպման նշանավոր գործիչ և այդ դպրոցի հիմնադիր-բարերար) նույն գյուղի ծնունդ, Բաքվում բնակվող նավթարդյունաբերող Գասպար Տեր-Մարգարովին 1917 թ. նոյեմբերի 20-ին ուղարկած նամակում գրում էր. «Թանկագի՛ն Գասպար Իվանովիչ, սովի պատճառով ավազակությունները մեր շրջանում սոսկալի չափերի են հասել: Օրը ցերեկով քշում, տանում են ապրանքը: Թուրքերը զինված են եռագիծ հրացաններով: Մոսինը 1500-2000 ռուբլով, փամփուշտը 3-5 ռուբլով են առնում: Մեր ապուշները վաճառել են բոլոր հրացանները և այսօր անզեն են: Անցյալ օրը ցերեկով մի Վերին Խոտանանցի են սպանել անտառում, իսկ երեկ մեր գյուղացի (Խլաթաղ) մեկի բինայում վիրավորել են երեք տղամարդու և մի կնոջ, քշել տարել են ամբողջ տավարը՝ 16 գլուխ: Ամենուրեք սարսափ է տիրում: Չգիտենք վաղվա օրը ինչպես է լուսանալու: Կամ մեր զինվորները պետք է վերադառնան (ռազմաճակատներից: – *Ա. Ս.)* և պաշտպանեն իրենց հայրենիքը, կամ թե զորք պիտի պահանջել: Հացի խնդիրը դժվարացնում է ամեն բան...»[1]:

1917 թ. վերջերին Զանգեզուրի ընդարձակ գավառը, փաստորեն, բաժանված էր երկու մասի՝ հայկական և մուսուլմանաբնակ (թուրք-քրդական):

Մուսավաթականները գավառի թուրքական մասը հռչակեցին Գորիսից անկախ և Դոնդարլու գյուղում կազմեցին առանձին ղեկավար մարմին՝ «Մահմեդական կոմիտե» անունով՝ Ջալիլ բեկ Սուլթանովի նախագահությամբ[2]:

Թուրքական շրջանների հայերը տեղափոխվեցին հայկական վայրեր, իսկ Գորիսից թուրքերը քաշվեցին իրենց ցեղակիցների մոտ: Դրանց հետևեց հայերի պատասխանը. գավառի հայկական մասում ստեղծվեց հայկական վարչություն: Այդպիսով՝ Զանգեզուրը պաշտոնապես բաժանվեց իրարից անկախ երկու մասերի[3]:

Հայկական մասը, որն անվանվել էր «Զանգեզուր», ընդգրկում էր Գորիս (բուն Զանգեզուր), Սիսիան, Կապան, Արևիք (Մեղրի) հատվածները, իսկ մահմեդական մասը՝ թուրք և քուրդ բնակչությամբ, գավառի Գորիս–Կապան–Գենվազ (Մեղրի, Արևիք) գծից արևելք ընկած Զանգելանի, Կուբաթլուի և Լաչինի շրջանները: Նույն ժամանակ դադարել էր երթևեկությունը նախ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 378, ց. 1, գ. 26, թթ. 6-7 և շրջ.:

[2] Տե՛ս «Ալիք», 1981, 2 հուլիսի, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 327:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թթ. 42-43, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 327, **Г. Чурсин**, Армяне Зангезура, Тифлис, 1931, с. 229, **Ա. Աստուածատրեան,** նշվ. աշխ., «Հայրենիք», 1957 հոկտեմբեր, թիվ 10, էջ 46:

կին միասնական գավառի երկու մասերի միջև[1]:

Բաժանված Զանգեզուրի երկու մասերում համապատասխանաբար ստեղծվեցին իշխանության տեղական մարմիններ: Հայկական մասում ստեղծվեց երկու ազգային խորհուրդ՝ գավառի կենտրոն Գորիս քաղաքում և Կապան (Հանքեր) ավանում: Կապանի ազգային խորհուրդն անմիջականորեն ղեկավարում էր այդ շրջանի գործերը, իսկ Գորիսի ազգային խորհուրդը, որը կոչվում էր «Զանգեզուրի Կենտրոնական ազգային խորհուրդ», տնօրինում էր գավառի ողջ գործերը: Կապանի ազգային խորհուրդը ենթակա էր Կենտրոնական խորհրդին, Սիսիան և Արևիք (Մեղրի) շրջանները չունեին ազգային խորհուրդներ և ղեկավարվում էին Կենտրոնական ազգային խորհրդի կողմից նշանակված շրջանային և ենթաշրջանային լիազորների միջոցով: Նման լիազորներ ունեին նաև Գորիսի և Կապանի շրջանները: Գավառի բոլոր գյուղերը ղեկավարում էին համայնքների կողմից ընտրված և Կենտրոնական ազգային խորհրդի կողմից հաստատված գյուղական կոմիսարները[2]:

Եվ այսպես՝ նախկին միասնական Զանգեզուրը 1917 թ. վերջին արդեն բաժանված էր երկու թշնամական մասերի: 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումների կրկնություններից ահաբեկ՝ հայ և մահմեդական բնակչությունը սկսեց տենդագին զինվել:

Հայկական մասի նկատմամբ մահմեդական մասն ուներ մի մեծ առավելություն. այնտեղ բնակչությունը միատարր էր՝ կազմված էթնիկ թուրքերից ու քրդերից, իսկ հայկական մասում հայ բնակչության թիկունքում կային հայերի համար մեծ վտանգ ներկայացնող թուրք ստվար բնակչությամբ տասնյակ գյուղեր, հատկապես Սիսիանի և Կապանի շրջաններում:

Այսպիսին էր Զանգեզուրի բնակչության ազգային ու կրոնական ընդհանուր պատկերը: Սրընթաց զարգացող իրադարձությունների պայմաններում այն չափազանց աննպաստ էր այդ տարածքում ապրող տարազգի հատվածների խաղաղ գոյակցության համար: Ինչպես թուրքերն ու քրդերը, այնպես էլ հայերը տագնապահար նախապատրաստվում էին գալիք արյունահեղ կռիվներին:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թթ. 42-43, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 327, **Г. Чурсин**, Армяне Зангезура, Тифлис, 1931, с. 229, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1957, հոկտեմբեր, թիվ 10, էջ 46:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 21, թթ. 10-12, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 330, «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 2004, էջ 184, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 80, **Մ. Սողոմոնյան**, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, թիվ 1, էջ 114:

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ 1918 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ՝ ՄԻՆՉԵՎ ԹՈՒՐՔ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո պատերազմը դադարեցնելու ուղղությամբ բոլշևիկյան իշխանությունների ձեռնարկած գործողությունների հետևանքով ռուսական բանակները ռազմաճակատում սկսեցին քայքայվել: Դրանում ամենամեծ դերը խաղաց «Խաղաղություն ռազմաճակատում և պատերազմ երկրի մեջ» բոլշևիկների այդ օրերի կարգախոսը: Հեղափոխական զորքը, բավական համարելով «խրամատներում փտելը», թողեց ռազմաբեմը: Նա այլևս ոչ ոքի չէր լսում. ինքն էր իր գլխի տերն ու տնօրենը: Հայրենիքի պաշտպանությունը, երեք տարվա թափած ջանքերը, թշնամու արշավանքի սպառնալիքը առանձնապես չէին մտահոգում նրան: Ռուս զինվորները զանգվածաբար թողնում էին ռազմաճակատը և հեռանում Ռուսաստան: Պարսկաստանի ռազմաճակատից զորքերը հետ էին քաշվում դեպի Բաքու, այնտեղից Դաղստանի վրայով մեկնում հյուսիս և Ջուլֆա–Ալեքսանդրապոլ–Թիֆլիս երկաթուղով՝ դեպի Հյուսիսային Կովկաս, իսկ այնտեղից՝ հեռուներ:

Ռուս զինվորներին զինաթափելու համար թուրք պաշտոնյաների և ավազակախմբերի միջև առաջ եկավ մի կատաղի մրցակցություն: Ռուսական զորամասերի զենքերի մեծ մասն ընկավ նրանց ձեռքը[1]:

Պարսկական ռազմաճակատը լքող ռուսական զորքերի շարքերում եղած զանգեզուրցի և դարաբաղցի հայ զինվորները Ջուլֆայում անջատվում էին ռուսական զորամասերից և Գողթանի վրայով մեկնում Զանգեզուր, որտեղից դարաբաղցիները, մահացու վտանգների ենթարկվելով, անցնում էին իրենց ծննդավայրերը:

Եթե Զանգեզուրը Վայոց ձորի վրայով գոնե մի փոքր ելք ուներ դեպի Սևանի ավազան և Արարատյան դաշտ, ապա Ղարաբաղը աշխարհագրական տեսանկյունից գտնվում էր բացառիկ աննպաստ պայմաններում: Այն լիովին շրջապատված էր թուրքական գավառներով, որոնց վրայով էին ձգվում արտաքին աշխարհի հետ երկրամասը կապող գլխավոր ճանապարհները: Երբ ռուսական զորքերը տարերայնորեն բռնեցին տունդարձի ճանապարհը, Ղարաբաղը ամբողջապես կտրվեց դրսի աշխարհից և դատապարտվեց մեկուսացման:

Պարսկաստանից նահանջող դարաբաղցի հայ զինվորները Զանգեզուրի

---

[1] Տե՛ս **С. Сеф**, Правда о Шамхоре 7-12 января 1918 г. Заккнига, 1927, с. 5-57, **Эльде**, նշվ. աշխ., с. 7-9, **В. Худадов**, Современный Азербайджан, “Новый Восток”, книга 3-я, Москва, 1923, с. 183, **Լեո**, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 368, **Ռ. Դարբինեան**, Փոթորիկի օրերուն, «Հայրենիք», 1948, թիւ 1 (264), էջ 22, **Ա. Տօնեան**, Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», 1964, թիւ 7, էջ 5:

վրայով մի կերպ հասնում էին իրենց երկիր, բայց մյուս ռազմաճակատներում եղածները հնարավորություն չունեին տուն վերադառնալու և կանգ էին առել ճանապարհին: Տեղի հայությանը կառավարելու համար 1918 թ. սկզբին Շուշիում կազմվեց ժամանակավոր մարմին, որը կոչվեց «Միջկուսակցական բյուրո»: Նրա կազմի մեջ տեղ գտան 7 դաշնակցական և մեկական անդամ բոլշևիկներից, մենշևիկներից, էսէռներից ու Հայ ժողովրդական կուսակցությունից: Ծանր դրությունը բոլոր հոսանքներին հարկադրեց մի պահ մոռանալ մանր խնդիրները, հանդես գալ միացյալ ուժերով և պաշտպանել երկրամասի հայության ֆիզիկական գոյությունը: «Միջկուսակցական բյուրոն» գոյությունը շարունակեց մինչև 1918 թ. հուլիսի 29-ը:

Ղարաբաղի թուրքերն իրենց հերթին կազմեցին սեփական ազգային ղեկավար մարմին, որը կոչվեց «Միլի կոմիտե»:

Նշված երկու մարմիններից զատ՝ ազգային հողի վրա ծագած խնդիրները հարթելու համար կազմվեց նաև «Ազգամիջյան կոմիտե» անունով մի մարմին՝ բաղկացած 10 հոգուց՝ երկու կողմերից 5-ական ներկայացուցիչներով:

Հունվարի 25-ին Գորիսում կազմվեց միջկուսակցական մի խորհուրդ ևս, որի 18 անդամների կեսը դաշնակցականներ էին, իսկ մյուս կեսը այլ կուսակցությունների ներկայացուցիչներ[1]:

1918 թ. սկզբին Թիֆլիսում կուտակվել էին թուրքական և արևմտյան ճակատներից վերադարձող բավական թվով զանգեզուրցի զինվորներ, որոնք նույնպես, ճանապարհները փակ լինելու պատճառով, հաղթահարելով մեծ զրկանքներ ու մահացու վտանգներ, գալիս էին իրենց հայրենի օջախները: Երկարատև պատերազմի բովով անցած, ռուսական բանակի կարգապահական կանոններով առաջնորդվող, զենքի տեսակներին լավ տիրապետող զանգեզուրցի զինվորների, հատկապես տարբեր մակարդակներով մարտական գործողություններ ղեկավարելու փորձ ձեռք բերած սպաների վերադարձը մեծ նշանակություն ունեցավ գավառի ինքնապաշտպանության կազմակերպման համար[2]:

Գնալով լարվածությունն ուժեղանում էր, մի կողմից, նախկին միասնական գավառի մուսուլմանական և հայկական մասերի միջև, մյուս կողմից՝ հայկական Զանգեզուրի հայ և թուրք ազգաբնակչության միջև: Անտեսելով հայկական իշխանությունների բազմաթիվ նախազգուշացումները՝ տեղի թուրքերը չէին դադարեցնում իրենց դավադիր գործողությունները: Գավառի այն մասերից, որտեղ հայերը փոքրամասնություն էին, նրանք փախչում և ապաստան էին գտնում հայաշատ ենթաշրջաններում: Իրենց հերթին նույնն էին անում թուրքերը՝ տեղափոխվելով մեծամասնություն կազմող ցեղակից-

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 328:

[2] Տե՛ս **Ա. Տօնեան**, Ռուսական բանակի հայ սպայի մը յուշերը, «Հայրենիք», 1964, թիւ 7, էջ 5, թիւ 8, էջ 56, 60:

ների մոտ: Այդ գործընթացի հետևանքով կազմավորվում է ազգային երկու միատարր գյուղախումբ:

Թուրքերի օր օրի հաճախակի դարձող խժդժությունները Գորիսի ազգային իշխանություններին ստիպեցին դիմել անհրաժեշտ միջոցների: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքերի կողմից հայերի անհատական սպանությունները հիմնականում կատարվում էին ճանապարհներին՝ երիտասարդների զինված խմբերը թե՛ գավառի շրջանները միացնող և թե՛ միջգյուղային ճանապարհների առավել վտանգավոր հատվածներում հսկողություն սահմանեցին: Նաև ռազմաճակատներից վերադարձած զինվորների օգնությամբ ստեղծվեցին զինված ջոկատներ և լրացուցիչ միջոցներ ձեռնարկվեցին՝ զենք ու զինամթերք ձեռք բերելու համար: Բոլորը գիտակցում էին, որ զինված մարդը համարձակ ու վստահ է լինում, բայց երբ զենք չի ունենում, պատերազմական իրավիճակում կորցնում է հոգեկան հավասարակշռությունը:

1917 թ. ամռանից սկսած՝ Այսրկովկասի տարբեր վայրերում կազմավորվել էին ազգային խորհուրդներ, որոնք երկրամասում ազգային-տարածքային հստակ սահմանազատման բացակայության պայմաններում ստանձնել էին իրենց էթնիկ հավաքականությունների ղեկավարման մի շարք պարտականություններ:

Հայկական առաջին ազգային խորհուրդը ստեղծվել էր Բաքվում 1917 թ. ամռանը, այնուհետև հետագա ամիսներին մեկը մյուսի հետևից ստեղծվել էին հայ ազգային խորհուրդներ հայկական գավառներում և հայաբնակ վայրերում: Որպես կանոն, հայ ազգային խորհուրդների ստեղծման նախաձեռնողը ՀՅ դաշնակցությունն էր: Լուծարվում էին Ա. Կերենսկու կառավարության ստեղծած գործադիր կոմիտեները, և դրանց փոխարեն կազմավորվում էին ազգային խորհուրդներ, իսկ գավառապետների և նրանց ենթակա պաշտոնյաների փոխարեն սահմանվում էր գավառային, շրջանային և գյուղական կոմիսարների կառավարման համակարգ:

1917 թ. վերջին ՀՅ դաշնակցության Սյունիքի կենտրոնական կոմիտեի ջանքերով Գորիս քաղաքում ստեղծվեց Զանգեզուրի գավառային ազգային խորհուրդ, որին ենթակա էին լեռնավայրի տարածքում գործող քաղաքական և զինվորական կազմակերպությունները, այդ թվում՝ Կապանի հանքերում գործող բանվորների պատգամավորների խորհուրդը: Վերջինս 1918 թ. փետրվարին պղնձահանքերի և պղնձաձուլարանների փակվելու պատճառով ընդհանրապես դադարեցրեց իր գործունեությունը:

Զանգեզուրի ազգային խորհրդի կազմի մեջ մտան Մուշեղ Զաքարյանը (նախագահ), Մելիքսեթ Եսայանը (քարտուղար), անդամներ Արշակ Շիրինյանը, Նիկոլայ Հովսեփյանը, Միքայել (Միշա) Պարոնյանը, Նիկոլայ Դորունցը, Երեմիա Բակունցը, Տիգրան Սազանդարյանը, Սահակ Տեր-Հայրապետյանը:

Զանգեզուրը բաժանվեց վարչական չորս շրջանների՝ բուն Զանգեզուրի (Գորիսի), Սիսիանի, Կապանի և Գենվազի (Արևիք, Մեղրի): Յուրաքանչյուր

շրջան ուներ իր խորհուրդը, որը ղեկավարում էր շրջանի գործերը և ենթակա էր Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին: Իր հերթին ամեն շրջան բաժանված էր ենթաշրջանների (օրինակ՝ Գորիսի շրջանում կար երեք, Սիսիանի շրջանում՝ չորս ենթաշրջան): Ենթաշրջանների կոմիսարներն իրենք էին նշանակում գյուղերի կոմիսարներին՝ նրանց թեկնածությունը համաձայնեցնելով գավառի ազգային խորհրդի հետ:

Գավառապետ դարձավ Մ. Պարոնյանը, որին երկու ամիս հետո փոխարինեց Ն. Հովսեփյանը[1]:

Ստորև տրված են գավառի չորս շրջաններից մեկի՝ բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) ենթաշրջանների, դրանց մեջ մտնող գյուղերի և գյուղական կոմիսարների վերաբերյալ տվյալները[2].

Գյուղերի անվանումը	Ծխերի թիվը	Գյուղական կոմիսարների անուն, ազգանունը*
	1-ին ենթաշրջան	
Գորիս քաղաք	814	-
Գորիս գյուղ		Սահակ Բաբայան
Հին Գորիս		Նիկոլայ Տոռոզյան
Բուռուն **		Հարություն Վանեսյան
Քարահունջ	174	Մատթեոս Սնյան
Մաղանջուղ	49	Աբգար Գրիգորյան
Գեորու	97	Բալասան Վարդազարյան
Ալիղուլիշեն	102	Դանիել Հովսեփյան
	2-րդ ենթաշրջան	
Խոզնավար	98	Լևոն Հարությունյան
Խնածախ	230	Խաչատուր Զախարյան
Բայանդուր	80	Բալասան Մկրտչյան
Տեղ	700	Միքայել Բալաչյան
Քարաշեն	119	Ավանես Սավադյան
Արավուս	35	-
Կոռնիձոր	180	Միքայել Ղարախանյան
Խնձորեսկ	936	Հայրապետ Առուշանյան
	3-րդ ենթաշրջան	
Խոտ	187	-
Շինուհայր	274	-
Հալիձոր	104	-
Երիցաթումբ	43	-

[1] Տե՛ս **Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան,** նշվ. աշխ., էջ 202:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 44:

* Որոշ անուն-ազգանուններ չի հաջողվել ճշտել:

** Այս չորս բնակավայրերը (Գորիս քաղաք, Գորիս գյուղ, Հին Գորիս, Բուռուն) կազմում էին վարչական մի խումբ:

Տանձատափ	321	-
Տաթև	60	-
Յայջի	110	-
Ընդամենը	4782 ծուխ	

Ներկայացնում ենք նաև Սիսիանի շրջանի չորս ենթաշրջաններն իրենց հայկական և ռուսաբնակ Բազարչայ և Բորիսովկա գյուղերով.

1. **Բազարչայի ենթաշրջան՝** Բազարչայ, Բորիսովկա, Անգեղակոթ, Շաղաթ, Բալաք, Մուխութուրյան, Ղալաջուղ,
2. **Բռնակոթի ենթաշրջան՝** Բռնակոթ, Ղարաքիլիսե, Մազրա, Ուզ, Ալելու,
3. **Տոլորսի ենթաշրջան՝** Տոլորս, Աղքենդ, Բնունիս, Թազագյուղ, Ախլաթյան,
4. **Դարաբասի ենթաշրջան՝** Դարաբաս, Լոր, Գետաթաղ, Շնաթաղ, Լծեն:

Տվյալ շրջանի ենթաշրջանային և գյուղական կոմիսարները կազմում էին կոմիսարների խորհուրդ, որտեղ քննարկվում էին ինչպես տվյալ գյուղին կամ գյուղերին վերաբերող, այնպես էլ համաշրջանային հարցեր:

Հեռավորության և հաղորդակցության դժվարությունների պատճառով գավառի կենտրոն Գորիս քաղաքից Զանգեզուրի ազգային խորհրդի ընդունած որոշումները ժամանակին տեղ չէին հասնում, ուստի տեղում հարցերը օպերատիվ լուծելու անհրաժեշտությունից ելնելով՝ Կապանի խորհուրդը վերափոխվեց Զանգեզուրի ազգային խորհրդին ենթակա Կապանի ազգային խորհրդի, որի ղեկավարությունը տարածվում էր և՛ Կապանի, և՛ Գենվազի վրա:

Կապանի ազգային խորհրդի առաջին կազմում ընդգրկված էին հետևյալ անձինք՝ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյան (նախագահ), Իվան բեկ Մելիք-Քարամյան (Ազգային խորհրդի անդամ, քարտուղար), Սամսոն բեկ Մելիք-Փարսադանյան, Սողոմոն Համբարձումյան, Եգոր Անտոնյան, Միքայել Էլչիբեկյան, Գեդեոն Տեր-Մինասյան, Հովհաննես Դանիելյան, Գարեգին Աղայան, Խաչատուր Դանիելյան, Ս. Թորոսյան, Ա. Ն.*, Հ. Տեր-Պետրոսյան[1]:

Կապանի ազգային խորհուրդը կազմավորվելուց հետո Զանգեզուրի ազգային խորհուրդը վերանվանվեց Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդ:

Կապանի ազգային խորհրդի ստեղծումից հետո խորհուրդներ ունեին

* Մեր կարծիքով՝ Ա. Ն.-ն պետք է լինի Ղափանի Վաչագան գյուղի բնակիչ Արշակ Նուրիջանյանը:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 364, թ. 1:

միայն բուն Զանգեզուրը և Սիսիանը: Բուն Զանգեզուրի խորհրդի նախագահը գավառի Ազգային խորհրդի նախագահն էր, իսկ Սիսիանինը՝ Զաքար Տեր-Ղազարյանը:

1918 թ. հունվարին խորհուրդների այսրկովկասյան երկրամասային կենտրոնը ընդունեց հետևյալ բանաձևը. «Երկրամասի կենսական շահերը պահանջում են մոտակա օրերին գումարել Անդրկովկասից և Կովկասյան ռազմաճակատից Սահմանադիր ժողովի համար ընտրված դեպուտատների ժողով, որն առաջին հերթին պետք է ստեղծի ուժեղ, հեղինակավոր իշխանություն՝ երկրամասում հեղափոխական կարգ ու կանոն պահպանելու և հասունացած ռեֆորմներն ի կատար ածելու նպատակով»[1]: Այդպիսի իշխանություն պետք է հանդիսանար Այսրկովկասյան սեյմը, որը բացվեց 1918 թ. փետրվարի 10-ին: Սեյմի մանդատային հանձնաժողովի տվյալների համաձայն՝ դեպուտատական մանդատները բաշխվեցին հետևյալ կերպ՝ 32 մենշևիկ, 30 մուսավաթական, 27 դաշնակցական, 19 էսէռ, 7 դեպուտատ «Մուսուլմանական սոցիալիստական բլոկից», 4 հումմեթական, 3 ներկայացուցիչ «Մուսուլմանությունը Ռուսաստանում» կուսակցությունից, 1 վրացական սոցիալիստ-ֆեդերալիստ, 1 դեպուտատ ժողովրդական ազատություն կուսակցությունից, 1 վրացական նացիոնալ-դեմոկրատ: Ընդամենը՝ 125 անդամ[2]: Սեյմի նախագահ ընտրվեց Ն. Չխեիձեն:

Այսրկովկասյան կոմիսարիատը միառժամանակ՝ մինչև երկրամասի անկախության ազդարարումը, գոյատևեց որպես Անդրսեյմի կառավարություն: Սակայն ինչպես Այսրկովկասյան կոմիսարիատի, այնպես էլ Սեյմի իշխանությունը Զանգեզուրում խորհրդանշական էր, բացարձակապես ձևական, քանի որ գավառի բոլոր գործերը վարում էին ազգային իշխանությունները:

Որպես Անդրսեյմի կառավարություն՝ Այսրկովկասյան կոմիսարիատը գոյատևեց մինչև 1918 թ. ապրիլը: Ինչպես արդեն ասվեց, անկախ Այսրկովկասի առաջին կառավարության կազմավորումից հետո կոմիսարիատը լուծարվեց:

Այսպիսով՝ վրացական և հայկական քաղաքական հոսանքների և գործիչների այն հույսը, թե հնարավոր կլինի Այսրկովկասի երեք ազգերի ֆեդերատիվ պետություն ստեղծել երկրամասի անկախությունը պաշտպանելու համար, ի դերև եղավ: Նրանք հաշվի չէին առել դեպի Տաճկաստան մուսավաթականների և ընդհանրապես կովկասյան թուրքերի հսկայական ձգտումը, որն էլ, ի վերջո, վերջիններիս տարավ տաճիկների շարքերը: Հենց դա էլ դարձավ Անդրսեյմի կազմալուծման գլխավոր պատճառը:

---

[1] "Закавказский Сейм". Стенографический отчет, заседание 13, Тифлис, 1918, с. 4-5.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

ՕՍՄԱՆՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՄԱՐ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՀԱԳՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Խախտելով ռուսական և թուրքական պատվիրակությունների միջև 1917 թ. դեկտեմբերին Երզնկայում կնքված Կովկասյան ճակատում զինադադարի պայմանները՝ 1918 թ. հունվարի վերջերին թուրքական բանակն ամբողջ ճակատով անցավ հարձակման: Ռուսական զորքերի հեռանալուց հետո ռազմաճակատում օսմանյան զորքերին դեմ հանդիման մնացին միայն հայկական զորամասերը: Չնայած հերոսական դիմադրությանը՝ թուրքերին, այնուամենայնիվ, հաջողվեց պարտության մատնել հայերին:

Մեկը մյուսի հետևից ընկան Երզնկան, Բաբերդը, Վանը, Արճեշը, Ալաշկերտը, Էրզրումը: Թուրքերը, այդ հաջողություններից մեծապես ոգեշնչված, անցան ռուսական նախկին կայսրության տարածքների զավթմանը: Օսմանյան զորքերը գրավեցին Բաթումը, Կարսը, Արդահանը, ներխուժեցին Արարատյան դաշտ: Սպառնալիքի տակ դրվեց հայ ժողովրդի գոյությունը:

Պանթուրքական գաղափարախոսությունը որդեգրած երիտթուրք պարագլուխների ռազմական ծրագրերը ծավալապաշտական էին: Բաթումի խորհրդաժողովի օրերին հայկական պատվիրակության հետ ունեցած զրույցի ժամանակ երիտթուրք պարագլուխներից մեկը հետևյալ մտքերն է արտահայտել. «Դուք կը տեսնէք, որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք. մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաեւ Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրպէջան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եվ դուք՝ հայերդ, կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ»[1]:

Այսրկովկասի վրա սկսած թուրքական ինտերվենցիայի հետևանքով 1918 թ. գարնան սկզբներից Զանգեզուրի և Ղարաբաղի դրությունը գնալով ծանրացավ:

---

[1] **Ա. Խատիսեան**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը: Բ տպագրություն, Պէյրութ, 1968, էջ 86:

Թուրքական բանակը դեռ 1918 թ. փետրվարի 12-ին 700 կիլոմետր լայնությամբ ձգված ճակատով հարձակման էր անցել՝ նպատակ ունենալով գրավել ամբողջ երկրամասը: Օրհասական վիճակ ստեղծվեց Այսրկովկասի հայության համար, բայց նրան վերջնական կործանումից փրկեց սեփական ողջ ուժերի զորահավաքը: 1918 թ. մայիսյան ճակատագրական օրերին հայ ժողովուրդը կարողացավ իր մեջ ուժ գտնել, և Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում տեղի ունեցած արյունահեղ կռիվներում հայկական կամավորական ջոկատները կարողացան ուժգին հարվածներ հասցնել օսմանյան զավթիչներին և նրանց ստիպել նահանջել:

1918 թ. մայիսի 26-ին Այսրկովկասյան սեյմը լուծարվեց, և երկրամասում ստեղծվեցին երեք ինքնուրույն՝ Վրաստանի (մայիսի 26-ին), Ադրբեջանի (մայիսի 27-ին) և Հայաստանի (մայիսի 28-ին) հանրապետությունները: Հայ ժողովուրդը հայրենիքի մի փոքր տարածքի վրա ազդարարեց իր անկախ պետականության ստեղծումը, որը վավերացվեց Բաթումի հունիսի 4-ի պայմանագրով:

Սակայն օսմանյան զավթիչները կանգ չառան և շրջանցելով Հայաստանի մանուկ հանրապետության փոքր տարածքը՝ ուղղություն վերցրին դեպի Արևելյան Այսրկովկաս: 1918 թ. մայիսի 27-ին ստեղծված «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետությունը» թուրքերն անվանեցին «Ադրբեջան», որը, փաստորեն, դարձավ Օսմանյան կայսրության նահանգներից մեկը: Բնորոշ է Ադրբեջանի Հանրապետության առաջին վարչապետ Ֆ. Խան-Խոյսկու ճառը «իսլամի բանակի» հրամանատար Նուրի փաշայի Գանձակ մտնելու առթիվ. «Վերջապես Ադրբեջանի թրքությունը հասնում է իր նպատակին: Նա մտնում է իր սիրելի Օսմանյան խալիֆաթի գիրկը: Վերջապես, իրականանում է համայն մահմեդականության դարավոր իդեալը՝ բոլորի միացումը Սուլթանի կանաչ դրոշի տակ: Թուրք ազատարար զորքերին սրտատրոփ սպասում են Կովկասի լեռնականները, Թուրքեստանի թուրքերն ու կիրգիզները, Անդրկասպյան երկրի սարտերը, խիվացիները, բուխարացիները և վերջապես Աֆղանստանը և հզոր Հնդկաստանը»[1]:

Այսրկովկասի խորքերը գնացող թուրքական զորամասերը մուսավաթականների ակտիվ աջակցությամբ թափանցում էին մուսուլմանաբնակ շրջանները և տեղաբաշխվում: Տաճիկ զինվորական հրահանգիչները, էմիսարները և առանձին զորախմբեր թափանցեցին նաև Դաշտային Ղարաբաղի ադրբեջանաբնակ գրեթե բոլոր գյուղերը և մուսավաթական ղոչիների հետ իրենց ձեռքը վերցրին տեղական իշխանությունը: Ղարաբաղի լեռնային հայկական մասը կտրվեց դրսի աշխարհից:

Մուսավաթականների հրավերով թուրքական զորքերը շուտով մտան Գանձակ: Մայիսի 27-ին այնտեղ էր գտնվում թուրքական բանակի շտաբը՝

[1] “Бакинский рабочий”, 13 июня, 1918.

Նուրի փաշայի գլխավորությամբ: Մտնելով Գանձակի նահանգ՝ օսմանյան զորքերը և նրանց միացած տեղական մուսավաթական ուժերը անմիջական սպառնալիք դարձան նաև Արցախի և Զանգեզուրի հայերի համար: Գանձակը դարձավ Արցախը և Զանգեզուրը նվաճելու հենակետ:

Ամբողջ Այսրկովկասը նվաճելու նպատակով երիտթուրքերի օսմանյան կառավարությունը Ադրբեջան փոխադրեց ընտիր զորամասեր՝ թվով վեց դիվիզիա: Բացի այդ՝ տաճկական հրամանատարության տրամադրության տակ էր դրվել, այսպես կոչված, «իսլամի բանակը», որը կազմավորվել էր Կովկասի մուսուլմաններից և հիմնականում Ելիզավետպոլի նահանգում տեղակայված «վայրի դիվիզիայի» մնացորդներից ու բռնությամբ զորակոչված մահմեդականներից:

Ադրբեջանի ազգային խորհրդի նախագահ Մահմեդ Ռասուլզադեն հայտարարում էր. «Թուրքիան իր առջև խնդիր է դրել ստեղծել հարավարևմտյան Ադրբեջան՝ Երևանի և Թիֆլիսի նահանգների մի մասի (Ախալցխայի և Ախալքալաքի գավառները) և Ադրբեջանական Հանրապետության տերիտորիայի մասերից, այն բանից հետո, երբ Ադրբեջանին կմիացվեն հարավարևմտյան Ադրբեջանը, Աջարիան, Թերեքի, Դաղստանի, պարսկական Ղարադաղի, Թավրիզի, Մարանդի մահմեդական ազգաբնակչությունը: Այսպիսով, պետք է ստեղծվի մեծ Ադրբեջան՝ Թուրքիայի խնամակալության ներքո»[1]:

Տվյալ պահին տաճիկ-մուսավաթական ուժերի առջև ծառացած հիմնական խոչընդոտը Բաքվի կոմունան էր, որի հերոսական պաշտպանները գերմարդկային ճիգերով փորձում էին կանգնեցնել թշնամու առաջխաղացումը:

Բաքվի կոմունան իր առանձնահատկություններն ուներ: Եթե Ռուսաստանում ծայր առած արյունալի քաղաքացիական կռիվների գաղափարական հիմքը դասակարգային անողոք ու անզիջում պայքարի քարոզներն էին, ապա Կովկասում վիճակը նկատելիորեն այլ էր: Ազգային հարաբերությունների բարդությունը ծնունդ էր տվել ազգամիջյան արյունալի ընդհարումների, որոնք զուգորդվում էին դասակարգային կռիվներին և շատ հաճախ առաջնային նշանակություն ստանում: Այդպիսին էր վիճակը նաև Բաքվի կոմունայի պարագայում:

Կոմունան կյանքի էր կոչվել Կովկասի բոլոր ժողովուրդների տառապանքներից, որոնք խորացել էին չորսամյա համաշխարհային պատերազմի անթիվ արհավիրքների պատճառով: Բայց կոմունան ամենից առաջ պատերազմից առավել տուժած Այսրկովկասի հայ զանգվածների, ռուսահայ զինվորականության և իրենց երկիրը թողած արևմտահայ զինյալ մարտիկների պայքարի ծնունդն էր: Պատահական չէ, որ Բաքվի կոմունայի 19 հազարի

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 318, թ. 76:

հասնող զինյալ պաշտպաններից 17 հազարը հայեր էին՝ բոլշևիկներ, դաշնակցականներ, հնչակյաններ, էսէռներ, անկուսակցականներ: Կոմունայի գլուխ կանգնած էին հայ ժողովրդի նվիրյալ շատ զավակներ, որոնք թեև դավանում էին տարբեր գաղափարներ, գտնվում էին տարբեր կուսակցությունների շարքերում, բայց ճակատագրական այդ պահին միասնական էին: Դասակարգային պայքարի դրոշով կյանքի կոչված Բաքվի կոմունան հենց սկզբից ստիպված եղավ գոյապայքար մղել թուրքական բանակների և ադրբեջանցի թուրքերի միացյալ ուժերի դեմ: Փաստորեն՝ կոմունայի պաշտպանները գերազանցապես հայեր էին, կոմունայի թշնամիները՝ թուրքեր: Ըստ էության, շարունակվում էր թուրք-հայկական կռիվը[1]:

Բաքվի կոմունայի ժամանակավոր հաջողությունները հայերի ժամանակավոր հաջողություններն էին, կոմունայի պարտությունը հայերի պարտությունն էր և թուրքերի հաղթանակը:

Հարկ է շեշտել, որ օսմանյան, մուսավաթական ընդհանուր թշնամու դեմ նույն շարքերում մարտնչող հայերի նպատակները, այնուամենայնիվ, բավականաչափ տարբեր էին: Կոմունայի բազմազգ բոլշևիկյան ուժերի հիմնական նպատակն էր թուրքերին և թաթարներին հաղթելու միջոցով կոմունան փրկել և Կովկասում խորհրդային իշխանության հաստատման համար ստեղծել հեղափոխական հենակետ: Ի տարբերություն կոմունայի այլազգի պաշտպանների՝ հայ բոլշևիկ պաշտպանները, սկսած նրա ղեկավար Ստեփան Շահումյանից մինչև վերջին հայ կարմիր զինվորը, նաև մտածում ու գործում էին հանուն Բաքվի ու նահանգի հայության փրկության: Ավելին՝ ոչ միայն Բաքվի հայ բոլշևիկները, այլև քաղաքի ողջ հայությունը կանգնել էին կոմունան պաշտպանելու և մինչև վերջ թշնամուն դիմադրելու դիրքերում, այսինքն՝ բոլշևիկների հետ ճակատ էին կազմել ընդդեմ մյուս բոլոր ուժերի:

Կոմունայի բաղկացուցիչ մասը ՀՅ դաշնակցությունն էր՝ իր բազմաքանակ զինված ուժերով: Դաշնակցական զինված ուժերն իրենց թվաքանակով մեծապես գերազանցում էին կոմունայի Կարմիր բանակին, որի հրամանատարը և անձնակազմի բացարձակ մեծամասնությունը նույնպես հայեր էին: Դաշնակցության հիմնական մտահոգությունը թուրքերին հաղթելու միջոցով Բաքվի և Ադրբեջանի հայությանը փրկելն էր և Հայաստանի Հանրապետության գոյությանը սատարելը:

Դեպի Բաքու տաճկական զորքերի առաջխաղացմանը զուգընթաց ավելի ու ավելի անհագ էր դառնում նորահռչակ Ադրբեջանի Հանրապետության ղեկավարների՝ հայկական հողերը զավթելու ախորժակը:

Օգտվելով այն հանգամանքից, որ Առաջին աշխարհամարտն սկսվելուց ի վեր Հայաստանի և հայ ժողովրդի գլխով անցել են անօրինակ արհավիրք-

---

[1] Մանրամասն տե՛ս **Հ. Սիմոնյան**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 175-181:

ներ՝ 1915 թ. ցեղասպանություն, օսմանյան զորքերի՝ Այսրկովկաս ներխուժման հետևանքով Արևելյան Հայաստանի տարածքների բռնազավթում և հայ բնակչության զանգվածային կոտորածներ, երկրամասի հայկական գավառների տնտեսության ծայրաստիճան քայքայում, սովի ու տարափոխիկ հիվանդությունների պատճառով օրական հարյուրավոր հայ կյանքերի մարում և այլն, կովկասյան թուրքերը թիկունքից հարվածում էին տաճկական զորքերի դեմ կռվող հայկական պաշտպանական ուժերին, հարձակումներ կատարում հայկական բնակավայրերի և զինվորական մասերի վրա, եռանդով կատարում խափանարար գործողություններ: Այդ ամենը, ի վերջո, հետապնդում էր հեռուն գնացող նպատակներ, այն է՝ կոտորակված ու թուլացած հայությունից խլել նրա ընդարձակ պատմական հայրենիքից մնացած բեկորներն անգամ[1]:

Այսրկովկասյան սեյմի ցրումից և երկրամասում ազգային երեք հանրապետությունների ստեղծումից հետո նորաստեղծ Ադրբեջանի Հանրապետությունը, ելնելով Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի պայմանագրից, հենվելով Օսմանյան Թուրքիայի բազմակողմանի աջակցության վրա, երկրամասի հայկական տարածքների մեծ մասը պաշտոնապես, կառավարության մակարդակով հայտարարեց ադրբեջանական:

Մուսավաթական կառավարությունը պահանջում էր, որ հայերը ընդմիշտ ձեռք քաշեն Դաշտային և Լեռնային Արցախներից, Զանգեզուրի գավառից, ավելին՝ ձգտում էր Ադրբեջանին միացնել նաև Նախիջևանի գավառը, Շարուր-Դարալագյազի գավառից՝ Շարուրի գավառակը, Երևանի և Էջմիածնի գավառներից՝ Սադարակի, Վեդիբասարի, Զանգիբասարի շրջանները, գրեթե ամբողջ Սուրմալուի գավառը մինչև Կարսի մարզը: Նա պահանջում էր նաև տարածքներ Կարսի մարզից, եթե այդ մարզը չանցներ թուրքերին: Մուսավաթականներն իրենցն էին համարում նաև Բասարգեչարի շրջանը[2]:

Մուսավաթականները ունեին հեռահար նպատակներ. փորձում էին իրականացնել պանթուրքական ծրագրերը: Նրանք նախատեսում էին իրենց օսման եղբայրների հետ գրավել Դաղստանը, Չեչնիան, Հյուսիսային Կով-

---

[1] Տե՛ս **В. Худадов**, Современный Азербайджан, с. 183-184, **Ռ. Դարբինեան**, Փոթորիկի օրերուն, «Հայրենիք», 1948, թիւ 1 (264), էջ 22, **Ե. Սարգսեան**, Երեւանը 1917 թուականին, «Հայրենիք», 1950, թիւ 9 (296), էջ 94-95:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 33, գ. 7, թ. 215-ի շրջ. - 216, գ. 235, թթ. 7-17, **Ս. Մելիք-Եօլչեան**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12, էջ 123-124, **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրեին եւ անկախութեան օրերին, էջ 52, Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян, Ереван, 1992, с. 16, 23, 26-28, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 146:

կասը, Պովոլժիեն, Ղրիմը, Միջին Ասիան և շարժվել դեպի Հնդկաստան[1]:

Այդ հսկայական ծրագիրը թուրքերի համար դատարկ ցնորք չէր և ոչ էլ զառանցանք: Նրանք գտնում էին, որ դա միանգամայն իրատեսական ծրագիր է, և որ այն Հայաստանին վերաբերող մասով անառարկելիորեն պետք է կյանքի կոչվի 1918-1919 թվականներին:

Այսպիսով՝ Ադրբեջանի հարևանությունը կատարյալ դժբախտություն էր Հայաստանի համար: Իր ֆանտաստիկ պահանջներով այդ երկիրը մահացու սպառնալիք էր Հայաստանի Հանրապետության գոյության համար:

Այսրկովկասյան թուրքերի՝ Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի համար կործանարար ծրագրի իրականացումը սկսվում էր Արցախից և Զանգեզուրից:

Բաքվի ուղղությամբ թուրքական զորքերի հաջողությունները մեծապես ոգեշնչել էին Զանգեզուրի թուրք ազգաբնակչությանը: Գավառի թուրքաբնակ գյուղերում ակտիվ եռուզեռ էր. թուրքերն ամենուրեք գաղտնի թե բացահայտ պատրաստություններ էին տեսնում՝ առաջիկայում իրենց ցեղակիցների հարձակման դեպքում թիկունքից հայերին հարվածելու համար:

Թուրք-ազերի ասկյարները այնքան էին լկտիացել, որ իրենց զորամասերի շարային վարժությունների ժամանակ անընդհատ արտաբերում էին. «Բիր-իքի, բիր-իքի, Կավկազ, բիզիմքի» («Մեկ-երկու, մեկ-երկու, Կովկասը մերն է»)[2]:

Ինչպես ամեն տարի, 1918 թ. գարնան վերջերից նույնպես հարավարևելյան Այսրկովկասի թուրքաբնակ հարթավայրերից տասնյակ հազարավոր թուրքեր ու քրդեր իրենց հարյուր հազարավոր անասուններով շարժվում էին դեպի Զանգեզուրի, հատկապես Սիսիանի խոտառատ ու զովասուն սարերը: Քոչվորները հայ գյուղերի ճանապարհներով ու տարածքներով անցնելիս իրենց պահում էին սովորականից ավելի հանդուգն. հոտերն ու նախիրները համարձակորեն քշում էին արտերի ու խոտհարքների վրայով և հայ գյուղացիների բողոքներին ի պատասխան՝ սպառնում էին ավերել նրանց գյուղերը:

Քոչվորների անվան տակ սարերն էին բարձրանում նաև մուսավաթական զինյալներ, որոնք իրենց հետ տանում էին մեծաքանակ զենք ու զինամթերք՝ գավառի թուրքերին զինելու համար:

Հայության մեջ շերտընդմեջ ապրող Զանգեզուրի թուրք բնակչությանը Ադրբեջանի կառավարությունը համարում էր իր պահեստազորը՝ հինգերորդ շարասյունը, որը պետք է քայքայիչ աշխատանք տաներ, ներսից հարվածներ հասցներ հայերի թիկունքին: Մուսավաթական գործակալները և օս-

---

[1] Տե՛ս **Эльде**, նշվ. աշխ., էջ 11:

[2] **Լեռ**, նշվ. աշխ., էջ 414, **Ռ. Սիմոնյան**, Անդրանիկ. Սիբիրյան վաշտի ոդիսականը, Երևան, 2006, էջ 63:

մանցի էմիսարները լայնածավալ աշխատանք էին տանում գավառի թուրքերի շրջանում, զինում երիտասարդությանը, նրան սովորեցնում զենք գործածել[1]:

Հայը նստակյաց էր: Նա խաշնարածությամբ զբաղվում էր իր գյուղի սահմաններում կամ մերձավոր արոտավայրերում: Հայերն ու քրդերը ապրում էին Զանգեզուրի լեռնաստաններում, և նրանց համար հիմնականում արոտատեղիներ էին իրենց հողաբաժինների շարունակությունը: Արոտատեղիների հեռավորությունը Զանգեզուրի հայ գյուղերից հետևյալն էր. Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղից գտնվում էին 3 վերստ հեռավորության վրա, Շնաթաղից՝ 4 վերստ, Բոնակոթից՝ 5 վերստ, Կապանի շրջանի Կավարտ և Առաջաձոր գյուղերից՝ 6-8 վերստ: Այնինչ թուրք քոչվորները սար էին բարձրանում՝ կտրելով հարյուրավոր վերստեր: Զանգեզուրի արոտատեղիներ հասնելու համար նրանք, օրինակ, Ջևաթի գավառի Ամիրանլար գյուղից կտրում էին 235 վերստ, Հալաջից՝ 240 վերստ, Մուղանլուից՝ 265, Հաջի-Քերիմբեկլուից՝ 290 վերստ: Այստեղ էին գալիս Կարյագինի, Սալյանի, Շուշիի գավառների քոչվոր անասնապահները, ինչպես նաև բուն Զանգեզուրի ցածրադիր վայրերի թուրքերը:

Սարագնացությունը և Զանգեզուրի ալպիական մարգագետինների անծայրածիր տարածությունների (141.277 դեսյատին պետական հողեր) օգտագործումը կատարվում էր 1884 թ. հունիսի 29-ի օրենքի համաձայն: Խաշնարածությանը հատկացված այդ հողերը որևէ անձի կամ համայնքի սեփականությունը չէին, այլ պետական հողային ֆոնդ էին, որ կապալով տրվում էր անասնապահներին: Արոտատեղիներից 1899 թ. օգտվելիս են եղել 26038 ծուխ, որոնցից թուրքեր էին 18919-ը, քրդեր՝ 3510-ը, հայեր՝ 3408-ը, թաթեր՝ 201-ը[2]:

Առանց երկբայելու կարելի է ասել, որ 1918 թ. Զանգեզուրի սարեր բարձրացող խաշնարածների թիվը պետք է անհամեմատ պակաս լիներ, որովհետև թափառական անասնապահությունը՝ իբրև հետամնաց տնտեսական ճյուղ, գնալով կորցնում էր իր գրավչությունը և նպատակահարմարությունը[3]:

Մտնելով Զանգեզուրի տարածք՝ թուրք և քուրդ խաշնարածները ոտնատակ էին տալիս հայ գյուղերի ցանքսերն ու մարգագետինները, ջարդում ծառատունկերը, խառնում հայի մոլորված անասունը իրենց խաշներին և այլն: Դրանով նրանք վրդովում էին երկրի հանգիստը և աղետների պատճառ դառնում հարևանների համար: Տեղի էին ունենում կռիվ, ընդհարում, սպա-

---

[1] Տե՛ս «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 21 հոկտեմբերի, 1919:

[2] Տե՛ս ՎՊԿՊԱ, ֆ. 23, ց. 2, գ. 282, թ. 21:

[3] Տե՛ս **В. Худадов,** Закавказье. ЦУ печати ВСНХ СССР, М.-Л., 1926, с. 91-92:

նություն, և արդյունքում թշնամությունը խորանում էր*:

Դավիթ Անանունը, անդրադառնալով քոչի խնդրին, գրել է. «Կարելի է ասել, թե թուրք ժողովրդի բարքերի կոպտությունը, նրա մեջ արմատացած գողությունն ու ավազակությունն արդյունք են թափառական խաշնարածության: Անշարժ սեփականությունը և նստակյացությունը այնպիսի վարք ու բարք են հաղորդում մարդուն, որ չի կարող պատվաստել թափառակաշրջիկությունը, արկածախնդրությունը սարերում ու ձորերում: Թուրք խաշնա-

---

* Քոչի մասին ժամանակին մի պոեմ է տպագրել Ե. Հայպետը (Տե՛ս «Հայրենիք», 1939, դեկտեմբեր, թիվ 2 (206), էջ 55-59), որտեղ պատկերավոր նկարագրված են քոչի սարսափները: Բերենք հատվածներ այդ պոեմից.

* * *

Ծաղիկ, աղբիւր կեանք են տածում
Հայոց բարձրումն էն սուրբ, դրա՜խտ.
Ձգում է մութ օրդուն ցածում՝
Նախանձ բռնած ու տե՜նդ, հրա՜խտ.

Մին էլ օշափն էն խանձ-խոտով՝
Աջ եւ ձախից փոշու թեւեր,
Ձանգեզուրի սար ու ձորով
Ձը՜նգ-դը՜նգ սողում է վե՜ր…

* * *

Եռ է գալիս, յորդում ափից
Հեղեղն էն գոռ, ագահ, քաղցած.
Եւ աջ ու ձախ շեղւում ճամբից,
Արտն է թափւում՝ հասկը բացած.

Ա՜խ, ի՞նչ գիտէ վայրի քոչուոր
Պագել, պաշտել եզ ու գութան,
Իւրտ ու ճամբի միայն սովոր,
Սովոր լափել թափան ու թան.

Խոտ է կարծում շքեղ ցանքսեր –
Քրտնոտ Հայի ցորենն էն սուրբ:
Խարտեաշ ու ճոխ հասկի վարսեր,
Խշշո՜ցն իրենց նուագ մի նուրբ.

Ու՝ քանց անգութ մորեխ, կարկուտ,
Ելնում է մեր սար ու ձորով,
Քամուն տալիս Հայի կալ, կուտ
Ձնգում է վեր զօրո՜վ, զօրո՜վ…

* * *

- Հայ, հա՜յ… գոռաց քոչի զօռբան
Թրքոտ, ոջլոտ ու թուք ըռխին.
Իր դէմ ելաւ Գիւքին չոբան.
Զարկե՛ց. ընկա՜ւ… ինքն էլ գլխին…

Վա՜յ… որբ մնաց անտէր Նազին,
Որ սեւ հագաւ՝ սրտում լեղի.
Թուշը պատռած ու ցեխ մազին,
Ցաւն է լալիս՝ առանց դեղի.

Եարն իր սարի մի նառ չոբան,
Ընկաւ արնոտ՝ խոտ ու ծաղկում.
Ջա՜ն, ձիւն-ամպով ծածկուեց օբան,
Ոչխա՜րն էլ որբ՝ գէլի ճանկում.

Շապիկն էր լոկ արնով թաթխած,
Որ տուն բերին, իբրեւ կտակ,
Որ որբ Նազին գետը կախած՝
Հիպում է պաղ ջրում յստակ…

* * *

Կը՜ռ, կը՜ռ… Աշունք… Օշափ օրդուն
Որոտանի կեռ-մեռ ափով,
Գետի նման էն գոռ, յորդուն,
Իջնում է թունդ՝ վայրագ թափով:

Կոխ է տուել հունձքը Հայի,
Լափել փարթամ ձոր ու ծմակ.
Թո՜ղ մեր սոված գառը մայի՜,
Իսկ իր պոչին՝ մի լեռ դմակ.

Մեր սուրբ սարի գլխին թրքած,
Փէտով մեր հաստ քանդած կաշին,
Ընկնում է մերթ՝ ճարպից կքած
Ու յետ փախչում՝ ձիւնը բաշին.

Իջնում է քոչն Աղուանք փութով,
Ուր որ՝ մոռցած տենդ ու հրախտ,
Շնչում է ճոխ գարնան շուրթով
Ձմեռն անուշ – մի նոր դրա՜խտ…

բածն իր զբաղմունքի զոհն է, թեև շնորհիվ մտավորի սակավապետության այդ չի զգում: Իսկ նրա առաջնորդները՝ Ադրբեջանի գոյության համոզված պաշտպանները, կամենում են իրենց ժողովրդի հետամնացությունը զենք ծառայեցնել հարևան Հայաստանի դեմ ու մշտաբորբոք պահել ազգային կռիվը: Եվ դա այն ժամանակ, երբ Ադրբեջանի տափաստանների ոռոգման, ճանապարհների կառուցման և ճահիճների չորացման հետևանքով կարող են ապրուստ հայթայթել իրենց բնակիչների համար: Այդ շինարար ուղիով չի զարգանում ադրբեջանցիների քաղաքական մտածողությունը, այլ թշնամության ու ներհակության»[1]:

Նման պայմաններում Զանգեզուրի հայությունը ստիպված դիմեց հակամիջոցների, ուժեղացրեց ինքնապաշտպանությունը: Դա ամենից առաջ իր արտահայտությունը գտավ հայկական Զանգեզուրի ազգային խորհրդի որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝ քոչվորների առջև փակվեցին գավառի ամառային արոտավայրեր տանող ճանապարհները: Դա արվեց ոչ թե քոչվոր թուրքերին տնտեսական վնասներ հասցնելու, այլ գավառի անվտանգության համար: Նպատակն էր թշնամական քոչվոր զանգվածներին և նրանց հետ գնացող հազարավոր զինված մարդկանց թույլ չտալ անցնել հայերի թիկունքը[2]:

Մայիսի վերջերին Զանգեզուր հասավ Խնուսի, Սասունի ու Վանի գաղթականների մի մասը՝ զինված ուժերով: Այդ ուժերը կազմեցին այն կորիզը, որի շուրջ համախմբվեցին զանգեզուրցի մարտիկները:

Հունիսի սկզբներին հազարավոր զինված քոչվորներ խռնվեցին Հագարի գետի ափին՝ պատրաստ զենքի ուժով բանալու սարերի ճամփան: Նրանց օգնության էին եկել Հաջի Սամլուի ու Մուսուլմանլարի թուրքերը: Հարամի Դյուզ վայրում թուրքերի և հայերի միջև տեղի ունեցան արյունալի կռիվներ, և պարտված թուրքերը փախուստի դիմեցին՝ կռվի դաշտում թողնելով բազմաթիվ դիակներ: Կարճ ժամանակ անց Հաջի Սամլուի թուրքերը հարձակվեցին Սիսիանի վրա՝ կամենալով միանալ թուրքական Ջուլ շրջանին և այդպիսով Զանգեզուրը կտրել Դարալագյազից, բայց ջարդված այդտեղից էլ քշվեցին: Ընդհարումներ եղան նաև Զեյվա–Ագարակ գծի վրա՝ Մեղրիում. այստեղ ևս թուրքերը չդիմացան ու փախան Օրդուբադի կողմերը:

Այսպիսով՝ Զանգեզուրն ազատվեց քոչի մղձավանջից[3]: Բայց Ադրբեջանից եկող ընդհանուր վտանգը ոչ միայն չթուլացավ, այլև գնալով ավելի ուժեղացավ:

Գանձակի նահանգի մեծ մասը գրաված տաճկական զորքերի ներկա-

---

[1] «Ուրբաթ», 12 հոկտեմբերի, 1990:

[2] Տե՛ս **Ե. Իշխանեան**, Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 147, 153-154, 156, 158:

[3] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 328:

յությունը խանդավառել ու սիրտ էր տվել մուսավաթական Ադրբեջանի իշխանություններին, որոնք չէին էլ կասկածում, որ իրենցն են լինելու հայկական Ղարաբաղն ու Զանգեզուրը: Իսկ զանգեզուրցի հայերի մտքով անգամ չէր անցնում, որ իրենք երբևիցե կանցնեն կովկասյան թուրքերի ու տաճիկների տիրապետության տակ: Նրանք պատրաստ էին կյանքի գնով տեր կանգնել իրենց երկրին, իրենց ազատությանը:

Ազատ ապրելու համար Զանգեզուրի հայերը շարունակ կռիվների մեջ են եղել օտար՝ պարսիկ, արաբ, թուրք, թաթար նվաճողների հետ, երբեմն՝ հաջող, երբեմն՝ անհաջող, բայց ամեն անգամ զանգեզուրցին համառորեն, իր շահերի գիտակցմամբ, հանուն հայրենի երկրի պատերազմել է իրենից հզոր թշնամական ուժերի դեմ:

Որո՞նք են եղել Զանգեզուրի հայության ըմբոստության շարժառիթները: Բազմաթիվ պատճառներից առանձնացնենք մի քանիսը:

1. Այն կացությունը, որի մեջ դարեր շարունակ ապրել է զանգեզուրցին՝ մշտապես կռիվ տալով բնության հետ, ծանր աշխատանքով հոգալով ընտանիքի հոգսը: 2. Նա երկար ժամանակ հալածված է եղել իր հայրենիքում՝ իբրև իրավազուրկ տարր, իբրև եկվորների հպատակ, ուստի միշտ թանկ է գնահատել իր կյանքի ազատ ժամանակները և պատրաստ է եղել արյան գնով պաշտպանել այն: 3. Զանգեզուրցին միշտ քաջ գիտակցել է, որ Մայր Հայաստանի հետ մշտական կապ պահպանելու և հայ մնալու համար ինքը պարտավոր է ամեն ինչ անել, որ Զանգեզուրի թիկունքը կազմող Նախիջևան գավառը չբռնագրավվի թշնամու կողմից, այլապես դրանով մահացու հարված կհասցնի իրեն: 4. Եթե Հայաստանը զանգեզուրցու համար մայր հայրենիք էր, ապա Արցախը նա դիտում էր որպես բուն հայրենիք: Արցախը Զանգեզուրի շարունակությունն էր՝ իր տեղադրությամբ ու տնտեսական կյանքով: Դրանք տնտեսական մի ամբողջություն էին, բայց ոչ միայն տնտեսական: Արցախի և Զանգեզուրի հայերն ունեն նույն կենցաղն ու սովորույթները, նույն բարբառը, հոգեկան նույն կերտվածքը, ազատության համար պայքարի նույն ոգին: Արցախը բաժանել Զանգեզուրից և Հայաստանից զանգեզուրցու համար նշանակում էր եղբորը բաժանել եղբորից, իրեն ձգել բախտի քմահաճույքին և ի վերջո դատապարտել ոչնչացման: Բաժանել իրենից Արցախը կամ հարված հասցնել նրան կնշանակեր փշրել իր իսկ ողնաշարը: Ուստի պատահական չէ, որ Զանգեզուրի հայությունը պատմության ընթացքում միշտ մտահոգված է եղել ոչ միայն իր լեռնավայրի ազատությամբ, այլև ուժերը ներածին չափով օգնության է գնացել Նախիջևանի և Արցախի հայերին, աջակցել օտար զավթիչների դեմ նրանց մղած պայքարին: 5. Թվում է, թե համառ, աշխատող ու խնայող զանգեզուրցին միաժամանակ պետք է լիներ բիրտ ու անուս: Բայց իրականում եղել է հակառակը: Քաջ ու անվախ զանգեզուրցին, ի բնե լինելով ուսումնասեր, պաշտել ու փայփայել է ազգային մշակույթը, կրթությունը:

Ռուբեն Տեր-Մինասյանը միանգամայն իրավացի էր՝ գրելով. «Հայաստա-

նի քիչ անկիւններուն մէջ ուսումն ու կրթութիւնը այնքան հարգի են, որքան Զանգեզուրի մէջ: Կան շրջաններ, ինչպէս Մեղրին, ուր դեռ քանի մը տասնեակ տարիներ առաջ անուս մարդ չէր գտնուեր: Այնպէս որ, եթէ Զանգեզուրը իր մարտական ոգիով նմանեցնենք Չերնակորիային, իր կրթական և մտաւոր մղումներով պէտք է նմանեցնենք Զուիցերիային»[1]: Ուստի օտար նվաճողներից իր երկիրը, դպրոցը, մշակույթը, ավանդույթները պաշտպանելու համար զանգեզուրցին միշտ ստիպված է եղել զգոն լինել, համատեղել զենքն ու գրիչը:

Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը գավառի հայությանը հիշեցնում էր, որ Բաթումի հաշտության պայմանագրի համաձայն՝ Այսրկովկասում կազմվել են երեք հանրապետություններ՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի, և Երևանի նահանգի հայությունը «ստիպված է եղել խայտառակ հաշտություն կնքել» հայ ժողովրդի դարավոր ու արյունարբու թշնամու՝ թուրքի հետ:

Ստեղծված «Հայաստանի Հանրապետությունը» նաև կոչվում էր «Արարատյան Հանրապետություն», և այդ անվանումն առավել ճշգրտությամբ էր արտահայտում հայերի պետության ողբերգական վիճակը: Հայաստանի Հանրապետության կազմի մեջ չէին մտնում Ռուսահայաստանի շատ տարածքներ, այդ թվում՝ պատմական Սյունիքը և Արցախը:

Ինչ վերաբերում է տեղի թուրքերին, ապա նրանք կամա թե ակամա ապավինել էին տաճիկ բեկերին ու փաշաներին, որոնց օգնությամբ Բաքվի և Թավրիզի ճակատներում կռիվ էին մղում անգլո-ռուսական ուժերի, իսկ երկրի ներսում՝ հայերի դեմ՝ նպատակ ունենալով նախ և առաջ նրանց խեղդել տնտեսապես, ապա նաև ոչնչացնել ֆիզիկապես:

Ստեղծված պայմաններում Ազգային խորհուրդն ընդհանրություններ էր տեսնում հայկական զույգ երկրամասերի և Մակեդոնիայի ու Էլզաս-Լոթարինգիայի ճակատագրերի միջև: «Ինչպես Բուլղարիան երկար ժամանակ մնաց առանց իր Մակեդոնիայի,– նշվում էր Ազգային խորհրդի կոչի մեջ,– իսկ Ֆրանսիան՝ առանց Էլզաս-Լոթարինգիայի, այնպես էլ Հայկական հանրապետությունից արհեստական կերպով անդամահատել են Արցախն ու Սյունիքը, որոնք Մակեդոնիայի և Էլզաս-Լոթարինգիայի պես շարունակ պիտի ըմբոստանան և հանգիստ կյանք չպիտի ունենան, մինչև որ չվերանան արհեստական բաժանումները …»[2]:

Բաթումի պայմանագրի համաձայն՝ Գանձակի նահանգի հարյուր հազարների հասնող հայությունը, որ գլուխ չէր խոնարհել լենկթեմուրների և ալփարսլանների առջև, այժմ պիտի հպատակվեր Ադրբեջանին, ենթարկվեր եկվոր թաթարներին:

Կոչում նշվում էր, որ եթե հարևան թաթարները չդիմեին տաճիկների

---

[1] «Դրոշակ», 1925, դեկտեմբեր, թիվ 6, էջ 168:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5:

օգնությանը և նրանց միջոցով չուզենային կազմակերպել իրենց Ադրբեջանը, այդ դեպքում հայերը թերևս հնարավորություն կունենային փնտրելու մի ընդհանուր ուղի երկու ազգությունների համար և ստեղծելու համակեցության որոշ տանելի պայմաններ: Բայց մի կողմից՝ իրենց ցեղակից թուրքերին ապավինելը, մյուս կողմից՝ հայերի նկատմամբ ոխերիմ թշնամությունը, երկար ու ձիգ ամիսների ընթացքում ճանապարհները փակելը, հարյուրավոր հայ անցորդների սպանությունները, բոլոր շուկաներում հայերին բացարձակ բոյկոտ հայտարարելը, զանազան մութ նպատակներով շտապ զորահավաքներ անցկացնելը վկայում էին, որ անհնար էր հարևանների հետ խոսել մի ընդհանուր քաղաքական լեզվով[1]:

Այնուհետև նշվում էր. «Մեր առաջ երկու ճանապարհ կա. կամ պետք է առանց կռվի զինաթափ լինենք, հանձնվենք տաճիկին ու թաթարին, մեր աչքերի առջև նրանց բռնաբարելու տանք մեր քույրերին, ապա բոլորս մորթվենք ոչխարի պես, կամ ամենքս միանգամից պետք է պատրաստ լինենք զենքը ձեռքներիս պաշտպանելու մեր գոյությունն ու պատիվը»[2]:

Ազգային խորհուրդը Զանգեզուրի բնակչությանը տեղյակ էր պահում, որ Գանձակի նահանգի հայության ամենամեծ հատվածը՝ Գյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզակը, հրաժարվել են թաթարին հպատակվելու մտքից և վճռել են զենքով պաշտպանել իրենց գոյությունն ու պատիվը: «… Զանգեզուրի հայ ժողովուրդը չի կարող ուրիշ ճանապարհ բռնել. պիտի գնա իր մեծ եղբոր՝ Ղարաբաղի հայության ուղիով, որովհետև, եթե նույնիսկ ուզենա ուրիշ գործելակերպ էլ բանեցնել, ոչ ոք չի հավատա նրա անկեղծությանը և նա չարաչար կպատժվի»[3]:

Արտահայտելով Զանգեզուրի ժողովրդի հաստատուն կամքը՝ Կենտրոնական ազգային խորհուրդը կոչ էր անում. «Ուրեմն, գործի անցնենք, կազմակերպենք մեր սեփական զորքն ու զինված խմբերը, ունենանք խիստ կարգապահություն և հավատանք, որ դա է մեր փրկության միակ ճանապարհը»[4]: Զանգեզուրը օրհասական օրեր էր ապրում, և գավառին անհրաժեշտ էին վճռական իշխանություն և երկաթյա կարգապահություն: Այս առումով Ազգային խորհուրդը հայտնում էր Զանգեզուրի ժողովրդին, որ 1918 թվականի սեպտեմբերի 4-ից գավառում մտցվում էր պաշարողական դրություն, և երկրամասի զինվորական դիկտատոր էր ճանաչվում Շուշիի գնդի հրամանատար, գնդապետ Մելիք-Շահնազարյանը:

Այս օրերին, Բաքվից ստանալով մեծաքանակ զենք ու ռազմամթերք, Լաչինի, Կուբաթլուի, Զանգելանի, Ջաբրայիլի տեղական իշխանությունները

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

Ադրբեջանի կառավարության հրահանգներով սկսեցին զորահավաքի ենթարկել զենք բռնելու ունակ թուրք և քուրդ երիտասարդներին և հարձակումներ կազմակերպել Զանգեզուրի տարբեր սահմանային բնակավայրերի վրա:

Պարզ էր, որ ահագնացող վտանգի պայմաններում բացառված չէր, որ դեպի Բաքու շտապող օսմանյան բանակի առանձին զորամասեր ներխուժեին Լեռնային Ղարաբաղ, այնտեղ իրենց միացնեին մուսավաթական զինված ուժերը, հարձակում գործեին Զանգեզուրի վրա և ռազմակալեին գավառը:

Դժվար է ասել, թե ճակատագրական ու բախտորոշ այդ օրերին ինչ ընթացք կստանար թուրք-հայկական առճակատումը, եթե իր զորքով թշնամիներով շրջապատված Զանգեզուր չմտներ հայ ժողովրդի ազգային հերոս Զորավար Անդրանիկը:

1918 թ. օգոստոսից մինչև 1919 թ. մարտ ամիսը, երբ Անդրանիկն իր զորամասով գտնվում էր Զանգեզուրում, դարավոր թշնամին չկարողացավ մուտք գործել լեռնավայր: Անդրանիկի «Հարվածող զորամասը» և տեղի հայկական ուժերը ջախջախիչ հարվածներ էին հասցնում թշնամուն և դուրս շպրտում գավառի սահմաններից[1]:

---

[1] Մանրամասն տե՛ս **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 309-552: Հայ պատմագրության մեջ Անդրանիկի գործունեությունը Զանգեզուրում հավուր պատշաճի լուսաբանված է: Թեման ուսումնասիրել են նաև Հովակ Ստեփանյանը, Եղիշե Քաջունին, Եղիշե Իշխանյանը, Վարդգես Ահարոնյանը, Ստեմելը, Անդրանիկ Չելեպյանը, Հովհաննես Այվազյանը, Համբարձում Կարապետյանը, Ռուբեն Սիմոնյանը և ուրիշներ:

Մեր աշխատությունը գրելիս օգտվել ենք նշված հեղինակների (հատկապես Հ. Սիմոնյանի) աշխատություններից: Կարող է հարց առաջանալ. այդ դեպքում ինչո՞ւ տողերիս հեղինակը մեկ անգամ ևս անդրադարձել է թեմայի շարադրմանը: Երկու պատճառով: Նախ առանց Անդրանիկի և նրա զորամասի գործունեության անհնար է ներկայացնել Զանգեզուրի գոյամարտի պատմությունը: Եվ հետո, միշտ էլ գտնվում են առանձին մանրամասներ և եզրահանգումներ, որոնք լրացնում են եղածը: Այդ տրամաբանությամբ էլ առաջնորդվելով՝ սույն աշխատության մեջ կարևորագույն տեղ ենք հատկացրել 1918 թ. հուլիսի վերջ 1919 թ. մարտի վերջ Անդրանիկի և Հարվածող ջոկատի գործունեությանը:

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԶՈՐԱՄԱՍԻ ԵՎ ՇՈՒՇՎԱ ԳՆԴԻ ՄՈՒՏՔԸ ԶԱՆԳԵԶՈՒՐ: ԳԱՎԱՌԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Յուրաքանչյուր հայի համար Անդրանիկ Օզանյանի կերպարը անձնվիրության և անեզր հայրենասիրության լուսեղեն մարմնացում է: Իր հաղթական սրով նա պաշտպանում էր պաշտելի ժողովրդի պատիվն ու իրավունքը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության անդաստանում նրա կատարած գործը բացառիկ է, այն ոգեշնչման ու հավատի աղբյուր է ներկա և գալիք սերունդների համար:

Անդրանիկը չէր ընդունել Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված հաշտության պայմանագիրը, որի համաձայն՝ Հայաստանի կենսագործունեության գլխավոր լծակները դրվել էին թուրք զավթիչների վերահսկողության տակ: Զորավարին հավասարակշռությունից հանել էր այն հանգամանքը, որ իր զորամասը (Հայկական առանձին հարվածող զորամաս) Բաթումի պայմանագրով, փաստորեն, պետք է զինաթափվեր ու ցրվեր կամ հեռանար Հայաստանի սահմաններից[1]:

Անդրանիկն ընտրել էր երկրորդ տարբերակը: Նրա մտքով անգամ չէր անցնում, թե իր ձեռքով կարող է ցրել «Հարվածող զորամասը», մանավանդ որ զինվորները, հատկապես ստորաբաժանումների հրամանատարները, որոնց բացարձակ մեծամասնությունը արևմտահայեր էին, հույս ունեին, թե ի վիճակի են ճեղքել Նախիջևանի ու Պարսկաստանի մուսուլմանական պատը, անցնել Միջագետք, որն արդեն գտնվում էր «դաշնակից» անգլիական զորքերի ռազմակալման տակ, և նրանց աջակցությամբ մտնել Վանի շրջան ու այնտեղ տեղավորել զորամասին ապավինած հազարավոր արևմտահայ գաղթականությանը[2]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թթ. 99-100, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 70, **Հ. Ազատյան**, Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 87, **Բ. Ուլուբաբյան**, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, էջ 28, ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 12, թ. 1, ց. 2, գ. 11, թ. 35, «Նոր հորիզոն», Թիֆլիս, 1918, թիվ 18, 11-ը դեկտեմբերի, "Наше время", 3 января, 1919, № 4, "Кавказское слово", 12 декабря, 1918, № 269, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, մայիս, թիվ 7, էջ 161, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 1 (89)-2 (90), էջ 320, 326, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 161-165, 182-183:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 23, ց. 2, գ. 11, թ. 36, գ. 14, թ. 45: «Նոր հորիզոն», Թիֆլիս, 1918, թիվ 18, 11-ը դեկտեմբերի, "Наше время", 3 января, 1919, № 4, "Кавказское слово", 12 декабря, 1918, № 269, «Ժողովուրդ», Կ. Պոլիս, 1919, 6 ապրիլի, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, մայիս, թիվ 7, էջ 161, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց

Դիլիջանից հասնելով Նախիջևան՝ Անդրանիկն իր զորամասով ու գաղթականների հոծ զանգվածով մտավ Պարսկաստան, բայց հանդիպելով նախօրյակին այնտեղ հասած թուրք բազմաքանակ զորքի պատնեշին, արյունալի մարտ տալով՝ վերադարձավ Նախիջևան: Այստեղ նա օրհասական կռիվ մղեց Արարատյան դաշտի կողմից գավառ մտած թուրք գերակշիռ ուժերի դեմ, բայց չկարողացավ դիմակայել նրանց ճնշմանը: Նախիջևանի գավառը թուրքերի ձեռքն անցնելուց հետո Անդրանիկը ստիպված եղավ իր 3500 զինվորներով Գողթանի վրայով բարձրանալ Զանգեզուր:

Անդրանիկի՝ Զանգեզուր գալը բխում էր տեղի հայության շահերից: Այդ հանգամանքն ուներ ինքնապաշտպանական կարևոր նշանակություն, ուստի Անդրանիկին Զանգեզուր հրավիրելու նախաձեռնություն հանդես բերեց Զանգեզուրի ազգային խորհուրդը և որպես պատվիրակ նրան ընդառաջ ուղարկեց Արշակ Շիրինյանին: Պատվիրակության ճանապարհն անցնում էր Կապանով: Այդ ժամանակ Անդրանիկը գտնվում էր Գողթան գավառում: Արշակ Շիրինյանը Գողթան հասավ և Անդրանիկին ներկայացրեց Բիստ գյուղում ու Զանգեզուրի ազգային խորհրդի կողմից նրան հրավիրեց Սյունիք՝ նկարագրելով երկրի բնական ամրությունները, լեռնային օդը, որտեղ կարող էր հանգիստ գտնել տարափոխիկ ու ջերմախտ հիվանդություններից տառապող նրա զորամասը[1]:

Անդրանիկը ուշադրությամբ ունկնդրեց Զանգեզուրի պատվիրակին, բայց անմիջապես իր համաձայնությունը չտվեց, քանի որ զբաղված էր Նախիջևանի և Գողթանի շրջանում: Արշակ Շիրինյանը վերադարձավ Զանգեզուր և հիացմունքով պատմեց Անդրանիկի մասին՝ նշելով. «Ես կարծում էի, թե կհանդիպեմ նախկին հայդուկ Անդրանիկին, բայց տեսա գեներալ Անդրանիկին, ուսադիրներով, որն ավելի ակնածություն և պատկառելիություն էր տալիս նրա դեմքին»[2]:

Զորավարի հետ էր թուրքահայ գաղթականության հոծ զանգվածը, որին միացել էին իրենց տուն ու տեղը, հայրենի երկիրը թողած հազարավոր նախիջևանահայեր: Անդրանիկի հետ գնացող գաղթականների ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 35 հազարի: Գաղթականների մի մասը անկորուստ անցավ Սիսիանի շրջան, բայց 2000 հոգանոց մի խումբ սխալմամբ մտավ Կապանի թուրքաբնակ Գեղվա ձորը, որտեղ նրանց անխնա կոտորեցին թուրք-ազերիները[3]:

երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 70, **Ա. Ամուրեան**, Գասպար Գասպարյանի ոդիսականը, «Հայրենիք», 1962, նոյ.-դեկտ., թիվ 11-12, էջ 33, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 1 (89)-2 (90), էջ 300, 320, 326, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 182-192:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թթ. 23-25:

[2] Նույն տեղում, գ. 12, թ. 1, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, «Հայրենիք», 1962, թիվ 7-8, էջ 13:

[3] Տե՛ս ՀԱԱ ֆ. 370, ց. 2, գ. 45, թ. 18, ց. 1, գ. 35, թ. 25, ց. 2, գ. 14, թթ. 29-34, գ. 89, թ. 7: «Նոր հորիզոն», Թիֆլիս, 1918, թիվ 18, 11-ը դեկտեմբերի, «Հայկական առանձին հարուածող զօրամասը. Ժենէրալ Անդրանիկ», Պոսթոն, 1921, էջ 80, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում,

Մինչև Անդրանիկի Հարվածող զորամասի և գաղթականության Զանգեզուր գալը՝ դեռևս հուլիսի սկզբներին, Նախիջևանից Սիսիան էր մտել Անդրանիկի զորքի մի մասը՝ բաղկացած գլխավորապես սասունցիներից, վանեցիներից, և այդ իսկ պատճառով զորամասը կոչվում էր Սասունի կամ Սասունցիների գունդ, որը Մուշեղի հրամանատարությամբ հետագա ամիսներին մեծ դեր խաղաց Սիսիանի շրջանի պաշտպանության գործում[1]:

Հուլիսի 23-ին, անցնելով ծովի մակերևույթից 4000 մետր բարձրություն ունեցող Կապուտջուղ լեռան փեշերով ձգվող դժվարանց լեռնանցքով, զորքը (հետևակ, հեծելազոր, հրետանի) և գաղթականությունը մտան Զանգեզուր: Լեռնաշղթան կտրելով՝ առաջին հերթին նրանք մտան Բաղաբերդի ձորը: Բարձրաբերձ և անդնդախոր ժայռերի արանքում՝ Գեղվա և Կռաթաղի գետակների միացման հովտում, կար կղզիացած բլրաձև մի բարձր ժայռ: Այդ ժայռի վրա կառուցված էր Զեյվայի հինավուրց անառիկ բերդը, որի պարիսպները կարծես թե կախված էին օդի մեջ՝ լրացնելով անառիկ ժայռի բնական ամրությունները:

Անդրանիկը, հիացմունքով դիտելով այդ բնական ամրությունները, և ասաց. «Իրավ որ Սյունիքը ետ չի մնա Զեյթունէն և Սասունէն»:

Ջրախորի էլեկտրական կայանն անցնելով՝ Անդրանիկը հանդիպեց մի պատվիրակության՝ կազմված Շհարջիկ և Աչաղու (Աչախլու) թուրք գյուղերի հասարակությունից: Մոլլաների ուղեկցությամբ այդ պատվիրակությունը Հալիձորի նախկին պղնձագործարանի մոտ աղ ու հաց բերեց Անդրանիկին:

Թուրք-թաթարական պատվիրակները մնացին ապշած ու սարսափած՝ այդ նեղ ձորերում մեծաքանակ հայկական զորք և հայ զորավար տեսնելով: Զորքն անցավ ավելի քան 30 թուրքական գյուղերով, բայց ոչ մի անախորժություն տեղի չունեցավ: Թեև թուրք բնակիչները մնացել էին իրենց գյուղերում, բայց Անդրանիկի ձեռնարկած խիստ միջոցների շնորհիվ ոչ մի թուրք նյութական վնաս չկրեց: Զորավարն անձամբ հսկեց զորքի և գաղթականության անցման կարգի մասին իր կարգադրությունների կատարմանը: Հուլիսի 26-ին հասան Կապանի հանքեր, որտեղ սիրալիր ընդունվեցին Կապանի ազգային խորհրդի կողմից, որի նախագահն էր Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանը[2]:

«Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 74, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 1 (89)-2 (90), էջ 306, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 302-303, 309-310, **Հ. Կարապետյան**, Անդրանիկ, Երևան, 1994, էջ 558, **Հ. Այվազյան**, Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Երևան, 2004, էջ 212: Հայկական առանձին հարուածող զօրամասը. Ժենէրալ Անդրանիկ, էջ 80:

[1] Տե՛ս **Ա. Աստուածատրեան,** Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, հոկտեմբեր, թիվ 10, էջ 47, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 296: ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 18, թ. 8, գ. 35, թ. 2, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, թիւ 4 (148), փետրուար, էջ 95, 101, թիւ 5 (149), մարտ, էջ 82, **Ստեմել**, Զանգեզուրի գոյամարտը, «Հայրենիք», 1960, օգոստոս, թիվ 8, էջ 90:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 89, թ. 7, Հայկական առանձին հարուածող զօրամասը. Ժենէրալ Անդրանիկ, էջ 80, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 13-14, **Հ. Կարապետյան**, նշվ.

Ականատեսը գրել է. «Բոլորն ալ հոգնած, փոշոտած, անոթի, սպառուած, սևացած … գաղթականների մեծ մասը անճանաչելի դարձած են … կոշիկները պատռուած, գլխամազերը արձակուած, հագուստները փոշոտած, շատերն այլևս չեն կրնար քալել…»[1]:

Երեք օր հանգստանալուց հետո Անդրանիկը Կապանում թողեց մի փոքր ջոկատ՝ կապիտան Հայկ Բոնապարտյանի, հարյուրապետեր Պանդուխտի և Սարգիս Ջեբեջիի գլխավորությամբ, ինչպես նաև ավելի քան 2000 գաղթական՝ շրջանում տեղավորելու համար, ինքը Հարվածող զորամասով ու շուրջ 33 հազար գաղթականների հետ շարժվեց առաջ և օգոստոսի 4-ին հասավ գավառի կենտրոն՝ Գորիս քաղաք*: Գավառային իշխանությունները և ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեցին Զորավարին, նրա զորքին ու գաղթականությանը[2]:

Գորիս հասնելով՝ Անդրանիկը իջևանեց Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի նախագահ, բժիշկ Միքայել (Միշա) Պարոնյանի տանը: Նույն օրը քաղաքի իշխանությունները Զորավարին հանձնեցին նրա անվամբ հիմնադրամը՝ 100 հազար ռուբլի՝ զորքի սկզբնական ծախսերը հոգալու համար: Որոշ ժամանակ անց Անդրանիկը տեղափոխվեց և տևական ժամանակով հյուրընկալվեց քաղաքի առևտրականներից մեկի՝ Մալունց Ղազարի տանը[3]:

Կապանի շրջանի համեմատությամբ դրությունը Գորիսի շրջանում միանգամայն այլ էր: Անդրանիկի այստեղ հասնելու նախօրյակին տեղի էին ունեցել ազգամիջյան ընդհարումներ, խզված էին գավառի երկու ազգությունների հարաբերությունները: Թուրք ազերիները փակել էին Գորիս–Շուշի և Գորիս–Սիսիան խճուղիները, որի հետևանքով հայերը, փաստորեն, ենթարկված էին շրջափակման[4]:

աշխ., էջ 309-311, 558, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 309-311, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 212: ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 89, թ. 7, "Кавказское слово", 12 декабря, 1918, № 269, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 74-75, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 1 (89)-2 (90), էջ 306-307, 321: ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14, թ. 1, **Ռ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 124-126:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14, թթ. 29-34, գ. 19, թ. 8:

* Մինչ Գորիս մտնելը Անդրանիկը Ա. Մելիք-Ազարյանցի հանքերի և գործարանի ճարտարապետ Արամ Ֆեթվաճյանի ուղեկցությամբ եղավ Տաթևի վանքում:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 12, թ. 1, ց. 2, գ. 14, թ. 1, ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14, թ. 1, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, մայիս, թիվ 7, էջ 161, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 81, *նույնի՝* Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 75, **Ստեմել**, Զանգեզուրի գոյամարտը, էջ 14, 16, նույնի՝ Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 14, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 559, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 316-317: **Ա. Չելեբյան**, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990, էջ 518:

[3] Տե՛ս **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 14, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 317, **Ռ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 127:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 1, «Ժողովուրդ», Երևան, 1918, թիվ 4, 15 օգոստոսի, «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1918, թիվ 3, 4 սեպտեմբերի, «Զանգ», 1918, թիվ 58, 2 հոկտեմբերի, «Ժողովուրդ», Կ. Պոլիս, 1918, թիվ 47, 19 դեկտեմբերի, **Սարուր (Քիրս Սարոտ),** Ղարաբաղի

Անդրանիկից առաջ մեծաքանակ զենք-զինամթերքով Զանգեզուր էր եկել նաև Արցախյան կամ Շուշիի գունդը, որը կազմված էր 1918 թ. սկզբներին Թիֆլիսում կուտակված կովկասյան ռազմաճակատներից վերադարձած բավականին թվով արցախցի զինվորներից: Գնդի հրամանատարն էր գնդապետ Միքայել բեկ Մելիք-Շահնազարյանը: Նրա հետ եկել էր Թիֆլիսի հայ զինվորական միության վարչության կողմից Արցախի ընդհանուր զինվորական կոմիսար նշանակված Հովակ (Հովակիմ) Ստեփանյանը, որը կատարում էր նաև գնդի կոմիսարի պարտականությունը:

Մեկնելուց առաջ Շուշիի գնդին միացել էր Գանձակի հայ զինվորներից կազմված հրաձգային մի գումարտակ: Այդ երկու զորամասերի նպատակն էր Գորիս հասնելուց հետո անցնել Լեռնային ու Հյուսիսային Արցախ և ուժեղացնել տեղի հայության դիմադրական ուժը:

Վերցնելով մեծ քանակի զենք ու ռազմամթերք՝ Շուշիի գունդը ճանապարհ ընկավ Ղարաքիլիսա–Դիլիջան–Նոր Բայազետ–Դարալագյազ–Զանգեզուր գծով՝ Արցախ անցնելու համար: Մինչև Զանգեզուր հասնելը գունդը ճանապարհին կորցրեց ավելի քան երեք ամիս՝ մի քանի տեղ ընդհարվելով թուրքերի հետ[1]:

Առաջին ընդհարումը տեղի ունեցավ մարտի կեսերին Ելենովկայի և Նոր Բայազետի միջև գտնվող թուրքական վեց գյուղերի շրջանում: Երբ Հաջի-Մուխան գյուղում Շուշիի գնդի բեռնակիր սայլերի սայլապանները մի քանի տասնյակ զինվորների հետ գյուղի փողոցներում հանգստանում էին, ենթարկվեցին թուրքերի տմարդի հարձակման: Սպանելով հայ երիտասարդ զինվորներին՝ նրանք դիակները նետեցին հորերը: Այդ ուխտադրուժ հարձակմանը ղարաբաղցի զինվորներն արագ հակադարձեցին, որի հետևանքն այն եղավ, որ վեց թուրքական գյուղերը՝ Բոլուն, Աֆանդին, Հաջի-Մուխանը, Աղզիբիրը, Աղկայան և Այրիվանքը ավերվեցին, իսկ բնակիչները դիմեցին փախուստի: Այս արգելքը վերացնելուց հետո Շուշիի գունդը բավական ժամանակ կանգ առավ Նոր Բայազետի գավառի հարավային մասում, որովհետև դեպի Դարալագյազ տանող ճանապարհը, որն անցնում էր Սելիմի լեռնանցքով, և որի վրա նույնպես թուրքաբնակ գյուղեր կային, փակված էր:

կցումը Ատրբէջանի, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 131, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 27, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 324-325:

[1] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1934, դեկտեմբեր, թիւ 2 (146), էջ 83-93, 1935, յունուար, թիւ 3 (147), էջ 110-113, փետրուար թիւ 4 (148), էջ 89, 91, մարտ, թիւ 5 (149), էջ 82, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 190-191, ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թթ. 278, 279, ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 2, գ. 35, թ. 1, 2, Արցախը կանչում էր Անդրանիկին (փաստաթղթեր), Երևան, 1995, էջ 10, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 131, **Ե. Իշխանեան**, նշվ. աշխ., էջ 180, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 348, **Հ. Գևորգյան**, Յապոն (Հովհաննես Պարոնյան), Երևան, 2013, էջ 160-161:

Մինչև հնարավոր եղավ այդ ճանապարհը ևս մաքրել, անցան շաբաթներ[1]: Ճանապարհին՝ արդեն Դարալագյազում, Շուշիի գունդը հանդիպեց դեպի Նախիջևան ընթացող Անդրանիկի զորամասին և նրա հետ գնացող գաղթականությանը: Գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանը այստեղ առաջին անգամ թռուցիկ ծանոթացավ Զորավար Անդրանիկի հետ[2]:

Գունդը Զանգեզուր հասավ 1918 թ. հունիսին և այնտեղ կանգ առավ: Երկարատև երթի ընթացքում զորամասը որոշ առումներով կազմալուծվեց՝ զրկվելով շուրջ 200 զինվորից: Նրա կազմի մեջ մնաց 400 մարդ[3]:

Գունդը, ինչպես և խիստ նոսրացած Գանձակյան գումարտակը Գորիսից չկարողացան անցնել Արցախ թուրք և քուրդ ավազակախմբերի կողմից ճանապարհները շրջափակելու պատճառով: Զույգ զորամասերը տեղակայվեցին Գորիսի շրջանում՝ սպասելով բարենպաստ պահի՝ Արցախ մեկնելու համար[4]:

Մինչև Անդրանիկի Զանգեզուր գալը Շուշիի գնդի հրամանատարությունը ամուր հարաբերություններ հաստատեց Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի հետ և միանալով բուն Զանգեզուրի պաշտպանական ուժերին՝ ակտիվ մասնակցություն բերեց ինքնապաշտպանական կռիվներին[5]:

Երբ Անդրանիկն իր զորամասով հասավ Գորիս, Շուշիի գնդի հրամանատար գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանը և գնդի կոմիսար Հովակ Ստեփանյանը գտնվում էին Սիսիանում: Նրանք գնացել էին կազմակերպելու Վայոց ձորում գնդի թողած մեծաքանակ զենք-զինամթերքի փոխադրումը

---

[1] Տե՛ս **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1934, դեկտեմբեր, թիւ 2 (146), էջ 83-93, 1935, յունուար, թիւ 3 (147), էջ 110-113, փետրուար թիւ 4 (148), էջ 89, 91, մարտ, թիւ 5 (149), էջ 82, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 190-191, ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թթ. 278, 279, ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 2, գ. 35, թ. 1, 2, Արցախը կանչում էր Անդրանիկին (փաստաթղթեր), Երևան, 1995, էջ 10, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 131, **Ե. Իշխանեան**, նշվ. աշխ., էջ 180, **Մ. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 348, **Հ. Գևորգյան**, Յապոն (Հովհաննես Պարոնյան), Երևան, 2013, էջ 160-161:

[2] Տե՛ս նույն տեղում, ինչպես նաև **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, յունուար, թիւ 3 (147), էջ 107-113, փետրուար, թիւ 4 (148), էջ 91-92, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 191:

[3] Տե՛ս **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կռիվների շուրջը, «Ճշդում»ի ճշդումը, «Հայրենիք», 1934, մարտ, թիվ 5 (137), էջ 129, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, յունուար, թիւ 3 (147), էջ 108:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 205, Արցախը կանչում էր Անդրանիկին (փաստաթղթեր), էջ 15-16 (տողատակ), **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, յունուար, թիւ 3 (147), էջ 108, 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 82, ապրիլ, թիւ 6, էջ 106, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 131, *նույնի՝* Ղարաբաղի կռիվների շուրջը, «Ճշդում»ի ճշդումը, «Հայրենիք», 1934, մարտ, թիվ 5 (137), էջ 129, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 16, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 79:

[5] Տե՛ս **Յ. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 77:

Գորիս քաղաք: Դա դժվարին գործ էր, որի հիմնական ծանրությունն ընկած էր սիսիանցիների վրա[1]:

Տեղեկանալով Անդրանիկի գալու մասին՝ և՛ գնդի հրամանատարը, և՛ կոմիսարը պատրաստվել էին շտապ մեկնել Գորիս և հանդիպել ու «բարի գալուստ» մաղթել Զորավարին, բայց վերջին պահին որոշել էին, որ Գորիս է գնալու միայն կոմիսարը: Օգոստոսի 5-ի կեսօրին հասնելով Գորիս՝ նույն օրը Հովակ Ստեփանյանը Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի նախագահ Միքայել Պարոնյանի հետ այցելեց Անդրանիկին[2]:

Գնդի կոմիսարն ամենից առաջ Զորավարին փոխանցեց գնդապետ Մելիք-Շահնազարյանի նամակը, որում մասնավորապես ասված էր. «… Հիշում եք երևի, որ մենք պատահեցինք Դարալագյազի Քեշիշքենդում: Մինչև այսօր զբաղվում էի ռազմամթերքի տեղափոխության գործով և նոր միայն, համարյա վերջնականապես, տեղափոխեցի այն: … Վճռել եմ մինչև վերջին շունչը դիմադրել դարավոր ոսոխին, վճռել եմ թույլ չտալ, որ նա ոտնահարի ասպատակություններից զերծ մնացած մի փոքրիկ շրջան, որի գիրկն են մտել հազարավոր տարագիր քույր ու եղբայրներ: Լիահույս եմ, որ լուր կտաք մեզ Ղափանի դրության մասին, կապ կհաստատենք ու ձեռք ձեռքի տված կշարունակենք գործել մեր տարաբախտ ազգի մնացորդի համար: Այդ հույսով է, որ վաղվանից մենք դուրս ենք գալիս Սիսիանի սարերը»[3]:

Զորավարին այցի եկած Մ. Պարոնյանը և Հ. Ստեփանյանը նրան ծանոթացրին Զանգեզուրի ներսում և շուրջը ստեղծված վիճակին, իսկ Մ. Պարոնյանը Անդրանիկին խնդրեց հանձն առնել գավառի պաշտպանության ղեկավարությունը: Կոմիսար Հ. Ստեփանյանը Շուշիի գնդի հրամանատարության անունից հայտնեց, որ գունդը ևս կգործի Զորավարի ցուցումներով՝ կատարելով նրա բոլոր կարգադրություններն ու հրամանները: Այդ օրվանից Զանգեզուրում գտնված ամբողջ ժամանակաշրջանում Շուշիի գնդի հրամանատարն ու կոմիսարը ամենասերտ հարաբերությունների մեջ են եղել Անդրանիկի հետ, գնդի ունեցած մեծաքանակ զենք-զինամթերքից բաժին հանել Հարվածող զորամասին, անթերի կատարել Զորավարի բոլոր հանձնարարականները[4]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 3, **Քիրս Սարոտ (Սարուր),** Ղարաբաղի կռիվների շուրջը, «Ճշդում»ի ճշդումը, «Հայրենիք», 1934, մարտ, թիվ 5 (137), էջ 129, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, թիւ 6 (150), ապրիլ, էջ 102, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 27, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 362, 372:

[2] Տե՛ս **Քիրս Սարոտ (Սարուր),** Ղարաբաղի կռիվների շուրջը, «Ճշդում»ի ճշդումը, «Հայրենիք», 1934, մարտ, թիվ 5 (137), էջ 129, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 83:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 10:

[4] Տե՛ս Արցախը կանչում էր Անդրանիկին (փաստաթղթեր), էջ 10, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 82-83, 87, *նույնի*՝ Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, մայիս-յունիս, էջ 77:

Ստանալով Անդրանիկի համաձայնությունը՝ Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը օգոստոսի 7-ին հրավիրեց շրջանների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ քննության առան գավառի պաշտպանության հետ կապված հարցերը, Անդրանիկին խնդրեց ստանձնել գլխավոր հրամանատարությունը և գլխավորել գավառի պաշտպանությունը: Խորհրդակցությունում նաև ընտրեց հինգ հոգուց բաղկացած ռազմական գլխավոր շտաբ, որի ղեկավարությունը նույնպես ստանձնեց Անդրանիկը[1]:

Ստեղծվել էր նոր բարդ իրավիճակ. Անդրանիկի գալով մի կողմից Զանգեզուրը ունեցավ դիմադրական խոշոր ուժ՝ ընդդեմ թուրքական վտանգի, մյուս կողմից ծագեց ծանր կացություն՝ պարենի ու կենսամթերքի հայթայթման հետ կապված:

Զորավար Անդրանիկի, Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի և նրան ենթակա շրջանային և գյուղական մարմինների, ՀՅԴ գավառային կենտրոնական կոմիտեի և նրա տեղական կոմիտեների ու բջիջների, մի շարք գյուղերի (առաջին հերթին գավառի ամենամեծ գյուղի՝ Խնձորեսկի) հնչակյան կազմակերպությունների առջև ծառացան կարևոր, ծայրաստիճան դժվարլուծելի խնդիրներ: 1. Անհրաժեշտ էր տեղավորել ու կերակրել գաղթականության հսկա զանգվածը, հոգալ հազարավոր զինվորների կարիքները: 2. Պետք էր պաշտպանել գավառը տաճկական զորքերի և մուսավաթական հրոսակախմբերի հարձակումներից: Երկու խնդիրներն էլ բախտորոշ նշանակություն ունեին ինչպես բուն զանգեզուրցիների, այնպես էլ ճակատագրի բերումով գավառում հայտնված հայ զինվորների ու գաղթականության հսկա զանգվածի համար:

Հազարավոր տնազուրկ մարդկանց (այր թե կին, ծեր թե երեխա) հյուծված ու հոգնաբեկ մարմինները, վերջապես, մի պահ կարծես հանգիստ առան: Նախիջևանյան սարսափներից հետո գորիսեցիների կողմից ցույց տված ընդունելությունը գաղթականության համար անհավատալի շռայլություն էր:

Անդրանիկի զորամասի և գաղթականության՝ Գորիսի շրջան գալու ժամանակ այնտեղ զգացվում էր սննդամթերքի մեծ պակաս, իսկ հոծ գաղթականության և զինվորների ներկայությունը դրությունը դարձրեց աղետալի:

Ճակատագիրը հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկին բերել էր Զանգեզուր, որի ժողովրդին կենաց ու մահու պայքար էր սպասվում օսմանյան զավթիչների և ադրբեջանական մեծաքանակ հորդաների դեմ: Ազգային հերոսը կանգնեց զանգեզուրցիների ազատամարտի գլուխ և դյուցազնամարտի նոր էջ գրեց լեռնաշխարհի հերոսական տարեգրության մեջ:

---

[1] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 83-84, 86:

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԹՇՆԱՄՈՒ ՀԵՏ 1918 Թ. ԱՄՌԱՆԸ

1918 թ. ամռանը Զանգեզուրը դժվարին օրեր էր ապրում: Այսրկովկաս ներխուժած օսմանյան զավթիչները և Ադրբեջանի կառավարությունը գավառի հայ բնակչությունից պահանջում էին զինաթափվել և անվերապահ հպատակվել Բաքվի մուսավաթական իշխանություններին: Զանգեզուրը և Արցախը նրանք համարում էին Ադրբեջանի անբաժան մաս՝ ելնելով նրանից, որ այդ տարածքները ցարական կառավարության վարչական բաժանումով մտել էին Ելիզավետպոլի նահանգի մեջ: Առավել ծանր էր Արցախի հայության վիճակը:

Մուսավաթական կառավարությունը, թիկունք ունենալով օսմանյան զավթիչներին, շարունակում էր մերժել Արցախի ինքնորոշման իրավունքը և չեղյալ հայտարարել Շուշիում ստեղծված երկրամասի գործադիր իշխանությունը՝ Արցախի կոմիսարների խորհուրդը: Դրան ի պատասխան՝ 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիում տեղի ունեցած Արցախի հայության առաջին համագումարը վճռականապես մերժել էր Ադրբեջանին ենթարկվելու պահանջը: Այդ պատճառով տաճիկները և թուրքերը արցախահայության նկատմամբ սպառնալիքներից անցան կոնկրետ քայլերի. փակեցին Ղարաբաղ տանող բոլոր ուղիները և նախապատրաստվեցին վճռական գործողությունների: Նրանք ոչ մի կասկած չունեին, որ ամենակարճ ժամկետում բռնազավթելու են Արցախն ու Զանգեզուրը:

Այդ ժամանակ Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը 1918 թ. հուլիսի վերջին - օգոստոսի սկզբին գավառ եկած Զորավար Անդրանիկին տվեց գերագույն զինվորական հրամանատարի լիազորություններ: Բայց խորհուրդը առաջվա պես շարունակում էր մնալ գավառի բարձրագույն իշխանություն, որի ձեռքին էին կենտրոնացել ներքին, վարչական, պարենավորման և ընդհանուր քաղաքականության գործերը: Անհրաժեշտ էր Հարվածող զորամասի անձնակազմին բացատրել, թե Զանգեզուրում գտնվելու ժամանակ որն է լինելու նրա դերը:

Անդրանիկի հանձնարարությամբ սպաները զինվորներին հիշեցնում էին, որ թեև Նախիջևանում անհաջող գործողություններից հետո զորամասն այլընտրանք չունենալու պատճառով է եկել Զանգեզուր, բայց քանի որ լեռնավայրը հայոց հայրենիքի պատմական հատվածներից մեկն է, ուստի

նրա պաշտպանությունը սրբազան պարտականություն է զորամասի յուրաքանչյուր մարտիկի համար[1]:

Հուլիսի 30-ին (օգոստոսի 12-ին) Անդրանիկը հանդես եկավ իր զորամասին ուղղված հրահանգ-հորդորով.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՎԱԾՈՂ ԶՈԿԱՏԻ ՍՊԱՅԱԿՈՒՅՏԻՆ ԵՎ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Նկատի ունենալով Երևանի Հայկական Հանրապետության քաղաքական, ռազմական և տնտեսական մեզ համար աննպաստ հանգամանքները, նկատի ունենալով, որ տաճկական և հայկական կառավարությունների հաշտության պայմանագրով* վերջինս պետք է ունենա մեկ դիվիզիա զորքից ոչ ավելի, թուրքական զինվորական իշխանության պահանջմամբ զինաթափ պիտի արվի ամբողջի ջոկատը**՝ որպես տաճկահայ առանձնահատուկ մի զորամաս՝ նկատի ունենալով, որ զինաթափ լինելուց հետո տաճկահայ գաղթականության և զորամասի ֆիզիկական գոյությունը վտանգվում է,

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՄ.

1. Չգնալ Հայկական Հանրապետության սահմանների մեջ և ոչ մի պայմանով զինաթափ չլինել, առանց եվրոպական և հայկական պետությունների երաշխիքի:
2. Այն զինվորները, որոնք գտնում են իրենց ֆիզիկական ապահովությունը Երևանի նահանգում, և նրանք, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ուզում շարունակել իրենց զինվորական ծառայությունը, այդպիսինները կարող են հեռանալ ջոկատից:
3. Նրանք, որոնք պիտի մնան ջոկատում և պիտի շարունակեն իրենց զինվորական ծառայությունը, պետք է ենթարկվեն զինվորական խիստ դիսցիպլինի՝ սրբությամբ կատարելով ամեն մի զինվորական հրաման:
4. Երբ երաշխիք տրվեց և երաշխավորվեց եվրոպական պետական հայտնի անձնավորություններով և ներկայացուցիչներով, այդ դեպքում միայն կարող եմ շարժվել իմ ցույց տված վայրը, ուր ապահովված կլինի թրքահայ գաղթականության և զորամասերի ֆիզիկական և բարոյական գոյությունը:
5. Այս պայմանները չընդունելու դեպքում հարկադրված եմ հանուն թրքահայ վերջին մնացած բեկոր գաղթականության և զորամասերի

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 331:

* Անդրանիկը նկատի ուներ 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագիրը:

** Նկատի ուներ իր «Հարվածող զորամասը»:

ֆիզիկական և բարոյական ապահովության, զենքը վայր չդնել մինչև վերջին շունչը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ
1918 հուլիսի 30 (օգոստոսի 12), Գորիս»[1]:

Նուրի թուրք փաշան, որին հայտնի էր դարձել, որ «Շուշիի և Զանգեզուրի հայերը գաղտնի ու բացահայտ կապերի մեջ են Գանձակի գավառի լեռնային գոտում բնակվող հայերի հետ»[2], օգոստոսի 15-ին իր «պարտքը համարեց» Գանձակ քաղաքից Արցախի և Զանգեզուրի հայությանը դիմել մի կոչով, որը լեցուն էր կեղծ արտահայտություններով, սուտ խոստումներով ու սպառնալիքներով:

«Ինչ եղել է, այն անցել է,– ասված էր փաշայի կոչում: - Իմ Փադիշահի բարձրագույն հրամանով և իմ կառավարության վստահությունը վայելելով, ես, առաջին անգամ ոտք դնելով Կովկասի սահմաններին, ողջ անցյալը հանձնում եմ Ալլահի դատարանին:

... Ձեր պատրաստությունները Ղարաբաղում և շրջակայքում, Զանգեզուրի գավառում և Գանձակի գավառի լեռնային մասում ինձ հայտնի են: Ես տեսնում եմ նաև թշնամության այն կրակը ձեր սրտերում, որ պատրաստ է բռնկվել բոպե առ բոպե: Երկրի մեջ կարգ հաստատելու ձգտումով՝ անկեղծորեն խորհուրդ եմ տալիս ազգամիջյան թշնամությանը մասնակից անձանց՝ մարելու այդ թշնամության հրդեհը: Բավ է արյուն թափել»:

Ապա հետևում էին սպառնալիքներ: «Իմացե՛ք,– գրում էր Նուրի փաշան,– որ սրանից հետո եղած ձեր ապստամբությունները պիտի ուղղված համարվեն օսմանյան զորքի դեմ: Ափսոսացե՛ք ձեր անմեղ զավակների կյանքը, մի՛ տարվեք խարդախ Անգլիայի ոսկով և բանսարկություններով, որ ողջ մարդկությունը զոհ է բերում իր նվաճողական ցանկություններին, մի՛ դարձեք գործիք վաճառված մարդկանց ձեռքին»: Ապա Նուրի փաշան հույս էր հայտնում, թե «Ադրբեջանի Հանրապետության հայ բնակիչները ... առանց առարկության պիտի կատարեն ... տեղական իշխանությունների բոլոր հրամաններն ու կարգադրությունները՝ անպատասխանատու խաբեբաներին համոզելով դեպի խոհեմություն ու կարգ»[3]:

Նուրի փաշայի կեղծապատիր կոչը չէր կարող թյուրիմացության մեջ գցել Արցախի ու Զանգեզուրի հայությանը: Զորավար Անդրանիկի առաջին

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 61, թ. 8 նաև ֆ. 370, ց. 1, գ. 12, թ. 1 (տեքստը մեր կողմից դարձվել է բարեհունչ – *Ա. Ս.):*

[2] ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 1, թ. 11:

[3] «Մշակ», թիվ 38, 18 փետրվարի, 1919:

գործը եղավ գավառի պաշտպանության կազմակերպման ուղղությամբ մինչ այդ ձեռնարկված միջոցառումներին ծանոթանալը: Այդ նպատակով նա զրույցներ էր ունենում ինքնապաշտպանության գործի կազմակերպիչների և պատասխանատուների հետ, քարտեզների վրա ուսումնասիրում բնակավայրերի տեղադրությունը, հաղորդումներ լսում զանգեզուրյան մարտիկների բարոյահոգեբանական վիճակի մասին և այլն: Այդ բոլորից հետո նա իր զորամասի ուժերը բաժանեց Գորիսի շրջանի մի քանի կարևոր տեղամասերի՝ Կոռնիձոր, Խնձորեսկ, Տեղ, Խնածախ գյուղերի վրա, իսկ հիմնական ուժերը պահեց բուն Գորիս քաղաքում:

Զանգեզուր մտնելու առաջին իսկ օրերից Հարվածող զորամասը դարձավ գավառում օրինականության և կարգ ու կանոնի երաշխավոր՝ զինվորների ու սպաների անբասիր վարք ու բարքով, բարեխիղճ ու անթերի զինվորական ծառայությամբ:

Հարվածող զորամասի՝ Գորիս քաղաքում տեղակայված մի հարյուրյակի կամավորներից Սարգիս անունով մեկը քաղաքի տերտերի աղջկան փախցնելու անհաջող փորձ կատարեց: Ներկայանալով Զորավարին՝ տերտերը խնդրեց պատժել անարգ զինվորին: Անդրանիկի այն հարցին, թե կճանաչի արդյոք զինվորին, տերտերը դրական պատասխան տվեց: Զորավարի հրամանով հավաքեցին հարյուրյակի բոլոր կամավորները: Նրա թույլտվությամբ տերտերն անցավ զինվորների շարքի առջևով և ոչ մեծ դժվարությամբ ճանաչեց Սարգսին: Հենց նույն պահին շարքի առջև նրան ենթարկեց խիստ ծեծի:

Սակայն Զորավար Անդրանիկն էլ ավելի մտահոգ էր զանգեզուրյան մարտական խմբերի կարգապահության խնդրով, քանի որ այն հեռու էր բավարար լինելուց: Տեղի զինվորական մասերում հաճախ էին լինում կարգապահական խախտումներ, նույնիսկ դասալքության դեպքեր: Գավառում դժվար էր զինված մարտիկներին զանազանել զինված այն քաղաքացիներից և գյուղացիներից, որոնք ընդգրկված չէին պաշտոնական զինական կառույցների (ջոկատ, խումբ, վաշտ, հարյուրյակ) մեջ: Դա հատկապես ցայտուն էր արտահայտված Գորիս քաղաքում, որտեղ գրեթե բոլոր տղամարդիկ զենք էին կրում: Ինչպես սրանք, այնպես էլ գյուղերից տարբեր գործերով քաղաք եկած գյուղացիները, գավառային կենտրոնում միշտ շրջում էին զինված և շատ հաճախ դիմում անիմաստ հրացանաձգության՝ խանգարելով բնակիչների հանգիստը և աննպատակ սպառելով փամփուշտները:

Դիմելով Կենտրոնական ազգային խորհրդին՝ Անդրանիկը պահանջեց ամենակարճ ժամկետում անհրաժեշտ կարգ ու կանոն մտցնել: Միաժամանակ նա հրամաններ արձակեց գավառում ռազմական ժամանակաշրջանին համապատասխան կարգապահություն հաստատելու մասին:

«Զանգեզուրի գավառի հայ ազգաբնակչությանը, գաղթականությանը և զինվորականներին.

Ի նկատի ունենալով ներկայիս ծանր և լարված կացությունը, խուսափելու համար ամեն տիպի անկարգություններից, սրանով հրամայում եմ միանգամ ընդմիշտ վերջ տալ հրացանաձգություններին:

Այս հրամանը խախտող յուրաքանչյուր ոք ենթարկվում է զինվորական խիստ պատժի»[1]:

Ի կատարումն Անդրանիկի հրամանի՝ խստագույն պատիժներ սահմանվեցին նաև այն զինվորների նկատմամբ, որոնք հանցանքներ էին գործում, ինքնակամ գործողություններով նեղություն պատճառում տեղացիներին: Բնակիչներին բացատրվեց զենքով շրջելու հետևանքները: Գորիս քաղաքի զինվորական պարետ Մ. Ալավերդյանը հանդես եկավ ազդով, որը տպագրվեց ու տարածվեց նաև բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) գյուղերում:

«Հայտարարություն

Համաձայն գեներալ-մայոր Անդրանիկի կարգադրության, հրամայում եմ թե՛ քաղաքիս և թե՛ գյուղացիությանը, որ այսուհետև արգելվում է զինված շրջել: Զենք կրողները կենթարկվեն ամենախիստ պատժի ու հետ չի տրվիլ վերցրած հրացանը»[2]:

Անդրանիկի առաջարկով Զանգեզուրի ազգային խորհուրդը իր կազմում ստեղծեց զինվորական ժամանակավոր դատարան՝ գավառում տեղի ունեցող զինվորական հանցանքների դեմ պայքարելու համար:

Եռանդուն աշխատանքներ ծավալվեցին գավառի ինքնապաշտպանության ամրապնդման և հատկապես Գորիսի շրջանի սահմանների պաշտպանության ուժեղացման ուղղությամբ: Մարտական նոր խմբեր ստեղծելու համար զինվորական հրահանգիչները գյուղերում ցուցակագրեցին զենք բռնելու ունակ բոլոր տղամարդկանց, հաշվառեցին բնակիչների մոտ եղած բոլոր զենքերը և փամփուշտները, ինչպես նաև համայնքներին պատկանող զենքերը:

Անդրանիկի հրամանով ոչ միայն Գորիսի, այլև գավառի մյուս բոլոր շրջաններում հայտարարվեց 20-30 տարեկան հայ երիտասարդների զորահավաք: Միջոցառումը հաջող էր ընթանում հատկապես Սիսիանում: Այնտեղից կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանը Անդրանիկին գրում էր. «Ստացա Ձեր նամակը, վաղվանից սկսում եմ դերս կատարել: Արդեն սկսել եմ գործել դեզերտիրների դեմ ... մոբիլիզացիան խոստանում եմ անցկացնել լուրջ»[3]:

Ըստ Անդրանիկի հրամանի՝ զորակոչված յուրաքանչյուր երիտասարդ պետք է ներկայանար սեփական հրացանով և 150-200 փամփուշտով, հագնված լիներ վայելուչ, իր հետ բերեր փամփշտակալ, շինել, երեսսրբիչ, օճառ, ներքին սպիտակեղեն, ջրաման, բաժակ, գդալ, ափսե, գուլպա, մի

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 3, թ. 5:
[2] Նույն տեղում, ց. 1, գ. 47, թ. 19:
[3] Նույն տեղում, գ. 34, թ. 42:

զույգ չհագած տրեխ, նաև հացի երեքօրյա պաշար[1]: Ովքեր չունեին այս ամենը, գյուղական համայնքը պարտավոր էր տրամադրել նրանց:

Զորահավաքի արդյունքում ստեղծվեցին զինական նոր ստորաբաժանումներ, փորձված ու քաջարի գյուղացիներից նշանակվեցին պետեր: Սկսվեցին զինավարժություններ, որոնք անցկացնում էին Անդրանիկի զորամասի սպաները: Գյուղերում կազմակերպված վաշտերի կամավորներից շատերն իրենց ցանկությամբ մտնում էին Անդրանիկի Հարվածող զորամասի մեջ:

Ամեն գյուղի զինված ուժը բաժանվում էր երկու մասի՝ տեղական և թռուցիկ խմբերի: Տեղական խումբը կոչված էր պաշտպանելու գյուղը, իսկ թռուցիկ խումբը՝ նաև օգնության գնալու վտանգված հարևան գյուղերին:

Զորակոչային նշված տարիքից բարձր տարիք ունեցողները, հրամանի համաձայն, ցուցակագրվում էին իբրև տեղական պաշտպանական ուժ և ենթարկվում ենթաշրջանային կոմիսարներին: Նրանք հատկապես գիշերները հերթով էին իրականացնում դիրքապահությունը[2]:

Զորահավաքի ենթարկվեցին նաև հարյուրավոր տարեց գյուղացիներ, որոնք հարկավոր վայրերում զինվորների հետ փորում էին խրամատներ, գյուղերի բնական թույլ պաշտպանված մասերում կառուցում փոքր ծավալի ամրություններ:

Հատուկ ուշադրություն դարձվեց կանոնավոր կապի ստեղծմանը: Ճակատային բոլոր գյուղերը դաշտային հեռախոսներով հաղորդակցվում էին Գորիս քաղաքի և իրար հետ: Այդ տեսանկյունից խիստ կարևոր դեր կատարեց Նախիջևանից բերված դաշտային հեռախոսների խմբաքանակը: Դեռևս 1918 թ. հուլիսի սկզբներին, այսինքն՝ մինչև թուրքական զորքերի կողմից Նախիջևանի գավառի գրավումը, Նախիջևանի ազգային խորհրդի հատուկ կոմիտեի նախագահ, գյուղատնտես Լևոն Մինասյանը Ջուլֆայի ազգային խորհրդից ստացել էր 25 հեռախոս՝ իր պարագաներով՝ Գորիս ուղարկելու համար, ինչպես նաև երկու հեռագրական սարք՝ Գորիս քաղաքի և Նախիջևանի միջև կապ հաստատելու համար: Նախիջևանից Անդրանիկի զորամասի և գաղթականության նահանջի ժամանակ, հեռախոսները վերցրած, Զանգեզուր էր անցել նաև Լ. Մինասյանը և Տաթևում դրանք հանձնել էր Անդրանիկին[3]: Հեռախոսային և հեռագրական այդ սարքերը մեծ օգնություն եղան զանգեզուրյան պաշտպանների համար ոչ միայն գավառում Անդրանիկի գտնվելու ժամանակ, այլև դրանից հետո՝ ընդհուպ այնտեղ խորհրդային կարգերի հաստատումը:

Գորիս քաղաքում գտնվող ռազմամթերքի ու զենքի պահեստներից տեղի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 15:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 14, թթ. 1-2:

իշխանությունները բաժին էին հանում Անդրանիկի զորամասին: Օրինակ՝ մի ստացականով Գորիսի զինամթերքի պահեստը բաց էր թողել լեբել հրացանի 50, մոսինի՝ 20, բերդանի՝ 20 արկղ փամփուշտ, անհրաժեշտ քանակի ռմբաձիգ և ռումբ, 600 զինվորի համար հագուստ և կոշիկ, վրաններ և այլն[1]: Մի այլ ստացականով Հարվածող զորամասը նույն պահեստից ստացել էր հագուստ՝ 500 զինվորի համար[2]:

Գավառի (հատկապես բուն Զանգեզուրի) պաշտպանության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները, զորահավաքի հաջող անցկացումը հույս էին ներշնչում, որ թուրքական վտանգը առաջիկայում նույնպես կասեցվելու էր հաջողությամբ: Բայց պարենամթերքի խիստ պակասի պատճառով սկսվել էր մի գործընթաց, որը սպառնում էր հարվածել Անդրանիկի զորքի մարտունակությանը, հետևապես՝ խիստ թուլացնել գավառի պաշտպանական ուժը: Այդ գործընթացի կանխումը վեր էր նույնիսկ Անդրանիկի ուժերից:

Դեռ Նախիջևանից Զանգեզուր անցնելու ճանապարհին Հարվածող զորամասում նկատվել էին որոշ տատանումներ, որոնք գնալով ուժեղացան և արդեն գավառում առաջ բերեցին պառակտման և լեռնավայրից հեռանալու իրական վտանգ:

Զանգեզուրից հեռանալու առաջին բացահայտ փորձը կատարվեց Գորիս քաղաքում՝ Սմբատ Բորոյանի գլխավորած զորամասում: Այդ զորամասում էր նաև տարոնցի Պանդուխտը, որը հայտնի էր իր քաջությամբ և մեծ հեղինակություն էր վայելում զինվորների շրջանում: Նա իր շուրջը համախմբել էր մի խումբ մարտիկների, որոնց կենդանի մնացած հարազատները հանգրվանել էին Թիֆլիսում: Նա նրանց համոզել էր հեռանալ Գորիսից ու Գանձակի վրայով անցնել հարազատների մոտ: Գաղթականներից նույնպես 400-500 մարդ հարեց այդ մտքին և միացավ Պանդուխտի խմբին:

Իմանալով այդ մասին՝ Անդրանիկը չարգելեց ձեռնարկը, բայց զգուշացրեց սպասվող վտանգի մասին: Երբ խումբը մտավ Զաբուղի ձորը, շրջակայքում դարանակալած թուրք-քրդական ուժերը հանկարծակի հարձակվեցին խմբի վրա և առանձին դիմադրության չհանդիպելով՝ կոտորեցին մի մասին, իսկ մյուս մասը փախուստով վերադարձավ Գորիս[3]:

Երբ Պանդուխտն իր խմբով արդեն Գորիսից մեկնել էր, Սմբատը ժողովի հրավիրեց իր զորամասի սպայական կազմին: Այնտեղ ևս որոշվեց ամբողջ զորամասով հեռանալ Երևան: Ժողովից հետո այդ մասին Սմբատը Անդրանիկին գրել է.

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 15, թթ. 14-15:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 4:

[3] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 40ա, թ. 126:

«Այսօր մեր սոթնիի և ռոտնիի կամանտիրներու հետ, իրենց ստիպման վրա, ժողով ունեցանք, նրանք միաձայն որոշեցին յառաջիկա երկուշաբթի մեկնիլ այստեղից:

Շատ զինուորներ, համաձայն ձեր տուած յայտարարութեան, գնացեր են: Մնացածը՝ թե՛ զինուորներն ու թե՛ ղեկավարները, մեկնելու ցանկություն ունին՝ նկատի առնելով ներկա պայմանները:

Ի գիտություն քեզ հայտնում եմ:

Սմբատ»[1]:

Օրեցօր խորանում էին հեռանալու տրամադրությունները Հարվածող զորամասի մյուս ստորաբաժանումներում:

Օգոստոսի 18-ին պորուչիկ Բագրատ Ղազարյանը Անդրանիկին գրում էր.

«Հարգելի՛ փաշա,

1918 թ. հունիսի 8-ից մինչև այժմ ես պարտականություններս կատարել եմ՝ նկատի ունենալով ներկա հանգամանքները՝ թե՛ զինվորական և թե՛ տեղական պայմանները: Տեսնելով զորամասի ցրումը, քայքայումը և բոլոր ընկերների հեռանալը՝ [մտածում եմ, որ] իմ մնալը օգուտ չունի: Խնդրում եմ Ձեզ համարել ինձ ազատ, որի համար Ձեզ դիմել էի դեռ Բիստում: Փաշա՛, խնդրում եմ, չնեղանալ ինձնից: Ընտանիքիս անդամների մի մասին կոտորել են Նուխվա գավառի մեր կալվածքներում, մյուսները փախել են Թիֆլիս և այնտեղ շատ ծանր վիճակի մեջ են»[2]:

Զանգեզուրից հեռանալու տրամադրությունները արմատներ էին ձգել նաև գավառի մյուս շրջաններում տեղաբաշխված եկվոր զորամասերում: Սասնո գնդի՝ Սիսիանի Մազրա գյուղում տեղաբաշխված ստորաբաժանման հրամանատարը Անդրանիկին գրել է. «Մեր գնդի զինվորների մեջ այժմ մի տրամադրություն է առաջացել՝ գնալ Երևանի շրջան: [Նրանց] հազիվ եմ համոզել, որ մնան: Երևան գնալու ճանապարհը նկատի է առնվում Մազրայից Բազարչայ և Մարտիրոս: Այդ ճանապարհի վրա կան ընդամենը երեք-չորս թուրքական փոքր գյուղեր: Ես չեմ իմանում, թե Դուք դրա վրա ինչպես եք նայում»[3]:

Զինվորներից և սպաներից շատերը մեկնում էին Երևան՝ նպատակ ունենալով ծառայության անցնել հայկական բանակում: Մյուսների գնալը Զանգեզուրից ժամանակի հարց էր:

Զորավարը վշտացած էր, բայց մյուս կողմից նա զորքը սովից փրկելու ուրիշ ելք չէր տեսնում, ուստի հրամանատարական մի ժողովում նա ուղղակի հայտարարեց, թե քանի պարենամթերքի հարցը չէր վճռվում, ցանկացողը կարող էր հեռանալ Զանգեզուրից[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 13, թ. 4:

[2] ՀԱԱ, նույն տեղում, գ. 27, թ. 2 և շրջ.:

[3] Նույն տեղում, գ. 6, թ. 5 և շրջ.:

[4] Տե՛ս “**Наше время**”, 3 января, 1919, № 4:

1918 թ. օգոստոսի կեսերից օսմանյան և մուսավաթական զորքերը Զանգեզուրի հայերին հղած սպառնալիքներից անցան կոնկրետ գործողությունների: Հատկապես տագնապալի լուրեր էին գալիս Զանգեզուրի հարավ-արևմուտքում գտնվող Գողթանի և Գենվազի (Մեղրի) կողմերից:

Երբ 1918 թ. հուլիսին օսմանյան զորքերը գրավել էին Նախիջևանի երկրամասը, նրա Գողթան գավառակի մի մասը, որը հարում էր Կապան և Մեղրի շրջաններին, զերծ էր մնացել կոտորածներից, չնայած գտնվում էր եղեռնի ենթարկվելու մշտական սպառնալիքի տակ: Նախիջևանում տաճկական զորամասի հրամանատար Խալիլ բեյի հրամանով հուլիսի վերջերին Գողթանի նշված մասի հայերը ստիպված ընդունել էին օսմանյան հպատակություն: Տանակերտցի Քրիստափոր Տեր-Մկրտչյանը տաճիկներին ակտիվորեն օգնել էր հայերին զինաթափելու և օսմանյան լծի տակ բերելու գործում: Այդ ծառայության համար որոշ ժամանակ անց Խալիլ բեյը նրան նշանակել էր Գողթանի շրջանի պրիստավ[1]:

Զանգեզուրի հարավ-արևմուտքում ամենաթեժ կռիվները տեղի ունեցան Արևիքի (Մեղրի) շրջանում:

Նախիջևանը գրավելուց հետո օսմանյան զորքերի հրամանատարությունը համոզված էր, որ դեպի բուն Ադրբեջան, դեպի Բաքու գնալու ճանապարհին իրենք այլևս չեն հանդիպելու որևէ քիչ թե շատ լուրջ դիմադրության: Բայց այդպես չեղավ:

Բաքվից Վ. Լենինին հղած զեկուցագրերից մեկում Ստեփան Շահումյանը նկարագրում էր Նախիջևանից Զանգեզուրի ուղղությամբ օսմանյան զորքերի առաջխաղացման և այն կասեցնելու ուղղությամբ զանգեզուրցի հայերի ջանքերի մասին: Դեպի Բաքու օսմանյան նվաճողների հարձակման հավանական ուղիներից մեկը նա համարում էր Մեղրու կիրճով անցնող ճանապարհը: Շահումյանը գրում էր. «Երկաթգծի պաստառին զուգահեռ լավ ուղի կա Ջուլֆայից Արաքսի ափով և այնուհետև Մուղանով մինչև Բաքու ... Հնարավոր և հավանական է նրանք (տաճիկ զորքերը: – *Ա. Ս.*) այդ ուղղությամբ կշարժվեն անմիջապես»[2]:

Օսմանյան զորքերի հրամանատարությունը Նախիջևանից նամակներ էր ուղարկում Մեղրի՝ առաջարկելով բացել Օրդուբադից Մեղրիի վրայով Զանգեզուր տանող ճանապարհը՝ դեպի Բաքու շարժվելու համար: Մեղրեցիները ամեն անգամ վճռականապես մերժում էին ներկայացված պահանջը՝ ասելով, որ իրենք լիազորություն չունեն ինքնագլուխ գործելու, քանի որ ճանապարհը կառուցել են ռուսները, և այն պատկանում է ռուսական պետությանը, ուստի եթե օսմանյան զորքերը նպատակ ունեն այդ ճանապարհով

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 10, գ. 5, թ. 6, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 298-299:

[2] **Ս. Շահումյան**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 4, Երևան, 1978, էջ 302:

անցնել Ադրբեջան, ապա պետք է ունենան Ռուսաստանի կառավարության գրավոր թույլտվությունը:

Օգոստոսի երկրորդ տասնօրյակի սկզբին Խալիլ բեյը վերջնագիր է ներկայացրել մեղրեցիներին և պահանջել, առանց որևէ դիմադրության, ընդունել օսմանյան հպատակություն: Մեղրեցիները կտրուկ մերժել են պահանջը, որին հետևել է Էդիֆ բեյի գլխավորությամբ Օրդուբադի կողմից տաճկական մի խոշոր զորամասի հարձակումը Մեղրիի շրջանի վրա: Այդ վճռական պահին Տաշտուն գյուղում հրավիրվել է Լիճք, Վանք, Փուշկագ, Վահրավար, Գուդեմնիս, Կուրիս, Ագարակ, Մեղրի, Շվանիձոր, Մալեպ, Կարճևան և Տաշտուն գյուղերի ներկայացուցիչների խորհրդակցություն. որոշում է ընդունվել մինչև վերջ կռվել թշնամու դեմ: Գյուղերի զինված ջոկատները համախմբված դուրս են եկել թշնամու դեմ: Կապանից իրենց 52 մարտիկներով Մեղրի են անցել Անդրանիկի զորամասից անջատված Հայկ Բոնապարտյանը և Սարգիս Ջեբեջին: Բոնապարտյանը ստանձնել է Մեղրիի շրջանի զինված ջոկատների ընդհանուր հրամանատարությունը: Հարձակման անցած տաճկական զորքը հանդիպել է ուժգին դիմադրության: Մեղրու և Կապանի միացյալ հայկական զինված ջոկատներն ամուր փակել են Նախիջևանից Ադրբեջան տանող բոլոր ուղիները: Հայերի հերոսական պաշտպանության և շեշտակի հակագրոհների շնորհիվ թշնամին, մեծ թվով զոհեր տալով, ստիպված խուճապահար նահանջել է Օրդուբադ:

Պարտությունից մեկ շաբաթ անց թշնամին, համալրելով իր շարքերը մուսավաթական խմբերով, ուժեղացրեց ճնշումը Արևիքի և Կապանի սահմանների վրա, բայց այս անգամ էլ նրան չհաջողվեց էական հաջողություն ունենալ: Տեղական ինքնապաշտպանական ուժերը, Հարվածող զորամասի՝ Կապանում մնացած ու Արևիք անցած ստորաբաժանումները, խափանելով թշնամու կատաղի գրոհները, ջախջախիչ հարվածներ հասցրին նրան:

Նույն ժամանակ թշնամու սպառնալիքների դեմ միակամ ու վճռական էին կապանցիները: Օսմանյան զորամասերը և մուսավաթական հրոսակախմբերը Նախիջևանի կողմից, իսկ տաճիկ սպաների հրամանատարությամբ ադրբեջանական զինված խմբերը Զանգելանի կողմից անընդհատ հարձակումներ էին կատարում Կապանի սահմանների վրա՝ փորձելով ճեղքել հայերի պաշտպանական դիրքերը և մտնել Զանգեզուր, բայց թշնամու բոլոր փորձերը խափանվում էին հայ ինքնապաշտպանական ջոկատների բուռն հակագրոհներով:

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՍԻՍԻԱՆՈՒՄ ՄՂԱԾ ԿՌԻՎՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ՀՐՈՍԱԿԱԽՄԲԵՐԻ ԴԵՄ (1918 Թ. ՕԳՈՍՏՈՍ – ՍԵՊՏԵՄԲԵՐ)

1918 թ. օգոստոսի վերջերից շուրջ մեկամսյա լայնածավալ տևական կռիվներ տեղի ունեցան հատկապես Զանգեզուրի գավառի Սիսիանի շրջանում[1]:

Մինչ մուսավաթական զորքերը արևելքից Զանգեզուր մտնելու նոր ուղիներ էին փնտրում, օգոստոսի կեսերին Սիսիանում լուր տարածվեց, թե Նախիջևանի երկրամասը ռազմակալած օսմանյան ուժերը, որոնք գտնվում էին գնդապետ Խալիլ բեյի հրամանատարության տակ, մեծ համալրում ստանալով, պատրաստվում են հարձակման անցնել շրջանի վրա:

Սիսիանի շրջանի թուրքական բնակավայրերը, որոնց թիվը հասնում էր 25-ի, 1918 թ. ամռանը այլևս նախկին խաղաղ հողագործ գյուղերը չէին, այլ ներքաշված էին դրացի հայերի հետ ազգամիջյան վեճերի ու կռիվների մեջ: Այդ գյուղերում տաճիկ կոմիսարների, մուսավաթական բջիջների և տեղական զինված հրոսակախմբերի մասնակցությամբ եռանդուն աշխատանք էր սկսվել՝ օսմանյան զորամասի ներխուժելու դեպքում թիկունքից հարվածելու հայերին: Օսմանյան կանոնավոր բանակի սպաները և մուսավաթ գործիչները զենք ու զինամթերք էին բաժանում գյուղացիներին և նրանց հետ զինավարժություն անցկացնում: Վերջիններս հարձակումներ էին գործում հարևան հայկական գյուղերի վրա, փակում ճանապարհները, թալանում կամ սպանում պատահական հայ անցորդներին, գերում ու անհետացնում հարևան հայկական մի գյուղից մյուսը գնացող մարդկանց, հրացանաձգությամբ խանգարում շրջակա գյուղերին՝ կատարելու գյուղատնտեսական աշխատանքներ[2]:

Սիսիանի թուրքերը բացեիբաց հայտարարում էին, թե մեկ-երկու ամիս հետո ոչ միայն շրջանում, այլև ամբողջ Զանգեզուրում ոչ մի հայ չի մնալու[3]:

Սիսիանի շրջանի թուրքաբնակ գյուղերը դարձել էին Զանգեզուրում

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 85, թ. 2, **Ա. Չելեպյան**, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Երևան, 1990, էջ 522, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 323:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 51, թ. 1, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 87, 88, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 565, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 324-325:

[3] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 324:

մուսավաթականների և գերմանա-տաճկական բանակի ամրակետը, իսկ Սիսիանի տեղական փոքրաթիվ հայկական ուժերը ի վիճակի չէին միայնակ զսպելու թուրք զինված ավազակախմբերին: Այս պայմաններում անխուսափելի էին դառնում պատժիչ գործողությունները:

Նկատի առնելով, որ թշնամին գավառին սպառնում էր բոլոր կողմերից (նաև ներսից), Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը, խորհրդակցելով Սիսիանի շրջանային կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանի և շրջանի պաշտպանական ուժերի հրամանատարների հետ, օգոստոսի 10-ին որոշում ընդունեց. օգտվելով գավառի սահմաններում ժամանակավոր հարաբերական հանգիստ վիճակից՝ Գորիսի ուժերով առաջին հերթին զսպել Սիսիանի թուրքական գյուղերը և չեզոքացնել ներքին վտանգը[1]:

Շուշիի գնդի հրամանատար Միքայել բեկ Մելիք-Շահնազարյանը և գնդի կոմիսար Հովակ Ստեփանյանը, տեղեկանալով Սիսիանի թուրք ավազակախմբերի դեմ արշավանք սկսելու որոշման մասին, պատրաստակամություն հայտնեց միանալու ծրագրվող ձեռնարկին: Բայց այն համոզմունքը չկար, որ առանց Հարվածող զորամասի մասնակցության՝ արշավանքը կարող էր հաջողություն ունենալ: Ահա թե ինչու, անկասկած, Ազգային խորհրդի թելադրանքով, Ղարաբաղի և Զանգեզուրի գլխավոր լիազոր Հովակ Ստեփանյանը օգոստոսի 12-ին հետևյալ գրությունն ուղարկեց Զորավարին.

«Հայկական հարվածող առանձին զորամասի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկին.

Ի նկատի ունենալով, որ տեղիս Ազգային խորհուրդն ինձ հետ միասին, ինչպես և Շուշվա գնդի հրամանատար գնդապետ Մելիք-Շահնազարյանը, մի շարք պատճառներից դրդված՝ վճռել են զենքի ուժով բաց անել Անգեղակոթից–Գորիս–Շուշի տանող խճուղին՝ ոչնչացնելով ճանապարհի մոտ գտնվող գյուղերը, խնդրում եմ Ձեզ՝ հրահանգել Ձեր զորամասին, որ մասնակցի տեղի ունենալիք ռազմական գործողություններին, որոնց հետևանքների պատասխանատվությունը մեզ վրա է ընկնում»[2]:

Սիսիանի հայությանը իր զորամասով օգնության գնալու խնդրանքով Անդրանիկին է դիմել նաև Ազգային խորհուրդը: Զորավարը տվել է իր համաձայնությունը:

Մինչ այդ՝ դեռ օգոստոսի 8-ին, Անդրանիկի և Մ. Մելիք-Շահնազարյանի ստորագրությամբ* նամակ էր ուղարկվել Սիսիանի Բռնակոթ գյուղում

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 1, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 85-86, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 325:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 1:

* Քանի որ խոսքը վերաբերում էր Սասունի գնդին, որը միայն Անդրանիկին էր ենթարկվում, իսկ Մելիք-Շահնազարյանը այդ գնդի վրա որևէ ազդեցություն չուներ, ուստի, ամենայն հավանականությամբ, նամակի տեքստը պատրաստել էր Սիսիանում գտնվող գնդապետը և ստորագրելու ուղարկել նաև Գորիսում գտնվող Անդրանիկին:

տեղակայված Հարվածող զորամասի Սասունի գունդ՝ սասունցի Մուշեղին, որով առաջարկվել էր պատրաստ լինել ռազմական մեծ գործողության, միաժամանակ նրան հանձնարարվել էր Շուշիի գնդին պատկանող, Բոնակոթում պահեստավորված զենքն ու զինամթերքը դեռ չուղարկել Գորիս, որովհետև դրանք խիստ անհրաժեշտ են լինելու Սիսիանում լայնածավալ գործողություններ իրականացնելու համար:

Անդրանիկին և Մ. Մելիք-Շահնազարյանին հասցեագրած «օգոստոսի 12» թվակիր պատասխան նամակում Մուշեղը գրում էր. «Ստացանք ձեր երկրորդ հրահանգը՝ ապրանքներն այստեղ թողնելու … մասին: Այսօր՝ ամսոյս 12-ի վաղ առավոտյան, մենք սուրհանդակներ ենք ուղարկել ձեզ՝ նկարագրելով Նախիջևանում կատարվող անցուդարձի մասին»[1]:

Նույն Սասունի գնդից Անդրանիկը ստացավ ուրիշ մի նամակ[**], որում նշված էր. «… Մեր զինվորական աշխատանքները ընթանում են նորմալ կերպով: Նախիջևանի կողմից խուժանը սկսել է շարժվել այս ուղղությամբ՝ խճուղով: Ասում են, որ խուժանի հետ կան նաև տաճկական զորքեր՝ թնդանոթներով և գնդացիրներով, որքան է ճիշտ, չեմ իմանում. պաշտոնական ոչ մի տեղեկություն չունենք: Ղրկել եմ խոր հետախուզման՝ մինչև Սալասուզ թուրքական գյուղը, բայց դեռ չեն վերադարձել, արդյունքն անհայտ է: Այս շրջանում թե՛ տեղական և թե՛ եկվոր շատ մեծ ուժ կա. գյուղերը լիքն են զինվորներով, բայց՝ անկազմակերպ …»[2]:

Այնուհետև նամակագիրը Զորավարին հարցնում էր, թե վտանգի վերջին պահին, երբ «անկարող լինենք դիմադրել թշնամուն, ո՞ր ճանապարհով պիտի նահանջենք՝ դեպի Երևա՞ն, թե՞ դեպի Գորիս–Շուշի: Խնդրում եմ՝ այդ մասին Ձեր կարծիքը հայտնեք»[3]: Այնուհետև գնդի ներկայացուցիչը գրում էր, որ եթե հրաման լինի չնահանջել, իրենք կկռվեն մինչև վերջին փամփուշտը: «Մենք մեր ամբողջ ուժով պատրաստ ենք գործելու՝ ուր որ կամենաք և որ ուղղությամբ ուզենաք»[4]:

Վերջում նամակագիրը Զորավարին հաղորդել էր ավելի մանրամասն տեղեկություններ Սիսիանում եղած զենք-զինամթերքի մասին: «Պիտի ասեմ,– գրում էր նա,– որ այստեղ մեծ քանակությամբ մոսինի ու լեբելի փամփուշտներ կան, ինչպես և ամեն կարգի մթերք, նաև՝ երկու դաշտային թնդանոթ ու մի քանի գնդացիր: Դա Շուշվա գնդինն է, որ պիտի տանեն Շուշի և այնտեղ կազմակերպեն (նոր) գունդ: Առայժմ մենք օգտագործում ենք

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 14:

[**] Նամակի ստորագրությունից չի երևում հեղինակի ով լինելը:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 5 և շրջ.:

[3] Նույն տեղում, թ. 5:

[4] Նույն տեղում:

այդ մթերքները, ինչպես և ռազմամթերքը: Այդ հսկա ռազմամթերքով կարելի է ամիսներ կռվել»[1]:

Նամակագիրը նաև հայտնում էր, որ միջոցներ են ձեռնարկվում Շուշիի գնդի՝ Վայոց ձորում մնացած զենքի և ռազմամթերքի զգալի քանակությունը Սիսիան տեղափոխելու համար, և այդ նպատակով Սասնո գնդից այնտեղ են ուղարկվել Մուշեղի, Չոլոյի և Մանուկի 300 զինվորներ, որոնք «երեք-չորս օրից կլինեն այստեղ»[2]:

Սասնո գնդի ներկայացուցչի նամակում կային և՛ հուսադրող, և՛ տագնապահարույց հաղորդումներ, բայց մտահոգիչը Նախիջևանի կողմից միացյալ մեծ ուժերով Սիսիանի վրա թուրք-տաճկական հարձակման վտանգն էր: Հենց դա էր պատճառներից մեկը, որ երբ ստացավ դեպի Սիսիան համատեղ արշավանքի դուրս գալու Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի անունից օգոստոսի 12-ին Հովակ Ստեփանյանի գրած գրություն-խնդրանքը, Անդրանիկն անհապաղ տվեց իր համաձայնությունը:

Պետք է նշել, որ Հարվածող զորամասի՝ Զանգեզուրից հեռանալու մտադրություն չունեցող հրամանատարների մի մասն այն կարծիքին էր, որ եթե զորամասն անցներ Սիսիան, ապա մուսավաթական ուժերը, ոգևորված դրանից, լայնածավալ հարձակում կսկսեին բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) արևելյան սահմանների վրա, որոնք դեռ կարիք ունեին ամրապնդման և համալրման: Այս տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ իր զորքի հիմնական ուժերն Անդրանիկը պետք է կենտրոնացներ Գորիսի շրջանի Տաթևի ենթաշրջանում, որն անմիջականորեն հարում էր Սիսիանի շրջանին: Այդ դեպքում այնտեղից հնարավոր կլիներ վտանգի պահին արագ օգնության հասնել և՛ Սիսիանի, և՛ Գորիսի պաշտպաններին:

«Ձեր Տաթև փոխադրվելը,– գրում էին Զորավար Անդրանիկին,– շատ կարևոր է: Նախ՝ կենտրոն է, երկրորդ՝ Ձեր ներկայությունը կոգևորի տեղական ժողովրդին, ով գործնականապես ակտիվանալու տրամադրություն և նշաններ է ցույց տալիս: Եթե մեզ հաջողվի ժողովրդի (Տաթևի ենթաշրջանի: – *Ա. Ս.)* ուժերը շարժման մեջ դնել, վստահ եմ, որ մեծ գործ կարելի է տեսնել»[3]:

Բայց վճիռն արդեն կայացած էր, և Սիսիան տեղափոխվելու հարցն այլևս վիճահարույց չէր: Սակայն երաշխիք չկար, թե տեղափոխվելու ընթացքում ամեն բան հեշտ ու խաղաղ կանցներ՝ հաշվի առնելով Սիսիանի շրջանի թուրք գյուղերի բացահայտ խռովարար վիճակը:

Ռազմատենչ ավազակություններով, հանդուգն կողոպուտներով և սպանություններով հատկապես աչքի էին ընկել Սիսիան–Գորիս խճուղու մեր-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 5:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, թ. 5-ի շրջ.:

ձակայքի Աղուդի, Վաղուդի և Ուրուտ գյուղերի թուրքերը: Նրանք բացեիբաց հայտարարում էին, որ երբեք չեն ենթարկվի ո՛չ Զանգեզուրի ազգային խորհրդին և ո՛չ էլ Անդրանիկին, որ իրենց համար միակ օրինական իշխանությունը Ադրբեջանի կառավարությունն է: Այդ գյուղերի թուրքերը խաղաղ ժամանակ էլ հանգիստ չէին մնում, բայց այժմ, փակելով Գորիս–Սիսիան ճանապարհը, դադարեցրել էին հայերի երթևեկությունը, ուստի հաղորդակցությունը ստիպված կատարվում էր Գորիս–Շինուհայր–Յայջի–Դարաբաս–Ղարաքիլիսա կրկնակի երկար ու դժվարին լեռնային կածաններով, որոնք անմատչելի էին սայլերի համար: Պարզ է, որ Հարվածող զորամասն իր գումակով, հոծ գաղթականության հետ չէր կարող անցնել այդ երթուղով [1]:

Հետևաբար անհրաժեշտ էր խճուղին բանալ հայերի համար, և դա դժվարին կացության առջև կանգնեցրեց Անդրանիկին: Նա դեմ էր, որ վերսկսվեն ազգամիջյան կռիվները Զանգեզուրում, իսկ խճուղին ուժով բանալը կարող էր հանգեցնել այդպիսի կռվի:

Ահա այդպիսին էր դրությունը Սիսիանի թուրքական այն գյուղերում, որոնց տարածքներով ստիպված էր անցնել Անդրանիկը: Զորավարը լավ գիտեր թուրքերի իրական ուժի մասին, գիտեր, որ նրանք շատ թույլ էին իր տրամադրության տակ եղած ուժերի համեմատ և եթե փորձեին ճակատել, համոզված էր՝ երկու-երեք ժամ հազիվ դիմանային: Չնայած Անդրանիկն ամեն ինչ արեց, որ խուսափեր Սիսիանի թուրք գյուղերի հետ ընդհարվելուց, բայց դա նրան չհաջողվեց:

Սիսիան անցնելու որոշումն ընդունելուց անմիջապես հետո Անդրանիկը մշակել էր նաև մանրամասն հրահանգ՝ խճուղով զորամասի և գաղթականության անցնելու կարգի մասին, որը պիտի բացառեր ամեն տեսակ միջադեպ, եթե թուրքերը նույնպես իրենց կողմից բարի կամք դրսևորեին: Հրահանգը կազմելուց հետո Զորավարը նախապես գրավոր հայտնեց թուրք գյուղերին, որ իր զորամասն անցնելու է խաղաղությամբ և ոչ մի շփում չի ունենալու նրանց հետ: Բացի այդ՝ թուրք գյուղեր ուղարկվեց գորիսեցի և սիսիանցի հեղինակավոր ծերունիներից կազմված մի պատվիրակություն, որը, գնալով Սիսիանի թուրքական մի շարք գյուղեր, հայտնել էր առանց կռվի Անդրանիկին ճամփա տալու մասին: Զորավարի առաջարկը սկզբում հավանություն էր գտել. Վաղուդի, Աղուդի, Շաքի, Ղզլջուղ և այլ գյուղերի աղսախկալ թուրքերը խոստացել էին ազատ ճամփա տալ զորամասին ու գաղթականությանը, ամեն միջոց ձեռք առնել՝ ընդհարման տեղիք չտալու համար:

Զորքին խստագույնս հրամայված էր գնալ միմիայն կենտրոնական խճուղով, խիտ շարքերով, թուրք գյուղերի մոտ ոչ մի պատճառաբանությամբ կանգ չառնել: Արգելված էր ճանապարհին ձիերը ջրել, կերակրել, արածեցնել, արտե-

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 324:

ից բերք վերցնել: Ըստ պայմանավորվածության՝ օգոստոսի 27-ին, այսինքն՝ զորամասի անցնելու օրը, թուրքերը չպետք է աշխատանքի դուրս գային խճուղամերձ դաշտերը: Եվ եթե պատահմամբ թուրքեր հանդիպեին, ապա զինվորներին և գաղթականներին խստիվ պատվիրված էր նրանց հետ խոսքի չբռնվել, որևէ բան չհարցնել:

Մի խոսքով՝ կարծես բոլոր միջոցները ձեռք էին առնված:

Հավատացած լինելով, որ ոչ մի թյուրիմացություն տեղի չէր ունենալու, զորամասը հանգիստ, անփույթ առաջանում էր և նոր էր մտել Սիսիանի տարածք, երբ, նախապես ձեռք բերած պայմանավորվածության հակառակ, Գորիս–Սիսիան խճուղու ձախ կողմում գտնվող Աղուդի և Վաղուդի գյուղերի զինված ավազակախմբերը, որոնք տաճիկ և մուսավաթ սպաների գլխավորությամբ վաղօրոք դիրքավորվել էին ճանապարհի երկու կողմերում և կազմ ու պատրաստ սպասում էին Անդրանիկի զորամասի մոտենալուն, հրացանային կրակ բացեցին[1]:

Առաջապահ ջոկատի հրամանատար սեբաստացի Զատիկը, սպիտակ թաշկինակը թափահարելով, առաջացավ դեպի թուրքերի դիրքերը և բարձրաձայն կոչ արեց դադարեցնել կրակը, քանի որ կար համաձայնություն՝ զորքի ու գաղթականության խաղաղ անցնելու մասին: Սակայն թուրքերը նրան պատասխանեցին հայհոյանքներով ու կրակոցներով սպանեցին վերջինիս: Ջոկատի զինվորներն անմիջապես մարտական դիրք ընդունեցին, և սկսվեց կռիվը:

Անդրանիկը մի քանի հոգու հետ կանգնել էր Վաղուդիի վերևի մի բլրակի վրա, որտեղից մի սայլուղի իջնում էր ներքև՝ դեպի գյուղ: Վաղուդին երևում էր, ինչպես ափի մեջ:

Ամեն կողմից լսվում էր ուժեղ հրացանաձգություն: Ներքևից՝ Վաղուդի գյուղի կողմից, բլրակի ուղղությամբ կրակը գնալով ուժեղանում էր: Արդյո՞ք թուրքերը կռահել էին, որ այդտեղ կանգնած էր ինքը՝ Անդրանիկը, թե՞ դա միայն պատահականություն էր[2]:

Կռիվը կարճ տևեց: Ուժերը միանգամայն անհավասար էին: Վաղուդիի զինյալները, չկարողանալով դիմանալ հայ մարտիկների գրոհներին, թողնելով իրենց դիրքերը, խմբերով սկսեցին փախչել և մտնել գյուղ: Դիրքավորվելով այնտեղ՝ նրանք շարունակեցին հրացանաձգությունը: Անդրանիկի զինվորները նրանց ճնշում էին դիպուկահար կրակով: Քիչ անց գյուղում տեղ-տեղ ծուխ բարձրացավ: Հրդեհվում էին խոտի դեզեր ու շենքեր: Հայ զին-

---

[1] Տե՛ս “Наше время”, 3 января, 1919, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 87, *նույնի՝* Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 77-78, **Ա. Չելեպյան**, նշվ. աշխ., էջ 518-520, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 567-568, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 335-336, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 215-216:

[2] Տե՛ս նույն տեղում:

վորները դեռ գյուղ չէին իջել, հետևաբար հրդեհողները իրենք՝ թուրքերն էին: Դա նշանակում էր, որ գյուղը դադարեցնում էր դիմադրությունը: Վերջապես գյուղի ծայրից երևացին փախստականները. փախչում էին բաց դաշտով՝ ծանրաբեռնված տնային իրերով, գրկած կամ շալակած երեխաներին, քշելով անասունները:

Փախստականների միջից երիտասարդները մերթընդմերթ կանգ էին առնում, հարմար դիրք գրավում, մի պահ անկանոն կրակում զորամասի կողմը ու նորից վազեվազ գնում միանում իրենց խմբին: Նրանցից զատվեցին մոտ երկու տասնյակ ընտիր ձիավորներ ու լքելով ժողովրդին՝ սրարշավ անհետացան Որոտանի ձորում: Անշուշտ, գյուղի ղեկավարներն էին և օսմանյան էմիսարները, որոնք, ժողովրդին թողնելով կրակի տակ, փախուստով փրկում էին իրենց կյանքը:

– Խեղճ, անտե՛ր ժողովուրդ,– դառնությամբ ասաց Անդրանիկը և դառնալով դեպի շրջապատը՝ ավելացրեց,– տեսնո՞ւմ եք, ամեն տեղ տուժվողը միշտ էլ ժողովուրդն է:

Ապա, կանչելով սուրհանդակին, հրամայեց սրարշավ հասնել զորամասի ձիավորներին և հայտնել, որ փախչողներին հետապնդելը դադարեցնեն: Անդրանիկի հրամանը վաղուդցիներին հնարավորություն տվեց առանց կորստի հեռանալու կռվի դաշտից[1]:

Երբ հայ զինվորները մտան Վաղուդի, ոչ ոք այլևս չկար այնտեղ: Բայց շուտով պարզվեց, որ մի խումբ զինված վաղուդցիներ, չհասցնելով կամ չուզենալով փախչել, թաքնվել էին գյուղից ոչ հեռու գտնվող ձորակի այրերում: Առաջարկություն եղավ պաշարելու այրերը և ձեռնառումբեր նետելով ոչնչացնելու նրանց: Անդրանիկը կտրականապես մերժեց այդ առաջարկը և հրամայեց վերացնել պաշարումն ու հետապնդումը:

– Թող գնան հասնեն իրենց ընտանիքներին,– ասաց Անդրանիկը և քիչ անց կարգադրեց թողնել Վաղուդին ու բարձրանալ Եռաբլուր (Ուչ-Թափա):

Այդ գիշեր Անդրանիկը անցկացրեց այնտեղ՝ իր վրանում: Զինվորական խորհրդակցությունից հետո էլ վրանը լի էր մարդկանցով: Մեղրամոմի աղոտ, բեկբեկուն լույսի տակ հազիվ նշմարվում էին մարդկանց դեմքերը: Տիրում էր մի տեսակ անբացատրելի տխրագին լռություն: Ամենևին չէր զգացվում, որ հաջողություն էին ունեցել[2]:

Շարունակելով ճանապարհը՝ Զորավարը կանգ չառավ Սիսիանի կենտ-

---

[1] Տե՛ս "Наше время", 3 января, 1919, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 87, *նույնի*՝ Անդրանիկը Սիւնեաց երկրում, «ՎԷմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 77-78, **Ա. Չելեպյան**, նշվ. աշխ., էջ 518-520, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 567-568, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 335-336, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 215-216:

[2] Տե՛ս նույն տեղում և ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14, թթ. 24-30:

րոն Ղարաքիլիսայում. ուղղություն վերցրեց դեպի Անգեղակոթ: Ճանապարհին զորքը հանդիպեց նաև Շաքիի թուրքերի զինված դիմադրությանը: Զանգեզուր մտնելու նպատակով Խալիլ բեյը Նախիջևանից ամուր կապ էր հաստատել Սիսիանի թուրքաբնակ բոլոր գյուղերի, հատկապես Շաքիի հետ[1]:

Հասնելով Շաքի՝ Անդրանիկը ճանապարհը բացելու առաջարկ արեց Շաքիի բնակիչներին: Գյուղ մտած հայ պատվիրակները, երբ հանդիպում ունեցան տեղի ուսուցիչ, մուսավաթական գործիչ Աբդուլազիմ Ռուստամովի հետ, վերջինս բացեիբաց ասաց. «Անդրանիկը մեզանից ճանապարհ է ուզում, իսկ օսմանցիները մեզանից պահանջում են ճանապարհ չտալ: Մեր գյուղի մեծատունները որոշել են ճանապարհ չտալ, իսկ տալու դեպքում պահանջել 25 հազար ռուբլի»[2]:

Նման հանդգնությունը պետք է իր արժանի պատասխանը ստանար: Զորավարի հրամանով զորքը գրոհեց և ճանապարհից վերացրեց արգելքը: Բացի Շաքի գյուղից, որի բնակիչները փորձեցին դիմադրել հայկական զորքին, Սիսիանի մնացած թուրքական գյուղերը գերադասեցին խոհեմություն հանդես բերել և հայտարարեցին Զանգեզուրի իշխանություններին ենթարկվելու մասին:

Օգոստոսի 29-ին Զորավարն իր զորքով ու գաղթականներով հասավ Անգեղակոթ և այստեղ ժամանակավորապես հաստատեց իր ռազմակայանը[3]: Նույն օրը նա Անգեղակոթից նամակ գրեց՝ ուղղված Գժաձորի, Նորսի և Նորս Մազրայի, Գյոմուրի գյուղական կոմիսարներին, Ազգային խորհրդին և բնակչությանը: Նա կոչ արեց անհապաղ զորահավաք (զորակոչ) հայտարարել և վճռական դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին[4]:

Հարվածող զորամասի՝ Սիսիան տեղափոխվելուց հետո, բնականաբար, թուլացավ բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) և Կապանի պաշտպանությունը: Իսկ Բաքուն, տեղեկանալով, որ Անդրանիկը հեռացել է Սիսիան, որոշեց ուժեղացնել ճնշումը Զանգեզուրի արևելյան շրջանների վրա: Մինչ հարձակում սկսելը Ադրբեջանի կառավարությունը փորձեր արեց Զանգեզուրին տիրանալ Նախիջևանում օսմանյան զորքերի հրամանատար Խալիլ բեյի օրինակով:

Բաքվի կողմից Զանգեզուրի գավառի (հայկական և թուրքական մասերի) ընդհանուր պարետ նշանակված կապիտան Իզզահ բեյը օգոստոսի 27-ին գավառի թուրքական մասի կենտրոն Դոնդարլու գյուղից Զանգեզուրի հայե-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 84, թ. 1-3, 13, գ. 85, թ. 1, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 87, *նույնի՝* Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 78, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 336-337, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 216:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 85, թ. 1:

[3] Տե՛ս **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 16, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 337:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 14:

ին ուղղեց մի կոչ, որում նշված էր. «Մարդասիրական բուռն զգացումով լցված հայտարարում եմ բոլոր զանգեզուրցիներին՝ առանց ազգի և դավանանքի խտրության համախմբվեցե՛ք և այսուհետև համատեղ հոգացե՛ք ձեր գավառի բարօրության ու բարգավաճման մասին, որը հնարավոր կդառնա միայն Ադրբեջանի սահմանների մեջ: Ուստի ես պատրաստ եմ ձեզ մոտ ուղարկել մի հեղինակավոր հանձնախումբ, որը ձեզ հետ կքննարկի այն հարցը, թե Զանգեզուրն ինչպիսի խաղաղ եղանակով պետք է ենթարկվի Ադրբեջանի իշխանությանը: Հանձնախմբի բոլոր կարգադրություններին պետք է հնազանդվել, ինչպես վայել է ամեն մի հայրենասեր քաղաքացու, հակառակ դեպքում հանցավորները կենթարկվեն ամենախիստ պատասխանատվության և պատժի»: Միաժամանակ Իզզահը Զանգեզուրի հայերին խորհուրդ է տալիս «լինել բարի ու հավատարիմ, չրմբոստանալ և չխախտել երկրի անդորրությունը»[1]:

Զանգեզուրցիների համար պարզ էր, որ դա հերթական խորամանկ խաղն էր:

Ելնելով ստեղծված վտանգից՝ Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը սեպտեմբերի 4-ին գավառում հայտարարեց ռազմական դրություն և Զանգեզուրի դիկտատոր հայտարարեց Շուշիի գնդի հրամանատար Մ. Մելիք-Շահնազարյանին մինչև Անդրանիկի վերադարձը Սիսիանից: Այդ մասին տպագրված ազդում ասված էր.

«Ծանր օրեր է ապրում Զանգեզուրը: Դրությունը ժամ առ ժամ օրհասական է դառնում հայ ժողովրդի համար:

Մեզ հարկավոր է ուժեղ և վճռական իշխանություն ու երկաթյա կարգապահություն:

Այդ առիթով Կենտրոնական Ազգային խորհուրդը հայտնում է ի գիտություն Զանգեզուրի ժողովրդին, որ այսօրվանից գավառումս մտցվում է պաշարողական (осадное) դրություն և գավառիս զինվորական ***դիկտատոր*** է ընտրված Շուշվա գնդի հրամանատար գնդապետ (Միքայել բեկ) Մելիք-Շահնազարյանը»[2]:

Հաջորդ օրը Մելիք-Շահնազարյանը տվեց իր առաջին հրամանը.

«Հրաման Զանգեզուրի գավառին

Հ. 1

Այսօրվանից Զանգեզուրի կենտրոնական Ազգային խորհրդի կողմից ընտրված եմ զինվորական դիկտատոր, որի առթիվ հայտարարում եմ.

1) Զանգեզուր գավառը պաշարողական (осадное) դրության մեջ: Ամեն տեսակի անհնազանդությունը կամ իմ հրամանները չկատարողները ենթարկվելու են մահվան պատժի:

---

[1] ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 25, թ. 1:

[2] Նույն տեղում, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 17:

2) Ի նկատի առնելով ներկա օրհասական ժամանակը, հրամայում եմ նրանց, որոնք ընդունակ են զենք կրելու, իմ հրամանը լսելուն պես պետք է ներկայանան իմ ցույց տված տեղը:

3) Իշխանության դեմ եղած ագիտացիան և քննադատությունը կխեղդվեն իմ ուժով և միջոցներով:

4) Ինձ օգնականներ եմ նշանակում կապիտան Բորտին և քաղաքացի Սաքոյին*:

1918 թ. 5-ին սեպտեմբերի. Գորիս.
Զինվորական դիկտատոր,
Գնդապետ
/ստորագրություն/»[1]:

1918 թ. սեպտեմբերի առաջին օրերին Զանգեզուրի սահմաններում հարաբերական հանգիստ էր: Դրա պատճառն այն էր, որ տաճիկները և Ադրբեջանի թուրքերը, իրենց ողջ ուժերը նետելով Բաքվի դեմ, բնականաբար թուլացրել էին ճնշումը Արցախի ու Զանգեզուրի վրա:

Օգտվելով դրանից՝ Անդրանիկը անցավ Հարվածող զորամասի շարքերի վերակազմության, տեղական զինված ուժերի թվի ավելացման ու մարտունակության բարձրացման, շրջանի պաշտպանության ամրապնդման գործին:

Անդրանիկն այդ գործն առաջին հերթին սկսեց հենց Անգեղակոթից: Գյուղը գտնվում էր Նախիջևանից Սիսիան եկող ճանապարհի սկզբին՝ Բիչանակ լեռան ստորոտում: Անհրաժեշտ էր փակել ճանապարհի մուտքը և պատնեշ ստեղծել թշնամու առջև: Հարվածող զորամասի մի հարյուրյակ Զորավարն ուղարկեց Բիչանակ լեռան բարձունքը՝ հսկելու համար ճանապարհը[2]:

1918 թ. սեպտեմբերի 5-ին Անդրանիկը Սիսիանի ընդհանուր շրջանային կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանի խնդրանքով խորհրդակցության հրավիրեց Սիսիանի 4 ենթաշրջանների կոմիսարներին և 14 հայ գյուղերի ներկայացուցիչներին: Օրակարգում դրված էին մի քանի կարևոր հարցեր՝ Հարվածող զորամասի՝ Սիսիանի շրջանում մնալու և նրա պահանջներին բավարարություն տալու հնարավորությունները, զորահավաք անցկացնելը, տեղի վաշտերի պարենավորման խնդիրը, Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին մասնակցելու համար Սիսիանից երկու ներկայացուցիչներ ընտրելը և Սիսիանի շրջանի ընդհանուր կոմիսարի ընտրության հարցերը[3]:

---

* Հավանաբար խոսքը վերաբերում է Համբարձում Սարգիսջանյանին (Յապոնացի Սաքո):

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 6:

[2] Տե՛ս **Յ. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 59, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 357:

[3] Տե՛ս "Наше время", 3 января, 1919, № 4, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 89, *նույնի՝* Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 59, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 354, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 218:

Զորավարը հանդես եկավ ելույթով, ապա ցանկացավ պարզել՝ Սիսիանը կկանգնի՞ իր կողքին, թե՞ ոչ, սիսիանցիները փափագու՞մ են Զորավարին տեսնել իրենց մոտ, թե՞ ոչ: Նրանք կուզե՞ն կռվել, թե՞ խաղաղ ապրել ու ենթարկվել ամեն տեսակ ռեժիմի: Եթե համաձայնեին, որ Անդրանիկը մնար, այդ դեպքում պետք է զորահավաք կատարվեր, և ապագայում որևէ դժգոհության տեղիք չտալու համար ի սկզբանե հանձն առնվեր զորամասի պարենավորման հոգսը: Ապրելու համար, շեշտում էր Անդրանիկը, սիսիանցիները պետք է պատրաստ լինեին մեռնել զենքը ձեռքին: Ինչ վերաբերում էր շրջանի ռուս մոլոկաններին, ապա նրանք իրենց նախնիների պես չպետք է հրաժարվեին արյուն թափելուց այս լեռների վրա, որը նաև իրենցն էր[1]:

Պատասխան ելույթում Զաքար Տեր-Ղազարյանը հայտարարեց, որ Սիսիանի հայությունը գոհ է և ուրախ, որ Զորավարը ժամանել է իրենց երկրամաս: Նույն միտքն արտահայտեց նաև Դարաբասի ենթաշրջանի կոմիսար Դավիթ Տեր-Մկրտչյանը[2]:

Առաջին ենթաշրջանի (Բազարչայի) կոմիսար Ռոդիոն Կասմինինն իր ելույթում նշեց, որ իրենից առաջ հանդես եկած երկու կոմիսարների հայտարարությունը, թե Սիսիանը պատրաստ է օգնել գեներալին, պետք չէ լուրջ ընդունել. դա նրանց անձնական կարծիքն է: Անհրաժեշտ է ժողովրդի կարծիքն իմանալ, այլ ոչ թե մեկ-երկու ղեկավարի: Այդ նպատակով պետք էր ամեն մի գյուղից ընտրել 5-6 ներկայացուցիչ և բոլորի ներկայությամբ քննության առնել շատ լուրջ խնդիրը: «Գեներալի զորամասի հիմնական ուժին՝ թվով 700 զինվորի, մենք չենք կարող կանոնավոր կերակրել»[3],– վերջում շեշտեց նա:

Ռ. Կասմինինի ելույթից հետո կրկին հանդես եկավ Զորավարը և նշեց, որ նրա ասածները ճիշտ են, և ինքն էլ խիստ մտահոգ է, քանի որ մինչև այժմ զինվորները մերկ ու քաղցած են, իսկ տեղացիներից ոչ մեկը դեռ ինքնակամ որևէ օժանդակություն ցույց չի տվել: Անդրադառնալով Ռ. Կասմինինի այն առաջարկին, թե որոշում կայացնելու համար պետք է ընդհանուր ժողով հրավիրել՝ Անդրանիկն ասաց. «Ոչինչ, գումարեք ժողովը և որոշում տվեք: Իսկ մինչ որոշում ընդունելը պետք է զինվորներիս նայեք ու կերակրեք»[4]:

Զորավարը առաջարկեց այլևս չշարունակել խորհրդակցությունը, դադարեցնել մտքերի փոխանակումը և օրակարգի բոլոր հարցերը տեղափոխել ընդհանուր ժողով: Որոշում ընդունվեց ընդհանուր ժողովը հրավիրել առաջիկա կիրակի օրը՝ սեպտեմբերի 8-ին, որպեսզի յուրաքանչյուր կոմիսար

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 5, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, մարտ, թիւ 5 (149), էջ 89, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 354-355, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 218:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 5, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 355:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 355:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5-ի շրջ., **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 356:

ժամանակ ունենար ժողովրդի ներկայացուցիչների հետ խորհրդակցելու և արդյունքը գրավոր ներկայացնելու ժողովի նախագահությանը[1]:

Սիսիան հասնելուն պես Հարվածող զորամասի մի շարք ստորաբաժանումներում իսկական շարժում սկսվեց՝ աստիճանաբար, խումբ առ խումբ Զանգեզուրից տարբեր կողմեր և առաջին հերթին Երևան հեռանալու համար[2]: Թեև Անդրանիկը ներքուստ շատ ծանր էր տանում այդ գործընթացը, բայց արգելք չէր ստեղծում հեռացողների համար: Նա հատկապես խոր ապրումներ ունեցավ, երբ 1500 զինվորներով Զանգեզուրը թողեց Սմբատը: Վերջինս իր մեկնելը պատճառաբանում էր Հայաստանի Հանրապետությանը ծառայելու ցանկությամբ: Նպատակը թեև ազնիվ էր, բայց Անդրանիկի սրտով չէր: «Չնայած գոնե կարճ ժամանակով ինձ հետ մնալու իմ խնդրանքներին, նրանք չլսեցին ինձ»[3],– դառնությամբ ասել է նա:

Զանգեզուրից հեռանալու տրամադրությունները համակեցին նաև Շուշիի և Գանձակի գնդերին: Գանձակի գնդի հրամանատար պոդպորուչիկ Մ. Հովհաննիսյանը Անդրանիկին գրել է հետևյալ զեկուցագիրը. «Պատիվ ունեմ զեկուցելու Ձեզ, որ գնդումս (իրականում՝ գումարտակ: – *Ա. Ս.)* եղող սպաները և զինվորները դիմել են ինձ և խնդրել միջնորդել Ձեր առաջ, որ Դուք թույլատրեք նրանց վերադառնալ Երևան, մտնել հայկական գնդերը կամ թե հնարավորություն ստեղծեն այնտեղից վերադառնալու հայրենիք (այսինքն՝ Գանձակ), որովհետև տարուց ավելի կտրված են ընտանիքից և հայրենիքից: Բացի դրանից, սպայությունը և զինվորությունը աչքի առաջ ունեն, որ այստեղով անցնելը Շուշի, ապա՝ Գանձակ, հարցական է, իսկ վերահաս ձմեռը ստիպում է նրանց օր առաջ տեղափոխվել»[4]:

Զորավարին մեծ ցավ պատճառեց նաև Սասունի գնդում Մանուկի գլխավորած շարժումը: Թեև այս դեպքում նույնպես Անդրանիկը որևէ արգելք չհարուցեց, բայց, այնուամենայնիվ, նպատակահարմար գտավ նախատինքի մի քանի խոսք ուղղել նրան: Սեպտեմբերի 2 (15)-ին Անգեղակոթից Մանուկին գրած նամակում կար սրտի ցավով թղթին հանձնած այս տողերը.

«Մանուկին.

Ամենի հայտնածի համաձայն որոշած եք եղեր մեկնել այս շրջանէն և անցնիլ Դարալակեազ: Սիսիան մնալ որոշելէ վերջ չեմ հասկնար ինչու այտ նոր որոշումը. երևի կամք ըսուած բանը չկայ Ձեզ մոտ: Ինկած այնքան նահատակներու անունով ես Ձեզ առաջարկում եմ մնալ: Մեր գործը արդեն որոշ չափով յաջողութեան մեջ է: Հակառակ պարագային եթէ համառիք ու մեկնիք, այն ատեն իրավունք ունինք Ձեզ նկատելու ոչ թե յեղափոխական

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5-ի շրջ., **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 356:

[2] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 349-353:

[3] “Наше время”, 3 января 1919, № 4, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 16:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 27, թ. 5:

տեմպերամենտ ու վրեժի ծարավ ունեցող հայեր, այլ լոկ ավանտիւրիստներ»[1]:

Զանգեզուրի խնդիրը գնալով դառնում էր ավելի տագնապահարույց, ինչպես գավառի ողջ հայության, այնպես էլ անձամբ Անդրանիկի համար: Ուստի լեռնավայրից ամեն մի զինվորի հեռանալը մի հարված էր նրա պաշտպանության գործին:

Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը, Շուշիի գնդի հրամանատար գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանը և Հովակ Ստեփանյանը Անգեղակոթ հղած նամակում գրում էին, որ եթե Զորավար Անդրանիկը որոշել է առայժմ մնալ Սիսիանում, պետք է փորձի լուծել բուն Զանգեզուրի համար խիստ կարևորություն ներկայացնող մի շարք հարցեր, այն է՝ Հարվածող զորամասի միջոցով Գորիսի համար Մալիշկայից տեղափոխել տա Շուշիի գնդի այնտեղ մնացած երկու թնդանոթները և արկերը, ինչպես նաև նույն գնդին պատկանող Սիսիանում գտնվող ռազմամթերքը առաքի Գորիս: Նաև հարց էր բարձրացվում, որ Սիսիանում Հարվածող զորամասի ստորաբաժանումներից կազմվեր մի գումարտակ և ուղարկվեր Գորիս, որպեսզի միջոցը կամ առիթը ներկայանալու դեպքում Շուշիի գնդի հետ զենք ու զինամթերք հասցվեր Արցախ:

Անդրանիկը պատասխանել է. «Խնդիրներից ոչ մեկը հնարավորություն չունեմ կատարելու, որովհետև Սմբատը իմ բանակի մեծ մասի հետ մեկնել է Երևան: Ինձ մոտ հիմա ընդամենը ունեմ 300 ձիավոր և նույնչափ հետևակ, որոնց կազմակերպման խնդրով եմ զբաղված: Եթե ձեզանից մարդ կա այդ խնդիրներով զբաղվելու, ես հնարավորության սահմաններում կօժանդակեմ ձեզ: Սասնա պոլկի հարցը առ այժմ առկախ է. նրանք ևս գնալու տրամադրություն ունեն»[2]:

Հարվածող զորամասից Զանգեզուրում մնացել էր զորքի միայն մեկ երրորդը՝ ընդամենը 1200-1300 հոգի, բայց դա բավական եղավ, որ Զորավարը ձեռնարկի Սիսիանի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպումը: Մնացողները ազգային հերոսին մինչև վերջ նվիրված մարդիկ էին, որոնք պատրաստ էին նրա հետ դիմակայել բոլոր վտանգները և կիսել դժվարությունները: Զանգեզուրի ազգային խորհրդին և Մ. Մելիք-Շահնազարյանին սեպտեմբերի 4-ին Անգեղակոթից գրած նամակով Զորավարը կրկին հիշեցնում էր, որ երկու թնդանոթները՝ իրենց արկերով, Մալիշկայից Գորիս հասցնելու համար առաջին հերթին պետք է հոգա ոչ թե Սիսիանը, այլ Գորիսը: Նա ավելորդ չէր համարում զգուշացնել, որ թնդանոթներից մեկի անիվը չկա, հետևապես այն շատ դժվար է լինելու փոխադրել: Անդրանիկը պահանջում էր առաջադրանքը կատարելու համար Դարալագյազ ուղարկել շտաբս-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 16:
[2] Նույն տեղում, գ. 35, թ. 26:

կապիտան Յակով Ռոմանովիչ Բորտին կամ Հովակ Ստեփանյանին՝ խոստանալով նրանց ուղեկցելու համար տրամադրել մեկ հարյուրյակ զինվոր: Միաժամանակ թնդանոթները և արկերը տեղափոխելու համար նա հրահանգում էր բուն Զանգեզուրի 22 գյուղերից մոբիլիզացնել 350 ձի[1]:

Սեպտեմբերի 6-ին Անգեղակոթում Անդրանիկը տվեց իր առաջին հրամանը, որը վերաբերում էր Հարվածող զորամասին: Քանի որ զորամասից հեռացել էր ստորաբաժանումների հրամանատարների կեսից ավելին, և Զորավարը նշանակել էր նորերի, ուստի հրամանի առաջին կետով զորամասի ողջ զինվորական կազմին տեղյակ էր պահվում, թե ովքեր են ստորաբաժանումների նորանշանակ հրամանատարները: Զորամասի բոլոր պաշտոնյաներին հրամայվում էր անհապաղ ստանձնել պարտականությունները: Զորավարը պահանջում էր խիստ կարգապահություն հաստատել ինչպես սպայակազմի մեջ, այնպես էլ բոլոր ստորաբաժանումներում: Սպաները պարտավոր էին մարզանքներ կատարել շաբաթական երեք անգամ, իսկ այրուձին և հետևակը՝ ամեն օր, ըստ որում՝ հեծյալները՝ մեկ ժամ, հետևազորայինները՝ երկու: Հրամայված էր խստորեն հետևել աստիճանահարգությանը. բոլոր սպաներն ու զինվորները պարտավոր էին պատիվ տալ իրենց մեծավորներին: Հրամանով կարգավորվում էր հրամանատարությանը ստորաբաժանումներից տեղեկություններ տալու գործը, լուծվում էին պահակային ծառայության հստակեցման, անձնակազմի սննդի կազմակերպման և այլ հարցեր: Հրամանի պահանջները չկատարողները ենթակա էին խիստ պատիժների:

Հրամանը, որը բաղկացած էր 11 կետից, կարևոր նշանակություն ունեցավ Հարվածող զորամասի խիստ նոսրացող շարքերում ստորաբաժանումների զինվորական կարգապահությունն ամրապնդելու, անձնակազմի մարտական ոգին բարձրացնելու համար[2]:

Պահը թելադրում էր առավելագույնն անել տեղական ուժերի շարքերի ընդլայնման ու ամրապնդման համար: Զորավարը համոզված էր, որ Սիսիանի պաշտպանությունը շարունակելու է վտանգված մնալ, եթե տեղական զինվորական ուժերը մնան խղճուկ վիճակում: Հայ գյուղերի մի մասի երիտասարդները խուսափում էին զինվորական ծառայությունից, իսկ վաշտերի մեջ ընդգրկվածները ծառայությունը կատարում էին անփույթ, ավելին՝ նրանցից շատերը փախչում էին տները և դրա համար որևէ պատասխանատվություն չէին կրում:

Մինչև Զորավարի Սիսիան գալը գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանը փորձել էր որոշ կարգ ու կանոն մտցնել տեղական վաշտերի շարքերում, բայց դրանից ոչինչ չէր ստացվել: Այդ ուղղությամբ մեծ ջանքեր էր գործադրել նաև Զաքար Տեր-Ղազարյանը, բայց դարձյալ սպասված արդյունքը չէր եղել:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 16, թ. 14:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 17-18:

Անդրանիկը ստացել էր Բազարչայի վաշտի հրամանատարի զեկույցը, որում ասված էր, որ իր վաշտից տուն են փախել համարյա բոլոր զինվորները (թվով 109-ը), որ Զաքարն անցել է գյուղերը՝ դասալիքներին հավաքելու համար, բայց ոչինչ չի ստացվել[1]: Շատ գյուղերում հայտարարված զորահավաքը նույնպես սպասված արդյունքը չէր տվել:

Սեպտեմբերի 7-ին Անդրանիկն Անգեղակոթից Սիսիանի շրջանի չորս ենթաշրջանների կոմիսարներին հրաման արձակեց՝ զորահավաք կազմակերպելու և այն անթերի անցկացնելու մասին, համաձայն որի՝ զորակոչվում էին 25-30 տարեկան երիտասարդները: Նրանց բոլոր կարիքները պարտավոր էին հոգալ գյուղական համայնքները: Զինծառայության կանչվածները իրենց հետ պիտի բերեին երեք օրվա հաց: Զորահավաքի ենթակա չէին Սիսիանի շրջանային խորհրդի անդամները, Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի ներկայացուցիչները, շրջանային ու գյուղական կոմիսարները, գյուղական դատավորները, գյուղի զինվորական խմբապետը և տան միակ նեցուկ աշխատավորը: Եթե ընտանիքում կար երկու արու զավակ, ապա զորակոչվում էր նա, ով մինչ այդ ծառայել էր, երեք և ավելի զավակների դեպքում չէր զորակոչվում ամենափոքրը: Զինվորական ծառայության կանչվածների ցուցակները կազմելու էին գյուղերի կոմիսարները: Իսկ գյուղական խմբապետերը պիտի ցուցակագրեին գյուղերում եղած բոլոր զենքերը, փամփուշտները և առհասարակ ռազմամթերքը, ռազմաճակատներից բերված պետական բոլոր իրերը[2]: Հրամանի համաձայն՝ շրջանում զորակոչված բոլոր երիտասարդները սեպտեմբերի 10-ին պետք է հավաքվեին Ղարաքիլիսա գյուղում: Վերջում հրահանգվում էր. «Որոշեալ ատենին չներկայացողները պիտի նկատուին դասալիքներ և պիտի ենթարկուին մահապատժի»[3]:

Զորահավաքը թեև մեծ դժվարությամբ, բայց ընդհանուր առմամբ հաջողությամբ կատարվեց: Զորակոչիկներով համալրվեցին շրջանի նոսրացած վաշտերը, կազմակերպվեցին տեղական զինական նոր խմբեր: Եթե մինչ այդ տեղական ինքնապաշտպանական բոլոր ուժերը ենթարկվում էին Զաքար Տեր-Ղազարյանին, ապա զորահավաքից հետո դրանք միավորվեցին մի գումարտակի մեջ, որի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Հայկ Գրիգորյանը[4]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 27, թ. 3:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 47, թ. 7, նույն տեղում, թ. 14 և շրջ.: "Наше время", 3 января, 1919, № 4, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, ապրիլ, թիւ 6 (150), էջ 101:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 7 և թ. 15:

[4] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 64, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 363:

Զինվորական խմբապետերի հրամանով գյուղացիները հարկավոր վայրերում դիրքեր էին փորում: Հատկապես գիշերները հերթով պահպանում էին դիրքերը: Բոլոր գյուղերի և շրջանային կենտրոն Ղարաքիլիսայի միջև ստեղծվեց կանոնավոր կապ:

Նորաստեղծ վաշտերն անմիջապես գրավեցին Բազարչայ–Գյոմուր–Գժաձոր–Բնունիս–Թազագյուղ–Ախլաթյան–Ալիլու ռազմագծերը[1]:

Սիսիանին սահմանակից Նախիջևանում անարգել իշխող տաճիկ Խալիլ բեյը և տեղական մուսավաթական ղոչիները աչք էին տնկել հայկական հարուստ շրջանի վրա: Տաճկական հրամանատարությունը սիսիանցիներին փորձում էր ահաբեկել՝ հայտարարելով, թե հարձակման համար արդեն պատրաստ է 20 հազար ասկյար[2]:

Նախիջևանի կողմից թուրքական զորքերի հարձակումը պետք է զուգակցվեր Սիսիանի թուրք բնակչության զինված գրոհի հետ[3]:

Հարվածող զորամասի՝ Բնունիս գյուղում տեղակայված ստորաբաժանման հրամանատար Դ. Աղախանովը Թազագյուղի զորամասի հրամանատարին դեռ սեպտեմբերի 1-ին գրել էր. «Գյոմուրից մեզ հաստատ աղբյուրից հաղորդել են, որ Ղազանչու վրայով մեծ զինված ուժեր են շարժվել՝ հարձակվելու Ձեր գյուղի և Ախլաթյանի վրա, ուստի հայտնում ենք Ձեզ, որ ձեր դիրքերը գիշեր ու ցերեկ պաշտպանեք, նույնը և հայտնել ենք Ախլաթյանին: Մենք էլ մեր դիրքերն ենք պաշտպանում»[4]:

Անդրանիկն իր հերթին տեղեկություն էր ստացել, որ Նախիջևանի տաճիկ իշխանությունների կողմից Գյոմուրի, Գժաձորի, Նորսի և Նորս Մազրայի գյուղական կոմիսարներին զինաթափության առաջարկ է եղել: Նույն օրն իսկ՝ սեպտեմբերի 7-ին, Զորավարը Անգեղակոթից նամակ էր գրել նշված գյուղերի կոմիսարներին և պահանջել վճռական դիմադրություն ցույց տալ տաճիկ զորքերին, եթե նրանք փորձեն ներխուժել իրենց տարածքները: Նամակում ասված էր. «Հրամայում եմ անմիջապես մոպիլիզացիա ընեք ու մի երկու բոտայով բռնեք ձեր սարերն ու դիմադրեք … Այստեղ որոշուած է մոպիլիզացիա ընել: Սիսիանը որոշում է կռվել: Ձեր կողմանե անձնատուր և զինաթափ ըլնելը ամբողջ Զանգեզուրը այդ գործը պիտի նկատե դավաճանութիւն հայ ազգի դեմ և, ի սեր հակառակորդներու, երկար ժամանակ պիտի հետապնդե (ձեզ)»[5]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 14, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 64, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 363:

[2] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 61, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 365:

[3] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, թիւ 5 (149), էջ 87, 88, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 365:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 6:

[5] Նույն տեղում, գ. 6, թ. 14:

Անդրանիկը առաջնահերթ խնդիր համարեց Նախիջևանի սահմանին հարող Արավուսի և Շիլարի ձորերի Ջոմարդլու, Օրթաքյուզ, Արավուս գյուղերի հնազանդեցումը և սահմանի այդ վտանգված հատվածի ամրապնդումը: Օսմանյան հրամանատարությունն արդեն զորքեր էր մտցրել այդ գյուղերը[1]:

Հետախուզական տեղեկությունների համաձայն՝ թուրք-մուսավաթական ուժերը Սիսիանի վրա պետք է հարձակվեին սեպտեմբերի 15-ին, ուստի Զորավարը որոշեց կանխել թշնամուն և նախահարձակ լինել: Նա պարզ տեսնում էր, որ եթե տաճկական ուժերին հաջողվեր հիմնավորվել այդ գյուղերում, որոնք իրենց դիրքով իշխում էին դաշտերի վրա, ապա նշանակում էր հենց սկզբից նախաձեռնությունը տալ թշնամուն և վտանգի ենթարկել ամբողջ շրջանը[2]:

Զորավարը սեպտեմբերի 7-ին երեք հոգուց բաղկացած մի պատգամավորություն ուղարկեց Ջոմարդլու և Օրթաքյուզ գյուղերը՝ օսմանցիներից գաղտնի բանակցություններ վարելու տեղացիների հետ, որպեսզի նրանք ձեռնպահ մնային հայկական Սիսիանի վրա հարձակվելուց, բայց գնացած պատգամավորները հետ չդարձան, քանի որ թուրքերը նրանց սպանեցին[3]:

Սեպտեմբերի 9 (22)-ին Անդրանիկի հրամանով կայացավ Սիսիանի հայ գյուղերի ներկայացուցիչների ժողով, որը քննության առավ վերը նշված թուրքաբնակ երեք գյուղերի խնդիրը: Հարցը ներկայացրեց Զորավարը և մանրամասն բացատրեց այդ գյուղերի ռազմավարական նշանակությունը: Նա շեշտեց, որ գործողությունը ծրագրվում է զուտ ռազմագիտական նկատառումներով, որովհետև տաճկաց ռազմական ուժերի Սիսիան մտնելու միակ հարմար ճանապարհը անցնում էր այդ գյուղերի տարածքներով: Գործողությունը հաջող իրականացնելու դեպքում, ասում էր Զորավարը, հայերի ձեռքը կանցներ ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող ճանապարհը, և ըստ այդմ՝ տաճիկ հրոսակները կզրկվեին Սիսիան ներխուժելու և տեղի հայությանը ոչնչացնելու հնարավորությունից: Հակառակ դեպքում կիրականանար թուրք-մուսավաթական ուժերի ծրագիրը, մանավանդ որ շրջանի մեծաքանակ թուրք զանգվածն իր բարբարոսություններով ոչնչով չէր տարբերվում տաճիկ զավթիչներից[4]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 15, թ. 24:

[2] Տե՛ս **Քիրս Սարոտ (Սարուր)**, Ղարաբաղի կռիվների շուրջը, «Ճշդում»ի ճշդումը, «Հայրենիք», 1934, մարտ, թիվ 5 (137), էջ 30, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 61, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 219:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 15, թթ. 24-25:

[4] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 35, թ. 7 և շրջ., **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 62, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 367-368:

Եթե թուրքերին հաջողվեր Նախիջևանից Սիսիան ներխուժել Արավուս–Շիլար ուղղությամբ, ապա նրանք կմտնեին Աղուդի ու Վաղուդի թրքաբնակ գյուղերը, և Սիսիանը կկտրվեր Գորիսից[1]:

Ժողովականների մի մասը այն կարծիքին էր, թե նշված թրքաբնակ գյուղերի վրա հարձակման դեպքում ուրիշ տեղերից կարող էին գալ և Նախիջևանում գտնվող թշնամական զորքերին միանալ տաճկական ուրիշ զորամասեր ու համատեղ ուժերով ներխուժել Սիսիան: Այդ դեպքում շրջանը չէր կարող կանգնեցնել թշնամու մեծաքանակ զորքը, ուստի հայությունը ստիպված կլիներ, տուն ու տեղ թողած, փրկություն որոնել Գորիսում, Կապանում կամ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի գրեթե հացազուրկ գավառում:

Զորավարը վճռականորեն հանդես եկավ այդ տեսակետի դեմ՝ ասելով. «Միևնույն է, ես իմ զորամասով սկսելու եմ արշավանքը, և եթե սիսիանցիները ամուր կանգնած լինեն իմ թիկունքում, ապա թշնամական գյուղերի տեղահանումը մեկ-երկու օրվա հարց է: Ինչ վերաբերում է Աղուդու և Վաղուդու ձորին, [ապա] առանց ձեր կարծիքը հարցնելու՝ պիտի ավարտին հասցնեմ կիսատ թողած գործս և ավերեմ այդ գյուղերը»[2]:

Այնուհետև Անդրանիկն նշել է, որ Շիլար ձորի երեք գյուղերը գրավելուց հետո եթե նախիջևանցի հայ գաղթականները համաձայնեն ապրել այնտեղ, ապա նրանց խնդրանքը անմիջապես կբավարարվի, իսկ եթե ոչ, Օրթաքյուզը և Ջոմաթլուն կպահպանվեն հետագա վերաբնակեցման համար, իսկ Արավուսը... կմատնվի կրակի[3]:

Թրքաբնակ երեք գյուղերի մասին երկար բացատրությունից հետո Անդրանիկը հեռացավ՝ ժողովականներին հնարավորություն տալով ազատորեն վճիռ կայացնելու: Ժողովը որոշեց Շիլարի ձորը թուրքերից մաքրել տեղացիներից կազմակերպված նոր վաշտերի միջոցով, բայց Հարվածող զորամասի աջակցությամբ[4]:

Սակայն Զորավար Անդրանիկը, հաշվի առնելով խնդրի լրջությունը, նպատակահարմար գտավ գործողությունն իրականացնել բացառապես իր զորամասի ուժերով:

Արդեն մանրամասն ուսումնասիրած լինելով շրջանի տեղանքը՝ Անդրանիկը, նախքան նշված թուրքաբնակ գյուղերի վրա արշավանք ձեռնարկելը, կարգադրեց ամուր փակել Նախիջևանից Սիսիան եկող բոլոր ուղիները:

Սեպտեմբերի 10 (23)-ին Անդրանիկի գլխավորությամբ Հարվածող զորա-

---

[1] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «ՎԷմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 62, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 366:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 7-ի շրջ.:

[3] Տե՛ս նույն տեղում, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 367, 368, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 219, 220:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 7-ի շրջ.:

մասի ստորաբաժանումները շեշտակի հարվածով մտան նշված գյուղերը: Կարճատև դիմադրությունից և մի քանի տասնյակ զոհ տալուց հետո թուրք և տաճիկ զինված խմբերը ջախջախվեցին ու քաշվեցին սահմանից այն կողմ[1]: Փախան նաև այդ գյուղերի թուրք բնակիչները, որոնք սերտորեն համագործակցել էին օսմանյան ուժերի հետ: Զոհերի թիվը մեծ չէր, քանի որ հայկական զորամասերի առջև դրված խնդիրը բնավ էլ այդ գյուղերի բնակիչներին ջարդելը չէր: Այնուամենայնիվ, թշնամու պարտությունը կատարյալ էր[2]:

Նշված գործողությանը հետևեց Սիսիանի թուրքական ևս 14 գյուղերի տեղահանումը, որոնց բնակիչները անցան Մինքենդ և Քելբաջարի շրջան կամ Նախիջևանի երկրամաս: Այսպիսով՝ վնասազերծվեցին գավառամասի առավել վտանգված վայրերը: Շրջանում մնացած թուրքական գյուղերն այլևս չէին կարող խարիսխ ծառայել Նախիջևանից հարձակվելու պատրաստվող տաճիկների և մուսավաթականների համար: Նրանք խիստ նախազգուշացում ստացան: Անդրանիկը թուրքերին կոչ արեց հանգիստ մնալ և թշնամություն չանել հայերի հետ: Սիսիանի թուրք գյուղերի մեծ մասը ստիպված էր, գոնե խոսքով, ընդունել Զանգեզուրի ազգային խորհրդի իշխանությունը[3]:

Թուրքական անհնազանդ գյուղերի դեմ ձեռնարկված գործողությունները բարենպաստ իրադրություն ստեղծեցին Սիսիանի շրջանի և ողջ Զանգեզուրի համար թե՛ քաղաքական-ռազմական, թե՛ հաղորդակցական-տնտեսական տեսանկյունից:

Ջոմարդլու, Օրթաքյուզ և Արավուս գյուղերից հետո հերթը հասավ Ուրուտ թուրք գյուղին, որի գրավման գործը Անդրանիկը հանձնարարեց Դարաբասի ենթաշրջանի կոմիսար Դավիթ Տեր-Մկրտչյանին՝ խոստանալով օգնություն ուղարկել Հարվածող զորամասի մեկ վաշտ:

Դարաբաս գյուղի տեղական ուժերը՝ Դ. Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ, պաշարեցին Ուրուտը: Թուրքերը, նկատելով այդ, հարձակում գործեցին Դավթի ջոկատի վրա: Դարաբասցի զինվորները համարձակ գրոհով նրանց հանեցին դիրքերից, մտան գյուղ: Մեչիդից և երկու տներից թուրքերը կրակ բացեցին, որի հետևանքով սպանվեց մեկ, վիրավորվեցին երեք հոգի:

Անդրանիկին ուղարկած զեկուցագրում Դ. Տեր-Մկրտչյանը գրում էր. «Այդ պահին հայ տղաները բարձրացան մեչիդի կտուրը, երդիկով ռումբ գցեցին, և թուրք զինյալները հանձնվեցին: Մութը վրա հասավ, և անձրև

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 21:

[2] Տե՛ս **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, մայիս, թիվ 7, էջ 162, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, թիւ 6 (150), ապրիլ, էջ 102-104, *նույնի*՝ Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 62-63, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 17, **Ա. Չելեպյան**, նշվ. աշխ., էջ 522-523, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 368-369, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 220:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 84, թ. 10:

սկսվեց, և ես տղաներիս հետ քաշեցի: Այժմ գյուղը դատարկ է, առավոտյան նորից մտնելու ենք գյուղ: Սպասում եմ Ձեր կարգադրությանը»[1]: Այնուհետև նա հաղորդում էր, որ իրենք պատրաստ են հարձակվելու նաև Վաղուդի գյուղի վրա, և խնդրում էր Զորավարին շարժվել դեպի Վաղուդի՝ համատեղ ուժերով գյուղը գրավելու համար: «Սպասում ենք անհամբեր վաղը մաքրված տեսնել Վաղուդու ձորը Ձեզ հետ միասին: Չգիտեմ՝ ինչ փոփոխություն եղավ, որ չեկաք: Գրեցե՛ք, խնդրում եմ»[2]:

Թե ինչու Անդրանիկը զինվորներ չուղարկեց՝ դարաբասցիներին միանալու և համատեղ գրոհելու Վաղուդին, մեզ հայտնի չէ, քանի որ արխիվներում չկան այդ մասին վկայություններ: Ենթադրում ենք, որ Զորավարը մտածում էր, թե ինքն անպայման վերադառնալու է Գորիս և ճանապարհին, միևնույնն է, ընդհարվելու է Վաղուդիի թուրքերի հետ և այդ ժամանակ էլ իր զորամասի հիմնական ուժերով գյուղը մաքրելու է հրոսակախմբերից:

Ինչպես վերը նշվեց, Անդրանիկի հրավիրած խորհրդակցությունը նախատեսել էր սեպտեմբերի 8-ին հրավիրել համաշրջանային ժողով, բայց այն նշանակված օրը տեղի չունեցավ, քանի որ գյուղերի կոմիսարները Անդրանիկին խնդրել էին 3-4 օրով հետաձգել՝ Սիսիանում Հարվածող զորամասի մնալու մասին ժողովրդի հիմնավոր կարծիքը իմանալու համար:

Սեպտեմբերի 12-ին Անգեղակոթի եկեղեցում տեղի ունեցավ Սիսիանի հայ և ռուս 14 գյուղերի կոմիսարների ու 20 ժողովրդական ներկայացուցիչների ժողով, որին ներկա էին նաև Հարվածող զորամասի և Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի պատվիրակները:

Օրակարգի առաջին հարցը Հարվածող զորամասի Սիսիանում մնալու կամ չմնալու հարցն էր: Նախագահ ընտրվեց Հովակ Ստեփանյանը, քարտուղարներ՝ Ռոդիոն Կասմինինը և Եղիշե Քաջունին: Նախագահը հայտնեց, թե Զանգեզուրի ազգային խորհուրդը և Շուշիի գնդի հրամանատարը Անդրանիկին խնդրել են չհեռանալ գավառից և պաշտպան կանգնել զանգեզուրցիներին, ավելին՝ հույս են հայտնել, որ Զորավարը օգնության ձեռք կմեկնի նաև Արցախին: Պարզաբանելով օրակարգի հարցը՝ Զորավար Անդրանիկն ասաց, թե ինքը և իր զինվորները չեն եկել, որ վրդովեն ժողովրդի հանգիստը և վնասեն նրան: Եթե սիսիանցին փափագ հայտներ, որ զորամասը մնար, այն կմնար, բայց անհրաժեշտ էր նախ զորահավաք անել, բավարարել զորքի պահանջմունքները:

Սասունի գնդի ներկայացուցիչ Արմեն Սասունին իր գնդի անունից հայտնեց, որ եթե իր զորամասը մնա Սիսիանում կամ Զանգեզուրի մի ուրիշ շրջանում, այլևս դա չպիտի լինի հնի պես, այլ պետք է բավարարվեն նրա բոլոր պահանջները: Նույնը վերաբերում էր նաև մյուս զորամասերին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 23:

[2] Նույն տեղում, թ. 23-ի շրջ.:

Շրջանային կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանը հայտնեց, թե Սիսիանի ժողովուրդը փափագում է, որ Զորավարն իր զորքով մնա շրջանում, և խոստացավ բավարարել զորքի կարիքները:

Գեդեոն Տեր-Մինասյանը խոսեց Զանգեզուրի շուրջը ստեղծված քաղաքական վիճակի մասին, նշեց, որ Այսրկովկասը բաժանվել է երեք պետությունների, և ուզում են զենքի ուժով իրենց ենթարկել Ադրբեջանի կառավարությանը: Արցախի շրջանները որոշել էին չենթարկվել թուրքերին: Հերթը Սիսիանինն էր, որը պետք է որոշեր՝ ուզում էր ենթարկվել Ադրբեջանին, թե ոչ: Իսկ դա նշանակում էր՝ սիսիանցին պետք է որոշեր՝ փափագում էր արդյոք, որ Զորավարը մնար Սիսիանում:

Դարաբասի ենթաշրջանային կոմիսար Դավիթ Տեր-Մկրտչյանը գտնում էր, որ խնդիրը միայն զորամասի մնալը չէ, այլ նաև այն, որ առանց Անդրանիկի լուրջ միջամտության հնարավոր չէր լինի Սիսիանում ստեղծել տեղական ամուր զինվորական կազմակերպություն:

Ազգային խորհրդի ներկայացուցիչ Արշակ Շիրինյանն այն տեսակետը հայտնեց, որ Սիսիանի շրջանն ամեն պարագայում անձնատուր չէր լինելու: «Սիսիանը կռվող շրջան է, և շատ լավ կարելի է կռվել, եթե կազմակերպված լինի: Հայի և մոլոկանի միջև էլ թուրքերը տարբերություն չեն դնելու, եթե կարողանան հաղթահարել Սիսիանի ուժը»[1]:

Հավանություն տալով Ա. Շիրինյանի խոսքերին՝ Անդրանիկն ասաց, որ մեր լինել-չլինելու հարցը կախված է մեծ պետությունների պայքարի արդյունքից: «Կրնայ ըլլալ որ մեր ցեղը բնաջնջուի, բայց գեթ Ղարաբաղը (նկատի ունի Զանգեզուրը: – *Ա. Ս.)* պետք է լավ անուն թողնի: Կռուինք թե չկռուինք պիտի միանանք: Մեր ուժերով մեծ յաղթանակ չենք կրնար տանիլ, բայց մենք մեր սկզբունքներէն շեղելու չենք. եթէ Ղարաբաղը մէկ տիւիզիա հանէ՝ վեց ամիս ալ կապրի, իհարկե հարձակողական ձևով չէ, այլ ինքնապաշտպանութիւն պիտի կազմակերպուի»[2]:

Օրակարգի առաջին հարցի առթիվ ժողովն ընդունեց հետևյալ որոշումը. «Ժողովը միաձայնությամբ որոշեց ոչ մի կերպ չհամակերպվել Ադրբեջանի կամ տաճիկ իշխանության զինաթափության հնարավոր առաջարկին և դիմադրություն ցույց տալ մինչև վերջ: Հետևաբար խնդրել գեներալ-մայոր Անդրանիկին, որ իր և մյուս զորամասերը մնան Սիսիանում կամ այն շրջաններում, որոնք ռազմական տեսակետով հարմար կնկատվեն զինվորական

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 7-10, գ. 33, թ. 8, **Ե. Քաջունի**, Հայկական առանձին հարուածող զօրամասը: Ժեներալ Անդրանիկ, Պոսթոն, 1921, էջ 101, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, թիւ 6 (150), ապրիլ, էջ 100, 101, *նույնի՝* Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 60, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 17, **Ա. Չելեպյան**, նշվ. աշխ., էջ 520, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 570, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 357-358:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 8:

իշխանության կողմից: Իսկ խառը (տեղացի և դրսի) զորամասերի պարենավորման ծանրությունը պիտի բաժանվի Ղափանի, Գորիսի և Սիսիանի շրջանների վրա՝ համեմատական չափով: Միաժամանակ ներկայացուցիչները պարտավորվում են զորամասերի կարիքների համար առձեռն հավաքել, շրջանային կոմիսարների միջոցով, 6000 փութ ցորեն, 1000 փութ գարի և 50 փութ յուղ, որոնց կենտրոնացման վայրը ցույց կտա գեներալը»[1]:

Անցնելով օրակարգի երկրորդ խնդրին՝ նախագահող Հովակ Ստեփանյանը հայտնեց, որ անհրաժեշտ է կազմակերպել զորահավաք, ստեղծել զինվորական ուժ, որպեսզի Շուշիի գնդի համար Վայոց ձորից բերվելիք զենքերն ու ռազմամթերքը նպատակային գործածվեն: Այդ զորահավաքի համար Զանգեզուրի ազգային խորհուրդը որոշ սկզբունքներ ուներ. եկած զենքերն ու ռազմամթերքը համապատասխան ձևով բաշխելու էր շրջանների վրա: Այնուհետև համաշրջանային ժողովը որոշեց հայտարարել նոր զորահավաք՝ նախ զորակոչելով 20-25, ապա՝ 25-30 տարեկանների: Յուրաքանչյուր զինվոր իր հետ պետք է բերեր իր հրացանն ու որոշ թվով փամփուշտ: Եթե զինվորը հրացան չունենար, այն դեպքում տարիքավորների հրացանները տրվելու էին երիտասարդներին[2]:

Կրկին հանդես գալով՝ Զորավարն ասաց, որ շրջանի ամբողջ ժողովուրդը պետք է բարեխղճորեն հրապարակ բերի բոլոր ինչքերը՝ ցորեն, տրեխ, գուլպա և ունեցած պետական գույքը, ու այն հանձնի զինվորական իշխանությանը, որպեսզի զորակոչված հանրությունը օգտվի դրանից[3]:

Անդրանիկից հետո ելույթ ունեցավ Ռոդիոն Կասմինինը և առաջարկեց, առանց տարիքային սահմանափակման, յուրաքանչյուր գյուղից պահանջել որոշ թվով զինվորներ:

Հովակ Ստեփանյանը, պատասխանելով Կասմինինին, նշեց, որ առավելագույն արդյունք կարող է տալ տարիքային սկզբունքով կատարվող զորահավաքը: Նա տեղեկացրեց, որ զորահավաքից կազատվեն դատավորները, պաշտոնյաները, միլիցիոներները, ընտանիքի միակ աշխատավորը, գյուղի զինվորները, խմբապետերը, կոմիսարը, Ազգային խորհրդի անդամները, շրջանային կոմիսարները:

Ներկաների հետ միահամուռ համաձայնություն ձեռք բերվեց՝ ընդունելու Հովակ Ստեփանյանի առաջարկած պայմանները և Զորավարի հայեցողությամբ գլուխ բերելու զորահավաքը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 8-ի շրջ., “Наше время”, 3 января, 1919, № 4, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, թիւ 6 (150), ապրիլ, էջ 101, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 360:

[2] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, թիւ 6 (150), ապրիլ, էջ 101:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 9, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 60, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 358:

Նկատի ունենալով, որ ընդունվել են թե՛ Հարվածող զորամասի Սիսիանում մնալու, թե՛ պարենավորման և թե՛ զորակոչի հարցերը, ժողովը այլևս ավելորդ նկատեց պարենավորման խնդրի հատուկ քննարկումը[1]:

Օրակարգի 3-րդ խնդրին անցնելով՝ նախագահողը զեկուցեց. «Մեզ համար պետություն չունենալով՝ անհրաժեշտ է ունենալ կենտրոնական իշխանություն: Այդպիսի մի մարմին կա Գորիսում՝ հանձին Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի, որը, սակայն, թերի է: Նրանում չկան մի քանի տեղերի ներկայացուցիչներ, ինչպիսինը Սիսիանն է»: Եվ Հ. Ստեփանյանը առաջարկեց նույն պահին ընտրել այդ ներկայացուցիչներին: Նա նաև շեշտեց, որ Ազգային խորհուրդը ամենից առաջ պետք է զբաղվի զինվորական գործերով:

Նախքան Զանգեզուրի կենտրոնական խորհրդի համար ներկայացուցիչների ընտրությունը ժողովը հարմար գտավ, որ Սիսիանի չորս ենթաշրջանների կոմիսարները միասին կազմեն Սիսիանի շրջանային խորհուրդ, որը միջնորդ կլինի Ազգային խորհրդի և ժողովրդի միջև: Ապա ժողովը ձեռնարկեց գաղտնի քվեարկությամբ ընտրելու Սիսիանի շրջանի Զանգեզուրի ազգային խորհրդի անդամներին: Քվեների մեծամասնությամբ ընտրվեցին Հակոբ Տերունին՝ անդամ, Ալեքսան Ալեքսանյանը և Հակոբ Բաղալյանը՝ թեկնածուներ: Այնուհետև ժողովն անցավ Սիսիանի շրջանի ընդհանուր կոմիտեի ընտրությանը: Բաց քվեարկությամբ, միաձայն, շրջանի կոմիսար ընտրվեց Զաքար Տեր-Ղազարյանը: Որոշվեց, որ այսուհետև ենթաշրջանային կոմիսարների ընտրությունը պետք է կատարվի շրջանային ընդհանուր կոմիսարի միջոցով[2]: Ժողովից անմիջապես հետո Արշակ Շիրինյանը մեկնեց Երևան:

1918 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին Զանգեզուրի թուրքաբնակ բնակչության հակահայկական ըմբոստացումը և խժդժությունները թևակոխել էին ամենաեռուն շրջանը:

Ինչպես Գորիսում, Սիսիանում նույնպես ոչ միայն ղեկավարները, այլև բնակիչները արտահայտում էին խոր դժգոհություն Հայաստանի Հանրապետության կառավարությունից, որը շարունակում էր կրավորական կեցվածք՝ տաճիկների հետ նոր բարդություններ չստեղծելու զգուշավորությունից դրդված: Այն, ըստ էության, ոչ մի աջակցություն չէր ցուցաբերում հայկական այդ երկու երկրամասերին: Զանգեզուրի, Արցախի, մասնավորապես սիսիանցիների՝ Երևանի հանդեպ ունեցած տրամադրությունները, ինչ խոսք, համահունչ էին այն խիստ բացասական վերաբերմունքին, որ Անդրանիկը տածում էր Հայաստանի կառավարության և դաշնակցական ղեկավարության նկատմամբ:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 8-9, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 360:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 9-ի շրջ., **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 358:

Եվ ահա Ա. Շիրինյանը, մեկնելով Երևան, նպատակ ուներ հանրապետության կառավարությանը համոզել փոխել անտարբեր վերաբերմունքը Զանգեզուրի ու Արցախի հանդեպ և օգնության ձեռք մեկնել նրանց:

Երևանում Ա. Շիրինյանը անձամբ համոզվել էր, թե կառավարությունը ինչպիսի անբարյացակամ վերաբերմունք ունի արցախ-զանգեզուրյան խնդրի նկատմամբ:

Սեպտեմբերի 20 (7)-ին Արշակ Շիրինյանը Անդրանիկին գրել է.

«Սիրելի՛ փաշա

Դժբախտաբար իմ գալը մի քանի օրով ևս դանդաղում է, դրածս խնդիրներին տեղիս կառավարության և ընկերների անբարյացակամ վերաբերվելու պատճառով: Այստեղ ստեղծված է ստրկական մի մթնոլորտ, որը ամեն կերպ աշխատում է սիրաշահել տաճիկներին, ինչ գնով էլ ուզում է լինի: Այդպիսի քաղաքականության շարունակության դեպքում մենք ստիպված ենք ևս խաչ դնել հայկական հանրապետության վրա և խզել մեր հարաբերությունները, որը կորստաբեր կարող է լինել մեզ երկուսիս համար: Ամբողջ հայությունը պիտի ունենա մի քաղաքականություն և նրա բոլոր հատվածների վրա պիտի համահավասար ուշադրություն դարձնել և ոչ թե ամբողջ շրջան, ինչպիսին Ղարաբաղն ու Զանգեզուրն է, զոհ բերել հանրապետության շահերին, որը ավելի մինիատուր է… (մեկ բառ չի հասկացվում: – *Ա. Ա.)* քան ինքը Ղարաբաղը:

Սիրելի՛ փաշա, մի փոքր համբերություն ևս և բոլորովին կորոշվի մեր անելիքը:

20 (7).. 18

Երևան»[1]:

Զանգեզուրը հույսը ամբողջովին կապել էր Անդրանիկի, նրա Հարվածող զորամասի և իր քաջազուն զավակների հերոսական սխրանքների հետ, որը տվյալ իրավիճակում ամենաիրատեսականն էր:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թթ. 2-3:

ՂԱՐԱՂՇԼԱՂԻ ԱՎԵՐՈՒՄԸ: ԲԱՔՎԻ ԱՆԿՈՒՄԸ. ՕՍՄԱՆՅԱՆ ԶՈՐԱՄԱՍԻ ՄՈՒՏՔԸ ՇՈՒՇԻ

Նշված ժամանակահատվածում տեղի ունեցավ Ղարաղշլաղ* հայկական գյուղի ավերումը:

Նախորդ էջերում նշվել է, որ Զանգեզուրից Շուշի տանող ճանապարհը նախ իջնում է մի խորունկ ձոր, որտեղ գալիս խառնվում են Զաբուղ և Հազարու գետերը, ապա սկսվում է վերելք դեպի Ղարաբաղի լեռնաշղթան, որի ողնաշարի վրա է գտնվում Թթու ջուրը՝ Լիսագորսկը: Այս շրջանը թուրքաբնակ էր: 1918 թ. սկզբներից թուրքերը սկսել էին վտանգել ճանապարհը: Զանգեզուրի հայկական Տեղ գյուղից մինչև Շուշի ձգվող 70 վերստ ճանապարհը միանգամայն անանցանելի կդառնար, եթե չլիներ դեպի Թթու ջուր տանող վերելքի վերջին բարձունքների վրա թառած, 6-7 գյուղից բաղկացած, շուրջ 5 հազար բնակչություն ունեցող Ղարաղշլաղ մեծ գյուղը: Թուրքական գազանաբարո միջավայրում իրենց գոյությունը պահպանելու համար ղարաղշլաղցիները միշտ ի հայտ էին բերում արտակարգ տոկունություն:

1918 թ. օգոստոսի 2-ին Ղարաբաղի հայոց ազգային խորհուրդը նոր համագործակցության և փոխօգնության մասին նամակ հղեց Զանգեզուրի ազգային խորհրդին, սակայն այն մնաց անպատասխան:

Օգոստոսի 11-ին Արցախի ղեկավարությունը Զանգեզուրի ազգային խորհրդին նոր նամակ հղեց՝ նշելով, որ օգոստոսի 2-ին Գորիս ուղարկած նամակով բարձրացվել էին մի շարք կարևոր հարցեր, որոնց տարօրինակ անտարբերությամբ ոչ մի պատասխան չէր տրվել: Այդ ծանր, տագնապալից օրերին Արցախի ղեկավարությունը կրկին դիմեց Զանգեզուրի ղեկավարությանը՝ խնդրելով անհապաղ պատասխանել իրենց նամակին:

Առաջին հարցը, որ բարձրացնում էր Արցախի ղեկավարությունը, Շուշիի գնդին հնարավորինս շուտ իրենց մոտ տեսնելն էր կամ գոնե գնդի ռազմապաշարներից Արցախ հասցնելը: «Մենք կանգնած ենք ճակատագրական անխուսափելի անակնկալների առաջ և եթե մինչև ամսոյս 25-ը ռազմամթերքի պաշար չստանանք, կարելի է վճռականապես և հաստատ ասել, որ մենք կորած ենք»[1]:

Շուշիի գնդի երկու սպաներ դրանից երկու շաբաթ առաջ կարողացել էին Գորիսից անցնել Շուշի և գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանի ու Հովակ

---

* Այժմ՝ Բերդաձոր:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 1:

Ստեփանյանի անունից առաջարկել, որ համապատասխան փոխադրամիջոցներ ուղարկեն Գորիս՝ ռազմամթերքը Արցախ տեղափոխելու համար: Քանի որ Արցախը կռվող ուժերի և հատկապես ռազմամթերքի խիստ կարիք ուներ, ուստի Արցախի ժողովրդական կառավարությունն առանց ուշացնելու ձեռնամուխ եղավ փոխադրամիջոցների կազմակերպման գործին: Կազմվեց փոխադրամիջոց, որը բաղկացած էր 200-ից ավելի սայլերից, մոտ 200 ձիերից և ջորիներից: Այս աշխատանքի համար ներգրավվեց մոտ 900 մարդ[1]:

Նախատեսվում էր, որ մոտավորապես օգոստոսի 18-20-ը այդ փոխադրամիջոցը հասներ Ղարաղշլաղ: Դրանից հետո հնարավոր չէր լինի առաջ շարժվել, եթե Գորիսից ընդառաջ չգար Շուշիի գունդը կամ գոնե նրա մեծ մասը: Սակայն գնդի գալը գաղտնիք չէր տեղի թուրքերի և քրդերի համար: Նրանք նախապատրաստվում էին խափանել գնդի առաջշարժումը, հարձակվել փոխադրամիջոցի վրա: Այդ նպատակով նրանք նույնիսկ զորակոչ էին հայտարարել:

Շուշիից այդ մասին նախազգուշացրել են Զանգեզուրի ազգային խորհրդին և Մ. Մելիք-Շահնազարյանին, խնդրել ամենակարճ ժամանակահատվածում իրագործել հետևյալ միջոցառումները.

Առաջին՝ որոշել և Շուշիից նամակը Գորիս բերած սուրհանդակի միջոցով գրություն ուղարկել և հայտնել, թե որ օրը (18-ին, 20-ին, թե՞ 21-ին) փոխադրամիջոցը կարող է շարժվել Ղարաղշլաղից դեպի Գորիս:

Երկրորդ՝ սահմանային Տեղ գյուղում կենտրոնացնել 500-600 զինվոր՝ գնդացիրներով և թնդանոթներով: Այդ ուժը պետք է զբաղեցներ Զաբուղ և Հազարու գետերի միջև տարածված լեռնաշղթան, ինչպես նաև Տեղից Զաբուղ գետն իջնող սարահարթը, որպեսզի այդ կողմից ապահովեր փոխադրամիջոցի անվտանգությունը[2]:

Երրորդ՝ այդ անհրաժեշտ պայմանները կատարելուց հետո հարկավոր էր որոշել, թե ինչ ազդանշանով (լուսազդանշան, ձայնազդանշան և այլն) պետք է իմաց տրվեր փոխադրամիջոցին, որ Ղարաղշլաղից առաջ շարժվեր[3]: Դրանից բացի՝ Շուշիից նախազգուշացնում էին, որ փոխադրամիջոցի վրա հարձակումը կարող էր լինել երկու կողմից՝ վարից և վերից: Ուստի նշում էին, որ «Հազարու գետի մեր ափի անտառոտ լեռնաշղթան ղարաղշլաղցիների աջակցությամբ մենք կաշխատենք բռնել՝ ապահովելու տրանսպորտի

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 372, 373: Հ. Ստեփանյանը կասկածի տակ էր առնում վերը նշված թվական տվյալները՝ համոզված լինելով, որ հազիվ 120 մարդ էր գնացել Շուշիից: Արխիվային մի փաստաթղթում զինվորների թիվը նշվում է 150 (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 205): Իր հերթին Քիրս Սարոտը Ղարաղշլաղում կռվող հայ զինվորների թիվը հասցնում է 620-ի (ի հակառակ Ե. Իշխանյանի նշված 1800-ի): Տե՛ս «Հայրենիք», 1933, թիվ 11, էջ 87:

[2] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 374:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 2-ի շրջ.:

անցը այս կողմից և դիմավորել գնդին»[1]: Բայց սայլերն ու գրաստները չկարողացան տեղ հասնել, որովհետև այդ միջոցին Ղարաղշլաղի վրա շարժվեցին մի կողմից Հաջի Սամլու կոչվող շրջանի քրդերը՝ Սուլթան բեկ Սուլթանովի ղեկավարությամբ (հետագայում Բաքվի կողմից Ղարաբաղ–Զանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակված բժիշկ Խոսրով բեկ Սուլթանովի եղբայրը), իսկ մյուս կողմից՝ սարերից իջնող զինված թուրք և քուրդ քոչվորները, որոնց ղեկավարում էին մուսավաթական սպաներ ու զինվորներ[2]:

Ղարաղշլաղը չցանկացավ դյուրությամբ տեղի տալ և հենվելով իր անառիկ լեռներին՝ հինգ օր քաջաբար դիմադրեց թշնամուն: Բայց նա մենակ էր, իսկ թշնամու ուժերը գնալով ավելանում էին: Ուստի համառ ու հերոսական դիմադրությունից հետո Ղարաղշլաղը ի վերջո տեղի տվեց, և սեպտեմբերի 17-ին Զանգեզուր ուղարկվող սայլերի ու գրաստների վրա բարձելով իր գույքի մի մասը՝ Ղարաղշլաղի համայնքը անցավ Շուշի[3]: Գորիսում գտնվող Շուշիի կազմալուծվող գունդը Զանգեզուրից փորձեց օգնության հասնել Ղարաղշլաղին, բայց դա ևս չհաջողվեց: Գյուղախումբը մենակ մնաց և ավերվեց թուրքերի ու քրդերի կողմից: Լիովին խզվեց կապը Զանգեզուրի և Արցախի միջև[4]:

Վրաստանում հայկական դիվանագիտական առաքելությանը կից ինֆորմացիոն բյուրոյի պետին փոխարինող Ա. Մելիք-Քարամյանը Թիֆլիսից Երևան հղեց մի գաղտնի տեղեկագիր, որում մեծ ուշացումով նշված էր.

«Ելիզավետպոլից եկածները հաղորդում են, որ ադրբեջանական իշխանությունները ստացել են զեկույց Զանգեզուրի* գավառապետից՝ հետևյալի մասին. գյուղի մոտ մարտեր են գնում հայերի և թաթարների միջև, որոնց մասնակցում է նաև Անդրանիկը իր զորամասով: Գավառապետը խնդրել է ուղարկել պատժիչ էքսպեդիցիա՝ նկատի ունենալով մուսուլմանական բնակչության ոչնչացման վտանգը:

Ելիզավետպոլից ուղարկված է թուրքական զորամաս՝ հնազանդեցնելու (հայերին)»[5]:

Թուրքերին հատուկ խաբեբայությամբ հայկական գյուղի ոչնչացման

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 1-ի շրջ.:

[2] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 377:

[3] Տե՛ս "Наше время", 3 ноября, 1919, № 4, նաև Քիրս Սարոտի հոդվածը (Ղարաբաղի կռիվների շուրջ, «Ճշդում»ի ճշդումը, «Հայրենիք», 1934, մարտ, թիվ 5, էջ 129)՝ որպես պատասխան Ե. Իշխանյանին:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թթ. 275, 278: Ղարաղշլաղի ավերման մանրամասն նկարագրությունը տրված է Միրզա Տեր-Սարգսյանի անտիպ գրվածքում՝ «Լեռնային Ղարաբաղ. 1917-1923 թթ.», **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 377: Տե՛ս նաև **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 16-17:

* Խոսքը Զանգեզուրի ադրբեջանական հատվածի մասին է:

[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 49, թ. 38:

մեղքը ադրբեջանական իշխանություններն ամբողջովին բարդում էին հայերի վրա:

Ղարաղշլաղի ավերումը թևեր տվեց Զաբուղ և Հազարու ձորերի թուրքերին ու քրդերին, որտեղից նրանք սպառնալից գրություններ էին ուղարկում բուն Զանգեզուրի իրենց ծանոթ հայերին և պահանջում ենթարկվել Բաքվին՝ այլապես խոստանալով շրջանի բնակավայրերը ենթարկել Ղարաղշլաղի բախտին:

Օրինակ՝ Զանգեզուրի թուրքական մասի կենտրոն Դոնդարլու գյուղից այդ տարածքների մուսուլմանական ազգային խորհրդի նախագահ Սուրխայ բեկը Գերենզուր (Կոռնիձոր: – *Ա. Ս.*) գյուղի բնակիչ, իր հին ծանոթ «քիրվա» Գալուստին ուղարկել էր ռուսերեն գրված հետևյալ բովանդակությամբ նամակը*, որը շատ բնորոշ էր այն օրերի սահմանակից տարածքների թուրքերի տրամադրություններին ու հոգեբանությանը.

«Առաջին տեղամասում հայերի գործած գազանությունները մուսուլմանական բնակչության նկատմամբ, վերջապես, լցրել են նրանց համբերության բաժակը: Քեզ, իհարկե, հայտնի է, որ նրանք օրերս, ոչ մեկին չտեղեկացնելով, հարձակվել են իր խիզախությամբ հայտնի հայկական Կալադարասի (Ղարաղշլաղ: – *Ա. Ս.)* գյուղի վրա և լիովին ջախջախել այն: Այժմ այնտեղ միայն մոխիր է: Տևականորեն չհնազանդվելը Ադրբեջանի կառավարությանը, ձեր գործիչների ու երիտասարդության բռնած դիրքը ի վերջո գավառի մյուս գյուղերին նույնպես կբերեն նույն տխուր ճակատագիրը: Եվ դա անխուսափելի է: Որպես ներկայացուցիչ (Ադրբեջանի) օրինական իշխանության, որը վայելում է օսմանյան բարձր հովանավորությունը, խորհուրդ եմ տալիս անմիջապես մի կողմ դնել ձեր դավերն ու մեքենայությունները, չունկնդրել Անդրանիկին և մյուս ավազակներին ու սրիկաներին և հայտարարել խոնարհության ու հնազանդության մասին: Եթե իմ այս առաջարկությունը (որը կլինի վերջինը) ընդունելի է, ապա ուղարկեցեք ինձ մոտ ձեր ներկայացուցիչներին, որոնց ես կներկայացնեմ գավառային վարչության պետ Մելիք-Նամազալիևին:

Այսօր 1918 թ. սեպտեմբերի 8-ն (նոր տոմարով՝ 21-ը: – *Ա. Ս.)* է և պատասխանին սպասում եմ մեկ օր հետո»[1]:

* * *

Այդ օրերին թուրք-մուսավաթական շուրջ 15-18 հազարանոց միացյալ «մուսուլմանական բանակը» մոտեցավ Բաքվին: Չնայած պաշտպանների համառ դիմադրությանը՝ սեպտեմբերի 15-ին բանակը խուժեց քաղաք[2]: Երեք

---

* Նամակը ներկայացված է ազատ ոճի թարգմանությամբ:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 51, թ. 2 և շրջ., **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 377-378:

[2] Տե՛ս **Մ. Туманян**, նշվ. աշխ., էջ 63-64:

օր շարունակ քաղաքի հայությունը ենթարկվեց սոսկալի ջարդի: Սեպտեմբերի 20 (7)-ին Երևանից Անդրանիկին հղած նամակում Արշակ Շիրինյանը գրում էր. «Բաքուն ընկել է, բայց ծովի կողմից կռիվները դեռ շարունակվում են: Ասում են, որ ջարդված հայերի թիվը 30000-ի է հասնում»[1]:

Հայերի ջարդը քաղաքում տևեց երեք օր: Չորրորդ օրը Մուղանի անապատներ քշվեց ու կոտորվեց 8 հազար հայ տղամարդ: Բայց դրանով արյունալի գործողությունները չվերջացան. օգտվելով իրավիճակից՝ Բաքվի նահանգի Նուխի, Արեշ գավառների և այլ վայրերի թուրքերը տմարդի հաշվեհարդար տեսան իրենց հարևան հազարավոր հայերի հետ: Ընդհանուր առմամբ Բաքվում ու նահանգում սպանված հայերի թիվը մի քանի օրում հասավ 50 հազարի[2]:

«Կավկազսկոյե սլովո» թերթը 1918 թ. սեպտեմբերի 29-ին գրում էր. «Կատարվել է անմարդկային արարք. զոհվել են տասնյակ հազարավոր մարդիկ: Այդ ամենը սարսափով և զարհուրանքով տեսածները ադրբեջանական կառավարությունից պահանջում են պաշտոնական քայլեր՝ մեղավորներին պատասխանատվության կանչելու համար: Հայկական հանրապետությունը և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը իրավունք ունեն պահանջելու, որպեսզի վերջապես, պաշտոնապես և փաստարկներով ասեն՝ ինչ է տեղի ունեցել Բաքվում»[3]:

Բաքվի անկումը թևավորեց Զանգեզուրը շրջափակած մուսավաթականներին. նրանք հույս ունեին, որ հաղթություն տարած օսմանյան զորքերը շուտով թեքվելու են դեպի Արցախ ու Զանգեզուր, ու նրանց օգնությամբ իրենք տեր են դառնալու հայկական այդ երկրամասերին:

Մի կողմից Ադրբեջանից եկող տագնապալի լուրերը, մյուս կողմից Երևանի կառավարության շարունակվող անտարբեր վերաբերմունքը ստեղծել էին ծանրագույն վիճակ:

Բաքվի կոմունան տապալած և քաղաքի տասնյակ հազարավոր հայերի հետ արյունալի հաշվեհարդար տեսած օսմանյան և մուսավաթական զորքերից առանձնացվել էին մի քանի խոշոր զորամասեր և գնացքներով ուղարկվել Եվլախ: Քաղաքը վերածվել էր ռազմական մեծ ճամբարի: Այստեղ էին եկել նաև մի քանի ուրիշ զորամասեր, որոնք չէին մասնակցել Բաքվի գրավման գործողություններին, այլ թողնվել էին թիկունքում՝ Հյուսիսային Արցախի հայկական շրջանների բնակչության հնարավոր հուզումները զսպելու

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 31, թ. 3:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թթ. 5-8-ի շրջ., 39 շրջ., 49, ֆ. 223, ց. 1, գ. 50, թ. 5, ֆ. 275, ց. 2, գ. 34, թթ. 41-42, գ. 55, թթ. 63-64, **Բ. Իշխանեան**, Բազուի մեծ սարսափները, Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920, էջ 102-105, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ 89-100, 117-118, 120-121, 142-143, 145-150, 488-489:

[3] “Кавказское слово”, 29 сентября, 1918.

համար: Դրանցից էր կովկասյան Գալիբոլու կոչվող դիվիզիան, որը, իր հրամանատար Ջեմիլ Ջահիդ բեյի գլխավորությամբ Գանձակից դուրս գալով, Եվլախի վրայով եկել հասել էր Աղդամ[1]:

Առավելագույնս օգտվելով իրենց համար ստեղծված բացառիկ բարենպաստ իրադրությունից՝ մուսավաթական կառավարությունը օսմանյան զավթիչների աջակցությամբ շտապեց օր առաջ ոչնչացնել Լեռնային Արցախի ինքնուրույնությունը և իր տիրապետությունը հաստատել այնտեղ:

Վրա հասան ճակատագրական օրեր: Օսմանյան զավթիչները մուսավաթական կառավարության տրամադրության տակ դրեցին Ղարաբաղն ընկճելու բոլոր միջոցները: Միաժամանակ հայերի թիկունքը նախապես թուլացնելու համար թուրքական զորքերի հրամանատարությունը մեծաքանակ զենք ու ռազմամթերք առաքեց Արցախի ու Զանգեզուրի և հատկապես դրանց միջև սեպի պես խրված Քուրդիստանի թուրքերին ու քրդերին:

Գալիբոլու դիվիզիայի հրամանատար Ջեմիլ Ջահիդ բեյը իր զորքով Արցախ խուժելուց առաջ Աղդամից մի նամակով դիմեց Արցախի հայոց առաջնորդին ու հայ ազգաբնակչությանը և վերջնագրի տեսքով առաջարկեց ճանապարհները բացել սարերից իջնող քոչվորների առաջ և ոչ մի հարաբերություն չունենալ Զանգեզուրում գտնվող Անդրանիկի հետ, հակառակ դեպքում թուրքական զորքերը կշարժվեին Ղարաբաղի վրա:

Սեպտեմբերի 19 (6)-ից 24 (11)-ը Շուշիում տեղի ունեցավ Արցախի հայության երկրորդ համագումարը: Նախագահում էր միաձայն ընտրված հայտնի բոլշևիկ Ալեքսանդր Ռուբենի Ծատուրյանը: Մոտ 200 պատգամավորների մասնակցությամբ համագումարն անցնում էր խիստ լարված պայմաններում: Օրակարգում դրվել էր երկու ծանրակշիռ հարց:

Առաջինը Ղարաղշլաղից գաղթած 5 հազար հայերի խնդիրն էր, որոնք մնացել էին Շուշիի փողոցներում բաց երկնքի տակ և մատնվել զրկանքների: Համագումարը դիմեց քաղաքի թուրքերի Ազգային խորհրդին և խնդրեց աջակցել, որ ղարաղշլաղցիները վերադառնան իրենց բնակության վայրերը, բայց թուրքերը հրաժարվեցին միջամտել այդ խնդրին:

Երկրորդը թուրք հրամանատարության կողմից Արցախի հայերին տված վերջնագրին պատասխան տալու հարցն էր[2]:

Ջեմիլ Ջահիդ բեյին պատասխան ուղարկելու խնդիրը բուռն քննարկումների տեղիք տվեց: Երկու օր շարունակ պատվիրակները վիճաբանում էին, բայց վերջնական եզրակացության չէին հանգում, թե ինչ պատասխան տան օսմանյան հրամանատարին: Վերջապես որոշվեց մի պատվիրակություն ուղարկել Աղդամ, որը պետք է Ջեմիլ Ջահիդ բեյին ներկայացներ համագումարի գրավոր խնդրանքը: Այն է՝ աջակցել, որ ղարաղշլաղցիները վերա-

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 310-311:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թ. 279:

դառնան իրենց ավերված բնակավայրերը:

Որոշումը կայացավ, բայց ոչ ոք չէր ուզում Աղդամ գնալ: Բանն այն էր, որ թշնամու հետ բանակցելու խնդրի շուրջ ձևավորվել էր երկու տեսակետ: Քաղաքի հայ բնակչության, մանավանդ նրա ղեկավարների տեսակետն արտահայտող պատգամավորները հակված էին համակերպվել օսմանցիների և մուսավաթական թուրքերի հետ, իսկ գավառների հայությունը դեմ էր դրան, ուստի նրանց մեղադրում էր թուլամորթության մեջ՝ անվանելով դավաճաններ:

Այդ տեսակետն ունեին Դիզակը, Վարանդան, Խաչենը և Ջրաբերդը: Այդ շրջաններում կազմվել էին ինքնապաշտպանության զինվորական մասեր, որոնց հրամանատարները Դիզակի շրջանում Արտեմ Լալայանը և Ասլանիկ Մուրադխանյանն էին, Վարանդայում՝ Սոկրատ Մելիք-Շահնազարյանը, Խաչենում՝ Ալեքսան Բալայանը (Ելեքսան Դային), Ջրաբերդում՝ Բագրատ Ղազանչյանը:

Երկարատև վիճաբանություններից ու խորհրդակցություններից հետո Աղդամ գնալու համար կազմվեց պատվիրակություն, որի անդամներն էին Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանը, իրավաբան Ա. Մելիք-Հովսեփյանը, Ղուկասյան օրիորդաց դպրոցի տեսուչ Հ. Մուսայելյանը, թեմական դպրոցի ուսուցիչ Ա. Քամալյանը և գյուղացիներից՝ Դանիել Առաքելյանը[1]:

Հայ պատվիրակների հետ Աղդամ պիտի գնային նաև ազգամիջյան կոմիտեի թուրք անդամները, բայց կոմիտեից համաձայնեց գնալ միայն մեկը՝ Լյութվալի բեկ Բեհբութովը, բարձրագույն կրթությամբ մի մարդ, որը ճանաչված էր իբրև երկու ժողովուրդների միջև հաշտության ձգտող անձնավորություն: Այդպիսի կազմով պատվիրակությունը մեկնեց Աղդամ:

Երբ պատվիրակությունը տեղ հասավ, Ջեմիլ Ջահիդ բեյը պատվիրակությանը նույնիսկ չցանկացավ մինչև վերջ լսել: Նրանց ձերբակալեց և պահանջեց պաշտոնապես ընդունել իր երեք պահանջները, այն է՝ ա) Ղարաբաղն անառարկելիորեն պետք է հպատակվի Ադրբեջանի կառավարությանը, բ) հայկական բոլոր զորամասերը և ողջ բնակչությունը պետք է զինաթափվեն, գ) օսմանյան զորքերին պետք է տրվի անարգել ճանապարհ՝ Շուշի մտնելու[2]:

Պատվիրակությունը անակնկալի եկավ: Օսմանյան հրամանատարության հետ բարեկամական կապ հաստատելու և ղարաղշլաղցիներին իրենց տեղը վերադարձնելու հույսեր փայփայող հայ պատվիրակները կանգնեցին անելանելի իրավիճակի առջև: Նրանց այնպիսի առաջարկներ արվեցին, որոնց ընդունման համար նրանք լիազորություններ չունեին: Ուստի պատվիրակությունը խնդրեց թուրք հրամանատարին, որ թույլ տա վերադառնալ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թ. 278-279, “Кавказское слово”, 22 октября, 1918:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թ. 279, «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 8 նոյեմբերի:

Շուշի՝ հայերի նոր համագումարում ներկայացված առաջարկները քննարկելու և պաշտոնական պատասխան տալու համար: Համաձայնելով այդ խնդրանքին՝ Ջեմիլ Ջահիդ բեյը թույլ տվեց Շուշի վերադառնալ պատվիրակության անդամներից միայն երկուսին՝ Հ. Մուսայելյանին և Դ. Առաքելյանին, որոնք պետք է քաղաքի հայերի ղեկավարությանը հայտնեին թուրքերի պահանջը, իսկ մյուս երեքին, ինչպես և թուրք ներկայացուցչին, պահեց պատանդ[1]:

Ջեմիլ Ջահիդ բեյի ներկայացրած կտրուկ պահանջները հրամայաբար պահանջում էին նոր համագումար հրավիրել:

Սեպտեմբերի 18-22-ը Շուշիում գումարվեց Արցախի հայության արտակարգ համագումարը, որին մասնակցում էին 200 պատգամավորներ: Աշխատանքներն ընթանում էին խիստ լարված մթնոլորտում: Բաքուն արդեն ընկել էր, և թուրքերն ու մուսավաթականներն իրենց ուժերը բերում էին Շուշի: Դարձյալ սև ամպեր էին կուտակվում Արցախի գլխին: Այս պայմաններում երեքօրյա աղմկալի նիստերից հետո համագումարը կայացրեց հետևյալ որոշումները. 1) նկատի ունենալով ուժերի իրական փոխհարաբերությունը և Բաթումի դաշնագիրը, որի տակ ստորագրել էին Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները, ըստ որի՝ Արցախի հարցը վերջնականապես պիտի լուծվեր Պոլսի խորհրդաժողովում, ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, 2) չընդունել զինաթափման պահանջը, մինչև որ արցախահայության ֆիզիկական գոյությունն ու գույքը պահպանելու համար չտրվեն իրական և ամուր երաշխիքներ[2]:

Մինչ համագումարի նիստերը շարունակվում էին, հոկտեմբերի 2-ին Գանձակից Աղդամ եկավ Նուրի փաշան՝ իր հետ բերելով Գանձակի առաջնորդ Լևոն վարդապետ Պսուրյանին և Ս. Տեր-Իսրայելյանին, արձակեց պատանդ պահված արցախցի պատվիրակներին և ավտոմոբիլ հատկացնելով՝ նրանց բոլորին ուղարկեց Շուշի՝ պահանջելով 24 ժամում կատարել թուրքական հրամանատարության պահանջները:

Պատվիրակները և Գանձակի հայոց առաջնորդը, դեռ Շուշի չհասած, ճանապարհին ձերբակալվեցին հայ գյուղացիների կողմից և ուղարկվեցին Խանքենդ: Մի շարք անախորժություններից հետո նրանք ազատ արձակվեցին և հասան Շուշի:

Պատվիրակության Շուշի ժամանումից հետո որոշվեց թուրք հրամանատարության հետ բանակցելու համար Աղդամ ուղարկել քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանին, Լևոն վարդապետին և համագումարի նախագահ Գ. Ղարագյոզյանին, որպեսզի նրանք հասնեն նրան, որ խնդիրը լուծվի առանց զորքի միջամտության: Այս նոր պատվիրակության խնդիրն էր նաև

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թ. 279, «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 8 նոյեմբերի:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 78, թ. 279:

ճանապարհին Ասկերանի շրջակա հայկական գյուղերի գյուղացիներին համոզել, որ նրանք օսմանյան զորքերին դիմադրություն ցույց չտան՝ վերջինիս Աղդամից Ասկերանի վրայով Շուշի անցնելու ժամանակ[1]:

Ծագած մի շարք անհամաձայնությունների պատճառով այս նոր պատվիրակությունն Աղդամ մեկնեց մեծ ուշացումով: Ճանապարհին նրա անդամները փորձեցին հայ գյուղացիական ջոկատների հրամանատարներին համոզել թուրքերին ազատ ճանապարհ տալ: Վերջիններս կտրուկ մերժեցին, ավելին, պատվիրակներին անվանելով դավաճաններ, նրանց ձերբակալեցին և պատրաստվեցին դիմադրության[2]: Պատվիրակներին մի օր պահելուց հետո, այնուամենայնիվ, ազատեցին և նրանք Աղդամ հասան հաջորդ օրը[3]:

Բայց արդեն լրացել էր նշանակված ժամկետը: Թուրք հրամանատարությունը հենց սպասում էր այդ առիթին: Ռազմական արշավանքի համար անհրաժեշտ պատրաստություն տեսած Ջեմիլ Ջահիդ բեյն իր ուժերը շարժեց Լեռնային Արցախի վրա:

Թուրքերին միացել էին մուսավաթական զորամասերը: Մտնելով Ասկերան՝ թշնամին այդ և հաջորդ օրերին գրավեցին և ավերեցին Միրիշալու, Վարազաբույն, Դահրավ, Փիրզամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղլիջբաղ, Քարագլուխ և հայկական այլ գյուղեր, ապա շարժվեցին դեպի Շուշի: Այդ օրերին Շուշիում տարածվեց հետևյալ հայտարարությունը, որն ստորագրել էր քաղաքի նոր նշանակված պարետը.

«Քաղաքացինե՛ր,

Թուրքական բանակը գալիս է և նրա նպատակն է առանց կրոնի ու ազգի խտրության ապահովել Ադրբեջանի բնակչության խաղաղ գոյությունը: Այսօրվանից քաղաքում կատարված յուրաքանչյուր հրացանաձգության համար հանցավորները դիվիզիայի հրամանատարի կողմից կենթարկվեն մահապատժի:

Շրջանային կոմիտեները պարտավոր են հրացան արձակողներին անմիջապես ներկայացնել ոստիկանատուն, հակառակ դեպքում տվյալ շրջանային կոմիտեն կենթարկվի 10000 ռուբլու տուգանքի կանխիկ դրամով՝ հօգուտ Ադրբեջանի Հանրապետության:

Շուշի քաղաքի պարետ՝

Հասան Բասրի բեյ»[4]:

Սեպտեմբերի 23 (հոկտեմբերի 6)-ին Ջեմիլ Ջահիդ բեյի հրամանատարությամբ և գանձակեցի խոշոր կալվածատեր, հայտնի մուսավաթական զոր-

---

[1] Տե՛ս “Кавказское слово”, 22 октября, 1918, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 387-388:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 2, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 388:

ծիչ Իսմայիլ խան Զիաթխանովի ուղեկցությամբ թուրքական զորաբանակը Աղդամից շարժվեց դեպի Շուշի՝ առաջանալով հայկական զորքերի բացած նեղ միջանցքով: Թեև պայմանավորվածության համաձայն զորամասը առաջանում էր, բայց թուրքերը, երախտամոռ գտնվելով, ընթացքում հրետանակոծության ենթարկեցին Նախիջևանիկ, Փիրջամալ և այլ գյուղեր[1]:

1918 թ. սեպտեմբերի 25 (հոկտեմբերի 8)-ին (որոշ աղբյուրներում՝ 26 (հոկտեմբերի 9)-ին) Ջեմիլ Ջահիդ բեյի զորաբանակը՝ մոտ 1500 զինվորով[*], մտավ Շուշի, որի մահմեդական բնակչությունը նրան դիմավորեց տների պատշգամբներն ու պատուհանները գորգերով պատած: Շատ չանցած՝ եկան նաև նոր ստորաբաժանումներ, այդ թվում՝ մուսավաթական, և քաղաքում թուրք ասկյարների թիվը հասավ 2000-ի: Նրանք այստեղ մնացին 22 օր:

Շուշի մտնելուց հետո թուրքերը քաղաքում հայտարարեցին ռազմական դրություն, որով քաղաքացիներին արգելվում էր տնից դուրս գալ երեկոյան ժամը 9-ից մինչև առավոտյան ժամը 6-ը: Քաղաքի հայկական մասում հայերը պարտավոր էին անառարկելի կատարել թուրք հրամանատարության և մուսավաթական կառավարության ու նրա տեղական ներկայացուցիչների բոլոր կարգադրությունները: Հայ բնակչությունը զինաթափվեց, փոխարենը սպառազինվեցին տեղի թուրքական ուժերը: Տաճիկ և մուսավաթական սպաները տեղավորվեցին ռեալական ուսումնարանի շենքում և հայերի լավագույն տներում: Անօրինական համարվեց և լուծարվեց Արցախի կառավարությունը: Բայց դա դեռ բոլորը չէր. թուրք զինվորականներն ու մուսավաթականները անպատիժ դատաստան էին տեսնում խաղաղ հայ բնակչության նկատմամբ: Ձերբակալվեցին ու բանտ նետվեցին բազմաթիվ հայ մտավորականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ՝ Ե. Իշխանյանը (Արցախի կառավարության նախագահ, դաշնակցական), Ա. Իոանիսյանը (քաղաքի նախկին կոմիսար, էսէռ), Լ. Վարդանյանը (սոցիալ-դեմոկրատ), Ն. Իսախանյանը (ռազմական խորհրդի նախկին նախագահ, սոցիալ-դեմոկրատ), Մ. Այվազյանը (կառավարության անդամ, դաշնակցական) և ուրիշներ[2]: Ավելին՝ ձերբակալված հայ քաղաքացիներից մեկը կախաղան բարձրացվեց՝ զենքը չհանձնելու համար, իսկ մյուսները նետվեցին քաղաքային բանտ[3]:

---

[1] Տե՛ս “Кавказское слово”, 22 октября, 1918, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 388:

[*] Շուշի մտած թուրք-մուսավաթական միացյալ զորամասի մասին գրականության մեջ և աղբյուրներում բերված են իրարից խիստ տարբեր տվյալներ: Այսպես, Հարություն Թումյանի վկայությամբ զորամասում հաշվվում էր 1500 հոգի (տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 8 նոյեմբերի), “Кавказское слово” թերթը 1918 թ. հոկտեմբերի 13-ի համարում բերում էր 500 թիվը, աղրբեջանցի պատմաբան Ֆ. Շուշինսկու գրքում զորամասի զինվորների ու սպաների թիվը նշված է 4000 (տե՛ս **Ф. Шушинский**, Шуша, Баку, 1968, с. 83) և այլն:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 49, թթ. 41-42, “Кавказское слово”, 22 октября, 13 ноября, 1918:

[3] Տե՛ս “Кавказское слово”, 13 ноября, 1918:

Առաջին շաբաթվա ընթացքում Շուշիում կատարելով բազմաթիվ ոճրագործություններ՝ օսմանյան զորքը հետագա օրերին իրեն պահում էր զուսպ, իսկ քաղաքում մնացած Արցախի կառավարությունը գործում էր բացեիբաց[1]: Պատճառը Անդրանիկի՝ Հարվածող զորամասով ու տեղական վաշտերով Զանգեզուրում լինելն էր: Թուրք և մուսավաթական հրամանատարությունը տեղեկացված էր, որ Անդրանիկը Արցախ անցնելու պատրաստություններ է տեսնում: Թշնամին համոզված չէր, թե Զանգեզուրից եկող զորքի հետ կռվում կարող է որևէ հաջողություն ունենալ: Բացի այդ, ինչպես իր հուշերում նշել է Հարություն Թումյանը, «Աղդամ–Շուշի ճանապարհի մատույցներն ամբողջ երկարությամբ հսկում էին հայկական զորամասերը, որոնք անհրաժեշտության դեպքում կարող էին ոչնչացնել թշնամական պահակախմբերը, և Շուշիի թուրքական զորքը կմնար կրակե օղակի մեջ»[2]: Շուշիում եղած երեք շաբաթների ընթացքում «օսմանցիների ձեռնարկած բոլոր միջոցառումները՝ Արցախն Ադրբեջանին ենթարկելու համար, դաժան հակահարվածներ ստացան»[3]: Թուրքերի հիմնական նպատակն այն էր, որ մինչև գերմանա-թուրքական բլոկի նշմարվող պարտությունը և դրա հետևանքով իրենց զորքերի հետ քաշելը Բրեստի պայմանագրով նախանշված սահմանները կարողանան լուծել գլխավոր հարցը. հայկական հողերը, ամենից առաջ Արցախն ու Զանգեզուրը, միացնեն Ադրբեջանին: Թուրքամուսավաթական ծրագիրը, սակայն, կոչված չէր իրագործվելու:

---

[1] Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 8 նոյեմբերի:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆԸ ԹՇՆԱՄՈՒ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՎՏԱՆԳԻՆ ԴԵՄ ՀԱՆԴԻՄԱՆ: ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍԻՍԻԱՆԻՑ

Բոլոր իրադարձություններին Զանգեզուրում հետևում էին չթուլացող հետաքրքրությամբ և գալիքի վտանգավոր սպասումներով: Բոլորի համար պարզ էր, որ զանգեզուրցի հայերին մինչ այդ արված սպառնալիքներից օսմանյան և մուսավաթական զորքերը անցնելու են կոնկրետ գործողությունների: Եվ, իրոք, ներխուժման վտանգը շուտով կախվեց լեռնավայրի վրա:

Հայրենի լեռնաշխարհի գլխին կախված ահեղ վտանգի ժամին ցայտուն դրսևորվեց հայ բնակչության գերազանց հատկություններից մեկը, այն է՝ մի կողմ դնել ներքին հակասությունները, համախմբվել, զորահավաքի ենթարկել բոլոր ուժերն ու հնարավորությունները և ամուր բռունցք դառնալ թշնամու դեմ: Միաժամանակ պարզ էր դարձել, որ գավառի ինքնապաշտպանության ուղղությամբ մինչ այդ ձեռնարկված միջոցառումները բավարար չեն, և որ անհրաժեշտ են ավելի վճռական գործողություններ:

Թշնամին առաջին հերթին սպառնում էր հայաթափել բուն Զանգեզուրը (Գորիսի շրջանը): Քանի որ Անդրանիկն իր զորքով գտնվում էր Սիսիանում և զբաղված էր շրջանի պաշտպանության կազմակերպման գործով, Զանգեզուրի ազգային խորհուրդը գավառում հայտարարեց պաշարողական դրություն:

Թուրքական զորքերի առաջխաղացումը վտանգում էր ոչ միայն Ղարաբաղի, այլև Զանգեզուրի անվտանգությունը: Այդ իրադարձությունները արտացոլված էին նաև 1918 թ. սեպտեմբերին Զորավար Անդրանիկի՝ Նուրի փաշային ուղղված պատասխան նամակում, որում նշվում էր.

«Ես կարդացի Ձեր օգոստոսի 15-ի նամակը, տեղեկացված եմ նաև իմ հասցեին արված Ձեր հերյուրանքների մասին: Ես պարտություն չեմ կրել, ինչպես Դուք եք գրում և փախուստի չեմ դիմել: Ընդհակառակը, Դուք այսօր իմ առջև բարոյապես պարտված եք, քանի որ հավանաբար, հիշում եք հազարի հասնող Ձեր զորքի փախուստը Սասունի, Մշո վանքի, Բալկանյան պատերազմի, Բիթլիսի գրավման կռվի ժամանակ ընդամենը 40 ֆիդայիների առաջ, ինչպես նաև Ձեր թողած թնդանոթներն ու գնդացիրները մի քանի օր առաջ Խոյի մատույցներում: Եթե Դուք չեք հիշում, ապա կարող եք հարցնել Յավեր փաշայից»[1]:

Այնուհետև նամակի շարունակության մեջ Զորավարը փաստում էր, որ

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 7, թ. 2-3:

ինքն անգլիական կառավարությունից ոսկով կաշառք չի ստացել, իրավացիորեն արձանագրում էր, որ եթե աշխարհում կա մի երկիր, որն ամբողջությամբ պատված էր կաշառակերությամբ, ապա դա Թուրքիան է և նրա կառավարությունը, նրա պաշտոնատար անձինք:

«Դուք ձեզ հերոս եք համարում, սակայն համաշխարհային պատմությունը ցույց է տալիս, որ դուք հերոս եք միայն անմեղ ու անզեն ժողովրդի առջև, դա ես բավականին լավ գիտեմ:

Նրանից հետո, երբ ողջ աշխարհը իմացավ այն մասին, թե որքան արյունռուշտ է ձեր կառավարությունը և թե ինչ ....կավարնի քաղաքականություն է վարում, դուք, որ ձեզ համարում եք քաղաքակիրթ պետության պաշտոնավոր անձ և հրապարակում եք հայտարարություն, ցանկանում եք անմեղ ժողովրդին զցեք ձեր թակարդը: Այո՛, կարող է, որ դրանում հաջողության հասնեք և պատճառ կդառնաք անմեղ շատ մարդկանց արյունահեղությանը, սակայն իմացեք, որ դուք մեզ չեք խաբի: Աստծո կամոք, մենք շատ շուտով կհանդիպենք»[1]:

Գորիսից ստանալով լուրեր Արցախում և նրա շուրջը կատարվող իրադարձությունների մասին՝ Անդրանիկն այնտեղ թողած իր ուժերին հրամայեց շարժվել և ամրանալ գավառի արևելյան սահմաններին մոտ, միաժամանակ հայտարարեց Գորիսի շրջանի արևելյան հատվածի բնակչության զորահավաք, որի կազմակերպումը հանձնարարեց Հարվածող զորամասի 1-ին գումարտակի հրամանատար, շտաբս-կապիտան Յ. Ռ. Բորտին: Մեծ եռանդով անցնելով գործի՝ Յ. Ռ. Բորտը մի քանի օրում կազմակերպեց զինված ջոկատ, որի մեջ մտան Ղարաղշլաղից Գորիսի շրջան գաղթած տղամարդիկ և բուն Զանգեզուրի գյուղացիները:

Հայկական ուժերը դիրքեր գրավեցին Մաղանջուղ–Կոռնիձոր–Տեղ–Խնածախ–Խոզնավար գծի վրա:

Թշնամու բազմաքանակ ուժերը՝ թուրք, քուրդ և օսմանյան զորամասերը, հարձակում սկսեցին Խնածախի և Կոռնիձորի ուղղություններով[2]: Ղարաղշլաղն ավերելուց հետո թշնամին ավելի էր երես առել և մտադրվել էր հայերի Կոռնիձոր–Խոզնավար–Խնածախ պաշտպանական գիծը խորտակելուց հետո խուժել Զանգեզուրի կենտրոն Գորիս քաղաք:

Մահացու սպառնալիք կախվեց Զանգեզուրի վրա:

Սեպտեմբերի 26-ին թշնամին մեծաքանակ ուժերով անցավ հարձակման: Սկսվեցին կատաղի կռիվներ: Տեղական վաշտերը և Հարվածող զորամասի՝ Գորիսի շրջանում տեղակայված զինվորները կռվում էին հերոսաբար: Ինքնապաշտպանական մարտերը ղեկավարում էին բուն Զանգեզուրի դիկտատոր Մ. Մելիք-Շահնազարյանը և Անդրանիկի զորամասի գումարտակի

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 7, թ. 2-3:

[2] Տե՛ս “Наше время”, 3 января, 1919:

հրամանատար, շտաբս-կապիտան Յ. Ռ. Բորտը:

Եթե կռիվը երկար տևեր, ապա հայկական ուժերը կարող էին տեղի տալ և նահանջել: Սակայն բուն կռվի ընթացքում հրամանատարությանը հաջողվեց նոր զորահավաքով առավելագույն չափով զինել թե՛ շրջանի այդ հատվածի, թե՛ արևմտյան կողմի գյուղերի երիտասարդությանը: Իսկ թշնամին շարունակում էր նորանոր զորամասեր նետել կռվի ճակատ: Չնայած բոլոր ջանքերին՝ թշնամուն չհաջողվեց հաջողության հասնել:

Հարվածող զորամասի առաջին գումարտակը, Շուշիի գունդը, տեղական մարտական ջոկատները և դրանց միացած մի քանի հարյուր զինված գաղթականներն աներեր կանգնեցին թուրք-քրդական միացյալ ուժերի դեմ: Ութ օր տևած ծանր կռիվներում, ըստ Անդրանիկի տվյալների, տալով 200-300 սպանված, հակառակորդը պարտություն կրեց և նահանջեց ելման վայրերը[1]:

Զավթիչների սեպտեմբերյան դառը պարտությունը Զանգեզուրի հարակից թուրքաբնակ ու քրդաբնակ տարածքների բնակչության մեջ առաջ բերեց բարոյահոգեբանական ծանրագույն վիճակ: Հարկ է նաև նշել, որ Զանգեզուրի հայերի դրությունը շատ ավելի ծանր չէր նրանց դեմ կռվող թուրքերի վիճակից: Սրանք նույնպես կրում էին մեծ դժվարություններ և տառապանքներ: Թուրք փաշաները և ասկյարները տնտեսապես քամել էին Ադրբեջանի թուրքերին, նրանց ուժասպառ արել նաև ֆիզիկապես՝ երիտասարդներին շարունակ ուղարկելով Բաքվի և Թավրիզի ճակատները, որտեղ նրանք տալիս էին մեծ կորուստներ: Բացի այդ՝ 1918 թ. ամռանը դաշտային շրջանների թուրքերը, չկարողանալով ազատորեն սարը բարձրանալ, իրենց հոտ ու նախիրի հետ մատնվեցին ջերմախտի տենդին և երաշտի զուլումին: Մյուս կողմից էլ Զանգեզուրին հարևան թուրքական շրջաններում խոլերան էր իր հունձն անում:

Թշնամու պարտությունը չթուլացրեց զանգեզուրցիների զգոնությունը: Բացառված չէր, որ նա շուտով կարող էր նոր, ավելի մեծ ուժերով հարձակում գործել գավառի արևելյան սահմանների վրա:

Այս անգամ թշնամին հարվածը հասցնելու էր Արցախին, որին հպատակեցնելուց հետո օսմանյան-մուսավաթական ուժերը վճռական հարձակում էին գործելու Զանգեզուրի վրա: Ծրագրված էր այս գավառը նվաճելուց և տեղի հայությանը բնաջնջելուց հետո միանալ Նախիջևանին, այնուհետև, թիկունքից հարվածելով Հայաստանի Հանրապետությանը, գրավել Երևանը և վերջ տալ հայության գոյությանը հայոց մանուկ հանրապետության մեջ:

Այս բախտորոշ իրադրության մեջ Զանգեզուրի ազգային խորհուրդը փորձ արեց պարզելու, թե Անդրանիկի զորամասի բացակայության պայմաններում բուն Զանգեզուրը արդյո՞ք կարող է դիմանալ թշնամու զանգվածային հարձակմանը: Այդ նպատակով Ազգային խորհուրդը դեռ սեպտեմբերի 15 (2)-ին հրավիրեց շրջանային ժողով, որին ներկա էին բուն Զանգեզուրի բոլոր

[1] Տե՛ս “Наше время”, 3 января, 1919, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 391:

գյուղերի ներկայացուցիչները: Խորհրդակցության նյութն էր՝ արտաքին թշնամուն դիմադրե՞լ, թե՞ ոչ:

Մի շարք գյուղերի ներկայացուցիչներ պնդում էին, թե պետք է վճռականորեն կռվել Ղարաբաղի կողմից մեր երկիրը խուժող թուրք թշնամու դեմ, եթե անգամ նրանց միանան թուրքական կանոնավոր զորամասերը: Մյուս ներկայացուցիչները, ի թիվս մտավորականությունը ներկայացնող ժողովականների, առաջարկում էին կռվել տեղի թուրք խուժանի և թուրքական զորքի դեմ այն ժամանակ, երբ նա հարձակման անցներ: Իսկ եթե թուրք պետական ներկայացուցիչները բանակցելու համար նախօրոք դիմեին նշված գյուղերի և Գորիս քաղաքի ներկայացուցիչներին, ապա այդ դեպքում նրանց առաջարկը պետք էր ընդունել առանց կռվի: Այս առաջարկով հանդես եկողները նկատի ունեին բուն Զանգեզուրում՝ ա) զինամթերքի ոչ բավարար լինելը, բ) պարենավորման գործի անկազմակերպ լինելը և գ) ռազմական տեսակետից զորքի բարոյահոգեբանական ոչ բարձր մակարդակը[1]:

Ընդհանրապես շատերն այն կարծիքին էին, որ քանի որ կար կռվող զորքի պակաս, դիմադրելու դեպքում կարող էին լինել մարդկային զոհեր և հողերի կորուստներ:

Վերջում ժողովը որոշեց այդ ամենի մասին տեղեկացնել Սիսիանում գտնվող Անդրանիկին և նրան խնդրել պատասխանել, թե որն է Գորիսի շրջանի բնակչության անելիքը, և ինչ է մտածում Զորավարը այդ բնակչությանը օգնության ձեռք մեկնելու մասին:

Զանգեզուրի վրա կախված մահացու վտանգի ճակատագրական պահին Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը և իշխանության տեղական մարմինները թեև տենդագին գործողություն ծավալեցին թշնամու կողմից սպասվելիք լայնածավալ հարձակումներին դիմակայելու համար, բայց ժողովրդի գլխավոր հույսը Անդրանիկն էր, նրա Հարվածող զորամասը:

Անդրանիկի և նրա զորամասի Սիսիանում գտնվելու ժամանակ, երբ հսկայական աշխատանքներ էին ծավալվել շրջանի պաշտպանության ամրապնդման ուղղությամբ, բուն Զանգեզուրում (Գորիսի շրջանում) տարերային լայն շարժում սկսվեց՝ Անգեղակոթից նրան հրավիրելու համար: Այդ նպատակով գումարվում էին համայնքների ժողովներ, ընդունվում որոշումներ և ուղարկվում Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդ՝ պահանջելով Զորավարի վերադարձը: Նման պահանջով Ազգային խորհրդին էին դիմում նաև բազմաթիվ երևելի անհատներ՝ թե՛ Գորիս քաղաքում, թե՛ գյուղերում: Բացի դրանից՝ համայնքներում ընտրվում էին պատգամավորություններ, որոնք ուղղակի մեկնում էին Անգեղակոթ և իրենց գյուղերի կամ գյուղախմբերի անունից կազմած գրավոր հավաքական խնդրանքներն անմիջականորեն հանձնում Զորավարին:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 22:

Օրինակ՝ Գորիս քաղաքի հասարակայնության ժողովի արձանագրությունը Անգեղակոթ տարավ Սմբատ Խոջաբաղյանը[1], Տեղ գյուղինը՝ Համբարձում Մոհբաթյանցը[2], Խնձորեսկինը՝ Խաչատուր Ավանեսյանը[3] և այլն: Այս պայմաններում Ազգային խորհուրդը չէր կարող անտարբեր դիտողի դերում մնալ և հաշվի չառնել գնալով ծավալվող բողոքի ալիքը, մանավանդ որ Ազգային խորհրդի ներսում ևս արդեն մեծամասնություն էին Զորավարին հրավիրելու կողմնակիցները:

Մտահոգության հիմնական պատճառը արագ փոփոխվող իրադրությունն էր: Գորիսում լավ էին հասկանում, որ թշնամին փորձելու է Զանգեզուր մտնել իրենց շրջանի վրայով, իսկ շրջանի՝ Ադրբեջանին հարող սահմանային գյուղերի պաշտպանության համակարգը դեռ հեռու էր բավարար լինելուց: Հետևապես բոլորի համար պարզ էր, որ առանց Անդրանիկի զորամասի հարվածող ուժի դժվար է լինելու կանգնեցնել ագրեսորի արշավանքը:

Սեպտեմբերի 22 (9)-ին Զանգեզուրի ազգային խորհուրդը Մ. Պարոնյանի ստորագրությամբ առանձին նամակ ուղարկեց Անգեղակոթում գտնվող Անդրանիկին և նրան խնդրեց Հարվածող զորամասի հետ որքան կարելի է շուտ վերադառնալ Գորիս[4]:

Անդրանիկը, կարդալով նամակը, Ազգային խորհրդին գրեց իր պատասխանը՝ նամակում թվարկելով, թե ինչ պատճառներով ինքը ցանկություն չունի կրկին լինել Գորիսում.

I. «Իմ՝ զորավարի հանդեպ Ձեր շրջանի ցոյց տուած անհիւրընկալ վերաբերմունքը.
II. Այն իրողութիւնը, որ իմ այդտեղ եղած 50-ի մօտ հիվանդներս ու վիրավորներս թողնուած են քաղցած ու անխնամ.
III. Ձեր անբարեացակամ վերաբերմունքը հանդէպ գաղթականութեանը, որին նոյնիսկ ուզեցիք զինաթափ ընել զենքի ուժով.
IV. Այն փաստը, որ Դուք այստեղ ունեցած ռազմամթերքը չփոխադրեցիք Ձեր միջոցով.
V. Այն, որ առհասարակ դեռ կը շարունակուի (Ձեր կողմից) կասկածելի ու սիրալիր յարաբերություններ մշակվել թուրքերի հետ*.
VI. Որ Զապուղի ձորի օպերացիային համար 1000 մարդ չկարողացաք

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 18 և շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 19:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 17 և շրջ.:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 9, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 390, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 17:

* Անդրանիկը, հավանաբար, այն նկատի ուներ, որ Գորիս քաղաքի հարուստ առևտրականները և քաղքենի մտավորականներից ոմանք գտնում էին, որ, միևնույնն է, թուրք-տաճկական զորքերը գրավելու են Զանգեզուրը, ուստի կիսաձայն առաջարկում էին ենթարկվել թշնամուն՝ զանգվածային կոտորածների չենթարկվելու համար:

տուրս պերել, պատճառաբանելով, թե ինչպես կը լսեմ (դրա հետևանքով), Ղարաղշլաղը կենթարկուի քանդումի.

VII. Որ մինչև հիմա չտեսայ Ձեր յայտարարած մօպիլիզացիայի հետևանքով ստեղծուած զորքը և ամբարած ցորենը.

VIII. Ապոզի ձիերուս 11 հատը հին գորիսեցիների կողմանե գողացուելը.

IX. Որ ամեն մի առիթով՝ «Ազգային խորհուրտի գանձարկղում կոպեկ չկա» հայտարարելը.

X. Շրջանի մեջ 8000 զենք լինելով, կարողացաք բռնի ուժով հազիվ 200 հոգի տրամադրել պոլկովնիկին (Շուշիի գնդի: – *Ա. Ս.):*

Այս բոլորը իմ աչքովս տեսած լինելով, կասկածում եմ, թե Գորիս գալով կրկին խաբված լինեմ»[1]:

Սակայն Զորավարի համար պարզ էր, որ Գորիսից եկող տագնապալի կանչերն իսկապես զուր չեն, որ շրջանի համար, իրոք, ստեղծվել է խիստ վտանգավոր վիճակ, ուստի նա հաղթահարեց հոգու խռովքը, տրամադրվեց օգնության հասնելու ծանր կացության մեջ հայտնված գորիսեցիներին:

Նույն պատասխան նամակում իր հիասթափության պատճառները թվարկելուց հետո Զորավարը նշում էր, որ Գորիս վերադառնալը բացառված չէ: Նա գրում էր.

«Մյուս կողմանէ նկատի ունենալով, որ

I. Սիսիանի շրջանում արդեն կատարուած է 20-25 տարեկաններու առաջին մօպիլիզացիա և կազմուած է երկու ռոտա.

II. Հավաքված է բանակի համար անհրաժեշտ մթերքի մեծ մասը.

III. Սկսուած է 25-31 տարեկաններու երկրորդ մօպիլիզացիան, որը դեռ չէ ավարտուած.

IV. Որ Սիսիանի ժողովուրտը, ըմբռնելով տրությունը, որոշ չափով ընտառաջ է գնացած իր գոյութիւնը պաշտպանելու բնազտին.

V. Հակառակ անոր, որ թեև մինչև այժմ փող հանգանակելու ուղղութեամբ Սիսիանում ոչինչ չէ արուած, բայց, այնուամենայնիվ, եթե հարկ լինի, հոյս ունեմ, որ սիսիանցին կը մտածէ այդ մասին.

VI. Որ այստեղ դեռ կայ Աշոտի* վոլոստի կիսատ մնացած օպերացիան, որը, հավանական է, վաղը չէ մյուս օրը գլուխ հանուի:

Այս ամենը նկատի առնելով, հնարավոր եմ համարում Գորիս գալը»[2]:

Բոլոր կարևոր խնդիրները ավարտին հասցնելու համար, գրում էր Զորավարը, անհրաժեշտ էր առնվազն 5-6 օր, քանի որ չէր կարող սկսած գործերը կիսատ թողնել:

Նամակի վերջում Զորավարը Ազգային խորհրդին նախատում էր նրա

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 39 և շրջ.:

* Գողթանի ղեկավար Աշոտ Մելիք-Մուսյան:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 39-ի շրջ.:

համար, որ Գորիսում արմատավորվել էր թշնամու նկատմամբ վախը: «Իսկ եթե մինչև իմ գալը Սութխայ բեկը գա ձեզ քարուքանդ անելու, մի քիչ էլ դուք մտածեք, որովհետև այդտեղ ունեք պոլկովնիկը (Շուշիի գնդի: – *Ա. Ս.)* և ուրիշ զինվորականներ: Նկատի ունեցեք, որ եթե դուք Սութխայ բեկերի նմաններին ձեր զենքը և ձեր պատիվը տաք, դուք դժբախտացած պիտի լինեք ամբողջովին և դավաճանած մի ամբողջ գործի…»[1]:

Անդրանիկի պատասխան նամակը թեև Զանգեզուրի ազգային խորհրդին հույս էր ներշնչել, որ Զորավարը աչքաթող չէր անի իր խնդրանքը, սակայն չէր վերացրել տագնապը՝ ազգային հերոսի վերադարձը ուշանալու կապակցությամբ: Գորիսում մտածում էին, եթե Զորավարն ընդհանրապես չվերադառնա, կործանումն անխուսափելի է:

Ազգային խորհրդում տագնապը մեծացել էր հատկապես այն պատճառով, որ թուրքերը Զաբուղի ձորերից զանգվածային հարձակում էին սկսել շրջանի Խոզնավար և Խնածախ գյուղերի ուղղությամբ:

Սեպտեմբերի 25 (12)-ին Զանգեզուրի ազգային խորհրդի նախագահ Միշա Պարոնյանը և խորհրդի անդամ Գեղեոն Տեր-Մինասյանը Անգեղակոթում գտնվող Անդրանիկին ուղարկած նոր նամակում թախանձագին խնդրեցին Զորավարին շտապ վերադառնալ Գորիս՝ խոստանալով բոլոր հնարավորությունները ստեղծել զորամասի համար.

«Զանգեզուրին վտանգ է սպառնում մի քանի ճակատներից: Թուրքական (իհարկե՝ տեղացի) մեծ ուժեր են նկատվում Կոռնիձոր–Խնձորեսկ և Խոզնավար–Խնածախ կողմերում: Այսօր Խոզնավարից, Սաքոյից (Յապոն) նամակ ենք ստացել, որում գրում է, թե (երկու օր առաջ)՝ ամսի 11-ին, կեսօրի մոտերքը թուրքերը հարձակում են գործել դիրքերի վրա, բայց հետ են շպրտվել: Հայերը տվել են մի սպանված և մի վիրավոր: Մեր կողմից ուժեր են կենտրոնացված Կոռնիձոր, Խնձորեսկ, Տեղ, Խնածախ և Խոզնավար գյուղերում: Կարգադրված է դիրքապահությունը ուժեղացնել այդ բնակավայրերում: Հայտնում ենք նաև, որ շրջանում հաջող է ընթանում զորահավաքը:

Այս ամենով հանդերձ Ազգային խորհուրդը և մանավանդ ժողովուրդը բոպե առ բոպե սպասում է, թե ե՞րբ պիտի Գորիսի հորիզոնում տեսնի սիրելի հերոսին, որի շուրջը հավաքվելով մեր հազարավոր քաջ երիտասարդները՝ արժանի ապտակ պիտի տան թուրքությանը՝ Ղարաղշլաղն ավերողներին»[2]:

Ընդամենը մի օր անց՝ սեպտեմբերի 26 (13)-ին, Միշա Պարոնյանը հերթական նամակն ուղարկեց Սիսիան՝ Զորավարին:

«Գերազնի՛վ գեներալ,– գրում էր նա,– նամակս ներկայացնող Աստվածատուր Գևորգյանը և Դավիթ Խուրշուդյանը գալիս են Գորիս քաղաքի

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 39 և շրջ.:

[2] Նույն տեղում, գ. 51, թ. 4-5, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 390:

կողմից հայտնելու Ձեզ Խոզնավարի դրության մասին: Թուրքերի կողմից նկատելի են մեծ ուժերի ներկայություն: Գորիսը, Խնածախը և առհասարակ բուն Զանգեզուրը ենթակա են վտանգի Խոզնավարի կողմից: Ազգային խորհուրդը կրկին ու կրկին խնդրում է Ձեզ, առանց մի րոպե կորցնելու, շտապել Ձեր զորամասով և փրկել մեր շրջանը կորստից:

Կոռնիձորի մոտ գերի վերցված թուրք զինվորի ցուցմունքը և տված տեղեկությունները կներկայացնեն Ձեզ գրաբերներ Գևորգյանը և Խուրշուդյանը. միաժամանակ նրանք կպատմեն Ձեզ թուրքերի առաջխաղացված ճանապարհը»[1]:

Չբավարարվելով այդ նամակով՝ նույն օրը՝ սեպտեմբերի 26 (13)-ին, Զանգեզուրի ազգային խորհրդի նախագահը երկրորդ նամակն ուղարկեց Անդրանիկին՝ դարձյալ Գորիս վերադառնալու աղերսանքով.

«Մեծարգո գեներալ-մայոր
Անդրանիկին.

Ձեր վերջին գրությունը ստանալով՝ Ազգային խորհուրդս աղերսում է Ձեզ անմիջապես վերջացնել Ձեր կիսատ թողած օպերացիան, որոշ զգուշավոր միջոցներ ձեռք առնել Սիսիանի նկատմամբ և մնացած ամբողջ ռազմական ուժով անցնել Գորիս՝ այստեղ միահամուռ ջանքերով որոշելու մեր անելիքը ու գործի դիմելը:

Մեծարգո գեներալ, Ազգային խորհուրդս ավելորդ է համարում Ձեզ ավելորդ խոստումներ անելու. մենք մեր ամբողջ ֆիզիկական ուժերով Ձեր տրամադրության տակ ենք՝ պատրաստ Ձեզ հետ գործելու ու Ձեզ հետ մեռնելու: Ձեր բոլոր տնտեսական պահանջները մեր կողմից չէ, համենայն դեպս, որ պիտի անկատար մնան:

Այդ առթիվ Ձեզ հրավիրելու համար գրությանս հետ գալիս են Ձեզ մոտ մեր գյուղերի ներկայացուցիչները:

Նախագահ՝ բժ. Մ. Պարոնյան»[2]:

Սիսիանից Անդրանիկի վերադարձով մեծապես շահագրգռված էին նաև Արցախում: Նախիջևանից Զորավարի Գորիս գալուց անմիջապես հետո Շուշիից և Արցախի տարբեր վայրերից նա բազմաթիվ նամակներ էր ստանում, որի հեղինակները նրան խնդրում էին իր զորամասով անցնել Արցախ և ուժեղացնել այդտեղի դիմադրական ուժը: Բայց հիմա Անդրանիկը ոչ միայն չէր գնացել Արցախ, այլև Գորիսից մեկնել էր Սիսիան՝ էլ ավելի հեռանալով Արցախից:

Արցախ մտնելու խնդրանքով ու կոչերով Անդրանիկը Սիսիանում նույն-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 20 և շրջ., **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 390:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 19 և շրջ.:

պես Արցախից ստանում էր նամակներ: Արցախցիներն իրենց նամակների մի մասը հասցեագրում էին Գորիս՝ գնդապետ Միքայել բեկ Մելիք-Շահնազարյանին, Հովակ Ստեփանյանին և Միշա Պարոնյանին՝ Անդրանիկին փոխանցելու համար:

Վերջիններս Անդրանիկին գրել էին, որ Շուշիից ստացվել է հերթական գրությունը, որով արցախցիները գեներալից խնդրում են որևէ պատկառելի զորամասով անցնել Շուշի: Նշում էին, որ այն զորամասը, որ կանցնի Շուշի, Շուշիի գնդի բոլոր մթերքներից կստանա իր բաժին հագուստը, կոշիկը, վրանը և այլն, նաև ռոճիկ, իսկ Հարվածող զորամասի մյուս մասը, որը կմնա Գորիսի շրջանում, կստանա կանոնավոր սնունդ, գուլպա, տրեխ, բնակարան: Հակառակ դեպքում, եթե հերոսը վճռեր մնալ Սիսիանում, ապա արցախցիները խնդրում էին մի քանի հարյուր զինվոր տրամադրել գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանին, որ նրանց միացնեին Շուշիի գնդին, և հնարավոր լիներ անցնել Արցախ[1]:

Հարվածող զորամասի՝ Սիսիանի սահմաններում տեղաբաշխված Սասունի գնդի ստորաբաժանումների հրամանատարներ Մանուկին և Մուշեղին սեպտեմբերի 27 (14)-ին Անդրանիկը տեղեկացրեց Գորիսի շրջանում ստեղծված ծանր վիճակի և գորիսեցիներին օգնության գնալու իր որոշման մասին:

«Գորիսէն տեղեկութիւններ կը ստացուին,– գրում էր նա,– որ Շուշինսկի բոլկի բոլկովնիկը փորձեր է Զապուղը անցնիլ ու անյաջողութեան մատնուեր է, որ այդ շրջանին մէջ կը կենտրոնանան թուրքական (տեղական) ստուար ուժեր, որ թուրքերը հայերուն առաջարկած են զինաթափ ըլլալ և կը սպասի ընդհարումներու, որ Ղարաղշլաղ հայկական գեղը ավերուած է: Գորիսի ազգային խորհուրդը և շրջանի բոլոր ժողովուրդը կը խնդրեն, որ զորամասը գնայ Գորիս:

Այս տեղեկութիւններու վրայ, անշուշտ, որով կը յայտին, թե կռիվը սկսած է արդեն Կոռնիձորի շուրջ, անհնար է անտարբեր մնալ, հետևապես վճռեցի վաղն իսկ, 15 սեպտեմբերի*, զորամասով մեկնիլ դեպի Գորիս»[2]:

Անդրանիկը շեշտում էր, որ Գորիս գնալիս ճանապարհի վրա գտնվող Աղուդի և Վաղուդի թուրքական գյուղերը հիմնահատակ ավերելու է:

Մեկնումի նախօրյակին Անդրանիկը Սիսիանում հայտարարել էր երրորդ զորահավաքը՝ անխտիր զորակոչելով մինչև 31 տարեկաններին: Թեև, օրինակ, Բազարչայ գյուղում պաշտպանության գործը կազմակերպելուն դիմադրողներ եղան[3], այնուամենայնիվ զորահավաքի արդյունքները

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 2-3:

* Հին տոմարով:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 20-ի շրջ.:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 24-25-ի շրջ.:

գոհացրին Զորավարին: Սակայն դա բավական չէր՝ համոզված լինելու, որ Սիսիանի անվտանգությունը արդեն ապահովված էր[1]: Այդ մտահոգությամբ նա իր նամակում շարունակում էր.

«Նկատի ունենալով ֆրոնտի մեծութիւնն ու կազմակերպութեան թուլութիւնը, նաև այն, որ այտ շրջանը այժմ այնքան ալ կարիք չունի մեծ ուժերու, յանուն Սիսիանի և Զանգեզուրի (նկատի ունի բուն Զանգեզուրի: – *Ա. Ս.)* ժողովուրդի ֆիզիքական գոյութեան և գործի, հրամայում եմ ձեզ անմիջապես գալ Սիսիան (նկատի ունի Սիսիանի շրջանի կենտրոն Ղարաքիլիսա գյուղը: – *Ա. Ս.)* և վերցնել պարտականութեան այն բաժինը, որը կ'իյնայ այս րոպեիս ամեն հայու վրայ»[2]:

Նույն օրը՝ սեպտեմբերի 27 (14)-ին, Անդրանիկը հետևյալ շրջաբերական հրամանն ուղարկեց Սիսիանի շրջանային և գյուղական կոմիսարներին, շրջանի ազգաբնակչությանը.

«(Բուն) Զանգեզուրի ազգաբնակչության և թե գործի պահանջմամբ հայ(կական) առանձին հարուածող զորամասը վաղը կը շարժվի դեպի Գորիս: Զորամասի բացակայութիւնը Սիսիանի սահմաններէն ժամանակաւոր է: Շրջանի մեջ ինքնապաշտպանութեան համար սկսուած գործը պետք է շարունակել ու գլուխ հանել: Հետևաբար իմ բացակայութեան տեղի գործերը պիտի վարե Սիսիանի Ազգային խորհուրդը և աղյուտանտ Հայկ Գրիգորեանը:

Հայտնում եմ, որ բոլոր անոնք, որոնք չեն ենթարկուիր այդ իշխանութեան հրամաններուն, կ'ենթարկուին մահապատժի»[3]:

Նույն պահին Զորավարը Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին ուղարկեց հետևյալ երկտողը. «Վաղը, 15 (28) սեպտ. կես օրի ժամը 10-ին կը շարժվիմ դեպի Գորիս … Աշխատեցեք ամեն գնով պահպանել ու պահել ֆրոնտը»[4]:

Վերջապես, Սիսիանի պաշտպանության համար անհրաժեշտ կարգադրություններ անելուց հետո՝ սեպտեմբերի 28-ին, Անդրանիկը, իր զորամասի հիմնական ուժերի գլուխն անցած, շարժվեց դեպի Գորիս: Ճանապարհին Զորավարը նորից ստիպված եղավ ընդհարվել Աղուդի և Վաղուդի թուրք գյուղերի ավազակախմբերի հետ: Առաջին պարտությունից հետո այդ գյուղերի զինված խմբերը գյուղացիների հետ փախել էին ապահով վայրեր, բայց հետո Անդրանիկի համաձայնությամբ նորից վերադարձել էին իրենց բնակավայրերը[5]: Նրանց հետ եկել էին թուրք-մուսավաթական գործակալներ և կազմակերպել զինված նոր հրոսակախմբեր: Եվ ահա այդ գյուղերի

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 392:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 21, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 391:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 21, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 391:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 20:

[5] Տե՛ս նույն տեղում, թ. 25:

թուրքերը կրկին փորձեցին արգելք հանդիսանալ Անդրանիկի զորքի առաջխաղացմանը և կրակ բացեցին նրա առաջապահ ջոկատի վրա[1]: Կարճատև ընդհարումից հետո հրոսակախմբերը փախան ձորերը: Զորավարը նպատակահարմար չգտավ մտնել խռովարար գյուղերը և ներքաշվել կռվի մեջ, որովհետև ժամանակը թանկ էր[2]:

Դեռ Գորիս չհասած՝ այնտեղից նոր պատգամավորություն եկավ Անդրանիկի մոտ և խնդրեց շտապել: Սեպտեմբերի 29 (16)-ի երեկոյան Անդրանիկն իր զորամասով մտավ Գորիս[3]: Նույն օրը՝ երեկոյան, Զորավարն իր մոտ հրավիրեց գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանին, Շուշիի ու Գանձակի գնդերի և Հարվածող զորամասի բարձրաստիճան սպաների:

Շուշիի անկման կապակցությամբ, ամենից առաջ նկատի ունենալով Շուշիի գնդի զենքի պահեստները, Զորավարն ասաց, թե Գորիս քաղաքում կա մեծ թվով փամփուշտ ու զենք, բայց այժմ դրանք վտանգի տակ են, քանի որ եթե տաճիկները և մուսավաթականները մեծաթիվ ուժերով հարձակման անցնեն Գորիսի վրա, իսկ Շուշիի գնդի և Հարվածող զորամասի ուժերը չկարողանան պահել ճակատը, այն ժամանակ հնարավոր է, որ թշնամին գրավի Գորիս քաղաքը և տեր դառնա այստեղ գտնվող զինապահեստին: Զգուշանալով դեպքերի նման զարգացումից՝ նա առաջարկեց զինապահեստը ամբողջովին տեղափոխել ավելի ապահով տեղ՝ Սիսիանի որևէ գյուղ, իսկ եթե դա հնարավոր չէր իրագործել, ապա այդ դեպքում թշնամու՝ քաղաքին մոտենալուց առաջ պետք էր պայթեցնել զինապահեստը:

Խորհրդակցությունում այլ ելույթներ, նոր առաջարկություններ չեղան: Անդրանիկի առաջարկը ձևակերպվեց որպես որոշում, որի տակ, Զորավարի պահանջով, իրենց ստորագրությունները դրեցին խորհրդակցության բոլոր 14 մասնակիցները[4]: Այս խորհրդակցությունից անմիջապես հետո Անդրանիկը հանդիպեց Զանգեզուրի ազգային խորհրդի անդամների հետ, հաղորդումներ լսեց սեպտեմբերի 26-28-ին թուրքերի հարձակումների և հայերի ցույց տված համառ դիմադրության մասին:

Ազգային խորհրդի անդամները Զորավարին նաև տեղեկացրին, որ Շուշին գրավելուց հետո թուրք հրամանատարությունը քաղաքում գտնվող զանգեզուրցի երեք հայերից (Մուշեղ Զաքարյան, Արսեն Բակունց, Սերգեյ Բաղիրյան) կազմել է պատգամավորություն և նրա միջոցով Զանգեզուրի ազգային խորհրդին ուղարկել մի վերջնագիր, որով պահանջում էր գավառն անհապաղ հռչակել Ադրբեջանի մաս:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 15, թ. 25:

[2] Տե՛ս **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 17:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 37 և շրջ., **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 393:

Հասնելով Գորիս՝ պատվիրակները Ազգային խորհրդի նախագահին հանձնեցին վերջնագիրը՝ միաժամանակ բանավոր հայտնելով, որ թուրք հրամանատարությունը Միքայել (Միշա) Պարոնյանին նշանակել է Զանգեզուրի գավառապետ, իսկ Ազգային խորհրդի անդամ Նիկոլայ Հովսեփյանին՝ բուն Զանգեզուրի (Գորիսի շրջանի) շրջանապետ:

Անդրանիկը զայրույթով ընդունեց նշված երկու գործիչներին թուրք հրամանատարության կողմից պաշտոնների նշանակելու փաստը և վերջիններից պահանջեց ժողովրդին բացատրություն տալ դրա պատճառների մասին[1]:

Զորավարի զայրույթը հասկանալի էր, բայց բանն այն է, որ նշված գործիչները ո՛չ ընդունել էին արված առաջարկը, ո՛չ էլ տրամադիր էին կատարել թշնամու որևէ հանձնարարություն:

Անդրանիկը Զանգեզուրի ազգային խորհրդից պահանջեց վաղն ևեթ Գորիս քաղաքում հրավիրել բուն Զանգեզուրի հայության ներկայացուցիչների համագումար, դրան մասնակից դարձնել նաև գավառի բոլոր մյուս երեք շրջանների ղեկավար գործիչներին կամ նրանց ներկայացուցիչներին: Նույն օրը Զորավարը Կապանի ղեկավար գործիչներին անձամբ հրավիրեց Գորիս: Այնտեղի Ազգային խորհրդին ուղարկած նամակում նա գրում էր.

«Երեկ Շուշուց եկան երեք հայ ներկայացուցիչներ և հայտարարեցին, որ Շուշին առանց կռվի ընկել է թուրքերի ձեռքը և զինաթափ է արված: (Այն) զինված ուժերը, որոնք չեն կամեցել հպատակվել թուրքերին, դուրս են եկել քաղաքից:

Թուրքերը կարող են շուտով երևալ և Զանգեզուրի շրջանում: Այդ առթիվ հրամայված է շրջանիս գյուղերից վաղը յուրաքանչյուր 50 տնից մի լիազոր ընտրել և ուղարկել Գորիս՝ խորհրդակցելու և մեր բռնելիք դիրքը որոշելու:

Լիազորները բերելու են գյուղի կարծիքը իրենց հետ:

Հայտնում ենք Ձեզ՝ քանի որ այդ ժողովին հասնել չեք կարող, գրությունս ձեզ հասնելուն պես, խորհրդիդ ամբողջ կազմով կամ առնվազն երեք անդամով շտապել Գորիս՝ իրազեկ լինելու լիազորների որոշմանը և ընդհանուր գործելակերպ ունենալու»[2]:

Այնուհետև հետգրությամբ նա ավելացրել է.

«Ձեզ հետ բերե՛ք շրջանում եղած հրացանների տեսակների և փամփուշտների մոտավոր ճշգրիտ քանակությունը:

Այլև գրությանս հետ ուղարկում ենք Ձեզ մի գրություն՝ հանձնելու ֆրանսիական ընկ(երության) դիրեկտորին՝ պահանջելով 30 փ(ութ) նալ և 30

---

[1] Տե՛ս **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 17-18:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 16:

փ(ութ) մեխ: Որքան էլ լինի՝ անպատճառ Ձեզ հետ բերեք, որովհետև մեծ կարիք ունենք»[1]:

Փաստաթղթի լուսանցքում գրված էր հետևյալը. «Ընտրված է զինվորական խորհրդի կազմ՝ գեներալ-մայոր Անդրանիկի գլխավորությամբ: Հայտարարված է 19-45 տարեկանների զինակոչ: Դուք ևս հայտարարեցե՛ք զորահավաք՝ առանց բոպե կորցնելու: Հապաղումը ծանր կլինի և ժողովրդի առաջ պատասխանատուն Դուք կհանդիսանաք: Սույն գրությունը Ձեր կազմին հայտնելով՝ միաժամանակ տեղեկացրե՛ք և գյուղերին»[2]:

Սեպտեմբերի լույս 30-ի (13 հոկտեմբերի) ամբողջ գիշերը պատգամավորները բուն Զանգեզուրի գյուղերից հավաքվեցին Գորիսում, որտեղ առավոտյան բացվեց համագումարը:

Համագումարում Անդրանիկը կոչ արեց մեկ մարդու պես կանգնել թշնամու սպառնալիքներին դեմ հանդիման և նրան թույլ չտալ մուտք գործել գավառի սահմաններից ներս:

Ելույթ ունեցողների մեծ մասը պաշտպանեց Զորավարի առաջարկը, բայց եղան նաև դեմ արտահայտվողներ: Վերջում քվեարկության դրվեց երկու կետից բաղկացած որոշման հետևյալ նախագիծը. 1) կռվով դիմադրել թշնամուն, 2) կատարել գեներալ Անդրանիկի՝ զինական և պարենավորման բնույթ կրող բոլոր պահանջները: Նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց 27 ձայնով: Անդրանիկը վշտացել էր, որովհետև 42 պատգամավորներից 14-ը դեմ էին քվեարկել, իսկ մեկը մնացել էր ձեռնպահ[3]:

Համագումարից անմիջապես հետո՝ սեպտեմբերի 30-ի երեկոյան, Զորավարը Հարվածող զորամասի՝ Գորիսի և Կապանի շրջաններում տեղակայված բոլոր հարյուրյակների և վաշտերի հրամանատարներին, գնդացրային հաշվարկների ու գումակի պետերին հրաման տվեց անմիջապես հայտնել, թե յուրաքանչյուր ստորաբաժանում որքան զինվոր ունի, որքան փամփուշտ, քանի ձի: Միաժամանակ նա գավառի շրջանային մարմիններից պահանջեց հայտնել տեղական զինվորների, հրացանների թիվը հոկտեմբերի 1 (14)-ի տվյալներով:

Օրինակ՝ Կապանի ազգային խորհրդի կողմից Անդրանիկին ուղարկած տեղեկանքը պարունակում էր հետևյալ տվյալները.

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 16:

[2] Նույն տեղում, թ. 16-ի շրջ.:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 16 (Ստեմելը բերում է ուրիշ տվյալներ՝ 37 կողմ և 31 դեմ, տե՛ս **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 18):

Կապանի շրջանում եղած զենք-զինամթերքը և ռազմական ուժերը 1918 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով[1]

Ենթաշրջանների անվանումը	Հրացանների թիվը և տեսակները					Հրացանների ծայրերի թիվը					Ռազմիկ ուժերի թիվը		
	Մոսին	Ֆրանսիական	Տաճկական	Բերդան	Ընդամենը	Մոսին	Ֆրանսիական	Տաճկական	Բերդան	Ընդամենը	Վարժված	Անվարժ	Ընդամենը
Ուժանիս	181	28	3	69	281	4000	10500	850	2850	54200	192	290	482
Արծվանիկ	46	21	2	59	128	4800	2340	150	3250	10540	90	133	223
Աջանան	89	26	3	90	208	10357	2940	190	4000	17297	121	249	370
Վ. Կապան	125	26	1	77	229	3769	6845	80	6248	50863	69	67	236
Ուզուրչայ	121	31	9	80	241	25300	7029	1650	4876	38355	83	340	423
Շիկահող	164	37	12	144	376	54630	15353	2150	9627	81760	137	219	356
Ընդամենը	726	138	30	512	1456	172777	55007	5070	30841	222264	692	1398	2090

Բուն Զանգեզուրի արևելյան սահմանների վրա սեպտեմբերի վերջերին թուրքերի կրած պարտությունը խիստ հանգստացրել էր տեղական վաշտերի զինվորներին ու հրամանատարներին: Ոմանք, առանց հրամանի, թողնում էին դիրքերը և վերադառնում տները: Զինվորական կարգապահության խախտման դեպքերը գնալով դառնում էին հաճախակի: Անհրաժեշտ էր խիստ միջոցներ ձեռնարկել կարգազանցների դեմ:

Հոկտեմբերի 3-ին (սեպտեմբերի 20) Գորիս քաղաքի զինվորական պարետ Մ. Փիրումյանը Զորավարին հղած երկտողով թույլտվություն խնդրեց՝ զինվորական կարգապահությունը խախտողներին խիստ պատիժների ենթարկելու: Նա գրում էր. «Ի նկատի ունենալով ներկա մոմենտի լրջությունը, երբ հայ զինվորները, մոռանալով իրենց սրբազան պարտականությունը դեպի հայրենիքի պաշտպանության գործը, տմարդի կերպով թողնելով դիրքերը, հեռանում են, այդ իսկ պատճառով խնդրում եմ Գերազանցությանդ՝ թույլատրել բանալու զինվորական դաշտային դատարան՝ դեզերտիրներին և անպարտաճանաչներին պատժելու համար»[2]:

Նույն օրն իսկ Զորավարը գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանից՝ որպես Զանգեզուրի դիկտատորի, պահանջեց ստորաբաժանումներում անմիջապես հաստատել ամուր կարգապահություն, խիստ լինել ոչ միայն զինվորների, այլև հենց սպաների նկատմամբ: Նաև գրում էր. «… Կիմանամ, որ քաղաքի կոմենտանտը միաժամանակ Շուշինսկի բոտայի կամանդիր է. այտ բանը

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 16, թ. 9:
[2] Նույն տեղում, գ. 27, թ. 4:

անկարելի լինելով, զինուորական մը միաժամանակ չի կրնար քաղաքի կոմենտանտ լինել, հրամայում եմ անոր փոխարեն նշանակել ուրիշ բոտնի կամանդիր մը»[1]:

Հոկտեմբերի 3-ին Անդրանիկը Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին ուղարկեց գրություն, որով տեղեկացնում էր, թե հաջորդ օրը՝ հոկտեմբերի 4-ի առավոտյան ժամը 9-ին, իր զորամասի ստորաբաժանումները կշարժվեն դեպի դիրքերը: Միաժամանակ պահանջվում էր. «Անմիջապես հեռախոսով տեղեկություն տալ այդ գյուղերին և հրամայել, որպեսզի զինվորների համար պատրաստեն ուտելիք, ձիերի համար՝ խոտ և գարի»: Ըստ Զորավարի հրամանի՝ Արամի* առաջին հարյուրյակի առաջին վաշտի 1-ին և 2-րդ դասակները պիտի մեկնեին Խոզնավար, նույն վաշտի 3-րդ և 4-րդ դասակները՝ Բայանդուր, Հարությունի** 2-րդ հարյուրյակը և Արամի ամբողջ երկրորդ վաշտը՝ Խնածախ, Շուշիի գնդի առաջին վաշտը՝ Տեղ: Ամսի 22-ին Շուշիի գնդի այդ վաշտի առաջին և երկրորդ դասակները պիտի մեկնեին Կոռնիձոր, իսկ 3-րդ և 4-րդ դասակները՝ շարունակեին մնալ Տեղ գյուղում:

Ազգային խորհրդին ուղղված այս գրությունը Զորավարը վերջացրել է՝ կրկնելով իր պահանջը. «Հրամայում եմ անմիջապես տեղեկացնել այդ գյուղերին, որ ամեն ինչ պատրաստ լինի զինվորների այնտեղ հասած ժամանակ»: Հետգրությամբ Անդրանիկը ավելացրել է. «Կարդացե՛ք, ստորագրե՛ք և վերադարձրե՛ք»***: Արխիվային փաստաթղթի վրա, որ վերադարձված էր Զորավարին, կան Միքայել (Միշա) Պարոնյանի և Գեղեոն Տեր-Մինասյանի ստորագրությունները[2]:

Երբ Անդրանիկը վերադարձավ Սիսիանից, զինվորականները դժգոհեցին գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանից: Այն է՝ գնդապետը հանդես չբերեց անհրաժեշտ վճռականություն՝ զինակոչի գործը առաջ մղելու և զորամասերում զինվորական կարգապահություն ամրապնդելու համար: Ազգային խորհրդի անդամները Զորավարին թախանձագին խնդրեցին դառնալ Զանգեզուրի բոլոր զինված ուժերի գերագույն հրամանատար: Զորավարը տվեց իր համաձայնությունը՝ նկատի առնելով նաև այն, որ սեպտեմբերի 30-ին Գորիսում հրավիրված գյուղացիական համագումարը ևս այդ հարցով դիմել էր Ազգային խորհրդին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 15:

* Հարվածող զորամասի հարյուրապետ:

** Հարվածող զորամասի հարյուրապետ:

*** Սովորաբար այդպիսի դեպքերում Անդրանիկը ղեկավարներից պահանջում էր կարևոր գրությունների տակ դնել ստորագրություն՝ հանձնարարականների կատարման գործում նրանց պատասխանատվությունը բարձրացնելու համար:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 10:

«Հ Ր Ա Մ Ա Ն

Զանգեզուրի բոլոր զորամասերին և հայ ժողովրդին.

Սրանով հայտնում եմ, որ Զանգեզուրի գյուղացիական համագումարի ներկայացուցիչների և Կենտրոնական ազգային խորհրդի հրավերով ես կոչված եմ իբրև Գերագույն զինվորական հրամանատար՝ իր բոլոր լիազորություններով:

Պահանջում եմ բոլոր զորամասերի հրամանատարներից անշեղ կատարել իմ բոլոր հրահանգները՝ առանց մազաչափ անգամ փոխելու:

Պահանջում եմ բոլոր զինվորներից նույն եղանակով կատարել իրենց անմիջական գլխավորներից ստացված հրահանգները:

Հայտնում եմ նույնպես, որ երկրի գերագույն իշխանությունը միշտ հանդիսանալու է Զանգեզուրի Կենտրոնական ազգային խորհուրդը, որի ձեռքին են մնում ներքին վարչական, պարենավորման և ընդհանուր քաղաքականության գործերը:

Ազգային խորհրդի այդ ասպարեզում արված կարգադրությունները ժողովուրդը պետք է իրագործի անտրտունջ:

Որևէ ինքնագլուխ ձեռնարկում կամ անիշխանական երևույթ թե՛ զինվորականների, և թե՛ ժողովրդի կողմից պետք է խեղդեմ տեղն ու տեղը՝ իմ ունեցած բոլոր միջոցներով:

Հրահանգում եմ մեր բոլոր զինական ուժերին՝ ցույց տալ հարկ եղած դեպքում ինչպես Ազգային խորհրդին, նույնպես և նրա բոլոր պաշտոնյաներին ամենալայն աջակցություն:

6-ին հոկտեմբերի 1918 թ.

Գեներալ, մայոր՝ ԱՆԴՐԱՆԻԿ»[1]:

Հոկտեմբերի 7-ին Անդրանիկը 10 կետից բաղկացած գրություն ուղարկեց Զանգեզուրի ազգային խորհուրդ և պահանջեց շտապ կենսագործել իր առաջադրած կետերը: Զորավարի հանձնարարությամբ Եղիշե Քաջունին, հոկտեմբերի 8-ին ներկայանալով Ազգային խորհուրդ, նրա անդամների ուշադրությունը հրավիրեց Անդրանիկի գրության վրա և կրկին հիշեցրեց, որ Զորավարի պահանջները պետք է կատարվեն ամենասեղմ ժամկետում, որպեսզի, ինչպես շեշտել էր ազգային հերոսը, «դեպքերը չկարողանան կանխել մեզ»:

Զորավարը պահանջել էր. 1) անմիջապես կազմակերպել տեղական երկու վաշտ, որոնք զինված լինեն ֆրանսիական **լեբել** հրացաններով, 2) արագացնել զորահավաքը, որի հաջողությունից է կախված ամեն բան, 3) Գորիս քաղաքի կարգապահությունը հսկելու համար պարետի տրամադրության տակ դնել մեկ վաշտ, որը զինված լինի բերդան հրացաններով, 4) անմի-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 12:

ջապես սուրհանդակային կապ հաստատել Սիսիանի, Կապանի և Արևիքի միջև, 5) Գորիսի շրջանի գյուղերից պահանջել և կենտրոնացնել 80000 մոսինի փամփուշտ՝ իբրև պահուստ, 6) հավաքել և ամբարել կենսամթերք՝ կազմվելիք վաշտերի համար, 7) հավաքել 2000 գուլպա և 2000 տրեխ, 8) նոր զորահավաքի առթիվ ձիավոր լինելու ցանկություն ունեցողներից կազմել մեկ կամ կես հարյուրյակ՝ իրենց զենքերով, 9) ամենակարճ ժամկետում լրացնել զորամասի պետքերի համար հոկտեմբերի 1-ի (սեպտեմբերի 17-ի) թվով ներկայացրած պահանջագիրը, 10) գրավոր պատասխանել թիվ 312 գրությանը և ուղարկել հոկտեմբերի 6-ին (սեպտեմբերի 23-ին) տեղի ունեցած ժողովի արձանագրությունը՝ ստորագրված ժողովրդական բոլոր ներկայացուցիչների կողմից[1]:

Անդրանիկը, իր զորամասի մատակարարման խնդրով մտահոգված, ուզում էր հնարավորինս արագ լուծում տալ դրան: Այդ նպատակով նա երկու գրություն ուղարկեց Զանգեզուրի ազգային խորհրդին:

Թիվ 312 գրությամբ նա փորձել էր ճշտել մի շարք հարցեր.

«Հայ(կական) առանձին հարուածող զորամասը, հասնելով Գորիս, նրա ապագայ գործունեութիւնը պարզելու համար անհրաժեշտ է որոշել հետևեալ կետերը.

I. Ի՞նչ պիտի լինի զորամասի գործունեութեան կետ-նպատակը (բուն) Զանգեզուրի շրջանում,
II. Մոպիլիզացիան 20-30 տարեկաններու համար (բուն) Զանգեզուրի շրջանի մէջ լրիվ կատարուա՞ծ է, թե՞ ոչ: Եթէ չի կատարուած, պէտք է ամբողջացնել,
III. (Բուն) Զանգեզուրի 22 գյուղերու մէջ ինչքան անհատական զենք և պատրոն կայ և ինչքան հասարակական,
IV. Անուանապէս գոյութիւն ունեցող Շուշինսկի և Գանձակի բոլկերը իրենց պահեստներուն մեջ ինչքան ռազմամթերք օրմունդիրովկա ունին և մասնավորապէս դաշտային երկու թնդանոթները ինչքան սնարիատ ունին,
V. Տեղական (նկատի ունի Գորիսի շրջանի: – *Ա. Ս.*) Ազգ(ային) խորհուրդը ինչքան հասարակութեան պատկանող ռազմամթերք ունի և առհասարակ ինչեր ունի,
VI. Որքան օֆիցեր կայ աստիճանական զենքերով, որոնք են գործողները, և որոնք են բացակայողները,
VII. Որչափ զինուոր կայ այտ անուանապէս գոյութիւն ունեցող Գանձակսկի և Շուշինսկի բոլկերու մէջ և որչափ հայաստանցի (նկատի ունի թուրքահայաստանցի: – *Ա. Ս.)* զինուորներ կան, որոնք իմ քովէս եկած են,

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 11 և շրջ.:

VIII. Վերջին օրերու օպերացիաներու ընթացքին … …* ինչքան պատրօն ծախսուած է: Ազգային խորհուրդը, որպես Զանգեզուրի կենտրոնի իշխանութիւն այդ զօրամասերուն օգնելու համար նիւթական ինչքան միջոց ունի պատրաստ, ինչքան մթերք ունի պարենավորելու համար:

Կարևոր կետ մը. գործի յաջողութիւնը այն կը պահանջէ, որ Գորիսը, իր շրջանը, Ղափանը և Սիսիանը պետք է ունենան միօրինակ գործելակերպ՝ բոլորը միացած»[1]:

Թիվ 313 գրությամբ Զորավարը Կենտրոնական ազգային խորհրդի առջև դրել էր մի շարք կոնկրետ պահանջներ: «Հայկ(ական) առանձին հարուածող Զորամասը, (բուն) Զանգեզուրի շրջանը մնալու և գործողությունս սկսելու համար անմիջականօրեն անհրաժեշտ է հայթայթել ամէն մի զինուորի [համար] օրական $1\frac{1}{4}$ ֆունտ հաց, զորամասի համար 100 փութ կարտօֆիլ, 50 փութ ձավար, 50 փութ յուղ, 10 փութ աղ, 50 ձի, 30 հազար ռուպլի, առ այժմ 30 հազար պատրօն, 1000 փութ գարի, 3 փութ հրացանի յուղ, 5 փութ օճառ, 30 փութ պայտ, 10 փութ մեխ, 1000 գուլպա և 1000 զույգ տրեխ:

Հետևաբար հրամայում եմ անմիջապէս հայթայթիլ վերոյիշեալ իրեղենները և յանձնել զորամասին: Զորքին տրվելիք միսը կը հայթայթուի զորամասի միջոցներով»[2]:

Այդ բոլոր օրերին Զորավարը չէր կարողանում հաղթահարել իր վրդովմունքը, որ արցախցիները թուրքերին թողել են մուտք գործել Շուշի, ավելին՝ համաձայնել են մտնել Ադրբեջանի լծի տակ: Նա ցավով շեշտում էր, որ պարտվողականության ախտով վարակված են նաև Գորիս քաղաքի մտավորականության մի մասը և քաղաքային դասը, ուստի գավառի իշխանությունները պետք է ժողովրդի մեջ խուճապ առաջացնող անձանց դեմ ձեռնարկեն կտրուկ միջոցներ:

Շուշին թուրքերին հանձնելուն և Գորիս քաղաքում առաջացած պարտվողական տրամադրություններին անդրադառնալով՝ Կապանի ազգային խորհրդի նախագահ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանը նախօրյակին Անդրանիկին գրել էր. «Պինդ և հպարտ եղիր՝ ինչպես միշտ: Ղափանն ու (բուն) Զանգեզուրն իրենց խոսքը աշխարհին կասեն գործով … Նամարդ դուրս եկավ Շուշին, բայց Շուշին դեռ Ղարաբաղ չէ, ինչպես Գորիս քաղաքը դեռ (բուն) Զանգեզուր չէ: … Վայ գորիսեցիներին ու բոլոր բողբոջազներին հրամայեցե՛ք ղոչաղ լինեն: Այժմ նրանց պիտի ստիպել գրոհ տալ թշնամուն,

---

* Նախադասության երկու բառերը ձեռագրում չեն հասկացվում:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 8 և շրջ.:

[2] Նույն տեղում, գ. 18, թ. 12 և շրջ.:

որպեսզի ապագայում իրավունք ունենան մարդավայել ապրելու …»[1]:

Նամակին Սմբատ բեկը կցել էր հայրենասիրական բովանդակությամբ և թշնամու դեմ աներեր մարտի գնալու մի կոչի տեքստ, որ այն տպագրվի Գորիսի տպարանում ու ցրվի: Հետգրությամբ նա ավելացրել էր. «Հրամայե՛ք այս կոչը տպագրել որքան կարելի է արագ: Մի 40 հազար օրինակ պետք է այստեղ ուղարկել, իսկ 50-60 հազարը ցրել Սիսիանի և (բուն) Զանգեզուրի շրջաններում»[2]:

Այդ իրադրության մեջ Արցախի կողմից թշնամու եկող սպառնալիքին դիմագրավելու համար Անդրանիկի Հարվածող զորամասի ստորաբաժանումները բռնեցին բուն Զանգեզուրի արևելյան ճակատը և պատրաստվեցին դիմագրավել նրան:

Դեռ հոկտեմբերի 7-ին Անդրանիկը հրաման արձակեց Գորիսի շրջանում նոր զորահավաք անցկացնելու մասին: Այս անգամ զորակոչվում էին զենք բռնելու ունակ 20-50 տարեկանները: Զորահավաքն անցավ արագ և հաջող[3]:

Անդրանիկը սահմանների ամրապնդումը համարում էր առաջնահերթ խնդիր, թեև համոզված էր, որ թուրքերը չեն համարձակվի իր զորքերի ներկայության պայմաններում հարձակում գործել Գորիսի վրա: Ավելին՝ ինչպես երևում է Զորավարին ուղարկած արխիվային մի նամակից, որի վրա չկա հեղինակի անունը, Գորիսին սահմանակից շրջաններում՝ թուրքերի ու քրդերի միջավայրում, տագնապալից վիճակ էր տիրում, շատերը պատրաստվում էին մինչև հայկական զորքերի ներխուժումը Զանգեզուրի և Արցախի միջև ընկած տարածքներ, հեռանալ անմատչելի վայրեր: «Ձեր դիմաց թուրքական ուժերը շատ քիչ են,– ասված էր նամակում,– նրանք սիրտ չեն անի հարձակում գործել Ձեր 3-4 հազարանոց բանակի վրա. դա թե՛ թուրքերի, թե՛ տաճիկների համար մահաբեր հարված կլինի և այստեղի* կամ թե Ղարաբաղի հայության փրկությունը կախված է Ձեզանից, միայն թե ուշացնելը վատ է, պետք է գործողությունը շուտ սկսել»[4]:

Համոզվելով, որ զգալիորեն մեծացել են Գորիսի և Կապանի շրջանների ինքնապաշտպանական հնարավորությունները, իսկ իր զինակիցներ Հայկ Բոնապարտյանը և Սարգիս Ջեբեջին Զանգեզուրի հարավային՝ Մեղրիի հատվածը դարձրել են անառիկ, Անդրանիկը որոշեց նորից մեկնել Սիսիան: Մեկնելու գլխավոր պատճառն այն էր, որ Զորավարը լուր էր ստացել, թե Նախիջևանից թուրքերը կրկին անվերապահորեն ենթարկվելու առաջարկ են արել Նորս, Մազրա, Գյոմուր, Գժաձոր գյուղերի հայ բնակիչներին: Օս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 18 և շրջ.:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 404:

* Հավանաբար՝ Գորիսի:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 6:

մանյան և մուսավաթական էմիսարներին և լրտեսներին կրկին հաջողվել էր շրջանում մնացած թուրքական գյուղերում քարոզչական մեծ աշխատանք ծավալել և բնակչությանը գաղտնի նախապատրաստել խռովությունների: Անդրանիկի ներկայությունը Սիսիանում տեղի թուրքերին զսպաշապիկ կհագցներ:

Հոկտեմբերի 15 (2)-ին Անդրանիկը Ղարաքիլիսա գյուղում հրավիրեց շրջանի գյուղերի ներկայացուցիչների ժողով: Ներկա էին 17 գյուղերի 21 ներկայացուցիչներ:

Զորավարը բացեց ժողովը և համառոտ պատմեց Գորիսում կատարած գործերի մասին: Նա նշեց, որ ինքը այնտեղ էր գնացել ժողովրդի և իշխանությունների խնդրանքով, բայց երբ տեղ հասավ, կռիվը արդեն դադարած էր: «Ուզեցա այնտեղ կազմակերպել և 19-40 տարեկանները մոպիլիզացիայի ենթարկել, բայց այն մարդիկ տեղերնուն չշարժեցան: Եվ միայն այն ատեն ժողով ունեցան, երբ իմացան թէ Շուշին ինկած է: Յետոյ պահանջեցի, որ ինձ ցուցակ տան, թե շրջանի 22 գյուղերու մեջ ինչքան հրացան և պատրոն կա՝ այդ ցուցակագրությունն ալ չկատարուեցավ»[1]:

Չնայած դրան՝ շարունակեց Անդրանիկը, այնուամենայնիվ, Գորիսը նույնպես որոշեց կռվել: «Միայն թէ պէտք է այտ որոշումը հաստատ լինի և չտաւաճանեն իրենց խոստումին»[2]:

Այնուհետև Զորավարը պահանջեց էլ ավելի ամրապնդել Սիսիանի պաշտպանությունը: Քանի որ շրջանում հատկապես շատ կար ***լեբել*** հրացանի փամփուշտ, ուստի այդ հրացանները պետք է կենտրոնացնեին և կազմեին ***լեբելով*** զինված առանձին մի վաշտ: Նա առաջարկեց իսկույն ևեթ կատարել 20-40 տարեկանների զորահավաք, ամեն մի գյուղի նպաստավոր դիրքերում խրամատներ փորել. «Այն զինուորացուները, որոնք կը փափաքին ձիաւոր լինել, իրենց ձիերով կարող են կազմել սոտնի* մը յարաբերության պահելու** համար»[3]:

Ժողովը միաձայնությամբ որոշեց պաշտպանել Զորավարի բոլոր պահանջները և ընդունեց հետևյալ որոշումը.

«1. Տալ ազնիվ խոսք, որ Սիսիանի ժողովուրդը և, մասնավորապես, կռվող մասը որևէ պայմանով չպիտի համակերպվի թշնամու զինաթափման ու անձնատվության մասին կատարելիք առաջարկության:
2. Ցուցակագրել և ներկայացնել, թե Սիսիանի շրջանում ինչ քանակությամբ սեփական զենք և ռազմամթերք կա, և ինչ քանակի հասարակական զենք ու պատրոն կա:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 40:
[2] Նույն տեղում:
* Հարյուրյակ:
** Հետևակ զորամասերի միջև կապ պահպանելու համար:
[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 40:

3. Վաղվանից հայտարարել 20-40 տարեկանների լրացուցիչ մոբիլիզացիա:
4. Բավարարել զինվորների տնտեսական և պարենավորման բոլոր կարիքները:
5. Նորակոչիկներից նրանք, ովքեր կցանկանան ձիավոր լինել, նրանցից կազմել մի հարյուրյակ հարաբերություն պահելու և հետախուզում կատարելու համար:
6. Հավաքել ժողովրդի մոտ գտնվող ***լեբեկ*** հրացանները և դրանցով զինել մեկ կամ երկու վաշտ:
7. Զինվորական կարգապահություն հաստատելու համար ընդունել ամենախիստ պատիժներ, մինչև իսկ՝ մահապատիժ»[1]:

Ժողովը նոր էր վերջացել, երբ Երևանից Ղարաքիլիսա հասավ Արշակ Շիրինյանը, որն այնտեղ լավատեղյակ էր դարձել ինչպես Հայաստանի Հանրապետության կյանքին, այնպես էլ միջազգային անցուդարձերին[2]: Քանի որ ժողովի մասնակիցները դեռ չէին մեկնել իրենց բնակավայրերը, ցանկություն հայտնեցին կրկին հավաքվել և լսել Ա. Շիրինյանի հաղորդումը Երևանում տեսածի ու լսածի մասին:

Ա. Շիրինյանը հաղորդեց, որ Երևանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներից, խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայից, Դաշնակցության կենտրոնական կոմիտեից և բյուրոներից կազմվել էր 20 հոգանոց մի հանձնախումբ, որի անդամները, իրենից բացի, այն կարծիքին էին, որ Ղարաբաղի հայությունը պետք է ամեն զիջման գնար, նույնիսկ զինաթափ լիներ: Նա նշեց, որ երբ ինքը հայտնել է՝ «մենք* արդեն հունվար ամսից ի վեր թշնամական դրության մեջ ենք տեղացի թուրքերի հետ», պատասխանը եղել է՝ «այն ատեն պետք է այդ գավառի վրա խաչ քաշել»: Այդպես է պնդել հատկապես Ռուբենը[3]: «Մեծամասնությունը,– շեշտեց Ա. Շիրինյանը,– տրամադիր չէ մեզ օգնել ո՛չ փողով, ո՛չ էլ ռազմամթերքով: Փոքրամասնությունը միայն մեզ համակիր է, որոնց մեջ է Դրոն: Իսկ Քաջազնունին հայտնեց, որ թուրքերի դիրքն ավելի կամրանա: Վերջիվերջո Ղարաբաղի մասին չկարողացան մեզ որոշակի վճիռ տալ»[4]: Այնուհետև Ա. Շիրինյանը պատմեց Երևանում իր ունեցած ուրիշ հանդիպումների մասին. «Դիմեցի Սիլիկովին, որը հայտնեց, թե եղած պահանջները եթե սրանից չորս ամիս առաջ ներկայացվեր, կարող էր բավարարել, (բայց) այժմ իր ձեռքին չէ: Պահանջեցի գեթ Յապոնի մոտ գտնված մեր ռազմամթերքը տալ. կարգադրեցին տալ մեզ 500 արկ և 20000 փամփուշտ: Դրանից հետո ժողովականներին հայտարարեցի,

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 40 և շրջ.:
[2] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 419:
* Այսինքն՝ զանգեզուրցիները:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 41:
[4] Նույն տեղում:

թե մինչև այժմ մեր միջև կար բարոյական կապ, այժմ դա էլ խզված է: Երևանում ամեն կերպ ջանում են հաճոյանալ թուրք կառավարությանը և Անդրանիկի գործունեության մասին վատ կարծիք ունեն՝ ասելով, թե նա այդ շրջանի դժբախտության պատճառ պիտի դառնա»[1]:

Անդրադառնալով շտաբս-կապիտան Ստեփան Սարգսյանի և Գարեգին Մուսայելյանի առաքելությանը՝ Ա. Շիրինյանն ասաց, թե «անոնք եկած պիտի լինեն տեղի վրա զինվորական կազմակերպություն առաջացնելու համար, բայց, իմ կարծիքով, նրանք ուրիշ բան չեն, եթե ոչ հայկական կառավարության ագենտներ, որոնք իրենց հետ բերել են հարյուր տասը հազար (110000) ռուբլի»[2]:

Ա. Շիրինյանի ասածի մեջ ճշմարտություն կար: Դաշնակցության ղեկավարության մեջ կային ոչ քիչ թվով ազդու անձնավորություններ, որոնք Նախիջևանի ողբերգության համար փորձում էին իբրև գլխավոր մեղավոր ներկայացնել Անդրանիկին, պահանջում էին ձերբակալել և դատի տալ նրան: Եվ դա այն դեպքում, երբ Ռոստոմը Բաքվից Գորիս Անդրանիկին ուղարկած նամակում գրել էր. «Ես պիտի գամ Գորիս՝ քու անարատ և սուրբ ճակատդ համբուրելու»[3]:

Գիշերը Ա. Շիրինյանը նորից հանդիպեց Անդրանիկին, նրան փոխանցեց թերթերի հաղորդումների հիման վրա իր ստացած տեղեկությունները, նշեց ռազմաճակատներում դաշնակիցների ունեցած հաջողությունների մասին և վստահաբար պնդեց, թե մեկ-երկու ամսից պատերազմը ավարտվելու է գերմանա-թուրքական զինակցության պարտությամբ:

Իսկապես որ, այդ ժամանակ տեղի էին ունենում բախտորոշ իրադարձություններ: Սեպտեմբերին Եվրոպայում, Պաղեստինում և Սիրիայում կրած ծանր պարտություններից հետո Փառյակ դաշինքի զինված ուժերը բոլոր ռազմաճակատներում ամբողջովին կազմալուծվել էին: Դեռ դրանից մեկ շաբաթ առաջ, երբ Ա. Շիրինյանը գտնվում էր Երևանում, այնտեղից Անդրանիկին հոկտեմբերի 7-ին գրել է. «Տղաները* կպատմեն քաղաքական անց ու դարձերի հանկարծակի փոփոխման մասին: Բուլղարիան այլևս համարյա թե գոյություն չունի. Տաճկաստանն ամեն կերպ ուզում է հաշտություն կնքել. անգլիացիները վերցրել են Դամասկոսը:

Արևմտյան ֆրոնտում համաձայնության եկած պետությունները հսկա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 41:

[2] Նույն տեղում, թ. 41 և շրջ.:

[3] **Գ. Սուրենեան**, Ինչո՞ւ զորավար Անդրանիկ հեռացավ Հ. Յ. Դաշնակցութենէն, Կ. Պոլիս, 1920, էջ 16:

* Խոսքը Ա. Շիրինյանի հետ Երևան մեկնած ընկերների մասին էր, որոնք վերադառնում էին Գորիս, իսկ ինքը դեռ որոշ ժամանակ մնալու էր Երևանում՝ մեկ անգամ ևս փորձելով փոխել կառավարության վերաբերմունքը Զանգեզուրի և Արցախի նկատմամբ:

յական հաջողություններ են ունեցել: Զարզանդը պատել է կենտրոնական պետություններին: Թվում է թե մոտ, խիստ մոտ է այն րոպեն, երբ կենտրոնական պետություններն իսկ զենքերը պիտի վայր դնեն և մեզ համար պիտի ստեղծվի մի դրություն, որում կարող ենք ամոքել մեր ցավերը, մոռանալ մեր կսկիծները: Թուրքերը հապճեպորեն դեպի Պոլիս են քաշում իրենց զորքերը, Պարսկաստանի ֆրոնտում ևս ըստ ոչ լրագրական լուրերի թուրքերը մեծ անհանգստություն են ունեցել և լուր կա նույնիսկ, որ անգլիացիները իբր թե Սոֆիա են հասել: Վերջին լուրը որքան ճիշտ է, անկարող եմ երաշխավորել: Խալիլ փաշան Երևանի վրայով դիմում է Պարսկաստան՝ զինադադար կնքելու փորձ անելու»[1]:

Այս նույն ժամանակ բոլշևիկ ղեկավարները ևս ուշիուշով հետևում էին Կովկասում կատարվող իրադարձություններին: Հետաքրքրական է, որ հենց նրանք էլ փաստում են հայերի համար ստեղծված ծանր կացությունը և Բաքվի հայության կոտորածը: Դրա վառ վկայությունն է Օրջոնիկիձեի՝ Զորավար Անդրանիկի մասին Լենինին ուղղված 1918 թ. հոկտեմբերի 12-ով թվագրված հեռագիրը. «...Հայաստանի դրությունը ողբերգական է. Երևանյան նահանգի երկու ոչ մեծ գավառներում կուտակվել է 600 հազար փախստական, որոնք զանգվածներով մեռնում են սովից ու խոլերայից: Գրաված տարածքներում թուրքերը կոտորել են Ղարաբաղի բնակչության կեսը: Շուշիի և Զանգեզուրի գավառները գրավված են թուրքերի կողմից: Բնակչությունը համառ դիմադրություն է ցույց տալիս: Անդրանիկը դավադրաբար սպանվել է Ղարաբաղում*: Հայ բնակչությունը Խորհրդային Ռուսաստանից օգնություն է ակնկալում: Ադրբեջանական Հանրապետությունը կազմված է բացառապես կալվածատերերից՝ Խան-Խոյսկու գլխավորությամբ: ...Թաթարները պայթեցրել են երկաթուղին Շամխորի ու Ելիզավետպոլի մոտ: Նուխիի և Արեշի գավառներում ողջ հայկական բնակչությունը կոտորածի է ենթարկվել թուրք-թաթարական բանդաների կողմից: Բաքվում կողոպտվել և կոտորվել են մոտ 30 հազար հայեր և բանվորներ...» [2]:

Հոկտեմբերի 9-ին Սիսիանի խորհրդի նախագահ Զաքար Տեր-Ղազարյանը Անդրանիկին Ղարաքիլիսայից գրում էր.

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թթ. 2-3:

* Անդրանիկին դավաճանաբար սպանելու մասին ոչ ճիշտ տեղեկությունը նա ստացել էր մամուլում ի հայտ եկած մի սխալ հաղորդումից: Ենթադրում ենք, որ սխալ լուրը տարածվել էր Երևանից: Մեր այդ ենթադրության համար հիմք է ծառայում Գորիսում գտնվող Անդրանիկին Երևանից Սմբատի ուղարկած նամակը, որով Զորավարին հաղորդվում էր, որ նրա սպանության մասին լուրը տարածվել էր այն ժամանակ, երբ Խալիլ փաշան եկել էր Երևան: Մի ճաշկերույթի ժամանակ, նշում էր Սմբատը, հայ գործիչներից մեկը, ոտքի ելնելով և բաժակ բարձրացնելով, իբր Խալիլին ասել է. «Դուք միշտ (պատճառ) բռնած եք Անդրանիկը, նա էլ խփուավ գնաց» և որ, իբր, «նրանք (տաճիկները:– *Ա. Ս.)* շատ ուրախացել են, մերոնք ալ միասին» (ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 31):

[2] **Г. Орджоникидзе**, Статьи и речи, т. 1, Москва, 1956, с. 45.

«Նոր եկավ Գյումրու առաջին վաշտից մի զինվոր, որը հաղորդեց, թե երեկ ամբողջ օրը Ջուլֆայից լսվում էին թնդանոթի ուժգին ձայներ: Վաշտի զինվորները բռնել են մի թուրքի, որը պատմել է, թե Նախիջևանի շրջանի գյուղերում չկա ո՛չ թուրք, և ո՛չ էլ զորք: Թուրք բնակչությունը և զորքը փախել են: Նորս գյուղի դիրքերից երևում է, որ այրվում են Նախիջևանը և մի քանի հայ գյուղեր: Տեղի թուրքերի քոչերը գնում են դեպի Արաքսի ափերը: … Ժողովուրդը լսել է անգլիացոց գալը, բոլորն ուրախ են և սպասում են Ձեզ, որ միասին ձեզ հետ անցնեն դեպի Նախիջևան»[1]:

Գերմանա-թուրքական դաշինքի պարտության նախօրյակին Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը հանդես եկավ գավառի հայ ժողովրդին ուղղված ազդարարությամբ, որում ասված էր.

«Այն ժամանակ, երբ տաճիկ զորքը, միացած Ադրբեջանի խուժանի հետ, թալանելով ոգևորված ու անմեղների արյունով արբեցած, Նախիջևանի, Ղարաբաղի և Բաքվի ազգաբնակչությանն է ջարդում, այդ միևնույն ժամանակ մի այլ տեղ, թուրքական մայրաքաղաքի դռների տակ, համաշխարհային նշանակություն ունեցող պատմական դեպքեր են տեղի ունենում: Բուլղարիան դաշնակիցների հուժկու բանակներից ջախջախված զինաթափ է եղել: Հունաստանը, իբրև թարմ ուժ, միացած է դաշնակիցներին և նրանց հետ դեպի Չաթալջա–Պոլիս են արշավում: Տաճկաստանը իր Կովկաս և այլուր գտնվող իր զորքերը հապճեպով իր մայրաքաղաքն է ժողովում՝ վերջին անգամ իր ուժերը փորձելու: … Գերմանացիք գլխակորույս հետ են նահանջում. գերիների թիվը հարյուր հազարներ է հաշվվում, իսկ պատերազմական ավարի գումարը միլիարդների. գոռոզ Վիլհելմը Վիլսոնից հաշտություն է աղերսում «հանուն մարդասիրության»: Հաշտություն մարդասիրության 30 միլիոնանոց զոհերի գանգերի վրայով: Հաշտություն է խնդրում և Տաճկաստանը՝ միլիոնավոր անմեղների արյունով գետեր հոսեցնելուց հետո: … Հաշտություն:

Եվ այդ բոլորից հետո էլ նույնիսկ Ադրբեջանի ոճրագործ բեգերն ու աղալարները, թուրք ժողովրդի գռեհիկ ինստինկտների վրա կոթնած, հանդգնություն ունեն մեզնից հպատակություն պահանջել: … Մենք նրանց մի պատասխան պիտի տանք, համեցե՛ք և փորձե՛ք մեր ուժը:

Իսկ մեր ո՞ւժը: Նա ահեղ է ոչ միայն թուրք խուժանի դեմ, այլ անգամ թուրքական դիվիզիաների դիմաց, եթե մենք կուռ շարքերով, իբրև մի հոգի, մի մարմին դարձած խմբվենք մեր պաշտելի ազգային հերոս Անդրանիկի շուրջը ու կուրծքներս դեմ տանք թշնամուն»:

Ազգային խորհրդի ազդարարությունը վերջանում էր հետևյալ կոչերով.

«Զանգեզուրի՛*, Սիսիանի, Ղափանի հայ կտրիճներ – դուք Իսրայել Օրի-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 25-ի շրջ.:

* Նկատի է առնված բուն Զանգեզուրը:

ների և Դավիթ բեգերի հաջորդներ. պատմական այս անդառնալի օրերին դուք ձեր (հերոսական) էջերը, փառավոր ու լուսատու էջերը պիտի տաք մեր սերնդին:

Թողե՛ք թուլամորթներն ու վախկոտները իրենց կանանց փեշերից պինդ բռնեն. զզվանքով լի արհամարհանքն է նրանց բաժինը, իսկ դուք դուրս եկեք ասպարեզ ձեր պարտքը կատարելու:

Մեր անմեղների արյունը մեզնից գործ է պահանջում, նրանց անհանգիստ, թարմ դիակները՝ ձեզնից հանգստություն աղերսում:

Գալոց սերնդի հայացքները դեպի մեզ են հառած:

Ուրեմն, դեպի գործ, Զանգեզուրի կտրիճներ»[1]:

Թշնամու պարտությունը մոտ էր, և հայ ժողովուրդը մեծ հույսով սպասում էր գալիք լավ օրերին: Սակայն արյունարբու ոսոխը շարունակում էր սպառնալ երկրամասի հայությանը:

1918 թ. հոկտեմբերի 27-ին Կապանի ազգային խորհուրդը գրություն ուղարկեց գեներալ-մայոր Անդրանիկին՝ թուրքական հրամանատարության կողմից Գողթանի հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունների և այդ բնակչության պաշտպանության համար միջոցներ ձեռնարկելու կապակցությամբ: Այդ գրության մեջ նշվում էր.

«Հայկական Հարվածող զորամասի հրամանատար,

գեներալ-մայոր Անդրանիկին,

Վերջին օրերս Գողթանի Տաճկական կառավարության ներկայացուցիչ, ինքն իրեն Օրդուբադի կոմենդանտ անվանող Խալիլ-բեյը, զանազան ռեպրեսիաներով պահանջում է չգաղթող գյուղերից 75 հազար ռուբլի: Այս պահանջված գումարի մեծ մասը, մոտ 60 հազար ռուբ., արդեն վճարված է այնտեղի այսպես անվանյալ նախկին լիազոր Աշոտ Մելիք-Մուսյանցի ձեռքով: Այս քանակով չբավականանալով՝ Խալիլը նոր զինաթափության պահանջ է դրել»[2]:

Խորհրդի գրության մեջ նշվում էր նաև, որ թուրքերն առանձին մեծ ուժ չեն ներկայացնում, որ նրանց ուժը կազմված էր միմիայն խուժանից և թալանչիներից. պետք չէր ընդառաջ գնալ նրանց որևէ պահանջի: Այնինչ, նշվում էր, որ Գողթանի բնակիչները թշնամու ծարավը հագեցնում էին ոչ միայն փողով, այլ նաև մետաքսով, մատանիներով և գոհարներով: Նշվում էր նաև, որ, ի վերջո, Գողթանի հայերը սթափվել էին և հայտնել Խալիլ բեյին, որ զինաթափ չեն լինելու ու պատրաստ են զենքով մեռնելու:

Կապանը իսկույն օգնություն հասցրեց Փառակա և Ռումիս գյուղերին՝ նախապես ուղարկելով 75 զինվոր: Թուրք խուժանը հասել էր Ցղնա: Խորհուրդը նշում էր, որ այդ մասին հայտնել էր Գնդեվազ և պատասխան ստա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 43:

[2] Նույն տեղում, գ. 34, թ. 6-8 շրջ.:

ցել, որ պատրաստ են իրենց լրացուցիչ ուժը երկու մասի բաժանել և հարձակում կատարել:

«Այսպիսով մտադիր ենք Խալիլ-բեյին յուր մարդկանցով հուփ տալ, ինչպես հարկն է:

Սրանով հայտնում ենք Ձեզ ի գիտություն:

Նախագահ խորհրդի Ս. Մելիք-Ստեփանյան

Զինվորական հրաման[ատար] (ստորագրություն)

Քարտուղար Ի. Մելիք-Քարամյան

Հ. Գ. Ձեր գրությունը Գողթանից պուլեմյոտներ և թնդանոթներ բերելու վերաբերմամբ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այնտեղ սպասվում են լուրջ գործողություններ, առայժմ հետաձգվում է:

Քարտուղար Ի. Մելիք-Քարամյան»[1]:

Դեռևս հոկտեմբերի 16 (3)-ին Սիսիանի շրջանում նոր զորահավաք անցկացվեց, որի պատասխանատվությունը Զորավարն անձամբ դրեց Գորիսից Սիսիան եկած Շուշիի գնդի հրամանատար Մելիք-Շահնազարյանի և Սիսիանի շրջանի խորհրդի նախագահ Զաքար Տեր-Ղազարյանի վրա, որոնց կազմակերպչական ունակությունները շատ բարձր էր գնահատում: Զորահավաքն ընդհանուր առմամբ հաջող ընթացք ունեցավ՝ բացի Դարաբասի ձորի գյուղերից:

Զինակոչին մեծապես խանգարեց մի չնախատեսված հանգամանք: Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Սիսիանում տարածվել էր վարակիչ, միևնույն ժամանակ մի անհայտ հիվանդություն: Հիվանդության հիմնական ախտանիշը օրգանիզմի ցածր ջերմությունն էր և խիստ թուլությունը:

Գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանը հոկտեմբերի 22 (9)-ին Անդրանիկին գրում էր, որ թեև «վարակիչ հիվանդության լայն տարածման պատճառով մոբիլիզացիայի գործը արագ չի կատարվում», բայց «զինապարտների մեծամասնությունը ներկայացել է ժամանակին, իսկ ֆիզիկապես բոլորովին քայքայվածները, որոնք չեն կարողացել ներկայանալ ժամանակին, կազդուրվելուն պես կներկայանան»[2]:

Այդ անհայտ հիվանդության, նաև անհետևողականության պատճառներով Դարաբասի ձորերի գյուղերից ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ զորահավաքին ոչ ոք չէր ներկայացել: Շրջանային խորհրդի նախագահ Զաքար Տեր-Ղազարյանը Զորավարին գրում էր. «Այդ բոլորը ես վերագրում եմ Դավիթ Տեր-Մկրտչյանի թույլ աշխատանքին: Մոբիլիզացիայից հետո անպայման գնալու եմ Դավթի շրջանը՝ զինակոչության կանչված զինվորներից հին-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 6-8-ի շրջ.:

[2] Նույն տեղում, գ. 36, թ. 86 և շրջ.:

գերորդ վաշտը կազմակերպելու, որը կմնա Ուզ գյուղում: … Բոլոր վաշտերին պատվիրված է խոր ռազվետկաներ անել ամեն օր և հայտնել մեզ»[1]:

Չնայած դրան՝ հիմնականում Զաքար Տեր-Ղազարյանի ջանքերով շրջանում կազմակերպվեց չորս նոր վաշտ: Այսպիսով՝ սեպտեմբերի վերջերին Սիսիանում արդեն կար տեղացիներից կազմված վեց լիարժեք վաշտ, որոնց ղեկավարությունը հանձնված էր ռազմական փորձ ունեցող և վստահելի անձանց:

Առաջին վաշտը՝ պոդպորուչիկ Եգոր Իսկանդարյանի ղեկավարությամբ, ամրապնդվեց Գյոմուր, Գժաձոր, Նորս գյուղերում, 2-րդը՝ Հայկ Գրիգորյանի եղբայր, պոդպորուչիկ Գևորգ Գրիգորյանի հրամանատարությամբ, տեղաբաշխվեց Բազարչայում: Անգեղակոթցի պորուչիկ Հովնան Փիլիպոսյանի հրամանատարության տակ գտնվող 3-րդ վաշտը բաժանվեց երեք մասի: Դասակներից երկուսը տեղաբաշխվեցին Անգեղակոթ գյուղում, մեկը՝ Մուխուրթուրյանում, մյուսը՝ Ղարաքիլիսայում: 4-րդ վաշտը՝ ավագ ենթասպա Գևորգ Կրիկորովի (Բռնակոթ գյուղից) հրամանատարությամբ, նույնպես բաժանվեց երեք մասի: Այս դասակներից երկուսը տեղաբաշխվեցին Բնունիսում, մեկը՝ Թազագյուղում, մյուսը՝ Աղքենդում: 5-րդ վաշտը՝ պրապորշչիկ Սաֆրազբեկյանի գլխավորությամբ, տեղաբաշխվեց Ղարաքիլիսայում, իսկ 6-րդը՝ պոդպորուչիկ Բաղրամյանի հրամանատարությամբ՝ Բռնակոթում: Դրանցից բացի՝ Սիսիանում էին գտնվում Շուշիի գնդի 5-րդ և 6-րդ վաշտերը, որոնք հերթով պաշտպանում էին Մինքենդի ուղղությունը[2]:

Անդրանիկը դեռ նոր էր հասել Սիսիան, երբ բուն Զանգեզուրում նորից շարժում սկսվեց Զորավարին հնարավորինս շուտ հրավիրելու համար: Գյուղական համայնքների բազմամարդ ժողովներում ընտրվում էին պատգամավորներ՝ Սիսիան գնալու և իրենց ուղերձները Զորավարին հանձնելու համար[3]:

Հոկտեմբերի 15 (2)-ին Խնձորեսկի համայնքի ժողովում ընտրված պատգամավորները ժողովի կողմից Անդրանիկին ուղղված դիմումը և գյուղի կոմիսար Հայրապետ Առուշանյանի՝ Զորավարին գրած նամակը տարան Սիսիան և Ղարաքիլիսա գյուղում հանձնեցին Զորավարին: Գյուղի կոմիսարն իր նամակում գրում էր.

«Մեր Անդրանիկ եղբայր, ընկավ Ղարաբաղն* ու պատմական Արցախը**: Մեր դարավոր և արյունարբու թշնամին իր սուրն է բարձրացրել նաև Դավիթ-Բեկի և սպարապետ քաջազունների հմայիչ Սյունիքի վրա: Զանգեզուրի բերդը՝ Խնձորեսկը, իր հարազատ եղբայր Տեղ գյուղի և այլոց հետ, վերջա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 36, թ. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 9:

[3] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 420:

* Նկատի ունի Դաշտային Ղարաբաղը:

** Նկատի ունի Լեռնային Ղարաբաղը:

պես, որոշեցին դիմագրավել թշնամուն արիությամբ և հերոսությամբ՝ փրկելով մեր ընտանիքի պատիվն ու անարատությունը: Մեր այս անհողդողդ որոշումն ի կատար ածելու համար մենք Ձեզ ենք ընտրել անմահ դյուցազուն, քաջդ Անդրանիկ, մեր ղեկավար և ուղեցույց աստղ: Մահ դավաճաններին ու ազգադավներին: Մեր պատգամավորները կը լրացնեն ուղերձիս պակասը և վայրկյանիս իրերի դրությունը: Մենք պատրաստ ենք Ձեր բոլոր պահանջները կատարելու»[1]:

Նույն օրը՝ հոկտեմբերի 15 (2)-ին, Տեղ գյուղի կոմիսար Միխայիլ Բալաչիխյանը Զորավարին գրում էր, որ Տեղի ժողովուրդը իր ընդհանուր ժողովում որոշել է «կռվել և պատվով մեռնել, բայց չհպատակվել դարավոր ոսոխին»: Գյուղի կոմիսարը նշում էր, որ մեծ ու փոքր նրան օգնության են կանչում: «… Հասեք, թե չէ փչացած ենք: Ժողովրդի կողմից ընտրված և ուղարկած մարդիկ Ձեզ մանրամասնորեն կպատմեն այն ողորմելի դրության մասին, որի մեջ գտնվում են հայ կինն ու երեխան»[2]:

Մինչ Գորիսից Անդրանիկին ուղղված խնդրալից նամակները հաջորդում էին իրար, Զորավարը նպատակահարմար գտավ նեղ կազմով խորհրդակցություն հրավիրել և քննության առնել մի քանի անհետաձգելի հարցեր: Ներկա էին Հովակ Ստեփանյանը, Արմեն Սասունին, Երևանից վերադարձած Արշակ Շիրինյանը, Երվանդ և Զաքար Տեր-Ղազարյանները, Դավիթ Տեր-Մկրտչյանը, Ռոդիոն Կասմինինը, Շամիր Մելիք-Յոլչյանը, Հայկ Գրիգորյանը (Անդրեաս):

Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ Արշակ Շիրինյանը, ներկայացնելով Գորիսի տրամադրությունները, զորակոչի անհաջողությունը և Զաբուղի ձորը բանալու ձեռնարկի անհրաժեշտությունը, գտնում էր, որ Զորավարը իր զորամասով պետք է գնա այնտեղ, զորահավաք անի և Զաբուղը բանալով՝ կապ հաստատի Շուշիի հետ:

Անդրադառնալով Ա. Շիրինյանի ելույթին՝ Անդրանիկը նշում էր, քանի որ վերջինս առաջարկներն անում էր բերանացի, այլ ոչ թե գրավոր, ինքը չէր կարող իմանալ Զանգեզուրի ազգային խորհրդի իսկական տրամադրությունը, ուստի երաշխիք չուներ, թե Գորիսը կարող էր լիովին բավարարել իր պահանջները:

Հանդես գալով Զորավարի մտքի պաշտպանությամբ՝ Զաքար Տեր-Ղազարյանը առաջարկում էր, քանի որ Ազգային խորհուրդը չէր կարող անհրաժեշտ պարենամթերքը տալ, Անդրանիկն իր զորամասով մնար Սիսիանում, որտեղ կստանար ամեն բավարարություն[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 42:

[2] Նույն տեղում, գ. 40, թ. 1:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 33, թ. 11:

Զորավար Անդրանիկն ասում էր, որ ինքը պիտի փորձի բանալ Զաբուղը և վերադառնալ Սիսիան 10 օրվա մեջ: Այնուհետև նշում էր, որ կազմակերպչական աշխատանքների համար իրեն պետք է հայտնեն, թե ինչքան փամփուշտ կա, ինչքան պիտի թողնվի Սիսիանում, Գորիսում և ինչքան պիտի տարվի Շուշի: Նա նաև նշում էր, որ ինքն անձամբ Շուշի չի գնա: Որոշվում է՝ Սիսիանի գործին չվնասելու համար այնտեղ թողնել առնվազն 10 հազար բերդան հրացան, 15000 մոսինի, 10000 լեբելի փամփուշտ, մնացածը հասցնել Շուշի՝ չհաշված Զաբուղը բացելու գործողության ժամանակ ծախսվելիք փամփուշտները:

Զաքար Տեր-Ղազարյանը մտավախություն ուներ, որ իմանալով Զորավարի՝ դեպի Գորիս շարժվելու մասին, թուրքերը կարող են դրանից օգտվել և հարձակում գործել Սիսիանի վրա: Հովակ Ստեփանյանը նշում էր, որ Զ. Տեր-Ղազարյանի տեսակետը միակողմանի է. նա չպետք է միայն մտածեր Սիսիանի մասին, և Զորավարին կաշկանդելու հարկ չկար:

Անդրանիկը նորից էր շեշտում, որ չնայած անհրաժեշտ էր Շուշի ուղարկել սպասված ռազմամթերքը, քանի որ այնտեղ բոլորի հույսը դրա վրա էր, բայց ավելի շատ պիտի թողնվեր Սիսիանում, քանի որ այն ռազմաճակատ էր: Ինչ վերաբերում էր Գորիսին, այնտեղ համեմատաբար քիչ ռազմամթերք պետք է մնար[1]:

Ա. Շիրինյանի կարծիքով՝ Գորիսի ու Կապանի համար նախատեսվածն առայժմ պետք է մնար Սիսիանում՝ որպես ապահով տեղ, իսկ Շուշիի համար նախատեսվածը հնարավորինս շուտ հասցվեր Գորիս: Շուշիի գնդի ներկայացուցիչ Երվանդը նշում էր, որ ինքն իրավունք ուներ նույնիսկ ողջ ռազմամթերքը և զենքերը տրամադրելու փաշային, միայն թե փամփուշտները բաշխելիս Շուշիի բաժինը առանձնացնելուց հետո անհրաժեշտ էր բաժին հանել նաև Գանձակի գնդին:

Խորհրդակցության արդյունքում որոշվեց, որ Հովակ Ստեփանյանը և Երվանդ Տեր-Ղազարյանը Զորավարին պետք է ներկայացնեն այն ռազմամթերքի ցուցակը, որն առաջին հերթին տրվելու էր Շուշիի և Գանձակի գնդերին, այնուհետև՝ միայն նկատի ունենալ Սիսիանը, Գորիսը և Կապանը: Բաժանելիս անհրաժեշտ էր հաշվի առնել այն պարագան, որ Սիսիանը ռազմաճակատ էր, հետևաբար անհրաժեշտ էր նրան ավելի շատ զենք տրամադրել:

Խորհրդակցությունը հարմար գտավ, որ Զորավարը Աղուդի–Վաղուդի թշնամական գիծը հատելուց հետո անցներ Գորիս և Զաբուղը բանալով՝ Շուշիի և Գանձակի գնդերին հնարավորություն տար իրենց ռազմամթերքը փոխադրելու Շուշի:

Հաշվի առնելով ռազմամթերքը Շուշի փոխադրելու առաջին փորձի խոշոր անհաջողությունը, որն ավարտվել էր Ղարաղշլաղի ավերումով՝

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 11:

խորհրդակցությունը ճիշտ համարեց այն տեղափոխել ռազմական մեծ ուժի հսկողության և պաշտպանության տակ: Այնուհետև որոշվեց, թե Գորիսից Շուշի ռազմամթերքը ինչով պետք է փոխադրել՝ ձիերո՞վ, թե՞ սայլերով. ավելի հարմար նկատվեց փոխադրել ձիերով: Քանի որ փոխադրվելիքի ծանրությունը կազմում էր 1500 փութ, ուստի հարկավոր էր ձեռքի տակ ունենալ առնվազն 300 ձի[1]:

Ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Նախիջևանի կողմից տաճկական ուժերը և տեղի թուրքերը չհամարձակվեցին դիմել կոնկրետ գործողությունների: Բայց դրա փոխարեն դարձյալ լարված վիճակ ստեղծվեց Գորիսի շրջանի արևելյան սահմանների վրա: Հետախուզական տվյալները ցույց տվեցին, որ օսմանյան ու մուսավաթական զորքերը Արցախից պատրաստվել են լայնածավալ հարձակում գործել: Ուստի Անդրանիկը ստիպված էր շտապ վերադառնալ Գորիս:

Գորիսում Անդրանիկի գտնվելը կարևոր էր ոչ միայն Զանգեզուրի պաշտպանության տեսանկյունից: Այդտեղ նրա ներկայությունը գոտեպնդում էր Ղարաբաղի պայքարող հայությանը, որը շարունակում էր չենթարկվել թուրք բռնազավթիչներին, չնայած որ վերջիններս գրավել էին երկրամասի կենտրոնը՝ Շուշին: Ղարաբաղի հայերի զինված ջոկատները շարունակում էին տիրական լինել Շուշիից դուրս՝ գավառում: Ղարաբաղի գյուղական բնակչությունը լի էր հայրենի երկրամասը պաշտպանելու վճռականությամբ:

Համաձայն Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի հրավերի՝ 1918 թ. հոկտեմբերի 17-ին կայացավ շրջանի 16 գյուղերի՝ 35 ներկայացուցիչների ժողովը: Ժողովին ներկա էին Զորավար Անդրանիկը, Շուշիի զնդի հրամանատար, գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանը, մի շարք սպաներ, Ազգային խորհրդի անդամները և Սիսիանի ներկայացուցիչները:

Ժողովը միաձայնությամբ նախագահ ընտրեց Արշակ Շիրինյանին, քարտուղար՝ Տիգրան Սազանդարյանին[2]:

Բացելով ժողովը՝ նախագահողը ժողովականներին զեկուցեց աշխարհում տեղի ունեցող քաղաքական վերջին զարգացումների մասին՝ հատկապես ծանրանալով այն իրադարձությունների վրա, որոնք բախտորոշ նշանակություն ունեին հայության համար: Այդ հաղորդումից հետո ձայների մեծամասնությամբ ժողովը հայտարարվեց դռնբաց, տեղեկացվեց նաև, որ ժողովին ներկա ոչ պատգամավորները և զինվորականները ունենալու են խորհրդակցական ձայն[3]:

Այնուհետև Արշակ Շիրինյանը հայտնեց ժողովի օրակարգը, որն

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 11-ի շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 38, թ. 7-8, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 430:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 7:

ընդգրկում էր միայն Արցախին օգնության գնալու հարցը: Նա նաև ժողովականներին հայտնեց, որ Սոկրատ Մելիք-Շահնազարյանը իրեն նամակ է ուղարկել, որում խիստ պարտվողական տրամադրությամբ գորիսեցիներին կոչ էր անում՝ որքան հնարավոր է շուտ օգնության հասնել արցախցիներին: Դահլիճից խնդրեցին նամակն ամբողջությամբ կարդալ. Ա. Շիրինյանը կատարեց ժողովականների խնդրանքը*:

Սոկրատ Մելիք-Շահնազարյանի նամակի լրիվ բովանդակությանը ծանոթանալուց հետո ժողովն անցնավ մտքերի փոխանակության: Գեղեոն Տեր-Մինասյանն իր հակիրճ ելույթով արցախցիներին օգնություն գնալու սրբազան կոչ արեց: Նա ասաց, որ գորիսեցիները գոնե դրանով մասնակիորեն կսրբեն իրենց խղճի վրա նստած մուրը, որ Ղալադարասիի 4-5 օր տևած կռիվների ժամանակ չկարողացան որևէ օգնություն ցույց տալ նրա բնակիչներին: Ղարաբաղին օգնություն ցույց տալու առաջարկով հանդես եկավ նաև Բ. Հովսեփյանը՝ նշելով, որ նախ պետք է աշխատել «երկյուղը վանել մեզնից»: Սիսիանի ներկայացուցիչ Զաքար Տեր-Ղազարյանը հարցն ավելի արմատական դրեց՝ ասելով, որ Ղարաբաղին օգնության չգնալը դավաճանություն կլինի: «Թուրք կառավարությունը շուտով շունչը պիտի փչի,– նշում էր նա,– ուստի չպետք է թույլ տալ, որ այդ դիակը հանդգնի հպատակեցնել մեզ և փորձի իշխել մեզ վրա»[1]:

Սահմանային Տեղ գյուղի ներկայացուցիչ Սահակ Տեր-Հայրապետյանը գյուղի ողջ հասարակության անունից հայտարարեց, որ իրենք պատրաստ են օգնության գնալ Ղարաբաղին և թույլ չեն տա, որ թշնամին հաշվեհարդար տեսնի այնտեղի հայության հետ: Տաթևի պատվիրակ Մինասյանը, Ղարաբաղին օգնության հասնելը անհրաժեշտ համարելով, կարծում էր, որ օգնության կազմակերպման գործը ընկած է զինվորական ղեկավարների ուսերին, և նրանք պարտավոր են պատվով կատարել Գորիսի ժողովրդի կամքը: «Որքան մեր սահմաններից հեռու հանդիպենք թշնամուն՝ այնքան լավ»,– վերջում հայտարարեց նա: Հանդես գալով՝ Հովակ Ստեփանյանը կոչ արեց ոչինչ չխնայել Ղարաբաղին օգնելու համար. «Ղարաբաղին օգնել նշանակում է օգնած լինել ինքներս մեզ»[2]: Ն. Հովսեփյանն իր ելույթում կանգ առավ «մեր գյուղացոց մի շարք պակասությունների վրա»: Նա նշեց, որ ձեռնարկը անպայման պետք է գլուխ բերել, բայց նախապես անհրաժեշտ է զինամթերքի պաշարը լրացնել: Այդ նպատակով առաջարկեց խոշոր գումարներով երկու ներկայացուցիչ ուղարկել Դարալագյազ՝ փամփուշտ ձեռք բերելու համար: Զինամթերքի պաշարը լրացնելու նպատակով այնուհետև նրանք պետք է մեկնեին Երևան՝ պատմելու ձեռնարկվող գործի մասին և օգնություն խնդրելու:

---

* Նամակը մեզ գտնել չհաջողվեց:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 7-ի շրջ.:

[2] Նույն տեղում, թ. 8:

Վերջում ելույթ ունեցավ Զորավար Անդրանիկը: Ցավով շեշտելով հայ զինվորականների անպարտաճանաչությունը, հայ ունևորի քարսրտությունը, երիտասարդների մի մասի փախուստ տալը կռվից և այլն, ապա դառնալով ժողովականներին՝ նա պահանջեց տալ ազնիվ ու անկեղծ խոսք. «Իսկապե՞ս դուք օգնելու եք մեր ձեռնարկին, թե՝ ոչ»: Դահլիճը աղմուկով պատասխանեց՝ այո՛: «Վա՛յ այն զինվորին,– ազդու ձայնով շեշտեց Զորավարը,– որը դավաճանորեն հետ կը փախչի կռվից: Այդպիսիք ամենախիստ պատիժը կկրեն ինձնից: Ինձ հետ կռվի եկողը ապրելու է ինձ հետ, մեռնելու ինձ հետ»[1]:

Ապա Զորավարը առաջարկեց Ղարաբաղի և Զանգեզուրի անունից ՀՀ կառավարությունից խնդրել փող և փամփուշտ: «...Եթե անգամ չտան՝ հոգ չէ: Թող մեր խնդիրը նոքա մերժեն, ապագայում պատասխանատուութեան կը ենթարկուեն իրենց պարտքը չկատարողները»[2]:

Այնուհետև Զորավարն ասաց, որ Ղարաբաղին օգնության հասնելու համար անհրաժեշտ էին 245 ձի ու ջորի՝ թնդանոթի և գումակի համար: Բացի այդ՝ բուն Զանգեզուրը պետք է տար 200 ձիավոր, Սիսիանը՝ 50, Կապանը՝ նույնպես 50: Ձիավորները պետք է լինեին 20-45 տարեկան՝ զորակոչվածներից: Այդ 300 ձիավորները պետք է բաժանվեին երեք վաշտի, և յուրաքանչյուր զինվոր առնվազն պետք է ունենար 200-ական փամփուշտ: Պետք էր հոգալ նաև այն մասին, որ զինվորներն ունենային հաց, ձիերը՝ գարի[3]:

Վերջում ելույթ ունեցավ ժողովի նախագահ Արշակ Շիրինյանը: Դիմելով ժողովականներին՝ նա թվարկեց Արցախին օգնություն հասցնելու համար պահանջվելիք մի շարք զոհաբերություններ, մեկառմեկ պարզեց բոլոր այն պահանջները, որոնց բավարարման դեպքում միայն կարելի կլիներ ակնկալել արշավանքի հաջողությունը: Այնուհետև ժողովի նախագահը քվեարկության դրեց հետևյալ հարցը՝ Արցախին գնա՞լ օգնության, թե՞ ոչ:

Բաց քվեարկությամբ Արցախին օգնության գնալու միաձայն որոշում ընդունվեց: Բանաձևն ընդունելուց հետո Արշակ Շիրինյանը ժողովականներին առաջարկեց չմեկնել իրենց բնակավայրերը, առավոտյան շարունակել աշխատել քաղաքում՝ ժողովում արծարծված հարցերի լուծման միջոցները գտնելու, ըստ գյուղերի՝ Անդրանիկին զինվորներ տրամադրելու, դրանց համար ձիեր, հաց և այլն ապահովելու նպատակով Ազգային խորհրդից անհրաժեշտ լիազորագրեր ստանալու համար[4]:

Չնայած արցախահայության 3-րդ համագումարը, իր կամքին հակառակ, որոշում էր ընդունել հպատակություն հայտնել Ադրբեջանի կառավարու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 8-ի շրջ.:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

թյանը, չնայած օսմանյան զորքերը մտել էին Շուշի, դա չէր նշանակում, որ նրանք հաջողության էին հասել: Արցախահայերը բնավ մտադիր չէին իրենց երկիրը թշնամուն տալ: Արցախում գործող քաղաքական տարբեր ուղղությունների հայ կազմակերպությունները միատեղեցին իրենց բոլոր ուժերն ու հնարավորությունները, և հրով ու սրով Արցախ խուժած թշնամին հանդիպեց հայերի կատաղի դիմադրությանը: Նրանք զենքի դիմեցին՝ պաշտպանելու հայրենի օջախը, իրենց պատիվն ու անկախությունը: Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի հայորդիները զենքով պաշտպան կանգնեցին իրենց հողին: Ամենուր ստեղծվում էին աշխարհազորային ջոկատներ, որոնք միավորվում էին ավելի մեծ ստորաբաժանումների մեջ: 1918-1920 թթ. Արցախի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր ղեկավարներից ու հերոսներից էին Արտեմ Լալայանը, Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանը, Ալեքսան Դային, Բագրատ Ղազանչյանը և ուրիշներ: Եթե նույնիսկ օսմանյան տիրապետությունը Կովկասում երկար տևեր, միևնույնն է, նրանց համար դյուրին չպիտի լիներ ընկճել Արցախը: Հայկական զինված ջոկատների չդադարող հարձակումների շնորհիվ թուրք և տեղական մահմեդական զորքը մեծ կորուստներ էր կրում: Մարտակերտի և հարևան գյուղերի հայերի հերոսական դիմադրությունը խափանեց թշնամական հրոսակախմբերի առաջխաղացումը դեպի Ջրաբերդի խորքերը, որտեղ տեղի հայերը նույնպես պատրաստվել էին արժանի հակահարված հասցնելու նրանց:

Թշնամու դեմ կռվելու մեծ վճռականություն հանդես բերեց Դիզակի հայությունը: Երբ Շուշին, առանց մի կաթիլ արյուն թափելու, անձնատուր եղավ, Դիզակի շրջանը, որը ենթարկվում էր Շուշիին, առանձնացավ: Հադրութում կազմակերպվեց մշտական զորք, իսկ շրջանի զանազան վայրերում նշանակվեցին հրամանատարներ՝ ընդհանուր ինքնապաշտպանության գործը հաջողությամբ առաջ տանելու համար: Միաժամանակ լքյալ հայ գյուղացիությանը հուսադրելու և քաջալերելու համար ծավալվեց լայն քարոզչություն: Գյուղացիներին ներշնչում էին, որ նրանք անկարող չեն, որ իրենց ֆիզիկական գոյությունը և շահերը պաշտպանելու համար պետք է իրենց հույսը դնեն զենքի և լավ կազմակերպվածության վրա՝ ստեղծելով կանոնավոր զորք[1]: Ավելին, Դիզակի հրամանատար Արտեմ Լալայանի նախաձեռնությամբ և զինվորական շտաբի կարգադրությամբ այստեղ կազմակերպվեց մի գումարտակի չափ հետևակ և ձիավոր ուժ, որն ուղարկվեց Վարանդայի գյուղերը՝ ժողովրդին ոգեշնչելու և խրախուսելու:

Ղարաղշլաղի ու Վարանդայի 7 գյուղերի ավերումից ու Շուշիի անձնատուր լինելուց հետո մուսավաթականները Արցախի հարցը վերջնականապես փակելու նպատակով նախապատրաստվեցին վճռական գրոհի Աղդա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 11:

մից և Հարավային Ղարաբաղից: Նրանք Զաբրայիլում կուտակեցին հսկայական քանակի զենք-զինամթերք և պատրաստվեցին հարձակվել Խծաբերդ գյուղի վրա, որը Արցախի հարավային ամրակետն էր, այն կամուրջը, որով այդ դժվարին ժամանակներում (Ղարաղշլաղի անկումից հետո) Արցախը կապ էր պահպանում Զանգեզուրի հետ:

Թուրքերը մեծ ուժերով գյուղի վրա հարձակվեցին երկու ուղղություններով՝ հյուսիսից՝ Քիրս լեռան կողմից և հարավից՝ Ալիանլուի կողմից: Իմանալով այդ մասին՝ թուրքական գյուղերով շրջապատված խծաբերդցիները թողեցին գյուղը և ուղղություն վերցրին դեպի Տումի գյուղ: Սակայն ճանապարհին վրա հասան մուսավաթական մեծաքանակ ուժերը, և սկսվեց մի կատաղի կռիվ: Խծաբերդցիներին օգնության շտապեցին Տումի գյուղի քաջերը, ինչպես նաև Խծաբերդ գյուղի հարևան հայկական չորս փոքր գյուղերի՝ Թեզխարաբի, Պետրոսաշենի, Սպիտակաշենի և Արփա-Գյադուկի զինյալները:

Հայերին հաջողվեց անցնել թուրքերի թիկունքը և նրանց առնել աքցանի մեջ: Մեծ կորուստներ տալով՝ թշնամին խուճապահար նահանջեց: Հայերի ձեռքն անցան հրացաններ, ձիեր և հարյուրավոր դատարկ ջվալներ, որ թուրքերը բերել էին Խծաբերդից՝ թալան տանելու համար, սակայն ջվալների մի մասի մեջ, ձիերին բարձած, տարան իրենց դիակները[1]:

Սակայն թշնամին չէր հանդարտվում: Հետախուզական տվյալներից երևում էր, որ Զաբրայիլում նոր ուժեր էին կուտակվում՝ Դիզակի վրա հարձակվելու համար: Այդ ճգնաժամային պահին Դիզակի գլխավոր հրամանատար Արտեմ Լալայանը սուրհանդակի միջոցով հոկտեմբերի 16-ին օգնության խնդրանքով մի գրություն ուղարկեց Անդրանիկին, որը, սակայն, տեղ չհասավ. Կոռնիձորի հայերը, սուրհանդակին չճանաչելով, հրացանաձգությամբ հետ դարձրին նրան:

Երկու օր անց Ա. Լալայանը օգնության խնդրանքով հաջորդ նամակն ուղարկեց Անդրանիկին: Նախքան այդ նամակը Դիզակի հրամանատարությունը մի գրություն էր ուղարկել Անդրանիկին՝ օգնության խնդրանքով: Անդրանիկը Արշակ Շիրինյանին խնդրել էր իր անունից գրել պատասխան նամակ, որը շուտով տեղ էր հասել:

Արցախցիների ազատագրական այդ պայքարի ամենափայլուն դրվագը Մսմնայի կռիվն էր:

Շուշիում հաստատվելուց հետո տաճիկ զորքերն անցան գավառների նվաճման գործողություններին: Շուշիի գավառապետ կարգվեց տեղացի մի ազդեցիկ թուրք՝ Խոսրով բեկ Փոլադովը: Վերջինս, իր հետ վերցնելով 300 հոգուց բաղկացած օսմանյան մի զորամաս՝ 2 թնդանոթով և 8 գնդացիրներով, ինչպես նաև տեղացի թուրք և հայ գործիչներից 25 հոգու, այդ թվում՝ Խաչենի պրիստավ

[1] Մանրամասն տե՛ս Ալեքսան Եգանյանի «Խծաբերդի հերոսամարտը կամ Արցախի գոյատևման պայքարի մասունքներից» հոդվածը («Մանկավարժ», 1990, 11 մայիսի):

Ալեքս բեկ Փիրումյանին և շուշեցի Ներսես Նեյբաթյանին, ճանապարհ ընկավ դեպի իր պաշտոնատեղին՝ Վարանդայում գտնվող Ղաջար թուրքական գյուղը:

Թուրքերից և մուսավաթականներից կազմված զորամասը պիտի ճեղքեր Վարանդայի տարածքը և միանար թուրքական մի ուրիշ զորամասի, որը, Մուղանի դաշտով շարժվելով, հասել էր Կարյագինո: Այդ երկու զորամասերը միացյալ ուժերով պետք է վճռական հարձակում գործեին Վարանդայի վրա, ջախջախեին հայկական զինված ջոկատները, ռազմակալեին բոլոր բնակավայրերը, ապա մտնեին Դիզակ և զինաթափ անեին հայկական գյուղերը:

Շուշիից դուրս գալով՝ զորամասն անցավ Վարանդայի հայ գյուղերով և հոկտեմբերի 13 (26)-ին հանգիստ առավ դրանցից մեկում՝ Մսմնա գյուղում: Դա յուրատեսակ զորաշարժ էր, որի նպատակն էր թուրքական ազդեցությունը հետզհետե տարածել հայ բնակչության վրա: Վարանդայի և Դիզակի հայերը որոշեցին խափանել այդ մտադրությունը:

Այն ճանապարհը, որով թուրքական զորամասը Մսմնայից պիտի անցներ դեպի Ղաջար, ձգվում էր մի խոր ձորի միջով: Մսմնայի ձորի վրա իշխող բարձունքները նախօրոք բռնեցին մոտ 400 զինված հայեր: Դրանցից 300-ը Վարանդայից էին՝ քարինտակցի սպա Արտեմ Պետրոսյանի ղեկավարությամբ, մնացյալը՝ Դիզակից՝ մի քաջ հայորդու՝ Դիզակի Կարմրակուճ (Կեմրակուճ) գյուղի բնակիչ Ասլան Մուրադխանյանի (Ասլանիկ)[1] ղեկավարությամբ:

Հոկտեմբերի 18-ին զորամասը, Մսմնա գյուղից դուրս գալով, մտավ նույնանուն ձորը: Հենց դրան էլ սպասում էին բարձունքները բռնած հայ զինյալները, որոնք իշխող դիրքերից սկսեցին հուժկու կրակ տեղալ օսմանյան զորամասի վրա: Մինչ այդ մեծ հաջողություններ դրսևորած զորամասը կատաղի դիմադրություն ցույց տվեց՝ գործի դնելով գնդացիրներն ու թնդանոթները, բայց ելքն արդեն կանխորոշված էր: Դիրքերից բացվող համազարկերը հնձում էին թշնամական զորամասի շարքերը: Կռիվը կարճատև եղավ, զորամասը դիմեց փախուստի՝ ձորի մեջ թողնելով 86 դիակ, 2 թնդանոթ, 2 գնդացիր: Ջարդված զորամասը նահանջեց Շուշի[2]:

Դիզակի գլխավոր հրամանատար Արտեմ Լալայանը և շտաբի պետ Ասլան Շահնազարյանը Հադրութի հրամանատարական կայանից հոկտեմբերի 20-ին Անդրանիկին ուղարկած նամակում, նկարագրելով Մսմնայի ջարդը, գրում էին. «Թշնամին թնդանոթներով և գնդացիրներով կամեցել էր Շուշիից Վարանդայի միջոցով անցնել Կարյագինո՝ զինաթափելու Դիզակի գլխավոր գյուղերը: … Մեր քաջերը խլել են 2 թնդանոթ և 2 գնդացիր: Այդ հաղթությունը միանգամից բարձրացնում է Ղարաբաղի հայ գյուղացիության ոգին»[3]:

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 427, ինչպես նաև **Հ. Աբրահամյան**, Թևան (վավերագրություն), Երևան, 1998, էջ 7- 8:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 11-ի շրջ.:

Նշված դեպքը, անշուշտ, չպիտի անհետևանք անցներ Վարանդայի և Դիզակի համար, եթե թուրքերը մի փոքր երկար մնային Արցախում: Մսմնա ձորի ջարդով, փաստորեն, վերջ տրվեց օսմանյան կարճատև տիրապետությանը Արցախում: Դրա շնորհիվ նաև խափանվեց թշնամու՝ Զանգեզուր խուժելու մտադրությունը:

Հաստատելով Զորավարի անունից Ա. Շիրինյանի՝ մի քանի օր առաջ գրած նամակի ստացումը՝ Մ. Լալայանը և Ա. Շահնազարյանը Զորավարին տեղեկացնում էին.

«... Ձեր ուղարկած նամակը մեծ ցնծություն պատճառեց Ղարաբաղի ամբողջ հայությանը, նամանավանդ Դիզակի շրջանում: Այդ նամակի համաձայն (Շիրինյանցի գրած)՝ Դիզակի զինվորական շտաբը զինակոչի ցուցակ է պատրաստում, որ Ձեր կողմից պայմանավորված ազդանշանը լսելուն պես մեր ուժը Մուսուլմանլարի շրջանում պատրաստ լինի նոր գործողություն սկսելու: … Խծաբերդից մեզ հայտնեցին, թե կատաղի հրացանաձգության և թնդանոթաձգության ձայն է լսվում գետի կողմից: Դա համարելով Ձեզ մեզ գրած ազդանշանը, մեր ուժերը մի օրվա ընթացքում կենտրոնացնում ենք Խծաբերդի շրջանում, որպեսզի ավերենք շրջակայքի մի քանի վնասակար թուրք գյուղերը, բայց այդ ժամանակ այստեղ են հասնում Ձեր սուրհանդակները (5 հոգի): Դրանց ճանապարհում ենք Վարանդա. ահա մի շաբաթ է, որ մենք մեր զինված ուժերով սպասում ենք այստեղ: Դիզակի շտաբի ծրագիրն առայժմ Մուսուլմանլարի ավերումն է, որով կթեթևացնենք Ձեր գործը»[1]:

Իր նամակում Զորավարը նաև հարցրել էր՝ եթե ինքն իր զորքով անցնի Ղարաբաղ, ապա կարո՞ղ է վստահ լինել, որ տեղացիները կօգնեն իրեն: Հոկտեմբերի 20-ի նամակում Ա. Լալայանը և Ա. Շահնազարյանը այդ հարցադրմանը այսպես էին պատասխանել. «Գալով այն խնդրին, թե ինչպես կվերաբերվի Ղարաբաղի հայ գյուղացիությունը Ձեր այս կողմերն անցնելուն, (ապա) Դիզակի, նույնիսկ ամբողջ Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկությունն այն է, որ Դուք անցնեք մեր երկիրը մի քանի կարևոր և անհետաձգելի գործեր առաջ տանելու համար»[2]:

Դիզակի հրամանատարները թվարկում էին Ղարաբաղ գալուց հետո տեղացիների օգնությամբ այստեղ Անդրանիկի կատարելիք անհետաձգելի գործերը:

Առաջին՝ ավերված ու կրակի մատնված Ղարաղշլաղ գյուղը դարձել էր մահմեդականների որջ, իսկ գյուղացիները քայքայված, քաղցած ու գլխիկոր թափառում էին այս ու այն կողմ՝ ահագին զոհեր տալով հիվանդությունների և քաղցի պատճառով: Հարվածող զորամասի և ղարաբաղյան ուժերի առաջին գործը պիտի լիներ մահմեդականներին Ղարաղշլաղի շրջանից վանելը և

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 11-ի շրջ.:

[2] Նույն տեղում, թ. 12:

ղարաղշլաղցիներին իրենց բնակավայրում հավաքելը, այլապես գյուղը կշարունակեր մնալ ավերակների մեջ:

Երկրորդ՝ Շուշիի անձնատուր լինելը թշնամուն, մի անպատվություն լինելով Ղարաբաղի ողջ հայության համար, միաժամանակ, ապագայի տեսակետից հեռուն գնացող խիստ բացասական հետևանքներ էր ունենալու. մահմեդական տարրը երբեք չէր մոռանա իր այդ անարյուն հաղթությունը և, ոգեշնչված դրանով, մշտապես վերևից կնայեր և սպառնալիք կդառնար ոչ միայն Շուշիի, այլև ողջ արցախահայության համար: Հետևապես՝ երկրորդ նպատակը պիտի լիներ Շուշին ազատագրել թշնամուց և արժանի պատիժ տալ նրա հայ կառավարիչներին:

Երրորդ՝ Վարանդայի շրջանի ավերված 7 հայ գյուղերի ցրված գյուղացիներին պետք է վերադարձվեին իրենց բնակության վայրերը, միաժամանակ պատժեին Աղդամի մահմեդականներին՝ նրանցից պահանջելով հայ գյուղացիներին հասցրած վնասը:

Չորրորդ՝ Ղարաբաղի հայությունը չէր կարող հաշտվել այն մտքի, որ տեղի մահմեդականների բռնած դիրքի պատճառով ամբողջ 5 ամիս գտնվել էր սարսափի ազդեցության տակ, որ նրանք հայերին տանջել էին թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես: Ուրեմն, Հարվածող զորամասի և ղարաբաղյան հայ ուժերի չորրորդ գլխավոր խնդիրը լինելու էր այն մահմեդականներին պատժելը, որոնք հանցանքներ էին գործել արցախահայերի հանդեպ:

Նշված բոլոր խնդիրներն իրականացնելու համար, ինչպես իրենց նամակում նշում էին Ա. Լալայանը և Ա. Շահնազարյանը, Դիզակի շրջանի շտաբն ուներ մեծ քանակի ռազմամթերք, որոնք կենտրոնացված էին տարբեր պահեստներում: Դիզակը զենք ու զինամթերքով օգնել էր և այժմ էլ պատրաստ էր օգնել Վարանդայի հայ գյուղացիներին: Ունեցած հնարավորությունները թույլ կտային երկար ժամանակ վարել ռազմական գործողություններ:

Նամակի վերջում Դիզակի հրամանատարները, կրկին Զորավարին խնդրելով արագացնել Զանգեզուրից Արցախ անցնելը, գրում էին.

«...Բոլորս անհամբեր սպասում ենք մեր պաշտելի հերոսին՝ մեր դարավոր ոխը հանելու և մեր պատիվը փրկելու, (բայց) հանկարծ լսում ենք, որ նա կարող է ուշանալ կամ ետ դառնալ առանց Ղարաբաղի ժողովրդին յուր բարի գալուստը ավետելու: Դիզակի ամբողջ շրջանի հայությունն անհամբեր սպասում է Ձեր շուտափույթ գալուն, և նա սիրով ու ցնծությամբ կհյուրընկալի Ձեր բոլոր քաջերին յուր պաշտելի հայրենիքում: Մեր բոլոր ուժը այժմ կենտրոնացրել ենք Խծաբերդում և ամեն րոպե պիտի սպասենք Ձեզանից որևէ ազդանշանի»[1]:

Մսմնայի ջարդից մի շաբաթ հետո, նորից մի վաշտ հետևակ և ձիավոր ուժ պատրաստելով, Դիզակի հրամանատար Արտեմ Լալայանը այդ վաշտի հետ գնաց Վարանդայի շրջան, որտեղ տեսակցելով տեղի հրամանատար Սոկրատ

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 12:

բեկի հետ՝ իր մարդկանց հետ շրջեց գյուղերով, հուսադրեց, խրախուսեց, կազմակերպեց գյուղացիներին, հորդորեց ոչ մի կերպ չընկճվել և զենքը ձեռքին դիմադրել թշնամուն: Ա. Լալայանը այստեղից կապ հաստատեց նաև Խաչենի և Ջևանշիրի հրամանատարների հետ (Ալեքսան Դայի և Դալի Մարմա) և ամեն ջանք գործադրեց, որ Ասկերանի ավերված գյուղերի բնակիչները հավաքվեն իրենց գյուղերում և հարկավոր դեպքում փակեն Ասկերանի անցքը՝ Շուշին դրսի աշխարհից կտրելու համար: Այդ խնդիրը կատարվեց մեծ հաջողությամբ: Ասկերանի անցքն արդեն փակ էր թշնամու առջև[1]:

Հոկտեմբերի 21-ին Զորավար Անդրանիկի, գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանի և Հովակիմ Ստեփանյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի նիստ, որտեղ քննարկման էր դրված դեպի Ղարաբաղ Անդրանիկի առաջնորդությամբ արշավանք սկսելու հարցը:

Ելույթ ունենալով՝ Զորավարը հիշեցրեց, որ Զանգեզուրի գյուղացիական համագումարը որոշում է ընդունել օգնության փութալ Շուշիին, և որ ինքն էլ տրամադիր է կատարել հիշյալ որոշումը՝ հոկտեմբերի 24-ին սկսելով ծրագրի իրականացումը: Նա նշում էր, որ այդ արշավանքը լինելու է երկու փուլով. առաջին փուլում պետք է մաքրեր ձախ թևը՝ Մինքենդ–Մոլլա Ահմեդլի–Սուրունլար–Հաքյարի տարածքը, և դրանից հետո միայն ձեռնարկի երկրորդ գործողությունը, այն է՝ Մարքիզ–Ղարաղշլաղը «զարնելով անցնել Շուշի»: «Այդ արշավանքը պիտի կատարեմ, եթե նույնիսկ տեղացիները չօժանդակեն ինձ»[2],– իր ելույթը այս վճռական խոսքերով վերջացրեց Անդրանիկը:

Հարցի քննարկման ընթացքում լուրջ տարաձայնություններ առաջացան Շուշիի գնդի հրամանատարի և կոմիսարի միջև: Գնդապետ Մ. Մելիք-Շահնազարյանը կարծում էր, որ անօգուտ է այժմ որևէ գործողության դիմելը, քանի որ եղած ուժերն անբավարար են, և, բացի այդ, հույս չկար, թե տեղացիները ակտիվ օժանդակություն ցույց կտային ձեռնարկին: Մյուս կողմից թուրքերը, առիթն օգտագործելով, կարող էին կոտորել Շուշիի հայությանը: Պորուչիկ Հովակ Ստեփանյանը կտրուկ դեմ արտահայտվեց գնդապետի տեսակետին՝ նշելով, որ արշավանքը ոչ մի դեպքում չպետք է հետաձգել: Վերջինիս առաջարկը վճռականորեն պաշտպանեց Արշակ Շիրինյանը և հույս հայտնեց, որ գորիսեցիներն անպայման կմիանան Անդրանիկին: Նույն տեսակետը պաշտպանեց նաև Նիկոլայ Հովսեփյանը[3]:

Չնայած որոշ տարաձայնություններին՝ Անդրանիկի զորամասը և բուն Զանգեզուրի տեղական ուժերը պատրաստվում էին արյունալի գոտեմարտի: Զորավարը և Զանգեզուրի ազգային խորհուրդը միակամ էին՝ գտնելով, որ չպետք է նախաձեռնությունը թողնել թշնամուն, այլ պետք է նախահարձակ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 10-11:

[2] Նույն տեղում, գ. 34, թ. 2:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

լինել և մարտերով մտնել Ղարաբաղ:

Հոկտեմբերի 30-ի երեկոյան Հարվածող զորամասի ստորաբաժանումները և գորիսեցիների զինված խմբերը դուրս եկան քաղաքից և ուղղություն վերցրին դեպի Արցախ[1]: Բայց հենց նույն օրը Զանգեզուրից շատ հեռու տեղի էր ունենում պատմական իրադարձություն: Գերմանիայի և նրա դաշնակիցներ Ավստրո-Հունգարիայի ու Բուլղարիայի պարտությանը հաջորդել էր Թուրքիայի պարտությունը: Իզեթ փաշայի գլխավորությամբ կազմված նոր կառավարության ներկայացուցիչը 1918 թ. հոկտեմբերի 30-ին հունական Մուդրոս կղզու ափին խարիսխ նետած «Ագամեմնոն» նավի վրա ստորագրեց դաշնակիցների ներկայացրած պայմանագիրը, որի համաձայն՝ Թուրքիան ճանաչում էր իր պարտությունը և դրանից բխող բոլոր ծանր հետևանքները. դադարում էր գոյություն ունենալ դարեր շարունակ բազում ժողովուրդների տառապանքներ բերած Օսմանյան կայսրությունը:

Գորիսի շրջանի արևելյան հատվածում դիրքեր գրաված Հարվածող զորամասի ստորաբաժանումները և բուն Զանգեզուրի ուժերը, իմանալով Թուրքիայի պարտության մասին, նոյեմբերի 2-ին վերադարձան քաղաք: Ինչպես ամբողջ հայության, այնպես էլ Զանգեզուրի հայության ուրախությունը կատարյալ էր: Բոլորը տոգորված էին ապագայի վառ հույսերով:

Թուրքիայի կողմից Մուդրոսի դաշնագրի ստորագրման կապակցությամբ Սմբատ Բորոյանը Երևանից Զորավարին գրում էր.

«Սիրելի՛ Անդրանիկ.

Գերմանիոյ կայսր գահընկեց եղավ, գերման ժողովուրդը հպատակություն է պահանջում: Դարդանելի և Չաթալջայի դիրքերը հանձնված են անգլիացոց: Էնվեր փաշան, արդեն գրած եմ, հրաժարած է, նոր նախարարութիւն ընտրուած է, որու մեջ երեքը հայ ներկայացուցիչներ են՝ եղել»[2]:

Երևանից Գորիս ուղարկած, արխիվում պահպանվող անստորագիր մի նամակով Անդրանիկին տեղեկացվում էր, որ «Հորիզոն» թերթում լույս տեսած հեռագրերից երևում է, որ Թուրքիան ընդունել է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, համաձայն որի՝ Ախուրյան գետը դառնում է սահման Թուրքիայի և Հայաստանի միջև: Ըստ այդ հեռագրերի՝ Հայաստանին էին անցնում Ալեքսանդրապոլը՝ իր շրջաններով, Սուրմալու գավառի բոլոր մասերը և առհասարակ Երևանի նահանգի այն բոլոր վայրերը, որոնք Բաթումի պայմանագրով չէին մտնում հայկական հանրապետության սահմանների մեջ: Նամակագիրը նշում էր նաև, որ թուրքերը դեռ չեն հեռացել Այսրկովկասից, բայց արդեն առաջացել են հակասություններ հայերի մեջ՝ հայկական պետության զարգացման հեռանկարների վերաբերյալ այն դեպքում, երբ անդունդի եզրին

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 433:

[*] Հայ ներկայացուցիչների մասին հաղորդած լուրը իրականությանը չէր համապատասխանում:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 10:

կանգնած լինելով՝ Թուրքիան, հայկական հանրապետության տարածքի և «մեր կաշվի վրա սակարկություններ կատարելով, փորձում է իսպառ թաղել մեր ազգային իղձերը»: Նշվում էր նաև, որ թուրքահայ և ռուսահայ գործիչների միջև առաջ են եկել խոր տարաձայնություններ: Այդ երևույթը արդեն նկատվում է նույնիսկ թուրքահայերի տարբեր հատվածների միջև: Օրինակ՝ վանեցի դաշնակցականները բաժանվել էին երկու մասի. մի մասը հետաքրքրված էր ոչ միայն թուրքահայ, այլև ռուսահայ դատով, մյուս մասը՝ միայն թուրքահայ դատով: Վերջիններս ռուսահայ դաշնակցականներին հորդորում էին ձեռք քաշել տաճկահայ դատից, ազատ թողնել իրենց և չխառնվել իրենց գործերին, չմիջամտել իրենց «Աշխատանք» թերթի աշխատանքներին: Բայց ռուսահայ դաշնակցականները ոչ միայն մերժել էին, այլև սպառնացել էին գրավել թերթի տպագրված համարները, նույնիսկ՝ տպագրական թուղթը, որպեսզի անհնարին լիներ թերթի լույսընծայումը: Նման անցանկալի երևույթի կողքին, նշված էր նամակում, մխիթարական էր հայ քաղաքական ուժերի մերձեցման և միաձուլման միտումը: Օրինակ՝ ռուսահայերի ժողովրդական կուսակցությունը թուրքահայերի ռամկավար կուսակցությանն առաջարկել էր ձուլվել իր հետ, քանի որ «մեկ է հայու հայրենիք, հայու հանրապետական կառավարութիւն և հայու պետութիւն»: Թեև ռամկավարները մերժել էին այդ առաջարկը, բայց կարևորն այն փաստն էր, որ հայության բոլոր հատվածների մեջ հասունանում էր համազգային շահերով ապրելու գաղափարը[1]:

Թեև այս և նման կարգի դատողությունները առայժմ ցանկությունների շրջանակում էին, բայց հեռու չէին իրականությունից:

Հաղթանակած տերությունների հետ հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքած պայմանագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիայի նոր կառավարությունը պարտավորվեց վեց շաբաթվա ընթացքում զորքերը դուրս բերել Այսրկովկասի ողջ տարածքից: Շուտով օսմանյան զորամասերը բռնեցին նահանջի ճանապարհը: Թուրքերը սկսեցին զորքերը հետ քաշել նաև Շուշիից և Վարարակնից: Թեև հայկական գավառներից նրանք տեղահանվում էին չկամությամբ, դանդաղ ու հետ նայելով, բայց, ի վերջո, ստիպված էին հեռանալ: Զանգեզուրի սահմաններից և Արցախի տարածքից դուրս գալով՝ օսմանյան զորամասերը նախ անցան Եվլախ, ապա Վրաստանի վրայով (հիմնականում Թիֆլիս–Կարս երկաթուղով)՝ Թուրքիա: Մուդրոսի պայմանագրի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր նաև զորացրել իր բանակը: Օգտվելով դրանից՝ Ադրբեջանում մնացին թուրք շատ սպաներ և փորձված մեծաթիվ զինվորներ՝ Նուրի, Քազիմ, Խալիլ փաշաների գլխավորությամբ: Օսմանյան բանակի այս պարագլուխները և հարյուրավոր տաճիկ սպաներ ձեռնամուխ եղան Ադրբեջանի բանակի կազմակերպմանը:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 4:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱԴՐԲԵՋԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՅԱՎՆԱՍ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

Այն ժամանակ, երբ տաճկական զորքերը Կովկասի մուսուլմանների և մուսավաթական ոճրագործների հետ կոտորում ու թալանում էին Այսրկովկասի հայ ազգաբնակչությանը, Պարսկաստանում գործող անգլիական բանակին անգնահատելի օգնություն էին ցույց տալիս հայկական զինված ուժերը, որոնք այնտեղ էին նահանջել թուրքական ռազմաճակատից և Այսրկովկասից:

Հայկական զինված ուժերը՝ որպես անգլիացիների դաշնակիցներ, Պարսկաստանում համագործակցում և կռվում էին անգլիական զորքերի հետ՝ ընդդեմ թուրքերի: Սակայն, Պարսկաստանում ամրացնելով իրենց դիրքերը և ընդհուպ մոտենալով Այսրկովկասի սահմաններին՝ անգլիացիները փոխեցին իրենց քաղաքականությունը և վերաբերմունքը հայերի նկատմամբ. նրանց այլևս չէին ընկալում իբրև դաշնակիցների, որոնք պատերազմում կրել էին մարդկային, տարածքային և նյութական ծանր և անվերականգնելի կորուստներ:

Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտությունից հետո օսմանյան զորքերը ետ քաշվեցին Այսրկովկասից: 1918 թ. նոյեմբերի սկզբներին երկրամաս մուտք գործեցին դաշնակից տերությունների զինված ուժերը: Առաջնությունը տրված էր անգլիացիներին. նրանց բաժին էին ընկել երկրամասի ամենամեծ պատառները, առաջին հերթին՝ ընդամենը մի քանի ամիս առաջ Ադրբեջան անվանված ընդարձակ երկիրը:

Անգլիացիները անցան Այսրկովկասի խնդիրների «լուծմանը»: Այստեղ ստեղծված փոքր հանրապետությունները կարող էին բուֆեր լինել Պարսկաստանի և ապագա Ռուսաստանի միջև: Բացի այդ՝ Այսրկովկասում քաղաքական հավասարակշռություն պահպանելու համար նրանց պետք էր կռվեցնել միմյանց հետ, ինչպես դա անում էին իրենց արևելյան գաղութներում:

Անգլիացիների համար Այսրկովկասում ամենալուրջ գործոնը դարձավ մուսուլմանական բազմաքանակ բնակչությունը, որի հետ պետք էր պահպանել լավ հարաբերություններ:

Անգլիական զինված ուժերի հրամանատար, գեներալ Լ. Չ. Դենստերվիլը կոչով դիմեց մուսուլմաններին՝ շեշտելով անգլիացիների պատմական հովանավորությունը մուսուլման բնակչության նկատմամբ և վերջիններիս նվիրվածությունը Բրիտանիային:

Այսրկովկասում փոխարինելով թուրք-գերմանական զավթիչներին՝ անգլիական օկուպանտները բացահայտորեն իրենց պաշտպանության տակ առան երեկվա իրենց պատերազմական հակառակորդներին, այդ թվում՝ կովկասյան թուրքերին, Ադրբեջանի հայատյաց իշխանություններին:

Հաղթանակած անգլիացիները չէին շտապում փոխհատուցել իրենց «փոքր դաշնակցին» պատերազմի տարիներին կրած տառապանքների դիմաց: Մինչդեռ հայերը համոզված էին, որ Թուրքիայի պարտությունը, նրա զորքերի հեռանալը Այսրկովկասից և անգլիական ուժերի մուտքը լուրջ տեղաշարժեր առաջ կբերեն երկրամասում՝ ի վնաս մուսավաթի՝ որպես երիտթուրքերի կամակատարի ու զինակցի: Այնինչ հայերին վիճակված էր, այս էլ որերորդ անգամ, հուսախաբ լինել արևմտյան «դաշնակիցներից»:

Նավթի հոտն առած անգլիացիների համար առաջնայինը օրվա շահն էր, նամանավանդ որ Բաքվի անկումից հետո հայերին սիրաշահելու քաղաքականությունը ժամանակավրեպ էր: Բրիտանական իմպերիալիստների նպատակն էր թալանել ու դուրս տանել Այսրկովկասի հարստությունները, ուստի ճնշում էին իրենց դեմ ուղղված ամեն ընդվզում՝ չհանդուրժելով որևէ հեղափոխական գործունեություն:

Գեներալ Լ. Չ. Դենստերվիլի տեղակալ, գեներալ-մայորի պաշտոնակատար Վ. Թոմսոնը որևէ շահագրգռություն չէր դրսևորում հայերի հանդեպ: Բաքվից Պարսկաստան եկած հայ գաղթականներին սկզբում՝ մինչև 1918 թվականի սեպտեմբերի 26-ը, անգլիացիները կերակրում էին, բայց հետո դադարեցրին օգնությունը՝ նրանց նկատմամբ ցուցաբերելով բարբարոսական վերաբերմունք:

Հայերի՝ Էնզելի գալու կապակցությամբ, որպեսզի հայ զինվորականները չցրվեն, որոշված էր Պարսկաստանում նրանցից կազմակերպել առանձին բրիգադ, որն անհրաժեշտության դեպքում Ջուլֆայի վրայով կշարժվեր դեպի Երևան: Այդ հարցի վերաբերյալ գեներալ Յ. Բագրատունին համապատասխան հուշագիր էր ներկայացրել գեներալ Վ. Թոմսոնին:

1918 թվականի հոկտեմբերի սկզբին գեներալ Յ. Բագրատունու մոտ տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցում էին անգլիական զորքերի արևելյան շտաբի պետ, գեներալ Վեբ Գիլմանը, գեներալ Վիլյամ Բիչը, գեներալ Չարլզ Ալեքսանդր Անդերսոնը և ուրիշներ: Այստեղ անգլիացիները հայտարարեցին, որ իրենք որոշել էին Հյուսիսային Պարսկաստանում դադարեցնել ռազմական գործողությունները, ուստի և հրաժարվում էին հայկական բրիգադ կազմակերպելուց:

Հենց այդ ժամանակ էլ հայտնի դարձավ Բաքվի անկման մասին անգլիացիների սադրիչ ռադիոհեռագրի մասին, որում նրանք հայերին մեղադրում էին դավաճանության մեջ:

Դեռևս 1918 թվականի օգոստոսի սկզբին Էնզելիում գտնվող հայերին հայտնի էր դարձել, որ անգլիացիների հետ առանձին հույսեր կապել չէր

կարելի: Դեռ գարնանը Վանի շրջանի 60-70 հազար հայ գաղթականության հետ եկող վեց-յոթ հազարանոց հայկական զորամասը անգլիացիները զինաթափել էին:

Միասնական հակախորհրդային ճակատ ստեղծելու իր ձգտման մեջ անգլիական հրամանատարությունը հիմնականում կարևորում էր Այսրկովկասի պետական այն կազմավորումները, որոնք կարող էին առավել մեծ նշանակություն ունենալ նախածրագրած պայքարում: Դրանք էին, անկասկած, Վրաստանը, որը, բոլորովին չտուժելով այդ տարիների իրադարձություններից, ամբողջովին պահպանել էր իր ուժերը, և Ադրբեջանը, որի բնական հարստությունները և անմիջական մոտիկությունը գործողությունների կիզակետին ռազմավարական կարևոր նշանակություն էին ստանում այդ ծրագրերում: Այս պարագայում, անկասկած, պակաս հետաքրքրություն էր ներկայացնում քայքայված ու արյունաքամ եղած Հայաստանը, որն ավելի հեռու էր Խորհրդային Ռուսաստանի հետ նախատեսվող առճակատման վայրերից: Պատահական չէ, որ նոր զավթարարներն իրենց պայքարի հիմնական սլաքն ուղղել էին այն բոլոր ուժերի դեմ, որոնք Այսրկովկասի շահերը շաղկապում էին Ռուսաստանի շահերին: Եվ քանի որ նրանք հայությանը համարում էին Այսրկովկասի առավել «անհանգիստ» և ռուսամետ տարր, ուստի, բնականաբար, վստահություն չէին տածում նրա նկատմամբ՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով:

Նշված հանգամանքների բերումով անգլիական հրամանատարությունը զարմանալի անտարբերություն ցուցաբերեց Հայաստանի շահերի նկատմամբ՝ խորապես զարմացնելով և ցավ պատճառելով հայ հասարակությանը:

Կովկասյան անգլիական զորքերի հրամանատարության անմիջական մասնակցությամբ ու ջանքերով կազմակերպվում էր հարավարևմտյան մեծ Ադրբեջան, որի սահմաններում պետք է ներառնվեին նաև Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևան-Շարուրի և Սուրմալուի գավառները: Տեղի ունեցավ պատմության պարադոքսներից մեկը. օսմանյան թուրքերի «կրտսեր եղբայր» կովկասյան թուրքությունն օրերի ընթացքում դարձավ անգլիացիների դաշնակիցը, իսկ հայ ժողովուրդը, որ նրանց դատին ծառայել էր անմնացորդ, տվել անհաշիվ մարդկային զոհեր, կորցրել էր իր հայրենիքի մեծ մասը, այժմ ստիպված էր շարունակել իր գոյապայքարը՝ կռիվը մուսավաթական Ադրբեջանի դեմ, որի թիկունքում այս անգամ արդեն ամուր կանգնել էր բրիտանական իմպերիալիզմը:

Չէր կարելի անտեսել մի կարևոր հանգամանք ևս: Պատերազմը դեռ նոր էր վերջացել, բայց Անգլիան իր դաշնակիցների թիկունքում ջանում էր Թուրքիայի հետ մերձենալու եզրեր գտնել, իսկ այդ խնդրի կատարման համար կարևոր դեր էր վերապահում Ադրբեջանին:

Հայաստանի ռազմաքաղաքական դրության մասին դաշնակցական գործիչ Գարեգին Ենգիբարյանը նոյեմբերի 16-ին Անդրանիկին գրում էր.

«Դրությունը բարդանում է, և բազմաչարչար հայությունը դեռ չի կարողանում հանգիստ գտնել: Մինչդեռ ուրիշ ազգերը պատերազմի վերջանալու առիթով լցված են հույսերով՝ մեզ համար ապագան դեռ շատ մութն է: Չգիտենք, թե ինչ պայմաններով է Անգլիան հաշտվել թուրքերի հետ և արդյո՞ք մեզ չի զոհել նրանց»[1]:

Մուսավաթական կառավարությունը կարողացավ օրերի ընթացքում շահել անգլիացիների համակրանքն ու պաշտպանությունը: Այժմ էլ զանգեզուրցիներին ու արցախցիներին վիճակված էր իրենց հողը պաշտպանել Ադրբեջանի թուրքերի և այնտեղ մնացած օսմանյան զորամասերի հարձակումներից՝ սրանց նկատմամբ անգլիացիների բացահայտ թողտվության պայմաններում:

Մտնելով Այսրկովկաս՝ անգլիական զավթարարները հայտարարել էին, թե նշված երկրամասերը «վիճելի» տարածքներ են, որոնց պատկանելության հարցը վերջնականապես կորոշի Փարիզի հաշտության վեհաժողովը[2]:

Փաստորեն՝ թուրքերի հեռանալուց հետո Այսրկովկասում ստեղծվել էր մի դրություն, որտեղ շուտ հասնողը իրեն տեր էր համարում:

Լավ գիտակցելով այդ հանգամանքը՝ հայ-վրացական պատերազմից արդեն փորձ ձեռք բերած Երևանի քաղաքական շրջանակները համառորեն պնդում էին, թե կառավարությունը պետք է շուտափույթ օգնության գնար Արցախ–Զանգեզուրին՝ դրանով փաստի առաջ կանգնեցնելով անգլիացիներին[3]:

Եթե Հայաստանի կառավարությունը Զանգեզուրում և Արցախում նշանակեր իր ներկայացուցչին, ապա նա, հենվելով տեղի հայության կազմակերպված ուժի վրա, հայկական այդ երկրամասերը կարող էր մեկընդմիշտ միացած համարել Հայաստանին և այդպիսով վերջ տալ Ադրբեջանի հետ երկամյա արյունալից ընդհարումներին ու սրված հարաբերություններին: Բայց վարչապետ Հովհաննես Քաջազնունին լսել անգամ չէր ուզում այդ մասին և համառորեն մերժում էր Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչներ Արցախ և Զանգեզուր ուղարկելու բոլոր առաջարկները՝ մշտապես պատճառաբանելով, թե դաշնակիցների հետ հարաբերությունները փչացնելու ոչ մի առիթ չպետք է տալ և համբերատարությամբ պետք է սպասել հաղթանակած մեծ տերությունների՝ 1920 թ. հունվարին Փարիզում կայանալիք վեհաժողովի վճիռներին: Այսպիսով՝ Հ. Քաջազնունու կառավարությունն ի վիճակի չեղավ ըմբռնել պահի լրջությունը և օր առաջ դիմել անհրաժեշտ քայլերի[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 46, թ. 4:

[2] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 469-470, 490:

[3] Տե՛ս **Ա. Բաբալեան**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրե, 1959, էջ 30:

[4] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 395-396, 398, 438:

Կառավարությունը նոյեմբերի 16-ի նիստում որոշում ընդունեց. «Ի նկատի առնելով, որ Ադրբեջանը, չսպասելով Ղարաբաղի և Զանգեզուրի սահմանների վիճելի հարցերի փոխադարձ համաձայնությամբ խաղաղ լուծմանը, անցել է գործողությունների և բռնագրավելով Ղարաբաղի ու Զանգեզուրի լեռնային մասերը՝ ազգաբնակչության վերաբերմամբ գործադրում է բռնություններ, կազմակերպել զինական ուժեր վերոհիշյալ հայկական շրջաններում պահպանության, ինչպես և ազգաբնակչությունը ոտնձգություններից կասեցնելու համար»[1]:

Արցախի ազգային խորհուրդը խորհրդի նախագահի ստորագրությամբ Անդրանիկին նամակ հղեց, որում նշում էր, որ երկրամասը մինչև այժմ որևէ աջակցություն չէր ստացել ոչ միայն Երևանի իշխանություններից, այլև Հայաստանի Հանրապետությունից դուրս հայկական կենտրոններից: Ավելին՝ «վերջին երկու տարիների ընթացքում Ղարաբաղը միանգամայն մոռացության տրված է եղել մեր կենտրոնների կողմից: Թեև իր ժամանակին քանիցս կենտրոնների ուշադրությունն ենք հրավիրել, այնուամենայնիվ այստեղից ուղղված գրությունները և հատուկ ներկայացուցիչների միջոցով արված դիմումները մնացել են ձայն բարբառոյ յանապատի»[2]:

Այնուհետև նամակում նշվում էր. «Ղարաբաղը… իր աշխարհագրական դիրքով ընկած լինելով Հայաստանի մի կողմում, երբ իր հույսը կտրեց կենտրոններից, որոշեց մեն-մենակ ինքնապաշտպանվել թե՛ դրսի զորեղ թշնամիներից, թե՛ ներսում բուն դրած հայ կյանքի հիմքերը փորող անիշխանական տարրերից»[3]:

Նույնիսկ այդ իրավիճակում հայ ժողովուրդը համոզված էր, որ դաշնակիցների հաղթանակի մեջ իր ներդրումը զուր չի անցնելու և նրանց օգնությամբ անպայման հասնելու է հայրենի հողերի ամբողջացման՝ իր հույսերի և իղձերի իրականացմանը:

Ադրբեջանի կառավարությունը, որ Թուրքիայի պարտությունից հետո առաջին օրերին խիստ ընկճված և թմրած վիճակում էր, տեսնելով իր համար ստեղծված անսպասելի բարենպաստ իրադրությունը՝ ոգի առավ: Ավելին՝ նա վերսկսեց իր զավթողական քաղաքականությունը Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ՝ այս անգամ ստանալով Ադրբեջանի վրա փաստական իշխանություն հաստատած անգլիական զորքերի հրամանատարության բացահայտ աջակցությունը: Վերջինս, «մոռանալով» «վիճելի» հայտարարված հայկական զույգ երկրամասերի պատկանելության հարցը Փարիզի վեհաժողովում քննության առնելու իր կառավարության խոստումները, կանգնեց մուսավաթականների հավակնությունների աներկբա պաշտպա-

[1] ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 92:

[2] Նույն տեղում, գ. 38, թ. 17 և շրջ.:

[3] Նույն տեղում:

նության դիրքերում: Ավելին՝ անգլիացիները բոլոր միջոցներով օգնում էին Ադրբեջանի կառավարությանը՝ զենքի ուժով իր իշխանությունը Արցախի և Զանգեզուրի վրա հաստատելու նրա նկրտումներում[1]:

Անգլիացիների քաղաքականությունը, նրանց կողմնորոշման կտրուկ փոփոխությունը՝ հօգուտ կովկասյան թուրքերի՝ որպես արդյունք մահմեդական-թուրքական գործոնի կարևորման ու դրան շաղկապվող շահախնդրությունների, սպառնում էին հայկական զույգ երկրամասերի ինքնիշխանությանը: Արդյունքում թուրքական նորաստեղծ ցեղամիավորի՝ այսպես կոչված Ադրբեջանի կապանքների մեջ հայտնվելու հնարավորություն էր ենթադրվում:

Զանգեզուրցի հայերի համար մեծ բախտավորություն էր, որ ճակատագրական այդ օրերին նրանց հետ էր հայ ժողովրդի ազգային հերոս, Զորավար Անդրանիկ Օզանյանը: Նրա գլխավորությամբ Հարվածող զորամասը և գավառի զինված ջոկատները 1918 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին հերոսական կռիվներ մղեցին թուրք-մուսավաթական զավթիչների դեմ՝ անառիկ պահելով երկրամասի սահմանները:

Առավել մեծ վտանգը կախվել էր արցախահայերի գլխին: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը նպատակ ուներ հրով ու սրով իրեն ենթարկելու ազատատենչ Արցախը՝ այն հայաթափելու հեռանկարով:

Արցախահայերը Զանգեզուրից քանիցս օգնության էին կանչել Զորավար Անդրանիկին, բայց զանգեզուրցիների ինքնապաշտպանության հոգսերը Զորավարին հնարավորություն չէին տվել ընդառաջ գնալու արցախցիների խնդրանքներին[2]:

Այժմ, երբ անգլիացիների գալուց հետո էլ ադրբեջանական ռազմամոլները Արցախի հանդեպ նույնքան սանձարձակ էին, որքան Ադրբեջանում իրենց «ավագ եղբոր»՝ օսմանյան զավթիչների ներկայության օրերին, Զանգեզուրից արցախահայությանն օգնության հասնելը դառնում էր օրախնդիր:

Թիֆլիսում լույս տեսնող «Նոր հորիզոն» թերթում 1918 թ. նոյեմբերի 4-ին Անդրանիկի մի նամակից տպագրվել էին քաղվածքներ: Նամակը, թերթի խմբագրի հավաստմամբ, պատահաբար էր ընկել իր ձեռքը: Նամակում նկարագրված էին Գորիսի, Սիսիանի, Կապանի ժողովրդի պաշտպանության ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները: Դրանով Զորավարը կոչ էր անում օգնության ձեռք մեկնելու իր հետ Զանգեզուր եկած և այստեղ

---

[1] Տե՛ս **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8, էջ 134, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 62, **Յրթ. Ց. Խաչատուրեան**, Անգլիական քաղաքականութիւնն ի Անդրկովկաս, «Հայրենիք», 1945, մայիս-հունիս, թիվ 3 (248), էջ 28-32, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 460:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 2-3, գ. 35, թ. 1, գ. 38, թթ. 1-6, 11-12, 33-34, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 79:

սովից մեռնող գաղթականությանը: Նամակը հաստատում էր Արցախին օգնության գնալու Անդրանիկի վճռականությունը:

Նա գրում էր. «Սիսիանը, Զանգեզուրն ու Ղափանը սերտ կերպով իրար միացնելէ վերջ կմնար մեզ հետ կապել բուն պատմական Ղարաբաղը, որը, սակայն, նախքան այդ ընկավ թուրքերու տիրապետութեան տակ: Թեև քաղաքն ընկած էր և զինաթափ եղած, բայց շրջանները, գյուղերը չեն ենթարկված և անհամբեր կսպասեն մեզ»[1]:

Զորավարն ընդգծում էր. «Շնորհիվ իմ և զորամասիս ներկայութեան և տեղական զորահավաքի՝ Սիսիանը, Զանգեզուրը (նկատի ուներ Գորիսի շրջանը՝ բուն Զանգեզուրը: – *Ա. Ս.)* և Ղափանը մինչև օրս զերծ մնացին որևէ ձևի թուրքական տիրապետութիւնէ, հակառակ անոր, որ Երևանի հայկական հանրապետութիւնը ոչ միայն ոչ մի օգնութիւն չէր ուզեր հասցնել, այլ նոյնիսկ չէր ուզեր հարաբերութեան մտնել (Զանգեզուրի գավառի իշխանությունների հետ: – *Ա. Ս.)* և խորհուրդ կուտար մինչև անգամ զինաթափ լինել և երբեք տեղի չտալ ընդհարումներու, հեռացնելով այդ շրջանէն Անդրանիկին իբր վտանգավոր մարդ»[2]:

Այնուհետև շարունակում էր. «Համենայն դէպս, անհրաժեշտ է օգտվել ամէն մի առիթէ նպաստավոր լուծում տալու համար Ղարաբաղի հարցին. փաստորեն Զանգեզուրի (Բուն Զանգեզուր: – *Ա. Ս.),* Սիսիանի և Ղափանի դրութիւնը որոշված է, իսկ Շուշու մասին կհուսամ շուտով իրագործել մեր որոշումը»[3]:

Գորիսում բազմակողմանի նախապատրաստական աշխատանքներից հետո Զորավար Անդրանիկը վերջապես ծրագրեց 1918 թ. նոյեմբերի 5-ին ռազմերթ սկսել դեպի Շուշի: Նա նախապես պայմանավորվածություն էր ձեռք բերել Դիզակի և Վարանդայի հրամանատարների հետ, ըստ որի՝ Դիզակի զինված ջոկատները պիտի գրավեին Մուսուլմանլարի բարձունքները, իսկ Վարանդայի ջոկատները՝ Թթու ջրինը[4]: Դիզակի հրամանատարը բարեխղճորեն կատարել էր Զորավարի հրամանը, իսկ Վարանդայի հրամանատար Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանը Չանախչիից նոյեմբերի 6-ին նամակ էր գրել Զորավարին: Նամակը Գորիս էր բերել սուրհանդակը[5]:

Զորավարին ուղղված հաճոյախոսություններից հետո Սոկրատ բեկը

---

[1] «Նոր հորիզոն», 1918, 4 նոյեմբերի, թիվ 18:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում: Տե՛ս նաև՝ **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 128, **Ե. Իշխանեան**, Դէպքերը Ղարաբաղում, ճշդումներ եւ դիտողութիւններ, «Հայրենիք», 1933, հոկտեմբեր, թիվ 12 (132), էջ 111, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 37:

[4] Տե՛ս **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 128, **Ե. Իշխանեան**, Դէպքերը Ղարաբաղում, ճշդումներ եւ դիտողութիւններ, «Հայրենիք», 1933, հոկտեմբեր, թիվ 12 (132), էջ 111, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 37:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թթ. 9, 10, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, էջ 128-129, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 38, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 444:

խնդրել էր զորքի առաջացումը դեպի Շուշի 10 օրով հետաձգել:

«... Իմ խնդիրքն այն է,– գրում էր Սոկրատ բեկը,– քանի որ տեղվույս ժողովուրդն ապրում է Ձեր անվամբ, կազմակերպվել է Ձեր անվամբ, եթե ես մի քայլ արեցի տաճիկների հարյուրավոր զորքերի դեմ և ունեցա հաջողություն, նույնպես այն հույսն էր, որ ինձ ասում էր. մի՛ վախեցիր, քեզ ունես փրկիչ, որը նստած է Գորիսում և սպասում է միայն հարմար մոմենտի՝ օգնության գալու: Ի վերջո, ես եկել եմ այն համոզմունքին, որ քանի որ թուրքերը բանակցության մեջ են մտնում, քանի որ տաճկաց զորքերը քաշվել են (և) Աղդամում կենտրոնացրել իրենց ուժերը, քանի որ երկաթե դիսցիպլինայի տակ են իմ զորքերը և ամբողջ Դիզակի և Խաչենի շրջանը, ինչու անել մի այնպիսի քայլ, որը կարող է կոտորածի պատճառ դառնալ: Բայց լավ իմացած եղեք, որ թուրքերի Աղդամ հավաքվելը ինձ թվում է, նրա համար է, որ Դուք գաք դեպի քաղաք, նրանք հարձակվեն գյուղերի վրա, գրավեն մեր ուշադրությունը և մի գուցե կարողանան, այդպիսով, թերի թողնել մեր ծրագիրը: Քանի որ կարելի է Ձեր անվան տակ, առանց արյունի, մտնել և գրավել քաղաքը այնպիսի մոմենտում, որ թուրքերը չկարողանան կոտորած սարքել հայերի մասում, ուստի ես Ձեզ խնդրում եմ միայն սպասել 10 օր Գորիսում: Այս 10 օրվա ընթացքում ես բոլոր միջոցները ձեռք կառնեմ քաղաքականության (այսինքն՝ խաղաղ ճանապարհով: – *Ա. Ս.)* մտնել և գրավել քաղաքը...»[1]:

Մտահոգված արցախահայությանը կոտորածից զերծ պահելու խնդրով՝ Սոկրատ բեկը շարունակում էր. «... Նորից եմ ասում, որ Ձեր Գորիսում մնալը միայն կարող է հաջողացնել իմ ծրագիրը և շտապեցնել, իսկ եթե Դուք հեռանաք Գորիսից մինչև ծրագրիս կատարելը, ես պետք է ոչ թե գրավեմ քաղաքը, այլ պետք է պատրաստ լինեմ կռվելու տասնյակ անգամ ավել ուժերի դեմ, այն ուժերի դեմ, որոնց ցանկությունն էր Ղարաբաղը մոխրակույտ դարձնել, որով միայն կստիպեին Ձեզ երես դարձնել Ղարաբաղից: Ուրեմն, եթե մինչև 10 օր ինձ հաջողվի գրավել քաղաքը, ես նույնպես դիմում եմ Ձեզ անպատճառ գալ Ղարաբաղ, նստել մեր քաղաքում, կարգի բերել քաղաքը և շրջանը, հետո որտեղ կցանկանաք գնալ: Եթե չհաջողվի վերցնելը, նույնպես ձեռք եմ առնում միջոցներ Ձեր հրամանները կատարելու Ասկերանի և Ղարաղշլաղի առթիվ, որ Դուք հեշտությամբ մտնեք քաղաքը: Ուստի հավատացած եմ, որ թեև ծանր կլինի Ձեզ համար, բայց և այնպես ինձ չեք թողնիլ Ղարաբաղի հետ միասին երեսի վրա և կաշխատեք ամեն կերպ օգնել ինձ, որ Ղարաբաղի նամուսը ոտքի տակ չդնեք, այլ թողնենք արժանի յուր պատմությանը»[2]:

Սոկրատ բեկի հետ նամակի տակ իրենց ստորագրություններն էին դրել Շուշիի ներկայացուցիչը (ստորագրությունն անընթեռնելի է) և Խաչենի ներկայացուցիչ Աղասին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 9, 10:

[2] Նույն տեղում:

Նամակը Զորավարին ուղարկելուց հետո Սոկրատ բեկ Շահնազարյանը, առանց նրան տեղյակ պահելու, Չանախչիից մեկնեց Քարինտակ գյուղ և ինքնագլուխ բանակցությունների մեջ մտավ Ադրբեջանի թուրքերի հետ:

Անդրանիկը խիստ անհանգստացած էր Վարանդայի հրամանատարի վեհերոտ պահվածքից: Նա, դեռևս Սոկրատ բեկի նամակը չստացած, գրել էր նրան. «Սոկրա՛տ բեկ … չլինի խաբվեք Ձեզ հղած առաջարկություններուն և Ձեր ունեցածները հանձնեք ու ամբողջ երկիր մը դժբախտացնեք ... Ձեր երկիրը իր պատմութիւնովը բարձր է եղած ... չպետք է արատավորել և մրոտել այդ պատմութիւնը...»[1]:

Դժվար է այսքան տարվա հեռավորությունից բացահայտել Սոկրատ բեկի նամակի դրդապատճառները, քանի որ մեր ձեռքի տակ չկան անհրաժեշտ արխիվային նյութեր: Բայց ժամանակակիցները նրա կատարած քայլը որակել են բացահայտ դավաճանություն: Այս կապակցությամբ Դիզակի հրամանատար Արտեմ Լալայանը գրել է. «Վարանդայի ղեկավարությունը Սոկրատ Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ դավաճան դուրս եկավ այնպես, ինչպես իր ապուպապ Մելիք-Շահնազարը»[2]:

Հարկ է նշել, որ Սոկրատ բեկը միակը չէր, որ դեմ էր դեպի Շուշի Անդրանիկի արշավանքին: Այդ ձեռնարկի դեմ հանդես էին գալիս Երևանի կառավարությունը, Զանգեզուրի ազգային խորհրդի անդամների մի մասը: Բայց Ազգային խորհրդում մեծամասնությունը կողմնակից էր սկսված գործը որքան հնարավոր է արագ իրականացնելուն: Արշավանքին դեմ արտահայտվող Ազգային խորհրդի անդամներին քննադատում էր Արշակ Շիրինյանը: Նա ասում էր, որ Արցախի համար ճակատագրական այդ պահին, երբ անգլիացիները բացահայտորեն կանգնել են Ադրբեջանի կողքին, անթույլատրելի է չեզոքություն պահպանելը, որ դավաճանության համազոր էր հերոսական արցախահայությանը պաշտպան չկանգնելը: Ինչպես միշտ, այդ հարցում նույնպես Ա. Շիրինյանը և Ազգային խորհրդի անդամ Նիկոլայ Հովսեփյանը համախոհներ էին: Հենց նրանք երկուսով էին ուղղություն տալիս խորհրդի գործունեությանը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 17, «Հայրենիքի ձայն», 1990, 11 մարտի, թիվ 11:

[2] Նույն տեղում:

ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ ԱՐՑԱԽԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՑՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄՈՒԺԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (1918 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ)

1918 թ. նոյեմբերի 18-ին Անդրանիկը նամակ հղեց Ադրբեջանի կառավարության նախագահ Խան-Խոյսկուն՝ դեպի Շուշի գնալու պատճառների մասին:

«Ինչ վերաբերում է իմ Զանգեզուրից Շուշի առաջխաղացմանը, ես մի քանի պատճառներ ունեմ,– գրում էր Զորավարը: – Գրեթե տարի է, երբ թաթարները կտրել են ամեն մի հաղորդակցություն Զանգեզուրի և Ղարաբաղի միջև: Զաբուղի և Հաքյարի գետերի ձորերում թափված են մի քանի հարյուր հայերի դիակներ՝ զինվորներ, որոնք վերադառնալով ռազմաճակատից՝ Զանգեզուրից Ղարաբաղ, հուլիսին և օգոստոսին գազանաբար ոչնչացվել են, ինչպես նաև Թուրքիայից եկած հազարավոր գաղթական հայեր, որոնք ցանկացել են բնակություն հաստատել Ղարաբաղում»[1]:

Այնուհետև Զորավարն արդարացիորեն փաստում էր, որ մահմեդականներն իրականացրել են հայկական Կալադարասի մեծ գյուղի լրիվ ոչնչացումը, շարունակաբար կատարում են ասպատակություններ, կողոպուտ և սպանություններ Զանգեզուրում, այդտեղ կուտակված արցախցի հայերին հնարավորություն չեն տալիս վերադառնալու իրենց հայրենի օջախները և, վերջապես, չեն դադարում Արցախում բնակվող մահմեդականների գազանաբարո գործողությունները հայերի նկատմամբ: Այս ամենը, շեշտում էր Զորավարը, ստիպում են միացնել երկու հայկական երկրամասերը:

Անդրանիկի զորքի 10-օրյա ուշացումը դեպի Շուշի իսկական տագնապ էր առաջացրել ողջ Արցախում, ուստի շարունակվում էին արցախահայերի թախանձագին խնդրանքները, որպեսզի նա շտապեր իրականացնել փրկարար արշավանքը և երկրամասը պաշտպաներ Ադրբեջանի ոտնձգություններից: Նրանք ևս խորապես համոզված էին, որ եթե Անդրանիկի զորամասը մուտք գործեր Շուշի, ապա դրանով իսկ փաստի առաջ կկանգնեցներ Բաքվի կառավարությանը և Ադրբեջանում անգլիական զորքերի հրամանատարությանը, հնարավորություն կստեղծեր Զանգեզուրը և Արցախը միավորելու Հայաստանի Հանրապետությանը:

Զանգեզուրի հայությունը փափագում էր, որ Անդրանիկի նոսրացած

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 52, թ. 1:

զորամասի հետ տեղական զինուժը նույնպես ժամ առաջ օգնության գնար արցախցի իր եղբայրներին ու քույրերին: Գավառի Ազգային խորհուրդը՝ բացարձակ մեծամասնությամբ, ընդառաջ գնալով զանգեզուրցիների ցանկությանը, դիմեց Անդրանիկին՝ գլխավորելու իր զորամասի և տեղական զինված ուժերի համատեղ արշավանքը դեպի Արցախ[1]:

Շուշիի արշավանքին Գորիսում դեմ էին Ազգային խորհրդի որոշ գործիչներ, միայն թե ուրիշ պատճառաբանությամբ:

Երևան մեկնած և այնտեղից հենց նոր վերադարձած Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ Գեղեոն Տեր-Մինասյանը, արտահայտելով Երևանի կառավարության և Զանգեզուրի ազգային խորհրդի մեկ-երկու անդամների տրամադրությունը, Գորիս քաղաքից նամակ ուղարկեց Տեղ գյուղ հասած Անդրանիկին: Նա գրում էր.

«Սիրելի՛ փաշա.

Շտապեցի Երևանից ուրախալի լուրերով վերադառնալ և Ձեզ ուրախություն պատճառել, բայց, դժբախտաբար, Դուք արդեն մեկնել էիք Տեղ: Ցավում եմ, որ տկար լինելու պատճառով այժմ իսկ չեմ կարող Ձեզ հետ գալ, սակայն հույս ունեմ շուտով առողջանալ ու Ձեզ այցի գալ Շուշի:

Ուղարկում եմ ջերմագին բարևներս Ձեզ, Ձեր շքախմբին և քաջարի զինվորներին:

Բայց ինչո՞ւ եք գնում, փաշա՛, թուրքերը հեռանում են. չլինի՞ թե Ձեր ներկայությունը խուճապ առաջ բերե և կոտորածի առիթ լինի, որ գոնե այժմ ցանկալի չէ: Երևանում խոսվում էր, որ հայ զորամասերը պետք է առաջնորդեն գաղթականներին դեպի Նախիջևան, Շարուր, Սարդարապատ և այլն: Անշուշտ այս խնդրում Դուք ևս խոշոր պատմական դեր պիտի կատարեք, բայց թողնում և Շուշի եք մեկնում»[2]:

Ապա Գ. Տեր-Մինասյանը Զորավարին լրացուցիչ տեղեկություն էր հաղորդում, թե Երևանում ինչ կարծիքներ կան իր անձի ու գործի մասին: «Երևանում շատ թշնամիներ ունեք,– գրում էր նա,– բայց ունեք և շատ հարգողներ: Նախարարներից շատերը խոստովանում են Ձեր բարոյական մեծությունը և գնահատում են Ձեր խաղացած դերը Զանգեզուրի փրկության գործում»[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թթ. 33-38, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, մայիս, թիվ 7, էջ 162, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 53, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 19, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 81:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 18:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 19: Քանի որ նամակի վերջին հատվածը նույնպես կարող է որոշ հետաքրքրություն ներկայացնել, ուստի այն մեջբերում ենք ամբողջովին. «Ներեցե՛ք, կարճ եմ գրում: Ձեզ համար ուղարկում եմ մեկ շիշ կոնյակ, 10 տուփ ծխախոտ "Египетская", երեք զույգ գուլպա, որ բազարչայցիք են ուղարկել, մեկ հեռագիր, «Ժողովուրդ» թերթի 31, 32, 33 համարները, «Զանգ» թերթի 67, 68, 69, 70, 71 համարները: Թիֆլիսի թերթերը չկային (բայց

Անդրանիկի գործունեությունը Զանգեզուրում բարձր էին գնահատում գերազանցապես Երևանի և ընդհանրապես հանրապետության ոչ դաշնակցական շրջանակներում, նաև դաշնակցական անկողմնակալ գործիչների միջավայրում: Այսպես՝ նոյեմբերի 16 թվով Երևանից Գորիս Անդրանիկին հղած իր նամակում դաշնակցական գործիչ Գարեգին Ենգիբարյանը շեշտում էր, թե «արդեն բոլորը զգում են Ձեր կատարած ներդրումը Սիսիանում և Ղարաբաղում»[1]:

Զորավարը շատ հակառակորդներ ուներ հատկապես ՀՅ դաշնակցության Երևանի կենտրոնական կոմիտեում և կառավարության ուժային կառույցներում: Հենց այս շրջանակներում էր միտք հղացել դավաճանության մեղադրանքով նրա նկատմամբ դատ հարուցել[2]:

Այդ օրերին Երևանից Անդրանիկին գրած նամակով Սմբատ Բորոյանը նրան տեղեկացնում էր, որ Զորավարի հակառակորդները հատկապես օգտագործում են Նախիջևանի դեպքերը և «զմեզ դավաճան են անուանում, և այդ բառն ընկած է ամբողջ ժողովրդի և պարագլուխներու բերան»[3]: Նա նշում էր, որ Նախիջևանի ինքնապաշտպանության ղեկավարներից Երվանդ (Երո) Խարազյանը, որ «իբր հանցավոր բանտարկուած է բանտում», Նախիջևանի ողբերգությանը վերաբերող իր մոտ եղած փաստաթղթերը ներկայացրել է կաթողիկոսին, որը զբաղվում է Անդրանիկին և նրա զինակիցներին ամբաստանող կողմի փաստարկները ստուգելով: Սմբատը նաև հայտնում էր, որ «Ղարաքիլիսեի կռվին* ալ մեղադրում են, (բայց) նրանց համար ևս պատասխաններ կան մեզ մոտ... Ես ամեն տեղն ալ խոսել եմ, (որ) մեր ամեն մի քայլի համար ունենք հաստատուն տոքումենտներ փաշայի** քով, որը կմնա ապագա քննութեան»[4]:

Դեպի Շուշի ռազմերթից առաջ, որպես երախտագիտության նշան, «Գորիսի հայ կանանց միությունը» պատրաստել և Հարվածող զորամասին էր նվիրել մի դրոշ՝ շնորհակալություն արտահայտող մակագրությամբ[5]:

հիշատակված «Զանգը» լույս էր տեսնում Թիֆլիսում: – *Ա. Ս.):* «Հորիզոնը» փակված է վրաց կառավարության կողմից: Ձեր նամակները, նոր ծրարում դրած, Գևորգ Խատիսյանի միջոցով ղրկած եմ Թիֆլիս: Սույն գրաբերովս ուղարկում եմ մի նոր գլխարկ Շիրինյանի համար (որը գտնվում էր արշավազորքի մեջ և Անդրանիկի հանձնարարությամբ կատարում էր զորքի «կոմիսարի» պարտականությունները: – *Ա. Ս.):* Թեև տձև է, բայց գլխին ձև կստանա»:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 46, թ. 4:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 36, թ. 102-107, գ. 37, թթ. 44-48, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 442:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 29:

* Նկատի ունի 1918 թ. մայիսին հայերի մղած Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտը օսմանյան զավթիչ զորքերի դեմ:

** Անդրանիկի:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 29:

[5] **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 56, **Ա. Չելեպյան**, նշվ. աշխ., էջ 527, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 445-446:

Նոյեմբերի 27-ին դրոշը ստանալու առթիվ, Զորավար Անդրանիկը պատգամ հղեց Զանգեզուրի հասարակությանը: «Մինչև հիմա,– նշում էր նա,– շատ դրոշներ նվիրուած են [ինձ], որոնք բոլորն ալ նշանակ եղած են արյունի, ավերի, ջարդի և դժբախտութեանց: Կմաղթեմ, որ այս դրոշակը լինի վերջինը և բերէ հաջողություն, խաղաղութիւն»:

Եղիշե Քաջունու վկայությամբ Զորավարը այնուհետև «կոչ կընե բոլոր հայ անհատի, մասնավորապես զանգեզուրցիին, արի լինել, պաշտպանել իր իրավունքը և կռվել ազգի ազատագրութեան ու իր կեանքի, պատվի ու ինչքի պաշտպանութեան համար: Ահա միակ ուղին ամեն մի պարտաճանաչ կռվողներու»[1]:

Վերջապես, 1918 թ. նոյեմբերի 16 (29)-ին Զանգեզուրի զինված ուժերը (գորիսեցիներ, կապանցիներ, սիսիանցիներ, այդ թվում՝ բազարչայցի մոլոկաններ), թվով՝ շուրջ 5000 մարդ, որոնց միացել էին նաև շուրջ 200 արցախցիներ ու զանձակցիներ և Հարվածող զորամասը (սասունցիներ, վասպուրականցիներ, սեբաստացիներ, մշեցիներ, խնուսցիներ, ալաշկերտցիներ և այլք), թվով՝ 1000-ից ավելի մարտիկներ, Գորիս քաղաքից դուրս գալով, Անդրանիկի գլխավորությամբ ուղղություն վերցրին դեպի Շուշի[2]:

Արևմտահայ մարտիկները պատրաստ էին իրենց կյանքը անմնացորդ նվիրաբերել արևելահայոց մի հատվածի՝ իրենց եղբայրների ու քույրերի ազատագրության գործին: Հենց այդպես էր բանաձևել իր խոսքը Գորիսի շրջանի զինված ջոկատների հրամանատար, գնդապետ Բողդան Մելիք-Հուսեյնովը՝ դիմելով իր մարտիկներին. «Մեզ համար նրանց արյունը նույնքան թանկ է, որքան մերը»:

Տեղ գյուղի տարածքում կարճատև դադար առնելուց հետո զորքը իջավ Զաբուղի ձորը*:

Զանգեզուրի և Արցախի արանքում ընկած Զաբուղի ձորի և նրան հարող տարածքների, հատկապես Հաջիսամլուի թուրք-քրդական մուսավաթական զինված խմբերը, որոնք նախապես բռնել էին բոլոր դիրքերը, ցույց տվեցին կատաղի դիմադրություն: Կռիվը շարունակվեց նոյեմբերի 17-ի վաղ առավոտից: Հաղթահարելով թշնամու դիմադրությունը՝ հայ մարտիկները գրավեցին շրջակայքի վրա իշխող Մարքիզ լեռը, Սուս և Զեյվա մեծ գյուղերը, ինչպես նաև Ղզլջան, Սումուքլու, Նովրուզլու, Թաթտարա բնակավայրերը, ապա գրոհով մտան Ավդալար գյուղաքաղաքը:

---

[1] **Ե. Քաջունի**, նշվ. աշխ., էջ 143-144:

[2] Տե՛ս «Ժողովրդի ձայն», Երևան, 1918, 7 նոյեմբերի, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, մայիս, թիվ 7, էջ 162, **Յ. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 57, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 19, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ. էջ 445:

* Անդրանիկի արշավանքը դեպի Շուշի ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Հ. Սիմոնյանի նշված աշխատությունում (տե՛ս էջ 445-461):

Թուրք և քուրդ զինված խմբերը, ավելորդ համարելով հետագա կռիվը, խուճապով փախան Հագարու գետի ձորն ի վար[1]:

Անդրանիկի հեծյալները, սպասելով Զորավարի հետագա հրամանին, մնային Ավդալարում և հարակից տարածքում, իսկ Անդրանիկը՝ Հարվածող զորամասի հիմնական ուժերով, կանգ առավ Հագարու գետի Ավդալարի կամրջի մոտ և հանգիստ տվեց զորքին՝ հաջորդ օրը դեպի Շուշի շարժվելու համար[2]:

Երկու կողմերից եղել էին բավականին զոհեր: Կռվի ժամանակ սպանվել էր նաև Անդրանիկին ուղեկցող արցախցի քաջ սպա Ստեփան Սարգսյանը, որի դին տեղափոխվեց Գորիս և թաղվեց զինվորական պատիվներով[3]:

Երբ հայ զորքն արդեն որոշ դադար էր առել, հանգստացել և պատրաստվում էր շարունակել ռազմերթը, դեպքերը, սակայն, նոր ընթացք ստացան. Զորավարին չվիճակվեց ավարտին հասցնել սկսած գործը:

Ադրբեջանի կառավարության ղեկավար Ֆաթալի Խան-Խոյսկին գեներալ Վ. Թոմսոնին դիմեց հետևյալ գրությամբ. «Զանգեզուրի գավառում հայերը Անդրանիկի գլխավորությամբ անխնա բնաջնջում են մահմեդականներին, … որոնք զուրկ են որևէ պաշտպանությունից: Խնդրում ենք շտապ և արագ միջոցներ ձեռք առնել»: Ապա շարունակում էր. «Անդրանիկը, 5000 զինվորի գլուխ անցած, երրորդ օրն է պաշարում Զաբուղը, որպեսզի անցնի Շուշի… Աղերսում ենք, զոնե այժմ անգլիական և ամերիկյան կառավարությունների ուշադրությունը դարձրե՛ք դժբախտ մահմեդականների վրա»[4]:

Տեսնելով, որ իրադարձությունները սրընթաց զարգանում են հօգուտ հայերի, ընդառաջ գնալով Ադրբեջանի կառավարության տագնապալի կանչերին, իրականում հաշվի առնելով իրենց քաղաքական շահերը՝ անգլիացիները դիմեցին շտապ հակամիջոցների՝ օգնության փութալով Բաքվին:

Նոյեմբերի 18-ին (դեկտեմբերի 1-ին) Ավդալար հասավ մի կապավոր և

---

[1] Տե՛ս **Ա. Միքայելեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, մայիս, թիվ 7, էջ 162, **Ա. Բաբալեան**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, «Հայրենիք», 1923, յուլիս, թիվ 9, էջ 103, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, էջ 128, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 60-61, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 19, **Ա. Չելեպյան**, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Երևան, 1990, էջ 530, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 38, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 449-451, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 85-86, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 233-234:

[2] Տե՛ս **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, էջ 128, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 61-62, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 19, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 451:

[3] Տե՛ս **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, էջ 128, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 59, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 19, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 38, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 86:

[4] «Մշակ», 1918, 12 դեկտեմբերի, թիվ 257:

Անդրանիկին հանձնեց Ադրբեջանում տեղակայված անգլիական 27-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայորի պաշտոնակատար Վիլյամ Մոնտգոմերի Թոմսոնի՝ Բաքվից Շուշի հղած հեռագիրը, որով հայ Զորավարին հրահանգված էր դադարեցնել զորաշարժը: Հեռագրում ասված էր.

«… Ինձ հաղորդում են, որ Դուք մտադրվել եք գրոհել Շուշիի վրա: Թուրքական զորքերին դաշնակիցները հրամայել են թողնել Կովկասը: Ադրբեջանական զորքերին դաշնակիցների կողմից հրամայված է հայերի դեմ ռազմական գործողությունների չդիմել: Որպես դաշնակիցների ներկայացուցիչ հրահանգում եմ չգրոհել թուրքական կամ ադրբեջանական զորքերի վրա: Եթե Դուք չգործեք այս կարգադրության համաձայն, Ձեզ նախազգուշացնում եմ, որ անձամբ պատասխանատու կլինեք Ձեր գործողություններով արյունահեղության տեղիք տալու համար: Այսօր մի սպա եմ ուղարկում Շուշի՝ հանդիպելու Ձեզ հետ»[1]:

Հեռագրի տոնը և սպառնալիքները Անդրանիկին խորհելու առիթ տվեցին: Թեև զորքի արցախցի մարտիկները Զորավարին խնդրեցին հաշվի չառնել Բաքվից ստացված հրահանգը և կիսատ չթողնել սկսած գործը, բայց նա խոհեմ համարեց սպասել անգլիացի զորավարի կողմից ուղարկվելիք սպային:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 19-ին, սպիտակ դրոշակ պարզած, ավտոմոբիլով Ավդալար հասավ Վ. Թոմսոնի անունից ուղարկված «հաշտության պատվիրակությունը»՝ բաղկացած երկու սպաներից՝ անգլիացի Ջ. Ֆ. Սքուայրից և ֆրանսիացի կապիտան Նիկոլաս Գասֆիլդից: Ներկայանալով Ավդալարի գետամերձ այգիներից մեկում հանգրվանած հայ Զորավարին՝ բանագնացներն Այսրկովկասում դաշնակից զորքերի հրամանատար, իր զորակայանը Բաքվում հաստատած անգլիացի զորավար Վ. Թոմսոնի անունից նրան հանձնեցին նախորդ օրը Շուշիում ստացված հեռագրի բովանդակությամբ նամակը:

Նամակում շեշտվում էր, որ արշավանքը չդադարեցնելու դեպքում հազիվ թե Փարիզի խաղաղության վեհաժողովը որոշում ընդունի հօգուտ հայերի, այդ թվում՝ Արցախի և Զանգեզուրի պատկանելության հարցերը քննարկելիս[2]:

Անդրանիկը տեղի տվեց, քանի որ նրա մոտ նոր պատրանք էր ստեղծվել: Նա մտածում էր, որ դաշնակիցները Արևմտյան Հայաստանը երբեք չեն

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 52, թ. 2:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 50, թ. 13, գ. 52, թ. 1, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, էջ 129-130, **Յ. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 62-63, **Ե. Իշխանեան**, Դէպքերը Ղարաբաղում, ճշդումներ եւ դիտողութիւններ, «Հայրենիք», 1933, հոկտեմբեր, թիվ 12 (132), էջ 116, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 607-608, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 39, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 459, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 298, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 89, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 235:

թողնի Թուրքիային, որ պատերազմում երկու միլիոն զոհ տված հայերը բարոյական բոլոր իրավունքները պիտի ունենան իրենց հատուցումը պահանջելու: Նա մտածում էր, որ եթե ինքը շարունակի արշավանքը և մտնի Շուշի, ապա դա «դաշնակիցների» և հայերի փոխհարաբերությունների վատթարացման առիթ կդառնա և կունենա բացասական հետևանքներ: Անդրանիկը ենթադրում էր, որ Նուրի փաշան, որը մի զորամասով դեռ մնացել էր Ադրբեջանում, իբրև պատասխան քայլ՝ կներխուժեր Գանձակի հայ գյուղերը և հրի ու սրի կմատներ բնակիչներին[1]:

Նույն օրը՝ նոյեմբերի 19-ին, Անդրանիկը Վարանդայի, Դիզակի, Խաչենի և Զևանշիրի զորքերի հրամանատարներին, բոլոր կոմիսարներին և հայ ազգաբնակչությանը հրաման (թիվ 640) արձակեց անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները թուրքերի և Ադրբեջանի զորքերի դեմ[2]:

Ինչ խոսք, Զորավարը սխալ գործեց՝ ավելորդ հավատ տածելով անգլիացիների արդարամտության և խոստումների նկատմամբ: Շատ չանցած՝ նա հայտարարելու էր. «Այս բոլորն էն սրիկա Սոկրատ բեկի պատճառով եղավ, թե չէ ես վաղուց Շուշի կլինեի»[3]:

Անդրադառնալով այդ ճակատագրական սխալին՝ Արցախի հայոց ազգային խորհուրդն իր նախագահի ստորագրությամբ Անդրանիկին հղած նամակներից մեկում գրել է.

«Ձերդ Գերազանցություն, այն օրվանից, երբ Ձեր քաջարի զորքերը եկան բանակ դրին Զանգեզուրի սահմաններում, Ղարաբաղի հայությունը մինչև վերջին ժամանակներս, թեև շրջապատված թշնամիների կուռ շղթայով, իր հույսը չէր կտրում և միշտ սպասում էր բազմաչարչար հայ ժողովրդի ալեզարդ հերոսապետի գալստյան: Նույնիսկ երբ թուրքերը տիրել էին Ղարաբաղի կենտրոնին՝ Շուշի քաղաքին, ժողովուրդը իր սրտի խորքում չհաշտվելով կատարված փաստի հետ, իր հայացքը ուղղել էր դեպի արևմուտք և այնտեղից էր սպասում իր փրկությունը: ***Անգլիական առաջին միսիան*** կարծեք եկավ խորտակելու ժողովրդի հույսը:

Գեներալ Թոմսոնի հեռագրի համաձայն Դուք ակամայից կանգ առաք Հաքարուի ափերին, առաջ չանցաք, և որից հետո Ղարաբաղը մնաց բախտի քմահաճույքին ենթակա»[4]:

Զորավար Վ. Թոմսոնի ուղարկած սպաները Զաբուղից վերադարձան Շուշի: Նրանց հետ Շուշի անցան Արշակ Շիրինյանը և Նիկոլայ Հովսեփյանը, որոնք այնտեղից մեկնեցին Բաքու՝ կարևոր հանդիպումներ ունենալու և

---

[1] Տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., էջ 426:

[2] Տե՛ս "Вперед", 24 января, 1919, «Մշակ», 1919, 28 հունվարի, թիվ 20, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 461, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 90:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 18, «Ազատամարտ», 1993, 21-27 մայիսի:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 17:

պարզելու Զանգեզուրի հետ կապված մի շարք անհետաձգելի խնդիրներ[1]:

Նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 4-ին) հայ զորքը, թողնելով Զաբուղի ձորը, վերադարձավ Գորիս[*]:

Գորիսում Անդրանիկին ընդունեցին խանդավառությամբ, քանի որ, այնուամենայնիվ, Զորավարն իր բանակով ջարդել էր Զաբուղ և Հազարու ձորերի թուրք-քրդական ուժերին[2]:

Գորիսից Անդրանիկը, հետևելով անգլիացի զորավարի տված սպառնալից հրահանգին, Զանգեզուրի բոլոր զինվորական ստորաբաժանումներին հրաման արձակեց: Կապանի ազգային խորհրդին Գորիսից ուղարկած նամակում Անդրանիկը գրում էր. «… Հրամայում եմ իսկույն ևեթ դադարեցնել թշնամական գործողություն թուրքերու դեմ և կավելացնեմ, որ հակառակ իմ նախազգուշացումիս, եթե երբեք շարունակվի թշնամական գործողությունը, ես ինձ վրայից վերցնում եմ որևէ պատասխանատվություն և կը հայտնեմ, որ այդ արյունահեղության համար անձամբ պատասխանատու պիտի նկատվին ամեն անոնք, որոնք կը ղեկավարեն այդ գործը:

Հայտնելով այս մասին՝ պարտք եմ դնում ձեր վրա ներկա գրությանս իսկականը ուղարկել Ղափանի և Մեղրիի շրջանի բոլոր ազգային խորհուրդներու և գործի ղեկավարներուն, որմէ վերջ նամակս՝ անոնց կողմէ ստորագրված կը պահեք ձեզ հետ:

Նույն իմաստով գրած եմ նաև Ղարաբաղի զանազան շրջաններու ղեկավարներուն և վստահ եմ, որ անոնք ևս կը կատարեն իմ հրամանը»[3]:

Շաբաթներ անց, ըմբռնելով բրիտանական հրամանատարության դիրքորոշումը և տեսնելով մահմեդական նկրտումների աշխուժացումը, Զորա-

---

[1] Տե՛ս **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, էջ 129-130, **Ե. Իշխանեան**, Դէպքերը Ղարաբաղում, ճշդումներ եւ դիտողութիւններ, «Հայրենիք», 1933, հոկտեմբեր, թիվ 12 (132), էջ 117, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «ՎԷմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 63, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 461:

[*] Ադրբեջանցի պատմաբան Ֆ. Շուշինսկին իր «Շուշա» գրքում, անդրադառնալով դեպի Շուշի Անդրանիկի ռազմերթին, չի հիշատակում անգլիացիների միջամտության փաստը, և ընթերցողը շարադրանքից այն տպավորությունն է ստանում, թե Անդրանիկի զորքը Շուշի գնալու ճանապարհին չի կարողացել հաղթահարել թուրքերի դիմադրությունը: Միաժամանակ, թունավոր ատելությամբ լցված դեպի հայ ժողովրդի ազգային հերոսը, նա գրել է. «Այդ ժամանակ մոլի դաշնակ գեներալ Անդրոնիկը, իր ավազակային բանակով, թալանելով Զանգեզուրի գավառի ադրբեջանական գյուղերը, ներխուժել էր Ղարաբաղի տարածք: Այդ կատաղի նացիոնալիստը փորձում էր զավթել Շուշին: Օգտվելով Զանգեզուրի և Շուշիի դաշնակների աջակցությունից, Անդրոնիկը զավթում է Ղարաբաղի Ջրաբերդի, Վարանդայի ու Դիզակի շրջանները և հայտնվում Շուշիից 35 կիլոմետր հեռավորության վրա: Բայց Շուշին գրավել նրան չի հաջողվում, և նա իր բանակով քաշվում է Զանգեզուր: Ադրբեջանից Ղարաբաղը անջատելու անհաջող փորձեր կատարվել են նաև հետագայում» (**Ф. Шушинский**, նշվ. աշխ., էջ 83):

[2] Տե՛ս **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «ՎԷմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 63, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 461, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 237:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 50, թթ. 9-10:

վարը Բաքվի դաշնակցային զորքերի գլխավոր հրամանատարին նամակ հղեց՝ արտահայտելով իր դժգոհությունը.

«Անցյալ տարվա նոյեմբերի 18-ին դեպի Շուշի իմ տեղաշարժը կանգնեցվեց գեներալ Թոմսոնի առաջարկով: Ինձ հաղորդվեց դաշնակից երկրների մեծ պատերազմի դադարեցման և հաղթանակի մասին, որի համազինակիցն եմ համարում ինձ և հպարտ եմ դրա համար: Խոստացվեց, որ միջոցներ են ձեռք առնված մահմեդականների (կողմից հայերի) ճնշումների դեմ, և ես, լսելով դա, վերադարձա Զանգեզուր, տալով երդում՝ ներդնել բոլոր ձգտումները և միջոցները խաղաղությունը վերականգնելու համար իմ հրամանատարության ենթակա տարածքներում:

Ցավոք, ինձ հայտնի է դարձել մահմեդական զորքերի տեղաշարժի և կենտրոնացման մասին և նրանց տեղաշարժը դեպի Ղարաբաղ և Զանգեզուր»[1]:

Զորավարն այդ ամենը համարում էր հայկական Զանգեզուրին, Արցախին և անձամբ իրեն մահմեդականների նետած մարտահրավեր, խնդրում էր, բնակչության շահերից ելնելով, միջոցներ ձեռք առնել իրավիճակը կարգավորելու համար: Զորավարը իր հոգու պարտքն էր համարում հայտնել, որ «Ղարաբաղի և լայնածավալ Զանգեզուրի (նկատի ունի Բուն Զանգեզուրի: – *Ա. Ս.)* գավառի, ինչպես նաև Ղափանի, Սիսիանի և Մեղրիի մահալների հայությունը՝ ավելի քան 300 հազար հայ, ոչ մի դեպքում չի ընդունի… Ադրբեջանի (իշխանությունը)…»[2]:

Թույլ տված սխալը՝ Շուշի չմտնելը, ծանր հետևանքներ ունեցավ: Ադրբեջանի կառավարությունը առավելագույնս օգտագործեց իր օգտին ստեղծված հոգեբանական մթնոլորտը, դիմեց լայնածավալ սադրանքների և անգլիական հրամանատարությանը ներկայացրեց նորանոր չհիմնավորված կեղծ մեղադրանքներ՝ ուղղված հայ Զորավարին:

Նոյեմբերի 27-ին Ադրբեջանի կառավարության պաշտոնաթերթ «Ադրբեջանը» «Անդրանիկի գործողությունները» վերնագրի տակ տպագրել էր նախկին Զանգեզուրի գավառի ադրբեջանական մասից ստացված հեռագիրը, որի հեղինակ ոմն Հաջիևը գրում էր, թե Անդրանիկը, իր զորամասի գլուխն անցած, Մեղրիի շրջանի հայերի հետ ջախջախել է 10-ից ավելի թուրքական գյուղեր՝ Լեհվազը, Կիլիտը, Վարդանազուրը և այլն, ու պատրաստվում է շրջապատել ու ոչնչացնել Ալիդարան, Նյուվադին, Էրնաձուրը և շրջանի մյուս բոլոր թուրքական գյուղերը: Այնուհետև Հաջիևը ստապատիր հորինվածքով գրում էր. «Թուրք բնակչությունը խուճապի մեջ է և փորձում է փախչել Պարսկաստան: Շատ կանայք ու երեխաներ խեղդվել են Արաքս գետում: Զարդերից փրկված բնակիչները թափառում են բաց երկնքի տակ, Արաքսի ափերին: Առաջիկա-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 39, թ. 7:

[2] Նույն տեղում, թ. 7:

յում նման վիճակ է սպասվում Զանգեզուրի գավառի և Օրդուբադի անպաշտպան մուսուլմաններին: Անդրանիկի ջոկատը որոշել է վերջնականապես բնաջնջել անպաշտպան բոլոր մուսուլմաններին: Ներկայումս, երբ ողջ Եվրոպան և ամբողջ աշխարհը, ցած դնելով զենքը, բացականչում են խաղաղության մասին, այդ նույն ժամանակ Անդրանիկի ջոկատը սրի ու կրակի է մատնում մուսուլմաններին, հաշվի չառնելով Կովկասում դաշնակից տերությունների ներկայությունը: Թախանձագին խնդրում ենք ձեռնարկել արտակարգ ու շտապ միջոցներ՝ խաղաղ մուսուլմաններին պաշտպանելու համար, նաև դաշնակից տերությունների ներկայացուցիչներին խնդրում ենք անհապաղ այստեղ գործուղել ադրբեջանական և վրացական կառավարությունների կողմից կազմած հանձնախումբ, որը տեղում կուսումնասիրի և կհամոզվի, թե ինչպիսի գազանություններ է կատարում Անդրանիկը: Օրդուբադը և Զանգեզուրի գավառի հարևան շրջանները մեկ տարուց ավելի է, ինչ կտրված են արտաքին աշխարհից: Բնակչությունը, փոստի ու հեռագրի բացակայության պատճառով հնարավորություն չունի բարձր իշխանություններին հայտնելու իր վշտի մասին, ուստի խնդրում ենք ուշադրություն դարձնել այդ հանգամանքին»[1]:

Զանգեզուրում տեղեկատվական միջոցների բացակայության պատճառով այդ սադրանքներին հնարավոր չէր հակահարված տալ: Թեև գավառի դեպքերին լավ ծանոթ և այնտեղից մեկնած գործիչները Թիֆլիսի և Բաքվի ռուսալեզու մամուլի էջերում հասարակայնությանը պատմում էին ճշմարտությունը, բայց դրա հետ հաշվի չէին նստում ո՛չ Բաքվի իշխանությունները, ո՛չ անգլիական օկուպանտները:

«Ադրբեջան» թերթում տեղ գտած, Զանգեզուրում Անդրանիկի գործունեության հետ կապված փաստերի խեղաթյուրման դեմ ակտիվ հանդես էին գալիս Հարվածող զորամասի շարքերում կռված ռուս սպաներ շտաբս-կապիտան Յ. Ռ. Բորտը և պորուչիկ Ալեքսեյ Գրիգորևիչ Կոլմակովը, որոնք Թուրքիայի պարտության նախօրեին հեռացել էին գավառից: 1918 թ. դեկտեմբերի 2-ին, գալով Բաքու և կարդալով «Ադրբեջան» թերթի մի քանի համարները, նրանք «Զնամյա տրուդա» թերթի դեկտեմբերի 12-ի համարում տպագրեցին մի ծավալուն հոդված, բազմաթիվ փաստերով մերկացրին Ադրբեջանի թուրքերի սադրանքները՝ ստապատիր մեղադրանքները և փաստերի միտումնավոր խեղաթյուրումները, միաժամանակ խիստ քննադատության ենթարկեցին նրանց պաշտպան անգլիական զինվորական իշխանությունների ծայրահեղ կողմնակալ հակահայկական քաղաքականությունը: Հոդվածի վերջում նրանք գրում էին. «Հայտարարում ենք ի գիտություն ամենքի, որ Զանգեզուրի շրջանը կտրված է ամբողջ աշխարհից: Եվ հնարավոր է, որ գեներալ Անդրանիկը մինչև այժմ լուր չունի գերմանացիների ու թուրքերի դեմ դաշնակիցների նվաճած հաղթանակից: Եվ եթե, իրոք, այնտեղ

[1] “Азербайджан”, 10 декабря (27 ноября), 1918, № 56.

մարտեր են տեղի ունենում, ինչպես այսօր Խան-Խոյսկին գեներալ Թոմսոնին է հաղորդում “Бакинское слово” լրագրում (հ. 4, սույն ամսի 5-ին), ապա, հավանաբար, թուրք-մուսավաթիստական ավազակախումբը կփորձի Զանգեզուրի վրայով անցնել Նախիջևան, մի բան, որ հավասարազոր կլինի տակավին անփորձանք մնացած այդ երկրամասի բովանդակ հայ ազգաբնակչության լիակատար քայքայմանն ու ոչնչացմանը: Եվ եթե դա այդպես է, ապա մենք, իբրև գեներալ Անդրանիկի զինակիցներ ու մարտական ընկերներ, հավաստիացնում ենք, որ թուրքական ելուզակները կարող են առաջ անցնել միայն այդ լեռնային արծիվների դիակների վրայով»[1]:

Բաքվի հայոց ազգային խորհուրդը և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Բաքվում դաշնակից օկուպացիոն զորքերի ղեկավարության մոտ Հայաստանի ներկայացուցիչ նշանակված գեներալ Յ. Բագրատունին էլ իրենց հերթին լայն գործունեություն էին ծավալել՝ հատկապես անգլիական հրամանատարությանը և հասարակայնությանը լայնորեն պարզաբանելու ճշմարտությունը[2]:

Այդ ուղղությամբ իր կատարած աշխատանքների մասին գեներալ Յ. Բագրատունին նամակ հղեց Գորիս:

«Վսեմափայլ տեր,

Հարգելի բարեկամ,

գեներալ Անդրանիկ.

Շատ ուշ իմացա այն փայլուն կռիվների մասին, որ Դուք վարել եք վերջին ամիսների ընթացքում, այն հաջողությունների մասին, որոնց է պարտական, մասնավորապես, Զանգեզուրի հայ ժողովուրդը իր ֆիզիկական գոյության (համար): Այժմ, երբ արտաքին պայմաններն այնքան նպաստավոր են, լիահույս եմ, որ ոչ միայն վերացած պետք է համարել մեր բազմաչարչար ժողովրդի գլխին կանգնած վտանգը, այլև ապահոված մեր քաղաքական ապագան:

Այստեղ անգլիացիների հաստատվելուց հետո հայերը, բնականաբար, խնդիր դրին թուրքերի գազանությունների մասին: Դրան ի պատասխան, տեղացին հեռագրեր Զանգեզուրի շրջանից, որոնք լիքն են գանգատներով մեր բանակի դեմ: Մենք համոզված ենք, որ այդ բոլորը զրպարտություններ են, և որ մի կազմակերպված, կարգապահության ենթարկված բանակ թույլ չի տա մի քայլ, որ խախտեր զինադադարի պայմանները: Այդ իմաստով ես խոսել եմ անգլիական հրամանատարության հետ, ավելացնելով, որ թուրքերի նպատակն է աղմուկ հանելով ստիպել, որ հայ զորքերը քաշվեն Ղարաբաղից, ինչը, որ իհարկե, անհնարին է»[3]:

---

[1] “Знамя труда” (Баку), 12 декабря, 1918.

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 14:

[3] Նույն տեղում, գ. 6, թ. 29:

Գեներալ Յ. Բագրատունին անհիմն լավատեսություն էր հանդես բերում՝ մեծ հույսեր կապելով Ադրբեջանում անգլիական վարչության քաղաքականության հետ: Ընդամենը օրեր անց՝ 1919 թ. հունվարի սկզբին, անգլիացիների թույլտվությամբ ու հովանավորությամբ Ադրբեջանի զորքերը լայնածավալ պատերազմ էին սկսելու Զանգեզուրի դեմ:

Սադրանքների դիմելով և Անդրանիկին մեղադրելով ադրբեջանական գյուղերն ավերելու, բնակչությանը կոտորելու մեջ՝ մուսավաթականները, միաժամանակ ոգեշնչված անգլիացիների հովանավորությունից և նրանց անսքող աջակցությունից, արագացրին Արցախի և Զանգեզուրի հպատակեցմանն ուղղված իրենց ագրեսիվ գործողությունները: Սկսվեց հայ-թուրքական կռիվների նոր շրջանը[1]:

Նոյեմբերի կեսերից վտանգավոր կացություն ստեղծվեց Կապանի և Մեղրիի շրջաններում: Մուսավաթական զորքերը և Զանգեզուրին հարող թուրքական տարածքներում մնացած տաճկական զորամասերը համատեղ ուժերով հարձակման անցան գավառի հայկական բնակավայրերի վրա՝ հույս ունենալով ճեղքել հայերի պաշտպանական ամրությունները, ոտքի հանել տեղի ցեղակիցներին և համատեղ ուժերով վերջնականապես տեր դառնալ նշված տարածքներին: Սակայն թշնամին ի սկզբանե հանդիպեց հայերի անխորտակելի դիմադրությանը և արժանի ջարդ կրեց: Հետապնդելով հակառակորդին՝ հայերը մտան թուրքերի բնակավայրերը:

Կապանի ազգային խորհրդի նախագահ Ս. Մելիք-Ստեփանյանը Ղաթարի հանքերից նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին) Անդրանիկին գրած նամակում տեղեկացնում էր. «Չնայած Զանգեզուրի ազգային խորհրդի և զորավարի՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին կարգադրություններին, Ղափանի շրջանի բոլոր ճակատների երկարությամբ կռիվ է բռնկվել թուրքերի հետ»: Տալով այդ կռիվների ամփոփ բնութագրությունը՝ նամակագիրը Զորավարին հաղորդում էր. «Այստեղ դեպքերն ընդունել են լայն ծավալ: Իհարկե, առայժմ հաջողությունը մեր կողմն է, և թրքությունը գլխակորույս փախուստի է դիմում: Հաջողության համար բոլոր հարկավոր կարգադրություններն արվում են, և ձեռք են առնվում բոլոր միջոցները»: Շեշտելով, որ «մինչև այժմ ավերված են թուրքական 30 մեծ ու փոքր գյուղեր՝ Ս. Մելիք-Ստեփանյանը Զորավարին առաջարկում էր փոփոխություն մտցնել իր ռազմական ծրագրի մեջ: «Չէի՞ք գտնիլ ավելի նպատակահարմար,– հարցնում էր նա,– Զաբուղի հովտով պտույտ գործելու դեպի Դամիրչի Դոնդարլու՝ Իզզեթի բազան, որտեղ նրա ձեռքով ամբարված է ահագին քանակությամբ զինամթերք և հացի պաշար, որից հետո էլի ինչպես կուզենայիք: Կ՚խնդրեի տեղեկացնել Ձեր անելիքի մասին»[2]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 39, թ. 7:

[2] Նույն տեղում, գ. 35, թ. 18-19:

Վտանգավոր վիճակ էր ստեղծվել նաև Սիսիանում՝ Նախիջևանի կողմից: Այդ մասին զանգեզուրյան իշխանությունները հետախուզական տվյալներ էին ստացել Երևանից: Հենվելով այդ տվյալների վրա՝ Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Արարատյանը Թիֆլիս՝ Վրաստանում Հայաստանի առաքելության ղեկավար Եվանգուլովին, նոյեմբերի 29-ին հաղորդում էր. «Թաթարական մեկ զորամաս, դուրս գալով Նախիջևանից, մոտեցել է Ջուլին և Սիսիանի շրջանի սահմանին՝ հարձակման նպատակով»[1]:

Սակայն թշնամին այդպես էլ սիրտ չարեց ներխուժել Սիսիան, քանի որ տեղեկացվել էր շրջանի զինված ուժերի հնարավորությունների մասին: Խայտառակ պարտություն կրելով Կապանի ուղղությամբ՝ մուսավաթականներն իրենց վրեժն առան զավթված Նախիջևանի և Ադրբեջանի հայաբնակ բնակավայրերի հայերից՝ դիմելով նորանոր գազանությունների:

Այսպես, «Մի քստմնելի դեպք» վերնագրի տակ «Մշակը» հետևյալ հաղորդումն էր անում. «Լավատեղյակ աղբյուրներից մեզ հաղորդում են, որ Արեշի գավառի Չանախ-Բուլաղ գյուղի ծխատեր քահանա Աստվածատուր Առուշանյանը, որ հունիսի 10-ին թյուրքերի կոտորածից խուսափելով 60 մարդու հետ ապաստանել էր լեռներում, վերջերս շրջապատվել է տեղական թուրքերից և բռնվել: Թուրքերը, հանելով նրա կաշին, մեջը լցրել են ծղոտ և դրել ճանապարհի վրա, ի ցույց մարդկանց, որպեսզի անցնող-դարձող թուրքերը թքեն նրա վրա»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 101:

[2] «Մշակ», 1918 թ., թիւ 264, 24 դեկտեմբերի:

1918 Թ. ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսրկովկասից թուրք փաշաների և զորքերի հեռանալուն զուգընթաց նրանց տեղը գրավում էին դաշնակից պետությունների առաքելությունները և բարձրաստիճան զինվորականները, որոնք աստիճանաբար թափանցում էին երկրամասի խորքերը:

1918 թ. դեկտեմբերի կեսերին Բաքվից Շուշի եկավ դաշնակիցների առաջին առաքելությունը* բրիտանական բանակի մայոր Վիլյամ Դաֆ Գիբոնի գլխավորությամբ[1]:

Երկու օր անց քաղաքի տների պատերին փակցվեց հետևյալ բնութագրական հայտարարությունը.

«Շուշիի գավառի ազգաբնակչությանը.

Քանի որ գոյություն ունի Շուշի քաղաք անգլիական առաքելության գալու մասին սխալ պատկերացում, ես՝ միսիայի ղեկավարս, հայտարարում եմ հետևյալը:

Սույն առաքելությունը ուղարկված է Բաքվում գտնվող դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թոմսոնի կողմից՝ օրենքն ու կարգը Շուշիի շրջանում վերականգնելու համար, մինչև որ այդ շրջանում յուրաքանչյուրը հնարավորություն կունենա գարնանը վերադառնալու իր տունը և իր խաղաղ աշխատանքին: Քաղաքական և սահմանային հարցերը միսիային չեն վերաբերում, քանի որ դրանք կվճռվեն հաշտարար կոնֆերանսում**:

Որպեսզի օրենքն ու կարգը այս գավառում ապահովվի, մահմեդական և քրիստոնյա բոլոր բնակիչներին ես կոչ եմ անում հնազանդվել այն բոլոր հրամաններին, որոնք ես կարձակեմ:

Այն փաստը, որ անգլիական կառավարությունն ունի միլիոնավոր քրիստոնյա և մահմեդական հպատակներ, որոնք ինքնակամ մտնելով նրա զորքերի շարքերը, կողք կողքի կռվում են այդ պետության համար, գրավական է հանդիսանում, որ մենք անաչառ գործելով, կանենք այն, ինչ գտնում ենք օգտակար երկու կողմերի համար:

Անգլիական միսիայի ղեկավար մայոր Գիբոն

25 նոյեմբերի (18.12) 1918 թ. Շուշի»[2]:

---

* Գրականության մեջ այդ առաքելությունը անվանված է նաև «Անգլիական միսիա», «Անգլիական բանակի ներկայացուցչություն»:

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 311:

** Նկատի ունի տերությունների՝ Փարիզում բացվելիք վեհաժողովը:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 204:

Մի քանի օր անց Վ. Գիբոնը կապիտան Ջ. Սքուայրի հետ մեկնեց Գորիս՝ բանակցելու Զանգեզուրի ազգային խորհրդի անդամների հետ[1]: Պատվիրակության կազմում էին նաև Բաքվի մուսավաթական կառավարությունից Աբդուլլա բեկ Հասանբեկովը և Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչ Չիլինգարյանը: Պատվիրակությունը Անդրանիկի հետ համաձայնության եկավ, որ վերջինս Զանգեզուրում իր զորամասով պիտի մնա մինչև 1919 թ. մայիսը:

Շփումներ հաստատելով Անդրանիկի և Զանգեզուրի ազգային խորհրդի հետ՝ Վ. Գիբոնը և պատվիրակության մյուս երկու անդամները մեկնեցին Նախիջևան՝ ծանոթանալու տեղի վիճակին:

Զանգեզուրում հույս էր արթնացել, թե նրանց օգնությամբ շատ շուտով գավառում և Դարալագյազում ապաստանած նախիջևանահայ գաղթականները կվերադառնան իրենց բնակավայրերը: Այդպես էին մտածում նաև Երևանում:

1918 թ. նոյեմբերի 1-ին Կարո Սասունին Անդրանիկին գրում էր, որ անհրաժեշտ է շտապ հետախույզներ ուղարկել Նախիջևան և պարզել, թե ինչպիսին է վիճակն այնտեղ: «Հավանաբար արդեն այնտեղ են եկել անգլիացիները, և դա հեշտացնում է մեր գործը»[2]:

Նույն լավատեսությամբ Սմբատ Բորոյանը Երևանից Զորավարին տեղեկացնում էր. «Գեներալ Սիլիկովի հետ տեսնուած ենք, (նա) առաջարկեց ինձ Լոռիի Ղարաքիլիսա գնալու, իսկ մյուսներին (օրինակ՝ ժողովրդական կուսակցությանը) առաջարկում են հավաքել ուժեր, գալ ձեզ հետ միանալ և սպասել նրանց (տաճիկների: – *Ա. Ս.)* քաշվելուն, խփել նրանց քամակից և իջնել Նախիջևան»[3]:

Իրականում, սակայն, շարունակվում էր Շարուր–Նախիջևանի հայության արյունալի ոդիսականը: Նախիջևանի թուրքերը և այնտեղ մնացած օսմանյան թուրք ուժերը արգելել էին շեն օջախները թողած հազարավոր տնավեր նախիջևանահայերի վերադարձը հայրենի բնօրրան[4]:

Առանց անգլիացիների համաձայնության՝ Անդրանիկը տրամադիր չէր Զանգեզուրից մտնել Նախիջևան և սպասում էր այնտեղից Վ. Գիբոնի՝ Գորիս վերադարձին: Նա հույս ուներ, որ Գորիսում անգլիացի մայորը նախիջևա-

---

[1] Տե՛ս «Արև», 1919, 11 փետրվարի, թիվ 5:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 14:

[3] Նույն տեղում, թ. 30:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, թթ. 64, 89, 90, 91, ֆ. 370, ց. 1, գ. 48, թթ. 9-10, «Զանգ», 1918, թիվ 54, 17 սեպտեմբերի, «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 1919, թիվ 361, 18 դեկտեմբերի, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 623, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 481, **Է. Զոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ. – 1920 թ. ապրիլ), Երևան, 2002, էջ 69, *նույնի՝* Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, էջ 140-148:

նահայերի վերադարձին կտա իր համաձայնությունը, և հարցը կկարգավորվի խաղաղ ճանապարհով[1]: Նման հեռանկարին, սակայն, չէր հավատում հայկական բանակի Դարալագյազի զորամասի հրամանատար, գորիսեցի Յապոնը (Հովհաննես Պարոնյան), որն իր նախաձեռնությամբ և ՀՀ կառավարության հավանությամբ սկսել էր ռազմական գործողություններ՝ նախիջևանահայ գաղթականների համար դեպի հայրենի եզերք ճանապարհ բացելու նպատակով[2]:

1918 թ. դեկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին հղած հեռագրով Յապոնը հաղորդում էր, որ իր զորամասը համառ դիմադրությունից հետո գրավել է Ամաղու գյուղը և պատրաստվում է շարժվել դեպի Շարուր: Նա նաև հայտնում էր, որ «տեղեկությունների համաձայն՝ Անդրանիկը Սիսիանից շարժվում է Նախիջևանի վրա: Անդրանիկի կողմից ուղարկված սպան գտնվում է Սուլթանբեկի շրջանում, որտեղ կազմակերպում է տեղական ուժերը»[3]:

Սակայն, շատ չանցած, Երևան ուղարկած իր մի ուրիշ հեռագրով Յապոնը հաղորդում էր. «Նախիջևանից և Շարուրից եկած թուրքերը գրավել են Ուլիա-Նորաշենի և Յայջիի լեռները, և ես ստիպված եմ ժամանակավորապես կանգնեցնել առաջխաղացումը: Թուրքերը որոշել են համառ դիմադրություն ցույց տալ: Սիսիանից Նախիջևան Անդրանիկի առաջխաղացման լուրը չի ճշտվում»[4]:

Գորիսից Վ. Գիբոնի Նախիջևան մեկնելուց հետո՝ 1918 թ. դեկտեմբերի 23-ին, Անդրանիկն իր զորամասի բոլոր հրամանատարներին ժողովի հրավիրեց, որտեղ որոշում ընդունվեց Սյունիքից հեռանալ ավելի շուտ, քան ենթադրվում էր: Վտանգ կար, որ սովի կարող են մատնվել ոչ միայն գաղթականությունը, այլև զորքը, հետևապես նրանց հեռանալով կթեթևանար տեղի իշխանությունների հոգսը, և ձեռք բերած հացահատիկը ամբողջովին կտրամադրվեր գաղթականներին[5]:

Երևան գնալու համար Անդրանիկին շտապեցնում էին այնտեղ գտնվող նրա զինակիցներն ու բարեկամները:

Դեկտեմբերի 7-ին Երևանից Զորավարին Սմբատ Բորոյանի գրած նամակից երևում էր, որ նա տեղյակ էր իր զենքի ընկերոջ՝ Հայաստանի Հան-

---

[1] Տե՛ս «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 1919, թիվ 361, 18 դեկտեմբերի, **Ց. Ստեփանեան**, «Անդրանիկը Սիւնեաց երկրում», «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 5, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 67, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 481, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 240:

[2] Տե՛ս Եապօնի (Հովհաննէս Պարոնեան) յուշերը, գրի առաւ Ցակ. Տէրունի, «Հայրենիք», 1941, հունիս, թիվ 8 (224), էջ 95-96, **Տիգրան Դէոյեանց**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1945, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիվ 5 (250), էջ 98-99, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 38-39, 69-70, **Հ. Գևորգյան**, Յապոն (Հովհաննես Պարոնյան), Երևան, 2013, էջ 158-159, 164-166, 376-380:

[3] «Զանգ», 1918 թ., 22 դեկտեմբերի:

[4] «Զանգ», 1918 թ., 29 դեկտեմբերի:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 55:

բապետություն անցնելու մասին: Սմբատը Զորավարին զգուշության կոչ էր անում Գորիսից Երևան գնալիս: Նա գրում էր. «Սիսիանի, Դարալագյազի և այլն ճանապարհներում շատ զգույշ պահելու ես քեզ: … Զինուորներուն պետք է հետդ բերես և դրամի մասին որևէ հոգ չը տանես: Հոս 400.000 ռուբլի կա, որ պիտի ստանաս …»[1]:

Մի երկտողում, որը դժվարընթեռնելի է, և հայտնի չէր, թե ում էր ուղղված եղել, Զորավարը գրում էր. «Հավանական է, որ մի ամիս վերջը ես այստեղից մեկնեմ իմ զորամասով: … Հնարավորություն չկա այստեղ զորք պահելու: Ձիերի ֆուրաժի և զինվորներու ուտելիքի համար խոսողներ շատ կան, իսկ գործիչներ՝ շատ քիչ: Մի խոսքով՝ հայերը սոլդատցու չունին, բոլորը գեներալ են»[2]:

Բայց տարվա այդ եղանակին Արարատյան դաշտ մեկնելը ուղղակի անհնար էր: Գորիս–Սիսիան և Դարալագյազ–Վեդի ճանապարհները ծածկված էին ձյան հաստ շերտով, ճանապարհի Գորիս–Սիսիան հատվածում՝ Ուչ-Թափայում, պարբերաբար մոլեգնում էր ձնաբուքը: Մինչև գարնան սկիզբը մեկնելը չափազանց վտանգավոր էր:

Զանգեզուրցիները և հատկապես արցախցիները դեմ էին Անդրանիկի և նրա զորամասի հեռանալուն: Արցախցիները վերջնականապես համոզվել էին, որ եթե նույնիսկ մուսավաթական զավթիչները ձեռք քաշեին Զանգեզուրից, ապա միանգամայն բացառված էր, որ խաղաղությամբ հեռանային երկրամասից: Նրանք առավելապես շահագրգռված էին, որ Անդրանիկը մնար Զանգեզուրում, որովհետև այնտեղ նրա ներկայությունն իսկ իրենց տալիս էր ապահովության երաշխիքներ:

Դիզակի զինվորական շտաբի պետ և ժողովրդական լիազոր Ասլան Շահնազարյանը և Վարանդայի հրամանատարի լիազոր Արսեն Տեր-Միքայելյանը 1918 թ. դեկտեմբերի 12 (25)-ին նամակ գրեցին Գորիս՝ Զորավար Անդրանիկին, որով տեղեկացրին, որ իրենք 11 օր էր, ինչ գտնվում էին Շուշիում՝ անգլիական առաքելության մոտ, որին մանրամասն տեղեկություն էին տվել նշված շրջանների ժողովրդի տնտեսական դրության և զինվորական գործի մասին: Առաքելությունը կոնկրետ պատասխան չէր տվել և առաջարկել էր սպասել մինչև մայոր Վ. Գիբոնի վերադարձը Գորիսից: «Դժբախտաբար,– ասված էր նամակում,– անգլիացոց միսիան իր միտքը բացարձակ չի հայտնում մեզ և մենք տարտամ վիճակում ենք. թեև քանիցս բացատրել ենք, որ Ղարաբաղի զինվորական շրջանները չեն ճանաչել Ադրբեջանի կառավարությանը, բայց նկատելի է, որ Շուշի քաղաքի և Ասկերանի շրջանի վերաբերյալ այս միսիան այլ կարծիքի է, այսինքն՝ համահավասար տալ Ադրբեջանին: Բայց մենք չենք կարողանում հաշտվել այդ մտքի հետ:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 25:
[2] Նույն տեղում, գ. 15, թ. 12:

Ներկայումս քաղաքում ստեղծվել է երկու իշխանությունների տարբեր կարծիք՝ Ադրբեջանի և քաղաքագլխի: Մեր ցանկությունն այն էր, որ այս ձմեռ Դուք անցնեք այս կողմը, քանի որ Խանքենդ և Հադրութ կան ռուսներից մնացած զորանոցներ, ուր կարող կլինենք Ձեր զորքերը տեղավորել: Բացի դրանից Ձեր այս կողմերեն անցնելուց հետո այլևս Ադրբեջանի անուն չի կարող լինել: Եթե հնարավոր է, շատ խնդրում ենք Ձեզ, գեներա՛լ, հայտնել մեզ, թե անգլիացիք ինչ առաջարկություն են արել Ձեզ, ի՞նչ է նոցա միտքը Ղարաբաղի վերաբերյալ, և ինչպիսին կլինեն արդյունքները»[1]:

Այնուհետև նշվում էր. «Ձեր և գեն[երալ] Թոմսոնի հեռագրի համաձայն մենք վաղուց դադարեցրել ենք ընդհարումները թուրքերի հետ: Բայց այս գիշեր սուրհանդակներ հասան մեզ Շուշի և հայտնեցին, թե Ալիանլուի, Մուսուլմանլուի և այդ շրջանի այլ թուրքեր հարձակվելով շրջապատել են Դիզակի շրջանի Խծաբերդ, Հին Թաղեր և Խանձաձոր գյուղերը: Ահա երրորդ օրն է, որ կռիվը շարունակվում է, և [հայերը] օգնություն են խնդրում: Տմարդի թուրքերը իմանալով, որ Դուք այլևս առաջ չպիտի գաք, և թե Դիզակի ու Վարանդայի հրամանատարները իրանց ուժերը քշել են այդ շրջանից, հարմար առիթ գտնելով, կամենում են ավերել այդ գյուղերը»[2]:

Վերջում նամակագիրները շեշտում էին, որ Գորիսից օգնություն չգալու դեպքում նույնիսկ պետք էր գլուխ բերել անգլիացիների ճնշումը թուրքերի վրա, որպեսզի նրանք դադարեցնեին հարձակումները: «Խնդրում ենք այդ մասին հայտնել մայորին ու բացատրել, որ եթե այս ձևով մնաց Ղարաբաղը, և Ադրբեջանը ոտնձգություն անե՝ շարունակելու յուր ավանտյուրան, այն ժամանակ դրությունը խիստ կծանրանա: Այսօր այդ մասին զեկուցում կտանք այստեղի անգլիացոց օֆիցերներին»[3]:

Անդրանիկը պատասխանեց նամակի հեղինակներին*, որին հետևեց Ա. Շահնազարյանի՝ դեկտեմբերի 28-ին Շուշիից Զորավարին հղած նամակը: Նշելով, որ «այս երեկո» նշանակված էր Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Ջևանշիրի հրամանատարների խորհրդակցություն՝ Ա. Շահնազարյանը գրում էր. «Մենք չգիտենք, թե ինչ կարծիքի է գնդ. (մայոր: – *Ա. Ս.)* Գիբոնը մեր շրջանների հրամանատարների մասին, բայց և այնպես մեր որոշումը միանգամայն հաստատ է և վճռական, մինչև այժմ Ղարաբաղի հայը զենքը ձեռքին կռվել է թուրքի և Ադրբեջանի դեմ, այժմ էլ, դաշնակից և բարեկամ անգլիացիներին յուր մոտ տեսնելով, չէ կարող որևէ Ադրբեջանի կառավարություն ճանաչել. մենք կառաջարկենք միայն, որ Ղարաբաղում բարձր իշխանությունը անգլիացիներից լինի: Բացի դրանից՝ ներկայացուցիչներ

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 4:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

* Անդրանիկի այդ նամակի տեքստը չի պահպանվել:

պիտի ուղարկենք Բաքու՝ Ղարաբաղի ապագա վիճակը տնօրինելու համար հուշագիր ներկայացնել եվրոպական դաշնակից պետություններին»[1]:

Ա. Շահնազարյանի նամակը Անդրանիկին էր հասցրել Գորիսի շրջանի Խնձորեսկի գյուղացի, սպա Լևոն Շահնազարյանը, որը Բաքվի կոմունայի խիզախ պաշտպաններից էր: Նա Գանձակի վրայով հայրենի գյուղ վերադառնալիս Ջևանշիր գավառի Առաջաձոր գյուղում ենթարկվել էր հայ ավազակների հարձակմանը: Նրան կողոպտել էին, խլել զենքը: Ուստի նամակագիրը Զորավարին խնդրում էր. «Եթե հնարավորություն ունեք նորան տաք ատրճանակ կամ հրացան և թուր: Այս սպան արժանի է վարձատրության զենքով, քանի որ նա Բաքվում կռված հերոսներից մեկն է»[2]:

Առաջվա պես արցախցիները Զորավարից խնդրում էին զենք ու զինամթերք, քանի որ երկրամասի տարբեր վայրերում թուրքերի զենքերն էին շաչում:

Խծաբերդ գյուղից, որը ենթարկվել էր թուրքերի հարձակման, դեկտեմբերի 29-ին Անդրանիկին գրում էին.

«Հայ ազգի հերոս գ. [ներալ] Անդրանիկին.

Մեր գյուղը երկու անգամ ենթարկվելով հարձակման, համարյա թե վերջացրել է փամփուշտի պաշարը: Զեռք բերելու հնար չկա ոչ մի տեղից: Ուստի շատ խնդրում ենք, եթե հնարավոր է, Շուշի անցկացնել մի 10 կամ 12 արկղ փամփուշտ՝ կեսը մոսինի, կեսն էլ լեբելի, յա ֆրանսիականի: Շատ և շատ խնդրում ենք, եթե հնարավոր է սուրհանդակ Ալեքսան բիձայի միջոցով այդ մասին, նեղությունը արժան համարեք, գրեք մեզ»[3]:

Դեկտեմբերի 29-ին մայոր Վ. Գիբոնը և նրա առաքելության մյուս երկու անդամները Նախիջևանից վերադարձան Գորիս: Անգլիացի մայորը այստեղ մի քանի նոր հանդիպումներ ունեցավ Անդրանիկի հետ, որոնց ընթացքում նա աստիճանաբար փոխեց իր կարծիքը հայ Զորավարի մասին՝ համոզվելով, որ նրա մասին Ադրբեջանի պաշտոնյաների և մուսավաթական մամուլի տարածած զրպարտիչ լուրերը հեռու էին իրականությունից: Նման լուրեր տարածելով՝ նրանք նպատակ ունեին դաշնակիցների աչքում վարկաբեկելու հայ ժողովրդի ազգային հերոսին, հասնելու սրան, որ անգլիական հրամանատարությունը նրա նկատմամբ իրականացներ պատժիչ միջոցներ: Վ. Գիբոնը տեսնում և համոզվում էր, որ Անդրանիկը որևէ թշնամանք չուներ հասարակ թուրք ժողովրդի հանդեպ, որ նրա գործունեությունը Զանգեզուրում հետապնդում էր մեկ գլխավոր նպատակ՝ թուրք զավթիչների ոտնձգություններից պաշտպանել գավառի հայությանը և հայրենի լեռնաշխարհը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 14:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, գ. 16, թ. 10:

Երկու օր հետո մայոր Վ. Գիբոնն իր առաքելության երկու անդամների հետ Գորիսից մեկնեց Շուշի: Նրանց հետ Արցախ մեկնեցին Շուշիի գնդի զինվորները՝ շուրջ 360 հոգի և ցրվում հայրենի բնակավայրերում:

Մայոր Վ. Գիբոնի և նրա առաքելության Գորիսում եղած ժամանակ Գորիս–Շուշի–Եվլախ գծի վրա երթևեկությունն ազատ էր, իսկ Շուշի վերադարձից հետո ճանապարհը փակվում է:

Շուշիից Վ. Գիբոնը ուղևորվեց Բաքու՝ գեներալ-մայորի պաշտոնակատար Վ. Թոմսոնին զեկուցելու իր ուղևորության արդյունքների մասին:

Դեկտեմբերի 30-ին զորավար Վ. Թոմսոնը Բաքվում պաշտոնապես հայտարարեց, որ իր կառավարությունը Արցախի և Զանգեզուրի հարցում աներեր կանգնած է Ադրբեջանի կողքին: Այդ հայտարարությունը, փաստորեն, հայկական երկու լեռնավայրերի վրա ադրբեջանական բանակի նոր հարձակման ազդանշան էր[1]:

Եվ հարձակումը տեղի ունեցավ:

---

[1] Տե՛ս “Азербайджан”, 1 января, 1919, № 1, Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը Հայաստանի կառավարութեան կովկասեան կօնֆերանսի գործունէութեան մասին, 12 յունիս, 1919, «Հայրենիք» եռամսեայ, 1968, Ա տարի, թիվ 2, էջ 31, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 469, 472-473:

ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Համաշխարհային պատերազմի ավարտից և Այսրկովկասի վրա դաշնակից պետությունների վերահսկողության հաստատումից հետո անխուսափելիորեն առաջ եկավ գավառի կյանքը հնարավորինս իրավական դաշտ փոխադրելու անհրաժեշտությունը: Հատկապես կարևորվում էր հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու խնդրի կանոնավորումը առայժմ նախկինում Զանգեզուրում գոյություն ունեցած քաղաքացիական դատական համակարգի հիման վրա:

1918 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին գավառում գործող հիմնական իրավական ակտերը Անդրանիկի զինվորական հրամաններն էին և Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի որոշումները, բայց բացակայում էր օրենսդրական դաշտը:

Ցարիզմի ժամանակ, ինչպես Այսրկովկասի բոլոր գավառներում, այնպես էլ Զանգեզուրում, դատական իշխանությունը իրականացվում էր ռուսների, լեհերի և վրացիների կողմից: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Զանգեզուրում էին մնացել այստեղ պաշտոնավարող ռուս պաշտոնյաներից մի քանիսը, այդ թվում՝ հաշտարար դատավոր Ֆ. Ֆ. Դուբրովինը, որը ճանապարհները փակ լինելու պատճառով գավառից դուրս չէր եկել, մնացել էր Գորիս քաղաքում և տեղացիների հետ կրել բոլոր դժվարությունները: Գալով Զանգեզուր՝ Անդրանիկը հրահանգեց հնարավորությունների սահմաններում հոգ տանել գավառում գտնվող բոլոր նախկին պաշտոնյաների նկատմամբ: Նրա անձնական կարգադրությամբ Հարվածող զորամասի պահուստից 10 փութ ցորեն տրվեց Ֆ. Ֆ. Դուբրովինին, որի շնորհիվ գոյատևեց նրա բազմանդամ ընտանիքը[1]:

Դեռ 1918 թ. սեպտեմբերին Կապանի ազգային խորհրդի որոշումով ստեղծվել էր «Մոտավոր ձեռնարկ դատաստանական կանոնադրության՝ մինչև Հայկական Արարատյան Հանրապետության կառավարությունից կստացվի կարգադրություն այդ առթիվ» փաստաթուղթը, որով առաջնորդվում էին Կապանի և Մեղրիի շրջաններում[2]: Ինչ վերաբերում է Գորիսի և Սիսիանի շրջաններին, ապա այստեղ քրեական գործերը առաջվա պես

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 54, թ. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 252, ց. 2, գ. 21, թ. 1:

պետք է քննվեին Գորիսի դատարանում՝ Ռուսաստանում գործող քրեական օրենսդրության հիման վրա: Բայց, ինչպես ասվեց, այստեղ գործում էին միայն Անդրանիկի զինվորական հրամանները և Զանգեզուրի կենտրոնական խորհրդի որոշումները:

Իրավիճակը թելադրում էր ունենալ գավառային դատարան, բայց առայժմ ոչ թե քաղաքացիական, այլ զինվորական: Այդ նախաձեռնության հեղինակը Անդրանիկն էր, որը դեռևս 1918 թ. հոկտեմբերի վերջին դիմել էր Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին և առաջարկել հատուկ որոշմամբ ստեղծել զինվորական ժամանակավոր դատարան, որը կկարողանար արդյունավետ պայքար ծավալել միաժամանակ և՛ քրեական, և՛ զինվորական բնույթի հանցագործությունների դեմ[1]:

Այդ նպատակով Անդրանիկի միջնորդությամբ Ազգային խորհուրդն ընտրեց հատուկ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ Զանգեզուրի հաշտարար դատավոր՝ Ֆ. Ֆ. Դուբրովին (նախագահ), միջնորդ դատավոր՝ Բաղրամյան, անդամներ՝ Մանուչարյան, Փանիլյան, Բակունց[2]:

Հենվելով ռուսական օրենսդրության վրա՝ հանձնաժողովը նախապատրաստեց և Անդրանիկին ներկայացրեց «Զանգեզուրի հայկական զինվորական դատարանի ենթակա օրենքների և հանցանքների օրինագիծ» դատաստանագիրքը, որը Զորավարի ստորագրումից հետո հոկտեմբերի 23-ին մտնավ ուժի մեջ: Շուտով հրապարակվեց նաև զինվորական ժամանակավոր դատարանի մասին օրենքը[3]:

Զինվորական դատարանի օրենսդրական փաստաթղթի առաջին հոդվածով հիմնավորվում էր, որ տիրող անիշխանությունը վերացնելու, զորքում և քաղաքացիների շրջանում կարգ ու կանոն հաստատելու, ինչպես նաև ժողովրդական իրավագիտակցության վերականգնման նպատակներով գեներալ-մայոր Անդրանիկի նախաձեռնությամբ ձեռնարկված էին անհրաժեշտ միջոցառումներ, որոնք պետք է կենսագործվեին անառարկելիորեն:

Երկրորդ հոդվածով նշվում էր, որ ժամանակավոր զինվորական դատարանի կազմի մեջ մտնում էր Ազգային խորհրդի նախաձեռնությամբ կազմված և գոյություն ունեցող քաղաքացիական դատարանի ամբողջ կազմը, որի նիստերի ժամանակ այդ կազմը լրացվում էր հասարակական խավերի հետևյալ ներկայացուցիչներով՝ մեկ սպայով, Կենտրոնական ազգային խորհրդի մեկ անդամով, քաղաքագլխով կամ գյուղական կոմիսարով:

Փաստաթղթի երրորդ հոդվածով նշվում էր, որ Զինվորական դատարանին առընթեր գործում էր մշտական մեղադրող՝ Ռուսաստանի պետական դատախազներին հատուկ բոլոր գործառություններով, որը պար-

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 527:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 527-528:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 37, թթ. 1-7, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 527-530:

տավոր էր հսկել իշխանությունների գործողությունների օրինականությունը, մանավանդ կատարողական (գործադիր: – *Ա. Ս.*) իշխանության մարմինների գործողությունների համապատասխանությունը օրենքին: Իրենց պարտականությունների մեջ թերանալու կամ զանցառությունների դեպքում իշխանության ներկայացուցիչները ենթարկվելու էին դատական պատասխանատվության:

Վեցերորդ հոդվածով սահմանվում էր, որ դատարանին կից հաստատվում էր քարտուղարի մշտական պաշտոն, որը պարտավոր էր կազմել դատական նիստերի արձանագրությունները և դատական գործերին վերաբերող գրագրությունները:

Զինվորական դատարանի գործունեության վրա մեծ էր Զորավարի ազդեցությունը: Դատաստանագրքում արձանագրված էր. «Զինվորական դատարանի այն վճիռները, որոնք կրում են մահվան պատժի բնույթ, ներկայացնում են ի հաստատության գլխավոր հրամանատարի, ներկա դեպքում գեներալ Անդրանիկի, որին տրվում է նաև պատժի թեթևացման իրավունք, որից հետո ի կատար է ածվում»[1]:

Դատական ատյանը, այնուամենայնիվ, պահպանում էր զինվորական բնույթը, քանզի 10-րդ հոդվածում նշվում էր, որ զինվորական դատարանի անդամները իրենց պաշտոնավարության ժամանակ օգտվում էին զինվորական բարձր աստիճանին հատուկ իրավունքներից և արտոնություններից:

Զորավար Անդրանիկը հոկտեմբերի 29-ին հաստատեց 13 հոդվածից բաղկացած «Դատաստանագիրքը», որն անմիջապես ուժի մեջ մտավ: Շատ չանցած՝ Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի կողմից այն հրատարակվեց հայերեն և ռուսերեն[2]:

Չնայած Անդրանիկի բազմաթիվ նախազգուշացումներին՝ Կապանի և Մեղրիի հայկական իշխանությունները հաճախակի խախտում էին Գորիսի կենտրոնական իշխանության հրահանգները: Կապանի ազգային խորհուրդը թեև անմիջականորեն ենթակա էր Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին, բայց երբեմն, նույնիսկ վճռորոշ հարցեր լուծելիս, դրանք չէր համաձայնեցնում Գորիսի հետ: Դրանով էր բացատրվում այն, որ չնայած Անդրանիկի նախազգուշացումներին՝ կապանցիները երբեմն խախտում էին զինադադարը և հարձակումներ գործում հարևան թուրքական գյուղերի վրա: Նման գործելակերպը շատ դեպքերում առաջ էր բերում տարաձայնություններ երկու ազգային խորհուրդների միջև և հարվածում ընդհանուր գործին՝ միասնական կարգ ու կանոնի հաստատմանը:

Դեկտեմբերի 11-ին Անդրանիկը Կապանի ազգային խորհրդի նախագահ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանին գրում էր.

---

[1] **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 530:

[2] Տե՛ս նույն տեղում:

«Ստացա Ձեր ուղարկած նամակը և տեղեկացա Ձեր տված բացատրություններուն: Այստեղի անցուդարձերու համար անշուշտ լսած կլինեք: Կլսեմ, որ իմ ուղարկած կոչերս զինադադարի մասին չեք հայտարարած և պահելով՝ անոր փոխարեն ուրիշներ հրապարակ եք հանած՝ Ձեր ստորագրությամբ:

Շուտով այդտեղ կուգա Ազգային խորհրդի ներկայացուցիչ պ. Գեդեոնը* կատարելու համար իրեն տրված հանձնարարությունները. հրահանգ տրված է հավաքել Ձեր չորս շրջանի ներկայացուցիչները և Ազգ. խորհրդի նիստ կազմել:

Կ'հուսամ, որ Ղափանը կըմբռնե ըոպեն և այլևս հեռու կմնա անկարգություններէ»[1]:

Համազանգեզուրյան միասնական օրենսդրության հետևողական կիրառումը ձեռք էր բերում սկզբունքային նշանակություն և խիստ անհրաժեշտ էր դառնում լեռնավայրի ներքին կյանքը կանոնավորելու իմաստով, մանավանդ որ Զորավարի այս նամակից հետո էլ կապանցիները չէին դադարեցնում իրենց հակահարձակումները Ադրբեջանի թուրքական գյուղերի վրա, թեև առաջվա պես նախահարձակը մուսավաթական հրոսակախմբերն էին լինում:

Անդրանիկի բռնած դիրքը հետևողական էր՝ առիթ չտալ թուրքերին խաղաղասեր երևալու անգլիացիների աչքին, խնդիրներ չստեղծել հայության համար, որի դատը պետք է որոշվեր Փարիզի խաղաղության վեհաժողովում:

Գորիսի շրջանի Էյվազլար գյուղի թուրքերը հարձակվել էին Խոտ գյուղի այգիներում գտնվող ձմեռանոցի վրա: Հարձակմանը հետևել էր Խոտ և Շինուհայր գյուղերի զինյալների հակահարձակումը, որի հետևանքով սպանվել էին մեկ հայ և չորս թուրք: Նոյեմբերի 23-ին Անդրանիկը ստիպված հանդես եկավ ռուսերեն հետևյալ դիմումով՝ ուղղված գավառի հայ և մահմեդական բնակչությանը.

«Ինչպես ներկայումս հայտնի է դարձել գավառի ազգաբնակչությանը, դեպի Շուշի կատարվող մեր առաջխաղացումը դադարեցվել է Բաքվում գտնվող դաշնակից զորքերի պետ գեներալ Թոմսոնի հրամանով: Հիշյալ հրամանի համար հիմք է ծառայել ադրբեջանական կառավարության նախագահ պ. Խան-Խոյսկու միջնորդությունը ... Ուստի ես կասեցրել եմ առաջխաղացումը դեպի Շուշի և դադարեցրել բոլոր մարտական գործողությունները: Հիշյալ հրամանի հիման վրա պահանջում եմ վերջ տալ միմյանց նկատմամբ բոլոր թշնամական գործողություններին: Նախազգուշացնում եմ, որ ամեն տեսակի ինքնակամ ելույթներ, ում կողմից էլ դրանք նկատվեն, խստիվ կճնշվեն, իսկ մեղավորները կպատժվեն ռազմական ժամանակի օրենքներով»[2]:

---

* Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ Գեդեոն Տեր-Մինասյան:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 24:

[2] Նույն տեղում, գ. 5, թ. 13: Վավերագրի վերջում կա Զորավարի ինքնագիրը՝ «Զանգեզուրի հայ, թե թաթար ժողովրդին հայտարարությունս» թռուցիկով:

1918 թ. դեկտեմբերին բացվեց Գորիս–Շուշի ճանապարհը, որը դրական նշանակության հետ մեկտեղ ունեցավ նաև խիստ անցանկալի հետևանքներ Զանգեզուրի գավառի համար: Բանն այն է, որ Շուշիում, Աղդամում և այլ վայրերում սննդամթերքի մեծ պահանջարկ կար, որի պատճառով Զանգեզուրում եղած գյուղատնտեսական ապրանքների մի իսկական արտահոսք սկսվեց: Դա կարող էր չափազանց ծանր դրության մեջ դնել գավառի աղքատ ու քայքայված բնակչությանը[1]:

Անդրանիկը ստիպված էր լուրջ միջոցներ ձեռնարկել և արգելել գավառից պարենամթերք դուրս տանելը: Դրան էր ուղղված Զորավարի և Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի համատեղ հայտարարությունը[2], որով հիշեցում էր արվում «Դատաստանագրքի հիման վրա կարգազանցներին խստագույն պատիժների ենթարկելու անխուսափելիության մասին»:

Անդրանիկը Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին բազմիցս հորդորել էր չմիջամտել գավառային դատարանի գործերին: Գուցե դա արվում էր այն նպատակով, որ դատարանը վճիռներ կայացնելիս առաջնորդվեր միայն ու միայն ռուսական քրեական օրենսգրքով: Զորավարը, սակայն, գիտակցում էր, որ հայերի համար լեռնավայրի շուրջը ստեղծված աննպաստ իրավիճակը դատարանին դեռ հնարավորություն չէր տալիս ամբողջովին իր վրա վերցնելու արդարադատություն իրականացնելու գործը, որի հետևանքով շարունակվում էր կամայական պատժիչ որոշումների ընդունումը Կապանի ազգային խորհրդի, Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի և անձամբ իր կողմից: Ինչ խոսք, իրավիճակը կարգավորվելու դեպքում աստիճանաբար կնվազեին խախտումները գավառի իրավական դաշտում:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 18, թ. 9, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 531:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 24:

ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԾ ԶԱՆԳՎԱԾԻՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՍՈՎԻՑ ՓՐԿԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՃԻԳԵՐԸ

Անդրանիկի և Զանգեզուրի իշխանությունների համար առաջնային դարձավ գաղթականության խնդիրը[1]: Նրանց կարիքները հոգալու համար Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդն իր կազմում ստեղծեց հատուկ հանձնախումբ, որն առաջին հերթին կազմեց գաղթականներին գյուղախմբերի ու գյուղերի վրա բաժանելու ծրագիր և ձեռնամուխ եղավ դրա շտապ իրականացմանը, որը տևեց մի քանի օր: Այնուհետև հանձնախումբը շրջանային և ենթաշրջանային լիազորների ու գյուղական կոմիսարների հետ զբաղվեց գյուղեր հասած գաղթականներին տեղավորելու հարցերով: Հրահանգ իջեցվեց գյուղական համայնքներին, որով նրանց պարտավորեցվում էր ազատ կամ մասամբ ազատ տնտեսական շինություններն անմիջապես տրամադրել գաղթականներին: Կարճ ժամանակում գաղթականների մեծ մասը տեղավորվեց Գորիսի շրջանի գյուղերի լքված կիսավեր շինություններում ու քարանձավներում, մարագներում ու անասնագոմերում, տների նկուղներում ու բակերում հապճեպ սարքված քոլիկներում, այգիների հնձաններում[2]:

Տնավեր հսկա զանգվածը «տեղավորելուց» հետո հանձնախմբի հրահանգով կատարվեց գավառում ապաստանած բոլոր գաղթականների հաշվառում: Պարզվեց, որ Գորիսի շրջանում օգոստոսին «տեղավորված» շուրջ 30 հազար գաղթականների մեծ մասը դեռ գիշերում էր բաց երկնքի տակ: Նրանք տեղավորվել էին աղբյուրների մոտ, զբաղեցրել քաղաքի և գյուղերի հրապարակները, մերձակա դաշտերն ու պարտեզները: Ստեղծվել էր աննախադեպ հակասանիտարական վիճակ[3]:

Ոչ պակաս դժվար էր զորքին տեղավորելը: Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի համաձայնությամբ առավել հայտնի սպաները, հարյուրապետերը, խմբապետերը բաժանվեցին Գորիս քաղաքի ընտանիքների վրա, որոնք պարտավոր էին հոգալ նրանց կեցությունը և սնունդը[4]: Գորիս

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, թ. 73, «Кавказское слово», 15 марта, 1919:

[2] Տե՛ս **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 14: «Նոր հորիզոն», 1918, թիվ 18, 11 դեկտեմբերի, «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 1920, թիվ 391, 24 հունվարի:

[3] Տե՛ս «Հայկական առանձին հարուածող զօրամասը. Ժենէրալ Անդրանիկ», էջ 85, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 326:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 24, թ. 34:

քաղաքում մնացած զինվորների հիմնական զանգվածը բաց երկնքի տակ էր, իսկ առավել «հաջողակ» մասը գիշերում էր վրանների տակ: Յուրաքանչյուր վրանում տեղավորվում էին 20-30 հոգի: Զորամասի՝ գյուղերում տեղաբաշխված ստորաբաժանումների պետերի կեցությունը իրենց ընտանիքների վրա էին վերցրել գյուղական կոմիսարները, իսկ զինվորները բաժանվել էին գյուղացիական ընտանիքների վրա[1]:

Չնայած նախապես տված խոստումներին՝ զինվորներին շինություններում տեղավորելու հարցը չէր լուծվում: Մի քանի անգամ բանավոր պահանջելով հարցի դրական լուծում, բայց չհասնելով որևէ արդյունքի՝ Անդրանիկը օգոստոսի 13-ին հետևյալ (թիվ 726) գրությունը ուղարկեց Զանգեզուրի ազգային խորհրդին.

«Այսօր 13 օգոստոսի ս/թ ժամը 3-ից մինչև 5-ը պետք է տեղավորեք շինություններում հրապարակում գտնվող բոլոր զինվորներին, եթե չէ, ես ինքս պետք է ռեկվիզիցիա անեմ շենքերը և տեղավորեմ, [իսկ] եթե չկարողանաք տնտեսական մասը վերցնել, հաց հասցնել, այն ժամանակ ես ինքս պիտի կազմակերպեմ:

Անդրանիկ:

Հ. Գ. Դուք ինքներդ խորհրդակցեք և նշանակեք տաքսա. ինչ ծախսվում է հրապարակում: Նույնը»[2]:

Անդրանիկի զորքի նկատմամբ Ազգային խորհրդի կողմից ցուցաբերած անտարբերությունը և անբարյացակամությունը խիստ դժգոհություն էին առաջացրել Գորիսի շրջանի՝ հատկապես Ադրբեջանին հարող սահմանամերձ գյուղերում, որոնք առաջինն էին իրենց վրա ընդունելու թշնամու նոր հարձակումները: Ազգային խորհուրդը քննադատվում էր նաև քաղաքի նշանավոր մի քանի մտավորականների կողմից, որոնք գտնում էին, որ Զորավարի ու նրա զորամասի հեռանալը կարող էր ճակատագրական լինել շրջանի և առաջին հերթին պաշտպանական հնարավորությունների տեսակետից խիստ խոցելի Գորիս քաղաքի համար: Անշուշտ, դա էր պատճառներից մեկը, որ Ազգային խորհուրդը ստիպված էր հայտարարել, թե ինքը դեմ չէ Գորիսի շրջանում պահելու Հարվածող զորամասի մի մասը: Ազգային խորհուրդը օգոստոսի 17-ին Զորավարին ուղարկեց մի գրություն՝ նշելով Զորավարի զորքին աջակցելու իր նախապայմանները:

«Գեներալ-մայոր Անդրանիկին.

Ազգային խորհուրդը, հիմնվելով շրջանային (բուն Զանգեզուրի: – *Ա. Ս.*)

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 47, թ. 5ա, **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մէջ, էջ 14, **Հ. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 559:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 5: Փաստաթուղթը խունացած է, և որոշ բառեր վերծանել ենք ենթադրաբար:

ժողովի կարծիքի վրա, հայտնում է իր լիակատար պատրաստակամությունը պահելու Ձեր զորամասից 1000-1500 հոգու՝ միայն այն դեպքում, եթե մեր շրջանի հայ գյուղերը ազատվեն գաղթականությունից՝ Ձեր կարգադրությամբ:

Զուտ ռազմիկ ուժերից բաղկացած Ձեր 1000-1500 հոգանոց բանակը մեր շրջանում պիտի դասավորվի Ձեր և մեր փոխադարձ համաձայնությամբ:

Միաժամանակ խորհուրդս հայտնում է, որ մնացող ռազմիկներին պետք է հայթայթենք կանոնավոր սնունդ և բնակարան:

Նախագահ՝ բժ. Մ. Պարոնյան

Անդամ-քարտուղար՝ Տ. Սազանդարյան»[1]:

Հարվածող զորամասի մի մասը Գորիսի շրջանում պահելու համար Ազգային խորհրդի առաջադրած պայմանը («եթե մեր շրջանի հայ գյուղերը ազատվեն գաղթականությունից») անընդունելի էր Անդրանիկի համար:

Գրեթե անլուծելի էին թվում գաղթականությանը սովից փրկելու և զինվորականներին սննդով ապահովելու խնդիրները: Զանգեզուրի, հատկապես Գորիսի շրջանի բնակչության վրա օգոստոսին ընկել էր անասելի ծանր բեռ: Գաղթականներին փրկելու համար կար երկու ճանապարհ՝ գավառում եղած պարենային ներքին հնարավորությունների առավել խնայողաբար օգտագործում և դրսից սպասվող օգնություն: Դրսից հացահատիկ բերելու ամենափոքր իսկ հնարավորությունը բացառված էր, քանի որ այդ ժամանակ Զանգեզուրը բոլոր կողմերից շրջափակման սեղմ օղակի մեջ էր: Ճիշտ է, Վայոց ձորի վրայով հետիոտն ու հեծյալ մարդիկ անհատապես կապ էին պահպանում Հայաստանի Հանրապետության հետ, բայց այնտեղ ևս կուտակված էին հարյուր հազարավոր թուրքահայ գաղթականներ՝ իրենց խնդիրներով: Այնտեղ ամեն օր սովից մեռնում էին հարյուրավոր գաղթականներ, հետևապես Երևանից նույնպես որևէ օգնություն ստանալու հույս չկար: Ուրեմն միակ ելքը ներքին հնարավորություններն էին, որոնք խիստ սահմանափակ էին:

Խաղաղ տարիներին անգամ Զանգեզուրը արտաքին շուկաներից տարեկան ներմուծում էր հարյուր հազարավոր փութ ցորեն[2]: Ապրուստը հազիվ ծայրը ծայրին հասցնող զանգեզուրցիները այժմ ստիպված էին իրենց ունեցած ոչ մեծ պաշարներից բաժին հանել և անորոշ ժամանակով պահել գաղթականության հսկա զանգվածը և մի քանի հազար զինվորականներին՝ իրենց ձիերի հետ[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 5: Փաստաթուղթը խունացած է, և որոշ բառեր վերծանել ենք ենթադրաբար:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 10-ի շրջ., **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մեջ, էջ 14:

[3] Տե՛ս **Ստեմել**, Անդրանիկը Զանգեզուրի մեջ, էջ 14:

Հացառատ չէր հատկապես Գորիսի շրջանը: Չնայած դրան՝ առաջին օրերին Գորիս քաղաքում և գյուղերում հանգանակություններ էին կատարվում գաղթականության օգտին:

Գաղթականների փրկության համար Կենտրոնական ազգային խորհրդի հրահանգով ոչ միայն Գորիսի, այլև գավառի բոլոր գյուղերում անցկացվեց հացահատիկի հանգանակություն, որի հաջող անցկացման պատասխանատվությունը դրվեց Գաղթականական հանձնաժողովի վրա: Հատկապես առատաձեռն էին Սիսիանի հայ գյուղացիները, որոնք իրենց հացի պաշարի 30-40 %-ը տրամադրեցին սովահար գաղթականությանը: Իսկ քանի որ Գորիսի, Կապանի և Արևիքի (Մեղրիի) շրջաններում ինչպես սովորաբար, այնպես էլ այդ տարի հացի պաշարը սուղ էր, ուստի այդ շրջաններում գյուղացիներից հացահատիկը վերցնում էին ոչ թե հարկի կամ մասնատրման միջոցով, այլ Հարվածող զորամասի բյուջեից կատարվող վճարումներով[1]:

Անդրանիկի կարգադրությամբ ամենախիստ վերահսկողություն սահմանվեց ձեռք բերված հացահատիկի բաշխման վրա. այն օգտագործվում էր ծայրագույն խնայողությամբ, ամենափոքր իսկ յուրացման ու զեղծարարության համար նախատեսվում էին խիստ պատիժներ[2]:

Չնայած ձեռնարկած բոլոր միջոցներին՝ սովը հաղթահարել չէր հաջողվում: Անդրանիկի յուրաքանչյուր զինվորի համար նախատեսված էր օրական 400 գրամ հաց, իսկ գաղթականների համար՝ 530 գրամ ալյուր, սակայն նրանց մեծ մասին հաճախ դրա կեսն էլ չէր տրվում[3]:

Եթե Գորիս ժամանելու առաջին օրը ժողովուրդն ու տեղի իշխանությունները ցնծությամբ էին դիմավորել և ընդունել Անդրանիկի զորամասին և գաղթականությանը, ապա ընդամենը մեկ շաբաթ անց տեղացիները սկսեցին բացահայտ դժգոհություն հայտնել:

Օգոստոսի 10-ին Հին Գորիս գյուղի հասարակության անունից Անդրանիկը ստացել էր հետևյալ բողոքը.

«Նորին գերազանցության գեներալ
Անդրանիկին
Հին Գորիս գյուղի ժողովրդի կողմից
ամենախոնարհ խնդիր.

Գերազնի՛վ գեներալ: Մեր Հին Գորիս գյուղը բաղկացած է ընդամենը 100 ծխից, որից 30 ծուխ կարողանում են հազիվ պահպանել իրենց գոյությունը, իսկ մնացած ծխերին բաժանված են զինվորներ՝ ամեն ծխի մեջ 3, 4, 5, անգամ 6 հոգի: … Մի փոքրիկ գյուղ անկարող է յուր ուսերի վրա տանել այդ

---

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 510-511:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 179, թ. 22:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 12, գ. 53, թ. 10-ի շրջ.:

ծանրությունը՝ պահել և կերակրել մոտ 300 զինվորի …»[1]:

Օգոստոսի 11-ին Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի նախագահ Միքայել բեկ (Միշա) Պարոնյանը Անդրանիկի զինվորական շտաբին գրում էր.

«Ձեր զորամասերը կերակրելու համար մի շարք գյուղերից հաջողվել է մեզ ցորեն ստանալ և մինչև այժմ կերակրել: Սակայն հետայսու հաց հասցնելու նպատակով մենք անկարող ենք դիմել մնացած գյուղերին … Այնպես որ այսուհետև մեր բոլոր միջոցները սպառված են, և ոչ մի հնարավորություն չունենք Ձեր զորամասերը այստեղ պահելու, որի առթիվ հայտնում ենք Ձեզ ի գիտություն»[2]:

Զորքի համար ստեղծված էր սպառնալից վիճակ: Հարվածող զորամասի երկրորդ գումարտակի առաջին հեծելավաշտի հրամանատար Փիլոսը մի երկտողով Անդրանիկին բողոքում էր, որ իր զինվորները սոված էին և, չնայած բազմաթիվ խնդրանքներին, ալյուր չէր տրամադրվում[3]: Շուտով Զորավարը ստացավ նույն գումարտակի հրամանատար Սմբատ Բորոյանի բողոքը: Նա գրում էր.

«Նկատի ունենալով ներկա քաղաքական և ռազմական պայմանները, ճանապարհին շատ մը անպատեհութեանց տեղի չը տալու համար, մոտ 2000-ի չափ հետևակազորքին և հեծելազորքին յառաջնորդնելով մինչև հոս (Գորիս քաղաք: – *Ա. Ս.)* բերինք: Տեղւոյս Ազգ[ային] խորհուրտի տուած խոստումներին համաձայն, մոտ մի շաբաթ է կըսպասենք այստեղ: Ազգային իշխանութեան տուած տնտեսական աջակցութեան (խոստումին) բավարարութիւն չէ տրուած՝ հակառակ զորքի զրկանքին: Զորքը մինչև այսօր համբերութեամբ սպասած է. այս երկու օրը զինուորները ոչ մի ֆունտ հաց չեն ըստանար: Կերևի վաղը ևս չը պիտի ստանան: Հետևակա և հեծելազօրքի կողմանէ գրավոր և բերանացի վճռական զեկույցներ կան, որոնք կը պահանջեն 24 ժամուայ մեջ գեթ մասամբ բավարարութիւն ստանալ՝ զորքի գոյությունը պահպանելու համար: Իսկապես, լեռնավայրի մեջ հեծելազօրքի վիճակը և հետևազօրքի կացութիւնը անհանդուրժելի է: Այս բոլոր պարագաները ձեզի հաղորդելով, կը խնդրեմ Ձեր վերջնական կարգադրությունը և տնօրինութիւնը»[4]:

Հավանաբար Անդրանիկը Սմբատին խորհուրդ էր տվել անձամբ դիմել Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին, ինչը և վերջինս կատարել էր[5]:

Շուտով՝ օգոստոսի 14-ին, Ազգային խորհրդի նախագահ Մ. Պա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 2 և շրջ.:

[2] Նույն տեղում, գ. 18, թ. 8:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 15:

[4] Նույն տեղում, գ. 32, թ. 5:

[5] Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 2:

րոնյանից ստացվել էր պատասխան, որում ասված էր, թե Սմբատի զորամասը կստանա 60 փութ հաց, և որ խորհուրդը «այսուհետև անկարող է տալ թե՛ հաց և թե՛ միս: Մեր միջոցները միանգամայն սպառված են»[1]:

Տեղացիների վերաբերմունքը դեպի վատն էր փոխվել հատկապես գաղթականների նկատմամբ: Հազարավոր քաղցած գաղթականներ, սփռված այգիներում ու դաշտերում, մի կերպ ապրում էին, սնվում Գորիսի շրջանի աղքատ գյուղացիության հաշվին: Սովից ոսկրացած գաղթականները, մանր գողություններից զատ, խուժում էին հասած կամ հասնելու մոտ արտերը, պոկոտում կամ ուղղակի հնձում հացահատիկը և տեղնուտեղն աղանձում: Նույն բանը կատարվում էր այգիներում ու բանջարանոցներում: Անհաս կարտոֆիլը քանդում էին, հանում ու խորովում: Գիշեր ու ցերեկ թթաստաններում դեգերող գաղթականները՝ մեծ թե փոքր, թութ էին թափ տալիս, բայց ավելի շատ ոտնատակ տալիս, քան օգտագործում[2]:

Դժբախտ մարդկանց հսկա զանգվածն իր հետ բերեց բազում անախորժություններ, գժտություններ: Նրանց և տեղացիների միջև տեղի էին ունենում սուր վեճեր և ծեծկռտուքներ: Եղան նույնիսկ գաղթականների սպանության դեպքեր[3]:

Հարվածող զորամասի զինվորներից մեկը՝ Թորգոմ Գևորգյանը, հետագայում վերհիշել է. «Մեկ տեսար՝ գաղթականները գրաստի վրա բարձած սպանված դիակը բերում են Անդրանիկի մոտ ու լաց ու շիվանով նրան խնդրում ու աղաչում դատ ու դատաստան անել: Անդրանիկն ինչո՞վ կարող էր օգնել: Զանգեզուրցին ինքն էր կանգնած սովի առաջ»[4]:

Գորիս քաղաքի կենտրոնական հրապարակում մեծ միտինգ հրավիրվեց: Հավաքվել էր մի քանի հազար մարդ՝ մոտիկ ու հեռավոր գյուղերից: Հավաքվածներին Զորավարը դիմեց այսպես.

«Պատմական Սյունիքի ազնի՛վ ու քաջամարտի՛կ ժողովուրդ: Հայերի կյանքը այնպես դասավորվեց, որ վասպուրականցին, տարոնցին, էրզրումցին ստիպված եղան թողնել իրենց հայրենի երկիրը, իրենց շեն օջախն ու ապաստան փնտրել հեռավոր Զանգեզուրի իրենց եղբայրների մոտ: Տասնյակ դարերի ընթացքում առաջին անգամ նա հյուր եկավ ձեզ՝ իր արյունակից եղբայրների մոտ: Բայց ձեզ մոտ գտնվեցին մարդիկ, որոնք խեթ աչքով նայեցին իրենց եղբայրներին: Ի՞նչ կասի հայոց պատմությունը, ինչպե՞ս կգնահատի ապագա պատմագիրը: Ի՞նչ կասեն ձեր ապագա սերունդները: Ես

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 18, թ. 10:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 8, գ. 53, թ. 4 և շրջ., **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 75, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 326-327:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 13, թ. 5, գ. 30, թ. 2, ց. 2, գ. 15, թ. 22, «Հայկական առանձին հարուածող զորամասը. Ժենէրալ Անդրանիկ», էջ 85, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 75, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 326, 328:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14, թ. 12:

շատ լավ գիտեմ ձեր դժվարին դրության մասին, գիտեմ, որ ձեզանից ամեն մեկը արյուն - քրտինքով մշակած իր փոքրիկ հողակտորից սպասում է իր ընտանիքի, իր երեխաների ապրուստի տարեկան պաշարը, որպեսզի սովամահ չլինեն: Դա միանգամայն բնական է ու հասկանալի, բայց չէ՞ որ ձեր գաղթական եղբայրը կամ նրա երեխան հենց այսօր ուտելու ոչինչ չունեն, և եթե դուք չօգնեք, ապա ձեր օջախի առաջ սովամահ կլինեն»[1]:

Միտինգին հաջորդած օրերին թեև էլի վեճեր ու ծեծկռտուքներ եղան, բայց սպանություններ՝ ոչ:

Պարենավորման հարցը շարունակում էր տագնապ առաջացնել: Անհրաժեշտ էին շտապ լուծումներ, այլապես սպասելի էր լիակատար փլուզում, մանավանդ որ զորամասի պաշարներն էլ սպառվելու վրա էին:

Մ. Պարոնյանը վերոնշյալ նամակում գրում էր, որ «գաղթականության հասցրած վնասները և ավերումները հսկայական չափերի են հասել»[2] ոչ միայն բուն Զանգեզուրում, այլև Կապանում:

Կապանում գտնվող գաղթականներից Վահան Բարսեղյանը Գորիսում գտնվող Անդրանիկին գրում էր. «Մենք այսքան ճանապարհներով եկանք ոչ մի բան չեղավ, բայց ես երեկ, Ձեզ մոտ գալուց, մեր գաղթականները իրենց գլխու գնացած են մոտ հարևան գյուղից թալան բերեն, ինչքան ուզեցի, որ այդ բերած թալանը հետ տալ թուրքերուն, չեն լսեր …»: Նամակի վրա կա Անդրանիկի ձեռքով արած այս մակագրությունը. «Սմբաթ պեկ, այս նամակը, ինձ ուղղված, կարդա՛ և նամակումը գրի այնտեղի կոմիսարին, թող անպայման [թալանածը] տերերին վերադարձնեն»[3]:

Նշված իրավիճակում գաղթականների հոծ խմբերը առավել հուսալի ապաստարան գտնելու ակնկալիքով հեռանում էին այլ վայրեր: Օգոստոսի 15-25-ը Գորիսի շրջանից Վայոց ձորի վրայով ոտքով Հայաստանի Հանրապետություն մեկնեց մի քանի հազար գաղթական, որոնցից շատերը մեռան ճանապարհներին[4]:

Մեծ թվով գաղթականներ Արևիքի վրայով անցան Պարսկաստան՝ Արաքս գետում և ճանապարհներին թողնելով բազում դիակներ: Մի քանի հազար գաղթականներ օգոստոս-նոյեմբեր ամիսներին սովից և հիվանդություններից մեռան հենց Զանգեզուրում: Սովի ճիրաններից փրկվելու համար գաղթականների մի մեծ խումբ՝ 4-5 հարյուր հոգի, օգոստոսի վերջերին փորձեց Գորիսի շրջանից անցնել Ղարաբաղ: Մտնելով Զանգեզուրի և Ղարա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14, թ. 12:

[2] Նույն տեղում, գ. 18, թ. 8:

[3] Նամակի մեքենագիր պատճենը մեր անձնական արխիվում է: – *Ա. Ս.:*

[4] Տե՛ս **Քիրս Սարոտ (Սարուր)**, Ղարաբաղի կռիվների շուրջը, «Հայրենիք», 1934, ապրիլ, թիվ 6 (138), էջ 126, **Ց. Ստեփանեան**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 75, **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 327:

բաղի միջև ընկած թուրք-քրդական բնակչություն ունեցող տարածքը և անցնելով Զաբուղ գետի կամուրջը՝ խումբը մոտեցել էր մյուս՝ Հազարու գետի կամրջին: Բայց այստեղ տեղի էր ունեցել արյունալի ողբերգություն. հենց որ գաղթականները մոտեցել էին կամրջին, քարերի հետևում դարանակալ թուրք ազերիները և քրդերը թաքստոցներից փոթորկալի կրակ էին տեղացել: Տալով 80-ից ավելի սպանված՝ գաղթականները հետ էին փախել սահմանային Տեղ գյուղ[1]:

Իրենց հայացքները հացառատ Ղարաբաղին հառած գաղթականները այնտեղ անցնելու նոր փորձեր էին անում: Օգոստոսի 10-ի վաղ առավոտյան Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի խնդրանքով և Անդրանիկի համաձայնությամբ Գորիս քաղաքից դեպի Ղարաբաղ շարժվեցին ավելի քան 2500 տաճկահայ գաղթականներ: Բայց հասնելով Խնձորեսկ, Քարաշեն և Տեղ գյուղերի ցորենի հասունացած արտերին՝ նրանք հրաժարվեցին առաջ գնալու մտքից. մնացին արտերում և սկսեցին քաղել հասկերը: Օգոստոսի 13-ին Մ. Պարոնյանը Անդրանիկին հաղորդեց, որ գաղթականները տեղից չեն շարժվում, փչացնում են արտերը ու այգիները և «տրամադիր չեն կատարելու Ձեր հրամանը: Ուստի խորհուրդս կրկին խնդրում է Ձեզ՝ միջոցներ ձեռք առնել գաղթականությունը որևէ ուղղությամբ առաջ շարժելու»[2]:

Ի վերջո, գաղթականության այդ հոծ խումբը Ղարաղշլաղի վրայով ուղղություն վերցրեց դեպի Շուշի: Գաղթականները նոր էին անցել Ղարաղշլաղից, երբ Զարսլու գյուղի թուրքերի կողմից ենթարկվեցին հարձակման: Շուշիից օգնության հասած հայ երիտասարդների շնորհիվ գաղթականներին հաջողվեց շարունակել ճանապարհը: Գաղթականներին Շուշիում պահելու հնարավորություն ևս չկար. քաղաքի բնակչությունը ևս այդ պահին մթերքի խիստ կարիք ուներ, ուստի նրանց մեծ դժվարությամբ տեղավորեցին մոտակա հայ գյուղերում[3]:

Խորապես ըմբռնելով դժվարին կացությունը Գորիսի շրջանում, ինչպես նաև նեղված իր զորքի և գաղթականության նկատմամբ Գորիսի իշխանությունների ոչ բարեհաճ վերաբերմունքից՝ Անդրանիկը հարկադրված էր կատարել գաղթական զանգվածների նոր տեղաշարժեր: Տվյալ պահին միայն մի ընդունելի ելք կար՝ գնալ Սիսիանի գավառամաս: Բարեբախտաբար, այդ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 10, գ. 56, թ. 16-17, “Наше время”, 3 января, 1919, № 4, “Вперед”, Баку, 26 февраля, 1919, № 13, «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 1920, թիվ 390, 23 հունվարի, «Մշակ» (Ֆրեզնո), 1937, թիվ 1213, 3 սեպտեմբերի, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 328, 449, 476, 507-508:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 4 և շրջ.:

[3] Տե՛ս «Զանգ», 1918, թիվ 54, 17 սեպտեմբերի, **Ց. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, ապրիլ, թիւ 6 (150), էջ 101, *նույնի՝* Անդրանիկը Սիւնեաց երկրում, «ՎԷմ», 1936, Դ տարի, թիւ 3, մայիս-յունիս, էջ 75, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 178, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 328:

տարի Սիսիանի շրջանը բարձր բերք էր ստացել, և, ընդհանրապես, Սիսիանը, համեմատած Գորիսի հետ, միշտ հացառատ է եղել:

Գորիսում թողնելով ընդամենը 600 գաղթական՝ Անդրանիկը, վերցնելով գաղթականության հսկա զանգվածը և Հարվածող զորամասի գլխավոր մարտական ուժերը, օգոստոսի 27-ին Գորիսից մեկնեց Սիսիանի շրջան՝ այնտեղի հայկական գյուղերում և հատկապես դատարկված թուրքաբնակ գյուղերում տեղավորելով զորքը և գաղթականության մեծ մասին[1]:

Սիսիանի հայկական մի քանի գյուղեր ի վիճակի չէին Գորիսից եկած գաղթականներին ապաստան տալ և կերակրել, քանի որ մինչև Անդրանիկի Զանգեզուր գալը՝ 1918 թ. հունիսից սկսած, Նախիջևանի կողմից մեծ թվով գաղթականներ թափանցել էին Վայոց ձոր և Սիսիանի շրջան, տեղավորվել այնտեղ: Այդ գյուղերը անկարող էին նոր մարդկանց ընդունել և կերակրել[2]:

Ղարաքիլիսա գյուղի հասարակության անունից գյուղի կոմիսարը և ուրիշ հինգ գյուղական ներկայացուցիչներ սեպտեմբերի 7-ին (հին տոմարով՝ օգոստոսի 25-ին) Անդրանիկին գրում էին. «Ամսոյս 25-ին ստացանք մեծարգո փաշայիդ հրամանը, այն է՝ Ղարաքիլիսայում տեղավորել 30 մշեցի ընտանիք: Պատիվ ունենք հայտնելու մեծարգո փաշայիդ, որ գյուղումս բոլորովին ազատ բնակարան չկա: Գորիսի Ազգային խորհրդի կարգադրությամբ գյուղումս բնակվում են 450 շունչ սարիղամիշցի: Բացի դրանից՝ այստեղ ապրում են նախիջևանցի և տաճկահայ գաղթականներ՝ մոտ 400 շունչ: Ուստի անհնարին է մշեցիներին տեղավորել»[3]:

Թեև գաղթականների մեծ մասը 1918 թ. օգոստոսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում արդեն հեռացել էր Զանգեզուրից, բայց առ 1-ը դեկտեմբերի այնտեղ դեռ կար շուրջ 17 հազար հայրենազուրկ գաղթական՝ 10498 թուրքահայ և 6214 ռուսահայ (նախիջևանցիներ): Գաղթականների թիվը Գորիսի շրջանում (բուն Զանգեզուր) 486 էր, Կապանի շրջանում՝ 1976, Արևիքում՝ մի քանի տասնյակ, Սիսիանի շրջանում՝ 14.250: Դրանից բացի՝ Սիսիանի Ղարաքիլիսա գյուղում Անդրանիկի բացած որբանոցում 137 որբեր կային[4]:

Որբանոցի խնդրով անմիջականորեն զբաղվում էր Եղիշե Քաջունին, որը որբերի վիճակի մասին պարբերաբար հաշվետվություններ էր գրում Անդրանիկին: Նրա հոգածության տակ էր նաև գաղթականների և զինվորների համար Ղարաքիլիսայում բացված «հիվանդանոցը»: Այստեղ ևս լուրջ խնդիրներ կային: Հիվանդանոցն ուներ միայն մեկ բուժակ, չուներ անհրա-

---

[1] Տե՛ս «Զանգ», 1918, թիվ 54, 17 սեպտեմբերի, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 566-567, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 215, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 334:

[2] Տե՛ս «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 1919, թիվ 361, 18 դեկտեմբերի, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 623, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 508-511:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 6:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 53, թթ. 6, 10, 11, 16-21, գ. 55, թ. 53, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 508:

ժեշտ դեղամիջոցներ, «բուժումը» կատարվում էր պապենական եղանակներով: Սեպտեմբերի 20-ին Եղիշե Քաջունին Զորավարին գրում էր. «Շարունակական գանգատներ կան հիվանդանոցի դրության և խնամքի պակասության մասին: Խնդրում եմ, եթե հնարավոր է, կտրուկ կարգադրություններ անեք հիվանդների դրությունը բարելավելու համար»[1]:

Անդրանիկի զորամասի՝ Նախիջևանից Զանգեզուր անցնելուց հետո տաճկահայ և նախիջևանցի գաղթականներին գումարվել էին գավառի արևելյան կողմից՝ Ղարաղշլաղից և հյուսիսարևմտյան կողմից՝ Նախիջևանի Գյոմուր, Գժաձոր, Նորս և Նորս Մազրա գյուղերից տեղահանված մոտ 4000 հայ բնակիչներ: Սրանք հաշվառված չէին այն ցուցակներում, որոնք 1918 թ. օգոստոսին ներկայացվել էին ՀՀ կառավարությանը՝ օգնություն ստանալու նպատակով: Այդ իսկ պատճառով վերջիններիս կերակրելու հոգսը բացառապես ընկած էր զանգեզուրցիների վրա[2]:

Չնայած բոլոր դժվարություններին, ի պատիվ սիսիանցիների, նրանք առավելագույն ջանքեր գործադրեցին և՛ զորքին, և՛ գաղթականությանը տեղավորելու, կերակրելու ուղղությամբ: Համենայնդեպս, Սիսիանում հաջողվեց գաղթականների սովից մահացությունը հասցնել նվազագույնի: Կապանից և Գորիսից չնչին օգնություն էին ստանում, որը, սակայն, էական նշանակություն չէր կարող ունենալ[3]:

Կապանի ազգային խորհրդի նախագահը հոկտեմբերի 18-ին Անդրանիկին գրում էր. «Խորհուրդս այսօր ուղարկում է Ձեզ՝ հասցնելու Ձեր զորքի պետքերի համար մի արկղ ծխախոտ (40 տուփ), մի քսակի մեջ մի փութ շաքար և երեք տուփ մոմ: Ներեցեք, որ մոմը քիչ ենք ուղարկում, որովհետև շուկայում չգտանք: Իսկ պայտն ու մեխը դեռ պատրաստ չեն, պատրաստի լինելուց՝ իսկույն կուղարկենք»[4]:

Թվում էր, թե Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և տաճկական զորքերի՝ Այսրկովկասից հեռանալուց հետո այնտեղ մտած դաշնակիցների զինվորական իշխանությունները շտապ միջոցներ կձեռնարկեին Հայաստանի Հանրապետությունում և այլուր ապաստանած հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականներին, Այսրկովկասի առավել կարիքավոր շրջանների սովյալներին քաղցից ու հիվանդություններից փրկելու համար: Բայց դա տեղի չունեցավ: Զանգեզուրում այդ հոգսն առաջվա պես իր ամբողջ ծանրությամբ շարունակում էր ընկած մնալ Զորավար Անդրանիկի և գավառի իշխանությունների վրա:

---

[1] ՀԱԱ ֆ. 370, ց. 1, գ. 26, թ. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 53, թ. 11:

[3] Տե՛ս «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 1919, թիվ 361, 18 դեկտեմբերի, **Յ. Ստեփանեան**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», 1935, ապրիլ, թիւ 6 (150), էջ 101:

[4] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 18, թ. 13:

Առ մեկը դեկտեմբերի 1918 թ. Զանգեզուրի գավառում կար 16712 գաղթական, որոնց կերակրելու համար կար 3620 փութ ալյուր: Զմեռն անցկացնելու և մինչև հուլիս ամիսը, այսինքն՝ մինչև նոր բերքահավաքը, սովից չմեռնելու համար նրանց անհրաժեշտ էր ևս 96652 փութ ալյուր (մեկ շնչին ամսական մեկ փութ), որը ձեռք բերելը ստեղծված պայմաններում դարձել էր անհնարին, քանի որ անհրաժեշտ գումարը (շուրջ հինգ միլիոն ռուբլի) չկար[1]:

1918 թ. դեկտեմբերին Զորավար Անդրանիկը և Զանգեզուրի ազգային խորհուրդն իսկական տագնապ էին ապրում գաղթականության վիճակն անտանելի դառնալու կապակցությամբ: «Նաշե վրեմյա» թերթի խմբագրությանը դեռ նոյեմբերի 9 (22)-ին գրած նամակում Անդրանիկը, դիմելով հայ հասարակությանը, ազդարարում էր. «Զանգեզուրի Սիսիանում այժմ գտնվում են տասնյակ հազարավոր փախստականներ, որոնք մեռնում են սովից, ցրտից, ապրում են բաց երկնքի տակ: Անհրաժեշտ է օգնություն և դարձյալ օգնություն»[2]:

Դեկտեմբերի սկզբին Զորավարը Գորիսից նամակ էր գրել Երևան՝ խնամատարության նախարար Ալեքսանդր Խատիսյանին, որի հետ ջերմ հարաբերությունների մեջ էր: Նկարագրելով գաղթականության անտանելի վիճակը՝ նա խնդրել էր աջակցություն:

Դեկտեմբերի 11-ին Ա. Խատիսյանը Անդրանիկին պատասխան նամակ էր հղել. «Ձեր դիմումի համաձայն՝ ուղարկեցինք Սիսիանի կոմիսարին հիսուն հազար ռուբլի (50.000)՝ բաժանելու Սիսիանում գտնվող թուրքահայ և ռուսահայ կարիքավոր գաղթականներին»[3]:

Մեկ այլ գրությամբ Ա. Խատիսյանը Սիսիանի գաղթականական մարմնին տվեց հետևյալ հանձնարարականը. «Գեներալ-մայոր Անդրանիկի դիմումին և Ձեր ներկայացուցիչների բերանացի բացատրության վրա ուղարկուեցավ հիսուն հազար ռուբլի (50.000 ռուբլի)՝ բաժանելու թուրքահայ և ռուսահայ (նախիջևանցի) գաղթականներին ու մանրամասն հաշիվ ներկայացնել մեզի»[4]:

Դեկտեմբերի 11-ի նամակով Ա. Խատիսյանը Անդրանիկին ՀՀ կառավարության հետ հաշտեցնելու իր բուռն ցանկությունը նաև հայտնեց. «Ես կարող եմ օգնել այդ գործում: Մեր ցանկություններն ու շահերը մին են ... Ձեզ տեսնել ես շատ կուզեի: Սեղմում եմ ձեռքդ: Քո՝ Ա. Խատիսյան»[5]:

Զորավարը, ի պատասխան Ա. Խատիսյանի գրության, 1918 թ. դեկտեմբերի 13-ի իր նամակում հանգամանալից ներկայացրեց Զանգեզուրում տիրող իրավիճակը: Զորավարը գրում էր, որ սովամահության տասնյակ դեպքեր

---

[1] Զանգեզուրի գաղթականական գործերի ընդհանուր լիազոր, 1918, թիվ 43, 6 դեկտեմբերի, ք. Գորիս:

[2] “Наше время”, 3 января, 1919.

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 6:

[4] Նույն տեղում, թ. 13:

[5] Նույն տեղում, թ. 7-8:

էին եղել Սիսիանում, և ավելի քան 100 որբեր կային Սիսիանում ու Ղարաքիլիսայում: «Իմ ջոկատի հացահատիկից ես գաղթականների համար առանձնացրել եմ 15 հազար փութ: Որբանոցը պահվում է իմ ջոկատի հաշվին: Լավ կլիներ ընդհանրապես չուղարկեիք այդ 50 հազարը, որը մեկ շնչի հաշվով կազմում է 2,5 ռուբլի: Ձեզ թվացել է, թե այդ գումարով կարող եք փրկե՞լ այս դժբախտներին»[1]:

Այնուհետև Անդրանիկն անդրադառնում էր իր և Հայաստանի կառավարության փոխհարաբերությունների խնդրին: Անհրաժեշտ ենք համարում այստեղ զետեղել Զորավարի պատասխան փաստաթուղթն ամբողջությամբ, որն ավելի հստակ պատկերացում կտա նրա ու ՀՀ կառավարության փոխհարաբերությունների մասին:

«Անցնենք երկրորդ հարցին,– շարունակում էր Զորավարը,– Դուք գրում եք, որ ես հաշտվեմ կառավարության հետ:

Առաջին. ես լսել անգամ չեմ ուզում այս ինքնակոչ կառավարության մասին, որը համարվում է թուրքական կառավարության միահեծան տիրույթը:

Երկրորդ. եթե եվրոպական դաշնակցային պետությունները պաշտոնապես հայտարարում են Հայաստանի և նրա կառավարության ճանաչման մասին, ապա Հայաստանի ժողովուրդը երջանիկ կլինի. ուրեմն ինչ նշանակություն կարող է ունենալ իմ հաշտեցումը կամ անհամաձայնությունը:

Երրորդ. Դուք անընդհատ հետապնդում եք ինձ, թող [այդպես] լինի, սակայն մի հետապնդեք հայ ժողովրդին:

Չորրորդ. Զանգեզուր իմ գալու օրվանից ես հեշտությամբ տարել եմ բոլոր տանջանքները և տառապանքները: Կատարե՞լ եմ արդյոք այստեղ՝ Զանգեզուրում, ինչ-որ վնասակար կամ օգտակար գործ՝ թող որոշի տեղի ժողովուրդը:

Հինգերորդ. շուտով պատրաստվում եմ հեռանալ Զանգեզուրից, թեպետ անգլիացի գեներալ Թոմսոնը պնդում է, որ ես մնամ այստեղ: Բայց այստեղ մնալն անհնար է: Ուղարկե՛ք այստեղ մեկին, որը կհետևի կարգ ու կանոնին, իսկ ես կհեռանամ աշխարհի մի անկյուն, որպեսզի Ձեր կառավարությունը չունենա իր կողքին ինձ պես թշնամու:

Վեցերորդ. կտա՞ն արդյոք երբևէ գայլի մորթիով մարդիկ իրենց խղճի հաշվետվությունը, որոնք իրենց համարում են հայրենասերներ, ժողովրդասերներ և ամեն տեսակի արժանիքների կրող: Ես կարծում եմ, որ կանցնի միառժամանակ, և դիմակները կպատռվեն, այն ժամանակ մարդիկ կտեսնեն, ոչխարներ էին նրանք, թե գայլեր:

Յոթերորդ. թող այս ամենի մասին պատմությունը ճշմարտացիորեն պատմի ապագա սերունդներին: Եվ ոչ ավելի:

Ութերորդ. շատ ժողովներում եմ լսել, որ Ղարաբաղը Ձեր առաջ-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 7-8:

նորդության (գուցե առաջնահերթությա՞ն: – *Ա. Ս.)* առարկան է, սակայն դուք նրան էլ եք հալածել այնպես, ինչպես ինձ: Ձեր մոտ մինչ օրս ցանկություն չի եղել օգնելու նրան...

Իններորդ. աշխատեք, որ ապագա սերունդը և ապագա պատմությունը Ձեզ հիշի լավ ձևով, այլ ոչ թե անեծքով…

Ողջույններով Անդրանիկ»[1]:

Անդրանիկը դեկտեմբերի 13-ի իր պատասխան նամակով, փաստորեն, կտրականապես մերժում էր կառավարության հետ հաշտվելու Ա. Խատիսյանի առաջարկը: Հայաստանի Հանրապետության կառավարությանը համարելով ինքնակոչ՝ նա հայտնում էր, որ ինքը գերադասում է թողնել ու հեռանալ, քան ենթարկվել նրան:

Անդրանիկը չէր կարողանում ներել այն, որ երբ ինքը նոր էր եկել Զանգեզուր, 1918 թ. օգոստոսի 17-ին թիվ 401 գրությամբ Վրաստանում ՀՀ գործերի հավատարմատար Արշակ Ջամալյանը Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի անունով, ի պատասխան վերջինիս հարցման, հետևյալ գրությունն էր ուղարկել նրան.

«Հաստատելով Ադրբեջանական Հանրապետության տարածք գեներալ Անդրանիկի ջոկատի ներխուժման առիթով Ձեր օգոստոսի 15-ի թիվ 461 գրության ստացումը և այդ գրության հանձնումը իմ կառավարությանը՝ պատիվ ունեմ իմ կողմից հայտարարելու, որ ինչպես ինքը՝ գեներալ Անդրանիկը, այնպես էլ նրա ամբողջ ջոկատը առանձին հայկական կորպուսին տրված հրամանով վաղուց հեռացված են հայկական զորքերի կազմից և ցուցակներից, որից հետո նրանք հրաժարվել են ճանաչելու Հայաստանի իշխանությունն ու նրա պաշտոնատար անձանց և ենթարկվելու նրանց:

Այսպիսով, գեներալ Անդրանիկն ու նրա ջոկատը ոչ մի առնչություն չունեն հայկական ազգային զորքերի և նրանց մարմինների հետ, և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հետևաբար, ոչ մի կերպ չի կարող պատասխան տալ նրա անպատասխանատու գործունեության համար:

Վրաստանի կառավարությանն առընթեր Հայաստանի

Հանրապետության գործերի հավատարմատար՝ Ջամալյան»:

Մուսավաթական կառավարության կիսապաշտոնական «Ազերբայջան» թերթը չորս ու կես ամիս հետո տպագրել էր Ջամալյանի սույն գրությունը[2]:

Ինչևէ, դեկտեմբերի 17-ին Անդրանիկը ստորագրեց Գորիս քաղաքում և շրջակա 12 գյուղերում եղած գաղթականներին 15.196 ռուբլի հատկացնելու հրամանը՝ յուրաքանչյուրին տալով 29 ռուբլի[3]: Հաջորդ օրը Անդրանիկը

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 17-21:

[2] Տե՛ս “Азербайджан”, 1 января, 1919.

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 56, թ. 6:

զորամասի միջոցներից Ազգային խորհրդին հանձնեց 101 հազար ռուբլի՝ Ղարաղշլաղից փախած և Զանգեզուրում ապաստանած գաղթականների համար հացահատիկ գնելու համար[1]: Դեկտեմբերի 22-ին Զորավարը կարգադրեց իր զորամասի պահուստից Գյոմուր, Գժաձոր, Նորս և Նորս Մազրա գյուղերից տեղահանված սովյալներին հատկացնել 200 փութ ալյուր[2]: Շատ չանցած՝ նա Ազգային խորհրդին փոխանցեց 44.000 ռուբլի՝ Կապանում մնացած գաղթականներին բաժանելու համար[3]:

Միաժամանակ Անդրանիկը հույս ուներ Սիսիանում և Գորիսում ապաստանած Գյոմուր, Գժաձոր և հիշատակված նախիջևանյան մյուս գյուղերից փախածների, ինչպես նաև ղարաղշլաղցի գաղթականների համար Կապանից գնել ինչ-որ քանակի հացահատիկ: Այդ նպատակով նա դիմեց Զանգեզուրի ազգային խորհրդին՝ այնտեղ գործուղելու Գեդեոն Տեր-Մինասյանին:

Դեկտեմբերի 26-ին Զորավարը Կապանի ազգային խորհրդին, հասարակությանը և շրջանային ներկայացուցիչներին գրում էր. «Զանգեզուրի Ազգային խորհրդի կողմից գալիս է Ղափան պարոն Գեդեոն Տեր-Մինասյանը: Օգտվելով առիթից, Գեդեոնին ըրած եմ հանձնարարություններ գաղթականության և իմ զորամասի վերաբերմամբ: Հավատացած եմ, որ Ազգային խորհուրդը ցույց պիտի տա պ-րն Գեդեոնին ջերմ աջակցություն՝ լրիվ կերպով գլուխ հանելու համար իմ հանձնարարությունները: Ուղարկում եմ նաև մի հարյուրյակ ձիավորներ, որոնց կեսը պետք է մնա քաղաքում (նկատի ունի Հանքերում: – *Ա. Ս.)*՝ որպես պահապան ցորենի ու գարու պահեստին, իսկ մյուս կեսը պետք է ցրվի մոտակա գյուղերում: Հարյուրյակը պիտի պահվի շրջանի ազգաբնակչության հաշվին:

Ցորենի ու գարու գնման գործը աշխատեցե՛ք շուտ վերջացնել, որովհետև այստեղ գաղթականությունը մեռնում է սովից»[4]:

Այնուհետև Զորավարը, այս էլ քանիերորդ անգամ, Կապանի ղեկավարությանը հրահանգում էր առիթ չտալ թուրքերի հետ նոր ընդհարումների և խստիվ հետևել դաշնակից տերությունների ներկայացուցիչների և իր միջև կայացած պայմանավորվածությանը: Այդ կապակցությամբ նա գրում էր. «Անհրաժեշտ եմ համարում շեշտել, որ պետք է միանգամ ընդմիշտ վերջ տալ միջցեղային անկարգություններին. սա կլինի չորրորդ անգամը, որ ձեզ նախազգուշացնում և արգելում եմ: Մեր դեմ գտնվող պետությունը ոչ ռուսական է, ոչ էլ թուրքական: Բոլոր անկարգությունները վնասակար են լինելու մեզ համար»[5]:

Կապանում Գեդեոն Տեր-Մինասյանը հաջողությամբ կատարեց պա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 56, թ. 1:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 2:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

[4] Նույն տեղում, թ. 16:

[5] Նույն տեղում:

տասխանատու հանձնարարությունը և գնումների միջոցով ձեռք բերեց նախատեսված քանակի հացահատիկ: Անհրաժեշտ էր այն որքան կարելի է շուտ հասցնել Գորիս, բայց դա դժվար խնդիր էր, որովհետև Կապան–Գորիս հիմնական ճանապարհը մնում էր վտանգված թուրքերի կողմից:

Կապանի հանքերից Գեդեոն Տեր-Մինասյանը դեկտեմբերի 18-ին Անդրանիկին գրում էր.

«Սիրելի՛ փաշա.

... Ցորենի և գարու գործը կարգավորված է: Սպասում եմ Ձեր կարգադրությանը՝ թե ո՞ր ճանապարհով պետք է ուղարկել: Շուռնուխով ապահով չէ»[1]:

Հացահատիկը Գորիս տեղափոխվեց հիմնական՝ Շուռնուխի խճուղով, որի պաշտպանությունը իր վրա վերցրեց Հարվածող զորամասի հեծյալ մի ստորաբաժանում:

Դեկտեմբերի վերջերին օրհասական էր գողթանցիների վիճակը:

Գողթանցի հայերը, որոնք 1918 թ. հուլիսին Անդրանիկի հետ անցել էին Զանգեզուր, հետագա ամիսներին օրեցօր կենտրոնացել էին Մեղրիի շրջանում: Այստեղ նրանց անընդհատ միանում էին թուրքերի տիրապետության տակ գտնվող Գողթանի հայ գյուղերի բնակիչները: Գողթանցի փախստականները հավաքվել էին Մեղրիում, որպեսզի Արաքսի կողքով, որը միակ հարմար և մոտիկ ճանապարհն էր, վերադառնային հայրենիք, բայց Օրդուբադի շրջանի թուրքերը փակել էին Մեղրի–Օրդուբադ, Օրդուբադ–Նախիջևան ճանապարհները՝ գողթանցիներին արգելելով վերադառնալ իրենց բնակավայրերը: Եվ ահա 6-7 հազար գողթանցիներ տառապում էին սովի ճիրաններում, և մահն ամեն օր տասնյակ կյանքեր խլում[2]:

Մեղրիի շրջանի լիազոր ներկայացուցիչներ պոդպորուչիկ Ն. Տիրացույանը, Ա. Բարխուդարյանը և Ա. Ազատյանը 1918 թ. դեկտեմբերի 27-ին նամակով դիմեցին Զորավար Անդրանիկին՝ խնդրելով օգնության հասնել սովից մեռնող գողթանցիներին և զինուժով բացել Մեղրիից Գողթան տանող ճանապարհները[3]:

Անդրանիկը ստիպված էր Կապանում գտնվող Գեդեոն Տեր-Մինասյանին հանձնարարական տալ այնտեղ գնված ցորենից 150 փութ ուղարկել Մեղրի՝ գողթանցիներին սովից փրկելու համար: Ինչ վերաբերում էր դեպի Գողթան ճանապարհները բացելու խնդրանքին, ապա Զորավարը կրկին ու կրկին հիշեցնում էր դաշնակիցների հետ ունեցած պայմանավորվածությունը՝ խուսափել թուրքերի հետ նոր ընդհարումներից:

Պատերազմի ավարտից հետո Բաքվի հայությունը սկսել էր մասնակի դրամահավաք՝ Զանգեզուրի գաղթականությանը օգնելու համար: Այդ գոր-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 50, թ. 14:

[2] Տե՛ս «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1918, թիվ 3, 4 սեպտեմբերի:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 41, թ. 11:

ծում հսկայական ջանքեր էին գործադրել Բաքվի հայոց ազգային խորհուրդը և Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները: Բայց անհայտ պատճառներով այդ գումարը Զանգեզուր չէր հասել:

Միակ գործնական աջակցությունը զորավար Յ. Բագրատունու միջնորդությամբ զորավար Լ. Բիչերախովի կողմից տրված մեկ միլիոն ռուբլին էր՝ Անդրանիկին ուղարկելու համար: Այդ գումարը զորավար Յ. Բագրատունու դեկտեմբերի 12-ին գրած նամակի հետ դեկտեմբերի 20-ին Գորիս հասցրին Արշակ Շիրինյանը և Նիկոլայ Հովսեփյանը[1]:

Զորավար Յ. Բագրատունին Անդրանիկին գրում էր. «Ուղարկում եմ Ձեզ մեկ միլիոն ռուբլի, որից 400.000-ը հատկացնել զինվորական պետքերի համար, իսկ մնացած 600.000-ը տեղական* և դրսի** գաղթականներին՝ Զանգեզուրի Ազգային խորհրդի միջոցով: Նկատի ունենալով, որ մոտիկ ապագայում դժվար կլինի դրամ հասցնելու Ձեզ, խնդրում եմ պատվիրեք, որ այդ դրամը ծախսվի խնայողաբար»[2]:

1918 թվականի դեկտեմբերի 26 (13)-ին Անդրանիկը Լ. Բիչերախովին գրում է պատասխան նամակ.

«Ձերդ գերազանցություն գեներալ Բիչերախովին

Զանգեզուրի Հայկական Ազգային խորհրդի անդամներ Արշակ Շիրինյանը և Նիկոլայ Օսիպովը, վերադառնալով Բաքվից, բերել են մեկ միլիոն (1.000.000) ռուբլի, որի դիմաց Ձեզ են թողել ստացական: Խորհրդի նշված անդամները ինձ հաղորդել են, որ այդ գումարը Դուք տվել եք գեներալ Բագրատունու միջնորդությամբ: Սրանով արտահայտում եմ Ձեզ իմ խորին ու անկեղծ շնորհակալությունն այն բանի համար, որ Դուք չեք մոռացել իմ ջոկատը և անբախտ փախստականներին:

Գեներալ-մայոր Անդրանիկ»[3]:

Անդրանիկը փորձեց օգնություն ստանալ նաև անգլիացիներից, սակայն ջանքերը զուր էին[4]:

Դեկտեմբերի 24-ին Արշակ Շիրինյանը նորից մեկնեց Երևան՝ գաղթականության համար կառավարությունից փող խնդրելու[5], ինչպես և արծարծելու Զանգեզուրի և Արցախի հրատապ խնդիրները:

Լսելով Արշակ Շիրինյանի Երևան մեկնելու լուրը՝ արցախյան ղեկավա-

---

[1] Տե՛ս «Հայկական առանձին հարուածող զօրամասը. ժենէրալ Անդրանիկ», Պոսթոն, 1921, էջ 166, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 518:

* Այսինքն՝ նախիջևանահայ գաղթականությանը:

** Այսինքն՝ տաճկահայ գաղթականությանը:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 30:

[3] Նույն տեղում, գ. 34, թ. 14:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 34, թ. 115:

[5] Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 12:

ությունը մեծ հույսեր էր կապում նրա առաքելության հետ: Արցախի ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը նամակով Զորավարին գոհունակություն էր հայտնում այդ առթիվ: «Այստեղից ոչ մի հնարավորություն չկա ներկայացուցիչներ ուղարկելու Երևան և այնտեղ հայկական կառավարությանը իրազեկ դարձնելու մեր շրջանի ունեցած կարիքների և պահանջների մասին: Խորհուրդս մասնավոր կերպով տեղեկացավ, որ Ձերդ գերազանցության հանձնարարությամբ Զանգեզուրի կենտրոնական խորհրդի կողմից ներկայացուցիչներ են գնացել Երևան և այնտեղ պիտի հրապարակի վրա դնեն նաև Ղարաբաղի հարցը: Խորհուրդս համոզված է, որ Ձերդ գերազանցության միջնորդությունները երևանյան հանրապետության և դաշնակիցների հետ դրական հետևանքներ կարող են ունենալ …»[1]:

Լ. Բիչերախովի ուղարկած գումարով կարելի էր գաղթականներին պահել ևս երկու ամիս: Իսկ դրանից հետո՞. չէ՞ որ մինչև նոր բերքի ստացումը պետք էր աջակցել նրանց ևս չորս ամիս: Միայն երկու ելք կար՝ ձեռք բերած հացահատիկը ծախսել մեծագույն խնայողությամբ և օգնություն կազմակերպել դրսից[2]:

Հետագայում՝ 1919 թ. հունվարի երկրորդ կեսին, Զանգեզուրի սահմաններում ստեղծված հարաբերական հանգիստ վիճակը հնարավորություն տվեց ավելի մոտիկից զբաղվելու գավառի բնակչության և գաղթականության պարենավորման հարցերով: Բաքվից Լ. Բիչերախովի ուղարկած մեկ միլիոն ռուբլին, որը բաժանվել էր գաղթականներին, սպառվում էր, և, ըստ հաշվարկների, փետրվարի կեսերին գաղթականությունը կրկին կանգնելու էր սովամահության սպառնալիքի առջև: Զանգեզուրի գյուղացիության հացի պաշարները ևս սպառվում էին օր օրի, և եթե նույնիսկ ինչ-որ տեղից նոր գումարներ ստացվեին, այդ դրամով այլևս հնարավոր չէր լինելու գյուղացիներից գնել պարենամթերք: Միակ ելքը դարձյալ մնում էր սննդամթերքի խիստ խնայողաբար օգտագործումը և այն ամենափոքր չափով իսկ գավառից դուրս տանելու փորձերի խստիվ կանխումը:

Այդ առիթով հունվարի 22-ին Անդրանիկը հանդես եկավ կոշտ հայտարարությամբ, որով զգուշացվում էր, որ օրինազանցների համար խիստ պատիժներ կսահմանվեն[3]: Բայց ամենախիստ պատիժներն անգամ չէին կարող փրկել հազարավոր գաղթականների կյանքը, ուստի Անդրանիկի մեջ հասունանում էր իր զորամասով Զանգեզուրից հեռանալու գաղափարը: Դա թույլ կտար իր զորամասի սննդի համար ծախսվող գումարները տրամադրել գաղթականությանը, որը առայժմ մնալու էր Զանգեզուրում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 19:

[2] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 520:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 24:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԹՈՒՐՔԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՇՈՐԱԾԱՎԱԼ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ: ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՒՅԳ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1919 Թ. ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ)

1919 թվականը Զանգեզուրի և Արցախի համար սկսվեց նոր տագնապներով, քանի որ անգլո-ադրբեջանական համագործակցությունը աստիճանաբար սպառնալից ծավալներ էր ընդունում:

1919 թ. հունվարի 1-ից Ադրբեջանի մի քանի հազարանոց բանակը՝ գնդացիրներով ու թնդանոթներով համալրված, մոտեցավ Զանգեզուրի և Լեռնային Արցախի մատույցներին: Դեպի Արցախ և Զանգեզուր շարժվող ադրբեջանական զորքերի հետ էին նաև թուրքական զորամասեր, որոնց գործողությունները կատարվում էին բրիտանական հրամանատարության գիտությամբ:

Զորքերը գալիս էին՝ հայ ժողովրդին պատկանող հողերի վրա հաստատելու Ադրբեջանի թուրքերի բիրտ տիրապետությունը: Դա այն դեպքում, երբ նույն ժամանակ Փարիզում սկսվել էին տերությունների վեհաժողովի աշխատանքները: Այնտեղ թե՛ մեծ, թե՛ փոքր պետությունների ներկայացուցիչները շատ երկրների ու ազգերի համար պիտի գծեին նոր քարտեզ:

Ադրբեջանի զորքերը հունվարի 1-ին առաջին հարվածը հասցրին Կապանի սահմաններին: Նրանք, մեծ ուժեր կուտակելով Ուժանիսի ուղղությամբ, փորձեցին ճեղքել գյուղի պաշտպանական դիրքերը և խորանալ Հանքերի ուղղությամբ: Հարձակումը սկսվեց և ավարտվեց նրանց պարտությամբ ու փախուստով: Մուսավաթական զինյալները նույն օրը հարձակում գործեցին նաև Դավիթ Բեկ գյուղի ուղղությամբ և կրկին պարտություն կրեցին[1]: Կապանցիների կամքն անկոտրում էր: Նրանք պատրաստ էին մեռնել, քան ապրել թուրքերի լծի տակ:

Հունվարի 9-ին Կապանի ազգային խորհրդի նախագահ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանը իր մի հուշագրում նշում էր. «... Մենք համարում ենք մեր երկիրը՝ Ղափանը, մեզ հետ էլ բոլոր պետականորեն անկերպարանք մնացած վայրերը, [այսինքն]՝ Հայաստանի մի մասը, չպիտի թույլ տանք, որ Ադրբեջանը հաստատի այստեղ իր կառավարությունը: Մենք պիտի մի քանի

[1] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 484-485:

ժամանակ էլ կառավարենք ինքներս մեզ ամենալայն մտքով, մինչև որ սահմանների հարցը որոշվի վերջնականապես»[1]:

Կապանի ուղղությամբ կրած խայտառակ պարտությունից կատաղած մուսավաթականները ձեռնարկեցին արյունալի նոր ոճիրներ Ադրբեջանի տարբեր վայրերի խաղաղ հայ բնակչության նկատմամբ: "Кавказское слово" թերթը գրում էր. «Հունվարի 18-ին Ալյաթ կայարանում նորից տեղի է ունեցել քստմնելի ոճրագործություն. զինված թաթարները, խուժելով գնացք, ամբոխի աչքի առաջ սպանել են հինգ հայ ճանապարհորդների, բռնաբարել երեք հայուհիների, այդ թվում՝ վեցամյա մի աղջկա, որից հետո, մյուսների հետ, նրան նույնպես կտոր-կտոր են արել»[2]:

Իր հերթին «Մշակը» հաղորդում էր հայերի նկատմամբ մուսավաթականների գործած ոճրագործությունների մասին Զաքաթալայի շրջանում: Այնտեղից թերթին ուղարկված մի թղթակցության մեջ կարդում ենք.

«Ծանր է, շատ ծանր է քրիստոնյա ազգաբնակչության դրությունը մեր շրջանում, առավել ևս հայերի …

Մտնել օրը ցերեկով խուզարկել տները, սրբել, տանել եղած-չեղածը, ծեծել, ջարդել, բանտարկել, օրերով սոված, ծարավ պահել բանտում և վերջը ստորագրություն առնել, որ շատ գոհ են հայերը տեղական իշխանություններից – սովորական բաներ են:

… Բելաքան գյուղի 60-70 հայ ընտանիքներից ոչ ոք չի մնացել, թողել են իրենց ահագին կալվածքները, կարողությունը և փախել զանազան կողմեր»[3]:

Հունվարի 10-ին ադրբեջանական զորքերը և տեղական հրոսակախմբերը, թվով մի քանի հազար մարդ, թուրք սպաների առաջնորդությամբ արշավանք ձեռնարկեցին Զաբրայիլի գավառի հայկական գյուղերի վրա, իսկ տեղական ադրբեջանական իշխանությունները հնազանդվելու և զենքերը հանձնելու վերջնագիր ներկայացրին գավառի հայ բնակչությանը[4]:

Նույն ժամանակ, մտնելով Ասկերանի հայկական գյուղերը, ադրբեջանական զորքերը Ասկերանի բերդի շրջանում ոչնչացրին և ավերեցին բոլոր ջրաղացները, տարան դրանցում եղած հացամթերքը: Զինված թուրք հրոսակախմբերը, մտնելով հայերի տները, գոմերը, մարագները, հափշտակում և տանում էին ձեռքն ընկածը[5]:

Այդ օրերին ավելի հաճախակի դարձան Արցախից Անդրանիկին ուղղված օգնության խնդրանքները: ՀՅ դաշնակցության Շուշիի շրջանային կոմիտեն Զորավարին գրում էր.

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 212, թ. 1:

[2] "Кавказское слово", 1 февраля, 1919, № 12 (հոդվածի թարգմանությունը տե՛ս «Մշակ», 1919, 11 փետրվարի, թիվ 32):

[3] «Մշակ», 1919, 28 հունվարի, թիվ 20:

[4] Տե՛ս նույն տեղում, նաև ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թթ. 45-46, 52-ի շրջ.-54:

[5] Տե՛ս «Մշակ», 1919, 28 հունվարի, թիվ 20, ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թթ. 45-46, 52-ի շրջ.-54:

«Ինչպես Դուք հայտարարել էիք անգլիական մայորին (Վ. Գիբոնին: – *Ա. Ս.),* թե թույլ չեք տա, որ 300 հազար հայություն ունեցող Ղարաբաղը տնքա թուրք-թաթարական վայրենի Ադրբեջանի անտանելի լծի տակ, մենք ևս՝ Ղարաբաղի հայությունը, չենք կարող հանդուրժել մի երկու տասնյակ հազար թրքության հպատակությունը, մանավանդ որ Սասնո արծիվը մեզնից շատ հեռու չէ»[1]:

Ապա, նոր ստեղծված տագնապային վիճակից ելնելով, ՀՅԴ կոմիտեն շեշտում էր. «Այսօր, երբ ներքին և արտաքին այլևայլ պարագաները Ղարաբաղը հյուծել, թուլացրել, մեր դիմադրական ուժը ցրել ու անկազմակերպ են դարձրել, երբ մենք զուրկ ենք մի կենտրոնացնող ուժեղ անհատից, զինվորական հանճարից, Ղարաբաղի հայությունը, փաշա՛, իր աչքերը հառել է Ձեզ և իր ամբողջ էությամբ ցանկանում է Ձեզ տեսնել, ունենալ իր մեջ, ամբողջ գործի գլուխը կանգնած: Դրությունը միայն Դուք կարող եք փրկել, հետևապես հապաղելը հանցանք է:

Երբ անցյալում գտնվել են մի քանի գծուծ անհատներ, որոնք ինչ-ինչ փոքրոգի նկատառումներով դեմ են եղել Ձեր տեղս գալուն, և որոնք նույնիսկ շտապեցրել են անգլիական առաջին միսիայի Ձեզ մոտ գալը, որի շնորհիվ այսօր մեզ համար չէր ստեղծվի այս դժոխային վիճակը, այժմ Ձեր շուտափույթ Ղարաբաղ անցնելը դարձել է Ղարաբաղի համայն հայության փափագն ու իղձը:

Ղարաբաղի հայությունը կանչում է Ձեզ, և Դուք պետք է գաք»[2]:

Ադրբեջանական զորքերի նոր հարձակումները հայկական բնակավայրերի վրա բուռն բողոքներ առաջ բերեցին հայ քաղաքական շրջաններում: Դաշնակից զորքերի հրամանատարության մոտ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ գեներալ Յակով (Հակոբ) Բագրատունին Բաքվում մի քանի հանդիպումներ ունեցավ գեներալ-մայորի պաշտոնակատար Վ. Թոմսոնի հետ և պահանջեց զսպել մուսավաթական կառավարությանը, կանխել նրա զորքերի ագրեսիվ գործողությունները: Հանդիպումները կարևոր նշանակություն ունեցան: Նկատվում էր դրական փոփոխություն գեներալ Վ. Թոմսոնի՝ դեպի Անդրանիկն ունեցած բացասական վերաբերմունքի մեջ: Տրամադրությունների փոփոխման հարցում կարևոր դեր էր խաղացել մայոր Վ. Գիբոնի համեմատաբար անկողմնակալ զեկույցը:

Հունվարի 25 (12)-ի թվով Բաքվից Գորիս ուղարկած նամակում գեներալ Յ. Բագրատունին Անդրանիկին գրում էր. «Ես շատ եմ խոսած դաշնակիցների գլխավոր հրամանատարի հետ Ձեր գործունեության, Ձեր կատարած դերի մասին (մանավանդ աչքի առաջ ունենալով այն կեղտոտ և անհիմն

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 7:

[2] Նույն տեղում, թ. 8:

տեղեկությունները, որ տրված էին մեր թշնամիների կողմից Ձեր դեմ): Վստահ եմ, որ անգլիացոց հայացքը դեպի Ձեզ փոխված է (մանավանդ մայոր Վ. Գիբոնի Ձեզ հետ տեսնվելուց հետո)»[1]:

Անդրադառնալով Զանգեզուրի և Արցախի դեմ ադրբեջանական զորքերի վերջին հարձակումներին՝ գեներալ Յակով Բագրատունին շարունակում էր. «Թուրքերը, ըստ բոլոր մեր ստացած տեղեկությունների, արտահայտում են բոլորովին որոշ[ակի] ձգտում՝ տարածել իրենց իշխանությունը Ղարաբաղի զուտ հայկական բոլոր մասերի վրա:

Ադրբեջանի կառավարությունն աշխատում է ամեն կերպ դիմել, կազմակերպել և մտցնել Ղարաբաղի մեջ իր վարչական մարմինները և նրանց օգնությամբ «խաղաղ» կերպով նվաճել երկրամասի հայաբնակ մասերը»[2]:

Այնուհետև Յ. Բագրատունին Անդրանիկին տեղեկացնում էր, որ դեպի Ղարաբաղ թուրքերի ունեցած ձգտումների մասին ինքը մի առանձին հուշագրով դաշնակիցների գլխավոր հրամանատարությանը տեղեկացրել է և պատճենը ուղարկել արտասահման՝ ցույց տալով, թե որքան անհիմն էին նրանց պահանջները պատմական, ազգագրական և վիճակագրական տեսանկյունից: Եվ որ հատկապես կարևոր է, նա Երևանի կառավարությանը հորդորել էր անմիջապես օգնություն հասցնել Արցախին և այնտեղ մտցնել հայկական վարչություն: Այդ վարչությունը չպետք է լիներ Արարատյան Հանրապետության պաշտոնական վարչությունը: Դաշնակիցների և թուրքերի համար ընդունելի կլիներ միայն տեղական ժողովրդի կողմից ընտրված տեղական ինքնավարությունը՝ մինչև Արցախի հարցի որոշումը Փարիզի կոնֆերանսում:

«Մեզ համար,– գրում է նա,– շատ կարևոր է ներկա հանգամանքներում մի կերպ աշխատել, մի կողմից խաղաղությունը պահպանել, որ ոչ մի նոր կռիվ չառաջանա, մյուս կողմից թույլ չտալ, որ թուրքերը իրենց վարչությունով մուտք գործեն Ղարաբաղի հայկական մասերը»[3]:

Գեներալ Յ. Բագրատունու նամակում բերված է պատմագիտությանն անծանոթ շատ հետաքրքիր մի փաստ: Գնդապետ Լազար Բիչերախովը Սիբիրի ռուսական կառավարության (Կոլչակի: – *Ա. Ս.)* կողմից նշանակվել էր կասպյան շրջանի ռուսական զորքերի հրամանատար, բայց նա կազմակերպված զորք չուներ, չհաշված այն մի քանի հավատարիմ հարյուրյակները, որոնք մինչև վերջ մնացել էին նրա հետ: Եվ անգլիացիներին ցույց տալու համար, թե ինքը բոլորովին անզոր չէ, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի տարբերություն Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների, հետևողակա-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 49, թ. 1-2:
[2] Նույն տեղում, թ. 2:
[3] Նույն տեղում, թ. 3-4:

նորեն պաշտպանում էր խորհրդային կարգերի դեմ ուղղված սպիտակգվարդիական շարժումը, Լ. Բիչերախովը Յ. Բագրատունուն առաջարկել էր քննության առնել հայկական բոլոր զինված ուժերը, այդ թվում, բնականաբար, նաև Անդրանիկի՝ Զանգեզուրում գտնվող Հարվածող զորամասը իր ենթակայության տակ դնելու հարցը[1]:

«[Քանի որ] մենք Բաքվում ունեցել ենք … դառը փորձ*, ուստի մի քանի խոսակցություններից հետո ես նրան (Լ. Բիչերախովին: – *Ա. Ս.)* բացատրել եմ այդ քայլի անհարմարությունը: … Հարաբերությունները կտրել Բիչերախովի հետ՝ մեզ համար ձեռնտու չէ, աչքի առաջ ունենալով, որ մենք կարող ենք միշտ որոշ շահեր ստանալ: Մյուս կողմից մեր հարաբերությունները ոչ մի կերպ չպետք է ստանան ենթակայության կերպարանք»[2],– շեշտում էր Յ. Բագրատունին:

Նամակի վերջում Յ. Բագրատունին գրում էր. «Ուղարկում եմ հարյուր խաչ՝ բաժանելու, ըստ Ձեր որոշման, մեր քաջարի զինվորներին»[3]:

Թեև իր նամակում գեներալ Յ. Բագրատունին հավաստիացնում էր, թե մայոր Գիբոնի զեկույցը գեներալ Թոմսոնին և վերջինիս հետ իր՝ Յ. Բագրատունու հանդիպումները նպաստել էին Անդրանիկի և Զանգեզուրի ու Արցախի հարցում նրա ադրբեջանամետ կոշտ դիրքորոշումների մեղմացմանը, բայց դա չէր դրսևորվում կոնկրետ գործողություններով: Ադրբեջանական զորքերը շարունակում էին իրենց խժդժությունները Արցախում և Զանգեզուրի սահմանների վրա՝ փորձելով խորանալ Արցախի շրջաններից ներս:

Հունվարի 15-ին Ասկերանով անցավ ադրբեջանական դիվիզիայի մի զորամաս (300-400 հոգի) և տեղավորվեց Խանքենդ ավանի զորանոցներում: Մինչ այդ անգլիացիները հայերին համոզում էին, թե այդ զորամասի զինվորները մաքրում էին զորանոցները, որովհետև անգլիական զորքեր էին գալու Արցախ և տեղավորվելու այդ շինություններում: Երբ այդ առթիվ հայերը դիմեցին նրանց և խնդրեցին պարզաբանել կատարվածը, նրանք պատասխանեցին, թե Արցախը նույնպես Ադրբեջան է, հետևապես թուրք-թաթարները ևս իրավունք ունեն կատարելու զինաշարժեր: Երբեմն էլ անգլիացիները պատասխանում էին, թե իրենք անզոր են նման հարցեր վճռելու[4]:

Արցախահայության պայքարին օգնություն ցույց տալու նպատակով Բաքվի հայոց ազգային խորհրդի կողմից հայրենի երկրամաս ուղարկված դաշնակցական գործիչ, գրող, հրապարակախոս Միսակ Տեր-Դանիելյանն իր օրագրում 1919 թ. մայիսի 12-ին գրում էր.

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 49, թթ. 3-4:

* Նկատի ունի այն, որ Բաքվի կռիվների օրերին հայկական զորամասերը ենթակա էին կոմունայի կարմիր բանակի հրամանատարությանը:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 49, թթ. 4, 5:

[3] Նույն տեղում, թ. 6:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 40, թ. 7 և շրջ., տե՛ս նաև **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 487-488, 491:

«Քանի գնում դրությունն ավելի է ծանրանում… Ղարաբաղի հարցում Հայաստանի կառավարության բռնած դիրքը ինձ միանգամայն ապշեցրել է… Ադրբեջանը չի խնայում միլիոնները, փողը հոսում է ջրի պես, կաշառվածները վխտում են ամեն անկյունում, իսկ մենք փող չունենք, որ սպային հացի փող տանք…

Մեր կողքին Ադրբեջանն ամեն օր ուժեղանում է… Արդեն կազմակերպված զորք ունի…, ռազմամթերքի անհուն պաշար, Խանքենդում՝ թնդանոթներ, Շուշիում՝ գնդացիրներ, Ասկերանում՝ գնդացիրներ, ոտից գլուխ զինված թրքություն և այդ բոլորի վրա ավելացրած՝ հացի առատություն, ճանապարհների ազատություն ու … անգլիական հրամանատարության չափազանց բարեհաճ վերաբերմունք»[1]:

Երբ Անդրանիկը Զաբուղի ձորում ստացել էր գեներալ Վ. Թոմսոնի հրամանը՝ դեպի Շուշի ռազմերթը դադարեցնելու մասին, ինքը ենթարկվել էր հրահանգին, ավելին՝ մեկ ու կես ամիս խստիվ հետևել էր, որ զանգեզուրցի ու արցախցի հայերը չխախտեն պայմանավորվածությունը և նախահարձակ չլինեն թուրքերի դեմ, սակայն, տեսնելով, որ անգլիացիների բացահայտ աջակցությունից թևավորված թուրքերը շարունակում էին կռիվներ սանձազերծել, այլևս հայերից չէր պահանջում զենքի չդիմել: Ավելին՝ նա մեղադրական հետևյալ բողոքագիրը հղեց Բաքվում Կովկասի անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատարությանը.

«Իմ շարժումը դեպի Շուշի կանգնեցվեց դաշնակից պետությունների ընդհանուր հրամանատար գեն[երալ] Թոմսոնի կարգադրությամբ: Ինձ հայտնեցին համաշխարհային պատերազմի վերջանալը հօգուտ դաշնակից պետությունների, որի զինակիցն եմ հաշվվում և հպարտ եմ նրանով: Ինձ խոստացան, որ այլևս տեղի չի կարող ունենալ և ոչ մի զինաշարժում և ագրեսիվ գործունեություն, ճնշում թրքերի կողմից հայերին:

Ես ընդունեցի առաջարկը և վերադարձա Զանգեզուր, տալով իմ ազնիվ խոսքը իմ հրամանատարության տակ գտնվող ամբողջ տերիտորիայում գործադրել բոլոր միջոցները՝ խաղաղեցնելու երկիրը և վերականգնելու բարի դրացիական կենցաղ ժողովրդի մեջ առանց ազգի խտրության:

Ցավոք սրտի, այժմ ինձ հայտնի են թրքության մեջ զորաց շարժումների և զինամթերքի փոխադրություններ մի տեղից մյուսը Ղարաբաղում և Զանգեզուրում:

Այս հանգամանքները նկատելով կարգադրությանց ճգնաժամային փոփոխություններ ի վնաս հայության ապահովության ու երկրի անվտանգության, և մարտահրավեր Ղարաբաղի, Զանգեզուրի հայության և ինձ՝ խոնարհաբար խնդրում եմ Ձեզ, ընդհանուր ժողովրդի շահը նկատի առնելով, միջոցներ ձեռք առնել վերահաստատելու այն դրությունը, ինչպիսին էր

[1] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 64, թ. 17-ի շրջ.:

մինչև նոյեմբերի կեսը: Կարգադրել հետ քաշվել այն զորամասերին, որոնք Աղդամի շրջանից Ասկերանով իջած մտած են Խանքենդ և ուրիշ տեղեր, որպեսզի խաղաղվեն մտքերը և պատճառ չդառնան նույնանման զորամասերի առաջխաղացման հայերի կողմից:

Պարտք եմ համարում հայտնել հարգո միսիային, որ Ղարաբաղի և լայնածավալ Զանգեզուրի, Ղափանի, Սիսիանի և Մեղրիի շրջանների 300 հազար շնչից ավելի հայության համար անհանդուրժելի է, ոչ մի կերպ այս հայությունը չի կարող ճանաչել Ադրբեջանի որևէ իրավունք իր տերիտորիայի նկատմամբ:

Զանգեզուրի զորամասերի ընդհանուր հրամանատար
գեներալ-մայոր
ԱՆԴՐԱՆԻԿ»[1]:

Թուրք-թաթարների նոր հարձակումներն ակտիվացրին Հայաստանի Հանրապետության կառավարության դիվանագիտական գործողությունները և նրան վերջնականապես դուրս բերեցին սպասողական վիճակից:

Քանի որ Զանգեզուրը և Արցախը Ադրբեջանին հանձնելու դիմաց անգլիացիները հակված էին Նախիջևանի երկրամասը Հայաստանին թողնելու մտքին, Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը 1919 թ. հունվարի 14-ին որոշում ընդունեց Նախիջևանի գեներալ-նահանգապետ նշանակել գեներալ-մայոր Գրիգոր Հարությունի Շելկովնիկյանին[2]: Դա հնարավոր դարձավ այն պատճառով, որ գերմանա-թուրքական բլոկի պարտությանը հաջորդած երկու ամիսներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը դիվանագիտական հսկայական ջանքերի գնով կարողացել էր հասնել այն բանին, որ դաշնակիցները ճանաչել էին Հայաստանի իշխանությունը հայկական պատմական այդ երկրամասի վրա:

Հայաստանի կառավարության կողմից դրսևորված այդ հապճեպությունը թելադրված էր նաև նրանով, որ Երևանում հայտնի էր դարձել Բաքվի մտադրությունը՝ չսպասել Փարիզի վեհաժողովի որոշմանը, զավթել ոչ միայն Զանգեզուրը և Արցախը, այլև Նախիջևանը և այնտեղ հիմնել Ադրբեջանի Նախիջևանի գեներալ-նահանգապետություն: Չնայած դա Ադրբեջանին չհաջողվեց, բայց 1919 թ. հունվարի 15-ին անգլիացիների երաշխավորությամբ մուսավաթական կառավարությունը Ելիզավետպոլ նահանգի հարավարևելյան մասի՝ Շուշիի, Զանգեզուրի, Զևանշիրի և Զաբրայիլի չորս գավառներից կազմեց նահանգապետություն և նույն օրը դրա ղեկավարությունը հանձնեց գեներալ-նահանգապետ նշանակված Զանգեզուրի մուսուլ-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 39, թ. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 132: Տե՛ս նաև **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 548:

մանական մասի Հաջիսամլու գյուղի Սուլթանովների մեծահարուստ քուրդ հայտնի գերդաստանից սերած, մասնագիտությամբ բժիշկ Խոսրով բեկ Սուլթանովին[1]:

Վերջինս խոշոր կալվածատեր էր, նախկին օսմանյան գործակալ, երիտթուրքական մարդատյաց գաղափարների ջերմ երկրպագու, մոլի հայատյաց մուսավաթական: Իր եղբայրների հետ Խոսրով բեկը հռչակվել էր հայերի նկատմամբ անլուր գազանություններով[2]:

Խոսրով բեկ Սուլթանովի՝ որպես հայերի դահճի համբավը վաղուց էր հայտնի մուսավաթական պարագլուխներին, որոնք, նրան այդ պաշտոնին նշանակելով, Արցախի և Զանգեզուրի հայությանը կանգնեցրել էին փաստի առջև՝ հասկացնել տալով, որ անզիջում էին լինելու հայկական զույգ երկրամասերը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու հարցում[3]:

Արցախի ազգային խորհուրդը և Հայաստանի կառավարությունը երբեք չհաշտվեցին Ղարաբաղը Ադրբեջանին զիջելու մտքին: Նրանք բոլոր հիմքերն ունեին չհավատալու անգլիացիների այն հավաստիացումներին, որ Խ. Սուլթանովի նշանակումը զորավար Վ. Թոմսոնի կողմից ժամանակավոր միջոցառում էր՝ մինչև Փարիզի համաժողովի կողմից հարցի լուծումը:

Հայերը այդ իրավիճակի հետ չէին կարող հաշտվել, որովհետև.

ա. Արցախյան հարցը նրանք դիտարկում էին իրենց կենսական շահերի և պետականության ամրապնդման անքակտելի միասնության մեջ,

բ. արցախահայության մասնակցությունը հայոց ազգային կյանքի և քաղաքական շարժման մեջ միշտ եղել է նշանակալից և ծանրակշիռ թե՛ պատմական, աշխարհագրական-ազգագրական, թե՛ ռազմավարական տեսանկյունից,

գ. Արցախը հնուց ի վեր շարունակ եղել է Հայաստանի ներքին զորության բաղկացուցիչ և կարևոր մասը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 31, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 55: Տե՛ս նաև **Լեո**, նշվ. աշխ., էջ 426, **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրեին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 50, Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը Հայաստանի կառավարութեան կովկասեան կօնֆերանսի գործունէութեան մասին, 12 յունիս, 1919, Հայրենիք եռամսեայ, 1968, Ա տարի, թիվ 2, էջ 20: **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 490, **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 224-225: **Ց. Ղուլյան**, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թվականներ, Երևան, 2009, էջ 216: **Ռ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, հատոր առաջին, Երևան, 2005, էջ 175-178:

[2] Տե՛ս **Ց. Խաչատուրեան**, Անգլիական քաղաքականութիւնն ի Անդրկովկաս, «Հայրենիք», 1945 մայիս-յունիս, թիվ 3 (248), էջ 31, **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 50:

[3] Տե՛ս **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 21:

Այս գիտակցությամբ տոգորված՝ Արցախի ազգային խորհուրդը և Հայաստանի կառավարությունը բողոքի նոտաներ ու ուղերձներ էին հղում անգլիական զինվորական իշխանություններին, Ադրբեջանի կառավարությանը, դաշնակից երկրների ներկայացուցիչներին ու ժողովուրդներին[1]:

Անգլիական հրամանատարության և Բաքվի իշխանությունների կողմից Ադրբեջանի կազմում Ղարաբաղ–Զանգեզուրի գեներալ-նահանգապետության ստեղծումը մեծ դժգոհություն էր առաջ բերել ոչ միայն այդ երկու երկրամասերի հայ բնակչության և հայկական իշխանությունների շրջանում, այլև Հայաստանի Հանրապետությունում, որի կառավարությունը Արցախ–Զանգեզուրի շրջանի հայության արդարացի պահանջները համառորեն անտեսելու համար ուժգին քննադատության էր ենթարկվում ինչպես խորհրդարանում, այնպես էլ քաղաքական ուժերի, այդ թվում՝ դաշնակցական նշանավոր շատ գործիչների կողմից: Հոգսն ընդհանուր էր. Արցախը և Զանգեզուրը հայկական տարածքներ էին, և դրանք պետք էր անհապաղ ներառել Հայաստանի Հանրապետության կազմի մեջ[2]:

Հապաղումը կարող էր ճակատագրական լինել Ադրբեջանի կառավարության կողմից իրականացվող նոր դեմարշի պատճառով: Եվ կառավարությունը սկսեց գործել:

Գեներալ-նահանգապետության ստեղծումը և Խ. Սուլթանովին գեներալ-նահանգապետ նշանակելը Երևանում համարեցին հերթական թշնամական գործողություն: Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Սիրական Տիգրանյանը բողոքի նոտա ուղարկեց Ադրբեջանի կառավարությանը՝ հայտարարելով, որ Զանգեզուրն ու Արցախը Հայաստանի անբաժան մասերն են[3]: Նոտայում նշվում էր, որ երկու պետությունների միջև սահմանները որոշելիս պետք է առաջնություն տալ ժողովրդագրական սկզբունքին:

Նշված բողոքին Ադրբեջանի կառավարությունը պատասխանեց, որ խնդրո առարկա շրջանները «Ադրբեջանի անվիճելի և անխախտ մասն են կազմում», ուստի «ընդհանուր նահանգապետություն հաստատելու որոշումը ոչ մի դեպքում չի խախտում Հայաստանի հողային իրավունքները: Ընդհակառակը, Հայաստանի կառավարության բողոքը մենք համարում ենք խախտում մեր գերիշխանության և մեր ներքին գործերին միջամտելու փորձ»[4], ուստի իր

---

[1] Տե՛ս «Ազատամարտ», 21-27 մայիսի 1993 թ., **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 312:

[2] Տե՛ս **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 225:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 190, թ. 5, տե՛ս նաև **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 50:

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 190, թ. 6, տե՛ս նաև **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 51:

իրավասությունն էր ենթակա երկրամասերում կառավարման վարչական ձևերի ընտրությունը՝ տվյալ դեպքում միացյալ նահանգապետության սահմանումը[1]:

Հայաստանի կառավարության նմանատիպ բողոքները Ադրբեջանում բացահայտորեն արհամարհում էին՝ անգլիացիների անթաքույց խրախուսանքով: Հայաստանի կառավարությունը բողոքներ հղեց նաև Կովկասում անգլիական հրամանատարությանը[2]:

Իր բողոք-նամակում արտգործնախարար Ս. Տիգրանյանը հույս էր հայտնում, որ մինչև Փարիզի համաժողովի կողմից Լեռնային Արցախի վերաբերյալ որոշման ընդունումը պետք է պահպանվեր նրա status quo-ն, որը չէր կարող միակողմանիորեն փոփոխվել ադրբեջանական կառավարության կողմից[3]: Սակայն բոլոր բողոքները ապարդյուն էին: Գաղութարար բրիտանացին լուռ էր: ՀՅ դաշնակցության Շուշիի կենտրոնական կոմիտեն 1919 թ. փետրվարի 19-ին դիմեց Անդրանիկին՝ չհեռանալ Զանգեզուրից: Դիմումում նշվում էր, որ Զորավարին ուղղված ՀՅԴ շրջանային կոմիտեի նախորդ նամակից հետո քաղաքական մթնոլորտն ավելի էր վատթարացել: Ժամանել էր անգլիական նոր առաքելություն, որը Բաքվում ստացել էր որոշակի ցուցումներ: Կոմիտեն փաստում էր, որ խիստ որոշ էր անգլիացիների վարած քաղաքականությունը: Պատմական փորձը, մանավանդ անգլիացիների՝ անցյալում հայերի նկատմամբ վարած քաղաքականությունը ցույց էին տալիս, որ նրանք հանուն տնտեսական և այլևայլ շահերի ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնի: Բրիտանիայի շահերը բարձր էին դասվում մյուս բոլոր խնդիրներից: Այդ պատճառով տնտեսական նորանոր թևակոխումների համար հզորացվում էին Ադրբեջանը և Վրաստանը, որոնք հենց իրենց՝ անգլիացիների թշնամիներն էին, և որոնց, մանավանդ առաջինի իշխանությունը հիմնված էր տասնյակ հազարավոր հայ դիակների վրա: Այդ հայերը զոհ էին դարձել նույն անգլիացիների զինակցությանը մեր թշնամիների հետ[4]: ՀՅԴ Շուշիի կոմիտեն փաստում էր նաև, որ անգլիացիներն առաջնորդվում էին հետևյալով. Փարիզի համաժողովը հավանորեն մի ամբողջություն կկազմեր Մայր Հայաստանից և Ռուսահայաստանից, և քանի որ Անգլիան աչք ուներ Կովկասի վրա, ուստի շահագրգռված էր Ադրբեջանի և Վրաստանի հողերի ընդարձակմամբ, որովհետև վերջիններիս

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 190, թ. 6, տե՛ս նաև **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 51:

[2] Տե՛ս ֆ. 206, ց. 1, գ. 27, թ. 68 և շրջ.:

[3] Տե՛ս **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 51, Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը Հայաստանի կառավարութեան կովկասեան կօնֆերանսի գործունէութեան մասին, 12 յունիս, 1919, «Հայրենիք եռամսեայ», 1968, Ա տարի, թիվ 2, էջ 21:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15, Արցախը կանչում էր Անդրանիկին (փաստաթղթեր), Երևան, 1995, էջ 92-93:

հողերի ընդլայնումը նշանակում էր ապագա Բրիտանական Կովկասի սահմանների ընդլայնում: Այս հարցում Անգլիայի ու Ադրբեջանի շահերը միաձուլվում էին: Հենց այս հանգամանքով էր բացատրվում այն երևույթը, որ աշխարհամարտի ժամանակ Բրիտանիային թշնամի Ադրբեջանը մեծարվում էր նույն Բրիտանիայի կողմից, իսկ զինակից հայերը շարունակ զսպվում, ճնշվում, ստորացվում էին նրա կողմից[1]: Այդ ամենից հետո պարզից պարզ էր, թե ինչու անգլիացիները և Ադրբեջանի թուրքերը ամեն ինչ անում էին՝ Զորավարին ազգային գործերից հեռու պահելու համար:

«Անգլիացիների կողմից մի հանգամանք ևս նկատելի է,– նշում էր կոմիտեն,– նրանք աշխատում են, բացի իրենցից, Կովկասում քիչ թե շատ աչքի ընկնող ուժերին, ուժեղ անհատներին, որոնք անհրաժեշտ դեպքում լուրջ արգելք կարող են լինել իրենց ծրագրած քաղաքականության, աստիճանաբար չեզոքացնել, վերացնել՝ մեծ հնարավորություններ տալով, անգամ Եվրոպա ուղարկել. այդպես վարվեցին նրանք Բաքվում գեներալ Բիչերախովի հետ, այդպես են ուզում վարվել նաև... թվում է Ձեզ հետ: Նրանք շատ լավ են հասկանում և հաշվի առնում, թե ո՞վ եք Դուք և ի՞նչ կարող եք անել հարկ եղած դեպքում»[2]:

Նամակում ցավ էր հայտնվում, որ այդ քաղաքականությունը աջակցություն էր ստանում Հայաստանի իշխանությունների կողմից, և ավելացվում. «Բայց մենք համոզված ենք, Անդրանի՛կ, որ Ձեր հեռանալը կարող է մեծամեծ դժբախտությունների պատճառ դառնալ, որի նշաններն արդեն երևում են. Դուք Զանգեզուրում Ձեր ներկայությամբ թեկուզ հեռվից սանձահարում, զսպում եք Ադրբեջանի ախորժակները, Դուք այդտեղից իսկ ազդում եք տեղիս իրերի դասավորության, երևույթների ընթացքի վրա: Ձեր՝ Շուշիում լինելը պատմական անհրաժեշտություն է. եթե այդ անկարող եք անել, գոնե այդտեղից՝ Զանգեզուրից, էլ չենք ասում հայ երկրից, Ձեր հեռանալը մեծամեծ չարիքների դուռ է բանալու»[3]:

Փաստաթուղթն արձանագրում էր, որ Արցախի հայությունը դառնացած էր անգլիացիների վրա, և մոտ ապագան ցույց կտա, թե ինչ խոսք էր ասելու նա ծանր ու խիստ պատասխատու պահին: Արցախահայության վերջին ցանկությունն էր, որ եթե Զորավարը չէր կարող անցնել Արցախ, գոնե մնար Զանգեզուրում[4]:

ՀՅ դաշնակցության Շուշու շրջանի կենտրոնական կոմիտեն հավատացած էր, որ Անդրանիկը կասեր իր որոշիչ խոսքը[5]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15-ի շրջ., Արցախը կանչում էր Անդրանիկին (փաստաթղթեր), Երևան, 1995, էջ 92-93:

[2] Նույն տեղում:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15-ի շրջ.:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում:

Անգլիացիները շարունակում էին իրենց նմանատիպ գործունեությունը: Դիզակի զորքի շտաբի պետ Ասլան Շահնազարյանը Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին հորդորում էր Վրաստանի մայրաքաղաքում գտնվող բրիտանական թագավորական բանակի 27-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ջորջ Թաունզենդ Ֆորեստյե-Ուոկերի անունով կազմել մի հուշագիր՝ բացատրելով նրան, որ մինչև անգլիական առաքելության Շուշի գալը հայերը եղել են ազատ:

«Ինչպես կարելի է այժմ,– գրում է նա,– այդ ազատ ժողովրդին ենթարկել նորաթուխ թշնամական պետությանը՝ Ադրբեջանին, որի գոյությունը չեն ճանաչում անգամ շատ մահմեդականներ, և որն ի վիճակի չէ իր երկրում ապահովելու կարգուկանոնը և անձի անձեռնմխելիությունը, էլ ուր մնաց, թե ղեկավարի ազատասեր և կուլտուրական առումով ավելի բարձր մակարդակի վրա գտնվող Ղարաբաղի հայերին»[1]:

Ի վնաս հայերի Ադրբեջանին պաշտպանելը անգլիացիները փորձում էին բացատրել նրանով, որ Արևմտյան Հայաստանից և Այսրկովկասի հայկական գավառներից կազմվելիք ամբողջական Հայաստանի ստեղծմանը Փարիզում կողմ էր քվեարկելու նաև բրիտանական կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության վրա թողած տհաճ տպավորությունը մեղմելու համար գեներալ-մայորի պաշտոնակատար Վ. Թոմսոնի հանձնարարությամբ մայոր Վ. Գիբոնը եկավ Գորիս, հանդիպեց Անդրանիկին, նոր քննարկումներ սկսվեցին: Զրույցի ընթացքում Զորավարը մայորին պատմեց իր երեսնամյա պայքարի, թուրքական բռնակալության դեմ մղած իր կռիվների մասին: Երբ խոսք բացվեց Հայաստանի սահմանների հարցի շուրջ, Անդրանիկը նշեց, որ ինքը դեմ է Կասպից ծովից մինչև Միջերկրականի ափերն ընկած տարածքների վրա հայկական պետություն ունենալու ծրագրին, քանի որ ջարդերի հետևանքով խիստ նվազել էր հայերի թիվը, և հազիվ թե նրանք կարողանային պաշտպանել նման մեծ պետությունը: Նա կարծում էր նաև, որ Հայաստանը պետք է այնպիսի տարածք ունենար, որը համապատասխաներ հայության ուժին և հնարավորություններին, բայց անպայման դեպի ծով ելքով՝ Կիլիկիայի կամ Տրապիզոնի վրայով: Նա մտածում էր նաև, որ Հայաստանը գոնե մեկ սերնդի ընթացքում պետք է գտնվեր որևէ պետության հովանավորության ներքո[2]:

Գորիսից Վ. Գիբոնը մեկնեց Նախիջևան, տեսակցեց անգլիացի զինվորական նահանգապետ կապիտան Ֆրեդերիկ Իստլենդ Լաուտոնին և գնաց Երևան[3]: Այստեղ նա հանդիպումներ ունեցավ նախարարների խորհրդի նախագահի, զինվորական և պարենավորման նախարարների հետ, որոնք

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15:

[2] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 64, թ. 5:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 27, թ. 41:

բոլորն էլ վճռական անհամաձայնություն հայտնեցին Զանգեզուրի և Արցախի հարցում վարվող անգլիական քաղաքականությանը:

Երկու երկրամասերի և Երևանի միջև հաղորդակցության դժվարությունները հաշվի առնելով՝ Հայաստանի կառավարությունը նպատակահարմար համարեց Լեռնային Արցախի կառավարման գործը ժամանակավորապես հանձնարարել Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը մուսավաթական կառավարության և անգլիացիների նվաճողական քայլերին ընդդեմ 1919 թ. հունվարի 21-ին որոշում ընդունեց՝ Զանգեզուրի և Արցախի հայկական շրջանների ժամանակավոր միասնական վարչություն ստեղծելու մասին՝ ղեկավար (պետական կոմիսար) նշանակելով շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանին: Պետական կոմիսարը, ըստ էության, դարձավ երկու երկրամասերի գլխավոր դեմքը[1]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իր քաղաքականությունն ակտիվացնելով, փորձում էր կանխարգելել Զանգեզուրին և Ղարաբաղին տիրելու ադրբեջանական ոտնձգությունը:

ՀՀ իշխանությունների՝ Զանգեզուրի ազգային խորհրդին ուղղված փաստաթղթում արձանագրված էր, որ Զանգեզուրի և Արցախի հայկական մասերում ժամանակավոր վարչություն հաստատելու մասին որոշմամբ այդ երկու հայկական մասերը, կազմելով Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը, կառավարվելու էին հանրապետության կենտրոնական կառավարության համապատասխան մարմինների միջոցով և Հայաստանում գործող օրենքների հիման վրա: Ժամանակավորապես երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում էր Զանգեզուրի հայկական ազգային խորհրդին, որն այսուհետև կոչվելու էր Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդ:

Խորհուրդը երկիրը ժամանակավորապես կառավարելու էր Հայաստանի Հանրապետության անունից և նրանից ստացած լիազորություններով: Խորհրդի գոյություն ունեցող կազմը լրացվելու էր Արցախի հայաբնակ մասերի ներկայացուցիչների, ինչպես նաև շրջանում ապրող թուրք ազգաբնակչության ներկայացուցիչների թվին համապատասխան: Խորհրդի կազմը պետք է ներկայացվեր ՀՀ կառավարությանը հաստատման նպատակով[2]:

Կառավարության նիստում ընդունված փաստաթղթի 6-րդ կետով նշվում էր, որ մինչև նոր կարգի հաստատումը երկրամասի բոլոր պետական հաստատությունները և պաշտոնյաները պետք է ենթարկվեին Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդին, հիմնվեին և հաստատվեին խորհրդի կողմից ու պատասխանատու լինեին նրա առաջ:

Փաստաթղթի 7-րդ կետը վերաբերում էր եկամուտներին, ըստ որի՝

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 7, ֆ. 206, ց. 1, գ. 27, թթ. 28-29:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 38, գործավարական թիվ 268:

երկրի եկամուտները (պետական հարկեր և ուրիշ հասույթներ) ծախսվելու էին երկրամասի կարիքների համար, իսկ պակասը լրացվելու էր հանրապետության գանձարանից: 1919 թ. փետրվար ամսի պետական ծախսերը հոգալու համար հանրապետության գանձարանից հատկացվեց 400000 ռուբլի:

9-րդ և 10-րդ կետերով ամրագրվում էին երկու երկրամասերի կառավարության ընդհանուր գործառույթները: Հայաստանի կառավարությունը Զանգեզուրի և Ղարաբաղի հայկական շրջանների վարչություններին իր բյուջեից տրամադրում էր որոշակի միջոցներ[1]:

Որոշման կայացումից հետո՝ 1919 թ. հունվարի 21-ին, ՀՀ կառավարությունում ներկայացվեց նաև ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Ալեքսանդր Խատիսյանի անմիջական մասնակցությամբ մշակված փաստաթուղթը, որն իր կետերով Զանգեզուր–Ղարաբաղի կառավարման ծրագիր էր: Ըստ այդ ծրագրի՝ պետական կոմիսարի զինվորական լինելու դեպքում նրան էր հանձնվելու նաև Գորիսի վաշտի հրամանատարությունը, հակառակ դեպքում վաշտի հատուկ հրամանատար պետք է նշանակեր զինվորական կոմիսարը: Պետական կոմիսարի ընտրությունը հանձնարարվում էր նախարար-նախագահին՝ ներքին գործերի և զինվորական նախարարների համաձայնությամբ[2]:

Հայկական կառավարությունն իր ընդունած որոշման մասին տեղյակ պահեց Զանգեզուրի տեղական ինքնավարության ներկայացուցիչներին, որի մասին վկայում էր փաստաթղթի՝ Զանգեզուրի ազգային խորհրդին ուղարկված օրինակի՝ արխիվում պահպանված պատճենը:

Կառավարությունը 1919 թ. հունվարի 30-ի թվով Ա. Շահմազյանին հանձնեց հետևյալ փաստաթուղթը.

«ՎԿԱՅԱԳԻՐ

Սույն վկայագիրը ներկայացնող Արսեն Շահմազյանն է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված Զանգեզուր-Ղարաբաղի շրջանի պետական կոմիսար, առ որ վկայեմ ստորագրությամբ և կնիքի դրոշմամբ:

Մինիստր-նախագահ՝

Ի տ. գործերի կառավարչի»[3]:

Արամ Մանուկյանի մահվանից հետո Հայաստանի Հանրապետության ներքին գործոց նախարար նշանակված Ալեքսանդր Խատիսյանը 1919 թ. փետրվարի 2-ին Անդրանիկին գրում էր. «Մեր կառավարությունը նշանակել

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 27, թ. 28-29-ի շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 7:

է Արսեն Շահմազյանին կոմիսար Զանգեզուրի և Ղարաբաղի համար, և ես լիահույս եմ, որ Դուք նրան ամենայն կերպով կաջակցեք ամեն բանում»[1]:

Այսպիսով՝ նույն հայկական տարածքների վրա նշանակվել էին երկու ղեկավարներ, մեկը՝ Բաքվի, մյուսը՝ Երևանի կողմից:

Բաքվի նշանակած նահանգապետի թիկունքում կանգնած էին Ադրբեջանի ողջ թրքությունը, անգլիացիները, Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ընկած շրջանի քրդությունը: Երևանի կողմից նշանակված պետական կոմիսար Շահմազյանի թիկունքում երկու երկրամասերի հայությունն էր, Անդրանիկի Հարվածող զորամասը: Որոշ հանգամանքների պատճառով Ա. Շահմազյանը ստիպված էր Զանգեզուր մեկնել մեկ ու կես ամիս հետո միայն՝ մարտի 12-ին[2]:

1919 թ. հունվարի վերջերին զորավար Վ. Թոմսոնը, այլ պաշտոնի անցնելու կապակցությամբ Բաքվից եկավ Շուշի, այնտեղից ժամանեց Գորիս, ապա՝ Նախիջևան–Ղամարլու գծով անցավ Երևան՝ Թիֆլիս գնալու համար:

Թեև Զևանշիրի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի ազատասեր ըմբոստ գավառները ոտքի էին կանգնել թոթափելու թուրքական լուծը, բայց Արցախն ամբողջությամբ, որի հայությունը ռուսական պետությանը տալիս էր մինչև 30 հազար զինվոր[3], չուներ զինվորական մի կուռ կազմակերպություն, հեղինակավոր մի անձնավորություն, որը կարողանար ի մի բերել երկրամասի բոլոր ուժերը:

Կշռադատելով այդ բոլոր հանգամանքները՝ Արցախի հայ սպաները, որոնք պատկառելի թիվ էին կազմում և ունեին իրենց զինվորական զանգվածը, մի շարք ժողովներից հետո՝ 1919 թ. փետրվարի կեսերին, ստեղծեցին մի կազմակերպություն, որն իր առջև նպատակ էր դրել համախմբելու արցախահայության ուժերը, հարթեցնելու կուսակցական և անհատական տարաձայնությունները և թույլ չտալու Ադրբեջանի իշխանության հաստատումը երկրամասում: Հայ սպաների կազմակերպությունը ճանաչում էր միայն Արցախի հայոց ազգային խորհրդի հեղինակությունը, որի կազմում ուներ իր ներկայացուցիչը:

Բաքվից գեներալ Յ. Բագրատունին իր հավանությունը տվեց հայ սպաների կազմակերպության ստեղծմանը և խոստացավ օժանդակել նրան: Այս մասին Արցախի հայ սպաների կազմակերպության ղեկավար մարմինը (շտաբը) 1919 թ. փետրվարի 21-ին նամակով տեղյակ պահեց զորավար Անդրանիկին՝ միաժամանակ խնդրելով այդ առթիվ մի կոչ հղել Արցախին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 47, թ. 21:

[2] Տե՛ս **Ա. Աստուածատրեան,** Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 10 (380), էջ 48, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 548:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 21:

«Առանց Ձեր հեղինակավոր կոչի,– ասված էր նամակում,– առանց Արցախի բոլոր գավառների հրամանատարներին և հայ հասարակությանն ուղղված Ձեր շրջաբերականի, մենք կասկածում ենք, հազիվ թե բոլորի կողմից ըստ արժանվույն կճանաչվեն Արցախի հայոց ազգային խորհրդի հեղինակությունն ու օրինականությունը: Լիահույս ենք, որ այդպիսի մի կոչի հրապարակումը չեք զլանա և այն կուղարկեք տպագրված և կնքված Ձեր հատուկ կնիքով»[1]:

1919 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին ավելի ու ավելի հաճախ էին Արցախից նամակներ հղվում Գորիս՝ Անդրանիկին:

Վարանդայի զինվորական հրամանատար Սոկրատ բեկը հունվարի 27-ի նամակով Զորավարին զանգատվում էր, որ հայերի բազմաթիվ բողոքները հաշվի չէին առնում ո՛չ Բաքվի իշխանությունները և ո՛չ էլ անգլիացիները: Նա նշում էր, որ մայոր Գիբոնը Շուշիում հայտարարել էր, թե քանի որ քաղաքը Ադրբեջանի կազմի մեջ է, ուստի այնտեղ ապրող ամեն հայ պարտավոր էր ճանաչել այդ իրողությունը: Մայորը դա հիմնավորել էր նրանով, որ քաղաքի բոլոր, այդ թվում՝ հայ պաշտոնյաներն իրենց ռոճիկը ստանում էին Բաքվից[2]: Սոկրատ բեկը գրում էր, որ ինքը մայորին հետևյալն է պատասխանել. «Եթե մեզ փող չունենք ադմինիստրացիան պահելու, դա մեր մեղքն է, բայց փողի պատճառով ենթարկվել Ադրբեջանին, դա իմ գործը չէ: Եթե Դուք մեզ մտցնեք Ադրբեջանի մեջ, կստեղծվեն այնպիսի թյուրիմացություններ, որոնց առջևը Դուք չեք կարողանա առնել»[3]:

Արցախի հայոց ազգային խորհուրդն ակնկալում էր Զորավարի աջակցությունը և անմիջական միջամտությունը երկրամասում կատարվելիք իրադարձություններին:

Ադրբեջանական զինված հրոսակախմբերը թուրք զինվորականների ղեկավարությամբ շարունակ հարձակումներ էին գործում սահմանագծի հայկական գյուղերի վրա: Ամեն օր տեղի էին ունենում կողոպուտներ Գորիս-Շուշի և Շուշի–Եվլախ խճուղիների վրա: Փոստը չէր գործում, Բաքվից և այլ տեղերից փոխադրված գումարները տեղ չէին հասնում: Թիֆլիս–Բաքու երկաթուղին հայերի համար շարունակում էր մնալ անապահով: Վագոններից հայ ճանապարհորդներին թուրքերը հաճախ դուրս էին քշում ու սպանում: Կատարվող խժդժությունների մասին տեղեկացնում էին Շուշիի անգլիական առաքելությանը, դաշնակիցների զորքերի հրամանատարներին, Բաքվի հայոց ազգային խորհրդին, բայց ոչ մի պատասխան չէր ստացվում[4]: Արցախի ազգային խորհուրդը հնարավորություն չուներ ներկայացուցիչներ

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թթ. 21-22:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 40, թ. 12:

[3] Նույն տեղում, թ. 12-ի շրջ.:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 38, թ. 18:

ուղարկելու Բաքու՝ իր խնդիրները պարզելու և որոշ պահանջներ դնելու նպատակով: Շուշիի առաքելությունը խոստովանում էր, որ ինքը անզոր է որևէ ակտիվ քայլ անելու ընդդեմ ադրբեջանական ոտնձգությունների: Իրավիճակի մասին նա ևս տեղեկացնում էր Բաքվի իր վերադասին, բայց վերջինից ոչ մի պատասխան չէր ստանում: Ադրբեջանցիները այլևս հաշվի չէին առնում առաքելությանը և դարձել էին անկառավարելի[1]:

Արցախի ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը հունվարի 28-ին Անդրանիկին գրած նամակում նշում էր, որ Արցախի հայությունն ավելի քան թշնամաբար էր տրամադրված դեպի Ադրբեջանը, «որի ձգտումն է տիրանալ մեր երկրին ու իր հայադավ կարգերը հաստատել այստեղ», բայց Արցախի «հայ ժողովրդի միակ նպատակն ու որոշումն է՝ երբեք և ոչ մի դեպքում գլուխ չխոնարհել, չենթարկվել Ադրբեջանին և միանալ հայության ընդհանուր կենտրոնին՝ Արարատյան Հանրապետության»[2]: Նա նշում էր, որ այդ ամենին խանգարում են որոշ «տխրահռչակ հերոսներ», որոնք «իրենց արտաքո կարգի ռուսասիրությամբ ձգտում են Ղարաբաղը առանձնացնել և նույնիսկ թուրքական հարթավայրերի հետ միասին ապագա Ռուսաստանի սահմաններում ինչ-որ քաղաքական ինքնավար միություն ստեղծել»[3]: Նամակագիրը այնուհետև փաստում էր, որ հայերի շրջանում առաջացած անհամաձայնությունների պատճառով Արցախում վերջին շրջանում թուլացել էր զինվորական ուժը և շատ մոտ ապագայում գուցե միանգամից ոչնչանար: «Ժողովուրդն այսօր չգիտի ինչ անել, ում դիմել: … Վաղվան օրը մեր ժողովուրդը պիտի կանգնե կորստյան անդունդի առաջ և չի գտնվելու մեկը, որ փրկե նրան»[4]:

Ազգային խորհրդի նախագահը գրում էր. «Այսօր մեր դրությունն ավելի անորոշ է, քան թուրքերի տեղս եկած ժամանակը: Այն ժամանակ մի կողմում հայ ազատասեր գյուղացիությունն էր զենքը ձեռին ու չէր ուզում խոնարհվել բիրտ ուժի առաջ, իսկ մյուս կողմում թուրքական բարբարոս կառավարությունն էր, որ պատրաստ էր ամեն րոպե ծվատելու հայությանը: Տագնապի այն օրերին ընդհանուր կամքն ավելի էր նկատելի, քան այժմ: Որոշ մարդիկ այժմ անձնական քաղաքականությունն են առաջ տանում առանց ժողովրդի կամքը հարցնելու: Ժողովուրդը վաղը կամ մյուս օրը բոլորովին պիտի լքվի և կորցնի իր գլուխը»[5]:

Ստեղծված այդ ծանր պայմաններում Ե. Իշխանյանը Արցախի փրկության մի ելք էր տեսնում. Անդրանիկը իր զորամասով պետք է Գորիսից անցներ Շուշի: «Ժողովուրդը Ձեզ է ցանկանում և ուզում տեսնել իր մեջ՝ իր

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 18:

[2] Նույն տեղում, թ. 17-ի շրջ.:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, թ. 18:

[5] Նույն տեղում, թ. 19:

հարազատ, սիրած ու պաշտած հերոսապետին: Ձեր ներկայությամբ, իհարկե, այլևս անգլիական միսիան չի կարող լուռ հանդիսատես լինել, (և) նա հարկադրված կլինի ակտիվ քայլերի դիմելու ադրբեջանյան ոտնձգությունների դեմ»[1]:

Հինգ օր հետո՝ փետրվարի 2-ին, Արցախի ազգային խորհրդի նախագահը մի նոր նամակով կրկին դիմեց Զորավարին՝ գրելով. «Ղարաբաղի հայությունը սրտատրոփ սպասում էր Ձերդ Գերազանցության տեղս գալուն, սակայն երբ զանազան հանգամանքների շնորհիվ Դուք կանգ առաք Հազարուի ափերին, մեր ժողովուրդը խորապես վշտացավ: Այժմ ևս նա իր հույսը չի կտրել և դարձյալ հուսով է, որ մի օր Ձերդ Գերազանցությունը պիտի գա Ղարաբաղ, բայց եթե Ձեզանից անկախ պատճառներով կհետաձգվի Ձեր գալը, ապա մեր ժողովուրդը պատրաստ է միշտ Ձեր հրահանգներով գործելու»[2]:

Հաջորդ օրը՝ փետրվարի 3-ին, Ե. Իշխանյանը դարձյալ գրել է Անդրանիկին՝ խնդրելով նույն բանը՝ անցնել Արցախ: «Նկատի ունենալով ստեղծված հանգամանքները,– նշում էր նա,– մենք նախատեսում ենք, որ շատ շուտով կռվի թատերաբեմ պիտի դառնա մեր երկիրը: Բայց մենք ո՞ւմ վրա դնենք մեր հույսը, եթե ոչ Ձերդ Գերազանցության, որին և խնդրում ենք ձեռք առնել ամեն միջոց մեր ժողովրդին ազատելու այս ճգնաժամային նեղ դրությունից: Կարող է պատահել, որ կրկին Զաբուղի կիրճը փակվի, դա նշան կլինի այստեղի կռիվների, հետևապես խնդրում ենք այդպիսի դեպքում առաջ շարժվեք, որովհետև մեր փրկությունը միմիայն Ձեզանից է կախված. պաշար չունենք, դրամ չունենք – ահա մեր վիճակը»[3]:

Փետրվարի 3-ին Սոկրատ բեկը նույնպես Անդրանիկին գրել էր հերթական նամակը՝ արտահայտելով արցախահայության տագնապն այն առթիվ, որ Ադրբեջանը բնավ մտադիր չէր ձեռք քաշել Արցախից, և արցախահայերը միայն զենքով կարող էին մնալ իրենց երկրի տեր: «Այսօր,– գրում էր նա,– գալիս է Ադրբեջանի զինվորական մինիստրը, այս օրերս, մտցրել են Խանքենդի 2 հարյուրյակ ձիավոր զորք և հարյուրյակներով անցնում են դեպի Զաբուղ և Զանգիլան: Կարծես թե դրանք շրջապատում են մեզ»: Ելնելով իրավիճակից՝ նամակագիրը շեշտում է, որ թուրքերն ավելի համարձակ են դարձել, որովհետև «գիտեն, որ Դուք պետք է գնաք»[4]:

Փետրվարի 3-ին Շուշի էր եկել Ադրբեջանի զինվորական նախարար, գեներալ Մեհմանդարովը, որը նպատակադրվել էր Արցախի սրտում զորանոցներ կառուցել և այդտեղ մեծաքանակ զինված ուժեր տեղակայել[5]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 19:

[2] Նույն տեղում, թ. 23:

[3] Նույն տեղում, թ. 24:

[4] Նույն տեղում, գ. 40, թ. 10:

[5] Տե՛ս նույն տեղում, գ. 38, թթ. 24-25:

Երկու օր անց՝ փետրվարի 5-ին, Սոկրատ բեկը Զորավարին նամակով տեղեկացրեց, որ Խանքենդ եկած ադրբեջանական զինվորների թիվը հասել էր 1500-ի՝ թնդանոթներով ու գնդացիրներով զինված, որ Շուշիում նույնպես Ադրբեջանը ուներ 1000 զինվոր: Նա նշեց, որ երբ պահանջում են իրենց ուժերը ևս ավելացնել, թույլ չեն տալիս, ավելին՝ անգլիացիները պատասխանել են. «Այդ չենք կարող ձեզ խորհուրդ տալ, որովհետև դրանից կարող է ծագել կռիվ, և մեղքը կընկնի ձեր՝ հայերիդ վրա»[1]: Ապա նամակագիրը տագնապով շարունակել է. «Դրությունը լուրջ է, մեզ ամբողջովին շրջապատել են, (թուրքերի կողմից) Շուշիում, Զաբուղում բավականաչափ ուժեր հավաքելուց հետո մենք թակարդի մեջ ենք ընկնում»[2]: Արցախում ստեղծված իրավիճակը նկարագրելուց հետո Սոկրատ բեկը կրկին նշում էր. «(Թե) որքան օգտավետ կլինի Ձեր մնալը և որքան վնասակար Ձեր հեռանալը (Զանգեզուրից)՝ այդ Դուք վճռեցե՛ք, բայց ինձ թվում է, որ Դուք պետք է դեռևս մնաք այդտեղ, որ վերջնական պարզվի անգլիացոց քաղաքականությունը, թե չէ, դրանց հավատալով, մենք կարող ենք հանկարծ տուժել, և մեր բոլոր գործողությունները ապարդյուն կանցնեն, ու Ադրբեջանը մեր գլխի տերը կդառնա»[3]:

Արցախում տիրող ծանրագույն վիճակին պարբերաբար անդրադառնում էին Այսրկովկասի մամուլի օրգանները:

Այսպես, «Կավկազսկոյե սլովո» թերթում տպագրվել էր Շուշիից ստացված մի թղթակցություն, որում ասվում էր, թե քաղաքը նման է օվկիանոսի խորքերում ընկած կղզյակի՝ կտրված աշխարհից, թողնված բախտի քմահաճույքին: Շուշիի կյանքի միակ զարկերակը մնացել էր Եվլախի ճանապարհը, որը, սակայն, գտնվում էր խաղաղ բնակչությանն անպատիժ տեռորի ենթարկող ավազակային հրոսակախմբերի ձեռքին: Նշելով, որ ժողովուրդն անուժ հեծում է բռնադատիչներից՝ թղթակցության հեղինակը ընդգծում էր, թե օր չէր լինում, որ քաղաք չբերվեին սպանվածներ ու վիրավորներ, մինչև վերջ թալանված մարդիկ: «Օրերս քաղաք բերեցին ծանր վիրավոր մի հոգևորականի, որի վրա, ավազակների կողմից հանած զգեստի փոխարեն, երևում էին միայն լաթի ծվեններ: Բերել էին նաև երիտասարդ մի մարդու, որը մահացավ ստացած վերքերից, ինչպես և մի քանի սպանված ու վիրավոր զինվորների, որոնք նույնպես ենթարկվել էին ավազակների հանդուգն հարձակումների»[4]:

Թղթակցության մեջ շեշտվում էր, որ քաղաքն անուժ էր՝ սեփական միջոցներով պայքարելու ավազակային անարխիայի դեմ. մղձավանջային սարսափ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 10:

[2] Նույն տեղում, թ. 11:

[3] Նույն տեղում:

[4] “Кавказское слово”, 17 февраля, 1919.

ների սահմանափակման համար անհրաժեշտ էր ուժեղ և վճռական կամք: Թղթակցության հեղինակը պատմում էր, որ Աղդամից Եվլախ ընկած տարածքների մահմեդական գյուղերը ավազակաբներ էին, որոնց անհրաժեշտ էր ցանկացած միջոցներով վնասազերծել և ապահովել անցորդների անվտանգությունը: Նշվում էր, որ դրա համար անհրաժեշտ էր հանդերձավորել մի մեծ պատժիչ արշավախումբ: Հարկ էր լավ ըմբռնել, որ ցանկացած դանդաղում կործանարար կլիներ ժողովրդի համար, այն կբերեր անհամար աղետներ[1]:

Իր հերթին «Զնամյա տրուդա» թերթը «Ադրբեջանում» վերնագրով տպագրել էր թղթակցություն Ալյաթ երկաթուղային կայարանից: Թղթակիցը նշում էր, որ Բաքվի 1918 թ. սեպտեմբերի մղձավանջային ջարդերի օրերին ավելի քան 600 գերի հայերի տարել էին Ալյաթ, որոնք այնտեղ ամիսներ շարունակ ենթարկվել էին տանջանքների, մեծ մասը մահացել էր սովից ու կտտանքներից, հիվանդություններից ու տաժանակիր աշխատանքից: Մնացածներին կոտորել էին: Հանգուցյալների դիակների մի մասը, երկար ժամանակ ընկած մնալով, կեր էր դարձել շների ոհմակներին, իսկ մնացած դիակները փոսերի մեջ լցնելուց հետո՝ որոշ ժամանակ անց, հանել էին և վերածելով կտորների՝ ցրել են այս ու այն կողմ[2]:

Գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով բեկ Սուլթանովը փետրվարի 10 (23)-ին մեծ շուքով եկավ Շուշի: Նույն օրը քաղաքի թուրքական թաղամասում նա հայտարարեց, որ իր հիմնական նպատակն է զենքի ուժով կոտրել հայերի դիմադրությունը և Արցախն ու Զանգեզուրը ենթարկել Ադրբեջանին: Այդ հայտարարությունից անմիջապես հետո Սուլթանովը Շուշիի հայկական իշխանություններին ներկայացրեց անվերապահորեն իրեն ենթարկվելու պահանջ[3]:

Փետրվարի 12 (25)-ին հրավիրվեց համաարցախյան 4-րդ համագումարը, որը կրկին որոշեց Արցախը համարել Հայաստանի անբաժան մաս, ոչ մի դեպքում չճանաչել Ադրբեջանի իշխանությունը և մերժել ադրբեջանական կառավարության պահանջը՝ Արցախի կողմից ուղարկել պատգամավորներ՝ մասնակցելու Ադրբեջանի խորհրդարանի աշխատանքներին[4]:

Համագումարում ծավալվեց մտքերի լայն փոխանակում: Պատգամավորները նշում էին, որ ժամանակին անգլիական հրամանատարությունը հայ և թուրք ազգաբնակչությանը հայտարարեց, որ ինքը պետք է երկրում վերականգներ կարգ ու խաղաղություն և արգելեր որևէ զորաշարժ կատարել Արցախի սահմաններում, իսկ երկու կողմերը պետք է դադարեցնեին միմյանց

---

[1] Տե՛ս "Кавказское слово", 17 февраля, 1919:

[2] Տե՛ս "Знамя труда", 28 февраля, 1919, № 46:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15 և շրջ., **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 491:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 18-19, տե՛ս նաև **Սարոտ** (պետք է լինի Քիրս Սարոտ), Ղարաբաղի կցումը Ատրբեջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 133-134, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 491-492, **Մ. Տումանյան,** նշվ. աշխ., էջ 225:

դեմ թշնամական գործողությունները: Հայությունն իր օրինապահությամբ ճշտորեն կատարեց դաշնակիցների հրամանը, այնինչ տեղական թուրքերն ու Ադրբեջանի կառավարությունը շարունակեցին իրենց ոտնձգությունները: Ամեն օր հայ-թուրքական սահմանագծի վրա տեղի էին ունենում սպանություններ, ավազակություններ: Մի քանի անգամ հարձակումներ էին կատարվել Խծաբերդ, Քյուրաթաղ, Ճարտար և հայկական այլ գյուղերի վրա: Այդ ամենի մասին թե՛ հրամանատարները, թե՛ Ազգային խորհուրդը գրավոր բողոքներ էին հղել անգլիական առաքելությանը և գեներալ Վ. Թոմսոնին: Պատգամավորները նշում էին, որ իրենց բոլոր բողոքները մնացել էին ձայն բարբառոյ յանապատի: 1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. փետրվար գործող ժամանակավոր Ազգային խորհուրդը հնարավորություն չէր ունեցել ներկայացուցիչներ ուղարկելու Երևան՝ իրազեկ դարձնելու Արարատյան Հանրապետությանը տարածաշրջանի իրադարձությունների մասին: Երկար ժամանակ Արարատյան Հանրապետությունը դատապարտելի անտարբերություն ցուցաբերեց դեպի Արցախը, որի ազգաբնակչության մոտ 90%-ը հայեր են: Արարատյան Հանրապետությունը ժամանակին չկարողացավ ըմբռնել պատմության պահը և Արցախ ուղարկել իր ներկայացուցչին՝ անհրաժեշտ դրամական միջոցներով: Ելույթ ունեցողները փաստում էին, որ Ադրբեջանը փողի միջոցով, անարյուն կերպով փորձում էր տիրել Արցախի կենտրոնին, իսկ հետագայում փորձեր կաներ ձեռք բերել նաև ողջ գավառը: Արարատյան Հանրապետությունը շատ էր ուշացրել Արցախում և Զանգեզուրում գեներալ-կոմիսարություն հաստատելը, որը մեծապես վնասել էր գործին:

Համագումարում նշվում էր, որ ստեղծված պայմաններում ոչ միայն չպիտի թողնել Զորավար Անդրանիկին հեռանալ Զանգեզուրից, այլ բոլոր հնարավոր միջոցները պիտի գործադրել, որ նա անցներ Արցախ՝ ուշադրություն չդարձնելով անգլիական առաքելության հարկադրանքներին:

Պատգամավորները մտահոգ էին, որ Արցախի ռազմական ուժերն ընդհանուր ղեկավար չունեն: Շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Զրաբերդի հրամանատարներից և ոչ մեկը ի վիճակի չէր իր ձեռքում կենտրոնացնել հայ զինվորությանը: Նրանք մեղադրում էին Արարատյան Հանրապետությանը, որ չէր կարողացել Արցախ ուղարկել մի զինվորական գործչի, որի ներկայությունը մեծապես զարկ կտար ժողովրդի համախմբմանը: Շրջանների ղեկավար զինվորական ուժերի միջև գործելակերպի համանմանություն և համերաշխություն գոյություն չուներ: Նրանք ավելի շատ զբաղվում էին իրար բզկտելով, քան ընդհանուր գործի հաջողությանը նպաստելով: Առանց հմուտ գլխավոր հրամանատարի՝ անհնարին էր ի մի բերել բոլոր գործուն զինվորական ուժերը: Նա պիտի ուշադրություն դարձներ ինքնապաշտպանական գործի վրա, այսինքն՝ երկրի իրական ուժերի վրա հիմնված՝ կարողանար թշնամուն թելադրել հայոց կամքը:

Համագումարն ընտրեց 6 հոգուց բաղկացած Արցախի հայոց ազգային խորհուրդ, նախագահ նշանակեց Եղիշե Իշխանյանին: Խորհրդին հանձնարարվեց հետևողականորեն կենսագործել ընդունված որոշումները, մասնավորապես, որպես երկրամասի իրավասու մարմին՝ կազմակերպել գավառի հայկական իշխանությունը և նպաստել Արցախի հարցի լուծմանը՝ հօգուտ հայերի[1]:

Արցախի հայոց ազգային խորհուրդն իր ձևավորումից հետո դիմեց Զանգեզուրի և Ղարաբաղի գեներալ-կոմիսար Ա. Շահմազյանին և նրան տեղեկացրեց համագումարի աշխատանքների մասին և նշեց, որ Արցախի հայոց ազգային խորհրդի IV համագումարը, ամենաբուռն կերպով բողոքելով ադրբեջանական կառավարության ոտնձգությունների դեմ, պարզ ու որոշակի հայտարարել էր, որ Արցախի հայությունը երբեք չէր ենթարկվել և այսուհետև նույնպես չէր ենթարկվելու Ադրբեջանին[2]:

Արցախի ազգային խորհուրդը գտնում էր, որ.

«Հայաստանի Հանրապետությունը պետք է.

1) անմիջապես ուղարկի տեղս մի զինվորական ղեկավար՝ միացնելու բոլոր ցաքուցրիվ կենսունակ և ռազմիկ ուժերը:
2) Եթե անհնարին է գեներալ մայոր Անդրանիկին տեղս ուղարկելը կամ գոնե Զանգեզուրում պահելը, Հանրապետությունը պիտի գեթ մի գունդ ուղարկի Զանգեզուր: Պետք է նախօրոք ի նկատի ունենալ, եթե գունդ ուղարկվելու է, նա Շուշու գնդի պես ծանրաբեռնված չլինի զանազան խլամ ապրանքներով, որովհետև փոխադրության հարմար ճանապարհներ չկան:
3) Որ ամենագլխավորն է, պետք է հենց սկզբից խոշոր դրամական միջոցներ մտցնի մեր շրջանը, որպեսզի հնարավոր դառնա ոչ միայն զինվորական ուժերի ու ադմինիստրացիայի կազմակերպության գործը, այլև կյանքի կոչելու բոլոր հիմնարկությունները՝ դպրոցները, կոմիսարիատը, գանձարանը, դատարանը և այլն:

Ղարաբաղի հայության լիազոր կառավարման կառույցը՝ Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը, որին ընտրել էր Ղարաբաղի հայության IV համագումարը, և, որը վերջինից հետո միակ լիազոր օրգանն էր, որ կարող էր ժողովրդի կամքն ու ցանկությունն արտահայտել, ուզում էր իմանալ՝ արդյոք Հայաստանի Հանրապետությունը որոշել էր գեթ այսուհետև լուրջ ուշադրություն դարձնել Ղարաբաղի վրա, որովհետև վերջինս միակն էր հայկական բնագավառներից, որ ազատ էր մնացել թուրք-ադրբեջանական ավերածություններից»[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 55-57-ի շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 57-ի շրջ.:

[3] Նույն տեղում:

Ազգային խորհուրդը եզրահանգում էր, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է համոզված լիներ, որ եթե Փարիզի խորհրդաժողովում անգամ որոշվեր Արցախի հարցը լուծել հօգուտ Հայաստանի, Ադրբեջանը չէր հանդուրժելու և ամեն կերպ աշխատելու էր կոնֆլիկտ ստեղծել: Ահա այդ ամենը նկատի ունենալով՝ հարկավոր էր նախազգուշական միջոցներ ձեռք առնել:

Ադրբեջանական կառավարությունը Խանքենդում օրեցօր կենտրոնացնում էր նորանոր ուժեր և մեծաքանակ ռազմամթերք՝ նպատակ ունենալով անցկացնել քոչը դեպի վեր՝ դեպի Զանգեզուրի սարերը[1]:

Հիրավի, ցայսօր արդիական են հնչում Արցախի Հայոց ազգային խորհրդի զգուշացումները. «Քանի դեռ ուշ չէ, Հայաստանի Հանրապետությունը լուրջ միջոցների պիտի դիմե՝ կասեցնելու Ադրբեջանի առաջխաղացումը: Եթե այսուհետ ևս Հայաստանի Հանրապետությունը զաքարեական լռություն պահպանելու լինի, Արցախի հայությունն այդ համարելու է դավաճանական ակտ՝ ուղղված հայկական Արցախի դեմ»[2]:

Չնայած անգլիացիների ջանքերին՝ Սուլթանովի և ադրբեջանական զորքի ազդեցությունը Շուշի քաղաքից այն կողմ չէր անցնում: Արցախի բոլոր գավառները՝ Վարանդան, Խաչենը, Ջևանշիրն ու Դիզակը, կառավարվում էին Արցախի ազգային խորհրդի կողմից: Բայց թուրք-թաթարները չէին ընկրկում. նրանց ակտիվությունը պայմանավորված էր նաև նրանով, որ անգլիացիները հայտնել էին, թե Անդրանիկը վճռել էր շուտով վերջնականապես հեռանալ Զանգեզուրից:

Փետրվարի 21-ին Շուշիից Զորավարին գրած նամակում Արցախի սպայական շտաբի անդամները, լսած լինելով Զանգեզուրից նրա հեռանալու մտադրության մասին, հարցրել են. «Ի՞նչ ռազմամթերք կարող եք տրամադրել մեր երկրի ինքնապաշտպանությանը, Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին:

Փոխադրությունը, իհարկե, կկատարվի Ձեր խորհրդի համաձայն, խիստ գաղտնի և միանգամայն վստահելի ձեռքերով»[3]:

Զանգեզուրից հեռանալու Անդրանիկի վճիռը վերջնական էր, և դա ուներ իր հիմնավոր պատճառները: Նրան մտահոգում էր ոչ միայն իր, այլև զորամասի հետագա ճակատագիրը, բայց ամենից շատ Արևմտահայաստանի խնդիրը, որի լուծմանը ուզում էր ունենալ իր կոնկրետ մասնակցությունը: Պատերազմը վերջացել էր, և իր զորամասի ամեն մի ռուսահայ զինվոր, բնականաբար, շահագրգռված էր տուն վերադառնալ, իսկ արևմտահայ զինվորները պետք է սկսեին որոնումներ կատարել՝ իմանալու իրենց հարազատներից որևէ մեկի տեղը, եթե նրանք մի հրաշքով փրկվել էին թուրքական յաթաղանից: Զորավարը, որ իր հարաբերությունները լիովին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 57-ի շրջ.:

[2] Նույն տեղում, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 3:

[3] Նույն տեղում, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 21:

խզել էր Երևանի դաշնակցական կառավարության հետ, բոլորովին մտադիր չէր վերականգնել այդ կապերը: Նա ծրագրել էր զորամասը պատվավոր կերպով ցրելուց հետո նրա ունեցվածքը հանձնել Էջմիածնի վանքին և անցնել արտասահման[1]:

Գեներալ-նահանգապետ Սուլթանովին աջակցելու համար 1919 թ. փետրվարի վերջերին Շուշի եկավ անգլիական երկրորդ առաքելությունը՝ Գոդֆրի Նոել Գրեյ Մոնք-Մեյսոնի գլխավորությամբ, 400 զինվորներով[*]: Նրա հետ եկան նաև զորավար Թոմսոնի և մուսավաթական կառավարության համաձայնությունը ստացած Բաքվի հայոց ազգային խորհրդի և ՀՅԴ կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչներ Գերասիմ Բալայանը, Լևոն Զարաֆյանը, Իշխան Միրզաբեկյանը և Ներսես Նասիբյանը: Քանի որ անգլիացիները հրաժարվում էին պաշտոնական բանակցությունների մեջ մտնել Արցախի տեղական իշխանությունների հետ, ուստի համաձայնել էին իրենց հետ բերել նշված գործիչներին և բանակցություններ վարել նրանց հետ[2]:

Սկսվեցին բանակցություններ, մի կողմից՝ Գ. Մոնք-Մեյսոնի և Սուլթանովի, մյուս կողմից՝ Բաքվից եկած հայ գործիչների միջև: Վերջիններիս անգլիական առաքելության գլխավորն առաջարկեց ստորագրել մի հայտարարություն, որ Արցախը մինչև Զաբուղ գետը ժամանակավորապես հանձնվում էր Ադրբեջանին: Բայց հայ գործիչները, հատկապես Գ. Բալայանն ու Լ. Զարաֆյանը, կտրականապես մերժեցին անգլիացու առաջարկը՝ ցույց տալով, որ Ադրբեջանի հանդեպ բրիտանական կառավարության հովանավորչական քաղաքականության պատճառով մուսավաթականները փորձում էին զինուժով Արցախը Բաքվին հպատակեցնել և այդ նպատակով Խանքենդում ու Շուշիում արդեն կենտրոնացրել էին մեծաթիվ զինական ուժ, առաջինում՝ 2000, երկրորդում՝ 1000 ադրբեջանցի զինվոր: Այնուհետև նշում էին, որ երբ արցախահայ իշխանությունները Շուշիի անգլիական առաքելությունից պահանջել են, դրան ի պատասխան, թույլատրել, որ գավառներից քաղաք մտցվեն լրացուցիչ հայկական ուժեր, պատասխան են ստացել, թե դա կարող է ուժեղացնել լարվածությունը երկրամասում, և հետևանքների համար սպառնացել են պատասխանատու համարել հայերին[3]:

Չհանդուրժելով հայ գործիչների ըմբոստ վերաբերմունքը՝ մայոր Գ. Մոնք-Մեյսոնի կարգադրությամբ Գ. Բալայանին ու Լ. Զարաֆյանին նստեցրել զրահապատ մեքենա և հեռացրել Արցախից: Երեք օր Աղդամում

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 34, թ. 21, գ. 40, թ. 15, 16, գ. 56, թ. 19: Տե՛ս նաև **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 538, 543, 548:

[*] Համաձայն մի ուրիշ աղբյուրի՝ 200 զինվորներով:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, թ. 63, ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 11, **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 229, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 312-313:

[3] Տե՛ս **Սարոտ (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, յունիս, էջ 134, **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 230-231:

պահելուց հետո նրանց հեռացրել են իրարից և Գ. Բալայանին տարել Բաքու՝ որպես առավել հանդուգն խռովարարի[1]:

Գ. Բալայանի և Լ. Զարաֆյանի ձերբակալությունն ու աքսորը մեծ վրդովմունք առաջացրին Շուշիի հայ բնակչության մեջ, որոնք, փակելով խանութները, փետրվարի 25-ին բողոքի ցույց կատարեցին անգլիական ներկայացուցչության առջև[2]:

Շուշիից Գորիս գրած նամակում բժիշկ Հայկ Մ. Շահնազարյանը, Զորավար Անդրանիկին տեղեկացնելով այդ ամենի մասին, ավելացնում էր, որ Գ. Բալայանն ու Լ. Զարաֆյանը քաղաքից հեռացվել են Սուլթանովի սադրանքի պատճառով[3]:

Մինչ մայոր Գ. Մոնք-Մեյսոնի ժամանումը Շուշի Արցախի ազգային խորհուրդը դիմել էր Բաքու՝ գեներալ Յ. Բագրատունուն, և խնդրել այնտեղից ուղարկել զինվորական հեղինակավոր մի գործչի՝ տեղի հայության ուժերը կազմակերպելու, Արցախի զանազան շրջանների հրամանատարների միջև սերտ համագործակցություն ստեղծելու համար:

Պատասխանը ստացվել էր այն օրը, երբ մայոր Գ. Մոնք-Մեյսոնի հետ հայ գործիչները նստել էին խորհրդակցության: Պատասխանը այն հրամանն էր, որ ստացվել էր Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանի անունով: Գեներալ Յ. Բագրատունին վերջինիս շնորհել էր գնդապետի աստիճան և նշանակել Արցախի բոլոր զինվորական ուժերի հրամանատար: Հրամանի մեջ նշված էր, որ Սոկրատ բեկը ընդհանուր հրամանատար էր մնում մինչև այն ժամանակ, երբ Հայաստանի Հանրապետությունը իր ներկայացուցիչը կուղարկեր Արցախ[4]:

Գեներալ Յ. Բագրատունու այդ որոշումը խիստ դժգոհություն առաջացրեց Ազգային խորհրդում, քանի որ նախքան իր հրամանի արձակումը նա չէր հարցրել Արցախի հայկական իշխանությունների կարծիքը: Սոկրատ բեկի՝ իբրև ընդհանուր հրամանատարի նշանակումը, խորհրդի կարծիքով, ոչ թե նպաստելու էր շրջանների հրամանատարների միջև սերտ համագործակցության հաստատմանը, այլ, ընդհակառակը, առաջ էր բերելու նոր հակասություններ[5]:

Մայոր Գ. Մոնք-Մեյսոնի առաքելության ժամանումը Շուշի և այնտեղ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 16-17, **Սարոտ (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, յունիս, թիվ 8 (80), էջ 134, **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 231, **Ռ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 181:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 17, **Սարոտ (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929 հունիս, թիվ 8 (80), էջ 135, **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 51:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 19, գ. 38, թ. 31-32, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 497:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 24:

որպես Ադրբեջանի կառավարության ագրեսիվ քաղաքականության պաշտպան հանդես գալը թուրքերի ու քրդերի համար հանդուգն և արագ գործելու նոր ազդանշան եղան: Սկսվեցին մուսավաթական զորքերի նոր տեղաշարժեր և կենտրոնացում Արցախին ու Զանգեզուրին հարող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող վայրերում, հատկապես Աղդամում և Կարյագինոյում: Ավելին՝ ադրբեջանական զորամասերը թափանցեցին նաև բուն Արցախի խորքերը: Զորամասերն իրենց հետ փոխադրում էին մեծաքանակ զենք ու ռազմամթերք[1]:

Բաքվից հայրենի Արցախ եկած Բաքվի հայոց ազգային խորհրդի անդամ Միսակ Տեր-Դանիելյանը (Արամայիս) Ասկերանով անցնելուց հետո իր օրագրում գրել էր. «Ասկերանում թուրք պահակներն ինձ կանգնեցրին, հարց ու փորձ արին և բաց թողեցին: Սիրտս պայթում է վշտից. Ասկերանում թուրք պահա՞կ … Այն Ասկերանում, որ կանգնեցնում էր ամբողջ թուրքական գրոհները, որ հաստատուն պատվարի նման Հայկական Ղարաբաղը դարձնում էր անմատչելի, և որից թուրքերն այնքան էին վախենում, որ Ասկերանից անցնելը տղամարդկություն էին համարում: Խոջալուում վարժեցնում են նոր հավաքած ասկյարներին, իսկ Խանքենդ ավանի զորանոցը արդեն դարձել է Ադրբեջանի զորքերի զորանոց»[2]:

Անդրանիկը դեռ Գորիսում էր, երբ Զանգեզուրի և Արցախի պետական կոմիսար նշանակված Արսեն Շահմազյանը 1919 թ. մարտի 12-ին հասավ Գորիս և անմիջապես անցավ իր պարտականությունների կատարմանը:

Ա. Շահմազյանի Գորիս ժամանելու հաջորդ օրն իսկ Անդրանիկը վար դրեց Զանգեզուրի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պարտականությունը և գավառին վերաբերող զանազան հանձնարարություններ տալու իրավունքը: Կապանում գտնվող Գեղեոն Տեր-Մինասյանին Զորավարը մարտի 17-ին գրում էր. «Արդեն ես ներքին գործերու չեմ խառնուիր: Գորիս հասած է արդեն Զանգեզուրի համար ընդհ[անուր] նահանգապետ նշանակուած Արսեն Շահմազեանը և հետևաբար նրա գործն է հարկավոր կարգադրությունը ընել»[3]:

Գորիս եկած Ա. Շահմազյանը լիազորված էր լայն իրավունքներով: Կառավարությունը նրա առջև երկու կարևոր խնդիր էր դրել՝ 1) տեղական ուժերից կազմակերպել կանոնավոր զորամասեր՝ Ադրբեջանի ոտնձգություններից Զանգեզուրը և Արցախը պաշտպանելու համար, 2) կարճ ժամկետում ամբողջ Զանգեզուրում մտցնել Հայաստանի կառավարությանը ենթակա վարչություն:

Արցախում նոր վարչություն ստեղծելը Հայաստանի կառավարությունը համարել էր ավելորդ, քանի որ այնտեղ մեծ հաջողությամբ գործում էր ազգային մարմինների լայն ցանց, կային զինվորական, կուսակցական, քա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 5-6:

[2] ՀՀ ԳԱԱ պատմության արխիվի Լեոյի ֆոնդ, Միսակ Տեր-Դանիելյանի հուշեր:

[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 14, թ. 7:

ղաքացիական բազմաթիվ փորձված գործիչներ:

Հայաստանի Հանրապետության զինվորական հայտնի գործչին հայկական զույգ երկրամասերի ղեկավար նշանակելը չէր նսեմացնում Զանգեզուրի ազգային խորհրդի դերը: Ընդհակառակը՝ դրանով տարածքը անքակտելի ամուր կապերով ձուլվում էր հանրապետության վարչապետական կառույցին: Դրա վկայությունն էր «Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի» վերանվանումը «Հայաստանի Հանրապետության Զանգեզուրի խորհրդի»:

Շահմազյանը կարողացավ չնչին միջոցներով կազմակերպել գավառի զինական ուժերը՝ ձեռքի տակ ունենալով մի քանի սպաներ միայն: Նա տեղի իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ ստեղծեց կարգ ու կանոն՝ բարձր պահելով Հայաստանի կառավարության վարկը:

Զանգեզուրի սահմաններում ստեղծված հարաբերական հանգիստը չէր կարող թուլացնել գավառի իշխանությունների ու հայության զգոնությունը, որոնք սևեռուն հետևում էին Սուլթանովի ու Բաքվի կառավարության խարդավանքներին և ձեռնարկում հարկ եղած միջոցներ: Միավորվել ու միաձույլ էին դարձել տեղացի բոլոր հայերը՝ դաշնակցական, բոլշևիկ թե անկուսակցական, ամենքը միավորվել և որոշել էին ասպարեզ չտալ ադրբեջանցիներին և նույնիսկ անգլիացիներին:

Նույն ժամանակ ադրբեջանական իշխանություններն էլ կարգի էին բերում իրենց զորամասերը, զինանոցները համալրում նոր զենք ու զինամթերքով՝ նախապատրաստվելով լայնածավալ հարձակումների Զանգեզուրի հայության դեմ:

Մարտի 18-ին Հայաստանի կառավարությունը նոր նոտա ուղարկեց Բաքու՝ բողոքելով ոխերիմ հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովի ռազմական նախապատրաստությունների առթիվ:

Բրիտանական հրամանատարությունը դարձյալ անուշադրության մատնեց Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի հայերի՝ Հայաստանի Հանրապետությանը միանալու պահանջը, ինչպես նաև լիովին աչքաթող արեց Հայաստանի կառավարության մարտի 18-ի նոտայում պարունակած բողոքը: Ավելին՝ անգլիացիները առաջվա պես պաշտպանում էին Սուլթանովի բոլոր գործողությունները՝ ուղղված հայկական զույգ երկրամասերի զավթմանը: Նրանք շատ ակտիվորեն պաշտպանում էին հատկապես Սուլթանովի այն ջանքերը, որոնք ուղղված էին զենքի ուժով քոչվորների համար հայկական տարածքներով անցնող ճանապարհների բացմանը:

Բաքվից եկած ցուցումների համաձայն՝ Սուլթանովը թուրք և քուրդ քոչվորներին նախապատրաստում էր բարձրանալ Զանգեզուրի սարերը և նրանց հրահանգում էր չենթարկվել արոտավայրերից օգտվելու Զանգեզուրի ազգային խորհրդի սահմանած կարգին[1]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 146, թ. 36:

Դրանով իսկ Սուլթանովը քոչվորներին գրգռում էր Զանգեզուրի հայկական իշխանությունների և ընդհանրապես գավառի հայերի դեմ, առիթ ստեղծում արյունալի միջադեպերի և ազգամիջյան ընդհարումների:

Զանգեզուրի սարեր քոչվորների բարձրանալը և արոտավայրերը նրանց կողմից օգտագործելն ունեին ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կարևոր նշանակություն: Մուսավաթական կառավարության համար դա մի պատրվակ էր գավառ մուտք գործելու համար:

«Կավկազսկոյե սլովո» թերթը տպագրել էր Արցախից ստացված թղթակցություն, որի հեղինակը, անդրադառնալով Արցախին տիրանալու Ադրբեջանի կառավարության համառությանը, գրում էր. «Դա անհնար է: Ղարաբաղի 300 հազարանոց հայ ժողովրդի կամքը արտահայտված է բացահայտորեն և ուժգին: Մենք նրա համար չենք ռազմաճակատ ուղարկել հազարավոր մեր զավակներին, պայքարել թուրքերի, սովի, տառապանքի դեմ, որպեսզի Ադրբեջանին հանձնենք Խաչենը, Վարանդան, Դիզակը և Ջիվանշիրը: … Ժամանակավորապես, մինչև (Փարիզի) կոնֆերանսի որոշումը, Ղարաբաղը պետք է կառավարեն հայերը՝ բրիտանական միսիայի վերահսկողությամբ ու ղեկավարությամբ, համոզված լինելով, որ կմիավորվենք վերածնվող Ռուսաստանի կամ Հայաստանի հետ»[1]:

Արցախում և Զանգեզուրում ստեղծված դրությունը քննելու և իրավիճակի համեմատ որոշում ընդունելու համար Զանգեզուրի ազգային խորհուրդը նպատակահարմար համարեց հրավիրել գավառի հայ բնակչության համաժողով:

1919 թ. մարտի 18-ին* Գորիս քաղաքում բացվեց Գորիսի և Սիսիանի շրջանների գյուղացիական համագումարը՝ 62 պատվիրակների մասնակցությամբ: Համագումարի նախագահ ընտրվեց Մուշեղ Զաքարյանը: Երեք օր տևած աշխատանքների ընթացքում քննության ենթարկվեցին գավառի պաշտպանության խնդիրները: Համագումարը դատապարտեց մուսավաթական կառավարության ոտնձգությունները Զանգեզուրի նկատմամբ և վճռականություն հայտնեց «Հայաստանի Հանրապետության երկրամաս Զանգեզուրը բռնագրավել ցանկացող Ադրբեջանի մուսավաթական կառավարության ոտնձգություններին պատասխանել զենքով»[2]: Քննելով քոչվորների՝ Զանգեզուրի սարերը բարձրանալու խնդիրները, համագումարը որոշում ընդունեց «թույլ չտալ, որ Ադրբեջանին հպատակ քոչվորները բարձրանան Զանգեզուրի արոտավայրերը, կռվել այն բոլոր ուժերի դեմ, որոնք կաշխատեն քոչվորներին ուժով բարձրացնել գավառի տարածքում գտնվող սարերը»[3]:

---

[1] “Кавказское слово”, 15 марта, 1919.

* Այլ տվյալներով՝ մարտի վերջին: Տե՛ս «Արև», 1919, թիվ 59, ապրիլի 24:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 7, թ. 1, «Արև», 1919, թիվ 59, ապրիլի 24:

[3] Նույն տեղում:

Զանգեզուրի հայության համագումարին ներկայացավ Ղարաբաղ–Զանգեզուրում ՀՀ կոմիսարը, որին պատգամավորներն ընդունեցին հոտնկայս, երկար ծափահարություններով և «Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը» ողջույններով:

Պետական կոմիսարը, ամբիոն բարձրանալով, ասաց.

«Շատ ուրախ եմ, որ բախտ ունեցա Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը լինելու այն երկրում, որտեղ իմ երիտասարդական ժամանակն եմ անցկացրել: Մի ժամանակ գալիս էինք այս երկիրը գաղտնի, այժմ ոտք եմ դնում ազատ և այն էլ Հանրապետության կողմից, որը վաղուց մեր իդեան է եղել»[1]: Իր հետագա խոսքում պետական կոմիսարը շնորհակալություն հայտնեց պատշաճ ընդունելության համար, ապա փաստեց, թե ով ծանոթ է իրավիճակին, նա կասի, որ «Հանրապետությունից շատ բան չէր կարելի սպասել, որովհետև նա առաջ է ընկել վատ պայմաններում, որը բոլորիդ էլ հայտնի է, և որից դուրս մտածելու հնարավորությունից նա միանգամից զրկված էր: Բայց այդպես չի մնա ապագայում, երբ պայմանները կփոխվեն, դրությունը կլավանա հօգուտ մեզ, նա կանի ավելին ձեզ համար, որ հերոսաբար պաշտպանեցիք այս երկիրը և հանձնեցիք Հանրապետությանը: Եվ ես վստահորեն կասեմ, որ դուք չեք խաբվել, որ ձեր բախտը կապել եք Հայաստանի Հանրապետության հետ»[2]:

Համագումարն ափսոսանք հայտնեց Զանգեզուրից Անդրանիկի հեռանալու մտադրության կապակցությամբ: Թեև զանգեզուրցիների բացարձակ մեծամասնությունը, ինչպես նաև Արցախի ողջ հայությունը դեմ էին գավառից Անդրանիկի և նրա զորամասի հեռանալուն, բայց Զորավարին պահել չհաջողվեց: Նրա ուշադրությունը Փարիզի վեհաժողովի վրա էր, որը եթե ընդուներ Արևմտյան Հայաստանը Թուրքիայից անջատելու մասին որոշումը, ինքն օր առաջ իր զորամասով անցնելու էր այնտեղ:

Ընդունվեց Զորավարին ուղղված շնորհակալական մի փաստաթուղթ, որտեղ արձանագրված էր, որ Անդրանիկի զորամասը 1918 թ. ամռանն ու աշնանը՝ շրջափակման դժվարագույն ժամանակաշրջանում, Զանգեզուրի և հարակից հայաբնակ գավառների ինքնապաշտպանության ոգին էր: Համառ մարտերում զորամասը կարողացել էր հետ մղել թուրք-մուսավաթական զորքերի բազմաթիվ հարձակումները և կասեցնել նրանց մուտքը Զանգեզուրի հայկական շրջանները: Զորամասի այնտեղ եղած ողջ ժամանակահատվածում հայկական ոչ մի գյուղ ավերի չէր ենթարկվել և չէր գաղթել:

«Դուք մնացիք մեր երկրամասում՝ Ձեր վրա վերցնելով մեր երկրի ինքնապաշտպանության գործի ողջ ծանրությունը…, հերոսականությամբ,

---

[1] «Արև» 1919 թ. թիվ 59, 24-ը ապրիլի:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 7, թ. 6-7:

ինչն արժանի է Ձեզ հերոսական անվանելու, Դուք տարաք այդ ամենը՝ բազմապատկելով Ձեր 30 տարիների փառքը»: Այնուհետև նշվում էր, որ Զանգեզուրի հայությունը խոր ցավ է ապրում Զորավարի՝ երկրամասից հեռանալու կապակցությամբ: Տեղի հայությունը պատրաստակամություն էր հայտնել հոգալու գաղթական եղբայրների և քույրերի կարիքները: «Քանի դեռ նրանք մեզ հետ են,– ասված էր հայտարարության մեջ,– նրանց կցուցադրվի նույն հյուրընկալությունը և եղբայրական օգնությունը»[1]:

Բարձր գնահատելով Զանգեզուրի ինքնապաշտպանության գործում ազգային հերոսի մատուցած անգնահատելի ծառայությունը՝ պատգամավորները միաժամանակ որոշեցին «մի հատուկ պատվիրակությամբ բարի երթ մաղթել զորավարին»[2]:

Համագումարի աշխատանքների մասին նախագահ Մուշեղ Զաքարյանը, քարտուղարներ Նիկոլայ Դորունցը և Հովսեփ Ստեփանյանը գրավոր տեղեկացրին ՀՀ Զանգեզուր–Ղարաբաղի կոմիսար Արսեն Շահմազյանին՝ գրելով. «Վերոհիշյալ որոշումները ի նկատի առնելով՝ համագումարի կողմից խնդրում ենք Ձեզ անմիջապես անցնել Զանգեզուրի դիմադրական-ռազմական ուժերի կազմակերպման, որին իր ջերմ աջակցությունը ցույց տվեց համագումարը: Հայտնելով այս մասին Ձեզ՝ համագումարը համոզված է, որ իր որոշումներն էլ Ձեր սրտին մոտ են, և հույս ունի, որ շատ մոտիկ ապագայում մեր երկրի ապահովության վերաբերյալ որոշումներն ու Ձեր ցանկությունները գործ դառած կլինեն»[3]:

1919 թ. մարտի 19-ին Ղարաբաղի ազգային խորհուրդը նամակ հղեց Զանգեզուր–Ղարաբաղի գեներալ կոմիսարին՝ շեշտելով, որ Ադրբեջանը օգտագործում է նպաստավոր յուրաքանչյուր պահ՝ Արցախին տիրելու համար: Ուստի այս պայմաններում Անդրանիկի՝ Զանգեզուրից հեռանալը ավելի էր արագացնելու Ադրբեջանի ակնկալվող հաջողությունը: Ազգային խորհուրդը կարծում էր, որ պետք էր ամեն ջանք թափել, որ Զորավարը չհեռանար Զանգեզուրից, որովհետև երկրամասը կանգնած էր նոր անակնկալների առաջ: Ավելին՝ պետք էր բոլոր միջոցներով աշխատել, որ Անդրանիկը մտներ Արցախ՝ ուշադրություն չդարձնելով անգլիական առաքելության բողոքներին: «Մենք համոզված ենք, որ եթե Անդրանիկը մտնի Ղարաբաղ, ապա անգլիական միսիան չի ստիպի նրան թողնել մեր շրջանը»,– ասված էր նամակում[4]:

Զորավար Անդրանիկի հեռանալու հարցը և դրա հետ կապված Զանգեզուր–Ղարաբաղի խնդիրները քննարկվեցին 1919 թ. մարտի 23-ին ՀՀ վար-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 16, թթ. 11-13, գ. 34, թ. 41:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, գ. 1, թ. 41:

[4] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 55-57:

չապետի և անգլիացի զորավար Թոմսոնի միջև կայացած զրույցի ընթացքում: Անգլիացին հաղորդում էր, որ Անդրանիկը խնդրել էր թույլ տալ անցնել Եվլախ, և ինքը տվել էր նրան այդ հնարավորությունը, սակայն Անդրանիկը հրաժարվել էր. գնալու էր Երևան, իսկ հետո՝ Լոնդոն: Վերջում Վ. Թոմսոնը խոստանում էր, որ Զանգեզուրը կկառավարվեր Ազգային խորհրդի կողմից [1]:

1919 թ. մարտի 21-ին Երևանից ՀՀ արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Երևանի բրիտանական ռազմական ներկայացուցչին հղած նամակում նշում էր Զանգեզուրը և Ղարաբաղը գեներալ-նահանգապետության կազմից հանելու անհրաժեշտության, ադրբեջանական զինուժը հանելու և բրիտանական հրամանատարությանը ենթարկելու մասին[2]:

Ճգնաժամային այս օրերին Անդրանիկը մեկնելու վերջին նախապատրաստություններն էր տեսնում. նա երկար ճամփորդության համար կարգի էր բերում զորամասը: Գաղթականությանն առայժմ թողնելով Զանգեզուրում՝ Զորավարը գաղթականների կարիքները հոգալու համար զավառի Կենտրոնական ազգային խորհրդին տրամադրեց Հարվածող զորամասի միջոցներով ձեռք բերած 4000 փութ հացահատիկը, զորամասի ունեցած գրեթե ողջ գումարը և դեղորայքի մեծ մասը: Նա նաև Գորիսի հատուկ գնդին և միլիցիայի գնդին թողեց Հարվածող զորամասի զենք-զինամթերքի մի մասը և ռազմական գործի հետ կապված բազմաթիվ իրեր՝ հեռախոսներ, թամբեր, բժշկական վիրակապեր և այլն[3]:

Բազմաթիվ էին Անդրանիկին ուղղված նամակները հեռանալու կապակցությամբ: Ահա դրանցից մեկը՝ հղված 1919 թ. մարտի 21-ին, որի հեղինակը գրում էր.

«Թանկագի՛ն Անդրանիկ,

Գրում եմ առաջին անգամ, կարիքը ստիպում է դիմելու Ձեզ: Ես չեմ համարձակվում Ձեզ խորհուրդներ տալ և առաջարկել փոխելու Ձեր որոշումը: Ով գիտի, թե ինչ կպատահի հետո, և քանի դեռ ուշ չէ, ես օգտվում եմ հնարավորությունից և ուզում եմ ասել իմ անկեղծ խոսքը:

Թանկագի՛ն փաշա, Դուք շատ բան եք արել հայ ժողովրդի համար, մշտապես բարձր եք պահել գիտակցականության և հայրենասիրության դրոշը: Դուք դարձաք ինքնազոհության ամենից լուսավոր և պայծառ օրինակը: Ձեր ներկայությունը Զանգեզուրում բավական էր, որ զսպվեր Ադրբեջանի և թուրքական զանգվածի նկրտումները…

Անկասկած, առանց Ձեր ներկայության, Զանգեզուրի կործանման պատկերը ներքին և արտաքին թշնամուց կլիներ լիովին: Այժմ հարց եմ տալիս՝ ում եք թողնում և ինչ միջոցներով եք երաշխավորում Ձեր իսկ ձեռքով

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 101, թ. 14-15:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 63-64:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 370, ց. 1, գ. 16, թթ. 11-13:

ստեղծած խաղաղությունը: Իսկապես, այն ժամանակ, երբ հայության գլխին դամոկլյան սրի նման կանգնած էր լինել-չլինելու խնդիրը, ինչպես եք հիմա թողնում ու հեռանում, և արդյոք դա Ձեր վերջնական որոշումն է… Հայրը իրավունք չունի սրտնեղելու իր զավակների անշնորհակալությունից, որքան էլ նրանք այլասերված լինեն: Հայրը պետք է մշտապես զիջող լինի և մեծահոգի… Կրկնում եմ, Ձեր ներկայությունը կօգնի սանձելու ոչ միայն վայրենի թաթարներին, այլև իրենց տեղը դնելու անձնապաշտ ու եսասեր անգլիացիներին: Մտածե՛ք լրջորեն և մի՛ թողեք, որ մի քանի ժամում կործանվի այն, ինչ Դուք կառուցել եք տանջանքով ու տառապանքով ամիսների ընթացքում:

Եվ եթե իմ առաջարկները չունկնդրեք, և Դուք հեռանաք ընդմիշտ, ապա բարի ճանապարհ Ձեզ և հաջողություն Ձեզ...»[1]:

Պայքարը՝ դաժան ու անզիջում, դեռ առջևում էր:

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թթ. 35-36:

ԱՐՑԱԽՆ ՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ՆՎԱՃԵԼՈՒ ԱՆԳԼՈ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919 Թ. ԳԱՐՆԱՆԸ

Հասավ Զանգեզուրին Անդրանիկի հրաժեշտ տալու օրը: Մարտի 25-ի առավոտյան Գորիսից և մոտակա գյուղերից հազարավոր մարդիկ հավաքվել էին քաղաքի մեծ հրապարակում՝ հայ ժողովրդի ազգային հերոսին երախտագիտության խոսք ասելու և բարի երթ մաղթելու:

Խուռներամ բազմությունը, աչքերը հառած Մանուչարյան փողոցի ուղղությամբ, սպասում էր Անդրանիկի երևալուն:

Ժամը 10-ն էր: Անդրանիկը, հեծած Ասլան ձին, հետևից՝ շքախումբը, տան դարպասից դուրս եկավ փողոց, ապա գալով հրապարակ՝ կանգ առավ նրա կենտրոնում: Հրապարակում և փողոցներում ասեղ գցելու տեղ չկար: Ժողովուրդը Զորավարին դիմավորեց երկարատև ծափահարություններով: Շատերը բացականչում էին. «Մի՛ գնա, հերո՛ս»: Զորավարը ալեկոծված էր: Հենց ձիու վրայից դիմելով ժողովրդին՝ վերջին խոսքն ասաց: Ասաց, որ այլևս հնարավոր չէ մնալ և պահել զորամասը, հոգալ զինվորների տարրական պահանջները, ուստի պետք է գնա Երևան և այնտեղ մտածի հետագա անելիքների մասին: Իր կարճատև ելույթը Անդրանիկը վերջացրեց հետևյալ խոսքերով. «Երեսունհինգ տարիներ կռիվների մեջ եմ եղել, բազմաթիվ ճակատամարտեր եմ տվել մեր դարավոր թշնամուն: Մասնակցել եմ Բալկանյան պատերազմին, մեր դարավոր ոսոխի դեմ կռվել եմ ռուսական զորքերի կողքին ..., շփում եմ ունեցել շատ ժողովուրդների հետ, բայց այսպիսի քաջ ժողովրդի չեմ հանդիպել և նրան երբեք չեմ մոռանալու: Կեցցեն զանգեզուրցիները»[1]:

Խոսքը վերջացնելուց հետո Զորավարը զորքին հրամայեց շարժվել, բաց թողեց ձիու սանձը, սլացավ առաջ և երբ հասավ քաղաքի ծայրին, ձեռքի շարժումով կրկին հրաժեշտ տվեց հրապարակում հավաքված ժողովրդին, ապա դիմացի սարի լանջի կածանը կտրելով՝ բարձրացավ վեր, գնաց Սիսիանի ուղղությամբ:

Համայն հայության ազգային հերոս, հայ ժողովրդի պարծանք Անդրանիկը լեռնաշխարհին հրաժեշտ տվեց՝ անջնջելի հիշողություններ թողնելով զանգեզուրցիների սրտում:

Անդրանիկի՝ Զանգեզուրից հեռանալը անգլիացիների թելադրանքն էր, որոնք կատարում էին մուսավաթականների կամքը. չէ՞ որ հայ Զորավարը

[1] «Ալիք», 29 մայիսի, 1974:

մեծ արգելք էր նրանց ծրագրերի իրականացման համար: Անգլիական հրամանատարությունը լիակատար տեղեկություն ուներ ազգային հերոսի ձգտումների, ըմբոստ ոգու, անկաշառ էության, անսահման հայրենասիրության մասին և լավ հասկանում էր, որ Զանգեզուրում նրա ներկայությունը անլուծելի է դարձնելու գավառն Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու իր խնդիրը:

Հասնելով Սիսիանի Անգեղակոթ գյուղ՝ ապրիլի 1-ին Անդրանիկն այնտեղ հրավիրեց մի ժողով, որին մասնակցում էին Սիսիանի իշխանությունների ներկայացուցիչները, գաղթականության 12 ներկայացուցիչները, ինչպես նաև անգլիական առաքելության ներկայացուցիչ լեյտենանտ Հաուելը: Ժողովը վարում էր Անդրանիկը: Օրակարգում դրվել էր Սիսիանի գյուղերից գաղթականության համար գնված 2635 փութ ցորենի և 119 փութ գարու ճիշտ բաշխման հարցը:

Ցորեն գնելու համար անգլիական առաքելությունը Անդրանիկին տրամադրել էր 200.000 ռուբլի: Գնված ցորենի դիմաց այդ գումարից վճարվել էր 131.750 ռուբլի (փութը 50 ռուբլի), իսկ գարու համար՝ 3.570 ռուբլի (փութը 30 ռուբլի): Գնվել էր ընդամենը 135.320 ռուբլու հացահատիկ: Մնացած 64.680 ռուբլին Զորավարը վերադարձրել էր առաքելության ներկայացուցիչ Հաուելսին, և դա այն դեպքում, երբ Արարատյան դաշտ հասնելու համար Հարվածող զորամասի կարիքները հոգալու համար մնացել էր չնչին գումար:

Ձեռք բերած հացահատիկի մեծ մասը, ժողովում ասաց Անդրանիկը, հավասարապես պետք է բաժանվեր Սիսիանի շրջանում գտնվող որբ ու այրի գաղթականներին, 50 փութը տրվեր Ղարաքիլիսայի որբանոցին, իսկ 100 փութը պիտի առայժմ մնար անձեռնմխելի՝ հատկացնելու համար այն որբերին ու այրիներին, որոնք, հացի կտոր մուրալով, թափառում էին շրջանի գյուղից գյուղ և այդ իսկ պատճառով հաշվառման չէին ենթարկվել[1]:

Անգեղակոթում երկու օր մնալուց հետո Անդրանիկը անցավ Բազարչայ ռուսական (մոլոկանների) գյուղը, որտեղ բնակիչները նրան արտակարգ ընդունելություն ցույց տվեցին: Գյուղացիները մորթում էին կովեր և կերակրում զինվորներին[2]:

Դարալագյազի տարածքով անցնելիս Անդրանիկը ամենուր տեսնում էր ճանապարհների եզրերին մեկնված, սովից ուժասպառ եղած հազարավոր գաղթականների: Ամեն օր տասնյակ, հարյուրավոր գաղթականներ էին մեռնում: Հյուծված և ոսկրացած գաղթականների մի մասը, դաշտերն ընկած, քաղում և ուտում էր հողի տակից նոր դուրս եկած այն ամենը, ինչ կանաչ էր և կարող էր հագեցնել քաղցը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 56, թ. 20, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 553-554:

[2] Տե՛ս **Վ. Ահարոնեան**, Անդրանիկ. մարդը և ռազմիկը, Բոսթըն, 1957, էջ 172-173, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 555-556:

Ի տես այդ ամենի՝ Անդրանիկի մոտ իրար էին խառնվել վիշտն ու զայրույթը: Նա վերջնականապես համոզվել էր, որ ինքը սխալվել է՝ հավատալով «դաշնակիցներին», որոնք կարողացել էին իրեն խաբել և Զաբուղի ձորից վերադարձնել Գորիս, հասկացել էր, որ սխալ են եղել անգլիացիների ստիպմամբ Ադրբեջանի թուրքերի դեմ կռիվները դադարեցնելու մասին իր հրահանգները՝ ուղղված ոչ միայն Զանգեզուրի, այլև Արցախի հայ ռազմիկներին:

Մայոր Վ. Գիբոնը, որը անգլիական հրամանատարության հրահանգով Գորիսից սկսած ուղեկցում էր Անդրանիկին՝ թույլ չտալով նրա զորքի հնարավոր մուտքը Նախիջևան, 1919 թ. վերջերին իր տեսածը հանձնել էր թղթին: Դարալագյազի ճանապարհներով անցնելիս Անդրանիկի հոգեվիճակի մասին վերջինս գրել է. «Ցերեկվա ճաշին Անդրանիկը ո՛չ կերավ, ո՛չ խմեց և ամբողջ կեսօրից հետո լուռ էր: Ավելի ուշ, Քեշիշքենդի սովյալ ժողովրդին օգնելու մտածումով նրան հարցրի, թե ինչ պարեն կարող է թողնել այստեղ, եթե ես երաշխիք տայի, որ Դավալու հասնելուն պես նրա զինվորներին կփոխհատուցեմ սննդամթերքով, որ այնտեղ արդեն ստացված կլինի»[1]:

Անկարող լինելով իրեն զսպել՝ Անդրանիկը պոռթկաց. «Գացե՛ք անգլիացիներուն ըսեք, որ այս օրերեն սկսեալ, ձեռքերս կը լուամ և դաշնակիցներուն հետ որևէ գործ չունիմ այլևս: Ինչ դրամ որ ստացած եմ իրենցմե, պիտի վերադարձնեմ, ձիերս ծախելով, երբ Երևան հասնիմ»[2]: Եվ Անդրանիկը զայրույթով բացատրում էր, թե ինչու պետք է այդ քայլին դիմի. «Մեզի ըսիք, որ այլևս չկռուինք և մեզի համար եղած անիրավութեանց համար սպասենք խաղաղութեան համաժողովին: Ձեզի վստահելով, հանդարտ կեցանք և համբերութեամբ սպասեցինք մեր փրկութեան: Կ՚ըսեք, թե Թուրքիայէն անկախ Հայաստան մը պիտի ունենանք: Մոտ ատենէն այդ Հայաստանը լեցնող հայ պիտի չմնայ այլևս: Կը մերժեք, որ մեր երկրին և մեր կեանքին համար կռուելով մեռնինք, և մեզ կը դատապարտենք սովամահ մեռնելու անպատվութեան: Մինչև հիմա հավատարիմ եղայ ձեզի, բայց ալ չեմ կրնար հանդուրժել: Էջմիածին պիտի երթամ, ինչպէս խոստացա ձեզի: Հոն հասնելէ ետք, պիտի ընեմ ինչ որ շիտակ գտնեմ իմ ժողովրդիս բարիքին համար: Եթէ դուք նոյնիսկ ինծի **այո** ըսեք, եթե Աստված ալ ինծի **այո** ըսե, թէ իմ ցեղիս հանդէպ արդարութիւն կա, ես պիտի ժխտեմ զայդ իմ ներկայութեան …»[3]:

Անդրանիկի՝ Զանգեզուրից հեռանալու մասին Ռ. Խուդադովը 1923 թ. գրում էր, որ հենց անգլիական հրամանատարության պահանջով էր, որ Անդրանիկը ցրեց իր ջոկատը, հեռացավ Զանգեզուրից, որտեղ նա կարող էր հաղթականորեն դիմանալ Արևելյան Այսրկովկասի թուրքական

---

[1] «Մշակ» (Ֆրեզնո), 1937, 3 սեպտեմբերի, թիվ 1213, արտատպված է «Բլեքվուդ մեգըզին» հանդեսի 1919 թ. դեկտեմբերյան համարից:

[2] Նույն տեղում:

[3] «Մշակ» (Ֆրեզնո), 1937, 3 սեպտեմբերի, թիվ 1213:

օկուպացիայի՝ հայերի համար օրհասական պահերին և գնաց արտասահման:

Անդրանիկի բացակայությունը շատ ազդեց Թուրքիայի և Ադրբեջանի դեմ հետագա պայքարի վրա: Ռ. Խուդադովը կարծում էր, որ եթե Անդրանիկը իր ուժերով մնար Զանգեզուրում կամ Հայաստանի որևէ այլ մասում, հազիվ թե Ղարաբաղի լեռնային մասը մտներ Ադրբեջանի Հանրապետության կազմի մեջ, իսկ Շուշին ավերածության ենթարկվեր: Ընդհանրապես, ըստ Ռ. Խուդադովի, անգլիական հրամանատարության գործողությունները Այսրկովկասում աչքի էին ընկնում բացառիկ ցինիկ «իմաստությամբ» առ այն, որ Զանգեզուրը, որը խռովության տարիներին դարձել էր գրեթե բացառապես հայկական, գեներալ Վ. Թոմսոնի որոշմամբ մտավ Ադրբեջանի կազմի մեջ այն դեպքում, երբ Նախիջևանի երկրամասը՝ գերակշիռ թուրք բնակչությամբ, մտավ Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, որի հետևանքով առաջացան մի շարք արյունահեղ ընդհարումներ, որոնք անչափ թուլացրին Հայաստանի Հանրապետությունը: Անգլիական օկուպացիան ակնառու կերպով բոլորին ապացուցեց, թե որքան ապարդյուն են եղել այն մարդկանց հույսերը, որոնք իրենց քաղաքականությունը կառուցում էին՝ հույսները դնելով դաշնակիցների հաղթանակի վրա (ըստ իս, Խուդադովը ակնարկում է հայությանը: – *Ա. Ս.):* Այն ցույց տվեց, որ բոլոր մեծախոստում լոզունգները լոկ վարագույր էին, որոնց ետևում հարմար էր հետապնդել սեփական շահախնդիր նպատակները: Ռ. Խուդադովը կարծում էր, որ հայ հասարակությունը մի շարք դառը հիասթափություններից հետո չզգաստացավ, որի վկայությունը հայկական քաղաքական ղեկավարների վարքագիծն էր:

Ռ. Խուդադովն իրավամբ ճիշտ էր: Անգլիական հրամանատարությունը որոշեց հեռանալ Այսրկովկասից, քանի որ օկուպացիայի հետ կապված խոշոր ծախսերի պատճառով չկարողացավ ստեղծել միասնական հակախորհրդային ճակատ: 1919 թ. օգոստոսին՝ անգլիական զորքերի հեռանալուց հետո, ամբողջ Ադրբեջանում սկսվեցին ռազմական ուժգին նախապատրաստություններ՝ գլխավորապես Փոքր Կովկասի լեռնային շրջանները՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Ղազախը ենթարկելու համար, որոնց նկատմամբ տիրապետությունը անգլիական հրամանատարությունը թողել էր Ադրբեջանին, և որոնք մեծ արժեք էին ներկայացնում ամառային քոչերի համար: Ընդհարումները վերսկսվեցին արդեն 1920 թ. առաջին իսկ ամիսներից և շուտով ընդունեցին արտասովոր չափեր. մարտերը տեղի էին ունենում Փոքր Կովկասի լեռնաշխարհի ամբողջ երկարությամբ՝ Վրաստանի սահմաններից (Թիֆլիսի նահանգ) մինչև Արաքս գետը, որը հարավից ողողում է Ղարաբաղի լեռները: Պետք է նշել, սակայն, որ Խուդադովը անարդարացիորեն հավասարության նշան էր դնում ռազմական քայլերի առումով. «Այդ ընդհարումների ժամանակ, ինչպես մեկ, այնպես էլ մյուս կողմը կիրառում էր փո-

խաղարձ ոչնչացման առավել կատարելագործված միջոցներ՝ ընդհուպ խեղդող գազերի և հրետանային ճիշտ կրակի կիրառումը»[1]:

Թուրքերը կարծում էին, թե Անդրանիկի հեռանալուց հետո Զանգեզուրն այլևս չէր կարող դիմադրություն ցույց տալ իրենց զանգվածային ճնշմանը: Բայց Զանգեզուրը, կանգնած ամուր ոտքերի վրա, աներեր և արթուն պատրաստ էր դիմագրավելու աջից ու ձախից՝ Նախիջևանից և Ղարաբաղի կողմերից եկող բոլոր վտանգները:

Հենց դա էր, որ չէր մտնում անգլիական հրամանատարության ծրագրերի մեջ: Թիֆլիսից շատ կարճ ժամանակով գալով Երևան՝ Վ. Թոմսոնը մարտի 28-ին հանդիպում ունեցավ նախարար-նախագահ Ալեքսանդր Խատիսյանի հետ և հայտնեց իր դժգոհությունը, որ հայոց կառավարությունը, հակառակ դաշնակիցների ցանկության, եռանդուն գործունեություն է ծավալել Զանգեզուրն ու Արցախը ներառելու Հայաստանի Հանրապետության կազմի մեջ: Ա. Խատիսյանը և զրույցի մասնակիցներ Քրիստափոր Վերմիշևն ու Սիրական Տիգրանյանը իրենց հերթին բողոքում էին հայկական զույգ երկրամասերի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը բացահայտորեն պաշտպանող անգլիացիներից: Վ. Թոմսոնը Թիֆլիս վերադարձավ ձեռնունայն[2]:

Անգլիացիները համառորեն շարունակում էին անտեսել ՀՀ կառավարության կարծիքը և Արցախի ու Զանգեզուրի հայության կամքը:

Բաքվի անգլիական զորքերի հրամանատար Վ. Թոմսոնին մարտի 9-ին փոխարինած գնդապետ (ապա՝ բրիգադի գեներալ) Դիգբի Ինգլիզ Շատլվորթը ապրիլի 3-ին այնտեղ հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասված էր, որ ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Զանգեզուրի հայերը պարտավոր են անառարկելիորեն կատարել Ղարաբաղ–Զանգեզուրի ընդհանուր գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի «բոլոր հրամաններն ու կարգադրությունները», և որ անգլիական հրամանատարությունը նահանգապետի «ձեռք առած բոլոր օրինական գործողություններին» ցույց է տալու ամեն տեսակի աջակցություն[3]:

1919 թ. ապրիլի սկզբներին Զանգեզուրի ազգային խորհրդի վերընտրությունից հետո նախկին խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը: Հայաստանի կառավարությունը, ընդառաջ գնալով Զանգեզուրի ու Արցախի ժողովրդի միահամուռ փափագին, ինչպես նաև ելնելով Զանգեզուր–Արցախի համար ընդհանուր պետական կոմիսար նշանակելու փաստից, որոշեց ՀՀ Զանգեզուրի նորընտիր Ազգային խորհուրդը վերանվանել Զանգեզուր–

---

[1] “Новый восток”, 1923, № 3, с. 186.

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 231, թ. 51, ֆ. 275, ց. 2, գ. 101, թթ. 14-15, գ. 131, թթ. 1-2, **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 67, **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 231-234:

[3] Տե՛ս **Գ. Լազեան**, Հայաստան և հայ դատը ըստ դաշնագիրերու, Գահիրե, 1942, էջ 135, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 313:

Ղարաբաղի միացյալ շրջանային (մարզային) խորհուրդ և նրա կազմը համալրել Արցախի ներկայացուցիչներով: Այդ ձևով պաշտոնապես նվիրագործվեց Ղարաբաղ–Զանգեզուրի միությունը և երկուսի կցումը Մայր Հայաստանին: Զանգեզուր–Արցախի ընդհանուր պետական կոմիսար նշանակվեց շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանը, որի պարտականություններին ավելացվեց նաև շրջանային խորհրդի գործունեությանն աջակցելու և ուղղություն տալու գործը: Ինչ վերաբերում էր Արցախի ազգային խորհրդին, ապա այն շարունակելու էր գործել, բայց սահմանափակ իրավունքներով[1]:

Զանգեզուր–Ղարաբաղի միացյալ շրջանային նորընտիր խորհրդի կազմում ընդգրկված էր 11 հոգի (Գորիսի շրջանից՝ 3, Սիսիանից՝ 2, Կապանից՝ 1, Արցախից՝ 5): Նորաստեղծ խորհրդի նախագահ ընտրվեց Մուշեղ Զաքարյանը (Սիսիանի շրջանից), փոխնախագահ՝ Արշակ Շիրինյանը (Գորիսի շրջանից), քարտուղար՝ Մելիքսեթ Եսայանը (Արցախից): Խորհրդի անդամներ ընտրվեցին Երեմիա Բակունցը և Սահակ Տեր-Հայրապետյանը՝ Գորիսի շրջանից, Սմբատ Մելիք-Ստեփանյանը՝ Կապանի շրջանից, Հակոբ Տերունին՝ Սիսիանի շրջանից, Խաչատուր Դանիելյանը, Գերասիմ Բալայանը, Եղիշե Իշխանյանը և Ավետիս Ասատուրյանը՝ Արցախից[2]:

Ինքնապաշտպանության գործը ղեկավարելու համար ստեղծվեցին զինվորական խորհուրդ և գլխավոր սպայակույտ: Այդտեղ ակտիվ դերակատարություն ստանձնեցին արհեստավարժ զինվորականներ Պ. Տեր-Դավթյանը, Խ. Մալինցյանը, Մ. Հուսեյինյանը, Հ. Տեր-Պետրոսյանը և ուրիշներ[3]:

Ի պատասխան այդ ակտի՝ Դ. Շատլվորթը Բաքվում հրապարակեց հետևյալ հայտարարությունը. «Անգլիական հրամանատարությունը հայտարարում է, ի գործադրություն Շուշի, Զանգեզուր, Զաբրայիլ և Ջիվանշիր գավառների բովանդակ ազգաբնակչության, որ՝ 1) Ազրբեջանի կառավարության 1919 թ. հունվար 15-ի որոշումով Սուլթանովը նշանակված է Շուշի, Զանգեզուր, Զաբրայիլ և Ջիվանշիր գավառների ընդհանուր նահանգապետ և վայելում է անգլիական հրամանատարության աջակցությունը: 2) Գոյություն ունեցող օրենքի համաձայն, ամբողջ ազգաբնակչության կարիքների գոհացման համար ընդ[հանուր] նահանգապետին կից կազմակերպվում է հայ-մահմեդական վեց իրազեկ ներկայացուցիչներից մի խորհուրդ:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 31-32, ֆ. 1021, ց. 5, գ. 449, թ. 1, ֆ. 1457, ց. 1, գ. 390, թ. 1 և շրջ., **Ա. Բաբալեան**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, «Հայրենիք», 1923, հուլիս, թիվ 9, էջ 105:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, գործավարական թիվ 268, ֆ. 206, ց. 1, գ. 27, թ. 28 և շրջ., ֆ. 1457, ց. 1, գ. 390, թ. 1 և շրջ., **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, հոկտեմբեր, թիվ 10 (380), էջ 48, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 331, **Գ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 57, **Գ. Գրիգորյան**, **Ս. Հախվերդյան**, նշվ. աշխ., էջ 205:

[3] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 331:

3) Անգլիական հրամանատարության ներկայացուցչի հանգամանքով կարող է խորհրդի մեջ մտնել անգլիական առաքելության սպաներից մեկը: 4) Ընդ[հանուր] նահանգապետության սահմաններում ծառայող բոլոր պաշտոնյաների ռոճիկը և մյուս ծախսերը հոգացվում են ադրբեջանյան գանձարանից: 5) Բոլոր վիճելի հարցերն իրենց վերջնական լուծումը կստանան [Փարիզի] Հաշտության վեհաժողովում: 6) Ընդ[հանուր] նահանգապետության սահմաններում կատարվող բոլոր զինվորական տեղափոխությունների մասին նախօրոք տեղեկացվում է անգլիական առաքելությանը: 7) Սույն հաղորդագրությամբ անգլիական հրամանատարությունը ուզում է մատնանշել, որ ընդ[հանուր] նահանգապետի վրա դրված պարտականությունների գործադրությունը՝ ի մասին ընդ[հանուր] նահանգապետության մեջ կարգի և անդորրության պահպանման, ընդ[հանուր] նահանգապետից և նրա մարմիններից բխող բոլոր հրամաններն ու կարգադրությունները պետք է իրագործվեն առանց առարկության, և անգլիական հրամանատարությունը աջակցություն է ցույց տալիս ձեռք առնված օրինական միջոցներին»[1]:

Այս հայտարարությունը հանդիպեց Հայաստանի կառավարության, զանգեզուրցիների և արցախցիների դիմադրությանը, նախ՝ Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը ապրիլի 7-ին Գորիս քաղաքում, Կապանի հանքերում, գավառի բազմաթիվ գյուղերում կազմակերպեց բողոքի հանրահավաքներ ու ժողովներ՝ ուղղված Զանգեզուրին ուժով տիրանալու Բաքվի ոտնձգությունների դեմ: Միաժամանակ սկսվեց զինված նոր ջոկատների կազմակերպումը:

Այսպես, Սիսիանում կազմակերպվեց լրացուցիչ չորս վաշտ՝ փորձված հրամանատարների գլխավորությամբ: Շրջանի զինված ուժերի ընդհանուր հրամանատար նշանակվեց Բռնակոթի գյուղացի Եղիա Իսկանդարյանը, ռազմական շտաբի պետ՝ ծննդով Կապանի շրջանի Վերին Խոտանան գյուղի բնակիչ Պողոս Տեր-Դավթյանը:

Իր հերթին Ադրբեջանը անգլիացիների հովանավորությամբ աստիճանաբար սեղմում էր օղակը Ղարաբաղի և Զանգեզուրի շուրջը՝ մեծաթիվ զորքեր կենտրոնացնելով ռազմավարական կարևոր կետերում՝ Ասկերանում, Խանքենդում, Շուշիում, Զաբուղում, Կարյագինոյում, իսկ Նախիջևանի կողմից՝ Դարալագյազի ուղղությամբ: Մուսավաթական զորքերին միացել էին Ադրբեջանում և Նախիջևանում մնացած թուրքական ջոկատները: Այդ կապակցությամբ Արցախի ինքնապաշտպանության նշանավոր կազմակերպիչներից Հարություն Թումյանը գրել է. «Նույն անգլիացիների գիտությամբ ադրբեջանական բանակը կազմակերպելու գործում մեծ դեր էր խաղում այստեղ թաքնված հայակեր Էնվեր փաշան: Փաստորեն՝ հայտարարված էր Ղարաբաղի տնտեսական շրջափակում, անհնար էր գյուղատնտեսական

[1] ՀԱԱ, ֆ. 1457. ց. 1. գ. 389, թ. 2:

աշխատանքներով զբաղվելը: Սուլթանովի կազմակերպած ավազակախմբերը հսկում էին Շուշի մտնող ճանապարհները: Շուշիում անգլիացիները ուժեղացրել էին մուսուլման հնդիկներից կազմված զորամասը»[1]:

Միաժամանակ Դ. Շատլվորթը Բաքվում վճռականորեն հայտարարել էր, որ 1919 թ. փետրվարի 12-21-ը Շուշիում տեղի ունեցած Արցախի հայության չորրորդ համագումարում ընտրված Ազգային խորհրդի հետ անգլիական առաքելությունը այլևս ոչ մի հարաբերություն չի ունենալու, հետևապես այն պետք է ցրվի[2]:

Չնայած բոլոր սպառնալիքներին՝ Արցախի հայոց ազգային խորհուրդը շարունակում էր գաղտնի գործել և ուղղություն տալ արցախահայության պայքարին՝ առայժմ ստանալով միայն Հայաստանի Հանրապետության կառավարության, Զանգեզուրի ու Արցախի պետական կոմիսարի և Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի բարոյական աջակցությունը[3]:

Ապրիլի 19 (21)-ին մեծ շքախմբով Բաքվից Շուշի ժամանեց բրիգադի գեներալ Դ. Շատլվորթը՝ մասնակցելու ապրիլի 23-ին Շուշիում սկսվող Արցախի հայության հինգերորդ համագումարի աշխատանքներին և տեղում կոնկրետ լուծելու արցախահայերին մուսավաթական Ադրբեջանին ենթարկելու հարցը[4]: Դ. Շատլվորթը Արցախի հայոց ազգային խորհրդից պահանջեց հնարավորինս շուտ դրական պատասխան տալ իրեն հետաքրքրող հարցին, այսինքն՝ համաձայնություն տալ Արցախի ու Զանգեզուրի 300.000-ի հասնող հայությանը դնելու մուսավաթական կառավարության լծի տակ[5]:

Համագումարի նիստերից մեկի ժամանակ ունեցած իր ելույթում գեներալը հնչեցրեց տարածաշրջանում բրիտանական հրամանատարության հետապնդած երեք նպատակները՝ 1) Այսրկովկասից դուրս քշել գերմանացիներին և թուրքերին, 2) վերագործարկել երկաթուղային կապը, 3) վերականգնել կարգուկանոնը: Նա մեծամտորեն հայտարարեց, որ բրիտանացիները

---

[1] «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 10 նոյեմբերի:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 32, 57, գ. 309, թթ. 123, 130, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 59, 20 մարտի, **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 67:

[3] Տե՛ս «Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը Հայաստանի կառավարութեան կովկասեան կօնֆերանսի գործունէութեան մասին, 12 յունիս, 1919», «Հայրենիք», 1968, Ա տարի, թիվ 2, էջ 21:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 36 և շրջ., ֆ. 1457, ց. 1, գ. 441, թ. 1, **Ս. Մելիք-Եօլչեան**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 124, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, «Հայրենիք», 1929, հունիս, թիվ 8 (80), էջ 136, **Ա. Աստուածատրեան**, նշված հոդվածը, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 51, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 333, **Ե. Իշխանեան**, նշվ. աշխ., էջ 393, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 53, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 128-129:

[5] Տե՛ս **Ս. Մելիք-Եօլչեան**, նշվ. աշխ., էջ 124, **Սարուր (Քիրս Սարոտ)**, նշվ. աշխ., էջ 136, **Ա. Աստուածատրեան**, նշված հոդվածը, «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 52, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 331-333, **Ե. Իշխանեան**, նշվ. աշխ., էջ 395, **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 68, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 130:

հասել են իրենց նպատակին, և սպառնաց, որ եթե արցախահայությունը չզիջի ադրբեջանական պետության նկրտումներին, կենթարկվի տնտեսական շրջափակման[1]: Վերջում անգլիացին բրիտանական կառավարության անունից նորից պահանջեց անվերապահորեն կատարել գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի բոլոր կարգադրությունները[2]:

Դ. Շատլվորթի սանձարձակ ելույթը բողոքի փոթորիկ առաջ բերեց համագումարում: Պատգամավորներն իրենց ելույթներում մերժեցին ներկայացված պահանջները՝ անընդունելի համարելով Ադրբեջանի հետ միավորվելու որևէ վարչական ձև[3]:

Ի պատասխան գեներալի ելույթի՝ համագումարի պատգամավորները հանդես եկան հայտարարությամբ, որում նշվում էր, որ Ադրբեջանի թուրքերը միշտ ունեցել են թուրքական կողմնորոշում և ամեն կերպ նպաստել են թուրքական զորքերի Այսրկովկաս մտնելուն: Նշվում էր, որ այժմ նույնպես Ադրբեջանը կողմնորոշված է դեպի Թուրքիա, թեև ադրբեջանական թուրքերը փորձում էին դա ժխտել: Նշվում էր նաև, որ ավազակությունները, թալանը, մարդասպանությունները, ճանապարհներին հայերին առևանգելը Ադրբեջանի նպատակների իրականացման սովորական միջոցներն են: Համագումարը գտնում էր, որ Ղարաբաղի հայության քաղաքական, պատմական, կուլտուրական, իրավական և մանավանդ տնտեսական պայմանները չեն կարող ոչ մի դեպքում հիմք ծառայել հայ ժողովրդի վզին փաթաթելու Ադրբեջանի թեկուզ ժամանակավոր իշխանության վարչական ձևը[4]:

Համագումարի պատվիրակները միահամուռ մերժեցին անգլիացի գեներալի պահանջները: Երկրորդ անգամ լսելով Ադրբեջանի իշխանությանը ենթարկվելու մասին Դ. Շատլվորթի պահանջը՝ համագումարը կրկին շեշտեց, որ «միանգամայն անհնարին է գտնում փոխելու իր ժխտական որոշումը, որը թելադրված է Ղարաբաղի ամբողջ հայության անհողդողդ կամքով, որին դավաճանելը ոչ մի դեպքում չեն ուզում և չեն կարող»[5]:

Համագումարի վճռական կեցվածքին հետևեց Շատլվորթի նույնքան վճռական հայտարարությունն այն մասին, որ ինքը օրենքից դուրս էր հա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 218, թ. 1, ֆ. 200, ց. 1, գ. 293, թ. 40, **М. Туманян,** նշվ. աշխ., էջ 156-157:

[2] Տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, Միսակ Տեր-Դանիելյանի հուշեր:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 27, **Ե. Իշխանեան**, նշվ. աշխ., էջ 393, **Սարուր (Քիրս Սարոտ)**, նշվ. աշխ., էջ 136, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 52, «Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը ...», էջ 21, **Հ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 54, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 130-132:

[4] Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 333, **Ե. Իշխանեան**, նշվ. աշխ., էջ 403, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 132:

[5] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 390, թ. 4, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 314-315:

մարում Արցախի հայության 4-րդ համագումարում ընտրված Ղարաբաղի ազգային խորհուրդը՝ հիշեցնելով, որ Բաքվի բրիտանական հրամանատարությունը հենց սկզբից չէր ճանաչել այդ խորհրդի լիազորությունները, իսկ առավել ևս այժմ նրա գոյությունը անհանդուրժելի էր համարում:

Արցախի հայության 5-րդ համագումարից հետո անգլիացիները խարդավանքներով ու բացահայտ բռնություններով առժամանակ կարողացան կասեցնել Ազգային խորհրդի ակտիվ գործունեությունը: Նրանք նախ Արցախից աքսորեցին հայտնի գործիչներից ոմանց, այդ թվում՝ Ազգային խորհրդի անդամներից մի քանիսին, իսկ ոմանց էլ ստիպեցին քաղաքական գործունեությամբ այլևս չզբաղվելու ստորագրություն տալ[1]:

Աքսորներով ու ձերբակալություններով անգլիացիներին ու թուրքերին ի վերջո հաջողվեց դադարեցնել Ազգային խորհրդի գործունեությունը Շուշիում[2]: Բայց դա չկոտրեց արցախահայության դիմադրական ուժը: Ժողովուրդը մերժեց անգլիական իշխանության հայադավ պահանջները: Վարանդայում կազմակերպվեց ինքնապաշտպանական մի մարմին, որը փոխարինեց Ազգային խորհրդին: Այդ մարմնի մեջ էին մտնում խորհրդի դեռևս Արցախում գտնվող անդամները, զինվորական ու պետական հայտնի գործիչներ[3]: Այդպիսով, փաստորեն, Ազգային խորհուրդը շարունակում էր գործել: Ամեն ինչից երևում էր, որ Այսրկովկասի բրիտանական հրամանատարությունը ամուր բռնել էր Արցախի ու Զանգեզուրի կոկորդից և չէր ցանկանում բաց թողնել: Անգլիացիների օգնությամբ Արցախին տիրանալու համար մուսավաթականները պատրաստ էին ամեն տեսակի բռնությունների, նույնիսկ արյունահեղության: Անհանգստացնող էր հատկապես այն, որ մեղմանալու փոխարեն օրըստօրե ավելի էր սրվում ու բարդանում իրավիճակը, որից դուրս գալու երեք ուղի կար՝ 1. ենթարկվել Ադրբեջանի կառավարությանը, 2. կրկին ու կրկին խնդրել Հայաստանի կառավարությանը, որպեսզի նա իր ձեռքը վերցնի Արցախի դատը և դիվանագիտական կամ մեկ այլ ճանապարհով լուծի այդ ծանր խնդիրը, 3. դիմել զինված լայնածավալ պայքարի:

Առաջին տարբերակը արցախահայությունը վճռականապես մերժում էր, երկրորդը հույս չէր ներշնչում. հազիվ թե մոտ ապագայում Երևանից օգնություն հասներ, թեև Արցախի հայերը չէին կորցնում իրենց հույսը: Ինչ վերաբերում էր Ադրբեջանի հետ վճռական կռվի մեջ մտնելուն, ապա պահը խիստ անհարմար էր, քանի որ, ինչպես տեսանք, նրան Այսրկովկասում

---

[1] Տե՛ս **Ա. Բաբալեան**, նշվ. աշխ., էջ 104, **Ե. Իշխանեան**, Դէպքերը Ղարաբաղում, Ճշդումներ և դիտողութիւններ, «Հայրենիք», 1933, հոկտեմբեր, թիվ 12 (132), էջ 124, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 334:

[2] Տե՛ս **Ս. Մելիք-Եօլչեան**, նշվ. աշխ., էջ 124, **Ա. Բաբալեան**, նշվ. աշխ., էջ 104, «Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը ...», էջ 21:

[3] Տե՛ս **Ա. Բաբալեան**, նշվ. աշխ., էջ 104:

գտնվող իր զորքերով բացահայտորեն աջակցում էր Անգլիան:

Արցախում տեղի ունեցող վտանգավոր գործընթացները տագնապ էին առաջացնում նաև Զանգեզուրում: Բայց այդ դժվարին օրերին հուսադրիչ լուրեր էին գալիս գավառի հարավարևմտյան կողմերից:

Բանն այն է, որ Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը և Նախիջևանի գավառի բրիտանական զինվորական կառավարիչ կապիտան Ֆրեդերիկ Իստլենդ Լաուտոնը դեռևս 1919 թ. փետրվարի 3-ին կնքել էին մի համաձայնություն, որով. 1) Նախիջևանի գավառը հանձնվում էր հայկական կառավարմանը (Ուվա-չայից մինչև նախկին Երևանյան գավառի հարավային սահմանը), սակայն երկրամասը անորոշ ժամանակով ենթակա էր լինելու բրիտանական վերահսկողությանը, 2) Նախիջևանի յուրաքանչյուր գյուղ ինքն էր ընտրելու իր տանուտերին, 3) նշված տարածքում կարգն ու կանոնը պաշտպանելու էին ոչ թե հայկական, այլ բրիտանական զորախմբերը, և այդ նպատակով բրիտանական մի զորամաս տեղաբաշխվելու էր Դավալու գյուղում, իսկ հայերն իրենց բոլոր զորախմբերը, բացառությամբ Դավալուի զորամասի, հետ պիտի քաշեին Ուվա-չայից հյուսիս, 4) առանց բրիտանական ներկայացուցչի հրամանի՝ հայկական զորամասերն առժամանակ չպետք է մտնեին թուրքաբնակ գյուղերը, 5) Երևանի կառավարությունը պարտավորվում էր վերահաստատել հեռագրական հաղորդակցությունը Նախիջևանի սահմանի և Երևան քաղաքի միջև[1]:

Ինչպես տեսնում ենք, այս համաձայնագիրն անգլիացիների կողմից առաջին գործնական քայլն էր Նախիջևանի խնդիրը կարգավորելու, երկրամասը իր իսկական տիրոջը վերադարձնելու ուղղությամբ:

Զանգեզուրցիները մեծ շահագրգռվածությամբ էին հետևում Նախիջևանում դեպքերի հետագա զարգացմանը, քանի որ գործընթացի հաջող ելքից էր կախված լեռնաշխարհում ապաստանած նախիջևանահայ բազմահազար գաղթականության վերադարձը հայրենի օջախներ, որով միայն կթեթևանար զանգեզուրցու ծանր բեռը:

Շատ չանցած՝ Նախիջևանը լիովին անցավ Հայաստանի Հանրապետությանը, և նախիջևանահայ գաղթականները սկսեցին վերադառնալ իրենց բնակավայրերը, այդ թվում՝ Ջուլֆա և Ջուղա[2]:

Զանգեզուրում ուրախությամբ ընդունեցին Նախիջևան–Շարուրի տարածքում անհապաղ պետական մարմիններ ստեղծելու մասին ՀՀ նախարարների խորհրդի ապրիլի 26-ի որոշումը[3]:

Ապրիլի 29-ին ՀՀ նախարարների խորհուրդը քննարկեց այդ շրջաննե-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 391, թթ. 1-4, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 37:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 37ա, գ. 243, թ. 99, ֆ. 1457, ց. 1, գ. 391, թ. 1, **Ա. Բաբալեան**, նշվ. աշխ., էջ 109, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1957, հոկտեմբեր, թիվ 10 (380), էջ 51, **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 77, **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 157-160:

[3] Տե՛ս «Կառավարական լրաբեր», 1919, 12 մայիսի:

ռում վարչական միավորներ կազմակերպելու հարցը և որոշեց ստեղծել 3 գավառ՝ ա) Գողթան՝ Ագուլիս կենտրոնով, բ) Նախիջևան՝ Նախիջևան կենտրոնով, գ) Շարուր՝ Բաշ–Նորաշեն կենտրոնով[1]:

Հայաստանի կառավարության բազմաթիվ բողոքներից հետո անգլիական հրամանատարությունը համաձայնել էր, որ Հայաստանի պետությունը Արցախում ունենա հանրապետության զինվորական ներկայացուցիչ, բայց միայն այն պայմանով, որ նա գործի Շուշիի անգլիական առաքելությանը կից և զբաղվի միայն սովյալ բնակչության վիճակը բարելավելու հարցերով: Ըստ այդմ՝ ՀՀ կառավարությունն Արցախում իր զինվորական ներկայացուցիչ նշանակեց գնդապետ Միքայել Արզումանյանին[2]: Ճիշտ է, Խոսրով բեկ Սուլթանովի բողոքի հիման վրա Ադրբեջանի կառավարությունը անգլիական հրամանատարությանը խնդրել էր այդ պաշտոնում նշանակել մեկ ուրիշ հայ գործչի, բայց ապրիլի 28-ին Միքայել Արզումանյանը, հասնելով Շուշի, նրանց կանգնեցրել էր փաստի առաջ:

Հայաստանի զինվորական ներկայացուցիչը Արցախ եկավ այն ժամանակ, երբ դրությունը օրըստօրե ծանրանում էր, որովհետև հայկական գյուղերի վրա թուրքերի հարձակումներն ու ալան-թալանն անցել էին չափ ու սահման: Պաշտոնապես լուծարված, բայց նախկինի պես ակտիվորեն գործող Ազգային խորհրդի և նրա նախագահ Եղիշե Իշխանյանի մոտ կուտակվել էին գյուղերից ստացված հարյուրավոր բողոքագրեր ու գանգատներ:

Քանի որ Արցախի ազգային խորհուրդը զրկված էր անգլիական առաքելության հետ անմիջական կապի մեջ մտնելու իրավունքից, ուստի առավել կարևոր դիմումները ստիպված եղավ շտապ փոխանցել Մ. Արզումանյանին՝ առաքելությանը ներկայացնելու համար:

Սովորաբար, երբ առաքելության անդամները Արցախի հայերից գանգատներ ու բողոքներ էին ստանում, որպես կանոն, դրանց չէին պատասխանում, իսկ հազվադեպ տրված պատասխանը լինում էր միայն «բարի խորհուրդ»՝ դիմել ոչ թե իրենց, այլ գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովին: Մ. Արզումանյանի կողմից առաքելություն ներկայացրած բողոքներն այս անգամ էլ արժանացան նույն ծաղրական պատասխանին[3]:

Անգլիացիների բացահայտ հակահայկական դիրքորոշումը Սուլթանովին դարձրել էին ավելի լկտի ու անզիջում: Զանգեզուրին սահմանակից վայրերում և Արցախի կարևոր կետերում կուտակված զինական ուժերը համարելով բավարար՝ Սուլթանովը որոշեց դիմել վճռական գործողությունների՝ զենքով հայկական զույգ երկրամասերը նվաճելու համար: Նա նույնիսկ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14 (մաս առաջին), թ. 77:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 42, թթ. 9, 10, **Սարուր (Քիրս Սարոտ)**, Ղարաբաղի կցումը Ատրբէջանին, էջ 135, **Ե. Իշխանեան**, նշվ. աշխ., էջ 404, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 124:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 123, «Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը Հայաստանի կառավարութեան...», էջ 22:

ադրբեջանական առաջին հետևակային դիվիզիայի հրամանատարին հատուկ նամակ էր գրել՝ Շուշիի վրայով դեպի Նախիջևան արշավելու ուղիների վերաբերյալ առաջարկով[1]:

Ապրիլի 30-ին Ադրբեջանի թուրքերը մեծ ուժերով հարձակվեցին Դիզակի Դոլանլար հայկական գյուղի վրա: Օրենքից դուրս հայտարարված Արցախի ազգային խորհուրդը զինվորական շտաբին կարգադրեց անպայման օգնության հասնել Դիզակի շրջանի հրամանատար Արտեմ Լալայանին և ամեն գնով պաշտպանել Դոլանլարը: Երկու օր տևած համառ կռիվներից հետո թուրքերի հարձակումը հետ մղվեց նրանց համար զգալի կորուստներով[2]:

Թուրքական մի այլ բազմամարդ զորամաս նույն օրը հարձակում գործեց Գորիսի շրջանի Գերենզուր գյուղի ուղղությամբ, բայց, հանդիպելով զանգեզուրյան ուժերի կործանիչ դիմադրությանը, մեծ թվով դիակներ թողնելով, փախավ կռվի դաշտից:

Մուսավաթական մեկ ուրիշ զորամաս հարձակման անցավ Կապանի շրջանի Ուժանիս, Մողես, Հագարակ գյուղերի վրա, բայց տեղի հայկական ջոկատները շշմեցուցիչ հարված տվեցին թշնամուն և դուրս շպրտեցին գյուղերի տարածքներից: Ավելին, խորանալով հակառակորդի դասավորության մեջ՝ կարողացան նրան ջախջախել իր իսկ տարածքում և վերադառնալ ռազմական ավարով[3]:

Համոզվելով, որ Զանգեզուրի սահմաններն անառիկ են, Ադրբեջանի կառավարությունը փոխեց գործելաձևը, սկսեց սպառնալից բողոքագրեր ուղարկել Երևանի կառավարությանը: Սակայն ո՛չ մուսավաթական կառավարության, ո՛չ էլ Խոսրով բեկ Սուլթանովի սպառնալիքները որևէ նշանակություն չունեցան, քանզի առաջվա պես զանգեզուրցիներն ամուր կանգնած էին հարազատ լեռնավայրի պաշտպանության դիրքերում:

Անգլիական առաքելության ղեկավար մայոր Գ. Մոնք-Մեյսոնի կարգադրությամբ առաքելության ներկայացուցիչը Միքայել Արզումանյանի ուղեկցությամբ 1919 թ. մայիսի 1-ին Շուշիից ավտոմեքենայով մեկնեց Գորիս՝ շրջանային խորհրդի հետ բանակցելու[4]:

Գալով Գորիս՝ մայիսի 2-ին անգլիացին իր մոտ է հրավիրեց շրջանային խորհրդի անդամներին և արեց բազմիցս կրկնված հայտարարություններ, ապա ներկայացրեց երկու գլխավոր պահանջ. 1) Զանգեզուրում կարգ և իշխանություն հաստատելու, ճանապարհները բանալու և ժողովրդին պարեն

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 463, թ. 1:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 123:

[3] Տե՛ս **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, «Հայրենիք», 1963, փետրվար, թիվ 2, էջ 30-31:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 61: Աղբյուրների մի մասում նշված է, թե Մ. Արզումանյանի ուղեկցությամբ Գորիս է մեկնել Շուշիում անգլիական առաքելության ղեկավար Գ. Մոնք-Մեյսոնը:

հասցնելու համար ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Ըստ որում՝ այդ ճանաչումը պետք է կատարվեր պաշտոնապես, գրավոր՝ չսպասելով Փարիզի խաղաղության համաժողովի որոշմանը, նկատի առնելով, որ համաժողովը, միևնույնն է, հարցն անպայման վճռելու էր Ադրբեջանի օգտին, 2) հնարավորություն ստեղծել, որպեսզի Ադրբեջանից եկող քոչվորներն անարգել բարձրանան Զանգեզուրի սարերը[1]:

Շրջանային խորհրդի անդամները անգլիացուն տվեցին բանավոր մի շարք բացատրություններ, որոնցից կարևորներն էին.

ա) Զանգեզուրում կարգ և իշխանություն հաստատելու անգլիացիների պահանջն ավելորդ է, քանի որ «ոչ միայն այժմ, այլև համատարած իշխանության օրերին*, Զանգեզուրում միշտ թագավորել է օրինակելի իշխանություն, և այժմ հարկ չկա իշխանություն հաստատել այնտեղ, որտեղ անիշխանություն չկա»:

բ) «Ուղիղ երկու տարի է, ինչ Զանգեզուրը կտրված է կուլտուրական աշխարհից, նրա առաջ փակված են հաղորդակցության ճանապարհները: Զանգեզուրը հաշտվել է այդ հանգամանքի հետ՝ գտնելով, որ իր ազատությունը վեր է ամեն տեսակ հարմարություններից և կուլտուրական բարիքներից: Համաշխարհային խաղաղարար կոնֆերանսի հայտարարությունը պարզորոշ թելադրում է ամենքին՝ պահպանելու եղած դրությունը, մինչև վերջնական որոշման հայտարարելը»:

գ) «Թուրք-ադրբեջանական ավանտյուրայի ամբողջ ընթացքում Զանգեզուրը միշտ եղել է ինքնուրույն և դաշնակից հրամանատարությունը այդպես էլ տեսել է Զանգեզուր մտնելիս»:

դ) «Ամեն մի ոտնձգություն մեր ինքնուրույնության դեմ, ում կողմից էլ որ երևան գա այն, «ստատուս-քվոյի» խախտում է և մեր կողմից կհանդիպի ամենաուժեղ դիմադրության»:

ե) Քոչը բաց թողնել նշանակում է Զանգեզուրի թիկունքն անցկացնել զինված թշնամի տարր, որը հարմար բոպեին կարող է մեծապես վտանգել գավառը: «Ոչ քոչը բաց կթողնենք և ոչ էլ լսել անգամ կուզենք Ադրբեջանի մասին»,– անգլիացուն ասում էին խորհրդի անդամները՝ համառորեն պնդելով, որ Զանգեզուրը Հայաստանին է պատկանում, և իրենց հրահանգներ կարող է տալ միայն Երևանը[2]:

Կտրականապես մերժելով ներկայացված պահանջները և հենվելով Զանգեզուրի գյուղացիական համագումարի կամքի վրա՝ շրջանային խորհրդի անդամները իրենց պատասխանը ձևակերպեցին գրավոր և

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 100, թ. 2, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 332:

* Նկատի են առնված ցարական միապետության ժամանակները:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 100, թ. 2, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 332:

պաշտոնապես ներկայացրին անգլիացուն: Այն բաղկացած էր երկու կետից.

«1. Զանգեզուրի Առաջին գյուղացիական համագումարի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության երկրամաս Զանգեզուրի դեմ կատարած ամեն մի ագրեսիվ գործողություն կհանդիպի ամենահամառ և կատաղի դիմադրության Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից:

2. Այն քոչվորները, որոնք չեն ապրում Հայաստանի Հանրապետության [Զանգեզուր] երկրամասում, ոչ մի դեպքում և ոչ մի պայմանով չի թույլատրվում՝ բարձրանան սարերը»[1]:

Խորհրդակցությունից հետո անգլիացին բողոքագիր ներկայացրեց պետական կոմիսար Արսեն Շահմազյանին՝ սպառնալով. «Զանգեզուրի գավառը Ադրբեջանի կառավարությանը ենթարկելու դեմ որևէ արգելք հարուցելու դեպքում Դուք կրելու եք անձնական պատասխանատվություն Անգլիայի կառավարության առջև»[2]: Ավելին՝ նա նույնիսկ հանդգնեց Ա. Շահմազյանին առաջարկել, որ հեռանա Զանգեզուրից: Այսուհանդերձ, անգլիացին Միքայել Արզումանյանի հետ, փաստորեն, մայիսի 4-ին դատարկաձեռն վերադարձավ Շուշի[3]:

Խ. Սուլթանովի հետ ունեցած տեսակցությունից հետո Շուշիում գտնվող Դ. Շատլվորթը մանրամասն զեկույց ուղարկեց իր հրամանատարությանը, որտեղ խիստ բացասաբար էր նկարագրում Ա. Շահմազյանի գործունեությունը երկրամասում, աջակցություն էր հայտնում Խ. Սուլթանովի գործունեությանը և պնդում էր քոչը դեպի Զանգեզուրի սարերը կազմակերպելու անհրաժեշտությունը[4]:

Դ. Շատլվորթի զեկույցին հետևեց գեներալ Վ. Թոմսոնի կտրուկ պահանջը Ա. Խատիսյանին՝ ներկայանալ Թիֆլիս և տալ անհրաժեշտ բացատրություններ: Մայիսի 3-ի խորհրդակցության ժամանակ Վ. Թոմսոնը, ՀՀ արտաքին գործերի նախարարին դիմելով, Հայաստանի Հանրապետության իշխանություններին մեղադրեց Արցախի ներքին գործերին խառնվելու և, փաստորեն, դրանով կարծես Անգլիային պատերազմ հայտարարելու մեջ: Զայրացած բրիտանացին հայտարարեց, որ իր հրամանով կասեցվել է հայկական զինված ուժերի մուտքը Նախիջևան մինչև հետևյալ պայմանների ընդունումը. 1) Շահմազյանը և նրա մյուս գործընկերները պետք է ետ կանչվեն Արցախից և Զանգեզուրից, 2) ՀՀ կառավարությունը պետք է հնազանդության կոչ հրապարակի զույգ երկրամասերի հայ բնակչությանը՝ ենթարկվելու ադրբեջանական իշխանություններին, 3) պետք է չխոչընդոտվի քոչը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 100, թ. 3, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 332:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 25:

[3] Տե՛ս **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, էջ 32-33, **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 135:

[4] Տե՛ս **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 235:

Պատասխան խոսքում Ա. Խատիսյանը հայտարարեց, որ իր կառավարությունը Արցախը և Զանգեզուրը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս, սակայն մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը անհրաժեշտ էր համարում զույգ երկրամասերի կառավարումը հանձնել անգլիացի գեներալ-նահանգապետին և տեղում գործող հայ և մահմեդական ազգային խորհուրդներին, քանի որ Արցախի ու Զանգեզուրի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայությունը չէր ենթարկվի ադրբեջանական իշխանություններին, և անխուսափելիորեն կշարունակվեին ազգամիջյան բախումները: Ա. Խատիսյանը հայտարարեց, որ հայկական կառավարությունը Արցախում և Զանգեզուրում ուներ երկու ներկայացուցիչ: Նշեց, որ նրանք էին Ա. Շահմազյանը և Մ. Արզումանյանը, և որ Ա. Շահմազյանն արդեն կանչվել էր Երևան՝ զեկույցի:

Անդրադառնալով քոչի հարցին՝ Ա. Խատիսյանը հավելեց, որ Հայաստանի կառավարությունը դեմ չէր քոչին, միայն թե այն պետք է լիներ կազմակերպված, ընթանար ՀՀ կառավարության մշակած կանոնների համաձայն, վերահսկվեր անգլիացիների զինված ուժի և հայ ու մահմեդական հսկիչների կողմից: Այնուհետև Ա. Խատիսյանը հրաժարվեց բավարարել գեներալ Վ. Թոմսոնի պահանջը: Այն է՝ կոչով դիմել Արցախի և Զանգեզուրի հայ բնակչությանը՝ հնազանդվելու ադրբեջանական իշխանություններին: Նա համաձայնեց դեպի Նախիջևան հայկական զինված միավորումների մուտքը կասեցնելու բրիտանացիների որոշմանը, բայց հիշեցրեց, որ հայ գաղթականության վիճակն այստեղ օրհասական էր. 18 հազարից մահացել էր 8 հազարը: Նշեց, որ դրությունը գնալով ծայրաստիճան լարվում էր, որը ոչ մի կերպ չէր բխում բրիտանական ռազմական շահերից:

Հանդիպումից հետո գեներալ Վ. Թոմսոնը, գոհ մնալով արդյունքներից, հայկական զինված կազմավորումների մուտքը Նախիջևան արգելող իր հրամանը ետ վերցրեց[1]:

1919 թ. մայիսի 5-ին ՀՀ կառավարությունը որոշեց.

«Հանձնարարել ներքին գործերի մինիստրին՝ հաղորդելու Արզումանյանին, որ՝

ա) Հայոց կառավարությունը ոչ մի համաձայնություն չի տվել Ադրբեջանին Ղարաբաղը կառավարելու գործում:

բ) Հայոց կառավարությունը ոչ մի արգելք չունի քոչվորներին սարը բարձրացնելու դեմ:

գ) Շահմազյանը մնում է իր տեղում նախկին պաշտոնով»[2]:

Բրիտանական պատվիրակության Զանգեզուրից Շուշի մեկնելուց հետո

---

[1] Տե՛ս **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 235-239:

[2] «Կառավարության լրաբեր», 1919, 30 մայիսի, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 104:

Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը հանդես եկավ «Զանգեզուրի հայ ժողովրդին» դիմումով՝ նրան տեղեկացնելով Շուշիից եկած անգլիացի պաշտոնյայի՝ Գորիսում արած հայտարարություններին:

Շուշի հասնելուց հետո անգլիացի պաշտոնյան և Մ. Արզումանյանը բրիտանական առաքելությունում մանրամասն պատմեցին իրենց երկիրը Ադրբեջանի ոտնձգություններից պաշտպանելու զանգեզուրցիների միակամության ու վճռականության մասին: Առաքելության ղեկավար Գ. Մոնք-Մեյսոնին ոչինչ չէր մնում անելու, և նա զեկուցագիր գրեց Բաքվի անգլիական զորքերի հրամանատար Դ. Շատլվորթին՝ առաքելության անդամի՝ Գորիս կատարած առաքելության ձախողման մանրամասները նկարագրելով:

Արցախի ազգային խորհուրդը հավանություն տվեց Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի բռնած սկզբունքային ու վճռական դիրքին, բայց դժգոհեց, որ Մ. Արզումանյանը Գորիսից իր հետ չէր բերել Երևանից Արցախի համար ուղարկած գումարը[1], որով հնարավոր կլիներ հոգալ տեղի հայության որոշ կարիքները: Մինչդեռ Խոսրով բեկ Սուլթանովը Արցախ էր մտել 25 միլիոն ռուբլով, բացի այդ՝ Ադրբեջանի գանձարանում նրա համար բացված էր անսահմանափակ վարկ[2]:

Զանգեզուրի մերժումը ստանալուց հետո Սուլթանովը, անգլիական առաքելության հետ խորհրդակցելով, որոշեց քոչը տեղավորել Արցախի սահմաններում[3]: Դա նշանակում էր, որ Արցախը ենթարկվելու էր ավերածության, հարյուր հազարավոր անասունները մորեխի պես ոչնչացնելու էին արցախցիների արտերն ու արոտավայրերը, իսկ զինված քոչվորները և նրանց միացած ավազակաբարո տարրերը շերտընդմեջ մտնելու էին հայության մեջ:

Միաժամանակ Խ. Սուլթանովը նամակով դիմում էր ադրբեջանական 1-ին հետևակային դիվիզիայի հրամանատարին՝ մատնանշելով դիվիզիայի հնարավոր շարժման ուղիները Շուշիից Նախիջևան: Նա նշում էր.

«Անվտանգ է համարվում Աղդամ–Զաբրայիլ և Գիլյանի տափաստանով Ջուլֆա–Նախիջևան: Այս ուղին երկար էր, սակայն անվտանգ:

Մուսուլմանլար, Շաքի, Արիկլի և Ղալանով Նախիջևան տարածությունը մոտ 350 վերստ է: Այդ ուղին կարելի է գնալ հեծելազորով 5 օր, հետևակով՝ 9: Այս ճանապարհին հնարավոր են բախումներ հայերի հետ Սիսիանի շրջանում, Բազարչայի և Ղարաքիլիսայի, Ղարաբաբայի, Գյամրիի (Գյումրի: – *Ա. Ս.)* և Գեղվաձորի շրջանում»[4]:

---

[1] Մ. Արզումանյանը նաև Արցախի ազգային խորհրդից խնդրանք ուներ՝ Շուշի տանել Հայաստանի կառավարության կողմից Արցախին հատկացված Գորիսում գտնվող 1.200.000 ռուբլին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 61):

[2] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 61:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 28, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 40, ֆ. 1457, ց. 1, գ. 441, թ. 2:

[4] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 463, թ. 1:

1919 թ. մայիսի 17-ին Սուլթանովը դիմեց Ադրբեջանի կառավարությանը՝ Ղարաբաղի հայության դեմ կռվելու համար զենքի և զինամթերքի պաշար տրամադրելու պահանջով: Դիմումում նշվում էր. «1919 թ. մայիսի 13-ին ժամանեցի Շուշի: Գեներալ Շատլվորթը 12-ին գնացել է Գորիս: Նրան ուղեկցում էր անգլիական մայոր Խիկկիի ջոկատը: Նա ինձ խնդրել էր սպասել իր վերադարձին: Նա վերադարձավ ամսի 15-ին և ինձ պատմեց հետևյալը. Դիգում (Տեղ գյուղում: – *Ա. Ս.)* անգլիական ջոկատը և գեներալը կանգնեցվել են զինյալ հայերի կողմից, հետո գեներալին, առանց ջոկատի, թույլ է տրվել մտնել Գորիս: Գորիսում հրավիրվել է Ազգային խորհրդի նիստ, որը հրաժարվել է ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Շատլվորթը պահանջել է հանձնել Շահմազյանին, Շիրինյանին, Հովսեփյանին և Ա. Գ. Կոլմակովին՝ տանելու համար: Սահմանված ժամին նշված անձինք ներկայացել են Շատլվորթին: Հենց այդ ժամանակ հնչել են զանգերը և հավաքվել են մեծ քանակությամբ զինված մարդիկ՝ երեք դաշտային հրանոթով, գնդացիրները ուղղվել են գեներալի կողմը, աղաղակել են՝ մա՛հ անգլիացիներին, և հայտարարել են, որ ոչ ոքու չեն տա: Այնպես որ անգլիացիների վրա հույս դնել չի կարելի, իսկ դուք ինձ խոստացված զենքը չտվեցիք: Ուստի ուզում եմ, որ ինձ շտապ պատասխանեք՝ կարող եք տալ 200-ի չափ զենք, միլիոն փամփուշտ, մեկ գումարտակ և 10 գնդացիր՝ իր պաշարով»[1]:

Արցախին և Զանգեզուրին առաջիկայում սպասվում էին նոր փորձություններ:

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 5, գ. 446, թ. 1:

ԳԵՆԵՐԱԼ ՇԱՏԼՎՈՐԹԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԳԵԶՈՒՐ ԵՎ ԵՐԿՐԱՄԱՍԻ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԲԱԺԱՆ ՏԱՐԱԾՔ ԼԻՆԵԼՈՒ ՓԱՍՏԱՅԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Անգլիական հրամանատարությունը Հայաստանի կառավարությանը առաջարկել էր Եվլախ ուղարկել մի ներկայացուցիչ, որը մայիսի 10-ին այնտեղ հանդիպեր գեներալ Դ. Շատլվորթին, այնուհետև նրա հետ մեկներ Շուշի–Գորիս[1]:

Հայաստանի կառավարությունը որպես ներկայացուցիչ ընտրեց Հովսեփ Արղությանին[2]՝ նրա վրա դնելով հետևյալ պարտականությունները.

1. Պարզաբանել Հայաստանի կառավարության տեսակետը Ղարաբաղի վերաբերյալ այն իմաստով, որ Լեռնային Ղարաբաղը համարելով իր անբաժան մասը՝ Հայաստանի Հանրապետությունը ցանկանում էր մինչև Փարիզի համաժողովի կողմից հարցի վերջնական լուծումը կառավարել այդ երկիրը գոյություն ունեցող ազգային խորհուրդների միջոցով, տեղական թուրք ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությամբ, իսկ եթե անգլիական հրամանատարությունը կառավարման այդ ձևը ցանկալի չգտներ, այն ժամանակ Հայաստանի կառավարությունը առաջարկում էր Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակել մի անգլիացու:
2. Նպաստել քոչի խնդրի դրական լուծմանը: Հայերը թույլ կտային, որ Ադրբեջանի քոչը բարձրանար Զանգեզուրի սարերը՝ անգլիական պահակների հսկողության տակ:
3. Զանգեզուր–Ղարաբաղի պետական կոմիսար շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանին հայտնել, որ կառավարությունը նրան կանչում էր Երևան՝ զեկուցում տալու Զանգեզուրի դրության մասին:
4. Միջոցներ ձեռնարկել՝ բարիդրացիական հարաբերություններ ստեղծելու հայերի և թուրքերի միջև[3]:

Կառավարական այս առաջարկներով Հ. Արղությանը մեկնեց Եվլախ:

Մայիսի 10-ին Եվլախում Հ. Արղությանը հանդիպեց գեներալ Դ. Շատլվորթին, իսկ հետևյալ օրը՝ մայիսի 11-ին, նրանք մեկնեցին Շուշի: Դա

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 81, **Ե. Իշխանեան**, Դէպքերը Ղարաբաղում, ճշդումներ եւ դիտողութիւններ, «Հայրենիք», 1933, թիվ 12 (132), հոկտեմբեր, էջ 125:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, **Ա. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 182, **Ռ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 189-190:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 81:

Բաքվից Դ. Շատլվորթի երկրորդ այցն էր Արցախի կենտրոն[1]:

Տեղ հասնելուն պես Հ. Արղությանը հանդիպեց Արցախի ազգային խորհրդի անդամներին: Նրան առաջադրվեցին բազմաթիվ հարցեր՝ կապված Հայաստանի կողմից Արցախին ցույց տրվելիք օգնության և ընդհանրապես երկրամասի հայությանը փրկելու խնդրի հետ: Նրանք շեշտեցին, որ չունեն բավարար զենք ու զինամթերք, ուստի իրենց գլխին շարունակում էր մնալ կախված մահացու վտանգը: Անհրաժեշտ քանակի զենք ու զինամթերք չունենալու դեպքում, ասում էին խորհրդի անդամները, Ադրբեջանը՝ իր սպառազինությամբ, անգլիական առաքելությունը՝ իր եռանդուն պահանջներով, կարող էին հասնել իրենց նպատակին՝ Զանգեզուրն ու Արցախը ենթարկել Ադրբեջանին:

Իշխան Արղությանը առաջադրված հարցերին որևէ հուսադրող պատասխան չտվեց՝ առաջ բերելով Ազգային խորհրդի անդամների դժգոհությունն ու հիասթափությունը[2]:

Նույն օրվա՝ մայիսի 11-ի երկրորդ կեսին անգլիական առաքելության շենքում տեղի ունեցավ Դ. Շատլվորթի և Հ. Արղությանի առաջին պաշտոնական հանդիպումը, որին ներկա էր նաև Միքայել Արզումանյանը: Գեներալը Հ. Արղությանին հայտարարեց հետևյալը. «Ես եկել եմ Ղարաբաղ՝ անգլիական հրամանատարության կողմից ունենալով հատուկ հրահանգներ: Ինչպես Հայաստանի կառավարությանը հնարավորություն է տրված ժամանակավորապես կյանքի խաղաղ պայմաններ ստեղծել Նախիջևանի և Կարսի շրջաններում*, նույնը պիտի կատարվի Ղարաբաղում՝ տալով այդ հնարավորությունը Ադրբեջանի կառավարությանը: Հայաստանի կառավարությունն այդ իմաստով տվել է իր դրական համաձայնությունը, և Դուք ուղարկված եք այստեղ՝ նպաստելու ինձ այդ գործում: Քոչը անպայման պիտի բարձրանա: Շահմազյանը պիտի հեռանա Զանգեզուրից և [դրա դեմ] որևէ դիմադրություն պիտի դիտեմ որպես անգլիական հրամանատարության դեմ [ուղղված դիմադրություն], [իսկ ես] հրահանգ ունեմ՝ դիմադրության դեպքում դիմելու զինական ուժի: Ասացե՛ք, Դուք ի՞նչ հրահանգներ եք ստացել Ձեր կառավարությունից»[3]:

Հ. Արղությանը կտրուկ հայտարարեց, որ Հայաստանի կառավարությունը որևէ համաձայնություն չէր տվել, որ Ղարաբաղում, թեկուզ ժամանակավորապես, մտցվեր Ադրբեջանի իշխանությունը, միաժամանակ պարզեց իր ստացած հրահանգները՝ խոստանալով աջակցություն քոչի խնդիրը դրական լուծելու հարցում:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 81:

[2] Տե՛ս նույն տեղում, թթ. 81-82:

* Խոսքն այն մասին էր, որ անգլիական օկուպացիոն իշխանությունները համաձայնել էին Հայաստանի կազմի մեջ մտցնել Նախիջևանի երկրամասը և Կարսի մարզը:

[3] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 82:

Գեներալ Շատլվորթը բորբոքված բացականչեց, թե այս ամբողջ գործում առկա էր մի մեծ թյուրիմացություն, կամ Հայաստանի կառավարությունը վարում էր երկդիմի քաղաքականություն: «Պետք է պարզել այս թյուրիմացությունը,– ասում էր գեներալը,– և եթե այս գործի մեջ կա հանցավոր, նա պիտի կրի արժանի պատիժ»[1]:

Այս խնդիրների շուրջ երկար բացատրություններ լսելուց հետո Դ. Շատլվորթը որոշեց հաջորդ օրը մեկնել Գորիս:

Շուշիի երևելի հայ գործիչներից մի քանիսը Դ. Շատլվորթին առաջարկեցին Գորիս տանել նաև Զանգեզուրը և նրա մարդկանց լավ իմացող մի գործչի, որը տեղում աջակցեր գործին, այն է՝ զանգեզուրցիներին համոզեր՝ ընդունել քոչի մի մասը, որպեսզի այն ամբողջապես չկենտրոնանար Արցախում, ինչպես որոշել էր Սուլթանովը[2]:

Դ. Շատլվորթը համաձայնեց իր հետ վերցնել Աշոտ Մելիք-Հովսեփյանին, որը լուծարված Ազգային խորհրդի անդամ էր: Մելիք-Հովսեփյանը միաժամանակ գաղտնի հանձնարարություն ստացավ Գորիսից բերել Արցախի համար Երևանից ուղարկած 1.200.000 ռուբլին[3]:

Մայիսի 13-ին Դ. Շատլվորթը Շուշիից մեկնեց Զանգեզուր նույն նպատակներով, այն է՝ տեղի ղեկավարությանը պարտադրել գավառը Ադրբեջանին ենթարկելու անգլիական հրամանատարության կամքը և հարթել քոչի հարցը: Նրա հետ էին Հովսեփ Արղությանը և Աշոտ Մելիք-Հովսեփյանը[4]:

Դ. Շատլվորթին ուղեկցում էր 11 ավտոմեքենայից և մեկ զրահապատ մեքենայից բաղկացած շարասյունը՝ մայոր Հիքքի հրամանատարությամբ, 25 հնդիկ զինվորներով[5]:

Շուշիից դուրս գալուց հետո անգլիացի զորավարը փոխեց որոշումը և, առանց որևէ պատճառաբանության, Ա. Մելիք-Հովսեփյանին ճանապարհից հետ ուղարկեց[6]:

Զանգեզուրի հենց սահմանագլխին՝ Տեղ գյուղում, անգլիացի զորավարն ընկավ անախորժ դրության մեջ: Նրան կանգնեցրեց հայկական պահակախումբը՝ սպայի գլխավորությամբ: Եվ եթե չլիներ Հ. Արղությանի միջամտությունը, անախորժությունը գուցե երկար տևեր: Շատ չանցած՝ հասավ նաև շրջանային կոմիսարը՝ ձիավորներով, և անգլիացուն ցույց տվեց պատվա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 82, ինչպես նաև ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 87, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 218, թ. 2, ֆ. 1457, ց. 1, գ. 441, թ. 2:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, **Ա. Աստուածատրեան,** Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, հոկտեմբեր, թիվ 10, էջ 47:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 9, ֆ. 1457, ց. 2, գ. 6, թ. 9, ֆ. 1021, ց. 5, գ. 446, թ. 1, ց. 8, գ. 91, թ. 4:

[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 218, թ. 2, ֆ. 1457, ց. 1, գ. 441, թ. 2:

վոր ընդունելություն: Բայց վերջինս այնքան խորն էր վիրավորվել, որ երկար ժամանակ չէր կարողանում կատարվածի համար ներել զանգեզուրցիներին[1]:

Գորիս քաղաք մտնելիս Դ. Շատլվորթին ողջունեց Զանգեզուր–Ղարաբաղի պետական կոմիսար Արսեն Շահմազյանի ուղարկած հատուկ վաշտը: Իջևանելով Շուշիի անգլիական առաքելության Գորիսի բնակարանում՝ նա ցանկություն հայտնեց մեկ ու կես ժամ հետո իր մոտ տեսնել շրջանային խորհրդի կազմին[2]:

Խորհուրդը նախապես հավաքվում է պետական կոմիսար Ա. Շահմազյանի մոտ՝ նախնական խորհրդակցության, որին մասնակցում էր նաև իշխան Հ. Արղությանը: Վերջինս պատմում էր Տեղ գյուղում պատահած դեպքի մասին, ապա մտքերի կարճ փոխանակումից հետո ներկաներին իրազեկ դարձրեց քաղաքական դրությանը: Զրույցի ընթացքում Հ. Արղությանը առաջարկեց անգլիացիների հետ բարդություններ առաջ չբերելու համար քոչի հարցը զատել Ադրբեջանին ենթարկվելու հարցից, մանավանդ որ Հայաստանի կառավարությունն արդեն իր որոշ տարածքներում քոչ ընդունելու մասին որոշում էր ընդունել: Քոչը, նշում էր Հ. Արղությանը, տնտեսական խոշոր նշանակություն ունեցավ թուրքերի համար, ուստի ինքը համոզված էր, որ անգլիական ընդհանուր հրամանատարությունը՝ որպես Ադրբեջանի հովանավոր, ամեն միջոց գործ կդներ՝ գլուխ բերելու ադրբեջանցի թուրքերի ցանկությունը: Ինչ վերաբերում էր Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի ոտնձգություններին, ասում էր Հ. Արղությանը, ապա որքան կարելի է, «պետք է ուժեղ բողոքել»[3]:

Շրջանային խորհրդի անդամները վճռականապես դեմ արտահայտվեցին քոչի հարցում որևէ զիջման: Նրանք նշում էին, որ քոչը միշտ կապված է եղել Ադրբեջանի կողմից «մեր երկրին տիրանալու հետ»[4]: Այնուամենայնիվ, մտքերի փոխանակությունից հետո նրանք եկան համաձայնության՝ գնալ որոշ զիջումների և թուրքերին հատկացնել առանձին արոտատեղիներ (գոտիներ):

Հարցի նախնական քննարկումից հետո շրջանային խորհրդի անդամների ընդհանուր համաձայնությամբ կազմվեց պատվիրակություն՝ անգլիացի զորավարի հետ հանդիպելու համար: Պատվիրակության կազմում էին պետական կոմիսարը, իշխան Հ. Արղությանը, խորհրդի նախագահության անդամները՝ Արշակ Շիրինյանը, Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանը, Երեմիա Բակունցը և խորհրդի քարտուղարը՝ Դ. Եսայանը[5]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 9, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, ֆ. 1457, ց. 2, գ. 6, թ. 9, **Ս. Մելիք-Եոլչեան**, Բազուի հերոսամարտը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 126:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 9, ֆ. 1457, ց. 2, գ. 6, թ. 9:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 82, ֆ. 200, ց. 2, գ. 37, թթ. 9-10, ֆ. 1457, ց. 1, գ. 6, թ. 9-10:

Դ. Շատլվորթին ներկայանալուց հետո պատվիրակության անդամները ստիպված եղան համբերությամբ լսել նրա երկարաշունչ ճառը, որը մասմաս թարգմանում էր Ա. Շիրինյանը[1]:

Շատլվորթն ասաց, որ այն օրից, երբ Անգլիան մտավ մեծ պատերազմի մեջ, նրա համար պարզ ու որոշ էր, որ մեծ խնդիրներ լուծելուց բացի՝ պետք է լրջորեն զբաղվեր նաև փոքր ազգությունների ցավերով ու պահանջներով, նրանց համար ստեղծեր կյանքի նոր կացություն: Ի թիվս այլ ազգությունների՝ նա նշում էր հայերին և Ադրբեջանի թուրքերին, որոնց նկատմամբ Անգլիան միշտ բարյացակամ է եղել, թեև նրանք շարունակաբար մտահոգություններ են պատճառել բրիտանական կառավարությանը և՛ պատերազմից շատ առաջ, և՛ ընթացքում, և՛ այժմ նույնպես: Այնուհետև նշում էր, որ Անգլիան իր անելիքը լավ գիտեր. հաղթությունից հետո Կովկաս մտնելով՝ նա դաշնակից պետությունների հետ աշխատեց որքան կարելի է շուտ Այսրկովկասում հաստատել կարգ ու կանոն և խաղաղություն բերել այնտեղ ապրող ժողովուրդներին: Եվ դաշնակիցները հովանավոր եղան այսրկովկասյան նորաստեղծ երեք պետություններին:

Բայց, ցավոք, դեռ չի հաջողվել խաղաղություն ստեղծել Զանգեզուր–Ղարաբաղի շրջանում: Պատճառն այն էր, ասում էր Շատլվորթը, որ Ադրբեջանին պատկանող այդ երկրամասերի հայերը չէին ուզում ճանաչել Բաքվի իշխանությունը: Այդ պատճառով հայկական մասերում ստեղծված չէին կարգ ու կանոն, վարչական անհրաժեշտ մարմիններ: Երկու ժողովուրդների միջև եղած հակամարտությունը դաշնակիցներին հնարավորություն չէր տալիս իրագործելու այսրկովկասյան ժողովուրդների կենցաղի և կյանքի կանոնավորման իրենց ծրագիրը[2]:

Դիմելով հայ պատվիրակներին՝ գեներալ Դ. Շատլվորթը շարունակում էր. «… Պարզ պիտի լինի Ձեզ, վոր Ձեր լեռներում յերկար ապրել չեք կարող, կտրված ամեն կողմից, փակ բոլոր ճանապարհները, ներքևից Արաքսի ափից, Որդուբատի կողմից, Նախիջևանի կողմից, ունեք մի ճանապարհ, այն է՝ Յեվլախի, վորը կապված էր անշեղ Ադրբեջանի պետության հետ, վորը պարզ յեվ նույնպես, ընդունելուց բաց կլինի, չընդունելուց փակ. ուրեմն և փակ ամբողջ գյուղերից, այնպես ապրել չի կարելի, յերկար չի քաշիլ, վորքան ել քարշ տալու լինեք, միևնույն է վերջ ի վերջո պիտի հասկանաք յերկրի դրությունը և հրամայական պահանջը:

Այսօր Ձեզ մոտ է իջել անգլիական գլխավոր հրամանատարության գեներալը՝ Ձեզ հասկացնելու դրությունը, պարզելու անմիտ լինելը ամեն մի հա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, ինչպես նաև՝ **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, էջ 33:

[2] Տե՛ս ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 10, ֆ. 1457, ց. 1, գ. 6, թ. 10:

կառակությունների, բայց դուք փորձ եք անում նույն իսկ անգլիական զորքի առաջը կտրելու, անգլիական գեներալի ճանապարհը փակելու, վորի համար առ այժմս չեմ խոսում, հետո կվերադառնանք այն հարցին: Այսօր, վաղը թուրքերի քոչը պիտի գա, ինչպես միշտ իրա տեղերը, այդ հարցը ահագին տնտեսական նշանակություն ունի, անպատճառ պիտի գա և ինչո՞ւ, դուք պիտի հասկանաք, դուք պիտի ընդդեմ կանգնե՞ք Ադրբեջանի քոչին, վորոնց պիտի ուղեկցեն հնդիկ անգլիական զորքերը. ո՞վ պիտի պատասխանե ձեզնից, ունե՞ք արդյոք պատասխան, այսօր ինձ կանգնեցրին Տեղ գյուղի մեջ, Հայաստանի Հանրապետության անունից, դուք գիտեք արդյոք ի՞նչ է նշանակում այդ, դուք գիտե՞ք Հայաստանը, ինչպես պետություն, Ձեր պաշտպանությունը իր վրա է վերցնում, վոչ յեվ յերյեվի դուք չգիտեք, բայց դորան կվերադառնանք. ուրեմն Տեղում կկտրեք քոչի առաջը, այնպիսի քայլեր կթույլ տաք Ձեզ, բայց դուք պիտի իմանաք, վոր ադրբեջանական կարգերին հակառակվելով, դուք հակառակվում եք Անգլիային, դուք ունի՞ք պատասխան, ինչ է Ձեր պատասխանը»[1]:

Շրջանային խորհրդի անդամները ամենայն վճռականությամբ հերքեցին Դ. Շատլվորթի պատճառաբանություններն ու փաստարկումները և միաբերան, շատ կտրուկ գեներալին հայտարարեցին, որ թեև Զանգեզուրի հայերը Մեծ Բրիտանիայի վրա նայում են որպես հայության բարեկամի և հովանավորի, բայց նրանք մեկընդմիշտ որոշել են ոչ մի գնով չընդունել Ադրբեջանի իշխանությունը և զենքի ուժով պատրաստ են դիմադրել մինչև վերջին շունչը: «Իսկ եթե մեր ավագ եղբայր Մեծ Բրիտանիան կվճռի զենքի ուժով Զանգեզուրում մտցնել Ադրբեջանի իշխանությունը,– ասում էին նրանք,– այն ժամանակ մենք մի բան ենք խնդրում. նախապես զգուշացրե՛ք, ժամանա՛կ տվեք մեզ, որ մենք թողնենք այս երկիրն ու գաղթենք այստեղից և այն ժամանակ անգլիական զենքի ուժով Ադրբեջանը թող գա՝ տիրելու Զանգեզուրի անմարդաբնակ լեռներին ու ձորերին»[2]: Ինչ վերաբերում էր քոչին, Ազգային խորհուրդը հայտնում էր, որ դեմ չէր, որ քոչը բարձրանար Զանգեզուրի սարերը, բայց այդ խնդիրը չպետք է կապել Ադրբեջանի քաղաքական նկրտումների հետ: Հայերը պատրաստ էին քոչվորների ներկայացուցիչների հետ ունենալ խորհրդակցություն և քոչի հարցը լուծել փոխադարձ համաձայնությամբ[3]:

Հայ գործիչները վճռական դիրք գրավեցին նաև մյուս բոլոր հարցերի քննարկման ժամանակ, բայց հատկապես Զանգեզուրի ինքնուրույնության պահպանման հարցում: Այսպես՝ իր խոսքում Կապանի ազգային խորհրդի նախագահ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանը նշեց, որ բրիտանացի գեներալը սխալ պատկերացում ունի Զանգեզուրում և նրա շուրջը ստեղծված իրա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թթ. 10-11, ֆ. 1457, ց. 2, գ. 6, թթ. 10-11, ՀԱԱ, ֆ. 1021, ց. 5, գ. 490ա, թ. 3, ֆ. 1021, ց. 8, գ. 91, թ. 5:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 82-83:

[3] Տե՛ս նույն տեղում, ինչպես նաև ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 11-12, ֆ. 1457, ց. 2, գ. 6, թ. 11-12, ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 91, թ. 5 և շրջ.:

վիճակի մասին: Նրա և անգլիացի զորավարի միջև տեղի ունեցավ հետևյալ երկխոսությունը:

«**Ս. Մելիք-Ստեփանյան.** – Գեներա՛լ, դուք շատ խոսեցիք, շատ հարցեր շոշափեցիք, կաշխատենք վորքան կարելի յե բավարարել Ձեր հարցերին. դեռ պատերազմի ժամանակից մեր այս փոքրիկ Զանգեզուրը, ամեն միջոց գործ դնելով, ընդդեմ կանգնեց, չթույլ տվեց այստեղ վոտք դնելու սահմաններին, և այնուհետև հետ եյին մղում ադրբեջանական բոլոր վոտնձգությունները, և մեր յերկրի վճիռն է, գեներա՛լ, վոչ մի միջոցի առաջ չկանգնել, չթույլ տալ Ադրբեջանին վոտն դնել մեր յերկիրը մինչև վեհաժողովի վորոշումը, և այդ բանում մենք հույս ունենք մեզ կօգնե մեր դաշնակից մեծ պետությունը՝ մեծն Անգլիան: Ադրբեջանի ադմինիստրացիայի մտնելը մեր յերկիրը ծածկում են բոլոր ճանապարհները վոր նե բանակցությունների քոչի հարցի վերաբերյալ, յեթե Ադրբեջան են առաջարկում մեզ, ամեն ուժով ընդդիմանում է մեր ժողովուրդը և՛ Ադրբեջանի, և՛ քոչի, և՛ ամեն ինչի. ջոկ բան է, հարցը բոլորովին կփոխվի, յեթե յերաշխավորեն մեզ ազատ լինել Ադրբեջանի ամեն վոտնձգություններից, այն ժամանակ մենք համաձայնություն կտանք թրքերի ներկայացուցիչների հետ: Վորոշ տեղեր կհատկացվի նրանց, վորոշ ճանապարհներով, նույնիսկ յերաշխավորելով հանգիստ կացություն:

Դ. Շատլվորթ. – Այնուամենայնիվ, ադրբեջանական կարգերը պիտի մտցվեն այստեղ, կառավարության մեջ կլինեն հայեր, գլխավոր օգնականը նահանգապետի հայ, այլ կերպ չի կարող լինել, վճիռը անխախտելի յե, դուք մտածո՞ւմ եք ազգությունների մասին, դուք մտածո՞ւմ եք, վոր կառավարչական և վոչ մի ֆունկցիա չի կարող լրիվորեն հիմք ստանալ Զանգեզուրում, այս հանգամանքներում, այդպես ապրել չի կարելի, վոչ մի ներմուծում չեք ունենալ, ամեն տեղից կտրված կլինեք:

Ս. Մելիք-Ստեփանյան. – Դեռ ռուսական տիրապետության ժամանակից յերբեք Զանգեզուրը չե տեսած այսպիսի խաղաղ կյանք, կացություն, կարգ, ինչ տիրում է մեր յերկրում այժմս, այդ մտքով վոչ մի կարիք չի զգացվում յերկրում, մի անգամ ընդ միշտ գեներալ, պարզ լինի Ձեզ, վոր Զանգեզուրը ի՞նչ գնով ել վոր լինի, չի ընդունելու ադրբեջանական ադմինիստրացիան, կարգերը և այլն... Մենք միայն մի ցանկություն ունենք մեզ Հայաստանի Հանրապետության կպած լինելու, Հայաստանի մի մասը կազմելու և վորու համար վոչ մի միջոցի առաջ չենք կանգնի»[1]:

Զանգեզուրի հայերի համառությունն ու վճռականությունը մի պահ շփոթմունքի էին մատնել Դ. Շատլվորթին, թեև նա լավ գիտեր, որ Գորիսում նույնպիսի վերաբերմունքի են արժանացել նաև անգլիացի ուրիշ պաշտոնյաներ:

Շատլվորթը վերջնականապես համոզվեց, որ ոչ մի ուժ, այդ թվում՝ բրիտանական գլխավոր հրամանատարությունը, ի վիճակի չէ զանգեզուրցի

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թթ. 11-12, ֆ. 1021, ց. 8, գ. 91, թ. 5 և շրջ., ֆ. 1457, ց. 2, գ. 6, թթ. 11-12:

հայերին բռնությամբ տանելու Ադրբեջանի լծի տակ:

Երկար հարց ու պատասխանի վերջում Դ. Շատլվորթը համաձայնեց, որ այնուամենայնիվ, քոչի հարցը պետք է առանձնացնել: Վերջապես նա անսպասելիորեն արտաբերեց հետևյալ խոսքերը. «Շատ ուրախ եմ, որ հայերը քոչի հարցում գալիս են ընդառաջ: Խոստանում եմ, որ Զանգեզուրում չի մտցվի Ադրբեջանի իշխանություն, մինչև որ այդ հարցի մասին ինքը նոր հրահանգներ չստանա իր կառավարությունից»[1]: Սա զարմանալի շրջադարձ էր: Այնուհետև խոսելով իր կրած վիրավորանքի մասին Զանգեզուրի սահմանի վրա՝ գեներալը նկատեց, որ դեպքը բնավ չէր համապատասխանում Հայաստանի կառավարության բարեկամական քաղաքականությանը դեպի անգլիական հրամանատարությունը: Այդ երևույթին վերջ տալու համար նա պահանջեց իրեն հանձնել Զանգեզուրում հակաանգլիական քաղաքականության գլխավոր հեղինակներին՝ Ազգային խորհրդի անդամներ Արշակ Շիրինյանին և Նիկոլայ Հովսեփյանին, որպեսզի այդ երկուսին հաջորդ օրը՝ առավոտյան, իր հետ տաներ Շուշի և այնտեղից աքսորեր Երևան: Ինչ վերաբերում էր Ա. Շահմազյանին, նա ևս անհապաղ պետք է թողներ Զանգեզուրը և անցներ Երևան: Գեներալն անթույլատրելի համարեց նաև Ա. Գ. Կոլմակովի ներկայությունը Զանգեզուրում. նա զինվորական ծառայության մեջ էր այնտեղ: Անգլիացին պնդում էր, որ Ա. Գ. Կոլմակովը պիտի բանտարկվեր և հանձնվեր իրեն, որպեսզի տարվեր Բաքու:

Հ. Արղությանը փորձեց միջամտել՝ աշխատելով գեներալին համոզել, որ նման պատժամիջոցը կարող էր հուզում առաջ բերել ժողովրդի մեջ և բարդացնել վիճակը, բայց անգլիացին չլսելու տվեց խորհուրդը[2]:

Բանակցությունից հետո Դ. Շատլվորթը իր այդ որոշումը գրավոր թողեց շրջանային խորհրդին, որով հայտնում էր, որ բրիտանական հրամանատարությունը դեմ չէր լինի Զանգեզուրի հայերի պահանջի կատարմանն, այն պայմանով, որ Զանգեզուր–Ղարաբաղյան շրջանային խորհուրդը լուծարվեր, Զանգեզուրը նախկինի նման ունենա իր Ազգային խորհուրդը՝ անջատ Ղարաբաղից[3]:

Շրջանային խորհուրդն ի գիտություն ընդունեց Դ. Շատլվորթի գրությունը:

Այսպիսով՝ զանգեզուրցիների պողպատյա վճռականության դիմաց անգլիացիները տեղի տվեցին և ստիպված էին Զանգեզուրի նկատմամբ ընդունել

---

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 83:

[2] Տե՛ս նույն տեղում, թթ. 83-84, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 17, գ. 309, ֆ. 1457, ց. 2, գ. 6, թթ. 16-17, **Г. Г. Махмурян**, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Бремя белого человека, Ереван, 2002, с. 72, **М. Туманян,** նշվ. աշխ., էջ 241:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 69, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 66, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 13, ֆ. 200, ց. 1, գ. 50[2], թ. 342, Դ. Շատլվորթի Գորիս կատարած այցի մասին տե՛ս նաև «Աշխատավոր», 1919, 1 ապրիլի:

status quo-ի սկզբունքը, պայմանով, որ Լեռնային Ղարաբաղը ենթարկվեր Ադրբեջանին: Բացի այդ՝ գեներալը կապիտան Ա. Ֆ. Թաունզենդին հանձնարարել էր իշխան Արղությանի հետ մնալ Գորիսում և տեղի ղեկավարության հետ որոշել Զանգեզուրի և Ադրբեջանի Հանրապետության միջև անցնելիք սահմանը:

Իշխան Արղությանի կանխատեսումը իրականացավ: Հաջորդ օրը՝ մայիսի 15-ի առավոտյան, երբ Դ. Շատլվորթը պատրաստվում էր մեկնել Շուշի, քաղաքի վրդովված ժողովուրդը դուրս եկավ ցույցի, խուռն բազմությամբ շրջապատեց ավտոմեքենաները և թույլ չտվեց նշված անձնավորություններին տանել: Գեներալը հանդգնություն ունեցավ սպառնալ, թե օդանավերից կոմբակոծվի Զանգեզուրի կենտրոն Գորիսը, բայց Գորիսի բնակիչները արհամարհանքով պատասխանեցին նրա սպառնալիքներին՝ հայտարարելով, որ նա կաշառված է Ադրբեջանից[1]:

Դ. Շատլվորթը ստիպված էր տեղի տալ: Հ. Արղությանը Դ. Շատլվորթից համաձայնություն ստացավ Ա. Շիրինյանին և Ն. Հովսեփյանին Երևան ուղարկել լեռնային ճանապարհով՝ ավելացնելով, որ ինքը Գորիսում մնալու էր ևս երեք օր[2]: Այդ համաձայնությունից հետո անգլիացի գեներալը խիստ դժգոհ ճանապարհվեց Շուշի. չէ՞ որ չէր կարողանում զանգեզուրցիներին պարտադրել ո՛չ Ադրբեջանին ենթարկվելու և ո՛չ էլ քոչը թույլատրելու իր պահանջները[3]:

Դ. Շատլվորթի գնալուց հետո բանակցելով Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի անդամների հետ՝ կապիտան Ա. Ֆ. Թաունզենդը և իշխան Հ. Արղությանը համաձայնեցին, որ Զանգեզուրի և Ադրբեջանի Հանրապետության սահմանն անցնի Զաբուղ գետով[4]:

Այսպիսով՝ Զանգեզուրը Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը ենթարկելու նպատակով բրիտանական հրամանատարության կազմակերպած հերթական առաքելությունը ձախողվեց:

Ինչպես Գորիսում անգլիական առաքելության ղեկավար կապիտան Ա. Ֆ. Թաունզենդի հաղորդումից, այնպես էլ երկու օր քաղաքում ստացած անձնական տպավորություններից անգլիացի գեներալը եկել էր այն համոզման, որ Զանգեզուրում անգլիական քաղաքականության իրագործման

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 66, **Ա. Բաբալեան**, նշվ. աշխ., էջ 31, **Ս. Մելիք-Եոլչեան**, նշվ. աշխ., էջ 126-127, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., էջ 47, **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, էջ 33-34:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84:

[3] Տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., էջ 429, **Ց. Խաչատուրեան**, Անգլիական քաղաքականութիւնն ի Անդրկովկաս, «Հայրենիք», 1945, մայիս-յունիս, թիվ 3 (248), էջ 32, **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, էջ 34:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84:

գլխավոր արգելքը Հայաստանի Հանրապետության Զանգեզուր–Ղարաբաղի պետական կոմիսար Արսեն Շահմազյանն էր: Իր այդ հաստատուն կարծիքը գեներալ Դ. Շատլվորթը նորից փոխանցեց Կովկասում անգլիական գլխավոր հրամանատարությանը: Վերջինս մի քանի անգամ ևս խիստ հանդիմանական գրություններ ուղարկեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ պահանջելով Ա. Շահմազյանին հետ կանչել: Կառավարությունը անուշադրության մատնեց այդ գրությունները: Ավելին՝ օր օրի Ս. Շահմազյանի իշխանությունն ամրապնդվեց Զանգեզուրում[1]:

Ժամանելով Շուշի՝ Դ. Շատլվորթը Խոսրով բեկ Սուլթանովի հետ տեսակցելուց հետո թուղթ ուղարկեց Միքայել Արզումանյանին, նրան կանչեց իր մոտ և սպառնալից տոնով ասաց. «Վաղն առավոտյան ավտոմոբիլը պատրաստ կլինի հյուրանոցի առջև, և Դուք ուղիղ ժամը 7-ին պետք է թողնեք Շուշին և հեռանաք …»:

Մ. Արզումանյանի այն հարցին, թե որն է իրեն Շուշիից արտաքսելու պատճառը, Դ. Շատլվորթը պատասխանեց, որ պատճառները հիմնականում երկուսն են. «Առաջին, որովհետև Դուք Ձեզ հետ Հայաստանից փող եք բերել՝ Ղարաբաղում Ադրբեջանի դեմ ագիտացիա անելու, և, երկրորդ, երբ Դուք գնացել էիք Գորիս, այնտեղ չեք ասել, թե Հայաստանի կառավարությունը Ղարաբաղը զիջել է Ադրբեջանին»[2]:

Անգլիացի զորավարի առաջադրած երկրորդ մեղադրանքին Մ. Արզումանյանը պատասխանեց, որ ինքը Գորիսում այդպիսի բան ասել չէր կարող, որովհետև նախապես տեղեկություն ուներ, որ Հայաստանի կառավարությունը Ղարաբաղը Ադրբեջանի տարածք համարելու մասին ընդհանրապես որևէ հայտարարություն չէր արել: Այդ ասելով՝ նա անգլիացուն ցույց տվեց մայիսի 8-ին Երևանից ստացած հեռագիրը՝ որպես պատասխան Ղարաբաղի մասին իր հարցման: Հեռագրում նշված էր, որ Հայաստանի կառավարությունը երբեք ոչ մի տեղ և ոչ ոքի որևէ խոստում չէր տվել Ղարաբաղի վերաբերյալ[*]:

Գաղութարարին հատուկ հանդգնությամբ Դ. Շատլվորթը զայրացած բացականչեց. «Հայաստանի կառավարությունը երկդիմի քաղաքականություն է վարում: Այս խնդրում մեղավորը մահապատժի կարժանանա և, առ-

---

[1] Տե՛ս **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, էջ 33-34:

[2] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 64, թ. 16-ի շրջ.:

[*] Պետք է նշել, որ ՀՀ կառավարությունը մայիսի 5-ի նիստում որոշում էր ընդունել Ղարաբաղի կառավարման վերաբերյալ: Ի պատասխան Մ. Արզումանյանի հեռագիր հարցման՝ նիստը որոշել էր հաղորդել նրան, որ «… ոչ մի համաձայնություն չի տվել Ադրբեջանին Ղարաբաղը կառավարելու գործում…, ոչ մի արգելք չունի քոչվորների սարը բարձրանալու դեմ…», և Արսեն Շահմազյանը նախկինի նման «…մնում է իր տեղում…»: Տե՛ս «Կառավարության լրաբեր», 1919, մայիսի 30:

հասարակ, Ղարաբաղի շուրջը կատարվող գործերը, որոնք տարվում են անգլիական հրամանատարության ծրագրին հակառակ, կարող են արժանանալ հազարավոր հայերի կյանք»: Ապա ավելացրեց. «Ես կհեռագրեմ, որ վերադարձող գաղթականներին թողնեն Ղարսում և Նախիջևանում, մինչև … Ղարաբաղը չընդունի Ադրբեջանի իշխանությունը... Հայաստանի կառավարությունն ընդունել է Ղարաբաղի վրա այդ իշխանությունը, ելնելով նրանից, որ դա կարող է ժամանակավոր լինել, մինչև որ Փարիզի խաղաղարար կոնֆերանսը կտա իր վճիռը»[1]:

Մ. Արզումանյանին ոչինչ անել չէր մնում, քան զարմանքով նայել «դաշնակցի» երեսին: Դուրս գալով զորավարի մոտից՝ նա քայլերն ուղղեց Ազգային խորհուրդ, որտեղ պատմեց Դ. Շատլվորթի հետ իր հանդիպման մասին՝ ավելացնելով, որ ինքը չի ենթարկվելու Ղարաբաղից հեռանալու նրա կարգադրությանը:

Մայիսի 16-ի առավոտյան ավտոմոբիլը հյուրանոցի առջև պատրաստ սպասում էր Մ. Արզումանյանին, բայց նա չներկայացավ: Դ. Շատլվորթը երկրորդ անգամ նրան գրություն ուղարկեց, կրկին իր մոտ կանչեց և դարձյալ պնդեց կատարել իր կարգադրությունը: Վերջապես, մայիսի 19-ին իր քարտուղար Լ. Տեր-Օհանյանի հետ Միքայել Արզումանյանը ստիպված թողեց Շուշին և Եվլախ–Թիֆլիս ճանապարհով վերադարձավ Երևան:

Նույն ժամանակ գեներալ Դ. Շատլվորթը Գորիսի անգլիական առաքելության ղեկավար կապիտան Ա. Ֆ. Թաունզենդին կարգադրություն ուղարկեց ընդմիշտ թողնել Գորիսը և առաքելության պաշտոնյաների հետ վերադառնալ Շուշի՝ վերցնելով իր հետ և Հ. Արղությանին: Այնուհետև անգլիական փոքրիկ զորամասին, որ կարգադրություն էր ստացել գնալ Զանգեզուր, հրամայեց չմտնել Զանգեզուրի սահմանները և կանգ առնել Զաբուղի ձորում: Այս կարգադրությունները ցույց էին տալիս, որ անգլիական հրամանատարությունը խզում էր իր բոլոր կապերը Զանգեզուրի հետ և գավառին էր թողնում տնօրինելու իր ապագա բախտը[2]:

Շուշիում Դ. Շատլվորթը անգլիական առաքելությանը հանձնարարություն տվեց հետևողականորեն իրականացնելու Ղարաբաղի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը, իսկ Խ. Սուլթանովին խորհուրդ տվեց ուժեղացնելու ճնշումը Զանգեզուրի վրա՝ նախապես նրան ներկայացնելով իր այցելության հետ կապված մանրամասները: Մասնավորապես առաջարկում էր նրան «սննդի բոյկոտ» հայտարարել, համաձայն որի՝ Արցախում պարեն գնելու իրավունք կունենային օգնության Ամերիկյան կոմիտեն և այն հայերը, որոնք կընդունեին Ադրբեջանի տիրապետությունը: Դրանով չափազանց դժվար կացության մեջ էին դրվում ոչ միայն տեղաբնակ հայերը, այլև

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84, ֆ. 200, ց. 1, գ. 146, թ. 37-38:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84:

Շուշիում և նրա շրջակայքում եղած բազմաթիվ հայ գաղթականներ[1]:

Ուրիշ հրահանգներ տալուց հետո գեներալը վերադարձավ Բաքու: Հատկանշական է, որ դրանից անմիջապես հետո Սուլթանովը դիմեց ադրբեջանական կառավարությանը՝ անհապաղ պահանջելով լրացուցիչ զորք, զենք և զինամթերք՝ 200 հրացան, 10 գնդացիր, մեկ միլիոն փամփուշտ և մեկ գումարտակ զինվոր[2]:

Շատ չանցած՝ Շուշիի անգլիական առաքելության ղեկավար մայոր Գ. Մոնք-Մեյսոնը Դ. Շատլվորթի կարգադրությամբ իշխան Հ. Արղությանին հայտնեց.

1) առաքելությունը չի կարող Զանգեզուրի և քոչվորների ներկայացուցիչների խորհրդակցություն կազմակերպել, որովհետև Զանգեզուրի հետ այսուհետև որևէ կապ չի պահպանելու,
2) անգլիական պահակները քոչվորներին կուղեկցեն միայն մինչև Զանգեզուրի սահմանը, այնուհետև նրանք Զանգեզուր կանցնեն առանց պահակների:

Իր հերթին Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը Դ. Շատլվորթի գնալուց հետո ուժը կորցրած համարեց այն բոլոր հանձնարարականները, որոնց հիման վրա Գորիսում պայմանավորվածություններ էին ձեռք բերվել քոչի առթիվ[3]:

Հետևելով Դ. Շատլվորթի հրահանգին՝ Սուլթանովը ուժեղացրեց ճնշումը Զանգեզուրի սահմանների վրա:

1919 թ. մայիսի կեսերին մուսավաթական զորամասերը՝ Հաջիսամլուի և Մաղավուզի թուրքերի ու քրդերի մասնակցությամբ, հարձակում գործեցին Գորիսի շրջանի Խոզնավար գյուղի վրա: Հաղթահարելով հայ փոքրաթիվ մարտիկների դիմադրությունը՝ թշնամու ուժերը մտան գյուղ և կիսով չափ ավերեցին այն: Հայ մարտիկները, մագլցելով գյուղից վեր գտնվող բարձունքները, շարունակեցին գնդակոծության տակ պահել թշնամուն: Շուտով խոզնավարցիներին օգնության եկան Խնածախ և Տեղ գյուղերի զինված ջոկատները և համատեղ ուժերով հետ շպրտեցին թուրք-քրդական միացյալ հրոսակախմբերին[4]:

Մոտավորապես նույն ժամանակ հարձակման ենթարկվեցին Կապանի շրջանի Վերին և Ներքին Խոտանան գյուղերը: Հարձակվողները ակտիվ աջակցություն ստացան Կապանի իրենց ցեղակիցներից[5]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 171, ֆ. 1457, ց. 1, գ. 441, թ. 3, **Ս. Մելիք-Եօլչեան**, նշվ. աշխ., էջ 127, **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, էջ 34, **Յրթ. Յ. Խաչատուրեան**, նշվ. աշխ., էջ 32, ՀԱԱ, ֆ. 1021, ց. 5, գ. 446, թ. 1:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 5, գ. 446, թ. 1:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84, ֆ. 200, ց. 1, գ. 146, թթ. 37-38, գ. 309, թ. 131:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 126:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 77:

Ահա թե ինչու Զանգեզուրի ղեկավարները Սերգեյ Մելիք-Յոլչյանի առաջարկով որոշեցին անտեսել գավառը Ադրբեջանին միացնելու Խ. Սուլթանովի պահանջը և արագացնել Զանգեզուրի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածքներից թուրքերին վտարելու գործը, որ դեռևս 1918 թ. օգոստոսից սկսել էր Զորավար Անդրանիկը[1]:

Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը քննության առավ Գորիսից դեպի Կապան ձգվող խճուղու վրա գտնվող թուրք գյուղախումբը տեղահանելու հարցը: Քննարկման ընթացքում խորհրդի նախագահ Մուշեղ Զաքարյանը կտրականապես դեմ արտահայտվեց թուրք գյուղախմբի տեղահանմանը՝ պատճառաբանելով, որ տվյալ պահին, երբ գավառը մեկուսացած էր, կտրված Հայաստանի Հանրապետության մյուս շրջաններից, զանգեզուրցիների համար խիստ վտանգավոր էր նման ծրագիր ձեռնարկելը:

Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի անդամները Մ. Զաքարյանի տեսակետը համարեցին չափազանց վտանգավոր և հանրապետության վերադաս մարմիններից պահանջեցին առաջիկայում (հունիսի 21-23-ին) կայանալիք ընտրությունների կապակցությամբ շրջանային խորհրդի նախագահի համար առաջադրվող թեկնածուների ցուցակում չհաստատել Մուշեղ Զաքարյանի թեկնածությունը:

Մ. Զաքարյանն ազատվեց խորհրդի նախագահի պարտականություններից, մնաց որպես խորհրդի անդամ, իսկ նրա փոխարեն ընտրվեց Արշակ Շիրինյանը:

Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը 1919 թ. մայիսի 17-ին Հայաստանի նախարարների խորհրդին հղած նամակում անդրադարձել էր Զանգեզուրի, Արցախի և Նախիջևանի նկատմամբ ադրբեջանական կառավարության զավթողական ծրագրերին:

Ադրբեջանը, նշված էր նամակում, ոչ մի բանի առջև կանգ չէր առնում, որպեսզի բոլոր միջոցներով իր տիրապետությունը տարածեր Զանգեզուրի և Նախիջևանի գավառների վրա: Ինչպես Զանգեզուրում, այնպես էլ Նախիջևանում տեղի էին ունենում մուսուլման բնակչության ապստամբական առկայծումներ՝ նախապես մշակված ծրագրով: Այդ ամենն ուղղված էր հայկական կառավարության դեմ և հետապնդում էր հեռուն գնացող նպատակ՝ ուժեղացնել մուսուլմանների տիրապետությունը և հայությանը շրջափակել թշնամական օղակով, դրանով իսկ կաթվածահար անել կառավարության սկսած պետական շինարարությունը:

Նամակով տեղեկացվում էր, որ Զանգեզուրում և Նախիջևանում տեղի ունեցող իրադարձությունները Բաքվի մուսուլմանական մամուլում լուսաբանվում էին խտացված գույներով՝ հրահրելով խավար զանգվածների

[1] Տե՛ս **Ց. Ղուլյան**, նշվ. աշխ., էջ 43:

հակահայկական թշնամությունը, նրանց մղելով բախումների և ցույցերի:

Նշվում էր նաև, որ ադրբեջանական ղեկավար շրջանների թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ այնքան էր սաստկացել, որ նավթահանքերում ու գործարաններում կազմակերպված միտինգներում կոչեր էին հնչում՝ ստեղծելու կամավորական ջոկատներ, դրանք Ղարաբաղի տարածքով ուղարկելու Զանգեզուր ու Նախիջևան: Այդ ջոկատները իրենց ճանապարհին կվերացնեին հայությանը՝ Ադրբեջանի տիրապետությունը տարածելով մինչև Ռուսաստանի հին սահմանները՝ Թուրքիային միանալու համար:

Այնուհետև ներկայացուցչության նամակում նշված էր, որ վերջին տեղեկությունների համաձայն՝ ադրբեջանական կառավարությունը լուրջ միջոցառումներ էր ձեռնարկում՝ Արաքսի կիրճով և Օրդուբադի վրայով ճանապարհ բացելու դեպի Նախիջևան: Այդ խնդրի կատարման միակ արգելքը Զանգեզուրի Մեղրիի շրջանի հայկական գյուղերն էին: Եվ այդ արգելքի հաղթահարման համար, ադրբեջանական թուրքերը բանակցություններ էին սկսել ավազակաբարո պարսիկ խաների հետ, որ վերջիններս թուրքերի հարձակման ժամանակ Արաքսի մյուս ափից ռմբակոծեին Մեղրի գյուղի բարձունքները՝ հայերի ուշադրությունը շեղելու համար: «Խաների ու ադրբեջանցիների միջև համաձայնությունն արդեն կայացել է, և խաների երկու ներկայացուցիչներ գտնվում են Բաքվում»[1]:

Բաքվում գտնվող Դ. Շատլվորթը և Ադրբեջանի կառավարությունը նոր հնարքների դիմեցին արցախահայերին պատժելու նպատակով: 1919 թ. մայիսի 20-ին հայտարարվեց Արցախի տնտեսական բոյկոտը, որը ծանրագույն վիճակ ստեղծեց այնտեղի հայության համար:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված մայիսի 20-ի նամակում Արցախի ազգային խորհուրդը հաղորդում էր, որ արցախահայության հինգերորդ համագումարում Դ. Շատլվորթի բոյկոտի սպառնալիքն այսօր կատարված փաստ է: «Մի շաբաթ է արդեն, որ թուրք ժողովուրդը մերժում է հայերին որևէ բան վաճառել, և դա այն ժամանակ, երբ թե մենք և թե Զանգեզուրը համաձայնություն ենք տվել քոչը բաց թողնելուն: Բոյկոտը թուրք ժողովուրդը չէ հայտարարել, այլ Ադրբեջանի կառավարության կարգադրությամբ և գեներալ Դ. Շատլվորթի գիտությամբ ու կատարյալ համաձայնությամբ …»[2]:

Արցախահայության պայքարին օգնություն ցույց տալու նպատակով Բաքվի հայոց ազգային խորհրդի կողմից հայրենի երկրամաս ուղարկված դաշնակցական գործիչ, գրող, հրապարակախոս Միսակ Տեր-Դանիելյանը,

---

[1] **Ա. Սարգսյան**, Լեռնային Ղարաբաղի պատմությունից (1918-1921 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, թիվ 3 (85), էջ 69-70:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 441, թ. 3:

հասնելով Աղդամ, այստեղ ականատես եղավ սովի մատնված արցախցիների ստորացված վիճակին: Այդ կապակցությամբ 1919 թ. մայիսի 27-ին նա գրեց. «Լույսը նոր բացված՝ Աղդամ իջնող հայ գյուղացիների տուտը բացվեց: Նրանք գալիս էին անվերջ շարաններով, կային և մեծ թվով կանայք՝ ոտաբոբիկ, ցնցոտիներով: Ո՞վ է տեսել, որ հայ կինը Աղդամ գար՝ գնումներ անելու: Բայց այժմ սովը ստիպում էր, և նրանք եկել էին. որը՝ քսակով, որը՝ խուրջինով, կամ մի քանի հոգի՝ մի ավանակ վարձած: Շուտով պարզվեց, որ թուրքերը տնտեսական բոյկոտ են հայտարարել և հայերին ոչինչ չեն տալիս. ով կարող էր՝ ծածուկ մի քիչ բան էր առնում ու շտապում Աղդամը թողնելու, որովհետև մթնոլորտը ծանրացել էր… Աղդամում շուտով մի բան էլ պարզվեց. այս կամ այն թուրքը հայի ձեռքից խլում էր նրա ավանակը, ձին և եզը՝ պնդելով, թե իրենն է եղել, և հայը ժամանակներ առաջ գողացել է: Բողոքողը ծեծվում էր, և բողոքը տեղ էլ չէր հասնում …»[1]:

Արցախի հայությունը մատնված էր սովի, այն հայությունը, որի հազարավոր զավակները պատերազմի տարիներին արյան գնով պաշտպանել էին դաշնակիցների դատը: Եվ ահա այդ դաշնակիցներից մեկը՝ անգլիացին, գալով Այսրկովկաս, կանգնել էր Ադրբեջանի կուշտ ու լավ զինված թուրքերի նպատակների իրականացման կողմը և լուռ համաձայնությամբ հաշտվել էր նրանց կողմից հայտարարված անմարդկային տնտեսական շրջափակման հետ:

Տնտեսական բոյկոտը ուղեկցվում էր թուրք հրոսակների կողմից կատարվող անհատական սպանություններով ու թալանով: Երբ հայերը բողոքներով դիմեցին Շուշիի անգլիական առաքելությանը և խնդրեցին ապահովել իրենց կյանքի և ունեցվածքի անվտանգությունը, այնտեղից պատասխանեցին, թե Խ. Սուլթանովին կխնդրեն համապատասխան միջոցներ ձեռնարկել, իսկ եթե հայերը թուրքերի դեմ ինքնագլուխ պատասխան քայլերի դիմեն, ապա նման քայլերը կդիտվեն որպես բրիտանական կառավարության դեմ ուղղված հանցագործ գործողություններ:

Կովկասում բրիտանական իշխանությունների բացահայտ անարդար վերաբերմունքը հայերի հանդեպ և նրանց կողմից Ադրբեջանի հետևողական պաշտպանությունը առաջ էին բերել ոչ միայն բոլոր անկողմնակալ մարդկանց, այլև նույնիսկ անգլիացիների դաշնակից ֆրանսիացի դիվանագետների ու գործիչների դժգոհությունը:

Այսպես՝ Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մահմեդ խան Թեկինսկին, դրանից անհանգստացած, 1919 թ. մայիսի 20-ի գաղտնի գրությամբ իր կառավարությանը հայտնում էր. «Ինձ մոտ ճաշի ժամանակ Հայաստանում Ֆրանսիայի ներկայացուցիչը դժգոհություն

[1] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվի Լեոյի ֆոնդ: Միսակ Տեր-Դանիելյանի հիշողությունները:

հայտնեց Անգլիայի քաղաքականությունից, որը բացարձակորեն ուղղված է Ադրբեջանական կառավարության օգտին, և գլխավորապես, Վ. Թոմսոնի քաղաքականությունից, որը ճարպիկ գործողություններով հասել է Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելուն, մի բան, որ նրա կարծիքով, բացահայտ անարդարություն է»[1]:

Այսրկովկասում ֆրանսիական առաքելության ղեկավար, գնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյիի կարծիքով՝ երկրամասում բրիտանական քաղաքականությունը խիստ միակողմանի, ադրբեջանամետ էր և բացարձակ չէր նպաստում խաղաղության ու կարգուկանոնի հաստատմանը[2]:

Շուշիում գտնվող իշխան Արղությանը մայիսի 21-ին բոյկոտի հարցով դիմեց անգլիական առաքելությանը, բայց ստացավ հետևյալ պատասխանը. «Դա Ադրբեջանի ներքին գործն է»: Նույն օրը Հ. Արղությանը Երևան մեկնելու համար ճանապարհվեց Թիֆլիս: Հասնելով Թիֆլիս՝ Հ. Արղությանը մայիսի 27-ին այնտեղից զեկուցագիր հղեց ՀՀ արտգործնախարարին: Զեկուցագրում ասվում էր. «Քոչի հարցի այս ձևի լուծումը ես համարում եմ վտանգավոր…»: Նա նշում էր, որ դա ուղի է հարթելու «… այն ցավալի ընդհարումներին, որոնք բնավ չեն համապատասխանում Ղարաբաղի հայության ձգտումներին: Այս բոլորի վրա պիտի ավելացնել մի նոր աննպաստ երևույթ: Ղարաբաղի վերջին հինգերորդ համագումարը միաձայն որոշել է բաց թողնել քոչը և ամեն կերպ աշխատել քոչի հարցը լուծելու խաղաղ, բարեկամական ճանապարհով: Չնայած այդ բարյացակամ տրամադրությանը՝ վերջին օրերը թուրքերը, անշուշտ կառավարության համաձայնությամբ, հայտարարել են տնտեսական բոյկոտ հայերին և ամեն տեղ մերժում են ծախել նրանց հացահատիկ, ալյուր և առհասարակ որևէ մթերք: Այս երևույթը հուզում է առաջ բերել հայության բոլոր շրջաններում: Հայերը այս վարմունքին կպատասխանեն մի քայլով՝ թույլ չտալ քոչվորներին սար բարձրանալ, որի ծանր հետևանքները երկու հարևան ժողովուրդների համար կլինի չափազանց կորստաբեր:

Զեկուցելով Ձեզ, պ. նախարար, Ղարաբաղում և Զանգեզուրում ստեղծված ծանր կացության մասին, որը հղի է ծանր անակնկալներով, խնդրում եմ Ձեզ դիմել բոլոր միջոցներին՝ խաղաղ լուծում տալու վերոհիշյալ հարցերին»[3]:

Թեև Միքայել Արզումանյանը Դ. Շատլվորթին պատասխանել էր, որ Հայաստանի կառավարությունը որևէ մեկին խոստում չի տվել Արցախը Ադրբեջանի տարածք հայտարարելու մասին, բայց հայ, մանավանդ արցախահայ շրջաններում, չէր վերանում սաստիկ հուզումը:

---

[1] «Ազատամարտ», 1992, հ. 29, հուլիս, էջ 11, **Ռ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 263-265:

[2] Տե՛ս **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 244:

[3] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 80:

Մայիսի 24-ին Արցախի և Զանգեզուրի հայրենակցական միության վարչությունը Թիֆլիսից նամակ հղեց Երևան՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարին խնդրելով հստակ պարզաբանումներով վերջ տալ տարակուսանքներին:

«Վարչությունը խնդրում է Ձեզ,– ասված էր նամակում,– առանց հետաձգելու 1) պաշտոնական հայտագրով՝ ուղղված բրիտանական հրամանատարությանը, հերքել գեներալ Դ. Շատլվորթի հայտարարությունները և 2) հուզված հասարակական միտքը հանգստացնելու համար հրապարակական հայտարարություն անելու մամուլի մեջ, որ գեներալ Դ. Շատլվորթի պնդումը չի համապատասխանում իրականության՝ պարզելով սրա հետ Հայաստանի կառավարության տեսակետը Ղարաբաղի և Զանգեզուրի քաղաքական դատի մասին»[1]:

ՀՀ արտգործնախարարությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1919 թ. մայիսի 7-ի պաշտոնական հաղորդագրությունը, այն է՝ «նկատի առնելով այն, որ տարբեր անձանց կողմից Հայաստանում և արտասահմանում լուրեր են տարածվում այն մասին, որ իբր Հայաստանի կառավարությունն իր համաձայնությունն է տվել Ղարաբաղը Ադրբեջանի գլխավոր նահանգապետի կողմից կառավարելու առթիվ, հայկական կառավարությունը միանշանակ հայտարարում է, որ ինքը ոչ ոքի, երբեք և ոչ մի առիթով իր համաձայնությունը չի տվել այդ կապակցությամբ: Ընդհակառակը, հայկական կառավարությունը միշտ հայկական Ղարաբաղը համարել և համարում է –Հայաստանի անբաժան մասը: Այդ մասին բազմիցս հաղորդվել է բրիտանական հրամանատարությանը և Ադրբեջանի կառավարությանը»[2], Արցախ–Զանգեզուրի հայրենակցական միության ղեկավարությանը պատասխանեց, որ Հայաստանի կառավարությունը Հաշտության կոնֆերանսից պահանջել է հայկական և այժմ էլ հայերով բնակեցված մարզերը (Ղարաբաղն ու Զանգեզուրը) անհապաղ մտցնել հանրապետության տարածքի մեջ:

Թերևս այս կտրուկ պահանջը անգլիական բարձր հրամանատարությանը խորհելու առիթ էր տալիս: Մայիսի 31-ին անգլիական 27-րդ դիվիզիայի նոր հրամանատարը՝ գեներալ-մայոր Ջորջ Նորտոն Կորին, Հայաստանի կառավարությանը նամակ հղեց, որում նշում էր, որ ինքը մեկնում էր Բաքու և կբանակցեր ադրբեջանական կառավարության հետ, որ նա սահմանափակեր իր գործողությունների շրջանակը վիճելի շրջաններում և ներկայումս ձեռնպահ մնար Զանգեզուրի վրա իշխանության տարածումից[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 80:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 45, տե՛ս նաև Нагорный Карабах в 1918-1923 гг.:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 102, տե՛ս նաև Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 230, **М. Туманян,** նշվ. աշխ., էջ 242:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍԱՆՁԱՁԵՐԾԱԾ ԱՐՅՈՒՆԱԼԻ ՆՈՐ ԿՌԻՎՆԵՐԸ 1919 Թ. ԱՄՌԱՆԸ՝ ԱՐՑԱԽԸ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ՌԱԶՄԱԿԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բաքվի իշխանություններից և Ադրբեջանի հովանավորությունը ստանձնած անգլիական հրամանատարությունից ստանալով մեծաքանակ զենք և լրացուցիչ զինվորական կազմավորումներ՝ Խ. Սուլթանովն անցավ վճռական գործողությունների: 1919 թ. մայիսի 20-ին հայտարարված բոյկոտի պատճառով հայկական շրջանները զրկվել էին հարևաններից կենսամթերք գնելու հնարավորությունից[1]: Ի լրումն դրա՝ քոչվորները հոծ խմբերով և լավ զինված սկսել էին բարձրանալ Արցախի և Զանգեզուրի սարերը:

Մայիսի վերջին Շուշին շրջապատվեց կանոնավոր զորամասերով, իսկ այլ ուժեր սկսեցին ասպատակել Արցախի տարածքները[2]: Այս պայմաններում հայկական շրջաններից դիմեցին Արցախի հայոց ազգային խորհրդին և առաջարկեցին թշնամուն հակահարված տալու համար օգտագործել իրենց ունեցած միակ հնարավորությունը՝ զենքով փակել քոչի ճանապարհը: Ազգային խորհուրդը մերժեց այդ առաջարկը և գյուղացիներին հորդորեց չխանգարել քոչի ընթացքը՝ գտնելով, որ դա կարող էր պատճառ դառնալ լայնածավալ ընդհարումների[3]:

Շրջանները թեպետ ենթարկվում էին Ազգային խորհրդի այդ հրահանգին, սակայն արցախահայությունը շարունակում էր վճռական մնալ Ադրբեջանին չենթարկվելու հարցում:

«Նրանք հայտարարում էին, որ այդ երկրի անունն անգամ լսել չեն ուզում: Զինվում էին, հատկապես գյուղերում, ով ինչով կարող էր. հրացան, ատրճանակ, կացին, դաշույն .... նույնիսկ երկաթից երկար շամփուրներ էին պատրաստում՝ կրծքեր շամփրելու»[4],– իր հուշերում գրել է Մ. Տեր-Դանիելյանը (Արամայիս):

Հունիսի սկզբներին Խ. Սուլթանովը դիմեց նոր սադրանքի՝ նպատակադրվելով Շուշիի հայկական թաղամասում գտնվող քաղաքային գանձատունը և հեռագրատունը տեղափոխել ադրբեջանական թաղամաս: Հայ ղեկավարները հավաքվեցին թեմական առաջնորդի մոտ և երկար խորհրդակցելուց հետո որոշեցին դիմել Շուշիի անգլիական առաքելու-

---

[1] Տե՛ս **Հ. Գևորգյան**, Դրո, Երևան, 2014, էջ 560:

[2] Տե՛ս "Кавказское слово", 19 июня, 1919, **М. Туманян,** նշվ. աշխ., էջ 246:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 172:

[4] «Ուրբաթ», 1991, 4 հոկտեմբերի:

թյանը՝ տեղափոխությունը կանխելու խնդրանքով: Նրանք դա հիմնավորում էին երկու հանգամանքով՝ ա) գանձատան և հեռագրատան ծառայողների մեծ մասը հայ կանայք են, որոնք չէին համաձայնի աշխատանքի գնալ ադրբեջանական մաս, բ) հայերը մեծ գումարներ ունեին պահ տված գանձատանը, ուստի չէին ցանկանում դրանք դնել ադրբեջանցիների հսկողության տակ[1]:

Նշված փաստարկներին անգլիական առաքելությունը համաձայնեց և գտավ, որ հայերի պահանջները տեղին էին: Նրա ղեկավարը հայ եպիսկոպոսին հավաստում էր, որ նշված հաստատությունները չեն տեղափոխվի: Սակայն հունիսի 2-ին Խ. Սուլթանովը, առանց որևէ նախազգուշացման, դրանք փոխադրեց: Այդ գործողության դեմ հայերը որևէ հակաքայլ չարեցին, իսկ անգլիացիները ստանձնեցին լուռ հանդիսատեսի դերը[2]:

Ոգևորված դրանից՝ Խ. Սուլթանովի կարգադրությամբ հունիսի 3-ին ադրբեջանական զորամասերը բռնեցին Շուշիից դեպի Գորիս տանող խճուղին: Միաժամանակ գնդացիրներով զինված մեկ այլ զորամաս՝ ռուս սպա Մաքսիմովիչի գլխավորությամբ, գրավեց քաղաքի բարձունքում գտնվող դիրքերը[3]:

Հունիսի 4-ին հայերը, պատվիրակներ ուղարկելով ռուս սպայի մոտ, փորձեցին նրան համոզել թողնել դիրքերը, բայց վերջինիս հրամանով նրան ենթակա զորամասը սկսեց կրակ տեղալ Շուշիի հայկական թաղամասի վրա: Քաղաքի հայկական թաղերից հետևեց նույնքան ուժգին պատասխան հրացանաձգություն: Այդ նույն ժամանակ թուրքական մասում աշխատող չորս տասնյակ հայեր ձերբակալվեցին և գնդակահարվեցին:

Հունիսի 5-ին անգլիացիների միջամտությամբ հրացանաձգությունը դադարեց: Շուշիից սկսեց հեռանալ մտավորականությունը՝ ապաստանելով շրջակա գյուղերում: Փոստը և մի քանի այլ հիմնարկություններ քաղաքի հայկական մասից փոխադրվեցին թուրքական մաս:

Հնդիկ սիպահների ջոկատի ուղեկցությամբ ադրբեջանական մի մեծ զորամաս մտավ Շուշիի հայկական թաղամաս և տեղավորվեց զորանոցներում՝ այնտեղից վոնդելով փախստականներին: Խ. Սուլթանովի կարգադրությամբ քաղաքի բոլոր ոստիկանները սկսեցին կրել ադրբեջանական կանաչ ուսադիրներ[4]:

Երբ Շուշիում սկսվեց հրացանաձգություն, Ղայբալիշեն (Ղայբալիքենդ) հայկական գյուղի բնակիչները պայմանավորվեցին հարևան ադրբեջանաբնակ Խալֆալու գյուղի բնակիչների հետ զենք չգործածել միմյանց դեմ:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 171:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 172:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս “Кавказское слово”, 19 июня, 1919.

Նրանք պարտավորվեցին ոչ միայն խաղաղ մնալ, այլև պաշտպանել միմյանց[1]: Բայց հունիսի 5-ին ադրբեջանական կողմը խախտեց պայմանը: Նրանց միացան զինված քրդական խմբեր ու զինվորներ: Չունենալով զենք ու զինամթերք՝ հայ գյուղացիները՝ տղամարդ, կին, երեխա, ենթարկվեցին կոտորածի, իսկ նրանց ունեցվածքը՝ թալանի: Ազերի և քուրդ ելուզակներին ղեկավարում էր նահանգապետի եղբայր Սուլթան բեկ Սուլթանովը[2]: Նախճիրը շարունակվեց նաև հունիսի 6-ին: Սպանվում է մինչև 600 մարդ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում երեխաները[3]: Փրկվեց միայն 11 տղամարդ և 87 կին[4]: Հետագա երկու-երեք օրերին Խանքենդի (Վարարակն) ուղղությամբ ավերվեց ևս 5 հայկական գյուղ՝ Կրկժանը, Փահլուլը, Բաշուշենը, Խանաբադը, Ջամիլլուն, որոնց բնակիչները հասցրին նախապես հեռանալ և ապաստանել մոտակա հայկական գյուղերում[5]: Ողջ Արցախը գիտեր, որ այդ շրջանում մնացել էին մեծ թվով թուրք սպաներ, զինվորներ և գործակալներ, որոնք ղեկավարում էին Խ. Սուլթանովի ավազակախմբերի գործողությունները[6]:

Ղայբալիշենի կոտորածի ժամանակ անգլիական առաքելությունը նախճիրը դադարեցնելու ոչ մի միջոց չձեռնարկեց՝ դա համարելով Ադրբեջանի ներքին գործը[7]: Նույն ժամանակ Եվլախից Շուշի վերադարձող բազմաթիվ հայեր անհետանում էին ճանապարհին՝ զոհ գնալով թուրքերի խժդժություններին[8]:

Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը ՀՀ արտգործնախարարին գրած զեկուցագրում նշում էր, որ հայերի կոտորածը մանրակրկիտ նախապատրաստված էր Բաքվից եկած հրահանգով և իրագործվել էր Խ. Սուլթանովի անմիջական ղեկավարությամբ: «Մի հանգամանք, որ առանձնապես աչքի է ընկնում Ղարաբաղի շրջանում,– գրում էր նա,– դա այն է, որ Սուլթանովը, ունենալով կանոնավոր զորք, ամբողջ շրջանում միլիցիայի անվան տակ կազմակերպել է զանազան զինված ավազակային խմբեր, որոնք իրենց հանդուգն ու լկտի գործողություններով ուղղակի ահաբեկել են Ասկերանի շրջանի հայ գյուղացիներին: Սրանք հնարավորություն չունեն գյուղերից դուրս գալու և իրենց առատ բերք խոստացող

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 173:

[2] Տե՛ս "Кавказское слово", 19 января, 1919:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 552, թ. 139:

[4] Տե՛ս "Кавказское слово", 19 января, 1919: Նշենք, որ գրականության մեջ, ժամանակի մամուլում, ինչպես նաև հուշագրություններում զոհերի մասին բերվում են տարբեր թվեր՝ 500-ից մինչև 700: Մենք վերցնում ենք միջինը:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 232, թ. 138, **Միգմա**, Կովկասեան կոնֆեդերացիա, «Դրօշակ» (Փարիզ), 1931, թիվ 9, սեպտեմբեր, էջ 198:

[6] Տե՛ս նույն տեղում, գ. 252, թ. 173:

[7] Տե՛ս նույն տեղում, թ. 174:

[8] Տե՛ս նույն տեղում, թ. 173:

արտերն ու այգիները հավաքելու: Տնտեսական քայքայման հեռանկարը նոցա տրամադրությունը փոխել է: Նոքա ելք են փնտրում այդ դրությունից մի կերպ դուրս գալու»[1]:

Արցախի խաղաղ հայ գյուղացիների գազանային կոտորածների մասին տեղեկություններն առաջինը հասան Զանգեզուրի կենտրոն՝ Գորիս: Զանգեզուրցիները կրկին համոզվեցին, որ ազերիների և անգլիացիների հանդեպ իրենց վճռական ու անզիջում վերաբերմունքը միակ ճիշտ ելքն է:

Ղարաբաղի կոտորածների դեմ առաջին պաշտոնական բողոքը հայտնեց Էջմիածինը: Կաթողիկոսը գեներալ Զ. Կորիին հղեց հետևյալ հեռագիրը.

«Մենք համոզված ենք, որ դաշնակիցների հովանավորության շնորհիվ մեր հոտի համար հասել է փրկությունը երկար տանջանքներից ու չարչարանքներից: Բայց և այնպես, Ղարաբաղում հոսում է անմեղ արյունը կանանց, երեխաների և նրանց հերոսական պաշտպանների, որոնց ողբն ու աղաղակը հասնում է մինչ մեր պատրիարքական աթոռը: Մենք չենք կարող մնալ անկարեկից դիտող կատարվող սարսափների և ձայն չբարձրացնել՝ ի պաշտպանություն անմեղ զոհերի: Այդ պատճառով դիմում ենք ձեզ՝ իբրև Մեծն Բրիտանիայի ներկայացուցչի և խնդրում պաշտպանել նոր բնաջնջման նախօրյակին գտնվող մեր հոգևոր զավակներին և վերացնել վիճելի խնդիրը: Կատարելապես հավատում ենք, որ հզոր Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը կիրագործե մեր օրինական բաղձանքները»[2]:

Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը ՀՀ արտգործնախարարին հունիսի 11-ին հղած նամակով խնդրում էր իրեն կանչել Երևան՝ «մի շարք քաղաքական նշանակություն ունեցող խնդիրներ լուսաբանելու համար»: «Ղարաբաղի հարցը,– գրում էր նա,– վերջին դեպքերի հետևանքով բավական սուր կերպարանք է ստացել, և Ադրբեջանի կառավարությունը սպառնում է զենքի ուժով գրավել Ղարաբաղը, Շուշիի, Ջիվանշիրի և Կարյագինոյի գավառները՝ առժամանակ թողնելով բաց Զանգեզուրի խնդիրը»[3]:

Հունիսի 16-ին հրապարակային մեծ ժողով տեղի ունեցավ Երևանում: Ժողովում կրակոտ ճառերով հանդես եկան Դ. Անանունը, Ա. Խոնդկարյանը, Վ. Խորենին, Դրոն և ուրիշներ: Ժողովի ընդունած բանաձևում մասնավորապես ասված էր. «Բա՛վ է որքան կոտորվեց հայ ժողովուրդը Թուրքիայում, Ղարաբաղում, Ազրբեջանում: Մենք այլևս չենք կարող թույլ տալ, որ եվրոպական մեծ ժողովուրդների ներկայացուցիչների աչքերի առջև մեր կանայք ու երեխաները ենթարկվեն կոտորածի: Պահանջում ենք, որ դաշնակից պետությունների Կովկասում գտնվող ներկայացուցիչները վերջ դնեն կոտորածի և ավերի քաղաքականությանը: Պահանջում ենք հայկական կառավարու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 252, թ. 173: Տե՛ս նաև «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 20 դեկտեմբերի:

[2] «Վերածնված Հայաստան», թիվ 4, 1990, էջ 52-53:

[3] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 137:

թյունից բուռն կերպով բողոքել դաշնակիցների ներկայացուցիչներին և հանուն քաղաքակրթության ու մեր ժողովրդի ֆիզիկական գոյության պաշտպանել հայ ժողովուրդը՝ ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով»[1]:

Այդ ժողովից հետո Հայաստանի Հանրապետության արտգործնախարարը նոտա հանձնեց ՀՀ-ում Ադրբեջանի ներկայացուցչին: Նշվում էր, որ տեղի ունեցածի համար «Հայաստանի կառավարությունը պատասխանատու է համարում Ադրբեջանի կառավարությանը»[2]:

Հունիսի 17-ին Երևանում հրապարակվեց կառավարական հաղորդագրություն, որում նշված էր. «Հայաստանի կառավարությունը հարկ է համարում հայտարարել, որ նա երբեք ոչ մեկի և ոչ մի տեղ չի հայտարարել այն մասին, որ նա համաձայն է, թեկուզ և ժամանակավորապես, Ղարաբաղի կառավարմանը Ադրբեջանի կողմից: Հակառակը, նա մի քանի անգամ բացահայտ և գրավոր ձևով հայտարարել է բոլոր տերությունների ներկայացուցիչներին Կովկասում և Փարիզում, որ ինքը Ղարաբաղը համարում է Հայաստանի Հանրապետության անքակտելի մասը և խնդրում է անգլիական հրամանատարությունից մինչև փարիզյան կոնֆերենցիայի որոշումները հաստատելը, այնտեղ սահմանել անգլիական գեներալ-նահանգապետի իշխանությունը և ինքնակառավարում ի դեմս ազգային մուսուլմանական և հայկական խորհուրդների Ղարաբաղի համապատասխան մասերում: Այս տեսակետից, նա երբեք և ոչ մի հանգամանքներում չի հրաժարվել:

Ցանկացած ուրիշ պնդում չի համապատասխանում իրականությանը»[3]:

Հունիսի 22-ին Թիֆլիսում տեղի ունեցավ հրապարակային մեծ ժողով, որին մասնակցում էին 40-ից ավելի ազգային կազմակերպություններ: Նախագահում էր Հովհաննես Թումանյանը: Ընդունվեց բանաձև, որով ժողովի մասնակիցները «դաշնակից» անգլիացիներից պահանջում էին Խ. Սուլթանովին վտարել Արցախից, կոտորածի հեղինակներին ձերբակալել ու ենթարկել պատժի, Արցախը միացնել Հայաստանին:

Բողոքի ձայն բարձրացրեց նաև Ղարաբաղի ազգային խորհուրդը, որը մի ընդարձակ հաղորդագրությամբ դիմեց դաշնակից հրամանատարությանը՝ պահանջելով պատասխանատվության կանչել կոտորածի գլխավոր մեղավորին՝ Խ. Սուլթանովին, որը Ղարաբաղ գալու առաջին օրից ձգտում էր զենքի ուժով հնազանդեցնել հայկական շրջանները: Հաղորդագրության վերջում ասված էր, որ մուսավաթականների կողմից Շուշիի գրավումը դեռ չէր նշանակում Արցախի նվաճում, և որ արցախահայությունը շարունակելու էր իր անդուլ պայքարը Հայաստանի Հանրապետությանը միանալու համար:

Նման հայտարարություններով հանդես եկան նաև ՀՅԴ Արցախի

---

[1] «Վերածնված Հայաստան», թիվ 4, 1990, էջ 53:

[2] “Кавказское слово”, 19 июня, 1919.

[3] Նույն տեղում:

կոմիտեն, Հայ ժողովրդական կուսակցության Շուշիի մասնաճյուղի ժողովը և երկրամասի այլ կազմակերպություններ[1]:

Ծայր առած աննախադեպ բողոքների ճնշման տակ գեներալ Դ. Շատլ-վորթը հանձնարարեց Շուշիում անգլիական առաքելության ներկայացուցիչ գնդապետ Սեսիլ Հ. Կլատերբակին տեղում ուսումնասիրել եղելությունը և զեկուցագիր ներկայացնել Ադրբեջանի կառավարությանը: Գնդապետը կատարեց առաջադրանքը և անկողմնակալ զեկուցագիր գրեց, որտեղ նկարագրում էր սարսափելի դեպքերը: Նա պնդում էր, որ կոտորածները հիմնականում կատարել են քրդերը և ակտիվ մասնակցել են ռուս սպաները: Ս. Հ. Կլատերբակը պահանջեց պատասխանատվության ենթարկել կոտոր-ածների գլխավոր կազմակերպչին՝ Խ. Սուլթանովին[2]:

Արցախում ընթացող արյունահեղության կապակցությամբ Ադրբեջանի խորհրդարանում հանդես եկան հայ պատգամավորները: Որոշում կայաց-վեց, որ երկու հայ (Պ. Չուբարյան, Ի. Խոջայան) և երկու ադրբեջանցի (Կ. Կա-բաբեկով և Շ. Ռուստամբեկով) պատգամավորներ մեկնեն Արցախ՝ տեղում ուսումնասիրելու իրավիճակը: Հունիսի 22-ին վերադառնալով Բաքու՝ Պ. Չուբարյանը խորհրդարանին ներկայացրեց մի զեկուցագիր, ըստ որի՝ արյունահեղության կազմակերպիչ էր ճանաչվում Խ. Սուլթանովը: Առա-ջարկվում էր նրան անհապաղ հեռացնել Արցախից: Սակայն խորհրդարանը գտավ, որ Արցախի ադրբեջանական իշխանությունների և անձամբ նահան-գապետի գործողություններում ապօրինի ոչինչ չկա[3]:

Հունիսի 23-ին Բաքվի հայոց ազգային խորհուրդը քննարկեց Արցախի վերջին դեպքերը և նկատի առնելով ստեղծված ծանր վիճակը՝ որոշեց ժամանակավոր զիջումների գնալ Ադրբեջանի իշխանություններին, մինչև կպարզեր ՀՀ կառավարության դիրքորոշումը: Այդ նպատակով խորհուրդը ընտրեց մի պատգամավորություն (Հ. Մանանդյան, Բ. Իշխանյան և Հ. Խա-չատրյան), որը նույն օրը մեկնեց Երևան[4]:

Նույն օրը՝ հունիսի 23-ին, Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայա-ցուցիչը ՀՀ կառավարությանը հաղորդեց, որ Շուշիում արդեն կան 300-ից ավելի անգլիացի զինվորներ, որոնց մեծ մասը մահմեդական սիպահներ են, որոնք ամեն րոպե պատրաստ էին աջակցել Խ. Սուլթանովին: «Ամեն ինչից երևում է, որ Զանգեզուրի դեմ լուրջ պատրաստություններ են տեսնվում, և ով գիտե, թե ինչ է սպասվում այդ գավառի հայությանը, եթե կտրուկ և լուրջ միջոցներ ձեռք չառնվեն այդ ամենը կանխելու»[5]:

Այդուհանդերձ, Ադրբեջանի կառավարությունում կային անձինք, որոնք

---

[1] Տե՛ս «Գործ», 1990, թիվ 15, ՀԱԱ ֆ. 199, ց. 1, գ. 23, 2-րդ մաս, թ. 430:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 465, թ. 1, տե՛ս նաև “Кавказское слово”, 19 января, 1919:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 1:

[4] Տե՛ս նույն տեղում, թ. 189:

[5] Նույն տեղում, թ. 168:

մտավախություն ունեին, որ եթե Արցախում դեպքերը զարգանային նույն կերպ, ապա հնարավոր էր, որ արցախցիներին օգնության գային ՀՀ զինված ուժերը, և այդժամ դժվար կլիներ կանխատեսել իրադարձությունների ելքը:

Հունիսի 24-ին ՀՀ կառավարությանը հղած մեկ այլ զեկուցագրում Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը նշում էր, որ նախորդ օրը Ադրբեջանի խորհրդարանականներից մեկը խորհրդարանում հանդիպել է Ադրբեջանի նախարարներից մեկի՝ Խուդադաթ բեկ Մելիք-Ասլանովի հետ և մասնավոր խորհրդակցություն է ունեցել Ղարաբաղի հարցի շուրջ: Այդ խոսակցության ժամանակ խորհրդարանականը կարծիք է հայտնել, որ Ղարաբաղի հարցը պետք է հարթել կառավարության, այլ ոչ թե խորհրդարանի միջոցով, որովհետև այնտեղ կրքերը կբորբոքվեն, հարցը կբարդանա և նոր բախումների տեղիք կտա: Նախարարը պատասխանել էր, որ ինքը ղարաբաղցի է, շատ է սիրում Ղարաբաղը և «չէր ցանկանա, որ այնտեղ խլրտում առաջ գա, որովհետև այն կարող է կորստաբեր լինել Ադրբեջանի համար»: ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը, ուշադրություն հրավիրելով Խուդադաթ բեկ Մելիք-Ասլանովի խոսքերի վրա՝ ավելացրել է. «Թե ինչ շարժառիթներից դրդված նա Ղարաբաղում ազգամիջյան ընդհարումները կորստաբեր է համարում Ադրբեջանի համար, դա անհայտ է խոսակցի համար»[1]:

Հունիսի վերջերին Շուշիի անգլիական առաքելությունը թողեց Արցախը և մեկնեց Բաքու: Փաստորեն՝ դեմ հանդիման մնացին երկրամասի հայերն ու ազերիները: Սակայն, անգլիացիների հեռանալով՝ Արցախի հարցը չէր լուծվում: Վերջիններս առաջվա պես Արցախը դիտում էին Ադրբեջանի անբաժանելի մասը:

Անգլիացիների այդ կարծիքը նաև արցախահայերի պաշտոնական տեսակետը դարձնելու համար Խ. Սուլթանովը որոշեց նպաստել ղարաբաղցի հայերի հաջորդ՝ 6-րդ համագումարի հրավիրմանը[2]:

Համագումարը հրավիրվեց հունիսի 28-ին Շուշիից ոչ հեռու՝ Վարանդայի Շոշ գյուղում: Բացի պատգամավորներից՝ մասնակցում էին Բաքվի ղարաբաղցիների ներկայացուցիչները և Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչ Շ. Ռուստամբեկովը: Խ. Սուլթանովին կանչվեցին Բաքու: Համագումարը չափազանց կարճ տևեց: Ընտրվեց 3 հոգուց բաղկացած մի պատվիրակություն՝ Ռուբեն Շահնազարյան, Արամայիս Տեր-Դանիելյան, Գերասիմ Խաչատրյան կազմով, որին տրվեց Ղարաբաղի կողմից Ադրբեջանի կառավարության հետ բանակցելու լիազորություն[3]: Այնուհետև համագումարը ցրվեց:

Լիազորված երեք անձինք մեկնեցին Բաքու: Գերասիմ Խաչատրյանը

---

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 170:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 2:

[3] Տե՛ս **Ռ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 200:

ճանապարհին սպանվեց թուրքերի ձեռքով, իսկ մյուս երկուսը հասան տեղ, խորհրդակցեցին տեղի Ազգային խորհրդի հետ, որից հետո հանդիպեցին այնտեղ գտնվող Խ. Սուլթանովի հետ և հանգեցին որոշ համաձայնության: Դրանից հետո նրանք վերադարձան Ղարաբաղ:

«Հաջողություններից» ոգևորված՝ Խ. Սուլթանովը պահը հարմար գտավ՝ Զանգեզուրի վրա հարձակում գործելու համար: Նա մտածում էր, քանի որ Արցախի հայերը ահաբեկված են, իսկ թուրքերի ու քրդերի բարոյահոգեբանական վիճակը, ընդհակառակը, բարձր է ինչպես երբեք, պետք է գործել: Հավանաբար նա նաև լուր էր ստացել, թե Զանգեզուրի ղեկավարության մեջ, իբր, կան տարաձայնություններ: Բայց նա սխալվում էր. իրականում Զանգեզուրի ղեկավարությունը համերաշխ էր ու միակամ: Բացառություն էր Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի նախկին նախագահ Մ. Զաքարյանը, որն իր պարտականությունից ազատվելուց հետո սկսել էր պայքարել շրջանային խորհրդի նոր ղեկավարության դեմ, բայց որևէ արդյունքի չհասնելով՝ հուլիսի 22-ին հայտարարել էր, թե ընդհանրապես հեռանում է խորհրդի աշխատանքներից: Այդ քայլի համար գեներալ-կոմիսար Սերգեյ Մելիք-Յոլչյանը նրան պատասխանատվության էր կանչել, բայց վերջինս, հետապնդումներից խուսափելով, Գորիսից տեղափոխվել էր Սիսիանի շրջան՝ հայրենի Բռնակոթ գյուղը:

Ադրբեջանական 1500 զինվորից բաղկացած կանոնավոր զորամասը և նրան միացած շուրջ 2000-անոց խուժանը՝ Քյարիմ բեյի հրամանատարությամբ, դուրս գալով Կարյագինոյից, շարժվեց դեպի Կապանի սահմանը:

Զորամասն ուներ 7 գնդացիր և 10 բեռնասայլ փամփուշտ[1]: Հունիսի 28-ին, լույսը չբացված, այն հարձակում ծավալեց Ղարաբաբա, Ուժանիս, Ագարակ և Եղվարդ գյուղերի վրա[2]:

Ղարաբաբայի բնակիչները առանց լուրջ դիմադրության լքեցին գյուղը: Թշնամին մտավ գյուղ, թալանեց, ապա՝ հրդեհեց: Այդ օրը հայերից սպանվեց 3-ը, վիրավորվեց 2-ը[3]: Սակայն Ագարակի ուղղությամբ ազերիները չկարողացան հաջողության հասնել: Հարմար դիրքեր գրավելով՝ լուսաբացին նրանք բոլոր կողմերից հարձակվեցին գյուղի վրա: Ճիշտ է, հաջողվեց կրակի տալ գյուղի գոմերը, բայց ավելին անել չկարողացան: Ագարակի պաշտպանները շտաբս-կապիտան Ս. Թորոսյանի գլխավորությամբ դուրս եկան իրենց մի քանի անգամ գերազանցող թշնամու դեմ: Չորս ժամ տևած կռվից հետո հակառակորդը մեծ կորուստներով փախուստի դիմեց: Հայերը տվեցին 5 զոհ և երկու վիրավոր[4]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 169, թ. 56:

[2] Տե՛ս նույն տեղում, նաև՝ ֆ. 200, ց. 1, գ. 501, թթ. 12-14:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 208:

[4] Տե՛ս նույն տեղում:

Դրան հակառակ՝ ազերիներին հաջողվեց մտնել Եղվարդ: Փողոցներում կատաղի մարտ սկսվեց: Վճռական պահին հայերին օգնության եկան շրջանում Զանգեզուրից Անդրանիկ Զորավարի հեռանալուց հետո (1919 թ. մարտ) ապաստանած վանեցիները: Նրանց օգնությամբ թշնամին հետ շպրտվեց: Եղվարդը տվեց 8 զոհ և 7 վիրավոր[1]:

Հունիսի 29-ին հայկական ուժերն անցան հակահարձակման Եղվարդի, Ագարակի ու Ուժանիսի ուղղություններով և կոտրելով հակառակորդի դիմադրությունը՝ գրավեցին Ղորդարա, Խաղդափ և Էմանլու, Հաջի-Ղուրբանլար, իսկ ապա՝ Սարալու և Աղբիս ադրբեջանական գյուղերը: Այս կռիվներում հայերից սպանվեց 18-ը, 10-ը՝ վիրավորվեց: Հակառակորդի կորուստները 100-ից ավելի էին: Հայերի ձեռքն էին անցել 120-ից ավելի հրացան, 3 գնդացիր, զգալի քանակությամբ փամփուշտ, նաև ձիեր և պարեն[2]:

Հակառակորդի սպանված զինվորների գրպաններում գտնվել էին վկայականներ՝ տրված Շուշիում և Խանքենդում տեղակայված Ադրբեջանի հեծյալ 2-րդ գնդի թուրք հրամանատարի ստորագրությամբ: Եղվարդի մարտի ժամանակ սպանված Հեյդար բեկի մոտ գտնվել էին փաստաթղթեր, որոնցից պարզվել էր, որ կռվին մասնակցել էին բազմաթիվ թուրք ժանդարմներ[3]: Իսկ Կապանի կռիվներում սպանված զինվորների մոտ կային անձնագրեր՝ տրված Էրզրումում, Սվազում, Երզնկայում[4]:

Ազերիների նահանջող զորամասը կենտրոնացավ Դոնդարլու գյուղում և սկսեց զորավարժություններ՝ նոր հարձակումների համար: Հուլիսի 2-ին հարձակումներ տեղի ունեցան Կապանի Զեյվա և Մողես գյուղերի վրա, սակայն դրանք հետ շպրտվեցին[5]:

Մեկ այլ զորամաս հուլիսի 1-ին հարձակման անցավ Գորիսի շրջանի Խոզնավար գյուղի վրա, իսկ հուլիսի 2-ին՝ Երիցաթումբի ուղղությամբ: Հայկական ջոկատները, թշնամուն ջարդելով, ստիպեցին նահանջել դեպի ելման դիրքերը[6]:

Չնայած այս ամենին՝ զանգեզուրցիները համոզված էին, որ թշնամին չի խաղաղվելու: Գավառի վրա սպասվում էին նոր լայնածավալ հարձակումներ: Ուստի անհրաժեշտ էր կազմ ու պատրաստ լինել: Թուրքական հարձակումների ակտիվացումը և ազգամիջյան նոր ընդհարումների բորբոքումը գավառի իշխանությունների առջև դրեցին կարևորագույն խնդիրներ՝ բոլոր ուժերը զորահավաքի ենթարկել և բռունցքվել: Այդ նպատակով Զանգեզուր–

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 42, թ. 219:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 169, թ. 57:
[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 208:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 104:
[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 169, թ. 56-ի շրջ.:

Ղարաբաղի շրջանային խորհուրդը, հուլիսի 1-ի նիստում քննության առնելով գավառի պաշտպանությանն ուղղված մի շարք կարևորագույն հարցեր, որոշեց գավառում հաստատել ռազմական դրություն. «Զանգեզուրի* թուրքության կողմից վարվող ագրեսիվ քաղաքականության և հարձակումների առթիվ Շրջանային խորհուրդը հայտարարում է երկրում ընդհանուր զինվորական դրություն:

Զանգեզուրի բոլոր զինվորական ուժերի Գերագույն հրամանատար է նշանակվում սպա Արսենը»[1]:

Հուլիսի 3-ին Արսեն Շահմազյանը տվեց իր առաջին հրամանը. «Ահեղ վտանգի պահին, երբ Ադրբեջանի զորքերը և խանական-բեկական հրոսակախմբերը ձգտում են ավերել ու ոչնչացնել մեր երկրամասը, ես Զանգեզուրի բոլոր զինված ուժերին կոչ եմ անում ազնվությամբ և արիաբար կատարել իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Հունիսի 28-ին Եղվարդի տակ թշնամին արդեն փորձել է քաջակորով Ղափանի որդիների զենքի ուժը»[2]:

Հաջորդ օրը հայտարարվեց 18-25 տարեկան երիտասարդների զորահավաք: Ստեղծվեց մի նոր կադրային գումարտակ, իսկ գոյություն ունեցող վաշտերը համալրվեցին[3]:

Դեռևս մայիսին Շուշի էր եկել ամերիկյան մի առաքելություն, որը, ըստ էության, հնազանդ հետևում էր անգլիացիների վարած քաղաքականությանը:

Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպման ամենապատասխանատու ժամանակաշրջանում՝ հուլիսի 14-ին, Գորիս քաղաք ժամանեց Շուշիի ամերիկյան առաքելության կողմից ուղարկված ամերիկյան մի հանձնախումբ՝ գնդապետ Ժ. Հ. Ֆորդի գլխավորությամբ՝ գավառի բժշկական և սանիտարահիգիենիկ վիճակին ու գաղթականության խնդիրներին ծանոթանալու համար: Առաքելությունը 10 օր մնաց գավառում, բայց, ըստ էության, ոչինչ չարեց: Նրանք հուլիսի 17-ին այցելեցին Տաթևի վանք, հուլիսի 21-ին Ազգային խորհրդի որոշ անդամների ուղեկցությամբ եղան գավառի սահմանամերձ Խոզնավար գյուղում: Գյուղի շրջակայքում շրջելիս նրանք ականատես եղան Ադրբեջանի տարածքից հայկական դիրքերի ուժգին գնդակոծությանը: Հուլիսի 24-ին առաքելության անդամները վերադարձան Շուշի[4]: Զանգեզուրցիները այնպես էլ չհասկացան ամերիկյան առաքելության՝ գավառ գալու նպատակները: Այդ ժամանակ Նախիջևանի գավառում

---

* Նկատի է առնվում Զանգեզուրի նախկին գավառի թուրքական մասը՝ Դոնդարլու կենտրոնով:

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 95, թ. 1:

[2] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 3, գ. 97, թ. 1:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1021, ց. 9, գ. 91, թ. 11:

[4] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 1919, 22 օգոստոսի:

տեղի էին ունենում բախտորոշ իրադարձություններ, որոնք իրենց ծանր հետևանքներով մեծապես դժվարացնելու էին Զանգեզուրի ինքնապաշտպանության գործը:

1919 թ. հուլիսի 17-ին Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունից վարչապետին հղված գրության մեջ արձանագրվում էր. «Ադրբեջանը տենդագին նախապատրաստվում է՝ ամեն միջոցներով իր տիրապետությունը տարածելու Զանգեզուրի և Նախիջևանի գավառների վրա: Ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Նախիջևանում և Զանգեզուրում տեղ են գտել ապստամբական ելույթներ, որոնք օրգանապես կապված են միմյանց հետ, և այդ ամենը կատարվում է՝ նախապես մշակված պլանի համաձայն:

Բնականաբար, այս ամենը ուղղված են Հայաստանի կառավարության դեմ և նպատակ ունեն ուժեղացնելու մահմեդականների տիրապետությունը և դրանով օղակել հայությանը մահմեդականությամբ և կաթվածահար անել կառավարության աշխատանքը»[1]:

Ինչպես նաև վկայություններ կային, որ թուրք-թաթարական քաղաքական կազմակերպությունները իրենց գործակալների միջոցով ձգտում են Հայաստանին սահմանակից մուսուլմանաբնակ մարզերում ուժեղացնել հակահայկական տրամադրությունները, ուստի նրանց մատակարարում են ինչպես դրամական միջոցներ, այնպես էլ զենք և ռազմական այլ պարագաներ: Ոչ միայն ծայրամասերում, այլև Բաքվի բանվորական մահմեդական կազմակերպություններում տարվում էր հակահայկական ուժեղ քարոզ, ինչը հղի էր հայկական ջարդերի վտանգով: Զանգեզուրի և Նախիջևանի վերջին իրադարձությունները մահմեդական տեղական մամուլում լուսաբանվում էին այնպիսի խտացված գույներով, որ բացահայտ թշնամանք էին սերմանում թուրք-թաթարական բնակչության մեջ և նրանց դրդում ընդհարումների:

Հանրահավաքների ժամանակ որոշ գաղտնի գործակալներ կամավորական ջոկատներ կազմավորելու կոչեր էին անում: Վերջիններս պետք է Բաքվից Ղարաբաղով և Զանգեզուրով շարժվեին դեպի Նախիջևան և իրենց ուղին ազատելով հայկական տարրերից՝ Ադրբեջանի տիրապետությունը տարածեին մինչև ռուսական հին սահմաններ՝ Թուրքիայի հետ միանալու համար:

Իր նկրտումների հաջողությունը ապահովելու համար Ադրբեջանն իր ներկայացուցիչներին՝ ռազմական պարագաներով և դրամական միջոցներով, պարբերաբար Վրաստանի վրայով ուղարկում էր Արդահանի շրջան: Միայն Պարսկաստանով Նախիջևանի շրջան էր ուղարկվում 200.000 փամփուշտ, իսկ Սուլթանովի կողմից Նախիջևան՝ 3 մլն նիկոլայևյան ռուբլի:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 10-11:

Վարչապետին ուղղված գրության մեջ նշվում էր, որ ուժեղ քարոզչություն էր իրականացվում նաև սևծովյան շրջանի թուրքական զորքերի շրջանում՝ ադրբեջանական զորքերի կազմում թուրքական սպաներ ներգրավելու նպատակով: Այդ աշխատանքի հետևանքը եղավ թուրքական 15 սպաների ժամանումը Բաքու: Աղդամում կենտրոնացած 600 հոգանոց հեծելազունդը Ադրբեջանի կառավարության հրահանգով պետք է ուղղվեր Զանգեզուր:

Ադրբեջանում ստեղծվել էր կամավորական ջոկատ, որը նախատեսված էր հասցնելու զորամիավորման աստիճանի: Հավաքագրվել էր հրամանատարական կազմ, որի մի մասը թուրք սպաներ էին: Այս ջոկատը պետք է ունենար մյուսներից տարբերվող հատուկ արտահագուստ:

Թեպետ այս ամենն ուղղված էր հայ ժողովրդի և նրա կառավարության դեմ, սակայն այս շարժման բուն նպատակն էր դաշնակիցներին խանգարել երկրամասի խաղաղեցումը հատկապես այն վայրերում, որտեղ կար մահմեդական և քրիստոնյա խառը բնակչություն[1]:

1919 թ. գարնանը անգլիական զորքերը ռազմակալել էին Շարուրն ու Նախիջևանը և մայիսի 19-ին դրանք պաշտոնապես ճանաչել որպես Հայաստանին պատկանող պատմական տարածքներ: Շարուր գավառակից և Նախիջևան գավառից ստեղծվել էր գեներալ-նահանգապետություն, որի գեներալ-նահանգապետն էր գեներալ-մայոր Գրիգոր Հարությունի Շելկովնիկյանը[2]: Հայկական զորքերը զբաղեցրել էին Պարսկաստանի հետ Շարուր–Նախիջևանի սահմանային ուղեկալները, ինչպես նաև զինվորական կայազորներ հաստատել կարևոր բնակավայրերում[3]: Բայց Հայաստանը հազիվ երկու ամիս կարողացավ իր ձեռքում պահել Նախիջևանի գավառը և Շարուրի գավառակը: Տեղի թուրք ազգաբնակչությունը, ղեկավարվելով թուրք սպաների կողմից, 1919 թ. հուլիսի 20-21-ին Նախիջևան քաղաքում, Ջուլֆայում, Շահթախտում, Բաշ-Նորաշենում ապստամբություն բարձրացրին Հայաստանի իշխանության դեմ[4]:

Նախիջևանում գտնվող ամերիկյան փոքրաթիվ զորամասի հրամանատարությունը ապստամբների առաջնորդներ Քերբալայ խանին և Խալիլ բեյին առաջարկեց դադարացնել ռազմական գործողությունները, բայց նրանք կտրականապես մերժեցին: Նույն առաջարկով հանդես եկավ մայիսի սկզբներից Նախիջևանում գտնվող ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչ Էդմոնդ Դևին, որը նույնպես կտրուկ մերժում է ստացավ[5]:

Ընդհարումները տևեցին 10 օր, և թուրքերը, հաջողության հասնելով, դարձան դրության տերը: Հայկական զորքերը, մեծ կորուստներ տալով,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 10-11:

[2] Տե՛ս «Կառավարական լրաբեր», 1918, 4 սեպտեմբերի:

[3] Տե՛ս **Է. Զոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, էջ 215-217:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 42, թ. 230:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 501, թ. 12, նաև՝ ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 104:

ստիպված նահանջեցին Երևանի և Վայոց ձորի ուղղություններով, իսկ սահմանապահների մի մասը կարողացավ անցնել Արաքսը և կենտրոնանալ Թավրիզում: Հաղթանակած թուրքերը սրի քաշեցին հազարավոր նախիջևանահայերի՝ տղամարդ, կին, ծեր ու մանուկ: Օրինակները շատ են՝ մեկը մյուսից սարսռազդու:

Այսպես՝ թշնամին օղակի մեջ էր առել Ջուլֆան: Երեք կողմում թուրք գյուղեր էին, և հայերի համար հեռանալու հնարավորություն չկար: Չորրորդ կողմը Արաքսն էր: Ջուլֆայի վրա հարձակվեցին 300-ից ավելի յայջիցիներ, իսկ ավանի հայ պաշտպաններից զենք վերցնելու ունակ էին միայն 18-ը, քանի որ նոր էին գաղթից վերադարձել, սովից ու տառապանքներից հյուծված էին, անուժ, հետևապես՝ անկարող կռվելու: Մինչ այդ թուրքերը կամրջի մոտ կոտորել էին հայ զինվորներին և մաքսատան ծառայողներին՝ թվով 40 հոգու, բայց ավանի 18 հայ մարտիկները կարողացել էին յայջիցիներին հաղթել և հետ գրավել կամուրջը: Ապա հայերը դիմեցին պարսից խանին, որը Ջուլֆայի հայ բնակիչներին թույլատրեց անցնել Պարսկաստան: Հաջորդ օրը Նեհրամից, Յայջուց և այլ գյուղերից հազարավոր թուրքեր հարձակվեցին Ջուլֆայի վրա: Այնտեղ մնացած հիվանդ երկու կանանց նրանք անմիջապես սպանեցին: Այդպիսով՝ սպանված հայերի թիվը Ջուլֆայում հասավ է 43-ի: Հայկական գյուղերի՝ արդեն խիստ նոսրացած բնակչության մի մասը գաղթեց Սիսիանի, Կապանի և Գորիսի շրջաններ, իսկ մի հատված էլ անցավ Վայոց ձոր[1]:

Օգոստոսի 1-ին ամբողջ Նախիջևանը և Շարուրը գրավված էր թշնամու կողմից:

Ապստամբության ղեկավարները, սակայն, չբավարարվեցին դրանով: Մի կողմից նրանք կապվեցին Կապանի շրջանի Օխչի և Գեղի ձորերի հետ՝ Արցախ թափանցելու համար, մյուս կողմից՝ ծրագրեցին գրավել Վայոց ձորը և այնտեղից հարձակվել Զանգեզուրի վրա:

Հետագա դեպքերը ցույց տվին, թե որքան ժամանակին էր ռազմական դրության հաստատումը գավառում: Օգոստոսի 6-ին Հաջիսամլուի և Մաղավուզի քրդական ուժերը փորձեցին Զանգեզուր մտնել Սիսիանի շրջանի Մուխուրթուրյան հայկական գյուղի ուղղությամբ: Նրանց հաջողվեց մտնել գյուղ: Հանկարծակիի եկած հայերը, վերադասավորելով ուժերը, անցան հակահարձակման: Տալով 20-ից ավելի զոհ՝ թշնամին խուճապահար բռնեց փախուստի ճանապարհը[2]:

Օգոստոսի 7-ին տեղի է ունեցավ նոր ընդհարում Սիսիանի Իշխանասար լեռան փեշերին: Շրջապատման վտանգից խույս տալով՝ ազերիների և

---

[1] Տե՛ս, ֆ. 205, ց. 1, գ. 541, թ. 58-59, տե՛ս նաև **Э. Зограбян**, Шарур-Нахичеван в 1918-1919 гг., Ереван, 2012, стр. 270-271:

[2] Տե՛ս “Борьба” (Тифлис), 26 августа, 1919:

քրդերի ուժերը նահանջեց՝ իրենց հետ տանելով հայերի նախիրը[1]:

Օգոստոսի 11-ին Նախիջևանի ազերիները մեծ ուժերով հարձակում սկսեցին Դարալագյազի Ղուշչիբիլակ, Սիսիանի Նորս գյուղի, ինչպես նաև Մեղրիի ուղղությամբ: Առաջին ուղղությամբ հակառակորդին հաջողվեց գրավել Նորս, Գյոմուր, Գժաձոր, Մազրա գյուղերը, որոնց հայ բնակիչներն ապաստանեցին Սիսիանում և Գողթն գավառում: Մյուս ուղղությունում հայոց ուժերը ըստ արժանվույնս դիմակայեցին հակառակորդին, որը մեծ կորուստներով վերադարձավ ելման դիրքերը[2]:

Օգոստոսի 15-ին Հաջիսամլուի և Մաղավուզի ավազակախմբերը հարձակվեցին Գորիսի շրջանի Խնածախ գյուղի վրա[3]: Նույն օրը հակառակորդն իր հարձակման թիրախը դարձրեց Կապանի Զեյվա և Մողես գյուղերը, բայց այստեղ ևս մատնվեց անհաջողության[4]:

Կռիվների ժամանակ երկու կողմից մասնակցում էր 1500-3000 մարդ[5]:

Չնայած որոշ հաղթանակներին՝ Զանգեզուրի վիճակը առաջվա պես մնում էր ճգնաժամային: Գավառը կարծես հանձնված էր բախտի քմահաճույքին, չուներ հաղորդակցություն հայկական Արցախի հետ, վտանգված էին նաև դեպի Հայաստանի Հանրապետություն տանող ճանապարհները:

1919 թ. օգոստոսի 18-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը Վրաստանում ՀՀ ներկայացուցչին հեռագիր ուղարկեց թշնամու զինուժի կողմից ինը հայկական գյուղերի շրջապատման մասին, որտեղ նշում էր, որ Գողթանի ինը հայկական գյուղեր շրջապատված են հրոսակների կողմից, որոնք թուրքական բանակի մնացուկներ են և ադրբեջանական կանոնավոր բանակի զինվորներ: Նախարարը հաղորդում էր նաև, որ Գողթանի դրությունը ծայրահեղ է, և հարկավոր է անհրաժեշտ և շտապ միջոցներ ձեռնարկել[6]:

Հակառակորդի զինված ուժերի կազմում մեծ ակտիվություն էին հանդես բերում ադրբեջանական բանակում ծառայության անցած ցարական բանակի ռուս բազմաթիվ սպաներ և բարձրաստիճան զինվորականներ, այդ թվում՝ գնդապետներ ու գեներալներ: Օրինակ՝ նրանցից գեներալ-լեյտենանտ Սուլկևիչը, լինելով Ադրբեջանի բանակի շտաբի պետը, քաջ հասկանում էր, որ եթե չհաջողվեր գրավել Զանգեզուրը, ապա հնարավոր չէր լինի հնազանդեցնել Արցախը, ուստի Ադրբեջանի բանակի առաջնահերթ խնդիրը համարում էր Զանգեզուրի նվաճումը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 126-ի շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 352:

[6] Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 42, թ. 230:

Բոլոր առումով Ադրբեջանը առավելություններ ուներ, փաստորեն, բախտի քմահաճույքին թողնված Զանգեզուրի հանդեպ: Գավառը չուներ ոչ մի հաղորդակցություն հայկական Ղարաբաղի հետ. բոլոր ճանապարհները փակ էին և գտնվում էին Խոսրով բեկ Սուլթանովի եղբայր Սուլթան բեկ Սուլթանովի հսկողության տակ:

Թշնամու համար պահը հարմար էր նաև այն տեսանկյունից, որ ամերիկյան դիվանագիտական առաքելությունը Շուշիի ամերիկյան օգնության կոմիտեին հրահանգել էր անհապաղ մեկնել Թիֆլիս, որը և կատարվել էր օգոստոսի 12-ին: Ինչպես վերը նշվել է, Շուշիի անգլիական առաքելությունը հեռացել էր Բաքու ավելի վաղ, և ահա այժմ՝ ամերիկացիների հեռանալուց անմիջապես հետո՝ օգոստոսի 13-ին, այդտեղից հեռացավ նաև անգլիական կայազորը: Զանգեզուրի և Ադրբեջանի սահմանը Զաբուղ գետը ճանաչելուց հետո անգլիական գլխավոր հրամանատարությունը արդեն վերջնականապես լուծված էր համարում Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի ենթակա լինելու հարցը և իր վերջին զինվորը հանում էր այնտեղից:

Նշված երկու հանգամանքները տեղի հայ բնակչությանը դրել էին ծանր դրության մեջ, մանավանդ որ հենց այդ ժամանակ էր, որ Խ. Սուլթանովը հայերի վրա ուժեղացրել էր ճնշումը և փակել բոլոր ճանապարհները: Թեև Արցախի հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը ադրբեջանամետ էր, բայց անգլիական զորքի ներկայությունը երկրամասում, այնուամենայնիվ, որոշ զսպիչ դեր ուներ երկու կողմերի համար: Այս խիստ բարենպաստ պայմաններում Արցախի գրավումը կատարված փաստ համարելով և ստանալով գործողությունների լիակատար ազատություն՝ Խ. Սուլթանովը չէր դադարեցնում իր կանոնավոր զորքերի և անկանոն հրոսակախմբերի հարձակումները Զանգեզուրի վրա:

Բայց արդյոք զանգեզուրցի հայը պատրա՞ստ էր առաջիկայում նույնպիսի ոգևորությամբ ու անձնազոհությամբ պաշտպանելու իր լեռնավայրը, ինչպես մինչ այդ: Իրադրությունը մեծապես փոխվել էր ի վնաս զանգեզուրցու: Նույնն էր վերջինիս բարոյահոգեբանական կերպարը՝ բարձր ու անկոտրում, բայց նվազել էին հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտ միջոցները՝ զենքը և զինամթերքը:

Զենք-զինամթերքի խիստ պակասը Զանգեզուրի ղեկավարությանը ստիպում էր պարբերաբար մերժել Գորիսից զենք ստանալու արցախցիների ակնկալիքը: Հայաստանի Հանրապետությունից օգնություն ստանալու հույսը լիովին կորցրած Արցախի ազգային խորհուրդը հերթական անգամ դիմեց Գորիս՝ Արսեն Շահմազյանին: Վերջինս այդ կապակցությամբ Դրոյին գրում էր. «Սիրելի՛ Դրո, ուղարկում եմ Ղարաբաղից ստացած գրությունները, որից ինքներդ կտեսնեք, թե դրությունը որքան լուրջ է և կրիտիկական: Ուզում են ինձանից օգնություն: Հայտնում եմ, որ մեր դրությունը նույնպես քանի գնում վտանգավոր է. որոշ տեղերում թարաքաման երևացել է, այս մի

շաբաթվա ընթացքում թուրքերի կողմից Սիսիանում, Ղափանում, Խոզնավարում քշել են հայերի տավարը: Փամփուշտ ունեմ 120 հազար՝ երեքգծանու համար … Հրացանի խիստ պակաս ունենք: Այս պայմաններում տեղական ուժերով Ղարաբաղին օգնության գնալ դժվար թե ինձ հաջողվի, նամանավանդ …, որ զինվորները բոլորը տեղացի են, կապված են իրենց հարստության և ընտանիքի հետ: Երկրորդ, այստեղից մի որևէ բան սկսելը կլինի ազդանշան նույնպես և Նախիջևանի շրջանի ու այլ տեղերի համար և անվերջ կռիվների դուռ կբացի: … Աշխատեցե՛ք, քանի ուշ չէ, դրսի միջամտություն կազմակերպել և չպետք է ուշացնել: Եթե Ղարաբաղի խնդիրը դիվանագիտական ճանապարհով չի վճռվելու, այլ կռվով, [այդ դեպքում] անհրաժեշտ է անմիջապես Զանգեզուր մտցնել դրսի ռազմական ուժ, լեռնային թնդանոթներ և փամփուշտներ: Միայն այդ դեպքում, ապահովելով մեզ, կարելի կլինի գնալ օգնության ղարաբաղցիներին»[1]:

Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը և անձամբ Արսեն Շահմազյանը, ելնելով Զանգեզուրի համար ստեղծված ծանրագույն վիճակից, ապրիլ-հուլիս ամիսներին Հայաստանի կառավարությանը բազմիցս խնդրել էին օգնել զենքով, ռազմամթերքով, բայց օգնություն այդպես էլ չէին ստացել[2]:

Իբրև բողոք՝ Ա. Շահմազյանը Հայաստանի կառավարությանը հասկացնել էր տվել, որ նրա անուշադրության ու անտարբերության պայմաններում ինքն այլևս չի կարող շարունակել աշխատանքը և թողնելով Զանգեզուրը՝ կվերադառնա Երևան: Իր այդ մտադրության մասին նա տեղյակ էր պահել նաև Զանգեզուրի խորհրդին:

1919 թ. օգոստոսի 17-ի թվով Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի նախագահ Արշակ Շիրինյանը նամակ հղեց ՀՀ կառավարության նախագահին: Նամակում ասված էր, որ «եթե իրերի դրությունը շարունակվի այնպես, ինչպես մինչև այժմ», ապա հանրապետության Զանգեզուրի ներկայացուցիչ պետական կոմիսար Արսեն Շահմազյանը մոտ մի ամսից հետո մտադիր է վերադառնալ Երևան՝ ժամանակավոր կամ ընդմիշտ՝ «նայած թե կառավարությունը որքան կկարողանա ընդառաջել նրա մի շարք պահանջներին»[3]:

Արշակ Շիրինյանը Հայաստանի վարչապետին հիշեցրեց, որ Զանգեզուրի հայությունը վերջին մեկ ու կես տարում անասելի տառապանքներ է կրել, տեսել է թշնամու չդադարող հարձակումներ, սով, ավեր ու մահ: Նա գավառում ստեղծված իրավիճակը ներկայացրեց չորս հիմնական կետերով:

1. Շեշտելով Զանգեզուրում ռազմամթերքի բացակայության փաստը՝ գրել է. «Մեր դրությունը օր օրի վրա գնալով ավելի վատթարանում է,

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 77:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 76, թ. 239:

[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 66:

որովհետև թեև մեր տակտիկը ինքնապաշտպանողական է եղել, բայց, այնուամենայնիվ, հարկադրված էինք մի շարք կռիվների դիմել, որի ընթացքում շատ ավելի փամփուշտ է մսխված, քան այդ ժամանակամիջոցում մենք ստացել ենք դրսից»: Թվարկելով առավել ուժեղ կռիվները՝ մղված Զանգեզուրի տարբեր վայրերում, նամակագիրը ավելացրել է. «Թեպետ ամենուրեք էլ հաջողությունների ենք հանդիպել, բայց, այնուամենայնիվ, ռազմամթերքի մեծ մինուս ենք ստացել», որը և մնացել է բաց[1]:

2. Թուրքերի և քրդերի հետ զանգեզուրցիների բոլոր ընդհարումները, թերևս բացառությամբ Նորսի, կապված են եղել քոչվորների սար բարձրանալու հետ, որը ցանկացել է օգտագործել Ադրբեջանի իշխանությունը: Նրա համար 200.000-ի չափ քոչվորները մեծ ուժ են: Վերջիններս զանգեզուրցիների դեմ կռվի դաշտ են դուրս բերել 10-15 հազար զինյալներ. «մի հանգամանք, որ մեզ ստիպել է զինված ուժը պարփակել մեր սահմաններում և պատրաստ լինել կռվի բոլոր ճակատներում»:
3. Քոչվորների սար բարձրանալուն զուգընթաց սկսվել են դաշտային աշխատանքները: Որչափ էլ սպառնալից լիներ դրսի վտանգը, և որքան անհրաժեշտ լինեին դրսի գործողությունները, գրել է Ա. Շիրինյանը, այնուամենայնիվ, անկարելի էր անուշադրության մատնել գավառի տնտեսությունը և թույլ չտալ ժողովրդին անգամ անխուսափելի և անհրաժեշտ պատերազմական գործողությունների պատճառով իր տարվա պարենը հայթայթել, մանավանդ այնպիսի մի երկրում, ինչպիսին Զանգեզուրն է, որտեղ ներկա պայմաններում դրսից որևէ կենսամթերք հայթայթել երազել անգամ չէր կարող:
4. Ա. Շիրինյանը այնուհետև վարչապետի ուշադրությունը հրավիրել է Զանգեզուրի վարչական և զինվորական ներքին կազմակերպվածության վրա՝ շեշտելով. «Գավառի իշխանությունը իր բոլոր տեսակի ֆունկցիաներով գրեթե վերջնականապես կազմակերպված է, ուժեղ է ու անարխիայի հետքերն անգամ իսպառ չքացել են գավառում: Զինվորական գործը կանոնավորված է ու այժմ աշխատանք է տարվում ավելի ստվար կադրեր ստեղծելու»[2]:

Խոսելով կատարված դրական զգալի փոփոխությունների մասին՝ Ա. Շիրինյանը ավելացրել է. «Այս բոլոր, անշուշտ, ոչ աննշան, հետևանքներին հասել ենք անպայման պետական կոմիսարի ուժեղ աջակցության շնոր-

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 66:
[2] Նույն տեղում, թ. 66-ի շրջ.:

հիվ, և որը ինչպես հիշեցինք, մի ամսից մտադիր է հեռանալ ժամանակավորապես կամ ընդմիշտ»[1]:

Անդրադառնալով Զանգեզուրի քաղաքական ապագային՝ շրջանային խորհրդի նախագահը վարչապետին տեղեկացրել է, որ գավառը երբեք այնպիսի աննպաստ պայմաններում չի եղել, ինչպես այժմ: Դրա հիմնական պատճառը նա համարել է Նախիջևանը թուրքերի ձեռքն անցնելը, որով «կտրվեց այն կենսական երակը, որը Զանգեզուրին ոգի և շունչ էր ներշնչում»: Այնուհետև խոսելով Ղարաբաղի կարգավիճակի մասին՝ Ա. Շիրինյանը նշել է, որ հայկական այդ երկրամասը Ադրբեջանի ձեռքն անցնելու դեպքում «փշրվելու է այն ռեդուտը, որպեսզի [որպիսին] համարվել է միշտ Ղարաբաղը Զանգեզուրի համար»: Այդ ամենը ցույց է տալիս, որ «այժմ Զանգեզուրը օդից է կախված. նա չի կարող Դարալագյազի կածաններով կենդանի կապ պահպանել հանրապետության հետ ու իրեն վերջինիս մի կենսական մասը համարել»: Ուստի պատահական չէ, ընդգծում էր Ա. Շիրինյանը, որ «այսօր մեր ամբողջ ուշքն ու միտքը դեպի Նախիջևանն է դարձված. պետք է օր առաջ լուծել այդ՝ Հայաստանի Հանրապետության համար Գորդյան հանգույց դարձած հանելուկը, որի համար մենք պատրաստ ենք մեր ամբողջ ուժի թափով ասպարեզ նետվելու, այլապես Հայաստանի Հանրապետության համար ընդմիշտ կորած է Զանգեզուրը, էլ չենք խոսում Ղարաբաղի մասին, եթե այդ բոլոր կորուստներից հետո Հայաստանի Հանրապետությունը դեռ շարունակի գոյություն ունենալ: Նախիջևանի հանգույցը լուծելուց հետո միայն կարելի է լուրջ միջոցներ ձեռնարկել Ղարաբաղի նկատմամբ, թեև այս հանգամանքը չի խանգարում, իհարկե, այժմվանից նեթ այնտեղի համար նախապատրաստական աշխատանքների դիմելու»[2]:

Վերջում կրկին անդրադառնալով Արսեն Շահմազյանի՝ Երևան վերադառնալու մտադրությանը՝ Արշակ Շիրինյանը գրել է. «Հայտնելով այս բոլորի մասին Ձեզ, հարգո՛ նախագահ, խնդրում ենք լիուլի բավարարել պետական կոմիսարի բոլոր պահանջները. անկարելիության դեպքում նշանակել անպայման Ձեր կողմից նրան փոխարինող, այլապես սկսած գործը հսկայական չափերով կտուժի»[3]:

Բարեբախտաբար, Արսեն Շահմազյանը Զանգեզուրից չի հեռացել, քանի որ Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ Ա. Խատիսյանին հղած Արշակ Շիրինյանի օգոստոսի 17-ի նամակից հետո վարչապետը խոստացել էր, որ կառավարությունը շատ շուտով օգնություն է հասցնելու գավառին:

Ավելին՝ այդ օրերին էր, որ 180 հոգուց բաղկացած հեծյալ մի ջոկատի հետ

---

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 66-ի շրջ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, թ. 67:

Գորիս հասավ հայկական բանակի կապիտան*, ծնունդով նախիջևանցի Գարեգին Նժդեհը[1]:

Նժդեհը* (Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյան) ծնվել է 1886 թ. հունվարի 1-ին Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում, քահանայի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա սովորել Կզնութից տասը կիլոմետր արևմուտք գտնվող Հին Նախիջևան քաղաքի ռուսական դպրոցում: Ուսումը շարունակելու ցանկությունը նրան տարել է Թիֆլիս, որտեղ ընդունվել է ռուսական միջնակարգ դպրոցներից մեկը: Ջանասեր և ընթերցասեր պատանին խանդավառվել է հայ ազատագրական շարժման գաղափարներով և, դեռ դպրոցը չավարտած, մտել է ՀՅ դաշնակցության շարքերը:

---

* Կապիտանի կոչումը Նժդեհն ստացել է Զանգեզուր մեկնելու նախօրեին: 1919 թ. մարտ-օգոստոս ամիսներին նա ծառայում էր Գառնիի գումարտակում որպես հրամանատար, և այստեղ էլ օգոստոսի 5-ին նրան տրվել էր այդ կոչումը: Նժդեհի հետ էր նաև բաշգյառնեցի հայտնի խմբապետ Ղազար Քոչարյանը:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 52, **Ա. Սիմոնյան**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, էջ 38: Երկար տարիներ Գարեգին Նժդեհի կյանքն ու գործունեությունը հետազոտել, նրա գիտական ժառանգությունը ուսումնասիրել և նրա մասին արժեքավոր աշխատություններ են հրատարակել Մուշեղ Լալայանը և Ռաֆայել Համբարձումյանը: **Գ. Նժդեհ**, Երկեր, կազմ.՝ Ա. Բաղալյան, Հ. Գևորգյան, Մ. Լալայան և ուրիշներ, Երևան, 2002, *նույնի՝* Ասոյթներ (1910-1955 թթ.) (կազմ. և առաջաբ.՝ Ռ. Համբարձումեան, խմբ.՝ Ռ. Թորոսեան), Երեւան, 2002, *նույնի՝* Գրական երկեր (բանաստեղծություններ, աֆորիզմներ, էպիգրամներ) (կազմ., առաջաբ. և ծանոթագր.՝ Բ. Յովակիմեան, խմբ.՝ Ռ. Համբարձումեան), Երևան, 2003, *նույնի՝* Գրական երկեր (կազմ., առաջաբ. և ծանոթագր.՝ Ռ. Համբարձումեան, խմբ. Վ. Օհանեան), Երևան, 2012: **Մ. Լալայան**, Ցեղակրոնություն (քննական վերլուծություն), Երևան, 1994, *նույնի՝* Տարոնականություն (քննական վերլուծություն), Երևան, 1994, *նույնի՝* Ցեղակրոն և տարոնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունեությունը, Երևան, 2001, *նույնի՝* Գարեգին Նժդեհ (կենսագրական ակնարկ): Ցեղակրոն շարժումը (պատմություն և գաղափարախոսություն), Երևան, 2002, *նույնի՝* Գարեգին Նժդեհ (կենսագրական ակնարկ): Ցեղակրոն շարժումը (պատմություն և գաղափարախոսություն), Երևան, 2006, *նույնի՝* Տարոնական շարժում, Երևան, 2007, *նույնի՝* Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ, Երևան, 2008, *նույնի՝* Ցեղակրոն և տարոնական շարժումները (պատմություն և գաղափարախոսություն), Երևան, 2011: **Ռ. Համբարձումեան**, Վարք Նժդեհի: Ասոյթներ, Երեւան, 2001, *նույնի՝* Գարեգին Նժդեհ: Համառոտ կենսագր., ասոյթներ և կենսատարեգր., Երեւան, 2003, *նույնի՝* Ղարաքիլիսայի համատարած խուճապը յաղթանակի վերածող ոգին, Երեւան, 2005, *նույնի՝* Գարեգին Նժդեհ, կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, Երեւան, 2005, *նույնի՝* Գարեգին Նժդեհ (Համառօտ կենսագրական եւ կենսատարեգրութիւն): Նուիրւում է Գարեգին Նժդեհի ծննդեան 120-ամեակին, Երեւան, 2006, *նույնի՝* Գարեգին Նժդեհ (Համառօտ կենսագրական եւ կենսատարեգրութիւն), Երեւան, 2006, *նույնի՝* Գարեգին Նժդեհ: Ամբողջական կենսագրութիւն, Երեւան, 2007, *նույնի՝* Գարեգին Նժդեհ (Համառօտ վարք, ասոյթներ և կենսատարեգրութիւն), Երեւան, 2008, *նույնի՝* Գարեգին Նժդեհ (Համառօտ վարք, ասոյթներ և կենսատարեգրութիւն), Ստեփանակերտ, 2008, *նույնի՝* Ղարաքիլիսայի ճակատամարտը յաղթանակի վերածող ոգին, Երեւան, 2010, *նույնի՝* Նժդեհ: Հարցուպատասխան, Երեւան, 2012:

* Նժդեհ նշանակում է «պանդուխտ», «օտար երկրում ապրող»:

Ստանալով միջնակարգ կրթություն՝ Գ. Նժդեհը 1902 թ. մեկնել է Պետերբուրգ և ընդունվել տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այստեղ հանդես է բերել բարձր առաջադիմություն, բայց նրան վիճակված չէր ավարտելու համալսարանը: 1904 թ. թողնելով Պետերբուրգը՝ ՀՅԴ մարմինների կարգադրությամբ մեկնել է Սալմաստ (Պարսկաստան), նշանավոր հեղափոխական Սամսոն Թադևոսյանի տրամադրության տակ՝ իբրև կուսակցական քարոզիչ: Այսպիսով՝ Գարեգին Նժդեհը 17 տարեկանից ամբողջովին նվիրվել է ազգային ճնշումից և սոցիալական հարստահարումից իր ժողովրդի ազատագրության գործին:

1906 թ. Գ. Տեր-Հարությունյանն անցել է Բուլղարիա և մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներ Բորիս Սարաֆովի և Դ. Լյապով-Գուրինի միջնորդությամբ ընդունվել է Սոֆիայի՝ Դմիտրի Նիկոլովի անվան սպայական դպրոցը: 1907 թ. առաջին կարգի դիպլոմով ավարտելով դպրոցը՝ Գ. Նժդեհը վերադարձել է Կովկաս, որտեղից Սեբաստացի Մուրադի հայդուկային խմբի հետ մտել է Արևմտահայաստան, հետո՝ անցել Պարսկաստան, որտեղ հեղափոխական շարժում է ծավալվել շահի միահեծան ինքնակալությունը տապալելու, պետական ու հասարակական կարգերը վերափոխելու, երկրում սահմանադրություն և խորհրդարան մտցնելու համար: Պարսկաստանի հայերը նույնպես իրենց հեղափոխական կազմակերպությունների՝ ՀՅ դաշնակցության և Ս. Դ. հնչակյան կուսակցության տեղի մասնաճյուղերի ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն էին ունենում սահմանադրական շարժմանը, իսկ նրանցից ոմանք (Եփրեմ Դավթյան և ուրիշները) ղեկավար դեր էին խաղում այդ շարժման մեջ: Գ. Նժդեհը սահմանադրականների շարքերում էր՝ կռիվների ամենավտանգավոր տեղերում: 1909-ին նա վերադարձել է Կովկաս՝ զենք ու ռազմամթերք հայթայթելու և Թավրիզ առաքելու համար: 1909 թ. մայիսին Արաքսն անցնելով՝ նա ձերբակալվել է Ջուլֆայի մոտ, տարվել Հին Նախիջևան և նետվել տեղի բանտը: Այստեղ մի քանի ամիս մնալուց հետո տեղափոխվել է Երևանի բանտ:

Երեք տարի անցկացնելով բանտերում՝ Նժդեհը 1911 թ. ազատ է արձակվել և ցարական իշխանությունների կողմից ՀՅ դաշնակցության դեմ կազմակերպված դատավարությունից խուսափելով՝ նորից մեկնել է Բուլղարիա, որտեղ ծառայության է անցել բուլղարական բանակում իբրև սպա:

1912 թ. աշնանը բալկանյան քրիստոնյա չորս պետություններ՝ Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը և Չեռնոգորիան, պատերազմ են հայտարարել Թուրքիային՝ Բալկաններից նրան դուրս մղելու համար: Բալկանյան այդ առաջին պատերազմին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև հայ կամավորներից կազմված վաշտը, որի հրամանատարներն էին Նժդեհը և Անդրանիկը:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին ցարական կառավարությունը ներում է շնորհել ՀՅ դաշնակցության գործով մեղադրվածներին, այդ

թվում՝ Գարեգին Նժդեհին, պայմանով, որ նա մասնակցի Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին: Վերադառնալով Կովկաս՝ նա ստանձնել է Հայկական կամավորական 2-րդ գումարտակի (գնդի) փոխհրամանատարությունը և մասնակցել կռիվներին, իսկ պատերազմի երկրորդ տարում ղեկավարել է հայ-եզդիական մի առանձին զորամաս:

1917 թ. սակավաթիվ ուժերով Նժդեհը օգնության է գնացել պաշարված Կողբին և փրկել այդ շրջանի հայությանը: Հայաստանի անկախության նախօրյակին նա վարել է Ալաջայի կռիվները, դրանով իսկ Էրզրում–Սարիղամիշ–Ղարսից նահանջող հայկական զորամասերին հնարավորություն է ընձեռել անցնելու Ալեքսանդրապոլ: Նա Արփաչայի մյուս ափն է նահանջել բոլորից հետո՝ կարողանալով իր մարդկանց միջոցով Անիից փոխադրել պրոֆեսոր Մառի պեղումներով հայտնաբերված արժեքավոր հնությունները:

1918 թ. մայիսի վերջին Նժդեհն իր զորամասով հերոսաբար կռվել է Ղարաքիլիսայի ճակատամարտում և վիրավորվել:

Ղարաքիլիսայի կռիվների նախօրեին, երբ հայկական բանակի բարձր հրամանատարությունը մատնվել էր անորոշ վիճակի, իսկ զորամասերը՝ խուճապի, երբ շատերը բռնել էին Դիլիջան–Թիֆլիս ճանապարհը, հրազենից վերք ստացած Նժդեհն իր կրակոտ ճառերով ոգևորում էր լքված զորամասերին: Միաժամանակ, հեծելազոր հարյուրակի գլուխն անցած, հետախուզություն է կատարել և պարզել, որ թշնամին չի մտել Դիլիջան. այդ լուրը տարածել էին խուճապ ստեղծելու համար: Զորամասերն ամրացրել են դիրքերը և պատրաստվել պաշտպանության: Հատկապես ամրացվել է Մայմեխ լեռնաշղթան: Կացությունը փրկվել է:

Հայաստանի անկախության օրերին հմուտ զինվորական Նժդեհն իր զորամասով մղել է մի շարք կռիվներ և ամեն անգամ պատվով կատարել հրամանատարության առաջադրանքը, որի համար կառավարության կողմից պարգևատրվել է քաջության համար բարձրագույն շքանշանով: 1919 թ. աշնան սկզբին նա իր զորամասով փրկել է Դավալուի և Վեդիի միջև պաշարման մեջ ընկած հայկական 2-րդ գունդը[1]:

Այդ նույն ժամանակ Գողթանի հայության մնացած հատվածը չափազանց ծանր օրեր էր ապրում: 1919 թ. օգոստոսի 18-ին Երևանի կառավարությանն ուղղված իր գրության մեջ Գողթանի կառավարիչ Աշոտ Մելիք-Մուսյանն այսպես էր նկարագրում Գողթանի և Զանգեզուրի դրությունը. «Կռիվը Գողթանում սկսվել է հունիսի 25-ից: Հայկական գյուղեր Աղան, Դերը, Շուռութը, Փառականը, Գյալը և մոտ 500 հոգի ղազանչիցիներ թուրքերի ճնշման տակ անցել են Գողթանի լեռնային մասը: Մենք ավերել ենք

[1] Տե՛ս **Մ. Լալայան**, Գարեգին Նժդեհ (կյանքը և գործունեությունը), էջ 138-142:

թուրքական Բիլան և Բեյուք գյուղերը: Տասնօրյա կռիվներից հետո մեծ կորուստներով օգոստոսի 6-ին ընկավ Տանակերտը: Ագուլիսցիների հետ կապը խզված է: Տեղեկությունների համաձայն՝ նրանք հանձնվել են թուրքերին՝ վար դնելով զենքերը: Ամենաստույգ տեղեկություններ ունենք, թե թուրքերը վճռել են ամեն գնով ոչնչացնել Գողթանը և կապվել Գենվազի հետ: Գենվազում դրությունը աննկարագրելիորեն սպառնական է: Սովը, ռազմամթերքը և արտաքին աշխարհի հետ հաղորդակցության չգոյությունը դրել են մեզ անել կացության մեջ: Փրկություն փնտրել գաղթելու մեջ անհնար է, որովհետև ճանապարհները գտնվում են թուրքերի ձեռքին: Անհամբեր սպասում ենք այս գրության Ձեր պատասխանին: Մեր օրերը համրված են, դիմադրել 10-15 օր այլևս անհնար է: Տվե՛ք մեզ ցուցմունքներ և փութացե՛ք փրկելու Գողթանը»[1]:

Մելիք-Մուսյանի նամակի հետ գրեթե միաժամանակ Երևան է հասել Գողթանի հայկական միլիցիայի պետ Մովսես Գյուլնազարյանը՝ օգնության գործը արագացնելու առաքելությամբ:

ՀՀ կառավարությունը, զբաղված լինելով Վեդիբասարի և Շարուրի անհաջող կռիվներով, այս անգամ էլ դժվարացել է կանոնավոր զորամասեր ուղարկել Գողթան:

Գարեգին Նժդեհը ակնդետ հետևում էր իր հայրենի Նախիջևանի Գողթան գավառակի դեպքերին: Վեդիբասարի մոտ մղած հաղթական կռիվներից հետո վերադառնալով Երևան՝ նա դիմել է հանրապետության զինված ուժերի հրամանատար Ի. Վ. Հախվերդովին*՝ խնդրելով իրեն ուղարկել Գողթան՝ Էդիֆ բեյի զորքերի կողմից պաշարված, սովի ու ոչնչացման վտանգի ենթարկված հայ բնակչությանն օգնություն ցույց տալու համար: Նժդեհին Գողթան ուղարկելու առաջարկությամբ զորավարին է դիմել նաև ՀՅ դաշնակցության բյուրոն: Ի վերջո Հախվերդովը տվել իր համաձայնությունը, և Նժդեհը մեկնել է Զանգեզուր՝ այնտեղից Գողթան անցնելու համար:

Ճանապարհին Նժդեհն իր մի քանի հեծյալ զինվորների հետ կանգ է առել Սիսիանում: Այստեղ ինքնապաշտպանական զորամասի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանի և շրջանային կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանի հետ հանդիպում ունենալուց հետո նա շարունակել է ճանապարհը, հասել Զանգեզուրի կենտրոն՝ Գորիս քաղաք:

Պետական կոմիսար Արսեն Շահմազյանի և Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի նախագահ Արշակ Շիրինյանի հետ հանդիպումից հետո փոխվել է Գարեգին Նժդեհի նախնական ծրագիրը: Գ. Նժդեհի հետ զրույցից հետո Ա. Շահմազյանն ու Ա. Շիրինյանը համոզվել են, որ, հանձին հայկական բանակի 33-ամյա կապիտանի, իրենք գործ ունեն արտակարգ

---

[1] **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 8:

* Իվան Վասիլի Հախվերդով, նույն ինքը՝ Հովհաննես Բարսեղի Հախվերդյան:

խելքի և ռազմական մեծ տաղանդով օժտված մարդու հետ: Ուստի, հաշվի առնելով, որ, 1919 թ. հունվարից սկսած, շուրջ 9 ամիս Կապանը և Գենվազը (Մեղրի, Արևիք) չունեն դրսի հարձակումներից իրենց պաշտպանությունը կազմակերպող ընդհանուր հրամանատար, Ա. Շահմազյանը և Ա. Շիրինյանը Նժդեհին առաջարկել են Գողթանի հետ ստանձնել նաև այդ երկու շրջանների պաշտպանության կազմակերպման գործը: Նժդեհը գոհ էր առաջարկից, քանի որ ստացել էր անձամբ որոշումներ ընդունելու և ինքնուրույնաբար գործելու, իր հմտություններն ու ընդունակությունները, իր մտավոր ու ֆիզիկական ողջ կարողությունը ոչ միայն Գողթանին, այլև Զանգեզուրին ծառայեցնելու հնարավորություն: Նա տվել է իր համաձայնությունը, և Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը, քննելով հարցը, Գարեգին Տեր-Հարությունյան – Նժդեհին նշանակել է Կապանի, Արևիքի (Գենվազ, Մեղրի), Գողթանի կամ կրճատ՝ Կապարգողթի* հայկական զինված ուժերի և Սյունյաց երկրի հարավարևելյան ռազմաճակատի հրամանատար[1]:

Նժդեհը մեկնեց Կապան: Նա գնում էր ստանձնելու Կապարգողթի 60 հազար հայության ճակատագրի պատասխանատվությունը, գնում էր սկսելու մեծ գործը և կերտելու իր անմար փառքը:

«Իմ հավատքի և պաշտամունքի տաճարում,– գրել է նա,– միշտ էլ առաջին տեղերը հատկացուցած են եղել Աստծո և Հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրավոր սրբազնագույնն ինձ համար: Շնչել, ապրել եմ նրանով՝ միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու և մեռնելու նրա համար: Դա է եղել իմ սրբազան ցավը, կարոտը, ուրախությունը, իմ գոյության իմաստը, իմ անմահությունը, իմ գերագույն իրավունքն ու պարտականությունը»[2]:

Այդ հզոր անհատականության մոտ իր հայրենիքի նկատմամբ տածած սերը հասել էր գերաստիճանի՝ հայրենապաշտության: Մեծատաղանդ գրող Համաստեղը (Համբարձում Կելենյան) Նժդեհի հայրենասիրության մասին գրել է. «Հայաստանն ու հայ ժողովուրդն էին անոր հաւատքը, որ մինչեւ բնազանցութիւն տարած էր, իր ուժով եւ նոր գծերով: Հայրենասիրութեան մէջ իր ուժն ունէր, տեսակ մը **պառնասական**: Այնպէս կը խօսէր, որ կարծէս գտած էր հայ ժողովրդի գոյութեան նախնական **կաւը** – այդ կաւը **ցեղն** էր եւ ցեղի փիլիսոփայութիւնը: Մոլեգնորեն կը հավատար, որ հայ ժողովուրդը պահողը այդ էութիւնն է»[3]:

---

* «Կապարգողթ» բառը բաղկացած է Կապան+Արևիք+Գողթան բառերի Կապ+Ար+Գողթ առաջին մասերից:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 52-53:

[2] Նույն տեղում, գ. 476, թ. 16:

[3] «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 433:

ՂԱՐԱԲԱՂԻ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ԱՆՑՆԵԼԸ: ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ՄԻԱՅՆԱԿ՝ ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻՆ ԴԵՄ ՀԱՆԴԻՄԱՆ

Նախիջևանի կորուստը մեծապես վտանգել էր Զանգեզուրի հայության ինքնապաշտպանության գործը, բայց գավառի վիճակն ավելի բարդացավ, երբ հայկական Ղարաբաղը նույնպես ստիպված էր տեղի տալ և առերևույթ ընդունել Ադրբեջանի իշխանությունը:

Հիմա արդեն, երբ Շուշին գրավված էր, և մուսավաթական հրոսակախմբերը կարևոր դիրքեր էին ստեղծել հայկական Ղարաբաղի շուրջը, Խ. Սուլթանովը դիմեց ավելի արմատական քայլերի:

1919 թ. օգոստոսի 12-ին Շոշ գյուղում գումարվեց արցախահայերի 7-րդ համագումարը: Պատգամավորները հենց սկզբից ժխտողական դիրք գրավեցին Բաքվում Խ. Սուլթանովի հետ ղարաբաղցի պատվիրակների հանդիպման պայմանավորվածությունների նկատմամբ: Դրան ի պատասխան՝ Խ. Սուլթանովը համագումարին ներկայացրեց մի վերջնագիր՝ պահանջելով 48 ժամվա ընթացքում ընդունել Բաքվում ձեռք բերած համաձայնությունը՝ հակառակ դեպքում սպառնալով Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկեցնել զենքի ուժով: Միաժամանակ նրա հրամանով փակվեց Եվլախ–Շուշի ճանապարհը[1]:

Անդրանիկի՝ Զանգեզուրից հեռանալը թեև արցախցիները ծանր էին տարել, բայց տեղի Ազգային խորհուրդը շարունակել էր ակտիվ գործունեություն՝ հենվելով հայ գյուղացիության ուժի վրա: Թե՛ թուրքերի օրոք, թե՛ հետո Արցախի հայ ղեկավարությունը, առանց միջոցների, առանց դրսի օգնության, իր վարած զգույշ ու հաստատուն քաղաքականությամբ, կարողացել էր երկրամասի հայությանը հեռու պահել կոտորածներից և ավերից: Զգտելով Արցախը միացնել Հայաստանի Հանրապետությանը՝ Ազգային խորհուրդը խուսափեց ազգամիջյան ընդհարումներից և խոհեմությամբ կարողացավ պահպանել հայ բնակչության ֆիզիկական գոյությունը:

Այժմ ևս, հաշվի առնելով ստեղծված ծայրահեղ վտանգավոր կացությունը, համագումարը օգոստոսի 15-ին խոհեմություն համարեց հայտարարելու, թե պատրաստ է զիջումների դիմելու[2]: Նման եզրահանգման պատ-

---

[1] Տե՛ս “Слово”, 28 августа, 1919:

[2] Տե՛ս **Միգմա**, Կովկասեան կոնֆեդերացիա, էջ 198, «Նոր աշխատավոր», 1919, 7 և 16 սեպտեմբերի, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2010, էջ 258:

ճառներից մեկն այն էր, որ բրիտանական առաքելությունը Շուշիից հեռանալիս տեղի հայ ղեկավարությանը խոստացել էր Բաքվում քայլեր ձեռնարկել, որ ադրբեջանական կառավարությունը դադարեցնի հարձակումները Արցախի վրա: Թերևս Բաքվում նրանց միջամտության շնորհիվ էլ կառավարությունը պարտավորվել էր այլևս ոչ մի զորամաս չուղարկել հայկական գյուղերը, չզինաթափել հայերին[1]:

Հաջորդ օրը համագումարում ընտրվեց 16 հոգուց բաղկացած մի պատվիրակություն, որը, գալով Շուշի, օգոստոսի 22-ին գնաց գեներալ-նահանգապետ Խ. Սուլթանովի մոտ և ստիպված ստորագրեց 26 կետից կազմված մի համաձայնագիր: Փաստաթղթում ասվում էր, որ Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցը լուծվելու է Փարիզի հաշտության վեհաժողովում, հետևապես «ամեն մի ընդհարում վնասակար է Ղարաբաղի ազգաբնակչության համար»: Ուստի հետագա բարդություններից խուսափելու համար կողմերն ընդունեցին «սույն ժամանակավոր համաձայնությունը», մինչև որ հարցը վճռվի Փարիզում: «Նման լուծումը հավասարապես պարտադիր է երկու կողմերի համար էլ»[2],– ասված էր փաստաթղթում:

Համաձայնագրի պայմանների համաձայն՝ Ղարաբաղը կառավարվելու էր մահմեդական գեներալ-նահանգապետի միջոցով, որն ունենալու էր մեկ հայ օգնական, բացի այդ՝ նահանգապետին կից գործելու էր 6 հոգուց բաղկացած մի խորհուրդ, որի անդամներից 3-ը հայեր էին լինելու[3]:

Ըստ համաձայնագրի՝ երկրամասում ազատորեն գործելու էր Արցախի հայոց ազգային խորհուրդը: Միայն նրա համաձայնությամբ երկրամասում կարող էին տեղաշարժվել զորամասերը: Քաղաքական համոզմունքների համար այլևս ոչ ոք չպետք է ենթարկվեր հետապնդման: Բնակչությանը տրվում էր խոսքի ու մամուլի ազատություն, միություններ կազմելու իրավունք, կուլտուր-կրթական մարմինները գործելու էին անարգել, բոլոր բնակիչները, առանց ազգի ու կրոնի խտրության, ենթակա էին զինաթափման և այլն: Բայց համաձայնագրի մեխը, այնուամենայնիվ, երկրորդ կետն էր, որով հայտարարվում էր, թե Ղարաբաղ, Շուշի, Զևանշիր և Զաբրայիլ գավառների՝ հայերով բնակեցված լեռնային մասը (Դիզակ, Վարանդա, Խաչեն, Զրաբերդ) ժամանակավորապես իրեն համարում էր Ադրբեջանի Հանրապետության սահմաններում[4]:

Այսպիսով՝ օգոստոսի 22-ի համաձայնագիրը հայերն ընդունեցին մի պայմանով, որ Ադրբեջանը այսուհետ չէր միջամտելու Լեռնային Ղարաբաղի ներքին գործերին:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50[1], թ. 164-170, 196-198:

[2] **Գ. Լազեան**, նշվ. աշխ., էջ 135-136:

[3] Տե՛ս "Слово", 28 августа, 1919:

[4] Տե՛ս նույն տեղում, ինչպես նաև **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 250-251, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 322-323:

Խ. Սուլթանովը հպարտ էր, որ կարողացել էր արցախահայության 7-րդ համագումարում ընդունել տալ, իր խոսքերով ասած, «պատմական որոշումը»:

«Նրանք, որ երազում են Ղարաբաղի հայկական լեռնային մասը բաժանել նրա մահմեդական մասից,– ասում էր նա,– կարող են համարվել կա՛մ ցնորամիտներ, և կա՛մ իրենց ժողովրդի թշնամիներ: Ղարաբաղի դաշտավայրից պոկված՝ լեռնամասի ազգաբնակչությունը սովից կկոտորվի. դաշտավայրի բնակչությունն էլ առանց լեռների կկործանվի թե՛ տնտեսապես (անասնաբուծություն) և թե՛ ֆիզիկապես (մալարիա): Իսկ թե մի անգամ ընդունենք իբրև անժխտելի ճշմարտություն, որ Ղարաբաղը տնտեսապես և քաղաքականապես անբաժան է, հեշտ կլինի լուծել այն հարցը, թե ո՞ր պետությանն է պատկանելու նա: Եվլախից սկսած մահմեդական հոծ բնակչության շրջանն է տարածված: Մոտենալով լեռան ստորոտին՝ տեսնում ենք հայ-մահմեդական խառը բնակչության շրջան: Բարձրանալով լեռները՝ գտնում ենք համարյա ***բացառապես հայ*** ազգաբնակչություն: Այդ վերջին շրջանի հետևները դարձյալ մահմեդական շրջաններ են՝ Զանգեզուրը և ավելի հեռուն՝ Նախիջևանը, որից հետո սկսվում է Հայաստանի հողը: Այսպիսով, հայկական շրջանը ***շրջապատված է*** մահմեդական շրջաններով: Բացի այդ՝ պետք է նկատել, որ ձմեռվա երեք ամիսների ընթացքում ճանապարհը Նախիջևանից Զանգեզուր, ուրեմն և Հայաստանից Զանգեզուր, բոլորովին կտրվում է:

Այսպիսով, Ղարաբաղը, իբրև տնտեսական մի ամբողջություն, ճնշիչ մեծամասնությամբ բաղկանալով մահմեդական ազգաբնակչությունից և հայկական շրջանը լինելով շրջապատված մահմեդական շրջաններով, իր ոչ մի մասով կապ չունի Հայաստանի հետ և ֆիզիկապես հնարավորություն չունի հարաբերություն պահելու նրա հետ: Մյուս կողմից՝ Ղարաբաղը գտնվում է տնտեսական և, այսպես ասենք, բնախոսական սերտ կապակցության մեջ Ազրբեջանի հետ, և միացումը այս վերջինի հետ պահանջում են Ղարաբաղում ապրող երկու ազգությունների շահերը»[1]:

1919 թ. օգոստոսի վերջին ՀՀ-ն հուշագիր հղեց Փարիզի խաղաղության համաժողովին Արցախի և Զանգեզուրի բնակչության իրավունքների պաշտպանության մասին: Հուշագրում նշված էր. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մտահոգվելով թուրքական կոտորածներից միակ փրկված Զանգեզուրի և Ղարաբաղի բնակչության և Կովկասում խաղաղության հաստատման մասին, անհրաժեշտ է համարում կրկին խնդրել Խաղաղության կոնֆերանսին վերը նշված հինավուրց հայկական և ներկայումս հայերով բնակեցված մարզերը անհապաղ կերպով հանրապետությանը միացնելու համար:

---

[1] «Վերածնված Հայաստան», հ. 4, 1990, էջ 56:

Կառավարությունը շարունակում է Ղարաբաղը և Զանգեզուրը համարել ՀՀ անբաժանելի մասը, և դա Հայաստանի կառավարության հաստատուն կարծիքն է և չի կարող որևէ հաշտությամբ փոխվել, ինչը տեղի է ունեցել օգոստոսի 22-ին Հայաստանի կառավարության և Ադրբեջանի Հանրապետության միջև կնքված հաշտությամբ»[1]:

Մինչդեռ, «երբ … Ղարաբաղի հայերի ազգային համագումարը ստիպված եղաւ ժամանակաւոր ու պայմանական կերպով ճանաչել ազրբէջանեան իշխանութիւնը, «Մուսաւաթ»ի պարագլուխ Ռասուլ Զադէն թուրքերէն «Ազրբէջան» թերթում (28 օգոստոս) ահա ինչպիսի ցնծագին յօդուած գրեց, որով ողջունում էր Ղարաբաղի ու Նախիջեւանի գրաւումը եւ յոյս էր յայտնում Զանգեզուրն էլ շուտով կցած տեսնել Ազրբէջանին»[2]:

Մ. Ռասուլզադեն գրում էր. «Ղարաբաղը՝ մեր հայրենիքի այդ սիրուն վայրը, ազատվեց մեր համառ դրացիների ոտնձգություններից, որոնք ջլատում էին մեր տնտեսական կյանքը և մեր ջրերի վերին հոսանքը բռնելով՝ ուզում էին մեզ նեղ դրության մատնել: Առանց տեղի տալով ավելորդ արյունահեղության՝ հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը և ընդունեց Ազրբեջանի գերիշխանությունը:

Նախիջևանը, որ իր բնական պայմաններով իսկապես «Նախշը-Զիհան» (աշխարհի զարդանկար) է և անբաժան մասն է Ազրբեջանի, շնորհիվ իր հերոս ու անձնվեր զավակների հայրենասիրության, օգտվեց ապստամբելու իրավունքից՝ միանալու համար հայրենիքին, որից բաժանվել էր խաբվելով: Նախիջևանը իր սահմանից դուրս շպրտեց բռնագրավող Հայաստանի բանակը:

Գալով Զանգեզուրին, որ ցավ է դարձել մեզ համար և մեջտեղը կանգնած է՝ սպառնալով մեր նպատակներին, կարող ենք հույս ունենալ, որ նա էլ մոտ ժամանակում կդրվի անվնաս դրության մեջ, և որ Աստարա գետից և Սամուրի կամրջից սկսած մինչև Արաքս գետն ու Ջուլֆայի կամուրջը կբացվի անարգել մի ճամփա: Այդ նշանակում է, որ այս կերպով Ազրբեջանի հողային պահանջների կարևոր մասը լուծում է ստացել»[3]:

Եվ իրոք, Ղարաբաղի հարցը «լուծելուց» հետո Ադրբեջանը սկսեց տենդագին պատրաստություններ տեսնել Զանգեզուրը ևս «զենքի ուժով իր իշխանությանը ենթարկելու համար»[4]:

Երբ բրիտանական հրամանատարությունն իր բոլոր ներկայացուցիչներին արդեն հետ էր կանչել Արցախից, մուսավաթական կառավարությունը դրժեց այնտեղ զորքեր չմտցնելու մասին անգլիացիներին տված խոստումը և

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 244-245:

[2] **Սիգմա**, Կովկասեան կոնֆեդերացիա, էջ 198, **Ռ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 205:

[3] "Азербайджан", 28 августа, 1919, տե՛ս նաև **Սիգմա**, Կովկասեան կոնֆեդերացիա, էջ 198:

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 135:

զորամասեր ուղարկեց Ասկերան, Խանքենդ, Շուշի և Զաբուղ[1]:

Ոգեշնչված Զանգեզուրի մատույցներում մուսավաթական զորքերի կուտակումներով՝ գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը դիմեց Զանգեզուրի իշխանություններին և բնակչությանը՝ կոչ անելով հետևել արցախահայերի օրինակին, որոնք 7-րդ համագումարում որոշել են միանալ Ադրբեջանին:

Թե՛ Հայաստանում, թե՛ Զանգեզուրում գիտակցում էին, որ գավառի սահմաններում մուսավաթական զորքերի տեղաշարժերն ու կուտակումները, Սուլթանովի կոչերն ու հորդորները աննպատակ չէին[2]:

Ահա թե ինչու լեռնավայրի պաշտպանությունը ուժեղացնելու համար Հայաստանի կառավարությունը վերջապես սկսեց գործնական աջակցություն ցույց տալ Զանգեզուրին: Նախարարների խորհուրդը 1919 թ. սեպտեմբերի 3-ին որոշում ընդունեց և Գորիս ուղարկեց 9-րդ լեռնային մարտկոցը: Տեղ հասնելուն պես մարտկոցի հրանոթները տեղաբաշխվեցին համապատասխան վայրերում: Այդ քայլին հետևեցին կառավարության ուրիշ կարևոր միջոցառումներ ևս. Նոր Բայազետի և Քեշիշքենդի վրայով Զանգեզուր ուղարկվեցին հետևակային հատուկ գումարտակ և կամավորական առանձին հեծյալ դիվիզիա: Գավառ եկավ նաև առանձին էքսպեդիցիոն հեծյալ ջոկատը՝ Դրաստամատ Կանայանի հրամանատարությամբ:

Հետախուզության միջոցով տեղեկանալով Հայաստանի կառավարության քայլերին՝ Ադրբեջանի կառավարությունը Զանգեզուրի և Արցախի սահմանամերձ շրջաններ ուղարկեց նոր զորամասեր, ինչպես նաև խոշոր միջոցներ հատկացրեց այդ շրջանների թուրք և քուրդ երիտասարդներից նոր ստորաբաժանումներ ստեղծելու համար:

Ադրբեջանական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Վ. Սուլկևիչը Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովին սեպտեմբերի 7-ին գրած գաղտնի գրության մեջ նշում էր. «Ղարաբաղի հարցի խաղաղ լուծումը մեզ ստիպում է մտածել, որ Զանգեզուրի գավառի միացումը (Ադրբեջանին: – *Ա. Ս.)* տեղի կունենա առանց զինված պայքարի, քանի որ նրա հայկական բնակչությունը, նախիջևանյան ջախջախիչ գործոդությունից հետո, ընկել է երկու կրակի արանքը և հազիվ թե համարձակվի հակահարված տալ (ադրբեջանական զորքերին: – *Ա. Ս.)*՝ չունենալով նախկին աջակցությունը թիկունքից» (Արցախից: – *Ա. Ս.)*[3]:

Գեներալն առաջարկում էր Զանգեզուրը գրավելու նպատակով առավելագույնս օգտագործել քրդերի ուժը՝ սուլթան Աբդուլ Համիդի ստեղծած

---

[1] Տե՛ս **В. Худадов**, Современный Азербайджан, с. 186:

[2] Տե՛ս «Յառաջ», 14, 15 հոկտեմբերի 1919 թ., թիվ 19, 20, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 291-295:

[3] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 41:

քրդական համիդիեների նմանությամբ կազմակերպելով հեծյալ և հետևակ զինվորական մասեր[1]: Նա խորհուրդ էր տալիս առաջին փուլում ձևավորել հեծյալ զունդ և հրաձգային գումարտակ, իսկ ռազմական գործողությունների ժամանակ քրդական այդպիսի գումարտակների թիվը հասցնել 4-ի[2]: «Համիդիեների արդյունավետությունը ստուգված է վերջին պատերազմի թուրքական* փորձով»[3],– գրում էր Վ. Սուլկևիչը:

Չնայած Զանգեզուրը զավթելու բոլոր ջանքերին՝ թշնամուն վիճակված չէր հասնելու իր նպատակին: Համառ ջանքերով գավառի հայությունը իր լեռնավայրը դարձրել էր անառիկ մի ամրոց: Շատ շուտով զանգեզուրցիները Ադրբեջանի բանակին և թուրք-քրդական հրոսակախմբերին հասցնելու էին կործանիչ հարվածներ և իրենց անօրինակ մարտական սխրագործություն-ներով բազում էջեր էին գրելու հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական տարեգրության մեջ:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 41:

[2] Տե՛ս նույն տեղում:

* Խոսքը օսմանյան թուրքերի փորձի մասին է:

[3] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 41-ի շրջ.:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀՈԳՍԵՐԸ: ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ

1919 թ. օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսները Գարեգին Նժդեհը անվանել է կրավորական ժամանակաշրջան: «Կրավորական» ասելով՝ Նժդեհը նկատի չուներ անտարբերություն կամ թուլակամություն: Ընդհակառակը՝ դա անքուն գիշերների, գերլարված աշխատանքի ժամանակաշրջան էր: Զանգեզուրը տենդագին ամրապնդում էր իր պաշտպանությունը:

Սեպտեմբեր ամիսը նշանավորվեց նաև նրանով, որ Զանգեզուրի քաղաքացիական հասարակական-քաղաքական կյանքի հետ միաձուլվելու ուղղությամբ Հայաստանի կառավարությունը առաջին որոշակի քայլերն արեց:

Այսպես՝ ՀՀ նախարարների խորհուրդը 1919 թ. սեպտեմբերի 15-ին որոշում ընդունեց, որում նշված էր՝ քանի որ Զանգեզուրը գտնվում է հանրապետության սահմաններում, ուստի անհրաժեշտ է նրա փոստային-դրամական բոլոր փոխադրությունները վճարել Երևանում և հանրապետության մյուս վայրերում: Որոշման համաձայն՝ Գորիսում փոստ-հեռագրատունը քաղաքացիներից պետք է ընդուներ փոխանցվելիք դրամը, այն մտցներ գանձարան՝ կառավարության դեպոզիտ (ավանդ), ապա այդ մասին իրազեկեր հանրապետության համապատասխան փոստ-հեռագրատանը, որն էլ գումարը կվճարեր հասցեատիրոջը: Նման ձևով էր իրականացվելու նաև հանրապետության այլևայլ վայրերից Զանգեզուր դրամական փոխադրություններ կատարելը[1]:

Նախարարների խորհրդի այդ որոշումից հետո ներքին գործերի նախարարը սեպտեմբերի 20-ին և 21-ին համապատասխան կարգադրություններ արեց Երևանի փոստ-հեռագրական բաժնի կառավարչին՝ հանձնարարելով հետևել որոշման կատարմանը[2]: Պատասխան գրությամբ վերջինս ներկայացրեց այն դժվարությունները, որոնք կային Զանգեզուրի հետ փոստ-հեռագրական կանոնավոր կապ ապահովելու և ֆինանսական գործարքներ իրականացնելու գործում: Միաժամանակ բաժնի կառավարիչը նախարարին հավաստիացնում էր, որ ամեն ինչ կարվի կառավարության որոշումն անթերի կատարելու համար[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 76:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 74, 76:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 75:

Երևանից Զանգեզուրին հասցրած օգնությունն անմիջապես իրեն զգացնել տվեց գավառի վրա թուրքերի հարձակումների ժամանակ՝ 1919 թ. սեպտեմբերի կեսերին:

Բաքվում ծրագրել էին արևելքից հասցրած ուժգին հարվածներով գրավել Զանգեզուրը: Հարվածի հիմնական ուղղությունը ընտրվել էր Կապանի շրջանը: Հաջողության դեպքում մուսավաթականները հնարավորություն կունենային միանալու Շարուր–Նախիջևանի թուրքերին, տեղի զորակոչային տարիք ունեցող մահմեդականների ու Նախիջևանում գտնվող թուրքական զորամասերի հաշվին ուժեղացնելու իրենց զինական ուժերը, ապա վճռական հարձակումով գրավելու Վայոց ձորը և Սիսիանի շրջանը: Այս դեպքում շրջապատման մեջ ընկած Գորիսի շրջանը ստիպված կլիներ առանց կռվի հանձնվելու:

Թիֆլիսում հրատարակվող «Աշխատավոր» թերթի 203-րդ համարում տպագրվեց հաղորդում այն մասին, որ «մի շաբաթ առաջ ընդհանուր նահանգապետ Սուլթանովը Կարյագինոյի վրայով մեկնել է Զանգեզուրի շրջանի թաթարական շրջանները» (Շուշիից ստացված թղթակցությունը թվագրված է 25-ը սեպտեմբերի 1919 թ.): Նրա՝ Շուշի վերադառնալուց հետո Զաբրայիլի գավառ եկան ադրբեջանական լավ զինված ու մարզված զորամասեր, որոնց միացան տեղի թուրքերի զինված ջոկատները: Այդ ընդհանուր ուժը Սուլթան բեկ ու Իլդրիմ բեկ Սուլթանովների գլխավորությամբ Զաբրայիլից շարժվեց Կապանի շրջանի վրա և սեպտեմբերի 17-ին Արաքսի հովտի հարավային կողմից հարձակում ձեռնարկեց Ագարակ և Եղվարդ գյուղերի ուղղությամբ: Այդ զորախմբին աջակցելու համար հաջորդ օրը՝ սեպտեմբերի 18-ին, Նախիջևանի կողմից Խալիլ բեյի գլխավորությամբ թուրք-տաճկական մի խոշոր զորամաս հարձակում սկսեց Կապանի Ուժանիս և Աղահուրդ գյուղերի ուղղությամբ:

Հենց սկզբից թուրքերի հարձակումը ձախողման մատնվեց: Հայկական գյուղերի զինված բնակչությունը ուժգին հարվածներ հասցրեց շրջանի թե՛ արևելքից, թե՛ արևմուտքից ներխուժած թշնամուն, որը, մեծ կորուստներ կրելով, ի վերջո խուճապահար բռնեց նահանջի ճանապարհը[1]:

Բաքուն ծանր պարտությունից դասեր չառավ: Առաջվա պես Զանգեզուրը համարելով ադրբեջանական՝ մուսավաթական կառավարությունը հաղթողի իրավունքով Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդից պահանջեց անվերապահորեն ենթարկվել իրեն, այլապես սպառնաց էլ ավելի մեծ ուժերով գրոհել Զանգեզուրի վրա:

Միաժամանակ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հատուկ նոտայով Հայաստանի կառավարությանը հորդորեց չխառնվել Զանգեզուրի խնդիրներին և Հայաստանի կողմից գավառի հետ որևէ կապ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50[1], թ. 164:

ունենալը համարեց անթույլատրելի միջամտություն Ադրբեջանի ներքին գործերին:

Թեև Ադրբեջանը լարել էր իր բոլոր ուժերը՝ Զանգեզուրին տիրանալու համար, բայց գավառի հայությունը ամուր կանգնած էր իր դիրքերում և լսել անգամ չէր ուզում Բաքվին ենթարկվելու մասին[1]: Եվ դա այն դեպքում, երբ զենքի պակասությունը շատ տեղերում սպառնալիքի տակ էր դնում բնակիչների ֆիզիկական գոյությունը: Սիսիանի շրջանի՝ Նախիջևանին սահմանակից գյուղերի մի մասը համարյա անզեն էր: Զենքի մեծ պակաս կար Գորիսի շրջանի Տաթևի ենթաշրջանում: Բավարար թվով զենք ունեցող գյուղերի բնակիչների տրամադրությունը խիստ մարտական էր: Իսկ եթե ամեն մի կռվող զանգեզուրցու հրացանը ունենար 300 փամփուշտ, ապա բոլոր ճակատներում հայերը նույնիսկ նախահարձակ կլինեին:

ՀՀ արտաքին գործերի նախարարը սեպտեմբերի 19-ին նամակով դիմեց Զանգեզուրի ազգային խորհրդին ու Արսեն Շահմազյանին՝ շնորհավորելով տարած հաղթանակների առթիվ: Նշելով, որ Զանգեզուրի ռազմական, կրթական և նյութական կարիքներին գոհացում տալու համար Հայաստանի կառավարությունը ժամանակին Գորիս է փոխադրել դրամական զգալի միջոցներ, ինչպես նաև հրետանի ու ռազմամթերք, «որ հուսով ենք թե ստացած եք արդեն», նախարարը այնուհետև գրում էր. «Կառավարությունը խորին ուշադրությամբ և գոհունակությամբ հետևում է Զանգեզուրի արիական ինքնապաշտպանությանը և ձեռքից եկածն անում է Ձեզ օգնելու համար: … Կառավարությունը առանձնապես գնահատում է այն համերաշխ ընթացքը, որ ի տես ընդհանուր վտանգի, երևում է Ազգային խորհրդի և հանրապետության ներկայացուցիչ պ. Արսեն Շահմազյանի միջև, այդ հանգամանքը համարելով լավագույն գրավականը ձեր հետագա հաջողության»[2]:

Անդրադառնալով Հայաստանի համար Նախիջևանի կորստով ստեղծված ծանր իրավիճակին՝ նախարարը գրում էր, որ «Շարուր-Նախիջևանի առժամանակ կորստով մեր հարաբերությունները պիտի դժվարանան Ձեզ հետ և ձմռան գալով գուցե խզվեն ընդերկար, թեև մենք պիտի ջանանք ամեն կերպ կապ պահել ձեզ հետ և նույնը կխնդրեինք ձեզ անել»:

Զգտելով զենքի ուժով իշխել Զանգեզուրին՝ Ադրբեջանի կառավարությունը միաժամանակ կատարել էր հերթական դիվանագիտական դիվային քայլը: Սեպտեմբերի սկզբներին նա դիմել էր Թիֆլիս (անգլիական հրամանատարությանը) և առաջարկել Շարուր–Դարալագյազի ու Նախիջևանի գավառները միավորելով՝ ստեղծել չեզոք մի գոտի և այն դնել ամերիկացի նահանգապետի իշխանության տակ: Այդ կապակցությամբ ՀՀ արտգործնախարարը գրում էր. «Զանգեզուրը ներկայումս ստացել է քաղաքական առաջնա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 180-181:

[2] Նույն տեղում, գ. 50, թ. 128:

կարգ կարևորություն: Մեզ լիովին ուժաթափ կարծելով՝ Ադրբեջանի կառավարությունը, անցողական հաջողությամբ շլացած, պահանջեց չեզոք զոն հաստատել Շարուր–Դարալագյազ–Նախիջևանը, … առանց խոսք բացելու Զանգեզուրի մասին, միանգամայն վստահ, որ անջատելով ձեզ Հայաստանից՝ դիվանագիտությամբ կարող է Զանգեզուրը նվաճել: Այս առաջարկն ընդունել՝ նշանակում էր անջատվել ձեզանից ու Ղարաբաղից (քանի որ դուք եք կապում Հայաստանը Ղարաբաղին) և Ադրբեջանի իշխանությունը հասցնել մինչև Ղամարլու, մի բան, որ չէր կարող անել (Հայաստանի) կառավարությունը»[1]:

Ապա նամակում Զանգեզուրի իշխանություններին տեղյակ էր պահվում, թե կառավարությունը ինչ հակաքայլեր է ձեռնարկում: Նշվում էր, որ նախարար-նախագահ Ա. Խատիսյանը և խորհրդարանից Ռ. Տեր-Մինասյանը գնացել են Թիֆլիս, անձամբ հանդիպել ամերիկյան ներկայացուցիչ Հասկելին, նրան բացատրել «մեր կացությունն ու Ադրբեջանի առաջարկի կործանարար նշանակությունը Հայաստանի համար»: Այդ հանդիպման շնորհիվ հնարավոր էր դարձել «Դարալագյազը հանել չեզոք զոնից ու Զանգեզուրը կցել Հայաստանին՝ ամերիկյան նահանգապետի իշխանությանը ենթարկելով միմիայն Շարուրն ու Նախիջևանը»: Այդ նոր առաջարկի մասին պետք է տեղեկացվեր Ադրբեջանի կառավարությանը, և որը կարող էր չհամաձայնել այս նոր պայմաններին ու իր նպատակին հասնելու համար դիմեր զենքի ուժի: «Ուստի անհրաժեշտ է,– զգուշացնում էր նախարարը,– որ դուք լարեք ձեր բոլոր ուժերը՝ դիմագրավելու այն հարվածներին, որոնք մեր թշնամին առաջին առիթով պիտի թափի ձեզ վրա: Ձմեռը հավանորեն վերջ կտա ոտնձգություններին, բայց մինչև ձմեռ պետք է տոկալ ինչ գնով որ լինի: Մենք համոզված ենք, որ թուրքերին գլուխ չխոնարհած Զանգեզուրը չի վարանի միասիրտ ու միակամ կանգնել Ադրբեջանի իշխանության դեմ»[2]:

Վերջապես, Զանգեզուրի ընկերների մարտական տրամադրությունն էլ ավելի բարձրացնելու համար նամակի վերջում ՀՀ արտգործնախարարը հաղորդում էր հաճելի լուրեր հանրապետության ներքին կյանքից՝ գրելով.

«Մեր երկրի վիճակը գնալով բարվոքվում է. ամերիկյան մի ընկերություն մոտ մեկ միլիարդ ռուբլու ապրանք է խոստանում հատկացնել Հայաստանին, Բաթումում մեզ համար ավելի քան կես միլիոն փութ հաց է ամբարած: Վրաստանը նվազ դժվարություններ է հարուցանում փոխադրությունների համար: Մեր նոր դրամանիշները դնում են կովկասյան բոներին համարժեք, իսկ կուրսի շրջանում՝ մինչև իսկ ավելի բարձր դնելով: Գնդապետ Հասկելի այստեղ (Երևանում: – *Ա. Ս.*) եղած ժամանակ կառավարությունը միջնորդություն է հարուցել Զանգեզուր ուղարկել մի ամերիկյան սպա՝ իբրև նրա

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 128:
[2] Նույն տեղում, թ. 128-ի շրջ.:

ներկայացուցիչ: Գնդապետը խոստացել է բավարարել այդ միջնորդությունը. հետևանքի մասին կտեղեկացնենք ձեզ:

Ղարսի շրջանը խաղաղ է. վերջին ընդհարումների ժամանակ միշտ մերոնք են եղած հաղթական: Սուրմալուն վերագրավել ենք, բացի Կողբից: Նոր զորահավաք է լինում՝ մինչև 32 տարեկանը լրիվ: Դպրոցները բացվում են: Թվում է, թե կյանքը ստանում է նորմալ ընթացք:

Այս բոլոր տեղեկությունները, հուսով ենք, ձեզ պիտի ոգևորեն և դարձնեն ավելի դիմացկուն և վճռական ձեր պայքարի մեջ: Կառավարությունը, վճռելով Զանգեզուրն ուժեղացնել, իր ուղարկած դրամական և ռազմական օժանդակության հետ, (որպես) քաջալերանք պ. Ա. Շահմազյանին՝ զինվորական իշխանությանը առաջարկել է բարձրացնել նրա ծառայության աստիճանը: Այս առաջարկը մենք նկատում ենք գնահատություն ոչ միայն նրա ջանքերի, այլ նաև համերաշխ ոգու, որով Ազգային խորհուրդը ու նա վարել են Զանգեզուրի դժվարին գործը: Մի անգամ ևս, առիթն օգտագործելով, հայտնում ենք մեր գոհունակությունը ձեզ և Զանգեզուրի քաջարի ժողովրդին»[1]:

Հայկական կողմի թափած ջանքերը իրենց դրական արդյունքը տվեցին: Հոկտեմբերի 23-ին Ադրբեջանի արտգործնախարար Մ. Ջաֆարովը Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Աբդուռահիմ բեկ Հախվերդովին հեռագրում էր. «Հասկելը բանակցություններ է վարել (մեր) կառավարության հետ՝ Շարուր–Նախիջևանի շրջանում չեզոք գոտի հաստատելու հարցի մասին: Համաձայնություն ձեռք չի բերվել, քանի որ Հասկելը չի ընդունել մեր պահանջները»[2]:

Հայաստանի Հանրապետության առաջին հաջողությունները կատաղության ալիք էր բարձրացրել Ադրբեջանում, որի կառավարությունը հույս ուներ, որ հայությունը ի վիճակի չի լինելու կերտել իր անկախությունը:

Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Հայաստանի արտգործնախարարին 1919 թ. սեպտեմբերի 22-ին գրած նամակում անդրադարձել էր Ադրբեջանում ծավալված աննախադեպ հակահայկական հիստերիային, այդ երկրի կառավարության նվաճողական նոր նկրտումներին: Նա նախազգուշացնում էր, որ Ադրբեջանի կառավարությունը շարունակում էր տենդագին նախապատրաստություններ տեսնել՝ Զանգեզուրի հայությանը զենքի ուժով ենթարկեցնելու համար, միաժամանակ հայտնում էր, որ գաղտնի ռազմական նախապատրաստություններին զուգընթաց մղում է հակահայկական սանձարձակ քարոզչություն[3]:

Հիրավի, համարյա Բաքվում հրատարակվող ռուսերեն և թուրքերեն

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 129:

[2] Նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 21:

[3] Տե՛ս **Ա. Սարգսյան**, Լեռնային Ղարաբաղի պատմությունից (1918-1921 թթ.), էջ 71:

թերթերում ամեն օր լույս էին տեսնում Երևանի, Նախիջևանի, Շարուրի, Օրդուբադի, Սուրմալուի շրջաններում բնակվող թուրքերի կողմից ուղարկված հայտարարություններ, և՛ Ադրբեջանի կառավարությանը, և՛ դաշնակից պետությունների ներկայացուցիչներին հղած դիմումներ, որոնցով աշխատում էին վարկաբեկել Հայաստանի կառավարությունը և նրա վարչական պաշտոնեությունը՝ նկարագրելով բազմատեսակ բռնությունների, հալածանքի և կողոպուտի դեպքեր՝ ուղղված թուրքերի դեմ:

Այսպես՝ «Ազերբայջան» թերթի 1919 թ. 197, 200, 202 համարներում տպագրված բազմաթիվ դիմումներից առանձնանում էր Հասկելին ներկայացրած հուշագիրը, որտեղ շեշտվում էր, թե Օրդուբադի շրջանի Կարճևան, Մեղրի և Շվանիձոր հայկական գյուղերը իսկական պատուհաս են դարձել մահմեդական հարևան բնակավայրերի համար, որոնց բնակիչների պաշտպանության համար խնդրում էին ամերիկացի գնդապետի աջակցությունն ու կարգադրությունը՝ պատճառաբանելով, որ այդ գյուղերն են թուրքերին խանգարում կանոնավոր հարաբերություններ պահպանել Զանգեզուրի իրենց ցեղակիցների հետ[1]:

Զանգեզուրի վրա սեպտեմբերի վերջերին թուրքերի հարձակման կապակցությամբ ՀՀ արտգործնախարար Ա. Խատիսյանը Հայաստանի Հանրապետությունում Ադրբեջանական Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին սեպտեմբերի 28-ին ներկայացրեց նոտա:

Նոտայում նշված էր, որ Ադրբեջանի կանոնավոր զորամասերը և մուսուլմանական տեղի բնակչությունը շարունակում էին փորձեր անել՝ գրավելու Զանգեզուրը, որի կառավարումը բրիտանական բարձր հրամանատարությունը հանձնել էր Զանգեզուրի ազգային խորհրդին:

Նկատի ունենալով Զանգեզուրի վրա վերջին հարձակումները՝ արտգործնախարարը գրում էր. «Վերջին հանգամանքները ստիպում են ինձ իմ կառավարության անունից խնդրելու Ձեզ շտապ հեռագրով հարցում անել Ձեր կառավարությանը, թե … ինչպիսի միջոցներ են ձեռնարկվում անհապաղ կանխելու ընդհարումները, որոնք կարող են հանգեցնել համընդհանուր հրդեհի՝ Անդրկովկասի լայնարձակ տարածքի վրա: … Խնդրում եմ շտապ ինձ տեղեկացնել Ձեր կառավարության պատասխանի մասին»[2]:

Հոկտեմբերի 2-ին ՀՀ արտգործնախարարի նոտայի կապակցությամբ Ադրբեջանի կառավարությունը Հայաստանում իր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով պատասխան ուղարկեց Երևան: Նա գտնում էր, որ «Զանգեզուրի գավառը գտնվում է Ադրբեջանական Հանրապետության տարածքում, հետևաբար Հայաստանի արտգործնախարարի սեպտեմբերի 28-ի նոտան անթույլատրելի միջամտություն է Ադրբեջանական Հանրապե-

---

[1] Տե՛ս **Ա. Սարգսյան**, Լեռնային Ղարաբաղի պատմությունից (1918-1921 թթ.), էջ 72:

[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 42, թթ. 258, 259, տե՛ս նաև **Մ. Туманян** նշվ. աշխ., էջ 252:

տության ներքին գործերին, որի կառավարությունը իրեն պարտավորված չի համարում Հայաստանի կառավարությանը տեղեկացնելու, թե ինչպիսի անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում հանրապետության տարբեր մարզերի ներքին կառավարման ուղղությամբ»[1]:

Ադրբեջանի կառավարության սույն պատասխան նոտան կասկած չէր թողնում, որ Զանգեզուրի հայությանն առաջիկայում նույնպես վիճակվելու էր կենաց ու մահու կռիվ մղել՝ իր երկիրը պաշտպանելու համար:

Հայաստանի կառավարության պահանջի պատասխանը եղավ այն, որ թուրքերը Կապանի վրա սեպտեմբերի վերջերին նոր հարձակում կատարեցին՝ այս անգամ Հանդ և Սրաշեն գյուղերի ուղղությամբ: Նույն ժամանակ մի ուրիշ զորամաս Զանգեզուր ներխուժեց Արաքս գետի հովտով:

Հայկական գյուղերի զինված ջոկատները թշնամու այս հարձակումը նույնպես հետ մղեցին՝ թշնամուն պատճառելով մեծ կորուստներ: Հայերը, շարունակելով մարտը, գրավեցին Կապանի շրջանը Գողթանի հետ կապող ճանապարհը, որն անցնում էր Շահբազյուրդ և Ղափուջուղ սարերի բարձունքներով: Այդ հաջող գործողության շնորհիվ Գեղվա և Օխչիի զուգահեռ ձգվող ձորերի թուրքերը զրկվեցին միմյանց հետ կապ պահպանելու հնարավորությունից:

Ադրբեջանական զորքերի վերջին հարձակումների ժամանակ՝ սեպտեմբերի ամբողջ երկրորդ կեսին, Արսեն Շահմազյանը և Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի բոլոր անդամները՝ նախագահ Արշակ Շիրինյանի գլխավորությամբ, լինում էին ռազմաճակատի տարբեր հատվածներում և գիշեր ու ցերեկ մարտիկների հետ կիսում բոլոր դժվարությունները: Նրանց ներկայությունը բարոյահոգեբանական մեծ ազդեցություն էր ունենում կռվի առաջին գծում գտնվող հայ զինյալների վրա, նրանց ոգևորում նոր սխրանքների:

Թուրքերին Կապանի և Գենվազի շրջաններից հետ մղելուց հետո շրջանային խորհուրդը հոկտեմբերի 3-ին իր 81-րդ նիստում որոշում ընդունեց Արշակ Շիրինյանին, որի առողջությունը ծայրահեղորեն վատթարացել էր, մեկ ամսով արձակուրդ տալ՝ մեկնելու Երևան: Խորհրդի նախագահը, օգտվելով առիթից, պետք է ներկայանար կառավարությանը՝ Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի իրավասության սահմանները որոշելու և այլևայլ խնդիրներ պարզաբանելու համար: Միաժամանակ շրջանային խորհուրդը պատշաճ դիմումով Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահին խնդրել էր Ա. Շիրինյանին ժամանակավորապես ազատ թողնել խորհրդարանի անդամի պարտականությունից և արգելք չհարուցել նրա՝ Զանգեզուր վերադարձի դեմ՝ «Նկատի ունենալով նախագահ պ-րն Շիրինյանի անձնական ներկայության կարևորությունը ներկա մոմենտում»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 42, թ. 260, տե՛ս նաև **Մ. Туманян,** նշվ. աշխ., էջ 252:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 165:

ՎՃՌԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հասնելով Կապանի հանքեր՝ Նժդեհն անմիջապես գործի անցավ: Նրան ջերմորեն ընդունեց Կապանի ազգային խորհուրդը՝ Սմբատ Մելիք-Ստեփանյանի ղեկավարությամբ: Առաջին իսկ օրից նա իր շուրջը համախմբեց ճանաչված գործիչներ Գեղեոն Տեր-Մինասյանին, Գերասիմ Աթաջանյանին, Կարապետ Նուրիջանյանին, Իվան Մելիք-Քարամյանին, Արսեն Բաբայանին, Մուշեղ Ոսկանյանին, Արմենակ և Դավիթ Դավթյաններ եղբայրներին, Համազասպ Ստեփանյանին, Նիկոլայ Նիկողոսյանին, Թովմաս Բարխուդարյանին և ուրիշների:

Կապան գալու հաջորդ օրն իսկ Նժդեհը խնդրեց հրավիրել Ազգային խորհրդի ընդլայնված նիստ՝ գյուղական կոմիսարների և զինական ուժերի ղեկավարների մասնակցությամբ: Խորհրդի նիստում նա իր առաջին կրակոտ ելույթն ունեցավ Կապանում, իր հավատարմությունը հայտնեց Սյունիքի ժողովրդին, խոսեց առաջիկայում կապանցիների և իր անելիքների մասին, ներկաներին կոչեց հայրենասիրության ու անձնազոհության, հորդորեց լինել զգոն ու գաղտնապահ, անառարկելիորեն ենթարկվել զինվորական կարգապահությանը:

Մի օր անց Հանքերում հրավիրվեց մեծ միտինգ, որտեղ Նժդեհը փայլուն ճառ ասաց, Սյունյաց քաջերին կոչ արեց անթերի կատարել զինվորական հրամանները, գոտեպնդվել և ամեն րոպե պատրաստ լինել դիմակայելու երկիր ներխուժող թուրք ավազակախմբերին:

Ծանոթանալով իրավիճակին՝ Նժդեհը եկավ այն համոզման, որ Կապարգողթի հայությունը Նախիջևանի հայության նման կարող էր ենթարկվել բնաջնջման, եթե չձեռնարկվեին արտակարգ միջոցներ:

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունն ամեն ինչ անում էր Զանգեզուրը նվաճելու համար: Այդ նպատակով Բաքուն մշտապես գրգռում էր գավառով մեկ տարածված թուրքական գյուղերի բնակիչներին, նրանց մղում ապստամբությունների, որի հետևանքով բուն Զանգեզուրը (Գորիսի շրջանը), Կապանը, Գենվազը և Գողթանը, ըստ էության, կտրվել էին իրարից: Այլ խոսքով՝ Ադրբեջանն ամեն ինչ անում էր՝ ջլատելու Սյունիքի հայության միասնականությունը: Հայ գյուղացիությունը ապրում էր մեկուսացած կյանքով, իրարից կտրված: Զաբրայիլի և Զանգելանի կողմերում կազմելով մեծաքանակ ավազակախմբեր՝ թուրքերը սպառնում էին գրավել Կապանն ու Գենվազը, որպեսզի այդ շրջանները նույնպես հայաթափեին և Օրդուբադի վրայով միանային Նախիջևանին: Ամենավտանգավոր վայրեր էին դարձել

Ողջիի և հատկապես Գեղվա ձորերը, որտեղ իրենց կատարած թալաններով ու գազանություններով թուրքերն իսկական պատուհաս էին Գենվազի հայության համար: Այս ձորերի թուրքերը սերտ կապեր էին պահպանում մի կողմից՝ Նախիջևանի, մյուս կողմից՝ Զանգելանի և Ջաբրայիլի, իսկ երրորդ կողմից՝ Շիլարի վրայով նաև Հաջիսամլուի թուրքերի հետ: Երկու ձորերի հայկական գյուղերը օղակված էին չորս կողմից:

Չկային ո՛չ կանոնավոր զորամասեր, ո՛չ թնդանոթներ, և ո՛չ էլ կատարված էր կազմակերպչական աշխատանք: Միակ ուժը զինված գյուղացիությունն էր: Եվ եթե շտապ ձեռք չառնվեին անհրաժեշտ միջոցներ, հայ գյուղացիությունը կդատապարտվեր ոչնչացման[1]:

Շատ շուտով Նժդեհի շուրջը համախմբվեցին հավատարիմ զինակիցներ, որոնք պատրաստ էին արյան գնով կատարելու հրամանատարի բոլոր կարգադրությունները: Նրանք էին Կապարգողթի հետախուզության պետ Նիկոլայ Նիկողոսյանը, Գյուտկումի գյուղացի Գերասիմ Աթաջանյանը, Կապանի գործարանի նախկին պարետ Արմենակ Դավթյանը և նրա եղբայր Դավիթ Դավթյանը (Ճակատենից), վաշտապետեր Համազասպ Ստեփանյանը (Վահրավարից), Սերգեյ Հակոբյանը (Զեյվայից), Սամսոն Աթայանը (Խդրանից), Հարություն Գրիգորյանը, Թովմաս Բարխուդարյանը, Նիկոլայ Աղախանյանը, Արշակ Առաքելյանը, Բագրատ Տեր-Մովսիսյանը, Արշակ Սարգսյանը, Վարդազար Տեր-Պետրոսյանը, Անդրեաս Տեր-Հարությունյանը, Աղաբեկը, Սահակը, Գինոսը և ուրիշներ[2]:

Սեպտեմբերին Կապանի ազգային խորհուրդը հարկ համարեց իր կազմը համալրել նոր անդամներով: Նորացված կազմը հետևյալն էր՝ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյան (Առաջաձորից), Գեղեոն Տեր-Մինասյան (Խլաթաղից), Կարապետ Նուրիջանյան (Վաչագանից), Միքայել Էլչիբեկյան (Գյուտկումից), Դավիթ Դավթյան (Ճակատենից), Եգոր Անտոնյան (Բաղաբուրջից), Արսեն Բաբայան (Գյուտկումից), Իվանբեկ Մելիք-Քարամյան (Ղարաբաբայից), պրիստավ Իվանբեկ (Ուժանիսից), Սմբատ (Ազարակից):

Գարեգին Նժդեհի կողմից կազմակերպվեցին երեք ռազմական շրջաններ.

1. Կապան, որ հին Բաղաց իշխանների երկիրն էր և կոչվում էր Բաղաբերդ,
2. Գողթան, որ պատմական գրականության մեջ հայտնի է որպես գուսանների, աշուղների երկիր,
3. Արևիք–Մեղրիի շրջան, որ կոչվում է նաև Գենվազ:

Այսպիսով՝ այդ երեք շրջանների անվանումների առաջին հնչյուններով (Կապ-Ար-Գողթ) կազմվեց Կապարգողթ անունը, որով կոչվեց Նժդեհի հրա-

[1] Տե՛ս «Արնոտ գիրք», Գորիս, 1921, էջ 28:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 364, թ. 1:

մանատարության ենթակա երկրամասը: Այդ երկրամասով էր, որ Հայաստանի Հանրապետության անկումից հետո հայ վտանգված զանգվածը և մտավորականությունը անփորձանք անցան դեպի Պարսկաստան:

Նժդեհի ռազմական գործունեությունը կարելի է բաժանել երկու մասի.

առաջին՝ պայքար հայ ժողովրդին սպառնացող մահմեդականության դեմ, որը կամենում էր ամբողջ Սյունիքը ընկճել և դնել Ադրբեջանի գերիշխանության տակ,

երկրորդ՝ պայքար բոլշևիկների դեմ, որոնք հետապնդում էին նույն նպատակը:

Ընդամենը երկու-երեք ամիս հետո 33-ամյա հայ զորականը՝ որպես տաղանդաշատ զորավար և հարգի մտավորական, հայտնի էր դառնալու Զանգեզուրում և նրա սահմաններից շատ հեռու[1]:

Անցնելով Կապանի հանքեր՝ Նժդեհը արձակեց իր թիվ 1 հրամանը.

«Ղափան–Գենվազ–Գողթանի միացյալ զորամասերին.

1. Այսօրվանից ես ստանձնում եմ Ղափան–Գենվազ–Գողթանի միացյալ ուժերի հրամանատարությունը: Ընդսմին հրամայում եմ բոլոր պաշտոնական գործերով դիմել ինձ:
2. Զորամասերի շտաբը գտնվում է Հանքերում, ուր բոլոր ռազմաշրջանների պետերը պետք է ուղարկեն իրենց հաղորդագրությունները:
3. Ոչ ուշ, քան ամսոյս 12-ի ժամը 16-ը տեղեկացնել զինվորների հրացանների ինչ սիստեմի լինելու, փամփուշտների քանակի մասին:

Ղափան–Գենվազ–Գողթան
Միացյալ ռազմ. ուժերի
ընդհ. հրամանատար՝ Նժդեհ»[2]:

Այնուհետև Նժդեհը ձեռնամուխ եղավ Կապանի և Գենվազի (Արևիք, Մեղրի) բոլոր կարևոր վայրերի ուսումնասիրությանը, եղավ բոլոր հայկական գյուղերում, դրանց առավել կարևոր բնական դիրքերում, ծանոթացավ ժողովրդի սովորություններին ու հոգեբանությանը: «Շրջագայելով գավառները՝ տեղնուտեղը ուսումնասիրեցի երկրի աշխարհագրությունը ու տեղագրությունը: Ծանոթացա շրջանների ռազմագիտական համառ և թույլ կետե-

---

[1] Տե՛ս **Ա. Սիմոնյան**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., էջ 36-37, **Է. Զոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, էջ 228:

[2] **Վ. Գէորգեան**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 1991, էջ 29, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», Լոս Անջելես, 1989, էջ 80, **Ռ. Համբարձումեան**, Գարեգին Նժդեհ: Ամբողջական կենսագրութիւն, Երևան, 2007, էջ 148:

րի հետ»[1]: Հրամանատարը ուսումնասիրությունը կատարում էր խիստ մանրակրկիտ, որպեսզի դրա հիման վրա անսխալ պարզեր տեղանքի ռազմագիտական նշանակությունը և, ըստ այդմ, Կապարգողթի հուսալի պաշտպանության պլանը: Բայց նրա ծրագիրը, ինչպես հետո պարզվեց, ոչ միայն Կապարգողթն անառիկ դարձնելն էր, այլև զանգեզուրցիների կռվի մարտավարության արմատական փոփոխությունը, երբ հիմնական դերը հատկացվելու էր ոչ թե ինքնապաշտպանությանը, այլ հարձակմանը:

Վերադառնալով Կապանի հանքեր՝ Նժդեհը պատրաստվեց մեկնել Գողթան: Այդ ժամանակ Երևանից Հանքեր հասավ Գողթանի միլիցիայի պետ Մ. Գյուլնազարյանը, որն իր հետ բերել էր Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Գողթանի հայության 5-րդ համագումարի նախագահությանը հասցեագրած մի նամակ, որում ասված էր, որ կառավարությունը ի վիճակի չէ օգնության ձեռք մեկնելու Գողթանի ժողովրդին, և ելքը այն է, որ գողթանցիները գաղթեն Գենվազի և Կապանի շրջաններ:

Խորհրդակցելով Կապանի ազգային խորհրդի ղեկավարության հետ՝ Նժդեհը որոշեց ՀՀ կառավարության որոշման մասին տեղյակ չպահել ժողովրդին, որ նա խուճապի չենթարկվի, միաժամանակ վճիռ ընդունվեց թույլ չտալ Գողթանը լքել, որովհետև այն թշնամուն հանձնել նշանակում էր նրա ձեռքը տալ Զանգեզուրի և Ղարաբաղի բանալին: Այսպիսով՝ հետաձգվում էր գողթանցիների գաղթը:

Իրեն հանձնարարված տարածքների ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ իր պարտականությունները կատարելիս Նժդեհը հանդես բերեց արտակարգ վճռականություն ու հետևողականություն: Ուսումնասիրելով վիճակը՝ Նժդեհը եկել էր այն եզրակացության, որ տեղական բնակչության վրա չափազանց ծանր կանդրադառնա, եթե զինվորական ծառայության կանչով տնականորեն զենքի տակ պահվի երիտասարդությունը: Այդ դեպքում հարկ կլիներ հոգալ զինվորների սննդի և հագուստի մասին, նրանց համար կառուցել զորանոցներ և այլն: Ելքը նա տեսավ աշխարհազորի մեջ: «Վարել եմ միշտ էլ ժողովրդական ուժեր՝ մի տեսակ պաղություն զգալով դեպի այսպես կոչված «կանոնավոր» զորամասերը»[2],– գրել է Նժդեհը:

Զանգեզուրյան ինքնապաշտպանական ջոկատները չնչին բացառություններով կազմավորված էին կամավորության սկզբունքով, որը և գլխավոր պատճառներից մեկն էր մարտիկների անսահման խիզախության, նրանց տարած անհավատալի հաղթանակների: Նժդեհը գրել է. «Հայը կռվում է աննահանջ և սխրագործում ավելի իբրև կամավոր, քան պարտա-

---

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 43, **Աւ**ο, Նժդեհ, Պէյրութ, 1968, էջ 83:

[2] **Գ. Նժդեհ**, Ինքնակենսագրություն, Երկեր, հատոր երկրորդ, էջ 276:

դիր ծառայության զինվոր: Նրա սրտովը չէ գործել հրամանով, իսկ մեռնել հրամանով՝ բնա՛վ:

Պարտադիր ծառայության մեջ նա իրեն զգում է կամավոր: Հոգեբանական այդ իրողությունը հետևանք է այն բանի, որ երկար, շատ երկար ժամանակ՝ իր պատմական ճակատագրի բերումով, հայն իր հայրենիքի պաշտպանության գործին մասնակցել է ոչ իբրև մի նախարարի ստրուկը, ճորտը, այլ իբրև հայ մարդ, որ պարտական է կռվելու Հայաստանի համար:

Հայու այդ հոգեգիծը՝ դրական և օրինաբեր, պիտի պահպանվի գուրգուրանքով, քանզի կամավորության գաղափարն ավելի վեհ է, քան պարտադիր ծառայությունը:

Կամավորությունը ուխտվածություն է – ահա թե ինչումն է իր խորհուրդը, իր ուժը: Եվ ոչ մի իշխանություն կարող է մեռնելու բռնադատել նրան, ով ուխտված չէ, մահապատրաստ չէ հայրենիքի համար: Կարելի է առաջ վարել անգամ մորթապաշտներին. նմաններին իսկ կարելի է զոհաբերել, բայց նրանց կրավորական, ակամա մահերով հաղթանակ չի շահվում:

Կամավորագրվողն է քաջագործում, մեռնում կամովին – հաղթանակում»[1]:

Նժդեհը ստեղծեց վաշտեր՝ զինվորների միջից առաջ քաշելով և վաշտապետեր նշանակելով առավել համարձակ, խիզախ ու քաջարի անձանց: Սյունիքն ուներ 200-ի չափ ժողովրդական ուխտյալ վաշտապետեր[2]: Կռվի ժամանակ մի քանի վաշտեր գործում էին ճակատապետի հրամանատարությամբ[3]: Ամենաքաջ ու կարգապահ վաշտերը Նժդեհը մկրտել էր Դավիթ Բեկի անունով: Դավիթբեկյան վաշտերից ամեն մեկն ուներ իր առանձին դրոշակը՝ հատուկ մակագրությամբ: Ամեն ինչի պակաս էր զգացվում, պակաս էր նաև զորքի հանդերձավորումը, հագուստը: Զինվորները հագնում էին միատեսակ հագուստ և կապում կարմիր կտորից գոտի: Նույն տարազն էր կրում նաև Նժդեհը[4]:

«Իսկ թե ինչպես էր «զգեստավորված» իմ զինվորը,– գրել է Նժդեհը,– գիտեն այն բոլորը՝ թուրք, թաթար և ռուս, որոնք գործ ունեցան նրա հետ: Որքան զինվոր, գրեթե նույնքան ձևի և գույնի զգեստ, այն էլ պատրաստված տանը՝ բրդից կամ մազից: Իմ զինվորի ոտները կոշիկների փոխարեն ծածկում էին տրեխները, որի հետ նա իր լեռների վրա մաշում էր և իր ոտների կաշին՝ շատ անգամ և շատ տեղ իր ծեծված ոտքերի արյունով իր անցած ճա-

---

[1] **Գ. Նժդեհ**, Բանտային գրառումներ (խորհրդածութիւններ), Երևան, 1993, էջ 72:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հունիս, թիվ 8 (32), էջ 134:

[3] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 152:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 38, 39, **Ռ. Համբարձումեան**, Գարեգին Նժդեհ: Ամբողջական կենսագրութիւն, Երեւան, 2007, էջ 151:

նապարհը ներկելով: Այսպես, այս ձևով էր զգեստավորված իմ զինվորությունը»[1]:

Կազմվեցին նաև, այսպես կոչված, գայլավաշտեր, որոնցից ամեն մեկը բաղկացած էր 20-50 հոգուց, որոնք, զինված ուժանակներով և ձեռնառումբերով, գիշերային համարձակ հարձակումներ էին կատարում թշնամու վրա՝ նրան մեծ կորուստներ պատճառում և մատնում խուճապի:

Վաշտերի կազմակերպումը Նժդեհը սկսել էր Զանգեզուրի հարավային ծայրամասից՝ Գենվազից (Մեղրի): Հոկտեմբերի 18-ի՝ Հանքերից տրված թիվ 3 հրամանով նա զորահավաքի ենթարկեց զենք կրելու ընդունակ 18-52 տարեկան բոլոր գենվազցիներին: Գենվազի ամբողջ գավառամասը բաժանվեց վաշտային վեց շրջանների (զորաշրջաններ): Վեց վաշտերը միասին կազմում էին մեկ զորամաս, որը ղեկավարվում էր ընդհանուր հրամանատարի կողմից: Նժդեհի հրամանով Գենվազի զորամասի պետ նշանակվեց պոդպորուչիկ Անուշյանը, որին և հանձնարարվեց Մեղրիում հիմնել զորամասի շտաբը[2]:

Այնուհետև ձեռնարկվեց Կապանի շրջանի վաշտերի կազմակերպումը: Աշխատանքն իրականացվում էր շատ ավելի արագ, որովհետև թե՛ մարդկային ուժի, թե՛ մարտական փորձառության տեսանկյունից այստեղ պայմաններն ավելի բարենպաստ էին:

Վաշտերի հրամանատարներ էին նշանակվում մարտական փորձ ունեցող, արդեն հայտնի դարձած անձնավորություններ: Նրանք ընտրվում էին հիմնականում գյուղացիներից: Նժդեհը գրել է. «Ղեկավար տարրերը քամել եմ ժողովրդից և վերջինները կաղապարել, եթե այսպես կարելի է ասել, ըստ իր պատկերի»[3]:

Վաշտապետերը, իրենց հերթին, տեղացի քաջ երիտասարդներից ընտրում և նշանակում էին տասնապետեր, հիսնապետեր ու հարյուրապետեր: Հիսնապետերի և հարյուրապետերի նշանակումը կատարվում էր Նժդեհի գիտությամբ ու հավանությամբ: Նրա հրամանով ժողովրդական վաշտերը շաբաթական երկու անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին, պարտադիր անցկացնում էին ռազմափորձեր: Այն զինվորները, որոնք խուսափում էին մասնակցել ռազմափորձերին և մարզանքներին, ենթարկվում էին կարգապահական պատիժների:

Վաշտերի հրամանատարները՝ վաշտապետերը, ելնելով իրադրությունից, ունեին մարտավարական ինքնուրույն վճիռներ ընդունելու իրավունք: Թեև ռազմական տեսակետից վաշտերը ամբողջությամբ չէին համապա-

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 89:

[2] Տե՛ս **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 29-30:

[3] **Գ. Նժդեհ**, Ինքնակենսագրություն, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 277:

տասխանում զինվորական կանոնագրքով ներկայացվող պահանջներին, բայց այդ բացը լրացվում էր նրանով, որ զինվորների մեջ շատ բարձր էր անձնազոհության ոգին ու կարգապահությունը: Եթե կադրային բանակում շարքային զինվորի և հրամանատարի հարաբերությունները զուտ ենթակայի ու հրամայողի հարաբերություններ էին, ապա զանգեզուրյան վաշտերի դեպքում դրանք գործում էին միայն զինավարժությունների և մարտերի ժամանակ, իսկ խաղաղ պայմաններում զինվորն ու ղեկավարը գաղափարի և զենքի անբաժան ընկերներ էին[1]:

Քանի որ վաշտապետերը վարձ չէին ստանում, խոսք չէր կարող լինել արդեն շարքային մարտիկ-գյուղացիների վարձատրության մասին: Ընդհանրապես չէր վարձատրվում ոչ ոք, այդ թվում՝ Նժդեհը: «Ռոճիկ չեմ ստացել ողջ կյանքում,– գրել է նա տարիներ անց՝ 1944 թվականին: – Հրաժարվել եմ անգամ օտար պետության սահմանած թոշակից: Ունեցել եմ հարուստ լինելու և ճոխ ապրելու ամեն կարելիություն, սակայն ապրել եմ իբրև ժողովրդի մարդ, համեստորեն, աղքատ կոչվելու աստիճան*: Նյութապաշտությունը հեղափոխականի, զորականի, հայրենասերի համար համարել եմ մեկը մեր աշխարհի ամենամեծ պղծություններեն»[2]:

Վաշտերում ընդգրկված գյուղացի զինվորները պարտավոր էին իրենց ժամանակի որոշակի մասը հատկացնել չվարձատրվող հասարակական գործին, այսինքն՝ իրենց ինքնապաշտպանությանը: Հայրենիքի պաշտպանությանը անհատույց ծառայելու գիտակցությունը գյուղացի զինվորներին հաղորդում էր մարտական բարձր տրամադրություն, նպաստում ամուր կարգապահության հաստատմանը: Յուրաքանչյուր մարտիկի մոտ այն համոզումն էր ամրապնդվում, որ լեռնաշխարհի և ընդհանրապես ազգի ճակատագիրը պայմանավորված է նաև անձնապես իր խիզախությունից, նվիրվածությունից, անձնազոհությունից: Նժդեհը սովորեցնում էր, որ վաշտի զինվորը վարձկան չէ, որ նա պետք է խորապես ըմբռնի, որ իր ընտանիքը, մարդկային արժանապատվությունը և ունեցվածքը պաշտպանող ուրիշ ուժ չկա: Յուրաքանչյուր վաշտի ամեն մի զինվոր, ասում էր նա, պետք է լցված լինի հայրենի լեռնաշխարհը զավթելու նպատակով նրա վրա արշավող թուրք ագրեսորներին արժանի հակահարված տալու անհաղթահարելի տենչով[3]:

Վաշտերից բացի՝ Նժդեհը կարճ ժամանակամիջոցում Կապանում

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի գոյամարտը, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 18-19, *նույնի*՝ Հայ-բոլշևիկյան կռիվները, էջ 43:

* Նժդեհը գրել է. «Այդ սկզբունքի դեմ մեղանչել եմ մի անգամ՝ Ամերիկայում, ուր ընդունեցի, որ ինձ՝ իբրև գործչի, շաբաթական տրվի: Մեղանչեցի և արդարորեն պատժվեցի: Այդ օրեն մարդկային տմարդությունը ստվերիս պես հետևեց ինձ՝ ամենուրեք»:

[2] **Գ. Նժդեհ**, Ինքնակենսագրություն, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 278:

[3] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 82:

ստեղծեց նաև արագաշարժ հեծյալ մի դասակ, ինչպես նաև՝ շարժուն ջոկատներ: Այլ խոսքով, 1919 թ. հոկտեմբերի վերջերին Կապարգողթն ուներ հայրենասեր 800 զինվորներից կազմված մի մարտունակ զորամաս: Իր թվաքանակով այդ զորամասը գնդից փոքր էր, բայց ավելին էր, քան գումարտակը[1]:

Կապարգողթի զորամասի ուժը նրա թվաքանակի մեջ չէր, այլ զինվորների նվիրվածության ու քաջության, նրանց բարձր գիտակցության ու կարգապահության մեջ:

Թեև Կապանի և Գենվազի գյուղերից շատերը հեռախոսային կապ ունեին Կապարգողթի կենտրոնի՝ Հանքերի և միմյանց հետ, բայց շրջանի ռելիեֆի խիստ կտրվածությունը ձորերով, բարձունքներով, անտառային զանգվածներով մեծապես դժվարացնում էր տեղեկությունների արագ փոխանցումը մի տեղից մյուսը: Դա երբեմն թշնամուն հնարավորություն էր տալիս զանազան կողմերից աննկատ թափանցելու հայկական տարածքները և հանկարծակիի բերելու բնակիչներին ու զինված ջոկատներին:

Կապարգողթի բոլոր մասերը միմյանց ամուր կապելու համար Նժդեհի կարգադրությամբ շրջանի զանազան տեղերում, հատկապես բարձունքների վրա հաստատվեցին տեղեկատվության կետեր, որոնք գիշերները լույսի միջոցով (լուսախոսություն), իսկ ցերեկները նշաններով (նշանատվություն) անմիջապես տեղեկություններ էին հաղորդում թշնամու շարժումների մասին: Եթե թշնամին երևում էր գիշերը, դիրքերի պահակներն արձակում էին մահիկաձև լույսեր, իսկ եթե վտանգ չկար, այդ մասին հաղորդում էին խաչաձև լուսարձակումներով: Ցերեկը պահակները լուրերը հաղորդում էին ձեռքերի շարժումներով, խարույկի ծխով և այլն[2]:

Հանքերից վաշտերին ուղղված թիվ 3 հրամանում ասված էր.

«… 2. Հրամայում եմ վաշտային շրջանների մեջ ստեղծել կենդանի կապ ու ամեն օր երեկոյան ժամը 9-ին և առավոտյան 4-ին նշանատվությամբ տեղեկացնել զորամասերի շտաբին ճակատներում տեղի ունեցած փոփոխությունների և դրության մասին: Նշանատվությունից զատ՝ շաբաթական երկու անգամ, հինգշաբթի և կիրակի օրերը, ուղարկել հաղորդագրություն և այլն:

Հանքեր, 1919 թ. հոկտ(եմբերի) 15

Նժդեհ»[3]:

---

[1] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 85:

[2] Տե՛ս **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 33:

[3] Նույն տեղում, էջ 29:

Զինված ուժերի շտաբը Կապանի հանքերում օրական մի քանի անգամ ճակատներից տեղեկություններ էր ստանում թշնամու տեղաշարժերի մասին: Դրանք հետախույզների հայթայթած տվյալներն էին, կապի միջոցներով տրվող հաղորդումները և տեղեկատվական կետերից լույսերի և նշանների միջոցով ստացվող լուրերը:

Բացառիկ նշանակություն տալով հետախուզությանը՝ Կապարգողթի հրամանատարը նաև խիստ կարևորում էր հակահեղափոխության գործի կազմակերպումը: Նկատի առնելով, որ շրջանում թուրք մեծաքանակ բնակչության առկայությունը թշնամու համար հայկական կողմի մասին ամեն տեսակի տեղեկություն ստանալու բարենպաստ պայման է՝ թշնամու հետախուզությունը եթե ոչ լիովին խափանելու, ապա մեծապես դժվարացնելու նպատակով Նժդեհը ձեռնարկեց անհետաձգելի միջոցառումներ, որոնցից մեկը Կապանի ու Գենվազի մուսուլման բնակչության առավել շարժունակ մասը շրջանից հեռացնելն էր:

Զանգեզուրի հայ հարուստները սովորություն ունեին իրենց տնտեսության մեջ աշխատելու համար վարձելու մոտ ու հեռու վայրերից եկած թուրքերի ու պարսիկների, որոնց զգալի մասը հովիվներ էին: Այդ եկվոր մահմեդական աշխատողների թիվը 1919 թ. վերջին Կապանում ու Գենվազում հասնում էր շուրջ 700-ի: Աշխատանքի բերումով նրանց բացարձակ մեծամասնությունը, հատկապես ոչխարների հոտերն արածացնող հովիվները լինում էին տարբեր տեղերում և դառնում բոլոր շարժումների ականատեսը[1]: Քանի որ այդ աշխատողների մեծ մասի ընտանիքները գտնվում էին իրենց գյուղերում, ուստի նրանք զանազան արդարացուցիչ պատճառաբանություններով անարգել անցնում էին սահմանից այն կողմ ու կրկին վերադառնում: Պարզ էր, որ նրանք իրենց տեսածն ու լսածը կարող էին հաղորդել թշնամուն:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Նժդեհը կարգադրեց արձակել ուրիշ տեղերից եկած ու հայ հարուստների մոտ աշխատող բոլոր մահմեդականներին: Պարսիկ հովիվներն իրենց ընտանիքներով վերադարձվեցին Պարսկաստան, իսկ թուրք և թաթար հովիվները բանտարկվեցին՝ իբրև պատերազմական գերիներ[2]:

1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կապարգողթի բոլոր գյուղերում մեծ աշխատանքներ կատարվեցին ***խրամատներ*** պատրաստելու ուղղությամբ: Խրամատաշինությունը պարտադիր էր ոչ միայն ամեն գյուղի, այլև ամեն ճակատի բոլոր հատվածների համար:

Շաբաթվա որոշված օրերին, ամռան տապին թե ձմռան բքին գյուղացիները՝ տղամարդ, կին, երեխա, բահերով ու բրիչներով, մեկ մարդու պես աշխատում էին: Լեռան զառիթափին կամ ձորի հարթ լանջին, այնտեղ, որտեղ

---

[1] Տե՛ս **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 33-34:

[2] Տե՛ս նույն տեղում:

ցույց էին տալիս հրամանատարները, նրանք խրամատներ էին փորում անտրտունջ՝ լիովին գիտակցելով իրենց ուժը ընդհանուր գործին ի սպաս դնելու անհրաժեշտությունը[1]:

Նժդեհի կարգադրությամբ Կապարգողթի բոլոր գյուղերում կառուցվեցին, այսպես կոչված, ***միջնաբերդեր***՝ հիմնականում քարից ու փայտից, որոնք կռիվների ժամանակ եզակի ծառայություն էին մատուցում: Միջնաբերդ ասվածը բարդ շինություն չէր: Այդպես էր կոչվում նաև բլուրը, որի վրայից հարմար էր հրացանաձգություն կատարելը, գյուղի կողքին բարձրացող և մարտիկների համար պաշտպանական վահան ծառայող մի ժայռակտորը, ժայռափոր անձավը՝ մուտքը շարված քարե պատով և հրացանի փողը դուրս բերելու համար սարքած անցքերով, հարմար դիրքով ծառը, որի վրա դրված գնդացիրն իսկական ավեր էր գործում հարձակվող թշնամու շարքերում[2]:

Իր հրամաններից մեկում (թիվ 2), նշելով խրամատներում և միջնաբերդերում դիրքապահ ծառայության վիճակը, Նժդեհը գրում էր. «1. [Մայիս] 12-ին և 13-ին եղա Զեյվա–Ազարակ ռազմաճակատում: Բոլոր գյուղերը, բացառությամբ Մողեսի, բավարար կերպով տանում են դիրքապահություն: Հյուղեր ունեն ոչ բոլոր պահակախմբերը: Դրությունը պահանջում է ավելի լուրջ վերաբերմունք»[3]:

Գարեգին Նժդեհը հատուկ նշանակություն էր դարձնում ***պայթուցիկ տակառների*** պատրաստմանը, որի արվեստը յուրացրել էր դեռևս 1907 թ. Սոֆիայի զինվորական ուսումնարանում: Եվ ահա այժմ նրա հարուստ գիտելիքները թշնամու համար վերածվում էին դժոխային մեքենաների:

Կապարգողթի հրամանատարը պատրաստել տվեց 10-80 կիլոգրամ ծանրությամբ մետաղե տակառներ, որոնց մեջ լցվում էին երկաթի ու պղնձի կտորներ և ուժանակ[4]: Երբ լուր էր ստացվում, թե թշնամու զորքը պիտի անցնի այսինչ ձորով, որը միակ ճանապարհն էր զորքի համար, 18-20 հոգուց բաղկացած ջոկատը ծանր տակառներ էր բարձրացնում ձորի երկու կողմի ոլորանների գագաթները և սպասում թշնամուն:

Թշնամու զորամասի առաջխաղացման ժամանակ տակառները լեռների ու ժայռերի կատարներից նետում էին ներքև: Գահավեժ անկման ժամանակ դրանք պայթում էին և ահավոր դղրդյունով ծուխ, ժայռի ու մետաղի

---

[1] Տե՛ս **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 32:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 33:

[3] Նույն տեղում, էջ 29:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի գոյամարտը, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 22, *նույնի*՝ Հայ-բոլշևիկյան կռիվները, էջ 47, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 83, **Ռ. Համբարձումեան**, Գարեգին Նժդեհ: Ամբողջական կենսագրութիւն, Երեւան, 2007, էջ 152-153:

կտորներ տարածում չորս կողմը[1]: Հակառակորդի շարքերում ոմանք խլանում էին, ուրիշները՝ ուշաթափվում, շատերն էլ, խուճապի մատնված, անգամ ձեռքերը զենքին չհասցրած, հանձնվում էին: Թշնամու շարքերում տարածված սարսափը աննկարագրելի էր: Երբ թշնամու զինվորները զինաթափված դուրս էին գալիս ձորից և տեսնում, որ իրենց գերողները ընդամենը երկու տասնյակ երիտասարդներ են, նրանց սարսափը տեղի էր տալիս զարմանքի:

Տակառները լցնելու համար պայթուցիկ նյութերի պակաս չէր զգացվում: Դեռ համաշխարհային պատերազմից առաջ Կապանի պղնձահանքերը շահագործող ֆրանս-բելգիական ընկերությունը պայթեցումների համար Շուշի–Գորիս–Կապան խճուղով Հանքեր էր բերել ու պահեստավորել մեծ քանակով պայթուցիկ նյութեր, որոնք Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց ի վեր չէին օգտագործվել՝ հանքախորշերում պղնձաքարի արդյունահանման աշխատանքները դադարեցնելու պատճառով: Ճակատագրի այդ շնորհը անփոխարինելի էր Զանգեզուրի պաշտպանների համար:

Քանի որ տակառների պատրաստման ժամանակ գործածվում էին մեծ քանակի ուժանակներ, ուստի Նժդեհը կարգադրեց դրանք օգտագործել խիստ նպատակային՝ խնայողաբար: Կապանում և Գենվազում եղած ողջ ուժանակը հաշվառման ենթարկվեց և կենտրոնացվեց հուսալի տեղերում: Այսպես, Գենվազի սահմաններն ամրացնելու համար այդ շրջանի տարբեր մասերում գտնվող ամբողջ ուժանակը խրամատաշենների պետ Համազասպ Եպիսկոպոսյանի պատասխանատվությամբ հավաքվեց ու ամբարվեց մի տեղ: Նույն բանն արվեց նաև Կապանի շրջանում[2]:

Պայթուցիկ տակառների պատրաստումը և գործածումը պահանջում էր անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություն, ուստի բոլոր վաշտապետերը Նժդեհից հրաման ստացան այդ գործի մասնագետների տրամադրության տակ դնել 5-ական բանիմաց զինվոր՝ ուժանակային գործն ուսումնասիրելու և ռմբակոծության արվեստը յուրացնելու համար[3]:

«Կրավորական» շրջանի հետաքրքիր ու արժեքավոր նախաձեռնություններից էին զինվորների հայրենասիրական, բարոյական ու մարտական ոգին բարձրացնելուն ու վառ պահելուն ուղղված միջոցառումները:

1919 թ. հոկտեմբերի 23-ին Լիճք գյուղից Նժդեհը արձակեց իր թիվ 4 հրամանը, որը լոկ զորքին ուղղված հայտարարություն չէր, այլ հայոց ազատամարտի ճանապարհին ընկած բազում նահատակների հիշատակին

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի գոյամարտը, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 22, *նույնի՝* Հայ-բոլշևիկյան կռիվները, էջ 47, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 83, **Ռ. Համբարձումեան**, Գարեգին Նժդեհ: Ամբողջական կենսագրութիւն, Երեւան, 2007, էջ 152-153:

[2] Տե՛ս **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 30:

[3] Տե՛ս նույն տեղում:

նվիրված երախտիքի խոսք, անկախության գաղափարին զինվորագրված ***նահատակների ոգեկոչում:***

Հրամանում ասված էր, որ մի շարք երկրներում զորքի մեջ կար մի գեղեցիկ սովորություն, այն է՝ զինվորների անվանացուցակների ստուգման ժամանակ նախ հիշատակել իրենց հայրենիքի ազատության ճանապարհին ընկած հերոսների անունները: Երբ ստուգողը տալիս էր այդ նվիրական անունները, ապա զորաշարքի աջ թևի առաջին զինվորը պատասխանում էր. «Ընկա՛ն»: «Փա՛ռք»,– կրկնում էր շարքի աջ թևի երկրորդ զինվորը: «Հավերժ փա՛ռք»,– ավելացնում էր ամբողջ զորաշարքը[1]:

Նժդեհը նշում էր, որ ազգային նահատակների անունների ամենօրյա հիշատակումը զինվորների շրջանում ստեղծում էր բարոյահայրենասիրական բարձր տրամադրություն, հայրենիքին անձնուրաց հավատարմությամբ ծառայելու ու մեռնելու այնպիսի պատրաստակամություն, ինչպիսին ցուցաբերել են նահատակները: Ուստի Կապան–Գենվազ–Գողթանի զորամասերի պետերին նա հրամայում էր «որդեգրել այդ գեղեցիկ սովորությունը և ամենօրյա ստուգումների ժամանակ հարգել մեր ցեղի ընտիր որդիների խնկելի անունները՝ Քեռի, Խեչո …»[2]:

Մարտիկների բարոյական ոգին բարձր պահելու նպատակին էր ուղղված նաև հրամանատարի կարգադրությամբ Կապարգողթի բոլոր գյուղերում արագ կառուցված պարզ միջնաբերդերին անուններ շնորհելը: Այդ «բերդերը» կոչվում էին այս կամ այն նահատակ հեղափոխականի անունով՝ Քրիստափորաբերդ, Խեչոյաբերդ, Ռոստոմաբերդ և այլն[3]:

Մարտիկների բարոյական ոգու ամրացմանն էր ուղղված զորքի մեջ ներդրված ևս մի հասկացություն. ժողովրդական բոլոր վաշտերն ունեին իրենց «հեղափոխական սրբերը»: Մի վաշտի սուրբը համարվում էր Քրիստափորը, մյուսինը՝ Խեչոն, երրորդինը՝ Դումանը, չորրորդինը՝ Ռոստոմը: Կռվի ժամանակ սրբի ոգին տվյալ վաշտի մարտիկների զորավիգն էր ու պաշտպանը:

Նահատակ հերոսների հիշատակը ոգևորության անշեջ աղբյուր էր երկրի մարտնչող ուժերի համար: Վաշտերի կիսաքաղց զինվորների մեջ այն ստեղծում էր բարոյահոգեբանական բարձր տրամադրություն՝ իրենց վիճակված ծանր գոտեմարտը պատվով վարելու համար[4]:

Այսպիսով՝ 1919 թ. վերջին ամիսներին կատարված վիթխարի աշխատանքի շնորհիվ Կապարգողթը դարձավ անառիկ մի ամրոց՝ պատրաստ դիմակայելու թշնամական բոլոր ոտնձգություններին: Այդ ամրոցի կերտող

---

[1] **Գ. Նժդեհ**, Հրամաններ, կոչեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 414, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 32:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 82:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 82-83:

ուժը ժողովուրդն էր, որի ոգին ու կամքը կոփում էր Զանգեզուր եկած երիտասարդ հայ սպա Գարեգին Տեր-Հարությունյանը, որի առասպելական գործերի մասին շուտով ոսկե տառերով էին գրելու հայ ժողովրդի ազատագրական պայքարի տարեգրության մեջ: Այդ անառիկ ամրոցը, սակայն, չպիտի ծառայեր միայն պաշտպանական նպատակների. այն պաշտպանող վաշտերը պետք է նաև հարձակողական կռիվներ մղեին, լինեին նախահարձակ: Վաշտերին հարձակողական արվեստին հաղորդակից դարձնելը Նժդեհը համարում էր իր ամենակարևոր խնդիրներից մեկը և հասավ իր նպատակին:

1919 Թ. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

«Կրավորական» շրջանի աշխատանքները դեռ լիովին չէին ավարտվել, երբ Կապարգողթը և ողջ Զանգեզուրը ենթարկվեցին թուրք զավթիչների զանգվածային հարձակմանը:

Մուսավաթական բանակի գլխավոր նպատակն էր մեծ ուժերով հանկարծակի հարձակվել Զանգեզուրի վրա ու գրավել այն, բնաջնջել հայ բնակչությանը և գավառը միացնել Ադրբեջանին:

Զանգեզուրի վրա կռվի գնալու նախընթաց օրերին Ադրբեջանի բոլոր գավառներում արագորեն կատարվում էր հավաքագրում, կազմավորվում էին զինվորական ջոկատներ, անցկացվում զինավարժություններ:

Հայկական բանակի՝ Ղարաքիլիսայում տեղակայված երրորդ բրիգադի հրամանատար գնդապետ Նիկոլայ Տիմչենկոն Երևան՝ բանակի հրամանատարին ուղարկած հեռագրով հայտնում էր միլիցիայի գնդի հրամանատարի տեղեկատվությունը. «Ղազախից եկած մի հայ հաղորդում է, որ գավառի գյուղական ամեն մի համայնքից այնտեղ է ուղարկվում 100 զինվոր, որ Ղազախի հրապարակին հարակից տները ռեկվիզիցիայի են ենթարկում՝ զորակոչված 7000 զինվորներին տեղավորելու համար»[1]:

Հաջորդ օրը Ն. Տիմչենկոն նույն հասցեով ուղարկեց երկրորդ հեռագիրը՝ տեղեկացնելով, որ նոյեմբերի 2-ին Ղազախից եկած մի մոլոկան կառապան պատմել է, որ այնտեղ 3 ռուս գնդապետի և հինգ թուրք սպաների գլխավորությամբ արդեն կազմ ու պատրաստ էր ադրբեջանական զորախումբը, և գավառի թաթարական բոլոր գյուղերից Ղազախ էին եկել մեծ թվով կամավոր հեծյալներ[2]:

Նույն ժամանակ ՀՀ արտգործնախարարության գլխավոր քարտուղար Տեր-Հակոբյանը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգուլովին հաղորդում էր, որ Ղազախի շրջանում՝ Բաշքենդ գյուղի մոտ, Ադրբեջանը կենտրոնացնում էր զորքեր և զինում էր տեղի մուսուլմաններին. հավանաբար ցանկանում էր զավթել շրջանի ողջ հայկական մասը, գրավել Սևանա լճի հյուսիսային եզերքը և Զանգեզուրը կտրել Հայաստանից[3]:

Հետախուզությունը հաղորդում էր, որ հոկտեմբերի 16-ին իր շտաբով Շուշի էր եկել օսմանյան նշանավոր զինվորական գործիչ Նուրի փաշան, որը

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 22:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 19:

նույն օրը Խանքենդում հրավիրել էր խորհրդակցություն, որտեղ քննարկվել էին Զանգեզուրի դեմ ռազմական գործողություններ սկսելու հետ կապված հարցեր: Խորհրդակցությունից անմիջապես հետո Խանքենդից դեպի Զանգեզուր էին մեկնել 16 թուրք սպաներ, որոնք, հասնելով նշանակված զորամասեր, անմիջապես սկսել էին զինավարժությունները[1]:

Միաժամանակ մուսավաթականները լայնածավալ հոգեբանական պատերազմ էին սկսել զանգեզուրցիների դեմ: Սուլթանովի հրամանով Զանգեզուրը խաղաղ նվաճելու նպատակով այնտեղ տարածվում էին երեք լեզվով գրված հազարավոր թռուցիկներ, որոնցում կոչ էր արվում «միանալ Ղարաբաղին և նրա հետ խաղաղ ու երջանիկ ապրել ազատ ու դեմոկրատական Ադրբեջանում»[2]:

Հոկտեմբերի երրորդ տասնօրյակի վերջերին Շուշիում ու հարակից տարածքներում արդեն կուտակված էին Ադրբեջանի բանակի կանոնավոր ու ընտիր խոշոր զորամասեր, որոնցում հաշվվում էր 6000 հետևակ զինվոր, երկու հեծելազորային գունդ՝ 800 թրով, 8 թեթև և 4 հաուբիցային հրանոթ, 400 քուրդ հեծյալներ: Այդ տեղեկությունը Զանգեզուրի զինված ուժերի գլխավոր հրամանատար Արսեն Շահմազյանը ստացել էր Շուշիից[3]:

Այն բանից հետո, երբ բանակը հասավ Զաբուղի ձորեր, նրա կազմում արդեն կար ավելի քան 15 հազար մարդ, որից 7000-ը կանոնավոր բանակի զինվորներ էին, որոնց միացել էին 5000 քուրդ և 3000 նախիջևանյան խռովարար[4]: Նույնիսկ այդքանից հետո Ադրբեջանի տարբեր վայրերից Զանգեզուրի մատույցներ էին գալիս նորանոր կանոնավոր զորամասեր և անկանոն հրոսակախմբեր:

Նոյեմբերի սկզբին ադրբեջանական զորքի թիվը հասել էր քսան հազարի: Նրա կազմում էին Ջևանշիրյան առաջին հետևակային գունդը, Ղարաբաղի երկրորդ և Շաքիի երրորդ հեծյալ գնդերը, Զաքաթալայի գնդի երկու գումարտակները (батальоны), լեռնահրետանային երկրորդ դիվիզիոնը, տասներկու թնդանոթային հաուբից և այլն[5]:

Այսպես՝ Զանգեզուր-վայոցձորյան զինվորական օկրուգի պետ, գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանը ՀՀ զինվորական նախարարին հաղորդում էր, որ ըստ իր ունեցած տեղեկությունների՝ հոկտեմբերի 21-ին Բաքվից դուրս է եկել և Եվլախի վրայով Զանգեզուրի դեմ բացվելիք կռվի ճակատ է ուղարկվել Ադրբեջանի բանակի 2-րդ դիվիզիան՝ ռուս գեներալ Ա. Գ. Մականի հրամանատարությամբ[6]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 174, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 188:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 14:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 124, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4-5:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 180:

[6] Տե՛ս նույն տեղում, գ. 50, թ. 174:

Զորամասերն ունեին առատ ռազմամթերք, նրանց մեծ մասի հրամանատարները ռուս և թուրք սպաներ էին: Ադրբեջանական բանակի ընդհանուր հրամանատարն էր ռուսական բանակի հրետանու գեներալ-լեյտենանտ Ալի-Աղա Շիխլինսկին:

Ըստ Բաքվի ծրագրի՝ պատերազմական հիմնական գործողությունները պետք է ծավալվեին Գորիսի շրջանի ուղղությամբ: Այս ճակատում հիմնական նպատակը պետք է լիներ Գորիս քաղաքի գրավումը:

1919 թ. հոկտեմբերի 25-ին Հայաստանի կառավարությունը դիմեց Բաքվում գտնվող բրիտանական գլխավոր կոմիսարին և ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավարին, որպեսզի նրանք, օգտագործելով իրենց հնարավորությունները, մուսավաթական կառավարությանը ստիպեն դադարեցնել զինված ուժերի շարժումը դեպի Զանգեզուրի սահմանները: Սակայն Երևանից ստացված դիմումը չարժանացավ նրանց ուշադրությանը: Ավելին, դաշնակիցների ներկայացուցիչների աչքերի առջև թուրք-մուսավաթական ջարդարարները ահաբեկում էին Գանձակի լեռնային շրջանների Կարաչինար, Մանաշեն, Գյուլիստան, Ազատ, Խարխապուտ, Պարիս և հայկական ուրիշ բնակավայրերի բնակիչներին: Դա գլխավոր փորձ էր Զանգեզուրի վրա հարձակումից առաջ:

Տվյալ իրադրության մեջ Զանգեզուրի զորքերի գլխավոր հրամանատար Արսեն Շահմազյանին ոչինչ չէր մնում անելու, քան պատրաստվել դիմադրության: Գլխավոր հրամանատարը և Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը ոտքի հանեցին ամբողջ Զանգեզուրը՝ Մեղրին, Կապանը, Գորիսը, Սիսիանը: Վաշտերը հավաքվեցին գավառի զինված ուժերի կենտրոնակայանում՝ Գորիս քաղաքում, և այստեղ սկսեցին զինավարժություններ: Գորիսը, Հանքերը, Մեղրին, Ղարաքիլիսան հեռախոսային կապ ունեին բոլոր գյուղերի, իսկ շրջանային բոլոր կենտրոնները՝ Գորիս քաղաքի հետ: Իրենց հերթին սուրհանդակները և դիրքապահ պահակները արթուն հսկում էին թշնամու տեղաշարժերը[1]:

Զանգեզուրի դեմ հարձակում գործելուց երկու օր առաջ՝ հոկտեմբերի 29-ին, ադրբեջանական դիվանագիտությունը կարևոր հաղթանակ արձանագրեց: Այդ օրը Կոստանդնուպոլսում կնքվեց թուրք-ադրբեջանական համատեղ «պաշտպանական և հարձակողական» գաղտնի պայմանագիր, որը հիմնականում ուղղված էր հայերի դեմ: Այդ պայմանագրով Ադրբեջանը բազմակողմանի ռազմական աջակցություն էր ստանալու քեմալական Թուրքիայից[2]:

Ավդալարի և Զաբուղի ձորերում կենտրոնացած մուսավաթական զորամասերի առաջատար ջոկատի պետ ռոտմիստր Իբրահիմբեկովը հոկտեմբերի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 174, գ. 427, մաս II, թ. 240:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 184, թ. 67 և շրջ.:

29-ին 30 հեծյալով մտավ Զաբուղ գյուղ և այնտեղից անմիջապես պատվիրակներ ուղարկեց սահմանային Տեղ գյուղ: Սրանք ժամը 14-ին հասան Տեղ և իրենց պետի անունից գյուղի կոմիսարից պահանջեց ներկայացուցիչներ ուղարկել Զաբուղ՝ նրա հետ բանակցելու:

Այդ մասին գյուղի կոմիսարը շտապ հայտնեց Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդին: Մինչ այնտեղից պատասխան կգար, թուրք պատվիրակները ուսումնասիրեցին փոստային կայանի շենքը և միլիցիայի ուղեկալները:

Շրջանային խորհրդի համաձայնությամբ Գորիսի շրջանի ղեկավարությունը Տեղ գյուղի կոմիսարին հանձնարարեց երեք հոգի ուղարկել Զաբուղ: Ծանոթանալով իր մոտ եկած հայ պատվիրակներին՝ Իբրահիմբեկովը նրանց հանձնեց մի գրություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ես, գլխադասային ջոկատի պետս, գտնվում եմ Ավդալարում: Խնդրում եմ հայտնել ինձ՝ ցանկանու՞մ եք արդյոք ապրել խաղաղ, ճանաչելով Ադրբեջանի իշխանությունը, թե՞ մտադիր եք պատերազմել: Ձեր պատասխանը ես պետք է ուղարկեմ մեր գեներալին»[1]:

Հայ պատվիրակները գրությունը հասցրին Գորիս: Տեղ գյուղում սկսվեցին բանակցություններ Զանգեզուրի ներկայացուցիչների և ադրբեջանական բանակի հրամանատարության կողմից այդտեղ ուղարկված պատվիրակների միջև: Վերջիններս կտրուկ պահանջում էին ճանաչել իրենց կառավարության իշխանությունը Զանգեզուրի վրա:

Տեղեկանալով մուսավաթականների պահանջին՝ գյուղի բնակիչները Գորիս քաղաքից եկած ներկայացուցիչներին առաջարկեցին անհապաղ դադարեցնել բանակցությունները և Ադրբեջանից եկած պատվիրակներին ճանապարհել Զանգեզուրի սահմաններից[2]: Այս ամենի մասին ՀՀ ռազմական նախարարին անհապաղ հեռագրել էր Դարալագյազից Գորիս տեղափոխված, շրջանի արևելյան հատվածի զորամասի հրամանատար Յապոնը (Հովհաննես Պարոնյան)[3]:

Պատրաստվելով հարձակվել Զանգեզուրի վրա՝ Ադրբեջանը իր ագրեսիան հիմնավորելու համար դիվանագիտական լարված աշխատանք էր կատարում՝ օգտագործելով կեղծիքների իր հարուստ զինանոցը: Այսպես՝ հոկտեմբերի 30-ին և 31-ին մուսավաթական կառավարությունը բողոքագրեր ուղարկեց Թիֆլիս ամերիկացի գնդապետ Ջ. Ռեյին, Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Ջ. Ուորդրոպին և Այսրկովկասում ֆրանսիական ռազմական առաքելության պետ, գնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյիին՝ պատերազմական նախապատրաստությունը արդարացնելով նրանով, որ

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 14, նաև՝ ֆ. 204, ց. 1, գ. 134ա, թ. 31:

[2] Տե՛ս «Յառաջ», 1919, 14 նոյեմբերի, թիվ 45, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 338:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 15:

իբր, ՀՀ կառավարությունը, հակառակ Վ. Հասկելի հետ ունեցած պայմանավորվածության, զորքեր է մտցրել Զանգեզուր, որն Ադրբեջանի տարածքն է:

ՀՀ արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ա. Տեր-Հակոբյանը նոյեմբերի 4-ին այս իրադարձությունների մասին տեղեկացրեց Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին:

«Ադրբեջանի խաղացած խաղերը Նախիջևանի հարցում*,– գրում էր Տեր-Հակոբյանը,– անչափ նման են Զանգեզուրի դեպքերին»: Վ. Հասկելի հետ ունեցած համաձայնությամբ Ադրբեջանը պարտավորվել է զերծ մնալ Զանգեզուրի դեմ ակտիվ քայլերից, «բայց օրերս Զաֆարովը** հեռագիր է ուղարկել Ա. Ախվերդովին***՝ խնդրելով հաղորդել Ռեյին, որ այդ համաձայնությունը պետք է համարել չեղյալ, քանի որ հայերը չեն կատարել դրա պայմանները, այն է՝ իրենց զորքերը չեն հանում Զանգեզուրից: Մինիստրությունը (ՀՀ արտգործնախարարությունը: – *Ա. Ս.)* նույն օրը գրություն է ուղարկել Ռեյին՝ բացատրելով, որ հայկական կառավարությունը երբեք այնտեղ չի ուղարկել և այժմ էլ չունի ոչ մի զինվոր, որ այնտեղ եղած ռազմական ուժը տեղի Ազգային խորհրդի կողմից կազմակերպվածն է և ղեկավարվում է Զանգեզուրի կողմից: Անհրաժեշտ է Ռեյի մոտ բացահայտել Ադրբեջանի կողմից սարքված այդ ողջ կատակերգությունը համաձայնագրի շուրջ և համոզել նրան, որ նա այդ մասին հեռագրի Հասկելին՝ Զանգեզուրում սպասվող իրադարձությունների կապակցությամբ»[1]:

Թուրքերի հարձակումից ժամեր առաջ՝ նոյեմբերի 5-ի առավոտյան, ՀՀ վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանը թիվ 148 նամակով դիմեց Թիֆլիս՝ Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Ջ. Օլիվեր Ուորդրոպին՝ Զանգեզուրի վրա Ադրբեջանի նոր հարձակումը կանխելու համար:

Ա. Խատիսյանը դաշնակիցների ներկայացուցիչներին հիշեցնում էր, որ Այսրկովկասում ԱՄՆ գլխավոր կոմիսար գնդապետ Վ. Հասկելի և Այսրկովկասում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջ. Կորիի միջև ձեռք բերած համաձայնագրով արդեն բավական ժամանակ է, որ Զանգեզուրի կառավարումը մինչև Խաղաղության համաժողովի համապատասխան որոշումը թողնված է գավառի հայերին՝ հանձին Զանգեզուրի ազգային խորհրդի:

---

* Նկատի ունի այն, որ 1919 թ. մայիսին դաշնակիցների կողմից Նախիջևանի երկրամասը Հայաստանի Հանրապետությանը միացնելուց շատ չանցած՝ այնտեղի մուսավաթական ուժերը Բաքվի աջակցությամբ բարձրացրել էին ապստամբություն, Նախիջևանում զավթել իշխանությունը և այն ազդարարել Ադրբեջանի անբաժանելի մաս:

** Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ:

*** Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ:

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 18-19:

Ա. Խատիսյանը նշում էր, որ Զանգեզուրի դեմ հարձակման նախապատրաստվելով՝ Ադրբեջանի կառավարությունը սպառնում էր մեծ հրդեհ առաջ բերել Այսրկովկասի ողջ տարածքում՝ խախտելով Փարիզի խաղաղության վեհաժողովի 1919 թ. հունվարի 24-ի հրահանգն այն մասին, որ վիճելի տարածքների նկատմամբ պետք է բացառվեր կողմերից որևէ մեկի ամեն մի ոտնձգություն, և բոլորը պետք է սպասեին Փարիզի խաղաղության վեհաժողովի վճռին:

Ելնելով դրանից՝ Ա. Խատիսյանը Ջ. Ուորդրոպին խնդրեց ճնշում գործադրել Ադրբեջանի կառավարության վրա, որպեսզի արյունահեղությունը կանխելու համար կանգնեցվեր ադրբեջանական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Զանգեզուր[1]:

Ճիշտ է, Ա. Խատիսյանի դիմումը բավական ուշացած էր, բայց եթե նա դիմած լիներ ավելի վաղ, հազիվ թե հնարավոր լիներ ադրբեջանական բանակին հետ դարձնել Զաբուղի ձորից:

Պետք է ասել, որ վրացական կառավարությունը իրադարձությունների զարգացմանը հետևում էր մեծ տագնապով՝ երկյուղ կրելով, որ Զանգեզուրի դեմ Ադրբեջանի ռազմական գործողությունները կարող էին ունենալ աղետալի հետևանքներ նաև Վրաստանի և ամբողջ Այսրկովկասի համար:

Դեռևս հոկտեմբերի 24-ին Վրաստանի Հանրապետության արտգործնախարար Եվգենի Գեգեչկորին շտապ հեռագիր էր հղել Երևան՝ Հայաստանում Վրաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար Գ. Ֆ. Մախարաձեին՝ հայտնելով, որ «Բաքվից Ալշիբայան* հոկտեմբերի 22-ին հեռագրով հաղորդել է (Վրաստանի արտգործնախարարին: – *Ա. Ս.*), որ գեներալ Շիխլինսկու ղեկավարությամբ Զանգեզուրի մատույցներում են գտնվում Ադրբեջանի բանակի ամենաընտիր զորամասերը: Ադրբեջանի զորքերը ճանապարհ են ընկել դեպի Զանգեզուր ամսի 19-ին, մնացած զորամասերը կշարժվեն առաջիկա օրերին՝ Գյանջա–Թարթար–Աղդամ–Շուշի–Գորիս գծով: Գորիսում կա հայկական երկու գումարտակ՝ 4 հրանոթով՝ բեկ Փիրումովի հրամանատարությամբ: Ադրբեջանական զորքերը 10 օրից կարող են լինել [նշանակված] տեղում: Ընդհարումն անխուսափելի է: Խնդրում եմ բոլոր միջոցները ձեռք առնել պատերազմը կանխելու համար: Մենք Ադրբեջանի կառավարությանը հասկացնել ենք տվել, որ ընդհարումը չկանխելու դեպքում դա կդառնա անմիջական պատճառ ողջ Անդրկովկասի կործանման համար»[2]:

Ստանալով այս հեռագիրը՝ Գ. Ֆ. Մախարաձեն անմիջապես պատասխանեց. «Ձեռնարկում եմ բոլոր միջոցները Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղ ելքի համար, բայց հույսը փոքր է: Անհրաժեշտ է գործել Թիֆլիսում և

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 124:

* Ադրբեջանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ:

[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 21:

Բաքվում և համոզել ամերիկացիներին՝ ժամանակավոր կառավարչություն ստեղծել Զանգեզուրում»[1]:

Հայ-ադրբեջանական հնարավոր լայնածավալ պատերազմի վերաբերյալ վրացիների տագնապը զուր չէր: Զանգեզուրի դեմ նետելով իր բանակի ամենամարտունակ կանոնավոր զորամասերը՝ Ադրբեջանը թուլացնում էր երկրի հյուսիսային սահմանները Դենիկինի կամավորական բանակի սպառնալիքի առկայության պայմաններում: Ռուս գեներալը Այսրկովկասում հակառակորդներ էր դիտում Ադրբեջանին ու Վրաստանին և գործերը հաջող դասավորվելու դեպքում ծրագրել էր երկրամասում վերականգնել ռուսական տիրապետությունը՝ հարվածի համար ամենից առաջ թիրախներ ընտրելով նշված երկու հանրապետությունները:

Կամավորական բանակը Այսրկովկասի սահմաններին մոտենալու դեպքում, բնականաբար, իրենց ռազմական ուժերը նրա դեմ պիտի նետեին և՛ Ադրբեջանը, և՛ Վրաստանը: Վրացիների համար պարզ էր, որ Ադրբեջանը, ձեռք չքաշելով Զանգեզուրից և զորքեր կենտրոնացնելով այդ գավառի մատույցներում, փաստորեն, մերկացնում էր իր հյուսիսային սահմանները:

Ընդսմին՝ ադրբեջանական զինված ուժերը թուլացնելու համար գեներալ Դենիկինը հրամայել էր այնտեղ ծառայության անցած ռուս զինվորականներին (առաջին հերթին բոլոր սպաներին) թողնել իրենց ծառայությունը թշնամական երկրի բանակում և անցնել իր տրամադրության տակ:

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլովն այդ օրերին իր կառավարությանն ուղարկած զեկուցագրում նշում էր, որ Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Ջ. Ուորդրոպի հետ ունեցած զրույցի ժամանակ վերջինս զայրույթ է արտահայտել, որ Դենիկինի կամավորական բանակը սպառնում էր Ադրբեջանի անկախությանը: «Դաշնակիցները թույլ չեն տա,– ասել էր նա,– որ Դենիկինը ռազմակալի Ադրբեջանը: Բանը հասել է նրան, որ գեներալն իր հրամանով կարգադրել է բոլոր ռուս զինծառայողներին հեռանալ Ադրբեջանից»[2]:

Դեպքերի նման զարգացումից խիստ անհանգստացած՝ Վրաստանի կառավարությունը դիմեց նորանոր քայլերի:

Արտգործնախարար Ե. Գեգեչկորին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հանձնեց գրություն՝ իր կառավարությանը փոխանցելու համար: Այստեղ կրկին ակնարկվում էր, որ Վրաստանի կառավարության ունեցած տեղեկությունների համաձայն՝ Զանգեզուրի գավառում զարգացող իրադարձությունները անխուսափելիորեն առաջ էին բերելու պատերազմ: Նշվում էր, որ վիճելի հարցերի լուծման նման եղանակը խախտելու էր խաղաղության ամրապնդումը և նվազեցնելու Այսրկովկասի ժողո-

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 22:

[2] Նույն տեղում, ֆ. 1457, ց. 1, գ. 540, թ. 1:

վուրդների ստեղծագործ աշխատանքի ձգտումը, որը և անպայման ունենալու էր կործանարար ազդեցություն երիտասարդ երեք հանրապետությունների ընդհանուր ճակատագրի վրա, որոնց գոյությունը դեռևս չէր ստացել պաշտոնական միջազգային ճանաչում: Նշվում էր, որ այս պատերազմը հավելյալ օղակ կավելացներ ողբերգական երևույթների այն շղթային, որն օգտագործելով՝ ընդհանուր թշնամիները ցանկանում էին նրանց վարկաբեկել քաղաքակիրթ աշխարհի աչքում: Այդ հանրապետությունների միջև նոր ընդհարումներն անվստահության և արդարացի նախատինքների հավելյալ առիթ կտային նրանց, որոնց ձեռքին էր համաշխարհային քաղաքականության կշեռքը:

Միայն Այսրկովկասի ժողովուրդների փոխադարձ համագործակցության, միասնաբար գործելու, ներքին խաղաղության հաստատման միջոցով հնարավոր կլիներ հաղթահարել այն մեծաթիվ խոչընդոտները, որոնք սպառնում էին նրանց անկախ քաղաքական գոյությանը, կենսագործել իրենց արդարացի պահանջները և թշնամիներից խլել այն զենքը, որով նրանք վարկաբեկում էին երեք ժողովուրդների բարի անունը:

Ելնելով այդ ամենից՝ Ե. Գեգեչկորին գտնում էր, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է ամեն ինչ անեին, որ բանը չհասներ արյունահեղության: Գրության վերջում տեղեկացվում էր, որ նմանօրինակ նոտա էր ուղարկվել նաև Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին[1]:

Ե. Գեգեչկորուն ուղարկած պատասխան գրության մեջ Ա. Խատիսյանը նշում էր, որ իր կառավարությունը լիովին համաձայն էր այն տեսակետին, որ այսրկովկասյան կառավարություններն իրենց միջև եղած հակասությունները պետք է հարթեին միայն ու միայն բանակցությունների միջոցով և ջանքերը կենտրոնացնեին խաղաղ տնտեսական ու կուլտուրական շինարարության վրա: Բայց, ցավոք, գրում էր նա, Ադրբեջանի կառավարությունը դեռ չէր հասունացել ըմբռնելու այդ պարզ ճշմարտությունը և շարունակում էր իր զավթողական քաղաքականությունը Զանգեզուրի հանդեպ՝ այդ նպատակին հասնելու համար ծառայեցնելով նաև գավառի մուսուլմանական բնակչությանը: Ա. Խատիսյանը հիշեցնում էր, որ Հայաստանի կառավարությունը նախկինում բազմիցս դիմել էր Ադրբեջանի կառավարությանը՝ նրան կոչ անելով նստել կլոր սեղանի շուրջ և հարցերը քննարկել փոխադարձ հանդուրժողականության պայմաններում, բայց այդպիսի առաջարկներին այդ կառավարությունը պատասխանել էր նոր հարձակումներով Զանգեզուրի վրա[2]:

Դիվանագիտական լարված աշխատանքը արդյունք չտվեց:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 11-ի շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 16 և շրջ.:

Նոյեմբերի 5-ին*՝ լույսը դեռ չբացված, ադրբեջանական բազմահազարանոց բանակը՝ 12000 զինվորներով և 30 թնդանոթներով[1], Գորիսի շրջանի ուղղությամբ ընդհանուր հարձակում սկսեց Զանգեզուրի վրա: Միաժամանակ թուրք հրոսակախմբերը Նախիջևանի կողմից հարձակում գործեցին Վայոց ձորի վրա՝ նպատակ ունենալով այդտեղ կոտրել հայերի դիմադրությունը, Սիսիանի կողմից դուրս գալ գավառի արևմտյան սահմանները և Զաբուղի կողմից հարձակվող ադրբեջանական զորքերի հետ աքցանի մեջ առնել Գորիսի ու Սիսիանի շրջանները:

Առաջինը Զաբուղ գետն անցան և Գորիսի ուղղությամբ առաջացան հետևակ զորամասերը՝ Զաքաթալայի, Գանձակի, Ջևանշիրի և Շաքիի գնդերը: Դրանց հետ էին մոտ 800 հեծյալ և 400 քուրդ ձիավոր: Այդ զորամասերի ռազմական գործողություններն անմիջականորեն ղեկավարում էին գեներալ Իսրաֆիլ բեյ Յադիգարովը և նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի եղբայր Սուլթան բեկ Սուլթանովը[2]:

Թուրք հրամանատարության ռազմական ծրագրի համաձայն՝ հարձակումը կատարվում էր երկու թևով՝ աջ կամ հյուսիսային և ձախ կամ արևելյան: Իր ձախ (արևելյան) թևում՝ Տեղ–Կոռնիձոր գյուղերի հատվածում, թշնամին բռնեց լայն ճակատ: Ա. Շահմազյանը այս ճակատի հրամանատար էր նշանակել փորձված զինվորական, ցարական նախկին բանակի սպա Խաչատուր Մալինցյանին:

Ադրբեջանի զորքերի հարձակումն առաջինն իր վրա զգաց Տեղ գյուղը: Հակառակորդի թնդանոթները գյուղի վրա կրակում էին դիմացի բլրի հետևից: Հրետանակոծությունն այնքան ուժեղ էր, որ հայ մարտիկները չէին կարողանում դուրս գալ խրամատներից: Թուրք հրետանավորները, որոնց ընդհանուր ղեկավարը ռուս սպա Կուզնեցովն էր, թնդանոթները առաջ քաշեցին և ուղղակի դաշտից կրակելով՝ քանդեցին գյուղի տներից շատերը[3]: Քանի որ թուրքերի թնդանոթները մեծ էին, իսկ հայկական կողմի երեք թնդանոթները՝ փոքր, որոշվեց դիմադրել մինչև մութն ընկնելը և այնուհետև անցնել հակահարձակման: Բայց օգտագործելով ուժերի գերակշռությունը՝ հակառակորդը, այնուամենայնիվ, կարողացավ գրավել Կոռնիձոր գյուղը:

Մարտերն այս ճակատում տևեցին չորս օր: Չնայած թուրքերի քանակա-

---

* Հրապարակի վրա եղած գրականության մեջ, չգիտես ինչու, նշված է, որ ադրբեջանական բազմահազարանոց բանակի հարձակումը Զանգեզուրի վրա սկսվել է 1919 թ. նոյեմբերի 1-ին (տե՛ս, օրինակ, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 333 և այլն): Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ թշնամու հարձակումը սկսվել է նոյեմբերի 5-ին:

[1] Տե՛ս «Յառաջ», 1919, 14 նոյեմբերի, թիվ 45, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 338:

[2] Տե՛ս "Борьба", 18 ноября, 1919, № 263:

[3] Տե՛ս **Գ. Գասպարյան**, Հիշողություններ (Ս. Խանզադյանի առաջաբանով ու մեկնություններով): Շարունակություն, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3 (91), էջ 212-213:

կան գերակշռությանը՝ Գորիսի կաղրային զորամասերը Տեղ, Կոռնիձոր, Քարաշեն, Խնձորեսկ և շրջանի մյուս գյուղերի գյուղացիական ջոկատների հետ՝ Արսեն Շահմազյանի, Ռուբեն Նարինյանի, Զաքար Տեր-Ղազարյանի, Համբարձում Սարգիսջանյանի և մյուսների հմուտ ղեկավարությամբ, մեծ համառությամբ դիմադրություն ցույց տվեցին մուսավաթական «վայրի դիվիզիայի» զորամասերին և կանգնեցրին նրանց առաջխաղացումը:

Իրենց փայլուն դրսևորեցին 9-րդ լեռնային մարտկոցի հրետանավորները, որոնք դիպուկ և անվրեպ կրակով ոչնչացրին թշնամու համարյա ողջ թնդանոթախումբը: Դա սարսափի մատնեց թուրքերին և քաջալերեց Զանգեզուրի մարտիկներին՝ նրանց մղելով առաջխաղացման: Թեև հայերի համառ դիմադրության շնորհիվ թուրքերը այս ճակատում դադարեցրին առաջխաղացումը, բայց շարունակում էին ամրանալ Տեղ–Կոռնիձոր գյուղերի միջև ընկած ընդարձակ տափարակում:

Թշնամին ավելի մեծ հաջողության հասավ իր աջ (հյուսիսային) թևում: Այստեղ հայերը ստիպված էին հակառակորդին հանձնել Խոզնավար, Բայանդուր և Խնածախ գյուղերը և նահանջել Գորիս քաղաքը հյուսիսից շրջափակող սարերի ուղղությամբ՝ Հովվի բլուր–Ճաղատ սար (Քաչալ դաղ)–Գառնակ լիճ (Ղազի գյոլ): Բայանդուր–Խոզնավարի ձորերից մինչև Գառնակ լիճ 7-8 կիլոմետր էր: Այս ուղղությամբ շարժվող թշնամու զորախումբը առաջանալով պետք է շրջանցեր Ճաղատ սարից Գորիս տանող ճանապարհը և գրոհով իջներ քաղաքի արևմտյան կողմում տարածվող Եռաբլրի սարահարթը, որից հետո, առանց կանգ առնելու, մտներ Սիսիանի շրջանի Աղուդի, Վաղուդի և Որոտանի կիրճի թուրքական մյուս գյուղերը, ապա գետի հովտով թեքվելով հարավ-արևելք՝ միանար Բարգուշատում գտնվող մուսավաթական մյուս զորամասերին և այդպիսով աքցանի մեջ առներ Գորիսը՝ այն կտրելով Սիսիանի շրջանից:

Մի պահ ոմանք հուսահատվեցին, և թվաց, թե Զանգեզուրի կենտրոն Գորիս քաղաքը փրկելն անհնար էր: Ծանր կացություն և դժվարին հոգեբանական վիճակ ստեղծվեց նաև Զանգեզուրի զինված ուժերի հրամանատարության շրջանում: Արսեն Շահմազյանը նույնիսկ մտածում էր Գորիսը դատարկել բնակչությունից և շտաբը տեղափոխել այլ տեղ, քանի որ քաղաքը գտնվում էր փոսորակում և խիստ աննպաստ էր պաշտպանության համար: Բայց տատանողական վիճակը կարճ տևեց: Նրա մոտ եկան Միքայել (Միշա) Պարոնյանը և Նիկոլայ Հովսեփյանը՝ խորհրդակցելու: Որոշվեց թշնամուն թույլ չտալ՝ մոտենալու քաղաքի բարձունքներին:

Քաջ զանգեզուրցին, որ ամիսներ շարունակ զենքը ձեռքին իր սարերն ու ձորերն էր պաշտպանում, հավաքեց իր ուժերը: Ամբողջ չորս օր Զանգեզուրի լեռներում որոտում էին թնդանոթներն ու գնդացիրները:

Զանգեզուրի զինված ուժերի ընդհանուր հրամանատար Արսեն Շահմազյանի հանձնարարությամբ Սիսիանում տեղակայված հայկական զորամասե-

րի և աշխարհազորային ջոկատների մի մասը՝ Պողոս Տեր-Դավթյանի հրամանատարությամբ, փակեց Ճաղատ սարից դեպի Եռաբլրի սարահարթ իջնող ճանապարհը, իսկ հիմնական ուժերը կենտրոնացան Նախիջևանին հարող տարածքներում՝ այնտեղից հնարավոր հարձակումները կասեցնելու համար:

Դեպի Եռաբլուր տանող սարահարթի ճանապարհը փակած Սիսիանի ուժերը կատաղի կռիվ տվեցին հակառակորդի դեմ և նրան ստիպեցին մտնել պաշտպանական դիրքեր: Պողոս Տեր-Դավթյանն առաջավոր գծում էր և անձնական օրինակով ոգեշնչում էր մարտիկներին*:

Մյուս կողմից՝ Գորիս քաղաքից դեպի հյուսիս մեկնած ջոկատը՝ Նիկոլայ Հովսեփյանի գլխավորությամբ, թուրքերի դեմ կռվի ճակատ բացեց Ճաղատ սարի արևելյան կողմից: Վճռական պահին կապիտան Սիմոն Մելիք-Հարությունյանը (Թոփչի Սիմոն) իր թնդանոթային մարտկոցով դիպուկ հարվածներով ցաքուցրիվ արեց հակառակորդի դիրքերը:

Կռվի երկրորդ օրը Արսեն Շահմազյանը Երևան հայտնեց հետևյալը. «Չնայած հակառակորդի գերակշիռ ուժերին, նրա գնդացրային և ռմբային ուժգին հարվածներին, մերոնք համառ դիմադրում են թշնամու ճնշմանը: Խոզնավարի ուղղությամբ թաթարները նահանջելով Ճաղատ սարից, թողել են յոթ գնդացիր: Գերի ընկած ասկյարի պատմելով՝ հակառակորդն ունի վիթխարի ուժեր»[1]:

Նույն օրը ճակատի հատվածներից մեկում սպանված ռուս սպայի մոտ գտնվել էր մի քարտեզ, որի վրա մանրամասն նշված էին եղել Գորիսի շրջանում ադրբեջանական զորքերի շարժման ուղղությունները, այդ ուղղություններով հարձակվող զորամասերի անուններն ու համարները և նույնիսկ գնդացիրների ու հրանոթների թիվն ու տեսակները: Քարտեզը Զանգեզուրի հրամանատարությանը օգնեց զորքերի տեղաշարժերի միջոցով ժամանակին փակել թշնամու հարձակման ուղիները:

Կռվի հետագա ընթացքի վրա մեծ ազդեցություն գործեց 1918 թ. աշնանը Սիսիանի ժողովրդական կամավորներից Պողոս Տեր-Դավթյանի կազմած հեծելախումբը՝ քաջ ու առնական, ածդահա ուժի տեր երիտասարդ Զաքոյի գլխավորությամբ: Գիշերով երկար ռազմերթ կատարելով՝ հեծելախումբն անցավ Զաբուղ–Ավդալար շրջանի թիկունքը և կռվի երրորդ օրը՝ լույսը չբացված, հանդուգն ու անսպասելի հարվածներով խուճապի մատնեց թուրք զորամասերին, որոնք լքեցին իրենց պաշտպանական դիրքերը և ցրվեցին տարբեր ուղղություններով:

Առավոտյան կողմ Ճաղատ սարի և Հովվի բլրի տարածքների ադրբեջա-

---

* Զուր չէ, որ Սիսիանի ժողովուրդն իր խիզախ հրամանատարին մկրտել էր Քաջ Պողոս անունով: Նա այն բացառիկ հերոսներից էր, որ լեգենդ են դարձել դեռևս իրենց կենդանության օրոք:

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 25:

նական ուժերը, չդիմանալով հայկական ուժերի հզոր հարվածներին, թողեցին մարտադաշտը և սկսեցին անկանոն նահանջել դեպի Գառնակ լճի տարածք, բայց այստեղ նրանք ամրանալ չկարողացան: Սեպաձև խրվելով հակառակորդի դասավորության մեջ՝ հայկական ուժերը դիպուկ հարվածով նրան դուրս քշեցին դիրքերից: Թուրքերը խուճապով սկսեցին իջնել նախօրյակին իրենց գրաված Խոզնավար և Բայանդուր գյուղերի հատվածը: Այստեղ ևս հանդիպելով հայկական վաշտերի փոթորկալի կրակին՝ թուրք ծեծված զորամասերը փախան Զաբուղի ձորերը: Ադրբեջանական զորքերը ջարդվեցին նաև Տեղի և Կոռնիձորի մոտ, որտեղ ամբողջովին ոչնչացավ 2-րդ ձիավոր գունդը[1]:

Խայտառակ փախուստի դիմած և եկած ճամփով գլխիկոր հեռացած ադրբեջանական բանակը կռվի դաշտում թողեց շուրջ 500 դիակ, իսկ թե քանի հարյուր սպանվածների թուրքերն ու քրդերը տարան իրենց հետ, հայտնի չէ: Վիրավորների թիվը, հավանաբար, պակաս չէր 2000-ից: Ավելի քան 150 ասկյար գերի ընկավ: Հայերի ձեռքն անցան մեկ թնդանոթ, 20 գնդացիր, հարուստ ռազմավար[2]:

Նահանջող զորամասերը վրեժ էին լուծում իրենց ճանապարհին հանդիպած հայ գյուղերից, կոտորում բնակիչներին, ավերում շինությունները: Միայն Շուշի–Եվլախ ճանապարհին նրանք սպանեցին ավելի քան 400 միանգամայն անմեղ հայերի[3]:

Գորիսի կռվին մասնակցած բարձրաստիճան թուրք զինվորականներից շատերը խոստովանում էին, որ իրենցից «ոչ ոք չէր կարծում, թե Զանգեզուրում կարող էր այդքան կազմակերպված և ուժգին դիմադրության հանդիպել»[4]:

Քաջ զանգեզուրցիների սխրանքները ադրբեջանական զորքի ու բնակչության մեջ խոր համոզմունք առաջացրին, որ անհնար է հաղթել զանգեզուրցուն:

Ղարաբաղում թուրքերը զանազան երգեր էին հորինում, որոնցից մեկում ասվում էր.

Սև հաց կուտեմ,
Ղարաբաղից դուրս գալ չեմ,
Զաբուղ գետը անցնիլ չեմ,
Զանգեզուր գնալ չեմ[*]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 72:

[2] Տե՛ս նույն տեղում, նաև ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 180, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 333:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 24, թ. 2:

[4] Նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 131-ի շրջ.:

[*] Գարա չյորագ է յարամ,
Ղարաբաղտան չխմարամ,
Զաբուղ չայը քեչմանամ,
Զանգեզուրա գետմանամ:

Զանգեզուրի հաղթական զավակները վերադառնում էին տուն հպարտ, արժանապատիվ կեցվածքով, կռվի դաշտում զոհված տասնյակ հերոսների ցավը սրտերում:

Գորիսյան հերոսապատումը հյուսվեց առաջին հերթին հազարավոր շարքային զինվորների սխրանքներով: Կռիվը ղեկավարող Զանգեզուրի զորքերի ընդհանուր հրամանատար Արսեն Շահմազյանի շուրջն էր համախմբված քաջազուն հայորդիների մի փայլուն համաստեղություն՝ Զանգեզուրի նահանգապետ Սերգեյ Մելիք-Յոլչյանը, Սիսիանի զինուժի հրամանատար, Կապանի Խոտանան գյուղի բնակիչ Պողոս Տեր-Դավթյանը, շուշեցի գնդապետ Ռուբեն Նարինյանը, հրանոթային անձնակազմի հրամանատար, Վայոց ձորի Սերս գյուղի բնակիչ Սիմոն Տեր-Հարությունյանը (Թոփչի Սիմոն), գորիսեցիներ՝ Տաթևի վանքի վանահայր Հովհաննես Տեր-Գրիգորյանը, կապիտան Նիկոլայ Դոնդարովը, պոդպորուչիկ Միխայիլ Մելիք-Օհանջանյանը, Միքայել (Միշա) Պարոնյանը, Զաքար Յոլյանը, Հովհաննես Պարոնյանը (Յապոն), Զաքար Տեր-Դավթյանը, Խաչատուր Մալինցյանը, Ղազար Մալունցը և շատ ուրիշներ:

Ա. Շահմազյանի և զորքերի հրամանատարության կողքին էր Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդը՝ Արշակ Շիրինյանի գլխավորությամբ: Խորհրդի անդամները՝ Նիկոլայ Հովսեփյանը, Գեղեոն Տեր-Մինասյանը, Հակոբ Տերունին և մյուսները, ռազմաճակատի ամենավտանգավոր հատվածներում էին, իրենց ոգեշունչ խոսքով մարտիկներին մղում էին խիզախումների, նրանց հետ գրոհի գնում ոխերիմ թշնամու դեմ:

Չիրականացավ նաև Նախիջևանի կողմից թուրք-տաճիկ զորամասերի հարձակման ծրագիրը Վայոց ձորի վրա: Նրանց՝ այնտեղից Զանգեզուրը շրջապատելու և Հայաստանի Հանրապետությունից կտրելու ծրագիրը մնաց առկախ: Գործողության ռազմական օպերատիվ պլանը կազմել էր ցարական բանակի հեծելազորային զորքերի գեներալ-լեյտենանտ Հուսեին խան Նախիջևանսկին: Նրա ղեկավարությամբ և Վայոց ձորի մուսուլմանական գյուղերի ակտիվ մասնակցությամբ նախիջևանյան թուրքական ուժերին հաջողվեց գրավել Սուլթանբեկ ու Փաշալու հայ գյուղերը՝ նպատակ ունենալով ռազմակալել ողջ գավառը:

Հայկական կողմը, հարձակումը դիտելով ադրբեջանական կանոնավոր զորամասերի կողմից Զանգեզուրը գրավելու ընդհանուր ծրագրի մի մաս, անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկեց թշնամուն հետ մղելու համար[1]: Զանգեզուրի ազգային խորհրդին ուղղած հեռագրում ՀՀ վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանը նշում էր. «Զանգեզուրի վերջին հերոսական կռիվների առթիվ հանրապետության կառավարությունն իրեն պարտք է համարում շնորհավորել Զանգեզուրի քաջարի մարտիկներին և ազատատենչ ժողովրդին այն փառավոր հաղթանակների համար, որ տարան իրենց

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 108:

ստրկացնել ցանկացող թշնամիների դեմ: Կառավարությունը սրտատրոփ հետևում էր կռիվների ընթացքին և հիացմունքով տեղեկանում հայ մարտիկների հերոսություններին, որոնք գալիս էին՝ մի ավելորդ անգամ ևս հաստատելու Զանգեզուրի հայ ժողովրդի ռազմական ոգին և նրա անհողդողդ կամքը՝ ազատ ապրելու:

Հանրապետության կառավարության անունից սրտագին ողջունում եմ հանձին խորհրդիդ՝ Զանգեզուրի քաջարի ժողովրդին և հերոս ռազմիկներին»[1]:

Ադրբեջանի ջախջախված բանակը նոր էր փախել Զաբուղ գետի մյուս ափը, երբ Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին, նոյեմբերի 6-ին իր մոտ հրավիրելով այդ երկրում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, տագնապ հայտնեց, որ եթե Զանգեզուրի հայերը շարունակեն հարձակողական գործողությունները, ծայր կառնի հայ-ադրբեջանական լայնածավալ պատերազմ, որը դամոկլյան սրի պես կկախվի Այսրկովկասի երեք հանրապետությունների գլխին՝ սպառնալիքի տակ դնելով նրանց անկախ գոյությունը:

Վրաստանի կառավարության մտահոգությունների առթիվ հայկական կողմն իր տեսակետը պարզորոշ արտահայտել էր ՀՅ դաշնակցության բանվորական ներկայացուցչական խորհրդի նիստում 1919 թ. նոյեմբերի 7-ին: Նիստը նախագահել էր խորհրդի նախագահ Լևոն Շանթը, լսվել էր վարչապետ Ա. Խատիսյանի զեկուցումը ներկա քաղաքական պահի մասին և ընդունվել բանաձև, որի 3-րդ և 4-րդ կետերը առնչվում էին հայ-վրացական հարաբերություններին:

Այնտեղ նշված էր.

«3. Տարիներ շարունակ պաշտպան կանգնելով հայ ժողովրդի անկախության և ազատության, նույնը ցանկացել ենք նաև իրականացնել մեր հարևան բոլոր ժողովուրդների համար: Եվ այսօր էլ, պաշտպան կանգնելով մեր երկրի անկախության, նույնը հայ դեմոկրատիան ցանկանում է և՛ Վրաստանին, և՛ Ադրբեջանին: Այսօր և հետագայում ցանկանում ենք լինել հաշտ և բարի հարևանական հարաբերության մեջ, որն արդեն իրականացած է Վրաստանի հետ:

4. Խորհուրդը, ողջունելով հայ-վրացական դաշինքը, իր սրտանց ողջույնն է ուղարկում վրաց դեմոկրատիային, իր բարեկամական բազուկն է մեկնում նրան հանուն երկու երկրների ազատության, խաղաղության և դաշինքի անխախտ պահպանման՝ հույս հայտնելով ու ձգտելով հետագայում էլ բոլոր խնդիրները լուծել նույն ճանապարհով»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս II, թ. 373:

[2] Նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 130 և շրջ.:

Չհաշտվելով պարտության իրողության հետ՝ մուսավաթականները մեծ աղմուկ և վայնասուն բարձրացրին: Բաքուն դիմեց Անտանտի ներկայացուցիչ, գնդապետ Վ. Հասկելին՝ բողոքելով, թե Զանգեզուրի հայերն իրենց հարձակումներով շարունակում էին ավերել թուրքական գյուղերը: Ադրբեջանի կառավարությունը պահանջում էր ազդել հայերի վրա, որպեսզի նրանք դադարեցնեն իրենց հարձակումները: Դիմելով Հայաստանի կառավարությանը՝ Վ. Հասկելը պահանջեց ամենախիստ միջոցներով կանխել ընդհարումների նոր փորձերը[1]: Ի պատասխան Վ. Հասկելի պահանջի՝ նրան ուղարկվեց ոչ միայն կառավարության պատասխանը, այլև բանվորական ներկայացուցչական խորհրդի վերոհիշյալ նիստի ընդունած բանաձևը, որում նաև նշված էր. «... Յուրաքանչյուր ժողովուրդ պետք է լինի ազատ իր ազատ հայրենիքում, նրանց շարքում և հայ ժողովուրդը պետք է ունենա իր ազատ հայրենի հողը՝ որպես երաշխիք ազատ աշխատանքի, որ նա կարողանա կառուցել իր անկախ պետական շենքը և որպես հիմքը այդ պետության, նա պետք է ունենա իր տերիտորիան»[2]:

Հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին բանաձևում նշված էր. «Զգտելով հայ-ադրբեջանական բոլոր վեճերը լուծել խաղաղ ճանապարհով, խորհուրդը հավատում է, որ Ադրբեջանի դեմոկրատիան ընդառաջ կգնա Հայաստանի աշխատավորությանը՝ գտնելու մի ընդհանուր լեզու՝ հանուն Անդրկովկասի հանրապետությունների խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի և Անդրկովկասի պետությունների անկախության և անարգել զարգացման»[3]: Նշված էր նաև, որ եթե Ադրբեջանի իշխանությունները չհասկանան, որ զենքի ուժով անհնարին է Հայաստանից խլել Զանգեզուրը, ապա նորանոր աղետներ կբերեն հենց իրենց ժողովրդին: Այնուհետև, անդրադառնալով Զանգեզուրի վրա Ադրբեջանի կատարած հարձակմանը և այն դիմադրությանը, որ ցույց տվեց նրա աշխատավոր գյուղացիությունը, բանաձևը ողջույն ուղարկեց Լեռնահայաստանի հերոսական ինքնապաշտպանական բանակին՝ հայտարարելով. «Զանգեզուրը, իր իսկ ժողովրդի ցանկությամբ, լինելով Հայաստանի Հանրապետության անբաժան մասը, կստանա նրա պաշտպանությունը իր բովանդակ ուժերով: Կառավարությունը կձգտի խաղաղ ու անարյուն լուծել հայ-ադրբեջանական վեճերը, իսկ եթե դա չհաջողվի, ապա ամեն գնով պաշտպան կկանգնի Զանգեզուրին՝ իր հետ ունենալով հայ աշխատավորության բովանդակ ուժերը»[4]:

Վարչապետ Ն. Ուսուբբեկովը նոյեմբերի 14-ին հայտարարեց, որ իր կառավարությունը երբեք «Հայաստանին թույլ տալ չի կարող խառնվելու մեր

---

[1] Տե՛ս Սոցիալ-քաղաքական պատմության ռուսական պետական արխիվ (այսուհետև՝ ՍՔՊՌՊԱ), ֆ. 76, ց. 2, գ. 92, թ. 24:

[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 130:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, թ. 130-ի շրջ.:

ներքին գործերին, ինչը մենք համարում ենք Զանգեզուրի հարցը»[1]:

Միաժամանակ մուսավաթական իշխանությունները փորձեր էին անում դաշնակից տերությունների ներկայացուցիչների մոտ տպավորություն ստեղծելու, թե նախահարձակը իրենք չեն եղել, այլ հայերը[2]: Արտաքին գործերի նախարար Մ. Ջաֆարովը, փորձելով քողարկել իրականությունը, նոյեմբերի 17-ին պաշտոնական հայտարարությամբ ժխտում էր Գորիսի ուղղությամբ մուսավաթական զորամասերի հարձակման փաստը Զանգեզուրի վրա և պարտությունը: Այդ հայտարարության մեջ նա նշում էր. «Զանգեզուրի դեմ Ադրբեջանի կողմից չեն ձեռնարկվել ռազմական գործողություններ, քանի որ այն Ադրբեջանի Հանրապետության անբաժանելի մասն է: Պարզապես ադրբեջանական կառավարությունը նպատակ ունի դադարեցնել հայերի կողմից Զանգեզուրի մուսուլմանական գյուղերի ավերումը և 6000 թշվառացած գաղթական մուսուլմաններին վերադարձնել իրենց օջախները»[3]:

1919 թ. նոյեմբերի 18-ին Ա. Խատիսյանը գրություն ուղարկեց Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ թուրք-ադրբեջանական նվաճողական գործողությունների մասին, որտեղ մասնավորապես նշվում էր, որ «... շնորհիվ Վ. Հասկելի միջամտության՝ Ադրբեջանը արդեն ընդունել է մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջևանի և Գողթանի շրջանները պետք է կազմեն Ամերիկյան նահանգապետություն՝ չեզոք գոտի, մինչև Փարիզի համաժողովի վերջնական որոշումը Կովկասի մասին: Գերագույն կոմիսարի կարգադրությամբ ամերիկյան նահանգապետը Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ հոկտեմբերի 23-ին հանդիսավոր կերպով պետք է մեկներ Նախիջևան, բայց վերջին պահին Ադրբեջանը հրաժարվեց մասնակցելուց այդ հանդեսին՝ միևնույն ժամանակ գաղտնի դիմադրություն կազմակերպելով Նախիջևանի թուրքական ամբոխի կողմից»[4]:

Այնուհետև Ա. Խատիսյանը հիշատակում էր, թե ամերիկյան նահանգապետն անզոր էր իրավիճակի վրա ազդելու: 1919 թ. նոյեմբերի 14-ին ադրբեջանական ոտնձգությունների դեմ կատարված մարտերում հայերն ունեցան որոշ հաջողություններ[5]:

Զինվորականներից մեկի՝ Երևան հղված նամակում նշվում էր. «Չորսօրյա անընդհատ կռիվներից հետո հակառակորդի զորքերը ջախջախված են, մնացորդները փախել են Ղարաբաղ: Արդեն երկրորդ օրն է, ինչ բոլոր ուղղություններով հանգիստ է: Այնուհանդերձ, մենք պետք է պատրաստ լինենք

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 31:

[2] Տե՛ս «Յառաջ», 1919, 22 նոյեմբերի, թիվ 52, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 347:

[3] ՍՔՊՌՊԱ, ֆ. 76, ց. 2, գ. 16, թ. 9:

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, թ. 4, **Հ. Գևորգյան**, Դրո, էջ 525:

[5] Տե՛ս նույն տեղում:

ամեն տեսակի պատահականությունների և ունենանք փամփուշտների պաշար: Հակառակորդը միայն Դիգի (Տեղի: – *Ա. Ս.)* ուղղությամբ կռվում էր 2,5 մլն փամփուշտով: Հակառակորդից առգրավել են 14 գնդացիր և ռազմական այլ պաշարներ: Հեծելազորային գնդերից մեկը, որը գործում էր Գերենզուրի ուղղությամբ, լիովին ոչնչացված է մեր կրակով: Սպանվել է մեկ ռուս սպա, որի դիակը հասցվել է Գորիս: Վաղը զորքերը հանդիսավորությամբ կմտնեն Գորիս: Վերցված է ավելի քան 150 գերի: Գյուղացիները վերցրել են մեծ ավար՝ հաց, շաքար, վրաններ, փամփուշտներ և այլն: Ավարի մեծ մասը մնացել է գյուղացիների մոտ»[1]:

Ադրբեջանի խորհրդարանում չէին դադարում ընդդիմադիր խմբակցությունների անդամների կողմից կառավարության հասցեին արվող քննադատությունները: Սրանք հարցապնդումներ էին անում՝ պարզելու, թե ինչպես է պատահել, որ ռազմական մեծաքանակ զենք-զինամթերք ունեցող բազմահազարանոց բանակը ջախջախիչ պարտություն է կրել՝ տալով հսկայական կորուստներ:

Կառավարությունը թե՛ խորհրդարանում, թե՛ մամուլի էջերում դիմում էր խաբեության՝ թաքցնելով իր կորուստների իրական պատկերը[2]: Բաքվում լույս տեսնող «Օբնովլենիե» թերթի նոյեմբերի 26-ի համարում մեծ ուշացումով տպագրվել էր կառավարական հաղորդագրություն, որտեղ նշված էր. «Բոլշևիկյան-անարխիստական տրամադրություններով տոգորված դաշնակցական հրոսակախմբերի կողմից Զանգեզուրում ավերված մուսուլմանական գյուղերի ավելի քան 6000 փախստականներին իրենց բնակության վայրերը վերադարձնելու, ինչպես նաև Ադրբեջանի այդ տարածքում օրինական կարգը վերականգնելու համար ընդամենը մի փոքրաթիվ զորամաս առաջացել էր Գորիս քաղաքի ուղղությամբ»: Այնուհետև թերթը շարունակում էր. «Զանգեզուրում կարգը վերականգնելու համար այնտեղ ուղարկված զորամասը, բարձրանալով Տեղ գյուղի տարածք, այնտեղ նկատում է ամրացված դիրքեր: Նրանցում դիրքավորված զինված մարդիկ հանկարծակի սկսում են գնդակոծել խճուղին, որով առաջ էր շարժվում զորքը: Մեր պահանջին՝ ազատ ճանապարհ տալ դեպի Գորիս քաղաք՝ դիրքերում գտնվող հրոսակախումբը հրացանային կրակ է բացում:

Այդ պահին լուր է ստացվում, թե Խնածախ և Խոզնավար գյուղերի կողմից շարժվում են հրետանի ունեցող հայկական կանոնավոր զորամասեր: Այդ լուրը մեր ջոկատի հրամանատարին ստիպում է նահանջել դեպի Ավդալար, որը հրետանակոծության է ենթարկվում հակառակորդի կողմից: Մեր հրետանին պատասխան կրակ է բացում և կանգնեցնում թշնամու առաջխաղացումը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 237:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 121 և շրջ.:

Տեղի ունեցած ընդհարումների ժամանակ մեր ջոկատը տալիս է 1 սպանված և 4 վիրավոր, իսկ Խնածախի ուղղությամբ մեզանից սպանվել ու վիրավորվել է 10 մարդ: Հայկական զորամասերը մարտի դաշտում թողել են 40 դիակ, իսկ Տեղ գյուղի դիմաց՝ 30 դիակ: Այնուհետև՝ նոյեմբերի 8-ից մինչև այժմ որևէ մարտական գործողություն տեղի չի ունեցել»[1]:

Սակայն իրողությունը թաքցնել չէր հաջողվում: Կառավարության հասցեին քննադատությունները չէին թուլանում, իսկ հասարակությունը չէր հանդարտվում: Ի վերջո Ադրբեջանի կառավարությունը հրաժարական տվեց, և կազմվեց նոր կաբինետ, որտեղ գերակշռում էր մուսավաթի աջ թևը, իսկ ոչ մի սոցիալիստ այնտեղ չկար[*]:

Զանգեզուրի հայերի տարած փայլուն հաղթանակը մեծապես ոգեշնչել էր արցախահայությանը և, ընդհակառակը, խիստ տագնապեցրել մուսավաթականներին, որոնք սպասում էին նոր ցնցումների: Նրանք քաջ գիտակցում էին, որ իրենց կողմից Արցախի հայերի ժամանակավոր «հնազանդեցումը» չի կարող երկար տևել, և, միևնույնն է, նրանք մեծ գլխացավանք են պատճառելու իրենց: Ուստի Բաքվի կառավարիչները մտահղացան հրապարակ բերել մի անսպասելի առաջարկ. Ադրբեջանի կառավարության անունից Խ. Սուլթանովը Ղարաբաղի հայոց ազգային խորհրդին առաջարկեց արցախահայերին տեղափոխել Նախիջևան, իսկ այդտեղի թուրք բնակչությանը՝ Ղարաբաղ, քանի որ վերջինս կապված էր Ադրբեջանի, իսկ Նախիջևանը՝ Հայաստանի հետ: «Այդ միջոցով միանգամից կլուծվեն և՛ Ղարաբաղի, և՛ Նախիջևանի հարցերը»[2],– ասում էր նա:

Դաշնակիցների ներկայացուցիչները «հարցի լուծման» այդ տարբերակը բացառված չէին համարում:

Մինչ դաշնակիցները խաղաղության կեղծ թե անկեղծ կոչեր էին անում, իսկ Ադրբեջանի նոր կառավարությունը՝ Ն. Ուսուբբեկովի գլխավորությամբ, Զանգեզուրի վրա հարձակումների հերթական ծրագրեր էր մշակում, գավառի հարավարևելյան ռազմաճակատի հրամանատար Գարեգին Նժդեհի կազմակերպած ու կոփած կապարգողության (Կապան + Արևիք + Գողթն) զորքը պատրաստվում էր հրաշագործությունների, որոնց շնորհիվ արմատապես փոխվելու էին թշնամուց մշտապես պաշտպանվող հայերի պատկերացումներն իրենց ռազմական ունակությունների ու հնարավորությունների մասին:

---

[1] “Обновление”, 26 ноября, 1919.

[*] Նոր կաբինետում վարչապետը և ներքին գործերի նախարարը Նասիբ բեկ Ուսուբբեկովն էր, արտաքին գործերինը՝ Ֆաթալի խան Խոյսկին, արդարադատությանը՝ Խալիլ բեկ Խասամեդովը, ֆինանսների և առևտրաարդյունաբերության նախարարը՝ Մամեդ Հասան Հաջինսկին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 32):

[2] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 151:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿՌՎԻ ՆԺԴԵՀՅԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ: ՕԽՉԻԶՈՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Կապարգողթի ազատամարտի կրավորական շրջանը հասել էր իր ավարտին: Այսուհետև ոչ միայն Կապարգողթի, այլև ողջ Զանգեզուրի հայության ազատամարտը կապվելու էր հայ ժողովրդի մեծ զավակ Գարեգին Նժդեհի անվան հետ:

Մինչև 1919 թ. նոյեմբերը զանգեզուրցիները գերմարդկային ջանքերով իրենց լեռնաշխարհը կարողացել էին պաշտպանել թուրք զավթիչների անընդմեջ հարձակումներից: Եվ ահա այժմ Գարեգին Նժդեհը փոխում էր զանգեզուրյան ազատագրական պայքարի մարտավարությունը. ***ինքնապաշտպանական*** մարտերին փոխարինելու էին գալիս ***հարձակողական*** հաղթական կռիվները:

Նժդեհի ղեկավարությամբ Կապարգողթի մարտունակության օր օրի բարձրացումը տագնապի էր մատնել Կապանի և Գենվազի թուրքերին, այդ շրջաններին հարակից տարածքների ադրբեջանական ավազակախմբերին, Օրդուբադի, Զանգեզուրի, Փրչևանի, Մնջվանի խաներին ու բեգերին: Այդ ուղղությամբ մուսավաթական զորքերի հիմնական մարտական առաջադրանքն էր Կապանի շրջանի գրավումը և այն Գորիսի շրջանից անջատելը, թեև նրանց քաջ հայտնի էր, որ դրա իրականացումը հեշտ չի լինելու[1]:

Նժդեհի ձեռքն էր ընկել ադրբեջանական բանակի՝ Կապանի ուղղությամբ հարձակման ռազմական պլանը, որտեղ նշված էր, որ Շահբազյուրդ և Կապուտջուղ բարձրությունները գրավելուց հետո թուրք զորքերը համարյա անարգել պիտի զավթեին Վերին ու Ներքին Կապանները, ապա կապվեին Օխչի ու Գեղվա ձորերի թուրքերի հետ, Զանգեզուրից կտրեին Գողթանը և նրա բնակչությանը նույնպես ենթարկեին բնաջնջման[2]:

Թուրքերը ոչ պակաս ծրագրեր էին մշակել Մեղրիի ուղղությամբ իրենց ձեռնարկելիք արշավանքի հաջող ելքի համար: Այս հատվածին արագ մոտենալու համար նրանք կարճ ժամկետում կարգավորեցին Կարյագինոյից դեպի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 1, թ. 207-ի շրջ., գ. 475, թ. 52, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 72, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 18, **Գ. Գասպարյան**, Հիշողություններ, էջ 213, «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 1919, 21 հոկտեմբերի:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 52, ֆ. 499, ց. 1, գ. 22, թ. 1, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 41, 44, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 311-312, **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 35:

Զանգելան ու Բարթազ լեռան շրջանը տանող ճանապարհը, Բարթազի մոտ՝ Արաքս գետի վրա, կառուցեցին կամուրջ, որպեսզի կիսաշրջան գործելով՝ Իրանի տարածքից ճակատային հարձակում կատարեն Շվանիձորի, Մեղրիի և Կարճևանի վրա: Գրավելով այդ գյուղերը՝ թուրքերը նպատակ ունեին կապ ստեղծել Օրդուբադի հետ: Նժդեհի հակահետախուզությունը պարզել էր, որ Պարսկաստանի խաների միջոցով Ադրբեջանն ամեն միջոց գործ է դնում՝ խաբելու համար Շվանիձորի հայությանը՝ զանազան խոստումներ տալով, որպեսզի ինչ գնով լինի գրավի Օրդուբադի և Բարթազի միջև գտնվող 60 վերստ տարածությունը և ուղիղ կապ հաստատի Բաքվի ու Նախիջևանի միջև[1]:

Ադրբեջանական բանակն իր հարձակման հաջողությունը կապում էր Կապանի շրջանի երկու խոշոր՝ Օխչի և Գեղվա ձորերի թուրք հոծ բնակչության հետ, որը մարտական գործողությունների ժամանակ թիկունքից պետք է հարվածեր հայերին: Ահա թե ինչու Օխչի և Գեղի ձորերը ճակատագրական նշանակություն էին ստացել Կապարգողթի, հետևապես նաև ողջ Զանգեզուրի համար: Այդ ձորերը հայկական գավառի մեջ դարձել էին հուսալի հենակետեր Զանգեզուրը զավթել ձգտող մուսավաթական ագրեսորների և նրանց աջակից թուրքերի համար, որոնք պատրաստություններ էին տեսնում՝ շտապ կոտորելու Գողթանի և Բաղաբերդի հայությանը, տեր դառնալու այդ շրջանների ռազմագիտական տեսակետից կարևոր կետերին: Սովից և թշնամու սպառնալիքներից տանջահար և Կապանի հայկական մյուս մասերից կտրված Գողթանի և Բաղաբերդի հայությունը ողբերգական օրեր էր ապրում[2]:

Կապարգողթի հրամանատարը և Կապանի ազգային խորհուրդը բազմիցս դիմեցին Օխչիձորի թուրք գյուղերի ղեկավարներին ճանապարհները բացելու և ծագած խնդիրները խաղաղ միջոցներով լուծելու առաջարկներով, բայց ձորի ոչ միայն թուրք ղեկավարները, այլև բնակչությունը, ոգեշնչված ու շփացած ոչ միայն ադրբեջանական, այլև թուրք վաշտերի ներկայությունից, լսել անգամ չէին ուզում ճանապարհները բացելու մասին[3]:

Զանգեզուրի նկատմամբ մուսավաթականների քաղաքականությունը քննադատության էր ենթարկվում Ադրբեջանի առանձին կազմակերպությունների և քաղաքական գործիչների կողմից: Խորհրդարանի սոցիալիստական խմբակցությունը, օրինակ, խմբակցություններին առաջարկել էր միացյալ ուժերով ազդել կառավարության վրա և նրանից պահանջել

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 52, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 73, **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, էջ 34:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 42, 44, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 314, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 36, **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսեն Շահմազեան, էջ 31:

[3] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, «Հայրենիք», 1963, յունուար, թիվ 1, էջ 18:

դադարեցնել Զանգեզուրի հետ ընդհարումները, քանի որ այն «հավասար չափով կորստաբեր է երկու հարևան ժողովուրդների համար»[1]:

Ադրբեջանի խորհրդարանի հայ խմբակցությունը ևս իր կողմից մի հուշագիր էր ներկայացրել կառավարությանը և խորհրդարանական բոլոր խմբակցություններին՝ կոչ անելով պահանջել կառավարությունից դադարեցնել Զանգեզուրում մղվող ռազմական գործողությունները[2]: Բայց կառավարությունը ոչ միայն չարձագանքեց հիշյալ բողոքներին, այլև շարունակեց ուժեր կուտակել Զանգեզուրի հարավարևելյան սահմանների ուղղությամբ:

Համբերությունը սպառված էր, և այլևս անհնար էր դանդաղել: Տեղեկանալով թշնամու նոր հարձակման նախապատրաստմանը՝ Հանքերում հավաքվեցին շրջանի վաշտերը: Ելույթ ունեցավ Նժդեհը և կապանցիներին մարտի կոչեց: Աննկարագրելի խանդավառություն էր տիրում: Կապանցիները, հրացաններն ուսած, երդվեցին անմոռանալի դաս տալ հակառակորդին: Ընդհանուր հրամանատարի խոսքերից ոգևորված՝ վաշտերն ուղղություն վերցրին դեպի սահման:

Մեղրիի ուղղությամբ հակառակորդի հարձակումից մեկ օր առաջ, առանց տեղեկացնելու Գորիսի ընդհանուր հրամանատարությանը, Նժդեհը Շվանիձորի, Ափկիսի և Մալևի տեղական ուժերին պատվիրեց, ինչ գնով էլ լինի, գրավել թուրքական Նյուվադի գյուղը, որը թշնամու ներխուժման դեպքում ծառայելու էր որպես ադրբեջանական բանակի գլխավոր հենակետ: Գենվազի վաշտերը սրընթաց գրոհով մտան Նյուվադի: Առանց դիմադրություն ցույց տալու՝ գյուղի թուրքերը փախան ադրբեջանական բանակին ընդառաջ: Նյուվադին դադարեց թշնամու համար հնարավոր հենակետ դառնալուց[3]:

Սակայն այդ օրերին թուրքերի կողմից մեծ հարձակում չեղավ Կապան–Մեղրի շրջանի վրա: Հարձակմանը պատրաստ թուրքական զորքերը հետ քաշվեցին ելման դիրքերը՝ սպասելով հարմար պահի և համալրման:

Երբ Ադրբեջանին չհաջողվեց Մեղրիի շրջանի Նյուվադի գյուղը իր համար դարձնել ռազմաբազա, նա դիմեց ուրիշ միջոցի: Միմյանց զուգահեռ գտնվող Օխչի և Գեղվա ձորերը Գողթանը բաժանում էին Գենվազից: Նախիջևանում թուրքական զորքերի հրամանատար Էդիֆ բեյը Բաքվի թելադրանքով այդ երկու ձորերը հայտարարել էր Ադրբեջանի անվիճելի տարածքներ[4]: Ելնելով դրանից՝ տաճկական երկու վաշտեր՝ իրենց սպաներով, նոյեմբերի 2-ին Օրդուբադից անցել էին Օխչիձոր և տեղում անմիջապես անցկացրել

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 31-ի շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 31:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 52 և շրջ.:

[4] Տե՛ս նույն տեղում: Նաև **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 44, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 314, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 35:

զորահավաք ու զինավարժություններ[1]: Թուրքական վաշտերի մուտքը Օխչիձոր մեծ խանդավառություն էր առաջ բերել տեղի թուրքերի մեջ, որոնք իրենց մարդկային ուժով և նյութական բոլոր հնարավորություններով թիկունք էին կանգնել ցեղակից ասկյարներին: Կապանի շրջանը ակոսող մյուս, էլ ավելի հսկա ձորի՝ Գեղվաձորի թուրքերի հետ համագործակցած՝ նրանք լիովին փակել էին Կապուտջուղի լեռնանցքը, որը Գողթանը Կապանի հետ կապող միակ ճանապարհն էր[2]: Այս իրավիճակում Գողթանում մնացած վեց հայկական գյուղերը և այնտեղ գտնվող Կապարգողթի զորամասը՝ Ղազար Քոչարյանի (Քաչալ Ղազար) հրամանատարությամբ, կմատնվեին սովի[3]:

Նժդեհը չէր կարող անտարբեր դիտել, թե ներքին թշնամին ինչպես է ազատ ու համարձակ պատրաստվում հարվածել հայերի թիկունքին: Նա կարգադրեց գրավել Ալի-Ջանղր անունով բարձունքը, որի ստորոտով անցնող ճանապարհով երկու ձորերը Նախիջևանից ստանում էին զենք ու զինամթերք: Նոյեմբերի սկզբին, երբ զենք-զինամթերքով բեռնված ձիերից ու ջորիներից կազմված մի մեծ քարավան Օրդուբադից անցնում էր Օխչի, Նժդեհի կարգադրությամբ վաշտերից մեկը հարձակվեց և զինաթափեց քարավանը հսկող զինվորներին, իսկ դիմադրողներից չորսին տեղում սպանեց: Տվյալ պահի գրավված ավարը կարևոր արժեք էր ներկայացնում: Այդ դեպքից հետո Օխչիձորի գյուղերի թուրքերը ձեռնարկեցին պաշտպանական ամրությունների կառուցում, փորեցին խրամատներ՝ հայկական վաշտերի հնարավոր հարձակման դեպքում նրանց դիմակայելու համար:

Գնալով Նժդեհի համար պարզ դարձավ, որ առանց ռազմական միջամտության՝ Օխչիի թուրքերը չեն զսպվելու, հետևապես ձորը մնալու էր մշտական սպառնալիք Զանգեզուրի անվտանգության համար:

Օխչիձորի արշավանքի նախօրյակին՝ հոկտեմբերի 30-ին (նոյեմբերի 11-ին)*, Նժդեհը Կապանի հանքերից հետևյալ գրությունն ուղարկեց Գորիս.

«Զանգեզուրի ռազմական ուժերի գերագույն հրամանատարին.

Ղափանի, Գենվազի, ինչպես և ամբողջ Զանգեզուրի համար ճակատագրական նշանակություն է ստացել Օխչիի, Գեղվա ձորի և Շիլարի թրքությունը, որը, սերտ կապ ունենալով Նախիջևանի կառավարության հետ, ամենաեռուն պատրաստությունների մեջ է՝ պատեհ առիթին տեղահան

---

[1] Տե՛ս նույն տեղում: Նաև **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 44, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 314, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 35:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 43, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 313:

* Մեկ այլ ֆոնդում գտնվող փաստաթղթում նշվում է նոյեմբերի 4 (17)-ը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 41, թ. 4:

անելու Գողթանը և զարկելու Զանգեզուրի հայությանը թիկունքից:

Այսպիսի հանգամանքներում դանդաղելը և Հասկելյան* բանակցությունների հետևանքին սպասելը ոչ թե միայն ձգձգած կլինի գործը, այլև գուցե վտանգ[ի] Զանգեզուրի գոյությունը, ինչպես և Գողթանը՝ ընդմիշտ:

Ի նկատի ունենալով այս բոլորը՝ եկել եմ վերջնական համոզման, որ օր առաջ պիտի ձեռնարկվի հիշյալ ձորերի գրավումը: Գողթան–Գենվազ**–Ղափանը ունենալով իմ ղեկավարության տակ՝ այս ճակատի գործողությունները պատկերացնում եմ հետևյալ ձևով.

1) Գենվազը գրավում է Օխչին և շարժվում դեպի Գեղվա ձորը:
2) Ղափանը խփում է Գեղվա ձորին մինչև Ինջաբելի գիծը:
3) Գողթանը գրավելով Խուրսը, Նուրգութը և Թիլլաքը՝ կտրում է Գեղի–Նախիջևանի գիծը:

Իհարկե, անիմաստ կլիներ, եթե միաժամանակ կոնտակտ-գործողություններ չսկսվեն ինչպես Սիսիանի, այնպես էլ Զանգեզուրի*** կողմից: Ինձ թվում է, որ նույն օրն ու ժամին Սիսիանը մի ուժեղ թևով պիտի վերագրավի Նորս–Գիժաձորը և գրավի թրքական Գեչուլուն, իսկ մյուս թևով, միանալով [բուն] Զանգեզուրի ուժերին, վճռական հարված տա Շիլարի ձորին ու, առաջ շարժվելով, խեղդի Գեղին:

Ընդգծելով ընդհանուր գործողությունների կմախքը՝ դետալների մշակումը իմ շրջաններում կազմակերպում եմ ես, իսկ Ձեր շրջաններում, իհարկե՝ Դուք:

Կապիտան Նժդեհ»[1]:

Նոյեմբերի 6 (19)-ին հայերից կազմված մի պատվիրակություն, գալով Հանդ գյուղ, այնտեղ հրավիրեց Օխչիձորի թուրքերի ներկայացուցիչներին՝ բանակցելու համար: Հանդիպման ժամանակ հայերը պահանջեցին տաճիկ և թուրք սպաներին ու ասկյարներին հեռացնել ձորից և անմիջապես բացել Գողթան տանող ճանապարհը: Թուրքերը պատասխանեցին, որ ձորում գտնվող տաճիկ և թուրք սպաներին ու ասկյարներին Նախիջևանի կողմից ուղարկել է Էդիֆ բեյը, հետևապես սրանք կարող են ձորից հեռանալ միմիայն բեյի կարգադրությամբ: Ավելին՝ թուրք պատգամավորները համարձակորեն հայտարարում են, թե Օխչիձորում կա՛մ թուրքերը պիտի ապրեն, կա՛մ հայերը: Այդ հայտարարությունը, ըստ էության, կռվի մարտահրավեր էր: Հայ պատգամավորներին պարզապես մնում էր հեռանալ: Ակնհայտ դարձավ նաև, որ անհրաժեշտ է արագ պատրաստություններ տեսնել՝ ռազ-

---

* Նկատի ունի Այսրկովկասում ամերիկյան գերագույն կոմիսար, գնդապետ Վ. Հասկելին:

** Գենվազ-Մեղրի:

*** Նկատի ուներ բուն Զանգեզուրը (Գորիսի շրջան):

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 22, թ. 1, ֆ. 1457, ց. 2, գ. 41, թ. 4, **Գ. Նժդեհ**, Նամակներ, գրություններ, հեռագրեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 281-283:

մական գործողություններով զսպելու ձորի գյուղերի թուրքերին[1]:

Մինչ հայերը պատրաստություն էին տեսնում իրականացնելու իրենց մտադրությունը, Կապարգողթի՝ Գողթանում գտնվող զորամասի հրամանատար Ղազար Քոչարյանը նամակով Նժդեհին տեղեկացրեց, որ «զորամասը սովից մեռնում է, իսկ ժողովուրդը նույն պատճառով շուտով բռնելու է գաղթի ճանապարհը: Եթե մի քանի օր էլ շարունակվի եղած դրությունը, տեղում ոչ զորամաս կմնա և ոչ էլ ժողովուրդ»[2]: Ուստի այս բոլորը Կապարգողթի հրամանատարությանը ստիպեցին, ինչ գնով էլ լինի, տեղահանել Օխչիձորի թուրքությանը:

Նոյեմբերի 5-ին Օխչիձորի հայ գյուղերից հաղորդեցին, թե այսօր կամ վաղը ադրբեջանական բանակը սկսելու է հարձակումը: Նոյեմբերի 7 (20)-ին հետախուզությունը նաև հայտնեց, որ Օխչիձորի թուրքական գյուղերը կազմ ու պատրաստ են մինչև Ադրբեջանի զորքերի հարձակումը կռիվ սկսել՝ ձորի հայկական գյուղերը վերացնելու համար: Լուրը ստանալուց անմիջապես հետո՝ նոյեմբերի 8 (21)-ին, Նժդեհի կարգադրությամբ մեկ վաշտ բոլորովին անսպասելի բռնեց ձորի մուտքը տիրող բոլոր բարձունքները: Միայն նոյեմբերի 9 (22)-ի լուսաբացին ձորի մուտքին հարող հինգ գյուղերի թուրքերը հասկացան, որ ընկել են ծուղակի մեջ, բայց արդեն ուշ էր: Ուստի նրանք պատգամավորներ ուղարկեցին հայ վաշտերի հրամանատարների մոտ՝ խնդրելով կռիվ չսկսել, միաժամանակ խոստանալով հանձնվել ու զինաթափվել: Պատգամավորությունը հայերի կողմից ընդունվեց սիրալիր[3]:

Ձորի այդ հատվածի թուրքական գյուղերը հանձնեցին ընդամենը 30-40 վնասված հրացան: Այդ «զինաթափման» ընթացքում թուրք ղեկավարները աշխատում էին բարձունքներում գտնվող հայ մարտիկներին իջեցնել դիրքերից՝ հավատացնելով, որ իրենց կողմից բացառված են կռիվն ու դիմադրությունը[4]: Բայց քանի որ թուրքերի խոստումները վստահություն չէին ներշնչում, հայ մարտիկները շարունակեցին մնալ իրենց դիրքերում: Նրանցից միայն մի քանի հոգի ցած իջան՝ ձորի բերանի հինգ գյուղերը զինաթափելու համար: Ուխտադրժությունը իրեն սպասեցնել չտվեց: Չանցած երեք ժամ՝ դիրքերում գտնվող մարտիկները «զինաթափվող» թուրք գյուղերից լսեցին հրացանների կրակոցներ: Տներից ու մարագներից սկսված հրացանաձգությունից սպանվեցին գյուղերն իջած հայ զինվորներից մի քանիսը, իսկ մի քանի հոգի, վերքեր ստանալով, այնուամենայնիվ, կարողացան պաշտպանվելով նահանջել: Երբ այդ ամենը նկատեցին բարձունքների վրա գտնվող հայ զինվորները, հուժկու կրակ բացեցին ներքևում հավաքված թուրքերի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 52-ի շրջ.:

[2] Նույն տեղում, թթ. 52-ի շրջ. - 53:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 53:

[4] Տե՛ս նույն տեղում, թթ. 53:

վրա, և սկսվեց կռիվը, որը տևեց մի ամբողջ օր ու գիշեր: Թուրքերը դիմադրում էին կատաղորեն, մաուզերներից կրակում էին նույնիսկ կանայք: Օխչիձորին օգնության հասան նաև Գեղվա ձորից, հատկապես Փիրմազրա գյուղից[1]: Չնայած այդ ամենին՝ թուրքերը մեծ կորուստներ կրեցին: Պատճառներից մեկն այն էր, որ նրանք տասնյակներով հավաքվել էին մեծ տներում, և երբ հայերը պայթեցնում էին այդ տները, թուրքերը մեծ կորուստներ էին կրում: Նոյեմբերի 10-ին թշնամու դիմադրությունը հաղթահարված էր: Օխչիձորի՝ կռվի մասնակցած հինգ գյուղերից հազիվ կարողացան ազատվել 20 հոգի: Թուրք մի քանի ընտանիքների, որոնք չէին մասնակցել կռվին, հայերը կարողացան փրկել և տեղափոխել Հանքերը[2]:

Օխչիձորի ընկնելուց հինգ օր անց՝ նոյեմբերի 25-ին, Օրդուբադի և Նախիջևանի թուրքերը հարձակում գործեցին Գողթանի Ռամիս, Նասրվազ և Բիստ գյուղերի վրա, բայց երկու օրվա կռվից հետո, թողնելով 70-ի չափ դիակներ և իրենց դրոշակը, նրանք գլխիկոր փախան մարտադաշտից[3]:

Թեև այդ երկու իրադարձությունները առիթ հանդիսացան, որ Ադրբեջանում բարձրանա հիստերիկ աղմուկ, բայց Գարեգին Նժդեհը չունկնդրեց ո՛չ Բաքվի վայնասուններին, ո՛չ էլ «դաշնակիցների» խաղաղասիրական կոչերին. նա որոշեց մի հարվածով Օխչիձորը մաքրել թուրքերից: Օխչիձորի մուտքին հարող թուրք հինգ գյուղերի ավերումը դեռ չէր նշանակում, թե վտանգը չեզոքացվել է: Անհրաժեշտ էր վճռական գործողություններով ձորը մաքրել մնացած թուրք գյուղերից: Գործողության իրականացումը հանձնարարվեց Գենվազի ուժերին: Նժդեհի տված հրամանով Գենվազի երկու վաշտերը՝ մոտավորապես 200 մարտիկներով, հարձակում գործեցին շրջանի Թոփ, Սոբի, Կիմազլու, Ռազիդարա և Քյոլլու թուրքական գյուղերի վրա և ավերեցին[4]: Մի քանի օր անց այդ նույն վաշտերը հարձակվեցին Օխչիձորի ուղղությամբ: Գրավելով բարձունքները՝ Նժդեհի ուժերը իշխող դիրք բռնեցին շրջապատի նկատմամբ՝ ծուղակի մեջ առնելով ձորի թուրքական բոլոր գյուղերը:

Նոյեմբերի 15-ի լուսաբացին Գենվազի վաշտերին օգնության եկան մի քանի տասնյակ կապանցի զինվորներ: Երբ արդեն գրավված էին Օխչիձորի վրա իշխող մյուս բարձունքները, Նժդեհը հրաման տվեց սկսել մարտական գործողությունը: Նույն օրվա առավոտյան վաշտերը մտան ձորը: Հանկարծակիի եկած թուրքական գյուղերի ղեկավարներին առաջարկվեց անհապաղ զինաթափել բնակիչներին, հանձնել թուրք սպաներին ու ասկյարներին և անվերապահորեն ենթարկվել Զանգեզուրի իշխանություններին: Թուրքա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թթ. 53:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 110, թ. 8, **Գ. Նժդեհ**, Նամակներ, գրություններ, հեռագրեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 282, «Վերածնունդ», 1919, 6 դեկտեմբերի, թիվ 39:

[3] Տե՛ս նույն տեղում, նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53, գ. 50, թ. 389:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 9, գ. 77, թ. 3, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 34:

կան գյուղերը մերժեցին ներկայացված առաջարկները[1]:

Սկսվեց մարտը, և հաջողությունն անմիջապես ուղեկցեց հայկական վաշտերին: Գործի դրվեցին պայթուցիկ տակառները, որոնք մահ ու սարսափ էին տարածում հակառակորդի շարքերում: Թուրքերը տվեցին մեծ կորուստներ: Կռվի առաջին իսկ օրը հայկական վաշտերը գրավեցին Շաբադին, Օխչի, Փիրդովդան, Արալըխ, Աթկիզ, Մուսալլամ, Հաջիբու, Ղուշչիլար և Գիլաթաղ գյուղերը[2], որոնց բնակչությունը գաղթեց դեպի Նախիջևան: Մինչև մթնշաղ ամբողջությամբ մաքրվեց Օխչի գետի հովիտը, և շրջանն ամբողջովին անցավ հայերի ձեռքը: Շրջափակումից ազատվեցին ձորի հինգ հայկական գյուղերը: Հայերի ձեռքն անցան նաև որոշ քանակի զենք, ռազմամթերք ու հացահատիկ: Վերականգնվեց հաղորդակցությունը Գողթանի, Բաղաբերդի և Զանգեզուրի միջև[3]:

Օխչիձորը գրավելուց հետո հայկական վաշտերն անցան Գողթան: Այնտեղ անցավ նաև Նժդեհը: Օխչիձորի հաղթանակը և հայկական վաշտերի մուտքը Գողթան ոգեշնչեց տեղի ահաբեկ հայությանը, ամրություն հաղորդեց նրա նվաղած ոգուն:

Դեռևս 1918 թ. հուլիսին, երբ Անդրանիկն իր զորամասով Նախիջևանից հեռացել էր Զանգեզուր, ագուլիսցիներն ընդունել էին Ադրբեջանի հպատակությունը և կառավարվում էին Էդիֆ բեյի կողմից: Օխչիձորի կռվի նախօրյակին Գողթանի Ցոնա գյուղի հայ բնակչությունը նույնպես, հետևելով բժիշկ Գարեգին Սարգսյանի պարտվողական թելադրանքին, պատրաստվում էր ագուլիսցիների օրինակով ենթարկվել Ադրբեջանի կառավարությանը և այդ նպատակով նույնիսկ պատվիրակություն էր ուղարկել Օրդուբադ: Բայց Նժդեհին տեսնելով Ցոնայում՝ գյուղի բնակիչները ոգի առան, հրաժարվեցին Ադրբեջանին ենթարկվելու մտադրությունից և կապվեցին Կապարգողթի հետ[4]:

Օխչիի կռիվը Զանգեզուրում Նժդեհի ծրագրած առաջին հարձակողական գործողությունն էր և, ընդհանրապես, զանգեզուրցիների երկրորդ նախահարձակ գործողությունը Անդրանիկի՝ դեպի Արցախ ձեռնարկած արշավանքից հետո, որը կանգնեցվել էր անգլիացիների կողմից: Օխչիձորի կռվով սկիզբ դրվեցին այն բոլոր հարձակողական գործողություններին, որոնք առաջիկայում ծավալվելու էին Զանգեզուրում:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 45, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 315, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 36:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2-րդ, թ. 389:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 139, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 45:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 42-43, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 313, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 34:

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ (1919 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)

Ինչպես տեսանք, Զանգեզուրի վրա Ադրբեջանի թուրքերի չդադարող հարձակումներին ի պատասխան, գավառի հարավարևելյան շրջանի (Կապարգողթի) հայկական զինված ուժերի հրամանատար Գարեգին Նժդեհին հաջողվեց Կապանը և Օխչիձորը մաքրել խռովարար թուրքերից:

1919 թ. նոյեմբերի վերջերին Զուլի շրջանի թուրքերն իրենց հարձակումներով շարունակում էին վտանգված պահել Զանգեզուրը Ղուշչիբիլակ հայկական գյուղի վրայով Վայոց ձորի հետ կապող ճանապարհը: Հայկական զորամասերը ստիպված էին ուժի դիմել: Զանգեզուրյան երկու վաշտից ու Ղուշչիբիլակի միլիցիոներական գնդից բաղկացած միացյալ ջոկատը 9-րդ լեռնային մարտկոցի հետ հարձակում գործեց Զուլ գյուղի վրա և ավերեց այն:

Բողոքի անհամար հեռագրեր հղելով Այսրկովկասում դաշնակիցների ներկայացուցիչների հասցեներով՝ մուսավաթական կառավարությունը երկրի մուսուլմանների ընկճված ոգին բարձրացնելու համար շարունակում էր նոր հարձակումները Զանգեզուրի և Վայոց ձորի դեմ:

Զանգեզուրում և նրա մատույցներում ծավալված արյունալի կռիվները դաշնակից տերությունների՝ Այսրկովկասում գտնվող առաքելություններին տագնապի էին մատնել, քանի որ դրանք կարող էին Այսրկովկասում վերածվել մեծ պատերազմի, թուլացնել նորաստեղծ անկախ ազգային պետությունները ու ճանապարհ բացել այդ երկրներում խորհրդային կարգերի հաստատման համար:

Այս անգամ ևս հայկական կողմը հանդես եկավ խաղաղ միջոցներով երկու երկրների միջև եղած կնճռոտ խնդիրները հարթելու նախաձեռնությամբ, թեև ինքն էր հաղթանակողը: ՀՀ կառավարությունը դիմեց Թիֆլիսում գտնվող դաշնակիցների ներկայացուցիչներին և առաջարկեց Թիֆլիսում հրավիրել հակամարտող երկրների ներկայացուցիչների խաղաղարար համաժողով:

Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Օլիվեր Ուորդրոպը և ամերիկյան գլխավոր կոմիսար Վիլյամ Նեֆյու Հասկելի տեղակալ, գնդապետ Ջեյմս Ռեյը շտապեցին համաձայնություն տալ Հայաստանի առաջարկին և մտադրվեցին նոյեմբերի վերջին կազմակերպել Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների ղեկավարների հանդիպում՝ երկու երկրների միջև վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար[1]:

---

[1] Տե՛ս «Յառաջ», 1919, 22 նոյեմբերի, թիվ 52, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 347:

Օխչիձորի գործողությունը դաշնակից տերությունների ներկայացուցիչներին ստիպել էր արագացնել երկու վարչապետերի հանդիպումը: Մինչ դաշնակիցների ներկայացուցիչները նախապատրաստական աշխատանքներ էին տանում՝ կազմակերպելու Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների ղեկավարների երկխոսությունը, Ադրբեջանի վարչապետը 1919 թ. նոյեմբերի 17-ին Այսրկովկասում ԱՄՆ գլխավոր կոմիսարի տեղակալ գնդապետ Ջ. Ռեյին ուղարկեց հեռագիր, որում, խեղաթյուրելով իրական փաստերը, հերթական անգամ հինգ մեղադրանքներ ներկայացրեց Հայաստանին, այն է՝ 1. Զանգեզուրը, որը պատկանում է Ադրբեջանին, զավթել են հայերը, 2. անօրինական է Զանգեզուրի ազգային խորհուրդը, 3. Հայաստանը զորքեր է ուղարկել Զանգեզուր, 4. զանգեզուրցի հայերի կողմից Ադրբեջանի դեմ բարձրացրած ապստամբությունը իր բնույթով անարխո-բոլշևիկյան է, 5. Զանգեզուրում տեղի են ունենում բռնադատություններ մուսուլմանների նկատմամբ[1]:

Ջ. Ռեյը Հայաստանի կառավարությանը ծանոթացրեց այդ նամակի բովանդակությանը: Վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանին ժամանակավորապես փոխարինող գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանը Թիֆլիս, գնդապետ Ջ. Ռեյին ուղարկեց հինգ կետերից կազմված պատասխան հեռագիր, այն է՝

Առաջին, մինչ համաշխարհային պատերազմի ավարտը հարձակվող թուրքերի դեմ մղած պայքարում Զանգեզուրը պահպանել է իր անձեռնմխելիությունը:

Այսրկովկասում անգլիական բարձրագույն հրամանատարության վերջին որոշումով Զանգեզուրը թողնվել է տեղի Ազգային խորհրդի ղեկավարությանը՝ մինչև Խաղաղության համաժողովի կողմից նրա հարցի լուծումը: Հայաստանի կառավարությանը ուղարկած իր մայիսի 31-ի նամակում գեներալ Ջ. Կորին* կրկին պաշտոնապես հաստատել է այն փաստը, որ ինքը ադրբեջանական կառավարությանը առաջարկել է ձեռնպահ մնալ Ադրբեջանի իշխանության ազդեցությունը Զանգեզուրի վրա տարածելու փորձերից:

Երկրորդ, դաշնակիցների գերագույն կոմիսար, գնդապետ Վ. Հասկելը Ադրբեջանի կառավարության հետ ունեցած վերջին համաձայնագրով հաստատել է Զանգեզուրի կառավարման գոյություն ունեցող կարգը՝ գավառը թողնելով Զանգեզուրի ազգային խորհրդի ձեռքին:

Երրորդ, Հայաստանի կառավարությունը ոչ մի զորամաս չի ուղարկել Զանգեզուր, իսկ այնտեղ գտնվող զորքը ինքնապաշտպանության համար կազմակերպած միավոր է:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 56:

* Գեներալ-մայոր Ջորջ Նորտոն Կորին Այսրկովկասում բրիտանական ուժերի հրամանատարն էր:

Չորրորդ, Զանգեզուրում Ադրբեջանի կառավարության դեմ ապստամբական ելույթներ չէին կարող լինել արդեն այն պատճառով, որ Ադրբեջանի իշխանությունը չի տարածվել Զանգեզուրի վրա: Ավելին՝ անհասկանալի և տարօրինակ էր Ադրբեջանի վարչապետի՝ Զանգեզուրում իբր տեղի ունեցող անարխո-բոլշևիկյան ելույթների մասին հղումը. մի բան, որը գոյություն չուներ:

Հինգերորդ, Զանգեզուրի մահմեդականների նկատմամբ որևէ բռնություն հայերի կողմից չի կատարվել, ինչը կարելի է ստուգել Զանգեզուրում գտնվող ամերիկյան կապի սպաների միջոցով: Ադրբեջանը բազմիցս փորձեր է արել զավթել Զանգեզուրը զինված ուժով, ըստ որում՝ վերջին հարձակման փաստը չի ժխտում ինքը՝ Ադրբեջանի վարչապետը՝ իր նոյեմբերի 19-ի հ. 4946 գրությամբ[1]:

Նոյեմբերի 20-ին Թիֆլիսում՝ գնդապետ Ջ. Ռեյի առանձնասենյակում, տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի վարչապետեր Ալեքսանդր Խատիսյանի և Նասիբ բեկ Ուսուբբեկովի հանդիպումը:

Խորհրդակցությանը մասնակցում էին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլովը (Եվանգուլյան), Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մամեդ Ռիզա բեկ Վեքիլովը, Վրաստանի արտգործնախարարության ներկայացուցիչները՝ նախարար Եվգենի Գեգեչկորին և պատասխանատու աշխատող Դավիթ Գամբաշիձեն[2]:

Ելույթ ունենալով՝ Ջեյմս Ռեյը նշեց, որ Այսրկովկասում դաշնակից տերությունների ներկայացուցիչները համակարծիք են, որ վիճելի հարցերը պետք է լուծել խաղաղ ճանապարհով: Ինչ վերաբերում է Զանգեզուրի խնդրին, ապա նա արտահայտվեց այն Հայաստանի հսկողության տակ դնելու օգտին՝ առաջ բերելով Ն. Ուսուբբեկովի բուռն բողոքը և Ա. Խատիսյանի գոհունակությունը: Խորհրդակցության սղագրությունը վկայում էր այնտեղ տիրած լարված մթնոլորտի մասին: Ահա սղագրված վիճաբանություններից մի հատված.

«***Ջեյմս Ռեյ***. – Վիճելի հարցերը պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով: Անդրկովկասում Հայաստանի դեմ դարանակալած գործում են Թուրքիայի գործակալները, որոնցից պետք է ազատվել:

Ն. Ուսուբբեկով. – Մենք Զանգեզուրը միշտ համարել ենք Ադրբեջանի մաս:

Ա. Խատիսյան. - Զանգեզուրը տրված չի եղել Ադրբեջանին:

Ջեյմս Ռեյ. - Զանգեզուրը պետք է գտնվի Հայաստանի հսկողության տակ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 66 և շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2, թ. 309, ֆ. 275, ց. 2, գ. 131, թթ. 98-107, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 354, **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, էջ 270-271: Խորհրդաժողովի մասին նաև տե՛ս **Մ. Туманян**, նշվ. աշխ., էջ 256-260:

և պետք է կառավարվի Հայաստանի (արձանագրության մեջ այդպես է, պետք է լինի՝ Զանգեզուրի: – *Ա. Ս.*) Ազգային խորհրդի կողմից՝ համաձայն սահմանված կարգի:

Ն. Ուսուբբեկով.– Ղարաբաղի և Զանգեզուրի վերաբերյալ անգլիացիների որոշումն արտահայտություն էր գտել նրանում, որ բժիշկ Սուլթանովը նշանակվել էր այդ շրջանների գեներալ-նահանգապետ: Դա կարող է ապացույց ծառայել այն բանի, որ անգլիացիներն այստեղ (Զանգեզուրում: – *Ա. Ս.*) ընդունելի են համարել միայն Ադրբեջանի իշխանությունը: Իրականում Զանգեզուրն ու Ղարաբաղը չեն կազմում երկու առանձին մարզեր. Զանգեզուրը հանդիսանում է Ղարաբաղի երեք գավառներից մեկը: Բարդությունները տեղի են ունեցել այն բանի հետևանքով, որ հայկական կառավարությունն այնտեղ է ուղարկել իր գործակալներին և սպաներին, որը հասցրել է հուզումների: Ես պնդում եմ, որ Ղարաբաղի և Զանգեզուրի գավառները հանդիսանում են Ադրբեջանի մասը:

Ջեյմս Ռեյ. – Անգլիացիները Սուլթանովին ժամանակավոր էին նշանակել՝ գերմանացիներին և տաճիկներին Անդրկովկասից վտարելու ժամանակ: Հետագայում Սուլթանովը հետ է կանչվել անգլիացիների կողմից: Հետո նա վերադարձել է Շուշի, բայց դրա համար անգլիացիների կողմից չլիազորված: Սուլթանովը դեռ գտնվում է Ղարաբաղում՝ առանց անգլիացիների կողմից լիազորություն ունենալու:

Ն. Ուսուբբեկով. – Սուլթանովը նշանակված է եղել ոչ թե անգլիացիների կողմից, այլ նշանակում է ստացել Ադրբեջանի կառավարությունից՝ անգլիացիների համաձայնությամբ:

Ա. Խատիսյան. – Գեներալ Կորին իր նամակում հայտնել է, որ համաձայն սկզբնական որոշման, ենթադրվում էր Զանգեզուրը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ և դնել նրա կառավարման տակ: Բայց հետագայում կայացվել է այդ վերջին որոշումը (Զանգեզուրը Հայաստանի կառավարման տակ դնելու մասին: – *Ա. Ս.*), որին պետք է խստորեն հետևել:

Ն. Ուսուբբեկով. – Ես ոչինչ դեմ չունեմ Զանգեզուրի հսկողությունը Հայաստանին վերապահելու* այնպես, ինչպես Ղարաբաղում հսկողությունը Ադրբեջանին թողնելու: Պահանջում եմ, որպեսզի Հայաստանը հանի Զանգեզուրից իր բոլոր կանոնավոր զորքերը և այնտեղ գտնվող ռազմական գործակալներին:

Ա. Խատիսյան. – Զանգեզուրին շրջապատող պայմանները դեռ թշնամական են: Չէի ցանկանա ժողովրդին խորհուրդ տալ հանձնել իր զենքերը: Ղարաբաղի հարավային (պետք է լինի՝ արևելյան: – *Ա. Ս.)* մասում գտնվում

---

* Սա առաջին դեպքն էր, որ բարձր պաշտոն զբաղեցնող ադրբեջանցի մի պաշտոնյա, այն էլ վարչապետի մակարդակով, Զանգեզուրը համարում էր Հայաստանին պատկանող տարածք:

են քրդական ցեղեր, որոնք շատ թշնամական են (հայերի հանդեպ: – *Ա. Ս.),* և մենք պետք է շատ զգույշ լինենք»[1]:

Խորհրդակցության ավարտին՝ նոյեմբերի 23-ին, Թիֆլիսում Ա. Խատիսյանի, Ն. Ուսուբբեկովի, Ե. Գեգեչկորու և Ջեյմս Ռեյի ստորագրությամբ կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ դադարեցվում էին թշնամական գործողությունները Հայաստանի ու Ադրբեջանի միջև և հաստատվում խաղաղ հարաբերություններ: Նախատեսվում էին բացել Զանգեզուր տանող ճանապարհները և վերականգնել երթևեկությունը: Համաձայնագրի 3-րդ կետով նախատեսվում էր երկու երկրների միջև վիճելի, այդ թվում՝ սահմանների հարցերը խաղաղ միջոցներով լուծելու համար 1919 թ. դեկտեմբերին Բաքվում և Թիֆլիսում հրավիրել համաժողով: Նույն կետով սահմանվում էր, որ համաժողովում տարաձայնություններ առաջանալու դեպքում միջնորդի դեր կարող է ստանձնել Ջեյմս Ռեյը[2]:

Եթե ամփոփ ներկայացնենք համաձայնության ընդհանուր բովանդակությունը, ապա երկու վարչապետերը որոշել էին կռիվը դադարեցնել, Զանգեզուրի հարցը թողնել նախկին վիճակին, իսկ մնացյալ խնդիրները քննելու համար Բաքվում հրավիրել խորհրդաժողով[3]:

Վարչապետ Ա. Խատիսյանը Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը հեռագրով տեղեկացնում էր. «Դաշնակիցների գերագույն կոմիսարի նախագահությամբ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների նախագահները եկել են փոխադարձ համաձայնության, որով թշնամական գործողությունները դադարեցվում են անմիջապես, դեպի Զանգեզուր գնացող ճանապարհները բացվում են, վիճելի հարցերը կարգավորվում են նրանց ընդհանուր համաձայնությամբ՝ անհրաժեշտության դեպքում դիմելով Գերագույն կոմիսարին»[4]:

«Այս համաձայնությամբ,– գրել է Սիմոն Վրացյանը,– վերջ գտավ Զանգեզուրի արյունահեղությունը, որ քիչ մնաց պատճառ դառնար հայ-ադրբեջանյան պատերազմի»[5]:

«Ազերբայջան» թերթը 1919 թ. թիվ 231-ի առաջնորդող հոդվածում գովերգվում էր նոյեմբերի 23-ին կնքված համաձայնագիրը՝ այն համարելով «պատմական առաջին օրինակը, որում ժողովուրդների առողջ բնազդը հաղթեց թշնամիների մութ զգացումներին»: Թերթի խմբագրությունը միաժամանակ չէր մոռացել ավելացնել. «Զանգեզուրի գավառի բնակիչները

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2, թ. 310:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 311, տե՛ս նաև գ. 282, թթ. 35-36, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 367-368:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թթ. 35-36, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 334-335:

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2, թ. 325 և շրջ.:

[5] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 354-355:

հանդիսանում են Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիներ»[1]:

Նույն թերթը հաջորդ օրվա համարում զետեղում էր «Դաշնակների ինտրիգները Զանգեզուրում» ծավալուն հոդվածը՝ «Φ. A.- B» ստորագրությամբ: Հոդվածագիրը նախ անդրադարձ էր կատարում Երևանում հրատարակվող ՀՅԴ օրգան «Յառաջ»-ում լույս տեսած, Զանգեզուրի իրադարձություններին նվիրված հոդվածին, որում շեշտված էր. «Զանգեզուրի հետ կլինի ողջ Հայաստանը իր մարտական ու բարոյական բոլոր միջոցներով: Հայաստանը երբեք թույլ չի տա, որ իր անբաժանելի մաս կազմող Զանգեզուրը զավթվի ադրբեջանական զինվորների կողմից»[2]:

«Անբաժանելի մաս» բառակապակցությունից հետո դնելով հարցական նշան՝ հոդվածի հեղինակը կրկնում էր մուսավաթականների կողմից բազմիցս ծեծված այն մեղադրանքը, թե Զանգեզուրի շուրջ ստեղծված բոլոր թյուրիմացությունների պատճառը դաշնակների ստեղծած Գորիսի ազգային խորհուրդն էր, որը, իրեն ապօրինաբար կարգելով ղեկավար մարմին, Զանգեզուրը հայտարարել էր Հայաստանի մաս, թեև այն եղել է և կմնա որպես Ղարաբաղի գավառներից մեկը: Այնուհետև նշվում էր, որ Գորիսի դաշնակցական բռնապետության ոչնչացման համար անհրաժեշտ է իրենց կառավարության տրամադրության տակ եղած բոլոր միջոցները զորահավաքի ենթարկել:

Հոդվածագիրը նշում էր, որ անհասկանալի է, թե ինչ տվյալների հիման վրա է «Յառաջը» Զանգեզուրը համարում Հայաստանի անբաժանելի մաս, և այնուհետև «հիմնավորում էր», թե ինչու գավառը Ադրբեջանինն է, այլ ոչ թե Հայաստանինը: «Գավառում հայերի թվի գերակայություն ստեղծելու համար,– գրում էր նա,– դաշնակները Զանգեզուրում (Անդրանիկի այնտեղ գտնված ժամանակից սկսած: – *Ա. Ս.)* ոչնչացրել են ոչ պակաս 100 մուսուլմանական գյուղ: Բայց այդ անմարդկային արարքը հայերին չի տվել ցանկալի էթնիկ գերակշռություն»:

Այնուհետև, թերթը (այս էլ քանիերորդ անգամ) «փաստարկում» էր, թե Զանգեզուրը «աշխարհագրականորեն» կապված չէր Հայաստանի հետ: «Սիսիանի հատվածը, որով անցնում է խճուղին, երկար ձմռանը ծածկվում է ձյան հաստ շերտով և այդ իսկ պատճառով դադարում է ամեն տեսակի հաղորդակցություն Երևանի հետ: Պատահական չէ, որ ռուսական կառավարությունը, ձևավորելով Անդրկովկասի գավառները, տասնյակ անգամ չափ ու ձև անելով, չի գտել այլ ելք, քան Զանգեզուրը խմբավորել Ելիզավետպոլի մյուս գավառների հետ: Զանգեզուրը հանդիսանում է ղարաբաղյան քոչվորների մշտական էյլաղը, մի բան, որ հաստատել են նախկին խաները, ապա և ռուսական իշխանությունները»[3]:

---

[1] “Азербайджан”, 28 ноября, 1919, № 231.

[2] Նույն տեղում, 29 ноября, 1919, № 232:

[3] Նույն տեղում:

«Ազերբայջան» թերթը նոյեմբերի 30-ին տպագրել էր ներքին գործերի նախարարության հայտարարությունը՝ ուղղված «Ադրբեջանի Հանրապետության Զանգեզուրի գավառի քաղաքացիներին»: Նախարարությունը ազդարարում էր, որ Զանգեզուրը եղել և մնալու է իր մայր հայրենիքի՝ Ադրբեջանի անբաժան մասը, և դաշնակցական ոչ մի «ավանտյուրա» չի կարող հասնել իր նպատակին[1]:

Այդ առթիվ Ա. Խատիսյանը Ադրբեջանի արտգործնախարար Մ. Ջաֆարովին հղեց բողոքի նոտա, որում ասված էր, որ մուսավաթական կառավարության հայտարարությունը նոյեմբերի 23-ին Թիֆլիսում երկու հանրապետությունների կառավարությունների միջև կնքած համաձայնագրի ուղղակի խախտում էր, որը հղի էր անցանկալի բարդություններով: «Ես իմ կառավարության անունից վճռական բողոք արտահայտելով Ձեր կառավարության միակողմանի ակտի դեմ, միաժամանակ ինձ թույլ եմ տալիս համոզմունք հայտնելու, որ Ձեր կառավարությունը, կոնֆերանսի արդյունավետ աշխատանքի և երկու հանրապետությունների մերձեցման շահերից ելնելով, ձեռնպահ կմնա նշված ակտը կյանքում կիրառելուց, որը միանգամայն անհամապատասխան է կառավարությունների միջև կայացած համաձայնությանը և գոյություն ունեցող իրական վիճակին»[2]:

Հայաստանի և Ադրբեջանի միջև պաշտոնապես պատերազմ չէր հայտարարված, բայց գոյություն ունեցող վիճակը պատերազմականից ոչնչով չէր տարբերվում: Շարունակվող դիվանագիտական առճակատումները մեղմելու և տարակարծությունները հարթելու համար դաշնակիցների ներկայացուցիչները, Ա. Խատիսյանի և Ն. Ուսուբբեկովի միջև նոյեմբերի 23-ին Թիֆլիսում կնքած համաձայնագրի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն, նշանակեցին երկու հանրապետությունների ներկայացուցիչների հանդիպում:

Ադրբեջանի կառավարությունը սկզբում առարկում էր հանդիպել Հայաստանի ներկայացուցիչների հետ: Մուսավաթ պատգամավորները խորհրդարանում այդ հարցի քննարկման ժամանակ հայտարարել էին. «Հանդիպում կազմակերպելու գաղափարը, որ առաջ է քաշվել հայերի կողմից, մի շախմատային խաղ է, որ նրանք ուզում են օգտագործել՝ իրենց գործերը կարգավորելու համար»[3]:

Բաքու մեկնելու համար Հայաստանի կողմից պատգամավորներ նշանակվեցին Մարտիրոս Հարությունյանը, Տիգրան Բեկզադյանը և Վահան Փափազյանը: Վերջինիս հիվանդության պատճառով նրան փոխարինել էր Հովսեփ Արղությանը, որը Բաքվի վրայով մեկնում էր Թեհրան՝ իբրև Պարսկաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան: Ադրբեջանական պատ-

---

[1] Տե՛ս “Азербайджан”, 30 ноября, 1919, № 233:

[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 126:

[3] Նույն տեղում, թ. 151-ի շրջ.:

գամավորության կազմի մեջ էին Ֆաթալի Խան-Խոյսկին, Մամեդ Հասան Հաջինսկին և Ռահիմ բեկ Ալի օղլի Վեքիլովը: Որպես իրազեկ անձ՝ նիստերին ներկա էր լինելու նաև Խալիլ բեյ Խասմամեդովը[1]:

Բաքվի խորհրդաժողովի նախօրյակին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Ադրբեջանի առաջարկների դեմ կազմեց «Առարկություններ» վերնագրով փաստաթուղթը և ներկայացրեց Բաքու գնացող հայ պատվիրակությանը: Յոթ կետից և մի քանի ենթակետերից բաղկացած այդ փաստաթղթում ներկայացված էին Հայաստանի անհամաձայնությունները վիճելի տարածքների նկատմամբ Ադրբեջանի ունեցած հավակնությունների ու գործողությունների վերաբերյալ: Առանձնակի ուշադրություն էր դարձված Զանգեզուրի խնդրին: Փաստաթղթի 4-րդ կետով հայկական պատվիրակությանը խորհուրդ էր տրվում խորհրդաժողովում վճռականորեն մերժելու Զանգեզուրը զինաթափելու Բաքվի պահանջը: Այնտեղ ասված էր. «Հայաստանի կառավարությունը ներկա մոմենտում իր համար անհնարին և աննպատակահարմար է գտնում առաջարկել Զանգեզուրի ազգային խորհրդին, որը հանդիսանում է տեղական կառավարման մարմին, զինաթափվել, քանի որ չկա որևէ երաշխիք, որ տեղի կամ շրջակայքի մուսուլմանական բնակչությունը հարձակումներ չի կատարի, չկա ոչ մի երաշխիք, որ Շարուրի, Նախիջևանի և Օրդուբադի բազմաթիվ թնդանոթներն ու գնդացիրները չեն ուղղվի նրանց (զանգեզուրցիների: – *Ա. Ս.)* դեմ: Մենք չենք կարծում, որ այդ պայմաններում, նման հոգեբանական մթնոլորտում հնարավոր կլինի այդ հարցում ազդել Զանգեզուրի տեղական ղեկավարության վրա»[2]:

«Առարկությունների» 5-րդ կետի 4-րդ ենթակետում շեշտված էր, որ երբեք չի կարելի համաձայնել, որ Զանգեզուրից փախած մուսուլմանները վերադառնան իրենց բնակավայրերը, ինչպես պահանջում է Բաքուն: «Մենք հաստատ համոզված ենք,– նշված էր փաստաթղթում,– որ Ադրբեջանի կառավարությունն այդ միջոցով նպատակ ունի, ի դեմս մուսուլման փախստականների, Զանգեզուր մտցնել 15000-ից մինչև 20000 զինված մարդկանց (նա ինքն է նրանց զինում), որպեսզի նվաճի [գավառը] ներսից»[3]:

Փաստաթղթի 6-րդ կետով այն կազմողները դեմ էին արտահայտվում խորհրդաժողովը Ադրբեջանի մայրաքաղաքում կազմակերպելուն. «Մենք սկզբից համաձայնվել ենք կոնֆերանսը Բաքվում անցկացնել: Բայց ներկա հոգեբանական պայմաններում և մթնոլորտում, որը կա Բաքվում, մենք չենք համարում բարենպաստ հանգիստ աշխատանքի համար և այդ տեսակետից հարմար է չեզոք քաղաք: Մյուս կողմից Թիֆլիսը, գտնվելով միատեսակ հեռավորության վրա Հայաստանից և Ադրբեջանից, հարմար է երկու կողմերի

[1] Տե՛ս **Գ. Լազեան**, նշվ. աշխ., էջ 137:
[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 65:
[3] Նույն տեղում, թ. 66:

անձնական հարաբերությունների համար: Վերջապես, մենք կցանկանայինք, որ դաշնակիցները մոտ լինեին* և հաճախ տեղեկանային կոնֆերանսի աշխատանքների մասին»[1]:

Վերջապես, 7-րդ կետով փաստաթուղթը անդրադառնում էր այն հարցին, թե Զանգեզուրի անվտանգության համար որքան կարևոր էր Շարուր–Նախիջևանի խնդրի անկողմնակալ լուծումը: «Ինչ վերաբերում է Շարուրին ու Նախիջևանին, մենք պնդում ենք այն պայմանների վրա, որոնք մշակվել են դաշնակիցների կողմից, այն է՝ ազատագրել այդ շրջանը Ադրբեջանի տիրապետությունից, որը հանդիսանում է լուրջ վտանգ Հայաստանի համար և այն դարձնել չեզոք գոտի: Շարուրն ու Նախիջևանը անվտանգ ձեռքերում դնելը (այսինքն՝ այդ տարածքներից չեզոք նահանգապետություն ստեղծելը և նրա կառավարումը ամերիկացի նահանգապետի հանձնելը: – *Ա. Ս.)* համարում ենք ամենաամուր երաշխիքը Զանգեզուրի, Գողթանի և Դարալագյազի համար»[2]:

Դեկտեմբերի 14-ին Բաքվում բացված խորհրդաժողովի օրակարգում դրված էին մի շարք կարևորագույն հարցեր՝ 1) սահմանների հարցը, 2) երկաթուղային ու առևտրական պայմանագրերը, 3) գաղթականների վիճակի կարգավորումը, 4) երկու հանրապետությունների քաղաքացիների դատաստանական-իրավական հարաբերությունների կարգավորումը, 5) հյուպատոսական հարցը[3]:

Խորհրդաժողովի աշխատանքներն անցնում էին ծանր մթնոլորտում: Կողմերից ոչ մեկը, հատկապես ադրբեջանական կողմը, տրամադիր չէր գնալու փոխզիջումների ոչ միայն օրակարգային, այլև դրանից դուրս բարձրացված հարցերի շուրջ:

Այսպես՝ խորհրդաժողովում Ադրբեջանի պատվիրակությունն առաջարկեց երեք հանրապետություններից կազմել համադաշնակցություն: Մինչ այդ նման առաջարկ, մանավանդ Վրաստանի կողմից, եղել էր մի քանի անգամ: Այդ առաջարկի գլխավոր նպատակն էր միացյալ ուժերով դիմադրել հյուսիսից սպասվող ռուս սպիտակգվարդիական կամավորական կամ բոլշևիկյան բանակների առաջխաղացմանը: Հայ պատվիրակները վաղաժամ նկատեցին այդ առաջարկը, քանի որ Հայաստանի սահմանները դեռ ճշտված ու ճանաչված չէին:

Խորհրդաժողովն ընդհատեց իր աշխատանքները, որպեսզի օրակարգային հարցերի շուրջ առաջացած խնդիրները երկու կողմերի պատվիրակները համաձայնեցնեն իրենց կառավարությունների հետ, ինչպես նաև տեղ-

---

* Դաշնակիցների կենտրոնատեղին Թիֆլիսն էր:

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 66:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս «Յառաջ», 1919, 20 դեկտեմբերի, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 352, թ. 40, գ. 427, մաս 1, թթ. 48-54, **Գ. Լազեան**, նշվ. աշխ., էջ 137, **Ց. Ղույյան**, նշվ. աշխ., էջ 283-291:

յակ պահեն խորհրդարաններին: Հայ պատվիրակները մեկնեցին Երևան՝ նոր հրահանգներ ստանալու և խորհրդաժողովը Թիֆլիսում շարունակելու համար[1]:

Տեղերում խնդիրների քննարկումը ձգձգվում էր, որովհետև երկու հանրապետությունների շահերը հնարավոր չէր համատեղել: Չէին դադարում նաև ընդհարումները:

Այնուամենայնիվ, Թիֆլիսում վերսկսվեցին խորհրդաժողովի աշխատանքները՝ Այսրկովկասի երեք հանրապետությունների արտաքին գործերի նախարարների մակարդակով: Այս անգամ էլ կողմերը չկարողացան որևէ համաձայնության գալ[2]: Այդ նույն միջոցին Ադրբեջանը, գաղտնի դաշնակցելով քեմալական Թուրքիայի հետ, պատրաստվում էր նվաճել Զանգեզուրը: Թուրքերը պարբերաբար գնդակոծում էին Կապանի շրջանի Զեյվա գյուղը, հարձակումներ գործում Գորիսի շրջանի Ճաղատ սարի ուղղությամբ: Նրանք հատկապես արյունալի ոճիրներ կատարեցին Գողթանի Ագուլիսներում:

Հայաստանի այսպես կոչված «դաշնակիցներն» իրենց կայուն տեսակետը չունեին Զանգեզուրի հարցի վերաբերյալ: Թե՛ անգլիացիները, թե՛ ամերիկացիները հաճախ իրարամերժ տեսակետներ էին հրապարակ բերում: Եթե 1919 թ. ամռանը Այսրկովկասում ԱՄՆ գլխավոր կոմիսար Վ. Հասկելը անվերապահորեն կողմ էր Զանգեզուրի կառավարումը գավառի Ազգային խորհրդին թողնելուն մինչև Փարիզի խաղաղության համաժողովի վճիռը, ապա նույն տարվա նոյեմբեր-դեկտեմբերին նա արդեն այնպիսի առաջարկներ էր անում, որոնք նվազագույնի էին հասցնում զանգեզուրցիների իրավունքները, թեև նրանք թուրքերի դեմ փայլուն հաղթանակ էին տարել կռվի դաշտում:

Դեռևս դեկտեմբերի 7-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Ջ. Ուորդրոպի և Վ. Հասկելի հետ դեկտեմբերի 5-ին ունեցած հանդիպումների մասին մի ընդարձակ զեկուցագիր էր գրել Ա. Խատիսյանին: Այնտեղ նշվում էր, որ Հայաստանում Ադրբեջանի ներկայացուցիչ Հախվերդովին Վ. Հասկելն ասել է՝ եթե հայ-ադրբեջանական խորհրդաժողովը ոչ մի արդյունք չունենա, ապա ինքը խնդիրը կլուծի այսպես. Զանգեզուրի հայկական մասը կկցի Հայաստանին, իսկ Նախիջևանը կթողնի Ադրբեջանին: Զանգեզուրը կթույլատրի գաղթականների վերադարձը և քոչվորների սար բարձրանալը՝ առանց որևէ արգելք հարուցելու, իսկ Ադրբեջանը կբացի Ջուլֆայի ճանապարհը և հայ ճանապարհորդներին թույլ կտա ազատ երթևեկել[3]:

---

[1] Տե՛ս «Յառաջ», 1919, 20 դեկտեմբերի, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 352, թ. 40, գ. 427, մաս 1, թթ. 48-54, **Գ. Լազեան**, նշվ. աշխ., էջ 137, **Ց. Ղույյան**, նշվ. աշխ., էջ 283-291:

[2] Տե՛ս **Մ. Туманян**, նշվ. աշխ., էջ 269-270:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 540, թ.1:

1919 թ. դեկտեմբերի 8-ին Երևանից Ա. Խատիսյանի կողմից հղվել է հետևյալ նամակը. «Ամենակտրուկ կերպով հայտարարեք Հասկելին, որ ներկա պահին միակ ընդունելի որոշումը և Հայաստանի կողմից վերջին զիջումը այն է, որ Զանգեզուրը կառավարվի Ազգային խորհրդի կողմից, իսկ Շարուր–Նախիջևանը՝ ամերիկյան գեներալ-նահանգապետի կողմից: Հասկելի կողմից առաջարկված տարբերակը ժողովրդի մեջ մեծ դժգոհություն է առաջացրել և հակասում է անգլիացիների, Ռեյի և հենց Հասկելի ցուցումներին: Վերջին ժամանակները զինված բախումները դադարել են: Կրկնում եմ՝ Հայաստանի կառավարությունը այլևս ոչ մի զիջում անել չի կարող, ավելին, մեր ռազմական վիճակն արդեն լավ է... Զատման սահման կարող է լինել միայն Զաբուղը: Դուք էլ նկատի ունեցեք դա»[1]:

Այսպիսով՝ դաշնակիցների լուռ կամ կրավորական անտարբերության պայմաններում Ադրբեջանը, չնայած Գորիսում կրած ջախջախիչ պարտությանը, մտադիր չէր ձեռք քաշել Զանգեզուրից և պատրաստվում էր գավառի վրա նոր հարձակումների: «Ճիշտ է, կռիվները փաստորեն շարունակվեցին, բայց այս անգամ արդեն նախահարձակը զանգեզուրցիներն էին»[2],– գրում էր Ս. Վրացյանը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 178, թ. 114: Հասկելի ծրագրի և Ա. Խատիսյանի առարկությունների ու պայմանների մասին տե՛ս նաև՝ **Մ. Туманян**, նշվ. աշխ., էջ 262-263:

[2] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 355:

ԳԵՂԻ ՁՈՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Թիֆլիսում 1919 թ. նոյեմբերի 23-ին երկու երկրների միջև կնքված հաշտության համաձայնագիրը մնաց թղթի վրա: Երկու օր անց ընդհարումները շարունակվեցին[1]: Դեռ նոյեմբերի 12-ին Օրդուբադի և Նախիջևանի թուրքերը հարձակվել էին Գողթանի շրջանի Բիստ գյուղի, իսկ 25-ին՝ Ռամիս, Նասրվազ, Ալահի գյուղերի վրա և երկու օր տևած համառ մարտերից հետո պարտություն կրելով՝ նահանջեցին[2]:

Նախիջևանի գավառում օսմանյան բանակից մնացած զինվորներից կազմված զորամասը տեղի թուրքերի հետ նոյեմբերի 25-ին հարձակում գործեց Սիսիանի շրջանի վրա: Նոյեմբերի 29-ին Սիսիանի վրա նոր հարձակում եղավ՝ այս անգամ Նախիջևանի թուրքերից կազմված զորքի կողմից: Երկու դեպքում էլ, հանդիպելով ուժգին դիմադրության, թշնամին նահանջեց ելման դիրքերը[3]:

Թուրքերի հետագա հարձակումները խափանելու և ճակատները ամրապնդելու համար նոյեմբերի 26-ին Գորիսից 12-րդ մարտկոցի մի ջոկատ ուղարկվեց Սիսիանի շրջան, իսկ 9-րդ լեռնային մարտկոցի մի ջոկատ՝ Կապանի շրջան:

Զանգեզուրի հարավարևելյան ռազմաճակատի (Կապարգողթի) հրամանատար Գարեգին Նժդեհը ոչ մի հավատ չէր տածում Այսրկովկասում դաշնակից տերությունների ներկայացուցիչների «խաղաղարար» միջնորդությունների հանդեպ, առավել ևս չէր հավատում, թե Ադրբեջանի կառավարությունը հանգիստ է թողնելու Զանգեզուրը: Դրա վկայությունը մուսավաթական զորքերի շարունակվող հարձակումներն էին գավառի վրա, Կապարգողթի թուրքերի և հատկապես Գեղի ձորի իսլամ բնակչության՝ հայերի հանդեպ շարունակվող թշնամանքը, նրանց համառ անհնազանդությունը Զանգեզուրի իշխանություններին:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 110, թ. 24, գ. 128, թ. 132, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2-րդ, թթ. 309-312, գ. 282, թթ. 35-36, ֆ. 275, ց. 2, գ. 131, թթ. 15, 88-91, 98-100, 103-108, 138, ֆ. 1457, ց. 1, գ. 521, թթ. 1-2, **Ա. Աստուածատրեան**, Ադրբէջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք», 1957, հոկտեմբեր, թիվ 10, էջ 50, **Ա. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 197, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 353-355, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 227:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 108, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., էջ 52, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 358, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 231:

[3] Տե՛ս **Տ. Դէոյեանց**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1945, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիվ 5 (250), էջ 98:

Դեռևս 1918 թ. հուլիսի վերջերին դեպի Զանգեզուր արևմտահայ գաղթականների անցման և Նախիջևանի հայության փախուստի ժամանակ Գեղի ձորի թուրքերը նախճիրի էին ենթարկել նրանցից շուրջ 2000 հոգու[1]: Դժբախտ փախստականների նկատմամբ իրականացրած այդ գազանային հաշվեհարդարի մխացող կսկիծը հանգիստ չէր տալիս Զանգեզուրի հայությանը, որը եթե հանդես չբերեր հարկ եղած համառություն և հերոսական խոյանքներով չհակադարձեր թշնամուն, ապա, անշուշտ, ենթարկվելու էր նույն ահեղ ճակատագրին:

Գեղի ձորը դարեր առաջ եղել էր Սյունյաց Բաղաց իշխանների պատմական ոստանը, որը հետագայում աստիճանաբար զավթել էին Զանգեզուրի խորքերը թափանցած թուրքական ցեղերը: Հայկական գյուղերը դարձել էին թուրքական, բայց հարյուրամյակներ հետո էլ դրանցում մնացել էին հայկական մշակույթի բազմաթիվ հետքեր՝ եկեղեցիներ, գերեզմանատներ և այլն[2]:

Այժմ ձորում կար 39 գյուղ, որոնցից 34-ը թուրքական էին և միայն 5-ը՝ հայկական: Չորս կողմից օղակելով հայկական գյուղերը՝ բարբարոս թուրքերը մշտական տագնապի մեջ էին պահում նրանց բնակիչներին: Իրենց գազանություններով ու թալանով ձորի ավազակաբարո բնակչությունը միանգամայն հուսահատության դուռն էր հասցրել հատկապես Գենվազի (Մեղրի) գյուղացիությանը[3]:

Սերտ կապեր ունենալով մի կողմից՝ Նախիջևանի, մյուս կողմից՝ Զանգելանի ու Ջաբրայիլի, իսկ երրորդ կողմից՝ Շիլարի վրայով նաև Հաջիսամլուի թրքության հետ՝ Օխչիձորի թուրք զանգվածը դարձել էր ծայրահեղ սանձարձակ և իր ասպատակությունները տարածում էր Կապարգողթից հեռու՝ պատուհաս դառնալով նույնիսկ Գորիսի շրջանի Տաթևի ենթաշրջանի, Սիսիանի Դարաբասի ձորի և ընդհանրապես Սիսիանի հայության գլխին՝ անտանելի դարձնելով նրանց կյանքը: Ավազակախմբերը պարբերաբար քշում տանում էին այս ու այն գյուղի ոչխարն ու տավարը, սպանում դաշտում աշխատող խաղաղ հայ մշակին, գերի վերցնում պատահական ճամփորդներին և ազատում միայն մեծ փրկագին ստանալուց հետո, առևանգում և գերի էին տանում նաև հայ կանանց ու աղջիկների՝ նրանց պատվազրկելով[4]:

Գեղվա ձորի թուրքերը անկառավարելի էին դարձել հատկապես ադրբեջանական թուրքերի պետության ստեղծումից, թուրքական զորքերի Այսրկովկաս մտնելուց և Բաքվի հայության կոտորածից հետո: Նրանք

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 1, թ. 2, **Ստեմել**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, «Հայրենիք», էջ 31, **Վ. Առաքելյան**, Նժդեհ, Երևան, 1989, էջ 18, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 47, *նույնի՝* Հրամաններ, կոչեր, էջ 415:

[2] Տե՛ս «Արնոտ գիրք», Գորիս, 1921, էջ 29:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53-ի շրջ., **Ա. Աստուածատրեան,** նշվ. աշխ., էջ 50, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 355:

[4] Տե՛ս «Սյունիք» (Գորիս), 23 մայիսի, 1919, թիվ 18:

խորապես համոզված էին, որ եթե ոչ այսօր, ապա վաղն իրենք Կապանի և Գենվազի վրայով միանալու են Ադրբեջանին, որը Գեղվա ձորից հեռու էր ընդամենը 10 վերստով:

Թուրքերի ավազակությունները և կատարած նախճիրները հայերին ստիպում էին գիշեր ու ցերեկ պաշտպանության տակ առնել տևական ասպատակության ենթակա հայկական գյուղերը:

Հետախուզությունը հայտնել էր, որ Նախիջևանից Այրումի վրայով Գեղի ձոր են անցել մեծ թվով ասկյարներ ու սպաներ՝ նպատակ ունենալով հարձակվել ներքին Կապանի վրա[1]: Ուրեմն միայն զենքը կարող էր խափանել Գեղի ձորը Ադրբեջանին միացնելու դիվային ծրագիրը և վերջ դնել հայ խաղաղ բնակչության տառապանքներին:

Օխչիձորի հաղթանակից անմիջապես հետո (1919 թ. նոյեմբերի 15) Նժդեհը նախապատրաստվեց իրականացնելու հարձակողական երկրորդ խոշոր գործողությունը: Հերթի դրվեց Գեղի ձորը թուրքերից ազատագրելու ռազմական ծրագիրը: Ծրագրի կենսագործմամբ Ադրբեջանն ընդմիշտ կկորցներ այն հույսը, ըստ որի՝ քանի որ ձորը ցեղակիցների ձեռքում է, Զանգեզուրը վաղ թե ուշ անցնելու է իր հսկողության տակ:

Զանգեզուրի պետական կոմիսար Արսեն Շահմազյանը, որը նաև համատեղում էր զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը, 1919 թ. նոյեմբերի վերջերին մեկնեց գավառից: Նրա գնալուց հետո Զանգեզուրի զինված ուժերի գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Ն. Ղազարյանը (Ղազարով)՝ ռազմական գիտելիքներով առանձնապես աչքի չընկնող մի մարդ, իսկ ՀՀ նախարարների խորհրդի՝ դեռևս նոյեմբերի 8-ի որոշմամբ Զանգեզուրի պետական կոմիսար էր նշանակվել Երևանում Զանգեզուրի ներկայացուցիչ Սերգեյ Մելիք-Յոլչյանը, որը, նոյեմբերի 26-ին հասնելով Գորիս, դեկտեմբերի 1-ին ստանձնեց իր պաշտոնը[2]:

Այսպիսով՝ երկրամասի ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական գործերը վերցվել էին Հայաստանի կառավարության անմիջական հսկողության տակ, իսկ դա նշանակում էր, որ գավառը, գոնե ձևականորեն, համարվում էր Հայաստանի մաս:

Նույն օրերին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով Զանգեզուրում ստեղծվեց «Վարիչների խորհուրդ»՝ Ս. Մելիք-Յոլչյանի ղեկավարությամբ, որը երկրամասը բաժանեց երկու մասի՝ բուն Զանգեզու-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թթ. 53-ի շրջ., 56, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 35-36, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 353, **Գ. Նժդեհ**, Հրամաններ, կոչեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 423, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 226:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479, 2-րդ մաս, թ. 352: Հայ պատմագրության մեջ այս նշանակումները միանշանակ արժանացել են բացասական գնահատականի՝ հատկապես գեներալ Ղազարյանի մասով, որի զորավարական ընդունակությունների մասին խիստ ցածր կարծիքի էին մասնավորապես Նժդեհը և Դրոն (տե՛ս **Հ. Գևորգյան**, Դրո, էջ 527-528):

րի՝ Գորիս կենտրոնով և Կապարգողթի՝ Հանքեր կենտրոնով: Ռազմական ղեկավարումն ավելի արդյունավետ դարձնելու համար Զանգեզուրը բաժանվեց երեք զինվորական շրջանների՝ Սիսիանի՝ Պողոս Տեր-Դավթյանի հրամանատարությամբ, Կապարգողթի՝ Գարեգին Նժդեհի ընդհանուր ղեկավարությամբ և բուն Զանգեզուրի՝ գեներալ Ն. Ղազարյանի հրամանատարությամբ[1]:

Իր պատրաստությունների և Գեղի ձորի գրավման վճռի մասին Նժդեհը հաղորդեց գեներալ Ն. Ղազարյանին և նրա հավանությունը ստանալով՝ սկսեց նախապատրաստական աշխատանքները[2]:

Նենգ ու ոխերիմ թշնամու դեմ արշավանքը Նժդեհը նախապատրաստեց խիստ գաղտնապահությամբ և ամենայն պատասխանատվությամբ: Անբավարար էր զորքի զինամթերքը, և որևէ տեղից այն ստանալու հույս չկար: Կապարգողթի զորքը չուներ նույնիսկ մեկ հրանոթ: Ուստի Նժդեհը ռազմերթի ծրագրի հիմքում դրեց ***հանկարծակի ու արագ հարվածով*** ամենասեղմ ժամկետում հաղթություն տանելու գաղափարը[3]:

Առաջին քայլը եղավ ***զինանոցի համալրումը:*** Նախկինում պղնձահանքերում որպես պայթեցնողներ աշխատած և ուժանակի գործածությանը քաջածանոթ 20 կապանցի վարպետներ 10 օրում պատրաստեցին 1-5 փթանոց մոտ 300 պայթուցիկ տակառ և 1-10 ֆունտ ծանրությամբ 1000-ից ավելի ձեռնառումբ [4]:

Երկրորդ կարևոր գործը եղավ գայլախմբերի ստեղծումը, որի առիթը դարձավ այդ օրերին թուրքերի կողմից երկու հայ երիտասարդների գազանային սպանությունը:

Նոյեմբերի 25-ին Նժդեհը վաշտապետերին ուղարկեց հետևյալ գրությունը. «Նկատւում է, որ վերջին ժամանակներս թշնամին խոր եւ յանդուգն խուզարկութիւններ է կատարում, ինչպես օրինակ՝ Վերին Խոտանանի դէպքը եւ Սիւնիքի մօտ մի վաչագանցու եւ ագարակցու սպանուելը օրը ցերեկով: Թշնամին դորանով նախ մերկացնում է մեր դիրքերը և ուժերի դասաւորութիւնը ու միաժամանակ իր աւազակային խմբերով ահաբեկում է մեր ամբողջ հասարակութիւնը: Հրամայում եմ բոլոր վաշտապետներին՝ անմիջապես ուղարկել ինձ մօտ երկուական աչքի ընկնող, կտրիճ տղաներ՝ գայլախումբերը կազմակերպելու համար»[5]:

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 371:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53-ի շրջ., **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 19:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի գոյամարտը, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 21, *նույնի՝* Հայ-բոլշևիկյան կռիվները, էջ 46-47:

[4] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 318, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 38, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 18, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 47:

[5] **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 38:

Գայլախմբերը կազմակերպվեցին ընդամենը երկու օրում՝ նոյեմբերի 26-ին և 27-ին: Դրանք ուժանակներով և ռումբերով զինված քաջ երիտասարդներից կազմված խմբեր էին, որոնք գիշերային համարձակ գործողություններով պետք է սարսափ տարածեին թշնամու շարքերում: Նոյեմբերի 28-ից մինչև 30-ը անցկացվեցին լարված ռազմափորձեր: Գայլախմբերի առջև խնդիր դրվեց գործել այնպես, ինչպես գործում է թշնամին՝ անողոք ու վրեժխնդիր[1]:

«Կռվի նախապատրաստման ընթացքում պետք էր տեսնել պ-րն Նժդեհի եռանդն ու անդադար աշխատանքը»[2],– այդ օրերին գրում էր ականատեսը:

Երբ արդեն պատրաստ էին պայթուցիկ տակառներն ու ձեռնառումբերը, և կազմակերպված էին գայլախմբերը, Նժդեհը նոյեմբերի 30-ի առավոտյան արշավանքի պատրաստ վաշտերի հրամանատարներին ուղարկեց զորադասավորումների հետևյալ հրամանը.

«Թուրք սպաների, ինչպես Էդիֆ բեյի* և ուրիշների ներկայությունը Գողթանում, Ադրբեջանի թելադրությամբ սրանց կազմակերպած հաճախակի հարձակումները Գողթանի և Սիսիանի հայ գյուղերի վրա, սրանց վերջին օրերի ընթացքում ցույց տված ակտիվությունը, երբ Ադրբեջանը կռիվ է սկսել Զանգեզուրի դեմ, վերջապես սրանց պատերազմական գործողությունները Զանգեզուրի թիկունքում՝ հայ տարրի բնաջնջմամբ Նախիջևանի և Ադրբեջանի միջև կապ ստեղծելու նպատակով, կրկնում եմ՝ այդ բոլորը ստիպեցին Գենվազի, Կապանի և Տաթևի զորամասերին վերջ դնել Նախիջևանի նվաճողական ծրագրերին, այսինքն՝ մաքրել Գեղվա ձորը (որը այսօր թևավորում, դեպի իրեն է քաշում թե՛ Նախիջևանի և թե՛ բուն Ադրբեջանի ուժերը) և այդպիսով, միանգամ ընդմիշտ ապահովել Զանգեզուրի հայության ֆիզիկական գոյությունը և խաղաղ կյանքը:

Մարտական լուրջ խնդիրը լուծելու համար հրամայում եմ.

1) ***Գենվազի զորամասին.*** իր ուժերի մի մասով (մոտավորապես 400 սվին) գրավել Փիրմատան լեռնաշղթան (Օխչի գյուղից դեպի հյուսիս և զուգահեռ Օխչվա ու Գեղվա ձորերին) և վճռականորեն գործել Գեղի և Փիրալլու գյուղերի դեմ:

2) ***Կապանի արևմտյան ուժերին.*** բաժանվել երեք մասի և նշանակված ժամին կենտրոնանալ Կոմբախի և Հալիձորի վրա, իր աջ զորաթևով գրավել «Չիման» կոչված բարձունքը ու այս բարձունքից դեպի արևելք ձգվող լեռնաշղթան և արագ հարվածով գրավել Շհարջիկ և Աչաղլու գյուղերը:

Ձախ զորաթևով գրավել Տունուս, Աջիշլու և Մուսալյամ գյուղերը և անմիջապես կապվել Գենվազի զորամասի հետ:

---

[1] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 86, 318, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 39:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53-ի շրջ.:

* Նախիջևանի երկրամասում մնացած տաճկական զորամասերի հրամանատար:

3) ***Տաթևի զորամասին***. բռնելով Օղլան-Նիժա, Կիզիլ-Ղայա և Ազա-Գայա բարձունքները, ձախ զորաթևով գրավել Վերին և Ներքին Գերարա գյուղերը՝ կապ և կոնտակտ պաշտպանելով, ամբողջ ժամանակ, Կապանի զորամասի հետ: Աջ զորաթևով գրավել Քիրսը և շարժվել Չիրիշի վրա:

Կռիվներին ձգձգվող բնույթ չտալու համար հրամայում եմ բոլոր զորամասերին իրագործել իրենց վրա դրած մարտական խնդիրներն առանձին վճռականությամբ ու արագությամբ:

Նույն նպատակով Տաթևյան զորամասի աջ զորաթևին և Գենվազի ձախին, թշնամու համար թողնել նահանջի ճանապարհ Աջիբաջով դեպի Նախիջևան:

Գեղվա ձորի օպերացիային մասնակցող բոլոր ուժերին խստորեն արգելվում է թալանը՝ հայ մարտիկի անունն արատավորող այդ ստոր երևույթը: Այդպիսիները տեղն ու տեղը կոչնչացվեն գնդացրային կրակով, առանց զինվորադաշտային դատարանի պատշաճ որոշման, որն արդեն նշանակված է իմ կողմից:

Գործողությունները սկսել միաժամանակ՝ դեկտեմբերի 1-ին, ուղիղ ժամը 6-ին:

Վիրակապական կետերը նշանակվելու են զորամասերի պետերի կողմից:

Կռվի առաջին օրը իմ դաշտային շտաբը գտնվելու է Հալիձորի բերդում, ուր զորամասերի պետերը օրական առնվազն երեք անգամ պետք է ուղարկեն հաղորդագրություններ:

Արտակարգ դեպքում հաղորդագրել վայրկյանաբար:

Ղափան–Գենվազ–Գողթանի
ռազմական ուժերի
ընդհանուր հրամանատար՝ Նժդեհ:
30 նոյեմբերի 1919 թ.
Ղափանի Հանքեր»[1]:

Նույն օրը՝ նոյեմբերի 30-ին, Նժդեհը հայտարարեց զորաժողով: Ժամեր անց Կապանի վաշտերը կազմ ու պատրաստ հավաքեցին Հանքերում, Գենվազի վաշտերը՝ Բաղաբերդում, իսկ Դարաբասի և Տաթևի ուժերը կենտրոնացան են Մալդաշում:

Նոյեմբերի 30-ի ամբողջ օրը զորամասերն անցկացրին ռազմափորձեր: Այդ օրը՝ երեկոյան, Նժդեհը Հանքերում իր զորքի առջև հանդես եկավ հայրենաշունչ, կրակոտ ճառով: Նա, խոսելով կատարվելիք արշավանքի նշանակության մասին, «կը բացատրէ թէ աւարի ու կողոպուտի տենչը չէ իրենցը այդ կռուին մէջ, թէ յափշտակութենէ ու կողոպուտէ բարձր նպատակ

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թթ. 56-57:

մը զիրենք կը տանի ռազմադաշտ, ուր պիտի վճռուի այդ երկրին հարազատ զաւակներուն ապրելու անկորնչելի իրաւունքը: Հերոսներու անունով կ'զգուշացնէ զօրքին՝ ձեռք չբարձրացնել կիներու եւ երեխաներու վրայ»[1]:

Մարտի գնալուց առաջ Նժդեհն իր զինվորների հետ, որպես ուխտագնացություն, այցելեց Դավիթ Բեկի քաջ զորապետերից մեկի՝ Թորոս իշխանի շիրիմին: Նրանց միացավ մեծ բազմություն Կապանի գյուղերից ու Հանքերից: Նա իր զինվորներին մի քանի դրվագներ պատմեց Դավիթ Բեկի գլխավորած հերոսամարտերից և իր մարտիկներին ու զանգեզուրցի կամավորականներին կոչ արեց երդվել հայոց նախնիների մեծազոր փառքով և մարտի նետվել՝ տոգորված նրանց արիությամբ ու խիզախությամբ, թշնամու դեմ ատելությամբ առլեցուն, մեծ հաղթանակի ակնկալիքով: Ապա Նժդեհը հավաքվածներին զգուշացրեց, որ կորցնելով Սյունյաց բնական ամրությունները՝ կվտանգվի Հայաստանի ողնաշարը՝ ողջ Զանգեզուրը:

Նա ոգեշնչեց զինվորներին և մղեց անձնազոհ կռվի: Հրամանատարի կոչին արձագանքեցին նրա՝ հանուն հայրենիքի անձը զոհելու պատրաստ զինվորները:

Արշավանքից անմիջապես առաջ Նժդեհը ժողովրդական զորամասերին ուղղեց հետևյալ հրամանը.

«Հրաման
Ղափան–Գենվազ–Տաթևի զորամասերին:
Զորաշարքային մաս
թիվ 12
Ա.

Զինվորնե՛ր, թշնամու ցանկությամբ սկսվում է մեր արշավանքը, մեր խաչակրաց արշավանքը Գեղվա ձորի դեմ:

Վաղը, երբ ձեր խենթ գրոհներից և զարկերից թշնամին շշմած կթողնի իր գյուղերը, ձեզ կողջունեն մեր հինավուրց, այսօր թշնամու կողմից պղծված բերդերի և վանքերի ավերակները:

Վաղը, երբ այդ ձորերում կլսվի ձեր ոտքերի ձայնը, ձեր զենքերի շաչյունը, հայ գերիները, Քեյֆաշենի բեկերի շնաբարո կրքերի առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք կաղոթեն ձեր զենքի հաջողության համար:

Վաղը, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, հիշեք խալիլբեկյան սև օրերը, երբ այս գյուղի մոտ թշնամին բարբարոսաբար մորթոտեց երկու հազարի չափ օսմանյան սրից ճողոպրած հայ կին ու երեխաներ: Ասում են՝ այժմ այնտեղ մի ամբողջ ձոր լիքն է կմախքներով, գանգերով, ուր հաճախ հյուր են գալիս Գեղվա ձորի շներն ու գիշատիչները:

Հիշե՛ք այդ և եղե՛ք անխնա ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և

[1] **Վ. Գեորգեան**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 1991, էջ 39:

մարդ եղե՛ք կանանց, երեխաների ու ծերերի նկատմամբ:

Ուրեմն, առա՛ջ, մեզ հետ է Աստված և Դավիթ-Բեկի վրիժակ հոգին:

Բ.

Զորամասերի պետերին.

Կրակի մատնել, ավերել Փիրիլլուից դեպ արևմուտք գտնվող բոլոր գյուղերը: Մնացած գյուղերում հրդեհել միմիայն դարմանոցները և բեգերի տները: Գրոհների ժամանակ գործածել մեծ քանակությամբ ուժանակ և պայթուցիկ տակառ:

Նշանառությունը (сигнализация) կատարել կարբիդային լամպերով, գունավոր խարույկներով և դինամիտային փամփուշտներով:

Ղափան–Գենվազ–Գողթանի ռազմական ուժերի

ընդհանուր հրամանատար Նժդեհ:

1919 թ. նոյեմբերի 30

Ղափանի Հանքեր»[1]:

Նոյեմբերի 30-ի գիշերվա ժամը 12-ին հնչեց շեփորի ձայնը: Զորքը ոտքի վրա էր՝ կազմ ու պատրաստ: Մեկ ժամ հետո զորամասերը շարժեցին և ժամը 4-ին գրավեցին իրենց հատկացրած դիրքերը՝ սպասելով հարձակման հրամանի [2]:

1919 թ. դեկտեմբերի 1-ի լուսաբացին՝ ժամը ուղիղ 6-ին, ստացվեց ընդհանուր հարձակման հրամանը: Ներքև նետված պայթուցիկ տակառի դղրդյունը հարձակման ազդանշան եղավ[3]: Գեղվա ձորի բարձունքները բռնած Կապանի վաշտերը նույն պահին սլացան առաջ:

Փաստորեն, Նժդեհը, Գեղվա ձորի արշավանքը սկսելով, անտեսեց նոյեմբերի 23-ի համաձայնագիրը: Նա հաշվի չառավ ոչինչ չասող, կողմերին որևէ բան չպարտադրող այդ փաստաթուղթը: Նա հայ զինվորական գործիչ-ներից թերևս առաջինը և միակն էր, որը որևէ հավատ չէր ընծայում ո՛չ թշնամի թուրքին և ո՛չ էլ օտար «դաշնակցին»: Նա հավատում էր միայն զեն-քին, և նրա սկզբունքն անողոք ու անզիջում կռիվն էր: Նա պնդում էր, որ հայ ժողովուրդը պետք է ապավինի իր սեփական ուժերին, գիտակցի, որ թեև փոքրաթիվ է, բայց հզոր է իր մտավոր, ֆիզիկական, ռազմագիտական ունա-կություններով:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 55, տե՛ս նաև՝ **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 39, **Գ. Նժդեհ**, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 414:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 55, նաև՝ «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը …», էջ 86-87, 318, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 39-40, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 47:

[3] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը …», էջ 87, 319, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 48:

Չնայած կռվի առաջին օրը՝ դեկտեմբերի 1-ին, թշնամին ուժգին դիմադրություն էր ցույց տալիս, բայց որոշ տեղերում ընկրկում էր հայ քաջերի առաջ: Հայերը Կոմբախ լեռան վրա բարձրացրած թնդանոթի կրակով ավերում էին ձորի Շհարջիկ, Աչաղլու, Քիրս, Սանջարախլու, Չիրիշ և այլ գյուղերը[1]:

Դեկտեմբերի 2-ին վաշտերն ուժգին գրոհով գրավեցին Շհարջիկը, բայց մյուս գյուղերը համառորեն դիմադրում էին: Երկրորդ օրվա արդյունքները նշանակալի չէին: Անհանգստացնում էր այն, որ ռազմամթերքը սպասածից արագ էր սպառվում: Դեկտեմբերի 3-ին ուշացումով Հանքեր բերված թնդանոթը տեղադրվեց Գեղվաձորի բարձունքներից մեկում. այն երեք արկ արձակելով՝ շարքից դուրս եկավ[2]: Այս հանգամանքներում կռվի ելքը պետք է վճռեին մարդկանց կամային հատկությունները, նրանց խիզախությունն ու անձնազոհությունը: Իրենց երկիրը պաշտպանող հայերը այդ բոլոր որակներով մեծապես գերազանցում էին թալանի ու արյան ծարավ թուրք ելուզակներին:

«Կռվի բախտը,– գրել է Նժդեհը,– վճռում է թշնամի կողմերից մեկի բարոյական հավասարակշռության խախտումը: Սրան հետևում է անխուսափելի խուճապը: Իսկ այդ վերջինին՝ նյութական պարտությունը:

Անհավասար կռիվը չի կործանում այս կամ այն բանակը, այլ խուճապը, որին մատնված կողմը առնվազն եռապատկում է իր կորուստը, երբեմն էլ ոչնչանում իսպառ:

Սպանվածների, վիրավորների, գերվածների, ինչպես և պատերազմական ավարի քանակը եղել է և կմնա պարտության երկրորդական էլեմենտը:

Էականը՝ դա այն բարոյական ազդեցությունն է, որը ունենում է կռվող կողմերից մեկը՝ մյուսի վրա:

Ուրեմն հաղթելու համար պետք է բարոյապես ազդել գիտենալ»[3]:

Տարիներ անց վերհիշելով, թե զանգեզուրցի մարտիկները ինչպես էին իրականացնում իր այդ պատգամները, Նժդեհը գրել է. «Իմ մշակած եւ գործադրած տակտիկան գրեթէ միշտ էլ յաջողում էր. որեւէ տարերային անակնկալով խախտել թշնամու հոգեբանական հաւասարակշռութիւնը՝ ապահովելով իմ մարտական յաջողութիւնը»[4]:

Հայ վաշտապետերը և զինվորները զանգվածաբար խիզախում էին, տալիս անզուգական հերոսության բազում օրինակներ: Դեկտեմբերի 4-ին հայկական ուժերը նոր թափով շարունակեցին գրոհը: Գնդակների ուժեղացող տարափի տակ թուրքական զորամասերը սկսեցին երերալ: Դեկտեմբերի

---

[1] Տե՛ս **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 19:

[2] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը …», էջ 320, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 49:

[3] «Արնոտ գիրք», էջ 30-31:

[4] **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 15:

5-ին հայերի ձեռքն անցան Բաղաբերդի բարձունքները: Թշնամու դիմադրությունը մեծապես թուլացավ: Հուժկու գրոհներով կապանցիները մեկը մյուսի հետևից գյուղերից դուրս էին մղում թուրքերին: Հաջորդ օրը թուրքերի նահանջը վերածվեց գլխակորույս խուճապի: Թշնամին զանգվածաբար լքում էր գյուղերը: Հայ մարտիկները, ոգեշնչված մոտալուտ կատարյալ հաղթանակի հեռանկարից, անվրեպ ու անխնա հարվածներ էին հասցնում թշնամուն: Կռվի 7-րդ օրը՝ դեկտեմբերի 7-ին, հայկական զորքը գրավեց թուրքերի վերջին գյուղը՝ Աջիբաջը: Քչերին հաջողվեց գլուխը փախցնել և ազատվել: Թշնամին կռվի դաշտում թողեց հարյուրավոր սպանվածներ, մեծաքանակ զենք ու զինամթերք[1]:

Հայերի կորուստները համեմատության եզրեր չունեին այն հսկա կորուստների հետ, որ դեկտեմբերի 1-7-ը կրել էին թուրքերը: Բայց ցավալին այն էր, որ սպանվել էր շուրջ երկու տասնյակ հայ երիտասարդ, ծանր վիրավորվել էին քաջ հրամանատար Գերասիմ Աթաջանյանը և հինգ տասնյակից ավելի մարտիկներ: Նժդեհի կարգադրությամբ ծանր վիրավորներին շտապ տեղափոխում էին Հանքեր, որտեղ նրանց շրջապատում էին մեծ հոգատարությամբ: Կապանի երկու հայտնի բժիշկները՝ Գերմանիայում կրթություն ստացած վիրաբույժներ Միքայել Աթաջանյանը և Եգոր Անտոնյանը, օր ու գիշեր հիվանդանոցում էին, ամեն ինչ անում էին, որ վիրավոր մարտիկները որքան հնարավոր է շուտ վերադառնան իրենց վաշտերը[2]:

Կապանցիների հաղթանակը կատարյալ էր: Գեղվաձորի ողջ թրքությունը գաղթեց Նախիջևան: Զորը նորից դարձավ հայկական: Զանգեզուրի գեներալ-կոմիսար Սերգեյ Մելիք-Յոլչյանի կարգադրությամբ ազատագրված գյուղերը հանձնվեցին Նախիջևանի և Բարգուշատի հայ գաղթականներին, որոնք և բնակություն հաստատեցին այնտեղ:

Գեղվաձորի հաղթանակը Կապարգողթի հրամանատար Գարեգին Նժդեհի ռազմագիտական փայլուն տաղանդի դրսևորումն էր, նրա մտքի ու կազմակերպչական փայլուն ունակությունների գործունեության արգասիքը: Հենց այդպես էլ այդ նշանավոր հաղթանակն ընկալվում էր ինչպես ողջ Զանգեզուրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հաղթանակի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին, Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ Սմբատ Մելիք-Ստեփանյանը Կապանից հետևյալ երկտողն ուղարկեց Նժդեհին.

«Սիրելի՛ Գարեգին,

Կատարածներիդ անվերջ շնորհակալութիւն: Կուզենայի այս պատ-

---

[1] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը...», էջ 88, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 40, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 52:

[2] Տե՛ս **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 20, «Նժդեհ, կեանքն ու գործունէութիւնը...», էջ 88:

մական օրերին գեղեցիկ յաղթական շարքերն այստեղ ընդունել և ապա վերադառնալ կեդրոն (ք. Գորիս: – *Ա. Ս.)*»[1]:

Վերադառնալով Հանքեր՝ Նժդեհը մի քանի օրից հետո անցավ Մեղրի (Գենվազ), որի հայությունը մեծ խանդավառությամբ ողջունեց Կապարգողթի փառապանծ հրամանատարի մուտքն իրենց շրջան: Այդ խանդավառությունը և երախտագիտությունը զգացվում էին Եփրեմ Վարդանյանի՝ Նժդեհին հղած հետևյալ գրության մեջ.

«Ողջունում ենք հաղթանակից հետո Ձեր կրկին այցը Մեղրիին, որի հարազատ զավակը լինելու բախտն ունինք: Ողջունում ենք Ձեր տարած հաղթանակն ու ասում՝ բարի՛ գալուստ: Դուք, մեր ազգի սրբության զինվորներով, կատարեցիք մի մեծ պատմական ակտ. հոծ հայ բնակչության մեջ որպես մշտական արգելառիթ՝ թուրք ազգաբնակչությունից մաքրեցիք Օխչին և Գեղվաձորը, ընդմիշտ ապահովելով հայերիս սպառնացող թիկունքը: Դուք ճշմարտացրիք մեր անմահ ռազմիկ բանաստեղծ Ռ. Պատկանյանի՝

Ասված վկա, որ մենք կհաղթենք,
Թե մեկ անձնուրաց մարդ ունենայինք...

խոսքը, և մեր ազգի անձնուրացներից մեկը հանդիսացաք այս արյունոտ օրերին:

Դուք բարձրացրիք հայ զինվորության ոգին ու նրա համբավը: Կեցցեք Դուք, կեցցեն Ձեր բոլոր զինվորները:

Մեղրի, 1919 դեկտ. 26
Ի դիմաց Մեղրիի հայության՝
Եփրեմ Վարդանյան»[2]:

Եթե Կապարգողթի հայերը վերջապես ազատվեցին Կապանի երկու ձորերի ավազակաբարո թուրքերի մշտական սպառնալիքներից և ազատ շունչ քաշեցին, ապա Ադրբեջանում երկար ժամանակ չէր դադարում մուսավաթականների աղմուկը հրապարակային ժողովներում, միտինգներում, թերթերի էջերում: Կառավարությունն օգտագործում էր ամեն առիթ դաշնակիցների մոտ Հայաստանը ներկայացնելու որպես ջարդարար պետություն, թեև Նժդեհը և Կապարգողթը գործում էին միանգամայն ինքնուրույն:

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլովը Երևան՝ իր կառավարությանը հաղորդում էր, որ Ադրբեջանի արտգործնախարարությունը Վրաստանի իր դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Վեքիլովին հանձնարարել է դաշնակիցների հրամանատարությանը ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստերը և պաշ-

---

[1] **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 40:
[2] ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 44, թթ. 2-3:

տոնապես բողոք ներկայացնել Զանգեզուրում մուսուլմանների կոտորածի առթիվ, որին զոհ է գնացել ավելի քան 600 մարդ, իսկ հազարավորները միայն փախուստով են փրկել իրենց կյանքը[1]:

Դեկտեմբերի 8-ին Ղարաբաղի նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը Ադրբեջանի նախարար-նախագահ Ն. Ռասուլբեկովին հեռագրեց Գեղվաձորի գործողության մասին՝ նշելով, որ «խաղաղ բնակչությունը ի վիճակի չէ դիմանալ Զանգեզուրի հայերի կանոնավոր զորամասերի հարձակմանը: … Զանգեզուրի մուսուլմանները խուճապով հեռանում են …»[2]:

Խ. Սուլթանովի հեռագրին հետևեց դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի արտգործնախարար Մ. Ջաֆարովի վճռական բողոքը Ա. Խատիսյանին[3]: Բողոքի պատճենը ուղարկվեց Վ. Հասկելին: Վերջինս այն ուղարկեց Ա. Խատիսյանին՝ իր կողմից ավելացնելով հետևյալը.

«Եթե այդ մեղադրանքները հետաքննությունից հետո հաստատվեն, ապա դրանք շատ ուժգին հարված կհասցնեն Հայաստանի ապագային: Եթե որևէ ռազմական ուժ է ուղարկվել Զանգեզուր, շտապ հետ կանչեք և այդ մասին հաղորդեք ինձ»[4]:

Դեկտեմբերի 12-ին Ա. Խատիսյանը հեռագրով պատասխանեց Մ. Ջաֆարովին՝ նշելով, որ Զանգեզուրում չեն եղել և չկան Հայաստանի Հանրապետությունից ուղարկված կանոնավոր զորամասեր, նոյեմբերի 23-ի համաձայնագրից հետո Հայաստանի կողմից որևէ ակտիվ գործողություն չի եղել: Խ. Սուլթանովի ցուցմունքը, ասված էր հեռագրում, հավանաբար Սիսիանի ուղղությամբ Նախիջևանին միանալու նպատակով հայերի կողմից թաթարների զինված ուժերի հարձակումը կասեցնելու, ապա և ջախջախելու արձագանքն էր: Վերջում վարչապետն ավելացնում էր. «Հայաստանի կառավարությունը անկեղծորեն ցանկանում է և ձեռնարկում է բոլոր միջոցները նոյեմբերի 23-ի համաձայնագրի լիակատար պահպանման համար: Նա հավատում է, որ հայ-ադրբեջանական կոնֆերանսը կարող է փոխադարձ համագործակցությամբ լուծել Հայաստանի և Ադրբեջանի միջև գտնվող վիճելի հարցերը»[5]:

Նույն օրը Խ. Սուլթանովը ինքն էր Շուշիից հեռագիր հղել Վ. Հասկելին՝ դարձյալ բողոքելով Գեղի ձորում հայերի կատարած գործողություններից: Վ. Հասկելը նորից հարցում էր արել Ա. Խատիսյանին՝ ավելացնելով. «Այդ դեպքից կարող է ծագել մեծ պատերազմ երկու երկրների միջև՝ հարցականի տակ դնելով երկուսի ազգային անկախությունը: Անհրաժեշտ են ոչ թե խոսքեր, նոտաների փոխանակում, այլ անհապաղ խաղաղ աշխատանք տեղում»[6]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 123:

[2] Նույն տեղում, թ. 140:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 139:

[4] Նույն տեղում, գ. 131, թ. 139:

[5] Նույն տեղում, թ. 138:

[6] “Борьба”, 17 декабря, 1919, № 287.

Վ. Հասկելի նշված հարցմանը ևս Ա. Խատիսյանը նույն պատասխանը տվեց. «Ադրբեջանը դիմել է հերթական սադրանքի»:

1919 թ. դեկտեմբերի 13-ին Կոստանդնուպոլսում բրիտանական գլխավոր կոմիսարը հեռագրեց Թիֆլիս՝ Այսրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Ջ. Ուորդրոպին՝ պահանջելով հաղորդել վերջերս Զանգեզուրում տեղի ունեցած իրադարձությունների, այսինքն՝ Գեղի ձորում իրականացված ռազմական գործողության մասին: Վերջինս դեկտեմբերի 14-ին հետևյալ հեռագիրը հղեց Երևան՝ արտգործնախարար Ա. Խատիսյանին.

«Կոստանդնուպոլսում բրիտանական գերագույն կոմիսարը ստացել է հեռագիր այն մասին, որ չնայած Զանգեզուրը հայտարարված է չեզոք, և այդ մասին նույնիսկ կնքված է ժամանակավոր համաձայնագիր (նկատի ունի նոյեմբերի 23-ի համաձայնագիրը: – *Ա. Ս.),* բայց հայերը գրոհել և ավերել են մի շարք ադրբեջանական գյուղեր: Բրիտանական գերագույն հրամանատարությունը, գտնվելով այդ ոչ բարենպաստ հաղորդման թողած տպավորության տակ, խորհուրդ է տալիս խուսափել ագրեսիվ գործողություններից և բարեխղճորեն հարգել ստորագրված համաձայնագիրը: Ես շատ ուրախ կլինեի, եթե Ձեր մինիստրությունը ինձ հնարավորություն ընձեռեր ապացուցել այդ լուրի անճշտությունը»[1]:

Նշված հեռագրին հետևեց Ա. Խատիսյանի պատասխանը, որով նա, այս էլ քանիերորդ անգամ, ստիպված էր լինում համոզել, որ Զանգեզուրում չկան Հայաստանի Հանրապետության զինվորական միավորներ, և որ տեղի ունեցածը հավանաբար եղել է ազգամիջյան սովորական ընդհարում[2]:

«Այդ դեպքերը (Գեղի ձորը մոտ 40 թուրքաբնակ գյուղերից մաքրելը: – *Ա. Ս.)* նորից բողոքի ու սպառնալիքի նյութ դարձան գնդ[ապետ] Ռեյի և Ուորդրոպի (նաև՝ Վ. Հասկելի: – *Ա. Ս.)* կողմից: Ադրբեջանի կառավարությունը ցասկոտ հեռագրեր տվեց ու պատասխաններ ստացավ, բայց կյանքը գնաց իր ճանապարհով. Զանգեզուրն այլևս մաքրված էր ներքին թշնամուց»[3],– նշում էր Ս. Վրացյանը:

Զանգեզուրում պարտություն կրած Ադրբեջանը, քեմալականներին ունենալով թիկունքում, փորձեր էր անում Հայաստանի դեմ պայքարում նոր դաշնակիցներ գտնել: Այդ նպատակով կառավարության նախաձեռնությամբ և հրավերով դեկտեմբերի 15-ին Բաքու ժամանեց պարսկական կառավարության պատվիրակությունը, և այնտեղ դեկտեմբերի 17-ին սկսվեց համատեղ խորհրդաժողով:

«Աշխատավոր» թերթը գրում էր, որ ադրբեջանա-պարսկական խորհրդաժողովից մուսավաթական կառավարությունը շատ բան էր սպա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 131, թ. 143: Թարգմանություն անգլերենից:

[2] Տե՛ս «Աշխատավոր», 1919, 17 դեկտեմբերի, թիվ 267:

[3] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 355:

սում: «Բանն այն է, որ եթե Հայաստանն ու Վրաստանը իրենց գլխավոր խնդիրն են համարում անկախության պահպանումը, ապա Ադրբեջանի հոգսը ուրիշներին պատկանող տերիտորիաներ զավթելն է: Նա երազում է իրեն միացնել նաև Պարսկական Ադրբեջանը: Այդ բանը շատ լավ է ըմբռնում պարսից կառավարությունը, ուստի Բաքվի պարսիկ-թուրք խորհրդաժողովի առիթով հայերը անհանգստանալու պատճառ չունեն, քանի որ այն հազիվ թե ունենա Ադրբեջանի համար դրական արդյունքներ, բայց հնարավորություն կտա պարզել երկու երկրների բնավ էլ ոչ բարեկամական փոխհարաբերությունները»[1]:

Պարսկական կառավարությունը քաջատեղյակ էր օսմանյան թուրքերի կրտսեր եղբայրների՝ Ադրբեջանի թուրքերի՝ Զանգեզուրի և Արցախի հայերի դեմ սանձազերծած կռիվների մասին: Նա նաև արդեն նկատում էր, որ ընդամենը մի քանի ամսվա պատմություն ունեցող, Ադրբեջան անունը որդեգրած թուրքական նոր պետությունը գնալով ծանր խնդիր է դառնալու իր համար:

Զանգեզուրի դեմ չդադարող հարձակումների ընթացքում որևէ նկատելի հաջողության չհասնելով և մեծ կորուստներ կրելով՝ Ադրբեջանը նոր հալածանքներ սկսեց իր հպատակ հայ քաղաքացիների դեմ: Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատվական բյուրոյի տեղեկագրում բերվում էին այդ հալածանքների բազմաթիվ օրինակներ. իշխանությունները, առանց որևէ պատճառաբանության, փակեցին Բաքվում լույս տեսնող «Յառաջ» թերթը՝ Երևանի «Յառաջի» երկվորյակը[2]: Փակվեցին մի քանի հայկական դպրոցներ, աշխատանքից հեռացվեցին նավթահանքերում ու գործարաններում աշխատող բազմաթիվ հայ ինժեներներ և տեխնիկներ, պետական հիմնարկներից վտարվեցին հատուկենտ հայ պաշտոնյաները և այլն:

Որպես կանոն, ամեն մի արյունալի ոճրագործություն ծրագրելիս բարբարոս Թուրքիայի հարազատ ծնունդ Ադրբեջանը առիթը բաց չէր թողնում և վարպետորեն աղմուկ էր բարձրացնում՝ հայերին մեղադրելով նախահարձակ լինելու կամ ինչ-որ պայմանավորվածություն խախտելու համար:

Գողթանում Ներքին և Վերին Ագուլիսների հայերն ընդունել էին Ադրբեջանի իշխանությունը և ապրում էին իբրև հպատակներ՝ կրելով Գողթանի մյուս գյուղերի հայ բնակչության նախատինքը՝ իբրև թուլամորթների և ստրուկների: Բայց Ադրբեջանին հպատակվելն անգամ չփրկեց ագուլիսցիների կյանքը: Նրանք, 1919 թ. վերջին լիովին շրջափակվելով, մատնվել էին սովի, և արդեն անխուսափելի էր նրանց կործանումը[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 31, թ. 10:

[2] Տե՛ս "Слово", 17 декабря, 1919, № 102:

[3] Տե՛ս **Ց. Ղուլյան**, նշվ. աշխ., էջ 293-294:

Թեև Նժդեհը որոշել էր իր ուժերով վերացնել թուրքերի կողմից Ագուլիսների պաշարումը, բայց Զանգեզուրի ղեկավարությունը մերժեց այդ առաջարկը այն պատճառաբանությամբ, թե ավելի կարևոր է Բարգուշատի շղթայի ապահովության պահպանումը[1]:

Դեկտեմբերի 19-ին Օրդուբադի և շրջակա գյուղերի թուրքերը մտան Ներքին Ագուլիս և սկսեցին կոտորածը: Վայրենի խրախճանքին զոհ գնաց 400 հայ[2]: Բնակչության մի փոքր մասը խուճապահար կարողացավ փախչել և ապաստանել Վերին Ագուլիսում: Ներքին Ագուլիսը մինչև վերջին թելը կողոպտվեց:

ՀՀ վարչապետը այդ մասին տեղեկացրեց Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին՝ ներկայացնելով Գորիսից ստացված հեռագիրը. «Մելիք-Մուսյան Աշոտը Ղափանից հաղորդում է, որ Օրդուբադի և Նախիջևանի թաթարները հրետանակոծությունից հետո կոտորել են [Ներքին] Ագուլիսի ողջ խաղաղ բնակչությանը և այժմ շարունակում են հարձակումը Վերին Ագուլիսի վրա»[3]:

Այդ օրերին Վերին Ագուլիս եկած Էդիֆ բեյը հայերին հավատացրեց, որ պատահածը մի թյուրիմացություն էր, ուստի ոչ ոք թող երկյուղ չունենա: Հայտարարելով, թե թուրքերը միայն իր դիակի վրայով կմտնեն գյուղ՝ նա մեկնեց Օրդուբադ[4]:

Կուրորեն հավատալով Էդիֆ բեյի խոսքերին՝ ագուլիսցիները ո՛չ գաղթեցին հարևան Ցղնա գյուղ, ո՛չ էլ օգնություն խնդրեցին Նժդեհի Գողթանի զորամասից: Ավելին, երբ զորամասի հրամանատար Ղազար Քոչարյանը Ներքին Ագուլիսի ջարդից հետո քանիցս դիմեց Վերին Ագուլիսի բնակիչներին, որ թույլ տան գիշերով 200 զինվոր մտցնել գյուղ՝ պաշտպանելու բնակիչներին և բազա ստեղծելու Օրդուբադի դեմ գործողություններ սկսելու համար, պատասխանը եղավ. «Դուք մեզ հետ գործ չունեք, մենք թուրքերի հետ ապրում ենք հաշտ ու խաղաղ: Մեր սիրելի Էդիֆը խոստացել է մեզ պաշտպանել՝ ինչ գնով էլ լինի»[5]:

Դեկտեմբերի 23-ին ագուլիսցիները տեղեկացան, որ թուրքերը պատրաստվում են շարժվել իրենց գյուղի վրա, թեև այնտեղ կային Ադրբեջանի ոստիկաններ: Հայերը դիմեցին Օրդուբադում նստող գավառապետ Աբասկուլի բեկ Թահիրովի և այնտեղ գտնվող Էդիֆ բեյի օգնությանը: Վերջինս Օրդուբադից եկավ Վերին Ագուլիս, արժանացավ փառահեղ հյուրասիրու-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 2 և շրջ., ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53-ի շրջ., **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 52, 53, *նույնի*՝ Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 283:

[2] Տե՛ս «Սյունիք», 1920, 15 հունվարի, թիվ 3:

[3] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 183, թ. 285:

[4] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 338:

[5] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 53-ի շրջ.:

թյան ու նորից հանգստացրեց ագուլիսցիներին:

Դեկտեմբերի 24-ին շրջակա գյուղերի թուրք հրոսակախմբերը շրջապատեցին Ագուլիսը՝ սպասելով հրամանի: Գյուղի մեծերը նորից դիմեցին Օրդուբադ, և այս անգամ գյուղ եկավ Աբասկուլի բեկը՝ մի քանի շեյխերով: Նրանք իջան Էդիֆ բեյի մոտ: Տեղի ունեցավ խորհրդակցություն: Հաջորդ օրը Աբասկուլի բեկը վերադարձավ Օրդուբադ: Նա հեռացավ թե չէ, թուրք հրոսակախմբերը և նրանց միացած ասկյարները խուժեցին Ագուլիս, և սկսվեց սոսկալի կոտորած:

Երկու օր շարունակ սրախողխող էին արվում մարդիկ, բռնաբարվում էին կանայք ու աղջիկները, կողոպտվում ու ավերվում էր շեն գյուղը: Գեղեցիկ հարսներն ու աղջիկները առանձնացվում էին և ուղարկվում հարեմներ: Գեղեցիկ օրիորդները՝ որպես նվեր, բաժանվում էին սպաներին: Ունևոր Փանյանի 16-ամյա աղջկան նվիրաբերում են Էդիֆ բեյին:

Այսպիսով՝ երկու Ագուլիսներում տանջանքներով մեռավ 1400 հոգի, իսկ գյուղերը դադարեցին գոյություն ունենալուց[1]:

Ընկած ու անպաշտպան Ագուլիսում անասելի գազանություններ էին կատարում հատկապես Օխչի և Գեղի ձորերից Գողթան գաղթած թուրքերը: Հրաշքով փրկվածների մի փոքր մասը փախավ Զանգեզուր, մի ուրիշ անհնշան մասն էլ, վճարելով փրկանք, անցավ Արաքս գետը և հայտնվեց Թավրիզում[2]:

Ագուլիսի կոտորածից հետո Գողթանի՝ հնարավոր ջարդի ենթակա Ղազանչի, Շուռութ, Փորադաշտ ու Ազա գյուղերի բնակիչները գաղթեցին Զանգեզուր: Գողթանի հայության գլխին կախվեց լիակատար ոչնչացման և հայոց պատմական այդ գավառակի կորստյան վտանգը[3]:

Ադրբեջանը, ինչպես միշտ, այս անգամ էլ դաշնակիցներին ներկայացրեց իրավիճակը՝ կոտորածի մեղքը բարդելով հայկական ուժերի վրա:

1920 թ. հունվարի 1-ին Լոնդոնի «Թայմս» թերթը Բաքվից ստացած հաղորդման հիման վրա տպագրել էր հոդված այն մասին, որ Զանգեզուրի հայերը ներխուժել են «Ադրբեջանի Ղարաբաղ պրովինցիան», գրավել և ավերել են մի քանի թուրք գյուղեր և սպանել թուրքերի:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը որոշ ժամանակ անց, գալով Լոնդոն, Բրիտանիայի արտգործնախարարի տեղակալին հայտնեց, որ ինքը հեռագրով իր կառավարությանը այդ մասին հարցում է արել և պատասխան ստացել, որ Բաքվից ուղարկված տեղեկությունը իրականությանը չի համապատասխանում[4]:

---

[1] Տե՛ս «Սյունիք», 1920, թիվ 3, 15 հունվարի, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 338-339, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 234-238:

[2] Տե՛ս **Ա. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 197, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 240:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 141:

Զանգեզուրի գեներալ-կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանը 1920 թ. հունվարի 5-ին ՀՀ նախարարների խորհրդի նախագահ Ա. Խատիսյանին (պատճենը՝ ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանին) հեռագիր է հղել՝ նկարագրելով ագուլիսյան սարսափները: Այնուհետև գրել է. «Զանգեզուրի հայ ժողովուրդը խորապես վրդովված և գրգռված է՝ պահանջում է ձեռք առնել ծայրահեղ միջոցներ … Աներևակայելի դժվարություններով է հաջողվել ինձ, Ձեր հրամանների հիման վրա, հանգստացնել հայ ազգաբնակչությանը»[1]:

Երբ թուրքերն արդեն կոտորել էին Ագուլիսի հայությանը, նրանց հետագա ոճիրները կանխելու համար դեկտեմբերի 28-ին Նժդեհը Օրդուբադի ուղղությամբ կատարեց ռազմական ցույց և կանգնեցրեց թշնամու հարձակումները[2]:

Ագուլիսցիների կոտորածի և գողթանցիների մի մասի ստիպողական գաղթի համար թուրքերը Նժդեհից նոր պատիժներ պիտի կրեին:

Գեղվաձորի ռազմական հաղթանակից հետո Զանգեզուրի ղեկավարությունը ՀՀ ռազմական նախարարությանը խնդրում էր բարձրացնել Նժդեհի զինվորական աստիճանն՝ իր կատարած ծառայությունների համար: Գրությանը կից ներկայացրած «Պարգևաթերթում» միջնորդվում էր «կապիտան Գարեգին Տեր-Հարությունյանին – Նժդեհին» միանգամից շնորհել գնդապետի* աստիճան՝ շրջանցելով փոխգնդապետի աստիճանը[3]:

Գեղվաձորը գրավելուց հետո Նժդեհը պատրաստվեց ***Օրդուբադի*** դեմ գործողություններին: Օրդուբադի բնակչությունն արդեն խուճապահար փախել էր տարբեր ուղղություններով: Բայց, չգիտես ինչու, գեներալ Ն. Ղազարյանը Գորիսից հրամայել էր այլևս ոչ մի քայլ առաջ չգնալ, միաժամանակ պահանջել էր թնդանոթները վերադարձնել նշանակված վայրերը[4], որովհետև թշնամին նոր ուժեր է կուտակել Զանգեզուրի սահմանների վրա՝ գավառի արևելքից Գորիսի, իսկ Նախիջևանի ու Մինքենդի կողմերից Սիսիանի վրա հարձակվելու համար:

ՀՀ ներքգործնախարարին Զանգեզուրի պետական կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանը դեկտեմբերի 25-ին գրում էր. «... Ամբողջ Զանգեզուրը շրջա-

---

[1] «Սյունիք», 1920, 15 հունվարի, թիվ 3:

[2] Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 361, **Ռ. Համբարձումեան**, Վարք Նժդեհի, ասոյթներ, Երևան, 2001, էջ 63:

* Պատմագիտական հետազոտություններում (տե՛ս, օրինակ, **Աւօ**, Նժդեհ, էջ 79, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 218, **R. Ovanisian**, The Republic of Armenia, vol. 2, 1979, էջ 218) սխալմամբ նշված է, թե Երևանից Նժդեհը Զանգեզուր էր եկել փոխգնդապետի աստիճանով: Ինչպես երևում է վերը բերած արխիվային փաստաթղթից, այդ ժամանակ նա կապիտան էր: Դրոյի 1920 թ. մայիսյան հրամաններում Նժդեհի կոչումը նշվում է «փոխգնդապետ»: Դա նշանակում է, որ Զանգեզուրի ղեկավարության միջնորդությունը դեռ չէր բավարարվել (տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 9, թ. 5-9):

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479, մաս 2-րդ, թ. 353-ի շրջ.:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 280, ց. 2, գ. 44, թթ. 2-3:

պատված է թշնամիներով. մեր հետախույզ մասերը սահմանագծերում միշտ հանդիպում են թշնամիներին: Աշխատում ենք ստեղծել այնպիսի սահմաններ, որոնք հնարավորություն կտան ընդհարումների դեպքում հեշտությամբ պահպանել երկիրը»[1]:

1919 թ. դեկտեմբերի վերջերին Հայաստանի զինվորական նախարար գեներալ Արարատյանի հրամանով Դրաստամատ Կանայանը (Դրո) նշանակվեց Զանգեզուր–Ղարաբաղի ընդհանուր հրամանատար: Դեկտեմբերի 20-ին նա իր շուրջ 600 հոգանոց էքսպեդիցիոն զորամասով ժամանեց Գորիս[2]: Անվճռական գեներալ Ն. Ղազարյանի կարևորագույն կարգադրությունները այսուհետև համաձայնեցվելու էին հանդուգն ու խիզախ Դրոյի հետ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 54:

[2] Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 394, **Դրո**, Կենսագրական, հուշեր, վկայություններ, Երևան, 1991, էջ 138, **Հ. Գևորգյան**, Դրո, էջ 531:

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ 1920 Թ. ՍԿԶԲԻՆ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՇՈՒՌՆՈՒԽՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Ավարտվեց իրադարձություններով լի զանգեզուրյան ևս մեկ տարին՝ 1919 թվականը: Այդ իրադարձությունները հիմնականում ռազմական էին՝ կռիվ, պաշտպանություն, հարձակում, ավեր ու արյուն: Բայց գավառում կար նաև ներքին կյանք՝ խաղաղ, ստեղծագործ աշխատանք, կառավարման մարմինների վերակազմություն ու կատարելագործում և այլն:

1919 թվականին կատարված գործերի յուրատեսակ հաշվետվություն էր դեկտեմբերի 1-ին Զանգեզուրի գեներալ-կոմիսար նշանակված Սերգեյ Մելիք-Յոլչյանի դեկտեմբերի 25-ի զեկուցագիրը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին:

Գավառում գրեթե բացակայում էր ամուր կազմակերպված դատաստանական օգնությունը: Գորիս քաղաքում ոչ լրիվ կազմով գոյություն ունեցող շրջանային (окружной) դատարանը չէր կարողանում բավարարել գավառի մեծ պահանջմունքը, քանզի տեղում չկային մասնագետներ և պատրաստված անձինք, որոնցով կարելի լիներ լրացնել պակասը: Իսկ լիարժեք դատաստանական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ էր ունենալ մեկ շրջանային դատավոր (окружной судья), երեք հաշտարար դատավոր, երեք դատաստանական քննիչ:

Չնայած իրավաբան մասնագետների խիստ պակասին՝ այնուհանդերձ հանցավոր տարրերը դատական պատասխանատվության էին կանչվում: Գյուղական բանտերում վերացվել էր շղթայակապության երևույթը՝ որպես Հայաստանի Հանրապետության դեմոկրատական կարգերին անհարիր միջոց:

Զինվորական ծախսերը մեծ էին: Զորակոչն իրականացվում էր առանց որևէ դժվարության: Սկզբում որոշված էր զորակոչել մինչև 34 տարեկաններին, բայց պարենային դժվարությունների պատճառով կատարվել էր միայն մինչև 28 տարեկանների հավաք: Նույն պատճառով գավառի ղեկավարությունը զինակոչի ենթարկվածների կեսին ընդգրկում էր Գորիս քաղաքի և շրջանների կանոնավոր զորամասերում, իսկ մյուս կեսին՝ միլիցիական ծառայությունում:

Պարենավորման գործը գավառում 1920 թ. սկզբին առաջվա նման խոցելի էր: Ժողովրդի տնտեսական դրությունը աննկարագրելի ծանր էր: Գավառը իշխանություններին էր հանձնում ստացած բերք ու բարիքի և ընդհանրապես եկամտի 50%-ից ավելին: Ազգաբնակչությունն ընդհանուր ֆոնդին 1919 թ. տվել էր 22 հազար փութ ցորեն, նույնքան գարի, ինչպես նաև պա-

հանջված քանակի խոտ և դարման[1]: 1920 թ. հունվարի կեսերին Երևանից Զանգեզուր ուղարկվեց 20 հազար փութ ալյուր, 6 հազար զինվորական հագուստ, շաքար, թեյ, լոբի, չորացրած բանջարեղեն, որը քիչ թե շատ թեթևացրեց դրությունը: Բայց այդ ամենը չնչին բան էր պահանջարկի դիմաց:

Բժշկասանիտարական գործը բարձիթողի վիճակում էր, չէր բավականացնում դեղորայքը: Գյուղերում և նույնիսկ Գորիս քաղաքում 1919 թ. տիֆով վարակվել էին հարյուրավոր մարդիկ, որոնց զգալի մասը բուժվել էր ժողովրդական բուժամիջոցներով: Մայիս ամսին Երևանից Նախիջևանի վրայով Զանգեզուր էին ուղարկվել 30 փութ դեղորայք և գործիքներ, որոնք, սակայն, ընկել էին թուրքերի ձեռքը:

Զանազան հիվանդություններից մեծ կորուստներ էր կրում անասնապահությունը: Եղջերավոր անասունների մեջ իսկական կոտորած էր սկսվել ժանտախտի պատճառով: Սակայն այդ ամենի կողքին ակնառու էին նաև դրական փոփոխությունները:

Իր զեկուցագրում գեներալ-կոմիսարը նշում էր, որ գավառի ներքին կյանքը կանոնավորելու ուղղությամբ 1920 թ. սկզբին լարված աշխատում էին Զանգեզուրի ազգային խորհուրդը, նրան ենթակա Կապանի ազգային խորհուրդը, շրջանային խորհուրդները: Դրանից բացի՝ գեներալ-կոմիսարությանը կից գործում էր գավառի կառավարման խորհուրդը, որն ուներ հետևյալ բաժանմունքները. 1) ներքին գործերի և պարենավորման, 2) դպրոցական-կրթական, 3) խնամատարության, ժողովրդական առողջապահության ու հասարակական աշխատանքների, 4) ճանապարհների հաղորդակցության, 5) պետական վերահսկողության[2]:

Ներքին գործերի բաժանմունքի ջանքերով վերակազմավորվում էր հեծյալ և հետևակ միլիցիան: Նոր գրավված Օխչի և Գեղի ձորերի տարածքներում ստեղծվել էր կոմիսարության 6-րդ շրջանը, որը բնակեցվել էր հայ գաղթականներով:

Գորիս քաղաքում հիմնվել էր պետական ջուլհականոց, որը բավականին կրճատել էր այնտեղ ապաստանած գործազուրկ գաղթականների թիվը:

Դպրոցական գործը գավառում հետզհետե բարելավվում էր: Ուսուցչական կազմը կանոնավոր աշխատավարձ էր ստանում: Հրահանգի համաձայն՝ բոլոր գյուղերում, որտեղ հնարավոր էր, բացվել էին դպրոցներ, թեև առաջվա պես շատ մեծ էր գրքերի և գրենական պիտույքների պակասը:

Աշխատանքներ էին տարվում Գորիս քաղաքի և գավառի բոլոր շրջանների միջև հեռագրային և հեռախոսային կապ հաստատելու ուղղությամբ: Առաջնահերթ էին համարվում Գորիսը Գողթանի և Գենվազի հետ կապելու աշխատանքները: Գորիսից հեռագրային հաղորդակցությունը Սի-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479-ի 2-րդ մաս, թ. 352-ի շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 352:

սիանի վրայով հասնում էր մինչև Բազարչայ և ծրագրված էր մինչև 1920 թ. գարնան սկիզբը հասցնել Ղուշչիբիլակ: «Եթե Քեշիշքենդից ևս դեպի Սիսիան հեռագրաթել անցկացնելու աշխատանքները կանգ չառնեն,– կարդում ենք մի պաշտոնական փաստաթղթում,– ապա կարելի է հուսալ, որ մոտ ապագային Գորիսը կարող է միանալ Երևանի հետ հեռագրաթելով»[1]:

Սկսվել էր ճանապարհների կարգավորումը: Չնայած հաղորդակցության դժվարություններին՝ տրանսպորտային կապը Վայոց ձորի կենտրոն Քեշիշքենդի հետ գործում էր: Զանգեզուրի գյուղերից բերված ավելի քան 3 հազար գրաստ երթևեկում էր Գորիս–Քեշիշքենդ ճանապարհով[2], որի միջոցով Հայաստանի այդ տարածքից գավառ էր փոխադրվում զինամթերք, պարեն, հագուստ: Ոչ մի հնարավորություն չկար վարձատրելու մարդկանց այս աշխատանքի դիմաց. ամբողջ այդ գործը կատարվում էր հասարակական հիմունքներով: «Զանգեզուրի ժողովրդի այդ զոհողությունը անսահման է,– կարդում ենք նույն փաստաթղթում,– նա պատրաստ է ամեն ինչ զոհաբերել երկրի պաշտպանության համար»[3]:

1920 թ. մեծ հույսեր էր արթնացրել Զանգեզուրում, թեև աշխարհի քաղաքական հորիզոնը դեռ չէր պարզվել: Ընդհակառակը, շահերի բախումը հաղթանակած պետությունների միջև շարունակվում էր, Թուրքիայի խնդիրը չէր լուծվում, իսկ բոլշևիկյան Ռուսաստանը ձգտում էր ձեռք պարզել մի կողմից՝ պարտված Գերմանիային, մյուս կողմից՝ հոգեվարք ապրող Թուրքիային ու Պարսկաստանին: Եվ խորհրդային զորքերն իրենց արշավը ուղղեցին դեպի հարավ:

Հունվարի 8-10-ը խորհրդային և կամավորական բանակի միջև Դոնի ավազանում տեղի ունեցան խոշոր ընդհարումներ. Դենիկինը պարտվեց, իսկ խորհրդային զորքերը, գրավելով Նոր Նախիջևանն ու Ռոստովը, շարժվեցին առաջ: Դենիկինի կամավորական բանակը տվեց տասնյակ հազարավոր գերիներ, կարմիր զորքերի ձեռքն անցան բազմաթիվ թնդանոթներ, զենք, ռազմամթերք: Սրանք կամավորական բանակի վերջնական կազմալուծման նշաններն էին: Կարմիր բանակի սպառնալիքը մոտենում էր Այսրկովկասին, որտեղ հարկավոր էր դիմադրական ուժ ստեղծել:

Եվ ահա հունվարի 12-ին Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդրոպը Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին պաշտոնապես հայտարարեց, որ լորդ Քերզոնի առաջարկով Փարիզում դաշնակիցների Գերագույն խորհուրդը ճանաչել է Վրաստանի և Ադրբեջանի փաստական անկախությունը:

Ջ. Ուորդրոպի այս հայտարարությունը եթե հանդիսությունների ու խանդավառ ցույցերի առիթ տվեց Վրաստանի ու Ադրբեջանի մայրաքաղաք-

---

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479-ի 2-րդ մաս, թ. 353:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Նույն տեղում:

ներում, ապա խիստ ծանր տպավորություն գործեց Հայաստանում և վրդովմունք առաջ բերեց դաշնակիցների նկատմամբ:

Թեև Ադրբեջանը դե ֆակտո անկախ էր ճանաչվել առանց Զանգեզուրի և Արցախի, բայց այդ երկրամասերը Եվրոպայի համար առաջվա պես համարվում էին «չեզոք» տարածքներ, և դրանց պատկանելության հարցը դեռ որոշված չէր, թեև արդեն մեկ տարի (1919 թ. հունվարից) շարունակվում էր Փարիզի վեհաժողովը: Չնայած դրան՝ Ջ. Ուորդրոպը շարունակեց Արցախի և Զանգեզուրի նկատմամբ ադրբեջանական զավթիչների հավակնությունների օգտին հայտարարություններ անել: Ավելին՝ 1920 թ. հունվարի 23-ին նա ժամանեց Բաքու՝ Ադրբեջանի անկախության ճանաչման առիթով անձամբ շնորհավորելու մուսավաթական կառավարությանը, նաև խորհրդակցելու 1919 թ. վերջերից Զանգեզուրի շուրջ երկուստեք ծավալված ռազմական գործողությունների կապակցությամբ: Ջ. Ուորդրոպը Բաքվի կառավարությանը հավաստիացրեց, որ ինքը Լոնդոնին ու Փարիզին անպայման կտրամադրի Հայաստանի դեմ, որն «ուզում է զավթել ուրիշի հողերը»[1]:

Գեղվաձորի արշավանքից (1919 թ. նոյեմբերի 15) հազիվ մեկ ամիս էր անցել, երբ գավառի հայության առջև կանգնեց անտառապատ ու լեռնային Շուռնուխ գյուղի և շրջակա գյուղերի, ինչպես նաև Բարգուշատ (Որոտանի ստորին հոսանք) գետի և հովտի թուրքերի ավազակային հարձակումների մշտական վտանգից ազատվելու հրատապ խնդիրը[2]:

Շուռնուխը և նրան հարակից թուրքական գյուղերը՝ Էյվազլար, Մազրա, Նավլու և այլն, գտնվում էին Որոտան գետի աջ ու ձախ ափերին: Այդ տարածքն իր աշխարհագրական դիրքով իշխում էր Կապանի և Գորիսի շրջանների վրա, բացի դրանից՝ այդտեղով էր անցնում Գորիս–Կապան խճուղային ճանապարհը, որի «բանալին» գտնվում էր թուրքերի ձեռքին. ցանկացած ժամանակ նրանք փակում էին ճանապարհը, հաճախ սպանում կամ առևանգում հայ ճամփորդներին և, որպես կանոն, մնում անպատիժ[3]:

Զանգեզուրի ազգային խորհուրդը, Դրոյի մասնակցությամբ իր նիստում քննարկելով Շուռնուխի դեմ արշավանք կազմակերպելու անհրաժեշտության հարցը, Ն. Ղազարյանի առջև դրեց այն իրականացնելու խնդիրը: Վերջինս հավանություն տվեց Ազգային խորհրդի առաջարկին և Նժդեհին հրավիրեց Գորիս՝ խորհրդակցելու[4]:

Գեներալ Ն. Ղազարյանը Զանգեզուր-արցախյան շրջանի հայկական ուժերի հրամանատար նշանակված Դրաստամատ Կանայանի (Դրո) և իր անունից Կապարգողթի հրամանատարին առաջարկեց արշավանք սկսել

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թթ. 56-57:

[2] Տե՛ս Եպոսի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, գրի առաւ՝ Յ. Տէրունի, «Հայրենիք», 1941, հունիս, թիվ 8 (224), էջ 97, **Վ. Առաքելյան**, Նժդեհ, Երևան, 1989, էջ 20:

[3] Տե՛ս Եպոսի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, էջ 97:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 53:

Շուռնուխի և հարակից թուրքական գյուղերի վրա, տեղահանել բնակիչներին և Գորիս–Կապան խճուղին դարձնել անվտանգ[1]: Նաև Նժդեհին ներկայացրեց արշավանքի իր ծրագիրը, որի համաձայն՝ Շուռնուխի վրա պետք է հարձակում սկսվեր միաժամանակ՝ և՛ Կապանի կողմից՝ Կապարգողթի ուժերով, և՛ Գորիսի կողմից՝ Հովհաննես Պարոնյանի (Յապոնի) հրամանատարության տակ գտնվող ջոկատով: Վերջինիս զորամասը հիմնականում հարվածելու էր Որոտանի աջ ափի թուրքական գյուղերին[2]: Շուռնուխի ռազմական գործողության ընդհանուր ղեկավարությունը իրականացնելու էր Դրոն:

Գ. Նժդեհը, գտնելով որ Շուռնուխի հովտի վրա հարձակվելու ձեռնարկը տվյալ պահին աննպատակահարմար էր և ռազմավարական տեսանկյունից խիստ վտանգավոր, դեմ արտահայտվեց այդ ծրագրին[3]: Գեներալ Ն. Ղազարյանի հետ զրույցի ժամանակ հիմնավորելով իր կարծիքը՝ նա ասաց, որ այն պահին, երբ Ղարաբաղում խմորվում էին հայերի ապստամբական նոր շարժումներ, Շուռնուխի արշավանքը Ադրբեջանի կառավարությանն առիթ կտար մեծ ուժերով օգնության հասնելու Ղարաբաղի և Զանգեզուրի արևելյան ճակատների վրա կռվող թուրքերին: Դա մեծապես կբարդացներ Ղարաբաղի առանց այն էլ ծանր դրությունը, որտեղ չկար ո՛չ կանոնավոր կազմակերպվածություն, ո՛չ էլ բավարար քանակի ռազմամթերք[4]:

Գ. Նժդեհը Շուռնուխի արշավանքը խիստ վտանգավոր էր համարում հատկապես Գողթանի համար: Գողթանը, ըստ նրա, իր աշխարհագրական դիրքով բացառիկ նշանակություն ուներ Զանգեզուրի պաշտպանության հարցում, ուստի նրա կորուստը կարող էր անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Սյունեցի կամավորների մի հավաքում խոսելով Գողթանի ռազմավարական նշանակության մասին՝ Նժդեհը նշել է. «Գողթանը դա մեր լեռնաշխարհի ռազմագիտական բանալին է: Զիջել այդ փոքրիկ, բայց իր աշխարհագրական դիրքի ու բնական ամրությունների արժեքով մեծ ու կարևոր շրջանը, կնշանակի հաշտվել Սյունիքից և Ղարաբաղից ընդմիշտ ձեռք քաշելու մտքի հետ:

Դեռ ավելին, ձեռքից տալ Գողթանը, կնշանակի անհնար դարձնելու աստիճան դժվարացնել հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը՝ մշտական վախի ու ջղայնության մատնելով մեր փոքրիկ հանրապետությունը»[5]:

Եվ ահա ադրբեջանական ուժերը, պատրվակելով Շուռնուխի արշավան-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 73:

[2] Տե՛ս Եապօնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, էջ 97, **Հ. Գևորգյան**, Յապոն (Հովհաննես Պարոնյան), Երևան, 2013, էջ 202, 204:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 44, թ. 3:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 53, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 42:

[5] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 56, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 42:

քը, կարող էին ոչնչացման սպառնալիք կախել Գողթանի, փաստորեն, անպաշտպան հայության գլխին: Ուստի, ասում էր Նժդեհը, երբ դրված է գողթանցիների լինել-չլինելու հարցը, առաջնությունը պետք է տալ Գողթան մտնելու և Օրդուբադը գրավելու իր մշակած ծրագրին: Նա զորավարին հիշեցրեց իր՝ նրան մի քանի օր առաջ ներկայացրած մարտագիրը, որտեղ հիմնավորել էր Օրդուբադի դեմ անհապաղ արշավանք սկսելու անհրաժեշտությունը, սակայն պատասխան չէր ստացել:

Նկատի առնելով այս բոլոր հանգամանքները՝ Նժդեհը գտնում էր, որ Շուռնուխի արշավանքը կարելի է սկսել Գողթանի արշավանքից անմիջապես հետո[1]:

Գեներալ Ն. Ղազարյանը տեղյակ էր Գողթանի նկատմամբ Հայաստանի կառավարության տեսակետին: Կառավարությունը գտնում էր, որ կենտրոնից Գողթանին օգնության հասնելը գործնականորեն անհնարին էր, հետևապես կրկին ու կրկին հիշեցնում էր, որ միակ ելքը դեպի Զանգեզուր գողթանցիների գաղթն էր[2]:

Իր զեկուցագրում Նժդեհը մասնավորապես նշում էր, որ Գեղիի, Ողջիի և Շիլարի կիրճերը և նրանց ադրբեջանաբնակ գյուղերը մասամբ դժվարացնում, մասամբ անհնար էին դարձնում առանձին շրջանների հաղորդակցումը: Կապանը Սիսիանի ու Գորիսի հետ հաղորդակցվում էր մեծ դժվարություններով, Գողթանը Գենվազի ու Կապանի հետ նույնպես հաղորդակցվում էր շատ ծանր պայմաններում, իսկ Գողթանը և Սիսիանը Շիլարի կիրճի պատճառով հաղորդակցվելու հնարավորություն չունեին: Քանի որ Զանգեզուրի թիկունքը վտանգված էր, Նժդեհը պնդում էր, որ ողջ ուշադրությունը պետք է դարձնել այդ կիրճերի վրա: Զբաղեցնելով Ողջիի և Գեղիի կիրճերը, նրա կարծիքով, հանդուրժելի վիճակ կստեղծվեր Գողթանի, Գենվազի, Կապանի, Գորիսի և Սիսիանի համար, թեև Գողթանն ու Սիսիանը Շիլարի կիրճի պատճառով դարձյալ կմնային տարանջատված: «Իմ բոլոր դիմումները Զանգեզուրի իշխող շրջաններին ու հորդորումները՝ մաքրել Շիխլիարի կիրճը, ոչ մի դրական արդյունք չտվեցին, միշտ ստանում էի մերժում, որը հիմնավորվում էր այն բանով, թե շիխլիարցիները «հավատարիմ հպատակներ» և օրինապահ են, մոռանալով, որ և՛ Շահվերդիլյարը, և՛ Էյվազլարը, և՛ Ողջիի կիրճը Անդրանիկի ժամանակ էլ հայտարարել էին իրենց օրինապահության ու հավատարմության մասին»:

Զեկուցագրում այնուհետև նշվում էր, թե հայտնի է՝ այդ նույն «օրինապահ» էյվազլարցիները ինչպիսի ճնշում գործադրեցին քարահունջցիների վրա, իսկ «հավատարիմ» հպատակներ ողջեցիները իրենց Հայաստանի թշնամի էին հայտարարում և անգամ փորձում թիկունքից հարվածել Գողթանին:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 53:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 56:

Նժդեհը համոզված էր, որ հարմար պահի, երբ կպահանջեն Ադրբեջանի շահերը, նույն խաղը Զանգեզուրի գլխին կխաղան նաև Շիլարի կիրճի բնակիչները: Վերջին վեց ամիսների ընթացքում, նշում էր զորավարը, հակառակորդը հինգ անգամ հարձակվել էր Գողթանի և մեկ անգամ՝ Սիսիանի վրա, իսկ հայերը հարձակվել էին երկու անգամ՝ մի անգամ Գողթանում, մի անգամ էլ՝ Սիսիանում (Զուլում): Նա նշում էր, որ այդ օպերացիաների ընթացքում Գողթանը հնարավորություն չունեցավ օգնելու Սիսիանին, ինչպես և Սիսիանը՝ Գողթանին, քանի որ դրանց միջև գտնվում էր Շիլարի կիրճը, որի բնակչության օրինապահությանը հավատալը ոչ միայն պարզամտություն կլիներ, այլև հանցավորություն: Նժդեհը ընդգծում էր, որ ամբողջ Զանգեզուրում չէր գտնվի գեթ մի մարդ, որը հանգիստ խղճով կերաշխավորեր շիլարցիներին այն առումով, որ նրանք ներգրավված չէին Ադրբեջանի ռազմական լրտեսության մեջ: Նժդեհը գրում էր. «Ես համոզված եմ, որ Շիխլյարի կիրճը հոգուտ Ադրբեջանի գործող մի հսկայական լրտեսական կազմակերպություն է, և որ այդ կիրճը Զանգեզուրի ապագա դժբախտության պատճառն է»[1]:

Ամփոփելով գրությունը՝ Նժդեհը փաստում էր, թե համաձայն տեղեկությունների՝ հակառակորդն զբաղված էր Զանգեզուրի դեմ ամենալայնածավալ գործողություն մշակելով: Նա կարծում էր, որ այդ օպերացիայի կազմակերպման աշխատանքները հակառակորդից կխլեն մեկ ամիս ժամանակ, և որ այդ ընթացքում անհրաժեշտ էր պատրաստ լինել դիմավորելու թշնամուն, որ հնարավոր լիներ ձախողել հակառակորդի պլանները, և որ նրան հնարավորություն չտրվեր դրսից Շիլարի կիրճ ու Զուլ ուժեր մտցնելով՝ հարվածել Սիսիանին և Քիլիսալուով միանալով հակառակորդի այն զորամասերի հետ, որոնք գործում էին Հաջիսամլուի կողմից, Զանգեզուրը կտրել Դարալագյազից, ինչը, իհարկե, երկրամասը կդներ անելանելի վիճակի մեջ: Ուստի անհրաժեշտ էր Սիսիանի ուժերով անհապաղ մաքրել Շիլարի կիրճը և գրավելով Արավսա, Լյաքաթաղ, Թեյվաս*, Վերին, Միջին և Ներքին Անզր գյուղերը՝ կապ հաստատել Գողթանի հետ:

Որպես եզրակացություն՝ Նժդեհն իրավամբ նշում էր. «Շիխլյարի կիրճի գրավմամբ կհեշտանան հետագա գործողությունները Նախիջևանի գավառում և կվերանա Երևանից կտրված լինելու վտանգը:

Զեկուցելով Շիխլյարի կիրճը մաքրելու անհրաժեշտության այս բոլոր շարադրված և, ըստ իս, անառարկելի փաստարկները՝ ես վերջին անգամ եմ խնդրում Ձերդ Գերազանցությանը, որ այն դեպքում, եթե որոշ անձանց հաջողվի ի վնաս հայրենիքի շահերի և ի հակասումն ռազմավարության պահանջների պնդել այն բանի վրա, որ Շիխլյարի թաթարները մնան իրենց տեղերում, ինձ ազատել զբաղեցրածս պաշտոնից, որովհետև Զանգեզուրում

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 48, թ. 2:

* Այժմ դրանք Նախիջևանի Լյաքաթաղ (Լաքաթաղ) և Թեյվազ գյուղերն են:

իմ հետագա մնալը կլինի անօգուտ և աննպատակ:

Նման պայմաններում ես ավելի օգտակար կլինեի արյունաքամ լինող Գողթանում մի շարքային կամավորի դերում»[1]:

Կրկին ու կրկին ընդգծելով Օրդուբադի դեմ արշավանքի առաջնային նպատակահարմարությունը՝ Նժդեհը, սակայն, ենթարկվում էր զինվորական կարգապահությանը և, ի վերջո, համաձայնվում Ն. Ղազարյանի առաջարկին[2]:

Շուռնուխի արշավանքից առաջ Նժդեհը մի գրություն էր ուղարկել Դրոյին, որտեղ մասնավորապես նշվում էր. «Որպես հեղափոխական՝ իմ բարոյական պարտքն եմ համարում վերջին անգամ նախազգուշացնելու Ձեզ, որ Շուռնուխի գործողությունները շատ ծանր հետևանքներ պիտի ունենան Ղարաբաղի և Գողթանի համար:

Իհարկե … իմ տեսակետը տվյալ հարցերի մասին ինձ՝ որպես զինվորականի, իրավունք չի տալիս չկատարելու ինձ տրվելիք հրամանը: Եղե՛ք համոզված, որ տրվելիք խնդիրները իմ ուժերի կողմից կը կատարվին ամենափայլուն կերպով»[3]:

1920 թ. հունվարի 17-ին Նժդեհը հետևյալ թիվ 17 մարտագիրն ուղղեց իր վաշտերին.

«1. Շուռնուխի ուղղությամբ թշնամին իր ձեռքին պահելով Ալի-Ղուլի-Ուշաղի, Էյվազլար, Շամսազ, Ղուրթղալա, Մազրթնի, Ային գյուղերը և Քեափազ, Ային-Տաղ և Խանակա բարձունքները, փակել է Ղափան–Գորիս խճուղին: Հրամայված է մաքրել եւ ապահովել այդ ճանապարհը թշնամու յարձակումներից:

2. Ձիւորնե՛ր, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել: Վերցնենք առանց տատանումի: Օրեր առաջ իմ արևմտեան ուժերի խենթ հարուածներից ընկաւ անառիկ Գեղուաձորը: Օրեր անց՝ ձեր նոյն Գեղուաձորեան թափի ու կրակի առաջ պիտ ընկնի Որոտանի աջ ափը:

Այնտեղ, Գեղուայ բարձունքներում եւ ձորերում մեզ զօրավիգեց Դավիթ-Բէգի վրիժավառ ստւերը, այստեղ, Որոտանի ճակատում, մեզ կ'առաջնորդէ Թորոս իշխանի հայրենանւեր հոգին: Եօթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մէջ, որոնց վրայ է մեր փրկութիւնը: Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տէրը Զանգեզուրին: Ուրեմն յառաջ, իմ եօթն անգամ սիրած և քաջ ղափանցիներ, յառաջ դէպ այդ բարձունքները, դեպ Քեափազ, Ային-Տաղ, դէպ Հարթիզ:

Մեզ հետ Աստուած եւ մեր պատերազմական բախտը, յառաջ»[4]:

Զանգեզուր–Ղարաբաղի ընդհանուր հրամանատար Դրոն ևս կարգավո-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 48, թ. 2:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 53, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 42-43, **Վ. Առաքելյան**, Նժդեհ, էջ 20:

[4] **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 43:

ռում էր տեղի զինուժը՝ համապատասխան նշանակումներ կատարելով: Դրոյի՝ 1920 թ. հունվարի 18-ի հրամանով պոդպորուչիկ Արիստակես Մուրադխանյանը նշանակվեց Սիսիանի ջոկատի գումարտակի հրամանատար: Պահեստազորի հրամանատար, ռոտմիստր Նիկոլայ Թարխանովը հունվարի 13-ին ծանուցեց Դրոյին, թե հատուկ հետևակային գումարտակը իր հրամանով մտել է Քարահունջ գյուղը, որի կազմում կա 60 զինվոր և մեկ ավագ սպա: Հրետանու պետը ծանուցեց, որ լեռնային մարտկոցի 9-րդ դասակը իր և հեծյալ մարտկոցի հետ՝ պորուչիկ Ռուբեն Արզանովի գլխավորությամբ, հունվարի 18-ին տեղակայվել է հանձնարարված վայրում:

Հունվարի 18-ին ջոկատի շտաբի պետ շտաբս-կապիտան Վալենտին Միրիմանյանը և համհարզ, պորուչիկ Նիկոլայ Նուրովը գնացին դիրքերը՝ Շուռնուխի օպերացիան անմիջականորեն ղեկավարելու համար[1]:

1920 թ. հունվարի 22-ին՝ արշավանքից առաջ, Դրոն արձակեց հետևյալ կոչը.

«Սպանե՛ր և զինվորնե՛ր,

Թշնամին, որը երազում էր Զանգեզուրի գրավումը և վերջերս մտել էր մեր տարածք, կրելով մեծ կորուստներ անցած տարվա վերջին, ջարդված ու ոչնչացած, թողել է մեր սահմանները: Սակայն նա դեռևս չի կորցրել իր հույսը և օգտվելով տեղի մահմեդականների աջակցությունից՝ պատրաստ է՝ կրկին անցնելու հարձակման և գրավելու մեր շրջանը:

Թշնամին շարունակում է իր ձեռքում պահել ողջ Շուռնուխի շրջանը և փակելով մեր ճանապարհները դեպի Ղափան, առաջիկայում ձգտում է միանալ Նախիջևանի հետ՝ կտրելու մեզ մեր եղբայրներից՝ ղափանցիներից և գողթանցիներից, սակայն սուրբ ծննդյան օրերին, դուք, Հերոսական Հայաստանի քաջարի մարտիկներդ կրկին հաղթանակ և ուրախություն բերեցիք մեր ժողովրդին. թշնամին այստեղ էլ տեսնելով ձեզ փախավ:

Սպանե՛ր և զինվորնե՛ր, քաջությունը, անձնազոհությունը և խնդրի կարևորությունը գիտակցելը մեր առաջիկա հաղթանակների երաշխիքն են, քանի որ թշնամին արդեն գիտակցել է, որ մեծ է Ձեր սերը հայրենիքի հանդեպ և թե որքան դաժանորեն եք դուք պատժում նրան, ով համարձակվել է խաթարելու Ձեր ազատությունն ու պատիվը:

Շնորհապարտ եմ Ձեզ զինվորներ... Հավերժ փառք զոհվածներին...»[2]:

1920 թ. հունվարի 19-ին Նժդեհի վաշտերն անցան հարձակման: Միաժամանակ Յապոնի զորամասը հարվածեց Որոտանի ափին գտնվող թուրքական Էյվազլար գյուղին: Տեղ հասավ նաև Սիսիանի աշխարհազորային ջոկատը՝ Պողոս Տեր-Դավթյանի հրամանատարությամբ[3]: Դաժան բքի պայմաններում, հաղթահարելով Ղարաքիլիսա–Յայջի–Տաթև–Երիցաթումբ դժվարին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 280, ց. 4, գ. 2, թ. 59:

[2] Նույն տեղում, գ. 2, թ. 59-ի շրջ.:

[3] Տե՛ս «Երեկոյան Երևան» թերթ, 1990, 9 հուլիսի:

ճանապարհը, Սիսիանի ջոկատը դիրքեր գրավեց Կատար բարձունքում՝ կրակի տակ առնելով թուրքերի գրաված բարձունքները[1]: Կռիվը տևեց ընդամենը երկու օր: Կապարգողթի հրամանատարը կռվի թեժ կետերում էր: Իր զինվորների համար Նժդեհն իսկական կուռք էր: Զորաշարքերում նրա հայտնվելը տասնապատկում էր զինվորների մարտական ոգին: Նա մարտիկներին հմայում էր անձնական քաջությամբ, իր օրինակով նրանց մղում նոր սխրանքների: Երբ վաշտերից մեկի զինվորները չկարողացան հարձակվելով վերցնել Խալաջ գյուղի անառիկ դիրքերը և մութը վրա հասնելու պատճառով մտադիր էին գրոհը հետաձգել վաղվան, միայն տասը հեծյալների հետ Նժդեհը գրոհեց թշնամու դիրքերի ուղղությամբ: Դիրքերը գրավվեցին, և թուրքերը փախան գյուղից[2]:

Կռվի այս կամ այն հատվածում Նժդեհի երևալը ահ ու սարսափի էր մատնում թշնամուն:

Հունվարի 20-ին, այլևս անկարող լինելով որևէ դիմադրության, թշնամին գլխապատառ լքեց բոլոր դիրքերը: Ռազմական ծրագրով նախատեսված 6 գյուղերի փոխարեն Նժդեհի քաջերը երկու օրում գրավեցին Բարգուշատի Չարալու, Սալդաշ, Փարիջան, Գյոյալի, Դաշբաշ, Հարթիզ, Միհրալու, Խոջամուսախլու, Այյադ, Զոր, Մազըտտի, Թարավլու, Չարդախլու, Վերին և Ներքին Քյոռջալանլու, Կարաղաջ, Քյուրդ-Խալաջ, Ային, Ղուրդղուլաղ, Չիբիկլու, Սևաքար, Միսիթան, Ղարաղաջ-Բուլաղի, Ղարաղշլաղ, Խանլավա, Մահմուտլու և Հաջիլու գյուղերը: Նույն ժամանակ Գորիսի զորամասը Յապոնի, Արտեմ Խանզադյանի և տաթևցի Վարդանի ղեկավարությամբ գրավեց Շուռնուխ, Էյվազլար, Մազրա, Նավլու և Հազարու գետի ափին ընկած թուրքական մյուս գյուղերը[3]:

Այսպիսով՝ Կապարգողթի և Գորիսի ուժերը, գրավելով բազմաթիվ ռազմավարական կարևոր դիրքեր, ձեռք գցելով պատերազմական ավար և բացելով Գորիս–Կապան խճուղին, իրենց հսկողության տակ վերցրին 30-ից ավելի թուրքաբնակ գյուղեր[4]:

Կատարված ռազմական փայլուն գործողությունը արժանացավ հրամանատարության խրախուսանքին: 1920 թ. հունվարի 25-ի շնորհավորական

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 54, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, հունիս, թիվ 8, էջ 115, Եապօնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, էջ 97-98, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 89, **Վ. Առաքելյան**, Նժդեհ, էջ 21:

[2] Տե՛ս «Արնոտ գիրք», Գորիս, 1921, էջ 30, 31, **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 54, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 90, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 44, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 21:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 54, Եապօնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, էջ 98, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 89, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 43, **Հ. Գևորգյան**, Յապոն (Հովհաննես Պարոնյան), էջ 208-209, *նույնի՝* Դրո, էջ 546-547:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 280, ց. 4, գ. 2, թթ. 59, 82, Եապօնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, էջ 98:

ուղերձում նշվում էր. «Շուռնուխի ձեռնարկած օպերացիան, որի նպատակը դեպի Ղափան ճանապարհի բացումն էր, պսակվեց լիովին հաջողությամբ:

Անկազմակերպ, անկարգապահ հակառակորդը փախավ՝ թողնելով իրենց կանանց և երեխաներին՝ չկարողանալով դիմանալ Ձեր սրընթաց հարվածին:

Քաջարի՛ սպաներ և զինվորներ, Դուք կրկին անգամ ապացուցեցիք Ձեր բարձր անձնազոհությունը, պարտքի հանդեպ անմնացորդ նվիրումը, սերը դեպի հայրենիքը և հանուն հաղթանակի մեծագույն զրկանքները տանելու ունակությունը:

Հրամայում եմ ջոկատի հրամանատարներին՝ մարտերում աչքի ընկածներին ներկայացնել շքանշանների:

Գեներալ-մայոր Ղազարով, շտաբի պետ՝ կապիտան Դոնդարով»[1]:

Շուռնուխի գյուղախմբի վրա հայկական ուժերի հարձակումը և ձեռք բերած հաջողությունը նոր աղմուկ առաջացրին Ադրբեջանում: Վերջինիս քաղաքական դաշտը Ղարաբաղի և Զանգեզուրի հարցում գնալով դառնում էր ավելի արմատական: Երկրի խորհրդարանական և քաղաքական շրջանակներում դժգոհության ալիք էր բարձրացել կառավարության ազդեցիկ անդամների և նրանց վարած տարտամ քաղաքականության դեմ: Այս առթիվ զանազան խորհրդակցություններ էին տեղի ունենում, որի հետևանքը պիտի լիներ կառավարության կազմից գլխավոր դերակատարներին՝ վարչապետ Ն. Ռուսուբբեկովին, Ֆ. Խան-Խոյսկուն, Խուդադաթ բեկ Մելիք-Ասլանովին, հեռացնելը: Ռազմական նախարար գեներալ-մայոր Սամեդբեկ Մեհմանդարովը արդեն հրաժարական էր ներկայացրել[2]:

Հունվարի 22-ին պաշտոնապես հրաժարական տվեց նաև խորհրդարանի նախագահի ավագ տեղակալ (փոխխոսնակ) Հասան բեկ Աղաևը, որը մի տարուց ի վեր, փաստորեն, վարում էր խորհրդարանի նախագահի պաշտոնը: Ադրբեջանի խորհրդարանական և ազդեցիկ քաղաքական դեմքերը կողմնակից էին առավել ակտիվ քաղաքականության[3]:

Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Ա. Խատիսյանին 1920 թ. հունվարի 24-ին գրած զեկուցագրում նշում էր. «Թե՛ մասնավոր և թե՛ պաշտոնական աղբյուրներից ստացած մեր տեղեկությունները ցույց են տալիս, որ Ադրբեջանը տրամադիր է այս անգամ Զանգեզուրի և Ղարաբաղի խնդիրը վերջնականապես լուծել, միացնելով այդ վիճելի շրջանները երկրին ու ապահովել կանոնավոր հաղորդակցությունը Նախիջևանի շրջանի հետ: Այս նպատակին հասնելու համար տրամադրություն է նկատվում կառավարության կազմի մեջ մտցնել անձնավորություններ, որոնք ըստ

---

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 102, թ. 37, ց. 9, գ. 18, թ. 9, ֆ. 280, ց. 4, գ. 2, թ. 82:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 29-30, ֆ. 275, ց. 2, գ. 211, թ. 28, ֆ. 275, ց. 4, գ. 21, թ. 50, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, հունիս, թիվ 8, էջ 116- 117:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 21, թ. 50:

ամենայնի կողմնակից լինեն՝ ինչ միջոցներով էլ ուզում է լինի, վիճելի վայրերը միացնել Ադրբեջանին: Սուլթանովի հստակ առաքելությունով շտապ Ղարաբաղ գնալը, քրդական դիվիզիոն կազմակերպելը և զանազան զորամասերից այդ դիվիզիոնը հմուտ, պատրաստված զինվորականներ փոխադրելը ապացույց է Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության: Բոլոր պաշտոնական գրագրություններից և հրահանգներից հայտնի է, թե ինչ մեծ հույսեր են դրել նրանք նոր կազմակերպվող քրդական դիվիզիոնի վրա՝ Ղարաբաղի և Զանգեզուրի հայությանը ճնշելու և երկիրը վերջնականապես նվաճելու խնդրում»[1]:

Հայկական հետախուզությունը Գորիսի զորակայան էր հաղորդել, որ Խ. Սուլթանովը ծրագրել էր զինաթափել Վարանդայի ու Դիզակի հայկական այն գյուղերը, որոնք գտնվում էին Զանգեզուրի սահմանագծի վրա, և որտեղից Զանգեզուրի ու Ղարաբաղի հայերն իրար հետ հարաբերություն էին պահպանում: Այդ ծրագրի կենսագործումը, անկասկած, դիմադրության կհանդիպեր հայերի կողմից և առիթ կդառնար նոր ընդհարումների: Սահմանային նշված վայրերում բախումները կվերածվեին հայ-թուրքական կոտորածների[2]:

Ահա թե ինչու Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը գրում էր. «Հայ-թուրքական հարաբերությունները այդպիսի տարամերժ և երկու հարևան ժողովուրդների համար կորստաբեր ընթացք ընդունելը կանխելու նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, որպեսզի սկսվող շարժումը համատարած կոտորածների բնույթ չկրի, և Ղարաբաղի ու Զանգեզուրի հայությունը նոր փորձությունների չենթարկվի»[3]:

Շուռնուխի գյուղախմբի վրա հայերի հարձակումների կապակցությամբ Ադրբեջանի կառավարությունը զայրալից նորանոր բողոքներով դիմեց Թիֆլիս՝ դաշնակիցների ներկայացուցիչներին: Այդ բողոքներին հատկապես արձագանքում էին Անգլիայի ներկայացուցիչները: Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդրոպը Ա. Խատիսյանին ուղղված իր հեռագրում ներկայացրել էր, որ Զանգեզուրից ուղարկված հաղորդագրությունները խիստ անհանգստացնող էին, և խնդրվում էր անհապաղ միջոցներ ձեռք առնել՝ կանգնեցնելու Զանգեզուրի ուղղությամբ կատարվող գործողությունները: Նա նույնիսկ Բաքվին վստահեցրեց, որ ինքն անձամբ պատրաստվում էր հեռագրեր հղել Խաղաղության վեհաժողովին և հասնել այն բանին, որ այն պաշտոնապես դատապարտեր Հայաստանի Հանրապետության վարքագիծը[4]:

Միաժամանակ անգլիացի գեներալը գաղութատերի համարձակությամբ

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 21, թ. 50-ի շրջ., տե՛ս նաև ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 34, գ. 486, թ. 19:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 14, թ. 4, ֆ. 200, ց. 1, գ. 466, թ. 50, գ. 486, թ. 19, գ. 531, թ. 5, ֆ. 275, ց. 4, գ. 21, թ. 50-ի շրջ., «Հառաջ», 26 փետրվարի, 7 ապրիլի 1920 թ., “Слово”, 22 февраля, 14 марта, 1920, **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, հունիս, թիվ 8, էջ 116:

[3] ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 21, թ. 50-ի շրջ.:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 98, գ. 466, թ. 46, ֆ. 1457, ց. 1, գ. 572, թ. 3:

սպառնալիքով լի հեռագիր էր հղել Հայաստանի կառավարությանը[1]:

Ինչպես արդեն նշել ենք, Ջ. Ուորդրոպը 1920 թ. հունվարի 23-ին ժամանեց Բաքու: Նա եկել էր՝ Ադրբեջանի պաշտոնյաներից իմանալու Զանգեզուրի վերջին դեպքերի մասին և իր համերաշխությունը հայտնելու Ադրբեջանի կառավարությանը[2]:

Ադրբեջանի պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումներից հետո Ջ. Ուորդրոպը հաջորդ օրը՝ երեկոյան, Ադրբեջանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Գրիգորի Ալշիբայայի մոտ կայացած բանկետի ժամանակ նաև հանդիպում ունեցավ Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի հետ: Հանդիպումը տևել է մեկ ժամ[3]:

Հանդիպումը նվիրված էր Զանգեզուրի վերջին դեպքերին, Շուռնուխի ռազմական գործողությանը և Հայաստանի ու Ադրբեջանի փոխհարաբերություններին: Ջ. Ուորդրոպը հենց սկզբից նկատել էր, որ Զանգեզուրում շարունակ տեղի ունեցող ընդհարումները շատ վատ տպավորություն էին թողել Եվրոպայում, ուստի երկու երկրները ամեն կերպ պետք է աշխատեին խուսափել ազգամիջյան ընդհարումներից[4]:

Տ. Բեկզադյանը Ջ. Ուորդրոպին մանրամասն ներկայացրել էր դրությունը, բացատրել Հայաստանի և Ադրբեջանի վատ հարաբերությունների պատճառները, հանգամանորեն ներկայացրել Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի և Գողթանի ազգամիջյան ընդհարումների ժամանակ Ադրբեջանի ու նրա գործակալների կատարած գործողությունները:

Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը, երկու երկրների վատթար փոխհարաբերությունների պատճառներից մեկը համարելով՝ Խ. Սուլթանովի Հայաստանի դեմ ուղղված ագրեսիվ քաղաքականությունը, կարծես համոզել է անգլիացի գեներալին, որ այդ ամենի նպատակն էր խլրտումներ առաջ բերել երկրի զանազան մասերում և հնարավորություն չտալ Հայաստանի կառավարությանը՝ իրականացնելու իր գործառույթները[5]:

Խոսակցության ժամանակ Տ. Բեկզադյանը բրիտանացու ուշադրությունը հրավիրել է առանձնապես Ադրբեջանի իթթիհատ կուսակցության գործունեության վրա, որն ամեն միջոց գործ էր դնում ուժեղացնելու համար թուրքական տարրի մասնակցությունը Ադրբեջանի իշխանական մարմիններում[6]:

Անդրադառնալով Ադրբեջանի հանդեպ Հայաստանի կառավարության վարած քաղաքականությանը՝ Տ. Բեկզադյանը նշել է, որ Ադրբեջանի ղեկա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 572, թ. 3:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 56, գ. 475, թ. 32:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 417, թ. 56:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 56 և շրջ.:

[6] Տե՛ս նույն տեղում:

վար քաղաքական շրջանների արտահայտած ագրեսիվ տրամադրություններին ի հակառակ՝ Հայաստանն ամեն կերպ աշխատում էր բոլոր վիճելի խնդիրները լուծել խաղաղ ճանապարհով, որ նրա նախաձեռնությամբ մեծ դժվարություններով հաջողվեց գումարել հայ-ադրբեջանական խորհրդաժողով, որի որոշումները, տարաբախտաբար, Ադրբեջանի վարած անխոհեմ քաղաքականության հետևանքով չէին կատարվում: Բայց, չնայած դրան, Հայաստանը մնում էր խաղաղության դիրքերում[1]:

Ի պատասխան այդ փաստարկների՝ Զ. Ուորդրոպը խոստացավ խոսել վարչապետ Ն. Ուսուբբեկովի հետ և բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնել՝ կասեցնելու Զանգեզուրի վերջին դեպքերի հետևանքով Ադրբեջանում սկսված զորաշարժը, թույլ չտալ Ղարաբաղում և Զանգեզուրում կենտրոնացնել զորամասեր և նորանոր ընդհարումների ու բարդությունների առիթ տալ: Միաժամանակ Զ. Ուորդրոպը խնդրեց Տ. Բեկզադյանին Հայաստանի կառավարությանը նույնպես կոչ անել՝ զսպելու այն հայ զինվորական գործիչներին, որոնք ագրեսիվ են տրամադրված Ադրբեջանի և ընդհանրապես թուրքության հանդեպ[2]:

Հունվարի 25-ին Տ. Բեկզադյանը երկրորդ անգամ այցելեց Զ. Ուորդրոպին: Այցելության ժամանակ նա անգլիացու ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ «Ուսուբբեկովի դիրքը բավական խախուտ է ներկայումս, քանի որ Ադրբեջանի կառավարության վրա շարունակվում է ուժեղանալ ոչ միայն մուսավաթ կուսակցության, այլև իթթիհատականների ազդեցությունը, որոնք այժմ ամեն կերպ ձգտում են փոխել կառավարության կազմը և այնտեղ մտցնել առավել ագրեսիվ գործիչների»: Զ. Ուորդրոպը խոստացավ միջոցներ ձեռք առնել՝ կասեցնելու իթթիհատականների ագրեսիվ գործողությունները[3]:

Նույն օրը Զ. Ուորդրոպը փոխայցելություն կատարեց Տ. Բեկզադյանին, իսկ երեկոյան «Մետրոպոլ» հյուրանոցում անգլիացի գեներալի պատվին Ադրբեջանի կառավարության կողմից տրվեց բանկետ, որին հրավիրվեց նաև Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը: Այստեղ անգլիացի գեներալը համոզմունք հայտնեց, որ Ադրբեջանն իր բոլոր ուժերով կպայքարի բոլշևիկների դեմ, և երկրի բոլոր կուսակցությունները կաշխատեն Անտանտի օգտին[4]:

ՀՀ վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանը հունվարի 26-ին շտապ հեռագիր հղեց Թիֆլիս՝ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանին: Հեռագրում ասված էր. «Նկատի ունենալով Զ. Ուորդրոպի սպառնալիքը Լոնդոնը և Փարիզը տրամադրելու մեր դեմ, ի նկատի ունենալով նրա այդտեղ գալը չորեքշաբթի, ասացեք նրան, որ նրա հեռագիրը [Հայաստանի] կառավարության

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 56 և շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 56-ի շրջ., 57:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 417, թ. 56-ի շրջ., 57:

վրա թողել է ճնշող և վիրավորական տպավորություն, մանավանդ մեր տոնի օրը, երբ այնքան հույսեր ունենք Անգլիայի վրա: Ջանացեք նրան տրամադրել այլ կերպ՝ ստանալու սիրալիր հեռագիր, որովհետև հարկավոր է նրան դիմավորել (Երևանում: – *Ա. Ս.)* և հանդիսավոր: Շտապ պատասխանեք»[1]:

Հունվարի 26-ի երեկոյան Ջ. Ուորդրոպը և նրան ուղեկցող պաշտոնյաներ փոխգնդապետ Կլոդ Բեյֆիլդ Ստոուքսը և Օվայտը, Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Ուսուբբեկովը, Ֆ. Խան-Խոյսկին, Գ. Ալշիբայան, Ադրբեջանի խորհրդարանի հայկական խմբակցության անդամները հրավիրվեցին Տ. Բեկզադյանի մոտ՝ ընթրիքի, որից հետո Ջ. Ուորդրոպը անմիջապես գնաց կայարան: Նրան ուղեկցում էին ընթրիքի բոլոր մասնակիցները: Արտակարգ գնացքով գեներալը մեկնեց Թիֆլիս[2], որտեղից ծրագրել էր այցելել Երևան:

Ինչո՞ւ էր Ջ. Ուորդրոպը գալիս Երևան, ի՞նչ առիթով: Բանն այն է, որ մինչ այդ՝ հունվարի 23-ին, նրա տեղապահ փոխհյուպատոս Թոմաս Էդվարդ Միլլիգան Գրանդին Հայաստանի կառավարությանը պաշտոնապես հաղորդել էր, որ լորդ Քերզոնի առաջարկությամբ դաշնակիցների գերագույն խորհուրդը Փարիզում վերջապես ճանաչել էր նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը: Եվ ահա Ջ. Ուորդրոպը հունվարի 29-ին Երևանում էր ու փորձելու էր այս դրական լուրերով ցրել ՀՀ կառավարության վրա թողած այն ծանր տպավորությունը, որ հետևանք էր նրա նախօրոք ուղարկած սպառնալից հեռագրի՝ կապված Զանգեզուրի իրադարձությունների հետ: Բացի այդ՝ բրիտանացին դարձյալ համոզելու էր ՀՀ կառավարությանը համատեղել իր ուժերը հարևանների հետ՝ ընդդեմ բոլշևիկյան Ռուսաստանի[3]:

«… Բաքվում այժմ մթնոլորտը բարենպաստ է,– նշում էր Ջ. Ուորդրոպը: – Ադրբեջանի անկախության հռչակումը բարենպաստ կերպով ազդել է կառավարության վրա (ադրբեջանական: – *Ա. Ս.)*, որը դարձել է պակաս ագրեսիվ: Նա վստահ է, որ Ադրբեջանը կպայքարի բոլշևիկների դեմ, և բոլոր կուսակցությունները կաշխատեն Անտանտի շահերի օգտին»[4]: Այնուհետև Ուորդրոպն ավելացրեց, որ ինքը «… բավականաչափ խիստ է խոսել նաև Ադրբեջանի հետ և կարծում է, որ նրանք կզատեն իրենց անպատասխանատու տարրերին»[5]:

Թե որոնք էին Անտանտի երկրների և մասնավորապես Մեծ Բրիտանիայի շահերն Այսրկովկասում, որքանով էին անկեղծ Ուորդրոպի հավաս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 572, թ. 3:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 57:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 464, թթ. 30-31, ֆ. 275, ց. 4, գ. 25, թ. 2-3, **Ռ. Դարբինյան**, Հայաստանի Հանրապետության օրերուն, «Հայրենիք», 1950, թիվ 6 (293), էջ 28, 29, **Գ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 281:

[4] Նույն տեղում, գ. 464, թթ. 30-31, ֆ. 275, ց. 4, գ. 25, թ. 4:

[5] Նույն տեղում:

տիացումները Հայաստանի և հայ ժողովրդի անկեղծ բարեկամը լինելու մասին, և իրական ինչ արժեք ունեին Ադրբեջանի խոստումները, ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մասնավորապես Զանգեզուրի և Արցախի շուրջ ընթացող արյունալի պայքարը:

Հայաստանում անկախության ճանաչման լուրը ընդունվեց ուրախությամբ[1]. հազարավոր երևանցիներ համակրական ցույց կատարեցին Ջ. Ուորդրոպի կացարանի առաջ՝ միաժամանակ բարձրացնելով Թուրքահայաստանի անկախության ճանաչման խնդիրը:

Հունվարի 30-ին բրիտանացի պաշտոնյայի ներկայությամբ տեղի ունեցավ Հայաստանի նախարարների խորհրդի արտահերթ նիստ: Ցերեկվա ժամը 12-ին բացելով նիստը՝ նախարար նախագահ Ա. Խատիսյանը հենց սկզբից անդրադարձավ Զանգեզուրի հարցին՝ ասելով, որ կառավարությունը սկզբունքորեն հակված է Ադրբեջանի հետ ունեցած վիճելի հարցերը խաղաղ միջոցներով լուծելու, մուսուլմանների հետ համերաշխ համակեցություն հաստատելու տեսակետին, բայց չի կարող հանդուրժել, որ Ադրբեջանը, օգտագործելով Հայաստանի խաղաղասիրությունը, ոտնձգություն կատարի Ղարաբաղի, Զանգեզուրի և մյուս անվիճելի հայկական մարզերի վրա[2]:

Այնուհետև Ա. Խատիսյանը շարադրեց այն հարցերը, որոնք տվյալ ժամանակում առավել էին հետաքրքրում կառավարությանը:

1. Քանի որ Նախիջևանի երկրամասը վերածվել էր տաճիկ-ադրբեջանական ագիտացիայի և մուսուլմանական ուժերի կազմակերպման կենտրոնի, ուստի անհրաժեշտ էր վերջ դնել այդ դրությանը և այդ շրջանում ընդհանրապես հաստատել բաժանարար գիծ, ըստ որում՝ Հայաստանի կառավարության համար ընդունելի էր Նախիջևանում անգլիական գեներալ-նահանգապետության հաստատումը: Պետք էր նախ միջոցներ ձեռնարկել՝ բացելու Երևան–Թավրիզ երկաթուղին, որի նշանակությունը շատ մեծ էր ամբողջ Այսրկովկասի համար:
2. Պետք է վերջ տրվեր թուրքերի և ադրբեջանցիների կողմից տարվող պանիսլամական և հակահայկական քարոզչությանը Կարսում, Զանգիբասարում, Դարալագյազում, Զանգեզուրում և Հայաստանի մահմեդաբնակ մյուս մասերում:
3. Անդրադառնալով Շուռնուխ–Բարգաշատ նժդեհյան գործողության կապակցությամբ Ջ. Ուորդրոպի կողմից իրեն հղած զայրալից հեռագրին՝ Ա. Խատիսյանը շեշտում էր, որ դա Հայաստանի կառավարության վրա թողել էր ծանր տպավորություն: Ուստի գեներալը պարտավոր էր ինչ-որ ձևով մեղմել այդ հեռագրի թողած ճնշող տպավո-

---

[1] Տե՛ս «Յառաջ», 1920, 29, 30 հունվարի, թիվ 20, 21, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 440-444:

[2] Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, գ. 4, գ. 25, թ. 2:

ությունը՝ համանման հեռագիր ուղարկելով նաև Ադրբեջանի կառավարությանը՝ երկու Ագուլիսների և Շարուրի Խանլուխլար գյուղի հայ բնակիչների զանգվածային կոտորածները հիմք ընդունելով:

4. Անհրաժեշտ էր թուրքական հարցի լուծումը, որից կբխեր Հայաստանի Հանրապետությունում, նաև Զանգեզուրում գտնվող թուրքահայ բազմահազար գաղթականության՝ հայրենիք վերադարձի արագ կազմակերպումը: Հայաստանի Հանրապետությունում գաղթականության անհանգիստ զանգվածի ներկայությունը մեծապես խանգարում էր երկրի կառավարության բնականոն աշխատանքին:
5. Ադրբեջանական կառավարությունը ցանկանում էր հայերի վրա ազդել նավթի ներմուծումը արգելելու միջոցով: Անհրաժեշտ էր վերջ տալ այդ վիճակին:
6. Հայ ժողովուրդը վաղուց կողմնորոշված էր դեպի դաշնակիցները: Նա կարող էր անգլիական կառավարությանը օգտակար լինել և՛ տնտեսական, և՛ քաղաքական տեսանկյունից: Հայկական բանակի համար նախատեսված ռազմական հանդերձանքը պետք է տրվեր անմիջապես, ըստ որում՝ Այսրկովկասի երեք անկախ հանրապետություններին այն պետք է հանձնվեր միաժամանակ:
7. Հայկական կառավարությունը լուր էր ստացել, որ Բաթումը տրվելու էր Վրաստանին: Դրանում մեծապես շահագրգռված էր Հայաստանը, ուստի հարցի վերջնական լուծման ժամանակ պետք էր նկատի առնել Հայաստանի քաղաքական և տնտեսական շահերը: Խնդրվում էր նպաստել Կարս–Բաթում երկաթուղու կառուցման ծրագրի իրականացմանը[1]:

Հայաստանի վարչապետի ելույթից հետո նրա առաջ քաշած բոլոր հարցերին Ջ. Ուորդրոպը տվել էր հետևյալ պատասխանները.

«1. Ես շատ լավ եմ հասկանում Նախիջևանի խնդրի լուծման անհրաժեշտությունը և ձեռք կառնեմ բոլոր հնարավոր միջոցներն արագացնելու հարցի լուծման ընթացքը: Առանց ռազմական ուժի գործադրության դժվար է տաճիկներին և ասկյարներին հեռացնել այնտեղից: Անհրաժեշտ է սպասել Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքմանը: Այդ պայմանագրում բոլոր հարցերը նախատեսվելու են: Տաճիկները աշխատում են ոչ միայն Նախիջևանում, այլև հենց Բաքվում: Այդ բանից դժգոհ է նաև ինքը՝ Ադրբեջանի կառավարությունը: Վերջինս շահագրգռված է նաև դեպի Թավրիզ ճանապարհի բացումով: Ձեռք կառնվեն միջոցներ հաղորդակցությունը վերսկսելու համար:
2. Մուսուլմանական շրջաններում պանիսլամական և հակահայկական ագիտացիան կդադարի այն ժամանակ, երբ խաղաղության պայմա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 25, թթ. 2-3:

նագիր կկնքվի Թուրքիայի հետ, և երբ վերջնականապես կպարզվեն Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանները:

3. Զանգեզուրի դեպքերի կապակցությամբ ես բնավ նպատակ չեմ ունեցել վիրավորելու Հայաստանի կառավարությանը, այլ միայն ցանկացել եմ նոր էջ բացել հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմության մեջ, որպեսզի մոռացության մատնվեն հին վիրավորանքներն ու ընդհարումները: Դրա համար Բաքվում այժմ ստեղծվել է բարենպաստ մթնոլորտ: Ադրբեջանի անկախության ազդարարումը դրական ազդեցություն է ունեցել նաև այն առումով, որ նրա կառավարողները դարձել են ավելի քիչ ագրեսիվ:
4. Ես Հայաստանի լավագույն բարեկամներից եմ: Թուրքիայի հարցը անպայման կլուծվի օրերս և, իհարկե, հայերի համար բարենպաստ ելքով, այն է՝ Թուրքահայաստանը կազատագրվի: Ձեր հարցը շատ լավ պաշտպանում է հայկական պատվիրակությունը Փարիզում, և հայերի բազմաթիվ բարեկամների կողմից եվրոպական բոլոր պետություններում:
5. Կարվի ամեն ինչ, որպեսզի Հայաստանը ստանա նավթ և կերոսին:
6. Հայերին կտրվի ռազմական հանդերձանք, ըստ որում հնարավոր է, որ Վրաստանը ստանա ավելի շուտ, իսկ Հայաստանն ու Ադրբեջանը՝ անպայման միաժամանակ:
7. Բաթումի մասին ես չունեմ ոչ մի տեղեկություն»[1]:

Վերջում Ջ. Ուորդրոպը Հայաստանի կառավարությանը կրկին հավաստիացնում է, որ ինքը հայերի անկեղծ ու լավագույն բարեկամն է: Խորամանկ Ալբիոնը հարազատ էր մնում իր գործելաոճին:

Երկու օր անց՝ հունվարի 31-ին, Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ ևս մի կարևոր տոն: Այդ օրը դրվեց հայկական համալսարանի հիմքը: Հանդիսավոր բացմանը ներկա էին նաև Երևանից ժամանած Ջ. Ուորդրոպը, Թիֆլիսից եկած ամերիկյան գնդապետ Վ. Հասկելը և ֆրանսիական ներկայացուցիչ կապիտան Ա. Պուադեբարը:

Փետրվարի 2-ին Ալեքսանդրապոլից Երևան այցելեց Վիլյամ Նեֆյու Հասկելը: Նրա պատվին նույնպես քաղաքում տեղի ունեցավ համակրական ցույց, որի նշանաբանը Թուրքահայաստանի անկախության ճանաչումն էր: Ցուցաբարները երախտագիտական արտահայտություններ էին անում ամերիկյան ժողովրդի հասցեին, որը շարունակում էր հաց մատակարարել Հայաստանին:

Այսպիսի տոնական օրեր էր ապրում Հայաստանը, երբ Երևանում ստացվեց Ադրբեջանի կառավարության հայտարարությունը, որի նպատակը երկուսն էր՝ խաթարել հայերի ուրախությունը և պատրվակ գտնել Զանգեզուրի դեմ նոր ագրեսիվ գործողություններ սկսելու համար: Բաքուն դի-

[1] ՀԱՍ, ֆ. 275, ց. 4, գ. 25, թթ. 3-4, ֆ. 200, ց. 1, գ. 464, թթ. 30-31:

մում էր հերթական սադրանքի՝ Հայաստանին մեղադրելով այն բանում, որ նրա կանոնավոր զորքերը, միացած տեղի զինված ուժերին, Զանգեզուրից շարժվում էին Շուշիի վրա՝ ճանապարհին ավերելով թուրքական գյուղերը: Ազդարարվում էր, որ եթե Հայաստանի կառավարությունը չդադարեցներ իր զորքերի շարժումը դեպի Շուշի, ապա Ադրբեջանը հարկադրված կլիներ դիմել կտրուկ միջոցների:

Հայտարարությունը, սպառնալիք պարունակելով հանդերձ, միաժամանակ միտում ուներ արդարացնելու այն գործողությունները, որոնք Ադրբեջանը մտադիր էր ձեռնարկել Ղարաբաղի ու Զանգեզուրի դեմ: Բայց դա դաշնակիցների ներկայացուցիչներին թյուրիմացության մեջ գցելու և Զանգեզուրի դեմ հարձակման նախապատրաստությունը քողարկելու միակ հայտարարությունը չէր: Առանց հիմնավոր առիթների՝ դրան հաջորդեցին Հայաստանին ուղղված ուրիշ մի քանի հայտարարություններ ու սպառնալիքներ ևս հետագա դավադրական գործողություններն արդարացնելու համար[1]:

Փետրվարի 6-ին Ադրբեջանը մի նոր հայտարարագիր ուղղեց Հայաստանի կառավարությանը՝ Զարուշատի և Աղբաբայի շրջաններում խռովությունները հայկական ուժերի կողմից ճնշելու առիթով: Հոգ չէր, որ Հայաստանի թուրքաբնակ շրջաններում խռովությունները կազմակերպում էին թուրք ու ադրբեջանցի գործակալները: Հայտարարությունը ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Այս նոր դիմումով սպառված ենք համարում բոլոր նախազգուշական միջոցները»:

Զանգեզուրի զորակայանի հետախուզությունը հայտնեց, որ Զաբուղի և Դիզակի շրջանների զինական ուժերը նահանգապետ Խ. Սուլթանովը դրել է մարտական պատրաստության մեջ: Բայց Զանգեզուրի հայերը քնած չէին:

Մուսավաթական կառավարությունը որոշել էր Զանգեզուրի վրա հարձակվել չորս ուղղություններով՝ 1) Մինքենդ գյուղի վրայով դեպի Գորիս, 2) Ալիղուլիուշաղի գյուղի վրայով դեպի Կապան, 3) Զաբրայիլի գավառից դեպի Կապան և 4) Նախիջևանից տաճկական զորամասի հետ դեպի Զուլ[2]:

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունն այդ առթիվ բողոքի նոտա ներկայացրեց Ադրբեջանի արտգործնախարարությանը, ամերիկյան գլխավոր կոմիսար Վիլյամ Նեֆյու Հասկելին, բրիտանական գլխավոր կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդրոպին և Երևանում գտնվող արտասահմանյան բոլոր առաքելություններին[3]:

Իր հերթին Զանգեզուրի ազգային խորհուրդը կոչով դիմեց գավառի բնակչությանը՝ հայտնելով մուսավաթականների նոր հարձակման մասին:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 21, թ. 50 և շրջ., “Слово”, 22 февраля, 1920, **Ա. Միքայելեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», 1923, Ա տարի, հունիս, թիվ 8, էջ 116-117:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 49:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 486, թ. 138:

Զաբրայիլից հարձակվող ադրբեջանական զորամասերը գրավեցին Այինդաղ, Խանագա և Հարթիզ բարձունքները՝ նպատակ ունենալով Կապանի շրջանը կտրել Գորիսից: Շարունակելով հարձակումը՝ նրանք գրավեցին Զեյվա գյուղը և վտանգի տակ դրեցին Կապարգողթի Մողես, Ուժանիս, Եղվարդ և Ագարակ գյուղերը: Զանգեզուրի վրա մյուս ուղղություններով թուրքերի հարձակումն առժամանակ հետաձգվեց:

Նժդեհի ուժերը առանց դժվարության կասեցրին թուրքերի առաջխաղացումը դեպի Կապանի խորքերը, ապա պաշտպանությունից անցան հակահարձակման և հետ գրավեցին զավթած տարածքները: Այս կռվից հետո Կապանի վաշտերի թվով 21 հրամանատարներ որոշեցին երախտագետ լինել իրենց սիրելի մարդուն՝ Կապարգողթի հրամանատարին: Նրանք միասին կազմեցին հետևյալ փաստաթուղթը.

«Արձանագրություն

Ղափանի ժողովրդական ռազմական ուժերի ներկայացուցիչները արտակարգ ժողովում որոշեցին նվիրաբերել իրենց սիրած հերոս-ղեկավար Գարեգին Նժդեհին, որը հաղթական դրոշակ բարձրացրեց Գեղվաձորի Բաղաբերդի բարձունքները և ջարդեց թշնամուն արևելքում, մի «Պատվո սուր»՝ հետևյալ մակագրությամբ.

«Գարեգին Նժդեհին, որին Ղափանը անվանեց «Երկրորդ Դավիթ բեգ», իսկ թշնամին՝ «Աժդահա-փաշա»:

Թող այդ սուրը միշտ հիշեցնե հերոսին, որ Նժդեհը և Ղափանը անբաժան են ոգով:

2-ին փետրվարի 1920 թ.»[1]:

Փաստաթուղթը ստորագրել էին Անդրեաս Տեր-Հարությունյանը, Նիկոլայ Աղախանյանը, Հարություն Գրիգորյանը, Արշակ Առաքելյանը, Վարդազար Պետրոսյանը, Գերասիմ Աթաջանյանը, Արշակ Սարգսյանը, Աղաբեկը, Բոգդան Տեր-Մովսիսյանը, Սամսոն Աթայանը և ուրիշներ:

Զանգեզուրյան ուժերը տպավորիչ հաջողություններ ունեցան նաև գավառից արևմուտք ընկած Դարալագյազում: Այստեղ նույնպես տեղական թուրք բազմաքանակ բնակչությունն իր անհնազանդությամբ Նախիջևանի թուրքերի համար, ըստ էության, դարձել էր հինգերորդ զորասյուն: 1920 թ. փետրվարի սկզբներին Սիսիանի շրջանի զինվորական ջոկատը, Նոր Բայազետի, Երևանի, Ղրխբուլաղի և Դարալագյազի գումարտակները Հով-

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 102, թ. 37, ց. 9, գ. 18, թ. 9: Պատմագրության մեջ Կապանի ժողովրդական ռազմական ուժերի ներկայացուցիչների արտակարգ ժողովի որոշումը ընդունված է թվագրել 1920 թ. հունվարի 15-ով և այն ստորագրող ներկայացուցիչների թիվը նշել 25-ը (տե՛ս «Նժդեհ, կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 89, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 40, 41): Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, արխիվում պահպանվող ձեռագիր արձանագրությունը թվագրված է 1920 թ. փետրվարի 2-ով, և ներկայացուցիչների թիվն էլ այլ է:

հաննես Պարոնյանի (Յապոն) ղեկավարությամբ, շարժվեցին դեպի Դարալագյազ և գրավեցին գավառի գրեթե բոլոր մուսուլմանաբնակ գյուղերը[1]:

Այսպիսով՝ նշված ժամանակաշրջանում ստեղծված բացառիկ բարդ ու ծայրահեղ վտանգավոր պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Զանգեզուրի հայկական իշխանություններն ամեն ինչ անում էին, որ խափանեն գավառի դեմ ուղղված Ադրբեջանի թուրքերի չդադարող ոտնձգությունները, և զանգեզուրցիների կյանքի ու կեցության համար ստեղծեն գոնե նվազագույն պայմաններ: Այդ գերլարված գործունեությունը ծավալվում էր արտաքին քաղաքական ամենաբարդ հանգամանքներում:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 29, թ. 56:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԳՈՂԹԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին պարտություն կրելով Զանգեզուրի դեմ բոլոր ճակատներում՝ Նախիջևանում մնացած օսմանյան ուժերը և տեղի մուսավաթական ավազակախմբերը իրենց վրիժառական կրքերին հագուրդ տալու համար հաշվեհարդար սկսեցին հայության մնացած բեկորների հետ: 1920 թ. հունվարի կեսերին, տեղեկանալով, որ հայկական ուժերի մեծ մասը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ կենտրոնացել են Շուռնուխի գործողության վրա, և քաջ գիտակցելով, որ գործնականում Նժդեհի համար անհնար էր լինելու իր ուժերը Որոտանի աջ ափից արագորեն նետել Օրդուբադի դեմ, այնտեղի թուրք զինվորականությունը՝ Էդիֆ բեյի գլխավորությամբ, նախապատրաստվում էր նոր ոճրագործությունների Գողթանի հայության նկատմամբ[1]:

Այդ ժամանակ, չհամարձակվելով ձեռնարկել լայնածավալ նոր ագրեսիա Զանգեզուրի դեմ, այնտեղից պարտությամբ հեռացած մուսավաթականները մտադրվեցին իրենց հիմնական ուժերը նետել արցախահայության դեմ և ծավալել հաղթական ռազմական գործողություններ: Թուրքերը վերջնականապես համոզվել էին, որ առանց նախապես հնազանդեցնելու Ղարաբաղը, ավելորդ էր մտածել Զանգեզուրը գրավելու մասին: Զանգեզուրի պատնեշը ոչ միայն չէր հաղթահարվել, այլև նրա զինված ուժերը կարողացել էին իրենց գործողությունները տեղափոխել Ադրբեջանի տարածք: Այդ պայմաններում զանգեզուրցիներից ևս մի ջախջախիչ պարտություն կրելուց հետո հայկական Ղարաբաղը նույնպես ամրակուռ պարիսպ կդառնար՝ վերջնականապես տապանաքար դնելով Ադրբեջանի պանթուրքական ձգտումների ու ցնորքների վրա:

Ղարաբաղը զավթելու իր հերթական մտադրությունը իրականացնելու համար Ադրբեջանը շարունակում էր հենվել Անգլիայի բարոյական աջակցության վրա: Անգլիան շարունակում էր Ղարաբաղը պաշտոնապես ճանաչել Ադրբեջանի տարածք, դրանով իսկ, ի լուր իսլամական աշխարհի, ցույց էր տալիս, որ ինքը հովանավորում է մուսուլմանական մի երկրի ևս: Դրան գումարվել էր Արևելք թափանցող բոլշևիզմի վտանգի դեմ համատեղ պայքարի խնդիրը: Տվյալ պահին Անգլիայի համար առավել կարևորություն էր ստանում այն, որ Հյուսիսային Կովկասը գրաված և Ադրբեջանի սահման-

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 41, **Վ. Առաքելյան**, Նժդեհ, Երևան, 1989, էջ 21, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 223:

ներին մոտեցող Կարմիր բանակի դեմ կանգուն պահվի մուսավաթական պատնեշը:

Այս անգամ էլ ադրբեջանական զորքերի կենտրոնավայրը դարձավ Շուշին և նրա շրջակայքը:

«Սլովո» թերթը հաղորդում էր, որ փետրվարի 8-ին Հայաստանի կառավարությունը Գորիս քաղաքից ստացել էր պաշտոնական հաղորդում այն մասին, որ մուսավաթականները մեծ ու տենդագին աշխատանք էին տանում զենքի ուժով հայկական Ղարաբաղը գրավելու համար: Հաղորդման մեջ ասված էր. «Տաճիկ սպաների և գեներալ [Թեյմուր բեյ] Նովրուզովի հետ Շուշի է ժամանել Նուրի փաշան*: Նովրուզովը գլխավորում է մի քանի հազարանոց ջոկատ: Ադրբեջանը մտադիր է լայնամասշտաբ հարձակման անցնել միաժամանակ մի քանի ուղղություններով: Հարձակման նպատակն է վերջնականապես ավերել և իրեն ենթարկել Ղարաբաղը, ապա գրավել Զանգեզուրը: Ադրբեջանը, ինչպես երևում է, որոշել է լրացնել Զանգեզուրի վրա նախորդ հարձակման ծրագիրը»[1]:

Գորիսից ստացված այդ հաղորդումը մեծ զայրույթ առաջ բերեց Հայաստանի, այդ թվում՝ Զանգեզուրի բնակչության բոլոր շերտերում: Հայաստանի արտգործնախարար Ա. Խատիսյանը այդ առթիվ հետևյալ հեռագիրն ուղարկեց Ադրբեջանի արտգործնախարար Ֆ. խան Խոյսկուն (պատճենը՝ Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին).

«Հայաստանի կառավարության ստացած պաշտոնական լուրերի համաձայն Շուշիում և Ղարաբաղում կենտրոնացվում է մեծաքանակ զորք՝ տաճիկ գեներալների ղեկավարությամբ: ... Որոշ զորասյուներ արդեն շարժվել են: Այդպիսի գործողությունները բացահայտորեն խախտում են համաձայնագրերը և առիթ են հանդիսանում նոր արյունահեղությունների: Ամուր կանգնած լինելով համաձայնությունների և խաղաղասիրության տեսակետի վրա, ես հայկական կառավարության անունից ադրբեջանական կառավարությանը խնդրում եմ ուժի մեջ պահել նոյեմբերի 23-ի համաձայնագիրը և Ձեր կողմից բազմիցս շեշտված ու ողջունած բարիդրացիական հարաբերությունները: Սպասում եմ շտապ պատասխանի»[2]:

Նուրի փաշայի և գեներալ Թ. Նովրուզովի ռազմական մեծ ուժով Շուշի

---

* Անդրադառնալով Նուրի փաշայի Շուշի գալուն՝ «Մշակը» ընթերցողներին հիշեցնում էր, որ դա այն մարդն է, որը «Բաքվում 30 հազար հայ կոտորեց (1918 թ. սեպտեմբերին: – *Ա. Ս.*)»: Մինչև Բաքուն վերցնելը նա մի կոչ ուղղեց Ղարաբաղի հայերին, նրանց հպատակության հրավիրեց՝ հայտարարելով. «Հակառակ դեպքում հիշել Ադանան», այսինքն՝ 30 հազար հայերի ջարդը Ադանայում 1909 թ. ապրիլին («Մշակ», 1920, 29 փետրվար, թիվ 4): Ի միջի այլոց, Բաքվում ՀՀ ներկայացուցչի զեկուցագրում Նուրի փաշայի փոխարեն սխալմամբ նշված է Խալիլ փաշայի անունը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 92-93):

[1] "Слово", 22 февраля, 1920. Այդ մասին տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 49:

[2] Նույն տեղում:

ժամանելուց հետո նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը, որը մինչ այդ բնակվում էր քաղաքի հայկական մասում, փոխադրվեց թուրքական մասը:

Մինչև 1920 թ. փետրվարի երրորդ տասնօրյակի կեսերը Ադրբեջանի բանակը համալրվում էր և լարված մարզվում: Նուրի փաշայի և գեներալ Թ. Նովրուզովի հսկողությամբ բանակի սպաները կազմակերպեցին նաև քուրդ-թուրքական խոշոր հրոսակախմբեր, որոնց հիմնական խնդիրը հայկական բնակավայրերի գրավումից հետո դրանց բնակիչների գլխովին բնաջնջումն էր:

Խ. Սուլթանովը վերջապես որոշեց չեղյալ համարել օգոստոսյան համաձայնագիրը: Նա իր կառավարության անունից մի անգամ ևս Ղարաբաղի հայոց ազգային խորհրդից պահանջեց մեկընդմիշտ վճռել Ադրբեջանին ենթարկվելու հարցը և այդ նպատակով առաջարկեց հրավիրել հայերի հերթական համագումար: Միաժամանակ նա հայտարարեց, որ համագումարը պետք է հրավիրվեր Շուշիում, և պատգամավորները փակված էին պահվելու այնքան ժամանակ, մինչև որ ընդունվեր այնպիսի որոշում, որը ձեռնտու լիներ Ադրբեջանին[1]:

Համագումարի վրաճնշում գործադրելու համար, հենց այդ օրերին Աղդամում և Խանքենդում կազմակերպվեցին հայերի կողոպուտներ ու ջարդեր:

Իմանալով համագումարի վրա վերահսկողություն հաստատելու Խ. Սուլթանովի մտադրության մասին՝ ընտրված 130 պատգամավորների մեծ մասը, բացառապես ընտրված Գյուլիստանի, Ջևանշիրի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի շրջաններից, հավաքվեցին Վարանդայի Շոշ գյուղում և սկսեցին արցախահայության 8-րդ համագումարի աշխատանքները. այն տևեց մինչև մարտի 4-ը:

Համագումարը նշեց, որ Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է Ղարաբաղի հայության 7-րդ համագումարում կնքված ժամանակավոր համաձայնագրի գլխավոր կետերը, կոտորածներ է իրականացրել հայկական բնակավայրերում: Վճռականապես բողոքելով Խանքենդում, Ասկերանում, Աղդամում, Եվլախ–Շուշի խճուղու վրա տեղի ունեցած կոտորածների կապակցությամբ՝ համագումարը կոչ հղեց քաղաքակիրթ աշխարհին՝ վերջ տալու Ադրբեջանի արյունալի քաղաքականությանը: Համագումարը, արտահայտելով Ղարաբաղի ողջ հայության վճռականությունն ու կամքը, ի լուր ամենքի ազդարարեց, որ եթե Ադրբեջանը խախտի օգոստոսյան համաձայնագիրը և դիմի բռնի միջոցների, նրան դիմադրություն ցույց կտրվի զենքով: Միաժամանակ համագումարը արտահայտվեց Մայր Հայաստանի հետ միավորվելու օգտին[2]:

---

[1] Տե՛ս «Հառաջ», 1920, 20 ապրիլի:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, մաս I, թ. 32, 48-50:

Փոքրամասնությունը (62 պատգամավորներ՝ հիմնականում Շուշիից) հավաքվեց քաղաքում: Մտքերի փոխանակության ընթացքում նրանց մեծ մասը հանդես եկավ Արցախը ***տնտեսապես*** Ադրբեջանի մաս համարելու առաջարկով: Ընդունվեց որոշում՝ 52 կողմ, 10 դեմ ձայներով[1]:

Որոշումը վերցնելով իրենց հետ՝ 52 պատգամավորների ներկայացուցիչները մեկնեցին Բաքու, ներկայացան Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին: Վերջինս պաշտոնապես հայտարարեց, որ նրանց իրավազոր չի ճանաչում հանդես գալու Լեռնային Արցախի 100.000 հայության անունից, և որ ժողովրդի իսկական ներկայացուցիչները Շոշ գյուղում հավաքվածներն են: Այնուհետև նրանք ընդունվեցին վարչապետ Ն. Ուսուբբեկովի կողմից, որը նույնպես օրինական չէր համարում ընդունված որոշումը և հրահանգում էր լուծարված համարել Շուշիի «համագումարը»[2]:

Այսպիսով՝ մուսավաթականները սվիններով ընդունեցին համագումարի արդյունքները: Հասկանալով, որ ահաբեկումներով անկարելի է ընկճել արցախահայությանը՝ Խ. Սուլթանովը և Բաքվի կառավարությունը որոշեցին բնաջնջել նրան:

Մարտի 4-ից Շուշիից սկսեցին գավառներ մեկնել ադրբեջանական զորամասերը, որոնց առջև առայժմ երկու խնդիր էր դրված՝ 1) ռազմակալել Արցախի բնակավայրեր տանող բոլոր ուղիները, 2) դիրքավորվել Զանգեզուրի սահմանների ուղղությամբ՝ հրաման ստանալուն պես հայկական զույգ երկրամասերի վրա հարձակման անցնելու համար: Օրինակ՝ դեպի Զանգեզուր գրոհող ադրբեջանական զորամասերից մեկը, հասնելով Զաբրայիլ, մարտի 7-ին միացավ այստեղ արդեն կազմավորված մի ուրիշ, ավելի բազմաքանակ զորամասի: Այդ առթիվ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ, աքեպիսկոպոս Ներսես Թանգյանը տեղեկացրեց Ա. Խատիսյանին՝ գրելով. «Զեբրայիլի գավառում տաճիկ սպաները մարզում են 1500 հոգուց բաղկացած զորամաս՝ Զանգեզուրի վրա հարձակվելու համար»[3]:

Թուրք հրամանատարությունը Արցախի և Զանգեզուրի գրավման համար կազմել էր միասնական ռազմական պլան և առաջիկա ռազմական գործողության իրականացումը դիտում էր մի ամբողջության մեջ[4]:

Զանգեզուրի հայոց ազգային խորհուրդը, թուրքերի վերջին նախապատրաստությունները հաշվի առնելով, կոչ ուղղեց գավառի հայ բնակչությանը*.

---

[1] Տե՛ս «Նոր աշխատավոր», 1920, 21 մարտի, **Ա. Ղարիբյան**, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012, էջ 251:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 537, թ. 52:

[3] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 499, թ. 62, «Նոր աշխատավոր», 1920, 23 մարտի:

[4] Տե՛ս **Հ. Գևորգյան**, Դրո, էջ 563:

* Կոչի տեքստը ընդունելուց հետո Ազգային խորհուրդը նպատակահարմար գտավ այն լույս ընծայել գեներալ կոմիսար Սերգեյ Մելիք-Յոլչյանի ստորագրությամբ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 604, թ. 1):

«Համաշխարհային պատերազմի սկզբից դուք տանում եք ձեր ուսերի վրա տնտեսական քայքայման ամբողջ ծանրությունը և հերոսաբար կուրծք եք տալիս կյանքի դաժան փորձություններին:

Երեք տարուց ավելի է, ինչ դուք համառ կռիվ եք մղում Զանգեզուրի թրքության դեմ և գերմարդկային ճիգերով կարողացել եք ազատվել նրանց անվերջ հարձակումներից և մեր թանկագին երկրամասը ազատ պահել թրքական ավերմունքից և սրածությունից»[1]:

Կոչի մյուս մասում նշվում էր, թե նոյեմբերյան կռիվներով Ադրբեջանը փորձում էր ստրկացնել ազատ Զանգեզուրը և երկիրը ներկել հայության արյունով, բայց հերոսամարտի ընթացքում հայերն իրենց անձնվիրությամբ ցույց տվեցին համայն աշխարհին, որ արժանի են ազատ հայրենիք ունենալու:

Նշվում էր նաև, որ պարտված թշնամին դեռևս վերջնականապես ընկճված չէր և գիշեր ու ցերեկ ծրագրում էր գրավել Զանգեզուրը, որը համարում էր Ադրբեջանի կարևոր և անբաժան մասը: Նաև կատարվեց եզրահանգում, թե քանի կանգուն էր Ղարաբաղը, Զանգեզուրը անմատչելի էր թշնամու համար: Ուստի թշնամի Ադրբեջանը ջանք չէր խնայում՝ օր առաջ վերացնելու Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը, որին նա առաջարկել էր հպատակության մի շարք պահանջներ, ինչպիսիք էին՝ թուրք զորամասերի համար ճանապարհների բացումը դեպի հայկական գյուղերը, զանգվածային զինաթափությունը, հարկատվությունը և այլն: Այնուհետև նշվում էր, որ թշնամին իր պահանջների իրականացման համար թնդանոթներով ռմբակոծում էր հայկական գյուղերի դիրքերը Ջևանշիրում և Խծաբերդում, դիմում կոտորածների, ալան-թալանի՝ խախտելով այն համաձայնությունը, որի զորությամբ Լեռնային Ղարաբաղի հայությունը պետք է պահպաներ իր ազատությունը Ադրբեջանի ոտնձգություններից մինչև Խաղաղության վեհաժողովի վերջնական որոշումները:

Կոչի շարունակության մեջ նշվում էր.

«Զանգեզուրի քաջարի՛ գյուղացիներ.

Ձեզ համար թող պարզ լինի, որ Ղարաբաղի անկումով ինչպիսի անտանելի և դժվարին դրություն է ստեղծվում ձեզ համար:

Առանց Ղարաբաղի Զանգեզուրը երբեք ազատ լինել չի կարող:

Թշնամին մոտ է. նա օղակել է մեզ և պատրաստվում է արշավելու Զանգեզուրի վրա. եղե՛ք կազմ և պատրաստ, համախմբված քաջարի խմբապետների և զինվորական հրամանատարի շուրջը, և կուռ շարքերով կազմակերպված առաջին իսկ կոչին դիմեցե՛ք դեպի ֆրոնտ՝ դիմադրելու և ետ շպրտելու թուրքական ուժերը, որոնք կհանդգնեն ձեռք բարձրացնելու միացյալ և անբաժան Զանգեզուր–Ղարաբաղի վրա:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 177:

Այս կլինի մեր վերջին խիստ նշանակալից ազատամարտը մեր դարավոր նենգամիտ թշնամու դեմ:

Կատարենք մեր պարտքը Մայր-Հայաստանի առաջ և պահպանենք Զանգեզուր–Ղարաբաղը, առանց որոնց չկա և ազատ Հայաստան:

Ամենքը դեպի ֆրոնտ և ամեն մի զոհաբերություն կատարյալ հաղթության համար. ամեն ոք իր կարողության և ընդունակության չափ իր զոհը բերե հայրենիքի ազատության սեղանին:

Զինվորը իր կյանքը, ունևորը իր հացը, իր կայքը, որովհետև առանց հաղթության մեր ամբողջ կարողությունը թշնամունն է և ոչ մերը:

Ոչ մի խնայողություն չպետք է լինի ազատության համար, և ոչ ոք պարապ չպիտի մնա կռվի ամբողջ ընթացքում:

Թող հայ գեղջկուհիները հաց պատրաստեն կռվողների համար, իսկ ծերերն ու մանուկները պաշար հասցնեն ֆրոնտ:

Եվ եթե ամեն ոք սրբությամբ կատարի իր փոքրիկ պարտքը, հաղթությունը անվիճելի է: Ոչ մի թերացում և ոչ մի դասալքություն. այդպիսիները հայրենիքի առաջ կհամարվեն ազատության դավաճաններ և անեծքով կհիշվեն նոքա Զանգեզուրի ազատամարտի պատմության մեջ:

Կեցցե Զանգեզուրի քաջամարտիկ գյուղացիությունը.

Կեցցե ազատ Զանգեզուր–Ղարաբաղը.

Կեցցե Հայաստանը: Կեցցե մեր առաջիկա հաղթությունը:

Զանգեզուրի գեներալ-կոմիսար՝ Ս. Մելիք-Եօլչեան

6-ին մարտի 1920 թ. Գորիս»[1]:

Մարտի 8-ին Ա. Խատիսյանը հեռագրեց Ադրբեջանի արտգործնախարար Ֆ. Խան-Խոյսկուն և հայտնեց Հայաստանի կառավարության տագնապը: Նա գրում էր, որ ստացված ճշգրիտ տեղեկությունների համաձայն՝ ադրբեջանական կառավարությունը Նուրի փաշայի և տաճիկ սպաների գլխավորությամբ զորամասեր է կուտակել հայկական Ղարաբաղի և Զանգեզուրի շրջաններում: Հայկական Ղարաբաղի բնակիչներին վերջնագրային առաջարկ է արված՝ զինաթափվել և ադրբեջանական զորքերին անարգել թողնել տեղաշարժվելու Դիզակի, Վարանդայի, Ջևանշիրի շրջաններով՝ հակառակ դեպքում սպառնալով գործածել զինված ուժեր:

Այնուհետև արձանագրեց. «… Դա կոպիտ խախտում է նախկինում ձեռք բերած համաձայնագրի, որի համաձայն ադրբեջանական զորքերը կարող են Ղարաբաղի տարածքով տեղաշարժեր կատարել միայն Հայոց ազգային խորհրդի համաձայնությամբ: Ադրբեջանական կառավարության ագրեսիվ գործողությունները սպառնում են վերածվել հսկայածավալ արյունահեղության: Խնդրում եմ Ձեզ չմերժել ձեռնարկելու Ձեզանից կախված բոլոր միջոցները՝ կանխելու համար ադրբեջանական զորքերի՝ դեպի Ղարաբաղի

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 177, ֆ. 252, ց. 1, գ. 6, թ. 12:

խորքերը շարժվելու դեպքում առաջանալիք անխուսափելի արյունալի ընդհարումները»[1]:

Ֆ. Խան-Խոյսկին Ա. Խատիսյանի հեռագրին չպատասխանեց, բայց դրա փոխարեն ադրբեջանական հեռագրական գործակալությունը Շուշիում տարածեց հետևյալ հաղորդագրությունը. «Տեղի է ունեցել հայ գործիչների խորհրդակցություն, որտեղ որոշվել է ընտրել երեք հոգու և նրանց ուղարկել Բաքու, Թիֆլիս և Երևան: Նրանք այդ մայրաքաղաքներում Ղարաբաղի հայերի անունից պետք է խնդրեն հայ ագիտատորներին հեռացնել, որոնք խանգարում են Ղարաբաղի մուսուլմանների հետ հայերի խաղաղ կյանքի հաստատմանը, ինչպես նաև հայտարարեն Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու մասին»[2]:

Վիճակը նույնքան տագնապալից էր Գողթանում: Այդ օրերին Զանգեզուրի ազգային խորհուրդը հեռագրեց Հայաստանի խորհրդարանին. «Այս ռոպէիս ստացուած տեղեկութիւնների համաձայն, թիւրք ասկեարները թիւրք սպաների գլխաւորութեամբ, Օրտուբաթի եւ Նախիջեւանի թաթարները՝ Ադրբէջանեան սպաների ղեկավարութեամբ, ընդհանուր յարձակում են գործում Գողթանի հայ գիւղերի վրայ՝ ոչնչացնելու և նուաճելու նպատակով: Հայ գիւղացիութիւնը մահուան կռիւ է վարում նենգաւոր եւ անպատիժ թշնամու դէմ»[3]:

Զանգեզուրում լարված հետևում էին թե՛ Ղարաբաղում, թե՛ Նախիջևան–Գողթանում տեղի ունեցող իրադարձություններին և ձեռնարկում հարկ եղած միջոցառումներ:

«Նոր աշխատավոր» թերթը մարտի 5-ի խմբագրականում գրում էր. «Թող պարզ լինի … գարունքին Ադրբեջանը քոչվորներին սարը բարձրացնելու պատրվակին տակ սկսվելու է ընդհանուր արշավանք ամբողջ Զանգեզուրի դեմ և բոլոր կողմերից …»[4]:

1920 թ. մարտի 14-ին Ավետիք Իսահակյանը Ժնևից Սիմոն Հակոբյանին գրում էր. «… Ուրեմն նորից Զանգեզուրի շուրջը պատերազմ: Անգլիան ուզում է անպատճառ ունենալ Զուղայի բերանը: Հնար չկա, կորած է թե՛ Ղարաբաղը, թե՛ Զանգեզուրը և թե՛ Նախիջևանը: Դուք հավատու՞մ եք Թուրքահայաստանի ազատության. ես դրան չեմ հավատում, հրաշք պիտի լինի, եթե ազատվի: Իտալիան անվերջ զինում է Մուստ[աֆա] Քեմալին, Ֆրանսիան՝ գիտեք ինչ շուն է, Անգլիան էլ մյուս կողմից Ադրբեջանին է զինում: Խաբում են մեզ: Բոլշևիկներից էլ հույս չկա, նրանք էլ պանթուրքիստ են դարձել: Շատ մռայլ եմ

---

[1] “Слово”, 14 марта , 1920.

[2] Նույն տեղում:

[3] **Ա. Միքայէլեան**, Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», Ա տարի, 1923, սեպտեմբեր, թիվ 11, էջ 116-117:

[4] «Նոր աշխատավոր», 1920, 5 մարտի:

տեսնում գործերը: Պոլսի առումը գարանտի չէ, քանի որ ոչ ոք լուրջ չի մտածում Հայաստան շինել … Քեֆս շատ վատ է:

Ատող և զայրացած՝ քո

Ավետիք»[1]:

Զուր էր հայոց մեծ բանաստեղծի հուսահատությունը: Զանգեզուրն ու Արցախը համառորեն պայքարում էին: Զանգեզուրցիներն ու արցախցիները, մշտական հարաբերության մեջ լինելով, սուրհանդակների միջոցով իրար պարբերաբար տեղեկություններ էին հաղորդում կազմակերպչական աշխատանքների, զինվորական ուժերի, Ադրբեջանի պատրաստությունների և զորքերի տեղափոխությունների մասին:

Ահա այդ բախտորոշ օրերին էր, որ Գարեգին Նժդեհը ձեռնարկեց իր պատմական քայլերից մեկը՝ Գողթանի արշավանքը: Նա հանգիստ չուներ և մտածում էր օր առաջ Գողթանին օգնության հասնելու մասին: Սակայն խստաշունչ ձմռան բուքը փակել էր Գողթան տանող միակ ճանապարհը, որն անցնում էր 3904 մետր բարձրություն ունեցող Կապուտջուղ լեռան վրայով: Սյունյաց աշխարհի և Նախիջևանի միջև Գողթանն աշխարհագրական և բնակլիմայական առանձնահատուկ դիրք էր գրավում գավառակի վերին հատվածում, հատկապես Կապուտջուղի ստորոտներում, ձմեռը խստաշունչ էր, երկարատև: Անգամ սեպտեմբերի վերջին և գարնան սկզբի երկու ամիսներին ձյուն էր նստած լինում: Այնպես որ տարվա մեջ մոտ ութ ամիս Գողթանն առանձնացված էր Զանգեզուրից, և լեռնանցքի անանցելիության պատճառով գողթանցին հաճախ մնում էր մեն-մենակ դաժան ճակատագրի հանդեպ[2]:

Գորիս–Զանգեզուրի զինված ուժերի հրամանատար գեներալ Ն. Ղազարյանին ուղարկած մի գրության մեջ Նժդեհն այսպես էր նկարագրում գողթանցիների ահավոր վիճակը. «Հաղորդում եմ Ձերդ գերազանցության, որ մի քանի օր ևս՝ և Գողթանի տեղ մենք կունենանք մի հսկայական գերեզմանատուն: Հրեշավոր չափերի հասած սովն սկսել է իր ավերածությունը: Օր չէ անցնում, որ յուրաքանչյուր գյուղում սովամահ չլինեն 15-20 հոգի: Ժողովուրդը կերակրվում է շների և կատուների մսով, մի բան, որից առաջացել են մի շարք տարափոխիկ հիվանդություններ, որոնք լրացնում են սովի կատարած հունձը:

Հացի հետ վաղուց ի վեր սպառված են բոլոր տեսակի փոխանյութերը (суррогаты)»[3]:

---

[1] Պահպանվում է Իսահակյանների ընտանեկան արխիվում:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, թ. 1, **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 55, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 44, **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 357, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 223, 231, 232:

[3] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, թ. 1, ֆ. 1457, ց. 2, գ. 41, թ. 5, տե՛ս նաև **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 55, *նույնի՝* Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 284, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 44:

Սովից ու թուրքի սպառնալիքից իրենց կյանքը փրկելու համար գողթանցիներից շատերը, այնուամենայնիվ, փորձում էին ձմռան կեսին բարձրանալ Կապուտջուղ և լեռնանցքով անցնել Զանգեզուր: Բայց, ավա՜ղ, նրանցից քչերին էր հաջողվում հաղթահարել ճանապարհը: Կապուտջուղի լանջերին ընկած էին կանանց ու ծերերի բազմաթիվ դիակներ[1]:

Գողթանի կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանը Կապարգողթի հրամանատար Նժդեհին գրում էր. «Ժողովրդի դրությունը ուղղակի ողբերգական է … Գողթանին պահողը ներկա մոմենտում միայն Ղափուջուղն է: Այդ հսկան հենց որ մի քիչ հնարավորություն տա անասուններ անցկացնելու, Գողթանում ոչ մի մարդ չի մնա:

Մարդիկ պարզ ասում են. «Գողթանը մեզ պետք չէ»: … Ժողովուրդը մեռնում է սովից: Նա անընդունակ է դառել դիմագրավելու թշնամու ամենաթեթև գրոհին»[2]:

Այնուհետև իր նամակում Ա. Մելիք-Մուսյանը շեշտում էր, որ եթե Հայաստանի Հանրապետության համար Գողթանը ռազմագիտական ու քաղաքական կարևորություն ուներ, ապա նա կարող էր օգնության ձեռք մեկնել և գողթանցիներին պահել տեղում[3]:

Երևանը, սակայն, հաշտվել էր Գողթանի կորստի հետ: Այդ մասին Գողթանում գիտեին: Ի՞նչ էր մնում անելու գողթանցիներին. կռվել կամ գաղթել: Նրանք, որքան էլ դժնդակ էր իրենց վիճակը, վճռեցին կռվել[4]: Թեև նրանք իրենց հույսն արդեն կտրել էին Երևանից, բայց օգնություն էին ակնկալում Գորիսի իշխանություններից, որոնք էլ դեռ լռում էին[5]: Զանգեզուրի ազգային խորհրդի անդամներից ոմանք, հատկապես Նիկոլայ Հովսեփյանը, լիովին համամիտ էին Նժդեհի տեսակետին, այն է՝ Կապարգողթի ուժերը պիտի հարձակում գործեն Օրդուբադի ուղղությամբ և փրկեն Գողթանի ժողովրդին:

«Հայկական լեռնաշխարհի ինքնապաշտպանութեան գործով զբաղվողներու համար,– գրում էր Վարդան Գէորգեանը,– պարզ էր Զանգեզուրի և Ղարաբաղի վերապահուած դրութիւնը, եթե Գողթան յուսահատած գաղթէր՝ մշտական սպառնալիքի պիտի մատնուէր նորակազմ Հայ Հանրապետութիւնը»[6]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 22, թ. 4, **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 55, 60, *նույնի՝* Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 288, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 45, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 21, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 223:

[2] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 55-56, տե՛ս նաև **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 45:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 90:

[5] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 57:

[6] **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 45:

Բախտորոշ վճիռ կայացնելու համար այդ օրերին տեղի ունեցավ Գողթանի հայության հերթական համագումարը, որը որոշում ընդունեց կռվել, եթե Զանգեզուրը օգնության ձեռք մեկնի[1]: Համագումարից հետո Գողթանի կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանը Կապարգողթի ընդհանուր հրամանատար Նժդեհին գրել է. «Մենք վճռել ենք մեռնել հայրենի լեռներում: Մենք մեր ձեռքով կկոտորենք մեր որդիներին, քույրերին, հայրերին ու մայրերին, որպեսզի շան նման սովից չսատկեն, իսկ տղամարդիկ կկռվեն մինչև վերջին շունչը»[2]:

Ահա այդպիսին էր հայրենիքի կործանման եզրին կանգնած մի հատվածի ողբերգական պատկերը:

1920 թ. փետրվարի 10-ին, երբ Նժդեհը Աշոտ Մելիք-Մուսյանի հետ գտնվում էր Քաջարանում, նրանց ներկայացան 200-ից ավելի գողթանցիներ, որոնք նոր էին թողել Գողթանը և հաղթահարելով Կապուտջուղի լեռնանցքը՝ անցել էին Կապանի շրջան: Նժդեհը և Ա. Մելիք-Մուսյանը նրանց առաջարկեցին վերադառնալ, բայց սովից հյուծված ամբոխը խնդրեց իրենց հետ չուղարկել: Միայն այն բանից հետո, երբ Նժդեհը խոստացավ, որ մեկ շաբաթ հետո՝ մինչև փետրվարի 18-ը, իր վաշտերով անցնելու է Գողթան, գաղթականները համաձայնեցին վերադառնալ[3]:

Պարզ է, որ ոչ մի ուժ, բացի Կապարգողթի վաշտերից, ի վիճակի չէր փրկել Գողթանը: Ուստի Նժդեհն իր առաջնահերթ խնդիրը համարեց Գողթանի հայության պաշտպանությունը:

Գաղթականների հետ հանդիպման հաջորդ օրը՝ 1920 թ. փետրվարի 11-ին, Նժդեհը գրություն ուղարկեց Գորիսի հրամանատարությանը՝ տեղեկացնելով, որ Գողթանի ռազմական ուժերի հրամանատարն իրեն գրավոր հայտնել է, թե այնտեղի հուսալքված և քաղցած ժողովուրդը սպասում է պարզ եղանակի, որ թողնի և գաղթի Զանգեզուր: Այդ տառապյալ ժողովուրդը, գրում էր նա, իր երկիրը դարձրել է իր Գողգոթան՝ հանուն Զանգեզուրի պաշտպանության և այժմ անգամ ուժ չունի կյանքը փրկելու համար: Այնուհետև նշում էր. «Կրկնում եմ՝ մի քանի օր ևս – և պարտաճանաչ ու մարտնչող Գողթանը, մեր Հանրապետության այդ Բելգիան*, որը երկրորդ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 2-ի շրջ., **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 56, 57, *նույնի*՝ Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 283, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 45, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 90:

[2] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 56, տե՛ս նաև **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 45, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 90:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, թ. 1, **Գ. Նժդեհ**, Նամակներ, գրություններ, հեռագրեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 284, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 46, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 91:

* Նկատի ուներ այն, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում Բելգիան պաշտպանական վահան էր ծառայել Ֆրանսիայի համար:

տարին է, ինչ հավատարիմ պահակի պես, ամենաղժնդակ պայմաններում պաշտպանում է Զանգեզուրի նախադուռը, կ'ընկճվի և կը կորչի ընդմիշտ:

Ձերդ գերազանցություն, Զանգեզուրի կատարյալ փրկության ձգտողը նախ պիտ մտածէ Գողթանի մասին, որի մի բուռն ժողովուրդը, այլևս առանց դրսի օգնական ուժերի, չի կարող մնալ Ղափուջուղի այն կողմը:

Այս անգամ էլ ինձ և պրն. Աշոտին հաջողվեց մի կերպ խափանել Գողթանի մասսայական գաղթը, որն այնքան կատաստրոֆային պիտ լիներ Զանգեզուրի համար:

Տվածս խոսքը գողթանցիներին դրժել չեմ կարող (դա ոճիր և դավաճանություն կ'լիներ):

Գնում եմ, եթե չկարողացա փրկել դրությունը՝ պատվով կմեռնեմ սովի և թշնամու դեմ կռվող ժողովրդի հետ:

Որոշել եմ մինչև ամսիս 18-ը 300 հոգով անցնելու Ղափուջուղը, որի համար և խնդրում եմ Ձերդ Գերազանցության անմիջական կարգադրությունը՝ Գորիսի ռազմամթերանոցից բաց թողնել Գողթան անցնող զորամասիս համար 80.000 եռագծանի փամփուշտ ու հարկավոր քանակությամբ կենսամթերք և շորեղեն»[1]:

Ի պատասխան այս գրության՝ գեներալ Ղազարյանը կազմեց մի փաստաթուղթ, որով ամփոփ ներկայացրեց Գարեգին Նժդեհի մարտական ուղին: Այն է՝ «Կապիտան Նժդեհը դեկտեմբերի 1-ից մինչև 9 ժամանակվա ընթացքում արեց անընդհատ հարձակումներ թուրքերի դեմ Գեղվա ձորում, ոչնչացնելով թուրքական գյուղեր, որոնք շարունակ հանդիսանում էին Գենվազի, Ղափանի և Գողթանի պատուհասներ:

Միանգամայն ճիշտ կազմակերպված օպերացիաները (գործողությունները) վերջացան հաջող մեզ համար: 1919 թ. դեկտեմբերի 20-ին և Ներքին Ագուլիսի կոտորածի ժամանակ կապիտան Նժդեհը կազմակերպել է Օրդուբադի ուղղությամբ ռազմական ցույց և դրանով հնարավորություն տվել մի քանի ագուլիսցիների ազատվել կոտորածից և կանգնեցնել թուրքերի հետագա հարձակումները Գողթանի խորքերը:

Վերջին 1920 թ. 19 հունվարի՝ Շարուրի օպերացիայի ժամանակ, նա ինքը, անձամբ առաջնորդելով վաշտերը, տիրում է թուրքերի կողմից գրավված բարձունքներին և դրանով նպաստում ընդհանուր հաջողություններին, որի հետևանքով ոչնչացվում են 30 թուրքական գյուղերը և բացվում է Գորիս–Ղափան հանքերի խճուղին»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, թ. 1 և շրջ., ֆ. 1457, ց. 2, գ. 41, թ. 5, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1, 2 (95, 96), էջ 174-175, **Գ. Նժդեհ**, Նամակներ, գրություններ, հեռագրեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 284-285, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 45-46, տե՛ս նաև «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 91-92:

[2] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479, 2-րդ մաս, թ. 353:

Գարեգին Նժդեհի որոշումը՝ արշավել դեպի Գողթան, օր օրի ավելի իրական էր դառնում: Փետրվարի 12-ին՝ ժամը 7-ին, նա հրաման ուղղեց իր զորքին:

«Զինակիցնե՛ր,– դիմեց նա մարտիկներին,– հասել է օրը անօրինակ հերոսությամբ ավելի քան երկու տարի ամենադժնդակ պայմաններում Զանգեզուրի նախադուռը պաշտպանող այն մի բուռն ժողովրդի փրկության օրը, այն քաջանուն ժողովրդի, որն ամիսներ առաջ, խորապես գիտակցելով իր շրջանի ռազմագիտական խոշոր նշանակությունը, բացճակատ հայտնեց մեզ իր որոշումը՝ «Գողթանը կը մեռնի, բայց չի՛ գաղթի»:

Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր հայորդիների՝ Աստվածաշունչ Քրիստափորի և Ռոստոմի արյունաներկ ու սրբապղծված ծննդավայրը՝ երբեմնի չքնաղ Ագուլիսները պիտ վերագրավվեն, պիտ վերականգնվեն իրենց շենությամբ ու բարոյական մեծությամբ»:

Այնուհետև Նժդեհն իր վաշտերին դիմեց հետևյալ սրտառուչ կոչով. «Լսե՛ք, հնչել է ժամը, զինակիցնե՛ր, երբ վախկոտ էդիֆների* տմարդ սրից զարնված հազարավոր անթաղ մեռելները ձեզնից արդար ու արյունոտ հատուցումն են պահանջում:

Լսե՛ք և հարյուրավոր գերված ու լլկված հայ կանանց, որոնք ձեր գոռ արշավի և ուռաների սպասումով, ձեզ հերոսության են կանչում:

Լսե՛ք և ինձ, ձեր ղեկավարին, որը ձեզնից ծուխ, թշնամու գյուղերի հրդեհն ու քաղցր ծուխն է պահանջում, այն փրկարար ծուխը, որն այնքան բարձր ու առատ բարձրացրիք և՛ պատմական Որոտանի ափերում, և՛ Գեղվա ձորերում:

Լսե՛ք իմ քաջ ու հայրենանվեր զինակիցներ, լսե՛ք, լցվե՛ք բոցով ու վրեժով, առե՛ք զենքներդ ու առա՜ջ: Առա՜ջ, մեզ հետ են Աստված և մեծ հայորդիների՝ Քրիստափորի և Ռոստոմի անհանգիստ հոգիները: Առա՜ջ»[1]:

Նժդեհի մարտիկները քաջ գիտեին, որ տարվա այդ ժամանակ դեպի Գողթան անցում կատարելը պայմանավորված էր մեծագույն դժվարություններով, որը և խիստ վտանգավոր էր: Բայց հրամանատարի բոցավառ խոսքերով հմայված կապանցի և գենվազցի քաջերի համար կյանքից ավելի գերադասելի եղավ թշնամու սրի տակ գտնվող ազգակիցների փրկությունը: Նրանք ոտքի ելան առանց վարանումի, մեկ մարդու նման:

Մարտի 8-ին Կապանի և Գենվազի ուժերի մի մասը համախմբվեց Բաղաբերդում: Այստեղ Կապանի ժողովրդի անունից զորքին հանձնվեց սպիտակ կտավից մի դրոշակ, որի մի կողմի վրա գրված էր՝ «Ղափանը Գողթանի

---

* Նկատի ունի Նախիջևանում մնացած օսմանյան ուժերի հրամանատար Էդիֆ բեյին և նրա զինակիցներին:

[1] **Գ. Նժդեհ**, Հրամաններ, կոչեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 416, տե՛ս նաև **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 47-48, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 92-93, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2 (95-96), էջ 175-176:

համար», իսկ մյուս կողմի վրա՝ «Պատանակրաց արշավանք»: Պատանակրաց ...Ասել է թե՝ մարդիկ իրենց եղբայրների փրկության համար պատրաստ էին մեռնել, ուստի նրանցից ամեն մեկը մարմնի վրա կրում էր պատան: Նժդեհն անչափ հուզված էր հայրենապաշտ հերոս ժողովրդի վերաբերմունքից: Զինվորներն իրենց սերն ու նվիրվածությունը լեգենդ դարձած հրամանատարի նկատմամբ արտահայտում էին խանդավառ ցույցերով[1]:

Բաղաբերդում հավաքված իր զինվորների առաջ ունեցած ելույթներից մեկում, վկայակոչելով կապանցիների նվիրած դրոշակը, Նժդեհն ասել է. «Մենք մեզ հետ տանում ենք մի պատան: Հաջողության դեպքում կը հագցնենք թշնամուն: Մեռնելու դեպքում մեզ կը հագցնեն»[2]:

Եթե Կապանում և Գենվազում ժողովուրդը, զորքը և ղեկավարությունը դեպի Գողթան արշավանք կատարելու հարցում միակամ էին, զոդված նժդեհյան անկոտրում կամքով, ապա Գորիսում՝ Զանգեզուրի ազգային խորհրդում և հրամանատարության մեջ, հետզհետե մեծանում էր արշավանքն աննպատակահարմար համարողների թիվը:

Արշավանքի նախապատրաստությունը վերջանալու վրա էր, երբ մարտի 9-ի երեկոյան Նժդեհը Գորիսից գեներալ Ն. Ղազարյանից ստացավ հետևյալ հրամանը. «Հետաձգել Գողթանի օպերացիան: Մեր հակահետախուզության տված տեղեկություններից երևում է, որ Ջաբրայիլ–Կարյագինոյի շրջաններում երևացել են Նուրի փաշան և գեներալ Ս. Մեհմանդարովը: Ադրբեջանը պատրաստություններ է տեսնում մեծ ուժերով մի քանի կետերից հարձակվելու Զանգեզուրի վրա»[3]:

Գորիսից եկած հրամանը Նժդեհն ընդունեց զայրույթով: Ինչպե՞ս կարող էր հետաձգել օպերացիան: Դրա մասին նա մտածել անգամ չէր ուզում. այդ դեպքում ինքը դավաճանած կլիներ իր և իր բանակի նվիրական երդմանը, հուսախաբ արած կլիներ սպասվող վտանգներն արհամարհող, հավանական մահը մոռացած և թշնամուն հաղթելու մոլեռանդ ցանկությամբ առլեցուն իր քաջակորով զինվորներին[4]:

Նույն գիշերվա ժամը 1-ին Կապարգողթի հրամանատարը հետևյալ պատասխանը գրեց գեներալ Ն. Ղազարյանին. «Ձեր տված տեղեկություններից հետո Գողթանի արշավանքն ինձ համար դառնում է ավելի իմաստալից և

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 58, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 48, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 22:

[2] Նույն տեղում, ինչպես նաև՝ **Ռ. Համբարձումեան**, Վարք Նժդեհի, ասոյթներ, էջ 60:

[3] **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49, տե՛ս նաև **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 58, **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 20:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 58, *նույնի՝* Իմ պատասխանը, էջ 205, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 21-22, **Ռ. Համբարձումեան**, Վարք Նժդեհի, ասոյթներ, էջ 60:

անհետաձգելի: Հենց այս գիշեր Քաջարանում հավաքված զորքը իմ ղեկավարությամբ շարժվելու է առաջ»[1]:

Միաժամանակ Նժդեհը նամակ ուղղեց Երևան՝ ՀՅԴ արևելյան բյուրոյին: Նամակում նշվում էր. «Այսօր էլ, երբ հրեշավոր չափերի հասած սովի և թշնամու գերադաս ուժերի դեմ մարտնչող Գողթանի մի բուռ ժողովուրդը «գաղթ կամ կռիվ» է պահանջում, նրանք, որոնք չլսեցին ինձ և պատճառ դարձան Ագուլիսների կոտորածին, թեթև սրտով պատասխանում են՝ «Հրամայված չէ մեզ ... Առանց Երևանի թույլտվության չենք կարող, պատասխանատվության հարց կա» և այլն:

Զանձրացնելու չափ դիմումներ եմ արել, խնդրել, սպառնացել, որ կ'հեռանամ Զանգեզուրից, եթե թույլ չտան ինձ գրավելու Օրդուբադն ու Բարթազը, բայց միշտ էլ հազար անհիմն պատճառաբանություններով արգելել են ինձ:

Եվ Գողթանը, ավելի քան երկու տարի հավատարիմ պահակի պես ամենադժնդակ պայմաններում Զանգեզուրի ամրություններն ու նախադուռը պաշտպանող Գողթանը, աչքերը Ղափուջուղի բարձունքներին հառած, սպասում է, անվերջ սպասում»[2]:

Մարտի 9-ի լույս 10-ի գիշերը Նժդեհը արձակեց Կապուտջուղի լեռնանցքն անցնելու հրաման: 1920 թ. մարտի 10-ի առավոտյան սկսվեց Գողթանի արշավանքը[3]:

Հետագայում Նժդեհը գրել է. «... Մահաշունչ ձմեռվա կեսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մոտենում Ղափուջուղին՝ Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձյունները, մեղմացրինք բնության արհավիրքը, բուքն ու բորանը և Գողթան իջանք ...»[4]:

Մարտի 15-ին 700 հոգուց բաղկացած զորքը կենտրոնացավ Բիստ գյուղում[5]: Նույն օրվա երեկոյան Նժդեհը թիվ 25 հրամանն իջեցրեց Կապարգողթի ռազմական ուժերին: Հրամանի սկզբնամասում, դիմելով իր զորքին, նա նշում էր, որ արդեն երկու տարի է, ինչ թշնամին անվերջ հարձակումներ

---

[1] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 59, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49:

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 2 և շրջ., **Գ. Նժդեհ**, Նամակներ, գրություններ, հեռագրեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 283:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 59, **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 20, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 93, 428, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 22, Գողթանի արշավանքի մանրամասները տե՛ս նաև **Ռ. Համբարձումեան**, Գարեգին Նժդեհ: Ամբողջական կենսագրութիւն, Երեւան, 2007, էջ 160-174:

[4] **Գ. Նժդեհ**, Հրամաններ, կոչեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 417, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 93:

[5] Տե՛ս **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49, **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 20, «Նժդեհ, կեանքն ու գործունէութիւնը...», էջ 96:

էր գործում Զանգեզուրի նախադուռը պաշտպանող մի բուռ գողթանցիների վրա, որպեսզի տեր դառնար նրա հայրենի երկրամասին: Այդ նպատակն իրականացնելու դեպքում մուսուլմանական երկու երկրները՝ Ադրբեջանն ու Տաճկաստանը, տարածքներով կմիանային իրար: Այն բանից հետո, երբ տեղահանվեց Տանակերտը, թշնամին այնուհետև «աննախընթաց բարբարոսությամբ սրի և հրի մատնեց Գողթանի կուլտուրական փառքը կազմող Ագուլիսների ուղղամիտ ազգաբնակչությունը»: Այնուհետև հրամանի մեջ ասված էր, որ չնայած այդ անդառնալի կորուստներին՝ Գողթանը իր կողմն էր քաշել Նախիջևանի և Օրդուբադի շրջանների բովանդակ ուժերին ու, այդպիսով, ցայսօր ապահովել Զանգեզուրի անվտանգությունը: Եվ ահա այժմ, մշտական հարձակումներից ջլատված, գողթանցի հայերը իրենց վերջին համագումարում որոշել էին՝ «կռիվ կամ գաղթ»:

«Խորապես գիտակցելով Գողթանի ռազմագիտական խոր նշանակությունը,– շարունակում էր Նժդեհը,– գնահատելով նրա՝ Զանգեզուրի համար կատարած դերը և նկատի առնելով նրա արդի աննախընթաց կրիտիկական դրությունը՝ հրամայում եմ Ղափգենգողթի* ռազմական կամավոր ուժերին մի շարք մուսուլման գյուղերի տեղահանությամբ ու այրումով հայկական Գողթանի ժողովրդի համար ստեղծել ռազմագիտական ու տնտեսական հնարավորություն՝ շարունակելու իր գոյությունը հայրենի երկրում»[1]:

Այնուհետև հրամանում Նժդեհը տալիս էր Կապարգողթի ուժերի տեղաբաշխումը, նշում նրանց թվաքանակը և զինական հնարավորությունները: Իսկ հրամանի երկրորդ մասի բնօրինակը նպատակահարմար ենք գտնում ներկայացնել ամբողջությամբ.

«I Ազայի զորասյուն
[Հրամանատար]՝ պարուչիկ Թադևոսյան
Հետևակ 150
Հեծելազոր 7
Գնդացիր 1
Ընդամենը՝ 150 հետևակ, 7 հեծյալ, 1 գնդացիր

Գրավել Խարաբագիլան բերդը և Այզայի (Ազայի: – *Ա. Ս.)* կարևոր դիրքերը՝ անդամալուծելու Յայջիից և Նախիջևանից Օրդուբադին օգնության հասցնելու բոլոր փորձերը, կտրելով թշնամու հաղորդակցությունը ինչպես շոսեով, նույնպես և Արաքսի ափով:

II Ռազմափորձային հարյուրյակ
[Հրամանատար]՝ պրապորշչիկ Ոսկանյան

Գրավելով Դոյլունը, ճնշում է Քալանթար և Դոյլուն դիզաները, որոնց տեղահանությունից հետո մի հիսնյա-

* Կապան + Գենվազ (Մեղրի) + Գողթան:

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 1, թ. 6, ֆ. 1021, ց. 8, գ. 105, թ. 1, **Գ. Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 57, *նույնի*՝ Հրամաններ, կոչեր, էջ 425-426, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 46-47:

Հետևակ 100
Հեծելազոր 4
Գնդացիր 1
Ընդամենը՝ 100 հետևակ, 4 հեծելազոր, 1 գնդացիր

կը միանում է Ազայի զորասյունին, իսկ մյուսը մի գնդացիրով ընդունում է դեպի ձախ և գրավում է կարևոր կետ Դաստայի, Վանանդի և Ազայի միջև խանգարելու թշնամու շարժումները շոսեի վրա և Արաքսի ափով:

III Բաղամարի (Վանանդի) զորասյուն
Գողթանի ռազմաճակատի հրամանատար Ղազար [Քոչարյան]
Հետևակ 300
Հեծելազոր 20
Լեռնային թնդանոթ 1
Գնդացիր 2
Ընդամենը՝ 300 հետևակ, 20 ձիավոր, 1 թնդանոթ և 2 գնդացիր

Դիսարը տեղահանելուց հետո վճռական հարվածով գրավել Վանանդը, Սալը, Վալավերը, Աղրին և Դիզին (Դիզան կամ Տիզենը: – *Ա. Ս.):* Ամբողջ ժամանակ հաստատ կապ ու կոնտակտ պաշտպանելով իր հարևան զորասյուների հետ: Վանանդի և վերոհիշյալ գյուղերի անկումից հետո զորասյունը յուր ուժերի 2/3-ը իջեցնում է Ագուլիս և խիզախում է կապ ստեղծել Գենվազի ուժերի հետ: Միանալուց հետո մի հետևակային հարյուրյակ, մի գնդացիրով մնում է զբաղեցնելու Նուռնուսը, իսկ Գողթանի և Գենվազի միացյալ ուժերը գրոհում են Օրդուբադի վրա:

IV Ագուլիսի զորասյուն
[Հրամանատար]՝ պոդպորուչիկ Գյուլնազարյան
Հետևակ 200
Հեծելազոր 6
Լեռնային թնդանոթ 1
Գնդացիր 1
Ռմբաձիգ 1
Ընդամենը՝ 200 հետևակ, 6 հեծյալ, 1 լեռնային թնդանոթ, 1 գնդացիր, 1 ռմբաձիգ

Արագ առաջխաղացումով գրավել Ունուսը և Դոնիսը՝ թողնելով անհրաժեշտ թվով զինվորներ՝ [խափանելու] Նուռնուսին, Դոնիսին օգնության գալու փորձերը և իջնել Վերինգետ թուրքական թաղը գրավելու նպատակով:

V Կարճևանի զորասյուն
[Հրամանատար]՝ շտաբս-կապիտան Ամիրջանյան
Հետևակ 250

Ունենալով երկու զորասյուն՝ Օրդուբադյան և Գանձայի, առաջինով գրավել Ղափա կոչված ամրությունը և վճռականորեն հարվածել Օրդուբադը:

Հեծելազոր 40 Լեռնային թնդանոթ 1 Գնդացիր 1, Ընդամենը՝ 250 հետևակ, 40 ձիավոր, 1 լեռնային թնդանոթ և 1 գնդացիր	Երկրորդով գրավել Գանձան, առաջանալ դեպի Ագուլիս՝ Գողթանի ուժերին միանալու նպատակով:
VI Պահեստի ուժեր [Հրամանատար]՝ պորուչիկ Տեր-Սարգսյան Հետևակ 100	Կատարյալ մարտական պատրաստությամբ լինել Շոր-ջրում:
VII Բիստի պահակախումբ [Հրամանատար]՝ շտաբս-կապիտան Մատակյան Հետևակ 100 Հեծելազոր 3 Գնդացիր 1 Ընդամենը՝ 100 հետևակ, 3 հեծելազոր, 1 գնդացիր»:	Ուժեղացնելով Բիստ-Ալահի և Նասիրվազի ճակատը և խոր հետախուզություններով շփման մեջ մտնել Բայահմատի և նրա հարևան գյուղերի հետ:

Հրամանը ավարտվում էր հետևյալ հանձնարարականով. «Հրամայում եմ բոլոր զորասյուներին ու զորախմբերին՝ իրենց վրա դրած մարտական խնդիրները իրագործել առանձին վճռականությամբ և արագությամբ: Կռիվներին տարերային և ահաբեկիչ բնույթ տալու համար բոլոր վաշտապետերին և զորախմբերի պետերին՝ ունենալ հրձիգ տասնյակներ և գայլախմբեր: Սրանց՝ գործածել մեծ քանակությամբ ուժանակ և ձեռնառումբեր»[1]:

Մարտի 17-ին Կապարգողթի զորքը հասավ Ցղնա: Այստեղ կենտրոնացվեց նաև պայթուցիկով տակառների խմբաքանակը[2]: Մարտի 19-ի երեկոյան Ցղնայում կենտրոնացված զորքը շարվեց, և զինվորները ոգեկոչեցին հայ ժողովրդի ազատագրության համար ընկած նահատակներին[3]:

Մարտի 20-ի լուսադեմին տրվեց հարձակման հրամանը, և, լույսը դեռ չբացված, Նժդեհի ուժերը գրավեցին Խարաբագիլան հինավուրց բերդը, ինչպես նաև Դոյլու, Քալանթար, Դիսար, Հանան, Վալավեր, Աղրի, Դիզա (Տիզեն), Վանանդ, Դոնիս գյուղերը: Նույն օրը զորքը հասավ Օրդուբադի

---

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 1, թ. 6-7, ֆ. 1021, ց. 8, գ. 105, թթ. 1-ի շրջ., 2 և շրջ., **Գ. Նժդեհ**, Հրամաններ, կոչեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 426-428:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 61, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 97, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 22:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 61, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 22:

նախադուռը և սրի քաշեց ամբողջ պահակախումբը: Հայերի ձեռքն անցան նաև ռազմական բոլոր կարևոր կետերը[1]:

Հաջորդ օրը՝ մարտի 21-ին, բացի Արաքսի ափին գտնվող Յայջի և Դաստակ գյուղերից, հայերի ձեռքն անցան Գողթանի մնացած բոլոր թուրքաբնակ գյուղերը[2]:

Այդ օրը Նախիջևանից օգնություն հասավ Գողթանի թուրքերին, բայց նրանք չհանդգնեցին կռվի մեջ մտնել և դաշտային թնդանոթից մի քանի արկ արձակելուց հետո նահանջեցին Ջուլֆա[3]:

Նժդեհը չէր կարող անպատիժ թողնել գլխավոր ավազակաբույնը՝ Օրդուբադը:

Կապանի հանքերից ՀՅԴ արևելյան բյուրոյին հղած նամակում Նժդեհը նշում էր. «... Օխչու և Գեղվա ձորերի 36 գյուղերը գրավելուց հետո, երբ Օրդուբադը տարերային պանիկայի մատնված իր հարստություններն էր փոխադրում պարսկական ափը, եթե իմ դեկտեմբերի 9-ին գրած դիմումը չմնար «ձայն բարբառոյ յանապատի»՝ այժմ մեր ձեռքին կլիներ ոչ թե միայն Օրդուբադը, այլև՝ Ջուլֆան»[4]:

Մարտի 21-ի լույս 22-ի գիշերը Նժդեհի վաշտերը Նուռնուսի ու Կարճևանի կողմից հարձակվեցին հանցավոր քաղաքի վրա և մարտի 22-ի առավոտյան շրջապատեցին այն: Օրդուբադի բնակչությունը մատնվեց ահավոր խուճապի, շատերը փախուստի դիմեցին: Հայերը, գրավելով գերեզմանատունը, պատրաստվեցին գրոհով վերցնել քաղաքը[5]:

Զանգեզուրի գեներալ կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանը հեռագրեց Երևան, որ «Օրդուբադի շուրջ եղած ողջ տարածքը գրավված է մեր կողմից»[6]:

Օրդուբադի թուրք ղեկավարներից մեկը՝ Ասքիեր խանը, որն այդ պահին գտնվում էր Ջուլֆայում, այնտեղից հեռախոսագիր ուղարկեց Թավրիզ, որում նշում էր, որ Նովրուզի առաջին օրը՝ մարտի 21-ին, 10 հազար հոգուց բաղկացած հայկական ուժերը, իբր, գրավելով և այրելով թաթարական գյու-

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 61, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49, **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 20, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 94, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 243:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 61, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 22, **Ռ. Համբարձումեան**, Վարք Նժդեհի, ասոյթներ, էջ 61:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 20-21, **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 62, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 98:

[4] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 2, **Գ. Նժդեհ**, Նամակներ, գրություններ, հեռագրեր, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 283:

[5] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 62-63, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 49:

[6] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 136:

ղերը, հարձակվել էին Օրդուբադի վրա: «Հեռախոսային հաղորդակցությունը ոչնչացված է,– հաղորդում էր նա:– Օրդուբադի կողմից լսվում են ուժեղ թնդանոթաձգության ձայներ: Օրդուբադի ժողովուրդը ձեզնից օգնություն է խնդրում մուսուլմաններին ազատելու համար: Հայտնեցե՛ք Ադրբեջանի կառավարությանը և եվրոպական պետությունների ներկայացուցիչներին ու միջոցներ ձեռք առեք պաշարված Օրդուբադը ազատելու համար»[1]:

Ասքիեր խանի այդ հեռախոսագրին հաջորդեց երկրորդ հաղորդագրությունը, որում ասված էր. «Հայերը գրավել են Օրդուբադ տանող բոլոր ճանապարհները: Նախիջևանից եկած օգնական ուժը աշխատում է անցնել Օրդուբադ՝ Ահարի վրայով: Շրջակա գյուղերի ազգաբնակչությունը սարսափի մատնված՝ հավաքվել է Օրդուբադում: Ուտեստեղեն չի ճարվում: Դիմեցե՛ք պարսից կառավարությանը և օգնություն խնդրեցե՛ք Ղարադաղից: Օրդուբադը ռմբակոծվում է»[2]: Այնուհետև, միտումնավոր խեղաթյուրելով իրողությունը, նա հաղորդում էր. «Երկու կողմից էլ կան մեծ կորուստներ» (այնինչ Գողթանի ողջ օպերացիայի ընթացքում հայերը տվել էին ընդամենը երեք զոհ, և վիրավորվել էր Գողթանի ուժերի հրամանատար Ղազար Քոչարյանը), որ, իբր, «հայկական ուժերը կազմված են կանոնավոր կառավարական զորքերից, զանգեզուրցիներից, պարսկահայերից և տեղացիներից»[3] (իրականում Գողթանի ճակատում չկային ո՛չ երևանյան կանոնավոր զորքեր, ո՛չ պարսկահայեր):

Օրդուբադի անկումը ժամերի հարց էր, սակայն դրությունը փրկեց ոչ թե Նախիջևանից եկած ռազմական օգնությունը, այլ Կապանից ուղարկված տագնապալի գրությունը, որը Գողթան էր հասցրել մի սուրհանդակ:

«Շուտ և կարևոր: Նժդեհին.

Ամսվա 23-ին սկսվեցին մեր ճակատներում կռիվները: Թշնամին մեծ ուժերով առաջանում է: Թուրքերը վերցրել են իրենց նախկին դիրքերը: Ազարակ–Զեյվա գծի վրա եղած գյուղերի դրությունը օրհասական է ... Մեր դեմ գործում է երեք թնդանոթ՝ մեծ ուժերով: Խնդրում եմ շտապեք մեզ հասնելու, բերելով ձեզ հետ թարմ ուժեր:

Շտաբս կապիտան՝ Նարինյան

25 մարտի 1920, ժամը 1, գիշեր, Ղափանի Հանքեր»[4]:

---

[1] «Մինարեթ», Թավրիզ, թիվ 13, 22 ապրիլի 1920 թ., **Գ. Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 62 (տողատակ), **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 50, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 94, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2 (95-96), էջ 176-177:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] **Գ. Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 63, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 50, **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 20, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 99:

Երկու ժամ հետո հասավ երկրորդ սուրհանդակը՝ այս անգամ Կապարգողթի հրամանատարին բերելով Կապանի ազգային խորհրդի անդամ Արսեն Բաբայանի՝ Գյուտկումից ուղարկած հետևյալ գրությունը.

«Սիրելի՛ հրամանատար, մեծարգո՛ Նժդեհ.

Քո սիրեցյալ Ղափանը ձեռքից գնում է. այս գիշեր Զեյվան հանձնել են թուրքերին: Զեյվան ձեռքից գնալուց հետո, պարզ է, որ Մողեսը, Ուժանիսը, Եղվարդը և Ագարակն էլ այսօր-վաղը կգնան: Հրամանատարություն չկա, զինվորությունը սրտով չի կռվում: Ի սեր այն նեղությունների, որ կրել ես մեր Հայրենիքի համար, հասիր մեզ: Եթե մինչև 3 օրը այստեղ չլինես քո քաջարի զինվորներով, այլևս Ղափանը կորած կը տեսնես»[1]:

Հիրավի, ադրբեջանական զորքերը խոշոր ուժերով, այդ թվում՝ 10 թնդանոթներով, հարձակում էին սկսել երեք ուղղությամբ՝ 1) Մինքենդի ուղղությամբ Գորիսի վրա, 2) Կեռլյարի կողմից Ալիղուլիուշաղի վրա՝ նպատակ ունենալով Կապանն անջատել Զանգեզուրից, 3) Զաբրայիլի կողմից՝ Կապանի վրա:

Առաջին երկու ուղղություններով հակառակորդի բոլոր գրոհները հետ էին մղվել: Կապանի ուղղությամբ Զաբրայիլից հարձակվող ադրբեջանական զորքերը՝ Նուրի փաշայի ղեկավարությամբ, կարողացան նեղել հայ զորամասերին, որոնք նահանջեցին շրջապատի վրա իշխող Այինդաղ բարձունքից, թշնամուն հանձնեցին նաև Խանաղան և Հարթիզը[2]:

Կապանի շրջանի վրա այս հարձակումը Նժդեհին ստիպեց դադարեցնել Օրդուբադի գրոհն ու գրավումը՝ մոտ ապագային թողնելով նրան հասցնելիք վճռական հարվածը:

---

[1] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 63, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 51, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 99-100:

[2] Տե՛ս «Նոր աշխատավոր», 1920, 6 ապրիլի, **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 63-64 (տողատակ), «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 94, **Ա. Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 255-256:

ԿԱՏԱՂԻ ԿՌԻՎՆԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ:
ՀԱՅԿԱԿԱՆ ՇՈՒՇԻԻ ԵՎ ԱՍԿԵՐԱՆԻ ԲԵՐԴԻ ԱՆԿՈՒՄԸ

Հենց այդ ժամանակ ադրբեջանական բանակը լիովին ավարտել էր հայկական Ղարաբաղի դեմ վճռական կռվի նախապատրաստությունները: Չնայած դրան՝ Բաքվից ու Գանձակից դեպի Ղարաբաղ էին շարժվում նորանոր զորամասեր:

Թուրքերը նախ ամրացրին Շուշին և Խանքենդ ավանը, ապա գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով իսկ ապահովեցին Ադրբեջանի կապը Շուշիի հետ: Խ. Սուլթանովը մտադրվեց զորք մտցնել Ավան Յուզբաշյանի Մարգուշավան կալվածքը (Զևանշիրի շրջան), բայց նրա փորձը ձախողվեց՝ հանդիպելով վճռական դիմադրության: Շրջանի գյուղերի ներկայացուցիչները, հավաքվելով Մարտակերտում, միաձայն որոշում ընդունեցին մերժել այդ անօրեն քայլը, որը 1919 թ. օգոստոսյան համաձայնագրի կոպիտ խախտում էր:

Ադրբեջանական նախահարձակների հաջորդ քայլը եղավ այն, որ զորքերը կենտրոնացրին ոչ միայն Զևանշիրի սահմաններում, այլև Ասկերանում, Խանքենդում, Շուշիում, Կարյագինոյում, Զաբրայիլում, Աղդամում և այլ վայրերում[1]:

Ադրբեջանական բանակին պատրաստվում էին դիմադրել Ղարաբաղի շրջանները՝ Վարանդան, Խաչենը, Զրաբերդն ու Դիզակը: Հայաստանի Հանրապետությունից եկած արցախցի գործիչները այստեղ կազմակերպեցին ինքնապաշտպանական ջոկատներ, որոնց շտաբը տեղավորված էր Վարանդայի Սարուշեն գյուղում: Բայց թուրք-ադրբեջանական յաթաղանի սպառնալիքի դիմաց Շուշին մնացել էր անպաշտպան: Շուշի քաղաքում հայության դրությունը անտանելի էր. հայ բնակչության ջուրը թուրքերը կտրում էին, քաղաքից դուրս ջրի գնացող հայ տղամարդիկ գնդակահարվում էին, իսկ կանայք՝ գերեվարվում[2]:

Անպաշտպան էր նաև Բաքվի և Ադրբեջանի մյուս քաղաքների ու շրջանների հայությունը, որի գլխին դամոկլյան սրի պես կախվել էր կոտորածների վտանգը:

Մարտի 17-ին Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը տեսակցություն էր ունեցել վարչապետ Ն. Ուսուբ-

---

[1] Տե՛ս “Слово”, 27 марта, 1929:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 479-ի 2-րդ մաս, թ. 353-ի շրջ.:

բեկովի հետ՝ նպատակ ունենալով ճշտել կառավարության վերաբերմունքը այն լուրերի կապակցությամբ, թե շուտով սկսվելու են Ադրբեջանի հայության ջարդերը: Ն. Ուսուբբեկովը ասել է. «Ես մի անգամ արդեն առիթ ունեցել եմ հայտնելու Ձեզ, որ քանի ես կառավարության գլուխ եմ կանգնած՝ հակահայկական որևէ շարժում տեղի ունենալ չի կարող: Կառավարությունն այնքան ուժ ունի, որ ամեն շարժում յուր հիմքում կարող է խեղդել»[1]: Հայ դիվանագետին հանգստացնող ազերի թուրք վարչապետը, անշուշտ, տեղյակ էր հակահայկական խմորումներին:

Մարտի 21-ին դրությունը կտրուկ լարվեց. Թարթառ ավանում կողոպտվեցին հայերի խանութները, իսկ Մարաղա, Չայլու և Թալիշ գյուղերի սահմաններում թուրքերը սկսեցին քշել ու տանել հայերի նախիրը, ոտնատակ տալ արտերը: Ասկերանի շուրջը և Խանքենդում ադրբեջանական զորքերը նոր բախումների առիթ տվեցին, իսկ Շուշիում Խ. Սուլթանովը պահանջեց հայերի զինաթափում: Քաղաքի հայկական մասի սահմաններում թուրքական նորանոր զորքերը դիրքեր գրավեցին, չնայած որ հայկական մասում վաղուց առկա էին թուրք զորամասեր:

Բոլոր քայլերը վկայում էին, որ Ղարաբաղի հարաբերական խաղաղությունն ապրում է իր վերջին ժամերը:

Մարտի 22-ին մահմեդականների կրոնական տոնն էր՝ Բայրամը: Այն արագացրեց դեպքերը:

Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը հայերը՝ Դալի Ղազարի (Միքայել Բադալքյոխյան) գլխավորությամբ, հարձակվեցին Ասկերանի վրա, ջարդեցին թուրքերից և դաղստանցիներից բաղկացած զորամասը: 50 ասկյարներից փախուստի դիմելով ազատվեցին 15-ը[2]: Գրավելով Արցախի գլխավոր միջանցքը՝ հայ մարտիկները Շուշին այդպես կտրեցին Ադրբեջանից: Դա սպասվող դեպքերի կանխման փորձ էր: Հայկական ուժերը հարձակվեցին նաև Խանքենդի վրա, ուր ևս գտնվում էին թուրքական զորքերը, պաշարեցին այն և կտրեցին Շուշիի հետ նրա կապը ևս: Հարձակում եղավ նաև Թարթառ ավանի վրա[3]:

Նշված դեպքերն իրենց արձագանքն ունեցան Շուշիում, որտեղ միամիտ հայերը հույսները դրել էին Խ. Սուլթանովի՝ քաղաքի հայերին պաշտպանելու ազնիվ խոսքի վրա:

Մարտի 23-ի լուսաբացին քաղաք մտան մի քանի տասնյակ զինված հայ մարտիկներ և հարձակվեցին թուրքական զորանոցի վրա: Հարձակումը հանդիպեց ուժգին դիմադրության, և դա ազդանշան եղավ, որպեսզի թուրք

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 606, թ. 1, ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 34:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 27, ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 34:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 34, «Յառաջ», 1920, 7 ապրիլի, թիվ 73, Հայաստանի պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 480:

զորքերը տարբեր ծայրերից միահամուռ հարձակվեն քաղաքի հայկական մասի վրա: Սկսվեց իրարանցում: Հայկական մասում հրդեհ ծագեց: Այն շուտով տարածվեց ամենուր: Հայությունը խուճապի մատնվեց, թուլացավ նրա առանց այն էլ անբավարար ինքնապաշտպանությունը: Ժողովուրդը ահաբեկված բռնեց փախուստի ճանապարհը[1]:

Շատերը մնացին բոցերի մեջ, իսկ մուսավաթական զինվորները և մահմեդական մոլեռանդ ամբոխը անցան ծրագրված ջարդարար գործողությունների ու թալանի: Այդ օրը սպանվեց մի քանի հազար մարդ, կին, ծեր ու երեխա: Բարբարոս զորքի ու խուժանի ձեռքով սրախողխող ընկան բազմաթիվ հասարակական, քաղաքական, կրոնական, մշակութային գործիչներ:

Երկու օրվա ընթացքում Շուշիի հայկական մասը՝ մոտ 2000 տուն և բազմաթիվ խանութներ, հրդեհի ճարակ դարձավ: Քաղաքում կանգուն մնաց միայն 25 շինություն, այդ թվում՝ թեմական դպրոցը, Բեգլարյանի շքեղ տունը և մի քանի ուրիշ արժեքավոր շենքեր:

Հետագա մի քանի օրերին մուսավաթականներն ու խուժանը շարունակեցին անսանձ կամայականությունները, բռնություններն ու անպատիժ սպանությունները: Արցախի ազգային խորհուրդը դադարեց գործել: Շուշիում Բեգլարյանի և մյուս չայրված տներում ապաստանած ավելի քան 5000 հոգի՝ կին ու երեխա, գերվեցին և նետվեցին բանտերը: Այս վիճակում Շուշին մնաց ամբողջ երկու շաբաթ: Ոճրագործ Խ. Սուլթանովը, գտնվելով մեկուսացած ու պաշարված դրության մեջ, զգուշանում էր կոտորել հայ գերիներին:

Պաշարված, բայց կանգուն էր մնացել նաև Խանքենդը՝ այդտեղ գտնվող թուրք զորքերով, որոնք հրետանու շնորհիվ կարողացան պահել իրենց դիրքերը: Հայերը վաղուց քաշվել էին այդտեղից:

Ամենուրեք շարունակվում էին համառ կռիվները, դրանք մեծ թափ էին ստացել հատկապես Ջևանշիրում և Գանձակի գավառում: Մարտի 24-ին ադրբեջանական զորքերը՝ թուրք խուժանի աջակցությամբ, Ջևանշիրի շրջանում (Ինջա գետից սկսած) դիմեցին հարձակման: Հայերը, որ առաջացել էին մինչև Թարթառ ավանը, քաշվեցին Մարաղա, Չայլու և Թալիշ գյուղերը, որոնց շուրջը տեղի ունեցավ համառ կռիվ: Հայերը, խնայելով փամփուշտները, հետզհետե թողեցին Մարաղան և երկու Չայլուները, Մարգուշավանը ու կենտրոնացան Թալիշում:

Ադրբեջանական մեկ այլ զորամաս՝ թնդանոթներով զինված, խուժանի ուղեկցությամբ մարտի 25-ին հարձակվեց Գանձակի գավառի Կարաչինար և Էրքեջ գյուղերի վրա: Այս շրջանի զինված հայերը՝ Տեր-Անանյանի ղեկավարությամբ, դուրս եկան՝ թշնամուն դիմադրելու: Երկու օրվա համառ կռվից հետո զինամթերքի բացակայության պատճառով հայկական զինված ուժերը ստիպված թողեցին Կարաչինարը, Խարխապուտը, Պարիսը, Էրքեջը, Մա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 423, թ. 9:

նաշիդը և Ներքին Շենը: Մտնելով այդ գյուղերը՝ թուրքերը անլուր չարագործություններ կատարեցին բնակչության նկատմամբ:

Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը հաղորդում էր Երևան. «Գանձակի գավառում կոտորածներ են կազմակերպվել հայկական գյուղերում: Կանանց առևանգել են, երեխաների ձեռքերն ու ոտքերը կոտրել են, Գանձակի հայերի մեջ խուճապ է տիրում»[1]:

Թիֆլիսում Գանձակի գավառի հայրենակցական միության վարչության նախագահ Ա. Միանսարյանը Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Ուսուբբեկովին ուղարկած բողոքում գրում էր. «Գանձակ քաղաքի և նրա շրջանների հայերի անասելի ծանր դրությունը վերջին ժամանակներս դարձել է ուղղակի անտանելի: Բռնությունները, սպանությունները, թալանը, ծաղր ու ծանակը, որ օրը ցերեկով կատարվում են լոյալ հայ բնակչության նկատմամբ, ընդունել են սիստեմատիկ բնույթ և զանգվածների մեջ ստեղծել այնպիսի խուճապ, որ բնակչությունը թողնում է ամեն ինչ՝ տուն ու տեղ, հանդ ու արտ և հեռանում անհայտ ուղղություններով»[2]:

Մարտի 26-ին Բաքու ժամանեց Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին[3]: Մարտի 27-ին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը հանդիպեց նրա հետ: Զրույցի ընթացքում Ե. Գեգեչկորին նշեց, թե ինքը տեղեկացված է, որ Շուշիի դեպքերը սկսել են հայերը: Մ. Հարությունյանն ասաց, որ ինքը դեռ հավաստի տեղեկություններ չունի, ուստի չի կարող ասել, թե ովքեր են քաղաքում նախահարձակ եղել՝ թուրքե՞րը, թե՞ հայերը:

Մարտի 29-ին Մ. Հարությունյանը երկրորդ անգամ հանդիպեց Վրաստանի արտգործնախարարի հետ, և նրանց միջև տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը:

«***Մ. Հարությունյան***. – Թիֆլիսի լրագրերից արդեն տեղեկացել եմ, որ գործը բոլորովին այլ կերպարանք ունի. հարձակումը կատարել են ոչ թե հայերը, այլ Ադրբեջանը, որը ցանկացել է իրագործել Ղարաբաղը և Զանգեզուրը գրավելու իր ծրագիրը՝ հարձակումներ սկսելով բոլոր կողմերից: Բացի այդ, մեր ունեցած, բայց դեռ չստուգված տեղեկությունների համաձայն, Նովրուզ-Բայրամի օրը Շուշիում ասկյարները նախապես 16 հայ են սպանել, և առհասարակ վերջին ժամանակներս սպանությունները և բռնաբարությունները Ղարաբաղի շրջանում հասել են աննախադեպ չափերի: Այսպիսով, իմ մտածողությունը այժմ բոլորովին այլ ընթացք է ստանում:

Ե. Գեգեչկորի.- Ես նույնպես, մոտիկից ծանոթանալով մամուլին, արդեն գալիս եմ այն եզրակացության, որ այդ դեպքերը չէին կարող կազմակերպ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 106, թ. 6:

[2] “Слово”, 26 марта, 1920.

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 7:

ված լինել Հայաստանի կողմից, քանի որ, ինչպես հենց իրենք (թուրքերը: – *Ա. Ս.*) են ասում, այնտեղ հայկական զորամասեր շատ քիչ են, և, մյուս կողմից, բռնությունների ու անկարգությունների փաստերն ինձ մտածել են տալիս, որ երևույթը լոկ տեղական բնույթ ունի (այսինքն՝ զանգեզուրցիները չեն մասնակցել Շուշիի դեպքերին: – *Ա. Ս.):* Երևում է, որ ժողովուրդը մի հուսահատական քայլ է արել՝ հարձակվելով զորամասի վրա: Նաև պետք է ասեմ, որ Ադրբեջանի կողմից էլ դա կազմակերպված արշավանք չի կարող լինել, քանի որ այդ դեպքում նրանք նախապես պետք է բռնեին ստրատեգիական կարևոր կետեր:

Մ. Հարությունյան.- Դուք պետք է մտածեք մի փոքր էլ այն ուղղությամբ, որ սա կարող է լինել մի մտածված քայլ՝ արդարացնելու համար, թե ինչու չեն կարող (ադրբեջանցիները: – *Ա. Ս.)* այժմ ձեզ հետ միասին կռվել բոլշևիկների դեմ: Մահմեդական հոգեբանության հետ լավ ծանոթ անձնավորությունները հաստատապես պնդում են, որ նախապես վճռված լինելով չդիմադրել բոլշևիկներին, Ադրբեջանը կազմակերպել է այս ընդհարումը, որպեսզի արդարացված պատճառաբանությամբ յուր զորքերն ուղղի դեպի Ղարաբաղ և ձեզ պատասխանի, թե շատ կուզենար ձեզ հետ միացած պաշտպանել Անդրկովկասը, բայց հայերը իրենց այդ շարժումով զբաղեցնում են Ադրբեջանի բոլոր զինված ուժերը»[1]:

Ադրբեջանի կառավարության անդամների հետ Բաքվում ունեցած մասնավոր զրույցի ընթացքում, անդրադառնալով հայ-մուսուլմանական վերջին իրադարձություններին, Ե. Գեգեչկորին տագնապ հայտնեց, որ դրանք կարող են վերաճել երկու հանրապետությունների միջև լայնածավալ պատերազմի՝ Այսրկովկասի համար ողբերգական հետևանքներով:

«Բակինեց» թերթը այդ առիթով գրում էր. «Գիտակցելով հայերի և մուսուլմանների միջև ընթացող ընդհարումների կործանարար լինելը և, ելնելով անդրկովկասյան երեք հանրապետությունների ընդհանուր շահերից, Ե. Գեգեչկորին մտադիր է հանդես բերել նախաձեռնություն և Ադրբեջանի ու Հայաստանի միջև եղած վիճելի հարցերը խաղաղ միջոցներով լուծելու համար Թիֆլիսում հրավիրել արտակարգ կոնֆերանս»[2]:

Մարտի 28-ին Ա. Խատիսյանը հեռագրով դիմել էր Վ. Հասկելին, Ջ. Ուորդրոպին, Այսրկովկասում ֆրանսիական առաքելության ղեկավար մայոր Շ.-Մ. դե Նոնանկուրին և իտալական առաքելության ղեկավար գնդապետ Մելկիադե Գաբբային՝ նշելով, որ մարտի 20-ին Ադրբեջանը ձեռնարկել էր Արցախի հայ բնակչությանը բռնությամբ զինաթափելու գործը, միաժամանակ բազմաթիվ ուղղություններով հարձակում էր սկսել հայկական Ղարաբաղի ու Զանգեզուրի վրա, և սկսվել էին կատաղի մարտեր: Հայաստանի կառավարու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 9, գ. 417, թ. 139-140:

[2] “Бакинец”, 29 марта, 1920.

թյան անունից Ա. Խատիսյանը բողոք էր հայտնում և նշում, որ ողջ հայ ժողովուրդը չի կարող անտարբեր գտնվել հայության այս կոտորածի հանդեպ: Միևնույն ժամանակ նա դաշնակից տերությունների ներկայացուցիչներին կոչ էր անում «անհապաղ միջամտել և դադարեցնել Ադրբեջանի լայնածավալ ագրեսիան, բավարարություն տալ Արցախի հայ բնակչության օրինական պահանջներին և նրան զերծ պահել Ադրբեջանի հետագա բռնություններից»[1]:

Մարտի 30-ին Ա. Խատիսյանը նոր հեռագիր հղեց Թիֆլիս՝ դաշնակիցների ներկայացուցիչներին՝ նրանց ուշադրությունը կրկին բևեռելով Արցախի և Զանգեզուրի դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի վրա: Հեռագրում նա նշում էր, որ ինքը տագնապ ունի, թե Արցախում և Զանգեզուրում հաջողության հասնելու դեպքում թուրքերը կկոտորեն Բաքվի, Ելիզավետպոլի և Ադրբեջանի Հանրապետության մյուս շրջանների հայերին[2]:

Ապրիլի 2-ին թշնամու գլխավոր ուժերը 4 թնդանոթով և բազմաթիվ գնդացիրներով հարձակվեցին Թալիշի վրա: Գյուղը, որտեղ հավաքվել էին հայկական ուժերը, երեք օր համառ դիմադրություն ցույց տվեց, բայց ապրիլի 5-ին հայերը ստիպված քաշվեցին նաև Թալիշից: Կռիվների ընթացքում հայերը հետզհետե քաշվեցին դեպի Գյուլիստանի լեռները՝ ենթարկվելով քաղցի ու ցրտի զրկանքներին:

Գանձակի գավառում ընդհարումներ տեղի ունեցան նաև երեք կենտրոնական գյուղերի շուրջը: Դրանք էին՝ Չարդախլուն, Բանանցը և Գետաշենը (Չայքենդ): Շրջակա գյուղերի բնակիչները նույնպես հավաքվեցին այդտեղ և միացան տեղի պաշտպաններին, բայց թշնամու դեմ երկար կռվել չկարողացան:

Սկզբում թուլության նշաններ ցույց տվեց Գետաշենը՝ մտածելով, որ զենքը վայր դնելով կարող է խուսափել ավերածությունից: Թշնամու մի զորամաս մտավ գյուղ և պահանջեց զենքերը հանձնել: Գետաշենցիները որոշ թվով զենքեր հանձնեցին, բայց բոլորովին անձնատուր չեղան:

Անձնատուր եղավ Սուլուկ (Ազատ) գյուղը, որը և չարաչար տուժեց: Ապրիլի 3-ից սկսած՝ այստեղ եկան պրիստավ Մահմուդ բեկը և մի տաճիկ սպա՝ մի քանի զինվորներով, ապա եկան այլ բեկեր, ավազակապետեր և զինված խմբեր: Խեղճ Սուլուկը հանձնեց իր զենքերը, հյուրընկալեց թշնամուն, տվեց մեծ փրկանք, բայց ոչինչ չօգնեց: Ապրիլի 5-ին հիշյալ պրիստավը գյուղ եկավ կասկածելի մարդկանցով ու ավազակներով, հայերին առաջարկեց տեղափոխվել Գանձակ՝ պատճառաբանելով, թե այնտեղ ավելի ապահով է: Ժողովուրդը, վերցնելով անհրաժեշտ որոշ պարագաներ, ճանապարհ ընկավ դեպի քաղաք, բայց երբ հասավ Նաջիքենդ ամառանոցից ոչ հեռու գտնվող Դափ-Յաղդ կոչվող ձորը, հանկարծ չորս կողմից ենթարկվեց հար-

---

[1] “Слово”, 30 марта, 1920.

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 143, տե՛ս նաև “Слово”, 1 апреля, 1920:

ձակման: Պայթեցին համազարկեր, վրա հասան ավազակներն ու սանձազերծ խուժանը և անզեն ժողովրդին սկսեցին կողոպտել ու ջարդել, բռնաբարել ու առևանգել: Այդ միջոցին անտառում թաքնված երկու տասնյակ սուլուկցի քաջեր թիկունքից անսպասելի հարձակվեցին ջարդարար խուժանի ու ավազակների վրա. նրանց մի մասը կոտորվեց, մյուսը, թողնելով անմեղ զոհերին, սարսափահար փախուստի դիմեց: Օգտվելով դրանից՝ կենդանի մնացած 400-ի չափ սուլուկցիները շարժվեցին դեպի Ելենենդորֆ գերմանական գաղութ, ապա այդտեղից անցան Գանձակ:

Արցախյան դիմադրության ամենաթեժ կետը շարունակում էր մնալ Ասկերանը:

Վերը նշվեց, որ մարտի 23-ի առավոտյան Սարիղամիշի 1918 թ. կռվի հերոս Դալի Ղազարի գլխավորությամբ Վարանդայի և Խաչենի ընդամենը 450-500 քաջեր, զինված միայն հրացաններով, այն էլ՝ փամփուշտի խիստ սակավ պաշարով, հարձակվել ու գրավել էին Ասկերանի բերդը: Թուրք պահակազորի փախուստից հետո նրանք ամրացել էին բերդում և փակել Ադրբեջանից Շուշի ձգվող ճանապարհը:

Մարտի 31-ին Զանգեզուրի կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանը Գորիսից Երևան ուղարկած հեռագրում տեղեկացնում էր. «Ասկերանը ղարաբաղյան գյուղացիների ձեռքն է: Թաթարների բազմիցս գրոհները, հանդիպելով Ասկերանի բերդապարիսպներին, ջախջախվում են»[1]:

Ադրբեջանի հեռագրական գործակալությունը հաղորդում էր. «Հայկական զինված ուժերի կողմից Ասկերանի բերդի գրավումով Ղարաբաղի լեռնային մասը կտրված է հարթավայրային մասից, և դա հղի է հեռուն գնացող վտանգներով»[2]:

Թշնամին չէր կարող հաշտվել, որ Ադրբեջանը Շուշիի հետ կապող Ասկերանի միջանցքը երկար ժամանակ մնար հայերի ձեռքում: Ասկերանի միջանցքը գրավելու համար ամենուրեք պատրաստություններ էին տեսնում. մարտական վիճակի էին բերվում Աղդամի և Եվլախի զորամասերը, կազմակերպվում էին կամավորների խմբեր տարբեր շրջաններում:

Ապրիլի 1-ին Ղուբայի Ջամա մեչիդում տեղի ունեցավ Ղարաբաղի հարցին նվիրված միտինգ, որի ընթացքում որոշվեց կազմակերպել կամավորական ջոկատ՝ Ղարաբաղ ուղարկելու համար: Դրամահավաքի և կամավորական ջոկատի կազմակերպման համար ստեղծվեց երկու կոմիտե: Ապրիլի 2-ին որոշվեց կազմակերպել նաև սանիտարական ջոկատ՝ Ղարաբաղ ուղարկելու նպատակով[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 136:

[2] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 69, թ. 1:

[3] Տե՛ս "Вестник бакинского генерал-губернаторства", 6 апреля, 1920:

Սակայն դա բոլորը չէր. Ադրբեջանի կառավարությունը ոտքի հանեց Դաշտային Ղարաբաղի իր բոլոր զինված ուժերը, ինչպես նաև Գանձակից ու Բաքվից բերեց կանոնավոր բանակի լավագույն զորամասերից երեք գունդ՝ շուրջ 3500-4000 զինվորով՝ զինված բոլոր տեսակի զենքերով, այդ թվում՝ ծանր հրետանախմբով՝ ռուս փորձված թնդանոթաձիգներով հանդերձ: Այս բազմաքանակ զորքի ստորաբաժանումների մեծ մասը ղեկավարում էին թուրք սպաները:

Արխիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Ադրբեջանի բոլոր շրջաններից իրենց զենքերով ու ռազմամթերքով կամավորական խմբեր են գնում Ղարաբաղ: Բաքվի համալսարանի թուրք ուսանողներն ու անգամ միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտները մեկնում են ռազմաճակատ՝ ուժերը ներածին չափ օգտակար լինելու հայրենիքի պաշտպանության գործին: Միով բանիվ Ադրբեջանի թե՛ կառավարությունը և թե՛ քաղաքական բոլոր կազմակերպությունները միջոցների առաջ կանգ չեն առնում թուրք ժողովրդի հայրենասիրական զգացմունքները բորբոքելու և դեպի կռիվ մղելու: Թե ինչով կվերջանա այս ամենը, դժվար է գուշակել»[1]:

Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ապրիլի 3-ին իր կառավարությանը գրած զեկուցագրում նշում էր. «Բոլոր տվյալներից կարելի է ենթադրել, որ այս կռիվը ճակատագրական է լինելու երկու կողմերի համար: Այս կռվում Ղարաբաղի հայության պարտությունը համազոր է տնտեսական և ֆիզիկական ոչնչացման: Եթե հանգամանքների անսպասելի բերումով Ղարաբաղի հայության գոյամարտը անհաջող վախճան ունենա, ապա Ադրբեջանը նրան չի խնայելու: Այդ բանը չեն թաքցնում հենց իրենք թաթար ղեկավար շրջանների ներկայացուցիչները և հրապարակավ հենց այդպես էլ արտահայտվում են»[2]:

Երկու անհավասար ուժերի՝ Ասկերանի բերդում ամրացված փոքրաթիվ հայ մարտիկների և մի քանի հազարանոց թուրք զորքի միջև սկսվեց կատաղի կռիվ, որը տևեց օրեր: Անհամեմատ փոքրաթիվ հայ մարտիկները թշնամու անընդհատ գրոհները հետ էին մղում՝ մեծ կորուստներ պատճառելով:

Արցախի զինված հայ գյուղացիությունը իր հույսը ամենից առաջ դրել էր Զանգեզուրի օգնության վրա: Նա ակնկալում էր, որ Զանգեզուրը, վերջապես նաև Հայաստանի Հանրապետությունը, իրեն օգնության կգան մարդկային ուժերով: Ելնելով այդ պահանջից՝ ՀՀ զինված ուժերի հրամանատարի հրամանով Գորիսի վրայով Արցախ ուղարկվեց մի զորամաս՝ փոխգնդապետ Ա. Թարվերդյանի հրամանատարությամբ: Զորամասի առջև խնդիր էր դրվել հասնել Ասկերան և միանալ Դալի Ղազարի գլխավորությամբ մղվող կռիվներին և բերդի պաշտպանությանը: Բայց քանի որ Գորիս–Շուշի խճու-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 10:
[2] Նույն տեղում, թ. 12:

ղով գնալը դեռ վտանգավոր էր (այն ամեն րոպե ենթակա էր հարձակումների), ուստի զորամասը Արցախ անցավ Խծաբերդի վրայով՝ ճանապարհին ստիպված կռվի մեջ մտնելով ադրբեջանական զորքի հետ, որի հետևանքով կորցրեց մի ամբողջ օր ու ժամանակին չկարողացավ հասնել տեղ և երբ հասավ, Ասկերանը արդեն գրավված էր թշնամու կողմից[1]:

Փոխգնդապետ Ա. Թարվերդյանին տրված էին մեծ լիազորություններ: Ընդառաջ գնալով Արցախի զորահրամանատարների բազմաթիվ խնդրանքներին՝ այնտեղ ուղարկելու մի բանիմաց բարձրաստիճան զինվորականի, որն ի վիճակի լիներ համախմբելու ու միավորելու արցախյան բոլոր զինվորական ուժերը և վարելու դրանց միասնական գործողությունները, Զանգեզուրի ղեկավարությունը նպատակահարմար գտավ այդ առաքելության իրականացումը դնել հենց Ա. Թարվերդյանի վրա: Սակայն վերջինս այն ուժը չէր, որ ի վիճակի լիներ դառնալ Արցախի զինվորական առաջին դեմքը:

Ապրիլի 1-ին անձամբ կռվի վայր եկավ Ադրբեջանի զինվորական նախարար գեներալ Սամեդբեկ Մեհմանդարովը և մնաց երկու օր: Այստեղ էին նաև գեներալ Հ. Սելիմովը և բարձրաստիճան այլ զինվորականներ: Հ. Սելիմովն էր ղեկավարում բերդի հայ պաշտպանների դեմ ուղղված ռազմական գործողությունը:

Ադրբեջանի մեծաքանակ ուժը ապրիլի 3-ին ընդհանուր հարձակման անցավ բերդի վրա: Հայ քաջերը մի քանի անգամ հետ մղեցին թշնամուն՝ մեծ կորուստներ պատճառելով նրան: Բայց օրհասը մոտեցել էր. հայ կտրիճները սպառել էին իրենց փամփուշտի պաշարը, և դա հայտնի էր թշնամուն: Նույն օրը՝ երեկոյան, տեղի ունեցավ մի նոր հարձակում, և հայերը անզոր գտնվեցին հակադարձելու թշնամուն: Կենդանի մնացած երկու-երեք տասնյակ քաջերի հետ Դալի Ղազարը կռվեց մինչև վերջին փամփուշտը և ընկավ հերոսական մահով՝ իր նահատակ մարտիկների կողքին: Ասկերանի շղթան պատռվեց:

Ասկերանի անկումը բուռն ցնծություն էր առաջ բերել Ադրբեջանով մեկ: Օրինակ՝ Ղազախ քաղաքում, որն ամբողջովին զարդարվել էր դրոշակներով, կազմակերպվել էր զանգվածային միտինգ, որից հետո մեչիդում հսկա բազմությունը կատարել էր Ասկերանի կռվում զոհվածների հոգեհանգիստ, ապա տեղի սեմինարիայի տնօրեն Կոչարլինսկին, ուսուցիչ Կասիմովը և հոգևոր դեմքերը հանդես էին եկել ելույթներով և կոչ արել ամեն ինչով նպաստել, որ զորքերը «Ղարաբաղը լիովին մաքրեն գյավուր հայերից»[2]:

Գեներալ Հ. Սելիմովը իր զորքերը շարժեց հայկական բնակավայրերի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 3, թ. 1:

[2] Տե՛ս “Вестник бакинского генерал-губернаторства”, 6 апреля, 1920:

վրա, նվաճեց ու ավերեց դրանցից շատերը[1]: Հատկապես սոսկալի էր Խաչենի և Գանձակի գավառների հայ գյուղերի վիճակը: Ավերածությունները այս շրջաններում հասել էին այնպիսի բարբարոսության, որ շատ տեղերում չէր կարելի նշմարել, թե երբևիցե այդտեղ բնակատեղի է եղել: Գյուղերը հողին հավասարեցվել էին մասնավորապես Գանձակի շրջանում, իսկ կոտորածից փրկված բնակիչները ապաստանել էին լեռներում ու անտառների խորքերում[2]:

«Ազերբայջան» թերթը ապրիլի 5-ին տպագրեց կառավարության պաշտոնական հաղորդագրությունն այն մասին, որ ամսի 3-ի կեսօրին Ադրբեջանի կանոնավոր զորքերը համառ դիմադրությունից հետո գրավել էին Ասկերանի դիրքերը և առաջ էին շարժվում հայերից պաշարված Շուշիի և Խանքենդի զորամասերն ազատելու համար[3]:

Ապրիլի 6-ին Ադրբեջանի զորքերը արշավով մտան Շուշի: Միաժամանակ պաշարումից ազատվեց Խանքենդի զորամասը, ազատվեց նաև Շուշիի զորքը և ինքը՝ Խ. Սուլթանովը[4]: Դրանից հետո Խ. Սուլթանովի ու Հաբիբ բեյ Սելիմովի թողտվությամբ սկսվեց Շուշիում կենդանի մնացած անզեն ու անպաշտպան հազարավոր հայերի բռնությունների, բռնաբարությունների, տանջանքների ու սպանությունների մի եղկելի շարան, որպիսին դժվար է պատկերացնել: Շուշիի առաջնորդ Վահան եպիսկոպոսին և թեմական դպրոցի տեսուչ, նշանավոր բոլշևիկ Ալեքսանդր Ծատուրյանին (Ռուբենի) գլխատեցին և նրանց գլուխները, ի ցույց բոլորի, բարձրացրին ձողերի վրա*:

1920 թ. մարտի 23-ից ապրիլի 6-ը ժամանակահատվածում թուրքերը և քրդերը Շուշիում ոչնչացրին համարյա ամբողջ հայությանը: Քաղաքի 35 հազար բնակիչ ունեցող հայկական մասը դադարեց գոյություն ունենալուց. ավերված Շուշիին տեր դարձավ 23 հազար բնակիչ ունեցող թուրքական մասը[5]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 27, թ. 55:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 15:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 16:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 27, թ. 55:

* Ղարաբաղի և հատկապես Շուշիի անցքերը քննելու համար ապրիլի 22-ին Թիֆլիսից Շուշի հասավ հատուկ քննիչ հանձնաժողով, որի կազմում հայերից Ռ. Յուզբաշյանն ու Ա. Պապովյանն էին, վրացիներից՝ Գ. Ալշիբայան և թուրքերից՝ Ռ. Վեքիլովը և Աղաբաբանը: Այցելելով քաղաքային բանտ, որտեղ պահվում էին կենդանի մնացած հայերը, հանձնաժողովի անդամները հարց ու փորձ արեցին մերկ ու քաղցած, տանջված ու միանգամայն այլակերպված մարդկանց, որոնք տեղավորվել էին ապականություններով լի սառը հատակների վրա: Նրանցից շատերը ապրում էին իրենց վերջին ժամերը: Ի տես այդ սոսկալի պատկերի՝ հուզմունքից լաց էին լինում հանձնաժողովի հայ ու վրացի անդամները (տե՛ս ֆ. 200, ց. 1, գ. 441, մաս 2, թ. 123):

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թթ. 14-17, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 144, գ. 417, թթ. 139-140, գ. 563, թ. 67, ֆ. 278, ց. 1, գ. 30, թթ. 1-2, “Слово”, 16 апреля, 1920:

Ղարաբաղի վարչական և մշակութային կենտրոնի հրդեհումը և ավերումը անդառնալի կորուստ էին տարածաշրջանի ողջ հայության և ընդհանրապես հայ մշակույթի համար:

Ղարաբաղի թուրք եզակի կոմունիստներից մեկը՝ Օջախկուլի Մուսանը, Ադրբեջանի կոմկուսի ղեկավար մարմնին ուղղած զեկուցագրում զայրույթով նկարագրում էր մուսավաթական ջարդարարների գործողությունները քաղաքում: Նա վկայում էր, որ «ջարդերի ժամանակ Խոսրովբեկ Սուլթանովը մուսուլմաններին սրբազան պատերազմի կոչ էր անում հայերի դեմ՝ հորդորելով մինչև վերջին մարդը վերջ տալ հայությանը Շուշիում՝ չխնայելով կանանց, երեխաներին, ծերերին»[1]:

Մուսավաթական հրոսակախմբերին հաջողվեց հսկայական ավերներ կատարել Արցախում այն պատճառով, որ հայերն ապստամբել էին իրենց համար աննպաստ պայմաններում՝ առանց լուրջ ու բազմակողմանի նախապատրաստության, չունենալով ամուր կարգապահությամբ կանոնավոր զորք, անհրաժեշտ քանակի ռազմամթերք ու զենք: Մարտ-ապրիլյան դեպքերը եկան հաստատելու դեռևս 1920 թ. փետրվարի 2-ին Դիզակի Հարար գյուղում հրավիրված Արցախի ազգային խորհրդի մի քանի անդամների և զինված ջոկատների հրամանատարների խորհրդակցությունում արձանագրված այն կանխատեսումը, թե «Ղարաբաղում եղած սակավաթիվ ռազմամթերքով կռվի դեպքում երեք օր միայն կարող ենք դիմանալ»[2]:

Այնինչ ռուս, թուրք գեներալների ու սպաների միջոցով Ադրբեջանը կարողացել էր հատկապես 1919 թ. դեկտեմբեր – 1920 թ. մարտ ամիսներին զգալի առաջընթաց ունենալ բանակաշինության ուղղությամբ, և այդ գործում անուրանալի էր ռազմական նախարար գեներալ-մայոր Սամեդբեկ Մեհմանդարովի դերը:

Մուսավաթական «Բակինեց» թերթը, անդրադառնալով բանակի կազմակերպման ուղղությամբ ձեռք բերված հաջողություններին, գրում էր. «Ադրբեջանը պարտավոր է կենդանության ժամանակ անձեռակերտ հուշարձան կանգնեցնել իր առաջին և անփոփոխ ռազմական մինիստր գեներալ Մեհմանդարովին: Միայն զինվորական գործի այդպիսի գիտակը կարող է կարճ ժամանակում ոչնչից ստեղծել բանակ, որը պատիվ կբերեր եվրոպական

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 168, թ. 17:

[2] Նույն տեղում, ֆ. 1457, ց. 1, գ. 606, թ. 30: Համլետ Գևորգյանը, իր արժեքավոր մենագրության մեջ վկայակոչելով Եղիշե Իշխանյանին, Հովակ Ստեփանյանին և դեպքերի ականատես ու մասնակից այլ գործիչների, իրավացիորեն նշում էր, որ Արցախի ողբերգությունն ու նամանավանդ Շուշիի կործանումը հետևանք էին արցախյան մարտական ջոկատների ղեկավարներ Դալի Ղազարի, Արսեն Միքայելյանի, Զախար Մեսյանի, ռոտմիստր Տեր-Մարտիրոսյանի և նրանց մի շարք գործընկերների հապճեպ կազմակերպած, վատ փոխհամաձայնեցված, չկշռադատված, տաքարյուն ու անմիտ գործողությունների (տե՛ս **Հ. Գևորգյան**, Դրո, էջ 565-569):

ցանկացած փոքր պետության: … Իհարկե ոչ ոքի չի զարմացնում Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների զորքերի օրինակելի վիճակը, որքանով որ վրացիներն ու հայերը ծառայության են անցել ռուսական բանակներում և զինվորական ոգին նրանց մոտ բարձր է: Եվ գեն[երալ] Մեհմանդարովի մեծ աշխատանքը հենց նրանով էլ բարձր է, որ, ի պատիվ մեր կառավարության, պետք է ասել, որ սա միշտ և ամեն ինչում աջակցել է իր ռազմական մինիստրին՝ բանակի կառուցման համար նրան տրամադրելով դիկտատորական իրավունքներ և անսահմանափակ վարկեր»[1]:

Եվ դա այն դեպքում, երբ Արցախի ու Զանգեզուրի հայ պաշտպանների համար զենք ու զինամթերք ձեռք բերելը կապված էր անասելի դժվարությունների հետ: Մարտիկները իրենց ստացած փամփուշտները օգտագործում էին՝ միշտ մտածելով դրանք խնայելու մասին: Հայաստանը չէր կարողանում բավարար քանակությամբ զինամթերք առաքել Զանգեզուր, իսկ Արցախն ընդհանրապես Երևանից ոչինչ չէր ստանում: Արցախցիների միակ հույսը շարունակում էր մնալ Զանգեզուրը, որն իր սուղ հնարավորություններից, այնուամենայնիվ, բաժին էր հանում նրանց:

Այս բոլոր դեպքերից հետո՝ ապրիլի 4-ին, Դոնավազ գյուղում տեղի ունեցավ մի խորհրդակցություն, որին մասնակցում էին փոխգնդապետ Ա. Թարվերդյանը, գնդապետ Զ. Մեսյանը, Կ. Աթայանը, Հ. Թումյանը և ուրիշներ: Այստեղ որոշվեց. 1) գնդապետ Ա. Թարվերդյանին ճանաչել Արցախի բոլոր զինված ուժերի հրամանատար, 2) կռիվը շարունակել գլխավորապես ինքնապաշտպանական մարտավարությամբ:

Նշված խորհրդակցությունից հետո ճակատները ամրացվեցին, լիազորները վերադարձան իրենց տեղերը և կազմակերպեցին զինամթերքի առաքման գործը:

[1] “Бакинец”, 29 марта, 1920.

ԿԱՊԱՐԳՈՂԹԻ ՎԱՇՏԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գողթանից հաղթականորեն Կապան վերադառնալով՝ Նժդեհը որոշեց շրջան ներխուժած թուրքերին հակահարված տալ Ագարակ և Զեյվա գյուղերի ուղղությամբ: Իմանալով այդ մասին՝ Կապանի վտանգված գյուղերի պաշտպանները ոգի առան: Նրանք դեռ հիշում էին Գողթանի արշավանքից առաջ Նժդեհի արձակած մարտական կոչը, որը ներառում էր Զանգեզուրի թիկունքն ապահովելու կարճ ու հստակ ծրագիր:

Եվ հիմա, երբ Նժդեհն իր ուժերով օգնության էր հասնում Կապանի գյուղերին, դիրքերում լսվում էին ուրախության խոսքեր՝ «Հրամանատարը շուտով կհասնի, նա արդեն անցել է սարը …»[1]:

Մարտի 25-ին Գորիսից եկած պահեստային զորամասը և Կապարգողթի վաշտերը համատեղ նետվեցին կռվի դաշտ: Չդիմանալով հայերի շեշտակի գրոհին՝ թուրքերը խուճապով թողեցին Զեյվա գյուղը: Հայ զորքը ճակատային շեշտակի գրոհներով թշնամուց հետ գրավեց նաև Հարթիզի և Սուսանի բարձունքները: Կարյագինոյի և Ջաբրայիլի կողմերից եկած զավթիչները քաշվեցին իրենց տեղերը: Կապանի շրջանի վրա կախված վտանգը վերացավ[2]:

Նժդեհի նպատակը Կապանի տարածքից թշնամուն քշելը չէր միայն: Նրա մտածմունքը շրջանի պաշտպանությունը հուսալի դարձնելն էր և առհասարակ Զանգեզուրի արևելյան մատույցներից նրան հեռացնելը: Իսկ այդ խնդիրը հնարավոր էր լուծել Որոտան գետի ստորին հոսանքի՝ ադրբեջանաբնակ տարածքով անցնող Բարգուշատի երկու կողմերում գտնվող թուրքական գյուղերի տեղահանությամբ միայն: Ուստի Զեյվան ազատելուց և Կապանի շրջանից թշնամուն հետ շպրտելուց հետո Նժդեհը կանգ չառավ, այլ մտնելով ադրբեջանաբնակ տարածք՝ շարունակեց հետապնդել թուրքական զորամասերին: Նրա նպատակն էր մեջտեղից վերացնել Զանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնվող ադրբեջանական սեպը և այդպիսով կենդանի կապ ստեղծել երկու հայկական երկրամասերի՝ Զանգեզուրի և Արցախի

---

[1] **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 53:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 21, **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 63-64, **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 20, 21, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 100:

միջև[1]: Այսպես սկսվեց Բարգուշատի արշավանքը:

Հայկական վաշտերը ապրիլի 1-ին հարձակվեցին Բարգուշատի (Որոտանի) թուրքական գյուղերի վրա: Նուրի փաշայի և գնդապետ արքայազն Ղաջարի զորքերը, կորցնելով իրենց բարոյական կորովը, նահանջեցին դեպի Դոնդարլու և Խոջահան[2]:

Ապրիլի 2-ի լուսաբացին հայկական վաշտերը շարունակեցին համառ գրոհը: Թշնամու դիմադրությունը արագ կոտրվեց. խոշոր կորուստներ կրելով՝ թշնամին սկսեց թողնել գյուղերը: Հայկական զորքի ձեռքն անցան գերիներ, ձիեր, մեծ քանակությամբ հացահատիկ, ինչպես նաև հակառակորդի շտաբի արխիվը՝ կարևոր փաստաթղթերով, որոնցից հայտնի դարձավ, որ ադրբեջանական այս զորամասի մեջ նույնպես կան մեծ թվով օսմանցի սպաներ[3]:

Կռվի երրորդ օրը՝ ապրիլի 3-ին, վերջին կատաղի հարձակումով հայերը գրավեցին Բարգուշատի ձախ ափին փռված տարածքները[4]:

Զանգեզուրի և Արցախի միջև ընկած ադրբեջանաբնակ տարածքի առաջին շարքը մաքրելուց հետո կռվի ծանրությունը փոխադրվեց Ասկյուլում (Ասքելում): Իր ավազակաբարո բնակչությամբ վերջինս երկար ժամանակ պատուհաս էր դարձել հայ բնակչության գլխին: Հարկ էր վերացնել չարիքի այդ որջը, որքան էլ այն անառիկ էր իր դիրքով:

Ապրիլի 6-ին Նժդեհը հարձակման հրաման տվեց, և հայկական վաշտերը, բաժանված երկու թևի, գրոհեցին Ասկյուլումը: Թուրքերն այստեղ նույնպես խուսափեցին հայկական ուժերի հետ առճակատումից և արագորեն թողեցին գյուղը[5]:

Ասկյուլումը և նրա շրջակա մի քանի բլուրները գրավելուց հետո հայկական զորքը, շարունակելով հարձակումը, նույն օրը՝ երեկոյան, մտավ Խոջահան գյուղը և կրակի մատնեց տեղի հարուստ շուկան[6]:

Նշված ճակատը զորացնելու համար թուրքերը զգալի թվով օգնական

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 63-64, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 100, 428, **Վ.. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 53, **Ռ. Համբարձումեան**, նշվ. աշխ., էջ 61:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 64, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 100, 102, 428, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 53:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 64 և տողատակ, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 53:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 64, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 102, 428, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 54, **Ռ. Համբարձումեան**, նշվ. աշխ., էջ 61:

[5] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 65-66, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 54, **Ռ. Համբարձումեան**, նշվ. աշխ., էջ 61:

[6] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 66, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 54:

ուժեր ստացան Զաբրայիլից ու Ղարադաղի պարսիկ խաներից և փորձեցին կանգնեցնել հայկական զորքի առաջխաղացումը: Բայց դա նրանց չհաջողվեց[1]:

Շարունակելով հարձակումը՝ հայկական ուժերը ապրիլի 13-ին գրավեցին Շուքյուրդարասի բարձունքը, ապա հարձակվեցին Չավնդուրի (Բարթազ) շրջանի վրա: Այս տարածքում հայ քաջորդիները կռվեցին տասնապատկված եռանդով: Նժդեհը դարձյալ նրանց հետ էր և գրոհից առաջ հիշեցրեց, որ Չավնդուրը նվիրական է ոչ միայն կապանցիների, այլև ողջ Զանգեզուրի համար, քանի որ այն Թորոս իշխանի ծննդավայրն է: Նժդեհի օրինակով ամեն մի մարտիկ իր հետ մի բուռ հող էր վերցնում Թորոս իշխանի գերեզմանից: Հետագայում Նժդեհը վերհիշել է, որ դա հայ մարտիկներին նոր ոգի և նոր ուժ է ներշնչել Չավնդուրը գրոհելիս: Շրջանը մաքրվեց թշնամուց: Թշնամին գլխակորույս փախավ տարբեր ուղղություններով[2]:

Ապրիլի 25-ի հրամանով Զանգեզուրում գործող զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ն. Ղազարյանը գավառում մտցրեց ռազմական դրություն: Հրամանում ասվում էր.

«Համաձայն Արևելեան Գրուպպայի հրամանատարի 22 ապրիլի 1920 թ. № 93 հեռագրի, Զանգեզուրի գավառը հայտարարված է զինվորական դրության մեջ:

Գեներալ Սիլիկյանը նշանակված է Զանգեզուր – Դարալագյազի գեներալ-նահանգապետ, հանձին որի կենտրոնացված են զինվորական և քաղաքացիական իշխանությունները:

Ի կատարումն այդ հրամանի հրամայում եմ.

1. Զանգեզուրի գավառը համարել զինվորական դրության մեջ սույն հրամանի հրատարակված օրից:
2. Զանգեզուր գավառի բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանությունները ենթարկվում են ինձ:
3. Այսօրվանից կսկսի գործել զինվորական դատարան, որին կենթարկվեն հավասարապես այն բոլոր զինվորականները և քաղաքացիները, որոնք կմեղադրվեն դասալքության կամ այլ կերպ՝ զինվորական պիտույքների և առարկաների (որոնք կպատկանեն պաշտպանման և պարենավորման իրերի շարքին), հեռագրի, հեռախոսի, կամուրջների և այլ հաղորդակցական միջոցների կանխամտածված փչացման մեջ:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 67, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 100, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 54, **Ռ. Համբարձումեան**, նշվ. աշխ., էջ 61, **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 243:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 537, թ. 54-ի շրջ. - 55: **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 2002, էջ 66-69, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 54, **Ստեմել**, Գարեգին Նժդեհը Զանգեզուրում, էջ 21, **Ռ. Համբարձումեան**, նշվ. աշխ., էջ 61:

4. Ադրբեջանից բխող հանցավոր քարոզչությունը կխեղդվի անխնա, մեղավորները կհանձնվեն զինվորական դատարանին, որպես դավաճաններ, իսկ կասկածելիները՝ կաքսորվեն:

Բոլոր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիները 20 մինչև 50 տարեկան հասակը առաջին պահանջմամբ պարտական են ներկայանալ ուր հարկն է: Չներկայացողները կենթարկվեն զինվորական դատարանի»[1]:

Թավրիզի «Մինարեթ» հայկական թերթը այս հաղթության մասին գրում էր. «Գորիսէն կը հեռագրեն, որ Ղափանի ուղղութեամբ գործող թուրք ուժերու մէջ երեւան է հանուած Ատրբեջանէն հետիոտն տիվիզիայի մասնակցությունը:

Զանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնված հողամասը գրավեր են հայ գյուղացիները: Գրավուած են նաև Դեմիրչիլար, Կուբաթլու, Դոնդարլու և Խաչմաս գյուղերը, մինչև Բարթազ»[2]:

Իսկ «Ազերբայջան» թերթը գրում էր. «Պառլամենտի անդամ Ջալիլ բեգ Սուլթանովը Ջաբրայիլից պառլամենտին հեռագրում է, որ Զանգեզուրի հայերի վերջին հարձակումը սկսվել է մարտի 29-ին և վերջացել է ապրիլի 4-ին: Մահմեդական գյուղերը բոլորովին այրված են: Թալանից զերծ մնացած մահմեդականները փախել են Պարսկաստան: Պարսկաստանում մոտ 10.000 ադրբեջանցի թուրքեր մնացել են անօթևան և քաղցած: Բնակչությունը խուճապ սոսկումի է մատնված: Պարսիկները, փոխանակ օգնելու փախստականներին, նրանց կողոպտում են: Սուլթանովը ինքն էլ փախստականների մեջ է»[3]:

Այսպիսով՝ Գողթանից վերադառնալուց հետո Կապանի և Գենվազի վաշտերը երկու շաբաթվա ընթացքում նոր փայլուն հաղթանակներ տարան՝ բազմապատկելով հայ զենքի փառքը:

Ճիշտ է, անխուսափելի անկումից Օրդուբադը փրկվել էր, բայց դրա փոխարեն Կապանի և Գենվազի սահմաններից այն կողմ հայկական ուժերը կատաղի հարձակումներով գրավել էին ադրբեջանական տասնյակ գյուղեր, վերցրել պատերազմական գերիներ, մեծ քանակությամբ ցորեն և ռազմամթերք:

1919 թ. նոյեմբերի կեսերից մինչև 1920 թ. ապրիլի կեսերը, այսինքն՝ հինգ ամիսների ընթացքում, Կապարգողթի վաշտերը, մուսավաթական զորքերին ջախջախիչ հարվածներ հասցնելով, անձնազոհությամբ և խիզախությամբ հերոսական նոր էջեր գրեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 106, թ. 1:

[2] «Մինարեթ», 1920, 23 ապրիլի, թիվ 14, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 436, թ. 131: «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 95, **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 56 (տողատակ):

[3] **Հ. Ստեփանեան**, Յուշեր, Թեհրան, 1930, էջ 42, «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը…», էջ 95, **Զ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 55 (տողատակ):

Զանգեզուրի 1918-1920 թթ. հերոսական կռիվների կազմակերպիչներից մեկը՝ Հովակիմ (Հովակ) Ստեփանյանը, տարիներ անց գրել է. «Քանի, քանի անգամ Սյունիքը կրկնեց հաղթական Ավարայրը: Քանի, քանի անգամ… թշնամու բանակները փորձեցին Արաքսի ջրերի մեջ խեղդել «նրա հպարտ ու անպարտ զավակներին», բայց միշտ էլ, հազար դիակներ փռելով մեր լեռների վրա, քաշվեցին հեռուները, Սյունիքի և հայ զենքի գովքն անելու»[1]:

Կապարգողթի զորքի փառահեղ հաղթանակների կոփողը Գարեգին Նժդեհն էր՝ իր ռազմագիտական հանճարով, կազմակերպչական վիթխարի տաղանդով, գործողությունների վճռականությամբ, հայ ազգի ուժերի նկատմամբ անմար հավատով:

[1] **Հ. Ստեփանեան**, Յուշեր, էջ 42:

ՄԱՐՏԵՐ ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հաղթական էին նաև Գորիսի շրջանի զինված ուժերը:

Մարտի 21-ին՝ դեռ Շուշին կործանելուց առաջ, ադրբեջանական զորքերը և նրանց միացած Աղդամից եկած մի քանի զորամասեր քաղաքից և շրջակա տարածքներից շարժվեցին դեպի Զանգեզուր:

Մարտի 23-ին ադրբեջանական բանակը՝ խոշոր ուժերով, զենքի երեք տեսակներով և 10 հրանոթներով, հարձակում գործեց տարբեր ուղղություններով՝ Գորիսի վրա՝ Մինքենդի ուղղությամբ, Կեռլյարի կողմից՝ Ալիղուլիուշաղի վրա՝ նպատակ ունենալով Զաբրայիլի կողմից Կապանը բուն Զանգեզուրից կտրելու: Մինքենդից ու Զաբուղից հարձակվող ադրբեջանական զորքերի մեջ զգալի թիվ էին կազմում քրդական հեծյալ ջոկատները, որոնք առաջապահի դեր էին կատարում: Այս երկու ուղղություններում հաջողվեց կանգնեցնել հարձակումը: Կապանի ուղղությամբ կռվող հայկական զորքերին հակառակորդին հաջողվեց նեղել: Շրջակա կարևոր բարձունքները՝ Այինդաղը, Խանագան, Գարտիզը, անցան հակառակորդի ձեռքը:

Մարտի 25-ին հայկական զորամասերը Գորիսի շրջանի արևելյան սահմաններից հակահարձակման անցան բոլոր երեք ուղղություններով: Առավել թեժ մարտեր տեղի ունեցան Զաբուղի և Մինքենդի տարածքներում: Այս հատվածներում զգալի կորուստներ կրելով՝ հակառակորդը անցավ պաշտպանության: Քրդերը, որոնք խաղալիք էին թուրքերի ու Ադրբեջանի կառավարության ձեռքին, նահանջելիս Գորիսի ուժերին թողեցին զենքի տարբեր տեսակներ և զինամթերք, այդ թվում՝ գնդացիրներ, որոնք ստացել էին Բասարգեչարի և Նոր Բայազետի թուրքերից[1]:

Մարտի 29-ին հայկական ուժերը վերսկսեցին հակահարձակումը հիշյալ ուղղություններով: Թուրքերը մեկը մյուսի հետևից թողեցին Դեմիրչիլարը, Կուբաթլին, Դոնդարլուն և ուրիշ բնակավայրեր:

1920 թ. մարտի 31-ին Զանգեզուրի կոմիսար Մելիք-Յոլչյանը Գորիսից հեռագրում էր Երևան. «Շտապում եմ ուրախացնել Ձեզ Զանգեզուրի և Ղարաբաղի ռազմաճակատներում փայլուն հաղթանակների համար: Զանգեզուրի և Ղարաբաղի քաջարի զավակները հրաշքներ են գործում, թշնամու բոլոր հարձակումները ոչ միայն ետ են մղված, այլև անցնելով հարձակման, ջախջախել են ադրբեջանական զորքերը, վերցրել են գերիներ և հետապնդում են նրանց: Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած տարածքները

[1] Տե՛ս , ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 436, թ. 131, ֆ. 1457, ց. 1, գ. 537, թ. 50 և շրջ.:

մաքրված են և գրավված են մեր զորքերի կողմից: … Շուշիի ճանապարհը լիովին մեր ձեռքում է: Մարտերը շարունակվում են բոլոր ճակատներում: Ասկերանը ևս գտնվում է Ղարաբաղի գյուղացիների ձեռքում: Թաթարների չդադարող հարձակումները ջախջախված են Ասկերանի մատույցներում: Քաջարի զանգեզուրցիները այսօր առավոտյան միավորվել են ղարաբաղցիների հետ, իսկ կալադարասինցիները, ընդհակառակը, անցել են Զանգեզուր: Մարկիզի վրա օրերս իմ ձեռքով բարձրացվել է ազատ Հայաստանի Հանրապետության դրոշը: Կռիվները շարունակվում են և արդյունքների մասին կհաղորդեմ հետագայում: Օրդուբադի ողջ շրջակայքը գրավված է մեր կողմից»[1]:

Հաջորդ օրը Զանգեզուրի զինված ուժերի ընդհանուր հրամանատար գեներալ Ն. Ղազարյանը Հայաստանի Հանրապետության բանակի հրամանատարին Գորիսից հեռագրեց. «Արդեն 6-րդ օրն է, որ շարունակվում են մարտերը, որոնց ընթացքում սպաները, զինվորները և ժողովուրդը, ամենաանպաստ կլիմայական և սննդամթերքի խիստ պակասի պայմաններում անձնազոհությամբ կատարել են հայրենիքի հանդեպ իրենց պարտքը: Փամփուշտները վերջանալու վրա են: Խնդրում եմ Զանգեզուրի և Ղարաբաղի համար շտապ ուղարկել փամփուշտներ՝ գլխավորապես երեք գծանի հրացանների համար: Երկյուղում եմ, որ չլինի թե փայլուն հաղթանակները հանկարծ անցանկալի վերջ ունենան»[2]:

Ս. Մելիք-Յոլչյանը ապրիլի 2-ին վարչապետ Ա. Խատիսյանին և ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանին Գորիսից հեռագրեց.

«Մարտերը շարունակվում են տասներկուերորդ օրը, մեր վիճակը գերազանց է մեր զանգեզուրյան ռազմաճակատներում: Հակառակորդը մեր կողմից ջախջախված է գլխովին և խուճապահար փախչում է: Գերված են ասկյարները հինգերորդ և յոթերորդ գնդերից: Մինչև Բարգուշատ և Հաքյարի ընկած տարածքները գրավված են: Մենք միացել ենք Ղարաբաղին և օգնություն ենք ցույց տալիս: Ըստ տեղեկությունների Ադրբեջանը խոշոր ուժերով հարձակում է սկսել Ջիվանշիրի վրա»[3]:

Գորիս–Շուշի խճուղու գրավումը և Խծաբերդի վրայով ճանապարհի բացումը հնարավորություն ստեղծեցին, որ զանգեզուրցիները օգնության ձեռք մեկնեն մաքառող արցախահայ մարտիկներին: Արցախը օդի և ջրի պես կարիք ուներ փամփուշտների, ուստի նշված ճանապարհներով առաջին հերթին զինամթերքի մի քանի խմբաքանակներ ուղարկվեցին Արցախի մարտական ջոկատներին: Բայց Արցախը առաջվա պես կարիք ուներ մի հզոր անձնավորության, որը կարողանար ի մի բերել երկրամասի հայոց բոլոր

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 136, ֆ. 1457, ց. 1, գ. 537, թ. 54-55:

[2] Նույն տեղում, թ. 139:

[3] Նույն տեղում, գ. 486, թ. 138:

զինական ուժերը, իր ռազմագիտական տաղանդով թշնամու դեմ միշտ լիներ հաղթական, ինչպես Կապարգողթի հրամանատարը: Ուստի արցախցի գործիչների մի խումբ ապրիլի 8-ին նամակով դիմեց Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար գեներալ Ն. Ղազարյանին (պատճենը՝ Նժդեհին): Նամակում ասված էր.

«Այժմ, երբ Ղարաբաղը բարձրացրել է ապստամբության սրբազան դրոշը և արնաքամ է լինում, պետք է օգնել նրան ոչ թե զորամասերով կամ դրամական միջոցներով, այլ մի փորձված առաջնորդով և ռազմամթերքով: Այդպիսի առաջնորդ այժմ փոխգնդապետ Նժդեհն է, որի անունը թշնամիների համար դառել է վրեժխնդրության խորհրդանիշ, և որի անունից թշնամին սարսափահար փախչում է, ինչպես ցույց տվեցին մոտիկ անցյալի դեպքերը, երբ թշնամու կանոնավոր զորքերը լսեցին Նժդեհի Գողթանից վերադառնալու մասին, խուճապահար փախուստի դիմեցին: ...Նժդեհն ստեղծված է ժողովրդի համար, և նա պիտ լինի այնտեղ, ուր նրա կարիքն ավելի է զգացվում»[1]:

Նույն օրը՝ ապրիլի 8-ին, Սերգեյ Մելիք-Յոլչյանը Գորիսից նամակ ուղարկեց Կապան՝ Նժդեհին՝ այդպես փորձելով շոշափել Արցախ գնալու նրա տրամադրությունը:

Նամակում գեներալ-կոմիսարը Նժդեհին նախ խորհուրդ էր տալիս դադարեցնել Կապարգողթի ուժերի հետագա արշավանքը, դրա փոխարեն կազմակերպել պաշտպանական ամուր գիծ և Գորիս ուղարկել եղած թնդանոթները:

«Այս պատմական մոմենտին,– նշում էր նա,– երբ ամեն լրջությամբ պարտքը հայրենիքի և հայ ժողովրդի առաջ՝ անում եք այն բոլոր հանձնարարականները, որ դրված են մեզ վրա կուսակցության ու կառավարության կողմից, ես հնարավորություն չունեմ, դժբախտաբար, հանդիպելու Ձեզ, խորհրդակցելու ամենաշիտակ կուսակցականի և տաղանդավոր զինվորականի հետ զանազան ռազմական հարցերի շուրջը, որոնք վերաբերում են ընդհանուր մեր գործին: Ես այստեղ համարյա մենակ եմ և հսկայական աշխատանքներ կան կատարելու: Այս րոպեիս ստացա մեր շտաբի պետի հաղորդումը, որում նկարագրված է, թե ինչ մեծ գործ եք կատարում Դուք Ձեր արշավանքներով: Այդ բոլորը մեզ շատ է ուրախացնում, և ես, հրճվանքս արտահայտելով, հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը»[2]:

Այնուհետև, անդրադառնալով Գորիսի շրջանի վիճակին, գեներալ-կոմիսարը Նժդեհին տեղեկացրեց թուրքերի նոր հանձակումներին հաջորդած իրադարձություններին: «Այս վերջին գործողությունների ժամանակ,– գրում էր նա,– մեր գործողությունները ընդհանրապես լավ են ընթանում,

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 3, թ. 1: **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 41:

[2] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 3, թ. 1:

բացի Մինքենդի ռազմաճակատից, որ չնայած մեր երկու հարձակումներին, չհաջողվեց գրավել և շոսեով միանալ Ղարաբաղին: Դրա պատճառով էլ Երևանից եկած պետական զորամասը* բավականին ուշ Խծաբերդի վրայով անցավ Ղարաբաղ»:

Ս. Մելիք-Յոլչյանը նամակում նշում էր, որ Արցախ գնացած փոխգնդապետ Ա. Թարվերդյանը չունի անհրաժեշտ համարձակություն և հմտություն, ուստի ինքը երեկ (ապրիլի 7-ին: – *Ա. Ս.)* մեկնել է Արցախ՝ ստանձնելու այնտեղի զինվորական ուժերի ընդհանուր ղեկավարությունը, բայց ճանապարհին՝ Կոռնիձոր գյուղում, ստացել է Ասկերանի անկման լուրը և գեներալ Ղազարյանի խնդրանքով վերադարձել է Գորիս, քանի որ «նա այստեղ մենակ դժվարանում է գործ կատարել և անօգնական է»[1]:

Ապա նամակագիրը զգույշ մոտենում էր իր հիմնական ասելիքին՝ գրելով. «… Ղարաբաղի հարցը մեր երկրի ամենագլխավոր և էական հարցերից մեկն է: Ես մի ամբողջ օր է՝ մտածում եմ, (թե) ինչպես անենք գործն ուղղելու համար: Եկա եզրակացության. խնդրել Ձեզ գալ այստեղ՝ խորհրդակցելու և ապա միասին Ղարաբաղ անցնելու, այնտեղ դրությունը պարզելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու: Ես կարծում եմ, որ Դուք չեք մերժի և Ձեր ժամանակավոր տեղապահ կնշանակեք ու իսկույն կանցնեք Գորիս, իհարկե՝ վերջացնելով Ձեր գործն այդտեղ: Ես կարծում եմ, որ Ձեր շրջանը մաքրելուց (թուրքերից: – *Ա. Ս.)* հետո մոտիկ ապագայում Ղափանին և Մեղրուն առանձին վտանգ չի սպառնա, և Դուք մի որոշ ժամանակով կարող եք այստեղ անցնել: Դրսում (Արցախում: – *Ա. Ս.)* խնդիրը շատ լուրջ է, ճակատագրական, ուստի Դուք իմ ընկերական խնդրանքը չպետք է մերժեք և անպատճառ պետք է գաք Գորիս: Սպասում եմ շուտափույթ Ձեր գալուն: Իսկույն ճանապարհվեք կամ ուշանալու դեպքում պատասխան գրեք»[2]:

Գարեգին Նժդեհի պատասխանը եղավ ապրիլի 23-ին իր զորքով Վարանդա անցնելը:

---

* Խոսքը Ա. Թարվերդյանի զորամասի մասին է:

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 3, թ. 1:

[2] Նույն տեղում:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՌՃԱԿԱՏՈՒՄՆԵՐ

Զանգեզուրում և Արցախում ծավալված պատերազմները երկու թշնամի պետությունների կառավարությունների միջև առաջ էին բերել դիվանագիտական նոր առճակատումներ:

Տվյալ պահին դիվանագիտական կռվի կենտրոնում հիմնականում հետևյալ հարցերն էին՝ ո՞վ է եղել արցախյան արյունալի դեպքերի պատճառը, ո՞վ է եղել նախահարձակը զանգեզուրյան իրադարձություններում: Ադրբեջանական կողմը, ինչպես միշտ, մեղադրում էր հայերին, վերջիններս՝ ադրբեջանական կողմին:

Արցախից նոր վերադարձած ներքին գործերի նախարար Մուստաֆա բեկ Վեքիլովը ապրիլի 1-ին Ադրբեջանի խորհրդարանի նիստում զեկույց էր ներկայացրել Շուշիի դեպքերի կապակցությամբ և տեղի ունեցածի ամբողջ մեղքը կրկին բարդել հայերի վրա: Նիստի ընթացքում խորհրդարանական բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները (բացառությամբ հայ խորհրդարանականների) արտահայտվել էին հայերի դեմ և կառավարությունից պահանջել ամենակտրուկ միջոցները ձեռք առնել հայերի ըմբոստացումը խեղդելու համար: Ձախակողմ խմբակցությունների ներկայացուցիչներն իրենց ագրեսիվ տրամադրությամբ և բացարձակ թշնամական վերաբերմունքով գերազանցում էին մուսավաթականներին[1]:

Դաշնակիցների ներկայացուցիչներին ապրիլի 5-ին ուղարկած իր հայտագրում Ֆ. Խան-Խոյսկին գրում էր. «Ադրբեջանական զորամասերի վրա բայրամի օրը հայկական ուժերի գիշերային հարձակումը չէր կարող ամենախոր ցասում առաջ չբերել ամբողջ ադրբեջանական ժողովրդի մեջ: Ժողովրդի ճակատագրի համար պատասխանատու Ադրբեջանի կառավարությունը պարտավոր է կատարել իր նվիրական պարտականությունը և անհապաղ միջոցներ ձեռք առնել ճնշելու այդ ապստամբությունը, որ առաջացել է մի խումբ չարամիտների կողմից և որ սպառնում է պետության ազատությանը և նույնիսկ գոյությանը …»[2]:

Ֆ. Խան-Խոյսկին Մ. Հարությունյանի հետ հանդիպման ժամանակ նրան ասել էր, թե Ասկերանում սպանված Դալի Ղազարի մոտ թղթեր են գտնվել՝ ստորագրված Հայաստանի կառավարության անդամների կողմից: «Այդ թղթերի պատճենները ես ձեզ կուղարկեմ, իսկ ապագայում այդ ամենը մենք

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 10:

[2] Նույն տեղում, թ. 15:

հրատարակության կտանք: Այդ թղթերից պարզվում է, որ Հայաստանի կառավարությունը այդ շրջանների համար պաշտոնյաներ է նշանակել»[1]:

Ֆ. Խան-Խոյսկին Շուշիի հայկական մասի ոչնչացման գլխավոր պատասխանատուն էր համարում Զանգեզուրի հայերին՝ նշելով, թե քաղաքի վրա հարձակվողները Զանգեզուրից Ջևանշիրի վրայով ներթափանցած 20-25 հոգանոց զինված խմբերն են եղել[2]:

Ճիշտ է, Շուշիի հայ բնակչությունը հույսեր էր կապում ոչ միայն Արցախի գավառների հայ զինյալների, այլև զանգեզուրցիների օգնության հետ: Մի առիթով Զանգեզուրի գեներալ-կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանը Երևան ուղարկած զեկուցագրում նշել էր. «Շուշիի հայությունը սուրհանդակների միջոցով աղերսում է (զանգեզուրցիներին: – *Ա. Ս.)* ազատել իրեն Ադրբեջանի լծից»[3]: Սակայն իրականում Զանգեզուրի հայերը չմասնակցեցին Շուշիի դեպքերին:

Իրականում Հայաստանի կառավարությունը, չցանկանալով բորբոքել մի նոր արյունահեղություն, բացարձակապես ոչ մի մասնակցություն չունեցավ կռիվներին: Նա Արցախ չուղարկեց զինվորներ՝ նման ձևով իր համերաշխությունը արտահայտելով դաշնակիցներին, և եթե առանձին մարտիկներ Հայաստանի Հանրապետությունից Արցախ էին թափանցել, ապա իրենց նախաձեռնությամբ միայն: Զանգեզուրցի մարտիկները, անշուշտ, անհատապես թե մանր խմբերով, անցել էին Դիզակ ու Մարանդա և միացել արցախյան ջոկատներին, բայց Շուշիի դեպքերին նրանք որևէ մասնակցություն չէին ունեցել[4]: Փոխարենը Հայաստանի կառավարությունը, հույսը դնելով «դաշնակիցների» միջամտության վրա, օգնության էր կանչում նրանց ներկայացուցիչներին՝ անկեղծորեն հավատ տածելով վերջիններիս կազմակերպած համաժողովների և երկու հանրապետությունների կառավարությունների

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606,, թ. 28:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 479-ի 2-րդ մաս, թ. 353-ի շրջ.:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1457, ց. 1, գ. 606, թ. 6: Ինչպես հանրապետության հռչակման առաջին պահերից, այնպես էլ արցախյան ճգնաժամի օրերին, Հայաստանի ղեկավարությունը, ցավոք, հետևողականորեն առաջնորդվում էր միջազգային իրավունքի և համընդհանուր բարոյականության սկզբունքներով. մի բան, որ արդարացված չէր, երբ հայությունն իր դիմաց ուներ բարոյականությունից գաղափար չունեցող Տաճկաստան և Ադրբեջան, որոնք իրենց համար հարմար պահի, առանց բոպե անգամ վարանելու, ոտնատակ էին տալիս այդ սկզբունքները: Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Զանգեզուրում և Արցախում, իհարկե, կային գործիչներ, որոնք մշտապես նախազգուշացնում էին նման գործելակերպից բխող վտանգների մասին և առաջարկում էին գործել այնպես, ինչպես գործում է թշնամին՝ անողոք ու դաժան: Բայց նրանք կառավարական շրջաններում եղանակ չէին ստեղծում: Նման գործելակերպը ծանր նստեց հայության վրա: Օրինակ՝ 1918 թ. վերջերին Գորիսից դեպի Շուշի սկսած արշավանքը դադարեցնելու և անգլիացիների ճնշման տակ Զաբուղի ձորից վերադառնալու մասին Անդրանիկի որոշումը դրա ակնառու ապացույցներից մեկն էր: Գարեգին Նժդեհն էր, որ, Զանգեզուր գալով, վճռականապես փոխեց թշնամու դեմ կռվելու մարտավարությունը և այստեղ հրապարակ բերեց «ակն ընդ ական» սկզբունքը:

ղեկավարների հանդիպումների արդյունավետության նկատմամբ:

Ադրբեջանի կառավարությունը, մուսավաթական կուսակցության տեղական մարմինները, խաներն ու բեկերը բոլոր միջոցներով թուրք բնակչությանը գրգռում էին հայության դեմ: Ադրբեջանի բոլոր խավերն ու հոսանքները զբաղված էին Արցախի հարցով: Բաքվում տիրում էր խորհրդավոր լռություն: Ռազմաճակատում տիրող դրության մասին պաշտոնական հաղորդագրությունները գրեթե ոչինչ չէին ասում: Այդ ամենը Բաքվի հայությանը խիստ մտահոգում էր և պաշարում երկյուղով: Երեկոները՝ մութն ընկնելուն պես, հայերը փակում էին իրենց խանութները և քաշվում տները ու երկյուղից այլևս դուրս չէին գալիս փողոց: Շարունակվում էին հայերի վիրավորանքներն ու ձերբակալությունները: Մարտի 29-ին և 30-ին անհայտ պատճառներով քաղաքի մի քանի շրջաններում տեղի ունեցան հայերի խմբակային ձերբակալություններ:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ապրիլի 6-ին ՀՀ արտգործնախարարին հաղորդում էր. «Ամեն օր ռազմաճակատից վիրավորներ են բերում Բաքու, որը թուրք ամբոխի թշնամական տրամադրությունները լարում է դեպի տեղի հայերը: Թե՛ քաղաքում և թե՛ գործարանային շրջանում օրը ցերեկով հայերի սպանությունները սովորական երևույթ է: Այստեղի հայությունը ահաբեկ է, և բոպե առ բոպե սպասվում է կոտորած: Եթե որևէ դժբախտություն պատահելու լինի՝ սարսափահար եղող ժողովուրդը մի հուսալի տեղ չունի, որի վրա կարողանա հենվել: Ոտքից գլուխ զինված թուրք տարրի մեջ մի բուռ հայությունը ի՞նչ կարող է անել: Ադրբեջանի կառավարության հավաստիացումներին վստահել չի կարելի: Եթե անկեղծ ցանկություն էլ ունենա կառավարությունը կասեցնելու հակահայկական շարժումը քաղաքում, հազիվ թե կարողանա, որովհետև արյունարբու թուրք ամբոխը չափազանց սանձարձակ է դարձել և իրերի ընթացքին պիտի ուղղություն տա նա, այլ ոչ թե կառավարությունը»[1]:

Այս ամենը տեղի էր ունենում այն միջոցին, երբ Թիֆլիսում հրավիրվել էր այսրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների համաժողովը, որը քննում էր Հայաստանի ու Ադրբեջանի ընդհարումներին վերջ տալու և ընդհանրապես երկրամասում խաղաղություն հաստատելու հարցը:

Համաժողովի կազմակերպումը մտահղացել էր Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին, և այդ գաղափարին անմիջապես հավանություն էին տվել Այսրկովկասում դաշնակիցների ներկայացուցիչները:

Համաժողովի նախօրյակին՝ ապրիլի 3-ին, Հայաստանի խորհրդարանի 78-րդ նիստում հանդես գալով ելույթով՝ վարչապետ Ա. Խատիսյանն ասել է. «Մենք ողջունում ենք կոնֆերանսը … Մենք հրահանգ ենք տալիս մեր

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 15:

պատվիրակության անդամներին, որ նրանք գնան ու դաշնակիցներին հայտնեն, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը պիտի տրվեն Հայաստանին, քանի որ դրանք Հայաստանի անբաժան մասերն են»: Ա. Խատիսյանը նշել էր, որ երբեք չեն հրաժարվելու իրենց ազգային իրավունքներից՝ հիշեցնելով. «Դեռ սրանից երկու տարի առաջ Բաթումում Խան-Խոյսկին և Ուսուբբեկովը պնդում էին, թե լավ կլինի, եթե Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը լինի ոչ թե Երևանը, այլ՝ Վաղարշապատը, որովհետև, իբր, Երևանի թուրքերը հազիվ թե համաձայնեն դրա հետ: Բայց ինչպես տեսնում ենք, նրանց ասածները չիրականացան: Մենք մեր հարևաններից ոչ մի երկրամաս չենք ուզում գրավել և նրանց էլ թույլ չենք տա տերիտորիայից մի բուռ հող անգամ զավթել»[1]:

Այսրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչների համաժողովը բացվեց ապրիլի 9-ի կեսօրին՝ Ե. Գեգեչկորու նախագահությամբ: Համաժողովին Վրաստանից մասնակցում էին արտգործնախարար Ե. Գեգեչկորին, ռազմական նախարար Գ. Լորդկիպանիձեն, Հայաստանում վրացական դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Մախարաձեն, Ադրբեջանից՝ խորհրդարանի փոխխոսնակ Ա. Աղաևը, արտգործնախարար Ֆաթալի Խան-Խոյսկին (համաժողովի վերջնամասում), Վրաստանում ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցիչ Մամեդ Ռիզա բեկ Վեքիլովը և արդարադատության նախարարի տեղակալ Օլգերբեյ Կրիչինսկին, Հայաստանից՝ արտգործնախարար Համո Օհանջանյանը, Ստեփան Մամիկոնյանը, Սմբատ Խաչատրյանը և Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը[2]:

Ապրիլի 11-ին ընդունվեց հետևյալ որոշումը. «Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների համաժողովը որոշում է. առաջին, անմիջապես դադարեցնել Ղազախում, Նախիջևանում, Օրդուբադում և Ղարաբաղում այժմ տեղի ունեցող արյունալի բոլոր ընդհարումները: Երկրորդ, Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին հանձնարարել անհապաղ ձեռնարկել ամենավճռական միջոցներ, որպեսզի համապատասխան հանրապետության սահմաններում բացառվեն հայ և մուսուլման բնակչության ընդհարումները: Երրորդ, այս որոշման մասին շտապ տեղեկացնել ադրբեջանական և հայկական կառավարություններին՝ համապատասխան գործողությունների դիմելու համար:

Կոնֆերանսի նախագահություն՝

Ա. Աղաև, Ս. Մամիկոնյան, Ե. Գեգեչկորի»[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 537, թթ. 54-55:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 537, թ. 54, նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 411, մաս 1, թթ. 52, 54, 56, “Вестник бакинского генерал-губернаторства”, 16 апреля, 1920, **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 292, **Ց. Ղուլյան**, նշվ. աշխ., էջ 312:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 411, թ. 74, “Вестник бакинского генерал-губернаторства”, 16 апреля, 1920, **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 295-296, **Ց. Ղուլյան**, նշվ. աշխ., էջ 315-316:

Համաժողովի ապրիլի 12-ի նիստում ընդունվեց երկրորդ որոշումը.

«Կոնֆերանսն ընտրում է 6 հոգուց բաղկացած հանձնախումբ, որը

1) Տեղում կանցկացնի և կվերահսկի արյունալի ընդհարումները դադարեցնելուն ուղղված կոնֆերանսի որոշումը կյանքում կիրառելու համար:
2) Հետազոտել տեղի ունեցած ընդհարումների պատճառները և պատկերը»[1]:

Համաժողովը ավարտեց իր աշխատանքները, բայց քննարկված բոլոր հարցերը մնացին անլուծելի:

Ո՛չ մասնավոր խաղաղասիրական դիմումները, ո՛չ դաշնակիցների կրկնակի նախազգուշացումները չկարողացան Արցախի արյունալի դեպքերի առաջն առնել և այդպիսով Ադրբեջանի կառավարությանը հեռու պահել նման գործողություններից:

Ռազմական ընդհարումները բոլոր ճակատներում դադարեցնելու մասին համաժողովի ընդունած որոշումն անշեղորեն կատարելու փոխարեն մուսավաթական ուժերը շարունակեցին հարձակումները Արցախի հայ գյուղերի վրա[2], միաժամանակ կենտրոնացան Զանգեզուրի մատույցներում[3]:

---

[1] “Вестник бакинского генерал-губернаторства”, 16 апреля, 1920, **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 297, **Ց. Ղուլյան**, նշվ. աշխ., էջ 317-318:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427-ի 1-ին մաս, թ. 216:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 606, թ. 17:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՇՐՋԱԴԱՐՁ

Ասկերանը գրավելուց հետո Ադրբեջանի առաջ բացվեց երազանքների հեռանկարը. նա այժմ իրագործելի համարեց նվաճել Ղարաբաղն ու Զանգեզուրը, ապա՝ իջնել Արարատյան դաշտ և Հայաստանի վրայով գնալ և միանալ Թուրքիային:

Նշված ծրագիրն իրագործելու համար Ադրբեջանը աշխատում էր Հայաստանում առաջ բերել անկայունություն և այդ նպատակով ամեն ինչ անում էր՝ ոտքի հանելու Երևանից ոչ հեռու գտնվող թուրքաբնակ Զանգիբասարը և Վեդիբասարը[1]: Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը թուրք բնակչության համար հայթայթում էր դրամ ու զենք:

Ապրիլի 4-ին Ջաֆարաբադ գյուղի մոտ հայերը կանգնեցրին Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի ավտոմեքենան, որի մեջ նստածները Զանգիբասար էին տանում դրամական մեծ միջոցներ: Բացի այդ՝ հայկական կառավարության ձեռքն ընկան Ադրբեջանի կառավարության և Հայաստանում նրա դիվանագիտական ներկայացուցչի միջև փոխանակված մի շարք ծածկագիր գրություններ ու հեռագրեր, որոնք բացեցին ծրագրվող ապստամբության մանրամասները:

Խրախուսված Ասկերանի անկումով և հայկական Շուշիի կործանումով՝ ադրբեջանական կառավարությունը ապրիլի 7-ից սկսած իր զորքերին հարձակման մղեց Զևանշիրի հայկական գյուղերի վրա: ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ապրիլի 9-ին Բաքվից Երևան էր հաղորդում, որ Արցախում կենտրոնացած ադրբեջանական զորամասերը՝ Խալիլ փաշայի և գեներալ Հ. Սելիմովի գլխավորությամբ, շարժվել են դեպի Զանգեզուր[2]:

Հանդես գալով խորհրդարանում՝ Ադրբեջանի ներքին գործերի նախարար Մ. Վեքիլովը հայտարարեց, թե «Ադրբեջանի զորքը և թե կամավորական խմբերը սրբազան խոստում են տվել շուտով գրավել Ղարաբաղը, Զանգեզուրը և բոլոր գաղթականներին վերադարձնել իրենց բնակավայրերը»[3]: Իսկ Զևանշիրի տարածքով դեպի Զանգեզուրի սահմանները իրենց զորքերի առաջխաղացումը Ֆ. Խան-Խոյսկին պատճառաբանում էր այսպես. «Զանգեզուրի սահմաններում մենք պարտական ենք զորք ունենալ, երբ տեսնում ենք, թե այնտեղ ինչ պատրաստություններ են տեսնվում Ղարաբաղի հետ

---

[1] Տե՛ս **Է. Զոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, էջ 49:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 6:

[3] Նույն տեղում, թ. 10:

կապեր հաստատելու համար: Մենք դա պետք է անենք Զանգեզուրի ազդեցությունը վերացնելու համար»[1]:

Ադրբեջանը շարունակում էր անհաշտ ու սանձարձակ մնալ, քանի որ այդ օրերին կարողացել էր մեծապես համալրել իր զինանոցը և պայմանները դասավորել ի նպաստ իրեն, այնինչ Արցախն ու Զանգեզուրը զբաղված էին ռազմամթերք հայթայթելու ծանր հոգսով:

Ապրիլի սկզբին կամավորական բանակը Հյուսիսային Կովկասում ծանր պարտություն էր կրել և կազմալույծ վիճակում դիմել դեպի Այսրկովկաս: Այդ բանակի մի մասը, ռազմավարական ճանապարհով մտնելով Վրաստան, վրաց կառավարությանն էր հանձնել մեծ թվով թնդանոթներ ու գնդացիրներ, զենքի այլ տեսակներ ու զինամթերք: Դրա փոխարեն իշխանությունները համաձայնել էին ապաստարան տալ սպաներին[2], իսկ զինվորներին՝ զինաթափելուց հետո թույլատրել երկրի տարածքով անցնել Բաթում և այնտեղից մեկնել արտասահման:

Կամավորական բանակի մի ուրիշ զանգված՝ շուրջ 8000 զինվոր ու սպա՝ գեներալ Դ. Պ. Դրացենկոյի և ծովակալ Ա. Ի. Սերգեևի ղեկավարությամբ, կուտակվել էր Պետրովսկ նավահանգստային քաղաքում: Կտրված լինելով գլխավոր հրամանատարությունից՝ կամավորականները մնացել էին անելանելի դրության մեջ: Նավատորմը վառելիք չուներ, զորքը մնացել էր առանց դրամի: Դ. Պ. Դրացենկոն դիմեց անգլիացիներին՝ խնդրելով պարտքով դրամ տալ, բայց մերժում ստացավ: Զորամասը ստիպված եղավ Պետրովսկուց նավերով հեռանալ դեպի պարսկական ափը՝ Էնզելի: Այստեղ անգլիացիները թույլ չտվեցին, որ զորամասը ափ իջնի, ավելին՝ կամավորականներին առաջարկեցին զինաթափվել, մնալ առանձին ճամբարում՝ որպես ռազմագերիներ: Ահա այս վիճակում գեներալ Դ. Պ. Դրացենկոն Ադրբեջանից առաջարկ ստացավ՝ գալու Բաքու, հանձնելու զենքերն ու ռազմամթերքը և ստանալու դրանց արժեքը: Գեներալին նաև խոստացել էին ցանկացողներին հնարավորություն տալ մնալու Բաքվում, իսկ ովքեր կկամենային հեռանալ՝ ճանապարհ տալ:

Էնզելիից նավերով ճանապարհ ընկնելով՝ Դ. Պ. Դրացենկոյի ու Ա. Ի. Սերգեևի գլխավորած զորքը ապրիլի 5-ին հասան Բաքու: Կամավորականները իրենց հետ բերել էին մեծաքանակ ռազմամթերք ու զինատեսակներ, ռազմական տեխնիկա ու զինվորական գույք, ինչպես նաև 32 տարբեր տեսակի նավերից բաղկացած նավատորմիղ[3]:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ապրիլի 6-ին տեսակցություն ունեցավ գեներալ Դ. Պ. Դրացենկոյի հետ: Նրա այն հարցին, թե գեներալը ինչու զենքերը հանձնեց կամավորական բանակի թշնամի

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 6:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 17:

Ադրբեջանին, վերջինս պատասխանեց. «Մենք գերադասեցինք մեր զույքը հանձնել մեր թշնամիներին՝ ադրբեջանցիներին, քան իբրև ռազմագերիներ հանձնվել մեր «դաշնակից» անգլիացիներին: Ուրիշ ելք չունեինք»:

Գեներալ Դ. Պ. Դրացենկոյի հետ իր հանդիպման մասին Մ. Հարությունյանը հաղորդեց Երևան և տեղեկացրեց, որ իր ունեցած տեղեկության համաձայն՝ կամավորականները Ադրբեջանին են հանձնել 15 ինքնաթիռ, 6 զրահապատ ավտոմոբիլ, մեծ տրամաչափի 14-16 թնդանոթ, մոտ 200 գնդացիր, մի քանի տասնյակ հազար հրացան, մի քանի միլիոն փամփուշտ, ձիեր, սայլեր, մեծաքանակ ուտեստեղենի պաշարներ: Այդ ամենի համար Ադրբեջանը վճարել էր 50 միլիոն ռուբլի[1]:

Զինաթափ եղած զինվորականներին Ադրբեջանի կառավարությունը փոխադրեց Գանձակ, մինչև որ Դ. Պ. Դրացենկոն կկարողանար բանակցել իր գլխավոր հրամանատարության հետ ու պարզել հետագա անելիքները: Եթե հաջողվեր, այդ զորամասը՝ բաղկացած մոտավորապես 4000 հոգուց, Փոթիի վրայով կտեղափոխվեր Ղրիմ: Այդ զորամասում կային 1000-ից ավելի հայեր, որոնց ռուսներից զատել էին և պահում էին Բաքվում: Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը ամեն ինչ անում էր, որպեսզի նրանց չուղարկեն Գանձակ, այլ աշխատում էր նրանց ժամանակավորապես ուղարկել Էնզելի, եթե, իհարկե, անգլիացիները թույլ տային[2]:

Ապրիլի 9-ին Մ. Հարությունյանը իր կառավարությանը տեղեկացրեց. «Կամավորական բանակի Բաքու հասած զորամասի զինաթափ լինելը և ողջ ռազմական զույքը Ադրբեջանին հանձնելը ... մեծ դժգոհություն էր առաջ բերել նավատորմիղի անձնակազմի մոտ, որը, որոշելով չհանձնվել Ադրբեջանին, Բաքվից հեռացել էր Էնզելի՝ իր հետ տանելով նաև նավերի վրա եղած ռազմական զույքը: Այստեղ ողջ նավատորմիղը հանձնվել էր անգլիական օկուպացիոն իշխանություններին»[3]:

Հայաստանի Հանրապետությունը սահմանակից չէր Ռուսաստանին և ոչ էլ ուղղակի կապ ուներ ռուսական կամավորական (սպիտակ) բանակի հետ, թեև նրանք ընդհանուր շահերով կապված էին միմյանց: Հայաստանը բռնել էր անկախության ուղին, բայց հույս ուներ, որ Ռուսաստանը կաջակցեր իրեն և տարբեր միջոցներով կնվազեցներ իր վրա վրացիների և ադրբեջանցիների ճնշումները, միաժամանակ կչեզոքացներ վերակենդանացող Թուրքիայի սպառնալիքը, ինչպես նաև կպատսպարեր իր հողերի վրա հայտնված տասնյակ հազարավոր հայ գաղթականներին, հնարավորություն կընձեռեր, որ այնտեղ գործող հայ կազմակերպությունները նյութական օժանդակություն ուղարկեն Երևան, և վերջապես կընդուներ Ռուսահայաստանի անկախությունը և

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 18:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Նույն տեղում, թ. 29:

կնպաստեր Թուրքահայաստանի ու Հայաստանի Հանրապետության միավորմանը՝ միացյալ ազատ ու անկախ հայկական պետություն կազմելու համար:

Բայց հարց էր առաջանում. Հայաստանը ո՞ր Ռուսաստանի հետ պետք է մշակեր իր հարաբերությունը: Այդ երկիրը քաղաքացիական պատերազմի մեջ էր և բաժանված երեք-չորս պետությունների: Հստակ չէր, թե դրանցից որն էր հաղթական լինելու: Ռուսաստանում ընթացող քաղաքական պատերազմի նկատմամբ իր չեզոքությունը հայտարարելով՝ Երևանի կառավարությունը միաժամանակ հստակ հայտարարել էր, որ Հայաստանի վստահելի բարեկամ կարող է լինել այն Ռուսաստանը, որը կճանաչի ու կհարգի հայ ժողովրդի անկախ պետությունը: Այս նպատակով հայ ներկայացուցիչներ գործուղվեցին ռուսական զանազան կենտրոններ: Այնուհանդերձ, աշխարհագրական մերձավորության և հավանական օժանդակության դյուրության նկատառումներով Հայաստանի ջանքերը կենտրոնացան Հարավային Ռուսաստանի՝ գեներալ Ա. Դենիկինի գլխավորած կամավորական զինված ուժերի հրամանատարության վրա: Փաստորեն՝ դաշինք ստեղծվեց Հայաստանի Հանրապետության և կամավորական բանակի միջև[1], որի հիման վրա Հայաստանը սկսեց օգնություն ստանալ Ա. Դենիկինից: Վերջինիս կարգադրությամբ Հայաստան ուղարկվեց մի քանի հազար տոննա ցորեն, որից ոչ մի կիլոգրամ տեղ չհասավ կամավորական բանակներին հակազդող Վրաստանի և Ադրբեջանի հարուցած արգելքների պատճառով:

Կամավորական բանակի զինվորները, մանավանդ սպաները, հրամանատարության ներկայացուցիչները սովորաբար ջերմ ընդունելության էին արժանանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայողների, հյուպատոսների և կառավարության կողմից: Սպաները, հաճախ գալով Հայաստան, կարևոր դեր էին խաղում հայկական բանակում, ստանում զինվորական բարձր պաշտոններ: Նրանցից մի քանիսը ծառայում էին նաև Զանգեզուրի զինական ուժերում: Օրինակ՝ 1919 թ. նոյեմբերյան կռիվներից հետո Սիսիանի զորամասի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Սամոյլենկոն, Գորիս քաղաքի պարետի տեղակալն էր Վ. Սադովնիչին, Զանգեզուրի զինուժի շտաբի անդամ էր Ի. Վոլկովը և ուրիշներ[2]:

Հայաստանը, սակայն, իրեն ծայրահեղորեն զգույշ էր պահում, որպեսզի ռուսական բանակների հետ ունեցած հարաբերությունը դաշնակիցների կողմից մեկնաբանվի այնպես, որ վերջիններս արգելքներ չհարուցեն իր անկախության պահանջը պաշտոնապես ընդունելուն: Այնուհանդերձ, Հայաստանի և սպիտակգվարդիական բանակների միջև հարաբերությունները շարունակում էին մնալ սերտ, թեև գեներալ Ա. Դենիկինը այդպես էլ մինչև

---

[1] Այդ մասին տե՛ս “Бакинец” թերթի 1920 թ. մարտի 29-ի համարում տպագրված “Армения и большевизм” հոդվածը:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 16:

վերջ չճանաչեց հայոց պետության անկախությունը:

Այնուամենայնիվ, Այսրկովկասում անգլիացիների քաղաքականությունը նկատելի դժվարություններ էր ստեղծում հայ-ռուսական հարաբերությունների մեջ: Անգլիացիները 1918-1919 թթ. Կովկասում էին գտնվում՝ նաև արգելք լինելու համար բոլշևիկների ազդեցության տարածմանը: Այդ նպատակով էին նրանք օժանդակում Ա. Դենիկինի բանակին: Բայց Անգլիան վախենում էր, որ Ռուսական կայսրությունը վերականգնվի, և իր նախկին այդ մրցակիցը գերակշիռ դիրք ունենա Մերձավոր Արևելքում: Ահա թե ինչու Անգլիան կասկածանքով էր նայում հայ-ռուսական որևէ մերձեցման, որը, ըստ նրա, կարող էր նպաստել ռուսների Այսրկովկաս վերադառնալուն:

Սակայն Հայաստանում պարենավորման սուր ճգնաժամի պայմաններում, կառավարության որոշման համաձայն, անցանկալի էր համարվել կամավորական բանակի զինվորների ու սպաների մուտքն այստեղ[1]: Գեներալ Դ. Պ. Դրացենկոն Ադրբեջանին էր հանձնել ոչ միայն ունեցած զենքն ու զինամթերքը, այլև, ինչպես ասվեց, մեծաքանակ սննդամթերքը: Իսկ Հայաստանը հազիվ էր գլուխ բերում իր բանակի պարենավորումը:

Զենքի ու ռազմամթերքի այս նոր պաշարով հարստացած Ադրբեջանն էլ ավելի զինեց Ղարաբաղի դեմ կենտրոնացած բանակը՝ լայնածավալ ու վճռական հարձակման համար: Սակայն ռազմական նախարար գեներալ Սամեդբեկ Մեհմանդարովը, չնայած իր հասցեին ադրբեջանական մամուլի հիացական արտահայտություններին և կառավարության մեջ ունեցած ազդեցիկ դերին, խիստ դժգոհ էր իր բանակից: Նա չէր թաքցնում, որ ռազմամթերքի և պարենի մշտական պակաս ունեցող Հայաստանի բանակը, Զանգեզուրի ու Արցախի զինված ջոկատները, որոնք փամփուշտները հաշվելով էին կրակում, իրենց ռազմական պատրաստվածությամբ և մարտական ոգով մեծապես գերազանցում էին ադրբեջանական զորքերին: Չնայած պաշտպանության նախարարի ձեռնարկած խստագույն միջոցներին՝ բանակում կարգապահությունը մնում էր ծայրահեղ ցածր մակարդակի: Զանգեզուրի դեմ ամեն անգամ ձեռնարկած հարձակման ձախողումից հետո զորքը բարոյալքվում էր, ասկյարները զանգվածաբար լքում էին զորամասերը և վերադառնում տուն: Բանակում անպակաս էին ներքին հակասությունները: Թուրք սպաները բացահայտ արհամարհանքով էին վերաբերվում ադրբեջանական բանակի զինվորներին և սպայական ցածրաստիճան անձնակազմին, որի արդյունքը վերջիններիս ատելությունն էր նրանց նկատմամբ: Ասկերանի և Շուշիի դեպքերից հետո Նուրի փաշան մեկնել էր Դաղստան՝ ադրբեջանական բանակի համար կամավորներ հավաքագրելու, բայց այնտեղ անհաջողության հանդիպելով և տեղացիների հետ ընդհարվելով՝ ձեռնունայն վերադարձել էր Բաքու: Ապրիլի 16-ին նա Բաքվից իր սպայակույտով եկել էր

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 16:

Եվլախ՝ նորից Ղարաբաղ անցնելու համար, որտեղ այս անգամ ականատես էր եղել ադրբեջանական բանակի հրամանատարության դեմ դաղստանցիների ընդվզումներին:

Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ կռվող զորամասերի մեջ մեծ թիվ էին կազմում հյուսիսկովկասյան լեռնցի մահմեդական զինվորականները, որոնց թվում գերակշռում էին դաղստանցիները: Նրանց շրջանում ուժեղ դժգոհություն էր առաջացել թուրք զինվորական բարձր պաշտոնյաների, գլխավորապես գեներալ Հ. Սելիմովի դեմ: Պատճառն այն էր, որ գեներալը, ադրբեջանցի թուրք սպաներին խնայելով, հայերի դեմ կռվի ամենավտանգավոր տեղերն էր ուղարկում լեռնցի սպաներին՝ նրանց կյանքը ենթարկելով վտանգի: Հատկապես մեծ բողոք էր առաջացել ռազմաճակատում ոմն ռոտմիստր Կիշիմբեկովի սպանվելու կապակցությամբ: Դաղստանցիները որոշել էին թողնել ծառայությունը Ադրբեջանի զորքերում և մեկնել հայրենիք[1]:

Իրենց բանակի մարտունակության մասին Ս. Մեհմանդարովի և Ադրբեջանի ուրիշ բարձրաստիճան զինվորականների ունեցած երկյուղն ավելի էր մեծացել այն պատճառով, որ Բաքվում Թուրքիայից հեռագիր էր ստացվել, որով Ադրբեջանի կառավարությանը հայտնվում էր, որ Հայաստանի դեմ գործողություններ սկսելու դեպքում Թուրքիան որևէ օգնություն հասցնել չի կարող, որովհետև ստեղծված քաղաքական պայմանների հետևանքով նա անզոր էր օգնություն տրամադրելու Ադրբեջանին: Նամակը ստանալուց հետո Ադրբեջանի նախարարների խորհուրդը հրավիրել էր հատուկ նիստ: Քննարկումներից հետո հանդես էր եկել նախարար Ս. Մեհմանդարովը և հայտարարել, որ ինքն իր զորքերի վրա ոչ մի վստահություն չունի և չի կասկածում, որ ռազմական գործողություններ սկսելու դեպքում անպայման պարտություն է կրելու[2]:

Ապրիլի կեսերից Բաքվում սկսվել էր նախարարական ճգնաժամ: Մուսավաթի աջ արմատական թևը գտնում էր, որ կառավարությունը ոչ միայն ի վիճակի չէ գրավել Զանգեզուրը, այլև ի վիճակի չէ կարգ հաստատել Ղարաբաղում, ուստի պետք է հեռանա: Նասիբ բեկ Ուսուբբեկովը մինչ այդ արդեն հայտարարել էր, որ իր առողջական վիճակը ստիպում էր հրաժարական տալ, և չորս ամսով մեկնել էր՝ հանգստանալու և բուժվելու: Որպես նոր վարչապետի թեկնածու՝ շրջանառվում էր հիմնականում Ֆ. Խան-Խոյսկու անունը[3]:

Ծայրահեղ մուսավաթականների նպատակն էր այնպիսի կառավարություն կազմել, որը, երկրի ողջ տնտեսական ու մարդկային ռեսուրսները մոբիլիզացնելով, վճռական հարձակումով լուծեր Արցախի ու Զանգեզուրի հայաթափման և զույգ երկրամասերը վերջնականապես Ադրբեջանին միաց-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 38:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 37:

նելու խնդիրը: Սակայն անպարտելի Զանգեզուրը և կիսանվաճ Արցախը ձեռքերը ծալած չէին նստել:

Ամեն ինչից երևում էր, որ առանց Հայաստանի Հանրապետության և առաջին հերթին առանց Զանգեզուրից եկած օգնության Արցախը չէր կարողանալու ազատվել Ադրբեջանի ճիրաններից:

Ադրբեջանական հրոսակախմբերի արյունալի նոր ոճրագործություններն այս անգամ Հայաստանի կառավարությանը դուրս բերեցին կրավորական վիճակից, և վերջինս ռազմական օգնություն հասցրեց Ղարաբաղին: Գորիս–Ավդալար–Շուշի գծով Ղարաբաղ մեկնեց Դրաստամատ Կանայանի (Դրո) գլխավորած Զանգեզուր-ղարաբաղյան ռազմարշավային ջոկատը:

Գալով Շուշի՝ Դրոն հետևյալ կոչն ուղղեց Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը.

«Ես մտա Ղարաբաղ ամսույս 14-ին, այն ժամանակ, երբ արդեն հրդեհը սկսված էր, և երբ բավական հայ գյուղեր ավերի մատնված էին թշնամու կողմից, և երբ Ղարաբաղի գյուղացիությունը հերոսաբար դիմադրելուց հետո նորից մնացել էր իր դիրքերում՝ կուրծքը դեմ տված թշնամու գնդակներին:

Դու պիտի ըմբռնես, Ղարաբաղի հա՛յ ժողովուրդ, որ Ադրբեջանի ծրագիրն է վերացնել հայ ազգաբնակչությունը, շարունակել իրականացնել թուրքական փաշաների որոշումը, տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Զանգեզուրը և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունն ու այդպիսով վերացնել մահմեդական աշխարհի մեջ ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը:

Ես եկել եմ ձեր մեջ այն խոր համոզումով և հաստատ որոշումով, որ հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորների հետ, պետք է հաղթենք թշնամուն: Ես վճռել եմ մնալ ձեր մեջ, կռվել ձեզ հետ միասին և ազատությունն ու հաղթանակը տոնել այստեղ:

Հիշեցե՛ք, որ պետք է միայն մի քանի հարյուր զոհ՝ վճռականորեն փրկելու Ղարաբաղը:

Ղարաբաղը միշտ հերոսներ է տվել ռուսական մեծ բանակին և հայ ազատագրությանը, որոնք կռվել են բոլոր ճակատամարտերում:

Այսօր մենք բոլորս ձեզ հետ միասին ձեռք ձեռքի տված պիտի շարունակենք կռիվը մինչև վերջնական հաղթանակ:

Ամո՛ւր կաց, Ղարաբաղի՛ հայ գյուղացիություն: Միշտ դիրքերի մեջ ու պատրաստ՝ թշնամուն ետ շպրտելու և մեր ազատությունը ձեռք բերելու:

ԶԱՆԳԵԶՈՒՐ-ՂԱՐԱԲԱՂԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ԴՐՈ

26-ին ապրիլի 1920 թ.»[1]:

Մի քանի օրվա ընթացքում համարյա ամբողջ Վարանդան՝ մինչև

[1] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 6, թ. 14:

Ղարաբուլաղ գյուղը, անցավ Դրոյի ուժերի հսկողության տակ: Սարուշեն գյուղում հաստատվեց Դրոյի շտաբը:

Արցախը հայտարարվեց մայր հայրենիքին վերամիավորված: Ապրիլի 21-ին կազմավորվեց Արցախի ժամանակավոր կառավարություն, որը գոյություն ունեցավ մինչև մայիսի 25-ը:

Հանրապետության և Զանգեզուրի զորամասերի մուտքը Արցախ հսկայական ոգևորություն էր առաջ բերել արցախցիների մեջ, նրանց հոգում արթնացրել մայր հայրենիքի հետ միավորվելու երազած հույսերը: Նրանց ամենից առաջ ոգևորում էին կռվի դաշտում զանգեզուրցիների տարած նոր հաղթանակները:

1920 թ. ապրիլի 22-ին Հայաստանի բանակի արևելյան խմբավորման հրամանատար գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանը Նոր Բայազետից Գորիս ուղարկած հ. 93 հեռագրով Զանգեզուրի գավառը հայտարարել էր ռազմական դրության մեջ: Նույն օրերին ՀՀ խորհրդարանի որոշմամբ Զանգեզուրի ու Դարալագյազի գավառները միավորվել էին և ստեղծվել էր Զանգեզուր–Դարալագյազի նահանգ: Գեներալ-նահանգապետ նշանակված գեներալ Մովսես Սիլիկյանի ձեռքում էին կենտրոնացվում նահանգի բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանությունները: Այդ պատճառով վերացավ Զանգեզուրի գեներալ-նահանգապետի պաշտոնը, որը վարում էր Ս. Մելիք-Յոլչյանը, իսկ Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար գեներալ-մայոր Ն. Ղազարյանը նշանակվեց գավառի զինվորական ջոկատի պետ, որին ենթարկվելու էին Զանգեզուրի բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանությունները[1]:

Կապարգողթի վաշտերի վերջին հաղթություններն աննախընթաց խանդավառություն էին ստեղծել ամբողջ Զանգեզուրում: Այդ հաղթանակները տոնելու համար հենց նույն ապրիլի 22-ին Զանգեզուրի կենտրոն Գորիս քաղաքում տեղի ունեցավ մեծ զորահանդես: Հրապարակում շարվել էր զինավառ զորքը, քաղաքից և գյուղերից հավաքվել էին հազարավոր մարդիկ. նրանք եկել էին փառաբանելու Կապարգողթի հերոսներին և նրանց առաջնորդին:

Վերջին փառավոր հաղթանակների առթիվ շնորհակալական խոսքեր ասացին Ս. Մելիք-Յոլչյանը և Հայաստանի խորհրդարանի անդամ Զաքար Յոլյանը, ապա ելույթ ունեցավ Կապարգողթի հերոս հրամանատար Գարեգին Նժդեհը:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարած հերոսությունների համար ստացած իր Գեորգիևյան խաչը Ս. Մելիք-Յոլչյանը անձամբ կախեց Գարեգին Նժդեհի կրծքին և ցանկություն հայտնեց մոտ ապագայում այդ խաչի կողքին կախված տեսնել Հայաստանի Հանրապետության

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 8, գ. 106, թ. 1:

«Մեծն Վարդան» զինվորական շքանշանը[1]:

Այստեղ էլ հենց տոնահանդեսի ժամանակ ժողովուրդը պահանջեց օգնության գնալ Արցախին: Նոր ուժերով արցախահայությանը օգնության գալու հարցը վճռված էր:

Ապրիլի 23-ին Կապանի ուժերի մի մասից կազմված և «Հարավղարաբաղյան» անվանումը ստացած ջոկատը Նժդեհի գլխավորությամբ Կապանի շրջանից Դիզակի վրայով անցավ Վարանդա և ուղղություն վերցրեց դեպի Շուշի: Այդ ընթացքում ճանապարհի երկու կողմերի գյուղերի թուրք և քուրդ բնակիչները, թողնելով տները, հեռացան տարբեր ուղղություններով, գլխավորապես՝ Պարսկաստան[2]:

Շուշիում գտնվող Դրոն ապրիլի 26-ին հետևյալ խոսքերով ողջունեց Արցախ մտած զանգեզուրցիներին.

«Շնորհավորում եմ քաջարի զանգեզուրցիների մուտքը Ղարաբաղ, որ ցանկալի րոպեին նրանք օգնության հասան հարազատ Ղարաբաղին: Յուրաքանչյուր զանգեզուրցի թող հիշի, որ կռվելով պատմական Ղարաբաղի լեռներում, դրանով նա կռվում է ամբողջ Հայաստանի և, մասնավորապես, Զանգեզուրի ազատության և խաղաղության համար: Վստահ եմ, սպանե՛ր և զինվորնե՛ր, առաջնորդությամբ ձեր արժանավոր հրամանատար փոխգնդապետ Նժդեհի, քաջարի տեղացիների հետ, որ ահա ամբողջ ամիս կռվում են, ոչ միայն կթեթևացնենք Ղարաբաղի հայերի վիճակը, այլև ձեր կորովի ասպետական գործողություններով կը հանդիսանաք Ղարաբաղի հայ ժողովրդի բախտավորության և ազատ գոյության ապագայի գրավականը»[3]:

Զորքերի զգալի մասը Արցախ անցնելուց հետո, բնականաբար, թուլացավ Զանգեզուրի պաշտպանական ուժը: Ուստի գավառի իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին առաջվա նման բարձր պահելու բնակչության զգոնությունը և զինյալների մարտական ոգին:

Ի կատարումն հայոց բանակի՝ Արևելյան խմբավորման հրամանատարի ապրիլի 22-ի հեռագրի՝ գեներալ Ն. Ղազարյանը իր նոր պաշտոնում ապրիլի 25-ին տվեց հ. 1 հրամանը՝ «Զանգեզուրի գավառին»: Հրամանով Զանգեզուրի գավառը համարվեց ռազմական դրության մեջ. ստեղծվեց զինվորական դատարան՝ հրձիգության և այլ ծանր մեղքեր գործածներին խստագույնս պատժելու համար: Շեշտվում էր, որ հատկապես անողոքաբար կպատժվեն «Ադրբեջանից բխող հանցավոր պրովոկացիոն ագիտացիա» անողները, «մեղավորները կհանձնվեն զինվորական դատարանին, որպես դավաճաններ, իսկ կասկածելիները կաքսորվեն»: Զինվորական ծառայության ենթակա 20-50 տարեկան բոլոր քաղաքացիները «առաջին իսկ պահանջով պարտական

---

[1] Տե՛ս **Վ. Գէորգեան**, նշվ. աշխ., էջ 41:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 242, գ. 486, թթ. 136-137:

[3] Նույն տեղում, ֆ. 1021, ց. 8, գ. 106, թ. 1, 2:

են ներկայանալ, ուր հարկն է: Չներկայացողները կենթարկվեն զինվորական դատի»[1]:

1920 թ. ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում գումարվեց Արցախի հայ գյուղացիության 9-րդ համագումարը, որին մասնակցում էին միայն Վարանդայի և Դիզակի պատգամավորները: Համագումարը որոշեց «Լեռնային Ղարաբաղը հայտարարել որպես Հայաստանի Հանրապետության անքակտելի մաս և խնդրել Մոսկվայում գտնվող Հայաստանի պատվիրակությանը (նկատի ունեին Լ. Շանթի պատվիրակությունը[2]: – *Ա. Ս.)* ՝համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը»: Համագումարն ընդունեց Դրոյի բոլոր առաջարկները, այդ թվում՝ զորահավաք անցկացնելու պահանջը: Նաև որոշում ընդունվեց «Ղարաբաղի դատը պաշտպանելու համար» ներկայացուցիչ ուղարկել Թիֆլիս՝ կովկասյան հանրապետությունների նոր համաժողովին մասնակցելու [3]:

Այդ օրերին հայ գյուղացիության համագումար տեղի ունեցավ նաև Մարտակերտում, որին մասնակցեցին Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի գավառներից եկած պատգամավորները: Այս համագումարը նույնպես որոշեց Թիֆլիս ուղարկել պատգամավոր՝ կովկասյան հանրապետությունների համաժողովին արցախահայության պահանջը ներկայացնելու համար: Ապա, քննարկելով այն կարևոր հարցը, թե Լեռնային Արցախը Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետություններից որի իշխանությունն է նախընտրում, համագումարը միաձայն որոշում ընդունեց. «Ոչ մի դեպքում և ոչ մի պայմանով չենթարկվել խան-բեկական կառավարությանը»[4]:

Նույն օրերին թիֆլիսաբնակ ղարաբաղցիների հայրենակցական ընկերության կոմիտեի հանձնարարությամբ Արամայիս Երզնկյանը և Սիմոն Փիրումյանը մեկնեցին Մոսկվա և հանգամանորեն շարադրված զեկուցագիր ներկայացրին Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը: Զեկուցագրում ասված էր, որ «վերջին երկու-երեք տարվա ընթացքում Ղարաբաղի աշխատավորները կռվել են մեծամասնական գաղափարների համար, սպասել են մեծամասնականներին, ձգտել են ազատվել բուրժուա-կալվածատիրական Ադրբեջանի գերիշխանությունից և միանալ Հայաստանին»[5]: Բայց հենց այդ ժամանակ իրադարձություններն անսպասելիորեն զարգացան ուրիշ ուղղությամբ:

Մարտի 25-ին Ֆ. Խան-Խոյսկու հետ հանդիպման ժամանակ ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի այն հարցին, թե «Դուք հնարավո՞ր եք համարում բոլշևիկների արշավանքը դեպի Անդրկովկաս»,

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 3:

[2] **Է. Զոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, էջ 23:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 5, գ. 461, թ. 144:

[4] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 563, թթ. 191-192:

[5] «Մշակ», 1920, 21 օգոստոսի, թիվ 76:

Ադրբեջանի արտգործնախարարը պատասխանել է. «Հաստատ ոչինչ չի կարելի ասել»[1]: Իսկ այն հարցին, թե «Դուք տեղեկություն չունե՞ք դաշնակիցների Գերագույն խորհրդի որոշման մասին, որ եթե Անդրկովկասի հանրապետությունների վրա հարձակում լինի, սրանք որևէ օգնություն կստանան նրանցից», Ֆ. Խան-Խոյսկին պատասխանել է. «Մինչև այժմ նրանց կողմից ոչ աջակցություն է եղել և ոչ էլ որևէ խոսք: Մենք դիմել ենք նրանց և խնդրել հայտնելու, թե վտանգի դեպքում ինչով են աջակցելու մեզ»[2]:

Դեռ մարտի վերջին Այսրկովկասում Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ամերիկայի ներկայացուցիչները, Թիֆլիսում մի առիթով անդրադառնալով այն հարցին, թե ինչ դիրք են բռնելու դաշնակից երկրները, եթե ռուս բոլշևիկյան բանակները մոտենան Այսրկովկասի սահմաններին, վստահաբար հայտարարել էին, թե Այսրկովկասի անկախ հանրապետությունների դեմ խորհրդային բանակների հարձակման դեպքում Անտանտը ստիպված կլիներ այդ հանրապետություններին օգնություն ցույց տալ ոչ միայն ռազմական հանդերձանքով ու զենքով, այլև մարդկային ռեսուրսներով, ըստ որում՝ այդ օգնությունը կլիներ ավելի զգալի, քան Դենիկինին ցույց տվածը: Բացի այդ՝ բացառված չէր, որ իրենց երկրները նորից Ռուսաստանին ենթարկեին տնտեսական բլոկադայի[3]:

Բայց դրանք միայն խոսքեր էին:

Մինչ դեռ 1920 թ. սկզբներին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը եկավ այն համոզման, որ վրա է հասել Այսրկովկասի ազգային երեք հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կառավարությունների տապալման և երկրամասում ռուսական կայսրության մինչպատերազմյան սահմանները վերականգնելու պահը:

Ինչո՞ւ էր Խորհրդային Ռուսաստանը այդպես շտապում մտնել Այսրկովկաս:

1) Դեռ 1920 թ. հունվարի կեսերին քեմալական Տաճկաստանի և Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջև կնքվել էր մի գաղտնի դաշնագիր, որով Ռուսաստանը պարտավորվել էր խզել բոլոր կապերը համաձայնության պետությունների հետ և երկրում հաստատել խորհրդային կարգեր: Դա պատնեշ կստեղծեր այդ պետությունների առջև, որոնք ցանկանում էին ամուր նստել Կովկասում և Ռուսաստանը դուրս մղել այնտեղից: Եվ Կովկասը կորցնելու վտանգից դրդված՝ խորհրդային կառավարությունը որոշեց ժամ առաջ այնտեղից հեռացնել համաձայնության տերություններին:
2) Բոլշևիկյան կառավարությունը հսկայական ջանքեր էր գործադրում

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 6:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս “Бакинец”, 29 марта, 1920:

երկրի տնտեսությունը վերականգնելու համար, իսկ առանց նավթի անհնարին էր աշխատեցնել գործարանները, գործի գցել նավթային շարժիչները և այլն: Բայց հսկա Ռուսաստանում նավթ չկար: Նավթը Բաքվում էր, որը պետք էր գրավել:

3) Տաճկաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև հաստատված բարիդրացիական հարաբերությունները վերջինիս հնարավորություն էին տալիս քեմալականների միջամտությամբ իր կողմը քաշելու Ադրբեջանին և նրա օգնությամբ ցամաքային ուղղակի կապ հաստատելու Տաճկաստանի հետ Արցախ–Զանգեզուր–Նախիջևան գծով և իբրև պարգև՝ Բաքվի կառավարմանը հանձնել նշված հայկական երկրամասը:

Ի կատարումն Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության 9-րդ համագումարի ցուցումի՝ Հյուսիսային Կովկասի կոմունիստական կազմակերպությունների, այդ թվում՝ բանակային կուսակցական կազմակերպությունների աշխատանքները մոտիկից ղեկավարելու համար ՌԿ(բ)Կ կենտկոմը 1920 թ. ապրիլի 8-ին ստեղծեց նոր կենտրոն՝ ՌԿ(բ)Կ կենտկոմի հյուսիսկովկասյան բյուրո: Կուսակցական ղեկավար այդ մարմնի մեջ մտան Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ի. Տ. Սմիլգան, Բ. Գ. Մդիվանին և Ս. Մ. Կիրովը: Բյուրոն ստանձնում էր նաև ռազմական գործառույթներ, ուստի նրա կազմի երկու անդամները՝ Գ. Կ. Օրջոնիկիձեն և Ս. Մ. Կիրովը, միաժամանակ Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամներ էին:

Դեռևս 1920 թ. ապրիլի 15-ին, այսինքն՝ Ադրբեջանի խորհրդայնացումից երկու շաբաթ առաջ, Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Օրջոնիկիձեի հետ ունեցած հեռախոսային զրույցի ժամանակ 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Մ. Կ. Լևանդովսկին նրան հաղորդել էր, որ քեմալական կառավարությունը Դաղստանում գտնվող երիտթուրք պարագլուխներ Նուրի և Խալիլ փաշաներին հրահանգել էր իրենց զինված ուժերի հետ միասին թողնել այդ մարզի սահմանները: Իր հերթին Խալիլ փաշան Անկարայի կառավարությունից թույլտվություն էր խնդրել՝ վերակազմելու իրեն ենթակա զորամասերը, այդ զորամասերի հետ Դաղստանից անցնելու Բաքու, ապա այնտեղից շարժվելու դեպի Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան. տարածքներ, որոնք Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը մտադիր էր «վիճելի» հայտարարել: Ընդ որում, թուրք փաշաներն ուզում էին ավելի շուտ մտնել Բաքու, քան այդ կհասցներ անել 11-րդ Կարմիր բանակը: Հայկական երկրամասերը՝ Ղարաբաղը և Զանգեզուրը նվաճելուց հետո նրանք այնուհետև պետք է մտնեին պատմականորեն հայկական Նախիջևան երկրամասը և ուղիղ գծով միանային Թուրքիային:

Սակայն քեմալականների՝ Ադրբեջանում հիմնավորվելու նպատակ հետապնդող ծրագիրը ձախողվեց: Մինչ նրանք Ադրբեջանում և Դաղստանում զբաղված էին տեղի մուսուլմանական զորքերը կարգի բերելու, դրանք վերա-

խմբավորելու և վերականգնելու հարցերով, ռուսական բոլշևիկյան կառավարությունը արագացրեց Ադրբեջանը և Այսրկովկասի մյուս տարածքները խորհրդայնացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Կարմիր բանակի զորամասերը ռազմական պատրաստության մեջ դրվեցին՝ Հյուսիսային Կովկասից Այսրկովկաս ներխուժելու համար: Նախատեսվեց Այսրկովկաս մտնել Ադրբեջանի հյուսիսային սահմաններից:

Այսրկովկասի վրա զինված գործողություններ ծավալելու նախօրյակին Կարմիր բանակի համար ստեղծվել էին ռազմաքաղաքական նպաստավոր պայմաններ: Շեշտակիորեն փոխվել էր իրադրությունը Կովկասյան ռազմաճակատում, որի հրամանատարն էր Միխայիլ Տուխաչևսկին: Փոխվել էր իրադրությունը նաև Կասպից ծովի շրջանում: 1920 թ. ապրիլին Կովկասյան ռազմաճակատի խորհրդային բանակի զորամասերն արդեն դուրս էին եկել Ադրբեջանի և Վրաստանի սահմանները: Ապրիլի վերջերին 9-րդ Կարմիր բանակի 34-րդ դիվիզիան, Սոչիի շրջանում վրացական սահմանին սեղմելով գեներալ Ն. Ա. Մորոզովի Կուբանյան բանակը, ջախջախել էր այն: 11-րդ Կարմիր բանակի զորամասերը, Դաղստանում պարտության մատնելով դենիկինյաններին, կենտրոնանում էին Պետրովսկի շրջանում: Այստեղ էին փոխադրվել նաև կասպիական կարմիր նավատորմիղի նավերը:

Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Մ. Տուխաչևսկին և ռազմական խորհրդի անդամ Սերգո Օրջոնիկիձեն 1920 թ. ապլրիլի 21-ին Պետրովսկից հրաման արձակեցին Բաքվի վրա հարձակվելու և Ադրբեջանը գրավելու մասին: Հրամանում ասված էր. «Ադրբեջանի գլխավոր ուժերը կենտրոնացված են այդ պետության արևմտյան սահմաններում: Ցամալա կայարան–Բաքու շրջանում, հետախուզության տվյալներով, կան միայն անանշան ադրբեջանական ուժեր...» [1]:

Հետախուզության տվյալները ճիշտ էին: Մուսավաթական բանակի շարքերում 1920 թ. ապրիլի կեսերին հաշվվում էր մոտ 30000 հետևակ և հեծյալ զինվոր: Կանոնավոր զորամասերից մուսավաթականներն ունեին.

ա) մեկ հետևակային դիվիզիա, որի կազմում կար հինգ գունդ՝ մինչև 12000 սվինով,

բ) երկու գնդերից կազմված մեկ հեծյալ բրիգադ՝ մինչև 2800 սրով:

Դերբենտի ուղղությամբ՝ Ադրբեջանի և Դաղստանի սահմանի վրա, ինչպես նաև Ղուսարի և Ղուբայի շրջաններում մուսավաթական բանակն ուներ զորքերի անկանոն ջոկատներ, որոնցում հաշվվում էր 8000 մարդ: Բանակն ուներ նաև զորքերի այլ տեսակներ.

ա) անմիջականորեն սահմանի վրա կանգնած էր ժանդարմական դիվիզիոնը,

բ) Բաքվում տեղակայված էր հետևակային մի գունդ,

---

[1] **Г. Орджоникидзе**, Статьи и речи (1910-1926 гг.), т. 1, Москва, 1956, с. 107.

գ) այստեղի յունկերական ուսումնարանն ուներ մինչև 500 մարդ,
դ) քաղաքում կար ոստիկանական պահեստային մի գումարտակ՝ 2000 մարդով:

1920 թ. ապրիլի 22-ին ՌԿ(բ)Կ կովկասյան կազմակերպության Բաքվի բյուրոյի խորհրդակցությունում, որին ներկա էին 11-րդ Կարմիր բանակից ժամանած ներկայացուցիչներ, որոշվեց ապրիլի 27-ին՝ ցերեկվա ժամը 12-ին, մուսավաթական կառավարությանը վերջնագիր ներկայացնել իշխանությունը հանձնելու մասին[1]:

Ապրիլի 26-ին Ադրբեջանի կառավարությունը թատերական-դիվանագիտական մի ժեստ արեց. դիմեց Վրաստանի կառավարությանը, որի հետ ուներ զինական դաշինք և նրանից խնդրեց ռազմական օգնություն՝ իր սահմանների վրա հայտնված ռուսական բոլշևիկյան զորքերին դիմադրելու համար: Միաժամանակ Ադրբեջանը դիմեց դաշնակից պետությունների ներկայացուցիչներին՝ նրանց խնդրելով Հայաստանից պահանջել հավաստիացումներ, որ նա հարձակումներ չի գործելու Ադրբեջանի տարածքների վրա, որպեսզի վերջինս հնարավորություն ստանա Ղարաբաղից և Հայաստանին սահմանակից այլ վայրերից իր զորքերը հանելու ու նետելու երկրի անկախությանը սպառնացող Կարմիր բանակի դեմ:

Վրաստանի կառավարությունը Ադրբեջանին անմիջապես հայտնեց, որ իր երկիրը պատրաստ է ռազմական օգնություն ցույց տալու բարեկամ երկրին:

Ադրբեջանի կառավարության խնդրանքի մասին դաշնակիցների ներկայացուցիչները ապրիլի 26-ին հարցում արեցին Հայաստանի կառավարությանը: Վերջինս դեռ չէր հասցրել պատասխանել, երբ 1920 թ. ապրիլի 27-ին՝ վաղ առավոտյան, 11-րդ Կարմիր բանակի զորամասերը բանակի հրամանատար Մ. Կ. Լևանդովսկու հրամանով անցան Ադրբեջանի մուսավաթական հանրապետության սահմանը և սրընթաց հարձակումով շարժվեցին առաջ:

11-րդ Կարմիր բանակում կային հետևյալ ուժերը՝ 2-րդ հեծյալ կորպուսը (հրամանատար՝ Վ. Ֆ. Վոդոպյանով), 32-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Պ. Կ. Շտեյգեր), 28-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Ն. Ա. Նեստերովսկի), 20-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Մ. Դ. Վելիկանով) և երկաթուղային մարտական տեղամասը[2]:

Անցնելով սահմանը՝ բոլշևիկյան զորքը, թվով 6000 հոգի, գրավեց Խաչմասը և զրահապատ գնացքով առաջացավ Բալաջարի: Մուսավաթական բանակի գլխավոր ուժերը՝ 30 հազարանոց բանակից 20 հազարը, կենտրոնացած էին Ղարաբաղ–Զանգեզուրի շրջանում[3]: Իր հուշերում Անաստաս

---

[1] Տե՛ս **А. Кадишев,** նշվ. աշխ., էջ 244:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 304:

Միկոյանը գրել է, որ այդ իսկ պատճառով «մուսավաթական կառավարությունը չուներ այնպիսի զգալի ուժեր, որոնք կարողանային 11-րդ բանակին լուրջ դիմադրություն ցույց տալ Բաքվի ճանապարհին»[1]:

Ապրիլի 28-ին բոլշևիկների ներկայացուցիչները վերջնագիր են ներկայացրել մուսավաթական կառավարությանը՝ իշխանությունը հանձնելու մասին: Խորհրդարանն ընդունել է վերջնագիրը և իշխանությունը հանձնել է ռազմահեղափոխական կոմիտեին[2]:

Բաքուն և Ադրբեջանի մյուս տարածքները գրավվեցին համարյա առանց կրակոցի: Ադրբեջանի քաղաքագետները՝ թե՛ մուսավաթական, թե՛ բոլշևիկ, լավ ըմբռնելով իրենց ազգային ընդհանուր շահերը, ներքին պայմանավորվածությամբ փոխեցին հանրապետության ցուցանակը: Սակայն մուսավաթական ոչ բոլոր պարագլուխները հավանություն տվեցին կատարված հեղաշրջմանը, իսկ նրանցից ոմանք էլ դա համարում էին հայ և ռուս բոլշևիկների կողմից Ադրբեջանի դեմ ուղղված հերթական քաղաքական խարդավանքների հետևանք:

Թիֆլիսում ապաստանած ադրբեջանական ազգայնամոլության նշանավոր պարագլուխ Հասան Աղաևը 1920 թ. հունիսի 13-ին Էնվեր փաշային ուղարկած իր նամակում նշում էր, որ Ադրբեջանի կործանման պատճառ դարձան Ղարաբաղ–Զանգեզուրի հայերի մղած կռիվները, որ հենց այդ կռիվների պատճառով ադրբեջանական բանակն այն աստիճան էր թուլացել, որ ռուսական ամբողջ սահմանագծի վրա միայն 300 զինվոր էր մնացել: Այդ բոլորից հետո Աղաևը ողբում էր, որ խորհրդայնացված Ադրբեջանում կրկին հայերն էին իշխում[3]:

Բաքվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը ապրիլի 29-ի առավոտյան իր առանձնասենյակ է հրավիրել առաքելության խորհրդական Կոնստանդին Ատամանյանին և քարտուղար Արամ Առաքելյանին՝ խորհրդակցելու նախորդ օրը տեղի ունեցած կառավարական հեղաշրջման հետևանքով Ադրբեջանում ստեղծված նոր իրավիճակի շուրջ: Նա ասել է, որ Ադրբեջանում կազմված կառավարության պաշտոնական հաղորդագրությունից երևում է, որ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ և արտաքին գործերի կոմիսար էր նշանակված Նարիման Նարիմանովը: Ուրիշ պաշտոնական հայտարարություններից երևում էր, որ Ադրբեջանը չէր դադարում անկախ պետություն լինելուց, և նոր կազմված կառավարությունն անկախ խորհրդային հանրապետության կառավարություն էր, հետևաբար տեղի էր ունեցել միայն

---

[1] **Ա. Միկոյան**, Պայքարի ուղիով, Գիրք առաջին, Երևան, 1972, էջ 724:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 1:

[3] Տե՛ս **Հ. Ասատրեան**, Հայաստան – Արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում, Սոֆիա, 1942, էջ 215:

կառավարական փոփոխություն և ոչ թե Ադրբեջանի տարածքի միացում Խորհրդային Ռուսաստանին: Պետք էր ենթադրել, շարունակել է նա, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունը շարունակելու էր իր գործունեությունը Բաքվում՝ իբրև Հայաստանի **անկախ** հանրապետության ներկայացուցչություն խորհրդային դարձած Ադրբեջանում[1]:

Առաքելության հիշատակած աշխատակիցներն էլ իրենց հերթին նկատել են, որ ապրիլի 28-ի լույս 29-ի գիշերը նոր կառավարությունը ձերբակալել է Բաքվի անգլիական և ֆրանսիական առաքելությունների անձնակազմերի անդամներին, իսկ Վրաստանի առաքելությունը դեռ լիովին չպարզված հանգամանքներում նստավայր շենքի վրայից հանել է իր երկրի դրոշը և դադարեցրել գործունեությունը, այնինչ Հայաստանի առաքելությունը շարունակել է իր աշխատանքը, և նրա նստավայրի վրա դեռ ծածանվում էր հայկական դրոշը[2]:

Մտքեր փոխանակելուց հետո Բաքվի հայ դիվանագետները հանգել են այն ենթադրության, որ հավանաբար շուտով հերթի էր դրվելու նաև Ռուսաստանի կողմից «վիճելի» հայտարարվելիք Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը զինված միջամտությամբ կամ դիվանագիտական միջոցներով խորհրդայնացնելու հարցը, և այդ ուղիներից բոլշևիկները որն էլ ընտրելու լինեին, իրենց շատ պետք էր գալու ադրբեջանական առաքելությունը Երևանում, հետևապես փոխադարձաբար հանդուրժելու էին հայկական առաքելության գոյությունը Բաքվում:

ՀՅ դաշնակցության, ինչպես և, ըստ էության, Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ու կառավարության պաշտոնաթերթ «Յառաջը» գրում էր. «Այդ հեղաշրջումը պատրաստված է եղել ոչ թե Բալախանու հեղափոխական բանվորության մեջ, այլ հայտնի ջարդարար Ջիվանշիրի բնակարանում: Այնտեղ կողմերը համաձայնության են եկել, և Մուսավաթն իշխանությունը հանձնել է «կոմունիստներին», իհարկե, շատ լավ գիտակցելով, թե ինչ է անում: Մուսավաթը զիջել է իշխանությունը նոր մարդկանց, որոնք հանձն են առել մուսավաթական կառավարության գործը՝ հեռացնելով Ադրբեջանի գլխից հյուսիսից խուժող վտանգը: Եվ հենց նոր կառավարության կազմն էլ հաստատում է այդ. նա ունի նեղ թուրքական ազգային բնույթ, նրա մեջ ոչ ոք չկա Բաքվի հեղափոխական բանվորության ներկայացուցիչներից: Նա տաճիկ-ադրբեջանական շովինիստների հաղթանակի արգասիքն է...»[3]:

Ադրբեջանի խորհրդայնացումը Այսրկովկաս վերադառնալու ճանապարհի առաջին հանգրվանն էր բոլշևիկյան Ռուսաստանի համար: Այդ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 58, թ. 1:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 1-2:

[3] «Յառաջ», 1920, 5 մայիս:

գործողությունը տվյալ պահին ձեռնտու էր նաև քեմալականներին, որոնք սկսել էին դեպի Մոսկվա կամուրջ նետել և խորհրդային կառավարության օգնությամբ կարգավորել իրենց գործերն Անատոլիայում, փրկել Թուրքիան կործանումից՝ թեկուզ Ադրբեջանի անկախության կորստի գնով: Եվ Ադրբեջանի ղեկավար շրջանները, հանուն թուրքական աշխարհի ընդհանուր շահերի, ընդառաջ գնացին Անկարայից եկած պահանջին՝ պետական հեղաշրջումով փրկելու իրենց ավագ եղբորը, իհարկե, Հայաստանի ոչնչացման գնով:

Քաղաքական այդ հեռուն տանող մտահղացմանը անդրադառնալով՝ «Ժողովուրդ» թերթը գրում էր. «... Ադրբեջանն իր ղեկավարների անհեռատեսության պատճառով ընկավ ուրիշի համար փորած հորի մեջ և կորցրեց իր անկախությունը»[1]:

Սակայն վաղաժամ էր հարևան երկրի զգեստափոխությունը անհեռատեսություն որակել. շուտով պարզվելու էր, որ իրենց անկախության կորստով Ադրբեջանի թուրքերը խոշոր հաշվով տանուլ չեն տվել, ավելին՝ շահել են շատ բան:

Զանգեզուրում տեղյակ չէին, թե ինչ է անցել-դարձել Ադրբեջանում: Ապրիլի 29-ին խորհրդարանի անդամ Տեր-Հակոբյանը Գորիսում՝ հոծ բազմության առջև, զեկուցեց Հայաստանի քաղաքական դրության մասին՝ չիմանալով, որ նախորդ օրը Ադրբեջանը հայտարարվել է խորհրդային. մի բան, որ ամբողջովին փոխում էր քաղաքական իրադրությունը Հայաստանի շուրջը և ողջ Այսրկովկասում: Ժողովի նախագահող, Հայաստանի խորհրդարանի անդամ Զաքար Յոլյանը խորհրդարանի նախագահին տված հեռագրով հաղորդում էր անցկացրած միջոցառման մասին, որտեղ մասնավորապես ասված էր. «Սյունիքի ժողովուրդն իր լավագույն զավակների արյամբ կերտում է ազատ հայրենիք, որի վերջնական ապահովման համար կանգ չի առնելու ոչ մի զոհաբերության առաջ»[2]:

Բաքվի գրավումը, Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը և 11-րդ Կարմիր բանակի զորամասերի դուրս գալը դեպի Վրաստանի և Հայաստանի սահմանները մեծ ազդեցություն գործեցին Այսրկովկասի իրադարձությունների հետագա ընթացքի վրա:

Ադրբեջանի խորհրդայնացումն անմիջական սպառնալիք ստեղծեց հայկական Ղարաբաղի և Զանգեզուրի համար, որոնք, իրենց անկախ գոյությունը պահպանելով, երեք տարի շարունակ արյունահեղ կռիվներ էին մղել թուրք-մուսավաթական միացյալ ուժերի դեմ:

Այժմ վիճակը փոխվում էր: Ժամերի ընթացքում պարզ դարձավ, որ Նարիման Նարիմանովի գլխավորած Ադրբեջանի նոր՝ խորհրդային կառավա-

---

[1] «Ժողովուրդ», 1920 թ., 5 հունիսի:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 161, թ. 1-2:

ությունը, ստանալով Ռուսաստանի տնտեսական, ռազմաքաղաքական, դիվանագիտական ակտիվ աջակցությունը, Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ շարունակելու է մուսավաթականների զավթողական, հայատյաց քաղաքականությունը: Եթե մինչև այդ Հայաստանի Հանրապետության դեմ մղվող պայքարում մուսավաթական Ադրբեջանը ստանում էր քեմալական Թուրքիայի ակտիվ աջակցությունը, ապա այժմ Խորհրդային Ադրբեջանին օգնելու և օժանդակելու պատրաստակամություն էր հայտնում Խորհրդային Ռուսաստանը՝ իր Կարմիր բանակով:

Ապրիլի 30-ին Ադրբեջանի ռազմահեղկոմի անդամներից Համիդ Սուլթանովն իր բարեկամներից մեկին հաղորդել էր, թե շուտով Կարմիր բանակի զորքերը Եվլախը գրավելուց հետո առանց կանգ առնելու առաջ են շարժվելու և Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով միանալու են թուրքական զորքերին: Միաժամանակ նա ասել էր, որ իրենք Վրաստանից բնավ վախ չունեն, բայց ինչ-որ չափով վախ էր ներշնչում Հայաստանը, որը կարող էր դիմադրել: «Եթե Հայաստանը դիմադրություն ցույց տա, ապա հարկադրված կլինենք նրան պատերազմ հայտարարելու»[1],– շեշտել էր նա:

1920 թ. ապրիլի 30-ին, այսինքն՝ Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց ընդամենը երկու օր հետո, Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերջնագիր հղեց, որով պահանջում էր Ղարաբաղը և Զանգեզուրը: Վերջնագիրը Երևանում ստացվեց մայիսի 1-ին: Այնտեղ ասված էր.

«Երևան, Արտաքին գործոց նախարարին.

Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորագյուղացիական կառավարությունը, ի դեմս հեղափոխական կոմիտեի, պահանջում է, նախ, ձեր զորքերից մաքրել Ղարաբաղի և Զանգեզուրի տարածքը, երկրորդ, ետ քաշվել դեպի ձեր սահմանները, երրորդ, դադարեցնել ազգամիջյան ջարդը: Հակառակ դեպքում՝ Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կհամարի Հայաստանի Հանրապետության հետ պատերազմական վիճակում: Նոտայի պատասխանը պետք է ստացվի եռօրյա ժամկետում:

30 ապրիլի 1920 թ., Բաքու: Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության արտաքին գործերի կոմիսարի տեղակալ՝

Հուսեինով»[2]:

Իր արտաքին քաղաքական գործունեությունն ահա այսպես սկսեց Ադրբեջանի խորհրդային կառավարությունը՝ դիվանագիտական առաջին քայլն ուղղելով Հայաստանի դեմ՝ լի ատելությամբ ու սպառնալիքներով: Ադրբեջանը Հայաստանին ընդամենը երեք օր ժամկետ էր տալիս պատաս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 2:

[2] Նույն տեղում, ց. 1, գ. 525, թ. 34, տե՛ս նաև ֆ. 1021, ց. 3, գ. 4, թ.1:

խանի համար: Այդ երկրի նոր կառավարության լկտիությունը սահման չուներ, որովհետև նրա կողքին կանգնել էր 11-րդ Կարմիր բանակը:

Հայաստանի կառավարությանը հասցեագրված ադրբեջանական վերջնագրին նույն օրը հետևել էր Բաքվից տրված այս հրամանը.

«**Հրաման** Ղարաբաղում և Զանգեզուրում գտնվող ադրբեջանական զորամասերին

30 ապրիլի 1920 թ.

Ադրբեջանի մուսավաթական հին կառավարությունը իշխանությունը հանձնել է Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորագյուղացիական կառավարությանը:

Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հեղափոխական կոմիտեի կողմից վերջնագիր է ներկայացվում հայկական կառավարությանը՝ Ղարաբաղի ու Զանգեզուրի տարածքներն իր զորքերից մաքրելու և ազգամիջյան կոտորածները դադարեցնելու պահանջով:

Ղարաբաղում և Զանգեզուրում գտնվող ադրբեջանական զորամասերին.

1. Դադարեցնել հարձակումը,
2. Գրավել հարմար դիրքեր,
3. Ընդունել պաշտպանական դրություն:

Հայաստանի կառավարության կողմից՝ նրան ներկայացրած վերջնագիրը չկատարելու դեպքում ձեզ օգնության կուղարկվի դաշնակից եղբայրական խորհրդային Կարմիր բանակը, որը պատրաստ է բռնությունից ու հարստահարումից ազատել ողջ աշխարհը:

Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային
Հանրապետության Հեղկոմի նախագահի տեղակալ՝
Մ. Դ. Հուսեինով
Ռազմածովային գործերի գծով կոմիսար
Ի. Իլդրըմ»[1]:

Վերջնագիրը ստանալու օրն իսկ՝ մայիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանը տվեց հետևյալ պատասխանը. «Մոսկվա և Բաքու: Կովկասյան ռազմաճակատի հեղափոխական խորհրդին, Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության հեղկոմին: Պատճենը՝ Մոսկվա, Ժողկոմխորհի նախագահ Լենինին, պատճենը՝ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինին, պատճենը՝ [Ադրբեջանում] Հայաստանի ներկայացուցիչ Հարությունյանին:

[1] "К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР (1918-1920)", Документы и материалы, Баку, 1989, с. 42.

Ի պատասխան Ձեր մայիսի 1-ի նոտայի՝ հաղորդում եմ, որ հայկական զորամասեր Ադրբեջանի տարածքում ոչ մի տեղ չեն եղել ու չկան:

Ընդհակառակն, Ադրբեջանի բեկական ու մուսավաթական կառավարության զորքերը գտնվում են վիճարկվող հայկական Ղարաբաղում և դեռ վերջերս այնտեղ կոտորում էին հայ բնակչությանը, հրկիզում գյուղերն ու քաղաքները: Ղարաբաղի բնակչությունը գյուղացիական դեպուտատների իր համագումարներում բազմիցս անհողդողդ կամք է արտահայտել՝ չմտնել Ադրբեջանի կազմի մեջ, իսկ Ադրբեջանի զորքերն այդ մարզում են գտնվում հենց ինքնորոշվող ժողովրդի այդ կամքը կոտրելու համար: Հայաստանի կառավարությունը, ամենևին զորք չունենալով Ադրբեջանի սահմաններում, Ադրբեջանի նոր կառավարությանը խնդրում է զորքերը դուրս բերել հայկական Լեռնային Ղարաբաղի սահմաններից և հետո այդ մարզի շրջանում հարցում անցկացնել ու վարվել նրա կամքի համաձայն:

Խաղաղ միջնորդի և վիճելի հարցերը լուծողի դեր ստանձնելու մասին Խորհրդային Ռուսաստանի իշխանության հայտարարությունը, իհարկե, կողջունվի Ղարաբաղի տառապած ու արյունաքամ եղած հայ գյուղացիության կողմից: Հայաստանի կառավարությունը Խորհրդային Սոցիալիստական Ռուսաստանի ներկայացուցիչներին առաջարկում է Ղարաբաղ ուղարկել մի չեզոք հանձնախումբ՝ իսկական վիճակը պարզելու համար:

Ելնելով վերը շարադրվածից՝ մեր կառավարությունը հարկ է համարում հայտարարել, որ տվյալ դեպքում վերջնագրային նոտայի համար ոչ մի հիմք չկա, և լիակատար վստահություն է հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը, որը վաղուց Լենինի, Խորհուրդների չորրորդ համառուսաստանյան համագումարի դեկրետով արդեն ընդունել է Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը, թույլ չի տա նոր բռնություններ գործադրել տարիներ շարունակ արյունաքամ եղող աշխատավոր հայ ժողովրդի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործոց նախարար՝
Օհանջանյան
1 մայիսի (1920 թ.)»[1]:

Դեռ չէր լրացել Ադրբեջանի հեղկոմի վերջնագրով տրված ժամկետը, երբ Հայաստանի կառավարությունը նույնանման բովանդակությամբ սպառնալից վերջնագիր ստացավ նաև 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունից, որը ևս պահանջում էր Ադրբեջանին հանձնել Ղարաբաղը և Զանգեզուրը: Վերջնագրում ասված էր. «Հայաստանի և մեր բարեկամ Խորհրդային Ադրբեջանի սահմաններում շարունակվում են պատերազմական գործողությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև: Ռուսաստանի բանվորագյու-

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 38, թ. 90: Տե՛ս նաև ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 36, գ. 581, թ. 32-33:

ղացիական կառավարությունն իր սրբազան պարտքն է համարում բոլոր ուժերով օգնության հասնել Ադրբեջանի՝ համայն աշխատավորության անունից օգնություն խնդրող խորհրդային կառավարությանը, որպեսզի Ադրբեջանում վերջնականապես հաստատվի բանվորագյուղացիական կառավարություն»:

Այնուհետև բանակի հրամանատարությունը, Հայաստանի անկախ հանրապետության կառավարության հասցեին սպառնալիք կարդալով, շարունակում էր. «Հանուն [Ռուսաստանի] Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության՝ Հայաստանի կառավարությանը առաջարկում եմ անմիջապես դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները Խորհրդային Ադրբեջանում և զորքերը դուրս հանել նրա սահմաններից:

Այդ բանը պետք է արվի ներկա հեռագրի ստացումից հետո՝ 24 ժամվա ընթացքում: Սույն պահանջը չկատարելը կնկատվի որպես մարտահրավեր՝ ուղղված ՌՍՖԽՀ հասցեին: Առաջարկը կիրագործվի Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով, իսկ հետևանքների պատասխանատվությունը կընկնի հայկական կառավարության վրա:

Կովկասյան Ռազմաճակատի
Ռազմահեղափոխական Խորհուրդ՝
Օրջոնիկիձե
Տասնմեկերորդ Բանակի
Ռազմահեղափոխական Խորհուրդ՝
Կիրով, Մեխանոշին, Լևանդովսկի
1 մայիսի, 1920 թ.»[1]:

Հայաստանի կառավարությանն ուղղված վերջնագրերի լեզվով և դիվանագիտական պրակտիկայում աննախադեպ սպառնալիքներով խոսում էին ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի կուսակցական և զինվորական խոշոր գործիչները, կարմիր գույն ստացած Ադրբեջանի ղեկավարները, այլև երեկվա բացահայտ հայատյաց մուսավաթական ջարդարարները:

Նույն օրը՝ մայիսի 1-ին, Ադրբեջանի նոր իշխանությունների պաշտոնաթերթ «Կոմունիստը» (ռուսերեն) թիվ 1-ում տպագրել էր Ղարաբաղի հայերին ուղղված մի կոչ, որի հեղինակը նույն ինքը՝ Շուշիի հայության 1919 և 1920 թթ. կոտորածների կազմակերպիչ, մոլի մուսավաթական, սակայն այդ օրերին իրեն Ղարաբաղի հեղկոմի նախագահ հռչակած Խոսրով բեկ Սուլթանովն էր: «Հեղափոխական Ղարաբաղը,– ցինիկորեն հայտարարում էր նա,– միշտ կանգնած լինելով Ադրբեջանի պրոլետարիատի շահերի պաշտպանության դիրքերում, ինքնուրույն Ադրբեջանի կողմից խորհրդային իշխանու-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 274, գ. 529, թ. 36, տե՛ս նաև ֆ. 1022, ց. 5, գ. 364, թ. 1:

թյուն ընդունելուն սպասում էր որպես կապիտալի բռնատիրությունից պրոլետարիատի փրկության միջոցի... Ղարաբաղի դեմոկրատիան այժմ խորապես համոզված է Խորհրդային Ադրբեջանի, Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի դաշինքի ուժով Արևելքի աշխատավոր ժողովուրդներին Անգլիայի և Արևմուտքի իմպերիալիստների ճորտությունից ազատելու գործում: Կեցցե՛ Խորհրդային Ադրբեջանը, Խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան, Կարմիր բանակը և հեղափոխության առաջնորդը...»[1]:

Կարմիր բանակի հրամանատարության վերջնագիրն ստանալուց հետո Վրաստանում Հայաստանի առաքելությանը (Թումանովի անունով) Երևանից ուղարկվեց հեռագիր*, որում հաստատված էր Բաքվից ստացված երկու վերջնագրերի փաստը, և համառոտ շարադրված էր դրանց բովանդակությունը:

«Անհապաղ հաղորդեցե՛ք բոլոր միսիաներին և վրացական կառավարությանը,– ասված էր հեռագրում:– Ձեռնամո՛ւխ եղեք բոլոր Ձեր հայտնի գործնական քայլերի. ժամը 4-ին եղե՛ք ուղիղ գծի մոտ, Մախարաձեին** և Մամիկոնյանին*** հրավիրեցե՛ք Ձեզ հետ»[2]:

Հեռագրագծի երկու կողմերում տագնապող հայ պետական գործիչներին պարզ էր, որ Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զինուժը դուրս բերելու երկու վերջնագրերի պահանջին անխուսափելիորեն հաջորդելու է բացված ճանապարհով Կարմիր բանակի հետագա առաջխաղացումը և Հայաստանի նկատմամբ Բաքվի ծրագրերի իրականացման համար դաժան պայքարը:

«Բաքուն գրավողը,– գրում էր Նժդեհը,– չէր կարող չառաջանալ դեպի Հայաստան և Վրաստան: Բաքուն իր ձեռքին պահելու անհրաժեշտությունը պիտի թելադրեր Խորհրդ[ային] հրամանատարությանը իր ձեռքին ունենալ նաև Երևանն ու Թիֆլիսը: Ահա թե ինչու 11-րդ Կարմիր բանակը չէր կարող բավականանալ Ադրբեջանով և չէր կարող նստած մնալ Բաքվում»[3]:

Մայիսի 1-ի երեկոյան տեղի ունեցավ խորհրդարանի ՀՅ դաշնակցության խմբակցության արտակարգ նիստ, որտեղ Հայաստանի շուրջը ստեղծված նոր իրադրության մասին հաղորդեց Համո Օհանջանյանը: Մտքերի կարճ փոխանակումից հետո որոշում ընդունվեց այդ առթիվ հրավիրել խորհրդարանի դռնփակ նիստ և խնդրի հետ կապված բոլոր հարցերը քննության առնել խորությամբ ու բազմակողմանիորեն[4]:

«Յառաջ» թերթը «Հայրենիքը վտանգի մեջ է» խմբագրականում գրում էր.

---

[1] “К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР (1918-1920)”, с. 42.

* Հեռագրի ձևաթղթի վրա չկան ամսաթիվ և ստորագրություն, հավանական է, որ այն մայիսի 2-ին հեռագրել է Հայաստանի արտգործնախարար Համո Օհանջանյանը:

** Վրաստանի արտգործնախարար:

*** Խոսքը Ստեփան Մամիկոնյանի մասին է:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 530, թ. 33:

[3] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, մայիս, թիվ 7 (31), էջ 131:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 56 և շրջերես:

«Ադրբեջանի մուսավաթական դահիճ կառավարությունը, որ անխնա սրի էր քաշում Ղարաբաղի անզեն հայ գյուղացիությանը, տապալվեց: Խան ու բեկերի ձեռքից իշխանությունն անցավ ադրբեջանական «կոմունիստների ձեռքը»[1]: Թերթը նշում էր, որ Ադրբեջանում տեղի ունեցած հեղաշրջման առաջին պահին թվում էր, թե Ղարաբաղում վերջ էին տրվելու կռիվներին ու կոտորածներին, և Այսրկովկասի երեք հանրապետությունների աշխատավորները հնարավորություն էին ստանալու համերաշխության ձեռք մեկնելու իրար: Բայց այդ միամիտ հավատը շատ շուտ մարեց. ընդամենը երկու օր հետո պարզ դարձավ, որ Ադրբեջանի «Հեղափոխական կոմիտեն» Մուսավաթի հաջորդն էր, որը հարազատորեն շարունակելու էր նրա քաղաքականությունը: Փոխանակ իր բանակները հայկական Ղարաբաղից ետ քաշելու, ընդհակառակը, Ադրբեջանի «սոցիալիստ» հրեշները Հայաստանի կառավարության առջև կտրուկ պահանջ էին դրել՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը «մաքրել» հայկական զինվորական ուժերից՝ սպառնալով արյունալի պատերազմով, որի նպատակն էր լինելու Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով անցնել ու միանալ Քեմալ փաշայի զորքերին: Թերթը շեշտում էր.

«Էնվերները, Քեմալ փաշաները, Հուսեինովները և Սուլթանովները՝ բոլորը, «խորհրդային» են դարձել: Անգլիական իմպերիալիզմի երկաթե ճիրաններից պետք է փրկել մեռնող Տաճկաստանը, ուստի Էնվերն ու Քեմալը «սոցիալիստ» են դարձել:

Իսկ այդ փրկությունն ուզում են հիմնել հայ ժողովրդի գերեզմանի վրա:

Դրությունը ծանր է ու մտահոգիչ, հայ ժողովուրդը գլխովին բնաջնջման առաջ է կանգնած: Մեր խաղաղ կյանքը նորից է փոթորկվում: Ի՞նչ ես անում, հա՛յ աշխատավոր: Արթնացի՛ր, հայրենիքդ վտանգի մեջ է...»[2]:

Հաջորդ համարում թերթը գրում էր, որ եթե գլուխները համիսլամական չալման փաթաթած թուրք շովինիստները դեռ կարող են մի պահ մոլորության մեջ գցել ռուս կոմունիստներին, «մեզ խաբել չեն կարող, որովհետև մենք նրանց լավ ենք ճանաչում, մենք գիտենք, որ նրանց կոմունիստական ճոռոմաբանության և կարմիր դրոշակների տակ թաքնված է նեղ համիսլամական էությունը»[3]: Ինչ վերաբերում էր Բաքվում կատարված «խորհրդավոր», այլ ոչ թե խորհրդային հեղաշրջմանը, ապա այն վարագույրի ետևում սարքված մի կատակերգություն էր, որի բոլոր դերակատարները ծանոթ մարդիկ էին, վաղեմի համիսլամականներ:

Իհարկե, այնուհետև շարունակում էր պաշտոնաթերթը, եթե կեղծ-խորհրդային ադրբեջանական կառավարությունը հաշտության ձեռք մեկներ, հայերն այդ ձեռքը օդի մեջ չէին թողնի: Այդ դեպքում կստեղծվեին կանոնա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 56 և շրջերես:

[2] «Յառաջ», 1920, 4 մայիսի:

[3] Նույն տեղում, 5 մայիսի:

վոր հարաբերություններ հարևան անկախ հանրապետությունների միջև, որոնց մեջ ղեկավար դեր կխաղային ռուսական հեղափոխության՝ հրապարակ հանած սկզբունքները: Իսկ եթե այդ կառավարությունը սպառնալիքից անցնի բացահայտ ագրեսիայի, ապա «մենք մինչև վերջին շունչը կդիմադրենք և թույլ չենք տա, որ զանազան գեղեցիկ լոզունգներով խեղդեն մեզ»[1]:

Մայիսի 2-ին Հ. Օհանջանյանը հետևյալ հեռագիրը հղեր Բաքու՝ Կովկասյան ռազմաճակատի հեղափոխական ռազմական խորհրդի անդամ Ս. Օրջոնիկիձեին, պատճենը՝ Ժողկոմխորհրդի նախագահ Լենինին.

«Ի լրացումը մայիսի 1-ի Ձեր վերջնագրի առթիվ, իմ կառավարությունը առաջարկում է Ձեր վերջնագրով առաջ քաշված հարցերի քննարկման համար նշանակել ժամանակ և տեղ՝ Հայաստանի կառավարության և Ֆեդերատիվ Խորհրդային Սոցիալիստական Ռուսաստանի կառավարության պատվիրակների հանդիպման համար»[2]:

Ադրբեջանի խորհրդայնացման մասին արդեն Ղարաբաղ ու Զանգեզուր ոչ ճշտված լուրեր էին հասել, բայց թե մեկ և թե մյուս երկրամասում դեռ անտեղյակ էին Հայաստանի կառավարության ստացած վերջնագրերին և ընդհանրապես Հայաստանի Հանրապետության նկատմամբ բոլշևիկների և Ադրբեջանի թուրքերի վերաբերմունքին, թեև նրանք գիտեին, որ Բաքվում կատարված հեղաշրջումից անմիջապես հետո Ադրբեջանի զանազան վայրերում բազմաթիվ ամենաթունդ մուսավաթականներ սկսել էին իրենց բոլշևիկներ հայտարարել, ստեղծել կեղծ հեղկոմներ, «հաստատել» խորհրդային կարգեր: Դա կատարվել էր նաև Ղարաբաղի և Զանգեզուրի արանքում ընկած «Քուրդիստան» կոչվող տարածքում հայտնի մուսավաթական պարագլուխներ և կատաղի հայատյացներ Սուլթանովների կողմից: Ուստի Ղարաբաղում գտնվող Զանգեզուր-ղարաբաղյան ռազմարշավային ջոկատի պետ Դրոն, նրա զինակիցները, Ղարաբաղի դաշնակցականները չէին շտապում իրենց կարծիքը հայտնել երկրամաս մտած ռուսական զորքերի, Ադրբեջանի բոլշևիկացման, այնտեղ հաստատված խորհրդային կարգերի մասին: Այդ բանն ակնհայտորեն արտահայտված էր, օրինակ, Դրոյի և ռազմարշավային ջոկատի շտաբի պետ Միրիմանյանի ստորագրությամբ Ղարաբուլաղ գյուղից Գարեգին Նժդեհին ուղարկված հետևյալ նամակում.

«Հարավային Ղարաբաղյան ջոկատի պետ, փոխգնդապետ Նժդեհին.

Ադրբեջանում բոլշևիզմի և Բաքուն գրավելու մասին լուրերը հաստատվում են: Երեկ Շուշիից ստացված նամակները Ձեզ եմ ուղարկում՝ ի գիտություն, որոնք ընթերցելուց հետո խնդրում եմ վերադարձնել: Շուշիից եկած հայուհին և թաթարները (նամակով) հաղորդում են, որ սպաները (մուսավա-

[1] «Յառաջ», 1920, 5 մայիսի:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 38:

թական բանակի: – *Ա. Ս.*) հանել են իրենց ուսադիրները, նետել զենքերը, Սուլթանովը կապել է կարմիր ժապավեն և այլն: Թեև բոլշևիզմը ակնհայտ է, բայց առայժմ, ինչպես տեսնում եք, թաթարներին առաջնորդում են Սուլթանովը, Նուրի փաշան և ուրիշներ: Ուստի մենք պետք է խիստ զգույշ լինենք: Գտնում եմ, որ ինչպես միշտ, Ադրբեջանում առաջին շրջանն անցնում է անցավագին, բայց, հավանաբար, շուտով կսկսվի բանակի (մուսավաթական: – *Ա. Ս.*) քայքայումը: Մեզ անհրաժեշտ է այժմ հակառակորդին հնարավորություն տալ ինչպես հարկն է կազմալուծվելու և ձեռնպահ մնալ ամեն մի ելույթից, քանզի դա կարող է նրանց ստիպել ինքնակազմակերպվելու: Մինչև բոլշևիզմի բնույթի պարզելը պետք է սպասողական դիրք գրավենք:

Սպասում եմ տեղեկությունների Երևանից և Ջիվանշիրից:

Մի՛ ձեռնարկեք հարձակողական գործողություններ և կազմակերպեցե՛ք Ձեզ վստահված շրջանի համառ պաշտպանությունը:

Բոլոր ճակատներում հանգիստ է»[1]:

Հայաստանի խորհրդարանը 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստում քննարկեց խորհրդայնացված Ադրբեջանի արտաքին գործերի կոմիսարիատի և Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների վերջնագրերի հետ կապված հանրապետության շուրջը ստեղծված քաղաքական նոր իրադրության հարցը: Նիստին ներկա էր կառավարության ամբողջ կազմը, դահլիճի՝ ունկնդիրներին հատկացված մասը լի էր խուռն բազմությամբ:

Լսվեց հանրապետության Արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանի հաղորդումը՝ ստացված վերջնագրերի մասին: Նշելով, որ վերջին օրերին Ադրբեջանում տեղի ունեցած դեպքերն «անմիջականորեն վերաբերում են մեր կենսական շահերին»՝ նախարարը հակիրճ նկարագրեց այդ երկրի՝ խորհրդայնացմանը նախորդած դեպքերը: Նա նշեց, որ նախքան Ադրբեջանում կատարված հեղաշրջումը Հայաստանի կառավարությունը Այսրկովկասում դաշնակից պետությունների ներկայացուցիչներից ստացել էր մի վերջնագիր, որից պարզ երևում էր, թե Ադրբեջանի նախկին «վարիչներն» ինչպիսի փորձեր են արել դաշնակիցների մոտ՝ արդարացնելու իրենց երկրի հյուսիսային սահմանների թույլ պաշտպանությունը: Բաքվի հիմնական պատճառաբանությունն այն էր եղել, թե Ադրբեջանը ենթակա է Հայաստանի զորքերի հարձակման վտանգին[2]:

Հայաստանի կառավարությունը դաշնակիցների ներկայացուցիչներին պատասխանել էր, թե ինքը լիակատար երաշխիքներ է տալիս, որ Հայաստանի կողմից Ադրբեջանի վրա ոչ մի հարձակում չի լինելու[3]: Միանգամայն պարզ էր, նշում էր Հ. Օհանջանյանը, որ Ադրբեջանը այդպիսի արագությամբ

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 9, թ. 7:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 1, նաև տե՛ս «Յառաջ», 1920, 7 մայիսի:

[3] Տե՛ս նույն տեղում:

չէր կարող գրավվել Կարմիր բանակի կողմից, եթե նրա կառավարությունը հաշվի առներ հյուսիսային սահմաններին սպառնացող վտանգը և իր զինված ուժերը՝ 10 հազար կանոնավոր զորքից և 10 հազար կամավորներից բաղկացած զորախումբը չուղարկեր Ղարաբաղ, «որոնք զբաղված էին կոտորելով խաղաղ հայ ազգաբնակչությանն ու ավերելով քաղաքներ ու գյուղեր»[1]:

Այնուհետև իր հաղորդման մեջ Հ. Օհանջանյանը պատգամավորներին տեղեկացնում էր ստացած վերջնագրերի և կառավարության կողմից ուղարկված պատասխանների բովանդակությանը: «Այս պատասխաններից դուք տեսնում եք,– ասում էր նա,– որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը տոգորված է գերազանց խաղաղասիրությամբ, և նրա բուռն ցանկությունն է բոլոր վեճերը լուծել փոխադարձ համաձայնությամբ»: Միաժամանակ, հիմք ընդունելով ժողովուրդների ինքնորոշման բարձր սկզբունքը, կառավարության նախարարը պարտքն էր համարում հայտնել, որ «...բովանդակ հայ ժողովրդի վճռական կամքի համաձայն՝ կառավարությունը և բանակը պատրաստ են ամեն գնով պաշտպանելու Հայաստանի սահմաններն ու անկախությունը՝ ում կողմից էլ վտանգ սպառնա նրան»[2]:

Արտաքին գործերի նախարարի հաղորդումից հետո խորհրդարանում ծավալվեցին բուռն քննարկումներ: Նշանակալից էր հատկապես դաշնակցական պատգամավոր Սահակ Թորոսյանի ելույթը: Նա նշում էր, որ «ռուսական կոմունիզմը պտուղ է զարգացած արդյունաբերության, որ այն բանվորության և գյուղացիության տիրապետությունն է Ռուսաստանում»[3]: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա, դեռ չազատագրված բեկական-խանական տիրապետությունից, դիմել է արկածախնդրության և իրեն հայտարարել կոմունիստական: Ուստի յուրաքանչյուր մարդ, ով ծանոթ էր հասարակական կյանքի պատմությանը, պետք է քաջ գիտակցեր, որ Ադրբեջանում կատարվում էր մի կեղծիք, և Հայաստանի խորհրդարանը պարտավոր էր պատռել «բոլշևիկացած» բեկերի ու խաների դիմակը և մերկացնել այդ կեղծիքը: «Իր կոմունիստական կյանքի երեք օրը դեռ չապրած,– ասում էր նա,– Ադրբեջանն անում է առաջին քայլը: Պետք էր սպասել, որ նա հանդես կգա նոր նշանաբաններով, որ բոլոր միջոցներով կձգտի վերջ տալու արյունահեղություններին: Բայց ո՛չ, դրա փոխարեն վերջնագիր է ուղարկում Հայաստանին և կամենում է Ղարաբաղի ու Զանգեզուրի ըմբոստ ժողովրդին իր ձեռքը գցել, հաստատել նրա վրա խանական տիրապետություն, կեղեքել ու ճնշել: Այս փաստն ինքնին մի անժխտելի ապացույց է այն բանի, որ Ադրբեջանի նոր կառավարությունը բնավ կոմունիստական չէ, մյուսների հին կառավարության հարազատ զավակն է ու նրա նպատակների մոլի հետապնդողը»[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 2:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, թ. 3:

Կասկած հայտնելով, թե գուցե Օրջոնիկիձեի և այլոց ստորագրությամբ ստացված վերջնագիրը Ադրբեջանի կեղծ տեղեկատվության արդյունք էր, քանի որ դրա բովանդակությունը չէր համապատասխանում ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի վրա հաստատված խորհրդային իշխանության քաղաքականությանը, Ս. Թորոսյանն այնուհետև նշում էր. «Մենք չենք կարող անտեսել, որ հայ ժողովուրդը կուլտուրական կապերով կապված է Ռուսաստանի հետ: ...Սակայն, հարգելով կուլտուրական կապը, մենք Սովետական Ռուսաստանին պարզ ու որոշ պետք է հայտարարենք, որ հայ ժողովուրդն ազատ պիտի լինի, որ նրա ինքնորոշվելու իրավունքը ոչ ոք խախտել չի կարող: Կոմունիստների՝ Մոսկվայի համագումարը* ի լուր աշխարհի հայտարարել է, որ սովետական իշխանությունը բոլոր ազատագրված պետություններին ազատ է թողնելու և նրանց ինքնուրույն զարգացման հնարավորություն է տալու: Հատկապես հայկական դատի նկատմամբ այդ նույն իշխանությունը թե՛ հատուկ դեկրետով** և թե՛ Խորհուրդների երրորդ համագումարում որոշակի դրական վերաբերմունք է դրսևորել հայ ժողովրդի նկատմամբ, ճանաչել և ընդունել է Հայաստանում պետականություն ունենալու՝ հայ ժողովրդի պատմական և իրավական իրավունքները: Այժմ հասել է ազատության ժամը, և սովետական իշխանությունը պետք է կատարի իր խոսքը՝ ճանաչելով ու ամրապնդելով մեր ազատությունը»: Երկարատև ծափահարությունների ներքո իր ելույթը այսպես է վերջացրել պատգամավորը. «Մենք կարող ենք բանակցություններ սկսել Ռուսաստանի հետ՝ ամուր ու անսասան կանգնելով Հայաստանի անկախության տեսակետի վրա: Եթե կառավարությունն ընթանա այս ուղիով, ժողովուրդն ու զորքը նրան զորավիգ կլինեն»[1]:

Ս. Թորոսյանի ելույթին հաջորդել են ուրիշ ելույթներ: Խնդրի քննարկմանը ակտիվորեն մասնակցել են Սեպուհը, Լևոն Թումանյանը, Արշակ Հովհաննիսյանը, Արշամ Խոնդկարյանը, Արշակ Ջամալյանը, Վահան Նավասարդյանը, Գերասիմ Բալայանը, Արշակ Շիրինյանը, Վահան Խորենին, Վահան Մինախորյանը, Հովակիմ Բուդաղյանը:

Սեպուհն իր ելույթում առանձնացնում էր Խորհրդային Ռուսաստանը և խորհրդայնացված Ադրբեջանը: Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ «մենք միշտ կարող ենք խոսել,– ասում էր նա,– որովհետև ռուսական հեղափոխական բանակն ու հեղափոխական իշխանությունը մեզ համար բոլորովին այլ արժեք և այլ նշանակություն ունեն», իսկ ինչ վերաբերում է «Խորհրդային» Ադրբեջանին, ապա, ինչպես երևում է, նա Հայաստանի և հայ

---

* Խոսքը ՌԿ(բ)Կ 9-րդ համագումարի մասին է:

** Նկատի ունի Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհրդի կողմից 1917 թ. դեկտեմբերին ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 4:

ժողովրդի նույնպիսի թշնամի է, ինչպիսին Մուսավաթի կառավարությունն էր: Խանդավառ ծափերի տակ Սեպուհը շարունակում էր. «Իմ զորամասն այսօր ուղարկած հեռագրով խոստանում է կռվել մինչև վերջին մարդը և մի թիզ հող չզիջել թշնամուն: ...Ես հայտարարում եմ ձեզ, որ այդ ոգով տոգորված է մեր ամբողջ բանակը, հենված նրա վրա, կառավարությունն աներեր հավատով պետք է առաջ տանի մեր հայրենիքի պաշտպանության գործը»[1]:

Միանգամայն այլ դիրքորոշմամբ էին հանդես գալիս խորհրդարանի սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների) ֆրակցիայի անդամներ Լ. Թումանյանը, Ա. Խոնդկարյանը, Վ. Մինախորյանը:

Լ. Թումանյանը նշում էր, որ Ադրբեջանում տեղի ունեցածը իսկական հեղաշրջում է, որ Մուսավաթը հեռացվել է իշխանությունից, որին օրինաչափորեն պիտի հաջորդի «հայկական Մուսավաթի՝ Դաշնակցության հեռացումը ասպարեզից, քանի որ «Անդրկովկաս է իջնում ռուս-հեղափոխական բանակը»[2]: Ա. Խոնդկարյանն այն կարծիքին էր, որ պետք է հաշվի առնել նոր իրողությունները, «համակերպվել դրանց հետ»: «Գալիս է խորհրդային իշխանությունը,– ասում էր նա,– և պատրաստ պիտի լինենք զիջումների՝ մինչև իսկ մեր անկախությունից հրաժարմանը: Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ելակետ ունենալով՝ մեզ մնում է մի բան՝ Հայաստանում հայտարարել խորհրդային իշխանություն»[3]: Քննադատելով կառավարության արևմտամետ քաղաքականությունը՝ Վ. Մինախորյանը պնդում էր, որ չպետք է շարունակել «կառչած մնալ Եվրոպայի փեշերից», քանի որ, այսպես կոչված, դաշնակիցները նույնպես «մեզանից արյուն են խլել»: Նա, առաջ քաշելով հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը՝ որպես ամենաառաջնային, իր ելույթում նշում էր. «...Վերջ պիտի տալ կնճռոտ հարցերը հայ-թուրքական մեթոդներով վճռելու եղանակին և ամբողջովին պիտի հենվել հեղափոխական Ռուսաստանի վրա…»[4]:

Միայն հեղափոխական Ռուսաստանի հովանու տակ Հայաստանը կարող էր պաշտպանել իր պետական անկախությունը. այս էր հայ սոցիալիստ-հեղափոխականների հիմնավոր տեսակետը[*]:

---

[1] «Յառաջ», 1920, 8 մայիսի:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[*] ՀՀ խորհրդարանի 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստում հայ սոցիալիստ-հեղափոխականների բռնած դիրքը չէր խոսում այն մասին, թե նրանք ընդհանրապես դեմ են եղել Հայաստանի պետական անկախությանը: Սոցիալիստ հեղափոխականների հայկական հատվածը թեև Հայաստանի Հանրապետության անկախության վերջին ճանաչողն էր, բայց անվերապահ ստանձնել էր Հայաստանի անկախության ամրապնդման և հայոց երկրի վերաշինության գործը: «Գլխավորապես Արշամ Խոնդկարյանի և Վահան Մինախորյանի ջանքերով էր, որ հայ սոցիալիստ-հեղափոխականները հայացան և դարձան հայ իրականության օրգանական մասը» («Յուսաբեր», 28 մարտի 1996 թ.): 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին

Մյուս բոլոր ելույթ ունեցողները դաշնակցականներ էին, որոնք Սեպուհի նման միատեսակ կարծիք ունեին ծավալվող իրադարձությունների մասին:

Ա. Հովհաննիսյանը, քննադատելով սոցիալիստ-հեղափոխական պատգամավորներին, ասում էր. «Պարոնա՛յք էսէռներ, ի վերջո հասկացեք, որ դուք չեք, որ պիտի մեզ կապեք Ռուսաստանի հետ: Մենք ողջունում ենք Սովետական Ռուսաստանը, եթե նա ճանաչում է մեր անկախությունն ու ազատությունը»: Ապա նա դիմում էր կառավարության՝ օթյակում նստած անդամներին. «Կառավարության համար թող պարզ լինի, որ ոչ մի գնով, ոչ մի պարագայում իշխանության թուլացում տեղի չպիտի ունենա: Դուք, պարոնա՛յք նախարարներ, ձեր խելքով, ձեր ամբողջ ուժով, հայ աշխատավորության ու պառլամենտի հետ միասին պիտի ծեծեք բոլոր դռները, պիտի սպառեք բոլոր միջոցները՝ փրկելու հայ ժողովրդի գոյությունը ու նրա հայրենիքի անկախությունը: Հայ աշխատավորության վճռական ու միահամուռ կամքն է՝ լինել ազատ ու ապրել Միացյալ և Անկախ Հայաստանում»[1]:

Ա. Շիրինյանը նկատում էր, որ ռուս բոլշևիկյան հեղափոխական բանակի հետ Այսրկովկաս էր իջնում նաև «Դաղստանի մուսուլման բանակը»: Նա համոզված էր, որ «Նարիմանովի «հեղկոմը» Սուլթանովի, Մուսավաթի, Իթթիհադի հարազատ եղբայրն է»[2]: Նույնը հաստատում էր Վ. Խորենին՝ ասելով, որ սխալ է Բաքվի «բոլշևիկյան» կառավարությունը նմանեցնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը [3]:

Հանդես գալով և պատասխանելով Լ. Թումանյանին՝ Հ. Բուդաղյանը նշում էր. «Մեզ խորհուրդ են տալիս եղբայրական ձեռք մեկնել Ռուսաստանին, բայց հետաքրքրական է իմանալ, թե այդ երբ է, որ մենք թշնամական ձեռք ենք մեկնել այդ նույն Ռուսաստանին: ...Ասում են նաև, թե հրաժարվեք իշխանությունից, բայց ու՞մ տանք երկրի ղեկը, ո՞րն է այն ուժը, որ պիտի հուժկու բազուկներով վարե մեր նավը: Կա՞ այդ ուժը, պարոնա՛յք էսէռներ: Հայ դեմոկրատիան վաղուց հանդես է բերել իր վճռական կամքն ու հաղթ

Հայաստանի Հանրապետության դեմ բոլշևիկ-քեմալական ուժերի համատեղ գործողությունները հայ սոցիալիստ-հեղափոխականներին քաղաքական կտրուկ շրջադարձի հրեցին Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցում, իսկ Հայաստանի Հանրապետության անկումից հետո նրանք կանգնեցին Հայաստանի խորհրդային իշխանությունների հակառակորդների շարքերում: Հայ սոցիալիստ-հեղափոխական ղեկավար գործիչները արտասահմանում տարիներ շարունակ՝ մինչև իրենց սերնդի վախճանը, հոդվածներով, հուշերով, ուսումնասիրություններով ակտիվորեն հանդես էին գալիս Դաշնակցության մամուլի զանազան օրգաններում (տե՛ս հատկապես Վահան Մինախորյանի բազմաթիվ հոդվածները «Հայրենիք» (Բոստոն) ամսագրում և այլ պարբերականներում):

[1] «Յառաջ», 1920, 8 մայիսի:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

ուժը՝ հանձին Հ. Յ. դաշնակցության, որ այժմ երկրի ղեկավարն է և պիտի մնա գալիք օրերին ևս»[1]:

Ոգեշունչ ելույթ ունեցավ Վ. Նավասարդյանը: «Հայրենիքը վտանգի մեջ է,– ասում էր նա:– Հենց այս րոպեին, երբ դուք քննության եք առնում Բաքվի նոտաները, թափվում է արյունը հայ մարդու Ղարաբաղի և Զանգեզուրի բարձունքներում»: Ռուսական բոլշևիզմի և Թուրքիայի մասնակցությամբ է տեղի ունենում դա, այն Թուրքիայի, որը «մեր ժողովրդի մի ամբողջ հատվածը դրեց հողի տակ»: Դարերի դառը փորձից եկել ենք այն վերջնական համոզման, որ «հայ ժողովրդի միակ փրկությունն իր իսկ կազմակերպված բազկի մեջ պիտի որոնել իսլամական ծովի մեջ»: Նկատի առնելով 1919 թ. Գորիս եկած անգլիական գեներալ Դ. Շատլվորթի հրամայական պահանջը, որ նա ներկայացրել էր Զանգեզուրի ազգային խորհրդին՝ Ադրբեջանին անվերապահորեն ենթարկվելու մասին, Վ. Նավասարդյանը նշում էր, որ ապագա պատմագիրը հիացմունքով պիտի արձանագրի «ըմբոստ Զանգեզուրի պատասխանը հզոր Բրիտանիայի ներկայացուցիչներին, երբ նրանք Բաքվի բրիտանական հրամանատարության կարգադրությամբ ուզում էին զորքեր մտցնել Զանգեզուր»: Նա մեջբերում էր Զանգեզուրի ազգային խորհրդի գրավոր պատասխանից այս հատվածը. «Մենք գիտենք, որ ձեր ետևից թուրք բանակն է գալիս Զանգեզուր, այդ պատճառով դուք միայն մեր դիակների վրայով կարող եք մեր երկրի սահմանները կոխել. թող որ աշխարհը իմանա, որ նաև Անգլիայի ձեռքով մեր արյունը հոսեց, մենք ձեզ կամովին մեր կյանքն ու հայրենիքը չենք հանձնի»: Այս մեջբերումն անելուց հետո խորհրդարանի պատգամավորների ծափերի ուղեկցությամբ Վ. Նավասարդյանը խորին համոզմունքով ասում էր. «Այդպես պիտի լինի նաև այսօր, երբ այդ հողամասը մտնողն արդեն «բոլշևիկ» դարձած Թուրքիան է»: Նա համոզված էր, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը կանեն այն, ինչ նրանց «առողջ բնազդն է հրահանգում»: «Բախտորոշ դեպքեր են կատարվում, և մեր միակուռ, միակամ պայքարն է, որ պիտի դիմագրավե և փրկե մեր փոթորկված նավը»[2]:

Ընդհանուր տրամադրությունն այն էր, որ կառավարությունը պատրաստ էր բանակցելու Ռուսաստանի հետ, բայց անսասան կանգնած էր Հայաստանի անկախության տեսակետի վրա: Խորհրդարանի բացարձակ մեծամասնությունը վճռական կեցվածք էր ընդունել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը, ունենալով հոծ հայություն, պետք է միանային Հայաստանին[3]:

Բաքվից ստացված երկու վերջնագրերի բուռն քննարկումից հետո խորհրդարանի դաշնակցական խմբակցության կողմից Հ. Բաղալյանը առաջարկեց բանաձևի հետևյալ նախագիծը.

---

[1] «Յառաջ», 1920, 8 մայիսի:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 4:

«Լսելով արտաքին գործերի նախարարի զեկուցումը՝ Ադրբեջանի կառավարության նոտայի և նրան տված պատասխանի մասին, պառլամենտը հավանություն է տալիս կառավարության ընթացքին ու միաժամանակ հրահանգում է նրան՝ ձեռք առնել բոլոր միջոցները՝ փրկելու հայ ժողովրդի գոյությունն ու ազատությունը»[1]:

Բանաձևը դրվեց քվեարկության և ընդունվեց 33 ձայնով: Հայաստանի խորհրդարանի 1920 թ. մայիսի 3-ի նիստին մենք հանգամանորեն կանդրադառնանք որպես հրատապ հարցի, որտեղ ծավալված քննարկումը և ընդունված բանաձևը, ինչպես կտեսնենք, տնական ազդեցություն պիտի ունենային «վիճելի տարածքների» խնդրում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականության վրա և կանխորոշելու էին հետագա ճակատագրական իրադարձություններում կառավարության բռնած դիրքը:

Խորհրդարանի որոշմանն ամենից առաջ սատար կանգնեց ՀՅ դաշնակցության բյուրոն, որը կուսակցության անդամների և կառավարության դաշնակցական նախարարների ուշադրությունը հրավիրեց այդ որոշումը սրբությամբ կատարելու անհրաժեշտության վրա:

«Յառաջ» թերթի մայիսի 7-ի համարից սկսած՝ թերթի 2-րդ և 3-րդ էջերը լի էին համախմբման կոչերով ու ազդերով՝ «Դավաճան է այն դաշնակցականը, ով այսօր Հ. Յ. դաշնակցության հետ չէ», «Դավաճան է այն կուսակցական մարմինը, որն այսօր իր բարձրության վրա չէ», «Դավաճան է նա, ով այսօր ժողովրդի և նրա հեղափոխական կառավարության հետ չէ», «Մեկտեղենք մեր ուժերը և, հանուն հայրենիքի ու հանրապետության, նեցուկ հանդիսանանք մեր հեղափոխական կառավարությանը» և այլն: Թերթի մայիսի 7-ի և 8-ի համարների առաջին էջերում ընթերցողը կարդում էր.

«Հ. Յ. դաշնակցության Բյուրոն, ի նկատի ունենալով հայրենիքին և պետությանը սպառնացող վտանգը, հայտարարում է կուսակցության բոլոր ուժերի մոբիլիզացիա: Այսօրվանից սկսած՝ յուրաքանչյուր շրջանի բոլոր դաշնակցական ընկերները պարտավոր են ներկայանալ տեղական մարմնին կամ Բյուրոյի լիազորին և նրանց տրամադրության տակ դնել իրենց բոլոր ուժերը: Յուրաքանչյուր անպարտաճանաչություն այս խնդրում համարվում է կուսակցական դավաճանություն և պետք է համապատասխան պատժի արժանանա:

Հ. Յ. դաշնակցության Բյուրո»[2]:

Իր խմբագրականում անդրադառնալով ՀՅԴ բյուրոյի այդ կոչին՝ «Յառաջը» գրում էր. «Դեպի գործ, որովհետև յուրաքանչյուր դաշնակցական և

[1] «Յառաջ», 1920, 8 մայիսի:
[2] Նույն տեղում, 7 և 8 մայիսի:

յուրաքանչյուր կուսակցական մարմին այս ծանր օրերին անքթիթ պահակ պիտի լինի հայրենիքի, ժողովրդի և իր հեղափոխական կառավարության»[1]:

Մայիսի 7-ին Հայաստանի զորքերի հրամանատարության շտաբը պաշտոնական հաղորդագրություն հրատարակեց բոլշևիկյան-քեմալական համագործակցության և նրանց կողմից Հայաստանի Հանրապետության դեմ պատերազմի պատրաստության մասին: Վերլուծելով Հայաստանի շուրջը ստեղծված վտանգավոր ռազմաքաղաքական կացությունը՝ շտաբը նաև նախազգուշացնում էր Ղարաբաղի և Զանգեզուրի կողմից ադրբեջանական և խորհրդային զորքերի ներխուժման սպառնալիքի խիստ իրական լինելու մասին: Ուշադրություն հրավիրելով այն բանի վրա, որ քեմալականների 15-րդ կորպուսը Քյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարությամբ պատրաստություններ էր տեսնում ռազմական գործողություններ սկսելու Հայաստանի դեմ՝ շտաբը իր հաղորդագրության մեջ շեշտում էր, որ «միաժամանակ ապստամբություններ պիտի սկսվեն Զանգիբասարում, Վեդիբասարում, իսկ ադրբեջանական զորքերը, Ղարաբաղի և Զանգեզուրի ռազմական կարևոր կետերն անվնաս դարձնելով իրենց համար և հայկական զորքերը հեռացնելով այդ կետերից, պետք է ուղիղ կապ հաստատեն Էրզրումի հետ՝ նոր կառուցվող Ալյաթ–Ջուլֆա երկաթուղագծով և Արաքսի հովտով»[2]:

Հայրենիքի համար այդ վտանգավոր պահին շտաբը կոչ էր անում՝ «ի մի հավաքել մեր ամբողջ ժողովուրդը իր կառավարության և քաջարի բանակի շուրջը»[3]:

Սակայն կառավարության մեջ ոչ բոլորն էին համակարծիք. խորհրդարանի որոշումը և ՀՅԴ բյուրոյի դիրքորոշումը շատերը համարում էին ծայրահեղական:

1920 թ. մայիսի 8-ին Հայաստանի Հանրապետության նորանշանակ վարչապետ Համո Օհանջանյանը, որը հինգ օր առաջ, երբ դեռ արտգործնախարար էր, հաղորդում էր արել խորհրդարանին, ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը և սպարապետ Թովմաս Նազարբեկյանը շտապեցին հրապարակել «Կոչ՝ Հայաստանի Հանրապետության բանակին և պետական պաշտոնյաներին», որում նշում էին. «...Ամենքին ծանոթ պետք է լինի արդեն այն, որ Խորհրդային Ռուսաստանը ամենից առաջ ճանաչել է Հայաստանի անկախության սկզբունքը և մտցրել իր սահմանադրության մեջ: Լավ պետք է գիտակցել, որ Ռուսաստանը ոչ մի կապ չունի այժմ թուրքերի և թաթարների հետ, իսկ մեր միակ թշնամիները հենց վերջիններս են»[4]:

Նման համոզմունքը շուտով ժխտվեց իրադարձությունների հետագա

---

[1] «Յառաջ», 1920, 8 մայիսի:

[2] Նույն տեղում, 9 մայիսի:

[3] Նույն տեղում:

[4] ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 27, թ. 1:

ընթացքով: Շատ չանցած՝ կառավարությունը նույնպես դարձավ միակամ, մանավանդ այն բանից հետո, երբ Հայ ժողովրդական կուսակցությունը, ի տարբերություն Հայ սոցիալիստ-հեղափոխականների, լիակատար համերաշխություն դրսևորեց խորհրդարանի որոշման և Հ. Յ. դաշնակցության բյուրոյի դիրքորոշման նկատմամբ: Մայիսի 6-ի ամսաթվով այդ կուսակցության՝ Հայաստանի կոմիտեն հետևյալ նամակն ուղարկեց հանրապետության վարչապետին.

«Սրանով պատիվ ունեմ հայտնելու Ձեր կառավարության, որ Հայ ժողովրդական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն միաձայն որոշեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը և ազատությանը սպառնացող խոշոր վտանգի հանդեպ ցույց տալ Հայաստանի կառավարության եռանդուն աջակցություն, պաշտպանելու իրավակարգը երկրում և պաշտպանելու Միացյալ Հայաստանի անկախությունը ամեն տեսակ ոտնձգություններից:

Կոմիտեի փոխնախագահ՝ Հ. Հովհաննիսյան»[1]:

Հայրենիքի համար այդ օրհասական պահին, երբ հանրապետությանը վիճակված էր դիմագրավել արտաքին ահռելի վտանգը, ծագեց մի ուրիշ վտանգ ևս, այս անգամ երկրի ներսում:

Դեռևս ապրիլի կեսերին ՀՅ դաշնակցության բյուրոն կառավարությանն առաջարկ էր ներկայացրել Աշխատավորների միջազգային համերաշխության օրը՝ Մայիսի 1-ը, առաջին անգամ անկախ Հայաստանում մեծ շուքով նշելու մասին:

Ապրիլի 30-ի առավոտյան ՀՅ դաշնակցության պաշտոնական ներկայացուցիչը վարչապետ Ա. Խատիսյանին հայտնեց, որ նկատի ունենալով բանվորական տոնի բնույթը՝ կուսակցության բյուրոն որոշել էր իր վրա վերցնել փողոցներում կարգապահության պահպանությունը և ժողովրդական ցույցերի ղեկավարությունը:

«Ես այդ հայտարարութիւնը ընդունեցի ի գիտութիւն,– գրել է Ա. Խատիսյանը,– բայց, այնուամենայնիվ, հրավիրեցի ինձ մոտ քաղաքապետ պ-րն Ա. Շահխաթունիին եւ հայտնեցի անոր, որ թեեւ կուսակցութիւնը իր վրա կ՚վերցներ տոնակատարութեան վերահսկողութիւնը, բայց այդ չազատէր իշխանութիւնները պատասխանատուութենէ կարգապահութեան համար, ուստի քաղաքի իշխանութիւնները պարտավոր են աչալուրջ հետեւիլ այն բոլորին, ինչ որ տեղի է ունենալու փողոցներու մէջ»[2]:

Նույն օրը վարչապետին ներկայացավ նաև տոնակատարության կարգադրիչ հանձնախմբի նախագահ, Հայաստանի արհեստակցական կազմա-

---

[1] «Յառաջ», 1920, 8 մայիսի:

[2] **Ա. Խատիսեան**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ տպագրութիւն, Պէյրութ, 1968, էջ 210:

կերպությունների միության նախագահ Ավալյանը և նրան հավաստիացրեց, որ մայիսի 1-ին ամեն բան կընթանա կանոնավոր կարգապահությամբ:

Մայիսի 1-ի առավոտյան Երևանի կենտրոնական մասում կախված էին պաստառներ ու կարգախոսներ՝ հետևյալ կոչերով ու բովանդակությամբ. «Կեցցե՛ ազգերի համերաշխությունը», «Անկախ և Միացյալ Հայաստանի աշխատավորությունը ողջունում է Մայիսի 1-ի մեծ տոնը», «Ամբողջ իշխանությունը՝ աշխատավորությանը», «Կեցցե Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը և գյուղացիությունը»: Շքերթը շուտով պիտի սկսվեր, և շարքերի առջևից պիտի գնար բեռնակիր մի մեծ ավտոմոբիլ, որը զարդարված էր պաստառներով, դրոշակներով, ծաղիկներով, Կարլ Մարքսի, Քրիստափոր Միքայելյանի, Ստեփան Շահումյանի, Սիմոն Զավարյանի, Լևոն Աթաբեկյանի և Ռոստոմի նկարներով: Քիչ հետո եղած կարգախոսներին ավելացան նորերը՝ «Կեցցե՛ երրորդ ինտերնացիոնալը», «Կեցցե՛ սոցիալիզմը»[1]:

Դեռ նոր էր սկսվել մայիսմեկյան հանդիսությունը, երբ այն աստիճանաբար վերածվեց ցույցի, ապա փոխվեց գրոհի՝ հանրապետության կառավարության և Դաշնակցության դեմ: Նույնը կատարվեց նաև Ալեքսանդրապոլում, Սարիղամիշում, Ղարսում, Դիլիջան–Իջևանում, Նոր Բայազետում:

Ցույցերը, միտինգները, բողոքները ամբողջ մայիս ամսվա ընթացքում հանրապետության տարբեր քաղաքներում և շրջաններում փոխարկվեցին ապստամբական ելույթների, որոնք գլխավորում էին բոլշևիկները: Ապստամբությունը նպատակ ուներ Կարմիր բանակի օգնությամբ Հայաստանում ևս հաստատելու խորհրդային իշխանություն:

Շփոթի մատնված կառավարությունը կարողացավ ուշքի գալ և վճռական միջոցների դիմել՝ երկրում կարգն ու հանգստությունը վերականգնելու համար: «Ակներև էր,– գրել է Սիմոն Վրացյանը,– որ կառավարական մեքենան ի վիճակի չէր բռնկված հրդեհը մարելու: Ճիշտ է, մայիսի 3-ին կատարվել էր նախարարների խորհրդի մասնակի լրացում. կառավարության մեջ մտցվել էին Ա. Ջամալյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Վրացյանը, որով Հ. Յ. Դ. բյուրոյի անդամների մեծ մասը դառնում էր նախարար, բայց կառավարելու եղանակը՝ խորհրդարանական դանդաղաշարժ մեքենայով, չէր համապատասխանում վայրկյանի պահանջին: Անհրաժեշտ էր արագաշարժ ու վճռական իշխանություն: Հարկավոր էին կտրուկ միջոցներ: Այդ կարող էր տալ միայն Հ. Յ. դաշնակցությունը»[2]:

Մայիսի 4-ի լույս 5-ի գիշերը տեղի ունեցավ ՀՅ դաշնակցության խորհրդարանական խմբակցության և կուսակցության գլխավոր վարիչ

---

[1] Տե՛ս «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը)», Նյութեր և փաստաթղթեր, էջ 40-41:

[2] **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 390:

մարմնի՝ Բյուրոյի համատեղ նիստ, որը սկսված ապստամբությունը ճնշելու համար որոշում ընդունեց դիմելու արտակարգ միջոցների և, որպես հիմնական քայլ, առաջարկում էր «կազմել նոր կառավարություն, որը բաղկացած լինի միայն Հ. Յ. Դ. Բյուրոյի անդամներից և օժտված լինի դիկտատորական լիազորություններով: Կառավարության նախագահի պաշտոնի համար խորհրդակցությունն առաջադրում է Բյուրոյի անդամ Համո Օհանջանյանին»[1]:

Մայիսի 5-ին գումարվեց խորհրդարանի արտակարգ նիստ, որն ընդունեց Ա. Խատիսյանի և նրա դահլիճի հրաժարականը: Նույն նիստում խորհրդարանը նշանակեց նոր կառավարություն՝ հետևյալ կազմով՝ վարչապետ և արտաքին գործերի նախարար՝ Համո Օհանջանյան, ներքին գործերի և զինվորական՝ Ռուբեն Տեր-Մինասյան, ելևմտային՝ Աբրահամ Գյուլխանդանյան, հաղորդակցության՝ Արշակ Ջամալյան, գյուղատնտեսության, պետական գույքի և աշխատանքի՝ Սիմոն Վրացյան, խնամատարության՝ Սարգիս Արարատյան, հանրային կրթության և արվեստի՝ Գ. Ղազարյան»[2]:

Այսպիսով՝ ՀՅ դաշնակցության բյուրոն իր ամբողջ կազմով անցավ իշխանության գլուխ: Խորհրդարանը որոշեց մեկ ամսով դադարեցնել իր գործունեությունը և ելնելով երկրում ստեղծված արտակարգ ծանր վիճակից՝ օրենսդիր և գործադիր ողջ իշխանությունը հանձնել Բյուրո-կառավարության ձեռքը: Խորհրդարանի կամքով երկրում, փաստորեն, հաստատվեց դաշնակցական կուսակցության դիկտատուրա:

Նոր կառավարությունն անմիջապես հայրենիքը հայտարարեց վտանգի մեջ և կոչով դիմեց ժողովրդին, որտեղ նաև ասված էր.

«Քաղաքացինե՛ր, Հայաստանը կարիք ունի հանգստի և համերաշխության, ո՛չ մի հուզում, ո՛չ մի խլրտում – ամեն ոք պետք է գտնվի իր գործի և պաշտոնի գլխին: Զինված՝ պառլամենտից ստացած արտակարգ լիազորություններով՝ կառավարությունը դիմում է ձեր քաղաքացիական գիտակցությանը և հրավիրում ամենքիդ հայ ժողովրդի գոյության այս ճգնաժամային վայրկյանին համախմբվել կառավարության շուրջը, որի նշանաբանն է՝ Հայաստանի անկախության և ազատության պաշտպանությունն ու ներքին դեմոկրատիկ կարգերի ամրապնդումը: Այս նպատակներն իրագործելու համար կառավարությունը չի խնայի և ո՛չ մի ճիգ, և նա կհաղթի ձեզ հետ և ձեզ համար»[3]:

Բյուրո-կառավարությունը հայտարարեց բոլոր դաշնակցականների ընդհանուր զորաշարժ: Դաշնակցական բոլոր հայտնի գործիչները լայն

---

[1] **Ա. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 214-215:

[2] **Մ. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 390:

[3] Նույն տեղում, էջ 391-392:

լիազորություններով մեկնեցին գավառները: Ամեն տեղ կազմվում էին կամավորական զինված խմբեր և իրենց դնում կառավարության տրամադրության տակ: Խմբապետ Սեպուհի գլխավորությամբ կազմվեց մի առանձին զորամաս՝ Ալեքսանդրապոլը վերագրավելու համար: Արագորեն շարժման մեջ դրվեցին նաև կանոնավոր զորքերը: Հիմնվեց արտակարգ դատարան: Երկրում հայտարարվեց արտակարգ դրություն:

Կառավարության այս քայլերը պաշտպանություն գտան հասարակական լայն շերտերում: Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության՝ Երևանի կոմիտեն կոչով դիմեց հանրապետության բանվորներին, գյուղացիներին, բոլոր քաղաքացիներին՝ դատապարտելով ապստամբության կազմակերպիչներին: «Ամեն մեկիդ սրբազան պարտականությունն է,– ասված էր կոչի մեջ,– այս ծանր օրերին ձեր ուժի ու եռանդի, շնորհքի և ընդունակության մաքսիմումը նվիրաբերել վտանգված հայրենիքի պաշտպանության գործին»[1]:

Նույնքան վճռական էին Հայ ժողովրդական կուսակցության[2], Ռամկավար կուսակցության[3], Անկուսակցականների միության, Հայաստանի արհմիությունների խորհրդի կոչերը[4], որոնցում անվերապահորեն դատապարտվում էր ապստամբությունը, և ժողովրդին հրավեր էր ուղղվում՝ ամեն ինչով աջակցելու կառավարությանը՝ երկրում կարգը արագորեն վերականգնելու համար:

Քաղաքացիական կռվից ու արյունահեղությունից խուսափելու նպատակով կառավարությունը փորձեց խաղաղ միջոցներով կարգավորել խնդիրը, բայց դա նրան չհաջողվեց: Երբ այդ ուղղությամբ թափած բոլոր ճիգերն անցան ապարդյուն, կառավարությունն ապստամբների դեմ շարժեց զինված ուժեր: Ապստամբության կենտրոն Ալեքսանդրապոլը գրավելուց հետո զինված ելույթները մեկը մյուսի ետևից ճնշվեցին Ղարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Դիլիջանում: Երկու շաբաթվա ընթացքում կառավարությունն ամբողջ երկրում վերականգնեց կարգը:

Երբ ապստամբությունը դադարեցված էր, մայիսի վերջին ապստամբական կարճատև բռնկում եղավ Զանգեզուրում, որի մասին հանգամանալից կխոսվի հետագա շարադրանքի ընթացքում:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերջնագիր ներկայացնելուց հետո Ադրբեջանի խորհրդային կառավարությունը Կովկասյան ճակատի հրամանատարությանը ցուցում տվեց՝ անհապաղ զորքեր մտցնելու Լեռնային Ղարաբաղ, Զանգեզուր ու Նախիջևան և հսկողության

---

[1] «Յառաջ», 1920, 16 մայիսի:

[2] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 395:

[3] Տե՛ս «Յառաջ», 1920, 19 մայիսի:

[4] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 394:

տակ առնելու հայ-ադրբեջանական վեճի առարկա հիշյալ տարածքները: Այդ մասին ՌԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն հետո՝ 1920 թ. հուլիսի սկզբին, ընդունեց հատուկ որոշում, որտեղ մասնավորապես ասված էր. «Ռուսական զորքերի կողմից գրավման ենթակա վիճելի տերիտորիաների բնակչությանը բացատրել, որ այդ տերիտորիաները մեր զորքերի կողմից գրավվում են ժամանակավորապես՝ ազգամիջյան կոտորածներ թույլ չտալու համար: Այդ տարածքների պատկանելության հարցը կլուծվի խառը հանձնաժողովի միջոցով, Ռուսաստանի ներկայացուցչի նախագահությամբ, ընդ որում, հանձնաժողովը կղեկավարվի բնակչության ազգային կազմով»[1]:

Վերջնագրային սպառնալիքներից հետո կարմիր հրամանատարությունը և Ադրբեջանի բոլշևիկյան կառավարությունն անցան կոնկրետ գործողությունների:

Ինչպես մուսավաթականները, Ադրբեջանի նոր ղեկավարները նույնպես իրենց անհետաձգելի խնդիրն էին համարում որքան կարելի է շուտ գրավել Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը, իրականացնել «Մեծ Ադրբեջան» ստեղծելու ծրագիրը՝ անմիջականորեն կապ հաստատելով Թուրքիայի հետ: Դա պանթուրքիզմի կենդանի ձայնն էր, որ լսվում էր երկու կողմերից՝ Թուրքիայից և Ադրբեջանից:

Գործի դրվեց հայկական մարզերը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը զենքով նվաճելու ծրագիրը:

Մուսավաթական բանակն արագորեն վերակազմվեց Խորհրդային Ադրբեջանի Կարմիր բանակի: «Իսլամ բանակի» ասկյարները, համազգեստը փոխելով, մեկ օրում դարձան «կարմիր ասկյարներ», իսկ մուսավաթական բանակի նախկին հրամանատար Ալի-Աղա Շիխլինսկին, մուսավաթական կառավարության նախկին ռազմական նախարար Սամեդբեկ Մեհմանդարովը, զինվորական գործիչներ Հուսեին խան Նախիջևանսկին, Ի. Ուսուբովը, երեկվա ուրիշ բարձրաստիճան մուսավաթականներ դարձան «կարմիր» հրամանատարներ[2]:

Հետագայում նրանց մեծ մասը նույնիսկ մտավ Կոմունիստական կուսակցության շարքերը: Ահա այդ հայատյացներն էին, որ պիտի գային «դաշնակների լծից ազատագրելու» Ղարաբաղն ու Զանգեզուրը:

Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ ռուս-բոլշևիկյան և ադրբեջանական լայնածավալ ներխուժման վտանգի հանդեպ Հայաստանի կառավարությունը պետք է որոշեր իր կոնկրետ անելիքները: Արդյոք կառավարությունը հայկական այդ երկու երկրամասերի նկատմամբ շարունակելո՞ւ էր վարել նախկին կրավորական քաղաքականությունը, թե՞ հիմա արդեն ավելի

---

[1] ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու, ց. 1, գ. 2, թ. 67-71:

[2] Տե՛ս **А.-А. Шихлинский**, Мои воспоминания, Баку, 1984, с. 176-177:

ակտիվորեն էր միջամտելու Ղարաբաղում և Զանգեզուրում սպասվելիք իրադարձություններին:

Ինչ խոսք, Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ Հայաստանի կառավարության՝ նախկինի պես կրավորական կամ նոր, ակտիվ քաղաքականություն վարելը պայմանավորված էր հանրապետության ռազմական ներուժով: Արդյո՞ք Հայաստանն ի վիճակի էր իր սեփական զինական հնարավորություններով սատար կանգնելու հայկական երկրամասերի անվտանգությանը, նրանց փաստացի անկախությունը կռվով պաշտպանելու բոլշևիկացած Ադրբեջանի թուրքերի զինված հրոսակախմբերից:

Հայաստանում և Վրաստանում հայ հասարակական կարծիքը, չհաշված հայ կոմունիստներին և հայ սոցիալիստ-հեղափոխականներին, ամբողջովին ազրեսորներին վճռական դիմադրություն ցույց տալու կողմն էր: Երևանում և Թիֆլիսում լույս տեսնող թերթերը շարունակում էին տագնապ բարձրացնել, միաժամանակ ժողովրդին հոգեբանորեն նախապատրաստել այս անգամ ոչ միայն թուրք-թաթարների, այլև ռուսական ուժերի դեմ կռվելու համար:

«Ժողովուրդ» թերթը «Ռուսների արարքը» վերտառությամբ հոդվածում գրում էր. «Այն օրը, երբ տանջալից երկունքի մեջ ծնվում է մեր ազատությունը և անկախությունը, երբ մեր ազատատենչ ազգային կամքի ուժի հանդեպ մոլորվել են մեր դահիճները, մեր հինավուրց թշնամիները՝ թուրքերը և թաթարները, երբ, վերջապես, Եվրոպան, խոնարհվելով նահատակ ժողովրդի մեծ տառապանքի առջև, անկախության թագով է պսակում նրա ծերուկ գլուխը, [այդ նույն օրը] մեր երկրին, մեր դարավոր իղձերի իրականացմանը սպառնում են ... ռուսները: Պարզելով ազատության կարմիր դրոշակ՝ [նրանք] դաշնակցել են Ադրբեջանի թաթարների հետ: Ռուս «դեմոկրատիան» ավելի անամոթ դուրս եկավ, քան ցարական Ռուսաստանը: Այս վերջինս, իր գործակալների միջոցով կազմակերպելով հայ-թուրքական կոտորածները, ինքը մնում էր կուլիսների ետևում, և նրա գազանային դիմագծերը չէին երևում: Այժմ ... խորհրդային վաշտերը, դաշնակցած թուրքերի և թաթարների հետ, գալիս են ոչնչացնելու հայ ժողովրդի փայփայած երազը»[1]:

Նույն թերթը նույն համարում զետեղած «Բոլշևիկների պահանջը Ղարաբաղի մասին» հոդվածում արձանագրում էր. «Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության ջահակիրներն այժմ միացած են մահմեդական թուրքական երկրների արյունռուշտ փաշաների, խանների հետ: Իրենց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ջատագովներ հռչակած [բոլշևիկները] բռնի ուժով ցանկանում են հոծ հայկական մեծամասնություն ունեցող Լեռնային Ղարաբաղը հպատակեցնել Ադրբեջանին: Դրանով, իհարկե, բոլշևիկա-թուրքական դաշնակիցները չպիտի բավականանան, այլ կաշխատեն իրագործել իրենց վաղեմի ծրագիրը՝ Հայաստանի վրայով միանալ Անատո-

[1] «Ժողովուրդ», 1920, 3 հունիսի:

լիայի թուրք «կարմիր» ազգայնականներին, պայքարելու համար դաշնակիցների դեմ»[1]: Այնուհետև նշելով, որ «մեր հանրապետությանը, մեր ժողովրդին սպառնում է նոր վտանգ», հոդվածագիրը շեշտում էր. «... Հայ ժողովուրդը չպետք է թույլ տա, որ իր պապենական հողից մի թիզ անգամ գրավեն թշնամիները: Ղարաբաղը եղել է հայկական և պիտի կցվի մայր հայրենիքին: Հայ ժողովուրդը միահամուռ կդիմադրի իր գոյությանը վտանգող և անկախության սրբազան իրավունքը ոտնահարելու ձգտող բոլշևիկա-պանթուրքիստական բլոկի ամեն մի փորձին»[2]:

Ժողովրդին զգոնության և կենաց ու մահու կռվի կոչ էին անում «Մշակը» (Թիֆլիս), «Հայաստանի կոոպերացիան» և ուրիշ պարբերականներ:

Տեսնելով իր ազգային տարածքները պաշապանելու հայ քաղաքական ուժերի, ամբողջ հայ ժողովրդի անկոտրում կամքն ու վճռականությունը՝ խորհրդային բանակի հրամանատարությունը և Ադրբեջանի կոմունիստ իշխանավորները որոշ չափով փոխեցին իրենց վերջնագրային լեզուն և Երևանին բանակցությունների առաջարկ արեցին:

Մայիսի 8-ին Երևանում ռադիոհաղորդագրություն ստացվեց Բաքվից. Ադրբեջանի արտգործժողկոմի տեղապահ Հուսեինովի դիմումն էր «հայ ժողովրդին և հայկական կառավարությանը» (պատճենը՝ Լենինին, Չիչերինին, բոլորին): Ըստ էության դա հերթական նոտա էր Հայաստանի կառավարությանը՝ շղարշված հայ ժողովրդի նկատմամբ «բարիդրացիական զգացմունքներով»:

Դիմումը սկսվում էր հայ-մուսուլմանական հարաբերությունների համառոտ պատմական ակնարկով: Հուսեինովը նշում էր, որ «Կովկասում ցարական տիրապետության ամբողջ ընթացքում մշտապես հոսել է տեղական ժողովուրդների անմեղ արյունը», որ հայերի և մուսուլմանների միջև տեղի ունեցած բոլոր ընդհարումները բացառապես հրահրել է ցարիզմը: Ռուսական միապետության տապալումից հետո այդ հանցավոր քաղաքականությունը շարունակել են մուսավաթական և դաշնակցական կառավարությունները:

Հուսեինովը Դաշնակցությանը հարուցում էր 1918 թ. Նախիջևանի, Շարուր–Դարալագյազի, Նոր Բայազետի, Էջմիածնի գավառներում, 1920 թ. Կարսի, Զարիշատի, Չըլդրի, Շորագյալի, Սուրմալուի, Զանգիբասարի, Երևանի նահանգի հարավային մասերի, Սևանա լճի հարավային եզերքների մուսուլմանական գյուղերում կոտորածներ կազմակերպելու մեղադրանքը:

Արտգործժողկոմի տեղապահը հատկապես կանգ էր առնում 1918-1920 թթ. Զանգեզուրում տեղի ունեցած կռիվների վրա՝ նշելով, որ այդ ժամանակաշրջանում իսպառ բնաջնջվել են տասնյակ մուսուլմանական գյուղեր[3]:

---

[1] «Ժողովուրդ», 1920, 3 հունիսի:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 112, թ. 6:

Նկարագրելով մուսուլմանների կրած տանջանքներն ու սարսափները հայերից՝ Հուսեինովը գոնե մեկ օրինակ չէր բերում, թե այդ նույն ժամանակահատվածում հայերն ինչ տանջանքներ են կրել թուրք-թաթարներից: Նա այն տեսակետն էր հայտնում, թե հայ-մուսուլմանական կռիվներն ու ջարդերը կշարունակվեն, քանի դեռ դաշնակցականները իշխանության ղեկի մոտ են Հայաստանում: Եթե Հայաստանը խորհրդայնացվի, ապա «Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությունը իսկույն նրա հետ ընդհանուր լեզու կգտնի»: Այնուհետև, իբրև մտահոգ հայ ժողովրդի ճակատագրով, Ադրբեջանի թուրք դիվանագետը փորձում էր համոզել, թե իր կառավարությունը երբեք չի մտածել և չի մտածում նվաճողական նպատակներ հետապնդել հարևան երկրների գյուղացիության և բանվորության նկատմամբ: «Ադրբեջանի աշխատավորությունը միայն մի ցանկություն ունի՝ Դաշնակցական կառավարության լծի տակ հեծող ... Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին ազատ տեսնել»[1]:

Եվ այս զավեշտը՝ հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ «մտահոգությունը», արտահայտվում էր մի մարդու բերանով, որն ընդամենը մի քանի օր առաջ՝ ապրիլի 30-ին, Երևան հղած իր վերջնագրով սպառնում էր այդ ժողովրդին ու նրա օրինական կառավարությանը:

Դիմումի վերջում Ադրբեջանի արտժողգործկոմի տեղապահը գրում էր, որ «չնայած Հայաստանի բանվորությունն ու գյուղացիությունը դեռ չեն թոթափել դաշնակցականների լուծը», այնուամենայնիվ Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության կառավարությունը մեծապես շահագրգռված է, որ անհապաղ դադարեցվեն ազգամիջյան արյունահեղ ընդհարումները, և այդ նպատակով «ներկայիս գոյություն ունեցող հայկական կառավարությանն առաջարկում է գոյություն ունեցող վիճելի հարցերի լուծման համար բանակցությունների մեջ մտնել՝ ուղարկելով իր ներկայացուցիչներին Բաքու քաղաք սույն թվի մայիսի 15-ից ոչ ուշ»[2]:

Թեև այս անգամ անհամեմատ մեղմ էր դիմումի լեզուն, բայց այն նորից վերջանում էր հրամայական շեշտով՝ գալ «Բաքու քաղաք սույն թվի մայիսի 15-ից ոչ ուշ»:

Հայաստանի կառավարությունը Բաքվից ստացված, Հուսեինովի կողմից ստորագրված դիմումին հեռագրով պատասխանեց բավական ուշացումով՝ մայիսի 13-ին (պատճենը՝ Լենինին և Չիչերինին): Պատասխանը ստորագրել էր վարչապետ և արտգործնախարար Համո Օհանջանյանը:

Հայաստանի արտգործնախարարը Ադրբեջանի նոր կառավարության դիմումի բովանդակությունը համարում էր բնական, քանի որ ապրիլի 28-ի հեղաշրջումը «էապես ոչ մի փոփոխություն չէր մտցրել Ադրբեջանի պետա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 112, թ. 6:

[2] Նույն տեղում, թ. 7:

կան քաղաքական կյանքի մեջ»: Դրա վառ ապացույցը, գրում էր Օհանջանյանը, Հայաստանին տրված նոտաներն էին, որոնք ոչնչով չէին տարբերվում մուսավաթական կառավարության նոտաներից: Հայերի սարսափելի կոտորածներ կազմակերպած Էնվեր, Խալիլ և Նուրի փաշաների հետ ադրբեջանցի կոմունիստ ղեկավարների սերտ հարաբերությունները, Մուստաֆա Քեմալի հետ բարեկամությունը «Հայաստանի կառավարությանը հիմք չեն տալիս Ադրբեջանի այժմյան կառավարությունը համարել դեմոկրատական և սոցիալիստական»:

Ինչպես և պետք էր սպասել, Հ. Օհանջանյանը գրում էր, որ մայիսի 8-ի նոտայի մեջ վկայակոչելով մուսուլմանների նկատմամբ հայերի իբր կատարած բռնությունները՝ Ադրբեջանի կառավարությունը «մոռանում է» այն բոլոր արհավիրքները, որ հայերին հասցրել են օսմանյան թուրքերը և կովկասյան թաթարները: «Դուք բոլորովին չեք հիշում բոլորին հայտնի մասսայական այն գազանությունները, որ տեղի ունեցան Նուխիի, Արեշի, Գանձակի, Շամախու, Ղարաբաղի, Գողթանի խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ: Հայ աղջիկներն ու կանայք դեռ այսօր ձեր կառավարության օրոք շարունակում են տանջվել Ադրբեջանի մուսուլմանների հարեմներում, գերության մեջ: Հայ բազմաթիվ աշխատավոր գյուղացիությունն այսօր [Ադրբեջանում] գտնվում է ստրուկի դրության մեջ և ձեր հանրապետության տերիտորիայի զանազան վայրերում օգտագործվում է որպես գրաստ: Նուրի փաշան շարունակում է գործել Ջիբրայիլում, Ղարաբաղի հայկական կոտորածների կազմակերպիչ Սուլթանովը, կրելով կարմիր ժապավեն, նորից գտնվում է իշխանության մեջ»[1]:

Վկայակոչելով այս անվիճելի փաստերը՝ Հայաստանի արտգործնախարարը, այնուամենայնիվ, ընդունելի էր համարում երկու հանրապետությունների ներկայացուցիչների հանդիպումը, բայց ոչ Բաքվում: Նա գրում էր. «Հարատև խաղաղասիրական զգացմունքից դրդված՝ իմ կառավարությունն ընդունում է ձեր կառավարության առաջարկությունը՝ բանակցություններ սկսել երկու հանրապետությունների միջև գոյություն ունեցող բոլոր վիճելի հարցերը լուծելու համար: Որպես լիազոր ներկայացուցիչներ՝ Հայաստանի կառավարությունը նշանակում է Բաքվում իր դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանին, ինչպես նաև ... Պապովյանին ու բժ. Յուզբաշյանին, որոնց, խնդրում եմ, այդ մասին տեղեկացնել: Բանակցությունների համար իմ կառավարությունն առաջարկում է Ղազախ քաղաքը, ուր բանակցությունները սկսելու համար կմեկնեն ևս երկու հոգի, որոնք կնշանակվեն իմ կառավարության կողմից: Սպասում եմ ձեր պատասխանին»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 112, թ. 4:

[2] Նույն տեղում:

Մինչ Երևանն անկեղծորեն ձգտում էր հարցերը լուծել բանակցությունների միջոցով, գործողությունները զարգանում էին այլ ուղղությամբ: 1920 թ. մայիսի 5-ին 11-րդ Կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի զորամասերը գրավեցին Աղստաֆան, Փոյլին և դուրս եկան Ղազախ: Մյուս ուղղությամբ գրավելով Եվլախը՝ կարմիր զորքերը մայիսի 8-ին գրավեցին Բարդան, մայիսի 9-ին՝ Աղդամը: Մայիսի կեսերին Գյանջայի շրջան սկսեցին ժամանել նաև 20-րդ դիվիզիայի զորամասերը:

Մինչ Կարմիր բանակը պատրաստվում էր մտնել Ղարաբաղ, այնտեղի մուսուլմանական ուժերը միավորվում էին և իրենց հայտարարում Կարմիր բանակի մասեր: Շուշիի և բուն Զանգեզուրի միջև ընկած թուրքական ու քրդական տարածքների մուսուլմանական զինված հրոսակախմբերը միավորվելով հայտարարեցին, թե համարվում են Կարմիր բանակի զորամասերից մեկը՝ կրելով 281-րդ գունդ անվանումը: Այդ ամենն արվում էր Բաքվի նարիմանովյան կառավարության թելադրանքով:

Իրենց հերթին միավորվում էին Ղարաբաղի հայկական զինված ջոկատները և իրենց հայտարարում հայկական հանրապետության բանակի մասեր:

Խորհրդային Ադրբեջանի Կարմիր բանակի շտաբի օպերատիվ բաժնի 1920 թ. մայիսի 12-ին կազմած և բաժնի պետ Զեյնալովի ստորագրությամբ Ադրբեջանի ռազմական և ծովային կոմիսարին ուղարկած հերթական հետախուզական ամփոփագրում ասված էր. «281-րդ հետևակային գունդը ժամանել է Ղոչազ–Ավդալարի շրջանը: Մուսուլմանլարում վերականգնվել է մինչև մայիսի 6-ը եղած վիճակը: Մեր կողմից վիրավորվել է 1-ին հետևակային գնդի 4 ասկյար:

Հայերը խմբավորվում են Մեծ և Փոքր Քիրս լեռների շրջանում, Ալթընթախտը*–Կարակիշլար** լեռնանցքում: Նշված այս բոլոր կետերը գտնվում են Շուշիից հարավ: Այդ տեղերի հայկական ուժերը դրանով իսկ փակում են դեպի Զանգեզուր Քեշիշքենդից*** գնացող լեռնային ճանապարհը: Այդ գյուղում Դրոյի շտաբն է: Հետախուզության միջոցով հաջողվել է պարզել, որ իրոք, այդ ճանապարհով է կատարվում ղարաբաղյան հայկական զորքերի մատակարարումը [Զանգեզուրից]: Հակառակորդը այդ շրջանում առայժմ ակտիվություն հանդես չի բերում»[1]:

Փաստաթղթի վրա մակագրված էր, որ այդ տեղեկությունները փոխանցված էին 11-րդ Կարմիր բանակի շտաբ[2]:

Ադրբեջանական իշխանությունները ռուսական Կարմիր բանակի

---

* Ալթունթախտ

** Ղարաղշլաղ

*** Խոսքը Ղարաբաղի Քեշիշքենդ գյուղի մասին է:

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 37, թ. 21:

[2] Տե՛ս նույն տեղում:

հրամանատարությանն ամեն կերպ գրգռում էին հայերի դեմ, փորձում էին նրան համոզել, որ Ղարաբաղի և Զանգեզուրի ողջ բնակչությունը ատելությամբ էր լցված Ռուսաստանի, առավել ևս՝ նրա բանակի նկատմամբ, ուստի սխալ տեղեկություններ էին ներկայացնում բանակի շտաբին, ուռճացնում Ղարաբաղում եղած հայկական ուժերի թիվը:

Ադրբեջանի Կարմիր բանակի շտաբի օպերատիվ բաժնի կողմից 11-րդ Կարմիր բանակի հրամանատարին ուղարկված 1920 թ. մայիսի 19-ի թվով հետախուզական ամփոփագրում նշված էր.

«Հայկական կանոնավոր զորամասերի մեծ մասը կենտրոնանում է Կարսից և Երևանից հարավ՝ ուղարկելու համար թուրքական զորքերին ընդառաջ, որոնք, իբր, շարժվում են Հայաստանի վրա: Ուստի, հայկական կառավարությունը զենքի տակ է կանչում մեծ թվով հայերի՝ տարբեր գավառներում:

Հայկական նոր զորամասերի կազմավորման համար Ղարաբաղում և Զանգեզուրում մեծ աշխատանք է տանում գեներալ Դրոն, որի մոտ Երևանից ուղարկված էր տարբեր ազգությունների պատկանող մինչև 100 սպա, ինչպես նաև զենք ու զինամթերք:

Գերի վերցրած հայ պարտիզանը, որը հարցաքննված է Ադրբեջանի Կարմիր բանակի շտաբում, հայտնել է, որ Շուշիի շրջանում գործում է 3 ջոկատ, որոնց մեջ ընդհանուր թվով հաշվվում է մինչև 8000 մարտիկ: Այդ ջոկատները տեղաբաշխված են Քեշիշքենդ, Չարտազ-Գյունեյ*, Զավե գյուղերում՝ Շուշիից արևելք: Չարտազ-Գյունեյում եղած ջոկատը, բաղկացած 3 վաշտից, ունի մինչև 500 սվին, 200 թուր, 7 գնդացիր, 2 լեռնային հրանոթ: Ջոկատի հրամանատարն է կադրային սպա Մինաս Բաբաևը: Բոլոր ջոկատները ենթակա են Դրոյին, որի շտաբը գտնվում է Քեշիշքենդում: Ջոկատներում մոբիլիզացված են տեղի բնակիչները: Ամեն մի վաշտում կա 2-3 սպա: Մարտիկները զինված են տարբեր սիստեմների հրացաններով, յուրաքանչյուր հրաձիգ ունի 50 փամփուշտ, դրանից բացի, իր պաշարում ջոկատն ունի 9000 փամփուշտ: Համազգեստը գյուղացիական է: Ջոկատների խնդիրը պայքարն է Ադրբեջանի դեմ»[1]:

Ադրբեջանական հետախուզության ամփոփագիրը տրամադրվել էր Կարմիր բանակի շտաբին: Այստեղ անմիջապես նկատել էին, որ Դրոյի զորքի թվաքանակի և զինվածության մասին բերված թվերը չէին համապատասխանում այն տվյալներին, որոնք հայթայթված էին Կարմիր բանակի հետախուզության կողմից, գլխավորապես Ղարաբաղի և Զանգեզուրի կոմունիստների ջանքերով: Հետախուզական այդ ամփոփագրի վրա 11-րդ բանակի շտաբում կատարված է հետևյալ մակագրությունը. «Ղարաբաղում հայկա-

---

* Գյունեյ-Չերտազ (Գյունեյչարտազ):

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 37, թ. 2-3:

կան ջոկատների կազմի և թվաքանակի վերաբերյալ տվյալները չափազանցված են»[1]:

Ադրբեջանի խորհրդայնացումն արագացրեց Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար մարմինների կառուցվածքային փոփոխությունների ընթացքը:

1920 թ. մայիսի երկրորդ կեսին ընդլայնվեց ՌԿ(բ)Կ կենտկոմի հյուսիսկովկասյան բյուրոյի կազմը, և նրա հիմքի վրա կազմակերպվեց ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրո: Սա պետք է փոխարիներ մինչ այդ գործող ՌԿ(բ)Կ կովկասյան երկրամասային կոմիտեին: Կովկասյան բյուրոն ձևավորվեց հետևյալ կազմով՝ Ա. Գ. Բելոբորոդով, Գ. Կ. Օրջոնիկիձե, Ա. Բ. Մդիվանի, Մ. Ի. Ֆրումկին, Ս. Մ. Կիրով, Յան Վ. Պոլույան, Ի. Դ. Օրախելաշվիլի և Հ. Նազարեթյան: Առաջին չորսը ներկայացնում էին Բյուրոյի գործող նախագահությունը: Թե որն էր լինելու ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի առաքելությունը, հենց այդ օրերին պարզորոշ արտահայտել էր Սերգո Օրջոնիկիձեն՝ ասելով, որ դրա գլխավոր խնդիրը լինելու է ողջ Կովկասում և Այսրկովկասում խորհրդային իշխանության հաստատումը և ամրապնդումը[2]:

11-րդ Կարմիր բանակը, իր կազմի մեջ ընդգրկելով նաև Ադրբեջանի Կարմիր բանակի զորամիավորումներ, 1920 թ. մայիսի կեսերին մոտեցավ Լեռնային Ղարաբաղի սահմաններին: Տեղի հայ բոլշևիկներն ամեն կերպ աջակցում էին երկրամասի խորհրդայնացմանը: Նրանք կարծում էին, թե ժողովուրդների ազատ ինքնորոշման կարգախոսներով առաջացող Խորհրդային Ռուսաստանի բանակը Ղարաբաղի հայությանն օգնելու է ինքնորոշվելու:

Մայիսի 19-ին Կարմիր բանակի մի պատվիրակություն, գալով Շուշի, այցելեց հայկական զորքերի այնտեղ գտնվող շտաբը: Պատվիրակներին ընդունեց Դրաստամատ Կանայանը (Դրո), որը, Հայաստանի կառավարության կարգադրությամբ իր զորամասով Զանգեզուրից Ղարաբաղ անցնելով, այնտեղ ստեղծել էր Ժամանակավոր կառավարչություն: Նա եկածներին հայտարարեց, որ ինքն ուրախ է ողջունելու Կարմիր բանակի զորքերին և խնդրեց միջոցներ ձեռնարկել, որպեսզի մուսուլմանները դադարեցնեն հարձակումները հայերի դեմ: Պատվիրակությունը Դրոյին հավաստիացրեց, որ Կարմիր բանակը թույլ չի տա վնաս պատճառել հայերին: Դրոն պատասխանեց, որ հայերը Անգլիային, Ամերիկային և գեներալ Ա. Ի. Դենիկինի կամավորական բանակին օգնության համար դիմել են միայն այն պատճառով, որ նրանց վրա ճնշում էին գործադրել Թուրքիան և Ադրբեջանը, այն դեպքում, երբ իրենք դիմադրություն ցույց տալու համար զենք անգամ չունեին, իսկ մարդիկ մեռնում էին սովից: Միաժամանակ Դրոն բոլշևիկյան

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 37, թ. 4:

[2] Տե՛ս **Г. Орджоникидзе**, Статьи и речи (1910-1926 гг.), т. 1, էջ 109:

պատվիրակության անդամներին ցույց տվեց Հայաստանի կառավարության կողմից իրեն արված կարգադրությունը, որտեղ ասված էր. «Մի՛ ենթարկվեք պրովոկացիայի և ամո՛ւր պահեցեք ռազմաճակատը, իսկ Խորհրդային Կարմիր բանակը մոտենալիս մենք նրա հետ կգտնենք ընդհանուր լեզու»[1]: Բայց ընդհանուր լեզու չգտնվեց:

11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հրաման իջեցրեց 32-րդ դիվիզիայի հրամանատար Պ. Կ. Շտեյգերին՝ առաջ շարժվել և գրավել Լեռնային Ղարաբաղը: Հրամանում ասված էր, որ ամբողջ ուժերը կենտրոնացնելով Շուշիի շրջանում՝ դիվիզիան պետք է շարունակի առաջխաղացումը դեպի Զանգեզուր, ապա այն գրավելուց հետո շարժվի Նախիջևանի, Ջուլֆայի և Օրդուբադի ուղղությամբ:

Շուտով 32-րդ հրաձգային դիվիզիան մտավ Շուշի: Ապա 11-րդ բանակի հրամանատար Մ. Կ. Լևանդովսկու և ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի լիազոր Ս. Տեր-Գաբրիելյանի հետ այստեղ ժամանեց Սերգո Օրջոնիկիձեն: Շուշին հայտարարվեց խորհրդային, և Դրոյին առաջարկվեց հեռանալ Ղարաբաղից: Մայիսի 24-ին Ավետարանոց գյուղում Դրոն իր զինակիցների խորհրդակցություն հրավիրեց, որտեղ հայտնեց, որ Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել զորքերը հանելու Ղարաբաղից: Դա առաջ է բերեց Նժդեհի բուռն դժգոհությունը, և նա խիստ ընդհարվեց Դրոյի հետ: Բուռն վիճաբանության ընթացքում վերջինս նրան մենամարտի կանչեց: Դեպքին ներկա Մելիք Հասան-Ջալալյանի վկայությամբ Նժդեհը նրան դիմեց հետևյալ խոսքերով. «Մեր կյանքը մեզ չի պատկանում, այլ հայ ժողովրդին, իսկ եթե ուզում ես խփել ինձ, առ քեզ»: Եվ ատրճանակը շպրտել է Դրոյին: «Դերասան շան որդի»[2],– ասել է Դրոն՝ Նժդեհի այդ արարքից զզացված*:

Չնայած Նժդեհի ու նրա նման մտածողների բուռն բողոքներին՝ հաջորդ օրը՝ մայիսի 25-ին, Շուշիում Դրո Կանայանի ստեղծած Ժամանակավոր կառավարչությունը դադարեցրեց իր գործունեությունը: Դրոն իր զորամասով հեռացավ Ղարաբաղից: Շուտով ամբողջ երկրամասը դարձավ խորհրդային:

Ղարաբաղից Դրոյի հեռանալը մեծագույն ուրախություն պատճառեց Ադրբեջանի ողջ հակահայ զանգվածին, իսկ Նարիմանովի կառավարությունը չէր թաքցնում երախտագիտական զգացումները Կարմիր բանակի նկատմամբ:

Հունիսի 8-ին Դրոն Գորիսից հեռագրեց Երևան: Հեռագրում նշվում էր.

«Հայ ժողովրդի և, մասնավորապես, Զանգեզուրի թշնամիները տարա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 5, թ. 182 և շրջերես:

[2] **Ե. Իշխանյան**, Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 681:

* Հայ ժողովրդի ապստամբական շարժման երկու խոշոր գործիչների այս առաջին լուրջ ընդհարումը սառնություն առաջ բերեց նրանց միջև: Այս դեպքին հաջորդեցին նոր ընդհարումներ, որոնք էլ ավելի բարդացրին նրանց անձնական հարաբերությունները:

ծում են բացահայտ սադրիչ լուրեր՝ Զանգեզուրից կառավարական զորքերի հեռանալու մասին: Թող ժողովրդի թշնամիներն իմանան, որ կառավարական զորքերը, ամրապնդված նոր ուժերով, նորից օգնության կգնան դարաբաղյան գյուղացիությանը:

Խնդրում եմ լայնորեն տեղեկացնել բնակչությանը»[1]:

Նորից Ղարաբաղ վերադառնալու մասին խոստումը, որ տալիս էր Դրոն, չէր կարող փարատել զանգեզուրցիների անհանգստությունը: Դրոյի հեռանալը առաջ էր բերել զարմանք, տարակուսանք, զայրույթ: Հասարակության դժգոհությունն արձագանք էր գտնում «Սյունիք» թերթի** էջերում: Ինչո՞ւ էր Երևանի կառավարությունը գնացել այդ անհասկանալի քայլին, մանավանդ որ, ինչպես հայտնի էր Գորիսում, հանրապետության կառավարական շրջաններում և ՀՅ դաշնակցության բյուրոյում մինչ այդ մեծամասնություն էին կազմում Ղարաբաղն ամեն գնով պաշտպանելու կողմնակիցները: Իսկ գուցե Դրոն ինքնագլուխ էր դիմել այդ քայլին: Հազիվ թե:

Ինչևիցե, փաստն առկա էր, և Զանգեզուրի գեներալ-կոմիսար Սերգեյ Մելիք-Յոլչյանը հունիսի 7-ին Գորիսից հեռագիր հղեց Երևան՝ Նախարարների խորհրդի նախագահ Համո Օհանջանյանին, պատճենները՝ ներքին և զինվորական գործերի նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին, արդարադատության և ֆինանսների նախարար Աբրահամ Գյուլխանդանյանին, ՀՅ դաշնակցության բյուրոյին՝ խիստ բողոք հայտնելով այն կապակցությամբ, որ Դրոն, առանց Կարմիր բանակին դիմադրություն ցույց տալու, հեռացել է Ղարաբաղից: Նա գրում էր. «Հունիսի 1-ին (արխիվային փաստաթղթում այդպես է, պետք է լինի մայիսի 25-ին: – *Ա. Ս.*) Դրոն իր ամբողջ ջոկատով թողել է Ղարաբաղը և անցել Զանգեզուր: Պատճառը խորհրդավոր է և բոլորովին անհասկանալի մեզ: Ղարաբաղում վիճակը անորոշ է: Մեր ձեռքով մենք կործանել ենք Ղարաբաղը: Դա մեր կուսակցության կրախն է: Դրոն անձամբ է իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Ինչպես հայտնում է հենց նոր Ղարաբաղից եկած գնդապետ Մեսյանը, այնտեղ չկան ռուսական բոլշևիկներ, և ժողովուրդը տատանվում է: Դրոյի և նրա ջոկատի խուճապահար փախուստը [Ղարաբաղից] Զանգեզուրում ստեղծել է որոշ հուսալքում: Տարածված են լուրեր, թե ջոկատը հեռանում է Զանգեզուրից: Ժողովուրդը հուզմունքի մեջ է»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 52, թ. 2:

** 1918-1919 թթ. Գորիս քաղաքում տպագրվում էր «Որոտան» շաբաթաթերթը, որը քաղաքական և տնտեսական դժնդակ պայմանների հետևանքով լույս էր տեսնում մեծ ընդհատումներով: 1920 թ. հունվարի 1-ից թերթը սկսեց լույս տեսնել «Սյունիք» անունով՝ որպես քաղաքական, հասարակական, տնտեսական և գրական շաբաթաթերթ: «Սյունիք» թերթը Հ. Յ. դաշնակցության Զանգեզուրի կենտրոնական կոմիտեի օրգանն էր: Ինչպես «Որոտանը», այնպես էլ «Սյունիքը», հետագայում նաև «Ազատ Սյունիքը» տպագրվում էին Խոսունց Ծատուրի «Սասուն» տպարանում:

[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 51, թ. 2:

Այնուհետև գեներալ-կոմիսարը հայտնում էր, որ իր կողմից հետապնդվող ձախ դաշնակցական, «սրիկա և գրգռիչ պրովոկատոր» Մուշեղ Զաքարյանը, թաքնվելով ընդհատակում, զանգվածների մեջ առաջ էր բերում անիշխանություն, և նրա նմանները քիչ չէին: Մուշեղին և նրա կողմնակիցներին պատժելու մասին զինվորական իշխանություններին բազմիցս արված առաջարկները մնացել էին անկատար:

«Կարգը վերականգնելու համար,– վերջում նշում էր Ս. Մելիք-Յոլչյանը,– անհրաժեշտ է ուղարկել մեկ գումարտակ և ուժեղ ու ինքնուրույն մի լիազոր: Ստեղծված պայմաններում ես ի վիճակի չեմ աշխատելու և մեկնում եմ Երևան: Դրոն գործում է ինքնուրույն, ու արդյունքը բացասական է»[1]:

Ղարաբաղ մտնելուց հետո Կարմիր բանակի զորամասերը և նրանց ուղեկից թուրք զինված խուժանն անմիջապես անցան հայ բնակչության նկատմամբ դաժան բռնարարքների: Ձերբակալվեցին Արցախի ազատագրական շարժման հարյուրավոր մարտիկներ, նրանցից շատերը գնդակահարվեցին՝ առանց որևէ պատճառի և դատի: Կարմիրբանակայինները և ադրբեջանցի թուրքերը թալանում էին գյուղացիներին, բռնագրավում էին հացահատիկը, անասունները, տնային իրերը, հայ երիտասարդներին ուժով հավաքագրում և ստիպում էին ծառայել ադրբեջանական բանակում: Մի քանի հարյուր ձերբակալված մտավորականներ և հասարակական-քաղաքական գործիչներ պահակախմբի ուղեկցությամբ քշվեցին Բաքու և նետվեցին բանտերը: Հայ գործիչներով լցվեցին նաև Գանձակի, Շուշիի և այլ վայրերի կալանավայրերը:

Ղարաբաղից Հայաստանի Հանրապետության զորքերի հեռանալը հետագայում Նժդեհը համարել է ճակատագրական սխալ: Նա գրել է. «Ղարաբաղն առանց կռվի թշնամուն թողնելը, անշուշտ, պիտի ունենար իր բարոյալքիչ ազդեցությունը Զանգեզուրի վրա: Կամ թշնամին չափազանց ուժեղ է, որ Երևանյան զորքերը խուսափել են չափվելու նրա հետ, կամ ինչ-ինչ քաղաքական նկատառումներով չպետք էր կռվել, և չեն կռվել մերոնք»[2]:

Փաստորեն, առանց կռվի Ղարաբաղը կարմիրբանակայիններին հանձնելը Զանգեզուրի շուրջը ստեղծել էր ռազմաքաղաքական միանգամայն այլ իրադրություն, որը պահանջում էր լուրջ վերլուծություն և եզրահանգումներ:

Խնդիրը հանգամանորեն քննարկելու համար Գորիս քաղաքում՝ գեներալ-կոմիսարիատի դահլիճում, հրավիրվեց կուսակցական ընդլայնված ժողով, որի նմանը մինչ այդ Զանգեզուրում տեղի չէր ունեցել:

Պատմական այդ ժողովին մասնակցում էին Մեղրիի, Կապանի, Սիսիանի և բուն Զանգեզուրի շրջանի կուսակցական ներկայացուցիչները և պատասխանատու բոլոր գործիչները, կային ինչպես և Գորիսում գտնվող

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 51, թ. 2:

[2] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 93:

ղարաբաղցիներ: Ժողովին ներկա էին նաև Դրոն, Նժդեհը, Երևանից եկած Հայաստանի խորհրդարանի անդամներ Արշակ Շիրինյանը, Վահան Խորենին և Զաքար Յոլյանը, Զանգեզուրի գեներալ-կոմիսար Սերգեյ Մելիք-Յոլչյանը, Գերասիմ Բալայանը, Յապոն Պարոնյանը, Համբարձում Սարգիս-ջանյանը (Յապոնացի Սաքո)*, Հալիձորի ենթաշրջանի կոմիսար Զաքար Տեր-Դավթյանը, Սիսիանի կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանը, Նիկոլայ Հովսեփ-յանը, Կրմենանցը, Հովհաննես վարժապետը, Արտեմ Խանզադյանը, Հակոբ Տերունին, Վաղարշակ Ղազարյանը, Գեդեոն Տեր-Մինասյանը, Դավիթ Խուր-դիդյանը և Վազգեն Միրզաբեկյանը (Վանբեկ)[1]:

Օրակարգն էր՝ 1) Զանգեզուրի ինքնապաշտպանությունը, 2) խորհրդա-յին իշխանության միջոցառումները Ղարաբաղում, 3) 11-րդ կարմիր զորա-բանակի ներխուժման վտանգը և դրան դիմակայելու խնդիրը, 4) ներքին թշնամիների դեմ բռնելիք դիրքը:

Ժողովը բացեց Սերգեյ Մելիք-Յոլչյանը, որը հակիրճ ներկայացրեց տի-րող արտաքին և ներքին քաղաքական կացությունը, ապա ասաց, որ ինքը, հավանաբար երկար ժամանակով մեկնելու է Երևան և Զանգեզուրի շրջան-ների գեներալ-կոմիսարի պաշտոնի համար երաշխավորում է Զաքար Յոլ-յանին:

Մելիք-Յոլչյանի գնալուց հետո կուսակցական ժողովը գավառի գեներալ-կոմիսարի պաշտոնը ժամանակավորապես հանձնեց Զ. Յոլյանին, որի իշխանությունը տևեց ընդամենը մեկ ամիս՝ մինչև բոլշևիկների Գորիս մտնելը:

Ժողովը հերթով սկսեցին նախագահել Գերասիմ Բալայանը և Զաքար Յոլյանը:

Խորհրդային բանակի՝ Զանգեզուր ներխուժելու վտանգը դիմագրավելու հարցի քննարկումը ժողովականներին բաժանեց երկու մասի: Բացարձակ մեծամասնությունն այն կարծիքին էր, որ ամեն կերպ պետք էր խուսափել խորհրդային ուժերի հետ բախվելուց:

Հին հեղափոխական Համբարձում Սարգիսջանյանը ասում էր. «Ռուսաս-տանի հեղափոխականներն են գալիս. նրանց հետ մեր կապերի շնորհիվ մենք նրանց միջոցով ամեն ինչ կարող ենք անել, նույնիսկ կարող է պատա-հել, որ մեր առաջարկով նրանք տաճիկներին պարտադրեն նահանջել մինչև 1914 թվի սահմանները»[2]: Սաքոյի այս միամիտ խոսքերը հավանություն գտան ժողովականներից շատերի մոտ՝ «ճի՛շտ է, ճի՛շտ է» արտահայտու-թյուններով:

---

* Յապոնացուն չպետք է շփոթել Յապոնի հետ: Երկուսն էլ գորիսեցիներ էին. Յապոնը (Հովհաննես Պարոնյան) քաղաքից էր, իսկ Յապոնացին (Համբարձում Սարգիսջանյան)՝ Գորիս (Կյորես) գյուղից:

[1] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 488-489:

[2] Նույն տեղում, էջ 489:

Ժողովի մասնակիցներից մեկը՝ Վազգեն Միրզաբեկյանը, հետագայում վերհիշել է, որ այդ պահին Նժդեհը, կանգնած վերջին շարքում, մեջքը հենած պատի անկյունին, ձեռքերը խաչաձև դրած թևերի տակ, լուռ լսում էր ժողովականների կարծիքները: Նախագահողը հայտարարել է, որ ելույթի համար խոսքը տրվում է Նժդեհին, որի հայացքը այդ վայրկյանին համակ տխրություն էր արտահայտում: Նժդեհն իր խոսքն այսպես է սկսել.

«Խոսքս ուղղում եմ Հայաստանի Գարիբալդի Դրոյին և հարց տալիս, թե ո՞ր օրվա համար է պահել իր կարծիքը, քանի որ այդ ժողովից է կախված Զանգեզուրի բախտը: Նկատի պետք է ունենալ, որ մեր բռնելիք ընթացքը ազդելու է նաև Հայաստանի կառավարության ու Հայաստանի ժողովրդի հոգեկանի վրա»: Դրոն ընդհատել է Նժդեհի խոսքը՝ ասելով. «Եթե ժողովը որոշի, ես իմ բանակով կմիանամ զանգեզուրցիներին. ես չեմ ուզում ազդել ժողովականների վրա»: Նժդեհը հակադարձել է. «Ո՛չ, դուք պետք է ղեկավարողի դերում լինեք այս պատմական ժողովում, այլ ոչ թե լուռ մնաք կամ ընթանաք ժողովականների բռնած ընթացքով»:

Հուշագրողն այնուհետև նշել է. «Նա խոսելով կամաց-կամաց առաջացավ և կանգնեց ժողովասրահի մեջտեղում: Հագին ուներ դավիթբեկյան պատմական տարազը և կարծես Դավիթ-Բեկը վերակենդանացել էր: Կրակ էր ժայթքում նրա բերանից և համակ վճռականություն»:

Նժդեհն ուժգին շեշտադրումներով շարունակեց իր կրակոտ ելույթը. «Հայրենիքը ոչ ոք իրավունք չունի առանց կռվի զիջելու սովետներին, որոնց միացած է Ադրբեջանը: Սո՛ւտ են նրանց շռայլած խոստումները, սո՛ւտ են նրանց ուժի մասին չափազանցված լուրերը: Նրանք մեզ կպարտադրեն ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը, նրանք Զանգեզուրը կմատնեն սովի ու տեռորի, մասսայական կոտորածի: Հայակեր մուսավաթական ղեկավարները, մեկ օրում ղեկավար բոլշևիկներ դարձած, եկել են ռուսական զորքերի հետ...»:

Ժողովականները հմայված շարունակում էին լսել. «Զանգեզուրը, որ կռվի դաշտում, ամենից աննպաստ պայմաններում անգամ միշտ հաղթանակեց, այսօր երկընտրանքի մեջ է և հուսալքված՝ ղեկավարների երերուն ընթացքի պատճառով: Բայց կանգուն է Ղափանը՝ իմ հրամանատարական շրջանը: Ես վերադառնում եմ այնտեղ և պատրաստ սպասելու եմ եկող նոր ջարդարարներին...»[1]:

Ինչ վերաբերում էր «ներքին թշնամիների», այսինքն՝ գավառի հայ բոլշևիկների նկատմամբ դիրքորոշմանը, ապա ժողովը որոշեց «այդ դավաճանների հետ վարվել ամենախիստ միջոցներով»՝ պատերազմական ժամանակաշրջանի արտակարգ օրենքներին համապատասխան:

Ղարաբաղից հայկական ուժերի նահանջը դեռ չէր սկսել, երբ Ադրբե-

[1] «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 490-491:

ջանի կոմկուսի Ղարաբաղի կոմիտեն գաղթականի անվան տակ Զանգեզուր ուղարկեց Շմավոն Շահնազարյանին՝ նրան հանձնարարելով բոլշևիկների Զանգեզուրի գավառային կոմիտեին հայտնել, որ Ղարաբաղ մտած Կարմիր բանակի զորամասերը շատ շուտով շարժվելու են դեպի Զանգեզուր՝ այնտեղ նույնպես խորհրդային կարգեր հաստատելու համար: Պատվիրակը հասավ սահմանամերձ Տեղ գյուղ, որտեղից կոմունիստներն անմիջապես նրան ուղեկցեցին Ալիղուլիշեն (հետագայում՝ Ազատաշեն) գյուղը, որտեղ գտնվում էր գավառի ընդհատակյա կոմիտեն:

Իշխանությունները, տեղեկանալով Շահնազարյանի Զանգեզուր ժամանելու մասին, սկսեցին ակտիվորեն որոնել նրան, բայց պատվիրակը հասցրել էր ընդհատակյա կոմիտեին հաղորդել Ադրբեջանի կոմկուսի Ղարաբաղի կոմիտեի հանձնարարականը և շտապ վերադառնալ Շուշի[1]:

Խորհրդային զորքերի կողմից Ղարաբաղի գրավումը և Կարմիր բանակի զորամասերի մոտենալը Զանգեզուրի սահմաններին թևավորեցին տեղի բոլշևիկներին, որոնք պահը հարմար գտան՝ զենքի դիմելու: Նրանք համոզված էին, որ ապստամբություն բարձրացնելու դեպքում իրենց անմիջապես օգնության կգան Կարմիր բանակի զորամասերը և միասնական ուժերով գավառում կհաստատեն խորհրդային կարգեր: Զանգեզուրի բոլշևիկները ապստամբության համար պահը հարմար էին համարում նաև այն պատճառով, որ Հայաստանի տարբեր վայրերում մայիսին տեղի ունեցած բոլշևիկյան զինված ելույթները, իրենց կարծիքով, արդեն լիովին շփոթի էին մատնել հանրապետության իշխանություններին, որոնք, իբր, այլևս անուժ էին զինված միջամտությամբ ճնշելու զանգվածային որևէ ընդվզում Զանգեզուրում:

Ապստամբության նախապատրաստության գործը ղեկավարում էր 1920 թ. մայիսի 5-ին Գորիսում կազմակերպված ՌԿ(բ)Կ Զանգեզուրի ժամանակավոր կենտրոնական կոմիտեն: Այդ ղեկավար մարմնի մեջ էին Հակոբ Կամարին (նախագահ), Գորիս քաղաքում 1919 թ. ստեղծված բոլշևիկյան առաջին ընդհատակյա բջջի ղեկավար Երեմիա Բակունցը, Քրիստափոր Մկրտչյանը, Մակիչ Մաշուրյանը, Հայկ Սիլանյանը, Նիկոլայ Արզումանյանը և Բագրատ Հարությունյանը: Կենտրոնական կոմիտեն կարողացել էր կարճ ժամանակում համախմբել Գորիս քաղաքի, Կապանի հանքերի, գավառի գյուղերի՝ ընդհատակում գործող կոմունիստների ուժերը և համաձայնեցնել նրանց գործողությունները:

Բոլոր գյուղերը միաժամանակ ոտքի հանելու համար գավառային կոմիտեն անհրաժեշտ գրություններ էր ուղարկել: Խնդիր էր դրված՝ Զանգեզուրի սահմաններին Կարմիր բանակի զորամասերի մոտենալուն պես պատրաստ լինելու ապստամբության:

---

[1] Տե՛ս **Н. Гейдаров**, նշվ. աշխ., էջ 101:

Ապստամբության նախապատրաստությունը դեռ չէր ավարտվել, երբ գավառի իշխանությունները ձերբակալեցին Հակոբ Կամարուն և զինվորների ուղեկցությամբ Գորիսից ուղարկեցին Ղարաբաղ՝ հանձնելու Դրոյին: Բայց նախօրյակին Քրիստափոր Մկրտչյանին հաջողվեց կազմակերպել նրա ազատումը: Մկրտչյանը եկավ Խնձորեսկ և տեղի բոլշևիկյան կազմակերպությանը հանձնարարեց ձախողել Զանգեզուրի կոմունիստների ղեկավարին Ղարաբաղ տանելը: Գյուղի կոմունիստներից ստեղծվեց զինված խումբ, որը Աբել Ղավալյանի գլխավորությամբ կտրեց Տեղ գյուղից Կոռնիձոր գյուղ տանող ճանապարհը, որտեղով պետք է զինվորների հսկողությամբ անցներ Կամարին: Խումբը զենքի սպառնալիքով ազատեց նրան և բերեց Խնձորեսկ: Այստեղ մի քանի օր մնալուց հետո հետքերը կորցնելու նպատակով Կամարին գաղտնի տեղափոխվեց Ալիղուլիշեն գյուղը, իսկ այնտեղից՝ Քարահունջ՝ ապահով թաքստոց[1]:

Ապստամբության նախօրեին ՌԿ(բ)Կ Զանգեզուրի կենտրոնական կոմիտեի անդամները և ճանաչված կոմունիստներ Յաշա Մարտիրոսյանը, Գաբրիել Սևյանը, Բագրատ Ղարագյոզյանը, Գարեգին Մայիլյանը, Սողոմոն Կարապետյանը, Գառնիկ Ղազարյանը և ուրիշներ ակտիվ աշխատանք էին տանում բնակչության շրջանում, որի հետևանքով խմորումներ սկսվեցին Գորիսի շրջանի Խնձորեսկ, Տեղ, Ալիղուլիշեն, Քարահունջ, Շինուհայր, Սիսիանի շրջանի Բռնակոթ, Կապանի շրջանի Ծավ, Շիկահող գյուղերում, Գորիսի կադրային գումարտակի զինվորների շրջանում, որտեղ ակտիվ քարոզչություն էին մղում կոմունիստներ Արսեն Մայսուրյանը, Տիգրան Սարգսյանը, Արսեն Խոյլունցը:

Խմորումներն աստիճանաբար փոխվեցին հուզումների, և կոմունիստները բացահայտ ձեռնոց նետեցին գավառի իշխանություններին:

Մայիսի 18-ին զինված ելույթներ եղան Սիսիանի շրջանի Բռնակոթ, Բնունիս, Ղարաքիլիսա, Ախլաթյան գյուղերում: Ապստամբները ձերբակալեցին տեղի պաշտոնյաներին և բռնագրավեցին Բռնակոթ գյուղում գտնվող ռազմական պահեստը: Սակայն ապստամբությունը հատկապես համառ բնույթ ընդունեց բուն Զանգեզուրի (Գորիսի շրջանի) Խնձորեսկ գյուղում:

Խնձորեսկը Զանգեզուրի ամենամեծ գյուղն էր՝ ավելի քան 8000 բնակչությամբ: Այնտեղ դաշնակցականները փոքրաթիվ էին, իսկ գյուղի քաղաքական կյանքին տոն տվողները հնչակյաններ էին, որոնց բավականին ուժեղ կազմակերպությունն ուներ ավելի քան 15-ամյա պատմություն: Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո գյուղի հնչակյանները մտան տեղի բոլշևիկյան կազմակերպության մեջ:

Զինված ելույթի նախօրյակին Խնձորեսկի բոլշևիկյան կազմակերպու-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 256, թ. 3-6:

թյան անդամների թիվը հասնում էր 75-ի: Դա պատկառելի ուժ էր, որին հաջողվել էր իր ետևից տանել գյուղացիների մեծ մասին:

Ապստամբության հետ կապված կոնկրետ հարցերը քննարկելու համար մայիսի 26-ին Ղուկաս Յուզբաշյանի տանը տեղի ունեցավ Խնձորեսկի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը: Ժողովի աշխատանքները ղեկավարում էր Հայկ Սիլանյանը: Ժողովին մասնակցելու համար գավառային կոմիտեն Խնձորեսկ էր գործուղել իր ներկայացուցչին՝ Մուշեղ Մկրտչյանին: Հակոբ Կամարին վատառողջ էր և այդ պահին գտնվում էր Քարահունջ գյուղում՝ ընդհատակում:

Բացելով ժողովը՝ Հայկ Սիլանյանը խոսեց մի շարք հարցերի շուրջ: Նա հատկապես հանգամանորեն խոսեց ապստամբության քաղաքական նշանակության և հաղթանակի հետ կապված բարդությունների մասին: «Դժվարությունները մեզ չպետք է վախեցնեն,– ասաց նա:– Ապստամբությունը սկսում ենք վաղը լուսաբացին: Առաջին հերթին պետք է գրավենք գյուղում գտնվող զորամասի շտաբը, ապա զինանոցը»: Նա համոզված ասում էր. «Մեզ օգնության կգան հարևան գյուղերից: Միասնական ուժերով պետք է զինաթափենք Ղարաբաղից նահանջող Դրոյի զորամասը: Մենք մենակ չենք. մեզ օգնության կհասնի նաև Կարմիր բանակը: Սակայն, մեր գործի հաջողությունը կախված է առաջին հերթին մեր համարձակությունից ու կամքից»[1]:

Ժողովի նախագահի ելույթից անմիջապես հետո հանդես եկած Իսկանդար Էքտիբարյանը ջերմորեն պաշտպանեց ապստամբության գաղափարը: Ապստամբություն բարձրացնելու առաջարկը, սակայն, լուրջ դիմադրության հանդիպեց: Եվ առաջինը դեմ արտահայտվեց գավառային կոմիտեի ներկայացուցիչ Մ. Մկրտչյանը՝ այն համարելով վաղաժամ: Նա ասաց, որ մյուս գյուղերը պատրաստ չեն, հույս չկա նաև, որ ժամանակին օգնության կգան կարմիր զորամասերը:

Ձինված ելույթն անհապաղ սկսելուն դեմ էր նաև բոլշևիկների գավառային կենտրոնական կոմիտեի նախագահ Հակոբ Կամարին: Չկարողանալով մասնակցել ժողովին, բայց իմանալով դրա հրավիրման մասին՝ նա ընդհատակից նամակ էր ուղարկել Հ. Սիլանյանին և կտրականապես մերժել տվյալ պահին ապստամբություն բարձրացնելու ծրագիրը:

Հ. Կամարու նամակը կարդացին ժողովում: Ծավալվեց բուռն ու երկարատև վիճաբանություն. ամեն մեկն իր կարծիքն էր հայտնում և բերում իր տեսակետը հիմնավորող փաստարկներ: Կեսգիշերին գավառային կոմիտեի հանձնարարությամբ ժողովատեղի եկավ Ալեքսանդր Դադայանը, որը նույնպես պարզաբանեց կոմիտեի տեսակետը՝ շեշտելով, որ ոչ միայն Գորիսի, այլև Սիսիանի, առավել ևս Կապանի բոլշևիկները պատրաստ չեն

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 87, թ. 24:

ապստամբության: Բայց դա էլ չօգնեց: Սիլանյանը շարունակեց պնդել ապստամբությունը սկսելու առաջարկը և նույնիսկ հենց այդտեղ պատռեց Կամարու նամակը:

Մի քանի ժամ տևած մտքերի փոխանակումից հետո քվեարկության դրվեց ապստամբությունը սկսելու հարցը: Ձայների մեծամասնությամբ որոշվեց մայիսի 27-ի առավոտյան ապստամբել: Այս որոշումն ընդունելուց հետո ժողովն ընտրեց Խնձորեսկի հեղափոխական կոմիտե՝ հետևյալ կազմով՝ Հայկ Սիլանյան (նախագահ), Աբել Ղավալյան (տեղակալ), Արսեն Մայսուրյան, Հարություն Թաթարյան, Գարեգին Սայինյան, Բագրատ Ղարագյոզյան, Իսկանդար Էքտիբարյան:

Հեղկոմը, զինելով գյուղի կոմունիստներին, մայիսի 27-ի առավոտյան ապստամբություն բարձրացրեց: Հեղկոմի կոչերի ետևից գնացին հարյուրավոր գյուղացիներ: Ապստամբներն առաջին հերթին կտրեցին հեռախոսալարը, ապա գրավեցին զինվորական շտաբը և ձերբակալեցին շտաբի պետ կապիտան Գարեգին Ամիրխանյանին, կոմիսար Հայրապետ Առուշանյանին և ուրիշ զինվորականների: Այնուհետև գրավվեց ռազմամթերքի պահեստը, ապստամբների ձեռքն անցան մեծ թվով հրացաններ, զգալի քանակի փամփուշտ, հանդերձանք: Բարձրացվեց կարմիր դրոշակ, և գյուղում հայտարարվեց խորհրդային իշխանություն:

Հեղկոմն անմիջապես ձեռնարկեց խմբերի ստեղծումը, որի անդամներին բաժանվեցին հենց նոր գրաված հրացանները և փամփուշտները: Խմբերից ամեն մեկը ստացավ կոնկրետ առաջադրանք ու գրավեց իրեն հատկացված դիրքը: Կազմվեց նաև գնդացրային դասակ՝ Մաթևոս Ասատրյանի ղեկավարությամբ, որին հանձնարարվեց դիրք մտնել Կուրաթ գետի մոտերքում, որտեղով սպասվում էր Դրոյի զորամասի անցումը:

Ապստամբության լուրն անմիջապես հասավ Դրոյին, որն այդ ժամանակ իր զորամասով գտնվում էր սահմանային Կոռնիձոր գյուղում, որտեղից Խնձորեսկ գյուղի տարածքներով անցնող խճուղով պետք է մեկներ Գորիս քաղաք:

Դրոն անմիջապես Խնձորեսկի վրա շարժեց իր զորամասը: Նույն ժամանակ գյուղի հեղկոմը կազմեց մի հանդուգն վերջնագիր՝ նրան ներկայացնելու համար: Վերջնագիրը տանելու պարտականությունը ստանձնեց Բախշի Առուշանյանը, որը Կուրաթի գետի* այգիների մոտ այն հանձնեց Դրոյին:

Հեղկոմը Դրոյին առաջարկեց սահմանային Տեղ գյուղում հանձնել ամբողջ զենքը, հենց այդտեղ էլ արձակել հեծելազոր զորակոչված բնիկ զանգեզուրցիներին, չմտնել Խնձորեսկի խորհրդային իշխանության տարածքը և զինաթափված զորամասով արագ հեռանալ Սյունիքից:

---

* Գյուղատեղի

Ի պատասխան այդ անհեթեթ վերջնագրի՝ Դրոն անմիջապես հեծելազորը շարժեց Խնձորեսկի վրա: Զորամասը առանց դժվարության գրավեց գյուղը, իսկ ապստամբները հեռացան ձորերը՝ համարյա կորուստներ չտալով: Նրանց օգնության չեկան հարևան գյուղերից, չեկան նաև Կարմիր բանակի զորամասերը: Մայիսի 28-ին սկսվեցին հարցաքննությունները և ծեծը: Մայիսի 29-ին գյուղի դպրոցի բակում հավաքված գյուղացիների առջև գնդակահարվեցին Հեղկոմի անդամ Իսկանդար Էքտիբարյանը և Մկրտիչ Ղարագյոզյանը՝ անվանի բոլշևիկ, Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին հանձնելու ջերմ կողմնակից, Բաքվում Ղարաբաղ–Զանգեզուրի արտակարգ կոմիսար նշանակված և Կարմիր բանակի հետ Զանգեզուր եկող Արմենակ Ղարագյոզյանի հայրը: Բախշի Առուշանյանը և Արսեն Խոյլունցը ուղարկվեցին Գորիսի բանտ:

Ապստամբությունը Խնձորեսկում ճնշելուց հետո Զանգեզուրում ծայր առան քաղաքական հալածանքները, բանտարկությունները և գնդակահարությունները, ամենուրեք հետապնդվում էին հուզումների աչքի ընկնող ղեկավարները և առավել ակտիվ մասնակիցները: Կոմունիստների տները խուզարկելիս գավառի իշխանությունների ձեռքն էին անցել ռազմական գաղտնիքներ պարունակող նամակներ՝ հասցեագրված Ադրբեջանի ռազմհեղկոմին և Կարմիր բանակի հրամանատարությանը: Խուզարկումների արդյունքում կատարվում էին նորանոր ձերբակալություններ: Եթե Գորիսի շրջանում կարգը համեմատաբար արագ վերականգնվեց, ապա Սիսիանի շրջանում ապստամբները շարունակում էին դիմադրություն ցույց տալ: Ի վերջո ապստամբությունը այստեղ ևս ճնշվեց, նրա ղեկավարներից մի քանիսը դաժան պատիժների ենթարկվեցին: Գնդակահարվեց Սիսիանի ապստամբ զինված ջոկատների ընդհանուր հրամանատար Եղո Իսկանդարյանը[1]:

Թեև Մայիսյան ապստամբությունը Զանգեզուրում ճնշվել էր, բայց Ադրբեջանի խորհրդայնացումն անշրջելի էր դարձրել բոլշևիզմի արմատավորումը գավառում: Ադրբեջանի խորհրդայնացումը և այնտեղ Կարմիր բանակի ներկայությունը մեծապես ոգեշնչել էին Զանգեզուրի, հատկապես Սիսիանի և Գորիսի շրջանների բոլշևիկներին՝ կյանքի կոչելով նորանոր կազմակերպություններ կամ բազմամարդ դարձնելով եղածները:

Մայիս-հունիս ամիսներին Սիսիանի Բռնակոթ, Շաղաթ, Ղարաքիլիսա, Ախլաթյան, Աղքենդ, Անգեղակոթ գյուղերի կոմբջիջներից յուրաքանչյուրում արդեն տասնյակ կուսակցականներ էին հաշվվում[2]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 896, թ. 38:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 73, թ. 35, տե՛ս նաև «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը): Նյութեր և փաստաթղթեր», 1932, Երևան, էջ 341-342:

Մայիսի 24-ին Բռնակոթ գյուղում տեղի ունեցավ Սիսիանի շրջանի մի շարք գյուղերի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որն ընտրել էր շրջանային հեղկոմ՝ Թովմաս Ադոնց, Հակոբ Գևորգյան, Պատվական Տեր-Ղազարյան կազմով[1]: Որոշվեց նաև կազմակերպել կոմունիստական զինված խմբեր, չճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նախապատրաստվել զինված պայքարի՝ խորհրդային իշխանության հաստատման համար[2]:

Բռնակոթի խորհրդակցությունից հետո հեղկոմներ կազմակերպվեցին նաև Սիսիանի մի շարք գյուղերում: Օրինակ՝ Անգեղակոթում ստեղծվեց հեղկոմ՝ Մկրտիչ Մկրտումյանի նախագահությամբ, որը բնակչության շրջանում գաղտնի ու բացահայտ բոլշևիկյան քարոզչություն էր մղում, նախապատրաստվում էր կազմ ու պատրաստ դիմավորելու Կարմիր բանակի մուտքը Սիսիան:

Սիսիանի՝ մեծապես աճած բոլշևիկյան ընդհատակի աշխատանքները ղեկավարում էին Նիկոլայ Արզումանյանը, Միքայել Գրիգորյանը, Մարտիրոս Մկրտչյանը, Հովհաննես Հայրապետյանը և ուրիշներ:

Ամրապնդվում էին նաև Գորիսի բոլշևիկյան կազմակերպությունները. հունիսի սկզբներին շրջանի Տեղ, Կոռնիձոր, Քարահունջ, Ալիղուլիշեն, Քարաշեն, Շինուհայր, Խոտ գյուղերի կոմբջիջներում հաշվվում էին 150-ից ավելի կոմունիստներ, իսկ Խնձորեսկ գյուղի կազմակերպության անդամների թիվն արդեն անցնում էր 90-ից:

Մայիս-հունիսին հեղկոմներ էին գործում Խնձորեսկում և Շինուհայրում[3]:

Մինչ Մայիսյան ապստամբությունից տենդահար Հայաստանի իշխանություններն ամեն միջոց գործադրում էին վերականգնելու կարգն ու օրինականությունը, այդ նույն ժամանակ Կարմիր բանակը արագացնում էր շարժումը դեպի հանրապետության սահմանները՝ նպատակ ունենալով տվյալ ժամանակաշրջանում վճռել երկու հիմնախնդիր.

ա) գրավել հաջորդ վիճելի երկրամասը՝ Զանգեզուրը,

բ) հետապնդելով մուսավաթական զորքերի մնացորդներին՝ նրանց թույլ չտալ մեծ զանգվածներով անցնել Նախիջևան և ամրապնդվել այնտեղ:

Երբ 11-րդ Կարմիր բանակի հարվածների տակ թուրքական զորամիավորները ստիպված թողեցին Դաղստանը, երբ այնուհետև կարմիր զորամասերը մտան Բաքու, և Ադրբեջանը հայտարարվեց խորհրդային, թուրքերը ճիգեր էին թափում կառչած մնալու Այսրկովկասի առանձին տարածքներին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 35, տե՛ս նաև «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը): Նյութեր և փաստաթղթեր», 1932, Երևան, էջ 341-342:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 90, թ. 3, ֆ. 1022, ց. 2, գ. 180, թթ. 6, 7, 8, 14, 15, 16, 18, 20, 22, 23:

և ամենից առաջ Նախիջևանին, որին նրանք կարևորագույն դեր էին հատկացրել իրենց պանթուրքական ծրագրերի մեջ: Այդ բանը լավ էր ըմբռնում Ռուսաստանի խորհրդային կառավարությունը, որը միջոցներ էր ձեռնարկում խափանելու Նախիջևանին տիրանալու՝ քեմալականների մտադրությունը:

ՌԿ(բ)Կ քաղբյուրոյի 1920 թ. մայիսի 25-ին ընդունած որոշման մեջ ուղղակի ասված էր, որ անհրաժեշտ է «բոլոր միջոցներով Նախիջևանը պաշտպանել Թուրքիայի նախկին կառավարության և Անտանտի ազդեցությունից»[1]: Կասկած չկա, որ այստեղ իրականում խոսքը վերաբերում էր ոչ թե «Թուրքիայի նախկին կառավարությանը», որը ոչ մի իշխանություն չուներ Անատոլիայում, այլ Անգորայի քեմալական իշխանություններին:

Զանգեզուրին հարող Նախիջևանի գավառում վիճակը բարդանում էր նրանով, որ այնտեղ ընդհարվում էին ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի, այլև մի կողմից՝ Նախիջևանի փաստացի տերը դարձած Ադրբեջանի և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունների շահերը: 1919 թ. ամռանը թուրքական զինված ուժերի աջակցությամբ մուսավաթականները ապստամբություն էին բարձրացրել և Նախիջևանի գավառը անջատել Հայաստանից: Հայկական բանակը շարունակում էր կռիվ մղել՝ Նախիջևանը կրկին Հայաստանի Հանրապետության մեջ ներառելու համար, մանավանդ որ դաշնակիցների և առաջին հերթին Անգլիայի կողմից այն պաշտոնապես ճանաչված էր որպես Հայաստանին պատկանող տարածք:

Այդ դժվարին խնդիրը իրագործելիս Հայաստանը, բնականաբար, ընդհարման մեջ մտավ ոչ միայն Նախիջևանի գավառի խաների ու բեկերի գլխավորած մուսավաթական զինված ուժերի, այլև այնտեղ գտնվող թուրքական կանոնավոր զորամասերի հետ: Իսկ քեմալական զորամասերը Նախիջևանում ամրապնդվել էին ոչ միայն երկրամասը Թուրքիային միացնելու համար, այլև այն պատճառով, որ «Նոր Թուրքիայի» կառավարողները այն դիտում էին մոտ ապագայում Հայաստանի Հանրապետության վրա հարձակում գործելու շատ հարմար զինադաշտ:

1920 թ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովում արտասանած ճառում Մուստաֆա Քեմալն ասել էր. «Մենք Հայաստանի վրա արշավելու որոշում ընդունեցինք: 1920 թ. հունիսին մենք հրամայեցինք արևելյան շրջաններում նախնական զորահավաք անցկացնել: 15-րդ կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան նշանակվեց արևելյան ճակատի հրամանատար»[2]:

Կարաբեքիրի նոր նշանակումից հետո Թուրքիայում, հատկապես նրա

---

[1] **Ս. Ալիխանյան**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921), 1966, Երևան, էջ 102:

[2] **М. Кемаль**, Путь новой Турции, т. 3, Москва, 1934, с. 313.

արևելյան նահանգներում, հայտարարվեց նախնական զորահավաք, և կազմակերպվեց Բայազետյան դիվիզիան՝ 9000 սվինով: Այդ դիվիզիան նախքան Կարմիր բանակի զորքերի Նախիջևան մուտք գործելը ներխուժել էր գավառ և գրավել Նախիջևանի, Ջուլֆայի և Օրդուբադի շրջանները: Այնուհետև, առանց հապաղելու, թուրքերը ռազմական գործողություններ էին սկսել հայկական զորքերի դեմ:

Հայկական կառավարությունն իր հերթին ուժեղացրեց դիվանագիտական ջանքերը՝ Թուրքիայի հետ ընդհարումից խուսափելու համար: Մի կողմից՝ խորհրդայնացված Ադրբեջանի և նրան թիկունք կանգնած բոլշևիկյան Ռուսաստանի, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև գնալով աճող հակասությունները հրամայաբար առաջ քաշեցին հայ-ռուսական բանակցությունները սկսելու պահանջը:

Բանակցությունների նախաձեռնությունը վերցրեց ՌՍՖԽՀ կառավարությունը և Հայաստանի կառավարությանն առաջարկեց բանակցություններ վարել Մոսկվայում:

Դեռևս ապրիլի վերջին Երևանում կազմվել էր պատվիրակություն՝ գրող Լևոն Շանթ (պատվիրակության ղեկավար), ՀՀ խորհրդարանի անդամներ Համբարձում Տերտերյան և Լևոն Զարաֆյան հիմնական կազմով: Պատվիրակության մեջ ընդգրկվեցին նաև Սարգիս Այդինյանը և Տեր Հակոբ քահանա Սառիկյանը: Պատվիրակությունը հանձնարարություն ստացավ՝ անմիջապես մեկնելու Մոսկվա և Հայաստանի կողմից բանակցություններ վարելու խորհրդային կառավարության հետ ու կնքելու բարեկամության դաշինք: Պատվիրակությունը կառավարությունից ստացավ հետևյալ հրահանգները.

«1. Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչի Հայաստանի անկախությունը՝ ընդունելով, որ Հայաստանին են պատկանում Ղարաբաղն ու Գյուլիստանը,
2. Խորհրդային Ռուսաստանը, գոնե սկզբունքով, պետք է ընդունի թուրքահայ հողերի կցումը Հայաստանին,
3. Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտի Հայաստանի ներքին գործերին, չպիտի Հայաստանում կոմունիստական գործունեություն ծավալի,
4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թույլ տա, որ Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում գտնվող հայ գաղթականները վերադառնան Հայաստան»[1]:

Երևանում կառավարական շրջաններում հույսի և ոգևորության մթնոլորտ էր ստեղծվել: Շատերն այն կարծիքին էին, որ Ռուսաստանի միջնորդությամբ և բարի կամքով հնարավոր կլիներ ճշտել Թուրքիայի և Ադրբեջա-

[1] **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 453:

նի հետ Հայաստանի Հանրապետության սահմանները, արդարացի լուծել տարածքային հարցերը:

Պատվիրակությունն անհապաղ մեկնեց Մոսկվա՝ մի ամբողջ ամիս կորցնելով ճանապարհին: Վերջապես, տեղ հասնելուց հետո՝ մայիսի վերջին, սկսվեցին հայ-ռուսական բանակցությունները: Հայկական կողմից բանակցություններին մասնակցում էին Լևոն Շանթը, Համբարձում Տերտերյանը և Լևոն Զարաֆյանը, խորհրդային կողմից՝ արտգործնախարար Գեորգի Չիչերինը և նրա տեղակալ Լևոն Կարախանը:

Հունիսի 3-ին Մոսկվայից Լևոն Շանթը հաղորդեց Երևան՝ արտգործնախարար Հ. Օհանջանյանին.

«Մեզ հետ բանակցություններ է վարում Կարախանը: Առաջին հանդիպումն ունեցել ենք մայիսի 28-ին: Հույս ունենք մեր միսիայի հաջողությանը: Առայժմ գիտակցաբար չենք գրում մանրամասների մասին: Քեմալի ներկայացուցիչները այստեղ են գտնվում ռազմական օգնություն ստանալու համար: ...Այսօր մենք եղանք Չիչերինի մոտ. գլխավոր դժվարությունը թուրքական Հայաստանի արևմտյան սահմանների հարցն է, հատկապես Էրզրումի մասին՝ Քեմալի պատճառով»[1]:

Բանակցությունները սկզբում ընթանում էին հաջող, խորհրդային կողմն ընդունեց Հայաստանի առաջ քաշած բոլոր պայմանները: Հունիսի 10-ին Լ. Շանթը հաղորդում էր Երևան ռուս-հայկական պայմանագրի մոտալուտ ստորագրման մասին. այն նախատեսված էր հունիսի 12-ին: Բայց դա տեղի չունեցավ, քանի որ փաստաթղթի կնքմանը ամեն կերպ խանգարում էին հատկապես Բաքվից այն պատճառաբանությամբ, թե պարզված չեն Խորհրդային Ադրբեջանի և դաշնակցական Հայաստանի սահմանները, հատկապես Ղարաբաղի և Զանգեզուրի կողմից: Բանակցությունների ընթացքի դանդաղեցման և թուրք-ադրբեջանական կողմից հարուցած խոչընդոտների մասին հունիսի 20-ին Շանթը հեռագրեց Երևան: Հայաստանի պատվիրակությունը գնալով հանդիպում էր նորանոր դժվարությունների:

Սակայն խորհրդային կառավարությունը շարունակում էր այն տպավորությունը ստեղծել, թե ինքը մտադիր էր հօգուտ Հայաստանի լուծել վիճելի տարածքների հարցը: ՌՍՖԽՀ արտաքին գործերի կոմիսարիատը նույնիսկ կազմել էր Այսրկովկասի վարչական քարտեզ, որտեղ Հայաստանին «նախատեսված էին» ընդարձակ սահմաններ: Այդ քարտեզով Հայաստանի սահմանների մեջ էին առնված նաև Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի երկրամասերը:

Շանթի պատվիրակությունը հավատ չէր ընծայում խորհրդային կողմի առաջարկների նկատմամբ և շարունակում էր ոչ իր մեղքով օրերն անորոշ դրությամբ անցկացնել Մոսկվայում: Հայկական պատվիրակության նկատ-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 39:

մամբ բոլշևիկյան կառավարության, մեղմ ասած, ոչ բարեկիրթ վերաբերմունքի պատճառն այն էր, որ, ինչպես խորհրդային կողմն էր մշտապես շեշտում, Հայաստանի կառավարությունը շարունակում էր իր հույսը կապել Անտանտի տերությունների հետ՝ ակնկալելով, որ նրանց աջակցությամբ կլուծեն Թուրքիայի հետ Հայաստանի ունեցած տարածքային հարցերը:

Խորհրդային կողմի նկատմամբ հայկական պատվիրակության անվստահությունը, ինչ խոսք, հիմքեր ուներ: Մոսկվան «վիճելի» հայկական տարածքները խաղաքարտ էր դարձրել՝ Թուրքիայի և Ադրբեջանի համակրանքն ամեն կերպ շահելու համար: «Վիճելի» մարզերի վերաբերյալ հարցերի քննարկումների ժամանակ խորհրդային ղեկավարները դրանցից ամենազանազան կոմբինացիաներ էին սարքում: Նրանք մի դեպքում Զանգեզուրը և Ղարաբաղը տեսնում էին Ադրբեջանի կազմում, իսկ Նախիջևանը՝ Հայաստանի, մյուս դեպքում մտածում էին երեք մարզերն էլ հանձնել Ադրբեջանին, երրորդ դեպքում Զանգեզուրը խոստանում էին թողնել Հայաստանին, իսկ Նախիջևանն ու Ղարաբաղը միացնել Ադրբեջանին և այսպես շարունակ: Եվ ամեն անգամ Ադրբեջանի շահն առաջնային էր:

Մինչ Մոսկվայում հայ-ռուսական բանակցությունները տեղապտույտ էին տալիս, թուրքերը Նախիջևանի կողմից ուժեղացրին ռազմական ճնշումը Հայաստանի վրա: Ուստի Նախիջևանը կորցնելու վտանգը խորհրդային իշխանություններին ստիպեց ժամ առաջ ոտք դնել այնտեղ: Իսկ դա հնարավոր էր Զանգեզուրի գրավումն իրականացնելուց հետո:

Զանգեզուրում օրեցօր սպասում էին Կարմիր բանակի ներխուժմանը: Ազգային խորհրդի առաջարկով Զանգեզուրի գեներալ-կոմիսար Սերգեյ Մելիք-Յոլչյանը հունիսի 9-ին մեկնեց Երևան՝ գավառի կացության մասին զեկուցելու ՀՀ կառավարությանը: Նրան ժամանակավորապես փոխարինեց գավառի պաշտպանության ակտիվ կազմակերպիչներից մեկը՝ Զաքար Յոլյանը: Երևան մեկնելուց առաջ Ս. Մելիք-Յոլչյանը դիմեց Զանգեզուրի ժողովրդին՝ կոչ անելով ուժ չխնայել հայրենի լեռնաշխարհը պաշտպանելու համար:

Զանգեզուրյան ուղղությունից Հայաստանի զինված ուժերի ուշադրությունը շեղելու նպատակով, ինչպես ասվեց, 1920 թ. մայիսի վերջերին Ղազախի և Քարվանսարայի շրջաններում երևացել էին կարմիր զորամասերի առաջին ստորաբաժանումները: Բայց Կարմիր բանակն այդ ժամանակ չմտավ Զանգեզուր, քանի որ իրադրությունը փոխվել էր, ուստի նրա առաջխաղացումը ժամանակավորապես հետաձգվեց: Բանն այն է, որ մուսավաթական ուժերը տեղի չէին տալիս: Կենտրոնանալով Ադրբեջանի խորքերում՝ նրանք խռովություններ էին սկսել, որոնց նպատակն էր վերականգնել հին կարգերը:

Մուսավաթական զինված ուժերին միացել էին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո 1920 թ. ապրիլ-մայիս ամիսներին Բաքվից գավառներ փա-

խած նախկին հանրապետության պարագլուխներից շատերը: Գավառներում նրանց էին միացել տասնյակ խաներ և հարյուրավոր բեկեր, որոնք վախ ունեին, որ որքան էլ Ադրբեջանի թուրք բոլշևիկները տարված են պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարներով, բայց Բաքվում նստած ռուս բոլշևիկների թելադրանքով ձեռնամուխ կլինեն իրենց հարստությունների բռնագրավմանը և ունեցած դիրքերի վերացմանը:

Մուսուլմանական հակախորհրդային ապստամբությունն սկսվեց Գյանջայում (Ելիզավետպոլ) մայիսի 26-ին: Այն գլխավորում էր թուրք գեներալ Նուրի փաշան: Հունիսի 5-ին խռովություն բռնկվեց Բարդայում և Ղարաբաղի ադրբեջանական գյուղերում, հունիսի 9-ին՝ Զաքաթալայում: Այս խոշոր ելույթներից բացի՝ Ադրբեջանի մի շարք քաղաքներում ու գյուղերում ելույթներ ունեցան մուսուլմանական մեծ ու փոքր զինված խառնախմբեր: Այսպես, օրինակ, հունիսի սկզբին Զևադի գավառում՝ Պետրովսկից 15 կմ հեռավորության վրա, Ալի Աֆունտ մոլլայի աջակցությամբ խան Շիրվանսկին հավաքեց 3000 մարդուց բաղկացած մի ջոկատ, որը հունիսի 3-ին հարձակվեց 28-րդ հրաձգային դիվիզիայի 2-րդ հեծյալ գնդի վրա: Ուժգին դիմադրության հանդիպելով և կրելով կորուստներ՝ ապստամբները Արաքսի ափով նահանջեցին հարավարևմտյան ուղղությամբ և սկսեցին նոր ուժեր հավաքել: Խան Շիրվանսկին օգնություն ստացավ նաև Պարսկական Ադրբեջանից[1]:

Խռովությունն ընդգրկել էր նաև Լենքորանի շրջանը, որտեղ գործում էին գեներալ Սելիմովի, Ղուլամ Թաղիևի և Շահվարանի ջոկատները՝ մինչև 1500 մարդ: Այս ու այնտեղ ծագած խոշոր ու ոչ մեծ ապստամբություններն իրենց վրա էին գամել 11-րդ Կարմիր բանակի հիմնական ուժերը:

1920 թ. հունիսի 3-ին Նուրի փաշայի և մուսավաթական բանակի գնդապետ, Ղարաբաղի ջոկատի նախկին պետ Զեյնալովի զինված ուժերը մոտեցան Շուշիին, իսկ հունիսի 5-ին գրավեցին քաղաքը: Ձերբակալվեցին Լեռնային Ղարաբաղի հեղկոմի անդամները և մեծ թվով ղարաբաղցի բոլշևիկներ: Խռովարարների կողմն անցավ Ադրբեջանի Կարմիր բանակի՝ Բաքվի գունդը, որը կազմված էր նախկին մուսավաթական բանակի ասկյարներից[2]:

Բացառությամբ Բաքվի շրջանի՝ Ադրբեջանի այն տարածքներում, որտեղ կային Կարմիր բանակի զորամասեր, ապստամբներն ընդհարումներ էին ունենում դրանց հետ, կորուստներ կրում և կորուստներ պատճառում: Մասնավորապես նրանց հաջողվեց հանկարծակիի բերել խորհրդային ոչ փոքր մի զորամասի և գլխովին կոտորել դրա անձնակազմին: Այդ առիթով «Սլովո» թերթը գրում էր.

---

[1] Տե՛ս ՌՊՌԱ, ֆ. 109, ց. 1, գ. 896, թ. 38:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 173, թ. 1-3:

«Ելիզավետպոլում բարձրացրած ապստամբության հետ միաժամանակ, Նուրի փաշայի նախաձեռնությամբ, Ջևանշիրի գավառում թաթարների կողմից Թարթառ գետի հովտում սրի է քաշվել խորհրդային զորքերի մեծ ջոկատ: Խորհրդային իշխանության ներկայացուցիչներ Օրջոնիկիձեն և Սահակ Տեր-Գաբրիելյանը հրաման են արձակել ձերբակալելու Նուրի փաշային, որը թաքնվելով մշակում է Ադրբեջանում խորհրդային բոլոր զորքերի ոչնչացման մասին պլան»[1]:

Բռնկված թուրք-մուսավաթական հակախորհրդային խռովությունը կարող էր լայն ծավալ ստանալ, եթե Կարմիր բանակի զորամասերը չդիմեին վճռական գործողությունների:

Ղարաբաղում խռովությունը վերացնելու համար 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունն այնտեղ ուղարկեց Պ. Կ. Շտեյգերի 32-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը, որոնց միացան նաև մուսուլմաններից կազմված, ավտոզրահապատներ ունեցող հատուկ ջոկատը, ինչպես նաև՝ Կուրիշկոյի հրամանատարության տակ գտնվող 18-րդ հեծյալ դիվիզիան: Այդ բոլոր զորամասերին ուղեկցելու հրաման ստացավ Լուննիչի ավիացիոն ջոկատը, որն օդից գնդացիրների կրակով և ռումբերով պետք է ցրեր խռովարարներին:

Հունիսի 8-ին Ադրբեջանի տապալված հանրապետության խորհրդարանի նախկին փոխնախագահ Ահմեդ Աղաևը դիմում ուղղեց «քաղաքակիրթ աշխարհի բոլոր ժողովուրդներին և կառավարություններին»: Դիմումն ուղարկվեց նաև «Վրաստանի Հանրապետությանն առընթեր Հայաստանի Հանրապետության Նորին Գերազանցության դիվանագիտական պ-րն ներկայացուցչին»[2]:

Դիմումի մեջ Աղաևը միջազգային հանրությանը բողոք էր հայտնում զենքի ուժով Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատելու կապակցությամբ: Անկախության համար երկու տարվա ընթացքում մեծաքանակ զոհեր կրած ադրբեջանական ժողովուրդը, գրում է նա, «չէր կարող հաշտվել իր վզին բռնի փաթաթած նոր կարգերի հետ», ուստի կարճ ժամանակ անց երկրի տարբեր վայրերում ապստամբության դիմեց՝ պաշտպանելով Ադրբեջանի բանակի այն զորամասերը, որոնք չէին հպատակվում բոլշևիկներին:

Դիմումի մեջ նշելով, որ բոլշևիկյան նոր իշխանությունները արյունալի հաշվեհարդարներ էին տեսնում ապստամբների հետ, Աղաևը այնուհետև գրում էր. «Ես կտրականապես բողոքում եմ քաղաքակիրթ աշխարհի բոլոր ժողովուրդների և նրանց կառավարությունների առջև՝ Ադրբեջանի ժողովուրդների անկախ գոյության գերագույն իրավունքը այդքան կոպտությամբ ոտնահարելու առթիվ և համառորեն խնդրում եմ միջոցներ ձեռք առնել

[1] “Слово” (Тбилиси), 1920, 1 июля.

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 6-8:

անհապաղ դադարեցնելու Ադրբեջանում տեղի ունեցող արյունահեղությունը և նրա սահմաններից դուրս տանելու ռուսական կարմիր զորքերին, որպեսզի հնարավորություն տրվի Ադրբեջանի ժողովրդին շարունակելու իր խաղաղ և անկախ գոյությունը՝ համաձայն իր արտահայտած կամքի:

Իսկ եթե ռուսական կարմիր զորքերը չեն թողնի Ադրբեջանի սահմանները, այդ դեպքում հետագայում տեղի ունենալիք բոլոր անցքերի ամբողջ պատասխանատվությունը կընկնի Խորհրդային Ռուսաստանի վրա»[1]:

Մինչ մուսավաթական հայտնի գործիչը աղիողորմ բողոքներ էր ուղարկում տարբեր կառավարությունների հասցեներով, 1920 թ. հունիսի 10-ին 32-րդ հրաձգային և 18-րդ հեծյալ դիվիզիաների զորամասերը հարձակման անցան Թարթառի և Լեմբերանի վրա: Սկսելով այդ հարձակումը՝ Կարմիր բանակի հրամանատարությունը մտահոգ էր իր թիկունքի ապահովման խնդրով, քանի որ հայտնի էր դարձել, որ Շամխոր կայարանի շրջակայքում՝ Գյանջայից 30-35 կմ հարավ-արևելք, գործում են խռովարարների բավական ուժեղ ջոկատներ: Ահա թե ինչու Սարովի շրջանում տեղակայեցին Կրիվոնոսովի 94-րդ հրաձգային բրիգադը, որն ուժեղ պահակախմբեր կարգեց Կըզըլ-Հաջիլի, Բորսունլու, Ջամիլլի, Սեիդլի բնակավայրերում: Միաժամանակ բրիգադի հեծյալ պարեկները հետախուզում էին առջևում ընկած տարածքները:

Հունիսի 12-ին 32-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը գրավեցին Աղդամը, որտեղ առգրավեցին լեռնային 3 հրանոթ, 2 հրասանդ, 5 գնդացիր, շատ զինամթերք ու հեռախոսային գույք: Խռովարարները նահանջեցին դեպի Ջաբրայիլ[2]:

Հունիսի 13-ին 32-րդ դիվիզիայից առանձնացվեց մի ուժեղ ջոկատ, որը հրետանիով և զրահամեքենաներով շարժվեց դեպի Շուշի և հունիսի 15-ին գրավեց քաղաքը:

Բաքվի հայերեն «Կոմունիստ» թերթը Շուշիի գրավման առթիվ գրում էր. «Հակահեղափոխության վերջին կայանը՝ Շուշին, վերցված է քաջարի բանվորագյուղացիական բանակի կողմից: Հեղափոխության կարմիր դրոշակը նորից ծածանվում է Ղարաբաղի կենտրոնում»[3]: Դիվիզիայի մյուս զորամասերը շարունակեցին զարգացնել հարձակումը դեպի հարավ-արևելք՝ հետապնդելով նահանջող ապստամբ ջոկատներին:

Նուրի փաշայի և գնդապետ Ջեյնալովի ջախջախված ջոկատների մնացյալ մասը, Խուդափերինի կամրջով հուլիսի սկզբին անցնելով Արաքս գետը, հեռացավ Պարսկաստան:

1920 թ. մայիս-հունիս ամիսներին ծայր առած հակախորհրդային ելույթ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 6-8:

[2] Տե՛ս **А. Кадишев**, նշվ. աշխ., էջ 302:

[3] «Կոմունիստ» (Բաքու), 1920, 20 հունիսի:

ները հաջողություն չունեցան: Շուրջ 20 օր տևած կռիվների ընթացքում Կարմիր բանակը դաժանորեն ճնշեց ապստամբությունը:

Հունիսի 13-ին Սերգո Օրջոնիկիձեն Լենինին հղած հեռագրում զեկուցում էր. «Ապստամբությունը Ղարաբաղում ոչնչացված է. գրավել ենք 8 հրանոթ՝ լծասարքով, ձիերով, 26 գնդացիր, զինամթերքի, հրացանների ու գնդացիրների մեծ պահեստներ: Շարժման պարագլուխները Նուրի փաշայի գլխավորությամբ փախան: Հրահրված խավարամիտ գյուղացիությունը պարագլուխների լքումից հետո ձեռնամուխ է եղել կալվածատիրական ագարակների գրավմանը»[1]:

Արևելյան ճակատի քեմալական զորքերի հրամանատար Կարաբեքիր փաշային հղած հեռագրով 11-րդ Կարմիր բանակի հրամանատարին փոխարինող Վասիլենկոն և բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Լուկինը հայտնում էին, որ որոշում է կայացվել ապստամբներից գրավված զենքը և զինամթերքը հանձնել Անկարայի կառավարությանը՝ «ձեր հայեցողությամբ Թուրքական հեղափոխական բանակի կարիքների համար օգտագործելու նպատակով»[2]:

Գանձակում և հարակից շրջաններում ճնշելով մուսավաթականների խռովությունը և ամրապնդելով խորհրդային կարգերը Լեռնային Ղարաբաղում՝ 11-րդ Կարմիր բանակի 20-րդ և 32-րդ դիվիզիաները ուրիշ զորամասերի հետ վերստին ձեռնարկեցին արշավ դեպի Զանգեզուր և Նախիջևան: Առաջինը Զանգեզուր պիտի մտներ 32-րդ դիվիզիան:

Կարմիր բանակի ջանքերով հեշտությամբ տիրելով Լեռնային Ղարաբաղին՝ ադրբեջանցիները համոզված էին, որ նույն բանակով հեշտությամբ գրավելու են նաև Զանգեզուրը, Նախիջևանը, Շարուր–Դարալագյազը: Չի կարելի չգնահատել Ադրբեջանի՝ այն օրերի ղեկավարների համառությունը, նպատակին հասնելու հետևողականությունն ու ճարպկությունը: Նրանք հմտորեն էին օգտագործում այն հանգամանքը, որ Այսրկովկասում առաջինը Ադրբեջանն էր խորհրդայնացվել: Ինչպես Մոսկվայից, այնպես էլ Բաքվից հրապարակ էր նետվել այն առասպելը, թե Ադրբեջանը հեղափոխական պայքարի առաջամարտիկ է, որ շատ չանցած՝ այդ հանրապետությունը ոչ միայն օրինակ, այլև իսկական փարոս է դառնալու ողջ Արևելքի համար, հետևաբար պետք է ամեն կերպ նրան աջակցել և նրա օգնությամբ նորանոր տարածքներ ներառել խորհրդային սահմանների մեջ:

Այսպիսով Ադրբեջանն իր կողքին ուներ Խորհրդային Ռուսաստանը, թիկունքում՝ քեմալական Թուրքիան: «Նոր Թուրքիայի» կառավարողները, որոնք հաջողությամբ քողարկվում էին հեղափոխական կեղծ կարգախոսներով և հանդես էին գալիս իբրև իմպերիալիզմի լծից Արևելքի ճնշված,

---

[1] ՌՊՌԱ, ֆ. 1328, ց. 1, գ. 422, թ. 27:

[2] Նույն տեղում, գ. 555, թ. 40:

հատկապես մուսուլմանական ժողովուրդների ազատագրության ջատագովներ, Հայաստանի նկատմամբ, ըստ էության, շարունակում էին երիտթուրքերի զավթողական արյունարբու քաղաքականությունը: Նրանք մտմտում էին հայ ժողովրդի արևելյան հատվածը նույնպես բնաջնջելու ծրագիրը: Ավելին, քեմալականները, որոնց պարագլուխները երեկվա ակտիվ երիտթուրքերն էին, փայփայում էին պանթուրքական ցնորքներ, երազում էին իրենց պետության սահմաններ ներառել Ադրբեջանը, Դաղստանը, Միջին Ասիան, թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքներ:

Դիվանագիտական սերտ հարաբերությունների մեջ մտնելով քեմալականների հետ՝ խորհրդային կառավարությունը Թուրքիային աջակցում էր Անտանտի տերությունների դեմ մղվող պայքարում: Դրա հետ մեկտեղ խորհրդային կառավարությունը ստիպված էր հաշվի առնել Այսրկովկասի նկատմամբ քեմալականների ագրեսիվ նկրտումները:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ այդ ժամանակ խորհրդային կենտրոնական կառավարության մեջ վերջնական համաձայնություն և միակամություն չկար Ղարաբաղը, Զանգեզուրը և հատկապես Նախիջևանը Ադրբեջանին հանձնելու հարցի շուրջ: Դրան մերթընդմերթ ընդդիմանում էր Գ. Չիչերինը, որը բազմիցս հանդես էր եկել հարցը Հայաստանի օգտին լուծելու առաջարկներով: Բայց Թուրքիայի քեմալական կառավարությունը Խորհրդային Ռուսաստանի հետ իր հարաբերությունները հետևողականորեն պայմանավորում էր նրանով, թե այդ մարզերը ում պետք է անցնեն՝ Հայաստանի՞ն, թե՞ Ադրբեջանին: Թուրքիան շարունակում էր ամուր կանգնել վերջինիս թիկունքին, պաշտպանել նրա ծավալապաշտական նկրտումները, ամեն ինչ անում էր, որպեսզի Հայաստանին մնա միայն մի փոքր «կենսական տարածք»: Իրենց հերթին Խորհրդային Ադրբեջանի բոլշևիկացած կառավարողները, ունենալով «մեծ եղբոր»՝ Թուրքիայի հետևողական աջակցությունը, իրենց դիմումներով ու կոչերով Մոսկվային հանգիստ չէին տալիս, բոլոր միջոցներով համակենտրոնացնում էին խորհրդային կառավարության մեջ ազդեցություն ու վճռական խոսք ունեցող ոչ քիչ թվով սիոնիստ գործիչներին, թուրքասերներին, որպեսզի օգտագործելով հարմար պահը՝ «իմպերիալիստական Հայաստանից» պոկեն նորանոր տարածքներ*:

Առայժմ, սակայն, Բաքվին չէր հաջողվել Մոսկվային թեքել «վիճելի» մարզերը անվերապահորեն Ադրբեջանին հանձնելու կողմը: Մոսկվան դեռ շարունակում էր միջնորդի դեր խաղալ Ադրբեջանի և Հայաստանի միջև: Խորհրդային կառավարությունը Այսրկովկասում գտնվող Կարմիր բանակի

---

* «Վիճելի տարածքների» պատկանելության հարցում խորհրդային կառավարության մեջ եղած տարբեր տեսակետները բանիմացորեն ու համոզիչ բացահայտել է պատմաբան Ռեմ Ղազանչյանն իր մի շարք հրապարակումներում, այդ թվում՝ "К предыстории самоопределения Нагорного Карабаха: С приложением новых документов" (Москва, 1997) արժեքավոր ուսումնասիրության մեջ:

հրամանատարությանը մշտապես հիշեցնում էր իրենց հիմնական խնդիրը՝ գրավել «վիճելի» տարածքները և դրանք այնքան ժամանակ պահել ռազմակալման տակ, մինչև որ համատեղ կորոշվեր դրանց՝ Ադրբեջանին կամ Հայաստանին պատկանելությունը:

Հունիսի 19-ի հեռագրով Գ. Չիչերինը, Բաքվում գտնվող Սերգո Օրջոնիկիձեին կրկին հիշեցնելով ռուսական զորքերի կողմից Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես ռազմակալելու անհրաժեշտության մասին, գրում էր. «Բուրժուական Վրաստանի, դաշնակցական Հայաստանի և թուրքական ազգայնականների հետ խաղաղության և փոխզիջումների քաղաքականությունը, որը քաղաքական նկատառումներով թելադրված է կուսակցության կենտկոմի կողմից, պետք է անշեղորեն անցկացնել... Ղարաբաղը, Զանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Ջուլֆան չպետք է միացվեն ո՛չ Հայաստանին և ո՛չ Ադրբեջանին, այլ պետք է գտնվեն ռուսական օկուպացիոն զորքերի ենթակայության տակ, ուր կստեղծվեն տեղական խորհուրդներ, այլապես ուրիշ որևէ որոշում կարող է ձախողել խաղաղության մեր քաղաքականությունը, որն թելադրված է ընդհանուր վիճակի պահանջով»[1]:

Այսպես թե այնպես, Կարմիր բանակը Ադրբեջանի կողմից մոտեցավ Հայաստանի սահմաններին և պատրաստվեց, առանց ժամանակ կորցնելու, Ղարաբաղից մտնել Զանգեզուր:

Արդեն հունիսի վերջին Զանգեզուրի սահմաններին կուտակված էին 28-րդ դիվիզիայի 1-ին գունդը, 281-րդ և 299-րդ հետևակային գնդերը, 1-ին և 2-րդ հեծյալ գնդերը, որոնք ընդհանուր առմամբ կազմում էին 6-7 հազար սվին, 800-1200 թուր, 12 թնդանոթ[2]:

Նախքան Զանգեզուր մտնելը Կարմիր բանակի հետախուզական ծառայությունները գավառի բոլշևիկների օգնությամբ հայթայթել էին անհրաժեշտ տվյալներ՝ այնտեղի պաշտպանական հնարավորությունների, հայկական զորամասերի դասավորության, զանգեզուրյան զինվորների մարտական ոգու, բնակչության քաղաքական տրամադրությունների մասին և այլն:

Զանգեզուրից հայտնած տվյալների հիման վրա Շուշիում գտնվող 32-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի հետախուզական բաժինը կազմել էր տեղեկանք ու ներկայացրել Բաքու՝ 11-րդ Կարմիր բանակի շտաբին: Տեղեկանքում մասնավորապես նշված էր. «...Դարալագյազի ու Զանգեզուրի գավառների պաշտպանությունն իրականացնում է հայկական բանակի արևելյան խմբավորումը, որի կազմում են զանգեզուրյան, դարալագյազյան և դարաբաղյան ջոկատները: Խմբավորման հրամանատարն է Մովսես Սիլիկյանը, որի շտաբը գտնվում է Դարալագյազի Կարագանլու գյուղում: Ինչ վերաբե-

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 506:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1-ին, թ. 180-181:

րում է առանձին վերցրած Զանգեզուրին, ապա այնտեղ, հետախուզության տվյալներով, չկան կանոնավոր զորամասեր, այլ կա 5000 զինված կամավոր և ընդամենը 67 բանակային սպա, որոնք, ապրելով իրենց գյուղերում, սահմանված հերթականությամբ կատարում են գավառի սահմանների պաշտպանությունը: Զանգեզուրյան այդ բոլոր ուժերի հրամանատարի (գեն. Ն. Ղազարով) և շտաբի պետի (փոխգնդապետ Դոնդարով) նստավայրը Գորիս քաղաքն է: Այստեղ է գտնվում նաև բուն Զանգեզուրի (Գորիսի շրջանի) գլխավոր ջոկատի հրամանատարությունը (ջոկատի հրամանատար՝ նույն ինքը՝ զանգեզուրյան բոլոր ուժերի հրամանատար գեն. Ղազարով): Այս գլխավոր ջոկատին ենթակա է Զաբուղի ջոկատը՝ պորուչիկ Յապոնի և վեց այլ սպաների ղեկավարությամբ: Նույնպիսի ջոկատներ կան Զանգեզուրի ուրիշ վայրերում: Ղափանի ջոկատի հրամանատարն է Նժդեհը, Սիսիանի ջոկատինը՝ Պողոս Տեր-Դավթյանը»[1]:

Իր հերթին, Ադրբեջանի Կարմիր բանակի շտաբը 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանն էր տրամադրել իր հետախուզության հայթայթած տեղեկությունները: Դրա վկայությունն էր ՀՀ ՀՔԿՓԿՊ արխիվում պահվող Խորհրդային Ադրբեջանի՝ Կարմիր բանակի շտաբի օպերատիվ բաժնի հետախուզական բաժանմունքին տրամադրած լրտեսական ամփոփագիրը[2]:

Խորհրդային հետախուզությունը պարզել էր, որ բոլշևիկների 1920 թ. Մայիսյան ապստամբությունը ծանր հարված էր հասցրել Զանգեզուրին: Ճիշտ է, գավառի իշխանություններին հաջողվել էր վերականգնել կարգն ու օրինականությունը, բայց մտքերն արդեն պղտորվել էին, և ինչ-որ չափով վտանգված էր լեռնաշխարհի մարդկանց դիմադրության ոգին: Չնայած դրան՝ հետախուզությունը նաև պարզել էր, որ զանգեզուրցիները, չհաշված բոլշևիկներին ու նրանց համախոհներին, տրամադիր էին մինչև վերջ պաշտպանել իրենց գավառը՝ իբրև Հայաստանի Հանրապետության անբաժան մաս:

Դեռևս 1920 թ. մայիսի կեսերին Շուշի ժամանած Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Սերգո Օրջոնիկիձեն, 11-րդ բանակի հրամանատար Միխայիլ Լևանդովսկին և լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը, մոտիկից ծանոթանալով քաղաքական իրադրությանը Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև մանրամասն լսելով Զանգեզուրում և Նախիջևանում բնակչության քաղաքական տրամադրությունների մասին հաղորդումներ, իրենց եզրակացությունը պաշտոնապես փոխանցել էին Կենտրոն: Մոսկվա՝ Լենինին, Ստալինին և Չիչերինին հղած հեռագրում Օրջոնիկիձեն մասնավորապես նշել էր. «Հայ և մուսուլմանական բնակչությունը ցնծությամբ է ընդունում ռուսական կարմիր զորքերին: Կարծում եմ,

[1] ՍՔՊՌՊԱ, ֆ. 85, ց . 2, գ. 16, թ. 8:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 174, թ. 13-18:

որ Շուշիի շրջանը, Նախիջևանը, Օրդուբադը և Ջուլֆան մեր զորքերի կողմից կգրավվեն առանց դիմադրության»[1]:

Ինչպես տեսնում ենք, իր հեռագրում Սերգո Օրջոնիկիձեն նշված շրջանների կողքին չէր հիշատակում Զանգեզուրը և չէր գտնում, թե Կարմիր բանակի զորքերի կողմից այն «կգրավվի առանց դիմադրության»:

Ինչպես վերևում ասվեց, 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը դեռևս 1920 թ. մայիսի 25-ին հրաման էր իջեցրել 32-րդ դիվիզիայի հրամանատար Պ. Կ. Շտեյգերին՝ Լեռնային Ղարաբաղը գրավելուց հետո անմիջապես շարժվել Զանգեզուրի վրա: Բայց այդ առաջադրանքի կատարումը, ինչպես արդեն նշվել է, ժամանակավորապես հետաձգվել էր մուսուլմանական խռովությունների պատճառով: Այժմ նորից օրակարգի մեջ էր դրվում արշավը դեպի Զանգեզուր և Նախիջևան:

Դարձյալ ուժի մեջ էր մնում 11-րդ Կարմիր բանակի՝ Բարդա–Աղդամի շրջանում տեղակայված 32-րդ դիվիզիային նախկինում տված հրամանը: Դիվիզիայի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ մարտական առաջադրանքի կատարմանը:

32-րդ դիվիզիայից հետո, ըստ ռազմական պլանի, պետք է Զանգեզուր մտներ նաև Գյանջայում տեղաբաշխված 20-րդ դիվիզիան: Բանակի օպերատիվ պլանով նախատեսված էր, որ Զանգեզուր մտնելուն պես 32-րդ դիվիզիային պետք է ամենալայն աջակցություն ցույց տային գավառի բոլշևիկները և «աշխատավոր գյուղացիները»:

Չնայած Զանգեզուրի բոլշևիկյան գավառային կազմակերպությունը Մայիսյան ապստամբության օրերին ծանր հարվածներ էր ստացել, բայց շարունակում էր պահպանել իր կազմակերպչական կառույցը և ակտիվ աշխատանք տանել: Կոմունիստների մի մասը, խույս տալով տեղական իշխանությունների պատիժներից, գործում էր ընդհատակում: Շատ բոլշևիկներ անցել էին խորհրդայնացված Ադրբեջանի՝ Զանգեզուրի գավառին սահմանակից տարածքները: Նրանք այնտեղ վերախմբավորում էին իրենց ուժերը և Զանգեզուրի իշխանությունների դեմ պատրաստվում նոր զինված ելույթի:

Ադրբեջանի խորհրդայնացումն անմիջական սպառնալիք էր ստեղծել Զանգեզուրի համար: Գավառի իշխանությունները քաջ գիտակցում էին, որ լեռնավայրը բոլշևիկների կողմից գրավվելուց հետո այնտեղ սանձազերծվելու էին հաշվեհարդարներ, ինչպես արվում էին այն բոլոր տարածքներում, որտեղ ոտք էին դնում Կարմիր բանակի զորամասերը, և որտեղ դրանց ետևից հաստատվում էր բոլշևիկների իշխանությունը: Բայց առավել վտանգավորն այն էր, որ Զանգեզուրի անկումով միանալու էին թուրքական աշխարհի երկու թևերը՝ Թուրքիան ու Ադրբեջանը, և այդ դեպքում Հայաստանի Հանրապետության գլխին կախվելու էր մահացու սպառնալիք: Նժդե-

[1] ՍՔՊՌՊԱ, ֆ. 885, ց. 13, գ. 156, թ. 23:

հը գրել է. «Մեր հայրենիքի համար ստեղծուած այդ ծանրածանր պայմանների մէջ թույլատրելի՞ է հարցնել, թե Սիւնիքը պիտի ծառանա՞ր Կարմիր բանակի դէմ, թե՞ ոչ:

Այո՛, դա վճռաբար պիտի կտրէր քեմալական ուժերին օգնութեան փութացող Կարմիր բանակի զորքերի ճամփան, եթէ՝ հաշվի առնելով ուժերի փոխհարաբերութիւնը, անգամ համոզուեր, թէ գերազանցապես անհաւասար այդ կռուում իր լեռնոտ բոյնը ամբողջապես կը վերածուի Լեոնիդասեան մի կիրճի*, եւ որպէս նուիրական կտակ ու հիշատակ, նա դարերին իր աճիւնը կը թողնի»[1]:

Գավառի իշխանություններն ու դաշնակցական կազմակերպությունները այդ հարցերը բացատրում էին բնակչությանը, ցույց էին տալիս, որ լեռնաշխարհի հայության ապահովությունը կարող է երաշխավորվել միայն Հայաստանի Հանրապետության սահմաններից ներս, որ բոլշևիկների կողմից հրապարակ բերված «վիճելի տարածքների» մասին հայտարարությունները նպատակ ունեն բթացնելու նրա զգոնությունը և կոտրելու դիմադրության կորովը: Հայոց հայրենիքի «վիճելի» հայտարարված տարածքները օտարվելու էին Հայաստանից և հանձնվելու Ադրբեջանի գերիշխանությանը:

Չեզոքացնելու համար գավառի իշխանությունների քարոզչությունը՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը և գավառի բոլշևիկյան ղեկավար գործիչները դիմեցին հակամիջոցների: Զանգեզուրի «աշխատավորների անունից» բազմաթիվ նամակներ ու հեռագրեր էին հղվում Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդին, 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը, Ադրբեջանի հեղկոմին, Ղարաբաղի հեղկոմի նախագահ Ջամիլ Վեզիրովին, Շուշիի գավառային հեղկոմի նախագահ Բահաթուր Վելիբեկովին, որոնց «հեղինակները» խնդրում էին «օր առաջ օգնության ձեռք մեկնել», «զորք մտցնել գավառ», «կանխել ազգամիջյան հետագա ընդհարումները»: Հեռագրերի, նամակների, խնդրագրերի հիմնական իմաստն այս էր. «Աշխատավորները խորապես գիտակցում են, որ միայն խորհրդային իշխանությունն Անդրկովկասին կրերի խաղաղություն և ազգային համերաշխություն»[2]:

---

* Թերմոպիլե լեռնանցքն է Թեսալիայի և Միջին Հունաստանի սահմանում: Այստեղ մ.թ.ա. 480-ին տեղի ունեցավ հույն-պարսկական պատերազմների նշանավոր ճակատամարտերից մեկը: Հունական փոքրաթիվ զորքը՝ Սպարտայի քաջարի թագավոր Լեոնիդասի (Լեոնիդ I) գլխավորությամբ, երկու օր հաջողությամբ ետ մղեց պարսից Քսերքսես արքայի բանակի գրոհները: Միայն դավաճանության շնորհիվ պարսկական զորքը կարողացավ հաղթել: Մարտերի ընթացքում բոլոր հույները զոհվեցին: Հերոսի մահով ընկավ նաև Լեոնիդասը, որի անունը անտիկ աշխարհում հայրենասիրության և արիության խորհրդանիշ դարձավ: Ճակատամարտի վայրում կանգնեցվել է առյուծ պատկերող հուշարձան (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 4, Երևան, 1978, էջ 180, 569):

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 15:

[2] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 6, գ. 12, թ. 8:

Այդ օրերին Զանգեզուրի իշխանություններն իրենց հերթին ամեն ինչ արեցին, որպեսզի թույլ չտան Կարմիր բանակի զորքերի մուտքը գավառ: Ամենուրեք անցկացվում էին ժողովներ, որոնցում հանդես էին գալիս դաշնակցական գործիչներ: Նրանք բնակչությանը կոչ էին անում զինված դիմադրություն ցույց տալ Կարմիր բանակին: Հունիսի 17-ին Կապանի հանքերում Նժդեհի ղեկավարությամբ տեղի ունեցավ Կապարգողթի (Կապան, Գենվազ, Գողթան) հայության ներկայացուցչական ժողովը, որն ընդունեց հետևյալ որոշումը.

«Ա. Բոլոր շարժումները, ներքին թե արտաքին, ուղղված Հայաստանի անկախության և, մասնավորապես, Ղարաբաղ–Զանգեզուրի ազատագրական ձգտումների դեմ, համարել հակահեղափոխական և դավաճանական ու ամեն գնով աջակցել կառավարությանը՝ իրենց սաղմի մեջ խեղդելու երկիրը դեպի կորուստ տանող բոլոր երևույթները, Բ. Ադրբեջանի խորհրդայնացումը համարել քաղաքական շանտաժ, ստեղծված տաճկա-ադրբեջանյան համիսլամականների և ռազմապաշտների ձեռքով՝ հատկապես Հայաստանի անկախությունը և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը վտանգելու նպատակով, Գ. ամեն մի դափանցի, 18-60 տարեկան, ինչպես եղել է մինչև օրս, զենքը ձեռքին կռվելու է Ադրբեջանի դեմ՝ մինչև վերջին փամփուշտն ու արյան կաթիլը, քանի նա կշարունակի իր հայակեր քաղաքականությունը, Դ. գիշեր-ցերեկ հսկել դիրքերում և կոչ անել Զանգեզուրի ազգաբնակչությանը՝ վարվել նույն ձևով»[1]:

Այդ օրերին Գորիսից Կապան էին անցել Հայաստանի խորհրդարանի անդամներ Արշակ Շիրինյանն ու Վահան Խորենին: Կապարգողթի հայության հունիսի 17-ի ներկայացուցչական ժողովից հետո նրանք որոշեցին այցելել շրջանի մի քանի գյուղեր և Նժդեհին խնդրեցին իրենց հետ լինել: Գյուղերում ամենուրեք նրանք տեսան գալիք օրերի նկատմամբ բնակչության մտահոգությունն ու տագնապը, բայց նաև զինյալ մարտիկների՝ հայրենի երկիրը պաշտպանելու անկոտրում վճռականությունը:

Այդ օրերին առավել վտանգվածը բուն Զանգեզուրի, Սիսիանի և Կապարգողթի հայության ֆիզիկական գոյությունն էր: Եթե Զանգեզուրի հոծ հայությունը ինքնակազմակերպման և ինքնապաշտպանության հնարավորություն ուներ, ապա Կապարգողթի մի մասը կազմող Գողթանի* հայությունը կանգնած էր ֆիզիկապես բնաջնջվելու սպառնալիքի առջև:

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 93:

* Մինչև 1917 թ. Գողթանի գավառակը վարչական տեսանկյունից մտնում էր Երևանի նահանգի Նախիջևանի գավառի մեջ: 1918-1919 թթ. նախիջևանահայության ջարդերից ու արտաքսումից հետո Զանգեզուրի իշխանություններն իրենց պաշտպանության տակ էին առել Գողթանը՝ Կապանի ու Արևիքի հետ այն դիտելով որպես մի միասնական հայկական տարածք, Հայաստանի Հանրապետության մաս, և կազմել Կապարգողթի պաշտպանական միավորումը:

Գողթանում ստեղծվել էր գերսպառնական դրություն: Թուրքական և ադրբեջանական զորամասերը Էդիֆ բեյի և Խալիլ փաշայի գլխավորությամբ պատրաստվում էին վերջնականապես կործանել հայոց այդ հին ոստանը: Թշնամին նորանոր ուժեր էր կենտրոնացնում Օրդուբադում: Սովի կատաբած ավերածություններից և թշնամու գերադաս ուժերից ահաբեկված գողթանցիները սկսել էին կորստաբեր գաղթը:

Մայիսի վերջերին Կապարգողթի հրամանատար Նժդեհը դիմել էր Երևան՝ ՀՀ զինվորական նախարարին՝ խնդրելով Զանգեզուրի վրայով Գողթան ուղարկել 500 զինվորից բաղկացած զորամաս՝ այնտեղի հայությանը փրկելու համար: Բայց օգնությունը չէր գալիս:

Նույն խնդրանքով հունիսի կեսերին Կապանի հանքերից Նժդեհը նորից դիմել էր Երևան, այս անգամ՝ ՀՅ դաշնակցության բյուրոյին:

«Ձեզ համար պարզ է և այն,– գրում էր Նժդեհը,– որ Գողթանի տեղահանությամբ թշնամին տեր է դառնում Արաքսի ափից (Կարճևան) մինչև Ջուլ ձգվող լեռնաշղթաների բոլոր կարևոր ռազմագիտական բարձունքներին ու կետերին և իր մշտական կրակի ու տեռորի տակ է պահելու Զանգեզուրի հարավ-արևմուտքը:

Ընկերնե՛ր, մի տարվա տաժանակիր գործունեության արգասիքի ապահովման մտահոգությունը չէ, որ թելադրում է մեզ նոր չավ անել*, օգնություն խնդրել, ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ընդունե՛ք, որպես աքսիոմա, որ առանց Գողթանի Զանգեզուր–Ղարաբաղ լինել չի կարող, և որ Գողթանի անկման հետ գերեզման կդրվի և Նախիջևան–Շարուրի վերագրավման հույսը, և մեր ջահել հանրապետության համար կստեղծվի մի աննախընթաց սպառնական դրություն:

Զանգեզուր–Ղարաբաղը միշտ մերն են, եթե ժամանակավորապես վտանգվեն անգամ, եթե Գողթանի մի բուռն հերոսական ժողովուրդը չլքի իր Քրիստափորի և Ռոստոմի նվիրական ծննդավայրը: Արագացրե՛ք, ժամը, վայրկյանը ճակատագրական նշանակություն ունի, արագացրե՛ք օգնությունը»[1]:

Ի պատասխան Զանգեզուրի իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցների՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը մի կոչով դիմեց «Ղարաբաղի և Զանգեզուրի աշխատավորներին»: Կոչում ասված էր, որ մուսավաթականները և դաշնակցականները, ադրբեջանցիներին և հայերին միմյանց դեմ կռվի հանելով, ձգտում են ազգային խնդիրները լուծել կոտորածների ու ավերների միջոցով: Հրամանատարությունը հայտարարում էր, որ արտահայտելով Ռուսաստանի խորհրդային իշխանության կամքը՝ ինքը որոշել է ակտիվ միջամտել իրադարձություններին և դադարեցնել կոտորածները:

«Մենք չենք կարող թույլ տալ, որ... թափվի հայ և թուրք աշխատավոր-

---

* Լուր տարածել:

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 7 և շրջերես:

ների արյունը: Մենք հաշտություն և խաղաղություն ենք բերում այդ շրջանների բանվորների և գյուղացիների համար:

Ընկեր աշխատավորնե՛ր, մի՛ հավատացեք հակահեղափոխականներին, որոնք ձեզ դրդելու են կռվելու խորհրդային իշխանության դեմ:

Դուք եկե՛ք մեր ետևից: Պաշտպանեցե՛ք մեզ և մեկնեցե՛ք ձեր եղբայրական ձեռքը: Կորչե՛ն հարուստների, մուսավաթի և դաշնակցականների կառավարությունները:

Կեցցե՛ Կարմիր բանակը, որ ազատություն է բերում աշխատավորներին: Կեցցե՛ խորհրդային իշխանությունը»[1]:

1920 թ. հունիսի վերջերին 11-րդ Կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի զորամասերը Լեռնային Ղարաբաղից շարժվեցին դեպի Զանգեզուր:

Բանակի հրամանատարությունը հրահանգ էր ստացել՝ փորձել Զանգեզուրը գրավել առանց կռվի: Ուստի որոշում ընդունվեց բանակցություններ սկսել գավառի իշխանությունների հետ: Այդ նպատակով բանակի հրամանատարությունը կազմավորեց «պատվիրակություն»՝ 15 հոգուց բաղկացած հետախուզական հեծյալ ջոկատ՝ 32-րդ դիվիզիայի զինվորական կոմիսար, լատիշ Կարլ Ռատնեկի գլխավորությամբ: Նրա հետ էր նաև դիվիզիայի հետախուզության պետը: Ջոկատին միացան նաև Ադրբեջանում գտնվող մի քանի զանգեզուրցի հայ կոմունիստներ:

Նախքան Զանգեզուր ուղևորվելը պատվիրակության ղեկավարը և դիվիզիայի հրամանատարը հանդիպում ունեցան Սաքո Համբարձումյանի և Ղարաբաղի մի քանի ուրիշ բոլշևիկ կուսակցական աշխատողների հետ, որոնք կապեր ունեին Զանգեզուրի կուսակցական ընդհատակյա կազմակերպության հետ և քաջատեղյակ էին գավառի իրավիճակին:

Հետախուզական հեծյալ ջոկատը հունիսի 29-ին մոտեցավ սահմանին: Տասնամյակներ հետո իր հուշերում Կ. Ռատնեկը գրել է. «Ահա և սահմանը: Այն անցնելով՝ ժայռի վրա բարձրացրինք կարմիր դրոշը, կիրճով մեկ բարձր ձայնով հայտնեցինք, որ եկել է Կարմիր բանակը: Այնուհետև կիրճով շարժվեցինք առաջ: Ներքևում երևում էին ցախ հավաքող գյուղացիներ և դիրք մտած զինվորներ»: Առջևում Լեռնային Ղարաբաղին հարող Գորիսի շրջանի սահմանամերձ Տեղ գյուղն էր: «Ժայռերից շտապ խճուղի իջան Տեղ գյուղի զինվոր գյուղացիները: Նրանց տեսքն անմխիթար էր՝ հին բանակի մաշված շինելներով և տրեխներով: Նրանցից շատերը ցարական բանակի զինվորներ էին եղել, Առաջին համաշխարհային պատերազմի մասնակիցներ... Շարժվեցինք դեպի գյուղ: Բնակիչները մեզ դիմավորեցին աղուհացով: Եկել էր ողջ գյուղը, անգամ քահանան: Սկսվեց միտինգը: Հետո մեզ հյուրասիրեցին, տեղավորեցին բնակարաններում:

Ընկել էինք շատ անսովոր իրադրության մեջ. ի՞նչ անել այնուհետև՝

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 68, թ. 1:

վերադառնա՞լ, թե՞ առաջ գնալ Գորիս: Այդ հարցը լուծեց մի ընկեր, որ գիշերը եկավ Գորիսից՝ բերելով ընդհատակյա կուսակցական կազմակերպության գրությունը, որն ուներ մոտավորապես հետևյալ բովանդակությունը. եթե ձեր ուժերը բավարար են, եկե՛ք, մենք ձեզ կօգնենք, իսկ եթե քիչ եք, վերադարձե՛ք: Մենք բռնել ենք հեռախոսագիր, որտեղ ասվում է, որ Բազարչայից դուրս է եկել Դրոյի 300 հեծյալից կազմված ջոկատը, որը վաղը գալու է ձեր դեմ»[1]:

Նույն օրը՝ հունիսի 29-ին, Գորիս քաղաքից Տեղ գյուղ եկան նաև Զանգեզուրի քաղաքացիական իշխանությունների երկու ներկայացուցիչներ՝ Գեղամ Տեր-Մինասյանը և Նիկողայոս Դորունցը: Սկսվեցին բանակցությունները, որի ընթացքում կարմիր պատվիրակները հիշեցրին, որ Զանգեզուրի շատ աշխատավորներ բազմաթիվ դիմումներ են հղել Կարմիր բանակի հրամանատարությանը, օգնություն խնդրել՝ որքան հնարավոր է շուտ զորքեր մտցնել գավառ, քանի որ դա, հատկապես Մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո, հրամայական անհրաժեշտություն է դարձել: Նրանք ասացին, որ ապստամբները ենթարկվել են հալածանքների և հետապնդումների, իսկ կոմունիստների դեմ կիրառվել են դաժան միջոցներ: Կարմիր բանակի պատվիրակությունը հայտարարեց, որ ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը Զանգեզուրում խորհրդային կարգեր հաստատելն էր: Նաև տեղյակ պահվեց, որ այդ նպատակով բանակի հրամանատարությունը որոշել էր զորամիավորումներ մտցնել գավառ: Պատվիրակությունը Զանգեզուրի իշխանություններից պահանջեց զենք չբարձրացնել Կարմիր բանակի զորքերի դեմ, այլ խաղաղ ճանապարհով, արանց արյուն թափելու ընդունել խորհուրդների իշխանությունը[2]:

Գորիսի պատվիրակությունը կտրականապես մերժեց ներկայացված պահանջները և հայտարարեց, որ եթե Կարմիր բանակի զորամիավորումները մուտք գործեն Զանգեզուր, ապա գավառի իշխանությունները դա կդիտեն իբրև ներխուժում և բոլոր միջոցներով կկազմակերպեն զինված դիմադրություն:

Բանակցությունները, այսպիսով, ոչ մի արդյունք չտվեցին: Կարլ Ռատնեկի գլխավորած խորհրդային հետախուզական հեծյալ ջոկատը, թողնելով Տեղ գյուղը, վերադարձավ Ադրբեջանի տարածք[3]:

Կարմիր բանակի հետախուզական հեծյալ ջոկատի պետի հետ ունեցած բանակցությունների մասին Գորիսից անմիջապես հաղորդում արվեց Երևան՝ Հայաստանի վարչապետին[*]:

---

[1] «Սովետական Հայաստան», 1974, 22 մարտի:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 53:

[*] Վարչապետ Համո Օհանջանյանի հիվանդության պատճառով հունիսի 23-ից վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել գյուղատնտեսության և պետական գույքի նախարար Սիմոն Վրացյանը (տե՛ս «Յառաջ», 1920, 30 հունիսի):

Բանակցությունների ավարտից հետո Դրոն, որ գտնվում էր Գորիսում, նամակ ուղարկեց Մեղրիում գտնվող Նժդեհին, որի հետ էին Շիրինյանը և Խորենին: Նամակում ասված էր, թե բոլշևիկներն ուժեր էին կենտրոնացրել Զաբուղում և պատրաստ էին անցնել Զանգեզուր: Այդ լուրը լսելով՝ նրանք երեքով անմիջապես վերադարձան Կապան:

Գորիսի շրջանի պաշտպանության ամրացումը դարձել էր ամենահրատապ խնդիրը, ուստի Շիրինյանն ու Խորենին Աշոտ Մելիք-Մուսյանի հետ Կապանի հանքերից ուղևորվեցին Գորիս քաղաք:

Կարմիր բանակի հրամանատարության համար պարզ էր դարձել, որ զանգեզուրցիները չէին հետևելու համարյա առանց դիմադրության Ղարաբաղը Ադրբեջանի բոլշևիկներին հանձնելու օրինակին և ունեցած բոլոր միջոցներով պաշտպանելու էին իրենց երկրամասը:

Ադրբեջանի ղեկավարությունը Կարմիր բանակի հրամանատարությանը խորհուրդ տվեց դեպի Զանգեզուր արշավի ընթացքում գավառի դեմ ուղղել Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած շրջանների քրդերի զինված ուժերը: Հրամանատարությունը գերադասեց նախ օգտագործել հետախուզության հնարավորությունները և որքան կարելի է շատ բան իմանալ քրդերի, նրանց քաղաքական տրամադրությունների, ռազմական ուժի մասին:

32-րդ դիվիզիայի հրամանատար Պ. Կ. Շտեյգերը և դիվիզիայի զինկոմ Կ. Ռատնեկը հունիսի 27-ին 11-րդ բանակի հրամանատարին հետևյալ տեղեկություններն էին հաղորդում Զանգեզուրին հարակից Քուրդիստանի մասին՝ 1. հատվածը բնակեցված է քրդերով և քոչվոր թուրքերով: 2. Քրդերի առաջնորդը Սուլթանբեկ Սուլթանովն է, որը մեծ ազդեցություն ունի այդտեղի ողջ բնակչության վրա: 3. Քրդերը լավ են տրամադրված Կարմիր բանակի նկատմամբ և ամեն ինչ անում են կանխելու Զանգեզուրից հայկական զորքերի ներխուժումը Քուրդիստանի սահմաններից ներս: 4. Քրդերի և հայերի հարաբերությունները ներկայումս թշնամական են: 5. Քրդերը հայերի դեմ ունեն 400 զինված մարտիկ, բացի այդ՝ պահեստում ունեն 1500 զինված մարդ: 6. Զանգեզուրում հայկական ուժերի վերացման համար Կարմիր բանակի կողմից քրդական ջոկատների օգտագործումը անթույլատրելի է՝ երկու ազգերի միջև լայնատարած կոտորած առաջ չբերելու համար[1]:

Կարմիր բանակի հրամանատարությանը Ադրբեջանի ղեկավարության տված հերթական դիվային խորհուրդն այս անգամ վրիպեց, նպատակին չհասավ: Դրա փոխարեն հրամանատարությունն ուժեղացրեց կապը Զանգեզուրի բոլշևիկյան ընդհատակի հետ: Գավառից տարբեր ճանապարհներով Շուշի ու Բաքու մեկնեցին բոլշևիկներ, որոնք, իրենց ներկայացնելով որպես լիազորված պատվիրակներ, Զանգեզուրի բնակչության անունից Ադրբեջանի կառավարությանը և Կարմիր բանակի հրամանատարությանը խնդրանք

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 67, թ. 2-3:

ներկայացրին՝ արագացնելու Զանգեզուրի «ազատագրումը»:

11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդի լիազոր, Ղարաբաղ–Զանգեզուրի արտակարգ կոմիսար Արմենակ Ղարագյոզյանը 11-րդ բանակի հրամանատարին հուլիսի 2-ին Շուշիից հեռագրեց, որ Խնձորեսկի գյուղացիներից մի խումբ եկել էր իր մոտ և հայտնել, որ Զանգեզուրի գավառի բնակիչներն անհամբերությամբ սպասում էին Կարմիր բանակի գալստյանը: Միաժամանակ Ղարագյոզյանը կարևոր ռազմական տեղեկություններ էր հաղորդում Զանգեզուրում տեղաբաշխված զինվորական մասերի, նրանց զինվածության մասին և այլն[1]:

Դրանից ընդամենը երեք օր հետո 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հրաման արձակեց մտնել Զանգեզուրի սահմաններից ներս, տապալել գոյություն ունեցող իշխանությունը և գավառը հայտարարել խորհրդային:

Հուլիսի 4-ին 32-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադը Ադրբեջանի Կարմիր բանակի զորամասերի հետ Զաբուղ գյուղի հովտից բարձրացավ Տեղ և Կոռնիձոր գյուղերի տափարակը: Փոքր ընդհարում տեղի ունեցավ սահմանագլխին, զանգեզուրյան զորամասը տեղի տվեց և բռնեց նահանջի ճանապարհը:

Նույն օրը Կարմիր բանակի առաջապահ զորամասերը մտան Տեղ և Կոռնիձոր գյուղերը: Մի քանի ժամ հետո Տեղ գյուղ մտավ նաև կարմիր մի հեծելավաշտ, ապա նաև դիվիզիայի հեծյալ գունդը:

Տեղ–Քարաշեն հատվածը Կարմիր բանակի զորամասերն անցան համարյա առանց դիմադրության: Քարաշեն գյուղի մոտ զանգեզուրյան զորամասերը մի քանի հրացանային համազարկ տվեցին: Քարաշեն–Գորիս խճուղու Խնձորեսկ գյուղի հատվածում և նրան հարող հանդամասերում հայ սպաներին թեև հաջողվեց վերախմբավորել ուժերը, բայց կարճատև ընդհարումից հետո շտապ նահանջեցին Գորիս: Վրա հասած մութը չկանգնեցրեց Կարմիր բանակի զորքերի առաջխաղացումը: Բոլշևիկյան զորքերի կողմից Զանգեզուրի սահմանը խախտելու և գավառ ներխուժելու մասին Տեղ գյուղից հեռախոսով հայտնեցին Գորիս՝ Ազգային խորհրդին: Լուրն առնելով՝ Ազգային խորհուրդը հուլիսի 4-ի երեկոյան նիստի հավաքվեց նախագահ Միշա Պարոնյանի տանը: Ներկա էր նաև Դրոն:

Քննության դրած հարցը մեկն էր. բոլշևիկյան ուժերին դիմադրե՞լ, թե՞ ոչ: Վիճաբանությունները երկար տևեցին, եղան թեր ու դեմ կարծիքներ: Դրոն առաջարկեց ամբողջ վարչական կազմով և զորամասերով թեկուզ ժամանակավորապես հեռանալ Գորիս քաղաքից և թողնել, որ բնակչությունն ինքը տեսնի ու համոզվի, որ բոլշևիկների նպատակը Զանգեզուրը Ադրբեջանին ենթարկելն է: Ի վերջո նիստը որոշեց չդիմադրել և զինված ուժերը,

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 8, թ. 101:

պատասխանատու պաշտոնյաներին ու աչքի ընկնող գործիչներին դուրս բերել քաղաքից:

Հուլիսի լույս 5-ի գիշերը խորհրդային ուժերը բռնեցին քաղաքը հյուսիսարևելյան կողմից շրջափակող բարձունքները: Վաղ առավոտյան 32-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադի զորամասերը մտան Զանգեզուրի վարչական կենտրոն Գորիս քաղաքը: Զանգեզուրը հայտարարվեց խորհրդային:

Նախօրյակին Բաքվում գումարված Ադրբեջանի արհմիությունների համագումարում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Կամինսկին արել էր հետևյալ հայտարարությունը. «Ստացվել է հեռագիր այն մասին, որ Նժդեհի դեմ ձեռնարկված ռազմական գործողությունները պսակվել են հաջողությամբ և հուլիսի 2-ի առավոտյան ժամը 4-ին ամենաանառիկ կետը՝ հակահեղափոխական բանդաների մայրաքաղաքը՝ Գորիսը, գրավված է քաջարի Կարմիր բանակի զորքերի կողմից»[1]:

Ինչպես ընթերցողը նկատում է, այդ հայտարարությունն արվել էր հուլիսի 3-ին, այսինքն՝ Գորիսը գրավելուց երկու օր առաջ: Դա նշանակում է, որ ռազմաօպերատիվ պլանով նախատեսված էր եղել Գորիսը գրավել հուլիսի 2-ին, և դրանից ելնելով է Կամինսկին արել այդ հայտարարությունը:

Կարմիր բրիգադի զորամասերի հետ եկել էին գավառից Ադրբեջան փախած մի քանի տասնյակ զանգեզուրցի կոմունիստներ: Քաղաքը գրավելուց երեք օր անց՝ հուլիսի 8-ին, Բաքվից Գորիս եկավ Ղարաբաղ–Զանգեզուրի արտակարգ կոմիսար Արմենակ Ղարագյոզյանը (Կարակոզով):

Գորիս քաղաքի բնակիչների մի մասը համակրանքով ընդունեց Կարմիր բանակի զորամասերի մուտքը Զանգեզուր: Դրա վկայությունն էր քաղաքի կենտրոնում կայացած միտինգը, որտեղ ելույթներ ունեցան տեղի բոլշևիկ ղեկավարներից մի քանիսը, Կարմիր բանակի զորքի հետ Բաքվից եկած 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդին առընթեր հրամանատարական դասընթացների ղեկավար Ն. Յանիշևսկին և կոմիսար Ս. Մաժոնցը, բանակի այլ ներկայացուցիչներ: Բայց ավելի մեծ էր տեղի ունեցածից բացահայտ դժգոհ քաղաքացիների թիվը:

Գորիս մտնելով՝ բոլշևիկների առաջին գործը եղավ պետական զինապահեստին տիրանալը: Հսկողության համար նշանակված զինվորները՝ թվով երեք հոգի, հրաժարվեցին պահեստին մոտ թողնել կարմիրբանակայիններին՝ ասելով, որ իրենք՝ որպես պահապաններ, իրենց տեղը կարող են զիջել միմիայն օրինավոր իշխանության՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան զինվորական մարմնի կողմից նշանակված մարդկանց: Պարտաճանաչ զինվորների կողմից հանդիպելով նման ընդդիմության՝ կարմիրբանակայինները տեղնուտեղը գնդակահարեցին երեքին էլ: Դա

[1] “Бакинский рабочий”, 4 июля, 1920.

Գորիսը խորհրդային զորքերի կողմից գրավելուց հետո առաջին արյունալի դեպքն էր:

Գորիս քաղաքը գրավելու առաջին օրն իսկ՝ հուլիսի 5-ին, կազմակերպվեց Զանգեզուրի գավառի հեղափոխական կոմիտե (գավհեղկոմ), որի մեջ մտան Հակոբ Կամարին (նախագահ), Միքայել Չալյանը (նախագահի տեղակալ), Քրիստափոր Մկրտչյանը (քարտուղար), Համբարձում Տեր-Հովհաննիսյանը և Լևոն Առուստամյանը (Հեղկոմի անդամներ)[1]: Փոքր-ինչ ուշ Հեղկոմի նախագահ դարձավ Հայրապետ Տատյանը, իսկ Հակոբ Կամարին անցավ կուսակցական աշխատանքի: Նրանք բոլորն էլ հին, փորձված բոլշևիկներ էին:

Իր առաջին նիստում իսկ այնտեղ ընդունած թիվ 1 որոշումով գավհեղկոմը ազդարարում էր (կետ 2), որ Զանգեզուրում քաղաքացիական ողջ իշխանությունը պատկանում է իրեն՝ որպես բարձրագույն խորհրդային մարմնի: 3-րդ կետով գավհեղկոմը ստեղծեց իր բաժինները՝ ներքին գործերի, պարենավորման, ժողովրդական տնտեսության, լուսավորության, սոցիալական ապահովության, ժողովրդական առողջապահության, ֆինանսների, ռազմական, արդարադատության, հողային, ինչպես նաև՝ բանվորագյուղացիական տեսչություն: Պարենավորման բաժնի վարիչ նշանակվեց Համբարձում Տեր-Հովհաննիսյանը, ներքին գործերի՝ Միքայել Չալյանը, լուսավորության՝ Մուշեղ Մկրտչյանը, հողային՝ Քրիստափոր Մկրտչյանը, ժողտնտեսության՝ Լևոն Առուստամյանը, սոցիալական ապահովության և ժողովրդական առողջապահության՝ բժիշկ Հակոբյանը:

Ստեղծվեցին նաև ենթաբաժիններ՝ բռնագրավման (վարիչ՝ Բախշի Օգանեսյան), բնակարանային (Ալեքսանդր Մելիք-Դադայան), փոստ-հեռագրի և հաղորդակցության (Դիլիս): Գորիս քաղաքի միլիցիայի պետ նշանակվեց Մկրտիչ (Մակիչ) Մաշուրյանը[2]:

Իր առաջին իսկ նիստում գավհեղկոմը հաստատեց Սիսիանի շրջանի հեղկոմի կազմը, որի մեջ մտան Պատվական Ղազարյանը (նախագահ), Նիկոլայ Արզումանյանը (տեղակալ), Լևոն Թովմասյանը, Արշամ Տեր-Ղազարյանը, Հովսեփ Հարությունյանը (քարտուղար):

Երկրորդ նիստում հեղկոմը գավառը բաժանեց մի քանի շրջանների և հաստատեց դրանց ղեկավար մարմինների կազմը: Օրինակ՝ բուն Զանգեզուրի նորաստեղծ Հալիձորի շրջանային հեղկոմի նախագահ նշանակվեց Հարություն Թովմասյանը, Խնձորեսկի շրջանի հեղկոմի կազմում էին Աբել Ղավալյանը, Հայկ Սիլանյանը, Գարեգին Մայիլյանը, Ավագ Ջանունցը[3]:

Հուլիսի 5-ին, այսինքն՝ այն օրը, երբ 11-րդ Կարմիր բանակի 32-րդ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 158, թ. 1:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 57:

դիվիզիայի հեծյալ բրիգադն արդեն գրավել էր Գորիս քաղաքը, Տեղ գյուղի հատվածով Զանգեզուր մտան նաև նույն բանակի 28-րդ դիվիզիայի զորամասերը: Մի քանի ժամ անց ժամանելով Գորիս քաղաք՝ դրանք այստեղ միացան 32-րդ դիվիզիայի զորամասերին:

Կարմիր բանակի ճնշման տակ թողնելով Գորիս քաղաքը՝ հայկական զինված ուժերը բաժանվեցին երկու խմբի: Դրոն, իր ուժերի գլուխն անցած, հուլիսի 5-ին նահանջեց Սիսիանի ուղղությամբ: Նրան հետևեցին Զաքար Յոլյանը և Նիկոլայ Հովսեփյանը՝ Երևան անցնելու համար: Հայկական ուժերի մյուս մասը Գորիս–Շինուհայր–Տաթև գծով գնաց դեպի Կապան:

Առանձին ջոկատներ, որոնք չէին հասցրել հեռանալ դեպի Սիսիան և դեպի Կապան, ամրացան տարբեր վայրերում՝ սպասելով դեպքերի հետագա զարգացմանը: Արտեմ Խանզադյանը, օրինակ, իր հավատարիմ զինակիցների փոքր խմբով բարձրացավ քաղաքից մոտ 10 կմ հեռու ընկած հյուսիսային կողմերի բարձր լեռները, Զաքար Տեր-Դավթյանը իր ջոկատով գնաց Բուռուն գյուղից վերև ընկած Մանաջարի ժայռերի շրջանը:

Հուլիսի 5-ի առավոտյան ժամը 10-ի մոտ Կապանից Գորիս եկող Շիրինյանը, Խորենին և Մելիք-Մուսյանը քաղաքից ոչ հեռու Քարահունջ գյուղում ականատես եղան բոլշևիկյան բացօթյա միտինգի և այդտեղ էլ իմացան, որ երևանյան ուժերը տեղի են տվել, ու Գորիս քաղաքն անցել է բոլշևիկների ձեռքը: Նրանք աննկատ հեռացան Քարահունջից. Շիրինյանը Խորենու հետ անցավ իր հայրենի գյուղը՝ Շինուհայր, իսկ Աշոտ Մելիք-Մուսյանն աճապարեց Հանքեր՝ Նժդեհին հասցնելու Գորիսի անկման լուրը:

Կարմիր բանակի 252-րդ գունդը կարճատև հանգստից հետո՝ հուլիսի 6-ին, սկսեց հետապնդել դեպի Սիսիան նահանջող հայկական զորաջոկատին: Գունդը դեռ նոր էր դուրս եկել Գորիսից և ուղղություն վերցրել դեպի Սիսիանի շրջանի կենտրոն Ղարաքիլիսա գյուղը, երբ դեպի այնտեղ նահանջող Դրոյի զորաջոկատի թիկունքում ապստամբություն ծագեց շրջանի մի քանի գյուղերում: Գորիս–Ղարաքիլիսա խճուղու որոշ հատվածներում ապստամբները նույնիսկ փորձ արեցին փակել Դրոյի ջոկատի ճանապարհը, մինչև կհասնեին Կարմիր բանակի զորամասերը: Բայց այդ փորձը չհաջողվեց, քանի որ ջոկատը նահանջում էր այնքան արագ, որ ապստամբները նույնիսկ չհասցրին դիրքերի մեջ մտնել: 252-րդ գունդը լուրջ դիմադրության չհանդիպեց թե՛ Եռաբլրի տափարակում, թե՛ Սիսիանի կենտրոն Ղարաքիլիսայի մատույցներում: Դրոն նպատակ ուներ ամրանալու Սիսիան–Անգեղակոթ հատվածում՝ հատկապես օգտագործելով այդտեղով անցնող խճուղուց հյուսիս ընկած բարձունքները: Սակայն Դրոն, հաշվի առնելով Սիսիանի բնակչության մի մասի տրամադրությունները, սիրտ չարեց իրականացնել այդ մտադրությունը և զորքին Դարալագյազ հեռանալու հրաման տվեց: Նահանջն այնքան արագ էր կատարվում, որ նրա զինվորներից ոմանք հրացանները թողնում էին ճանապարհներին, հարմար առիթներ էին փնտրում

զորամասը լքելու և Կարմիր բանակի զորքերին հանձնվելու համար: Այնուամենայնիվ, խորհրդային զորամասերին չհաջողվեց գրավել Սիսիանի ողջ տարածքը: Գլխավոր մայրուղուց հեռու ընկած բնակավայրերը, ինչպես նաև բնական շատ ամրություններ շարունակում էին մնալ տեղական ազգային զինված ջոկատների ձեռքին:

Հուլիսի 5-ին Գորիսից դուրս եկած և դեպի Կապան գնացող հայկական զորաջոկատները, ի տարբերություն Սիսիան–Դարալագյազ նահանջող վաշտերի, չենթարկվեցին հարձակումների Կարմիր բանակի զորամասերի կողմից, քանի որ վերջիններս երկու օր շարունակ կարգի էին բերում իրենց ուժերը:

Դադարի այդ պահին 32-րդ դիվիզիայի զինվորական կոմիսար Կարլ Ռատնեկի ստորագրությամբ Գորիսից դիմում հղվեց «Զանգեզուրի բնակչությանը»:

«Հեռավոր Խորհրդային Ռուսաստանից,– ասված էր դիմումի մեջ,– ձեզ մոտ է եկել բանվորագյուղացիական Կարմիր բանակը, որպեսզի օգնի ձեզ ազատագրվելու դաշնակցական կառավարության ճնշումից, որպեսզի օգնի ձեզ կառուցելու նոր, խաղաղ կյանք՝ ինչպես ձեզ, նույնքան՝ աղքատ ու տանջված թաթարական ժողովրդին* հոգնեցրած, բոլորին տանջահար արած, անիծյալ պատերազմի փոխարեն»:

Նշվում էր, որ Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակը և Խորհրդային Ադրբեջանի Կարմիր բանակը եկել են ազատագրելու հարստահարված աշխատավորներին, բայց ոչինչ չէր ասվում գավառի հայ բնակչությանը հուզող հիմնական հարցի մասին. Զանգեզուրը պիտի ենթարկվի՞ Ադրբեջանին, թե՞ ոչ: Այնուհետև դիմումի մեջ համոզմունք էր հայտնվում, որ «եղբայրական աշխատավոր հայ ժողովուրդը երբեք ձեռք չի բարձրացնի հեղափոխության մեջ իր ավագ եղբոր՝ ռուս գյուղացու և բանվորի վրա: Նա երբեք չի գնա ռուսական Կարմիր բանակի դեմ, ընդհակառակը՝ ինքը կստեղծի հայկական Կարմիր բանակ և մեզ կօգնի աշխատավոր ժողովրդի թշնամիների՝ խաների, բեկերի, գեներալների, դաշնակների, մուսավաթականների և բուրժուական մյուս սրիկաների դեմ մղվող պայքարում: Դրանում մենք խորապես համոզված ենք»[1]:

Իմանալով բոլշևիկների կողմից բուն Զանգեզուրի կենտրոն Գորիս քաղաքը գրավելու մասին՝ Կապանի հանքերում գտնվող Նժդեհը կարգադրեց շրջանի գյուղերի ներկայացուցիչներին շտապ հրավիրել ժողովի: Կապանի ազգային խորհրդի եռանդուն քարտուղար Իվան բեկ Մելիք-Քարամյանը գիշերը հեռախոսով և սուրհանդակների միջոցով Նժդեհի կարգադրությունը հաղորդեց բոլոր գյուղերին: Հետևյալ օրը՝ հուլիսի 6-ին, նշանակված ժամին

* Նկատի ունի Ադրբեջանի թուրքերին:

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 92ա, թ. 4-5:

37 գյուղերի ներկայացուցիչները եկան Հանքեր, որպեսզի որոշեն բոլշևիկների հանդեպ Կապանի և ընդհանրապես Կապարգողթի բռնելիք դիրքը:

Բացելով ժողովը՝ Նժդեհը հակիրճ ներկայացրեց ստեղծված վիճակը և ներկաներին թողեց որոշման ընդունումը: Ելույթներ ունեցան շատերը՝ բուռն, կրակոտ: Ժողովականների կամքն անկոտրում էր, որոշումը՝ մեկը՝ դիմադրել, կռվել մինչև վերջ:

Շիկահող գյուղում ուսուցչություն անող բոլշևիկ Բագրատ Հարությունյանը, որը Նժդեհի նախկին կամավորներից էր, ներկայանալով նրան, ցանկություն հայտնեց գնալ Գորիս և տեղեկություններ բերել խորհրդային զորամասերի վերաբերյալ:

Նժդեհը տվեց իր համաձայնությունը, և Բ. Հարությունյանը հուլիսի 8-ին մեկնեց Գորիս, ուր, իր խոստման համաձայն, պիտի մնար մեկ օր և որոշ տեղեկություններ հավաքելուց հետո գիշերը հեռանար քաղաքից:

Հուլիսի 10-ի գիշերը բոլշևիկյան մի հեծյալ գունդ հանկարծակիի բերեց Կապանի սահմանագլխային գյուղերից մեկը՝ Խոտանանը: Լուսաբացին այդ մասին Նժդեհին լուր բերեց սուրհանդակը: Կարմիր բանակի գունդը դեպի Կապան առաջնորդեց Բագրատ Հարությունյանը[1]:

Ստանալով Խոտանանի անկման լուրը՝ Նժդեհը մի քանի թիկնապահներով շտապեց Կավարտ՝ ոտքի հանելու տեղական ուժերը: Այստեղ նրան հայտնեցին, որ բոլշևիկյան զորամասերը նաև գրավել էին Խլաթաղ ու Առաջաձոր գյուղերը և շարժվում էին դեպի Հանքեր:

Շուտով խորհրդային հեծելազորը հայտնվեց Կավարտի և Առաջաձորի միջև ընկած ձորում: Սակայն այն այլևս առաջանալ չկարողացավ, քանի որ մոտակա գյուղերից հասան Նժդեհի վաշտերը և բռնեցին ճանապարհի երկու կողմերի բարձունքները: Նրա հրամանով պայթեցրին Կավարտից բերված պայթուցիկ տակառներից մեկը: Առաջխաղացումը կանգնեցնելով՝ Կարմիր բանակի զորամասի հրամանատարությունը բանագնացներ ուղարկեց Նժդեհի մոտ, որոնք, սպիտակ դրոշակը պարզած, մոտեցան հայերի դիրքերին: Նրանք բերել էին ռուսական զորամասի հրամանատարության հետևյալ նամակը Նժդեհին.

«Կատարի ջոկատի պետին.

Ռուսական Կարմիր բանակը եկել է Զանգեզուրում հաստատելու խորհրդային իշխանություն: Նա, ով զինված դիմադրում է դրան, հանդիսանում է ռուսական Կարմիր բանակի թշնամի. նրա նկատմամբ ներում չի լինի: Իսկ նա, ով կամովին կանցնի Կարմիր բանակի կողմը և կենթարկվի նրան – ներում կլինի: Նույն բանը վերաբերում է նաև սադրիչներին, որոնք կեղծ լուրեր են տարածում, թե դեպի Զանգեզուր են գալիս ադրբեջանական

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021. ց. 4, գ. 398, թ. 68-77, գ. 199, թ. 146-166:

զորամասեր, այլ ոչ թե գալիս է ռուսական Կարմիր բանակը:

Հրամայում եմ.

Դադարեցնել ամեն տեսակի դիմադրություն և ռուսական Կարմիր բանակի զորամասերին թույլ տալ անարգել անցնելու այն գյուղերը, որոնք գտնվում են Ձեր ճակատային գծից այն կողմ:

Ձեր ջոկատի գործողությունների շրջանում գտնվող ողջ բնակչությանը հայտարարել ռուսական Կարմիր բանակի ժամանման մասին, այն մասին, որ նրա դեմ ամեն մի դիմադրություն, ում կողմից էլ որ լինի, կճնշվի զենքի ուժով: Ըստ որում, որևէ գյուղի շրջանում տեղի ունեցող դիմադրության համար պատասխան է տալիս ողջ գյուղը:

Ձեզ հրամայվում է անհապաղ ներկայանալ ինձ, ըստ որում, երաշխավորվում է Ձեր կյանքի անձեռնմխելիությունը:

Սույն հրամանի չկատարումը կդիտվի որպես ռազմական գործողությունների ձեռնարկում Կարմիր բանակի դեմ: Պատասխան ուղարկել անմիջապես գրաբերիս միջոցով կամ Ձեր սուրհանդակով: Ես կգտնվեմ Վերին Խոտանանում:

Ռուսական կարմիր զորամասի պետ՝
Իվանով
Զինվորական կոմիսար՝
Ա. Կոչետկով»[1]:

Նժդեհը կարդում է նամակը: Տեղի է ունենում կարճատև երկխոսություն Կարմիր բանագնացներից մեկի և նրա միջև.

– Պարո՛ն զնդապետ,– դիմելով Նժդեհին ասում է բանագնացը,– խորհրդային հրամանատարությունը խնդրում է Ձեզնից ճանապարհ տալ իր զորքերին՝ անցնելու Զուլֆա:

– Զուլֆա անցնելու համար կարմիր հրամանատարությունը իր տրամադրության տակ ունի լավագույն ճանապարհը՝ Սիսիան–Նախիջևան գիծը,– լինում է Նժդեհի պատասխանը:

– Այդ ճիշտ է, բայց մեզ պետք է Ղափան–Մեղրի գիծը, որ, ըստ կարմիր հրամանատարության, մեծապես պիտի հեշտացնի մեր առաջխաղացումը դեպի հեռուները՝ Պարսկաստանի վրայով Հնդկաստան և այլն:

– Ի՞նչ, դուք Պարսկաստանն արդեն խորհրդայնացա՞ծ եք համարում:

– Գրեթե այո,– պատասխանում է Կարմիր բանագնացը[2]:

Նժդեհը խորհրդային բանագնացներին զգացնել տվեց, որ լավ կլինի, եթե Կարմիր բանակի զորքը ետ քաշվի Կապանի սահմաններից, այլապես

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 565, թ. 2-3:

[2] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 94:

սպասվելիք կռիվների և թափվելիք արյան ամբողջ պատասխանատվությունն ընկնելու է Կարմիր բանակի հրամանատարության վրա:

Կարմիր բանագնացները հեռացան, իսկ գրավոր պատասխանը* Նժդեհը ուղարկեց Առաջաձոր գյուղում ապրող, Կապարգողթի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկի՝ լեռնային ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանյանի միջոցով, որին և ձերբակալեցին:

Ցերեկվա ժամը 4-ի մոտ բոլշևիկները նահանջեցին դեպի Խոտանան՝ իրենց հետ տանելով Մելիք-Ստեփանյանին: Խոտանանից նույն օրը զորամասի զինվորական կոմիսարը Նժդեհին ուղղեց հետևյալ վերջնագիրը.

«Գնդապետ Նժդեհին.

Արդեն Ղարաբաղ–Զանգեզուր է մտել Կարմիր բանակը: Բոլոր տեղերում կազմակերպված են հեղկոմներ: Հրամայում եմ այդ առթիվ հայտարարել ժողովրդին և ճանապարհ տալ Վերին Խոտանանում գտնվող մեր զորամասին՝ անցնելու Մեղրիի վրայով Օրդուբադ–Զուլֆա:

Զորամասի զինվորական կոմիսար՝ Իվանով:

10 հուլիս, 1920 թ. Վ. Խոտանան»[1]:

Անմիջապես հետևեց Նժդեհի պատասխան գրությունը.

«Ի պատասխան Ձեր ամսոյ 10-ի գրության՝ հայտնում եմ.

Կապանի բախտը տնօրինելու գերագույն իրավունքը վերապահված է Կապանի գյուղացիության խորհրդին:

Ինձ և ինձ ենթակա բոլոր զինվորությանը հրահանգված է պաշտպանել երկրի սահմանները օտար տարրերի ներխուժումից, ով կամ ինչ անվան տակ այդպիսին տեղի ունենա:

Ձեր առաջարկությունը՝ ենթարկել Կապանը Ձեր իշխանության, ես անմիջապես **կդնեմ խորհրդին քննության, գրությանս պատասխանը ստանալուց [հետո]:**

Եթե Դուք համբերություն ունենաք լսելու գյուղացիության կամքը, արյունահեղության մասին խոսք լինել չի կարող:

Մինչև խորհրդի գումարումը և Ձեզ տրվելիք պատասխանը նրա կողմից, Դուք պարտավոր եք հեռացնել Ձեր զորքերը Ղափանի սահմաններից:

Ձեր կողմից ձերբակալված մեր ներկայացուցիչ Սմբատ Մելիք-Ստեփանյանը պիտի լինի ազատված:

---

* Կարմիր զորամասի հրամանատարությանը ուղարկած Նժդեհի այս պատասխան գրությանը չենք հանդիպել ո՛չ գրականության մեջ, ո՛չ արխիվներում:

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 95:

Ես անհատապես լայն ինֆորմացիայի համար դեմ չէի լինի տեսակցելու Ձեր ներկայացուցիչների հետ Ղափանի հանքերում, որոնց անձի անձեռնմխելիության համար տալիս եմ պատվո խոսք:

Կապարգողթի ռազմական ուժերի հրամանատար՝

Նժդեհ:

1920, 10 հուլիս, Առաջաձոր»[1]:

Նժդեհի այս պատասխանին հետևեց կարմիր զորամասի հրամանատարի նոր նամակը.

«Ղափանի ջոկատի պետ Նժդեհին.

Ձեր պատասխանի մեջ տեսնում եմ մերժումն այն ամենի, ինչը կարող էր կանխել արյունահեղությունը, ուստի հայտնում եմ հակիրճ.

1. Ինչպիսի պահանջ էլ Ղափանից ներկայացվի ռուսական Կարմիր բանակի դուրսբերման մասին, բավարարվել չի կարող: Ես գործում եմ խորհրդային բարձր հրամանատարության հրամանի համաձայն:
2. Սպասում եմ որոշմանը գյուղացիական խորհրդի, եթե այդպիսին գոյություն ունի, ինչպես նաև բանակցության համար Ձեր ներկայացուցիչների ժամանմանը:
3. Սմբատ Մելիք-Ստեփանյանը կալանված է ժամանակավորապես, որպես պատանդ՝ Ձեր կողմից ձեռնարկվելիք ագրեսիվ գործողությունները կանխելու նպատակով: Քանի դեռ Դուք պահում եք ռազմաճակատը, նրա ազատման մասին խոսք լինել չի կարող:
4. Մեր ներկայացուցիչների անձնական տեսակցությունը Ձեզ հետ չի կարող տեղի ունենալ Ղափանի հանքերում, մինչև որ իմ առաջին հրամանին դրական պատասխան չտրվի»[2]:

Բուն Զանգեզուրի, Սիսիանի, Տաթևի և այլ վայրերի՝ առանց կռվի բոլշևիկներին հանձնվելը Նժդեհի մոտ լուրջ անհանգստություն էր առաջ բերել. նա մտածում էր, որ իր խնամքին հանձնած երկրամասը՝ Կապարգողթը, նույնպես կարող է նույն ուղին բռնել:

Ստացած գրությունները Նժդեհը հանձնեց Կապանի ազգային խորհրդին՝ խնդրելով քննել և տալ պատասխան: Հուլիսի 12-ին Ազգային խորհուրդը Առաջաձոր գյուղում գումարեց Կապանի ներկայացուցիչների երկրորդ արտակարգ ժողովը՝ նախագահությամբ Գեղեոն Տեր-Մինասյանի և քարտուղարությամբ Վ. Փարսադանյանի: Հավաքին Կապանի բոլոր գյուղերից ամեն մեկը ուղարկել էր երկուական ներկայացուցիչ: Օրակարգում մի հարց էր դրված՝ «Կարմիր հրամանատարությունից ստացված վերջնագիրը

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 565, թ. 4 և շրջերես:

[2] Նույն տեղում, թ. 5 և շրջերես:

և ընդհանուր հրամանատար Նժդեհի տրվելիք պատասխանը»:

Նժդեհը հարմար գտավ բացակայել ժողովից, որպեսզի դրա մասնակիցներն անկաշկանդ քննարկեն հարցը: Անցկացվում էր բացօթյա ժողով, և Նժդեհը, իր համհարզի հետ հեռվում նստած, սպասում էր ժողովրդի ներկայացուցիչների վերջին խոսքին, այն է՝ Կապանը պատրա՞ստ է կռվելու, թե՞ կամավոր հանձնվելու է բոլշևիկներին:

Ժողովը երկար տևեց: Ներկաներից ոչ ոք չէր ուզում իր վրա վերցնել վիթխարի պատասխանատվության բեռը: Վաշտապետերից Գերասիմ Աթաջանյանը, մոտենալով Նժդեհին, տեղեկացրեց ժողովում ստեղծված ծանր մթնոլորտի մասին: Անհրաժեշտ դարձավ հրամանատարի միջամտությունը, և նա մոտեցավ ժողովականներին: Բոլորը սպասում էին նրա խոսքին, և Նժդեհը դիմեց նրանց հետևյալ հակիրճ խոսքով.

«Ղափանցիներ՛ր.

Եկա՝ ձեր վերջին խոսքը լսելուց առաջ իմ վերջին խոսքն ասելու ձեզ: Չէ՛, էլ ոչինչ չունեմ ասելու ձեզ: Միայն մի խնդիր ունեմ, որ չեք կարող չկատարել: Վաղուց է, ինչ կռվում եմ ձեր երկրում ձեզ հետ: Որպես բարոյական **վարձատրություն, կուզեի, որ հանեիք իմ աչքերը, կուրացնեիք ինձ, որ անբախտություն չունենայի ձեր գլխին գալիք աղետը տեսնելու»** (ընդգծումը Նժդեհինն է: – *Ա. Ս.*)[1]:

Այս ասելով՝ Նժդեհը հեռացավ ժողովատեղից: Ժողովը շարունակվում էր: Մոտ կես ժամ անց Նժդեհին ներկայացրին հետևյալ արձանագրությունը.

«Ժողովը միաձայնությամբ որոշեց. ա) Կարմիրներին թույլ չտալ մտնել Ղափան, բ) Վերին Խոտանանը և նրան հարող մյուս գյուղերը կարմիրներին ենթարկվելու դեպքում կհամարվեն հայրենիքի դավաճան և թշնամի»[2]:

Անմիջապես վաշտերին հաղորդվեց Կապանի ներկայացուցիչների որոշումը և հակառակորդին ուղղված Նժդեհի հետևյալ հակավերջնագիրը.

«Խոտանանում գտնվող կարմիրների զորամասի պետին.

Կապարգողթի գյուղացիական ներկայացուցչական խորհուրդը հրամայել է ինձ ուղարկելու ձեզ վերջնագիրը՝ վաղը՝ ամսույս 13-ին մինչև ժամը 7-ը (այսինքն՝ 24 ժամվա ընթացքում: – *Ա. Ս.*) թողնել Ղափանի սահմանները, հակառակ դեպքում ստիպված կլինեմ անցնելու հարձակողականի և զինու ուժով վանելու ձեզ:

Նժդեհ:

1920 թ. 12 հուլիս, Ղափանի հանքերը»[3]:

---

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 95:

[2] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 35:

[3] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 96: Արխիվային փաստաթղթում Նժդեհի սույն հակավերջնագիրը այսպես է ձևակերպված.

«Վերին Խոտանան եկած զորամասի պետին.

Հուլիսի 13-ի առավոտյան՝ դեռ լույսը չբացված, Կարմիր բանակի զորամասը թողեց Խոտանանը և նահանջեց դեպի Գորիս՝ իր հետ տանելով նաև Սմբատ Մելիք-Ստեփանյանին, որին շուտով Գորիսից տանելու էին Բաքու: Միաժամանակ նահանջելիս զորամասի հրամանատարությունը Վերին Խոտանանից մի կոչով դիմեց շրջակա գյուղերի բնակիչներին՝ զինաթափ անել Նժդեհի ջոկատները և իրենց մոտ հաստատել խորհրդային կարգեր: Կոչն իր արձագանքը գտավ. մի շարք գյուղեր իրենց հպատակությունն ու հավատարմությունը հայտնեցին խորհրդային իշխանությանը:

Նժդեհը բոլոր միջոցները գործադրեց կասեցնելու խորհրդային զորքերի առաջխաղացումը դեպի Հանքեր: Եվ այդ բանն առայժմ նրան հաջողվեց:

Կապանի շրջանում բոլշևիկների ամուր հենակետերից մեկը Շիկահող գյուղն էր: Այստեղ գործում էր ուժեղ կոմբջիջ, որի անդամները լայն աշխատանք էին տանում բնակչության շրջանում: Նժդեհը հրամայեց ձերբակալել գյուղի կոմբջիջի երկու ղեկավարներին՝ Բագրատ Հարությունյանին և Պատվական Բաբայանին: Բ. Հարությունյանին հաջողվեց խուսափել բանտարկությունից և թաքնվել: Պ. Բաբայանը թեև ձերբակալվեց, բայց կոմունիստների զինված ջոկատը կարողացավ նրան ազատել բանտից, որը և շարունակեց ղեկավարել գյուղի կոմբջիջը:

Այսպիսով՝ 1920 թ. հուլիսի 5-ից հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ 5 օրվա ընթացքում, բուն Զանգեզուրում, Սիսիանի շրջանում և Կապանի մի մասում ժամանակավորապես խորհրդային կարգեր հաստատվեցին: Այլ խոսքով՝ Կարմիր բանակը գրավեց Զանգեզուրի մեծ մասը:

Կատարելով իր կառավարության հանձնարարությունը՝ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը հուլիսի 10-ին Թիֆլիսից Խորհրդային Ադրբեջանի արտաքին գործերի ժողկոմին ուղարկեց հեռագիր, որում բողոք էր հայտնում Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի կատարած նվաճողական գործողությունների կապակցությամբ: Զանգեզուրի վրա հարձակումը և Գորիսի գրավումը համարելով բացահայտ պատերազմական գործողություն՝ Հայաստանի կառավարությունը պահանջեց ադրբեջանական զորքերը անհապաղ դուրս բերել այդ վայրերից՝ հակառակ դեպքում հետագա արյունահեղության

Գյուղացիության ներկայացուցիչների կողմից ինձ տեղեկացված է, որ նրանց կողմից Ձեզ տրվում է վերջնագրային ժամկետ՝ մինչև հուլիսի 12-ի ժամը 10-ը Ձեր ենթակա ջոկատը դուրս բերել Խոտանանից: Նրանց կողմից ինձ հրամայված է՝ Ղափանի գյուղացիության կամքը Ձեր կողմից չկատարելու դեպքում դիմել ակտիվ գործողությունների:

Կապարգողթի զինված ուժերի հրամանատար Նժդեհ

1920, հուլիս 12, ժ. 7 անց 10 րոպե, Առաջաձոր» (ՀԱԱ, ֆ 200, ց. 1, գ. 565, թ. 7 և շրջերես):

ամբողջ պատասխանատուն համարելով ադրբեջանական կողմին[1]:

Բոլշևիկների գրաված տարածքներում գնալով էլ ավելի մեծ ծավալներ էին ընդունում անօրեն բռնությունները, էկզեկուցիաներն (պատժամիջոցներ) ու գնդակահարությունները: Ըստ որում, այդ գործում ամենաակտիվ դեր էին կատարում Կարմիր բանակի ադրբեջանական զորամասերը և տեղի կոմունիստները[2]:

Հուլիսի 10-15-ը չեկիստները ձերբակալեցին և անհետացրին Հայաստանի ազգային բանակի՝ Գորիսում տեղակայված զորամասի մի շարք սպաների՝ գնդապետ Բոգդան Մելիք-Հյուսեինյանին, կապիտաններ Մաղաքյանին, Վոլոդյա Ոսկանյանին, Արմենակ Պարոնյանին, պորուչիկներ Առուստամյանին, Շմավոն Տեր-Ղազարյանին, Տրդատ Օհանյանին, Գրիգոր Տոռոզյանին, Ավագ Քոչարյանին, Աստվածատուր Գիլավյանին[3]: Գորիսի բանտից դուրս բերելով պորուչիկ Գարեգին Օհանյանին ու շտաբս-կապիտան Սարգսյանին՝ բոլշևիկները նրանց էյվազլար թուրքաբնակ գյուղ տարան և գնդակահարեցին այնտեղ[4]:

1920 թ. հուլիսի 17-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարը հեռագիր ուղարկեց Բաքու՝ Ադրբեջանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին, պատճենը՝ Թիֆլիս՝ Ս. Կիրովին և Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին: Հեռագրում նշված էր, որ նրանց զորամասերը, ապօրինաբար ներխուժելով Ղարաբաղի և Զանգեզուրի սահմանները, գնդակահարել էին գերի ընկած, հայկական բանակի ծառայության մեջ գտնվող սպաներին՝ դրանով իսկ ի չիք դարձնելով Հայաստանի և Ադրբեջանի միջև որևէ համաձայնություն:

«Իմ կառավարության անունից,– նշված էր հեռագրում,– հայտնելով ամենակտրուկ բողոքը ձեր զորամասերի կողմից կատարված ապօրինի գործողությունների համար, նորեն խնդրում եմ ձեզ, ձեռք առնել բոլոր համապատասխան միջոցները՝ Զանգեզուրի սահմաններից և Ղարաբաղի վիճելի շրջաններից անմիջապես հեռացնելու ձեր զորամասերը...»[5]:

Կառավարության հանձնարարականով Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը Թիֆլիսում տեսակցություն ունեցավ Վրաստանում ՌՍՖԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Սերգեյ Կիրովի հետ և բողոք հայտնեց բոլշևիկների կողմից Զանգեզուրում հայկական բանակի սպաների սպանությունների կապակցությամբ[6]:

Ղարաբաղում և Զանգեզուրում կատարվող արյունալի ոճրագործությունները լրացվում էին հակահայկական այն ձեռնարկներով, որ սանձա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 42, թ. 16:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 271:

[3] Տե՛ս «Յառաջ», 1920, 10 սեպտեմբերի:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] «Յառաջ», 1920, 21 հուլիսի:

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 4, թ. 3:

զերծվել էին ամբողջ Ադրբեջանում և հատկապես Բաքվում:

Գրքի նախորդ էջերում արդեն նշվել է, որ 1920 թ. ապրիլի 28-ին՝ Ադրբեջանում պետական հեղաշրջում կատարելուց անմիջապես հետո, փակվել էր մենշևիկյան Վրաստանի դիվանագիտական առաքելությունը Բաքվում: Բայց դա երկար չէր տևել. երկու-երեք օր հետո այն վերաբացվել էր: Վրաց-ադրբեջանական բարեկամությունը նորից մտել էր Մուսավաթի ժամանակվա բնականոն հունի մեջ, թեև Վրաստանը շարունակում էր մնալ անկախ, իսկ Ադրբեջանը խորհրդայնացված էր: Վրացիներն առաջվա պես այստեղ վայելում էին բացառիկ արտոնություններ. նրանք զորակոչի չէին ենթարկվում, իրավունք ունեին իրենց գույքն ազատորեն տեղափոխելու Վրաստան, համարյա բոլոր վրացի բանտարկյալներն ազատ էին արձակվել:

Դրան հակառակ՝ Խորհրդային Ադրբեջանում պատանդի վիճակում էր հայտնվել հարյուր հազարների հասնող հայությունը, որի մեջ մեծ թիվ էին կազմում առևտրի բնագավառում իրենց գործին լիովին տիրապետող անձինք, արդյունաբերության ասպարեզի առաջնակարգ մասնագետներ՝ ինժեներներ, տեխնիկներ, որակյալ բանվորներ, ինչպես նաև այլ մասնագետներ՝ բժիշկներ, ճարտարապետեր, փաստաբաններ և այլք: Հայերին արգելված էր սեփական գույքը դուրս բերել երկրից, իշխանություններն ամեն քայլափոխի նեղում էին հարազատ բնակավայրերը վերադառնալ ցանկացող հայ գաղթականներին, հայ երիտասարդներին զինակոչում և ստիպում էին Կարմիր բանակի զորամասերի կազմում մասնակցել պատժիչ գործողություններին Ղարաբաղում, ձերբակալված էին հայ հասարակության համարյա բոլոր նշանավոր ներկայացուցիչները և այլն[1]:

Անտանելի վիճակ էր ստեղծվել Հայաստանի դիվանագիտական առաքելության համար, որը գտնվում էր մշտական սպառնալիքի տակ՝ պարբերաբար ենթարկվելով արհամարհանքի ու ստորացումների: Պատահական չէ, որ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանն իր կառավարությանը հղած հերթական զեկույցում գրում էր. «Պետք է կամ մեկ անգամ վերաքննության ենթարկել կառավարության այն որոշումը, որով մենք Ադրբեջանում դիվանագիտական միսիա ենք հիմնել, կամ պետք է միսիան բոլորովին վերացնել և ... միանգամ ընդմիշտ մեզ ազատել այն անպատիվ վիճակից, որի մեջ գտնվում ենք այժմ»[2]:

Ադրբեջանի բոլշևիկ կառավարության այդ աներկյուղ գործողություններին Հայաստանի իշխանություններն ի վիճակի չէին նույնանման պատասխան տալու, քանի որ դրա համար չունեին անհրաժեշտ լծակներ:

Հայաստանի արտգործնախարարությանն այլ բան չէր մնում անելու, քան վճռական բողոքներ ուղարկել Մոսկվա և Բաքու: Այդ բողոքները կա՛մ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 7:

[2] Նույն տեղում, թ. 9:

անհետևանք էին մնում, կա՛մ մերժվում էին տարօրինակ պատճառաբանություններով, բացահայտ արհամարհանքով:

Հայաստանի արտգործնախարարի հեռագրերից մեկին ի պատասխան՝ խորհրդային կողմը Երևանին համոզում էր ազդել Նժդեհի վրա, որպեսզի նա զենքը ցած դնի: Միաժամանակ Նժդեհի մոտ ուղարկվեցին երկու ռուս պատվիրակներ, որոնք իրենց հրամանատարությունից անձնատուր լինելու առաջարկություն էին բերել, որը, ըստ էության, վերջնագրի բովանդակություն ուներ: Այնտեղ նաև շեշտված էր, որ կամավոր հանձնվելու դեպքում Նժդեհը և իր սպաները կստանան կյանքի ապահովություն: Նժդեհը պատասխանեց, որ ինքը Կապան եկած պատվիրակներին չի ճանաչում, նրանց հետ բանակցելու ոչ մի կարիք չունի և առաջարկում է տասնհինգ բոպեից թողնել Կապանի սահմանները՝ սպառնալով հակառակ դեպքում գնդակահարել[1]:

Նշված դեպքից հետո Կարմիր բանակի հրամանատարությունը տեղի բոլշևիկների խորհրդով խաղի մեջ ներգրավեց հայերին: Գավիեղկոմը ճանաչված մի քանի գործիչների, որոնք չէին հասցրել հեռանալ կամ գերադասել էին մնալ Գորիսում ու Սիսիանում և համագործակցել բոլշևիկների հետ, պատվիրեց նամակներով Նժդեհին հորդորել դադարեցնել դիմադրությունը:

Դրանցից մեկը՝ ձախ դաշնակցական Մուշեղ Զաքարյանը, Հանքերում գտնվող Նժդեհին և Գողթանի կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանին հուլիսի 21-ին Գորիսից նամակ հղեց և խորհուրդ տվեց՝ որքան հնարավոր է շուտ դադարեցնել կռիվը և Կապանը հանձնել բոլշևիկներին, քանզի անիմաստ է դիմադրությունը հատկապես այն բանից հետո, երբ խորհրդայնացվել է Ադրբեջանը: Կապանի, Զանգեզուրի և ընդհանրապես Հայաստանի փրկությունը միանալն էր Խորհրդային Ռուսաստանին, գրում էր նա, մանավանդ հայ ժողովուրդն արդեն համոզվել էր, որ Անգլիայից կամ Արևմուտքի որևէ երկրից իրական օգնություն սպասելն անմտություն է[2]:

Սակայն ձեռնոցն արդեն նետված էր, և Նժդեհը կտրականապես մերժում էր նման խորհուրդներն ու առաջարկները: Նա չէր ընդունում «վիճելի» կոչված հասկացությունը՝ պատմական Զանգեզուրը համարելով Հայաստանի Հանրապետության անվիճելի մասը:

Հուլիսի 20-ին ՌՍՖԽՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը հայտագիր ուղարկեց Երևան՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարի հասցեով: Հեռագրում ասված էր. «Խորհրդային զորքերի կողմից այն հողամասերի գրավումը, որոնք հարևան ժողովուրդների կռվի ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի բնույթ են ստացել, նպատակ ունի դադա-

[1] Տե՛ս «Յառաջ», 1920, 27 հուլիսի:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 11, թ. 1-3:

բեցնել արյունալի կոնֆլիկտները, որոնք կարող են անթիվ աղետալի հետևանքներ ունենալ բոլոր մասնակցողների համար, ինչպես և նպատակ ունի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավոր դարձնեին խաղաղ ու անկողմնակալ կերպով քննել հողային վիճելի հարցերը»[1]:

Հայտագրի վերջում Չիչերինը հույս էր հայտնում, որ երկու երկրների միջև ծագած խնդիրները հնարավոր կլիներ լուծել բանակցությունների, կարծիքների փոխանակման միջոցով, որոնք ի վերջո կհանգեցնեին բարեկամության դաշնագրի կնքմանը: Ուստի, գրում էր նա, Խորհրդային Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ Բորիս Լեգրանի Երևան գալը վճռական նշանակություն կունենար կուտակված բոլոր թյուրիմացությունները պարզելու տեսակետից[2]: Բայց խորհրդային կողմի բացատրությունները և խոստումները հավատ չէին ներշնչում Հայաստանի կառավարական շրջաններին:

ՀՅ դաշնակցության օրգան «Յառաջ» թերթը հուլիսի 22-ի խմբագրականում գրում էր.

«Կարո՞ղ է արդյոք բովանդակ հայ ժողովուրդը հանգիստ ու անխռով Հայաստանի անկախության և ազատության բարիքները վայելել, երբ այդ անկախության և ազատության համար ամենից շատ պայքարած Ղարաբաղն ու Զանգեզուրը վերստին պիտի կրեն օտարի անարգ ստրկական շղթան:

Կա անկախ Հայաստան, բայց այդ Հայաստանի մեջ չկան ո՛չ Ղարաբաղը և ո՛չ էլ Զանգեզուրը. սա մի այնպիսի դաժան հեգնանք է ողջ հայության, հայության ողջ պատմության հասցեին, որի հետ չի կարող հաշտվել բովանդակ հայ ժողովրդի և ոչ մեկ շիտակ ու հայրենասեր զավակը:

Այսպես գիտենք մենք մեր ժողովրդին, այսպես գիտենք մեր արյունաներկ դարավոր պատմությունը, այսպես գիտենք, վերջապես, ըմբոստ, անվեհեր ու ազատասեր ղարաբաղցուն և զանգեզուրցուն»[3]:

Հուլիսի 26-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովին գրում էր. «Ձեզ հետ իմ վերջին անձնական տեսակցության ժամանակ ես Ձեր ուշադրությունը հրավիրեցի այն տեղեկությունների վրա, որ կան միսիայի տրամադրության տակ: Դրանք վերաբերում են Զանգեզուրում հայկական ծառայության մեջ գտնվող հայ սպաների գնդակահարությանը, որոնք գերի էին վերցվել խորհրդային զորքերի կողմից Զանգեզուր վերջին անօրինական ներխուժման ժամանակ»[4]:

Հուլիսի 27-ին Հայաստանի արտաքին գործոց նախարար Համո Օհան-

---

[1] «Յառաջ», 1920, 28 հուլիսի:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Նույն տեղում, 1920, 22 հուլիսի:

[4] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 219, թ. 12:

ջանյանը պատասխան ուղարկեց Գ. Չիչերինի՝ հուլիսի 20-ի հայտագրին, որում ասված էր, որ Հայաստանի կառավարությունը, ինչպես և հայ ժողովուրդը, միայն շնորհակալ կարող են լինել Ռուսաստանի խորհրդային կառավարությունից՝ նրա արտահայտած բարեկամական զգացմունքների և ձգտման համար՝ աջակցել ազատ Հայաստանի ապագա հանգիստ ու խաղաղ կյանքի զարգացմանը: Սակայն Հ. Օհանջանյանը գրում էր. «Իմ կառավարությունը, դժբախտաբար, պիտի հաստատի, որ Ձեր կառավարության այդ բարեկամական հավաստիացումները սովետական տեղական իշխանությունների ու ադրբեջանյան՝ Ձեր զորամասերի հրամանատարության գործողությունների մեջ իրական կյանքում կերպարանափոխվում են Հայաստանի դեմ անվերջ ու անընդհատ թշնամական ռազմական գործողությունների – Ղազախի, Ղարաբաղի և Զանգեզուրի շրջաններում»[1]:

Նշելով, որ այդ թշնամական գործողությունները որպես ծանր բեռ ընկնում են հատկապես հայ աշխատավոր գյուղացիության ուսերին և նրան զրկում խաղաղ ու ստեղծարար աշխատանքին նվիրվելու հնարավորությունից, այնուհետև Հ. Օհանջանյանը շեշտում էր, որ «Ռուսաստանի սովետական զորքերի ներկայությունը Հայաստանի վիճելի հայտարարված տարածքներում, իսկ ներկա դեպքում նաև անվիճելի, ինչպես, օրինակ, Զանգեզուրի շրջանում, ոչ միայն չի նպաստում առաջն առնելու Հայաստանի և Ադրբեջանի միջև արյունալի կոնֆլիկտների, այլ ավելի ևս նպաստում է դրանց զարգացմանը»[2]: Նա հիշեցնում էր, որ Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ նախատեսվում է առաջիկայում գումարել հայ-ադրբեջանական կոնֆերանս՝ երկու երկրների միջև խաղաղություն հաստատելու նպատակով, ուստի «Ձեր զորքերի ներկայությունը վերը մատնանշված վայրերում կարող է միայն բացասական ազդեցություն ունենալ և խանգարել ստեղծելու պայմաններ, որոնք հնարավոր դարձնեին կոնֆերանսի կանոնավոր աշխատանքները՝ խաղաղ ու անաչառորեն քննության առնելու տերիտորիալ վիճելի բոլոր հարցերը»[3]:

Այս նկատառումներից ելնելով՝ Հայաստանի արտգործնախարարը հույս էր հայտնում, որ խորհրդային կողմից ձեռք կառնվեն բոլոր միջոցները՝ շտապ կերպով դադարեցնելու Կարմիր բանակի զորամասերի թշնամական գործողությունները Հայաստանի նկատմամբ, դուրս հանելու զորքերը վերոհիշյալ վայրերից, նաև վերջ դնելու հայ հասարակական գործիչների ձերբակալություններին ու հալածանքներին, որ կատարվում էին Ադրբեջանում[4]:

Այդ օրերին դեպքերն արագ զարգանում էին նաև Նախիջևանի երկրամասում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 219, թ. 40, տե՛ս նաև «Յառաջ», 1920, 30 հուլիսի, թիվ 160:

[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 211, թ. 202, տե՛ս նաև «Յառաջ», 1920, 30 հուլիսի, թիվ 160:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս «Յառաջ», 1920, 28 հուլիսի:

1920 թ. հուլիսի սկզբներին թուրքական բայազետյան դիվիզիան (մինչև 9000 սվին) Զևադ բեյի հրամանատարությամբ սկսել էր Նախիջևանի, Զուլֆայի, Օրդուբադի ընդարձակ շրջանի ռազմակալումը: Դիվիզիայի առաջապահ զորամասերից մեկը՝ 300 սվինով, հուլիսի 2-ին ուղղություն վերցրեց դեպի Շահթախտի շրջան: Այդ նույն ժամանակ հայկական զորքը Արարատյան դաշտից շարժվում էր դեպի Նախիջևան: Համառ կռիվներից հետո 1920 թ. ամռանը հայկական զորամասերին հաջողվել էր Շարուր–Դարալագյազի ուղղությամբ կոտրել թուրքերի ու մուսավաթականների դիմադրությունը և գրավել Շարուրի շրջանը:

Հուլիսի 26-ին հայկական զորքերը գրավեցին նաև Շահթախտի երկաթուղային կայարանը, իսկ առաջատար զորամասերը զրահագնացքով նույնիսկ ընդհուպ մոտեցան Նախիջևան քաղաքին:

Այսպիսի պայմաններում, երբ հայկական զորքերը սպառնում էին գրավել Նախիջևան քաղաքը և ամբողջ գավառը, քեմալականները, որոնք օժտված էին քաղաքական լարախաղացության անուրանալի ձիրքով, այս անգամ էլ իրենց ներկայացրին իբրև խորհրդային իշխանության անկեղծ բարեկամներ՝ ցույց տալով, թե տենչում են իրենց կողքին տեսնել Կարմիր բանակի զորամասերին՝ ընդհանուր թշնամու՝ Հայաստանի դեմ համատեղ կռիվ մղելու նպատակով:

Կարմիր բանակի զորքերի՝ Զանգեզուր մտնելուց երկու օր հետո՝ հուլիսի 7-ին, Նախիջևանից Գորիս ժամանեցին Զևադ բեյի դիվիզիայի մի քանի պատվիրակներ և ներկայացան խորհրդային հրամանատարությանը: Նրանք խնդրեցին, որ ռուսական զորամասերը Զանգեզուրից անցնեն Նախիջևանի գավառ, բռնեն Նախիջևան–Օրդուբադ գիծը և թուրքական զորամասերի հետ հայերի դեմ համատեղ գործողություններ սկսեն:

Դեպքերի բերումով քաղաքական նման ամբոխավարության համար նպաստավոր պայմաններ էին ստեղծված, ու քեմալականները առիթը բաց չթողեցին, որպեսզի իրենց օգտին առավելագույնս օգտագործեն այդ պայմանները: Եթե Զանգեզուրում ռուսական զորքերը ռազմական ընդհարումների մեջ էին գավառի հայ պաշտպանների հետ, իսկ Նախիջևանի գավառում հայկական զորքերի դեմ կռվում էին թուրքական ուժերը, ապա տրամաբանական էին Կարմիր բանակի և քեմալական թուրքերի ուժերի միավորումը և հայկական զորքերի դեմ համատեղ պայքարը: Եվ դա այն դեպքում, երբ քեմալականները հայ ժողովրդի նկատմամբ հետապնդում էին հեռուն գնացող նպատակներ. նրանք չէին հրաժարվել Հայաստանը և հայ ժողովրդին ոչնչացնելու մտքից: Ուստի հայկական բանակի դեմ Կարմիր բանակի և քեմալական զավթիչների համատեղ գործողությունները, բնականաբար, ավելի էին ուժեղացնում հայ ժողովրդի տառապանքները: Հեղափոխական գրավիչ արտահայտություններով քողարկված՝ քեմալական ազգայնականները կարողացել էին վստահություն ձեռք բերել Մոսկվայում, և

խորհրդային կառավարությունը, որպես փոխհատուցում, ամեն ինչ անում էր, որպեսզի նրանց հետ գժտության խնդիրներ չունենա:

1920 թ. հուլիսին Մոսկվա հասավ Անկարայի քեմալական կառավարության մի մեծ պատվիրակություն՝ Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ, որը, պատվիրակության ղեկավարի ասելով, գնացել էր՝ Կոմունիստական 3-րդ ինտերնացիոնալի 2-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու և խորհրդային կառավարության հետ Անկարայի հաստատած կապերն ամրապնդելու նպատակով:

Խորհրդային իշխանությունների հետ քեմալական թուրքերի հարաբերությունների ամրապնդմանը զուգընթաց Մոսկվայի աչքում և Անկարայի համար գնալով մեծանում էր Բաքվի դերը: Ադրբեջանի մայրաքաղաքը 1920 թ. ամառվանից դարձել էր քեմալականների գործնական աշխատանքի կենտրոնը:

Հուլիսի 20-ին Մոսկվայից Բաքու էր վերադարձել Խալիլ փաշան, որին ընդունել էին մեծ հանդիսավորությամբ: Նրա համար Ադրբեջանում ստեղծվեցին գործելու ամենաբարենպաստ պայմաններ: Խորհրդային իշխանությունների աջակցությամբ Խալիլ փաշան անմիջապես ձեռնամուխ եղավ «իսլամական բանակի» ստեղծմանը: Կամավորների արձանագրումը, մարզանքը, զորամասերի ձևավորումը կատարվում էին Ղուսար ավանում: Բանակի ողջ ծախսը հոգում էր խորհրդային կառավարությունը՝ տրամադրելով հագուստ, զենք, ռազմամթերք: Բանակի շտաբի պետը խորհրդային զինվորական փորձված մասնագետներից մեկն էր: Ռուսաստանի ամենատարբեր մուսուլմանաբնակ շրջաններից՝ Ղրիմից, Կազանից, Ուֆայից, Թուրքեստանից, խումբ առ խումբ Ադրբեջան էին ուղարկվում մահմեդական երիտասարդներ և մտցվում բանակի մեջ: Խալիլ փաշայի տրամադրության տակ դրվեցին նաև Սիբիրից վերադարձող թուրք գերիները: Մեծ արագությամբ պատրաստվող բանակի հետ Խալիլ փաշան Ղարաբաղի և Զանգեզուրի վրայով պետք է անցներ Թուրքիա[1]:

Ի կատարումն Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի տված հրամանի՝ 11-րդ բանակի ժամանակավոր հրամանատար Վասիլենկոն հուլիսի 18-ին 28-րդ դիվիզիայի հրամանատարին ուղարկել էր հեռագիր, ուր ցուցում էր տրված, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկել արևելյան թուրքական հրամանատարության ներկայացուցիչ Խալիլ փաշային և այդ հրամանատարության մոտ ռուսական առաքելության քարտուղարությանը մինչև Նախիջևան ուղեկցելու համար: Այդ նպատակով կարգադրվում էր՝

1. գործողությունն իրականացնելու նպատակով նախապատրաստել 32-րդ դիվիզիայի 1-ին հեծյալ գունդը՝ հրետանային հեծմարտկոցով,

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 449, 450:

2. զորամասի գլխավոր խնդիրն էր՝ լիակատար պաշտպանությամբ Գորիսից Անգեղակոթ–Կարմալինովկա ճանապարհով Նախիջևան հասցնել Խալիլ փաշայի և ռուսական առաքելության քարտուղարությունը՝ իրենց ամբողջ բեռներով,
3. ճանապարհին կատարել տեղանքի հետախուզություն, պարզել դաշնակցական զորամասերի տեղաբաշխման վայրերը, բնակիչների տրամադրությունը դաշնակցականների, Խորհրդային Ադրբեջանի, Թուրքիայի, Խորհրդային Ռուսաստանի և Կարմիր բանակի նկատմամբ,
4. Ճանապարհին դաշնակցական զորքերի հանդիպելու դեպքում ղեկավարվել թիվ 70 օպերատիվ հրամանի 7-րդ կետով, այսինքն՝ պատրաստ լինել մտնելու կռվի մեջ,
5. տեղի բնակիչների և թուրքական զորքերի հետ փոխհարաբերությունների ընթացքում ղեկավարվել թիվ 70 օպերատիվ հրամանի 3-րդ կետով,
6. Նախիջևանում գնդին տալ 3-4-օրյա հանգիստ, որից հետո նույն ճանապարհով վերադարձնել Գորիս՝ նախապես թուրքական հրամանատարության հետ պայմանավորվելով Նախիջևանի և Գորիսի, Օրդուբադի և Ջաբրայիլի միջև թուրքական զորքերի հետ ռուսական զորամասերի հետագա կապերի պահպանման միջոցների մասին[1]:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության նկատմամբ խորհրդային կառավարության քաղաքականությանը, ապա դա գերազանցապես թելադրված էր հեղափոխության հեռահար շահերով: Քանի որ Հայաստանի կառավարությունն ամեն ինչ անում էր չկորցնելու համար հանրապետության անկախությունը և իր արտաքին քաղաքականության մեջ հենվում էր Արևմուտքի վրա, ուստի բոլշևիկյան Ռուսաստանը, որը մահու և կենաց կռվի մեջ էր Անտանտի հետ, բնականաբար դառնում էր անկախ Հայաստանի հակառակորդ, Անտանտի և Հայաստանի դեմ պայքարող Թուրքիայի բարեկամ ու դաշնակից:

Միաժամանակ Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը Հայաստանի կառավարությանը փորձում էր համոզել, որ ինքն ամեն կերպ կնպաստի, որ Հայաստանի օգտին լուծվեն Թուրքիայի նկատմամբ իր տարածքային պահանջները: ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. մայիսի 25-ի որոշման մեջ ուղղակի ասված էր. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, ռուսական զորքերի օգնությամբ խորհրդայնացման փորձ չկատարել»: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, դա մնում էր թղթի վրա:

Թե խորհրդային կառավարությունն ինչպիսի քաղաքականություն էր

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 86, թ. 1-2:

վարում Հայաստանի նկատմամբ, երևում է թեկուզ 11-րդ Կարմիր բանակի զորամասերին տրված հրամաններից:

Այսպես, Գորիսում գտնվող 32-րդ և 28-րդ դիվիզիաների զորամասերի բանակի հրամանատարության 1920 թ. հուլիսի 16-ի հրամանում նշվում էին այն շարժառիթները, որոնք Կարմիր բանակի զորքերին ստիպում էին առանց հապաղելու Գորիսից շարժվել և գրավել Նախիջևանը: Հրամանում ասված էր. «Բոլոր զորամասերի հրամանատարները պետք է Նախիջևան ուղարկվող ամբողջ հրամանատարական կազմին և կարմիրբանակայիններին ներշնչեն, որ մենք պատերազմ չենք մղում, որ այս գործողությունը իրականացվում է բացառապես թուրքական հեղափոխական զորքերի հետ կապ հաստատելու և Թուրքիայի ու Հայաստանի սահմաններին տիրող քաղաքական և մարտական իրադրությունը մանրամասնորեն պարզելու նպատակով: Շարժման նպատակն է՝ պարզել թուրքերի և հայ դաշնակցականների փոխհարաբերությունները, թուրքական զորքերի վերաբերմունքը Ադրբեջանի հանդեպ և այն, թե հատկապես ինչ է ակնկալում թուրքական հրամանատարությունը ռուսաստանյան Կարմիր բանակից»[1]:

Նույն օրը՝ հուլիսի 16-ին, Սերգո Օրջոնիկիձեն Բաքվից Լենինին, Չիչերինին և Ստալինին հեռագրում էր. «Բացարձակապես անհրաժեշտ եմ գտնում Նախիջևանի շրջանի օկուպացիան: Ես գտնում եմ, որ կարելի է շարունակել առաջխաղացումը՝ հետախուզության նպատակով: Կրկնում եմ՝ հետախուզությունն անհրաժեշտ է»[2]:

Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Լուկը և ֆրանսիական բարձրագույն կոմիսար Դամիեն դե Մարտելը խիստ անհանգստացած էին դեպի Հայաստան Կարմիր բանակի առաջխաղացումով և հանրապետության շուրջը տեղի ունեցող զարգացումներով:

Լուկի հանձնարարությամբ Երևանում անգլիական ներկայացուցիչ կապիտան Գրեյսը հուլիսի 19-ին տեսակցություն է ունեցավ Հայաստանի վարչապետ Համո Օհանջանյանի հետ և խնդրեց պարզաբանել իր կառավարությանը հետաքրքրող մի շարք հարցեր՝ կապված Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակի հետ:

Գրեյսին ամենից առաջ հետաքրքրում էր բոլշևիզմի վտանգի առկայությունը հանրապետության ներսում: Այդ հարցին Հ. Օհանջանյանը պատասխանեց, թե «բոլշևիզմը բուն Հայաստանում մեռած է», բայց կան քիչ թվով հայ բոլշևիկներ հանրապետության սահմաններից դուրս, հատկապես Ադրբեջանում, որոնք քարոզչական շփման մեջ են երկրի բնակչության հետ[3]:

Այն հարցին, թե վարչապետն ինչ է մտածում ադրբեջանցի կոմունիստ-

---

[1] ՌՊՌԱ, ֆ. 1328, ց. 1, գ. 429, թ. 6:

[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 85, թ. 3-4:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 89, թ. 1:

ների մասին, Հ. Օհանջանյանը պատասխանեց, որ, իր կարծիքով, նրանք նշանակալի չափով տարբերվում են Ռուսաստանի բոլշևիկներից. «պանթուրանական բոլշևիկներ են, որոնց նպատակը կարծես նույնն է, ինչ տաճկա-գերմանական ծրագիրը, այն է՝ միացնել մուսուլմանական բոլոր ցեղերը և կազմել մի ուժեղ զանգված Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի մահմեդականներից»[1]:

Գրեյսն այնուհետև հարցրեց, թե Հայաստանի կառավարությունը որքանով է հավատ ընծայում Հայաստանի նկատմամբ Մոսկվայի խաղաղասիրական հավաստիացումներին: Վարչապետը պատասխանեց, որ իր կառավարությունը հիմքեր չունի հավատալու բոլշևիկյան ղեկավարության խոստումներին, քանի որ նրա համար «ոչ մի դաշինք սուրբ չէ: ... Այնպես որ մենք նրանց չենք հավատում»[2]:

Այն հարցին, թե վարչապետի կարծիքով ռուսներն ու ադրբեջանցիներն ինչպես են մտադիր Հայաստանի վրայով միանալ քեմալական թուրքերին, Հ. Օհանջանյանը պատասխանեց. «Նրանց ծրագիրը մեզ քաջ հայտնի է՝ նրանք կամենում են Ադրբեջանից հարձակվելով գրավել Իջևանը, Դիլիջանը, Ղարաքիլիսան, Ալեքսանդրապոլը, Ղարսը և միանալ Քեմալին»: Իհարկե, նշեց վարչապետը, եթե նրանք մեծ ուժ ունենային, այդ ծրագիրը կարող էին իրագործել, մանավանդ նրանց գործը կհեշտացներ երկաթուղին, որ Ղարաքիլիսայից ձգվում է դեպի Ղարս և ավելի հեռու: Բայց հայ ժողովուրդը մտադիր չէ հեշտությամբ տեղի տալ և արյան գնով կպաշտպանի իր սուրբ երկրի ամեն մի թիզը: «Երկրորդ ճանապարհը դեպի Մուստաֆա Քեմալ,– նշում էր վարչապետը,– Ղարաբաղի և Զանգեզուրի միջով կլինի: Ամբողջ Ղարաբաղը հիմա բոլշևիկների ձեռքին է: Սկզբում նրանք սահման ուզեցին Հազարու գետի գիծը, բայց հետո առաջ եկան ու գրավեցին Գորիսը: Նրանք հաջողություն ունեցան, որովհետև մենք չունեինք կանոնավոր ճանապարհ՝ [Զանգեզուրին] զորք, զենք, ռազմամթերք հասցնելու»:

Հ. Օհանջանյանը անգլիացուն ներկայացրեց, որ Զանգեզուրի ժողովուրդը երկար ժամանակ դիմադրում էր թուրքերին ու ադրբեջանցիներին, բայց երբ ռուս բոլշևիկները եկան գավառ, զանգեզուրցիների մի մասը վերհիշեց Ռուսաստանի անցյալի փառքը և դրանով հրապուրվելով՝ աջակցություն ցույց տվեց ռուսական բանակի զորամասերին՝ չկարողանալով ըմբռնել, թե նրանք այս անգամ ինչ նպատակով են գալիս: Նշելով, որ եթե ռուս-ադրբեջանական ուժերը չկարողանային գրավել Ղարաբաղը, ապա չէին կարող նաև Զանգեզուր մտնել, այնուհետև Օհանջանյանն ասաց. «Այս անհաջողությունը, իմ կարծիքով, բրիտանական սխալ քաղաքականության հետևանք է, որ միշտ պաշտպանել է Ադրբեջանի ագահությունը Ղարաբաղի նկատմամբ՝

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 89, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 2:

հակառակ մեր շահերին ու Ղարաբաղի բնակչության բացարձակ մեծամասնության ցանկություններին: Մեր շահերը պահանջում են, որ մեզ տրվեր այն, ինչ ամեն տեսակետից, նաև ֆիզիկական և աշխարհագրական, պատկանում է մեզ: Դա կհամապատասխաներ նաև Բրիտանիայի շահերին»[1]:

Գրեյսի այն հարցին, թե Հայաստանի կառավարությունն ունի՞ արդյոք հակամիջոցներ՝ դիմակայելու երկրին սպառնացող վտանգներին, Հ. Օհանջանյանը պատասխանեց. «Ներկայումս մեր զորքը գնում է Նախիջևանի վրա, ու մենք արդեն գրավել ենք Շահթախտ քաղաքը: Երբ մենք վերցնենք Նախիջևան քաղաքը, այն ժամանակ կունենանք ազատ ճանապարհ՝ Գորիսի վրա գնալու, բոլշևիկներին այնտեղից ետ մղելու և Ղարաբաղը գրավելու: Մեր բոլոր գործողություններն այս ճանապարհի վրա նպաստավոր են մեզ համար, ու մենք մտադիր ենք այդտեղով կտրել պանթուրանական բոլշևիկների և Մուստաֆա Քեմալի կապը: ... Մեր առաջխաղացման հետ երկաթուղային բանվորները նորոգում են այն 15 կիլոմետր գիծը, որ քանդել են թուրքերը»: Նա նշեց, որ այդ կարևոր գործը դանդաղ է առաջանում, որովհետև չի հաջողվել Սարիղամիշից հիմնափայտեր տեղափոխել: Չնայած գյուղատնտեսական աշխատանքների բուռն շրջան է, այնուամենայնիվ երկաթգծի շուրջը գտնվող ամեն գյուղ 10-ական հոգի է տրամադրել գծի շինարարությունն արագ ավարտելու համար, և «3-4 օր հետո գնացքը կսկսի գործել»[2]:

Հայաստանի վարչապետի հետ զրույցի արդյունքների մասին կապիտան Գրեյսը նույն օրը զեկուցագիր հղեց Թիֆլիս՝ Լուկին:

Դեպի Նախիջևան խորհրդային զորամասերի ռազմերթը, ռազմական օպերատիվ պլանի համաձայն, կատարվելու էր երկու ուղղություններով: 28-րդ դիվիզիայի 1-ին հեծյալ գունդը՝ Տերեխովի հրամանատարությամբ, կտրելով Գորիս–Սիսիան տարածքները, պետք է անցներ Բիչանակի լեռնանցքով, մտներ Նախիջևանի գավառ և շարժվելով առաջ՝ գրավեր Նախիջևան քաղաքը: Այս գնդի գործողություններին աջակցելու էր Ադրբեջանի Զանգելանի տարածքում տեղաբաշխված 18-րդ հեծյալ դիվիզիայի մեկ բրիգադ, որը, Արաքս գետի հոսանքն ի վեր առաջանալով, պետք է կտրեր-անցներ Մեղրիի շրջանը և մտներ Նախիջևանի գավառ՝ արևելքից: Նախատեսված էր հուլիսի 22-ին գրավել Օրդուբադ քաղաքը և շարժվել Նախիջևան քաղաքի ուղղությամբ: Ճանապարհի՝ Օրդուբադ–Նախիջևան հատվածում այդ բրիգադը պետք է հանդիպեր Բիչանակի լեռնանցքով Նախիջևանի գավառ մտած և Նախիջևան քաղաքը գրաված 28-րդ դիվիզիայի 1-ին հեծյալ գնդին:

Ռազմաօպերատիվ այդ խնդիրը ձևակերպված էր 28-րդ դիվիզիայի հրամանատարի տեղակալ Լիտվինենկոյի և զինվորական կոմիսար Լեոնովի՝ դիվիզիայի զորամասերին հուլիսի 20-ին Շուշիից իջեցրած թիվ 14 հրամանի

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 89, թ. 2-3:

[2] Նույն տեղում, թ. 3:

մեջ[1]: Այդ հրամանով Տերեխովը կարգադրություն էր ստացել Սիսիանի տարածքով անցնելիս ամեն կերպ խուսափել տեղական բնակչության հետ բարդություններ ստեղծելուց, ձգտել, եթե հնարավոր է, ուժ չգործադրել:

Գորիսից Նախիջևան ուղևորվող 1-ին հեծյալ գնդի թևերի և թիկունքի անվտանգությունն ապահովելու խնդիրը դրվեց Սիսիանի շրջանում գտնվող 32-րդ հրաձգային բրիգադի (հրամանատար՝ Նիկիտին) վրա: Բրիգադը նաև ակտիվ հետախուզություն պիտի կատարեր Կուդերբելյակ–Ջուլ ուղղությամբ[2]:

Հուլիսի 17-ին բրիգադը Շաքի գյուղում էր: Հանգամանքներից ելնելով՝ բրիգադի հրամանատարը որոշեց ոչ թե անմիջապես շարունակել երթը դեպի Անգեղակոթ և կանգ առնել այնտեղ, այլ Շաքիից սկսած՝ իր ստորաբաժանումները տեղաբաշխել Շաքի–Շուքար–Կարմալինովկա գծի վրա, այսինքն՝ Նախիջևան տանող ճանապարհի երկու կողմերում ընկած տարածքներում: Այլ խոսքով, բրիգադը ապահովում էր Շաքիից մինչև Նախիջևանի գավառի սահմանն ընկած երթուղու անվտանգությունը:

Ճանապարհի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով Գորիսից Սիսիանի Անգեղակոթի ենթաշրջան ուղարկվեց մի ուրիշ զորամաս ևս՝ համալրված հրետանային հաշվարկով, որը պետք է պաշտպաներ առաջ շարժվող Կարմիր բանակի զորքերի թիկունքը՝ կանխելով Դարալագյազի կողմից Բազարչայի վրա հայկական զորքերի հնարավոր հարձակումը: Անվտանգության նկատառումներով հեծյալ մի վաշտ էլ՝ իբրև ուղեկալ, ուղարկվեց Կարմալինովկա գյուղ:

Խորհրդային ղեկավարությունը խիստ անհանգստացած էր Գորիս–Նախիջևան ճանապարհին Խալիլ փաշային և ռուսական առաքելության քարտուղարությանը սպասվելիք պատահարներով: Ի պատասխան Թիֆլիսից Ս. Կիրովի արած հարցման՝ 11-րդ բանակի ժամանակավոր հրամանատար Վասիլենկոն և Ռազմհեղկոմի անդամ Լուկինը օգոստոսի 6-ին Բաքվից նրան տեղեկացնում էին՝ քանի որ բեռների փոխադրման համար տրանսպորտային միջոցներ գտնելու նպատակով ռուսական առաքելությունը Գորիսում հապաղել է, ուստի այդ պատճառով Խալիլ փաշան անջատվել է առաքելությունից և Ղարաքիլիսա–Անգեղակոթի վրայով հուլիսի 29-ին բարեհաջող հասել Նախիջևան: Ուշացած առաքելությունը Գորիսից ճանապարհ է ընկել հուլիսի 29-ին:

Իմանալով Գորիս եկած և այնտեղից Նախիջևան ուղևորվող ռուսական առաքելության աշխատակիցների մասին, որոնք իրենց հետ տանում էին գույք և արժեքներ, Վայոց ձորում գտնվող Դրոն՝ 400 հեծյալներով և 400 հետևակ զինվորներով, 8 թնդանոթով, հուլիսի 31-ին հարձակվեց Բազարչայ

---

[1] Տե՛ս ՌՊՌԱ, ֆ. 1328, ց. 1, գ. 422, թ. 29:

[2] Տե՛ս նույն տեղում:

գյուղի վրա: Այնտեղ ամրացված բոլշևիկյան զորամասը համառ դիմադրությունից հետո ստիպված եղավ նույն օրը՝ երեկոյան, ետ քաշվել ու դիրքավորվել Անգեղակոթից 7 վերստ դեպի արևմուտք: Այդ օրը՝ երեկոյան, առաքելությունը Գորիսից ժամանեց Անգեղակոթ: Դրոյի մարտիկների ճնշման տակ և Անգեղակոթի ներսում ծագած ապստամբության պատճառով բոլշևիկյան զորամասը հարկադրված եղավ շտապ հեռանալ: Հանդիպելով ուժգին կրակի՝ նա նահանջեց ավելի հեռու՝ դեպի Նախիջևան[1]: Հայկական ջոկատը կարողացավ գրավել առաքելության ոսկու ձուլածոները՝ ավելի քան 200,6 կիլոգրամ քաշով, որն ուժով վերադարձնելու ուղղությամբ հակառակորդի բոլոր փորձերը անհաջողությամբ էին վերջանում:

Այս իրադարձությունների ժամանակ Բազարչայում գտնվող ռուսական զորամասին ամենաակտիվ աջակցությունը ցույց տվեցին գյուղի բնակիչները:

Ինչպես նախորդ էջերից մեկում թռուցիկ նշվել է, ամբողջ Զանգեզուրում միայն երկու գյուղեր՝ Բազարչայը և Բորիսովկան էին ռուսաբնակ: Սիսիանի տնտեսական կյանքում հատկապես մեծ նշանակություն ուներ Բազարչայը, որը գավառի ամենահյուսիսային բնակավայրն էր: Իսկ ինչպե՞ս էին ռուս մարդիկ ընկել այսրկովկասյան լեռնային այս խուլ վայրերը:

Ռուսական եկեղեցու ներսում առաջացած աղանդներից մեկը մոլոկանների աղանդն էր, որի անդամներն իրենց համարում էին «հոգևոր քրիստոնյաներ», իսկ ցարական կառավարությունը նրանց դիտում էր իբրև ուղղափառության հակառակորդներ, ուստի, Ռուսաստանի կենտրոնական նահանգներից բռնությամբ տեղահանելով, բնակեցնում է կայսրության ծայրամասային շրջաններում, Ղրիմի և Ստավրոպոլի անմարդաբնակ տափաստաններում, նաև Այսրկովկասում: Այստեղ մոլոկանները բնակություն էին հաստատել մի քանի գավառների ամենահեռավոր ցածրադիր վայրերում և արագ կլիմայավարժվել էին: «Անդրկովկասի բարձրադիր մասերում էին հիմնավորվել դուխոբորները*, իսկ մոլոկանները՝ հովիտներում,– գրել է Վ. Դ. Բոնչ-Բրուևիչը: – Սրանք (մոլոկանները: – *Ա. Ս.*), բացի հացահատիկի մշակությունից, զբաղվում էին նաև այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ»[2]:

19-րդ դարի կեսերին Զանգեզուրի հյուսիսային ծայրամասում ցարական կառավարությունը վերաբնակեցրեց Տամբովի նահանգի Մորշանսկի գավառից տեղահանված մոլոկանների մի քանի տասնյակ ընտանիքներ: Որոտան գետի վերին հոսանքի՝ Բազարչայ գետի հովիտը, որի ճանապարհն անցնում էր Թուրքիայի սահմանին մոտ լեռնանցքով, ուներ ռազմավարական նշանա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 171, թ. 2:

* Ռուսական եկեղեցու աղանդներից մեկը:

[2] **В. Бонч-Бруевич**, Избранные атеистические произведения, Москва, 1973, с. 247-248.

կություն. ճանապարհի վրա հուսալի պահակ-բնակավայր ունենալը անհրաժեշտություն էր: Մոլոկան գաղութաբնակներն արագ մտերմացել էին Սիսիանի հայկական գյուղերի բնակիչների և ամռանն իրենց անասուններով նույն Սիսիանի խոտառատ սարերը բարձրացող Ղարաբաղի և Արանի թուրք քոչվորների հետ: Բազարչայում բնակիչներն ապրում էին մեծ տոհմերով, որոնք իրար հետ կապված էին արյունակցական կապերով, այդպիսի տոհմերի թիվը 1920 թ. գյուղում հասնում էր 40-ի, որոնցում հաշվվում էր 242 բազմանդամ ընտանիք: Բնակավայրը լիովին ռուսական տեսք ուներ. այնտեղ միայն ռուսներ էին ապրում: Մոլոկանները շատ շուտով հռչակվել էին որպես հմուտ պանրագործներ: Գետը, նաև գյուղը Բազարչայ անունը ստացել էին բազարների (շուկաներ) պատճառով, որ այստեղ կազմակերպում էին թուրք քոչվորները: Գնորդները գլխավորապես տեղացի հայերն էին և ռուս վերաբնակները: Ցարիզմի «չար կամքով» դառնալով հայերի հայրենակիցներ՝ նրանք սովորել էին ապրել հաշտ ու խաղաղ:

Բայց ահա, երբ ռուսական Կարմիր բանակի զորամասերը ոտք դրեցին Զանգեզուրից ներս, Բորիսովկայի և Բազարչայի բնակիչները կանգնեցին ռուս զորամասերի կողքին: Բազարչայը, փաստորեն, գավառի հայկական իշխանություններին հայտարարել էր քաղաքացիական անհնազանդություն և բոլշևիկյան զորամասին դիմավորել էր աղուհացով: Գյուղի բնակիչների գործողությունները ղեկավարում էին երկու ծերունիներ՝ Ռոդիոն Կասմինինը և Միխայիլ Յուրինը, որոնց շուրջն էին համախմբված ակտիվիստներ Նիկոլայ Գալկինը, Ֆեոդոր Ժուկովը, Ֆեոդոր Տեպկինը և ուրիշներ:

Երբ Դրոյի ուժերի ճնշման տակ խորհրդային զորամասը Բազարչայից շարժվեց Անգեղակոթի ուղղությամբ, նրա հետ հեռացան գյուղի երիտասարդներից ավելի քան 50 հոգի, որոնց մի մասը, հագնելով կարմիրբանակայինի համազգեստ, ձուլվեց զորամասին, մյուս մասը գնաց Նախիջևան տանող Բիչանակ լեռնանցքի վրա գտնվող Կարմալինովկա ռուսական գյուղը և միացավ տեղի զինյալներին, իսկ շուրջ 20 հոգի, բոլշևիկյան զորամասից զենք ու զինամթերք ստանալով, վերադարձավ ու բարձրացավ Բազարչայի սարերը:

Չնայած ձեռնարկած պատժիչ գործողություններին՝ Բազարչայի գյուղացիները շարունակում էին լուռ դիմադրություն ցույց տալ գավառի իշխանություններին, կազմակերպում էին գերի ընկած կարմիրբանակայինների փախուստները, խնամում էին վիրավորներին և հետո լեռներով գաղտնի անցկացնում, հասցնում էին Ղարաբաղ և հանձնում Կարմիր բանակին:

Դեպքերը գավառում շարունակում էին սրընթաց զարգանալ: Անհաջողության մատնվեց Մեղրիի շրջանի վրայով խորհրդային զորամասերի նախատեսված ռազմերթը: 18-րդ հեծյալ դիվիզիայի հեծյալ բրիգադը չկարողացավ ճեղքել-անցնել այդ տարածքը և մտնել Նախիջևան: Մեղրիի շրջանում Նժդեհի վաշտերն ուժեղ դիմադրություն ցույց տվեցին, և բոլշևիկյան զորամա-

սերը ստիպված նահանջեցին ելման դիրքերը: Այդ իսկ պատճառով չիրականացավ 11-րդ բանակի հրամանատարության ռազմական պլանը, որը նախատեսում էր Օրդուբադ-Նախիջևան հատվածում 18-րդ հեծյալ դիվիզիայի հեծյալ բրիգադի հանդիպումը 28-րդ դիվիզիայի 1-ին հեծյալ գնդի հետ:

Մինչ Կարմիր բանակի հեծյալ գունդը Սիսիանի սահմանն անցնելով մտնում էր Նախիջևանի գավառ, տեղի խաները և մուսավաթականները քեմալականների ծրագրով Նախիջևան քաղաքում «մուսավաթական վարչակարգի դեմ» «ապստամբության» խեղկատակություն սարքեցին և «հաստատեցին» «խորհրդային իշխանություն»: Ստեղծվեց գավառային «հեղկոմ», որը, ըստ էության, նույն խաների և մուսավաթականների իշխանությունն էր՝ քողարկված «հեղափոխական», «բոլշևիկյան» դիմակով: Գավառային «հեղկոմի» նախագահ նշանակվեց կալվածատեր Իբրահիմ Շահթախտինսկին, գավառի զինվորական ուժերի կոմիսար՝ մուսավաթական Ադրբեջանի զորքերի նախկին գլխավոր հրամանատար գեներալ Սալիմովը (Սելիմով):

Հուլիսի 28-ին՝ չորսօրյա երթից հետո, Նախիջևան քաղաք մտավ 28-րդ դիվիզիայի 1-ին հեծյալ գունդը՝ Տերեխովի հրամանատարությամբ: Ժամանելով Նախիջևան և խորամուխ լինելով նախօրյակին ստեղծված խորհրդային տեղական իշխանության գործերի մեջ՝ նա պարզեց, որ հանձին տեղի «հեղկոմի»՝ խորհրդային իշխանությունը գործ ունի թշնամական ուժի հետ: Սերգո Օրջոնիկիձեին հղած իր զեկուցագրում Նախիջևանում կյանքի կոչված գավառային «հեղկոմին» նա համարում էր «խորհրդային հեղկոմի ծաղրանկար»:

Նախիջևան մտած կարմիր զորամասի հրամանատարը և Շուշիից այստեղ տեղափոխված ու գավառի արտակարգ կոմիսար դարձած Բահաթուր Վելիբեկովը նպատակահարմար գտան վերացնել կեղծ հեղկոմը և «իսկական բոլշևիկյան հեղկոմ» ստեղծել:

Խորհրդային զորամասի աջակցությամբ ցրվեցին քեմալականների թելադրանքով ստեղծված կեղծ հեղկոմները նաև գավառի ուրիշ բնակավայրերում, և ստեղծվեցին նոր հեղկոմներ:

Այսպիսով՝ 1920 թ. հուլիսի վերջերին «վիճելի» համարված հայկական տարածքներում՝ Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանում, արդեն հաստատված էին խորհրդային կարգեր: Հերթի էին դրված այդ գավառներում նոր իշխանության ամրապնդման, դրանցում խորհրդային շինարարության ծավալման, գրավածը պաշտպանելու խնդիրները:

Մինչ Կարմիր բանակը զբաղված էր «վիճելի» հայկական տարածքները գրավելով՝ քեմալական թուրքերը եռանդով նախապատրաստվում էին վերջնական հարված հասցնելու հայ ժողովրդին:

Այն օրերին, երբ Շանթի պատվիրակությունը գտնվում էր Մոսկվայում, թուրքերը նույնպես, ինչպես ասվեց, այնտեղ էին ուղարկել իրենց պատվիրակությունը՝ բանակցելու խորհրդային կառավարության հետ: Ի տարբերություն հայ-ռուսական բանակցությունների՝ ռուս-թուրքական բանակցու-

թյունները հաջողությամբ էին առաջ գնում, որի հետևանքով օրեցօր ամրապնդվում էր միմյանց նկատմամբ երկու պետությունների վստահությունը: Թուրքերը բոլշևիկների աչքում վերջնականապես ձեռք բերեցին Ռուսաստանի հավատարիմ դաշնակիցների և հակաիմպերիալիստական պայքարի առաջամարտիկների համարում: Ռուս-թուրքական մերձեցումը մահացու վտանգ էր ստեղծում հայ ժողովրդի համար, որովհետև այն լիովին արձակում էր Հայաստանի Հանրապետությունը ոչնչացնել ձգտող քեմալական զավթիչների ձեռքերը[1]:

Ստեղծված պայմաններում խորհրդային կառավարությունը, փոխանակ դիմելու ակտիվ քայլերի և չեզոքացնելու հայ ժողովրդի գլխին կախված նոր արհավիրքը, բավարարվում էր հայերին խոստումներ տալով: ՌՍՖԽՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1920 թ. հուլիսի 20-ին Հայաստանի վարչապետ և արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանին հասցեագրած հայտագրում հավաստիացնում էր, թե խորհրդային կառավարությունը մեծապես շահագրգռված է Հայաստանի անվտանգության խնդրով և ամեն ինչ անում է՝ կանխելու համար թուրքական արշավանքը, օգտագործում է իր ազդեցությունը քեմալական կառավարության վրա, որ Փոքր Ասիայում հայ ժողովրդի համար ապահովվի «բավականաչափ տերիտորիա ձեռք բերելը», որ ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան «վերջապես դուրս գալ հարևան մահմեդական ազգաբնակչության հետ հավիտենական թշնամությունից»[2]:

Չիչերինը հաղորդում էր, որ բացառապես Խորհրդային Ռուսաստանի խաղաղասեր ձգտումների ազդեցության տակ թուրք ազգայնականները կասեցրել են իրենց սկսած զորահավաքը, որի նպատակն էր նոր հարվածներ հասցնել հայ ժողովրդին, և պատրաստակամություն են հայտնել խաղաղ ելք գտնել՝ կայուն ու բարի հարևանական հարաբերություններ հաստատելու հայ և մահմեդական ազգաբնակչության միջև[3]:

Հավաստելով Հայաստանի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի կառավարության բարեկամական վերաբերմունքը՝ Չիչերինն այնուհետև գրում էր. «Խորհրդային Ռուսաստանը կշարունակի գնալ նույն անկողմնապահ բարեկամության ճամփով՝ բոլոր աշխատավոր ազգությունների նկատմամբ, և հայ ժողովուրդը կարող է հաստատ հույս ունենալ նրա անփոփոխ բարեկամական վերաբերմունքի և իր ուժերի սահմաններում նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին պաշտպանելու համար սպառնացող նոր, արյունալի աղետներից»[4]:

---

[1] Տե՛ս «Յառաջ», 1920, 28 հուլիսի, թիվ 158:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Նույն տեղում:

Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Սերգեյ Կիրովը 1920 թ. հուլիսի 21-ին զրույց ունեցավ Վրաստանում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի հետ և արեց հետևյալ պաշտոնական հայտարարությունը. «Մենք ոչ միայն ճանաչում ենք Հայաստանի անկախությունը, ոչ միայն այդ տեսակետը տարածում ենք Թուրքահայաստանի վրա, այլև... մեր պարտքն ենք համարում օգնել հայերին, նույնիսկ զինված ուժերով պահպանել անկախ Հայաստանի սահմանները»[1]:

Բայց այդ բոլոր խոստումները մնում էին թղթի վրա:

ՀՀ արտաքին գործերի նախարարության մի տեղեկագրի մեջ նշված էր, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական դեկրետներով հայտարարել էր, որ ճանաչում է և պիտի ճանաչի Հայաստանի անկախությունը, քանիցս ազդարարել էր, որ Խորհրդային Ռուսաստանը եղել և մնում է հայ ժողովրդի բարեկամը, որ նրա բոլոր միջամտությունները միայն մի նպատակ ունեին՝ խաղաղորեն վերջացնել Հայաստանի և Ռուսաստանի դաշնակից Ադրբեջանի միջև եղած վեճերը, վերջ տալ ավելորդ արյունահեղություններին[2]:

Այնուհետև տեղեկագրում նշվում էր, որ հակառակ հավաստիացումներին՝ խոսքով չափազանց բարյացակամ Մոսկվայի կոմունիստները գործնականում չէին մոռանում իրենց շահերը և բոլշևիզմի արևելյան ծրագիրը իրագործելու համար ջլատում էին Հայաստանը՝ խլելով Զանգեզուրն ու Ղարաբաղը: Ավելին, այդ տարածքներում վարելով ահաբեկման քաղաքականություն, ժողովրդին պահում էին սարսափի մեջ, երկրի հարստությունը դուրս տանում Բաքու[3]:

Կարմիր բանակի և ադրբեջանական զորամասերի կողմից գրավված բուն Զանգեզուրի և Սիսիանի հայությունն իր հայացքը հառած էր պահում Դարալագյազի կողմը՝ հույսը չկորցնելով, որ այնտեղից շուտով հայկական զորքերը հարձակման կանցնեն և գավառից դուրս կմղեն խորհրդային ուժերին:

Այդ օրերին Նժդեհը ՀՀ զինվորական նախարարին (պատճենը՝ արտաքին և ներքին գործոց նախարարներին, խորհրդարանի նախագահին և ՀՅ դաշնակցության բյուրոյին) գրում էր, որ չնայած հակառակորդը գրավել է բուն Զանգեզուրը և Սիսիանը, բայց լեռնաշխարհի հայությունը «դեռ չի դադարել իր հարազատ զորքերին սպասելուց և դեռ ջերմորեն հավատում է, որ շուտով, շատ շուտով Բազարչայից կգոռան մեր թնդանոթները և երկրիս հայությանը կավետեն մեր զորքերի մուտքը Զանգեզուր»: Ապա ավելացնում էր. «Գիտեմ, դուք ընդմիշտ լքել չեք կարող Զանգեզուրը, որովհետև դրանով

---

[1] **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 198:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 107, թ. 6-7:

[3] Տե՛ս նույն տեղում:

դուք երիցս ուժեղացրած կլինեք Ադրբեջանը և լայն հնարավորություն տված կլինեք նրան իրագործելու իր վաղեմի երազանքը՝ միանալ Տաճկաստանին:

Ձեռքից թողնելով Զանգեզուրը, դուք կվտանգեք ոչ թե միայն տրագիկ Գողթանը, այլև կվիժեցնեք Նախիջևանի օպերացիան: Ստեղծված պայմաններում ես դժվարանում եմ հավատալ այդ օպերացիայի հաջողությանը: Թշնամին իր ձեռքին պահելով Սիսիանը, լայն հնարավորություն ունի Հաջիսամլուի և Մինքենդի (իսկ ով չգիտե, որ այդ շրջանները կենդանի ուժերի անսպառ ռեզերվ են) իր ուժերի մեծագույն մասը կարիքի դեպքում փոխադրելու Նախիջևան»:

Տալով գավառի և նրա շուրջը ստեղծված ռազմաքաղաքական իրադրության բնութագիրը՝ Նժդեհը այնուհետև գրում էր, որ բուն Զանգեզուրի և Սիսիանի «ապստամբ ժողովուրդը, որ Ադրբեջանի հետ մեկից ավելի անգամ է չափվել և միշտ էլ հաղթել, ջերմ հավատով սպասում է Հայաստանի զորքերի շուտափույթ երևալուն իր երկրի սահմաններում:

Ուշացնել օգնությունը՝ նշանակում է թուլացնել սպասող ազգաբնակչության մարտական կորովն ու հավատը և հեշտացնել թշնամու գործը, որն անանխընթաց արագությամբ առաջ է տանում բռնությամբ սովետականացված հայ տարրի զինաթափումը, գլխատումն ու տնտեսական քայքայումը:

Արագացրե՛ք զորքերի մեկնումը: Սպասում ենք»[1]:

Հայաստանի կառավարությունը, իր հերթին, մտադիր չէր հաշտվելու «վիճելի» Զանգեզուրի կորստի և այնտեղ սկսված արյունալի հաշվեհարդարների հետ: Ուստի նա Դրոյին հրամայեց իր զորքերով շարժվել բուն Զանգեզուրի վրա և հաջողության դեպքում վերագրավել նաև Ղարաբաղը:

Վերախմբավորելով իր ուժերը՝ 1920 թ. օգոստոսի 1-ին Դրոն Վայոց ձորի Ղուշչիբիլակ գյուղից Բազարչայի լեռնանցքով հանկարծակի հարձակման անցավ Սիսիանի շրջանի վրա: Բազարչայի ենթաշրջանում տեղաբաշխված փոքրաթիվ խորհրդային զորամասերն անկարող եղան կասեցնելու հարձակումը և սկսեցին նահանջել Անգեղակոթ գյուղի ուղղությամբ[2]:

Նահանջող զորամասերին օգնություն ցույց տալու և ճակատի ճեղքվածքը փակելու համար 32-րդ դիվիզիայի հրամանատարությունը Անգեղակոթ ուղարկեց դիվիզիայի հեծյալ և հետևակ երկու գնդեր և մեկ հեծելավաշտ: Միանալով նահանջող զորամասերին՝ նրանք համատեղ ուժերով կարողացան ժամանակավորապես կասեցնել հայկական զորամասի առաջխաղացումը Անգեղակոթից հյուսիս ընկած տարածքներում: Դրան նպաստեց այն, որ Անգեղակոթ և Շաղաթ գյուղերի կոմբջիջների ջանքերով շուրջ 50 հոգի մտան կարմիրբանակայինների շարքերը և կռվեցին հայկական զորամասերի դեմ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 16 և շրջերես:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս I, թ. 180-181:

Խորհրդային զորամասերի համար այդ ծանր պահին 28-րդ և 32-րդ դիվիզիաների հրամանատարները և զինվորական կոմիսարները Գորիսից հեռախոսագիր-վերջնագիր հղեցին Դրոյին՝ նշելով, որ հայկական զորքերը հարձակում են կատարել ՌՍՖԽՀ Կարմիր բանակի զորամասերի վրա, որ գրավվել ու կողոպտվել են Թուրքիա տարվող ռուսական առաքելության ունեցվածքը և արժեքները, և որ այդպիսի գործողությունները Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև դրացիական հարաբերությունների խզման սկիզբ են: Ասված էր, որ Կարմիր բանակը Զանգեզուր–Նախիջևանի շրջանը գրավել է ոչ թե այն նվաճելու, այլ հայերի և թաթարների փոխադարձ կոտորածները դադարեցնելու նպատակով: Պնդելով, թե Կարմիր բանակը խնդիր չունի հարձակվելու հայկական բանակի վրա, բայց «կոչնչացնի բանդիտներին և ավազակներին», հրամանատարությունը, սակայն, չէր ճշտում, թե, իր կարծիքով, Դրոյի զորամասը հայկական բանակի զորքերի՞ց է, թե՞ ավազակախումբ: «Ձեր հրամանատարության տակ գտնվող զորքի կամ հայկական բանակի ուրիշ զորամասերի թշնամական գործողությունների դեպքում միայն,– շեշտված էր վերջնագրում,– ՌՍՖԽՀ Կարմիր բանակը վճռական գործողությունների կդիմի և ամեն մի հարվածին կպատասխանի տասնապատիկ ուժգին հարվածով»[1]:

Այնուհետև խորհրդային հրամանատարությունը Դրոյին առաջարկում էր անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և 48 ժամվա ընթացքում զորամասերը ետ քաշել իրենց նախկին տեղերը, վերադարձնել Թուրքիայում խորհրդային առաքելությանը պատկանող ամբողջ գույքն ու արժեքները: «Սույն վերջնագիրը չկատարելու դեպքում,– շեշտված էր այնտեղ,– Կարմիր բանակը կանցնի վճռական հարձակման: Վերջնագրի պատասխանին սպասում եմ 24 ժամվա ընթացքում: Այդ ժամկետը լրացնելուց հետո, պատասխան չստանալու կամ ստանալու, բայց ներկայացված պահանջները չբավարարելու դեպքում, Կարմիր բանակի՝ ինձ վստահված զորամասերը կանցնեն վճռական գործողությունների»[2]:

Դրոն անմիջապես պատասխան չտվեց վերջնագրին և Բազարչայում սպասում էր Երևանից եկող հրահանգի: Բայց իրադարձության արագ փոփոխությունը նրան ստիպեց չսպասել և դիմել վճռական գործողությունների: Շինուհայր գյուղի քահանայի որդի Գարեգին Բալյանը մի քանի հոգով Սիսիանի վրայով շտապում էր Դարալագյազ՝ լուր տանելու Դրոյին՝ բոլշևիկների կողմից Հայաստանի խորհրդարանի անդամներ Արշակ Շիրինյանին և Վահան Խորենուն Շինուհայրում մատնությամբ ձերբակալելու և Գորիսում բանտարկելու մասին: Տեսնելով, որ Դրոն իր զորքով արդեն Բազարչայում է, Բալյանն անմիջապես ներկայացավ նրան և պատմեց եղելությունը.

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 106, թ. 3:

[2] Նույն տեղում:

«Երկու ակտիվ բոլշևիկներ՝ Արամ Մուսայելյանը և գորիսեցի Մկրտիչ Մաշուրյանը 10 հայ զինվորներով գնացել են Շինուհայր, որտեղ թաքնված էին Շիրինն ու Խորենին, նրանց ձերբակալել ու տարել են Գորիսի քաղաքային բանտ»[1]: Դրոյի համար պարզ էր, որ նշանավոր գործիչներին սպասվում էր հաշվեհարդար, ուստի անմիջապես զորքը շարժեց Գորիս քաղաքի ուղղությամբ: Օգոստոսի 1-ին նրա ուժերը մտան Սիսիանի կենտրոն Ղարաքիլիսա գյուղը, օգոստոսի 2-ի գիշերը վերագրավեցին Սիսիանի շրջանը և զարգացնելով հարձակումը՝ առանց կանգ առնելու նույն գիշերը մոտեցան Գորիսի մատույցներին: Ճանապարհին Դրոյին միացան նաև գորիսցիների ջոկատները՝ Արտեմ Խանզադյանի և ուրիշ խմբապետերի գլխավորությամբ:

Երբ Դրոյի զորքերի հարվածների տակ կարմիրբանակայինները Սիսիանից նահանջում էին Գորիս, այստեղ օգոստոսի 2-ի գիշերը քաղաքային բանտում տեղի ունեցավ սոսկալի ողբերգություններից մեկը. բանտում անմարդկային տանջանքների ենթարկելուց հետո սպանվեցին Հայաստանի խորհրդարանի անդամներ Արշակ Շիրինյանը և Վահան Խորենին: Նրանց սպանությունը կատարվեց շատ արագ, քանի որ բոլշևիկները վախ ունեին, որ Դրոն ուր որ է կմտնի Գորիս և բանտից կազատի իրենց ձեռքն ընկած դաշնակցական խոշոր գործիչներին[2]: Նույն ժամերին հրացանազարկ եղան նաև Սիսիանի կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանը և բռնակոթցի Միքայելը: Հետևյալ օրը սրախողխող արվեցին, գնդակահարվեցին նաև Զանգեզուրի ինքնապաշտպանության ուրիշ կազմակերպիչներ ու մտավորականներ, որոնք չէին հասցրել փախչել բուն Զանգեզուրը և Սիսիանը խորհրդայնացնելու ժամանակ և ձերբակալվելով գտնվում էին Գորիսի բանտում: Նրանցից էին, օրինակ, Զաքար Տեր-Ղազարյանի տեղակալ Միքայել Աղամյանը, պարենավորման կոմիսար Գեղամյանը, հասարակական գործիչներ Պողոս Փարսյանը, Դավիթ և Գասպար Տեր-Մկրտչյան եղբայրները, Ազատ Մալինցյանը և ուրիշներ[3]: 81 հոգի՝ ռանչպար ու մտավորական, գնդացրային կրակով կոտորվեցին Զաբուղի ձորում, Գորիս–Շուշի ճանապարհի վրա ընկած Ղարաղշլաղ (Կալադարասի) գյուղի մոտ գտնվող «Ծակեր» կոչվող վայրում[4]:

Արյունալի հանցագործությունն արդարացնելու և կատարվածի մեղքը Հայաստանի կառավարության վրա գցելու համար օգոստոսի 2-ի առավոտյան շտապ տպագրվեց և տարածվեց հետևյալ ազդը.

---

[1] **Ե. Իշխանյան**, Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, էջ 642:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 256:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 275, 276, 281:

[4] Տես «Յառաջ», 1920, 10, 21, 22 օգոստոսի, ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 57:

«Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր.

Դաշնակցության կառավարության կողմից խորհրդային Զանգեզուրի վրա նենգ հարձակման հետևանքով օգոստոսի լույս 2-ի գիշերը գնդակահարված են դաշնակներ Արշակ Շիրինյանը, Վահան Խորենին, Զախար Տեր-Ղազարովը և Միքայել Աղամյանը:

Արտակարգ հանձնաժողով
02.08.20 թ.»[1]:

Նույն ժամերին 28-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարը վերջնագիր հղեց Դրոյին՝ Կարմիր բանակի զորամասերի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու և Թուրքիայում խորհրդային առաքելության բռնագրված գույքը վերադարձնելու պահանջով[2]:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 3-ին, Դրոյի զորքը գրավեց Գորիս քաղաքը:

Արագ երթերում հոգնած Կարմիր բանակի զորամասերը նահանջեցին Տեղ գյուղի տարածքները, ապա նույն օրը, Հայաստանի սահմանից անցնելով Ադրբեջան, կենտրոնացան Զաբուղում[3]: Նրանց հետ Զաբուղ անցան Արմենակ Ղարագյոզյանը, Հակոբ Բեջանյանը (Կամարի), զանգեզուրցի և ղարաբաղցի ավելի քան 150 կոմունիստներ[4], որոնց թվում էին ղարաբաղցիներ Արամ Մուսայելյանը, Մանսումյանը, Չալինան, բժիշկ Հայկ Մելիք-Շահնազարյանը, օրիորդ Թամարան, օրիորդ Արմենուհին, գորիսցիներ Մկրտիչ (Մակիչ) Մաշուրյանը, Երեմիա Բակունցը, Մուշեղ Մկրտչյանը, Մկրտիչ Տոռոզյանը, Տեղ գյուղից Լևոն Ափունցը, Սահակ Տեր-Հայրապետյանը, խնձորեսկցիներ Բագրատ Ղարագյոզյանը, Հովհաննես Հայրապետյանը, բռնակոթցի Նիկոլայ Բաբաջանյանը, մազրեցի Աղալո Իսագուլյանը, քարահունջցի Լևոն Առուստամյանը և ուրիշներ: Նրանցից ոմանք մասնակցել էին Սիսիանի և Գորիսի շրջաններում սանձազերծված տեռորին:

Գորիս քաղաքի գրավմանը ժամերի ընթացքում կտրուկ հայտարարություններով արձագանքեցին խորհրդային զինվորական և քաղաքացիական իշխանությունները: Օգոստոսի 3-ի երեկոյան ՀՀ արտգործնախարար Հ. Օհանջանյանը Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին գրեց, որ 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոն վերջնագրով դիմել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրամանատարին՝ պահանջելով խորհրդային զորքերին թույլ տալ անարգել մտնելու Զանգեզուրի՝ դեռևս չխորհրդայնացված շրջանները և Նախիջևան՝ ազգամիջյան ընդհարումների վտանգը կանխելու

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 160, թ. 1:

[2] Տե՛ս Փաստաթղթեր, հոդվածներ, հաղորդումներ, նամակներ, լուսանկարներ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1980, թիվ 2, էջ 26:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 60:

[4] Տե՛ս «Կոմունիստ», 1920, թիվ 90:

պատճառաբանությամբ: Նաև տեղյակ պահեց, որ բանակի հրամանատարը վերջնագրի կատարման առավելագույն ժամկետ է նշանակել օգոստոսի 5-ը, և որ հետևելու են մի շարք ջախջախիչ հարվածներ Հայաստանի զինված ուժերին[1]:

Դրոն օգոստոսի 3-ի երեկոյան Գորիս քաղաքից գրություն հղեց Զաբուղ նահանջած 28-րդ և 32-րդ դիվիզիաների հրամանատարներին ու զինկոմիսարներին, որը, ըստ էության, պատասխան էր օգոստոսի 1-ին նրանցից ստացած վերջնագրերին: Գրության մեջ ասված էր. «Ստանալով բոլշևիկյան բռնադատիչներից Զանգեզուրը մաքրելու մասին իմ կառավարության հրամանը՝ Ձեզ առաջարկում եմ Ձեր զորքերը ետ քաշել Ղարաբաղյան լեռնաշղթայով անցնող՝ Զանգեզուրի նախկին վարչական սահմանից այն կողմ:

Իմ կողմից իմ զորքերին հրամայված է գրավել Հաքյարի գետի գիծը, որը պետք է Ձեր կողմից մաքրվի 24 ժամվա ընթացքում:

Ձեր կողմից ակտիվություն հանդես բերելու դեպքում ամբողջ ճակատով կանցնեմ հարձակման՝ թափվելիք արյան և հետագա հետևանքների ողջ պատասխանատվությունը դնելով Ձեզ վրա:

Այսուհետև, մինչև իմ կառավարության հատուկ հանձնարարականը, Հաքյարիի և Ղարաբաղյան լեռնաշղթայի միջև անցնող գիծը համարել դեմարկացիոն գիծ»[2]:

Դրոն Գորիսից հեռագրեց նաև 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը: Հեռագրի պատճենը բանակի հրամանատարն ուղարկեց Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանն ի գիտություն, իսկ վերջինս, իր հերթին, առաքեց Թիֆլիս, Ս. Մ. Կիրովին՝ ծանոթանալու համար: Դրոյի հեռագրում ասված էր. «28-րդ և 32-րդ կարմիր դիվիզիաների, դրանց հրամանատարների և զինկոմների մեղքով հայ աշխատավոր գյուղացիության և ռուսական դեմոկրատիայի միջև տեղի է ունեցել այն, որից մենք միշտ խուսափել ենք»: Ապա նշվում էր, որ Զանգեզուրում զինկոմների և հեղկոմների չորսշաբաթյա գործունեությունը խաղաղ բնակչության թալանի և ուրիշ ստոր արարքների մի երկար շղթա էր, որի առավել ամոթալի օղակը Հայաստանի խորհրդարանի անդամներ Վ. Խորենու և Ա. Շիրինյանի գազանային սպանությունն էր: Դրոն բանակի հրամանատարությանը տեղյակ էր պահում, որ զոհերի այլանդակված և անարգված դիակների ֆոտոնկարները հայ գյուղացիության բողոքի հետ ուղարկվելու էին բոլոր երկրների սոցիալիստական կուսակցությունների մարմիններին: Այդ գազանային ակտը և Մոսկվայի դաշինքը հայ ժողովրդի արյունալի ու մոլի դահիճ Խալիլ փաշայի հետ լիովին մատնում էին Կարմիր բանակի զավթողական նպատակները, որոնք քողարկված էին կոմունիզմի թիկնոցով: Այնուհետև հեռագրով տեղյակ էր

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 219, թ. 67:

[2] Նույն տեղում, թ. 86:

պահվում, որ հայ գյուղացիությունը մեծագույն ոգևորությամբ և զայրույթով ցանկություն է հայտնել պայքարելու զավթիչների դեմ, պաշտպանելու իր ազատությունն ու անկախությունը, որը ձեռք է բերվել 30-ամյա հերոսական ազատագրական պայքարում ընկած լավագույն հեղափոխական մարտիկների արյան գնով: Հեռագիրն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Հայտարարում եմ Ձեզ՝ արյունոտ ձեռքերդ՝ հեռու՛, թողե՛ք ու հեռացե՛ք Հայաստանի գրաված տերիտորիայից: Մի՛ ստեղծեք արյունահեղություն: Հեռացե՛ք Ղարաբաղից, վերադարձրե՛ք գյուղացիներից կողոպտած գույքը»[1]:

Գորիսը սուգով ու ծանր մտորումներով հողին հանձնեց Արշակ Շիրինյանին և Վահան Խորենուն: Ժողովրդի ընտրյալների սպանությունը առաջ բերեց զայրույթի ալիք ամբողջ Հայաստանում: Հանրապետության կառավարության, խորհրդարանի և «Յառաջ» պաշտոնաթերթի հասցեներով հասարակական, քաղաքական, արհմիութենական կազմակերպություններից, քաղաքային ինքնավարաթյուններից, անհատ անձանցից ամեն օր ստացվում էին տասնյակ ցավակցական հեռագրեր: Բողոքի բազմամարդ միտինգներ տեղի ունեցան Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում և այլուր: Խորհրդարանի դահլիճում տեղի ունեցած սգո երեկոյին հանդես եկան վարչապետ Համո Օհանջանյանը, խորհրդարանի նախագահ Ավետիք Սահակյանը, Նիկոլ Աղբալյանը, ՀՅ դաշնակցության ուրիշ նշանավոր գործիչներ, հանրապետության բոլոր կուսակցությունների, քաղաքական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանք բոլորը զայրույթով դատապարտում էին Հայաստանի խորհրդարանի անդամների նկատմամբ կատարված արյունալի հաշվեհարդարը՝ այն որակելով որպես հայ ժողովրդի պետականության դեմ ցինիկ ոտնձգություն և միջազգային օրենքների կոպիտ խախտում:

«Յառաջ» պաշտոնաթերթը «Զանգեզուրի սարսափները» ընդհանուր խորագրի տակ օրեր շարունակ հաղորդումներ էր տալիս կատարված ոճրագործության առթիվ հանրապետությունում ծայր առած վրդովմունքի ալիքի մասին: Թերթը «Զվզելի ոճիր» խմբագրականում նշում էր, որ իրենց կոմունիստ համարող և աշխատավորության շահերի պաշտպանությամբ հանդես եկող մարդասպանները, «ոտքի տակ տալով ամեն սրբություն, միջազգային օրենք և սովորություն, գազանացած և միացած նույնքան և ավելի դաժան թաթար ավազակների հետ, շարունակում են առաջ տանել այն քաղաքականությունը, որ 1915 թ. սկսել էին շնական Էնվերը ու մարդակեր Թալեաթը»: Թերթը գրում էր, որ հայ ժողովրդի զավակների դեմ կատարվող հաշվեհարդարները զանգվածային բնույթ էին կրում: Ձերբակալվել էին բազմաթիվ դաշնակցականներ Ղազախի շրջանում, Բաքվում բանտարկվել էին 2000-ից ավելի հասարակական դեմքեր, Ղարաբաղում գնդակահարվել

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 171, թ. 7:

էին ազատագրական շարժման տասնյակ անձինք: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանի բանտերում գտնվող մայիսյան բոլշևիկյան ապստամբության մասնակիցներից, կազմակերպիչներից և ղեկավարներից ոչ մեկը մահապատժի կամ կտտանքների չէր ենթարկվել: «Գորիսում պառլամենտի անդամներին և դաշնակցական ընկերներին մորթելուց հետո,– գրում էր «Յառաջը»,– մենք միայն մի եզրակացության կարող ենք գալ, որ նոր, մեծ ու սև դավ է պատրաստվում հայ ժողովրդի գլխին»: Թերթը հարց էր տալիս. «Եվ պե՞տք էր այդ բոլորը կատարեին այն ժամանակ, երբ մեր պատվիրակությունը բանակցություններ էր վարում Մոսկվայում բոլշևիկների հետ, երբ Չիչերինը հավաստիացումներ է տալիս, թե ինքն ու իր կառավարությունը բարյացակամ վերաբերմունք ունեն դեպի հայ ժողովուրդը, երբ նրանց խաղաղության պատվերով Լեգրանը գալիս է մեզ հետ համաձայնության եզր գտնելու»[1]:

Խորհրդարանի անդամների տմարդի սպանության փաստը առավելագույնս օգտագործեց Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ժողովրդին Հայաստանի ազգային պետության, ՀՅ դաշնակցության շուրջը համախմբելու, հանրապետությունը կործանել պատրաստվող ուժերին հակահարված տալու համար:

Կատարվածը համարելով անլուր ոճրագործություն և հայ ժողովրդի դեմ ուղղված մեծ դավ՝ «Յառաջը» այնուհետև գրում էր. «Մեր պառլամենտի անդամներին մորթել՝ նշանակում է մեր ժողովրդին, նրա կամքը, ընտրական իրավունքը, ազատությունը սպանել, և դրա համար հայ աշխատավորությունը ոչ թե միայն պիտի բողոքի, **այլև վրեժ պիտի լուծե...** ամրացնելով իր շարքերը, կազմակերպվելով բանակի մեջ, համախմբվելով իր կառավարության շուրջ՝ վերջին հարվածը հասցնելու մեր բոլոր անարգ և տմարդի թշնամիներին:

Նա պետք է միանա և դուրս գա հրապարակ հին, սրբագործված և դեռ մինչև այսօր էլ կիրառվող սկզբունքը իրականացնելու՝ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման»[2]:

Օգոստոսի 8-ին Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանն իր խնդրանքով տեսակցություն ունեցավ Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի հետ: Այդ մասին նա հաջորդ օրը Հայաստանի արտգործնախարարին զեկուցագիր գրեց՝ նշելով.

«Այդ տեսակցությունը հարկադրական էր, քանի որ Հասանովը Մոսկվայից դեռ չի վերադարձել. նա սպասվում է այսօր, և նրան փոխարինում է Նարիմանովը: Առհասարակ ես խուսափում եմ Նարիմանովի հետ տեսնվել, քանի որ նա չունի նույնիսկ թուրք ցեղին հատուկ վարվեցողության եղանակը, այսինքն՝ արտաքին սիրալիրությունը, և շատ ակնհայտ երևան է բերում

[1] «Յառաջ», 1920, 10 օգոստոսի:

[2] Նույն տեղում:

յուր հակահայկական տրամադրությունը և չի աշխատում գոնե այդ թաքցնել քաղաքավարության քողի տակ. նա շատ հաճախ մոռանում է, որ կոմունիստ է և յուր ազգային թրքական պատկերը ցայտուն կերպով հրապարակ է հանում: Անշուշտ, մյուսները դրանից ավելի կոմունիստ և ինտերնացիոնալիստ չեն, բայց իրենց մերժումները և հակակրանքը այդքան ցինիկ կերպով չեն արտահայտում»[1]:

Հարությունյանը տեսակցություն էր խնդրել՝ պարզաբանելու հայ-ադրբեջանական հարաբերությունների հետ կապված մի շարք խնդիրներ, սակայն ոչ մի հարցում բացատրություն չստացավ: Նրա առաջին խնդրանքն էր՝ թույլ տալ տեսակցել գերված գեներալ Բաղդասարովի և առհասարակ Ադրբեջանի բանտերը լցված հայերի հետ, բայց Նարիմանովը մերժեց: Հարությունյանի այն հարցին, թե ինչու իրեն՝ որպես դիվանագիտական ներկայացուցչի, թույլ չի տրվում կատարել իր պաշտոնական պարտականությունները և զբաղվել հայկական բանակի մի գերված զորավարի և հայ բանտարկյալների ճակատագրով, Նարիմանովը պատասխանեց. «Տովարի՛շչ, մի՞թե կարիք կա այդ բանը Ձեզ բացատրելու, մի՞թե Դուք ինքներդ չգիտեք»: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի զարմանքի արտահայտությանն ի պատասխան՝ Նարիմանովն ասաց, թե մերժման պատճառն այն է, որ «մենք պատերազմում ենք իրար դեմ, որ ամբողջ ճակատի վրա, սկսած Ղազախից մինչև Նախիջևան, հայերը կռվում են կարմիր զորքերի դեմ»: Այնուհետև Նարիմանովը դիվանագիտական ներկայացուցչին լկտիաբար ասաց. «Դուք միայն զարմացեք այն բանի վրա, որ այսօր նստած եք իմ աշխատասենյակում»[2]:

Հանդիպման ժամանակ Հարությունյանը Նարիմանովին ներկայացրեց նոտա, որով դժգոհություն էր հայտնվում, որ Հայաստանի բժիշկներին և սպաներին Զանգեզուրում և Ղարաբաղում ծառայության էին կոչում Կարմիր բանակի զորքերի մեջ, իսկ Ղազախից բերված հայ գերիներին ստիպողաբար մտցնում էին կարմիր զորքերի շարքը:

«Ինձ թվում է,– հետագայում նշում է Հարությունյանը,– թե Նարիմանովը շատ էլ ուրախ չէ այդ երևույթի վրա և կցանկանար հայերի թիվը կարմիր զորքի մեջ իջեցնել նվազագույնի: Սակայն, նրանից ոչինչ կախված չէր, քանզի զորահավաքի գործը իր վրա էր վերցրել 11-րդ բանակի շտաբը»[3]:

Զանգեզուրում ծայր առած արյունալի ոճրագործությունների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը մի շարք բողոքներով դիմեց Մոսկվա՝ ՌՍՖԽՀ կառավարությանը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 4, թ. 17-18:

[2] Նույն տեղում, թ. 18:

[3] Նույն տեղում:

Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը Կովկասի բոլշևիկյան ղեկավարությունից ուղիղ հեռագրակապով պահանջում էր պատասխանել մի շարք հարցերի, այդ թվում՝ բացատրություն տալ Զանգեզուրում տեղի ունեցող արյունահեղությունների մասին: Նա գրում էր. «Օհանջանյանը (Համո Օհանջանյանը: – *Ա. Ս.*) ուղարկել է սարսափելի ռադիոգիր, որում, բացի Խորենու և Շիրինյանի սպանությունից, թվարկում է Զանգեզուրում և Ղարաբաղում մեր զորքերի կողմից գնդակահարված բազմաթիվ հայկական կոմիսարների և այլ պաշտոնատար անձանց գնդացիրներով մասսայաբար գնդակահարելու մասին: Մեր զորքերի կողմից ջախջախված են մեծաթիվ հայկական գյուղեր Զանգեզուրում, իսկ փրկված գյուղացիության մնացորդները գտնվում են բաց երկնքի տակ: Մեր զորամասերը գնդացիրներով խմբերով գնդակահարել են նույնիսկ 12-13 տարեկան տղաների և աղջիկների: Բնակչությունը հասցված է հուսահատության: Մեր զորքերի կողմից ուրիշ անձինք տարվել են Ադրբեջան, որտեղ շատերին արդեն գնդակահարել են: Հենց Բաքվում հայերի մասսայական գնդակահարություններ են եղել: Երևանյան կառավարության տրամադրության տակ են գնդակահարությունների վերաբերյալ ռուսական հրամաններ: Սպասում ենք Ձեզանից բացատրություններ, քանզի նման էքսցեսները հայկական մասսաներին ստիպում են ատելությամբ լցվել մեր նկատմամբ»: Այդ ամենը, վերջում նշում էր Չիչերինը, կարող է խիստ բացասական ազդեցություն ունենալ Հայաստանում խորհրդային կարգեր մտցնելու առումով[1]:

Պատասխանելով ՌՍՖԽՀ կառավարության հարցումներին՝ Կովկասում գործող քաղաքացիական և ռազմական բոլշևիկ գործիչները ամենազանազան պատճառաբանություններով արդարացնում էին կատարած մարդասպանությունները: Եվ պատահական չէ, որ ամեն անգամ, Հայաստանի Հանրապետության կառավարության բողոքներից հետո, Մոսկվայից գալիս էին արդարացուցիչ հանգամանքներով պատճառաբանված պատասխաններ*:

Դրոյի զորամասերի կողմից Գորիսի վերագրավումը վտանգավոր վիճակ ստեղծեց Կապանի տարածքում գտնվող խորհրդային զորամասերի համար, որոնք ստիպված էին դադարեցնել հետագա առաջխաղացումը և ետ քաշվել Շուռնուխ գյուղի անտառապատ բարձունքները: Բնական ամրություններ լինելուց զատ՝ այս տարածքը նաև սահմանամերձ էր Ադրբեջանին, և հայկական ուժերի ճնշման դեպքում կարմիրբանակայինները կարող էին նահանջել այդտեղ:

Սիսիանից և Գորիսից 11-րդ բանակի զորամասերի նահանջը Զաբուղ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 117, թ. 1-2:

* Ա. Շիրինյանի և Վ. Խորենու սպանության շուրջ Հայաստանի և ՌՍՖԽՀ կառավարությունների միջև ուրիշ պաշտոնական գրություններ տե՛ս ՀԱԱ, ֆ. 276. ց.1. գ. 219, թ 87, 88, 89, 89-ի շրջերես, թ. 90, 165-169, 189:

կարևոր նշանակություն ունեցավ Կապարգողթը պաշտպանող ուժերի համար այն իմաստով, որ նրանց վրա թուլացավ այնտեղ գտնվող բոլշևիկյան զորամասերի ճնշումը: Ժամանակ շահելով՝ հայկական վաշտերը վերախմբավորեցին իրենց ուժերը և վերագրավեցին մի շարք բնակավայրեր:

Դրոյի զորամասի հաջողությունը ոգեշնչեց Զանգեզուրի ազգաբնակչությանը, որի բացարձակ մեծամասնությունն անվերապահ աջակցում էր գավառում օրինական իշխանության վերահաստատմանը: Դրոյի ջոկատի կողմից Սիսիանի և Գորիս քաղաքի գրավումը լայն արձագանք գտավ Ղարաբաղում: Արցախի նվիրյալ զավակները չէին հաշտվել իրենց հայրենի երկրի բռնազավթման և հայ բնակչության նկատմամբ սանձազերծած լայնածավալ բռնությունների ու դաժանությունների հետ: Սկիզբ առավ ապստամբական շարժում, որի գլուխը կանգնեց ծննդով Դիզակի Տումի գյուղից, ըմբոստ ու քաջարի Թևան Ստեփանյանը:

Թևանը եղել էր ցարական բանակի սպա, հեծյալ ստորաբաժանման ավագ, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կռվել էր Արևմտյան և Կովկասյան ռազմաճակատներում, 1918 թ. վերադարձել էր հայրենի եզերք և շուտով դարձել արցախցիների 1920-1921 թթ. ապստամբական շարժման առաջնորդ:

Շարժումը սկիզբ առավ Դիզակում, ապա տարածվեց դեպի Վարանդ և Խաչեն: Բոլշևիկներին հաջողվեց ձերբակալել Թևանին, բայց նա կարողացավ փախչել և նոր եռանդով նետվել պայքարի մեջ:

Սակայն Սիսիանում և Գորիսում Դրոյի հաղթանակը կարճատև եղավ: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը, մերժելով Դրոյի վերջնագիրը, սկսեց արագորեն վերախմբավորել ուժերը: Բանակի 28-րդ, 32-րդ հրաձգային և 18-րդ հեծյալ դիվիզիաների զորամասերից կազմվեց զորքերի հատուկ հարվածող խմբավորում՝ 28-րդ դիվիզիայի 84-րդ բրիգադի հրամանատար Գ. Սեմյոնովի գլխավորությամբ: Հարձակվող խմբին միացան Ադրբեջանից եկած նոր համալրումներ, ինչպես նաև Ադրբեջան անցած Զանգեզուրի կոմունիստական ջոկատները:

1920 թ. օգոստոսի 7-ի լուսաբացին կարմիրբանակայինները Գորիսի շրջանի Տեղ գյուղի շրջակայքում կռվի բռնվեցին հայկական զորամասերի հետ: Չդիմանալով այս նոր հարձակմանը՝ հայկական ուժերը նահանջեցին Գորիս քաղաք, ապա կարճատև դադար առնելուց հետո սկսեցին նահանջել դեպի Սիսիան[1]:

Կառավարական ուժերի նահանջի ապահովումն իր վրա էր վերցրել Կապանից օգնության եկած զորամասերից մեկը՝ Նժդեհի գլխավորությամբ: Դեպի Սիսիան քաշվող ուժերի անկարգ նահանջի հետևանքով այդ զորամասից մի տասնյակ չհասցրեց ժամանակին դուրս գալ Գորիսի ձորից և ընկավ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 156, գ. 427, մաս I, թ. 185-186:

կարմիրբանակայինների կրակի տակ: Իր զինվորներին փրկելու փորձի ժամանակ Նժդեհը վիրավորվեց: Նա շարժվեց դեպի Եռաբլուրի սարահարթը, որտեղ Դրոն նրան առաջարկեց անցնել Երևան՝ բուժվելու:

Նժդեհը մերժեց Դրոյի առաջարկը և բաժանվելով նրանից՝ անցավ Կապան[1]:

Գորիսից Դրոյի երևանյան զորամասի հապճեպ ու անկարգ նահանջից հետո Կապանի գյուղացիական ներկայացուցիչների խորհրդի նախագահությունը Հանքերից բողոքի նամակ հղեց ՀՀ զինվորական նախարարին: Լեռներով երթևեկող սուրհանդակները թեև Երևանից չբերեցին պատասխանը, սակայն, անկասկած, նամակը անհետևանք չանցավ այն իմաստով, որ Երևանում ավելի պարզ պատկերացրին Դրոյի նահանջի նկատմամբ զանգեզուրցիների տրամադրությունը:

Նամակում ասված էր, որ Զանգեզուրը վերագրավելու նպատակով երևանյան զորամասի հարձակումը, ապա արդեն գրված Գորիսից երրորդ օրը շտապ նահանջն «անմիտ» և «վտանգավոր» խաղ էր, որին մասնակցելու էր կանչվել նաև Կապանի ուժերի մի մասը: Կապանցիները «վերադարձել են գազազած», քանի որ նրանք սկզբում հույս են ունեցել, թե երևանյան զորքը չի կրկնի իր հին սխալը և այս անգամ կանցնի Կապան–Գողթան՝ ուժեղացնելու այդ շրջանների պաշտպանությունը: Ոչ միայն դա տեղի չի ունեցել, այլև զորամասը իր թնդանոթները Կապանին տալու փոխարեն դրանք իր հետ տարել է Վայոց ձոր: Ավելին, Դրոն տարել է նաև Կապանին պատկանող երկու թնդանոթները՝ պատճառաբանելով, որ ոչ մի թնդանոթաձիգ սպա չի համաձայնվում վերադառնալ Կապան:

«Ի՞նչ,– այնուհետև ասված էր նամակում,– Դրոն եկել էր զինաթա՞փ անելու մեզ, թուլացնելո՞ւ: Ի՞նչ է նշանակում սա: Մենակ մնացած ժողովուրդը հազար ենթադրություններ է անում»: Նամակի վերջում Կապանի գյուղացիական ներկայացուցչական խորհրդի նախագահությունը նշում էր. «Վերջին անգամ դիմում ենք ձեզ և խնդրում արագացնել զորքերի առաքումը Սիսիան: Մեր հրամանատարը (Նժդեհը: – *Ա. Ս.*) գտնում է, որ կարիք չկա կռվով վերագրավելու Գորիսը և պահելու Զաբուղի ճակատը: Գրավելով Սիսիանը մինչև Տաթև՝ մենք փաստորեն տեր ենք դառնալու ամբողջ Զանգեզուրին: Ուչթափալար–Տաթև–Ինջաբել գիծը բռնելով՝ մենք կստիպենք բոլշևիկներին թողնելու Գորիսը»[2]:

Օգոստոսի 8-ին Գորիս քաղաքը նորից խորհրդային զորամասերի ձեռքում էր: Նույն օրը նրանք մտան Սիսիանի շրջանի տարածք և Եռաբլրի հանդամասերում կարճատև ու ցաքուցրիվ ընդհարումներից հետո՝ օգոստոսի 9-ին, գրավեցին Սիսիան (Ղարաքիլիսա) գյուղը: Դրոն թողեց Սիսիանի շրջա-

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 97:

[2] Նույն տեղում:

նը և նորից իր զորքով նահանջեց Ղուշչիբիլակ՝ Դարալագյազ[1]:

Այսպիսով՝ ընդամենը 3-4 օրում Գորիսի և Սիսիանի շրջաններում վերահաստատվեցին խորհրդային կարգերը: Գորիսի և Սիսիանի ճակատներում ունեցած այս երկրորդ հաջողությունը կարմիրբանակայիններին հնարավորություն տվեց իրենց գործերը շտկելու նաև Կապանի հատվածում: «Վիճելի» Զանգեզուրի մեծ մասը գրավելուց հետո կարմիր զորամասերը հրաման ստացան ամրապնդվելու այնտեղ:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 61, ֆ. 200, ց. 1, գ. 58, թ. 325:

1920 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՄԱՐ

Լևոն Շանթի գլխավորած պատվիրակության առաքելությունը խափանվելուց հետո խորհրդային կառավարությունը որոշեց Հայաստանում ունենալ ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչություն, որը պետք է գլխավորեր խորհրդային փորձված դիվանագետներից մեկը՝ Բորիս Լեգրանը*:

1920 թ. հուլիսին Լեգրանը գործուղվեց Այսրկովկաս: Նրա հետ էր 14 հոգուց բաղկացած մի պատվիրակություն: Առաջին խնդիրը, որ դրված էր նրա առաքելության առջև, Հայաստանի Հանրապետության կառավարության հետ հաշտության դաշնագրի կնքումն էր, որին մինչ այդ պետք է նախորդեին Զանգեզուրում Կարմիր բանակի և հայկական զորամասերի միջև զինված ընդհարման դադարեցումը և զինադադարի ստորագրումը[1]:

Գալով Աղստաֆա՝ Բ. Լեգրանն այնտեղից դիմեց Հայաստանի կառավարությանը՝ Երևան գալու համաձայնություն ստանալու համար: Սակայն այդ համաձայնությունը Հայաստանի կառավարությունը չտվեց՝ ունենալով իր պատճառաբանությունները:

«Յառաջ» թերթը գրում էր, որ Խորհրդային Ռուսաստանը չի կարող Հայաստանում առաքելություն ունենալ, քանի դեռ այդ երկու երկրների միջև կնքված չէ բարեկամության և խաղաղության դաշինք: Թերթը գրում էր, որ Լեգրանի խումբը չի կարող Երևան գալ նաև իբրև սոսկ բանակցություններ վարող մի պատվիրակություն, քանի որ մոտ երեք ամիս առաջ Հայաստանի կառավարությունը Ռուսաստանի խորհրդային կառավարության հետ բանակցություններ վարելու համար Մոսկվա է ուղարկել Շանթի գլխավորած պատվիրակությունը, որի նկատմամբ Երևանը կատարյալ վստահություն է տածում, և որը Ռուսաստանի հետ բարեկամական դաշինք կնքելու համար օժտված է ամենալայն լիազորություններով: «Անմտություն կլիներ,– գրում է թերթը,– միաժամանակ երկու տարբեր կենտրոններում՝ Մոսկվայում և Երևանում, որոնք, ի դեպ, բաժանված են իրարից հազարավոր վերստերով, միևնույն խնդրի շուրջը տարբեր մարդկանց միջոցով անջատ բանակցու-

---

* Լևոն Շանթի պատվիրակության գործունեությանն այս աշխատության մեջ անդրադարձել ենք հարևանցիորեն՝ նկատի ունենալով, որ այդ հարցը հանգամանորեն լուսաբանված է պատմական գրականության մեջ:

[1] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 453-454, Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, թիվ 3, էջ 32:

թյուններ վարել: ...Մոտ երեք ամիս է, ինչ մենք բանակցությունների մեջ ենք. բանակցությունները շարունակում ենք վարել նաև այսօր: Բայց նախ հասկանանք, թե ինչ է կատարվում Մոսկվայում, ինչ եղավ դաշինքը, ինչ են անում մեր պատվիրակները, հստակորեն ճշտենք ու պարզենք մեր դիրքերը ու նոր միայն նոր գործերի ձեռնարկենք»[1]:

Աղստաֆայից Լեգրանն իր առաքելության հետ ստիպված մեկնեց Թիֆլիս: Այստեղ էլ նա ձեռնամուխ եղավ իր՝ որպես Հայաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչության ղեկավարի, պարտականությունների կատարմանը:

Թիֆլիսից Լեգրանը նոր հեռագիր հղեց Հայաստանի արտգործնախարար Հ. Օհանջանյանին՝ կրկին պահանջելով թույլատրել իր առաքելությունով ժամանել Երևան: «Հայաստանի սահմաններում ստեղծված իրադրության պայմաններում Խորհրդային Ռուսաստանի հետ հաշտության բանակցությունների ամեն մի ընդհատում,– ասված էր հեռագրում,– կարող է առաջ բերել միանգամայն անցանկալի բարդություններ երկու հանրապետությունների ժողովուրդների միջև, իսկ այդ դեպքում հետևանքների ամբողջ պատասխանատվությունը կընկնի Հայաստանի կառավարության վրա»[2]:

Բանակցելու համար Հայաստանի կառավարությունը տվեց իր համաձայնությունը՝ այն վերապահումով, որ բանակցությունները պետք է վարվեն ոչ թե Երևանում, այլ Թիֆլիսում:

Թիֆլիսում սկսված բանակցությունները ընթանում էին լարված մթնոլորտում: Ռուսական կողմը մշտապես ընդգծում էր «տվյալ պահի հրամայականով» Կարմիր բանակի կողմից «վիճելի» տարածքների անվերապահ ռազմակալման անհրաժեշտությունը: Հայկական պատվիրակության անդամները մտահոգություն ունեին, որ ռուս բոլշևիկյան զորքերը չեն բավարարվի «վիճելի» տարածքները ռազմակալելու գործողություններով և առիթներ կփնտրեն Հայաստանից նոր գրավումներ կատարելու համար: Նրանք վկայակոչում էին խորհրդային կողմին պատկանող փաստաթղթեր, որոնք հայթայթվել էին հայկական հետախուզության կողմից: Նրանց հայտնի էր դարձել, օրինակ, որ Ս. Կիրովն օգոստոսի 2-ին 11-րդ բանակի հրամանատարությանը հարցում է արել Զանգեզուր–Նախիջևանի շրջանում Կարմիր բանակի զորամասերի գործողությունների մասին և հաջորդ օրը ստացել է բանակի ժամանակավոր հրամանատար Վասիլենկոյի՝ Բաքվից հեռագրով տված պատասխանը:

Հեռագրում նշված էր, որ, Կովկասյան ճակատի հրամանատարության

---

[1] «Յառաջ», 1920, 27 հուլիսի:

[2] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 453-455, Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, թիվ 3, էջ 44-45:

կողմից տրված հրահանգի համաձայն, 11-րդ բանակի զորամասերը զբաղեցրել են «Հայաստանի կողմից գրավված» Զանգեզուրի և Նախիջևանի վիճելի շրջանները և այնտեղ կանխել հայերի և թուրքերի կոտորածը: «Հայաստանի դեմ պատերազմելու խնդիր չունենք,– գրում էր բանակի հրամանատարը,– առաջ ենք շարժվում բարեկամական մտադրություններով, բայց եթե հայկական զորքերը առաջինը հարձակում գործեն, ապա դրա պատասխանը կլինի երկու-երեք դիվիզիաներ Երևան ուղարկելը»[1]: Դրա համար նա գտնում էր, որ անհրաժեշտ է նախազգուշացնել հայկական կառավարությանը ձեռնպահ մնալ Նախիջևանի և Զանգեզուրի գավառները գրաված Կարմիր բանակի հետ ընդհարումներ առաջ բերելուց, քանի որ վիճելի հարցերը պետք է լուծվեն դիվանագիտական ճանապարհով: Այնուհետև հեռագրում ասված էր. «Նախիջևանը գրաված ջոկատի խաղաղ մտադրությունների մասին նախազգուշացված է հայկական կառավարությանը, դուք նույնպես ձեր կողմից մի անգամ ևս հաստատեցեք դա: Մեզ համար հատկապես կարևոր է ապահովել հաղորդակցությունը Նախիջևանի հետ՝ Անգեղակոթի և Կարմալինովկայի վրայով, որտեղ ներկայումս գործում է գեներալ Դրոն: Նրան լիկվիդացնելու միջոցներ ձեռնարկված են: Շահթախտից այն կողմ չենք գնա, եթե, իր հերթին, հայկական կանոնավոր բանակը այլևս չառաջանա»[2]:

Եռօրյա դժվարին բանակցությունները վերջացան դրական արդյունքով: 1920 թ. օգոստոսի 10-ին ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև պետական մակարդակով կնքվեց առաջին համաձայնագիրը, որը ստորագրեցին մի կողմից՝ Ա. Զամալյանը և Ա. Բաբալյանը, մյուս կողմից՝ Բ. Լեգրանը:

Համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախությունը, և դրա հիման վրա ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև օգոստոսի 10-ի ցերեկվա ժամը 12-ից դադարեցվում էին ռազմական գործողությունները:

Համաձայնագրով «վիճելի» Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ռազմակալվում էին Կարմիր բանակի կողմից: Այդ մարզերի՝ Ադրբեջանին թե Հայաստանին պատկանելության հարցը մնում էր առկախ: Այսրկովկասյան այդ երկու պետությունների միջև եղած տարածքային հարցերը առաջիկայում պետք է լուծվեին խաղաղ ճանապարհով, բանակցությունների միջոցով: Ինչ խոսք, Մոսկվայի համար իրական պայմանը մնում էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

Խորհրդային կողմը համաձայնել էր Հայաստանի Հանրապետության կազմում թողնել այն տարածքները, որ հայկական զորքերը Նախիջևանի գա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 110, թ. 1:

[2] Նույն տեղում:

վառում գրավել էին 1920 թ. հունիս-հուլիս ամիսների ռազմական գործողությունների ընթացքում: Հայկական բանակի և Կարմիր բանակի զորամասերի միջև սահմանային գիծ համարվեց Շահթախտ–Խոկ–Զնաբերդ–Սուլթանբեկ գիծը, այնուհետև դեպի հյուսիս-արևմուտք՝ Քյուքի–Բազարչայ բնակավայրերի սահմանը: Ղազախի գավառում սահմանն անցնում էր այն գծով, որը 1920 թ. հուլիսի 30-ի դրությամբ զբաղեցնում էին հայկական և ռուսական զորքերը[1]:

Համաձայնագիրը ստորագրելու օրը՝ օգոստոսի 10-ին, Օրջոնիկիձեն Բաքվից հեռագրեց Մոսկվա՝ Լենինին, Տրոցկուն, Չիչերինին.

«Նախիջևանի շրջանը գրավված է մեր զորքերի կողմից: Լեգրանն այսօր ստորագրել է համաձայնագիր Հայաստանի հետ՝ ռազմական գործողությունները դադարեցնելու մասին: Դրա հիման վրա Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել ճանաչել արդեն մեր զորքերի կողմից գրավված շրջանների օկուպացիան»[2]:

1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագիրը, անշուշտ, խորհրդային կողմի դիվանագիտության հաջողություններից էր: «Վիճելի» տարածքների հարցը արևմտյան տերությունների դիվանագիտության ոլորտից փոխադրվեց բոլշևիկյան Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների ոլորտ:

Զինադադարի համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո հայկական կողմը ձեռնամուխ եղավ դրա կատարմանը: Նույն օրը՝ օգոստոսի 10-ին, Հայաստանի զինվորական նախարարը հեռագիր ուղարկեց Դարալագյազում գտնվող Դրոյին՝ նրան պատվիրելով հայտնել Կապանի զորքերի հրամանատար Նժդեհին, որ կարգադրված է թողնել Զանգեզուրը և առանց դիմադրության անցնել հանրապետության տարածք: «Զինվորական նախարարը հրամայում է Ձեզ,– ասված էր Երևանից Դրոյին տրված հեռագրում,– կապ պահպանելով Նժդեհի հետ, տեղեկացնել նրան, որպեսզի նա, համաձայն կնքած զինադադարի, հավաքի իր զորամասը, նույնպես իր բոլոր ցանկացողներին ու նախազգուշական միջոցներ ձեռք առնելով անցնի մեր տերիտորիան, բերելով իր հետ ամբողջ զորքերը»[3]: Չնայած կառավարության մեջ և Հայաստանի խորհրդարանում համաձայնագրի դեմ շարունակում էին հանդես գալ ազգային գործիչներից շատերը, սակայն այն արդեն ստորագրված էր, և կառավարությունը տրամադիր էր վճռականորեն հետևելու համաձայնագրի տառին:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 66. գ. 581, թ. 262, գ. 607, թ. 34 և շրջերես, Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, թիվ 3, էջ 46, 47, Из истории Нагорного Карабаха, “Вестиик архивов Армении”, 1989, թիվ 1, էջ 122, 123, **И. Таирян**, նշվ. աշխ., էջ 113-114:

[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 116, թ. 12:

[3] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 97:

Կարծես օգոստոսի 10-ի համաձայնագիրը կատարելու հակում էր ցույց տալիս նաև խորհրդային կողմը: Ելնելով փաստաթղթի ոգուց՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը զորքերին հրաման տվեց այլևս չմտնել Հայաստանի Հանրապետության տարածքները, միաժամանակ խստիվ հետևել, որ սահմանները չխախտի հակառակ կողմը: Հրամանում նաև նշվում էր, որ, ըստ կնքված համաձայնագրի, հայկական զորքերը թողնում էին վիճելի երեք մարզերը և հեռանում Հայաստանի Հանրապետություն, իսկ դրանց տեղը զբաղեցնելու էին Կարմիր բանակի զորամասերը:

Դրոյի միջոցով ստանալով Հայաստանի Հանրապետության տարածք անցնելու մասին կառավարության կարգադրությունը՝ Նժդեհը տարակուսեց. ինչպե՞ս և ո՞ր ճանապարհով անցնել: Նախիջևանով անհնարին էր, քանի որ այն գտնվում էր քեմալականների, մուսավաթականների և բոլշևիկների ձեռքին: Անհնար էր նաև մտնել Վայոց ձոր, քանզի Սիսիանի շրջանը գտնվում էր բոլշևիկների ռազմակալության տակ: Եվ եթե նույնիսկ այդ ճանապարհները բաց լինեին, Նժդեհը իրեն նման չէր լինի, եթե թողներ Կապարգողթը և հեռանար: Ուստի պատահական չէ, որ **նա կտրականապես հայտարարեց, թե չի ենթարկվելու կառավարության հրամանին և մնալու է Կապարգողթում ու շարունակելու է կռիվը:**

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին (պատճենը՝ զորավարներ՝ Նազարբեկյանին, Սիլիկյանին, Դրոյին, ՀՅ դաշնակցության բյուրոյին և Դարալագյազի հատուկ կոմիսար Գերասիմ Բալայանին) օգոստոսի 20-ին Կապանի հանքերից Նժդեհը գրում էր.

«Ես չգիտեմ՝

1. Ի՞նչ պայմաններով, ու՞մ հետ (Ադրբեջանի՞, թե՞ Սովետական Ռուսաստանի) և որքա՞ն ժամանակով է կնքված զինադադարը:
2. Եթե Կապարգողթի իմ ուժերը, համաձայն զինադադարի, պետք է թողնեն իրենց երկիրը և քաշվեն մեր տերիտորիան, ապա «մեծամասնականները» և ադրբեջանական բանդաները ե՞րբ և ո՞ւր են քաշվելու:
3. Ըստ կնքված զինադադարի, ո՞ր օրը և ո՞ր ժամին պետք է Զանգեզուրից քաշվեն-հեռանան մեր և թշնամու ուժերը:
4. Ո՞վ է կառավարելու զինադադարի ընթացքում այս երկիրը:
5. Ի՞նչ է լինելու Գողթանի դրությունը, որը ադմինիստրատիվ տեսակետից չի մտնում Զանգեզուրի մեջ:
6. Չե՞ք կասկածում, որ թշնամին կարող է դավադրել, այն է՝ որ մեր դուրս գալուց հետո, հանկարծակիի բերելով անտերացած ազգաբնակչությանը, կարող է տեր դառնալ Կապարգողթի չորս ապստամբ շրջաններին:
7. Մեր խոր հետախուզությունը պարզել է, որ Այրիչայում կուտակված են բավականին մեծ ուժեր (Շարուրի և Նախիջևանի [թուրք] գաղթա-

կանությունը): Չե՞ք ենթադրում, որ իմ [կողմից] Զանգեզուրը թողնելուց հետո այդ ուժերը հեշտությամբ կարող են տեր դառնալ Գողթանին:

Սա ի՞նչ զինադադար է, որի ժամանակ «մեծամասնականները» շարունակում են իրենց շահատակությունները, թալանը և զինաթափությունը Սիսիանում և բուն Զանգեզուրում:

8. Դուք գիտեք, որ ես, բացի ժողովրդական վաշտերը, ուրիշ կանոնավոր զորամասեր չունեմ: Կարող է այնպես լինել, եթե իսկապես կնքված է զինադադարը, որ հարկադրված լինեմ երկրից դուրս գալ 30 հոգով, գուցե և այնպես լինի, որ՝ 300 հոգով: Ընդունենք, որ մինչև թշնամին չքաշվի և մաքրի ամբողջ Սիսիանը, իմ դուրս գալը, քանի հոգով էլ որ լինի, ոչ թե դժվար, այլ միանգամայն անկարելի կլինի: Մեր Դարալագյազի ուժերը պետք է առաջանան դեպի Սիսիան, որ մենք, կապվելով նրանց հետ, հնարավորություն ունենանք անցնելու մեր տերիտորիան:
9. Ի՞նչ դրության մեջ է Նախիջևանի հարցը: Խնդրում եմ հատուկ սուրհանդակով պատասխանել իմ բոլոր հարցերին՝ տալով ինձ լայն ինֆորմացիա: Ավելացնում եմ. ամսիս 12-ին «մեծամասնականները» փորձեցին մոտենալ մեր դիրքերին, բայց ետ շպրտվեցին: Ժողովրդի ակտիվ մասը, թողած հունձը և այլ գյուղատնտեսական աշխատանքները, ամրացել է դիրքերում: Ժողովուրդը բարձր տրամադրությամբ սպասում է Հայաստանի զորքերի գալուն, որ միացյալ ուժերով քշե թշնամուն Զանգեզուրից:

Սրա հետ ուղարկում եմ ձեռքս ընկած մի դոկումենտ, որից երևում է, որ «մեծամասնականները», անձնավորելով Ադրբեջանի քողարկված վտանգը, համառորեն ձգտում են զինաթափելու, տնտեսապես քայքայելու, գլխատելու և ապա տեղահանելու կամ բնաջնջելու Զանգեզուրի հայությանը»[1]:

Երկու օր հետո՝ օգոստոսի 20-ին, Նժդեհը ՀՀ զինվորական նախարարին դարձյալ Հանքերից գրեց նոր նամակ, որտեղ, շեշտելով Կապարգողթի նշանակությունը ոչ միայն Զանգեզուրի, այլև Հայաստանի համար, նշում էր. «Մեզ պետք է կառչել մեր երկրի ամեն մի բարձունքին, բնական ամեն մի ամրությանը, անգամ բլուրին, որ մեր անհաշտ թշնամին հնարավորություն չունենա իր մշտական կրակի տակ պահելու մեր երկիրը... Մի՛ լքեք այս գերազանցորեն հերոս ու հայրենանվեր ժողովրդին, մի՛ զիջեք նրա սրբազան երկիրը: ...Ոչ մի զիջում: Զիջումն գերություն է, կոտորած ու մահ մեզ համար: Եթե չպետք է տեր կանգնեք մեզ, միացած պահեք մեզ մեր յոթն անգամ սիրած Հայաստանին, թողե՛ք մեզ բարի կամքին՝ մենակ, անկախ: Մենք, որ

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 78, թ. 9-10:

ապրել ենք ազատ ու հաղթական կյանքով, հպարտ ու հերոսական մահով մեռնել էլ գիտենք: Աստված և իմ սերը իմ հանրապետության հետ»[1]:

Եթե Նժդեհը կտրականապես մերժում էր ենթարկվել օգոստոսի 10-ի զինադադար-համաձայնագրից բխող ՀՀ զինվորական նախարարի հրամանին և վճռել էր շարունակել կռիվը Կարմիր բանակի ու ադրբեջանական ուժերի դեմ, ապա նա ելնում էր միայն ու միայն Հայաստանի ու հայ ժողովրդի շահերից: Նժդեհը չէր կարող վարվել ուրիշ կերպ: Այլ կերպ վարվելու դեպքում նա, իրոք, նման չէր լինի իրեն: Ճակատագրական այդ որոշումը բխում էր իր իսկ էությունից, ըմբոստ ու անկոտրում ոգուց, ափեր չճանաչող հայրենապաշտությունից, մայր ժողովրդի նկատմամբ անհուն սիրուց:

Հիշատակելով այդ պահը՝ Նժդեհը հետագայում գրել է. **«...Իմացականությամբ ու սրտով փոքրիկ էակներին է միայն հատուկ՝ կուրորեն կատարել վերեն տրված ամեն հրաման:**

Սրբագրելի է մարդկային ամեն հրաման, թեկուզ դա արված լինի մի երկրի կառավարության կողմից:

Կարող է սխալվել, տկարանալ ամենաբարձր իշխանությունն անգամ:

Մարդկային իմացականության դեմ խորապես մեղանչում է նա, ով իրեն տրված հրամանը չի գործադրում ստեղծագործաբար:

Վտանգի ժամանակ, մասնավորապես, երբ մի երկրի և ժողովրդի լինել-չլինելու խնդիր կա, դավաճանություն է զինվորական կանոնագրի այս կամ այն հոդվածի տակ վատորեն թաքնվելը կամ անձնական պատասխանատվությունից փախչելը:

Նման պատմական պայմաններում ղեկավարի չափանիշը, նրա հարցումը պետք է լինի – ինչ կը թելադրե երկրիս ու ցեղիս հավիտենական շահը, և ոչ թե միայն՝ օրվա իշխանությունը»[2]:

Օգոստոսի 10-ի զինադադարի պայմանագիրը անհանգստություն էր առաջացրել Հայաստանի հասարակական-քաղաքական տարբեր շրջաններում ևս: «Ժողովուրդ» թերթը նշում էր. «Պոկել մայր Հայաստանի մարմնից նրա մի երրորդը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը, և այդ ահագին հողամասը դարձնել ինչ-որ չեզոք շրջան, ուր իշխանությունը չեզոք չի լինելու, այլ լինելու է միակողմանի, այսինքն՝ հակառակորդից կազմված – մեզ համար միանգամայն անընդունելի է:

Մենք հիմք ունենք անհանգստանալու: Հայ ժողովրդի երկուսուկես հազար տարվա պատմական փորձը դարձրել է նրան սկեպտիկ, թերահավատ: Մեծ աշխարհակալ պետությունների, նրանց թվում՝ առավելապես Խորհրդային Ռուսաստանի վարած երկդիմի քաղաքականությունը դեպի մանր պետությունները և նոր ազատագրված ազգերը, ստիպում է լինել

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 78, թ. 20-21:

[2] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 32-33:

վերին աստիճանի զգույշ և շրջահայաց»[1]:

Ինչ վերաբերում է «դաշնակից» պետություններին, ապա Հայաստանի կառավարության կողմից օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրումը նրանք դիտեցին որպես Անտանտի ուխտին «փոքր դաշնակցի» բացահայտ դավաճանություն:

Թիֆլիսն իրենց նստավայր դարձրած՝ Այսրկովկասում անգլիական գերագույն կոմիսար Լուկը և ֆրանսիական բարձրագույն կոմիսար դ'Մարտելը, որոնք սևեռուն հետևում էին ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների բանակցություններին, այն բանից հետո, երբ տեղեկացան, որ արդեն ստորագրվել է համաձայնագիրը, անմիջապես զայրույթ հայտնեցին կատարվածի առթիվ: Համաձայնագիրը կնքելու հաջորդ օրն իսկ՝ օգոստոսի 11-ին, նրանք իրենց մոտ հրավիրեցին Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին և նրանից հանգամանալից բացատրություն պահանջեցին: Լուկը և դ'Մարտելը ուղղակի հայտարարեցին, որ այդ քայլով Հայաստանի կառավարությունը Անտանտի նկատմամբ ոչ բարեկամական ակտ է կատարել, և որ իրենք կասկածի տակ են դնում իրենց նկատմամբ բարեկամաբար տրամադրված լինելու Հայաստանի հավաստիացումները:

Հանդիպման ժամանակ Տ. Բեկզադյանը և Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական առաքելության մյուս ներկայացուցիչները փորձեցին մեղմել դաշնակից տերությունների դիվանագետների զայրույթը, համոզել, որ բոլշևիկների հետ կնքած համաձայնագիրը լոկ զինադադար է, և որ Հայաստանի կառավարությունը, հավատարիմ մնալով Անտանտի ուխտին, շարունակում է մնալ հակախորհրդային դիրքերում:

Երբ ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի միջև կնքվեց համաձայնագիր, այդ նույն օրը՝ 1920 թ. օգոստոսի 10-ին, Փարիզի մերձակայքում՝ Սևրում, դաշնակից տերությունների ճնշման տակ Թուրքիայի սուլթանական (Կ. Պոլսի) կառավարությունը դաշնագիր ստորագրեց, որով ընդունում էր Արևմտյան Հայաստանի հողերի վրա հայության գերիշխանությունը: Դաշնագրի տակ դրվել էր նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակ Ավետիս Ահարոնյանի ստորագրությունը: Սևրի պայմանագրի համաձայն՝ Արևմտյան Հայաստանի Հանրապետության մեջ էին մտցվում Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի վիլայեթները[2]:

Սևրի դաշնագիրը կնքվեց այն ժամանակ, երբ նոր ամպեր էին կուտակվում Հայաստանի վրա, նոր մահացու սպառնալիք էր կախվել հայ ժողովրդի գլխին: Եվ ահա, կարծես թե, վերջապես, մի նոր դուռ էր բացվում ջարդված ու կոտորակված ժողովրդի առջև, կարծես իրագործվում էր հայ

---

[1] «Ժողովուրդ», 1920, 14 օգոստոսի:

[2] Տե՛ս **Ա. Եսայան**, նշվ. աշխ., էջ 88:

ժողովրդի դարավոր երազանքը՝ տեսնել իր հայրենիքի միասնությունը՝ սեփական պետականությամբ, անկախ և ինքնիշխան գոյությամբ: Վերջապես ակնհայտ է, որ Սևրի դաշնագրի այն մասերը, որոնք վերաբերում էին անկախ Հայաստանի և անկախ Քուրդիստանի ստեղծմանը, արդարացի էին և արտահայտում էին հայ և քուրդ ժողովուրդների ամենալայն շրջանակների ազգային զգացմունքները և իղձերը:

Ահա թե ինչու հոգեբանորեն շատ դժվար էր անջատվել Սևրից և բանադրանքի ենթարկել այն, ինչպես դա պահանջում էին քեմալականները և բոլշևիկները: Պատմական արդարության տեսանկյունից դա մի փաստաթուղթ էր, որն արձանագրում էր հայ և քուրդ ժողովուրդների իրավունքներն իրենց հազարամյա հայրենիքի տարածքների նկատմամբ: Բայց գործնական իրականացման տեսակետից Սևրի դաշնագիրը մնաց օդում կախված: Դաշնագրի ստորագրման ժամանակ Արևմտյան Հայաստանը և թուրքական Քուրդիստանը գտնվում էին քեմալականների իշխանության տակ: Մուստաֆա Քեմալի կառավարությունը, անօրինական համարելով Սևրի դաշնագիրը, հայտարարեց, որ Թուրքիան մի թիզ հող անգամ չի զիջելու հայերին: Ավելին, քեմալականները տենդագին նախապատրաստական աշխատանքներ տարան, որպեսզի հարձակվեն Հայաստանի վրա, զավթեն այն և բնաջնջեն հայ ժողովրդին:

Սևրի դաշնագրով հայերին տրված հողերը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ի վիճակի չէր ձեռք բերել սեփական ուժերով: Իսկ դաշնագիրը իբրև փաստաթուղթ կյանքի կոչած Անտանտի տերությունները մտադիր չէին Հայաստանի գործերը կարգավորելու համար ընդհարվել քեմալական թուրքերի հետ: Օգնության մասին դաշնակիցներին հղած Հայաստանի կառավարության բազմաթիվ խնդրանքները մնացել էին անհետևանք կամ բավարարվել աննշան չափերով: Պարզ է, որ նման պայմաններում Հայաստանը չէր կարող հույս ունենալ, թե «դաշնակիցները» կարող են օգնության գալ զինուժով: Դեռ 1919 թ. աշնանը Անգլիան իր հիմնական զինված ուժերը հանել էր Այսրկովկասից: 1920 թ. հունիսին ԱՄՆ-ը վերջնականապես հրաժարվել էր վերցնել Հայաստանի մանդատը: Դա պատահական չէր, որովհետև Հայաստանը գրավիչ քիչ բան ուներ. չուներ նավթահորեր ու գյուղատնտեսական ընդարձակածավալ հողատարածքներ: «Դաշնակից» պետությունները ցույց էին տալիս, թե հայ ժողովրդի կողմն են, բայց իրականում ոչինչ չէին անում հայության հոգսերը թեթևացնելու համար. ինչպես նախորդ երկու տարիներին, այնպես էլ այժմ, Հայաստանի կառավարությանը նրանք կերակրում էին կեղծ խոստումներով: Ինչ վերաբերում է Հայաստանին զորք տրամադրելուն, ապա այդ մասին ընդհանրապես խոսակցություն չկար:

Հայաստանին իրական օգնության ձեռք չմեկնելով և քեմալական զավթիչներից նրան պաշտպանելու միջոցներ չձեռնարկելով՝ «դաշնակից» տե-

ությունները միաժամանակ ամեն կերպ խոչընդոտում էին Ռուսաստանի հետ նրա մերձեցումը: Ահա այդ ընդհանուր քաղաքականությունից ելնելով է, որ նրանք կտրականապես հանդես եկան ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի միջև կնքված ժամանակավոր համաձայնագրի դեմ:

1920 թ. օգոստոսի 24-ին Երևան ժամանեց ֆրանսիական գնդապետ Կորբելը: Մի քանի օր հետո՝ օգոստոսի 31-ին, այստեղ եկավ նաև Լուկը: Հայաստան գալով՝ նրանք նպատակ ունեին ոչ միայն բացատրություն պահանջելու նրա կառավարությունից, այլև, եթե հաջողվեր, ստիպելու չեղյալ հայտարարել օգոստոսի 10-ի համաձայնագիրը:

Հայաստանի կառավարությունն ամեն կերպ փորձում էր փարատել դաշնակից տերությունների կասկածները, նրանց կրկին ու կրկին հավաստում էր այդ տերությունների նկատմամբ իր հավատարմությունը: Կառավարության անդամները հավաստիացնում էին Կորբելին ու Լուկին, որ չնայած համաձայնագիր է ստորագրվել ՌՍՖԽՀ-ի հետ, բայց դա վկայություն չէ իրենց հակաբոլշևիկյան դիրքի փոփոխության:

Ճնշում գործադրելով Հայաստանի Հանրապետության կառավարության վրա՝ «դաշնակիցները» դրանով իսկ խաղաքարտի վրա էին դնում Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությունը: Մի կողմից՝ նրանք հրաժարվում էին թուրքական վտանգի դեմ ռազմական իրական օգնություն ցույց տալուց, մյուս կողմից՝ արգելում էին, որ Հայաստանը հաշտության եզրեր գտնի Ռուսաստանի հետ:

Ճիշտ է, զրույցների ժամանակ հայկական կողմից արտահայտվում էին նաև բողոքներ Հայաստանի նկատմամբ դաշնակիցների բռնած անհետևողական և անբարյացակամ վերաբերմունքի կապակցությամբ: Ոմանք նույնիսկ մեղադրական խոսքեր էին ասում, թե ՌՍՖԽՀ-ի հետ Հայաստանի կառավարության համաձայնություն կնքելուն մղել է Զանգեզուրի և Ղարաբաղի հարցում անգլո-ֆրանսիական կողմի բռնած հակահայկական դիրքը: Ավելին, վարչապետ Համո Օհանջանյանը մեղադրեց «դաշնակիցների» ներկայացուցիչներին՝ հիշեցնելով 1918-1920 թթ. անգլիական կառավարության բացահայտ հովանավորչական քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ: Անգլիան, ասում էր նա, «համառ կերպով ցանկանում է Ղարաբաղը տալ Ադրբեջանին, իսկ մեզ թույլ չէին տալիս զորք մտցնել Զանգեզուր և կազմակերպել տեղի ժողովուրդը»[1]:

Երկար զրույցներից և հանգամանալից բացատրություններից հետո Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները համոզվեցին, որ, այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը հավատարիմ է Անտանտի ուխտին և շարունակում է կանգնած մնալ հակաբոլշևիկյան դիրքերում:

Չնայած օգոստոսի 10-ին կնքած համաձայնագրին՝ արդեն նույն ամսվա երկրորդ կեսին՝ հատկապես վերջին տասնօրյակում, Կապանում, Սիսիա-

[1] ՍՔՊՌՊԱ, ֆ. 85, ց. 13, գ. 5, թ. 12:

նում, Մեղրիում, Նախիջևանում ընդհարումներ տեղի ունեցան հայկական և խորհրդային զորամասերի միջև: Զինադադարի խախտման դեպքերը հաճախակի դառնալով՝ սպառնում էին վերաճել ճակատային ընդհանուր կռվի: Օգոստոսի 24-ին ընդհարում եղավ Նախիջևանի Ջահրի գյուղի մոտ, որը, սակայն, չվերածվեց լայնածավալ ռազմական գործողությունների:

Նախորդ տարիների ջարդերի հետևանքով թվապես խիստ նվազել էր Նախիջևանի գավառի հայ բնակչությունը և այլևս ի վիճակի չէր որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ մուսավաթական հրոսակախմբերին ու գավառ մտած քեմալական ստվարաքանակ զորքերին: Այժմ նախիջևանահայության մնացորդների համար վիճակը արտակարգ ողբերգական էր դառնում, քանի որ գավառ մտած Կարմիր բանակի զորքերը պաշտպան էին կանգնել «իմպերիալիզմից կեղեքված թուրք աշխատավորներին»՝ միաժամանակ պայքարի ճակատ հարդարելով Հայաստանի դեմ:

Խորհրդային զորքերի և Հայաստանի զորամասերի միջև ռազմական ընդհարումներ եղան նաև Ղազախի և Իջևանի գավառների սահմանագլխին և Սիսիանի Կսըր սարի շրջանում:

Մթնոլորտը շիկանում էր նաև այն պատճառով, որ, «վիճելի» տարածքներում չէին դադարում հայերի հալածանքները:

Կառավարությանը ներկայացրած տեղեկագրում ՀՀ արտգործնախարարությունը նշում էր, որ դրությունը Զանգեզուրում շարունակում է մնալ շատ ծանր. ամբողջ հայությունը զինաթափ է արված բոլշևիկների կողմից, նրանից խլված զենքերով զինել են տեղական երիտասարդներից կազմած կոմունիստական խմբերը: Մյուս կողմից՝ բռնի զորահավաքի են ենթարկել հայերին և նրանց պարտադրել մտնել Ադրբեջանի բանակի մեջ: Այդ նպատակով Ղարաբաղ–Զանգեզուրում հայտարարված է 18-45 տարեկանների ընդհանուր զորակոչ: Ավելին, թուրք էմիսարները բուն Զանգեզուրում (Գորիսի շրջանում) և Սիսիանում գտնվող տաճկահայերի առանձին խումբ են կազմել և Տեղ ու Խնձորեսկ գյուղերի երիտասարդներից կազմած մի գումարտակի հետ ստիպողաբար ուղարկել են կռվելու Կապանի դեմ[1]:

Դեպքերի նման զարգացումը լրջորեն մտահոգում էր Հայաստանի իշխանություններին: Օգոստոսի 17-ին ՀՀ արտգործնախարար Հ. Օհանջանյանը հեռագիր հղեց Թիֆլիս՝ Բ. Լեգրանին և պաշտոնապես բողոքեց Ղարաբաղում և Զանգեզուրում բոլշևիկների սանձազերծած բռնությունների և գնդակահարությունների դեմ[2]:

Օգոստոսի 22-ին Հ. Օհանջանյանը հայտագիր ուղարկեց դարձյալ Լեգրանին, որտեղ նշում էր, որ սարսափելի հալածանքների էին ենթարկվում ոչ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, 2-րդ մաս, թ. 392-393:

[2] Տե՛ս «Յառաջ», 1920, 25 օգոստոսի, թիվ 181:

միայն Ղարաբաղի և Զանգեզուրի հայ գործիչները, այլև նրանց ընտանիքներն ու բոլոր ազգականները:

«Ուստի, իմ կառավարության կողմից խնդրում եմ Ձեզ,– ասված էր հայտագրում,– շտապ հարաբերել ում որ հարկ է և պնդել, որ նախ՝ դադարեցվեն հալածանքները Ղարաբաղում և Զանգեզուրում մնացած հայ հասարակական գործիչների և նրանց ընտանիքների դեմ, երկրորդ՝ այն հայ գործիչներին, որոնք ուզում են մեկնել երկրից, անարգել թույլ տալ, և երրորդ՝ հիշյալ շրջաններից հեռացնել ադրբեջանական զինվորական մասերը և հայ կոմունիստների խմբերը:

Ձեր ձեռք առած միջոցների մասին խնդրում եմ չմերժեք ինձ տեղյակ պահել»[1]:

Երկու կողմերի հարաբերությունների վատթարացման մեղքը Հայաստանի իշխանությունները դնում էին խորհրդային բանակի վրա՝ նկատի ունենալով, որ սահմանային տարբեր հատվածներում ընդհարումները, որպես կանոն, սկսում էին այդ բանակի զորամասերը՝ դրանով իսկ խախտելով օգոստոսի 10-ի համաձայնագիրը: Իր հերթին՝ համաձայնագրի խախտման պատասխանատվությունը խորհրդային կողմը մշտապես դնում էր Հայաստանի իշխանությունների վրա:

Օգոստոսի 24-ին Բ. Լեգրանը Թիֆլիսից հեռագրեց Հ. Օհանջանյանին, որտեղ ասվում էր. «Ներկա պահին մենք տեղեկություններ ենք ստացել սահմանային գծում օգոստոսի 10-20-ը ընկած ժամանակաշրջանում տիրող դրության շուրջ: Այդ տեղեկություններից երևում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրված հաղորդումները Հայաստանի տերիտորիայի վրա խորհրդային զորքերի կատարած հարձակումների մասին չեն համապատասխանում իրականությանը և հանդիսանում են սահմանային գծում տեղի ունեցած փոքրիկ բռնկումների ծայրահեղ չափազանցություններ, որոնք, ցավոք, տեղ են գտել Կսըր սարի շրջանում, Ղազախի և Իջևանի գավառների սահմանում»[2]:

Ցավ հայտնելով տեղի ունեցած միջադեպերի կապակցությամբ և նորից շեշտելով համաձայնագրի պայմաններն անխախտ պահելու անհրաժեշտությունը՝ Բ. Լեգրանը միաժամանակ հիշեցնում էր, որ Վայոց ձորի Կուշչիբիլակ (Ղուշչիբիլակ) գյուղի շրջանում նկատվում են հայկական զորքերի կուտակումներ. մի բան, որ առիթ է տալիս ենթադրելու, թե նրանք պատրաստվում են հարձակում գործել Զանգեզուրում գտնվող Կարմիր բանակի զորամասերի վրա[3]:

---

[1] «Յառաջ», 1920, 25 օգոստոսի, թիվ 181:

[2] Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, թիվ 3, էջ 48:

[3] Տե՛ս նույն տեղում:

Բ. Լեգրանի տված բացատրությունը չբավարարեց Հայաստանի կառավարությանը, որը շարունակում էր խորհրդային կողմին մեղադրել սահմանային խախտումների մեջ: Ռուսաստանի կենտրոնական կառավարությանը Երևանից Մոսկվա հղվեցին նոր հեռագրեր: Դրանցից մեկում ասված էր, թե Կարմիր բանակի զորամասերը գրված հայկական տարածքներում բռնություններ են գործադրում խաղաղ հայ բնակչության նկատմամբ, հայկական գյուղերը դատարկում են նրա բնակիչներից, ավելին՝ կազմակերպում են երեխաների զանգվածային սպանություններ[1]:

Հայաստանի կառավարությունից Մոսկվայում ստացված բողոքների կապակցությամբ Գ. Չիչերինը դիմեց Բաքվում գտնվող Ս. Օրջոնիկիձեին և խնդրեց անհրաժեշտ պարզաբանումներ տալ այդ առթիվ: Ի պատասխան Չիչերինի հարցումի՝ Օրջոնիկիձեն նրան հեռագրով տեղեկացրեց, որ Կարմիր բանակի զորամասերին խստիվ հրամայված է չխախտել Հայաստանի Հանրապետության սահմանները: Միաժամանակ նա առաջ քաշեց այն վարկածը, թե իր բողոքներով Հայաստանի կառավարությունը նպատակ էր հետապնդում հասարակայնության ուշադրությունը շեղել Մայիսյան ապստամբության պարտությունից հետո բոլշևիկների նկատմամբ երկրում սկսած լայնածավալ հալածանքների փաստերից[2]:

Իր մյուս՝ օգոստոսի 27-ի հեռագրով Օրջոնիկիձեն Չիչերինին կրկին պարզաբանումներ տվեց Հայաստանի կառավարության բողոքների կապակցությամբ: «Մի անգամ ևս հաստատում եմ,– գրում է նա,– որ [կարմիր] բանակի հրամանատարությանը կատեգորիկ հրաման է տրված՝ խստորեն պահպանել օգոստոսի 10-ի համաձայնագրի բոլոր պայմանները: ...Այդ ժամանակից ի վեր Հայաստանի կողմից հրամանատարությանը ոչ մի բողոք չի ներկայացվել»[3]:

Խորհրդային կողմը շարունակում էր հակաբողոքներ ներկայացնել Հայաստանի իշխանություններին, թե Մայիսյան ապստամբությունը ճնշվելուց հետո նրա մասնակիցների, հատկապես կոմունիստների նկատմամբ երկրում ուժեղացել էին հալածանքներն ու հաշվեհարդարները:

Օգոստոսի 14-ին գնդակահարվեցին Մայիսյան ապստամբության կազմակերպիչներից Ս. Ալավերդյանը, Մ. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը: Խորհրդային կողմն այդ կապակցությամբ մի քանի անգամ վճռական բողոք հայտնեց և պահանջեց անհապաղ դադարեցնել կոմունիստների հալածանքները: Ասվում էր, որ կոմունիստների գնդակահարությունները հակասում էին օգոստոսի 10-ի համաձայնագրի տառին և ոգուն, և որ այնպիսի տպավորություն էր ստեղծվում, թե Հայաստանի կառավարությունն ամեն ինչ անում

---

[1] Տե՛ս ՍՔՊՌՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 6, թ. 1:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

[3] Նույն տեղում, թ. 8:

էր այդ համաձայնագիրը չեզոքացնելու համար:

Խորհրդային կողմը հայկական կողմին նաև մեղադրում էր նրանում, որ Հ. Օհանջանյանի կառավարությունը ենթարկվում էր արևմտյան տերությունների ճնշմանը, կատարում էր Ռուսաստանի հետ Հայաստանի մերձեցումը թույլ չտալու նրանց պահանջը: Դրա արտահայտություններից մեկը խորհրդային կողմը համարում էր այն, որ Հայաստանի կառավարությունը տարբեր պատճառաբանություններով շարունակում էր արգելքներ հարուցել Հայաստանում ՌՍՖԽՀ-ի լիազոր ներկայացուցիչ նշանակված Լեգրանի և նրա առաքելության առջև՝ չթողնելով Թիֆլիսից Երևան ժամանել: Խորհրդային կողմը հայտարարում էր, որ ինքն այդ առաքելությանը կարևոր դեր էր հատկացրել խորհրդային-հայկական հարաբերությունների բարելավման գործում:

ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի կառավարությունների հակասությունների մյուս խումբը կապված էր խորհրդային-թուրքական հարաբերությունների զարգացման հետ: Միաժամանակ գնալով ավելի ու ավելի ջերմ էին դառնում խորհրդային կառավարության և քեմալականների հարաբերությունները*: Նրանց հետ ուղղակի կապ հաստատելու համար Մոսկվան հայկական կառավարությունից պահանջեց ժամանակավորապես իրեն տրամադրել Հայաստանի ճանապարհները՝ Թուրքիային ռազմական, տնտեսական և այլ կարգի օգնություն ցույց տալու համար: Բայց Հ. Օհանջանյանի կառավարությունը կտրականապես մերժեց այդ պահանջը:

Քեմալականներին ցույց տալով լայնածավալ օգնություն՝ միաժամանակ խորհրդային իշխանությունները հայկական կառավարությանն ասում էին, թե իրենք անկեղծորեն մտահոգ են, որ այդ օգնությունը թուրքերը կարող են օգտագործել Հայաստանի դեմ: Ավելին, խորհրդային կառավարությունը Հայաստանի կառավարությանը հավաստիացնում էր, թե ինքը դիվանագիտական ուղիներով ճնշում էր գործադրում Թուրքիայի վրա, զսպում Հայաստանի նկատմամբ նրա ագրեսիվ նկրտումները: Խորհրդային կառավարությունը հավաստիացումներ էր անում նաև, թե ինքը պատրաստ է անհրաժեշտության դեպքում զորքեր մտցնել Հայաստան՝ թուրքական ներխուժումը կանխելու համար:

Բանն այն է, որ չնայած խորհրդային-թուրքական հարաբերությունները զարգանում էին վերընթաց գծով, բայց առկա էին նաև հակասություններ, որոնք երբեմն տեղիք էին տալիս լուրջ տարաձայնությունների:

Խորհրդային-թուրքական հակասություններից մեկը սուր դրսևորում ստացավ օգոստոսի 10-ի համաձայնագրի առիթով: Ինչպես ասվեց, համաձայ-

---

* 1920 թ. օգոստոսի 20-ին Մակուով Անգորա՝ Քեմալ փաշայի մոտ էին հասել խորհրդային միսիայի քարտուղար Ուպման Անգորսկին և ռազմական ատաշե Բագիրովը: Շուտով սպասվում էր նաև գլխավոր ներկայացուցիչ Էլիավայի ժամանումը Անկարա:

նագրով Նախիջևանի գավառի Շահթախտի շրջանը և Շահթախտ–Ջուլֆա երկաթուղագիծը թողնվել էր Հայաստանին, որը քեմալականները հանդուրժել չկարողացան և մեծ աղմուկ բարձրացրին: Ավելին, այդ ժամանակ Մոսկվայում բանակցություններ վարող քեմալական պատվիրակությունը խորհրդային կողմին պահանջ ներկայացրեց՝ չեղյալ հայտարարելու Շահթախտի երկաթուղային կայարանի ու Շահթախտ–Ջուլֆա երկաթգծի մասին օգոստոսի 10-ի համաձայնագրի կետը և կայարանն ու երկաթգիծը հանելու Հայաստանի տնօրինությունից: Պահանջը չկատարելու դեպքում թուրքերը սպառնում էին զինված ուժով Հայաստանից խլել և՛ երկաթգիծը, և՛ կայարանը:

Քեմալականների այս պլանը խափանելու համար Ս. Օրջոնիկիձեի և խորհրդային ուրիշ գործիչների մոտ միտք հղացավ՝ Կարմիր բանակի զորքերով զբաղեցնել Հայաստանին հանձնած Շահթախտի շրջանը, նախքան թուրքերը փորձ կանեին զավթել այն: Բայց այդ ծրագրի դեմ հանդես եկավ Լեգրանը՝ ասելով, թե խորհրդային զորքերի կողմից հայկական զորքերի հսկողության տակ գտնվող Շահթախտի շրջանի գրավումը օգոստոսի 10-ի համաձայնագրի բացահայտ խախտում կլինի: Այդ տեսակետը հավանություն գտավ նաև Մոսկվայում կենտրոնական կառավարության կողմից: Քննության առնելով հարցը՝ ՌԿ(բ)Կ կենտկոմը որոշում ընդունեց զորքեր չմտցնել Շահթախտ և թուրքական կողմին նույնպես թույլ չտալ այդ բանն անել:

Այդ առթիվ Չիչերինը Օրջոնիկիձեին գրում էր, որ օգոստոսի 10-ի պայմանագիրը պետք է կատարվեր անշեղորեն, որ Հայաստանի հետ չէր կարելի թույլ տալ հարաբերությունների ոչ մի սրում և ռազմական բարդացում: Նա տեղեկացնում էր նաև, որ դա կառավարության տեսակետն էր, որը վճռականորեն հաստատվել էր կուսակցության կենտկոմի կողմից[1]:

Խորհրդային կառավարության բռնած այդ դիրքը սթափեցրեց քեմալականներին, որոնք չհամարձակվեցին զորքեր մտցնել Շահթախտ: Բայց ընդհանուր առմամբ իրադարձությունները զարգանում էին ի վնաս Հայաստանի: Ողբերգությունն այն էր, որ քեմալական զավթիչները, քողարկվելով հեղափոխական արտահայտություններով, շարունակում էին Մոսկվային հավատարմության երդումներ տալ: Խորհրդային իշխանությունները հավատ էին տածում քեմալական «հեղափոխականների» նկատմամբ, որոնք ակտիվորեն պատրաստվում էին հարձակվել Հայաստանի վրա:

Իր հերթին խորհրդային կառավարությունը, կատարելով թուրքերի պահանջը, Հայաստանի իշխանություններին ստիպում էր պաշտոնապես հրաժարվել Սևրի դաշնագրից, իսկ Սևրից հրաժարվելը Հայաստանի համար նշանակելու էր նաև հարաբերությունների խզում արևմտյան «դաշնակիցներից»: Հայաստանի կառավարությունը գերադասեց չհրաժարվել Սևրից և հավատարիմ մնալ Անտանտի ուխտին:

---

[1] Տե՛ս ՍՔՊՌՊԱ, ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 33, տե՛ս նաև **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 130:

ՀԵՂԿՈՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՎԱԾ ԳՈՐԻՍԻ ԵՎ ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ: ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱՄՈԼՆԵՐԻ ԹԻՐԱԽ

Զանգեզուրի այն վայրերում, որտեղ հաստատվել էր խորհրդային իշխանություն, ձեռնարկվեցին դրա ամրապնդմանն ուղղված աշխատանքներ:

Գորիսը Կարմիր բանակի կողմից գրավվելուց հետո սկսել էին լայնածավալ գործել գավառային հեղկոմը և բոլշևիկյան կուսակցության գավառային կոմիտեն:

Կարմիր բանակի զորամասերի կողմից գավառի ամեն մի բնակավայր գրավվելուց անմիջապես հետո այնտեղ ստեղծվում էր նոր իշխանության տեղական մարմին՝ հեղկոմ:

Հեղկոմներից բացի՝ շատ գյուղերում ստեղծվում էին կուսակցական նոր բջիջներ, ամրապնդվում էին արդեն եղածները: Նախքան Կարմիր բանակի մուտքը գավառ բուն Զանգեզուրում արդեն գործում էին կոմբջիջներ՝ Գորիս գյուղում (9 մարդ), Քարահունջում (10 մարդ), Ալիղուլիում (11 մարդ), Գերու գյուղում (8 մարդ): Կարմիր բանակի գալուց հետո կոմբջիջներ կազմակերպվեցին Մաղանջուղ (7 մարդ), Խոտ (5 մարդ), Քարաշեն (9 մարդ), Բայանդուր (11 մարդ), Խնածախ (4 մարդ), Կոռնիձոր (5 մարդ), Հալիձոր (3 մարդ) գյուղերում, իսկ Խնձորեսկ գյուղի բոլշևիկյան կազմակերպության անդամների թիվը մոտեցավ 100-ի[1]:

Կոմունիստական ուղղության երիտասարդական խմբերի հիմքի վրա ձևավորվեց նաև Զանգեզուրի կոմերիտական կազմակերպությունը: Այդ գործում ակտիվ դեր էին խաղում Գուրգեն Մելիք-Դադայանը (Գումեդին), Խաչատուր Զարայելյանը, Մուշեղ Մինասյանը, Անուշավան Արզումանյանը և ուրիշներ[2]:

Իր քաղաքականությունը գյուղում իրականացնելու համար նոր իշխանությանն անհրաժեշտ էր ունենալ քիչ թե շատ կայուն սոցիալական հիմք: Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ այստեղ, բոլշևիկները հենվեցին չքավոր գյուղացիության վրա:

Չնայած չքավոր գյուղացիությունը Զանգեզուրում բազմամարդ էր, բայց այն դեռևս ամուր հիմք չէր խորհրդային իշխանության համար: Այդ իշխանությունը կարող էր ամրանալ, եթե անվերապահորեն նրա կողմն անցներ նաև միջակ գյուղացիությունը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 180, թ. 6, 7, 8, 14-16, 18, 20, 22-23:

[2] Տե՛ս **Բ. Խուդավերդյան**, նշվ. աշխ., էջ 85:

Ահա թե ինչու բոլշևիկյան քարոզիչները ծավալուն աշխատանքներ ձեռնարկեցին գյուղացիության այդ շերտի շրջանում, որոնց արդյունքները, սակայն, գոհացուցիչ չէին. դեպի խորհրդային իշխանություն միջակների շրջադարձը չափազանց դանդաղ էր կատարվում, նրանց բացարձակ մեծամասնությունը շարունակում էր հետևել դաշնակցականներին, գնալ նրանց կարգախոսների ետևից:

Հեղկոմների և գյուղական կոմբջիջների համար առաջին լուրջ քննությունը **հացամթերումների կամպանիայի անցկացումը եղավ:** Հողասակավ Զանգեզուրում դա չափազանց դժվար իրականացնելի խնդիր էր:

Գյուղացիական լայն զանգվածներն իրենք հացի սուր կարիքի մեջ էին և հազիվ էին ծայրը ծայրին հասցնում: Սովորաբար ապրիլ-մայիս ամիսներին սպառվում էին հացի աղքատիկ պաշարները, գյուղացիների զգալի մասը սկսում էր սնվել կանաչեղենով, ապա՝ մրգերով, մինչև որ հնձվում էր վաղահաս գարին: Ուստի հաց մթերելը կապված էր ոչ միայն վարչական, այլև սոցիալական կարգի մեծ դժվարությունների հետ: Հացամթերումների կամպանիայի դեմ, բնականաբար, առաջին հերթին հանդես էին գալիս փոքրաթիվ ունևոր գյուղացիները, իսկ հետո նաև՝ միջակների մեծ մասը: Նրանցից շատերը հրաժարվում էին հեղկոմներին և Կարմիր բանակի պարենային մասի աշխատողներին կայուն գներով հաց ու սննդամթերք տալ, դրանք թաքցնում էին բակերում և գոմերում փորված հորերի մեջ, այգիներում ու քարանձավներում: Ընդհատակ անցած դաշնակցականները և նրանց համակիրները բնակչությանը բացատրում էին, որ եթե հացամթերումների կամպանիան անցնի հաջողությամբ, ապա գյուղացիությունը մատնվելու է սովի: Նրանք գյուղացիներին պարզաբանում էին, որ բոլշևիկները, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ այստեղ, գրավելու են ոչ միայն պարենը, այլև այգիներն ու վարելահողերը, լծկաններն ու մյուս անասունները:

Այսպիսով, իրադարձությունների հետագա ընթացքը կախված էր նրանից, թե ում կողմն էին անցնելու գյուղացիական հիմնական զանգվածները՝ չքավոր ու միջակ գյուղացիները:

Դաշնակցականների քարոզչությունը չէր կարող անհետևանք մնալ: Գյուղացիների մեծ մասը հրաժարվեց ենթարկվել խորհրդային մարմինների հրահանգներին և չկատարեց հաց մթերելու համար գյուղ եկած պաշտոնյաների պահանջները:

Այս պայմաններում նոր իշխանությունները դիմեցին լայնածավալ բռնությունների: Հեղկոմների անդամները և այլ պաշտոնյաներ գյուղացիներից, հատկապես ունևորներից, հացը վերցնում էին ուժով: Բռնությունների էր ենթակվում նաև միջակների մեծ մասը[1]:

Առաջնորդվելով պարենմասնատրման՝ Ռուսաստանի կոմունիստական

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 163, թ. 4:

կուսակցության քաղաքականությամբ՝ հեղկոմները հետևողականորեն կիրառում էին ռազմական կոմունիզմի քաղաքականություն, որն արդեն Ռուսաստանում իրեն սպառել էր, իսկ Զանգեզուրում նոր էր սկսվում:

Գյուղացիները բացահայտորեն ընդվզում էին ռազմական կոմունիզմի կողոպտիչ քաղաքականության դեմ, ամեն կերպ դիմադրում նոր իշխանությունների միջոցառումներին: Չնայած գյուղացիների համառ դիմադրությանը, այնուամենայնիվ, հացի մթերման գործը թեև շատ դանդաղ, բայց առաջ էր գնում: Հեղկոմականները և կոմունիստները հայտնաբերում էին թաքցրած հացի մի մասը, բռնագրավում և ստեղծում «պետական պաշարներ»:

Գավառի նորաստեղծ խորհրդային իշխանության կարևոր պարտականություններից մեկը **Կարմիր բանակի զորամասերին հաց, սննդամթերք, անասնակեր մատակարարելն էր:**

Զանգեզուրի գավկոմը և գավհեղկոմը կուսակցական բջիջներին և գյուղական հեղկոմներին առաջադրանք էին տվել՝ սերտորեն համագործակցելու Կարմիր բանակի զորամասերի հետ, օգտագործելու նրանց ներկայությունը՝ խորհրդային իշխանության տեղական մարմիններ ստեղծելու և ամրապնդելու համար:

Գավառ մտնելու առաջին իսկ օրերից 11-րդ Կարմիր բանակի զորամասերի հրամանատարությունը նորաստեղծ իշխանություններից պահանջեց անառարկելիորեն կատարել զինվորական բոլոր կարգադրությունները: Դա բնական էր, քանի որ այդ իշխանությունները, փաստորեն, ստեղծվել էին զինվորական սվինների ուժով: Փոխհատուցումը պիտի կատարվեր և այն էլ՝ մեծ հավելումով: Պարտքի կատարման ձևերից մեկը զորամասերին կերակրելն էր[1]:

Արագ երթով գավառ մտած 11-րդ բանակի զորամիավորումները կտրված էին իրենց թիկունքային հենակետերից և բանակի մատակարարման ծառայություններից համարյա ոչինչ չէին ստանում. չկար հաց և այլ սննդամթերք, քանի որ դրանք չէին ուղարկվում Ռուսաստանից՝ այնտեղ սով լինելու պատճառով: Հյուսիսային Կովկասում բանակի համար փոքր քանակությամբ հաց էր մթերված, բայց այն Զանգեզուրի նման լեռնաշխարհ տեղափոխելը կապված էր մեծ դժվարությունների հետ: Ահա թե ինչու այստեղ մուտք գործելու հենց սկզբից Կարմիր բանակին կերակրելու հոգսը ամբողջովին ընկավ գավառի բնակչության վրա:

Զանգեզուրի բոլշևիկյան ղեկավարությունը հսկայական ջանքեր էր գործադրում Կարմիր բանակի առջև «սևերես չմնալու», զորամասերն անհրաժեշտ պարենով ապահովելու համար: Սակայն, չնայած հեղկոմների և կուսակցական բջիջների ձեռնարկած միջոցներին, գոհացուցիչ չէին թափած ջանքերի արդյունքները:

Գյուղացիները առաջվա պես շարունակում էին հավատ ընծայել դաշնակ-

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 200, ց. 1, գ. 427, II մաս, թ. 392-393:

ցական գործիչներին, որոնք ընդհատակից նրանց կոչ էին անում «հաց չտալ թուրք-բոլշևիկյան զավթիչ բանակին», զգուշացնում էին գավառ եկած Կարմիր բանակի զորամասերի և նրանց աջակցող տեղի ուժերի հակազգային գործելակերպի ծանր հետևանքների մասին: Գյուղացիների վրա հատկապես մեծ ազդեցություն էին գործում այն չճշտված լուրերը, թե մթերվող հացի մի մասը ուղարկվում է Ադրբեջան՝ «ասկյարներին կերակրելու» համար*:

Կարմիր բանակի նկատմամբ գավառի նորաստեղծ իշխանությունների երախտագիտական արտահայտություններից մեկը **կոմունիստական ջոկատների ստեղծումն էր և դրանց՝ Կարմիր բանակի զորամասերի տրամադրության տակ դնելը:**

Գավիեղկոմը և կուսակցության գավառային կոմիտեն բազմիցս դիմեցին Զանգեզուրի ազգաբնակչությանը, հատկապես երիտասարդությանը՝ կոչ անելով կամավոր մտնել Կարմիր բանակի շարքերը, անդամագրվել կոմունիստական ջոկատներին կամ պարտիզանական խմբերին:

Չնայած բոլոր ջանքերին՝ արդյունքները չնչին էին: Զանգեզուրցիները չէին ուզում ծառայել բանակում: Կամավորների թիվը միայն մատների վրա կարելի էր հաշվել: Բազմաթիվ գյուղեր չտվեցին նույնիսկ մեկ կամավոր զինվոր:

1920 թ. օգոստոսի վերջին Զանգեզուրի գավառային հեղկոմը ագիտբաժնի գծով Գորիսի շրջանի Խնձորեսկի ենթաշրջանի կոմիտեին էր ուղարկել թիվ 17 գրությունը (ռուսերեն), որտեղ հանձնարարվում էր ենթաշրջանի գյուղերում միտինգներ գումարել և Կարմիր բանակի համար կամավորներ ցուցակագրել: Այդ գրությունը Խնձորեսկի կոմիտեի թիվ 52 հրամանով ուղարկվեց ենթաշրջանի Գերու, Ալիղուլիշեն, Մաղանջուղ, Քարաշեն, Խնածախ, Բայանդուր, Խոզնավար, Տեղ, Կոռնիձոր, Խնձորեսկ գյուղերը[1]: Սեպտեմբերի սկզբներին գյուղերից ստացվեցին գրության պատասխանները: Ահա դրանցից մի քանիսը:

«Քարաշեն գյուղի կազմկոմիտեից, 3 սեպտեմբերի, 1920 թ.: Գյուղում ժողով գումարելով և կարդալով գրության հետ ուղարկած կոչը, ոչ ոք չցանկացավ մտնել կրասնի արմիայի մեջ, իբրև թե դաշտային աշխատանքի ժամանակ է»[2]:

«Խնձորեսկի շրջկազմկոմիտեին Բայանդուր գյուղի կազմկոմիտեից, 5 սեպտեմբերի, 1920 թ.: Զանգեզուրի կենտրոնական կազմկոմիտեի ուղարկած թիվ 17 գրության համաձայն հրավիրվեց ժողով, հավաքվեցին մեր ընկերները, թարգմանվեց ձեր ուղարկած տողերի միտքը, [բայց] չգտնվեց մեկը,

---

* Ս. Վրացյանի վկայությամբ՝ 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին միայն բուն Զանգեզուրի շրջանից բոլշևիկները Բաքու են տեղափոխել մոտ 20000 փութ հացահատիկ, իսկ Գորիս քաղաքից տարել են ոսկե զարդեր, մոտ 200 գորգ, 1000 կարպետ, 500 անկողին, 100 կարի մեքենա, մի քանի հարյուր աթոռ, սեղան և այլն (տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 156):

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 171, թ. 5-ի շրջերես, 6, 26:

[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 269, թ. 62:

որ ցանկանա Կարմիր բանակ [մտնել]: Նախագահ՝ Ա. Օհանջանյան, քարտուղար՝ Շ. Հայրապետյան»[1]:

«Ալիղուլիշենի կազմակերպիչ կոմիտե, 8 սեպտեմբերի, 1920 թ.: Համաձայն Զանգեզուրի Կենտրոնական կազմակերպչական կոմիտեի թիվ 17 գրության, այսու հայտնում ենք ի գիտություն, որ գյուղում կայացավ միտինգ՝ կամավորներ ունենալու Կարմիր բանակի շարքերում: Բայց գյուղում կամավոր մտնող չեղավ: Նախագահ՝ (ստորագրություն), քարտուղար՝ (ստորագրություն)»[2]:

Խորհրդային նորաստեղծ իշխանությունը գավառում ընդհարվեց մի շատ ծանր՝ այնտեղ **գտնվող գաղթականների խնդրին:** Այդ հարցը խիստ սրվեց հատկապես այն բանից հետո, երբ գավառում բռնությամբ հացամթերք էր ժողովվում Կարմիր բանակի զորամասերի համար, իսկ հազարավոր գաղթականներ շարունակում էին կարոտ մնալ մի կտոր հացի:

Զորավար Անդրանիկի հետ 1918 թ. Զանգեզուր եկած արևմտահայ գաղթականների՝ այնտեղ մնացած մասին գումարվել էր Նախիջևանի կոտորածներից փախած հայ գաղթականների մի ստվար զանգված: Գաղթականներին ոչ միայն պետք էր կերակրել, այլև բնակեցնել:

Դեռ նախորդ իշխանությունները գյուղացիներից վերցրել էին գոմեր, մարագներ, քարանձավներ, որոնցում տեղավորել էին գաղթականներին: Չնայած դա առաջ էր բերել դրանց տերերի դժգոհությունը, բայց ուրիշ ելք չկար: Այժմ այդ ծանր խնդրի առջև կանգնել էին նաև բոլշևիկյան իշխանությունները:

Զանգեզուրի բոլշևիկյան նոր իշխանությունները պետք է ճշտեին իրենց վերաբերմունքը խորհրդայնացված Ադրբեջանի նկատմամբ:

Մուսավաթականները փոխել էին իրենց դիմակը և մեկ օրում «դարձել» «երդվյալ բոլշևիկներ»: Դա բավական էր, որ բոլշևիկյան տրամաբանությամբ նրանք համարվեին հայ բոլշևիկների դասակարգային եղբայրներ:

Հայ և ադրբեջանցի բոլշևիկների ընդհանուր կարծիքն այն էր, որ իրենց միջև «եղբայրական» հարաբերությունների հաստատման համար ոչ մի խոչընդոտ չկա՝ բացի «անգլիական իմպերիալիզմի դաշնակցական գործակալներից», և եթե Դաշնակցությունը հեռանա քաղաքական ասպարեզից, ապա իրենք եղբայրական հարաբերությունների հաստատման ճանապարհին բնավ չեն ունենա լուրջ խնդիրներ:

Իսկ թե ինչեր կային ադրբեջանցի բոլշևիկյան իշխանավորների մտքում, հայտնի էին բոլորին, բայց ոչ հայ բոլշևիկ գործիչների մեծ մասին. նրանք կույր ջատագով էին հայ-ադրբեջանական «եղբայրական համերաշխության» ու «պրոլետարական ինտերնացիոնալիզմի». անկեղծորեն հավատում էին, որ ադրբեջանցի բոլշևիկները, հանուն «վեհ» գաղափարների, պատրաստ էին զոհաբերելու «նեղ ազգային» շահերը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 269, թ. 67:

[2] Նույն տեղում, թ. 78:

Հայ կոմունիստները, համենայնդեպս նրանց ճնշող մասը, որքան էլ ցավալի է, չկարողացավ ճիշտ ընկալել ժամանակի անցուդարձերի իմաստն իր ամբողջության մեջ: Ի տարբերություն ադրբեջանցի գործիչների՝ նրանք իդեալիստներ էին բառիս լավ, ազնիվ իմաստով՝ տարված համամարդկային եղբայրության գաղափարներով: Նրանք, կրթություն ստացած լինելով Ռուսաստանի և Եվրոպայի համալսարանական կենտրոններում, դաստիարակված լինելով համամարդկային արժեքների առաջնայնության, ժողովուրդների համընդհանուր բարօրության ու երջանկության գաղափարներով, իրենց անմնացորդ նվիրել էին հեղափոխությանը՝ որպես նվիրյալ զինվորներ՝ մի րոպե անգամ չտարակուսելով դրա արդարացիության և հաղթանակի անխուսափելիության մեջ: Ազգայինը նրանց մոտ մղված էր երկրորդական գիծ. ուրիշ ժողովուրդների ազգային շահերը նրանց համար համարյա նույնքան կարևոր էին, որքան սեփական ժողովրդինը: Ինչ խոսք, դա բխում էր ռուսական հեղափոխության բարձր գաղափարներից: Բայց այդ գաղափարները հսկայածավալ երկրի պայմաններում նրա տարբեր մասերում, ինչպես և նրանից անջատված ու անկախություն ստացած ծայրամասային պետություններում ամենազանազան դրսևորումներ էին ստանում: Հայաստանում՝ հայ բոլշևիկների միջավայրում, դա ընկալվեց որպես բացարձակ ճշմարտություն, և բացառվեց դավանած գաղափարներից որևէ, նույնիսկ փոքր շեղում դեպի ազգայնականություն: Իհարկե, երկար ժամանակ չէր անցնելու. ընդամենը մի քանի ամիս, և հայ կոմունիստներից շատերն աստիճանաբար իրենցից թոթափելու էին ոչ քիչ պատրանքներ և անցնելով դաժան փորձությունների միջով՝ գալու էին դեպի ազգայինը:

Սակայն առջևում էր, իսկ այստեղ խոսքը 1920 թ. ամռան դեպքերի մասին էր, երբ ադրբեջանցի կոմունիստ գործիչները զբաղված էին ոչ թե պրոլետարական ինտերնացիոնալիզմի տեսական խնդիրներով, այլ պրակտիկ գործերով: Ի տարբերություն հայ գործիչների՝ նրանք շատ ավելի գործնական մարդիկ դուրս եկան, եղան օրվա քաղաքական կարգախոսներով քիչ հրապուրվող կամ ընդհանրապես չհրապուրվող իրապաշտ մտածողներ և սթափ դատողներ: Հատկապես պատմական այդ ժամանակահատվածում նրանց բնորոշ եղավ ժամանակի ոգուն ու ստեղծված իրադրությանը ճարպկորեն հարմարվելու բնազդը: Նրանք մինչև վերջ ազգայինը մղում էին առաջին գծի վրա՝ Ադրբեջանի շահերը համարելով գերագույն, իհարկե, չմոռանալով ինտերնացիոնալիզմի կարգախոսների մասին, չհոգնելով հավաստիացնել ում որ պետք է, թե իրենք ազգային շահերը կապում են հեղափոխության շահերի, մասնավորապես Արևելքի ժողովուրդների քաղաքական զարթոնքի, նրանց հակաիմպերիալիստական պայքարի շահերի հետ, առանձին դեպքերում նույնիսկ խոսելով համաշխարհային հեղափոխության թեմաներով: Բայց թզենու տերևով երկար ժամանակ մերկությունը ծածկելու հարկը չկար, քանի որ թուրքերի ազգային շահերն այլ բան էին պահանջում:

Ադրբեջանցի կոմունիստ ղեկավարները, որոնց թվում գերակշռում էին բացահայտ հակահայ դիրքորոշում ունեցողները, քաջ գիտակցում էին, որ բոլշևիկյան կառավարության արևելյան քաղաքականությունը լիովին համապատասխանում էր իրենց ազգային շահերին, ուստի «վիճելի» տարածքների հարցին մոտենում էին զուտ պանիսլամական-մուսավաթական դիրքերից: Խոսքով համաձայնություն տալով խորհրդային կենտրոնական կառավարության այն տեսակետին, թե այդ տարածքների՝ Հայաստանին կամ Ադրբեջանին պատկանելու հարցը պետք է վճռվեր հանգիստ պայմաններում՝ հաշվի առնելով դրանց բնակչության էթնիկական կազմը և պատմական պատկանելությունը, գործով հակառակն էին անում. փորձում էին, որքան հնարավոր է, հարևանների հաշվին ավելի շատ տարածքների տեր դառնալ, դրանց տեղի բնակչության զանգվածների ցանկությանը հակառակ ավելացնել թուրք բնակչության թիվը և հատկապես ամենակարևորը՝ օրինականացնել բռնագրավվածը:

Այսպիսով՝ 1920 թ. ամռանն առկա էր մտածողության երկու ուղղություն և երկու գործելակերպ՝ հայ կոմունիստների՝ ընդհանուր ու վերացական և ադրբեջանցի կոմունիստների՝ ճշգրիտ ու գործնական: Պատմությունը խոսեց վերջիններիս օգտին:

Նարիման Նարիմանովի կառավարությունը ամեն կերպ նպաստում էր, որ երեկվա մուսավաթական առավել ակտիվ գործիչները, որոնք Ադրբեջանի խորհրդայնացման առաջին օրերին ձերբակալվել էին, ազատ արձակվեին և ներգրավվեին «խորհրդային շինարարության» մեջ: Դրա համար բավական էր, որ երեկվա ամենակատաղի մուսավաթականները, հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները «ազնիվ խոսք» տային, թե անդավաճան ծառայելու էին նոր կարգերին: Սրանց թվում էին, ինչպես արդեն ասվել է, գեներալներ Ալի-Աղա Շիխլինսկին, Սամեդբեկ Մեհմանդարովը, Հուսեին խան Նախիջևանսկին, մուսավաթական կառավարության ներքին գործերի նախարար Ջևանշիրը, տասնյակ ու հարյուրավոր ուրիշ մուսավաթական գործիչներ:

Անդրադառնալով այս խնդրին՝ Նժդեհը գրել է. «Խորհրդային զորքերը, ոտք դնելով Ադրբեջան, ուժեղացրին մեր ակտիվ թշնամիներին – թաթար և տաջիկ, որոնք անպաշտոն կերպով, բայց փաստորեն վաղուց էին թշնամական գործողություններ սկսել հայ ժողովրդի դեմ»[1]:

Ղարաբաղի հայությունը, որ մուսավաթական և թուրքական ուժերի դեմ երկարատև կռիվներում կարողացել էր պահպանել իր ինքնուրույն անկախ գոյությունը, այժմ Կարմիր բանակի բռնի ուժով ստիպված էր ենթարկվել Ադրբեջանի շովինիստ կառավարությանը:

Ադրբեջանը նույնպիսի հետևողական անհանդուրժողականություն էր դրսևորում Նախիջևանի գավառը Հայաստանին հանձնելու հեռանկարի հանդեպ:

---

[1] **Գ. Նժդեհ,** Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 78:

Բացահայտ ու գաղտնի ոտնձգությունները շարունակվում էին նաև հայկական Զանգեզուրի նկատմամբ: Եթե դեպքերը շարունակվեին զարգանալ այնպես, ինչպես նախատեսված էր Մոսկվայում և Բաքվում, ապա Զանգեզուրը նույնպես անխուսափելիորեն նույն բախտին էր արժանանալու, ինչին արժանացել էր Ղարաբաղը, և ինչին պիտի արժանանար Նախիջևանը:

Ինչպես արդեն նշվել է սույն ուսումնասիրության նախորդ էջերում, Զանգեզուրի մուսուլմանական մասը դեռ 1917 թ. վերջերին գավառից, փաստորեն, անջատվել և միացել էր հարևան ադրբեջանական տարածքներին: Այժմ, երբ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները վերջնականապես համոզվել էին Մոսկվայի թուրքամետ քաղաքականության մեջ, բացահայտորեն առաջ էին քաշում նաև հայկական Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու հարցը: Ըստ որում, ադրբեջանցիների մտքով անգամ չէր անցնում, թե Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը վիճելի են. նրանք հարցն արդեն վերջնակապես լուծված էին համարում՝ գտնելով, որ այդ երկրամասերը անվիճելիորեն պատկանում էին Ադրբեջանին:

Ադրբեջանի կառավարության ռուսերեն «Կոմունիստ» պաշտոնաթերթը 1920 թ. ամռանը «Խորհրդային Ադրբեջանի տարածքներով» ընդհանուր խորագրի տակ պարբերաբար լուրեր էր տպագրում նաև Ղարաբաղից ու Զանգեզուրից՝ դրանով իսկ փորձելով հաստատել, թե այդ երկրամասերը պատկանում էին Ադրբեջանին: Խորագրի «Զանգեզուր» ենթավերնագրի տակ թերթը հուլիսի 30-ի համարում գրում էր, որ «Զանգեզուրը Կարմիր բանակի կողմից գրավվելուց հետո [ադրբեջանցի] փախստականները ետ են վերադառնում իրենց բնակավայրերը», որ Բաքվում պատրաստվում են Զանգեզուրում խճուղային նոր ճանապարհների կառուցման նախագծեր, Զանգեզուրի և Բաքվի միջև վերականգնվում է հեռագրական կապը, որը խափանված էր 1918 թ. ի վեր և այլն[1]:

ՀՀ արտգործնախարարության կողմից կառավարությանը ներկայացված հերթական տեղեկագրի մեջ նշվում էր, որ թուրքերը գավառի հայ բնակչության շրջանում ուժգին քարոզչություն էին մղում՝ հորդորելով հպատակվել Ադրբեջանին՝ այլապես սպառնալով բնաջնջումով: Իր հերթին Խալիլ փաշան, որ, Մոսկվայից վերադառնալով Բաքու, հուլիսին եկել էր Գորիս, Զանգեզուրի հայերին առաջարկել էր ընդունել Ադրբեջանի հպատակությունը՝ նախազգուշացնելով, որ հակառակ դեպքում նրանց հետ կվարվի այնպես, ինչպես վարվել է Տաճկաստանի հայության հետ[2]:

Երևան ուղարկած զեկուցագրերից մեկում Նժդեհը գրում էր.

«Ադրբեջանը գործում է: Նրա հարյուրավոր ագենտները, իրենց տարած պյուռոսյան հաղթությամբ արբեցած, օրնիբուն չափչփում են բուն Զանգեզուրի

---

[1] Տե՛ս “Коммунист” (Баку), 1920 г., 20 июля: Թերթը «Խորհրդային Ադրբեջանի տարածքներով» խորագրի տակ Զանգեզուրի մասին զանազան նյութեր է տպագրել նաև 1920 թ. հետագա ամիսներին (տե՛ս, օրինակ, հոկտեմբերի 3-ի, հոկտեմբերի 27-ի և այլ համարներ):

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 392-393, ց. 2, գ. 94, թ. 9-10:

և Սիսիանի գյուղերը և համոզում, հավատացնում ժողովրդին, որ «Սովետական Ռուսաստանը ստիպել է Հայաստանի կառավարությանը ձեռք քաշելու Զանգեզուրից, որ այդ երկիրը արդեն տրված է Ադրբեջանին» և այլն, և այլն:

Գլխատված ու ահաբեկված ժողովուրդը լսում է այդ բոլորը ու անզոր կատաղությամբ անիծում և՛ թշնամու կողմն անցած, իր տականքը կազմող մի բուռն կաշառված դավաճաններին, և՛ յուր ղեկավարներին, որոնք այնքան հանցավոր հեշտությամբ տեղի տվեցին թշնամու ողորմելի ուժերի առաջ»[1]:

Նժդեհի հետախուզությունն ու հակահետախուզությունը, որոնք աշխատում էին մեծ արդյունավետությամբ և ժամանակին բացահայտում թշնամու մտադրությունները, իրենց ձեռքը գցեցին 1920 թվի ամռանը Ղարաբաղում գտնվող, Ադրբեջանի կուսակցական և պետական ղեկավար աշխատող Ասադ Կարաևի՝ հուլիսի 19-ին Շուշիից գրած հույժ գաղտնի նամակը՝ ուղղված Զանգեզուրի գավառից անջատված մուսուլմանական մասի ղեկավարությանը: Այս նամակը Նժդեհը հատուկ գրությամբ ուղարկեց Երևան՝ Հայաստանի ռազմական նախարարին: Գրության մեջ նշված էր. «... Ուղարկում եմ ձեռքս ընկած մի դոկումենտ, որից երևում է, որ մեծամասնականները, ընդառաջելով Ադրբեջանի քաղաքական ձգտումներին, համառորեն ջանում են զինաթափել, տնտեսապես քայքայել, գլխատել և ապա տեղահանել կամ բնաջնջել Զանգեզուրի հայությանը»[2]:

Կարաևի նամակում ասված էր.

«Ընկերնե՛ր: Ձեր հաջողությունները խիստ ուրախացնում են մեզ: Մենք բոլորովին չենք կասկածում, որ Բաքվից հատկացված մոտ 100 միլիոն ռուբլի գումարը անօգուտ չի անցնի: Թո՛ղ ալլահը օրհնի փողի ուժը, որն ավելի շատ բան կարող է անել, քան ուժեղ զորքը: Ովքեր գիտեն հայերի հոգեբանությունը, նրանք միշտ կդառնան նրանց տերերը: Չկա մի հայ, որ փողով չծախի ամեն ինչ: Այդ ազգը, փողից բացի, ոչ մի սրբություն չի ճանաչում: Եվ հենց դրանով կարելի է բացատրել հայ լրտեսների, գործակալների բազմաքանակությունը: Ոչ մի երկրում հնարավոր չի փողով անել այն, ինչ՝ հայերի մեջ: Սա փաստ է: Խեղճ ու դժբախտ հրեաներին զուր են մեղադրում դրանում: Ես այս մասին երկար եմ գրում, որպեսզի ձեզ ու բոլոր ընկերներին համոզեմ, որ խորապես սխալ է եղել ձեր հին քաղաքականությունը, այսինքն՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը զորքերով գրավելու քաղաքականությունը: Մենք գիտենք, որ մեր զորքերը ջախջախվեցին ու նահանջեցին, իսկ այսօր զորքերի փոխարեն մեր փողը հրաշքներ է գործում: Նորից ու նորից կրկնում եմ խորհուրդս՝ չափսոսալ ոչ մի գումար, ավելացրեք ռոճիկները, տվեք պարգևավճարներ և այն ամենը, ինչ նրանք ուզում են»: Այնուհետև հայտնելով, որ «կառավարությունը որոշել է Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 16:
[2] ՍՔՊՈՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 10, թ. 8:

միացնելու համար հատկացնել 200 միլիոն ռուբլի»՝ նա միաժամանակ հրահանգում էր շտապել, քանի որ «իրավիճակը կարող է հանկարծ փոխվել»: Նա նշում էր, որ Անգլիան քնած չէ, և Բաքվում կասկածներ և ենթադրություններ կան, որ նա կարող էր Թուրքիային իր կողմը գրավել: Եթե դա տեղի ունենար մինչև Զանգեզուրը Ադրբեջանին միացնելը, ապա Զանգեզուրը կարելի էր դարձյալ կորած համարել: «Դեհ, ալլահը թող օրհնի մեզ, փութացե՛ք, ժամանակը չի սպասում... Ընկերական ողջույնով՝ Ասադ Կարաև»[1]:

Մի քանի օր անց՝ հուլիսի 21-ին, Ա. Կարաևը Շուշիից նույն հասցեով երկրորդ նամակն էր գրում, որը նույնպես Զանգեզուրյան հետախուզության ջանքերով հայտնվեց Նժդեհի մոտ: Ահա այդ նամակը. «Ընկերնե՛ր: Եկած ընկերները պատմում են, որ մինչև այժմ դեռ զինաթափված չի Զանգեզուրի գյուղերի 90 տոկոսը, սա տխուր փաստ է: Բայց ավելի տխուրն այն է, որ մինչև այժմ Զանգեզուրի հայությունը չի գլխատված (չի թողնված առանց առաջնորդների), նրա մտավորականությունը և զինվորական պարագլուխները մինչև այժմ շարունակում են մնալ գյուղերում: Վաղը, ապստամբության դեպքում, նրանք կդառնան ապստամբության պարագլուխներ և դուրս կհանեն մեր ուժերը Զանգեզուրից: Նորից ու նորից կրկնում եմ՝ ժամանակը չի ներում: Աշխատեցե՛ք գիշեր-ցերեկ: Ջանացե՛ք, որ բոլոր աչքի ընկնող ու երևելի հայերը ձերբակալվեն: Աքսորն ու առևանգումը մի մեծ բան չէ (դժվար չէ): Կանցնեն օրեր, դրությունը կփոխվի, և նրանք կրկին կվերադառնան իրենց երկիրը: Մի՛ կողմ թողեք մարդասիրությունը: Դրանով չի կարելի պետություն ստեղծել, երկրներ նվաճել, խաղաղ ապրել: Այստեղի ընկերներն այնքան էլ գոհ չեն Գորիսի հայկական հեղկոմի անդամներից, աշխատեցե՛ք վերընտրել հեղկոմը և այդ ընթացքում ընտրել միայն մուսուլմանների և մեզ հայտնի ռուսների: Մոտ օրերս Գորիս կժամանի Արմենակ Ղարագյոզյանը: Նա ուշանում է փող ստանալու կապակցությամբ: Մինչև չստանա 22 միլիոն ռուբլի՝ չի մեկնի: Լավ ժամանակներ են հարստանալու, ինչո՞ւ նա չօգտվի դրանից: Դե՛հ, թող անուշ լինի, որ մեր կառավարությունը տալիս է նրան: Նա (Ղարագյոզյանը) խոստանում է յոթ օրվա ընթացքում Զանգեզուրը միացնել Ադրբեջանին: Ձենք կասկածում, որ շուտով մեզ կուրախացնեք Ղափանը միացնելու լուրով: Եթե չունեք ուժ, ապա ունեք փող: Ինչո՞ւ եք հապաղում այդ ապստամբած շրջանի հարցում, արդարանալով մի ինչ-որ «Աժդահ փաշայով» (խոսքը Նժդեհի մասին է: – *Ա. Ս.):* Ձե՛ռք առեք օրհնված միջոցներ: Հայերից որին էլ երեք միլիոն ռուբլի տաս, նա կմատուցի ձեզ այդ մարդու (այսինքն՝ Նժդեհի: – *Ա. Ս.)* գլուխը:

Եթե փողի կարիք ունեք, հեռագրեցե՛ք, կուղարկենք: Ողջույնով՝ Ասադ Կարաև»[2]:

Ապա նամակի վերջում նա ավելացրել էր հետևյալ հետգրությունը՝

---

[1] ՍՔՊՌՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 10, թ. 9:

[2] Նույն տեղում, թ. 10:

«Մարտիկներով հարուստ որոշ տեղերում հայերին թուլացնելու նպատակով սպանեցեք մի ռուս ռազմիկի և դրանում մեղադրեցեք հայերին: Գիտե՞ք, թե ռուսները ինչ կանեն: Զանգեզուրում մի՛ թողեք ոչ որևէ կարգին մարդու, ոչ էլ հարստություն, որպեսզի այդ անիծյալ ցեղը այլևս չկարողանա ոտքի կանգնել: Ռուսաստանում այդպես են արել, այդպես պետք է անեք նաև դուք: Ասաղ Կարան»[1]:

Կաշառված ազգուրացներին նկատի ուներ Նժդեհը՝ գրելով. «Բաքվի մի քանի տասնյակ կաշառված հայերով Ադրբեջանը տեր դարձավ Ղարաբաղին: Սովետականացած Ղարաբաղը վարակեց բուն Զանգեզուրի որոշ գյուղերը, և թշնամու՝ թալանի տենչով խելագարված սրիկայախմբերը, գրեթե առանց կռվի, մտան Գորիս: Վերջինս իր հերթին արագացրեց Սիսիանի անկումը: Ու այսօր այդ բոլորը՝ և՛ Ադրբեջան, և՛ բուն Զանգեզուր, ոտքի հանած իրենց բովանդակ ուժերը՝ և՛ զորք, և՛ տեռոր, և՛ թղթադրամների դեզեր, կաշվից դուրս են գալիս ընկճելու իրենց դեմ ծառացած Ղափանը, Գենվազը, Բաղաբերդը և Գողթանը»[2]:

Թշնամու խարդավանքները չէին կարող աննկատ մնալ Զանգեզուրի հայերից:

Կապանի, Գենվազի, Բաղաբերդի և Գողթանի 60 վաշտապետեր կոչով դիմեցին «խաբված զանգեզուրցիներին»՝ Գորիսի և Սիսիանի շրջանների բնակչությանը, որոնք «հաշտվել էին» Ադրբեջանին ենթարկվելու մտքի հետ:

«Ղափանը և յուր զինակիցները,– ասված էր վաշտապետերի կոչում,– խորապես ցավում են և զայրանում, որ դուք դեռ լուռ էք, որ դուք թույլ էք տալիս ձեր երկրի զենքը և ռազմամթերքը, հացն ու ուտեստը, գրաստներն ու լծկանները թշնամին դուրս տանի Զանգեզուրից... Ելեք կարմիր հագեք, մաքրեք ձեր գյուղերը, քավեք ձեր մեղքերը... Մահ և սարսափ, գնդակ ու կրակ, բոլոր տեսակի դավաճաններին, Զանգեզուրը Ադրբեջանին ծախող սրիկաներին:

Ոտքի՛, ի զե՛ն»[3]:

Զանգեզուրում բացահայտ դժգոհում և ընդվզում էին Ադրբեջանի ղեկավարների դեմ: Գորիսի և Սիսիանի շրջանների կոմունիստները փորձում էին մեղմել ժողովրդի զայրույթը, բնակչությանը համոզում էին վերաբերմունքը փոխել արդեն խորհրդային դարձած Ադրբեջանի հանդեպ, քանի որ այն իբր նախկին Ադրբեջանը չէր, բայց դրանից բան չէր ստացվում:

Ահա Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում 1920 թ. օգոստոսին տեղի ունեցած ծխական ժողովի արձանագրությունից մի հատված. «Օրակարգ՝ Բաք-

---

[1] ՍՔՊՌՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 10, թ. 9 (Ա. Կարանի այս նամակների մասին տե՛ս նաև «Մշակ», 1920 թ., 23 սեպտեմբերի):

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 16-ի շրջերես: Տե՛ս նաև **Գ. Նժդեհ,** Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 96:

[3] «Ցառաջ», 1920, 30 սեպտեմբերի:

վից եկած նորեկ ընկեր Հակոբ Մալյանի զեկուցումը: ...Ընկերը կոչ է անում, որ դուք, ընկե՛ր գյուղացիներ, չենթարկվեք վատ էլեմենտների պրովոկացիաներին և խորթ աչքով մտիկ տաք Ադրբեջան բառին: Այն միայն մի խոսք է, իսկ կյանքի մեջ գործադրվում է Ռուսաստանի խորհրդային ծրագիրը»[1]:

Սակայն Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների քաղաքականությանը «իրազեկ» նման մարդկանց ելույթները և խորհուրդները սպասած արդյունքները չէին տալիս:

1920 թ. ամռանը գավառի կենտրոն Գորիս քաղաքում ստացվեցին Ադրբեջանի կոմկուսի մեծ թվով անդամատոմսեր. դրանք իր հետ Բաքվից այստեղ էր բերել Արմենակ Ղարագյոզյանը: Այդ անդամատոմսերը տրվեցին Գորիս քաղաքի և Գորիսի ու Սիսիանի շրջանների մի շարք գյուղերի կոմբջիջների անդամների: Բայց շուտով կոմունիստներից շատերը անդամատոմսերը ետ ուղարկեցին գավառային կոմիտե՝ դրա փոխարեն պահանջելով Հայաստանի կոմկուսի անդամի տոմս: Անհրաժեշտ եղավ կոմբջիջներում «բացատրական աշխատանք» տանել, կոմունիստներին համոզել, որ Ադրբեջանի կոմկուսից ստացված անդամատոմսերը տրվում են ժամանակավորապես, մինչև Հայաստանի կոմկուսի անդամատոմսեր ստանալը:

Գորիսի շրջանի Գերու (Կյորու) գյուղի հեղկոմի 1920 թ. օգոստոսի 26-ի նիստի արձանագրությունում կարդում ենք. «Մենք՝ կոմունիստներս, ստիպված ենք անմիջապես կապ պահպանել Բաքվի հետ, մինչև Երևանից հարցը կպարզվի»[2]:

Միաժամանակ կոմբջիջները գավկոմից պահանջում էին Գորիս քաղաքում տպագրել Հայաստանի կոմկուսի անդամատոմսեր և շտապ ուղարկել տեղերը՝ կոմունիստներին բաժանելու համար:

Խնձորեսկ գյուղից կոմունիստ Հարություն Թաթարյանը գավառային կոմիտե ուղարկեց 30 հոգու ցուցակ՝ կից գրությամբ պահանջելով. «Այդքանի համար պատրաստի տոմսեր ուղարկե՛ք, իսկ դրա չափ էլ՝ առանց անուն և ազգանուն գրելու: [Տեղում] տոմսեր պատրաստե՛ք և ուղարկե՛ք: Բոլորը լինի 60 հատ»[3]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության զավթողական քաղաքականության դեմ վճռականորեն հանդես էին գալիս ոչ միայն Զանգեզուրի աշխատավորների լայն զանգվածները՝ Դաշնակցության գլխավորությամբ, այլև այդ բացահայտ շովինիստական քաղաքականության դեմ ընդվզում էին նույնիսկ գավառի կոմունիստներից շատերը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 167, թ. 6:

[2] Նույն տեղում, թ. 11:

[3] Նույն տեղում, գ. 165, թ. 2:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՆՈՐ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԿԱՊԱՐԳՈՂԹԻ ՎՐԱ: ԿԱՊԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Ինչպես վերևում ասվեց, օգոստոսի 10-ին՝ պայմանագիրը կնքելու օրը, Հայաստանի կառավարությունը Դրոյին ուղարկած հեռագրի միջոցով Կապանի հայկական զորքերի հրամանատար Նժդեհին կարգադրել էր թողնել Զանգեզուրը և անցնել Հայաստանի Հանրապետության տարածք: Բայց Նժդեհը հրաժարվել էր կատարել կառավարության որոշումը և հայտարարել էր, որ չի հեռանալու Կապարգողթից:

Կառավարության կարգադրությունը չկատարելու և չենթարկվելու համար Նժդեհը պետք է հետ կանչվեր՝ պատասխանատվության ենթարկվելու: Բայց Հայաստանի իշխանությունները այդ քայլին չգնացին՝ սպասելով իրադարձությունների հետագա զարգացմանը: Ավելին, որոշ ժամանակ անց կառավարությունը ձեռնպահ մնաց նման բովանդակության նոր հրաման տալուց, քանի որ ամեն ինչից երևում էր, որ Կապարգողթը առանց կռվի չի հանձնվելու: Եվ Նժդեհը որոշեց մինչև վերջին շունչը դիմադրել ու պաշտպանել Կապարգողթը: Նա վիրավոր էր և կարիք ուներ բուժման, բայց այդ մասին չէր մտածում, քանզի անկոտրում ոգի ու կամք ուներ:

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին ուղղած 1920 թ. օգոստոսի 23-ի և 25-ի թիվ 24, 25, 26 պաշտոնական զեկույցներում (որոնց պատճենները հասցեագրված էին ներքին և արտաքին գործոց նախարարություններին) Նժդեհը խնդրում էր՝ առանց ուշացնելու Կապարգողթին օգնության ուղարկել կանոնավոր զորամասեր: Նա կրկին ու կրկին հավաստիացնում էր, որ չնայած բոլշևիկները գրավել էին Ղարաբաղը, Գորիսն ու Սիսիանը, բայց Զանգեզուրի ոգին ընկճված չէ, որ Կապանը, Գենվազը (Արևիք), Բաղաբերդն ու Գողթանը պատրաստ էին կռվելու մինչև վերջ:

Կապարգողթը լիովին կտրված էր դրսի աշխարհից: Գորիսում և Սիսիանում խորհրդային զորքերն էին, աջից ու ձախից՝ Ադրբեջանի «բոլշևիկացած» թուրքերը, հարավում Պարսկաստանն էր՝ հարափոփոխ վերաբերմունքով: Այս պայմաններում Կապարգողթի ժողովրդի ներկայացուցիչները և զինվորական ղեկավարները օգոստոսի 25-ին հավաքվեցին Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, որտեղ տեղի ունեցան արարողություն և հանդես: Պահը ճգնաժամային էր. թշնամիներն ուժեղ էին, զանգեզուրցիները կորցրել էին իրենց երկրի մեծ մասը, բայց անհատնում էր նրանց ազատության տենչը, անկոտրում՝ Հայաստանի հետ մնալու կամքը: Նրանց համար անընմբռնելի և

անընդունելի էր, թե ինչու է հայկական գավառը հայտարարված «վիճելի տարածք»:

Կավարտում հավաքված ժողովրդական ներկայացուցիչները և զորամասերի հրամանատարները երդվեցին հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատության գաղափարին, կռվել մինչև վերջին շունչը: Նրանք ուխտեցին նաև անվերապահորեն ենթարկվել հրամանատար Նժդեհին, սրբությամբ կատարել նրա բոլոր կարգադրություններն ու հրահանգները:

Կավարտի տոնականորեն զարդարված եկեղեցում գնդապետ Նժդեհը օծվեց հրամանատար-դիկտատոր, և նրա մեջքին հանդիսավորությամբ կապեցին այդ պաշտոնը խորհրդանշող կարմիր գոտի[1]:

Կավարտ գյուղի եկեղեցական արարողությունից ու հանդեսից հետո Նժդեհը, որն այժմ պաշտոնապես հանդես էր գալիս որպես Ղափանի, Գենվազի, Գողթանի և Բաղաբերդի ռազմական ուժերի դիկտատոր-հրամանատար, նոր ուժերով սկսեց արագորեն համալրել ժողովրդական վաշտերը: Շրջելով Կապարգողթի գյուղերը՝ նա կրկին ու կրկին համոզվում էր, որ այդ երկրի հայ գյուղացիների ոգին բնավ կոտրված չէ, որ նրանք այսուհետև էլ պատրաստ են կրելու էլ ավելի մեծ զոհողություններ և կատարելու նոր խոյանքներ:

Օգոստոսի 30-ին Նժդեհը Հանքերից Երևան՝ ՀՀ զինվորական նախարարին, հաղորդեց Կապարգողթում տիրող ռազմաքաղաքական դրության մասին և ներկայացրեց հետագա պայքարի մի ամբողջ ծրագիր:

«Ես չգիտեմ, թե ինչով կվերջանան մեր հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև սկսված բանակցությունները,– գրում էր Նժդեհը,– սակայն, քաջ գիտեմ, որ Ադրբեջանին զիջել ապստամբ Կապարգողթը, նշանակում է մեծապես դժվարացնել մեր ժողովրդի ինքնապաշտպանության գործը»[2]:

Դիկտատոր-հրամանատարը նշում էր, որ իրենք որոշել են կառչել Կապարգողթի ամեն մի բարձունքից, որ ոխերիմ թշնամին ի վիճակի չլինի մշտական կրակի ու տեռորի տակ պահել նրա ժողովրդին: «Զեռքից տալով Ղափանի, Գենվազի, Գեղվաձորի ու Գողթանի բնական ամրությունները, Արարատյան հարթավայրերում մենք հեշտությամբ չպետք է կարողանանք կազմակերպել ու վարել մեր ժողովրդի ինքնապաշտպանության դժվարին գործը»[3]: Նա գտնում էր, որ թշնամուն զիջել Զանգեզուրը և Գողթանը, որոնք Հայաստանի Հանրապետության համար կատարում են ամրակուռ բերդերի դեր, նշանակում է ոչ միայն զգալիորեն վտանգել Հայաստանի դրությունը, այլև մահվան դատապարտել Կապարգողթի և Բաղաբերդի ազգաբնակչությանը:

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 152:

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 21:

[3] Նույն տեղում:

Ահա թե ինչու այդ ազգաբնակչությունը վճռել է մեռնել, բայց չստրկանալ, շեշտում էր Նժդեհը: Վերջինս նշում էր, որ բուն Զանգեզուրը և Սիսիանը գրաված հակառակորդը լավ գիտեր, որ այդ շրջանների նվաճումով դեռ տերը չէր Զանգեզուրի: «Մեր թշնամուն պետք է Խալիլ և Նուրի փաշաների ուժերը ջարդող հաղթական Կապանը, նրա Խուստուփը, Գեղվաձորի բերդերն ու բարձունքները, Գողթանի Ղափուջուղը, Գենվազի Այիչանգլը, Կապարգողթի այդ փոքր Մասիսներն են պետք, որոնց տիրելով ևս ընդմիշտ պետք է տեր դառնա Զանգեզուրին»: Բայց Նժդեհը համոզված էր, որ դա չի կարելի թույլատրել անգամ կյանքի գնով:

Ուստի հրամանատար-դիկտատորը Երևանին խնդրում էր. «Մի՛, մի՛ լքեք այս գերազանցորեն հերոս ու հայրենանվեր ժողովրդին, մի՛ զիջեք նրա սրբազան երկիրը, որը իր ծոցի մեջ տեղ է տվել մեր պատմությանը զարդարող հերոսներից ամենամեծերին՝ Դավիթ Բեկին, Թորոս իշխանին: Ոչ մի զիջում: Զիջումը գերություն է, կոտորած ու մահ մեզ համար: Եթե չպետք է տեր կանգնեք մեզ, միացած պահեք մեզ մեր յոթն անգամ սիրած Հայաստանին, թողեք մեզ բախտի կամքին, մենա՛կ, անկա՛խ:

Մենք, որ ապրել ենք ազատ ու հաղթական կյանքով, հպարտ ու հերոսական մահով մեռնել էլ գիտենք:

Աստված և իմ սիրտը իմ Հանրապետության հետ»[1]:

Մյուս կողմից՝ իրենց ուժերն էին խմբավորում Կարմիր բանակն ու թուրք-ադրբեջանական ուժերը՝ Զանգեզուրի մնացյալ մասին վերջնական մահացու հարված հասցնելու համար:

1920 թ. օգոստոսի կեսերին որոշվեց 11-րդ Կարմիր բանակի թիվ 248, 249, 250, 251 և 252 ռուսական գնդերից կազմել հարվածող մի զորախումբ, որը պետք է առաջ շարժվեր Կապան–Գենվազ ուղղությամբ, օղակի մեջ առներ այդ երկու շրջանները, շրջապատեր և ջախջախեր Նժդեհի զորամասերը: Ռուսական հարվածող զորախմբին աջակցելու էին Նախիջևանում և Զաբրայիլում գտնվող թուրք-բոլշևիկյան զորամասերը՝ խփելով Նժդեհի թիկունքին:

Հարվածող զորախմբի գաղափարի հրապարակ գալուն զուգընթաց՝ 28-րդ դիվիզիայի՝ Շուշիում գտնվող շտաբից դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին և դիվիզիայի զինկոմ Բերեժկոն գաղտնի հեռախոսագրով հրահանգ իջեցրին նույն դիվիզիայի՝ Զանգեզուրում գտնվող զորամասերի հրամանատարությանը:

Հրահանգում ասված էր, որ Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում խորհրդային իշխանության ամրապնդմանը մեծապես խոչընդոտում էին Դրոյի նոր հարձակման վտանգը Վայոց ձորի կողմից և հատկապես Կապանի հանքերի շրջանում ամրացված «գնդապետ Նժդեհի բանդաների առկայությունը»:

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 78, թ. 25:

Նշվում էր, որ նա զենքի տակ ուներ ընդամենը 200-300 մարդ, բայց նրանց թիվը շուտով կարող էր աճել մինչև 1000 հետևակ և 200 հեծյալ կռվողների, քանի որ գնդապետի թույլտվությամբ բերքը հավաքելու համար գյուղերն անցած զինյալները շուտով կվերադառնային իրենց վաշտերը:

Հետախուզության տվյալների հիման վրա Նեստերովսկին և Բերեժկոն տեղեկացնում էին՝ հակառակորդն ուներ 9 լեռնային և 4 դաշտային հրանոթ, 18 գնդացիր, և այդ կրակային ոչ մեծ հզորությամբ նա իր ձեռքում պահում էր Կատարի գործարանների շրջանը և դրան հարող Կավարտ, Արծվանիկ, Սևքար, Գյուտկում, Վաչագան և ուրիշ գյուղեր. պաշտպանական գիծը կիսաօղակաձև ձգվում էր Կատարի գործարանների արևմտյան, հյուսիսային և արևելյան կողմերով, հատկապես աչալուրջ հսկվում էր Կատարի գործարաններին մոտ ընկած շրջանը[1]: Այնուհետև նշվում էր, որ «այդ բանդաների վերացման համար այժմ պահն ամենահարմարն է»՝ նկատի առնելով, որ հացահատիկի բերքահավաքի ամենաեռուն շրջանն էր, և այդ պայմաններում Նժդեհի համար անհնարին կլիներ իր վաշտերը արագորեն համալրել նոր ուժերով:

Նշելով Կատարի գործարանների և Հանքերի շրջանի վրա հարձակման հիմնական ուղղությունները՝ դիվիզիայի հրամանատարն ու զինկոմը այնուհետև հրահանգում էին. «Կատարի գործարանների գրավումից հետո Գորիս է ուղարկվում գրավված ամբողջ ավարը՝ թնդանոթները, արկերը, գնդացիրները, փամփուշտները, ավտոմոբիլները և այլն, ինչպես նաև ուղարկվում են ձերբակալված հակահեղափոխական սպաները: Խորհրդային իշխանություն հաստատելու և նրա ու Կարմիր բանակի նպատակները բնակչությանը բացատրելու նպատակով մի քանի միտինգներ կազմակերպելուց հետո գնդերը վերադառնում են Գորիս: Օպերացիան սկսվում է օգոստոսի 28-ից ոչ շուտ, ռազմական արշավը, հաշված նաև զորամասերի վերադարձը Գորիս, տևում է 10 օր»[2]:

Ապա, միանգամայն արհամարհելով հակառակորդի ուժերը, Նեստերովսկին ու Բերեժկոն ցուցում էին տալիս. «Զորամասերը առաջանում են, ունենալով թեթև հանդերձանք, մատակարարվում են միայն անհրաժեշտ քանակի պարենով, զինամթերքով ու բեռնակիր գումակով»[3]:

Տեղեկանալով առաջիկայում դեպի Կապան կարմիր զորքերի առաջխաղացման մասին՝ տեղի թուրքերի ղեկավարները նամակներով ու խնդրանքներով Կարմիր բանակի հրամանատարներին շտապեցնում էին օր առաջ սկսել հարձակումը:

Կապանի շրջանի թրքությունը պահը հարմար էր համարում Կարմիր

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 122, թ. 1:

[2] Նույն տեղում, թ. 2:

[3] Նույն տեղում:

բանակի ձեռքով վերջնականապես հաշվեհարդարի ենթարկելու տեղի ողջ հայությանը և իրականացնելու շրջանը լիովին թրքացնելու վաղեմի ծրագիրը:

1920 թ. օգոստոսի 23-ին 28-րդ դիվիզիայի շտաբից վերադասին էին փոխանցել 84-րդ հրաձգային բրիգադի հրամանատարին և զինվորական կոմիսարին գրած «Ղափանի շրջանի թուրք փախստականների ներկայացուցչի» հետևյալ դիմումը, որ նա Շուռնուխ գյուղում հանձնել էր Բարգուշատի շրջանի միլիցիայի պետ Ա. Մալչանովին:

«Ղափանի շրջանի 30 հազար փախստական մասուլմանների անունից,– ասված էր դիմումի մեջ,– ես խնդրում եմ միջոցներ ձեռնարկել մեզ ազատելու դաշնակների լծից: Մենք մեր հերթին կարող ենք կռվի դաշտ հանել 500 լավ, փորձված մարտիկներ, որոնք Կարմիր բանակի հետ ձեռք ձեռքի տված կգնան դաշնակներից մաքրելու Ղափանի շրջանը: Մենք չենք առաջնորդվում ազգային վրեժով, քանի որ գիտենք, որ Կարմիր բանակը դա թույլ չի տա: Եթե Կարմիր բանակը մեզ շուտով չազատագրի, ապա կարող ենք ոչնչանալ, քանի որ մենք զենք չունենք, և փախստականների մեծ մասը հիվանդ է: Հուսով եմ, որ Ղափանի շրջանը մաքրելուց հետո մեզանից շատերը կմնան Կարմիր բանակի շարքերում մինչև քաղաքացիական պատերազմի ավարտը»[1]:

Կապանի շրջանը «դաշնակներից մաքրելը» թուրքերի իրական մտադրությունների քողարկումն էր, քանզի նրանք առիթը բաց չէին թողնում Կարմիր բանակի զորքերի հրամանատարներին համոզելու, որ դաշնակցականներ են Կապանի և, ընդհանրապես, Զանգեզուրի բոլոր հայերը, և որ նրանք բոլորն էլ խորհրդային իշխանության և Ռուսաստանի թշնամիներ են: Հետևապես «դաշնակներից մաքրելու» պահանջը հավասարազոր էր գավառը «հայերից մաքրելու» պահանջին:

Հարվածող զորամասի կազմավորման նպատակով օգոստոսի 25-ից սկսվեց զորամասերի արագ վերախմբավորումը: 84-րդ բրիգադի հրամանատար Գ. Սեմյոնովին հրամայվեց Գորիսում և Անգեղակոթում կենտրոնացնել 250-րդ և 251-րդ գնդերը՝ հրետանու հետ: 32-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադի հրամանատար Ա. Գ. Նիկիտինը հրաման ստացավ ուժերը կենտրոնացնել Գորիսում, բայց 70-80 սրից բաղկացած մեկ հեծելավաշտ ուղարկել Բազարչայ, զորափակոց կազմել Կսըր սարի վրայով: Նախիջևանում գտնվող 1-ին հեծյալ գնդի հրամանատար Տերեխովն առաջադրանք ստացավ մեկ հեծելավաշտ ուղարկելու Ջահրի, մյուսը՝ Կարմալինովկա՝ դրանցով ստեղծելով զորափակոցներ Շահթախտ–Խոկ–Զնաբերդ–Սուլթանբեկ–Քյուքի գծով: Միաժամանակ հրամանատարությունն անհրաժեշտ միջոցներ էր ձեռնարկում՝ իմանալու, թե Կարմիր բանակի զորամասերի մոտակա առաջխաղացման

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 125, թ. 1:

կապակցությամբ ինչ մտադրություններ կարող են ունենալ մի կողմից՝ քեմալականները, որոնք դեռևս բնավորված էին Նախիջևանում, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Կարմիր բանակին օգնություն ցույց տալու համար տենդագին աշխատանքի լծվեցին Զանգեզուրի խորհրդայանացված շրջանների հեղկոմները և կոմբջիջները: Գավառային կոմիտեն քարոզչական լայն գործունեություն ծավալեց բնակչության շրջանում, որպեսզի ցույց տա, թե Կարմիր բանակը միայն ու միայն ունի ազատագրական նպատակներ: Փորձում էին մարդկանց համոզել, թե բոլշևիկները գավառ են եկել ոչ իբրև քեմալական թուրքերի և Խորհրդային Ադրբեջանի դաշնակիցներ, ինչպես ներկայացնում էին դաշնակցականները, այլ իբրև ազատարարներ:

Հատկապես կարևորություն էր տրվում Կապանին, որը պատրաստվում էր դիմադրության: Տարբեր ճանապարհներով այնտեղ ուղարկվեցին Գորիսում տպագրված զգալի քանակությամբ թռուցիկներ ու կոչեր, որոնք տեղի կոմունիստների միջոցով ցրվում էին բնակչության շրջանում:

Ճիշտ է, բուն Զանգեզուրի (Գորիսի) և Սիսիանի շրջանների համեմատությամբ բոլշևիկյան շարժումը Կապանի շրջանում բավականին թույլ էր: Կապանի առաջին խորհրդայնացման նախօրյակին այնտեղ ընդամենը կար ձևավորված 5 անլեգալ կոմբջիջ, ինչպես նաև կային 45-50 ակտիվ կոմունիստներ այն գյուղերում, որոնցում չկային կազմակերպված բջիջներ: Բայց այդ ոչ մեծ ուժերով Կապանի բոլշևիկները՝ Բագրատ Հարությունյանի գլխավորությամբ, նկատելի գործունեություն էին ծավալել:

Հատկապես կազմակերպված էին Հանքերի, Շիկահողի, Ծավի, Կեմանցի, Սնքարի, Վաչագանի կոմունիստները: Այս գյուղերի և Հանքերի վրա ուժեղ էր Բաքվի ազդեցությունը, դրանց երիտասարդության զգալի մասը, որ տարիներ շարունակ աշխատում էր նավթահանքերում, մշտական շփման մեջ էր համերկրացիների հետ և ծննդավայր էր բերում բոլշևիկյան գաղափարներ[1]:

Հարվածող Կարմիր բանակի խմբավորումն արդեն պատրաստ էր շարժվելու Կապարգողթի վրա, երբ վերին հրամանատարությունից կարգադրություն եկավ՝ որոշ ժամանակով հետաձգելու առաջխաղացումը և սպասելու նոր հրամանի:

11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը ցուցում էր ստացել՝ Կապանի և Մեղրիի վրա զորքեր շարժելուց առաջ նորից փորձել Նժդեհին համոզել, որ նա այդ վայրերը հանձնի առանց կռվի: Կատարելով այդ հանձնարարականը՝ բանակի հրամանատարությունը անհրաժեշտ գտավ Զանգեզուրի գավառի կուսակցական և խորհրդային նորաստեղծ մարմինների ու բանակի ներկայացուցիչներից միացյալ մի պատվիրակություն կազմել, հանդի-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 325, թ. 2:

պել Նժդեհին և նրա հետ քննարկել խաղաղությամբ զենքերը վար դնելու հնարավորության հարցը: Բանակցելու համար Զանգեզուրի գավառային հեղկոմն իր կողմից պատվիրակներ նշանակեց Երեմիա Բակունցին և Բագրատ Հարությունյանին:

Պայմանավորվածության համաձայն՝ Գորիսի շրջանի Երիցաթումբ գյուղում բանակցություններ սկսվեցին Զանգեզուրի ազգային իշխանությունների և խորհրդային ներկայացուցիչների միջև. Նժդեհն անզիջում դիրք գրավեց:

Խորհրդային կողմի ներկայացուցիչները նորից փորձեցին համոզել, թե վիճելի տարածքներ, այդ թվում՝ Զանգեզուր, խորհրդային զորքեր են մտցվում ժամանակավորապես: Դա նշանակում է, որ այդ տարածքները «առայժմ» անցնում են Խորհրդային Ռուսաստանի տրամադրության տակ, և դրանց վրա չեն տարածվելու ո՛չ Ադրբեջանի և ո՛չ էլ Հայաստանի պահանջները, մինչև որ կստեղծվեն խաղաղ պայմաններ, և այդ պայմաններում կքննարկվեն դրանց՝ Ադրբեջանին կամ Հայաստանին պատկանելու հարցերը՝ հիմքում ունենալով ազգերի ինքնորոշման սկզբունքը: Ասվեց, որ նոր արյունահեղությունները ոչ մի օգուտ չեն բերելու խաղաղություն տենչացող հայ ժողովրդին, որ դիմադրությունը շարունակելու դեպքում Զանգեզուրի բնակչությունը նոր արհավիրքներ է ապրելու, ավելին, դա առաջ է բերելու նոր բարդություններ ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև: Բացառված չէր, զգուշացնում էին խորհրդային կողմի պատվիրակները, որ այդ բարդացումները կարող էին ճակատագրական լինել՝ սպառնալով նույնիսկ Հայաստանի Հանրապետության անկախությանը, նրա բուն գոյությանը:

Բանակցությունների ընթացքում Նժդեհը մերժեց խորհրդային կողմի բոլոր փաստարկները և հանդես եկավ հակափաստարկներով: Նա կտրականապես մերժեց Զանգեզուրից հեռանալու առաջարկը՝ հայտարարելով, որ միայն զենքը կարող է ելք որոշել ստեղծված դրությունից:

Իսկ որտեղի՞ց զենք զանգեզուրցիներին. չէ՞ որ ամբողջ երեք տարի Զանգեզուրը կտրված էր դրսի աշխարհից: Արդյո՞ք դիմադրության համար նրանք զենքի բավարար պաշար ունեին, թե՞ Նժդեհի ասածը պարզապես գեղեցիկ մեռնելու բաղձանք էր:

Եռամյա գոյության անկախ տարիներին Զանգեզուրի բնակչությունը ինքնապաշտպանության նպատակով, այնուամենայնիվ, կարողացել էր զանազան տեղերից զենք հայթայթել: Զենք էր տեղափոխվել նաև Հայաստանի Հանրապետության Երևանի և Քեշիշքենդի ռազմական պահեստներից: Վերջապես, խաղաղ տարիներից Կապանի հանքերում մնացած պայթուցիկ նյութերից պատրաստվում էին մեծ թվով ձեռնառումբեր և փամփուշտներ:

Խորհրդային գրականության մեջ տեղ էր գտել այն չհիմնավորված տեսակետը, թե անգլիացիները 1918-1920 թթ. զենքով օգնում էին Զանգեզուրի

հայերին: Բ. Խուդավերդյանը, վիճարկելով Ս. Սողոմոնյանին, ճիշտ է նկատել, որ անգլիացիները Նժդեհին օգնություն ցույց տալ չէին կարող, որովհետև գերմանա-թուրքական բլոկի պարտությունից հետո, այսինքն՝ 1918 թ. աշնան վերջերից սկսած, գրեթե մինչև Ադրբեջանի խորհրդայնացումը, նրանք ամեն կերպ ջանում էին հայկական Զանգեզուրը միացնել մուսավաթական Ադրբեջանին, հետևապես խոսք լինել չէր կարող անգլիացիների կողմից գավառի պաշտպանական ուժերին ռազմական օգնություն ցույց տալու մասին:

1920 թ. օգոստոսի 26-ին 11-րդ Կարմիր բանակի 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկուն տրվեց օպերատիվ հրաման՝ առաջ շարժվել դեպի Կապանի հանքերի շրջանը և գրավել այն: Այդ գործողությունը վերջացնելուց հետո զորքերը պետք է շարունակեին առաջխաղացումը և գրավեին Մեղրիի շրջանը:

Սեպտեմբերի 1-ին Կարմիր բանակի զորքերը Գորիսի շրջանից երկու ուղղությամբ շարժվեցին դեպի Կապան: Մեկ զորասյունը առաջացավ Գորիս–Կապան խճուղով, մյուսը՝ Տաթև–Տանձավեր–Խոտանան գծով:

Երբ Կարմիր բանակի զորքերը, Տաթև գյուղից դուրս գալով, ուղղություն վերցրին դեպի Տանձավեր գյուղ, գավառային կոմիտեի և գավիեղկոմի նախաձեռնությամբ Գորիսի Հալիձոր գյուղում, որն այն ժամանակ նույնանուն ենթաշրջանի կենտրոնն էր, խորհրդակցության հավաքվեցին Զանգեզուրի բոլշևիկյան նախկին ընդհատակյայինները, խորհրդային և կուսակցական ակտիվիստները: Խորհրդակցությունը, որ վարում էր գավառային հեղկոմի նախագահի տեղակալ Միշա Չալյանը, որոշում ընդունեց՝ անմիջապես կազմակերպելու կոմունիստական զինված ջոկատ և Կարմիր բանակի զորամասերի շարքերում կռվի գնալու Կապարգողթի դեմ: Խորհրդակցությունից անմիջապես հետո բոլոր մասնակիցները ցուցակագրվեցին ջոկատին: Նրանց թվում էին Ալեքսանդր Մելիք-Դադայանը, Հարություն Թովմասյանը, Անդրանիկ Խաչատրյանը, Բախշի Հովհաննիսյանը, Բագրատ Խաչատրյանը, Բեգլար Զորունցը և ուրիշներ[1]: Նույն օրը ցուցակագրվեցին նաև ուրիշ կոմունիստներ ու անկուսակցական ակտիվիստներ, և ջոկատի թիվը հասավ 75 մարդու: Գավիեղկոմի կոմունիստական ջոկատի հրամանատար նշանակվեց Յաշա Մկրտչյանը, որը մինչ այդ գլխավորում էր Կապանի շրջանային ժողովրդական միլիցիան:

Ջոկատը գործում էր Զանգեզուրում գտնվող 11-րդ բանակի զորամասերի հետ սերտորեն համագործակցած և ղեկավար ցուցումներ էր ստանում Կարմիր բանակի հրամանատարությունից[2]:

Հաջորդ օրը, դուրս գալով Հալիձոր գյուղից, կոմունիստական ջոկատը

---

[1] Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք 2, էջ 632-633:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 90, թ. 3:

Չըռչըռ սարի վրայով ուղղվեց դեպի ռազմաճակատ: Ճանապարհին այն համալրվեց զինված գյուղացիներով: Օրինակ՝ Մալդաշ գյուղում կամավոր զինյալներին միացավ մի ստվար խումբ: Առաջացած ռուսական զորամասերին դեռ չհասած՝ ջոկատի կազմում արդեն հաշվվում էր 150 մարդ:

Գորիս–Կապան խճուղով շարժվող խորհրդային զորասյունն արագ երթով մոտեցավ Զեյվա (Դավիթ Բեկ) գյուղի տարածքին, ապա, զարգացնելով հարձակումը, ամրացավ գյուղից հարավ ընկած բարձունքներում:

«Այդ շրջանի գյուղերից,– գրել է Նժդեհը,– կռվին մասնակցեց միայն մեկը՝ Զեյվան, և կռվեց արիաբար: Սեպաձև թաղված լինելով Բարգյուշատի կրծքի մեջ՝ նա, Ղափանի առաջամարտիկի դերում, ավելի քան երկու ամիս դիմադրեց թշնամու բոլոր հարձակումներին և մարզվեց, թրծվեց կռիվների մեջ»[1]:

Կապանի վրա հարձակման ընթացքում գավառի խորհրդային մարմինները և կոմունիստական կազմակերպություններն ամեն ինչով աջակցում էին Կարմիր բանակի զորամասերին: Կոմունիստների առջև խնդիր էր դրված հետախուզել Կապարգողթի զորամասերի դասավորությունը և կարևոր տեղեկություններ հաղորդել Կարմիր բանակի զորքերի հրամանատարությանը, գաղտնի քարոզչություն տանել Նժդեհի զինվորների մեջ՝ նպատակ ունենալով կազմալուծել զորամասերը: Կարևոր համարվեց նաև կուսակցականներից և անկուսակցական գյուղացիներից ու բանվորներից եռանդուն ջանքերով կազմակերպել զինված ջոկատներ, որոնք Նժդեհի զորամասերին պետք է հարվածեին թիկունքից և փակեին նրանց ճանապարհները:

Նժդեհը որոշել էր Գորիս–Կապան խճուղով հարձակվող Կարմիր բանակի զորասյունը կանգնեցնել Դավիթ Բեկ–Արծվանիկ գծի վրա, ուստի նրա զորամասերն ամրացել էին այդ գծի բնական ամրություններում: Կանոնավոր վաշտերից բացի նա այստեղ էր բերել նաև Կապանի գյուղերից եկած գյուղացիական թռուցիկ ջոկատներ:

Սկսվեց արյունալի ընդհարումը, որի հետևանքով երկուստեք զոհեր եղան, բայց խորհրդային զորամասերի կորուստները շատ ավելին էին: Նժդեհի կողմից հատկապես կատաղի էին կռվում գյուղերից եկած զինյալները: Կարմիր բանակի զորքերի հետ Դավիթ Բեկ գյուղի ուղղությամբ հարձակմանը մասնակցում էր նաև Ադրբեջանի թուրքերից կազմված մի մեծ ջոկատ[2]:

Գնալով կարմիրբանակայինների ճնշումն ուժեղացավ, և գյուղացիներից շատերը, թողնելով դիրքերը, հեռացան տները: Չնայած Նժդեհը ջանքեր գործադրեց՝ նրանց ետ բերելու, բայց նրան այդ բանը չհաջողվեց:

Սեպտեմբերի 1-ից կռիվներն այդ ճակատում վերսկսվեցին և շարու-

---

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 98:

[2] Տե՛ս նույն տեղում:

նակվեցին մեծ չափերով ու չտեսնված կատաղությամբ: Խորհրդային զորամասերը միաժամանակ գործողություններ սկսեցին Ինջաբելի, Գեղվաձորի և Գյազբելի կողմից: «Կարմիր հրամանատարությունը ոտքի էր հանել Բարգյուշատի, Խանլղի, Հաքյառուի, Այրիչայի և Գեղվաձորի բովանդակ ուժերը: Օգնական ուժեր են հասել և Ջիբրայիլից»[1],– գրում էր Նժդեհը:

Բոլշևիկները գիտեին, որ Կապանի ուժերի գրեթե 80 %-ը չի մասնակցում կռիվներին, որովհետև ժողովուրդը խոտհարքն ու հունձը սկսված լինելու պատճառով թողել էր զենքը և վերցրել մանգաղը:

Նժդեհը նշում էր. «Թշնամին գիտե և այն, որ ես պետական կանոնավոր զորք չունեմ, որ այդ օրերին ստանձնելով երկրի ինքնապաշտպանությունը՝ գյուղացիությանը հնարավորություն եմ տվել, որպեսզի նա ավարտի իր դաշտային աշխատանքները: Այժմ թշնամին գիտե այդ բոլորը և վճռականորեն շարունակում է կռիվը»[2]:

Արյունահեղ ընդհարումներից հետո՝ սեպտեմբերի 2-ին, խորհրդային զորամասերը գրավեցին Դավիթ Բեկը, ապա, առանց հանգիստ առնելու, բուռն հարձակում սկսեցին Դավիթ Բեկ–Կարմրաքար (Ղզլդաշ)-Ինջաբել գծով: Նոր ընդհարումներ եղան: Հայկական ուժերը նահանջեցին, և բոլշևիկները գրավեցին Արծվանիկ, Չափնի, Սևքար, Ընկենաց, Բարաբաթում գյուղերը:

Երբ կարմիրբանակայինները մտան Արծվանիկ, այնտեղ նրանք ոչ մի բնակչի չհանդիպեցին, քանի որ բոլորը փախել էին ներքևի ձորերը կամ շրջանի հեռավոր գյուղերը՝ վախ ունենալով, թե Ադրբեջանի թուրքերը և բոլշևիկները դաշն կնքած գալու են և «կացիններով կոտորելու են բոլորին»: Նույնիսկ գյուղի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար Արարատ Տեր-Հարությունյանին չհաջողվեց իր հորդորներով գյուղացիներին ետ պահել փախուստից[3]: Կարմիր բանակի զորամասերի հարձակումը հաջող էր զարգանում նաև Տաթև–Տանձավեր–Խոտանան ուղղությամբ: Այս գծի վրա Նժդեհի ուժերը տևական դիմադրության համար ավելի քիչ էին պատրաստ, ուստի համարյա առանց կռվի թողնելով Վերին ու Ներքին Խոտանան գյուղերը՝ շտապ հեռացան: Առաջ շարժվելով՝ կարմիրբանակայինները համարյա առանց դիմադրության գրավեցին նաև Զորաստան (Խլաթաղ), Շրվենանց, Առաջաձոր, Նորաշենիկ և այդ ենթաշրջանի մյուս գյուղերը:

Ռազմակալելով Կապանի շրջանի զգալի մասը՝ խորհրդային երկու զորասյուները շարժվեցին դեպի Հանքեր, մեկը՝ Ինջաբելի, մյուսը՝ Գեղվաձորի վրայով և գրավեցին այն:

Հաշվի առնելով Հանքերի և նրա շրջակա վայրերի՝ որպես պաշտպանա-

---

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 98:

[2] Նույն տեղում, էջ 99:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 245, թ. 37:

կան բնական ամրությունների կարևորությունը՝ Նժդեհը որոշեց բոլոր միջոցներով դրանք պահել ձեռքում: Հեծելազորով շտապ զբաղեցնելով Ողջի գետի ձախ ափի Զալինգյոլ սարալանջը՝ նա այնտեղ հարմար դիրքեր գրավեց՝ նպատակ դնելով հանկարծակի հարձակում կատարել Կարմիր բանակի զորամասերի վրա և ջախջախել դրանք: Նժդեհը հատկապես մեծ կարևորություն էր տալիս Գերասիմ Աթաջանյանի հեծյալ խմբի դիրքին, որը բռնել էր սարալանջի հարավարևմտյան փեշերը:

Երբ երևաց խորհրդային զորասյան առաջապահը, հայկական զորամասերը, դուրս գալով իրենց դիրքերից, ուժեղ գրոհ ձեռնարկեցին՝ փորձելով զորասյունը սեղմել կիրճի մեջ: Հանկարծակի սկսած այդ գրոհը սկզբում սասանեց ռուս զինվորների մարտակարգը, բայց, շատ չանցած, զորասյան հրամանատարությունը կարողացավ արագ կողմնորոշվել: Սրընթաց հակագրոհով կարմիրբանակայինները Նժդեհի ջոկատներին ետ մղեցին ելման դիրքերը: Ուժեղ ճնշման տակ հայկական ուժերը նահանջեցին Ողջի գետի աջ ափը: Սեպտեմբերի 6-ին ռուսական զորքը մտավ Կապանի հանքերը:

Կարմիր բանակի զորամասերին օգնություն էին ցույց տալիս Կապանի շրջանի բոլշևիկները: Առանձնապես ակտիվ էին գործում Շիկահող, Ծավ, Կեմանց, Սևքար գյուղերի կոմբջիջները: Նրանց կազմակերպած զինված ջոկատները թիկունքից հարվածում էին Նժդեհի զորամասերին և կորուստներ պատճառում: Ռազմական գործողություններ պլանավորելիս Կարմիր բանակի զորամասերի հրամանատարները հաշվի էին առնում տեղի կոմունիստների և նրանց համակիրների առաջարկությունները. վերջիններս ռուսական զորքերին ուղեկցում էին առավել հարմար վայրերով, կարմիրբանակայինների հետ երթեր կատարում դժվարանցանելի լեռանցքներով և անտառներով:

Սեպտեմբերյան օրերին հատկապես աչքի էին ընկել Շիկահող գյուղի կոմունիստները: Գյուղի կոմբջիջն աշխատում էր մեծ եռանդով. ակտիվ քարոզչություն էր տանում ոչ միայն տեղի, այլև հարևան գյուղերի բնակիչների շրջանում, նրանց տրամադրում Նժդեհի ու նրա զինակիցների դեմ, շատերին ներգրավում կռվի մեջ: Շիկահողի կոմբջիջում էին աշխատում Բագրատ Հարությունյանը, Պատվական և Փառանձեմ Բաբայանները, Լևոն Ստեփանյանը, Երեմ Կարապետյանը և ուրիշներ:

Շիկահող գյուղի կոմբջիջի գործունեության մասին Բաքվում լույս տեսնող հայերեն «Կոմունիստ» թերթը գրում էր. «Այդ յաչեյկան (կոմբջիջ) և Շիկահողն ընդհանրապես մեծ դեր են խաղում խորհրդային իշխանությունը գյուղերում տարածելու գործում: Երբ կարմիր զորքը նորից ետ է դառնում և քշում Նժդեհին, շիկահողցիք կարմիր դրոշով գալիս են Հանքերը, զորքը տանում իրենց գյուղը և այնտեղ հաստատում խորհրդային իշխանություն»[1]:

[1] «Կոմունիստ», 1920, 20 օգոստոսի:

Այնուհետև թերթը նշում էր, որ Նժդեհը Ղափանի իր նախկին զինվորներին ուղղված նամակում գրել է, թե այդ գյուղի բնակչությունն իրեն անգամ մի զինվոր չի տվել, «մինչդեռ այսօր կարմիր զորքերին 30 զինված կամավոր է տալիս»[1]:

Կարմիր բանակի զորամասերի մուտքը Կապանի հանքեր հոգեփոխություն առաջ բերեց այն գյուղերում, որոնք դեռ չէին գրավվել բոլշևիկների կողմից: Դրանց բնակիչների մի մասը պահանջում էր, առանց դիմադրություն ցույց տալու, ընդունել խորհրդային իշխանությունը: Առանձին գյուղական համայնքների կողմից պատվիրակներ ուղարկվեցին Հանքեր, Խոտանան և Շիկահող՝ այնտեղից իրենց մոտ հրավիրելով Կարմիր բանակի զորամասեր և կոմունիստական ջոկատներ: Այդ ճանապարհով և համարյա առանց դիմադրության խորհրդային ազդարարվեցին Արծվանիկի, Նորաշենիկի, Ողջիի, Շիկահողի ենթաշրջանները:

Կապանի հանքերը գրավելուց հետո ստեղծվեց շրջանային հեղկոմ՝ հետևյալ կազմով՝ Բագրատ Հարությունյան՝ նախագահ, անդամներ՝ Մամիկոն Մարտիրոսյան, Գարեգին Գևորգյան և ուրիշներ, թվով՝ 7 մարդ[2]: Բ. Հարությունյանը միաժամանակ շրջանի կուսակցական աշխատանքների ղեկավարն էր[3]:

Սկզբնական շրջանում հեղկոմը ամենից շատ զբաղված էր Կապանի հայկական և ադրբեջանական գյուղերի միջև բորբոքված ընդհարումները դադարեցնելու խնդրով, բայց աստիճանաբար նրա գործունեությունն ընդլայնվեց՝ ընդգրկելով տնտեսական, քաղաքական և ռազմական ոլորտները: Ստեղծվեց նաև շրջանային ժողովրդական միլիցիա, որի պետ նշանակվեց Գորիսի շրջանի Շինուհայր գյուղի կոմբջջի հիմնադիր-անդամ, կոմունիստական ջոկատներից մեկի հրամանատար Յաշա Մկրտչյանը: Նույն ջոկատի անդամներ Մ. Չալյանը, Ա. Մելիք-Դադայանը, Հ. Թովմասյանը և ուրիշներ, ինչպես նաև Կապանի շատ կոմունիստներ բուռն գործունեություն ծավալեցին գյուղերում հեղկոմներ կազմակերպելու ուղղությամբ: Նրանք քաղաքական աշխատանք էին տանում գյուղացիական զանգվածների մեջ՝ նոր իշխանության շուրջ նրանց արագ համախմբելու համար: Գավառում հաստատված հեղկոմները՝ որպես պետական և քաղաքական մարմիններ, տեղերում սկսեցին հետևողականորեն անցկացնել խորհրդային իշխանության քաղաքականությունը:

Նժդեհը բոլոր միջոցներով դիմադրություն էր կազմակերպում Կապանի շրջանի այն գյուղերում, որոնք ռազմական տեսանկյունից առավել կարևոր էին:

---

[1] «Կոմունիստ», 1920, 20 օգոստոսի:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 245, թ. 6:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 397, թ. 45:

Իր բնական բացառիկ դիրքով հատկապես կարևորություն էր ստանում Քաջարանը: Այդ գյուղը մեծ նշանակություն ուներ նաև Գենվազի և Գողթանի հետ կապ պահպանելու առումով: Ահա թե ինչու Նժդեհը ամրացրեց Քաջարանը՝ նպատակ ունենալով նաև իր ձեռքում պահել Գենվազից Գողթան տանող ճանապարհը:

Եթե չհաշվենք Կապանի շրջանի առանձին վայրերում, հատկապես Բաղաբերդի (կամ Քաջարանի) ձորի գյուղերում Նժդեհի զինված ջոկատների ներկայությունը, ապա կարելի է ասել, որ արդեն 1920 թ. սեպտեմբերի առաջին տասնօրյակում խորհրդային իշխանություն էր հաստատվել շրջանի տարածքի մեծ մասում: Իսկ մի քանի օր հետո Կարմիր բանակի զորամասերի ռազմակալման տակ էր գտնվում արդեն Կապանի ողջ շրջանը՝ բացի Շիշկերտ և Մազրա գյուղերից[1]: Շիշկերտը, փաստորեն, դարձել էր «սահմանագլուխ» Կապանի և Մեղրիի շրջանների միջև:

Եվ այսպես, Սյունիքի երեք կարևոր շրջանները՝ բուն Զանգեզուրը (Գորիսը), Սիսիանը և Կապանը 1920 թ. սեպտեմբերի կեսերին ամբողջովին գրավված էին բոլշևիկյան ուժերի կողմից:

[1] Տե՛ս «Արնոտ գիրք», էջ 7, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 397, թ. 44:

ԳԵՆՎԱԶՑԻՆԵՐԻ ՄԱՔԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Բոլշևիկները տարակույս չունեին, որ Կապանում կրած ծանր պարտությունից հետո Նժդեհը վայր կդնի զենքը և կձգտի խաղաղ ճանապարհով լուծել խնդիրը, խորհրդային զորամասերին թույլ կտա մտնել Զանգեզուրի վերջին տարածքը՝ Գենվազ (Մեղրիի շրջան): Բայց այդպես չեղավ: Ընդհակառակը, Նժդեհը և նրա խմբապետերն ու վաշտապետերը Կապանում կրած պարտությունը համարեցին «բոլշևիկյան խարդավանքների» արդյունք և պատրաստվեցին մինչև վերջ շարունակել կռիվը:

Հայաստանի կառավարության որոշմամբ արդեն գնդապետի կոչում ստացած Նժդեհը իր ուժերը կենտրոնացրեց Գենվազում: ՀՀ զինվորական նախարարին ուղարկած նամակում նա գրում էր. «Կռվի ծանրության կենտրոնը փոխադրված է Արևիքի շրջան (Մեղրի)»[1]:

Ինքը՝ Նժդեհը, սակավաթիվ հետևորդներով (Աշոտ Մելիք-Մուսյան, Գեղեոն Տեր-Մինասյան, Գերասիմ Աթաջանյան և ուրիշներ)[2] բարձրացավ Կապանի վրա տիրաբար իշխող, ժայռակոփ լանջերով Խուստուփ լեռը:

Խուստուփը, որ ծովի մակերևույթից 9000 ոտք բարձրություն ունի, հարմար դիրքով ընկած է Կապանի և Գենվազի սահմանագլխին: Նրա՝ Կապանի կողմը անտառածածկ է, իսկ գագաթը՝ լերկ: Լեռն ունի բնական բազմաթիվ թաքստոցներ: Դրա ստորոտով է անցնում Կապանից Գենվազ տանող ճանապարհը:

«Խուստուպ լե՛ռը:

Այդ հպարտ հսկային էր վիճակված մեր լեռնաշխարհի ազատության ու փառքի խորհրդանիշը լինելու,– գրում է Նժդեհը:– Ինձ հետևող մի բուռ ապստամբների հետ ապաստանելով այդ լեռան բարձունքներին, մենք շարունակեցինք թշնամուն զգացնել տալ դավիթբեկյան ուխտի անպարտելիությունը: ...Ղափանը թողնելուց ընդամենը երեք օր անց՝ Խուստուպը պատրաստ էր արդեն չափվելու ամենաուժեղ թշնամու հետ...»[3]:

Խուստուփի կատարից մինչև փեշերը, որոշ կետերի վրա ժայռերի թե մացառների տակ նստած էին Նժդեհի զինվորները՝ զինանոցում ունենալով պայթուցիկ մահաբեր տակառը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 198. ց. 1, գ. 73, թ. 14:

[2] Տե՛ս **Ա. Արծրունի**, Դեպի Երեւան եւ վերադարձ, մաս 2-րդ, «Հայրենիք», 1941, մարտ, թիվ 5 (221), էջ 86:

[3] **Գ. Նժդեհ,** Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 100:

Լեռան կարևոր դիրքը հնարավորություն էր տալիս շարունակելու դիմադրությունը: «Վճռել եմ հանուն... մեր ժողովրդի անկապտելի իրավունքների, շարունակել կռիվը մինչև վերջին փամփուշտը»[1],– ազդարարում էր Նժդեհը:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 6-ին, Գենվազի (Արևիքի) 13 գյուղերի ներկայացուցիչները հավաքվեցին Կալեր գյուղում՝ ժողովի: Ամեն գյուղից եկել էր երկու մարդ: Ժողովին ներկա էին Նժդեհը և Աշոտ Մելիք-Մուսյանը:

Նախագահում էր Ա. Մելիք-Մուսյանը, և օրակարգում մեկ հարց էր. ստեղծված վիճակում ի՞նչ դիրք պետք է բռնի Գենվազի հայությունը: Հարցի քննարկման շուրջ արտահայտվեցին գրեթե բոլորը: Վերջում ժողովականներին ուղղված խոսքով հանդես եկավ Նժդեհը և առաջարկեց իրեն տալ հստակ պատասխան՝ կռվելո՞ւ է Գենվազը, թե՞ ոչ: Ժողովականները երդվեցին հավատարիմ մնալ իրենց հրամանատարին: Նրանք Նժդեհին հավաստիացրին, թե գենվազցիները պատրաստ են մեկ մարդու պես պաշտպանել իրենց երկիրը:

Ժողովից հետո Գենվազի փրկության կոմիտեն իր հերթին հայտարարեց, թե 13 գյուղերի ներկայացուցիչների վճիռը լիովին արտահայտում է տեղի հայության կամքը՝ միաժամանակ ազդարարելով, որ «Գենվազը իր ուժերը դնում է ռազմական դրության մեջ, բռնում է բոլոր դիրքերը և սպասում երևանյան զորքերի երևալուն բուն Զանգեզուրում, ուր, միացած Ղափանի ուժերին, զարկե թշնամուն թիկունքից»[2]:

Փոքրիկ Գենվազը երդվեց շարունակել անհավասար կռիվը թվական անհամեմատելի առավելություն ունեցող հակառակորդի դեմ: Նժդեհը գրել է. «Նրան՝ գենվազցուն էր վերապահված լինելու ազատության Բեթլեհեմը*, ուր պիտի ծնվեր ու զարգանար Սյունիքի ազատությունը...»[3]: Գենվազի վճռականությունը հպարտությամբ էր լցրել բոլորի հոգիները: Ա. Մելիք-Մուսյանը Կալերի ժողովից հետո «ավելի քան հպարտ էր զգում իր հայ լինելու համար»[4]: Հպարտ էր և Արևիքի արի հրամանատարը, որի մեջ այդ օրը խոսում էր իր լեռների պաշտամունքը: Նրա մասին Նժդեհը հետագայում ասել է. «Նա՝ իմ ջահել զինակիցը, գտնում էր, որ չկա ավելի մեծ դժբախ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 13, թ. 8:

[2] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 101:

* Բեթլեհեմ-Բեթղեհեմ (եբր. - տուն հացի) – քաղաք Պաղեստինում՝ հնագույն Հուդա երկրում՝ Երուսաղեմից 15 կմ հարավ: Ըստ Հին կտակարանի՝ Իսրայելի թագավոր Դավթի ծննդավայրն է: «Բաբելոնյան գերությունից» (մ.թ.ա. 597-537) հետո հրեաները վերաշինել են ավերակ Բեթղեհեմը: Նրանք հավատում էին, թե այստեղ է ծնվելու իրենց ազատարարը՝ Մեսիան: Բեթղեհեմը սրբազան քաղաք է նաև քրիստոնյաների համար, որովհետև այնտեղ է ծնվել Հիսուս Քրիստոսը (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 2, Երևան, 1976, էջ 353):

[3] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 101:

[4] Նույն տեղում:

տություն, քան հայրենի լեռներից հեռու մեռնելը»[1]:

Սեպտեմբերի 6-ի երեկոյան շրջանի ներկայացուցիչները Կալերից ցրվեցին գյուղերը: Նույն ժամերին սուրհանդակները Խուստուփ տարան Գենվազի հերոսական ժողովրդի որոշումը, իսկ Նժդեհը, Ա. Մելիք-Մուսյանը և Գենվազի հրամանատարը մեկնեցին Շվանիձոր[2]:

Շվանիձորի հնամենի եկեղեցու ներսում և դրսում խռնված էր գյուղի ողջ հասարակությունը: Բոլորը սպասում էին Նժդեհին և Աշոտին: Կալերի ժողովի գերհանդուգն որոշումը մոլորեցրել էր գյուղացիներին, վախ առաջացրել նրանցից շատերի մեջ: Ելույթ ունեցավ Նժդեհը: **«Գյուղը ձերն է, ձերն է և կռվելու-չկռվելու իրավունքը, բայց գիտցեք, որ ձեր գյուղի դիրքերը, որպես ռազմաճակատ, որպես կարևոր ռազմագիտական կետ՝ Հայաստանինն է, իսկ կռիվն սկսելու իրավունքը՝ իմը:** Վաղը կտեսնեք, որ ոչ ոք չի կարող խանգարել ինձ և իմ զինվորներին մեռնելու այդ դիրքերի վրա:

Դե, ով ինձ հետ է, թող դուրս գա թշնամու դեմ, ով ինձ դեմ է, թող միանա թշնամուն...»[3]:

Հրամանատարի խոսքերը թափանցեցին ներկաների հոգիները: Անմիջապես գյուղի վաշտապետի շուրջը հավաքվեցին նրա զինվորները և ուղևորվեցին դիրքեր:

Նույն օրվա գիշերը Նժդեհը Ա. Մելիք-Մուսյանի և Գենվազի հրամանատարի հետ Շվանիձորից մեկնեց Մեղրի: Նժդեհը Մեղրին համարում էր ավելի քան մի շվեյցարական գյուղ, մեղրեցուն՝ Սյունիքի շվեյցարացի: Անվանի այդ գյուղը, ասում էր նա, իդեալ է հայ գյուղացիության համար՝ իր ծառ ու ծառաստաններով, խնամքով մշակված դաշտ ու այգիներով, իր մեղվաջան աշխատավորներով, համալսարանական ուսուցիչներով, տեղացի սպանեռով և վաշտապետերով:

Սեպտեմբերի 7-ի առավոտն էր: Մեղրիի ողջ բնակչությունը հավաքվել էր գյուղի կենտրոնում՝ «չինարի» տակ: Բոլորը լուռ ու մռայլ էին, բայց ոչ ընկճված:

Նժդեհը դիմեց հավաքվածներին: «Ժողովո՛ւրդ,– ասաց նա,– թշնամին առաջանում է առանց կռվի: Նա չի հաղթում, այլ խաբում է: Վա՜յ ձեզ, եթե Ղափանի պես դուք էլ խաբվեցիք: Արևելքի և արևմուտքի թրքությունը չպիտի հապաղի Արևիքի գերեզմանի վրա տոնելու իր վաղեմի երազի՝ Ադրբեջանի ու Տաճկաստանի միջև հողային կապ ստեղծելու իր ճիգերի հաղթանակը»[4]:

Նժդեհը հարց ուղղեց հավաքվածներին. «Կռվելո՞ւ ենք, թե՞ հանձնվելու

---

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 101:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի զոյամարտէն, «Հայրենիք», 1924, հունվար, թիվ 3, էջ 126:

[4] Նույն տեղում:

ենք թշնամուն»: Նա սպասում էր պատասխանի, և պատասխանը եղավ կտրուկ, զանգեզուրավարի: Այս և այն կողմից հնչում էին՝ ի զե՛ն, ի զե՛ն:

«Ի զե՛ն:

Որքա՛ն թափ ու թև կա այդ սեղմ խոսքի մեջ,– գրել է Նժդեհը: – Քիչ լեզուների է տրված հայոց այդ մի զույգ բառերի արտահայտչական թափը:

Լսելով կամ մտովի կրկնելով այդ ռազմականչը՝ պատկերում ես հանկարծակի արթնացած վագրին, որ ձգվում է հարձակվելու համար, արծվին, որ թափահարում է թևերը թռիչք առնելուց առաջ և նպատակասլաց հեծյալին, որի երիվարի սմբակները կայծակներ են արձակում»[1]:

Բոլորը միահամուռ պատրաստակամություն հայտնեցին անսասան կանգնելու հրամանատարի կողքին:

«Մի ժամ անց,– գրել է Նժդեհը,– գյուղում ծերերից, կանանցից և երեխաներից զատ չէր երևում զենք կրելու ընդունակ և ոչ մի անձ: Ուրախ էինք, որ դեռ կա մի անկյուն, ուր կարող է ապաստան գտնել հալածված ազատությունը, որ կան հավատարիմ և մաքուր ձեռքեր, որոնց կարելի էր վստահել մեր ազգային եռագույնի պաշտպանությունը»[2]:

Նժդեհը և իր զինակիցները չէին հաշտվում խորհրդային զորամասերի կողմից համարյա առանց դիմադրության Կապանի շրջանի գրավման փաստի հետ: Հրամանատարի հոգին դառնացած էր կապանցիների մի մասի կողմից այդօրինակ վարքագիծ դրսևորելու համար: Նա դյուրագրգիռ էր դարձել, բայց երբեք չէր կորցնում պաղարյունությունը: Պարտության կորուստների ցավը, սակայն, մեծ էր: Եվ նա տեղի ունեցածի պատճառը, որքան էլ զարմանալի է, տեսնում էր ոչ թե հակառակորդի հզորության կամ մեծաթիվ լինելու, այլ Կապանի ժողովրդի մարտական տրամադրությունների խաթարման մեջ:

Նժդեհը Գենվազից կապանցիներին ուղղեց իր առաջին կոչը, որ գիշերը սուրհանդակները հասցրին Հանքեր: Կոչում ասված էր.

«Ղափանցինե՛ր, ես՝ Դավիթբեկյան ուխտին հավատարիմ, շարունակում եմ մնալ քո լեռներում, ամպերի տակ, մենակ, վիրավոր ու ավելի հպարտ, քան էի:

Այժմ ես լիզում եմ քո և թշնամու ինձ հասցրած վերքերը և սպասում քեզնից խնդրածս վարպետների, որ գան, շուտ գան, կոպիտ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումը, քո բարոյական անկումը: Դու արիր այն, ինչ որ ուզում էր թշնամին: Նա գոհ է քեզանից, անչափ գոհ, բայց գիտե՞ս, Ղափա՛ն, թե որքա՛ն ուժեղ է նա ատում, արհամարհում քեզ:

---

[1] **Գ. Նժդեհ**, Բանտային գրառումներ, էջ 82:

[2] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 14, թ. 2:

Դու քո վիրավոր, սրտից զարնված հրամանատարին ես դավաճանել, լքել, մենակ թողել:

Գիտակցու՞մ ես, չափու՞մ կատարածդ տմարդության և դավաճանության անչափելի մեծությունը:

Ա՛ռ, ե՛տ առ քո ինձ տված անունը, որով խաբեցիր ինձ, կաշառեցիր ինձ, որ այսօր ինձ մենակ թողնես:

Տմա՛րդ ժողովուրդ, ինչո՞ւ են ուշանամ քո դավաճանները, քո լրտեսները, քո ահաբեկիչները: Ադրբեջանը հոգնեց իմ գլխին սպասելուց: Փոքրիկ գումար չէ երեք միլիոնը, ստացի՛ր և գործի՛ անց:

Նժդեհ

7 սեպտ. 1920 թ.,

Խուստուպյան լեռներ»[1]:

Բոլշևիկները Կապանին տիրելուց հետո պիտի ձգտեին կա՛մ հայ վաշտերը թափել Արաքսը, կա՛մ դրանք շպրտել Պարսկաստան:

Գենվազի պաշտպանության խնդրում կար մի ուրիշ մտահոգիչ պարագա: Օրդուբադում հավաքվել էին հակառակորդի մեծ ուժեր: Այնտեղ, Կարմիր բանակի զորքերից զատ, կային թուրքական չորս զորախմբեր և Շարուրի տեղահանված թուրք տարրերից կազմված մի զորամաս: Կասկած չկար, որ եթե հակառակորդը այդքան մեծ ուժեր էր կուտակել Օրդուբադում, ապա նա մտադիր էր Արևիքի վրա ուժեղ հարձակում գործել հենց այդ կողմից:

Ուստի Արևիքի արևմտյան՝ Կաքավաբերդի շրջանի ամրացումը խիստ կարևոր նշանակություն էր ստանում: Նժդեհը շտապում էր Կարճևան, ուր հավաքվել էր Կաքավաբերդի գյուղերի զինվորությունը:

Կաքավաբերդի կամ Բաղաբերդի շրջանը Նժդեհն անվանում էր Արևիքի փոքրիկ Չեռնոգորիա, որն իր չորս գյուղերով՝ Վահրավար, Կուրիս, Ագարակ և Գուդեմնիս, ընկած էր Ալանգյազ լեռան արևելյան փեշերին: «Ես չգիտեմ, չեմ ճանաչում մարդկային մի այլ հասարակություն, որի մեջ այնքան ջերմ և այնքան զորեղ լիներ լեռների սերը, պաշտամունքը, որքան Ալանգյազի ստորոտում բուն դրած այդ մի բուռ հայության մեջ: Օրդուբադի թրքության անհաշտ հարևանությունը տարիների ընթացքում կաքավաբերդցուց ստեղծել է մի եզակի մարտիկ, գրեթե միշտ զինված, անվրեպ խփող, շուտ բռնկվող և մի քիչ էլ անիշխանական»[2]:

Մինչև Նժդեհի Կարճևան գալը, Օրդուբադից այդտեղ էին եկել երկու

---

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 101, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 13, թ. 1:

[2] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, հոկտեմբեր, թիվ 3, էջ 127:

թուրք պատվիրակներ: Նրանք բերել էին խորհրդային հրամանատարության վերջնագիրը, որով Արևիքի հայությանը հրամայվում էր անմիջապես մաքրել Արաքսի ափով ձգվող խճուղին և հնարավորություն տալ Խորհրդային Ադրբեջանին միանալու Նախիջևանին[1]: Թուրք պատվիրակները հայ պաշտպաններին ահաբեկելու նպատակով ասում էին, որ Կարմիր բանակի զորքերի հետ Արևիքի դեմ բռունցք են կազմել թուրք-թաթար մեծաթիվ ուժեր: Նժդեհը գոհ էր, որ հայ գյուղացիները իրենք անձամբ լսել էին թուրք պատգամավորների շուրթերից դուրս եկած խոսքերն այն մասին, որ թուրքերը և բոլշևիկները միասին են: «Թուրք զորքերի ներկայությունը ավելի ևս պիտի բորբոքեր իմ զինվորների կատաղությունը՝ դարձնելով մեր հարվածները տարերային և վճռական»[2]:

Հասնելով Կարճևան՝ Նժդեհը ելույթ ունեցավ հավաքվածների առջև: Ունկնդիրներին համոզելու բան չուներ, քանի որ մինչև իր գալը թուրք պատվիրակներն արդեն դա արել էին: Նրա ելույթը դարձյալ ոգեշունչ էր, մարդկանց հոգիները գերող: Վերջում նա, դիմելով հավաքված զինվորությանը, հայտարարեց, որ կարող են տուն վերադառնալ բոլոր նրանք, ովքեր նոր են ամուսնացել, նոր տուն շինել կամ նոր այգու տեր դարձել, և նրանք, ովքեր... վախկոտ են[3]:

«Քիչ անց մեր ուժերը գունդառգունդ բարձրանում էին լեռները»[4],– հետագայում վերհիշել է Նժդեհը:

Ոչ ոքի, մասնավորապես՝ բոլշևիկների մտքով չէր կարող անցնել, թե փոքրիկ գավառակ Արևիքը, որի բնակչությունը հազիվ էր հասնում 8000-ի, արիություն կունենա ընդունելու Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև տաճիկների բազմաքանակ ուժերի նետած ձեռնոցը:

Կապանցիներին ուղղված առաջին կոչից երկու օր հետո՝ սեպտեմբերի 10-ին, Նժդեհը «Ղափանցիներ» վերտառությամբ նախատինքի երկրորդ թուղթն էր հղում նրանց:

«Քո մի մասի վախկոտության ու դավաճանության պատճառով,– գրում է նա,– թշնամին մտավ Ղափան և քո ռազմական ուժերի ամենաքաջանուն ու խիզախ մասը, կրակելով իր վերջին փամփուշտը, քաշվեց լեռները... Լուրերը թև առած գալիս հասնում են ինձ, որ դու շատ տեղ արդեն աղ ու հացդ ես պղծում՝ ինքդ գնում ու եկողի փեշը բռնած գյուղդ քաշում»:

Թշնամին խոստումներ տալով՝ փորձում էր լեռներից իջեցնել ապստամբ մարտիկներին, և դա որոշ չափով նրան հաջողվում էր: Իսկ լեռներում մնացողները շարունակում էին չճանաչել նվաճողների իշխանությունը և

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, հոկտեմբեր, թիվ 3, էջ 127:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Նույն տեղում:

ամեն ինչ անում էին սանձահարելու նրանց: Նժդեհը կապանցիներին կոչ էր անում. «Դեպի ի՛նձ, դեպի լեռնե՛րը»[1]:

Սեպտեմբերի 15-ին Նժդեհը ՀՀ զինվորական նախարարին (պատճենը՝ սպարապետ Նազարբեկյանին և ՀՅ դաշնակցության բյուրոյին) գրում էր. «Մեծամասնականները բռնաբար սովետականացած Ղափանի գյուղացիությանը հայտարարել են, որ «իրենք կռվում են ոչ թե Հայաստանի Հանրապետության դեմ, որը վաղուց է ձեռք քաշել Զանգեզուրից, և որը հայտնել է Լեգրանին, թե այս շրջաններում ոչ ռեգուլյար ուժեր ունի, ոչ էլ ներկայացուցիչներ, այլ Նժդեհի դեմ, որը զենք է վերցրել Սովետական իշխանության և նրա զորքերի դեմ»:

Նման պրովոկացիաներով թշնամին ձգտում է թուլացնել մարտնչող գյուղացիության ռազմական կորովը:

«Մեզ Նժդեհն է հարկավոր, ոչ թե ձեր երկիրը, և եթե նրան մեզ չհանձնեք՝ ձեր գյուղերը կրակի կմատնվեն, և Կարմիր բանակը կշարունակի մնալ ձեր շրջաններում և ապրել ձեր հաշվով»:

Նման զենքերով կռվող թշնամին իմ դեմ է հանել բռնաբար սովետականացած շրջանների կաշառված ամբողջ տականքը: Կռվում եմ: Խփվել է ձիս: Վիրավորված եմ»[2]:

Այդ օրը՝ սեպտեմբերի 15-ին, Խուստուփից Նժդեհն իր երրորդ գրությունն ուղարկեց Կապանի ժողովրդին, որին դիմելով՝ ասում էր. «Ժողովո՛ւրդ, ձեզ հետ խոսողը քո հրամանատարն է, քո վիրավոր, քո՝ սրտից զարնված հրամանատարը, որի սուրը վաղուց է, ինչ հանուն քո ինքնապաշտպանության, չի հանգստացել պատյանում»[3]: Նշելով, որ ինքը ոչինչ չի խնայել Կապանի ժողովրդի ազատության ու փառքի համար, որ այդ հողի վրա իր արյունն է թափվել, այնուհետև հիշեցնում էր. «Իմ սուրը յոթն անգամ մեծացրել է քո երկիրը և քեզ համար բացարձակ ապահովություն ստեղծել»: Բայց հրամանատարի սրտում չարություն չկար իր պաշտելի Կապանի ժողովրդի հանդեպ, թեև վերջինս «լքել էր» իրեն:

«Ներում եմ,– գրում էր նա,– թեև պատմությունը չի ների քեզ, և խնդրում՝ երբ ինձ սպանված գտնես, դիակս թաղի՛ր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երևա ինձ և՛ Ղափանը, և՛ Գենվազը, և՛ Գեղվաձորը, և՛ Գողթանը»[4]:

Այո՛, դառնացած էր հրամանատարը, բայց Կապանին այնքան ամուր կապված, այդ երկիրը այնքան սիրող նրա հոգին շարունակում էր փայփայել հույսը, թե կապանցու պարտությունը ժամանակավոր էր, և նա նորից էր

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 13, թ. 4:

[2] Նույն տեղում: Ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 178:

[3] Նույն տեղում, ֆ. 499, ց. 1, գ. 13, թ. 1:

[4] Նույն տեղում, թ. 2:

մտնելու իր դյուցազնական դերի մեջ: Ուստի նա Խուստուփի բարձունքից Կապանի ժողովրդին պատվիրեց. «...Հայացքդ մի՛ կտրիր Խուստուպից: Որքան հաճախ, որքան շատ նայես սև ու սեգ ամպերով ծածկված սարին՝ այնքան շուտ կգա, կհասնի փրկությունդ»[1]:

Սեպտեմբերի 17-ին Նժդեհը Կապանի ժողովրդին մի նոր գրություն հղեց, որտեղ նորից նախատինքի խոսքեր էր ուղղում նրան՝ հայրենի եզերքը պաշտպանել չկարողանալու համար[2]: Իսկ այդ ժամանակ Կարմիր բանակի հրամանատարությունը վերջին պատրաստություններն էր տեսնում՝ Գենվազը (Մեղրու շրջանը) գրավելու համար:

Կապանի Շիկահող գյուղի ակտիվ կոմունիստներից մեկը՝ Արտաշես Տեր-Մարտիրոսյանը, տասնամյակներ հետո վերհիշել է այդ օրերին Հանքերում իր հանդիպումը Կապանի հեղկոմի նախագահ Բագրատ Հարությունյանի հետ: Վերջինս նրան ասել էր. «Կարմիր բանակը շուտով կգրավի Մեղրու շրջանը: Հիմնական ուժերը կգնան Արաքսի ափերով: Անհրաժեշտ է անմիջապես վերադառնալ գյուղ և աշխատանք կազմակերպել Մեղրու գյուղերում՝ դաշնակների թիկունքում: Պետք է քայքայել նրանց թիկունքը և հեշտացնել Կարմիր բանակի մուտքը շրջան»[3]:

Կարճատև դադարից հետո Կարմիր բանակի զորամասերը շարժվեցին Գենվազ: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության կողմից ռազմական գործողությունների՝ նախապես մշակված պլանի համաձայն՝ ստեղծվել էին զորքերի արևելյան, հյուսիսարևելյան և արևմտյան խմբեր:

Զորքերի առաջին՝ արևելյան խումբը, որի կազմում հիմնականում ընդգրկված էր 20-րդ դիվիզիայի հեծյալ գունդը, խնդիր ուներ Շվանիձոր գյուղի ուղղությամբ արագ գործողություններ սկսելու, գրավելու Գենվազի կենտրոնի Մեղրի գյուղը, փակելու դեպի Պարսկաստան նահանջի ճանապարհը:

Զորքերի երկրորդ՝ հյուսիսարևելյան զորախմբի կազմում ընդգրկվեցին 28-րդ դիվիզիայի 84-րդ բրիգադի 250-րդ, 251-րդ, 252-րդ գնդերը: Զորքերի այս խումբը առաջադրանք ստացավ շեշտակի հարվածով ազատագրելու Բաղաբերդը, Քաջարանի ձորի գյուղերը և Տաշտունի լեռնանցքով իջնելու Մեղրի գետի հոսանքն ի վար՝ գրավելով դրա ավազանում գտնվող գյուղերը:

Զորքերի երրորդ՝ արևմտյան խումբն ըստ էության Նախիջևանում գտնվող 32-րդ դիվիզիայի առաջին հեծյալ գունդն էր: Այդ զորամասի առջև խնդիր դրվեց՝ Օրդուբադից դուրս գալով մտնելու Մեղրիի շրջան և ռազմական գործողություններ ծավալելու Մեղրի գետի ավազանում:

Իրենց հերթին, Զանգեզուրի գավհեղկոմը, գավառային կոմիտեն, բոլ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 13, թ. 3:

[2] Տե՛ս «Արնոտ գիրք», էջ 38:

[3] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 397, թ. 45:

շնիկյան կուսակցական բջիջները մի շարք կոնկրետ միջոցներ ձեռնարկեցին Գենվազում ծավալվելիք գործողությունների ընթացքում Կարմիր բանակի զորամասերին աջակցելու համար:

Սեպտեմբերի սկզբներին Գորիսում կազմակերպվեց կոմունիստական նոր ջոկատ, որի հրամանատար նշանակվեց Երեմիա Խուրշուդյանը: Ջոկատն անմիջապես մեկնեց Կապան և դրվեց 84-րդ բրիգադի հրամանատար Գ. Սեմյոնովի տրամադրության տակ:

Նույն օրերին 50 հոգուց բաղկացած կոմունիստական մի ուրիշ ջոկատ ստեղծվեց Կապանի շրջանի Շիկահող գյուղում: Այդ ջոկատը, Շվանիձոր գյուղի ուղղությամբ առաջ շարժվող առաջին զորախմբի հետ կռվելով, պետք է մտներ Մեղրի: Ջոկատի անդամները նաև առաջադրանք ստացան՝ Գենվազի գյուղերում լայն աշխատանք ծավալելու իշխանության նոր մարմիններ՝ հեղկոմներ կազմակերպելու համար: Մեղրու շրջանային հեղկոմի նախագահ առաջադրվեց համանուն շրջանի Գուդեմնիս գյուղից բոլշևիկ Համբարձում Համբարձումյանը[1]:

Գենվազի վրա շարժվող Կարմիր բանակի զորախմբերին աջակցելու համար գավառային կուսակցական և խորհրդային մարմինները ձեռնարկեցին նաև ուրիշ միջոցներ: Գորիսից հաճախ էին ռազմաճակատ մեկնում գավկոմի և գավհեղկոմի ղեկավար աշխատողներ Հ. Կամարին, Ե. Բակունցը, Ք. Մկրտչյանը, Սեյրին, Ա. Մելիք-Դադայանը, Մ. Մաշուրյանը, Մ. Չալյանը, Մ. Մանուչարյանը և ուրիշներ: Նրանք հանդիպումներ էին ունենում ռուս զինվորների հետ, հավաստիացնում, որ բոլոր միջոցներով օգնելու են Կարմիր բանակին:

Գենվազի բնակչությունը 1918-1920 թթ. անընդհատ ինքնապաշտպանական կռիվներ է մղել թուրքական զորամասերի և մուսավաթական հրոսակախմբերի դեմ, ուստի ատելությամբ էր լցված զավթիչների նկատմամբ և հակաթուրքական ու հակամուսավաթական ամեն մի գործողություն ընկալում էր որպես իր սրտին հարազատ գործ: Հակաթուրքական տրամադրությունները նոր ուժով բորբոքվեցին, երբ 1920 թ. հունիսին, այսինքն՝ Զանգեզուր և Նախիջևան խորհրդային զորքեր մտնելուց մեկ ամիս առաջ, քեմալականները և տեղի թուրքերը նորանոր կատաղի գրոհներ ձեռնարկեցին Գենվազի վրա, իսկ երբ խորհրդային զորամասերը, անցնելով Նախիջևան, կապ հաստատեցին քեմալական զորքերի հետ և համատեղ գործողություններ ձեռնարկեցին Զանգեզուրի դեմ, գենվազցիները դա ընկալեցին որպես հայության դեմ ուղղված համատեղ դաշինք, թեև Զանգեզուրի հայ բնակչության որոշ շրջանների համար այդ դաշինքի էությունն ու նպատակները դեռևս անըմբռնելի էին:

---

[1] Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք 2-րդ, էջ 648-649:

«Կարմիրները,– գրել է Նժդեհը,– գրավելով Կապանը, հոգեբանական նոր հեռատես հաշվով կաճապարեին գրավել Մեղրիի շրջանը՝ Արևիքը և մեզ սրբել, թափել Արաքսը:

Խուստուպի վրա թողնելով իմ մի բուռ մարտիկները, ես մեկնեցի Արևիք՝ խորհրդակցության հրավիրելու այդ շրջանի փրկության կոմիտեին»[1]:

Նժդեհի հետ էր «Գողթանի վշտակիրը»՝ Աշոտ Մելիք-Մուսյանը, որի նախագահությամբ, ինչպես ասվեց, սեպտեմբերի 6-ին Կալեր գյուղում գումարվել էր Արևիքի ներկայացուցչական ժողովը, որը որոշել էր. «Արևիքը, իր ուժերը դնելով ռազմական դրության մեջ, բռնում էր բոլոր դիրքերը»[2]:

Այդ բախտորոշ օրերին Հայաստանի բանակը, Նախիջևանում կռվի մեջ լինելով քեմալական զորքերի հետ, հնարավորություն չուներ օգնության գնալու Զանգեզուրին, մասնակից լինելու այնտեղ ծավալված դեպքերին:

Խորհրդային առաջին զորախումբը մարտեր սկսեց արևելքից Կապանի շրջանին սահմանակից Գենվազի Կալերի ենթաշրջանում՝ Շվանիձոր գյուղի ուղղությամբ: 20-րդ հեծյալ գնդի զորամասերին միացան Շիկահող, Ծավ, Կեմանց և շրջակա գյուղերի կոմունիստները[3]:

Հարձակման այդ պահը այսպես է ներկայացրել Նժդեհը՝ իր «Էջեր Լեռնահայաստանի գոյամարտեն» հոդվածում.

«Սեպտ[եմբերի] 10-ի լուսաբացին Շվանիձորի ճակատում զոռում են թշնամու զույգ թնդանոթները: Քիչ անց, նույն օրը, կարծեք որպես արձագանք, թնդանոթային բոմբյուններ են լսվում և Ալանգյազի կողմից:

Ռուս և թուրք գնդերը՝ արևելքից, տաճիկ և ռուս թաբուրները՝ արևմուտքից, գրեթե միաժամանակ, թնդանոթների և գնդացիրների փոթորկային կրակի պաշտպանությամբ ճգնում են սեպաձև թաղվել Արաքսի հայկական ափի և ապստամբ Արևիքի միջև... Կռիվը տեղի է ունենում այնպիսի պարագաներում, որ, երբ անզոր է ռազմավարությունը, գործում է պատերազմական հրաշակերտ բարոյագիտությունը:

Արևելքից թշնամին է, արևմուտքից՝ թշնամին, հյուսիսից՝ թշնամին, հարավից՝ Արաքսը:

Կռիվը տարվում է մի շրջագծաձև ճակատի վրա:

Թիկունք չունենք, ճակատ է ամեն մի թիզ տարածությունը: Ռազմամթերքը սակավ է, հացը՝ պակաս, կապ, հաղորդակցություն չունենք դրսի աշխարհի հետ: Մեկը կռվում է տասնյակների դեմ, տասը՝ թշնամու վաշտերի դեմ, Գենվազը՝ մի մեծ պետության դեմ:

Կրակում ենք քիչ, այն էլ՝ միայն 700 քայլի և ավելի մոտիկ տարածությունների վրա, այն էլ՝ հրամանով:

---

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 37:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 397, թ. 46:

Ցերեկը ինքնապաշտպանվում ենք, գիշերը և միգամած եղանակներին՝ «գայլաբար» անցնում թշնամու թևն ու թիկունքը»[1]:

Սեպտեմբերի 12-ի գիշերը Նյուվադի գյուղի ուղղությամբ Նժդեհի վաշտերն անցան Կարմիր բանակի զորամասերի թիկունքը: Կատաղի ընդհարումներ տեղի ունեցան, որի հետևանքով հայկական ուժերը ստիպված հեռացան ելման դիրքերը, իսկ կարմիրբանակայիններն ամրացան կարևոր բարձունքներում:

Նժդեհի վաշտերը համառ դիմադրություն ցույց տվեցին Շվանիձոր գյուղում: Սեպտեմբերի 15-ին Երևան ուղարկած իր զեկուցագրերից մեկում նա գրում էր. «Երրորդ օրն է, ինչ հերոսաբար դիմադրում է Շիվանիձորը: Այս շրջանի գյուղացիությունը դեռ ինձ հետ է: Հույս ունեմ մի քանի օր ևս դիմագրավել, մինչև որ ձեզնից կստանամ օգնություն և որոշ հրահանգներ»[2]:

Թեև ծանր մարտում ռուսական զորամասերը Շվանիձորում մեծ կորուստներ ունեցան, բայց հայկական ուժերը ստիպված էին թողնել գյուղը, քանի որ շվանիձորցիների մի մասը, անցնելով բոլշևիկների կողմը, զենք էր ստացել և միացել նրանց:

Այն ժամանակ, երբ արևելյան զորախումբը թեժ կռիվներ էր սկսել Շվանիձորի ուղղությամբ, 32-րդ դիվիզիայի 1-ին հեծյալ գնդի հեծելավաշտերը, Նախիջևանի Օրդուբադի կողմից շարժվելով, մտել էին Մեղրի գետի ավազանը:

«Կարմիր բանակը,– գրել է Նժդեհը,– գրեթե միաժամանակ սկսեց իր գրոհները թե Օրդուբադի և թե Բարթազի կողմից: Նա ոտքի հանեց Զանգելանի ողջ թաթարությունը և Օրդուբադի թուրքական ուժերը, որոնց անվիճելի սեփականությունը կը համարեր Զանգեզուրը»[3]:

20-րդ կարմիր հեծյալ գնդի դեմ կռվող իր ջոկատների մի մասը Նժդեհը ստիպված նետեց Օրդուբադից հարձակվող Կարմիր բանակի հեծելավաշտերի դեմ, որոնց հրամանատարներին թվում էր, թե զանգեզուրցիների կողմից կռիվը շարունակելը այլևս ոչ մի իմաստ չունի, և ուր որ է Նժդեհն իր ջոկատներին հրաման է տալու զենքը վար դնել և անցնել Պարսկաստան: Բայց ի զարմանս ռուս զինվորների՝ այդ բանը նա չարեց, և նրան հավատարիմ մնացած փոքրաթիվ ջոկատները շարունակեցին կռվել խելակորույս վրիժառությամբ:

«Կռի՛վ էր, կռի՛վ, որի նմանը քիչ անգամ են տեսնում պատերազմող կողմերը,– վերհիշել է հետագայում Նժդեհը:– Թշնամին կաշվից դուրս էր գալիս Արևիքի, որ ասել է՝ մեր դիակների վրայով միանալու քեմալականներին»[4]:

---

[1] **Գ. Նժդեհ,** Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, հունվար, թիվ 3, էջ 128-129:

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 17:

[3] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 38:

[4] Նույն տեղում:

Հայերը վաղօրոք գրավել էին բնական անառիկ լեռնանցքները և հարմար դիրքեր ընտրել: Նրանք քաջատեղյակ էին տեղանքին, ոլորապտույտ կածաններին և անցուղիներին: Փոքր խմբերով, հատկապես գիշերները, հայկական ջոկատները հարձակումներ էին կատարում Կարմիր բանակի զորամասերի վրա: Նժդեհից անբաժան էին զենքի պատրաստման գործին գիտակ մասնագետները, որոնք քարանձավներում ձեռնառումբեր և նռնակներ էին սարքում: Հայ մարտիկները լայնորեն գործածում էին զենքի «սեփական» տեսակը՝ վառոդով լեցուն տակառները: Նրանք այդ տակառները գլորում էին սարերից ցած, որոնց խլացուցիչ պայթյունների արձագանքները տարածվում էին հեռու՝ սարսափի մատնելով հակառակորդին:

Դժվարությամբ էին ընթանում խորհրդային զորքերի մյուս՝ հյուսիս-արևելյան խմբի հարձակողական գործողությունները:

Շրջանցելով Խուստուփ սարը՝ այդ խմբի մի թևը մոտեցավ Գենվազի սահմաններին: Մյուս թևը, որին միացել էր շուրջ 70 հոգուց բաղկացած կոմունիստական ջոկատը, կարողացավ համեմատաբար հեշտությամբ գրավել Բաղաբերդի Քյուրդիքենդ, Հանդ, Փխրուտ գյուղերը:

Քաջարան և Փիրմազրա գյուղերի բնակիչները բոլշևիկների քարոզչության ազդեցության տակ ապստամբություն բարձրացրին և իրենց բնակավայրերը հայտարարեցին խորհրդային: Բայց այդ ժամանակ նշված գյուղերում չհաջողվեց խորհրդային կարգեր հաստատել. Քաջարանը թողած՝ զանգեզուրյան ջոկատները և Մեղրիից եկած զինյալ խմբերը ամրացան Փիրմազրա գյուղի վերևում և սկսեցին համառ դիմադրություն ցույց տալ: Ամրանալով լեռնագագաթներին և անդունդների ծերպերին՝ հայերը նախօրոք իրենց համար ապահովել էին հարմար դիրքեր: Նրանք այդ դիրքերից հսկայական ժայռաբեկորներ էին ցած գլորում, փակում Կարմիր բանակի զորամասերի անցման ուղիները, մեծ վնասներ պատճառում նրանց: Կարմիրբանակայինների ձեռնարկած բազմաթիվ գրոհները վերջացան անհաջողությամբ:

Այսպիսով՝ հնարավոր չեղավ իրականացնել Գենվազը հյուսիսից՝ Բաղաբերդի ձորով գրավելու նախապես մշակված ռազմական պլանը:

Սեպտեմբերի 20-ից մարտերը թուլացան, և մինչև հոկտեմբերի սկիզբն այլևս ակտիվ գործողություններ չէին ձեռնարկվում, եթե չհաշվենք, որ փոփոխակի հաջողություններով ռազմաճակատի այս կամ այն հատվածում փոքր ընդհարումներ էին տեղի ունենում:

«Արևիքի հերոսական որդիները,– հպարտությամբ գրել է Նժդեհը,– գերազանցեցին ամեն ակնկալություն, թշնամուն՝ զարմանք, հարևան Պարսկաստանին՝ հիացում պատճառելով»[1]:

Բնավ չափազանցություն չէր Սյունիքի հերոս զավակների սխրանքների

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 38:

նկատմամբ Պարսկաստանի բնակչության արտահայտած ուրախության և հիացումի մասին նժդեհյան վկայությունը:

«Ծանր կռիւ էր տանում փոքրիկ Հայաստանը հսկա Ռուսաստանի եւ իսլամական շրջապատի դէմ,– գրել է Նժդեհի հավատարիմ գաղափարակից Հայկ Ասատրյանը: – Մահմեդական դրացիներից բարեացակամ չեզոքութիւն էր պահպանում միայն Պարսկաստանը, որ, արդեն վտանգուած Ռեշտ եւ Էնզելի ներխուժած բոլշեւիկներից, փրկութեան իր հոյսը կապել էր Հայաստանի, մասնաւորապես սահմանակից Զանգեզուրի դիմադրութեանը»[1]:

Կարմիր բանակի զորքերի հարձակման կասեցումը 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը դրեց դժվարին կացության մեջ: Հրաման եղավ այլևս առաջ չգնալ, այլ ամրանալ գրաված վայրերում: Այդ կարճատև հարաբերական դադարը Նժդեհին հնարավորություն տվեց որոշ չափով համալրելու սպառման հասնող զինամթերքի պաշարները: Նա միջոցներ ձեռնարկեց խորհրդային զորամասերի կողմից գրավված Կապանի շրջանի տարբեր վայրերում մնացած զենքն ու զինամթերքը, գոնե դրանց մի մասը, Գենվազ տեղափոխելու համար:

Սեպտեմբերի 25-ին Նժդեհը Գենվազի Վահրավար գյուղից Մելիք-Մուսյանին նամակ հղեց.

«Սիրելի՛ Աշոտ,

Վաշտապետ Ենոքը և պորուչիկ Տեր-Պետրոսյանը գրում են, թե Ողջի ձորի հայությունը գրեթե ընդունել է բոլշևիզմը և որ հայկական իշխանություն չի ճանաչում և այլն: Մի ուրիշ հաղորդագրություն ասում է, որ բոլշևիկները պատրաստվում են մտնելու Ողջի ձորը: Այդ բոլորը ստիպում է ինձ խնդրելու ձեզ, որ անմիջապես անցնես Դաշտուն՝ տնօրինելու հետևյալը.

1. Քաջարանից անմիջապես փոխադրել տալ իմ 30 000 փամփուշտը Դաշտուն: Նույն տեղում կան մեծ քանակությամբ նաև ձեռնառումբեր: Այդ բոլորը փոխադրել էի Ղարաբաղից՝ Օրդուբադի օպերացիայի համար: Այդ բոլորը պահանջել Քաջարանի կոմիսարից և վաշտապետից:
2. Հանդից Քաջարան բերել մեր մի ձեռնագնդացիրը:
3. Ապահովել Գողթանից մի թնդանոթի դուրս բերելը: Կարող է լինել, որ թնդանոթը Ղափուջուղից իջեցնելուց հետո ընկնի սրիկաների ձեռքը:
4. Ազդել Բաղաբերդի ժողովրդի վրա՝ ետ կանգնելու դավաճանությունից:
5. Մերկացնել, որ Բաքվից Բաղաբերդ եկած սրիկաները կաշառվածներ են:

---

[1] **Հ. Ասատրեան**, նշվ. աշխ., էջ 217:

6. Բարձր պահել Լիճք-Դաշտունի տրամադրությունը»[1]:

Հետգրությամբ Նժդեհը Աշոտին տեղյակ էր պահում. «Ղազարը գրում է, որ երկու թնդանոթով, 100 տղաներով շարժվում են»: Ապա՝ «Սովը, որ հրեշավոր չափեր է ընդունել, կատարում է իր քայքայիչ դերը: Օր չկա, որ ամեն մի գյուղում սովից չմեռնի 15-20 մարդ: Ժողովուրդը սնվում է շների ու կատուների մսով, մի բան, որ առաջ է բերել տարբեր վարակիչ հիվանդություններ, որոնք լրացնում են սովի ավերները»[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 16, թ. 4:
[2] Նույն տեղում, թ. 5:

ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԻՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Այն ժամանակ, երբ Զանգեզուրի գրավումն ամբողջացնելու համար 11-րդ Կարմիր բանակի գորամասերը հարձակում էին սկսել Կապարգողթի վրա, 1920 թ. սեպտեմբերի 1-ին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում՝ Մայիլովի թատրոնում, իր աշխատանքները սկսեց Արևելքի ժողովուրդների համագումարը:

Արդեն 1920 թ. առաջին կեսին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության և եվրոպական կոմունիստական կուսակցությունների համար պարզ դարձավ, որ Եվրոպայում չկան հասունացած պայմաններ համաեվրոպական պրոլետարական հեղափոխության համար: Գերմանիայում և Հունգարիայում 1918 թ. ծագած հեղափոխությունները և դրանց պարտությունը ցույց տվեցին, որ եվրոպական պրոլետարիատը ի վիճակի չէ միաժամանակյա հեղափոխական պատերազմ սկսել բուրժուազիայի դեմ և դրանով իսկ օգնության ձեռք պարզել աշխարհում առաջին բանվորագյուղացիական իշխանությանը: Այլ խոսքով, պարզ դարձավ, որ Եվրոպան դեռ պատրաստ չէ գնալու Հոկտեմբերյան հեղափոխության ուղով:

Կոմինտերնի երկրորդ կոնգրեսը (1920 թ. հուլիս) այդ եզրակացությունը ձևակերպեց որպես Կոմունիստական ինտերնացիոնալի նոր քաղաքականություն: Այլևս վստահություն չունենալով, թե առաջիկա տեսանելի ժամանակում Եվրոպայում տեղի կունենա համընդհանուր հակակապիտալիստական ապստամբություն, կոնգրեսը Ռուսաստանում հաղթանակած հեղափոխության գլխավոր դաշնակից հռչակեց «Արևելքի ճնշված ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարը»: Այլ խոսքով՝ Արևելքից պետք է գար հեղափոխական պաթոսը. Արևելքի հեղափոխական ներուժն էր դառնում «իմպերիալիզմի դեմ» ուղղված պայքարի պահեստարանը:

Բաքվում համագումարը հրավիրվում էր Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի և 1920 թ. հունիսի վերջերին Մոսկվայում կայացած Կոմինտերնի երկրորդ կոնգրեսի պատգամավորների մի մասի նախաձեռնությամբ՝ «գաղութարարների դեմ Արևելքի ժողովուրդների ջանքերը միավորելու համար»:

Համագումարին մասնակցելու համար օգոստոսի 31-ի գիշերը Մոսկվայից Բաքու էին ժամանել նշանավոր բոլշևիկներ Գ. Ե. Զինովևը և Կ. Բ. Ռադեկը, Կոմունիստական ինտերնացիոնալի խոշոր գործիչ, հունգար Բելա

Կունը, հայտնի հակահայ գործիչներ Պավլովիչը (Մ. Լ. Վելտման), Սկաչկոն, Մատուշևը և ուրիշներ[1]: Այդ նույն նպատակով Բաքու էր եկել նաև հայ ժողովրդի ոխերիմ թշնամի, երիտթուրքերի պարագլուխներից Էնվեր փաշան՝ իր 12 կողմնակիցներով:

Բաքվի համագումարին մասնակցում էին Արևելքի երկրների կոմունիստական և ազգային հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հակաիմպերիալիստական տրամադրություններ ունեցող անկուսակցական գործիչներ:

1920 թ. օգոստոսի վերջին Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունների և գավառի խորհրդային իշխանությունների միացյալ պատվիրակությունը ևս մեկնել էր Բաքու՝ մասնակցելու համագումարի աշխատանքներին:

Համագումարը տևեց մինչև սեպտեմբերի 8-ը: Մասնակցում էին 37 ազգերի 1891 պատվիրակներ, որոնցից 1273-ը կոմունիստներ էին: Պատվիրակներից 157-ը հայեր էին, որոնցից հինգը Զանգեզուրից՝ Ք. Մկրտչյանը, Մ. Մաշուրյանը. Ս.Ղարագյոզյանը, Ն. Արզումանյանը և Մ. Մկրտչյանը:

Թեև Կոմինտերնի երկրորդ կոնգրեսը պարզորոշ ցույց էր տվել, որ Եվրոպան ի վիճակի չէ հեղափոխություն բարձրացնել և աջակից լինել Խորհրդային Ռուսաստանին, բայց հայ կոմունիստ գործիչները առաջվա ոգեշնչվածությամբ դեռ խոսում և գրում էին եվրոպական պրոլետարիատի հեղափոխական ներուժի, նրա՝ որպես տվյալ պահին համաշխարհային հեղափոխության ընթացքն արագացնող կատալիզատորի մասին: Նրանք խորապես համոզված էին, որ, այնուամենայնիվ, շուտով բռնկվելու է համաշխարհային հեղափոխություն, և անխուսափելի է լինելու «համաշխարհային Սովնարկոմի» ստեղծումը, ուստի մեծ ակնկալիքներ ունեին Բաքվի համաժողովից՝ նրանից սպասելով համաշխարհային հեղափոխական գործընթացի արագացմանն ուղղված կոնկրետ գործողություններ, անկախ ազգային ու կրոնական պատկանելությունից՝ հարստահարված ազգերի ու դասակարգերի ջանքերի միավորում ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության դրոշի ներքո:

Սակայն համագումարն այլ բան ցույց տվեց, այն, որ հակաիմպերիալիստական պայքարն ուժեղացնելու կոչերով հանդես եկող պատվիրակների զգալի մասը հեռու չէ ազգայնամոլությունից, ավելին՝ կանգնած է պանիսլամիզմի և պանթուրքիզմի դիրքերում:

Համագումարի առաջին նիստում Զինովևը արտասանեց ռազմաշունչ մի ճառ՝ զանազան վայրերից եկած մուսուլման խայտաբղետ պատվիրակներին կոչ անելով սրբազան պատերազմ սկսել «արևմուտքի իմպերիալիստական գիշատիչների դեմ և արևելքի աշխատավոր ժողովուրդներին ազատել գերության շղթաներից»:

---

[1] Տե՛ս **Գ. Եղիկեան**, Արեւելեան ժողովուրդների ազատագրութեան աչքակապութիւնները, «Հայրենիք», 1938, դեկտեմբեր, թիվ 2 (194), էջ 153:

Մուսուլման պատվիրակների զգալի մասը Զինովևի ճառն ընկալեց որպես ընդհանրապես քրիստոնեության դեմ սրբազան պատերազմի կոչ: Այդ ճառին առաջինը անմիջական արձագանք էր տվել համագումարի նախագահության կազմում գտնվող Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի (ՉԿ) նախագահ Ալիևը: Տեղից ցատկելով՝ նա առաջացել էր բեմի վրայով, մերկացրել սուրը, ծնկի եկել և մուսուլմանների անունից երդվել, որ ինքը և իր հավատակիցները հողին են հավասարեցնելու քրիստոնյա իմպերիալիստներին և նրանց կամակատարներին: Ալիևին դահլիճից անմիջապես արձագանքել էին տասնյակ մուսուլման պատվիրակներ. նրանք նույնպես պատյանից հանել են սրերը, ճոճել օդի մեջ և միացել նրա երդմանը[1]:

Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը համագումարի աշխատանքների ընթացքի մասին կառավարությանն ուղարկած իր ընդարձակ զեկույցում գրել էր. «Համագումարում մի ակներև խաղ է կատարվում: Արևելյան ժողովուրդների և կարմիր կոմունիզմի քողի տակ, կողմերից յուրաքանչյուրը, պանիսլամիստներն ու կոմունիստները, աշխատում են իրար խաբել և գործիք դարձնել: Դժվար թե այս պարագաներում մի այլ տեղ հնարավոր լիներ այսպես հեշտությամբ և այսպես ազատ կերպով հավաքել պանիսլամիստ մահմեդականներին աշխարհի բոլոր ծայրերից և նրանց հնարավորություն տալ իրենց առաջիկա գործունեության վերաբերյալ ծրագիր մշակել: Որքան էլ կոմունիստները աշխատում են առաջիկա կռվին երկյակ բովանդակություն հաղորդել, այսինքն՝ ընդդեմ Անգլիայի ու Արևելքի տիրապետող դասակարգերի, սակայն ժողովականների հսկա մեծամասնության համար այն սրբազան պատերազմը, որ համագումարը հայտարարեց արևմտյան կապիտալի դեմ, ոչ այլ ինչ է, եթե ոչ մահմեդականության կռիվ քրիստոնյաների դեմ, այսինքն՝ մի սովորական «ղազավաթ»: Էնվերը պահանջում է, որ Անգլիայի դեմ արևելքում մղվելիք առաջիկա պատերազմում հրամանատարությունը իրեն հանձնվի, որ յուր հեղինակությամբ, զինվորական մասնագիտական պատրաստությամբ կարողանա ոտքի հանել Թուրքեստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը և մյուս մահմեդական երկրները»[2]:

Զինովևի սադրիչ ճառից անմիջապես հետո Բաքվի փողոցներում բացվեցին շախսեյ-վախսեյի տեսարաններ. վառվում էին խարույկներ, որոնց մեջ ամբոխի գոռում-գոչյունի տակ նետվում էին Միլերանի, Վիլսոնի, Լլոյդ Ջորջի նկարներն ու խրտվիլակները: Բանը նրան էր հասել, որ Ռադեկը ստիպված նախազգուշացրել էր Զինովևին, թե չափազանց վտանգավոր է արևելցիների կրքերի հետ նման խաղեր խաղալը, մահմեդական ֆանատիզմը այդպես ուժգնորեն գրգռելը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 10:

[2] Նույն տեղում, թ. 13:

Զինովևը կարծես թե հաշտվել էր արված նախազգուշացմանը, բայց արդեն ուշ էր. խաղն սկսված էր:

Բաքվում հայտնված Էնվերը համագումարի նախագահության անունից նամակ էր ուղարկել, որն ընթերցվել էր նիստերից մեկում: Քեմալականների ներկայացուցիչ Վաղարդին Շաքիրը արդարացնում էր Թուրքիայի մասնակցությունն Առաջին համաշխարհային պատերազմին: «Կարմիր թուրքերի» անունից համագումարում կոչեր էին լսվում, թե «հայկական իմպերիալիզմը խեղդելու» նպատակով պետք է հարձակվել Հայաստանի Հանրապետության վրա և մեջտեղից վերացնել այն: Նման կոչեր էին լսվում նաև Ադրբեջանի պատվիրակության առանձին անդամներից:

Նույն զեկուցագրով Մ. Հարությունյանն այնուհետև հաղորդում էր. «Ի տես այս համագումարի բնույթի և Էնվեր փաշայի ներկայությանը Բաքվում, կարծես թե հայ կոմունիստների մեջ սթափումն է առաջ գալիս: Դրանցից չափավոր մտածող տարրը, որ առաջ մի տեսակ ահաբեկված Ավիս, Միկոյան և ընկերությունից, չէր համարձակվում ոչ միայն դրսի մարդկանց մոտ, այլև իրենց ընկերների շրջանում բողոքել ու պնդել յուր տեսակետների վրա, այժմ աստիճանաբար ձայնը բարձրացնում է, իսկ մյուսներից ոմանց մեջ կարծես զղջման նշաններ են երևում: Անշուշտ, այս նոր տրամադրությունը ռեալ արժեք չունի, քանի որ սև գործն արդեն կատարված է: Արևելյան համագումարը «սրբազան պատերազմ» հայտարարելով արևմտյան կապիտալին՝ նրա սպասավորը համարեց Հայաստանին: Այլևս Դաշնակցությունը չէ, որի վրա հարձակումներ են կատարում, այլ Հայաստանը, որին հիմա այստեղ անվանում են մի նոր Լեհաստան, որը Անգլիայի աջակցությամբ ամրանում է իբրև սեպ և իրարից բաժանում կարմիր Ռուսաստանը հեղափոխական Տաճկաստանից ու Պարսկաստանից»[1]:

Համագումարը ընդունեց և հրատարակեց երկու կոչ: Մեկով Արևելքի ժողովուրդներին առաջարկվում էր սրբազան պատերազմ (ղազավաթ, ջիհադ) հայտարարել անգլիական կայսերապաշտության դեմ, երկրորդով ամբողջ աշխարհի բանվորությանն առաջարկվում էր շուտափույթ օգնություն հասցնել Արևելքին: Համագումարը ընտրեց նաև մի քանի տասնյակ հոգուց բաղկացած «քարոզչական ու գործողության խորհուրդ»՝ Նարիման Նարիմանովի գլխավորությամբ, որը պիտի ղեկավարեր քարոզչության և հեղափոխության գործը արևելյան ժողովուրդների մեջ[2]:

Համագումարի երրորդ օրը մուսուլմանական բեկերը, մուսավաթական երեկվա ընտրանին, կարմիր գույն ստացած թուրք «բոլշևիկները»՝ Էնվեր

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 14:

[2] Տե՛ս ՍՔՊՌՊԱ, ֆ. 64, ց. 2, գ. 29, թ. 58-62, **Գ. Եղիկեան**, Արեւելեան ժողովուրդների ազատագրութեան աշխակապութիւնները, «Հայրենիք», 1938, դեկտեմբերի, թիվ 2 (194), էջ 153, «Գրական թերթ», 1990, 8 հունիսի:

փաշայի գլխավորությամբ, հավաքեցին քաղաքի Թազա-փիր մեչիդում, որի շուրջը խուռներամ ալեկոծվում էր Բաքվի ամբողջ մահմեդական աշխարհը: Ելույթ ունեցան Էնվերը, Օսման փաշան և ուրիշներ, որոնք քրիստոնյաների, հատկապես հայերի կոտորածների կոչեր էին անում: Շուտով հայտնվեցին մոլլաները, որոնք Ղուրանի վրա երդվեցին մինչև արյան վերջին կաթիլը կռվել գյավուրների դեմ՝ սուլթանի կանաչ դրոշի տակ:

Տեսնելով այդ զանգվածային սանձարձակությունը՝ Զինովևը և Ռադեկը Նարիման Նարիմանովին շտապեցնում էին միջամտել: Նա եկավ մեչիդ և ճառով դիմեց էքստազի մեջ ընկած ամբոխին: Ճառելիս նա պատահաբար տվեց «պրոլետարիատ» անունը, որն առաջ բերեց դժգոհության փոթորիկ. նրան զրկեցին խոսքը շարունակելու հնարավորությունից, և նա ստիպված եղավ հեռանալ:

Զինովևը, Ռադեկը և մյուս ռուս բոլշևիկները շտապեցին Մոսկվա մեկնել մուսուլմանական մոլեռանդության մղձավանջի վերածված Բաքվից: Շուտով վերևից Բաքվի փողոցներում թնդանոթներ ու գնդացիրներ տեղադրելու կարգադրություն եկավ: Ռուսների անունով հանդես եկող սիոնիստ «բոլշևիկներն» այսպես էին կազմակերպում արևելյան ջարդարարների բանակը:

Այդ ամենը, հատկապես համագումարում Ադրբեջանի ՉԿ-ի նախագահի արարքը, համագումարի ամբիոնից հնչած բացահայտ հակահայ ելույթներն ու կոչերը[1] չափազանց ծանր տպավորություն էին թողել հայ պատվիրակների վրա, բայց նրանք ստիպված էին լռությամբ տանել ազգային վիրավորանքները: Բայց դրանով ամեն ինչ չէր վերջացել. համագումարի օրերին Վրաստանի և հատկապես Հայաստանի հարցերով զբաղված էր նաև Բաքվի մամուլը: Թերթերն առասպելական բաներ էին գրում մանավանդ Հայաստանի մասին, որ, իբր, այդ երկիրը Անգլիայից ստանում էր հսկայական օգնություն՝ զենք, զինամթերք, պարեն և պատրաստվում էր Հունաստանի հետ դաշն կնքելով՝ կռիվ սկսել հեղափոխական Տաճկաստանի դեմ: Հակահայ թերթերն աստիճանաբար հասունացնում էին այն միտքը, որ պետք էր հնարավորին չափ շուտ զորքերը շարժել Վրաստանի ու Հայաստանի վրա: Մամուլը քննարկում էր նաև այն հարցը, թե ինչպես դա անել: Ըստ որում՝ առկա էին երկու մոտեցումներ, որոնք զգալիորեն տարբերվում էին իրարից. ռուս կոմունիստ ռազմագետները կարծում էին, որ Թիֆլիսի գրավումով այդ երկու հանրապետությունների հարցը միանգամից կլուծվեր. Հայաստանը, առանց արյուն թափելու, անձնատուր կլիներ, իսկ թուրք ու տաճիկ «կոմունիստները» պնդում էին, թե գրավումը պետք էր սկսել Հայաստանից: Նրանց մոտ իշ-

[1] Տե՛ս “Первый съезд народов Востока, Баку, 1-8 сентября 1920 г.” Стенографический отчет, Петроград, 1920, էջ 40, 46, 58, 60, 91, 113, 122-123, 125, 137, 141, 151, 222 և այլն:

խող կարծիքն այն էր, որ Հայաստանը բավական խոշոր դիմադրական ուժ ուներ, հետևաբար նրա վրա պետք էր գնալ լավ պատրաստությամբ:

Մոսկվայում նույնպես քաջ գիտակցում էին, որ Հայաստանը հեշտությամբ տեղի չէր տալու Կարմիր բանակի առջև, ինչպես արել էր Ադրբեջանը: Դրա ցայտուն ապացույցը հենց Հայաստանի օգնությունից կտրված Զանգեզուրի և Ղարաբաղի բնակչության անզիջում դիմադրությունն էր Կարմիր բանակի զորամասերի և ադրբեջանական զինված ուժերի դեմ: Այս պայմաններում խորհրդային կառավարության առջև հարց էր բարձրանում. արդյո՞ք Ռուսաստանի շահերն անպայման ենթադրում են Ղարաբաղի և Զանգեզուրի ենթակայությունն Ադրբեջանին:

Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը սեպտեմբերի 10-ին իր կառավարությանը գրում էր. «Ամսի 7-ին (սեպտեմբերի: – *Ա. Ս.*) տեղեկություն ստացանք, որ Մոսկվայից այստեղ հեռագիր է ստացվել, որ եթե Հայաստանը պնդի Ղարաբաղի վրա և ուզենա պատերազմական գործողություններ սկսել, այդ դեպքում զիջել Ղարաբաղը Հայաստանին ու պատերազմի չհասցնել»[1]:

Արևելքի ժողովուրդների համագումարի աշխատանքների ավարտից հետո Զանգեզուրի պատվիրակության անդամները մասնակցեցին Բաքվում տեղի ունեցող Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսին՝ ստանալով անհրաժեշտ խորհուրդներ և ցուցումներ:

Վերադառնալով Զանգեզուր՝ պատվիրակության անդամները հաղորդումներով հանդես եկան կուսակցական բջիջներում և բնակչության առջև: Իրենց ելույթներում նրանք ընդգծում էին ամբողջ Զանգեզուրում խորհրդային կարգեր հաստատելու և որքան կարելի է շուտ տնտեսական շինարարության անցնելու անհրաժեշտությունը, բնակչությանը կոչ էին անում սերտ համագործակցություն հաստատել Կարմիր բանակի զորամասերի հետ:

Դեռ մինչև պատվիրակների՝ Զանգեզուր վերադառնալը Բաքվից այնտեղ արդեն լուրեր էին հասել, որ Արևելքի ժողովուրդների համագումարում եղել են հակահայ բնույթի կատաղի ելույթներ:

Գավառի բնակչության ուշադրությունը հրավիրելով այդ փաստի վրա՝ դաշնակցականները քարոզում էին այն տեսակետը, որ այդ ելույթները արտահայտում են Հայաստանի և հայերի նկատմամբ ոչ միայն Ադրբեջանի ղեկավարության, թուրքական շովինիստների և ընդհանրապես մուսուլմանական ռեակցիայի, այլև ռուս բոլշևիկների տեսակետները:

Համագումարի և նրանում հակահայ բովանդակության ելույթների մասին լուրերը խիստ դժվարացրին Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունների, մասնավորապես Բաքվից վերադարձած պատվիրակների գործը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 14:

Համագումարի արդյունքների մասին իրենց ելույթներում նրանք ակամայից ճշմարտություններ էին ասում՝ դրանով իսկ հաստատելով այդ արդյունքներին դաշնակցականների տված գնահատականը: Ավելին, Արևելքի ժողովուրդների համագումարում պանթուրքական և պանիսլամական ելույթների մասին լուրերը լսելուց հետո առանձին կոմունիստներ դուրս եկան կազմակերպություններից և բռնեցին սպասողական դիրք: Նրանցից ոմանք էլ ուղղակի անցան Նժդեհի կողմը: Այսպես, Տաթև գյուղի նորաստեղծ կոմբջիջն ամբողջապես լուծարվեց, և նրա անդամների մեծ մասը ակտիվորեն ընդգրկվեց Կարմիր բանակի դեմ կռվող վաշտերի մեջ[1]: Տաթևցի ակտիվ կոմունիստներից «Քուրդ» մականունով Եփրեմը դարձավ Նժդեհի ամենանվիրյալ զինակիցներից մեկը:

Տաթևի կոմունիստներին հետևեցին հարևան Սևարանց գյուղի կոմունիստները[2]: Նժդեհի կողմն անցան նաև Հին Գորիս և Բուռուն գյուղերի կոմբջիջները[3]:

Գավառի կոմունիստների շարքերում առաջացած բացահայտ բողոքներն անհետևանք չէին անցնում: Կուսակցության գավառային կոմիտեի որոշմամբ Զանգեզուրի կոմունիստական բջիջներում անցկացվեցին անդամների ու թեկնածուների վերահաշվառում և վերացուցակագրում, որի ընթացքում բջիջներից հեռացվեցին «անհուսալիները»: Այսպես, կուսակցության Գորիսի շրջանի Խնձորեսկի տեղամասի Ալիղուլիշեն գյուղում անցկացրած զտման արդյունքների մասին վերադասին ուղարկած գրության մեջ կարդում ենք. «Սույնով տեղեկացվում է ձեզ, որ հաշվառման ժամանակ կուսակցականներից երկու հոգի՝ Տիգրան Դավթյանը (կոմբջջի նախագահ) և Ավետիս Օհանջանյանը (ռեկվիզիցիոն բաժնի վարիչ) հեռացվել են կուսակցության շարքերից: Բջիջն այժմ ունի 13 անդամ»[4]:

Արևելքի ժողովուրդների՝ Բաքվի համագումարին հաջորդեց հայ ժողովրդի համար ճակատագրական մի ուրիշ իրադարձություն:

1920 թ. սեպտեմբերի 28-ի առավոտյան քեմալական զորքերը, ընդհանուր թվով ավելի բան 50 հազար զինվոր ու սպա[5], հարձակում գործեցին Հայաստանի վրա և ներխուժեցին հանրապետության սահմաններից ներս: Թշնամու առաջին հարվածով ընկավ Սարիղամիշը: Հայաստան ներխուժած թուրք ռազմամոլները նոր արհավիրքներ բերեցին բազմաչարչար երկրին: Հայ ժողովուրդը նորից կանգնեց ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև:

ՀՅ դաշնակցության բյուրոն սեպտեմբերի 30-ին հետևյալ կոչով դիմեց բոլոր դաշնակցականներին.

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 2, թ. 9:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 9:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 12:

[4] Նույն տեղում, գ. 70, թ. 104:

[5] Տե՛ս **Է. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 169:

«Ընկերնե՛ր.

Թշնամին նորից ծեծում է մեր դռները: Սարիղամիշի շրջանում տեղի են ունենում արյունոտ դեպքեր: Տաճիկ փաշաները ուզում են արյան մեջ խեղդել Հայաստանի Հանրապետությունը և բնաջնջել հայ աշխատավոր ժողովրդին: Կյանքը մեզ վրա նորից պարտականություններ է դնում: Հ. Յ. դաշնակցության բյուրոն, ինչպես մայիսյան խռովության օրերին, նույն ձևով հայտարարում է բոլոր ընկերների մոբիլիզացիա: Ամեն ընկեր պարտական է իրեն դնել կուսակցության տրամադրության տակ և անմիջապես կատարել իրեն տրված հրահանգը:

Ընկերնե՛ր, դեպի գո՛րծ, դեպի ֆրո՛նտ»[1]:

«Յառաջ» պաշտոնաթերթի էջերից չէին իջնում հանրապետության կառավարության, Հայաստանում գործող տարբեր կուսակցությունների՝ բնակչությանն ուղղված կոչերն ու հորդորները: Շտապ կազմված կամավորական խմբերն անմիջապես մեկնում էին ճակատ՝ միանալու զորքին, որը ծանր կռիվներով նահանջում էր:

Հաջողությամբ խաղալով արևելքի ճնշված ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի առաջամարտիկի դերը՝ քեմալական զավթիչները ծրագրել էին վերջնականապես գերեզմանել հայ ժողովրդին: Իրենց դիվային նպատակը իրականացնելու ճանապարհին նրանք դիմում էին տարբեր միջոցների, որպեսզի ստանան Խորհրդային Ռուսաստանի բարոյաքաղաքական ու ռազմական օգնությունը: Ուստի կաշվից դուրս էին գալիս ապացուցելու, թե իրենք խորհրդային կարգերի ջատագովներ են, Ռուսաստանի և ռուս ժողովրդի բարեկամներ, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ընդհանրապես հայերը խորհրդային իշխանության հակառակորդներ են, Ռուսաստանի և ռուս ժողովրդի թշնամիներ: Այստեղից, ասում էին նրանք, կարելի է անել այն պարզ հետևությունը, որ Ռուսաստանի և Թուրքիայի շահերը համընկնում էին, ավելին՝ այդ շահերը նույնացած էին, այսինքն՝ և՛ Ռուսաստանը, և՛ Թուրքիան, հանձին Հայաստանի, ունեին ընդհանուր բնական հակառակորդ:

Իրենց ասածների ճշմարտացիությունն ապացուցելու համար թուրքերն իբրև զորեղ փաստարկ էին օգտագործում զանգեզուրյան հակախորհրդային գոյամարտը:

Ռազմաճակատում պարտության մատնելով հայկական զորքերին և գրավելով Հայաստանի նորանոր տարածքներ՝ քեմալականները միաժամանակ գործադրում էին բոլոր միջոցները, որպեսզի խորհրդային իշխանություններին համոզեն ավելի եռանդով շարունակել կռիվը Զանգեզուրում: Նրանք ռուս բոլշևիկ ղեկավարներին մշտապես հիշեցնում էին, որ եթե թուրքական «հեղափոխական» զորքերը հայերին անխնա հարվածում են արևմուտքից, ապա խորհրդային զորքերը նրանց պետք է շարունակեն հար-

[1] «Յառաջ», 1920, 30 սեպտեմբերի:

վածել Ղարաբաղում, Զանգեզուրում, Նախիջևանում, Իջևանի կողմից: Աքցանի մեջ առնել Հայաստանը և նրան խեղդել վերջնականապես. այս էր թուրք ռազմամոլների չարանենգ ծրագիրը:

Թուրքերի հարձակումը Հայաստանի վրա և նրանց առաջխաղացումն անհնարին կլիներ առանց Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության համաձայնության և տնտեսական, ռազմաքաղաքական ու բարոյական բազմակողմանի աջակցության: Ամենամեծ աջակցությունն այն էր, որ երբ քեմալական զորքերը Հայաստանը ծվատում էին արևմուտքից, ապա բոլշևիկյան զորքերը այդ նույն ժամանակ Հայաստանին խփում էին հյուսիսից և արևելքից: Փոքրիկ Հայաստանը, փաստորեն, կռվում էր չորս ճակատով. թուրքերի դեմ՝ արևմուտքում, Կարմիր բանակի զորքերի դեմ՝ Իջևանի ճակատում, բոլշևիկյան ռուսական զորքերի և բոլշևիկացած ադրբեջանական զորքերի դեմ՝ Նախիջևանի և Զանգեզուրի ճակատներում:

Ինչպես նշում են հետազոտողները և հուշագրությունների շատ հեղինակներ, այդ օրերին թուրք-բոլշևիկյան համագործակցությունն այնքան հեռուն էր գնացել, որ Հայաստանի դեմ առանձին ռազմական գործողություններ մշակվում և իրականացվում էին համատեղ, փոխադարձ համաձայնությամբ և փոխադարձ ըմբռնումով:

Իրադարձությունների վերլուծումը հանգեցրեց այն համոզման, որ այդ պահին Խորհրդային Ռուսաստանին ձեռնտու էր Հայաստանի դեմ ուղղված քեմալականների պատերազմը, բայց՝ փոքր պատերազմը: Բոլշևիկները մտածում էին, որ եթե թուրքերը հարձակվեն Հայաստանի վրա, հայկական բանակը մի քանի ամիս ուժգին դիմադրություն ցույց կտա, ապա հակառակորդի ճնշման տակ կսկսի նահանջել, և երբ թուրքերը սկսեն գրավել որոշ տարածքներ, Հայաստանի կառավարությունը անխուսափելիորեն կդիմի Ռուսաստանին՝ Կարմիր բանակը Հայաստան մտցնելու և երկիրը կամավոր խորհրդայնացնելու խնդրանքով: Բայց, սպասածին հակառակ, հայկական բանակն անկարող եղավ երկարատև դիմադրության և քեմալականների ճնշման տակ ետ նահանջեց՝ մեկը մյուսի ետևից թուրքերին թողնելով Հայաստանի Հանրապետության գյուղերն ու քաղաքները:

Տասնամյակներ շարունակ խորհրդային պատմագրությունն առաջնորդվել է հետազոտության մի սկզբունքով, այն է՝ անպայման արդարացնել բոլշևիկների բոլոր գործողությունները՝ դրանք միանշանակ համարելով ճիշտ, մերժելով այդ գործողությունների մասին մյուս բոլոր տեսակետներն ու փաստարկումները: Որքան էլ ցավալի է, խորհրդային, այդ թվում՝ խորհրդահայ պատմաբանները նույնիսկ արդարացնում էին քեմալականների և Կարմիր բանակի պատերազմը «իմպերիալիստական Հայաստանի» դեմ, որի «դաշնակ կառավարողները», իբր, «վաճառքի էին հանել հայ ժողովրդի ազգային շահերը»: Այդ, մեղմ ասած, հակագիտական տեսակետն էին հաստատում նաև այն պատմաբանները, որոնց մեղադրանքներն ուղղված էին Զանգեզուրը պաշտպա-

նող հայկական ուժերի դեմ: Այն տեսակետն էր իշխում, որ 1920 թ. աշնանը Այսրկովկասում 11-րդ Կարմիր բանակի դրությունը ծանր լինելու գլխավոր պատճառներից մեկը զանգեզուրյան գոյապայքարն էր:

Այս հարցում խորհրդային պատմագրության հիմնական փաստարկներից մեկն այն էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարության վարած քաղաքականությունը հակառակ էր Այսրկովկասում խորհրդային կառավարաթյան շահերին, և որ դա հող էր ստեղծում, որպեսզի համընկնեն Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի շահերը, թեկուզև ժամանակավորապես[1]:

Ինչևիցե, թուրքերը առավելագույնս օգտագործեցին Զանգեզուրի հայության ազգային-ազատագրական պայքարը: Նրանց հեռահար նպատակն էր՝ եթե չհաջողվի Թուրքիային միացնել Նախիջևանի գավառը, ապա ամեն ինչ անել, որպեսզի Ռուսաստանը հակվի վիճելի տարածքները՝ Նախիջևանը, Զանգեզուրը և Ղարաբաղը, Խորհրդային Ադրբեջանին տալու վճռին:

Խորհրդային կողմը ելնում էր նրանից, որ Զանգեզուրում Նժդեհի վարած կռիվները քաջալերում և ոգեշնչում էր Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ դրանով իսկ խախտելով ՌՍՖԽՀ և Հայաստանի Հանրապետության միջև 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված ժամանակավոր զինադադարի մասին համաձայնագիրը:

Բոլշևիկյան կառավարությունը միաժամանակ չէր կարող չտեսնել քեմալականների շատ հեռուն գնացող նպատակները, Հայաստանը վերջնականապես ոչնչացնելու ծանր հետևանքները Այսրկովկասում և Կովկասում՝ ռուսական քաղաքականության համար:

Դեմ չլինելով Հայաստանի վրա թուրքական զավթիչների հարձակմանը, ավելին՝ աջակցելով նրանց՝ բոլշևիկյան իշխանությունները միաժամանակ երկյուղում էին հայերի նկատմամբ քեմալականների չափից ավելի անպատիժ, լկտիության հասնող վարմունքից:

1920 թ. սեպտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության՝ Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայից վերադարձել էր ձեռնունայն, թեև բանակցությունները չէին խզվել, այլ ընդհատվել էին:

Սեպտեմբերի 18-ին Լենինն ընդունեց Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովին և զրուցեց Կովկասում տիրող վիճակի մասին: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 19-ին, Լենինի մասնակցությամբ տեղի ունեցավ ՌԿ(բ)կ կենտկոմի պլենում, որը որպես առանձին հարց քննարկեց Գեորգի Չիչերինի, Շալվա Էլիավայի, Սերգեյ Կիրովի առաջարկները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ Բորիս Լեգրանի առաքելության բանակցությունների առնչությամբ[2]:

---

[1] Տե՛ս **Ա. Եսայան,** նշվ. աշխ., էջ 157:

[2] Տե՛ս ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու, ց. 1, գ. 2, թ. 108-109:

Հայաստանի կառավարությունը գերմարդկային ճիգեր թափեց ժողովրդի գլխին կախված ահռելի վտանգը ետ մղելու համար, իսկ խորհրդային կառավարությունն արդեն փորձում էր զսպել թուրքերի չափազանց մեծ ախորժակը: Մինչդեռ զանգեզուրցիները վաղուց էին ճշտել իրենց անելիքները. նրանք գիտակցում էին, որ հայ ժողովուրդը կարող է գոյությունը շարունակել միայն այն դեպքում, երբ կարողանա զորահավաքի ենթարկել բոլոր ուժերը և կանգնեցնել երկիր ներխուժած թշնամուն՝ քեմալական թուրքերի և Ադրբեջանի թուրքերի միացյալ ուժերը:

ՀԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԱՀԱՆՋԸ ԳԱՎԱՌԻՑ

ՄԱՐՏԵՐԸ ԳԵՆՎԱԶՈՒՄ

Տեսնելով խորհրդային զորքերի թուլացումը՝ Զանգեզուրի զինյալները գոտեպնդվեցին և որոշեցին ուժեղացնել ճնշումը:

Ինչպես վերևում ասվեց, Կապանի հանքերը թողնելուց հետո Նժդեհը հեծյալների մի զորախմբով բարձրացել էր Խուստուփ սարը՝ շարունակելու կռիվը: Սեպտեմբերի 17-ին Նժդեհը Կապանից հեռացած իր վաշտապետերին և կոմիսարներին հրահանգեց հավաքվել Մեղրի գյուղում և սպասել իրեն:

Իջնելով Խուստուփից՝ Նժդեհը մեկնեց Մեղրի: Այնտեղ հասնելուն պես՝ սեպտեմբերի 19-ին, նա իր զինակիցների ժողով հրավիրեց, որի օրակարգում մի հարց էր դրված՝ ինչպես կանգնեցնել զորամասերի առաջխաղացումը: Ժողովը որոշեց ամրացնել Գենվազի պաշտպանական գծերը և ուժեղ ճակատային դիմադրություն ցույց տալ: Միաժամանակ որոշվեց ապստամբություն բարձրացնել Կարմիր բանակի զորամասերի թիկունքում, դրանց կտրել իրարից, և եթե սկսեն նահանջել, ապա օգտագործել բնական ամրությունները, փակել նահանջի ճանապարհները: Հենց այստեղ էլ հաստատվեց գործողությունների պլանը, որի իրականացման պատասխանատվությունը դրվեց խմբապետ Գերասիմ Աթաջանյանի և Սամսոն Մելիք-Փարսադանյանի վրա:

Մեպտեմբերի 20-ին Գարեգին Նժդեհի մարդիկ անցան ապստամբության կոնկրետ նախապատրաստմանը: Գենվազից վերադառնալով՝ Նժդեհը նորից բարձրացավ Խուստուփ սարը և այնտեղից սկսեց հրահանգներ տալ Կապանի հակախորհրդային ընդհատակին:

Բոլշևիկյան զորամասերի թիկունքում ապստամբությունն արագացնելու նպատակով Նժդեհը գյուղական 10 վաշտապետեր ուղարկեց Կապան[1]: Գաղտնի ճանապարհներով անցնելով նշանակված տեղերը՝ նրանք սկսեցին ընդհատակում կազմակերպել հարվածող խմբեր, մարտիկներին հրահանգավորել և բացատրել անելիքները:

Ապստամբության նախապատրաստման օրերին Գարեգին Նժդեհը կարևոր համարեց ամրապնդել կապերը պարսից խաների հետ: Նա մարդիկ

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ,** Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 100:

ուղարկեց Արաքս գետից այն կողմ, որոնք բանակցությունների մեջ մտան պարսիկների հետ՝ ակնկալելով նրանց օգնությունն ու աջակցությունը: Կողմերից ամեն մեկն իր հաշիվներն ուներ: Ստացած նյութական օգնությանը զանգեզուրցիները պարտավորվում էին փոխհատուցել Կարմիր բանակի դեմ անզիջում պայքարով: Հյուսիսային Իրանում տագնապի մեջ էին, որ Ադրբեջան ու Հայաստան մտած Կարմիր բանակը կարող է մուտք գործել նաև իրենց երկիրը: Ուստի «բոլշևիկյան վարակից» սեփական տիրույթները զերծ պահելու համար պարսիկ խաները պատրաստ էին նյութական այլ կարգի զոհողությունների, տրամադիր էին ամեն կերպ աջակցելու այն ուժերին, որոնք կռվելով Կարմիր բանակի դեմ՝ դանդաղեցնում էին նրա մոտենալը Իրանի սահմաններին:

Ավելին, Նժդեհի հետ հարաբերություններ հաստատելու համար Իրանի խաներն առաջինն իրենք նախաձեռնություն հանդես բերեցին: «Բարեկամությունը իմ և պարսից խանության միջև» խորագրով հոդվածում Նժդեհը հետագայում պատմել է պարսից խաներից Մութալիմ Սահրադի հետ իր հանդիպման մանրամասները: Ցանկություն ունենալով տեսակցելու Նժդեհի հետ՝ այդ խանը անցել էր Արաքսի ձախ ափը, որտեղից նրան անմիջապես առաջնորդել էին Կարճևան գյուղ: Այստեղ էլ տեղի էր ունեցել նրա հանդիպումը Նժդեհի հետ: Հանդիպման ժամանակ Մութալիմ Սահրադը Նժդեհին խոսք էր տվել ապահովել նրա մարդկանց անարգել և անվտանգ երթևեկությունը Գենվազի և Թավրիզի միջև: Նույն օրը՝ երեկոյան, վերհիշել է Նժդեհը, խանի հետ միասին «Գեդեոն Տեր-Մինասյանը իմ որոշ հանձնարարություններով անցնում է Ատրպատական»[1]: Արաքսի այս ափին նման մի տեսակցություն Նժդեհն ունեցել է մի ուրիշ երևելի պարսիկի՝ Մեհթի խանի և նրա եղբոր հետ: Այս հանդիպման ընթացքում պարսիկ գործիչները Նժդեհին խոստացել են «պարբերաբար տեղեկություններ տալ Օրդուբադի շարժումների մասին»[2]: Այդ օրերին Նժդեհի հետ տեսակցելու համար Մեղրի է եկել նաև Ղարադաղի Մուժամբար հայկական գյուղի քահանա Տեր-Մեսրոպը[3]:

Դրան հաջորդեցին փոխադարձ այցելություններ: Գեդեոն Տեր-Մինասյանից հետո Արաքսի այն կողմն անցավ Աշոտ Մելիք-Մուսյանը, ապա նրան հետևեցին ուրիշներ՝ վարելով բանակցություններ:

Պարսիկների հետ Նժդեհի և նրա զինակիցների բանակցությունների հիմնական արդյունքը հետևյալն էր.

1. կողմերը համաձայնության եկան կանոնավոր կապեր հաստատել Գենվազի և Թավրիզի միջև,
2. խաները հանձն առան Նժդեհին տեղեկություններ տալ Օրդուբադի

---

[1] **Գ. Նժդեհ,** Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, հունվար, թիվ 3, էջ 131:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

կողմից հարձակվող Կարմիր բանակի զորամասերի գործողությունների մասին,

3. Նժդեհը խոստացավ մինչև վերջին փամփուշտը կռվել բոլշևիկյան զորքերի դեմ:

* * *

Նախքան Կապանում հակաբոլշևիկյան ապստամբություն սկսվելը՝ Կարմիր բանակը տասնօրյա դադարից հետո՝ 1920 թ. հոկտեմբերի սկզբին, նորից վերսկսեց մարտական գործողությունները Գենվազում:

Պահը շատ նպաստավոր էր զանգեզուրյան ուժերին վերջնական հարված հասցնելու համար. Հայաստանի դեմ հարձակման անցած քեմալական զորքերը առաջանում էին և, ըստ էության, աջակցում Զանգեզուր մտած Կարմիր բանակի գործողություններին:

Խորհրդային հրամանատարությունը հատկապես կարևոր էր համարում այն, որ իր զորքերը թվապես գերազանցում էին Նժդեհի զինյալներին, և ընդհանրապես դեմ առ դեմ կանգնած այդ երկու ուժերը թվաքանակով համեմատության ոչ մի եզր չունեին:

Նժդեհը, սակայն, այդ հանգամանքը վճռորոշ չէր համարում: «...Միայն թվական հաշիվներով կռիվ մղելը կամ կռվից խուսափելը,– ասում էր նա,– պղծություն է մարդկային պատմության և զայն շարժող հրաշագործ ոգու դեմ»[1]:

Գենվազի ճակատում մարտական նոր գործողությունների հենց սկզբից՝ հոկտեմբերի 1-ից, Կարմիր բանակի զորամասերը վերցրին նախաձեռնությունը: Գարեգին Նժդեհի ջոկատների համար ծանրագույն վիճակ ստեղծվեց. թվում էր՝ ուր որ է նրանք կթողնեին Զանգեզուրի վերջին տարածքը և կանցնեին Պարսկաստան: Բայց դա ոչ միայն տեղի չունեցավ, այլև հայերը ծավալեցին իրենց համար կենաց ու մահու մի դաժան կռիվ: Հրացանների որոտը բռնել էր չորսբոլորը, դիրքերը ձեռքից ձեռք էին անցնում: Կարմիր բանակի զորամասերը հարձակման առաջին օրը որևէ հաջողություն չունեցան՝ տալով բավական թվով զոհեր:

Հոկտեմբերի 1-ի ուշ երեկոյան Մեղրիի Կարճևան գյուղից Աշոտ Մելիք-Մուսյանը և Նժդեհը հերթական հաղորդումն ուղղեցին Երևան՝ ՀՀ զինվորական նախարարին, պատճենը՝ ՀՅԴ բյուրոյին:

«Գենվազում կռիվները շարունակվում են նախկին թափով,– գրում էին նրանք:– Սեղմում են մեզ երկու կողմից՝ 1. Շվանիձորի, 2. Օրդուբադի: Կասկածից դուրս է, որ Ադրբեջանը որոշել է կապվել Նախիջևանի հետ՝ վերաց-

[1] **Գ. Նժդեհ,** Իմ պատասխանը, էջ 33:

նելու մեջտեղից Գենվազը»[1]: Նշելով, որ հակառակորդը, չթուլացնելով Շվանիձորի գործողությունները, կրկնակի համառությամբ գործում էր Օրդուբադի կողմից, այնուհետև նրանք գրում էին, որ խորհրդային զորքերի հետ այս ճակատում անմիջականորեն մասնակցում էին տեղական թուրքերը և թուրքական զորքերը[2]:

Հաղորդելով, որ «Գենվազի մի բուռ հայությունը հերոսության աննախընթաց օրինակներ է ցույց տալիս»՝ Նժդեհն ու Մելիք-Մուսյանը զարմանալի լավատեսությամբ ավելացնում էին. «Հաջողությունը մինչև օրս մեր կողմն է: Վերցրել ենք գերիներ և ավար. թշնամու կորուստները շատ են»[3]: Եվ նրանք այս տողերը շարադրում էին այն ժամանակ, երբ Գենվազում Կարմիր բանակի ռազմակալումից ազատ էր մնացել ընդամենը մի քանի բնակավայր:

Նժդեհը և Մելիք-Մուսյանը բողոքում էին, որ Երևանի հետ կապ չկա: «Ինֆորմացիայի կատարյալ բացակայությունը մեզ դրել է ծանր կացության մեջ[4]»,– հայտնում էին նրանք:

Իրենց անելիքների մասին կառավարությունից բոպե առ բոպե սպասելով հրահանգների ու ցուցումների՝ նրանք միաժամանակ զինվորական նախարարին ներկայացնում էին մոտ օրերի իրենց գործողությունների ծրագիրը, որը պարունակում էր երկու հիմնական սկզբունք՝ 1. Արաքսի ափը (Շվանիձոր–Մեղրի–Կարճևան, որոնցից վերջինը գտնվում էր Նախիջևանի գավառում) ոչ մի գնով չզիջել թշնամուն, որովհետև, ինչպես գրում էին նրանք, «դա **միակ ճանապարհն է** (ընդգծումը նրանցն է: – *Ա. Ս.*), որով նա կարող է և կամենում է ուժ մատակարարել Նախիջևանին՝ նախ կանգնեցնելու հայկական առաջխաղացումը (նկատի ունեին՝ Արարատյան դաշտից: – *Ա. Ս.*), ապա իրագործելու Տաճկաստանի հետ միանալու իր նվիրական ծրագրերը»: 2. Կազմակերպել Գենվազի և Գողթանի ժողովրդի ինքնապաշտպանությունը վերահաս կոտորածների վտանգի դեմ[5]:

«Թշնամին աննախընթաց եռանդ է գործադրում պատռելու (այսօր, հոկտեմբերի 1-ին) մեր շղթան Օրդուբադի ճակատում: Մեր բոլոր դիրքերը ռմբակոծում են: Սոյուխի (սար) վրա նկատվում են թշնամու նորանոր ուժերի կուտակումներ: Բարձունքներից մերոնք հեռանում են: Տղաները փամփուշտ, փամփուշտ և փամփուշտ են խնդրում»[6],– հաղորդման վերջում շեշտում էին Նժդեհը և Աշոտը:

Գենվազի ճակատի՝ Կարմիր բանակի զորամասերի գործողությունների ուղղությունը շեղելու և դրանով իսկ Նժդեհի զինյալներին աջակցելու նպա-

---

[1] ՀԱԱ , ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 10:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 10 և շրջերես:

[4] Նույն տեղում, թ. 11:

[5] Տե՛ս նույն տեղում, թ. 10-ի շրջերես:

[6] Նույն տեղում, թ. 11:

տակով 1920 թ. հոկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության զորամասերը Դարալագյազի կողմից հարձակման անցան Սիսիանի վրա՝ նպատակ ունենալով շարժվել առաջ, գրավել Գորիսը և աքցանի մեջ վերցնել Կարմիր բանակի Գորիս–Կապան տարածքի վրա գտնվող զորամասերը:

Հոկտեմբերի 2-ի ամբողջ օրը Գենվազի հայերը, աջ թևից նահանջելով մինչև Կարճևան, ձախով աստիճանաբար թևանց էին անում: Դեռ առավոտյան նրանք կարողացան շրջապատել առաջացած հակառակորդին, որին, ստացած տեղեկությունների համաձայն, ղեկավարում էր տաճիկ սպա Էդիֆ բեյը: Խիտ մառախուղի պատճառով հակառակորդին, այնուամենայնիվ, հաջողվեց ճողոպրել՝ կռվի դաշտում թողնելով դիակներ, ուղտեր, բավական ավար:

Մեկը մյուսին հաջորդած գրոհները հայերը ետ մղեցին նաև Շվանիձորի ճակատում:

Հոկտեմբերի 2-ի գիշերը Նժդեհը նախորդ օրը Երևան հղած, բայց դեռ չուղարկած հաղորդման վերջում հետգրությամբ ավելացրել է. «Հերոսական Գենվազը լիկվիդացիայի ենթարկեց Օրդուբադի ճակատը»: Հակառակորդի զորամասերը «թվում է լեռներում թողած պիտի լինեն գնդացիրներ. թնդանոթները, ըստ երևույթին, ուղղակի ցած են գլորել կամ փախցրած են եղել գիշերով»: Նա զինվորական նախարարին տեղեկացրեց նաև, որ «Օրդուբադում գտնվող մեծամասնականների և տաճկական հրամանատարության միջև ինչ-որ թյուրիմացություններ են առաջացել: Զինվորական կոմիսար Վարդանյանը և մի քանի այլ հայեր ձերբակալված են որպես դավաճաններ»[1]:

Հոկտեմբերի 2-ի դրությամբ բնութագրելով Շվանիձորի ճակատի իրավիճակը՝ Նժդեհը նշեց. «Շիվանիձորի ճակատում, ինչպես արդեն գրված է ձեզ (նկատի ունի հոկտեմբերի 1-ի իր հաղորդումը: – *Ա. Ս.*) կռիվները շարունակվում են իրենց նախկին թափով»[2]:

Հենց այստեղ էլ Նժդեհն առաջին անգամ խոսք բացեց Կապարգողթը նորից լիովին ազատագրելու հնարավորության մասին՝ գրելով. «Եթե հաջողվի լիկվիդացիայի ենթարկել և այդ ճակատի գործողությունները՝ թիկունքն ապահովելու համար, ստիպված կլինեմ ձեռնարկելու Կապանի վերագրավման գործին»[3]: Հետգրության վերջում Նժդեհն ավելացրել էր. «Մի ավելորդ անգամ ևս խնդրում եմ արագացնել ձեր օգնությունը: Ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ դուք կարող եք անտես առնել Ղափանի, Գենվազի և Գողթանի ռազմական խոշոր նշանակությունը մանուկ Հայաստանի համար, ինչպես նաև այդ շրջանների հերոսական

[1] ՀԱԱ , ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 13:
[2] Նույն տեղում, թ. 13 և շրջերես:
[3] Նույն տեղում, թ. 13:

ժողովրդի ֆիզիկական գոյության կարևոր խնդիրը»[1]:

Հոկտեմբերի 3-ին հայկական ուժերը նոր, հուժկու հարձակումներով Շվանիձորի դիրքերից դուրս մղեցին հակառակորդին:

Այսպիսով՝ եռօրյա մարտերում Կարմիր բանակի զորամասերի և նրանց միացած ադրբեջանական զինված կազմավորումների ու թուրքական զինվորական ստորաբաժանումների բոլոր հարձակումները ձախողվեցին. հակառակորդը նահանջեց մարդկային ուժի, զենքի ու ռազմական հանդերձանքի զգալի կորուստներով:

Ռուսական զորամասերը հոկտեմբերի 4-ին նորից հարձակման անցան Գենվազի ճակատում: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության ռազմական պլանն այս անգամ նախատեսում էր արագ գրավել Գենվազը, ապա զորքերը ետ բերել և նետել Դարալագյազի կողմից Սիսիանի տարածք մտած Հայաստանի Հանրապետության ուժերի դեմ:

Հարձակման անցնելով՝ Կարմիր բանակի զորքերն ուղղություն վերցրին դեպի Մեղրի: Որքան խորանում էին նպատականշված ուղղությամբ, այնքան մարտերը ծանր էին դառնում: Նժդեհը փորձեց խորհրդային զորքերի հարձակումը կանգնեցնել՝ նրանց թիկունքից հարվածներ հասցնելով: Այդ նպատակով իր զորամասերի գլխավոր ուժերը նա կենտրոնացրեց ռազմաճակատի Շվանիձորի հատվածում: Հայկական մի զորաջոկատ, սեպաձև խրվելով թշնամու դասավորության մեջ, այնուհետև ջանքեր գործադրեց ընդլայնելու բացած ճեղքը՝ հակառակորդի առաջապահ մասը մյուս զորամասերից կտրելու համար, բայց այդ բանը նրան չհաջողվեց: Գրոհի անցնելով իրենց մարտակարգերի մեջ խրվող զորաջոկատի դեմ՝ Կարմիր բանակի զորքերը նրան ստիպեցին նահանջել:

Վերախմբավորելով ուժերը՝ ռուսական զորամասերը հարձակման անցան Շվանիձորը պաշտպանող, ինչպես նաև Շահբազյուրդում ամրացված զանգեզուրյան ուժերի դեմ:

Շվանիձորի վրա խորհրդային զորքերը շարժվեցին երեք ուղղություններով: Մեհման սարի փեշերից մի զորամաս՝ Սմիռնովի հրամանատարությամբ, գյուղի վրա հարձակում ձեռնարկեց արևելյան կողմից: Մյուս զորամասը, որի հրամանատարը Փարսադանովն էր, խնդիր ուներ Գյուլու-Գուրդին լեռնապարի գագաթներում ամրացված դիրքերից հայերին սրընթաց դուրս մղելու ու ջախջախելու, ապա գրավելու Շվանիձորի վերին թաղամասը: Երրորդ զորամասը Վայցեխովսկու հրամանատարության տակ հարձակվեց Բարահաջիի կողմից[2]:

Բոլշևիկյան զորքերին օգնեցին տեղի կոմունիստները և գյուղացիների մի մասը: Կոմունիստները հայկական ուժերի թիկունքում կատարեցին Կար-

---

[1] ՀԱԱ , ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 13:

[2] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 60:

միր բանակի հրամանատարների հատուկ հանձնարարությունները, հետախուզոցին Զանգեզուրյան ուժերի դասավորությունը և կարևոր տեղեկություններ հաղորդեցին: Նժդեհի զորամասերում գտնվող զգալի թվով գյուղացիներ կոմունիստների քարոզչության հետևանքով հրաժարվեցին կռվել Կարմիր բանակի դեմ՝ լքելով դիրքերը: Նրանք վերադարձան իրենց տները:

Շվանիձորի ուղղությամբ հարձակվող ռուսական զորքերին միացան Կապանի Շիկահողի ենթաշրջանի և Գենվազի Շվանիձոր ու Մալև գյուղերի գյուղացիներից կազմված կոմունիստական ջոկատները: Շվանիձորցիներից կազմված ջոկատի հրամանատարն էր Սամսոն Հարությունյանը:

Այդ կռիվներին մասնակցում էին Զանգեզուրի տարբեր վայրերից՝ Կապանից, Գորիսից, Սիսիանից եկած կոմունիստները: Նրանց թվում էին՝ Սեդրակ Հովհաննիսյանը, Գինոս Խաչատրյանը, Հովհաննես Գրիգորյանը, Լևոն Հովհաննիսյանը, Գինոս Հայրապետյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Կարապետ Գրիգորյանը, Մելիտոս Մելքոնյանը, Վարդան Վարդանյանը, Մարգար Ոսկանյանը և ուրիշներ[1]:

Շվանիձորի մերձակայքում կոտրելով հայկական ուժերի համառ դիմադրությունը՝ խորհրդային զորամասերը և կոմունիստական ջոկատները մտան գյուղ: Նժդեհի ուժերը տեղի տալով թողեցին գյուղը և բարձրացան շրջակա բնական ամրությունները:

Հոկտեմբերի 5-ին Նժդեհը Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին Ապկեզից գրեց. «Մեկից ավելի անգամ մեծ կորուստներով ետ շպրտված Օրդուբադն ու Բարթազը՝ միացած մեծամասնականներին, սեպտեմբերի 28-ին կրկնեցին իրենց հարձակումը ավելի մեծ ուժերով ու մասշտաբով: Կռիվը շարունակվում է երկու ճակատների վրա: Թշնամու մարտական և տեխնիկ ուժերից ավելի մեծ գործ են տեսնում նրա հրաշագործ թղթադրամների դեզերը և պրովոկացիան: Շվանիձորի զինվորությունը Բաքվից եկած մեկ-երկու կաշառված հայերի սադրանքով մերկացրել է դիրքերը և առաջ քաշել թշնամուն: Այդ գյուղն էլ կարելի է ժամանակավորապես կորած համարել, բայց և այնպես դրությունը անհույս չեմ համարում»[2]:

Տիրելով կարևոր դիրք ունեցող Շվանիձոր գյուղին՝ Կարմիր բանակի զորամասերը գերազանցություն ստացան մարտավարական առումով և, առանց ժամանակ կորցնելու, հապշտապ ձեռնամուխ եղան Գենվազը վճռական ոստյունով գրավելու գործին:

Չնայած կարմիրբանակայինները կռվում էին ուժերի գերազույն լարումով, բայց գնալով թուլանում էր նրանց հարձակման թափը: Յուրաքանչյուր կարևոր դիրք մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցնում: Զանգեզուրցիների դիմադրությունը գնալով կատաղի և անզիջում էր դառնում: Նրանք դիմադ-

---

[1] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 60:

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 3:

ության համար վարպետորեն օգտագործում էին քարափների նեղ շավիղները, քարքարոտ արահետները, սեպաձև լեռնակատարները, որոնցով ստիպված էին անցնել զորամասերը:

Նժդեհի ջոկատներն իրենց գրոհները մեծ մասամբ կատարում էին գիշերները: Հայերը, արդյունավետ օգտագործելով տեղանքի բնական ամրությունները, շարժվում էին արագ, թշնամու վրա կրակում թաքստոցներից՝ այդ նպատակին հատկապես ծառայեցնելով քարանձավները: Կռիվները թեժացան ոչ միայն Շվանիձորի ուղղությամբ, այլև ռազմաճակատի՝ Բարթազ, Շահբազյուրդ և Ալանգյազ հատվածներում:

Երբ Արևիքի հարավարևմտյան ճակատում՝ Ալանգյազ սարի բարձունքների վրա, իր զորամասերին գոտեպնդելու համար Նժդեհը շրջագայել է դիրքից դիրք, նրան է մոտեցել հարյուրապետերից մեկը և կասկած հայտնելով կռվի հաջող ելքի նկատմամբ՝ փաստարկել է, թե մնացել է աննշան քանակի ռազմամթերք, և եղած փամփուշտների պաշարով կռիվը շարունակելը հղի կլինի լիովին ոչնչանալու վտանգով:

Նժդեհը իսկույնևեթ չի պատասխանել նահանջի մասին մտածող վաշտապետին, որը կարծես դադարել էր գիտակցել, թե այդ վճռական պահին տեղի տալ՝ կնշանակեր թշնամուն թույլ տալ Արևիքի հայության գերեզմանի վրայով միանալ թաթար Ադրբեջանին: Նա հրամայել է իր մոտ կանչել ռազմական բոլոր ղեկավարներին: Եկել են նրանք, և նրանցից շատերը նույնպես իրենց անհանգստությունն են հայտնել հետագա հաջող դիմադրության կարելիության մասին:

Հետագայում Նժդեհը գրել է. «Նախ հոգեպես են պարտվում և ղեկավար տարրերը: Եվ թշնամու հաջողությունը սկսում է հենց այն վայրկյանից, երբ իր դեմ կռվող բանակի հրամանատարության մեջ սկսում է տկարանալ հաղթանակելու հավատը: Զորքը նման դեպքում բնազդաբար զգում է, թե ինքն այլևս բարոյապես անտեր է, անգլուխ:

Հոգուս աչքերով տեսնում էի պարտությունը՝ կախված մեր գլխին: Մենք պարտված էինք արդեն, մնում էր, որ թշնամին արիություն ունենար հազար քայլ առաջանալու, որպեսզի մենք լքեինք մեր դիրքերը»[1]:

Նժդեհը ոչ թե սպառնալիք էր կարդացել իր վաշտապետերին, այլ մի կրակոտ խոսքով դիմել էր նրանց՝ հիշեցնելով հայրենի երկրի նկատմամբ իրենց պարտքը:

«Մեզանից առաջ,– ասել է նա,– այս լեռների վրա կռվող հայը խորապես գիտակցել է, թե **Սյունիքը հանձնել թշնամուն՝ կնշանակե հայ երկրի բանալիները և հայ ժողովրդի բախտն ընդմիշտ հանձնել իր իսլամ հարևաններին:** Նույն փրկարար գիտակցությամբ այս բարձունքների վրա պետք է կռվե, մեռնե ու հաղթե և վաղվա հայությունը: Ի՞նչ, միայն ձե՞զ է պակասում այդ

[1] **Գ. Նժդեհ**, Ցեղի ոգու շարժը, էջ 36-37:

գիտակցությունը: Մոռացե՞լ եք, թե կա հայ ցեղի հավիտենադիր հրամանը՝ հաղթել կամ մեռնել»[1]:

– Ո՛չ,– լինում է վաշտապետերի պատասխանը:

Նժդեհը շարունակել է վաշտապետերին ուղղված իր խոսքը. «Ես բնավ չեմ մտածում նահանջի մասին, որովհետև սովորություն ունեմ նման օրհասական վայրկյաններին դիմելու իմ խղճին՝ հարցնելու իմ ներքին դատավորին՝ ինչպես են վարվել նման և ավելի ծանր վիճակում Վարդաններն ու Դավիթ-բեկերը»[2]:

Անմիջապես հետևում է վաշտապետերի որոշումը՝ «Մեռնե՛լ, բայց հաղթե՛լ»:

Այնուհետև, երբ կռվի հաջող ընթացքի մասին տարակուսող հարյուրապետը փորձել է արդարանալ, որ ինքը պարզապես ուզում էր ասել, որ ռազմամթերք չունեն, Նժդեհը պատասխանել է. «Բայց ո՞վ ասաց, թե միայն առատ ռազմամթերքով են հաղթում: Շատ անգամ հաղթում է այն կողմը, որ նվազ է կրակում: Վախկոտն է հաճախակի աղմկում՝ մատնելով իր անարիությունը: Հրացանից, գնդացրից, թնդանոթից չէ, որ սարսափում է թշնամին, այլ քար լռությունից: Չկա ավելի ահաբեկիչ բան, քան լուռ առաջխաղացումը, մասնավորապես գիշեր ժամանակ, երբ քարը, թուփը, այն ամենը, որ կարող է զբաղեցնել մարդուս աչքն ու երևակայությունը, դառնում են գրոհող հակառակորդ: Լուռ առաջխաղացող տասնյակը մի ամբողջ գունդ է, վաշտը՝ մի ամբողջ բանակ պաշտպանվողի համար: Գիշեր ժամանակ հարձակվողի զինակիցներն են՝ խավարը, լռությունը, ժայռերը: Իսկ **երբ նախահարձակվողը մենք ենք, այդ լեռների տերը՝ մեզ հետ են նաև այն բոլորի վրեժխնդիր ստվերները, որոնք մեզանից առաջ հեգնել են մահը և ընկել այդ սրբազան բարձունքների վրա:** Իսկ երբ մենք ենք նախահարձակվողը, մեզ հետ է նաև մեր լեռների հզոր ոգին: Ուրեմն, ռազմամթերքի կարիքը չզգալու համար՝ մնանք հավատարիմ մեր օրհնված ռազմավարության տարերային ձևերին: Գիշերամարտը թող լինի մեր բաժինը: Ուրեմն հարձակվենք, ինչպես հարձակվում է մահը՝ լուռ և անակնկալ»[3]:

Նժդեհի խոսքերը խորապես թափանցեցին վաշտապետերի սրտերը: Հրամանատարի հարձակման հրավերին նրանք պատասխանեցին՝ հարձակվենք: Եվ վաշտապետերը վերադարձան իրենց վաշտերը և նրանց տարան դեպի մարտ:

Նժդեհը քաջ գիտակցում էր, որ Գենվազում ծավալված այս նոր մարտերը վճռորոշ են լինելու: Ուստի նա զորահավաքի ենթարկեց իր ողջ ուժերը և անցավ հակահարձակման:

---

[1] **Գ. Նժդեհ**, Ցեղի ոգու շարժը, էջ 37:

[2] Նույն տեղում, էջ 37-38:

[3] Նույն տեղում, էջ 38:

Լուսաբացին Ալանգյազի բարձունքներում հակառակորդը ծեծված էր ու գերված: Եվ դա արել էին վերջին փամփուշտները կրակող հայ խիզախները՝ ապշահար անելով ռազմամթերքի պակաս չունեցող հակառակորդին:

Վերհիշելով այդ դեպքը՝ Նժդեհը գրել է. «Իմ զինվորն այդ օրը օրհնում էր ճակատագիրը, որ չէր հապաղել թշնամու ձեռքով մեզ առատ ռազմամթերք հասցնելու:

Այդ կռվում սյունեցին մի անգամ ևս զգաց, թե հաղթում է այն կողմը, որը վստահ է ոչ թե իր սպառազեն բռունցքի, այլ իր ներազեն ոգու գերազանցության:

Որ ցեղի ոգու ձեռքով ղեկավարվող ժողովուրդը կարիք չունի երկար սրի:

Իր լեռների վրա սյունեցին այդ օրը հաստատեց, թե երկաթե զենքերի դեմ հեշտ է վահան գտնել, բայց ոչ ոգու զենքերի, որպիսին են ցեղի զենքերը»[1]:

Զանգեզուրյան վաշտերի ուժեղ դիմադրությունը և հակահարձակումը ռուսական զորամասերին ստիպեցին նահանջել: Վիճակը կարմիրբանակայինների համար հատկապես ծանրացավ Ալանգյազի սարերի արևմտյան փեշերին:

Հայ մարտիկների 18-20 հոգանոց մի ջոկատ տեղեկացավ, որ Նախիջևանի կողմից եկող կարմիրբանակայինների մի զորամաս՝ բաղկացած 100 զինվորից, սպառազինված գնդացիրներով և լեռնային թնդանոթով, անցնելու էր մի ձորի միջով, որը միակ ճանապարհն էր առաջխաղացման համար: Ջոկատի մարտիկները ձորի երկու կողմերի ժայռակոփ գագաթները բարձրացրին ծանր տակառներ և սպասեցին հակառակորդին: Երբ ամբողջ զորամասն առաջանալով մտավ ձորը, տակառները երկու կողմերից սլացան ներքև և պայթեցին ահեղաձայն: Զորամասում սոսկալի իրարանցում առաջացավ. ոմանք խլացան կամ ուշաթափվեցին, ոմանք՝ ձեռքերը վեր պարզած հանձնվեցին: Երբ զինաթափ զինվորները դուրս եկան ձորից և տեսան, որ իրենց դիմաց ընդամենը 20 հայ զինյալներ են, նրանց սարսափը փոխվեց զարմանքի:

Հայերի՝ մեկը մյուսին հաջորդած և մեկը մյուսից հաջող գրոհների ճնշման տակ Կարմիր բանակի զորամասերը Գենվազից ետ քաշվեցին Նախիջևանի տարածք՝ Օրդուբադ: Նրանց մյուս մասը բռնեց դեպի Կապան անկարգ նահանջի ճանապարհը: «Վերջապես ջարդվեց թշնամին և անփառունակ կերպով իր բարոյալքված մասը փախցրեց Ղափան»,– գրել է Նժդեհը: Քառասունհինգ օր շարունակ տեղի ունեցած ճակատագրական կռիվները Արևիքում՝ մեկը մյուսից խիզախ, մեկը մյուսից հանդուգն, վերջացան մի բուռն մարտիկների փայլուն հաղթանակով:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես է լինում, որ մի բուռ խիզախ-

---

[1] **Գ. Նժդեհ**, Ցեղի ոգու շարժը, էջ 39:

ներ ճակատ առ ճակատ դուրս են գալիս տասնապատիկ գերազանց ուժեր ունեցող թշնամու դեմ, կարողանում են հալածել նրան և խլել հաղթության դափնեպսակը, Նժդեհը գրել է. «Վերջին հաշվով կողմերի զոհապատրաստության չափն է որոշում այս կամ այն ճակատամարտի, և ապա՝ ողջ պատերազմի ելքը:

Հաղթում, նշանակում է հակառակորդին գերազանցում եմ զոհաբերության մեջ: Ահա՛ ռազմական դոքտրինայի այբն ու փիլիսոփայությունը»[1]:

[1] **Գ. Նժդեհը**, Բանտային գրառումներ, էջ 79:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԱՆՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԱՀԱՆՋԸ

Ռազմաճակատի Ալանգյազի հատվածից Կարմիր բանակի զորքերի նահանջը դեպի Նախիջևանի գավառ Նժդեհի զինվորական պետերին վստահություն ներշնչեց իրենց ուժերի նկատմամբ, և նրանք, արագ խմբավորելով իրենց զորամասերը, պատրաստվեցին նոր գրոհների:

Ալանգյազում ձեռք բերած հաջողություններից հետո Նժդեհը այնտեղի իր զինջոկատները բաժանեց երկու խմբի: Մի խումբը նա ուղարկեց Կապանի շրջան՝ Բաղաբերդի տարածք (Քաջարանի ենթաշրջան)՝ նպատակ ունենալով մինչև Գենվազի վերագրավումը այդ խմբի ուժերով Բաղաբերդում վերականգնել կորցրած դիրքերը և թիկունքից սպառնալ Մեղրիի վրա հարձակվող հակառակորդի զորքերին: Մյուս խումբը օգնության ուղարկեց Շվանիձոր գյուղի ուղղությամբ կռվող ուժերին:

Վերևում արդեն ասվեց, որ Զանգեզուրում կռվող Նժդեհի զինված ուժերին աջակցություն ցույց տալու և Գենվազի ճակատում խորհրդային զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար 1920 թ. հոկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության զորքերը Դարալագյազից հարձակման անցան Սիսիանի վրա: Այդ մասին Նժդեհը Երևանից պաշտոնական լուր ստացավ հաջորդ օրը՝ հոկտեմբերի 3-ին: Նա դժգոհ էր, որ Սիսիանի վրա հարձակումն այդքան ուշ է սկսվել, և հատկապես դժգոհ էր, որ հանրապետության կառավարությունը իրեն հարկ եղած օգնություն չէր հասցնում զենքով ու զինամթերքով:

Զանգեզուրը կռվում էր մեն-մենակ՝ առանց դրսի օժանդակության: Գավառի ղեկավարները բազմաթիվ դիմումներ էին հղում Երևան՝ կառավարությունից ակնկալելով որևէ օգնություն, բայց անօգուտ: Երևանը միայն բավարարվում էր զանգեզուրցիներին դեպքից դեպք քաջալերանքի խոսքեր հղելով:

Հոկտեմբերի 3-ին Նժդեհը Կապանի հանքերից Երևանում Զանգեզուրի գեներալ-կոմիսար Սերգեյ Մելիք-Յուլչյանին գրել է. «Մոտավորապես 100 օր է, որ, կտրված Հանրապետությունից, կռվում եմ իմ թշնամու գերագույն ուժերի դեմ՝ առանց դրսի օգնության: Միայն իմ զինակիցները գիտեն, թե ինչ ռազմադավերի, ինչ թշնամու համար անծանոթ տակտիկական ձևերի, ինչ երբեմն խենթության հասնող խիզախ քայլերի եմ դիմել ռազմամթերքի ծախսը ամենամինիմալ չափերի հասցնելու համար: Կռվել եմ ուժանակով, պայթուցիկ տակառներով, տեղումս պատրաստած սվիններով: Ցերեկները

ակամայից դիմել եմ պատշպանողականի, գիշերները՝ “волчья” տակտիկայի: Կռիվներին նման ձև տալով հանդերձ՝ այսօր կանգնած եմ ռազմամթերքի սուր կրիզիսի առաջ:

Կատաստրոֆան անխուսափելի է, եթե Հանրապետությունը շուտափույթ կերպով օգնության չհասնի ինձ:

Ընկե՛ր, մի ավելորդ անգամ էլ խնդրում եմ արագացնել օգնությունը: Այս շրջանները՝ իրենց անչափելի ռազմագիտական նշանակությամբ և գերազանցորեն մարտունակ ժողովրդով, մեր Հանրապետությանը շա՛տ, շատ են պետք:

Աստված և իմ սերը իմ Հանրապետության հետ: Ջերմ բարևներս ձեզ և կուսակցական բոլոր ընկերներին»:

Այնուհետև հետգրությամբ նամակին ավելացրել է. «Նամակս կարդալ Մինիստրական խորհրդում և ֆրակցիայում»[1]:

Սիսիանի վրա Հայաստանի Հանրապետության զորքերի հարձակման լուրը ստանալուն պես և իր թիկունքում ունենալով Արևիքում տարած հաղթանակը՝ Գարեգին Նժդեհը որոշեց անհապաղ գործողության մեջ դնել Ղափանի շրջանում ապստամբություն բարձրացնելու և մարտերը Կարմիր բանակի զորքերի թիկունք տեղափոխելու իր ծրագիրը: Արևիքում տարած հաղթության շնորհիվ, գրել է նա, «հայ զենքի այդ փայլուն հաջողությամբ ես կարելիություն ստացա՝ ծրագրել ու գործադրել Ղափանի վերագրավումը»[2]:

Նույն օրը՝ հոկտեմբերի 3-ին, Նժդեհը, որպես իր ծրագրի կենսագործման առաջին քայլ, Կապան ուղարկեց երեք համհարզ, որոնք այնտեղ տարան անհրաժեշտ հրահանգներ ու կոչեր: Համհարզներ գնացին նաև Սիսիան: Ս. Վրացյանը գրել է. «Ապստամբությունը միաժամանակ հղացվում էր երկու շրջանում՝ Ղափանում և Սիսիանում: Ղափանն իր թիկունքում ուներ ազատ Արևիքը, Սիսիանը՝ Դարալագյազը»[3]:

Գենվազում ձեռք բերած ռազմական հաջողությունների առթիվ Նժդեհը հոկտեմբերի 5-ին կապանցիներին նոր գրություն ուղղեց, որում ասված էր. «**Ոտքի՛, խաբվա՛ծ ժողովուրդ, ոտքի՛ ել, փրկությունդ մոտ է:** Ոտքի՛, զենքը ձեռքիդ, կազմ ու պատրաստ ինձ սպասիր Խուստուպից»[4]:

Կապանի հակաբոլշևիկյան ընդհատակը արդեն պատրաստ էր ապստամբության: Իհարկե, այդ ընդհատակը նոր չէր ստեղծվում, այն կյանքի էր կոչվել դեռ մինչև Կարմիր բանակի մուտքը Կապանի շրջան: Հետագայում Նժդեհը գրել է. «Ղափանի անկումից շատ առաջ, երկրի սպառնական դրու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 19, թ. 1:

[2] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 38:

[3] **Ս. Վրացյան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 156:

[4] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 13, թ. 10, տե՛ս նաև **Վ. Գևորգյան**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), «Ազատ խոսք», Երևան, 1991, էջ 88:

թյունից խթանված, ես մթության մեջ ծնունդ էի տվել մի ստորերկրյա կազմակերպության»[1]:

Կապանի հակաբոլշևիկյան զինված ընդհատակը, որ Նժդեհն անվանում էր «դավիթբեկյան ուխտ», բաժանված էր առանձին միավորների՝ խմբերի: Խմբերում ընդգրկվածները կոչվում էին «դավիթբեկյաններ» կամ «գեղվաձորյաններ»: Ուխտի մարտական ուժերը բաժանված էին թեթև միավորների, որոնք կոչվում էին «գայլախմբեր»: Սրանք ունեին իրենց ահաբեկիչներն ու սուրհանդակները: Նորերը ընդունվում էին միայն հների երաշխավորությամբ:

Նժդեհի մարդիկ հետախուզական լայն աշխատանքներ էին տանում, տեղեկություններ հավաքում բոլշևիկյան զորամասերի տեղաբաշխման և շարժումների, կոմունիստական ջոկատների գործողությունների, հեղկոմների միջոցառումների, կուսակցական բջիջների որոշումների մասին: Նժդեհը կողմնակիցներ ուներ կոմունիստական պարտիզանական ջոկատներում, գյուղական հեղկոմներում, անգամ կուսակցական բջիջներում:

Կարմիր բանակի թիկունքում այս նախնական աշխատանքները տանելուց հետո՝ հոկտեմբերի 8-ին, Կապանի վաշտապետերը խորհրդակցության հավաքվեցին Խուստուփի սարալանջին փռված Արխալլղի անտառում: Այստեղ որոշում ընդունվեց անմիջական գործողությունների դիմել, այսինքն՝ զինված ապստամբություն բարձրացնել: Կապանի և Գենվազի վաշտապետերն ու զինվորները, սարից իջնելով, անցան իրենց գյուղերը:

Մյուս կողմից նախազգուշական միջոցներ էր ձեռնարկում Կարմիր բանակի հրամանատարությունը: Նրա կարգադրությամբ Կապանի զանազան կետերում ամրացան 251-րդ ու 252-րդ հրացանաձիգ և կովկասյան 2-րդ գնդերը: Միայն Կապանի հանքերում և շրջակա գյուղերում գտնվում էր ավելի քան 400 խորհրդային զինվոր: Բոլշևիկյան հրամանատարներն իրենց գործակալների միջոցով նախապես տեղեկացել էին նախապատրաստվող ապստամբության մասին և զգաստ էին պահում իրենց զորամասերը:

Միաժամանակ Կարմիր բանակի հրամանատարությունն ու Զանգեզուրի կոմունիստական կազմակերպությունները լայն հակաքարոզչություն էին մղում. զանգեզուրցիներին հորդորում էին հեռու մնալ ապստամբություն բարձրացնելու մտքից, համախմբվել խորհրդային իշխանության շուրջը և պայքար ծավալել գավառը «դաշնակ մաուզերիստներից վերջնականապես մաքրելու» համար:

1920 թ. հոկտեմբերի 7-ին Գորիսում տեղի ունեցավ բոլշևիկյան գավառային կոնֆերանս: Իրենց ելույթներում կոնֆերանսի մասնակիցները սպառնալիքներ էին տեղում բոլոր նրանց հասցեին, ովքեր կհամարձակվեին բողոքել խորհրդային իշխանության միջոցառումների դեմ, «գործիք դառնալ»

---

[1] **Գ. Նժդեհ**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, թիվ 12, էջ 100:

դաշնակցականների ձեռքին: Կոնֆերանսն ընդունեց մի շարք որոշումներ, որոնցով գավառի կոմունիստներին պարտավորեցնում էր անշեղորեն կատարել ՌԿ(բ)Կ կենտկոմի և խորհրդային կառավարության առաջադրանքները, «արմատախիլ անել դաշնակիզմը» և «միանալ համաշխարհային պրոլետարիատի մեծ բանակին»:

Կոնֆերանսի ավարտից անմիջապես հետո պատվիրակները մեկնեցին տեղերը և նրա արդյունքների մասին կոմբջիջներում հանդես եկան հաղորդումներով: Բջիջների ժողովներում կոմունիստների մեծ մասը պատրաստակամություն էր հայտնում կյանքը չխնայելու բոլշևիկյան գործի համար: Բայց առանձին բջիջներում կուսակցականների մի մասը կասկած էր հայտնում նոր իշխանությունների կողմից վարվող ազգային քաղաքականության ճշմարտացիության նկատմամբ, իսկ ոմանք էլ ուղղակի հանդես էին գալիս այդ քաղաքականության դեմ:

Մինչև բոլշևիկները բազմակողմանի աշխատանքներ էին ծավալում մոտեցող ապստամբությունը կանխելու համար, Նժդեհը վերջին նախապատրաստություններն էր տեսնում:

Հարկ է նշել, որ Նժդեհը և նրա զինակիցները մեծ վստահություն ունեին հատկապես Կապանի շրջանի կենտրոնին՝ Հանքերին մոտ գտնվող գյուղերի բնակչության վրա, որի բացարձակ գերակշիռ մասը անվերապահ հավատ էր տածում հրամանատարի նկատմամբ և գնում էր նրա ետևից: Այդ գյուղերից էին Գյուտկումը, Բեխը, Բաղաբուրջը, Կավարտը, Բարաբաթումը և այլն[1]:

Հոկտեմբերի 9-ի երեկոյան Նժդեհի հավատարիմ զինակից Արմենակ Դավթյանի զինված մարդիկ ձերբակալեցին Ճակատեն գյուղի հեղկոմի անդամներին: Գրավելով Ճակատենը՝ նրանք փակեցին Կապանի ավանը Շիկահողի ենթաշրջանի հետ կապող միակ ճանապարհը, ինչպես նաև իրարից կտրեցին Կապանի շրջանում գործող և Բարթազ–Նյուվադի–Շվանիձոր ճակատում կռվող Կարմիր բանակի զորքերի երկու խմբերին: Ճակատենի գրավումով սկսվեց Կապանի ապստամբությունը:

Նույն ժամերին Նժդեհը Գենվազից շտապում էր Կապան: Նա այսպես է վերհիշել այդ պահը. «Յոթը ձիավոր ենք: Առաջանում ենք դեպի Խուստուպ: Կալերի բարձունքներից երևում են մեր բոլոր ճակատները, որոնց վրա տիրում է մի ծանր, մի ճնշող լռություն, ինչպիսին զգացվում է փոթորկից առաջ: Աճապարում ենք: Մեզ հետ, միաժամանակ, գիշերվա ժամը 12-ին Խուստուպի վրա պիտի կենտրոնանան 300 զորընտիր հետևակներ»[2]:

Այդ ուժերը Նժդեհին օգնության պիտի գային Գենվազի արևելյան ու արևմտյան ճակատներից և Կապանի Շիշկերտ գյուղից, որի բնակչությունը,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 325, թ. 1:

[2] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 109:

հակառակ շատ կապանցիների, շարունակում էր հավատարիմ մնալ հրամանատարին:

Հետագայում Նժդեհը մի առանձին սիրով է արտահայտվել Շիշկերտի մասին՝ գրելով. «Ինչ խոսք, որ եթե Զանգեզուրի հարյուրավոր գյուղերի փոխարեն մնացած լիներ միայն այդ մեկը, դարձյալ պիտի մնայի գերագույն հաճույքով մեռնելու այդ մեկի փրկության համար: Դա այն եզակի գյուղերից է, որոնցով հռչակվում են ամբողջ շրջաններ»[1]:

Բայց որոշված ժամին զինյալները չկարողացան գալ Խուստուփ, քանի որ Նժդեհի կողմից Արաքսի ափը թողնելուց հետո խորհրդային զորքերը վերստին երևացել էին Շվանիձորի ճակատում:

Ուրեմն ի՞նչ, հետաձգե՞լ ձեռնարկը: Ո՛չ, դրա մասին խոսք անգամ չի կարող լինել, խորհում էր Նժդեհը, որովհետև Կապանից հասած սուրհանդակները լուր էին բերել, որ այնտեղ գտնվող բոլշևիկյան երեք գնդերը վաղը լուսաբացին հյուսիսային ճակատից վերսկսելու են իրենց գործողությունները՝ նպատակ ունենալով թիկնային հարվածով հայկական վաշտերը «սրբել և թափել Արաքսը»[2]:

Հետևապես մնում էր օգնության կանչել վճռականությունն ու կամքը և գիշերը գործի անցնել: Անդիմադրելի վճռականության առաջ «լերինք կը խոնարհին», իսկ խավարը նման ձեռնարկների հաջողության մայրն է, գրել է Նժդեհը: «Ուրեմն, հապո՛ն, առաջ դեպի Ղափան»[3]:

Կեսգիշերն անց յոթ ձիավորների խումբը Նժդեհի գլխավորությամբ իջնում էր լեռներից: Պայմանավորվածության համաձայն՝ Սևաքար գյուղի մոտ սպասում էին Գերասիմ Աթաջանյանի և Արմենակ Դավթյանի զինվորներից երկու հոգի, որոնք նրանց առաջնորդելու էին Գյուտկումի ձորը: Այստեղ հավաքվել էր մոտ 50 հոգի՝ Գերասիմի գլխավորությամբ, որոնց մի մասն անզեն էր:

Նժդեհը լսեց Գերասիմի կարճ զեկույցը Կապանի ժողովրդի տրամադրության, բոլշևիկյան ուժերի թվի, ռազմամթերանոցների տեղերի մասին և այլն: Բայց տվյալ րոպեին առավել հրատապը Կապանի հանքերի հարավարևելյան սարալանջին գտնվող Գյուտկում գյուղի մասին տեղեկություններն էին: Գերասիմը հաղորդում էր, որ գյուղում խորհրդային մի վաշտ կար, որը տեղավորված էր դպրոցում:

Իր խումբը համալրելով Գերասիմ Աթաջանյանի զինյալներով՝ նույն գիշերը Նժդեհը շարժվեց դեպի Գյուտկում: Հաշվի առնելով գյուղի հարմար դիրքը՝ նա որոշել էր այն կենտրոն դարձնել՝ ապստամբների գործողությունները ղեկավարելու համար:

---

[1] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 109:

[2] Նույն տեղում, էջ 109, 110:

[3] Նույն տեղում:

Նժդեհը հրաման տվեց, և ապստամբները, բաժանվելով երեք խմբի, անաղմուկ մտան Գյուտկում: Վտանգ չզգալով՝ բոլշևիկյան զորամասի հրամանատարը գյուղում պահակներ չէր նշանակել: Խոր քուն մտած զինվորները հանգստանում էին՝ նախապատրաստվելով հաջորդ օրվա աշխատանքին:

Հայ զինյալների երկու խմբեր անշշուկ մոտեցան դպրոցի շենքին և շրջապատեցին այն: Երրորդ խումբը մտավ դպրոց: Կարմիրբանակայինները հանկարծակիի եկած փորձեցին դիմել զենքի, բայց անմիջապես զգացին նման քայլի անմտությունը, քանզի նրանց էին ուղղված ամեն վայրկյան ճայթելու պատրաստ տասնյակ հրացաններ:

Վաշտը գերելուց հետո հայ մարտիկները դպրոցից դուրս տարան գրված գնդացիրը, զենքերն ու ռազմամթերքը: Գերված զինվորների վախը փարատելու համար Նժդեհը հայտնեց իր ով լինելը և ավելացրեց. «Մեր կռիվը ձեր դեմ չէ, այլ հրամանատարության դեմ: Նրանք չուզեցին հասկանալ քայքայված ժողովրդի լեզուն և դրա համար էլ այժմ անպատեհություն ունեն զգալու մեր սրի լեզուն: Ձեր զենքերից և ռազմամթերքներից զատ մեզ պետք չէ ոչինչ: Անարյուն կերպով պիտի զինաթափեմ ձեր բոլոր զորամասերը: Ցտեսություն»[1]:

Ճակատեն և Գեղանուշ գյուղերը վերագրավելուց հետո Նժդեհն առանց ժամանակ կորցնելու վերախմբավորեց ուժերը և պատրաստվեց նոր գործողությունների: Նույն գիշերը նա սուրհանդակներ ուղարկեց Վաչագան, Բեխ, Կավարտ, Բարաբաթում, Բաղաբուրջ գյուղերը, որտեղ իր մարդիկ կազմ ու պատրաստ սպասում էին ազդանշանի: Նրանք հրահանգ էին ստացել լույսը բացվելուն պես ապստամբել և արագ գործողություններով ոչնչացնել գյուղերում տեղակայված խորհրդային ուժերը:

Այն նույն ժամերին, երբ կապանցիների զորաջոկատը գրավեց Գեղանուշ գյուղը, Կապան ավանից վերև՝ Խուստուփ սարի ստորին փեշերից մեկի մոտ գտնվող Վաչագան գյուղում, Սամսոն Մելիք-Փարսադանյանի և Կարապետ Նուրիջանյանի գլխավորությամբ ապստամբների մի ուրիշ ջոկատ գիշերային մթության մեջ շրջապատեց դպրոցի շենքը, որտեղ նույնպես գիշերում էին կարմիրբանակայիններ և պարտիզաններ: Ի տարբերություն Գեղանուշ գյուղի՝ Վաչագանում հանկարծակիի եկած կարմիրբանակայինները հասցրին զենքի դիմել և դիմադրություն ցույց տալ: Կռիվը կատաղի, բայց կարճատև եղավ: Շրջապատվածներից մի քանիսը սպանվեցին, զոհվեց նաև ջոկատի հրամանատար Ռեզնիկովը: Մյուսները ստիպված անձնատուր եղան:

Առանց ժամանակ կորցնելու՝ առգրված գնդացրով և ռազմամթերքով ուժեղացած խմբերը, դեռ լույսը չբացված, դուրս եկան Հանքերի գլուխը: Շրջանային կենտրոնը գրավելու համար հայերի ուժերը չնչին էին, հետևա-

---

[1] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 110:

պես այդտեղ չէր կարող կիրառվել Գյուտկումի օրինակը: Նժդեհը վճռեց Հանքերում գտնվող հակառակորդի գնդերը նախ խուճապի մատնել, ապա նրանց մղել անձնատվության:

Հոկտեմբերի 10-ի լուսաբացին Արմենակ Դավթյանի վաշտը և Գերասիմ Աթաջանյանի ուժերը՝ դավիթբեկյան խմբերը և գայլավաշտերը, բոլոր կողմերից հարձակման անցան Կապանի հանքերի վրա:

Հայ զինվորները, մտնելով Հանքեր, հրացանային ուժեղ համազարկ տվեցին զորանոցին և շտաբին: Նույն պահին Կավարտի և Բարաբաթումի բարձունքներից դղրդյունով դեպի ձորը սլացան պայթուցիկ տակառներ: Զորանոցներից և շտաբից վայրկենաբար իրենց դուրս նետեցին սարսափահար մարդիկ՝ զինված ու անզեն, հագնված կամ գիշերազգեստով, կոշիկներով կամ բոբիկ: Գլուխները կորցրած փախչելով ուր պատահի՝ նրանք, ի վերջո, խռնվեցին ձորի մեջ: Բանտից ազատվեցին բոլոր ձերբակալվածները, որոնք անմիջապես մտան կռվող մարտիկների շարքերը: Այդ ամենն այնքան արագ ու անսպասելի կատարվեց, որ Կապանի շրջանային հեղկոմի անդամները չկարողացան ի մի գալ և որոշել իրենց անելիքները: Հեղկոմի նախագահ և կուսակցական կազմակերպության ղեկավար Բագրատ Հարությունյանը փորձեց դիմադրել ապստամբներին, բայց դա նրան չհաջողվեց, քանի որ վերջիններս արդեն արագ հսկողություն էին հաստատել բնակավայրի բոլոր կարևոր կետերի վրա և դարձել դրության տերը:

Զորում խռնված կարմիրբանակայինների մի մասը փախավ Ողջի գետի հոսանքով դեպի Գեղվաձոր, իսկ մյուս մասը, զենքերը նետելով, հանձնվեց: Նժդեհը հրամայեց սեղմել պաշարման շղթան՝ առանց կրակելու: Քիչ անց հանձնվեց և վերջին գունդը՝ բացառությամբ մի հարյուրյակի, որը թեթև դիմադրությունից հետո նույնպես ստիպված եղավ հանձնվել[1]:

Կարմիրբանակայինների միայն մի քանի ցաքուցրիվ խմբերի հաջողվեց խուճապահար նահանջել Գորիս տանող ճանապարհով: Դրանց հետ նահանջեցին նաև շրջապատումից խուսափած Հեղկոմի անդամները և տեղի կոմունիստների մի մասը:

Հոկտեմբերի 10-ի առավոտյան ժամը 10-ին ամբողջ Կապանը կրկին Նժդեհի ուժերի ձեռքին էր: Հաղթանակը Հանքերում կատարյալ էր: Նժդեհի զորքի ձեռքն էին անցել մեծաքանակ ռազմամթերք և զենք: Հակառակորդը թողել էր 20 գնդացիր, 200 հրացան, 200-ից ավելի ձի, 100 հազար փամփուշ, երկանիվ կառքեր, դաշտային խոհանոցներ, ռազմական այլ ավար, ամբողջ արխիվը[2]:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 111:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 162, թ. 7, տե՛ս նաև **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 111:

Նույն օրը Հանքերում կենտրոնացան Կապանի 37 վաշտերը: Գերիները հողին էին հանձնում իրենց զոհերին: Հայերը զոհեր չունեին:

«Լեռնահայաստանի գոյամարտը» հոդվածում Նժդեհը գրել է. «Կռվի բախտը վճռում է թշնամի կողմերից մեկի բարոյական հավասարակշռության խախտումը, որին անմիջապես հետևում է խուճապը, իսկ այդ վերջինին՝ նյութական պարտությունը:

Անհավասար կռիվը չէ, որ կործանում է այս կամ այն բանակը, այլ խուճապը, որին մատնված կողմը առնվազն եռապատկում է իր կորուստը, երբեմն էլ՝ ոչնչանում գլխովին:

Սպանվածների, վիրավորների, գերվածների, ինչպես և պատերազմական ավարի քանակը եղել է և շարունակում է մնալ պարտության երկրորդական ազդակը:

Էականը այն բարոյական ազդեցությունն է, որը ունենում է կռվող կողմերից մեկը մյուսի վրա»[1]:

Հանքերի գրավումից հետո Նժդեհի ուժերն առանց հապաղելու շարունակեց հետապնդել նահանջողներին: Վերջիններս Կավարտ և Բարաբաթում գյուղերի միջև ընկած տարածություններում կարողացան վերախմբավորել իրենց ուժերը և դիմադրություն ցույց տալ: Օրհասական կռիվ սկսվեց: Կարմիրբանակայինների հետ կռվում էին տեղի կոմունիստները և Կապանի շրջանի ողջ մնացած ղեկավարները: Այն բանից հետո, երբ Նժդեհի մի զորաջոկատի հաջողվեց անցնել խորհրդային զորամասերի թիկունքը, վերջիններիս դրությունը խիստ ծանրացավ: Ուժեղացնելով ճնշումը՝ Նժդեհի վաշտերը մեծ կորուստներ պատճառեցին նրանց, ապա շրջապատեցին: Պաշարման մեջ ընկան նաև Կապանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար Բագրատ Հարությունյանը, շրջանային հեղկոմի անդամները և ուրիշ ղեկավարներ: Շրջապատված և ուժասպառ զինվորներն ու կոմունիստները գերի հանձնվեցին:

Ապստամբության առաջին օրվա՝ հոկտեմբերի 10-ի երեկոյան վաշտապետերը բոլոր կողմերից գերի կարմիրբանակայիններին և կոմունիստներին տարան Կապանի շրջանային կենտրոն և բոլորին բանտարկեցին: Կոմունիստներից մի քանիսին հաջորդ օրերին գնդակահարեցին: Նրանց թվում էր նաև Բագրատ Հարությունյանը: Գնդակահարվեցին նաև կոմունիստական ջոկատի հրամանատարներ Երեմիա Խուրշուդյանը և Տիգրան Մայսուրյանը, կոմունիստ ամուսիններ Պատվական և Փառանձեմ Բաբայանները, Մեղրիի շրջանային հեղկոմի նախագահ Համբարձում Համբարձումյանը և ուրիշներ: Կապանի բոլշևիկյան կազմակերպությունը զրկվեց ղեկավար գործիչների մեծ մասից:

---

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, թիվ 11, էջ 74-75:

Ինչ վերաբերում էր գերի կարմիրբանակայիններին և հրամանատարներին, ապա նրանց նկատմամբ ոչ մի բռնություն չգործադրվեց: Մոտ 500-ի հասնող գերիները հիմնականում ռուսներ և ուկրաինացիներ էին, բայց նրանց թվում կային նաև թալիշներ, չեչեններ, դաղստանցիներ, նույնիսկ սարտեր: Գերիները մեծ հոգս էին զանգեզուրցիների համար, որովհետև գավառում պարենի պաշարները խիստ անբավարար էին և մոտալուտ սովի պայմաններում նրանց պահելը դառնալու էր անհնարին:

Հոկտեմբերի 11-ին, անշուշտ, Նժդեհի խորհրդով, գերի ընկած կարմիր զինվորների և հրամանատարների մի խումբ հավաքական գրություն կազմեց՝ ուղղված Կարմիր բանակի հրամանատարությանը, որի տակ իրենց ստորագրություններն էին դնում մի քանի հարյուր գերիներ: Գրության մեջ նշված էր, որ «Զանգեզուրում տեղի ունեցող հայ-բոլշևիկյան կռիվների գլխավոր պատճառներն են՝ Ա. Զանգեզուրը Կարմիր բանակի բարձր հրամանատարության կողմից Խորհրդային Ադրբեջանի անբաժան մասը հայտարարելը և Բ. Տաճկական փաշաների ու զորամասերի ներկայությունը Կարմիր բանակի շարքերում»:

Հրամանատարները և զինվորները նաև գրել էին. «Սուտ են այն լուրերը, թե Նժդեհի մոտ անգլիական սպաներ կան: Սրա բանակը զինված գյուղացիությունն է, որն ուզում է ազատ ապրել իր լեռների վրա: Նժդեհը հեղափոխական է և ոչ ցարական զորավար և մեզ հետ շատ լավ է վարվում»[1]:

Այն օրը, երբ Կապանը կրկին Նժդեհի ուժերի ձեռքին էր, այսինքն՝ հոկտեմբերի 10-ին, Խալիլ փաշան, որը Արևելքի ժողովուրդների՝ Բաքվի համագումարից հետո բոլշևիկների տված ոսկու առատ պաշարով անցել էր Օրդուբադ՝ կապ պահելու համար խորհրդային ուժերի և Քեմալի միջև, մի նոր հարձակում կատարեց Կարճևան–Կաքավաբերդի ուղղությամբ՝ նպատակ ունենալով Նժդեհին Գենվազ քաշել, որպեսզի Կապանում գտնվող Կարմիր բանակի զնդերը անարգել ձեռնարկեն դեպի Գենվազ իրենց ռազմական արշավը: Բայց Հանքերի կայծակնային գրավումը ի չիք էր դարձրել Խալիլի ծրագիրը:

Տեղեկանալով Գենվազի վրա Խալիլ փաշայի ուժերի հարձակման մասին՝ հոկտեմբերի 11-ի գիշերը Նժդեհը մեկնեց Մեղրի՝ իր հետ վերցնելով գերի ընկած կարմիրբանակայիններից երեք հոգու, որոնք նույն օրը կազմած և գերիների ստորագրությունները կրող գրության հետ Գենվազից Արաքսի ափով պիտի մեկնեին յուրայինների մոտ և այն հասցնեին 11-րդ բանակի հրամանատարությանն ու կովկասյան ռազմաճակատի զինվորական կոմիսարին:

---

[1] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 112:

Հոկտեմբերի 12-ի առավոտյան Նժդեհը հասավ Մեղրի: Սակայն հարկ չեղավ անձամբ ղեկավարելու գենվազցիների նոր մարտը, քանի որ մինչև հրամանատարի գալը նրանք կարողացել էին մեծ կորուստներ պատճառելով ետ մղել թուրքական ուժերի հարձակումը: Այդ մասին ՀՀ զինվորական նախարարին (պատճենը՝ սպարապետ Նազարբեկյանին և Հ. Յ. դաշնակցության բյուրոյին) ուղարկած զեկուցագրում նա նշում էր. «Կռիվը տևեց երեք օր ու վերջացավ թշնամու կատարյալ պարտությամբ: Թշնամին հետապնդվեց մինչև Օրդուբադի դաշտերը: Այդ կռվում վերցրել ենք երեք գնդացիր, հեռախոսային ապարատներ, հրացաններ ու գրաստներ»[1]:

Նժդեհը Մեղրիում երկար չմնաց և նույն օրը՝ հոկտեմբերի 12-ին, գիշերով վերադարձավ Կապան ու անձամբ գլխավորեց շրջանի գյուղերի վերագրավումը:

Համառ մարտեր մղվեցին Կապանի շրջանի համարյա բոլոր վայրերում: Մի քանի անգամ ձեռքից ձեռք անցան Արծվանիկի, Ինջաբելի, Կարմրաքարի բարձունքները: Խորհրդային զորամասերի հետ կռվեցին Սևաքարի, Շիկահողի և Կապանի շրջանի որոշ գյուղերում կազմակերպված կոմունիստական ջոկատները:

Նժդեհի ստորաբաժանումները շրջապատեցին Բաղաբերդը, որտեղ տեղակայված էր Կարմիր բանակի զորամասերից մեկը, որը Սիսիանից այստեղ էր բերվել հենց ապստամբության նախօրյակին: Մեծ դժվարությամբ դուրս գալով շրջապատման օղակից և շատ կորուստներ տալով՝ զորամասը Գետաթաղ և Աջիբաջ գյուղերի վրայով նահանջեց Ինջաբել սարի ուղղությամբ:

Այսպիսով՝ 1920 թ. հոկտեմբերի 10-13-ը տեղի ունեցած կռիվներում զանգեզուրյան ջոկատները ծանր պարտության մատնեցին Կարմիր բանակի զորամասերին, որոնք ետ քաշվեցին Կապանի շրջանի մեծ մասից և նահանջելով Գորիս տանող ճանապարհով՝ ամրացան Ինջաբել–Կարմրաքար–Ղզլդաշ բարձունքների բնական ամրություններում:

Նժդեհը Արևիքում գտնվող Աշոտ Մելիք-Մուսյանին գրեց՝ վախկոտները չէին հավատում, թե Նժդեհը կվերադառնա Կապան և կրկին կգլխավորի ինքնապաշտպանության գործը, բայց դա տեղի ունեցավ: «Ես մի խումբ արծիվների հետ վերադարձա՝ հրաժարվելով վերքս բուժելու համար Երևան մեկնելուց: ...Համբուրում եմ Ղափանի և աշխարհի բոլոր հպարտ ճակատները»[2]:

Կապանում տարած հաղթանակը ձեռք բերվեց հերոսական, անձնուրաց պայքարով, որը գլխավորում էին Նժդեհը և նրա հավատարիմ օգնական-

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 8:

[2] Նույն տեղում, գ. 16, թ. 1-2:

զինակիցները, վաշտապետերն ու խմբապետերը՝ Գերասիմ Աթաջանյանը, Արմենակ Դավթյանը, Գրիգոր Պողոսյանը, Հովհաննես Տեր-Պողոսյանը, Մուշեղ Ոսկանյանը, Հարություն Գրիգորյանը, Աստվածատուր Տեր-Պետրոսյանը, Տիգրան Ղազարյանը, Կարապետ Նուրիջանյանը, Անդրեաս Տեր-Հարությունյանը, Խեչան Թումանյանը, Բագրատ Մելիք-Քարամյանցը, Պատվական Տեր-Գրիգորյանը, Արտեմ Սարգսյանը, Սամսոն Մարտիրոսյանը և ուրիշներ[1]:

Արևիքում և Կապանում տարած հաղթանակների լուրը տարածվեց ամենուր՝ հույս ներշնչելով հայերի նվաղած հոգիներին: Այդ օրերին գրված արխիվային մի փաստաթղթում կարդում ենք. «Մեր գրիչն անզոր է նկարագրելու Կապան–Գողթի սիրելի հերոս Նժդեհի՝ «երկրորդ Դավիթ Բեկի», «Աժդահա փաշայի»՝ մի տարուց ի վեր այս շրջանում կատարած քաջագործությունները: Տեղի ունեցած բոլոր կռիվներում, որ ճակատում էլ նա հայտնվել է, յուր օրինակով ոգևորել է զինվորությանը ու միշտ գտնվելով առաջին շարքերում՝ տարել է թշնամու վրա փայլուն հաղթանակներ: Չնայած նրան, որ կռվի թեժ պահին խփվել է յուր տակի ձին և մի ուրիշ տեղ էլ վիրավորվել է ոտքից, բայց և այնպես ոչ մի ժամանակ կռվի առաջին շարքերից չի հեռացել ու իր բարոյական օրինակով շատերին է մղել հերոսական գործեր կատարելու:

Բավական է, որ թշնամին իմանար, որ յուր դիմաց կռվողը «Աժդահա փաշան» է, բռնում էր փախուստի ճամփան՝ գլուխը ազատելու համար»[2]:

Թավրիզում գտնվող Գեդեոն Տեր-Մինասյանը այնտեղից Նժդեհին ուղարկած նամակում գրում էր.

«Սիրելի Գարեգին, այսօր ցնծում է ամբողջ Թավրիզը՝ Մեղրու և Ղափանի հաջողության լուրերով:

Ղափանի վերագրավումը և ձեռք բերված զինամթերքի և ավարի լուրը ուղղակի հուզեցին մեզ բոլորիս:

Ամենուրեք, ամենքի բերանում հոլովվում է Նժդեհի անունը:

Մեր սիրտը պայթում է, որ այդ պատմական ռոպեին քո կողքին չենք:

Հաջողությո՛ւն քո սկսած գործին և բարի ելք:

Համբույրներով՝ միշտ հարգող և սիրող Գ. Տեր-Մինասյան:

Թավրիզ, 16 հոկտ[եմբերի] 1920:

Հ. Գ. Ներսես սրբազանը*, օգտվելով առիթից, օրհնում է քեզ, քո քաջարի զորքին և համբուրում քո ճակատը»[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 162, թ.1-3, ֆ. 1021, ց. 8, գ. 118, թ. 2-3:

[2] Նույն տեղում, թ. 1:

* Խոսքը Թավրիզի հայոց առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանի մասին է:

[3] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 40-41:

Հարևան Պարսկաստանի կառավարության համակրանքն ամբողջովին բոլշևիկների դեմ կռվող Սյունիքի պաշտպանների կողմն էր: Պարսիկները երկյուղ ունեին, թե զանգեզուրյան պատնեշի անկումը ճանապարհ է բացելու դեպի Իրան: Ուստի իշխանությունները, անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ միջոցներ էին ձեռնարկում երկրի հյուսիսային (Այսրկովկասին սահմանակից) նահանգներում քարոզչական և կազմակերպչական աշխատանքներ ծավալած, հատկապես ռուս բոլշևիկ հեղափոխականներին արտաքսելու ուղղությամբ:

Բաքվից Երևան ուղարկված մի փաստաթղթում այդ առթիվ նշված էր. «Տեղեկություն ստացանք, որ մեծամասնականները վերջնականապես թողնում, հեռանում են Պարսկաստանից և իրենց ողջ ունեցվածքը փոխադրել են Բաքու: Այնտեղից նոր վերադարձած մի հայ կոմունիստի պատմելով՝ Սովետական Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն անուղղակի կերպով տապալվեց և այնպիսի ատելություն առաջ բերեց պարսկական ժողովրդի մեջ, որ այսուհետև հազիվ թե մի ռուս կարողանա ոտք կոխել Պարսկաստան»[1]:

Եթե հաղթական ապստամբությունը Զանգեզուրում և Նժդեհի զինյալների հաջողությունները հայ ժողովրդի ամենալայն խավերում պատճառ էին դարձել հպարտության բուռն զգացումների, ապա ընդհակառակը՝ Բաքվում և Մոսկվայում դրանք առաջ էին բերել բոլշևիկ ղեկավարների անեզր զայրույթը:

Գ. Չիչերինին և Լեգրանին հղած հեռագրերից մեկում Սերգո Օրջոնիկիձեն նշում էր. «Ապստամբությունը Զանգեզուրում թևավորել է Հայաստանի կառավարությանը, որը, մեր ունեցած տվյալների համաձայն, չդադարեցնելով իր ընդհատակյա աշխատանքները Զանգեզուրում, նույնիսկ ցանկություն է դրսևորում Զանգեզուրի լեռներում ակտիվորեն հանդես գալ Կարմիր բանակի դեմ:

Մենք Հայաստանում կանգնած ենք նոր արկածախնդրության փաստի առջև: Այդպիսի իրադրությունը չի կարելի հանդուրժել: Պետք է լրջորեն զգուշացնել Հայաստանի կառավարությանը, որը բացահայտորեն կոնֆլիկտի է ձգտում ՌՍՖԽՀ կառավարության հետ»[2]:

Հայաստանի կառավարության գործողությունները, որոնք ուղղված էին հանրապետության օրինական տարածքներից մեկի՝ Զանգեզուրի պաշտպանությանը, բոլշևիկ գործչի համար նշանակում էին «արկածախնդրություն», նշանակում էր «բացահայտորեն ձգտել կոնֆլիկտի», իսկ բոլշևիկյան զինված ուժերի անօրինական ներխուժումը նույն հայկական տարածք նրա համար նշանակում էր խաղաղարար առաքելության իրականացում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 14:

[2] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 5, գ. 361, թ. 18:

* * *

Կապանում ձեռք բերած հաջողությունը ոգեշնչեց Զանգեզուրի մյուս մասերի պաշտպաններին:

Կապանին առաջինը հետևեց Սիսիանը: Կապ հաստատելով Նժդեհի հետ՝ Սիսիանի շրջանի ընդհատակը սպասում էր ապստամբության ազդանշանի:

Զանգեզուրյան պաշտպանների համար իրադարձություններն այստեղ հենց սկզբից հաջող ծավալվեցին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ 11-րդ Կարմիր բանակի՝ Զանգեզուրում գտնվող համարյա բոլոր զորամասերը կռվի էին նետվել Կապանի և Մեղրիի ուղղությամբ, իսկ Սիսիանում մնացել էին փոքր թվով զինվորական ուժեր: Այստեղից, ինչպես ասվեց, մի զորամաս դեռ ապստամբության նախօրյակին գնացել և ամրացել էր Բաղաբերդում, իսկ մի ուրիշ զորամաս անցել էր Նախիջևանի գավառ:

Դրոն, որը մինչ այդ գտնվում էր Վայոց ձորում, 1920 թ. սեպտեմբերին՝ թուրք-հայկական պատերազմն սկսվելուն պես, մեկնել էր ռազմաճակատ և կռվում էր Հայաստան ներխուժած քեմալական զորքերի դեմ: Վայոց ձորում նրան՝ իբրև զորամասի հրամանատարի, փոխարինել էր ցարական բանակի նախկին սպա, պորուչիկ Պողոս Տեր-Դավթյանը՝ ծնունդով Կապանի Վերին Խոտանան գյուղից:

Դեռևս հոկտեմբերի 5-ին Պողոս Տեր-Դավթյանն ու նրա զինակիցները հավաքվել էին Ջուլում, որտեղ որոշել էին կապ հաստատել Կապանի հրամանատար Նժդեհի ու Գորիսի ընդհատակի հետ և սպասել հարմար պահի՝ ապստամբելու համար: Ջուլի խորհրդակցությունից հետո Պողոս Տեր-Դավթյանը վստահելի մի քանի մարդկանց ուղարկեց Սիսիանի գյուղերը՝ նրանց առջև խնդիր դնելով մոտիկից ծանոթանալու ժողովրդի քաղաքական տրամադրություններին, պատրաստ լինելու վիճակի բերել հակախորհրդային ուժերը: Նրանք իրենց հետ վերցրել էին թռուցիկներ՝ գյուղերում տարածելու համար:

Տեղեկություն ստանալով, որ Կապանում հաղթել է Նժդեհը, և որ Սիսիանի ընդհատակը պատրաստ է անցնել կոնկրետ գործողությունների, հոկտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը Տեր-Դավթյանը 200 զինվորների հետ Վայոց ձորից անցավ Սիսիանի գյուղերը: Այստեղ նրան միացավ տեղական ամբողջ զինվորությունը: Համարյա առանց դիմադրության՝ Վայոց ձորի սահմանից մինչև Սիսիանի կենտրոն Ղարաքիլիսա ընկած գյուղերը գրավվեցին: Հոկտեմբերի 13-ի կեսօրին հայկական ուժերը գրավեցին նաև Ղարաքիլիսա գյուղը: Կարճատև ընդհարումներից հետո ապստամբները հասան Ուզ, Աղուդի, Վաղուդի գյուղերի տարածքները և մոտենալով Գորիսի շրջանի սահմաններին՝ դիրքեր գրավեցին Յայջի գյուղի ուղղությամբ:

Հոկտեմբերի 14-ին ամբողջ Սիսիանի շրջանը գտնվում էր ապստամբների ձեռքին: Այդ գործողություններն այնքան արագ կատարվեցին, որ

Սիսիանի շրջանային ղեկավար աշխատողները, կոմունիստները, գյուղական հեղկոմների անդամները, ըստ էության, չկարողացան որևէ լուրջ հակազդեցություն գործել և խույս տալով ձերբակալությունից՝ անցան Գորիս:

Ապստամբներին, այնուամենայնիվ, հաջողվեց ձերբակալել շրջանի ղեկավար մի շարք աշխատողների և կարմիրբանակայինների մի մասին: Գերի ընկան և գնդակահարվեցին Զանգեզուրի գավկոմի քարտուղար Քրիստափոր Մկրտչյանը, Սիսիանի շրջանային միլիցիայի պետ Աղալո Իսագուլյանը և ուրիշներ:

Հոկտեմբերի 14-ի դրությամբ ռազմաճակատի գիծը Կապանի շրջանում անցնում էր Ինջաբել–Կարմրաքար, իսկ Սիսիանի շրջանում՝ Ուզ, Աղուդի, Վաղուդի գյուղերից դեպի Գորիս ընկած տարածքներով:

Հայկական զորքերին հաջողվել էր գրավել Կապանի շրջանի մեծ մասը և ամբողջ Սիսիանի շրջանը: Դեռ խորհրդային էին մնացել Կապանի մի քանի գյուղեր և ամբողջ Գորիսի շրջանը:

* * *

1920 թ. հոկտեմբերի 11-ին 47 հոգուց բաղկացած մի պատվիրակություն՝ Բ. Լեգրանի գլխավորությամբ, Թիֆլիսից ժամանեց Երևան: Պատվիրակության կազմի մեջ էին նաև նշանավոր բոլշևիկներ Սահակ Տեր-Գաբրիելյանը և Աշոտ Հովհաննիսյանը: Հայաստանի կառավարությունը, որն անկեղծորեն ձգտում էր Ռուսաստանի հետ ունենալ միջպետական բարիդրացիական հարաբերություններ, մեծ պատիվներով ընդունեց խորհրդային պատվիրակությանը: Երկու օր հետո՝ հոկտեմբերի 13-ին, սկսվեցին բանակցությունները Լեգրանի և սեպտեմբերի 14-ին Մոսկվայից Երևան վերադարձած Շանթի պատվիրակության միջև:

Մոսկվայում ընդհատված և Երևանում վերսկսված հայ-ռուսական այս բանակցությունների ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց հայ-թուրքական կոնֆլիկտը կարգավորելու գործում Խորհրդային Ռուսաստանի կառավարության միջնորդության պայմանների վերաբերյալ: Լեգրանը բանակցությունների հենց առաջին օրը պահանջեց հրաժարվել Սևրի դաշնագրից: Դրան հետևեց մյուս պահանջը՝ Հայաստանի երկաթուղիներն անարգել տրամադրել ռուսական կողմին՝ քեմալական զորքերին զենք, զինամթերք և ռազմական այլ բեռներ ուղարկելու համար: Վերջապես, Լեգրանը Հայաստանի կառավարությունից պահանջում էր ընդունել Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը՝ հարևանների հետ հայերի ունեցած սահմանավեճերը լուծելու համար: Հայաստանի պատվիրակությունը կտրականապես մերժեց Սևրի դաշնագրից հրաժարվելու մասին Լեգրանի պահանջը: Երկրորդ և երրորդ պահանջների շուրջ բանակցությունները շարունակվեցին:

Այն օրերին Հայաստանի կառավարությունը կասկածներ ուներ, որ այդ բանակցություններին խորհրդային կողմը ձևական նշանակություն էր տալիս, բայց միայն տասնամյակներ անց արխիվային փաստաթղթերը և հրապարակումները լիովին հաստատեցին այդ կասկածները:

Երևանում բանակցությունները սկսվելու հաջորդ օրը՝ հոկտեմբերի 14-ին, Մոսկվայում տեղի էր ունենում ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի հերթական նիստը: Շատ տարիներ հետո՝ 1965 թ., Լենինի երկերի 5-րդ հրատարակության 54-րդ հատորում զետեղված փաստաթղթից իմացվեց, որ այդ նույն նիստում բոլշևիկների առաջնորդի առաջարկությամբ քննարկվել էր նաև Հայաստանում տիրող դրության հարցը, որը Գ. Օրջոնիկիձեի հաղորդման հիման վրա քաղբյուրոյին էր ներկայացրել Գ. Չիչերինը: Այն վերաբերում էր Հայաստանի կառավարության կողմից հրաժարական տալու հավանականությանը ու իշխանությունը կոմունիստներին փոխանցելու հնարավորությանը և պարունակում էր հետևյալ կետերը.

1. Համաձայնել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի կոմկուսի կենտկոմի և ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի կարծիքն:
2. Նրան քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար:
3. Պաշտպանել նոր, խորհրդային կառավարությունը:

ՌԿ(բ)Կ քաղբյուրոն ընդունեց Չիչերինի ներկայացրած առաջարկությունները[1]:

Երևանում Լեգրանի հետ սկսված բանակցությունները առաջ էին գնում դժվարությամբ: Շուրջ երկու շաբաթ տևած բանակցությունների արդյունքում, վերջապես, պատրաստվեց ՌՍՖԽՀ և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք համաձայնագրի նախագիծ, որը նախատեսում էր.

1. Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախությունը և ներքին անձեռնմխելիությունը: Հայաստանի անբաժանելի մաս էր համարվում Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի ու Նախիջևանի պատկանելության հարցը պիտի քննվեր հետագայում:
2. Խորհրդային Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնում միջամտելու և կասեցնելու ընթացող թուրք-հայկական պատերազմը:
3. 1914 թ. սահմանի վրա ստեղծվելու էր չեզոք գոտի, և Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանային վեճերը լուծվելու էին Ռուսաստանի միջնորդությամբ:
4. Հայաստանը համաձայնություն էր տալիս, որ ռուսական զորքերն

[1] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 456:

անցնեն իր տարածքով, ինչպես նաև քեմալական բանակի համար տեղափոխվի զենք ու զինամթերք:

5. Թուրքիա փոխադրվող զենքի 30 տոկոսը պիտի թողնվեր Հայաստանին՝ ինքնապաշտպանության համար:
6. Իր հերթին, Հայաստանն ընդունում էր Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը՝ հարևանների հետ հողային վեճերը լուծելու համար:
7. Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանին հատկացնել 2.5 միլիոն ոսկի ռուբլի, մատակարարել երկրագործական գործիքներ, վերադարձնել Մոսկվայում գտնվող՝ Էջմիածնին պատկանող գույքը, օգնել Հայաստանին փոխադրել Ռուսաստանի մի քանի կենտրոններում գտնվող հայկական մշակութային արժեքները, աջակցել հայ գաղթականների Հայաստան վերադարձին:

1920 թ. հոկտեմբերի վերջին Խորհրդային Ռուսաստանի կողմից՝ Բորիս Լեգրանը, Հայաստանի Հանրապետության կողմից՝ Լևոն Շանթը, Համբարձում Տերտերյանը և Լևոն Զարաֆյանը ստորագրեցին ՌՍՖԽՀ և ՀՀ հաշտության պատվիրակությունների եզրափակիչ որոշման արձանագրությունը: Եթե հաշտության պայմանագրի համաձայնեցված նախագծով Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքների հարցի վերջնական լուծումը թողնվում էր անցկացվելիք հանրաքվեին (հոդված 4), ապա եզրափակիչ որոշման արձանագրությունը անվերապահորեն ընդունում էր (հոդված 1) Նախիջևանի և Զանգեզուրի պատկանելությունը Հայաստանի Հանրապետությանը, իսկ Ղարաբաղի մարզը համարում էր Ադրբեջանի տարածք: Արձանագրության այդ մասը ձևակերպված էր այսպես.

«1. ...ՌՍՖԽՀ-ի և Ադրբեջանի ՍԽՀ-ի կառավարությունները ճանաչում են վիճարկելի մարզերի՝ Նախիջևանի և Զանգեզուրի գավառների տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության անսասան իրավունքը և այդ գավառների սահմաններից դուրս կբերեն այն բոլոր զորամասերը, որոնք գտնվում են ՌՍՖԽՀ-ի և ԱՍԽՀ-ի հրամանատարության ենթակայության տակ:

2. ...Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իր հերթին, անվերապահորեն կհրաժարվի որևէ պահանջից այսպես կոչված Ղարաբաղի մարզի նկատմամբ, բացառությամբ այն անկյունի, որ առաջացնում են Նոր-Բայազետի գավառի արևելյան սահմանագիծը և Շարուր–Դարալագյազի գավառի արևելյան սահմանագծի և Զանգեզուրի գավառի հյուսիսային սահմանագծի մի մասը՝ Գիկալդաղ սարից դեպի Չիչաքլի սարն ընթացող պայմանական գծով»[1]:

Եթե համաձայնագրի նախագծում նշված էր, որ հարևանների հետ հո-

---

[1] **Հ. Տերտերեան**, Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները-Լեւոն Շանթի պատուիրակութիւնը, «Հայրենիք», 1954, մայիս, թիվ 5 (339), էջ 7:

ղային հարցերը լուծելու համար Հայաստանը ընդունում է Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը, ապա եզրափակիչ որոշման արձանագրության մեջ այդ կետը ստացել էր հետևյալ, ավելի կոնկրետ ձևակերպումը.

«I. Հայաստանի Հանրապետությունը, ելնելով Թուրքական Հայաստանի մարզերում վիճելի տերիտորիալ հարցերը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ բարեկամաբար լուծելու դիտավորություններից, պատրաստ է այդ հարցերի լուծման գործում ընդունել ՌՍՖԽՀ-ի կառավարության օժանդակությունն այն բանից հետո, երբ՝

1. Ազգային մեծ ժողովի կառավարությունն իր զորքերը հետ կքաշի մինչև 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանագիծը:
2. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը կհրաժարվի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից և Բաթումի կոնվենցիայից:
3. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն անվերապահորեն կճանաչի Հայաստանի Հանրապետության անկախությունն այն սահմաններում, որոնք որոշված են ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրով:

Վերոհիշյալ պայմանների կատարումից հետո, ՌՍՖԽՀ բարեկամական օժանդակությամբ, լրացուցիչ կմշակվեն վիճելի տերիտորիալ հարցերի խաղաղ լուծման հիմունքները»[1]:

Թեև համաձայնագրի բոլոր կետերին Լեգրանը տվել էր իր համաձայնությունը, բայց փաստաթուղթը նա չէր ստորագրում, քանի դեռ չէր ստացել կենտրոնի հավանությունը:

Բանակցություններն ավարտելուց հետո Լեգրանը, իր հետ վերցնելով համաձայնագրի բնագիրը, Երևանում գտնվող ՌՍՖԽՀ առաքելության ժամանակավոր տեղապահ նշանակելով պատվիրակության անդամ Սիլինին, Թիֆլիսի վրայով մեկնեց Բաքու, որպեսզի այնտեղից Մոսկվա փոխանցի փաստաթուղթը, ինչպես նաև դրա վերաբերյալ հայտնի իր հավելյալ նկատառումները՝ կենտրոնից վերջնական համաձայնություն ստանալու համար:

Նոյեմբերի 1-ին Լեգրանը Բաքվից Մոսկվա փոխանցեց համաձայնագրի բովանդակությունը: Մինչ այնտեղից պատասխան կգար, Բաքու եկավ Ստալինը, որի մասնակցությամբ 1920 թ. նոյեմբերի 4-ին տեղի ունեցավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի համատեղ նիստ, որտեղ ուրիշ հարցերի հետ քննարկման էր դրված նաև Հայաստանի կացության հարցը: Լեգրանը նիստին զեկուցում ներկայացրեց Հայաստանի ներքաղաքական վիճակի մասին, ինչպես նաև ներկայացրեց Երևանից իր հետ բերած ռուս-հայկական համաձայնագրի տեքստը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 29, գ. 623, թ. 2, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 457-458, Բ. Լեգրանի միսիան. փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, թիվ 3, էջ 71-72:

Համատեղ նիստը, քննարկելով Հայաստանի քաղաքական կացությունը, գտավ, որ այդ երկրի կառավարությունը, փաստորեն, չէր վերահսկում իրավիճակը, և հասունացել էր նրան տապալելու պահը: Ինչ վերաբերում էր համաձայնագրին, ապա դրա վերաբերյալ ընդունվեցին հետևյալ առաջարկությունները.

1. Փաստաթուղթը կարող էր ուժ ստանալ միայն ՌԿ(բ)Կ կենտկոմի համաձայնությունը ստանալուց հետո:
2. Համաձայնագրով նախատեսված Նախիջևանի և Զանգեզուրի հանձնումը Հայաստանին ձեռնտու չէր ռազմաքաղաքական առումով:
3. Հայաստանի հետ կապված հարցերը կենտրոնին պարզաբանելու համար անհրաժեշտ համարել Լեգրանի ուղևորությունը Մոսկվա[1]:

Ի դեպ, նիստում առաջարկվել էր, որ ռուս-հայկական համաձայնագրի վերաբերյալ ՌԿ(բ)Կ կենտկոմի հետ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի բանակցությունների կազմակերպումը ստանձնի Ստալինը: Վերջինս տվել էր համաձայնությունը:

Ավելորդ է ասել, որ Ստալինն ամեն ինչ արել էր՝ բավարարելու համար Բաքվի պահանջները և խափանելու ռուս-հայկական համաձայնագրի նախագծի նկատմամբ ՌԿ(բ)Կ կենտկոմի կողմից դրական վերաբերմունք դրսևորելու ամեն մի փորձ: Սակայն ՌԿ(բ)Կ կենտկոմի և արտգործժողկոմատի ղեկավարների միջև միակամություն չկար ռուս-հայկական համաձայնագրից հրաժարվելու նպատակահարմարության մասին: Մոսկվայում երկյուղ կար քեմալականների կողմից Հայաստանի լիակատար ջախջախման հեռանկարի կապակցությամբ:

Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ՀՀ արտաքին գործերի նախարարին 1920 թ. նոյեմբերի 9-ին Բաքվից գրում էր. «Քեմալիստների արշավանքի հետ միասին այստեղ սովետական պատասխանատու գործիչների շրջանում նկատվում է մի տեսակ անհանգստություն: Կարծես սկսում են հասկանալ, որ եթե այդ արշավանքը հաջողություն ունեցավ, և քեմալիստները միացան Ադրբեջանի հետ, այստեղ կսկսվի մի նոր ֆրոնտ ընդդեմ բոլշևիկների: Ասում են, որ զանազան միջոցներ են ձեռք առնվում ուղղակի կամ Մոսկվայի միջոցով կանգնեցնելու այդ առաջխաղացումը»[2]:

Սակայն Ստալինի հեղինակությունն արդեն բացարձակ էր ընդհանրապես և կովկասյան գործերում՝ առանձնապես: Ուստի Բաքվում նրա ներկայությամբ և թելադրանքով նոյեմբերի 4-ին ընդունած որոշման անշեղ կա-

---

[1] Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., Փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2, էջ 314:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 14:

տարմանը խանգարող անհաղթահարելի արգելքներ չկային: Հենց այստեղ՝ Բաքվում, Ստալինը ցուցում տվեց Հայաստանի դեմ ծավալել լայնածավալ գործողություններ:

Բաքվի նշված նիստից հետո Դաղստան ու Թերեքի մարզ մեկնած և այնտեղ խորհուրդների համագումարներին մասնակցած Սերգո Օրջոնիկիձեն, նոյեմբերի 19-ին վերադառնալով Բաքու, անմիջապես ձեռնամուխ եղավ Ստալինի հանձնարարականի կատարմանը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՆՈՐ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

11-րդ Կարմիր բանակի հետագա գործողությունների մասին Նժդեհը շատ կարևոր տեղեկություններ էր ստացել գերիներից: Պարզվեց, որ Կարմիր բանակը պատրաստվում էր առանց ուշացնելու վճռական հարվածով ճնշել Կապանի և Գենվազի ապստամբությունը: Այդ նպատակով Կարմիր բանակի հրամանատարությունը գործի դրեց մեծ ուժեր: Մարտի պատրաստվեցին ամբողջ 28-րդ լեռնահրաձգային հետևակ դիվիզիան, Գենվազի ճակատում պարտված 20-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադը, երկու հետևակ «կովկասյան» գնդեր, Խորհրդային Ադրբեջանի երկու հետևակ բրիգադներ, հայերից կազմված կոմունիստական մի գումարտակ: Այդ բոլորին միացավ Հազարիի թրքությունը՝ իր զինված հրոսակախմբերով:

Հոկտեմբերի 13-ին 11-րդ Կարմիր բանակի շտաբից 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկուն կարգադրվեց ոչ մի կերպ թույլ չտալ Զանգեզուրում զորքերի հետագա նահանջ, շտապ վերականգնել խզված կապերը 84-րդ բրիգադի (հրամանատար՝ Գ. Սեմյոնով) զորամասերի միջև, արագորեն խմբավորել բրիգադի՝ հատկապես մեծ կորուստներ կրած 250-րդ և 251-րդ գնդերի ուժերը, քաղաքական լարված աշխատանք տանել զորքերի մեջ՝ մարտիկների բարոյական ոգին բարձրացնելու համար: Միաժամանակ կարգադրվեց անհապաղ մարտի մեջ նետել նաև 28-րդ դիվիզիայի՝ դեռևս Ղարաբաղում գտնվող 83-րդ բրիգադը (հրամանատար Վ. Լիտվինենկո):

Բանակի հրամանատարության կարգադրությունը ստանալուց հետո 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին առանց ժամանակ կորցնելու ձեռնարկեց դրա կատարումը: Դիվիզիայի շտաբից, որը գտնվում էր Շուշիում, հոկտեմբերի 14-ին նա իր զորամասերին իջեցրեց թիվ 29 հրամանը, որտեղ ասված էր. «Համարյա ամբողջ Զանգեզուրում բռնկվել է ապստամբություն: Ապստամբած հայերը գրավել են Անգեղակոթ–Ղարաքիլիսան, ամբողջ Ղափանի շրջանը և Ողջի չայի ու Մեղրի չայի ավազանները: Նյուվադի գյուղի շրջանում գործող 252-րդ և Կովկասյան 2-րդ գնդերի հետ ունեցած կապը խզված է: Ղափանի աննշան զորամասը շրջապատված է, և նրա վիճակն անհայտ է: 251-րդ հրացանաձիգ գունդը թշնամու դեմ կռվում է Տանձավերից 4 վերստ դեպի հարավ գտնվող Ինջաբելի բարձունքներում»[1]: Հրամանի տեքստում այնուհետև կարդում ենք. «Մեր դիվիզիային հրամայված է պատրաստել հարվածող բռունցք և ուժեղ թափով ջնջել ապստամբու-

[1] ՀԱԱ, ֆ. 220, ց. 1, գ. 12, թ. 29, տե՛ս նաև ֆ. 1022, ց. 8, գ. 139, թ. 1:

թյունը, կենդանի բաց չթողնելով ոչ մի բանդիտի»[1]: 83-րդ բրիգադի հրամանատար Լիտվինենկոյին կարգադրվեց. «Թիկունքն ապահովելու համար վերցնել Տեղ գյուղում կուլակներից 100 պատանդ, կարմիր զորքի թիկունքից մինչև իսկ մի գնդակ արձակելու դեպքում՝ բոլորին գնդակահարել: Ստանալ 84-րդ բրիգադի հրամանատարից մի դասակ հեծյալ, լեռնային հրետանի և, եթե հնարավոր չլինի հարձակման դեպքում օգտագործել, այդ դեպքում զետեղել Տեղ գյուղի դիմացի դիրքերում՝ գյուղը ռմբակոծել, եթե հարկ լինի»[2]:

84-րդ բրիգադի հրամանատար Սեմյոնովին նույնպես կարգադրված էր. «Ոչ մի բանդիտի բաց չթողնել»[3]: Հրամանի վերջում ասված էր. «Կրկին հիշեցնում և հրամայում եմ 83-րդ և 84-րդ բրիգադների հրամանատարներին՝ խուսափել ամեն տեսակի մարդասիրական միջոցներից և դաժան լինել ապստամբ բնակչության հետ, որպեսզի նա զգա բանվորական բռունցքի թափը: Դիմադրողներին գերի չվերցնել և կենդանի բաց չթողնել ոչ մի բանդիտի: Միմիայն ապստամբած կուլակներին ոչնչացնելով և նրանց ամբողջ կայքը գրավելով կհասնենք խաղաղության: Եթե հանգամանքները կստիպեն՝ կանգ չառնել ամբողջ գյուղերն ավերելու առաջ, հիշելով այն, որ աննեղողամտությունը և դաժանությունը, նամանավանդ Կովկասում, կհասցնի լավ հետևանքի: Գրաված գյուղերում զորամասերը պարենով ապահովել ապստամբների հաշվին: Ես կլինեմ Շուշի՝ դիվիզիայի շտաբում... ինձ ուղարկեցեք ռազմական գործողությունների մասին զեկուցումները՝ յուրաքանչյուր երկու ժամը մեկ»[4]:

Նույն հրամանով 28-րդ դիվիզիայի գլխավոր խնդիրն էր համարվում վճռորոշ հարվածով արագ ջախջախել զանգեզուրյան ջոկատները և գավառում հաստատել խորհրդային կարգեր:

Զորքերի օպերատիվ ծրագիրը հետևյալն էր.

1. 20-րդ դիվիզիայի կովկասյան բրիգադը Արաքսի ափով պետք է շարժվեր հոսանքն ի վեր և արագ հարվածով հոկտեմբերի 16-ին գրավեր Նյուվադի գյուղը: Հակառակ կողմից՝ Նախիջևանից, հարձակում էին սկսելու դեռևս հուլիսի վերջին Սիսիանի վրայով այնտեղ անցած 32-րդ և 28-րդ դիվիզիայի զորամասերը և Նյուվադիում միանալու էին 20-րդ դիվիզիայի զորամասերին: Համատեղ բռունցք կազմելով՝ զորքերի այս խումբը արագ գործողություններով պետք է ջախջախեր Նժդեհի ուժերը ու գրավեր ողջ Գենվազը: Ապա այդ միացյալ ուժերը Գենվազի ճակատից պետք է դառնային դեպի Կապան, թիկունքից խփեին ապստամբներին, փակեին նրանց նահանջի ճանապարհները

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 139, թ. 4:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, թ. 5:
[4] Նույն տեղում, թ. 6:

դեպի Պարսկաստան և լիովին ջախջախեին: Դրանից հետո միայն այդ ուժերը միանալու էին 28-րդ դիվիզիայի մյուս զորամասերին[1]:

2. 28-րդ դիվիզիայի 83-րդ բրիգադի հրամանատար Լիտվինենկոյին հրամայված էր բրիգադի 248-րդ և 249-րդ հրաձիգ գնդերի հագուստ ունեցող բոլոր զինվորներից կազմել միացյալ գունդ, այն միավորել նույն բրիգադի 247-րդ գնդի հետ: Հարվածող այդ բռունցքը, որին պիտի տրամադրվեր նաև 84-րդ բրիգադի հեծյալ լեռնային հրետանու դասակը, հոկտեմբերի 15-ին՝ ժամը 16-ին, պետք է կենտրոնացվեր Տեղ գյուղում, իսկ հոկտեմբերի 16-ի լուսաբացին, վճռական հարձակման անցնելով Զեյվայի, Արծվանիկի, Բարաբաթումի վրա, պետք է արևելյան կողմից օղակվեր Կապանի շրջանը և դաժանորեն ճնշվեր ապստամբությունը: Դեպի աջ պետք է կապ պահպանվեր 84-րդ բրիգադի հետ, իսկ Կապանը գրավելուց հետո՝ կապակցվել նաև 20-րդ հրաձիգ դիվիզիայի կովկասյան բրիգադի հետ[2]:
3. 28-րդ դիվիզիայի 84-րդ բրիգադի հրամանատար Գ. Սեմյոնովի հրամանատարությամբ բրիգադի 250-րդ և 251-րդ հրաձիգ գնդերը Գորիսի շրջանի Տաթև գյուղի մոտերքից սկսվող Գյազբել լեռների վրայով հոկտեմբերի 15-ին պետք է վճռական հարձակման անցնեին, Քոչբեկի (Քյամբիլի) լեռնանցքով մտնեին Կապանի Խալաջ գետի հովիտն ու Ողջի ձորի գյուղերը՝ Կապանի շրջանը օղակելով արևմտյան կողմից: Այդ գնդերի՝ Գորիսի շրջանից Կապանի շրջան անվտանգ անցումը ապահովելու համար առանձնացվում էին պահակային ուժեր, որոնք հսկելու էին Ղարաքիլիսայից, Անգեղակոթից և Բազարչայից եկող ճանապարհները, որպեսզի խոչընդոտեն այդ կողմերից 84-րդ բրիգադի վրա հայկական ուժերի հնարավոր հարձակումը: Բացի այդ՝ Գորիս քաղաքի դիմաց՝ նրա արևելյան կողմում, տեղակայվելու էր բրիգադի 3-րդ թնդանոթային մարտկոցի (հրամանատար՝ Գուսակով) մի դասակ՝ նպատակ ունենալով արկակոծությամբ զսպել Գորիսի ընդհատակը, եթե նա ապստամբելու փորձ աներ: Մարտկոցի առջև դրված խնդիրը այսպես էր ձևակերպված. «Լինել կատարելապես կռվի համար պատրաստ և քաղաքում ապստամբություն ծագելու կամ դրսից հարձակման դեպքում թնդանոթի կրակով անխնա ոչնչացնել բանդիտներին...»[3]:

Գորիսի շրջանից Կապանի շրջան անցած 250-րդ և 251-րդ հրաձիգ գնդերը Խալաջ գետի հովտում և Ողջի ձորի գյուղերում պետք է միանային 28-րդ դիվիզիայի 83-րդ բրիգադի 247-րդ, 248-րդ ու 249-րդ գնդերին և, հա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 139 թ. 1:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 1:

[3] Նույն տեղում:

մատեղ հարձակվելով, գրավեին Կապանի հանքերը:

4. Օպերատիվ ծրագրում նախատեսված էին նաև զորքերի պարենավորման և առողջապահական մասերի կոնկրետ խնդիրները:

28-րդ դիվիզիայի կապի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գրոսմանին հանձնարարված էր ձեռք առնել բոլոր միջոցները՝ Ղարաբուլաղի վրայով վերստին կապ պահպանելու Կովկասյան 20-րդ բրիգադի հետ:

28-րդ դիվիզիայի պարենավորման պետը կարգադրություն էր ստացել փոխադրական բոլոր միջոցները կենտրոնացնել ձեռքի տակ և Շուշիի հեղկոմի միջոցով գյուղացիներից հավաքելով 200 սայլ՝ Ավդալարում հիմնելու մթերքների տեղափոխման կայան, որպեսզի զորամասերը ժամանակին ստանան ուտելիք և ռազմամթերք: Պետք էր նկատի ունենալ, որ ապստամբած շրջաններում սննդամթերք հայթայթելու ուղղությամբ դիվիզիայի պարենավորման պետի գործունեությունը կարող էր ձախողվել:

Դիվիզիայի առողջապահական մասին հրահանգված էր կազմակերպել վիրավոր և հիվանդ կարմիրբանակայինների տարհանում՝ Գորիսից Շուշի վերադարձող սայլերով, որոնք մթերք էին տեղափոխելու ռազմաճակատ: Վիրավորների և հիվանդների նախնական բուժումը պետք էր կազմակերպել Ավդալարում: Նախօրոք պետք էր Շուշիում տեղ պատրաստել և վիրակապման համար բավականաչափ նյութ մատակարարել[1]:

Այդ օրերին Զանգեզուրին սահմանակից ադրբեջանական տարածքներում եռուն աշխատանքներ էին տարվում 11-րդ բանակի թնդանոթային կազմերը զանգեզուրյան ճակատ նետելու ուղղությամբ: Հոկտեմբերի 7-ին Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը Բաքվից ՀՀ արտգործնախարարին ուղարկել էր հետևյալ գաղտնի գրությունը. «Այսօր ամենահավաստի աղբյուրներից տեղեկացանք, որ Ադրբեջանի սովետական իշխանությունը 70-ի չափ ինժեներներ, տեխնիկներ է ուղարկել դեպի Զաբրայիլի գավառը, որպեսզի փութով այդտեղից սայլի ճանապարհ կառուցեն դեպի Զանգեզուրի գավառի զանազան մասերը: Ենթադրվում է ճանապարհ անցկացնել Զիբրայիլից դեպի Զանգեզուրի գավառի Թումասլու–Խոջևան և Խանլըղ գյուղերը: Խանլըղից ենթադրվում է մի ճանապարհ տանել դեպի Գորիս և ապա՝ դեպի Ղափան, իսկ մյուսը՝ Գորիսից դեպի Հաջիսամլու: Գնացողներին տրամադրել են խոշոր գումարներ, որպեսզի աշխատանքները արագորեն առաջ տան և հնարավորություն ստեղծեն դեպի Զանգեզուրի լեռնային մասերը արտիլերիա փոխադրելու և կանոնավոր երթևեկության համար սայլի, կառքի ճանապարհ ունենան այդ գավառում:

Հարկ ենք համարում այդ մասին հայտնել Ձեզ ի տեղեկություն»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 139, թ. 2-3:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 571, թ. 43 և շրջերես:

Հոկտեմբերի 14-ի հրամանի և զորքերի օպերատիվ ծրագրի տակ ստորագրել էին դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին, դիվիզիայի զինվորական կոմիսար Սարաևը և դիվիզիայի շտաբի պետ Ֆրոլովը:

Հոկտեմբերի 14-ի հրամանը ստանալուց անմիջապես հետո՝ նույն օրը, 84-րդ բրիգադի հրամանատար Սեմյոնովը Գորիս քաղաքում գտնվող իր զորքին տվեց թիվ 35 հրամանը, որով 250-րդ և 251-րդ հրաձիգ գնդերի հրամանատարներին կարգադրում էր. «Կանգ առնելով ներկայումս գրված դիրքերում, 24 ժամվա ընթացքում զորամասերը դնել կատարելապես ռազմական վիճակի մեջ և կարգի բերել»: Հրամանով 251-րդ և 252-րդ գնդերից կազմվում էր նույն՝ 251-րդ համարը կրող մի լիարժեք գումարտակ, որը գործողությունների ընթացքում ժամանակավորապես ենթարկվելու էր 250-րդ գնդի հրամանատարին[1]:

250-րդ գնդի հրամանատարին կարգադրվում էր՝ իրեն ենթարկել նաև հայ կոմունիստներից կազմված ջոկատները՝ դրանք մտցնելով իր գնդի կազմի մեջ: Հայ կոմունիստ-միլիցիոներները պետք է կատարեին ուղեցույց-առաջնորդողների դեր:

Սեմյոնովի հրամանում նշված էր, որ 84-րդ բրիգադի շտաբը կլինի Գորիսում, բայց ինքը կռվի ընթացքում լինելու է 250-րդ գնդի հետ և երկու ժամը մեկ սպասելու է զեկույցների:

Սեմյոնովի հետ այդ հրամանը ստորագրել էին նաև 84-րդ բրիգադի զինվորական կոմիսար Գորկովենկոն և բրիգադի շտաբի պետ Կրուպեննիկովը:

Պետք է ասել, որ այդ օրերին 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության կարգադրությունները միշտ չէ, որ ելնում էին զորամասերի իրական հնարավորություններից: Նշենք այն մասին, որ հարձակողական գործողությունների օպերատիվ հերթական ծրագիրն ընդունելիս հրամանատարությունը կարծես թե այդ ծրագրից ամբողջովին դուրս էր թողել Նժդեհի ուժերն ու հնարավորությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը և քամահրանքով էր վերաբերվում դիմադրություն ցույց տալու մասին նրա վճռական հայտարարություններին: Մյուս կողմից՝ այնտեղ հաշվի չէին առնված սեփական զինվորների հնարավորությունները, այն, որ նրանք տառապում էին ցրտից ու թերսնումից, որի հետևանքով մեծապես պակասել էր նրանց մարտական կորովը:

Զանգեզուրում կռվող Կարմիր բանակի զորքերին պակասում էին ամենաանհրաժեշտ բաները: Զինվորներից շատերը նույնիսկ շինել չունեին, իսկ պատառոտված ու քրքրված կոշիկները ոտքերը չէին պաշտպանում ցեխաջրերից ու սառնամանիքներից:

1920 թ. հոկտեմբերի 13-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի և Համառուսաստանյան ռազմահեղափոխական կոմիտեի հասցեով Բաքվից Սերգո Օրջոնիկիձեի

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 139, թ. 15:

ուղարկած զեկուցագրում ասված էր. «Մեր բանակների, մասնավորապես 11-րդի, կոշկեղենի և համազգեստի վիճակը բառիս իսկական իմաստով աղետալի է: Զանգեզուրում, Ղարաբաղում, Զաքաթալայում, Դաղստանում տեղացած ձյունը և սկսած աշնանային անձրևները միանգամայն անհնարին են դարձնում մեր զորամասերի առաջխաղացումը և լեռներից իջնող ապստամբների ու բանդիտական ջոկատների վերացումը: ...Զանգեզուրում, որը ներկայումս ամբողջովին բռնկված է ապստամբությամբ, թուրքերի հարձակման կապակցությամբ մենք ոչ միայն զրկված ենք այդ ապստամբությունը արագ ճնշելու հնարավորությունից, այլև ենթակա ենք լիակատար ոչնչացման: Ուստի հարկադրված դիմում ենք ձեզ, խնդրելով արտակարգ կերպով, ամեն կարգի հերթից դուրս, Բաքու ուղարկել 20 հազար ձեռք համազգեստ: Առանց այդ միջոցառման մենք կարող ենք կորցնել ամբողջ 11-րդ բանակը»[1]:

Հարձակման նախապատրաստությունը դեռ չէր ավարտվել, երբ Կարմիր բանակի հետախուզությունը պարզեց, որ հայերը նպատակ ունեն ապստամբություն բարձրացնելու 28-րդ դիվիզիայի այն զորամասերի թիկունքում, որոնք տեղաբաշխված են Որոտանի կիրճի Յայջի գյուղում և նրան հարող տարածքներում: Ապստամբությունը պետք է իրականացնեին Հալիձոր, Շինուհայր և Խոտ գյուղերի հայկական զինյալ խմբերը: Դրանք խնդիր ունեին Հալիձոր-Շինուհայր գծով անցնել Յայջի գյուղի բոլշևիկյան զորամասի թիկունքը, հարվածել նրան և հնարավորության դեպքում սեղմել Որոտան գետի ժայռակոփ ափերին: Դրանից հետո Դարբասի կողմից եկող զանգեզուրյան ուժերի օգնությամբ այդ զինյալ խմբերը Կարմիր բանակի զորամասերին պետք է ոչնչացնեին Տաթև գյուղի հյուսիսարևմտյան մասը երիզող կիրճերում:

Բայց այդ ծրագիրը ձախողվեց: Շինուհայր, Հալիձոր, Խոտ գյուղերում կազմվեցին կոմունիստական զինյալ խմբեր, որոնք նախապես փակեցին դեպի Յայջի գյուղի սարահարթը տանող ուղիները: Այդ խմբերը շուտով միավորվեցին մի ջոկատի մեջ, որը համալրվեց Գորիսի շրջանի Յայջի և Երիցաթումբ, ինչպես նաև Սիսիանի շրջանի մի շարք գյուղերի կոմունիստներով: Ջոկատի հրամանատար նշանակվեց Եգոր Հարությունյանը: Ջոկատի մեջ էին մտնում Արսեն Խոյլունցը, Լևոն Գալստյանը, Սահակ Աբգարյանը, Ասատուր Խուրշուդյանը, Սողոմոն Կարապետյանը, Նիկոլայ Հարությունյանը, Խաչատուր Զորունցը, Հարություն Մկրտչյանը, Պատվական Հարությունյանը, Սեդրակ Սարգսյանը և ուրիշներ[2]: Ջոկատը մասնակցեց Յայջի գյուղի մոտ տեղի ունեցած երկու մարտերի, ապա պատրաստվեց 84-րդ բրիգադի 250-րդ գնդի հետ մեկնել Կապանի ռազմաճակատ:

Ամեն ինչ պատրաստի վիճակի մեջ դնելուց հետո, 11-րդ Կարմիր բա-

---

[1] ՍՔՊՌՊԱ, ֆ. 85, ց. 13, գ. 57, թ. 12, ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 136, թ. 1:

[2] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 66:

նակի շտաբում մշակված օպերատիվ ռազմական պլանի համաձայն, հոկտեմբերի 15-ին բանակի՝ Զանգեզուրում գտնվող բոլոր զորամասերը կոմունիստական ջոկատների հետ անցան հարձակման:

Հոկտեմբերի 15-ին սկսված համառ ու դաժան կռիվները տևեցին մինչև նոյեմբերի 15-ը՝ ուղիղ մեկ ամիս:

28-րդ դիվիզիայի 83-րդ և 84-րդ բրիգադները և նրանց միացած հայ կոմունիստական ջոկատներն ու ադրբեջանցիների խմբերը Գորիսի շրջանից միաժամանակ շարժվեցին Կապանի և Սիսիանի ուղղություններով: «Այս ուժերը,– գրել է Ս. Վրացյանը,– ունեին մեծաքանակ փամփուշտ ու գնդացիրներ, առատ թնդանոթներ, ժողովրդից խլած հարուստ պարենավորում և տեղափոխության միջոցներ: Թիկունքն ապահովելու համար Գորիսից ու գյուղերից առնված էին հարյուրավոր պատանդներ: Զորամասերի պետերին խիստ հրաման էր տրված՝ լինել անողոք, չխնայել ոչ ոքի, գյուղերը հողին հավասարեցնել, մեծ ու փոքր չխնայել, գերի չվերցնել»[1]:

Պարզ է, որ կռիվը անողոք էր լինելու:

Ահռելի վտանգ էր կախվել Զանգեզուրի գլխին: «Մահ կամ ազատություն», «Ազատություն կամ մահ». այս մտքերով էին տոգորված զանգեզուրյան գոյամարտի մարտիկները: Նրանք մահապարտներ էին, ռազմական հզոր ուժերով օղակված մի փոքրիկ լեռնաշխարհի պատանդներ, բայց դեռ՝ ոչ զինաթափ: Հայոց ողբերգական և հերոսական պատումի մի նոր էջ էր հյուսվում՝ արյունով ու կամքով:

Ճակատագրական այդ օրերին աշխարհից կտրված Զանգեզուրին գործնականում աջակից էր միայն Արցախը: Արցախի ոչ քիչ թվով մարտիկներ ու հրամանատարներ կամավոր նետվել էին զանգեզուրյան ազատամարտի մահաբեր կրակների մեջ՝ կատարելով իրենց եղբայրական պարտքը:

Զանգեզուրում և Ղարաբաղում լայնորեն տարածվեց հետևյալ հոգեցունց կոչը.

«Զանգեզուրի և Ղարաբաղի հերոսնե՛ր:

Հայկական սև լեռների հերոսնե՛ր:

Հայե՛ր: Անկեղծ ու հավատարիմ բարեկամնե՛ր...

Մենք միշտ հրաժարվել ենք մեր գլուխը խոնարհելուց և միշտ բարձր գոչել ենք մեր իրավունքների մասին, մեր նահատակված եղբայրների և քույրերի մասին՝ օտարների ուրախ խնջույքին:

Եվ այսօր մենք մնացել ենք առանց բարեկամների, մինչև անգամ Ռուսաստանը, որի վրա դարերով և մեծ հույսերով նայում էր տանջված ժողովուրդը, մեզ դավաճանեց և ձեռք ձեռքի տված Քեմալ փաշայի, Խալիլ փաշայի, Նուրի բեկի, Քերբալայ խանի ավազակային բանդաների հետ, քարուքանդ է անում մեր գյուղերը, ներս է խուժել մեր լեռները, որպեսզի արյան

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 549:

հեղեղների մեջ խորտակի մեր մանուկ ազատությունը:

Բայց մեր թշնամիները դառը կերպով սխալվում են: Կբացվեն խաբված ռուս ժողովրդի աչքերը, և իրենց ազատության համար զոհվող մարմինները չեն գնա փոքր հայ ժողովրդի ազատության դեմ ...

Զանգեզուրի և Ղարաբաղի հայե՛ր:

Մեր հայրենիքը ձեզ է սպասում, սպասում է ձեր զոհողություններին այն բանի համար, որ նա տվել է ձեզ կյանք, ձեզ տվել է անուն և փառք:

Բուժե՛ք նրա վերքերը, կանգնեցրե՛ք արյունը...

Միևնույն մոր զավակներ: Այս ծանր բոպեին կյանքի և մահվան առջև ձեռք ձեռքի տված միացե՛ք հարազատ ժողովրդի դրոշակի շուրջը և ... կանգնե՛ք հայրենիքի զոհվող մարտիկների շարքերում՝ կռվելու հայրենիքի ազատության համար»[1]:

Ռազմական գործողությունները սկսելու հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին, 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին և դիվիզիայի զինվորական կոմիսար Սարաևը մի առանձին կոչով դիմեցին Զանգեզուրի, Նախիջևանի և Շուշիի շրջանների ժողովրդին: Կոչում ասված էր, որ «Զանգեզուրի ազգաբնակչությունը մոլորված է Նժդեհի և նրա արբանյակների կողմից», որ «բանդիտները կարմիր զորամասերին կատաղի դիմադրություն են ցույց տալիս», քանի որ գիտեն, որ մոտենում է իրենց վախճանը: Այնուհետև ասվում էր, որ Նժդեհի և նրա համախոհների քարոզչության ազդեցության տակ ապստամբելով և իր զենքն ուղղելով Կարմիր բանակի դեմ՝ «Զանգեզուրի ազգաբնակչությունը մոռացել է, որ այդ բանակը աշխատավորներին ազատել է ձրիակերների, պարազիտների, գեներալների, հողատերերի, բուրժուազիայի և կուլակների ծանր լծից»: Այնուհետև շեշտվում էր. «Թող Զանգեզուրի ողջ ազգաբնակչությունը իմանա, որ Կարմիր բանակը որքան բարյացակամ է աշխատավորության հանդեպ, որքան որ իր կյանքն է զոհում աշխատավորության երջանկության համար, այնքան էլ խիստ է ու անողոք իր թշնամիների նկատմամբ: ...Քանի ուշ չէ, վերադարձեք ձեր խաղաղ աշխատանքին, հանձնեք ձեր զենքերը...

Ապստամբներին գերի ընկած հիվանդ, վիրավոր կարմիր զինվորները և տեղական կազմակերպությունների կոմունիստները պետք է զերծ լինեն բռնություններից և վերադարձվեն...

Վռնդեցե՛ք Նժդեհին և նրա արբանյակներին, որոնք իրենց հետ բերում են աղքատություն և քայքայում: Կարմիր բանակը ձեզ բերում է ազատություն, բախտավոր ու խաղաղ կյանք»[2]:

Ապստամբությունը ճնշելու համար զորամասերի մեծ մասը ուղարկելով Կապանի և Սիսիանի շրջանները՝ դիվիզիայի հրամանատարը տագնապում

---

[1] ՀԱԱ, ֆ. 280, ց. 2, գ. 43, թ. 1:

[2] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 139, թ. 18-19:

էր, որ դրանով իսկ թուլացրել է թիկունքը՝ Գորիսը, որտեղ նույնպես ապստամբություն էր սպասվում: Ահա թե ինչու Գորիսի ընդհատակը սարսափի մատնելու և զսպելու համար նրա հրամանով հոկտեմբերի 16-ին Կոռնիձոր գյուղում գնդակահարվեցին 13 հայ բանտարկյալներ, որոնցից 6-ը՝ կոռնիձորցիներ: Նրանք բոլորը մեղադրվել էին հակաբոլշևիկյան գործունեության մեջ: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 17-ին, Նեստերովսկին հատուկ հրամանով բնակչությանը տեղյակ պահեց կատարված «արդարացի պատժի» մասին: Հրամանի 5-րդ կետում նշված էր. «Զանգեզուրի գավառի Կոռնիձոր գյուղի բնակիչներ Ավագիմ Պողոսյանը, Սիմոն Պողոսյանը, Շամիր Կարապետյանը, Ալեքսանդր Հասրաթովը, Հակոբ Վանեսյանը և Ահարոն Ղահրամանովը գնդակահարված են՝ հակահեղափոխականության համար»: Այդ օրը Գորիսի կենտրոնական բանտում, որը լիքն էր բանտարկյալներով[1], սվիններով սպանվեցին նաև Համբարձում Սարգիսջանյանը, որը հեղափոխական գործունեության համար 10 տարի շղթաներ էր կրել ցարական բանտերում, Ավանես Մալինցյանը, Ալեքսանդր Միրաքյանը, Բախշի Սարգսյանը, Ալեքսանդր Տեր-Մկրտչյանը, Համբարձում Շալունցը և ուրիշներ:

Իսկ մինչ այդ եղեռնագործները հոկտեմբերի 16-ին Գորիսի բանտում գնդակահարել էին 19 ռուս կարմիրբանակայինների և մեկ հայ զինվորի, որոնք հրաժարվել էին Կապան գնալ և կռվել ապստամբների դեմ[2]:

1920 թ. հոկտեմբերին տեղի ունեցած Ադրբեջանի կոմունիստական կուսակցության համագումարում Զանգեզուրի գավառից «ընտրված պատգամավոր» Հայրապետ Տատյանը հպարտությամբ զեկուցում էր, որ Կարմիր բանակի գավառ մտնելուց հետո «բոլոր դաշնակները գնդակահարվել են... Տերտերների հետ մենք այլ կերպ ենք վարվել. մի մասը ձերբակալվել է, որոնցից ոմանք գնդակահարվել են, որոնց թվում եղել է նույնիսկ մեկ մետրոպոլիտ»[3]:

Զանգվածային բռնությունների, ձերբակալությունների ու գնդակահարությունների հիմնական նպատակն էր վախ ու սարսափ տարածել բնակչության մեջ: Բայց այդ գործողությունները հակառակ արդյունք էին ունենում:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից այդ օրերին կառավարությանը գրած մի տեղեկագրի մեջ կարդում ենք. «Ղափանը Նժդեհի ղեկավարությամբ շարունակում է պահպանել իր անկախությունը և հերոսական կռիվ է մղում թուրքերի ու ռուս բոլշևիկների դեմ: Բոլշևիկները, որոնց հաջողվել է գրավման տակ պահել Ղափանի գյուղերի մի մասը, դիմում էին ամեն տեսակ վայրագությունների. գյուղերը հրդեհի են մատնում, ղեկավար գործիչներին՝ գնդակահարում: Չնայած

---

[1] 1920 թ. հուլիսի 6-ից մինչև նոյեմբերի 19-ը ժամանակաշրջանում բոլշևիկները Գորիսի կենտրոնական բանտ էին նետել 763 մարդ (տե՛ս «Արնոտ գիրք», էջ 24):

[2] Տե՛ս «Արնոտ գիրք», էջ 23:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 632, թ. 3:

դրան, Ղափանը և Գորիսը ընկճված չեն և շարունակում են անհավասար կռիվը»[1]:

Այդ բանը լավ էր ըմբռնում Կարմիր բանակի հրամանատարությունը, որը մտավախություն ուներ, թե դաժանությունները գուցե իրենց նպատակին չհասնեն: Ուստի նա անհրաժեշտ համարեց բացատրություններով դիմել գավառի բնակչությանը և բռնություններն ու գնդակահարությունները արդարացնելու փորձեր անել: Այդ նպատակին էր ուղղված 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկու հերթական հրամանը, որտեղ նա նորից անդրադառնում էր գնդակահարությունների խնդրին:

«Վերոհիշյալ անձնավորությունները,– ասված էր հրամանում,– գնդակահարված են որպես իսկական հակահեղափոխականներ և բանվորագյուղացիական իշխանության ակնհայտ թշնամիներ: Նրանք վարում էին պրովոկացիոն աշխատանք, որպեսզի ձեզ բարձրացնեն Կարմիր բանակի դեմ, այնպիսի բանվորների և գյուղացիների դեմ, ինչպիսին դուք եք: ...Բանվորագյուղացիական իշխանության թշնամինե՛ր, զգուշացե՛ք, դողացե՛ք, որովհետև հեղափոխությունն իր հաղթական ընթացքի ժամանակ կանգ չի առնում զոհերի առաջ:

Հայաստանի՛ պրոլետարներ, լա՛վ հասկացեք, որ Կարմիր բանակը եկել է Զանգեզուր ոչ թե ձեզ տիրելու, ձեզ շահագործելու ու կեղեքելու համար, ինչպես այդ անում էր հին ցարական կառավարությունը, և ինչպես հիմա անում են հայ դաշնակցականները, Կարմիր բանակը եկել է ձեզ և ձեր հարազատներին ազատելու կուլակների, գազան մաուզերիստների, բանդիտ Նժդեհի, Դրոյի և մյուսների բռնություններից, որոնք ուզում են ձեզ բարձրացնել Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի պրոլետարիատի դեմ:

Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի պրոլետարնե՛ր և չքավո՛ր գյուղացիներ, լա՛վ հիշեցեք, որ հիմա ահագին աշխատանք է տարվում ստեղծելու նոր հասարակարգ, որտեղ չի լինի ֆաբրիկանտների, հողատերերի և կուլակների իշխանությունը, այլ կլինի ազատության, հավասարության, եղբայրության և խաղաղ, հանգիստ կյանքի թագավորությունը:

Խորհրդային իշխանությունը վերջին անգամ դիմում է ձեզ. կանգնեցե՛ք խաղաղ կյանքի ուղիղ ճանապարհի վրա, մի՛ լսեք ձեր թշնամի դաշնակցականներին, հեղափոխության և ժողովրդի թշնամիներին, կուռ միացե՛ք Կարմիր բանակին՝ ոչնչացնելու մեր թշնամիներին, որոնք ձեզ ուզում են ապստամբեցնել: Թող անիծված լինեն Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի բանվորների և գյուղացիների թշնամիները՝ դաշնակները, հակահեղափոխականները:

Կեցցե՛ Կարմիր բանակը, որ պատժում է ժողովրդի թշնամիներին:

Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը Հայաստանում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 632, թ. 9-10:

Կեցցե՛ համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը»[1]:

Խորհրդային հրամանատարությունից զատ՝ թռուցիկներ ու կոչեր էր տպագրում ու տարածում նաև Գորիսի գավառային հեղկոմը: Հոկտեմբերի 21-ին, այսպես կոչված, «գյուղացու շաբաթվա» կապակցությամբ տպագրվեց ու տարածվեց «Զանգեզուրի չքավոր գյուղացիներին» կոչը, հոկտեմբերի 26-ին՝ «Կոչ Զանգեզուրի գյուղացիներին»:

Առաջին կոչում ասված էր.

«Ընկե՛ր գյուղացիներ:

Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը միակ կուսակցությունն է, որ պաշտպանում է ձեր շահերը, խորհրդային իշխանությունն է, որ կռվում է ձեզ կեղեքողների, ձեր արյունը ծծողների դեմ, բանվորությունը ձեր միակ զինակիցն է ու բարեկամը:

Ընկերնե՛ր, բանվորությունը, նրա առաջնորդ Կոմունիստական կուսակցությունը, շատ լավ գիտեն, որ դուք վատ դրության մեջ եք, գիտեն, որ դուք մերկ եք, շոր չունեք, նավթ չունեք, աղ չունեք, մի խոսքով՝ ձեր տնտեսությունը քանի գնում քայքայվում է, ձեր դրությունը քանի գնում վատանում է...

Հաստափորներից կաշառված ագենտները ձեր մեջ խռովություն են սերմանում մեր դեմ՝ բանվորությանը թույլ չտալով, որ նա ձեզ համար անհրաժեշտ գործիքներ ու մթերքներ պատրաստի:

Ընկե՛ր գյուղացիներ, դուք էլ լավ պիտի ճանաչեք ձեր իսկական թշնամիներին, պիտի կռվեք հարուստների, նրանց կողմից կաշառված զանազան մութ անձնավորությունների դեմ, որպեսզի բանվորությունը հանգիստ կարողանա ձեզ օգնել իր ունեցած ապրանքներով, իսկ դուք ձեր ունեցած հացով՝ բանվորներին: Միայն բանվորների և չքավոր գյուղացիների միության մեջ է մեր փրկությունը: Հակառակ դեպքում կստացվի այն, ինչ հիմա մեր գավառում է, մենք կմնանք սոված ու մերկ:

Ընկեր գյուղացինե՛ր, կազմակերպվում է «գյուղացու շաբաթ»: Մի ամբողջ շաբաթվա ընթացքում բանվորությունն ամենայն կերպ պետք է օգնի գյուղացիներին: Այդ շաբաթվա ընթացքում գյուղացիները ձրի, առանց որևէ վճարի, կստանան աղ, նավթ, շոր, լուցկի, հնարավորության սահմանում կշինվեն ճանապարհները, կվերաշինվեն ձեր երկրագործական գործիքները...

Զանգեզուրի հեղկոմի նախագահ՝
Եր. Բակունց
Զանգեզուրում «գյուղացու շաբաթը»
կազմակերպող հանձնաժողովի նախագահ՝
Ա. Շահգելդյան»[2]:

---

[1] «Արնոտ գիրք», էջ 67:

[2] Նույն տեղում, էջ 11-12:

Սկզբում կարծես թե բոլշևիկների գործերը վատ չէին գնում:

Ռուսական զորամասերը, ռումբերի տարափ տեղալով, հարձակվում էին Ասկյուլում–Ղզլդաշ–Ինջաբել գծով, այսինքն՝ Կապանի հյուսիսարևելյան ամբողջ սահմանի վրա:

Զախ թևում՝ Ճակատեն գյուղի վրա սկսած հարձակումը, սակայն, հաջողություն չբերեց: Խորհրդային զորամասերը ստիպված ետ քաշվեցին:

Ռազմաճակատի կենտրոնական մասում կարմիրբանակայինների գործերը հաջող էին գնում. հոկտեմբերի 17-ին նրանք գրավեցին Արծվանիկ գյուղը, ապա առաջ շարժվեցին դեպի Կապանի հանքեր:

Աջ թևում մխրճվելով Տաթևի և Կապանի միջև՝ ռուսական զորամասերն ամեն ջանք գործադրում էին գրավելու Խոտանան գյուղը:

Ռազմաճակատի կենտրոնական մասում անընդհատ գործում էին երկու դաշտային թնդանոթները, իսկ թևերից անդադրում կրակում էին 40-ի չափ գնդացիրներ:

Նժդեհը Բաղաբերդի շրջանից Խուստուփի վրայով մեկնում էր Գենվազ, երբ ճանապարհին սուրհանդակները նրան հասցրին Կապանի ազգային խորհրդի նախագահ Սամսոն բեկի՝ Հանքերից գրած գրությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «Ղափանում դրությունը շատ լուրջ է: Խոտանանից մինչև Զեյվա ամբողջ տարածության վրա թշնամին է կանգնած: Անհամբեր սպասում ենք Ձեր գալստյան»[1]:

Ստանալով այս գրությունը՝ Նժդեհը, սակայն, շարունակեց ճանապարհը: Խուստուփի կատարին չհասած՝ Սամսոն բեկից նրան բերեցին երկրորդ գրությունը. «Նորից խնդրում եմ, աղաչում՝ հասե՛ք, հասե՛ք: Այսօր մեծ կռիվ կար: Տղաներին իսկույն ուղարկեցի, դեռ լուր չունեմ»[2]:

Նժդեհը ստիպված վերադարձավ Հանքեր և անմիջապես Ինջաբելի ճակատ ուղարկեց հետևյալ հրահանգը. «Խուսափել ցերեկվա գրոհներից և զոհեր տալուց: Ընդունել **«Մուրճ ու Ոստայն»** ձևը և սպասել ինձ: Ձեզ մոտ կլինեմ մի ժամեն: 1920 թ. 17 հոկտեմբերի, ժամը 14.20, Հանքեր»[3]:

Նժդեհը շտապ կազմակերպեց թիկնային մի զորախումբ՝ վաշտապետ Կարապետի գլխավորությամբ, որը Գետաթաղի բարձունքներով ուղղություն վերցրեց դեպի Տափասար՝ անցնելու համար հակառակորդի թիկունքը, իսկ ինքը անցնում է Ինջաբելի ճակատ:

Նշված ժամին Նժդեհը եկավ Ինջաբել և անմիջապես ձեռնարկեց պաշտպանական գծի ստուգումը, զրույցներ ունեցավ մարտիկների հետ, նրանց հաղթանակի հավատ ներշնչեց: Նա իր վրա է վերցրեց իր իսկ ծրագրած ռազմական գործողության ղեկավարումը:

---

[1] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 113:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Կարծես թե 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության օպերատիվ մարտական պլանը կենսագործվում էր: Բայց հարձակման սկզբից ընդամենը երկու օր անց՝ հոկտեմբերի 17-ից, վիճակը սկսեց փոխվել: Առաջ ընթացող խորհրդային զորամասերն ավելի ու ավելի սպառնալիորեն էին կտրվում թիկունքից: Ռազմաճակատի բոլոր տեղամասերում՝ և՛ Կապանում, և՛ Գենվազում, նրանց համար ստեղծվում էր ծայրաստիճան աննպաստ վիճակ:

Հոկտեմբերի 18-ի լուսաբացին Նժդեհն իր զորամասերին ու գայլավաշտերին տարավ հակահարձակման: Հանկարծակի և հզոր գրոհով Խոտանանից հարձակված Նժդեհի զորասյունը խուճապի մատնեց խորհրդային ուժերին, որոնք սկսեցին նահանջել Ինջաբելի ամբողջ ճակատի վրա: Միաժամանակ Կարապետի հրամանատարությամբ գործող զորամասը, Տափասարի կողմից թևանցում կատարելով, անցավ կարմիրբանակայինների թիկունքը և ուժգին գրոհով նոր խուճապ առաջացնում նրանց շարքերում:

Ռազմաճակատի այս հատվածից բոլշևիկյան զորքերի խուճապահար նահանջի պահին թիկունքում՝ Տաթև գյուղում, Նժդեհի կողմնակիցները ապստամբեցին և գրավեցին ոչ միայն Տաթև, այլև Տանձատափ, Սևարանց, Մալդաշ, Աղվանի գյուղերն ու դրանց հարող տարածքները: Խորհրդային բրիգադի նահանջի միակ՝ Տաթև–Հալիձոր–Գորիս ճանապարհը փակվեց: Շուտով վրա հասան և կարմիրբանակայիններին թիկունքից հարվածում Սիսիանի կողմից Տաթևի տարածքներ մտած զանգեզուրյան զորամասերը՝ Պողոս Տեր-Դավթյանի և սպա Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ: Խորհրդային ուժերի մի մասը, ավելորդ համարելով դիմադրությունը, հանձնվեց: Մնացած մասը խուճապահար նահանջեց՝ մեծ կորուստներ կրելով Պողոս Տեր-Դավթյանի ուժերի հարվածներից:

Կարմիր բանակի զորամասերի գործերը վատ դասավորվեցին նաև ռազմաճակատի կենտրոնում: Արծվանիկը գրավելուց հետո Զեյվա–Արծվանիկ գծով դեպի Կապանի հանքեր հարձակվող 84-րդ բրիգադի զորամասերն այստեղ հանդիպեցին ուժգին դիմադրության: Բրիգադի զորքերին սկզբից հաջողվեց սեպաձև մխրճվել զանգեզուրցիների դասավորության մեջ: Բայց նախապես չմտահոգվելով անհրաժեշտ հետախուզական տվյալներ հայթայթելու հարցով՝ բրիգադի հրամանատարությունը չկարողացավ ճիշտ գնահատել ռազմական իրադրությունը և Նժդեհի ուժերը: Ոչինչ չարվեց ամրապնդելու առաջ շարժվող և թիկունքից կտրված զորամասերի թևերը:

Կապանի հանքերում Նժդեհի զորամասերը և գայլավաշտերը երեք-չորս օր պաշտպանական մարտեր մղելուց հետո՝ հոկտեմբերի 19-ին և 20-ին, հակահարձակման անցան: Նրանց հաջողվեց շրջապատել կարմիրբանակայիններին: Մեծ կորուստներ տալուց հետո բոլշևիկյան զորամասը դադարեցրեց դիմադրությունը: Հայերը գերեցին մոտ 500 զինվոր:

Նժդեհը գրել է. «Հոկտ. 18-ի երեկոյան մեր սահմանների վրա արդեն

թշնամին չկար: Մեր հաղթական վաշտերը բազմաթիվ գերիներով, թշնամուց խլած գնդացիրներով, հրացաններով, հեռախոսային ապարատներով, խրամատաշինական գործիքներով և դրոշակներով վերադառնում էին Հանքեր՝ տոնելու իրենց նոր հաղթանակը. **«Մուրճն ու Ոստայնը»** հաղթել էին և այս անգամ: Մարդկային կորուստ գրեթե չունեինք: Թշնամու կորուստը ավելի քան մեծ էր»[1]:

Հոկտեմբերի 19-ին Նժդեհը Կապանի հանքերից ՀՀ զինվորական նախարարին (պատճենները՝ սպարապետ Նազարբեկյանին, խորհրդարանի նախագահին և Հ. Յ. դաշնակցության բյուրոյին) հաղորդում էր. «Օրդուբադն ու Զանգիլանը նորից սկսեցին իրենց հարձակումը հերոսական Գենվազի մի բուռն ժողովրդի վրա: Թշնամու ուժերը հասնում են մի քանի հազարի: Հարձակվողների 70 տոկոսը թուրք է: Օրդուբադի ճակատից հարձակվողների մեջ կան նաև օսմանցիներ: Կասկածից դուրս է, որ թշնամին վճռել է գրավել Գենվազը և սրի քաշել նրա գերազանցորեն մարտունակ ու քաջանուն ժողովրդին: Պարսկական ափից հաղորդում են ինձ, որ թշնամին դեպի Գենվազ է շարժում նաև մի մեծ խուժան՝ թալանի և կոտորածի նպատակով: Ի սեր Գենվազի, Գողթանի և Ղափանի մարտնչող ժողովրդի, որը ոչինչ չխնայեց Հայաստանի նախադուռն ու ամրությունները պաշտպանելու համար, որը չորրորդ ամիսն է, ինչ հանուն իր հարազատ հանրապետության իր լավագույն մարտիկների ազնիվ արյունն է զոհի սեղան հանում, օգնություն հասցրեք ինձ զորքով, թնդանոթով ու ռազմամթերքով»[2]:

Այնուհետև Նժդեհը տեղյակ պահեց, որ կռիվները շարունակվում են նաև Կապանում, ուր «մի խենթ գրոհով» Ինջաբելի ճակատում հաջողվել էր մասամբ ջարդել, ապա ութ գնդացիրների հետ գերի վերցնել խորհրդային 250-րդ հեծելագունդը:

Բոլշևիկյան հրամանատարությունը կռիվների ծանրության կենտրոնը փոխադրել էր Կապանի հյուսիսարևելյան ճակատ և կռվում էր գերադաս ուժերով: Հայկական վաշտերի զինամթերքը սպառվելու վրա էր:

«Ռազմամթերքի սուր կրիզիսը և թնդանոթների բացակայությունը կարող է պատճառ դառնալ Ղափգենզողթի հերոս ժողովրդի ոչնչացմանը,– զինվորական նախարարին հաղորդում էր Նժդեհը:– Սա չորրորդ հարձակումն է Օրդուբադի կողմից: Օսմանյան հայակեր ավանտյուրիստներին Գենվազի ժողովրդի ազնիվ արյունն է պետք:

Ի սեր Աստծո և իմ թափած գերմարդկային աշխատանքների՝ արագացրե՛ք օգնությունը:

Ըստ իս, Կապարգողթը փրկելու համար պետք է կամ անմիջապես գրավել Նախիջևանը, կամ թե Լեգրանի միջոցով լավ կլիներ Նախիջևան – Օր-

---

[1] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 114:

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 14:

դուբադ մի խառը կոմիսիա ուղարկել, դադարեցնել Օրդուբադի և Գորիսի* անվերջ հարձակումները՝ Զանգեզուրի այս կամ այն շրջանի վրա: Օգնությո՛ւն, օգնությո՛ւն, օգնությո՛ւն՝ իր վերջին փամփուշտը կրակող Ղափան–Գենվազին»[1]:

Չսպասելով պատասխանի՝ Նժդեհը հաջորդ օրը՝ հոկտեմբերի 20-ին, Հանքերից հետևյալ երկրորդ նամակն է գրում ՀՀ զինվորական նախարարին (պատճենները՝ սպարապետ Նազարբեկյանին, խորհրդարանին, ՀՅ դաշնակցության բյուրոյին, Զանգեզուր–Ղարաբաղի կոմիտեին և «Յառաջ» թերթին).

«Ես լռել չեմ կարող: Բայց ի՞նչ արժե անվերջ, անհավասար կռիվներում արնաքամ և ուժասպառ եղած մի ժողովրդի մեռնող ղեկավարի ճիչը, ցավը, հարայը:

Ես մեռնում եմ. գիտե՞ք՝ ինչ է նշանակում սա:– Այն, որ ինձ հետ մեռնում է նաև իր ռազմական խոյանքներով մեր վերջին երկու տարվա պատմությունը զարդարող Ղափան–Գենվազ–Գողթանի հերոսական ժողովուրդը:

Ես հաղթում եմ, ջարդում թշնամու գնդերը, հարյուրներով գերի վերցնում, զինաթափում, բայց և այնպես ինձ պարտված եմ զգում և մեռնում: Գիտե՞ք՝ ինչ է նշանակում սա:– Այն, որ տեսնում եմ, որ վերջ չկա թշնամու հարձակումներին, որ ես իմ թոքերի վերջին կտորն եմ մաշում, իսկ ժողովուրդը վերջին փամփուշտն է վառում:

Հաղթել և իրեն պարտված զգալ... Այդ տրագեդիան զգալու համար պետք է սիրտ ունենալ, սիրտ: Այսօր Կապարգողթը օղակող թշնամին՝ «սովետականացնելու» տեղ միայն կոտորում է և թալանում:

Մեծամասնականների տեղ այժմ արյան տենչով խելագարված թուրք կանոնավոր ուժերն ու հսկայական խուժաններն են պաշարել իմ շրջանները:

Իհարկե, պարոն Լեգրանը գիտե այդ և դիվանագիտորեն լռում է: Մինչև այդ մարդը կասե յուր խորհրդավոր խոսքը, Կապարգողթի տրագիկ ժողովուրդը կարող է քայքայված լինել: Արագացրե՛ք, արագացրե՛ք օգնությունը, եթե պետք է այդ գերազանցորեն հայրենասեր և քաջագործ ժողովուրդը:

Գիտեք, չէ, որ այդ ժողովուրդը զոհ է գնում ի դեպ Երևանն ունեցած ջերմ հավատին: Օգնությո՛ւն, օգնությո՛ւն»[2]:

Եթե ահավոր դժվար էր զանգեզուրյան ուժերի համար, ապա Կարմիր բանակի զորամասերի դրությունն ուղղակի աղետալի էր: Կապանից նահանջող զորամասի մնացյալ մասը այդպես էլ չկարողացավ մարտական վիճակի գալ: Օգտվելով բրիգադի հրամանատարության մարտավարական

---

* Նկատի ունի Գորիսը գրված Կարմիր բանակի զորքերի հարձակումները:

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 15-17:

[2] Նույն տեղում, թ. 4:

կոպիտ սխալներից՝ Նժդեհի ջոկատները սկսեցին նահանջող զորամասերի վրա գրոհել աջ ու ձախ կողմերից: 84-րդ բրիգադի մնացած մասը Զեյվա–Արծվանիկ–Տանձավեր գյուղերի շրջանում նոր շրջապատման մեջ ընկավ՝ կրելով կենդանի ուժի մեծ կորուստներ: Ջարդուփշուր եղած բրիգադի չնչին մասը Բալդրղանով նահանջեց դեպի Խոտանան:

Ռազմաճակատի այս հատվածում Նժդեհի զորամասերի ձեռքն անցան տասնյակ գնդացիրներ, հարյուրավոր հրացաններ, մեծաքանակ ռազմամթերք:

Հանդիպելով Նժդեհի զորամասերի ուժգին դիմադրությանը՝ ստիպված պաշտպանության անցան նաև Արաքս գետի ափով դեպի Նյուվադի գյուղը հարձակվող 20-րդ դիվիզիայի զորքերը:

Գենվազում տալով մեծաթիվ զոհեր՝ այդ զորքերը խուճապահար վերադարձան Ադրբեջանի տարածք[1]:

Գենվազում ջախջախված ռուսական ուժերի մի մասը, անցնելով Նախիջևան և իրեն միացնելով տեղի թուրքերի մեծաթիվ հրոսակախմբերին և քեմալական սպաների գլխավորած զինվորների խմբերին, հոկտեմբերի 20-ին հարձակում գործեց սովահար ու տառապած Գողթանի վրա:

Չնայած ուժերի անհավասար լինելուն՝ Գողթանի հայերն առայժմ կարողանում էին հերոսական դիմադրությամբ պաշտպանել իրենց օջախները՝ չկորցնելով հույսը, որ Նժդեհից օգնություն կստանան: Օգնություն ուղարկվեց, որը, սակայն, տեղ չհասավ:

«Հոկտեմբերի 20-ից թշնամու ուժեղ հարձակումները Գողթանի վրա շարունակվում են,– հոկտեմբերի 25-ին գրում էր Նժդեհը ՀՀ զինվորական նախարարին:– Լեգրանի քթի տակ կարմիր կոչված սվոլոչը թուրք ասկյարների և խուժանի հետ Խալիլի և Էդիֆի ղեկավարությամբ պաշարել է քաղցից ուժասպառ եղած Գողթանը: Այլևս ի՞նչ զինադադար, ի՞նչ բանակցություններ: Թշնամին ձգտում է լայնացնել իր բազան և ամրացնել Նախիջևանի թիկունքը:

Կրկնում եմ՝ Գողթանին տիրելով՝ թշնամին կդառնա գրեթե անպարտելի և անզուսպ:

Ղափուջուղը՝ մեր ձեռքին եղած միակ ճանապարհը, որը միացնում է Կապան–Գենվազը Գողթանի հետ, փակ է: Այսօր չորրորդ օրն է, ինչ Գողթան ուղարկած օգնական ուժերը գերմարդկային ճիգեր են թափում անցնելու Գողթան և միշտ էլ մարդկային զոհերով ետ են գալիս:

Բուք ու բորանը ձյունապատ Ղափուջուղի՝ Կապգողթի այդ փոքր մասի վրա կտրել է մեր ճանապարհը: Արագացրե՛ք Նախիջևանի գրավումը, եթե չեք ուզում ընդմիշտ կորցրած լինել Գողթանը, գուցե և Նախիջևանը»[2]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 398, թ. 9:

[2] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 4:

Այդ օրերին ՀՅ դաշնակցության բյուրոյին գրած մի ուրիշ նամակում Նժդեհը նորից բարձրացրեց Գողթանին անհապաղ օգնության հասնելու և Նախիջևանն ու Օրդուբադը գրավելու անհրաժեշտության հարցը:

«Հարցերից ամենաէականը,– շեշտում էր նա,– դա Նախիջևան–Օրդուբադի գրավումն է, որը պետք է հանրապետությունը իրագործի մոտ օրերում, որպեսզի միանգամ ընդմիշտ վերջ դրված լինի տաճկա-ադրբեջանական անարգել հարձակումներին և ոտնձգություններին և հնարավորություն [տա]՝ Զանգեզուրը կապելու մայր երկրին»[1]:

Չնայած Նժդեհի ուղարկած վաշտը հնար չգտավ Կապանից անցնելու Գողթան, բայց գողթանցիները, մեն-մենակ արգելափակելով թշնամու ճանապարհը, շարունակում էին մաքառել:

Անհաջողություն կրեցին նաև Սիսիանի ուղղությամբ հարձակվող Կարմիր բանակի զորամասերը: Դուրս գալով Գորիսից՝ այդ զորամասերը հոկտեմբերի 20-ին մտան Յայջի, ապա, արագ առաջ շարժվելով, հաջորդ օրը՝ հոկտեմբերի 21-ին, հասան Անգեղակոթ և գրավեցին այն: Նույն օրը Անգեղակոթից բոլշևիկյան հրամանատարությունը վերջնագիր հղեց Սիսիանի ապստամբներին՝ պահանջելով անհապաղ զինաթափվել:

Բոլշևիկների հաշվարկները սխալ դուրս եկան: Սիսիանի ապստամբները բնավ մտադիր չէին տեղի տալ: Նրանց առաջնորդ Պողոս Տեր-Դավթյանը ոչ միայն չպատասխանեց այդ վերջնագրին, այլև իր ջոկատներին հրաման տվեց անմիջապես հակահարձակման անցնել և ետ գրավել Անգեղակոթը: Գիշերային հարձակումով սիսիանցի մարտիկները կարողացան բոլշևիկյան զորամասերը դուրս մղել գյուղերից և ստիպել նահանջել Ղարաքիլիսա: Այդ պահին Պողոս Տեր-Դավթյանը լուր ստացավ Ինջաբելի գծում խորհրդային 83-րդ բրիգադի ջախջախման և դեպի Տաթև նահանջի մասին: Նա, մի զորամասի գլուխ անցած, շրջանցեց Ղարաքիլիսա գյուղը, որտեղ ապաստանել էին Անգեղակոթից նահանջած խորհրդային զորամասերը և մի այլ ճանապարհով առաջ անցնելով՝ գրավեց Յայջին: Դրանով իսկ նա մի կողմից՝ սպառնում էր Ղարաքիլիսայում գտնվող բոլշևիկյան զորամասերին, մյուս կողմից՝ հնարավորություն էր ստանում օգնության գնալու Ինջաբելի գծից Տաթև նահանջող 83-րդ բրիգադին հալածող ապստամբական ուժերին:

Յայջի գյուղից Պողոս Տեր-Դավթյանը իր զորամասով անցավ Տաթև, ապա, Նժդեհին միանալու նպատակով Տաթևից դուրս գալով, շարժվեց Կապանի ուղղությամբ: Ճանապարհին՝ Մալդաշ գյուղում, հանդիպելով բոլշևիկների մի զորամասի, կռվի բռնվեց և նրան ստիպեց նահանջել: Անցնելով Կապանի Խոտանան գյուղը՝ Պողոս Տեր-Դավթյանը միացավ Նժդեհին: Ստանալով որոշ հրահանգներ՝ մի քանի օր հետո նա վերադարձավ

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 10:

Սիսիան՝ Ղարաքիլիսա գյուղ, որտեղից խորհրդային զորամասերն արդեն նահանջել էին Գորիս:

Այսպիսով՝ ձախողվեց 11-րդ բանակի հրամանատարության մշակած օպերատիվ մարտավարական պլանը: 28-րդ դիվիզիայի 84-րդ և 83-րդ բրիգադները և 20-րդ դիվիզիայի զորամասերը չկարողացան կատարել իրենց խնդիրը և նահանջեցին ելման դիրքեր:

Ընդամենը մեկ շաբաթում խորհրդային զորքերը միայն Կապանում տվեցին հարյուրավոր սպանվածներ: Հայկական ուժերը այստեղ գերի վերցրին հարյուրավոր զինվորների, գրավեցին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

Նժդեհի համար ծանր խնդիր էր դարձել այդքան մեծ թվով ռուս գերիներին պահելը: Նա այդ օրերին բազմիցս դիմում էր Հայաստանի կառավարությանը, որպեսզի սա միջոցներ ձեռնարկի գերիների գոնե մի մասին Վայոց ձորի վրայով Կապանից Հայաստան տեղափոխելու համար: Հոկտեմբերի 23-ին Նժդեհը Կապանի հանքերից Հայաստանի խորհրդարանի անդամներ Ե. Միրաքյանին և Գ. Բալայանին գրում էր, որ ինքը հույս ուներ, թե կառավարությունը գոնե 500 գերի կտաներ Հայաստան՝ նկատի ունենալով այն, որ Կապանում պարեն չկար՝ նրանց «ավելորդ օր անգամ կերակրելու», բայց Երևանից այնպես էլ ոչ մի պատասխան չէր ստացվել: «Մինչև ե՞րբ,– դառնացած գրում էր նա:– Ուզում եմ հավատալ, որ դուք, սիրելի՛ ընկերներ, զգում եք, ապրում իմ տրագեդիան և հասկանում ինձ: Ես կատարելապես հյուծվել եմ: Թոքերիցս արյուն է գալիս: Սուր ռևմատիզմը փակել է ոտ ու ձեռքս, այնպես որ շորերս հանել-հագնելու հնարավորությունից էլ զրկվել եմ: ...Ինչպես երևում է, իմ կյանքը ոչինչ չարժե հանրապետության համար»[1]:

Կարմիր բանակի զորքերի հարձակումը ձախողվեց մի շարք պատճառներով: Առաջին և գլխավոր պատճառը զանգեզուրցու հայրենապաշտությունն էր, նրա ամուր կամքը, անխորտակ հավատը իր արդար գործի նկատմամբ: Զանգեզուրի պաշտպանության գլուխ էր կանգնած հեռատես ու տաղանդավոր Գարեգին Նժդեհը, որը հրաշքներ գործեց հայոց այդ լեռնավայրում՝ առաջ բերելով թե՛ բարեկամների, թե՛ թշնամիների հիացումը: Պատճառներից մյուսը պետք է փնտրել Կարմիր բանակի հրամանատարության ապաշնորհ գործելակերպի և մեծամտության մեջ. մի բան, որ շատ թանկ նստեց կարմիրբանակայինների վրա, որոնք շինել հագած ռուս մուժիկներ էին և եկել էին այդ անծանոթ երկիրը իբրև նվաճողներ՝ ենթարկվելով բոլշևիկների դաժան կարգապահությանը: Վերջապես պատճառների շարքում պետք է նշել նաև Զանգեզուրի անբարենպաստ բնական և կլիմայական պայմանները: Շուտ վրա հասած աշնանային եղանակները՝ մինչև

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 1:

ոսկոր թափանցող ցուրտը, թանձր մառախուղը, անընդհատ անձրևները, մեծապես դժվարացնում էին բոլշևիկների գործը: Ընդհակառակը, Զանգեզուրի պաշտպանները, լավ ծանոթ լինելով տեղանքին, իմանալով լեռնային անցումները, վարպետորեն օգտագործելով բնական ամրությունները և օգտվելով մառախլապատ եղանակից, հատկապես գիշերները հարձակումներ էին գործում Կարմիր բանակի ստորաբաժանումների վրա, հանկարծակիի բերում, պատճառում ծանր կորուստներ[1]: Կապանում, Գենվազում և Սիսիանում խորհրդային զորքերի պարտությունը և նահանջը ծանր անդրադարձ ունեցավ: Զանգեզուրում, փաստորեն, խորհրդային էին մնացել Գորիս քաղաքը և Կապանի շրջանի մի մասը՝ Որոտան գետի ձախ ափից սկսած մինչև Ադրբեջանին սահմանակից Տեղ գյուղը, որոնց պաշտպանությունը նույնպես վտանգի տակ ընկավ:

Զանգեզուրում բոլշևիկյան ուժերի ծանր պարտությունը զարմանք էր առաջ բերել ամենուր: Խորհրդային Ռուսաստանի հզոր բանակներից մեկը ջարդուփշուր էր եղել մի գավառի հերոսական զինյալների ուժով, և դա այն դեպքում, երբ քաղաքացիական պատերազմի ճակատներում Կարմիր բանակը մեկը մյուսի ետևից հաղթանակներ էր տարել Յուդենիչի, Կոլչակի, Դենիկինի բազմահազարանոց բանակների դեմ, և հերթը արդեն հասել էր Վրանգելին:

Զանգեզուրցիների մարտական հաջողությունները մեծ օգնություն էին քեմալական հորդաների դեմ կենաց ու մահու կռիվ մղող Հայաստանի բանակին: Հանրապետության կառավարությունն այդ հանգամանքը բազմիցս ընդգծել է՝ համոզմունք հայտնելով, որ Զանգեզուրն անառիկ ամրոցի պես արգելք կհանդիսանա Կարմիր բանակի և թուրքական զորքերի միացմանը:

Այդ օրերին Հայաստանի կառավարությունը դիմեց Զանգեզուրի և Ղարաբաղի հայությանը՝ կոչ անելով ուժեղացնել պայքարը Կարմիր բանակի և ադրբեջանական հրոսակախմբերի դեմ[2]:

Բոլշևիկները լավ էին ըմբռնում, որ անհնար է կոտրել զանգեզուրցիների դիմադրությունը, եթե չհաջողվի գավառի բնակչության լայն խավերին կտրել զինյալներից և հակադրել նրանց: Ուստի կազմվեցին զանազան ծրագրեր՝ զանգեզուրցիների շարքերում պառակտում առաջ բերելու, նրանց ամուր միասնությունը քայքայելու համար:

Այդ օրերին Բաքվում ռուսերեն լույս տեսնող բոլշևիկյան «Կրասնի ավանգարդ» թերթը այսպես էր շարադրում Զանգեզուրում բոլշևիկների և Կարմիր բանակի հետագա անելիքները. «Արևելքում ի հայտ է եկել մեծ դաշնակիցների կրտսեր քույրը՝ Արևելյան Անտանտը: Այդ դաշինքը ստեղծել են Հայաստանի, Վրաստանի, Ռումինիայի և Հունաստանի բուրժուաները, որ-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 147, թ. 1-5:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 280, ց. 2, գ. 43, թ. 1:

պեսզի խեղդեն Արևելքում ծավալվող հեղափոխական շարժումը: Արևելյան Անտանտի անմիջական ներկայացուցիչներից մեկը ավազակապետ Նժդեհն է, որն իր բանակը կազմել է ազգային ատելությամբ լցված հայերից: Մինչ Նժդեհը Զանգեզուրի լեռների վրա ավազակությամբ էր զբաղվում, կարմիր սվինները փախուստի մատնեցին մի ուրիշ գայլի՝ Դրոյին:

Ընկեր կարմիրները պետք է ամուր սեղմեն իրենց հրացանները և քշեն սև գայլ Նժդեհին:

Կարմիր բանակի խորամանկ և համառ թշնամիներ Նժդեհը, Դրոն և մյուս հին գայլերը լավ գիտեն զինվորական գործը: Ուստի և այդ ապստամբների դեմ անհրաժեշտ է հանել մեծ ուժ՝ ջարդելու համար նրանց հրոսակախմբերը: Միաժամանակ մենք չպետք է մոռանանք, որ ապստամբների հաջողությունը մեծապես կախված է ազգաբնակչության տրամադրություններից: Ահա թե ինչու Կարմիր բանակը, թշնամու կենդանի ուժերը խորտակելուց բացի, պիտի ձգտի ժողովրդին ոտքի հանել և թշնամանք առաջացնել ապստամբության ղեկավարների նկատմամբ»[1]:

Հոկտեմբերի 25-ին 28-րդ հրաձգային դիվիզիայի շտաբից (Շուշի) հրամանատար Նեստերովսկին Զանգեզուրում գտնվող իր զորամասերին իջեցրեց հերթական հրամանը, որով առաջնային խնդիր էր համարում բոլոր միջոցներով ռազմաճակատի գիծն ամրացնելը, ասել է թե՝ զանգեզուրցիներին առաջ գնալու հնարավորություն չտալը[2]: Բայց այդ գիծն ամրացնելու համար զինվորական նոր ուժեր էին հարկավոր: Եվ քանի դեռ Ղարաբաղի կողմից այդպիսի ուժեր չէին ժամանել, զորքերի զանգեզուրյան խմբավորման հրամանատարությունը որոշեց փոքր դադարն օգտագործել ու կարգի բերել անհաջողություն կրած և նահանջած զորամասերը, նրանց տեղաբաշխել բնական հարմար ամրություններում, նաև հայթայթել պարեն:

Նժդեհը գրել է. «Կարմիր հրամանատարությունը՝ կույր գործիք Բաքվի համիսլամականների ձեռքին, ըստ ամենայնի, վճռել էր, ի գին իր վերջին զինվորի արյան, ճնշել «Նժդեհի և դաշնակների ստեղծած սպիտակ շարժումը» և Զանգեզուրը կցել Խորհրդային Ադրբեջանին: Նրա մի շարք զորամասերը ծեծված էին, զինաթափված, գերված: Նրա ռազմունակությունն ու բարոյական վիճակը գերեզման էին գտել Գենվազի, Բաղաբերդի և Ղափանի ռազմաճակատներում»[3]:

Տաթևի ենթաշրջանը գրաված հայկական ուժերը, մինչև Կապանի կողմից համալրում ստանալը, Որոտանի աջ ափից փորձեցին անցնել Հալիձոր և Յայջի գյուղերի տարածքները: Նրանք մտադիր էին, Շինուհայր–Խոտ գծով առաջ շարժվելով, ընդհուպ մոտենալ գավառային կենտրոն Գորիս քաղաքին

---

[1] ՌՊՌԱ, ֆ. 329, ց. 1, գ. 3, թ. 41:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 141, թ. 1-2:

[3] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 116:

և, եթե ներեին ուժերը, գրոհով վերցնել այն:

Խորհրդային զորքերի հրամանատարության պահանջով գավիեղկոմը միջոցներ ձեռնարկեց Տաթևից Գորիս եկող ճանապարհը փակելու և դեպի Գորիս քաղաք Նժդեհի զինջոկատների առաջխաղացումը կանգնեցնելու համար: Այդ նպատակով որոշվեց Եգոր Հարությունյանի գլխավորած կոմունիստական ջոկատը, որը նույնպես խորհրդային զորքերի հետ Կապանի ճակատից նահանջել էր Գորիս, ուղարկել զանգեզուրյան ուժերի կողմից գրավված Տաթև և կարմիրբանակայինների կողմից գրավված Հալիձոր գյուղերի արանքում ընկած Ցաքուտ կոչվող վայրը: Ջոկատը պետք է պաշտպաներ Հալիձոր–Ցայջի գիծը, Նժդեհի ուժերին թույլ չտար Որոտանի աջ ափից անցնել ձախ կողմը:

Սիսիանի ուժերի հրամանատարությունը շտապում էր օր առաջ հարձակում սկսել՝ Գորիս քաղաքը և շրջանը վերագրավելու համար: Համաձայնություն ստանալու համար Պողոս Տեր-Դավթյանը դիմեց Հանքեր՝ Նժդեհին:

Հոկտեմբերի 27-ին Նժդեհը Սիսիանի ուժերի հրամանատարությանը նամակ գրեց: Նամակում իր կարծիքն էր հայտնում Գորիսը տվյալ պահին վերագրավելու աննպատակահարմարության մասին: Նա ևս գտնում էր, որ կարելի է և պետք է վերագրավել Գորիսը, բայց դրա համար, գրում էր նա, անհրաժեշտ է՝

1. առանց ուշացնելու ունենալ բավականին կանոնավոր ու զգալի զինված ուժեր, այնքան, որ քաղաքը գրավելուց հետո այդ ուժերի մի մասով «կարողանանք ամրացնել և մեր ձեռքին պահել Զաբուղի մեր հին դիրքերը»,
2. Բուն Զանգեզուրի ժողովուրդը հետևի Ղափան–Սիսիանի օրինակին. «թոթափի սովետա-ադրբեջանական լուծը», իր միջից արմատախիլ անի բոլոր կոմունիստական տարրերին, վճռականորեն կանգնի իր սահմանների վրա՝ «միշտ պատրաստ՝ դիմագրավելու թշնամու բոլոր տեսակի փորձերին ու խաղերին»[1]:

Առաջադրելով Գորիս քաղաքը և բուն Զանգեզուրը վերագրավելու պարտադիր այս երկու նախապայմանները՝ Նժդեհը, այնուհետև, ավելացնում էր. «Որքան ես գիտեմ, այժմ մենք ո՛չ այնքան կանոնավոր ուժեր ունենք, ո՛չ ժողովուրդն է ապստամբելու միտումներ ցույց տալիս»[2]: Նա նշում էր, որ Խոտ, Շինուհայր, Հալիձոր գյուղերի կոմունիստները շարունակում են խտացնել խորհրդային զինվորների շարքերը, իսկ Խնձորեսկ գյուղը պաշտպանում է մեծամասնականների բոլոր ձեռնարկումները: Հետևապես գտնում էր, որ Գորիսը կարելի է վերագրավել ամեն րոպե, ամեն ժամ, ամենաչնչին ուժերով, բայց այդ ուժերով վերագրավել բուն Զանգեզուրը, առավել ևս՝

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 18, թ. 1:

[2] Նույն տեղում:

պաշտպանել այն, անհնար է: «Կարելի է մի խիզախ налет-ով կարճ ժամանակով տեր դառնալ Գորիսին. թշնամուն փախցնել մինչև Զաբուղ, ձեռք գցել թշնամու թնդանոթները և ռազմամթերքը, ազատել բանտարկյալներին, բայց մնալ Գորիսում, առանց Զաբուղն ամրացնելու, անկարելի էր»[1]:

Ընդհանուր հրամանատարը նշում էր, որ հակառակորդը, կարիքի դեպքում, բուն Զանգեզուրում իր պահեստազորը համալրելու մեծ հնարավորություններ ունի Հաջիսամլուի և ուրիշ վայրերի թուրքերի հաշվին: Այդ առավելություններից, ասում էր նա, Զանգեզուրի պաշտպանները զրկված են:

Նժդեհը Սիսիանի հրամանատարությանը նախազգուշացնում էր, որ շատ ժամանակ չի անցնի, և բոլշևիկները Ադրբեջանի կողմից նորից կանոնավոր ուժեր կուղարկեն Զանգեզուրի վրա, ուստի կարճատև դադարը պետք է օգտագործել առավելագույն արդյունավետությամբ: Նա հատկապես կարևորում էր բուն Զանգեզուրի ժողովրդի բարոյական ու մարտական ոգին բարձրացնելու ուղղությամբ աշխատանքների ծավալումը:

«Մինչև կանոնավոր (Կարմիր բանակի: – *Ա. Ս.)* ուժերի գալը,– գրում էր Նժդեհը,– պետք է թռուցիկներով, կոչերով, պրոպագանդիստներով հեղեղել բուն Զանգեզուրը, պետք է այնտեղ ստեղծել ցանկալի հոգեբանական մթնոլորտ (психологическая атмосфера)»[2]:

Գորիս քաղաքը և բուն Զանգեզուրը գրավելու նախապատրաստական աշխատանքների թվում ընդհանուր հրամանատարը խիստ կարևորում էր թիկունքի՝ տվյալ դեպքում Սիսիանի ամրապնդումը: «Աշխատե՛ք Սիսիանում մոբիլիզե անել 26, 27, 28, 29 և 30 տարեկաններին, կազմակերպել եռավաշտ մի ուժեղ զումարտակ, իհարկե, լավ զգեստավորելու (обмундировать) և կերակրելու պայմանով»[3]: Այնուհետև նա խորհուրդ էր տալիս Սիսիան ներմուծել մանածագործական արտադրանք, թեյ, շաքար, օճառ, լուցկի և նման բաներ[4]:

Նժդեհը համոզված էր. «Որքան լավ կազմակերպված լինի և ուժեղանա Սիսիանը, այնքան կհեշտանա բուն Զանգեզուրի վերագրավման գործը»[5]:

Մինչ Գարեգին Նժդեհը, Պողոս Տեր-Դավթյանը և նրանց զինակիցները զանազան ծրագրեր էին կազմում Գորիս քաղաքը և բուն Զանգեզուրը վերագրավելու համար, 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը Զանգեզուրի գավառը վերջնականապես գրավելու նոր նախապատրաստություն էր տեսնում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 18, թ. 1 և շրջերեսը:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, թ. 2:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ՀԱՐՎԱԾՈՂ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը զինվորական բարձր իշխանություններից կարգադրություն ստացավ՝ առանց ժամանակ կորցնելու, ամենակարճ ժամկետում ճնշելու զանգեզուրյան ապստամբությունը և գավառում վերահաստատելու խորհրդային կարգերը: Ելնելով դրանից՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը վիճելի բոլոր շրջանները՝ Զանգեզուրը, Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը, հայտարարեց ռազմական դրության մեջ: Միաժամանակ մարտական բարձր պատրաստության մեջ դրվեցին այդ շրջանների խորհրդային բոլոր զորամասերը:

Զանգեզուրը վերջնականապես ծնկի բերելու համար ստեղծվեց զորքերի մի հզոր միավոր, որը ստացավ «Զանգեզուրյան հարվածող խմբավորում» անվանումը: Այն գլխավորեց 9-րդ բանակի 18 -րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար Պյոտր Վասիլևիչ Կուրիշկոն: Վերջինս 11-րդ Կարմիր բանակին օգնության էր եկել Հյուսիսային Կովկասից: Ծագումով լինելով Դոնի գյուղացի՝ քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում նա իր մարտական ծառայությունը սկսել էր որպես ավագ հանձնակատար սպա, այնուհետև եղել էր հեծյալ հետախույզ ջոկատի պետ, ապա հեծելավաշտի հրամանատար, վերջապես դարձել էր հեծյալ դիվիզիայի հրամանատար: Դենիկինյանների դեմ դաժան կռիվներում հռչակվել էր որպես անվախ ու հերոս հրամանատար, մարտերի կազմակերպման և ղեկավարման ժամանակ միշտ ցույց էր տվել ռազմագիտական բարձր ընդունակություններ ու հմտություններ: Քաջարի այդ մարդը կռիվներում 18 անգամ վիրավորվել էր և կատարած սխրագործությունների համար արժանացել Կարմիր դրոշի շքանշանի ու ներկայացվել ոսկե զենքով պարգևատրման: Զուր չէ, որ նա «խորհրդային Հաննիբալ» անունն էր վաստակել[1]:

Երբ Գորիսում բոլշևիկներին հայտնի դարձավ, որ Զանգեզուրի դեմ գալիս է Կուրիշկոն, Ղարաբաղի և Զանգեզուրի արտակարգ կոմիսար Արմենակ Ղարագյոզյանը գավառի հայ ազգաբնակչությանը սարսափի մատնելու նպատակով շարունակ կրկնում էր. «Զգու՛յշ, սրան Կուռոչկին* կասեն, որը կատակ չի սիրում: Սա է ջարդել Դենիկինին, Կոլչակին և շատերին: ...Կտես-

---

[1] Տե՛ս "За рабоче-крестьянское дело". Сборник посвященный памяти Куришко, Тифлис, 1923, էջ 40:

* Զանգեզուրում սխալմամբ այդպես էին անվանում Կուրիշկոյին: Այդ սխալը կրկնվում է գրականության մեջ, այդ թվում՝ Նժդեհի գրվածքներում:

նեք՝ այսօր-վաղը Նժդեհի և Ղափանի փոշին քամուն կտա»[1]: Լսելով այդ խոսքերը՝ Նժդեհն ասում էր. «Դառար ոչխար՝ պատրաստ են գայլերը, բայց մենք երբեք ոչխար չենք դառնա»: Ապա պատասխանելով նրանց, ովքեր փորձում են խուճապ ստեղծել՝ ասելով, թե Կուրիշկոյի բազմամարդ զորքին հաղթել չի լինի, Նժդեհը, իր խոսքերն ուղղելով Կարմիր բանակի հրամանատարությանը, բացականչում էր. «Շատ եկեք և շուտ եկեք, ձեզ սպասում ենք անհամբեր»:

Հարվածող խմբավորման միջուկը կազմեց Կուրիշկոյի հեծելազորքի մի մասը՝ բաղկացած մարզված ու կռվելու ընդունակ 1800 հեծյալներից: Դա 18-րդ դիվիզիայի առաջին հեծյալ բրիգադն էր, որի կազմում էին 103-րդ և 105-րդ գնդերը և օժանդակ ուրիշ զորամասեր: Բրիգադի հետ էին դիվիզիայի հրամանատար Կուրիշկոն, դիվիզիայի զինվորական կոմիսար Կուլեշովը, շտաբի պետ Նեկրիտովը, որին շուտով փոխարինեց Ֆրոլովը: Առայժմ «Զանգեզուրյան հարվածող խմբավորում» անվանումը իր վրա էր կրում 18-րդ հեծդիվիզիայի՝ դեպի Զանգեզուր գնացող այդ բրիգադը:

18-րդ դիվիզիայի 1-ին հեծյալ բրիգադին հրամայված էր Զանգեզուր գնալ արագ երթով և կռվի մեջ մտնել որքան հնարավոր է շուտ:

11-րդ բանակի հրամանատարությունը և Ադրբեջանի նարիմանովյան ղեկավարությունը Բաքվում ակնդետ հետևում էին դեպի Զանգեզուր 18-րդ հեծդիվիզիայի զորամասերի երթին: Դիվիզիայի հրամանատարը և շտաբը բանակի ղեկավարությանը պարբերաբար տեղյակ էին պահում բրիգադի շարժման, ճանապարհի դժվարությունների, մարտիկների բարոյական ոգու մասին:

Ստորև ներկայացնում ենք հոկտեմբերի վերջին տասնօրյակում հեծբրիգադի շարժման մասին դիվիզիայի շտաբի կողմից 11-րդ բանակի հրամանատարությանը հեռագրով ուղարկած օպերատիվ ամփոփագրերը:

Հոկտեմբերի 22, Բարդա. «1-ին հեծբրիգադը՝ իր 103-րդ և 105-րդ գնդերով, առաջին կարգի գումակով և ձիաքարշ հրետանային մարտկոցով, դիվիզիայի դաշտային շտաբի հետ հոկտեմբերի 22-ին, ժամը 18-ին հասավ Բարդա գյուղը, որտեղ և կանգ է առել գիշերելու: Կորուստներ և ռազմավար չկան: Ճանապարհներին ցեխ է»[2]:

Հոկտեմբերի 25, Շուշի. «Դիվիզիայի 1-ին հեծբրիգադը ժամանել է Շուշի հոկտեմբերի 24-ին, ժամը 17.30-ին, ուր և կանգ է առել գիշերելու: Ռազմավար չկա: Ճանապարհին կորցրել ենք մի քանի ձի: Կերը միանգամայն բացակայում է: Ձիերը գերհոգնած են: Եղանակն անձրևային է: Լեռնային ճանապահներին ցեխ է»[3]:

---

[1] **Վ. Գեորգեան,** նշվ. աշխ., էջ 103:

[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 143, թ. 1:

[3] Նույն տեղում:

Հոկտեմբերի 26, Շուշի. «18-րդ հեծդիվիզիայի հեծյալ բրիգադի գնդերի դասավորության շրջանում օրն անցել է հանգիստ: 103-րդ հեծգունդը՝ 35 մարդ հրամկազմով, 260 թրով, 230 հրացանով, 6 գնդացրով տեղաբաշխված է Քեշիշքենդ գյուղում: Բրիգադի շտաբը գտնվում է ներքին Սիզնակ գյուղում: 1-ին ձիաքարշ հրետանային մարտկոցը չորս թնդանոթով գտնվում է Շուշի-քենդ գյուղում: Կորուստներ և ռազմավար չկան: Գնդերը սննդամթերքով ապահովված են: Կեր չկա: Ուրիշ տեղեկություններ չեն հասել: Եղանակը պարզ է, թույլ քամի է: Ճանապարհների վիճակն անբավարար է»[1]:

Հոկտեմբերի 27, Շուշի. «Զանգեզուրյան հարվածող խմբավորմանը տրված հրամանի համաձայն 18-րդ հեծյալ դիվիզիայի 1-ին հեծբրիգադը՝ 103 և 105 հեծյալ գնդերի կազմով, Ներքին և Վերին Սիզնակ–Քեշիշքենդ շրջանից շարժվել է Կալադարասիի ուղղությամբ, ուր կանգ է առել գիշերելու: ...Գնդե-րը սննդամթերքով ապահովված են: Կեր չկա: Եղանակն անձրևային է, ճանապարհների վիճակը՝ անբավարար»[2]:

Հոկտեմբերի 28, Շուշի. «18-րդ հեծյալ դիվիզիայի դաշտային շտաբը ժա-մը 8-ին մեկնել է Կալադարասի գյուղը, որտեղ կանգ է առել գիշերելու: 1-ին հեծբրիգադը՝ 103 և 105 հեծյալ գնդեր կազմով և առաջին կարգի զումակով, հոկտեմբերի 28-ին, ժամը 5-ին դուրս գալով Կալադարասի գյուղից՝ շարժվել է Տեղ գյուղի ուղղությամբ, ուր և կանգնել է գիշերելու: 1-ին ձիաքարշ մարտկոցը 4 հրանոթով գտնվում է Շուշիքենդում: 103-րդ հեծյալ գնդի կազմը՝ 35 հոգանոց հրամկազմ, 217 հրացանակիր, 258 թուր և 11 գնդացիր: 105-րդ հեծյալ գունդը, 25 հոգանոց հրամկազմ, 220 հրացանակիր, 260 թուր, 6 գնդացիր: Լեռնային ճանապարհներին ցեխ է»[3]:

Հոկտեմբերի 29, Տեղ գյուղ. «18-րդ հեծյալ դիվիզիայի 1-ին բրիգադի դաշ-տային շտաբը Կալադարասի գյուղից հոկտեմբերի 29-ին, առավոտյան ժամը 6-ին ճանապարհվել է և ժամը 2-ին հասել Տեղ գյուղ, ուր տեղավորվել է և պատրաստվել գիշերելու: Բրիգադի 103-րդ և 105-րդ գնդերը, որոնք նախորդ օրվա գիշերն են հասել Տեղ գյուղ, նույն օրվա առավոտյան ժամը 5-ին, հա-մարյա առանց հանգիստ առնելու, Տեղ գյուղից շարժվել են դեպի Գորիս և քաղաք հասել երեք ժամ հետո...»[4]:

18-րդ հեծյալ դիվիզիայի 1-ին հեծյալ բրիգադի անցած ճանապարհով Զանգեզուր էին գալիս նաև այդ դիվիզիայի մյուս զորամասերը:

Գորիս ժամանած «կարմիր զորավարը»՝ Պյոտր Կուրիշկոն, ջերմ ընդու-նելության արժանացավ տեղի բոլշևիկ ղեկավարների կողմից: Նա ամեն առիթով մեծարվում էր գավառի խորհրդային իշխանության կողմից, նրա

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 143,, թ. 3:

[2] Նույն տեղում, գ. 145, թ. 3:

[3] Նույն տեղում, թ. 4:

[4] Նույն տեղում, գ. 145, թ. 5, տե՛ս նաև նույն տեղում, գ. 146, թ. 1:

թանկագին հյուրն էր: Կուրիշկոյի հեծյալ զորամասերը, որոնք տեղավորվել էին քաղաքում և մերձակա գյուղերում, շատ էին տարբերվում 28-րդ լեռնահրաձգային դիվիզիայի զորամասերից. 18-րդ հեծյալ դիվիզիայի զորամասերի հրամանատարներն ու զինվորները առողջ էին ու կայտառ, լավ զգեստավորված էին և ունեին ընտիր ձիեր[1]:

Գորիսում Կուրիշկոն ձեռնարկեց խմբավորման վերջնական ձևավորումը: 18-րդ հեծդիվիզիայի՝ Գորիս հասած առաջին հեծյալ բրիգադը և Զանգեզուրում գտնվող մյուս բոլոր զորամասերը միավորվեցին՝ կազմելով մի ընդհանուր բռունցք:

Զանգեզուրյան հարվածող խմբավորման մեջ մտան 28-րդ հրաձգային դիվիզիան՝ իր բոլոր ստորաբաժանումներով, 20-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադը, 18-րդ դիվիզիայի առաջին հեծյալ բրիգադը:

Խմբավորման կազմի մեջ մտցվեցին զգալի թվով հրետանային միավորներ: Բացի Զանգեզուրի մերձռազմաճակատային վայրերում եղած լեռնային ձիաքարշ հրետանային մարտկոցներից՝ խմբին հանձնվեցին նաև Լեռնային Ղարաբաղում, Կարյագինոյում, Զաբրայիլում գտնվող երեք հրետանային դիվիզիոնները:

Հարձակման նախօրյակին Զանգեզուրյան հարվածող խմբավորման զորքերի ընդհանուր թիվը հաշվվում էր 6000 հետևակ և շուրջ 2000 հեծյալ: Զենքերի ընդհանուր քանակությունը, հրացաններից բացի, հետևյալն էր՝ 48 հրանոթ, 218 գնդացիր, 8 զրահամեքենա, 2 սավառնակ և այլն[2]: Մարտական գործողությունների ընթացքում հարվածող խմբավորմանը պետք է օգներ օդային ռմբակոծիչների մարտական օղակը[3]:

Ահա այդ հզոր խմբավորումն էր, որին միացավ նաև 1200 թուրք ասկյարներից կազմված «թուրքական առաջին հրաձգային կոմունիստական գունդը»՝ Զավալ փաշայի հրամանատարությամբ[4]:

Օսմանյան թուրքերից կազմված այդ գունդը ձևավորվել էր Բաքվում՝ Ադրբեջանի նորաստեղծ խորհրդային կառավարության և այնտեղ գտնվող Թուրքիայի կոմունիստական կուսակցության ջանքերով: Գունդը զինելու և հանդերձավորելու խնդիրը դրվել էր 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության վրա: Նրա բոլոր ստորաբաժանումների հրամանատարները թուրք սպաներ էին:

Ձևավորվելուց և ավարտուն տեսքի գալուց հետո գունդը ժամանակավորապես դիտվեց որպես 11-րդ բանակի զինվորական միավորներից մեկը և կրում էր «8-րդ գունդ» համարանիշը:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 117:

[2] Տե՛ս ՌՊՌԱ, ֆ. 326, ց. 1, գ. 2, թ. 7, տե՛ս նաև **А. Кадишев**, նշվ. աշխ., էջ 339:

[3] Տե՛ս ՌՊՌԱ, ֆ. 326, ց. 1, գ. 3, թ. 2:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 90, թ. 3-4:

Գունդը կազմող ասկյարները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան ճակատում ռուսական զորքերի կողմից գերի վերցված օսմանյան բանակի զինվորներ էին, որոնք 1918 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո «ներկվել էին կարմիր գույնով» և բոլշևիկներին նույնիսկ հավատացնում էին, թե ամբողջ հոգով ընկալում են այդ հեղափոխության գաղափարները: Իսկ երբ Թուրքիայում հաղթանակեց քեմալական շարժումը, Ռուսաստանում գտնվող թուրք ռազմագերիների արժեքն էլ ավելի բարձրացավ:

Խորհրդային կառավարությունը պատրաստակամություն հայտնեց նրանց ազատ արձակելու ռազմագերիների ճամբարներից, զինելու և ուղարկելու Մուստաֆա Քեմալի տրամադրության տակ, որի բարձրացրած «հեղափոխությունը», իբր, ուղղված էր միջազգային իմպերիալիզմի դեմ:

Թուրք ռազմագերիները Թուրքիա էին վերադառնում Ղրիմի վրայով (Սև ծովով) կամ Բաքվի վրայով (Հարավային Ադրբեջանով)՝ շրջանցելով Հայաստանը: Բաքվում գտնվող՝ Թուրքիայի կոմունիստական կուսակցության ղեկավարության մեջ միտք հղացավ իր դրոշի տակ ստեղծելու թուրք ռազմագերիներից կազմված մի գունդ և օգնության ուղարկելու «հեղափոխական» Քեմալին:

Այդ ուղղությամբ Բաքվում եռանդուն ջանքեր գործադրեց թուրք կոմունիստական ղեկավար Մուստաֆա Սուբխին, որը կարծում էր, թե օգնություն ցույց տալ Քեմալին նշանակում է՝ Արևելքի ճնշված ժողովուրդներին օգնել ազատագրվելու իմպերիալիզմի լծից:

Ինչևէ, գունդը կազմակերպվեց, և ծրագրվեց այդ զորամասը Թուրքիա ուղարկել ոչ թե Հարավային Ադրբեջանով, այլ ուղիղ Բաքու–Նախիջևան գծով: Բայց այդ գիծն անցնում էր Ղարաբաղով ու Զանգեզուրի Գորիսի և Սիսիանի շրջաններով, այսինքն՝ հայ բնակչություն ունեցող բնակավայրերով:

Նշված վայրերով անկորուստ անցնելու համար որոշվեց զինվորական այդ միավորը մտցնել Զանգեզուրյան հարվածող խմբավորման մեջ: Գորիսի և Սիսիանի շրջանները գրավելու ընթացքում գունդը բոլշևիկյան զորքերի աջակցությամբ պետք է անցներ Նախիջևան, իսկ այնտեղից՝ Թուրքիա:

Իրենց զավթողական նպատակները հաջողությամբ քողարկող և հեղափոխական կեղծ արտահայտությունների տակ թաքնված քեմալականները ջերմորեն ողջունեցին Բաքվում թուրքական գնդի ստեղծումը և հանդերձավորումը: Մյուս կողմից՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը, անվերապահ վստահություն տածելով իրեն կոմունիստական հայտարարած թուրքական գնդի նկատմամբ, հույս ուներ, որ միանալով Քեմալին, «կարմիր ասկյարները» պատվով կկատարեն հակաիմպերիալիստական պայքարի իրենց առաքելությունը: Բաքվում գտնվող հայ կոմունիստներից շատերը նույնպես միամտաբար կարծում էին, թե թուրքական գունդը, անցնելով Անատոլիա, կռիվ է մղելու եվրոպական կապիտալի դեմ՝ հանուն երկրում

խորհրդային իշխանության հաստատման:

Համաձայնություն տալով գունդը «Թուրքական կոմունիստական գունդ» անվամբ խորհրդային զորքերի կազմում մտցնել Զանգեզուր՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը, սակայն, հիմնավորված մտավախություն ուներ, թե հայ բնակչությունը կարող է արգելք հանդիսանալ գավառի տարածքով գնդի առաջխաղացմանը դեպի Նախիջևան և Թուրքիա: Երկյուղ կար նաև, որ Զանգեզուրով անցնելիս գունդն առաջինն ինքը կարող է հայ բնակչության հետ ընդհարումների տեղիք տալ: Հաշվի առնելով թուրքերի վայրագությունների, կողոպուտների ու սպանությունների բնական մոլուցքը՝ խորհրդային կուսակցական գործիչներից և բանակի հրամանատարությունից ոմանք ընդհանրապես դեմ էին թուրքական գունդը Կարմիր բանակի զորամասերի հետ շարժելուն: Նրանք գտնում էին, որ այդ զորամասը պետք է Նախիջևան անցկացնել շտապ՝ մինչև Զանգեզուրում Կարմիր բանակի նոր, հարձակողական գործողությունների սկսելը:

Բայց այդ պահանջի կողմնակիցները հարցը կտրուկ չէին դնում՝ չբացառելով, որ եթե թուրքական գունդը խորհրդային զորամասերի հետ մտնի Զանգեզուր, բայց չմասնակցի մարտերին, ապա կարող է բարեհաջող անցնել Նախիջևան:

Հենց այդ մտադրությամբ դեռ հոկտեմբերի 30-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հարվածող խմբի ղեկավարությանը կարգադրություն արեց՝ նախքան Զանգեզուրում ռազմական գործողություններ վերսկսելը թուրքական գունդը շտապ ուղարկել Նախիջևան: Մեզ անհայտ պատճառներով այդ կարգադրությունը չկատարվեց, և «Թուրքական կոմունիստական գունդը» կամա թե ակամա հայտնվեց 11-րդ Կարմիր բանակի Զանգեզուրյան հարվածող խմբավորման կազմում:

Երբ Մոսկվայում հայտնի դարձավ այդ մասին, արտգործժողկոմ Գ. Չիչերինը կովկասյան 11-րդ բանակի հրամանատարությունից պահանջեց բացատրություն: Բանակի շտաբի պետ Պուգաչովը նոյեմբերի 2-ին Չիչերինին ուղարկեց հետևյալ հանգստացնող հեռագիրը.

«Գորիսից Անգեղակոթի և Նախիջևանի վրայով դեպի Բայազետ է ուղևորվում թուրքական կարմիր հրաձգային գունդը, որը շարժվում է թուրքական կոմունիստների բյուրոյի պնդմամբ և ռազմաճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ ընկ. Օրջոնիկիձեի համաձայնությամբ: Գունդը շարժվում է մեր վաշտի պաշտպանությամբ, որին հանձնարարված է թույլ չտալ հայերի և թուրքերի ազգային կոտորած»[1]:

Հայաստանի վրա եկող Կարմիր բանակի զորքերի կազմում մուսուլմանական զորամասեր գտնվելու մասին իր կառավարությանը բազմիցս տեղյակ էր պահել Բաքվում հայկական առաքելության ղեկավարը: Այդ տեղե-

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 150, թ. 1:

կատվությունների հիման վրա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը բողոքներ էր ներկայացրել Մոսկվա՝ Գ. Չիչերինին: Վերջինս այս կապակցությամբ նույնպես բացատրություն էր պահանջել 11-րդ բանակի հրամանատարությունից: Նշված նույն հեռագրով բանակի շտաբի պետ Պուգաչովը արտգործժողկոմի հարցումին պատասխանել էր՝ հատուկ ընդգծելով, որ «Հայկական կառավարության հայտարարությունները իրականությանը չեն համապատասխանում: Ղարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանի շրջանում գործում են միայն ռուսական զորամասեր, և մուսուլմանական զորամասերով վերջիններիս փոխարինում չի եղել: Ապստամբական բանդաները մեր դեմ զինվում են բացառապես դաշնակների կողմից: Ինչ վերաբերում է մեզ, ապա մենք չենք դիմում դաշնակների հակառակորդների՝ հայ կոմունիստների օգնությանը»[1]:

Ինչպես տեսնում ենք, բանակի շտաբի պետի՝ Չիչերինին հղած հեռագրի պնդումները հեռու էին իրականությունից:

Ինչևիցե, թուրքական գունդն արդեն Գորիսում էր, և այդ կապակցությամբ Զանգեզուրի գավառային հեղկոմը հետևյալ գրությունն ուղարկեց համապատասխան գյուղական հեղկոմներին. «Հուրախություն Զանգեզուրի, այսօր Գորիս ժամանեց տաճկական կոմունիստական գունդը: Հրամայվում է սրա համար գյուղերում ստեղծել ապրելու հարմարություններ...»[2]:

Հարվածող խմբավորման հրամանատարությունը, առանց ժամանակ կորցնելու, Կուրիշկոյի, Կուլեշովի, Ֆրոլովի և 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկու ղեկավարությամբ վերջնական տեսքի բերեց Զանգեզուրը ռազմակալելու օպերատիվ պլանը:

Հարձակման պլանի համաձայն՝ հարվածող խմբավորումը բաժանվեց չորս զորասյունի:

Առաջին զորասյունն ամբողջովին կազմված էր 28-րդ դիվիզիայի 83-րդ և 84-րդ հրաձգային բրիգադներից: Այս զորասյան հրամանատարը, բնականաբար, դիվիզիայի պետ Նեստերովսկին էր: Դիվիզիայի կազմում էին նաև մեծ թվով տաճիկ զինվորներ: Առաջին զորասյունը մարտական առաջադրանք ստացավ՝ նոյեմբերի 1-ին Գորիսից անցնել Կապանի ռազմաճակատ, հարձակման անցնել Զեյվա–Արծվանիկ ուղղությամբ և կենտրոնից զարգացնելով մարտական գործողությունները՝ գրավել Կապանի հանքերը ու ամրանալ Ողջի գետի հովտում:

Երկրորդ զորասյան կազմի մեջ մտան 18-րդ հեծյալ դիվիզիայի առաջին հեծյալ բրիգադի 103-րդ և 105-րդ հեծյալ գնդերը: Զորասյան հրամանատար նշանակվեց Մինկոն: Խնդիրն էր՝ Գորիսի շրջանի Հալիձոր գյուղի մոտից Տաթևի վրայով անցնել Մալդաշ–Վերին Խոտանան–Տանձավեր գծով, դուրս

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 150, թ. 1:

[2] **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 117:

գալ Ներքին Խոտանանի, Շհարջիկի, Աչաջուրի շրջան, ամրանալ այնտեղ, ապա առաջին զորասյան հետ համագործակցված նախապատրաստվել առաջ մղելու հարձակողական գործողություններ դեպի Կապանի հանքեր:

Երրորդ զորասյունն ամբողջովին կազմված էր 20-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադից, որի հրամանատար Վորոնովը, բնականաբար, նշանակվեց զորասյան պետ: Այս զորասյունը, Ադրբեջանի Խոջահանի կողմից մտնելով Կապանի շրջան, Ողջի գետի հոսանքն ի վեր հարձակվելով, պետք է գրավեր Թաղլու, Կարագյոլ, Կյախալի, Բեխ գյուղերը, ապա ուղղություն վերցներ դեպի Հանքեր: Մոտենալով Հանքերի շրջանին՝ զորասյունը պետք է համագործակցեր կենտրոնից՝ Արծվանիկի ուղղությամբ հարձակվող առաջին զորասյան հետ, ապա, միասնական գրոհով գրավելով Հանքերը, ամրանար Շհարջիկի տարածքներում[1]:

Չորրորդ զորասյան կազմի մեջ սկզբնական շրջանում մտավ միայն «թուրքական առաջին հրաձգային կոմունիստական գունդը»: Կուրիշկոյի՝ հոկտեմբերի 27-ի հրամանով թուրքական կարմիր գնդի առջև խնդիր էր դրված Գորիս քաղաք հասնելուց հետո հանգիստ առնել, ապա, երթի դուրս գալով, շարժվել Սիսիանի ուղղությամբ, ընթացքում գրավել Գորիսի շրջանի Յայջի գյուղը, դիմադրության հանդիպելիս մարտի մեջ մտնել և Վաղուդի–Ղարաքիլիսա–Շաքի–Անգեղակոթ–Շյուքար երթուղով ու Բիչանակի լեռնանցքով անցնել Նախիջևան՝ միանալով այնտեղ գտնվող թուրքական 9-րդ դիվիզիային[2]:

Նախորդ ծանր կռիվների փորձը ցույց էր տվել, որ խորհրդային զորքերի անհաջողության գլխավոր պատճառներից մեկը տեղանքի վատ իմացությունն է: Ահա թե ինչու Զանգեզուրյան հարվածող խմբավորման հրամանատարությունը գավառի խորհրդային իշխանություններից (որոնց ազդեցությունն այդ ժամանակ, ըստ էության, տարածվում էր միայն Գորիսի շրջանի մի մասի վրա) պահանջեց ստեղծել կոմունիստներից և համակիրներից կազմված մի նոր ջոկատ, որը զորքերի հետ պետք է մասնակցեր մարտերին, նաև առաջապահի դեր խաղար: Ջոկատը պետք է նաև հետախուզական աշխատանքներ կատարեր, զորամասերին օգներ ճիշտ կողմնորոշվելու լեռնային դժվարանց վայրերում: Արձագանքելով այդ պահանջին՝ Զանգեզուրի գավառային կոմիտեն բնակչությանը դիմեց հատուկ կոչով: Այդ կոչը արձագանք չգտավ բնակչության մեջ: Զուր չէ, որ 11-րդ բանակի շտաբի պետը Բաքվից հեռագրում էր Մոսկվա՝ Գ. Չիչերինին. «Զանգեզուրում դաշնակների իշխանությունը չի ընդունում բնակչության չնչին մասը միայն: Մի քանի անանշան խմբեր, որոնք մնացել են մեզ, բացառապես կազմված են հայ կոմու-

[1] Տե՛ս **А. Кадишев**, նշվ. աշխ., էջ 341:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 342:

նիստներից»[1]: Այդ «աննշան խմբերի» միավորումով ստեղծվեց կոմունիստական նոր ջոկատ, որի մեջ մտան 200 կոմունիստ և համակիր: Ջոկատի հրամանատար նշանակվեց Մակիչ Մաշուրյանը:

Սիսիանից Գորիս անցած կոմունիստներից և համակիրներից կազմակերպվեց մի ուրիշ ջոկատ, որի կազմ մտան տասնյակ մարդիկ: Կոմունիստներով և համակիրներով համալրվեց նաև Հալիձորում գտնվող ջոկատը: Միաժամանակ մինչև Կուրիշկոյի Գորիս ժամանելը այստեղ բոլշևիկյան զորամասերի հրամանատարները գավառային հեղկոմի հետ միջոցներ էին ձեռնարկում՝ ամենուրեք երկաթյա կարգապահություն հաստատելու համար: Դա վերաբերում էր ոչ միայն բանակին, այլև գավառի քաղաքացիական իշխանություններին, կուսակցական կազմակերպություններին ու բջիջներին, բնակչությանը:

Կապանի վրա կարմիրբանակայինների հարձակման նախօրյակին Գորիս քաղաքում տեղի ունեցան մի շարք դեպքեր, որոնցից հիշատակելի են հատկապես երկուսը:

Մոտ 100 կուբանցի կազակներ հրաժարվել էին կռվի գնալ Նժդեհի դեմ: Ի պատասխան այդ հանդուգն քայլի, այսինքն՝ զինվորական կարգապահության խախտման՝ հեղափոխական տրիբունալի որոշմամբ նրանցից մոտ 60-ը գնդակահարվեց Գորիսում:

Նշված դեպքից մի օր անց «կարմիր թատերասերները» Գորիսի թատրոնի դահլիճում կազմակերպել էին երեկույթ՝ Կուրիշկոյի և նրա հրամանատարական կազմի համար: Երբ դահլիճն արդեն լիքն էր, հանկարծ լուր էր տարածվել, թե Նժդեհը ծպտյալ մտել է քաղաք՝ անձամբ ուսումնասիրելու խորհրդային զորքերի տեղն ու դասավորությունը: Իսկույն փակվեցին դահլիճի դռներն ու պատուհանները, սկսվեց հանդիսատեսների մեկ առ մեկ խուզարկումն ու քննումը: Երեկույթը խափանվեց, բայց դրա փոխարեն իսկական իրարանցում սկսվեց քաղաքում, որտեղ ծայր առան շուրջկալներ և ձերբակալություններ:

Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո հարվածող խմբավորման հրամանատարությունը օպերատիվ պլանը իջեցրեց զորամասերին: Զորքերին Տաթևի ուղղությամբ հարձակման հրաման տրվեց հոկտեմբերի 31-ին, Կապանի վրա՝ նոյեմբերի 1-ին:

Այս մեկ օրվա տարբերությունը պայմանավորված էր նրանով, որ առաջին զորասյունը նոյեմբերի 1-ին Գորիս քաղաքից դեպի Կապան էր շարժվելու ուղիղ գծով՝ հիմնականում առաջանալով Գորիս–Հանքեր խճուղով, իսկ դարձյալ Կապան գնացող երկրորդ զորասյունը Գորիս քաղաքից նախ պետք է շարժվեր արևմուտք, անցներ շուրջ 20 կմ տարածություն, հասներ Գորիսի

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 150, թ. 1:

շրջանի Տաթև գյուղ, որի համար կպահանջվեր մի ամբողջ օր: Այդ տարածությունը անցնելուց հետո միայն երկրորդ զորասյունը կարող էր հաջորդ օրը՝ նոյեմբերի 1-ին, առաջանալ դեպի Կապան: Այլ խոսքով՝ երկու հրամաններն այնպես էին տրված, որ և՛ առաջին, և՛ երկրորդ զորասյուները Գորիսի շրջանից Կապանի շրջան մտնեն նույն օրը՝ նոյեմբերի 1-ին:

Հոկտեմբերի 31-ին Գորիսից պետք է շարժվեր նաև խմբավորման չորրորդ զորասյունը, այսինքն՝ թուրքական գունդը. այն պետք է ուղղվեր դեպի Սիսիան:

Հարձակվող խմբավորման ռազմական գործողությունը լիովին պետք է ավարտվեր երեք օրում:

11-րդ բանակի հրամանատարության նախապես հաստատված ռազմական օպերատիվ պլանի համաձայն՝ խմբավորման չորրորդ զորասյանը հրահանգ էր իջեցված դեպի Սիսիան գնալիս ամեն կերպ խուսափել զանգեզուրցիների հետ ընդհարվելուց: Բայց խմբավորման հրամանատար Պ. Կուրիշկոն Գորիս ժամանելուց անմիջապես հետո նպատակահարմար գտավ թուրքական գնդին մասնակից դարձնել ռազմական գործողություններին: Այս տեսակետը պաշտպանություն գտավ զինակից հրամանատարների մեծ մասի մոտ, ինչպես նաև հավանության արժանացավ գավառի կուսակցական և խորհրդային առանձին ղեկավար աշխատողների կողմից:

Կուրիշկոն դիմեց 11-րդ բանակի հրամանատարությանը՝ թուրքական գունդը կռվի մեջ մտցնելու առաջարկով: Բանակի հրամանատարությունը տվեց իր համաձայնությունը, որը զանգեզուրցիների համար ունեցավ ծանր հետևանքներ:

Թուրքական գունդը կռվի մեջ մտցնելու մասին որոշում ընդունելուց հետո էլ հարվածող խմբավորման հրամանատարությունը մտահոգ էր, թե դա կարող է բարդություններ ստեղծել: Հենց դրանով պետք է բացատրել, որ Կուրիշկոն թուրքական գնդի հրամանատարությանը իջեցրած հրամանում խստիվ պատվիրում էր. «Ոչ մի դեպքում ձեռք չտալ խաղաղ բնակչությանը, նրա ունեցվածքը անօրինական բռնագրավումների չենթարկել»[1]:

Ինչպես ասվեց, խմբավորման չորրորդ զորասյան (ըստ էության՝ թուրքական գնդի) առջև խնդիր էր դրված՝ մի հարվածով գրավելու Գորիս քաղաքից մոտ 20 կիլոմետր արևմուտք, Որոտան գետի խոր կիրճի փոքր մի դարավանդում ընկած սահմանակից Յայջի գյուղը: Դա հայկական ուժերի կողմից ամրացված բնակավայրերից էր, որտեղ գտնվում էր նաև նրանց ռազմամթերքի խոշոր պահեստներից մեկը: Գյուղը գրավելով՝ զորասյունը կարող էր վերահսկողություն սահմանել Որոտան գետի ձախ ափին ընկած տարածքների վրա՝ Յայջի–Դարբաս հատվածում: Ենթադրվում էր, որ մտնելով

[1] ՌՊՌԱ, ֆ. 326, ց. 1, գ. 2, թ. 5:

Սիսիանի տարածքը՝ զորասյան հիմնական ուժը կազմող թուրքական գունդը անվտանգ կանցներ այդտեղի ադրբեջանաբնակ գյուղերով, որոնց բնակիչները անհամբեր սպասում էին իրենց ցեղակիցների գալստյանը: Առաջ շարժվելով դեպի Նախիջևան՝ գունդն իր ճանապարհին դաշնակցականներից պետք է «ազատագրեր» հայկական գյուղերը:

Զգալով, որ Յայջի գյուղի գրավումը հեշտ չի լինելու՝ Պ. Կուրիշկոն կարգադրել էր չորրորդ զորասյան հետ, եթե հարկ լինի, այդ ուղղությամբ ժամանակավորապես ճակատ մտցնել նաև 18-րդ դիվիզիայի երկրորդ զորասյան մաս կազմող 105-րդ գունդը և 28-րդ դիվիզիայի 2-րդ հեծյալ գունդը:

28-րդ դիվիզիայի 2-րդ հեծյալ գնդի հրամանատարության տրամադրության տակ դրվեց նաև մարտերից երկու օր առաջ Գորիս ժամանած 360 զինվորից բաղկացած «երթային» կոչվող հեծյալ գումարտակը: Նրա մարտիկները սպիտակգվարդիական նախկին զինվորներ էին, ծառայել էին Դենիկինի կամավորական բանակում, որի ջախջախումից հետո անցել էին խորհրդային իշխանության կողմը՝ իրենց զինվորական ծառայությունը առաջարկելով նրան: Այնպես որ Զանգեզուրյան հարվածող խմբավորման հրամանատարության համար այդ հեծյալ գումարտակն այնքան էլ հուսալի զորամաս չէր:

Մի շարք զորամասերով համալրված չորրորդ զորասյունը, հոկտեմբերի 31-ի առավոտյան ժամը 8-ին Գորիս քաղաքից դուրս գալով, շարժվեց դեպի Յայջի գյուղ՝ այնտեղից Սիսիան անցնելու համար: Թուրքական գնդին կարգադրված էր դեպի Յայջի գնալ բարձրավանդակով, չթեքվել ձախ և չմտնել Խոտ, Շինուհայր, Հալիձոր, որոնք նույնպես գտնվում էին դեպի Յայջի տանող ուղղության վրա՝ Որոտանի կիրճում: Նույն ժամին Գորիս քաղաքից դուրս եկավ նաև երկրորդ զորասյունը՝ Հալիձոր–Տաթև գծով ուղղություն վերցնելով դեպի Կապան:

18-րդ հեծդիվիզիայի 1-ին բրիգադը՝ իր շտաբով և 103-րդ ու 105-րդ հեծգնդերով, ունենալով 28-րդ դիվիզիայից վերցրած մեկ լեռնային հրանոթ, շարժվեց իրեն հանձնարարած ուղղությամբ: Հասնելով Ուլու-Դաղ բարձունքին (թիվ 6698)՝ բրիգադը իրեն միացրեց արդեն այնտեղ հասած չորրորդ զորասյան թուրքական գունդը, և դրանից հետո ամբողջ մի շաբաթ երկրորդ և չորրորդ զորասյուները գործում էին համատեղ:

Հոկտեմբերի 31-ի ժամը 10-ի սահմաններում 105-րդ հեծգնդի հրամանատարության կողմից Շինուհայր գյուղի ուղղությամբ ուղարկված հետախուզող խումբը հանդիպեց 50 մարդուց բաղկացած հայկական մի ջոկի: Տեղի ունեցավ փոխհրաձգություն, որից հետո հետախուզական խումբը միացավ իր գնդին:

Երկրորդ հարվածող զորասյունը՝ 18-րդ հեծդիվիզիայի 103-րդ և 105-րդ գնդեր, ինչպես նաև թուրքական գունդ կազմով, ոչ ուժեղ փոխհրաձգությունից հետո՝ հոկտեմբերի 31-ին՝ ժամը 15-ին, գրավեց Որոտանի դարավանդ-

ներից մեկի վրա գտնվող Շինուհայր գյուղը[1]: Բրիգադը հրաման ստացավ առայժմ մնալ Շինուհայրում, իսկ գյուղում գտնվող թուրքական գնդին նույն հրամանով հանձնարարվեց ամրապնդել բրիգադի ձախ թևը:

Հեծբրիգադի այդ օրվա ամփոփագրում նշված էր, որ գյուղը գրավելու ժամանակ հայերի կորուստները կազմել են 40 մարդ, կարմիրբանակայիններինը՝ ոչ մի[2]: Նշենք, որ Շինուհայրում հայերի կորուստների թիվը բացառապես վերաբերում էր խաղաղ բնակչությանը: Հատկապես թուրք ասկյարները, հավատարիմ իրենց ազգային բնազդներին և ցեղային նկարագրին, անլուր գազանություններ գործեցին, թալանեցին գյուղը, սպանեցին անմեղ շինականների: Նրանք պղծում էին գյուղացիների ընտանեկան պատիվը, վիրավորում ազգային արժանապատվությունը, ոտքի տակ տալիս ամեն սրբություն: Թուրք հրամանատարի կարգադրությամբ՝ ասկյարները գյուղի քահանա Ստեփան Բալյանին շամփուրներով ծեծելով կիսամեռ են անում: Այդ ամենը զայրացնում է շինուհայրցի կանանց, որոնք խմբով գալիս են Գորիս և բողոքում:

Թալանը, սպանությունները, բռնաբարությունները կատարվում էին կարմիրբանակայինների աչքի առջև. նրանցից շատերը նույնպես անմասն չմնացին գործած ոճիրներից:

Թողնելով Շինուհայր գյուղը և նրան հարակից տարածքները՝ հայկական վաշտերն անցան Յայջի:

«Բնակչությունը Կարմիր բանակի հանդեպ թշնամաբար է տրամադրված»,– կարդում ենք հարվածող խմբավորման դաշտային շտաբի նոյեմբերի 1-ի օպերատիվ ամփոփագրի մեջ[3]:

Հաջորդ օրը թուրք ասկյարները, գյուղացիներից թալանած զույքը ձիերին բեռնած և իրենց ետևում շինականների տասնյակ դիակներ թողած, բարձրացան բարձրավանդակ և չորրորդ զորասյան մյուս զորամասերի հետ շարժվեցին Յայջի գյուղի վրա:

Թանձր մառախուղը պատել էր դաշտերն ու ձորերը, իսկ տեղատարափ անձրևներից առաջացած ջրափոսերն ու ցեխը դժվարացնում էին զորասյան երթը: Վերջապես հարավարևելյան կողմից մոտենալով գյուղին՝ զորասյունը՝ առաջին հեծբրիգադ և թուրքական գունդ կազմով, նոյեմբերի 1-ին՝ ժամը 19-ին, գրոհի անցավ:

Հարձակվող զորասյանն օգնում էին Քարահունջ, Խոտ, Շինուհայր և Հալիձոր գյուղերի կոմունիստները:

11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը կարևոր նշանակություն էր տալիս Յայջի գյուղի և դրան հարող տարածքների գրավմանը: Հարվածող

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 7:

[3] Տե՛ս նույն տեղում:

խմբավորման զորքերի հրամանատարին բանակի հրամանատարության տված հանձնարարականում ասված էր. «Բանակի հրամանատարը հրամայում է Ձեզ՝ անհրաժեշտ ուշադրություն դարձնել աջ թևի վրա: Բանակի շտաբին ներկայացնելիք զեկուցագրում նշեք, թե ինչպիսի ուժերով է պաշտպանվում Յայջի–Դաշթափա–Ուչթափա գիծը...»:

Յայջի գյուղի մատույցներում հարձակվողները ուժգին դիմադրության հանդիպեցին: Գյուղի պաշտպանների թիվը 900 էր՝ 700 սվին և 200 թուր. կային նաև գնդացիրներ[1]: Երկու օր անընդհատ հրաձգություն էր տեղի ունենում, գրոհներն ու հակագրոհները հաջորդում էին իրար[2]: Խմբավորման զորամասերի հարձակումները շոշափելի արդյունք չտվեցին: Վիճակը բոլշևիկների համար բարդացավ, երբ նախկին սպիտակգվարդիական զինվորներից կազմված երթային հեծյալ գումարտակը մարտերից մեկի թեժ պահին լքեց ճակատը:

18-րդ հեծդիվիզիայի՝ նոյեմբերի 1-ի ամփոփագրում նշված էր. «Հակառակորդը ցույց է տալիս ուժգին, համառ դիմադրություն, և, երկրորդ օրն է, ինչ անընդհատ մարտ է մղվում: Զորասյան մասերի կողմից կտրված են հակառակորդի նահանջի բոլոր ուղիները, բացի Յայջի գյուղի հարավային մասից՝ դեպի Որոտան գետը: Մեր կողմից կան մեծ թվով սպանվածներ և վիրավորներ»[3]:

Անընդհատ մարտեր մղող հայկական ուժերը, համալրում ստանալով, Յայջի գյուղից նոյեմբերի 2-ի առավոտյան հակահարձակման անցան Շինուհայրի ուղղությամբ և զգալի կորուստներ պատճառեցին հակառակորդին՝ իրենց հերթին տալով սպանվածներ և վիրավորներ:

18-րդ հեծդիվիզիայի նոյեմբերի 2-ի ռազմական ամփոփագրում նշված էր, թե «սպիտակ դաշնակների կազմում նկատվել են մեծ թվով դենիկինյան սպաներ և կուբանյան կազակներ»[4]:

Եղած ուժերով չկարողանալով կոտրել Յայջի գյուղի պաշտպանների հերոսական դիմադրությունը՝ երկրորդ զորասյան հրամանատարությունը Գորիս քաղաքից օգնություն խնդրեց: Նույն օրը օգնության ուղարկեց 247-րդ գունդը՝ շուրջ 300 զինվոր կազմով:

Համալրում ստանալուց հետո 1-ին հեծբրիգադը և թուրքական գունդը համատեղ ջանքերով կարողացան հայկական ուժերին ետ մղել Յայջի գյուղի հարավարևմտյան ուղղությամբ դեպի Որոտան գետը և գրավել գյուղի հյուսիսային մասը: Դիվիզիայի՝ նոյեմբերի 2-ի հիշյալ ռազմական ամփոփագրում կարդում ենք. «Մարտը շարունակվում է: Կարմիրբանակայինների և

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 7:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 144, թ. 22-ի շրջերես:

[3] Նույն տեղում, թ. 8:

[4] Նույն տեղում:

ասկյարների տրամադրությունը կայտառ է»[1]: Բայց, իրականում, կայտառ լինել չէր կարող: Անընդհատ ծանր մարտերի, հայերի համառ դիմադրության պատճառով հարվածող խմբավորման հրամանատարությունը նոյեմբերի 2-ին կարգադրեց ժամանակավորապես կանգնեցնել հարձակումը և մի քանի ժամ գրված դիրքերում մնալով, հանգստանալ[2]:

Չորրորդ զորասյան անհաջողությունների գլխավոր պատճառը հարձակվողների շարքերում թուրքական գնդի առկայությունն էր: Թուրք ասկյարներին զանգեզուրյան պաշտպանների դեմ մարտի մեջ մտցնելը բումերանգով հարվածեց հենց իրենց՝ բոլշևիկներին, գավառի նորաստեղծ խորհրդային իշխանությանը:

Կարմիր բանակի զորքերի կազմում թուրքական գնդի գտնվելը և զանգեզուրցիների դեմ նրանց համատեղ գործողությունները բնակչության մեջ զայրույթի փոթորիկ առաջացրին: Շինուհայր գյուղում ասկյարների խժդժությունների մասին նույն օրը իմացել էին Յայջի գյուղում, որտեղ գյուղացիները զանգվածաբար զենք էին վերցրել, որպեսզի թուրքական գնդին թույլ չտան մուտք գործել իրենց բնակավայրը: Թուրքական զորամասի դեմ կազմակերպված դիմադրությունը անխուսափելիորեն ուղղված էր նաև գյուղի վրա հարձակվող խորհրդային զորքերի դեմ: Յայջեցիների հերոսական դիմադրության ղեկավարներից մեկը Անդրանիկի կամավորական գնդի նախկին հարյուրապետ, Սարդարապատի ճակատամարտի հերոս, այնուհետև՝ Զանգեզուրի պաշտպանության կազմակերպիչ Արմենակ Գրիգորյանն էր, որի զինվորական տաղանդը նոր ուժով փայլատակեց իր հայրենի գյուղի պաշտպանության օրերին:

Նոյեմբերի 3-ի գիշերն անցավ հանգիստ, բայց լուսաբացին Կարմիր բանակի զորամասերը թևերից հարձակման անցան հայկական ուժերի դեմ և սլացիկ հարվածով ու շրջանցիկ անցումներով նրանց դուրս մղեցին դեպի Որոտան գետի հյուսիսարևմտյան կողմը: Կարճատև դադարից հետո թուրքական գունդը մարտ սկսեց՝ Հալիձոր–Տաթև ճանապարհին գտնվող Սատանի կամուրջը գրավելու համար:

18-րդ հեծդիվիզիայի՝ նոյեմբերի 3-ի կեսօրից հետո տված ամփոփագրում նշված էր, որ մարտերի ընթացքում հայ զինյալները տալիս են սպանվածներ, բայց ոչ ոք գերի չի հանձնվում: «Կարմիրբանակայինների և ասկյարների տրամադրությունը կայտառ է, մարտը շարունակվում է»,– համառորեն կրկնվում էր դիվիզիայի ամփոփագրում: Իրականում խորհրդային զորամասերի համար վիճակը ծանրագույններից էր: Հենց ամփոփագրի վերոհիշյալ տողերը շարադրելիս՝ կեսօրին, 105-րդ հեծգունդը կարմիրբանակայինների ու ձիերի մեծ կորուստներ տալու և մարտունակությունը լիովին

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 8:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 11:

կորցնելու պատճառով հանվեց 1-ին հեծյալ բրիգադի կազմից, տեղափոխվեց Գորիս քաղաք, որտեղից ուղարկվեց Հին Գորիս գյուղ՝ վերականգնվելու համար:

Թեև նոյեմբերի 3-ի առավոտյան կարմիրբանակայինները գրավել էին Յայջին, բայց նույն օրն իսկ՝ կեսօրին, հայկական ուժերը, հակահարձակման անցնելով, խորհրդային զորամասերին դուրս մղեցին գյուղից և նրանց ստիպում կորուստներով նահանջել 4 վերստ դեպի հյուսիս-արևելք և հարավ:

Նոր դիրքերում մարտական կարգի բերելով շարքերը՝ 103-րդ հեծբրիգադը, թուրքական գունդը և 247-րդ գնդից որպես աջակցություն եկած մեկ վաշտը (գնդի մյուս երկու վաշտերը գտնվում էին Շինուհայր գյուղում) նոյեմբերի 4-ի լուսաբացին, հյուսիսարևելյան կողմից կատարելով հաջող շրջանցում, սրընթաց հարձակումով գրավեցին Յայջի գյուղը: Հայկական ուժերը նահանջեցին երկու ուղղությամբ՝ Վաղուդի–Ղարաքիլիսա և Տաթև–Մալդաշ:

Դիվիզիայի օրվա ամփոփագրում կարդում ենք. «Յայջին մեր զորամասերի կողմից գրավելու ժամանակ բնակիչները ցույց էին տալիս համառ դիմադրություն՝ կրակելով տների պատուհաններից ու տանիքներից»[1]: Ապա՝ «103-րդ հեծգնդի կողմից Յայջի գյուղում սրի է քաշված մինչև 300 մարդ»[2]:

Այս արյունալի եղեռնագործությունը դաժանությամբ գերազանցեց Շինուհայր գյուղում թուրքական գնդի կատարած կոտորածը: Յայջիի բնակչության մյուս մասը փախավ նահանջող հայկական վաշտերի հետ:

Նախքան Յայջին գրավելը՝ նոյեմբերի 3-ին, հարվածող խմբավորման հրամանատար Կուրիշկոն և զինկոմ Կուլեշովը 11-րդ բանակի հրամանատարին Գորիս քաղաքից հեռագրով ամփոփ ներկայացրին տեղի ունեցած կռիվների մոայլ նկարագրությունը: Հեռագրում ասված էր.

«Չորսօրյա գործողությունները, կլիմայական ծանր պայմանները և բնական արգելքները պարզ ցույց են տվել, որ այդ շրջանում հեծելազորի գործողությունը միանգամայն անհնար է և անօգուտ: Կերի պակասը, դժվար հաղթահարելի լեռնային արգելքները նպաստում են ձիերի արագ անկմանը:

...103-րդ հեծգունդը, որը Յայջի գյուղի շրջանն էր մտել 336 թրով, իր ողջ կազմով փաստորեն դուրս է եկել շարքից: Ինչ գնով էլ ուզում է լինի, պետք է բարձրացնել զորամասերի մարտունակությունը: Հաստատում եմ, որ եթե գնդերը այս վիճակով թեկուզ կարճ ժամանակով մնան ինձ հանձնարարած շրջանի մարտահատվածում, ապա դրանցից կմնան միայն գնդերի համարները, և ինձ ենթակա դիվիզիան հետագա գործողությունների համար կլինի միանգամայն անմարտունակ: Զանգեզուրյան շրջանում սպիտակ-դաշնակների բանդաները կարելի է ոչնչացնել միայն ու միայն լավ զգեստավորված և

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 14:
[2] Նույն տեղում, թ. 19-20:

ոտնամաններ հագած հետևակով: Այդ փաստը հաստատվում է անմարտունակության հասած 18-րդ դիվիզիայի 1-ին հեծբրիգադի օրինակով, որի 105-րդ գունդը լիակատար պարտություն է կրել ոչ թե հակառակորդի ուժերի հարձակումից, այլ լեռնոտ բնությունից: Ելնելով վերը շարադրածից, խնդրում եմ Ձեզ լուրջ ուշադրություն դարձնել սույն զեկույցի վրա և այն չթողնել անհետևանք»[1]:

Յայջի գյուղի գրավումը խմբավորման հրամանատար Կուրիշկոյի մոտ հույս ներշնչեց, թե հայկական ուժերն այլևս ի վիճակի չեն քիչ թե շատ լուրջ դիմադրություն ցույց տալ, և իր զորամասերը բանակի հրամանատարության թիվ 03 օպերատիվ հրամանն այսուհետև կկատարեն առանց մեծ դժվարության: Նման լավատեսությամբ նոյեմբերի լույս 5-ի գիշերը նա բանակի հրամանատարին հաղորդեց. «Զեկուցում եմ, որ մեր զորքերի կողմից Յայջի գյուղը գրավելիս հակառակորդի գլխավոր ուժերը նահանջել են Տաթևի ուղղությամբ: Հակառակորդի ուժերի ոչ մեծ մասը, բաղկացած առավելապես հայ ապստամբներից, անկարգ նահանջել է Անգեղակոթի ուղղությամբ և ցրվել զանազան կողմեր՝ սարերում: Լեռներում նստած թանձր մառախուղի պատճառով անհնար է պարզել հակառակորդի ուժերը: Զանգեզուրյան հատվածի աջ թևը ապահովված է 103-րդ հեծգնդով և 247-րդ գնդով: Թուրք գունդը շարժվել է Նախիջևանի գծով: Լուրջ ուշադրություն եմ դարձնում աջ և ձախ թևերի վրա»[2]:

Յայջին գրավելուց հետո թուրքական գունդը այդ գյուղի կիրճից նոյեմբերի 6-ին բարձրացավ Եռաբլրի սարահարթ և դիրքավորվեց Դաշթափայում: Նրա առջև խնդիր էր դրված՝ ապահովելու երկրորդ զորասյան աջ թևը Եռաբլրի կողմից, ինչպես նաև նախապատրաստվելու Վաղուդի–Աղուդի–Ղարաքիլիսա–Անգեղակոթ գծով առաջ շարժվել՝ Նախիջևան անցնելու համար[3]:

Սակայն նահանջած հայկական վաշտերը և սիսիանցիների զինված ջոկատները, վերախմբավորելով իրենց ուժերը, փակել էին թուրքական գնդի առաջխաղացման ճանապարհը դեպի Սիսիան:

Թուրքերը խժդժություններ կատարեցին նաև Սիսիանի շրջանում: Գորիսի գյուղերում, իսկ այժմ էլ Սիսիանի բնակավայրերում կատարած այդ խժդժությունները բարոյական ծանր հարված հասցրին խորհրդային իշխանության գաղափարին գավառում, լրացուցիչ դժվարություններ ստեղծեցին Կարմիր բանակի զորամասերի համար: Նժդեհը և նրան հավատարիմ մարդիկ առավելագույնս օգտագործեցին 11-րդ բանակի հրամանատարության կոպիտ սխալը: Ծավալվեց հակախորհրդային ուժգին քարոզչություն:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 14-15:

[2] Նույն տեղում, էջ 24:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 33:

Նպաստավոր առիթ էր ներկայացել Նժդեհին, և նա այդ առիթը ձեռքից բաց չթողեց: Խորհրդային զորամասերի հետ թուրքական գնդի հարձակումը ներկայացվեց որպես այն բանի ապացույց, որ թուրքն ու բոլշևիկը նույնն են: Թուրքական գունդը համարելով բոլշևիկյան զորամաս՝ Նժդեհն ասում էր, որ բոլշևիկների դեմ կռվել նշանակում է կռվել թուրքի դեմ, նշանակում է պաշտպանել հայրենի օջախն ու պատիվը: Նա անցնում էր գյուղից գյուղ, կրակոտ ելույթներով զանգեզուրցիների մեջ բորբոքում ատելություն, նրանց մղում անզիջում օրհասական կռվի:

Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան) նկատել է, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսների և զինվորական բացառիկ կարողություններով օժտված հեղափոխական նշանավոր առաջնորդների փայլուն համաստեղության մեջ քիչ է թիվը նրանց, ովքեր սուր ու զենք գործածելու քաջությանը հավասար ունեն հռետորական բացառիկ տաղանդ: Այդ եզակի տաղանդն ուներ Նժդեհը, որն ընդունակ էր «խանդավառել, նույնիսկ հիպնոսացնել բազմություններ»[1], նրանց մղել զանգվածային խելահեղ ըմբոստության ու անձնազոհության:

Ուժգին քարոզչությունն իր գործը տեսավ: Թուրքական գնդի հետ բոլշևիկյան զորամասերի համագործակցության լուրը տարածվեց ողջ Զանգեզուրով:

Իրենց բողոքն անթաքույց հայտնեցին նաև գավառի կոմունիստներից շատերը, իսկ ոմանք էլ դուրս եկան կազմակերպության շարքերից: Ավելին, նրանցից մեկը՝ Տիգրան Մելիք-Շահնազարյանը, ինքնասպանություն գործեց՝ կուսակցական ընկերներին թողնելով հետեյալ նամակը.

«Ընկերնե՛ր, անձնասպանությունից առաջ գրում եմ ձեզ. խաբված ենք, խաբվա՛ծ: Ադրբեջանում, Նարիմանովից սկսած, չի եղել և չկա մի հատիկ բոլշևիկ:

Մուսավաթը հին Մուսավաթն է, որ գույնը փոխել է և մեզ խաբել: Դարձի՛ եկեք, ընկերնե՛ր, դարձի՛, քանի դեռ ուշ չէ: Ես գիտակցորեն չեմ դավաճանել հայ աշխատավորությանը, բայց անգիտակցորեն ծառայել եմ ռեակցիոն Ադրբեջանին: Ես խոստովանում եմ իմ մեղքը, թող Աստված ու պատմությունը ներեն ինձ: Մեռնում եմ...»[2]:

Ասկյարների խժդժությունները Սիսիանում վրդովմունքի նոր պայթյուններ առաջ բերեցին բնակչության տարբեր խավերում: Սիսիանը ալեկոծվեց: Գավառի բոլոր շրջաններում գյուղացիները խմբերով ներկայանում էին Նժդեհի վաշտապետերին, զենք պահանջում և մտնում դիմադրական ջոկատների մեջ, կռվում մինչև վերջին փամփուշտը, վերջին հնարավորությունը:

---

[1] «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 430:

[2] Նույն տեղում, էջ 442-443:

11-րդ բանակի 32-րդ դիվիզիայի հետախուզական բաժնի կողմից այդ օրերին կազմած մի տեղեկագրում ասվում էր, որ հայ զինվորները անմարտունակ են դառնում, երբ ստիպված են լինում կռվել ռուս կարմիրբանակայինների դեմ: Դրան հակառակ՝ նրանք թուրքական զորքերի դեմ կռվում են անզիջում, ինչպես վայել է իսկական մարտիկներին[1]:

11-րդ բանակի հրամանատարությունը թուրքական գունդը Զանգեզուրում մարտի մեջ մտցնելու մասին որոշում ընդունելիս լիովին անտեսել էր հայկական գործոնը՝ հավանաբար արբեցած իր հաղթական երթով՝ սկսած Հյուսիսային Կովկասից: Թույլ տված կոպիտ սխալը թանկ նստեց ոչ միայն բոլշևիկյան զորամասերի, այլև գավառի կոմունիստների և խորհրդային աշխատողների վրա:

Ցայջին գրավելուց հետո երկրորդ զորայունը, առանց դադար առնելու, ձեռնամուխ եղավ իր հիմնական օպերատիվ ռազմական խնդրի կատարմանը, այն է՝ Տաթև–Մալդաշ գծով անցնել Կապան և առաջին զորայան հետ մարտեր սկսել շրջանը գրավելու համար:

Նոյեմբերի 5-ին 103-րդ հեծգնդից առանձնացավ մի ջոկատ՝ նույն գնդի 2-րդ հեծելավաշտի հրամանատար Կրիվիչի գլխավորությամբ, որի նպատակն էր գործողություն սկսել Տաթև գյուղից հարավ՝ Որոտան գետի աջ ափի բարձունքները գրավելու համար:

Հալիձորի գյուղամերձ անտառների կողմից իջնելով Որոտան գետի ձախ ափի Ցաքուտ կոչվող թեքությունները՝ ջոկատն անցավ Սատանի կամուրջը և դիմացի զառիվեր, ուղղաձիգ լանջերով փորձեց բարձրանալ Տաթև գյուղի տափարակը: Նախատեսված էր գյուղի վրա գրոհել հարավից: Բայց դեռ չհասած տափարակին՝ Կրիվիչի ջոկատը հանդիպեց այնտեղ ամրացած հայերի ուժգին կրակին, ուստի կանգ առավ՝ սպասելով օգնության: Շուտով մոտեցավ 247-րդ գունդը, և երկու զորամասեր համատեղ գրոհեցին հայ պաշտպանների դիրքերը: Չնայած զգալի կորուստներին՝ նրանք, գործադրելով ձեռնառումբեր, կարողացան զանգեզուրյան պաշտպաններին դուրս մղել առաջին գծից: Հայկական ուժերը նահանջեցին, բայց անմիջապես ամրացան գյուղը արևմուտքից գոտևորող մյուս բարձունքներում: Սկսվեց ուժեղ փոխհրաձգություն: Կարմիրբանակայիններին այլևս չհաջողվեց առաջ շարժվել, և նրանք մնացին գամված Տաթևի տափարակում:

Նոյեմբերի 6-ի կեսօրին պարզ դարձավ, որ հետագա ընդհարումները ծանր են նստելու զորայան վրա: Ուստի հարձակումը դադարեցվեց, և հրամայվեց նահանջել: Սատանի կամրջով զորամասերը վերադարձան Որոտան գետի ձախ ափը:

Այսպիսով, Զանգեզուրյան հարվածող խմբավորման երկրորդ զորայունը նույնպես չկարողացավ կատարել մարտական առաջադրանքը: Նա ի վի-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 144, թ. 20:

ճակի չեղավ Տաթև–Մալդաշ–Վերին Խոտանան–Տանձավեր գծով զարգացնելու հարձակումը և Արծվանիկի տարածքում միանալու հարվածող խմբի առաջին զորասյանը[1]:

Պահեստազոր թողնելով Սատանի կամրջի մոտ՝ 247-րդ գունդը հարձակման անցավ կիրճում գտնվող Կյուրատի գյուղի վրա, որտեղ, հետախուզության տվյալներով, կային հայերի զգալի ուժեր: Այդ հատվածի հայկական հրամանատարությունը, կանխատեսելով հակառակորդի զորաշարժը, իր ուժերը կենտրոնացրեց նրա աջ թևի վրա: Զբաղեցրած բարձունքներից հայերը հրացանային և գնդացրային փոթորկալի կրակ բացեցին, ապա իրենց դիրքերից բոլոր կողմերից հակահարձակման անցան՝ նպատակ ունենալով կտրել 247-րդ հրաձգային գնդի նահանջի բոլոր ուղիներ: Հայկական վաշտերի ուժգին ճնշման տակ 247-րդ գունդը նահանջեց դեպի Սատանի կամուրջը, ուր օգնության շտապեցին 103-րդ հեծգնդի մասերը, որոնց կրակային պաշտպանության տակ, տալով շուրջ 50 սպանված, կարողացան Որոտան գետի ձախ ափով առաջանալ հյուսիսային ուղղությամբ և ամրանալ Յայջի գյուղի մոտերքում: 103-րդ գունդը մնաց տեղում՝ իր հսկողության տակ պահելով Սատանի կամուրջը[2]:

Երկրորդ զորասյան ուղեկալները նոյեմբերի 6-ի դրությամբ տեղաբաշխված էին Յայջի–Կյուրատի–Շինուհայր գծի վրա: Նոյեմբերի 7-ին զորասյունը զբաղեցնում էր բավական մեծ տարածություն Որոտան գետի հոսանքով՝ Շինուհայր գյուղից սկսած մինչև Յայջի, և ավելի հեռու՝ հյուսիսարևմտյան ուղղությամբ մինչև Եռաբլրի սարահարթի հարավային Դաշթափա սարը:

Այժմ անդրադառնանք 6 օր առաջ Կապանի շրջան գնացած Զանգեզուրյան հարվածող խմբավորման առաջին զորասյան մարտական գործողություններին:

Առաջին զորասյան զորքերը Նեստերովսկու հրամանատարությամբ նոյեմբերի 1-ին Կապանի վրա հարձակման էին անցել Շահվերդլար-Շուռնուխ-Զեյվա (Դավիթ Բեկ) գծով: Զորասյան հիմնական ուժերը 28-րդ դիվիզիայի 83-րդ և 84-րդ բրիգադներն էին:

84-րդ հրաձգային բրիգադը՝ 250-րդ, 251-րդ և 252-րդ գնդեր կազմով և 2-րդ հեծգնդից նրան փոխանցած մեկ լեռնային և մեկ դաշտային հրանոթներով, Շահվերդլարում գրաված դիրքերից շարժվելով, հոկտեմբերի 21-ին անցավ Որոտան գետի աջ ափը՝ նոյեմբերի 1-ին հարձակման անցնելու համար:

83-րդ հրաձգային բրիգադը՝ 248-րդ և 249-րդ գնդեր կազմով, հոկտեմբերի 31-ին Գորիս քաղաքից ուղղվեց Շահվերդլար գյուղի գծով, իսկ նույն բրիգադի 247-րդ հրաձգային գունդն այդ օրը Շուշիից ժամանեց Գորիս[3]: 248-րդ և

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 144, թ. 20:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 31:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 2:

249-րդ գնդերն առայժմ մնում էին Շահվերդլար–Շուռնուխ շրջանում՝ 84-րդ բրիգադի զորամասերի թիկունքի վրա հայերի հնարավոր հանկարծակի հարվածը կանխելու համար[1]:

Նոյեմբերի 2-ին Գորիսի քաղաքային հրապարակում տեղի էր ունեցել միտինգ, որին մասնակցել էին կարմիրբանակայինները, նորաստեղծ կոմունիստական ջոկատը, քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչները: Բոլշևիկ հրամանատարներից մեկն ընդունել էր կոմունիստական ջոկատի շքերթը, ապա ելույթներ էին ունեցել Արմենակ Ղարագյոզյանը, քաղաքի զինվորական կոմիսարը և ուրիշներ: Զորահանդեսից հետո կոմունիստական ջոկատը հրապարակից ուղղակի մեկնել էր Կապանի ռազմաճակատ՝ օգնելու երկրորդ զորայանը:

Կապանի շրջանում հայերի և ռուսական հարվածող խմբավորման հետախույզ խմբերի առաջին հանդիպումը տեղի ունեցավ նոյեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը: 84-րդ բրիգադի աջ զորաթևը լուսաբացին մոտեցավ Զեյվա գյուղին, ժամը 10-ին անցավ հարձակման և գրավեց այն:

Այս մասին Նժդեհը հաղորդել է Երևան՝ կառավարությանը. «Նոյեմբերի 3-ին թշնամին մեծ ուժերով (20-րդ և 28-րդ կարմիր հեծյալ բրիգադները*, Բարգյուշատի թրքությունը և 400 տաճիկ ասկյարներ՝ Ռուսաստանից բերված գերիներ, որոնց զինել են Գորիսում) կրկնեց իր հարձակումը Ղափանի հյուսիսարևելյան գյուղերի վրա»[2]:

Կարմիրբանակայինների հերթական խնդիրը Արծվանիկ գյուղի գրավումն էր, ուստի 84-րդ բրիգադը, առանց ժամանակ կորցնելու, ժամը 13-ին դուրս եկավ Զեյվայից և շարժվեց դեպի Արծվանիկ: Հայկական վաշտերը, հրամանի համաձայն, նույնիսկ Զեյվան հանձնելուց հետո չէին կրակում և խուճապահար նահանջ էին բեմադրում:

Անգամ նման պահերին Նժդեհին չէր լքում հաղթանակի հավատը: Նա համոզված էր, որ զանգեզուրցիները նորից տեր են դառնալու իրենց լեռնավայրին: Ուստի նրա միտքը զբաղված էր ոչ միայն ռազմագիտական խնդիրներով, այլև ազատագրվելիք գավառում խաղաղ աշխատանքներ ձեռնարկելու հարցերով:

Կարմիր բանակի զորամասերը նոր էին սկսել Արծվանիկի գրավման գործողությունը, երբ Նժդեհը նոյեմբերի 3-ին Գենվազից նամակ գրեց ՀՅ դաշնակցության բյուրոյին, որտեղ հստակ ներկայացնում էր իր և Զանգեզուրի ժողովրդի պահանջները:

«Առաջին. Նախիջևանը և Օրդուբադը այսօրվանից պիտի համարել մեր ստրատեգիայի ալֆան և օմեգան:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 144, թ. 5:

* Պետք է լիներ 20-րդ հեծյալ և 28-րդ հրաձգային դիվիզիաների բրիգադները:

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 5:

Երկրորդ. Բուն Զանգեզուրի գրավումը, կանոնավոր զորքերով, մոտ օրերում:

Երրորդ. Առանձին ուշադրություն Զանգեզուրի վրա, նկատի առնելով նրա՝ տնտեսապես քայքայված, անզեն և հասարակականորեն գլխատված վիճակը:

Չորրորդ. Հաշվեհարդար ժողովրդի թշնամիների հետ:

Հինգերորդ. Նախաբոլշևիկյան Զանգեզուրի պաշտոնեությունը և հրամանատարությունը ենթարկել դատի՝ հանուն արդարության և հանրապետության շահերի:

Վեցերորդ. Վարձատրություն և պատիժ: Ավելի քան մի տարվա ընթացքում համայն Զանգեզուրում տեղի չի ունեցել վարձատրության և պատժի ոչ մի դեպք: Վատերը անարգել շարունակել են իրենց կործանարար դերը, իսկ լավերը, մոռացության մատնված, աստիճանաբար՝ հուսալքվելով քաշվել են ասպարեզից:

Յոթերորդ. Ուժեղ հրամանատարություն և պաշտպանություն ապստամբ Զանգեզուրում:

Ութերորդ. Ժողովրդական վաշտապետական համակարգի օրինականացում:

Իններորդ. Տաթև-ռեզիդենցիա:

Տասներորդ. Ինձ արձակուրդ, վերականգնելու միանգամայն քայքայված առողջությունս»[1]:

Մինչ Նժդեհը առաջիկա անելիքների ծրագրեր էր մշակում, 84-րդ բրիգադի զորամասերը մոտեցան Արծվանիկ գյուղի մատույցներին:

Բրիգադի 250-րդ գունդը հարձակվում էր խճուղով, իսկ 252-րդ գունդը՝ արևմուտքից: Առաջացող զորամասերից երկու վերստ հեռավորությամբ խճուղով շարժվում էր 251-րդ գունդը՝ որպես պահեստազոր. նրան տրամադրված էր դաշտային մեկ հրանոթ: Այդ նույն ժամերին 83-րդ հրաձգային բրիգադի 248-րդ և 249-րդ գնդերը, Շահվերդլար–Շուռնուխ շրջանից դուրս գալով, հասել էին Զեյվայի տարածքները և սկսել էին կենտրոնանալ գյուղի թիվ 5822 սարի բարձունքներում:

Ժամը 14-ին խորհրդային առաջավոր զորամասերը, շփման մեջ մտնելով հայկական վաշտերի հետ, անցան գրոհի[2]: Եթե Գորիսից մինչև Արծվանիկ գյուղի բարձունքները առաջին զորասյան զորամասերը չհանդիպեցին որևէ լուրջ միջադեպի, ապա Արծվանիկում հայկական վաշտերի դիմադրությունը կատաղի բնույթ ստացավ: Գյուղը և նրա շրջակա տարածքները լավ ամրացնելով՝ Նժդեհը որոշել էր այդտեղ կանգնեցնել հակառակորդի հետագա

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 19:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 13-14:

առաջխաղացումը: Բայց այդ բանն անել չհաջողվեց. շուրջ 30 ժամ տևած դաժան մարտից հետո 84-րդ բրիգադի զորամասերը նոյեմբերի 4-ի ժամը 20-ին, ի վերջո, գրավեցին Արծվանիկ գյուղը՝ տալով մինչև 40 սպանված[1]:

Ստորև ներկայացնենք Արծվանիկի գրավման ընթացքը:

Նոյեմբերի 4-ին՝ ժամը 15-ին, 84-րդ բրիգադի զորամասերին հաջողվեց հայկական վաշտերը դուրս մղել գյուղի բարձունքներից: Նրանք սկսեցին նահանջել և ամրանալ անմիջականորեն հարավ ընկած բլուրների վրա՝ ստեղծելով բռունցք Կարմիր բանակի զորքերի ձախ թևում՝ Ուժանիս գյուղի դիմաց: Ուժեղ մառախուղի պատճառով կարմիրբանակայինների համար խիստ դժվարացավ կողմնորոշվել մարտական իրադրության մեջ, որի հետևանքով գոյամարտերի միջև կտրվեց կապը:

Ժամը 16-ին 83-րդ բրիգադի մասերը ուժերի վերախմբավորում կատարեցին Արծվանիկի բարձունքների վրա: Այդ նույն պահին հայերը, իրենց հերթին, հարձակում գործեցին Զեյվայի բարձունքների վրա, միաժամանակ թիկունքային ուղեկալ դրեցին հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ նպատակ ունենալով շրջանցել 84-րդ բրիգադի մասերը: Ուժերի վերախմբավորումից և հայկական վաշտերի հարվածը հետ մղելուց հետո 84-րդ բրիգադի 250-րդ, 251-րդ և 252-րդ հրաձգային գնդերը խճուղով շարժվեցին Արծվանիկի վրա՝ վճռական գրոհով այն գրավելու համար: Հայկական վաշտերը հարձակվող խորհրդային զորամասերին ցույց տվեցին համառ դիմադրություն, բայց վերջիններս, այնուամենայնիվ, ժամը 18-ին լեռնային մեկ հրանոթի կրակի աջակցությամբ, գրոհով գրավեցին Արծվանիկ գյուղը: Հայկական ուժերը նահանջեցին Կատարի ուղղությամբ:

Զորային հետախուզության և տեղի բնակիչների հարցաքննությունից խորհրդային հրամանատարությունը պարզեց, որ Զեյվայի բարձունքների և Արծվանիկի պաշտպանության ժամանակ հայերի ուժերը կազմել են մինչև 300 հետևակ և 100 հեծյալ[2]:

83-րդ հրաձգային բրիգադի 248-րդ գունդը նույն ժամերին ամրացավ Արծվանիկի բարձունքների հարավարևմտյան հատվածում: Նույն բրիգադի 249-րդ գունդը գտնվում էր պահեստազորում՝ Շուռնուխ գյուղում:

Արծվանիկը գրավելուն զուգընթաց և դրանից անմիջապես հետո 83-րդ և 84-րդ բրիգադների զորամասերը գրավեցին նաև Չափնի, Ընկենանց և Ալմալու գյուղերը, քանի որ բնակիչների մեծ մասը նախապես հեռացել էր անտառներն ու սարերը: Գյուղում մնացածներից շատերը, այդ թվում՝ կանայք ու երեխաներ, զոհ դարձան կարմիրբանակայինների կույր վրեժխնդրությանը[3]: Նրանք Արծվանիկում թալանեցին բոլոր տները, բռնաբարեցին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 20:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 21-23:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 18-19:

ավելի քան 30 կին: Այդ դեպքերից զրգռված՝ հայ զինյալները որոշեցին գերի չվերցնել[1]:

83-րդ բրիգադի 249-րդ գունդը, դուրս գալով Շուռնուխից, նոյեմբերի 5-ին՝ ժամը 20-ին, ժամանել էր 248-րդ գնդի զբաղեցրած հատվածի հարավային բարձունքները, որպեսզի աջակցի 84-րդ բրիգադի հարձակմանը: Սակայն հայկական զորամասերը, վերախմբավորելով իրենց ուժերը, ցույց էին տվել կատաղի դիմադրություն, ապա, անցնելով հակահարձակման, ջախջախել էին 249-րդ գունդը: 28-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարությունը 11-րդ բանակի շտաբին հաղորդում էր, որ 83-րդ բրիգադի 249-րդ գունդը նոյեմբերի 5-ին լիովին շարքից դուրս էր եկել: Մեծ էին նաև 84-րդ բրիգադի կորուստները[2]:

Հայկական վաշտերի համառ դիմադրության պատճառով զորայունն այլևս չկարողացավ առաջ շարժվել և ստիպված դադարեցրեց հարձակումը Կատարի վրա[3]՝ դրա փոխարեն ուժերը կենտրոնացնելով ճակատի աջ թևի վրա՝ հայերի հարվածն այդ կողմից չեզոքացնելու համար: Զորասյան առաջխաղացման ժամկետը սկսեց խախտվել: Որոշվեց սպասել, մինչև որ կգային և առաջին զորասյանը կմիանային արևմտյան կողմից՝ Տաթև–Մալդաշ–Վերին Խոտանան–Տանձավեր–Կապան ուղղությամբ հարձակվող երկրորդ զորասյան և արևելյան կողմից՝ Խոջահան–Ագարակ–Կապան ուղղությամբ հարձակվող երրորդ զորասյան զորամասերը:

Առաջին զորասյան զորամասերը, հիմնականում տեղաբաշխվելով Ղզլդաշի տարածքում, սպասում էին մյուս երկու զորասյուների մոտենալուն: Վերջինները հապաղում էին, իսկ ժամանակը չէր ներում: Նժդեհի զորքերը՝ փոքր ջոկատներով, հատկապես գիշերները հանկարծակի հարձակումներ էին գործում, զգալի մարդկային կորուստներ պատճառում, ապա արագորեն անհետանում աչքից: Ահա թե ինչու զորասյան հրամանատարությունը որոշեց, առանց մյուս երկու զորասյուների մոտենալուն սպասելու, սեփական ուժերով շարունակել հարձակումը Կապանի հանքերի վրա: Սակայն նոյեմբերի 6-ին վերջնականապես ի դերևս ելավ աջ ու ձախ թևերից օգնություն ստանալու հույսը, և զորասյան հրամանատարությունը, հրաժարվելով դեպի Կապանի հանքեր հարձակումը շարունակելու մտադրությունից, զորամասերին հրաման տվեց անցնել պաշտպանության:

Նժդեհը որոշեց ամենից առաջ հարվածել Զեյվա-Արծվանիկ-Բերդիկ գծի վրա ամրացված Կարմիր բանակի զորքերի Զանգեզուրյան խմբավորման առաջին զորասյանը, ջախջախել այն և գրավել ամբողջ Կապանի շրջանը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 162, թ. 8:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 146, թ. 23:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 143, թ. 1, 2, գ. 144, թ. 16-17, գ. 145, թ. 1, 2, 3:

Ռազմական հետագա գործողությունների ծրագիրը մշակելիս Նժդեհը ելնում էր իր համար բարենպաստ դրությունից: Զանգեզուրյան հարվածող խմբավորման երկրորդ և երրորդ զորասյուները, չկարողանալով կատարել իրենց մարտական առաջադրանքը և կորուստներ տալով, արդեն նահանջել էին ելման դիրքերը: Առաջին զորասյունը ռազմաճակատի կենտրոնական հատվածում մնացել էր մենակ՝ առանց թևերից սպասվելիք օգնության:

Նոյեմբերի 5-ին Գենվազից եկավ Նժդեհը և սպաներին ու վաշտապետերին թռուցիկ խորհրդակցության հրավիրելով հրամայեց անմիջապես պաշարել ու վերագրավել Ընկենանց, Չափնի և Ալմալու գյուղերը: Շատ չանցած՝ զանգվածային հարձակումով բոլշևիկյան զորամասերը դուրս մղվեցին նշված գյուղերից: Բայց առավել կարևոր խնդիրը Արծվանիկ գյուղի վերագրավումն էր, որից հետո, Նժդեհի համոզմամբ, սկսվելու էր Կարմիր բանակի գնդերի բարոյալքումը:

Նոյեմբերի 6-ի վաղ առավոտյան, ուղղություն ունենալով Արծվանիկը, Կապարգողթի վաշտերը 84-րդ բրիգադի աջ թևով ուժեղ գրոհ ձեռնարկեցին Բերդիկ բարձրությունում ամրացած 248-րդ գնդի դիրքերի վրա: Չդիմանալով ճնշմանը՝ գունդը նահանջեց հյուսիսարևմտյան ուղղությամբ: Բերդիկի վրա ամրացավ Նժդեհի վաշտերի մի մասը: Նույն ժամերին հայկական ուրիշ վաշտեր, դուրս գալով իրենց հենակետերից, հարձակում սկսեցին 84-րդ բրիգադի ձախ թևով՝ Արծվանիկից 4 վերստ հեռավորության վրա գտնվող Մոդես գյուղի կողմից՝ դարձյալ նպատակ ունենալով Արծվանիկը:

Հայերի առաջին հարվածն ընդունեցին 250-րդ հրաձգային և 2-րդ հեծյալ գնդերը: Փոխգործողությունների միջոցով այդ երկու գնդերը կարողացան համատեղ ետ մղել հայերի մի քանի գրոհները և որոշ ժամանակ իրենց ձեռքում պահել Արծվանիկից հյուսիս և արևմուտք գտնվող բարձունքները, ինչպես նաև գյուղի հյուսիսարևմտյան մասը:

Արծվանիկի աջ հատվածում կենտրոնացնելով մինչև 500 սվին և մոտ 200 թուր՝ առավոտյան ժամը 11-ին ամբողջ ճակատով հայերը հակահարձակման անցան՝ նպատակ ունենալով շրջանցել 84-րդ բրիգադի զորամասերը և անցնել նրանց թիկունքը:

Ընդամենը կես ժամում հայկական վաշտերը կարողացան Չափնի գյուղի բարձունքներից հասնել Արծվանիկի մատույցները և դուրս գալ Արծվանիկ–Զեյվա ճանապարհը[1]:

Արծվանիկում ամրացել էին 84-րդ բրիգադի 250-րդ և 252-րդ գնդերը: 250-րդ գունդը խրամատավորվել էր գյուղի հարավարևելյան, իսկ 252-րդ գունդը՝ հարավարևմտյան մասերում՝ գրավելով դեպի Կապան տանող ճանապարհի կարևոր հատվածները: Սկսվեց արյունահեղ կռիվը, որը տևեց

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 31:

ամբողջ օրը: Դիրքերը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցան: Թեև խորհրդային զորամասերը գործի էին դրել 3 հրանոթ, բայց այյևս ոչինչ չէր օգնում: Նրանք պարտվում էին: Գոռ մարտում նորանոր հերոսներ էին ծնվում, մեծ դեր էին խաղում պորուչիկ Մելիք Ղարագյոզյանը, կապիտան Նարինյանը, վաշտապետ Անդրեասը և ուրիշներ:

Կարմիր բանակի զորամասերի համար ստեղծվեց լրիվ շրջապատման ու ջախջախման իրական վտանգ: Նրանք արդեն ոչ միայն ի վիճակի չէին հարձակվել, այլև պաշտպանվել:

Հրաման տրվեց դուրս գալ Արծվանիկից որպեսզի հայերը չկարողանան շրջապատել 84-րդ բրիգադի ստորաբաժանումները: Թողնելով հրացաններ, գնդացիրներ, մեծ թվով փամփուշտներ և այլ ավար՝ 83-րդ բրիգադի զորամասերի պաշտպանությամբ 84-րդ բրիգադը քաշվեց թիվ 5823 բարձունքը: Բայց հայկական վաշտերը անշեղորեն շարունակեցին ճնշումը և Արծվանիկից 3 վերստ հյուսիս-արևելք գտնվող Վանք գյուղի շրջանում ուժգին հարված հասցնելով 84-րդ հրաձգային բրիգադին՝ այն բաժան-բաժան արեցին: Միաժամանակ ջախջախելով 248-րդ հրաձգային գնդի՝ Արծվանիկ–Զեյվա խճուղու վրա դրված պահակակետը՝ վերջնականապես կտրեցին 250-րդ և 252-րդ գնդերի նահանջի ուղիները և ելքը դեպի Զեյվա տանող ճանապարհը: Մեծ թվով սպանվածներ տալով՝ այդ գնդերի մի մասը նոյեմբերի 6-ին կարողացան ճեղքել օղակումը և ծանր մարտեր մղելով՝ նահանջեցին դեպի հյուսիս՝ Զեյվայի ուղղությամբ՝ փորձելով կապ հաստատել դիվիզիայի մյուս զորամասերի հետ: Չհասած Զեյվա՝ Արծվանիկ–Զեյվա գծում գնդերը նորից շրջապատման մեջ ընկան: Նժդեհի զորաջոկատները խրվեցին գնդերի դասավորության մեջ: Կտրված ծառերով ու գերաններով նրանք փակեցին Կարմիր բանակի գնդերի նահանջի ճանապարհները: Ավելացնենք, որ խիտ մառախուղը պատել էր սար ու ձոր՝ դժվարացնելով տեղանքում ճիշտ կողմնորոշվելը: Խոր կիրճերով ու լեռներով կտրտված ռելիեֆը միանգամայն անծանոթ էր խորհրդային զինվորներին և, ընդհակառակը, խիստ նպաստավոր՝ տեղական ուժերի համար: Առավելագույն չափով օգտագործելով տեղանքը՝ Նժդեհի գայլավաշտերին հաջողվեց ոչնչացնել կամ գերել ձորերում ու անտառներում մոլորված կարմիրբանակայիններին:

Այդ ծանրագույն պահին 84-րդ բրիգադի շրջապատման մեջ ընկած զորամասերին օգնության եկան 83-րդ բրիգադը և դիվիզիայի պահեստայինները: Նրանք հարձակվեցին Բերդիկի բարձունքում ամրացված զանգեզուրյան զորաջոկատների վրա՝ տրամաբանելով, որ Նժդեհը ստիպված կլինի 84-րդ բրիգադը շրջապատած իր ուժերի մի մասը հանել և օգնության ուղարկել Բերդիկի վրա ամրացված զորաջոկատներին: Իսկապես որ, զանգեզուրյան մի քանի ջոկատներ բաժանվեցին 84-րդ բրիգադը օղակած իրենց հիմնական ուժերից և օգնության շտապեցին Բերդիկ: 84-րդ բրիգադի օղակումը թուլացավ: Առանձին զորամասեր, ճիշտ է, բաժան-բաժան, այնուամենայնիվ, մա-

քառելով կարողացան դուրս գալ օղակումից, շարունակել դիմադրությունը՝ իրենց հետ տանելով նաև հրանոթները[1]:

11-րդ Կարմիր բանակի ամփոփագրում այդ մասին ասված էր. «11-րդ Կարմիր բանակի օպերբաժպետին, պատճենները՝ 20-28-րդ հրաձ. դիվշտաբ-պետերին: Գաղտնի: Զանգեզուրի հարվածող խմբի շտաբի օպերատիվ ամփոփումը առ 1920 թիվ 7 նոյեմբերի ժամը 12- ը: Քարտեզ 10 վերստ մի դյույմում: Քաղ. Շուշի 7-XI-20, ժ. 19:

Հարվածող զորասյուն (28-րդ հրաձ. դիվիզիա), 84-րդ բրիգադ 6/XI: Հակառակորդը 84-րդ բրիգադի (251-րդ հրաձ. և 2-րդ հեծ. գնդերը) ձախ թևին ուղղած մի հարվածով Վանքի շրջանում, Արծվանիկից 3 վերստ դեպի արևելք, իրարից անջատեց բրիգադի մասերը, կտրելով 250-րդ և 252-րդ հրաձ. գնդերի նահանջի ճանապարհը դեպի Զեյվա տանող խճուղով: Գնդերի մի մասը օղակումից դուրս է պրծել, մյուս մասի (200 սվինավոր) ճակատագիրն անհայտ է»[2]:

Հաջորդ ամփոփագրում կարդում ենք. «250-րդ և 252-րդ հրաձ. գնդերի ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ. եղած տեղեկությունների համաձայն, որոնք պաշտոնապես չեն հաստատված, գնդերը, շրջապատված լինելով, Մյուլիքաչան (Մյուլկաչան: – *Ա. Ս.*) գյուղից գնացել են դեպի արևելք՝ մահմեդական գյուղերի շրջանը: Այդ տեղեկությունները ստուգվում են: Ինչ վերաբերում է 83-րդ հրաձ. բրիգադի 243-րդ հրաձ. գնդին, ապա այն, որպես անռազմունակ միավոր, ետ է բերվում Գորիս»[3]:

Նահանջի բոլոր դառնությունները խորհրդային զորամասերի հետ կիսում էին տեղի կոմունիստական ջոկատները: Կապանի ռազմաճակատում այդ օրերին սպանվեցին կոմունիստական առանձին ջոկատի հրամանատար Մակիչ Մաշուրյանը, Քարահունջ գյուղի կոմբջջի անդամ Սահակ Ծատուրյանը և ուրիշներ:

Ետ քաշվելով Արծվանիկի հատվածից՝ կարմիրբանակայինները փորձեցին ամրանալ Զեյվայի բարձունքներում, բայց դա նրանց չհաջողվեց: Զանգեզուրյան մարտիկները, առանց դադար առնելու, հետապնդում էին բոլշևիկյան նահանջող ուժերին:

Նոյեմբերի 3-ին Արծվանիկում և շրջակա տարածքներում մղած մարտերն ավարտվել էին խորհրդային զորամասերի դառը պարտությամբ, չորս գնդերի կազմից հազիվ էր հաջողվել մի մասը փրկել[4]: Նժդեհը նոյեմբերի 8-ին Կապանի հանքերից ՀՀ զինվորական նախարարին (պատճենը՝ սպարապետին և ՀՅ դաշնակցական բյուրոյին) հաղորդում էր. «Կռիվները

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 144, թ. 25:

[2] Նույն տեղում, թ. 27-ի շրջերես:

[3] Նույն տեղում, թ. 28 շրջերես:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 146, թ. 19:

աննախընթաց համառությամբ ու կատաղությամբ տևեցին չորս օր և վերջացան թշնամու պարտությամբ: Թշնամին թողել է 250-ի չափ դիակներ, մի քանի տասնյակ գերիներ և 6 գնդացիր: Հերոսաբար ետ է շպրտել թշնամուն նաև սովամահության մատնված Գողթանը: Արագացրե՛ք Նախիջևանի գրավումը»[1]:

83-րդ բրիգադի 248-րդ և 249-րդ գնդերին օգնություն ցույց տալու նպատակով 84-րդ բրիգադի 250-րդ և 251-րդ գնդերը Զեյվայի հարավարևմտյան բարձունքներից հարձակման են անցել հայկական ուժերի դեմ, բայց չեն կարողացել իրական աջակցություն ցուցաբերել այն պատճառով, որ հայկական վաշտերը Հաջիհան սարի կողմից կատարել են խոր շրջանցում և սպառնացել շրջապատման մեջ գցել ամբողջ 83-րդ բրիգադը:

Դրանով իսկ ավարտվեցին Կապանի հանքերի շրջանը գրավելու համար առաջին զորասյան զորամասերի հարձակողական գործողությունները: Իսկ դա նշանակում էր, որ Զանգեզուրյան հարվածող խմբավորման հիմնական ուժի՝ առաջին զորասյան համար նախատեսված օպերատիվ պլանի իրագործումը ձախողվել է:

84-րդ հրաձգային բրիգադի փրկված մասերը, այն է՝ համարյա գլխովին ջախջախված 251-րդ հրաձգային գունդը, նրան հանձնված 2-րդ հեծգնդի մնացած մասը, 250-րդ գնդի մեկ վաշտը և 252-րդ գնդի կես վաշտը, ինչպես նաև 83-րդ հրաձգային բրիգադի՝ 248-րդ և 249-րդ մեծ կորուստներ կրած գնդերը, 28-րդ դիվիզիայի հրամանատարի նոյեմբերի 6-ի հրամանի համաձայն, կենտրոնացվել էին Շուռնուխ գյուղի մոտ՝ Մազրայից 4 վերստ հարավ:

84-րդ բրիգադի 250-րդ և 252-րդ գնդերը, որոնք կտրված էին մնացել Արծվանիկի շրջանում, կարողացել էին մեծ ջանքերի գնով դուրս գալ շրջապատումից և հասնել Չայզամի գետից 3-4 վերստ հարավ և Զեյվա գյուղից 4 վերստ հյուսիս գտնվող Տուրուլու թուրքական գյուղը:

Համաձայն դիվիզիայի հրամանատարի նոյեմբերի 6-ի վերոհիշյալ օպերատիվ հրամանի՝ առաջին զորասյան Շուռնուխ–Մազրա հատվածում տեղի է ունեցել 83-րդ և 84-րդ հրաձգային բրիգադների ուժերի վերախմբավորում, և նոյեմբերի 7-ին զորամասերը հյուսիսային ուղղությամբ քաշվել են դեպի Որոտան գետը[2]:

Նոյեմբերի 8-ին առաջին զորասյան զորամասերը գտնվում էին հետևյալ կետերում. 83-րդ բրիգադի 248-րդ գունդն արդեն Գորիսում էր, իսկ 84-րդ բրիգադի 250-րդ և 252-րդ գնդերը Որոտան գետի ձախ ափից շարժվել էին և գտնվում էին Գորիսի ճանապարհին: Ձախ ափին ամրանալու հրաման էր ստացել 83-րդ բրիգադի 249-րդ գունդը, որին հանձնված էր 248-րդ գնդի

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 5:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 32:

հրամկազմը և կարմիրբանակայինների որոշ մասը: Այս զորամասը դիրք էր գրավել Որոտան գետի վրա՝ Խոտ–Ալիկուլիուշաղի գյուղերի գծով՝ պաշտպանելով հարավարևմտյան ուղղությունը, հատկապես ուշադրություն դարձնելով Որոտանի գետանցումների վրա[1]: Բայց 83-րդ հրաձգային բրիգադի 249-րդ գունդը չկարողացավ ամրանալ Որոտան գետի ձախ ափին: Չկար բավարար քանակությամբ ռազմամթերք, սպառվել էր պարենը, իսկ որևէ տեղից սննդամթերք չէր ստացվում: Դրան գումարվում էին աշնանային ցուրտ ու մառախլապատ եղանակը, չդադարող անձրևները և այլ բարդություններ, որոնք անհնարին էին դարձնում խիստ լեռնոտ տեղանքում բանակելը:

Ի վիճակի չլինելով իր ձեռքում պահել այս նոր բնագիծը՝ 28-րդ դիվիզիայի 83-րդ բրիգադի 249-րդ խիստ նոսրացած գունդը հարկադրված եղավ հետևել առաջին զորասյան մյուս պարտված զորամասերին և Որոտանի ձախ ափից կիրճն ի վեր բարձրացավ Վարարակ գետի նեղ հովիտը, ապա, էլ՛ ավելի առաջանալով, ամրացավ Գորիս քաղաքում[2]:

Գործերը նույնքան անհաջող դասավորվեցին Զանգեզուրյան հարվածող խմբավորման երրորդ զորասյան համար, որը հիմնականում կազմված էր խմբավորման 20-րդ դիվիզիայի առաջին հեծյալ բրիգադից:

Նոյեմբերի 1-ին՝ կեսօրից հետո, 1-ին հեծյալ բրիգադի 1-ին հեծգունդը հրանոթային կրակի աջակցությամբ Ադրբեջանի Խոջահան գյուղի տարածքից հարձակման էր անցել Ագարակ գյուղի վրա՝ հյուսիս-արևելքից[3]: Միաժամանակ գյուղի վրա հարավային կողմից հարձակում էին սկսել 2-րդ հեծգնդի երկու հեծելավաշտ՝ նպատակ ունենալով տիրել այն լեռնապարին, որը գյուղից ձգվում էր դեպի հյուսիս-արևմուտք:

Մինչ Ագարակ գյուղի սահմանները զորասյունը համարյա ոչ մի դիմադրության չհանդիպեց: Բայց հենց այստեղ էր, որ հայկական ուժերը նախապատրաստվել էին ուժգին դիմադրության[4]: Նրանք ամրացել էին Ագարակ–Աղավյուրդ գյուղերի հատվածում, ունեին «Մաքսիմ» մակնիշի մեկ գնդացիր և 400-500 զինյալներ, որոնց մեծ մասը տեղի բնակիչներ էին:

Գյուղերը տանող մատույցները դժվարանցանելի էին, քանի որ դրանք գտնվում էին Ագարակ սարի լանջերի բարձունքներին: Տեղանքն ամրացված էր խրամատներով և քարերից պատրաստված ապաստարաններով, որոնց բազմաթիվ հրակնատները գնդակոծման տակ էին պահում շրջակա ողջ տարածությունը[5]: Սարի վրա գտնվող պաշտպանների խնդիրն էր փակել Կարմիր բանակի զորասյան նահանջի ճանապարհը դեպի Վաչագան: Նկատելով

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 35:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 32:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 12:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 35:
[5] Տե՛ս նույն տեղում, թ. 18-19:

հայկական ուժերի այդ զորաշարժը՝ 1-ին հեծբրիգադը փոխեց ուղղությունը և Ագարակի վրա հարձակումը շարունակեց Մուղանլու–Կարաբաբա գծով:

Սկսվեցին ծանր մարտեր[1]: Թանձր մառախուղը պատել էր չորսբոլորը և բարենպաստ պայման ստեղծել հայկական փոքր խմբերի հանկարծակի հարձակումների համար: Կիրճերի խոր կտրվածքները, անձրևներից գոգավորություններում գոյացած լեփ-լեցուն ջրերը, լեռներում տեղացած առատ ձյունը խորհրդային հեծելազորին հնարավորություն չէին տալիս առաջ շարժվելու: Ձյան նստվածքաշերտերի մեջ խրվում էին մարդիկ, ձիերը, գումակը: Երեք օր դոփելով տեղում և կրելով զգալի կորուստներ՝ զորասյունը հարկադրված նահանջեց և վերադարձավ Խոջահանի բազան[2]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լիովին ձախողվեց Կապանի շրջանում ռազմական գործողություններ անցկացնելու՝ Կարմիր բանակի հրամանատարության մշակած ռազմական ծրագիրը: Զանգեզուրյան հարվածող խմբավորման առաջին, երկրորդ և երրորդ զորասյուները ծանր պարտություն կրեցին:

Կապանում և Մեղրիում տարած հաղթանակը հույս ներշնչեց Գողթանի սովահար, բայց աննկուն պաշտպաններին, որ, վերջապես, անհրաժեշտ օգնություն են ստանալու Զանգեզուրից և շարունակելու են իրենց կռիվը «խորհրդայնացված» Նախիջևանի մուսուլմանական հրոսակախմբերի դեմ:

1920 թ. նոյեմբերի 4-ին Բիստ գյուղում տեղի ունեցավ հարևան երեք գյուղերի՝ Բիստի, Մեսրոպավանի և Ալահի ներկայացուցիչների ժողով: Ընդունված որոշումն անհապաղ ուղարկվեց Նժդեհին: Որոշման մեջ ասված էր. «Ժողովը աչքի առաջ ունենալով Գողթանի տագնապալից և լուրջ դրությունը, երկար ու բարակ խոսակցություններից հետո, միաձայն եկավ այն եզրակացության, որ [հետագա] ռազմական գործողությունները անպայման պետք է սկսել Գողթանում, մեր հարևան Արևիքի և Կապանի գործող ուժերի աջակցությամբ տակն ու վրա անել Օրդուբադը՝ իր շրջանի թուրք գյուղերով, և այդ բոլորը պետք է ղեկավարի հարազատ հանրապետության ներկայացուցիչ և մեր ընդհանուր հրամանատար պարոն Նժդեհը:

Ուստի սույն գրությամբ դիմում ենք մեր ընդհանուր հրամանատարին և խնդրում աչքի առաջ ունենալ Գողթանի ճգնաժամային դրությունը, օգնության գալ և, ինչ գնով ուզում է լինի, մեզ՝ գողթանցիներիս, ազատել այս անելանելի դրությունից, հավատացած լինելով, որ անտես չեք առնի մեր խնդրանքը»[3]:

Նժդեհը ստացավ գողթանցիների խնդրագիրը, բայց տվյալ պահին նրանց օգնելու հնարավորությունը նա չէր տեսնում, քանի որ առջևում

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146, թ. 20-ի շրջերես և թ. 21:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 24:

[3] Նույն տեղում, ֆ. 499, ց. 1, գ. 20, թ. 1:

Սիսիանի և Գորիսի շրջանների ազատագրման խնդիրն էր:

Նույն ժամանակ արյունահեղ կռիվներ էին ծավալվել Սիսիանի շրջանում: Մտնելով Սիսիանի տարածքը՝ խորհրդային զորքերը թուրքական գնդի հետ առաջ էին շարժվում:

Որքան թուրքական գունդը առաջանում էր դեպի Նախիջևանի սահմանը, այնքան ասկյարներն ավելի սանձարձակ էին դառնում: Նրանք Սիսիանի գյուղերում նույնպես սկսեցին թալանը: Բայց այստեղ գյուղացիների նոր կազմակերպած զինված խմբերը և զանգեզուրյան զինյալները, Սիսիանի ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանի գլխավորությամբ, ցույց տվեցին համառ դիմադրություն: Թուրք զավթիչներին հատկապես մոլեգնաբար էին խփում Ուզ և Ղարաքիլիսա գյուղերի բնակիչները:

Կռվի թեժ պահին հայ մարտիկներն օգնություն ստացան: Դեռ մի քանի ամիս առաջ՝ 1920 թ. հուլիսին՝ Գորիսը Կարմիր բանակի զորքերի կողմից գրավելու օրը, մի խումբ երիտասարդներ քաղաքից հեռացել էին դեպի Երևան, բայց ճանապարհին որոշել էին ապաստանել Մեծ Վեդիի մոտակայքում գտնվող Չիմքենդ գյուղում: Ավելի քան երեք ամիս այստեղ մնալուց հետո նրանք կազմել էին զինյալների մի խումբ, որը մեկնել էր Զանգեզուր՝ մասնակցելու ազատագրական կռիվներին: Հասնելով Սիսիան՝ խումբն իրեն դրել էր Պողոս Տեր-Դավթյանի տրամադրության տակ:

Սիսիանի տարածքով Կարմիր բանակի զորքերի առաջխաղացումը գնալով դանդաղում էր: Սարսափելի ցուրտ էր, ձյան հաստ շերտը ծածկել էր սարերն ու դաշտերը: Հայկական ջոկատները գիշերային արագ երթեր էին կատարում՝ մանևրելով անսպասելի հարձակվում էին հակառակորդի զորամասերի վրա, հանկարծակիի բերում նրանց: Տալով զգալի կորուստներ՝ ռուսական զորքը ստիպված սկսեց նահանջել դեպի Գորիս:

Թուրքական գունդը, որը, թվում էր, ուր որ է մոտենալու է Նախիջևանի սահմանին, շնչակտուր եղավ: Նոյեմբերի 5-ին Սիսիանի ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանի զորամասերը, օգտվելով մառախուղից, խելահեղ հարձակման անցան Ուզ գյուղի մոտ: Հերոսաբար էին կռվում նաև գյուղացիական նոր կազմակերպված ջոկատները և Չիմքենդից եկած գորիսեցիների խումբը: Տալով 100-ի չափ սպանված՝ թուրքերը նույնպես բռնեցին նահանջի ճանապարհը:

Այդ օրվա կատաղի կռվում Ուզ գյուղի ճակատում գլխից մահացու վիրավորվեց Պողոս Տեր-Դավթյանը, որը Զանգեզուրի պաշտպանության տաղանդավոր կազմակերպիչներից մեկն էր՝ Գարեգին Նժդեհի աջ թևը: Ժողովրդի պաշտելի հրամանատարը մահվան դեմ մաքառեց ամբողջ երկու շաբաթ, սակայն հնարավորություն չեղավ նրան հարկ եղած բժշկական օգնություն ցույց տալու, և նա վախճանվեց նոյեմբերի 20-ին: Հերոսի դին փոխադրեցին ծննդավայր Խոտանան և դեկտեմբերի 4-ին մեծ պատվով ամփոփեցին գյուղի գերեզմանատանը: Ավելի քան 60 կիլոմետր՝ Սիսիանի կենտ-

րոն Ղարաքիլիսա գյուղից մինչև Խոտանան գյուղ, հերոսի դագաղը նրա զինակիցները տարան ուսերի վրա:

Մառախլապատ եղանակը թուրքական գնդին օգնեց խույս տալ սիսիանցիների նոր հարվածներից և նահանջել Աղուդի գյուղի վերևով անցնող վայրի ճանապարհով: Հայերը կրնկակոխ հետևում էին թշնամուն: Չիմքենդցիների խումբը, անցնելով հարձակվող զորաշղթայի ձախ թևը, կրակ էր թափում թուրքերի վրա: Հակառակորդին կենտրոնից խփում էին սիսիանցիների ուժերը: Պողոս Տեր-Դավթյանին ժամանակավորապես փոխարինեց անգեղակոթցի խմբապետ Սարգիսը: Նա կռիվը վարում էր խելահեղ համարձակությամբ. ամբողջ հասակով հերոսաբար կանգնելով զորաշղթայի առաջ՝ ոգեշնչում էր դեպի թշնամին սլացող մարտիկներին: «Տղե՛րք ջան, ձեզ մատաղ, թուրքին խփեցե՛ք քաջաբար, հերիք է որքան նրան գերի մնացինք»,– բարձրաձայն գոչում էր նա՝ չմոռանալով նաև հիշոցներ ուղղել ասկյարներին: Կենտրոնից հասցրած հարվածն այնքան ուժեղ էր, որ թուրքական զորամասը բաժան-բաժան եղավ և ցրվեց աջ ու ձախ կողմերի վրա: Աջ կողմից էլ Շաղաթի գյուղացի Զախարի գլխավորած խումբն էր ուժգին գրոհով թուրքերին մղում ետ՝ դեպի ձորերը:

Նոյեմբերի 5-ի իրիկնադեմին թուրքական զորամասը բռնեց դեպի Գորիս քաղաք փախուստի ճանապարհը՝ ձյան վրա թողնելով տասնյակ դիակներ:

Ճանապարհին նորից մտնելով Յայջի՝ ասկյարները սոսկալի խժդժություններ կատարեցին, գնդակահարեցին մի քանի անմեղ գյուղացիների, թալանեցին գյուղը՝ իբրև փոխվրեժ Ղարաքիլիսայի ճակատում իրենց կրած պարտության:

Թուրքական գունդը չկարողացավ, սակայն, մտնել նահանջի ճանապարհին գտնվող մյուս գյուղը՝ Հալիձորը, քանի որ այստեղ գյուղացիներն ապստամբություն էին բարձրացրել Նժդեհի կողմից այդտեղ ուղարկված մի վաշտապետի գլխավորությամբ: Հալիձորը դարձել էր զանգեզուրյան ուժերի ամուր հենակետերից մեկը, ուստի թուրքերը բարձրացան Եռաբլրի սարահարթը և Արխաշանի բարձրավանդակով խուճապահար նահանջեցին դեպի Գորիս: Յոթնաղբյուրի մոտ մութն ընկնելու պատճառով թշնամուն հետապնդող հայկական վաշտերն ու խմբերը, չնայած սոսկալի ցրտին, հանգիստ առան: Օգտվելով դրանից՝ թուրքերը գիշերը շարունակեցին նահանջել և ծեծված ու ջարդված հասան քաղաք:

Այսպիսով, անհաջողություն կրելով Զանգեզուրի բոլոր ճակատներում՝ խորհրդային զորքերը կենտրոնացան Գորիս քաղաքում և քաղաքը շրջապատող բարձունքների վրա:

Բանակի հրամանատարության համաձայնությունը ստանալուց հետո Զանգեզուրից սկսեցին աստիճանաբար հեռանալ առավել մեծ կորուստներ տված կամ լիովին ջախջախված խորհրդային զորամասերը: Այսպես, օրինակ, 18-րդ հեծդիվիզիայի 1-ին հեծյալ բրիգադը՝ իր ողջ կազմով, նոյեմբերի

10-ին դուրս գալով Գորիսից, նոյեմբերի 11-ի երեկոյան հասավ Շուշի[1]:

Ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար նոյեմբերի 14-ին Նժդեհը Կապանի հանքերից հետևյալ վերջնագիրն ուղարկեց Գորիսում գտնվող Կարմիր բանակի զորամասերի հրամանատարությանը.

«Ղարաբաղի և Զանգեզուրի հայությունն արդեն գլխատված և տնտեսապես ու հասարակականապես քայքայված է Կարմիր բանակի ձեռքով: Ձեր զորքերի ներկայությունը Սյունիքի սահմաններում այլևս անհանդուրժելի է: Հրամայում եմ, եթե չեք ուզում 11-րդ բանակի մնացորդներն էլ կոտորածի և գերության մատնել, անմիջապես դատարկել Զանգեզուրը, հակառակ դեպքում ստիպված կլինեմ կռվով տիրելու ձեր ձեռքին գտնված երկրամասին:

Կապարգողթի
հրամանատար Նժդեհ:
Հանքեր, 14 նոյեմբերի, 1920»[2]:

Պյոտր Կուրիշկոյի գլխավորած զորքերի պարտությունից հետո հայերը մի պահ հավատացին, թե Կարմիր բանակի հրամանատարությունը հրաժարվելու է նոր հարձակումներից: Բայց նրանք սխալվեցին. բոլշևիկները տրամադիր չէին դուրս գալու Գորիսից: Կարմիր բանակի հրամանատարությունը որոշել էր արագորեն վերախմբավորել ուժերը և նորից հարձակման անցնել:

«Իմ այդ վերջնագրին,– գրել է Նժդեհը,– խորհրդային զորահրամանատարությունը պատասխանեց սրով, ուղարկելով իմ դեմ Բաքուեն հասած նոր ուժեր...»[3]:

Այս անգամ խորհրդային զորքերի հարձակումը պիտի կատարվեր նեղ ճակատով՝ բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) Շինուհայր, Հալիձոր, Յայջի գյուղերի ուղղությամբ: Այդ նպատակով ստեղծվեց հարվածող մի զորախումբ, որի կազմի մեջ մտան թուրքերի գունդը, Կուրիշկոյի ձիավոր զորամասի՝ Գորիսում մնացած ստորաբաժանումները, այդտեղ եղած 11-րդ Կարմիր բանակի ուրիշ զորախմբեր, ինչպես նաև տեղի կոմունիստական ջոկատները:

Բոլշևիկյան հրամանատարությունը մտահոգ էր. համեմատաբար քիչ ուժերով հնարավո՞ր էր հասնել հաջողության, երբ ավելի մեծ ռազմական ուժերով հոկտեմբերին և նոյեմբերի առաջին կեսին դառը պարտություն էին կրել:

Հրամանատարությունն ուներ նաև ուրիշ, ոչ պակաս տագնապալի մտահոգություն. խորհրդային զորամասերի և ադրբեջանցի թուրքերի զինված հրոսակախմբերի՝ Զանգեզուրում կրած ծանր պարտությունները բարձրաց-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 146. թ. 35:
[2] «Արնոտ գիրք», էջ 48:
[3] **Գ. Նժդեհ,** Իմ պատասխանը, էջ 41:

րել էին արցախյան հակախորհրդային և հակաադրբեջանական ուժերի մարտական ոգին, որոնք սկսել էին հարվածներ հասցնել կարմիրբանակայիններին, ադրբեջանցի թուրք ջոկատներին, խորհրդային իշխանության մարմիններին[1]: Արցախցիների նոր պոռթկման գլուխ դարձյալ կանգնած էր Թևան Ստեփանյանը:

Ապստամբական նոր ելույթները ճնշելու համար հրամանատարությունը ստիպված էր Զանգեզուրից հանել և Արցախ տեղափոխել մի շարք զորամասեր: Իրենց հերթին, զանգեզուրցիներն էլ օգնության էին գնում արցախցի ապստամբներին:

Նոյեմբերի կեսերին, այսինքն՝ Գորիսը վերագրավելուց մի քանի օր հետո, Նժդեհը, կապվելով Ղարաբաղի ընդհատակյա հայկական ուժերի ղեկավարության հետ, նրանց տվել էր հետագա գործողությունների անհրաժեշտ հրահանգներ: Այդ օրերին որոշ ցուցումներ ստանալու նպատակով Սյունիք էր անցել Թևանը: Ստանալով օգնության հավաստիացումներ՝ Թևանը վերադարձել էր Դիզակ և այնտեղից Տաթև ուղարկել երկու ներկայացուցիչ, որոնք պետք է իրենց հետ տանեին զինվորական ղեկավարներ, ռազմամթերք և մի զորամաս[2]:

Թևանն իր շուրջն էր համախմբել 100-ից ավելի կողմնակիցների, որոնց թիվն արագորեն աճում էր:

11-րդ Կարմիր բանակի շտաբի 1920 թ. դեկտեմբերի 26-ի օպերատիվ գաղտնի ամփոփագրում նշված էր. «Խուզաբյուրտի (Շուշիից 23 վերստ հարավ) շրջանում Զանգեզուրից հայտնվել է 300 հոգուց բաղկացած դաշնակցական բանդա՝ ավազակ Թևանի առաջնորդությամբ: Բանդան գործում է Խուզաբյուրտ–Թաղլար–Արաքյուլ շրջանում: Խուզաբյուրտի շրջանում Թևանը հարկադրաբար մոբիլիզացնում է տեղի բնակչությանը՝ խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար»[3]: Մի քանի օր հետո՝ դեկտեմբերի 31-ին, նույն մարմնի ամփոփագրում արդեն նշված էր. «Ջիբրայիլ–Կարյագինո շրջանում գործում է մինչև 600 հեծյալ ունեցող դաշնակցական ջոկատ, որի նպատակն է ընդհանուր ապստամբություն բարձրացնել Լեռնային Ղարաբաղում և Լիսագորսկի կողմից հարձակում գործել Շուշիի վրա, միաժամանակ նաև հարձակվել Ասկերանի և Խանքենդիի շտաբ-կայանի վրա»[4]:

Վերադառնանք Զանգեզուր: Նոյեմբերի 12-ին թուրքական գունդը, ռուսների հետ Գորիսից դուրս գալով, մտավ Եռաբլրի սարահարթը, թեքվեց ձախ՝ Շինուհայր, Հալիձոր, Յայջի գյուղերի ուղղությամբ՝ նպատակ ունենալով դրանք գրավելուց և թիկունքն անվտանգ դարձնելուց հետո գնալ Սիսիանի Ուզ և Ղարաքիլիսա գյուղերի վրա: Ճանապարհին ընկած առաջին մեծ

---

[1] Տե՛ս **Հ. Աբրահամյան**, Թևան, Երևան, 1998, էջ 8-9:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 84:

[3] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 189, թ. 6:

[4] Նույն տեղում:

խոչընդոտը Հալիձորն էր, և զորախումբը գրոհեց գյուղի վրա: Խորհրդային հրամանատարությունը նորից թույլ էր տվել աններելի արարք՝ հրահանգելով և Գորիս քաղաքում մնացած թուրք ասկյարներին երկրորդ անգամ ուղարկելով հայ բնակչության դեմ:

Կարմիր բանակի զորամասերը Հալիձորը շրջապատեցին երեք կողմից: Սկսվեց կատաղի կռիվ: Հալիձորի պաշտպաններին օգնության փութաց Տաթևի զորամասը: Թեժ կռիվը տևեց երեք օր: Բոլշևիկյան զորամասերին չհաջողվեց գրավել Հալիձորը: «Տաթևի և Գորիսի միջև,– գրել է Նժդեհը,– ...տեղի ունեցավ մեր վերջին վճռական ճակատամարտը, որի ընթացքում Կարմիր բանակը մի անգամ էլ զգաց Սյունիքի զարկերի թափը»[1]: Կարմիրբանակայինները նահանջեցին դեպի Շինուհայր և Շինուհայր–Խոտ գյուղերի դաշտամասերի հարթությունը:

Չնայած դրան՝ թուրքական գունդը, ռուսական զորամասերի պաշտպանությամբ, Եռաբլրի հարթությունով կրկին շարժվեցին Ղարաքիլիսայի վրա: Սիսիանի ապստամբական ուժերը, օգտվեց մառախուղից, չհապաղեցին թուրքերին թևանցում կատարել: Հայերի՝ երեք ժամ տևած համառ դիմադրությունից հետո թուրքերը դիմեցին անկարգ փախուստի՝ թողնելով ավելի քան 90 սպանված: Սիսիանից նահանջելիս թուրքական գունդը կրկին պաշարեց հայկական Յայջին: Գյուղացիները դիմադրեցին հերոսաբար, բայց ռազմամթերքը հատվելու պատճառով տեղի տվեցին:

Նոյեմբերի 19-ին Տաթևի և Դարաբասի ձորերից օգնություն խնդրեցին Նժդեհից: Մոտ մի հարյուրյակ ձիավորներով նույն օրը նա անցավ Տաթև:

Իրենց ձեռքին պահելով Յայջին՝ թուրքական գունդը և ռուսական զորամասերը համատեղ գործողություններ սկսեցին ապստամբ Հալիձորի դեմ: Նրանց հաջողվեց Շինուհայրի կողմից մտնել գյուղի արևելյան թաղը և կրակի տալ մեկ-երկու տուն: Ապստամբները դիմադրեցին խիզախորեն, մինչև որ նրանց օգնության եկան Տաթևի ուժերը:

Տաթևում գտնվող Նժդեհը մշակեց ռազմական գործողությունների հետագա ծրագիրը: Ըստ նրա մարտագրի՝ Սիսիանի ուժերը Ղարաքիլիսա–Գորիս խճուղով շարժվելու էին դեպի Եռաբլրի սարահարթ և լուսաբացին թշնամուն հարվածելու էին թիկունքից: Դարաբասի ուժերը գիշերով պետք է գրավեին Յայջի գյուղի թիկունքում գտնվող Խութիս կոչվող բարձունքը, իսկ Տաթևի ուժերը նույն ժամերին անցնելու էին Որոտան գետը և գրոհելու էին թշնամու կենտրոնի վրա: Իրենց հերթին Հալիձորի ապստամբները պետք է անցնեին հակահարձակման և հարվածեին թշնամու ձախ զորաթևին:

Նոյեմբերի 20-ին իրականացվեց Նժդեհի մշակած օպերացիան: Դեռ գիշերով նախապատրաստվեցին հարկավոր խմբավորումները, իսկ գործողու-

---

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 42:

թյուններն սկսվեցին լուսաբացից մի ժամ առաջ:

Լուսաբացին Խութիսի բարձունքից հայկական ուժերը առաջացան դեպի հակառակորդի դիրքերը: Նրանց զորաշղթայի կրակից և պայթուցիկներից խուճապի մատնված հակառակորդը թողեց Յայջին և քաշվեց դեպի Եռաբլրի հարթությունը, իսկ ժամը 10-ի մոտ նա թողեց նաև Հալիձորի բարձունքները:

Համարյա նույն ժամանակ Սիսիանի զինվորականությունը՝ մինչև 800 սվին, 100 թուր և 4 գնդացիր ուժով, Ղարաքիլիսայից հարձակման անցան Կարմիր բանակի զորքերի դասավորության աջ թևի վրա և գրավեցին Եռաբլուրը: Միաժամանակ սիսիանցիները հարձակվեցին 248-րդ և թուրքական գնդերի շփման եզրերի վրա և նրանց դուրս մղեցին գրաված դիրքերից[1]:

Ճակատի գիծն ուղղելուց հետո հայկական ուժերը նետվեցին առաջ: Հակառակորդը բոլոր ճիգերով դիմադրություն ցույց տվեց, որպեսզի շահի մեկ-երկու ժամ և Գորիս մտնի գիշերով: Գորիսից թուրքերին օգնության ուղարկվեց 200 հոգուց բաղկացած զորամաս, որը, սակայն, տեղ հասավ ուշացած և, դեռ մարտի մեջ չմտած, ստիպված եղավ երեկոյան կողմ նահանջել Քարահունջ գյուղ:

Վրա հասավ գիշերը: Նժդեհը հրամայեց դադարեցնել հետապնդումը և կենտրոնանալ Յայջիում ու Հալիձորում: Յայջիում տեղավորվեցին Սիսիանի և Դարաբասի, Հալիձորում՝ Կապանի և Տաթևի ուժերը:

Երբ բոլշևիկները նոր անհաջողություն էին կրել Յայջի-Հալիձոր գծի վրա ու նահանջում էին, այդ նույն ժամանակ Գորիս քաղաքը պատրաստվում էր ապստամբել: Նժդեհի ուղարկած մարդիկ արդեն անհրաժեշտ գաղտնի աշխատանքներ էին տարել և կազմ ու պատրաստ հրահանգի էին սպասում ապստամբությունը սկսելու համար:

Ապստամբության պլանի համաձայն՝ առաջինը հանդես էին գալու Գորիս քաղաքից երեք վերստ դեպի հյուսիս ընկած Վերիշեն (Հին Գորիս) գյուղի բնակիչները, որոնց ղեկավարները կապի մեջ էին ինչպես Կապանում գտնվող Նժդեհի, այնպես էլ Սիսիանի ապստամբների հետ: Վերիշենցիները պետք է ապստամբություն բարձրացնեին նոյեմբերի լույս 21-ի գիշերը, փակեին Գորիս քաղաքից դուրս եկող և քաղաքի հյուսիսային կողմն ընկած լեռնաշղթայի լանջերով դեպի Շուշի տանող խճուղին, արգելեին այդ ճանապարհով զորքերի նահանջը: Միաժամանակ նախատեսված էր, որ այդ նույն օրը՝ նոյեմբերի 21-ին, ապստամբելու էին Գորիսի քաղաքացիները, որոնց օգնության էին շտապելու Սիսիանի վաշտերը, և համատեղ ուժերով գրավելու էին քաղաքը՝ շրջապատման մեջ գցելով բոլշևիկյան ուժերին[2]:

Գորիսում գտնվող խորհրդային հրամանատարությունը հետախույզների միջոցով տեղեկություն ստացավ նախապատրաստվող ապստամբության

---

[1] Տե՛ս ՌՊՌԱ, ֆ. 1328, ց. 1, գ. 422, թ. 70:

[2] Տե՛ս «Արնոտ գիրք», էջ 49:

մասին: Հայտնի դարձավ նաև, որ Սիսիանից արդեն Վերիշեն և ոչ հեռու գտնվող Բուռուն գյուղ են թափանցել 8 մարդ, որոնք առաջադրանք ունեն այդ գյուղերում գլխավորելու ապստամբությունը:

Վերջինիս ծրագիրը խափանելու, Շուշի տանող խճուղին իր ձեռքում պահելու և հարկ եղած դեպքում դեպի Ադրբեջան զորքերի նահանջը անվտանգ կազմակերպելու համար Կարմիր բանակի հրամանատարությունը նոյեմբերի 20-ին թնդանոթներ ուղարկեց քաղաքից վերև, որոնք դիրքավորվեցին խճուղու տարբեր հատվածներում:

Նոյեմբերի 20-ին հրամանատարությունը Գորիս քաղաքից մի զորամաս ուղարկեց Վերիշեն՝ Սիսիանից եկած 8 մարդուն ձերբակալելու և նոյեմբերի 21-ին նախատեսված ապստամբությունը ձախողելու համար: Հրամանատարությունը, իհարկե, պարզ պատկերացնում էր, որ եթե ապստամբություն տեղի ունենա, և ապստամբներին հաջողվի գրավել Վերիշենի մոտով անցնող Գորիս–Շուշի խճուղին, ապա անելանելի վիճակ կստեղծվի նահանջող իր զորամասերի համար:

Բոլշևիկյան զորամասը դեռ նոր էր Գորիսից ուղղվել դեպի Վերիշեն, երբ ապստամբները՝ Վանո Խանզադյանի գլխավորությամբ, դիրքեր էին գրավել գյուղից ներքև ընկած տարածության վրա: Հանդիպելով նրանց ուժեղ կրակին՝ զորամասը մի քանի զոհեր տալուց հետո ստիպված նահանջեց քաղաք:

Լուր ստանալով Վերիշենի իրադարձությունների մասին, նույն օրը՝ նոյեմբերի 20-ին, Շինուհայր և Խոտ գյուղերից վերև գտնվող հարթության վրա խորհրդային զորամասերն ու թուրքական գունդը սկսեցին արագորեն ետ քաշվել դեպի Գորիս քաղաք:

Նոյեմբերի 20-ի երեկոյան դեմ Շինուհայր գյուղից ու Եռաբլրի հարթությունից Գորիս նահանջած ուժերը և քաղաքում գտնվող զորամասերը հրաման ստացան թողնել բուն Զանգեզուրը (Գորիսի շրջան) և նահանջել Խորհրդային Ադրբեջան: Այդ օրվա գիշերը՝ ժամը 12-ին, սկսվեց նահանջը Գորիս քաղաքից երկու գծով՝ Գորիս–Շուշի խճուղով և Հին Գորիս գյուղի միջով անցնող արահետով:

Նոյեմբերի 21-ի լուսաբացին, պայմանավորվածության համաձայն, ապստամբեցին գորիսեցիները: Նրանք դիրքեր բռնեցին Հին Գորիս գյուղից եկող ճանապարհին, որը զորքերի նահանջի ուղիներից մեկն էր, և փակեցին այն[1]: Գորիս քաղաքի ապստամբների ղեկավարներից էր Արտեմ Խանզադյանը՝ Վանո Խանզադյանի հորեղբայրը:

Գիշերը Տաթևում գտնվող Նժդեհին ներկայացան Գորիսից եկած երկու սուրհանդակ և նրան հանձնեցին մի գրություն, որում ասված էր՝ որ քաղաքն ապստամբել է, բայց հակառակորդը կարող է լուսաբացին ուժեր ստանալ, վերագրավել այն և սրի քաշել ժողովրդին: Գորիսեցիները Նժդեհին խնդրե-

[1] Տե՛ս «Արնոտ գիրք», էջ 50:

ցին առանց ուշացնելու օգնության գնալ: Հրամանատարը ոտքի հանեց վաշտերը և արագ շարժվեց դեպի Գորիս:

Գորիսից Շուշի տանող գլխավոր խճուղին արդեն Վերիշենի ապստամբների ձեռքին էր, նրանք փակել էին նաև խճուղու՝ Վարարակ գետի վրա գտնվող կամրջի մուտքը:

Այսպիսով, Գորիսից դուրս եկող նահանջի երկու գծերը գրավված էին ապստամբների կողմից: Կարմիրբանակայինները թուրքերի հետ ընկել էին աքցանի մեջ: Նրանց մի ելք էր մնում՝ ճեղքել շրջապատման օղակը, դուրս գալ Գորիս քաղաքի փոսորակից և նահանջել Ադրբեջան:

Իրենց հերթին՝ զանգեզուրյան ուժերը Եռաբլրի կողմից խուժեցին Գորիս քաղաքի տափարակը: «Իմ վաշտերը թուրքական դիակներ կոխելով մտան Գորիս»[1],– հետագայում այդպես է վերհիշել պահը Գարեգին Նժդեհը:

Սկսվեց կատաղի կռիվ քաղաքի փողոցներում և այգիներում: Կարմիրբանակայինները և թուրք ասկյարները փորձեցին Գորիսի ձորից արահետով բարձրանալ Խնձորեսկի հարթությունը: Նահանջը անկանոն ընթացք ստացավ: Մութ գիշեր ու անծանոթ վայրեր: Մի կողմից՝ Գորիս քաղաքի և Հին Գորիս գյուղի միջև հոսող Վարարակ գետը, մյուս կողմից՝ ապառաժ ժայռեր, հրացանների անընդհատ որոտ: Ասկյարներն ամենուրեք դեմ էին առնում ուժեղ կրակի: Ետ ու առաջ գնալու ճանապարհ չունենալով՝ նրանք կռվելով կոտորվում էին հատկապես քաղաքի արվարձաններում: Թուրքերի դիակները փռվել էին Գորիսից Շուշի տանող գլխավոր խճուղու՝ Վարարակ գետի վրայի կամրջից մինչև Ղուռուչայ մոտիկ սարի փեշերը: Վիրավորվել և գերի էր ընկել թուրքական գնդի հրամանատար Ջավալ փաշան: Նրա ոսկեզօծ դաշույնը, որի վրա դրվագված էին օձի, ձիու և կնոջ գլուխներ, հայ զինյալները գոտուց հանեցին, և երբ Նժդեհը մտավ Գորիս, նվիրեցին նրան:

Ոչ միայն ռուսական բանակի զինվորներն ու հրամանատարները, թուրքական գնդի ասկյարները, այլև տեղի հայ կոմունիստներն էին փախչում քաղաքից: Վերջիններս փորձ արեցին դուրս գալ ձորից Գորիս գյուղին հարող ժայռերի վրայով անցնող կածանով՝ Խաչին աղբյուրի մոտով, սակայն նրանց ճանապարհը կտրեցին դաշնակցական երիտասարդները: Սկսվեց փոխհրաձգություն, և երիտասարդները տեղի տվեցին: Ի վերջո, հայ կոմունիստների մի մասը կարողացավ նահանջել Ըրջաթի խոր-խոր ձորերով, մյուս մասը, այնուամենայնիվ, Խաչին աղբյուրի մոտով ձորից բարձրանալով, միացավ նահանջող զորամասերին:

Թե Գորիսի զինյալներն ինչու էին իրենց վրեժխնդրությունը թափում հատկապես թուրք ասկյարների վրա՝ անխնա կոտորելով նրանց, իր հասկանալի բացատրությունն ունի: Թուրքերին ոչնչացնելով՝ գորիսեցիները կարծես վրեժ էին լուծում հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի կրած

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 42:

պարտությունների, գրավված հայկական տարածքներում թուրք զինվորների կողմից կատարվող ահավոր վայրագությունների համար: Նրանք չէին մոռացել մի քանի ամիս առաջ զոհված իրենց նշանավոր հայրենակիցներ Արշակ Շիրինյանի և Վահան Խորենու հիշատակին նվիրված՝ Հայաստանի խորհրդարանի օգոստոսի 15-ի սգո նիստում Նիկոլ Աղբալյանի արտասանած խոսքերը. «Մեզ հիմա ստիպում են այս նոր օրհասական կռվի մեջ դառնալ մի քիչ ավելի մարդասպան, մի քիչ ավելի արյունարբու, մի քիչ ավելի վայրագ, մի քիչ ավելի անխիղճ: Մեզ, որ դատապարտված ենք մահվան, ուրիշ ճանապարհ չի մնում, քան սպանությանը պատասխանել սպանությամբ»[1]:

Եվ այսպես, Գորիսի ձորում թողնելով հարյուրավոր բարձած սայլեր, դաշտային խոհանոցներ, ձիեր, մեծաքանակ ռազմամթերք, ինչպես նաև մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ՝ կարմիրբանակային զորամասերի մնացյալ մասը լուսաբացին կարողացավ դուրս գալ քաղաքի հյուսիսարևելյան տափարակը և նահանջել Տեղ գյուղի ուղղությամբ:

Սիսիանի ապստամբները, որոնք գիշերը դուրս էին եկել Յայջի և Հալիձոր գյուղերից, նոյեմբերի 21-ի առավոտյան՝ ժամը 10-ին, մտան քաղաք և միանալով տեղի ապստամբ ուժերին՝ նույնպես սկսեցին հետապնդել նահանջող զորամասերին:

Գորիս քաղաքը հանձնելուց հետո նույն օրը՝ նոյեմբերի 21-ի կեսօրին, 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին իր ջախջախված զորքերի մնացած հատվածին Շուշիից իջեցրեց թիվ 37 հրամանը, որում, մասնավորապես ասված էր. «Գտնվելով մեր թիկունքում ապստամբած բնակչության հարվածի վտանգի տակ և հնարավորություն չունենալով նշված գյուղերում ճնշելու ապստամբությունը, կանխելու համար մի քանի անգամ գերազանցող հակառակորդի կողմից մեզ շրջանցելու վտանգը, դիվիզիայի զորամասերը կատաղի մարտից հետո թողել են Գորիսը և ետ քաշվել Տեղ գյուղի արևմտյան և հյուսիսարևմտյան բարձունքների դիրքերը»[2]:

Դիվիզիայի նոր դիրքերի վրա զանգեզուրյան ուժերի ճնշումը կասեցնելու, այդ ուժերի կողմից Տեղ գյուղի շրջանի գրավումը թույլ չտալու և նրանց հետագա առաջխաղացումը խափանելու համար, ինչպես նաև մինչև օգնական ուժերի գալը հակահարձակման համար ելման հարմար դիրքեր ապահովելու նպատակով Նեստերովսկին 83-րդ բրիգադի հրամանատար Լիտվինենկոյին հրամայում էր.

ա) Տեղ և Գերենզուր (Կոռնիձոր) գյուղերում թողնել ուժեղացված պահեստազոր, մտցնել խստագույն զինվորական կարգապահություն և հայ բնակչությանը չտալ ապստամբություն բարձրացնելու հնարավորություն:

---

[1] «Յառաջ», 1920, 19 օգոստոսի:

[2] ՌՊՌԱ, ֆ. 1328, ց. 1, գ. 422, թ. 70:

բ) Ուժեղացված ուղեկալներով և պահակակետերով առաջավոր բնագիծ գրավել Կազիկուրից Աղսուչայ գետի ձախ ափով մինչև Դաշքենդ գյուղը և այնուհետև մինչև թիվ 6287 բարձունքը ներառյալ:
գ) Թիվ 6287 բարձունքում տեղակայել ուղեկալ և հուսալիորեն ապահովել բրիգադի աջ թևով հակառակորդի հնարավոր շրջանցումը Հին Գորիսի հովտից, Գորիս գետի վտակի և Կազի-Գուլյակբաշի սարի թիվ 7450 բարձունքի կողմից:
դ) Ոչ մի դեպքում չթողնել նոր դիրքի գիծը: Նահանջ չպետք է լինի ոչ մի առիթով:
ե) Թուրքական գունդը պահել պահեստազորում, Տեղ գյուղում, որտեղ նրան բերել մարտունակ վիճակի և թույլ չտալ նրա կողմից ոչ մի կողոպուտ[1]:

84-րդ բրիգադի հրամանատար Սեմյոնովին կարգադրվում էր 252-րդ գունդը շտապ նախապատրաստել և օգնության ուղարկել 83-րդ բրիգադին: Այդ գունդը նոյեմբերի 23-ի ժամը 12-ից ոչ ուշ պիտի գրավեր 83-րդ բրիգադին հատկացված պաշտպանական գծի իր հատվածը[2]:

83-րդ և 84-րդ բրիգադների հրամանատարներին խստիվ հրամայված էր ամեն օր մի քանի անգամ դիվիզիայի շտաբ (Շուշի) զեկույց ուղարկել թիվ 37 հրամանի հանձնարարականների կատարման մասին[3]:

Հրամանը՝ հրաման, բայց այն կատարել էր պետք: Իսկ ծեծված ու մարտունակությունից զրկված ուժերով անհնարին էր իրագործել Շուշիից եկած հրամանները:

Կրնկակոխ հետապնդելով Կարմիր բանակի զորամասերին՝ զանգեզուրյան ուժերը նույն օրը՝ նոյեմբերի 21-ին, երկու ժամ տարբերությամբ, Տեղ գյուղի շրջանում հասան հակառակորդին և, առանց կանգ առնելու, հարձակվեցին նրա զորամասերի վրա, որոնք դեռ չէին հասցրել զորափակոց կազմել և դիրքավորվել:

Կարճատև հրաձգությունից հետո բոլշևիկյան զորամասերի մնացորդները նոյեմբերի 21-ի երեկոյան լիովին թողեցին Զանգեզուրի տարածքը և նահանջեցին Ադրբեջան՝ Զաբուղի և Ավդալարի ձորերը: 11-րդ Կարմիր բանակը ծանր պարտություն էր կրել: Շուրջ 45 օր տևած ահեղ կռիվներից հետո գավառը ազատագրվել էր կարմիրներից: «Ազատագրված՝ ցնծում է ողջ Զանգեզուրը»[4],– գրում էր Նժդեհը:

Երբ ռուսական ջախջախված զորամասերն արդեն թողել էին Զանգեզուրի սահմանները, նույն օրը՝ նոյեմբերի 21-ին, բոլշևիկներին Նժդեհը Գորի-

---

[1] Տե՛ս ՌՊՌԱ, ֆ. 1328, ց. 1, գ. 422, թ. 71:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 72:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 73:
[4] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 42:

սից նամակ ուղարկեց: Այդ նամակում նա բացատրում էր իրերի բուն վիճակն ու ժողովրդական ապստամբության պատճառները և փորձում Կարմիր բանակի հրամանատարությանը հասկացնել իր մոլորությունը: Իսկ Կարմիր բանակի հրամանատարությունը համոզված էր, որ Բաքվի ու Ադրբեջանի թուրքերը պայքարում են սոցիալիզմի համար՝ ընդդեմ իմպերիալիզմի վարձկան հայերի[1]:

Զանգեզուրյան հարվածող խմբավորման զորքերի թվում առավել մեծ կորուստներ կրել էր 28-րդ լեռնահրաձգային դիվիզիան: Այս դիվիզիայի անհաջողությունների պատճառները պարզելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար դեռևս նոյեմբերի առաջին օրերին 11-րդ բանակի հրամանատարի կարգադրությամբ ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որը, ուսումնասիրելով հարցը, ներկայացրել էր հանգամանալից զեկուցագիր: Դրա հիման վրա բանակի նոր հրամանատար նշանակված Հեկկերը, բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Միխայլովը և բանակի շտաբի նոր պետ Ռեմեզովը նոյեմբերի 22-ին իջեցրել էին թիվ 712 հրամանը: Սույնով բանակի բոլոր ստորաբաժանումների հրամանատարներին ներկայացվում էին 28-րդ դիվիզիայի պարտության պատճառները և բանակի հրամանատարության կողմից ձեռնարկած պատժամիջոցները:

Հրամանում նշվում էր, որ դիվիզիայի հրամանատարությունը չի կարողացել ճիշտ գնահատել Զանգեզուրի շրջանում ստեղծված դրությունը, ժամանակին նախազգուշական միջոցներ չի ձեռնարկել կանխելու համար ապստամբությունը, ոչինչ չի արել բնակչությանը բացատրելու խորհրդային իշխանության քաղաքականությունը: Ասված էր, որ դիվիզիայի հրամանատարը, ինչպես հարկն է, հոգ չի տարել ժամանակին ստանալու և Զանգեզուր տեղափոխելու հագուստ, կոշիկ ու սննդամթերք այն դեպքում, երբ բանակի հրամանատարության կարգադրությամբ դիվիզիային տրամադրված է եղել մոտ 18000 զույգ կոշիկ և մոտ 7000 ձեռք համազգեստ: Շեշտվում էր, որ ոչինչ չի արվել տրանսպորտի աշխատանքը կանոնավորելու համար, չնայած նրան, որ 32-րդ դիվիզիայից վերցվել և 28-րդ դիվիզիային էին տրամադրվել մեծ թվով տրանսպորտային միջոցներ: Անտարբերություն էր հանդես բերվել սանիտարական մասերի և բուժկետերի կազմակերպման ուղղությամբ: Արձանագրվել էին դեպքեր, երբ վիրավոր և հիվանդ կարմիրբանակայինները 5-7 օր շարունակ մնացել էին առանց բժշկական օգնության, առանց վիրակապերի և սննդի[2]:

Այնուհետև բանակի հրամանատարությունը ստորաբաժանումներին

---

[1] Տե՛ս **Աւ**, նշվ. աշխ., էջ 143:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 153, թ. 2:

տեղեկացնում էր, թե ինչպիսի պատիժներ է ստացել 28-րդ դիվիզիայի հրամանատարական կազմը:

Դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին ազատվել էր իր պաշտոնից և ետ կանչվել բանակի ռազմահեղափոխական խորհրդի տրամադրության տակ: Դիվիզիայի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել 84-րդ բրիգադի հրամանատար Սեմյոնովը: Պաշտոնից ազատվել էր դիվիզիայի զինվորական կոմիսար Բերեժկոն և նրա փոխարեն նշանակվել Սոկոլովը, դիվիզիայի քաղբաժնի պետ Սարանին փոխարինել էր Վայմանը, դիվիզիայի 84-րդ բրիգադի շտաբի պետ Կրուպենինը նշանակվել էր 82-րդ բրիգադի ժամանակավոր հրամանատար: Զբաղեցրած պաշտոններից հեռացվել էին դիվիզիայի մատակարարման պետ Բաուերը և մատակարարման ռազմական կոմիսար Լինը, Բաուերի փոխարեն նշանակվել էր Ադրբեջանական հրաձգային դիվիզիայի հրամանատար Կրեմլը: Դիվիզիայի սանիտարական մասի պետ Կուզնեցովը և սանմասի զինկոմ Բլլը իրենց պարտականությունները կատարելիս ժամանակին հարկ եղած միջոցներ չձեռնարկելու համար հեռացվել էին զբաղեցրած պաշտոններից և հանձնվել ռազմհեղտրիբունալի դատին[1]: Հատկապես ծանր մեղադրանքներ էին ներկայացվել 83-րդ հրաձգային բրիգադի հրամանատար Լիտվինենկոյին: Հրամանում նշված էր, որ նա անփույթ է վարել մարտական գործողությունները: Հոկտեմբերի 19-ի լույս 20-ի գիշերը Արծվանիկ գյուղի շրջանում անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել հետախուզություն կազմակերպելու համար. փոխանակ բրիգադի ձեռքն ընկած գինու մեծ քանակությունը ոչնչացնելու հրաման տալու՝ հանցավոր թողտվությամբ չի արգելել դրա գործածությունը նույնիսկ դիրքերում: Հրամանով Լիտվինենկոն հեռացվել էր պաշտոնից և հանձնվել ռազմահեղափոխական տրիբունալի դատին, իսկ նրա փոխարեն 83-րդ բրիգադի հրամանատար էր նշանակվել 246-րդ հրաձգային գնդի հրամանատար Սաբլինը: Սակայն, մինչև նրա ժամանումը կարճ ժամանակով բրիգադի հրամանատարությունը հանձնվում էր 252-րդ գնդի հրամանատար Վոյցեխովսկուն, իսկ նրան փոխարինում էր նույն գնդի հրամանատարի տեղակալ Շուդլյակը[2]:

28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին պաշտոնից հեռացվել էր նոյեմբերի 22-ին, ուստի նրա՝ մի օր առաջ՝ նոյեմբերի 21-ին, դիվիզիայի 83-րդ և 84-րդ բրիգադներին տված հրամանը կորցրել էր ուժը, մանավանդ որ այդ բրիգադների մնացյալ մասերը արդեն գտնվում էին Զանգեզուրի սահմաններից դուրս՝ Զաբուղի ձորերում, Ավդալարում, Հաքյարի գետի երկու կողմերի զառիվայրերի վրա:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 153, թ. 3:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 154, թ. 1:

28-րդ հրաձգային դիվիզիայի նոր նշանակված հրամանատար Սեմյոնովը Շուշիից՝ դիվիզիայի շտաբից, 1920 թ. նոյեմբերի 23-ին զորամասերին տվել էր թիվ 39 հրամանը, որով հայտնում էր, որ 11- րդ բանակի հրամանատարի կողմից զորքերին ս. թ. նոյեմբերի 22-ին տրված թիվ 712 հրամանի համաձայն՝ ինքը նոյեմբերի 23-ից անցնելու էր իր պարտականությունների կատարմանը:

Այնուհետև հրամանատար Սեմյոնովը 28-րդ դիվիզիայի զորամասերին առաջադրում էր նրանց օպերատիվ խնդիրները.

1. 83-րդ բրիգադի հրամանատար Վոյցեխովսկուն կարգադրվում էր գրավել հետևյալ օպերատիվ մարտական տեղամասը՝ Աղողլան գետի ձախ ափով Մորատ գյուղից Հազարի գետի հոսանքով ներքև մինչև այդ գետի միանալը Շարսու և Միլխալև գետերին: Զորամասերը բերել խիստ մարտական կարգի՝ հաստատելով ամուր, կայուն ճակատ և ամեն կերպ պահել նշված բնագիծը: Հետագա նահանջը խստիվ արգելվում էր: Մոտեցող 252-րդ հրաձգային գունդը պետք է փոխարիներ մարտական տեղամասի առավել թույլ գնդին՝ հատուկ ուշադրություն դարձնելով իր թևերի անվտանգությանը: 252-րդ հրաձգային գնդով փոխարինված նոսրացած գունդը թուրքական գնդի մնացորդների հետ քաշվում էր Ավդալար՝ բրիգադի պահեստազոր, ուր արագորեն պետք է բերվեր մարտունակության: Զանգեզուրյան ուժերի նոր հարձակման դեպքում նրանց հարվածելու համար Հաքյարի և Աղողլան գետերի զառիվայրի վրա հաստատվում էր դաշտային մարտկոցի մի վաշտ:

Ամենալուրջ ուշադրություն էր դարձվում դիվիզիայի շտաբի հետ հստակ, անխափան կապի ստեղծմանը, և այդ նպատակով Ավդալարում հաստատվում էր «Մորզե» ապարատ:

Զանգեզուրյան ուժերի թևերը, նրա խմբերի տեղը, թվաքանակը, մտադրությունները պարզելու համար հարավային, հարավարևմտյան և արևմտյան ուղղություններով պետք է կատարվեր ամենալարված ու անընդմեջ հետախուզություն՝ խափանելու համար հակառակորդի հնարավոր թևանցումը: Խնդիր էր դրվում սերտորեն կապվելու Քաչալ դաղի շրջանում և Աղօղլան գետի վերին հոսանքում գտնվող քրդական ջոկատների հետ:

2. 84-րդ բրիգադի հրամանատար Կրուպեննիկովին կարգադրվում էր անմիջապես մեկ զորամաս նետել Շուշի և պատրաստ լինել աջակցություն ցույց տալու առաջապահ զորամասերին: Հաշվի առնելով Ասկերանի շրջանում հայ բնակչության ապստամբական տրամադրությունները՝ նախատեսվում էր օգնական լրացուցիչ ուժեր ուղարկել այնտեղ տեղաբաշխված Կարմիր բանակի զորամասերին:
3. 28-րդ հեծյալ բրիգադի հրամանատար Միզյարիկովը խնդիր էր ստանում ուժեղացնելու զբաղեցրած շրջանի պաշտպանությունը, արդյու-

նավետ հետախուզություն կատարել՝ լայնորեն դիմելով գործակալների ծառայությանը՝ պարզելու համար դաշնակցական շարժման հնարավորությունը Կարյագինոյին հարող հայկական գյուղերի շրջանում: Հետախուզության կողմից ստացված բոլոր տեղեկությունների և տվյալների մասին անմիջապես պետք է զեկուցվեր դիվիզիայի շտաբ[1]:

Պաշտպանական նոր բնագծերում ամրանալու՝ խորհրդային հրամանատարության նախազգուշական միջոցներն ըմբռնելի էին և թելադրված էին ծանր պարտության հետևանքներով:

1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Զանգեզուրում ծավալված կռիվների ժամանակ Զանգեզուրյան հարվածող խմբավորման զորամասերն ունեին մոտ 8000 մարդ: Ահա այդ հզոր ուժի դեմ էին ճակատել զանգեզուրցիները: 1920 թ. հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 9-ը Սիսիանի, Կապանի, Գենվազի, Գողթանի ու Օրդուբադի ճակատների վրա նրանք ետ էին մղել 14 ուժգին գրոհներ, ինչպես նաև՝ բազում մանր հարձակումներ:

Կռիվների ընթացքում զորքերը և «հեղափոխական» թուրքերը կռվի դաշտում թողել էին մեծ թվով դիակներ*, իսկ 1600 հոգի գերի էր ընկել: Ապստամբները գրավել էին 67 գնդացիր, մոտ 400 ձի, մեծ քանակությամբ ռազմական իրեր և մթերք:

Ամբողջ կռիվների ընթացքում զանգեզուրցիները տվել էին 22 զոհ**:

Երբ Կարմիր բանակի զորամասերն անցնում էին Զանգեզուրի Քուրդիստանի տարածքով, մասնավորապես Հաջիսամլուի շրջանով, տեղի քրդերը և ադրբեջանցիները օգնություն էին ցույց տալիս նրանց, ուղեկցում հարմար վայրերով: Նոյեմբերի 21-ին ամրանալով Զաբուդ–Մարքիզ–Ավդալար շրջանում՝ զորքերը երկյուղ ունեին, թե կարող են հարձակման ենթարկվել տեղի ավազակախմբերի կողմից: Բայց այդ բանը տեղի չունեցավ: Հայտնի արյունարբու Սուլթանբեկ Մուրադովը, իրեն հայտարարելով խորհրդային իշխանության կողմնակից, կապ հաստատեց նահանջող զորքի հրամանատարության հետ, նրան տեղյակ պահեց, որ զինյալ քրդերը և ադրբեջանցիները պաշտպանելու են զորքերի նահանջի գիծը: Կատարելով իր խոստումը՝

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 154, թ. 2-4:

* Մենք այստեղ Կարմիր բանակի կորուստների մասին հստակ թիվ չենք նշում, քանի որ դեպքերին նվիրված գրականության և արխիվային փաստաթղթերի տվյալների միջև մեծ տարբերություն կա: Նժդեհի հոդվածներում և գրքերում, ինչպես նաև դաշնակցական պատմագրության մեջ Զանգեզուրում սպանված խորհրդային զինվորների և հրամանատարների թիվը հաշվվում է ավելի քան 5000 այն դեպքում, երբ 11-րդ Կարմիր բանակի զորամասերի հրամանատարների զեկուցագրերում, բանակի հրամանատարության, մասնավորապես շտաբի տեղեկագրերում այդ թիվը տատանվում է 1500-1800-ի սահմաններում, որն ակնհայտորեն նվազեցված է: Մեր հաշվումներով սպանվածների թիվը տատանվում է 2500-3000-ի միջև:

** Այս տվյալը Նժդեհինն է, որը, մեր կարծիքով, ևս խիստ նվազեցված է:

Սուլթանբեկ Մուրադովը Գորիսից 18 կիլոմետր հյուսիս-արևմուտք գտնվող Քաչալ դաղի կողմից հայերի դեմ հանեց թվով 500 հետևակ և 600 հեծյալ քրդերի, սակայն համարձակություն չունեցավ նրանց մարտի նետելու:

Քրդերի օգնությունը խորհրդային զորքերին չէր կարող վճռորոշ լինել: Փոխադրական միջոցների քայքայվածության, հատկապես ձիերի զանգվածային կորստի պատճառով դեպի Ղարաբաղ նահանջող զորքերը տանջալից դժվարություններ էին կրում: Նահանջը, փոքր բացառություններով, կատարվում էր ոտքով: Գորիս–Շուշի խճուղային ճանապարհը աշնանը տեղացած հորդ անձրևներից առաջացած հեղեղումների պատճառով գրեթե անանցանելի էր դարձել:

Զանգեզուրում 1920 թ. աշնանը խորհրդային զորքերի կրած ծանր պարտության պատճառները բազմազան էին: Այդ պատճառների թվում հատկապես առանձնանում էին մի քանիսը, որոնք և որոշեցին ռազմական գործողությունների ընթացքը և ելքը:

Ամենից առաջ նշենք, որ 11-րդ Կարմիր բանակի՝ Զանգեզուրյան հարվածող խմբավորումը ստեղծվեց մեծ շտապողականությամբ և նույնպիսի շտապողականությամբ էլ արշավանքի գնաց գավառի վրա:

Բանակի հետախուզական մարմնի անբավարար աշխատանքի հետևանքով հրամանատարությունը ճիշտ պատկերացում չուներ Զանգեզուրում տիրող իրավիճակի, հակամարտող ուժերի հարաբերակցության, զանգվածների տրամադրությունների մասին: Հրամանատարության մոտ նախապես այն կարծիքն էր ստեղծվել, որ գավառի հայկական ուժերին հաղթահարելը երեք-չորս օրվա խնդիր է: Հենց այս սխալ հաշվարկից ելնելով է, որ հրամանատարությունը հարկ չհամարեց պահեստային ուժերով ամրապնդել Զանգեզուր գնացող զորքերի թիկունքը:

1920 թ. դեկտեմբերի 20-ին 28-րդ հրաձգային դիվիզիայի նախկին հրամանատար Ն. Նեստերովսկին և կոմիսար Ռ. Բերեժկոն ծավալուն զեկուցագիր էին ներկայացրել Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ս. Օրջոնիկիձեին՝ 11-րդ բանակի հրամանատարության կողմից բանակի ստորաբաժանումներին 1920 թ. նոյեմբերի 22-ին տրված թիվ 712 հրամանի կապակցությամբ[1]: Զեկուցագրում տրված էր դիվիզիայի կրած պարտության պատճառների վերլուծությունը՝ փաստաթղթի հեղինակների տեսանկյունից: Սակայն զեկուցագրի մեջ բերված պատճառները վերաբերում էին ոչ միայն կոնկրետ այդ դիվիզիային, այլև 1920 թ. աշնան բոլոր ամիսներին 11-րդ բանակի՝ Զանգեզուրում կռիվ մղած ու պարտված բոլոր զորամասերին:

Զեկուցագրի հեղինակները վճռականորեն մերժում էին իրենց ներկայացված բոլոր հիմնական մեղադրանքները՝ նշելով, որ 28-րդ դիվիզիայի

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 163, թ. 1-8:

անհաջող գործողությունների պատճառների հիմնավորումները, որոնք արձանագրված էին հրամանի մեջ, չէին համապատասխանում իրականությանը: Նրանց կարծիքով, Զանգեզուրում 28-րդ դիվիզիայի գործողությունները ստուգելու համար նշանակված հանձնաժողովը խիստ մակերեսորեն էր ծանոթացել ռազմական գործողությունների ընթացքին և այդ իսկ պատճառով թույլ էր տվել փաստերի կոպիտ խեղաթյուրում: Փոխանակ բացահայտելու անհաջողությունների իսկական պատճառները՝ դրանք շուտափույթ վերացնելու և վիճակը շտկելու համար հանձնաժողովը զբաղվել էր երկրորդական պատճառներ որոնելով, չէր անդրադարձել կրած պարտությունների մեջ բանակի հրամանատարության ունեցած մեղքերին, որոնք շատ ավելին էին, քան դիվիզիայի հրամանատարության թույլ տված սխալներն ու բացթողումները:

Զեկուցագրում շեշտված էր, որ եթե ծանր մեղադրանք էր հարուցված 28-րդ դիվիզիայի հրամանատարությանը, ապա նման մեղադրանք պիտի հասցեագրված լիներ նաև Զանգեզուրի հարվածող խմբավորմանը, որի հրամանատար Կուրիշկոն նաև 18-րդ հեծդիվիզիայի հրամանատարն էր: Չնայած խմբավորման զորքերի թիվը 28-րդ դիվիզիայի համեմատությամբ երեք անգամ ավելի էր, բայց այն նույնպիսի ծանր պարտություն էր կրել, ինչպիսին 28-րդ դիվիզիան: Խմբավորման հրամանատարությունը ոչ միայն չէր կարողացել բարելավել դրությունը, այլև, ընդհակառակը, 28-րդ դիվիզիայի զորամասերը դրել էր էլ ավելի վատթար վիճակի մեջ: Յոթնօրյա մարտերի ընթացքում խմբավորման կազմում կռվող 28-րդ դիվիզիայի մարտիկների 3/4 մասը, բառիս իսկական իմաստով, հյուծված էր, և պետք էր զարմանալ կարմիրբանակայինների հերոսության ու բարձր գիտակցականության վրա, որ նույնիսկ այդ անտանելի պայմաններում շարունակում էին դիմադրություն ցույց տալ: Խմբավորման կազմում դիվիզիայի գործողությունը պարզորոշ ցույց էր տալիս, որ առանց գլխավոր պատճառների վերացման, ինչպես դիվիզիայի, այնպես էլ խմբավորման հրամանատարությունը անզոր էին փոխելու իրավիճակը:

Զանգեզուրյան հարվածող խմբավորման պարտության համար հրամանատար Կուրիշկոն ոչ միայն չէր պատժվել, այլև նրան չէր արվել որևէ դիտողություն, ավելին՝ ստացել էր մարտական նոր, կարևոր առաջադրանք*:

---

* Զանգեզուրից Պյոտր Կուրիշկոյի մեկնելուց հետո 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը Ադրբեջանում տեղակայված զորամասերի հաշվին համալրեց նրա 18-րդ հեծյալ դիվիզիան և այն նետեց Վրաստանի դեմ: 1921 թ. փետրվարի 17-ին, առաջանալով Սղնախի ուղղությամբ, 59-րդ հրաձգային բրիգադի զորամասերը, հաղթահարելով վրացական բանակի ամրացված դիրքերը, գրավեցին Զաքաթալայից 30 կմ հարավ-արևմուտք գտնվող Լագոդեխին, իսկ այդ նույն ժամանակ 18-րդ դիվիզիայի հեծյալները լողալով անցան Ալազան գետը և ուղղություն վերցրին դեպի Ցարսկիե Կոլոդցի՝ Զաքաթալայից 50 կմ հարավ-արևմուտք: Դիվիզիայի հրամանատար Կուրիշկոն որոշեց շրջապատել զորանոցները Ցարսկիե Կոլոդ-

Թերի համարելով 28-րդ դիվիզիայի պարտության պատճառների մասին հանձնաժողովի արձանագրած փաստարկները՝ Նեստերովսկին և Բերեժկոն նշում էին, որ իրենք մտադիր են ճիշտ լուսաբանել եղելությունը, որպեսզի բարձր հրամանատարության համար պարզ լինի անհաջողությունների պատկերը, և որպեսզի հետագայում չկրկնվեն այն սխալները, որոնք «թանկ են նստել Կարմիր բանակի վրա»:

Առանձին-առանձին մեջբերելով թիվ 712 հրամանի կետերը՝ նրանք, այնուհետև, այդ կետերի դիմաց տալիս էին իրենց բացատրությունները:

Հրամանում ասված էր, որ դիվիզիայի հրամանատարությունը, անբավարար գնահատելով Զանգեզուրի շրջանում ստեղծված ռազմական իրադրությունը, չի ձեռնարկել նախազգուշական միջոցներ՝ ապստամբական խմորումները ժամանակին կանխելու համար: Զեկուցագրի հեղինակները գրում էին, որ այդ հաստատումը իրականությանը չի համապատասխանում: 28-րդ դիվիզիայի մասերը Ղարաբաղ գալուն պես սկսել են Զանգեզուրի խորհրդայնացման համար պայքարը: Սկզբում զորամասերը գրավել են Գորիս–Անգեղակոթ–Նախիջևան խճուղու երկայնքով մի նեղ շերտ, բայց «գեներալ Դրոյի հարձակվող զորամասերի և գնդապետ Նժդեհի ուժերի ջախջախման զուգընթաց» լայնացրել են այդ շերտը, հետո գրավել նաև Կատարի շրջանը: Ըստ որում, գրված բոլոր վայրերում դիվիզիայի համապատասխան ծառայությունները աչալուրջ հետևել են, որպեսզի ժամանակին խափանեն բնակչության ապստամբական փորձերը, բայց դա չի հաջողվել, որովհետև Զանգեզուրի զգալի մասը ռազմական գործողությունների ամբողջ ժամանակահատվածում «գտնվել է Նժդեհի զինյալների ազդեցության տակ»: Բնակչության վերաբերմունքը, որ սկզբում Կարմիր բանակի հանդեպ ընդհանուր առմամբ դրական էր, գնալով օրեցօր մեծապես վատացել էր, որովհետև Ադրբեջանի կենտրոնական իշխանության, մարզային հեղկոմի և 11-րդ բանակի հրամանատարության կողմից ոչ մի միջոց չէր ձեռնարկվել չքավոր գյուղացիների, խորհրդային ծառայողների, միլիցիայի և փախստականների դրությունը բարելավելու համար: Զանգեզուրը նմանվել էր աշխարհից լիովին անջատված, լքված մի կտորի, որտեղ գտնվող 28-րդ դիվիզիայի զորամասերը ոչ միայն չէին կարողացել իրենց միջոցներով օգնել գավառին, այլև գնալով իրենց դեմ էին հանել բնակչության նորանոր շերտերի:

Հրամանում նաև արձանագրված էր, որ դիվիզիայի համապատասխան ծառայությունները բնակչության շրջանում չեն տարել անհրաժեշտ քաղաքական աշխատանք, մասնավորապես խորհրդային իշխանության գաղա-

---

ցիում, որտեղ միացել էին մենշևիկյան զորքերը, և մեծ կորուստներից խուսափելու համար դրանք գրավել գիշերը: Փետրվարի լույս 18-ի գիշերը նա հրաման է արձակել հարձակման մասին, և ինքը, 103-րդ հեծյալ գնդի 1-ին հեծելավաշտի գլուխն անցած, նետել է գրոհի և այնտեղ էլ կռվի թեժ պահին զոհվել հակառակորդի գնդակից (տե՛ս **А. Кадишев**, նշվ. աշխ., էջ 378-379):

փարների քարոզչություն: Կտրականապես մերժելով այդ մեղադրանքը՝ Նեստերովսկին ու Բերեժկոն նշում էին, որ, ընդհակառակը, Զանգեզուրի շրջանները գրավելուց հետո զորամասերի զինկոմները և դիվիզիայի քարոզչական մասի աշխատողները շատ ժամանակ են հատկացրել բնակչության շրջանում խորհրդային իշխանության գաղափարների քարոզչությանը, գավառային հեղկոմի և դիվիզիայի հրամանատարության կողմից տեղերում, առանց հետաձգելու, ստեղծվել են գյուղական հեղկոմներ, նույնիսկ կոմբջիջներ, հրավիրվել են միտինգներ, տարածվել է խորհրդային գրականություն, ցրվել են թռուցիկներ: Բայց այդ ամենը բնակչությունն ընկալել է որպես խոսքեր, քանի որ ո՛չ Բաքվի, ո՛չ բանակի և ո՛չ էլ գավառի իշխանությունների կողմից ոչինչ չի արվել, որպեսզի կոնկրետ գործերով նրանց ցույց տրվի խորհրդային իշխանության գերազանցությունը մինչ այդ եղած իշխանության համեմատությամբ: Խոսքից բացի՝ անհրաժեշտ է եղել նաև գործ, սակայն կենտրոնի կողմից միայն մի անգամ, այն էլ 4-5 ամիս հետո է ուշադրություն հատկացվել Զանգեզուրին, որն արտահայտվել է միայն «գյուղացու շաբաթ» անցկացնելու ժամանակավրեպ ձևով, քանի որ ամբողջ Զանգեզուրն արդեն ապստամբել էր, և հեղկոմների մի մասն անցել էր ապստամբների կողմը:

28-րդ դիվիզիայի հրամանատարը և զինվորական կոմիսարը մերժում էին նաև հանձնաժողովի զեկուցագրում արձանագրված ուրիշ մեղադրանքներ: Նրանք միաժամանակ տեղեկացնում էին Ս. Օրջոնիկիձեին, որ իրենք բանակի հրամանատարության կողմից ուղարկված հանձնաժողովի անդամներին Գորիսում առաջարկել են մեկնել Արծվանիկի ճակատ, տեղում ծանոթանալ ռազմական գործողություններին, որպեսզի հնարավոր լինի ճիշտ պատկերացում կազմել իրավիճակի մասին, բայց նրանք հրաժարվել են մեկնել:

Նեստերովսկին և Բերեժկոն Ս. Օրջոնիկիձեին զեկուցում էին, որ դիվիզիայի պահանջների մասին իրենք ժամանակին հայտնել են բանակի շտաբին, բայց իրենց զեկուցագրերը միշտ անհետևանք են մնացել, և հենց բանակի հրամանատարությունն է պատասխանատու Զանգեզուրում գտնվող զորամասերի թիկունքի անմխիթար վիճակի համար: Ուստի նրանք գտնում էին, որ անհաջողությունների իսկական պատճառները բացահայտելու խնդրով նպատակահարմար է, որ զբաղվի ոչ թե բանակի, այլ ռազմաճակատի հրամանատարությունը՝ հետաքննության համար ուղարկելով իր հանձնաժողովը:

Վերջում Նեստերովսկին և Բերեժկոն Սերգո Օրջոնիկիձեին խնդրում էին՝ նկատի ունենալով անցյալի իրենց մարտական ծառայությունները, արդարացնել և վերականգնել իրենց նախկին հեղինակությունը և հնարավորություն տալ աշխատելու նոր եռանդով: Հեղափոխության գործին իրենց նվիրվածությունը կրկին ցույց տալու համար նրանք խնդրում էին նաև իրենց

հանել 11-րդ բանակի շարքերից և ուղարկել ցանկացած ռազմաճակատ[1]:

Ն. Նեստերովսկու ու Ռ. Բերեժկոյի զեկուցագրում, արխիվային ուրիշ փաստաթղթերում նույնպես բերված են Զանգեզուրում կարմիրբանակային զորամասերի ծանր պարտության ուրիշ պատճառներ:

1. Ռազմական գործողությունների ընթացքի վրա խիստ բացասաբար էր անդրադարձել անհրաժեշտ փոխադրական միջոցների պակասը: Գրավված վայրերում մթերվում էր պարենի և անասնակերի 40-50%, իսկ մնացածը պետք է լրացվեր Եվլախ կայարանից: Բայց փոխադրամիջոցները չէին բավականացնում այդ խնդիրը կատարելու համար: Դաշտային աշխատանքների ժամանակ գյուղացիները հրաժարվում էին Կարմիր բանակի զորամասերին գրաստներ ու սայլեր տրամադրելուց, մյուս կողմից՝ տրանսպորտային եղած սուղ միջոցները շարքից արագ դուրս էին գալիս հաղորդակցական գծերի երկար լինելու և չափից ավելի լարված փոխադրումների պատճառով: Տրանսպորտային գումակների ցածր արդյունավետության մասին է վկայում հետևյալ փաստը. սեպտեմբերին բանակի հրամանատարությունը 28-րդ դիվիզիային տրամադրեց 32-րդ դիվիզիայի ոչ մեծ տրանսպորտը, որը, սակայն, տեղ չհասավ, ավելին՝ այն նույնիսկ ի վիճակի չեղավ ինքն իրեն կերակրելու և ի վերջո ետ կանչվեց իր զորամաս:

Զանգեզուրում գտնվող զորքերի հրամանատարներն ամռան ամիսներին բանակի ղեկավարությունից պահանջել էին Եվլախ–Աղդամ շրջան բերել ավտոտրանսպորտ և ուրիշ անվավոր փոխադրամիջոցներ, բայց բոլոր խնդրանքները մնացել էին անհետևանք: Եվ երբ արդեն վրա էին հասել անձրևախառն, ձյունոտ եղանակները, երբ մթերքի և կերի պակասը դարձել էր ճգնաժամային, այն ժամանակ միայն բանակի հրամանատարությունը Զանգեզուր էր ճամփել 8 բեռնատար ավտոմեքենա, որոնք երկար ժամանակ մնացել էին Բարդայի և Աղդամի միջև ընկած ճանապարհներին, իսկ երբ, վերջապես, ճանապարհ էին ընկել, չէին կարողացել արագ շարժվել, քանի որ Եվլախ–Գորիս խճուղին քայքայվել և շարքից դուրս էր եկել: 28-րդ դիվիզիային տրամադրված 100 կառքերը ձիերի բացակայության պատճառով մի կողմ էին ընկած: Հատկանշական է նաև, որ հարվածող խմբի հրետանավորները, կանգ առնելով Գորիս քաղաքից հինգ կիլոմետրի վրա, մի քանի օր մատնվել էին անգործության, որովհետև չէին կարողանում հրանոթները առաջ մղել լծկաններ չլինելու պատճառով[2]:

2. Անհոգություն էր դրսևորվել զորքերին պարենով ապահովելու հարցում: Անհրաժեշտ քանակի պարեն չանենալու պատճառով զինվոր-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 163, թ. 8:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

ները տեղական բնակչությունից բռնությամբ ու առանց որևէ փոխհատուցման վերցնում էին մթերքներ՝ դրանով իսկ առաջ բերելով նրա զանգվածային դժգոհությունը:

3. Խիստ անբավարար է եղել հանդերձավորումը, որը նախատեսված չէր անձրևոտ օրերի համար: Զանգեզուր գալուց առաջ 28-րդ հրաձգային դիվիզիան Բաքվում ստացել էր 18000 զույգ կոշիկ և 7000 ձեռք իտալական մահուդից կարված համազգեստ: Համազգեստի մի մասը զինվորները Զանգեզուր գալու ճանապարհին, երբ դեռ ամառ էր, վաճառել էին կամ փոխանակել սննդամթերքի հետ: Ինչ վերաբերում էր կոշկեղենին, ապա այն լեռներում այնքան արագ էր մաշվում, որ մի քանի օր տևած երթերից հետո այլևս պետքական չէր լինում, և կարմիրբանակայինները մնում էին բոբիկ: Չնայած զինվորական զգեստներ տրամադրելու մասին ստորաբաժանումների կողմից բանակի հրամանատարությանը ներկայացրած բազմաթիվ հայտերին, ոչինչ չէր արվել կարգավորելու համար այդ հարցը: Ոտաբոբիկ, սոված, համազգեստ չունեցող զինվորների թիվը աճում էր օրեցօր: Մեծ տարածում էին գտել ցրտից ու քաղցից առաջացած հիվանդությունները: Այդ բոլորի հետևանքով խիստ իջել էր զորամասերի մարտունակությունը: Եվ այդպիսի անտանելի վիճակում գտնվող մարտիկները կարգադրություն էին ստացել՝ կտրել ձյունածածկ լեռներն ու ձորերը և հակառակորդին հաղթել 3-4 օրում:
4. Նժդեհի զորաջոկատները մեծ հաջողությամբ էին օգտագործում տեղանքը: Դարանակալելով անմատչելի լեռնածերպերում և անդնդախոր կիրճերում՝ նրանք սրընթաց հարձակումներ էին գործում Կարմիր բանակի զորամասերի վրա, դրանց հարվածում թևերից ու թիկունքից: Քաջ ծանոթ լինելով իրենց երկրին՝ զանգեզուրցիները թաքնվում էին բնական ամրություններում, հանկարծակի կրակ բացում ժայռաճեղքերից ու քարանձավներից:
5. Բանակի հրամանատարությունն անբավարար էր տիրապետում լեռնային պայմաններում ռազմական գործողություններ վարելու միջոցներին և ձևերին: Ինչպես ասվեց, անդամալույծ էր եղել տրանսպորտային ծառայությունը, չկային փոխադրության համապատասխան միջոցներ: Առանց այն էլ վատ ճանապարհները շարքից դուրս էին եկել, և այդ պատճառով կտրվել էր կապը թիկունքի և լեռներում իրարից անջատ գործող զորամասերի միջև: Հեծյալ գնդերը, ծանր հրետանին, տեխնիկական զորամասերը, գումակը չէին կարողանում հաղթահարել լեռնային ոլորապտույտ, նեղ ու քարքարոտ ճանապարհները, իսկ կածաններով շարժվելը համարյա անհնար էր, քանի որ դրանք գտնվում էին հայերի մշտական հսկողության և կրակի տակ:
6. Վատ էր աշխատում հետախուզությունը, որի հետևանքով հրամա-

նատարությունը հստակ պատկերացում չուներ հակառակորդի ուժերի քանակի, նրա դիտավորությունների մասին, չգիտեր, թե ինչն է Նժդեհի հաջողությունների պատճառը: Բանակի հրամանատարությունը հաշվի չէր առել այն վիճակը, որի մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը: Հայաստանի վրա թուրքական արշավանքը, պատերազմում հայկական զորքի պարտությունը, զավթած տարածքներում թուրքերի գազանությունները, լուրերն այն մասին, որ Խորհրդային Ռուսաստանը զենքով օգնում է Հայաստանի վրա արշավող քեմալականներին, այդ ամենը ծայրաստիճան լարել էին իրադրությունը Զանգեզուրում: Բնակիչները լի էին վճռականությամբ՝ արյան գնով պաշտպանելու հայրենիքի գոնե այն հողակտորները, որտեղ չէր հասել թուրքի ավերիչ ձեռքը: Այդ ամենին գումարվեց թուրքական գունդը մարտի մեջ նետելու՝ 11-րդ բանակի հրամանատարության անհավասարակշիռ որոշումը, որը շատ թանկ նստեց բոլշևիկյան զորամասերի վրա:

7. Հստակ չէին աշխատում գավառում ստեղծված խորհրդային մարմինները: Մի քանի ամիս շարունակ գավառի խորհրդային ծառայողները և միլիցիայի աշխատողները աշխատավարձ չէին ստացել, և նրանց շրջանում առաջ էր եկել մեծ դժգոհություն: Ամենուրեք ստեղծվել էր տնտեսական ծանր վիճակ, որի պատճառով գյուղական մի շարք հեղկոմներ ապստամբության ժամանակ անցել էին Նժդեհի կողմը:
8. Կարմիր բանակի զորքերի ռազմական գործողությունները մեծապես արգելակում էին աննպաստ եղանակները: Այդ տարի ձմեռը Զանգեզուրում շուտ վրա հասավ: Ձյան հաստ շերտը և կապտավուն սառույցը պատել էին ճանապարհներն ու անցուղիները: Անընդհատ տեղացող ձյունախառն անձրևներից լլկվել էր հողը: Վրա հասած սառնամանիքներն անհնարին էին դարձնում զինվորների երթը լեռնային ճանապարհներով, կածաններով ու լեռնանցքներով: Մառախուղի մեջ մոտիկ տարածությունից ոչինչ չէր երևում: Անբարենպաստ եղանակի պատճառով օդային ռմբակոծիչների օդակը չկարողացավ մասնակցություն ունենալ Զանգեզուրի մարտական գործողություններին: Օդակի հրամանատար Կուզնեցովը նոյեմբերի 5-ին Պ. Կուրիշկոյին ուղարկած հեռագրում նշում էր, որ աննպաստ եղանակի պատճառով հնարավոր չէր օդ բարձրացնել սավառնակները, և որ առաջին իսկ հնարավորության դեպքում դրանք մարտի մեջ կմտցվեին: Բայց այդպես էլ մինչև վերջ դրանք անգործության մատնվեցին՝ չկարողանալով կատարել մարտական ոչ մի թռիչք:

11-րդ Կարմիր բանակի հրամանատարական կազմի ներսում մեկը մյուսին մեղադրում էր կրած ծանր պարտության համար: Բանակի հրամանատարը, կոմիսարը, շտաբը հիմնական մեղքը գցել էին 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկու, դիվիզիայի կոմիսարի ու շտաբի պետի վրա:

Վերջիններս, իրենց հերթին, ներկայացրած մեղադրանքները վերահաստատագրում էին բանակի հրամանատարությանը, բայց նրանցից ոչ մեկը մեղք չուներ:

Կարմիր բանակի զորքերի պարտության հիմնական պատճառը զանգեզուրցիներն էին՝ կռվում խիզախ ու անձնազոհ, իրենց երկիրն ազատ տեսնելու անկոտրում կամքով ու համառությամբ, համախմբված հայ ժողովրդի անկախ պետականության գաղափարի շուրջը:

Զանգեզուրը հռչակվեց «առասպելական հերոսների, երկաթյա լեռների աշխարհ»:

ՍՅՈՒՆԻՔԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԱԴԱՐԻ ՕՐԵՐԻՆ
(1920 թ. դեկտեմբեր-1921 թ. ապրիլ)

Ներքաղաքական վիճակը Զանգեզուրում գավառից խորհրդային զորամասերի հեռանալուց հետո

1920 թ. նոյեմբերի 22-ի կեսօրին Գորիս ժամանեց Գարեգին Նժդեհը: Քաղաքում նրան ընդունեցին ջերմորեն, մեծ պատվով:

«Ազատ Սյունիքը» գրում էր. «Նոյեմբերի 22-ի առավոտվա ժամը 12-ին ամբողջ Գորիս քաղաքի և շրջանի ժողովուրդն ու զինվորությունը՝ խռնված Վահան Խորենու, Արշակ Շիրինյանի և Սաքոյի շիրիմներու շուրջ, «Մեր հայրենիք ազատ, անկախ» երգելով, հայ եկեղեցու զանգակներու քաղցր ղողանջներուն տակ, աղ ու հացով կը դիմավորե իր սիրելի ազատարար Նժդեհին և անոր հաղթական մուտքը կը շնորհավորե: Հազարավոր շրթունքներ օրհնութեան մրմունջներ կը թոթվեն, բոլորին դեմքին վրայ կը փայլե ազատութեան ժպիտը»[1]:

Գորիս գալու օրը Նժդեհն առաջին անգամ հայտարարեց «Ազատագրված Սյունիքի ազգաբնակչության համագումար» հրավիրելու անհրաժեշտության մասին: Նույն օրը կազմվեց բուն Զանգեզուրի համար յոթ հոգուց բաղկացած «Գյուղացիական ժամանակավոր խորհուրդ», որին և ժամանակավորապես հանձնվեց ապստամբ երկրի բախտը: Այն հանդիսանալու էր երկրի բարձր իշխանությունը մինչև համազանգեզուրյան համագումար հրավիրելը և իշխանության մարմիններ ստեղծելը[2]: Այդ ժամանակավոր խորհուրդը նաև պիտի զբաղվեր համագումար հրավիրելու նախապատրաստական աշխատանքներով: Ապա Նժդեհը հասարակությանը դիմեց հետևյալ հայտարարությամբ.

«Հայտնում եմ ի գիտություն հասարակության, որ ընտրված բուն Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդը հաստատում եմ իր պաշտոնում և հրամայում եմ ենթարկվել խորհրդից եղած կարգադրություններին:

---

[1] «Ազատ Սյունիք» թերթ, 1920, 25 նոյեմբերի:

[2] Տե՛ս «Ազատ Սյունիք» ժողովածու, էջ 43:

Հակառակվողները կը պատժվեն ամենախիստ կերպով»[1]:

Նույն օրը՝ նոյեմբերի 22-ին, Գորիսի հայ կանայք Նժդեհին ներկայացրին գրավոր մի բողոք, որի տակ դրված էր 100 ստորագրություն: Նրանք գայրացած բողոքում էին Նժդեհին, որ Զանգեզուրում մի քանի ամիս տևած բոլշևիկյան իշխանությունը մեծ չարիքներ է բերել գավառի բնակչությանը: Այդ իշխանությունը, ասված էր դիմումի մեջ, «անգթությամբ թալանեց խեղճ ու աղքատ գյուղացիներին՝ որից վերցնելով լծկան եզը, որից՝ ձին, որից՝ կով ու ոչխար... Չբավականանալով դրանով, նա յուր ճիրաններն ուղղեց դեպի անզոր ու խեղճ հայ կինը՝ նրա գլխի զարդն ու ոսկե գոտին խլելով...»: Նրանք հատկապես աններելի էին համարում, որ Կարմիր բանակի զորքերի հետ բոլշևիկները գավառ էին ուղարկել արյունարբու թուրքերին:

«Այդ ուղարկած «կարմիր» ասկյարներն էլ կարմիր արյան վրեժից չվախենալով, մտնելով հայաբնակ գյուղերը, ազատություն տվեցին վաղեմի վրեժին ու գազանաբարո կրքերին, կոտորելով երիտասարդներին, բռնաբարելով հայ կանանց ու անմեղ օրիորդներին, նետելով նրանց զանազան անբուժելի հիվանդությունների գիրկը»: Բերելով այդ փաստերը՝ կանայք այնուհետև դառնությամբ գրում էին. «Մենք շատ էինք լսել Տաճկաստանի սարսափ ու զուլումների մասին, բայց այնպիսի բարբարոսություններ, ինչպիսիք եղան Զանգեզուրում, չէինք տեսել ... Հայտնելով Ձեզ, պարո՛ն հրամանատար, մեր խորին շնորհակալությունները, որ դուք մեզ ազատեցիք մեր անունը արատավորելուց, աղաչում ենք Ձեզ՝ եղեք այսուհետև էլ մեր պաշտպանն ու փրկիչը, որպեսզի երկրորդ անգամ նրանք չհանդգնեն ոտք կոխելու մեր երկիրը...

Մեր միակ հույսը Դուք եք, Դուք, որ կանգ չառաք ոչ մի խոչընդոտի առաջ, Դուք, որ կարողացաք մեզ փրկել խորհրդային կոչված մուսավաթական կառավարության չարիքներից: Եղեք մեր փրկիչը ապագայում և ընդմիշտ»[2]:

Այդ օրերին ամբողջ Զանգեզուրում եռանդուն աշխատանք էր տարվում հաշվելու այն նյութական վնասները, որոնք հասցվել էին զանգեզուրցիներին: Այդ ամենի հիման վրա Զանգեզուրի գյուղացիական խորհրդի՝ Գորիսում 1920 թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցած նիստում հաստատվեց ընդարձակ մի արձանագրություն՝ 1920 թ. հուլիսի 5-ից մինչև նոյեմբերի 20-ը բոլշևիկյան զորքերի և խորհրդային իշխանությունների կողմից Զանգեզուրի բնակչության տարբեր խավերի նկատմամբ կատարած սպանությունների, բռնագրավումների և բռնությունների մասին[3]:

Զանգեզուրում Կարմիր բանակի զորքերի և ադրբեջանական զինված

---

[1] Տե՛ս **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 109:

[2] Նույն տեղում, էջ 110-111:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 11, 11-ի շրջերես, 11:

կազմավորումների կրած ծանր պարտությունները Ադրբեջանի իշխանությունների մոտ առաջ էին բերել վրեժխնդրության նոր մոլուցք, սկսվել էր հայերի զանգվածային ձերբակալությունների նոր ալիք: Բանտարկյալները ենթարկվում էին ծեծի, կտտանքների ու ստորացումների: Բանտարկյալների թվում հատկապես շատ էին Ղարաբաղից և Զանգեզուրից գերված հայերը՝ դաշնակցական գործիչներ, ինքնապաշտպանության մարտիկներ: Նրանց մեծ մասի գործերի քննությունը հանձնված էր ռազմադաշտային բարձրագույն դատարանին, որի նախագահ Հաջինսկին հայտնի էր իր կատաղի ատելությամբ դեպի հայությունը և այն ամենը, ինչ հայկական էր: Դատարանի որոշմամբ գնդակահարվել էին Գրիգոր Հակոբյանը (Գանձակից)՝ իր ընկերների հետ (16 հոգի), Պողոս Մելիք-Եգանյանցը (Ղարաբաղից), Արամ Ղուբլարյանը (Զանգեզուրից) և շատ ուրիշներ. համարյա բոլորն էլ՝ դաշնակցականներ կամ համակիրներ: Իրենց վախճանին էին սպասում հարյուրավոր ուրիշ զանգեզուրցիներ և ղարաբաղցիներ, այդ թվում՝ նաև Կապանի Առաջաձոր գյուղում 1920 թ. հուլիսին Կարմիր բանակի զորամասի կողմից առևանգված և որպես պատանդ Բաքու տարված Սմբատ Մելիք-Ստեփանյանը: Նրանք բոլորը ձերբակալվել էին իրենց քաղաքական հայացքների համար, բայց դատվում էին իբրև բանդիտներ:

Հայաստանի կառավարությունը ձեռնարկում էր հնարավոր բոլոր միջոցները՝ փրկելու համար ձերբակալվածների կյանքը հատկապես գերիների փոխանակման միջոցով:

1920 թ. նոյեմբերի 9-ին Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը հանդիպում ունեցավ Նարիման Նարիմանովի հետ և նրան ներկայացրեց բողոքի նոտա Զանգեզուրից և Ղարաբաղից Բաքու գերի բերված անձնավորությունների նկատմամբ կատարվող հաշվեհարդարների՝ դատավարությունների և գնդակահարությունների առիթով[1]:

Հայ դիվանագետի այն հարցին, թե որոնք էին գնդակահարված հայերին ներկայացված մեղադրանքները, Նարիմանովը պատասխանեց, որ հիմնական մեղադրանքը բանդիտիզմն է, և «մենք բանդիտներին պետք է ոչնչացնենք»: Բանդիտ էր համարվել նաև Տիգրան Բեգնազար-Յուզբաշյանը, որը 20 տարվա հարկադիր աշխատանքի էր դատապարտվել «դաշնակցական կառավարության մոտ ծառայության համար»:

Մ. Հարությունյանն ասել էր, որ «եթե դոքա բանդիտներ լինեին, ես երբեք չէի բողոքի, բայց դոքա ձեր գաղափարական հակառակորդներն են, կողմնակից Հայաստանի կառավարության և բնական է, որ ձեր տիրապետության ձգտումների դեմ կռվել են զենքը ձեռքին: Այդ մարդկանց դուք երբեք չպետք է դատեք, այլ պետք է պահեք իբրև պատանդներ կամ ռազմագերիներ՝ ժամանակին ազատելու կամ փոխանակելու համար»: Ապա Մ. Հարությունյանը

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 30-33:

հարցրել էր. «Ինչպե՞ս կվարվեիք դուք այն մարդկանց հետ, որ ձեր իշխանության դեմ ապստամբեցնեին ձեր զորքը, օգնեին ձեր թշնամուն և առհասարակ աշխատեին հեղաշրջում առաջ բերել ձեր պետության մեջ, օրինակ Գանձակի ապստամբության* հեղինակներին»: Իր տված հարցին ինքը՝ հայ դիվանագետը, պատասխանել է. «Անկասկած դուք նոցա կգնդակահարեիք և ոչ թե բանտերում կպահեիք»: Ապա նա վկայել է, որ Հայաստանի կառավարությունը այդպես չի մտածում և այդպես չի գործում: «Մեր կառավարությունը Հայաստանի կոմունիստներին, որոնք ամեն տեսակի ոճիր գործեցին մեր պետության և ժողովրդի դեմ, պահում է բանտարկված միայն այն պատճառով, որ նրանք գաղափարական հակառակորդներ են և պետք է փոխանակության ենթարկվեն: Դրանցից միայն մի քանիսին այնտեղ գնդակահարեցին, որոնք առանձնապես մեծ ոճիրներ էին գործել և այն էլ գուցե ի պատասխան ձեր արարքների ընդդեմ դաշնակցականների»[1]:

Մ. Հարությունյանի արտահայտած այն տեսակետին, թե երկուստեք գնդակահարություններով ո՛չ Ադրբեջանի և ո՛չ Հայաստանի կառավարությունները երբեք դրական արդյունքի չեն հասնի, և որ պետք է «միանգամ ընդմիշտ վերջ դնենք դրան», Նարիմանովն առարկել է՝ ասելով. «Մի՞թե մենք իրավունք չունենք գնդակահարելու մեր հանցավոր մի պաշտոնյային միայն այն պատճառով, որ նա հայ է: Դուք կարծեք տրամադրություն ունեք բոլոր հայերին պաշտպանելու»: Դրան հետևում է հայ դիվանագետի պատասխանը. «[Ես] երբեք ձայն չեմ բարձրացնի, եթե դուք ձեր զեղծարար հայ պաշտոնյային պատժում եք, դա ձեր իրավունքն է, բայց միշտ կբողոքեմ և անթույլատրելի կհամարեմ, երբ դուք «բանդիտ» անվան տակ պատժում եք հեղափոխական մարդկանց, որոնք զենքը ձեռքին պաշտպանել են իրենց ժողովրդի անկախությունը»[2]:

Ն. Նարիմանովի հետ հանդիպման մասին իր կառավարությանն ուղղած զեկուցագրում Մ. Հարությունյանն առաջարկում էր որոշ սպառնալիքով բողոքի մի հեռագիր ուղղել Ադրբեջանի խորհրդային կառավարությանը և Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտկոմին, քանի որ «ի վերջո, եթե մեկը կա, որ այս փոխադարձ գնդակահարումների մեջ որոշ շահագրգռություն է զգում, դա այդտեղի [Ադրբեջանի, Բաքվի:– *Ա. Ս.*] հայ կոմունիստներն են, որոնք կուզենային Հայաստանում բանտարկված իրենց ընկերներին [փոխանակության միջոցով] փրկել: Ես նույնիսկ համոզված եմ, որ [Ադրբեջանի]

---

* Մ. Հարությունյանը նկատի ուներ 1920 թ. աշնանը Գանձակի, հատկապես Ձեգամի և Շամխորի շրջաններում ծայր առած ապստամբական շարժումը, որի ընթացքում լավ զինված ադրբեջանական խմբերը պարբերական հարձակումներով հանգիստ չէին տալիս փոքրաթիվ խորհրդային զորամասերին: Ապստամբության նպատակն էր տապալել խորհրդային իշխանությունն Ադրբեջանում:

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 31-32:

[2] Նույն տեղում, թ. 32:

ռազմադաշտային տրիբունալն այնպիսի վճիռներ է կայացնում ու իրագործում, որպեսզի նույն բանն առաջ բերի նաև Հայաստանում կոմունիստների վերաբերյալ: Թե՛ դաշնակցականների և թե՛ հայ կոմունիստների ոչնչացումը հավասարապես ձեռնտու է այստեղի թուրք կարմիրներին»[1]:

Բաքվում և Ադրբեջանում կատարվող հայ գործիչների նոր ձերբակալությունների ու հաշվեհարդարների մասին լուրերը հասնում էին Զանգեզուր և այստեղ առաջացնում փոխադարձ վրեժխնդրության բռնկումներ:

Զանգեզուրն ազատագրելուց հետո Նժդեհը կարգադրեց խստագույն պատժի ենթարկել բոլոր նրանց, ովքեր նպաստել էին բոլշևիկյան զորքերի ներխուժմանը գավառ, տոն տվել այնտեղ կատարված անօրինականություններին ու խժդժություններին:

Դեռ գավառում մղվող կռիվների ժամանակ գնդակահարվեցին Գորիսից եկած և Կապանի ռազմաճակատում գերի ընկած մի շարք կոմունիստներ, որոնց թվում էր կոմունիստական ջոկատի հրամանատար Յաշա Մկրտչյանը: Ապստամբության օրերին գերվեցին և գնդակահարվեցին բոլշևիկների գավառային կազմակերպության ղեկավարներ Քրիստափոր Մկրտչյանը և Ավետիք Գուլոյանը (Սեյրի), ակտիվ կոմունիստներ Արտեմ Զանունցը, Արամ Մուսայելյանը, Երեմ Խուրշուդյանը և ուրիշներ: Մի քանի գերի կոմունիստներ գնդակահարվեցին Սիսիանի Անգեղակոթ գյուղում: 40-ից ավելի մարդու Տաթևի ժայռից նետեցին անդունդը: Պատժիչ ջոկատները Շինուհայրում կատարած հարցաքննություններից հետո հրդեհեցին գյուղի հեղկոմի նախագահ Հարություն Թովմասյանի, Լևոն Գալստյանի, Ասատուր Խուրշուդյանի և Ադրբեջան անցած մյուս կոմունիստների տները: Բազմաթիվ գյուղացիների հետ ձերբակալվեցին և Տաթևում բանտարկվեցին, օրինակ, Ասատուր Խուրշուդյանի մայրը, քույրը և կրտսեր եղբայրը՝ Արշակ Խուրշուդյանը: Անտեղի պատիժների ենթարկվեցին նաև գյուղի մի շարք ուրիշ կոմունիստների հարազատներն ու ազգականները:

Անշուշտ, այստեղ մեծ դեր ուներ վրեժխնդրության գործոնը. դեռ չէր մեղմացել Գորիսի բանտում գազանաբար խոշտանգված Արշակ Շիրինյանի և Վահան Խորենու կորստյան ցավը, դեռ թարմ էր գնդակահարված տասնյակ ազգային գործիչների հիշատակը:

Այդ բոլորը ճիշտ էր, բայց դա չէր արդարացնում արդեն գերի կամ անպաշտպան հայ մարդկանց փոխվրեժով կատարվող սպանություններն ու բռնությունները:

Գորիս գալով՝ Նժդեհը Զանգեզուրի գյուղացիական խորհրդի ներկայացուցիչ Աշոտ Մելիք-Մուսյանին հանձնարարեց գնալ Երևան, կառավարությանը հաղորդել գավառի վերջին դեպքերի մասին, ինչպես նաև սպասվելիք հետագա վտանգներին դիմագրավելու համար խնդրել ռազմական օգնու-

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 37, թ. 33:

թյուն: Մելիք-Մուսյանը կազմեց կառավարությանն ուղղված հիշատակագիր, այն համաձայնեցրեց Նժդեհի հետ և Գորիսից մեկնեց Երևան: Նոյեմբերի 24-ին նա կառավարությանը ներկայացրեց այդ հիշատակագիրը, որի մեջ ասված էր. «Զանգեզուրը, ինչպես հայտնի է, փաստորեն երբեք (նկատի ուներ 1918-1920 թթ.: – *Ա. Մ.*) Հայաստանի անբաժան մասը չի կազմել, նա ունեցել է ինքնուրույն կյանք՝ կառավարվելով սեփական ինքնավարությամբ: Հայաստանի կառավարությունն անտես առնելով այս հանգամանքը՝ ի վնաս սեփական իսկ շահերի, մասնավորապես առանց Զանգեզուրի ժողովրդի կամքն իմանալու, սույն թվի օգոստոսի 10-ին կնքում է մեծամասնականների հետ անպատվաբեր մի դաշնագիր՝ Զանգեզուրի անկախ ժողովրդի դատը համարելով վիճելի, իսկ կառավարությունը՝ խորհրդային: Թե ինչ կորստաբեր հետևանքներ պիտի ունենար այդ դաշնագրի իրականացումը ողջ Հայաստանի համար, եթե ի չիք չդարձներ դրա զորությունը ինքը՝ ժողովուրդը, հանձին իր սիրելի հրամանատար Նժդեհի, դա ակներև կարող է լինել, երբ բոլշևիկների 9000 սվինը Նախիջևանն անցնելով, այսօր ոտք կոխեր Հայաստանի մայրաքաղաքը:

Այս բոլորից հետո թվում է՝ կառավարությունը որոշ ողջախոհության պիտի եկած լինի, համոզվելով, որ յուր վերոհիշյալ ընթացքը տանում է, ինչպես Զանգեզուրը, նույնպես և ողջ Հայաստանը դեպի կորուստ»:

Ապա հիշատակագրով կառավարությանը ներկայացվում էր պահանջ՝ վերջապես տեր կանգնել Զանգեզուրին: Զանգեզուրցիների միակ իղձն էր միանալ մայր երկրին: Ուստի այդ նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ էր՝ 1. նրանց տրամադրել թնդանոթների մի խմբակազմ (4 թնդանոթ), 2. պահանջվող քանակի ռազմամթերք ու զենք, 3. ռազմական լուրջ գործողություններ ձեռնարկել Զանգեզուրում, 4. լեգալ կամ անլեգալ ճանապարհով Զանգեզուրը ճանաչել իբրև Հայաստանի տարածք և նրա կարևորագույն ռազմաճակատներից մեկը[1]:

«Զանգեզուրի ժողովրդի, Նժդեհի և իմ անունից,– վերջում գրում էր Ա. Մելիք-Մուսյանը,– խնդրում եմ դրված հարցերին շուտ պատասխանել մեզ, որովհետև Ձեր կողմից ամեն մի դանդաղում Զանգեզուրը կարող է մատնել վերջնական կորստի: Այս հանգամանքներում սկսած գործը մենք անկարող ենք շարունակել և Ձեր կողմից բացասական պատասխան ստանալու դեպքում ստիպված կը լինենք երկիրը հանձնելու մեծամասնականներին, իսկ մենք, այսինքն՝ ղեկավարներս, անցնելու Հայաստան, ամբողջ պատասխանատվությունը թողնելով կառավարության վրա»[2]:

Ինչպես նախկինում, այս անգամ նույնպես Զանգեզուրի խնդրանքները

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 130, նաև **Վ. Գէորգեան,** նշվ. աշխ., էջ 112-113:

[2] Նույն տեղում:

անուշադրության մատնվեցին կառավարության կողմից, որին ընդամենը մի քանի օրվա կյանք էր մնացել. շուտով երկրում հաստատվելու էին խորհրդային կարգեր:

Աշոտ Մելիք-Մուսյանը Երևանից Զանգեզուր մեկնեց Հայաստանի Հանրապետության անկման հաջորդ օրն իսկ: Ձեռնունայն Գորիս վերադառնալով՝ նա իր առաքելության անհաջողության մասին զեկուցեց Նժդեհին: Վերջինս վրդովմունքի պահերին շրջապատին հիշեցնում էր, թե կառավարությունը քանի անգամ է մերժել Զանգեզուրի պահանջները՝ տեր չկանգնելով նրա ժողովրդին, լքել է նրան, ավելին՝ հարվածել է Սյունիքի ազատագրության գործին: «Մենք թշնամուն ենք ծեծում, Երևանը՝ մեզ»[1],– ասում էր նա: Հետագայում ՀՀ կառավարությունից իր բողոքները Նժդեհը խմբավորում և շարադրում է իր հոդվածներից մեկում:

Նժդեհը նշում էր՝ առաջին անգամ կառավարությունը Զանգեզուրը լքել է 1920 թ. հուլիսի 5-ին, երբ երևանյան կանոնավոր զորամասը տեղի է տվել 11-րդ Կարմիր բանակի զորքերի առջև և հեռացել Զանգեզուրից, իսկ Կապարգողթի ուժերը շարունակել են կռվել: Երկրորդ անգամ՝ 1920 թ. օգոստոսի սկզբին, երբ հանրապետության մի զորամաս**, Զանգեզուրի վրա հարձակվելով, գրավել Սիսիանը և Գորիսը, բայց շուտով առանց խորհրդային զորամասերին լուրջ դիմադրություն ցույց տալու թողնել ու քաշվել է Վայոց ձոր: Նրան օգնության եկած Կապանի ուժերը ստիպված վերադարձել են Հանքեր և շարունակել Կապարգողթի պաշտպանությունը: Երրորդ անգամ՝ 1920 թ. օգոստոսի 10-ին, երբ Դրոն ՀՀ զինվորական նախարարի անունից մի պաշտոնական գրությամբ, համաձայն ՀՀ և ՌՍՖԽՀ պատվիրակությունների միջև նույն օրը կնքված զինադադարի, Նժդեհին առաջարկել է թողնել երկրամասը և անցնել Հայաստան: Սակայն, չենթարկվելով այդ որոշմանը, Նժդեհը շարունակել է մնալ և պաշտպանել Զանգեզուրը: Չորրորդ անգամ՝ 1920 թ. հոկտեմբերի 10-ին, այսինքն՝ ապստամբության միջոցով Կապանը վերագրավելու օրը, երբ կառավարությունը անորոշ ժամանակով Զանգեզուրը զիջել է խորհրդային զորքերին, իսկ Սյունիքի պաշտպանները երկարատև կռիվներով վերագրավել են իրենց երկիրը: Հինգերորդ անգամ՝ 1920 թ. նոյեմբերի 24-ին, երբ Զանգեզուրի հոգսերով Երևան գնացած Աշոտ Մելիք-Մուսյանը կառավարությանը ներկայացրել է գրություն՝ ռազմական, նյութական և բարոյական օգնության խնդրանքով, բայց Սյունիք է վերադարձել ձեռնունայն*: Վեցերորդ անգամ՝ 1920 թ. նոյեմբերի 26-ին, երբ կառավարությունը

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 130:

** Խոսքը Դրոյի գլխավորած զորամասի մասին է:

* Աշոտը Երևանում շատ դռներ էր բախել, բայց ապարդյուն: Նա Երևանում էր, երբ հանրապետությունն ընկավ: Բոլշևիկների՝ Երևան մտնելու հաջորդ օրն իսկ նա ճանապարհվել է Զանգեզուր: Ճանապարհին թոքերի բորբոքում է ստացել և հասնելով Գորիս՝ պառկել է քաղաքի հիվանդանոցում: Այստեղ էլ երեք օր անց ատրճանակի հարվածով նա վերջ է տվել իր

որոշել է առանց կռվի տեղի տալ բիրտ ուժի առջև և դեկտեմբերի 2-ին կատարել է Հայաստանը խորհրդայնացնելու Ռուսաստանի պահանջը: Նույն ժամանակ Զանգեզուրի զինյալները բոլշևիկներից լիովին ազատագրել են իրենց երկիրը և ստեղծել Սյունիքի ինքնավարությունը[1]:

Այս ամենին հետագայում Նժդեհն ավելացրել է յոթերորդը՝ «Հայրենիքի փրկության կոմիտեի» կողմից Զանգեզուրին հասցրած վնասը, երբ չկարողանալով կազմակերպել կռիվները Կարմիր բանակի դեմ՝ թողեց Երևանը և 12 հազար գաղթականության հետ ապաստան գտավ Լեռնահայաստանում: Երկիրը հեղեղած բազմահազար փախստականներն ապակայունացնող քայքայիչ ազդեցություն ունեցան Զանգեզուրի համար և արագացրին նրա անկումը:

Գորիսից Նժդեհն անցավ Սիսիան:

Նախապես իմանալով այդ մասին՝ Սիսիանի բոլշևիկյան ընդհատակի ղեկավարությունը որոշեց ահաբեկչության ենթարկել նրան, և այդ գործողության կազմակերպումը հանձնարարվեց կոմունիստ Հակոբ Մկրտումյանին:

Սիսիանում Նժդեհն առաջինն այցելեց Բռնակոթ գյուղ, որտեղ կազմակերպված էր մեծ հանրահավաք: Նա ելույթ ունեցավ, ապա անմիջապես մեկնեց Մազրա, իսկ այնտեղից՝ Շաղաթ: Հաջորդ օրը եղավ Անգեղակոթում: Ամեն տեղ փայլուն ճառերով ոգեշնչեց գյուղացիներին, միաժամանակ զգոնության կոչ արեց, հորդորեց չքնել դափնիների վրա և միշտ պատրաստ լինել Զանգեզուրի պաշտպանությանը:

Անգեղակոթի եկեղեցում տեղի ունեցած միտինգից հետո Նժդեհը վերադարձավ Գորիս. նրան սպանելու՝ Սիսիանի կոմունիստների մտադրությունը, այդպիսով, չհաջողվեց իրականացնել[2]:

Պարտություն կրած Կարմիր բանակի զորքերի հրամանատարության համար անընդունելի էր կատարվածը: Զինվորական մի հսկա ուժ չէր կարողացել հաղթահարել ընդամենը մի փոքր գավառի բնակչության օրհասական դիմադրությունը, ավելին, ջախջախիչ պարտություն էր կրել ու նահանջել:

Նույնիսկ այդ պայմաններում խորհրդային կողմը ավելորդ էր համարում զանգեզուրցիների հետագա պայքարը և փորձում էր դիվանագիտական ճանապարհներով ազդել Նժդեհի վրա, հասնել նրան, որ Զանգեզուրը դադարեցնի զինված դիմադրությունը և, առանց կռիվը շարունակելու, ենթարկվի բոլշևիկյան իշխանությանը: Միաժամանակ, նահանջած բոլշևիկ հրամանատարները Զաբուղում և Ավդալարում վերախմբավորում էին իրենց զորամասերի մնացյալ մասերը:

բեղմնավոր կյանքին՝ թողնելով մի երկտող (տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, մայիս, թիվ 7 (31), էջ 131:

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 13:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 273, թ. 6, գ. 432, թ. 3:

Նոյեմբերի 23-ի առավոտյան 28-րդ դիվիզիայի քաղբաժնից զինվորական կոմիսարը գրություն ուղարկեց «Զանգեզուրի գավառի ապստամբ բնակչության հրամանատարությանը»: Զինկոմիսարը առաջարկում էր «48 ժամվա ընթացքում վերադարձնել Գորիսում մնացած մեր հիվանդ ու վիրավոր և հոկտեմբերի 15-ից կռիվներում գերված զինվորներին, Գորիսում մնացած բոլոր զույքն ու ռազմամթերքը»: Միաժամանակ նա ավելորդ չէր համարում հայտարարել, որ միայն այդ պայմանով հնարավոր կլիներ առաջիկայում երաշխավորել Զանգեզուրի «ապստամբների կայքի ու գույքի ապահովությունը, նրանց անձի անձեռնմխելիությունը»[1]:

Ի պատասխան այս գրության՝ Նժդեհի զորամասերը պատրաստվեցին հարձակվել Զաբուղի վրա: Բոլշևիկյան զորամասերի համար կարող էր նոր աղետ ծայր առնել, քանի որ այդ դեպքում նրանք ստիպված կլինեին դիմագրավել ինչպես Զանգեզուրից հայ ապստամբ ուժերի սպառնացող հարձակմանը, այնպես էլ ադրբեջանական-քրդական հակախորհրդային ավազակախմբերի հարձակումներին: Բանն այն է, որ Զաբուղից և Ավդալարից կարմիրբանակային զորամասերը չէին կարողանում նահանջել դեպի Շուշի, որովհետև Հաջիսամլուի ադրբեջանական քրդական ուժերը, լսելով ռուսական զորամասերի Զանգեզուրում կրած պարտության մասին, Լիսագորի (Թթու ջրի) կողմից փակել էին նրանց ճանապարհը՝ թալանելու նպատակով: Զորամասերի վիճակը անհուսալի էր դառնում. վերջանալու վրա էին պարենամթերքի պաշարները, վիրավորներին ու հիվանդներին խնամելու համար չկային դեղամիջոցներ և այլն:

Նոյեմբերի 24-ին 84-րդ բրիգադի հրամանատար Սեմյոնովը երեք հոգուց բաղկացած մի պատվիրակություն ուղարկեց Գորիս, որը Նժդեհին պետք է առաջարկեր հեռանալ Զանգեզուրից և այսպիսով խաղաղությամբ վերջացնել Կարմիր բանակի հետ ունեցած վեճը[2]:

Այդ օրերին Նժդեհը Գորիսից անցել էր Սիսիան, ուստի պատվիրակության անդամներին պահեցին Կոռնիձոր գյուղում մինչև ապստամբների հրամանատարի վերադարձը[3]:

Միաժամանակ 28-րդ դիվիզիայի՝ Շուշիում գտնվող քաղբաժինը Զանգեզուր ուղարկեց նոյեմբերի 23-ին տպագրված «Ամեն մի ապստամբի ուշադրությանը» խորագրով հայտարարությունը, որն ընդհատակ անցած տեղի բոլշևիկների կողմից տարածվում էր գավառի գյուղացիության մեջ: Սույն հայտարարությամբ ապստամբ զանգեզուրցուն հարց էր տրվում. «Հայտնի՞ է արդյոք քեզ, որ ՌՍՖԽՀ Կարմիր բանակի հրամանատարության կողմից ուղարկված է քո հրամանատարների մոտ երեք հոգուց բաղկացած խաղա-

---

[1] «Արնոտ գիրք», էջ 70:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 72:

[3] Տե՛ս նույն տեղում:

ղարար մի պատգամավորություն՝ ապստամբների հետ նախնական հաշտություն կնքելու համար:

Արդյոք իրազե՞կ ես, որ Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական իշխանությունը և ՌՍՖԽՀ Կարմիր բանակի բարձրագույն հրամանատարությունը ձգտում են խաղաղ ճանապարհով լուծել մի կողմից՝ ապստամբների և մյուս կողմից՝ խորհրդային իշխանության ու կարմիր զորքի միջև ծագած վեճը: Հայտնե՞լ են արդյոք քեզ քո ղեկավարները, որ Կարմիր բանակի հրամանատարությունը և Ադրբեջանի խորհրդային իշխանությունը կարող կլինեն հրաման տալ Կարմիր բանակի զորամասերին մաքրելու Զանգեզուրն ու Ղարաբաղը, եթե ապստամբները չհրաժարվեն ազգայնական ավերումներից և թուրքերի կոտորածից:

Եթե այդ բոլորը հայտնի չէ քեզ, ապա ուրեմն այդ ամենը թաքցրել են քեզանից ապստամբության ղեկավարներն ու պարագլուխները: ...Իսկ եթե դու կատարյալ գիտակցությամբ սուրը ձեռքիդ դեմ ես գնում քո աշխատավոր եղբայրներին, ...ապա իմացած լինես, որ այն ժամանակ, չնայած մեր բոլորի ցանկությանը՝ հաշտվելու քեզ հետ, մենք ստիպված պիտի լինենք վարվել քեզ հետ անողորմ կերպով»[1]:

Այնուհետև հետևում էր ամփոփումը.

«Ռուսական Կարմիր բանակը, որը ջարդել է բարոն Վրանգելի տասնյակ հազարավոր սպիտակ գվարդիայի բանդաները, **կարող կլինի պաշտպանել նաև Խորհրդային Ադրբեջանը»** (ընդգծումը մերն է:– *Ա. Ս.*)[2]:

Սիսիանից վերադառնալով Գորիս՝ Նժդեհը անպատասխան թողեց ինչպես պատգամավորության բերած առաջարկը, այնպես էլ 28-րդ դիվիզիայի քաղբաժնի կողմից Շուշիից ուղարկված հայտարարությունը:

28-րդ դիվիզիայի հրամանատարությունը ստանձնած Սեմյոնովը և նրա զինվորական կոմիսարը նոյեմբերի 26-ին Զաբուղից Զանգեզուրի ապստամբական ուժերի հրամանատար, զնդապետ Նժդեհին ուղարկեցին գրություն, որտեղ կրկին առաջարկում էին վերջ տալ ապստամբական շարժմանը և խնդիրը վերջացնել խաղաղությամբ:

Գրության մեջ ասված էր, որ մի կողմից՝ Զանգեզուրի ու Ղարաբաղի հայության, մյուս կողմից՝ Կարմիր բանակի միջև ծագած կռիվները հետևանք էին այն բանի, որ բնակչությունը սխալ պատկերացում ուներ խորհրդային իշխանության իսկական նպատակների, մասնավորապես նրա ազգային քաղաքականության մասին:

Հանդես գալով ոչ միայն Ռուսաստանի խորհրդային հանրապետության, այլև խորհրդայնացված Ադրբեջանի կառավարության անունից՝ դիվիզիայի

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 155, թ.1:

[2] Տե՛ս նույն տեղում:

հրամանատարը և կոմիսարը հայտարարում էին, որ խորհրդային իշխանությունը վճռել է խաղաղ, բայց ամենակտրուկ միջոցներով վերջ դնել ռազմական գործողություններին: Նրանք Նժդեհին առաջարկում էին ընդունել նախնական համաձայնության հետևյալ երկու կետերը.

1. անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները և սկսել բանակցություններ,
2. բանակցելու համար ներկայացուցիչներ ուղարկել Զաբուղ գյուղը, որտեղ կժամաներ նաև Կարմիր բանակի հրամանատարության ներկայացուցիչները:

Միաժամանակ խորհրդային կողմից ռազմական գործողությունները դադարեցնելու համար դրվում էին հետևյալ պայմանները.

ա) անմիջապես լուծարել ապստամբական զորամասերը և զինվորներին ուղարկել իրենց գյուղերը՝ խաղաղ աշխատանքի,
բ) վերջ դնել մահմեդականների նկատմամբ ամեն տեսակ թշնամական գործողություններին,
գ) լիովին զինաթափվել և ձեռքի տակ գտնված ու պահեստներում եղած ամբողջ զենքը հանձնել ՌՍՖԽՀ Կարմիր բանակի մարմիններին, «որովհետև ազգայնական հողի վրա տեղի ունենալիք նորանոր կոտորածներին վերջ կդրվի միայն այն ժամանակ, երբ հայ և մահմեդական ժողովուրդներն ամբողջովին կզինաթափվեն»,
դ) վերադարձնել Կարմիր բանակի զորամասերից խլված ամբողջ գույքը, հիվանդներին, վիրավորներին և գերի խորհրդային զինվորներին:

Գրության մեջ, առանց դիվանագիտություն բանեցնելու, փաստորեն ակնարկված էր, որ Զանգեզուրն Ադրբեջանինն է: «Վիճելի» տարածքն արդեն դիտվում էր իբրև Խորհրդային Ադրբեջանի կալվածք, և խոստումներ էին տրվում, թե Զանգեզուրի հայերի հետ ադրբեջանական կառավարությունը լավ կվերաբերվի:

«ՌՍՖԽՀ Կարմիր բանակի զինվորական հրամանատարությունը և Ադրբեջանի խորհրդային իշխանությունը,– ասվում էր գրության մեջ,– երաշխավորում են ապահովել հայ ժողովրդի խաղաղ աշխատանքը և ապստամբների անարգել վերադարձը իրենց բնակավայրերը»:

Գրությունը վերջանում էր սպառնալիքով, որ եթե Զանգեզուրը չենթարկվի Կարմիր բանակի թելադրանքին, ապա դրանով իսկ կործանարար հարված կհասցնի Հայաստանին. «Ներկա րոպեին Ռուսաստանի խորհրդային կառավարությունը միջնորդի դեր է կատարում՝ բանակցություններ վարելով Հայաստանի և թուրք-հեղափոխական զորքերի միջև՝ հաշտություն կնքելու համար:

Մի՛ խանգարեք այդ գործը, մի՛ մղեք սակավ գիտակից հայ ժողովրդին դեպի ապարդյուն կռիվներ, որովհետև ձեր հաջողությունները չեն կարող

պայմաններ թելադրողի հաջողություններ լինել»[1]:

Ստանալով Սեմյոնովի և նրա զինվորական կոմիսարի գրությունը՝ Նժդեհը նոյեմբերի 30-ին տվեց դրա պատասխանը: Պաշտպանելով հաշտության բանակցություններ սկսելու առաջարկը՝ Զանգեզուրի ապստամբ զորքերի հրամանատարը, սակայն, դեմ էր արտահայտվում բանակցությունները Ադրբեջանի տարածքում (Զաբուղում) սկսելուն և դրա փոխարեն առաջարկում էր Գորիս քաղաքը, ուր և հրավիրում էր Կարմիր բանակի լիազոր ներկայացուցիչներին:

Այնուհետև Նժդեհը նշում էր, որ բոլշևիկները Զանգեզուրում կրած իրենց դառը պարտության պատճառը զուր էին փնտրում գավառի ապստամբ հրամանատարության գործունեության մեջ: Հիմնական պատճառը ժողովուրդն էր, նրա անզիջում կռիվը իր ազատության համար: Զանգեզուրցիներն իրենց փորձով համոզվեցին, որ հանձին Կարմիր բանակի՝ «հեղափոխական» դրոշով գավառ էր մտել մի ուժ, որը, թիկունք կանգնած խավարամոլ «հեղափոխական» թրքությանը, աննրելի բարբարոսություններ էր կատարել խաղաղ հայ բնակչության նկատմամբ: Կապանի Զեյվա ու Արծվանիկ, Գենվազի Շվանիձոր, բուն Զանգեզուրի Յայջի գյուղերի օրինակներով Նժդեհը ցույց էր տալիս, թե բոլշևիկները զանգվածային ինչպիսի սպանություններ, թալան ու բռնություններ էին կատարել գրավված հայկական բնակավայրերում: Հենց դա էր պատճառ դարձել զանգեզուրցիների ըմբոստացմանը, որոնք, պատվավոր մահը գերադասելով անպատիվ կյանքից, կռվի էին ելել թուրք-բոլշևիկյան ջարդարարների դեմ: «Ձեր տեռորի հունձը մեծապես արագացրեց ձեր պարտությունը»,– շեշտում էր նա:

Նժդեհը մեղադրում էր բոլշևիկյան իշխանություններին, որոնք քաղաքական կեղտոտ գործարքների մեջ էին մտել արևմտահայության արյունալի եղեռնը կազմակերպողների՝ երիտթուրքական պարագլուխների հետ, բացահայտորեն աջակցում էին քեմալական զավթիչներին՝ թուրքական քաղաքականության հայաջինջ ծրագրերը իրականացնողներին: Ուստի, գրում էր նա, բոլշևիկները բարոյական ոչ մի իրավունք չունեին ներկայանալու աշխատավորությանը իբրև հեղափոխականներ, հանդես գալու «սրբազան սոցիալիզմի» անունից:

Բոլշևիկյան իշխանություններին մեղադրելով Ադրբեջանի՝ հեղափոխական դրոշով քողարկված հետադեմ թրքությանը պաշտպան կանգնելու մեջ՝ Նժդեհը գրում էր. «Դուք զինաթափել եք հայ աշխատավորությանը և շարունակում եք այդ տխուր գործը, երբ մինչև ատամները զինված մուսավաթական Ադրբեջանը հարմար առիթի է սպասում Զանգեզուրը առանց հայի թողնելու:

---

[1] «Արնոտ գիրք», էջ 74-77:

Ձեզ՝ խաբվածներիդ համար Ադրբեջանը խորհրդային է, իսկ հայ աշխատավորության համար դա մնում է նույն ռեակցիոն հայահալած մուսավաթական «հանրապետությունը», որի դիվիզիաները դեռ տարին չէ լրացել, ինչ փորձեցին Զանգեզուրը հրի և սրի մատնել, սակայն Զաբուղում ետ քաշվեցին»*:

Ապա, անդրադառնալով բոլշևիկ-քեմալական դաշինքին և զինակցությանը, Նժդեհը գրում էր. «Մոսկվան և դուք բոլորդ խաբված եք քեմալականներից... Հեղափոխական լոզունգներով Քեմալը և ընկերությունը քողարկել են իրենց պանիսլամական ամենահետադեմ նպատակները: Պանիսլամականների, որոնք շատ են Ձեր դրոշակի տակ, նպատակն է՝ միանալ Ադրբեջանի հետ, տիրել Բաքվին, կապվել Դաղստանի հետ և քշել ռուսներին Հյուսիսային Կովկասից»[1]:

Նժդեհի այս խոսքերն այնքա՜ն այժմեական են, որ կարծես այսօր են ասված: Զանգեզուրի ապստամբության առաջնորդն իր գրության մեջ շրջանցել էր կարմիրբանակայիններին ու գրաված զենքն ու զինամթերքը վերադարձնելու պահանջը: Ո՛չ գերիները, ո՛չ զենքն ու զինամթերքը չվերադարձվեցին:

1919 թ. վերջերից սկսած՝ Նժդեհի անունը հոլովվում էր բոլշևիկյան մամուլի օրգաններում, հատկապես զինվորական թերթերի էջերում, նրա մասին անհատնում ատելությամբ և անզոր կատաղությամբ էին խոսում ու գրում Ադրբեջանում՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսին բնորոշելով «դահիճ», «դաշնակ ոճրագործ», «արկածախնդիր ավազակ» և նմանատիպ ուրիշ բառերով ու բառակապակցություններով: Ուստի Սեմյոնովին և բրիգադի կոմիսարին ուղղած գրության վերջում Նժդեհը հարմար էր գտել մի քանի խոսք ավելացնել իր մասին:

«Ես,– գրում էր նա,– որին այնքան հայհոյում են ձեր թերթերն ու թռուցիկները, ավելի շեշտված ու հին սոցիալիստ եմ, քան ձեզ մոլորեցնող նարիմանովներն ու կարաևները: Հանուն իմ հեղափոխական հավատամքի՝ եղել եմ բոլոր բանտերում՝ Արաքսի ափից մինչև Պետրոգրադ: Ավելի քան երեք տարի ես շղթաներ եմ մաշել բանտերում ու աքսորավայրերում: Կռվել եմ և կռվելու եմ բռնության դեմ՝ ինչ քողի տակ և ինչ գույնով էլ որ դա երևան գա՝ ճնշելու հեղափոխական աշխատավորությանը: Կռվել եմ թուրք աշխատավորության ազատության համար Պարսկաստանում, Բալկաններում՝ մակեդոն ժողովրդի փրկության համար, կռվում եմ և այսօր: Եթե իմ օգնության կարիքն երբևիցե զգացիք, դիմեք, կը հասնեմ»[2]:

---

* Նժդեհը նկատի ունի 1919 թ. նոյեմբերի՝ մուսուլմանական Ադրբեջանի 15 հազարանոց բանակի հարձակումը Զանգեզուրի վրա և նրա կրած ջախջախիչ պարտությունը գավառի հերոս պաշտպաններից:

[1] «Արնոտ գիրք», էջ 90:

[2] Նույն տեղում, էջ 81:

Այն պահին, երբ Նժդեհը գրում էր այս պատասխանը, Հայաստանում ծայր էին առել բախտորոշ իրադարձություններ: Հայաստան ներխուժած թուրքական զորքերը նորանոր տարածքներ էին գրավում: Նրանց ձեռքն էր անցել Կարսը, ապա ընկել էր Ալեքսանդրապոլը: Թշնամին պատրաստվում էր շարժվել հանրապետության մայրաքաղաք Երևանի վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարության հետ վարած բանակցությունների ժամանակ՝ 1920 թ. նոյեմբերի 19-ին, Բորիս Լեգրանն ասել էր, որ խորհրդային կառավարությունը բավականաչափ ուժեր չուներ մտցնելու Այսրկովկաս և հարկադրաբար թուրքերին սպառնալու՝ Հայաստանի վրա նրանց հարձակումը կանգնեցնելու նպատակով[1]:

Մի քանի օր հետո Թիֆլիսում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Ա. Շեյմանին գրած նամակում Գ. Չիչերինը, անդրադառնալով Հայաստանի վրա թուրքերի հարձակմանը, նշել էր. «Թուրքերը հարձակվում էին առանց մեզ հետ ունենալու որևէ համաձայնություն, հենց նրա համար, որ մենք այն ժամանակ թույլ էինք»[2]:

Ճշմարտությունից հեռու այս հաստատման մեջ ճշմարիտը միայն այն էր, որ թուրքերի հետ համաձայնության եկած բոլշևիկյան իշխանությունները, ինչպես ասվեց, չէին սպասում իրադարձությունների այդպիսի կտրուկ շրջադարձի և Հայաստանի արագ պարտությանը:

Այս ամենը Նժդեհի համար անսպասելի չէր: Կանխատեսելով թուրք-ադրբեջանական զավթիչների հետագա դավադիր քայլերը՝ նա գրում էր. «...Նուրի և Խալիլ փաշաները, Էդիֆ և Խալիլ բեյերը, իրենց հենարան ունենալով Ջիբրայիլ-Կարյագինը՝ հարավ-արևմուտքում, երկրորդ տարին էր, որ կաշվից դուրս էին գալիս՝ **Սյունիքի հայության գերեզմանի վրայով կամուրջ ձգելու Ադրբեջանի և Տաճկաստանի միջև»**[3]:

Առավել անտանելին, սակայն, այն էր, որ այդ կործանարար քաղաքականության պաշտպանությամբ կամ հավանությամբ հանդես էին գալիս հայ բոլշևիկները, համենայն դեպս՝ նրանց մի մասը:

«Զանգեզուրի կոմունիստ» թերթը գրում էր, որ Խորհրդային Ռուսաստանը պետք է ունենա անմիջական ու մշտական կապ Տաճկաստանի հետ, որի ճանապարհը Զանգեզուրն է: «Քեմալը,– նշում էր թերթը,– միևնույն ժամանակ աշխատում է իր բանակը միացնել Ռուսաստանի և Ադրբեջանի Կարմիր բանակներին, որպեսզի ընդհանուր ուժերով ջախջախենք անգլիական, ֆրանսիական և մյուս՝ արևելքի ժողովուրդներին հարստահարող կապիտալիստներին: Ահա սրա համար է, որ բուրժուական կուսակցություն-

---

[1] Տե՛ս Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, թ. 3, էջ 90:

[2] ՍՔՊՌՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 32, թ. 2:

[3] **Գ. Նժդեհ**, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 78:

ների Հ. Յ. դաշնակցությունն ու ուրիշները, այդպես տենդորեն աշխատում են **Խորհրդ. Ադրբեջանի գավառներում ապստամբություն առաջացնել** (ընդգծումը մերն է:– *Ա. Ս.*): Մեր բանակն ու Քեմալը բոլոր ազգությունների աշխատավորության համար ազատություն են բերում: Վա՛յ նրան, որ զենք կը բարձրացնի Խորհրդ. Ադրբեջանի դեմ»[1]:

Ինչպես տեսնում ենք, Զանգեզուրը ևս, ինչպես և Ղարաբաղը, կրկին հայտարարված էին Խորհրդային Ադրբեջանի գավառներ:

[1] «Զանգեզուրի կոմունիստ», 1920, 20 նոյեմբերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Զանգեզուրից խորհրդային զորքերի ժամանակավոր նահանջից մեկ շաբաթ հետո՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանի հյուսիսային մասում՝ Քարվանսարայի (Իջևանի) գավառում, կյանքի կոչվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն՝ Սարգիս Կասյան (նախագահ), Ավիս Նուրիջանյան, Ալեքսանդր Բեկզադյան, Իսահակ Դովլաթյան, Ասքանազ Մռավյան, Սահակ Տեր-Գաբրիելյան կազմով: 1920 թ. նոյեմբերի 29-ին կոմիտեն հանդես եկավ Հայաստանի աշխատավորությանն ուղղված հռչակագրով՝ Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հռչակելու մասին:

Հռչակագրի մեջ ասված էր, որ Ռուսաստանի խորհրդային իշխանությունը բազմիցս ցանկացել է «ազդել դաշնակցական կուսակցության վրա, նրան խլել Անտանտի գիշատիչներից» և օգնության ձեռք մեկնել Հայաստանի բազմատանջ ժողովրդին: Բայց «խորհրդային իշխանությունը մինչև այժմ այդ ժողովրդին զգալի աջակցություն չկարողացավ ցույց տալ, որովհետև զբաղված էր քաղաքացիական կռվի կարևոր ճակատներում, որ կլանում էին նրա բոլոր ուժերը: Լեհաստանի հետ կնքած հաշտությունը և ցարական վերջին գեներալ Վրանգելի չտեսնված պարտությունը այժմ ազատում են Կարմիր բանակը: Խորհրդային Ռուսաստանն այժմ ապստամբ ժողովրդի հրավերով հնարավորություն ունի եղբայրական օգնություն ցույց տալու նրան ու Հայաստանը Անտանտի գործակալների՝ դաշնակցական կառավարությունից փրկելու»[1]: Ապա հռչակագրում նշված էր, որ Խորհրդային Ռուսաստանը ներկայումս ի վիճակի է «երկրի առողջ ուժերը հավաքելու, վերակենդանացնելու և Խորհրդային Հայաստանի խաղաղ աշխատանքի հիմքը դնելու: Ազատ Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշը հուսահատության ու դառնությունների անդունդից դուրս կբերի նրա աշխատավոր զանգվածներին»[2]:

Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն հույս ուներ, որ «Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելով՝ մեկընդմիշտ վերանալու են այն վիճելի հարցերը, որոնք պատճառ են դարձել երկու երկրների (Հա-

---

[1] «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 404:

[2] Նույն տեղում:

յաստանի և Ադրբեջանի:– *Ա. Ս.*) բանվորների ու գյուղացիների արյան հեղեղներ թափվելուն: Այս համոզումով մենք մեր հեղափոխական ողջույնն ենք ուղարկում Ադրբեջանի աշխատավոր ժողովրդին, Բաքվի պրոլետարիատին՝ իբր Անդրկովկասի սոցիալիստական հեղափոխական առաջապահ գնդի, ողջույններ ենք ուղարկում նաև Ադրբեջանի հեղափոխական կոմիտեին:

...Ներկա պայմաններում ու լուրջ րոպեին ընդունելով իշխանության ամբողջ պատասխանատվությունը, մենք Հայաստանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում մեզ աջակցել բանվորագյուղացիական իշխանության թշնամիների դեմ կռվելու և կանչում խորհրդային անդուլ ստեղծագործական աշխատանքի»[1]:

Հայաստանում խորհրդային իշխանության հռչակման կապակցությամբ նոյեմբերի 30-ին Հայաստանի հեղկոմը Դիլիջանից ողջույն ուղարկեց Լենինին, որով նրան տեղյակ էր պահում կատարված իրադարձության մասին: Կատարելով ապստամբների կամքը՝ ասված էր ողջույնի մեջ. «Մենք՝ կազմելով Հեղկոմ, առաջ ենք շարժվում այն կատարյալ հույսով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարարը՝ սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական Կարմիր բանակը, մեզ իրական օգնություն ցույց կտա մեր այս դժվարին պայքարում: Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների անունից մենք խնդրում ենք ժողկոմխորհրդին ցույց տալ այդ օգնությունը»[2]**:**

Խորհրդային կառավարությունն անմիջապես պաշտոնապես արձագանքեց Հայաստանի հեղկոմի խնդրանքին: Հայաստանի բոլշևիկներին օգնության ուղարկվեցին Կարմիր բանակի զորամասեր: Նոյեմբերի 30-ին խորհրդային դարձավ Դիլիջանը, հաջորդ երկու օրերին՝ Ելենովկան (այժմ՝ Սևան) և Հրազդանը, հետո՝ Երևանը:

Լենինը պատասխան հեռագիր ուղարկեց Երևան՝ Հայաստանի ռազմհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի անունով, որտեղ ասված էր. «Հանձին Ձեզ՝ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Խորհրդային Հայաստանին»[3]:

Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչության մամուլի բյուրոն դեկտեմբերի 5-ին Մոսկվայից ստացել էր հետևյալ հաղորդագրությունը, որն անմիջապես հանձնվել էր տպագրության. «Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը, Հայաստանում կատարված հեղաշրջման և այնտեղ խորհրդային իշխանություն հաստատվելու մասին լուրը ստանալուց հետո,

---

[1] «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 405:

[2] Նույն տեղում, էջ 406:

[3] Նույն տեղում, էջ 408:

անմիջապես որոշում է կայացրել Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի վիճելի մարզերը հանձնել Խորհրդային Հայաստանին»[1]:

Հայաստանում խորհրդային կարգերի հաղթանակը ողջունեց Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը: 1920 թ. դեկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում խորհրդային կարգերի հաղթանակին: Նիստում հանդես եկավ Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը, որը կարդաց Հեղկոմի հռչակագիրը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաղթանակի առթիվ*: Այնտեղ ասված էր, որ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը ուրախության զգացումով է դիմավորում Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման լուրը: Ադրբեջանում մուսավաթականները և Հայաստանում դաշնակցականները Անտանտի կառավարությունների թելադրանքով հայ և ադրբեջանցի ժողովուրդներին դրդեցին մեկը մյուսի դեմ՝ ստեղծելով «ղարաբաղյան, զանգեզուրյան, նախիջևանյան և այլ տարածքային հարցեր, որոնք չէին կարող լուծվել դաշնակցական-մուսավաթական ռեակցիայի ջանքերով»: Այնուհետև Ն. Նարիմանովը կարդաց հռչակագրի այն տողերը, որտեղ ասված էր. «Խորհրդային Ադրբեջանը, ընդառաջ գնալով եղբայրական աշխատավոր հայ ժողովրդի պայքարին՝ ընդդեմ դաշնակների իշխանության, որոնք թափել և թափում են Հայաստանի և Զանգեզուրի սահմաններում մեր լավագույն կոմունիստների անմեղ արյունը, հայտարարում է, որ այսուհետև ոչ մի տերիտորիալ հարց չի կարող երկու դարավոր հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների փոխադարձ արյունահեղության պատճառ դառնալ. Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տերիտորիաները Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասն են, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լիակատար իրավունք, ռազմական բոլոր գործողությունները Զանգեզուրի սահմաններում դադարեցվում են, իսկ Խորհրդային Ադրբեջանի զորքերը դուրս են բերվում»[2]:

Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստին մասնակցում էր Սերգո Օրջոնիկիձեն: Երբ Ն. Նարիմանովը հրապարակեց հռչակագիրը, Օրջոնիկիձեն խոսք վերցրեց և զգայացունց ճառ արտասանեց:

«Ընկերնե՛ր,– ասաց նա,– ավելի երջանիկ դահլիճ, քան այս դահլիճն է, հազիվ թե կարելի է գտնել մեկ այլ տեղ: Ընդամենը յոթ ամսվա ընթացքում Բաքու քաղաքի բանվորները բազմիցս հավաքվել են նրա պատերի ներսում՝ հանդիսավոր տոների համար:

Այսօր այս նույն դահլիճում Բաքվի պրոլետարիատը ողջունում է ծնունդ

---

[1] “Слово”, 7 декабря, 1920.

* Հռչակագիրը լույս տեսավ հաջորդ օրը՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին, Բաքվի՝ հայերեն «Կոմունիստ» թերթում:

[2] «Կոմունիստ» (Բաքու), 1920, 2 դեկտեմբերի:

առնող Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը (ծափահարություններ):

Բազմաչարչար հայ ժողովուրդը, Հայաստանի աշխատավոր զանգվածները դաշնակների կառավարման հետևանքով նետվել էին իմպերիալիստական պատերազմի անդունդը՝ նրա բոլոր սարսափներով հանդերձ: Այդ ժողովուրդը ներկայումս բարձրացնում է ապստամբության կարմիր դրոշը և մեզ միանում խորհրդային իշխանության կարմիր դրոշի ներքո: Ավելի մեծ հաղթանակ մենք չէինք կարող ակնկալել: Ամեն մի ժողովուրդ, որը պատրաստվում է ազատվել դարավոր ճնշումից, այսուհետև բարձրացնում է խորհրդային իշխանության դրոշը, քանի որ մեր դրոշը ճնշվածների դրոշն է: Ամեն մի ճնշված ժողովուրդ, ամեն մի ճնշված աշխատավոր դասակարգ բարձրացնում է այդ դրոշը և ընթանում մեզ հետ միասին»:

Այնուհետև, անդրադառնալով Ն. Նարիմանովի պաշտոնական հայտարարությանը «վիճելի» երեք երկրամասերի մասին, Ս. Օրջոնիկիձեն ասում է. «Խորհրդային Ադրբեջանը, որն այսօր հանդես է գալիս ի դեմս ընկ. Նարիմանովի, ապացուցեց ամբողջ աշխարհին և ամենից առաջ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին, որ միայն խորհրդային իշխանությունն է ընդունակ լուծելու ազգամիջյան թշնամանքի հետ կապված բոլոր անիծյալ հարցերը, որոնք առկա էին այստեղ և որոնք շատ ու շատ են ամբողջ աշխարհում:

Շատ հատկանշական է ընկ. Նարիմանովի ելույթը: Նա կարդաց մեզ համար իր հռչակագիրը: Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը այդ բառերի բովանդակությունը չիրազեկված ռուսի ականջի համար բացարձակապես ոչինչ չեն նշանակում: Մի ինչ-որ Զանգեզուր. մերկ լեռներ, ո՛չ հաց, ո՛չ ջուր: Այնտեղ ոչինչ չկա: Մի ինչ-որ Նախիջևան՝ ճահիճ, մալարիա և ուրիշ ոչինչ: Մի ինչ-որ Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ կա այդ Ղարաբաղում: Ոչինչ էլ չկա: Վերցրեք անպտուղ հողերը Հայաստանի համար: Կարծես թե Խորհրդային Ադրբեջանը ազատվում է ավելորդ բեռից: Բայց ոչինչ: Այդ գավառներում, այդ անպտուղ հողերում թաքնված է այսպես կոչված հայ-մուսուլմանական հարցի հանգույցը, այստեղ, Այսրկովկասում, այն հարցի, որը արհավիրքի աղբյուր դարձավ, այն հարցի, որը մուսուլմանական աշխատավորին նետում էր հայ աշխատավորի վրա՝ փոխադարձ ոչնչացման համար: 1905 թվականից սկսած թափվում է այդ դժբախտ ժողովուրդների արյունը: Հազարավոր մարդիկ անգթաբար ոչնչացվում էին: Ես ինքս ականատես եմ եղել, թե ինչպես էին դժբախտ երեխաներին, որոնք ոչ մեկին վնաս չեն տվել, անդունդ նետում, և ինչպես էին դժբախտ, անպաշտպան կանանց ջրհորներ նետում, որպեսզի այնտեղ սոսկալի տանջանքներով նրանք մահանան: Այդպես են արել մուսուլմանները մուսավաթականների առաջնորդությամբ և հայերը՝ դաշնակցականների առաջնորդությամբ:

Եվ ահա այսօր Ադրբեջանական Հանրապետության ղեկավարը դուրս է

գալիս և ասում. «Այդ սարսափելի հարցը այլևս գոյություն չունի»: (Աղմկալից ծափահարություններ): «Այլևս չկա թշնամանք մուսուլմանների և հայերի միջև: Մուսուլմաններն ու հայերը, այդ աշխատավորները, այսուհետև դառնում են հարազատ եղբայրներ՝ խորհրդային իշխանության կարմիր դրոշի ներքո» (ծափահարություններ): Այստեղ ընթերցված այդ ակտը մեծագույն կարևորություն ունեցող ակտ է, պատմական մի ակտ, որը նախադեպ չունի մարդկության պատմության մեջ»[1]:

Այնուհետև իր ճառում հակիրճ անդրադառնալով Հայաստանի խորհրդայնացման ընթացքին՝ Օրջոնիկիձեն նշում էր, որ դա տեղի էր ունենում խաղաղ, անարյուն ճանապարհով: Ս. Օրջոնիկիձեն ճիշտ էր նկատում, որ բոլշևիկները Հայաստանում իշխանությունը վերցրել էին առանց կռվի:

1920 թ. դեկտեմբերի 2-ին համաձայնագիր ստորագրվեց ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև: Համաձայնագիրը Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից ստորագրեց Բորիս Լեգրանը, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրեցին Դրաստամատ Կանայանը (Դրո) և Համբարձում Տերտերյանը[2]: Այդպիսով, Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ ոչ թե նոյեմբերի 29-ին, այլ դեկտեմբերի 2-ին:

Համաձայնագրով Հայաստանը հայտարարվում էր Անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմվում էր ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե (Ռազմհեղկոմ), որին փոխանցվում էր Հայաստանի բովանդակ իշխանությունը: Ռազմհեղկոմի կազմի մեջ էին մտնում հինգ մարդ Կոմունիստական կուսակցության կողմից և երկու ձախ դաշնակցականներ, որոնց թեկնածություններին պետք է հավանություն տար Կոմունիստական կուսակցությունը:

Ռուսաստանի խորհրդային կառավարությունն ընդունում էր, որ անվիճելիորեն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության մաս են կազմում հետևյալ հողերը՝ Երևանի նահանգը՝ իր բոլոր գավառներով (նահանգի մեջ էին մտնում նաև Նախիջևանն ու Սուրմալուն: – *Ա. Ս.*), Կարսի շրջանի մի մասը, Գանձակ նահանգի Զանգեզուր գավառը, նույն նահանգի Ղազախ գավառի մի մասը՝ համաձայն 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրի, ինչպես նաև Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք մինչև 1920 թ. հոկտեմբերի 28-ը Հայաստանի տիրապետության տակ էին:

Ստորագրված փաստաթղթով կողմերը համաձայնության էին եկել, որ

---

[1] «Կոմունիստ» (Բաքու), 1920, 2 դեկտեմբերի, տե՛ս նաև **Հ. Օրջոնիկիձե**, Статьи и речи, т. I, էջ 140-141:

[2] Տե՛ս **Ս. Վրացեան**, Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, թիվ 1, էջ 72-73:

հայկական բանակի հրամանատարական կազմը ոչ մի պատասխանատվության չէր ենթարկվելու այն գործողությունների համար, որ կատարել էր բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը: Նաև համաձայնել էին, որ Դաշնակցություն կուսակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները իրենց կուսակցական պատկանելության համար չէին ենթարկվելու ոչ մի հալածանքի:

Համաձայնագրով խորհրդային կողմը պարտավորվում էր միջոցներ ձեռնարկել և անհրաժեշտ զինվորական ուժեր կենտրոնացնել Հայաստանի խորհրդային հանրապետության անկախությունը պաշտպանելու համար:

Համաձայնագրի վերջին՝ 8-րդ կետով նախատեսվում էր, որ փաստաթուղթը ստորագրելու պահից Հայաստանի Հանրապետության կառավարությունը հեռանում էր իշխանությունից և մինչև Հեղկոմի ժամանումը իշխանությունը փոխանցվում էր Հայաստանի զորահրամանատարությանը, որի գլուխն էր կանգնում Դրոն, իսկ Խորհրդային Ռուսաստանի կողմից այդ զորահրամանատարության կից կոմիսար էր կարգվում Սիլինը[1]:

Նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին, Օրջոնիկիձեն Լենինի անունով ուղարկեց հեռագիր, որտեղ նրան հայտնում էր. «Հենց նոր Երևանից հաղորդում է ստացվել, որ Երևանում հռչակվել է խորհրդային իշխանություն, հին կառավարությունն արձակվել է, ամբողջ իշխանությունը ժամանակավորապես, մինչև Հեղկոմի ժամանումը, հանձնվել է զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի գլխավորությամբ, Հայաստանի զինվորական կոմիսար է նշանակվել Սիլինը: Զորքերին հրաման է տրվել Հեղկոմի տնօրինությանը հանձնվելու մասին: Հեղկոմը ներկայումս Դիլիջանում է, վաղն առավոտյան կմեկնի Երևան: Հեղկոմը ողջույնի հեռագիր է ստացել թուրքական ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիրից և Թուրքիայի ներկայացուցիչ Քյազիմ բեյից: Հեղկոմը Երևան տանող ճանապարհին է: Այսօր Ալեքսանդրապոլից եկած ընկերը հայտնում է, որ քեմալական զորքերի շրջանում տրամադրությունը վերին աստիճանի բարեկամական է մեր նկատմամբ, զորքերը կարմիր կրծքանշաններ են կրում և իրենց Կարմիր բանակային են համարում: Ադրբեջանը երեկ արդեն հայտարարել է Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին»[2]:

Հայաստանի հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը ողջույնի հեռագիր ուղարկեց Բաքու՝ Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին: Այդ հեռագրում ասված էր, որ Հայաստանի հեղկոմը եղբայրական հիացմունքի զգացումով է ընդունել Ադրբեջանական խորհրդային կառավարության 1920 թ. նոյեմբերի 30-ի պատմական ակտը Զանգեզուրի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի մասին:

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, թիվ 1, էջ 73:

[2] Նույն տեղում: «Կոմունիստ» (Բաքու), 1920, 2 դեկտեմբերի:

Ս. Կասյանը շեշտում էր, որ այդ ակտը հարևան երկրների պատմության մեջ նոր, մինչ այժմ չտեսնված փոխհարաբերությունների կենդանի օրինակ էր[1]:

«Կոմունիստ» թերթը, որը սկսել էր լույս տեսնել Երևանում, այդ օրերին տպագրել էր «Վիճելի երկրամասերը» հոդվածը, որտեղ ասված էր. «Մոտ երեք տարվա պատմություն ունի Հայաստանի և Ադրբեջանի վեճը այդ երկրամասերի համար: Որքա՜ն դիվանագիտական ինտրիգներ են լարվել այդ խնդրի շուրջ, որքա՜ն բռնություն է գործադրվել և արյուն թափվել այդ դժբախտ «վեճի» առթիվ»[2]: Նշելով, որ այդ երկրամասերի համար կռիվը սանձազերծել էին դաշնակցականները և մուսավաթականները՝ ելնելով «հայ խոջաների և թուրք աղաների» շահերից, որ հայ-թուրք ազգամիջյան կռիվները նպատակ ունեին ամրապնդելու շահագործող դասակարգի իշխանությունը, որ «Ղարաբաղի և Զանգեզուրի կիրճերում Այսրկովկասյան հակահեղափոխությունը խճճված հանգույց էր ստեղծում», որպեսզի անհնարին դառնար հայ և ադրբեջանցի աշխատավորների համատեղ դաշինքը բուրժուազիայի տիրապետությունը տապալելու պայքարում, թերթը, այնուհետև, խորին համոզվածությամբ շեշտում էր, որ Ադրբեջանում, հետո՝ նաև Հայաստանում, խորհրդային կարգերի հաստատումով «վիճելի» տարածքների հարցը անդառնալիորեն լուծվում էր՝ Խորհրդային «եղբայրական» Ադրբեջանի ղեկավարության և մուսուլման ժողովրդի «բարի կամքով»: «Խորհրդային Ադրբեջանի նոր ակտը գալիս էր վկայելու,– այնուհետև միամտաբար գրում էր «Կոմունիստը»,– թե, հիրավի, «վիճելի» երկրամասերի շուրջը բռնկված պայքարը հայ և թուրք ժողովուրդների «ֆիզիկական գոյության» խնդիր չէր, ինչպես ուզում էին հավատացնել Ադրբեջանի և Հայաստանի տապալված բեգական և բուրժուական կառավարությունները, այլ դրան պաշտպանած դասակարգերի լինել կամ չլինելու հարց: Վեճի առարկա պետք է լիներ և կար թուրք հողատերերի և հայ գյուղացիների միջև, դասակարգային կատաղի պայքար կար, և չէր կարող չլինել, Ադրբեջանի աշխատավորության և Արարատյան իմպերիալիզմի միջև, ինչպես և ընդհակառակը Հայաստանի աշխատավորության և Ադրբեջանի աղալարության միջև: Սակայն այսօր տապալված են և տապալվում են շահագործողների դասակարգը և՛ Հայաստանում, և՛ Ադրբեջանում: Հին վեճը չքանում է, քանի որ չքացել կամ չքանում են նրան ծնունդ տվող դասակարգերն ու կուսակցությունները»[3]:

Հայաստանում խորհրդային իշխանությունը հաստատվեց ներքին և արտաքին չափազանց բարդ իրադրության պայմաններում: Երկիրը քաղաքական խոր ճգնաժամի մեջ էր, տնտեսությունը քայքայված էր ծայրաստիճան,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 4, թ. 13:

[2] «Կոմունիստ» (Երևան), 1920, 6 դեկտեմբերի:

[3] Նույն տեղում, 7 դեկտեմբերի:

սովի ոսկրոտ ձեռքը սեղմում էր տասնյակ հազարավոր մարդկանց կոկորդը: Չկային կամ պակասում էին կյանքի համար ամենաանհրաժեշտ բաները:

Էլ ավելի անմխիթար էր խորհրդային նորաստեղծ հանրապետության արտաքին դրությունը: Թուրքական ռազմամոլները Հայաստանի Հանրապետությունից զավթել էին մեծ տարածքներ, կոտորել խաղաղ հայ բնակչությանը: Փախստականների նոր ալիքը հեղեղել էր երկրի՝ թուրքական արշավանքից զերծ մնացած մասը:

Ահա թե ինչու Հայաստանում տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջումը նոր էջ էր հայ ժողովրդի ողբերգական պատմության մեջ. այն իրենով նշանավորում էր հայության համար մի նոր, բազում հարցականներով լի ժամանակաշրջանի սկիզբը: Ժողովրդի տարբեր հատվածներում և խավերում գիտակցում էին, որ ստեղծված պայմաններում նոր իշխանությունը թերևս միակ ուժն էր, որ կարող էր հայ ժողովրդին դուրս բերել ահավոր կացությունից:

Դրոյի և կոմիսար Սիլինի՝ դեկտեմբերի 2-ի համատեղ հատուկ հրամանով սկսվեց Հայաստանի Կարմիր բանակի վերակազմման գործը: Հաստատվում էր զինվորական խիստ կարգապահություն, բանակի ամբողջ հրամանատարական կազմը մնում էր իր տեղում, բայց վերացվում էին զինվորական աստիճանները, այսինքն՝ վերացվում էր բանակի ստորաբաժանումը սպաների, ենթասպաների, շարքայինների, արգելվում էր շքանշաններ կամ տարբերանշաններ կրելը, բացի Կարմիր դրոշի շքանշանից՝ հրամանատարական կազմ նշանակելիս մերժվում էր ընտրականության սկզբունքը, զորամասերում նշանակվում էին քաղաքական կոմիսարներ, որոնց ստորագրության դեպքում միայն կարող էին ուժի մեջ մտնել զինվորական պետերի հրամանները. բոլոր զորամասերը մնում էին իրենց տեղերում և առանց համապատասխան կարգադրության չէին կարող ուրիշ վայրեր տեղափոխվել[1]:

Այդ օրերին Հայաստանի հեղկոմի անունով բազմաթիվ ողջույններ էին գալիս ՌԿ(բ)Կ Այսրկովկասի տարբեր կազմակերպություններից ու մարմիններից, Կարմիր բանակի զորամիավորումներից, աշխատավորության ներկայացուցիչների ժողովներից, ինչպես նաև արտասահմանյան, մասնավորապես տարբեր երկրների հայ գաղութների զանազան կազմակերպություններից և գործիչներից: Ինչ վերաբերում էր Հայաստանի տարբեր վայրերից Հեղկոմին ուղարկված ողջույնի նամակներին, ապա դրանք վավերագրեր են, որոնք ցույց են տալիս, որ ժողովրդի ամենատարբեր հատվածներն ու խավերը, այլ ելք չունենալով, իրենց ապրելու և գոյատևելու հույսերը իսկապես որ կապում էին բոլշևիկյան հեղաշրջման հետ:

1920 թ. դեկտեմբերի 3-ին 11-րդ Կարմիր բանակի՝ Զանգեզուրից նահանջած 28-րդ դիվիզիայի զորամասերի ներկայացուցիչները, Հայաստանում

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 411-412:

խորհրդային իշխանության հաստատման առթիվ Շուշիում հավաքվելով հանդիսավոր նիստի, ողջույնի նամակ հղեցին Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանին[1]: Նույն օրը տեղի ունեցավ Շուշի քաղաքի աշխատավորների և 28-րդ դիվիզիայի զորամասերի ներկայացուցիչների միացյալ նիստ, որը ողջույն հղեց Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին: Վերհիշելով Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի մուսավաթական կառավարության քաղաքականությունը՝ նիստի մասնակիցները նշում էին. «Այն հանգույցը, որ մուսուլմանական կառավարությունը հյուսել էր Հայաստանի հարավում, կտրել է Հայաստանի գիտակից պրոլետարիատի հեղափոխությունը»[2]:

Դեկտեմբերի 5-ին Կովկասյան ռազմաճակատի հեղափոխական խորհրդի նախագահ Սերգո Օրջոնիկիձեն, 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերը և բանակի հեղափոխական խորհրդի անդամ Միխայլովը ռազմաճակատի հեղափոխական խորհրդի անունից Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առթիվ Հայաստանի հեղկոմին ողջույն ուղարկեցին, որում մասնավորապես ասված էր. «Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի ճնշված ազգերի և աշխատավոր մասսաների ազատագրման համար միշտ պայքարող Կարմիր բանակը խոնարհում է իր զինադրոշները պրոլետարական ինտերնացիոնալի շարքերը մտնող Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության առաջ»[3]:

Դրանից մեկ օր առաջ՝ դեկտեմբերի 4-ին, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առթիվ «Պրավդա» թերթում լույս տեսավ Իոսիֆ Ստալինի «Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը» վերնագրով հոդվածը, որտեղ նա, հերթականությամբ նկարագրելով 1920 թ. նոյեմբերի վերջերին Հայաստանում ծավալված իրադարձությունները, մասնավորապես նշում էր, որ «դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանը հոժարակամ հրաժարվում է վիճելի գավառներից և հայտարարում է Զանգեզուրը, Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին»: Ապա հայտարարելով, թե «Հայաստանի և նրան շրջապատող մուսուլմանների միջև եղած դարավոր թշնամությունը լուծվեց մեկ հարվածով», Ստալինը, **«հայկական պրոբլեմը»** բառակապակցությունը դնելով չակերտների մեջ, գրում էր, որ այդ պրոբլեմը, «որի վրա ապարդյուն գլուխ էին ջարդում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, կարողացավ լուծել միայն խորհրդային իշխանությունը»[4]:

Այսպիսով՝ Զանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու հարցերը կարծես թե սկզբունքորեն լու-

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 412:

[2] Նույն տեղում, էջ 413:

[3] Նույն տեղում, էջ 416:

[4] **Ի. Ստալին**, Երկեր, հատոր 4, Երևան, 1948, էջ 458-459:

ծում էին ստանում ՌՍՖԽՀ ամենավերին պետական մակարդակով: Վերացված էր հայտարարվում Ադրբեջանի և Հայաստանի միջև եղած հակասությունների հիմքը:

Նման պայմաններում ավելորդ էր դառնում Հայաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչության գոյությունը: 1920 թ. դեկտեմբերի 6-ին Խորհրդային Ռուսաստանի լիազոր Բորիս Լեգրանը հեռագիր հղեց Մոսկվա՝ Գ. Չիչերինին և Բաքու՝ Ս. Օրջոնիկիձեին այն մասին, որ Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի առաքելությունը պահելու հարկ չկա[1]:

Հարց էր առաջանում, թե ինչպես պատահեց, որ Հայաստանի խորհրդային կարգերի հաստատման առթիվ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը, ի դեմս Ն. Նարիմանովի, հանդես եկավ հռչակագրով, որով Զանգեզուրը, Նախիջևանը ու Լեռնային Ղարաբաղը իրավացիորեն հայտարարվեցին Հայաստանի անբաժանելի մասեր: Այդ հարցը առաջանում է բնականաբար, քանի որ մինչ այդ Ն. Նարիմանովը և Խորհրդային Ադրբեջանի ղեկավար գործիչները հանդես էին եկել Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը, ինչպես նաև հայկական Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու պահանջով և այդ պահանջը փորձում էին իրագործել զենքի ուժով: Ինչպե՞ս եղավ, որ մեկ օրում այդպիսի փոխակերպություն տեղի ունեցավ Ադրբեջանի հեղկոմի անդամների մտածելակերպում:

Թե ինչու Ադրբեջանի հեղկոմը, ի դեմս Ն. Նարիմանովի, հանդես եկավ նման հռչակագրով, դա թերևս թելադրված էր որոշ հանգամանքներով:

Վերևում նշվեց, որ Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչությունը Մոսկվայից հեռագիր էր ստացել այն մասին, որ մինչև Ադրբեջանի հեղկոմի հռչակագրի հրապարակումը Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը որոշում էր ընդունել խնդրո առարկա հայկական երեք մարզերը Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին:

Հստակ չէ՝ Մոսկվայում այդպիսի որոշում ընդունվել էր, թե ոչ, բայց կարելի է ենթադրել, որ Այսրկովկասում ազգային-տարածքային հարցերի լուծմանն ուղղված ՌՍՖԽՀ կենտրոնական կառավարության և ՌԿ(բ)Կ գործելակերպում դեռ տեղ ուներ այն միտումը, որ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո իսկապես հնարավոր կդառնար նշված տարածքների հանձնումը Հայաստանին՝ ելնելով ազգային-էթնիկական սկզբունքից և դրանց անվիճելի պատմական պատկանելությունից: Հավանաբար հենց դա էր եղել Ադրբեջանի հեղկոմի կողմից հռչակագրի ընդունման հիմնական պատճառը:

Երկրորդ, պետք է նկատի ունենալ, որ Նարիմանովի «մեծահոգի» հայտարարությունից մի քանի օր առաջ ողջ Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղի մի մասն արդեն ազատագրված էին թե՛ Կարմիր բանակի զորա-

[1] Տե՛ս ՍՔՊՌՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 33, թ. 3:

մասերից և թե՛ ադրբեջանական բանակային կազմավորումներից ու զինված հրոսակախմբերից, որը պարզապես հաշվի չառնել չէր կարող Ադրբեջանի կոմունիստ ղեկավարը: Բացի այդ՝ Հայաստանի խորհրդայնացված մասում նոր իշխանությունը դեռ ամրապնդված չէր, և հայության լայն զանգվածներում շարունակում էր տիրող մնալ ազգային անկախության գաղափարը, որի հիմնական կրողը Դաշնակցություն կուսակցությունն էր: Խորհրդային իշխանությունները կարծում էին նաև, որ այս հռչակագրով կարելի կլիներ երկար կռիվներից հոգնած զանգեզուրցիներին ի վերջո կտրել Նժդեհից, ավելին՝ հակադրել նրան՝ այդպիսով հեշտացնելով գավառում խորհրդային կարգերի հաստատման ընթացքը: Քաղաքական այդ խոշոր ակտով խորհրդային իշխանությունը հույս ուներ խառնել Դաշնակցության խաղաթղթերը և նրան դատապարտել պատմական ասպարեզից հեռանալուն:

Երրորդ, Ադրբեջանում, հատկապես Բաքվում, խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման գործում մեծ դեր էին խաղում հայերը, մասնավորապես բազմալեզու և բազմահազար բանվորության զգալի մասը կազմող հայ բանվորությունը: Խորհրդային իշխանության առաջին շրջանում Ադրբեջանի կոմկուսակցության մեջ և իշխանության մարմիններում մեծ թիվ էին կազմում հայ անվանի գործիչները, որոնց գերակշիռ մասը հանդես էր գալիս Այսրկովկասում ծագած տարածքային բարդ հարցերը ինտերնացիոնալիստական սկզբունքներով լուծելու դիրքերից: Ադրբեջանի հեղկոմը և նրա ղեկավարները, ինչ խոսք, նոր իրադրության պայմաններում չէին կարող հաշվի չնստել այդ հանգամանքի հետ:

Վերջապես, Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի հռչակագիրն ուղղակիորեն առնչվում էր թուրք-հայկական պատերազմի հետևանքներին: Պարտված Հայաստանի տարածքների մի զգալի մասը տիրակալած Թուրքիան արդեն այն ժամանակ՝ 1920 թ. դեկտեմբերին, մտածում էր այն չվերադարձնել Խորհրդային Հայաստանին, օրինականացնել տարածքային գրավումները: Թուրքերի համար հատկապես մեծ նշանակություն ուներ ռազմավարական խիստ կարևոր արժեք ունեցող Կարսի բերդին և հարակից շրջաններին տիրելը: Բացառված չէ, որ մշտական շփումների մեջ գտնվող, միասնաբար խորհրդակցող, հաճախ Բաքվում և այլուր համատեղ գործողությունների ծրագրեր մշակող «բոլշևիկ» քեմալականները և Խորհրդային Ադրբեջանի թուրք ղեկավարները պայմանավորվածություն ձեռք բերած լինեին, որ առայժմ անհրաժեշտ է հայտարարություն անել այն մասին, որ Զանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը հայկական են, որպեսզի հեշտացվեր թուրքերի գործը՝ օրինականացնելու Կարսի, Սարիղամիշի և Հայաստանի մյուս տարածքների զավթումը: Ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, այն բանից հետո, երբ քեմալականներին հաջողվեց 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ՌՍՖԽՀ կառավարության հետ կնքել պայմանագիր, որով նշված հայկական տարածքներն անցնում էին Թուրքիային, այսինքն՝ այն

բանից հետո, երբ արդեն կատարված էր հիմնական խնդիրը, քեմալական-ներ-նարիմանովականներ բլոկը ձեռնարկեց հերթական խնդրի լուծումը, այն է՝ հրաժարվել Ադրբեջանի հեղկոմի տված հռչակագրից, ամեն ինչ անել Զանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անբաժան մասեր հայտարարելու համար:

Թուրք-ադրբեջանական կողմի անդրկուլիսյան աշխատանքների, խարդավանքների և հետագա ագրեսիվ ձգտումների համար նպաստավոր վիճակ էր ստեղծել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Հայաստանի զգալի տարածքում արդեն հաստատվել էր խորհրդային իշխանություն, և Սիմոն Վրացյանի գլխավորած կառավարությունը, փաստորեն, զրկվել էր քաղաքական լիազորություններից, այդ կառավարության և Թուրքիայի միջև Ալեքսանդրապոլում կնքվեց խաղաղության պայմանագիր:

Հարկ է նշել, որ Թուրքիայի հետ պայմանագիր կնքելուն հանրապետության ղեկավարներից ոմանք արդեն հոգեբանորեն պատրաստ էին: Բանն այն է, որ դեռ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին Երևանի կառավարության մեջ ձևավորվել էր գործիչների մի խումբ, որն աշխատանք էր տանում հայությանը հոգեբանորեն Ռուսաստանից օտարելու և Թուրքիայի հետ մերձեցնելու, հայ ժողովրդի ավանդական կողմնորոշումը դեպի Թուրքիա շրջելու օգտին: Այդ տեսակետի պաշտպանն էր, հատկապես Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան): Նրա հետ համախոհ էին ՀՅ դաշնակցության նշանավոր գործիչներ Ռուբեն Տեր-Մինասյանը, Սարգիս Արարատյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Արշակ Ջամալյանը և ուրիշներ[1]:

Այդ ոգով Ա. Չիլինգարյանը մի քանի խմբագրականներ գրեց ՀՅ դաշնակցության պաշտոնաթերթ «Յառաջի» համար: Տարիներ հետո վերհիշելով այդ օրերը՝ նա գրել է. «Մեր քանի մը ընկերները եւ ես մասնավորապես այն համոզումն ունեինք, թե բոլշևիկները երբեք չպիտի ձգտեն, որ մենք ազգային անկախ պետութիւն մը ունենայինք, մինչդեռ թուրքերը ավելի դիւրութեամբ պիտի կրնային հաշտուիլ մեր անկախ պետութեան հետ, թեկուզ ավելի փոքր սահմաններուն մեջ, ինչպես որ հաշտուեցան 1918-ին, երբ կնքեցին մեզ հետ Պաթումի դաշնագիրը»[2]:

Ա. Չիլինգարյանի տեսակետը պաշտպանում էր նաև Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը: «Յառաջում» նա գրել է. «Եթե Հայաստան կամենում է ապրիլ իբրեւ պետութիւն, ամեն կերպ նա պիտի խուսափի լինել մեր մեծ հյուսիսային հարեւանի՝ Ռուսաստանի

---

[1] Տե՛ս **Ռ. Դարբինեան**, Կեանքիս գրքէն (փշրանքներ իմ յուշերէն), «Հայրենիք», 1961, թիվ 3 (421), էջ 27:

[2] Նույն տեղում, էջ 26:

խաղալիքը: Միւս կողմից՝ մեր դարավոր թշնամին՝ Տաճկաստանը, կարող է ի վերջո հաշտուիլ մեր պետական գոյութեան հետ միայն այն ժամանակ, երբ մենք միանգամ ընդմիշտ կը հրաժարուենք ռուսական օրիենտացիայից: ...Իր փրկութեան համար Հայաստան ունի մի ճանապարհ - գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարեւանի՝ թուրքի հետ: Եթե հայ ժողովուրդը կամենում է պահել ֆիզիկական գոյութիւնը հարատեւորեն, **նա պետք է ունենայ ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա**: Եվ եթե հայ ժողովուրդը վերջին համաեվրոպական պատերազմի ժամանակ չունենար ռուսական օրիենտացիա, այլ լիներ թուրքերի հետ, առանց վերապահութեան, ամենայն հավանականութեամբ նա խուսափած կը լիներ կոտորածներից եւ նրա դրությունը վրացիներից էլ ավելի լավ կլիներ: ...Ամեն մի օտար միջամտութիւն, մանավանդ ռուսների միջամտութիւնը, կարող է միայն վնասակար լինել հայ եւ թուրք ժողովուրդների հարատեւ խաղաղեցման համար... Մինչդեռ հայ ժողովուրդը, ինչպես եւ թուրք ժողովուրդը, կարոտ է հարատեւ հաշտութեան: Բավական է, ինչքան խաբուեցանք օտարներից»[1]:

Միանգամայն ճիշտ համարելով այն տեսակետը, որ հայ ժողովուրդն իր ազգային խնդիրները լուծելիս պետք է միայն կամ գերազանցապես հենվի իր սեփական ուժերի վրա, կտրականապես մերժելի են Ա. Չիլինգարյանի, Ս. Վրացյանի և նրանց հետ համախոհ գործիչների՝ հայության կողմից թուրքական կողմնորոշում որդեգրելու անհրաժեշտության մասին մտքերը:

Եվ այսպես, Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքված էր, և դրանով պատերազմը Հայաստանի և Թուրքիայի միջև համարվում էր ավարտված: Պայմանագրի երկրորդ կետում նշված էին Հայաստանի հետ Թուրքիայի սահմանները: Նախիջևանի, Շարուրի և Շահթախտի շրջաններում հետագայում պետք է անցկացվեր հանրաքվե, և դրա միջոցով հաստատվեր հատուկ վարչություն, ըստ որի՝ Հայաստանը պարտավորվում էր չմիջամտել այդ վարչակարգին, «անկախ այն բանից, թե ադմինիստրացիան որ կողմը կթեքվի: Այդ շրջանները ժամանակավորապես գտնվելու են Թուրքիայի պաշտպանության տակ»[2]:

Նշված կետում հատկանշական է «անկախ այն բանից, թե ադմինիստրացիան որ կողմը կթեքվի» արտահայտությունը: Այստեղ նկատի է առնվել երկու կողմ՝ Թուրքիան և Խորհրդային Ադրբեջանը: Երրորդ կողմը Հայաստանն էր: Քեմալականների համար կարևորն այն էր, որ այդ տարածքները չմտնեն Հայաստանի կազմի մեջ՝ անկախ նրանից, թե Հայաստանում ովքեր են լինելու իշխանության գլխին՝ դաշնակցականնե՞րը, թե՞ կոմունիստները: Միաժամանակ նրանց համար կարևոր չէր, թե Շարուր–Նախիջևանն ու

---

[1] «Յառաջ», 1920, 20 նոյեմբերի:

[2] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 684:

Շահթախտը ում կանցնեն՝ Թուրքիայի՞ն, թե՞ Ադրբեջանին: Նրանց համար դա սկզբունքային հարց չէր, սկզբունքայինը այդ տարածքները Հայաստանից խլելն էր:

Պայմանագրի մեջ նշված էր (կետ 11), որ «Թուրքիայի... կառավարությունը պարտավորվում է Շարուր–Նախիջևան–Շահթախտ–Ջուլֆայի վրայով Հայաստանին ազատ տրանզիտ տրամադրել դեպի Պարսկաստան և Մեքքա»[1]: Թուրքական կողմի այս «պարտավորությունը», ինչ խոսք, խաբեություն էր: Չխոսելով արդեն Հայաստանի Հանրապետության տապալված կառավարության մասին՝ ասենք, որ շուտով թուրքական իշխանությունները Հայաստանի խորհրդային կառավարության առջև հարուցելու էին խոչընդոտներ, որպեսզի խափանեն առևտրական կապերը Խորհրդային Հայաստանի և Պարսկաստանի միջև, արգելքներ էին ստեղծելու, որ Հայաստանը չօգտվի Շարուր–Շահթախտ–Նախիջևան–Ջուլֆա–Թավրիզ երկաթգծից: Ինչ վերաբերում էր թուրքական կողմի «մեծահոգությանը», այն է՝ Հայաստանին «ազատ տրանզիտ տրամադրելու» դեպի... Մեքքա, ապա դա առնվազն հնչում էր որպես հեգնանք, քանի որ հայերը՝ իբրև քրիստոնյաներ, բնավ կարիք չունեին հասնելու մուսուլմանական հեռավոր սրբավայրը:

Պայմանագիրն ամբողջությամբ ստորացուցիչ էր հայ ժողովրդի համար. նրա առանձին կետեր ուղղակի ծաղրում էին «պայմանավորվող» մյուս՝ հայկական կողմին: Վերջինս համաձայնում էր (կետ 4) «բացի թեթև և երկրի կարգն ու անվտանգությունը պաշտպանելու համար բավարար քանակությամբ զենք ունեցող ժանդարմերիայից, սահմանների պահպանության համար չունենալ այլ ռազմական ուժ, բացի 1500 զինվորից բաղկացած ջոկատից՝ 8 լեռնային կամ դաշտային հրանոթով և 20 գնդացիրով: Զինապարտությունը Հայաստանում պարտադիր չի լինի... Հայաստանին իրավունք է վերապահվում բերդեր (ամրություններ) կառուցել և այնտեղ դնել ծանր հրանոթներ... այնպիսի քանակությամբ, որը նա հարկավոր կհամարի, պայմանով, որ չդնի 15-սանտիմետրանոց տրամաչափի և հեռահար հրանոթներ, որոնք գործադրվում են ինչպես հայկական, այնպես էլ ուրիշ բանակներում»[2]:

Մի այլ կետով (կետ 10) Հայաստանի՝ արդեն իշխանությունից հեռացած կառավարությունը հանձն էր առնում «ապահովել մուսուլմանական բնակչության իրավունքները հանրապետության տերիտորիայում և մուսուլմանական բնակչության կրոնական ու կուլտուրական զարգացումն ապահովելու նպատակով... ոչնչով չարգելակել այդ [նրանց համայնքների] կազմակերպումը, մուֆտիների անմիջական ընտրությունների իրավունքը, որոնց հաս-

---

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 486:

[2] Նույն տեղում, էջ 684:

տատելու է գլխավոր մուֆտին, որին ընտրում են տեղական մուֆտիները և Թուրքիայի... կառավարության շեյխ ուլ-իսլամը»[1]:

Եվ այսպես, Հայաստանի իշխանությունները ոչ միայն իրավունք չունեին միջամտելու երկրի մուսուլմանական բնակչության ներքին գործերին, այլև պարտավոր էին ոչ մի արգելք չհարուցել այդ բնակչության կրոնական և մշակութային գործունեության ճանապարհին: Բայց առավել ստորացուցիչը պայմանագրի 12-րդ հոդվածն էր, որն ազդարարում էր, թե Թուրքիային իրավունք է վերապահված «ռազմական միջոցներ ձեռք առնել Հայաստանի... տերիտորիայում»[2]:

Հայաստանի իրավունքները «չխախտող» կողմը, այսպիսով, իրավունք էր ստանում ցանկացած դեպքում ոտնատակ տալ Հայաստանի դեռևս չօկուպացված մասը, ավելին՝ այնտեղ ցանկացած ժամանակ ռազմական գործողություններ ձեռնարկել, եթե ինքը դրա կարիքը զգա:

Եվ այսպես, Հայաստանում իշխանությունը հեղկոմին հանձնելուց 16 ժամ հետո կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանը, փաստորեն, դառնում էր Թուրքիայի ձայնազուրկ վասալը:

Հայաստանի հեղկոմը հենց առաջին օրերից ընդհարվեց ոչ միայն երկրում ստեղծված տնտեսական ծանր կացության, այլ թուրքական իմպերիալիստական անպատկառ թելադրանքի և դրանից բխող միջազգային և ներքին կարգի անասելի բարդությունների հետ:

1920 թ. դեկտեմբերի 7-ին Խորհրդային Հայաստանը հրաման արձակեց հանրապետության ժողովրդական կոմիսարների կազմի մասին: Հրամանի համաձայն՝ Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանը միաժամանակ նշանակվում էր զյուղատնտեսության ժողովրդական կոմիսար, ներքին գործերի և արտաքին առևտրի ժողկոմ նշանակվեց Ի. Դովլաթյանը, արտաքին գործերի և պարենավորման՝ Ա. Բեկզադյանը, ռազմական գործերի՝ Ա. Նուրիջանյանը, աշխատանքի և սոցիալական ապահովության՝ Հ. Կոստանյանը, արդարադատության՝ Ս. Բաղդատյանը, ֆինանսների ժամանակավոր ժողկոմ՝ Ե. Երզնկյանը, ճանապարհային հաղորդակցության և փոստ-հեռագրի ժողկոմ՝ Ռ. Ոսկանյանը[3]:

Հանրապետության կառավարությանը վիճակված էր լարված, դրամատիկ պահերով լի ծանր աշխատանք:

Եթե Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը դրական արձագանք էր գտել ժողովրդի տարբեր խավերում, եթե նույնիսկ Դաշնակցություն կուսակցության և Հայաստանի Հանրապետության նախկին պետական

---

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 686:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 187, թ. 5:

ու հասարակական գործիչներից շատերը ցանկություն էին հայտնել համագործակցել խորհրդային իշխանության, Խորհրդային Հայաստանի կառավարության հետ, ապա միանգամայն ուրիշ, տրամագծորեն հակառակ դիրք բռնեցին Նժդեհը և զանգեզուրցիները:

Հայաստանի Հանրապետության անկումով ավելի ծանրացավ Սյունիքի դրությունը. այն այժմ կտրված էր ամբողջ աշխարհից: Զանգեզուրի ապստամբ ուժերը որոշեցին մինչև վերջ պայքարել Հայաստանում հաստատված խորհրդային կարգերի դեմ՝ իրենց այդ դիրքորոշումը պատճառաբանելով մի շարք հանգամանքներով: Նժդեհը գտնում էր. առաջին՝ հենց նոր վերջացած թուրք-հայկական պատերազմում բոլշևիկները և քեմալականները դաշնակիցներ են եղել, հետևապես ինչպես թուրքերը, այնպես էլ բոլշևիկները հայ ժողովրդի թշնամիներն են:

Երկրորդ, հակառակ Ա. Չիլինգարյանի և ՀՅ դաշնակցության ուրիշ գործիչների այն տեսակետի, թե Հայաստանի անկախությունը փրկելու համար պետք էր փոխել Թուրքիայի նկատմամբ հայության ունեցած դիրքորոշումը և Ռուսաստանից կտրվելով սերտացնել կապերը Թուրքիայի հետ, Նժդեհը համոզված էր, որ հայ ժողովուրդն իր ազատությանը կարող էր հասնել միայն այն դեպքում, եթե իր հույսը կապեր սեփական ուժերի հետ, կարողանար զենքով պաշտպան կանգնել իր հայրենիքին:

Երրորդ, Նժդեհը և նրա կողմնակիցները հակված էին այն տեսակետին, որ դարեր շարունակ պետությունը կորցրած հայ ժողովուրդը, հանձին Հայաստանի Հանրապետության, վերջապես ձեռք էր բերել իր պետականությունը, որը կործանվել էր բոլշևիկների և քեմալականների միացյալ ջանքերով:

Վերջապես, չորրորդ, ապստամբները հայտարարեցին, որ իրենք չեն հավատում Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի տարածքներ համարելու մասին Ադրբեջանի կառավարության հռչակագրին: Նրանք պնդում էին, որ դա մուսուլմանական-բոլշևիկյան հերթական խաղ էր, որի նպատակն էր թուլացնել Զանգեզուրի պայքարող հայության զգոնությունը, ժամանակ շահել և հարմար պահին այդ տարածությունները միացնել Ադրբեջանին:

Ելնելով այդ ամենից՝ Նժդեհը գտնում էր, որ պայքարը, որքան էլ ողբերգական լիներ, պետք էր շարունակել մինչև վերջ, մինչև որ ամուր երաշխիքներ ստեղծվեին այդ խոստումները կատարելու համար:

Հայաստանի Կարմիր բանակը վերակազմելու մասին 1920 թ. դեկտեմբերի 2-ի՝ Դրոյի և Սիլինի հրամանի հիման վրա, բնականաբար, Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի զորամիավորումներ էին հայտարարվում նաև Հայաստանի Հանրապետության նախկին կանոնավոր բանակի այն զորամասերը, որոնք գտնվում էին Զանգեզուրում: Բայց Նժդեհի հրամանատարության տակ եղած զորամասերի պետերը, իմանալով հիշատակած հրամանի մասին, հայտարարեցին, որ իրենք հավատարիմ են մնալու իրենց հրա-

մանատարին տված զինվորական երդմանը և չեն ենթարկվելու խորհրդայնացված Երևանից եկած զինվորական և այլ կարգի հրամաններին:

Նժդեհին հավատարիմ ուժերի վճռականությունը կրկնապատկվում էր Լեռնային Ղարաբաղից, Ուտիքից, Քուրդիստանից, Նախիջևանից Զանգեզուր հասած լուրերից: Մեկը մյուսից տագնապալի այդ լուրերը ցույց էին տալիս, որ հայ ժողովրդի դեմ թուրք-ադրբեջանական դավերը ոչ միայն գնալով չէին թուլանում, այլև նոր երանգներ և ծավալներ էին ստանում Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակից հետո:

Քեմալական «բոլշևիկները» և ադրբեջանցի ղեկավարներից շատերը, ցույց տալով, թե ողջունում են Հայաստանի խորհրդային իշխանության հաստատման փաստը, իրականում մեծապես դժգոհ էին իրադարձությունների ընթացքից: Նրանք լավ էին ըմբռնում, որ Հայաստանի խորհրդայնացումով իրենք զրկվում են նրա հետ ցանկացած ձևով վարվելու հնարավորությունից, քանի որ, որքան էլ թուրքամետ էր Մոսկվան, Երևանի նոր իշխանությունը հայ ժողովրդի համար դառնում էր պաշտպանական վահան: Ինչ խոսք, թուրքերը կցանկանային այսուհետև նույնպես Հայաստանը տեսնել հակաբոլշևիկյան ճամբարում՝ անպաշտպան և լքված:

Մինչ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելը քեմալական զավթիչները, ինչպես վերևում ասվեց, տարածում էին այն սուտը, թե իրենք Հայաստանի և հայերի հետ այլևս ոչ մի հաշիվ չունեն, որ իրենց հաշիվները դաշնակցականների հետ է, և եթե վերջիններս հեռանան իշխանությունից, ապա իրենք կդադարեցնեն մարտական գործողությունները: Բայց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո քեմալականները չդադարեցրին հայ ժողովրդի դեմ իրենց դավերը: Այժմ նրանք սկսեցին տարածել նոր վարկած, թե Հայաստանի նորահաստատ իշխանությունը կեղծ է, ըստ էության, խորհրդային չէ, այլ դաշնակցական իշխանության մի տարբերակ՝ քողարկված բոլշևիզմի դրոշով: Եվ որպես ապացույց՝ նշում էին Հայաստանի առաջին խորհրդային կառավարության մեջ դաշնակցականների ղեկավարներից մեկի՝ Դրոյի ներկայությունը: Պարզ է, որ թուրքերը դա անում էին, որպեսզի անհրաժեշտ հող նախապատրաստեն Հայաստանի դեմ նոր գործողություններ ձեռնարկելու համար:

Դուրս գալով «բոլշևիզմի» ծխածածկույթի ետևից, որով հաջողությամբ քողարկվել էին թուրք-հայկական պատերազմի ամբողջ ընթացքում՝ թուրքերը Խորհրդային Հայաստանի նկատմամբ բռնեցին անզիջում թշնամական դիրք:

Ստեղծված նոր պայմաններում քեմալականները դիմեցին բացահայտ գործողությունների: Նրանք մուսավաթականների հետ, օրինակ, Նախիջևանում անպատիժ հաշվեհարդարներ էին տեսնում խաղաղ հայ բնակչության հետ, շարունակում էին թալանը, բռնաբարություններն ու սպանությունները: Անելանելի վիճակի մեջ ընկած Նախիջևանի երկրամասի հայկական գյու-

ղերի բնակիչները, ինքնապաշտպանության միջոցներ և հնարավորություններ չունենալով, ըստ էության, հանձնված էին թուրք-ադրբեջանական արյունարբուների ողորմածությանը: Դրա ցայտուն օրինակը Նախիջևան գավառի Գողթանի հայ բնակչության վիճակն էր:

1920 թ. վերջին ամիսներին հայոց պատմական Գողթանից մնացել էր միայն 6 գյուղ՝ մոտ 5000 բնակչությամբ, որը, շուրջ երեք տարի անասելի զրկանքների, նեղությունների, կոտորածների գեհենի միջով անցնելով, շարունակում էր քարշ տալ իր գոյությունը:

Վստահորեն կարելի է ասել, որ այդ ժամանակ Այսրկովկասում թերևս չկար մեկ այլ վայր, որի բնակչությունը ենթարկվեր այնպիսի ահավոր զրկանքների ու դաժան փորձությունների, որպիսին երբեմնի լիառատ ու փարթամ Գողթանի գյուղացիությունն էր: Մարդիկ այստեղ կարոտ էին մի կտոր հացի, շրջում էին բոբիկ ու ցնցոտիների մեջ՝ վաղուց մոռացած ճրագը, օճառի, լուցկու գործածությունը: Գողթանցի հայը ստիպված էր կտրել 12 հազար ոտնաչափ բարձրություն ունեցող Կապուտջուղը (Ղափուջուղ), անցնել 50 վերստ ճանապարհ, հասնել Կապանի գյուղերը և այնտեղից, եթե հաջողվեր, տանել մի շալակ գարի՝ երեխաներին սովից փրկելու համար:

Այդ անտանելի պայմաններում նույնիսկ Գողթանի երիտասարդությունն ինքնապաշտպանության համար գիշեր-ցերեկ դիրքերում էր՝ օրհասական կռիվ մղելով հարևան թուրքերի և օսմանյան բռնադատիչների դեմ:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման լուրն առնելուց անմիջապես հետո Գողթանի գյուղացիությունն իր ներկայացուցչին՝ Քրիստափոր Տեր-Մկրտչյանին, ուղարկեց Երևան՝ «մի ճար անելու» խնդրանքով:

«Հայաստանի բանվորագյուղացիական խորհրդային իշխանության ուշադրությունն ենք հրավիրում այդ թշվառ տարրի վրա,– ասվում էր գողթանցիների խնդրագրում, որ իր հետ տարել էր պատվիրակը:– Դանդաղելը հավասար է Գողթանի բնակչության իսպառ ոչնչացման: Ճանապարհ բաց արեք, հաց և հագուստ ուղարկեք Գողթանի սոված ու մերկ գյուղացիության համար»[1]:

Բայց Հայաստանի խորհրդային կառավարությունը ձեռք չէր մեկնում Գողթանին: Տեր-Մկրտչյանը Երևանում իշխանության մարմիններից ամեն անգամ լսում էր նույն պատասխանը. «Հարկ է մի քիչ էլ սպասել. շուտով կոնֆերանս կլինի, որտեղ տաճիկների հետ կքննարկվի Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման հարցը: Հայկական հողերը, այդ թվում Նախիջևանը, կվերադառնան հայրենիքի գիրկը, և այն ժամանակ ինքնաբերաբար արմատապես կլուծվի նաև հայկական Գողթանի հարցը»:

Եվ Գողթանի պատվիրակը սպասում էր: Սպասում էին գողթանցիները...

---

[1] «Կոմունիստ» (Երևան), 1920 թ., 26 դեկտեմբերի:

Այդ օրերին Նախիջևանի գավառի հայերի վիճակը ճշմարիտ է ներկայացրել այնտեղի արտակարգ կոմիսար, կոմունիստ Բ. Վելիբեկովը: Նա նշում էր, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակը «մեծ հարված եղավ» «հեղափոխական» Թուրքիային[1]: Թվում էր, թե պետք է հակառակը լիներ, որովհետև խորհրդային դարձած Ադրբեջանի կողքին կյանքի էր կոչվել Խորհրդային Հայաստանը: Այդ նոր պայմաններում սպասելի էր, թե պիտի վերանան կամ մեղմանան նրանց միջև եղած հակասությունները՝ հող ստեղծելով խորհրդային երկու հանրապետությունների համագործակցության համար: Բայց միայն թվում էր: Բանն այն է, ասում էր Նախիջևանի արտակարգ կոմիսարը, որ Թուրքիայի «վերաբերմունքը» դեպի Խորհրդային Հայաստան մնաց այնպես անփոփոխ, ինչպես դաշնակցական Հայաստանի նկատմամբ էր[2]: Դրան հակառակ, փոխվեց քեմալականների վերաբերմունքը Նախիջևանի շրջանի հայ կոմունիստների նկատմամբ, «որոնց հետ նրանք երեկ բարեկամություն էին անում, իսկ այսօր սկսեցին նայել իբրև դաշնակների վարձկանների»[3]:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը Նախիջևանում գտնվող թուրքերի մոտ տագնապ էր առաջացրել նաև այն պատճառով, որ գավառն արդեն դիտվում էր իբրև Հայաստանի անբաժանելի մաս: Ահա թե ինչու, այնուհետև նշում էր Բ. Վելիբեկովը, թուրքերն այլևս «չկարողացան սառնարյուն նայել Խորհրդային Նախիջևանին»: Նա գրում էր, որ «միջնադարյան բոլոր սարսափները, որոնք քայքայված երկրամասի գլխին խաղացել էին նրանց հրամանատարներն ու ասկյարները, նորից կյանքի կոչվեցին, այն է՝ փախստական կանանց բռնաբարություններ, կողոպուտ, սպանություն, կոմունիստների հալածանք»[4]:

Քեմալականների գլխից դուրս չէր գալիս Նախիջևանի գավառը Թուրքիային կցելու միտքը: Արդեն 1920 թ. դեկտեմբերի երկրորդ տասնօրյակին, այնուհետև գրում էր Բ. Վելիբեկովը, թուրքերը «խորհրդային իշխանությունների հետ սկսեցին բացեիբաց սակարկել Նախիջևանի երկրամասի համար, վկայակոչելով դաշնակցականների հետ կնքված պայմանագիրը» (խոսքը Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին է: – *Ա. Ս.):*

Նախիջևանի գավառի զավթումը թուրքերի համար ռազմավարական կարևոր նշանակություն ուներ: Այդ տարածքը նրանք դիտում էին որպես մի հարմար միջանցիկ ուղի՝ Ադրբեջան, Դաղստան և Հյուսիսային Կովկաս գնալու, իսկ Հյուսիսային Իրանի վրայով՝ Միջին Ասիա թափանցելու համար: Ահա թե ինչու գավառում քեմալականների կոնկրետ գործողություններն անմիջականորեն ուղղված էին այդ ռազմավարական նպատակի իրակա-

---

[1] Տե՛ս ՍՔՊԴՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 108, թ. 4:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

նացմանը կամ այդ նպատակի ճանապարհի հիմնական խոչընդոտներից մեկի՝ Հայաստանի հետագա թուլացմանը, և եթե հնարավոր էր՝ վերացմանը: Դրանով էր թելադրված քեմալականների սանձարձակ պահվածքը Նախիջևանի գավառում: Օգտվելով ստեղծված բարդ իրադրությունից՝ Նախիջևանում գտնվող քեմալական զորքերը զավթեցին երկրամասի Շահթախտի և Շարուրի շրջանները, որոնք ՌՍՖԽՀ և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրով թողնվել էին Հայաստանին: Քեմալականները Մակուի սարդարից լկտիաբար պահանջեցին անհապաղ դադարեցնել առևտուրը Խորհրդային Հայաստանի հետ, չնայած Ալեքսանդրապոլի պայմանագրով հանձն էին առել «Շարուր–Նախիջևան–Շահթախտ–Ջուլֆայի վրայով Հայաստանին ազատ տրանզիտ տրամադրել դեպի Պարսկաստան...»[1]: Միաժամանակ նրանք Նախիջևանից ուղիներ էին որոնում աջակցելու Ադրբեջանի ապստամբ ուժերին, որոնք հակախորհրդային դրոշով այդ հանրապետության տարբեր վայրերում ոտքի էին ելել՝ նպատակ ունենալով վերականգնել մուսավաթական ռեժիմը:

Ինչ խոսք, այս ամենի մասին Զանգեզուրի բնակչությունը այս կամ այն կերպ տեղյակ էր դառնում, և դա մեծապես ազդում էր նրա քաղաքական տրամադրությունների վրա՝ նպաստավոր հող ստեղծելով Նժդեհի շուրջը զանգեզուրցիների նորանոր շերտերի համախմբման համար:

Սիսիանից Գորիս վերադառնալուց հետո Նժդեհն այստեղ երկար չմնաց, այլ անմիջապես մեկնեց Կապան: Ամենուրեք, որտեղ նա լինում էր՝ Սիսիանում, բուն Զանգեզուրում թե Կապարգողթում, ժողովուրդը նրան խանդավառ ընդունելություն էր ցույց տալիս, հիանում նրա կերպարով, ոգևորվում բոցավառ ելույթներով ու ճառերով:

Ապստամբության ղեկավարն այնտեղ էր, որտեղ բազմաչարչար, բայց հերոսական ժողովուրդն էր: Օրական մի քանի անգամ նա հանդիպումներ էր ունենում տարբեր գյուղերի հասարակության հետ, հիացմունքով ընդունում վճռականությամբ տոգորված քաջակորով զանգեզուրցիների երդումներն առ այն, որ իրենք մինչև արյան վերջին կաթիլը կռվելու են թուրք-բոլշևիկյան միացյալ ուժերի դեմ, որ պատրաստ են մեռնելու, բայց երբեք ծնկի չգալու թշնամու առջև:

Գյուղացիների թռուցիկ հանրահավաքներում, զորամասերում Նժդեհի՝ այդ օրերին արտասանած անհամար ելույթներն ու ճառերը, հարազատ ժողովրդի հետ ունեցած զրույցները, նրա գրությունները, նամակներն ու կոչերը ոչ միայն բացահայտում էին մեծ հայի հոգևոր և բարոյական հզոր կերպարը, այլև ցույց էին տալիս, որ, հանձին նրա, հայ ժողովուրդն ունի պետական ու քաղաքական խոշորագույն գործիչ և տաղանդավոր զորավար,

[1] «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 410:

որը նույնիսկ ազգի համար այդ ողբերգական պահին ունակ է նրան կորով և ուժ ներշնչել՝ դիմագրավելու թշնամիներին: Հանձին Նժդեհի՝ զանգեզուրցիները տեսնում էին ազգային մի գործչի, որն արմատապես տարբերվում էր հայ իրականության մեջ եղած բոլոր գործիչներից՝ իր հայացքներով, դեպքերն ու երևույթները վերլուծելու և ճշտորեն գնահատելու բացառիկ կարողությամբ, մտքի պարզությամբ, իր ժողովրդի հետ ձուլված լինելու իրողությամբ, տաղանդավոր խոսքով ու գրչով: Նժդեհը ոչ միայն ռազմական ու պետական մեծ գործիչ էր, այլև մեծ մտավորական, որի մտքերը, ասույթները, փիլիսոփայական ընդհանրացումները, ազգային առողջ գաղափարները գալիք տարիներին ու տասնամյակներին դեռատի սերունդներ պիտի դաստիարակեին և իրենց ուրույն տեղն ունենային հայ ժողովրդի ազգային գաղափարի հիմքում:

Չընկճվել և մինչև վերջ մաքառել ազգային սուրբ իդեալների համար. այս էր այն օրերին զանգեզուրցիների աշխարհայացքի հիմնական սկզբունքը:

Ժողովրդի հերոս զավակ Պողոս Տեր-Դավթյանի մահացու վիրավորվելը Սիսիանում, ապա և մահը խոր վիշտ էր պատճառել ողջ Զանգեզուրին: Կորուստը անփոխարինելի էր. չկար այլևս Նժդեհի նվիրյալ զինակիցը, լեռնաշխարհի հարազատ զավակը, հայոց բազում քաջերից մեկը, որի գերագույն նպատակը նույնպես իր բազմաչարչար ազգին անմնացորդ նվիրումով ծառայելն էր: Բայց կյանքը շարունակվում էր: Նժդեհը նահատակ Տեր-Դավթյանին փոխարինելու ուղարկեց իր հավատարիմ մարդկանցից մեկին՝ արհեստավարժ զինվորական կապիտան Թորոսյանին:

Դեկտեմբերի 5-ին Նժդեհը Կապանի հանքերից Սիսիանի հերոսական ժողովրդին ուղղեց հետևյալ կոչը.

«Դուք, հետևելով ապստամբ Ղափանի օրինակին, թոթափեցիք բոլշևիկ-ադրբեջանական լուծը և ստեղծեցիք ձեզ համար ազատ ու անկախ կյանք: Փառք ու պարծանք ձեզ: Հարգանք ձեր տված զոհերին ու թափած սրբազան արյունին: Խեղճացած, բայց չար թշնամին մինչև ձեր ապստամբությունը անարյուն կոտորածով էր բնաջնջում, ոչնչացնում ձեզ՝ խլելով ձեզնից ձեր զենքը, ձեր ղեկավարներին, ձեր արյուն-քրտինքով ձեռք բերած մի կտոր հացը, միացած աշխարհի ամոթն ու անեծքը հանդիսացող օսմանյան ջարդարար ասկյարներին՝ նա փորձեց նորից ձեր վզին դնել բռնության լուծը:

Այդ փորձի ժամանակ, որը շնորհիվ ձեր անօրինակ քաջության, դարձավ պարտություն թշնամու համար, վիրավորվեց մեր պաշտելի Պողոսը և մի քանի օր անց վախճանվեց: Փառք այդ մեծ ու հերոս նահատակին:

Այսօրվանից Պողոսի որբացած զորամասը հանձնում եմ շտաբս-կապիտան Թորոսյանին, որին արդեն հրամայված է անցնել Սիսիան: Լիահույս եմ, որ դուք, քաջանուն սիսիանցիներդ, թև ու թիկունք կը հանդիսանաք ձեր նոր հրամանատարին:

Աստված և իմ հոգին ձեզ հետ»[1]:

Նժդեհի կոչը լայնորեն տարածվեց Սիսիանի բնակչության շրջանում: Գյուղական համայնքների ժողովներում և հավաքներում սիսիանցիները ելույթներ էին ունենում, երդվում մինչև վերջ հավատարիմ մնալ իրենց ընտրած պայքարի ուղուն, անսակարկ կատարել հրամանատարի բոլոր կարգադրությունները:

Նժդեհը Կապանից նորից Սիսիան անցավ՝ հանդիպելու ժողովրդին: Ամենուրեք նրա երևալը վերածվում էր խանդավառ ցույցերի: Նրան էին ուղղված հազարավոր մարդկանց հայացքները, որոնք, հանձին նրա, տեսնում էին իրենց խորհրդատուին ու փրկարար առաջնորդին:

Դեկտեմբերի 12-ին, երբ Նժդեհը այցելել էր Սիսիանի շրջանի Դարբասի ձորի գյուղերը, այդ գյուղերի հայ կանայք ու օրիորդները հետևյալ խանդավառ կոչով էին ընդունել Զանգեզուրի հրամանատարին:

«Քաջարի հերոս Նժդեհին.

Ողջունում ենք ձեզ և բարի գալուստ ցանկանում: Երկար կյանք և հաջողություն Ձեզ: Չորս ամսվա ընթացքին մեր կրած տանջանքներից ու բարբարոսների գազանային վերաբերմունքից հետո, վերջապես, Ձեր գալուստը բերեց մեզ մեծ ավետիք: Հայ կինը, դարեր ի վեր գտնվելով ստրկության լծի տակ, չէ կարողացել ազատ արտահայտվել: Այսօր նա պարտավոր է ազատ շնորհակալություն հայտնել իր քաջարի հրամանատարին, որովհետև նա եղավ նրանց պատիվը վերականգնողը:

Կեցցե՛ քաջ հրամանատարը:

Կեցցե՛ն նրա քաջարի զինվորները»[2]:

Սիսիանից գալով բուն Զանգեզուր՝ Նժդեհը Գորիս քաղաքից դեկտեմբերի 15-ին հրաման ուղղեց զանգեզուրցիներին, որի նպատակն էր ազատագրված շրջաններում հաստատել ամուր կարգուկանոն:

«Այսօրվանից Զանգեզուրը հայտարարում եմ զինվորական դրության մեջ: Ընդսմին, սահմանում եմ մահվան պատիժ դավաճանության, լրտեսության, պրովոկացիայի, սպեկուլյացիայի, կաշառակերության և նման քրեական ու քաղաքական հանցանքների համար: Հրամայում եմ բոլոր պաշտոնյաներին՝ զինվորական թե քաղաքական՝ լինել արթուն, աշխատել օրվա ընթացքում 24 ժամ և կանգնել իրենց կոչման բարձրության վրա»[3]:

1920 թ. դեկտեմբերի 16-ին Խորհրդային Հայաստանի զինվորական կոմիսար Ավիս Նուրիջանյանը և Խորհրդային Հայաստանի կարմիր զորքերի հրամանատար Դրոն Գորիս հղեցին կոչ՝ ուղղված Զանգեզուրի ապստամբներին:

---

[1] **Վ. Գեորգեան,** նշվ. աշխ., էջ 122:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 29, թ. 7:

[3] **Վ. Գեորգեան,** նշվ. աշխ., էջ 123:

«ԿՈՉ ուղիղ հեռագրաթելով՝ Երևան–Քեշիշքենդ–Զանգեզուր՝ գյուղացիությանը և հրամանատարությանը:

Թող հայտնի լինի բովանդակ Զանգեզուրին, որ Հայաստանը հայտարարված է խորհրդային հեղափոխական հանրապետություն: Հին կառավարությունը նետել էր երկիրը արյան ու արցունքի անդունդը: Զանգեզուրի բարձունքներում կռվելով Կարմիր բանակի դեմ, դուք, այսպիսով, անգիտակցաբար խորացնում եք վիշտն ու դժբախտությունը ձեր ժողովրդի, որի միակ փրկությունը կախված է Կարմիր բանակի և Խորհրդային Ռուսաստանի օգնությունից: Խորհրդային Ադրբեջանը զիջել է Խորհրդային Հայաստանին Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջևանը: Խորհրդային Ռուսաստանը, միմիայն նա է ընդունակ կանխելու այն վտանգը, որը սպառնում է դրսի ուժերի կողմից, և հաշտեցնելու ձեր ժողովրդին իր հարևանների հետ՝ վերականգնելով նրա իրավունքները: Հայաստանը քայքայված է, մենք կարող ենք վերականգնվել միայն այն օգնության միջոցով, որ ցույց կտան մեզ Խորհրդային Ռուսաստանը և Խորհրդային Ադրբեջանը: Առաջինը՝ իր ուժեղ բանակով, իսկ երկրորդը՝ իր նավթով: Խորհրդային Ադրբեջանը հրաժարվեց Զանգեզուրից, Ղարաբաղից և Նախիջևանից: Այսօր նա արդեն մեզ համար ուղարկում է նավթ, մանուֆակտուրա և մթերք: Մեր ժողովուրդը սուր կարիք է զգում երկաթուղագծերի բացման և խորհրդային իշխանության ամրապնդման Այսրկովկասում: Ներկայումս ամբողջ Հայաստանում կազմակերպված է խորհրդային իշխանություն: Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդվում, բացի հին կառավարության անդամներից, որոնք հեղկոմի ձեռքով ձերբակալված և հանձնված են ժողովրդական դատի: Մենք համոզված ենք, որ մեր բոլորի հարազատ Զանգեզուրը ևս կմտնի Խորհրդային Հայաստանի մեջ, որպեսզի վերջ տրվի ամեն թշնամական գործողության կարմիրների դեմ, որոնք բարեկամական և եղբայրական հարաբերությունների մեջ են գտնվում Խորհրդային Հայաստանի կարմիր զորքերի հետ: Խորհրդային Հայաստանի կառավարությունը դիմել է կարմիր զորքերի հրամանատարությանը, որպեսզի յուր զենքը ետ քաշի Զանգեզուրի շրջաններից այն հավատով, որ Զանզեզուրի գյուղացիությունը վերջ կտա կարմիրների դեմ թշնամական գործողության: Խորհրդային կառավարության անունից մենք հայտնում ենք կռիվներին բոլոր մասնակցողների ամնիստիա՝ համարելով այդ կռիվը կործանարար մեր ժողովրդի համար: Մենք կոչ ենք անում Զանգեզուրին՝ կանգնել Խորհրդային Հայաստանի դրոշակի տակ, մերձենալ Ռուսաստանին և Խորհրդային Ադրբեջանին: Մենք ազնվությամբ, բաց սրտով հայտարարում ենք մեր ժողովրդին, որ կարմիր զորքի դեմ հետագա կռիվները ձեռնտու են միայն հայ ժողովրդի թշնամիներին: Խորհրդային Հայաստանի անունից մենք կոչ ենք անում Զանգեզուրին՝ դիմել խաղաղ աշխատանքի: Պահանջում ենք անմիջապես դադարեցնել ամեն տեսակի պատերազմական գործողություն և ենթարկվել Հայաստանի խորհրդային

իշխանության: Սույն հրամանը խախտելը մեր կողմից կնկատվի իբրև թշնամական գործողություն՝ ուղղված Խորհրդային Հայաստանի և նրա դաշնակից Խորհրդային Ռուսաստանի ու նրա կարմիր զորքերի դեմ:

Խորհրդային Հայաստանի Հանրապետության
զինվորական կոմիսար՝
Ավիս
Խորհրդային Հայաստանի կարմիր
զորքերի հրամանատար՝
Դրո
16 դեկտեմբերի 1920 թ.»[1]:

Ինչպես տեսնում ենք, կոչում մի քանի անգամ հաստատ հավաստիացումներ են արված, թե Խորհրդային Ադրբեջանը Խորհրդային Հայաստանին է զիջել ոչ միայն Զանգեզուրը, այլև Նախիջևանը և Ղարաբաղը: Սակայն այդ խնդրի նկատմամբ կոչի հեղինակների և Նժդեհի տեսակետների միջև ոչ մի նմանություն կամ շփման կետ չկար: Եթե Ավիսն ու Դրոն միամտորեն խանդավառված էին Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը Հայաստանին զիջելու մասին բոլշևիկների և Ադրբեջանի թուրքերի պարագլուխների տված խոստումներով, ապա հեռատես ու սթափ հայացքով դեպքերն ու իրադարձությունները խորությամբ քննող Նժդեհը դույզն-ինչ չէր կասկածում, որ դա բոլշևիկյան և քեմալական հերթական խաբկանք էր, և համոզված էր, որ թուրքը Հայաստանին կամավոր չէր զիջի մի թիզ հող անգամ, եթե նա ստիպված չլիներ զիջելու:

Կոչը խորացրեց Նժդեհի և Դրոյի միջև եղած հակասությունները, որոնք գնալով վերածվեցին անձնական բացահայտ հակակրանքի:

Զանգեզուրն ազատագրված էր, և այնտեղ հայոց կամքն էր իշխողը: Զաբուղում կամ Ավդալարում իրենց ուժերը վերախմբավորող և Զանգեզուրի դեմ նոր հարձակման նախապատրաստվող Կարմիր բանակի զորամասերի հրամանատարների սպառնալից նամակ-գրությունները և Երևանից եկող հորդորներն ու կոչերը անկարող էին կոտրել Նժդեհի ու զանգեզուրցի ապստամբների՝ իրենց երկրի անկախությունը պաշտպանելու վճռականությունը:

Լեռնաշխարհի դրությունը օրհասական էր: Ձմեռ էր արդեն՝ խստաշունչ ու դաժան: Հացի պաշարները սակավ էին, և բոլորին մտահոգում էր այն հարցը, թե ինչ է լինելու ժողովրդի դրությունը, եթե լիովին սպառվի պարենը:

---

[1] «Արնոտ գիրք», էջ 86-88, **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 5: Սիմոն Վրացյանը վկայում է, որ Դրոն հետագայում անձամբ հաստատել է, որ «այս հեռագիրը քաշված էր Ավիսի առաջարկությամբ և Կասյանի ու Մռավյանի հավանությամբ: Զանգեզուրցիներին ասվելիքի մասին ընդհանուր որոշում է տրվել, իսկ հեռագիրը շարադրել և ստորագրությունները դրել է Ավիսը՝ ինքը» (**Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 558-ի տողատակ):

Բոլոր կողմերից շրջապատված Զանգեզուրը մահապարտի էր նման, որ կամավոր կառափնարան էր բարձրացել:

Սիմոն Վրացյանը գրել է. «Չափից ավելի աննպաստ ժամանակ կատարվեց Զանգեզուրի ազատագրությունը: Ազատվելով բոլշևիկներից՝ նա մնաց բոլորովին մենակ, կտրված ամբողջ աշխարհից, նաև Հայաստանից, որը այդ միջոցին՝ պարտված տաճիկներից՝ արագ քայլերով գնում էր դեպի բոլշևիզմ: Խորհրդային Ռուսաստանը՝ ազատ արտաքին և ներքին բոլոր ճակատներից՝ իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր Մերձավոր Արևելքի վրա և պատրաստվում էր խորհրդային կարգեր մտցնել նաև Անդրկովկասում: Ի՞նչ կարող էր անել հյուսիսից անհեթեթ թափով խուժող ալիքի առջև մենակ մնացած զանգեզուրցին:

Չնայած դրան, անխառն ոգևորություն և հավատ էր տիրում ամբողջ երկրում: Ժողովուրդը վստահ իր ուժերի վրա՝ վճռում է... սեփական ուժերով տնօրինել իր ճակատագիրը»[1]:

[1] **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 550:

ՍՅՈՒՆԻՔԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

Ազատ և ինքնուրույն ապրելու զանգեզուրցիների բուռն ձգտումն ու զարմանալի համառությունն իր ցայտուն արտահայտությունը գտան Համազանգեզուրյան պատմական համագումարի հրավիրման և Ինքնավար Սյունիքի հռչակման փաստի մեջ:

Մինչ գավառի ռազմաքաղաքական իրավական դրության վերջնական պարզվելը, երկիրը պետք է ապրեր ու կառավարվեր սեփական օրենքներով: Իսկ օրենքներ կարող էր ստեղծել ժողովրդի հավաքական կամքը: Անհրաժեշտ էր նաև ի մի բերել գավառում թուրք-բոլշևիկյան զինված ուժերի դեմ անցած ամիսներին մղված արյունալի կռիվների արդյունքները, նաև մշակել և ընդունել ապագա գործողությունների ծրագիրը: Այդ խնդիրներն էին, որ պետք է լուծեր Համազանգեզուրյան առաջին համագումարը*:

Համագումարի նախապատրաստական աշխատանքները սկսվեցին 1920 թ. դեկտեմբերի կեսերից: Գարեգին Նժդեհը և Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը գավառի բոլոր շրջաններ ուղարկեցին հեռախոսագրեր՝ պահանջելով հրավիրել շրջանային համագումարներ՝ նախապես այդ համագումարների պատվիրակներ ընտրելով գյուղական համայնքներում: Շրջանային համագումարներին առաջարկվում էր քննարկման դնել Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջման և դրա նկատմամբ շրջանի բնակչության բռնելիք դիրքի հարցը, ինչպես նաև ժողովրդական հիմունքներով ընտրել Համազանգեզուրյան համագումարի պատգամավորներ և նրանց Տաթև ուղարկել՝ համապատասխան մանդատներով:

Զանգեզուրի բոլոր շրջանների գյուղական համայնքներում ժամանակին անցկացվեցին ժողովներ, առաջադրվեցին, քվեարկվեցին և ընտրվեցին շրջանային համագումարների պատգամավորներ: Այդ համագումարներն իրենց հերթին ընտրեցին Համազանգեզուրյան առաջին համագումարի պատգամավորներ, որոնք մեկնեցին Տաթև: Բացառություն կազմեց Արևիքի (Մեղրիի) շրջանը, ուր հեռախոսագիրը հասավ մեծ ուշացումով՝ դեկտեմբերի 21-ի երեկոյան:

Դեկտեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը Արևիքի բոլոր 14 հայկական գյուղերում տեղի ունեցան հասարակական ժողովներ, որոնք ընտրեցին ներկայացուցիչներ և մանդատներով շտապ ուղարկեցին Մեղրի գյուղ՝ շրջա-

---

* Համազանգեզուրյան համագումարի և Ինքնավար Սյունիքի կազմավորման մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 30, թ. 25, գ. 37, թ. 98-129:

նային գյուղացիական համագումարի: Դեկտեմբերի 22-ին բացված համագումարին 12 գյուղերից ներկա էին 68 պատգամավորներ: Բացակայում էին Կարճևանի և Ապկեզի ներկայացուցիչները:

Արևիքի գյուղացիական պատգամավորների համագումարի օրակարգի հարցերն էին՝ 1. Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջումը և Արևիքի ժողովրդի բռնելիք դիրքը: 2. Համազանգեզուրյան համագումարին ներկայացուցիչներ առաջադրելն ու ընտրելը:

Օրակարգի առաջին հարցի քննարկումից հետո ընդունվեց հետևյալ որոշումը.

«Բոլշևիկյան իշխանությունը բռնի կերպով է փաթաթված հայ ժողովրդի վզին, Հայաստանը սովետական է հայտարարված տաճկական և ռուսական զորքի բռունցքի ճնշման տակ: Նորմալ պայմանների մեջ երբեք նման քաղաքական հեղաշրջում չէր կարող կատարվել Հայաստանում, ընդհակառակը, շատ անգամ հայ ժողովուրդը ցայտուն կերպով արտահայտել է, որ **ինքն Ազատ և Անկախ Հայրենիք է ցանկանում:** Եվ որովհետև բռնակալական ստոր միջոցներով ժողովրդի վզին փաթաթված իշխանությունը տևական լինել չի կարող, որովհետև այդ իշխանությունը չի կարող վայելել ժողովրդի մեծամասնության հավատն ու վստահությունը, Արևիքի ժողովրդի ներկայացուցիչներս այն ամուր համոզումն ունենք, որ շուտով Հայաստանի հայությունը ոտքի կկանգնի և զզվանքով դեն կշպրտի այն լուծը, որ այսօր ակամայից ընդունել է իր վրա: Ոտքի կկանգնի նոր ցասումով, ջարդ ու փշուր կանի այն երկաթե կապանքները, որոնցով սովետական իշխանությունը կապկպել է իրենց և նորից Արարատյան սրբազան դաշտերի վրա կծածանի ազատ ու անկախ կյանքի կարմիր դրոշակը:

Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս համոզված ենք, որ այս ապստամբությունը ավելի արագ կկատարվի, եթե Զանգեզուրը կանգուն մնա իր սահմանների մեջ: Իսկ ժողովրդի հոգին և հերոսական կամքն անընկճելի է. այն է՝ ապրել ազատ: Այդ իսկ նկատառումներով Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս դեկտեմբերի 22-ի ժողովում գտանք, որ մեր հորիզոնների վրա դեռ փրկության ճառագայթները ընդմիշտ չեն մարել, որ կա փրկության ճանապարհ, ուստի որոշեցինք պաշտպանվել մինչև վերջին հնարավորությունը»[1]:

Արևիքի գյուղացիական պատգամավորական համագումարը որոշեց շրջանի կողմից Տաթևի համագումարին ներկայացուցիչներ ուղարկել Դավիթ Դավթյանին և Խաչատուր Դանիելյանին: Պատգամավորները Մեղրիից դուրս եկան նույն օրը՝ դեկտեմբերի 22-ին, բայց Լիճք-Տաշտոնի ճանապարհն առատ ձյան պատճառով փակվել էր, և նրանք ստիպված էին վերադառնալ ու դեկտեմբերի 23-ին անցնել Հանքերը:

---

[1] «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 165-166:

Չկարողանալով հասնել Համազանգեզուրյան համագումարի բացմանը՝ պատգամավորները Հանքերից հեռախոսով Տաթև հղեցին Արևիքի գյուղացիական համագումարի որոշումը՝ ավելացնելով, որ արևիքցիները լի են անկոտրում վճռականությամբ, այն է՝ «թույլ չտալ ոչ մի օտար զորքի և օտար մարդկանց ներս խուժել մեր երկրի սահմանները և խառնվել մեր ներքին գործերի մեջ»[1]:

Համազանգեզուրյան առաջին համագումարը բացվեց Տաթևի պատմական վանքում 1920 թ. դեկտեմբերի 25-ին՝ կեսօրվա ժամը 2-ին: Համագումարին ներկա էին Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գյուղերից ըստ բնակչության թվի ընտրված պատգամավորները, գավառի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները, Զանգեզուր–Գողթանի սպարապետ Գարեգին Նժդեհը, ընդամենը՝ 118 մարդ[2]:

Համագումարը բացեց բուն Զանգեզուրի գյուղացիական ժամանակավոր խորհրդի նախագահ Տիգրան Մելիք-Հուսեինյանը և առաջարկեց ընտրել համագումարի դիվանը:

Ձայների մեծամասնությամբ համաժողովի դիվանի կազմում ընտրվեց Գեղեոն Տեր-Մինասյանը՝ նախագահ, Եզոր Հարությունյանը և Տիգրան Մելիք-Հուսեինյանը՝ փոխնախագահներ, Սամվել Մաշուրյանը և Նիկոլայ Դորունցը՝ քարտուղարներ:

Նիստը հայտարարելով բացված՝ նախագահ Գ. Տեր-Մինասյանը համառոտ բացատրեց համագումարի պատմական նշանակությունը, նշեց անելիքները, որից հետո առաջարկեց համագումարի հետևյալ օրակարգը.

1. Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձերի մասին և համագումարի բռնելիք դիրքը,
2. իրենց գործունեության մասին բոլոր շրջանային խորհուրդների զեկուցումները,
3. Ինքնավար Սյունիքի հռչակումը և նրա կառավարման ձևի որոշումը,
4. Ինքնավար Սյունիքի իշխանության կազմակերպումը (Սպարապետի հրավիրումը, Ինքնավար Սյունիքի պառլամենտի դիվանի, Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի ընտրությունները),
5. իշխանության կենտրոնատեղի որոշումը,
6. արտաքին քաղաքականություն (փոխհարաբերությունների մշակում Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների, Պարսկաստանի կառավարության և հարևան թուրքերի հետ),
7. ինքնապաշտպանության հարց,

---

[1] «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 166, ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 127-128, տե՛ս նաև «Ազատ Սիւնիք», էջ 58, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 626-627 (հավելված):

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 42, «Ազատ Սիւնիք», էջ 44, ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 120, շրջերես:

8. պարենավորման հարց,
9. պետական ծառայողների աշխատավարձերի չափերի որոշման հարց,
10. Մասնավոր խոշոր սեփականությունների պետականացում.
    ա. վանքապատկան և եկեղեցական,
    բ. խաների, բեկերի և մելիքների,
    գ. արդյունաբերական ձեռնարկությունների պետականացման հարց,
11. ընթացիկ հարցեր (որբանոցի, ջուլհականոցի բացման, նախկին կառավարություններից զանազան անձնավորությունների մոտ մնացած գումարների պահանջման հարց, դրամների գործադրության հարց)[1]:

Ինչպես տեսնում ենք, համագումարն ըստ էության նաև Սահմանադիր ժողովի դեր էր կատարում, քանի որ քննության էին առնվելու մի շարք հիմնական պետական սկզբունքներ, մասնավորապես որոշվելու էր նաև երկրի պետական կառույցի խնդիրը:

Օրակարգի հաստատումից հետո համագումարն անցավ դրանց քննարկմանը:

Նիստերն անցնում էին գործարար մթնոլորտում: Պատգամավորներն իրենց ելույթներում անդրադառնում էին գավառի բնակչությանը հուզող, առանց բացառության, բոլոր հարցերին, որոշակի առաջարկներ էին անում, պարզում իրենց ու ժողովրդի անելիքները:

Համարյա բոլոր ելույթ ունեցողները անդրադառնում էին Խորհրդային Ադրբեջանի կողմից Զանգեզուրի դեմ ձեռնարկվող թշնամական չդադարող գործողություններին, գավառն իրեն ենթարկելու՝ այդ երկրի ղեկավարների ջանքերին, միաժամանակ առաջարկում էին պատրաստ լինել նոր հարձակումները զենքով դիմակայելուն, արգելք հանդիսանալու ադրբեջանցի թուրքերի նվաճողական նոր ձգտումներին:

Մյուս կողմից՝ պատգամավորներն այն տեսակետն էին արտահայտում, որ Խորհրդային Հայաստանի նորաստեղծ իշխանությունը տվյալ իրադրության մեջ ի վիճակի չէր պաշտպան կանգնելու Զանգեզուրին, առավել ևս՝ անզոր էր գավառը ընդգրկելու հանրապետության կազմի մեջ:

Ելնելով դրանից՝ պատգամավորներն առաջարկում էին Զանգեզուրն անջատված համարել Խորհրդային Հայաստանից, գավառը հայտարարել անկախ երկրամաս և նրա ինքնավարությունը պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ ամուր երաշխիքներ չէին ստեղծված այն Հայաստանի կազմի մեջ մտցնելու համար:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 121 և շրջերես, տե՛ս նաև «Ազատ Սիւնիք», էջ 45-46, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 620-621:

Պատգամավորներն իրենց ելույթներում նկարագրում էին Զանգեզուրի տնտեսական ծանր վիճակը, ցավով նշում, որ վաղուց դադարել են աշխատելուց Կապանի պղնձահանքերը և ձուլարանը, փակվել են Գորիս քաղաքի մանր ձեռնարկությունները:

Ծայրահեղ անկման էր հասել գավառի գյուղատնտեսությունը: Որոշակի օրինակներով պատգամավորները ցույց էին տալիս, որ տևական կռիվները գյուղացիներին կտրում էին առօրյա աշխատանքներից, խանգարում ժամանակին վար ու ցանք անել: Այդ պատճառով խոպան էին մնացել դաշտերը, բարձիթողի՝ այգիները: Կեր չկար կովերի ու լծկանների համար, իսկ Որոտանի և Ողջիի ձորերում մակաղած ոչխարների սակավաթիվ ու նոսրացած հոտերն ամռան ամիսներին չէին բարձրանում սարերը, որովհետև այնտեղ անվտանգ չէր հովիվների կյանքը:

Երեք երկար տարիներ մեկուսացած լինելով դրսի աշխարհից՝ գավառի բնակչությունն իր գոյությունը պահպանում էր միայն ու միայն ներքին աղքատ միջոցներով՝ ամեն ինչում տնտեսելով, հաճախ ուղղակի զրկելով իրեն: Շուկաներում չքացել էր կենսամթերքը: Լիովին դադարեցված էր ապրանքների փոխանակությունը գավառի սահմանակից շրջանների հետ: Փակվել էին Գորիսի հռչակավոր հարուստ խանութները, դատարկվել էին պահեստները: Արդյունաբերական ապրանքներ ընդհանրապես չկային: Գյուղացին մոռացել էր նավթի, օճառի, կտորեղենի մասին: Աղը ամենաթանկ և հազվագյուտ ապրանքներից էր, քանի որ Նախիջևանից Զանգեզուր դրա տեղափոխելը կապված էր հսկայական դժվարությունների հետ: Շրջանառության մեջ գտնվող այսրկովկասյան բոն թղթադրամները և Հայաստանի Հանրապետության չեկերը արժեզուրկ էին, չէին երաշխավորված որևէ տարադրամով, ուստի առևտուրը ոչ այլ ինչ էր, քան պարզ ապրանքափոխանակություն: Այդ ամենի մասին խոսում էին համագումարի պատգամավորները և առաջարկներ անում, թե ինչպես շտկել դրությունը[1]:

Պատգամավորները երկար ու հանգամանալից քննարկեցին օրակարգի առաջին հարցը, ապա առաջարկվեց բանաձևի նախագիծ, որը քվեարկության դրվեց և ընդունվեց միաձայն[2]:

Բանաձևի արձանագրությունը սկսվում էր այսպես՝ զանգեզուրցի «մի շարք տականքների ու ազգուրացների» հրավերով, «առանց ազգաբնակչության կամքը և ցանկությունը հարցնելու», գավառ են մտել խորհրդային զորամասերը: Նշվում էր, որ խորհրդային զորքերի հրամանատարությունը «խլեց մեր վերջին պատառ հացը, թողեց մեզ մերկ ու զուրկ ամեն ինչից: Խորհրդային կառավարությունը իրեն հատուկ արյան բաղնիքներ սարքեց մեր գիտա-

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 552-553, 620-622:

[2] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 121 շրջերես, տե՛ս նաև **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 43, «Ազատ Սիւնիք», էջ 46:

կից երիտասարդների նկատմամբ և տասնյակներով կոտորեց նրանց՝ չխնայելով մեր գրական վաստակավոր գործիչներ Խորենուն և Շիրինյանին և տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքոներին: Առանց քննության և որոշ մեղադրանքների՝ մեր ռանչպար գյուղական երիտասարդներից տասնյակները գլորվեցին ու փոսերը թափվեցին, և վերջում իր հայակործան հաղթանակը կամենալով առաջ տանել՝ մեր գավառը մտցրեց 1000-ներով տաճկական ասկյարներ»: Չկարողանալով տանել նման բարբարոսությունները, այնուհետև ասված էր բանաձևում, Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված ոտքի կանգնեց և զավթիչներին դուրս վռնդեց երկրից:

Չբավականանալով Զանգեզուրում կատարած հանցագործություններով՝ ռուս և ադրբեջանցի բոլշևիկները Քեմալի գլխավորած թուրքական հորդաներին «հրավիրեցին Հայաստան և Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը, մի ռեժիմ և ծրագիր, որոնց հետ չի կարող այլևս հաշտվել թե՛ մեր երկիրը և թե՛ բովանդակ հայ ժողովուրդը»:

Նկատի առնելով այդ ամենը և այն, որ Զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել էր իր ներքին ուրույն կյանքով և այսուհետև էլ շարունակելու էր ապրել նույն կյանքով, Համազանգեզուրյան համագումարն իր այդ բանաձևով որոշեց.

«Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգեր, լինելով անկախ, մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ:

Ինքնավար Սյունիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները»[1]:

Այնուհետև համագումարը քննարկեց օրակարգի երկրորդ հարցը, լսեց շրջանային բոլոր խորհուրդների համառոտ զեկուցումներն ու ելույթները, ի գիտություն ընդունեց կատարած աշխատանքը և հանձնարարեց համագումարի ավարտից հետո լարել բոլոր ուժերը՝ ընդունված որոշումները կատարելու համար:

Պատգամավորներն անցան Ինքնավար Սյունիքի կառավարման ձևի որոշման խնդրին: Քանի որ հարցը արտակարգ կարևոր նշանակություն ուներ, ուստի ծավալվեց մտքերի լայն փոխանակություն, որին մասնակցեցին երկու տասնյակից ավելի պատգամավորներ: Ելույթ ունեցողները շեշտում էին, որ Զանգեզուրի ազատաբաղձ ժողովրդի համար ընդունելի կարող է լինել միայն խորհրդարանական-սահմանադրական կարգը:

Մտքերի փոխանակությունից հետո համագումարը միաձայն որոշում ընդունեց, որով հաստատվեցին Ինքնավար Սյունիքի կառավարման ձևի

---

[1] ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 121 շրջերես-123 շրջերես, տե՛ս նաև **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 628, «Ազատ Սիւնիք», էջ 46-50:

գլխավոր գծերը, սահմանադրվեցին կառավարման մարմինները, նրանց պարտականություններն ու իրավունքները:

Խորհրդարան: Որոշման համաձայն՝ համագումարը ճանաչվեց որպես Ինքնավար Սյունիքի բարձր օրենսդրական մարմին՝ պառլամենտ-խորհրդարան, որին վերապահվում էր Սյունիքի բախտի լիակատար տնօրինությունը[1]:

Որոշման մեջ արձանագրված էին Սյունիքի խորհրդարանի իրավասության շրջանակները, ինչն էլ ցույց էր տալիս իսկական սահմանադրական, ժողովրդավարական, իրավական պետություն կառուցելու Զանգեզուրի ժողովրդի ներկայացուցիչների վճռականությունը:

Սահմանվեց, որ պառլամենտ-խորհրդարանը հրավիրվում էր տարեկան երկու անգամ իր դիվանի պրեզիդիումի (նախագահության) կողմից: Բացառիկ պայմաններում խորհրդարանը կարող էր նաև արտահերթ հրավիրվել, եթե նման պահանջով հանդես գային պատգամավորների առնվազն կեսը, կամ եթե խորհրդարան հրավիրելը պահանջեր նրա նախագահությունը:

Սահմանվեց, որ խորհրդարանի անդամները Ինքնավար Սյունիքի ազգաբնակչության կողմից ընտրվում են ընդհանուր սկզբունքներով՝ հետևյալ համամասնությամբ՝ մինչև 100 ծուխ ունեցող գյուղական համայնքը խորհրդարան է ուղարկում մեկ, 100-ից մինչև 200 ծուխ ունեցող համայնքները ուղարկում են երկու, իսկ 200-ից ավելի ծուխ ունեցողները՝ երեք ներկայացուցիչներ[2]:

Խորհրդարանին վերապահված էր.

ա) զինվորական ընդհանուր հրամանատարի՝ սպարապետի ընտրությունը,

բ) պատերազմ հայտարարելու և հաշտության բանակցություններ վարելու իրավունքը, իսկ արտակարգ դեպքերում դա վերապահվում էր նաև սպարապետին,

գ) երկրի թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական կառավարչական ձևի հաստատումը և օրենսդրությունը[3]:

Կառավարություն: Իր պատգամավորների թվից կամ դրսի գործիչներից խորհրդարանն ընտրում էր պրեզիդիում-դիվան, այսինքն՝ Ինքնավար Սյունիքի կառավարություն: Պրեզիդիում դիվանն ընտրվում էր 9 մարդուց 6 ամսով՝ խորհրդարանի մի նստաշրջանից մյուսն ընկած ժամանակաշրջանի համար:

Համագումարը որոշեց, որ պրեզիդիում-դիվանն ունենուլու էր հետևյալ 10 վարչությունները՝ ներքին գործերի, արտաքին գործերի, պարենավորման,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 123 շրջերես, տե՛ս նաև **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 46, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 623:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 123 շրջերես, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 620, «Ազատ Սիւնիք», էջ 50-51:

[3] Տե՛ս նույն տեղում:

արդարադատության, ֆինանսական, լուսավորության, առևտրա-արդյունաբերության, հողային, ճանապարհների հաղորդակցության (փոստ, հեռագիր, հեռախոս և խճուղի), խնամատարության:

Ինքնավար Սյունիքի կառավարության մեջ մտնելու համար համագումարում առաջարկվել էր 15 մարդու թեկնածություն: Դրանցից ձայների մեծամասնությամբ ընտրվեցին 8 գործիչներ՝ Գեղեոն Տեր-Մինասյանը, Նիկոլայ Դորունցը, Իսրայել Մելիք-Փարսադանյանը, Գրիգոր Գրիգորյանը, Եգոր Հարությունյանը, Մկրտիչ Տեր-Մկրտչյանը, Տիգրան Մելիք-Հուսեինյանը և Սամվել Մաշուրյանը: Դրանց անձնափոխանորդ ընտրվեց Մինաս Մինասյանը: Գենվազի ներկայացուցիչներն ուշացել էին համագումարից, ուստի կառավարության մեջ նախատեսված 10 վարչությունների վարիչների տեղերից մեկը թափուր էր մնացել: Համագումարը Գենվազի շրջանին իրավունք վերապահեց ընտրել և ուղարկել մի ներկայացուցիչ՝ դիվանի կազմը լրացնելու համար:

Կառավարության պարտականություններն ու իրավունքներն էին.

ա) երկրի զինվորական և քաղաքացիական բոլոր գործերի ղեկավարում,

բ) խորհրդարանի կողմից ընդունված բոլոր որոշումների և օրենքների անթերի կատարում,

գ) բոլոր խոշոր կարևոր խնդիրները, մասնավորապես ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող, իրենց լուծումը ստանալու էին ոչ թե այս կամ այն վարիչի, այլ պրեզիդիում-դիվանի կոլեկտիվ վճռով,

դ) բոլոր պատասխանատու պաշտոնյաները հաստատվելու էին պրեզիդիում-դիվանի կողմից՝ վարիչների առաջարկությամբ,

ե) զինվորական բոլոր տեսակի գործերը տարվելու էին սպարապետի ղեկավարությամբ, որն այդ մասին իրազեկ էր պահելու պրեզիդիում-դիվանին:

Համագումարը միաձայն որոշում ընդունեց Նժդեհին հրավիրել որպես Սյունյաց Սպարապետ: Բուռն ծափահարությունների ներքո Նժդեհին տալով վստահության իրենց քվեն՝ դրանով իսկ նրան հանձնեցին Սյունիքի բախտի տնօրինությունը: Ինքնապաշտպանության հարցի վերաբերյալ բոլոր միջոցների ձեռնարկումը և գործադրությունը որոշվեց թողնել Սպարապետի կարգադրությանը[1]:

Իշխանության շրջանային օղակներ: Համագումարը քննեց իշխանության շրջանային օղակների հարցը և որոշում ընդունեց շրջանային գործադիր մարմինների, նրանց կազմի, ընտրության կարգի և իրավասության սահմանների մասին: Որոշման համաձայն՝

ա) Սյունիքը բաժանվեց 6 շրջանների՝ բուն Զանգեզուր, Տաթևի ձոր, Կա-

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 123-ի շրջերես, 124, 125-ի շրջերես, տե՛ս նաև **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, «Ազատ Սիւնիք», էջ 50-51, 54:

պան, Դարաբասի ձոր, Սիսիան և Գենվազ: Ամեն մի շրջանն ունենում էր իր գործադիր մարմինը, որի անդամներն ընտրվում էին նույն շրջանից խորհրդարան ուղարկած անդամների կողմից: Ըստ որում՝ մեծ շրջաններում գործադիր մարմինը բաղկացած էր հինգ, իսկ փոքր շրջաններում՝ 3 հոգուց: Շրջանային գործադիր մարմնի կազմը ընտրվում էր 6 ամսով:

բ) Շրջանային գործադիր մարմիններն իրենց գործունեության մասին պարբերաբար զեկուցում էին խորհրդարանի դիվանին և նրան ներկայացնում իրենց հաշվետվությունը՝ ի հավանություն և ի հաստատություն:

գ) Տվյալ շրջանի այս կամ այն հարցի լուծումը, որը համապետական բնույթ չէր կրում, վերապահվում էր գործադիր մարմնին:

դ) Շրջանային գործադիր մարմիններն ունենում էին իրենց հետևյալ մասնաճյուղերը՝ ներքին գործերի, պարենավորման, զինական: Շրջանային մարմիններին կից գործում էր քարոզչական բյուրո:

ե) Շրջանային գործադիր մարմիններն իրենց շրջանի գյուղերում կազմակերպում էին գյուղական զինվորական վաշտեր և գյուղացիական ինքնապաշտպանության կոմիտեներ:

զ) Շրջաններին վերաբերող բոլոր խոշոր ու կարևոր հարցերը վճռվում էին խորհրդարանի դիվանի կողմից:

է) Շրջանային գործադիր մարմինն իր կազմից ընտրում էր շրջանային կոմիսարներ, որոնք գործադիր մարմնի առաջարկությամբ հաստատվում կամ մերժվում էին խորհրդարանի դիվանի կողմից: Շրջանային կոմիսարներ ունեին 6 շրջաններից երեքը՝ Կապանի շրջանը՝ երեք, Սիսիանի և բուն Զանգեզուրի շրջանները՝ մեկական:

ը) Ինքնավար Սյունիքի յուրաքանչյուր գյուղ կամ համայնք, համագումարի որոշմամբ, ունենում էր իր գյուղական կոմիսարը: Այն գյուղերը, որոնց ծխերի թիվն անցնում էր 100-ից, ունենում էին նաև կոմիսարի օգնականներ: Ինչպես գյուղական կոմիսարները, այնպես էլ կոմիսարների օգնականները ընտրվում էին գյուղական հասարակության կողմից և հաստատվում տվյալ շրջանի գործադիր մարմնի կողմից[1]:

Վերահսկիչ մարմին: Համագումարը որոշեց ունենալ Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմին, որը լիազորված էր վերահսկողության ենթարկել պետական բոլոր հիմնարկների, այդ թվում՝ նաև խորհրդարանի դիվանի վարիչների գործունեությունը, լսել և հաստատել նրանց հաշվետվությունները:

Վերահսկիչ մարմնի անդամներ ընտրվեցին երեք հոգի՝ Գասպար Խաչատրյանը, Մուշեղ Ոսկանյանը և Գևորգ Գևորգյանը, իսկ դրանց անձնափոխանորդներ՝ Տիգրան Սազանդարյանը և Շիրին Շիրինյանը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 124-124-ի շրջերես, 125, տե՛ս նաև «Ազատ Սիւնիք», էջ 51-53:

Ինքնավար Սյունիքի իշխանության կենտրոնատեղի ընտրությունը: Համագումարը մտքերի փոխանակությունից հետո միաձայն որոշեց Ինքնավար Սյունիքի իշխանության կենտրոնատեղի ընտրել Գորիս քաղաքը*:

Մտքերի աշխույժ փոխանակությունից հետո համագումարը բանաձևեր ընդունեց, թե Ինքնավար Սյունիքի կառավարությունը ինչպիսի քաղաքականություն պետք է վարեր հարևան պետությունների նկատմամբ:

Առաջին հերթին ձևակերպվեց Խորհրդային Հայաստանի նկատմամբ վարվելիք քաղաքականությունը: Նշվում էր, որ Հայաստանի անկախ ազգային պետականության ստեղծումից ի վեր Զանգեզուրը միշտ ձգտել է լինել մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը: Բայց ժողովրդի կամքին հակառակ՝ Հայաստանում խորհրդային իրավակարգի հաստատումը փոխել էր քաղաքական իրադրությունը նաև Զանգեզուրում, որի բնակչությունը որոշել էր ապրել Խորհրդային Հայաստանից անկախ, ինքնուրույն կյանքով այնքան ժամանակ, քանի դեռ չէր վերականգնվել հայ ժողովրդի ինքնիշխանությունը:

Համագումարը ճիշտ համարեց Ադրբեջանի կառավարության նկատմամբ Զանգեզուրի հարաբերությունների կանոնավորումը՝ միաժամանակ նշելով, որ առայժմ հնարավորություններ չէին ստեղծված սերտ կապեր ունենալու այդ երկրի հետ, վերականգնելու երթևեկությունը, և որ դա միայն հնարավոր կդառնար երկու երկրների ժողովուրդների փոխադարձ վստահության վերականգնման պայմաններում:

Պարսկաստանի հետ Սյունիքի հարաբերությունները համագումարը միանշանակ համարեց սերտ ու բարեկամական: Հաստատված առևտրական, տնտեսական և հաղորդակցական կապերն էլ ավելի ամրապնդելու նպատակով Ինքնավար Սյունիքի կառավարությանը հանձնարարվեց Պարսկաստանում ունենալ իր մշտական ներկայացուցիչը:

Անդրադառնալով Սյունիքի հայ և թուրք բնակչության փոխհարաբերությունների հարցին՝ համագումարը նշեց, որ արտաքին սադրանքների և քաղաքական կոպիտ միջամտությունների հետևանքով երեք տարուց ի վեր այդ հարաբերությունները թշնամական են: Համագումարը, սակայն, հույս հայտնեց, որ Զանգեզուրում ապրող հայերն ու թուրքերը կդադարեցնեն անտեղի թշնամանքը, և երկու դարավոր հարևանների միջև կվերականգնվի բարեկամությունը: Այնուհետև քննվեց պետական ծառայողների աշխատավարձերի հարցը, և նպատակահարմար համարվեց աշխատավարձերի չափերի որոշումը թողնել Սպարապետի հայեցողությանը:

---

* Գորիսում էր գտնվում նաև զանգեզուրյան զորքերի գլխավոր շտաբը, այստեղ էր նաև հեռագրակայանը, իսկ ռադիոկայանը գտնվում էր Կապանի Կատարի գործարաններից մեկում (տե՛ս ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 15):

Համագումարը որոշեց պետականացնել վանքերի, եկեղեցիների, բեկերի և մյուս կալվածատերերի խոշոր սեփականությունը:

Վերջապես, օրակարգի ընթացիկ չորս հարցերի (որբանոցի ու ջուլհականոցի բացման, նախկին կառավարություններից զանազան անձնավորությունների մոտ մնացած գումարների պահանջման, դրամների գործադրության) մասին որոշումների ընդունումը համագումարը թողեց խորհրդարանի կողմից ընտրված պրեզիդիում-դիվանին[1]:

Տաթևի համագումարի որոշումները լայնորեն քննարկվեցին Գորիս քաղաքի, Կապանի հանքերի, Սյունիքի բոլոր գյուղերի և ավանների հասարակական ժողովներում և արժանացան ժողովրդի ջերմ հավանությանը:

Համագումարի որոշումները լայն հետաքրքրություն առաջացրին Ինքնավար Սյունիքի սահմաններից դուրս՝ Խորհրդային Հայաստանում և Ադրբեջանում, ինչպես նաև ռուսական բանակի հրամանատարության շրջանում:

11-րդ Կարմիր բանակի հետախուզությունը վերադասին գրած զեկուցագրում նշում էր, որ Տաթևի վանքում կազմավորված Զանգեզուրի ինքնավար կառավարությունը հրապարակել է տեղի մուսուլման բնակչությանն ուղղված մի կոչ, որում ասված է՝ պետք է վերջ տալ հայերի և մուսուլմանների դարավոր թշնամությանը, և գավառի հայկական իշխանությունների կողմից հավաստիացում էր արվում, որ ամեն ինչ կձեռնարկվի երկու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար[2]:

Այնուհետև նշված էր, որ մասուլմանների կողմից այդ կոչին դրական արձագանք տալու դեպքում պայմաններ կստեղծվեն հայ և ադրբեջանցի հակաբոլշևիկյան ուժերի միավորման համար՝ դրանով իսկ դժվարացնելով Զանգեզուրի խորհրդայնացման գործը:

Եվ այսպես, Սյունիքը ինքնավար էր, ասել է թե՝ ստեղծված պայմաններում՝ անկախ: Դա իր երկիրն ազատ տեսնելու՝ լեռնահայության իղձերի մարմնացումն էր, նրա կամքի արտահայտությունը:

Տվյալ պահին Սյունիքն ուրիշ ելք չուներ, քան ազդարարելու իր անկախությունը ոչ միայն Ադրբեջանից, այլև Հայաստանից: Դա նույնպիսի ստիպողական քայլ էր, ինչպիսին յոթ տասնամյակ հետո ղարաբաղյան համաժողովրդական շարժման ուժով Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակումը: Նժդեհը գրել է. «Թշնամին՝ շլացած Երևանի կամովին խորհրդայնացումից, չուզեց կատարել մեր առաջադրած հաշտության նախնական պայմանները և ստիպեց մեզ Սյունիքը հայտարարելու ինքնավար, մինչև որ քաղաքական հնարավորություն կստեղծվեր միանալու մայր երկրին»[3]: Նա նշում էր, որ քանի դեռ հարցականի տակ էր Սյունյաց երկիրը Հայաստանին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 126-ի շրջերես-127, տե՛ս նաև «Ազատ Սիւնիք», էջ 56-57:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ, 189, թ. 8:

[3] **Գ. Նժդեհ**, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 80:

միավորելը, Զանգեզուրի ժողովուրդը հերոսական պայքարով պահում էր հայոց այդ լեռնավայրի անկախությունը՝ միաժամանակ ձեռնամուխ լինելով իր պետական կյանքի կառուցմանը՝ ժողովրդավարական հիմունքներով:

Համագումարից անմիջապես հետո Նժդեհը, վերադառնալով Գորիս, կատարեց զինվորական ղեկավար կադրերի մի շարք անհետաձգելի փոփոխություններ: Պորուչիկ Պետրոսյանը նշանակվեց ռազմական գծով Նժդեհի օգնական, Սյունիքի զինված ուժերի շտաբի պետ նշանակվեց կապիտան Պարոնյանը, քաղաքի պարետ՝ Սմբատ Խոջաբեկովը: Խնձորեսկի զինվորական տեղամասի պետ դարձավ 28-րդ կարմիր դիվիզիայի նախկին սպաներից մեկը՝ Նժդեհի կողմն անցած Քոչարովը, իսկ նրան օգնական նշանակվեց Գերենզուր գյուղի քահանա Գրիգորը[1]:

Նժդեհն առաջվա պես վճռական էր համարում ժողովրդի բարոյական ոգու ամրացումը, ուստի գրեց սյունեցիներին ուղղված յոթ պատվիրաններ պարունակող քարոզչության մի պատգամ, որն այդ օրերին կարդում էին Սյունիքի եկեղեցիներում, դպրոցներում, զորանոցներում, ռազմաճակատներում, գյուղի թե քաղաքի ամեն մի հարկի տակ: Ահա այդ պատվիրանները.

1. «Երբեք առանց Սյունիքի և Արցախի: Առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարի, մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող:
2. Լեռներիդ վրա, լեռներիդ մեջ է քո փրկությունը: Արդ, տաճարներիդ մեջ, խաչերիդ կողքին բարձրացուր մի-մի ժայռ և՛ պաշտե, և՛ երկրպագե, որ չթուլանա փրկարար պաշտամունքդ դեպի լեռները:
3. Սպարտա: Քո երկիրը, որպես նոր Սպարտա կարող է գոյություն ունենալ տխուր Արևելքում: Զգտի՛ր, կարող ես և պիտի դառնաս:
4. Երբե՛ք անզեն: Թող նախ հարևանները իրենց սրերը խոփերի և նիզակները օթոցների վերածեն:
5. Եվ ոչ մի ընչազուրկ՝ քո հողի վրա: Խեղճերի արցունքից ու թույլերի անարիությունից են քանդվում հայրենիքները: Բոլոր որդիներդ անկարոտ և արի:
6. Մի ժողովուրդ – մի ընտանիք: Ազգերի մեջ գուցե և միայն դու իրավունք չունես ներքուստ պառակտված լինելու:
7. Եղի՛ր ուժեղ, էլի ուժեղ, և մի՛շտ ուժեղ: Ժողովուրդները վերջիվերջո տեր են մնում ոչ թե նրան, ինչ որ նրանց տրվում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան, ինչի որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում»[2]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 189, թ. 7:

[2] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 78:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1921 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐԻՆ

Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունը մեծ կորուստներ էր կրել: Գավառից Կարմիր բանակի զորամասերի նահանջի օրերին, ինչպես արդեն ասվել է, սպանվել էին Քրիստափոր Մկրտչյանը, Մակիչ Մաշուրյանը, Բագրատ Հարությունյանը և ուրիշ ղեկավարներ: Արմենակ Ղարագյոզյանը և Հակոբ Կամարին կոմունիստների մի մասի հետ անցել էին Ղարաբաղ, ոմանք էլ, ինչպես, օրինակ՝ Հայրապետ Տատյանը և ուրիշներ, այնտեղից մեկնել էին Բաքու:

Գորիսի կոմունիստական ջոկատները, ուժերը պահպանելու և համալրելու համար, անցել էին գավառին հարևան Ադրբեջանի Կուբաթլիի շրջանը: Այնտեղ էին գնացել նաև գավառի ընդհատակում գործող կոմունիստներից շատերը, ինչպես նաև մի քանի տասնյակ անկուսակցականներ: Կուբաթլիի բոլշևիկները և խորհրդային մարմինները աջակցություն ցույց տվեցին իրենց մոտ ապաստանած հայ կոմունիստներին և կոմունիստական ջոկատի անդամներին, համալրեցին նրանց զինապաշարը, ապահովեցին պարենով և այլն:

Այդ ամենը, իհարկե, անմիջապես հայտնի դարձավ Զանգեզուրի իշխանություններին: Նրանք Կուբաթլիի թուրք և քուրդ ղեկավարներից պահանջեցին իրենց հանձնել հայ կոմունիստներին, հակառակ դեպքում սպառնացին ասպատակել շրջանը և պատժել նրանց ապաստան տվողներին: Բայց, ինչպես և պետք էր սպասել, մերժում ստացան:

1921 թ. հունվարի երկրորդ կեսին Կուբաթլիում տեղի ունեցավ տեղի բոլշևիկների կոնֆերանս՝ Գորիսի շրջանի այնտեղ գտնվող հայ կոմունիստների մասնակցությամբ: Կոնֆերանսի կազմակերպման և անցկացման գործում ղեկավար դեր խաղաց Ադրբեջանի բոլշևիկ ղեկավարներից մեկը՝ ազգությամբ քուրդ Նազար Հեյդարովը: Կոնֆերանսը քննարկեց Կուբաթլիում գտնվող հայ կոմունիստներին ավելի լայն աջակցություն ցույց տալու, Զանգեզուրի բնակչության շրջանում հականժդեհական քարոզչությունը ուժեղացնելու հարցերը:

Քանի որ գավառային նախկին կոմիտեն ցրվել էր, ուստի կոնֆերանսն ընտրեց գավկոմի նոր կազմ, որի մեջ մտան Հուսեին Աբդուլաևը, Ալի Ամիրասլանովը, Օրուջ Բաբաևը, Կարա Իլյասովը, Քերիմ Իսկենդերովը, Կուլի Աբդուլ Ազիմովը, Լյաթիֆ Շաֆիևը, Արշակ Բալյանը, Ալի Շահմուրադովը, Եղո Ղազարյանը, Արսեն Քյարունցը, Սավալան Շիրինովը, Նազար Հեյդա-

րովը և ուրիշներ: Վերջինս ընտրվեց նաև գավառային կոմիտեի քարտուղար[1]:

Հայ կոմունիստները Կուբաթլիից ավելի ու ավելի հաճախակի սկսեցին թափանցել Գորիսի շրջանի գյուղերը և գաղտնի նախապատրաստական աշխատանքներ տանել: Նրանք ընդհատակում ժողովներ էին անցկացնում, ցրում թռուցիկներ, իրենց կողմը ներքաշում համակիրներին[2]:

Բոլշևիկյան աշխատանքները աշխուժացան նաև Սիսիանի շրջանում, որտեղից նրանք նույնիսկ կարողացան կապեր հաստատել Վայոց ձորի առանձին գյուղերի՝ ընդհատակում գտնվող կոմբջիջների հետ:

Միաժամանակ մեծ ջանքերի շնորհիվ կապեր հաստատվեցին Բաքվի հետ: Այդ գործում հատկապես ակտիվ աշխատանք տարան Անդրեաս Ապրյանը, Ալեքսանդր Բաղդասարյանը, Արշակ Բալյանը, Հարություն Գյուլնազարյանը, Յաշա Մարտիրոսյանը, Մակիչ Արզանյանը և խնձորեսկցի ուրիշ կոմունիստներ: Վերականգնվեցին կապերը նաև 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության հետ:

Խնձորեսկ գյուղի ակտիվ կոմունիստներից Մաթևոս Ասատրյանը շատ տարիներ հետո իր հուշերում գրել է. «Այդ ժամանակ մենք ուժեղացնում էինք մեր նամակագրական կապերը Անդրերկրկոմի և Ադրբեջանի ղեկավար մարմինների հետ: Դաշնակցության դեմ մղվող պայքարում կոնկրետ ցուցումներ և ղեկավարություն էինք ստանում Ադրբեջանի կենտկոմից: ...Մեր հերթին տեղեկություններ էինք հաղորդում դաշնակների զինված ուժերի քանակի և դասավորության մասին, նամակներ էինք ուղարկում Կուբաթլիի շրջկոմին: ...Մեզ հաջողվում էր տեղեկություններ ստանալ դաշնակների ուժերի տեղաբաշխման, նրանց պլանների, գյուղացիների տրամադրությունների և այլ հարցերի վերաբերյալ և հաղորդել Բաքու՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին և Կարմիր բանակի հրամանատարությանը»[3]:

Զանգեզուրի բոլշևիկները Բաքվում 11-րդ բանակի հրամանատարության հետ հանդիպումների ժամանակ հորդորում և խնդրում էին արագացնել Կարմիր բանակի զորքերի նոր հարձակումը գավառի վրա:

Նազար Հեյդարովը գրել է. «Մենք, ընդհատակյա կոմունիստներս, ստիպված էինք շարունակ կազմ ու պատրաստ լինել և հայ ընկերների միջոցով հսկողության տակ պահել Գորիսը, Խնձորեսկը և Շինուհայրը: Նրանցից մենք ստանում էինք տեղեկություններ դաշնակցական գեներալ Նժդեհի միջոցառումների, գյուղացիների տրամադրությունների մասին և այլն:

... Զանգեզուրի կոմունիստները կապ էին պահպանում Ադրբեջանի կոմունիստական կազմակերպությունների հետ: Դաշնակցական զորքերի

---

[1] Տե՛ս **Н. Гейдаров,** նշվ. աշխ., էջ 109.

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 87, թ. 32:

[3] Նույն տեղում, թ. 33, 45:

թվաքանակի ու գտնվելու վայրի մասին բոլոր տվյալները կուսակցության Շուշիի գավկոմի միջոցով ուղարկվում էին Ադրբեջանի Կ(բ)Կ կենտկոմին: Այդ տվյալների հիման վրա ես, 1921 թ. մայիսին լինելով Բաքվում, Ադրբեջանի Կ(բ)Կ կենտկոմին առընթեր Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի ներկայացուցչությունում, Հայաստանի կուսկազմակերպության ղեկավար աշխատողներ Սահակ Համբարձումյանի, Երեմիա Բակունցի, Հայրապետ Տատյանի և այլոց ներկայությամբ հատուկ հաղորդում արեցի»[1]:

Կուբաթլիից, հիմնականում Գյուրջուլու քրդաբնակ գյուղի վրայով, Գորիս քաղաքի ընդհատակի հետ կապը պահպանում էին Ադրբեջանի կոմկուսակցության Կուբաթլիի գավառային կոմիտեի անդամներ Եղո Ղազարյանը և Արսեն Քյարունցը, Խնձորեսկի հետ Կոռնիձոր գյուղի այգիներով՝ Արշակ Բալայանը և նրա ղեկավարած հետախույզների խումբը, որի մեջ մտնում էին Ղուկաս Յուզբաշյանը, Գրիգոր Բալույանը, Բախշի Առուշանյանը, Թևոս Շահնազարյանը, Մաթևոս Ասծատուրյանը, Գարեգին Դիլանչիյանը և Գարեգին Քյարունցը, Շինուհայր գյուղի հետ, գլխավորապես թուրքաբնակ Մազրա, Շահվերդլար և Էյվազլար (Էյվազլու) գյուղերի վրայով՝ շինուհայրցի կոմունիստներ Արշակ Աբրահամյանը, Արսեն Աղասյանը, Բարսեղ Առաքելյանը, Սուքիաս Աղասյանը, Ղուկաս Մկրտչյանը, Թադևոս Աբգարյանը, Ասատուր Խուրշուդյանը, Ավագ Աղամելյանը, Սերգեյ Բաղդասարյանը, Հարություն Թովմասյանը[2]:

Սակայն Զանգեզուրի պաշտպանների թիկունքում ընդհատակյա աշխատանք կատարելն այնքան էլ հեշտ չէր: Նժդեհի համապատասխան ծառայությունները ձերբակալեցին տասնյակ կոմունիստների, որոնք մեղադրվեցին Կարմիր բանակի հրամանատարության և ադրբեջանական հետախուզության հետ կապի մեջ մտնելու, նրանց տեղեկություններ հաղորդելու և այլ հանցանքների մեջ: Ձերբակալվածներից գնդակահարվեցին Թադեոս Թելունցը, Սոնա Թաթարյանը, Սոփի Աբրահամյանը, Սաշա Հովհաննիսյանը, Շուշանիկ Գյուլնազարյանը, Գարեգին Գյուրջյանը, Նիկոլայ Միրզոյանը, Ղազար Գասպարյանը, Վարդուհի Բարսեղյանը, Սաշա Բարխուդարյանը, Սուքիաս և Արսեն Աղասյանները և ուրիշներ: Հատկապես մեծ կորուստներ էին կրել Շինուհայրի կոմունիստները, որոնց մի մասը ձերբակալվել կամ գնդակահարվել էր գավառի ծառայությունների կողմից, իսկ մի քանիսը, որոնք անցել էին Ադրբեջանի՝ Զանգեզուրին սահմանակից շրջանները, այնտեղ զոհ էին գնացել տեղի մուսավաթական-բեգական տարրերի գնդակներին: Այսպես, մուսավաթական բանդիտները Խոջահանից Շուշի գնալիս Դևեղերեսի ձորում սպանեցին շինուհայրցի կոմունիստներ Արշակ Աբրա-

---

[1] **Н. Гейдаров**, նշվ. աշխ., էջ 112:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 114-115:

համյանին, Արսեն Աղասյանին և Բարսեղ Առաքելյանին[1]:

Ինչպես կռվի ճակատում բոլշևիկյան զորքերի պարտությունը, այնպես էլ տեղի կոմունիստների ու նրանց համակիրների ձերբակալությունները և դաժան պատիժները ի վիճակի չեղան խափանելու գավառում խորհրդային իշխանության հաստատման համար պայքարող ուժերի գործունեությունը: Ընդհատակում գործող բոլշևիկյան բջիջները և Ադրբեջան անցած զանգեզուրցի կոմունիստները շարունակում էին քարոզչական-կազմակերպչական գործունեությունը, նախապատրաստվում նոր առճակատման:

Դեռ 1921 թ. սկզբներին Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհուրդը ՌՍՖԽՀ կառավարությունից ցուցում էր ստացել՝ գրավելու Զանգեզուրը մինչև գարուն: Բայց 11-րդ բանակի հրամանատարությունը, հաշվի առնելով եղանակի հետ կապված բարդությունները, չէր շտապում՝ չցանկանալով նորից դիմել ռիսկի և նոր վտանգների առջև կանգնել: Նույն կարծիքին էր նաև Սերգո Օրջոնիկիձեն, որը Լենինին գրած նամակում նշում էր. «Զանգեզուրի դեմ Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունները վերսկսելը բոլորովին հնարավոր չէ: Հայաստանից և Ադրբեջանից Զանգեզուր տանող բոլոր լեռնանցքները ծածկված են խոր ձյունով»[2]: Նա շեշտում էր, որ գարնան բացվելուն պես բանակը ձեռնամուխ կլինի կառավարության ցուցման կատարմանը:

Ելնելով դրանից՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը որոշեց ժամանակավոր դադարն օգտագործել՝ փորձելով դիվանագիտական ուղիներով ներազդել Զանգեզուրի իշխանության վրա՝ պահանջելով առանց զենք գործադրելու հանձնվել: Նա գտնում էր, որ դեռ չեն սպառվել Գորիսի հետ լեզու գտնելու բոլոր հնարավորությունները: Ուստի զանգեզուրյան զինյալների ղեկավարին համոզելու նոր փորձեր արվեցին. ուղարկվեցին նոր կոչեր, նամակներ, գրություններ, որոնց բովանդակությունը նույնն էր. Նժդեհը չէր կարող իր փոքրաթիվ զինված ուժերով դիմադրել Կարմիր բանակի նոր հարձակմանը, գավառը չէր կարող պահպանել իր ներկա ինքնավար կարգավիճակը, հետևապես անիմաստ էր հետագա արյունահեղությունը*:

Զանգեզուրի հետ բանակցություններ վարելու հարցը հատկապես բարձրացավ Բաքվում Դրոյի գտնվելու ժամանակ:

Դեռ 1921 թ. հունվարի 5-ին Տրոցկին հեռագիր էր ուղարկել Երևան և պահանջել, որ Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար Դրոն Բաքվի վրայով մեկնի Մոսկվա: Դա նախազգուշական քայլ էր, որ խորհրդային իշխանություններն անում էին որոշակի նպատակով. Դրոն մեծ

---

[1] Տե՛ս **Н. Гейдаров**, նշվ. աշխ., էջ 224-225:

[2] ՍՔՊԴՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 77, թ. 2:

* Այդ տեսակետից շատ հետաքրքրական է բոլշևիկ հրամանատարության և Գ. Նժդեհի միջև տեղի ունեցած գրագրությունը, որը զետեղված է 1921 թ. գարնանը Գորիսում լույս տեսած «Արնոտ գիրք» վերնագրով փաստաթղթերի ժողովածուի մեջ:

հեղինակություն ուներ հայ զինվորականության շրջանում, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո իր հիմնական զանգվածով մնացել էր Երևանում: Նախկին հայկական բանակի զինվորականությունը չեզոքություն էր հանդես բերել նոր կարգերի նկատմամբ, իսկ շատ սպաներ, համակրելով խորհրդային իշխանությանը, ցանկանում էին ծառայել Հայաստանի Կարմիր բանակում: Չնայած դրան՝ Հայաստանի խորհրդային և զինվորական մարմինների ոչ քիչ պատասխանատու աշխատողներ (Ավիս, Աթարբեկյան, Այվազյան և ուրիշներ) մնում էին այն տեսակետին, որ հին զինվորականությունը նոր իշխանության անուղղելի հակառակորդն է, ուստի պետք է հալածել նրան՝ կանխելու հնարավոր ըմբոստացումը: Այդ ուղղությամբ ձեռնարկած առաջին քայլերից մեկը հենց Դրոյին Երևանից հեռացնելն էր: Նրան Մոսկվայում աշխատանք էին առաջարկելու, որպեսզի այդ վտանգավոր, անկայուն օրերին նա չվերադառնար Երևան:

Երևանից Դրոյի մեկնելուց հետո Խորհրդային Հայաստանի զորքերի հրամանատարի պաշտոնը ստանձնեց Մ. Վ. Մոլկաչանովը, իսկ բանակի քաղվարչության պետ նշանակվեց Հովսեփ Լազյանը:

Մոսկվա գնալու ճանապարհին Դրոն կանգ առավ Բաքվում և այստեղ մնաց մի քանի օր՝ զանազան մակարդակների հանդիպումներ և զրույցներ ունենալով տեղի խորհրդային և զինվորական գործիչների հետ: Այդ հանդիպումների արդյունքներից մեկն այն եղավ, որ նրան խորհուրդ տվեցին նամակ ուղարկել Նժդեհին և նրան հնազանդության կոչ անել:

Հունվարի կեսերին 11-րդ բանակի հրամանատարությունը Հայաստանի հեղկոմի հետ պայմանավորվել էր նրա անունից Բաքվից Եվլախ–Շուշիի վրայով պատվիրակություն ուղարկել Նժդեհի մոտ: Հեղկոմը տվել էր իր համաձայնությունը, և 11-րդ բանակի հրամանատարությունը լիազորել էր երկու մարդու՝ Սաքո Համբարձումյանին և Հակոբ Իոանիսյանին:

Հունվարի 23-ին Բաքվում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Աթաբեկովը (Աթաբեկյան) ուղիղ հեռագրաթելով կապվեց Երևանի հետ, և հետևյալ խոսակցությունը տեղի ունեցավ նրա ու հանրապետության արտգործժողկոմի տեղակալ Ասքանազ Մռավյանի միջև:

«Աթաբեկով:– Օրերս Զանգեզուր ենք ուղարկում 11-րդի (11-րդ Կարմիր բանակի: – *Ա. Ս.*) կողմից լիազորված Հեղկոմի (Հայաստանի հեղկոմի: – *Ա. Ս.)* ներկայացուցիչներ՝ գյուղացիներին և Նժդեհին ուղղված առաջարկով՝ ճանաչել Խորհրդային Հայաստանը, դադարեցնել թշնամական գործողությունները: Դրոն նամակ է տվել տանելու Զանգեզուր: Մեր առաջարկության մանրամասն պայմանները կմշակվեն Բեկզադյանի գալուց հետո: Հեղկոմի կողմից լիազորվածներ առաջարկում ենք Համբարձումյանին և Հակոբ Իոանիսյանին:

Մռավյան: – Զանգեզուրի պատվիրակության մասին մտածում ենք, որ լավ կլիներ, եթե գնար Երևանով, բայց եթե ձեր կողմից արդեն ամեն բան

արվել է Շուշիով ուղարկելու համար, ...ապա վաղը կհաղորդեմ ընկերներին այստեղ: Հաղորդի՛ր և մեր կարծիքը: Պատվիրակության ընտրությունը ես համարում եմ շատ հաջող...»[1]:

Լիազորված պատվիրակությունը, հավանաբար, Հայաստանի հեղկոմի կողմից հավանություն չգտավ, ուստի բանակի հրամանատարությունը հունվարի 25-ին լիազորեց պատվիրակության նոր կազմ, որն այս անգամ բաղկացած էր 5 հոգուց. Հայաստանի հեղկոմի կողմից նշանակված էին կոմունիստներ, նախկին հնչակյան գործիչ, իսկ հետո բոլշևիկյան կուսակցության մեջ անցած Գրիգոր Վարդանյանը (ղեկավար) և Սամսոն Թյունին, 11-րդ բանակի կողմից՝ ոչ կոմունիստներ փոխգնդապետ Արմենակ Օրբելյանը, Արտաշես Հովհաննիսյանը և Շմավոն Քոչարյանը: Վերջին երեքը պատվիրակության կազմի մեջ էին մտել Դրոյի համաձայնությամբ:

Հունվարի 21-ի թվով Դրոն երկու նամակ էր գրել, մեկը՝ Նժդեհի, մյուսը՝ Զանգեզուրի գյուղացիական խորհրդի անունով, որոնք պետք է տեղ հասցվեին Համբարձումյանի և Իոանիսյանի միջոցով: Նոր պատվիրակություն կազմելուց հետո այդ նամակների հանձնումը հանձնարարվեց նրան:

Նժդեհին գրած նամակում Դրոն արել էր հետևյալ առաջարկությունները. 1. Սյունիքը հայտարարել խորհրդային: 2. Դադարեցնել ապստամբական կռիվները Ղարաբաղում: 3. Ընդունել 11-րդ բանակի հրամանատարության ներկայացուցիչներին, եթե դա ցանկանում է Նժդեհը[2]:

Ավելի ընդարձակ էր Դրոյի շարադրած՝ Զանգեզուրի գյուղացիական խորհրդին ուղղված (պատճենը՝ Նժդեհին) նամակը, որտեղ կրկնում էին խորհրդային կողմի հիմնական պահանջները: Այս նամակում Դրոն գրում էր, որ երկու և կես տարվա դառը փորձը համոզել է, որ հայ ժողովուրդը չէր կարող իր հույսը կապել Եվրոպայի հետ: Հայաստանն արդեն խորհրդային էր, և հեղափոխական Ռուսաստանը կգար նրան եղբայրական օգնության: Ռուսաստանի միջոցով միայն հայ ժողովուրդը կարող էր լուծել իր հողային հարցերը: Շուտով Մոսկվայում տեղի կունենար կոնֆերանս, որտեղ Ռուսաստանի, Թուրքիայի և Հայաստանի մասնակցությամբ կլուծվեր երկրի սահմանների խնդիրը:

Նամակում ձևակերպված հիմնական պահանջը մնում էր Զանգեզուրի խորհրդայնացումը: Շեշտված էր, որ եթե զանգեզուրցիները շարունակեն իրենց պայքարը, ապա դա կունենա ծանր հետևանքներ ոչ միայն Սյունիքի աշխատավոր գյուղացիության, այլև ողջ հայ ժողովրդի համար: Նշվում էր նաև, որ Զանգեզուրի կողմից Խորհրդային Հայաստանը չճանաչելը բերելու էր հետևյալ աղետները.

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 35, թ. 9-ի շրջերես:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հունիս, թիվ 8 (32), էջ 131, **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 55:

1. Հայաստանի կառավարությանը խանգարելու էր լուծել Նախիջևանի, Շարուրի և Ղարաբաղի խնդիրները:
2. Առիթ էր դառնալու, որպեսզի տաճիկները զորքերը չհեռացնեին Հայաստանից՝ պատճառաբանելով, թե այնտեղ հաստատված խորհրդային իշխանությունը կեղծ էր:
3. Չէր սկսվելու խաղաղ և շինարար աշխատանք արյունաքամ երկրում:

Նշված էր նաև, որ «Դժվար է խոստովանել և հաշտվել այն դառն իրողության հետ, որ կատարված են մի շարք քաղաքական սխալներ»:

«Ուստի, դիմելով ձեզ, ուզում եմ հավատալ,– ասված էր Դրոյի նամակի վերջում,– որ Զանգեզուրը և նրա ղեկավարները վերջ կտան իրենց բռնած քաղաքականությանը և կմիանան իրենց Մայր Երկրին՝ Հայաստանին, որ Մոսկվայում տաճիկների հետ բանակցությունները կգան ապացուցելու, որ Սովետական Հայաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը: Ուստի՝

ա) Ձեզ պետք է անմիջապես հայտարարվել խորհրդային և միանալ Խ. Հայաստանի հետ,
բ) Եթե որևիցե բան ունեք պարզաբանելու, առանց ուշացնելու պետք է ներկայացուցիչներ ուղարկեք 11-րդ բանակի հրամանատարության և Հայաստանի կառավարության մոտ»[1]:

11-րդ բանակի ընդհանուր հրամանատար Հեկկերը և Ադրբեջանում Խորհրդային Հայաստանի հեղկոմի ներկայացուցիչ Աթարբեկյանը պատվիրակությանը հանձնարարել էին.

ա) Դրոյի նամակները տանել ու հանձնել Նժդեհին և Զանգեզուրի գյուղացիական խորհրդին:
բ) Բանակցել Նժդեհի հետ և նրան առաջարկել, որ Զանգեզուրում հայտարարի խորհրդային իշխանություն՝ միացած Խորհրդային Հայաստանին:
գ) Անհամաձայնության դեպքում աշխատել, որ Նժդեհն իր կողմից մարդիկ ուղարկի Շուշի կամ Բաքու՝ բանակցությունները շարունակելու համար:
դ) Համաձայնության դեպքում խոստանալ ամենալայն համաներում թե՛ իրեն՝ Նժդեհին, և թե՛ բոլոր յուրայիններին[2]:

Բաքվից դուրս գալով՝ պատվիրակությունը մեկնեց Ղարաբաղ՝ այնտեղից Զանգեզուր անցնելու համար: Հունվարի 28-ին հասնելով Շուշի՝ պատվիրակությունը հաջորդ օրը Արտաշես Հովհաննիսյանին և Շմավոն Քոչարյանին հանձնարարեց ճանապարհվել Զանգեզուր և, ինչ գնով էլ լինի, մտնել այնտեղ, տեսակցել Նժդեհին և նրան հայտնել, որ Շուշիում գտնվող

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70. թ. 29:
[2] Տե՛ս նույն տեղում. թ. 16:

պատվիրակության անդամները կարևոր նամակներ ունեն իրեն տալու: Զանգեզուր ուղևորվողները նաև հանձնարարական ունեին բանակցություն սկսելու խիստ կենսական և ընթացիկ հարցերի մասին, ինչպես և Նժդեհին առաջարկելու երաշխավորել պատվիրակության անձեռնմխելիությունը:

Շուշիում լուր ստանալով, որ պատվիրակության անդամներն արդեն անցել են Զանգեզուր՝ Գ. Վարդանյանը և Ա. Օրբելյանը որոշեցին պատասխանի չսպասել և այնտեղ թողնելով Սամսոն Թյունիևին՝ անմիջապես մեկնեցին Ավդալար՝ սահման, ուր հասան հունվարի 31-ի երեկոյան: Քիչ հետո նրանք սահմանի վրա ստացան Զանգեզուրից Շ. Քոչարյանի գրած երկտողը, ինչպես նաև բուն Զանգեզուրի (Գորիսի շրջանի) հրամանատար Տեր-Պետրոսյանից մի պաշտոնական գրություն, որում ասված էր, որ համաձայն Սյունիքի Սպարապետ Նժդեհի կարգադրության՝ ապահովվում էր պատվիրակության անդամների անձեռնմխելիությունը, և որ նրանց հրավիրում էին Զանգեզուր: Փետրվարի 1-ին նրանց առաջնորդեցին Տեղ գյուղ՝ հրամանատար Տեր-Պետրոսյանի մոտ: Գյուղ մտնելիս նրանք նկատեցին հավաքված գյուղացիների, որոնց տրամադրությունը խիստ բացասական էր եկվորների հանդեպ:

Հաջորդ օրը՝ փետրվարի 2-ին, նրանց առաջնորդեցին Գորիս քաղաք, որտեղ և գտնվում էր Նժդեհը:

Փետրվարի 2-ին Բաքվում Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Աթաբեկյանը հեռագրեց Երևան՝ ՀՍԽՀ արտգործժողկոմի տեղակալ Մռավյանին՝ հաղորդելով, որ պատվիրակությունն արդեն գտնվում էր Զանգեզուրում, և երաշխավորված էր նրա անդամների անվտանգությունը[1]: Սակայն Գորիս մտնելիս պատվիրակները հանդիպեցին էլ ավելի անբարեհաճ, մռայլ և վրեժով լեցուն մարդկանց: Այստեղ մթնոլորտն ավելի ճնշող էր, ատելությունն ավելի շատ զգացվում էր զինվորականության և պաշտոնյաների կողմից:

Զանգեզուրի սահմանը ոտք դնելուց հետո Գ. Վարդանյանը և Ա. Օրբելյանը, ինչպես և ավելի շուտ այնտեղ անցած Ա. Հովհաննիսյանը և Շ. Քոչարյանը մշտապես գտնվում էին խիստ հսկողության տակ, որպեսզի հնարավորություն չունենային շփվելու տեղացիների հետ: Այդ հսկողությունը պատճառաբանվում էր նրանով, որ այդպես փորձում էին կանխել բոլշևիկների նկատմամբ զայրացած ամբոխի հնարավոր անախորժությունները:

Փետրվարի 2-ին՝ ժամը 12-ին, Արմենակ Օրբելյանը հրավիրվեց Նժդեհի մոտ՝ նրա բնակարանը: Դրոյի երկու գրությունները հանձնելուց հետո նա բավական երկար զրույց ունեցավ Նժդեհի հետ և նրան հայտնեց պատգամավորության նպատակը:

Այնուհետև ժամը 2-ին Նժդեհն իր մոտ հրավիրեց Գրիգոր Վարդանյա-

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 114, գ. 2 գ, 70 թ. 28:

նին, իսկ ինքն այդ նույն պահին մի տան պատշգամբից ելույթ էր ունենում Տաթևից և այլ գյուղերից նոր եկած զորամասերի առջև: Այնտեղ էր հավաքվել քաղաքի գրեթե ամբողջ հասարակությունը: Գ. Վարդանյանին ուղեկցում էին միտինգի մասնակիցների շարքերի միջով այն պահին, երբ Նժդեհը մոտավորապես ասում էր. «Այո՛, կոմունիզմի շղարշ հագած պարոններ հայ կոմունիստները բավական չէ, որ կործանման դուռը հասցրեցին Զանգեզուրի աշխատավորությանը, այսօր խոնարհվելով ձեր իրական ուժի առաջ՝ պատգամավորներ են ուղարկում մեզ ինչ-ինչ առաջարկներով, և սա նրա համար, որովհետև սրիկա Քեմալի հակահեղափոխական բանդաները գրավել են Հայաստանի մեծ մասը և սպասում են գրավել մյուս մասերը, բայց ո՞վ բերեց քեմալականներին Հայաստան...»[1]:

Անցնելով շարքերի միջով՝ Գ. Վարդանյանը հասնել Նժդեհի բնակարան: Քիչ հետո այնտեղ է եկել նաև ինքը՝ Նժդեհը, և նրան հրավիրել իր աշխատասենյակը: Զրույցին ներկա է եղել նաև Սյունիքի նորընտիր կառավարության դիվանապետը՝ Գեդեոն Տեր-Մինասյանը:

Նժդեհի առաջարկով Վարդանյանը հանգամանորեն ներկայացրել է այն հարցերը, որոնք մշակվել էին Բաքվում, ինչպես նաև մի շարք ուրիշ հարցեր, այն է՝

1. Ռուսական սոցիալիստական հեղափոխության առաջադրած մեծ նպատակները և 3-րդ Ինտերնացիոնալը,
2. հակահեղափոխական Անտանտը և իր գործելակերպը,
3. Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը,
4. քեմալական շարժումը, Խորհրդային Ռուսաստանը և Անտանտը,
5. մուսավաթականները, մենշևիկներն ու դաշնակցականները և նրանց հակահեղափոխական գործելակերպն Անդրկովկասում,
6. Հայաստանի Հանրապետության կործանումը և դաշնակցականների դաշնագրերը Քեմալի և մենշևիկյան Վրաստանի հետ,
7. Խորհրդային Հայաստանի ներկա տնտեսական և քաղաքական ծանր պայմանները, որոնք արդյունք են Դաշնակցության արկածախնդրական քաղաքականության,
8. քաղաքական նոր բարդությունների հավանականությունը հատկապես Անդրկովկասում և մանավանդ Հայաստանի ճակատում,
9. Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի նշանակությունը ռազմական և Խորհրդային Հայաստանի ամրապնդման ու ապագա զարգացման տեսակետներից,
10. Զանգեզուրի կղզիացման հնարավոր հետևանքները թե՛ հենց իր՝ Սյունիքի աշխատավոր գյուղացիության և թե՛ առհասարակ մանուկ

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. , գ. 70, թ. 17 և շրջերես:

Խորհրդային Հայաստանի աշխատավոր մասսաների համար[1]:

Գ. Վարդանյանի՝ մեկ ժամ տևած հաղորդումից հետո սկսել խոսել Նժդեհը՝ հուզված ու վրդովված:

Իր խոսքի սկզբում Նժդեհը հայտարարել, որ սոցիալիստները ոչ թե Գորիս եկած պատգամավորներն են, այլ հենց ինքն է իսկական սոցիալիստ, որովհետև միշտ սեփականազուրկ է եղել և երբեք ձգտում չի ունեցել սեփականություն ունենալու, ընդհակառակը, իր ողջ կյանքը տրամադրել է միայն ու միայն աշխատավոր զանգվածների ազատագրման գործին, պայքարել հանուն Տաճկաստանի և Պարսկաստանի ճնշված ժողովուրդների, մասնավորապես հայ բազմաչարչար ժողովրդի ազատագրման համար:

Անցնելով բուն հարցին՝ Նժդեհն ասել է, որ նրանք առաջարկում են Զանգեզուրը խորհրդայնացնել, բայց չեն ուզում իմանալ՝ արդյոք դա ցանկանում է Սյունիքի ժողովուրդը, այն ժողովուրդը, որն արդեն տեսել է խորհրդային իշխանության «բարիքները» անցյալ տարվա հուլիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Մի՞թե խորհրդային զորքերը չէին, որ իրենց հետ Զանգեզուր էին բերել 1200-ի չափ տաճիկ ասկյարներ, որոնք 15 օր շարունակ կրակի էին մատնել Յայջի գյուղը և վերածել ավերակի, Քարահունջ գյուղում բռնաբարել ու լլկել 100-ից ավելի հայ օրիորդների, որոնք այժմ, սիֆիլիսով հիվանդացած, աղի արցունք են թափում: Իսկ Զանգեզուրի կոմունիստնե՞րը, որոնք «ծաղրում էին եկեղեցին», որոնք «մինչև իսկ ածիլեցին մի ծերունի քահանայի մորուքը պարզ քմահաճույքի համար»[2]: Բոլշևիկների՝ Զանգեզուրում եղած հինգ ամիսների ընթացքում նրանք գնդակահարեցին տասնյակ անմեղ մարդկանց, այդ թվում՝ Վահան Խորենուն և Արշակ Շիրինյանին: Մի՞թե Խորենին չէր, որ լինելով «Աշխատավորի» խմբագիր Թիֆլիսում, 1918 թվականին իր թերթի էջերում ջերմորեն ողջունում էր Խորհրդային Ռուսիան և Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը:

Դառնալով Գ. Վարդանյանի այն խոսքերին, թե խորհրդային իշխանությունը բանվորների և չքավոր գյուղացիների շահերի պաշտպանն է՝ Նժդեհն ասել է. «Բայց ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ խորհրդային 5-ամսյա իշխանության օրոք Զանգեզուրի չքավոր գյուղացիությունը բառի բան իմաստով թալանվեց: ...Իսկ դրա փոխարեն ի՞նչ է տրվել չքավոր գյուղացուն, ոչինչ և ոչինչ... Տարան մինչևիսկ աղքատ գյուղացու մի հատիկ ուլը»: Բերելով այս և նման կարգի ուրիշ այլ փաստեր ու փաստարկներ՝ Նժդեհը շարունակել է. «Թվելով այս բոլորը, կամեցա ցույց տալ այն խոր վերքերը, որ հասցրել են այս ժողովրդին, որով էլ Զանգեզուրի և Սիսիանի չքավոր մասսաներին ստիպեցին երեսները շուռ տալ կոմունիստներից և Խորհրդային կարգերից գեթ որոշ ժամանակով, մինչև վերքերը սպիներ դառնան: Ժամա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց., գ. 70, թ. 17 և շրջերես:

[2] Նույն տեղում, թ. 18-ի շրջերես:

նակ և գործելակերպի խիստ փոփոխություն է պետք, որ այս ժողովրդի հետ կարելի լինի խոսել սովետիզացիայի մասին»[1]:

Այնուհետև, դառնալով արտաքին-քաղաքական հարցերին, Նժդեհը կտրուկ հայտարարել է, որ Զանգեզուրը ոչ մի կապ և առնչություն չունի ոչ մեծ և ոչ էլ փոքր կոչված անտանտների հետ, «իսկ անձամբ ես խորապես ատում եմ և՛ մեկը, և՛ մյուսը: Պատճառը պարզ է. նրանք խաբեբաներ են, ստոր և ոճրագործ: Նրանք խաբել են ամենից շատ հայ աշխատավոր ժողովրդին և գցել նրան թրի բերան»[2]:

Գ. Վարդանյանը զրույցի ընթացքում նշել է, թե Կարմիր բանակի զորքերին Զանգեզուրի ցույց տված դիմադրությունն ավելի ծանր կացության մեջ է դրել Հայաստանը, որի Լոռվա շրջանը գրավել է Վրաստանը, իսկ Քեմալը գրավել է նրա ընդարձակ տարածքները և սպառնացել է զավթել ամբողջ Հայաստանը: Որպես պատասխան՝ Նժդեհն ասել է. «Գիտեմ, որ շատ լուրջ մոմենտ է: Այդ գիտակցելով է, որ ես շատ պինդ կպած եմ այս սարերին ու այս աշխատավոր զանգեզուրցիներին և խորապես համոզված եմ, որ այդ ահավոր պայքարի միջից մենք՝ զանգեզուրցիներս, ավելի շուտ պատվով դուրս կգանք, քան ներկա Խորհրդային Հայաստանը, որի ուժերը ոչ միայն չեն կազմակերպված, այլև, ինչպես լսում ենք, եղածն էլ քանդում են: Եթե, հիրավի, Խորհրդային Հայաստանը գտնվում է այդպիսի խոշոր վտանգի առաջ, ապա ինչո՞ւ այնտեղ գլխատում են մարզված զինվորական և ինտելիգենտ ուժերը: Ես լիովին ըմբռնում եմ հակահեղափոխական տարրերին կղզիացնելը, բայց ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ բանտերը լցվում են այնպիսի ինտելիգենտներով, որոնք անպայման օգտակար կհանդիսանային հենց իրեն՝ Խորհրդային Հայաստանին: Մինչև այս բոլորը մի վերջ չգտնեն, կարելի՞ է տեսնել գարանտիա ապագայի նկատմամբ: Պետք է հավատ ներշնչել ոչ թե խոսքերով, այլ գործով, փաստերով»[3]:

Հետագա խոսակցություններում Գ. Վարդանյանը, առարկելով Նժդեհի մի շարք փաստարկներին, հատկապես ընդգծել է, որ Զանգեզուրի հայ կոմունիստ ընկերների մասին եղած ամբաստանություններն իր համար մեծ մասամբ նորություններ են:

«Այս բոլորը, անշուշտ, խիստ ցավալի է,– ասում է նա,– բայց մենք խոշոր հասարակական երևույթները եթե մասնավորի վերածենք, երբեք չենք կարող լուծել էական հարցը: Ամեն մի հասարակարգ, քանի դեռ հիմնավորված չէ, կունենա իր թերությունները, ճիշտ այդպես էլ խորհրդային իշխանությունը Զանգեզուրում: Բայց մի՞թե այս և նման հանգամանքներն իրավունք կտան Զանգեզուրի աշխատավորությանը, որ կազմում է Հայաստանի մի մասը, կղզիանալ. չէ՞ որ սա պետական առողջ մտածելակերպ չէ, չէ՞ որ Խորհրդա-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 19-ի շրջերես:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, թ. 20:

յին Հայաստանի անկումից անմիջապես հետո Քեմալին, մուսավաթիստներին ու այլ հակահեղափոխականներին դժվար չպիտի լիներ ոտնակոխ անել նաև Զանգեզուրը»[1]:

Վերադառնալով Նժդեհի այն խոսքերին, թե Զանգեզուրի ժողովուրդը ոչ միայն կռվել, այլև պատվով մեռնել գիտե, Վարդանյանն ասել է. «Բայց սա նպատակ չէ, այլ հուսահատ միջոց: Մենք ձգտում ենք ապրեցնել մեր աշխատավոր մասսաները, իսկ դուք կոչ եք անում մեռնել՝ թեկուզ հերոսական մահով: Ի՞նչ օգուտ, չէ՞ որ վերջիվերջո խորտակվելու եք: Հարցը, ընդհակառակը, ես պարզ ու կտրուկ կերպով եմ դնում. ի՞նչ դիրք կբռնեք Դուք, պարո՛ն Նժդեհ, և Զանգեզուրի աշխատավորությունն այն դեպքում, եթե Խորհրդային Հայաստանը, հանգամանքների թելադրանքով, Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի հետ ձեռք ձեռքի տված պատերազմական գործողություններ սկսեն ընդդեմ Քեմալի ու Վրաստանի կամ այլ խոսքով՝ ընդդեմ Անտանտի»[2]:

Նժդեհն ասել է, որ դա կախված կլինի նրանից, թե ինչ վերաբերմունք ցույց կտան խորհրդային իշխանությունները հայ աշխատավոր զանգվածների նկատմամբ: Նման դեպքում Սյունիքը կվարվի այնպես, ինչպես թելադրում են հայ ժողովրդի շահերը:

«Ես, իբրև հեղափոխական, երբեք և ոչ մի դեպքում չեմ կարող լինել հակահեղափոխության հետ,– շեշտել է Նժդեհը:– Բայց եթե խորհրդային իշխանությունները գիտակցաբար թե անգիտակցաբար մեզ իրենցից ետ մղեն՝ շարունակելով նախկին կործանարար մեթոդները, ապա մենք մեղավոր չենք լինի, եթե ստիպված լինենք կղզիանալ կամ թեկուզ ընկնել կատաստրոֆիկ վիճակի մեջ: Կրկնում եմ, ես սկզբունքային տեսակետից չէ, որ վիճում եմ խորհրդային իշխանության մասին, ո՛չ, այլ թե որքան, ցավ ի սիրտ, վատ են կիրառվում խորհրդային կարգերը կյանքում, հատկապես՝ մեր կողմերում»[3]:

Վերջում Նժդեհը նշել է, որ իր կառավարությունը գրավոր պատասխան կտա խորհրդային կողմի արած առաջարկներին, նամակներ կտրվեն պատվիրակությանը՝ հասցնելու 11-րդ բանակի ընդհանուր հրամանատարին, Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Չիչերինին և Դրոյին:

Պատվիրակության անդամները տեսակցել և զրույցներ են ունեցել նաև Սյունիքի կառավարության երկու անդամների՝ Գեդեոն Տեր-Մինասյանի և Տիգրան Սազանդարյանի հետ: Ապա ստացել են հիշյալ նամակները:

11-րդ բանակի հրամանատար Հեկկերին հասցեագրած նամակը ստորագրել էին Ինքնավար Սյունիքի դիվանի նախագահ ու արտաքին գործերի վարիչ Գեդեոն Տեր-Մինասյանը և դիվանապետ Սամվել Մաշուրյանը: Նամա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 20:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, թ. 20-ի շրջերես:

կում նշվում էր, որ Սյունիքի կառավարությունը լի է վճռականությամբ՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու հարևան բոլոր երկրների և ժողովուրդների հետ՝ միմյանց ինքնուրույնությունը հարգելու պայմանով: Հիշեցնելով Զանգեզուրում Կարմիր բանակի կատարած դաժանությունները՝ միաժամանակ ցավ էր հայտնվում, որ Երևանի և Բաքվի բանտերում տառապում են հայ ժողովրդի բազում զավակներ, այն դեպքում, երբ սովետական կողմն անընդհատ փորձում է հավաստիացնել իր խաղաղասիրական մտադրությունները: Զանգեզուրը խորհրդայնացնելու՝ Դրոյի նամակի առթիվ նշվում էր, որ «Ինքնավար Սյունիքի կառավարությունը, լինելով գերազանցորեն ժողովրդական, առանց ժողովրդի հավաքական կամքի և ցանկության չի կարող անմիջապես պատասխանել նրան: Դրոյի նամակի կապակցությամբ նա կտնտղի ժողովրդի տրամադրությունը և կամքը՝ աշխատելով հնարավորության սահմաններում շուտափույթ կերպով պատասխանել այդ գրությանը»[1]:

Օգտվելով առիթից՝ նամակի հետ ներփակ կցվեցին դիվանում գտնվող բազմաթիվ փաստերից մի քանիսը, որոնք ցույց էին տալիս Զանգեզուրում բոլշևիկների կատարած անօրինությունները: Դրանք էին բուն Զանգեզուրի գյուղացիական ժամանակավոր խորհրդի՝ նոյեմբերի 30-ի նիստում հաստատված փաստերի արձանագրությունը, Կոռնիձոր և Տեղ գյուղերի բնակիչների աղաղակող համախոսականները, այդ գյուղերի կրած վնասների ցուցակները և Գորիս քաղաքի ու շրջանի հայ կանանց բողոքը*:

Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինին ուղղված նամակ-բողոքը[2] նույնպես ստորագրել էին Գեդեոն Տեր-Մինասյանը և Սամվել Մաշուրյանը: Այնտեղ նշված էր, որ Հայաստանի գյուղացիությունը և մասնավորապես Սյունիքի աշխատավորությունը, որ գերազանցորեն մի դեմոկրատ ժողովուրդ է, «աչքերը հառած դեպի հյուսիսի իր մեծ եղբայրը, նրա առաջ լայն բացեց իր դռները, բայց միանգամայն հիասթափվեց»: Ապա նորից նկարագրվում էին բոլշևիկյան իշխանության 5-ամսյա տիրապետության օրոք զանգեզուրցիների կրած տառապանքները: «Բողոքում ենք և սպասում,– ասված էր նամակի վերջում,– որ Ձեր կողմից ձեռք կառնվեն, վերջապես, իրական միջոցներ՝ հանգիստ տալու մեր գյուղացիությանը: Բողոքում ենք և պահանջում, որ վերջապես ճանաչեք արդարությունը և թույլ տաք խաղաղ և շինարար աշխատանքով զբաղվելու այն գյուղացիությանը, որն ընչազուրկ է, քաղցած և մերկ է»[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 30:

* Այդ և նմանօրինակ բազմաթիվ ուրիշ փաստեր տեղ են գտել 1921 թ. գարնանը Ինքնավար Սյունիքի խորհրդի հրատարակությամբ և Տիգրան Սազանդարյանի առաջաբանով Գորիսի «Սասուն» տպարանում լույս տեսած «Ազատ Սյունիք» վերնագրով ժողովածուի մեջ:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 32-34:

[3] Նույն տեղում, թ. 34:

Դրոյին հասցեագրած նամակում, որը ստորագրել էր Նժդեհը, առաջ էին քաշված տվյալ պահին Սյունիքի իշխանությունների հիմնական պահանջները.

1. հայ մտավորականությանն ազատել բանտերից,
2. Սյունիքը և Ղարաբաղը կցել Հայաստանին,
3. թուրքերին հեռացնել գոնե Շարուրից և Ալեքսանդրապոլից:

Այս երեք պահանջները կատարելու դեպքում նա խոստանում էր անցնել արտասահման և խորհրդային իշխանության առաջ բացել Սյունյաց երկրի դռները[1]:

Թեև Նժդեհն իր պաշտոնական պատասխաններում, ըստ էության, մերժում էր խորհրդային հրամանատարության որոշակի առաջարկությունները, բայց լիովին չէր բացառում Զանգեզուրի և բոլշևիկների միջև տանելի հարաբերությունների հաստատման հնարավորությունը՝ գտնելով, որ դա առաջին հերթին պայմանավորված էր նրանց քաղաքականության փոփոխությամբ:

Գորիսում երեք օր մնալուց հետո՝ փետրվարի 5-ի կեսօրին, 15 մարդուց բաղկացած պահակախումբը խորհրդային պատվիրակությանը ուղեկցեց մինչև սահմանը: Պատվիրակությունը Բաքու մեկնեց առանց որևէ արդյունքի: Նժդեհը տրամադրություն չէր հանդես բերել երկխոսություն սկսելու Կարմիր բանակի հրամանատարություն հետ և մերժել էր Դրոյի խորհուրդները[2]:

Վերադառնալով Բաքու՝ Հայաստանի հեղկոմի կողմից նշանակված պատգամավոր Գրիգոր Վարդանյանը 1921 թ. փետրվարի 11-ին զեկուցագիր ներկայացրեց* «Զանգեզուրի ներկա կացության և Նժդեհի հետ վարած մեր բանակցությունների մասին»[3]:

Զանգեզուրի ապստամբներին խաղաղորեն ենթարկվելու կոչեր էին գալիս նաև Երևանից:

1921 թ. հունվարի վերջերին ՀՍԽՀ հեղկոմը դիմում հղեց «Զանգեզուրի գյուղացիությանը», որի մեջ, նկարագրելով Խորհրդային Հայաստանի քաղաքական վիճակը, նորաստեղծ հանրապետության առջև կանգնած վիթխարի դժվարությունները, շեշտում էր, որ Ադրբեջանում և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով վերանում են այն շարժառիթները, որոնք վերջին տարիներին բաժանում էին այդ երկու հանրապետությունների աշխատավոր ժողովուրդներին՝ առաջ բերելով պատերազմական արյունալի ընդհարումներ:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հունիս, թիվ 8 (32), էջ 131:

[2] Տե՛ս **Զ. Աշխատունի**, Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 132:

* Արմենակ Օրբելյանը նույնպես ներկայացրել էր գրավոր զեկուցագիր, որը, սակայն, չհաջողվեց գտնել արխիվներում:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 29:

«Այժմ,– ասված էր Հեղկոմի դիմումի մեջ,– մնում է Զանգեզուրին Խորհրդային Հայաստանի հետ միացման հարցը: Հայաստանի խորհրդային իշխանության համար դա մի անհրաժեշտ և անհետաձգելի հարց է: ...Ձեր գործելակերպի շարունակությունը կարող են օգտագործել միայն նորահաստատ հայկական կառավարության և հայ աշխատավոր մասսաների թշնամիները: Ահա և դրա համար առաջարկում եմ վերջ տալ ձեր **աննպատակ** դիմադրությանը և ճանաչել Հայաստանի խոր[հրդային] իշխանությունը: Երբ դուք ցույց կտաք ձեր լոյալությունը, Հայաստանի հեղկոմը երաշխավորում է կյանքի անձեռնմխելիություն այն մարդկանց, որոնք անցյալում նկատվել են սովետական իշխանության դեմ մղվող կռիվներում»[1]:

11-րդ բանակի հրամանատար Հեկկերը ուղիղ հեռագրաթելով Բաքվից Երևան Ավիսին և Դրոյին հաղորդում էր. «Մենք հեռացնում ենք մեր զորամասերը Զանգեզուրից և Ղարաբաղից, Շուշիում և Աղդամում միայն թողնելով ոչ մեծ կարմիրբանակային մասեր՝ սահմանային ընդհարումներ թույլ չտալու համար: Հայկական ջոկատների հրամանատար Նժդեհը համաձայնություն է տվել բանակցություններ վարելու Գորիսում: Ես գտնում եմ, որ անհրաժեշտ է հենց այժմ բանակի** հրամանատարության կողմից կատեգորիկ սպառնալիքով հրաման ուղարկել Նժդեհին՝ նրա ջոկատների կողմից ակտիվ գործողությունները դադարեցնելու և անառարկելիորեն ռազմական հրամանատարությանը ենթարկվելու պահանջով, նշելով, որ այլապես նրա դեմ կշարժվեն հայկական զորամասերը*, առավել ևս նկատի առնելով այն, որ Նժդեհը ուղարկել է հանդուգն ագիտացիոն նամակ՝ խորհրդային իշխանության նկատմամբ զանազան զրպարտություններով, չշոշափելով անգամ երկու կողմից թույլ տրված թյուրիմացությունները»[2]:

Զանգեզուրի խնդիրը Երևանի բոլշևիկներին զբաղեցնում էր համարյա ամեն օր: Այդ թեման չէր իջնում «Կոմունիստ» թերթի էջերից, այն հանրահավաքների հիմնական խոսակցության նյութերից էր:

Թեև Զանգեզուրի դեմ ռազմական նոր գործողություններ էին ծրագրվում, բայց Խորհրդային Հայաստանի կառավարության անդամների մեծ մասը հարցը բանակցությունների միջոցով լուծելու կողմնակից էր: Ըստ որում, բոլշևիկներից ոմանք ուզում էին այդ գործում ներգրավել նաև ոչ բոլշևիկ մտավորականների: Այդպես գործելու կողմնակիցների թվում էին Հայհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը և Ասքանազ Մռավյանը, որոնք Զանգեզուր ուղարկելու համար տալիս էին Դավիթ Անանունի, Վահան Մինախորյանի և Սիմոն Վրացյանի անունները:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց, 1, գ. 169, թ. 1:

** Խոսքը Հայաստանի Կարմիր բանակի մասին է:

* Նկատի ունի Հայաստանի Կարմիր բանակի զորամասերը:

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 21, թ. 18:

Ս. Վրացյանը վկայում էր. «Ինձ անպաշտոն կերպով ուղղված հարցումին՝ ես տվի սկզբունքային համաձայնություն: Սակայն, իբրև նախապայման Զանգեզուր գնալու, ես անհրաժեշտ էի համարում, որ Հայաստանի Հեղկոմը երաշխավորի տալ զանգեզուրցիներին տեղական ինքնավարություն և վերջ դնի հալածանքներին Հայաստանում: Ինձ հաղորդեցին, որ Կասյանը ընդունելի է համարում այս պայմանները, բայց հանդիպում է խիստ դիմադրության Աթարբեկյանի և, մանավանդ, Ավիսի կողմից, որը պահանջել է Զանգեզուրը զենքով գրավել»[1]:

Նույն օրերին Գորիսում ստացվել է Շուշի քաղաքի և նրա շրջակայքի կայազորի պետ Վոյցեխովսկու պաշտոնագիրը, որի համառոտ բովանդակությունը հետևյալն էր՝ վերջ դնել բոլոր ապստամբություններին և բարեկամական հարաբերություններ հաստատել խորհրդային կողմի հետ: Այդ դեպքում խորհրդային կողմը համապատասխան քայլեր կկատարեր, որոնցից առաջինը կլիներ Շուշի–Գորիս հեռախոսային գծի վերականգնումը[2]:

Դրանից երկու օր անց՝ հունվարի 26-ին, Նժդեհը Շուշիից ստացել է նույնիմաստ մի ուրիշ գրություն, այս անգամ 28-րդ դիվիզիայի ժամանակավոր հրամանատար Սեմյոնովից, որը կրկին ստանձնել էր դիվիզիայի 84-րդ բրիգադի հրամանատարությունը:

«Կարմիր բանակը,– ասված էր գրության մեջ,– մտնելով Հայաստան, պաշտպան է հանդիսանում ճնշված հայ ժողովրդին: Սակայն համաշխարհային կապիտալիզմն այստեղ ևս ցուցադրել է իր հափշտակիչ դիտավորությունները և արգելք հանդիսացել այն ընթացքին, որը պատմականորեն պիտի կատարվի: Հայաստանի տարաբախտ որդուն բարեկամաբար պարզած մեր ձեռքը մնաց օդի մեջ կախված... Առաջարկում եմ դադարեցնել ամեն տեսակի ռազմական գործողություններ, կապ հաստատել մեզ հետ և փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու...»[3]:

Նժդեհը Սեմյոնովի գրությանը տվեց պատասխան, որում ասված էր. «Անկեղծ բարեկամական հարաբերություն կարող է ստեղծվել այն դեպքում, երբ հայ մտավորականությունը կազատվի բանտերից, երբ կդադարեք նրան հալածելուց, երբ ձեր բարձր հրամանատարությունը իրական և կտրուկ միջոցներ ձեռք կառնի մաքրել այն հողամասերը, որոնք գրավված են քեմալականներից և, վերջապես, երբ կդադարեք Զանգեզուր ուղարկել զանազան մութ անձնավորություններ՝ «գաղտնի և շտապ գործերով», ինչպես այդ անում էր 11-րդ բանակի ռեգիստրացիայի բաժինը: Երբ ես կհամոզվեմ, որ դուք կսկսեք իրականացնել Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության ցանկությունները, որի հավաքական կամքը արտահայտում եմ ես, երբ ես

---

[1] **Ս. Վրացեան,** Էջեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, փետրվար, թիվ 4, էջ 36:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հունիս, թ. 8 (32), էջ 132:

[3] Նույն տեղում:

կհամոզվեմ, որ դուք հանձինս հայ հեղափոխական դեմոկրատիայի տեսնում եք ոչ թե ձեր թշնամուն, այլ նրանց, որոնք կոչված են շարունակել ընդհանուր հեղափոխական գործը, այն ժամանակ միայն ես կարող եմ հավատալ ձեր անկեղծությանը, և ձեր մեկնած ձեռքը չի կախվի օդում: Իմացե՛ք և հիշե՛ք, որ ես և Զանգեզուրի ժողովուրդը, որն ինձ է հանձնել յուր բախտը, ներկայացնում է իրենից մի պատկառելի իրական ուժ, որը, ինչպես ես առաջ էլ գրել եմ, մի օր ձեզ պետք պիտի գա: ...Երբ գործով ապացուցեք, որ դուք միանգամայն թշնամի չեք դժբախտ հայ ժողովրդին, այն ժամանակ միայն կարելի է բարեկամական փոխհարաբերություն ստեղծել մեր և ձեր միջև»[1]:

Հատկանշական է, որ ինչպես Վոյցեխովսկու, այնպես էլ Սեմյոնովի գրությունները շարադրված էին հանդարտ, մեղմ տոնով ու հանդուրժողաբար, որոնք խիստ տարբերվում էին խորհրդային հրամանատարության նախորդ բազմաթիվ սպառնալից հայտարարություններից, գրություններից, վերջնագրերից: Դա մի կողմից Կարմիր բանակի զորամասերի ծանր պարտության հետևանքն էր, մյուս կողմից՝ արտահայտություն էր առանց կռվի Զանգեզուրը խորհրդայնացնելու բոլշևիկյան նոր մարտավարության:

Մի փոքր այլ կերպ էր իր մտքերը ձևակերպել Նժդեհին ուղարկած գրության մեջ 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Ի. Հեկկերը: Նա ընդունում էր, որ խորհրդային զորքերը Զանգեզուրում ծանր պարտություն էին կրել, բայց միաժամանակ զգուշացնում էր, որ դա բնավ չի նշանակում, թե բանակի հրամանատարությունը հրաժարվել էր նոր հարձակումով գավառը գրավելու մտքից: Ըստ որում, ամեն անգամ բանակի հրամանատարը հավաստիացնում էր, թե Զանգեզուրը կմիացվեր Խորհրդային Հայաստանին:

Զինաթափվելու բոլոր առաջարկներին ու կոչերին ի պատասխան՝ Զանգեզուրի ղեկավարները համառորեն պահանջում էին երեք բան.

1. տաճիկների հեռացում հայկական հողերից,
2. կայուն երաշխիքներ, որ Զանգեզուրը լինելու է Խորհրդային Հայաստանի անբաժան մասը,
3. Հայաստանում ծայր առած հալածանքների դադարեցում:

Զանգեզուրի կողմից առաջ քաշված առաջին երկու պահանջների առնչությամբ Կարմիր բանակի ներկայացուցիչները և Խորհրդային Հայաստանի պաշտոնական անձինք միանշանակ պատասխանում էին, որ շուտով Մոսկվայում տեղի էր ունենալու կոնֆերանս, որտեղ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվելու էին նաև Հայաստանի սահմանների, այդ թվում՝ Ղարաբաղի և Զանգեզուրի հարցերը, հետևապես պետք էր համբերել և սպասել կոնֆերանսի արդյունքներին: Ավելին, Մոսկվայի կոնֆերանսն իր որոշումներով այսուհետ հանգստություն և կարգ էր հաստատելու ամբողջ Այսրկովկասում: 1920 թ. դեկտեմբերի 18-ին

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հունիս, թիվ 8 (32), էջ 133:

Բաքվում հրատարակվող ռուսերեն «Կոմունիստ» թերթը գրում էր, որ Մոսկվայում հրավիրվելիք հատուկ կոնֆերանսը նախաձեռնել էր անգորական կառավարությունը, որն էլ որոշելու էր տարածքային և մյուս հարցերը Թուրքիայի և Այսրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև:

Նժդեհը ոչ մի հավատ չէր տածում այդ հավաստիացումներին՝ համոզված լինելով, որ Մոսկվայի կոնֆերանսի աշխատանքներն ընթանալու էին հաղթած երկրի՝ Թուրքիայի թելադրանքի ներքո: Այդ համոզմունքից ելնելով՝ Նժդեհը միջոցներ ձեռնարկեց խորհրդային կողմի վրա ճնշում գործադրելու համար:

Նախ, ավելի ծավալվեցին հարաբերություններ Թավրիզի հետ: Զանգեզուր–Պարսկաստան կապերի սերտացման մեջ խիստ շահագրգռված էին երկու կողմերը: Զանգեզուրը Պարսկաստանից շարունակում էր ստանալ ամենից առաջ տնտեսական օգնություն, հատկապես հացահատիկ և ալյուր, որը սյունեցիներին հնարավորություն էր տալիս հազիվ գոյատևելու: Պարսկական կողմը, որը սարսափած էր բոլշևիկյան ներխուժման վտանգից, շահագրգռված էր, որպեսզի Զանգեզուրը, որքան հնարավոր է, կանգուն մնա:

Սյունիքի կառավարությունը հույս ուներ Թավրիզի վրայով Պարսկաստանի, Սիրիայի, Լիբանանի հայերից ստանալու ոչ միայն նյութական, այլև ռազմական աջակցություն, ստանալու օգնություն նաև դրսի հակախորհրդային ուժերից:

Հայկական Կարմիր բանակի շտաբը 1921 թ. հունվարի 8-ին լրտեսական ծառայությունից ստացել էր տեղեկություն այն մասին, թե Զանգեզուրի ապստամբներին Թավրիզի եպիսկոպոսի միջոցով հաղորդվել է անգլիացիների հավաստիացումն այն մասին, որ Զանգեզուր է ուղարկվում հայ-սիրիական (արխիվային փաստաթղթում այդպես է, հավանաբար պետք է լիներ հայ-ասորական: – *Ա. Ս.)* միացյալ զինված մի ջոկատ: Ստանալով այդ տեղեկությունը՝ շտաբը բանակի հրամանատարությանը զեկուցում էր. «Հայ-սիրիական ջոկատի մասին տեղեկությունը ցույց է տալիս խորհրդային իշխանության դեմ ապստամբական նոր կենտրոն ստեղծելու՝ անգլիացիների փորձի հնարավորությունը»[1]:

Սյունիքի կառավարությունը քայլեր արեց Ղարաբաղի և Զանգեզուրի միջև գտնվող տարածքների զինված քրդերին չեզոքացնելու համար և այդ նպատակով բանակցություններ սկսեց նրանց ղեկավարի՝ Սուլթանբեկ Սուլթանովի հետ, որը Ղարաբաղի նախկին գեներալ-նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովի հարազատ եղբայրն էր, և որի ազդեցությունը տարածվում էր նաև Ջևանշիրի գավառի վրա:

1921 թ. փետրվարի 14-ին 11-րդ բանակի հետախուզական բաժինը վերադասին ներկայացրած զեկուցագրի մեջ հաղորդում էր, որ իր նստավայ-

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ, 192 թ. 1:

ռում՝ Գորիսից 15 վերստ հյուսիս գտնվող Պիչանիս գյուղում, Սուլթանբեկ Սուլթանովն ուներ մոտ 400 զինված քուրդ մարտիկ, իսկ Գորիսից մոտավորապես նույն հեռավորության վրա գտնվող Մինքենդ գյուղում կային սուլթանովյան 150 զինյալներ: Բազմաթիվ մանր խմբեր՝ սովորաբար կազմված 10-15 մարդուց, ունեին քրդական մյուս բեկերը[1]:

Թեև քրդական ավագանու տրամադրության տակ գտնվող զինյալները թվական տեսակետից մեծ ուժ չէին ներկայացնում, բայց Զանգեզուրի վրա Կարմիր բանակի զորքերի նոր հարձակման դեպքում դրանց գոնե չեզոք պահվածքը նպաստավոր կարող էր լինել հայկական կողմի համար: Ուստի դա էր պատճառը, որ Գորիսը որոշակի քայլեր էր անում քրդերի չեզոքությունը գլուխ բերելու նպատակով:

Խորհրդային կողմի վրա ճնշում գործադրելու միջոցներից մեկը խմբապետ Թևան Ստեփանյանի գլխավորած հակախորհրդային, հակաադրբեջանական ապստամբությանը ակտիվ աջակցություն ցուցաբերելն էր: Այդ ապստամբության նպատակն էր Կարմիր բանակի զորամասերին և ադրբեջանական զավթիչներին դուրս մղել հայկական Ղարաբաղից: Ըմբոստ արցախցիները աջակից էին զանգեզուրցի իրենց եղբայրներին: Նրանց հաջողությունները հնարավորություն կտային ընդլայնելու Գորիսի ազդեցության ոլորտը և ինչ-որ չափով թեթևացնելու բանակի զանգեզուրցի զինյալների գործը:

1921 թ. հունվարին ապստամբությունը Ղարաբաղում թևակոխեց նոր՝ Կարմիր բանակի զորամասերին զանգվածային դիմադրություն ցույց տալու փուլը[2]: Թևանի ուժերին ակտիվորեն օժանդակում էր Նժդեհի կողմից Ղարաբաղ ուղարկված սյունեցիների առաջին զորամասը, որի հետ միասին օրերի ընթացքում ապստամբները ազատագրեցին ամբողջ Դիզակը[3]:

Նժդեհի օրինակով Թևանը մեծ նշանակություն էր տալիս բնակչության շրջանում մղվող հակախորհրդային քարոզչությանը: Բանավոր լայն քարոզչություն մղելու և թռուցիկներ տպագրելու ու տարածելու գործը ղեկավարելու համար Թևանը կազմակերպեց արտակարգ եռյակ, որի կազմում էին ինքը, գնդապետ Մամունցևը և իր գլխավոր զինակիցներից մեկը՝ Բախուզը[4]:

Հարձակման անցնելով՝ Թևանի ուժերը 1921 թ. հունվարի կեսերին գրավեցին Դրախտիկ և Սուզ գյուղերը, ապա, շարունակելով հարձակումը, գրավեցին Շուշիից 12 վերստ արևելք գտնվող Սարուշենը: Այստեղից Թևանը գյուղի բնակիչների և իր անունից նամակ ուղարկեց Քեշիշքենդ* և բնակիչներին կոչ արեց զինված ապստամբություն բարձրացնել խորհրդային իշ-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 206, թ. 1:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ 90, թ. 4-5:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք. «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 84:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 189, թ. 8:

* Խոսքը Ղարաբաղի Քեշիշքենդ գյուղի մասին է:

խանության դեմ՝ սպառնալով հակառակ դեպքում գյուղը գրավել զինված ուժով[1]: Իրեն միացնելով Քեշիշքենդի հայերից կազմած զինված ջոկատը՝ Թևանը շարժվեց Շուշիից 25 վերստ հարավ գտնվող Ճարտար և դիրքավորվեց գյուղի դիմաց[2]:

Նույն ժամանակ՝ հունվարի 16-17-ին, ապստամբեցին Ղուշչիբաբա–Ղարաբուլաղ շրջանի հայկական գյուղերի բնակիչները, որոնք Թևանից հանձնարարություն ստացան գրավելու Խանքենդի տարածքը և Շուշին կտրելու Աղդամից[3]:

Այդ օրերին բուն Զանգեզուրի սահմանային վերջին գյուղի՝ Տեղի բնակիչները Գորիս–Շուշի ճանապարհի վրա ընկած քրդական գյուղերի բնակիչներին խնդրել էին թույլ տալ անցնելու իրենց բնակավայրերով, որպեսզի միանան Թևանին՝ հարձակվելու Շուշիի վրա և այն մաքրելու Կարմիր բանակի զորքերից[4]:

Այն բանից հետո, երբ ապստամբները գրավեցին Լեռնային Ղարաբաղի գյուղերը, Թևանը դրանք հայտարարեց արդեն գոյություն չունեցող Արարատյան Հանրապետության տարածքներ, իսկ իրեն՝ այդ հանրապետության կառավարության ներկայացուցիչ Ղարաբաղում: Գրավված գյուղերում անցկացվեց 20-65 տարեկան տղամարդկանց զորակոչ: Զորակոչվածների մի մասը մնաց տեղում՝ պաշտպանելու հայրենի գյուղը, մյուս մասը միանում էր Թևանի խմբերին:

1921 թ. հունվարի վերջերին Թևանի զինված խմբերում արդեն հաշվվում էր մինչև 800 մարդ[5]:

Ինչպես ասվեց, ապստամբները հենց սկզբից մեծ հույսեր էին կապում Զանգեզուրից սպասվող օգնության հետ, որը և ցուցաբերվեց: Գորիսից հատկապես Դիզակի շրջան մեկնեցին նոր զինված խմբեր՝ Թարխանովի հրամանատարությամբ, և Կապանից՝ Ամիրջանյանի հրամանատարությամբ: Ուղարկվեց նաև զգալի քանակի զինամթերք:

Նժդեհն անձամբ մշտական կապի մեջ էր Թևանի հետ. նրան ընդունում էր Զանգեզուրում, կամ ինքն էր գնում Ղարաբաղ, ամեն կերպ աշխատում էր բավարարել նրա պահանջները: Հունվարի 25-ին Շուշիից 26 վերստ հարավ գտնվող Տաշալտի գյուղ էր գնացել Նժդեհը, ուր եկել էր նաև Թևանը, և նրանք երկար խորհրդակցել էին վերջինիս անելիքների մասին[6]:

Երբ Թևանը մարտեր էր սկսել Կարմիր բանակի զորամասերի դեմ, այդ նույն ժամանակ ապստամբություն էր ծագել նաև Ադրբեջանի Լենքորանի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 189, թ. 5:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 8:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում, թ. 1:
[6] Տե՛ս նույն տեղում, թ. 5:

գավառում՝ Ղուլամ-Թաղիևի գլխավորությամբ:

1921 թ. հունվարի կեսերին Ղուլամ-Թաղիևի ապստամբական ջոկատում ընդգրկվածների թիվը հասնում էր 1500 մարդու: Նրա գործակալները բնակչության մեջ մղում էին ուժգին քարոզչություն, լուրեր էին տարածում, որ եթե բոլշևիկները գան, ապա կխլեն բոլորի ունեցվածքը, համայնական կդարձնեն նույնիսկ կանանց: Այդ քարոզչության ազդեցության տակ Լենքորանի Թալիշ և թուրք բնակչության զգալի մասը գնում էր Ղուլամ-Թաղիևի ետևից[1]:

Ինչպես Ղուլամ-Թաղիևի, այնպես էլ ադրբեջանցի մյուս ապստամբի՝ Իսրաֆիլ բեկի պայքարը բոլշևիկյան զորամասերի դեմ հեշտացնում էր Թևանի ապստամբական ուժերի վիճակը, որոնք իրենց ազդեցությունը տարածում էին նորանոր տարածքների վրա:

1921 թ. հունվարի վերջերին Թևանի զինված խմբերը վճռական հարձակման անցան և փետրվարի առաջին տասնօրյակին արագորեն գրավեցին Դիզակի (այժմ՝ Հադրութի) և Վարանդայի (այժմ՝ Մարտունու) շրջանները: Զարգացնելով հարձակումը՝ նրանք ընդհուպ մոտեցան Խանքենդի (այժմ՝ Ստեփանակերտ) առաջին տեղամասին և պատրաստվեցին գրոհով վերցնել այն[2]: Խորհրդային զորամասերը տեղի տվեցին. քաշվելով դեպի հարավ՝ նրանք խուճապով փախան Զաբրայիլի կողմերը՝ տալով հարյուրավոր սպանվածներ, 150 գերի, թողնելով ռազմամթերք, գնդացիրներ, հացի պաշար և այլ ավար:

Այսպիսով՝ 1921 թ. փետրվարի վերջերին ազատագրված էր Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և միացված Սյունիքին:

Թևանի հաջողությունն առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ Զանգեզուրից Լեռնային Ղարաբաղ նահանջած Կարմիր բանակի զորամասերի մի մասը հեռացել էր նաև այդ երկրամասի սահմաններից: Բանակի հրամանատարությունը կարծում էր, որ Լեռնային Ղարաբաղի կոմունիստներից ստեղծված զինված ջոկատները բավական էին պաշտպանելու համար այնտեղ հաստատված խորհրդային իշխանությունը: Բայց նման լավատեսությունը հիմք չուներ. կոմունիստական այդ ջոկատներում բացակայում էին բարձր կազմակերպվածությունը և կարգապահությունը, պակասում էին հանդերձանքն ու զինամթերքը, ոչ բոլոր ջոկատների բոլոր անդամներն էին հուսալի, նրանց զգալի մասը իրենց գյուղերի սահմաններից չէր ուզում հեռանալ:

Սակայն Թևանի ապստամբության հաջողության պատճառը միայն դա չէր: Հիմնական պատճառը Ղարաբաղի հայերի մեծ մասի դժգոհությունն էր այն բանից, որ ռուսական Կարմիր բանակի հետ իրենց երկիր էին մտել Ադրբեջանի կարմիր ասկյարները, որոնք Ղարաբաղն արդեն իրենցն էին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 189, թ. 8:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 84:

համարում: «Ամեն ինչից երևում էր, որ «վիճելի» համարված իրենց գավառի հարցը լուծվելու էր հօգուտ Ադրբեջանի, և դա չէր կարող զայրույթ և ըմբոստություն առաջ չբերել արցախահայության մեջ»[1]:

Երբ Թևանի ապստամբությունը ծավալվում էր Ղարաբաղում, լուրեր հասան Զանգեզուր այն մասին, որ բոլշևիկյան նոր իշխանությունները Խորհրդային Հայաստանում սանձազերծել են ահավոր չափերի հասնող անօրինականություններ և բռնություններ:

ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի և Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի ու Տերտերյանի միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված համաձայնագրով, ի միջի այլոց, նախատեսված էր նաև հետևյալ հոդվածը. «5. Դաշնակցության և ուրիշ սոցիալիստական կուսակցությունների անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկվեն կուսակցությանը պատկանելու և կոմունիստական կուսակցության դեմ մղած կռվին մասնակցելու ու Հայաստանը խորհրդային հայտարարելուց առաջ կատարած գործերի համար»[2]:

Բայց բոլշևիկները չհարգեցին իրենց ստորագրությունը:

Հեղկոմը հազիվ էր Հայաստան մտել, երբ Երևանի, Էջմիածնի, Աշտարակի, Ախտայի, Նոր Բայազետի և Ղամարլուի բանտերը լցվեցին դաշնակցական մտավորականներով ու հանրային գործիչներով: Դաշնակցականների ձերբակալությունը նոր թափ առավ 1921 թ. հունվարի երրորդ տասնօրյակում, երբ բանտ նետվեցին ՀՅԴ ավելի քան 300 անդամներ: Բանտարկվածների մեջ էին կուսակցական ու պետական նշանավոր գործիչներ՝ Հովհաննես Քաջազնունին և Համո Օհանջանյանը, Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Վահան Նավասարդյանը, Ռուբեն Դարբինյանը, խորհրդարանի և կառավարության համարյա բոլոր անդամները:

Դաժան հաշվեհարդարների ենթարկվեցին ոչ միայն դաշնակցականները, այլև Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության, Ժողովրդական կուսակցության անդամները, սոցիալիստ-հեղափոխականները, բոլորն էլ հայ մարդիկ, հայ ժողովրդի ներկայացուցիչներ: Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ղեկավարներից Բախշի Իշխանյանը, որը նույնպես ձերբակալվել էր, հետագայում վերհիշել է, որ սովորականից երեք անգամ ավելի մարդիկ էին նստած Երևանի կենտրոնական բանտում: Այս և հանրապետության մյուս բանտերում կալանվածների թիվն անցնում էր 2000-ից[3]:

Գործած անօրինականությունների և դաժանությունների շարքերում

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 208, թ. 1:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 248, թ. 2:

[3] Տե՛ս **Կ. Սասունի**, Փետրուարյան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, թիվ 12 (36) (հոկտեմբեր), էջ 99:

առանձնանում էին Հայաստանի Հանրապետության բանակի համարյա բոլոր բարձրաստիճան զինվորականների և սպաների զանգվածային ձերբակալությունները, բանտարկությունն ու աքսորը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչների հետ Բ. Լեգրանի կնքած համաձայնագրի չորրորդ կետով արձանագրված էր, որ հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել է նա բանակի շարքերում մինչև Հայաստանի խորհրդային իշխանության հաստատումը: Սակայն շատ չանցած, կասկածելով ասպարեզից արդեն հեռացած զինվորականներին, բոլշևիկները գավառներից նրանց աստիճանաբար տեղափոխեցին Երևան և արգելափակեցին: Այնուհետև հավաքեցին ու արգելափակեցին Երևանում բնակվող զինվորականներին: Այդպիսով, 1921 թ. հունվարի երկրորդ կեսին, ընդամենը 6 օրվա ընթացքում ձերբակալվեց հայկական բանակի համարյա ամբողջ հրամանատարական կազմը, այդ թվում՝ 18 գեներալ և 15 գնդապետ: Զինաթափված ու ձերբակալված էին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը, գեներալ-լեյտենանտներ Սիլիկյանը, Հախվերդյանը, Գամազովը, գեներալներ Բեյ-Մամիկոնյանը, Պավլովսկին, Բաղրամովը, Շելկովնիկովը, Վասիլևը և ուրիշներ, գնդապետեր Մելիք-Ադամովը, Մելիք-Շահնազարովը, Ստեփանյանը, Մելիք-Փարսադանովը, Տեր-Ներսեսովը և այլք[1]: Ձերբակալված զինվորականները մեծ մասամբ ճակատայիններ էին, որոնք անցել էին Առաջին համաշխարհային պատերազմի, արհավիրքների միջով և երջանիկ պատահականությամբ ողջ էին մնացել՝ թեև հաշմված մարմիններով և ճակատագրերով: Ոմանք մարտնչել էին Բաքվի կոմունայի պաշտպանների շարքերում, իսկ նրա պարտությունից հետո Լենքորանով և Իրանով, Վլադիկավկազով ու Վրաստանով շտապել էին Հայաստան, որպեսզի զավթիչներից պաշտպանեին նրա սահմանները: Քիչ չէին այն զինվորականները, որոնք ծառայել էին հայկական բանակի Զանգեզուրի զորամասերում:

Ձերբակալված բոլոր զինվորականներին՝ թվով ավելի քան 1000 մարդ, հունվարի 26-ին՝ մի սոսկալի ցրտաշունչ օր, ճանապարհեցին դեպի աքսոր՝ մինչև իսկ արգելելով վերցնել տաք հագուստ և ուտելիք[2]: Զինվորականները աքսորվեցին Ռուսաստան և հիմնականում ներփակվեցին Ռյազանի ճամբարում:

Վայրագ սպանությունների, բանտարկությունների, բռնությունների գլխավոր քուրմերը Գևորգ Աթարբեկյանը և Ավիս Նուրիջանյանն էին, նաև

---

[1] Տե՛ս, **Г. Мартиросян**, Еще об одной белой странице черного предательства, “Литературная Армения”, 1994, թիվ 7-9, էջ 89-125:

[2] Տե՛ս «Ասլան Ստեփանեանի յուշերը», «Ալիք», Թեհրան, 1966, էջ 372:

Արտակարգ հանձնաժողովի (ՉԿ) նախագահ Սերգեյ Մելիք-Հովսեփյանը:

Անօրեն բռնություններից զերծ չմնաց հասարակ ժողովուրդը: Այդ ամենը սկսվեց նրանից, որ բոլշևիկ նորեկ պաշտոնյաներին Երևանում և այլուր բնակեցնելու համար բռնագրավվեցին տներ ու բնակարաններ, նաև պետական հայտարարվեց դրանցում եղած ունեցվածքը: Հետո Երևանից մինչև վերջին գյուղը սկսվեց ժողովրդի կեղեքումը՝ նրան հասցնելով սովամահության:

Ստեղծված դժնդակ վիճակը «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը» աշխատության մեջ ճիշտ է ներկայացրել բոլշևիկյան նշանավոր գործիչ Բագրատ Բորյանը: «Հեղկոմը,– գրել է նա,– բռնեց անխնա ու վճռական ռեկվիզիցիայի և բռնագրավման ուղին՝ առանց խտրության ու առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշվի առնելու գյուղացիության ընդհանուր տնտեսական դրությունը և նրա հոգեբանական վիճակը: Դրա հետ մեկտեղ ռեկվիզիցիաները տեղի էին ունենում անկազմակերպ, չունեին պլանաչափ, հեղափոխական-դասակարգային բնույթ և ուղեկցվում էին անհարկի ռեպրեսիաների կիրառմամբ: Առանց կազմակերպված ու կարգապահ ապարատի, առանց նախնական ագիտացիոն նախապատրաստության և երկրի յուրահատուկ պայմանները հաշվի առնելու, հեղկոմը նետում է լոզունգ՝ ռեկվիզիցիայի ենթարկել և բռնագրավել պարենը քաղաքներում՝ մասնավոր անձերից և հացի պաշարները՝ գյուղացիներից»[1]:

Հիրավի, բացարձակապես ամեն ինչի՝ տնայնագործական իրերի, գյուղատնտեսական աշխատանքի միջոցների, ջրաղացների ու դինգերի, փեթակների, սպիտակեղենի, հագուստի, նույնիսկ երաժշտական և վարսավիրական գործիքների չհամակարգված բռնագրավումները, որոնք ուղեկցվում էին բռնություններով, չէին կարող չառաջացնել համաժողովրդական զայրույթ և ընդվզում, մանավանդ որ այդ ամենին գումարվեցին արտաքին գործոնները՝ տարածքային հարցերի չլուծվելը, գաղթականների հսկա զանգվածի թշվառ վիճակը, Վրաստանի կողմից իրականացվող շրջափակումը, սովը, ցուրտը և այլն: Արագորեն փոխվեցին զանգվածների տրամադրությունները՝ խորհրդային իշխանության համար ոչ ցանկալի իմաստով՝ նրա դեմ ձևավորելով թշնամական վերաբերմունք:

Այս ամենի պատճառով Զանգեզուր հասած մեկը մյուսից տագնապալի տեղեկությունները չէին կարող անտարբեր թողնել Սյունիքի կառավարությանը:

Նժդեհը որոշեց վճռական քայլերի դիմել Խորհրդային Հայաստանի բանտերում ոչնչացման դատապարտված կամ ընդհատակում թաքնված հայ մտավորականների, պետական ու հասարակական գործիչների, կուսակցական ընկերների փրկության համար: Նա եկել էր այն համոզման, որ, ինչ

[1] **Б. Борян**, Армения. Международная дипломатия и СССР, часть II, с. 126.

գնով էլ լինի, պետք է Արարատյան Հայաստանից մի ճանապարհ բացել դեպի Սյունիք, իսկ դա կարելի կլիներ այն ժամանակ միայն, եթե հաջողվեր գրավել Խորհրդային Հայաստանի և Ինքնավար Սյունիքի միջև ընկած Վայոց ձորը, որը նույնպես խորհրդային էր:

«Իմ այդ որոշումը,– գրել է Նժդեհը,– միանգամայն անկախ էր Երևանի շրջաններում առաջ եկած ապստամբական շարժումներից, որոնց մասին ինձ ոչ ոք իրազեկ չէր դարձրել»[1]:

Խորհրդային հետախուզությունը տեղեկացել էր Նժդեհի մտադրություններին, ուստի ձեռնարկում էր հարկ եղած միջոցներ: Դրանով էր, անշուշտ, պայմանավորված այն նամակը, որ Խորհրդային Հայաստանի կառավարության նախագահ Սարգիս Կասյանը հունվարի 29-ին գրել էր Վայոց ձորի հեղկոմին:

«Քանի դեռ չի գրավված Զանգեզուրը,– նշված էր նամակում,– Դարալագյազում, որը կազմում է չգրաված մեծ երկրամասի թիկունքը, վարել ամենամեղմ քաղաքականություն: Խստիվ արգելվում են աջից-ձախից ձերբակալումները և բռնագրավումները: Դեպի քաղաքացիները ցույց տալ կորրեկտ վերաբերմունք: Ձերբակալել միայն նրանց, որոնք բացահայտ կերպով պրոպագանդ են մղում իշխանության դեմ: Այն պաշտոնատար անձինք, որոնք կխուսափեն կատարել սույն հրամանը, կենթարկվեն հեղափոխական ամենախիստ պատասխանատվության»[2]:

Ինչպես տեսնում ենք, գրության մեջ խոսքը ոչ թե ընդհանրապես Հայաստանի նորահաստատ կառավարության կողմից հանրապետությունում մեղմ քաղաքականություն որդեգրելու մասին էր, այլ որոշակի մի գավառում՝ Վայոց ձորում, մարտավարական նկատառումներով ժամանակավորապես («քանի դեռ չի գրավված Զանգեզուրը...») իրագործվելիք մեղմ քայլերի մասին. մի բան, որ պետք է հոգեբանական ազդեցություն ունենար Սյունիքի գյուղացիության վրա:

Փետրվարի 14-ին Սյունիքի զորամասերը Յապոնի, հայտնի խմբապետ Մեսրոպի և Սիսիանի ուժերի հրամանատարի գլխավորությամբ Սիսիանից հարձակվեցին Վայոց ձորի վրա: Սյունեցիները մեկը մյուսի ետևից գրավեցին մի շարք բնակավայրեր: Մոտենալով Դարալագյազի կենտրոն Քեշիշքենդին, որտեղ տեղաբաշխված էր Կարմիր բանակի 24-րդ դիվիզիայի 180-րդ գնդի գումարտակներից մեկը, նրանք արագորեն գրոհի անցան: Հանկարծակիի եկած կարմիրբանակայինները չեն կարողանում դիմադրություն ցույց տալ: Հրաձգության ժամանակ սպանվեցին գումարտակի հրամանատարներ Կոզլովը և Բելովը: Մեծ կորուստներ տված գումարտակի հիմնական մասը գերի հանձնվեց, և միայն մի քանի տասնյակ զինվոր կարողացան հեռանալ

---

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 331:

[2] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 76:

Երևանի ուղղությամբ: Վայոց ձորի կոմունիստներից կազմված տեղական ջոկատները նույնպես չկարողացան կազմակերպված դիմադրություն ցույց տալ և զգալի կորուստներ ունեցան: Սպանվեցին Սիսիանի շրջանից՝ Քեշիշ-քենդում աշխատանքի նշանակված կոմունիստներ Վահան Տեր-Ղազարյանը, Արզուման (Արզո) Հարությունյանը, Մկրտիչ Մկրտումյանը, Հովակիմ Պողոսյանը, Կարապետ Ղազարյանը, Հովսեփ Դանիելյանը, Դարալագյազից՝ Սուրեն Տեր-Ստեփանյանը, Գրիգոր Ասատրյանը և ուրիշներ[1]:

Ինքնավար Սյունիքի Սպարապետի գլխավոր շտաբը փետրվարի 20-ին Գորիսում հրապարակեց ռազմական հաղորդագրություն (թիվ 2), որում ասված էր, որ փետրվարի 17-ին Զանգեզուրի զորքերը և ապստամբ ժողովուրդը առանց զոհի գրավել են Վայոց ձորի ամբողջ շրջանը: Բոլշևիկների կողմից ոչ մի դիմադրություն չի եղել: Գերի են վերցվել 405 ռուս բոլշևիկներ, ձերբակալվել են 20-ից ավելի հայ բոլշևիկ ղեկավար գործիչներ, շրջանի ամբողջ վարչությունը՝ իր լրիվ կազմով և մի շարք կարևոր փաստաթղթերով հանդերձ:

Ռազմական գործողության ժամանակ գրավվել էին բոլշևիկների բոլոր ռազմապահեստները, որտեղ կային լեռնային չորս թնդանոթ, 36 գնդացիր, հրացաններ, միլիոնի հասնող զանազան տեսակի փամփուշտներ, հազարներով հրանոթի արկեր, հեռախոսային ապարատներ, հեռախոսալարեր և այլն:

«Բովանդակ Վայոց ձորի ժողովրդի տրամադրությունն աննկարագրելի բարձր է,– նշված էր հաղորդագրության մեջ:– Նա քշեց բոլշևիկներին իր սահմաններից: Գերազանցորեն գիտակցելով իր կատարած գործի բարձր նշանակությունը, նա իր ձեռքով կալանավորել է բոլշևիկացած պարագլուխներին, իսկ շատերին էլ ենթարկել Լինչի դատաստանին:

Դարալագյազն այսօր տոնում է իր մեծ հաղթանակը»[2]:

Գործողությունը տևեց ընդամենը երեք օր. փետրվարի 16-ին ամբողջ Վայոց ձորը գտնվում էր Սյունիքի ուժերի ձեռքին[3]: Բոլշևիկյան ուժերը թողնում են այն տարածքները, որոնք կենսական նշանակություն ունեին Երևանի շրջանի և Վայոց ձորի միացման համար: Շուտով կապը Երևանի հետ իրականացվելու էր երկու ճանապարհով՝ 1. Չիմանքենդ–Բոյուք Վեդի-Ղամարլու–Երևան, 2. Չիմանքենդ–Խոսրով–Գիլանսար–Կետանիդու–Երևան: Երկու երթուղին էլ անցնում էր Վայոց ձորով[4]:

Վայոց ձորում զանգեզուրյան զինուժի տարած արագ հաղթանակն ամենից առաջ արդյունք էր նրա բարձր կազմակերպվածության, մարտիկ-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24, թ. 3, տե՛ս նաև **Ե. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 70-71, **Ա. Լալայան**, նշվ. աշխ., էջ 75:

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 40-ի շրջերես:

[3] Տե՛ս «Ազատ Հայաստան», 1921, 4 մարտի, տե՛ս նաև **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 79:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 5-ի շրջերես:

ների հայրենասիրական անկոտրում ոգու և իրենց կատարած գործի արդարացի լինելու խոր գիտակցության: Բայց քիչ կարևոր չէր նաև այն, որ Հայաստանի Կարմիր բանակը, որը կազմավորման փուլում էր, դեռ պատրաստ չէր լայնածավալ մարտական գործողությունների: Խիստ անբավարար էին բանակի, հատկապես նրա Դարալագյազի զորամասի զինվածությունը, զինվորների զգեստավորումն ու սնունդը:

ՀՍԽՀ զորքերի գլխավոր շտաբի պետ Մոլկաչանովը և շտաբի զինկոմը 1921 թ. փետրվարի 1-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատարին ուղարկած զեկույցում (թիվ 1935) գրում էին. «Խորհրդային իշխանությունը Հայաստանում ստացել է ոչ միայն շարային, այլև տնտեսական կողմից քայքայված բանակ: Գլխավոր նյութական պահեստները մնացին թուրքերի ձեռքին, իսկ Երևանի պահեստի և զորական ցեյխհաուզների պահեստների նյութական պաշարները շատ չնչին դուրս եկան, [քանի որ] իր ժամանակին կողոպտվել են:

Հին դաշնակցական բանակի բեկորները, որոնք վերցվել էին որպես նյութական նոր հայկական Կարմիր բանակ ստեղծելու համար, վատ զգեստավորված ու հագնված դուրս եկան: Բանակի շարքերը վերադարձող նախկին դասալիքները, մանավանդ թուրքերից գերվածները, գալիս են միանգամայն մերկ: Ներկայումս բանակի 18.000 մարդկանց կարիքը նյութական անբավարարվածության տեսակետից արտահայտվում է այսպես. սպիտակեղեն 90%, զգեստ 60%, ոտնաման 75%: Այս բերված տոկոսային թվերը նվազագույն են, մանավանդ, որ բանակի համալրումը տեղի է ունենում բացառապես ի հաշիվ զգեստազուրկների:

[Հայաստանի] Կարմիր բանակի վերակազմակերպման հաջողությունը, նրա նյութական բարեկեցության բարձրացումը կախված է նրանից, թե ինչ բաց կթողնվի 11-րդ Կարմիր բանակի կողմից»[1]:

Վայոց ձորի վրա զանգեզուրյան ուժերի հարձակումը արագացրեց 11-րդ Կարմիր բանակի ռազմական նախապատրաստությունները: Բանակը համալրվեց Ռուսաստանից ժամանած նորակոչիկ զինվորներով, ստացվեցին զենքի տարբեր տեսակներ, մեծաքանակ զինամթերք, հանդերձանք, դեղորայք և այլն: Համալրվեց նաև հրամանատարական կազմը: Բայց կար կոմունիստ քաղաշխատողների խիստ պակաս ընդհանրապես բանակի բոլոր օղակներում:

1921 թ. մարտի 1-ին Ս. Օրջոնիկիձեն Բաքվից հեռագրում էր Թիֆլիս. «Նկատի առնելով վերջին մարտերում (խոսքը 1920 թ. աշնանը Զանգեզուրում ծավալված կատաղի կռիվների մասին է: – *Ս. Ս.*)* կոմունիստների կրած

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 197, թ. 2:

* Խոսքը Զանգեզուրում ծավալված այդ կռիվների մասին է: Այդ մասին փաստում է արխիվային գործի փաստաթղթի վերնագիրը՝ “По поводу Зангезурских событий из Баку I/III – 21 г. Орджоникидзе телеграфирует”:

վիթխարի կորուստները, առաջարկում եմ Կավբյուրոյում և երկրամասային խորհրդակցությունում քննության առնել 11-րդ բանակի համար Կովկասում կոմունիստների մոբիլիզացիայի հարցը»[1]:

Միաժամանակ բանակի հրամանատար Հեկկերը շարունակում էր մնալ այն կարծիքին, որ հնարավոր էր Նժդեհի ուժերը Վայոց ձորից հեռացնել դիվանագիտական ճանապարհով, որ սպառված չէին նաև խաղաղ միջոցներով Զանգեզուրը զինաթափելու և խորհրդայնացնելու հնարավորությունները:

Վայոց ձորի վրա հարձակվելու հաջորդ օրը՝ 1921 թ. փետրվարի 15-ին, 11-րդ Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդի և խորհրդային գերագույն իշխանության կողմից լիազորված Հեկկերը «քաղաքացի Նժդեհին և քաղաքացի Տեր-Մինասյանին» ուղարկել էր նամակ, որում նա փորձում էր ժխտել Սպարապետի այն մեղադրանքը, որ Խորհրդային Ռուսաստանը օժանդակել էր թուրքական արշավանքին Ղարսն ու Ալեքսանդրապոլը գրավելու գործում: Հեկկերը հավաստիացնում էր, որ Զանգեզուրը պիտի միացվեր Խորհրդային Հայաստանին: Ուստի առաջարկում էր հանդիպում ունենալ և քննարկել այդ միացման հետ առնչվող կոնկրետ խնդիրները:

«Զանգեզուրը Հայաստանի հետ միացնելու պայմանները ճշտությամբ գծելու համար,– գրում էր նա,– խնդրում եմ ձեզնից որևէ մեկը ուղարկել Շուշի, ուր ես կսպասեմ Ձեր գալստյան[2]»:

Հեկկերն ընդունում էր, որ Կարմիր բանակի հրամանատարությունը անցյալ տարվա հոկտեմբեր-նոյեմբերին կոպիտ սխալ է թույլ տվել՝ թուրքական գունդը ուղարկելով Զանգեզուր: Նա խոստովանում էր, որ Զանգեզուրում, հիրավի, տեղի է ունեցել այդ «ամոթալի դեպքը»:

11-րդ բանակի հրամանատարի նամակը Նժդեհն անպատասխան թողեց: Իր զորքերի հետագա առաջխաղացումը Վայոց ձորից դեպի Արարատյան դաշտ տվյալ պահին համարելով անհնարին՝ Նժդեհը, այնուամենայնիվ, նպատակահարմար գտավ գաղտնի ուղիներով Զանգեզուրից մի քանիսին ուղարկել Խորհրդային Հայաստան՝ փորձելով այնտեղ ծավալել հակախորհրդային աշխատանք: Դրանցից մեկը բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսն էր, որը Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ դեկտեմբերի 2-ին, դեպի Զանգեզուր էր ուղեկցել զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին և պահեստի միլիցիայի պետ Լևոն Քալանթարյանին: Եվ ահա Նժդեհը և Ռուբեն Տեր-Մինասյանը Մարտիրոսին նույնպես խորհուրդ են տվել վերադառնալ հայրենի Բաշ-Գառնի:

Առժամանակ թաքստոցից հետևելով իրադարձությունների զարգացմանը՝ Մարտիրոսը հանգել էր ժողովրդական ապստամբական ուժերով

---

[1] ՍՔՊՌԱ, ֆ. 64, ց. 1, գ, 19, թ. 20:

[2] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 56:

Երևանը գրավելու և ձերբակալած ընկերներին բանտերից ազատելու մտքին: Կազմակերպչական աշխատանքի ընթացքում նրան հաջողվել է իր մտահղացումներին հաղորդակից դարձնել ընդհատակում գտնվող ուրիշ փորձառու զինվորական գործիչների, ինչպես, օրինակ՝ գնդապետ Սուրեն Թարխանյանին (Կուռռ), գնդապետ Գարեգին Սարգիսբեկյանին, խմբապետ Խնկոյին և ուրիշներին:

Շուտով պարզվել էր, որ ապստամբական տրամադրության մեջ են նաև Թալինի սասունցիները:

Այդ ամենը չէր կարող գաղտնի մնալ Հայաստանի բոլշևիկյան իշխանություններից, որոնք գնալով ավելի ու ավելի էին համոզվում, որ ուր որ է իրենց իշխանության դեմ պայթելու է ապստամբություն: 1921 թ. փետրվարի 8-ի լույս 9-ի գիշերը Հայաստանում սկսվեցին զանգվածային նոր ձերբակալություններ, մասնավորապես Երևանում և Էջմիածնում: Սակայն ինչպես նախորդ, այնպես էլ այս ձերբակալությունների ժամանակ հետապնդումներից կարողացան խուսափել ՀՅ դաշնակցության մի շարք կարևոր դեմքեր և գործիչներ, որոնք իրենց թաքստոցներից հետևում էին երկրի իրավիճակին և կատարելապես տեղյակ էին անցուդարձին[1]:

[1] Տե՛ս Ասլան Ստեփանեանի յուշերը, էջ 372:

1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ, ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂԹԸ ԴԵՊԻ ԶԱՆԳԵԶՈՒՐ

1921 թ. Փետրվարյան ապստամբությանն անդրադառնալիս հետազոտողները հակասական տեսակետներ են հայտնում դրա նախապատրաստման ժամկետների վերաբերյալ: Դաշնակցության պատմագրությունը կայուն տեսակետ ունի. այն նախօրոք կազմակերպված ու պատրաստված չի եղել, այլ ծագել է տարերայնորեն, հանկարծակի: Բոլշևիկյան պատմագրությունը, ընդհակառակը, գտնում է, թե այն Դաշնակցության կողմից նախապատրաստվել է Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո: Ճշմարտությունը, անշուշտ, այս երկու տարբեր տեսակետների միջև է: Դա են հաստատում բազմաթիվ փաստեր, որոնցից բերենք մեկը:

ՀՅ դաշնակցության Երևանի կազմակերպության ակտիվ անդամներից մեկը՝ Եղսո Ստամբոլցյանը (Էլլեն Բյուզանդ), Փետրվարյան ապստամբությունից տասնամյակներ անց իր հուշերում գրել է, որ Հայաստանում խորհրդային իշխանության առաջին օրերին ինքն ինչի է ականատես եղել:

«Դուրս եկա խորհրդարանեն: Հետևող չեղավ, ազատ էի: Աբովեան փողոցի վրայ, քիչ վերը Դաշնակցութեան Տունն էր: Դուռը բաց էր. մի երիտասարդ եւ մի նորահարս աղջիկ, ինձ անծանոթ, դուրս էին գալիս շենքից: Չկարողացայ դիմադրել **Մեր Տունը** մտնելու ցանկութեանս: Վեր բարձրացայ, տեսայ մի քանի պատանի եւ Սաթո (Սաթենիկ) Յակոբեանը, որը Երեւանի Հ. Յ. Դաշնակցաթեան քարտուղարուհին էր: Օրը ցերեկով նա բացել էր միջանցքի խորքում աննկատ մի պահարան, այնտեղէն դուրս էր հանում ատրճանակներ, հրացանների կազմաններ եւ հանդարտորեն յանձնում էր ներկայ պատանիներին, որոնք, ստացածները պահելով իրենց վերարկուների տակ, գնում էին, անշուշտ տանելու համար թանկագին ավանդը կանխավ նշանակուած տեղերը:

– Ի՞նչ ես անում, Սաթո՛, հապա եթե նրանցից (բոլշևիկներից: – *Ա. Ս.*) մեկը ներս մտնե:

– Քանի չեն մտել, պետք է փրկել ինչ որ կարելի է. դու գործ չունես այստեղ, հեռացի՛ր»[1]:

---

[1] **Է. Բիւզանդ**, Հայուհիները Երեւանի «Չեկայի» բանտում, «Հայրենիք», 1965, օգոստոս, թիվ 8, էջ 7-8:

Պատմագրության մեջ իրարից խիստ տարբերվող տեսակետներ կան նաև ապստամբության պատճառների մասին: Արդեն նախորդ էջերում ցույց է տրվել դաշնակցականների մատնանշած հիմնական պատճառը՝ Հայհեղկոմի կողմից երկրում ստեղծված հեղձուցիչ մթնոլորտը: Բայց բոլշևիկները հիմնական պատճառը համարում էին նորահաստատ խորհրդային ռեժիմի նկատմամբ դաշնակցականների շարունակվող թշնամանքը: Այս երկրորդ տեսակետի պաշտպանների թիվը տարիների ընթացքում աստիճանաբար ստվարացավ՝ հանձինս կոմունիստների, հնչակյանների, ռամկավարների, անկախ մտավորականության ներկայացուցիչների, նաև նախկին դաշնակցականների:

Փետրվարյան ապստամբության առաջացման պատճառների և դրա սկսվելու մասին ժամանակին կային և այսօր էլ կան տրամագծորեն հակառակ երկու տեսակետներ: Թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակետը պատմագրության մեջ քաղաքացիություն են ստացել պատմական երևույթների նկատմամբ հակառակ կողմերի կուսակցական-գաղափարական հակոտնյա մոտեցումների ուժով, որը և խանգարում է ճշգրիտ ու իրական գաղափար կազմել ապստամբության պատճառների ու բնույթի, կռվող կողմերի նպատակների մասին:

Նախքան Փետրվարյան ապստամբության դեպքերին անդրադառնալը հարկ է կանգ առնել մի հարցի վրա ևս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, որքան էլ տարօրինակ է, ապստամբության, տվյալ պարագայում քաղաքացիական կռվի մեջ շահագրգռված էին և՛ դաշնակցականները, և՛ կոմունիստները:

Անարյուն խորհրդայնացումից հետո Հայաստանի բոլոր կուսակցություններն ու հոսանքները կարծես մի սրբազան դաշն էին կնքել՝ ամեն կերպ աջակցելու բոլշևիկյան իշխանությանը՝ նրա միջոցով հավանական արտաքին նոր պատուհասները դիմագրավելու հույսերով: Սակայն մեկ ամիս չանցած՝ իրադարձությունները Դաշնակցությանը ստիպեցին մտածել ինքնապաշտպանական նպատակով գաղտնարաններում պահվող զենքերն օգտագործելու մասին:

Դաշնակցության բարձրացրած ապստամբությունը գերազանցապես ունեցել է որոշակի իրավիճակից բխող գործնական խնդիրներ, այն է՝ վերջ տալ երկրում ծայր առած անօրինություններին, բանտերից արձակել ձերբակալվածներին և, հնարավորության դեպքում, վերականգնել Հայաստանի անկախությունը: Քաղաքացիական պատերազմում դաշնակցականների շահագրգռությունն արտահայտվում էր այս հիմնական նպատակների իրականացման տեսքով:

Ինչ վերաբերում է քաղաքացիական կռիվներում բոլշևիկների ունեցած շահագրգռությանը, ապա պետք է ասել, որ այն բխում էր բոլշևիկյան տեսությունից: Բոլշևիկները Հայաստանում քաղաքացիական պատերազմի կոչ

էին անում իշխանությունը գրավելուց անմիջապես հետո:

Հայաստանի հեղկոմի առաջին նախագահ Սարգիս Կասյանը, անդրադառնալով Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի խնդրին, գրել է. «Համառուսական եւ արդյունագործական մասշտաբ – ահա մեր գործունեութեան ելակետը մինչեւ հոկտեմբերեան հեղափոխութիւնը: Անդրկովկասեան բանվորութեան ընդարձակ զանգվածների գիտակցութեան մէջ ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտութիւնը, ստեղծել նրանց մէջ հեղափոխական կամք դեպի այն, **պատրաստել նրանց՝ անհրաժեշտութեան դեպքում գործադրելու դասակարգային կռվի ամենասուր զենքը՝ քաղաքացիական պատերազմը**, եւ կազմել ռուս հեղափոխական բանվորութեան հետ միասին ընդարձակ եւ ուժեղ պրոլետարիական բանակ – ահա այն նպատակը եւ ուղին, որ որդեգրած ունեինք մենք փետրուարեան հեղափոխութիւնից (1917 թ.: – *Ա. Ս.*) հետո»[1]:

Նորաստեղծ Խորհրդային Հայաստանում քաղաքացիական պատերազմի մարտահրավեր էին կարդում ոչ միայն տեղի կոմունիստ ղեկավարները, այլև գերազանցապես հանրապետությունից դուրս հիմնականում Ռուսաստանում գործող հայ կոմունիստները, որոնք արդեն անցել էին քաղաքացիական պատերազմի դաժան փորձությունների միջով:

Հայ կոմունիստների համար Հայաստանում քաղաքացիական պատերազմը երկու հիմնական նպատակ էր հետապնդում՝ 1. արմատախիլ անել հին ուժերը, 2. թուրքերին ապացուցել, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունը Դաշնակցության ոխերիմ թշնամին է, չեզոքացնել քեմալականների այն պնդումները, թե Հայաստանում պարզապես կաբինետի փոփոխություն է կատարվել. Վրացյանին հաջորդել է Կասյանը և ուրիշ ոչինչ:

Այժմ տեսնենք, թե նորաստեղծ Խորհրդային Հայաստանում ինչպես սկսվեց և ինչպես ընթացավ բոլշևիկյան իշխանության դեմ ուղղված 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

Փետրվարի 10-ից սկսած՝ Բաշ-Գառնիում, Վայոց ձորում և Արագածի լանջերին, մե՛կ այստեղ, մե՛կ այնտեղ բռնկվում էին բացահայտ զինված ելույթներ: Ապստամբությունն սկսվեց փետրվարի 13-ին: Օգտագործելով ստեղծված իրադրությունը՝ ապստամբներն իրենց ուժերը մոտեցրին Երևանի շրջակա բնակավայրերին՝ նպատակ ունենալով միաժամանակյա կենտրոնացված հարձակում սկսել քաղաքի վրա ու մեկուսացնել այն: Նշանակալի ուժեր կենտրոնացան Շիրակալայի, Նեջիլուի շրջաններում, ինչպես նաև Բաշ-Գառնիում (դրանք փոխադրվել էին Դարալագյազից): Անգամ բուն Երևանում պատրաստված էր զինված մի ջոկատ քաղաքի պարետի օգնական Սարգսյանի հրամանատարության տակ: Փետրվարի կեսերին հակախորհրդային ճակատն ուներ շուրջ 5 հազար զինված մարդ:

[1] «Նոր աշխարհ» ամսագիր, 1922, թիվ 2, էջ 4:

Կարմիր բանակի գլխավոր ուժերը դասավորված էին Երևանից արևմուտք և հարավ՝ ապահովելով հայ-թուրքական սահմանի պաշտպանությունը: Բաշ-Ապարան–Աշտարակ–Էջմիածնի կայարան շրջանում խմբված էր 6 գումարտակ՝ մեկ հեծելավաշտով և 14 հրանոթով: Մյուս խմբավորումը՝ բաղկացած 6 գումարտակից և 8 հրանոթից, գրավել էր Ղամարլու–Ավշար-Դավալու շրջանը: Դարալագյազում գտնվում էր մեկ գումարտակ՝ 4 հրանոթով, որի խնդիրն էր ապահովել զանգեզուրյան ուղղությունը: Պահեստազորը, որի կազմում կային 6 գումարտակ, 12 հրանոթ, 5 հեծելավաշտ և 2 զրահագնացք, տեղաբաշխված էր ընդարձակ տարածքի վրա՝ Երևան–Ներքին Ախտա–Ելենովկա շրջանում[1]:

Խորհրդային բանակի հետախուզությունը չկարողացավ ժամանակին ճշտել, թե որտեղից կարող է գալ հիմնական հարվածը: Հայաստանի Կարմիր բանակի զորքերի հրամանատար Մոլկաչանովը գտնում էր, որ գլխավոր վտանգը սպասվում է Դարալագյազի կողմից, իսկ 11-րդ բանակի հրամանատար Հեկկերն իր հերթին գտնում էր, որ սպառնալիքի տակ են հանրապետության հյուսիսային շրջանները: Խորհրդային թե՛ մեկ և թե՛ մյուս բարձրաստիճան հրամանատարների կանխատեսումները սխալ դուրս եկան:

Փետրվարի 15-ին դաշնակցականների ղեկավարությունը վերջնականապես ճշտեց ապստամբության ժամկետը, և հակախորհրդային ուժերն անցան գործի:

Փետրվարի 16-ին Բաշ-Գառնիի ապստամբները գնդապետ Սուրեն Թարխանյանի և խմբապետ Մարտիրոս Աբրահամյանի (բաշգառնեցի Մարտիրոս) գլխավորությամբ, զգալի ուժերով անսպասելի հարձակվելով Կոտայքի շրջանի տարբեր վայրերում տեղակայված բոլշևիկյան ուժերի վրա, նրանց ստիպեցին նահանջել դեպի հյուսիս, ապա, շարժվելով Քանաքեռի և Էլարի ուղղությամբ, կտրեցին Երևանի հաղորդակցությունը Դիլիջանի հետ: Ապստամբների մեկ այլ ջոկատ, մոտ 600 հոգի, հարձակում սկսեց դեպի Շորբուլաղ:

Հարձակման հետևանքով ծանր կորուստներ կրեցին Հայաստանի Կարմիր բանակի 2-րդ գնդի զորամասերը: Հրամանատարության կարգադրությամբ գունդը նահանջեց Նորք և բռնեց Քանաքեռ–Ավան–Ջրվեժ–Թոխմախան գյոլ գծի բարձունքները, բայց այս ռազմագիծը նույնպես հնարավոր չէր լինում պահել: Գնդի հրամանատար Ֆիշիլևիչը հազիվ էր կարողացել շրջապատումից դուրս բերել իր զորամասերի մնացորդները և նահանջել Աղբաշի ուղղությամբ: Շորբուլաղը գրված ապստամբական ուժերը, գարգացնելով հարձակումը, մոտեցել էին Աղբաշին, դիրքավորվել և սպառնացել փակել խորհրդային զորքերի հարավային խմբավորման հաղորդակցության ուղիները Երևանի հետ:

---

[1] Տե՛ս **А. Кадишев**, նշվ. աշխ., էջ 381:

Քանաքեռը գրավելուց հետո Կոտայքի ապստամբական ուժերը շարժվեցին Երևանի վրա: Փետրվարի 16-ի և 17-ի ընթացքում կատաղի մարտեր տեղի ունեցան քաղաքի մերձակա մատույցներում: Երևանից դեպի հյուսիս՝ Քանաքեռ ուղարկված բոլշևիկյան զորամասերը ապստամբների կողմից ջախջախվեցին, այդ մարտում զոհվեց խորհրդային զորքերի արևմտյան խմբավորման հրամանատար Երմոլենկոն:

Նույն ժամանակ՝ փետրվարի 16-ին և 17-ին, Արագածի լանջերից դեպի Երևան շարժվող Թալինի ապստամբ ուժերը՝ Մուշեղ Ավետիսյանի, Չոլոյի, Մորուք Կարոյի, Կարո Սասունու և Ասլան Ստեփանյանի գլխավորությամբ, Աշտարակ–Էջմիածին ուղղությամբ ծանր պարտության մատնեցին հայկական Կարմիր բանակի 2-րդ բրիգադի զորամասերին և գրավեցին Էջմիածինը, Աշտարակը, Փարաքարը:

Փետրվարի 17-ի երեկոյան ապստամբ ուժերը մոտեցան Երևանի արվարձաններին և բոլոր կողմերից շրջապատեցին քաղաքը:

Սկսված ապստամբությունը ճնշելու համար 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը ստիպված եղավ Վրաստանը խորհրդայնացնելու նպատակով դեպի Թիֆլիս արշավող իր զորամասերից մի քանիսը հանել ապստամբների դեմ: Ղազախից Դիլիջանի վրայով Երևան ուղարկվեցին 18-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը, որոնք ուժեղացված էին 179-րդ հրաձգային գնդով և 20-րդ հրաձգային դիվիզիայի մեկ ուսումնական գումարտակով: Դիլիջանի վրայով ուղարկած այս զորամասերը հարձակվեցին Սեմյոնովկայի լեռնանցքը պահող ապստամբ ջոկատի վրա, գրավեցին լեռնանցքը և կռիվների ողջ ընթացքում այն ամուր պահելով՝ թույլ չտվեցին, որ ապստամբությունը տարածվի դեպի հյուսիս՝ Թիֆլիսի ուղղությամբ: Միաժամանակ Նախիջևանի երկրամասից դեպի Երևան էին շարժվում 20-րդ հրաձգային դիվիզիայի 178-րդ և 180-րդ հրաձգային գնդերը, որոնք ճանապարհին ուշանում էին: Ձեռնարկած այդ միջոցները, սակայն, ի վիճակի չէին կանգնեցնելու ապստամբության ծավալվելը: Փետրվարի 17-ի երեկոյան ապստամբական ուժերը, չհանդիպելով լուրջ դիմադրության, երեք կողմից օղակեցին մայրաքաղաքը:

Ե՛վ Քանաքեռից Երևան իջնող, և՛ Էջմիածին–Աշտարակից այնտեղ շտապող ապստամբները մինչև քաղաք մտնելը առաջադրանք էին ստացել հենց սկզբից գրավելու Երևանի բանտը և ազատել բանտարկյալներին:

Խորհրդային զորամասերի դիմադրությունը Երևանում արդեն անիմաստ էր դարձել, ուստի դրանց հրամանատարների գլխավոր խնդիրը մնացած զորամասերին գերվելուց փրկելն էր:

Քանի որ Երևանի հյուսիսային և հյուսիսարևմտյան ողջ տարածքները գտնվում էին ապստամբների վերահսկողության տակ, ուստի Հայաստանի ռազմհեղկոմը որոշում էր ընդունում թողնել մայրաքաղաքը և նահանջել դեպի Ղամարլու (Արտաշատ): Խորհրդային զորամասերը հրաման ստացան

նահանջել երկաթուղու կայարանի ուղղությամբ, որտեղ կանգնած էին «Ազատամարտ» և «Վարդան զորավար» զրահագնացքները:

Փետրվարի 18-ի երկրորդ կեսին կարմիրբանակայինները, վերցնելով 8 վագոն ցորեն, մի քանի վագոն թնդանոթի արկ և մեծ քանակությամբ ռազմամթերք, թողեցին Երևանը, կենտրոնացան հին ու նոր կայարաններում և դեպի Ղամարլու տանող խճուղու ուղղությամբ: Երևանից նահանջած զորքի թվաքանակը կազմում էր 1664 մարդ հետևակ, 70 հեծյալ, որոնց տրամադրության տակ կար 11 հրանոթ և երկու զրահագնացք[1]:

Երևանից նահանջելու նախօրյակին՝ փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը, բոլշևիկները Երևանի բանտում սպանեցին մոտ 40 բանտարկյալի, այդ թվում՝ հայտնի ռազմական դեմքեր Համազասպին և Մակեդոնին, խմբապետերի ու մտավորականների:

Փետրվարի 18-ի վաղ առավոտյան տարբեր կողմերից Երևան մտան ապստամբ ուժերը՝ 1. Զանգվի կամրջից դեպի բանտ՝ Ասլան Ստեփանյանը իր զորամասով, 2. Քանաքեռից իրենց զորամասերով՝ գնդապետ Սուրեն Թարխանյանը (որին աջակից էին Հակոբ Տեր-Հակոբյանը և Եփրեմ Սարգսյանը), բաշգառնեցի խմբապետ Մարտիրոս Աբրահամյանը, բուլանուղցի խմբապետ Ղազար Թարխանյանը (Դալի Ղազո), 3. Երևանի Նորք արվարձանից բաշգառնեցի խմբապետ Խնկո Ասատրյանը՝ իր զորամասով, 4. Երևանի Կոնդ թաղամասից՝ զինված խմբեր՝ վանեցի Փանոս Ժամհարյանի գլխավորությամբ[2]: Զինված ապստամբների հիմնական մասը արևմտահայեր էին:

Մինչև ժամը 8-ը փողոցներում մղվում էր քառսային ու արյունահեղ գուպար: Ամեն կարգի հրազենների որոտին խառնվել էին որբանոցներից ու բանտերից տարածվող սարասփազդու աղիողորմ ձայները:

«Ապստամբները կռվում էին կատաղության լացով»[3],– պահը պատկերավոր արտահայտել է Հայկ Ասատրյանը:

Երևան մտած ապստամբները, որոնց միացել էին քաղաքացիները, առաջին հերթին հարձակվեցին բանտի վրա և ազատ արձակեցին կալանավորներին: Ստույգ մահից ազատվեցին բազմաթիվ պետական ու կուսակցական գործիչներ, նշանավոր մտավորականներ, այդ թվում՝ Հովհաննես Քաջազնունին, Համո Օհանջանյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը և ուրիշներ:

Զրահագնացքների ուղեկցությամբ նահանջելով Ուլուխանլու՝ խորհրդային զորքերի այդ խումբը, որը կազմված էր 180-րդ հրաձգային գնդից և գնդապետ Միրիմանովի հրամանատարության տակ գործող 1-ին հայկական բրիգադից, նահանջեց Ղամարլու, ապա՝ Երևանից 40 կմ դեպի հարավ-

---

[1] Տե՛ս **Ա. Հակոբյան**, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվին, էջ 69-70. **А. Кадишев**, նշվ. աշխ., էջ 384:

[2] Տե՛ս «Ասլան Ստեփանեանի յուշերը», էջ 383:

[3] **Հ. Ասատրեան**, նշվ. աշխ., էջ 242:

արևելք գտնվող Ավշար: Ծանր մարտեր մղելով խորհրդային զորքերի մեծ մասը այնուհետև քաշվեց Վեդիբասարի տարածքը և բռնում Բոյուք Վեդի–Ենգիջա, Քյուչուկ Վեդի–Խոր Վիրապ–Թայթան–Շիրազլու գիծը:

Խորհրդային կառավարությունը, Հայկոմկուսի կենտկոմը, մի շարք հիմնարկներ և զորքերի խմբավորման շտաբը հիմնավորվեցին Ավշարի մոտ՝ երկաթուղային վագոններում: Այստեղ Կարմիր բանակի զորամասերը վերակազմվեցին և նախապատրաստվեցին վճռական մարտերի:

Միաժամանակ Խորհրդային Հայաստանի կառավարությունը դիմեց Հայաստանի Հանրապետության դեմ 1919 թ. Բոյուք Վեդիի թուրքերին ոտքի հանելու գործում մեծ դեր խաղացած Նախիջևանի բեկերից մեկին՝ Աբասկուլուն՝ խնդրելով տեղի թուրքերից կազմակերպել ջոկատ և միանալ Կարմիր բանակի զորամասերին: Բեկն ընդունեց առաջարկը և մինչև մարտի սկիզբը կազմակերպեց 400 հոգուց բաղկացած մի ջոկատ, որը ստացավ «Կարմիր տաբոր» անվանումը:

Երևանը գրավելուց անմիջապես հետո ապստամբ ուժերը ստեղծեցին իշխանության գերագույն մարմին՝ «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ իրենց վերապահելով Հայաստանի Հանրապետության խորհրդարանի դերը: Կոմիտեն գլխավորում էր Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը: Դրանով իսկ ապստամբներն ընդգծում էին, որ Հայրենիքի փրկության կոմիտեն Հայաստանի Հանրապետության վարչակարգի անմիջական շարունակությունն է:

Փրկության կոմիտեն կազմեց կառավարություն, որի մեջ, վարչապետի պաշտոնից զատ, Ս. Վրացյանը ստանձնեց նաև արտաքին գործոց նախարարի պաշտոնը: Նրա դահլիճի անդամ-նախարարներն էին Արշակ Հովհաննիսյանը (զինվորական), Կարո Սասունին (ներքին գործերի), Համբարձում Տերտերյանը (ելևմտական), Հակոբ Տեր-Հակոբյանը* (պարենավորման), բժիշկ Սմբատ Եղիազարյանը (խնամատարական), Հ. Սարգսյանը (պրոպագանդի և աշխատանքի): Կոմիտեում ՀՅ դաշնակցության ներկայացուցիչն էր Եփրեմ Սարգսյանը: Բանակի հրամանատար նշանակվեց սպա Սուրեն Թարխանյանը, շտաբի պետ՝ Գարեգին Սարգիսբեկյանը: Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոս Աբրահամյանը նշանակվեց Ղամարլուի ճակատի հրամանատար, իսկ սպա Սերյոժա Քոթանջյանը՝ Երևանի պարետ: Երևանի քաղաքագլուխ նշանակվեց Արշալույս Աստվածատրյանը[1]: Փետրվարի 20-ին Երևանում կազմվեց Արտակարգ դատարան՝ ինժեներ Ավետիս Օհանջանյանի նախագահությամբ[2]:

Փրկության կոմիտեի հրահանգով կազմվեց, այսպես կոչված, Վասպուրականի զինվորական մարմինը, որի անդամներն էին Վահե Արծրունին,

---

* Իրազեկ

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 38-39:

[2] Տե՛ս «Ասլան Ստեփանեանի յուշերը», էջ 386:

Գրիգոր Խլղաթյանը, Կարապետ Բեյլարյանը, Գալուստ Էյնաթյանը, Հայկակ Կոկոսյանը, Փանոս Ժամհարյանը, Սամվել Մեսրոպյանը և Արմենակ Մաքսապետյանը: Վերջին երկուսը մտան «Հայրենիքի փրկության» կոմիտեի մեջ:

Վասպուրականի զինվորական մարմինը կոչ հրապարակեց, որով վասպուրականցիներին զենքի էր կոչում՝ կռվելու բոլշևիկների դեմ: Մի քանի օրում կոչին արձագանքեց 20-60 տարեկան շուրջ 3000 մարդ և կազմվեց Վասպուրականի զորագունդը, որի հրամանատար նշանակվեց Ասլան Ստեփանյանը[1]: Իրենց առանձին զորամասերը ստեղծեցին նաև սասունցիներն ու տարոնցիները՝ մշեցի Սմբատի և ուրիշների գլխավորությամբ:

Մայրաքաղաքին տիրելուց հետո ապստամբները շարունակեցին մարտական գործողությունները՝ նպատակ ունենալով կարճ ժամանակում ջախջախել Կարմիր բանակի զորամասերը և որքան հնարավոր է արագ վերականգնել իրենց իշխանությունը Խորհրդային Հայաստանի ողջ տարածքի վրա:

Այսպիսով՝ ընդամենը 3-4 օրում ապստամբներին հաջողվեց շատ արագ գրավել Արագած լեռան հարավային և արևելյան փեշերը, Աշտարակը, Արարատյան դաշտի զգալի մասը, Բաշ-Գառնիի շրջանը և այլ տարածքներ: Բայց նրանց ուժերը անբավարար էին ռազմական ավելի մեծ գործողություններ ծավալելու և ավելի մեծ արդյունքներ ձեռք բերելու համար:

«Նրանք ապստամբել էին իրենց հոգու ուժով, բայց զուրկ էին հարձակողական պատերազմ վարելու տնտեսական թե ռազմամթերային կարելիությունից: Փետրվարի 18-ի ապստամբությունը քայքայված մի երկրի վերջին ճիգն էր: Երկրում բացվել էր երեք ռազմաճակատ, որոնց վրա ժողովուրդը կռվում էր ապավինած միայն բարոյական իր ուժերին»[2]:

Փրկության կոմիտեի օրգան «Ազատ Հայաստան» թերթը, որը սկսել էր լույս տեսնել փետրվարի 19-ից, թիվ 1-ի խմբագրականում գրում էր. «Այս շարժումը, որ մեր ազատագրական պատմության մեջ կմնա **անմահ,** գերազանցորեն ժողովրդական էր, վկա այն նմանը չտեսնված խանդավառությունը, որով տոգորված, անգամ կանայք և անչափահաս պատանիներ, հրացանները գրկած՝ նետվել էին փողոց՝ բոլշևիկ կոչվածներին մեր երկրից դուրս շպրտելու համար: Բայց այս շարժումը, ժողովրդական այս բուռն, տարերային պոռթկումը ուղղված չէ Ռուսաստանին և ոչ էլ նրան ղեկավարող կուսակցության: Մենք եղել ենք բարեկամը և սիրողը ռուս մեծ ժողովրդին և այսուհետև էլ կշարունակենք մնալ նույնը, պայմանով միայն, որ հյուսիսի մեր մեծ դրացին փոխադարձաբար հարգե մեր ժողովուրդը և նրա արյունով վաստակած անկախությունը»[3]:

Հայաստանում ծագած ու դեռևս հաղթանակած հակաբոլշևիկյան

---

[1] Տե՛ս «Ասլան Ստեփանեանի յուշերը», էջ 385-386:

[2] **Հ. Ասատրեան**, նշվ. աշխ., էջ 242:

[3] «Ազատ Հայաստան», 1921, 19 փետրվարի:

ապստամբության լուրը տարածվեց ամենուր՝ առաջացնելով կառավարությունների ու հասարակական-քաղաքական շրջանների զարմանքը և տարակուսանքը:

Ապստամբության լուրն ալեկոծեց հայ գաղթօջախները աշխարհի բոլոր մասերում: Արձագանքները Հայաստանից դուրս գտնվող հայերի շրջանում տրամագծորեն տարբեր էին: Դաշնակցության անդամների ու համակիրների մեծ մասի մոտ ապստամբությունը մեծ ոգևորություն էր առաջացրել և հույս էր ստեղծել, թե հնարավոր է լինելու վերականգնել Հայաստանի պետական անկախությունը: Ապստամբությունը ողջունեցին նաև Սահմանադրական ռամկավար կուսակցության արտասահմանյան համարյա բոլոր կազմակերպությունները, որոնք ցավով էին ընդունել 1920 թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության անկման լուրը*: Սահմանադրական ռամկավարների՝ Ամերիկայում լույս տեսնող «Ազգ» թերթը (թիվ 1712) «Մանչեսթր Գարդիանից» թարգմանաբար տպագրել էր մի հոդված, որտեղ նկարագրված էր Հայաստանում բոլշևիկյան ռեժիմի տակ իրագործվող «բնաջնջման» քաղաքականությունը՝ իր կողմից հակախորհրդային ոգով մեկնաբանելով այն: «Ազգը» մեղադրում էր Անտանտի երկրներին, որ նրանք չփութացին օգնության իրենց թշվառ ու հոգնաբեկ դաշնակցին, որը կորցրեց պետական անկախությունը: «Այդ երկրների կառավարությունները գոնե հիմա պատրաստ են արդյոք աջակից լինել հայոց ապստամբությանը»,– հարցնում էր թերթը: Հայ ազգային մյուս կուսակցությունը՝ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, նրան պատկանող թերթերը, կուսակցական գործիչները միանշանակ դատապարտում էին ապստամբությունը՝ այն որակելով որպես արկածախնդրություն: Գաղթօջախներում կար նաև մտավորականների մի խավ, որը, առավել սթափ գնահատելով Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակը, չէր շտապում կատարվածի մասին կարծիք հայտնել կամ գնահատական տալ:

Փարիզից Ավետիս Ահարոնյանը նամակ էր ուղարկել Իտալիայում գտնվող Ավետիք Իսահակյանին և հարցրել նրա կարծիքը Փետրվարյան ապստամբության մասին: Պատասխան նամակում Իսահակյանը նշել էր. «Գրում ես, թե Հայաստանում նորից կռիվներ կան, և բավական չէ՞, որ մեր լավ ժողովուրդը արյուն կորցնե: Սիրելի՛ս, խոսք չեմ գտնում ասելու, միայն քեզ հետ ո՛չ համաձայն եմ, ո՛չ հակառակ...»[1]:

Ավելի հստակ էր արտահայտվել Զորավար Անդրանիկը՝ Փետրվարյան ապստամբությունը համարելով անտեղի: Դեռ մեկ տարի առաջ նա ասում

---

* Ռամկավարական շատ կազմակերպություններ որոշ ժամանակահատվածում (1920-1922 թթ.) հակախորհրդային դիրք էին բռնել, սակայն 1923 թ. սկսած՝ Ռամկավար ազատական նորաստեղծ կուսակցությունը աստիճանաբար որդեգրեց Հայաստանում հաստատված նոր ռեժիմի ջերմ պաշտպանության քաղաքականությունը:

[1] «Ավետիք Իսահակեանի նամակները», Գահիրէ, էջ 78:

էր. «Հայաստանի ապագան մութ է: Այն բոլոր պետութիւնները, որոնք **տե ֆակտո** եւ **տե ժյուրե** ճանչցան մեր երկիրը, արտաքին երեւոյթի տակ համբոյր մըն է, որ շնորհեցին մեր նորածին հանրապետութեան՝ միմիայն աշխարհը խաբելու նպատակով, այն վայրկեանին, որ իրենց շահերը տարբեր կերպարանք մը ստանան՝ պիտի զոհեն ամեն բան Ռուսաստանին: Ռուսաստանը պիտի ըլլայ ամենավերջին խոսողը, պոլշեւիք թե հանրապետական, ընկերավարական թե կայսերական, ի՛նչ այլափոխութեան մեջ ալ ձուլուի, անորն է վերջին խոսքը...»[1]:

Առաջին անհաջողությունից ուշքի գալով՝ Կարմիր բանակի զորամասերը սկսեցին ուժգին դիմադրություն ցույց տալ ապստամբներին: Ավելին, վերախմբավորելով ուժերը, նրանք փետրվարի 25-ին երկու զորայունով հայկական հրաձիգ բրիգադի հրամանատար Միրիմանյանի հրամանատարությամբ հարձակման անցան Երևանի վրա՝ գլխավոր հարվածն ուղղելով ապստամբ խմբերի ձախ թևին: Իր հերթին, Ֆիշիլևիչի 2-րդ գունդը վերակազմվելով հարձակման է անցնում աջ թևից:

Սկսվում են համառ, անզիջում կռիվներ: Զորավար Սմբատը, վերհիշելով այդ արյունահեղ կռիվները, հետագայում ցավով նշել է. «Հայը հայուն կոտորեց, թուրքերուն դեմ այնքան սրտոտ չէին կռուեր, որքան որ իրարու դեմ զիրար կոտորելու ատեն»[2]:

Չնայած ապստամբների գերմարդկային դիմադրությանը՝ խորհրդային զորամասերին հաջողվեց առաջ շարժվել և փետրվարի 26-ին հասնել Երևանի մատույցները:

Քանի որ Հայաստանի հեղկոմը, Կոմկուսի կենտկոմը և պետական մի շարք կարևոր հիմնարկներ Ղամարլու–Վեդի շրջանում գտնվում էին շրջապատման մեջ, և նրանց կապը խորհրդային մյուս շրջանների հետ կտրված էր, փետրվարի 26-ին կազմակերպվեց Դիլիջան–Ղարաքիլիսա գավառների Ռազմահեղափոխական կոմիտե՝ Գևորգ Աթարբեկյանի գլխավորությամբ: Կոմիտեի հիմնական խնդիրն էր ղեկավարել այդ գավառների պետական և կուսակցական աշխատանքը ու նախապատրաստվել հյուսիսային շրջաններում ապստամբների դեմ վճռական հարձակման: Դիլիջանում ստեղծվեց նաև Հայաստանի կոմկուսի ժամանակավոր կենտկոմ: Սակայն այդ ժամանակ Դիլիջան–Ղարաքիլիսա շրջանում բոլշևիկները զբաղված էին իրենց ուժերը համալրելով, կարգի բերելով և անմիջական մասնակցություն կռիվներին չէին ունենում: Դրա փոխարեն՝ Ղամարլուի ճակատում մարտերն ավելի ու ավելի արյունահեղ էին դառնում:

---

[1] **Ա. Միհրանեան**, Ինչպե՞ս պետք է գրավել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, էջ 16:

[2] **Ա. Ժամկոչեան**, Զօրավար Անդրանիկ կը պատասխանէ իւր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 73:

Փետրվարի 26-ին Երևանի մատույցներ հասած Ղամարլուի ճակատի Կարմիր բանակի զորամասերին չհաջողվեց մտնել մայրաքաղաք: Ռազմաճակատում գտնվող Փրկության կոմիտեի ուժերին օգնության եկան ապստամբ նոր ջոկատներ, որոնք հնարավորություն տվեցին անցնելու հակահարձակման: Հատկապես ակտիվ գործեց հեծելազորը: Եռօրյա մարտերից հետո բոլշևիկյան զորքերը, զգալի կորուստներ կրելով, նահանջեց ելման դիրքերը:

Շուտով Միրիմանյանը նշանակվեց ամբողջ Ղամարլուի ռազմաճակատի զորքերի հրամանատար և ձեռնարկեց նոր հարձակում:

Մայրաքաղաքը գրավելու նպատակով փետրվարի 28-ի առավոտյան Կարմիր բանակի զորամասերը առաջացան բոլոր ճակատներով և գրավելով Ներքին Շենգավիթն ու Չարբախի այգիները՝ ամրացան Երևանի երկաթուղային կայարանից հյուսիս-արևելք և դեպի հարավ գտնվող բարձունքներում: Միաժամանակ Վայոց ձորի կողմից Բաշ-Նորաշենի վրա խմբապետ Յապոնի հնարավոր հարձակումը թիկունքից կանխելու նպատակով խորհրդային հրամանատարության հրամանով Աբասկուլի բեկն իր ջոկատով փակեց Վայոց ձորից Բաշ-Նորաշեն եկող ճանապարհի լեռնանցքը:

Բոլշևիկների նոր հարձակմանն ի պատասխան՝ ապստամբները, Աղջաղալա–Հաջի Էյլասի շրջանում կենտրոնացնելով հեծելազոր և հրետանի, հակահարձակման անցան ամբողջ ճակատով: Կորուստներ տալով՝ Կարմիր բանակի զորամասերը նահանջեցին և ամրացան Աղբաշ–Իմանշալու–Բուզումլու գծամասերում:

Մեծ ուժեր կենտրոնացնելով կարմիրբանակային 2-րդ գնդի տեղամասում՝ մարտի 1-ին ապստամբները շարունակեցին հակահարձակումը: Չդիմանալով ուժգին ճնշմանը՝ գունդը ետ քաշվեց Բոյուք Վեդի: 3-րդ գունդը ամրանում է Ենգիջա–Քյուչուկ Վեդի և Խոր Վիրապ գծամասերում: 178-րդ ռուսական գունդը զբաղեցրեց Արաքս գետի ձախ ափի Արարատ կայարանի և Սադարակ գյուղի միջև եղած տարածությունը: Բրիգադի շտաբը, զրահագնացքները և հրետանին մնում են Շիրազլուում[1]:

Մարտի 1-ից մինչև 8-ը ռազմաճակատում համեմատաբար հանգիստ էր, երկու հակառակորդ կողմերը պատրաստվում էին վճռական գործողությունների:

Փրկության կոմիտեն գերմարդկային ճիգեր էր գործադրում իր իշխանությունն ամրապնդելու, զորամասերը համադրելու և կարգի բերելու, ամուր կարգ հաստատելու համար:

«Լինենք անողոք» վերնագրով խմբագրականում «Ազատ Հայաստան» թերթը գրում էր. «Հայրենիքի փրկության կոմիտեն, որ հանձնակատարն է այսօրվա ըմբոստ գյուղացիության և աշխատավորության, իբրև դիկտատոր,

[1] Տե՛ս **Գ. Օգանեզով**, Դիվիզիայի հրամանատար Աթոյան, էջ 57-60:

հանուն մեր բարձրագույն շահերի, պիտի լինի այսուհետև... խիստ, անողոք բոլոր նրանց նկատմամբ, որոնք հանդգնություն կունենան որևէ կերպ այս ու այն կողմը շուռ տալ մեր ազգային քաղաքական կյանքի անիվը»[1]:

Այդ օրերին, ինչպես արդեն ասվեց, զանգեզուրյան զորքերը գրավել էին Վայոց ձորը: Գորիսից Նժդեհը Վայոց ձոր եկավ՝ տեղյակ չլինելով Փետրվարյան ապստամբության մասին: Իմանալով նա մեծ ուրախություն ապրեց: Լուրը Զանգեզուրում նույնպես ընդունվեց ցնծությամբ: Նժդեհը Քեշիշքենդից նամակ ուղարկեց Երևան և հետևյալ խոսքերով ողջունեց Մայր Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջումը. «Սրտի անհուն բերկրանքով ողջունում եմ Արարատյան հայության ապստամբությունը և ազատագրումը օտար լծից: Ինքնավար Լեռնահայաստանի ժողովուրդը ջերմ կարոտով սպասում է այն երջանիկ րոպեին, երբ քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրին»[2]: Նա ողջույն ուղարկեց նաև Փրկության կոմիտեի զորքերին՝ ասելով նաև հետևյալ խոսքերը. «Եթե խորապես գիտակցենք, ճապոնական կայսրի հետ կրկնում եմ, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի մոտ է կանգնած Մեծ ու Գեղեցիկ Արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամ մահը թիթեռնիկի թևից էլ թեթև կթվա»[3]:

Լեռնահայաստանի կառավարության նախագահ Գեղեոն Տեր-Մինասյանը ևս Գորիսից Փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանին ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Ութն ամիս տևող ապստամբական կռիվները Լեռնահայաստանի սահմաններում հերոս Նժդեհի գլխավորությամբ ստեղծեցին ազատ և ինքնավար Սյունիքը, որի կառավարությունը երջանիկ է այսօր ողջունելու Մայր Հայաստանի ազատագրումը: Սյունիքի առյուծները կազմ և պատրաստ սպասում են իրենց պաշտելի Սպարապետի հրամաններին՝ լրացնելու այն պակասը, որ դեռևս ունի մեր Մայր Հայաստանը»[4]:

Փետրվարի 27-ին Նժդեհը ժամանեց Քեշիշքենդ և տեղի ժողովրդի կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ: Նա մոտիկից հաղորդակից եղավ գյուղացիների տրամադրություններին, լսեց նրանց պահանջները[5]:

Մարտի 2-ին Քեշիշքենդում հրավիրվեց Գյուղացիական համագումար, որը որոշում ընդունեց՝ Վայոց ձորը միացնելու Սյունիքին[6]:

Փաստորեն հիմք էր դրվում Լեռնահայաստանին, իսկ Սյունիքի Սպարապետ Նժդեհն այսուհետև դառնում էր Լեռնային Հայաստանի Սպարապետ:

---

[1] «Ազատ Հայաստան», 1921, 6 մարտի, թիվ 14:
[2] Նույն տեղում, 9 մարտի:
[3] Նույն տեղում, 17 մարտի:
[4] Նույն տեղում, 15 մարտի:
[5] Տե՛ս նույն տեղում, 4 մարտի, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ 37, ց. 1, գ. 24, թ. 3:
[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24, թ. 3:

«Ազատ Հայաստան» թերթը գրում էր. «Զանգեզուրից ստացված վերջին տեղեկությունների համաձայն Նժդեհն ընտրված է Լեռնահայաստանի ընդհանուր Սպարապետ, որն այսօր ամբողջ Լեռնահայաստանի ժողովրդի պաշտամունքի առարկան է»[1]:

Ապա թերթը նշում էր. «Կազմվել է ինքնավար Լեռնահայաստան, որի մեջ մտնում են՝ Դարալագյազը, բուն Զանգեզուրը, Սիսիանը, Կապանը, Գողթանը, Մեղրին և Լեռնային Ղարաբաղը (Դիզակ, Վարանդա և Խաչեն)»[2]:

Միաժամանակ Վայոց ձոր գալուց հետո Նժդեհն այստեղից կապ հաստատեց Սևանի ավազանի հակաբոլշևիկյան ընդհատակի հետ՝ նպատակ ունենալով այնտեղ հրահրել ապստամբություն:

«Նժդեհը իր զորամասով մոտ օրերս սպասվում է Նոր Բայազետում»[3],– գրում էր «Ազատ Հայաստան» թերթը:

Սևանի ավազանի հակախորհրդային ուժերը, ստանալով Երևանում և այլուր սկսված ապստամբության լուրը, ինչպես նաև Նժդեհի հրահանգները, իրենք նույնպես գործի անցան և բարձրացրին ապստամբության դրոշ:

Այստեղ առաջինն ապստամբեց Բասարգեչարում կայանած թնդանոթաձիգ գունդը, որը, շարժվելով դեպի Նոր Բայազետ քաղաք, առանց կռվի գրավեց այն: Տեղի բոլշևիկյան ուժերը հեռացան և ամրացան Սևանա լճի հյուսիսային մասում ընկած Ելենովկա ռուս մոլոկանների գյուղում և նրա շրջակա բարձունքների վրա: Այդ առթիվ Երևանից Փրկության կոմիտեի ռադիոբանբերը եթեր արձակեց հետևյալ հաղորդագրությունը.

«Մարտի 5-ին Նժդեհի դարալագյազյան ջոկատը գրավել է Նոր-Բայազետ քաղաքը*, այն մաքրելով բոլշևիկներից: ...Գերված է 400 ռուսական կարմիր զինվոր և ողջ հրամանատարական կազմը, վերցված է 4 թնդանոթ, 100 միլիոն ռուբլի, մանուֆակտուրա, 100 փութ աղ, ուրիշ ավար: Գյուղացիական համագումարը Դարալագյազը միավորել է հակախորհրդային Զանգեզուրին՝ իր ներկայացուցիչը ուղարկելով Սյունիքի կառավարության մեջ:

Հռչակված է Լեռնային Հայաստան, որի կազմի մեջ են մտնում Զանգեզուրը, Ղարաբաղը, Դարալագյազը»[4]:

Մոտավորապես նույն բովանդակության հաղորդագրությամբ մարտի 7-ին հանդես եկավ Փրկության կոմիտեի տեղեկատու բյուրոն: Հաղորդագրությունը վերնագրված էր՝ «Կեցցե՜ ապստամբ Լեռնա-Հայաստանը»[5]:

---

[1] «Ազատ Հայաստան», 1921, 9 մարտի:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

* Ինչպես ասվեց, Նոր Բայազետը գրավել էր Բասարգեչարում ապստամբած հայկական Կարմիր բանակի թնդանոթաձիգ գունդը, այլ ոչ թե Վայոց ձորի նժդեհական զորամասը:

[4] ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 34:

[5] Նույն տեղում, թ. 30:

Այդ դեպքերի մասին Վայոց ձորում գտնվող Նժդեհին Նոր Բայազետից գրել է խմբապետ Աղաբեկը: Իր հերթին՝ Սպարապետը այնտեղ է ուղարկում իր խմբապետերից երկուսին՝ Մեսրոպին և Գառնիկ Շահինյանին, որոնք անձամբ պետք է տեղում ծանոթանային իրերի վիճակին և շտապ զեկուցեին իրեն: Երկու օր անց Աղաբեկի, Մեսրոպի և Գառնիկի ստորագրությամբ Նժդեհը ստացավ հեռախոսագիր, որով նրան խնդրում էին անցնել Նոր Բայազետ: Դեռևս խիստ անհրաժեշտ չհամարելով Վայոց ձորը թողնելը և Սևանի ավազան անցնելը՝ նա չընդառաջեց այդ խնդրանքին, սակայն հետևեց երկրորդ խնդրագիրը:

Յապոնին հրահանգելով Չանախչու վրայով կապվել Երևանի հետ՝ Նժդեհը մի քանի հեծյալներով Շատին գյուղի մոտով, Սելիմի լեռնանցքով շարժվեց դեպի Սևանի ավազան: Անցնելով լեռնանցքը՝ նա կանգ առավ ճանապարհի վրա գտնվող գյուղերում, հանդիպեց ժողովրդի հետ, ելույթներ ունեցավ:

Հասնելով Ներքին Ղարանլուխ (Մարտունի)՝ Նժդեհն այնտեղ ստացավ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանի՝ դեռ փետրվարի 20-ին Երևանից գրած նամակը՝ հասցեագրված իրեն և Ռուբեն Տեր-Մինասյանին: Նամակն ուշացել էր, քանի որ սուրհանդակները ձյան առատության պատճառով չէին կարողացել հաղթահարել Սևանից Չանախչու վրայով Վայոց ձոր գնացող ճանապարհը և ստիպված վերադարձել էին Երևան ու այս անգամ Վայոց ձոր մեկնել Ախտա–Ուչթափա–Նոր Բայազետ–Ղարանլուխ–Շատին գծով: Տեղեկանալով, որ Նժդեհը ոչ թե Վայոց ձորում է, այլ եկել է Ներքին Ղարանլուխ՝ սուրհանդակներն այստեղ էլ նրան հանձնեցին Վրացյանի նշված նամակը:

Փրկության կոմիտեի նախագահը գրում էր Փետրվարյան ապստամբության հաջողության, Բաշ-Ապարանի, Թալինի, Աշտարակի, Կոտայքի, Երևանի, Էջմիածնի, Զանգիբասարի շրջանները բոլշևիկներից ազատելու մասին՝ միաժամանակ հույս հայտնելով, որ շուտով կազատագրվեն նաև Նոր Բայազետը, Ղազախը, Լոռին: Տեղեկացնում էր նաև, որ Ղամարլուի կողմեր նահանջած Հեղկոմի անդամները և բոլշևիկյան ուրիշ ղեկավարներ իրենց հետ տարել են երկու զրահագնացք, ունեն 1000-ի չափ զինվոր, որի կեսից ավելին ռուսներն են: «Ժողովուրդն ամեն տեղ խանդավառ է և մեզ հետ է»[1],– ասված էր նամակում:

Ներքին Ղարանլուխից Նժդեհն անցավ Նոր Բայազետ, որտեղ մարտի 8-ի երեկոյան Համո Օհանջանյանից ստացավ մի երկտող, որում ասված էր, որ Սյունիքի հրամանատարի՝ Նոր Բայազետ գալով, փաստորեն, պաշտոնական կապ է ստեղծված Զանգեզուրի և Մայր Հայաստանի միջև:

Ինչպես Ս. Վրացյանը, այնպես էլ Հ. Օհանջանյանը Նժդեհին գրած իրենց

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 79:

նամակներում նրան ակնարկներ էին անում, որ նախապես անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի հարկ եղած դեպքում ապստամբները դեպի Սյունիք նահանջելու արահետ ունենան: Վրացյանը գրել էր. «Մի բանի վրա միայն առանձնապես շեշտում եմ, և խնդրում եմ ուշադրության առնել՝ Դարալագյազ–Զանգեզուր–Երևան գծի բացումը մեզ համար շատ է կենսական և անհետաձգելի, ինչպես նաև մարտական օժանդակություն հասցնելը: Ամեն գնով պետք է կապվեք մեզ հետ՝ ճանապարհը ապահովելու»[1]:

Ընդառաջ գնալով Սևանի ավազանի ապստամբական զորամասերի հրամանատարության խնդրանքին՝ Նժդեհն այստեղից գրություն է ուղարկեց Վայոց ձոր և պահանջեց Նոր Բայազետին օգնության ուղարկել սիսիանցիներից կազմած մի վաշտ, իսկ ինքը վերադարձավ Սյունիք:

Կատարելով Ս. Վրացյանի խնդրանքը՝ Նժդեհը Զանգեզուրի արևմտյան ճակատի հրամանատար Յապոնին, որի մոտ այն ժամանակ գտնվում էր Ռուբեն Տեր-Մինասյանը, կարգադրեց Քոմուրլու գծից, ինչ գնով էլ լինի, առաջ շարժվել և գրավել մինչև Քիրալու ընկած տարածքները, միանալ Փրկության կոմիտեի՝ Ղամարլուի ու Չիմանքենդի զորամասերին և դրանով իսկ ապահովել ճանապարհները: Նժդեհի հրամանը կատարվեց, և նահանջի հուսալի ուղի բացվեց Արարատյան դաշտից դեպի Զանգեզուր:

Այդ առթիվ «Ազատ Հայաստանը» գրում էր. «Անկախ և ազատ Զանգեզուրը ևս օգնության ձեռք է երկարում մեզ: Պաշտոնական աղբյուրից հաստատվում է, որ Նժդեհի հետախույզները սկսել են կապ հաստատել Ղամարլուի մեր զորամասերի հետ, որոնք հետապնդում են թշնամուն»[2]: Մի ուրիշ հաղորդագրության մեջ թերթը նշում էր. «Նժդեհի հետախույզները մտել են Ղամարլու և կապ հաստատել Մարտիրոսի զորամասի հետ»[3]:

Չնայած առաջին հաջողություններին՝ ապստամբները քաջ գիտակցում էին, որ ավելի հեշտ է իշխանություն գրավելը, քան այն պահելը: Իսկ իշխանություն պահելու համար նրանք հեռանկար չունեին: Հիմնականում անկանոն ապստամբ ուժերը չէին կարող դիմագրավել մեծաքանակ և լավ զինված Կարմիր բանակի զորամասերին: Բացի այդ՝ գրավված շրջանների բնակչությունը խանդավառված չէր սկսված ապստամբությամբ՝ քաջ գիտակցելով, որ արյունահեղ կռիվները նոր զոհեր էին խլելու բազմատանջ հայությունից: Սակայն առավել աղետալին այն էր, որ մեծապես ընկած էր ապստամբների բարոյական ոգին:

Ելենովկայի ճակատի կռիվներին ականատես Համո Օհանջանյանը մարտի 10-ին Գարեգին Նժդեհին գրում էր. «...Պիտի խոստովանեմ, ինձ բավական վհատեցրել են այստեղի ուժերը՝ իրենց խուճապային տրամադրու-

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 79:

[2] «Ազատ Հայաստան», 1921, 25 փետրվար:

[3] Նույն տեղում:

թյամբ: Ամոթ մեզ. երեք անգամ հարձակում գործեցինք Ելենովկայի վրա և չկարողացանք վերցնել: Վաղը չորրորդ անգամն ենք հարձակվում...»[1]:

Նժդեհը Երևանից ստանում էր բազմաթիվ ուրիշ նամակներ ևս, զրույցներ էր ունենում այնտեղից Զանգեզուր եկած գործիչների հետ: Տպավորությունը մեկն էր. ապստամբ զորամասերը և նրանց սպայությունը բարոյապես լքված էին ու ծայրահեղ ընկճված:

Պատահական չէ, որ Փրկության կոմիտեի անդամների մոտ հասունանում էր Գարեգին Նժդեհին Զանգեզուրից Երևան հրավիրելու և նրան զինված ապստամբ ուժերի ընդհանուր հրամանատար նշանակելու միտքը: Մարտի 10-ին Համո Օհանջանյանը Նժդեհին գրում էր. «Մեծ հույսեր ունեմ, որ Ձեր գալուստը պիտի ոգևորե և քաջալերություն ներշնչե այդտեղի և այստեղի ուժերին...»[2]:

Ապստամբների իշխանությունը հենման կետեր չուներ նաև դրսում և, կարելի է ասել, լիովին մեկուսացած էր: Կռվելով բոլշևիկյան զորքերի դեմ՝ Հայրենիքի փրկության կոմիտեն դաշնակիցներ չուներ Հայաստանը շրջապատող երկրների թվում: Թուրքիան սպասողական վիճակում հետևում էր իրադարձությունների հետագա, իր համար բարենպաստ զարգացմանը, որպեսզի վերջնականապես թաղի հայկական հողային պահանջների հարցը: Պարսկաստանը Հայրենիքի փրկության կոմիտեի հանդեպ թեև չեզոք էր, բայց տրամադիր չէր գործնական օգնություն ցույց տալու: Վրաստանը, ըստ էության, դիտողի դերում էր: Ադրբեջանի իշխանությունները կարծես հենց Փետրվարյան ապստամբությանն էին սպասում, որպեսզի Ռուսաստանի օգնությամբ իրենց օգտին լուծեն Հայաստանի հետ ունեցած հողային հաշիվները, հայերից խլեն և Ադրբեջանին միացնեն Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի «վիճելի» տարածքները:

Հայրենիքի փրկության կոմիտեի միակ աջակիցները Զանգեզուրի զինյալներն էին:

Ապստամբության կազմակերպիչները, սակայն, հույս ունեին ակտիվ գործողությունների դիմելու միջոցով փոխել իրենց համար խիստ անբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակը: Ստեղծման առաջին իսկ օրից Հայրենիքի փրկության կոմիտեն սկսեց դրսի ուժերի հետ կապեր հաստատելու ելք փնտրել՝ նրանց հետ լեզու գտնելու, լիակատար մեկուսացումից դուրս գալու համար: Այդ նպատակով նա ակտիվ քայլեր արեց՝ սերտ կապերի մեջ մտնելու պարսկական խաների հետ: Դրան կարող էին նպաստել այն լավ հարաբերությունները, որ 1918-1920 թթ. ստեղծված էին Հայաստանի Հանրապետության և Պարսկաստանի, իսկ այժմ՝ Հյուսիսային Պարսկաստանի և Զանգեզուրի, այնտեղի խաների և Նժդեհի միջև: Կոմիտեն հույս չուներ

---

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 333:

[2] Նույն տեղում:

անմիջական օգնություն ստանալ Պարսկաստանից, որովհետև Երևանի և Թավրիզի միջև ընկած տարածություններում Կարմիր բանակի զորամասեր էին, իսկ Նախիջևանում՝ նաև քեմալական զորամիավորումներ: Բայց ապստամբները մտածում էին գալիքի մասին, այն մասին, որ պարտության դեպքում իրենց միակ փրկությունը կլինի անցնել Պարսկաստան և հովանավորվել այնտեղի իշխանությունների կողմից:

Հայրենիքի փրկության կոմիտեն ինչ-որ չափով ակնկալում էր նաև վրացական մենշևիկյան կառավարության աջակցությունը, բայց հույսերը չնչին էին, քանի որ Փետրվարյան ապստամբությունը զուգադիպել էր Վրաստանի վրա բոլշևիկների հարձակմանը: Վրացական կառավարությունն ինքը սարսափի մեջ էր սպասվելիք իրադարձություններից և հազիվ թե կարողանար որևէ օգնություն ցույց տալ Հայաստանի ապստամբներին:

Ինչ վերաբերում էր Թուրքիային, ապա այդ դեպքում «Հայրենիքի փրկության» կոմիտեի հոգսն էր՝ ա) թուրքերին հեռու պահել իրադարձություններին միջամտելու գայթակղությունից, բ) հնարավորության դեպքում օգնություն խնդրել նրանից:

Ինչպես արդեն ասվել է, մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց առաջ դաշնակցականների գլխավորած կառավարության մեջ ստեղծվել էր գաղափարական մի հոսանք, որի փոքրաթիվ ներկայացուցիչները և, առաջին հերթին, Արտաշես Չիլինգարյանը գտնում էին, որ Հայաստանի հետագա գոյության երաշխիքը հայ-թուրքական տանելի հարաբերություններ հաստատելն էր: Եվ ահա այժմ՝ Երևանում և հարակից շրջաններում իշխանությունը ժամանակավորապես գրավելուց հետո, Փրկության կոմիտեն քայլ արեց թուրքերի հետ հարաբերությունները բարելավելու, նրանց հետ ընդհանուր լեզու գտնելու համար:

Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսը իր հուշերում նշել է, թե Կոմիտեի ղեկավարները գտնում էին, որ «տաճիկների քաղաքական ու ազգային շահերի տեսակետից շատ ավելի ձեռնտու է, որ Հայաստանը լինի Ռուսաստանից անջատված ու անկախ, քան թե նրա մեկ անբաժան մասը դառնա: Ուստի և մեր հակախորհրդային պայքարին նրանք չպիտի խանգարեն: Տաճկական ճակատից գեթ առայժմ վտանգ չկա»[1]:

Մարտի 9-ին Ս. Վրացյանը Թավրիզի հայկական թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին գրեց նամակ, որը լույս տեսավ Թավրիզի «Մինարեթ» շաբաթաթերթում: «Տաճիկների հետ մեր հարաբերությունները լավ են,– նշում էր նա,– հույս ունենք անկեղծ բարեկամություն հաստատել, մի հարաբերություն, որ հիմնված լինի փոխադարձ շահի

[1] Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), գրի առավ Ե. Հայրապետեան, «Հայրենիք», 1956, թիվ 7, էջ 40:

վրա: Մեր միակ վտանգն այժմ հյուսիսից է, որի համար պետք է միանան հարավի բոլոր ժողովուրդները»[1]:

Մարտի 10-ին Վրացյանը Աշտարակի փրկության կոմիտեի նախագահի հետ ունեցած հեռախոսազրույցում հայտնում էր. «Ռուսաստանում հեղափոխական շարժումները ուժեղանում են: Կրոնշտադը դարձել է հակաբոլշևիկյան հեղափոխության օջախ, շարժումը ղեկավարում են էսէռները: Լոնդոնի կոնֆերանսը զբաղված է հայ-տաճկական հարցով, հետևանքը դեռ հայտնի չէ: Երեկ տաճիկ ներկայացուցիչը հայտնեց, որ իր դիմումի հետևանքով Էրզրումից արդեն ճանապարհ են հանված դեպի Երևան գեն. Արարատյանը և գնդ. Վեքիլովը: Մյուս գերիների հարցը նույնպես կլուծվի այս օրերս»[2]:

«Հայ և թուրք բարեկամության խնդիրը» վերնագրով խմբագրական հոդվածում «Ազատ Հայաստան» թերթը (որի խմբագիրը Ս. Վրացյանն էր, և խմբագրականը, անշուշտ, պատկանում է նրա գրչին) գրում էր. «Իրերի պատմական բերումով Այսրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը: Որովհետև Տաճկաստանն էր այն միակ իրական մերձավորագույն քաղաքական ուժը, որ անմիջապես և կենսապես շահագրգռված է Այսրկովկասի ժողովուրդների կատարյալ ազատագրությամբ բոլշևիկյան Ռուսաստանի խեղդող լծից և որ ի վիճակի է այս պահին իրական օգնություն հասցնել իրենց ազատության համար հերոսաբար կռվող Այսրկովկասի ժողովուրդներին»: Ապա թերթը շարունակում էր. «Իր ազատագրական պայքարի այս տաժանելի օրերին հայ ժողովուրդը քաղաքական իմաստություն պիտի ունենա թոթափելու իրենց անցյալի դառն հուշերն ու ավանդությունները և ոչինչ չխնայելու հայ և թուրք ժողովուրդների, Հայաստանի և Տաճկաստանի բարեկամությունը հաստատելու համար: Թուրք ժողովրդի, Տաճկաստանի գործուն բարեկամությամբ է միայն, որ հայ ժողովուրդը պիտի դուրս գա իր ներկա ծանր տագնապից, և թուրք ժողովրդի հետ միասին է, որ հայ ժողովուրդը պիտի կարողանա վերջապես ձեռք բերել տևական խաղաղություն և տևական ապահովություն: Ուրիշ ճանապարհ չկա...»[3]:

Ինչպես տեսնում ենք, Վրացյանը և ընկերները սխալ պատկերացում ունեին իրենց շուրջը ծավալվող իրադարձությունների մասին: Դրա վկայություններից էր, օրինակ, մարտի 7-ի երեկոյան Փրկության կոմիտեի տեղեկատու բյուրոյի տված հաղորդագրությունը, որով ի լուր ամենքի հայտարարվում էր. «Ամբողջ թրքությունը մեզ հետ է և բոլշևիկների դեմ»[4]:

Դաշնակիցներ ձեռք բերելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր ռազ-

---

[1] «Մինարեթ» (Թավրիզ), 1921, 14 ապրիլի: Վրացյանի այս նամակը արտատպել էր «Ժողովրդի ձայն» թերթը 1921 թ., հունիսի 27-ին:

[2] ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24 թ., թ. 7-ի շրջերես;

[3] «Ազատ Հայաստան», 1921, 15 մարտի:

[4] ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 30:

մաճակատում մի խոշոր հաղթանակ տանել:

Մարտի 8-ի առավոտյան ապստամբ ջոկատները հարձակման անցան Քյուչուկ Վեդիի և Խոր Վիրապի ուղղություններով և երկու ժամ տևած կատաղի մարտերից հետո գրավեցին այդ տարածքները: Սակայն հաջողությունը տևական չէր: Ապստամբ ուժերը բոլշևիկյան զորամասերի ճնշման տակ նույն օրվա երեկոյան ստիպված էին նահանջել ելման դիրքերը:

Մարտի 9-18-ը ճակատում նորից հարաբերական հանգիստ էր: Բոլշևիկները պատրաստվում էին վճռական հարձակման Երևանի վրա[1]:

Այդ նույն ժամանակ Մոսկվայում իր աշխատանքներն էր շարունակում ռուս-թուրքական կոնֆերանսը, որը քննարկում էր նաև Հայաստանի սահմանների հարցը: Կոնֆերանսում խորհրդային պատվիրակությունը գլխավորում էր ՌՍՖԽՀ արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինը, Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատվիրակությունը՝ Յուսուֆ Քեմալ բեյը: Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը մերժում էր ստացել մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին: Դեռ փետրվարի 26-ին տեղի ունեցած առաջին նիստում, բացելով կոնֆերանսը, Գ. Չիչերինն ասել էր. «Այս կոնֆերանսին, որը ես պատիվ ունեմ բացելու, վիճակված է էպոխա ստեղծել Արևելքի պատմության մեջ և վերջնականապես ամրապնդել սերտ ու ամուր միաբանությունը Ռուսաստանի և Թուրքիայի ժողովուրդների միջև, որոնք տոգորված են միանման վճռով, արտաքին ամեն տեսակի կեղեքումից ու ճնշումից պաշտպանել իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը և կարգավորել իրենց քաղաքական ու սոցիալական իրավիճակի հարցը...»[2]:

Չիչերինը համոզմունք էր հայտնել, որ երկու երկրները դառնալու են հավատարիմ դաշնակիցներ ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում:

Պատասխան խոսքով հանդես գալով՝ Յուսուֆ Քեմալ բեյը ոչ պակաս ոգեշնչվածությամբ շեշտել էր. «Մենք ընտրել ենք ամենաճիշտ ուղին: Աշխարհագրական, պատմական, տնտեսական ու քաղաքական պայմանները մեզ ցույց տվեցին Ռուսաստանի ճանապարհը: Նոր Ռուսաստանի ներկայացուցիչների առջև թուրքին հատուկ ամբողջ անկեղծությամբ ասում եմ. հավատացե՛ք մեզ...»[3]:

Փոխադարձ սիրո և հավատարմության հավաստիացումների պակաս չկար: Կարծես ընդամենը երեք տարի առաջ չէր, որ Բրեստ-Լիտովսկում բանակցությունների սեղանի շուրջ նստած թուրքական պատվիրակները գերմանական գեներալների հետ և նրանց խրախուսանքով տենչում էին նվաստացնել, կողոպտել ու ոչնչացնել Խորհրդային Ռուսաստանը:

Կոնֆերանսում խորհրդային պատվիրակության դիրքը Չիչերինը հետա-

---

[1] Մանրամասն տե՛ս **И. Таирян**, նշվ. աշխ., էջ 250-259:

[2] **Ս. Զարնիցկի, Ա. Սերգեև**, Չիչերին, Երևան, 1969, էջ 186:

[3] Նույն տեղում, էջ 187:

գայում շարադրել է հետևյալ կերպ. «... Մենք թուրքերին շարունակ ասում էինք, ձեզ մոտ կոմունիզմ չկա, մեր իդեալները չեն համընկնում, բայց մենք պետք է ընթանանք ձեռք ձեռքի տված և միմյանց աջակցենք շահերի միասնության պատճառով»[1]:

Մոսկվայում հայ ժողովրդի համար քննարկվում էին ճակատագրական հարցեր՝ առանց նույնիսկ Հայաստանի բոլշևիկյան կառավարության ներկայացուցիչների մասնակցության: Օտարները որոշում էին հայ ժողովրդի բախտը, իսկ Հայաստանում նույն ժողովրդի զավակները եղբայրասպան պատերազմում կոտորում էին միմյանց:

Այդ օրերին Ղամարլուի ճակատի Կարմիր բանակի զորքերի կապի պետին հաջողվեց Արարատ կայարանում եղած ավտոմոբիլային ռադիոկայանը կարգի բերել և Դիլիջանի ռադիոկայանի միջոցով կապ հաստատել Բաքվի և Թիֆլիսի հետ:

Ղամարլուի ճակատի զորքերի հրամանատարությունը ռադիոկապով 11-րդ բանակի ղեկավարությանը խնդրեց նոր զորամասեր ուղարկել օգնության: Սակայն բանակի հրամանատարությունն իր զորքերի ուժերը չցրելու համար որոշեց ակտիվ գործողություններ չձեռնարկել Հայաստանում, մինչև որ չավարտվի Թիֆլիսի օպերացիան:

Մենշևիկյան Վրաստանի խորհրդայնացման խնդիրը տվյալ պահին Մոսկվայի համար ավելի կարևոր էր, քան Հայաստանի ապստամբության ջախջախումը: Բանակի հրամանատարությունը երկու ուղղությամբ հարձակողական գործողություններ վարելու համար չուներ անհրաժեշտ ուժեր: Փետրվարի 20-ի դրությամբ 11-րդ բանակն ուներ ընդամենը 17937 սվին, 4316 սուր, 1065 գնդացիր, 181 թեթև, 15 ծանր հրանոթ, 7 զրահագնացք, 3 զրահաջոկատ, 1 տանկային ջոկատ (4 տանկ) և 50 ինքնաթիռ[2]: Այնինչ վրաց-մենշևիկյան զինված ուժերը, որոնք պատերազմում էին Վրաստան ներխուժած Կարմիր բանակի զորքերի դեմ, ունեին հետևյալ կազմերը՝ կանոնավոր բանակ՝ 27000 սվինով և 2000 սրով, «ժողովրդական գվարդիա»՝ 34400 սվինով և 500 սրով: Սահմանապահ ծառայության զորամասերի, զինվորական ուսումնական հաստատությունների, նավատորմի և այլ զորամասերի հետ Վրաստանն ուներ ընդամենը 75870 սվին և 3990 սուր: Վրաց զորքերն ունեին 1255 գնդացիր, 104 թեթև և 18 ծանր հրանոթ, 4 զրահագնացք, 16 զրահամեքենա, 2 տանկ և 56 ինքնաթիռ[3]:

Այսպիսով՝ 11-րդ Կարմիր բանակը թվական տեսակետից զգալիորեն զիջում էր վրացականին: Ուժերի այդպիսի հարաբերության պայմաններում Հայաստանում լայնածավալ հարձակում սկսելը բանակի հրամանատա-

---

[1] **Ս. Զարնիցկի, Ա. Սերգեև**, նշվ. աշխ., էջ 188:

[2] Տե՛ս ՌՊՌԱ, ֆ. 195, ց. 4, գ. 112, թ. 1-2:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 109, ց. 4, գ. 946, թ. 172:

ությունը համարում էր աննպատակահարմար:

Փետրվարի վերջերին ընկավ Թիֆլիսը, և Կարմիր բանակի զորքերը ռազմականացրին երկրի ողջ տարածքը: Վրացական բանակը գլխովին ջախջախելուց հետո Վրաստանում գտնվող խորհրդային զորքերը հրաման ստացան օգնության գնալ Հայաստանում կռվող բոլշևիկյան զորամասերին:

Մարտի կեսերին 11-րդ բանակի հրամանատարությունը ստեղծեց զորքերի «Դիլիջանյան» հատուկ խմբավորումը՝ Երևանի վրա վճռական հարձակում գործելու համար: Այդ խմբավորման մեջ մտան 18-րդ, 20-րդ, 32-րդ հրաձգային և 18-րդ հեծյալ դիվիզիաները: Խմբավորումը այնուհետև ստացավ «Երևանյան» (Հյուսիսային) անվանումը, որի հրամանատար նշանակվեց 20-րդ դիվիզիայի հրամանատար Վելիկանովը:

Ռադիոյի միջոցով Կարմիր բանակի զորամասերը տեղեկացան, որ 11-րդ բանակի Երևանյան խմբավորումը մարտի 9-ին դուրս էր եկել Ղարաքիլիսայից ու Դիլիջանից և հյուսիսից հարձակվելու էր Երևանի վրա:

Հայաստանի Կարմիր բանակի հրամանատարությունը Ղամարլուի ճակատի զորքերին հրաման իջեցրեց մարտի 11-ին հարձակման անցնել: Ռազմական պլանի համաձայն՝ այդ զորքերը Կարմիր բանակի Երևանյան խմբավորման հետ մարտի 18-ին գրոհով պետք է մտնեին մայրաքաղաք Երևան: Սակայն ցրտերի և առատ ձյան պատճառով Երևանյան խմբավորումը չկարողացավ ժամանակին կատարել նախատեսված ծրագիրը և ստիպված կանգ առավ Ներքին Ախտայի շրջանում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ եղավ Ղամարլուի ճակատի զորքերի հարձակման օրը մարտի 11-ից տեղափոխել մարտի 14:

Մարտի 15-ին խորհրդային զորքերը հյուսիսից՝ Ախտայի կողմից, և հարավից՝ Ղամարլուի ճակատից, վճռական հարձակման անցան Երևանի վրա: Հարձակումը, սակայն, նույն օրը կանգնեցվեց ապստամբ զորամասերի կողմից, որոնք, անցնելով հակահարձակման, ջախջախեցին խորհրդային առաջապահ ուժերը:

Ծանր վիճակ էր ստեղծվել նաև Ղամարլուի ճակատի և՛ կարմիրբանակայինների, և՛ ապստամբների համար: Կատաղի մարտեր էին ծավալվել, և երկու կողմերն էլ ծանր կորուստներ էին կրում:

Ապստամբների հրամանատարությունը, նախազգալով Երևանյան խմբավորման մոտակա հարձակումը, վճռեց բոլոր ջանքերը կենտրոնացնել Ղամարլուի ճակատում՝ նպատակ ունենալով ապահովել Երևանից Դարալագյազ նահանջի ճանապարհը: Մինչև 60 տարեկան՝ զենք կրելու ընդունակ տղամարդկանց զորահավաք հայտարարվեց, միաժամանակ Ելենովկայի ճակատից Փրկության կոմիտեի ուժերի մի մասը փոխադրվեց Ղամարլուի ճակատ:

Կռիվների թեժ պահին՝ 1921 թ. մարտի 16-ին, Մոսկվայի կոնֆերանսի ՌՍՖԽՀ-ի և Թուրքիայի կառավարական պատվիրակությունները ստորա-

գրեցին «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիր: Դա հայ ժողովրդի պատմության սև էջերից մեկն էր: Պայմանագրում ոչ մի հիշատակություն չկար Արևմտյան Հայաստանի մասին: Ավելին, նրանում վավերացվեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ քեմալական զորքերի կողմից Հայաստանի հողերի զավթումը: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազար քառ. կմ տարածք: Ըստ որում, Թուրքիան խլեց 18815 քառ. կմ, այսինքն՝ Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Մնացած 5.5 հազ. քառ. կիլոմետրը՝ Նախիջևանի մարզը և Շարուրը, միավորվեցին իբրև Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն, որը քեմալականների ճնշման տակ տրվեց Ադրբեջանին: Ավելին, պայմանագրի մեջ կետ մտցվեց, որի համաձայն՝ Ադրբեջանը այդ տարածքները չպետք է զիջեր «երրորդ պետությանը»՝ նկատի ունենալով Հայաստանը[1]:

1921 թ. մարտի 18-ին Սիմոն Վրացյանը հետևյալ դիմումն ուղարկեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարության արևելյան ճակատի հրամանատարության ներկայացուցիչ, կապիտան Բահաեդդին բեյին:

«Հաճեցեք ներկա դիմումը շտապ կերպով հասցնել Ձեր բարձր իշխանության և ինչպես անձամբ բացատրել եմ Ձեզ, շտապեցնել, որ շուտափույթ պատասխան ստացվի:

Իր ազատության ու անկախության համար մարտնչող Հայաստանի կռիվը բոլշևիկների դեմ, մեր համոզումով, ծառայում է ո՛չ միայն Հայաստանի, այլև Առաջավոր Ասիայի բոլոր ազգերի օգտին: Այդ պատճառով Հայաստանը հույս ունի, որ իր կռվի ընթացքում ինքը կստանա օգնություն իր հարևաններից և, առաջին հերթին, տաճիկ ժողովրդի կենսական շահն էլ պահանջում է Հայաստանի հաղթական դուրս գալը այս կռվից և անկախ մնալ:

Այդ համոզումից ելնելով՝ Հայաստանի կառավարությունը խնդրում է Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությանը, հանուն երկու ազգերի փոխադարձ շահի, ըստ կարելվույն շուտ՝

1. Վերադարձնել Երևան Տաճկաստանում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին:
2. Որոշ պայմաններով հայ բանակին ռազմամթերք և առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացանի կամ տաճկական մաուզերի փամփուշտներ տալ և կամ Ռոսի ու Լեբելի սիստեմի հրացաններ:
3. Հաղորդել մեզ, թե արդյոք Ազգային Մեծ ժողովի կառավարությունը հնարավո՞ր է գտնում Հայաստանին զինվորական օժանդակություն հասցնել և եթե կարող է՝ ի՞նչ չափով ու եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում:

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնք հիմք են դրված Ալեք-

[1] Տե՛ս “Документы высшей политики СССР”, т. 3, Москва, 1959, էջ 598-599:

սանդրապոլի դաշնագրից սկսած, և որոնք խանգարված են բոլշևիկյան իշխանության ժամանակ»[1]:

Այդ օրերին թուրքական էմիսարներն իրենց հերթին Հայրենիքի փրկության կոմիտեին հավաստիացումներ էին անում, ելույթներ էին ունենում բնակչության առջև: Օրինակ՝ նույն Բահաեդդին բեյը, Երևանի Գյոյ մզկիթում մահմեդական հավատացյալների առջև հանդես գալով, հայտարարել էր, թե քանի որ բոլշևիկներից արդեն ազատագրվել է Հայաստանը, «մենք պետք է աշխատենք նրանց (ապստամբների: – *Ս. Ս.)* հետ»: Մի ուրիշ հավաքույթում նա ասել էր. «Հայե՛ր, դուք մի՛ վախեցեք, մենք ձեզ օգնության կգանք, կտանք զենք և ամեն կարգի ռազմական պաշար»: Վերջապես ելույթներից մեկում էլ խոստումներ տալով՝ Բահաեդդինը շեշտել էր, «Մենք պատրաստ ենք օգնել ձեզ: Դուք միայն սարքեցեք Մարգարայի կամուրջը, և մենք բոլոր ուժերով օգնելու ենք ձեզ»[2]:

Մարտի 18-ին Ս. Վրացյանը մի ուրիշ նամակ է գրել Գարեգին Նժդեհին և նրան տեղյակ պահել թուրքերի հետ սկսված բանակցությունների մասին: Նամակից երևում էր, որ չնայած Փրկության կոմիտեի նախագահը օգնության համար դիմել էր դարավոր թշնամուն, բայց այդ օրերին արդեն պարզորոշ գիտակցում էր ապստամբության անհաջող վախճանի անխուսափելիությունը և դրությունը փրկելու վերջին հույսը դարձյալ կապում էր Նժդեհի հետ:

Վրացյանի այդ նամակը չէր հասել հասցեատիրոջը, որովհետև երեք օր հետո՝ մարտի 21-ին, Ախտայի շրջանում այն ընկել էր Կարմիր բանակի զորամասերից մեկի ձեռքը: Տեքստն ամբողջությամբ տպագրվել էր Խորհրդային Հայաստանի իշխանությունների «Կոմունիստ» պաշտոնաթերթում:

«Երևան, 18 մարտի 1921 թ.

Սիրելի՛ Նժդեհ

Ես արդեն գրել եմ մեր կացության մասին: Մի ամիս է կռվում ենք: Վերջին օրը նկատվում է ժողովրդի մեջ թուլություն ու մարտիկների մեջ խուճապային տրամադրության նշաններ: Կանգնած ենք ծանր հնարավորությունների առաջ: Դրությունը կարելի է փրկել միայն Բայազետից և Դարալագյազից գործող ուժերով: Այդ մասին քանիցս գրել ու խնդրել ենք քեզ, բայց ցարդ գործուն հետևանքներ չեղան: Նորից շեշտում եմ անհրաժեշտությունը ձեր արագ և վճռական գործողությունների, որոնք կարող են փրկել Հայաստանը կատաստրոֆից: Մյուս կողմից քո անմիջական ներկայությունը Հայաստանում ավելի քան անհրաժեշտ է և իմ բոլոր ընկերների ստիպողական պահանջն է: Մեր մարտական ուժերի գլուխը պետք է կանգնե քեզ պես ժողովրդական հեղինակություն ունեցող մի անձնավորություն, որպեսզի

---

[1] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 67-68:

[2] **Ա. Եսայան**, նշվ. աշխ., էջ 183-184:

կարելի լինի վճռական քայլեր անել: Այս տեսակետից ինչ էլ լինի պայմանները, դու պետք է շտապես Երևան: Ես չեմ ուզում գուշակություններ անել: Կարող է պատահել փորձության շատ ծանր օրեր հասնեն Երևանի համար, բայց ինչ էլ լինի Երևանի ճակատագիրը՝ մենք կռիվը շարունակելու ենք մինչև վերջ:

Մտել ենք բանակցության մեջ օգնության մասին նաև տաճիկք հրամանատարության հետ:

Հաշվի առ բոլոր հանգամանքները, լարիր բոլոր ուժերը, ոտքի հանիր ամեն տեղ ժողովուրդը և արա մաքսիմումը, ինչ որ կարելի է: Եվ որ գլխավորն է՝ արագ:

Համբույրներով՝

Ս. Վրացյան»[1]:

Թուրքիայից սպասվելիք «օգնությունն» այդպես էլ չեկավ: Քեմալականները միամիտ չէին, որ Մոսկվայում իրենց օգտին վերջացած ռուս-թուրքական կոնֆերանսից հետո, երբ Հայաստանի մասնատումը արդեն իրավաբանական ձևակերպում էր ստացել, իրենց համար լրացուցիչ դժվարություններ ստեղծեին: Նրանց հաշիվների մեջ Փրկության կոմիտեին օգնելու հարց չկար, քանի որ լավ գիտեին, որ ապստամբությունը անհուսալի ճիգ է, ոչ մի հեռանկար չունի և չի կարող պարտությամբ չվերջանալ: Բայց, հակառակ դրան, մինչև ապրիլի սկզբները, այսինքն՝ մինչև Կարմիր բանակի զորքերի կողմից Երևանի վերագրավումը, Կոմիտեն հավատացած էր, որ քեմալականները, այնուամենայնիվ, օգնության կգան[2]: Կոմիտեի հույսերը, սակայն, մնացին օդում կախված:

Փետրվարյան ապստամբությունն ուրախությամբ ընդունած Զանգեզուրի պաշտպանները, մի քանի ղեկավարներից բացի, խանդավառված չէին Հայրենիքի փրկության կոմիտեի այդ գործողություններով և սկզբունքորեն հակառակ էին Սիմոն Վրացյանին և նրա համախոհ այն գործիչներին, որոնք հակված էին Թուրքիայի հետ դաշինքի կողմը:

Երբ Ս. Վրացյանը օգնության խնդրանքով դիմում էր Թուրքիային, այդ նույն օրը՝ մարտի 18-ին, ապստամբ ուժերի ընդհանուր հրամանատար, գնդապետ Սուրեն Թարխանյանը Ղամարլուի ռազմաճակատում գործող զորամասերին հետևյալ հրամանը տվեց. «Համարյա մեկ ամսից ավել տևող անընդհատ մարտերում կարմիրների թիվը խիստ նվազել է: Նրանք չունեն պարեն և հրանոթներ: Սննդամթերքի բացակայության պատճառով ուժգին դժգոհություններ են առաջացել կարմիր զինվորների շրջանում: Ռուսները չեն ուզում մեռնել Հայաստանի դաշտերում և հրաժարվում են մեր դեմ

[1] «Կոմունիստ», 1921, 13 մարտի:

[2] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 66-68:

պատերազմել: Ելենովկայի ճակատի դրությունը մեզանից պահանջում է շտապ կարմիրներին ջախջախել Ղամարլուի ճակատում: Անհրաժեշտ է կապ հաստատել Յապոնի ջոկատների հետ և մաքրել մեր թիկունքը կարմիրներից, որպեսզի հնարավորություն ստեղծվի մեր բոլոր ուժերը տեղափոխել Ելենովկայի ճակատ»[1]:

Այնուհետև գնդապետը հրամայում էր դրանից հետո անցնել ընդհանուր հարձակման և երկու օրվա ընթացքում խորհրդային ուժերին ջախջախել Ղամարլուի ճակատում:

Մարտի 19-ին՝ ժամը 6-ին, ապստամբները հարձակման անցան Ղամարլուի ամբողջ ճակատով: Խորհրդային 2-րդ գունդը՝ Ֆիշիլևիչի հրամանատարությամբ, չդիմանալով ուժգին հարձակմանը, թողեց Աղբաշը և սկսեց անկանոն նահանջել դեպի Արտաշատ: Նահանջի ճանապարհը բռնեցին նաև այդ գնդի ձախ թևում գտնվող Յանիշևսկու կոմունիստական ջոկատը և 3-րդ կարմիր գունդը՝ Բաղդասարյանի հրամանատարությամբ:

Նկատի ունենալով, որ 11-րդ բանակի առաջխաղացումը դանդաղում է, Ղամարլուի ճակատի Կարմիր բանակի զորամասերի հրամանատարությունը վճռեց դադարեցնել հարձակումը Երևանի վրա, մինչև որ հյուսիսից կհարձակվեին 11-րդ բանակի զորամասերը: Ետ քաշվելով՝ կարմիրբանակայինները գրավեցին Կարաբեկլյար–Բոյուք Վեդի–Ենգիջա–Խոր Վիրապ գիծը:

Այդ օրերին Սերգո Օրջոնիկիձեի կարգադրությամբ Թիֆլիսից ինքնաթիռ ուղարկվեց Ղամարլուի շրջան, որը 5 փութ ոսկի էր բերել՝ Կարմիր բանակի զորամասերի համար Շարուրի թուրքերից պարենամթերք գնելու նպատակով[2]:

Հաշվի առնելով բոլշևիկների հյուսիսային խմբավորման կողմից սպառնացող վտանգը՝ գնդապետ Թարխանյանը մարտի 24-ին վճիռ ընդունեց հաջորդ օրը՝ լուսաբացին, հարձակման անցնել Ղամարլուի ճակատից նահանջած կարմիրբանակայինների վրա և նույնիսկ համապատասխան հրաման տվեց: Բայց նույն օրը՝ երեկոյան, հայտնի դարձավ, որ հյուսիսային ճակատի խորհրդային զորամասերն արդեն պատրաստ էին արագ առաջխաղացումով գնալ Երևանի վրա, ուստի նա ետ վերցրեց արդեն տրված հրամանը: Նույն օրը հյուսիսային երկու ճակատներում (Ապարան և Ախտա) մեծապես ուժեղացավ բոլշևիկյան զորամասերի ճնշումը: Ապստամբական ուժերը սկսեցին աստիճանաբար նահանջել դեպի Երևան և Էջմիածին:

Մարտի 25-ի առավոտյան Կարմիր բանակի զորքերի Երևանյան խմբավորումը հարձակում սկսեց մայրաքաղաքի վրա երկու ուղղությամբ՝ Ելենովկա–Ախտա–Սուխոյ Ֆոնտան–Քանաքեռ–Երևան խճուղային ճանապարհով և Համամլու–Ապարան–Աշտարակ–Երևան գծով: Միաժամանակ Երևանի

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 1, թ. 25:

[2] Տե՛ս **Ս. Կրասովսկի**, Կյանքը ավիացիայում, Երևան, 1974, էջ 66-68:

վրա հարձակում սկսեցին Ղամարլուի ճակատի խորհրդային զորամասերը: Ծավալվեցին կատաղի մարտեր, և ապստամբների ուժերը, մեծապես զիջելով հակառակորդին, ստիպված էին նահանջել:

Ս. Վրացյանը գրել է, որ այդ բախտորոշ պահին Հայրենիքի փրկության կոմիտեի՝ Երևանում գտնվող անդամները պատասխանատու գործիչների հետ միասին խորհրդակցություն են ունեցել՝ քննելով անխուսափելի նահանջի հետ կապված խնդիրները: Խորհրդակցության մասնակիցները գիտակցում էին, որ բոլորովին անհույս է ապստամբության ելքը. ավերված երկրում սովը կրկին ցույց էր տալիս իր ժանիքները, սպառվելու վրա էր զինամթերքը, հակառակորդը հասցնում էր նորանոր ուժեր, ճանապարհները լի էին խուճապահար բազմություններով: Նախատեսվեց երկու հնարավորություն. Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների մի մասը տրամադիր էր բովանդակ ուժով գրոհ տալ և խորտակելով Ղամարլուի ճակատի բոլշևիկյան պատնեշը՝ Շարուր–Նախիջևանի վրայով միանալ Զանգեզուրին: Ոմանք գերադասում էին բռնել Բաշ-Գառնի–Միլլիի ձոր–Վայոց ձոր գիծը, որ թեև դեռ փակված էր ձյունով, բայց շուտով կարող էր բացվել:

Հաշվի առնելով ստեղծված ծանր վիճակը, այն, որ 11-րդ բանակի զորամասերը հյուսիսից Երևանի վրա էին գալիս մեծ ուժերով, իսկ Ղամարլուի ճակատից Կարմիր բանակի զորամասերը սպառնում էին թիկունքից, ապստամբների հրամանատարությունը վճռեց նահանջել Վայոց ձոր՝ Զանգեզուր անցնելու համար:

Խորհրդային ուժերն առանց կանգ առնելու շարունակեցին հետապնդել պարտություն կրած ապստամբ ուժերին, որոնք գաղթականության հետ շտապեցին օր առաջ թողնել Արարատյան դաշտը և Սյունիքի զորքի միջոցով ապահով դարձած գծով անցնել դեպի Վայոց ձոր:

Լեռնահայաստանի իշխանություններն ուշիուշով հետևում էին Արարատյան Հայաստանում տեղի ունեցող դեպքերի զարգացմանը, և որքան մոտենում էր Փրկության կոմիտեի անկման օրը, այնքան ավելի էր ուժեղանում նրանց ատելությունը բոլշևիկների հանդեպ: Հանձինս թուրքերի՝ դաշնակից գտնելու հույսը այս անգամ վերազարթնել էր Գորիսում:

Գարեգին Նժդեհը, որը երկու-երեք ամիս առաջ անհնարին էր համարում թուրք-հայկական կապերի հաստատումը, այժմ նկատելիորեն փոխել էր իր վերաբերմունքը՝ հակվելով երկու երկրների բարիդրացիական հարաբերությունների հաստատման կողմը, իսկ մարտի վերջին ճգնաժամային օրերին դա ուղղակի անհրաժեշտ էր համարում:

Ինչպես արդեն ասվել է, 1920 թ. ամռանը՝ Նախիջևանի երկրամասը խորհրդային հայտարարվելիս, խորհրդայնացվել էր նաև նախկինում Նախիջևանի գավառի մաս կազմող Գողթանի գավառակը՝ դեռ հայկական մնացած մի քանի գյուղերով:

Գողթանում խորհրդային իշխանության շարունակվող գոյությունը ոչ

այնքան ռազմագիտական, որքան հոգեբանական տեսակետից բացասաբար էր անդրադառնում զանգեզուրցիների տրամադրությունների վրա: Գողթանի հայերի մնացորդները, ենթակա լինելով Նախիջևանի «հեղկոմին», ստիպված էին կատարել նրա որոշումները, այդ թվում՝ նաև այն կարգադրությունները, որոնք նպատակաուղղված էին Զանգեզուրի պաշտպանների դեմ պայքարին: Դրանով իսկ Գողթանի հայերը ակամայից մասնակից էին դառնում Նախիջևանի կողմից Լեռնահայաստանի նկատմամբ կատարվող ոտնձգություններին:

1921 թ. մարտի 30-ին Նժդեհը նամակ գրեց Գողթանի խորհրդային իշխանության ներկայացուցիչ Քրիստափոր Տեր-Մկրտչյանին՝ պահանջելով, որ վերջինս հանդես գա գավառակը Արարատյան Հայաստանի հետ միավորվելու և Փրկության կոմիտեին ենթարկվելու մասին հայտարարությամբ:

«Պրն. Քրիստափոր

Երբ դեռ Արարատյան Հայաստանը կարմիր սրիկաների ձեռքին էր՝ հասկանալի էր ձեր կատարածը, Գողթանի սովետականացումը, իսկ այսօր, երբ Արարատյան Հայաստանում ժողովուրդը ապստամբությամբ մաքրել է իր երկիրը, ձեր սովետական իշխանություն ճանաչելը, անմիտ լինելուց զատ, դավաճանություն է: Երևանից քշված սրիկայախմբերի թափթփուկները փախել, պատսպարվել են Նախիջևանում, իսկ դուք Գողթանի խաբված ժողովրդին շարունակում եք պահել մթության մեջ և հավատացնել, որ Հայաստանը կարմիր սվոլոչի ձեռքին է: Աթարբեկյան, Ավիս, Կասյան կոչված «կոշկոդավ»ները փախել են այդ կողմերը և առնտուր սկսել պարսկական կոնսուլի հետ, որ ստանալով երկու թնդանոթ, թույլ տա 7-10 հոգով անցնելու Պարսկաստան*:

Մի՛ մոռանաք, որ այդ երեք հոգուն ազատելու համար ոչ թե միայն դուք, այլև Գողթանի երեք դավաճան գյուղերը հավետ անեծքի առարկա պիտի դառնան: Այդ սրիկաներից ամեն մեկի խղճի վրա ծով արյուն կա:

Ի՞նչ, ուզում էիք թուրքերի հետ առևտրական փոխհարաբերություններ սկսել, կարելի էր, բայց դա չէր նշանակում, որ դուք երկիրը պետք է հայտարարեիք սովետական: Ի՞նչ են իրենցից ներկայացնում Գողթանի երեք գյուղերը: Երկու Հայաստանների (Արարատյան և Լեռնահայաստան) միջև մեր թշնամու հացին յուղ քսող մի ողորմելիություն, որը առանց դրսի օգնության չի ապրել և ապրել չի կարող: Ուշքի՛ բերեք ձեր վատ ընկերներին, որոնք արջի ծառայություն են մատուցում և՛ ձեզ, և՛ խաբված գյուղերին:

---

* Թե Նախիջևանում պարսկական կոնսուլի հետ հայ բոլշևիկ ղեկավարների բանակցությունների բովանդակության մասին Նժդեհի պնդումը որքանով է համապատասխանում իրականությանը, դժվարանում ենք ասել, քանզի մեր տրամադրության տակ այդ փաստը հաստատող այլ աղբյուր չունենք:

Առաջարկում եմ՝

1. Անմիջապես Գողթանը հայտարարել Արարատյան Հանրապետության անբաժանելի մասը:
2. Ձերբակալել դրսեցի սրիկաներին և հանձնել ինձ:
3. Կանոնավորել հայ-թրքական երթևեկություններն ու փոխհարաբերությունները:
4. Մի պատգամավորություն ուղարկել ինձ մոտ, որ որոշ գրություններ ստանալով անցնի Երևան՝ հոգալու Գողթանի կարիքները:

Սպարապետ Նժդեհ»[1]:

Ինչպես երևում է Նժդեհի առաջարկից, նա արդեն համակարծիք էր Փրկության կոմիտեի՝ թուրքերի հետ կանոնավոր փոխհարաբերություններ հաստատելու քաղաքականությանը: Տվյալ պահին նրա համար գլխավոր թշնամին մնում էր բոշևիկյան Ռուսաստանը, որի դեմ պայքարում ընդունելի էր համարում նույնիսկ թուրքերի հետ ժամանակավոր մերձեցումը:

Այնուհետև Նժդեհը հետգրությամբ անհրաժեշտ էր համարում Ք. Տեր-Մկրտչյանին տեղեկություններ հաղորդել Խորհրդային Ռուսաստանում կատարվող անցուդարձերից: Նա գրել է. «Ամբողջ Ռուսաստանում բռնկվել է ապստամբություն: Ամենուրեք ժողովուրդը պահանջում է համառուսաստանյան սահմանադիր ժողով: Կրոնշտադը, Պետրոգրադը, Կոզլովը*, Ռյազանը, Պսկովը, Օրեոլը, Վորոնեժը, Խարկովը և ամբողջ Ուկրաինան գտնվում է ապստամբների ձեռքին: Մարտի 21-ից Մոսկվայի ռադիոն չի պատասխանում Երևանին և Թիֆլիսին. ապստամբություն է այնտեղ: Ապստամբությունը ղեկավարում են գեն. Կոզլովը, Չերնովը (էսէռ), Սավենկովը, Պետլյուրան: Դոնը, Կուբանը, Թերեքը և Դաղստանը վաղուց է (փետրվարի վերջերին) մաքրված կարմիրներից: Վրացիները կռվել են հերոսաբար՝ պատճառելով մեծ կորուստ թշնամուն: Կարմիրները նահանջում են բոլոր ճակատներից: Անգլո-տաճկական դեսանտը շարժվում է դեպի Բաքվի թիկունքը: Կարմիրները Գանձակից գիշերով են փախել: Հայաստանում դրությունը կայուն է, ժողովրդի տրամադրությունը՝ մարտական ու խանդավառ: Լեռնահայաստանի (իմ) զորքերը Չանախչի-Չիմանքենդով և Նոր Բայազետով միացել են Արարատյան Հայաստանի զորքերին:

Նժդեհ»[2]:

Ռուսաստանի և նրա շուրջը ստեղծված ռազմաքաղաքական իրադրության մասին Նժդեհի նկարագրությունը հիմնականում չէր համապատաս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 38, թ. 1-4:

* Այդպես է նամակում:

[2] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 38, թ. 4-6:

խանում իրականությանը: Դա կարելի է բացատրել երկու հանգամանքով. կամ Նժդեհը նպատակ է ունեցել բարձրացնել աշխարհի անցուդարձին անհաղորդ Ք. Տեր-Մկրտչյանի և գողթանցի հայերի բարոյական ոգին, նրանց համարձակություն ներշնչել Արարատյան Հայաստանին միանալու համար, կամ ինքը, աշխարհից կտրված լեռնաշխարհում տարված լինելով ամենօրյա եռուն կազմակերպչական աշխատանքով, ճշգրիտ տեղեկություններ չէր ստանում Ռուսաստանում, Ուկրաինայում և նույնիսկ Կովկասում ու Այսրկովկասում ծավալվող դեպքերի մասին: Այլապես նա չէր գրի, թե «ամբողջ Ուկրաինան գտնվում է ապստամբների ձեռքին», կամ «կարմիրները նահանջում են բոլոր ճակատներից» և այն էլ 1921 թ. գարնանը, երբ քաղաքացիական պատերազմի բոլոր ճակատներից խորհրդային զորքերը դուրս էին գալիս հաղթանակով: Հատկապես տարօրինակ է դեպի Բաքու անգլո-տաճկական դեսանտի շարժման մասին տեղեկությունը, նաև այն հաստատումը, թե «Հայաստանում դրությունը կայուն է», և դա այն դեպքում, երբ Երևանը գտնվում էր անկման նախօրյակին:

Մենք չգիտենք՝ Նժդեհի նամակը հասել է արդյոք Ք. Տեր-Մկրտչյանին, թե՝ ոչ: Եթե այո, ապա ինչպե՞ս է նա արձագանքել Սպարապետի առաջարկին: Ամենայն հավանականությամբ Տեր-Մկրտչյանը չի հասցրել պատասխան գրել: Եթե ընդունենք, որ նա Սպարապետի նամակը ստացել է ապրիլի 1-ին կամ 2-ին, ապա դրանից ընդամենը ժամեր հետո Կարմիր բանակի զորքերը պիտի մտնեին Երևան, և Արարատյան Հայաստանին Գողթանի միանալու մասին մտածելն անգամ դառնալու էր ավելորդ:

Դեպքերի վերջին արարն էր Արարատյան դաշտում:

Ինչպես փետրվարի 18-ին, երբ դաշնակցականների գլխավորած ապստամբները, մտնելով Երևան, առաջին հերթին գրավել էին բանտերը, որտեղ բռնափակված էին Դաշնակցության բազմաթիվ գործիչներ ու համակիրներ, այս անգամ էլ՝ ապրիլի 2-ին, երբ կոմունիստների գլխավորած բոլշևիկյան զորամասերը մտան մայրաքաղաք, նրանց առջև դրված առաջին խնդիրներից մեկը դարձյալ եղել էր բանտերի գրավումը, որոնցում բանտարկված էին Փրկության կոմիտեի կարճատև իշխանության օրոք ձերբակալված կոմունիստներ և նրանց համակիրներ, որոնց թիվը չէր զիջում 1921 թ. հունվար-փետրվարին ՉԵԿԱ-ի կողմից բանտերը նետվածների թվին:

Այսպես, 1921 թ. մարտի 5-ի տվյալներով Երևանի կենտրոնական բանտում կար շուրջ 800 մարդ, իսկ զինվորական բանտում՝ 600: Բանտարկյալներով լեփ-լեցուն էին նաև Աշտարակի, Էջմիածնի, Կոտայքի, Ախտայի, Նոր Բայազետի բանտերը[1]: Բանտարկյալ կոմունիստների և նրանց համակիրների համար բանտերի վարչակազմերի կողմից հաստատված էր նույնքան սոսկալի ռեժիմ, ինչպիսին մինչև փետրվարի 18-ը ՉԵԿԱ-ն հաստատել

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 126, թ. 8:

էր բանտարկյալ դաշնակցականների և նրանց համակիրների համար:

Երբ ռազմական գործողությունների ընթացքում Կարմիր բանակի զորամասերը մոտենում էին քաղաքին (փետրվարի 27, մարտի 14-15), բանտարկյալները լսում էին թնդանոթների որոտն ու գնդացիրների ձայնը, և նրանց մոտ ազատության հույս էր առկայծում: Այդ էր պատճառը, որ Փրկության կոմիտեի նախագահի մոտ միտք հղացավ առավել աչքի ընկած կոմունիստ-բանտարկյալներին քաղաքից հեռացնելու:

Փրկության կոմիտեի արտակարգ հանձնաժողովի (արտակարգ դատարան) նախագահ Արծրունին, որը մարտի 19-ին փոխարինել էր Ավետիս Օհանջանյանին, մարտի 25-ին Ս. Վրացյանից բանավոր կարգադրություն ստացավ առավել ակտիվ կոմունիստներին ու կոմերիտականներին շտապ հանելու բանտերից և խիստ հսկողության տակ տեղափոխելու Բաշ-Գառնի:

Փրկության կոմիտեի նախագահի անձնական կամայական այդ որոշումը կատարվեց. մայրաքաղաքի երկու գլխավոր բանտերի՝ Կենտրոնական բանտի և Զինվորական բանտի վարչակազմերի ղեկավարներին Արծրունին հրամայեց նույն օրը բանտախցերից դուրս բերել «ամենավտանգավոր էլեմենտներին»: Կենտրոնական բանտից հանվեց 52, իսկ Զինվորական բանտից՝ 11 մարդ, ընդամենը՝ 63 «դավաճան» ու «մարդասպան», որոնք շրջապատված 150 միլիցիոներներով ու ներքին գործերի նախարարության վասպուրականցի զինվորներից կազմված պահակախմբով, քշվեցին Բաշ-Գառնիի ուղղությամբ: Պահակախմբերը ղեկավարում էր Անդրանիկ Կարագետյանը՝ օգնականներ ունենալով Կարապետ Կարապետյանին և Վարդանին:

Բանտերից հանվածների թվում էին՝ Ն. Օլթեցյանը. Մ. Միկիչյանը, Ռ. Պողոսյանը, Վ. Սարոյանը, Կ. Տեր-Գաբրիելյանը, Գ. Գևորգյանը, Ա. Բուդաղյանը, Խ. Խաչյանը, Գ. Ներսիսյանը և ուրիշներ[1]: Նրանցից ոմանք հանրապետական մասշտաբի կուսակցական և պետական գործիչներ էին, ուրիշները՝ Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի հրամանատարներ, կային նաև կոմունիստ շարքայիններ՝ ծառայողական ավտոմեքենաների վարորդներ և մեխանիկներ, հեռագրիչներ, տպարանի բանվորներ և այլք:

Բանտարկյալ-պատանդները Բաշ-Գառնիում մնացին 6 օր, այսինքն՝ մինչև կարմիրբանակայինների կողմից Երևանի գրավումը՝ ենթարկվելով ամեն տեսակ զրկանքների և պատիժների:

Փրկության կոմիտեի ուժերի կողմից Երևանը խորհրդային զորքերին հանձնելուց հետո 5000-ից ավելի հյուծված զինվորներ և 8000 քաղաքացիներ հայ մտավորականության ընտրանու հետ բռնեցին Զանգեզուր տանող ճանապարհը[2]: Զանգեզուր էին գնում Հովհաննես Քաջազնունին, Սիմոն Վրաց-

---

[1] Տե՛ս «Ավանգարդ» (Երևան), 1927, 21 ապրիլի:

[2] Տե՛ս **Ե. Սարգիսեան**, Փետրուարեան յեղաշրջման օրերից (յուշեր և ապրումներ), մաս Գ, «Հայրենիք» ամսագիր, 1960, ապրիլ, թիվ 40 (410), էջ 89:

յանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, Ռուբեն Դարբինյանը, Սիրական Տիգրանյանը, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, գրող Լեռ Կամսարը և հարյուրավոր ուրիշ մտավորական գործիչներ:

Երևանի գրավման օրերին, երբ փախստականների հոսանքը շարժվում էր դեպի Բաշ-Գառնի, մյուս ուղղությամբ հսկայական զանգվածներ դիմեցին դեպի Մարգարայի կամուրջը՝ թուրքերին հանձնվելու համար: Իհարկե, թուրքերը նրանց չընդունեցին, ուստի նրանք ստիպված վերադարձան ու բարձրացան Արագած լեռան լանջերը[1]: Արագածում հավաքվածները մի քանի օրվա թեթև, բայց այլևս անիմաստ ընդհարումներից հետո ցրվեցին իրենց գյուղերը:

Հայրենիքի փրկության կոմիտեն հասցրեց իր հետ վերցնել կառավարական արխիվների մի փոքր մասը, իսկ արխիվային մյուս բոլոր փաստաթղթերը մնացին Երևանում, որոնք հետագայում համալրեցին Խորհրդային Հայաստանի արխիվային ֆոնդերը: Փրկության կոմիտեն իր հետ տարավ նաև պետական գանձը: Այդ արարքին Սիմոն Վրացյանը տվել է հետևյալ բացատրությունը. փետրվարի 18-ի ապստամբության հետևանքով Երևանից նահանջելիս բոլշևիկները պետական գանձը լցրել էին սնդուկների մեջ՝ իրենց հետ տանելու նպատակով, բայց հաջողվել էր տանել այդ սնդուկների միայն մի մասը, մնացածն ընկել էր Փրկության կոմիտեի ձեռքը: Այդ արկղերը մնացել էին պետական գանձարանում՝ չբացված, մինչև դեպի Զանգեզուր նահանջի նախօրյակին հատուկ հանձնաժողովի միջոցով դրանք հաշվառվել էին և տարվել զինվորական ջոկատի հսկողությամբ[2]:

Փրկության կոմիտեի տրամադրության տակ կային Երևանից դուրս հանված երեք տեսակի դրամներ՝ ա) հայկական դրամանիշներ ու չեկեր, բ) սովետական դրամներ, գ) տարադրամային արժեքներ:

Հայկական դրամները տեղավորվել էին 15 արկղերի մեջ, որոնց պարունակությունը կազմում էր ինը միլիարդ չորս հարյուր միլիոն (9.400.000.000) ռուբլի: Սովետական դրամները կազմում էին վեց հարյուր հիսուն միլիոն (650.000.000) ռուբլի: Տարադրամային արժեքները բազմազան էին՝ ռուսական դրամներ, ամերիկյան դոլար, անգլիական ֆունտ ստեռլինգ, ֆրանսիական ֆրանկ, թուրքական լիրա, պարսկական ղռան, գերմանական մարկ, իտալական լիրա, դանիական կրոն, շվեյցարական ֆրանկ, ռումինական լեյ, բուլղարական լև, մեկ կնքված արկղ ոսկյա իրեր և այլն[3]:

«Որևէ հաշվեցույց չկա,– գրել է Վրացյանը,– թե Հայաստանի պետական գանձի ո՞ր մասը Հեղկոմն է տարել և ո՞ր մասը՝ Հայրենիքի փրկության կոմիտեն: Համենայն դեպս, մեծ մասը բաժին ընկավ Հեղկոմին, որը, սակայն,

---

[1] Տե՛ս **Ց. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 108:

[2] Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 628-629:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 629-632:

որևէ հաշիվ չներկայացրեց հասարակության: Հայրենիքի Փրկության տարած գումարները ծախսվեցին կառավարական ընթացիկ պետքերու և բազմահազար տարագիրների պարենավորման համար, և այդ մասին 1921 թ. վերջերը հայ[կական] կառավարությունը հաշիվ ներկայացրեց հանրության»[1]:

1921 թ. ապրիլի 6-ին Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և հանրապետության ռազմժողկոմ Ավիսը հեռագրեցին Թիֆլիս՝ Սերգո Օրջոնիկիձեին: Վերջինս պատրաստվում էր գալ Երևան:

«Երևանից նահանջողները իրենց հետ տարել են պետական արժեքները, ինչպես խորհրդային, այնպես էլ հայկական բոլոր դրամները: Խնդրում եմ Ձեզ հետ վերցնել նվազագույնը մեկ միլիարդ խորհրդային ռուբլի»[2]:

Հենց այստեղ հարկ է նշել, որ Փրկության կոմիտեն գոնե բարոյական իրավունք չուներ քայքայված ու սոված երկրից դուրս տանելու վերջին միջոցները: Դաշնակցական գործիչներից մեկը հետագայում գրում էր. «Անհասկանալի է, թե կառավարությունը (Փրկության կոմիտեն: – *Ա. Ս.*) ինչու՞ չի հանձնել (դրամները: – *Ա. Ս.*) նոր կազմակերպված իշխանություններին, որպես ժողովրդի սեփականություն: Եկող ուժերին էին թշնամի համարում (Ս. Վրացյանը և ընկերները: – *Ա. Ս.*), ժողովուրդը խոմ մնո՞ւմ էր ու պիտի լիներ ամեն ժամանակներում էլ, բոլոր ռեժիմի կառավարությունների օրոք»[3]: Իր հերթին «Կոմունիստ» (Երևան) թերթը հիշեցնում էր, որ այդ «միլիոնավոր դոլարների ու այլ գումարների մեծ մասը փոխառության ձևով» արտասահմանի տարբեր երկրների հայ գաղթօջախներում դեռես 1920 թ. ամռանը հավաքված են եղել Հայաստանի սահմաններում ապրող ժողովրդի տագնապը մեղմելու, նրա երկիրը վերաշինելու նպատակով, ուստի «այդ թալանը մեղմացուցիչ ոչ մի հանգամանք չունեցող ոճիր է»: Թերթը գտնում էր, որ պետք է մի «հատուկ լիազոր պատգամավորություն ուղարկել արտասահման և մեր այնտեղի ընկերների, բազմաթիվ բարեկամների և հայ մասսաների միջոցով վերադարձնել տառապող ժողովրդի անունով կատարված փոխառության հսկայական գումարները»[4]: Արտասահման անցնելուց հետո Փրկության կոմիտեի անդամները կառավարության արածն արդարացնում էին՝ ասելով, որ եթե իրենք Երևանից հանած չլինեին տարադրամը և մյուս արժեքները, ապա Պարսկաստան անցած մի քանի հազար հայերն անկասկած սովամահ կլինեին: Այս պատճառաբանությանն ի պատասխան՝ նրանց ընդդիմախոսները փաստարկում էին, որ Հայաստանում մնացել էին ոչ թե մի քանի հազար, այլ 700-800 հազար հայեր, որոնց գերակշիռ մասը նույնպես գտնվում էր

---

[1] **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 628-629:

[2] ՀԱԱ, ֆ. 959, ց. 2, գ. 1, թ. 13:

[3] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 63:

[4] «Կոմունիստ», 1921, 12 մայիսի: Տարադրամի և մյուս տարած արժեքների մասին տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1921, 19 հունիսի:

ծայրահեղ աղքատության ու թշվառության մեջ, և այդ տարած տարադրամի կարիքը շատ էր զգում: Ինչ արդարացուցիչ փաստարկներ էլ հետագայում վկայակոչում էին Փրկության կոմիտեի ղեկավարները, սակայն կատարվածը ոչ մի կերպ չի կարելի արդարացնել: Ասենք նաև, որ նշված գումարների վրա հսկողությունը և ծախսը իրականացվում էին մի փոքր խումբ ղեկավար մարդկանց կողմից: Ժամանակին այդ ամենը տեղիք է տվել գաղթականության մեծ բողոքներին ու մեղադրանքներին, ընդվզում էր առաջացրել նաև շարքային դաշնակցականների շրջանում[1]:

Բոլշևիկները երկրորդ անգամ հաստատեցին իրենց իշխանությունը Հայաստանում: Անլուծելի թվացող խնդիրներ ունեցող երկրում դաշնակցականների գլխավորած ապստամբության և կոմունիստների կողմից դրա ճնշման հետևանքով ավերածությունն ու թշվառությունը հասել էր ծայրահեղ աստիճանի:

Դաշնակցության հայտնի գործիչներից մեկն այսպես է նկարագրել բոլշևիկների գրաված Երևանը. «Քաղաքը մեռած վիճակի մեջ է, ինտելիգենտ դեմքեր չկան, դպրոցների բարձր դասարանները փակ են աշակերտների և ուսուցիչների բացակայության պատճառով: Փողոցներում երթևեկություն չկա, ընդհանուրի տրամադրությունը սաստիկ ընկճված է: Համալսարանում հրավիրված ուսանողական ժողովին ներկայացել են միայն 6 հոգի: Ապրիլի 20-ից սկսվում են համալսարանի դասախոսությունները 20 ուսանողի ներկայությամբ: Ամենքի, հատկապես բոլշևիկների վրա, խիստ ճնշիչ տպավորություն է թողել ինտելիգենցիայի հեռացումը»[2]:

Մոսկվայում և Բաքվում մոբիլիզացված մի խումբ հայ կոմունիստների հետ 1921 թ. ապրիլի 17-ին Դիլիջանի խճուղով Երևան եկավ Սերգո Օրջոնիկիձեն: Նա հանգամանորեն ծանոթացավ Փետրվարյան ապստամբությունից հետո Հայաստանում ստեղծված աղետալի վիճակին: Ապրիլի 19-ին կայացավ Հայաստանի կոմկուսակցության Երևանի կազմակերպության, Երևանի կոմիտեի, Արհեստակցական միությունների և դրանց խորհրդի միացյալ բազմամարդ հանդիսավոր նիստ: ՌԿ(բ)Կ-ի և խորհրդային կառավարության անունից Օրջոնիկիձեն ողջունեց «Երիտասարդ կարմիր Հայաստանին», խստորեն քննադատեց Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որով օրինականացվել էր թուրքերի կողմից հայկական տարածքների բռնազավթումը: Նա նշեց, որ նման արտակարգ պայմաններում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը դավաճան կլիներ, եթե չվերցներ ղեկն իր ձեռքը. կոմկուսակցությունը և Խորհրդային Ռուսաստանը Հայաստան են եկել ոչ թե «տանջված ու հյուծված երկրի անկախությունը խլելու», այլ բոլոր ուժերով և միջոցներով

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 47:

[2] **Ց. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 108:

ապահովելու ժողովրդի անվտանգությունը[1]: Նա շեշտում էր, որ Ռուսաստանի զորամասերի՝ Հայաստանում գտնվելը ժամանակավոր է, և դրանք հանրապետությունից կհեռանան հենց այն ժամանակ, երբ կկազմակերպվի Հայաստանի երիտասարդ Կարմիր բանակը, «որը աշխատավոր մասսաների ֆիզիկական գոյության ապահովման միակ երաշխիքը կլինի»[2]:

Այնուհետև Օրջոնիկիձեն ափսոսանք էր հայտնում, որ Երևանից և Արարատյան դաշտից Զանգեզուրի ճանապարհն էին բռնել մեծ թվով աշխատավոր մարդիկ, հատկապես մտավորականներ:

«Հայ մտավորականությունը պետք է մնար իր ժողովրդի հետ,– ասում էր նա և շարունակում,– թող հայ մտավորականությունն ամոթով չմնա իր ժողովրդի առաջ ... Հայ մտավորականությունը տրեխավոր գյուղացու և աշխատավոր բանվորի զավակն է: Նա հանցավոր կլինի, եթե չգա ծառայելու նրա բանվորա-գյուղացիական իշխանությանը»[3]:

Ապրիլի 20-ին Ս. Օրջոնիկիձեն, Հայհեղկոմի ղեկավարները, 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերը, Վրաստանի հեղկոմի անդամ Էլիավան և ուրիշ նշանավոր բոլշևիկ գործիչներ այցելել են Երևանի կենտրոնական բանտ:

Երևանը բոլշևիկների կողմից ապրիլի 2-ին վերագրավվելուց հետո բանտերը երրորդ անգամ լցվել էին հայ մարդկանցով: Կալանքից ազատված կոմունիստների և նրանց համակիրների տեղերը այս անգամ բռնել էին դաշնակցականներն ու նրանց համակիրները, ապստամբության ակտիվ մասնակիցներ, որոնց թիվը հանրապետությունում հասնում էր 1000-ի: Անշուշտ, եթե չլիներ դեպի Զանգեզուր զանգվածային փախուստը, ապա այդ թիվն անհամեմատ մեծ կլիներ:

Չնայած տեղատարափ անձրևին՝ հազարավոր քաղաքացիներ հանրահավաքի էին եկել Կենտրոնական բանտից քիչ հեռու: Ելույթ ունեցան Օրջոնիկիձեն, Հեկկերը, Էլիավան, Կարինյանը և ուրիշներ: Միտինգից հետո Օրջոնիկիձեն և մյուս ղեկավարները մտել են բանտ և Հայաստանի հեղկոմի ներման դեկրետի համաձայն, անձամբ բացել բանտախցերի դռները և այնտեղից դուրս բերել ապստամբության մասնակից քաղաքական բոլոր բանտարկյալներին՝ առանց բացառության:

«Կոմունիստ» թերթը հաղորդում էր. «Ազատված բանտարկյալները բուռն ոգևորությամբ և ուռաներով դուրս եկան փողոց, ուր նրանց սպասում էր հազարավոր ժողովուրդ»[4]:

Հենց բանտի դռան առջև կայացավ մի նոր, մեծ միտինգ, որտեղ ճառով

---

[1] Տե՛ս «Կոմունիստ», 1921, 22 ապրիլի:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

կրկին հանդես եկավ Օրջոնիկիձեն: Մասնավորապես նա խիստ քննադատեց Սարգիս Կասյանի գլխավորած Հայաստանի բոլշևիկյան նախկին կառավարությանը, որը հաշվի չէր առել երկրի իրավիճակն ու առանձնահատկությունները, թույլ էր տվել կոպիտ սխալներ, կատարել էր անկիրթ, անօրինական քայլեր և դրանով իսկ նպաստել Փետրվարյան ապստամբության առաջացմանը: Միտինգն ընդունեց բանաձև, որն արտահայտում էր դրա մասնակիցների կամքը՝ ամեն կերպ աջակցել խորհրդային իշխանությանը, խաղաղ ստեղծագործ աշխատանքով ամրացնել նրա հիմքերը:

«Ազատվածներն ու ժողովուրդը իրար խառնված,– գրում էր «Կոմունիստը»,– ցնծության բուռն կոչերով փռվեցին ու ցրվեցին Երևանի փողոցներով ու տներով, ամեն տեղ բերելով ներման ու խաղաղության ուրախ լուրը»[1]:

Նույն օրը՝ ապրիլի 20-ին, Հայաստանի հեղկոմը Հայկոմկուսի կենտկոմի անդամների, Օրջոնիկիձեի և Էլիավայի մասնակցությամբ քննության առավ Հայաստանի բանակի՝ երկրի սահմաններից արտաքսված և Ռուսաստանի զանազան բանտերում ու ճամբարներում բռնափակված նախկին սպաների հարցը և ընդունեց հետևյալ որոշումը. «Հայկական բանակի բոլոր նախկին սպաներին ազատել լագերներից ու արգելման այլ վայրերից, լիակատար ազատություն տալ նրանց, իսկ նրանց Հայաստան վերադառնալու հարցը թողնել բաց, մինչև քաղաքացիական կռվի վերջը»[2]:

Հայհեղկոմի այդ որոշման մասին Թիֆլիսի միջոցով անմիջապես հաղորդում արվեց Մոսկվա: Երկու օր անց՝ ապրիլի 22- ին, Մոսկվայից տեղեկություն ստացվեց այն մասին, որ նախկին հայկական բանակի սպաներին, որոնք աքսորված էին Ռուսաստան, թույլատրված է վերադառնալ հայրենիք[3]:

Իհարկե, հասարակությանը հանգստացնելու նպատակով արված զանազան խոստումները, Հայհեղկոմի ներման դեկրետները և նույնիսկ Երևանում գտնվելու օրերին Ս. Օրջոնիկիձեի արած արտասովոր քայլերը ցույց էին տալիս, թե Փետրվարյան ապստամբությունն ինչպիսի սթափեցնող ազդեցություն է ունեցել բոլշևիկյան ղեկավարության վրա: Ձեռնարկած այդ արտասովոր միջոցառումները ուշացումով կամ արագ արձագանք էին գտնում Զանգեզուրի ճանապարհին գտնվող կամ արդեն տեղ հասած հատկապես փախստական շատ մտավորականների մոտ, բայց բոլշևիկների հանդեպ ունեցած վախն ու սարսափն այնքան զորավոր էին, որ նրանք գերադասում էին հնարավորինս հեռու փախչել:

Երևանը գրավելուց հետո 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունն իր զորքերի առջև դրեց երկու գլխավոր խնդիր՝ 1. կրնկակոխ հետա-

---

[1] «Կոմունիստ», 1921, 22 ապրիլի:

[2] Նույն տեղում, 24 ապրիլի:

[3] Տե՛ս նույն տեղում, 7 մայիսի:

պնդել Փրկության կոմիտեի նահանջող զորամասերին և վերականգնել խորհրդային իշխանությունը Վայոց ձորում, դիմադրության դեպքում դրանց հասցնել ջախջախիչ հարվածներ, 2. վճռական գործողություններով ճնշել Թևան Ստեփանյանի գլխավորած ապստամբությունը Ղարաբաղում:

Արդեն ապրիլի առաջին օրերին Ղարաբաղում տեղակայված Կարմիր բանակի զորամասերը, ադրբեջանական թուրքերի զինյալները և տեղի կոմունիստական զումարտակներն ու ջոկատները, Բաքվից ստանալով մեծաքանակ զենք ու ռազմամթերք, հարձակման անցան Թևանի ուժերի դեմ:

Թեև կռվող երկու կողմերի թվակազմերը համեմատության եզրեր չունեին, բայց Թևանի փոքրաթիվ ջոկատները շարունակում էին հարվածներ հասցնել հակառակորդին, որն իր ուժերը հիմնականում կենտրոնացրել էր Կարյագինոյի, Աղդամի և Լաչինի շրջաններում[1]: Բոլշևիկները փակել էին Ղարաբաղից Պարսկաստանի սահման տանող բոլոր ուղիները, ինչպես նաև ուժեղ հսկողության տակ էին առել Լաչինով և Կուբաթլիով Զանգեզուր անցնող ճանապարհները: Ըստ հրամանատարության մշակած պլանի՝ Թևանի ուժերը շրջապատման մեջ էին ընկնելու Դիզակում ու հարակից տարածքներում, ապա ձեռնարկվելու էին բոլոր միջոցները, որպեսզի նրանք չկարողանան դուրս գալ շրջապատումից և անցնել Զանգեզուր: Նժդեհի կողմից Դիզակի ապստամբներին օգնության ուղարկված ռազմարշավային զորամասի հրամանատար Տեր-Պետրոսյանը 1921 թ. ապրիլի 8-ի իր մի գրության մեջ նշում էր. «Ես նույնիսկ կասկածում եմ, որ մենք կարողանանք այստեղից ապահով դուրս գալ»: Իսկ ապրիլի 12-ի թվակիր գրությամբ նա տեղեկացնում էր. «Կամուրջը քանդված է, հաղորդակցությունը կտրված, կռիվները սկսված»:

Արցախի ապստամբ ուժերի դեմ ընդհանուր հարձակումը սկսվեց 1921 թ. ապրիլի 15-ի առավոտյան: Հակառակորդը որոշել էր նախ ոչնչացնել Զանգեզուրից եկած ռազմարշավային զորամասը, ապա ջախջախել Թևանի ուժերը, որոնք հիմնավորված էին Շաղախ, Աղջաքենդ, Թաղլար, Խծաբերդ գյուղերում: Կարմիր բանակի զորամասերը հաջողություն ունեցան և նույն օրվա երեկոյան գրավեցին Թևանի հիմնական ամրացված հենակետը՝ Մեծ Թաղլարը: Չնայած դրան՝ ապստամբները կռիվը շարունակում էին ուժերի գերագույն լարումով, նրանց համար անձնուրացության օրինակ էին Թևանը և Տեր-Պետրոսյանը:

Հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշման տակ ապստամբների հիմնական մասը ստիպված էր թողնել վերջին հենակետը՝ Խծաբերդ գյուղը, և Զանգեզուրից Դիզակ անցած քաջ հրամանատար Ամիրջանյանի ղեկավարությամբ մտնել Զաբուղ ապրիլի 18-ի գիշերը: Նրանք այստեղ ճեղքեցին կարմիրբանակայինների և մուսուլմանների ամրացրած գիծը և բացելով

[1] Տե՛ս **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 13:

ճանապարհը՝ անցան Գորիս[1] ու միացան Նժդեհի մարտիկներին: Իսկ Դիզակում մնացած ապստամբները ապաստան էին գտել լեռներում ու անտառներում՝ շարունակելով պայքարը:

Ղարաբաղում Թևանի ապստամբությունը ճնշելուց հետո արագացավ 11-րդ Կարմիր բանակի զորամասերի կենտրոնացումը Վայոց ձորում:

Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո բոլշևիկները, առանց հապաղելու, ձեռնամուխ եղան Հայաստանում խորհրդային կարգերի ամրապնդմանը:

1921 թ. Փետրվարյան ապստամբությանը դժվար է միանշանակ գնահատական տալը: Ընդհանուր առմամբ, ավելի ճիշտ՝ մեծ վերապահումներով, ապստամբությունը արդարացի էր, բարոյական, բայց արդյունքների տեսակետից՝ անցանկալի:

Ապստամբությունը հիմնականում երեք դրական հետևանք ունեցավ. 1. բանտերից ազատվեցին պետական, հասարակական, քաղաքական պատասխանատու նկատված բազմաթիվ գործիչներ, մտավորականներ, մարտական առաջնորդներ, ուսանողներ, որոնցից շատերին ՉԵԿԱ-ի կողմից սպասվում էին արյունալի հաշվեհարդարներ: 2. Աքսորից վերադարձավ հայկական բանակի սպաների մեծ մասը: 3. Թե՛ Մոսկվայում և թե՛ Երևանում բոլշևիկյան իշխանավորները դառը դաս առան. Խորհրդային Հայաստանի ոչ կոմունիստական տարրերի նկատմամբ սկսեցին վարել հանդուրժողական քաղաքականություն, դադարեցրին բռնագրավումները, մտավորականության նկատմամբ բացահայտ անվստահությունը փոխարինվեց սիրաշահմամբ ու հոգատարությամբ:

Ապստամբությունն ունեցավ նաև բացասական հետևանքներ. 1. առանց այն էլ ծայրահեղորեն քայքայված երկրում եղան նոր ավերածություններ: 2. Դաժան կռիվներին զոհ գնացին հայ ժողովրդի հազարավոր զավակներ՝ հիմնականում երիտասարդ տարիքում: 3. Երկրից հեռացավ տաղանդավոր, շնորհալի մտավորականությունը՝ իր հետ տանելով կուտակած գիտելիքների մեծ պաշար, որն այնքան անհրաժեշտ էր Հայաստանին: 4. Դեպի Զանգեզուր խուճապահար շտապող հազարավոր փախստականներ քայքայում առաջացրին Սյունիքի պաշտպանների շարքերում՝ իր ավերիչ հետևանքներով: 5. Ավելի քան 12 հազար արտագաղթողներ, անցնելով Պարսկաստան, այնտեղ կրեցին անասելի զրկանքներ ու տառապանքներ:

Իր դրական ու բացասական կողմերով հանդերձ՝ 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը հայ ժողովրդի նորագույն պատմության անջնջելի էջն է՝ հերոսական ու ողբերգական դրսևորումներով:

---

[1] Տե՛ս **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 15-16:

ԳՈՅԱՄԱՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԸ
ԳԱՂԹԻ ՏԱՌԱՊԱԼԻՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Նահանջը Աղբաշից ձգվեց դեպի Բաշ-Գառնի, այնուհետև Միլլիի ձորով դեպի Վայոց ձոր:

Անդրադառնալով Արարատյան դաշտից ապրիլի 2-ին սկսած գաղթի քաղաքական նշանակությանը՝ գաղթողների խմբում եղած նշանավոր սոցիալիստ-հեղափոխական (էսէռ) գործիչ, ՀՀ խորհրդարանի անդամ Վահան Մինախորյանը գրել է. «Ապրիլի 2-ի գաղթը ինքնաբերաբար առաջացած մի գաղափարական ակտ էր, որ «չէ» էր ասում հակառակորդին: Մի հրամայական կամարտահայտություն էր, մի հանրաքվե, իր մինչ այդ դիտած իրադարձություններից հանած մի վճիռ, քառասուն օրվա անդուլ պայքարով նվիրագործված վերջնական **վեթո,** մի «ինքնորոշում» և այն էլ ոչ սեղմ, այլ «ամենալայն», մինչև «անջատվելու իրավունքի» բոլոր նշաններով, մի բան, որ ամենից առաջ բարոյական ապտակ էր խորհրդային իշխանությանը»[1]:

Հարց է առաջանում՝ խորհրդային իշխանությանը «բարոյական ապտակ» տալու համար արժե՞ր արդյոք հազարավոր մարդկանց հանել տուն ու տեղից, գցել սար ու ձոր, նետել անիմաստ տառապանքների գիրկը: Մի՞թե միակ հնարավոր ելքը անիմաստ ու խելակորույս փախուստն էր Երևանից:

Ստեղծված իրադրության մեջ դեպի Զանգեզուր փախչող հազարավոր մարդիկ ի վիճակի չէին սթափ ու սառնասրտորեն մտածել այլ ելքի մասին: Եվ դա գլխավորապես այն պատճառով, որ խուճապային տրամադրություններն առավելապես բորբոքում էին Փրկության կոմիտեի որոշ ղեկավարներ՝ զանգվածներին սարսափեցնելով, թե «գալիս են բոլշևիկյան հրեշները, գալիս են կացիններով»:

Չնայած զանգվածներին համակած ընդհանուր խուճապին՝ այնուամենայնիվ նրանց մեջ կային ոչ քիչ թվով մարդիկ, որոնք կարծում էին, որ սխալ է բռնել Զանգեզուր տանող տանջալի ճանապարհը: Այդպես մտածողները քիչ չէին հենց Փրկության կոմիտեի ղեկավարների շրջանում:

Դաշնակցության ակտիվ գործիչներից մեկը՝ Հայաստանի խորհրդարանի անդամ Սիրակ Գրիգորյանը, այդ փախուստի առթիվ գրում էր. «Բաշ-Գառնիում հրավիրված էր տասը հազարից ավելի ժողովուրդ, բայց կառավարությունը դեռ իր համար չէր պարզել, թե այդ ահագին բազմությանն ու՞ր է տանելու: Մինչդեռ Լեռնահայաստանի բնակավայրեր հասնելու համար

---

[1] **Վ. Մինախորեան**, Վերադարձը, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 48:

պահանջվում էր անմարդաբնակ վայրերով կտրել օրերի ճանապարհ, հայտնի չէր նաև, թե ճանապարհի վրա ընկած գյուղերի սոված բնակիչներն ինչպե՞ս են այդ հսկա զանգվածը տեղավորելու Լեռնահայաստանում»[1]:

Քանի որ հիմնականում փախչում էին Հայաստանի մտավորականությունը և նրա գործուն տարրը, ուստի նախկին խորհրդարանականը հարց էր տալիս, թե այդ զանգվածի համար ով և որտեղ է համապատասխան աշխատանք գտնելու: Նա նաև հարց էր տալիս, թե Փրկության կոմիտեի ղեկավարները բարոյական իրավունք ունեին արդյոք Հայաստանը զրկելու իր աշխատավոր, ստեղծագործ ուժից:

«Թվում է, թե Բաշ-Գառնիում մեր ղեկավարները պիտի սթափվեին, բանակցություններ վարեին Երևան մտած բոլշևիկների հետ՝ գոնե ապստամբություն բարձրացնելու գործին չմասնակցած տարրերին իրենց հայրենի օջախը վերադարձնելու համար: Եթե կառավարությունը չխորշեց տաճիկների հետ բանակցություններ վարելուց,– շարունակում էր Ս. Գրիգորյանը,– եթե նա Կարսի ու Ալեքսանդրապոլի աղետից հետո քեմալականների հետ կարող էր բանակցել զանազան հարցերի շուրջ, ապա կարծում եմ, որ խորշելի չէր լինի Հայաստանում տիրող հեղափոխական մի կուսակցության հետ նույնպես որևէ լեզու գտնելը: Կարծեմ սա ավելի պատվաբեր կլիներ: Սակայն կառավարությունը գլուխը կորցրած, անկազմակերպ, անղեկ, առանց ծրագրի, այդ հսկա մասսան սոված, ծարավ ձգեց դեպի հեռուն, դեպի անորոշ տարածություններ»[2]:

Մինչև Վայոց ձոր գաղթականությունը շատ էր տագնապում հարձակումներից, ուստի Սմբատի, Սասունցի Մուշեղի և Մարտիրոսի կռվող ուժերը, որոնք գտնվում էին թիկունքում, քայլ առ քայլ հետևում էին Արարատյան Հայաստանից հեռացող հայությանը: Բոլորը մի պահ ազատ շունչ են քաշում Վայոց ձոր հասնելուց հետո:

Արարատյան դաշտը թողած զինվորների, մտավորականության, պետական ու հասարակական գործիչների **նահանջն արագորեն վերածվեց գաղթի:**

«Ոչինչ այնքան առատ յուղ է քսում թշնամու հացին,– գրել է Նժդեհը,– որքան գաղթը: Ոչինչ այնքան շուտ, այնքան հեշտ է բարոյալքում և կազմալուծում զորքը, որքան գաղթը, գաղթականությունը: **Ոչ մի նյութական անհաջողություն և ոչ մի կորուստ, լինի դա հողային թե մարդկային, այնքան արագ չէ խախտում զորքերի բարոյական հավասարակշռությունը, ինչպես գաղթականությունը, գաղթը:** Այդ տխուր և անփառունակ գործողությունն է հարվածում կռվողների արիությանը, մարում նրանց մեջ ռազմական բոցը, խռովություն և շփոթ մտցնում նրանց հոգիների, նրանց շարքերի մեջ»[3]:

Գաղթողների կազմը բազմազան էր՝ առևտրականներ ու արհեստավոր-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 58:

[2] Նույն տեղում, թ. 59:

[3] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 10 (34), էջ 135:

ներ՝ իրենց ընտանիքներով կամ առանց ընտանիքների, գյուղացիներ, որոնք ակնհայտ համակրանք էին ցույց տվել ապստամբներին կամ ուղղակի աջակցել նրանց: Հատկապես մեծ թիվ էին կազմում մտավորականները, որոնք փրկվելու համար օր առաջ ձգտում էին ոտք դնել ազատ Սյունիքի հողին:

«Հերոսական Սյունիքը,– գրել է Նժդեհը,– որպես հեքիաթային տիտան, իր մի բազուկը պահեց իր լեռների վրա՝ թշնամու դեմ, իսկ մյուսը նախախնամաբար երկարեց Արաքսի վրա, որ Արարատյան դաշտեն պոկված բազմահազար մտավոր և մարտական ընտրանին անվնաս ու անաղետ անցնի Պարսկաստան»[1]:

Հայոց լեռնաշխարհի ամենատհաճ ժամանակն էր. լեռների վրա՝ ձյուն, սոսկալի ցուրտ, իսկ ձորերում՝ մեգ, մառախուղ, անձրև, ցեխ: Տեղ-տեղ հալած ձյունը, կիսահալ սառույցը և լճացած ջուրը ուղղակի անհնարին էին դարձնում շարժվելը:

Սարսափահար բազմությունը խճողել էր Զանգեզուր տանող բոլոր արահետներն ու դրանց հարող շրջակա տարածքները: Ճանապարհներ, որպես այդպիսին, չկային, միայն լեռնային կածաններ էին, որոնք ձգվում էին դեպի բարձրաբերձ լեռների կատարները կամ իջնում անդնդախոր ձորերն ու ափաչափ հովիտները: Շատ քչերը ձի կամ գրաստ ունեին, բայց դրանց մեծ մասը մնացել էր ճանապարհին՝ կեր չլինելու և հյուծվածության պատճառով: Բոլորը գնում էին ոտքով՝ մի կտոր հաց կամ մի ձեռք սպիտակեղեն մեջքներին կապած, թրջված, ցեխաթաթախ, գնում էին փրկելու իրենց կյանքը[2]:

Հազարավոր մարդիկ անտերության էին մատնված. չկար իշխանություն, չկար բազմությանը կազմակերպող ուժ, չկային տարրական խնամք ու հոգածություն:

Սովահար ու տանջահար բազմությունն անցնում էր այն շրջաններով, որոնք ընդհանրապես աղքատ էին, չունեին իրենց սեփական հացը և բնականոն ժամանակներում իսկ իրենց պաշարը ստանում էին դրսից:

Դեպի Զանգեզուր շտապող Փրկության կոմիտեի անդամներից Հակոբ Տեր-Հակոբյանը գրել է. «Եթե ավելացնենք այն, որ տարիներ շարունակ պատերազմի ծանրությունն իրենց ուսերին կրելով, այլև հաճախ կռվի թատերաբեմ լինելով, այդ շրջանները հնարավորություն չէին ունեցել իրենց սովորական ցանքի գեթ նվազագույնը ցանելու: Եվ հիմա այդ քաղցած ու տնտեսապես քայքայված ժողովուրդը պիտի ընդուներ ու կերակրեր 10 հազարի չափ մի բազմություն, որ մորեխի պես թափվել էր իր վրա»[3]:

Վայոց ձոր մտած գաղթականությունը իսկական չարիք էր այն վայրերի համար, որտեղով անցնում էր, բայց հատկապես անուղղելի էր նրա թողած

---

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 8:

[2] Տե՛ս **Ց. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 114:

[3] Նույն տեղում:

ավերիչ ազդեցությունը տեղի բնակչության և տեղական զինվորների բարոյակամային վիճակի վրա:

Վայոց ձորի ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը 1921 թ. ապրիլի 17-ին Գնդեվազ գյուղից Նժդեհին գրած նամակում տագնապ էր հայտնում բնակչության վրա երևանյան գաղթականության, մտավորականության և զորքի կազմալուծիչ հետևանքների կապակցությամբ[1]: Նա հատկապես շեշտում էր երևանյան զորամասերի թողած ավերիչ ազդեցությունը:

Նժդեհը լիովին համամիտ էր այս և նման գնահատականներին: Այդ զորամասերի անկառավարելի լինելու փաստին անդրադառնալով՝ նա գրել է. **«Զորամասերը չեն գաղթում, այլ նահանջում են ռազմագիտորեն: Իսկ նահանջել՝ նշանակում է տեղի տալ կռվով, աստիճանաբար, կազմակերպված ձևով, խուսափելով տնաքանդ խուճապից և բարոյալքումից, որոնք, գիտենք, հաճախ ամբողջ բանակներ ու երկրներ են կործանել:** Սակայն, Երևանի անկումը պսակվել էր մերոնց համար ոչ թե ռազմագիտական նահանջով, այլ սովորական խուճապով և գաղթով»[2]:

Դեպի Զանգեզուր գաղթի կործանարար հետևանքների մասին այսպես է արտահայտվել Հովհաննես Քաջազնունին. «Ապստամբների, կուսակցականների և մարտիկների հետ էր նաև մի ահագին ամբոխ-հազարներով ու հազարներով ահաբեկված մարդիկ, որոնք հաշիվ չէին տալիս իրենց, թե ու՞ր են գնում և ինչի՞ համար գնում: Անխուսափելի պարտությունը կատարված փաստ էր արդեն: Այն, ինչ որ տեղի ունեցավ հետագա երկու-երեք ամիսների ընթացքում Դարալագյազի և Զանգեզուրի մեջ, պայքար չէր այլևս, այլ հոգեվարք... Հաշվի չէինք առել, որ պարտված, կազմալուծված և նահանջի ճամփան բռնած խմբերը և մանավանդ սարսափահար ամբոխը կարող են առաջ բերել միայն լքում և հուսահատություն: Ակամայից շփոթ էինք մտցրել տեղական կյանքի մեջ: Ծագել էր մի խուլ հակառակություն եկվոր և տեղական իշխանությունների միջև»[3]:

1921 թ. ապրիլի 10-ին Հայաստանի հեղկոմն ընդունեց ներման մասին դեկրետ, որը ստորագրել էին Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը, անդամներ՝ Ավիսը, Ի. Դովլաթյանը և Ա. Մռավյանը: Դեկրետում ասված էր.

«Խաղաղ աշխատավորական կյանքի բարեկարգման, դաշնակցականների ավերած երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և ծաղկող սոցիալիստական հայրենիք ստեղծելու համար անհրաժեշտ է, որ բոլորը նվիրվեն շինարար ստեղծագործ աշխատանքի:

Խորհրդային Հայաստանի հեղափոխական կոմիտեն այս շինարար աշխատանքին լծվելու հրավիրում է ոչ միայն նրանց, որոնք կռվել են հեղափո-

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք ամսագիր», 1925, օգոստոս, թիվ 10 (34), էջ 136:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 137:

խության հաղթանակի համար, այլև նրանց, ովքեր նետվել էին նրա դեմ մղվող ակտիվ կռվի մեջ: ՀՍԽՀ Ռազմահեղափոխական կոմիտեն, իբրև երկրի աշխատավոր մասսաների կառավարություն, չի կարող լինել ոխակալ, չի կարող ղեկավարվել վրեժի զգացումով: ...Նա անողոք է այն խմբակի նկատմամբ, որ ստիպեց քաղաքականապես դիմազուրկ և փոքրոգի ինտելիգենցիային ծառայել հակահեղափոխական կառավարության և պաշտպանել նրան: Բայց նա, բանվորագյուղացիական կառավարությունը, մեծահոգի է դեպի այն բոլոր մոլորյալները, բոլոր նրանց, որոնք ենթարկվել են հանցավոր ագիտացիայի, վախի ու փոքրոգության»[1]:

Դրա հետ միասին դեկրետում շեշտվում էր, որ Հայաստանի խորհրդային իշխանությունը լինելու է անողոք այն «փոքր խմբակի» նկատմամբ, որը, կազմակերպելով Փետրվարյան ապստամբությունը, ժողովրդին նետել է նոր արհավիրքների մեջ:

Ներումն ազդարարվում էր հիմնական երկու կետով:

«1. Ի նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, սրանով հայտարարվում է բոլոր գյուղացիներին, տաճկահայ գաղթականներին, աշխատավոր ինտելիգենցիային, որոնք այս կամ այն ձևով մասնակցել և մասնակցում են հակահեղափոխության շարժման – լինի դա դաշնակցական զինված ուժերի շարքերում կամ դաշնակցական պետական կամ հասարակական հիմնարկություններում, անկախ նրանց համոզմունքից կամ գործունեության դրդումներից-կառավարությունը լիակատար մոռացության է տալիս Հայաստանի բանվորների և գյուղացիների հանդեպ նրանց կատարած հանցանքը, հակահեղափոխական շարժման մեջ մասնակցելու համար: Նրանք բոլորը՝ գյուղացիները, գաղթականները և աշխատավոր ինտելիգենցիան կանչվում են աշխատանքի:

2. Սույն ներումը չի տարածվում հակահեղափոխության գիտակցական և հանցագործ ղեկավարների՝ այսպես կոչված Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների, արտակարգ հանձնաժողովի կոլեգիայի, բարձր հրամանատարական կազմի և խմբապետերի վրա»[2]:

Ներման դեկրետի առթիվ «Կոմունիստ» պաշտոնաթերթը գրում էր, որ «սովն ու ավերածությունն այսօր հրեշի նման բազմել են մեր քաղաքներում ու գյուղերում», և դրա դեմ պայքարի միայն մի միջոց կա՝ «դիմել իսկույն նեթ շինարար աշխատանքի»: Թերթը կոչ էր անում. «Հեռու քշել գլխից այն բոլոր դժոխային սարսափները, որ տարածել են դաշնակցականները կոմունիստների ու Կարմիր բանակի մասին: ... Այսօր արդեն ամեն մի աշխատավոր, ամեն մի քաղաքացի իր աչքով պիտի տեսնի, որ կոմունիստներն ու Կարմիր

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 14:

[2] Նույն տեղում:

բանակը ոչ թուրք են, ոչ էլ կացիններով զինված ծեր ու ջահել կոտորող հրեշներ: Կոմունիստներն ու կարմիր զինվորները նույն հայ աշխատավորներն են, որոնք մի փափագ ունեն միայն՝ որ մեր երկիրը էլի չքանդվի, և ժողովուրդը մինչև վերջին մարդը գաղթական չդառնա: ... Խորհրդային իշխանությունը ոչ մի աշխատավորից վրեժ չի ուզում հանել: Սրտի խոր ցավով թեքում է նա իր գլուխը խաբված անմեղ զոհերի առաջ և կենդանի մնացածներին հրավիրում է դեպի գործ, դեպի աշխատանք»[1]:

Հավանաբար դեկրետի երկրորդ կետը առիթ էր դարձել լուրջ տարաձայնությունների Խորհրդային Հայաստանի կառավարության մեջ: Հատկանշական է, որ «Կոմունիստ» թերթն այդ օրերին, մի քանի անգամ հանդես գալով դեկրետի պարզաբանմանը նվիրված հոդվածներով, միայն հարևանցիորեն էր անդրադառնում այդ կետին կամ ընդհանրապես չէր անդրադառնում: Հետևապես ներման դեկրետը սպասած արդյունքը չտվեց, և բոլշևիկներից սարսափահար փախչողներից ոչ ոք հետ չդարձավ Երևան: Բայց դեկրետից տեղյակ նեղ շրջանակի՝ երևանյան զորքի բարձրաստիճան սպայության և արևմտահայ զորագնդերի հրամանատարների շարքերում տատանումներ սկսեցին՝ հավատա՞լ դեկրետին ու վերադառնալ, թե՞ ոչ: Ի վերջո հաղթեց չվերադառնալու որոշումը: Հատկապես տաճկահայ հրամանատարները, չցանկանալով վերադառնալ Խորհրդային Հայաստան, ոչ մի ցանկություն չունեին նույնիսկ կարճ ժամանակով մնալու Զանգեզուրում, մասնակցելու Կարմիր բանակի զորքերի դեմ կռիվներին: Ընդհակառակը, նրանք աշխատում էին իրենց զորագնդերի հետ ժամ առաջ թողնել Լեռնահայաստանը և անցնել Պարսկաստան:

Առաջիններից մեկը, որ հեռացավ Սյունիքից, հայ ժողովրդի ազատագրական շարժման խոշոր գործիչ Սմբատն էր՝ իր ավելի քան 1500 զինյալներով: Գորիս հասնելուն պես Սմբատին հանդիպել են Լեռնահայաստանի կառավարության անդամները և նրան համոզել, որ մնա Զանգեզուրում: Բոլոր փորձերն ապարդյուն են անցել, և Սմբատն իր զորքով շարժվել է դեպի Արաքսի ափը[2]:

Չնայած դեկրետի հրատարակմանը և տարածմանը՝ սարսափի մատնված հազարավոր մարդիկ, խուճապով մտնելով Վայոց ձոր, առանց կանգ առնելու շարունակել էին իրենց փախուստը: Կանգ չառան նաև զինվորներն ու սպաները, որոնք բարոյականության օրենքով պարտավոր էին միանալ Վայոց ձորում գտնվող զանգեզուրյան զորամասերին և միասնական ուժերով ապահովել քաղաքացիների անվտանգ գաղթը:

Նժդեհը գրել է, որ գաղթողներից ամեն մեկն «իր համար գլուխը վերցրած առաջ էր փախչում՝ առանց հետ նայելու»: Գաղթողների հեղեղը «ողողել էր

---

[1] «Կոմունիստ», 1921, 10 ապրիլի:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 19 հունիսի:

Դարալագյազի և Սիսիանի ճանապարհին ընկած համարյա բոլոր գյուղերը»[1]:

Փրկության կոմիտեն ի վիճակի չէր ղեկավարելու գաղթը, ընթացք տալու և կանոնավորելու նրա հոսքը, որևէ չափով թեթևացնելու գաղթականների տառապանքը: Գաղթականները չգիտեին, որ Երևանից մինչև Արաքս գետի պարսկական ափը ոտքով գնալու են ամբողջ մեկ ու կես ամիս, նաև չէին պատկերացնում, որ սովից չմեռնելու համար ստիպված էին լինելու ճանապարհին մորթոտել իրենց հետ տարած բոլոր անասունները, այդ թվում՝ մի քանի հարյուր ընտիր ձի[2]:

Գաղթող դաշնակցական գործիչներից մեկը մի քանի ամիս հետո գրելու էր. «Այդ գաղթի ժամանակ երևաց, որ մեր ղեկավարներն իրենց բարձրության վրա չեն: Նոքա իրենց և իրենց ընտանիքների ու մերձավորների համար ստեղծել էին հարմարություններ, միաժամանակ բառի բուն նշանակությամբ լքել էին կուսակցական ու պետական գործիչներին, մտավորականներին, չխոսելով արդեն հասարակ մարդկանց մասին, լքել էին բոլորին, թողնելով իրենց բախտին: Երբեք չի մոռացվի ոտքով գնացող [Նիկոլ] Աղբալյանի, Շաթիրյանի և ուրիշ ավելի տարիքավոր ու ֆիզիկականով թույլ գործիչների ետ մնալը անմարդաբնակ վայրերում, իսկ զանազան խմբապետեր, զինվորներ, սպեկուլյանտ առևտրականներ, պետական ձիերի վրա նստած, անցնում էին հայ ժողովրդի վաստակավոր աշխատավորների և նրանց ընտանիքների շարքերի միջով զինված ու հպարտ՝ շրջապատված իրենց թիկնապահներով ու ծառայողներով: Այդ երևույթն ավելի տանջալից էր դարձնում մեր իսկական ընկերների հոգեկան հիասթափումը»[3]:

Ապրիլի 11-ին Ս. Վրացյանը Նժդեհին գրում էր. «Կարծեմ լավագույն կլինի նշանակել Կուռոյին քեզ օգնական և Արևմտյան ճակատի հրամանատար»: Թեև Նժդեհը առանձնապես բարձր կարծիք չուներ ապստամբ զորքերի ընդհանուր հրամանատար Կուռոյի մասին, բայց, իբրև կուսակցական, ենթարկվելով կարգապահությանը, կատարում է Վրացյանի առաջարկը և Կուռոյին նշանակում օգնական և Արևմտյան ճակատի հրամանատար՝ մտածելով, թե Երևանից եկած զինվորությունը հանգստանալուց և ապաքինվելուց հետո իր հրամանատարի գլխավորությամբ ունակ կլինի գոնե քիչ ու շատ, գոնե իր շահերից ելնելով, կատարելու այս կամ այն ռազմական խնդիրը[4]:

Վայոց ձոր հասած Փրկության կոմիտեի անդամները և պատասխանատու ուրիշ գործիչներ ապրիլի 11-ին Ղոյթուր գյուղում հավաքվեցին խորհրդակցության: Մասնակցում էին Սիմոն Վրացյանը, Արաքսի ափից եկած Ռուբեն Տեր-Մինասյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, Սերգեյ Մելիք-

---

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 332:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 1 հուլիսի:

[3] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 58-59:

[4] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 333:

Յոլչյանը, Ա. Մաքսապետյանը, Հայկակ Կոսոյանը և Վասպուրականի Զինվորական մարմնի մյուս անդամները: Ղոյթուր էր եկել և խորհրդակցությանը մասնակցում էր նաև Դարալագյազի (Վայոց ձոր) ընդհանուր հրամանատար Յապոնը (Հովհաննես Պարոնյան):

Խորհրդակցությունում Ռուբենը և Յապոնը հայտարարեցին, որ Վայոց ձորը և Զանգեզուրը լի են վճռականությամբ՝ մի մարդու պես կռվելու բոլշևիկյան ուժերի դեմ: Բաժանելով այդ տեսակետը՝ Փրկության կոմիտեի անդամներից ոմանք ասացին, որ իրենց ուժերով օգնելու են վայոցձորցիներին ու զանգեզուրցիներին, իսկ այն նահանջող զորամասերը, որոնք չէին ցանկանում կռվել, դեպի Զանգեզուր կարող էին շարժվել միայն Վայոց ձորում զինաթափվելուց և զենքերը կռվել ցանկացող ուժերին հանձնելուց հետո[1]:

Այդ տեսակետը ժողովականներից շատերի մոտ առաջ բերեց մեծ հուզում, վեճը երկարեց և անախորժ ձևեր ընդունեց: Ի վերջո, Ռուբենի առաջարկով որոշվեց, որ կռվել չցանկացող զորամասերը զինաթափելու հարկ չկա:

Խորհրդակցության ընթացքում Յապոնը խիստ դժգոհություն հայտնեց Վայոց ձորում գաղթականության ներկայությունից, որը հուսալքում էր առաջ բերում տեղի ժողովրդի մեջ: Ելնելով դրանից՝ նա առաջարկում էր գաղթականությանը թույլ չտալ անցնել Զանգեզուր, որտեղ նա կունենար ավելի քայքայիչ դեր: Յապոնի տեսակետը պաշտպանում էր Ռուբենը[2]: Բայց անհնար էր կանգնեցնել բազմահազար գաղթականության հեղեղը. ոչ ոք չէր կարող պատնեշ դնել նրա շարժման առջև:

Հաջորդ օրը՝ ապրիլի 12-ին, պատասխանատու գործիչների մասնակցությամբ նորից խորհրդակցության հավաքվեց Փրկության կոմիտեն, բայց այս անգամ Քեշիշքենդում: Ժողովին մասնակցում էին Ս. Վրացյանը, Հ. Քաջազնունին, Հ. Օհանջանյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Վ. Մինախորյանը, Հ. Տերտերյանը, Ա. Խոնդկարյանը և ուրիշներ: Խորհրդակցության մասնակիցները նշում էին, որ գաղթականությունն անկազմակերպ ու տարերային թափով շարունակում է առաջանալ դեպի Զանգեզուր և չգիտի, թե առջևում ինչ է սպասում իրեն: Պարզ չէր նաև, թե Զանգեզուրի իշխանությունը և մասնավորապես Գ. Նժդեհը ինչ դիրք էին բռնելու Փրկության կոմիտեի նկատմամբ: Մանավանդ արդեն կար տհաճ նախադեպը. դեռ Փետրվարյան ապստամբությունից առաջ հեռանալով Զանգեզուր՝ Ռուբեն Տեր- Մինասյանը փորձել էր համագործակցել Նժդեհի հետ, բայց վերջինս ընդառաջ չէր գնացել, որի հետևանքով Ռուբենը, ըստ Ս. Վրացյանի, «քաշվել էր Մեղրի գյուղը, Արաքսի ափը և այնտեղ նստած դիտում էր Զանգեզուրում կատարվող դեպքերը»[3]: Որոշվեց.

1. Կռիվը բոլշևիկների դեմ շարունակվում է,

---

[1] Տե՛ս **Ե. Սարգսեան**, Փետրուարեան յեղաշրջման օրերից (յուշեր եւ ապրումներ), Գ մաս, «Հայրենիք», 1960, ապրիլ, թիվ 4 (410), էջ 90:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 138:

2. Հայաստանի Փրկության կոմիտեն թեև գտնվում էր իր սեփական հողի վրա, այնուամենայնիվ գործուն մասնակցություն չէր ունենալու երկրի (Զանգեզուրի) կառավարման մեջ, այլ միայն գործակցելու էր տեղական իշխանության հետ՝ իր զինվորական ու քաղաքական ուժերը տրամադրելով նրան[1]:

Այս վերջին հարցը որոշակիացնելու համար անհրաժեշտ էր, որ Փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանն առանց ուշացնելու հանդիպի Գ. Նժդեհի հետ: Ուստի վերջինիս տեղեկացրին, որ Ս. Վրացյանի հետ տեսակցելու համար Գորիսից գա Գնդեվազ կամ Բազարչայ[2]:

Որոշում ընդունվեց նաև չլուծարել Հայրենիքի փրկության կոմիտեն այնքան ժամանակ, մինչև որ Գորիսի իշխանությունների հետ համաձայնություն կկայացվի Հայաստանի նոր կառավարություն ստեղծելու մասին[3]:

Վերջապես, անհրաժեշտ համարվեց, որպեսզի Փրկության կոմիտեի բոլոր անդամները առաջ շարժվեն դեպի Զանգեզուր՝ բացի Հակոբ Տեր-Հակոբյանից և Եփրեմ Սարգսյանից, որոնք մնալու էին Վայոց ձորում՝ հացահատիկի գնում կազմակերպելու համար: Ասենք, որ այդ ուղղությամբ նրանց սկսած գործը խոստումնալից էր, բայց դեպքերի արագ զարգացման պատճառով կիսատ մնաց:

Հակառակ ապրիլի 12-ի խորհրդակցության որոշման՝ արդեն անհնարին էր դառնում Փրկության կոմիտեի գործունեությունը, քանի որ հենց կոմիտեի անդամներից ոմանք ավելորդ էին համարում նրա գոյությունը: Ուստի Ս. Վրացյանը և Հովհ. Քաջազնունին որոշեցին Քեշիշքենդից անմիջապես մեկնել Զանգեզուր՝ Նժդեհի հետ տեսակցելու և գործակցության ձևերի մասին համաձայնության գալու համար: Անցնելով Մալիշկան, Գնդեվազը և Բազարչայը՝ Վրացյանն ու Քաջազնունին Նժդեհին գտան Ղարաքիլիսա գյուղում:

Վրացյանը գրել է. «Նժդեհի հետ ես երբեք մտերիմ չեմ եղել, բայց և չեմ արհամարհել նրան: Նա էլ հարգանքով էր վերաբերվում դեպի ինձ: Այս անգամ ջերմ համբույրներով հանդիպեցինք իրար: Նույն Նժդեհն էր՝ բուլղարական սպայի թիկնոցը ձգած տաք հագուստի վրա, բուլղարական ձևի գլխարկը գլխին, մի քիչ ավելի ծերացած, նժդեհական վառվռուն աչքերով ու նժդեհական խոսելաձևով...»[4]:

Վրացյանն ականատես դարձավ, թե Զանգեզուրի ժողովուրդն ինչպիսի մեծագույն սիրով ու նվիրվածությամբ էր տոգորված իր խելացի ու անձնազոհ ղեկավարի հանդեպ:

---

[1] Տե՛ս **Ե. Սարգսեան**, Փետրուարեան յեղաշրջման օրերից, (յուշեր եւ ապրումներ), Գ մաս, «Հայրենիք», 1960, ապրիլ, թիվ 4 (410), էջ 90:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կյանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 139:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 140:

«Նա կարողացել էր ձեռք բերել լայն ժողովրդականություն, կապել իր հետ ժողովրդի համակրանքը և կազմակերպել շրջանի մարտական ուժերը: Նա անընդհատ պտտում էր գյուղից գյուղ և, շնորհիվ իր աչքի ընկնող եռանդի, կազմակերպչական շնորհքի և խոսքի ազդեցության, կարողանում էր բնակչությանը ոգևորել և բարձր պահել նրա դիմադրական ոգին»[1]:

Կարծես շարունակելով Ս. Վրացյանի միտքը՝ Աշոտ Արծրունին հետագայում վերհիշել է. «Ուր ալ որ եղա Զանգեզուրում, նշմարեցի ընդհանուր մի երեւոյթ՝ ժողովուրդը կը պաշտէր իր Սպարապետը: Որ գիւղն ալ որ մտնէիր, խօսակցութեան գլխավոր նիւթը Սպարապետն էր: ... Նժդեհը ոչ միայն բացարձակ հեղինակութիւն մըն էր ժողովրդեան խավերուն համար, այլ եւ սիրուած էր բոլորին կողմէ անխտիր: Այն տպաւորութիւնն կը ստանայիր, թե Լեռնահայաստանի ժողովրդի միակ յոյսն ու ապաւենը իր Սպարապետն էր, Խուստուփի արծիվը:

Եվ իրականին մեջ Նժդեհ ամեն ինչ էր եւ ամեն տէր: Ան օր ու գիշեր կը չափչփէր հարթ ճանապարհներէ զուրկ այդ երկրամասը, որ վայրէջքի եւ վերելքի աշխարհ մըն է: Յաճախ ձիուն վրայ նստած կը քնանար: Տեղ մը սահմանային դիրքերը կը քննէր, ուրիշ տեղ մը մարտական վաշտերը կը ստուգէր, պահեստները աչքե կ՚անցկացնէր, վեճեր կը լուծէր եւ նորանոր կարգադրություններ կ՚ընէր: Անոր խօսքը օրենք էր եւ վճիռը անբեկանելի: Ոչ թե տիկտատորի մը բռնի պարտադրանք, այլ որպէս հետեւանք այն վստահութեան, որ ժողովուրդն ունէր իր Սպարապետի նկատմամբ»[2]:

Հենց այդ անսահման վստահությունն էր, որ մինչև 1921 թ. ապրիլ ամիսն ամուր էր պահել լեռնաշխարհի զինյալների պայքարի կամքն ու դիմադրական ոգին: Բայց հենց Նժդեհի աչքերի առջև այդ ոգին արդեն սկսել էր աստիճանաբար թուլանալ, և դրա եթե ոչ միակ, ապա գլխավոր պատճառը արարատյան գաղթականության քայքայիչ ազդեցությունն էր: Երևանից և Արարատյան դաշտից խուճապահար փախուստն իր հերթին կատարյալ քայքայման ենթարկեց Վայոց ձորում գտնվող թվով փոքր զանգեզուրյան զորամասերը, որոնք ստիպված էին բնազդաբար ետ քաշվել: Թողնելով Վայոց ձորը՝ զորամասերն ամրացան այդ գավառի մի փոքր տարածքում՝ Գնդեվազ գյուղում և հարակից հողամասերում:

Ռազմական անհաջողությունների այդ օրերին Վայոց ձորում տեղի էր ունենում հերթական ողբերգություններից մեկը:

Երևանի բանտերից դուրս բերված 63 պատանդները, որոնց նահանջողները տանում էին իրենց հետ, ճանապարհին ենթարկվում էին բազում տանջանքների: Ութ օր տևեց պատանդներին Բաշ-Գառնիից Քեշիշքենդ բերելը: Ճանապարհի տարբեր հատվածներում գերվածներին շրջապատած միլի-

---

[1] **Ս. Վրացեան**, Կյանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 151-152:

[2] «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 449:

ցիոներները և վասպուրականցի զինվորները սպանեցին նրանցից մի քանիսին: Զոհ գնաց Հայաստանի կոմերիտականների ղեկավար Արմենակ Բուդաղյանը: Սպանվեցին նաև Աճեմովը, բանվոր Տաճատ Թաղիանոսյանը, Օհանես Նավասարդյանը, Հայրապետյանը, Տեր-Հարությունյանը, զինվորական կոմիսար Նիկոլայ Օլթեցյանը, վաշտի հրամանատար Ռուբեն Պողոսյանը: Քեշիշքենդում կոմունիստ պատանդների խմբին միացրին 40 հոգանոց մեկ այլ խումբ՝ հիմնականում բաղկացած Դարալագյազի գյուղական հեղկոմների նախագահներից ու անդամներից:

Գարեգին Նժդեհի պահանջով Փրկության կոմիտեն Բաշքենդում պատանդներին հանձնեց Լեռնահայաստանի զինվորական իշխանություններին: Քեշիշքենդում Լեռնահայաստանի զինվորական հատուկ հանձնախումբը որոշեց բոլոր ձերբակալվածներին տանել Գնդեվազ գյուղ, իսկ այնտեղից՝ Զանգեզուր[1]:

Պատանդներին ապրիլի 13-ին բերեցին Գնդեվազ, բայց Լեռնահայաստանի զինվորական իշխանությունները, խախտելով իրենց զինվորական հատուկ հանձնախմբի որոշումը, կարգադրեցին գնդակահարել նրանցից 12-ին: Նրանց թվում էին Կոլյա Տեր-Գաբրիելյանը, Զուրաբյանը, Նալչաջյանը, Կորխմազյանը, աշտարակցի Գևորգյանը: Մեկ օր հետո բանտարկյալները Բազարչայ գյուղում էին, որտեղ նրանց միացրին Քեշիշքենդում Յապոնի կողմից գերված 100 ռուս կարմիրբանակայինների և բոլորին տարան Անգեղակոթ ու նետեցին գոմերից մեկը: Տեղի միլիցիոներները, նույն գյուղի խմբապետ Ծերունի կարգադրությամբ, գիշերը դուրս բերեցին 16 բանտարկյալի և գնդակահարեցին գյուղի մերձակա մի ձորակում: Դրանց թվում էին Անտոն Անտոնյանը, Մուրադյանը, Սարոյանը, Միկիչյանը, ջրվեժցի Վարդանը, Արփա գյուղից հինգ մարդ:

Երբ պատանդների խումբը հասավ Ղարաքիլիսա, այստեղ էր Նժդեհը, որը և կարգադրեց Տաթև տանելուն պես նրանց բոլորին գնդակահարել: Ապրիլի 19-ին պատանդները Լծեն գյուղում էին, որտեղ նրանցից գնդակահարվեց 17 մարդ (Մալխասյան, Ավշարյան և ուրիշներ): Լծենից Տաթև ընկած ճանապարհին սպանվեցին ևս տասնյակ պատանդներ, այնպես որ Տաթև հասան Լեռնահայաստանում գերված կարմիրբանակայիններից 80 հոգի և մոտ 30 հայ կոմունիստ ու կոմերիտական: Հետևյալ օրը՝ ապրիլի 21-ին, Տաթևում գնդակահարվեցին բոլոր ռուս կարմիրբանակայինները: Հայ պատանդների խմբին միացրին ձերբակալված տեղի բոլշևիկներից 7 մարդու և կարճատև հարցաքննությունից հետո բոլորին գնդակահարեցին: Նրանց թվում էին կոմունիստներ Պ. Մկրտչյանը, Ա. Անտոնյանը, Մ. Զոհրաբյանը,

[1] Տե՛ս «Կոմունիստ», (Երևան), 1921, 28 ապրիլի:

Խ. Խաչյանը, Հ. Մուրադյանը, Մ. Տեր-Գևորգյանը, Ա. Սարուխանյանը, Ռ. Պողոսյանը և ուրիշներ[1]:

Բաշ-Գառնիից Տաթև ողջ անցուդարձի ընթացքում հրաշքով փրկվեցին միայն մի քանիսը՝ Գևորգյանը, Սեկոյանը, Խուտգարյանը, ջրվեժցի Լևոնը և ինչ-որ մեկը, որի անունը պարզել չհաջողվեց:

Անպաշտպան հայ մարդկանց նկատմամբ նմանօրինակ դաժան հաշվեհարդարները դեռ այն օրերին բուռն բողոքներ առաջ բերեցին դաշնակցական ոչ միայն շարքային, այլև ղեկավար շատ գործիչների մոտ, որոնք դատապարտում էին ավելորդ դաժանությունները, դրանք համարում անհարիր դաշնակցականի ազգային նկարագրին, քաղաքական համոզմունքներին ու բարոյականությանը:

Այս առթիվ Ս. Վրացյանը «Հայրենիք» ամսագրի 1923 թ. թիվ 3-ում «Հայաստանի Հանրապետության պատմությունից» հոդվածում գրել էր հետևյալը. «Մեր Զանգեզուրի ապստամբության պատմության մեջ մի սև էջ կա, այն է՝ 60 բոլշևիկ պատանդների գնդակահարությունը, որ կատարվել է զինվորական իշխանությունների կարգադրությամբ և Արտակարգ հանձնախմբի նախագահի անփութության պատճառով: Այս դեպքը, որի մեջ, սակայն, մեզ չի կարելի մեղադրել, մեծ վիշտ պատճառեց մեզ*, որովհետև դա հակասում էր թե մեր գործունեության և թե մեր քաղաքական դավանանքներին: Հանցավորները հանձնվեցին դատի, սակայն սխալը ուղղել, իհարկե, անկարելի էր»[2]:

Ի պատասխան իր նկատմամբ Ս. Վրացյանի կողմից հարուցած մեղադրանքի՝ Փրկության կոմիտեի Արտակարգ հանձնախմբի (Արտակարգ դատարան) նախագահ, դաշնակցական ճանաչված գործիչ, ինժեներ Ավետիս Օհանջանյանը 1923 թ. ապրիլի 18-ին Թավրիզից Թիֆլիսում լույս տեսնող «Զարյա Վոստոկա» թերթի խմբագրությանը գրեց մի նամակ, որը, ըստ էության, պատասխան բացատրագիր էր: Նամակը ռուսերեն թարգմանությամբ տպագրեց թերթի մայիսի 16-ի համարում, իսկ 1923 թ. հունիսի 25-ին լույս տեսավ «Արձագանք Փարիզի» թերթում:

Իր նամակում Ա. Օհանջանյանը կտրականապես մերժում էր Վրացյանի վերոհիշյալ բացատրությունը և վկայում, որ հենց նրա շրջապատի կարգադրությամբ է իրականացվել այդ ոճիրը:

«Թեև ես եղել եմ Արտակարգ հանձնախմբի ղեկավարը,– գրում էր նա,– բայց ոչ ես, ոչ էլ Արտակարգ հանձնախումբը Երևանի սահմանից դուրս չունեին և չէին կարող ունենալ որևէ հարաբերություն արագ երթով դեպի Զանգեզուր տարվող պատանդների հետ, մանավանդ, որ Լեռնահայաստանի սահ-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 8, գ. 126, թ. 9-10:

* Թե «մեզ» ասելով հոդվածագիրը ում նկատի ուներ՝ Փրկության կոմիտեի՞ն, թե՞ Լեռնահայաստանի իշխանություններին, Ս. Վրացյանը չի հստակեցրել:

[2] **Ս. Վրացեան,** Հայաստանի Հանրապետութիւնը, «Հայրենիք», 1923. թիվ 3, էջ 45:

մաններ Արարատյան Հայաստանից փոխադրված կառավարությունը և նրա ընտրած Արտակարգ հանձնախումբը չունեին ոչ մի իրական իշխանություն»:

Այնուհետև նամակագիրը հայտնում էր, որ երբ Ղարաքիլիսա գյուղում գտնվող Նժդեհը Վրացյանի ներկայությամբ հրամայել էր գնդակահարել պատանդներին, վերջինս «չի համարձակվել գոնե մի խոսք ասել փրկելու համար այդ անմեղ զոհերին, թեպետ նա, որպես Դաշնակցության բյուրոյի անդամ ուներ և՛ իրավունք, և՛ հնարավորություն այդ բանն անելու: Նրան անպայման կլսեր Լեռնային Հայաստանի հրամանատարը»[1]:

Նշելով, որ գնդակահարությունը կատարվել է «վանքի բակում, Վրացյանի բնակարանից 50 քայլ հեռավորության վրա», որից հետո դիակները նետել են ձորը, Ա. Օհանջանյանը այնուհետև շարունակում է. «Եթե այս բոլոր բարբարոսությունները «հակասում էին» Վրացյանի «քաղաքական դավանանքներին», [ապա] ինչո՞ւ նա և նրա հետ ներկա եղող Բյուրոյի երկու անդամները լռել են և Լեռնային Հայաստանի հրամանատարից չեն պահանջել դադարեցնել ջարդը»[2]: Ապա Օհանջանյանը հարկ է համարում ներկայացնել նաև մի քանի ուրիշ մանրամասներ: «Ես,– գրում է Օհանջանյանը,– Տաթև էի հասել Վրացյանից չորս օր հետո, երբ արդեն գնդակահարված էին դժբախտ մարդիկ: Երբ ապշած ու զայրացած մի քանի անգամ պահակախմբի պետին հարցում ուղղեցի, թե ուր են մնացյալ բանտարկյալները, վերջինս միշտ պատասխանում էր՝ «էլ չկան»: Կենդանի մնացածների մասին ես այն կարծիքն էի հայտնում, որ նրանք հասարակ գյուղացիներ ու զինվորներ են, որ նրանց չպետք է պատանդներ նկատել և պետք է ազատ արձակել»:

Փրկության կոմիտեի Արտակարգ հանձնախմբի նախագահը, եզրափակելով իր խոսքը, գրել է. «Ուրեմն պարզ է, որ 48 պատանդների և պատերազմական գերիների գնդակահարությունը (Տաթևի վանքում: – *Ա. Ս.*) տեղի է ունեցել, երբ ես հեռու էի Տաթևից և երբ, ընդհակառակը, Վրացյանը գտնվելիս է եղել Տաթևում և ձևացել է համր, խուլ և կույր՝ նահատակների սրտաճմլիկ աղաղակների հանդեպ»[3]:

Եվ այսպես, անողոք պատերազմում կույր վրեժխնդրության զոհեր էին դառնում և՛ կոմունիստները, և՛ դաշնակցականները: Դաժանությունից ոչ ոք չէր շահում, բայց տուժում էր նրանց ծնած ժողովուրդը՝ կորցնելով ծաղկուն տարիքի իր զավակներին:

Մինչ Տաթևում տեղի էր ունենում արյունալի ողբերգություն, Կարմիր բանակի զորամասերը շարունակում էին զարգացնել հարձակողական գործողությունները: Զանգեզուրյան զորամասերի անսպասելի նահանջը Վայոց ձորում մեծապես վշտացրել էր Նժդեհին: 1920 թ. սեպտեմբեր-

---

[1] “Заря Востока” (Тбилиси), 16 мая 1923.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

հոկտեմբերից սկսած առաջին անգամ էր, որ նա բացահայտ դժգոհություն էր հայտնում իր զինվորներից և սպաներից:

Ապրիլի 16-ին Նժդեհը Գորիսից հետևյալ հեռախոսագիրն է հղում Սյունիքի արևմտյան ճակատի պետին. «Այդ ի՞նչ եք անում, մինչև ե՞րբ պետք է շարունակվի ձեր նահանջը: Նստել և թշնամուն սպասել՝ սխալ, կորստաբեր տակտիկա է: Անմիջապես անցե՛ք հարձակողականի: Աշխատե՛ք նախաձեռնությունը խլել թշնամուց և միշտ լինել ակտիվ: Այդ առթիվ խոսե՛ք Արարատյան զորամասերի պետերի հետ և գիտցե՛ք, որ անվերջ նահանջներով դուք վտանգում եք նաև Լեռնահայաստանի դրությունը»[1]:

Նկատի առնելով նահանջող ժողովրդի և զինվորների պարտվողական-խուճապային հոգեբանությունը՝ Նժդեհը ապրիլի 24-ին Արևմտյան ճակատ՝ Յապոնին և Կուռոյին է ուղղում հերթական (թիվ 297) հեռախոսագիրը, որում, մասնավորապես ասված էր. «Երևանից մինչև Գենվազ տեղի ունեցած նահանջները եղել են խուճապային, անկազմակերպ և բարոյալքող... Նկատի ունեցեք, որ այսուհետև այս երկրի ամեն մի թիզ հողը պիտի պաշտպանեք ամենակատաղի կերպով, եթե անգամ փամփուշտներ չլինեին, ապա պետք է կռվել ատամներով...»[2]:

Բայց բարոյական հարվածն արդեն հասցված էր, զորամասերում տիրում էր խուճապային տրամադրություն: Ինչպես Սպարապետի հեռագրերը, այնպես էլ նրա այցելությունները ռազմաճակատ ի վիճակի չեղան ոգի ու եռանդ ներշնչել ժողովրդին ու զինվորականությանը: Երբ 5000-ից ավելի զինվորականությունը տարերային շարժումով Սիսիան էր անցնում, մի քանի հարյուր զանգեզուրցի զինվոր միայնակ չէր կարող պաշտպանել Վայոց ձորի սահմանները: Դառնացած սրտով Նժդեհը դրանից մի քանի ամիս հետո գրել է. «...Ոչ թե միայն Երևանից եկած զինվորությունն էր հուսալքվել, թուլացել, անմարտունակ դարձել, այլև նրանց սպաներն ու գործընկերները, համարյա թե քիչ բացառությամբ, նույն հոգեկան դրությունն ու ապրումներն ունեին, նույն պարտվողական վիճակի մեջ էին: Էլ ո՞վ պիտի նրանց առաջնորդեր դեպի հաղթություն: Երևանի շրջաններում ապստամբական ձգձգվող կռիվներն արդեն հոգնեցրել էին և միանգամայն անմարտունակ դարձրել այդ զորամասերը...»[3]:

Կռվի հետագա հաջողության հանդեպ թերահավատների թիվը օրեցօր մեծանում էր: Տասնամյակներ անց խուճապի ու սեփական ուժերի նկատմամբ կորցրած հավատի մասին իր խոհերը Նժդեհը ձևակերպել է այսպես. «Թերահավատությու՛ն – ահա իրական թշնամին, որին չհաղթահարած՝ հաղթանակ տոնած չէ և ո՛չ մի զորավար: Հաղթանակում կամ պարտվում է

---

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 333:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

նախ ոգին, ապա հետո՝ նյութեղեն զենքը»[1]:

Սյունիքի հրամանատարությունը բազմաթիվ փորձեր արեց, որպեսզի փախչող զորամասերի գոնե մի մասը ամրանա Գնդեվազի շրջանում, բայց այդ բանը նրան չհաջողվեց: Ցավալի է, բայց խուճապը հատկապես ավերներ էր գործել սպաների մեջ: Արևմտյան ճակատի նոր հրամանատար նշանակված Կուռոն, որի ռազմակայանը արդեն գտնվում էր Սիսիանի տարածքի վերջին գյուղում՝ Բազարչայում, ի վիճակի չէր այլևս իր զորամասերը պահել Վայոց ձորում, ուստի շատ դեպքերում ստիպված էր անտեսել Գորիսից եկող հրամանները:

Փրկության կոմիտեի անդամ Արշակ Հովհաննիսյանը, այցելելով Արևմտյան ռազմաճակատ, հանդիպումներ և զրույցներ էր ունեցել հրամանատարության հետ և իր տպավորությունների մասին գրել էր Սերգեյ Մելիք-Յոլչյանին: Գրության մեջ նա նշում էր. «Կուռոյի հետ երկար, շատ երկար և կտրուկ ու պարզ խոսեցի այդ (ռազմաճակատի դրության: – *Ա. Ս.*) մասին: Նա դժգոհ է և Փրկության կոմիտեից, և՛ իր մեծ ընկերներից, և՛ քեզանից, և՛ ձեր կառավարությունից, և՛ Նժդեհից, և՛ բոլորից, որ իրեն չեն գնահատել: Իմ կատեգորիկ հարցին՝ ի՞նչ է քո ուզածը, նա պատասխանեց. – Այսպիսի պայմաններում չեմ կարող, չեմ ուզում աշխատել: – Ես նրան պատասխանեցի, որ մեր կյանքի, մեր կառավարության և ընկերների պայմաններն այդ են, և ես քեզ համար չեմ կարող ստեղծել այնպիսի պայմաններ, որ գոհ լինես. բոլորս դժգոհ ենք, բայց ժողովրդին թողնել չենք կարող: Նա պատասխանեց. «Ես կուսակցական մարդ չեմ, ես էլ ինձ համար մի մա՞րդ եմ հո»: Իմ վերջին խոսքն եղավ՝ «Ինչպես երևում է՝ չես ուզում աշխատել»: Նա պատասխանեց. «Այո՛, չեմ ուզում աշխատել և չպետք է աշխատեմ, խնդրում եմ ինձ ազատեք»:

«Այս հայտնելով քեզ,– այնուհետև գրում էր Արշակ Հովհաննիսյանը,– մնում է. առաջին՝ Նժդեհին հայտնես, որ, իմ կարծիքով, անպայման պիտի ազատել այդ մարդուն պաշտոնից, երկրորդ՝ դրա համար թող Նժդեհը կանչի նրան զեկուցման՝ յուր մոտ և ազատ կացուցանե յուր պաշտոնից: Իմ վերջնական եզրակացությունն է՝ Կուռոյին բոլորովին ազատել պաշտոններից և հայտնել, ուր ուզում է, կարող է գնալ, որ այդ մարդը հասկանա իրեն էլ, ուրիշներին էլ: Այս բոլորը որքան շուտ կատարվի, այնքան լավ: Զորքի (զանգեզուրյան: – *Ա. Ս.*) տրամադրությունը բարձր է, նա ուզում է կռվել, բայց ինչպես ժողովուրդն է ասում՝ կռվեցնող չկա: Ես այս խնդրի առթիվ երկար չեմ գրում: Կուռոն ինքը մի շարք պատճառաբանություններով չի կատարել Նժդեհի հրամանը և այդ մասին, ինչպես ինքը հայտնեց, պատրաստ է բացատրություններ տալու Նժդեհին»[2]:

Կուռոյի մասին Ա. Հովհաննիսյանի կարծիքի առնչությամբ Նժդեհն

---

[1] **Գ. Նժդեհ**, Բանտային գրառումներ, էջ 93:

[2] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 334:

ասում էր. «...Ու՞մ առաջնորդությամբ զորքը (փախստական: – *Ս. Ս.*) պիտի կռվի ելներ, ո՞վ պիտի նրան ոգի ու եռանդ ներշնչեր, երբ հրամանատարն ինքը չի ուզում աշխատել այդ ժողովրդի հետ միասին, որի մոտ գաղթելով նա յուր գլուխը փրկեց»[1]:

Զորքի և գաղթականության մի մասը դեռ ճանապարհին էր և չէր հասել Զանգեզուրի սահմաններին, երբ Հայրենիքի փրկության կոմիտեն ապրիլի 20-ին իր ամբողջ կազմով Սիմոն Վրացյանի գլխավորությամբ հասավ Տաթև:

Հաջորդ օրը՝ ապրիլի 21-ի երեկոյան, Փրկության կոմիտեն Տաթևի վանքում հավաքվեց պաշտոնական նիստի, որի օրակարգում դրված էր երկու հարց՝ 1. կոմիտեն պիտի շարունակի՞ իր գոյությունը, թե՞ պետք է ինքնալուծարվի: 2. Արդյոք Կոմիտեի լուծարումից հետո պետք է ստեղծե՞լ իշխանության նոր մարմին, թե՞ ոչ:

Առաջին հարցը հանգամանորեն քննարկելուց հետո որոշում ընդունվեց Հայրենիքի փրկության կոմիտեի ինքնալուծարման մասին:

Երկրորդ հարցի քննարկումն անցավ բուռն վիճաբանությունների մթնոլորտում, և ի վերջո որոշվեց Զանգեզուրում ունենալ երկու կառավարություն[2]:

Կառավարություններից մեկը Սյունիքինն էր՝ զուտ տեղական իշխանություն, տեղական գործերի համար: Սրան էին փոխանցվում նաև Փրկության կոմիտեի ներքին կառավարման լիազորությունները:

Մյուս կառավարությունը ստեղծվում էր Փրկության կոմիտեի հիմքի վրա: Նիստում որոշվեց Ս. Վրացյանին լիազորել՝ կազմելու «մեծ» կամ «Հանրապետական Հայաստանի կառավարություն»: Այս նոր կառավարությունը ներքին կառավարման գործառույթներ չէր ունենալու, չէր խառնվելու Սյունիքի ներքին գործերին, այլ կոչված էր լինելու «Հանրապետական Հայաստանը ներկայացնել արտաքին աշխարհի առաջ»[3]: Կառավարության պաշտոնավայր էր հայտարարվում Կապանի հանքերը:

Նիստից անմիջապես հետո Փրկության կոմիտեի մի խումբ անդամներ մասնավոր խորհրդակցության հավաքվեցին և նպատակահարմար գտան կյանքի կոչել Ս. Վրացյանի «Նախաբոլշևիկյան դահլիճը», այսինքն՝ մինչև Հա-

---

[1] Նույն տեղում: Հարկ է նշել, որ դաշնակցական պատմական գրականության մեջ և գործիչների հուշերում երևանյան ապստամբ զորքի հրամանատար, սպարապետ Կուռո Թարխանյանի մասին տարբեր, շատ հաճախ մեկը մյուսին հակասող կարծիքներ են արտահայտված: Ս. Վրացյանը, օրինակ, գրել է. «Կուռոն ըմբոնում էր կացության լրջությունը, բայց չէր կարող հաշվի չառնել և զորքի ու իր շրջապատի տրամադրությունը: Վախ չուներ բնավ, համարձակ նայում էր իրականության երեսին և, իբրև կարգապահ և քաջ զինվորական, անվախ հետևում էր ճակատագրի տնօրինության» (**Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ (հատոր Ա), էջ 240): Քանի որ Կուռոյի մասին Նժդեհի և Վրացյանի տեսակետները տրամագծորեն հակառակ էին, ուստի մենք վերապահ ենք գնահատական տալու զինվորական այդ գործչի գործունեությանը:

[2] Տե՛ս **Յ. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 109:

[3] Նույն տեղում, էջ 110, 115:

յաստանում խորհրդային իշխանություն հաստատվելը գոյություն ունեցած նախկին դաշնակցական կառավարությունը, որի կազմը լրացվում էր երկու նոր նախարարներով՝ Լևոն Շանթ և Ա. Մաքսապետյան (երկուսն էլ արևմտահայեր):

Նոր կառավարություն կազմելուց հետո Ս. Վրացյանը մեկնեց Տաթև՝ այնտեղից Պարսկաստան անցնելու համար: Նա այնտեղ պետք է փորձեր ստանալ Զանգեզուրին օգնություն ցույց տալու մասին «դաշնակիցների» հավաստիացումը:

Տաթևի շրջանում կենտրոնացել էր գաղթականության մտավորական մասը, որը ցերեկները հավաքվում էր վանքի բակում՝ ցուցակագրվելու: Որոշում էր ընդունվել, որ առաջին հերթին Պարսկաստան է անցնելու հայ մտավորականությունը: Արևմտահայ զորամասերը, ինչպես և զինված ու մարտունակ տարրերը պիտի սպասեին հերթի:

Քաոսը չխորացնելու համար գաղթականությունը, Նժդեհի մշակած ծրագրի համաձայն, Տաթևից մինչև Արաքսի ափ շարժվում էր քարավաններ կազմած՝ ինչ-որ մեկի գլխավորությամբ: Առաջին քարավանի մեջ էին Քաջազնունին, Շանթը և ուրիշներ, որոնք որոշ առաքելություններով պիտի անցնեին Թավրիզ: Այդ խմբի հետ էր նաև Նժդեհի ներկայացուցիչը, որ Ատրպատականի իշխանություններին, ավելի հստակ՝ արքայական փոխանորդ խանին, տանում էր Լեռնահայաստանի Սպարապետ Նժդեհի և գլխավոր շտաբի պետ Նարինյանի նամակը:

Գորիսից հղված ապրիլի 26-ի նամակում մանրամասն տրված էր Սյունիքում և նրա շուրջը ստեղծված ռազմաքաղաքական վիճակի նկարագրությունը, շեշտված էր, որ Սյունիքի գոյամարտը Պարսկաստանի հյուսիսային նահանգների համար, ըստ էության, պաշտպանական վահան է Կարմիր բանակի զորքերի ներխուժման դեմ: Այս հանգամանքը նամակում շեշտված էր մի հիմնական մտահոգությամբ, որպեսզի պարսկական իշխանությունները արգելք չհանդիսանան երևանյան փախստականության և, առաջին հերթին, հայ մտավորականության Պարսկաստան անցնելուն: Քանի որ Լեռնահայաստանը հնարավորություն չունի պահելու ու կերակրելու գաղթող մտավորականությանը, ասված էր Նժդեհի նամակում, ուստի «այդ պատճառով խոնարհաբար խնդրում եմ Ձերդ արքայական բարձրության, կարգադրել թույլ տալու այդ մտավորական ուժերին, որոնք թվով մոտ 500 հոգի են և բաղկացած են մեծ մասամբ պրոֆեսորներից, ինժեներներից, տեխնիկներից, ուսուցիչներից, բժիշկներից և իրավաբաններից, անցնելու հյուրընկալ Պարսկաստանի հողը և ժամանակավորապես պատսպարվելու Ձերդ արքայական բարձրության վեհաշուք հովանու տակ, Թավրիզում և նրա շրջակայքում, մինչև որ հանգամանքները նրանց թույլ կտան կրկին վերադառնալու իրենց հայրենիքը: Հարկավոր եմ համարում ավելացնել, որ այդ մտավորական ուժերը ծանր բեռ չեն լինի մեր բարեկամ Պարսկաստանի համար,

որովհետև նրանք ունեն նյութական ապահովություն՝ իրենց միջոցներով ապրելու»[1]:

Ատրպատականի արքայական փոխանորդի ներկայացուցիչներ Սահրանգ և Մենթի խաները հարգել էին տարագիր 500 մտավորական հյուրընկալելու՝ Նժդեհի խնդրանքը: Բայց նահանջը կազմակերպված կատարելու Զանգեզուրի իշխանությունների բոլոր ջանքերին հակառակ՝ գաղթականության մեծ մասը խուճապով թափվեց Արաքսի ափը: Մեղրին այլևս գյուղ չէր, այլ մի հսկա բանակատեղի: Գետափի ավազի վրա ցերեկվա արևին և գիշերվա ցրտին կիսամերկ ու անոթի ընկած էին հարյուրավոր մարդիկ: Եղան սովամահության շատ դեպքեր. բոլորին սարսափի էին մատնել խոլերայի բռնկման հնարավորության մասին խոսակցությունները[2]: Մեղրիում էին Արարատյան մտավորականությունը, սպայությունը, խմբապետերը, նախկին նախարարներ, խորհրդարանի անդամներ և այլք: Խաները, տագնապած գետի ափին կուտակված բազմահազար բազմությունից, դադարեցրին գետանցը:

Երբ այդ մասին Մեղրիից տեղեկացրին Նժդեհին, նա վերստին անցավ Արաքսի ափը և Մեղրի հրավիրեց բարեկամ խաներին ու բանակցությունների միջոցով հարթեց կնճիռը: Նորից սկսվեց անցումը Արաքսով դեպի Թավրիզ:

Թավրիզի հետ Զանգեզուրի կապը իրականացվում էր Մեղրի–պարսկական ափի Դուզալ գյուղ–Մուժամբար հայկական գյուղ–Թավրիզ գծով: Դուզալում մեծ քանակությամբ պարենամթերքի գնումներ էին կատարվում Զանգեզուրի համար: Այդ գործում մեծ օգնություն էր ցույց տալիս Ղարադաղի խան Ամիր Արշադի օգնական Մութալիմ խանը: Նրա օգնությամբ սուրհանդակներ էին մեկնում Զանգեզուր և վերադառնում: Ապրիլից սկսած՝ Պարսկաստան–Զանգեզուր կապը ավելի արդյունավետ դարձավ: Զանգեզուր էին գնում ու վերադառնում դիվանագիտական առաքելության և տնտեսական ամենատարբեր գործարքներ կատարելու նպատակով: Օրինակ՝ ապրիլին Զանգեզուր էր մեկնել Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանի եղբայրը՝ Մելիք-Թանգյան Սիմոն բեկը՝ երեք սպաների ուղեկցությամբ՝ կարևոր հանձնարարականով[3]:

Գետանցը կապված էր մեծ վտանգների հետ: «Կամուրջներ չհանդուրժող Արաքսը» հատկապես խիստ վտանգավոր էր Մեղրի գյուղի հատվածում: Ժայռակոփ ափերով սեղմված, գարնանային հեղեղներից վարարած գետը վայրագ դղրդյունով սլանում էր առաջ՝ անզուսպ ու մոլեգին: Բայց այն առավել կատաղի էր այդ տարի: Գետն անցնելիս շատերը խեղդվում էին, որովհետև խղճուկ էր փոխադրության միջոցը: Քանի որ Սյունիքը Պարս-

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 10 (34), էջ 141:

[2] Տե՛ս «Զանգ» (Թավրիզ), 1921, 8 մայիսի:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3 գ. 10, թ. 14:

կաստանին միացնող կամուրջ Արաքսի վրա գոյություն չուներ, ուստի մյուս ափին կարելի էր հայտնվել միայն, այսպես կոչված, «քելեկի» վրա «նստած»: Այն կազմված էր այծի փչած տիկերի վրա դրված տախտակի մի քանի բարակ կտորներից ամրացված պարաններով: Հորդացած ու փրփրած գետի խենթ ալիքների վրա լաստանման այդ «փոխադրամիջոցը» նման էր անսարք խաղալիքի: Երկու-երեք հոգի, երերուն տախտակների վրա ծալապատիկ նստած, հանձնվում էին գետի հոսանքին: Լաստավար պարսիկը թիանման երկար ձողով վարում էր լաստը, որը ջրի հոսանքի ուղղությամբ դուրս էր գալիս մյուս ափ՝ որևէ տեղ: Փրփրաբաշ ալիքների վրա անզգույշ մի շարժումը կարող էր անխուսափելի կործանման հանգեցնել[1]: Եվ այդպես էլ լինում էր. գետում բազմաթիվ խեղդվողներ էին լինում:

Երբ ապրիլ ամսին սկսվեց գետանցը, «քելեկները» ընդամենը երկուսն էին և չէին բավականացնում նվազագույն պահանջը: Քանի՛ օր ու ամիս պիտի տևեր հազարների գետանցը... Գետն անցնելու նպատակով գալով Մեղրի՝ ճարտարապետ Ալ. Թամանյանը Ռուբեն Տեր-Մինասյանի խնդրանքով մի քանի ճարտարագետների հետ նախաձեռեց Արաքսի վրայով լաստագիծ (пароом) անցկացնելու գործը, և դրա համար հանքերից բերվեցին երկաթե պարաններ: Բայց չէր հաջողվում անզուսպ գետը կամրջել, ուստի մոտ 100 օսմանյան ոսկի ծախսելուց հետո աշխատանքները դադարեցվեցին: Գաղափարից հրաժարվելու հիմնական պատճառն այն էր, որ գետում խեղդվել էր նաև այդ գործի տեխնիկական ղեկավարը՝ ճարտարագետ Նորայր Իսահակյանը: Միակ ելքը նորից մնացել էին քելեկները, որոնց թիվը արդեն չորսն էր[2]: Դրանք մոտ երկու ամիս երթևեկեցին Արաքսի վրա, մինչև որ ավարտվեց գաղթականության անցը[3]:

Երևանյան գաղթի առաջացրած բարոյալքումից տեղական ժողովրդին հեռու պահելու համար պետք էր մի նոր արարքով գոտեպնդել նրան՝ ոչ միայն անկախ Հայաստանի գաղափարն ապրեցնելու նպատակով, այլև որպեսզի Սյունիքի հայությունը հոգեբանական մի նոր լիցք ստանար՝ դիմադրելու Կարմիր բանակին և թուրք հորդաներին այնքան ժամանակ, մինչև որ մազապուրծ հայ մտավորականությունը կանցներ Պարսկաստան:

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ (հատոր Ա), էջ 229-230, հատոր Զ, էջ 147:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 81, **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 10 (34), էջ 142. **Ե. Սարգսեան**, Փետրուարեան յեղաշրջման օրերից (յուշեր եւ ապրումներ), «Հայրենիք», 1960, մայիս, թիվ 5 (411), էջ 67:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 81:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

Հայրենիքի փրկության կոմիտեի լուծարումից և Հայաստանի նոր կառավարության ստեղծումից 5 օր հետո Սյունիքի խորհրդարանի դիվանի հրավերով 1921 թ. ապրիլի 26-ին Տաթևի վանքում կայացավ Ինքնավար Սյունիքի հայ ազգաբնակչության 2-րդ (Արտակարգ) համագումարը, որտեղ 64 գյուղից ներկա էին 95 պատգամավոր և Սպարապետ Նժդեհը[1]:

Ինքնավար Սյունիքի կառավարության նախագահ Գեղեոն Տեր-Մինասյանը, բացելով համագումարը, առաջարկեց ընտրել նախագահություն: Առաջադրվեցին թեկնածուներ, տեղի ունեցավ քվեարկություն: Համագումարի նախագահ ընտրվեց Սերգեյ Մելիք-Յոլչյանը, փոխնախագահ՝ բժիշկ Մինասյանը, քարտուղարներ՝ Տ. Սազանդարյանը և Վ. Վարդապետյանը:

Բացելով համագումարը՝ նախագահ Ս. Մելիք-Յոլչյանն ընդգծեց, որ այն ունի եզակի նշանակություն և կոչված է կարևոր դեր ունենալու Ինքնավար Սյունիքի պատմության մեջ:

Համագումարը հաստատեց հետևյալ օրակարգը՝ 1. Ինքնավար Սյունիքի դիվանի կազմի հրաժարականը, 2. պարենավորման հարցը, 3. Ինքնավար Սյունիքի սահմանադրության վերամշակումը, 4. ազատ հողերի բաշխման հարցը, 5. պաշտոնյաների վարձատրության հարցը, 6. դպրոցական գործը, 7. պետական հարստության պահպանության հարցը, 8. նոր կառավարության (դիվանի) ընտրությունը, 9. համագումարում հարուցվելիք այլ խնդիրներ:

Օրակարգի այս հարցերը պետք է լուսաբանվեին Նժդեհի, Սյունիքի խորհրդարանի և կառավարության հաշվետվությունների մեջ:

Զեկուցման համար խոսքը տրվեց Նժդեհին: Նա հանգամանալից հաշվետվություն ներկայացրեց, կատարեց Ինքնավար Սյունիքի ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի բազմակողմանի ու խոր վերլուծություն, հանրագումարի բերեց նախորդ համագումարից հետո կատարված աշխատանքները և առաջադրեց մոտակա ժամանակների հրատապ խնդիրները: Սպարապետի սպառիչ զեկուցումից հետո համագումարի պատգամավորներն ավելորդ համարեցին լսել հաշվետու մյուս զեկուցումներն առանձին-առանձին և անցան մտքերի փոխանակության:

Այնուհետև քննարկվեց պարենավորման հարցը, որի մասին դարձյալ զեկուցեց Նժդեհը: Նա նկարագրեց տնտեսական ծանր կացությունը գա-

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 71:

վառում, բնակչության կրած տառապանքները, որոնք անընդհատ խորանում էին Արարատյան դաշտից եկած հազարավոր գաղթականներին կերակրելու պատճառով:

Սյունիքը հացի մեծ կարիք ուներ՝ սկսած դեռ 1918 թվականից, երբ Այսրկովկասը մատնվել էր քաոսի, երբ ծայր էին առել հայ-ադրբեջանական և հայ-վրացական բախումները, որի հետևանքով փակվել էին ճանապարհները և լեռնաշխարհը կղզիացել էր: Բայց եթե 1918-1919 թվականներին վիճակն ինչ-որ կերպ տանելի էր, ապա 1920 թ. ամառվանից սովը չոքել էր զանգեզուրցիների դռանը: Ճիշտ է, 1920-ին Կարմիր բանակի զորքերից խլած հացի պաշարները փոքր-ինչ մեղմել էին զանգվածային սովը (Նժդեհի պատկերավոր խոսքերով ասած՝ զանգեզուրցին «հաց էր ճարել իր սրի ծայրով»), բայց 1921 թ. գարնանը նա նորից սոված էր:

1921 թ. գարնան ամիսներին սովի սաստկացումը երկու պատճառների հետևանք էր. ա) Սյունիք եկած բազմահազար գաղթականությունը արագորեն նվազեցնում էր զանգեզուրցիների հացի առանց այն էլ խղճուկ պաշարը, բ) Արաքսի վրայով Սյունիքից դեպի Պարսկաստան կամուրջ չլինելը և այդ երկրից բավարար քանակությամբ հաց չստանալը: Աշխարհից կտրված երկրամասը դրսի օգնության որևէ հույս չուներ:

Այս պայմաններում սովը սաստկանում էր օրըստօրե, ժամ առ ժամ: Շատ գյուղերի բնակիչների միակ սնունդը դաշտերի բանջարեղենն էր և արմտիքը:

«Դիրքապահ վաշտերը շատ ռազմաճակատներում ապրում էին վայրի շագանակի ալյուրից պատրաստած հացով,– նշել է Նժդեհը:– Գողթանը գործածեց անգամ կատվի և էշի միս:

Դաշտերում չմնաց ո՛չ աղվես, ո՛չ ագռավ: Դիրքապահ զնդերի մի մասի պարտականությունը դարձավ որսով սնունդ ճարելը: ...Դիրքապահ զինվորությունը, զինված և գործոն վիճակի մեջ, դեռ մի կերպ կարող էր լրացնել իր աղքատիկ սնունդը: Նրանն էին երկնքի թռչունները, վայրի գազաններից՝ հովազը, արջը, նրանն էին վայրի պտուղները»[1]:

Սպառվելու վրա էր ռազմամթերքը: Նման դժնդակ պայմաններում, ասում էր Նժդեհը, երբ բանակները դիմադրելու փոխարեն թշնամու անարգանքին են հանձնում իրենց դրոշակները, երբ «տեղի են տալիս կառավարությունները», «այունեցին չլքեց իր վահանը», քանզի նրա մարմնում «ցեղի հրաշագործ ոգին» էր: Կրելով գերմարդկային տառապանքներ՝ նա զարմանալիորեն չէր ընկճվում, չէր թուլացնում բազուկը. շարունակում էր ամուր բռնած պահել զենքը[2]:

Համագումարին տված հաշվետվության մեջ Նժդեհը պատգամավորնե-

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 11 (35), էջ 89:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932, էջ 32:

ին տեղեկացրեց, որ հացի չնչին պաշարները ինչ-որ չափով լրացնելու համար Ինքնավար Սյունիքի իշխանությունները 1921 թ. գարնանը մի շարք փորձեր են արել հաց հայթայթելու հարևան ադրբեջանական թուրքաբնակ և քրդաբնակ Ավդալարի, Կուբաթլիի, Զանգելանի, Զաբրայիլի շրջաններում: Այդ նպատակով մարտի 21-ին Ադրբեջանի մոտակա գյուղերից Գորիս էին հրավիրվել երեք մարդ՝ Էյվազբեկովը Էյվազլար գյուղից, Հաջի Հաշիմը՝ Շուռնուխից և մեծահարուստ Քերբալայ Ալամամեդը՝ Մելիք-Ահմեդլու գյուղից, որոնց հետ Նժդեհը հանդիպել և առաջարկել էր համեմատաբար բարձր գներով հացահատիկ վաճառել: Սրանք համաձայնել էին, բայց վերադառնելով իրենց գյուղերը՝ ադրբեջանական իշխանությունների սպառնալիքների տակ հրաժարվել էին կատարել տված խոստումը: Նման մեկ այլ խորհրդակցություն ապրիլի 6-ին հրավիրվել էր Կապանի Ագարակ գյուղում, որտեղ Խոջահան, Մինջևան, Խորամա, Իսկենդերբեյլի, Դոնդարլու և այլ գյուղերից եկել էին ոչ քիչ թվով հարուստ թուրքեր՝ Շահսուվարբեկ Քալանթարովը, Բախլուլ էֆենդի Բեհչետին և ուրիշներ: Խորհրդակցությանն անձամբ մասնակցել էր Նժդեհը: Այստեղ ևս հացահատիկ վաճառելու խոստումներ էին եղել, որոնք նույնպես չէին կատարվել:

Բնակչության և զորքի պարենավորումը համարելով առաջնային՝ համագումարը տեղի պաշտոնյաներին ցուցում տվեց՝ խիստ կազմակերպված կատարելու հացահատիկի հունձը, հացը հավաքելու անկորուստ, միաժամանակ միջոցներ հայթայթելու Պարսկաստանից՝ լրացուցիչ հացահատիկ կամ ալյուր ձեռք բերելու համար:

Պարենավորման խնդրի վերաբերյալ համագումարի միաձայն ընդունած հայտարարության մեջ ասված էր. «Պարենավորման համար Սպարապետը հայտարարում է, որ մինչև նոր հունձը հնարավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության* նյութական օգնությամբ հաց ձեռք բերել և միաժամանակ ըստ հնարավորության աշխատել կազմակերպել պետական տրանսպորտը և ժողովրդին ազատել փոխադրական ծանր պարտականությունից»[1]:

Այնուհետև քննարկվեց կառավարման մարմիններ կազմելու ձևի և սկզբունքների հարցը: Պատգամավորների ելույթներից հետո ձայների մեծամասնությամբ համագումարը որոշեց.

1. «Ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» հայտարարել անկախ պետություն և այն վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) և Լեռնային Ղարաբաղը: Գորիս քաղաքը համարել Լեռնահայաստանի մայրաքաղաք:
2. Քանի որ նորաստեղծ պետությունն ազդարարվում էր հանրապե-

* Նկատի ունի Ս. Վրացյանի գլխավորած Փրկության կոմիտեն:

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 71, թ. 11:

տական և ժողովրդավարական, ուստի այն պետք է ունենար համապատասխան հաստատություններ՝ պառլամենտ, նախարարների խորհուրդ և ինքնիշխանությանը բնորոշ մյուս հատկանիշները:

3. Համագումարը հայտարարել Լեռնահայաստանի վարչապետություն՝ նախարարների խորհուրդ: Կառավարության անդամներին հետայսու անվանել նախարարներ:
4. Վարչապետ ընտրել Սպարապետին՝ նրան վերապահելով նոր կառավարության կազմի ընտրությունը:

Կուռոյի զորքերը պետք է մնային նոր կառավարության տրամադրության տակ Բազարչայում[1]:

Համագումարում հարց է բարձրացվեց Սպարապետ Նժդեհին զորավարի (գեներալի) աստիճան շնորհելու մասին: Մտքերի և կարծիքների փոխանակումից հետո խորհրդարան-համագումարը միաձայն որոշեց զնդապետ Նժդեհին շնորհել զորավարի աստիճան և նրան պարգևատրել «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով[2]:

Օրակարգի համաձայն՝ ապրիլի 27-ին որոշվեց նոր կառավարության կազմը: Նժդեհը համագումարի հաստատմանը գրավոր ներկայացրեց կառավարության՝ յոթ մարդուց բաղկացած հետևյալ կազմը՝ 1. Գ. Նժդեհ՝ վարչապետ և արտաքին գործերի նախարար, 2. Ս. Մելիք-Յոլչյան՝ ներքին գործերի, 3. Հ. Տեր-Հակոբյան՝ պարենավորման, 4. բժիշկ Մ. Մինասյան՝ խնամատարության, 5. Հ. Տևեճյան՝ արդարադատության և լուսավորության, 6. Ա. Օհանջանյան՝ հաղորդակցության և փոստ-հեռագրի, 7. բժիշկ Ս. Եղիազարյան՝ ֆինանսների նախարար[3]:

Կառավարության կազմը հաստատելուց հետո մեկ ժամով հայտարարվեց ընդմիջում, որից հետո ընթերցվեց և ընդունվեց Լեռնահայաստանի զորքին ու ղեկավարներին ուղղված համագումարի ողջույնի ուղերձը: «Համազանգեզուրյան Տաթևի 2-րդ Խորհրդարանը սրտանց ողջունում է իր կուռ, անհաղթելի և տոկուն բանակի ռազմիկներին և լիահույս է, որ այդ անհաղթ բանակը, որ մինչև օրս իր փառապանծ հաղթանակներով աշխարհն է զարմացրել, այսուհետև էլ պատրաստ կը լինի նոր հրաշքներ, նոր զարմանքներ ցուցադրելու քաղաքակիրթ աշխարհին, իր կատարյալ և վերջնական հարվածը տալով հայ աշխատավորության թշնամիներին:

Կազմված է կառավարություն:

Մեր ինքնավար Սյունիքն այսուհետև կոչվելու է Լեռնահայաստան, որն

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան,** Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 178:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 30 (տողատակ):

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 150, տե՛ս նաև **Յ. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 16, **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 235, **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 10 (34), էջ 139:

իր քաջարի զորքով, իր անպարտ առյուծասիրտ մարտիկներով սպառնալիք պետք է լինի մեր բոլոր թշնամիների համար:

Մեր ազատարար Սպարապետ Նժդեհին տրված է զորավարի տիտղոս և «Խուստուփյան արծիվ» շքանշան:

Այս սուրբ տաճարում նա ուխտեց և իր սրբազան խոսքն ասաց՝ ձեզ հետ միասին, սև օրվա համար հայության բաժին համարված Սյունիքը դարձնել հայության վերածնության օրրան»[1]:

1921 թ. մայիսի 1-ին Լեռնահայաստանի կառավարությունը Գորիսում հանդես եկավ հռչակագրով: Կառավարությունը հայտարարում էր, որ «իր առաջնակարգ պարտքն է համարում լարել երկրի բոլոր ուժերը՝ զորացնելու մեր հայրենիքի ինքնապաշտպանության ռազմական կորովը. Լեռնահայաստանը պետք է լինի ամուր հենակետ մոտ ապագայում Մայր Հայաստանը թշնամի տարրերից ազատելու համար»[2]:

Կառավարությունն իր կարևորագույն խնդիրներից էր համարում պարենավորման գործի արմատական բարելավումը, գյուղացիական տնտեսությունների արագ զարգացումը: Միաժամանակ ազդարարվում էր կառուցել իրավական պետություն՝ «մոտեցնելով ժողովրդին և մատչելի դարձնելով դատավարությունը, զարկ տալ ժողովրդի լուսավորության գործին՝ կազմակերպելով նորանոր դպրոցներ, անգրագետների դասընթացներ, դասախոսություններ, զրույցներ, երեկույթներ և տարածելով գրավոր հրատարակություններ: Կառավարությունը ջանք չի խնայելու հանրային առողջապահությունը և բժշկական օգնությունը դնելու ավելի լավ հիմքերի վրա»[3]:

«Լեռնահայաստանի կառավարության դեկլարացիայում» շեշտված էր հարևան ժողովուրդների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման հրամայականը:

«Լեռնահայաստանի կառավարությունը պետք է ջանա սերտ բարեկամական, բարիդրացիական հարաբերություններ հաստատել մեր երկրի սահմաններում բնակվող և սահմանամերձ ազգությունների, մանավանդ թուրք ժողովրդի հետ: Տնտեսական և առևտրական փոխհարաբերությունների զարգացումը ավելի ևս կնպաստի հայ ժողովրդի մերձեցումին թուրք, պարսիկ և տաճիկ ժողովուրդների հետ: Կառավարությունը նաև պիտի ձգտի ապահովել միջազգային բոլոր բարեկամ ուժերի օժանդակությունը մեր ազգային դատի բարեհաջող լուծման համար»[4]:

Կառավարությունը վստահ էր, որ ժողովրդի միակամ աջակցության պայմաններում ինքը կարող է կատարել իր առաքելությունը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց, 1, գ. 73, թ. 11 և շրջերես:

[2] **Ս. Վրացեան,** Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 233:

[3] Նույն տեղում, էջ 234:

[4] Նույն տեղում:

«Լիահույս լինելով, որ Լեռնահայաստանի ազատատենչ ժողովուրդը և պարտաճանաչ պաշտոնեությունը ոչ մի ջանք չեն խնայի ընդառաջ գնալու և բոլոր ուժերով աջակցելու կառավարությանը համագումարի կողմից նրա վրա դրած պարտականությունները կատարելիս, նաև վստահ լինելով, որ Սյունյաց Աշխարհի հերոսացած Դավիթ-բեկյան զորքերը, միացած բուն Հայաստանի զորամասերի հետ, նորանոր սխրագործություններով պիտի զորավիգ հանդիսանան կառավարությանը, իրենց Սպարապետի ղեկավարությամբ՝ Լեռնահայաստանի կառավարությունը ստանձնում է երկրի ծանր ղեկը»[1]:

Այսպիսով, 1921 թ. ապրիլի 27-ից մի փոքր լեռնաշխարհում կողք կողքի գոյություն ունեին դաշնակցական երկու կառավարություններ՝ Սիմոն Վրացյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը և Լեռնահայաստանի Հանրապետության նոր կառավարությունը՝ Գարեգին Նժդեհի վարչապետությամբ:

«Մի կտոր հողի վրա երկու կառավարություն»[2],– հեգնանքով գրում էր նշանավոր դաշնակցական գործիչներից մեկը:

Նժդեհը նշում էր, որ Լեռնահայաստանի ստեղծման նպատակը «ոչ թե Սյունիքի անկախ գոյությունը երկարացնելն էր», այլ «որպեսզի այդ ապստամբ երկրամասին հնարավորություն տրվեր մի որոշ ժամանակով ևս դիմագրավելու իրեն օղակող թշնամիներին», մինչև որ Երևանից փախչող հայ մտավորականությունը, երկրից հեռացող արևմտահայ զորամասերը, սպայության մեծագույն մասը, խմբապետերի մի որոշ մասը անցնեն Պարսկաստան[3]:

Արաքսի հայկական ափին՝ Մեղրի գյուղի դիմաց, շարունակում էին խռնվել հազարավոր գաղթականներ:

Նժդեհը ստիպված էր երկրորդ անգամ անցնել Արաքսը և անձամբ տեսնվել պարսից իշխանության ներկայացուցիչների և իր բարեկամ խաների հետ: Պարսկական կողմն այն մտահոգությունն ուներ, որ Սյունիքից Արաքսն անցնողների մեջ մեծ թիվ կարող էին կազմել զինվորական ուժերը: Դա նրան հիմք էր տալիս կարծելու, որ զանգեզուրցիները որոշել են դադարեցնել կռիվը Կարմիր բանակի դեմ այն դեպքում, երբ իրենք հույս ունեին, որ Սյունիքը ի վիճակի է լինելու կանգնեցնել բոլշևիկների առաջխաղացումը և նրանց հեռու պահել պարսկական սահմանից:

Նժդեհին հարկ եղավ բազմիցս հավաստիացնելու պարսկական իշխանությունների ներկայացուցիչներին, որ Սյունիքը չի մտածում տեղի տալու,

---

[1] **Ս. Վրացեան,** Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 235:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց, 3, գ, 37. թ. 59:

[3] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 80:

որ արարատյան գաղթականությունը փոխադրվում է Պարսկաստան ոչ թե Սյունիքը վտանգված լինելու պատճառով, այլ որովհետև այնտեղ հաց չկա: Բացառված համարելով Սյունիքի անձնատվությունը՝ Նժդեհը նշում էր, որ ինքն իր զինված ուժերի հետ «մինչև վերջին փամփուշտը» կռվելու է անկախության համար:

Իր բարեկամ խաների հետ զրույցների ընթացքում պարզվեց նաև, որ որոշ մութ ուժեր պարսկական ափում սադրիչ լուրեր են տարածել, թե իբր Նժդեհը պատրաստվում է լքել Զանգեզուրը և անցնել Պարսկաստան: Այս տեղեկությունը հատկապես խիստ բացասաբար էր անդրադարձնել պարսկական կողմի վրա, որը և որոշել էր փակել գետանցը:

Թյուրիմացությունները պարզելուց հետո վերսկսվեց գաղթականության անցը Արաքսի վրայով[1]: Նժդեհը վերադարձավ Գորիս:

«Ահա թե նաև ինչ պատճառներով 3-4 ամիս ևս անհրաժեշտ էր դառնում երկարաձգել Ազատ Լեռնահայաստանի գոյությունը»[2],– գրել է Նժդեհը:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 81:

[2] Նույն տեղում:

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԽԱՂԱՂ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՆԵԼՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՁԱՆՔԵՐԸ: ՍԻՍԻԱՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդեն 1921 թ. ապրիլի վերջերին Կարմիր բանակը պատրաստ էր վճռական նոր հարձակումով գրավել Զանգեզուրը: Բայց այդ ժամանակ դա չարվեց, և ռազմական գործողությունները ժամանակավորապես հետաձգվեցին: Հիմնական պատճառը վատ եղանակն էր: Նախորդ տարվա աշնանն էլ Զանգեզուրում Կարմիր բանակի զորամասերի կրած ծանր պարտությունները շատ բանով պայմանավորված էին խիստ անբարենպաստ եղանակով. երկարատև հորդառատ անձրևներ, ամպամածություն և, վերջապես, նոյեմբերյան ճքճքան սառնամանիքներ:

«Ձմռանը Զանգեզուրի վրա հարձակվելը ծայրահեղ դժվար էր և մեզանից կպահանջվեր մեծ զոհեր»[1],– «Պրավդա Գրուզիի» թերթում գրում էր Հայկոմկուսի ղեկավարներից մեկը: Բայց ոչ միայն ձմռանը: Բանակի հրամանատարությունը հաշվի էր առնում, որ ապրիլ-մայիս ամիսներին Զանգեզուրում լինում են հորդառատ անձրևներ և թանձր մառախուղ. մի հանգամանք, որ կարող էր նորից արգելք լինել կռիվների հաջող ծավալմանը:

Ռազմական գործողությունների հետաձգումը հետապնդում էր նաև մի ուրիշ նպատակ: Խորհրդային Հայաստանը օդի ու ջրի պես կարիք ուներ խաղաղ տնտեսական աշխատանքի: Հանրապետության շահերը պահանջում էին բոլոր ուժերը զորահավաքի ենթարկել, բայց ոչ թե ռազմական նոր գործողություններ ձեռնարկելու, այլ երկիրը քայքայվածությունից դուրս բերելու համար:

Ահա թե ինչու Հայաստանի խորհրդային կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի Զանգեզուրի հարցը լուծվեր խաղաղ ճանապարհով, գավառը մայր երկրին միացվեր՝ առանց նորից արյուն թափելու: Նա գիտեր, որ ռազմական յուրաքանչյուր գործողություն վնասում էր ամենից առաջ հայ աշխատավորությանը, Զանգեզուրի և Վայոց ձորի գյուղացիության տնտեսությանը: Ռազմական գործողությունների վայրերում էլ հարկավոր կլիներ գումարել զորախմբեր, կերակրել զինվորներին, հայ շինականներից պարենի ու զենքի փոխադրության համար խլել սայլերն ու լծկանները և այլն: Այդ բոլորից մեծապես կտուժեին աղքատ հայ գյուղացիները: Հենց այդ հանգամանքները նկատի առնելով՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ջանում էր որքան կարելի է արագ վերջ տալ պատերազմական

[1] “Правда Грузии”, 2 июля, 1921.

վիճակին և Զանգեզուրը խորհրդայնացնել բանակցությունների միջոցով[1]:

Նշենք նաև, որ Հայաստանում կատարվող դեպքերը լրջորեն մտահոգել էին Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, որն սկսել էր աշխույժ միջամտել նորաստեղծ հանրապետության ներքին կյանքին: Մոսկվայից Հայաստանի բոլշևիկներին խորհուրդ էր տրվում՝ որդեգրել նոր գործելաոճ: Կենտրոնի այդ վերաբերմունքը շուտով արտահայտվեց Հայաստանի բոլշևիկների գործելակերպի մեջ: ՀՍԽՀ կառավարությունն արդեն խիստ անհանգստացած էր, որ ապրիլի 25-ին փախստականների առաջին խումբը, հասնելով Մեղրի, անցել էր Արաքսից այն կողմ՝ Պարսկաստան[2]: Մեղրիում հերթի էին կանգնել գետն անցնել ցանկացող նորանոր խմբեր:

Ինչպես ասվեց, Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից ապրիլի 10-ին ընդունած դեկրետը, համաձայն երկրորդ կետի, չէր տարածվում Փրկության կոմիտեի անդամների և Փետրվարյան ապստամբության մյուս առավել ակտիվ ղեկավարների վրա:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ Հայաստանի հեղկոմը ապրիլի 23-ին, այս անգամ միայն Ս. Կասյանի և Ա. Մռավյանի ստորագրությամբ, լույս ընծայեց երկրորդ դեկրետը, որով չեղյալ էր հայտարարվում նախորդ դեկրետի 2-րդ կետը և ազդարարվում համաներում, այսինքն՝ ներումը տարածվում էր բոլորի, այդ թվում՝ Փրկության կոմիտեի անդամների վրա:

Ի լրումն և ի փոփոխություն նախորդ ներման դեկրետի՝ ընդհանուր ներման այս դեկրետով Հայաստանի հեղկոմը հայտարարում էր.

«1. Ազատ համարել քաղաքական ամեն տեսակի և ձևի պատասխանատվությունից առանց բացառության բոլոր նրանց, ովքեր որևէ կերպ պայքարել են Հ.Ս.Խ. Հանրապետության դեմ՝ անկախ նրանց անմիջական գործերից, կոչումից, դիրքերից, պաշտոնից:

2. Բոլոր այս քաղաքացիներին վերահաստատել իրենց ամբողջ իրավունքների մեջ:

3. Պարտավորեցնել Հ.Ս.Խ. Հանրապետության բոլոր զորական և քաղաքացիական հիմնարկություններին ու պաշտոնյաներին՝ անհապաղ և անշեղ գործել ներկա դեկրետը՝ ազատելով վերոհիշյալ քաղաքական գործիչներին ու քաղաքացիներին ինչպես բանտարկությունից, կալանքից և աքսորից, նույնպես և այլ տեսակի որևէ հետապնդումից:

4. Սույն դեկրետը գործադրության ուժ է ստանում իր հրատարակման օրվանից և հեռագրով հաղորդվում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բոլոր զինվորական և քաղաքացիական հիմնարկություններին ու պաշտոնյաներին ի գործադրություն»[3]:

Այս դեկրետը սովորական հայտարարություն չէր, այն նաև սրտառուչ կոչ

---

[1] Այդ մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 20-ի շրջերես:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 11:

[3] Նույն տեղում, գ. 3, թ. 142:

էր՝ ուղղված բազմահազար փախստականներին. «Վերադարձե՛ք, իզուր եք փախել. Հայաստանում տեղ կա բոլորիդ համար: Վերադարձե՛ք շենացնելու ամայացած Երևանը: Վերադարձե՛ք լծվելու սոցիալիստական հայրենիքի շինարարության գործին: Կարող են վերադառնալ բոլորը, բոլորը, բացի մեկը, երկուսը»[1]:

«Ընդհանուր ներում» վերտառությամբ հոդվածում «Կոմունիստ» թերթը գրում էր, որ կառավարության երկրորդ դեկրետը շատերի համար քաղաքական իմաստով կարող է անհասկանալի լինել:

«Շատերը կարող են կարծել, թե դեկրետը հետևանք է որևէ գաղտնի հետին մտքի և հայտարարված է ժողովրդին քնեցնելու, հիմարացնելու նպատակով: Այսպես խոսողներ կգտնվեն, և նրանք կարող են հեշտ հավատացող մարդկանց մոլորեցնել»:

Ընդհանուր ներման նպատակը, շեշտում էր թերթը, փախստական զանգվածներին, նաև ապստամբության ղեկավարներին վերադարձնելն է և նրանց խաղաղ շինարարական աշխատանքի մեջ ներգրավելը[2]:

Դեկրետի շուտափույթ և լիակատար իրագործման համար Հեղկոմը ստեղծեց հատուկ մի հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ Արտաշես Կարինյան, Սիմոնիկ Փիրումյան և ՀՍԽՀ արդարադատության ժամանակավոր ժողովրդական կոմիսար Աղասի Վարդանյան[3]:

Ընդհանուր ներման դեկրետն ամենուրեք լայն արձագանք գտավ: Այսպես, ապրիլի 27-ին Հայաստանում Իտալիայի ներկայացուցիչ սինյոր Դորինը Հանքերում (Կապան) կուտակված արարատյան փախստականներին դիմեց հետևյալ բաց նամակով. «Որպես Իտալիայի ներկայացուցիչ այստեղ հասնելով՝ ես մեծ ցավով տեղեկացա, որ ազգաբնակչության մի մասը գաղթել է դեպի Զանգեզուր: Կառավարությունը, սրբագրելով իր առաջին մասնակի ներման դեկրետը, այսօր նոր հրատարակեց մի ընդհանուր լրիվ ներում՝ առանց որևէ մեկին դուրս թողնելու, և ինձ տվեց ցանկալի երաշխիք, թե բոլոր վերադարձողները պիտի հարգվեն: Հայաստանի երջանկության համար ես ցանկանում եմ ձեր վերադարձը դեպի Երևան, ես կանեմ ինչ որ կարող եմ, որպեսզի դուք հարգվեք և ապահով լինեք»[4]:

Հայհեղկոմի վերջին հրամանագիր-կոչը բարոյահոգեբանական ուժգին ազդեցություն գործեց հատկապես գաղթի ճանապարհին գտնվող փախստականների և նահանջող զորամասերի վրա՝ ոգևորելով նրանց: Վայոց ձորում բոլշևիկների կողմն անցավ Կոտայքի վաշտը, երկու օր անց նույն կերպ վարվեց մի կիսավաշտ, հետո լրիվ կազմով դիրքերը թողեց և հեռացավ Նոր Բայազետի գումարտակը:

---

[1] «Կոմունիստ», 1921, 24 ապրիլի, տե՛ս նաև՝ **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 10, էջ 143:

[2] Տե՛ս «Կոմունիստ», 1921, 26 ապրիլի:

[3] Տե՛ս նույն տեղում, 23 ապրիլի:

[4] **Վ. Մինախորեան**, Վերադարձը, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 49:

Քանի որ ներումը տարածվում էր նաև Պարսկաստան անցած բոլոր անձանց վրա, ուստի բոլշևիկների հորդորները պարարտ հող էին գտնում նաև Արաքսից այն կողմ՝ Թավրիզում և նրա շրջակա այն բնակավայրերում, որտեղ կային փախստականներ[1]:

Հնչակյան կուսակցության Թավրիզի օրգան «Զանգ» թերթը ընդհանուր ներման մասին դեկրետի առթիվ հանդես էր եկել «Կառավարության և հայրենիքի ձայնը» խմբագրականով, որում ասված էր. «... Բնավեր դառած, ոսկե երազներից հիսաթափված մեր գաղթականության համար հանգստացնող և բերկրալից ձայն է լսվում: Այդ ձայնը գալիս է հայ հայրենիքից և նոր կառավարությունից: ... Դա վեհանձնության, իմաստուն քաղաքականության ձայնն է, որին պետք է արձագանքել օր, ժամ և րոպե առաջ: ... Դեպի՛ հայրենի հորիզոնները, դեպի՛ հայրենի անուշ հողը – ահա թե ձեզ՝ Թավրիզ թափված Երևանի տարագիրներ, ինչ է ասում նոր կառավարությունը իր ողջունելի ներման դեկրետով»[2]:

Թեև ներման մասին Հայաստանի հեղկոմի զույգ դեկրետները սկզբնական շրջանում չէին տալիս սպասված արդյունքները, բայց դրանից հետո էլ Հայաստանի կառավարությունը չդադարեցրեց փախստականներին ետ բերելու և Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու փորձերը:

Երևանից եկած մի շարք առաջարկներից հետո Լեռնահայաստանի կառավարությունը, վերջապես, համաձայնեց Զանգեզուրի հետագա ճակատագրի հարցով բանակցել խորհրդային կողմի հետ:

Հայաստանի հեղափոխական կոմիտեի որոշմամբ ապրիլի վերջերին կազմվեց 5 մարդուց բաղկացած մի պատվիրակություն, որը պիտի աշխատեր խաղաղ բանակցությունների միջոցով վերջ տալ Զանգեզուրի ապստամբությանը: Պատվիրակության կազմի մեջ էին Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից՝ Արտաշես Կարինյանը (պատվիրակության ղեկավար) և Վասիլի Մելնիկովը (Կարմիր բանակի ներկայացուցիչ), ինչպես նաև Երևանի քաղաքացիների կողմից՝ երեք ոչ բոլշևիկներ՝ Դավիթ Անանունը, Ադոն և Հ. Մելիքյանը[3]: Վերջին երեք անձնավորություններն իրենց կողմից պիտի արագացնեին բանակցությունների ընթացքը և Հայաստանի մտավորականության անունից Զանգեզուրի իշխանություններին խորհուրդ տային համաձայնության գալ Երևանի հետ: Միաժամանակ այդ մտավորականները պիտի ցույց տային, որ խորհրդային իշխանության մասին Զանգեզուրում տարածվող լուրերը միանգամայն անտեղի են ու անհեթեթ: Հայաստանի կառավարությունը գտնում էր, որ Երևանի մտավորականության կողմից ուղարկված ոչ բոլշևիկ պատվիրակները կարող կլինեն փարատել սխալ կարծիքներն ու սադրիչ լուրերը:

Արդեն այն հանգամանքը, որ Երևանի կառավարությունը Զանգեզուր էր

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 10 (34), էջ 144:

[2] «Զանգ» (Թավրիզ), 1921, 8 մայիսի:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113. ց. 3, գ. 61, թ. 20:

ուղարկում նաև ոչ բոլշևիկների, նշանակում էր, որ Խորհրդային Հայաստանը, հիրավի, ցանկանում էր Զանգեզուրի խաղաղության համար գործադրել բոլոր ջանքերը:

Հայաստանի հեղկոմը հետևյալ մանդատն է տվել Ա. Կարինյանին.

«Սոցիալիստական Խորհրդային Հայաստանի Հանրապետության Ռազմահեղափոխական կոմիտեն լիազորում է ընկ. Արտաշես Կարինյանին բանակցություններ վարել Լեռնային Հայաստանի և Հայրենիքի փրկության կոմիտեի կառավարությունների և հրամանատարության հետ՝ զինվորական գործողությունները դադարեցնելու մասին:

Ընկ. Կարինյանին տրվում են արտակարգ լիազորություններ՝ մշակելու զինադադարի պայմանները և վերջնականորեն դադարեցնելու զինվորական գործողությունները»[1]:

Մանդատը ստորագրել էին ՀՍԽՀ ռազմահեղափոխական կոմիտեի նախագահի տեղակալ Պողոս Մակինցյանը, անդամ Ասքանազ Մռավյանը և գործերի կառավարիչը:

Խորհրդային Հայաստանի կառավարական պաշտոնաթերթը գրում էր, որ բանվորագյուղացիական իշխանությունը այդ քայլին դիմում էր ոչ թե նրա համար, որ թույլ էր: Կարմիր բանակը շատ հեշտորեն կարող էր տապալել Զանգեզուրի կառավարությունը և ճնշել ապստամբությունը, բայց նա խուսափում էր դրանից, որովհետև քաջ գիտակցում էր, որ ամեն մի ռազմական գործողություն ամենից առաջ հարվածում էր հայ աշխատավորների, տվյալ դեպքում՝ Դարալագյազի և Զանգեզուրի գյուղացիական զանգվածների տնտեսությանը: Ռազմական գործողությունների վայրերում հարկ էր լինում կազմակերպել նոր զորամասեր տեղի բնակիչներից, կերակրել զինվորներին, խլել գյուղացիներից պարեն և անասնակեր, զենքի փոխադրության համար առգրավել շինականների սայլերը, լծկանները, գրաստները: «Եվ ահա, նկատի ունենալով հենց այդ բոլորը, մեր կառավարությունը հանձնարարում է իր պատգամավորներին՝ որքան կարելի է արագորեն ուղևորվել Զանգեզուր և բանակցությունների միջոցով վերջ տալ ռազմական գործողություններին»[2]:

Պատգամավորությունը լրիվ կազմով Երևանից դուրս էր եկել մայիսի 1-ին և մայիսի 3-ին հասել մերձճակատային Հերհեր գյուղը: Նույն օրը Երևանի մտավորականության երեք ներկայացուցիչները այստեղից ուղևորվել էին տասը վերստ հեռավորության վրա ընկած Գնդեվազ գյուղը, որտեղ գտնվում էր Վայոց ձորի գավառապետ և տեղի դաշնակցական զորամասերի հրամանատար Յապոնի շտաբը: Այդ նույն օրը մտավորականության պատվիրակները հասել էին Գնդեվազ, իսկ Հայաստանի կառավարության պատվիրակները՝ Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը, մնացել էին Հերհերում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113. ց. 3, գ. 61, թ. 52:

[2] «Խորհրդային Հայաստան», 1921, 23 հունիսի:

Մայիսի 3-ին Դ. Անանունը Ա. Կարինյանին երկտող է ուղարկել:

«Սիրելի՛ Արտաշես.

Հասանք Գնդեվազ: Մեր նպատակների մասին հաղորդված է Կենտրոնական կառավարությանը (Գորիսի: – *Ա. Ս.*): Սպասում ենք պատասխանի, որի մասին կհաղորդենք ձեզ»[1]:

Հերհերում Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը սպասում են երկու օր, բայց լուր չստանալով՝ պաշտոնական դիմում են ուղարկում Գնդեվազ:

«Զանգեզուրի կառավարության և զորահրամանատարության.

Հայաստանի Հեղկոմը և կարմիր զորաբանակի հրամանատարությունը հանձնարարել են մեզ սկսել հաշտության բանակցություններ Զանգեզուրում գոյություն ունեցող կառավարության հետ՝ զինվորական գործողությունների դադարեցման համար: Խնդրում ենք տեսակցության տեղի և ժամանակի մասին հաղորդել Հերհեր:

Ա. Կարինյան
Վ. Մելնիկով
Հերհեր գյուղ, 1921 թ. մայիսի 5»[2]:

Այս գրությանը նույն օրը տրվել է Յապոնի պատասխանը:

«Ա. Կարինյանին և Վ. Մելնիկովին.

Ձեր առ 5 մայիսի 1921 թ. թիվ 1 գրությունը ստացա և նույնությամբ հաղորդեցի կառավարության և հրամանատարության: Պատասխանը ստանալուն պես կհաղորդեմ Ձեզ:

Յապոն
5 մայիսի 1921 թ.
Գնդեվազ»[3]:

Այդ պաշտոնական նամակից հետո Ա. Կարինյանը Դ. Անանունից ստացել է մի երկտող:

«Սիրելի՛ Արտաշես.

Կենտրոնական կառավարությունից ստացանք տեղեկություն, որ մեզ՝ պատգամավորներիս, պիտի լսեն Գնդեվազում: Սպասում ենք ներկայացուցչի գալստյան:

Քո Դավիթ»[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 36:
[2] Նույն տեղում, թ. 20-ի շրջերես:
[3] Նույն տեղում, թ. 39:
[4] Նույն տեղում, թ. 42:

Դ. Անանունի երկտողին ի պատասխան՝ Կարինյանը Գնդեվազ է ուղարկել հետևյալ գրությունը՝

«Սիրելի՛ Դավիթ.

Քո նամակը ստացա: Այսօր մի տղայի հետ քեզ նամակ ղրկեցի: Խնդիրը նրանումն է, որ շատ են ուշացնում: Եթե կարող ես՝ տեղեկացրու նրանց, որ շուտ գան: Հույս ունեմ, որ վաղը տեղեկություն կստացվի: Երևանից մեզ շտապեցնում են: Ավելի լավ է շուտ որոշել խնդիրները: Եթե կարող ես՝ ուղարկիր Զանգեզուրում լույս տեսած հրատարակությունները: Ավելի լավ կլիներ, որ նրանք իրենց ներկայացուցչին մանդատ տային, որպեսզի հենց Գնդեվազում սկսենք կանոնավոր բանակցությունները:

Բարևներ, Արտաշես:

1921 թ. մայիսի 5, Հերհեր գյուղ»[1]:

Նույն օրը Ա. Կարինյանը Անանունից ստացել է իր այդ գրության պատասխանը:

«Գնդեվազ, մայիսի 5

Արդեն առավոտյան հատուկ սուրհանդակի միջոցով հայտնել էի քեզ, որ կենտրոնական կառավարությունից ստացել ենք պատասխան, թե մեզ պիտի լսեն Գնդեվազում: Մենք սպասում ենք, որ կգա կառավարության պատասխանատու ներկայացուցիչը և նրան մանրամասն իրազեկ կդարձնենք մեր առաքելության մասին:

Այստեղ գրականություն չկա, թեև Գորիսում թերթ լույս է տեսնում: Ողջ եղիր ու համբերությամբ սպասիր: Մեր ողջույնները հաղորդիր Մելնիկովին:

Քո Դավիթ»[2]:

Պատվիրակության՝ Հերհերում մնացած անդամներին թվում էր, թե շուտով Գորիսից լուր կգա Գնդեվազում բանակցություններ սկսելու մասին, և իրենք կմեկնեն այնտեղ: Բայց դա տեղի չունեցավ: Ուստի Ա. Կարինյանը ստիպված նամակ գրեց նաև Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ Համբարձում Տերտերյանին՝ ցանկություն հայտնելով, որ նա այդ նամակը ցույց տա նաև վարչապետ Սիմոն Վրացյանին: Կարինյանը լրջախոհության կոչ արեց նրանց՝ ասելով, որ տվյալ պայմաններում հայ ժողովրդի համար ամենակարևորը խաղաղությունն է, և միայն նա և նրա սոցիալիստական պետությունը ի վիճակի կլինեն ուժ հավաքել և ոտքի կանգնել:

«Այսուհետև,– նշում է նա,– ամբողջ պատասխանատվությունն ընկնում է

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 43:

[2] Նույն տեղում, թ. 40:

Զանգեզուրի կառավարության վրա, որն իր ապստամբությամբ ոչ միայն թուլացնում է միակ օրինավոր, անկախ Խորհրդային Հայաստանի ուժը, այլև նորանոր վնասներ է հասցնում առանց այն էլ վիրավոր ժողովրդին» [1]:

Վերջապես մայիսի 6-ին Գնդեվազ եկան Գորիսի կառավարության ներկայացուցիչները: Հաջորդ օրն այդ մասին Անանունը հայտնեց Կարինյանին:

«Գնդեվազ, 7 մայիսի 1921 թ.

Սիրելի՛ Արտաշես.

Երեկ, երեկոյան, Գնդեվազ եկան կառավարության ներկայացուցիչները: Զեկուցեցինք մեր առաքելության նպատակների մասին: Կառավարության ներկայացուցիչները այսօր վերադառնում են զեկուցանելու կառավարության, որից հետո կգան պաշտոնական ներկայացուցիչները: Պետք է աչքի առաջ ունենալ, որ ֆիզիկական հնարավորություն չկա արագորեն կապ հաստատելու: Պաշտոնական ներկայացուցիչները կարող են Գնդեվազ գալ 3-4 օրից հետո: Ողջ եղիր: Մեր ողջույնները Մելնիկովին:

Քո Դավիթ»[2]:

Վերոնշյալ նամակը Դ. Անանունը գրել էր այն բանից հետո, երբ ինքը և իր մյուս երկու ընկերները զանգեզուրյան կողմին նորից առաջարկել էին փութացնել բանակցությունները: Գնդեվազը Գորիսի հետ կապված էր հեռախոսակապով, ուստի նրանք կարծում էին, որ հեռախոսի միջոցով հնարավոր կլինի արագացնել երկու կողմերի պատվիրակների հանդիպումը: Նրանց վրա տարօրինակ տպավորություն էր թողել այն, որ Գորիսից Գնդեվազ էին եկել «ոչ պաշտոնական» մի քանի ներկայացուցիչներ և առանց իրենց հետ խորհրդակցելու՝ անակնկալ կերպով վերադարձել: Այդ մասին Դ. Անանունը հաղորդում էր Ա. Կարինյանին: Վերջինս տարակուսել էր, թե ինչու իրեն գրած նամակում Անանունը Զանգեզուրի իշխանությունը կոչել էր «Կառավարություն», իսկ դրանից առաջ՝ մայիսի 5-ին գրած նամակում՝ «Կենտրոնական կառավարություն»: Արդյոք «Կենտրոնական կառավարությունը» Փրկության կոմիտե՞ն է, իսկ «Կառավարությունը»՝ Զանգեզուրի իշխանությո՞ւնը, և եթե այո, ապա ո՞ւմ հետ է գործ ունենալու Երևանից եկած պատգամավորությունը: Չնայած այս անորոշությանը, այնուամենայնիվ, Ա. Կարինյանը մայիսի 7-ին նամակ ուղարկեց Դ. Անանունին և հայտնեց, որ ինքը և Վ. Մելնիկովը ցանկանում են ուղևորվել Գնդեվազ և հանդիպել Գորիսից եկած որևէ, թեկուզ «ոչ պաշտոնական» ներկայացուցչի հետ[3]:

Եվ այսպես, հինգերորդ օրն էր, ինչ Կարինյանն ու Մելնիկովը Հերհերում

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 25:

[2] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 38:

[3] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 23 հունիսի:

նստած Գորիսից սպասում էին պաշտոնական պատասխանի, բայց պատասխանն այդպես էլ չէր գալիս: Նրանք ստիպված մայիսի 7-ին նամակ ուղարկեցին Գնդեվազ, Յապոնին՝ Գորիս հաղորդելու համար:

«Զանգեզուրի կառավարությանը և բանակի հրամանատարությանը.

Ս.թ. մայիսի 5-ի մեր առաջարկը մինչև այժմ մնացել է առանց պատասխանի: Այս նկատառումով տպավորություն է ստեղծվում, թե Զանգեզուրում գոյություն ունեցող կառավարությունը հակված չէ խաղաղ բանակցությունների ուղիով դադարեցնել ռազմական գործողությունները: Ուստի կրկին դիմում ենք Ձեզ նույն առաջարկով, շտապ հաղորդեցեք մեզ խաղաղ բանակցությունների համար պատվիրակությունների հանդիպման ժամկետի մասին»[1]:

Մինչ Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը պատրաստվում էին Հերհերից մեկնել Գնդեվազ, այնտեղից ստացվեց Դ. Անանունի երկտողը:

«Գնդեվազ, 8 մայիսի

Սիրելի՛ Արտաշես.

Կառավարության ներկայացուցիչները, որոնց զեկուցում տվինք, անմիջապես վերադարձան, որ շտապեցնեն պաշտոնական ներկայացուցիչների գալուստը: Մենք էլ էինք փութացնում: Հավանորեն մի երեք օր էլ պիտի սպասենք նրանց գալստյան: Եթե ձեզ մոտ թեյ ու չամիչ կա՝ բաժին հանեցեք մեզ, նույնպես ծխախոտ: Ողջ եղեք:

Դավիթ»[2]:

Նույն օրը հերթական նամակը է ստացվեց նաև Յապոնից:

«Ա. Կարինյանին և Վ. Մելնիկովին.

Ձեր մայիսի 7-ի նամակի բովանդակությունը նույնությամբ հաղորդված է կառավարության և հրամանատարության շտապ կարգով: Հետևանքի մասին ձեզ կհաղորդվի նույնպես շտապ կարգով:

8 մայիսի 1921 թ.

գյուղ Գնդեվազ»[3]:

Երբ Հերհերում Ա. Կարինյանը ստացավ Դ. Անանունի՝ մայիսի 8-ի նամակը, նա համոզվեց, որ Զանգեզուրի իշխանությունը խուսափում է պարզ պատասխան տալուց: «Արդեն չափազանց ակներև է այն,– շեշտում էր Կարինյանը,– որ «Կառավարության ներկայացուցիչների» վերադարձը, իբր թե «զեկուցման համար», կատարվում է ձգձգման նպատակով»:

Ահա թե ինչու Դ. Անանունի նամակը ստանալուց հետո նա Վ. Մելնի-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 46:

[2] Նույն տեղում, թ. 37:

[3] Նույն տեղում, թ. 45:

կովի հետ մայիսի 8-ին հեռացավ Հերհերից և վերադարձավ Մալիշկա գյուղ: Ըստ երևույթին Դարալագյազում գտնվող զանգեզուրյան հետախույզները, տեղեկանալով այդ մասին, շտապ հայտնեցին Գնդեվազում գտնվող Յապոնին, իսկ սա հեռախոսով հաղորդեց Գորիս: Այստեղ, հավանաբար, խորհրդակցելով՝ կառավարությունն այն հետևությանը է հանգեց, որ Խորհրդային Հայաստանի պատգամավորության վերադարձը Երևան կարող էր ունենալ անկանխատեսելի հետևանքներ, ուստի պատասխան տալը կամ չտալը դառնում էր հրամայական անհրաժեշտություն:

Անցավ ևս մի օր, և մայիսի 9-ին Հերհերում Յապոնից ստացվեց սպասված գրությունը:

«Պ. Պ. Արտ. Կարինյանին և Վ. Մելնիկովին.

Այս րոպեին ստացա կառավարությունից հրահանգ, որ բանակցությունների վայր է նշանակված Ղալաջուղ գյուղը, որտեղ և Դուք տեղումս եղած պատգամավորների հետ պետք է բարեհաճեք մեկնել: Ձեզ Գնդեվազ բերելու համար վաղը՝ ամսիս 10-ին, ուղիղ ժ. 12-ին մեր և Ձեր առաջավոր դիրքերի մեջ եղած տարածության վրա կլինի մեր մարդը, որը կուղեկցի Ձեզ Գնդեվազ:

ժ. 18-ին
9 մայիսի 1921
Գնդեվազ»:

Ապա Յապոնը գրության վերջում ավելացրել էր.

«Հ. Գ.– Ձեզ համար սահմանի վրա պատրաստ կլինի երկու ձի, այնպես որ, Ձեր մոտ եղած ձիերը սահմանից կարող եք ետ ուղարկել:

Նույն»[1]:

Կարինյանը և Մելնիկովը այդ ամենի մասին Մալիշկա գյուղից Նորաշենի հեռագրատան միջոցով մայիսի 9-ի կեսօրին զեկուցեցին Երևան՝ Պ. Մակինցյանին ու զորքերի երևանյան խմբավորման հրամանատար Վելիկանովին[2], և նա իսկույն ևեթ մեկնեց Հերհեր՝ Գնդեվազ գնալու համար, որտեղ և պետք է որոշվեր, թե որ գյուղը կարող էր բանակցությունների համար ավելի հարմար լինել:

Նույն ժամերին ՀՍԽՀ արտգործժողկոմի տեղակալ Ա. Մռավյանը Մոսկվա՝ Սահակ Տեր-Գաբրիելյանին հաղորդում էր, որ «Զանգեզուրի ներկայացուցիչները եկել են Դարալագյազ խաղաղ բանակցությունների: Սպասում ենք զանգեզուրյան կառավարության վերջնական պատասխանին»[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 41:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 5, 6, 7:

[3] Նույն տեղում, ց. 1, գ. 9, թ. 48-ի շրջերես:

Մայիսի 10-ին Կարինյանը և Մելնիկովը Հերհերից հետևյալ տեքստն ուղարկեցին Նորաշեն, որտեղից հեռագրով հաղորդում էին Երևան՝ Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, պատճենը՝ երևանյան խմբավորման հրամանատար Վելիկանովին:

«Այսօր, մայիսի 10-ին (այսպես է արխիվային փաստաթղթում, պետք է լիներ մայիսի 9-ին: – *Ա. Ս.*), Յապոնի միջոցով ստացել ենք Զանգեզուրի կառավարության հրավերը: Հանդիպման տեղը նրանց կողմից նշանակված է Ղալաջուղ: Հիմա մենք մեկնում ենք Գնդեվազ: Համառորեն կպնդենք փոխելու բանակցությունների տեղը՝ տեխնիկական և Երևանի հետ կապ չունենալու նկատառումներով»[1]:

Հայաստանի կառավարության պատվիրակության քայլերին ակնդետ հետևում էին ոչ միայն Երևանից, այլև Բաքվից: 11-րդ բանակի հրամանատարությունը մեծապես շահագրգռված էր, որպեսզի որքան հնարավոր է շուտ խաղաղությամբ ավարտվեր զանգեզուրյան կնճիռը, որպեսզի Կարմիր բանակի զորամասերը ստիպված չլինեին նորից արյունահեղ կռիվների մեջ մտնել: Ուստի նույն օրը Կարինյանը և Մելնիկովը նույն բովանդակությամբ և նույն գծով հեռագիր են ուղարկել Բաքու՝ Ադրբեջանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Աթաբեկյանին[2]:

Անսպասելի և անհասկանալի էր այն, որ բանակցությունների վայր, հակառակ Դ. Անանունի նախորդ գրության, Գորիսի կառավարությունն առաջարկել էր ոչ թե Գնդեվազը կամ մի որևէ ուրիշ գյուղ Դարալագյազում, այլ ռազմաճակատից հեռու Ղալաջուղ գյուղը: Բայց Կարինյանը և Մելնիկովը չեն ուզել նոր ձգձգումների առիթ տալ և որոշել են անհապաղ ուղևորվել Գնդեվազ և այնտեղ արդեն քննարկել, թե որ գյուղը կարող է բանակցությունների համար ավելի հարմար լինել:

Մայիսի 10-ին Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը ուղևորվել են Մալիշկայից և նույն օրը՝ երեկոյան ժամը 8.30-ին, հասել Գնդեվազ: Այստեղ են եղել պատգամավորության կազմի մեջ մտնող հայ հասարակության ներկայացուցիչները (Դ. Անանուն, Ադո, Հ. Մելիքյան) և Դարալագյազի գավառապետ Յապոնը:

Գնդեվազ գյուղում երևանյան պատգամավորությունը, որն արդեն լրիվ կազմով էր, հայտարարել, որ Ղալաջուղ գյուղը չափազանց հեռու է ռազմաճակատից և այնքան էլ հարմար չէ՝ բանակցություններ վարելու համար: Նրանց, սակայն, տեղեկացվել է, որ Զանգեզուրի իշխանության կողմից միմիայն այդ գյուղն է հարմար դիտվել: Դա նշանակում էր, որ որևէ առարկության դեպքում կարող էին նորից ձգձգվել բանակցությունները: Մյուս

---

[1] ՀԱԱ, ֆ. 113. ց. 2, գ. 70, թ. 1, տե՛ս նաև «Կոմունիստ», 1921, 13 մայիսի:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 1:

կողմից՝ Խորհրդային Հայաստանի պատվիրակները ցանկանում էին ապացուցել, որ բանակցությունների տեղի հարցում համաձայնվելով Գորիսի հետ՝ խորհրդային իշխանությունը մեկ անգամ ևս ցուցադրում էր, որ իրապես նա կողմնակից էր վիճելի խնդրի արագընթաց լուծմանը և ընդհանրապես ջատագով է խաղաղության: Դրանից հետո Յապոնը հայտնում էր, որ «կառավարության ներկայացուցիչներն արդեն հասել են Ղալաջուղ և այդտեղ սպասում են ձեր դելեգացիային»: Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը մտածում էին Ղալաջուղ մեկնել հաջորդ օրվա առավոտյան, բայց Յապոնը պատգամավորությանն առաջարկեց լրիվ կազմով հենց գիշերը դուրս գալ Գնդեվազից և ուղևորվել այնտեղ: Երբ Ա. Կարինյանը տարակուսանքով հարցրեց, թե որքանով է հարմար ճանապարհ ընկնել գիշերով, Յապոնը պատասխանեց, որ անհանգստանալու հարկ չկա, քանի որ Գնդեվազից մինչև Ղալաջուղ ճանապարհն այնքան էլ երկար չէ, բացի այդ՝ արդեն Ղալաջուղ հասած պատվիրակությանը սպասեցնել տալը հարմար չէր: Գիշերային երկար ճանապարհ կտրելը, այն էլ՝ դեռ ձյունապատ սարերով, հայ մտավորականության ներկայացուցիչները հարմար չէին համարում: Գիշերվա ժամը 10.30-ին Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը մեկնեցին Սիսիան, իսկ պատվիրակության մյուս երեք անդամները՝ Անանունը, Ադոն և Մելիքյանը, Գնդեվազից վերադարձան Երևան[1]:

Շուտով Ա. Կարինյանին և Վ. Մելնիկովին պարզ է դարձավ, որ ուղեկցող զինվորներն իրենց տանում են ճանապարհից բավականին հեռու ընկած զարտուղի շավիղներով, որպեսզի չտեսնեն Զանգեզուրի զորամասերի ռազմաճակատային դասավորումները:

Մայիսի 11-ի վաղ առավոտյան՝ ժամը 7.30-ին, Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը հասան Ղալաջուղ, որը բարձր լեռներով շրջապատված, աշխարհից կտրված գյուղ էր՝ մի խոր ձորի մեջ, Որոտան (Բազարչայ) գետի ափին: Գյուղում ապրում էին ընդամենը 75-80 տուն բնակիչներ[*]:

Տեղ հասնելուն պես երկու պատգամավորներին գյուղի պարետը հատկացրեց մի տուն, որի բակում տեղավորվեցին մի քանի զինվորներ՝ «դելեգացիայի պաշտպանության համար», բայց իրականում նրանց հանձնարարված էր բակից դուրս չթողնել պատվիրակներին և միաժամանակ մոտ չթողնել այն գյուղացիներին, որոնք ցանկանում էին բակ մտնել: Պարզ էր, որ պատգամավորությունը Զանգեզուրի իշխանության հրահանգով ենթարկվում էր մեկուսացման: Այդպիսի պայմաններում պատվիրակները ստիպված եղան հինգ օր մնալ Ղալաջուղում:

---

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 114. ց. 2, գ. 70, թ. 1:

[*] Սիսիանի Ղալաջուղ գյուղն այժմ գոյություն չունի. նրա բնակիչները 30-ական թվականներին վերաբնակություն են հաստատել շրջանի ուրիշ գյուղերում (ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 71):

Մայիսի 11-ի վաղ առավոտյան Ղալաջուղ հասած պատգամավորների համար միանգամայն անսպասելի էր, որ Զանգեզուրի իշխանության կողմից դեռևս ոչ ոք չէր եկել, թեև Գնդեվազում Յապոնը հայտնել էր, թե Գորիսի պատվիրակներն արդեն Ղալաջուղում սպասում են իրենց: Ուստի նրանք գյուղի պարետին հայտնեցին, որ իրենք միայն մեկ օր կարող են սպասել, և եթե հաջորդ օրը Զանգեզուրի իշխանության ներկայացուցիչները չգան, ապա իրենք ստիպված կլինեն հեռանալ:

Վերջապես, մայիսի 11-ի երեկոյան պատգամավորությանը հայտնեց, որ Զանգեզուրի իշխանության ներկայացուցիչներն արդեն եկել են, և որ մյուս օրը՝ վաղ առավոտյան, կսկսվեն բանակցությունները:

Բանակցությունների ընթացքն արագացվեց Ալեքսանդր Մյասնիկյանի՝ Հայաստան գալուց հետո:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո նորաստեղծ հանրապետությունը մեծապես կարիք ուներ կուսակցական և պետական փորձված գործիչների: Բազմաթիվ հայեր պատասխանատու պաշտոններ էին զբաղեցնում Ռուսաստանում, ինչպես նաև խորհրդայնացված Ադրբեջանում և Խորհրդային Վրաստանում:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի սկզբին, այսինքն՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո, ՌԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ ամբողջ Խորհրդային Ռուսաստանում հայ կոմունիստների զորահավաք էր հայտարարվել՝ Խորհրդային Հայաստան ուղարկելու համար:

«Կոմունիստ» (Երևան) թերթը հաղորդում էր. «Դեպի Խորհրդային Հայաստան են մեկնում բոլոր պատասխանատու աշխատողները: Գալիս են ընկ. Մյասնիկյանը (Ա. Մարտունի), Լուկաշինը (Սարգիս Սրապիոնյան), Կարինյանը, Նազարեթյանը, Մակինցյանը, Բորյանը և ուրիշներ: Ռոստովից արդեն ուղևորվել են 24 ընկերներ»[1]:

Ցուցակագրված հայ կոմունիստների մեծ մասի Հայաստան գալը ժամանակավորապես հետաձգվել էր մի շարք պատճառներով ու առաջին հերթին՝ 1921 թ. Փետրվարյան ապստամբության հետևանքով: Բայց նույնիսկ ապստամբության օրերին շարունակվում էր կոմունիստների ցուցակագրումը՝ ապստամբության ընթացքում և այն ճնշելուց հետո նրանց անմիջապես Հայաստան ուղարկելու համար:

Այսպես, 1921 թ. մարտի 15-ին Ասքանազ Մռավյանը Դիլիջանից հեռագիր ուղարկեց Թիֆլիս՝ ՌԿ(բ)Կ կենտկոմի կավբյուրոյին և Վրաստանի կոմկուսի կենտկոմին՝ հետևյալ բովանդակությամբ. «Հաշվի առնելով փորձված և պատասխանատու աշխատողների կարիքը, Հայաստանի կոմկուսի կենտկոմը խնդրում է Վրաստանում հայտարարել կոմունիստ հայերի մոբիլիզացիա և անմիջապես ուղարկել Դիլիջան քաղաք՝ Հայաստանի կոմկուսի

[1] «Կոմունիստ» (Երևան), 1920, 12 դեկտեմբերի:

կենտկոմի բյուրոյի տրամադրության տակ: Արդյունքների մասին խնդրում ենք հաղորդել հեռագրով»[1]:

Հաջորդ օրն իսկ Թիֆլիսում ընդունվեց սույն որոշումը.

«Վրաստանի հայ կոմունիստների մոբիլիզացիայի մասին.

Հայաստանի Կոմկուսի Ժամանակավոր Կենտկոմի որոշման համապատասխան, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոն սույնով հայտարարում է Վրաստանի բոլոր հայ կոմունիստների մոբիլիզացիա: Բոլոր ընկերներին, առանց բացառության, առաջարկվում է սույնի հրապարակման օրից երկօրյա ժամկետում գրանցվել ՍԽՀ Հայաստանի միսիայի հաշվառման - բաշխիչ բաժնում (Գոլովինսկի պողոտա, թիվ 8):

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոյի նախագահության անդամներ՝ Օրջոնիկիձե, Օրախելաշվիլի, Նազարեթյան

Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար՝ Գր. Դումբաձե

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի ներկայացուցիչ Լազրյան»[2]:

Սույն որոշման քաղվածքը տպագրվեց «Պրավդա Գրուզիի» թերթում[3]:

Եվ ահա այժմ, երբ վերահաստատվել էր խորհրդային իշխանությունը Հայաստանում, Կոմունիստական կուսակցության ղեկավար մարմինների որոշումներով Ռուսաստանից, Վրաստանից, Ադրբեջանից հանրապետություն ժամանեցին մեծ թվով կոմունիստներ՝ կուսակցական, պետական, զինվորական, հասարակական գործիչներ:

Նորաստեղծ հանրապետություն եկած բոլշևիկ գործիչներից շատերն առաջին անգամ էին լինում Հայաստանում: «Հայրենիք» ամսագրում Վահան Մինախորյանը գրում էր, թե Հայաստան եկածները «տարրական ծանոթություն չունեին երկրի մասին»[4]: Այդ պնդումը ճիշտ էր մասնակիորեն. նրանց մի մասն էր միայն, որ չէր եղել նախնիների հայրենիքում, և երկրին ծանոթ չլինելը փոխհատուցվում էր այդ գործիչների բուռն ցանկությամբ՝ ուժերի լարումով ոտքի կանգնեցնելու երկիրը[5]:

1921 թ. մարտի 21-ին ՌԿ(բ)Կ կենտկոմը որոշել էր Հայաստան աշխատանքի ուղարկել Կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության ականավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանին: Կենտկոմի կազմբյուրոյի որոշմամբ այն ժամանակվա ամենախոշոր բոլշևիկյան հայ գործիչը նշանակվեց Հայհեղկոմի նախագահ և մտցվեց Հայաստանի կոմկուսի կենտկոմի, նրա բյուրոյի և ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի կազմի մեջ:

Կովկաս մեկնելուց առաջ Ա. Մյասնիկյանը հանդիպեց Լենինի հետ և նրանից ստացավ կարևոր ցուցումներ: Մյասնիկյանը Լենինին խնդրեց գրա-

---

[1] “Правда Грузии”, 17 марта, 1921.

[2] ՍՔՊՌՊՊԱ, ֆ. 85, ց. 67, գ. 18, թ. 1. 2:

[3] Տե՛ս “Правда Грузии”, 17 марта, 1921:

[4] **Վ. Մինախորեան**, Վերադարձը, «Հայրենիք», 1924, թիվ 7, էջ 88:

[5] Տե՛ս նույն տեղում:

վոր շարադրել երկրամասի կոմունիստներին ուղղված ցուցումները: 1921 թ. ապրիլի 14-ին Լենինը գրեց «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» դիրեկտիվ-նամակը և հանձնեց Մյասնիկյանին: Նամակում շարադրված էին այսրկովկասյան նորաստեղծ խորհրդային հանրապետություններում նոր կարգերի ամրապնդման և սոցիալիստական շինարարության ծավալման ուղղությամբ երկրամասի կոմունիստների որոշակի խնդիրները: Անդրադառնալով Կովկասում սոցիալիզմին անցնելու յուրահատկության հարցերին՝ Լենինը գրում էր. «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,– ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի հանրապետությունների համար՝ ի տարբերություն ՌՍՖԽՀ-ի: Ահա թե ինչն է հարկավոր հասկանալ ու կարողանալ իրականացնել, ի տարբերություն մեր տակտիկայի»[1]:

Հասնելով Թիֆլիս՝ մայիսի 2-ին Մյասնիկյանը ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի նիստում հաղորդեց Լենինի նամակի մասին:

1921 թ. մայիսի 4-ին ժամանելով Երևան՝ Ա. Մյասնիկյանն անմիջապես անցավ Հայաստանի հեղկոմի նախագահի պարտականությունների կատարմանը: Նա մի քանի օրում հանգամանորեն ծանոթացավ հանրապետության ներքին կյանքին, խորամուխ եղավ այն պատճառների մեջ, որոնք նորաստեղծ հանրապետությունում ծնունդ տվեցին արյունահեղ քաղաքացիական պատերազմի: Նրան շատ էր մտահոգում ոչ միայն հանրապետության տնտեսական ծանր վիճակը, այլև արտաքին քաղաքական դրությունը: Չնայած նրան, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարության հարկադրանքով քեմալական բարբարոսները հեռացել էին Ալեքսանդրապոլ քաղաքից և Շիրակի գավառից, Թուրքիայի հետ հարաբերությունները շարունակում էին լարված մնալ: Այդ օրերին Հայաստանի մամուլում հրապարակվեց Լենինի՝ 1921 թ. ապրիլի 14-ի նամակը, որ Մյասնիկյանն էր իր հետ բերել Կովկաս: Հանրապետության նախագահը անհրաժեշտ համարեց նամակի ոգով, նրանում առաջ քաշված խնդիրների լույսի ներքո, կուսակցական, խորհրդային, տնտեսական լայն ակտիվի հետ միասին քննարկել հայ ժողովրդին հուզող կենսական հարցերը:

1921 թ. մայիսի 9-ին հրավիրվեց Երևանի կուսակցական կազմակերպության և Հայաստանի արհեստակցական միությունների միացյալ ժողով, որտեղ հանրապետության նոր ղեկավարը հանդես եկավ իր առաջին ծրագրային ճառով, որը տևեց ոչ ավելի, քան 20 րոպե: Բայց այդ համառոտ ելույթում նա շարադրեց հանրապետության առջև կանգնած անասելի բարդ խնդիրների լուծման մի ամբողջ ծրագիր:

---

[1] **Վ. Լենին**, ԵԼԺ, հ. 43, էջ 238-240:

Անդրադառնալով Հայաստանում ստեղծված ահավոր կացությանը՝ Ալեքսանդր Մյասնիկյանը շեշտում էր. «Դուք տեսնում եք, որ դրությունը անմխիթար է: Սա ամենադաժան, ամենադժբախտ երկիրն է Անդրկովկասում: Դեռ այս երկրի փողոցներում, դաշտերում, հիշեք Ալեքսանդրապոլը, ցրված են դիակներ: Քաղցը ահագին է: Պետք է կռվել քաղցի դեմ»[1]:

Մյասնիկյանը կոչ արեց ահավոր փլուզումից ելք գտնել՝ հույսը դնելով սեփական ուժերի վրա, առավելագույնս օգտագործելով ներքին հնարավորությունները: Ըստ որում, նա այն կարծիքին էր, որ Հայաստանի վերածնության գործը բոլոր բնակիչների պարտքն է՝ անկախ նրանց սոցիալական վիճակից և դասակարգային դրությունից: «Մենք կարծում ենք,– ասում էր նա,– որ **ժողովրդի բոլոր շերտերը** (ընդգծումը մերն է: – *Ա. Ս.*) մեզ օգնության կգան»[2]: Մերժելով նեղմիտ մոլեռանդությունը՝ նա լայնախոհաբար կոչ էր անում հայրենաշեն աշխատանքի մեջ ներգրավել բոլորին: Ավելին, Մյասնիկյանը գտնում էր, որ Հայաստանի վերածնության գործի մեջ պետք է ներգրավել նաև արտասահմանյան կապիտալը: Եվ նա հիշատակում էր իր վերջին զրույցը Լենինի հետ, որի ընթացքում նա ասել էր. «Տնտեսությունը պիտի վերականգնեք ներքին ուժերով: Կարմիր բանակը ձեզ միշտ կօգնի. Ռուսաստանը քաղաքական օգնություն կտա: Բայց ձեր երկրում տնտեսական հարստություններ ունեք: Դուք չե՞ք կարող այն սեփական ուժերով օգտագործել: Դիմեցեք արտասահմանին, կոնցեսիաներ տվեք: Այդ բանը թույլ է տալիս իմ մարքսիստական խիղճը»[3]:

Իր ծրագրային ճառում Մյասնիկյանը դատապարտում էր աշխատավոր գյուղացիության և մտավորականության նկատմամբ Հայաստանում խորհրդային իշխանության՝ առաջին ամիսներին թույլ տված կոպիտ սխալներն ու անօրինականությունները:

Քննադատելով Հայաստանի կոմկուսի և Հայհեղկոմի՝ ձախ հեղափոխական արտահայտություններով առաջնորդվող ղեկավար գործիչներին, որոնք անտեղի ու անարդար մեղադրանք էին առաջադրում Հայաստանի գյուղացիությանը, թե նա «ամբողջովին վարակված է դաշնակիզմով»՝ Մյասնիկյանը շեշտում էր, որ Հայաստանի գյուղացիությունը աղքատ է, բանվորությունը՝ սակավաթիվ, մտավորականությունն իր բնույթով դեմոկրատական է և բազմաթիվ թելերով կապված է աշխատավոր դասակարգերի հետ:

Ա. Մյասնիկյանը քաղաքացիական պատերազմը ժողովրդի համար համարում էր կործանարար և գտնում, որ այն անխուսափելի չէր Հայաստանում, և ընդհանրապես պարտադիր չէր, որ Հայաստանը նույնպես անցներ քաղաքական այն բոլոր անցուդարձերի փուլերը, ինչպիսին անցել էր Խորհրդային Ռուսաստանը: «Չպետք է անցնել անպատճառ Ռուսաստանի

---

[1] **Ա. Մյասնիկյան**, նշվ. աշխ., էջ 336:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 336-337:

եռամյա քաղաքացիական կռվի **շկոլան**,– շեշտում էր նա,– հարկավոր չէ, որ հայ աշխատավորությունը անպատճառ տեսնի քաղաքացիական կռվի այն բոլոր սարսափները, ինչ որ վիճակվեց ռուս մուժիկին»[1]: Նկատի ունենալով Ադրբեջանը և Վրաստանը՝ նա հիշեցնում էր, որ «մեր հարևաններն անմիջապես, առանց ծանր քաղաքացիական կռվի անցան շինարար աշխատանքի»[2]: Նույնը պետք է արվեր նաև Հայաստանում: «Եվ դա լավ է,– ասում էր Մյասնիկյանը,– չէ՞ որ վերջիվերջո ի՞նչ է կոմունիզմը աշխատավորության համար, գյուղացու համար դա գյուղացիությունն է առանց շահագործման, կուշտ կյանք է բանվորի համար և այլն»[3]: Այո՛, Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության՝ գյուղացիության և մտավորականության նկատմամբ բռնություններ կիրառելու ոչ մի անհրաժեշտություն չկար:

Ելնելով «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» Լենինի՝ 1921 թ. ապրիլի 14-ի նամակի ցուցումներից, մասնավորապես այն խորհրդից, որ անհրաժեշտ էր «մանր բուրժուազիայի, մտավորականության և մանավանդ գյուղացիության նկատմամբ» վարել նոր, համբերատար քաղաքականություն և հանդես բերել «ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն»[4]՝ Ա. Մյասնիկյանն իր ծրագրային ճառում առաջադրում էր. «Մենք նոր գիծը շեշտակի պիտի ընդգծենք Հայաստանի համար: Մենք պիտի աշխատենք ավելի մեղմ միջոցներով»: Դրությունը Հայաստանում ուրիշ է, քան Ռուսաստանում: Այստեղ՝ Հայաստանում, «մեր քաղաքականությունը պիտի լինի ավելի զգույշ, մեղմ»[5]:

Ահա այս տեսական հիմքի վրա էր Մյասնիկյանը մշակում իր վերաբերմունքը նաև Զանգեզուրի նկատմամբ:

Մայիսի 9-ի ճառում Ա. Մյասնիկյանը նշում էր. «Մենք եկել ենք այստեղ ոչ թե քաղաքացիական կռիվ անելու, չարչարելու, այլ աշխատավորությանը տանելու դեպի խաղաղ, հանգիստ աշխատանք՝ առանց շահագործման, առանց կռվի, դեպի կոմունիզմ»[6]: Հայաստանում, ասում էր նա, ըստ էության քաղաքացիական կռիվ էր ամբողջ մի տարի: «Հայաստանը տեսել էր քաղաքացիական կռիվ անցյալ մայիսին և այս փետրվարին: Մենք կաշխատենք խուսափել այս կռվից, որ այնքան ավերումներ բերեց հայ գյուղացուն»[7]: «Ուստի,– ասում էր Մյասնիկյանը,– Զանգեզուրում մեր դեմ կռվող զինվորներին մենք դիտում ենք ոչ թե որպես ոխերիմ թշնամիների, այլ իբրև շինել հագած գյուղացիների, որոնք ոչ մի շահ չունեն կրակելու Կարմիր բանակի զինվորների՝ նույնպես շինել հագած գյուղացիների վրա»:

---

[1] **Ա. Մյասնիկյան**, նշվ. աշխ., էջ 335:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] **Վ. Լենին,** ԵԼԺ, հ. 43, էջ 238:
[5] **Ա. Մյասնիկյան**, նշվ. աշխ., էջ 335:
[6] Նույն տեղում, էջ 336:
[7] Նույն տեղում, էջ 335:

Նժդեհի զորքի դասակարգային կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ երիցս իրավացի էր Մյասնիկյանը: Զանգեզուրյան զորաջոկատները կազմված էին գավառի աշխատավոր գյուղացիներից, որոնք իրենց ֆիզիկական գոյության երաշխիքը տեսնում էին թուրք-ադրբեջանական ջարդարարների դեմ անզիջում կռվի մեջ: Դրանք այն գյուղացիներն էին, որոնք, զայրացած Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբեր-1921 թ. փետրվար ամիսներին իրականացրած «ձախ» անշրջահայաց շեղումներից և վախեցած իրենց ընտանիքների ճակատագրի համար, Խորհրդային Հայաստանից թողել և հեռացել էին Զանգեզուր՝ միանալով Նժդեհին: Վերջապես, դրանց մի մասը թուրքահայ գյուղացիներ էին, որոնք 1918 թ. Անդրանիկի զորքի կազմում եկել էին Զանգեզուր և մնացել այնտեղ՝ հույսը չկորցնելով, թե իրադարձությունների հաջող դասավորման դեպքում գուցե հնարավոր լիներ վերադառնալ հայրենի հարազատ վայրերը: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Զանգեզուրի զինյալները շարքայիններ էին՝ գյուղացիներ, աշխատավորներ:

Ինչ վերաբերում է զանգեզուրյան զինված ուժերի հրամանատարությանը, ապա պետք է ասել, որ վաշտերի և ջոկատների պետերը նույնպես տեղի գյուղացիներ էին, և նրանց զգալի մասը Դաշնակցության կուսակցության անդամ չէր: Այդ կուսակցության հետ կապված չէր նաև կադրային սպաների մեծ մասը, որոնք ծառայել էին ցարական բանակում, հետո ծառայության անցել Հայաստանի Հանրապետության բանակի մեջ: Այդ սպայությունը խորհրդային իշխանության հանդեպ անզիջում թշնամական դիրք բռնեց, երբ 1921 թ. հունվարին Հայաստանում չպատճառաբանված, անհիմն հալածանքներ սկսվեցին հայ կադրային զինվորականության դեմ՝ նրանց ձերբակալելով և աքսորելով Ռուսաստան: Այս սպայությանն էին միացել ապրիլի սկզբներից Երևանից Զանգեզուր նահանջած այն զինվորականները, որոնք հավատարիմ էին մնացել Հայրենիքի փրկության կոմիտեին:

Ինչպես ասվեց, Հայաստանի խորհրդային կառավարությունը Ա. Մյասնիկյանի Երևան ժամանելուց մի քանի օր հետո ստացել էր Լեռնային Հայաստանի համաձայնությունը Սիսիանում բանակցություններ սկսելու մասին:

Հայաստան գալուց անմիջապես հետո, ծանոթանալով իրադրությանը, Ա. Մյասնիկյանը հավանություն տվեց այն քայլերին, որ ՀՍԽՀ կառավարությունն արդեն արել էր բանակցությունների նախապատրաստման ուղղությամբ:

Նախքան պատվիրակության Ղալաջուղ ժամանելը Հայհեղկոմի նախագահ Ա. Մյասնիկյանի ստորագրությամբ մամուլում հրապարակվեցին Լեռնահայաստանի կառավարությանն ուղղված առաջարկներ ու պայմաններ, որոնք կարող էին հաշտության հիմք դառնալ: Հիմնական պայմաններն էին՝

Առաջին. Զանգեզուրի կառավարությունը, լեռնաշխարհի բոլոր ըմբոստ տարրերը պետք է հրաժարվեն զինված պայքարից, լուծարեն իրենց իշխանության մարմինները և հպատակություն հայտնեն Խորհրդային Հայաստանի կառավարությանը:

Երկրորդ. Հայհեղկոմը ընդհանուր ներում էր խոստացել նրանց, ովքեր կռվել էին Լեռնահայաստանի կառավարության հրահանգներով. նրանք այժմ ցած են դնում զենքերը և հպատակվում: Ըստ որում, ներման երաշխիք էր տրվում բոլորին՝ և՛ շարքայիններին, և՛ ղեկավարներին: Նույնիսկ ամենաակտիվ դաշնակցական գործիչները, ըստ խոստման, չպիտի ենթարկվեին տնտեսական սեղմումների կամ քաղաքական հալածանքների, կարող էին ապրել այնտեղ, որտեղ ցանկանում էին, այդ թվում՝ Զանգեզուրում:

Երրորդ. կատարվելու էին տնտեսական ու սոցիալական արմատական վերափոխումներ, մասնավորապես արդարացի էր լուծվելու հողային խնդիրը, այսինքն՝ Լեռնաշխարհի աշխատավոր գյուղացիությանը հուզող գլխավոր հարցը:

Չորրորդ. մեծապես զարկ էր տրվելու մշակութային շինարարությանը, առանձնապես՝ դպրոցական գործին[1]:

Ա. Մյասնիկյանը ուշադիր հետևում էր Զանգեզուր մեկնած ՀՍԽՀ պատվիրակության աշխատանքներին:

Սիսիանի Ղալաջուղ գյուղ հասած Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը մայիսի 12-ին այնտեղ հանդիպեցին Լեռնահայաստանի կառավարության պատվիրակներին:

Խորհրդային պատվիրակներին այստեղ միայն հայտնի դարձավ, որ Լեռնահայաստանի կառավարությունը դեռ մայիսի 6-ին քննության էր առել բանակցությունների սկսման հետ կապված հարցերը և ընտրել երեք մարդուց բաղկացած պատվիրակություն, որի մեջ էին Գեղեռն Տեր-Մինասյանը (ղեկավար), արտաքին գործերի նախարար, բժիշկ Մինաս Մինասյանը և զինվորական Լևոն Միքայելյանը: Նրանց հետ էր նաև Գառնիկ Շահինյանը, որը պատվիրակության մեջ չէր մտնում, այլ կատարելու էր քարտուղարի պարտականությունները[2]:

Դեռ բանակցությունները չսկսած՝ մայիսի 11-ին Ա. Կարինյանը հետևյալ գրությունը ստացավ Ա. Մյասնիկյանից. «Հավաստի տեղեկություններով՝ Վրացյանը գտնվում է Թավրիզում և գնում է ավելի հեռու՝ Ամերիկա*: Երևանի անկումից հետո նա կողմ է եղել կապիտուլյացիայի, բայց նրան չի հաջողվել համոզել իր բոլոր ընկերներին: Նրանց շարքերում մեծ տարաձայնություններ են: Եղե՛ք անհողդողդ բանակցությունների ընթացքում, մեր պայմանների վրա պնդել համառորեն»[3]:

Բանակցությունների առաջին նիստը կայացավ մայիսի 12-ին՝ առավոտյան ժամը 10-ին:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 4, գ. 22, թ. 1:

[2] Տե՛ս **Ա. Արշակունի**, Սիսեանի բանակցութիւնները, «Հայրենիք», 1926, հունիս, թիվ 8 (44), էջ 40:

* Ս. Վրացյանի՝ Ամերիկա գնալու մասին Ա. Մյասնիկյանի ստացած տեղեկությունը հավաստի չէր:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 10:

Լիազորությունները ստուգելուց հետո փոխադարձ համաձայնությամբ որոշվեց նիստերը նախագահել փոխնիփոխ, իսկ բանակցությունները վարել հայերեն:

Առաջին նիստի նախագահ ընտրվեց Լեռնահայաստանի կառավարության պատվիրակության ղեկավար Գեղեոն Տեր-Մինասյանը[1]:

Բացելով նիստը՝ Գ. Տեր-Մինասյանը հանդես եկավ Լեռնահայաստանի կառավարության հայտարարությամբ: Նա ողջունեց Հայաստանի խորհրդային կառավարության ներկայացուցիչների ժամանումը Լեռնահայաստան, ապա հույս հայտնեց, որ երկու պատվիրակությունների բանակցությունները հնարավորություն կտան ստեղծելու այնպիսի տանելի փոխհարաբերություններ երկու պետությունների միջև, որոնք, ի վերջո, կհանգեցնեն վերջնական խաղաղության[2]:

Տեր-Մինասյանը նշում էր, որ Լեռնահայաստանն իր աշխարհագրական դիրքով կամուրջ էր բոլոր անցումների համար, որոնք տանում էին դեպի Մերձավոր Արևելք: Իր հարևան երկրամասերի նկատմամբ Զանգեզուրը նաև ուներ ռազմագիտական խոշոր նշանակություն: Ապա Գորիսի կառավարության ներկայացուցիչը կանգ էր առնում Զանգեզուրի կռիվների պատմության վրա: Նա հիշեցնում էր, որ ռուսական հեղափոխությունից ի վեր տարբեր կողմերից մի քանի փորձեր էին արվել տիրելու Լեռնաշխարհին: Առաջին անգամ անգլիական իմպերիալիզմի ներկայացուցիչները Այսրկովկասում քանիցս ցանկացել էին և դիմել ակտիվ քայլերի՝ հանձնելու Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին, բայց Զանգեզուրի զինված գյուղացիությունը վճռականորեն ընդդիմացել էր: Դրանից հետո Ադրբեջանի ազգայնականները իրենց բանակները քշել էին դեպի Զանգեզուր ու Ղարաբաղ և ամեն անգամ ջարդված նահանջել: 1919 թ. Ադրբեջանի կողմից եղավ վերջին փորձը, երբ 12 հազարանոց բանակով արշավեցին Զանգեզուր, բայց գավառի զինված գյուղացիությունը հենց Գորիս քաղաքի մատույցներում ջախջախեց այդ բանակը և փախուստի մատնեց: Սակայն Զանգեզուրից Ադրբեջանը ձեռք չքաշեց: Դառնալով խորհրդային և շահարկելով բոլշևիկյան լոզունգները՝ Ադրբեջանի թուրքերը Կարմիր բանակի հետ հարձակում գործեցին Զանգեզուրի վրա և ռազմակալեցին գավառի տարածքների մեծ մասը: Բայց կռիվը շարունակվում էր Կապանի լեռներում, որը գնալով վերածվեց ընդհանուր ապստամբության, և զանգեզուրցիները կարողացան հարազատ երկիրն ազատագրել ու տեր դառնալ իրենց բախտին:

Այնուհետև նշելով, թե Զանգեզուրում բոլշևիկյան զորքերի հնգամյա ներկայությունը ինչպիսի մեծ վնասներ է հասցրել գավառի աշխատավորու-

---

[1] Տե՛ս Գեղեոն Տեր-Մինասյան (1865-1937 թթ.), Փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 141:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 5:

թյանը՝ Գ. Տեր-Մինասյանը հույս էր հայտնում, որ այդ բանն այլևս տեղի չի ունենա, եթե խորհրդային կողմը հաշվի նստի ազատ ու անկախ ապրելու ինքնորոշված Լեռնահայաստանի աշխատավորության կամքի հետ[1]:

Գ. Տեր-Մինասյանի հայտարարությունը Մելնիկովին թարգմանում էր Կարինյանը:

Լեռնահայաստանի կառավարության պատվիրակության ղեկավարի հայտարարությունից հետո խոսք առավ Խորհրդային Հայաստանի պատվիրակության ղեկավար Արտաշես Կարինյանը, որը բարձրացրեց մի շարք հարցեր:

Իր ելույթը Կարինյանը սկսեց նրանից, որ Հայաստանի խորհրդային կառավարությունն իրեն հանձնարարել է հայտնել Լեռնահայաստանի կառավարությանը, որ նա կամենում է «խաղաղ կերպով վերջ տալ քաղաքացիական այն պատերազմին, որը տևում է ցայժմ»: Նա նշեց, որ Զանգեզուրը և, փաստորեն, նրան միացած Լեռնային Ղարաբաղը, մնալով անկախ, դարձել էին գործիք իմպերիալիզմի համար, մի գործիք, որն ուղղվում էր ամենից առաջ Խորհրդային Հայաստանի դեմ: Եվ որպես նախնական առաջարկ Գորիսի կառավարությանը՝ խորհրդային իշխանության հաստատումն էր Լեռնային Հայաստանում և իշխանության հպատակեցումը Խորհրդային Հայաստանին: «Այդ պայմանը ընդունելու պարագային,– շեշտեց Կարինյանը,– ներման կենթարկվեն քաղաքական բոլոր այն գործիչները, որոնք ըմբոստացել են Հայաստանի խորհրդային իշխանության դեմ»[2]:

Երկրորդ հարցը, որ Խորհրդային Հայաստանի պատվիրակության ղեկավարը բարձրացրեց իր ելույթում, վերաբերում էր Զանգեզուրի՝ իրենց բնակավայրերից հեռացած թուրք գաղթականների վերադարձին: Նա հավաստիացնում էր, որ նրանց վերադարձը չէր վնասելու տեղի հայերի շահերին: Կարինյանը որպես ի գիտություն հայտնում էր, որ իր կառավարությունը հանձնարարել էր Գորիսի պատվիրակությանը հայտարարել, որ «Զանգեզուրի գյուղացիության պատկանելիք հողավայրը ոչ մի պարագայում չի կրճատվի, որովհետև առանց այն էլ Զանգեզուրի գյուղացին այնքան սակավահող է, որ հազիվ է նրան բավարարում»[3]:

Վերջում Կարինյանը բարձրացրեց քոչի հարցը՝ անվանելով մի կարևոր խնդիր, որ «այսօր ևեթ պիտի դրվի ավելի ռեալ հիմքերի վրա»: Շեշտելով, որ տափարակներում ապրող թուրք բնակչությունը առանց քոչի չի կարող ապրել՝ նա նշեց, որ ճիշտ կլիներ, եթե Զանգեզուրի գյուղացիությունը ինքը կամովին աջակցեր այդ կնճռոտ խնդրի լուծմանը: «Կարելի է այնպես կազմակերպել այդ խնդիրը,– ասաց նա,– որ քոչը ոչ մի վնաս չհասցնի լեռներում

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 75, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 6 և շրջերես:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 7:

[3] Նույն տեղում:

ապրող հայ գյուղացիությանը: Իսկ եթե մենք կարողանանք խնդիրն իրապես լուծել, դրանով իսկ կամրացնենք բարիդրացիական հարաբերությունները հայ և թուրք գյուղացիների միջև: Հայաստանի խորհրդային կառավարությունը հենց դրան է ձգտում»:

«Առաջարկելով Ձեզ այդ բոլորը, կխնդրեի տալ պատասխան Հայաստանի խորհրդային կառավարության առաջարկին»[1],– ելույթի վերջում ասաց Կարինյանը:

Խորհրդային Հայաստանի կառավարության ներկայացրած առաջարկների կապակցությամբ Լեռնահայաստանի կառավարության պատվիրակության անդամները հանդես եկան լուրջ առարկություններով:

Գ. Տեր-Մինասյանը նշում էր, որ նպատակահարմար չէ թուրք բնակիչներին վերադարձնել ամենից առաջ այն պատճառով, որ Զանգեզուրում «հողի սոսկալի պակասություն կա»: Քոչի հարցի կապակցությամբ նա Երևանի պատվիրակության ուշադրությունը հրավիրեց այն իրողության վրա, որ «դեռ ցարիզմի ժամանակ ձգտում կար իշխանության կողմից որևէ կերպ վերջ տալ այդ թափառական կենսաձևին և նոցա (քոչվորներին: – *Ա. Ս.*) դարձնել նստակյաց, որովհետև քոչի շրջանում տեղական ազգաբնակչության և քոչվորների միջև շատ հաճախ են պատահում սպանություններ, թալան, կռիվներ, որոնք իրենց հետևանքներով դառնում էին ազգամիջյան կռիվներ»: Նա գտնում էր, որ այժմ բնավ երաշխիք չկա, որ «այս պայմաններում էլ, երբ ուժեղ որևէ իշխանություն չկա, նույն դեպքերն ու անախորժությունները չեն կրկնվի ավելի լայն ծավալով և ավելի վատ հետևանքներով»: Ուստի, ասում էր Գ. Տեր-Մինասյանը, Զանգեզուրի հայ բնակչության շահերը պահանջում են, որ «այդ հարցը վճռվի և մնա այն վիճակում, ինչպես եղել է վերջին 3-4 տարվա ընթացքում»[2]:

Այլ խոսքով՝ Լեռնահայաստանի պատվիրակության ղեկավարը պարզ ու հստակ հանդես եկավ ինչպես թուրք գաղթականությունը Զանգեզուր վերադարձնելու անհրաժեշտության, այնպես էլ թուրքերի քոչը Զանգեզուրի սարեր բարձրանալուն արգելք չհանդիսանալու՝ Ա. Կարինյանի առաջարկների դեմ: Սակայն հետագա խոսակցությունների ընթացքում թուրք գաղթականությունը վերադարձնելու հարցում Լեռնահայաստանի պատվիրակության տեսակետի մեջ տեղի ունեցավ փոփոխություն. Գ. Տեր-Մինասյանը հակվեց այն կարծիքին, որ կարող էր «ընդունելի լինել» թուրքերի վերադարձի հարցը[3]:

Լեռնահայաստանի պատվիրակության անդամ բժիշկ Մինասյանը ցանկություն հայտնեց իմանալ, թե ինչ վիճակի մեջ են Խորհրդային Հայաստանի

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 7:

[2] Նույն տեղում, թ. 7 և շրջերես:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 7, տե՛ս նաև **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 239-241:

և Թուրքիայի փոխհարաբերությունները: Ա. Կարինյանը պատասխանեց, որ Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի և Խորհրդային Ռուսաստանի ու Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին կնքված պայմանագրերի համաձայն՝ Կարսն անցել էր Թուրքիային, իսկ Ալեքսանդրապոլը իր շրջանով մնում էր Խորհրդային Հայաստանին:

Գ. Տեր-Մինասյանը, Նախիջևանի հարցը համարելով «չափազանց կենսական Զանգեզուրի ժողովրդի համար», Երևանի պատվիրակության ղեկավարին հարցրեց, թե «ի՞նչ վիճակի մեջ է այժմ Շարուր–Նախիջևանի խնդիրը»: Պատասխանը եղավ այն, որ Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված դաշինքի հիման վրա Շարուր–Նախիջևանը դառնում էր ինքնավար միավոր Խորհրդային Ադրբեջանի պրոտեկտորատի տակ: Ըստ որում, Ա. Կարինյանն այդ կապակցությամբ արեց հավատ չներշնչող ուրիշ հայտարարություն՝ ասելով, թե Նախիջևան–Շարուրի «տեղական թուրք ազգաբնակչությունը դիմում է և ցանկանում, որ հայությունը վերադառնա» և որ, իբր, «այդ ուղղությամբ աշխատում են առանձնապես թուրք գործիչները»[1]:

Հարցին միջամտել է Երևանի պատվիրակության անդամ Մելնիկովը՝ ցանկություն հայտնելով իմանալ, թե «ինչպե՞ս է նայում պատգամավորությունը (Լեռնահայաստանի: – *Ա. Ս.*) այն հիմնական հարցին, որ Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը պետք է մտնեն Խորհրդային Հայաստանի մեջ, որպես նրա անբաժան մաս»[2]:

Քանի որ այդ երկրամասերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու մասին չկային համապատասխան որոշումներ, և դա առայժմ մնում էր որպես լոկ խոսակցություն, ուստի Գ. Տեր-Մինասյանն ասաց, որ «մեր կենտրոնական կառավարության հետ» խորհրդակցելուց հետո միայն «ի վիճակի կլինենք այդ հարցին վերջնական պատասխան տալ»: Տեր-Մինասյանը միաժամանակ նկատում էր, որ Նախիջևանի հարցը «դուք դնում եք որպես արդեն վճռված հարց», բայց նման ձևով հարցի լուծումը կապ չուներ բանականության հետ. Զանգեզուրի թիկունքում ստեղծվում էր նրան թշնամի մի ինքնավար թուրքական միավոր: Ակնարկելով Մելնիկովի այն միտքը, թե Զանգեզուրը մտնելու էր Հայաստանի կազմի մեջ՝ նա ավելացրել է. «Չգիտեմ ինչպե՞ս պետք է Խորհրդային Հայաստանը կապ պահպանի Զանգեզուրի հետ՝ առանց Նախիջևանի: Պետք է այդ հարցը համարել չսպառված», Երևանի կառավարությունը պետք է աշխատի մի ելք գտնել, որպեսզի «Նախիջևանը լինի Խորհրդային Հայաստանի մի մասը»[3]:

Ա. Կարինյանը շեշտել է, որ Նախիջևանի հարցը վերջնականապես

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 8. Տե՛ս նաև **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 240:

[2] Նույն տեղում, թ. 8-ի շրջերես:

[3] Նույն տեղում, տե՛ս նաև՝ **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 241-242:

վճռված է Ադրբեջանի օգտին, և ավելորդ է այլևս դրան անդրադառնալ: Իր հերթին Մելնիկովը զարմանք է հայտնել, որ Լեռնահայաստանի պատվիրակությունը Նախիջևանին այդքան մեծ նշանակություն է տվել: «Նախիջևանի հարցը այնքան կարևոր հարց չէ»,– ասում էր նա: Ապա, նախիջևանահայության մնացորդների ճակատագրի հանդեպ զանգեզուրցիների ունեցած տագնապները փարատելու համար ավելացրել է. «Մենք Ռուսիայում էլ ունենք նման ավտոնոմ մասեր, օրինակ, բաշկիրները, և գործնականապես այն տեղերում, ուր ազգաբնակչությունը ռուս չէ: Նույնը և պետք է կատարվի այստեղ՝ Նախիջևանի հետ», իսկ եթե տեղի հայությունը ենթարկվի ճնշումների, ապա «խորհրդային կառավարությունն այնքան ուժ կունենա», որ «առաջը կառնի նման հակահեղափոխական ոտնձգությունների»[1]:

Հանդես գալով Նախիջևանի մասին Մելնիկովի արտահայտած տեսակետի դեմ՝ Լ. Միքայելյանն ասել է. «Որքան էլ ընկ. Մելնիկովը Նախիջևանի հարցը համարի ոչ կարևոր, բայց ես գտնում եմ, որ դա չափազանց կարևոր խնդիր է, մանավանդ՝ Զանգեզուրի քաղաքական ապագայի տեսակետից: Արժե, որ այդ հարցը պարզաբանվի բոլոր կողմերից և ըստ ամենայնի ուշիմ և ուշադիր: Սխալ է ընկ. Մելնիկովը, երբ Նախիջևանի հարցը, նրա ավտոնոմ վիճակը համեմատում է Ռուսաստանում գոյություն ունեցող ավտոնոմ շրջանների հետ: Այն պատմական, ցեղային և հոգեբանական անտագոնիզմը, որ կա հայ և թուրք ազգաբնակչության միջև մեզանում, պետք է հաշվի առնվի... Այլ բան է Ռուսաստանի ավտոնոմ շրջանների և ռուս ժողովրդի հարաբերությունը անցյալում: Նրանք չեն ունեցել և ոչ մի ազգամիջյան կռիվ, ինչ մեզանում գոյություն ունի դարերով»: Մելնիկովը կրկին պնդում էր իր տեսակետը՝ ասելով. «Մի երկիր, եթե նա խորհրդային է, թեկուզ և ավտոնոմ, պետք է առաջնորդվի կենտրոնի հրահանգներով և կառավարվի խորհրդային քաղաքականությամբ, իզուր են Ձեր բոլոր երկյուղներն ու կասկածները: Քանի կա ու գոյություն ունի խորհրդային իշխանություն, չի կարող և ոչ մի պարագայում լինել ո՛չ վեճ, ո՛չ կոտորած և ո՛չ ընդհարում»:

Նախիջևանի հարցում Լեռնահայաստանի պատվիրակությունը մնում էր իր կարծիքին:

«Դուք,– ասում էր Տեր-Մինասյանը,– զուր եք այդքան չնչին դեր տալիս ավտոնոմ Նախիջևանին, որը մի սեպի պես մտած է Հայաստանի կուրծքը, իր հետ ունենալով, լավ է ասել՝ թիկունք ունենալով, Տաճկաստանի մահմեդական ծովը և ճակատում մի բուռն հայ ժողովուրդ»[*]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 10:

[*] Հետագա տասնամյակներում նախիջևանահայության ողբերգական ճակատագիրը ցույց տվեց, որ երիցս ճիշտ էին Լեռնահայաստանի պատվիրակները, հիմնավորված էին նրանց տագնապները, իսկ Երևանի պատգամավորների «մաքուր», «գիտական» տեսության վրա հիմնված պնդումները՝ սնանկ:

Տեր-Մինասյանը գտնում էր, որ Մելնիկովի ասածն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ էին փաստացի և ուժեղ երաշխիքներ, որոնցից մեկը նա համարում էր ժողովրդի զինումը, այլ ոչ թե նրա զինաթափումը[1]:

Առաջին նիստի հարցերը սպառվելու վրա էին, երբ Մ. Մինասյանը ցանկություն էր հայտնում Երևանի պատվիրակության պահանջները ստանալու գրավոր և կետ առ կետ: Նա նաև ուզում է իմանալ՝ Երևանի պահանջները անբեկանելի՞ են, թե՞ պետք է մտնեն օրակարգի մեջ, դառնան բանակցությունների առարկա: Այդ հարցադրմանը միանում էր Լ. Միքայելյանը:

Ա. Կարինյանը պատասխանել է, որ արդեն բարձրացված հարցերը անպայման պետք է մտնեն օրակարգի մեջ և քննարկվեն: Նա այնուհետև ավելացրել է, որ օրակարգի հարցերը կանոնավոր քննարկելու համար կողմերից ամեն մեկը պետք է հնարավորություն ունենար մշտական կապի մեջ լինելու իր կառավարության հետ՝ բանակցությունների ընթացքը մշտապես տեղյակ պահելու և նոր ցուցումներ ստանալու համար: Նշում էր նաև, որ աշխարհից կտրված Ղալաջուղ գյուղից «մենք հնար չունենք հաղորդակից անելու մեր կառավարությանը այստեղի անցուդարձի և բանակցությունների ընթացքի մասին» և ելնելով դրանից՝ առաջարկում փոխել բանակցությունների վայրը:

Միաժամանակ Կարինյանը կտրուկ հարց էր դնում. Զանգեզուրի կառավարությունը ընդառաջ կգնա՞ր խորհրդային կողմին, կընդունե՞ր նրա առաջարկները, թե՞ կմերժեր դրանք:

«Մենք ի վիճակի չենք երկար սպասելու, երկուսս էլ ունենք պատասխանատու գործեր: Պետք է իմանանք, կհաջողվի՞ մեզ մի ընդհանուր լեզու գտնել, թե՞ ոչ»[2]:

Դրան ի պատասխան՝ Գորիսի պատվիրակությունը նորից առաջ էր քաշում հիմնական պահանջը. «Քանի դեռ Լեռնահայաստանը խորհրդային իշխանության կողմից չի ճանաչված որպես Հայաստանի անբաժան մաս, մենք չենք ճանաչելու խորհրդային իշխանությունը»[3]:

Հարցերը սպառված համարելով՝ առաջին նիստը որոշեց, որ նույն օրը՝ մայիսի 12-ի ցերեկվա ժամը 4-ին, Հայաստանի խորհրդային կառավարության ներկայացուցիչներն իրենց վերոհիշյալ առաջարկությունները գրավոր հանձնեն Գ. Տեր-Մինասյանի գլխավորած պատվիրակությանը, որպեսզի այն ներկայացվեր Լեռնահայաստանի կառավարությանը՝ քննարկման: Դա լինելու էր բարձրացված հարցերի վերաբերյալ Խորհրդային Հայաստանի կառավարության հռչակագիրը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 10-ի շրջերես: Տե՛ս նաև **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 242-243:

[2] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 241:

[3] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 86:

Նշանակված ժամին Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը Գ. Տեր-Մինասյանին են հանձնեց Խորհրդային Հայաստանի և 11-րդ Կարմիր բանակի զորահրամանատարության գրավոր հռչակագիրը՝ ուղղված Լեռնահայաստանի կառավարությանը:

Փաստաթղթում նշված էր, որ խորհրդային իշխանությունը միշտ ձգտել և ձգտում է ծագած խնդիրները լուծել ոչ թե պատերազմով, այլ խաղաղ միջոցներով և միայն ամենածայրահեղ պարագայում է դիմել զենքի: Պատերազմը Խորհրդային Հայաստանի և Զանգեզուրի միջև ներկայումս շարունակվում է այն պատճառով, որ մնալով Հայաստանի անկախ միավոր՝ նա դրանով իսկ «դառնում է իմպերիալիզմի համար մի գործիք, մի զենք, որ ուղղվում է Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների և ամենից առաջ Հայաստանի խորհրդային հանրապետության դեմ»:

Այս խոսքերին հետևում էր հետևյալ կտրուկ պահանջը. «Այդ պատճառով Խորհրդային Հայաստանի և Զանգեզուրի միջև տեղի ունեցող ռազմական գործողությունների լիկվիդացիայի համար առաջին և հիմնական նախապայմանն է խորհրդային իշխանության հաստատումը Զանգեզուրում և Լեռնային Ղարաբաղում, որը պետք է ենթարկվի Հայաստանի խորհրդային իշխանությանը»: Զանգեզուրն առանց կռվի հանձնելու դեպքում, ասված էր փաստաթղթում, քաղաքական համընդհանուր ներում կշնորհվեր բոլոր նրանց, ովքեր կռվել էին խորհրդային իշխանության դեմ, և հնարավորություն կստանային անցնելու խաղաղ աշխատանքի[1]: Նկատի ունենալով Զանգեզուրի առանձնահատկությունները՝ այնտեղ հովանավորության տակ կառնվեին մանր և միջակ գյուղացիական տնտեսությունները, տնայնագործությունը, կթույլատրվեր ազատ առևտուրը, չէին անցկացվի բռնագրավման կամպանիաներ և այլն:

Հաշվի առնելով լեռնավայրի գյուղացիության ընդհանուր տրամադրությունը, այն, որ սակավահողության պատճառով Զանգեզուրը չէր կարող կերակրել նույնիսկ իր ունեցած բնակչությանը՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը հայտարարում էր, որ «Զանգեզուրից այժմ բացակայող ոչ մի փախստական տարր չի տեղավորվի այնտեղ՝ հակառակ տեղացի գյուղացիության ցանկության»[*]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 305, թ. 1, **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 86, **Զ. Աշխատունի**, Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 80:

[*] Հետագայում, Խորհրդային Հայաստանի կառավարության համաձայնությամբ, գաղթած բոլոր թուրքերը իրավունք ստացան վերադառնալու հանրապետության իրենց նախկին բնակավայրերը, այդ թվում՝ Զանգեզուր, բացի Գորիսի շրջանից, որտեղ թուրք բնակչությունը չկարողացավ հիմնավորվել: Զանգեզուրի մնացած երեք շրջաններում՝ Սիսիանում, Կապանում և Մեղրիում, թուրքերի բնական արագ աճը մի քանի տասնամյակ հետո ժողովրդագրական վիճակի փոփոխման սպառնալիք էր ստեղծել:

Նորից շեշտելով, թե Զանգեզուրի անկախ գոյությունը հարված էր «մեր բանվորագյուղացիական հայրենիքին», Խորհրդային Հայաստանի կառավարությունը պարզ ու հստակ նշում էր, որ «այդ հանգամանքը ստիպում է մեզ պատերազմի հետ կապել մեր ժողովրդի այն զավակներին, որոնք կարող էին այժմ խաղաղ շինարարական գործերի անցնել»[1]:

Այս ամենից հետո Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը, ընդգծելով, որ իրենք հանձնարարություն ունեն Լեռնահայաստանի կառավարության պատվիրակությանը հայտնելու ստանձնած բոլոր պարտավորությունները կատարելու և դրանք անհրաժեշտ երաշխիքներով ապահովելու՝ խորհրդային կողմի վճռականության մասին, նորից խնդրում էին «շտապ կարգով քննել խորհրդային իշխանության առաջարկը և տալ պատասխան ամենակարճ ժամանակվա ընթացքում»:

Նույն օրը՝ մայիսի 12-ի երեկոյան ժամը 6-9-ը, տեղի ունեցավ բանակցությունների երկրորդ նիստը: Պատվիրակությունների նույն կազմն էր, նիստը նախագահում էր Ա. Կարինյանը:

Լեռնահայաստանի պատվիրակության անդամներն արդեն ծանոթացել էին Խորհրդային Հայաստանի կառավարության հռչակագրին, ուստի պատահական չէր, որ նրանց առաջին խոսքը վերաբերեց այդ փաստաթղթի ոչ միայն բովանդակությանը, այլև ձևին:

Մ. Մինասյանը և Լ. Միքայելյանը Երևանի պատվիրակությունից պահանջեցին հռչակագրում արծարծած հարցերը ներկայացնել գրավոր ամփոփ, կետ առ կետ, ինչպես պայմանավորված էր առավոտյան նիստում: Իրենց պահանջը նրանք հիմնավորում էին նրանով, որ Լեռնահայաստանի կառավարությունը նախապես չէր իմացել, թե որոշակի ինչ հարցեր էին քննարկվելու Ղալաջուղում, մանավանդ չէր իմացել, որ դրվելու էր Լեռնահայաստանի քաղաքական ինքնուրույնության վերացման հարցը: Մնացած հարցերը համարելով երկրորդական՝ նրանք առաջարկեցին քննարկել միայն այդ հարցը:

Գեղեոն Տեր-Մինասյանը նշեց, որ կարելի է բավականանալ խորհրդային պատվիրակության հռչակագրով և չպահանջել, որ Երևանի առաջարկները ներկայացվեն կետ առ կետ, քանի որ փաստաթղթում արդեն պարզորոշ ձևակերպված էր Լեռնահայաստանին հետաքրքրող հիմնական հարցը՝ նրա պետականության վերացման և երկրի խորհրդայնացման պահանջը:

Ա. Կարինյանը համաձայնեց, որ, իսկապես, իրենց հիմնական պահանջը Զանգեզուրի խորհրդայնացումն էր, ուստի լավ կլիներ, որ հենց այստեղ՝ Ղալաջուղում, Տեր-Մինասյանի գլխավորած պատվիրակությունը որևէ ձևով բանաձևեր այս բանակցությունների արդյունքը և որոշակի պատասխան տար հռչակագրում արված հիմնական առաջարկին՝ չմոռանալով, որ

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 13-ի շրջերես:

Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից տրված էին ամուր երաշխիքներ: Ապա նա ավելացնում էր, որ եթե Լեռնահայաստանի կառավարությունը մերժեր իր կառավարության՝ հռչակագրում շարադրած հիմնական պահանջը՝ Զանգեզուրի խորհրդայնացման առաջարկը, այդ դեպքում «այս բանակցություններն ավելորդ են»[1]:

Գ. Տեր-Մինասյանը պատասխանել է, որ Զանգեզուրի խորհրդայնացման պահանջի հարցին իր գլխավորած պատվիրակությունը և ոչ էլ նույնիսկ իր կառավարությունը ի վիճակի չեն պատասխան տալու, քանի որ դա այն խնդիրն է, որը «բացառապես վերաբերում է ժողովրդին և նրա վճռելու հարցն է, ուստի և պետք է ժողովրդի կամքը հարցնել»: «Ինքը՝ ժողովուրդն է, որ իր լավագույն զավակների գնով ստեղծել է հայրենիք և կառավարություն, որ պաշտպանել է իրեն բոլոր կողմերից եկած ոտնձգությունների դեմ»: Ժողովուրդն էր իրավասու իր համագումարով լուծելու այդ հարցը: Այդ ժողովուրդը չէր կարող կույր հավատ տածել երաշխիքների մասին տված խոստումներին: «Թղթի կտորներ շատերն են տվել, ինչպես Գերմանիան՝ Բելգիային, Լեգրանը՝ Հայաստանին: Մեր միակ երաշխիքը մեր ժողովրդի զենքն է ու կամքը»: Ապա, եզրափակելով իր խոսքը, նա ասել է. «Եթե անգամ մենք հանաձայնենք Ձեր առաջարկին, ժողովուրդը կարող է հոշոտել մեզ»:

Իր հերթին, Մ. Մինասյանը նշում էր. «Մեր ժողովուրդն ինքն է, որ պահել է իր երկիրը և պաշտպանել զայն անգլիացիների և Ադրբեջանի ոտնձգություններից: Եվ այն բոլորը, ինչ տեսել է մեր ժողովուրդը ու զգացել իր մաշկի վրա, լսել է նաև Հայաստանում կատարվածի մասին, պետք է հնար տրվի նրան հակառակը համոզվելու»: Ապա ավելացնում էր, որ գյուղացիությունն ու մտավորականությունը «մեզ կհարցնեն, թե ինչո՞ւ Նախիջևանը Ադրբեջանի պրոտեկտորատի տակ է և ոչ Հայաստանի: Ինչպե՞ս եղավ և ինչո՞ւ մեծամասնականները Քեմալի զորքերին Հայաստան բերին, և տեղի ունեցավ այն, ինչ որ Դուք էլ եք խոստովանում: Պետք է գարանտիան լինի գործնական, և ժողովուրդն ինքը համոզվի, որ վտանգ չկա իր գոյության դեմ»[2]:

Ինչպես տեսնում ենք, Լեռնահայաստանի պատվիրակության անդամները ոչ այնքան մտահոգ էին Զանգեզուրում խորհրդային կարգեր մտցնելու հեռանկարով, որքան դրա հնարավոր երկու հետևանքներով. ա) Զանգեզուրը կարող է հայտնվել Ադրբեջանի կազմում, բ) Զանգեզուրում կարող են ծայր առնել այնպիսի խստություններ, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում:

Զանգեզուրի տագնապներն օրինաչափ էին: Հայաստանից Նախիջևանի բռնազավթումը խարխլել էր զանգեզուրցիների հավատը: Հարևանների հետ հայերի ունեցած տարածքային հարցերը խորհրդային իշխանությունը

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 14, 15:

[2] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 248:

լուծում էր ոչ թե Այսրկովկասի բոլոր երեք հիմնական ժողովուրդների վրա տարածվող ընդհանուր ազգագրական սկզբունքով, այլ պրոլետարիատի դիկտատուրայի շահերից ելնելով, այսինքն՝ տվյալ պահին իշխանության համար նպատակահարմարության սկզբունքով: Մյուս կողմից՝ դեռ չափազանց թարմ էր Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելուց հետո Ս. Կասյանի գլխավորած՝ ՀՍԽՀ առաջին կառավարության կողմից սանձազերծած բռնությունների մասին հիշողությունը, ուստի նրանք, բնականաբար, հավատ չէին ընծայում նաև Ա. Մյասնիկյանի գլխավորած՝ Երևանի նոր կառավարության խոստացած երաշխիքներին, համընդհանուր քաղաքական ներման մասին արված հայտարարություններին:

Նիստի վերջում Լեռնահայաստանի պատվիրակության անդամները մտահոգություն են հայտնել, որ եթե իրենք Խորհրդային Հայաստանի կառավարության հռչակագիրն իրենց կառավարությանը ներկայացնեն այն տեսքով, ինչպես ստացել են, ապա կառավարությունը կարող էր այն դիտել որպես վերջնագիր և կտրականապես մերժել:

Արտահայտած այդ մտահոգությունը, սակայն, չփոխեց Երևանի պատվիրակության դիրքորոշումը: Ուստի Լեռնահայաստանի պատվիրակությունը խնդրեց տալ երկու օր ժամանակ՝ հռչակագիրն իր կառավարությանը փոխանցելու և պատասխան ստանալու համար: Խորհրդային կողմը տվեց իր համաձայնությունը: Բանակցություններն ընդհատվեցին և հետաձգվեցին երկու օրով:

Որոշվեց խորհրդային կողմի հռչակագիրն ամբողջովին ներկայացնել Լեռնահայաստանի կառավարությանը և պատասխանի համար առավելագույնը սպասել մինչև մայիսի 15-ի ցերեկվա ժամը 12-ը:

Մայիսի 13-ին Ղալաջուղ է եկել Լեռնահայաստանի արևմտյան ճակատի հրամանատար ու փոխսպարապետ Կուռոն և Գորիսի պատվիրակության անդամներին հայտնել, որ իրեն վստահած ճակատում իր զորամասերն ընկել են ծանր դրության մեջ, ուստի, որպեսզի հնարավոր լիներ բանակցությունների սեղանի շուրջ նստել հավասարը հավասարի հետ, պետք էր այդ բանակցությունները ձգձգել, ժամանակ շահել, մինչև որ ռազմաճակատում կշտկվեին գործերը: Նշելով, որ այդ կարծիքին էին և՛ Լեռնահայաստանի կառավարությունը, և՛ զորաճակատի հրամանատարությունը, նա կրկին շեշտում էր. «Բանակցությունները պետք է երկարաձգել, այդ մեր օգուտն է, ժամանակ շահելու համար»[1]:

Մայիսի 14-ին Կարինյանն ու Մելնիկովը շտապ գրություն են ուղարկել Երևան:

«Հեղկոմի նախագահ Մյասնիկյանին,

Երևանի զորքերի խմբավորման հրամանատար Վելիկանովին.

---

[1] **Ա. Արշակունի**, Սիսեանի բանակցութիւնները, «Հայրենիք», 1926, հունիս, թիվ 8 (44), էջ 40:

Գտնվում ենք Ղալաջուղ գյուղում: Տեղի է ունեցել պաշտոնական երկու նիստ, որից հետո մեր կողմից առաջարկված է դեկլարացիա, որը ուղարկված է Զանգեզուրի կառավարության քննարկմանը: Պատասխանի ենք սպասում երեք օր անց, որից հետո կմեկնենք Երևան»[1]:

ՀՍԽՀ արտգործժողկոմատն էլ իր հերթին շտապ հեռագիր է հղել խմբավորման հրամանատարի շտաբին:

«Ձեզ ի գիտություն եմ հաղորդում, որ մեր պատվիրակությունը Զանգեզուրի կառավարությանը առաջարկել է խաղաղության հետևյալ պայմանները՝ Զանգեզուրի անհիվանդագին խորհրդայնացման և այն Խորհրդային Հայաստանին միավորելու համար.

Առաջին.– Ապստամբած Խորհրդային իշխանության դեմ պայքարած բոլոր քաղաքական և ռազմական գործիչների լիակատար և համընդհանուր ներում:

Երկրորդ.– Զանգեզուրի հայ գյուղացիության համար հողային հարցի անցավագին լուծում:

Երրորդ.– Զանգեզուրի հեղկոմի և իշխանության տեղական մարմինների կազմակերպում՝ տեղի տարրերից»[2]:

Մայիսի 14-ին Լեռնահայաստանի կառավարությունը քննության առավ Խորհրդային Հայաստանի կառավարության հռչակագիրը:

Ղալաջուղի բանակցությունների ընթացքում Գորիսի պատվիրակության անդամները ենթադրում էին, որ իրենց կառավարությունը հնարավոր է, որ դրական վերաբերմունք դրսևորեր Երևանի կառավարության հռչակագրի առանձին կետերի նկատմամբ և փորձեր ընդհանուր լեզու գտնել Խորհրդային Հայաստանի հետ: Նրանք այդպես էին կարծում, օրինակ, Զանգեզուրից գաղթած թուրքերին վերադարձի հնարավորություն տալու՝ Երևանի պահանջի մասին: Բայց Լեռնահայաստանի կառավարությունը կտրականապես մերժեց Հայաստանի կառավարության բոլոր առաջարկներն ու պահանջները, ընդունեց պատասխան հռչակագրի տեքստ:

Պայմանավորված ժամկետին՝ մայիսի 15-ին, Լեռնահայաստանի պատվիրակությունը վերադարձավ Ղալաջուղ, և բանակցությունները վերսկսվեցին նրա բերած հռչակագրի շուրջ:

Խորհրդային Հայաստանի կառավարությանն ուղղված Լեռնահայաստանի կառավարության պատասխանը սկսում էր ամենակարևորից՝ Զանգեզուրի քաղաքական ինքնության հարցից:

Փաստաթղթում նշված էր, որ ռուսական հեղափոխությունը՝ իր կարգախոսներով և փոքր ազգերի ինքնորոշման գաղափարով, ջերմորեն ընդունեցին քաղաքական ակնկալիքներով խանդավառված Ռուսաստանի բոլոր ազ-

---

[1] ՀԱԱ. ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 14:

[2] Նույն տեղում, գ. 21, թ. 38:

գությունները, այդ թվում՝ հայ ժողովուրդը, որը հեղափոխության բարիքներից օգտվելու իր իրավունքները ձեռք էր բերել երեսնամյա հեղափոխական պայքարով: Սակայն ռուսական հեղափոխությունից տրված քաղաքական ինքնուրույնության իր անկապտելի իրավունքը հայությունը իրականացված չտեսավ: Ավելին, նրան վիճակվեց ընդունել և ետ մղել նորանոր հարվածներ: Դրա ակնառու օրինակը եղավ Լեռնահայաստանը՝ իր ազատասեր ու քաջ ժողովրդով: Նա պատվով դիմագրավեց բոլոր կողմերից եկած հարվածները և կարողացավ պաշտպանել ձեռք բերած ինքնուրույնությունը: Անգլիական իմպերիալիստներն ամեն ինչ արեցին Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու համար, բայց դրանից ոչինչ չստացվեց: «Կա և կմնա անմոռաց մեր ժողովուրդի ազատագրական կռվի պատմության մեջ, թե ինչպես 1919 թվին անգլիացի գեներալ Շատելվորտին իր զինակիցներով Գորիսում շրջապատեց զինված գյուղացիությունը, մերժեց նրա պահանջները՝ տալ իր ղեկավարներին՝ Շիրինյանին և Շահմազյանին, և դուրս վռնդեց Զանգեզուրի սահմաններից»:

Ադրբեջանը չդադարեց դավեր նյութել Զանգեզուրի դեմ: Նա դրանից հետո էլ բազմիցս փորձեց զավթել հայոց այդ լեռնաշխարհը, բայց զանգեզուրցին միշտ զենքով պատասխանեց զավթիչներին և միշտ եղավ հաղթական:

Եռամյա հերոսական պայքարով ու թանկագին զոհերով Զանգեզուրի ժողովուրդը ձեռք է բերել ինքնուրույն կառավարելու և ինքնուրույն ապրելու սրբազան իրավունք: Նա իր զենքի ուժով ազդարարել է ամենուր. «Չե՛մ ցանկանում ուրիշ ոչ ոքի տիրապետություն, ես եմ, որ կարող եմ ու ցանկանում եմ կառավարել ինձ»[1]:

Ազատ և ինքնուրույն ապրելու՝ զանգեզուրցիների կամքն այս անգամ փորձեցին կոտրել Կարմիր բանակները: Նրանք գրավեցին երկիրը և հաստատեցին իրենց անտանելի հնգամյա տիրապետությունը: Բայց ազատասեր ժողովուրդը անկոչ հյուրերին հերոսական խոյանքով դուրս մղեց լեռնաշխարհից, ընտրեց իր կառավարությունը և անցավ խաղաղ ստեղծագործ աշխատանքի:

Լեռնահայաստանի կառավարությունն իր պատասխանում, այնուհետև, մերժում էր Երևանի այն մեղադրանքը, թե Զանգեզուրն իմպերիալիստական ուժերի ձեռքին խաղալիք էր դարձել և դրանով իսկ սպառնում էր Այսրկովկասի խորհրդային հանրապետությունների և, ամենից առաջ, Հայաստանի անվտանգությանը:

«Պնդում ենք ամենավճռական կերպով,– ասված էր փաստաթղթի մեջ,– որ մեր ժողովուրդն ու անոր ղեկավարները ոչ միայն անցյալում խաղալիք չեն եղել որևէ իմպերիալիստական պետության ձեռքում, այլև ապագայում էլ

[1] ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 17 և շրջերես:

չեն կարող լինել: Մենք ցանկացել ենք առաջին հերթին գտնել խաղաղ ապրելու մի ձև՝ մեր հարևանների հետ, չենք ունեցել և ոչ մի ագրեսիվ փորձ որևէ ժողովրդի և երկրի նկատմամբ, բայց և թույլ չենք տվել նույնպես, որ ուրիշը իր թաթը մեկնի մեր աշխատանքին և քաղաքական անկախության»[1]:

Կառավարության պատասխան-հռչակագրում հստակ պատասխան էին տրված Զանգեզուրի համար երկու կենսական հարցերի, որոնք բարձրացված էին Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից ներկայացված հռչակագրով:

1. Կռիվների հետևանքով Զանգեզուրից հեռացել էր Լեռնահայաստանի քաղաքական անկախության և ժողովրդի ֆիզիկական գոյության դեմ դված ու պայքարած թուրք բնակչության մի մասը: Թեև Հայաստանի խորհրդային կառավարությունը պնդում էր, թե նրանց վերադարձը կարող էր տեղի ունենալ միայն «զանգեզուրցիների համաձայնության» դեպքում, բայց նույն զանգեզուրցիները չէին հավատում, որ գավառի խորհրդայնացումից հետո հաշվի կնստեն իրենց կարծիքի հետ: Ուստի, Զանգեզուրի կառավարությունը վճռականորեն հայտարարում էր, որ «այդ հարցը ոչ միայն չպետք է դնել որևէ ժողովի քննության», այլև այն պետք է համարել փակված և «արգելել որևէ վերաբնակություն Լեռնահայաստանի սահմաններում»[2]:
2. Ոչ պակաս հուզող հարցի՝ քոչի կապակցությամբ Լեռնահայաստանի կառավարությունը ազդարարում էր. «Թույլ տալ, որ նորից քոչվորների հեղեղը գա մեր լեռնաշխարհը, նույնիսկ երբ ձեռք առնվեն բոլոր նախազգուշական միջոցները, դա երկիրը անարխիայի, ազգամիջյան կռիվների մի թատերաբեմ կդարձնի, նոր ընդհարումներ, նոր անտագոնիզմ պիտի ստեղծվի երկու ժողովուրդների միջև, փոխանակ խաղաղ, շինարար աշխատանքի: Մեզ թվում է, ինչպես և որտեղ ապրել ու կառավարվել են այս 3-4 տարվա ընթացքում քոչվորները, այսուհետև էլ կշարունակվի այս ձևով: Մեր երկիրը պետք է ազատ լինի քոչվորների ասպատակություններից, որոնց ներկայությունը մեր լեռներում, մեր ժամանակի քաղաքական պայմաններում կարող է դրսի ուժերի համար դառնալ ագրեսիվ քաղաքականության գործիք»[3]:

Վերջում Լեռնահայաստանի իշխանությունը հետևյալ հարցերն էր առաջադրում ապագա բանակցությունների համար՝ 1. Լեռնահայաստան ռուսա-

---

[1] ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 18, 19, տե՛ս նաև **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 254:

[2] ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 18-ի շրջերես և 18ա, տե՛ս նաև **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 255:

[3] ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 61, թ, 18ա, տե՛ս նաև **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 258:

կան ու հայկական Կարմիր բանակի զորամասեր բերելու խնդիրը, 2. Լեռնահայաստանի զորքի ու հրամանատարության զինաթափման խնդիրը, 3. Լեռնահայաստանի գյուղացիությանը զինելու խնդիրը, 4. Լեռնահայաստանի իշխանության կազմակերպման ձևի ու եղանակի հարցը, 5. Լեռնահայաստանում քաղաքական կուսակցությունների ու մամուլի խնդիրը, 6. հայերենը Լեռնահայաստանի պետական-պաշտոնական լեզու հայտարարելու, զորքի ու հիմնարկությունների մեջ դրա առաջատար դերը ապահովելու խնդիրը, 7. Լեռնահայաստանի սահմաններից պարեն ու ռազմամթերք դուրս տանելու խնդիրը, 8. զորականների, քաղաքական, հասարակական ու պետական գործիչների երաշխավորված անվտանգության, նրանց ազատ գործելու, ինչպես նաև հանցագործ տարրերին Լեռնահայաստանից վտարելու խնդիրը, 9. Շարուր–Նախիջևանի հարցը:

Ինչ վերաբերում էր Լեռնահայաստանը խորհրդայնացնելու և այն Խորհրդային Հայաստանի անբաժան մասը համարելու խնդրին, ապա Գորիսի կառավարությունը գտնում էր, որ երկրի և բովանդակ ժողովրդի քաղաքական բախտի տնօրինման խնդիրը իր իշխանությունից դուրս էր. այն ժողովրդի գերագույն իրավունքի հարցն էր, որը և պետք է որոշեր ինքը՝ ժողովուրդը: Ուստի դրա համար պետք է հրավիրվեր Լեռնահայաստանի գյուղացիության համագումար, որտեղ և քննության կառնվեր այդ հարցը, ինչպես նաև ՀՍԽՀ պատվիրակության հետ բանակցությունների հետևանքները[1]:

Վերջում Լեռնահայաստանի պատվիրակությունը հայտնում էր, որ իր կառավարությունը ցանկալի էր համարում շարունակել բանակցությունները և հավատում էր, որ երկուստեք փոխզիջումների միջոցով կգտնվեր ընդհանուր լեզու՝ անարյուն և խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր խնդիրները և կանխելու որևէ հնարավոր ընդհարում[2]:

Խորհրդային Հայաստանի պատվիրակության համար պարզ դարձավ, որ այդ պատասխանով Զանգեզուրի իշխանությունը փորձում էր ժամանակ շահել՝ իր զորքերը կազմակերպելու և ընդհանրապես գործերը կարգի բերելու համար: Կասկած չէր մնում, որ Նժդեհը հրահանգել էր վերջ տալ բանակցություններին: Այդ համոզմամբ Ա. Կարինյանը զանգեզուրյան պատվիրակությանը հարցում արեց, թե ինչպես կարելի էր խաղաղության մասին արված հայտարարությունը համատեղել Լեռնահայաստանի կառավարության ստեղծման կապակցությամբ՝ նրա հրապարակած հռչակագրի հետ, որտեղ պարզ ասված էր, թե Զանգեզուրի զորամասերը պիտի հարձակվեին Խորհրդային Հայաստանի վրա և Երևանը մաքրեին բոլշևիկներից[3]: Կարինյանը, այդ վկայակոչելով, ցույց է տվել հռչակագրի համապատասխան մասը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 18ա-ի շրջերես:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 15 հուլիսի:

[3] Տե՛ս «Ազատ Սյունիք», 1921, թիվ 5:

Գ. Տեր-Մինասյանը պատասխանել է, որ տվյալ արտահայտությունը թյուրիմացաբար է մտել հռչակագրի մեջ:

Այսպիսով, Լեռնահայաստանի կառավարությունը Ղալաջուղի բանակցություններում ըստ էության հրաժարվեց համաձայնության գալ խորհրդային կողմի հետ:

Եռօրյա բանակցություններից հետո Արտաշես Կարինյանի պատվիրակությունը վերադարձավ Երևան՝ իր կառավարությանը տանելով Լեռնահայաստանի կառավարության առաջարկները և պահանջները: Ղալաջուղից մեկնելիս Կարինյանը խոստացավ «շուտափույթ պատասխան» տալ Լեռնահայաստանի կառավարության առաջարկներին, բայց դա տեղի չունեցավ: Դրա փոխարեն Խորհրդային Հայաստանի իշխանությունները մայիսի վերջերին Երևանից Սյունիք ուղարկեցին լեռնային ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանյանին, որին մեկ տարի առաջ, Կապանի Խոտանան գյուղից նահանջելիս առևանգել էր Կարմիր բանակի զորամասը: Նրան տարել էին Բաքու, բանտարկել, ապա ամիսներ հետո ազատել և ուղարկել Երևան:

Սյունիք մեկնելուց առաջ Սմբատ Մելիք-Ստեփանյանը ստացել էր իր իրավունքները հաստատող մանդատ:

«Թուղթս ներկայացնող ինժ. Սմբատ Մելիք-Ստեփանյանը Խորհրդային Հայաստանի Հեղկոմի համաձայնությամբ մեկնում է Զանգեզուր՝ լեռներում և գյուղերում թաքնված գյուղացիներին և քաղաքացիներին համոզելու, որ վերադառնան իրենց տեղերը և զբաղվեն խաղաղ աշխատանքով:

Առաջարկվում է բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանությանց՝ արգելք չհարուցել քաղաքացի Ս. Մելիք-Ստեփանյանին և ցույց տալ նրան ամեն տեսակ աջակցություն՝ իր վրա առած առաքելությունը ի կատար ածելու համար:

Խ. Հայաստանի Ռազմա-Հեղափոխական կոմիտեի նախագահ՝ Ա. Մյասնիկյան (Ա. Մարտունի)

Արտաքին գործոց ժողկոմ՝ Մռավյան

1921 թ., 14 մայիսի, Երևան»[1]:

Վերադառնալով հայրենի Զանգեզուր, ծանոթանալով անցած շուրջ մեկ տարում այնտեղ տեղի ունեցած դեպքերին՝ Ս. Մելիք-Ստեփանյանը, ելնելով երկրի ու ժողովրդի վիճակից, կազմեց տեղեկագիր և հունիսի 3-ի թվով ուղարկեց ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին, պատճենը՝ Լեռնահայաստանի կառավարությանը: Տեղեկագրում նա մասնավորապես գրել էր.

---

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 78:

«Այստեղ ես տեսնում եմ ժողովուրդ, կառավարություն և զորահրամանատարություն՝ միաբան:

Ամեն ինչ նորմալ է այստեղ:

Այստեղ չկան խաներ, բեկեր, կապիտալիստներ, բուրժուաներ, կուլակներ: Չկա այն ամենը, որ տկարացնում է ժողովրդի ռազմական թափն ու ուժը: Ժողովրդի տրամադրությունը կատարելապես հեղափոխական է...»[1]:

Ղալաջուղի բանակցությունների ժամանակ ձեռք բերված պայմանավորվածություններից հետո Լեռնահայաստանում սպասում էին Խորհրդային Հայաստանի կառավարության պատասխանին: Բայց պատասխան չէր ստացվում, քանի որ Երևանի կառավարությունն ինքնուրույնաբար ի վիճակի չէր լուծել խնդիրը. նա պետք է իր գործողությունները համաձայնեցներ և՛ Մոսկվայի, և՛ Բաքվի հետ:

Երևանն ամենից առաջ պետք է հաշվի առներ Ադրբեջանի պանթուրքիստ «բոլշևիկների» կամքը, որոնք իրենց զավթողական ծրագրերի իրականացման համար Կարմիր բանակը ներգրավել էին արյունալի կռիվների մեջ:

Իր հերթին, Կարմիր բանակի հրամանատարությունը չէր տեսնում Լեռնահայաստանի խնդրի կարգավորման խաղաղ ելքը և երկրամասի դեմ պատրաստվում էր նոր արշավանքի, որովհետև միայն հաղթական կռվով կարող էր փրկել իր զենքի պատիվը, ինչ-որ չափով մեղմել 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբերին բոլշևիկյան զորամասերի կրած պարտության դառը հիշողությունը: Եվ եթե Հայաստանի կառավարությունը հարգեր Լեռնահայաստանի կառավարության պահանջները, դա, ըստ էության, կնշանակեր, որ խորհրդային իշխանությունը ստորագրել է Կարմիր բանակի պարտությունը:

---

[1] **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, էջ 78:

ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման օրից սկսած՝ Հայհեղկոմը իշխանության և՛ օրենսդիր, և՛ գործադիր գերագույն մարմինն էր, թեև գործում էին նաև մի քանի ժողովրդական կոմիսարիատներ: Բայց ժամանակն էր, որ հեղափոխական արտակարգ դրության ժամանակ ստեղծված Հեղկոմը փոխարինվեր օրինական կառավարությամբ՝ օժտված գերագույն իշխանության բոլոր հատկանիշներով:

1921 թ. մայիսի 18-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենումը քննարկեց Հայհեղկոմը վերակազմելու և նրա փոխարեն Խորհրդային Հայաստանի կառավարություն՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ կազմակերպելու հարցը:

Երեք օր տևեց Ժողկոմխորհրդի ձևավորումը: Մայիսի 21-ին հաստատվեց նոր կառավարության կազմը, որը հրապարակվեց մայիսի 24-ին: Նախագահի պաշտոնը ստանձնեց Ա. Մյասնիկյանը, որը միաժամանակ հանրապետության ռազմական գործերի ժողկոմն էր: Արտաքին գործերի ժողկոմ հաստատվեց Ասքանազ Մռավյանը, ներքին գործերինը՝ Պողոս Մակինցյանը, արդարադատության ժողկոմ՝ Արտաշես Կարինյանը, ժողտնտխորհի նախագահ՝ Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին), հողժողկոմ՝ Արամայիս Երզնկյանը, պարենավորման և արտաքին առևտրի ժողկոմ՝ Ալեքսանդր Բեկզադյանը, ֆինժողկոմ՝ Սարգիս Խանոյանը, լուսժողկոմ՝ Աշոտ Հովհաննիսյանը, առողջապահության ժողկոմ՝ Սաքո Համբարձումյանը, փոստ-հեռագրի ժողկոմ՝ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, բանգյուղտեսչության ժողկոմ՝ Ալեքսանդր Շահվերդյանը[1]: Ավելի ուշ աշխատանքի և սոցիալական ապահովության ժողկոմ նշանակվեց Արշակ Խաչիկյանը, Արտակարգ հանձնաժողովի նախագահ՝ Շավարշ Ամիրխանյանը:

Խորհրդային Հայաստանի նոր կառավարությունը՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդը, Զանգեզուրի հարցում բռնեց հստակ գիծ.

1. Զանգեզուրը բուն հայկական հող է, և այն պետք է միացվի Խորհրդային Հայաստանին՝ որպես նրա անբաժան մաս: 2. Պետք է անել ամեն ինչ, որպեսզի Հայաստանին Զանգեզուրի միացումը իրականացվի խաղաղ միջոցներով: 3. Եթե դա չհաջողվի, Զանգեզուրը Հայաստանին միացնել զենքի ուժով:

Ժողկոմխորհրդի նիստում քննարկվեց Ղալաջուղից Երևան վերադարձած ՀՍԽՀ պատգամավորության հաղորդումը: Քննարկումն ավարտելուց

[1] Տե՛ս «Կոմունիստ», 1921, 24 մայիսի:

հետո Ժողկոմխորհուրդը հանդես եկավ մի հայտարարությամբ, որը տպագրվեց «Խորհրդային Հայաստան» թերթում: Այդ հայտարարության մեջ ավելորդաբանություն և անորոշ մտքեր չկային: Խորհրդային Հայաստանի կառավարությունը պարզ ու կտրուկ որոշել էր իր դիրքն ու քաղաքականությունը Զանգեզուրի հարցում:

Հանրապետության նոր կառավարությունը, Զանգեզուրի խնդրում ունենալով հստակ գիծ, այն է՝ գավառը պետք է միացվեր Խորհրդային Հայաստանին, միաժամանակ ընդգծում էր, որ չէին սպառվել խաղաղ միջոցներով հարցը լուծելու հնարավորությունները: Դրա վկայություններից մեկը, օրինակ, հեռագրած այն զրույցն էր. որ 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերը 1921 թ. մայիսի 23-ին ունեցել էր Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահ և ռազմգործժողկոմ Ա. Մյասնիկյանի հետ: Արխիվում պահպանվել է այդ համառոտ զրույցի տեքստը:

«Ապարատի մոտ է հրամանատար Հեկկերը.

Բարի՛ երեկո, ընկե՛ր Մյասնիկով: Ներեցեք, որ անհանգստացնում եմ Ձեզ, բայց ես ունեմ մի շարք հարցեր. 1. Ինչպե՞ս է լուծվել Զանգեզուրի մասին հարցը: 2. Արդյոք հույս կա վերացնելու (այսինքն՝ խնդիրը լուծելու: – *Ա. Ս.*) խաղաղ ճանապարհով:

Ապարատի մոտ է ընկ. Մյասնիկովը.

Ընկե՛ր Հեկկեր: Առայժմ բանակցությունները կշարունակվեն, նրանք (Լեռնահայաստանի կառավարության գործիչները: – *Ա. Ս.*) հավանաբար ձգձգում են: Մեր կարծիքով, այժմ անհրաժեշտ է շտապ ուժեղացնել մեր զորամասերը: Զանգեզուրի դեմ, ռազմական գործողությունների իմաստով, մեզ թվում է, որ պետք է առայժմ սահմանափակվել Մեղրի ավանը գրավելով և միայն այդքան: Մնացյալի մասին Ձեզ կհաղորդեմ վաղը...»[1]:

Մի ուրիշ վկայություն. Ղալաջուղի բանակցությունների ձախողումից մեկ ամիս հետո՝ 1921 թ. հունիսին, Թիֆլիսում՝ Անդրերկրկոմի բյուրոյի նիստում, Զանգեզուրի հարցը քննելու ժամանակ Ա. Մյասնիկյանը դեմ արտահայտվեց Լեռնահայաստանի վրա հապշտապ հարձակվելու առաջարկին[2]:

Երրորդ վկայություն. Խորհրդային Հայաստանի բանվորների, գյուղացիների և մի խումբ զանգեզուրցի կարմիրբանակայինների անունից մի դիմում հղվեց «Զանգեզուրի աշխատավոր եղբայրներին»՝ «Հիմա խոսքը ձերն է» վերտառությամբ: Դիմումի մեջ ասված էր. «Արարատյան ազատ աշխարհի ազնիվ աշխատավոր, ձեր հայրենակից զանգեզուրցիները շատ են ցավում, որ իրենց զանգեզուրցի եղբայրը... գութանը թողած հրացան է վերցրել: Էդ ի՞նչ թշնամու դեմ եք հրացանը բռնել, զանգեզուրցի եղբայրներ,... էն ո՞ր օրից է երևանցի, ղազախեցի, ալեքսանդրապոլցի ու լոռեցի շինականը քո թշնա-

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 309, թ. 1:

[2] Տե՛ս **Ս. Ամիրյան**, նշվ. աշխ., էջ 455:

մին դարձել, Զանգեզուրի քաջ, բայց խաբված շինական»[1]: Նշվում էր, որ Խորհրդային Հայաստանի աշխատավորը չէր ուզում կռվել Զանգեզուրի իր եղբոր դեմ, քանի որ «էս կողմերի գյուղացին հիմա մենակ մի կռիվ ունի, այդ կռիվը աղքատության, անկարության դեմ է»: Նրա դրությունը օրեցօր, ամսեամիս լավանում էր: Ճամփաները բացվել էին, Խորհրդային Ռուսաստանից ստանում էին չթեղեն, մաշիններ, մանգաղներ, գերանդիներ, գութաններ...: Հենց այդ խաղաղ պայմաններն էին պատճառը, որ Զանգեզուրից Պարսկաստան փախածներից շատերն արդեն վերադարձել էին Հայաստան և կանգնել իրենց գործին: «Գալիս են և՛ գյուղացին, և՛ առևտրականը, և՛ վարժապետը, և՛ ինժեները, և՛ զինվորականը: Գալիս են և տաճկահայերը՝ սասունցիները, մշեցիները, վանեցիները»:

«Հայաստանի բանվորագյուղացիական կառավարությունը,– այնուհետև նշվում էր դիմումի մեջ,– երկրորդ անգամ է մարդ ուղարկում ձեր կառավարության մոտ, որպեսզի հարցը խաղաղ վերջացվի», բայց այդ կառավարությունը հրաժարվում էր ընդունել խաղաղության առաջարկները: Ուստի «հասել է ժամանակը, որ դուք, աշխատավոր զանգեզուրցիներ, ինքներդ ձեր գլխով ձեր մասին մտածեք: Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը, որ ձեր երկրի սահմաններում է կանգնած, վաղուց արդեն կռվով ձեզ ազատած կլիներ ձեր այդ նեղ դրությունից, բայց մենք չենք ուզում արյունահեղություն, որովհետև եթե կռվով լինի, գյուղացու տունն է քանդվելու»: Դիմումի մեջ շեշտվում էր, որ եթե զանգեզուրցիներն իրենց երկիրը պաշտպանելու մտահոգությամբ չէին ուզում բաժանվել զենքից, ապա նրանց հնարավորություն կտրվեր ունենալու սեփական բանակ: «Խորհրդային Հայաստանը ձեզ չի խանգարում պահելու Զանգեզուրի Կարմիր բանակ՝ ձեր հալալ աշխատանքը պաշտպանելու համար»:

«Զանգեզուրի եղբայրներին» ուղղված դիմումի վերջում շեշտվում էր. «Այսօր դուք պիտի ասեք կարճ ու կտրուկ, խաղաղությո՞ւն եք ուզում, թե՞ կռիվ: Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի հե՞տ եք ուզում լինել, թե՞ նրա դեմ: Ուզո՞ւմ եք, որ մեր երկրում խաղաղ, ազատ աշխատանքը լինի, թե՞ կռիվն ու ավերը:

Զանգեզուրի աշխատավո՛ր գյուղացիներ: Ձեր պատասխանին են սպասում Հայաստանի բոլոր բանվորները և գյուղացիները: Դե՛, հիմա ինքներդ դատեցեք, զանգեզուրցի՛ եղբայրներ: Հիմա խոսքն ու գործը ձերն է»[2]:

Թեև անձամբ Ա. Մյասնիկյանը և նրա կառավարությունը հակված էին խնդիրի խաղաղ կարգավորմանը, բայց այդ կառավարության վրա մշտապես ճնշում էին գործադրում «ձախերը», հատկապես Ավիս-Աթարբեկյան խումբը, որի քաղաքականությունը Հայաստանում ձախողվել էր և հանգեցրել

[1] ՀԱԱ. ֆ. 1022, ց. 2, գ. 196, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 2:

Փետրվարյան ապստամբությանը: Այդ ապստամբությունից նրանք ոչ միայն դասեր չէին քաղել, այլև դժգոհում էին Ա. Մյասնիկյանի կառավարությունից՝ դասակարգային թշնամիների և հատկապես Դաշնակցության նկատմամբ հանդուրժողական քաղաքականություն վարելու համար:

Լեռնահայաստանի խնդիրը խաղաղությամբ լուծելու ճանապարհին Ա. Մյասնիկյանի կառավարության առջև ծառացել էին այլ խոչընդոտներ ևս: Դրանք այն տարաձայնություններն էին, որոնք գոյություն ունեին Երևանի և Բաքվի, Երևանի և 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության միջև: Ինչպես Հայաստանում «ձախերը», այնպես էլ Ադրբեջանում նարիմանովական «բոլշևիկները» խեթ աչքով էին նայում «դասակարգային թշնամիների» հանդեպ Ա. Մյասնիկյանի և նրա կողմնակիցների որդեգրած համեմատաբար մեղմ քաղաքականությանը: Ն. Նարիմանովի և նրա զինակիցների այդ տեսակետին լիովին համաձայն էր 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը:

Շուտով պարզվեց, որ Մյասնիկյանի կառավարությունը չէր կարողացել Լեռնահայաստանի խնդրի խաղաղ լուծման անհրաժեշտության մեջ համոզել Բաքվին և 11-րդ բանակի հրամանատարությանը: Դրան գումարվում էր այն, որ, ինչպես ցույց էին տվել Ղալաջուղի բանակցությունները, Նժդեհը առանց կռվի չէր զիջելու գավառը: Հենց այդ երկու հանգամանքները Ժողկոմխորհրդին հակեցին Զանգեզուրի վրա վճռական հարձակում գործելու կողմը:

Ա. Մյասնիկյանը և 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Հեկկերը մշակեցին ռազմական գործողությունների օպերատիվ պլան, որով նախատեսվում էր ուժեղացնել Հայաստանի Կարմիր բանակը, մասնավորապես մեծացնել նրա կրակային հզորությունը, նրա կազմում ստեղծել նոր հատուկ զորամիավորումներ՝ ելնելով Զանգեզուրի տեղանքի առանձնահատկություններից: Նախատեսվում էր 11-րդ Կարմիր բանակից Հայաստանի զինված ուժերին տրամադրել ձիեր, զենքեր, փամփուշտներ: Ա. Հեկկերի հետ ուղիղ գծով ունեցած խոսակցության ժամանակ Ա. Մյասնիկյանը նրան խնդրեց «Հայաստանի Կարմիր բանակի տրամադրության տակ ուղարկել զրահապատ մեքենաներ, ինչպես նաև այդ բանակի հրամանատարությանն օգնելու նպատակով Երևան ուղարկել 2-3 փորձված շտաբայինների»[1]:

Ռազմական գործողությունների օպերատիվ պլանը մշակելուց հետո Ա. Մյասնիկյանին մտահոգում էր, թե ինչպես այն գործողության մեջ դնել, քիչ լինեն զոհերը: Նրան չէր լքում նաև խնդրի լուծման համար խաղաղ ելք գտնելու միտքը: Այդ էր վկայում նաև, ինչպես տեսանք, մայիսի 23-ին 11-րդ բանակի հրամանատար Հեկկերի հետ ունեցած նրա խոսակցությունը:

---

[1] Ա. Ֆ. Մյասնիկյանի ռազմական գործունեությունը 1917-1925 թթ.: Փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1976, թիվ 1, էջ 205-206:

Ա. Մյասնիկյանը՝ որպես նաև հանրապետության ռազմժողկոմ, մի շարք հրամաններ արձակեց, որոնք ուղղված էին Հայաստանի Կարմիր բանակի ամրապնդմանը, զինվորների և հրամանատարների մարտական-բարոյական ոգու բարձրացմանը: Եվ այսպես, Հայաստանի Կարմիր բանակը և 11-րդ Կարմիր բանակը նախապատրաստվում էին միասնաբար վճռական հարված հասցնելու Զանգեզուրի ապստամբներին և գրավելու գավառը: Այդ նպատակով մայիսի երրորդ տասնօրյակում լրացուցիչ մի շարք միջոցառումներ ձեռնարկվեցին նաև 11-րդ Կարմիր բանակն ամրապնդելու, նրա շարքերը նոր, թարմ զորամասերով համալրելու, ստորաբաժանումների կրակային հզորությունը մեծացնելու համար:

Մայիսի 29-ին 11-րդ Կարմիր բանակը վերանվանվեց Կովկասյան առանձին բանակ: Նոր բանակի ռազմահեղափոխական խորհրդի կազմի մեջ մտան Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ա. Մյասնիկյանը, բանակի հրամանատար Ա. Հեկկերը և ուրիշներ: Խորհրդային Հայաստանի կառավարության պաշտոնաթերթը հաջորդաբար անդրադառնում էր բանակի ռազմահեղափոխական կոմիտեի գործունեությանը*:

Զանգեզուրի պաշտպանները ևս նախապատրաստական տենդագին աշխատանքի լծվեցին՝ Կարմիր բանակի հերթական հարձակմանը դիմագրավելու համար: Դարձյալ մտահոգում էր Լեռնահայաստանի արևմտյան ռազմաճակատի դրությունը:

Մայիսի 12-ին Լեռնահայաստանի կառավարության ներքին գործերի նախարար Ս. Մելիք-Յոլչյանը Նժդեհին ուղղած նամակում գրում էր. «Դարալագյազի հարցը և այնտեղի՝ մեր ճակատների պաշտպանության խնդիրը շատ խախուտ հիմքերի վրա է դրված: Կուռոն միանգամայն լքված է և չի կարողանում գործել. նրան կա՛մ պետք է հեռացնել, կա՛մ պետք է փոխել ուրիշ ճակատ, կա՛մ արձակուրդ տալ: Ես բացարձակապես կասկածում եմ, որ մի որևէ դեպքի ժամանակ նա կարող լինի պաշտպանել այն ճակատը, թեկուզ այնտեղ կան ավելի, քան պետք են, ուժեր»[1]:

Նժդեհը ստիպված էր մյուս ճակատներից հանել մի քանի փորձված զանգեզուրցի սպաների և նրանց ուղարկել արևմտյան ռազմաճակատ: Ինչ վերաբերում է Կուռոյին ռազմաճակատի հրամանատարի և իր օգնականի պաշտոններից ազատելու առաջարկներին, Նժդեհն այդ քայլին չդիմեց՝ անշուշտ հաշվի առնելով, որ նրան ինքն է նշանակել՝ Ս. Վրացյանի խնդրանքով:

Ավելի ավերիչ էին դառնում մեծ ծավալներ ընդունած բոլշևիկյան իրազեկման և քարոզչության ազդեցությունը զորքի և բնակչության վրա: Կո-

---

* Խորհրդային Հայաստանի կառավարության «Կոմունիստ» պաշտոնաթերթը 1921 թ. մայիսի 27-ից սկսել էր լույս տեսնել «Խորհրդային Հայաստան» անվանումով:

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 334:

մունիստների տարածած համարյա բոլոր թռուցիկների տեքստերը վերջանում էին փախստականներին ուղղված վերադարձի և Սյունիքի զինյալներին ուղղված՝ զենքը կամավոր վայր դնելու և կռիվը դադարեցնելու կոչերով:

Նժդեհը հանցանք էր համարում բոլշևիկների քարոզչությանը համապատասխան միջոցներով և նմանատիպ մեթոդներով չհակադրվելը: Նրա հանձնարարականով Լեռնահայաստանում հակաբոլշևիկյան քարոզչության լայն արշավ սկսվեց: Մասնավորապես Գորիսի «Սասուն» տպարանում մի քանի հազար օրինակով տպագրվեցին տարբեր բովանդակության թռուցիկներ, որոնց մեծ մասը ցրվեց ռազմաճակատի զանգեզուրյան զորամասերում: Մի քանի թռուցիկների հետ բոլշևիկների ձեռքն էր անցել նաև Նժդեհի ստորագրությամբ մի թռուցիկ, որը մայիսի 15-ին Հանքերից տված նրա հեռախոսագիրն էր:

«Արևմտյան ֆրոնտի հրամանատար Յապոնին, պատճենը՝ Լեռնահայաստանի փոխսպարապետ Կուռոյին, պատճենը՝ կառավարության:

Ես այսօր վերադարձա Կապան:

Թուրքեստանում ապստամբությունը պսակվել է կատարյալ հաջողությամբ: Ռուսաց զորքերը քաշվել են Կենտրոնական Ռուսաստան: Աֆղանստանում ժողովուրդը սպանել է սովետական դեսպանին և քշել բոլշևիկներին: Ուկրաինան և Լեհաստանը սկսել են իրենց առաջխաղացումը, Ռուսաստանի գրեթե բոլոր նահանգներում սկսել է ապստամբություն: 11-րդ Կարմիր բանակը քաշվել է Ռուսաստան. թե ինչ ուժեր պետք է փոխարինեն [այդ բանակին], մեզ հայտնի չէ:

Երևանում հայ և ռուս բոլշևիկների միջև տեղի են ունեցել կռիվներ: Ռուսները բացահայտ կերպով հրամայել են [հայկական] զորքին դուրս գալ Զանգեզուրի դեմ, իսկ հայերը հայտնել են, որ առանց ռուսների [զորամասերի] ոչ մի քայլ առաջ չեն անի:

Մայիսի 11-ին, կազմակերպված մանյովրներով, թշնամուն ստիպեցինք փախչել Օրդուբադից:

Եվրոպական մամուլը և դեմոկրատիան պահանջում են Կովկասը թողնել կովկասցիներին: Փարիզում հայերից, թուրքերից և վրացիներից կազմակերպված է մի խառն կոմիտե, որի նպատակն է Անդրկովկասում կազմել մի ընդհանուր զորք՝ բոլշևիկների դեմ կռվելու համար:

Սարդարապատի մոտ տեղի են ունենում ուժեղ կռիվներ բոլշևիկների ու տաճիկների միջև, և բոլշևիկները ջարդ են տվել. պատճառը Ալեքսանդրապոլը դատարկելու պահանջն է:

Զորավար Նժդեհ
15 մայիսի 1921 թ.
Հանքեր»[1]:

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 19 հունիսի:

Նժդեհի այս հեռախոսագիր-թռուցիկի մեջ բերված որոշ փաստեր չէին համապատասխանում իրականությանը, բայց պատերազմական պայմաններում սեփական զորքերի մարտական ոգին բարձրացնելու համար թերևս թույլատրելի էին տեղեկատվական պայքարի նմանատիպ միջոցները:

1921 թ. մայիսի 28-ին Զանգեզուրը տոնում էր Հայաստանի անկախության երրորդ տարին: Այդ օրը Գորիս քաղաքում հավաքվել էին բուն Զանգեզուրի, Տաթևի և Ղարաբաղի շրջանների ժողովրդական վաշտերը: Կեսօրին քաղաքային այգում, Շիրինյանի, Խորենու, Սաքոյի, Աշոտ Մելիք-Մուսյանի և այլոց եղբայրական գերեզմանների շուրջը հավաքվել էին բազմահազար մարդիկ: Ստեղծվել էր սվինների, սրերի, դրոշակների մի ամբողջ անտառ:

Տոնակատարությանը մասնակցում էր նաև Պարսկաստանից նոր վերադարձած Ս. Վրացյանը: Տարիներ անց, վերհիշելով այդ օրը, նա գրել է. «Չափազանց ազդված էի. խոսելու տրամադրություն չկար մեջս, բայց ինչպե՞ս կարելի էր խոսք չառնել Հայաստանի անկախության տարեդարձի առթիվ: Ինձանից հետո խոսեց Նժդեհը: Սպարապետի կարմիր գոտին մեջքին, ձեռքերը խաչաձև կրծքի վրա՝ նա սկսեց ճառը մեղմ ձայնով, ապա՝ աստիճանաբար ձայնը բարձրացավ՝ հատու և հզոր նախադասություններով, հուզելով ու հմայելով բազմությանը: Ի՞նչ ասաց, մի՞թե կարևոր էր, թե ինչ ասաց, կարևորը ասելու ձևն էր: Նժդեհը գիտեր խոսքով մարդկանց սրտերը գերելու արվեստը և այդ օրը գերազանցեց ինքն իրեն»[1]:

Իսկ որպիսի՜ ջերմությամբ է նկարագրել այդ հանդիսությունը ինքը՝ Նժդեհը:

«Նվիրական հողաթմբի վրա, արևի տակ վեհորեն ու հպարտ փայլում էին Սյունիքի սուրն ու խաչը՝ առաջինը որպես հաղթության, երկրորդը՝ տառապանքի խորհրդանշան:

Ջերմ խոսք կար:

Կար դառնության և ուրախության արցունք:

Այդ օրը ես հասկացա, որ մի պետության բարոյական բովանդակ մեծությունը կամ ոչնչությունը կարելի է կարդալ նրա քաղաքացիներից մեկի դեմքի վրա:

Այդ օրը սյունեցու աչքերի մեջ կարելի էր տեսնել մեր ցեղի բովանդակ զորույթն ու թափը:

Այդ օրը հաղթական էր սյունեցին, քանզի ցեղի ոգին կշարժեր հայ վաշտերը...

Ես այդ օրը տեսա Սյունիքը՝ իր ուժի, փառքի իր մեծության մեջ: Նա հպարտ էր, որովհետև պարտության էր մատնել Ադրբեջանը, ջարդել տաճիկ

---

[1] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Բ, էջ 238:

գնդերը, զինաթափել բոլշևիկյան 11-րդ բանակը...»[1]:

Բայց տոնակատարության մասնակիցների հոգում ոչ միայն հպարտություն էր, այլև տագնապ՝ վաղվա օրվա հանդեպ, քանի որ նրանք գիտակցում էին իրենց դրության ողբերգականությունը: Այդ օրը բոլորը՝ ղեկավար թե զինվոր, տղամարդ թե կին, ընդհանուր խանդավառության մեջ լուռ մտածում էին. «Ի՜նչ լավ պիտի լիներ, եթե մեր ռազմամթերանոցները դատարկ չլինեին: Մենք՝ ազատության համար թշնամու հարյուրապատիկ մեծ ուժերի հետ չափվողներս, հաց և փամփուշտ չունենք»:

Այո՛, կռվի համար Սյունիքը չուներ ամենաանհրաժեշտը՝ հաց և ռազմամթերք: Նա գիտակցում էր, որ «սիրամարգի պես իր շքեղ թևերի տակ չպիտի կարողանա թաքցնել իր «սև ոտները», իր պահեստների դատարկությունը: Նա հպարտ էր, որովհետև հաղթել էր, բայց դառնացած էր, քանզի հնարավորություն չուներ օգտվելու իր հաղթություններից»[2]:

Գորիսում Ս. Վրացյանը հանդես եկավ զեկուցումով, կառավարության նիստում հաղորդում արեց Պարսկաստան կատարած ուղևորության մասին, շեշտեց, որ այնտեղ իրեն հայտնի է դարձել, որ մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրից հետո, երբ բոլշևիկների և քեմալականների միջև հաստատվել են մտերիմ նոր հարաբերություններ, դաշնակիցները ո՛չ կարողություն ունեն օգնելու Լեռնահայաստանին և ո՛չ էլ կամեցողություն:

Սակայն Վրացյանը չխոսեց այն մասին, որ Թավրիզում ինքը հանդիպել է իր նկատմամբ ծայր առած բուռն դժգոհության: Հայաստանից Թավրիզ հասած ՀՀ նախկին խորհրդարանի անդամները, տեղեկանալով Վրացյանի գալստյան մասին, նրան խնդրել էին հանդիպել իրենց հետ և համատեղ քննարկել ստեղծված իրավիճակից բխող հետագա անելիքների հարցը: Վրացյանի մասնակցությամբ հրավիրվել էր ժողով, ուր նա ենթարկվել էր խիստ քննադատության: Մասնավորապես ելույթ ունեցողները հայտարարել էին, որ Տաթևում նրա կազմած նոր կառավարությունն ապօրինի է, և որ դա պատճառ է դառնալու մի նոր աղետի, այս անգամ՝ Լեռնահայաստանում: Ժողովը նրան առաջարկել էր ցրել կառավարությունը:

Նշանակություն չտալով նախկին խորհրդարանականների կարծիքին՝ Վրացյանն այնուհետև հանդիպում էր ունեցել Թավրիզում ապաստանած դաշնակցական մի քանի նշանավոր գործիչների հետ: Վերջիններս կարծիք էին հայտնել, որ նպատակահարմար է միավորել Զանգեզուրում գտնվող երկու կառավարությունները, Լեռնահայաստանն ազդարարել Ազատ Հայաստան և ստեղծել Հայաստանի միասնական կառավարություն: Վրացյանն անմիջապես հավանություն էր տվել այդ գաղափարին[3]:

---

[1] **Գ. Նժդեհ**, Ցեղի ոգու շարժը, էջ 26-27:

[2] Նույն տեղում, էջ 27:

[3] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 59:

Ծանոթանալով գործերի ընթացքին՝ Վրացյանը գնալով համոզվում էր, որ Լեռնահայաստանի անկախության պայքարը տանուլ է տրվում: «Ինձ համար,– գրել է նա,– արտասահմանի վիճակին ծանոթանալուց հետո պարզ էր այլևս, որ մենք դատապարտված ենք հեռանալու երկրից, որքան շուտ, այնքան, թերևս, ավելի լավ երկրի և մեզ համար: Կառավարությունը (Լեռնահայաստանի: – *Ա. Ս.*) այդպես չէր մտածում: Որքան երկար դիմանանք, այնքան լավ, թերևս դրանով հաջողվի ապահովել Լեռնահայաստանի ինքնավարությունը. թերևս նոր դեպքեր տեղի ունենան, նոր հորիզոններ բացվեն մեր առջև, ո՞վ գիտե: Հեղափոխական ժամանակ է, ինչեր ասես չեն պատահի...»[1]:

Իր հաղթանակներով հպարտ այունեցուն սպասում էր մշուշապատ ապագա, բայց նա սովոր չէր իր բախտը թողնել անորոշությանը:

Նժդեհը և նրա զինակիցները անբնական ու վնասակար էին համարում Զանգեզուրում երկու կառավարությունների գոյությունը, մանավանդ որ դրանք միջամտում էին միմյանց ներքին գործերին, խախտում գործառույթների հստակ բաժանման մասին նախապես համաձայնեցված կարգը: Ս. Վրացյանի կառավարության անդամներից ոմանք Զանգեզուրում իրենց գտնվելը համարում էին ժամանակավոր, ուստի համարյա չէին լինում ռազմաճակատներում, ջանքեր չէին թափում Երևանից եկած զորքերի գոնե մի մասը Զանգեզուրի պաշտպանության գործին լծելու համար և այլն:

Ի տես այս ամենի, Նժդեհը բողոքում էր. «Նախարարներից (Ս. Վրացյանի կառավարության: – *Ա. Ս.*) երեք հոգի ապրում են Հանքերում՝ առանց որևէ իրական օգնություն ցույց տալու գործին, իսկ կառավարության մյուս անդամները նույն եղանակով շարունակում են իրենց գործունեությունը, որի շնորհիվ էլ ոչինչ չի փոխվում եղած դրությունից»: Այնուհետև նա նշում էր. «Ես ստիպված եմ լինում ճակատից ճակատ թափառել, խոսել զինվորների և գյուղացիության հետ, նրանց մեջ վառ պահել անկախության ոգին: Մինչև իսկ կառավարության անդամները շատ անգամ գրում էին ինձ՝ այս կամ այն շրջանն անցնել և երևալ ժողովրդի աչքին, որ նա չհուսահատվի, չվարանե: Ես առանց դադարի Գորիսից Հանքերն էի անցնում, այնտեղից՝ Մեղրի, երկու օրից հետո երևում էի Տաթև, Բազարչայ և այսպես անընդհատ: Բայց ի՞նչ է լինում այդքան ջանքերի հետևանքը: Ընկ. Վրացյանը մի երկու օրով միայն վերադառնում է Գորիս և էլի իսկույն ետ գնում Թավրիզ»[2]:

Գավառի համար ճակատագրական այդ պահին անհրաժեշտ էր ուժերի ոչ միայն համադրում, այլև միավորում: Այդ նպատակադրումը իր հերթին առաջացրել էր Լեռնահայաստանի կառավարությանն անկախ Հայաստանի

---

[1] **Ս. Վրացեան,** Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Ա, էջ 237:

[2] **Գ. Նժդեհ**. Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 339-340:

կառավարության գործառույթներով օժտելու անհրաժեշտությունը:

Դեռ մայիսի 18-ի նիստում Լեռնահայաստանի կառավարությունը որոշում էր ընդունել «անմիջապես հեռախոսագրով Գորիս հրավիրել Փրկության կոմիտեի անդամներին (հատկանշական է, որ Լեռնահայաստանի կառավարությունը դեռ չէր հարմարվել «Հանրապետական Հայաստանի կառավարություն» բառակապակցությանը – *Ա. Ս.*), ամսիս 27-ին գումարել խառը նիստ, խորհրդակցության մեջ մտնել նոցա հետ և պարզել մի շարք կարևոր հարցեր, որոշելով Լեռնահայաստանի կառավարության և Փրկության կոմիտեի փոխհարաբերությունները»[1]:

Իր կառավարության անդամների հետ Կապանից Գորիս եկած Ս. Վրացյանը, առանց ժամանակ կորցնելու, Նժդեհի հետ քննարկեց Ազատ Հայաստանի միասնական կառավարություն ստեղծելու հարցը: Չնայած Վրացյան-Նժդեհ խոսակցությունը հարթ չանցավ, բայց նրանք ի վերջո եկավ համաձայնության:

1921 թ. մայիսի 31-ին Լեռնահայաստանի կառավարությունը Գարեգին Նժդեհի վարչապետությամբ, և Հանրապետական Հայաստանի կառավարությունը՝ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ, Գորիսում կայացած համատեղ նիստում համաձայնության եկան միանալու և միասնական կառավարություն ստեղծելու մասին:

Հունիսի 1-ին ստորագրվեց մի փաստաթուղթ, որի հիման վրա այդ երկու կառավարությունները ձուլվեցին, և ստեղծվեց մեկ՝ Հայաստանի կառավարությունը: Այլ խոսքով՝ Լեռնահայաստանը պաշտոնապես հայտարարվում էր Հայաստան, որի մայրաքաղաքը Գորիսն էր[2]:

Ըստ կայացած համաձայնության՝ Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ առաջադրվեց Սիմոն Վրացյանը, իսկ ռազմական ուժերի հրամանատար՝ Գարեգին Նժդեհը: Նոր դահլիճը բազմամարդ էր՝ բաղկացած 11 նախարարից՝ Ա. Հովհաննիսյան, Գ. Նժդեհ, Ս. Մելիք-Յոլչյան, Հ. Տեր-Հակոբյան, Ս. Եղիազարյան, Ա. Օհանջանյան, Հովհ. Տևեճյան, Հ. Տերտերյան, Ա. Խոնդկարյան, Վ. Մինախորյան, Մ. Մինասյան: Կառավարությանն առընթեր պետական հսկիչ նշանակվեց Գեդեոն Տեր-Մինասյանը[3]: Նախարարների մի մասը պորտֆելով էր, մյուս մասը՝ առանց պորտֆելի: Նրանցից մեկն անկուսակցական էր, երկուսը սոցիալիստ-հեղափոխականներ էին, մնացածը՝ դաշնակցականներ[4]:

Նշված գործողությամբ, ըստ էության, վերացվում էին Տաթևի՝ ապրիլի 26-ի համագումարի որոշումները, և չեղյալ էր հայտարարվում համագուման-

---

[1] **Ց. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 116:

[2] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 88:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Ց. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 116:

րում ընտրված Լեռնահայաստանի կառավարությունը: Թեև Լեռնահայաստանի փաստացի առաջնորդը շարունակում էր մնալ Նժդեհը, բայց իրավական տեսակյունից կառավարության ղեկավար դարձավ Ս. Վրացյանը:

Շուտով Սիմոն Վրացյանը կրկին մեկնեց Իրան, որ պարզի, թե գավառի վրա Կարմիր բանակի նոր հարձակման դեպքում Լեռնահայաստանը ինչպիսի փաստացի օգնություն կարող է ակնկալել պարսկական խաներից:

Գորիսում նոր կառավարության ստեղծումն արդեն Պարսկաստան անցած դաշնակցական գործիչներից շատերի մոտ կարող էր հույս արթնացնել, թե գուցե հնարավոր լինի Հայաստանում վերականգնել ազգային-անկախ պետականությունը: Բացի այդ՝ ենթադրվում էր, որ նոր կառավարությունը շունչ է տալու Խորհրդային Հայաստանում մնացած դաշնակցականներին և մտավորականության այն մասին, որոնք նույնպես չէին կորցրել Հայաստանի անկախության վերականգնման հույսը:

Գորիսում Հայաստանի միացյալ կառավարության ստեղծումը Խորհրդային Հայաստանի կառավարությունը դիտեց որպես Զանգեզուրի իշխանությունների կողմից պայքարը մինչև վերջ շարունակելու վկայություն:

Ելնելով դրանից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի բնակչության լայն շրջանները չէին ընդունում Զանգեզուրի վրա հարձակման գաղափարը՝ Ա. Մյասնիկյանի կառավարությունը, 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության հետ համագործակցած, քարոզչական լայն գործունեություն ձեռնարկեց: Զանգեզուրը գրավելու կոչերը չէին իջնում «Խորհրդային Հայաստան» թերթի էջերից: Ամենուրեք կազմակերպվում էին բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների միտինգներ, որոնցում համոզմունքով կամ պատվերով ելույթ ունեցողները պահանջում էին վճռական միջոցների դիմել «Զանգեզուրի հակահեղափոխությունը տապալելու» համար:

Հարկ է նշել, որ Ս. Վրացյանի գլխավորած Հայաստանի կառավարության ստեղծումը Զանգեզուրի բնակչության լայն զանգվածների շրջանում մեծ ոգևորություն առաջ չբերեց: Հոգնած ու տառապած գյուղացիներից շատերն այլևս նախկինի նման ոգեշնչված չէին գավառի ինքնիշխանության գաղափարով և փաստով: Նրանք կարոտով երազում էին հանգստության և խաղաղ կյանքի մասին: Այդ կառավարությունը հարկ եղած պաշտպանություն չստացավ նաև զորքի կողմից, ավելին՝ զորամասերի վստահելի հրամանատարների մի մասը բացահայտորեն հանդես եկավ նրա դեմ: Նոր կառավարությանը հակված չէին ընդունելու նույնիսկ նրա հետ Զանգեզուր եկած զորամասերը: Մասնավորապես տաճկահայերը, որոնք փետրվարյան օրերին դաշնակցականների հիմնական հարվածող ուժն էին, կենտրոնանալով Զանգեզուրում, սկսեցին տրտնջալ անորոշ վիճակից:

Այդ օրերին Ասքանազ Մռավյանը գրում էր, որ Փետրվարյան ապստամբության հիմնական ուժը կազմող տաճկահայերը, մասնավորապես սա-

սունցիները և մշեցիները, «նահանջելով Զանգեզուր, սոսկալի տանջանքներ են կրել ճանապարհին», ուստի նրանք «մերժում են կռիվը շարունակել Զանգեզուրում»[1]: Այո՛, Զանգեզուր անցած ապստամբների մի զգալի մասը այլևս տրամադիր չէր կռվելու Կարմիր բանակի դեմ: Ահա թե ինչու զանգեզուրյան իշխանությունները ձեռնարկում էին բոլոր միջոցները՝ թիկունքն ամրապնդելու համար: Այդ ուղղությամբ ձեռնարկած զանազան միջոցների թվում Ս. Վրացյանն ու Գ. Նժդեհը կարևոր նշանակություն տվեցին Զանգեզուրի հակախորհրդային, հակաադրբեջանական բոլոր ուժերի համախմբմանը: Ամենուրեք գյուղերում կազմակերպվում էին ժողովներ, որոնցում դրանց մասնակիցներին կոչ էր արվում մինչև վերջ կռվել գավառի անկախության համար: Նժդեհը շրջում էր գյուղից գյուղ, հանդես գալիս կրակոտ ելույթներով ու կոչերով, բնակչության մեջ բորբոքում կռիվը շարունակելու տրամադրություն: Կարևոր խնդիրներից մեկը նոր զորահավաքի միջոցով զորամիավորումների համալրումն էր: Վրացյանը և Նժդեհը այդ գործում մեծ դժվարությունների առջև կանգնեցին. երիտասարդների մի մասը հրաժարվում էր զորակոչից: Չնայած գործադրած ջանքերին՝ զորակոչը սպասված արդյունքը չտվեց:

Թիկունքն ամրապնդելու համար ձեռնարկվեցին նաև ուրիշ միջոցներ: Նժդեհը հրահանգ տվեց «գավառը մաքրել կոմունիստներից և նրանց համակիրներից»: Նա, օրինակ, Լեռնահայաստանի բանակի գլխավոր շտաբի պետ Ռուբեն Նարինյանի գլխավորությամբ պատժիչ զորամասեր ուղարկեց Սիսիանի շրջանի Բազարչայ և Բորիսովկա ռուս-մոլոկանական գյուղերը, որոնց բնակիչները, հետախուզության տվյալների համաձայն, գավառի վրա ռուսական Կարմիր բանակի հարձակման դեպքում պատրաստվում էին Զանգեզուրի պաշտպանների թիկունքում ապստամբություն բարձրացնել: Հօգուտ պետության բռնագրավվեց այդ գյուղերի բնակիչների մի մասի ունեցվածքը, իսկ զենքը բռնելու ընդունակ մոլոկաններից մի քանի տասնյակ մարդ ձերբակալվեց և ուղարկվեց Տաթևի վանք՝ բանտարկության: Նրանց թվում էին գյուղի ամենաակտիվ գործիչները՝ Ռոդիոն, Գրիգորի և Անդրեյ Կասմինինները, Վասիլի Տոկարևը, Անդրեյ Ժուկովը, Աֆանասի Սորոկոումովը, Վասիլի Տեպկինը, Պավել Սերգեևը, Իվան Յուրինը և ուրիշներ:

Տաթև հասնելուն պես պատանդներից մի քանիսը գնդակահարվեցին: Նրանց թվում էին Վասիլի Տեպկինը և Աֆանասի Սորոկոումովը: Բազարչայցիների հետ բանտարկության մեջ էին գերի կարմիրբանակայիններ և շրջակա գյուղերից, Գորիս քաղաքից ու Կապանի հանքերից բերված հայ բոլշևիկներ: Ովքեր հարցաքննությունների ժամանակ ցուցմունքներ չէին տալիս, ժայռից նետվում էին ձորը:

---

[1] «Կարմիր աստղ» (Թիֆլիս), 1921, 1 հուլիսի:

Տաթև գյուղի բոլշևիկյան բջիջը, ընդհատակյա ղեկավարությունից հրահանգ ստանալով, ձեռնարկեց ռուս գյուղացիներին ազատելու վտանգավոր գործը: Մի քանի կոմունիստներ գիշերով կարողացան թափանցել վանք, իրենց հետ բերած պարանը կապեցին վանքի խցերից մեկի պատուհանին, և բանտարկյալ բազարչայցիները սկսեցին իջնել կիրճը: Վանքի պահակ զինվորները, նկատելով այդ, կրակ բացեցին և սպանեցին իջնողներից մի քանիսին, բայց ոմանց, այնուամենայնիվ, հաջողվեց փախչելով ազատվել և 45-օրյա բանտարկությունից հետո, գիշերը քայլելով և ցերեկը թաքնվելով, հասնել Ադրբեջանի տարածք ու մտնել Կարմիր բանակի շարքերը: Այդ անսպասելի գործողությունն իրականացնելիս մեծ համարձակություն ցուցաբերեցին հատկապես Տաթևին հարևան Սևարանց գյուղի ընդհատակյա կոմունիստներ Սերգո Վարդանյանը, Լևոն Վարդանյանը, Սաթի Ղազարյանը և Տիգրան Մղումյանը: Վանքում մնացած բանտարկյալներից մի քանիսը գնդակահարվեցին, իսկ մյուսներն ազատվեցինկարմիրբանակայինների կողմից Տաթևը գրավելու ընթացքում*:

Այդ օրերին բուռն իրադարձություններ տեղի ունեցան Սիսիանի Ախլաթյան գյուղում: Գյուղացիների մի մասը հայտարարեց, որ այլևս չի ենթարկվելու գավառի կառավարությանը: Ցույցը կազմակերպել և գլխավորում էր ընդհատակյա կոմբջիջը՝ Հակոբ Տանինի գլխավորությամբ:

Զինված մի ջոկատ հարձակում գործեց գյուղի վրա և ճնշեց հուզումները[1]: Ձերբակալվեց 52 մարդ, որոնց ուղարկեցին Գորիս՝ հարցաքննության: Հ. Տանինը կարողացավ թաքնվել, բայց ձերբակալվեց նրա հայրը, որը նույնպես ցույցի կազմակերպիչներից էր. երկար հարցաքննությունից հետո վերջինս գնդակահարվեց Բոնակոթ գյուղում:

Շուրջկալ կազմակերպվեց Ղարաքիլիսա գյուղում, բայց կոմունիստներն այնտեղից կարողացել էին ժամանակին հեռանալ: Այնուամենայնիվ, պատժիչները բռնեցին գյուղի կոմբջջի ակտիվ անդամներից մեկին՝ Գարեգին

---

* Այս դեպքերից շատ չանցած՝ 1921 թ. վերջին և 1922 թ. սկզբին, տնտեսապես քայքայված բազարչայցիները թողեցին գյուղը: Միայն երկու ընտանիք՝ Մորոզովներն ու Մատրյոշկինները, չցանկացան մեկնել, իսկ 240 ընտանիք փոխադրվեց Հյուսիսային Կովկաս: Այնտեղ բախտ փնտրելուց և որոնումների ծանր ուղի անցնելուց հետո բազարչայցի շատ ընտանիքներ մի քանի տարի անց, կոլտնտեսություն մտնելուց խուսափելով (կոլեկտիվացումը Հյուսիսային Կովկասում ավելի վաղ էր սկսել), վերադարձան գյուղ: Բայց շուտով այստեղ էլ սկսվեց կոլեկտիվացման շարժումը, և կազմակերպվեց Բազարչայի հայտնի տոհմային՝ անասնաբուծության սովխոզը: Հայրենական մեծ պատերազմից հետո բազարչայցիները կրկին ու վերջնականապես թողեցին իրենց հարյուրամյա գյուղը և բնակություն հաստատեցին Չեչենա-Ինգուշական Ինքնավար Հանրապետության մայրաքաղաք Գրոզնու մերձակա ավաններում, բայց երկար ժամանակ իրենց հայրենիքը շարունակում էին համարել Զանգեզուրի ծայր հյուսիսում՝ Որոտանի վերին հոսանքում ընկած հովիտը՝ շրջապատված զով ու խոտառատ բարձրաբերձ սարերով:

[1] Այդ մասին տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 82:

Գյուրջյանին, որը նույնպես գնդակահարվեց՝ «խռովություն կազմակերպելու փորձ անելու» մեղադրանքով:

Հունիսի սկզբներին Հայաստանի հեղկոմի կողմից կրկին Վայոց ձոր եկան Արտաշես Կարինյանը և Մելնիկովը՝ բանակցելու Զանգեզուրի իշխանությունների հետ և վերջ տալու պատերազմին: Գորիսի կառավարությունը այնտեղ ուղարկեց Գառնիկ Շահինյանին, որին Լեռնահայաստանի նախարարների խորհրդի թիվ 1438 որոշմամբ և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության միացյալ կառավարության փոխվարչապետ Արշակ Հովհաննիսյանի ստորագրությամբ հունիսի 4-ին տրվեց հետևյալ վկայագիրը.

«Սույնը ներկայացնող ընկեր Գառնիկ Շահինյանը լիազորվում է անձամբ հանձնելու Խորհրդային Հայաստանի կառավարությանը Լեռնա-Հայաստանի կառավարության պաշտոնական գրությունը և ստանալու պատասխանը:

Հրահանգվում է զինվորական և քաղաքացիական իշխանություններին ցույց տալ ընկեր Շահինյանին ամենալայն աջակցություն»[1]:

Հանդիպումը կողմերի միջև տեղի ունեցավ Գնդեվազ գյուղում, բայց որևէ համաձայնություն չկայացավ, և որոշվեց բանակցությունները հետաձգել երկու շաբաթով:

Իշխանությունն ամրապնդելու նպատակով Գորիսի կառավարությունը զանազան քայլեր էր անում նաև գավառից դուրս գտնվող հակախորհրդային ուժերի հետ ընդհանուր լեզու գտնելու համար: Աջակցություն ստանալու հույսով նա դիմեց նույնիսկ Զանգեզուրին հարող խորհրդային հայտարարված ադրբեջանական տարածքներում դեռևս չջախջախված և դեռ իրենց ազդեցությունը բնակչության զգալի խավերի վրա պահպանող մուսավաթական ուժերին[2]: Երեկվա թշնամիներն ուզում էին միավորել իրենց ուժերը խորհրդային իշխանության դեմ: Այդ մերձեցման փորձը Գորիսում արդարացվում էր նրանով, որ եթե իրենց դեմ միավորվել են հայ և ադրբեջանցի բոլշևիկները, ապա տարօրինակ ոչինչ չկա, եթե նրանց դեմ իրենց ուժերը միավորեն բոլշևիզմի հակառակորդները:

Թեև Զանգեզուրին հարող շրջանների մուսավաթականները լավ էին տեսնում, որ խորհրդայնացված Ադրբեջանի կառավարության մեջ և իշխանության տեղական մարմիններում մեծ թիվ են կազմում երեկվա թունդ մուսավաթականները և իրենց կոմունիստ վերանվանած մուսավաթականամետ գործիչները, թեև համոզված էին, որ Նարիմանովի կառավարությունը Հայաստանի և հայերի նկատմամբ ըստ էության վարում է նախկին կառավարության քաղաքականությունը, այնուամենայնիվ նրանք պատրաստակամությամբ ընդառաջ գնացին Գորիսի կառավարության առաջարկին, որով-

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 33:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 208, թ. 1-2:

հետև երազում էին Բաքվում վերականգնել նախկին իշխանությունը[1]:

Հունիսի 5-6-ին Գորիսում բանակցություններ տեղի ունեցան այնտեղ ժամանած Քուրդիստանի Մինքենդ գյուղի և հարակից գյուղերի գործիչների հետ, որոնք դեռ պահպանում էին իրենց զինված ջոկատները: Հունիսի 6-ին Գորիսում բանակցություններ տեղի ունեցան «քոչվորների» անվան տակ այնտեղ եկած քուրդ գործիչների և տեղի իշխանությունների ներկայացուցիչների միջև: Բանակցելու էին եկել մի քանի բեկեր՝ Ալիբեկովը, Ասադուլաբեկ Համզաբեկովը, Հուսեին Գուլիբեկ Բաբաբեկովը, Հաջի Իսմայիլ Հաջի Շեխուլի օղլին, Քեմանդ Բաբա օղլին և Հաջի Մահմեդ օղլին[2]:

Գորիսի իշխանությունների կողմից բանակցությունները վարում էր կառավարության ներքին գործերի նախարար Մելիք-Յոլչյանի գլխավորած պատվիրակությունը:

Բանակցությունների ընթացքում բեկերը խոստումներ տվեցին, որ Զանգեզուրի վրա Կարմիր բանակի հարձակման դեպքում իրենք օգնություն են ցույց տալու Գորիսի կառավարությանը[3]:

Այդ խոստումը, իհարկե, չկատարվեց, և Գորիսի կառավարությունն էլ այնքան միամիտ չէր, որ հավատ ընծայեր բեկերի երդումներին: Ուղղակի այդ օրերին Գորիսի համար չափազանց կարևոր էր, որ Զանգեզուրի վրա Կարմիր բանակի արշավանքի դեպքում բեկերը գոնե իրենց չեզոք պահեին: Իսկ Զանգեզուրում տեսել էին, թե մուսավաթականները, ամենահետադեմ մուսուլմանական ուժերը, խավարամիտ բեկերը ինչպես էին զանգվածաբար միանում Կարմիր բանակին, բոլշևիկյան գույն ստացած ցեղակիցներին, այսպես կոչված, կարմիր ասկյարներին, երբ նրանք կռվի էին գալիս Հայաստանի Հանրապետության վերջին բեկորի՝ Զանգեզուրի դեմ:

Վրացյան-Նժդեհ խմբակցությունը եռանդուն ջանքեր էր գործադրում նաև Հյուսիսային Պարսկաստանի խաների հետ ստեղծված բարեկամությունը պահպանելու և նրանցից օժանդակություն ստանալու համար: Պարսկաստանում շարունակվում էր աշխատանքը հիմնականում երկու ուղղությամբ՝ երևանյան տարադրամով Զանգեզուրում գտնվող փախստականների համար գնել սննդամթերք և թույլտվություն ստանալ՝ Թավրիզում ու շրջակա բնակավայրերում տեղավորելու Արաքսն անցած փախստականներին: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հարցի լուծման գործում մեծ դեր էր խաղում Հյուսիսային Պարսկաստանի նշանավոր քաղաքական գործիչ, հայերի ընդգծված բարեկամներից մեկը՝ Ամիր Արշադ խանը:

Կարևոր դեր էր ստանձնել Թավրիզի հայոց առաջնորդ Ներսես Մելիք-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 315, թ. 1:

[2] Տե՛ս **Ա. Արշակունի**, Մինքենտի շրջանի թուրք-քոչուորները («Լեռնահայաստանի հերոսամարտը» գրքի առթիվ). «Հայրենիք», 1926, սեպտեմբեր, թիվ 11 (47), էջ 65, 71:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 208, թ. 1-2:

Թանգյանը, որին մշտապես աջակցում էր Ամիր Արշադը: Դեռևս Փրկության կոմիտեի օրերից նա նշանակվել էր «Հայաստանի կառավարության ներկայացուցիչ» Թավրիզում, ինչպես որ նույնպիսի պարտականություն Թեհրանում կատարում էր իշխան Արղությանը:

Մելիք-Թանգյանի նախաձեռնությամբ ստեղծվել էր Կարմիր խաչի կոմիտե՝ զանգեզուրյան բանակի վիրավոր և հիվանդ մարտիկներին բժշկական օգնություն ցույց տալու համար: Փախստականների առաջին խմբի ապրիլի 27-ին Պարսկաստան անցնելուց մեկ ամիս հետո՝ մայիսի 24-ին, սկսվել էր Հայաստան վերադարձի հոսքը[1]: Նրանց օգնելու նպատակով, ինչպես Թավրիզում, այնպես էլ ողջ Ատրպատականում սկսվել էր դրամահավաք, որը մեծ արդյունքներ էր տալիս: Թեմակալ առաջնորդը նաև Զանգեզուրի կառավարության և Ամիր Արշադի միջնորդն էր: Վերջինս և նրանից կախում ունեցող Մութալիբ և Հիդայաթ խաները ոսկու և թանկարժեք իրերի դիմաց Զանգեզուր էին ուղարկում ցորեն և փամփուշտ[2]:

Սակայն Արաքսն անցնելու գործը դժվարանում էր նրանով, որ Հյուսիսային Պարսկաստանում քաղաքական անկայուն վիճակ էր: Մի կողմից անգլիական զորքերը շարունակում էին մնալ Զանջանում, Համադանում, Ղազվինում և տեղաշարժվում էին՝ առանց հաշվի առնելու տեղական իշխանությունների կարծիքը, մյուս կողմից՝ լուծված չէին Խորհրդային Ռուսաստանի հետ կապված մի շարք լուրջ խնդիրներ:

Պարսկաստանի կառավարության նախարար-նախագահ Տաբատաբային մայիսի 15-ին Թավրիզ՝ սահմանային իշխանություններին ուղարկել էր հետևյալ հրամանը. «Պարսկական կառավարության հետ ունեցած պայմանագրի համաձայն, Խորհրդային Ռուսաստանը պարտավոր էր հեռանալ Հյուսիսային Պարսկաստանի Գիլանի նահանգի տարածքից, բայց մինչև այժմ շարունակում է մնալ այնտեղ: Ուստի Կովկասի հետ պարսկական սահմանը հայտարարում եմ փակված, և թույլ չտալ ապրանքների արտահանում Կովկաս»[3]: Թավրիզի գեներալ-նահանգապետ Մուխբիր-Սալթանեն անմիջապես ձեռնարկեց հանձնարարականի կատարմանը:

Պարսկական կառավարության նախարար-նախագահի այդ հրամանը տագնապալի էր Լեռնահայաստանի և հատկապես այնտեղ կուտակված բազմահազար փախստականների համար:

Մյուս կողմից՝ այդ հրամանը մեծ վրդովմունք էր առաջացրել Թավրիզի առևտրականների շրջանում, քանի որ այն մեծապես հակասում էր նրանց շահերին: Ուստի, հավաքվելով ընդհանուր ժողովի, առևտրականները քննադատեցին նախարար-նախագահի հրամանը, նշեցին, որ Թավրիզի

---

[1] Տե՛ս **Վ. Մինախորեան**, Վերադարձը, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 49:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 33:

[3] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 8 գ. 306, թ. 2:

գեներալ-նահանգապետը՝ որպես կառավարիչ, չի գտնվում իր կոչման բարձրության վրա, իր վարչական աշխատակազմով ազդեցություն չի գործում այն խաների ու զանազան սարդարների վրա, որոնք խաղաղ աչքով են նայում ավարառություններին և չեն մտահոգվում առևտրի ու արհեստների զարգացմամբ: Ելնելով դրանից՝ նրանք որոշում ընդունեցին՝ խնդրել նախարար-նախագահին պաշտոնազրկել Մուխբիր-Սալթանեին և նրա փոխարեն Թավրիզի գեներալ-նահանգապետ նշանակել Ամիր Արշադին, որն ավելի ազդեցիկ է, ուժեղ և գործունյա:

Իրենց պահանջը ժողովականները հեռագրով ուղարկեցին նախարար-նախագահ Տաբատաբայինին: Սակայն նա մերժեց առևտրականների պահանջը և Ամիր Արշադին առաջարկեց անմիջապես իր ջոկատով հեռանալ Թավրիզից. վերջինս ենթարկվեց հրամանին[1]:

Չնայած դրան՝ Նժդեհին հաջողվել էր մինչ այդ պայմանագիր կնքել Ամիր Արշադի հետ, որով երաշխավորվում էր Զանգեզուրից բոլոր հայերի Պարսկաստան անարգել անցնելը: Հաշվի առնելով արդեն կնքված պայմանագիրը և ելնելով Զանգեզուրում հայերի համար ստեղծված ծանր վիճակից՝ նախարար-նախագահը թույլատրելի համարեց նրանց առջև սահմանը բաց պահելը:

Բայց Նժդեհի, Վրացյանի և նրանց զինակիցների ջանքերը սպասած արդյունքները չէին տալիս: Լեռնաշխարհի բնակչության լայն զանգվածների գիտակցության մեջ փոփոխություն էր կատարվում: Ավելի ու ավելի շատ զանգեզուրցիներ էին հակվում խնդիրը Խորհրդային Հայաստանի բոլշևիկյան կառավարության հետ խաղաղ ճանապարհով լուծելու կողմը:

Զանգեզուրցին, բառիս բուն իմաստով, կանգնել էր սովի առջև: «Լեռնահայաստանի ժողովուրդը,– գրում էր Նժդեհը,– 7000-ի չափ երևանյան գաղթականություն է կերակրում, ինքը քաղցած մնալով հանդերձ»[2]: Բայց դա բոլորը չէր. դեպի Արաքս փախչող երևանյան զորամասերը բնակավայրերով անցնելիս թույլ էին տալիս զանգվածային անօրենություններ: Տաճկահայ զինվորությունը, որ հայկական հանրապետության բանակի ամենառազմունակ տարրն էր, Վայոց ձորի ճակատում մնալ չցանկանալով, շտապում էր դեպի Արաքս: 2500 մարդուց բաղկացած տաճկահայ մի զորամաս Սիսիանի, բուն Զանգեզուրի, Կապանի և Արևիքի հայկական գյուղերով անցնելիս անկազմակերպ խուճապային արշավով հուսաբեկություն էր առաջացնում տեղացիների մոտ: Բայց առավել անտանելին գյուղացիների նկատմամբ զորամասի զինվորների անկիրթ ու անհոգի վերաբերմունքն էր. նրանք թալանում էին գյուղացու հացի վերջին կտորը, մորթում նրա ոչխարը, այծը, հավերը, մի խոսքով՝ կատարյալ ավերի էին ենթարկում նրա վերջին ունեցածը: Այդ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 306, թ. 2:

[2] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 339:

պատճառով տեղի ունեցան ցավալի ընդհարումներ տաճկահայ զինվորների և տեղի գյուղացիների միջև, եղան նաև մարդկային զոհեր:

Գողթանի շրջանում մնացած մի քանի հայկական գյուղերի բնակիչներ զինված դուրս էին եկել և դիրք բռնել տաճկահայ զինվորների դեմ՝ իրենց բնակավայրերը պատշպանելով թալանի վտանգից: Նրանք նաև պարզ հայտարարել էին, որ իրենք, իհարկե, բոլշևիկներ չեն, բայց իրենց ֆիզիկական գոյության պահպանումը և տնտեսական կյանքի շահը պահանջում է լինել Խորհրդային Հայաստանի հետ[1]:

Ա. Մյասնիկյանին ներկայացրած հետախուզային զեկուցագրի մեջ նշված էր. «Մինչև երևանյան փախստականների Զանգեզուր հասնելը այստեղի գյուղացիները ռազմատենչ էին, բայց գալուց հետո նրանք ճնշված վիճակում են, անլուր սարսափներ են կրում մաուզերիստներից: Կան շրջաններ, որտեղ ամեն մի գյուղացու մոտ «հյուրընկալված» է 8-10 մաուզերիստ: Սրանց կողմից եղել են բռնաբարությունների դեպքեր»[2]:

Նժդեհը զայրացած գրում էր. «Ճիշտ է, տաճկահայ զինվորությունը կիսաքաղց էր, բայց չէ՞ որ նույն և ավելի վատթար վիճակում էր նաև Լեռնահայաստանի զինվորը, որը պետական պահեստներից չէր հաց ստանում, այլ կամավոր նվեր բերված հացի փշրանքներից, և ոչ թե հինգ օր, 10 օր, այլ ամբողջ ամիսներ շարունակ: Տաճկահայ զինվորի այդ վարմունքը պետք է քայքայում առաջ բերեր գյուղացիության լայն խավերում՝ սկսած Դարալագյազից մինչև Մեղրի»[3]:

Ուստի Լեռնահայաստանի իշխանությունները շահագրգռված էին երևանյան փախստականությանը որքան կարելի է շուտ հեռացնել Պարսկաստան՝ դրանով իսկ արգելքներ հարուցելով Հայաստանի կառավարության դեկրետների իրականացման առջև:

Հակառակ դրան՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները ուժեղացնում էին աշխատանքները գաղթողների փախուստը կանգնեցնելու և արդեն Պարսկաստան անցածներին ետ բերելու համար: Այդ նպատակին էին ծառայեցվում նաև Պարսկաստանի հետ դիվանագիտական և տնտեսական սերտ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ Խորհրդային Հայաստանի կառավարության ակտիվ քայլերը:

ՀՍԽՀ արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանը Մոսկվայում գտնվող Սահակ Տեր-Գաբրիելյանին հաղորդում էր. «Սկսում ենք ապրանքափոխանակություն Պարսկաստանի հետ: Համաձայնություն է կայացվել Թավրիզի նահանգապետի հետ 240 հազար փութ հացահատիկ ներմուծելու մասին: Մեր պատվիրակությունը Սիմոնիկ Փիրումյանի գլխավորությամբ գնացել է

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 60:

[2] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 306, թ. 2:

[3] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 336:

Մակուի սարդարի մոտ և համաձայնություն է ստացել մինչև կես միլիոն փութ ցորեն, ինչպես նաև անասուններ ներմուծելու մասին»[1]:

1921 թ. հունիսի 1-ին ՀՍԽՀ արտգործժողկոմի հրավերով և ՀԿԿ կենտկոմի ցուցումով Գրիգոր Վարդանյանը հանձն է առնում մեկնել Ջուլֆա և ղեկավարել Թավրիզից հայրենադարձություն կազմակերպելու գործը:

Ջուլֆայում նա մնում է 23 օր և անընդհատ ընդունում ու Հայաստան է ճամփում փախստականներին: Նրան մեծ աջակցություն էին ցույց տալիս Ջուլֆայում ՀՍԽՀ արտաքին առևտրի կոմիսարիատի ներկայացուցիչ Գ. Հայրապետյանը և պարսկական կողմի փոստային տնօրեն Վ. Աղասյանը:

«Փախստականները գալիս էին և՛ երկաթուղով, և՛ հետիոտն: Վերջիններս Ջուլֆա էին հասնում 4-րդ օրը՝ մեծ մասամբ հիվանդ և ուժասպառ: Այդ ամսում հաջողվեց Հայաստան տեղափոխել մոտ 3250 փախստական՝ ստվար մեծամասնությամբ աշխատավոր գյուղացիներ և մտավորականներ»[2]:

Խորհրդային Հայաստանի իշխանություններն ամեն ինչ անում էին, որ այդ բոլորի մասին տեղեկանան ինչպես Լեռնահայաստանում գտնվող փախստական զանգվածները, այնպես էլ տեղի բնակիչներն ու զինվորները:

Լեռնահայաստանի և հատկապես Երևանից եկած զորքերի մեջ իսկական ավերներ էին գործում բոլշևիկյան քարոզչությունը և իրազեկումը, խորացնում պարտվողական հոգեբանությունը:

Հունիսի առաջին օրերին երևանյան զորքերի՝ Գնդեվազում գտնվող մի վաշտ (Նոր Բայազետի) և մի կիսավաշտ (Կոտայքի) քարոզչության ազդեցության տակ անցնում են բոլշևիկների կողմը: Այդ առթիվ Նժդեհը հարկ է համարել կրկին ընդգծել զանգեզուրցի պաշտպանների և գաղթող զորքի արմատական տարբերությունը՝ գրելով. «Լեռնահայաստանի զինվորությունը յուր վարած բոլոր կռիվների ընթացքում չի հիշում այդպիսի դավաճանական արարք, և մինչև վերջին րոպեն էլ նա հավատարիմ մնաց հայրենասեր և ազնիվ զինվորի սուրբ պարտականությանց»[3]: Նա նշում էր, որ բոլշևիկները ոչ ամեն տեղ էին հաղթանակներ տանում զենքի ուժով, այլ շատ դեպքերում՝ իրազեկմամբ ու քարոզչությամբ՝ հուսալքում առաջացնելով հակառակորդի զորամասերի շարքերում: Այդպես կատարվեց նաև Վայոց ձորում: Մտնելով այնտեղ՝ բոլշևիկներն անմիջապես թռուցիկներ էին ցրել, որոնցում ասված էր, որ Խորհրդային Հայաստանի նախկին վարիչները, որոնք 1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար ժամանակաշրջանում կատարված պատժիչ գործողությունների հեղինակներն էին, հեռացված են ասպարեզից, որ խորհրդային իշխանությունը ներում է շնորհել երևանյան ապստամբներին,

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 97, թ. 48, 49:

[2] Նույն տեղում, ֆ. 113, ց. 39, գ. 11, թ. 69:

[3] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 337:

ուստի նրանք առանց որևէ վախի կարող են վերադառնալ իրենց տեղերը: Այդ թռուցիկներն ընկնում էին ռազմաճակատ, հեղափոխում դաշնակցական զորամասերի զինվորներին, ապա Գորիս կամ Սյունիքի մյուս շրջաններ պաշտոնական գործերով գնացած զինվորականների միջոցով տարածվում էին Լեռնահայաստանի բոլոր ծայրերում: Փախստականների մեծ մասն ընդառաջ էր գնում բոլշևիկների քարոզչությանը և կես ճանապարհից խմբերով վերադառնում էր Երևան:

Լեռնահայաստանի աշխատավոր զանգվածների գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հիմնական խթանը Խորհրդային Հայաստանում սկսված խաղաղ շինարարական աշխատանքներն էին, որոնց մասին լուրերը հասնում էին գավառ և մեծապես ազդում երկարատև կռիվներից հոգնած գյուղացիության վրա: Տառապած երկրի բնակչության բաղձանքը խաղաղությունն էր և շինարարական աշխատանքը: Երկարատև կռիվներից և արյունահեղությունից, տառապանքներից ու զրկանքներից շատ էին հոգնել բոլորը, կարոտել էին մուրճ ու զնդանի, հանդ ու արտի, գիր ու գրքի: Բայց Զանգեզուրի ապստամբների ղեկավարները առաջվա նման հրաժարվում էին հպատակություն հայտնել Հայաստանի խորհրդային կառավարությանը, քանի որ նրանք հավատ չունեին, թե խաղաղ ճանապարհով Զանգեզուրը հանձնելով՝ այն չի անցնի Ադրբեջանի ենթակայության տակ: Ավելին, ինչպես ասվեց, Ս. Վրացյանը, Գ. Նժդեհը և նրանց զինակիցները հույսը չէին կորցրել, որ կարելի է վերադառնալ Երևան և վերահաստատել Հայաստանի անկախ պետականությունը:

Հենց այդ մտքով Գորիսի կառավարությունը նախապատրաստական աշխատանք սկսեց Խորհրդային Հայաստանի վրա հարձակվելու համար: Ըստ որում, ինչպես հուշում են արխիվային որոշ տվյալներ, սկզբում Նժդեհը կասկած է ունեցել Դարալագյազի վրա հարձակվելու նպատակահարմարության հարցում, բայց Վրացյանը՝ որպես կառավարության նախագահ, ճնշում է գործադրել նրա վրա՝ արագացնելով ճակատագրական հարձակումը:

Դարալագյազի վրա հարձակում կազմակերպելու մասին արդեն հունիսի սկզբներին հայտնի էր դարձել Թավրիզում: Դաշնակցական հայտնի գործիչներից Սիրակ Գրիգորյանը վկայում էր. «Թավրիզում սարսափով լսում ենք, որ ծրագրվում է հարձակվել Դարալագյազի վրա և կռիվները վերանորոգել Խորհրդային Հայաստանի հետ: Ժողովներ են արվում, միջոցներ ձեռք առնվում խանգարելու այդ նոր աղետը»[1]:

Ժողովներում ընդունված բանաձևերը հանձնվեցին դեռևս Թավրիզում գտնվող Վրացյանին, ուղարկվեցին նաև Գորիս, բայց Վրացյանը պատասխանեց, թե «Հայաստանի (Լեռնահայաստանի: – *Ա. Ս.*) զորքն ու կուսակցական մարմինները կողմնակից են շարունակելու կռիվը և, որ Թավրիզում

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 60:

հավաքված գաղթականների կարծիքը չի կարող ազդել կառավարության քաղաքականության վրա»[1]:

Իրականում թե՛ Զանգեզուրի ժողովուրդը, թե՛ ՀՅԴ տեղի կազմակերպությունները և թե՛ նույնիսկ զորքի հրամանատարությունը կողմնակից չէին կռվին:

Թավրիզից վերադառնալով Գորիս՝ Ս. Վրացյանն այնտեղից մեկնեց Բազարչայ՝ համոզելու արևմտյան ճակատի հրամկազմին, որպեսզի նա կատարի Դարալագյազի վրա հարձակվելու մասին իր կառավարության որոշումը: Այդ մասին են վկայել նաև Թավրիզ անցնելուց հետո Դաշնակցության գերագույն դատական ատյանին Կուռոյի և Յապոնի տված ցուցմունքները[2]:

Պարզվել է նաև, որ հարձակման նախօրեին Դարալագյազի ժողովրդի կողմից հատուկ պատգամավորություն էր գնացել Գորիս և կառավարությանը խնդրել նոր կռիվ չսկսել, չգալ իրենց գավառը գրավելու, այլապես, եթե Գորիսի զորքերը հարձակում սկսեին, իրենք միանալու էին խորհրդային զորքին: Գորիսում պատգամավորությանը պատասխանեց, որ արդեն գործի էր դրվել պատերազմական մեքենան, և շուտով սկսվելու էին ռազմական գործողությունները[3]:

Այս պայմաններում Թավրիզում հրավիրվում էին նոր ժողովներ, որոնց ընդունած բանաձևերն ուղարկվում էին արդեն ոչ թե Վրացյանին, այլ ուղղակի Երևան՝ Հայաստանի խորհրդային կառավարությանը:

Հունիսի կեսերին՝ Դարալագյազի վրա հարձակման նախօրեին, տաճկահայության ներկայացուցիչները՝ Սմբատի նախագահությամբ, գումարեցին ժողով, որը մանրամասն քննության առավ թե՛ տաճկահայ փախստականության անտանելի վիճակը և թե՛ Խորհրդային Հայաստանի կացությունը, նրա ներքին և արտաքին քաղաքականությունը: Ժողովը վճռեց մեկընդմիշտ վայր դնել զենքերը, հետայսու ամեն կերպ աջակցել Խորհրդային Հայաստանի կառավարությանը: Ժողովը միաժամանակ ընտրեց մի պատվիրակություն՝ մշեցի Հակոբ Տեր-Զաքարյան և վանեցի Հայկ Կոկոսյան կազմով, և նրան հանձնեց իր կողմից միաձայն ընդունված և իբրև ժողովի նախագահ՝ Սմբատի կողմից ստորագրած բանաձևը՝ Հայաստանի խորհրդային կառավարությանը ներկայացնելու համար[4]: Պատվիրակությունը շտապ մեկնեց Երևան՝ հանդիպելու կառավարության ղեկավարներին: Ջուլֆայում նրանց միացավ այդ ժամանակ Խորհրդային Հայաստանի փախստականների հանձնաժողովի տեղի ներկայացուցիչ Գրիգոր Վարդանյանը, և միասին հասնելով Երևան՝ նրանք ներկայացան արտաքին գործերի ժողովրդական

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 60:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 24 հունիսի:

կոմիսարի պաշտոնակատար Արտաշես Կարինյանին, զրույց ունեցավ նրա հետ և հանձնեց Թավրիզում կայացած ժողովի բանաձևը։

Հաջորդ օրը պատվիրակությանն ընդունեց ներքին գործերի ժողովրդական կոմիսար Պողոս Մակինցյանը, որը հավաստիացնում էր, որ կառավարությունը մտահոգ է տաճկահայ փախստականների ճակատագրով, շեշտեց, որ Խորհրդային Հայաստանի դռները բաց են նրանց առջև, և որ այնտեղ նրանք կստանան հնարավորություններ՝ ներգրավվելու շինարար աշխատանքի մեջ, դրսևորելու իրենց ունակությունները։

Նույն օրը՝ հունիսի 23-ին, պատգամավորները հրավիրվեցին Ժողկոմխորհրդի նախագահ Ա. Մյասնիկյանի մոտ, որից հետո նրանք վերադարձան Թավրիզ՝ Երևանում իրենց տեսածներն ու լսածները հաղորդելու թուրքահայությանը[1]։

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 1 հուլիսի։

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՆՈՐ ՌԱԶՄԱԿԱԼՈՒՄԸ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿՈՂՄԻՑ: ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՎՐԱ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՎՃՌԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Դարալագյազի վրա նոր հարձակում սկսելու համար Գորիսի կառավարությունն իր պատճառաբանություններն ուներ:

Լեռնահայաստանի արևմտյան ռազմաճակատի վիճակն օրեցօր ծանրանում էր: Հունիսի 1-ի դրությամբ հացի միայն մեկ շաբաթվա պաշար էր մնացել: Դա նշանակում էր, որ հացը սպառվելուց հետո նահանջող երևանյան զորքը պիտի փախչեր բոլշևիկների կողմը կամ լավագույն դեպքում պիտի արշավեր Սիսիան, ցրվեր այդ շրջանի գյուղերում և վերածվելով քաղցած, բայց զինյալ ամբոխի՝ ավերի ենթարկեր գյուղացու տնտեսությունը, ինչպես մինչ այդ արել էր տաճկահայ զինվորությունը՝ անցնելով Վայոց ձոր–Սիսիան–բուն Զանգեզուր–Կապան–Մեղրի շրջանների բնակավայրերով:

Իսկ հացն առջևում էր՝ խորհրդային զորքի գրաված Վայոց ձորի տարածքներում: Բոլշևիկները հացի պակաս չունեին, որովհետև ողջ գավառի գյուղերից հավաքել էին հազարավոր փթերով հացահատիկ և պահեստավորել գավառի տարբեր բնակավայրերում, հատկապես՝ Քեշիշքենդում: Սպառվելու վրա էր նաև ռազմամթերքը, որը հազիվ կբավականացներ մեկ օրվա ոչ մեծ կռվում, իսկ բոլշևիկները Վայոց ձորում, հատկապես Հերհերում, կենտրոնացրել էին զինամթերքի հսկա պաշար:

Նժդեհը մտադրվեց գրավել ամբողջ Վայոց ձորը, ձեռք գցել հացի և զինամթերքի պահեստները, խլված պարենով ապահովել զորամասերը: Ավելին, հաջողության դեպքում, այսինքն՝ հանկարծակի Վայոց ձոր ներխուժելուց և այն գրավելուց հետո զորքն արագ ընթացքով պիտի առաջանար դեպի Արարատյան դաշտ, այնտեղ ապստամբ նոր խմբերով համալրեր իր շարքերը, որից հետո շարժվեր դեպի Երևան:

Հարձակման օպերատիվ պլանի համաձայն՝ զանգեզուրյան զորքերի մի խմբավորում արագ երթով պետք է հարվածեր Արփա գետի կամրջի ուղղությամբ, գրավեր այն, որպեսզի Կարմիր բանակի զորամասերը հնարավորություն չունենային անցնելու վարարած գետի մյուս՝ աջ ափը: Այդ նույն խմբավորումը այնուհետև, գետի հոսանքն ի վեր բարձրանալով, պետք է փակեր դրանից ձախ ընկած տարածքներում գտնվող խորհրդային զորքերի նահանջի բոլոր անցուղիները: Զորքերի մյուս խմբավորումը, Բազարչայի հյուսիսարևմտյան բարձունքներից գրոհելով, պետք է Կարմիր բանակի զորքերը սեղմեր Արփա գետին և վերցներ աքցանի մեջ:

Երբ արդեն պատրաստ էր ռազմական գործողության օպերատիվ պլանը, Նժդեհը հրահանգ տվեց ռազմաճակատի հրամանատար իր օգնական Կուռոյին ու Վայոց ձորի ուժերի հրամանատար Յապոնին. «Հրամայում եմ Ձեզ տված մարտական խնդիրը՝ Վայոց ձորի վերագրավումը, իրագործել **ոչ ուշ, քան ամսույս 7-ին** (հունիսի): Ամեն մի հաջողություն օգտագործել ամենալայն մասշտաբով, որի համար թշնամու ուժերի հետապնդումը շարունակել այնքան ժամանակ, մինչև որ վերջինս կզրկվի այս կարևոր ռազմական կետի վրա ամրանալու և ապա հակահարձակողականի անցնելու ամենաթույլ հնարավորությունից»:

Հրամանում կար նաև այսպիսի ցուցում. **«Կռիվները ղեկավարել անձամբ** (մեջբերման մեջ ընդգծումները Նժդեհինն են: – *Ա. Ս.*) և բոլոր զորամասերի պետերից պահանջեք՝ մեռնել, բայց՝ հաղթել»[1]:

Նժդեհի համար միանգամայն անհասկանալի պատճառներով Կուռո Թարխանյանն ավելի քան մեկ շաբաթ ձգձգեց տրված հրամանի կատարումը: Իրականում պատճառն այն էր, որ նա դեմ էր հրամանին՝ գտնելով, որ այդ հարձակումը Զանգեզուրի դեմ կհանի խորհրդային ողջ ուժերը:

Հրամանի նկատմամբ խիստ բացասական դիրք բռնեց նաև Յապոնը: Հետագայում նա գրել էր. «...Նժդեհից հրաման ստացա, որ առաջ շարժվեմ ու գրավեմ ամբողջ Դարալագյազը: Այդ հրամանը չկատարեցի՝ գտնելով, որ դա թե՛ իմ զորամասը և թե՛ Զանգեզուր ապաստանած բազմությունը կտանի կործանումի: Նժդեհը երկրորդ հրամանը գրեց: Ես այդ հրամանն էլ չկատարեցի ու անմիջապես պահանջեցի, որ ինքն անձամբ գա Գնդեվազ՝ ճակատի ընդհանուր կացությանը ծանոթանալու, մեր դեմ կանգնած թշնամու ուժը չափելու և, որ ամենակարևորն է, մեր զորամասերի ու բուն իսկ ժողովրդի տրամադրությունը իմանալու համար: Դրանից հետո ասում էի, եթե ինքը դարձյալ պնդեր իր հրամանի վրա՝ պատրաստ էի կատարելու այն»[2]:

Հետագայում իր հուշերում Յապոնը նշել է, որ ինքը համոզված էր, որ այս անգամ զանգեզուրյան զորքը խոշոր պարտություն էր կրելու, քանի որ այն կորցրել էր վաղեմի մարտունակությունը: Հրամանատարության մոտ հատկապես խոր տագնապ էր առաջացրել բոլշևիկների քարոզչության անանխընթաց ուժեղացումը:

Վայոց ձորի ժողովրդի տրամադրության և Լեռնահայաստանի զորքի մարտունակության վրա խիստ բացասաբար էին ազդում Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու մասին Երևանից եկող լուրերը: Զանգեզուրյան զորամասերում ու բնակչության մեջ գաղտնի ցրվում

---

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 340:

[2] Եպոնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, գրի առավ Յ. Տէրունին, «Հայրենիք», 1941, հուլիս, թիվ 9 (223), էջ 117:

էին հարյուրավոր թռուցիկներ՝ Լեռնային Ղարաբաղին վերաբերող հաղորդագրությամբ:

«Լեռնային Ղարաբաղը Հայաստանին է կցված.

Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային հանրապետության հեղկոմի և Հայաստանի ու Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմվանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժանելի մասը:

ՀՍԽՀ Ժողկոմների խորհրդի նախագահ՝
Ա. Մյասնիկյան (Ալ. Մարտունի)
Քարտուղար՝ Մ. Ղարաբեկյան
1921 թ. հունիսի 12
Երևան»[1]:

Իսկ այդ ժամանակահատվածում շարունակում էին բուռն իրադարձությունները ինչպես Լեռնահայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հայաստանի հեղկոմի ներկայացուցիչներ Ա. Կարինյանը, Վ. Մելնիկովը, որոնք հունիսի սկզբին եկել էին Գնդեվազ (Վայոց ձոր)՝ բանակցելու, հունիսի 13-ին կրկին եկան այստեղ: Նրանք իրենց հետ բերել էին Խորհրդային Հայաստանի կառավարության՝ Զանգեզուրի ապստամբներին ուղղված մի նոր հայտարարություն[2], որը ստորագրել էին Ժողկոմխորհրդի նախագահ Ա. Մյասնիկյանը, Ժողկոմխորհրդի նախագահության անդամներ Պ. Մակինցյանը, Ա. Բեկզադյանը, Ս. Սրապիոնյանը, Ա. Կարինյանը և քարտուղար Մ. Ղարաբեկյանը:

Հայտարարության մեջ «Զանգեզուրում ապաստանած բոլոր ըմբոստ տարրերին» կոչ էր արվում «վերջ տալ ապստամբությանը և խաղաղ կերպով հպատակվել երկրի միակ օրինական իշխանությանը՝ Հայաստանի Խորհրդային կառավարությանը»:

Ժողկոմխորհուրդը կարևոր էր համարում ի լուր ամենքի հայտարարել, որ նկատի առնելով Զանգեզուրի բնակչության «առանձին կարիքները»՝ նրան հնարավորություն կտրվի ունենալու կառավարման տեղական մարմիններ, պահպանելու իր ավանդական ապրելաձևը, այսինքն՝ «զավառում իշխող ուրույն համայնական կենցաղը», որն «առավել հարազատ և մոտ է» Զանգեզուրի ժողովրդի պահանջներին ու տեղական պայմաններին: Զանգեզուրցիները նաև իրավունք կունենային «ձեռնարկել ինքնապաշտպանու-

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 19 հունիսի:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 25:

թյան և լեռնավայրի ամրացման համար բոլոր անհրաժեշտ միջոցները»: Փարատելու համար զանգեզուրցիների հիմնական տագնապը, որ գավառը գրավելուց հետո բոլշևիկներն այն չեն հանձնի Ադրբեջանին, կառավարությունը ազդարարում էր, որ Զանգեզուրի հայությանը հնարավորություն կտրվի, որ հենց իրենք ձեռնարկեն ինքնապաշտպանության բոլոր անհրաժեշտ միջոցները «լեռնավայրի ամրացման համար», որ այնտեղ ամենալայն չափով կկիրառվի ընդհանուր զինավարժության սկզբունքը, որի համաձայն «երկրի ամեն մի քաղաքացի պետք է դառնար իր տեղավայրի գոյությունը պաշտպանող ռազմական ուժ»: Խոստում էր տրվում, թե կպահպանվեին գավառում «գործող այժմյան զորախմբերը»՝ իրենց սպառազինությամբ:

Ինչպես տեսնում ենք, **Ժողկոմխորհուրդը Զանգեզուրին, ըստ էության, տալիս էր ինքնավարություն:**

Ինքնավար Զանգեզուրը կազմելու էր Խորհրդային Հայաստանի անքակտելի մասը՝ ամենասերտ կերպով կապված «բանվորա-գյուղացիական իր հայրենիքի հետ»: Եվ այդ կապը պետք է ամրապնդեին իրենք՝ Զանգեզուրի գյուղացիները: Ինքնավարության պայմաններից մեկն այն էր, ասված էր հայտարարության մեջ, որ «Զանգեզուրում գործող այժմյան զորախմբերը պիտի ենթարկվեին մեր ընդհանուր հրամանատարությանը», որոնք «ձուլվելով մեր զորքի հետ, պիտի կազմեն ՀՍԽՀ կարմիր զորաբանակի անբաժան մասը»:

Լինել ինքնավար, բայց լինել ՀՍԽՀ կազմում. այս էր հարցի լուծման պայմանը և բանալին:

Միաժամանակ Ժողկոմխորհուրդը «ամենայն վճռականությամբ» հայտարարում էր, որ «կգործադրվի ընդհանուր քաղաքական ներման այն դեկրետը, որ հրատարակվել է Հայաստանում»: Նշվում էր, որ բոլոր նրանք, ովքեր զենք էին բարձրացրել խորհրդային իշխանության վրա, եթե այժմ հրաժարվեին Կարմիր բանակի դեմ կռվելուց, քաղաքական համաներում կստանային: Հայտարարության մեջ շեշտված էր, որ խորհրդային կառավարության դեմ կռված «բոլոր գործիչները ոչ միայն ազատ կլինեն որևէ հալածանքից, այլև կարող են անարգել մնալ Զանգեզուրում», և «ոչ ոք նրանցից չի աքսորվի երկրի սահմաններից այն չափով, որչափ նրա աշխատանքը չի ուղղվի Հայաստանի խորհրդային իշխանության դեմ»[1]:

Անդրադառնալով քաղաքական կուսակցությունների և մամուլի ազատության խնդրին՝ Ժողկոմխորհուրդն ազդարարում էր, որ «բոլոր քաղաքական այն հոսանքները, որոնք կկտրեն վերջնականապես իրենց կապը միջազգային իմպերիալիզմի հետ, բոլոր այն կազմակերպությունները, որոնք կպաշտպանեն խորհրդային գիծը, իրավունք կունենան միանգամայն ազատորեն գործել Հայաստանում: Այդ հոսանքները կունենան թե՛ իրենց

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 25:

առանձին կազմակերպությունները և թե՛ ազատ մամուլը»[1]:

Հայտարարությունը շոշափում էր նաև Զանգեզուրի գյուղացիության մյուս ցավոտ կողմը. Ժողկոմխորհուրդը գտնում էր, որ գավառից հեռացած նախկին բնակչությունը (նկատի ուներ թուրք բնակչությունը: – *Ա. Ս.*) պետք է վերադառնար իր լքած գյուղերը, բայց նաև հավաստիացնում էր, որ հեռացած այդ բնակչության վերադարձը «չպիտի կատարվի հակառակ տեղացի աշխատավորության ցանկության: Զանգեզուրում ապրող հայ գյուղացիությունը կարող է ապահով լինել, որ նրանից չի խլվի ոչ մի հողավայր»[2]:

Ի լրումն վերոհիշյալ կետերի՝ Ժողկոմխորհուրդը ավելորդ չէր համարում մեկ անգամ ևս Զանգեզուրի պաշտպաններին հիշեցնել խորհրդային իշխանության ուժի մասին՝ շեշտելով. «Ներկայումս ամբողջ Կովկասում հաստատված է ամուր և անպարտելի խորհրդային իշխանություն: Հայաստանը միացած է եղբայրական կապերով հարևան պետությունների՝ Խորհրդային Վրաստանի և Խորհրդային Ադրբեջանի հետ: Լեռնային Ղարաբաղը վերջին համաձայնությամբ Հայաստանի խորհրդային կառավարության կողմից հայտարարված է Հայաստանի անբաժան մաս»[3]: Ինչ վերաբերում է 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Ադրբեջանի ենթակայության տակ դրված Ինքնավար Նախիջևանին, ապա Ժողկոմխորհուրդը հայտարարում էր, որ այն «հարազատ եղբայրն է Խորհրդային Հայաստանի», և նրա կողմից ոչ մի վտանգ չի կարող սպառնալ հայ գյուղացիությանը: Այդ բանը գիտակցելով, ասված էր հայտարարության մեջ, Նախիջևանի երկրամասից հեռացած հայ գյուղացիությունը «այժմ երկար շարաններով վերադառնում է իր վայրերը և տեղական իշխանության աջակցությամբ վերահաստատվում է իր հին բնակավայրերում»[4]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զանգեզուրի մեկուսացված գոյությունը «խանգարում է մեր հայրենիքի խաղաղ շինարարության գործին և նրա բոլոր հատվածների վերջնական միացմանը», Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը վերջում հայտարարում էր, որ ինքը «այլևս չի կարող հաշտվել հին դրության հետ» և առաջարկում էր «անհապաղ տալ պարզ պատասխան այս պաշտոնական դիմումին»[5]:

Հայաստանի ժողկոմխորհրդի այս դիմում-հայտարարությունը տարակուսանքով ընդունվեց Գորիսի իշխանությունների կողմից: Հայտարարության մեջ բացակայում էին նախորդ դիմումների մեջ արված սպառնալիքները, բայց միաժամանակ չափից ավելի առատ էին խոստումները և ակնհայտ՝ քարոզչական նպատակները:

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 26:

[2] Նույն տեղում, թ. 27:

[3] Նույն տեղում, թ. 31, 32:

[4] Նույն տեղում, թ. 25:

[5] Նույն տեղում:

Ամենից առաջ հավատ չէին ներշնչում այն հավաստիացումները, թե խորհրդային իշխանության դեմ կռված գործիչները հալածանքների չեն ենթարկվելու, թե կուսակցություններն ու հոսանքները ազատորեն կգործեն Հայաստանում և կունենան իրենց ազատ մամուլը: Սա ինչ-որ նման չէր բոլշևիկների գործելակերպին: Խորհրդային երկրի ողջ տարածքում վերացված էր այլախոհությունը, ջախջախված էին բոլոր, այդ թվում՝ ոչ բոլշևիկյան, սոցիալիստական կուսակցությունները, Հայաստանում օրենքից դուրս էին հայտարարված ազգային բոլոր կուսակցությունները, իսկ Դաշնակցությունը հայտարարված էր հայ ժողովրդի ոխերիմ թշնամի: Եվ ահա, այդ ընդհանուր անմխիթար պատկերի կողքին հավաստիացումներ էին տրվում, որ աշխարհից կտրված Զանգեզուր լեռնավայրում ժողովրդավարական կարգեր են հաստատվելու՝ բազմակուսակցականությամբ և ազատ մամուլով:

Զանգեզուրի իշխանությունները տագնապով ընդունեցին գավառից հեռացած թուրք բնակչությանը վերադարձնելու՝ Երևանի կառավարության հաստատ որոշումը, թեև հավաստիացնում էին, որ թուրքերի «վերադարձը չպետք է կատարվի հակառակ տեղացի աշխատավորության ցանկության»: Ցանկության մասին խոստմանը ոչ ոք չէր հավատում, և ինչպես հետագայում ցույց տվեց կյանքը, նրանք իրավացի էին: 1917-1920 թթ. ինքնապաշտպանության տարիներին բոլոր կողմերից շրջապատված և թուրքերի անընդհատ հարձակումներից պաշտպանվող զանգեզուրցիները ստիպված են եղել դիմագրավել նաև ներքին սպառնալիքին՝ գավառի թուրքական գյուղերի բնակիչների խժդժություններին և խռովություններին, որոնք դրսի իրենց ցեղակիցների հետ ընդհանուր ճակատ կազմած փորձում էին հայաթափել Զանգեզուրը: Եվ ահա, հեռացած թուրք բնակչությունը պետք է վերադառնար գավառ այն դեպքում, երբ Նախիջևանի փախստական հայությանն արգելված էր վերադառնալ իր լքված բնակավայրերը: Ոչ ոք չէր կարող հավատալ, թե նախիջևանահայերը «երկար շարաններով» վերադառնում են իրենց քանդված օջախները: Ով-ով, Նախիջևանի անմիջական հարևան զանգեզուրցին լավ գիտեր այնտեղ տիրող վիճակը. հայության նկատմամբ շարունակվող ատելություն, մուսուլմանական չմարող մոլեռանդություն, իրենց բնակավայրեր վերադառնալ ցանկացող հայերի առջև անհաղթահարելի արգելքների ստեղծում և այլն: Այդ ամենից ելնելով՝ Գորիսի կառավարությունը նպատակահարմար չգտավ պատասխանել Ժողկոմխորհրդի հունիսի 13-ի դիմում-հայտարարությանը՝ այն համարելով ոչ այնքան Զանգեզուրին հասցեագրված կոչ, որքան Կարմիր բանակի նոր հարձակման նախօրյակին ստեղծված քարոզչական նյութ՝ ուղղված Խորհրդային Հայաստանի բնակչությանը:

Դիմում-հայտարարությունն անպատասխան մնաց նաև մեկ այլ պատճառով. Գորիսի կառավարությանը մտահոգում էր այն հարցը, թե հայտարարություններ անելիս ինչո՞ւ է Երևանը համառորեն շեշտը դնում Զանգե-

զուրը խաղաղ ճանապարհով Խորհրդային Հայաստանին միացնելու անհրաժեշտության վրա, երբ այդ նույն ճանապարհը բազմիցս առաջադրել էր ՀՅ դաշնակցության ղեկավարությունը: Մինչև անգամ Դաշնակցության արտասահմանյան կենտրոնի նախաձեռնությամբ աշխատանքներ էին տարվում Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ղեկավարության հետ բանակցությունների մեջ մտնելու համար:

Ղալաջուղում տեղի ունեցած բանակցություններից հետո մի աղոտ լույս էր ծագել, թե Լեռնահայաստանի խնդիրը գուցե հնարավոր լիներ կարգավորել խաղաղ միջոցներով: Ուստի ՀՅ դաշնակցության արտասահմանյան ղեկավար կենտրոնն իր հերթին միջոցներ ձեռնարկեց սկսած գործընթացը արագացնելու համար:

Արտասահմանյան կենտրոնի համար կարևորն այն էր, որ Ղալաջուղում Ա. Կարինյանի գլխավորած պատվիրակությունը Լեռնահայաստանի պատվիրակությանը հավաստիացումներ էր արել, թե Զանգեզուրը մտնելու էր Խորհրդային Հայաստանի կազմի մեջ: Հենց այս հանգամանքը ՀՅԴ արտասահմանյան կենտրոնին թելադրում էր հետագա արյունահեղությունից խուսափելու միջոցներ գտնել, որպեսզի Զանգեզուրի խնդիրը լուծվեր խաղաղ միջոցներով:

Քաջատեղյակ լինելով, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությունն ու ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը, առանց Մոսկվայի գիտության և համաձայնության, ինչպես նաև առանց Բաքվի կարծիքը ստանալու, ի վիճակի չեն ինքնուրույնաբար լուծելու կարևորագույն խնդիրներ, տվյալ դեպքում՝ Զանգեզուրի կնճիռը, ՀՅԴ արտասահմանյան կենտրոնը որոշել էր անմիջապես բանակցել Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կենտրոնական կոմիտեի հետ: ՀՅԴ ղեկավարությունը ենթադրում էր, որ ՌԿ(բ)Կ կենտկոմի համաձայնության դեպքում կարելի կլիներ համատեղ քննարկել ոչ միայն Զանգեզուրի խնդիրը, այլև ստեղծված ճգնաժամային վիճակից հայ ժողովրդին դուրս բերելու, ինչպես նաև երկու կուսակցությունների փոխհարաբերությունները կարգավորելու հետ առնչվող հարցերը: Այդ նպատակով Բուխարեստում ժամանակավորապես հաստատված ՀՅԴ գերագույն մարմինը 1921 թ. մայիսի կեսերին կազմել էր մի պատվիրակություն, որը բարձր լիազորություններով մեկնել էր Բեռլին, որպեսզի այնտեղից, որտեղ կային կապի հաստատուն միջոցներ, շփման մեջ մտներ խորհրդային իշխանությունների հետ:

Բուխարեստից Բեռլին մեկնած պատվիրակությունը բաղկացած էր երեք մարդուց՝ Վահան Փափազյան (ղեկավար), Արշակ Իսահակյան (նույն ինքը՝ Արշակ Ջամալյան) և Վահան Նավասարդյան: Պատվիրակության անդամները հայ ազատագրական շարժման և ՀՅԴ նշանավոր գործիչներ էին:

Բեռլին հասած պատվիրակությունը Մոսկվայի հետ առաջին շփումը

հաստատել էր տեղի խորհրդային ներկայացուցչության գծով: Մայիսի 26-ին Վահան Փափազյանի ստորագրությամբ ՌԿ(բ)Կ կենտկոմին հասցեագրված մի նամակ էր հանձնվել Բեռլինի խորհրդային ներկայացուցչությանը՝ Մոսկվա ուղարկելու համար: ՀՅԴ ղեկավար կենտրոնի անունից ՌԿ(բ)Կ կենտկոմին առաջարկ էր արվել առանց հետաձգելու բանակցություններ սկսել երկու կուսակցություններին հետաքրքրող խնդիրների շուրջ:

Նամակում շարադրվել էին Հայաստանի խորհրդայնացումից հետո տեղի ունեցած կարևորագույն դեպքերը, ուշադրություն էր հրավիրվել այն հանգամանքի վրա, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին իշխանությունը Հայաստանի հեղկոմին է հանձնվել կամավոր, առանց որևէ դիմադրության՝ Հայաստանում ՌՍՖԽՀ ներկայացուցիչ Բորիս Լեգրանի և Սիմոն Վրացյանի կառավարության միջև կնքված հատուկ համաձայնագրի հիման վրա: Ինչպես հայտնի է, այդ համաձայնագրով նախատեսվում էր Կարմիր բանակի ուժերով Կարսի մարզի բռնագրավված մասը և Ալեքսանդրապոլ քաղաքը մաքրել թուրքական զորքերից և փախստականներին վերադարձնել իրենց բնակավայրերը: Բայց թուրքերը շարունակում էին մնալ բռնագրավված տարածքներում: Նամակում նշված էր, որ իրենց հերթին Հայաստանի բոլշևիկյան իշխանությունները երկրում հաստատել են խստագույն ռեժիմ, սանձազերծել դաժան տեռոր, որի պատճառով հաջորդաբար իրար են հետևել ճակատագրական դեպքեր՝ 1921 թ. փետրվարյան համաժողովրդական ընդվզումը, խորհրդային իշխանության տապալումը և Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը, ապա ապստամբների պարտությունը, խորհրդային կարգերի վերահաստատումը և բոլշևիկյան իշխանությունների կողմից իրականացվող զանգվածային նոր բռնությունները:

Այդ նոր արհավիրքները, այնուհետև ասված էր նամակում, ուժգին հարված եղան ահավոր ջարդերի ու բռնությունների ենթարկված հայ ժողովրդի աշխատավոր զանգվածների համար, որոնք «հիմա էլ խորհրդային իշխանությունների ռեպրեսիաներով ահաբեկված, հոժարակամ չեն ուզում հանձնել իրենց դիրքերը, նորանոր զոհերի գնով պաշտպանում են իրենց անկախությունը Հայաստանի լայնատարած տարածքում՝ Զանգեզուրում և Ղարաբաղում, դժգոհ են նոր վարչակարգից երկրի նաև այն մասում, որն այժմ գտնվում է Հայաստանի հեղկոմի իշխանության ներքո»[1]:

Չնայած այդ ամենին, այնուհետև ասված էր նամակում, ՀՅ դաշնակցություն կուսակցությունը գտնում է, որ կարելի է խուսափել նոր արյունահեղությունից, կարելի է գտնել ընդհանուր լեզու և «հայ ժողովրդի տնտեսապես քայքայված աշխատավոր զանգվածների համար» անելանելի թվացող վիճակից դուրս գալու մի միջոց:

Ելնելով այդ համոզումից՝ պատվիրակությունը ՌԿ(բ)Կ կենտկոմին

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 1-2:

խնդրել էր նշանակել լիազոր անձանց և նշել կայանալիք հանդիպման տեղն ու ժամանակը՝ նպատակ ունենալով համատեղ գոյակցելու եղանակ գտնել, կարգավորել ՌԿ(բ)Կ կենտկոմի և ՀՅ դաշնակցության փոխհարաբերությունները և «կոորդինացնել նրանց համատեղ գործունեությունը»[1]: Ըստ որում, պատվիրակության անդամները «խիստ ցանկալի» էին համարում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությունը բանակցություններին:

Նամակի վերջում ասված էր. «Մեր առաջարկությունը համարելով շատ շտապ, հետաձգում չհանդուրժող, մենք Ձեզ խնդրում ենք չուշացնել պատասխանը և Ձեր որոշման մասին մեզ ծանուցել հեռագրով՝ Բեռլինում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի միջոցով»[2]:

Պատվիրակության անդամները ավելորդ չէին համարել նաև ավելացնել, որ եթե բանակցությունները կայանան, ապա իրենք դրանց ընթացքի մասին պետք է շարունակ տեղյակ պահեն իրենց կուսակցության գերագույն մարմնին: Ուստի նպատակահարմար էին գտել, որ հանդիպումը տեղի ունենար «որևէ չեզոք երկրում»[3], որպեսզի հնարավոր լիներ տեղեկություններ հաղորդել անարգել:

Խորհրդային կողմի առաջարկով բանակցությունների վայր ընտրվեց Լատվիայի մայրաքաղաք Ռիգան, նաև կազմվեց ՌԿ(բ)Կ կենտկոմի պատվիրակություն, որի մեջ մտան Ա. Ա. Իոֆֆեն (ղեկավար), Ս. Մ. Տեր-Գաբրիելյանը և Վ. Ա. Տեր-Վահանյանը:

ՌԿ(բ)Կ պատվիրակությունը չէր շտապում մեկնել Ռիգա: Հավանաբար խորհրդային կողմը մինչև բանակցություններ սկսելը մտածում էր ուժով լուծել Զանգեզուրի հարցը և Դաշնակցությանը կանգնեցնել կատարված փաստի առջև, իհարկե, միաժամանակ բանն այնպես ներկայացնելով, թե շարունակում էր մնալ հարցի խաղաղ լուծման կողմնակից, որին խանգարում էին զանգեզուրյան զինյալները: Հենց այդ տրամադրությամբ և նպատակով էր կազմված Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհրդի 1921 թ. հունիսի 13-ի դիմում-հայտարարությունը, որին պատասխանելը ավելորդ էին համարել Գորիսում:

Հունիսի 13-ի դիմում-հայտարարությունից հետո Երևանի ներկայացուցիչը հունիսի 15-ին մեկնել էր Վայոց ձոր, որպեսզի հունիսի 16-ին սահմանի վրա հանդիպում ունենար Զանգեզուրի կառավարության պատվիրակի հետ՝ Ղալաջուղում ընդհատված բանակցությունները շարունակելու համար[4]: Երևանի ներկայացուցչի ճանապարհ ընկնելու մասին նախապես տեղյակ էր

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 2:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 535:

պահվել Զանգեզուրի կառավարությանը:

Նույն օրը՝ հունիսի 13-ին, Գնդեվազ եկան Արշակ Հովհաննիսյանը և Կուռո Թարխանյանը: Նրանք Յապոնին ասացին, որ կրկին հրամայված է գրավել Վայոց ձորը: Յապոնը նրանց պատասխանեց. «Գրավելը հեշտ է, բայց պահելը՝ դժվար: Քանի որ դուք ինձ հրամայում եք, կանեմ: Բայց գրավելուց հետո խնդրում եմ իմ տեղը մի ուրիշ հրամանատար նշանակեք: Ես պիտի հրաժարվեմ»: Հունիսի 15-ի երեկոյան գրավոր հրահանգ ստանալով՝ Յապոնը անմիջապես զորամասերը շարժեց առաջ[1]:

Յապոնի ուժերը*, որոնք ամրացված էին Արփաչայի ձախ ափին, Ղուշչի-Գնդեվազի անառիկ բարձունքներում և կազմում էին Զանզեզուրի արևմտյան ճակատի զորքերի մեծ մասը, հունիսի 15-ի լույս 16-ի գիշերը Որոտանի լեռնանցքով հանկարծակի հարձակում սկսեցին Վայոց ձորում տեղաբաշխված խորհրդային զորամասերի դիրքերի վրա:

Հունիսի 16-ին, երբ Նժդեհը Կապանում էր, Կուռոն նրան հղեց առաջին հեռախոսագիրը. «Մեր քաջարի ձիավորները ժամը 16-ին վերցրին թշնամուց 3 թնդանոթ, ռազմամթերք, գերիներ, որոնցից երեքը գումարտակապետեր: Այսօրվա ընթացքում ընդամենը վերցված է 4 լեռնային թնդանոթ, 170 գերի: Թշնամու զորքերը ցրված են և սարսափով նահանջում են: Կարմիրների՝ Վայոց ձորի զորամասը կարելի է համարել ջախջախված»[2]:

Հունիսի 17-ին զորամասերը վերցրին 700-ի չափ նոր գերիներ և գնդացիրներ[3]:

Անակնկալի գալով Կարմիր բանակի զորամասերն ընկան ծանր դրության մեջ: Հարձակման առաջին երեք օրը զանգեզուրյան զորքերը ակնհայտ առավելության հասան Վայոց ձորում տեղաբաշխված խորհրդային հիմնական ուժի՝ հայկական առաջին բրիգադի նկատմամբ: Գրավելով Արփայի կամուրջը՝ զանգեզուրցիները թիկունքից սպառնալիք ստեղծեցին խորհրդային զորամասերի համար: Օդակի մեջ առնվեց Վայոց ձորի կայազորը՝ հայկական բրիգադի առաջին գունդը: Չկարողանալով լուրջ դիմադրել և տալով մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ՝ գունդը, փաստորեն, դադարեցրեց իր

---

[1] Տե՛ս Եպոնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, գրի առավ Յ. Տէրունին, «Հայրենիք», 1941, հուլիս, թիվ 9 (223), էջ 118:

* Յապոնի հրամանատարության տակ էին Սիսանի զորամասերից 330 մարդ (հրամ.՝ կապիտան Թորոսյան), Նոր Բայազետի գումարտակը (հրամ.՝ Աղաբեկ), Երևանի գումարտակը՝ չորս գնդացրով (հրամ.՝ փոխգնդապետ Սարգսյան), Ղրխբուլաղի գումարտակը (հրամ.՝ Հակոբ), Դարալագյազի գումարտակը (հրամ.՝ Թորոս), Երանոսի գումարտակը (հրամ.՝ Զելիմխանյան), Նավասարդյանի ձիավոր դիվիզիոնը, Խնկոյի ձիավոր դիվիզիոնը՝ իր հետևակ խմբով, լեռնային թնդանոթների մեկ մարտկոց և Սուրենյանի գնդացրային խումբը: Այդ բոլոր զորամասերի զինվորների թիվը հասնում էր 1900-ի (Եպոնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը), գրի առավ Յ. Տէրունին, «Հայրենիք», 1941, հուլիս, թիվ 9 (223), էջ 116-117):

[2] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 88:

[3] Տե՛ս նույն տեղում:

գոյությունը. նրա անձնակազմի մի մասը անցավ հարձակվողների կողմը:

Բրիգադի երկրորդ գունդը նույնպես չդիմացավ զանգեզուրցիների ուժգին գրոհին և սկսեց անկանոն նահանջել: Հրամանատարներին, այնուամենայնիվ, հաջողվեց վերադասավորել գնդի ուժերը և մարտակարգ կազմել: Բայց դա երկար չտևեց: Ուժեղացող ճնշման տակ գունդը ստիպված նորից նահանջեց: Երկրորդ գնդի նահանջը զանգեզուրցիներին հնարավորություն տվեց ակտիվացնելու հեծելազորի գործողությունները:

Ծանր վիճակ ստեղծվեց նաև բրիգադի երրորդ գնդի համար: Զանգեզուրյան հեծյալ հարյուրյակներից մեկը կարողացավ անցնել գնդի թիկունքը: Լիակատար շրջապատման վտանգից խուսափելով՝ գունդը հարկադրված նահանջեց Այնաձոր (այժմ՝ Աղավնաձոր) գյուղի արևելյան բարձունքները: Զանգեզուրցիները գրոհեցին նաև այդ նոր դիրքերը:

Երրորդ գնդի երկրորդ և երրորդ գումարտակները կարողացան ետ գրավել Արփա գետի կամուրջը և դրա վրայով նահանջել Նորաշեն: Բայց առաջին գումարտակը, չկարողանալով դիմանալ Այնաձորի բարձունքներում, զանգեզուրյան զորամասերի ճնշման տակ անջատվեց գնդի մյուս մասերից, ապա թողեց դիրքերը և նահանջեց դեպի Ղարանլուղ (Մարտունի):

Կարմիր բանակի զորամասերի հետ հեռացան նաև Վայոց ձորի գյուղացիներից շատերը[1]:

Վայոց ձորը գրավելուց 3-4 օր անց ճակատի վիճակին ծանոթանալու համար Քեշիշքենդ եկան Արշակ Հովհաննիսյանը, Եփրեմ Սարգսյանը և Գառնիկ Շահինյանը: Տեղ հասնելուն պես նրանք Նժդեհի անունից Յապոնից պահանջեցին հարձակվել և գրավել նաև Նոր Բայազետը:

«Այս առաջարկին ես բոլորովին հակառակ կանգնեցի,– հետագայում գրել է Յապոնը:– Ասացի, որ ոչ միայն չենք կարող Սելիմը անցնել ու Նոր Բայազետը գրավել, այլև իրենց տներին մոտեցած Երևանի ու Նոր Բայազետի մեր զինվորները այլևս կռվելու որևէ տրամադրություն չունեն և հարմար առիթի են միայն սպասում, որ տուն փախչեն»[2]:

Կարմիր բանակի հրամանատարությունը շտապ միջոցներ ձեռնարկեց զանգեզուրյան ուժերի հարձակումը կանգնեցնելու համար: Այդ նպատակով նա ուժեղացրեց ճնշումը Արևիքի, Կապանի և Գորիսի սահմանների վրա, որպեսզի Նժդեհը ստիպված լիներ Սյունիքի զորքի մի մասը հանել Վայոց ձորից և ուղղել այդ սահմանների պաշտպանությանը:

Կարմիրբանակայինների՝ Որոտան գետի աջ ափին կենտրոնացած ուժերը ցրելու նպատակով Նժդեհը կապանցիների մի թեթև հեծյալ զորամասով

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 541:

[2] Եպօնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, գիր առավ Յ. Տէրունին, «Հայրենիք», 1941, հուլիս, թիվ 9 (223), էջ 118:

հունիսի 18-ին խորհրդայնացված թուրքական շրջանով Կապանից շարժվեց դեպի Գորիս: Բարգուշատի թրքությունը, որը մի ամբողջ տարի գտնվում էր բոլշևիկների իշխանության տակ, հայկական զորամասի երևալուց հանկարծակիի եկած, նրան ընդունեցին աղ ու հացով և հպատակություն հայտնեցին, իսկ շրջանի միլիցիայի բաժանմունքները խուճապով փախչում են դեպի Խանլը: Հպատակություն հայտնած այդ գյուղերին նշանակելով թուրք կոմիսար՝ Նժդեհը եկավ Գորիս[1]:

Մարտերը Վայոց ձորի համար դեռ շարունակվում էին, երբ բռնկված նոր պատերազմի առիթով Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահ Ա. Մյասնիկյանը հունիսի 18-ին կոչով դիմեց Հայաստանի աշխատավորությանը[2]: «Դաշնակների նոր քայլը տեղիք է տալիս նոր արյունահեղությունների»,– նշում էր նա: Ասելով, թե «մենք չենք, որ ուզում էինք այս կռիվը, բայց մենք ստիպված ենք այժմ ընդունել այն», որ «այս կռվի ծանրության ամբողջ մեղքն ընկնում է Զանգեզուրի իշխանությունների վրա», Մյասնիկյանը միաժամանակ շեշտում էր, որ «մեկ բոպե անգամ չենք կասկածում, թե ով պիտի լինի հաղթողը այս կռվում»[3]: Նա ասում էր, որ զանգեզուրյան ուժերին չէր հաջողվի իրականացնել իրենց մտադրությունները, և շատ շուտով Կարմիր բանակը նոր հարձակումով կազատագրեր ոչ միայն Վայոց ձորը, այլև ողջ Զանգեզուրը:

«Նոր ավանտյուրան» վերտառությամբ հոդվածում «Խորհրդային Հայաստան» թերթը գրում էր. «Ժողովրդասպան հարվածը հասցված է: Հայաստանի խորհրդային կառավարությունը գերագույն փորձեր կատարեց Զանգեզուրի հարցն անարյուն լուծելու: Մեր կառավարության պատգամավոր ընկ. Կարինյանը ամսի 13-ին նորից ճանապարհվեց Դարալագյազ՝ հաշտության առաջարկով. այդ առաջարկի մասին վաղօրոք զգուշացվել էին Զանգեզուրի «փրկիչները», սակայն նրանք ... պատերազմը գերադասում են հաշտությունից...»[4]:

Այդ ծանր պահին ռազմաճակատում սկսված խուճապը կանգնեցնելու համար Ա. Մյասնիկյանի կարգադրությամբ կազմվեց ռազմահեղափոխական տրիբունալ, որը շտապ ռազմաճակատ ուղարկվեց. նպատակն էր այնտեղ կիրառել խստագույն պատիժներ, եթե հարկ լինի, դիմել նաև գնդակահարությունների:

Տրիբունալի անդամների մի մասը հակված էր մեղավոր ճանաչված կարմիրբանակայինների նկատմամբ կիրառել անսանձ բռնություններ՝ ամենադաժան եղանակներով ու մեթոդներով: Տեղեկանալով այդ մասին՝ Ա. Մյաս-

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11 (35), էջ 88:

[2] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 533-536:

[3] Նույն տեղում, էջ 536:

[4] «Խորհրդային Հայաստան», 1921, 19 հունիսի:

նիկյանը տրիբունալի անդամներին ռազմաճակատ մեկնելուց առաջ հրավիրեց իր մոտ և խստորեն նախազգուշացրեց չընկնել ծայրահեղությունների մեջ, չտարվել գործի վարչական, դատական-պատժիչ կողմով: Հանդիպմանը մասնակցած տրիբունալի անդամներից մեկը՝ Հայկ Բաղդասարյանը, հետագայում գրել է, որ հանրապետության նախագահը կարգադրեց շեշտը դնել քաղաքական ներգործության վրա՝ խնդիր ունենալով վերացնել խուճապը, բարձրացնել զինվորների բարոյական ու մարտական ոգին: Մյասնիկյանը մասնավորապես ասել էր. «Ինքնին ռազմահեղափոխական տրիբունալի երևալը ռազմաճակատում, ուրիշ ռազմական ու քաղաքական միջոցառումների հետ միասին, կօգնի արագ կերպով վերականգնել կարգապահությունն ու կարգը զորամասերում», որ անհրաժեշտ է «խոսել հրամանատարների ու մարտիկների հետ, պարզաբանել նահանջի պատճառները և միայն դրանից հետո, անհրաժեշտության դեպքում, դատական գործ հարուցել»[1]:

Պետք է ասել, սակայն, որ չնայած այդ մտահոգություններին ու նախազգուշացումներին՝ ռազմաճակատ ժամանած ռազմահեղափոխական տրիբունալը, այնուամենայնիվ, շեշտը դրեց դատական-պատժիչ կողմի վրա, որի հետևանքը եղան չարդարացված պատիժները և բազմաթիվ զոհերը:

Ինչևիցե, տրիբունալի օգնությամբ Կարմիր բանակի հրամանատարներին հաջողվեց զորամասերում վերականգնել կարգը և վերախմբավորել ուժերը: Միաժամանակ օգնության եկավ Հայաստանի Կարմիր բանակի 20-րդ հեծյալ գունդը, որը մարտի մեջ մտավ տեղ հասնելուն պես:

Մարտակարգերը կարգի բերելուց հետո Կարմիր բանակի զորամասերին հաջողվեց մի շարք հակագրոհներ ձեռնարկել, որի հետևանքով թուլացավ զանգեզուրցիների հարձակման թափը, կանգնեցվեց նրանց առաջխաղացումը Ռինդ և Արփա գյուղերի շրջանում:

Չնայած դրան՝ Կարմիր բանակի զորքերի պարտությունը ակնհայտ էր:

Համառ ու արյունահեղ մարտերում, որը տևեց վեց օր՝ հունիսի 15-ից մինչև 21-ը, Հայկական առաջին բրիգադը նահանջեց մոտ 80 կիլոմետր: Վայոց ձորն ամբողջովին անցավ զանգեզուրյան զորքերի ձեռքը, որոնք գերի վերցրին 900 զինվոր ու հրամանատար. գերիների թիվը կազմում էր այնտեղ եղած խորհրդային զինվորների մեկ երրորդը: Առգրավեցին 20 գնդացիր, մեծ քանակությամբ փամփուշտ, կերպասեղեն, սննդամթերք և այլն[2]: Տարած հաղթանակը գլխապտույտ էր առաջացրել Լեռնահայաստանի զինվորների մոտ: Բանը հասնում է նրան, որ Քեշիշքենդում Լեռնահայաստանի կառավարության հրավիրված մի քանի անդամների ներկայությամբ բանակի բարձր հրամանատարության զինվորական խորհուրդը զինվորական զանգվածի ճնշման տակ ստիպված քննության առավ Երևանը վերագրավելու

---

[1] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 180:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1435, ց. 1, գ. 114, թ. 11-12:

հարցը: Զորքը պահանջում էր առաջ շարժվել, բայց հրամանատարությունը դեմ էր հետագա հարձակմանը՝ գտնելով, որ Երևանը գրավել հնարավոր է, բայց դժվար կլինի հինգ օրից ավելի պահել: Այդ հողի վրա բարձր հրամանատարության և զինվորների միջև առաջ եկած տարակարծությունը կարող էր գնալով խորանալ:

Հրամանատարությունը հաշվի էր առնում այն, որ, այնուամենայնիվ, չէր հաջողվել իրականացնել Հայկական առաջին կարմիր բրիգադը շրջապատելու և լիովին ջախջախելու օպերատիվ ռազմական պլանը:

Մեկշաբաթյա կռիվներում զգալի կորուստներ ունեցան նաև զանգեզուրյան զորամասերը: Դա էր պատճառը, որ Նժդեհը որոշում ընդունեց կանգնեցնել նախատեսված առաջխաղացումը դեպի Արարատյան դաշտ, դեպի Երևան: Վայոց ձորում ձերբակալվեցին առավել ակտիվ մի շարք կոմունիստներ, որոնք ստացան զանազան պատիժներ: Կարճատև հարցաքննություններից հետո գնդակահարվեցին գերի ընկած մի քանի հոգի, որոնք ղեկավար պաշտոններ էին գրավել գավառային կոմիտեում և գավառի խորհրդային մարմիններում:

Դարալագյազի վրա զանգեզուրցիների հարձակումը տարբեր կերպ ընդունվեց Խորհրդային Հայաստանում: Քիչ չէին նրանք, ովքեր կառավարությունից պահանջում էին ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ և ճնշել զանգեզուրյան ապստամբությունը: Երևանում և հանրապետությունում ամենուրեք բողոքի ժողովներ ու միտինգներ էին կազմակերպվում, որոնց մասնակիցները դատապարտում էին «իմպերիալիզմի դաշնակ գործակալների» նոր քայլը, միաժամանակ պատրաստակամություն հայտնում Զանգեզուրի «հակահեղափոխությունը ոչնչացնելու» համար Կարմիր բանակին ցույց տալ ամեն տեսակի աջակցություն: Հանրապետության բնակչության մեծ մասը, սակայն, անորոշ վիճակի մեջ էր և սպասում էր իրադարձությունների հետագա զարգացմանը:

1921 թ. հունիսի 18-ի երեկոյան Ս. Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում Ա. Մյասնիկյանի նախագահությամբ կայացավ մեծ հանրահավաք՝ «Զանգեզուր ապաստանած դաշնակների նոր ավանտյուրայի առթիվ»: Միտինգը բացեց Ասքանազ Մռավյանը, ապա խոսք վերցրեց Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահ Ա. Մյասնիկյանը: Նա իր ճառը սկսեց նրանով, որ քաղաքացիական ծանր կռվից ժողովուրդը ժառանգել է միմիայն տնտեսական քայքայում: Նշեց, որ պատերազմն ինքնին մի չարիք է, որից տուժում են ամենից առաջ աշխատավոր գյուղացիական տարրերը: Դա չարիք է ոչ միայն այն պատճառով, որ արտադրողական թարմ ուժերը կտրվում են աշխատանքից: Պատերազմը ավելի ևս խոշոր վնասներ էր հասցնում այն տարածքին, որտեղ բախվում էին կռվող կողմերը: Վերջապես այն վնասաբեր էր նաև նրանով, որ խանգարում էր բուն երկրում սկսած շինարարական աշխատանքին: Զանգեզուրյան ապստամբությունը թելադրում

էր ձեռնարկել մի շարք նախազգուշական միջոցներ, որոնք անհրաժեշտ էին վաղվա անակնկալ դեպքերը կանխելու համար: Բայց ակներև էր և այն, որ այդ միջոցները հաճախ սխալ էին ընկալվում երկրի մտավորականության կողմից, շատ շատերին թվում էր, թե դա ընդհանրապես կառավարության մշակած մի քաղաքականություն էր, որ այսուհետև պետք էր հետևողականորեն կիրառվեր Հայաստանի հայության նկատմամբ: «Մեր ընկերները պիտի կարողանան ցրել բոլոր այդ թյուր կարծիքները,– ասում էր Մյասնիկյանը:– Գավառում գործող մեր գործիչների վրա դրվում էր առանձնապես ծանր պարտականություն: Մեր պայքարը Դաշնակցության դեմ քաղաքական մի պայքար է, որն ամենևին մեզ իրավունք չի տալիս փոխել մեր վերաբերմունքը դեպի հայ ինտելիգենցիան: Ոչ մի ռեպրեսիա, ոչ մի հալածանք հայ մտավորականության դեմ չի կարող և չպիտի լինի: Խիստ ու կտրուկ լինելով Խորհրդային Հայաստանի թշնամիների նկատմամբ, մենք պիտի նորից ընդգծենք, որ մեր հայ աշխատավորության բոլոր մնացյալ տարրերի և մանավանդ խաղաղ շինարարական աշխատանք վարող մտավորականության նկատմամբ խորհրդային իշխանությունը չի փոխում իր քաղաքականությունը: Այդ սկզբունքը մենք կյանքում կիրառելու ենք ամենայն վճռականությամբ, անշեղ ու անփոփոխ»:

Հայաստանի խորհրդային կառավարությունը, այնուհետև նշում էր Մյասնիկյանը, հայտարարել է ներման դեկրետ և պատվիրակություն է ուղարկել Զանգեզուր՝ զանգեզուրյան հարցը խաղաղաթյամբ լուծելու համար, որպեսզի Հայաստանի աշխատավորությունը հնարավորություն ստանար նվիրվելու շինարար աշխատանքի: «Մենք կարողացանք լեզու գտնել մեր դրացի հարևանների՝ խորհրդային հանրապետությունների հետ, Պարսկաստանի հետ ևս առևտրական հարաբերությունների սկիզբը դրինք: Բայց դաշնակները աշխատում են մեզ խանգարել»: Նա հավաստեց, որ ներման դեկրետը շարունակելու է պահել իր ուժը, քանի որ «մենք վստահ ենք, որ հաղթելու ենք»: Ապա Մյասնիկյանը, ի գիտություն միտինգի մասնակիցների, հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը շուտով կցվելու է Խորհրդային Հայաստանին, «մի բան, որ Դաշնակցություն կուսակցությունը երեք տարվա ընթացքում չկարողացավ անել, վատնելով ահագին կյանքեր»[1]:

Իր ելույթում Ավիս Նուրիջանյանը շեշտեց, որ «այլևս ոչ մի ներում չի լինելու», որ «յուրաքանչյուր բանվոր, գյուղացի, կարմիրբանակային պետք է իմանա, որ Զանգեզուրից արշավողները մեր աշխատավորության թշնամիներն են»[2]:

Այնուհետև Արտաշես Կարինյանը հանրահավաքի մասնակիցներին զեկուցեց Զանգեզուր մեկնած պատվիրակության գործունեության մասին՝

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 22 հունիսի:

[2] Նույն տեղում:

շեշտելով, թե Զանգեզուրի կառավարությունը ինչպես և ինչու էր խուսափում հարցը վճռել խաղաղորեն[1]:

Ներքին գործերի ժողովրդական կոմիսար Պողոս Մակինցյանը, խոսք վերցնելով, նշում էր, որ միայն աշխատավորությունն էր, որ անկեղծ ցանկանում էր հաշտություն: «Յուրաքանչյուր քիչ թե շատ խելքը գլխին մարդ պիտի գիտակցի, որ նրանց (Զանգեզուրի դաշնակցականների: – *Ա. Ս.)* արածը ծաղրելի հիմարություն և պախարակելի հանդգնություն է, քանի որ անհնարին է պատերազմել Խորհրդային Հայաստանի դեմ, երբ ամբողջ Ռուսիայում խորհրդային իշխանությունը ամուր է և ամբողջ Անդրկովկասում առավել ևս ամուր, և երբ պատերազմը Խորհրդային Հայաստանի դեմ՝ նշանակում է նաև պատերազմ Ռուսիո դեմ»[2]:

Սոցիալիստ-հեղափոխական ինտերնացիոնալիստների կողմից խոսք առնելով՝ Գրիգոր Չուբարյանը շեշտում էր, որ «դաշնակները, որոնք անցյալ տարվա դեկտեմբերին հոժար կամքով կառավարությունը հանձնեցին կոմունիստներին», այսօր ոտնահարում են ժողովրդի շահերը, ուստի «պետք է վերջնական, վախճանական հարված հասցնել նրանց»[3]:

Վերջում Դրաստամատ Տեր-Սիմոնյանի առաջարկած նախագծով հանրահավաքում միաձայն ընդունվեց բանաձև, որում, մասնավորապես, նշված էր.

«Զանգեզուրում ապաստանած, այսպես կոչված, «Զանգեզուրի կառավարությունը» չէր ուզում խաղաղ ձևով լուծել Զանգեզուրի վիճելի հարցը, որովհետև խորհրդային իշխանության խաղաղ քաղաքականությունը տարրալուծում է զանգեզուրցիների շարքերը և պատրաստում Զանգեզուրի գյուղացիների ապստամբությունը: Բացի այդ, անկասկած, Զանգեզուրի ետևում կանգնած է Անտանտը, որը ցանկանում է Հայաստանը ձգել քաղաքացիական կռվի գիրկը:

Միտինգն անեծքի և խոր զայրույթի խոսք է ուղղում Զանգեզուրի մաուզերիստներին՝ հայ ժողովրդի այդ երդվյալ թշնամիներին, և կոչ է անում Զանգեզուրի գյուղացիներին՝ դուրս քշել իրենց միջից այդ բախտախնդիրներին և միանալ Խորհրդային Հայաստանին:

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը:

Կեցցե՛ն Խորհրդային Հայաստանի անբաժան մասերը՝ Զանգեզուրն ու Ղարաբաղը»[4]:

Բազմաթիվ հանրահավաքներ տեղի ունեցան Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Կոտայքում և այլուր: Օրինակ՝ ՀԿ(բ)Կ

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 22 հունիսի:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

Դիլիջանի գավառային կոմիտեն հետևյալ շտապ հեռագիրն էր ուղարկել Երևան՝ Հայաստանի կառավարության նախագահ Ա. Մյասնիկյանի և Կենտկոմի քարտուղար Լուկաշինի անունով. «Այսօր՝ հունիսի 21-ին, մենք՝ Դիլիջանի բանվորներս, գյուղացիներս, քաղաքացիներս՝ լսելով գավկոմի քարտուղար ընկեր Իշխանյանի զեկուցումը՝ Զանգեզուրի վերջին ավանտյուրայի մասին, որոշեցինք, սովետական կառավարությունը մեր շահերի իսկական պաշտպանն է..., իսկ նրանց հարձակումը մի հարված է մեր թիկունքին՝ այն ժամանակ, երբ մենք զբաղված ենք դաշտային աշխատանքներով: Պարզ գիտակցելով այդ բոլորը, մենք հայտարարում ենք, որ պատրաստ ենք ամեն րոպե զենքը ձեռքներիս պաշտպանել սովետական կառավարությունը: Այս անգամ պետք է հաշիվներս մաքրենք մեր ոխերիմ թշնամիների հետ: Մա՛հ ավանտյուրիստներին, անխնա կռիվ՝ հակահեղափոխականների դեմ»[1]:

Նզովելով «հայ ժողովրդի չար ոգի» Դաշնակցությանը, որը «նորից կռվի ու ավերածության երախի առաջ է կանգնեցրել Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին»՝ «Խորհրդային Հայաստան» թերթը գրում էր, որ բովանդակ հայ ժողովուրդը աներկբա պաշտպանում էր խորհրդային կարգերը: Պաշտպանում էր նաև բազմաչարչար հայ գյուղացիությունը, որի քաղաքական տրամադրությունների մեջ կատարվել էին արմատական փոփոխություններ: Այնուհետև թերթը հիշեցնում էր, որ խորհրդային իշխանությունը զարգացման լայն հնարավորություններ էր ստեղծելու գյուղացիության համար, ուստի նա պարտավոր էր հետևողականորեն «պաշտպանել խորհրդային իշխանությունը Զանգեզուրի ոտնձգություններից: Ոչ միայն պաշտպանել, այլև ոչնչացնել դաշնակցականների կենդանի ուժերը: Այս սուրբ գործը հայ Կարմիր բանակը սրբությամբ էլ կկատարի»[2]: Ապա, անդրադառնալով հայ մտավորականությանը, թերթը գրում էր, թե նրա «միակ ճանապարհը խորհրդային իշխանությունն է, որը վերջնականապես հաստատվում է իբրև միակ աշխատավորական ու ժողովրդական ուժ»[3]:

Թերթը ընթերցողներին առաջարկում էր մի րոպե պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե Զանգեզուրին հաջողվեր անկախ լինել: «Անկախ Զանգեզուրը» հարմար կամուրջ կդառնա, որտեղից ներս «կխուժեն արևմտյան և այլ իմպերիալիստները»[4]:

Ամբողջ Կովկասը խորհրդային էր՝ բացի Զանգեզուրից: Բոլորին պարզ էր, որ այդպես երկար տևել չէր կարող: Վայոց ձորի վրա զանգեզուրցիների հարձակումը և գավառի գրավումը խորհրդային կողմի համար արդարացնող նոր հանգամանքներ էին ստեղծել խաղաղ միջոցներից վերջնականա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 12, գ. 11, թ. 99 -101:

[2] «Խորհրդային Հայաստան», 1921, 22 հունիսի:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

պես հրաժարվելու և Զանգեզուրը ռազմական ուժով գրավելու համար: Եվ այդ արդարացնող հանգամանքները մատուցել էր ինքը՝ Լեռնահայաստանի կառավարությունը: Որքանո՞վ էր արդարացված Լեռնահայաստանի զորքի և երևանյան զորամասերի նոր հարձակումը Վայոց ձորի վրա: Այդ վերջին հարձակումը ոչ մի արդարացում չուներ, որքան էլ դա պատճառաբանված լիներ Գորիսի կառավարության կողմից (պարենի ու ռազմամթերքի ձեռքբերում և այլն): Արդարացում չուներ տարբեր, հատկապես երկու պատճառով:

1. Պարզից պարզ էր, որ Լեռնահայաստանն իր՝ հոգնած և զինամթերք չունեցող զորամասերով, բոլշևիկյան քարոզչության ազդեցությամբ մտափոխ բնակչությամբ այլևս անզոր էր դիմագրավելու խորհրդային ռազմական վիթխարի մեքենայի ճնշմանը:
2. Արդեն սկզբունքորեն լուծված էր Զանգեզուրի հարցը հօգուտ Հայաստանի և լուծված էր Սյունիքի հերոսական ժողովրդի մղած երկարատև և հաղթական կռիվների շնորհիվ:

Վայոց ձորի վրա անիմաստ նոր հարձակումը իր հետ բերեց մարդկային նոր զոհեր, տառապանքներ, ավերներ:

Հունիսի 15-17-ը Դարալագյազում Լեռնահայաստանի զորամասերի խոշոր հաջողությունների օրերն էին, բայց դրանք կայուն չէին, ավելին՝ թվացյալ էին: Վայոց ձորն ամբողջովին գրավելու հաջորդ օրն իսկ ամբողջ հասակով հառնեց այն պահելու խնդիրը: Պարզվեց, որ դա ոչ միայն հեշտ չէ, այլև ստեղծված պայմաններում անիրագործելի է: Եվ տարած հաղթանակը փոխվեց պարտությունների շարանի:

Նժդեհի վկայությամբ ամեն ինչ սկսվեց նրանից, որ Կուռոն, առանց իր գիտության, գերի վերցրած զինվորների մի մեծ խումբ՝ իրենց զենքերով, մտցրեց երևանյան զորամասերի կազմի մեջ՝ «հակառակորդի դեմ կռվելու համար», իսկ ինքը, իր շտաբով անսպասելիորեն թողնելով Վայոց ձորը, անցավ Սիսիանի Բազարչայ ռուսական գյուղը, այլ խոսքով՝ զորքերից հեռացավ 50-60 վերստ:

Պատրաստի կարմիր քարոզիչների մտցնելը դաշնակցական զորքերի մեջ կործանարար ազդեցություն ունեցավ ամբողջ ռազմարշավի համար: Կարմիրբանակայիններից յուրաքանչյուրը հանդես էր գալիս իբրև գաղտնի կամ բացահայտ քարոզիչ:

Ինչպես վերևում ասվեց, դեռ մայիսի կեսերին Ա. Մյասնիկյանը և Ա. Հեկկերը մշակել էին Զանգեզուրի գրավման նախնական ռազմաօպերատիվ ծրագիր: Հիմք ընդունելով այդ՝ Կովկասյան բանակի հրամանատարությունը Վայոց ձորում կատարվող իրադարձությունների ժամանակ՝ հունիսի 20-ին, բանակի շտաբին հանձնարարեց մշակել Զանգեզուրի գրավման ռազմաօպերատիվ վերջնական ծրագիր:

Ռազմական ծրագրով նախատեսվեց Զանգեզուրի վրա սկսել ընդհանուր հարձակում միաժամանակ բոլոր կողմերից: Ստեղծվեց Զանգեզուրի վրա հար-

ձակվող երկու զորախմբավորում՝ Ղարաբաղ-Զանգեզուրյան և Երևանյան:

Ղարաբաղ-Զանգեզուրյան զորքերի խմբավորման մեջ մտան Կովկասյան առանձին բանակի առաջին կորպուսը և այլ զորամասեր: Կորպուսի հրամանատար Ա. Տոդորսկին միաժամանակ նշանակվեց խմբավորման հրամանատար, իսկ կոմիսար՝ Ի. Սվիրիդովը:

Զորքերի Ղարաբաղ-Զանգեզուրյան խմբավորումն ուներ 5175 սվին, 400 թուր, 12 հրանոթ, 7 օդանավ, 100 գնդացիր[1]: Զորախմբավորումը Զանգեզուրի վրա հարձակվելու էր միաժամանակ արևելքից, հարավ-արևելքից և հյուսիսից:

Մինչև մարտական որոշակի հանձնարարություն ստանալը զորքերի Ղարաբաղ-Զանգեզուրյան խմբավորումը բաժանվեց երկու զորասյան: Դրանցից մեկի առջև խնդիր դրվեց մինչև հունիսի 30-ը գրավել Խուդափիրինի կամուրջը և կտրել Զանգեզուրի պաշտպանների նահանջի ճանապարհը դեպի Պարսկաստան:

Մյուս զորասյունը հուլիսի 1-ին պետք է հարձակվեր Գորիս քաղաքի վրա, գրավեր այն, ապա, անցնելով Որոտան գետը, հետապնդեր Նժդեհի զորամասերին և գրավեր Կապանի հանքերը: Այս զորասյան գործողություններին տրվում էր վճռական նշանակություն, ուստի այն համալրվեց գավառից Լեռնային Ղարաբաղ և հարակից ադրբեջանական տարածքներ փախած հայ կոմունիստներով ու համակիրներով: Զորասյան մեջ մտավ, օրինակ, խմբավորման 84-րդ բրիգադի հրամանատար Գ. Սեմյոնովի և Շուշիի գավառային կուսակցական կոմիտեի աջակցությամբ դեռևս ապրիլի կեսերին Աղդամում ստեղծված ջոկատը, որին սկզբում անդամագրվել էր 100 մարդ, իսկ հետո նրանց թիվը կրկնապատկվել էր: Քանի որ ջոկատի անդամների մեծ մասը գորիսեցիներ էին, ուստի հարմար էր համարվել հրամանատար նշանակել Գորիսի շրջանի Քարաշեն գյուղի կոմունիստ Նիկոլայ Հայրյանին: Ջոկատը մի քանի օր մնաց Շուշիում, զինվեց ու հանդերձավորվեց, ապա կցվեց Կովկասյան առաջին կորպուսի 246-րդ գնդին, որի հրամանատարն էր Ն. Չոլովը:

Ապրիլի վերջերին ջոկատը Շուշիից մոտեցել էր Գորիսի սահմաններին և տեղավորվել Հագարու գետի ձախ ափին գտնվող Սաֆյան ադրբեջանական գյուղի մոտ: Այստեղից ջոկատի հրամանատարն անմիջապես կապ էր հաստատել Կուբաթլիի ադրբեջանական ղեկավարության և Եղիա Ղազարյանի հրամանատարությամբ այնտեղ գտնվող զանգեզուրյան կոմունիստների մյուս ջոկատի հետ, որի կազմում Կուբաթլիի շրջանից ևս կային մի խումբ կոմունիստներ՝ Սավալան Շիրինովը, Իսա Թայիրովը, Մուրթուզ Ալիևը և ուրիշներ: Ջոկատի հրամանատարը կապի մեջ էր նաև Քուրդիստանի կոմունիստական ջոկատի հետ, որի հրամանատարն էր Օջախկուլի Մուսաևը:

Ավելի քան երկու ամիս գտնվելով Գորիսի սահմանների մոտ՝ Ն. Հայրյանի ջոկատի անդամներից շատերը կարողացել էին թափանցել շրջանի գյուղերը,

---

[1] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 100:

պարզել գավառի բնակչության քաղաքական տրամադրությունները, վերաբերմունքը իշխանությունների նկատմամբ, Կարմիր բանակի մասին ունեցած պատկերացումները, ճշտել էին զանգեզուրյան մի շարք զորամասերի տեղաբաշխման վայրերը, դրանց զենքերի տեսակները և մարտիկների թիվը:

Եվ ահա, հուլիսի վերջերին Ն. Հայրյանի և Ե. Ղազարյանի կոմունիստական ջոկատները պատրաստվում էին մտնել Զանգեզուր՝ Ղարաբաղ-Զանգեզուրյան խմբավորման առաջապահ զորամասերի կազմում:

Երկրորդ՝ Երևանյան զորախմբավորման մեջ էին մտել հայկական հրաձգային բրիգադը և հեծյալ գունդը, 11-րդ Կարմիր բանակի նախկին 20-րդ դիվիզիայի 177-րդ, 178-րդ, 180-րդ գնդերը և այլ զորամասեր: Խմբավորման հրամանատար նշանակվեց Մ. Վելիկանովը:

Երևանյան խմբավորման զորքերը Զանգեզուրի վրա էին գնալու արևմուտքից և հարավ-արևմուտքից: Զորախմբավորումը պետք է մարտական գործողություններ սկսեր նախքան Ղարաբաղ–Զանգեզուրյան զորախմբավորման հարձակումը: Դա արվելու էր զանգեզուրցիների ուշադրությունը հարվածի գլխավոր ուղղությունից շեղելու համար: Այդ դեպքում Նժդեհը ստիպված կլիներ իր զորքերի մի մասը հանել արևելյան ռազմաճակատից և նետել Վայոց ձորի ուղղությամբ՝ Երևանյան զորախմբավորման հարձակվող զորամասերի դեմ. մի բան, որ կթուլացներ Զանգեզուրի արևելյան թևը և կհեշտացներ Ադրբեջանի կողմից խորհրդային զորքերի ներխուժումը գավառ:

Զորքերի Երևանյան խմբավորումը, իր հերթին, բաժանվեց երեք զորասյուների:

Առաջին զորասյան մեջ մտցվեցին հայկական Կարմիր բանակի առաջին բրիգադի 1-ին, 2-րդ և 3-րդ հրաձգային գնդերը, ինչպես նաև Վեդիի և Նախիջևանի թուրքերից կազմված, այսպես կոչված, «կարմիր տաբորը»: Զորասյան կազմում հաշվվում էր 1128 հետևակ զինվոր, 27 գնդացիր, 2 զրահամեքենա: Զորասյան մարտական խնդիրն էր հարձակվել Վեդի–Վայոց ձոր–Սիսիան–Գորիս գծով, Գորիսում միանալ Ղարաբաղից Զանգեզուր մտած Կովկասյան առաջին կորպուսի զորամասերին ու այնուհետև նրանց հետ շարունակել հարձակումը Կապանի ուղղությամբ:

Երկրորդ զորասյան մեջ ընդգրկվեցին հայկական 180-րդ և 4-րդ հրաձգային գնդերը, 1-ին հեծյալ գունդը, 9-րդ լեռնային մարտկոցը և հաուբիցյան մարտկոցը: Զորասյան կազմում հաշվվում էր 2150 հետևակ և հեծյալ մարտիկ, 6 հրանոթ, մոտ 80 գնդացիր[1]: Զորասյան մարտական խնդիրն էր հարձակվել Նախիջևան–Բիչանակ–Սիսիան ուղղությամբ, Սիսիանի տարածքներում միանալ Երևանյան խմբավորման առաջին զորասյան զորքերին և համատեղ հարձակումը շարունակել Գորիսի ուղղությամբ:

Երրորդ զորասյունը բաղկացած էր 177-րդ և 178-րդ հրաձգային գնդերից

[1] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 100-101:

և 3-րդ հայկական մարտկոցից: Զորասյան կազմում հաշվվում էր 1208 զինվոր, 45 գնդացիր, մի քանի հրանոթ[1]: Զորասյան մարտական խնդիրն էր հարձակվել Նախիջևան–Օրդուբադ–Մեղրի գծով, սրընթաց գրոհով փակել Գենվազից Պարսկաստան տանող անցուղիները, հակառակորդի նահանջող ջոկատներին թույլ չտալ անցնելու Արաքսի մյուս ափը, դրանց վերցնել օղակի մեջ և ջախջախել:

Զորքերի Երևանյան խմբավորման այս երեք զորասյուներից բացի՝ Զանգեզուրի վրա պետք է հարձակվեր նաև այդ խմբավորման մեջ մտնող մի այլ զորամաս, որը գտնվում էր Ղարանլուղում (Մարտունի): Այդ զորամասի մեջ էին մտնում 20-րդ հեծյալ գնդի մեկ վաշտ և հայկական 3-րդ հետևակ գնդի այն գումարտակը, որը մի քանի օր առաջ՝ հունիսի 17-ին՝ Վայոց ձորի վրա զանգեզուրցիների հարձակման ժամանակ, Այնաձոր (Աղավնաձոր) գյուղի բարձունքներից նահանջել էր Ղարանլուղ: Սելիմի լեռնանցքով իջնելով Հասանքենդ (այժմ՝ Շատին)՝ զորամասը այնուհետև պետք է շարունակեր հարձակումը Վայոց ձորով և այստեղ միանար Երևանյան խմբավորման առաջին զորասյանը:

Զանգեզուրի վրա երկու կողմից հարձակվող բոլշևիկյան զորքերը հրանոթաձիգների անձնակազմերի և օժանդակ ստորաբաժանումների հետ ունեին 10 հազար զինվոր:

Իսկ ի՞նչ ուժեր ուներ Գորիսի կառավարությունն այդ պահին:

Զանգեզուրի զինված ուժերը հունիսի կեսերին բաղկացած էին.

ա) տեղի իշխանությունների կադրային կանոնավոր զորամիավորումներից, բ) Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Զանգեզուր անցած բանակային զորամասերից, գ) տաճկահայերից, մասնավորապես՝ սասունցիներից և մշեցիներից կազմված զինված խմբերից, որոնք, փետրվարյան օրերին ապստամբություն բարձրացրած ուժերի հիմնական միջուկը լինելով, նույնպես անցել էին Զանգեզուր, դ) «աշխարհազորային գումարտակներից», որոնցում հավաքված էին տեղի գյուղացիները:

Չորս տեսակի այս զինված ուժերից առավել մարտունակը կանոնավոր զորամասերն էին, որոնք ունեին փորձված սպաներ և համեմատաբար լավ էին ապահովված զենքով ու ռազմամթերքով: Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Զանգեզուր անցած բանակային զորամասերը երկարատև անընդհատ կռիվներից հոգնած էին և նոսրացած: Տաճկահայ զինված խմբերը թեև կոփված էին մարտերում և ընդհանուր առմամբ հավատարիմ էին Գորիսի կառավարությանը, բայց ապրիլ ամսին Երևանից Զանգեզուր նահանջի ճանապարհին սոսկալի տանջանքներ կրելով՝ համարյա սպառել էին իրենց ուժերը: Նրանց վրա հոգեբանորեն ծանր էր անդրադարձել նաև այն, որ Զանգեզուրի իշխանությունների կողմից արժանացել էին բավական սառն ընդունելության: Այդ բոլորը տաճկահայ զինվորների

[1] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 101:

մեջ առաջ էր բերել հիասթափություն, նրանցից շատերը գնալով հակվում էին այն մտքին, որ Հայաստանում հին իշխանությունների վերականգնումը պատրանք է, իսկ խորհրդային բանակին դիմադրելը՝ անիմաստ:

Ինչ վերաբերում է աշխարհազորային գումարտակների մեջ հավաքագրված գյուղացիներին, ապա սրանց զգալի մասն այլևս ցանկություն չուներ դիմադրելու Կարմիր բանակին և պատրաստ էր առաջին իսկ հարմար պահին անցնելու խորհրդային հարձակվող զորքերի կողմը:

Ղարաբաղ-Զանգեզուրյան ռազմաճակատի ուղղությամբ՝ Զանգեզուրի մատույցներում, սահմանամերձ Կոռնիձոր, Դարաքյանդ, Տեղ, Խնածախ, Բայանդուր, Խոզնավար, Վերիշեն, Բուռուն գյուղերի տարածքների հարմար բարձրություններում զանգեզուրյան մարտիկները դեռ նախորդ ամիսներին ստեղծել էին պաշտպանական ամրություններ: Գորիսում համոզված էին, որ այս ճակատում Կարմիր բանակը հիմնական հարվածը հասցնելու էր Զաբուղի կողմից: Ուստի Կովկասյան առանձին բանակի առաջին կորպուսի հիմնական ուժերի դեմ այստեղ կենտրոնացվել էին մոտ 3 հազար հետևակ և հեծյալ զինվոր, 11 հրանոթ, 27 գնդացիր:

Մյուս երեք ճակատներում, այսինքն՝ Շարուր–Վայոց ձորի, Սիսիանի և Օրդուբադի ուղղությամբ, Կարմիր բանակի զորամասերի դեմ զանգեզուրցիները ունեին 7100 սվին և 1600 թուր, 16 հրանոթ, ավելի քան 50 գնդացիր[1]:

Հայկական բանակի հաշվառման բաժնի՝ հունիսի 6-ի տվյալներով Մեղրիում Նժդեհի կանոնավոր զորքերի թիվը հաշվվում էր 2500 զինվոր, որից 600-ը՝ հեծյալ: Այստեղ կային 2 լեռնային հրանոթ, 20 գնդացիր: Հրամանատարներն էին Սմբատը, Դալին, Քյուրդ Ղազոն և Մուշեղ Ավետիսյանը:

Կատարի գործարաններում և ընդհանրապես Կապանում կանոնավոր զորքեր չկային, բայց կային 2 լեռնային հրանոթ և 14 գնդացիր: Այս շրջանի հրամանատարը Գերասիմ Աթաջանյանն էր:

Վայոց ձորի շրջանում կանոնավոր զորքերի թիվը մոտավորապես 3 հազար էր: Դրանցից բացի՝ Յապոնի ջոկատում հաշվվում էր 500 հեծյալ: Շրջանում կային մեկ հրանոթ և 28 գնդացիր: Այստեղի հրամանատարներն էին Յապոնը, Կուռոն, կուբանցի գնդապետ Կորոլկովը:

Սիսիանի շրջանում կանոնավոր զինվորների թիվը 1500 էր: Կար 24 գնդացիր: Հրամանատարներն էին բաշգառնեցի Մարտիրոսը և սասունցի Մուշեղը[2]:

Այսպիսով՝ Լեռնահայաստանում զենքի տակ էր շուրջ 12 հազար մարդ, կային 16 հրանոթ, ավելի քան 100 գնդացիր[*]:

---

[1] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 102:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 15 և շրջերես:

[*] Ընդհանրացնող մոտավոր հաշվարկները կատարել է հեղինակը՝ ըստ հրապարակումների և արխիվային նյութերի համադրման:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂ - ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ

1921 թ. հունիսի 20-ին Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահ ու ռազմական գործերի ժողկոմ Ա. Մյասնիկյանը, որը միաժամանակ Կովկասյան առանձին բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ էր, և բանակի Երևանյան ռազմական խմբավորման հրամանատար Մ. Վելիկանովը ստորագրեցին և արձակեցին խմբավորման բոլոր զորամասերին, զինվորներին, հրամանատարներին ու կոմիսարներին ուղղված հրամանը[1]: Այդ հրամանում նորից շեշտվում էր, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ցանկանում է Զանգեզուրի հետ տարաձայնությունը լուծել խաղաղորեն, բայց վիճակը արմատապես փոխվել է այն պատճառով, որ դաշնակցականները «հարձակում են գործել Դարալագյազի մեր զորամասերի վրա»: Այդ հարձակման նպատակը պարզ է, ասված էր հրամանում, այն է՝ «տապալել Հայաստանում, ապա և ամբողջ Կովկասում խորհրդային իշխանությունը»: Ահա թե ինչու «աշխատավորական և հեղափոխական Հայաստանը նորից կոչում է ձեզ դեպի ռազմի դաշտ»: Այնուհետև, դիմելով զինվորներին, հրամանատարներին և կոմիսարներին, Ա. Մյասնիկյանն ու Մ. Վելիկանովը իրենց հրամանի մեջ կոչ էին անում. «Կարմի՛ր զինվորներ, դուք ձեր քաջարի սխրագործություններով պիտի հավերժացնեք Հայաստանի բանվորագյուղացիական պանծալի Կարմիր բանակի անունը: Մեր երկրի աշխատավորները մեծ հույսեր և սպասելիքներ են տածում դեպի ձեզ, ձեր յուրաքանչյուր շարժմանը նրանք հետևում են սրտատրոփ: Դե՛հ, ուրեմն, դուք ձեր գործն արեք համարձակ, իսկ թիկունքը կպաշտպանի ձեզ, կաջակցի ձեր կռվին, կկերակրի ձեզ և ձեր ամբողջ հոգսը կքաշի:

Հրամանատարնե՛ր, հիշեցե՛ք, որ ձեր քաջությունն ու ձեռներեցությունը իբրև օրինակ պիտի ծառայի ամբողջ բանակին, եղե՛ք ամրակուռ:

Կոմիսարնե՛ր, ձեր բանիմաց ղեկավարությունը, ձեր՝ դեպի զորամասերն ունեցած հոգատարությունը կխտացնի, կամրացնի և պրոլետարական հեղափոխության ոգով կոգևորի բանակը»:

Այնուհետև հրամանով մարտիկներին ու հրամանատարներին հանձնարարվում էր Զանգեզուրի տարածություններ մտնելիս հոգատար և ուշադիր վերաբերմունք ցույց տալ գավառի գյուղացիության նկատմամբ, չդիպչել խա-

[1] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 97-99:

ղաղ ժողովրդին, լեռնաշխարհում պահպանել կարգ ու կանոն: Զորքին ուղղված Ա. Մյասնիկյանի և Մ. Վելիկանովի հրամանը վերջանում էր «Առա՛ջ, դեպի Զանգեզուր» կոչով:

Այս հրամանն ամենից առաջ կոչված էր բարձրացնելու դեպի Զանգեզուր շարժվող զորքերի բարոյաքաղաքական և մարտական ոգին: Հրամանն ընթերցվեց Երևանյան ռազմական խմբավորման՝ Զանգեզուրի վրա հարձակվող բոլոր զորամասերում: Հանրահավաքներում ու ժողովներում մարտիկները և հրամանատարները երդվում էին կռվի դաշտում ցուցաբերել խիզախություն, չխնայել կյանքը Զանգեզուրը մայր երկրի՝ Հայաստանի հետ միավորելու համար[1]:

Ծավալվում էր հայոց նորագույն պատմության ողբերգական պարադոքսներից մեկը. թե՛ Նժդեհն ու իր զինակիցները և թե՛ Մյասնիկյանն ու իր կառավարությունը ձգտում էին Զանգեզուրը միացնել մայր երկրին, բայց այդ միացման դրոշով մի նոր կռիվ էր սկսվում՝ դաժան, արյունալի, եղբայրասպան:

Զանգեզուրի դեմ առաջինը շարժվեցին զորքերի Երևանյան խմբավորման առաջին զորասյան զորամասերը: Դա հունիսի 22-ն էր:

Նախապես գրավելով Վայոց ձորի ռազմաճակատի Քյոմուրլու–Էլփին–Չիվա–Վերին Տանձիկ ռազմագիծը՝ հայկական առաջին բրիգադի զորամասերը հարձակման անցան Դարալագյազի կենտրոն Քեշիշքենդ (Եղեգնաձոր), Ղուրդղուլաղ (Բոլորաբերդ), Ենգիջա (Գանձակ), Սալլի գյուղերի ուղղությամբ:

Հարձակման առաջին օրը Կարմիր բանակի զորքերը հաջողության հասան: Նժդեհի զորամասերը միայն մի քանի անկանոն դիմադրություն ցույց տվեցին, ապա բռնեցին նահանջի ճանապարհը: Այդ օրը բոլշևիկները գրավեցին Վայոց ձորի Ամաղու, Չիվա, Արփա գյուղերը:

Կուռոյի կողմից դեպի Զանգեզուր նահանջող Արարատյան զորքի մեջ մի քանի հարյուր գերի կարմիրբանակայինների մտցնելն իր բացասական հետևանքն ունեցավ: Ինչպես վերևում նշվեց, այդ զինվորներն իրենց բոլշևիկյան քարոզչությամբ ներսից լիովին քայքայեցին Արարատյան զորքի մարտունակությունը: Հետևանքն այն եղավ, որ երբ Վայոց ձորի հարավից խորհրդային մի զորամաս հարձակվեց Արարատյան զորքի վրա, շուրջ 3000 զինվոր ու սպա, բացառությամբ Խնկոյի և Մուկուչի հեծելազորի, իրենց զենքերով հանձնվեցին հարձակվողներին: Այդքան մեծաթիվ ուժերի բոլշևիկների կողմն անցնելու արդյունքում մերկացվեց ռազմաճակատը:

Կարմիրբանակայինների հարձակման առաջին օրվա տպավորիչ հաղթանակը Գորիսի կառավարությանը ստիպեց հակառակորդի հետ զինադա-

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 536, 539:

դարի փորձ անել: Իր համար ստեղծված ծայրահեղ տագնապալի իրավիճակում՝ զորքերի արագ նահանջի պայմաններում, նա այլընտրանք չուներ:

Հունիսի 22-ին տեղի ունեցավ Լեռնահայաստանի կառավարության արտակարգ նիստը, ուր Նժդեհը զեկուցում տվեց ռազմաճակատի դրության մասին, և ինքն առաջարկեց բանակցություններ սկսել Երևանի կառավարության հետ: Պատգամավոր նշանակվեց Գառնիկ Շահինյանը, նրա օգնական՝ Արամ Տեր-Հարությունյանը: Բայց առաջարկը շատ էր ուշացած. բոլշևիկների՝ գործի գցած պատերազմական մեքենան այլևս անհնար էր կանգնեցնել:

Հունիսի 23-ի լուսաբացին հայկական Կարմիր բանակի զորամասերը նոր թափով շարունակեցին հարձակումը: Զանգեզուրյան զորամասերը, թույլ դիմադրություն ցույց տալով, դարձյալ նահանջեցին: Կարմիր բանակի զորքերը նույն օրը երեկոյան կողմ մտան Քեշիշքենդ (Եղեգնաձոր), Գանձակ, Բաշքենդ (Վերնաշեն), Ղոյթուր (Գետափ), Օրթաքենդ (Գլաձոր) գյուղերը[1]: Միայն Քեշիշքենդում կարմիրբանակայինները գերի վերցրին Լեռնահայաստանի բանակի շուրջ 1000 զինյալ, այդ թվում՝ 10 սպա, գրավեցին գնդացիրներ, հրացաններ, մեծաքանակ զինամթերք[2]:

Առաջին բրիգադի մյուս զորամասերը նույն օրը՝ հունիսի 23-ին, հարձակումը զարգացնելով, գրավեցին Մալիշկա և Սալլի գյուղերը: Զանգեզուրցիները նահանջեցին Գնդեվազ և Հերհեր գյուղերի ուղղությամբ:

Միաժամանակ Ղարանլուղից (Մարտունի) Սելիմի լեռնանցքով և կիրճով Վայոց ձոր իջան հայկական 3-րդ գնդի գումարտակն ու 20-րդ հեծյալ գնդի հեծյալ վաշտը, որոնք Հասանքենդ (Շատին) գյուղում միացան առաջին բրիգադի զորամասերին:

Հունիսի 25-ի առավոտի դրությամբ ռազմաճակատում տիրող վիճակն այսպես է նկարագրված Նորաշենից Ա. Մյասնիկյանին հղած ռադիոգրի մեջ. «Հակառակորդի շարքերում քայքայում է տիրում: Այս գործում խոշոր դեր խաղացին նախորդ կռիվներում գերի ընկած մեր կարմիր զինվորները և դաշնակցականների գրաված վայրերի գյուղացիները: Հակառակորդը տալիս է հարյուրավոր գերիներ, որոնց թիվը հասել է 2000-ի: Մեր կողմն են անցնում զինված ամբողջ մասեր՝ գույքով, ինչպես օրինակ՝ սարք ու կարգով մի բատարեա իր հրամանատարական կազմով և հեռախոսներով: Մեր կողմն է անցել կապավորների վաշտը, որ Քեշիշքենդի առումից անմիջապես հետո կապ հաստատեց Ղոյթուրի հետ: Անվնաս գրավված է Քեշիշքենդի հրետանային պահեստը՝ ամբողջ գույքով: Աղաբեգի 400 հոգուց բաղկացած հեծելազորը կապ է հաստատել մեզ հետ և բանակցություններ է վարում՝ անձնատուր լինելու մասին: ... Բնակչությունը մնացել է իր տեղը և մեր

---

[1] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 100-102:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 25 հունիսի:

զորամասերին ամենուրեք ընդունում է նվագով ու ցնծությամբ»[1]:

Բոլշևիկների կողմից Հերհեր և Գնդեվազ գյուղերը գրավելուց հետո հունիսի 24-ին Յապոնը Վայոց ձորում գտնվող խորհրդային զորքերի հրամանատարությանը հաղորդեց, որ ժամանել է Գորիսի կառավարության ներկայացուցիչը՝ բանակցությունները վերսկսելու առաջարկով:

Գորիսից եկած պատվիրակի և հայկական Կարմիր բանակի ներկայացուցիչների հանդիպումը տեղի ունեցավ Բաշ-Նորաշենում:

Գառնիկ Շահինյանը բերել էր Խորհրդային Հայաստանի կառավարությանն ուղղված Լեռնահայաստանի կառավարության պաշտոնական դիմումը՝ փոխվարչապետ Արշակ Հովհաննիսյանի ստորագրությամբ:

«Դարալագյազի գյուղացիական վերջին ապստամբական շարժումներից անկախ, և ի նկատի ունենալով հայ աշխատավորության կենսական շահերը, Լեռնահայաստանի կառավարությունը երկրորդ անգամ ուղարկում է ընկեր Գառնիկ Շահինյանին՝ ստանալու ընկեր Կարինյանի միջոցով մեզ արված Խորհրդային Հայաստանի պաշտոնական առաջարկը:

Օգտվելով առիթից՝ Լեռնահայաստանի կառավարությունը ուզում է հավատալ, որ ինչպես ինքը, նույնպես և Սովետական Հայաստանի կառավարությունը, կանգնած լինելով հայ տառապյալ և չարքաշ զանգվածների մնացորդների ազատության և նրանց գոյության պաշտպանության տեսակետի վրա, չի խնայի ոչ մի միջոց՝ անելու այն բոլորը, որը կտանի մեր փոխհարաբերությունների բարեհաջող լուծման և տեղիք չի տա ապագա պատմագրին հայ պատմության էջերում դատապարտելու մեր ժողովրդի շահերին անհամապատասխան քաղաքականությունը»[2]:

Ստանալով դիմումը՝ խորհրդային կողմը պատասխանեց, որ այլևս հավատ չի ընծայում Գորիսի առաջարկի նկատմամբ, և ամենից առաջ հետևյալ պատճառներով.

ա) Լեռնահայաստանի կառավարության մեղքով էին ձախողվել Ղալաջուղի բանակցությունները,

բ) նոր բանակցությունների առաջարկ անելով՝ զանգեզուրցիները ցանկանում են ժամանակ շահել և ռազմաճակատում կարգի բերել գործերը,

գ) հանդես գալով բանակցելու առաջարկությամբ՝ նույն օրը զանգեզուրյան զորաջոկատները Մեղրիի ռազմաճակատում՝ Օրդուբադի ուղղությամբ, հարձակում են ձեռնարկել Երևանյան խմբավորման երրորդ զորասյան դեմ, որը դեռ չէր հասցրել մոտենալ Մեղրիի սահմաններին:

Մինչ բանակցությունները Բաշ-Նորաշենում շարունակվում էին, Հայաս-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 26 հունիսի:

[2] Նույն տեղում, 16 հուլիսի:

տանի իշխանություններն անհրաժեշտ միջոցներ էին ձեռնարկում բանակի թիկունքն ամրապնդելու համար: Հայտնի էր դարձել, որ Վրացյանի և Նժդեհի հետախուզական ծառայություններն ամեն ինչ անում են՝ տեղեկություններ ստանալու Կարմիր բանակի զորքերի մասին: Ավելին, այդ ժամանակ՝ հունիսի վերջերին, Թավրիզում կուտակված Երևանից եկած կռվելու ընդունակ գաղթականներին Վրացյանը հորդորում էր վերադառնալ Զանգեզուր ու միանալ Նժդեհին, բայց նրա հորդորները մնում էին անարձագանք[1]: Դրա փոխարեն ավելի քան 4000 փախստական Ջուլֆայի վրայով արդեն վերադարձել էին Հայաստան և շարունակում էին վերադառնալ: Նրանց մեծ մասը տաճկահայեր էին, որոնք ակտիվորեն մասնակցել էին խորհրդային իշխանության դեմ կռվին և չէին ուրանում դա՝ իհարկե զգալով խոր ցավ:

Խորհրդային Հայաստանի կառավարության համար հեշտ չէր հազարավոր մարդկանց հետ բերել հայրենիք, որտեղ տնտեսական պայմանները շարունակում էին մնալ ծայրահեղորեն լարված: Հայաստանը լի էր որբերով ու գաղթականներով: Նորանոր քարավանների վերադարձը մի նոր ծանր բեռ էր դնում հանրապետության իշխանությունների ուսերին: Բայց սկսած գործն ազնիվ էր, ազգանվեր, ուստի կառավարությունը որոշել էր մինչև վերջին փախստականը հայրենադարձնել:

Ջուլֆայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցչությունը՝ Գևորգ Հայրապետյանի գլխավորությամբ, հնարավորություն չուներ բավարար պայմաններում իրականացնելու ներգաղթողների ընդունելությունը: Ջուլֆա–Երևան երկաթգիծը նոր էր բացվել, և դեռ գնացքների երթևեկություն չկար: Ուստի ներկայացուցչությունը ստիպված էր Թավրիզից ոտքով Ջուլֆա հասած, 4-5 օր ճանապարհներին արևից տանջալլուկ, հոգնությունից հյուծված ներգաղթողներին Երևան հասցնել ձեռքի տակ եղած ցանկացած փոխադրամիջոցով՝ վճարելով կառավարությունից իրեն հատկացված սուղ միջոցներից: Ջուլֆայում Երևան մեկնելուն սպասողները ժամանակավորապես տեղավորվում էին վաղուց անշարժացած հատուկենտ վագոններում և խարխուլ շինություններում: Երևանից ուղարկված երկու բժշկի և մեկ բուժակի միջոցով անհրաժեշտ օգնություն էր ցույց տրվում նրանց[2]:

Հունիսի 26-ին Արաքսի այս կողմն անցավ Թավրիզից հետիոտն եկած, մշեցի Քեռու գլխավորած գաղթականների մի նոր մեծ խումբ, որը Պարսկաստանից հայրենադարձության առաջին փուլի վերջին քարավանն էր, որ հասավ Երևան: Եկողները հազիվ էին տեղավորվել գետնին՝ հանգստանալու, և նոր էին սկսել նրանց հաց բաժանել, երբ Երևանից ստացվեց տխուր բոթը. խորհրդային կողմը ստիպված էր խստացնել Պարսկաստանի հետ սահմա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 8 շրջերես:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 2 հունիսի, թիվ 116:

նային ռեժիմը և ժամանակավորապես դադարեցնել փախստականների հայրենադարձությունը:

Հունիսի 27-ին Ա. Մյասնիկյանը Ջուլֆայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյանին հեռագրով խնդրում էր ինչպես Ջուլֆայում, այնպես էլ Պարսկաստանում բոլորին հայտարարել, որ Զանգեզուրից Վայոց ձորի վրա կատարած նոր հարձակման հետևանքով հրամանատարությունը ժամանակավորապես փակել է Պարսկաստանի սահմանը՝ դեպի խորհրդային կողմը սադրիչների թափանցում թույլ չտալու համար: Ափսոսանքով նշելով այդ փաստը՝ Մյասնիկյանը միաժամանակ հույս էր հայտնում, որ «զանգեզուրյան ուժերը ջախջախելուց հետո» շուտով բոլոր փախստականներին թույլ կտրվի վերադառնալ[1]:

Պարսկական սահմանը փակելուց հետո զորքերի Երևանյան խմբավորման հրամանատար Վելիկանովը և ռազմական կոմիսար Կ. Ռատնեկը հունիսի 26-ին Նախիջևանից հեռագիր ուղարկեցին Կովկասյան առանձին բանակի հրամանատար Հեկկերին, պատճենները՝ Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահին և Վրաստանի հեղկոմի նախագահին:

«Նախիջևան, գաղտնի-օպերատիվ: Զանգեզուրի կողմից ռազմական գործողություններ սկսելու կապակցությամբ պարսկական սահմանը պետք է փակվի, ինչը և կատարված է ՀՍԽՀ կառավարության կողմից: Վրաստանի կառավարությունը մինչև այժմ մուսուլմաններին դեպի Պարսկաստան սահմանն անցնելու իրավունքի անձնագիր է տալիս, որով հսկայական վնաս է հասցվում բանակին և պարարտ հող նախապատրաստում լրտեսության համար: Խնդրում եմ Ձեր շտապ հանձնարարականը՝ արգելելու Վրաստանի և Ադրբեջանի սահմաններից պարսկահպատակների ուղևորությունը՝ մինչև զանգեզուրյան օպերացիայի ավարտը»[2]:

Հունիսի 29-ին գնացքով Ջուլֆա հասած 450 գաղթականները վերադարձվեցին Թավրիզ՝ համաձայն Ա. Մյասնիկյանի նամակի՝ ուղղված Ջուլֆայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյանին: Մյասնիկյանի նամակից հետո Ջուլֆայում ստացվել էր նաև Վելիկանովի կարգադրությունը՝ ժամանակավորապես գնացքներում ճանապարհորդներ չվերցնելու մասին[3]:

Անդրադառնալով սահմանի փակման փաստին՝ «Խորհրդային Հայաստան» թերթը գրում էր, որ դրա պատճառը Դարալագյազի վրա զանգեզուրցիների նոր հարձակումն է, որը հնարավորություն չի տալիս երկիր հրավիրել մնացած գաղթականներին: «Դա անհնարին է նախ և առաջ այն պատճառով, որ երբ Դարալագյազում կռիվներ են գնում, մենք չենք կարող պատռել և

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 43, թ. 184:

[2] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 8:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 11:

քայքայել ֆրոնտը: Մյուս կողմից ոչ մի գարանտիա չունենք, որ խաղաղ քաղաքացիների հետ Երևան չեն մտնի նաև հակախորհրդային ուժեր, որոնք կարող են ... հարվածներ հասցնել մեր թիկունքին: Թող Թավրիզում կուտակված հայ գաղթականներն ըմբռնեն, որ նրանց դարձը հետաձգվում է դարալագյազյան նոր կռիվների պատճառով»[1]:

Կարմիր բանակի զորամասերը Վայոց ձորում սրընթաց առաջ էին գնում: Հունիսի 24-ի երեկոյան նրանք գրավեցին Փաշալու և Մարտիրոս գյուղերը, իսկ 25-ին և 26-ին հարմար դիրքավորվեցին հետագա հարձակման համար: Կռիվներում հայկական առաջին բրիգադի զորամասերը ջախջախեցին Լեռնահայաստանի վայոցձորյան խմբավորումը և առաջ շարժվելով՝ ետ գրավեցին հունիսի 15-21-ը թողած տարածքների մեծ մասը: Կարմիրբանակայինները գերի վերցրին բազմաթիվ զինվորների, գրավեցին մեծաքանակ ռազմական ավար՝ 1000-ից ավելի հրացան, 27 գնդացիր, 2 թնդանոթ, 2 ռմբաձիգ, 150 արկղ ռումբ, 50 արկղ ձեռնառումբ, մոտ 20000 փամփուշտ, ռազմական այլազան հանդերձանք[2]:

Հունիսի 27-ին Գ. Նժդեհը Ս. Վրացյանին վշտաբեկ սրտով գրում էր. «Մինչև հոգուս խորքը խոցված եմ, վիրավորված երևանյան զորքերի և հրամանատարության կատարած անլուր դավաճանությունից: Նրանք անաստվածորեն ապտակել են իմ հպարտությունը և առանց դանակի մորթել իմ հավատը»[3]:

Հարձակումը շարունակելով՝ հունիսի 29-ին կարմիր զորամասերը գրավեցին Ջուլ (Արտավան) և Ղուշչի (Կեչուտ) գյուղերը: Զանգեզուրցիների դիմադրությունը կոտրելով՝ նրանք դժվարին վերելքով բարձրացան Բազարչայ գետի վերին հոսանքն օղակող բարձունքները և ամրացան այնտեղ: Դա արդեն Զանգեզուրի սահմանագլուխն էր:

Բազարչայի բարձունքներում ամրանալը նշանակում էր, որ Վայոց ձորը գրավված է: «Մեր զորամասերն արդեն մտել են Զանգեզուր և առաջ են շարժվում»[4],– ասված էր ՀՍԽՀ զինվորական կոմիսարիատի շտաբի հունիսի 27-ի երեկոյան ռազմական հաղորդագրության մեջ: Առջևում Սիսիանն էր:

Վայոց ձորի կոմունիստները, ընդհատակից դուրս գալով, Կարմիր բանակի հրամանատարությանը օգնում էին գավառում վերականգնելու բոլշևիկյան կարգը, հունի մեջ դնելու խորհրդային իշխանության մարմինների գործունեությունը:

Դեռ կռիվները Վայոց ձորում շարունակվում էին, երբ Նախիջևան քաղաքից դեպի Զանգեզուր շարժվեց Կարմիր բանակի Երևանյան խմբավորման

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 26 հունիսի:

[2] Տե՛ս **Ս. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 100-104:

[3] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 343:

[4] «Խորհրդային Հայաստան», 1921, 1 հուլիսի:

երկրորդ զորասյունը: Այդ զորասյունը, ինչպես ասվեց, առաջադրանք ուներ բարձրանալու Նախիջևանի գավառը Զանգեզուրից բաժանող Բիչանակ լեռնապարը, անցնել դրա լեռնանցքով, մարտերով մտնել Սիսիանի շրջան և այնտեղ միանալ Վայոց ձորից եկող զորքերի Երևանյան խմբավորման առաջին զորասյանը:

Նախիջևանից դուրս եկած զորասյան առաջապահ զորամասերն արդեն հունիսի 28-ին Բիչանակ լեռնապարի ստորոտներում էին: Նույն օրը Կարմալինովկա (Բիչանակ) գյուղի մոտ նրանք հանդիպեցին հետախուզության դուրս եկած զանգեզուրյան մի ջոկատի: Կարճատև փոխհրաձգությունից հետո ջոկատը ետ քաշվեց Սիսիանի շրջանի Սալվարդ սարի ուղղությամբ[1], իսկ Կարմիր բանակի զորքերը բարձրացան Բիչանակ սարը: Առջևում Սիսիանի համայնապատկերն էր:

Խորհրդային զորքերի կողմից Դարալագյազի ուղղությամբ Բազարչայի բարձունքներին տիրելը, իսկ Նախիջևանի կողմից Բիչանակ սարի վրա ամրանալը նշանակում էին, որ, ինչպես և սպասելի էր, կատարելապես ձախողվել են զենքի ուժով Դարալագյազը գրավելու և Զանգեզուրում ծայրահեղորեն բարդացած ռազմաքաղաքական դրությունը շտկելու Ս. Վրացյանի կառավարության բոլոր հաշվարկները, որոնք կառուցված են եղել ոչ թե Լեռնահայաստանի ներքին իրավիճակի և նրա շուրջը ստեղծված իրադրության խոր ու բազմակողմանի քննության և սթափ գնահատման, այլ սեփական ռազմական ուժի և բնակչության բարոյահոգեբանական վիճակի մասին չհիմնավորված փաստարկների, ավելորդ լավատեսության և հակառակորդի ուժերի թերագնահատման՝ արդեն ժամանակավրեպ դարձած դատողությունների վրա:

Ռազմական այդ անիմաստ գործողությունը բերեց նոր ավերներ Դարալագյազում, և որ հատկապես ցավալի է, երկու կողմերից խլեց բազմաթիվ հայ մարդկանց կյանքեր: Բայց ոչ միայն այդքանը:

Ինչպես նշվել է նախորդ էջերում, Երևանի կառավարությունը խոստացել էր՝ եթե Զանգեզուրը խաղաղ ճանապարհով միանար Խորհրդային Հայաստանին, նրան տրվելու էր ինքնավարություն՝ ըստ էության պահպանելով նրա պետականության կառույցները: Բայց Գորիսի կառավարությունը ոչ միայն չընդունեց այդ առաջարկը, այլև նախահարձակ եղավ Դարալագյազում՝ դրանով իսկ ի չիք դարձնելով Զանգեզուրի ինքնավարության գաղափարն իսկ: Հիմա այլևս այդ մասին մտածելն ավելորդ էր:

Այժմ՝ դարալագյազյան արկածախնդրության կործանիչ պարտությունից հետո, բոլշևիկներն առանց կանգ առնելու մտան Զանգեզուրի տարածք՝ նպատակ ունենալով լիովին ոչնչացնել Լեռնահայաստանի անկախությունը:

---

[1] Տե՛ս «Ղամարլուից Զանգեզուր (հիշողություններ Հայաստանի քաղաքացիական կռիվներից)», էջ 128-130:

Երբ Կարմիր բանակի զորամասերն արդեն Սիսիանի շրջանի մատույցներում էին, այդ նույն ժամանակ արյունահեղ կռիվներ էին բորբոքվել Գենվազի շրջանում:

Հունիսի 23-ին Երևանյան խմբավորման երրորդ զորասյունը Նախիջևան–Օրդուբադ–Մեղրի գծով շարժվել էր Գենվազի վրա: Այստեղ զանգեզուրցիները նախապես խիստ ամրացրել էին իրենց դիրքերը և նախապատրաստվել ուժեղ դիմադրության: Բացի Լեռնահայաստանի վաշտերից՝ այստեղ էր նաև տաճկահայ փախստականներից կազմված մի ջոկատ՝ խմբապետ Մուշեղ Ավետիսյանի հրամանատարությամբ, որի օգնականն էր խմբապետ Ղազար Քոչարյանը:

Երբ Կարմիր բանակի զորամասերը մոտեցան Գենվազի սահմաններին, Նժդեհի դիրքապահ զորաջոկատները, պաշտպանվելու փոխարեն, հունիսի 25-ին Մեղրի գյուղի ուղղությամբ նախահարձակ եղան և գրավեցին Ալանգյազ սարի մի բարձունքը: Հաջորդ օրը՝ հունիսի 26-ին, խորհրդային 178-րդ գունդը հակահարձակման անցավ, և զանգեզուրյան ջոկատները ստիպված նահանջեցին ելման դիրքերը: Երեկոյան կողմ գունդը ետ գրավեց բարձունքը:

Մեկ օր անց՝ հունիսի 27-ին, զանգեզուրցիները Գենվազից նոր, բավականին ուժեղ հարձակում ձեռնարկեցին Օրդուբադի ուղղությամբ, բայց մի քանի ժամ տևած համառ մարտերից հետո ստիպված եղան դադարեցնել հարձակումը: Խորհրդային զորամասերի ճնշման տակ ետ քաշվելով՝ նրանք ամրացան Գենվազի արևմտյան լեռնալանջերում:

Ամեն ինչից երևում էր, որ զանգեզուրցիները հեշտությամբ չեն տալու Գենվազի մատույցները: Նրանք ձգտում էին ամեն գնով իրենց ձեռքում պահել Գենվազը, քանի որ այն Զանգեզուրի թիկունքն էր: Տվյալ պահին Գենվազը նրանց համար շատ կարևոր էր նրանով, որ այնտեղով էր անցնում դեպի Պարսկաստան նահանջի ճանապարհը:

Իրենց հերթին Կարմիր բանակի Երևանյան խմբավորման առաջին զորասյան զորամասերը, առաջ շարժվելով և իջնելով Սիսիանի շրջանը Վայոց ձորից բաժանող բարձունքներից, ճնշեցին դրանց ստորոտներում դիրքավորված գնդացրային կետերը, իջան հովիտ և գրավեցին ռուս մոլոկանների Բազարչայ գյուղը: Նժդեհի զորամասերն արագ նահանջում էին՝ մտադրություն չունենալով ամրանալու նոր դիրքերում:

Կարմիր բանակի զորքերի արագ հաղթանակը Վայոց ձորում և նրանց ոտք դնելը Զանգեզուրի հողի վրա տագնապի էին մատնել Գորիսի կառավարությանը, նաև խուճապահար արել Զանգեզուրին հարևան քրդական շրջանների ղեկավարներին, որոնք Նժդեհին առաջարկեցին Սիսիանի Մուխուրթուրյան գյուղում բանակցություններ սկսել Լեռնահայաստանի կառավարության և Հաջիսամլուի քրդերի ներկայացուցիչների միջև՝ բոլշևիկների դեմ համատեղ կռվելու և նրանց առաջխաղացումը դեպի Զանգեզուր և Քուր-

դիստան կանգնեցնելու համար: Այդ դիմումն անհետևանք մնաց, որովհետև զանգեզուրյան ուժերը հապճեպ նահանջեցին Մուխուրթուրյանից. ժամանակ անգամ չկար մտածելու քրդերի պարագլուխների հետ բանակցություններ սկսելու մասին[1]:

Ինչ խոսք, զանգեզուրյան ուժերի արագ պարտությունը բնավ ձեռնտու չէր քեմալական թուրքերին. նրանք կցանկանային, որ եղբայրասպան կռիվներն էլ ավելի արյունահեղ բնույթ ստանային, և հայերը, որքան հնարավոր է, ավելի շատ իրար կոտորեին: Քեմալականները լավ էին պատկերացնում, որ եթե Զանգեզուրն իսկապես անցներ Խորհրդային Հայաստանին, ապա այն գլխացավանք էր առաջ բերելու թուրքերի համար՝ Ադրբեջանի թուրքերին կտրելով Անատոլիայի թուրքերից: Թեև իրենց մտավախությունը քեմալական բարձրաստիճան պաշտոնյաները բարձրաձայն չէին արտահայտում, բայց այդ միտքը կարմիր թելի նման անցնում էր Հայաստանում ծավալված կռիվները լուսաբանող Անատոլիայում լույս տեսնող թերթերի հոդվածներում:

Կարելի է ենթադրել, որ թուրքական մամուլի այդ հրապարակումների վրա էր հենվել Կ. Պոլսում լույս տեսնող «Երկիր» թերթը, որը գրել էր, թե, ամենայն հավանականությամբ, քեմալականները ռազմական օգնություն են ցույց տալիս Նժդեհին: «Երկրի» այդ հոդվածին անմիջապես արձագանքեց պաշտոնական Անկարան՝ դաշնակից ռուս բոլշևիկյան կառավարության մոտ առաջանալիք կասկածները փարատելու համար: Քեմալական կառավարության անունից Արևմտյան ճակատի հրամանատարը հեռագիրը հղեց Ռուսաստանում, Վրաստանում և Ադրբեջանում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչներին:

«Մոսկվա՝ Ալի Ֆուադ փաշային,
Թիֆլիս՝ Հուսսամեդդին բեյին,
Բաքու՝ Մեմդու Շևքեթ բեյին.

Կոստանդնուպոլսում լույս տեսնող հայկական «Երկիր» թերթի հուլիսի 14-ի համարում լույս տեսած հաղորդումը, թե Զանգեզուրի հրամանատար Նժդեհը համառորեն ձգտել է աջակցություն ստանալ թուրքական արևելյան բանակի հրամանատարությունից և որ, իբր, թուրքական իշխանությունները գաղտնի օգնություն և աջակցություն են ցույց տվել զանգեզուրյան դաշնակներին, բացարձակապես զուրկ է որևէ հիմքից և ամբողջովին հանդիսանում է չարանենգ հերյուրանք: Մենք դա հերքում ենք կտրականապես:

Արևելյան ռազմաճակատի հրամանատար՝
Քյազիմ Կարաբեքիր»[2]:

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 181:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 259ա:

Երբ բոլշևիկյան ուժերը պատրաստվում էին Սիսիանի տարածք մտնել, իրենց հերթին Նախիջևանից թուրքերը հարձակվեցին շրջանի արևմտյան հայկական գյուղերի վրա՝ նպատակ ունենալով օր առաջ՝ մինչև այդտեղ Կարմիր բանակի զորքերի հասնելը, գրավել և քշել հայ բնակչությանը: Ուստի հայկական այդ գյուղերն ուժգին դիմադրություն ցույց տվեցին հարձակվող թուրք ուժերին այնքան ժամանակ, մինչև որ Բազարչայի կողմից Սիսիան մտան բոլշևիկների՝ հայերից կազմված զորամասերը[1]:

Նժդեհն անցավ Սիսիան: Գյուղերում ունեցած հանդիպումների ժամանակ գյուղացիները չէին թաքցնում, որ զրկված են կռիվը շարունակելու հնարավորությունից: «Հրացաններից օգտվել չպիտի կարողանանք, որովհետև ռազմամթերք չունենք,– ասում էին նրանք,– իսկ մանգաղից չենք կարող չօգտվել, որովհետև սովն սկսել է իր ավերածությունները»[2]:

Միանգամայն հասկանալի, ըմբռնելի էր գյուղացիների տրտունջը, բայց տրտնջում էին կարծես թե մեղք գործելով, կիսաձայն ու գլխիկոր: Առաջվա նման նրանք հպարտ էին իրենց լեռների պես, բայց տանը մեռնում էին սովից հյուծված երեխաները: Հացի նոր բերքը դեռ չէր հասունացել, իսկ անցյալ տարվա պաշարից ոչինչ չէր մնացել: Քաղցած Լեռնահայաստանի դիմաց ամբողջ հասակով կանգնած էր ավերիչ սովը՝ ոսկրոտ ձեռքերով ու մահացու մանգաղով:

Կռիվը շարունակելու դեպքում Լեռնահայաստանի կառավարությունը հարկադրված պիտի լիներ դաշտային աշխատանքներից կտրել ժողովրդի ակտիվ տարրերին, շարունակել նրանց պահել զենքի տակ, այլ խոսքով՝ Սյունիքի անկախությունը մի որոշ ժամանակ ևս պահել հնարավոր էր՝ հարյուրավոր մարդկանց կործանման գնով: Ստեղծված քաղաքական ընդհանուր դրության պայմաններում դա դառնում էր անհնարին:

Սիսիան անցած Նժդեհը, այնտեղ թողնելով կառավարության անդամ Սմբատ Եղիազարյանին, շտապ վերադարձավ Կապան: Սպարապետի համար պարզ էր, որ եթե Սյունիքի ուժերը թողնեին Սիսիանի շրջանը, ապա կարմիրբանակայինները հեշտությամբ գրավելու էին նաև Դարաբասի ձորի գյուղերը, Տաթևի ենթաշրջանը և բուն Զանգեզուրը: Ուստի նա Կապան էր շտապում՝ միջոցներ ձեռնարկելու գոնե այնտեղ կանգնեցնելու բոլշևիկների առաջխաղացումը: Այդ նպատակով Սպարապետը Կապանում մասնակի զորահավաք կատարեց և Գերասիմ Աթաջանյանի գլխավորությամբ մի հեծյալ ջոկատ ուղարկեց Սիսիան՝ դանդաղեցնելու Կարմիր բանակի զորամասերի առաջխաղացումը: Իսկ ինքը, իր հետ առած կապանցիներից կազմված մի ջոկատ, այնտեղից հարձակվեց Բարգուշատի բարձունքների վրա, որտեղ քոչվորների անվան տակ կուտակվել էին բոլշևիկյան ուժեր՝ Գորիսի կողմից

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, 12 (36), էջ 133:

[2] Նույն տեղում, էջ 131-132:

դեպի Կապան զանգեզուրյան ուժերի նահանջի դեպքում նրանց թիկունքին հարվածելու համար: Ցրելով այդ ուժերը՝ նա մի քանի տասնյակ կապանցի զինվորների հետ հունիսի 29-ին անցավ Տաթև:

Դրանից երկու օր առաջ, ինչպես ասվեց, ակտիվ գործողություններ ծավալելով Բիչանակ սարի կողմից՝ Երևանյան խմբավորման երկրորդ զորասյան զորամասերը մտել էին Սիսիանի տարածքը:

Դեռ մինչ Բիչանակ սարը բարձրանալը, այսինքն՝ մինչև Սիսիանի սահմանագլուխ հասնելը, նույնանուն լեռնանցքի՝ Նախիջևանի կողմից ստորոտում գտնվող ռուս մոլոկանների Կարմալինովկա գյուղի մոտերքում Կարմիր բանակի զորասյանը միացավ Սիսիանի ռուս մոլոկան գյուղացիներից կազմված ջոկատը, որի անդամները, ժամանակին խուսափելով պատիժներից, ապաստան էին գտել լեռներում: Ջոկատը ուղեկցողի դեր կատարեց: Լավ իմանալով տեղանքը՝ ռուս մոլոկանները Կարմիր բանակի զորամասերին առաջնորդում էին հարմար տեղերով, հրամանատարներին տալիս արժեքավոր տեղեկություններ ու խորհուրդներ: Բիչանակի լեռնանցքն անցած 180-րդ գունդը հունիսի 29-ի առավոտյան սկսեց հետապնդել Սալվարդ սարի ուղղությամբ նահանջող զանգեզուրյան ջոկատին:

Նույն օրը՝ հունիսի 29-ին, զորքերի Երևանյան խմբավորման առաջին և երկրորդ զորասյուները հարձակում սկսեցին Վայոց ձորից Ղարաքիլիսա և Նախիջևանից Ղարաքիլիսա տանող խճուղիների հատման վայրում գտնվող, բնական կարևոր դիրք ունեցող Անգեղակոթ գյուղի ուղղությամբ: Չնայած զանգեզուրյան զինյալներն ամրացված կետերից գնդացրային ուժեղ կրակի տակ էին առել անցուղիները, սակայն կարճատև ընդհարումից հետո ստիպված էին գյուղը հանձնել կարմիրբանակայիններին:

Այսպիսով՝ հունիսի 29-ին Անգեղակոթ գյուղում միացան Երևանյան խմբավորման առաջին զորասյան՝ Վայոց ձորից Սիսիան և երկրորդ զորասյան՝ Նախիջևանից Սիսիան արշավող զորամասերը:

Սալվարդ սարի ստորոտներով առաջ շարժվելով և կոտրելով նահանջող զանգեզուրյան ջոկատների թույլ դիմադրությունը՝ այդ օրվա երեկոյան կարմիրբանակայինները գրավեցին Մազրա (Բարձրավան) և Շաղաթ գյուղերը: 4-րդ հրաձգային առաջին և երկրորդ գումարտակները, առանց դիմադրության հանդիպելու, մտան Աղքենդ (Աշոտավան), Բնունիս, Տոլորս:

Նժդեհի՝ Սիսիանում մնացած զորամասերը, Զանգեզուրի արևմտյան ճակատի հրամանատար Կուռո Թարխանյանի գլխավորությամբ կենտրոնանալով Ախլաթյան գյուղի արևելյան բարձունքների անտառապատ փեշերին, սպասում էին Գորիսից խոստացված օգնությանը: Վերջապես հունիսի 30-ի լուսաբացին նրանց միացավ Կապանից եկած հեծյալ հարյուրյակը՝ Գեբասիմ Աթաջանյանի գլխավորությամբ: Նույն օրը՝ վաղ առավոտյան, նրանք միացյալ ուժերով հարձակվեցին Ախլաթյան գյուղի վրա, որը գրավվել էր հայկական 4-րդ հրաձիգ գնդի կողմից: Չորս ժամ տևած մարտում Կուռոյի և

Գերասիմի զորամասերը պարտություն կրեցին և բռնեցին նահանջի ճանապարհը:

Գորիսի կառավարությունը Զանգեզուրի արևմտյան ռազմաճակատի զորքերի հրամանատարությանը կարգադրեց ամեն գնով դիմադրել հարձակվող Կարմիր բանակի զորքերին: Սիսիանի տարածքում հաջող դիմադրություն կազմակերպելու համար կառավարությունը մի շարք շտապ միջոցներ ձեռնարկեց նահանջող զորքերի թիկունքն ամրապնդելու նպատակով:

Կառավարության հանձնարարականներով խիստ պատիժների էին ենթարկվում հատկապես կոմունիստները և նրանց համակիրները, որոնք թիկունքում աշխատանք էին տանում՝ նպաստելու խորհրդային զորքերի հաղթանակին և զանգեզուրցիների պարտությանը: Պատիժներից զերծ չէին մնում նաև կոմունիստների ընտանիքները, մերձավոր հարազատները:

Բայց խստագույն պատիժներն այլևս չէին կարող փրկել դրությունը, ուստի զանգեզուրյան իշխանությունները կրկին դիմեցին քարոզչությանը: Կացիններով եկող բոլշևիկների մասին «հավաստի» լուրեր էին պտտվում բնակչության շրջանում, լուրեր այն մասին, թե ամբողջ Հայաստանում Արտակարգ հանձնաժողովը (ՉԿ) Զանգեզուրի դեպքերի առթիվ հարյուրավոր ձերբակալություններ է կատարել, և ձերբակալվածների մեծ մասը զանգեզուրցիներ են:

Խորհրդային Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շավարշ Ամիրխանյանի և ՀՍԽՀ Կարմիր բանակի հատուկ բաժնի պետ Մելիք-Հովսեփյանի ստորագրությամբ հունիսի 27-ին լույս տեսավ թիվ 12 հրամանը, որով հերքվում էին տարածված լուրերը:

«Սրանով հայտարարվում է ի գիտություն բոլորին,– ասված էր հայտարարության մեջ,– որ Զանգեզուրի դեպքերի առթիվ ձերբակալված է ամբողջ Հայաստանում միայն 43 մարդ, որոնցից 8-ը արդեն արձակված են, իսկ 35 հոգու համար կատարվում է քննություն»[1]:

Սիսիանի գրավումը շարունակվում էր: Դուրս գալով ընդհատակից՝ շրջանի կոմունիստները և նրանց համակիրներն ակտիվ աջակցություն էին ցույց տալիս այդ տարածքով առաջացող Կարմիր բանակի զորքերին: Նրանք թափանցում էին Նժդեհի զորամասերը, հետախուզական աշխատանք կատարում, հավաքում կարևոր տեղեկություններ և հայտնում խորհրդային հրամանատարությանը, թռուցիկներ և կոչեր էին տարածում ինչպես գյուղացիների շրջանում, այնպես էլ զանգեզուրյան զորաջոկատներում: Զորամասեր թափանցած կոմունիստ քարոզիչները քայքայում էին թիկունքը և ռազմաճակատը: Այդ քարոզչության ազդեցության տակ զանգեզուրյան բանակի առանձին զորամասեր հրաժարվում էին Կարմիր բանակի զորքերի դեմ

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ. 85:

կռվելուց, լքում էին ռազմաճակատը և անձնատուր լինում:

Ռազմաճակատում բոլշևիկյան քարոզչությունը հատկապես կործանարար էր զանգեզուրյան այն զորամասերի համար, որոնցում հավաքագրված էին շրջակա գյուղերի գյուղացիները: Շինել հագած ռանչպարները, տեղական դիրքապահ զինվորները զանազան պատրվակներով թողնում էին դիրքերը և ցրվում գյուղերը:

Գորիսի կառավարության անդամներից մեկը գրում էր, որ «զինվորների մեջ տիրում է բոլշևիկյան տրամադրություն և դրանով վարակված են գլխավորապես ախլաթյանցիները»[1]: Մի ուրիշը վկայում էր. «Զորքը (զանգեզուրյան: – *Ա. Ա.*) լսելով նահանջի հրամանը՝ հանկարծակիի է գալիս, և փոխանակ նահանջելու, խումբ-խումբ անձնատուր է լինում թշնամուն»[2]:

Արևմտյան ռազմաճակատում զանգեզուրյան զորքերի քայքայումն արագացավ հատկապես այն բանից հետո, երբ այնտեղ լուրեր հասան, թե շուտով Կարմիր բանակը Զանգեզուրի վրա հարձակվելու է նաև արևելքից՝ Ադրբեջանի կողմից:

Դեռևս Բաշ-Նորաշենում գտնվող Կարմիր բանակի ներկայացուցիչներ Միրիմանյանը և Ենոքյանը, գալով Գնդեվազ, Խորհրդային Հայաստանի կառավարության լիազորությամբ նրա ներկայացուցիչներ Գ. Չուբարյանի և Մարգարյանի միջոցով հունիսի 30-ին Հերհերում գրավոր հայտարարություն հանձնեցին Գ. Շահինյանին՝ Լեռնահայաստանի կառավարությանը փոխանցելու համար: Այնտեղ ասված էր, որ Վայոց ձորի Կարմիր բանակի զորքերի վրա Նժդեհի և Յապոնի հանկարծակի հարձակումը կատարվեց հենց այն ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչը Լեռնահայաստանի կառավարության գիտությամբ պիտի հանդիպեր վերջինիս ներկայացուցչի հետ՝ Խորհրդային Հայաստանի կառավարության խաղաղության առաջարկները հանձնելու նպատակով: Զանգեզուրի զորքերի հարձակումը ընդհատեցին խաղաղության բանակցությունները և պատճառ դարձան ծավալվող ռազմական գործողությունների: Ուստի այդ պայմաններում խաղաղության երկարաձիգ նոր բանակցություններ վարելը հանցանք կլիներ Հայաստանի աշխատավոր զանգվածների համար, որի շահերն իր բանվորագյուղացիական կառավարությունից տիրաբար պահանջում էին արագ և վճռական կերպով վերջ դնել ռազմական դրության կորստաբեր վիճակին և հեռու վանել հարձակման մշտական սպառնալիքը:

Նամակ-վերջնագրում նշվում էր, որ Վայոց ձորի գյուղացիության համակրանքը ամբողջովին խորհրդային իշխանության կողմն էր, այն գյուղացիության, որի զգալի մասը Կարմիր բանակի զորքերի նահանջի ժամանակ

---

[1] **Զ. Աշխատունի,** Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, թիվ 11, էջ 84:

[2] Նույն տեղում:

նրանց հետ հեռացել էր, իսկ մյուս մասը՝ Վայոց ձորը, այդ նույն զորքերի կողմից վերագրավելու ժամանակ խանդավառությամբ ընդունել էր նրանց վերադարձը՝ իբրև ազատարարների:

Հաշվի առնելով այդ ամենը և, վերջապես, լավ տեղյակ լինելով նաև Զանգեզուրի գյուղացիության իսկական տրամադրություններին՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը հաստատ և անշեղ կերպով վճռել էր կարճ ժամանակում վերջ դնել Զանգեզուրում գոյություն ունեցող դրությանը:

Նամակի վերջում ասված էր. «Այս ամենը Ձեր գիտությանը հայտնելով, Խորհրդային Հայաստանի կառավարության լիազորությամբ հայտարարում ենք Ձեզ, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ուրախ կլիներ, եթե Դուք, հաշվի առնելով բոլոր վերև նշված հանգամանքները, ապա նաև սարսափելի պատասխանատվությունը Հայաստանի աշխատավորության առաջ՝ անմիջապես առաջարկեիք Ձեր հրամանատարությանը զենքը վայր դնել և հնարավորություն տալ Զանգեզուրի աշխատավորությանը կցվելու իր սոցիալիստական հայրենիքին և դրանով իսկ վերջ դնել հետագա անիմաստ դիմադրության»[1]:

Լեռնահայաստանի պատվիրակ Գ. Շահինյանը, ստանալով խորհրդային կողմի գրավոր հայտարարությունը, Հերհերից շտապ վերադարձավ Գնդեվազ, որտեղ հանդիպեց բրիգադի զինկոմ Ենոքյանին և նրան խնդրեց իրեն ազատել ծրարը տեղ հասցնելու պարտականությունից՝ ասելով նաև, որ ընդհանրապես հրաժարվում է վերադառնալ Գորիս:

Զինկոմ Ենոքյանը անմիջապես ռադիոյով կապվեց Երևանի հետ և կառավարությանը տեղյակ պահեց այդ մասին: Սակայն Երևանում նպատակահարմար չհամարեցին Գ. Շահինյանի՝ Գորիս վերադառնալուց հրաժարվելը՝ նկատի առնելով երկու հանգամանք. 1. Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից արված Գորիս տարվելիք հայտարարությունը գուցե այս անգամ ազդեր Լեռնահայաստանի կառավարության վրա, և դադարեցվեր հետագա դիմադրությունը: 2. Դաշնակցականներն ավելորդ հնարավորություն կստանային քարոզելու, թե խորհրդային կողմը բռնություն է գործադրել Գորիսի պատվիրակի վրա և դրանով իսկ խախտել նրա անձեռնմխելիության մասին դիվանագիտական տարրական նորմը:

Ելնելով դրանից՝ կառավարությունը Ժողկոմխորհրդի քարտուղար Ղարաբեկյանի ստորագրությամբ Գենվազ է ուղարկել հետևյալ հեռախոսագիրը. «Զանգեզուրի կառավարության պատգամավորները պետք է վերադառնան և հաշիվ* ներկայացնեն իրենց իշխանությանը: Նրանց առաջարկեցեք անմիջապես վերադառնալ: Վերադառնալուց կտրականապես հրաժարվելու դեպքում հարկավոր է նրանցից վերցնել պատասխան և գրավոր բա-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 24:

* Տեքստում այդպես է, պետք է կարդալ՝ հաշվետվություն:

ցատրություն՝ չվերադառնալու պատճառների մասին: Բացատրության պատասխաններն ... ուղարկել Երևան: Պետք է պահանջել, որ պատգամավորները վերադառնան ետ՝ իրենց կառավարության մոտ»[1]:

Ելնելով Երևանից ստացված պատասխանի տրամադրությունից՝ Ենոքյանը Գ. Շահինյանին խնդրել է խորհրդային կողմի հայտարարության տեքստը Գորիս հասցնել որքան հնարավոր է շուտ: Վերջինս ստիպված էր ենթարկվել Երևանից եկած հրահանգին և իր ընկերոջ՝ Արամ Տեր-Հարությունյանի հետ մեկնել Գորիս: Հասնելով Սիսիանի Շաղաթ գյուղ, որը նախօրյակին գրավել էին կարմիրբանակայինները, նրանք ուզում էին շարունակել ճանապարհը, բայց գյուղում հերթապահող պարեկները նրանց ստուգելուց հետո առաջնորդել են գնդի զինկոմ Մայերի մոտ, որը Շահինյանից պահանջել է ցույց տալ իր վկայականն այն մասին, որ ինքը Գորիսի կառավարության պաշտոնական պատվիրակն էր, և որ այդ բանը հաստատում էր խորհրդային կողմը: Վերջինս չուներ նման փաստաթուղթ և բացատրում էր, որ Գորիսում չեն տվել պահանջվող վկայականը: Հավատ չընծայելով նման բացատրությանը՝ զինկոմը կարգադրել է փոխել ճանապարհը և Բիչանակի լեռնանցքով մեկնել Նախիջևան և ներկայանալ Կարմիր բանակի նախիջևանյան խմբավորման պետ Վելիկանովին ու խմբավորման զինկոմին:

«Ես Շաղաթում հրաժարվեցի թե՛ Նախիջևան գնալուց և թե՛ ծրարը Զանգեզուր տանելուց, բայց հնար չեղավ»[2],– գրել է Շահինյանը:

Երկու կարմիրբանակայինների ուղեկցությամբ նա և իր օգնական Տեր-Հարությունյանը ստիպված մեկնել են և հուլիսի 4-ին հասնել Նախիջևան: Այստեղ ուղեկցող կարմիրբանակայինները նրանց ներակայացնել վերոհիշյալ հրամանատարներին: Այդ պահին նրանց հետ էր Նախիջևան եկած Ժողկոմխորհրդի անդամ Պողոս Մակինցյանը, որը հաստատել և վավերացրել է Շահինյանի լիազորությունը և Հայաստանի Ժողկոմխորհրդի քարտուղար Ղարաբեկյանի պատասխանի իսկությունը: Նախիջևանի խմբավորման պետի միջոցով Շահինյանը կապվել է Երևանի հետ և խնդրել կազմակերպել իր հանդիպումը Ա. Մյասնիկյանի հետ՝ քննարկելու համար զինադադարի հարցը: Երևանից պատասխանել են, որ զինադադարի մասին այլևս խոսք լինել չի կարող, որ «մեր պատասխանը տրված է, և պատգամավորությունը պետք է մեկնի ու Խորհրդային Հայաստանի պատասխանը հասցնի Զանգեզուրի կառավարությանը»[3]:

Բայց Շահինյանն անդրդվելի է մնացել և կտրականապես հրաժարվել է մեկնել Գորիս: Խորհրդային կողմն այդ հրաժարմանն այլևս նշանակություն չի տվել՝ մտածելով, որ Կարմիր բանակի զորամասերն այնպիսի արագու-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 16 հուլիսի:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

թյամբ են առաջ գնում, որ եթե Լեռնահայաստանի պատվիրակը հասնի Գորիս, այնտեղ այլևս չի գտնի Զանգեզուրի կառավարությանը:

Գ. Շահինյանը, այնուամենայնիվ, նպատակահարմար է գտնել Նախիջևանից Լեռնահայաստանի կառավարությանը հղել մի նամակ՝ թվագրված հուլիսի 6-ին, որն իր բովանդակությամբ ավելի շուտ բոլշևիկների կողմից հետագայում սպասվելիք վտանգներից փրկվելու միջոց (ալիբի) էր և «արդարացում պատմության առաջ»: Նա գրում էր, որ գալով Դարալագյազ, ապա նաև Նախիջևան՝ ինքը համոզվել է, որ խորհրդային իշխանությունը պաշտպանում էր աշխատավորության շահերը, և նրա դեմ Դարալագյազում զենքով դուրս գալն արկածախնդրություն էր: Դատապարտելով «արարատյան աշխատավորության» բախտի հետ խաղալը՝ նա նշում էր. «Իմ խորին համոզմունքն այն է, որ բավական է հայ աշխատավորությանը դնել զենքի տակ, նրան կտրել խաղաղ ստեղծագործ աշխատանքից», պետք է պատասխանատու լինել ժողովրդի «թափած արյան համար», «պետք է վարել ռուսական խորհրդային օրիենտացիա, որովհետև աշխատավորության փրկությունը դրա մեջ է»: Զինադադարը չհաջողվեց, և դա նոր դժբախտությունների դուռ բացեց: Բացատրելով, թե ինչու ինքը չի ուզում վերադառնալ Գորիս, նա գրում էր. «Ես չեմ կարող իմ երիտասարդ կյանքը ներկել իմ ժողովրդի արյունով», «չեմ ուզում այլևս իմ կամքի և համոզմունքի հակառակ լինել ..., մի գործի մասնակից, որին վաղուց դեմ եմ իմ համոզմունքներով»[1]:

Հետևելով Գ. Շահինյանի օրինակին՝ հաջորդ օրը՝ հուլիսի 7-ին, Արամ Տեր-Հարությունյանը Լեռնահայաստանի փոխվարչապետ Արշակ Հովհաննիսյանի և սպարապետ Կուռոյի անունով ուղարկել է հետևյալ երկտողը. «Հայտնում եմ ձեզ, որ ես իմ ազատ կամքով չվերադարձա և մնում եմ աշխատելու Խորհրդային Հայաստանում»[2]:

Իսկ կռիվները Սիսիանի տարածքում դեռ շարունակվում էին: Զանգեզուրյան հրամանատարությունը մեծ ջանքեր էր գործադրում վիճակը Սիսիանում կարգավորելու համար, բայց դա նրան չէր հաջողվում: Հունիսի 30-ին զանգեզուրյան մի մեծ ջոկատ՝ Գորիսի կառավարության ներքին գործերի նախարար Մելիք-Յոլչյանի հրամանատարությամբ, Ղարաքիլիսայից դեպի հյուսիս ընկած սարերի փեշերին փորձեց փակել Կարմիր բանակի զորքերի առաջխաղացման ճանապարհը, բայց հաջողություն չունեցավ: Կարճատև հրաձգությունից հետո ջոկատը նահանջեց Գորիսի շրջանին սահմանակից Վաղուդի գյուղի ուղղությամբ:

Կռիվը շարունակե՞լ, թե՞ ոչ. այս հարցն էր կանգնած Սյունիքի զինյալների առջև և հրամայաբար պատասխան էր պահանջում:

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 16 հուլիսի:

[2] Նույն տեղում:

Արդեն հունիսի վերջին Նժդեհը մտածում էր կռիվը դադարեցնելու և Լեռնահայաստանի խորհրդայնացման մտքի հետ հաշտվելու մասին: Բայց կար մի հանգամանք, որ բացառում էր այդ հնարավորությունը: Խոսքն այն մասին է, որ Կարմիր բանակի զորքերին հրաման էր տրված ամեն գնով փակել Սյունիքից դեպի Պարսկաստան տանող ճանապարհը և անպայման գերել Փետրվարյան ապստամբության և Լեռնահայաստանի գոյամարտի ղեկավար գործիչներին: Եթե խորհրդային կողմը այդ ճանապարհը թողներ բաց ու անվտանգ, ապա Զանգեզուրում, ամենայն հավանականությամբ, դիմադրությունը կդադարեցվեր արդեն հունիսի վերջերին: Բայց բոլշևիկների անզիջում դիրքը Սյունիքի զինյալների մի մասին ստիպում էր կռիվը շարունակել դատապարտվածի համառությամբ:

Հուլիսի 1-ին Երևանյան խմբավորման առաջին և երկրորդ զորասյուները միացյալ գործողություններ ծավալեցին Սիսիանի կենտրոն Ղարաքիլիսան գրավելու համար: Մի քանի ժամվա ընթացքում խորհրդային զորքերը մտան Ղալաջուղ, Ղարաքիլիսա և Ուզ գյուղերը: Զանգեզուրյան զորամասերը բարձրացան Յայջի և Դարաբաս գյուղերի սարերը:

Նույն օրը՝ հուլիսի 1-ին, Նժդեհը Տաթևի վանքից հետևյալ գրությունն է գրել Սիսիանում գտնվող ՀՀ նախարար Եղիազարյանին և Կուռո Թարխանյանին. «Պաշտոնապես հայտնեցեք Խորհրդային իշխանության Սիսիանում գործող զորամասի հրամանատարին հետևյալը. «Լեռնահայաստանի կառավարությունը խնդրում է Ձեզ տեղեկացնել, թե որտե՞ղ և ի՞նչ վիճակում է գտնվում Լեռնահայաստանի կառավարության ներկայացուցիչ Գառնիկ Շահինյանը, որ տարել է Լեռնահայաստանի կառավարության սույն թվի հունիսի 24-ին գրած թիվ 1437 գրությունը՝ հաշտության բանակցությունների մասին: Մեր կառավարությունը խնդրում է մի անգամ ևս հիշեցնել Խորհրդային Հայաստանի Հեղկոմին, որ ցանկանալով վերջ տալ կռիվներին և արյունահեղություններին, մենք պատրաստ ենք սկսել խաղաղության բանակցությունները, հակառակ դեպքում թափվելիք արյան ամբողջ պատասխանատվությունը կընկնի Հայաստանի Հեղկոմի վրա»[1]:

Վաղուդի գյուղի մոտերքում Կարմիր բանակի զորամասերի առաջխաղացումը կանգնեցնելու մի փորձ ևս արվեց, որը նույնպես անհաջողությամբ վերջացավ: Հուլիսի 1-ին խորհրդային զորքերը մտան Վաղուդի:

Այսպիսով՝ Կարմիր բանակի Երևանյան խմբավորման զորամասերի ռազմական գործողությունները Զանգեզուրի մի ընդարձակ տարածքում՝ Սիսիանում, փաստորեն, ավարտվեցին: Ուստի Նժդեհը Կուռո Թարխանյանից կամ Եղիազարյանից Գ. Շահինյանի մասին իր հարցման պատասխանը ստանալու փոխարեն Տաթևում ստացավ կառավարության փոխվարչապետ Ա. Հովհաննիսյանի՝ Գորիսից տված հեռախոսագիրը, որում ասված էր,

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 3, թ. 52-53:

որ Սիսիանն արդեն ամբողջովին գրավված է բոլշևիկների կողմից: Ավելացնենք, որ խորհրդային զորքերի գրաված Սիսիանի գյուղերում անմիջապես վերականգնվում էին խորհրդային իշխանության տեղական մարմինները: Բնակչության մի մասը աջակցում էր նորաստեղծ հեղկոմներին, օգնություն ցույց տալիս Կարմիր բանակի զորամասերին: Զգալի թվով սիսիանցիներ մտան այդ զորամասերի մեջ՝ մասնակցելու Զանգեզուրի մյուս տարածքներում ծավալված ռազմական գործողություններին:

Մի փոքր զորախումբ թողնելով Եռաբլրի սարահարթում՝ Նժդեհը հուլիսի 1-ին շտապեց Գորիս, որտեղ անմիջապես հրավիրեց նախարարների խորհրդի նիստ: Այստեղ որոշվեց թողնել Գորիսը: Նժդեհը բուն Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատարին հայտնեց կայացած որոշման մասին և կարգադրեց. ա) բոլշևիկյան ուժերին դիմադրություն ցույց տալ միայն այն դեպքում, եթե կփորձեն ռուսական զորքերի հետ Սյունիք մտնել նաև թուրք ու թաթար ուժեր, բ) ռուս և հայ զորամասերի դեմ զենք չբարձրացնել:

Նույն օրը՝ երեկոյան դեմ, կառավարության շենքի առջև տարերայնորեն հավաքվեցին հազարավոր գորիսեցիներ, որոնք եկել էին «Նժդեհից մի քանի խոսք լսելու»: Դուրս գալով պատշգամբ՝ Սպարապետը հրաժեշտի վերջին խոսքը մոտավորապես այսպես ուղղեց նրանց. «Ժողովո՛ւրդ, դու վիրավոր ես, բայց ոչ պարտված: Այդ գիտե և թշնամին և դրա համար էլ քեզ հետ պիտի վարվի որպես ոչ պարտվածի: Մարդկային վերաբերմունք դեպի քեզ պահանջում են և թշնամու շահերը: Եթե նա անմտություն ունեցավ կրկնելու իր տխուր անցյալը, եղի՛ր վստահ, որ հունձդ հավաքելուց հետո դարձյալ կտեսնես ինձ քո կողքին»[1]:

Վաղուդի գյուղը գրավելուց հետո Երևանյան խմբավորման զորամասերը բաժանվեցին երկու մասի: Դրանցից մեկը թեքվեց դեպի աջ և մտավ Որոտանի կիրճի Դարաբասի ձորը, իսկ մյուսը շարունակեց հարձակումը Գորիս քաղաքի ուղղությամբ:

Դարաբասի ձորը մտած Կարմիր բանակի զորամասերի ճնշման տակ այնտեղ եղած զանգեզուրյան զորաջոկատները նահանջեցին դեպի Պատպատի բարձունքները: Կրնկակոխ հետապնդելով նրանց՝ հուլիսի 2-ին կարմիրբանակայինները հիշյալ բարձունքներում կռվի բռնվեցին և պարտության մատնեցին այդ զորաջոկատների հիմնական ուժերին: Այնուհետև, առանց դիմադրության հանդիպելու, նրանք գրավեցին Սիսիանի տարածքի վերջին՝ Դարաբաս գյուղը: Նույն օրվա երեկոյան գրավվեց նաև Որոտանի կիրճի ձախ լանջին ընկած Յայջի գյուղը՝ արդեն Գորիսի շրջանի տարածքում: Զանգեզուրյան ջոկատները նահանջեցին Գորիսի շրջանի Տաթև, Տանձատափ և Սևարանց գյուղերի ուղղությամբ:

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 132:

Զորքերի Երևանյան խմբավորման մյուս մասը, որ ուղղություն էր վերցրել դեպի Գորիս քաղաք, մտավ Սիսիանի և Գորիսի շրջանների միջև ընկած Եռաբլրի սարահարթը: Ամրանալով այդ սարահարթում՝ խմբավորման զորամասերը նախապատրաստվեցին մտնել քաղաք:

Այն ժամանակ, երբ Երևանյան խմբավորման զորքերը արևմուտքից արդեն հասել էին Լեռնահայաստանի մայրաքաղաք Գորիսի մատույցներին, այդ նույն ժամանակ արևելքից Լեռնահայաստանի վրա հարձակման վերջին պատրաստություններն էր տեսնում Ղարաբաղ-Զանգեզուրյան խմբավորումը:

Զանգեզուրի գրավման ռազմական օպերատիվ պլանի համաձայն՝ 1921 թ. հունիսի վերջին տասնօրյակում Կովկասյան առանձին բանակի առաջին կորպուսի զորամասերը, որ կազմում էին Ղարաբաղ-Զանգեզուրյան խմբավորման հիմնական ուժերը, սկսել էին կենտրոնանալ Զանգեզուրի արևելյան մատույցներում՝ Քուրդիստանում և սահմանակից մյուս տարածքներում: Հունիսի 25-ին կորպուսը մարտական լիակատար պատրաստության մեջ էր:

Կորպուսի հրամանատար Ա. Տոդորսկին դեռ 1921 թ. հունիսի 27-ին հատուկ հրաման էր տվել զորքերին, որում նշվում էր, որ Զանգեզուրի շուրջն են համախմբվել «Անդրկովկասի բոլոր հակահեղափոխական» ուժերը, որոնք «դանակ են սրում մեր հեղափոխության նվաճումների դեմ»: Նա միաժամանակ հիշեցնում էր, որ Նժդեհի դիմադրությունը «բանակի շարքերից խլեց շատ հերոս մարտիկների» կյանքեր: Դիմելով Կարմիր բանակի զինվորներին ու հրամանատարներին՝ կորպուսի հրամանատարը կոչ էր անում. «Առա՛ջ, կարճատև դաղար Գորիսում և հանգիստ Ղափանում: Զանգեզուրը կլինի կարմիր, քանի որ այդ է որոշել Կարմիր բանակը: Նժդեհը կջախջախվի, քանի որ կարմիրբանակայինի ձեռքը բարձրացել է նրա վրա: Մա՛հ ռսկյա ուսադիրներին, կալվածատերերին ու գործարանատերերին: Կեցցե՛ բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների իշխանությունը՝ իրենց դեպուտատների խորհուրդներով: Կեցցե՛ բանվորա-գյուղացիական Կարմիր բանակը»[1]:

Կովկասյան առաջին կորպուսի հրամանատար Տոդորսկու և կորպուսի զինվորական կոմիսար Ի. Վ. Սվիրիդովի ստորագրությամբ ու կորպուսի շտաբի ռազմաքաղաքական մասի հրատարակությամբ 1921 թ. հուլիսի 1-ին լույս տեսավ «Զանգեզուրյան օպերացիայի գաղափարական բովանդակությունը և մեր տակտիկան» վերնագրով 9 էջանոց գրքույկը (թողարկում թիվ 3)*, որը Լեռնահայաստանի վրա հարձակման նախօրյակին տարածվեց կորպուսի բոլոր զորամասերում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 318, թ. 1:

* Արխիվում պահպանվում է գրքույկի պատճենն այն օրինակի, որը Տոդորսկին նվիրել էր Ս. Օրջոնիկիձեին (տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 317, թ. 1-9):

«Կարմիր բանակի խնդիրները» ենթավերնագրի տակ տրված էր Կարմիր բանակի՝ իբրև աշխատավոր զանգվածներից սերված ուժի բնութագիրը, բացահայտված էին դասակարգային պայքարում նրա հետապնդած նպատակները, ցույց էին տրված ներքին՝ սպիտակգվարդիական հակահեղափոխական ուժերից և արտաքին՝ իմպերիալիստական ոտնձգություններից խորհրդային բանվորագյուղացիական իշխանությունը պաշտպանելու գործում նրա դերն ու նշանակությունը:

«Զանգեզուրյան օպերացիայի գաղափարական բովանդակությունը» ենթավերնագրի տակ տրված էր Դաշնակցություն և Մուսավաթ կուսակցությունների գնահատականը. նշված էր, որ դրանք երկուսն էլ անցյալում նողկալի դեր են խաղացել հայ և մուսուլման ժողովուրդների կյանքում, նրանց գրգռել են իրար դեմ, սերմանել թշնամանք ու ատելություն, որի տրամաբանական հետևանքը եղել են տարիներ տևած փոխադարձ կոտորածները: Իբրև մշտահարձակ կողմ՝ գրքույկում ներկայացվում էին «հայ շովինիստները»: Ըստ որում, եթե ամբողջ երկու էջ նվիրված էր Դաշնակցության «մերկացմանը», ապա Մուսավաթը քննադատված էր երկու պարբերության մեջ:

Իբրև ազգայնամոլական մարդատյացության տիպիկ օրինակ՝ բերված էին Շարուրի դեպքերը՝ հետևյալ մեկնաբանությամբ. «Շարուրի շրջանը՝ Արաքս գետի հովիտը, Ուլուխանլու կայարանից մինչև Նախիջևան, բնակեցված մուսուլմաններով, Արաքսի ծաղկուն շտեմարանը, այսօր իրենից ներկայացնում է մահվան ու նեխվող դիակների հովիտ: Շարուրի ամբողջ բնակչությունը 1919 և 1920 թվականներին Հայկական Հանրապետության կառավարական զորքերի կողմից մի մասով ենթարկվել է կոտորածի, իսկ մնացյալները վռնդվել են Թուրքիա, նրանց ունեցվածքը թալանվել է մաուզերիստների կողմից, որոնք հիմա էլ պաշտպանում են Նժդեհի «հայրական կալվածքը»՝ Զանգեզուրը: Այդպիսի բարբարոսություն չգիտի մարդկությունը»[1]:

Իսկ օսմանյան կամ Ադրբեջանի թուրքերի կողմից հայերի կոտորածների մասին՝ ոչ մի խոսք: Ավելին, իր հայրենիքի՝ Արևմտահայաստանի նկատմամբ հայ ժողովրդի արդարացի պահանջը գրքույկի հեղինակները որակում էին որպես «ոտնձգություն թուրքական վիլայեթների նկատմամբ»[2]:

Այնուհետև ասված էր, որ միմյանց կոտորող և իրենց ժողովուրդներին այդ կոտորածների մեջ ներքաշած երկու կուսակցությունները՝ Դաշնակցությունն ու Մուսավաթը, Հայաստանում և Ադրբեջանում իրենց իշխանությունը կորցնելուց հետո, «մի կողմ նետելով ազգային հին հակասությունները», միավորվել են և համատեղ պայքար են մղում բանվորների ու գյուղացիների իշխանության՝ խորհուրդների դեմ: Այդ համերաշխության տիպիկ օրի-

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 317, թ. 4:

[2] Նույն տեղում:

նակը նրանք տեսնում են Զանգեզուրում, որտեղ «խմբվել են երկու ազգերի շովինիստները» և միասնաբար պատնեշ են կանգնեցրել խորհրդային իշխանության դեմ: Ահա թե ինչու «զանգեզուրյան հակահեղափոխությունը Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների համար ներկայումս հանդիսանում և ապագայում էլ կհանդիսանա մշտական փորձանքի ու դժբախտության աղբյուր: Թաքնվելով Զանգեզուրում և աջակցություն ստանալով պարսկական ավազակներից, դաշնակցական-մուսավաթական հակահեղափոխությունը նորից փորձում է հարվածներ հասցնել խորհրդային իշխանությանը: Ուստի Զանգեզուրը պետք է վնասազերծվի, Զանգեզուրը պետք է դառնա խորհրդային»[1]:

Գրքույկի վերջին՝ «Գործող զորքի և ջոկատների վարքագիծը» ենթավերնագրի տակ, 21 կետերում ձևակերպված էին առաջիկա ռազմական գործողությունների ընթացքում կարմիրբանակայինների և հրամանատարների պահվածքի կանոնները:

Նշված էր, որ ռազմական գործողությունների ժամանակ պետք է խստորեն հաշվի առնել հայի և մուսուլմանի հոգեբանությունը, որոնք դաստիարակված են ազգային փոխադարձ թշնամանքի և ատելության մթնոլորտում, թշնամություն, որին «անմիջապես պետք է տալ դասակարգային պայքարի բնույթ»[2]:

Կորպուսի հրամանատարը և զինվորական կոմիսարը զորամասերին հրահանգում էին Զանգեզուրում մղվելիք մարտական գործողությունների ընթացքում հավասար վերաբերմունք դրսևորել հայերի և մուսուլմանների նկատմամբ, մեկին չհովանավորել մյուսի հաշվին, հանդես չբերել համակրանք ու հակակրանք (թեև գրքույկում այդ համակրանքն արդեն հանդես էր բերված՝ հօգուտ «հեղափոխական» մուսուլմանների), քանի որ «աշխատավորների նպատակներն ու խնդիրները նույնն են՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից»: Կարմիր բանակի մարտիկները պարտավոր են հարգել տեղական սովորույթները և ծեսերը, կարևորել «կանանց անձեռնմխելիությունը»: Նշվում էր, որ սպիտակ հրոսակախմբերի նկատմամբ բանվորների և գյուղացիների բանակի բարոյական գերազանցությունը գյուղացիությանը ցույց տալու համար չպետք է կողոպտել զանազան քրջեր ու լաթեր, գորգեր ու զարդեր, չպետք է ներխուժել այն տները, որտեղ խաղաղ բնակիչներ են: Նշվում էր նաև, որ շրջանից հեռացածների ողջ ունեցվածքը հանձնվում էր տեղական իշխանությանը: Պարտավոր են ցույց տալ մեծահոգություն նրանց նկատմամբ, ովքեր զենքը վայր են դրել և հանձնվել: Ինքնուրույն գործող ամեն մի զինվորական միավորի մեջ պետք է ունենալ իրենց շրջապատում փոխադարձ հարգանք վայելող երկու ներկայացուցիչ

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 317, թ. 5:
[2] Նույն տեղում, թ. 7:

(մեկը՝ հայ, մյուսը՝ մուսուլման), երկուսն էլ անպայման չքավորների միջավայրից: Խորհրդային զորքերի կողմից առաջ բերած բոլոր հակադրությունները և թյուրիմացությունները կամ ազգային տարաձայնությունների հողի վրա առաջ եկած ընդհարումները հարկավոր է անմիջապես տեղում քննել հանձնաժողովի կողմից, որի մեջ պետք է լինեն գնդի կոմիսարը և վերոհիշյալ երկու ներկայացուցիչները: Նոր գրաված ամեն գյուղում պետք է հաստատել հեղափոխական ամուր կարգ, նշանակել հեղափոխական կոմիտե, որի կազմում պետք է անպայման ունենալ կուսակցական կազմակերպությունից և չքավոր գյուղացիությունից ներկայացուցիչներ[1]:

Գրքույկում նաև հանձնարարականներ կային կորպուսի պարենային կազմակերպություններին, որոնք պարտավոր էին իրենց գործողություններում առաջնորդվել «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում գործող ընդհանուր դրույթներով», մթերող կազմակերպություններին, որոնց գործողությունները «ոչ մի դեպքում չպետք է անդրադառնային աշխատավորների կենսամակարդակի վրա», գյուղացիներից վերցրած պարենամթերքի դիմաց վճարումը անպայման պիտի կատարվեր կանխիկ՝ ամեն կերպ խուսափելով ստացական-անդորրագրերով պարեն մթերելուց: Խստորեն պատվիրված էր՝ միայն ծայրահեղ դեպքում դիմել գյուղացիների փոխադրամիջոցների հարկադրական օգտագործմանը, գրաված վայրերում բնակչությանն անմիջապես չզինաթափել՝ դա թողնելով ապագային, ոչ մի առիթով զարկ չտալ կրոնական-ազգայնամոլական հակահեղափոխական քարոզչությանը. սկզբնական շրջանում զգուշորեն շրջանցելով կրոնական և ազգային բնույթի հարցերը՝ լիովին նվիրվել զանգվածներին անմիջականորեն խորհրդային շինարարության մեջ ներգրավելու գործին:

Այնուհետև Տոդորսկին և Սվիրիդովը կորպուսի զորամասերին տեղյակ էին պահում, որ Զանգեզուրի ռազմական գործողության քաղաքական կողմը և այդտեղից բխող իրավական պատասխանատվությունը ընկնում են զորախմբի հրամանատարության վրա, առանց որի զորախմբի մեջ մտնող մարմիններից ոչ մեկը չի դիմում ինքնագլուխ գործողությունների, «իր աշխատանքը անպայման համաձայնեցնում է սույն դիրեկտիվում նշված վարքի կանոնների հետ»[2]:

1921 թ. հուլիսի 1-ին բանակատեղում՝ Հազարու գետի ափին, կայացավ խորհրդային զորախմբի հրամանատարության և բանակի հետ եկած Զանգեզուրի կոմունիստական ջոկատի ղեկավարների համատեղ խորհրդակցություն: Ջոկատի կազմում հարձակման նախօրյակին հաշվվում էր ավելի քան 170 մարդ: Խորհրդակցությունը որոշում ընդունեց, որ ջոկատը ամենաակտիվ գործողություններով օժանդակելու է Կարմիր բանակի զորամասերին: Խորհրդակցությունից հետո, ընդունած որոշման համապատասխան, տե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 317, թ. թ. 7-8:
[2] Նույն տեղում, թ. թ. 8-9:

ղանքին ու բնակչությանը քաջածանոթ պարտիզաններից ոմանք անջատվեցին ջոկատից և ընդգրկվեցին առանձին զորամասերի մեջ՝ ստանձնելով ուղեկցողի դեր:

Հուլիսի 2-ի առավոտյան Նժդեհի կառավարությունը Երևան ուղարկեց մի հեռախոսագիր, որտեղ խորհրդային խմբավորման հրամանատարությանը պաշտոնապես հայտնում էր դիմադրությունը դադարեցնելու մասին: «Լեռնահայաստանը,– ասված էր այդ գրության մեջ,– դադարեցնելով պատերազմական գործողությունները, հավատում է, որ Խորհրդային Հայաստանի Հեղկոմը կկատարի իր՝ Զանգեզուրի իշխանությանն ուղղած հայտարարության մեջ արված բոլոր խոստումները»[1]: Հեռախոսագրի բովանդակությունը Երևանից անմիջապես հաղորդվում է Մոսկվա և Այսրկովկասյան Կարմիր բանակների շտաբին՝ այն ուղեկցելով հետևյալ տեղեկությամբ. «Թշնամին առանց դիմադրության իր ուժերը քաշում է դեպի հարավ, դեպի պարսկական սահմանագլուխը: Այս անգամ հավանական ենք համարում սպիտակ Զանգեզուրի խորհրդայնացումը»[2]:

Նախապես իշխանությունը հանձնելով տեղացիներից կազմված մի մարմնի՝ կառավարությունը Գորիսից անցավ Տաթև: Հուլիսի 2-ի առավոտյան Նժդեհը բարձրացավ Եռաբլրի սարահարթը, ապա այնտեղից էլ անցավ Տաթև:

Նույն օրը՝ ուշ երեկոյան, Լեռնահայաստանի կառավարությունը Գ. Նժդեհի մասնակցությամբ Տաթևում խորհրդակցության հավաքվեց: Նժդեհը հայտարարեց, որ կառավարությունը պետք է փոխադրվեր Հանքեր, և քանի որ Կապանը, ի տարբերություն Սիսիանի և Գորիսի, ամուր էր, ուստի ինքը այնտեղ շարունակելու էր ղեկավարել անողոք կռիվը թշնամու դեմ:

1921 թ. հուլիսի 2-ի լուսադեմին Կովկասյան առանձին բանակի Ղարաբաղ-Զանգեզուրյան առաջին կորպուսի զորամասերը անցան հարձակման: Խմբավորումը կենտրոնից սկսեց հարվածել Տեղ գյուղի վրա, ձախ թևից՝ Կոռնիձոր, աջ թևից՝ Խնածախ–Խոզնավար գյուղերի ուղղությամբ:

Կենտրոնով հարձակվելով՝ Կարմիր բանակի զորքերի գլխավոր ուժերը Վոյցեխովսկու հրամանատարությամբ, հենց սահմանագլխին հանդիպեցին ուղեկալ զինվորների ուժեղ կրակին, որոնք, նախապես տեղյակ լինելով, սպասում էին խորհրդային զորքերի գրոհին: Կարմիրբանակայինները գործի դրեցին թնդանոթները: Զանգեզուրցիների դիրքերը հրետակոծելուց հետո բոլշևիկյան զորամասերը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, մտան Տեղ գյուղը: Զանգեզուրյան մի քանի ջոկատներ այդ հատվածից կարողացան հեռանալ և բարձրանալ Սև լճի կողմերը՝ միանալով այնտեղ դիրքավորված յուրայիններին:

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 133:

[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 316, թ. 1:

Ձախից 107-րդ հեծյալ կարմիր գնդի զորամասերը համարյա առանց դիմադրության գրավեցին Կոռնիձոր գյուղը, ապա, առաջ շարժվելով, ճանապարհին միացան կենտրոնի զորքերին: Կանգ չառնելով՝ նրանք համատեղ գրոհով սրընթաց մտան Քարաշեն և Խնձորեսկ գյուղերը:

Զանգեզուրյան ուժերի մի մասը թեքվեց դեպի ձախ և Մաղանջուղ գյուղի ուղղությամբ իջավ Վարարակ գետի նեղ հովիտը:

Զանգեզուրյան ուժերի մյուս մասը Քարաշեն–Խնձորեսկ հատվածից շարունակեց անկանոն նահանջել Գորիս քաղաքի ուղղությամբ: Հետապնդելով նրանց՝ կորպուսի զորամասերը երեկոյան դեմ դուրս եկան քաղաքի արևելյան բարձունքները:

Ռազմաճակատի ձախ մասում՝ Խոզնավար–Խնածախ–Քաչալ դաղ ուղղությամբ հարձակում սկսեց կորպուսի 246-րդ գունդը՝ Չալաբովի (Չալաբյան) հրամանատարությամբ: Այս գիծը՝ հատկապես Քաչալ դաղից մինչև Չալբուռուն սարն ընկած հատվածը, զանգեզուրցիները նախապես ամրացրել էին, քանդել խրամատներ, պատրաստել դիրքեր: Մեկ օր առաջ զանգեզուրյան զորքերի հրամանատարությունը Տեղ գյուղի հատվածից այստեղ էր ուղարկել մի քանի ջոկատ՝ այս գծի պաշտպանությունը ուժեղացնելու համար: Կատաղի կռիվ սկսվեց: Շարքից դուրս եկավ երկու կողմերի լեռնային հրետանին: Արյունահեղ մարտում զանգեզուրյան պաշտպանները մեծ թվով զոհեր տվեցին: Սպանվածների և վիրավորների թիվը փոքր չէր նաև խորհրդային գնդի անձնակազմից:

Հանդիպելով հերոսական դիմադրության՝ Չալաբովի գունդը կեսօրվա կողմ ստիպված էր նահանջել ելման դիրքերը՝ Քուրդիստանի Սուլթանաքենդ գյուղը: Այստեղ կարգի բերելով շարքերը և նոր համալրում ստանալով՝ նույն օրվա՝ հուլիսի 2-ի երեկոյան գունդը նորից հարձակման անցավ: Զորամասին օգնության եկան Զանգեզուրի կոմունիստներից կազմված ջոկատի անդամները: Թափանցելով զանգեզուրցի պաշտպանների թիկունքը՝ կոմունիստ քարոզիչները կռվողներին համոզում էին, որ կողմերի ուժերը խիստ անհավասար են, ավելի ճիշտ՝ խորհրդային ուժերը քառապատիկ-հնգապատիկ շատ են, ուստի միանգամայն անիմաստ է հետագա դիմադրությունը, որ պետք է զենքը ցած դնել, քանի որ Զանգեզուր եկող Կարմիր բանակի զորքերը ոչ թե նվաճողներ, այլ ազատարարներ են: Զինված գյուղացիները, սակայն, չէին հավատում՝ ասելով, որ «ազատարարները» գալիս էին Ադրբեջանի կողմից, և իրենք մահը գերադասում էին այնտեղից եկող «ազատությունից»: Բոլշևիկ քարոզիչները պատասխանում էին, որ չնայած խորհրդային զորամասերը գալիս էին Ադրբեջանի կողմից, բայց այս անգամ նրանց շարքերում թուրքական ուժեր և «բոլշևիկ-կացինավորներ» չկային:

Կրկին հարձակման անցած Չալաբովի գունդը համառ կռիվներում Չալբուռունի և Քաչալ դաղի բարձունքների վրա պարտության մատնեց Զանգեզուրյան գյուղացիական ջոկատներին:

Ուշ երեկոյան գնդի զորամասերը գրավեցին Խնածախ, Բայանդուր և Խոզնավար գյուղերը: Զանգեզուրյան պարտված ուժերի մի մասը անկանոն նահանջեց Գորիս քաղաքի ուղղությամբ, իսկ զինված գյուղացիները գիշերվա ընթացքում տարբեր ճանապարհներով սարերից իջան և ցրվեցին իրենց գյուղերում: Հուլիսի 2-ի երեկոյան խորհրդային զորքերի Ղարաբաղ-Զանգեզուրյան խմբավորման գլխավոր ուժերը, կոմունիստական ջոկատի անդամների հետ իջնելով Վարարակ գետի հովիտը, մտան Լեռնահայաստանի կենտրոն Գորիս քաղաքը: Նժդեհի ետնապահ զորամասերը թողեցին քաղաքը և տարբեր ուղիներով հավաքվելով Որոտան գետի կիրճում՝ ուղղություն վերցրին դեպի Կապան:

Ինչպես արդեն ասվեց, նույն օրը՝ հուլիսի 2-ին, Կարմիր բանակի Երևանյան խմբավորման ուժերը Գորիսի շրջանի Եռաբլրի սարահարթից Լեռնահայաստանի կենտրոնի վրա հարձակում էին սկսել նրա արևմուտքից: Ա. Տոդորսկու կորպուսի զորամասերի կողմից քաղաքը գրավելուց երկու ժամ հետո Գորիս մտավ նաև Երևանյան խմբավորման հայկական հեծյալ գունդը:

Այսպիսով՝ Կարմիր բանակի զորքերի երկու խմբավորումները՝ Ղարաբաղ-Զանգեզուրյանը և Երևանյանը, միացան:

Գորիսում Կովկասյան առաջին կորպուսի և Երևանյան խմբավորման զորամասերի միանալուց հետո վերջինիս զորամասերը, բացառությամբ Հայկական Կարմիր բանակի 4-րդ հրաձիգ և 1-ին հեծյալ գնդերի, անցան Ա. Տոդորսկու հրամանատարության տակ և սկսեցին գործել նրա զորամասերի հետ:

Գիշերելով Գորիսում՝ հաջորդ օրվա հուլիսի լույս 3-ի վաղ առավոտյան կորպուսի 245-րդ գունդն առաջ շարժվելով գրավեց Գորիս–Կապան խճուղու աջ լեռնալանջին ընկած Քարահունջ գյուղը և ամրացավ այնտեղ: Մյուս՝ 370-րդ գունդը, նույն խճուղով շարժվեց հարավ և անցնելով «Ծակեր» կոչվող վայրը՝ իջավ Որոտան գետի կիրճը՝ ամրանալով Էյվազլար գյուղի շրջակայքում: Զանգեզուրյան պարտված ուժերի մնացորդները Թաս կոչվող լեռնալանջերի վրայով անցնող խճուղով բարձրացան Մազմազակի սարահարթը և, առանց կանգ առնելու, նահանջեցին Չայզամի գետի ուղղությամբ:

Հայկական Կարմիր բանակի 4-րդ հրաձիգ և 1-ին հեծյալ գնդերը կորպուսի հրամանատարության կարգադրության տակ չէին անցել այն պատճառով, որ Սիսիանի շրջանում ռազմական գործողություններն ավարտելուց հետո դրանք ոչ թե գնացել էին Գորիս քաղաքի ուղղությամբ, այլ Դարաբաս և Յայջի գյուղերը գրավելուց հետո հարձակումը շարունակում էին Գորիսի շրջանի Հալիձոր–Տաթև հատվածում: Հուլիսի 4-ին բոլշևիկյան ուժերը, առանց դիմադրության հանդիպելու, մտան Տաթևը Հալիձորից բաժանող ձորերը, որտեղ տեղացիներից կազմված վաշտերը ցրվեցին, և զինվորներն

անցան իրենց գյուղերը[1]: Նժդեհն իր կառավարության հետ քաշվեց Կապան: Նույն օրը՝ կարճատև ընդհարումից հետո, 4-րդ հրաձգային և 1-ին հեծյալ գնդերը մտան Տաթև: Հաջորդ օրն այդ նույն գնդերի զորամասերը գրավեցին Գորիսի շրջանի Սևարանց, Տանձատափ և Մալդաշ գյուղերը: Դուրս գալով Մալդաշ–Բարձրավան գծի վրա ընկած տարածքը և գրավելով Բարձրավան գյուղը՝ հայկական 4-րդ հրաձիգ և 1-ին հեծյալ գնդերը կապ հաստատեցին Թասի լեռնալանջերով Մազմազակ–Չայզամի հատված դուրս եկած Կովկասյան կորպուսի 372-րդ և 240-րդ գնդերի հետ: Բուն Զանգեզուրը (Գորիսի շրջանը) լիովին գրավված էր:

Զանգեզուր մտած Կարմիր բանակի զինվորները և հատկապես զորքի հետ եկած և ընդհատակից դուրս եկած տեղի բոլշևիկները, վրեժխնդրությամբ լի, անօրինական բռնություններ և հաշվեհարդարներ սկսեցին գավառի պաշտպանությանը մասնակցած կամ Լեռնահայաստանի իշխանություններին համակրած անձանց նկատմամբ: Վրեժխնդրության զոհ գնացին նորանոր կյանքեր: Վերակենդանանում ու կրկնվում էր ուղիղ մեկ տարի առաջ տեղի ունեցած մղձավանջը:

Հարձակվողների կողմից տեղի բնակիչների նկատմամբ բռնությունները, վրեժխնդրությունն ու հաշվեհարդարները կանխելու նպատակով 1921 թ. հուլիսի 3-ի հրամանով Ա. Մյասնիկյանը՝ որպես Հայաստանի Հանրապետության ռազմական գործերի ժողկոմ և Կովկասյան առանձին բանակի Ռազմհեղկոմի անդամ, ողջերթի խոսքերով դիմեց Զանգեզուրում կռվող խորհրդային զորամասերին*: Նշելով Կարմիր բանակի նպատակների մասին՝ նա կռվող ռազմիկներին կոչ էր անում մարտնչել անձնվիրաբար, բայց միաժամանակ խոր մարդասիրական վերաբերմունք ցուցաբերել Զանգեզուրի բնակիչների նկատմամբ: Կարմիրբանակային մարտիկին հաղթանակ մաղթելով՝ Մյասնիկյանն ասում էր. «Զանգեզուրի գյուղացին քո եղբայրն է և քո դաշնակիցը, ուշադիր և զգայուն եղի՛ր նրա նկատմամբ: Հարգի՛ր տեղական բնակչության անձը, բնակարանը, գույքը և իրավունքները: Հիշի՛ր, որ Կարմիր բանակն իր հետ բերում է ազատություն, բարեկեցություն և կուլտուրա: Նա այդ բանն ապացուցել է իր փայլուն գործերով և հաստատել իր բազմաթիվ մարտիկների արյունով: Ամեն տեղ կարգ ու կանոն հաստատի՛ր: Օգնի՛ր գյուղացուն, և նա էլ քեզ կօգնի: Ապացուցի՛ր նրան, որ դու աշխատավոր ժողովրդի զավակ ես, նրա իրավունքների ու շահերի պաշտպանը»[2]:

---

[1] Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 133:

* «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի մեջ Մյասնիկյանի այդ հրամանը թվագրված է հուլիսի 3-ով (էջ 542), իսկ արխիվային փաստաթղթերում թվագրված է հուլիսի 1-ով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 316, թ. 3):

[2] ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 33, թ. 1:

Ապա հիշեցնելով, որ առջևում դեռ մարտեր են սպասվում, Ա. Մյասնիկյանը կարմիրբանակային ռազմիկին պատվիրում էր. «Իմացի՛ր, որ դու գործելու ես լեռնոտ վայրերում: Դեսուդեն մի՛ ընկիր, ուժերդ մի՛ ցրիր: Կապ պահպանի՛ր: Զգուշությա՛մբ շարժվիր: Մի՛ շտապիր և մի՛ հրապուրվիր: Բայց մի՛ էլ հապաղիր, հույս մի՛ դիր «յաբախտի» վրա: Գործի՛ր համառորեն, վստահորեն և վարպետորեն, և այն ժամանակ գործը հաստատ կլինի: Կապ պահպանի՛ր թիկունքի հետ: Ամրացրո՛ւ թիկունքը: Ամուր և առողջ թիկունքը երաշխիք է այն բոլոր վտանգներից ու անակնկալներից, որոնք ամեն րոպե կարող են սպառնալ բանակին: Մի՛ զանգատվիր արշավի դժվարություններից: Ոչ մի գործ, առավել ևս այսպիսի դժվար գործը, որին դու ձեռնարկել ես հանուն Զանգեզուրի ազատագրման, հեշտությամբ չի հաջողվում: Եղի՛ր համբերատար ու արի, իսկ մնացածն ինքն իրեն կլինի: Երկիրը կաջակցի քեզ, իսկ ժողովուրդն ու ապագա սերունդը կփառաբանեն քեզ ու քո մեծ սխրագործությունը»[1]:

Հուլիսի 4-ին Նժդեհը հասավ Հանքեր և նույն օրը հրավիրեց կառավարության անդամների խորհրդակցություն: Այստեղ նա նորից հայտարարում է, որ անհանգստանալու հարկ չկա, որ Կապանում ինքը ջարդելու էր թշնամուն, ուստի Հանքերից հեռանալու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Այնուամենայնիվ, խորհրդակցության մասնակիցներն անհանգստություն հայտնեցին Երևանից, պետական գանձարանից բերած դրամների և մյուս արժեքների ապահովության առթիվ: Ի վերջո Նժդեհը համաձայնեց եղած տարադրամը շտապ ուղարկել Մեղրի: Որոշվեց նաև Մեղրի հասցվելիք դրամներից 5 միլիարդ ռուբլի հայկական նոր դրամները թաղել հողում, իսկ մնացած 100 միլիոն հայկական ռուբլին, սովետական 120 միլիոն ռուբլին և եղած ոսկի «տարադրամը» վերցնել՝ հոգալու համար գաղթականության կարիքները: Դրամների փոխադրության և այն տնօրինելու համար ստեղծվեց մի հանձնախումբ՝ Համբարձում Տերտերյան, Սերգեյ Մելիք-Յոլչյան և կապանցի Սամսոն Մելիք-Փարսադանյան կազմով[2]:

Կառավարության անդամների խորհրդակցության ավարտին Նժդեհը, վստահելի գործիչների մի նեղ կազմով, վճռեց Կապարգողթի տարբեր վայրերում թաքցնել զենքի և զինամթերքի մի մասը. չէ՞ որ այդ պահին նա չէր բացառում, որ եթե Կարմիր բանակի զորքերը գրավեին Կապանը և Մեղրին, ապա ինքն իր զինակիցներով կրկին բարձրանալու էր լեռները և շարունակելու էր կռիվը: Ընդամենը երկու օրում թաքցվեց հետևյալ զենք-զինամթերքը Կատարի գործարանների շրջանում, **Գյուտկում** գյուղի մերձակա անտառում՝ 10 փութ դինամիտ, 4 գնդացիր, 6 արկղ ձեռնառումբ, երեքգծանի 50

---

[1] ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 33, թ. 1:

[2] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 181-182:

հրացան՝ 250000 փամփուշտով: Այդ զինապահեստի պաշտպանությունը հանձնարարվեց գյուտկումցիներ Գերասիմ Աթաջանյանին (վերջինս որոշել էր ոչ մի պարագայում չթողնել հայրենի եզերքը), Արսեն Գագյանին, վաշտապետ Թևանին (արխիվային փաստաթղթերում նաև՝ Հարություն): **Ճակատենի** անտառում թաքցվեց 10 արկղ դինամիտ, 300000 փամփուշտ, 5 արկղ ձեռնառումբ, լեռնային հրանոթի 500 արկ: Այդ ամենի պաշտպանությունը հանձնվեց Գերասիմ Աթաջանյանին, Խաչատուրին (արխիվային փաստաթղթերում նաև՝ Արշակ), Կատարի գործարանների նախկին պարետ Արմենակ Դավիդյանին և նրա եղբորը՝ Դավթին: **Վաչագան** գյուղից ոչ հեռու՝ Խուստուփի ստորոտում գտնվող վանքի ավերակներում, թաքցվեց լեռնային հրանոթի երկու փակաղակ, 700 արկ, 500000 փամփուշտ, 5 արկղ դինամիտ և 4 գնդացիր, որոնց հսկողությունը դրվեց Գերասիմ Աթաջանյանի, Կարապետ Նուրիջանյանի և Նավասարդյանի վրա, **Բեխ** գյուղում՝ 400000 փամփուշտ, 10 արկղ դինամիտ, 5 արկղ ձեռնառումբ, և այդ ամենի պատասխանատվությունը դրվեց Սամսոն Մելիք-Փարսադանյանի և Ղազի Արշակի վրա, Գնդեվազի շրջանում՝ **Կալեր** գյուղի կիրճում՝ 2 լեռնային հրանոթ՝ 150 արկով և 4 գնդացիր, որոնց տեղը հայտնի էր միայն նույն գյուղացի Աղաբեկի տղա Հարությունին և գնդապետ Օհանջանյանին, **Գուդեմնիս** գյուղում՝ 2 գնդացիր, որոնց հսկողությունը դրվեց վաշտապետ Եզեկյանի վրա, **Մեղրի** գյուղում՝ 4 գնդացիր՝ 25000 փամփուշտով, որոնց հսկողությունը դրվեց Խաչիկ Դանիելյանի, Դավիթ Վաչյանի, վաշտապետ Ազատի, Մեղրի գյուղի պարետ Գինոսի վրա, **Շվանիձորի** կիրճում՝ 2 գնդացիր՝ 10000 փամփուշտով, որոնց պահպանման պատասխանատուներն էին պորուչիկ Աղաբեկը և վաշտապետ Մկրտիչը[1]:

Հուլիսի 5-ին Նժդեհի մասնակցությամբ Հանքերում տեղի ունեցավ Կապանի շրջանի ներկայացուցիչների և ճակատների պետերի ժողով: Թեև Նժդեհը ժողովի սկզբում հույս ուներ, որ Կապանը դիմադրելու է, բայց ժողովի ընթացքը հակառակը ցույց տվեց: Ժողովականների ընդհանուր տրամադրությունն այն էր, որ պետք է ընդունել խորհրդայնացումը, քանի որ վերահաս սովը կարող է կործանարար լիներ: «Գուցե բոլշևիկները խրատված լինեն և չկրկնեն մոտիկ անցյալի իրենց տխուր արարքները,– մտածում էին նրանք:– Թաթարական Բաքուն չէ, այլ հայկական Երևանը, որի հետ այս անգամ պիտի գործ ունենանք»[2]: Բայց անմիջապես կանգնում էր ճակատագրա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 71-72: Զենքի և զինամթերքի պահպանության պատասխանատու անձանցից ոմանք (Սամսոն Մելիք-Փարսադանյանը, պորուչիկ Աղաբեկը, Նավասարդյանը, Գերասիմ Աթաջանյանը, վերջինս, մեկ ամիս չանցած, վերադարձավ Կապարգողթ) մի քանի օր հետո անցան Իրան, իսկ մյուսներն այն բանից հետո, երբ ՉԵԿԱ-ն 1922 թ. բացահայտեց զինապահեստները և դրանց պահպանման պատասխանատուներին, ձերբակալվեցին և գնդակահարվեցին:

[2] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 133:

կան հարցը. իսկ եթե բոլշևիկները չկատարե՞ն իրենց խոստումը և Սյունիքը կցեն Ադրբեջանի՞ն: «Այդ դեպքում ո՞րն է լինելու մեր անելիքը»,– այս հարցով ժողովականները միաբերան դիմում էին Նժդեհին: Պատասխանն այս էր. «Եթե Երևանն էլ այդպես վարվեց, դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո վերստին կբարձրանաք լեռները, ուր կգտնեք ինձ: Սյունիքը, ցանկության դեպքում, միշտ էլ կարող է իրեն անկախ հռչակել»[1]:

Ժողովը որոշեց բոլշևիկյան ուժերին տեղի տալ առանց կռվի և ցրվում է:

Ժողովից անմիջապես հետո Հանքերում տեղի ունեցավ ՀՀ կառավարության վերջին նիստը, որտեղ որոշվեց թողնել Կապանը և անցնել Մեղրի:

Կապանում գտնվող 1000-ի չափ գերիները, որոնց 95%-ը հայեր էին, տեղեկանալով, որ որոշված է շրջանը հայ բոլշևիկներին հանձնել առանց դիմադրության՝ հավաքվեցին շտաբի առջև, որպեսզի իմանան, թե ինչ է սպասվում իրենց, և Նժդեհից լսեն նրա վերջին պատվիրանը: Սպարապետը եկավ: Տեղի է ունեցավ հարց ու պատասխան: Նժդեհն ասաց, որ ինքը հույս ունի, որ երևանյան ուժերը չեն դիմելու բռնությունների, քանի որ, վերջապես, նրանք էլ հայ են: Նա նշեց, որ ամեն մի հայ մարդ պիտի հպարտ լինի, որ ինքը հայ է: Եվ դրանք «սրբազան խոսքեր» պիտի լինեն: Նժդեհը պատգամեց. «...Կրկնեք ամեն օր, ամեն ժամ և ամեն տեղ կրկնեք հպարտությամբ՝ մենք էլ հայ ենք: Եթե Հայաստանի նոր տերերը ձեզ ասեն էլ՝ էլ մի՛ աղոթիր, ես ասում եմ՝ ձեր նոր աղոթքը թող լինի – մենք էլ հայ ենք»[2]:

Գերիների միաբերան պատասխանը եղավ. «Հայ ենք և պիտի մնանք հայ, պարո՛ն Սպարապետ»[3]:

Զանգեզուրում կռվող Կարմիր բանակի հիմնական ուժերը 1921 թ. հուլիսի 5-ին գտնվում էին Որոտան գետից աջ ընկած տարածքներում: Նույն օրը հայկական 4-րդ հրաձիգ և 1-ին հեծյալ գնդերը Կովկասյան կորպուսի 372-րդ և 240-րդ գնդերի հետ մարտեր ծավալեցին Կապանի շրջանը գրավելու համար: Բարգուշատ լեռնաշղթայի լանջերով զորամասերը առաջ շարժվեցին և ամրացան նրա բարձունքներում՝ Օքյուզյարաթից հարավ ընկած Գյազբել–Ինջաբել–Կարմրաքար գծով: Փոքր դադար առնելուց հետո այդ զորքերը պետք է հարձակում գործեին Կապանի շրջանային կենտրոնի՝ Հանքերի վրա:

Ռազմաճակատի ձախ հատվածով առաջ շարժվեց Կովկասյան կորպուսի մյուս՝ 108-րդ գունդը: Այդ զորամասը խնդիր ուներ Էյվազլար–Շուռնուխ ուղիղ գծով հետապնդել զանգեզուրյան նահանջող զորամասերին, գրոհով գրավել Զեյվա գյուղը, ապա թեքվել աջ, Արծվանիկ–Սևքար–Բարաբաթում գծով փակել նրանց նահանջի ճանապարհը և օղակի մեջ առնել: Բայց նախապես մշակված այդ օպերատիվ պլանը խախտվեց: Ինչպես նկատում է

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 133:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Ս. Սողոմոնյանը, գնդի հրամանատարությունը թույլ տվեց մարտավարական սխալ և ընտրեց առաջխաղացման ոչ լավագույն տարբերակ: Էյվազլար գյուղից թեքվելով ձախ՝ գնդի զորամասերը մտան Ադրբեջանի Կուբաթլիի շրջանը և ամրացան Կապանի շրջանին սահմանակից Դեմիրչի և Դոնդարլու գյուղերում: Դա զգալի ժամանակ խլեց, որը բացասաբար անդրադարձավ գնդի հետագա գործողությունների վրա, միաժամանակ նպաստավոր եղավ նահանջող Զանգեզուրյան ջոկատների համար. նրանք դադար առնելու և շարքերը կարգի բերելու հնարավորություն ստացան:

Հուլիսի 5-ին Կուբաթլիի տարածքից 108-րդ գնդի զորամասերը հարձակվեցին և գրավեցին Կապանի շրջանի Զեյվա և Տանձավեր գյուղերը, ապա առանց կանգնելու գնացին Կաղնուտ, Եղվարդ, Ագարակ գյուղերի ուղղությամբ: Գունդը հնարավորություն ուներ արևելյան կողմից հարվածելու և գրավելու Կապանի շրջանային կենտրոնը: Բայց այդտեղ էլ մարտավարական երկրորդ սխալը թույլ տրվեց, որից կարողացան օգտվել զանգեզուրյան նահանջող զորամասերը. կորպուսի հրամանատարությունը իր բոլոր զորամասերին չորսօրյա հանգիստ տվեց:

Այդ դադարի ժամանակ Նժդեհի ջոկատներին հետապնդում էին միայն հայկական 4-րդ հրաձգային և 1-ին հեծյալ գնդերը: Թեև չորս օրվա փոխարեն կորպուսի հանգիստը մեկ-երկու օր տևեց, բայց դա էլ բավական էր, որպեսզի Նժդեհը կարողանար այդ հատվածի իր ուժերը տեղափոխել Հանքերի շրջանը:

108-րդ ռուսական գունդը հուլիսի 6-ի կեսօրին հարձակման անցավ և նույն օրը երեկոյան գրավեց Եղվարդ, Ագարակ, Խդրանց, Ուժանիս գյուղերը, ապա, նորից առաջ անցնելով, հարմար դիրքեր գրավեց Սուսանա սարալանջում:

Հայկական 4-րդ հրաձիգ և 1-ին հեծյալ գնդերի հարձակման ուղղությամբ կանգնած Նժդեհի զորամասերը ձգտում էին ամրանալ Ինջաբելի և Կարմրաքարի բնական ամրություններում: Բայց այդ բանը նրանց չհաջողվեց: Հուլիսի 6-ին հայկական Կարմիր բանակի զորամասերը և նրանց միացած Կապանի բնակիչներից կազմված կոմունիստական ջոկատները հարձակման անցան Ինջաբելում: Նահանջողները չկարողացան ամրանալ նոր դիրքերում: Խորհրդային զորքերը համարյա առանց դիմադրության գրավեցին Կապանի Վերին Խոտանան, Ներքին Խոտանան, Տորթնի (Անտառաշատ), Դովուս, Խլաթաղ (Զորաստան), Առաջաձոր, Նորաշենիկ, Շրվենանց գյուղերը և մոտեցան Հանքերին:

Հուլիսի 6-ի առավոտյան Նժդեհը կառավարությանը պատվիրեց անհապաղ հեռանալ Հանքերից, քանի որ ռազմաճակատները Կապանում մերկացած էին, հարևան Ագարակի գյուղացիները աղուհացով ընդունեցին Կարմիր բանակի զորքերին, և ուր որ է թշնամին կարող էր խուժել Հանքերը:

Սկսվեց խուճապ: Կառավարությունը երկու ժամից հեռացավ դեպի

Մեղրի: Նույն ուղղությամբ Հանքերից մեկնեց նաև Նժդեհը, բայց մեկնեց Ղափանի արևելյան ճակատ, քանի որ անհրաժեշտ էր գոնե մեկ օրով էլ պահել Հանքերը, որպեսզի հեռացողները կարողանային անցնել Մեղրի: Միաժամանակ ղափանցի սուրհանդակները Ինջաբել տարան Սպարապետի վերջին հրահանգը՝ «քաշվել ճակատներից և ցրվել գյուղերը»[1]:

Կապանի արևելյան ճակատից Նժդեհը և նրա ուղեկիցները ուղղություն վերցրին դեպի Մեղրի՝ բարձրանալով Խուստուփն ի վեր: Հենց այստեղ՝ Խուստուփի վրա, նա ստացավ մի գրություն, որ հուլիսի 2-ի ամսաթվով իրեն էր հղել Ատրպատականի հայոց առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանը: Դրանից մեկ օր առաջ՝ հուլիսի 1-ին, սրբազանը Թավրիզից հեռագիր էր ուղարկել Երևան՝ Ա. Մյասնիկյանին: Նժդեհին հանձնվեց նաև այդ հեռագրի պատճենը:

Մյասնիկյանին տված հեռագրով Ատրպատականի հայոց առաջնորդը տեղյակ էր պահում, որ իր կողմից սուրհանդակ է ուղարկվել Նժդեհի մոտ՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկությամբ[2]:

Ինչ վերաբերում է Նժդեհին հղած գրությանը, այնտեղ Մելիք-Թանգյանը, նշելով, որ ինքը միանգամայն հակառակ է «զենքի ուժով, արյան հեղեղներով և բռնությամբ խնդիրները լուծելու եղանակին», առաջարկում էր անվերապահորեն ընդունել բոլոր վեճերը խաղաղ միջոցներով լուծելու՝ Հայաստանի կառավարության հայտարարությունը Լեռնահայաստանին, կնքել զինադադար և անհապաղ վերսկսել բանակցությունները, որոնք ընդհատվել էին Վայոց ձորի վերջին ընդհարումների պատճառով: «Հույս ունիմ,– վերջում գրում էր նա,– որ Լեռնահայաստանի կառավարությունն անտես չի անի իմ միջնորդությունը և հնարավորություն կտա իր ժողովրդին ամառային ցանքսերը ժողովելու և դաշտային աշխատանքները անարգել կատարելու»[3]:

Ինչպես զինադադար հաստատելու, այնպես է բանակցություններ վերսկսելու մասին խոսելն ավելորդ էր, որովհետև սրընթաց առաջ շարժվող խորհրդային զորքերը այլևս շահագրգռված չէին որևէ գործ ունենալ Նժդեհի հետ: Արդեն բոլորին պարզ էր, որ բոլշևիկների համար այսուհետև ընդունելի էր միայն մեկ պայման՝ անվերապահ կապիտուլյացիա:

Այնուամենայնիվ, Նժդեհը որոշեց Հայաստանի կառավարության վերջին հայտարարությանը և Ատրպատականի հայոց առաջնորդի հաշտարար գրությանը տալ միասնական պատասխան: Հուլիսի 7-ին նա գրեց «Խորհրդային Հայաստանի Հեղկոմին» ուղղված գրություն*, որի մեջ շարա-

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 133:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 134:

[3] Նույն տեղում:

* Փաստաթղթի տակ գրված է «Ղափանի Հանքեր, 1921, հուլիս 7», գուցե իրոք այն գրվել է Հանքերում, բայց ակնհայտ է, որ ստորագրվել և թվագրվել է Մեղրիի ճանապարհին:

դրեց իր նկատառումները Հայաստանի քաղաքական ու տնտեսական բարեփոխումների և Զանգեզուրի նկատմամբ Խորհրդային Հայաստանի վարվելիք ցանկալի քաղաքականության վերաբերյալ:

Հայաստանում կատարվելիք բարեփոխումների կապակցությամբ Նժդեհը շեշտում էր, որ հանրապետությունում պետք է ստեղծել քաղաքական այնպիսի մթնոլորտ և այնպիսի տնտեսական պայմաններ, որ «արյունաքամ եղած հայ աշխատավորությունը և նրա մտավորականությունը հաշտվեն Հայաստանում ստեղծված խորհրդային իրավակարգի հետ» և «նոր ընդհարումներով չփորձեն ազատագրվել» իրենց պարտադրված կարգերից: Այդ նպատակով, ըստ Նժդեհի, անհրաժեշտ կլիներ.

ա) հարգել ու անձեռնմխելի համարել գյուղացիական և առհասարակ մանր սեփականությունը, հաստատել առևտրի ազատություն, լիովին վերացնել բռնագրավումները, ազատ զարգացման հնարավորություն ընձեռել կոոպերացիային, հանրապետության ներսում կատարել ներքին վերաբնակություն,

բ) նախկին թուրքահայերին տալ հողաբաժիններ,

գ) ազգայնական բախումները վերացնելու նպատակով կատարել հայերի և թուրքերի տեղափոխություն Հայաստան և Ադրբեջան,

դ) հաստատել անձի և բնակարանի անձեռնմխելիություն, հռչակել և իրագործել մամուլի, խոսքի ու ժողովների ազատություն,

ե) վերացնել արտակարգ հանձնաժողովները, պատասխանատվության ենթարկելու իրավունքը ամբողջովին թողնել դատարանին,

զ) վերականգնել հայոց լեզվի պետական իրավունքը, նրա գործածությունը պարտադիր համարել պետական հիմնարկներում ու բանակում,

է) կազմակերպել հայկական առանձին բանակ՝ իր ազգային հրամանատարությամբ, աքսորավայրերից հայ սպայությանը վերադարձնել հայրենիք և նրան հնարավորություն տալ պաշտոնավարելու հայկական բանակում:

Ինչ վերաբերում է Զանգեզուրի նկատմամբ Խորհրդային Հայաստանի վարվելիք քաղաքականությանը, Նժդեհը ցանկալի էր համարում, որ կառավարությունը, ելնելով Լեռնահայաստանի առանձնահատկություններից, այնտեղ հետապնդեր հետևյալ նպատակները.

ա) Լեռնահայաստանն ներառում է ամբողջ Զանգեզուրի գավառը, Լեռնային Ղարաբաղը, Վայոց ձորը և Գողթանը,

բ) Լեռնահայաստանը, լինելով մի վարչական միավոր և Հայաստանի անբաժան ինքնավար մասը, կառավարվում է իր ընտրովի կենտրոնական և տեղական իշխանությունների միջոցով ու ենթարկվում է Հայաստանի կենտրոնական կառավարությանը,

գ) Լեռնահայաստանը չի զինաթափվում, այլ ստանում է զենքի ու ռազ-

մամթերքի նոր պաշար Հայաստանի կենտրոնական կառավարությունից: Լեռնահայաստանում Կարմիր բանակ չի կազմակերպվում, այլ ընդունվում է ժողովրդական ընդհանուր զինման՝ միլիցիայի համակարգը: Նրա զինված ուժերը չեն հանվում երկրի սահմաններից, դրսից ուժեր չեն բերվում Լեռնահայաստան,

դ) Լեռնահայաստանի գյուղացիության սակավահողության պատճառով թուրք փախստականների վերադարձի հարցը վերջնականապես հանվում է օրակարգից, լքված գյուղերը հանձնվում են մնացած սակավահող գյուղացիներին,

ե) թուրք քոչվորների խնդիրը հարգվում է Լեռնահայաստանի իշխանության կողմից, ըստ որում՝ քոչվորները սար են բարձրանում անզեն,

զ) Լեռնահայաստանի աշխատավոր ժողովրդի հաշտ լինելու համար խորհրդային իշխանության հետ ցանկալի է, որ Լեռնահայաստանի սահմաններում չերևան ու չգործեն երկրամասի բնակչության աչքում իրենց գործունեությամբ արատավորված հայ կոմունիստները:

«Տեր դառնալ մի երկրի,– վերջում գրում էր Նժդեհը,– դեռ չի նշանակում հաղթել այդ երկիրը լցնող ժողովրդին և նրա՝ ազատ ապրելու ուժեղ ցանկությանը: Ձեր առաջխաղացումը, Արարատյան զորամասի ծանոթ քայլից հետո*, կարելի է համարել ամեն ինչ, միայն ոչ ռազմական հաջողություն, հաղթություն: Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը: Որպեսզի այս երկրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված չլինի մեկ էլ ինձ օգնության կանչելու, աշխատեք բավարարել հայ գյուղացիության և նրա մտավորականության այդ արդար պահանջները»[1]:

Հուլիսի 7-ին Կալերի և Մեղրիի միջև Նժդեհը հանդիպեց Գենվազի պատվիրակությանը, որը Կապանի վրայով անցնում էր Գորիս՝ բոլշևիկներին հայտնելու Արևիքի «հպատակությունը», գուցե նաև «տեսնվելու խելքը գլխին և մի քիչ հայ մեկի հետ»: Իջնելով ձիերից՝ Սպարապետը և նրա զինակիրները տեղավորվեցին ծառերի տակ՝ Մեղրի գետի ափին: Սկսվեց զրույց, և Նժդեհը որոշ հրահանգներ տվեց Գորիս մեկնողներին: Նա հատկապես շեշտեց, որ պատվիրակության անդամները պետք է հայ բոլշևիկներին հասկացնեն, համոզեն, որ միևնույնը չէ, թե որ խորհրդային հանրապետության անբաժան մասը պիտի կազմի մեր լեռնաշխարհը՝ Հայաստանի՞, թե՞ Ադրբեջանի:

«Նրանք պիտի նախազգուշացնեին՝ ոչնչով չկրկնել տխուր անցյալը, մասնավորապես ժողովրդից չպահանջել և ոչ մի հատ զենք: Նրանք պիտի

---

* Նկատի ունի այն զորամասը, որ Փրկության կոմիտեի մյուս զորամասերի թվում ապրիլի 2-ից հետո Արարատյան դաշտից նահանջում էր դեպի Զանգեզուր, բայց Վայոց ձորում բոլշևիկյան քարոզչության հետևանքով անցել էր հակառակորդի կողմը:

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 135-136:

լուսաբանեին և պահանջեին խորհրդային իշխանության ներկայացրած իմ գրավոր պայմանների հարգումը»[1]:

Պատվիրակությունն ուղևորվեց դեպի Կապան՝ Գորիս անցնելու համար, իսկ Նժդեհն իր զինակիցների հետ գնաց Մեղրի:

Հուլիսի 7-ի կեսօրին Կապանի շրջանային կենտրոնը շրջապատված էր կարմիրբանակայինների կողմից: Նույն օրը Կովկասյան կորպուսի 370-րդ և 245-րդ գնդերը Բարաբաթում և Կավարտ գյուղերի ուղղությամբ մտան Հանքեր: Նույն զորամասերը միաժամանակ գրավեցին Գյուտկում, Բաղաբուրջ, Վաչագան, Բեխ գյուղերը:

Իրենց հերթին, հայկական գնդերը Կովկասյան 1-ին կորպուսի զորամասերի հետ ռազմաճակատի աջ թևում նահանջողներին հետապնդում էին Ողջիի ենթաշրջանում: Գրավելով Քրդիքենդ (Լեռնաձոր), Վերին Հանդ, Քաջարան, Փխրուտ, Փիրմազրա (Կաթնառատ) գյուղերը՝ այդ զորամասերը նույնպես Խուստուփի սարալանջերով ուղղություն վերցրին դեպի Մեղրի:

Կովկասյան առանձին զորաբանակի ռազմահեղափոխական խորհրդի լիազորի տեղապահ և Զանգեզուրի արտակարգ կոմիսար նշանակված Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, զորաբանակի Առաջին կորպուսի հրամանատար Տոդորսկին և կորպուսի զինվորական կոմիսար Սվիրիդովը հուլիսի 8-ին Գորիսում ստորագրեցին թիվ 2 հրամանը և ուղղեցին Զանգեզուրի ազգաբնակչությանն ու Զանգեզուր-Ղարաբաղյան խմբավորման զորամասերին:

Հրամանում ասված էր, որ «խորհրդային հանրապետությունների կարմիր զորքերի հարվածների տակ» Նժդեհի գլխավորած «հակահեղափոխությունը» փախչում է Պարսկաստան... «**Զանգեզուրցինե՛ր**... այժմյանից ձեր բախտը, ձեր լավագույն ապագան ձեր ձեռքին է: Ընդհանրական կամքը և վստահությունը Զանգեզուրում բանվորագյուղացիական իշխանության հաղթանակի գրավականն է: **Կարմի՛ր զինվորներ,** հեղափոխությունը Զանգեզուրի հանգստությունը և կարգը ձեզ է վստահել: Դուք ձեր վարքով և գործելակերպով, որպես աշխատավորների իրավունքների պաշտպաններ, պարտավոր եք օգնել Զանգեզուրի աղքատ գյուղացուն...»:

Խստորեն «արգելելով ինքնագլուխ գործողությունները»՝ Զանգեզուրի արտակարգ կոմիսարը և Կովկասյան առանձին զորաբանակի առաջին կորպուսի հրամանատարն ու զինկոմիսարը հրամայում էին.

«1. Զորամասերին անհրաժեշտ անասունները, պարենը և խոտը վերցնել տեղական հեղափոխական կոմիտեների միջոցով՝ վերջիններիս պահանջ ներկայացնելով և տեղում վճարելով վերցրածի արժեքը, 2. Զորամասերի բնակարանային պահանջները բավարարում են միայն տեղական հեղափոխական կոմիտեները, 3. Զորամասերը փոխադրության միջոցներ... ստանում են տեղական հեղափոխական կոմիտեներից՝ կանխօրոք նրանց ներկայաց-

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 136:

նելով պահանջ, 4. Տրանսպորտային բաժնում կորպուսի ներկայացուցչի պահանջները պարտավորեցնող են՝ որպես ռազմական պահանջներ, 5. Զանգեզուրում զինաթափումը կատարվում է լիովին, առանց ազգի խտրության, հեղկոմների միջոցով, և միայն հեղկոմների անկարողության դեպքում, այս կամ այն գյուղի նկատմամբ գործողությունների ազատություն է տրվում զինվորական մասերին՝ մինչև թնդանոթային կրակի գործադրությունը, 6. Տեղերի հեղափոխական կոմիտեները Խորհրդային Հայաստանի և հրամանատարության հեղափոխական իշխանության ներկայացուցիչներն են և որպես այդպիսիները ի կատար են ածում զորամասերի բոլոր օրինական պահանջները՝ ինչպես բնակարանի, փոխադրական միջոցների և այլ պահանջներ, 7. Այն ամենը, ինչ որ գրավված է թշնամուց և պիտի գրավվի, Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության սեփականությունն է, 8. Ազգաբնակչությունից վերցված բոլոր իրերը զորամասերը պարտավոր են անհապաղ վերադարձնել, 9. Հեղափոխական իշխանությունը թույլ չի տա քաղաքացիների անցյալի անձնական հաշիվների և կուսակցական հողի վրա առաջացող և սրանից բխող և ոչ մի գործողություն, 10. Ամեն տեսակի բանդիտները և պրովոկատորները կենթարկվեն գնդակահարության:

Սույն հրամանի զանցառուները կենթարկվեն հեղափոխական ժամանակի ամենախիստ պատժին»[1]:

Ինչպես կարմիրբանակայիններին ուղղված կոչերն ու հրամանները, այնպես էլ բնակչությանն արված հորդորները խորապես ազդում էին ժողովրդական լայն զանգվածների տրամադրության վրա՝ հօգուտ խորհրդային իշխանության:

«Եղբայրը եղբոր արյունը չի թափի». այս էր օրվա կարգախոսը, բոլշևիկների ու դաշնակցականների նկատմամբ նրանց նոր վերաբերմունքի որդեգրման տրամաբանությունը:

Զանգեզուրի գյուղացիության մտքերի այս վերափոխումը պատկերավոր է նկարագրել Ս. Վրացյանը. «Որքան հեռանում էինք ռազմաճակատից վար, Մեղրիի ուղղությամբ, այնքան ավելի զգացվում էր ժողովրդի տրամադրության փոփոխությունը: Այլևս մեզ աղ ու հացով չէին ընդունում: Նույնիսկ խուսափում էին մեզ հետ շփում ունենալուց, նշանակու՞մ էր այդ, թե այլևս նրանք մեզ չեն համակրում: Իհարկե, ո՛չ: Բայց գյուղացին ամեն տեղ միևնույն հոգեբանությունը ունի – կասկածամիտ, խոհեմ, զգուշավոր: Ինչո՞ւ անցավ գլուխը ավետարանի տակ դնել: Հապա եթե տակից մի վատ բան դուրս գա՞: Սրանք գնալական են, գալիքը դաժան ուժ է, ինչո՞ւ իզուր տեղը կասկածելի դառնա»[2]:

Ճանապարհին կրած անասելի տանջանքներից հետո՝ հուլիսի 7-ի երե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022. ց. 8, գ. 318ա, թ. 2:

[2] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Բ, էջ 243:

կոյան, Նժդեհի կառավարությունը հասել էր Մեղրի: Արաքսի ափին՝ կիզիչ արևի տակ, խռնվել էր մի հսկա խուճապահար բազմություն: Կառավարության անդամները լծվեցին ծանր պարտականության կատարմանը՝ որքան հնարավոր է շատ փախստական (առաջին հերթին՝ հիվանդներ ու վիրավորներ) Արաքսի պարսկական ափը փոխադրելու աշխատանքների մեջ ակտիվորեն ընդգրկվելով:

Գետն անցնելու դժվարությունները միայն փոխադրամիջոցների հետ չէին կապված: Թեև Թեհրանի կառավարությունը հրահանգել էր, որ տարագիրներին անարգել թույլ տրվի Արաքսն անցնել՝ Թավրիզ գնալու համար, բայց Լեռնային Ատրպատականի ինքնիշխան խան Ամիր Արշադը, իրեն Ղարադաղի տերը համարելով, չէր ենթարկվում վերևից եկած այդ հրահանգին, մեկ արգելում, մեկ թույլատրում էր գետանցումը՝ պահանջելով որքան հնարավոր է շատ դրամ: Գետն անցնելու և պարսկական հողի վրա ոտք դնելու համար սկզբում յուրաքանչյուր փախստականից վերցվում էր մեկ դեղին ոսկի (Հայաստանի Հանրապետության չեկերով՝ մոտ 2 միլիոն): Քանի որ Արաքսն անցնող «երջանիկների» առաջին քարավանները հիմնականում բաղկացած էին ունևորներից, ապա նրանք, առանց դժվարության, տալիս էին նշանակված վարձը: Արշադ խանը, ոգևորվելով դրանից, վարձը բարձրացրեց մինչև 2-3 ոսկու: Բայց փախստականների մյուս մասը ի վիճակի չէր այդքան բարձր վարձ տալ. նրանց ճնշող մասը գրոշ անգամ գրպանում չուներ: Մարդիկ, գլուխները կորցրած, վաճառում էին իրենց հոգեպահուստը՝ խանի դրած պայմանը կատարելու համար, և գետի պարսկական ափն էին անցնում կողոպտված, մերկ ու տկլոր[1]: Արդյունքում գետն անցնելը կատարվում էր ընդհատումներով, տեղի էին ունենում ձգձգումներ[2]: Վերջապես համաձայնություն ձեռք բերվեց, որ գետն անցած ամեն ոք վճարելու է կես ոսկի: Վճարումն այս անգամ կատարում էր Ս. Վրացյանի կառավարությունը:

Նժդեհը Մեղրի գյուղում էր, որտեղ ամեն կերպ արագացնում էր գիշերցերեկ կատարվող գետանցումը: Նկատի էր առնվում, որ Կարմիր բանակի զորքերն ամեն կերպ աշխատում էին որքան կարելի է շուտ հասնել Արաքս և փակել դեպի Պարսկաստան բացվող փոքր պատուհանը:

Դեռ հուլիսի 2-ին Նախիջևանի կողմից Գենվազի վրա վճռական հարձակում էին գործել Երևանյան խմբավորման երրորդ զորասյան զորքերը, որի աջ թևի մեջ մտնող 177-րդ գնդի մեկ գումարտակ՝ համալրված լեռնային հրետանու մարտկոցով, Օրդուբադից դուրս գալով, Գենվազի վրա էր հարձակվել Սոյուխ անունով սարի լանջերով:

Սակայն եթե Կապանի շրջանը գրավվել էր առանց Նժդեհի զորամասերի

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 1 հուլիսի:

[2] Տե՛ս **Ա. Աստուածատրեան,** Իմ անձնական յուշերը Ռուբէնի մասին, «Հայրենիք», 1966, սեպտեմբեր, թիվ 9, էջ 7:

կողմից լուրջ դիմադրության, ապա նույնը չէր Գենվազում: Ծանր կռիվներ տեղի ունեցան Կաքավաբերդի ենթաշրջանում: Այստեղ դիրքապահ ուժերը ուժգին դիմադրություն ցույց տվեցին խորհրդային զորամասին և կասեցրին նրա առաջխաղացումը: Ավելին, հուլիսի 8-ին Նժդեհի զինյալները հակահարձակման անցան, որի ընթացքում գումարտակին օգնության հասան 177-րդ գնդի մյուս զորամասերը և 178-րդ գունդը: Նոր ուժով բորբոքվեց մարտը. Սոյուխ սարի ստորոտները և սարին հարող բլուրները մի քանի անգամ ձեռքից ձեռք անցան: Ի վերջո, հերոսաբար կռվող հայկական ջոկատների ուժգին ճնշման տակ Կարմիր բանակի զորամասերը հարկադրված ետ քաշվեցին և ամրացան Օրդուբադից դեպի արևելք ընկած բարձունքներում: Գենվազի արծիվները, Նժդեհի խոսքերով ասած, նորից իրենց բներն էին վերադառնում հաղթական: Բայց, հակառակ այդ փայլուն հաջողության, նրանք լուռ ու մռայլ էին, սրտաբեկ էր ամբողջ Գենվազը: Բոլորը գիտակցում էին, որ շուտով վրա է հասնելու իրենց խոյանքի վերջը:

Մեղրի–Օրդուբադ ճակատում ստեղծված լարված վիճակը Երևանյան խմբավորման հրամանատարությանը ստիպեց լրացուցիչ ուժեր տեղափոխել այնտեղ: Մասնավորապես, խմբավորման առաջին զորասյան կազմում Վայոց ձորի ճակատ ուղարկված ադրբեջանցիներից կազմված «կարմիր տաբորը» (ռազմական գործողություններն այնտեղ վերջանալուց հետո) բերվեց Օրդուբադ: Օրդուբադ–Մեղրի ռազմաճակատ նետվեցին նաև զորքերի՝ Երևանյան խմբավորման ուրիշ զորամասեր:

Այսպիսին էր Գենվազի վրա Նախիջևանի կողմից հարձակման դեմ զանգեզուրյան ուժերի դիմադրության ընդհանուր պատկերը մինչև հուլիսի 9-ը, այսինքն՝ մինչև Գենվազի վրա խորհրդային զորքերի վճռական հարձակումը Կապանի կողմից:

Հուլիսի 9-ին և 10-ին Գենվազի վրա հարձակումը կատարվում էր երեք ուղղություններով: Կենտրոնով՝ Մեղրի գետի ուղղությամբ, ամբողջ ճակատով հարձակվում էին Կովկասյան 1-ին կորպուսի հիմնական ուժերը 4-րդ հրաձիգ և 1-ին հեծյալ գնդերի վրա: Կարմիր բանակի զորամասերին Զանգեզուրի պաշտպանները դիմադրում էին դատապարտվածի համառությամբ, սակայն բնական ամրություններին կառչած նրանց ցաքուցրիվ ջոկատներն այլևս երկար դիմադրել չէին կարող և արագորեն սկսեցին նահանջել դեպի Արաքսի հովիտը:

Զախից՝ հարավարևմտյան կողմից, հուլիսի 10-ին Գենվազի տարածք մտավ Կովկասյան կորպուսի 108-րդ հեծյալ գունդը, որին օժանդակում էին մի քանի ուրիշ զորամասեր: Դուրս գալով Ադրբեջանի Բարթազ պահակակետից՝ այդ զորքերը Արաքսի ձախ ափով արագ առաջացան դեպի Գենվազի կենտրոն Մեղրի գյուղը: Ճանապարհին նրանք գրավեցին Նյուվադի, Աստազուր (Շվանիձոր), Ալդարա գյուղերը և նախապատրաստվեցին գրոհել Մեղրի գյուղի վրա:

Աջից՝ Նախիջևանի կողմից, հարձակումը շարունակում էին Երևանյան խմբավորման երրորդ զորասյան զորքերը: Երբ Կապանի շրջանից և Ադրբեջանից Գենվազ մտած Կովկասյան կորպուսի զորամասերը և հայկական գնդերը համատեղ սրընթաց գրոհով մոտենում էին Մեղրի գյուղին, Նժդեհը ստիպված եղավ Օրդուբադ–Մեղրի հատվածից հանել մի քանի ջոկատներ և նետել մյուս երկու ճակատները: Բայց արդեն ուշ էր: Ստեղծված իրադրության մեջ ջախջախված զորամասերի շտապ վերախմբավորումներն այլևս ոչինչ փոխել չէին կարող:

Ամբողջ Լեռնահայաստանը, փաստորեն, գրավված էր բոլշևիկների կողմից: Հայ զորքի ու փախստականների մնացյալ հատվածը դեռ խռնված էր Արաքսի ափին: Փախստականներից շատերը, չսպասելով «քելեկների» մոտենալուն, խուճապահար իրենց նետում էին ջուրը, իսկ պարսկական ափին հայտնված տարագիրները, շշված այս նոր աղետից, չէին պատկերացնում իրենց հետագա անելիքները: Ահա այս ողբերգական իրադրության նախօրեին Թավրիզում հանկարծ հայտնվեց մի անգլիացի (հայտնի չէր, թե ով էր նա և ինչ առաքելություն ուներ), ներկայացավ Ս. Վրացյանին՝ ասելով, որ չպետք է ընկճվել Լեռնահայաստանի կորստի համար. ամեն ինչ դեռ կորած չէ: Նա ասաց. «Եթե կարողանաք սահմանի վրա բոլշևիկներից հետ գրավել 2-3 գյուղ և 3-4 օր դիմադրել Կարմիր բանակի զորամասերին, ապա հավատացնում եմ, այդ ժամանակ տեղի կունենա անսպասելի մի բան՝ օգնության կգան Անտանտի երկրների զինված ուժերը և բոլշևիկներից կազատագրվի Հայաստանը»: Վրացյանը, այդ «հրաշքին» հավատալով, Թավրիզից հրաշագործ անգլիացուն դաշնակցական գործիչ Օննիկ Մարջանյանի հետ ուղարկեց Արաքսի ափ՝ հայտնելու զորքին, որ ճիգեր գործադրի 2-3 գյուղ հետ գրավելու և պահելու մի քանի օրով: Բայց զորքը միամիտ չէր և չէր մտածում «փրկարար» գյուղեր գրավելու և պահելու մասին, այլ շարունակում էր գետն անցնել: Անգլիացին և Օ. Մարջանյանը Արաքսի ափից վերադարձավ Թավրիզ: Սա հեքիաթի էր նման, բայց փաստ է. այդ մասին ՀՅԴ 10-րդ համագումարում հաղորդել էր դաշնակցական հայտնի գործիչներից մեկը[1]:

Հուլիսի 9-ին Նժդեհին հայտնի դարձավ, որ Կարմիր բանակի զորամասերը հրաման էին ստացել անպայման գերի վերցնել Լեռնահայաստանի կառավարության անդամներին և առավել հայտնի դաշնակցական գործիչներին: Ահա թե ինչու նա կառավարությանը հրահանգեց նույն գիշերն իսկ անցնել Արաքսը:

Մեղրիում էր հավաքվել շրջանի գրեթե ամբողջ ժողովուրդը:

Գյուղական վաշտերը եկել էին զինված: Դեռ լուսաբացից ղողանջում էին Մեղրիի եկեղեցու զանգերը: Լրանում և ավարտվում էր հայ-բոլշևիկյան կռիվների մեկ տարին: 1920 թ. այդ օրերին էր, երբ խորհրդային զորամասե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 61:

ը, հանկարծակի մտնելով Կապան, պահանջել էին իրենց ճանապարհ տալ դեպի Նախիջևան և մերժում էին ստացել: Սկսվել էր Կապարգողթի հերոսամարտը:

Մեղրիի հնամենի չինարի շուրջը և դեպի Արաքս ձգվող ճանապարհի վրա խռնված էին հազարավոր մարդիկ՝ հուզված, խառնված մտքերով: Եկել էին ճանապարհ դնելու իրենց Սպարապետին:

«Ցտեսությո՛ւն, հերո՛ս ժողովուրդ,– բարձրացնելով ձեռքը՝ ասում է Զանգեզուրի առասպելական գոյամարտի հերոս առաջնորդը.– ցտեսություն եմ ասում և ոչ մնաս բարով...»:

Այդ զգայացունց պահը հետագայում Նժդեհը այսպես է ներկայացրել ընթերցողին. «Լալիս էր ժողովուրդը... Տխուր ղողանջում էին զանգերը: Լալիս էր Արևիքի խորհրդապաշտ հոգին: Մենք թողնում ենք հայրենի լեռները...»[1]:

Հուլիսի 9-ին Նժդեհը նույնպես անցավ Արաքսը:

Հուլիսի 12-ին Երևանյան խմբավորման զորքերն ուժեղ գրոհով մոտեցան Մեղրի գյուղին: Մինչ այդ արդեն գյուղի մատույցներին էին հասել Կապանից և Ադրբեջանից հարձակվող Կովկասյան կորպուսի զորամասերը, հայկական 4-րդ հրաձիգ և 1-ին հեծյալ գնդերը:

Հուլիսի 13-ին խորհրդային զորքերը բոլոր կողմերից գրոհեցին Գենվազի կենտրոն Մեղրի գյուղի վրա և գրավեցին այն: Դա նշանակում էր, որ ամբողջովին գրավված է Զանգեզուրը:

Նժդեհին հավատարիմ մի քանի հարյուր զանգեզուրյան զինյալներ, որոնց չէր հաջողվել անցնել Արաքսը, Գենվազի տարբեր տեղերում շարունակում էին կռվել ևս երկու օր: Հուլիսի 14-ին և 15-ին նրանց մի մասը նույնպես հեռացավ Պարսկաստան: Նրանց մեջ էր Կապանի հրամանատար Գերասիմ Աթաջանյանն՝ իր ընտանիքով[2]: Մնացածները ցրվեցին և վերադարձան իրենց գյուղերը: Ամենավերջինը գետն անցավ բաշգառնեցի խմբապետ Խնկո Ասատրյանը: Միայն դրանից հետո գետանցի հասարակ լաստերը՝ «քելեկները», անշարժացան պարսկական ափում:

Նժդեհը գրել է. «Առաջին գնդակը Կարմիր բանակի դեմ (նկատի ունի Հայաստանի վրա եկած խորհրդային զորքերի դեմ: – *Ա. Ս.*) արձակեց իմ զինվորը, և բովանդակ Ռուսաստանում և Անդրկովկասում վերջինը լինելով՝ նա թողեց կռվադաշտը»[3]:

Զանգեզուրի ժողովուրդն իր երկրի հերոս պաշտպաններին անհայտ ու հեռու ափեր էր ճամփում դառը մտածումներով ու ափսոսանքով:

«Ճշմարտությունը պահանջում է խոստովանել,– 1921 թ. սեպտեմբերին գրել է Նժդեհը,– որ Լեռնահայաստանը... մինչև վերջին րոպեն հավատարիմ

---

[1] **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, թիվ 12 (36), էջ 137:

[2] Տե՛ս **Ա. Արծրունի**, Դէպի Երեւան եւ վերադարձ, մաս 2-րդ, «Հայրենիք», 1941, մարտ, թիվ 5 (221), էջ 83:

[3] **Գ. Նժդեհ,** Իմ պատասխանը, էջ 7:

մնաց յուր ընտրած հրամանատարությանը և կառավարիչներին, մնաց այն համոզմանը, որ տարիների ընթացքում մենք խոսքով և գործով ներշնչել էինք նրան՝ երբեք չդավաճանել հայրենի երկրի անկախությանը, երբեք վիզ չթեքել Ադրբեջանին, ինչ անվան տակ էլ նա երևան գալու լինի: Սկսած Սիսիանի նահանջից, երբ ժողովուրդն ինքը նկատում էր, որ մենք հեռանում ենք, նա ոչ թե մեզ չվիրավորեց, մեր թիկունքից չխփեց, այլև զինվորությունը հարյուրներով հետևեց մեզ, չկամենալով բաժանվել մեզանից, և մենք ահագին ջանք գործադրեցինք դրանց ետ դարձնել իրենց գյուղերը, և ի լրումն այդ բոլորի՝ Գենվազի զանազան շրջաններից Մեղրիում հավաքված գյուղացիությունը լացով ու արտասուքով հրաժեշտ տվեց մեզ, իբրև իր հարազատների: Լեռնահայաստանից հեռացել են միայն գործիչ անհատներ, բայց հայրենի երկրի անկախության գաղափարը, նրան ներշնչած գաղափարը, աննկուն մնացել է ժողովրդի մեջ»[1]:

Համաձայն Արաքսի աջ ափին կատարած ցուցակագրության՝ ապրիլի 25-ից մինչև մայիսի 9-ը վճարելով գետն անցել է 700 մարդ, մայիսի 9-ից 14-ը՝ 392, մայիսի 14-ից 19-ը՝ 713, մայիսի 19-ից հունիսի 2-ը՝ 4385 մարդ: Բացի դրանից՝ այդ ժամանակաշրջանում գետն անվճար անցել է 400 մարդ: Հետագա ամիսներին նույնպես գաղտնի, հիմնականում գիշերները, Արաքսի տարբեր մասերով անցել են 1452 թուրքահայ զինվորներ և զանգեզուրցիներ: Այսպիսով, 1921 թ. ապրիլից սկսած, Գենվազի վրայով Պարսկաստան էր անցել 8042 մարդ[2]: Գենվազի գրավումը վերջին արարն էր: Ամբողջ Զանգեզուրը գրավված էր:

1921 թ. հուլիսի 15-ին Կովկասյան 1-ին կորպուսի զինվորական կոմիսար Ի. Սվիրիդովը Գորիսից Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահ Ա. Մյասնիկյանին հղած հեռագրում գրում էր. «...Կովկասյան 1-ին կորպուսը երջանիկ է հաղորդելու Ձեզ՝ ամբողջ Զանգեզուրում հեղափոխական կարգը վերականգնելու մասին: Հեղկոմներին հրահանգված է ձեռնարկել աշխատանքների կազմակերպումը՝ իրենց իրավունքների և պարտականությունների սահմաններում»[3]:

«Խորհրդային Հայաստան» թերթը 1921 թ. հուլիսի 15-ին «Ավանտյուրան խորտակվեց» խմբագրական հոդվածում գրում էր, որ Արաքսը անցել են և մտել Պարսկաստան թվով ավելի քան 300 դաշնակցական և էսէռական նշանավոր կամ աչքի ընկնող քաղաքական գործիչներ, որոնք, անկասկած, արտասահմանում շարունակելու են ակտիվ պայքարը խորհրդային իշխանության դեմ:

---

[1] **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի անկման պատճառների մասին, «Նորք», 1923, թիվ 3, էջ 363:

[2] Տե՛ս **Վ. Մինախորեան**, Ապրիլ 2-ի գաղթը (Երեւան-Թավրիզ), «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, թիվ 2, էջ 92:

[3] «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 544:

«Ինչ վերաբերում է հոշոտված, արնաքամ Զանգեզուրին,– այնուհետև գրում էր թերթը,– ապա նա մտավ իր հարազատ Խորհրդային Հայաստանի գիրկը և անցավ խաղաղ աշխատանքի: ...Մեր երկիրը ստանում է կատարյալ հնարավորություն իր բոլոր կենսական ուժերը՝ թե՛ մարդկային և թե՛ նյութական, գործադրելու երկրի բազմաթիվ վերքերը բուժելու համար: Ստեղծագործական, համառ աշխատանքի ֆրոնտը այսօրվանից միակ ֆրոնտն է, ու մենք նրան ենք տալու մեր բովանդակ ուժերը»[1]:

«Թշնամու հետքերով խաղաղ աշխատանքն է գալիս» վերնագրով հոդվածում «Խորհրդային Հայաստան» թերթը Զանգեզուրի աշխատավորությանը կոչ էր անում, առանց ժամանակ կորցնելու, լծվել ստեղծագործ աշխատանքի[2]:

Զանգեզուրի աշխատավորության անունից ողջույն ուղարկվեց Խորհրդային Հայաստանի աշխատավորներին, Ժողկոմխորհրդին և Կարմիր բանակին, որտեղ ասված էր. «Լեռնաշխարհի աշխատավոր գյուղացիությունը այսօրվանից իր բախտի տնօրինությունը վստահում է խորհրդային իշխանությանը՝ լի հավատով կապիտալիզմից բզկտված հայ աշխատավորության լուսավոր ապագայի նկատմամբ»[3]:

Սերգո Օրջոնիկիձեն, կապվելով Ա. Մյասնիկյանի հետ, Խորհրդային Հայաստանի կառավարությանը և ժողովրդին ողջունեց «Զանգեզուրի ազատագրման կապակցությամբ»:

1921 թ. հուլիսի 20-ին հրապարակվեց ՀՍԽՀ ժողկոմխորհրդի նախագահ ու ռազմգործերի ժողկոմ Ա. Մյասնիկյանի հրամանը՝ ՀՍԽ Հանրապետության զորքերին, որի մեջ նա զանգեզուրյան կռիվներում ցուցաբերած տոկունության և անձնազոհության համար շնորհակալություն էր հայտնում մարտիկներին ու հրամանատարներին և համոզմունք հայտնում, որ Հայաստանի Կարմիր բանակը պատվով կկատարի հանրապետության սահմանների պաշտպանության և ժողովրդի անվտանգության ու հանգստության ապահովման իր գերագույն պարտքը[4]:

Ի պատասխան այդ հրամանի՝ ՌՍՖԽՀ հրաձգային դիվիզիայի և զորքերի՝ Երևանյան խմբավորման հրամանատար Վելիկանովը նույն օրը՝ հուլիսի 20-ին, հետևյալ ողջույնը հղեց ՀՍԽՀ ժողկոմխորհրդի նախագահ և Կովկասյան առանձին բանակի Ռազմհեղկոմի անդամ Ա. Մյասնիկյանին. «Երևանյան խմբավորման զորքերի կարմիրբանակայինների, հրամանատարական կազմի և կոմիսարների անունից խորին երախտագիտություն ենք հայտնում Զանգեզուրը դաշնակների իշխանությունից ազատագրած մարտիկներին

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1921, 15 հուլիսի:

[2] Տե՛ս նույն տեղում, 20 հուլիսի:

[3] «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 544:

[4] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 20 հուլիսի:

ողջույն հղելու համար: Մեր կողմից, խմբավորման մարտիկների անունից շնորհավորանքներ ենք հղում Զանգեզուրը՝ Խորհրդային Հայաստանին միավորվելու առթիվ և շնորհակալություն հայտնում օպերացիայի նախապատրաստման և անցկացման ընթացքում խմբավորման մարտիկների նյութական կարիքների նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար: Լիահույս ենք, որ խմբավորման զորքերը կարդարացնեն դաշնակներից ազատագրված Զանգեզուրի բնակչության հետ եղբայրական հարաբերություններ հաստատելու [ՀՍԽՀ] ժողկոմխորհրդի հույսերը: Կեցցե՛ Խորհրդային Զանգեզուրը: Կեցցե՛ [կարմիր] բանակի և տեղական իշխանության ու բնակչության միասնությունը: Կեցցե՛ ՀՍԽՀ ժողկոմխորհուրդը և նրա նախագահը»[1]:

Իր հերթին հայկական Կարմիր բանակի գլխավոր շտաբի պետ Մոլկաչանովը 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը հեռագրում էր. «Խորհրդային Հայաստանի կարմիր զորքի մասերը՝ ամբողջովին առած և առանձին-առանձին վերցրած, ցուցաբերել են խիզախության, հերոսության և նվիրվածության օրինակներ»[2]:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը և Կովկասյան առանձին բանակի հրամանատարությունը մարտերում աչքի ընկած մարտիկների, հրամանատարների և քաղաշխատողների մի մեծ խմբի պարգևատրեցին կառավարական պարգևներով, պատվո զենքերով և հուշանվերներով[3]:

Ավելի ուշ՝ 1921 թ. օգոստոսի 3-ի նիստում, ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում ընդունեց. «1921 թ. հուլիս ամսին դաշնակցական ավանտյուրան Զանգեզուրում վերացնելու համար Հայաստանի Խորհրդային Հանրապետության **Կարմիր Դրոշի շքանշանով** պարգևատրել՝ Կովկասյան առանձին բանակի հրամանատար Հեկկերին, Կովկասյան կորպուսի հրամանատար Տոդորսկուն, ՌՍՖԽՀ 20-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Վելիկանովին, ՀՍԽՀ հրաձգային բրիգադի հրամանատար Միրիմանովին»:

Նույն որոշմամբ **մարտական** դրոշներ էին հանձնվում Առանձին կովկասյան բանակին, ՌՍՖԽՀ 20-րդ հրաձգային դիվիզիային, ՀՍԽՀ հրաձգային բրիգադին, ՀՍԽՀ 3-րդ հրաձգային հետևակային գնդին, ՀՍԽՀ Լոռվա հրաձգային գնդին, Հայկական առանձին հեծյալ բրիգադի հեծյալ գնդին[4]:

Այո՛, մեկը հաղթել էր, մյուսը՝ պարտվել: Հաղթողներն արդեն դրության տերն էին և պարգևներ էին ստանում: Բայց արդյոք պարտվե՞լ էր Զանգեզուրյան հերոսամարտը, պարտվե՞լ էին արդյոք Սյունիքի զինյալները: Պատասխանը տվել է պատմությունը. անպարտ էր մնացել **ոգին**, անպարտ՝ **գա-**

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 716, թ. 39:

[2] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 319, թ. 1:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 4, գ. 78, թ. 75-77:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 39, գ. 34, թ. 53-54:

ղափարը, և որ ամենակարևորն է, հաղթանակել էր **գործը**: Չէ՞ որ Զանգեզուրում թուրքերի արյունոտ կացինը քարին էր դիպել, գավառը զավթելու նրանց ավելի քան երեքամյա ջանքերը խորտակվել էին, լեռնավայրը մնացել էր հարազատ մոր՝ Հայաստանի գրկում: Սա էր ընդհանրական արդյունքը: Դա պարտություն չէր, այլ հաղթանակ: Հաղթանակ, որ վաստակել էր հայրենիքի ազատության գործին անսահման նվիրված զանգեզուրցին՝ իր զինուժով և դյուցազնական խոյանքներով:

Տասնամյակների հեռավորությունից մեր աչքերի առջև հառնում են անմար կերպարներն այն գործիչների, որոնք կազմակերպեցին զանգեզուրցիների գոյամարտը, կռեցին ոգու, գաղափարի և գործի հաղթանակը՝ առանց պարգևի և առանց խրախուսանքի ակնկալության:

Նժդեհի մեծագույն առաքինություններից մեկն այն էր, որ նա կարողացավ զանգեզուրյան գործիչներին ու մարտիկներին համախմբել մեկ դրոշի տակ և նրանց մղել հերոսական գործերի:

Հերոսապատումի տարեգրությունն իր էջերում պահում է բազում անուններ՝*

Աբրահամյան Մարտիրոս՝ քաջ ու անվեհեր խմբապետ.

Աթայան Կոստյա՝ դարաբաղցի, հմուտ զինվորական գործիչ.

Աթայան Սամսոն՝ Կապանի Խդրանց գյուղից, անձնուրաց գործիչ.

Աթաջանյան Գերասիմ՝ Կապանի Գյուտկում գյուղից, Լեռնահայաստանի ինքնապաշտպանության սյուներից մեկը: Սկզբում Գյութկումի վաշտապետ, ապա՝ շրջանային հրամանատար և վերջում՝ ամբողջ Կապանի ռազմական ղեկավար: Խելահեղ քաջության տեր անձնավորություն: Այնպիսի հանդուգն ձեռնարկների է մասնակցել ու անհատական այնպիսի քաջագործություններ կատարել, որ ժողովուրդը նրա անվան շուրջ հյուսել է բազմաթիվ առասպելներ: 1921 թ. հուլիսին տարագրվել է Պարսկաստան, մի քանի անգամ գաղտնի վերադարձել Կապան և կրկին անցել արտասահման: Որպես Զանգեզուրի դաշնակցական ընդհատակի պատգամավոր՝ մասնակցել է Փարիզում տեղի ունեցած ՀՅ դաշնակցության 10-րդ համագումարին (1924 թ. նոյեմբեր - 1925 թ. հունվար): 1929 թ. օգոստոսին՝ Զանգեզուրից հերթական անգամ Արաքս գետով Պարսկաստան անցնելիս, կռվի է բռնվել իրեն նկատած ռուս սահմանապահ զինվորների հետ և զոհ գնացել նրանց գնդակին:

Ալում՝ վաշտապետ.

Աղալո՝ Գորիսի շրջանի Արավուս գյուղից, խմբապետ.

Աղամյան Միքայել՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, Սիսիանի կոմիսար

---

* Ստորև բերվող ցուցակում մի շարք գործիչների անունները կամ ազգանունները նշված չեն, քանի որ հեղինակին չի հաջողվել դրանք պարզել:

Զաքար Տեր-Ղազարյանի տեղակալ՝ պարենավորման գծով: Վերացրել է պարենավորման բազմաթիվ տագնապներ: Անողոք էր դեպի բոլշևիկների գաղտնի գործունեությունը: Գնդակահարվել է բոլշևիկների կողմից Գորիսում, 1920 թ. օգոստոսի սկզբին:

Աղայան Գուրգեն՝ Կապանից, գոյամարտի անձնուրաց գործիչներից.

Ամիրխանյան՝ Ալեքսանդրապոլից, կապիտան, Գորիսի շրջանի Խնձորեսկի հատվածի ճակատապետ.

Ամիրջանյան Գարեգին՝ Ղազախից, գնդապետ, բազում մարտերի ղեկավար: Տարագրվել է Պարսկաստան և մահացել Նոր Ջուղայում:

Անտոնյան Թադևոս՝ Կապանի Բաղաբուրջ գյուղից, վաշտապետ: Կարևոր դեր է կատարել 1920 թ. աշնանը տեղի ունեցած կռիվներում (Կապանում և Արևիքում):

Առաքելյան Առաքել՝ Շինուհայր գյուղի ուսուցիչ, դաշնակցական գործիչ.

Առուստամյան՝ գորիսեցի, պորուչիկ: Ձերբակալվել և բոլշևիկների կողմից գնդակահարվել է 1920 թ. ամռանը:

Ասաղ՝ Գորիսի Քարահունջ գյուղից, քաջ սպա: Պարսկաստան անցնելիս՝ 1921 թ. հուլիսին, խեղդվել է Արաքս գետում:

Աստվածատրյան Ասատուր՝ դաշնակցական գործիչ.

Ավետիսյան Մուշեղ (Սասունցի Մուշեղ)՝ հին ֆիդայի, Սասունի գնդի հրամանատար: Զանգեզուրից Անդրանիկի հեռանալուց հետո մնացել էր գավառում, գոյամարտի եռանդուն կազմակերպիչներից էր, ինքնապաշտպանության հերոս:

Արզումանյան՝ կապիտան, թնդանոթաձիգ, հմուտ նշանառու.

Արմենակ՝ Կապանից, վաշտապետ, 1920 թ. հոկտեմբերյան ապստամբության հերոսներից.

Բաբայան Աղալո՝ Գորիս քաղաքի և մերձակա գյուղերի կոմիսար.

Բաբայան Արսեն՝ Կապարգողթի անձնազոհ պաշտպաններից, վաշտապետ.

Բաբայան Հովսեփ՝ Շիկահողի ենթաշրջանի անձնուրաց գործիչ.

Բաբայան Ներսես՝ գորիսեցի, նշանավոր դաշնակցական, կուսակցական գործիչ.

Բաբայան Նիկոլայ՝ գորիսեցի, ինքնապաշտպանության ակտիվ մասնակից, Նժդեհի դավիթբեկյան ջոկատներից մեկի հրամանատար, կապիտան.

Բաղիրյան Բագրատ՝ գորիսեցի, սպա, ստալինյան բռնությունների զոհ.

Բալասանյան Գևորգ՝ Գորիսի ենթաշրջանի կոմիսար.

Բալյան Գարեգին՝ Շինուհայր գյուղի քահանայի ավագ որդին, Շինուհայրի վաշտապետ.

Բալյան Ստեփան՝ Շինուհայր գյուղի քահանա.

Բաղդասարյան Բագրատ՝ Խնձորեսկ գյուղից, սպա: Տարագրվել է Պարսկաստան և մահացել Թեհրանում:

Բարխուդարյան Թովմաս՝ վաշտապետ, Կապարգողթի պաշտպանության նվիրյալներից.

Բեգյան-Մելիք-Ղարագյոզյան Բագրատ՝ Կապանի Եղվարդ գյուղից, պորուչիկ, Եղվարդի հյուսիսարևելյան ճակատի ղեկավար: Աչքի է ընկել Կապանի վերագրավման ժամանակ (1920 թ. հոկտեմբերի 9-10-ը): Փայլուն քաջություն է ցուցաբերել հատկապես հոկտեմբերի 22-ին և նոյեմբերի 6-ին՝ Երիցվանքի (Արծվանիկի) վրա բոլշևիկների կատարած հարձակումների ժամանակ, երբ իր քաջերով անցնելով հակառակորդի թիկունքը՝ նրան մեծ կորուստներ է պատճառել, խլել գնդացիրներ, վերցրել գերիներ, հաղթության նժարը թեքել յուրայինների կողմը:

Բեգյան-Մելիք-Քարամյանց Բագրատ՝ ղարաբաղցի, պոդպորուչիկ: Աչքի ընկնող դեր է խաղացել Կապանի վերագրավման ժամանակ (1920 թ. հոկտեմբեր):

Բոզունց Նաբի (Կիզիրի Նաբի)՝ Գորիսի շրջանի Տեղ գյուղից, քաջ կռվող.

Բունիաթյան Առուստամ՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, վաշտապետի օգնական: Սպանվել է 1920 թ. նոյեմբերյան կռիվներում՝ Ղարաքիլիսա գյուղի մոտ:

Բունիաթյան Ավագ՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, կոմիսար.

Բունիաթյան Միսակ՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, վաշտապետ: Սպանվել է 1920 թ. աշնանը տեղի ունեցած կռիվներում:

Բուշտունց Իսակ՝ գավառի դաշնակցական ակտիվ գործիչներից.

Գալստյան Վահան՝ Աղբաշից, կապիտան, ռուսական բանակի սպա, զանգեզուրյան կռիվների ակտիվ մասնակից.

Գասպարյան Գասպար (Արամայիս Մանուչարյան)՝ Նժդեհի հետախուզության պետ.

Գիլավյան Աստվածատուր՝ Գորիսի Խնձորեսկ գյուղից, պորուչիկ: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Գյուլնազարյան Մովսես՝ քաջ սպա, Գենվազ-Գողթանի անձնուրաց պաշտպաններից, Գողթանի հայկական միլիցիայի պետ.

Գրիգորյան Արմենակ՝ Գորիսի Յայջի գյուղից, քաջ վաշտապետ: Առաջին աշխարհամարտի ժամանակ՝ 1915 թվականին, Անդրանիկի կամավորական գնդի կազմում հասել է Վան: Պատերազմի ավարտից հետո եկել է հայրենի գյուղ, դարձել զանգեզուրյան գոյամարտի հերոսներից մեկը: Մահացել է ստալինյան ճամբարում:

Գրիգորյան Գարսևան՝ ռուսական բանակի փոխգնդապետ, 1920 թ. աշնանը Կապարգողթում տեղի ունեցած կռիվների հերոսներից: Տարագրվել է Պարսկաստան և մահացել Թեհրանում:

Գրիգորյան Գրիգոր *(Չոփուռ Գրիգոր)*՝ գորիսեցի, ազատամարտի նվիրյալ գործիչ.

Գրիգորյան Հարություն՝ Կապանի Խնդրանց գյուղից, ինքնապաշտպա-

նության զինյալներից, քաջ ու անվեհեր վաշտապետ: Ակտիվորեն մասնակցել է 1918-1921 թթ. Կապանում տեղի ունեցած համարյա բոլոր կռիվներին, հատկապես մեծ դեր է կատարել 1920 թ. աշնանը Կապանում և Արևիքում ծավալված մարտերի ընթացքում:

Դանիելյան Խաչատուր՝ մեղրեցի, Կապարգողթի հմուտ զինվորական ղեկավարներից: 1920 թ. աշնանը աչքի է ընկել Արևիքում ծավալված կռիվներում:

Դանիելյան Հովհաննես՝ Կապանից, ազատագրական կռվի նվիրյալներից.

Դավթյան Ասատուր՝ Կարճևանի վաշտի հրամանատար: Կապանի ճակատում կռիվներ է մղել ադրբեջանական հրոսակախմբերի դեմ: Բուն Զանգեզուրում, Սիսիանում, Կապանում կռվել է Նժդեհի զորքի շարքերում:

Դավթյան Արմենակ՝ Կապանի Ճակատեն գյուղից, քաջազուն վաշտապետ, Արևիքի հերոսներից: Մասնակցել է Կապարգողթի համարյա բոլոր կռիվներին: Կապանի վերագրավման ժամանակ (1920 թ. հոկտեմբերի 10) նրա վաշտն առաջինն է մտել Հանքեր և կտրել նահանջողների ճանապարհը:

Դավթյան Դավիթ՝ Արմենակ Դավթյանի եղբայրը, Արևիքի (Մեղրի) ինքնապաշտպանության կազմակերպիչներից, քաջ վաշտապետ.

Դոնդարով՝ Թիֆլիսից, Գորիսի ձիավոր հարյուրյակի հրամանատար.

Դորունց Նիկոլայ՝ գորիսեցի, Զանգեզուրյան ազատամարտի աչքի ընկած գործիչ.

Ենոք՝ Կապանից, քաջ վաշտապետ, Կապարգողթի՝ 1920 թ. աշնանը տեղի ունեցած արյունահեղ կռիվների հերոսներից.

Եսայան Մելիքսեթ (Քյոսա Մելիքսեթ)՝ ղարաբաղցի, Ինքնավար Սյունիքի պետական իշխանության ամրապնդման համար աշխատած գործիչ.

Էլչիբեկյան Միքայել՝ Կապան-Մեղրի շրջանի Ուգուրչայի ենթաշրջանի նվիրյալ գործիչներից.

Թերզյան Հովհաննես՝ թուրքահայ մարտիկ, Գորիսի Կոռնիձոր գյուղի հատվածում վաշտի հրամանատարի օգնական: Անցել է Պարսկաստան, մահացել է Համադանում:

Թորոսյան Սմբատ՝ Կապանի Հազարակ գյուղից: Ծառայել է ռուսական բանակում: Կապիտան, ինքնապաշտպանության հմուտ կազմակերպիչ, Սիսիանի ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանի օգնական: Աքսորվել է Սիբիր և մահացել այնտեղ:

Թումանյան Արիստակես՝ Կապան-Մեղրի հատվածի ինքնապաշտպանության կազմակերպիչներից.

Թումանյան Խեչան՝ Կապանի Ճակատեն գյուղից, խմբապետ, Կապանի 1920 թ. հոկտեմբերյան ապստամբության հերոսներից: Նոյեմբերի 3-ին Ճակատենի վրա թշնամու հարձակման ժամանակ իրեն դրսևորել է որպես կռվի քաջ ու անվեհեր կազմակերպիչ:

Իսունց Խաչատուր՝ Գորիսի Տեղ գյուղից, ինքնապաշտպանության խիզախ մարտիկ.

Լազր՝ Գորիսի Քարահունջ գյուղից, քաջ վաշտապետ.

Խանզադյան Արտեմ՝ գորիսեցի, բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) ազգային խորհրդի անդամ, խմբապետ: Գործուն մասնակցություն է ունեցել ազատագրական կռիվներին: Զանգեզուրում խորհրդային կարգերի հաստատումից հետո ձերբակալվել և տարիներ շարունակ տառապել է խորհրդային բանտերում և աքսորավայրերում (Երևան, Թիֆլիս, Մոսկվա, ծայրագույն հյուսիսի Սոլովեցկի կղզի): 1933 թ. փախել է աքսորավայրից և անցել Պարսկաստան, որտեղ ապրել է երկար տարիներ: Մահացել է Թեհրանում:

Խանզադյան Վանո՝ Գորիսից, գոյամարտի նշանավոր հերոսներից, 1920 թ. նոյեմբերին Գորիս մտած թուրքական գնդի ջախջախման կազմակերպիչներից մեկը: Տարագրվել է Պարսկաստան և մահացել Թեհրանում:

Խորենի Վահան՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, համալսարանական կրթությամբ, Հայաստանի խորհրդարանի անդամ: Բոլշևիկների կողմից տանջահար արվեց Գորիսի բանտում Արշակ Շիրինյանի հետ:

Խուրշուդյան Դավիթ՝ գորիսեցի, ՀՅ դաշնակցության Զանգեզուրի կազմակերպության հիմնադիրներից: Երկար տարիներ կատարել է կուսակցական պատասխանատու հանձնարարություններ, եղել է ՀՅԴ Սյունիքի կենտրոնական կոմիտեի անդամ: 1921 թ. ընդհանուր նահանջի ժամանակ տարագրվել է Թավրիզ, որտեղ ապրել է զրկանքների մեջ և հիվանդացել թոքախտով: Մի խումբ հայրենակիցների հետ վերադարձել է Զանգեզուր, որտեղ ձերբակալվել է ՉԵԿԱ-ի կողմից և, շատ չանցած, գնդակահարվել Գորիսի բանտում:

Խուրշուդյան Երեմ՝ գորիսեցի, վաշտապետ.

Ծատուրյան Արտաշես՝ Կապանից, դաշնակցական գործիչ, Ագարակի ենթաշրջանի պաշտպանության ակտիվ կազմակերպիչներից.

Կրմենանց Նիկոլայ՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, Զանգեզուրի ազատագրական շարժման նվիրյալ գործիչ.

Հակոբյան Սերգեյ՝ Կապանի Զեյվա գյուղից, ինքնապաշտպանության նվիրյալ գործիչ.

Հովհաննես Վարժապետ՝ գորիսեցի, դաշնակցական գործիչ.

Հովհաննիսյան Սողոմոն՝ Կապանի Նորաշենիկի ենթաշրջանի նվիրյալ գործիչներից.

Հտո՝ Գորիսի շրջանի Տանձատափ գյուղից, հին հայդուկ, հմուտ նշանառու: Սպանվել է 1920 թ. աշնանը:

Ղազարյան Գևորգ՝ ղարաբաղցի, շրջիկ գործիչ: Սպանվել է բոլշևիկների կողմից Սիսիանում:

Ղազարյան Նիկոլայ՝ գեներալ, զանգեզուրյան զորախմբի պետ.

Ղազարյան Ստեփան՝ Կապանի Առաջաձոր գյուղից, վաշտապետ.

Ղազարյան Տիգրան՝ Կապանի Խնդրանց գյուղից, քաջ վաշտապետ: Կապանի 1920 թ. հոկտեմբերյան ապստամբության հերոսներից, որի մարտիկները ցույց էին տվել խիզախության բազում օրինակներ:

Մադաթ՝ ղարաբաղցի, սպա, Գորիսի Քաչալ դաղ սարի լանջերին և Եռաբլուր հարթավայրում տեղի ունեցած կռիվների հերոսներից.

Մալինցյան Ազատ՝ հասարակական գործիչ: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Մալինցյան Գալուստ՝ Գորիսից, եռանդուն դաշնակցական գործիչ: Երկար տարիներ եղել է ՀՅ դաշնակցության Սյունիքի կենտրոնական կոմիտեի անդամ և քարտուղար, գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը «Ծակեր» կոչվող վայրում՝ Գորիսից Շուշի տանող ճանապարհին:

Մալինցյան Խաչատուր՝ գորիսեցի, ցարական բանակի սպա, Տեղի ենթաշրջանի հերոս ճակատապետ.

Մալունց Ղազար՝ հսկա հասակով ու ահռելի ուժով գորիսեցի: Նա, 1919 թ. Գորիս քաղաք մտած անգլիական զրահապատ ավտոմոբիլների առաջը կտրելով, ասել է. «Հեռացե՛ք Գորիսից, մենք թուրքին ենթարկվող չենք»: 1920-1921 թթ. զենքը ձեռքին կռվել է հիմնականում Գորիսի շրջանում:

Մաղաքյան՝ գորիսեցի, կապիտան, դաշնակցական գործիչ: Գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Մաշուրյան Գալուստ՝ Գորիսի շրջանի Վերիշեն գյուղից, Առաջին աշխարհամարտի տարիներին որպես զինվոր կռվել է Կովկասյան ռազմաճակատում: Զանգեզուրյան հերոսամարտերի ակտիվ մասնակից: Պարսկաստան անցնելիս՝ 1921 թ. հուլիսին, խեղդվել է Արաքս գետում:

Մաշուրյան Հակոբ՝ գորիսեցի, դաշնակցական գործիչ.

Մաշուրյան Սամվել՝ գորիսեցի, Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ.

Մարտիրոսյան Արշակ՝ Կապանի Նորաշեն գյուղի վաշտապետ.

Մարտիրոսյան Եփրեմ՝ Կապանի Ագարակի ենթաշրջանի պաշտպանության ղեկավարներից.

Մարտիրոսյան Սամսոն՝ Կապանի Խնդրանց գյուղից, Նժդեհի թիկնազորի հրամանատար, իր պաշտոնում միշտ արթուն և միշտ հավատարիմ: Բոլոր կռիվներում իրեն դրսևորել է իբրև խիզախ մարտիկ, հատկապես աչքի է ընկել Կապանի 1920 թ. հոկտեմբերյան ապստամբության օրերին և Կապարգողթում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ծավալված մարտերում:

Մարտիրոսյան Սաշա՝ Կապանի Բարաբաթում գյուղից: Աչքի ընկնող դեր է կատարել 1920 թ. դեկտեմբերի 9-ին և 10-ին՝ Կապանի վերագրավման ժամանակ:

Մելիք-Ալավերդյան Ասո՝ Նժդեհի վստահելի գործընկերներից.

Մելիք-Ալավերդյան Միքայել՝ ղարաբաղցի, պորուչիկ, Գորիս քաղաքի պարետ.

Մելիք-Թանգյան Սիմոն բեկ՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, պարենա-

վորման գործերով պատասխանատու գործիչ: Տարագրվել է Պարսկաստան, մահացել է Թավրիզում:

Մելիք-Հուսեինյան Բոգդան՝ գորիսեցի, դաշնակցական գործիչ, գնդապետ, Բարգուշատի ճակատի հրամանատար, Լեռնահայաստանի կառավարության անդամ: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Մելիք-Մուսյան Աշոտ՝ Զանգեզուրյան ազատամարտի ամենանշանավոր գործիչներից, Գենվազ-Գողթանի ինքնապաշտպանության ղեկավար, անձնուրաց հայրենասեր: Ինքնասպանություն է գործել 1921 թ.:

Մելիք-Յոլչյան Սերգեյ՝ Սիսիանից, համալսարանական, Զանգեզուրի գեներալ-կոմիսար: Տարագրվել է Պարսկաստան, մահացել է Թեհրանում:

Մելիք-Ստեփանյան Սմբատ՝ Կապանից, Գերմանիայի Ֆրայբուրգ քաղաքի լեռնային ակադեմիայի շրջանավարտ, հանքային գործի նշանավոր մասնագետ, Կապանի լեռնարդյունաբերական ընկերության հանքերի վարիչ, Կապանի ազգային խորհրդի նախագահ, Զանգեզուրի ինքնապաշտպանական կռվի կազմակերպիչներից: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո մնացել է Զանգեզուրում, մեծ աշխատանք կատարել Կապանի պղնձարդյունաբերության վերականգնման ուղղությամբ: 1937 թ. զոհ է գնացել ստալինյան բռնություններին: Հետմահու արդարացվել է:

Մելիք-Փարսադանյան Արշակ՝ Կապանի Բեխ գյուղից, հայրենի գյուղի վաշտապետ.

Մելիք -Փարսադանյան Սամսոն՝ Կապանի շրջանի ղեկավար գործիչ.

Մելիք-Փարսադանյան Ստեփան (Ստեմել)՝ Կապանի Բեխ գյուղից, Կապանի ինքնապաշտպանության ակտիվ մասնակիցներից: Մահացել է 1965 թ. Ֆրեզնոյում (Կալիֆորնիա), թողել է արժեքավոր հուշեր:

Մելիք-Փարսադանյան Փարսադան՝ Կապանից: 1920 թ. ամռանը գնդակահարվել է բոլշևիկների կողմից:

Մելիք-Քարամյան Արսեն՝ Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ, Ագարակի ենթաշրջանի պաշտպանության կազմակերպիչներից.

Մելիք-Քարամյան Բագրատ՝ Կապանից, դաշնակցական գործիչ, խմբապետ: Հատկապես կարևոր դերակատարություն է ունեցել Կապարգողթի կռիվներում:

Մելիք-Քարամյան Գարեգին՝ Գորիս քաղաքից, ինքնապաշտպանության նվիրյալ գործիչ.

Մելիք-Քարամյան Փարամազ՝ Կապանի շրջանից, Ագարակի ենթաշրջանի պատասխանատու կազմակերպիչներից.

Մելիք-Օհանյան Գարեգին՝ գորիսեցի, Տեղ–Կոռնիձոր շրջանի կոմիսար: Տարագրվել է Պարսկաստան և մահկանացուն կնքել Շիրազում:

Մելիք-Օհանյան Ռուբեն՝ գորիսեցի, Զանգեզուրի դաշնակցական երիտասարդական կոմիտեի նախագահ.

Մելիք-Օհանջանյան Միքայել՝ մեղրեցի, փոխգնդապետ, Արևիքի, Կապանի, Գողթանի հերոս պաշտպաններից.

Մելքոնյան Խաչիկ՝ զինվորական գործիչ: Հատկապես աչքի է ընկել 1920 թ. աշնանը Կապարգողթում և բուն Զանգեզուրում ծավալված կռիվներում:

Մինասյան Մինաս՝ գորիսեցի, Գորիսի ազգային խորհրդի անդամ.

Միրզաբեկյան Վազգեն՝ գոյամարտի նվիրյալ գործիչներից: Տարագրվել է Պարսկաստան, մահացել է Թեհրանում:

Մնացականյան Արամ՝ Կապանի Ճակատեն գյուղից, պոդպորուչիկ: Մեծ եռանդ է դրսևորել Կապանի վերագրավման (1920 թ. հոկտեմբեր), ինչպես նաև նոյեմբերի 3-ին Ճակատենի վրա թշնամու հարձակման և այն հետ մղելու ժամանակ: Անվեհեր կռվել է նաև Խոտանանի ճակատում:

Մուղդուսունց Ղազար ապեր (Ամի)՝ Գորիսից, գավառի ինքնապաշտպանության ոգեշնչող, հովանավոր.

Մուշտունց Իսահակ՝ Գորիսի շրջանի Տեղի ենթաշրջանի կոմիսար.

Յոլչյան Ղազար՝ գորիսեցի, Հայաստանի խորհրդարանի անդամ: Տարագրվել է Պարսկաստան ու մահացել Թեհրանում:

Նարինյան Ռուբեն՝ ղարաբաղցի, գնդապետ, Նժդեհի շտաբի պետ: Տարագրվել է Թեհրան և մահացել այնտեղ:

Նարինյան Վաղարշակ՝ ղարաբաղցի, էսէռ, Զանգեզուրի տնտեսության բարենորոգմանը բարվոքելուն նվիրված գործիչ.

Ներսես՝ Գորիսի Խնածախ գյուղից, հերոս մարտիկ.

Նիկողոսյան Նիկոլայ՝ Կապանից, վաշտապետ, Նժդեհի հակահետախուզության պետ: Ստեղծել է գերազանց աշխատող լրտեսական ցանց:

Նուրիջանյան Կարապետ՝ Կապանից, ջոկատապետ, բարձր գնահատված զինվորական գործիչ: Մեծ դեր է ունեցել Գեղվաձորի կռիվներում: Կապանի 1920 թ. հոկտեմբերյան ապստամբության կազմակերպիչներից է: Արտակարգ համարձակություն և հնարամտություն է դրսևորել Հանքերի վերագրավման ժամանակ: Նրա վաշտն էր, որ գրավեց Վաչագան գյուղի դպրոցի շենքը և գերի վերցրեց այնտեղ գտնվող կարմիրբանակայիններին:

Շահզադյան Լևոն՝ Խնձորեսկից, հասարակական գործիչ: Զգալի դեր է կատարել Գորիսի շրջանի պաշտպանության ամրապնդման գործում:

Շահմազյան Արսեն՝ սպա, զանգեզուրյան կռվի հրամանատար (1919 թ.): Ձերբակալվել է բոլշևիկների կողմից, նստել Օրյոլի և այլ վայրերի բանտերում, ապա աքսորվել Նավոտուրուխանսկ, այնտեղից՝ Սիբիրի ավելի հեռուները: Կրած տանջանքների պատճառով ստացել է հոգեկան խանգարում և մեռել սիբիրյան անհայտության մեջ:

Շիրինյան Արշակ՝ Գորիսի Շինուհայր գյուղից, դաշնակցական նշանավոր գործիչ, Գերմանիայում համալսարանական կրթություն ստացած, Հայաստանի խորհրդարանի անդամ, համազանգեզուրյան պայքարի ղեկավար:

1920 թ. օգոստոսի սկզբին Գորիսի բանտում տանջահար արվեց բոլշևիկների կողմից:

Շիրինյան Պատվական՝ Գորիսի Շինուհայր գյուղից, դաշնակցական աչքի ընկած գործիչ, Շինուհայրի ինքնապաշտպանության ղեկավար, հարևան Խոտ, Հալիձոր, Յայջի գյուղերի ինքնապաշտպանության կազմակերպիչներից, Նժդեհի ամենավստահելի մարդկանցից: Աքսորվել է Ալթայի երկրամաս և մահացել այնտեղ:

Շնաթաղցի Համբարձում՝ սիսիանցի վաշտապետ.

Շնաթաղցի Հովհաննես՝ հսկա մարմնով և անասելի քաջությամբ սիսիանցի զինյալ, որին Շիլարի ձորի թուրքերն իրենց հոգեառն էին համարում:

Ոսկանյան Մուշեղ՝ Զանգեզուրյան ազատամարտի նշանավոր գործիչներից, հմուտ ու քաջ վաշտապետ, Ազատ Սյունիքի պետական կազմավորման գործընթացի ակտիվ մասնակից.

Ոսկանյան Վոլոդյա՝ Գորիսի շրջանի Խնածախ գյուղից, եռանդուն դաշնակցական գործիչ: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Պարոնյան Արմենակ՝ գորիսեցի, կապիտան: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Պարոնյան Հովհաննես (Յապոն)՝ գորիսեցի, Լեռնահայաստանի ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, Դարալագյազի գավառապետ, տարագրվել է Պարսկաստան, երկար տարիներ ապրել Մուժամբար հայաբնակ գյուղում և այնտեղ կնքել իր մահկանացուն:

Պարոնյան Միքայել (Միշա)՝ Զանգեզուրի ազգային խորհրդի նախագահ.

Պետրոսյան Արտեմ՝ պորուչիկ, ղարաբաղցի, Զեյվայի կռվի հերոս.

Պետրոսյան Վարդազար՝ Կապանի Խլաթաղ գյուղից, գյուղի վաշտապետ.

Պողոսյան Գրիգոր՝ Կապանի Կավարտ գյուղից, քաջ խմբապետ: Միայնակ դիմադրել է իր վրա հարձակվող կարմիրբանակային մի տասնյակի, նրանց ստիպել նահանջել՝ խլելով մեկ գնդացիր:

Պուպսիկ՝ թնդանոթաձիգ սպա, 1920 թ. հուլիսի վերջերին Բորիսովկայի և Անգեղակոթի կռիվներում բոլշևիկների թնդանոթները լռեցնողը.

Սազանդարյան Տիգրան՝ Գորիսի Խնձորեսկ գյուղից, հայտնի մտավորական գործիչ, Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ.

Սարատիկյան Մեսրոպ՝ Զանգեզուրի նշանավոր ղեկավար գործիչներից.

Սարգսյան Արտեմ՝ Ղարաբաղի Ճարտար գյուղից, պոդպորուչիկ: Բոլոր կռիվներում եղել է քաջ ու անվեհեր:

Սարգիս՝ անգեղակոթցի, քաջ վաշտապետ: Արտակարգ հերոսություններ է կատարել հատկապես Սիսիանի վրայով դեպի Նախիջևան շտապող թուրքական գնդի դեմ մղած կատաղի կռիվներում:

Սարգիսջանյան Համբարձում՝ Գորիս քաղաքից, լեգենդար հերոս: Երկար տարիներ որպես փականագործ աշխատել է Բաքվում: 1902 թ. վերադառնալով ծննդավայր՝ նվիրվել է ՀՅ դաշնակցության՝ Գորիսի և Զանգեզուրի կազմակերպության ստեղծմանը: 1903 թ. հայ եկեղեցական կալվածքները բռնագրավող ոստիկանների ու կազակների դեմ կազմակերպել է ժողովրդական զինված դիմադրություն: 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ նրա սխրագործությունների մասին ժողովուրդը երգեր է հյուսել: Շուշիում կատարել է ցարական մի շարք պաշտոնյաների, այդ թվում՝ քաղաքի գլխավոր ոստիկանապետ Սախարովի, պրիստավ Շումակնիչի և այլոց ահաբեկումները: 1908 թ. ձերբակալվել է, դատապարտվել 12 տարվա տաժանակիր աշխատանքի: Աքսորվել է Սիբիր: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո ազատվել է, վերադարձել Գորիս, որտեղ շարունակվել է նրա խիզախումների պատմությունը: 1918-1920 թթ. Զանգեզուրյան հերոսամարտի կազմակերպիչներից էր: Կատարել է վտանգներով լի հանձնարարություն՝ լինելով պաշարված Զանգեզուրի և Երևանի միջև կապող օղակ: Զանգեզուրի գոյամարտից հետո հրաժարվել է մեկնել գավառից, չեկիստների կողմից ձերբակալվել է և 1920 թ. հոկտեմբերին գնդակահարվել Գորիսի բանտում:

Սարգսյան՝ շտաբս-կապիտան: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Սաֆրազբեկյան Աստղիկ՝ Սիսիանի Ղարաքիլիսա գյուղից, տեղի որբանոցի կառավարիչ, բոցավառ քարոզիչ.

Սաֆրազբեկյան Միշա՝ Սիսիանի Ղարաքիլիսա գյուղից, սպա.

Սիմոն՝ Գորիսի Երիցաթումբ գյուղից, ձիավոր հարյուրյակի հրամանատարի օգնական.

Ստեփանյան Համազասպ՝ Արևիքի, Գողթանի, Կապանի պաշտպանական մարտերի ակտիվ մասնակից, անձնազոհ խմբապետ.

Վարդան՝ Տաթևից, Տաթևի վաշտի հրամանատար, թուրքական գնդի ջախջախման ակտիվ մասնակից.

Վարդանյան Հայրապետ՝ Կապանից, Շիկահողի ենթաշրջանի ինքնապաշտպանության ղեկավարներից, դաշնակցական քարոզիչ ու կազմակերպիչ.

Վիզերդյան Նահապետ՝ Կապանի Վաչագան գյուղից: 1919-1921 թթ. անձնուրաց կռվել է Կապարգողթում տեղի ունեցած բազմաթիվ ընդհարումների ժամանակ: Հատկապես կարևոր առաջադրանքներ է կատարել 1920 թ. հոկտեմբերին Կապանի վերագրավման ժամանակ:

Տեր Գրիգոր՝ Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղի քահանա.

Տեր-Գրիգորյան Հովհաննես՝ Տաթևի վանքի վանահայր.

Տեր-Գրիգորյան Պատվական՝ Կապանի Շիշկերտ գյուղից, վաշտապետ: Մեծ դեր է ունեցել Կապան–Գենվազի շրջանում տեղի ունեցած կռիվներում:

Մշտապես կենդանի կապ պահպանելով հրամանատարության հետ՝ ամեն ինչ անում էր, որ Շիշկերտը դուրս մնար բոլշևիկյան քարոզչության ազդեցությունից:

Տեր-Գրիգորյան Սարգիս՝ Գորիսի Տանձատափ գյուղի վաշտի քաջ հրամանատար: Տարագրվել է Պարսկաստան և մահացել այնտեղ:

Տեր-Դավթյան Զաքար՝ Գորիսի Շինուհայր գյուղից, բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) Հալիձորի ենթաշրջանի կոմիսար, գոյապայքարի անձնուրաց գործիչ: Գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1920 թ. հուլիսի վերջին:

Տեր-Դավթյան Պողոս՝ Կապանի վերին Խոտանան գյուղից, գնդապետ, Սիսիանի զինված ուժերի աննկուն հրամանատար: Սպանվել է մարտում:

Տեր-Կարապետյան Վաղարշակ՝ Նժդեհի գործակիցներից, հմուտ զինվորական ղեկավար.

Տեր-Հարությունյան Անդրեաս՝ Կապանից, հմուտ վաշտապետ, Ագարակի շրջանի պատասխանատու, բազում կռիվների մասնակից: Բազմաթիվ քաջագործություններ է արել 1920 թ. սեպտեմբերյան կռիվներում և հոկտեմբերին՝ Կապանի վերագրավման ժամանակ:

Տեր-Հարությունյան Սիմոն (Թուխչի Սիմոն)՝ Վայոց ձորի Սերս գյուղի ծնունդ, ցարական բանակի սպա, հրետանավոր, զանգեզուրյան կռիվների հերոս, թնդանոթաձիգների (չորրորդ մարտկոց) լեգենդար հրամանատար: Սպանվել է Թիֆլիսում 1922 թ.:

Տեր-Հովհաննիսյան Բագրատ՝ Բռնակոթ գյուղից, Սիսիանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից: Տարագրվել է Պարսկաստան, սպանվել է Թավրիզում:

Տեր-Ղազարյան Զաքար՝ Սիսիանի Ղարաքիլիսա գյուղից, գյուղական ուսուցիչ: 1918-1920 թթ. եղել է Զանգեզուրի շրջանային խորհրդի անդամ, Սիսիան ենթագավառի կոմիսար, Զանգեզուրի ինքնապաշտպանության աննկուն ղեկավարներից: Սիսիանցիներից կազմած իր փառապանծ հեծելազորով բազմիցս Զաբուղի ձորերում ու Քաչալ դաղի բարձունքներում թե՛ Ադրբեջանի զորքերի դեմ կռիվների ժամանակ, թե՛ Նախիջևանի խաների դեմ օրհասական բախումներում կատարել է անթիվ սխրագործություններ: Նա Սյունիքի փրկարար հերոսամարտի այն քաջերից էր, որոնց կյանքի գնով Զանգեզուրը պահպանվեց որպես Մայր Հայաստանի անբաժան մաս: Քաջ գիտակցելով անիշխանության կործանարար հետևանքներից ժողովրդին փրկելու անհրաժեշտությունը՝ եռանդուն գործունեությամբ սանձահարում էր հասարակական ու պետական չարամիտ ոճրագործներին: Դեպի ժողովրդի թշնամիները իր անողոք գործելակերպով վաստակել էր շրջապատի բոլշևիկների ատելությունը: Զանգեզուր մտնելով՝ չեկիստները ձերբակալեցին նրան և սպանեցին Գորիսի բանտում 1920 թ. ամռանը:

Տեր-Ղազարյան Շմավոն՝ գորիսեցի, պորուչիկ: Սպանվել է 1920 թ. ամռանը՝ բոլշևիկների կողմից ձերբակալվելուց հետո:

Տեր-Մարգարյան Աստուր՝ Կապանից, Նորաշենիկի ենթաշրջանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից.

Տեր-Միրաքյան Ներսես՝ գավառի նշանավոր դաշնակցական գործիչներից.

Տեր-Մինասյան Գեղեոն՝ Կապանից, Ինքնավար Սյունիքի կառավարության ղեկավար: Տարագրվել է Պարսկաստան, ապա վերադարձել Հայաստան, դարձել ստալինյան բռնարարքի զոհ:

Տեր-Մինասյան Գրիգոր՝ Կապանի Նորաշենիկի ենթաշրջանից, քահանա, ջերմ հայրենասեր.

Տեր-Մկրտչյան Գասպար՝ Սիսիանի շրջանի Դարաբաս գյուղից, հավատարիմ դաշնակցական և գիտակից մարտիկ: Երկար ժամանակ աշխատել է Բաքվում, ունեցել է ցուցանակներ պատրաստելու արհեստանոց, որը նաև ծառայել է իբրև քաղաքի դաշնակցական կազմակերպության զենքերի պահեստ: 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ Բաքվում մասնակցել է բազմաթիվ համարձակ գործողությունների: Վերադառնալով Զանգեզուր՝ նա դարձել է տեղի ինքնապաշտպանական կռիվների ղեկավարներից մեկը, մասնակցել թուրք-ադրբեջանական և Նախիջևանի խաների նվաճողական հարձակումները ետ մղելու կռիվներին: Սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Տեր-Մկրտչյան Դավիթ՝ Սիսիանի շրջանի Դարաբաս գյուղից, Գասպար Տեր-Մկրտչյանի կրտսեր եղբայրը: Սովորել է Շուշիի թեմական դպրոցում: Դաշնակցական էր, մեկը Զանգեզուրի ինքնապաշտպանական կռվի ղեկավարներից: Նա դեռ պատանի տարիքից ակտիվ մասնակցություն է ունեցել 1903-1904 թթ. ժողովրդական շարժմանը՝ ուղղված ցարիզմի կողմից հայ եկեղեցու կալվածքների բռնագրավման դեմ: ՀՅԴ մարմինների հանձնարարությամբ կատարել է ահաբեկչություններ: Լայն ժողովրդականություն էր վայելում ոչ միայն հայրենի գյուղում և Սիսիանի շրջանում, այլև ողջ գավառում: Եղբոր՝ Գասպար Տեր-Մկրտչյանի հետ սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Տեր-Մովսիսյան Բոգդան՝ Կապանի Զեյվա գյուղից: Սխրանքներ է կատարել Զեյվայի ճակատում տեղի ունեցած մարտերում:

Տեր-Պետրոսյան Աստվածատուր՝ Կապանի Խնդրանց գյուղից, ռուսական բանակի պորուչիկ, Կապարգողթի պաշտպանության հմուտ կազմակերպիչներից: 1920 թ. սեպտեմբերյան կռիվներում հատկապես աչքի է ընկել Ինջաբել սարի լանջերին՝ իր մարտիկներով փակելով լեռնանցքը:

Տեր-Պողոսյան Հովհաննես՝ Կապանի Խոտանան գլուղից, կապիտան: Ծառայել է ռուսական բանակում, Կապարգողթի անձնվեր պաշտպաններից է:

Տեր-Սարգսյան՝ գնդապետ: Գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Տերունի Հակոբ՝ սիսիանցի, Զանգեզուրի ազգային խորհրդի ներկայացուցիչը Սիսիանում: Մահացել է Թեհրանում:

Տիգրան՝ Կապանի Փիրմազրա գյուղի բնակիչ, գյուղի քաջ վաշտապետ.

Տոռոզյան Գրիգոր՝ գորիսեցի, պորուչիկ, ինքնապաշտպանական բազմաթիվ կռիվների մասնակից: Բոլշևիկների կողմից գնդակահարվել է 1920 թ. ամռանը:

Փառակեցի Առաքել՝ Գողթանի զինվորական հրամանատար.

Փարսյան Պողոս՝ Գորիսից, դաշնակցական գործիչ, Դաշնակցությանն անդամագրվել էր կուսակցական կազմակերպության՝ Զանգեզուրում հիմնադրվելու առաջին օրերից՝ 1902 թվին: Գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Քալանթարյան Լևոն՝ դաշնակցական գործիչ, գոյամարտի կազմակերպիչներից.

Քոչարյան Ավագ՝ գորիսեցի, պորուչիկ: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Քոչարյան Ղազար (Քաչալ Ղազո)՝ բաշգառնեցի, ազատագրական կռվի հայտնի հերոսներից: 1919 թ. իր խմբով հաղթանակներ է տարել Աստապատի և Կապուտջուղի կռիվներում: Գենվազ–Գողթանի ինքապաշտպանության ղեկավարներից է:

Օհանյան Աղաջան՝ դարաբաղցի, խմբապետ: Սպանվել է 1920 թ.:

Օհանյան Գարեգին՝ գորիսեցի, պորուչիկ: Ձերբակալվել և սպանվել է բոլշևիկների կողմից 1920 թ. ամռանը:

Օհանյան Տրդատ՝ գորիսեցի, պորուչիկ, ինքնապաշտպանական բազմաթիվ կռիվների մասնակից: Բոլշևիկների կողմից ձերբակալվել և գնդակահարկել է 1920 թ. ամռանը:

Օսիպով Նիկոլայ՝ Գորիսի ազգային խորհրդի անդամ, հետագայում՝ աքսորյալ.

Օրբելյան Նիկիտա՝ թնդանոթաձիգ սպա, ադրբեջանական թնդանոթաձիգների սարսափը.

Օրբելյան Միշա՝ Տաթև գյուղից, սպա:

Վերոնշյալ թվարկումն ընդգրկում է զանգեզուրյան գոյամարտի անձնուրաց գործիչների ու զինյալների աննշան մասը միայն: Իսկ որքա՜ն խոնարհ հերոսներ շարունակում են մնալ մոռացության ստվերում: Սյունյաց աշխարհի ազատության համար իրենց կյանքը զոհաբերած բոլոր հայորդիներն անուն առ անուն արժանի են մնալու ներկա և գալիք սերունդների հիշողության մեջ:

ՕՏԱՐ ԱՓԵՐՈՒՄ

1921 թ. ապրիլի վերջերին արդեն (հատկապես մայիս և հունիս ամիսներին) Պարսկաստան անցած քաղաքացիական փախստականների և՛ երևանյան, և՛ արևմտահայ հատվածը, զինվորականության մեծ մասը կուտակվել էին Թավրիզում և մերձակա բնակավայրերում: Արաքսի պարսկական ափից մինչև Թավրիզ և Ատրպատականի ժամանակավոր այլ հանգրվաններ հասնելու ընթացքում նրանք տվել էին զգալի զոհեր: Ճանապարհին քրդերի կողմից սպանվեցին շատերը, առևանգվեցին և բռնի մահմեդականացվեցին տասնյակ կանայք: Այդ ճանապարհին անհետացավ նաև Հայաստանի խորհրդարանի անդամ Լևոն Զարիֆյանը՝ իր կնոջ և 13 ուրիշ մտավորական կանանց ու տղամարդկանց հետ[1]:

Ինչ վերաբերում է հուլիսին Պարսկաստան անցածներին, ապա նրանք գերազանցապես սյունեցիներ էին: Ի տարբերություն արևմտահայ և երևանյան զորամասերի զինվորականների, որոնք նախքան Արաքսն անցնելը՝ ապրիլ-հունիս ամիսներին, իրենց զենքերի մեծ մասը թողել էին Կապանում և Մեղրիում, Լեռնահայաստանի զինված ուժերի մարտիկներն ու հրամանատարները՝ թվով 1200 հոգի, գետն անցնելիս իրենց հետ տարել էին անձնական զենքերը: Այնպես որ նրանք պարսկական ափ էին դուրս եկել զինված: Ավելին, զանգեզուրցիները կարողացել էին Պարսկաստան տանել մի քանի լեռնային թնդանոթներ և տարբեր տեսակի գնդացիրներ[2]:

Մի քանի օր անց Արաքսի պարսկական ափին սյունեցիներից նույնպես մարդ չէր մնացել. համարյա բոլորն անցել էին Թավրիզ:

Այսպիսով՝ հուլիսի վերջերին Թավրիզում և նրա շրջակայքում հավաքված էր մի քանի հազար հայ տարագիր: Քաղաքի Ղալա և Լիլավա հայկական թաղամասերում մարդկային հեղեղ էր ծփում: Մտավորական, բուրժուա, բանվոր, գյուղացի օրերով անորոշ թափառում էին փողոցներում: Փոքրաթիվ երջանիկներն էին տեղավորվել հարմարավետ բնակարաններում, իսկ 90 տոկոսից ավելին տեղ էր գտել խմելու ջրից և կենցաղային ամենատարրական պայմաններից զուրկ կացարաններում, շատերը նույնիսկ գիշերում էին գոմերում, շենքերի փլատակների մեջ կամ ուղղակի մայթերի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 58:

[2] Տե՛ս «Յեղափոխական ալպոմ: Ազատագրական պայքարի յուշամատեան», հատոր Ե, Բեյրութ, 1965, թիվ 12 (60), էջ 350:

վրա[1]: Պարսկական իշխանություններն ընդհանուր առմամբ ըմբռնումով էին վերաբերվում փախստականներին, թեև քիչ չէին նաև տհաճ միջադեպերը: Հենց Թավրիզում եղան գաղթականներին կողոպտելու բազմաթիվ դեպքեր: Զանգեզուրցի մարտիկների և արարատյան փախստականների նկատմամբ պարսիկների մոտ սկզբնական շրջանում եղած հիացումը աստիճանաբար փոխվում էր անտարբերության, առանձին դեպքերում՝ նաև արհամարհանքի: «Զանգեզուրն արդեն ընկել էր, այլևս հետաքրքրական չէր նա – Finish Armenia»[2],– իրավիճակն այդ պահին այսպես դիպուկ է բնութագրել Ս. Վրացյանը:

Թավրիզում ապաստան էին գտել պետական, կուսակցական, ռազմական, հասարակական բազմաթիվ գործիչներ՝ Հայաստանի Հանրապետության բյուրո-կառավարության անդամներ, Հայրենիքի փրկության կոմիտեն՝ իր ղեկավարներով և բոլոր անդամներով, Լեռնահայաստանի կառավարության անդամներ, մի քանի տասնյակ վաշտապետեր, Հայաստանի խորհրդարանի անդամներ: Այստեղ էին Հովհաննես Քաջազնունին, Սիմոն Վրացյանը, Համո Օհանջանյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Կարո Սասունին, Համբարձում Տերտերյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, Ավետիս Սահակյանը (հայր Աբրահամ), Վահան Մինախորյանը (Էսէռ), Արշամ Խոնդկարյանը (Էսէռ), Արշալույս Աստվածատրյանը և ուրիշներ:

Մեծ թիվ էին կազմում հայ մտավորականները՝ ուսուցիչներ, խմբագիրներ, բժիշկներ, փաստաբաններ, գավառային գործիչներ: Թավրիզում էին հայ մտավորական ընտրանու մի շարք փայլուն ներկայացուցիչներ, այդ թվում՝ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, Նիկոլ Աղբալյանը, Բախշի Իշխանյանը, Գրիգոր Ջաղեթյանը, Մալխասը, Սիրական Տիգրանյանը և ուրիշներ:

Նրանց հետ էին սպաներ և խմբապետեր Սուրեն Թարխանյանը, Ասլան Վանեցին, Գերասիմը, Մուշեղ Սասունցին, Սիմոն Վանեցին, Յապոնը, Դալի Ղազոն*, Քյուրդ Ղազոն, Շավարշ Ալաշկերտցին, Խնկոն, Բաշգառնեցի Մարտիրոսը, Հակոբ Օհանջանյանը և ուրիշ նշանավոր դեմքեր[3]:

Այն բանից հետո, երբ գաղթականությունն ամբողջովին անցել էր Պարսկաստան, Վրացյանը Թավրիզում հանդես եկավ հայտարարությամբ, թե Ազատ Հայաստանի միացյալ կառավարությունը շարունակում է պահպանել 1921 թ. հունիսի 1-ին Գորիսում իրեն տված լիազորությունները և իր վարչապետությամբ ստանձնում է գաղթականության գործերի ղեկավարման պատասխանատվությունը:

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 1 հուլիսի:

[2] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 182:

* Չշփոթել Դալի Ղազարի հետ:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 88, թ. 51 և շրջերես:

Պարսկական ափ անցնելուց հետո Նժդեհն ուղիղ գնացել էր Ղարադաղի հայկական Մուժամբար գյուղը: Այդ ժամանակ Ղարադաղի խան Ամիր Արշադի և Ատրպատականի հզոր խաներից մյուսի՝ Թաղիի միջև կռիվներ էին գնում: Դեռևս 1921 թ. հունիսին, երբ շարունակվում էին կռիվները Լեռնահայաստանում, վերջինիս ուժերը Մեղրիից 20 վերստ դեպի հարավ-արևելք գտնվող Ուչթուբինի մոտերքում ջարդել էին Ամիր Արշադի զորքը: Արշադը դիմել էր իր բարեկամ Նժդեհին՝ խնդրելով օգնել իրեն: Մեղրիի վրայով հունիսի կեսերին Լեռնահայաստանից 500 զինյալներ անցել էին սահմանը և դիրքեր գրավել Ամիր Արշադի և Թաղի խանի զորքերի մեջտեղում, որպեսզի վերջինիս թույլ չտան վերջնականապես ջարդելու Արշադին՝ դրանով իսկ միաժամանակ ապահովելով իրենց թիկունքը[1]:

Նժդեհի՝ Մուժամբարում գտնված ժամանակ Ս. Վրացյանի «կառավարության» մարդիկ բանակցություններ սկսեցին Ղարադաղի խան Ամիր Արշադի հետ և արդյունքում եկան համաձայնության, որ «հայկական կառավարությունը» խանին «նվիրում է» Զանգեզուրից բերած զենքի մի մասը, իսկ վերջինս ապահովում է Ղարադաղում ապաստան գտած հայ փախստականների ֆիզիկական անվտանգությունը:

Զենքը Նժդեհի տրամադրության տակ էր: Ելնելով Ամիր Արշադի հետ Վրացյանի մարդկանց պայմանավորվածությունից՝ նա խանին հանձնեց բոլոր 4 թնդանոթները (որոնցից երկուսի բանալիներն իր մոտ էր պահելու այնքան ժամանակ, մինչև որ Արշադը կձեռնարկեր կատարելու ստանձնած պարտականությունը) և գնդացիրներից 8-ը: Ամիր Արշադը Վրացյանին խնդրել էր նաև հայ սպաներից տրամադրել մի քանի հրահանգիչներ, որ նրանք իր մարդկանց սովորեցնեին, թե ինչպես պետք է գործածել ստացած զենքերը: Խանի խնդրանքը կատարվեց:

Պարսկական կառավարությունը, որն Ամիր Արշադի հետ այդ ժամանակ լարված հարաբերությունների մեջ էր, տեղեկացավ այդ մասին և ափսոսանք հայտնեց կատարվածի համար: Ատրպատականի նահանգապետը թեմակալ առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանին փոխանցեց կառավարության պահանջը՝ հայ սպաներին ու զինվորներին ետ կանչել Ամիր Արշադի մոտից և ընդհանրապես չխառնվել Պարսկաստանի ներքին գործերին:

Այդ տհաճ դեպքի առթիվ դաշնակցական գործիչներից մեկը հետագայում գրել է. «Մի կողմից մենք մեր միակ բարեկամ Պարսկաստանում ապաստան էինք գտնում, հյուրասիրվում էինք, մյուս կողմից այսպիսի անմիտ գործեր կատարում»[2]:

Հուլիսի վերջերին Մուժամբարում Նժդեհը հիվանդացավ և կազդուրվե-

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 26 հունիսի:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 61:

լուց հետո միայն օգոստոսի կեսերին տեղափոխվեց Թավրիզ[1]: Այստեղ նա ապրում էր գաղտնի[2]՝ հաճախ փոխելով բնակարանը: Նժդեհին հավատարիմ խմբապետերը հերթով պահակություն էին անում նրա կացարանի մոտ, քանի որ երկյուղ կար, որ նրա սպաներից որևէ մեկը կարող է ահաբեկչական փորձի դիմել: Խաթարված էր Սպարապետի հոգեկան վիճակը նաև այն պատճառով, որ ՀՅԴ բարձրագույն կուսակցական դատարանին* առընթեր ստեղծված հատուկ հանձնախումբը հավաքում էր նրան վերաբերող համապատասխան բոլոր նյութերը՝ դատելու համար: Երբեմն գիշերները նա գնում էր դատական ատյան՝ հարցաքննվելու և բացատրություններ տալու: Սպարապետին ներկայացված հիմնական մեղադրանքը Սյունիքի անկախության կորուստն էր[3]:

Թավրիզ գալուց հետո Նժդեհը հայտնվեց անգլիական հետախուզության դեմ հանդիման: Անգլիացիները նրան փորձում էին մղել նոր, վտանգավոր քայլերի: Թավրիզում անգլիական հյուպատոս Քրիստոուն երկու անգամ իր մոտ էր հրավիրել Նժդեհին, նրան համոզել Զանգեզուրում բարձրացնել ապստամբություն:

«Իմ կարծիքով Նժդեհը դժվար թե նորից Լեռնահայաստան գնա՝ ապստամբություն սկսելու»[4],– Թավրիզից իր վերադասին գրում էր խորհրդային գաղտնի լրտեսներից մեկը: Նա ճիշտ էր. Նժդեհը հյուպատոսին պատասխանել էր, որ ինքը տրամադիր չէ այդ քայլին դիմելու և շուտով մեկնելու է արտասահման[5]: Նոր տեսակցություններից նա խուսափում էր, որովհետև գաղթականության շրջանում արդեն աշխույժ խոսակցության նյութ էին դարձրել հյուպատոսի հետ նրա ունեցած հանդիպումները՝ ամենազանազան մեկնաբանություններով:

1921 թ. Խորհրդային Ռուսաստանի և Իրանի միջև ստորագրվել էր պայմանագիր, որի 6-րդ հոդվածի համաձայն՝ Ռուսաստանն իրավունք էր ձեռք բերել իր զորքերը մտցնել Իրան, երբ որևէ երրորդ տերություն փորձի նրա տարածքը վերածել հենակետի՝ խորհրդային պետության դեմ ռազմական գործողություններ սկսելու համար:

Հայ գաղթականության ղեկավարները, նախկին հայկական խորհրդարանի անդամները, հայկական բանակի սպաները, խմբապետերի մեծ մասը

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 88, թ. 51:

[2] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 445:

* Դեռ Լեռնահայաստանում ՀՅԴ գործիչների միջև տեղի էին ունեցել անախորժություններ, թյուրիմացություններ, բախումներ, որոնք տարագիրների՝ Թավրիզ եկած միջոցին քննության առարկա դարձան ՀՅԴ գերագույն ատյանի կողմից. այն ընտրվել էր Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովում (1919 թ., Երևանում)՝ քննելու համար դատական բնույթի խնդիրները:

[3] Տե՛ս «Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը: Նշխարներ, վկայութիւններ», էջ 444-445:

[4] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 4:

[5] Տե՛ս նույն տեղում, գ. 45, թ. 45:

դեմ էին Պարսկաստանում անգլիական ներկայացուցչությունների հետ ակտիվ շփումներին: Անգլիացիներն ամեն ինչ անում էին ամրապնդելու համար իրենց թուլացած ազդեցությունը Իրանում և պարսից կառավարության հետ շփումների մեջ էին, որպեսզի ձեռք բերեն նրա համաձայնությունը և զորքեր տեղաբաշխեն երկրի հյուսիսում՝ մերձավորարևելյան իրենց գաղութները «կոմունիզմի վարակից» փրկելու համար: Հայկական գաղթականության վերնախավը տագնապ ուներ, որ խորհրդային կողմը, հենվելով ռուս-իրանական պայմանագրի նշված հոդվածի վրա, կարող է ցանկացած պահի իր զորքերը մտցնել Ատրպատական՝ հայ վտարանդիության վերնախավի համար անկանխատեսելի հետևանքներով:

Թավրիզում գործում էին հայկական քաղաքական երեք ուժեր՝ դաշնակցական, հնչակյան և կոմունիստական, լույս էր տեսնում երեք թերթ՝ «Այգը», «Մինարեթը» և «Զանգը»:

Ամենաբազմամարդը և ամենահեղինակավորը ՀՅԴ Թավրիզի շրջանային կազմակերպությունն էր, որի մեջ հաշվվում էր մինչև 700 մարդ: Կազմակերպության շրջանային կոմիտեի ղեկավարներն էին Հակոբյանը, Պիոնյանը, Պանիրյանը և ուրիշներ: Դաշնակցականները այստեղ հրատարակում էին երկու թերթ «Այգը» և «Մինարեթը»:

1921 թ. կեսերից Թավրիզի դաշնակցական կազմակերպության մեջ տեղի ունեցան գաղափարական լուրջ խմորումներ:

Դաշնակցության արտասահմանյան կառույցի՝ դեռևս մայիս ամսին ընդունած որոշմամբ նախատեսված էր հուլիսի 5-ին Գորիսում հրավիրել կուսակցության բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆերանս՝ հետևյալ օրակարգով՝ 1. զեկուցումներ. 2. ներկա պահը և Դաշնակցություն կուսակցության մարտավարությունը. 3. կուսակցության վերակազմավորումը. 4. ընթացիկ հարցեր:

Այդ նպատակով արտասահմանյան երկրներում անցկացվում էին կուսակցության բոլոր կազմակերպությունների ժողովներ և ընտրվում Գորիսի կոնֆերանսի պատգամավորներ:

Կոնֆերանսի պատգամավորներ ընտրելու համար հունիսի 24- ին Թավրիզում նույնպես տեղի ունեցավ դաշնակցականների ընդհանուր ժողով, որտեղ կուսակցության Արևելյան բյուրոյի անունից ընթացիկ պահի մասին զեկուցումով հանդես եկավ Համո Օհանջանյանը: Իր զեկուցման մեջ նա հատկապես կանգ առավ Հայաստանի վիճակի վրա՝ փորձելով ներկաներին համոզել, որ բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում չարիք է, ուստի ամեն մի դաշնակցականի պարտքն է հնարավոր բոլոր միջոցներով աջակցել Զանգեզուրյան շարժմանը: Ժողովում Օհանջանյանի զեկուցումը ենթարկվեց ուժգին քննադատության: Ձևավորված ընդդիմությունը պահանջում էր Գորիսում ոչ մի կոնֆերանս չհրավիրել և դադարեցնել շարժումը Զանգեզուրում: Ժողովի մասնակիցների մեծ մասն իր դժգոհությունը հայտնեց կու-

սակցության Արևելյան բյուրոյի քաղաքականության նկատմամբ[1]:

Դաշնակցության կազմակերպության մեջ ձևավորված ձախ հոսանքի ղեկավարներից մեկը «Մինարեթ» թերթի խմբագիր Ս. Հարությունյանն էր, որի հետևից էին գնում նաև խմբագրությունում աշխատող դաշնակցականները[2]: Այդ ձախ հոսանքը հավանություն էր տալիս Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությանը Այսրկովկասի նկատմամբ, բայց Խորհրդային Հայաստանի իշխանությունների հանդեպ խիստ բացասաբար էր տրամադրված, այսինքն՝ շարունակում էր կանգնած մնալ կուսակցության ընդհանուր գծի վրա: Այդ հակասությունը փոխադրվում էր «Մինարեթի» էջեր, որոնցում լույս էին տեսնում բովանդակությամբ իրար հակասող հոդվածներ[3]:

Ի վերջո «Մինարեթը» լիովին հրաժարվեց Խորհրդային Հայաստանի իշխանություններին քննադատելուց, աստիճանաբար դուրս եկավ դաշնակցական կազմակերպության ազդեցությունից և դարձավ անկախ: Հրաժարվելով հակախորհրդային դիրքորոշումից՝ թերթը, սակայն, չէր որդեգրում բոլշևիկյան գաղափարները: Թեև թերթն իր ետևից տանում էր Դաշնակցությունից հեռացող կամ հեռացած զգալի թվով անդամների, բայց նրան մինչև վերջ խորթ մնացին կոմունիստական գաղափարները[4]:

Թավրիզի դաշնակցական կազմակերպության պաշտոնական օրգանը շարունակում էր մնալ երկօրյա «Այգ» թերթը, որը բոլշևիզմի հանդեպ անհաշտ դիրքերում էր: Թերթը Զանգեզուրյան գոյամարտի, Նժդեհի վարած գործունեության ակտիվ քարոզիչն էր[5]: Ընդհանրապես դեպի բոլշևիզմը և առանձնապես դեպի Հայաստանի խորհրդային կարգերը թերթի անհաշտ վերաբերմունքը հատկապես ընդգծվեց, երբ նրա խմբագրումը հուլիս-սեպտեմբեր ամիսներին հանձնվեց Արտաշես Չիլինգարյանին: Նա էր ուղղություն տալիս թերթի գաղափարական դիրքորոշմանը մինչև Պարսկաստանից մեկնելը[6]:

Թավրիզում գործող ՍԴ հնչակյան կազմակերպության մեջ հաշվվում էր շուրջ 60 անդամ, որոնք ունեին իրենց ակումբը և ֆինանսական մեծ դժվարություններով հրատարակում էին «Զանգ» թերթը: Կազմակերպությունը ղեկավարում էր Ալեքսանդր Տեր-Մինասյանը[7]:

Հնչակյան կազմակերպությունն աստիճանաբար կանգնեց խորհրդային իշխանության ակտիվ պաշտպանության դիրքերում: Քանի որ կուսակցու-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 22-ի շրջերես:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 99, թ. 16-ի շրջերես:
[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 99, թ. 11:
[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 11:
[5] Տե՛ս նույն տեղում, գ. 45, թ. 12:
[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 99, թ. 16-ի շրջերես:
[7] Տե՛ս նույն տեղում, թ. 11:

թյան կազմակերպությունների մեծ մասը Ամերիկայում, Բալկաններում և Թուրքիայում կանգնել էր III ինտերնացիոնալի պլատֆորմի վրա, ուստի Թավրիզի հնչակյաններն իրենց համարում էին բոլշևիզմի համակիրներ: Այդ ուղղությամբ քարոզչություն էր սկսել նրանց «Զանգ» պաշտոնաթերթը: Աստիճանաբար, բոլշևիզմի ամրանալուն զուգընթաց, «Զանգը» դարձավ Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների ակտիվ քարոզիչ[1]:

Թավրիզում գործում էր նաև ոչ մեծաթիվ հայ կոմունիստների կազմակերպությունը: Նրա մեջ հաշվվում էր շուրջ 50 մարդ, որոնք ընդգրկված էին 4-5 բջիջներում: Կազմակերպությունը մտնում էր Պարսկաստանի նորաստեղծ Կոմունիստական կուսակցության մեջ, բայց գործնական որևէ ցուցում կամ աջակցություն չէր ստանում նրա ղեկավարությունից: Թավրիզի հայ կոմունիստներին ղեկավարում էր Արշավիր Չիլինգարյանը (Ռոբերտս):

Կոմունիստների կազմակերպությունը, հանձին նրա ղեկավար Արշավիր Չիլինգարյանի, ամենասերտ կապերի մեջ էր Խորհրդային Հայաստանի ղեկավարության, մանավանդ՝ Ասքանազ Մռավյանի հետ: Քանի որ կոմունիստները չունեին իրենց պաշտոնաթերթը, ուստի նրանք ստիպված օգտագործում էին հնչակյան «Զանգը»: Թերթի խմբագրակազմ էին մտել մի քանի կոմունիստներ, որի պատճառով թերթը փոխել էր իր նախկին ուղղությունը և դարձել բոլշևիկյան[2]:

Թվով փոքր, բայց ամուր կարգապահություն ունեցող հայ կոմունիստների կազմակերպությունը չէր բավարարվում «Զանգ» թերթի էջերը օգտագործելով և գնալով ընդլայնում էր իրազեկման ու քարոզչական աշխատանքները հայ բնակչության, մանավանդ՝ հայ փախստական զանգվածների մեջ: Այդ գործում կազմակերպությունը զգալի աջակցություն էր ստանում Խորհրդային Հայաստանից և Թավրիզում Հայաստանի կառավարության ներկայացուցչությունից: Այդ օգնությունը հիմնականում արտահայտվում էր քարոզչական նյութեր տրամադրելով, որի վկայությունը արխիվներում պահպանվող բազմաթիվ փաստաթղթերն են:

Այսպես, օրինակ, Թավրիզի հայ կոմունիստների կազմակերպության ներկայացուցիչը 1921 թ. հունիսի 25-ին Ա. Մռավյանին հասցեագրած նամակով խնդրում էր Երևանից ուղարկել անհրաժեշտ գրականություն:

«Խիստ շնորհակալ կմնանք,– գրում էր նա,– եթե ուղարկեք թարմ թերթեր, բրոշյուրներ, գլխավորաբար՝ Լենինի, Զինովևի, Կամենևի և Բուխարինի վերջին աշխատությունները: Առաջին առիթով ուղարկեցեք Բուխարինի "Азбука коммунизма" գիրքը, որը մեր կոմյաչեյկայի մեջ կատարվելիք աշխա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 7:
[2] Տե՛ս նույն տեղում:

տանքների համար անհրաժեշտ է: Գրականությունը լինի ռուսերեն, թուրքերեն և հայերեն»[1]:

Բացի քաղաքական կազմակերպություններից՝ Թավրիզում գործում էին նաև բարեգործական, ուսումնական և այլ կազմակերպություններ:

Պարսկաստան անցած հայ սպաները, խմբապետերն ու մաուզերիստները օգոստոսին ստեղծեցին իրենց «Ռազմական միությունը»՝ Կուռռ Թարխանյանի ղեկավարությամբ: «Միության» ներսում ձևավորվել էր երկու խմբավորում՝ սպաների և խմբապետերի: Սեպտեմբերի 10-ին տեղի ունեցած նիստում սպաները՝ թվով 45 մարդ, հարց էին բարձրացրել խմբապետերին «Ռազմական միությունից» հեռացնելու մասին, սակայն տեղի ունեցած բուռն վիճաբանությունների արդյունքում հարցը հանել էին օրակարգից: Հետագա օրերին սպաներից մի քանիսը ստիպված են լինում աշխատանքի անցնել պարսկական ժանդարմերիայում[2], իսկ մյուսները կազմակերպում են «Սպաների միություն»: Իրենց հերթին առանձին կազմակերպություն են ստեղծում խմբապետերն ու մաուզերիստները:

«Սպաների միությունն» ամբողջովին թշնամաբար էր տրամադրված ինչպես Վրացյանի և ընկերների, այնպես էլ խմբապետերի և մաուզերիստների նկատմամբ: Բայց իրենք՝ սպաներն էլ միասնական չէին, բաժանված էին երկու խմբի. մի խումբը պնդում էր պատվիրակություն ուղարկել Մյասնիկյանի մոտ և խնդրել հատուկ դեկրետ հրապարակել սպաների ներման մասին, մյուս խումբը բռնել էր սպասողական դիրք: Սպաները կտրականապես դեմ էին Խորհրդային Հայաստանի նկատմամբ թշնամական որևէ գործողության, իսկ նրանցից շատերը երազում էին հայրենադարձվել և ծառայել հայկական Կարմիր բանակում[3]:

Դրան հակառակ՝ խմբապետերի և մաուզերիստների կազմակերպությունը շարունակում էր թշնամական դիրքերի մեջ մնալ խորհրդային իշխանության հանդեպ, մերժում էր ՀՍԽՀ հեղկոմի ներման դեկրետները և մտածել անգամ չէր ուզում Հայաստան վերադառնալու մասին: Բայց հայրենիք վերադառնալու գաղափարը օրեցօր ընդգրկում էր փախստականության նորանոր զանգվածների:

Գաղթականության ժողովրդական խավերի մեջ գնալով խորանում էր այն գաղափարը, որ «Խորհրդային Հայաստանի ամբողջության դեմ ուղղված ամեն մի քայլ ոճրագործություն է, որ պետք է դադարեցնել պայքարը և, եթե հնարավոր է, մասնակից դառնալ երկրի վերաշինության»[4]: Այդ մտափոխությանը մեծապես նպաստում էին Հայաստանից պարբերաբար Թավրիզ ժա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 9-ի շրջերես:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 46:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 33, թ. 47:

[4] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 99, թ. 1:

մանող բոլշևիկ գործիչները: Նրանցից մեկը Երևան վերադառնալուց հետո՝ օգոստոսի 17-ին, ՀՍԽՀ արտգործկոմիսարին հղած զեկուցագրում նշում էր. «Թավրիզում խմորումները սկսել են վաղուց, և իմ պրոպագանդը միայն յուղ է լցրել բռնկված խարույկին: Փոթորկված մթնոլորտում խորհրդային գործչի մասնակցությունն այդ բռնկումներին առաջ է բերում բարձր, հեղափոխական տրամադրություն»[1]: Ապա նա հաղորդում էր. «Իմ՝ Թավրիզում եղած ժամանակ կարդացել եմ մի շարք դասախոսություններ և զեկուցումներ՝ հնչակյանների, դաշնակների, ռամկավարների, մինարեթականների* և այլ հասարակական խմբակցություններում: Իմ դասախոսությունն ամենից ուժեղ ազդեցություն է գործել տաճկահայ զինվորների և խմբավորումների ժողովում, որ կազմակերպված էր դաշնակների նախաձեռնությամբ: ...Մարդիկ այլևս հոգնել են լսել կացիններով զինված կարմիր զորամասերի մասին և այժմ խիստ կարոտ ունեն լսելու զգաստ ու կոնկրետ բացատրություններ խորհրդային կարգերի և հեղափոխության ընթացիկ մոմենտի մասին»[2]:

Քանի որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը դեռևս դիվանագիտական ներկայացուցչություն չուներ Պարսկաստանում, ուստի ինչպես Թեհրանի հայ ազգային իշխանությունները՝ հանձինս Ատրպատականի հայկական թեմի ղեկավարության և անձամբ թեմական առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանի, այնպես էլ փախստականության ղեկավարությունը մինչև հուլիսի վերջերը Խորհրդային Հայաստանի հետ առնչվող բոլոր հարցերով դիմում էին Պարսկաստանում ՌՍՖԽՀ դեսպանությանը և Թավրիզում գտնվող հյուպատոսությանը:

Գորիս քաղաքը գրավելուց հետո Մոսկվան, Ա. Մյասնիկյանի միջնորդությամբ, Թեհրանում խորհրդային լիազոր ներկայացուցիչ Ռոտշտեյնի վրա էր դրել նաև Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի պարտականությունները, սակայն պարսկական կողմը մտադիր չէր ընդառաջ գնալու Մոսկվայի այդ առաջարկին և շարունակում էր ճանաչել Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպան իշխան Արղությանի լիազորությունները: Չնայած Ռոտշտեյնի մի շարք պահանջներին՝ Արղությանը հրաժարվում էր նրան հանձնել Հայաստանի նախկին հանրապետության դեսպանության գործերը և գույքը՝ պատճառաբանելով, որ ինքը Զանգեզուրի կառավարությունից հանձնարարություն ունի շարունակել կատարել իր վրա դրված պարտականությունները և Զանգեզուրը ներկայացնել պարսկական կառավարության մոտ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 99, թ. 2:

* Նկատի ունի գաղթականների այն մասին, որը գտնվում էր «Մինարեթ» թերթի գաղափարական ազդեցության տակ:

[2] Նույն տեղում, թիվ 3:

Հուլիսի 16-ին ՀՍԽՀ արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանը հեռագիր հղեց Թեհրան՝ Իրանի արտգործնախարարին, որով նշում էր, որ Զանգեզուրը լրիվ խորհրդայնացված էր, նրա նախկին կառավարությունը գտնվում էր գավառի սահմաններից հեռու, ուստի ոչ մի խոսք չէր կարող լինել Արդությանի լիազորությունները պահպանելու մասին, և, հետևապես, նրան պետք է դիտել իբրև մասնավոր անձ: Ավելին, Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմի հեռագրում ասված էր. «Արդությանի նկատմամբ կարելի է դիմել ռեպրեսիվ միջոցների՝ որպես հայ ժողովրդի ունեցվածքը յուրացրած անձի»: Վերջում հույս էր հայտնվում, որ պարսկական իշխանությունները անհապաղ միջոցներ ձեռք կառնեն Հայաստանի դեսպանության գործերն ու գույքը հանձնելու Ռուսաստանի դեսպան Ռոտշտեյնին՝ որպես Խորհրդային Հայաստանի շահերը Իրանի կառավարության առջև ներկայացնող պաշտոնյայի[1]:

Քիչ թե շատ ուշքի գալուց հետո տարագիրների շրջանում, ինչպես և պետք էր սպասել, սկսվեց կատարվածի գնահատումը և վերագնահատումը, մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ Զանգեզուրի գործիչների նկատմամբ ծայր առավ սաստիկ քննադատությունների և դատապարտումների ալիքը, մյուս կողմից՝ վերջիններս հրապարակ բերեցին անթիվ-անհամար արդարացուցիչ պատճառաբանություններ: Ս. Վրացյանի վկայությամբ՝ «Մասնավորապես քննադատում ու դատապարտում էին Գ. Նժդեհին: Նրան էին համարում Զանգեզուրի վերջին բոլոր անհաջողությունների պատճառը: Իր հերթին, Նժդեհն էլ դատապարտում էր երևանցիներին, որոնք եկել ու բարոյալքել էին Զանգեզուրի ուժերը: Մեղադրում էր Ռուբենին, որ Արաքսի ափին անտարբեր նստած մասնակից չէր եղել Զանգեզուրի պայքարին բոլշևիկների դեմ: Մեղադրում էր Կուռոյին, որ, իբր, բավարար եռանդ ցույց չէր տվել Զանգեզուրը պաշտպանելու համար: Դժգոհ էր Սմբատը՝ իր մշեցիներով, դժգոհ էին սասունցիները: Բնական էր, ճակատամարտը կորցրած զինվորը պետք է դժգոհ լիներ և պարտության համար պատասխանատուներ փնտրեր»[2]:

Այստեղ ճշմարտության դեմ մեղանչում է Վրացյանը: Իրականում և՛ կուսակցական ընկերների շրջապատից, և՛ գաղթականության հսկա զանգվածից ամենաուժգին քննադատությանը ենթարկվում էր Վրացյանը, այլ ոչ թե Նժդեհը:

Վրացյանի ընդդիմախոսների մի մասը նրան ամենից շատ քննադատում էր Փետրվարյան ապստամբությունը նախապատրաստելու, Փրկության կոմիտեի գործունեության և Դարալագյազի հունիսյան հարձակման համար, որոնց հետևանքը երկրի հետագա քայքայումը և մի քանի հազար մարդկանց

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 88, թ. 15:

[2] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Զ, էջ 183-184:

կործանումն էր եղել: Նախկին վարչապետը հատկապես անողոք քննադատության էր ենթարկվում Հայաստանի խորհրդարանի՝ Թավրիզում կազմակերպչորեն միավորված անդամների կողմից, որոնք նրանից պահանջում էին հանրությանը բացատրություններ տալ կատարած գործողությունների համար: Վրացյանը խորհրդարանականներին պատասխանում էր, որ ՀՀ խորհրդարանը Հայաստանի Հանրապետության անկումով, բնականաբար, զրկվել է իր լիազորություններից, հետևապես նրա նախկին անդամները ոչ ոքի չեն ներկայացնում, և որ ինքը պատասխանատու է միայն Դաշնակցության առաջիկա 10-րդ համագումարի առջև, ուստի նրան էլ կտա մանրամասն հաշվետվություն՝ 1921 թ. Փետրվարյան ապստամբության առաջին օրից հետո ընկած ժամանակաշրջանում իր կատարած լավ ու վատ գործերի համար:

Խիստ քննադատության էին ենթարկվում հատկապես Փետրվարյան ապստամբությունը և դրա հետևանքները: Ըստ որում, ապստամբությունը ղեկավարած ուժը՝ ՀՅ դաշնակցությունն ինքն էր նախաձեռնություն ու շահագրգռվածություն հանդես բերում՝ գնահատելու ու վերագնահատելու արվածը, ինքն էր փորձում վեր հանել ճշմարտությունը: Այդ նպատակով կազմակերպում էին բազմամարդ ժողովներ, որոնցում արտահայտվում էին ամենատարբեր տեսակետներ ու կարծիքներ:

Ս. Վրացյանն իր ընդդիմախոսներին պատասխանում էր ժողովներում տրված զեկուցումներով, բանավոր ելույթներով և մամուլում տպագրված նյութերով:

«Այգ» օրաթերթի 1921 թ. օգոստոսի 13-ի և 18-ի համարներում Ս. Վրացյանը հանդես եկավ հոդվածով, որը, ըստ էության, այդ օրերին ժողովներում իր տված զեկուցումների և ելույթների ամփոփումն էր: Հոդվածը նվիրված էր Փետրվարյան ապստամբությանը և դրանից հետո ծավալված իրադարձությունների վերլուծությանը: Հոդվածագիրն այն միտքն էր զարգացնում, որ այդ հեղաշրջումը պատահական չէր, այն արդյունքն էր ոչ թե սուբյեկտիվ ցանկությունների կամ միջազգային ուժերի միջամտության, այլ ուղղակի հետևանք էր ներքին պատճառների, բոլշևիկների վարած քաղաքականության:

Պատասխանելով նրանց, ովքեր Փետրվարյան շարժումը համարում էին արկածախնդրություն՝ Ս. Վրացյանը գրում էր. «Մենք այնքան կույր չէինք, որ չտեսնեինք, թե ինչպիսի միջազգային աննպաստ պայմաններում տեղի ունեցավ շարժումը, որի հեղինակը՝ գյուղացիությունը, հաշվի չէր առել հետագա անելիքները, որոնք անխուսափելի կերպով պիտի տանեին դեպի պարտություն, մանավանդ Վրաստանի անկումից հետո, երբ բոլշևիկ հրամանատարության ձեռքերն արձակվեցին, և նա դեպի Հայաստան շպրտեց մեծաքանակ ռուսական զորքեր»: Այնուհետև նա նշում էր. «Ինչքան և նշանակալից լինի փետրվարի 18-ի արդյունքը, որքան և անխուսափելի և անհրաժեշտ համարենք այդ շարժումը, չի կարելի ժխտել, որ նա էպիզոդիկ բնույթ ունի և չի

կազմում օրինական մասը քաղաքական դեպքերի շարունակության: Պարզ է, որ եթե դեկտեմբերից իշխեր ավելի խելացի ու հեռատես քաղաքականություն, Փետրվարյան ապստամբությունը տեղի չէր ունենա, և Հայաստանը ազատ կմնար մի խոշոր ցնցումից»[1]:

Այնուհետև Ս. Վրացյանը նշում էր, որ ծանր նահանջը, Զանգեզուրում կրած անհատակ դժվարությունները և տանջանքները մեծապես անդրադարձել էին Պարսկաստանում ապաստան գտած տարագիրների բազմության վրա. ամենքը բորբոքված էին ու իրարից դժգոհ, որովհետև նյութական վատ պայմաններն անտանելի էին դարձնում նրանց կյանքը: Բայց դա չէր էականը, գրում էր նա, այլ այն, որ առաջ էին եկել քաղաքական նոր հարցեր, որոնք շուտափույթ և լուրջ լուծում էին պահանջում: Այդ հարցերի թվում առաջին գծի վրա Վրացյանը դնում էր ՀՅ դաշնակցության շարքերի մաքրության, նրա հետագա ամրապնդման խնդիրները: «Արտասահմանյան բոլոր շրջաններում,– գրում էր նա,– մեր կուսակցության ներսում կատարվում է եռուն կազմակերպչական աշխատանք, որը պետք է զարգացնել երկու ուղղությամբ. մի կողմից՝ պետք է անողոք կռիվ մղել պատեհապաշտության ու քաղաքական հայացքների անորոշության դեմ՝ հաստատելով կուսակցական մեկ և ընդհանուր քաղաքականություն, մյուս կողմից՝ անխնա լինել դեպի արատավորված, բարոյազուրկ, զեղծարար, ոչ հեղափոխական ու հակասոցիալիստական տարրերը, որոնք տեղ են գտել մեր կուսակցության շարքերում»[2]:

Անդրադառնալով այն հարցին, թե այսուհետև ինչպիսին է լինելու Դաշնակցության քաղաքականությունը Խորհրդային Հայաստանի նկատմամբ՝ Վրացյանը շեշտում էր. «Մենք շատ լավ տեսնում ենք, թե ներկայումս մեր ժողովրդին ամենից ավելի ինչ է հարկավոր. նրան հարկավոր է հանգիստ և տնտեսական բարելավում: Եթե այժմվա բոլշևիկները կարողանան գեթ նվազագույն չափով գոհացնել ժողովրդին, մենք ոչ միայն խոչընդոտ չենք լինի, այլև ամենաանկեղծ կերպով կթելադրենք մեր երկրի ընկերներին՝ օգնել նրանց և արտասահմանում էլ արգելքներ չենք հարուցանի: ...Մեր խորին համոզումով Հայաստանը պետք է ազատ պահել ներքին ցնցումներից ու քաղաքական կռիվներից»:

Արտահայտելով իր կառավարության տեսակետը Խորհրդային Հայաստանում մնացած դաշնակցականների պահվածքի մասին՝ Ս. Վրացյանը նրանց պատվիրում էր. «...Երկրում գտնվող մեր ընկերները պետք է շատ զգույշ լինեն և չենթարկվեն որևէ պրովոկացիայի: Պետք է լծվել պետական և հասարակական աշխատանքի, նպաստել ժողովրդի տնտեսական վիճակի բարելավմանը, պետական մեքենայի կարգավորմանը, երբեք չմտածել

[1] «Այգ» (Թավրիզ), 1920, 13 օգոստոսի:

[2] Նույն տեղում, 18 օգոստոսի:

սաբոտաժի մասին. պետք է նպաստել, որ ստեղծված դրությունից Հայաստանը առավելագույն օգուտները քաղի»[1]:

Ս. Վրացյանի այդ հոդվածը առիթ դարձավ կրքերի նոր բորբոքման: Նրա քննադատները, կարևորագույն խնդիր համարելով կուսակցության շարքերի մաքրումը, միաժամանակ գտնում էին, որ այդ գործը պետք է կատարեն միմիայն իրենց ոչնչով չարատավորած կուսակցական ընկերները:

Կամա թե ակամա նորից բարձրացավ Հայաստանից տարած գումարների և մյուս արժեքների հարցը: Վրացյանին մեղադրում էին, որ նրա կարգադրությամբ ապրիլի 2-ին գումարները և մյուս արժեքները Երևանից դուրս էին բերվել ապօրինաբար և ապահով տեղ հասցնելու համար չէին ձեռնարկվել պաշտպանության ամենատարրական միջոցները: Ջորիների վրա բեռնված գումարների, արծաթե և ոսկյա իրերի, զարդարանքի մի մասը ճանապարհին յուրացրել էին հենց նրանք, ում վրա դրված է եղել այդ արժեքների հսկողությունը: Փախստականներից ոմանք հայտարարություններ էին անում, թե իրենք ականատես են եղել, որ Երևան–Մեղրի ճանապարհի տարբեր հատվածներում սրանք ինչպես են բեռների մի մասը թաղել գետնի տակ՝ ապագայում հանելու հույսով: Գոյամարտի վերջին օրերին արժեքների մյուս մասը Փրկության կոմիտեի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանի կարգադրությամբ, որին հանձնարարված էր դրանց պահպանությունը, ինքնագլուխ թաքցվել էր Կապարգողթի տարբեր մասերում: Վերջապես ապացույցներ էին բերվում, որ երևանյան տարադրամի զգալի մասը Զանգեզուրում և Պարսկաստանում արդեն ծախսվել էր Հակոբ Տեր-Հակոբյանի գլխավորած փոքր խմբի կողմից: Նշվում էր նաև, որ առանձին անձանց կողմից կատարվել են դրամական ծանր զեղծումներ:

«Կառավարությունն» ամեն միջոց գործի էր դրել ծածուկ պահելու ծախսված գումարների հաշիվները, բայց այն, ինչ հայտնի էր դարձել, առաջացրել էր գաղթականության ընդվզումը:

Գաղթականության մեջ մեծ հուզում էր առաջ բերել նաև Թիֆլիսից և Երևանից եկած այն լուրը, որ Հայաստանի համար արտասահմանից Բաթում հասած հսկայական գումարի ղեղորայքը, որի կարիքը մեծապես զգում էր հիվանդներով ու գաղթականներով լեցուն երկիրը, այնտեղից հետ էր տարվել[2]:

Գաղթականությունը պահանջում էր Երևանից հանած տարադրամի և մյուս արժեքների մասին մանրամասն հաշվետվություն ներկայացնել հասարակայնությանը: Հաշվետվություն կազմելու համար Ս. Վրացյանի հանձնարարությամբ ստեղծվեց մի հանձնախումբ, որի մեջ ընդգրկվեցին նախկին 12 նախարարներ, Փրկության կոմիտեի պետական վերահսկիչը և մի խումբ

---

[1] «Այգ» (Թավրիզ), 1920, 18 օգոստոսի:

[2] Տե՛ս «Կարմիր աստղ», (Թիֆլիս), թիվ 53, «Կոմունիստ», 1921, 12 մայիսի:

հաշվապահներ: Ըստ որում, հանձնախումբը իր աշխատանքներին մասնակից չդարձրեց ուրիշ ոչ ոքի, այդ թվում՝ նշանավոր մի քանի դաշնակցական այն գործիչներին, որոնց մասնակցությունը այդ գործին պահանջում էր հասարակայնությունը՝ ելնելով նրանց ազնվությունից, պարկեշտությունից և անկողմնակալությունից:

Հանձնախումբը չորս ամիս փակված աշխատելուց հետո, վերջապես, գրքույկի ձևով հրատարակեց հաշվետվություն, որը, սակայն, ոչ միայն չբավարարեց հասարակայնությանը, այլև առաջ բերեց նորանոր հարցեր:

Անդրադառնալով հիշյալ հանձնախմբի ստեղծած փաստաթղթին՝ դաշնակցական գործիչ Սիրակ Գրիգորյանը 1921 թ. նոյեմբերին ՀՅԴ առաջիկա 10-րդ համագումարին հղած ընդարձակ բողոք-զեկուցագրում գրում էր. «Այդ հաշվետվությունից անհնար է գաղափար կազմել, թե ի՞նչ արժողության տարադրամ է դուրս բերված (Երևանից: – *Ա. Ս.).* ինչքան է ծախսված և ինչքան մնացած»[1]:

Ս. Գրիգորյանը միաժամանակ նշում էր, որ հաշվետվության մեջ հիշատակված են տվյալներ տարբեր երկրների դրամների, ականջօղերի, մատանիների, արծաթե գոտիների, արծաթապատ դաշույնների, ժամացույցների և ուրիշ երկրորդական իրերի մասին, բայց ոչինչ չի ասված, թե որքան է Թավրիզ հասած տարադրամի և Երևանում եղած տարադրամի չափերի միջև տարբերությունը*:

Ավելի ծանր ու մտահոգիչ էր Երևանից բերած տարադրամի և գաղթականությանը սովից փրկելու համար արտասահմանյան հայ գաղութներից ստացած գումարների ծախսման ձևը:

Պարսկաստան անցնելուց հետո՝ առաջին մեկ ամսում, Թավրիզ հասցրած տարադրամը «կառավարությունը» հայտարարել էր անձեռնմխելի, և դա պատճառաբանում էր նրանով, թե իր տրամադրության տակ եղած արժեքները գործադրվելու էին «համազգային նպատակի»՝ «Հայաստանի ազատագրության գործին»: Բայց այդպես երկար անհնար էր շարունակել, քանի որ գաղթականությունը սոսկալի վիճակում էր: Պետական նախկին ողջ պաշտոնեությունը (բացի ընտրյալների մի փոքր խմբից), մտավորականությունը, զինվորականությունը տանջվում էին նյութական անտանելի պայ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 62:

* Ի դեպ, այս վերջին հարցը լայնորեն քննարկվում էր նաև արտասահմանյան հայ մամուլում ինչպես այդ օրերին, այնպես էլ դրանից հետո: Այսպես, «Արձագանք Փարիզի» թերթը 1922 թ. հունվարի 25-ի համարում տպագրել էր Հայաստանի պետական գանձի լրիվ ցուցակը՝ ներկայացնելով, թե այդ գանձը որքան է եղել Երևանում, և որքանն է հասել Թավրիզ: Պետական գանձի պատմությունը Սփյուռքի հասարակայնությանը հուզում էր շատ տարիներ: Նույնիսկ 15 տարի հետո՝ 1945 թ. օգոստոսին, Շահան Նաթալին տպագրել էր հոդված՝ Վրացյանից պահանջելով իր տարած գանձը վերադարձնել Խորհրդային Հայաստանի կառավարությանը (տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1945, 3 օգոստոսի):

մաններում, հանրապետական Հայաստանի հայտնի գործիչները ոտաբոբիկ ու կիսամերկ թափառում էին փողոցներում: Անտանելի էր հասարակ մարդկանց դրությունը. եղան սովամահության բազմաթիվ դեպքեր, Թավրիզի հայոց գերեզմանատան բակում թափված էին կմախքացած մարդիկ՝ ապրելու հույսը լիովին կորցրած:

Գաղթականության և դաշնակցական ընկերների ճնշման տակ «կառավարությունը» սկսեց ծախսել տարադրամը: Օգոստոսի վերջերից սկսած՝ գումարներ տրվեցին բոլոր փախստականներին՝ խիստ տարբերակված:

«Կառավարության» անդամներին նշանակվեց ամսական 30-ական թուման աշխատավարձ՝ հինգ ամսով, բայց այդ ժամկետը լրանալուց հետո էլ՝ մինչև 1922 թ. մարտ ամիսը, նրանք շարունակում էին ստանալ նույնքան գումար: Բացի այդ՝ նրանց տրվեց 100-ական թուման «լիկվիդացիոն»՝ մինչև այն ժամանակ, երբ Վրացյանը, չորս ամիս պահելով իր «կաբինետը», վերջապես լուծարեց այն:

Ինչ վերաբերում էր «պետական պաշտոնյաներին», ապա նրանք աշխատավարձ չէին ստանում (բացառությամբ մի քանիսի), Հայաստանի խորհրդարանի նախկին անդամները ևս աշխատավարձ չէին ստանում՝ չխոսելով արդեն «լիկվիդացիոնի» մասին: Ե՛վ պաշտոնեությանը (այդ թվում՝ զինվորականներին), և՛ մյուս բոլոր գաղթականներին տրվում էր նպաստ՝ օրական մեկ դոռանի չափով[1]:

Ինչպես տեսնում ենք, դրամը բաժանելու չափանիշ չկար: Այդ էր պատճառը, գրում էր դաշնակցական գործիչներից մեկը, որ մարդիկ հիսաթափված էին կամ թշնամացած[2]:

Պատահական չէ, որ Թավրիզի դաշնակցական մտավորականությունը խիստ մտահոգված էր, թե ինչպես զտել կուսակցությունն այլասերվող, վարկաբեկիչ տարրերից և գոնե ապագայում չեզոքացնել նրանց գործունեությունը:

Օգոստոսի սկզբին Սիրակ Գրիգորյանի նախագահությամբ Թավրիզի Ղալա թաղի հայկական դպրոցի սրահում տեղի ունեցավ քաղաքի դաշնակցական բոլոր մարմինների անդամների և գործիչ ընկերների ժողով, որը որոշում ընդունեց դիմել Դաշնակցության Կ. Պոլսի պատասխանատու մարմնին՝ կուսակցությունն անարժեք տարրերից մաքրելու պահանջով[3]:

Գարեգին Նժդեհը մի կողմ էր քաշվել կրքերի անսանձ ալեկոծումներից. նա իրեն հեռու էր պահում թե՛ ներկուսակցական պայքարներից և թե՛ Վրացյանի «կառավարության» քննադատություններից: Նրա միտքը զբաղված էր Լեռնահայաստանի անկման պատճառների քննությամբ, որի արդյունքում

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 14, թ. 63:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

իր մտածումները հանձնեց թղթին և որպես զեկուցագիր՝ ներկայացրեց ՀՅ դաշնակցության՝ Թավրիզի (Վրեժի) կենտրոնական կոմիտեին: Ընդարձակ այդ զեկուցագիրն առաջին հերթին պատասխան էր օրվա իր քննադատներին, բայց այն, ըստ էության, մեծ հայրենասերի և մեծ ռազմագետի վերապրած խոհերն էին Զանգեզուրի հերոսամարտի վերջին փուլի մասին, դեպքերի ու իրադարձությունների անմիջական գնահատումները: Եվ, որպես այդպիսին, զեկացագիրը ստույգ վավերագիր է, հետևապես՝ անփոխարինելի պատմագիտական արժեք:

Զեկուցագրի հիմնական դրույթները հետագայում Նժդեհը որոշակիացրել է իր գրքերում, հոդվածներում և նամակներում: Նրանում Սպարապետը հետևողականորեն զարգացնում էր այն միտքը, որ Զանգեզուրի հաղթանակների դափնին պատկանում է ոչ թե իրեն, այլ լեռնաշխարհի հերոս ժողովրդին, իսկ անհաջողությունների ու պարտությունների համար պատրաստ է կանգնելու պատմության դատի առջև: Այդպես է նա մտածել նաև հետագա ամբողջ կյանքի ընթացքում: Նամակներից մեկում գրել է, որ մոլորություն է Զանգեզուրի ինքնապաշտպանությունը բացատրել զանգվածների վրա իր մոգական ազդեցությամբ:

«Զանգեզուրում,– նշել է Նժդեհը,– ես չեմ ունեցել ոչ մի կանոնավոր զինվոր, ոչ տեխնիկական պաշարներ, ոչ նյութական միջոցներ, չկար այն ամենը, որով ինքնակալ անհատները ժողովրդական զանգվածներին են փաթաթում իրենց կամքը: Մեր ժամանակներում ոչ ոք չի կարող ժխտել ժողովրդական զանգվածների վճռորոշ դերը: Ես չեմ ժխտում նաև անհատի դերը, նրա ազդեցությունը պատմական իրադարձությունների ընթացքի և ելքի վրա:

Բայց հաստատում եմ, որ Զանգեզուրը կպաշտպաներ իր լեռները նաև առանց ինձ:

Ոչ մի անհատ, թեկուզ հանճարեղ, չի կարող ժողովրդին փաթաթել իր կամքը, եթե չի արտահայտում նրա կամքը: Զանգեզուրի ուժը պետք է որոնել ոչ թե իմ ազդեցության, այլ գաղափարապատմական ժառանգորդության մեջ. դարերի ընթացքում լեռնահայությունը հաճախ է ստիպված եղել պաշտպանել իր լեռները՝ խոր գիտակցելով նրանց նշանակությունն իր ինքնապաշտպանության գործում»[1]:

Վերլուծելով Լեռնահայաստանի անկման պատճառները՝ Նժդեհը հատկապես ընդգծում էր դրանցից մի քանիսը:

1. Լեռնահայաստանի պաշտպանության վրա կործանարար ներգործություն ունեցան խորհրդային զորքերի կողմից Երևանը գրավելուց հետո Զանգեզուր անցած ահաբեկ բազմությունները, որոնք իրենց հետ գավառ բերեցին հուսալքում և խուճապ:

[1] «Հանրապետական» (Երևան), 1996, դեկտեմբեր, թիվ 11 (111):

2. Լեռնահայաստանի զորամասերի մարտական ոգին մեծապես խաթարեց և լքում առաջ բերեց բոլշևիկների ծավալած լայն քարոզչությունը: Բոլշևիկ գործիչները և զորամասերը, գրում էր Նժդեհը, մտնելով Դարալագյազ և Զանգեզուր, անմիջապես թռուցիկներ էին տարածում, հրատարակում էին դեկրետներ, խոստանում էին ներում շնորհել բոլոր այն զինվորներին, որոնք կամավոր կհանձնվեին Կարմիր բանակի զորամասերին: Այդ ամենի հետևանքով «օրեցօր տարածվում էր դասալիքի հոգեբանությունը»:
3. Սպառվում էին զինամթերքի վերջին պաշարները, որի հետևանքով Լեռնահայաստանի զինվորների մոտ եղած փամփուշտները խստիվ հաշվառված էին, հրամայված էր կրակել միայն մոտիկ տարածությունից, Զանգեզուրի պաշտպանների վրա հոգեբանական ավերիչ ազդեցություն էր գործում այն, որ ոչ մի տեղից զենք և զինամթերք ստանալու որևէ հույս չկար այլևս:
4. Գավառի բնակչությունը, բառիս բուն իմաստով, կանգնած էր սովի վտանգի առջև: Անընդհատ կռիվների պատճառով 1920 թ. աշնանացան չէր արվել մեծ տարածությունների վրա, իսկ 1921 թ. գարնանը ընդհանրապես հացահատիկի ցանքս չէր կատարվել: Իրենց օրը կիսաքաղց էին անցկացնում ոչ միայն գյուղացիները, այլև զինծառայողները:
5. Փրկության կոմիտեի, զորքի և գաղթողների զանգվածային խուժումը Դարալագյազ և Զանգեզուր բարոյալքում առաջ բերեց այդ տարածքները պաշտպանողների շրջանում, և բնակչության մեջ, բայց առավել կործանիչ եղավ արդեն խառնիճաղանջ ամբոխի վերածված այդ բազմությունների՝ Զանգեզուրից գլխապատառ հեռանալը դեպի Պարսկաստան:

Նժդեհը գրել է. «Այս վերջին գաղթը, այն էլ՝ Լեռնահայաստանից, բնական իրարանցում առաջ բերեց ժողովրդի մեջ, որովհետև նա տեսնում էր, որ վտանգված է համարվում յուր երկիրը, քանի որ յուր մեջ դադար առած և բնակվող անձինք հապճեպով անցնում են Արաքսը»:

Լեռնահայաստանի անկման պատճառները քննելուց հետո Նժդեհն անդրադարձել է նաև 1920-1921 թթ. զանգեզուրյան հերոսամարտի պատմական նշանակությանը: Այն է՝ շնորհիվ զանգեզուրյան կռիվների՝ հնարավոր եղավ.

1. Զանգեզուրի հայությանը փրկել կործանումից,
2. խափանել Հայաստանի մահացու անդամահատումը՝ Զանգեզուրի բռնազավթման և Ադրբեջանին միացնելու միջոցով,
3. հոգեբանորեն և ռազմագիտորեն սատարել 1921 թ. փետրվարյան ապստամբությանը,
4. ապահովել հայ մտավորականության և մարտական մնացած ուժերի նահանջն ու անցումը Պարսկաստան:

Ընդգծելով, որ եթե չլինեին Զանգեզուրի հաղթական կռիվները, գավառը անպայման կհանձնվեր Ադրբեջանին՝ Նժդեհն այնուհետև նշում էր, որ շատերը թերագնահատում են այդ կռիվների նշանակությունը՝ ասելով, թե առանց այդ ամենի էլ Խորհրդային Ռուսաստանը Զանգեզուրը կթողներ Հայաստանին: Այդպես մտածողները, գրում էր նա, անտեսում են, որ պետությունների միջև կնքվող պայմանագրերը հաստատում և արձանագրում են նրանց միջև տվյալ պահին առկա սահմանները: Իրավացի էր Նժդեհը, եթե 1921 թ. մարտի 16-ի նախօրյակին Զանգեզուրում լինեին ոչ թե նրա ուխտյալները, այլ թուրքական զորքերը, ապա Ռուսաստանը գավառը միանշանակ կհանձներ Ադրբեջանին:

«Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը» հարցին Գարեգին Նժդեհը պատասխանել է. «Լեռնահայաստանի ինքնապաշտպանողական խոյանքը գուցե անիմաստ թվար օտարներին, մասնավորապես՝ բոլշևիկներին, որոնք քաղաքական միամտություն ունեին հավատալու և հավատացնելու, որ ոչ թե միայն իրենց ցնորական վարդապետությունը, այլև հետադիմական համիսլամականությունը՝ հանձինս քեմալական ջարդարար հորդաների, կոչված է բարերարելու, փրկելու մարդկությունը: Սակայն այդ ժողովրդի համար, որը անբախտություն է ունեցել մոտիկից ճանաչելու և չափելու՝ մեկից ավելի անգամներ իր գերեզմանափորը հանդիսացած, տարամերժ համիսլամության արժեքը, մեր գոյամարտը քաղաքականապես ավելի քան իմաստալից էր:

Լեռնահայաստանի հայության և նրա ինքնապաշտպանությունը վարողի համար միևնույնը չէր, թե որ հանրապետության մասը պիտի կազմի Սյունիքը՝ Հայաստանի՞, թե՞ Ադրբեջանի:

Սակայն նրա համար գրեթե միևնույն էր, թե քաղաքական ինչպիսի ցուցանակ է կրում Ադրբեջանը – մուսավաթակա՞ն, թե՞ խորհրդային:

Մեր կռիվը չէր մղվում այս կամ այն կուսակցության կամ դասակարգի դրոշի տակ: Նա ուղղված չէր խորհրդային իրավակարգի դեմ:

Հայկական լեռնաշխարհը Ադրբեջանին կցելու՝ տարիներով կրկնվող փորձերը – ահա թե ինչն էր մեր բազուկը զինել և մեզ լեռները հանել»:

Շատ տարիներ հետո իր հարազատներից մեկին գրած նամակում այդ նույն միտքը Նժդեհն այսպես է ձևակերպել. «Պատմությունը չէր ների մեզ, եթե, խոստովանելով մեր անկարողությունը, փոքրոգաբար հրաժարվեինք ինքնապաշտպանությունից: 1918-1920 թվականներին նման արարքը հավասարազոր կլիներ ինքնասպանության: Զանգեզուրի ինքնապաշտպանությունը մեծագույն բարոյական արիության գործ էր: Հայաստանից Զանգեզուրի խլումը, երբ Կարս, Սարիղամիշ, Իգդիր, Արդահան ամրությունները գտնվում էին Թուրքիայի սահմաններում, հայության համար մեծագույն ողբերգություն կլիներ»[1]:

[1] «Հանրապետական» (Երևան), 1996, դեկտեմբեր, թիվ 11 (111):

Ինչպես արդեն ասվել է, Թավրիզում և նրա շրջակա բնակավայրերում կուտակված տարագիրներին վիճակված էր կրելու տնտեսական անասելի դժվարություններ: Նրանց ապաստան տալու և նյութապես ու բարոյապես աջակցելու, պարտության դառնությունը ճաշակած գործիչներին ապրելու և գործելու հավատ ներշնչելու համար անգնահատելի դեր էր խաղում Ներսես Սրբազան Մելիք-Թանգյանը: Ճիշտ է, նրա տրամադրության տակ էր դրվել Հայաստանից տարած տարադրամի որոշ մասը, բայց դրանով անհնարին էր հոգ տանել ամեն ինչից զրկված հազարավոր մարդկանց մասին: Ուստի Սրբազանը նախանձելի եռանդ ու հետևողականություն ցուցաբերեց՝ պարսկահայերի շրջանում կազմակերպելու հանգանակություն, որը նույնպես չփրկեց իրավիճակը:

Տարագրության ղեկավարությունը Թավրիզում խռնված բազմությունը սովից փրկելու մի հիմնական ելք էր տեսնում՝ դարձ դեպի հայրենիք:

Խորհրդային զորքերը դեռ նոր էին գրավել Կապանի հանքերը, երբ ՀՍԽՀ կառավարությունը Գրիգոր Վարդանյանին հրահանգեց անմիջապես մեկնել Թավրիզ և իբրև Գաղթականության կոմիտեի լիազոր՝ շարունակել փախստական աշխատավորության՝ հայրենիք վերադարձնելու գործը: Ա. Մռավյանի կարգադրությամբ նա այս անգամ փախստականներին տալու էր պաշտոնական անցաթուղթ՝ կնքված և իր ստորագրությունով:

Հուլիսի 12-ին Գ. Վարդանյանը Թավրիզ ուղարկեց իր տեղակալ Հ. Ղազարյանին, իսկ հուլիսի 20-ին, իր հետ վերցնելով Օ. Տեր-Հովհաննիսյանին և հողժողկոմի կողմից՝ Պ. Օհանջանյանին, հասավ Ջուլֆա, ուր սահմանապահ իշխանություններին հայտնեց իր առաքելության մասին՝ խնդրելով առանց իր անցաթղթի այսուհետև ոչ մի փախստականի թույլ չտալ անցնելու սահմանը:

Հուլիսի 21-ին երեքով հասան Թավրիզ, որտեղ հայկական թաղերում փախստականները անհամբեր սպասում էին նրանց:

Մինչ այդ փախստականների առաքման գործը վարում էր Ներսես Սրբազանը՝ իրեն աջակից ունենալով գրեթե միայն դաշնակցականներից բաղկացած գաղթականության մի կոմիտե:

Տեսակցելով Սրբազանի հետ՝ Երևանից եկած պատվիրակները տեղեկացան, որ միայն բուն Թավրիզում գտնվում են Հայաստանից 4000-ից ավելի փախստականներ՝ աշխատավոր տարրեր, բարձր թե ցածր աստիճանի զինվորականներ, մոտ 100-ի չափ ուսուցիչ-ուսուցչուհիներ, մեծ ու փոքր խմբապետեր ու ամեն կարգի մտավորականներ[1]:

Նրանցից 900-ը Երևանի մերձակա շրջաններից էին, իսկ 1200-ը՝ Զանգեզուրից (որոնցից 300-ը՝ Գորիսի շրջանից)[2]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 26:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 29:

Հայաստանում քաղաքացիական ընդհարումների հետևանքով գաղթած տարագիրներից զատ՝ Թավրիզում էին ապաստանել նաև Սալմաստի, Ուրմիայի և սովահար Ղարադաղի գաղթականները:

1921 թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով Ղարադաղից այնտեղ էր ապաստանել 1292 մարդ, Խոյից՝ 456, Սալմաստից՝ 1230, Ուրմիայից՝ 1120, ընդամենը՝ 4098 մարդ[1]:

Սալմաստից եկածների մեջ կային արևմտահայեր, գլխավորապես՝ վանեցիներ, ինչպես նաև Համադանից, Բաղդադից վերադարձածներ և ուրիշներ: Այդ կարգի տարագիրների շարքին էին պատկանում ջուղայեցիները, դարաշամբցիները և ուրիշներ, որոնք, իրենց վայրերից տեղահանված լինելով փետրվարի դեպքերից առաջ, ծանր վիճակում ապրում էին Թավրիզում: Դրանց մի մասը նույնպես, հիմնականում ղարադաղցիներ և խոյեցիներ, դիմել էր՝ Հայաստան մեկնելու համար:

Ամեն օր Գ. Վարդանյանի առաքելությանը դիմում էին հարյուրավոր մարդիկ՝ բոլոր դասակարգերից: Հատկանշական է, որ առաջին այդ դիմումատուները նույնիսկ չէին հետաքրքրվում, թե իրենց ինչ է սպասվում Հայաստանում, միայն դուրս պրծնեին ստեղծված վիճակից:

Աստիճանաբար առաքելություն էին ներկայանում նաև Հայաստանի Հանրապետության նախկին խորհրդարանի անդամները, նախկին պաշտոնյաներ, բարձրաստիճան սպաներ, խմբապետեր և կարևոր այլ անձինք: Առաքելությունը նրանց մանրամասն բացատրություններ էր տալիս, բազմիցս հավաստիացումներ անում, որ Հայաստանի խորհրդային կառավարությունը չի շեղվելու գաղթականության հանդեպ որդեգրած իր քաղաքականությունից և անթերի կատարելու է ընդհանուր ներման մասին ընդունած դեկրետը:

Հայաստան վերադառնալու բուռն ցանկություն ունեին նաև տաճկահայերը, որոնց անունից Սմբատը ներկայացել էր Գ. Վարդանյանին, նրա հետ երկար զրույց ունեցել, պարզել վերադարձի հետ կապված բոլոր հանգամանքները[2]:

Առաջին հերթին հայրենադարձվելու համար հարցաթերթ լրացրեց մոտ 2700 մարդ:

Պետք է ասել, որ հենց սկզբից Գաղթականության հանձնաժողովը կանգնեց շատ բարդ խնդիրների առջև, որոնց լուծումը վեր գտնվեց նրա լիազորություններից, և որը տեղիք տվեց զանազան ասեկոսեների:

Այսպես, անդրադառնալով Գ. Վարդանյանի առաքելության գործունեությանը, Վահան Մինախորյանը հետագայում գրել է, որ տարագիրների վերադարձը կազմակերպելու համար Երևանից Թավրիզ եկած հանձնաժողովը

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 44-ի շրջերես:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 19 հունիսի:

անարժեք ձևականություններով ձգձգեց խնդիրը, հարցաթերթիկները խմբագրեց, հետո տպեց, փոխեց, գրեց, ջնջեց, վախ ներշնչեց վերադարձողներին: Մի երկու շաբաթ մնալուց հետո գնացքներ ուզեց տարագիրներին հայրենիք ճամփելու համար, հետո հայտարարեց, թե «չտվին», որովհետև, իբր, ճանապարհները խճողված են Ադրբեջանից Հայաստան գնացող գնացքների պատճառով[1]:

Գրիգոր Վարդանյանը Թավրիզ գալուց մի քանի օր հետո՝ հուլիսի 27-ին, ՀՍԽՀ արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանին գրում էր, որ Հայաստան վերադառնալու համար ցուցակագրվել է 4200 մարդ, բոլորն էլ՝ աշխատավոր գյուղացիներ, որոնք ցանկանում են իրենց բնակավայրերը վերադառնալ որքան հնարավոր է շուտ: «Նրանցից շատերը,– նշում էր իր նամակում Գ. Վարդանյանը,– ունեն ձիեր և եթե մի քիչ էլ մնան, ապա բոլոր ձիերը կծախեն՝ սովից փրկվելու համար: Ես նրանց դիմումին սկզբում պատասխանեցի, թե հայրենիք վերադառնալու մասին պարտավոր եմ հայտնել Երևան, բայց նկատի ունենալով, որ Ձեր հրահանգը կարող է ուշանալ, որի պատճառով այդ մարդիկ ստիպված կլինեն ձիերը ծախծխել, նաև այն, որ մարդիկ ցանքսեր ունեն, քաղ ունեն և այլն, համաձայնվեցի ոմանց անցագրեր տալ և Մեղրիի գծով ետ ճամփել: Մնացած 900 նորեկների մասին, որ Երևանի շրջաններից են, կսպասեմ Ձեր կարգադրությանը»[2]:

Կրկին անդրադառնալով փախստականների փոխադրության հարցին՝ գաղթականության գործերի լիազորը տեղեկացնում էր, որ պարսից կառավարությունը խոստացել է իր միջոցներով գնացքով Ջուլֆա տեղափոխել 1000 մարդ, բայց Նախիջևանի երկաթուղու պետը Թավրիզի հայոց առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանից պահանջել է ամեն մի վերադարձողի համար վճարել 12 դոռան, այսինքն՝ ընդամենը 12 հազար դոռան: Առաջնորդը համաձայնել էր տալ այդ գումարը, ուստի Գ. Վարդանյանը Մռավյանին խնդրում էր դեռևս Երևանում գտնվող իր տեղակալ Հ. Ղազարյանին տրամադրել 20 վագոն, ինչը հնարավորություն կտար այդ 1000 մարդուն չորս օրվա ընթացքում տեղափոխելու Ջուլֆա, այնուհետև մի շաբաթ հետո ևս նույնքան մարդ ուղարկել: Այսպիսով Թավրիզում մնացած գաղթականության կեսը ուղարկված կլիներ: Նա նշում էր, որ եթե 20 վագոնից բաղկացած երեք գնացք լիներ, ապա հնարավոր էր Հայաստան տեղափոխել շուրջ 3500 փախստական: Այնուհետև Գ. Վարդանյանը արտգործժողկոմին տեղյակ պահեց, որ պարսից իշխանությունները քանիցս դիմել են առաջնորդին և նույնիսկ պահանջել, որ փախստականները շատ շուտ փոխադրվեն Թավրիզից՝ պատճառաբանելով, որ նրանց ներկայության հետևանքով հացը թանկանում է: Առաջնորդն այդ դիմումին պատասխանել էր, որ Խորհրդային

---

[1] Տե՛ս **Վ. Մինասխորեան**, Վերադարձը, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 49:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 26:

Հայաստանի կողմից արդեն ժամանել է գաղթի լիազորը, որը կաշխատի կազմակերպել փախստականների արագ փոխադրումը Հայաստան: «Խնդրում եմ արագացնել գնացքը, հապաղումը առիթ է ընծայում պրովոկացիաների»[1],– վերջում գրում էր գաղթականության գործերի լիազորը:

Քանի որ բազմաթիվ խնդրանքներն առայժմ դրական ընթացք չէին ստանում, Գ. Վարդանյանը ստիպված, առանց Երևանից համաձայնություն ստանալու, անցաթղթեր էր տալիս առավել անելանելի վիճակում գտնվող անձանց: Օգոստոսի 9-ին նա Ա. Մռավյանին գրում էր. «Այս առավոտ ճամփու դրեցի մոտ 200 զանգեզուրցիներ դեպի Մեղրի՝ իրենց եկած ճամփով: Բայց մնացյալ գաղթականությունը առավոտյան ժ. 6-ից մինչև գիշերվա ժ. 9-ը իմ աշխատասենյակի դռան առաջ կամ տանս բակն ու սենյակս լցված խնդրում, աղաչում են շուտ հայրենիք մեկնելու համար, իսկ ես ցարդ լոկ խոսքերով եմ հուսադրում: Սա, անշուշտ, հիմար կացություն է և հնարավոր չի այսպես շարունակել՝ առիթ ընծայելով պրովոկացիայի: Հույս ունեմ, որ դու գոնե կմտնես իմ այս դրության մեջ և եռանդուն միջոցներ ձեռք կառնես անմիջապես ուղարկելու ոչ թե միայն առաջին գնացքը, այլև արագացնելու երկրորդ, երրորդ, չորրորդ գնացքները: Ես օգոստոսի 25-ից դենը չեմ մնա: Խնդրում եմ շտապել»[2]:

Հարկ եղավ սպասել 22 օր, բայց այդպես էլ գնացքները չեկան, և հնարավոր չեղավ ճանապարհել ոչ մի մարդ:

Վարդանյանը ստիպված է լինում դարձյալ անցաթուղթ տալ մոտ 180 զանգեզուրցիների և Մեղրի ճամփել Ղարադաղի և Մուժամբարի վրայով: Զանգեզուրի նորաստեղծ իշխանությունները նրանց ընդունեցին շատ սիրալիր և Գ. Վարդանյանին նամակով խնդրեցին ետ ուղարկել նաև մնացած զանգեզուրցի փախստականներին: Դրանից հետո զանգեզուրցիների հաջորդ խումբը ևս՝ բաղկացած 63 մարդուց, նույն ճամփով ուղարկվեց տուն[3]:

Վերջապես, Ա. Մռավյանը մի պաշտոնական գրությամբ Գ. Վարդանյանին հայտնեց, որ Երևանը հնարավորություն չունի գաղթականների համար առանձին գնացք ուղարկելու, ուստի պիտի աշխատել մաս-մաս նրանց ուղարկել Ջուլֆա, իսկ այնտեղից Երևան բերել զանազան գնացքներով:

Ստանալով հրահանգը և պարսկական երկաթուղային վարչության հետ համաձայնության գալով (ամեն մի գաղթականի համար 25 ղռանի փոխարեն վճարելով 10 ղռան)՝ օգոստոսի 12-ից վերսկսվեց վերադարձի հոսքը, որն անարգել շարունակվեց մինչև 1921 թ. սեպտեմբերի վերջը: Յուրաքանչյուր գնացքով հայրենիք էր վերադառնում 200-400 մարդ: Գնացքները Թավրիզից Ջուլֆա էին գնում շաբաթական 2-3 անգամ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 26:

[2] Նույն տեղում, թ. 25-ի շրջերես:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 70:

Երթևեկության անկանոնության և ամենատարբեր արգելքների պատճառով անհնարին եղավ Հայաստան ճանապարհել բոլոր մեկնել ցանկացողներին: Հաճախ կուտակում էր առաջանում պարսկական Ջուլֆայում կամ Նախիջևանում, որի հետևանքով հատկապես Նախիջևանում ներգաղթողները ենթարկվում էին թալանի և անպատվության, ստիպված էին օրեր անցկացնել բաց երկնքի տակ և անոթի:

Օգոստոս ամսվա ընթացքում Գ. Վարդանյանի ստորագրությունը կրող անցագրերով Թավրիզից Հայաստան գնաց 2400 մարդ:

Այսպիսով, հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստան էր տեղափոխվել արդեն մոտ 5500 մարդ[1]:

Հայաստան վերադարձավ նաև մտավորականների մի մեծ խումբ, որի մեջ կային ոչ քիչ թվով բարձրորակ մասնագետներ: Ակադեմիկոս Ա. Թամանյանին վերադարձնելու համար Ա. Մյասնիկյանի հանձնարարությամբ Թավրիզ գնաց Սարգիս Լուկաշինը և հատուկ գնացքով Երևան բերեց մեծ ճարտարապետին:

Գ. Վարդանյանի գլխավորած ՀՍԽՀ գաղթականական գործերի լիազոր ներկայացուցչությունը օգոստոսի վերջերին դադարեցրեց իր գործունեությունը, և ինչպես հայ, այնպես էլ մուսուլման և ռուս գաղթականներին Հայաստան ուղարկելու ընդհանուր ղեկավարությունը սկսեց իրականացնել Ատրպատականում ՌՍՖԽՀ գլխավոր հյուպատոսությունը:

Ռուսական հյուպատոսությունում փախստականների հայրենադարձության խնդրի կատարումը դրված էր գլխավոր հյուպատոսի քարտուղար Գիլբրասի վրա, որին էլ Վարդանյանը հանձնեց կնիքը, անցագրային ձևաթղթերը և հարցաթերթերը՝ վերադարձողներին անցաթուղթ տալու համար:

1921 թ. սեպտեմբերի 16-ին ՌՍՖԽՀ գլխավոր հյուպատոսությունը տեղեկացնում էր, որ գաղթականներով վերջին էշելոնը՝ բաղկացած 400-500 մարդուց, կուղարկվի մինչև ամսվա վերջը, և դրանով կդադարեցվի գնացքներով գաղթականների տարհանումը մինչև գալիք տարվա գարուն[2]:

1921 թ. սեպտեմբերի 2-ից մինչև հոկտեմբերի 1-ը Ատրպատականի ռուսական հյուպատոսարանի միջոցով Հայաստան են ուղարկվել հետևյալ թվով փախստականներ. հայեր՝ դիմում է ներկայացրել 2052 մարդ (1136 ընտանիք), որոնցից ստացել են անցագրեր 1927 մարդ (1037 ընտանիք), մուսուլմաններ՝ դիմում է ներկայացրել 849 մարդ (212 ընտանիք), որոնցից ստացել են անցագրեր 626 մարդ (142 ընտանիք): Այդ ժամանակահատվածում Հայաստան է վերադարձել 19 ռուս (7 ընտանիք): Նույն ժամանակ Նախիջևանի երկրամաս (Նախկրայ) վերադարձել են 36 հայ (11 ընտանիք),

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 71, **Վ. Մինասխորեան**, Վերադարձը, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 48, 49:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 45:

145 մուսուլման (44 ընտանիք), մի քանի ռուս: Այդ մեկ ամսում Թավրիզից Հայաստան և Նախիջևան է մեկնել 2753 մարդ (1241 ընտանիք), Մուժամբարից՝ 49 մարդ (15 ընտանիք), Ալյակից՝ 89 մարդ (18 ընտանիք), ընդամենը՝ 2891 մարդ (1274 ընտանիք)[1]:

Պետք է ասել, որ ինչպես Թեհրանի ռուսական դեսպանությունը, այնպես էլ ՌՍՖԽՀ Թավրիզի (Ատրպատականի) հյուպատոսությունը ամենայն ուշադրությամբ և հոգածությամբ էին վերաբերվում հայ գաղթականների հոգսերին, ամեն ինչ անում էին՝ նրանց հայրենադարձությունը կազմակերպված իրականացնելու համար:

Սեպտեմբերի 26-ին Պարսկաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Ռոտշտեյնը Թեհրանում կազմակերպել էր խորհրդային համակարգին համախոհ հայերի ներկայացուցիչների ընդունելություն: Դիմելով ներկաներին՝ նա նշեց, որ հայ ժողովուրդը երկար տառապանքներից հետո վերջապես հասել է ազատության: Ռոտշտեյնը խոր համոզմունք հայտնեց, որ Խորհրդային Հայաստանի ժողովուրդը ռուսական մեծ ֆեդերացիայի օգնությամբ անպայման կվերածնվի:

Հանդես գալով պատասխան խոսքով՝ պարսկա-հնդկական հայոց թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Այվատյանը, հանձին Ռոտշտեյնի, ողջունեց ռուսական մեծ հանրապետությունը՝ ընդգծելով, որ Հայաստանը ներկայումս չի կարող գոյություն ունենալ առանց ռուս մեծ ժողովրդի օգնության, միաժամանակ շեշտելով, որ հայ ժողովրդի ազգային շահերը պահանջում են որքան հնարավոր է մերձենալ Խորհրդային Ռուսաստանի ֆեդերացիային[2]:

Գ. Վարդանյանի խմբի Երևան վերադառնալը չէր նշանակում, թե դրանից հետո Թեհրանի հայ գաղթականության հարցերի լուծումը ամբողջովին վստահվել էր ՌՍՖԽՀ՝ Թավրիզում (Ատրպատական) գտնվող հյուպատոսությանը: Խորհրդային Հայաստանը իր դիվանագիտական ներկայությունը Պարսկաստանում դնում էր ավելի բարձր մակարդակի վրա: 1921 թ. նոյեմբերի 1-ից Թեհրանում բացվեց Խորհրդային Հայաստանի հյուպատոսությունը՝ Լևոն Սարգսյանի գլխավորությամբ*: Հայաստանի կառավարությունը նույն ժամանակ հյուպատոսություն բացեց նաև Թավրիզում և հյուպատոս նշանակեց Ե. Երզնկյանին[3]:

Հայկական ներկայացուցչության վրա էր դրվել նաև դեռևս Թավրիզում մնացած փախստականների տեղափոխման հոգսը, սակայն նոյեմբերի կեսերից լիովին դադարեցվեց գաղթականների վերադարձը[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 44-ի շրջերես:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 29:

* ՀՍԽՀ հյուպատոսությունը Պարսկաստանի մայրաքաղաքում գոյություն է ունեցել մինչև 1922 թ. հոկտեմբերի 12-ը (ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 67):

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 67:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 47, թ. 83:

Այսպիսով, 1921 թ. ապրիլի 20-ից մինչև հուլիսի 12-ը Մեղրիի վրայով Պարսկաստան անցած 8042 մարդուց Խորհրդային Հայաստանի կառավարության ջանքերով մինչև նույն թվականի նոյեմբերի 15-ը հայրենիք էր վերադարձել շուրջ 6850 մարդ:

Միայն քաղաքացիական ընդհարումների հետևանքով գաղթած տարագիրներից Թավրիզում դեռ մնում էր 1200 մարդ: Այդքան մարդ պահելու համար հոկտեմբերի վերջերին այլևս չկային անհրաժեշտ դրամական և նյութական միջոցներ, իսկ դրանց ծայրահեղ անբավարար լինելը տարագիրների ղեկավարությանը հարկադրեց պատրաստել օգնություն ստացողների մի սահմանափակ ցուցակ: Դա նաև մի փորձ էր՝ մոտավորապես ճշտելու Թավրիզում մնացածների մեջ եղած առավել վտանգված քաղաքական տարագիրների թիվը, որոնք խորհրդային իշխանությունների համար ոչ միայն անբարեհույս էին, այլև համարվում էին թշնամիներ: Տարագրության ղեկավարները հույս ունեին, որ ցանկից դուրս մնացածները, ի վերջո, հարկադրված կլինեն մեկնել Հայաստան, և Երևանի կառավարությունն էլ, իր հերթին, հիմքեր չի ունենա քաղաքական պատճառաբանություններով արգելքներ հարուցելու, իսկ հետագայում՝ նաև ենթարկելու բռնությունների:

1921 թ. նոյեմբերի սկզբին այդ ցուցակի մեջ ընդգրկված էր խորհրդային իշխանության համար անընդունելի 668 մարդ, որոնցից 612-ը ամսական ստանում էր 6 թուման, մնացածները՝ մի փոքր ավելի: Այդ գումարը շատ քիչ էր Թավրիզում գոյատևելու համար, մանավանդ ձմռան ամիսներին, երբ կենսամթերքի գները գրեթե կրկնապատկվում էին:

Ցուցակից դուրս մնացած 542 գաղթականները մնացին բախտի քմահաճույքին:

«Խորհրդային հաշվեհարդարի ենթակա» անձանց ցուցակը հարկ եղավ դեկտեմբեր ամսին էլ ավելի կրճատել՝ թողնելով 460 մարդ: Սրանք իրենց հերթին բաժանվեցին երեք կարգի՝ առավել պատասխանատու գործիչներ, նվազ պատասխանատուներ և շարքային ակտիվ դաշնակցականներ: Առաջին կարգի մեջ եղածներն ամսական ստանում էին 9 թուման, երկրորդինը՝ 6 և երրորդինը՝ 4 թուման[1]. Զինվորականների հասանելիքի ձևակերպումները կատարում և նպաստը բաժանում էր գնդապետ Նարինյանը, քաղաքացիական անձանցը՝ Նախիջևանի նախկին նահանգապետ Վարշամյանը:

«Խորհրդային հաշվեհարդարի ենթակա անձանց»՝ «Վտանգված» վերնագրով ցուցակը առաջ էր բերել սուր հուզումներ շարքայինների, սպաների և խմբապետերի շարքերում:

Դրամ չստացողները բողոքում էին՝ ասելով, թե Երևանից հանած գումարները հայկական պետությանն են եղել, հետևապես ամբողջ ժողովրդինը, այլ ոչ թե մի խումբ արտոնյալ ղեկավարների: Ուստի պահանջում էին իրենց

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 45, թ. 45:

ևս բաժին հանել Թավրիզ հասցրած գումարներից: Բայց զուր: «Վտանգված-ների» նպաստը գնալով պակասում էր, և ի վերջո 1922 թ. փետրվարի 18-ից հետո նրանք բոլորը հավասարապես ստանում էին մի չնչին գումար՝ մեկ դոռան՝ այն էլ ընդհատումներով[1]:

Նպաստ չստացող տարագիրների մի մասը դեռ փայփայում էր Հայաստան վերադառնալու հույսը: Նրանցից շատերը հետագա ամիսներին բազմաթիվ հուսահատ ճիգեր արեցին՝ հաղթահարելու հայրենիք գնալու արգելքները, բայց շատ քչերին հաջողվեց ի վերջո Հայաստան մեկնելու թույլտվություն ստանալ: Մնում էր տարբեր ճանապարհներով գաղտնի անցնել սահմանը: Ոմանց դա հաջողվեց, ուրիշները սահմանն անցնելիս ձերբակալեցին և Երևանի ու այլ վայրերի բանտերում մի քանի ամիս մնալուց հետո աքսորվեցին Թիֆլիս, Բաքու կամ Հյուսիսային Կովկաս[2]:

Նպաստ չստացողներից 1921 թ. վերջերին Թավրիզում մնացել էր մոտ 600 փախստական: Աշխատանք գտնելու ու Թավրիզում ապրելու հույս չունենալով՝ բնականաբար, նրանք պետք է դուրս գային քաղաքից: Բայց անմիջապես առաջանում էր այն հարցը, թե ուր գնալ: Վաղվա օրվա նկատմամբ ամենքի մոտ վախ կար ու անվստահություն: Ընդհանուր հիասթափությունն աստիճանաբար համակեց բոլորին՝ խորտակելով թարմ դեպքերի ազդեցության տակ դեռ մնացած վերջին հույսերն ու իդեալները:

Գնալով, բնականաբար, նվազում էր վերադարձի ցանկությունը: Ոմանք հույս չունեին Հայաստանում գտնել ապրուստի միջոցներ, ուրիշները, որոնք 1915 թ. եղեռնից հետո Արևմտահայաստանից եկել էին Արևելյան Հայաստան և այնտեղ ապրել էին անասելի աղքատության մեջ, մտածում էին, որ այլևս միևնույնն է, թե որտեղ քարշ կտան իրենց գոյությունը, իրենց տանջալից կյանքը: Ուստի նրանցից 200-300 մարդու վիճակված էր ավելի հեռանալ հայրենիքի սահմանակից երկրից: Նրանց մի մասը բնակություն հաստատեց Պարսկաստանի խորքերում, արևմտահայ զինվորները հիմնականում բռնեցին Բաղդադի ճանապարհը՝ Միջագետքում փնտրելու կորցրած հարազատներին, մյուսները հետագա ամիսներին ցրվեցին Պարսկաստանից դուրս՝ զանազան կողմեր:

Ավելի մտահոգիչ ապագա էր սպասվում նպաստ ստացող «արտոնյալներին», նրանց, որոնց քաղաքական հանգամանքը քաջ հայտնի էր Երևանում: Նրանք այլևս չէին կարող հույս կապել ներման հետ:

Աշնանը Պարսկաստանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցչության համար մտահոգիչ էր դարձել այն, որ պարսկական իշխանությունները գաղթական զինվորականներին սկսել էին հավաքագրել և օգտագործել

---

[1] Տե՛ս **Վ. Մինախորեան**, Ապրիլի 2-ի գաղթը, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, թիվ 2, էջ 95, *նույնի*՝ Վերադարձը, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 52:

[2] Տե՛ս **Վ. Մինախորեան**, Վերադարձը, «Հայրենիք», 1924, ապրիլ, թիվ 6, էջ 53:

շեյխ Իսմայիլ աղա Սմկոյի գլխավորած քրդական շարժման դեմ. շարժում, որը լայն աջակցություն էր ստանում Թուրքիայից: Խորհրդային Հայաստանի կառավարությունը մտահոգ էր, որ ազգամիջյան կռիվների մեջ հայ գաղթականներին ներքաշելը կարող է ծանր հետևանքներ ունենալ ոչ միայն նրանց, այլև տեղի իրանահայերի համար:

Սմկոյի ապստամբական շարժումը ծավալվել էր Սալմաստի և Ուրմիայի շրջաններում, որտեղ կային մի քանի հայկական գյուղեր: Հայ բնակչությունը մեծապես տուժում էր պարսիկ կառավարության դեմ քրդերի մղած տևական կռիվներից: Չնայած դրան՝ հայերին, այնուամենայնիվ, երկար ժամանակ հաջողվում էր չեզոք մնալ, որը ձեռնտու էր կռվող երկու կողմերին:

Եվ ահա, 1921 թ. ամռան սկզբներից վտանգվել էր հայերի չեզոք պահվածքը: Պարսկական իշխանությունների հավանությամբ Սմկոյի դեմ կռվելու համար դաշնակցական հին գործիչ Սամսոն Թադևոսյանը* տարագիրներից և պարսկահայերից կազմել էր կամավորական մի խումբ՝ նպատակ ունենալով գրավել Սալմաստը, Ուրմիան և այնտեղ տեղավորել հայ գաղթականներին:

Այս վտանգավոր ձեռնարկը մեծ դժգոհություններ առաջացրեց գաղթականների շրջանում, որոնց գերակշիռ մեծամասնությունն այդ վայրերում հիմնավորվելու մասին մտածել անգամ չէր ուզում, քանի որ նրա միտքը զբաղված էր Հայաստան վերադառնալու խնդրով: Իրենց աչքերը սևեռած դեպի Ջուլֆա և Երևան՝ գաղթականները սպասում էին, թե ինչ «խաբրիկներ» պիտի հասնեն հայրենի օջախից:

Այնուամենայնիվ, Ս. Թադևոսյանի կազմակերպած զինված խումբը աշնան սկզբներին կռվի մեջ մտավ Սմկոյի դեմ:

Թեհրանի ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունից 1921 թ. նոյեմբերի 23-ին հետևյալ գաղտնի գրությունն էր ուղարկվել Պարսկաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Ֆ. Ա. Ռոտշտեյնին:

«Թավրիզում մեր հյուպատոս ընկ. Երզնկյանը հաղորդում է, որ դաշնակների կողմից Ադրբեջանում (նկատի ունի Իրանական Ադրբեջանը: – *Ա. Ս.*) կազմավորվող զորքից 300 հոգանոց մի ջոկատ արդեն ուղարկված է Սմկոյի դեմ: Այդ ջոկատի կազմի մեջ մտնում են ինչպես պարսկահպատակ, այնպես էլ կովկասյան հայեր: Կազմակերպիչներից գլխավոր դերակատարներն են Սամսոն Խանը և Կուռոն»[1]:

Պարսկական կառավարությունն այդ ժամանակաշրջանում փորձում էր հնարավորին չափ անկախ քաղաքականություն վարել և կանոնավոր հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային

---

* Սամսոն Թադևոսյանը (Սամսոն խան) այդ ժամանակ փախստականների կոմիտեի նախագահն էր Ղազվինում:

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 47-48:

Հայաստանի հետ. մի բան, որ բնավ չէին ցանկանում անգլիացիները, որոնք գաղտնի թե բացահայտ աջակցում էին պարսիկ կենտրոնական իշխանությունների դեմ կռվող Սմկոյին և հանդես էին գալիս կառավարությանն աջակցող հայկական զինված խումբը լուծարելու պահանջով:

Թեև Թավրիզի անգլիական հյուպատոսը մի քանի անգամ տեղի դաշնակցականների ղեկավարությունից պահանջեց զինված խումբը հետ կանչել ռազմական գործողությունների վայրերից, բայց այն շարունակում էր հարվածներ հասցնել Սմկոյին և լուրջ պարտություն հասցնել մի շարք ընդհարումներում:

Քրդական ապստամբության նկատմամբ անգլիացիների և խորհրդային կողմի վերաբերմունքը տրամագծորեն հակառակ էր: Անգլիացիները ձգտում էին ապակայունացնել ներքին վիճակը Պարսկաստանում, իսկ խորհրդային իշխանություններին, ընդհակառակը, ձեռնտու էր հարևան երկրի ներքին կայունությունը: Բայց երկու կողմերն էլ դեմ էին հայկական զինված խմբի գոյությանը: Արդեն ասվեց, թե անգլիացիներն ինչու էին դեմ: Ինչ վերաբերում է խորհրդային կողմին, ապա նա երկյուղ ուներ, որ այդ զինված խումբը աստիճանաբար կարող է խիստ մեծացնել իր շարքերը և հարձակում գործել Հայաստանի սահմանների վրա:

Խորհրդային հետախուզությունը պարզել էր, որ Թավրիզում կան ուժեր, որոնք նախապատրաստություններ են սկսել, որ իրենց համար միջազգային բարենպաստ իրադրություն ստեղծվելու դեպքում փորձեն վերականգնել Լեռնահայաստանի անկախությունը, մանավանդ լուրեր էին տարածվել, թե Խորհրդային Հայաստանը գնում է դեպի անկում, և պետական հեղաշրջումն օրերի հարց է[1]:

Ինչպես արդեն նշվել է, Նժդեհը չէր մասնակցում Խորհրդային Հայաստանի դեմ ուղղվելիք գործողությունների նախապատրաստություններին: Այդ գործի գլուխ կանգնել էր Ռուբեն Տեր-Մինասյանը, որը սկսել էր զինված ջոկատի կազմավորումը խմբապետերից և զինվորներից ու այդ նպատակով Ամերիկայից ստացել էր 5.500 թուման, իր հերթին Վրացյանը տրամադրել էր 3000 թուման[2]: Ծրագրված էր զինվորական ուժով Հայաստան մտնելուն զուգընթաց այնտեղ բարձրացնել զանգվածային ապստամբություն:

Խորհրդային Հայաստանի դեմ գործողություններ նախապատրաստող ղեկավարները Թավրիզում ժողովի էին հավաքել առավել հայտնի սպաներին ու խմբապետերին՝ պարզելու համար նրանց անելիքները: Ժողովի մասնակիցներին ասվեց, թե հայտնի է դարձել, որ Ռուսաստանում գործում է մի ուժեղ կազմակերպություն, որը ծրագրել էր բոլշևիկների իշխանության գալու չորրորդ տարեդարձին, այսինքն՝ 1921 թ. հոկտեմբերին, ապստամբու-

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, 19 հունիսի:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 72:

թյուն պայթեցնել թե՛ Ռուսաստանում և թե՛ Հյուսիսային Կովկասում, բայց գործողությունների որոշակի հստակ ծրագիր չունենալու պատճառով այդ ժամկետը հետաձգվել է մինչև 1922 թ. մայիս ամիսը:

Ժողովականները հարց տվեցին, թե Ռուսաստանում կազմակերպվող ապստամբության նկատմամբ ի՞նչ դիրք պետք է բռնի Պարսկաստանում ապաստանած հայ զինվորական ուժը: Պատասխանը եղավ մոտավորապես այսպիսին. այժմ ուժերը թեև ցրիվ են, բայց եթե Ռուսաստանում, Վրաստանում և Ադրբեջանում ընդհանուր ապստամբություն սկսվի, կողմնակի դիտողի դերում լինել չի ստացվի: Մինչև 1922 թ. մայիսը պետք է կարողանալ Հայաստանի հակախորհրդային ընդհատակը լավ նախապատրաստել ապստամբությանը՝ շեշտը դնելով Դարալագյազի վրա, որտեղ առավել ուժեղ է Դաշնակցության ազդեցությունը[1]:

Տաճկահայերից մի քանիսը, նաև խմբապետ Շավարշը, հենց այդտեղ պատրաստակամություն հայտնեցին անցնելու Լեռնահայաստան, իսկ ժողովականների մեծ մասը հավանություն չտվեց Խորհրդային Հայաստանում ապստամբություն բարձրացնելու գաղափարին[2]:

Ապստամբությունը նախապատրաստելու համար գաղտնի ճանապարհներով Հայաստան մտան մի քանի տասնյակ դաշնակցականներ: Դրանցից էին բաշգառնեցիներ Ավետը, Գեղամը, Սեդրակը, թուրքահայեր Կարո Դեմերջանյանը, Ճապո Նաջարյանը, Գեղեցիկ Վարդանյանը, Երվանդը (մշեցի), Գևորգը, Մուշեղը, Սարգիս Ալաշկերտցին[3], ուրիշ անուն-ազգանուններ վերցրած այլ անձինք, որոնք լրացրին Երևանի, Կոտայքի, Վայոց ձորի և հատկապես Էջմիածնի շրջանների դաշնակցական գաղտնի կազմակերպությունների շարքերը: Այդ փուլում Խորհրդային Հայաստանում գործող ամենաբազմամարդ և ամուր դաշնակցական ընդհատակյա կազմակերպությունն Էջմիածնի շրջանի Վերին Խաթունարխի կազմակերպությունն էր, որը ուղղություն էր տալիս շրջանի ընդհատակյա մյուս կազմակերպությունների աշխատանքներին, և որն իր գոյությունը պահպանեց մինչև 30-ական թվականների կեսերը:

Ինչպես Երևանը, այնպես էլ Մոսկվան, պարսկական կառավարությանը կտրուկ պահանջներ էին ներկայացնում՝ երկրից հնարավորին չափ շուտ հեռացնելու Հայաստանի խորհրդային կարգերի հակառակորդներին: Ավելին, հակախորհրդային հայ ղեկավար գործիչների ներկայությունը վտանգավոր համարելով հանրապետության համար՝ նրանք պարսկական կառավարությանը մեղադրում էին խորհրդային իշխանության թշնամիներին բացահայտորեն հովանավորչության տակ առնելու համար:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 2:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 72:

1921 թ. օգոստոսի 13-ին ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մռավյանը հեռագիր հղեց Թեհրան՝ Իրանի արտգործնախարարին (պատճենը՝ ՌՍՖԽՀ և ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ռոտշտեյնին).

«Մեր ունեցած հավաստի տեղեկություններով, ժողովրդական վրեժխնդրությունից փախած՝ Հայաստանի տապալված կառավարության նախկին անդամները և, այսպես կոչված, Փրկության կոմիտեի անդամները, ինչպես նաև Զանգեզուրի ապստամբների առաջնորդները ներկայումս ապաստան են գտել Պարսկաստանում, մասնավորապես՝ Թավրիզում: Թավրիզն իրենց կենտրոնը դարձնելով՝ այդ պարոնները ոչ մի միջոցից չեն խորշում շարունակելու համար հայ ժողովրդի օրինական բանվորագյուղացիական կառավարության դեմ հանցավոր պայքարը, դրանով իսկ խոչընդոտելով մեր հանրապետությունում խաղաղության և կարգի հաստատմանը: Հայաստանի կառավարիչների ընդհատակյա գործունեությունը Պարսկաստանում սկսվել է դեռևս ապրիլին, որտեղից նրանք ղեկավարում էին ապստամբության շարժումը Զանգեզուրում»:

Այնուհետև հեռագրում ասված էր.

«Մեզ խիստ զարմացնում է, որ մինչև այժմ պարսկական իշխանությունների կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկվել պայքարելու այդ երևույթի դեմ, որը սպառնում էր ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև Պարսկաստանի անդորրին: Հանուն Խորհրդային Հայաստանի և Պարսկաստանի միջև հաստատված բարիդրացիական հարաբերությունների, իմ կառավարությունը դիմում է Ձեզ՝ վճռական միջոցներ ձեռք առնելու Հայաստանի նախկին իշխանությունների եղկելի աշխատանքը դադարեցնելու և նրանց Պարսկաստանի սահմաններից վռնդելու համար:

Ընդունեցեք Ձեր նկատմամբ հարգանքի հավաստիացումներս»[1]:

Այդ օրերին ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչը Իրանի արտգործնախարարությանը ներկայացրեց ցուցակն այն գործիչների, որոնց հնարավորին չափ արագ հեռացումը երկրի սահմաններից համարվում էր խիստ անհրաժեշտ: Ցուցակում տրված էին Ս. Վրացյանի, Գ. Նժդեհի, Ա. Չիլինգարյանի, Կուռոյի անունները: Շուտով ներկայացվեց նաև երկրորդ ցուցակը, որում ներկայացված 26 անուններն էին՝ Ռուբեն փաշա, բժիշկ Բաբալյան, Կարո Սասունի, Սարգիս (Սերգեյ) Մելիք-Յոլչյան, Վաչե Արծրունի, Նիկոլայ Նիկողոսյան, Հակոբ Տեր-Հակոբյան, Վահան Մինախորյան, Սմբատ Եղիազարյան, Արշակ Հովհաննիսյան, Համբարձում Տերտերյան, Եղիշե Իշխանյան, Դարմանյան, Արամ Մարգարյան, Գևորգ Վառլամյան, խմբապետեր Մարտիրոս, Յապոն, Շավարշ, Ասլան, Հրաչյա, Թևան, Սարգիս (Քեռի), Մուրադ, Խնկո, Ղազո (Դալի), Ղազո (Քուրդ)[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 88, թ. 21:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 14, թ. 141:

Իր հերթին, ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Վ. Չիչերինը, անշուշտ, Հայաստանի կառավարության խնդրանքով, 1921 թ. սեպտեմբերի 30-ին նոտա հղեց (թիվ 11/5163) Պարսկաստանի արտաքին գործերի նախարար Մուշարուլ Ազամին՝ անհանգստություն հայտնելով, որ պարսկական իշխանությունները շարունակում են հանդուրժել իրենց տարածքում հայկական հակախորհրդային զինված խմբերի ներկայությունը, որոնք սպառնում են Խորհրդային Հայաստանի անվտանգությանը: Մասնավորապես շեշտված էր, որ Ամիր Արշադը և նրա եղբայր Սարդար Արշադը սերտ հարաբերությունների մեջ են Վրացյանի հետ, մի բան, որ Մոսկվայում տեղիք է տալիս լուրջ խորհրդածությունների:

ՌՍՖԽՀ-ում պարսկական դեսպան Մուշավերոլ Մամալիքը հոկտեմբերի սկզբին Չիչերինին հանձնեց իր երկրի արտգործնախարարի պատասխանը, որտեղ ասված էր, որ Ամիր Արշադի և Վրացյանի կոմիտեի փոխհարաբերությունների վերաբերյալ Ռուսաստանի արտգործժողկոմատին կտրվի հանգամանալից պատասխան, իսկ ինչ վերաբերում է Պարսկաստանում ապաստանած հազարավոր հայերին, ապա նրանք հասել են այնտեղ «կատարելապես անզեն և ուզում են միայն կյանքի ապահովություն՝ վերադառնալու համար իրենց տեղերը»:

Զինված հայ միավորների մասին հարցին Մուշարուլ Ազամին պատասխանել էր. «Պարտքս եմ համարում Ձեզ հայտնել, որ վերոհիշյալ միավորները, եթե այդպիսիք գոյություն ունեն, պիտի կազմված լինեն պարսկահպատակ հայերից, որոնք համաձայն [մեր երկրի] սահմանադրական օրենքների, ունեն հավասար իրավունքներ և [այդ հիմունքներով] ծառայում են կազակների, ժանդարմերիայի և այլ զորամասերի մեջ, որոնց մասին տեղյակ է պարսկական կառավարությունը»[1]:

Հետագա ամիսներին նույնպես Երևանի կառավարությունը շարունակում էր ակնդետ հետևել Թավրիզի դաշնակցականների գործունեությանը և հետապնդում էր նախկին նպատակը՝ հնարավորինս շուտ նրանց հեռացնել Խորհրդային Հայաստանին սահմանակից երկրից:

1921 թ. դեկտեմբերի 11-ին Թավրիզում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Լևոն Սարգսյանը նամակ ուղարկեց Թեհրան՝ Պարսկաստանի արտաքին գործերի նախարար Մուշարուլ Ազամին՝ բողոքելով այդ երկրում դաշնակցականների շարունակվող հակախորհրդային գործունեության դեմ:

«Մասնավորապես,– գրում էր նա,– օգտվելով Ատրպատականի ներկա խառնակությունից, նոքա իրենց հայտարարել են որպես Հայաստանի պաշտոնական մարմին և նույնիսկ այժմս, երբ պարսից պետությունը Իսմայիլ աղա Սմկոյի ըմբոստության դեմ պատրաստությունների գործով է զբաղված,

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3,, գ. 45, թ. 47-48:

վերոհիշյալ ղեկավարները եռանդ ու ջանք են գործադրում և Հայաստանի զինվորական ծառայողների հրամանատարության տակ **Թավրիզ** փախած զորքից, ինչպես և պարսկահպատակ հայերից խմբեր են կազմակերպում, որպեսզի հարմար առիթին հարձակում գործեն Հայաստանի վրա: Ես համոզված եմ, որ մինչև այդ գաղտնի կառավարության բոլոր անդամները և գործիչները Թավրիզից դուրս չքշվեն և չարտաքսվեն, մեր երկու բարեկամ և հարևան պետությունների բնակչության կացությունը հավասարապես վտանգված կլինի: Հուսով եմ, որ Ձերդ գերազանցությունը այս մտերմական հիշատակագրության մասին կտեղեկացնի նաև Ատրպատականի նահանգապետությանը և կպահանջի նրանից, որ նա վերոհիշյալների խռովահույզ գործողությունների սանձահարման համար համապատասխան կարգադրություններ անի»[1]:

Հայկական զինվորական ուժի ծառայությունից հրաժարվելը տվյալ պահին չէր մտնում պարսիկ կառավարության հաշիվների մեջ, ուստի ի պատասխան Լևոն Սարգսյանի դեկտեմբերի 11-ի նամակի՝ Պարսկաստանի արտգործնախարարը գրում էր, որ Թավրիզում մնացել են ընդամենը մի քանի հարյուր կովկասահայ փախստական և Հայաստանի նախկին պետության ղեկավարներից վեց մարդ: Դրանց կեսը պատրաստ էր ապահովություն ստանալուց հետո վերադառնալու իր ծննդավայրը, մյուս կեսը, տրամադրություն չունենալով վերադառնալ Հայաստան, պատրաստ էր Թավրիզից հեռանալ Պարսկաստանի խորքերը, այնտեղ, որտեղ հարմար կգտներ պարսից կառավարությունը: Նախարարն ավելորդ չէր համարում շեշտել, որ Թավրիզում մնացած կովկասահայերը «ամբողջապես գտնվում են ճնշված տրամադրության մեջ և վարում են չքավոր, չարքաշ կյանք», որ նրանք «երբևիցե ինտրիգ սարքելու կամ խռովություն ստեղծելու նպատակ չեն ունեցել և չունեն»: Ինչ վերաբերում էր Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցչի այն պնդումներին, թե դաշնակցականները կազմակերպում էին զինված խմբեր, պարսից նախարարը պատասխանել է. «Այդ լուրը անհիմն է ամբողջապես, նոքա բոլորն էլ զինաթափ են եղել Ղարադաղում, և ոչ մեկը նրանցից զենք չունի: Հայոց պետության վախը նրանցից ոչնչով չի պատճառաբանվում, և ոչ մի կազմակերպումն ընդդեմ այդ պետության տեղի չի ունեցել: Երբ Իսմայիլ աղա Սմկոյի դեմ պատերազմական պատրաստություններ էին տեսնվում, պարսկահպատակ սալմաստեցի և ուրմիացի հայերի մի որոշ մասը զինվեցին և ընդունվեցին պատերազմական ծառայության մեջ: Միայն երկու հոգի Զանգեզուրի հայերից, որ պարզվեց հետո, մտել էին պարսից զորքի մեջ և նրանց մասին էլ Ատրպատականի նահանգապետության կողմից հրաման եղավ՝ զորքից դուրս հանելու: Հիշատակելով վերոգրյալը, ես հուսով եմ, որ դեպի հայ փախստականները մեր կառավարության կողմից ցույց տված կարեկցությունը չի

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 56:

կարող, հակառակ սպասողության, ծագում տալ անցանկալի երևույթների»[1]:

Թեև պարսկական իշխանություններն ընդհանուր առմամբ հանդուրժողաբար և ըմբռնումով էին վերաբերվում փախստական ղեկավար գործիչներին և մտավորականներին, բայց Մոսկվայից և Երևանից եկած նոտաների ազդեցության տակ սկսել էին անհանգստանալ և եկվորներին հասկացնել տալ, որ իրենց երկրում այլևս անցանկալի է նրանց ներկայությունը: Հատկապես մի քանի անգամ նախազգուշացումներ արեց պարսկական Ադրբեջանի (Ատրպատականի) նահանգապետ Մուխտար Սալտանեն:

Իրենց հերթին, անհանգիստ էին նաև տնտեսական-կենցաղային տառապանքներ կրող գործիչներն ու մտավորականները: Նրանք, ոչ առանց հիմքի, վախ էին զգում, որ մի օր իրենք կհայտնվեն սահմանից այն կողմ՝ Երևանի բանտում:

Թավրիզի գաղթականության մասին Ա. Մյասնիկյանին ներկայացրած զեկուցագրի մեջ հայկական բանակի հետախուզությունը դեռևս օգոստոսի 11-ին գրել էր, որ Փրկության կոմիտեի և Սյունիքի կառավարության ղեկավարները վախ ունեն, թե Խորհրդային Հայաստանի կառավարությունը կարող է պարսկական կառավարությունից պահանջել իրեն հանձնել նրանց՝ պատճառաբանելով, որ զանգեզուրյան կռիվների ժամանակ պարսկական կողմի գիտությամբ Լեռնահայաստանի կառավարության անդամները և Փրկության կոմիտեի նախագահը գտնվել են Թավրիզում և այնտեղից ամբողջ ժամանակ հանձնարարականներ ուղարկել Զանգեզուր՝ դրանով իսկ խախտելով Պարսկաստանի չեզոքությունը[2]:

Այդ երկյուղից դրդված և Երևանի մտադրությունների մասին ստույգ տեղեկություններ ստանալու նպատակով Թավրիզում ստեղծվել էր հակահետախուզություն, որի ղեկավարն էր դաշնակցական Մխոն[3]:

Միաժամանակ դաշնակցականների ղեկավարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ այն մասին, որ եթե գործիչներին ու մտավորականներին Հայաստան տանելու քայլեր կամ եթե խորհրդային գործակալների կողմից տեռորի փորձեր արվեն, ապա դաշնակցության հատուկ ծառայությունները ինչպես Պարսկաստանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների, այնպես էլ բուն Հայաստանում խորհրդային կուսակցական և պետական ղեկավար գործիչների նկատմամբ կդիմեն զանգվածային ահաբեկչական գործողությունների:

Որպես այդ ամենի հետևանք՝ գնալով արագացավ գործիչների և մտավորականների հոսքը Թավրիզից դեպի հեռուներ: Մեկնում էին առավել վտանգված քաղաքական գործիչները, ապա՝ մյուս մտավորականները:

Ամենից առաջ՝ դեռ 1921 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, Պարսկաստա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 57:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 10, թ. 31-ի շրջերես:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 45, թ. 46:

նից դուրս եկան Համո Օհանջանյանը, Շանթը և Բախշի Իշխանյանը[1]: Նրանց հետևեց Սմբատը: Հոկտեմբերի կեսերին Թեհրանից Եվրոպա մեկնեց Վրացյանը[2]: Նժդեհը նույնպես պատրաստվում էր արտասահման մեկնել և ուզում էր գնալ իր անդավաճան զինակցի՝ Ղազար Քոչարյանի (Քաչալ Ղազո) հետ, բայց ճանապարհածախսը չբավականացրեց՝ երկուսով Պարսկաստանից մեկնելու համար: Նա դիմեց Վրացյանին և խնդրեց ճանապարհի համար պակասող գումարը լրացնել «կառավարության» տրամադրության տակ եղած միջոցներից, սակայն նրան պատասխանեցին, որ կարող են միայն իր ճանապարհածախսի պակասող գումարը լրացներ: Նժդեհը ստիպված դիմեց Բուլղարիա, իր բարեկամներից մեկին, որը Կ. Պոլսի վրայով Թավրիզ ուղարկեց Նժդեհի և Ղազար Քոչարյանի ճանապարհածախսը[3]: Մոտ չորս ամիս Թավրիզում գաղտնի ապրելուց հետո նա, վերջապես, նոյեմբերի 22-ից անցավ Թեհրան և մի քանի օր այնտեղ մնալուց հետո մեկնեց Բուլղարիա. նրա հետ էին խմբապետ Ղազար Քոչարյանը և ուսանող Հայկ Ասատրյանը[4]:

Մի քանի տասնյակ «վտանգվածներ», այնուամենայնիվ, որոշեցին մնալ Պարսկաստանում: Իշխանությունների թույլտվությամբ Թևան Ստեփանյանը մի քանի զինակիցների հետ նոյեմբերին Թավրիզից մեկնեց Ղարադաղ և մշտական բնակություն հաստատեց այնտեղ[5]: Նույն կերպ վարվեց նաև Յապոնը (Հովհաննես Պարոնյան), որը հաստատվեց Մուժամբար հայկական գյուղում:

Թավրիզում մնացին մտավորականների ու գործիչների մի փոքր խումբ և մի քանի հարյուր շարքային տարագիրներ: Հիմնավորվելով այստեղ՝ նրանք պատահական նպաստներով մի կերպ քարշ էին տալիս իրենց գոյությունը, մինչև որ տարիների ընթացքում համառ աշխատանքով հաղթահարեցին տնտեսական և այլ կարգի դժվարությունները: Քաղաքում սկսեց գործել հայկական գիմնազիա, լույս տեսան թերթեր, կազմակերպվեցին դասընթացներ, հիմնվեցին արհեստանոցներ, բացվեցին խանութներ, որի շնորհիվ կենդանություն առավ գավառական քաղաքը:

Պարսկաստանի խուլ գավառներ անցած գաղթականները ևս աստիճանաբար թոթափեցին անարժեքության բարդույթը, լծվեցին զանազան աշխատանքների և իրենց քրտինքով ստեղծեցին տանելի պայմաններ:

Այդպիսիների վիճակը, իր օրինակով, քսան տարի անց ներկայացրել է Յապոնը. «Մուժամբար հաստատվելուց հետո ծախեցի իմ սեփական երկու ձին, մեկ հատ ջորիս ու այդ համեստ գումարով ձեռնարկեցի գյուղատնտեսական աշխատանքի: Խիստ սահմանափակ չափերով տարվող իմ այդ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 88, թ. 51 և շրջերես:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 61:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 37, թ. 3:
[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 35:
[5] Տե՛ս նույն տեղում:

տնտեսությունը այժմ այնքան հասույթ է տալիս, որ կարողանում ենք մեր ապրուստը հոգալուց բացի, ուրիշներին էլ օգտակար լինել:

Այժմ, Իրանի մեկ հովտում ընկած գեղջկական իմ տնակում մտքով դառնում եմ դեպի հայրենի աշխարհս, ուր հասակ առի, լեն ու նեղ օրեր տեսա, ծառայեցի հայրենիքիս ազատության դատին...»[1]:

Հիմնավորվելով տարբեր երկրներում՝ մտավորականներն ու գործիչները հայկական գաղութներում սկսեցին ծավալել քաղաքական, հասարակական, մշակութային լայն գործունեություն, լծվեցին հայապահպանման դժվարին գործին, արտաշխարհի զանգվածների մեջ կենդանի պահեցին հայրենիքի անկախության գաղափարը:

Հայ մտավորականների, պետական ու քաղաքական գործիչների փրկության, նրանց հետագա բեղուն գործունեության համար հայ գաղթաշխարհը պարտական էր Զանգեզուրի պաշտպաններին, որոնք զենքի ուժով իրենց լեռնաշխարհը հայ մտավոր դասի հալածական մի խոշոր հատվածի փրկության կամուրջ դարձրին:

«Դյուցազնական երկիրը,– գրել է Նժդեհը,– շեշտ կնայեր թշնամու աչքերի մեջ, նրան սանձած պահելով իր պատերի տակ, որպեսզի կարմիր մահվան ճիրաններից մազապուրծ հազարները անխռով և անկորուստ անցնեին դեպի ապահով հորիզոններ:

Եվ անցավ ու փրկվեց Արարատյան մտավորականությունը, ուսանողությունը, սպայությունը»[2]:

ՀՅ դաշնակցության գերագույն մարմինը, որը 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո փոխարինել էր ՀՅԴ բյուրոյին, իր ժամանակավոր նստավայրից՝ Բուխարեստից (Ռումինիա), Թավրիզում գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարությանը խորհուրդ տվեց ինքնալուծարվել: Կառավարությունը շարունակեց իր գոյությունը մինչև 1921 թ. հոկտեմբերի 11-ը. այդ օրը բազմամարդ դահլիճը լուծարման ենթարկվեց՝ նախապես վարչապետ Սիմոն Վրացյանին լիազորելով կազմել 3-5 մարդուց բաղկացած դահլիճ՝ գլխավորապես տարագրության գործերը հսկելու համար: Այն՝ Ս. Վրացյան, Հ. Տեր-Հակոբյան, Վ. Մինախորյան կազմով, հաջորդ օրը՝ հոկտեմբերի 12-ին, անցավ գործի: Երկու օր հետո՝ հոկտեմբերի 14-ին, Ս. Վրացյանը մեկնեց արտասահման, և «դահլիճում» մնաց երկու մարդ, որոնք իրենց պաշտոնը շարունակում էին վարել մինչև 1923 թ. սեպտեմբերի 24-ը, այսինքն՝ մինչև «կառավարության» վերջնական լուծարումը[3]:

---

[1] Եապօնի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը. գրի առավ Յ. Տէրունին, «Հայրենիք», 1941, հուլիս, թիվ 9 (223), էջ 119-120:

[2] **Գ. Նժդեհ**, Յեղի ոգու շարժը, էջ 32:

[3] Տե՛ս **Յ. Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 110-116:

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՇԵՄԻՆ

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում այնտեղ՝ Սյունիքում, որի ժողովուրդն ամբողջ երեք տարի գերմարդկային կռիվներ էր մղել ֆիզիկական գոյությունը պահպանելու և իր լեռնաշխարհը մայր հայրենիքի հետ միավորելու համար:

Ինչպես ասվեց, 1921 թ. հուլիսի 8-ին Ռիգայում բանակցություններ էին սկսվել ՌԿ(բ)Կ կենտկոմի և ՀՅ դաշնակցության՝ արտասահմանյան կենտրոնի պատվիրակության միջև՝ քննարկելու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող հարցեր, այդ թվում՝ Զանգեզուրի հարցը:

Հուլիսի 14-ին, երբ Զանգեզուրն ամբողջովին գրավված էր Կարմիր բանակի զորքերի կողմից, ՀՅ դաշնակցության պատվիրակությունը քննարկման ներկայացրեց իր կուսակցության Գերագույն մարմնի առաջարկությունը:

Առաջարկության նախագծի առաջին կետում նշված էր, որ ՌԿ(բ)Կ-ն պետք է պաշտոնապես ընդուներ, որ ճանաչում է Հայաստանի անկախությունը: Երկրորդ կետում նշվում էր, որ «այսպես կոչված, Ռուսահայաստանի և, այսպես կոչված, Թուրքահայաստանի տարածքային միավորումը, այն է՝ առաջինին միացնել նախկին հայաբնակ թուրքական տարածքներ, բավական կլինի Հայաստանի ազատ տնտեսական և քաղաքական գոյության համար»: Մյուս երկու կետերում ասված էր, որ Հայկական հարցի լուծման նպատակով ՌԿ(բ)Կ-ն պետք է պարտավորվեր ներգործել ՌՍՖԽՀ կառավարության վրա, որպեսզի վերջինս իր տրամադրության տակ եղած միջոցներով Թուրքիային ուղղորդեր հայկական հարցի լուծմանը՝ Թուրքահայաստանից Ռուսահայաստանին միացնելով հայ ժողովրդի ազատ քաղաքական գոյության համար բավականաչափ մի տարածք՝ դեպի ծով ունեցող ելքով:

Այս առաջարկությունն անող ՀՅԴ գերագույն մարմնին արդեն հայտնի էր, որ Զանգեզուրը գրավված էր Կարմիր բանակի զորքերի կողմից, և գավառի միացումը Խորհրդային Հայաստանին կատարված փաստ էր: Ելնելով այդ իրողությունից՝ Գերագույն մարմինն այժմ ձգտում էր նրան, որ բացի Զանգեզուրից՝ Խորհրդային Հայաստանին միացվեին նաև հայկական ուրիշ տարածքներ: Այդ գործում ՀՅ դաշնակցությունը Ռուսաստանի կառավարությանը (հետևապես նաև՝ Խորհրդային Հայաստանի կառավարությանը) առաջարկում էր իր աջակցությունը:

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը խոստանում է լիակատար աջակցություն և ուժերը ներածին չափ օգնություն ցույց տալ Հայաստանի կառավարությանը՝ առաջին և երկրորդ կետերում նշված դրույթ-

ները կենսագործելու համար և, մասնավորապես, պարտավորվում է.

ա) Ինչպես իր հայրենիքում, այնպես էլ նրանից դուրս քարոզչություն մղել հայ ժողովրդի միջավայրում, նպատակ ունենալով նրան միավորել [Խորհրդային] կառավարության շուրջը, որը կենսագործում է առաջին և երկրորդ կետերում հիշատակված դրույթները.

բ) Ամեն կերպ աջակցել, որ եվրոպական տերություններն օգնություն և օժանդակություն ցույց տան՝ ՌՍՖԽՀ-ի նախաձեռնությամբ հայկական հարցի լուծմանը՝ վերոհիշյալ իմաստով.

գ) Ուժերի ներածին չափ իր կողմից ներգործել Թուրքիայի վրա, նպատակ ունենալով ստանալ նրա համաձայնությունը Ռուսաստանին միացնելու վերոհիշյալ իմաստով բավականաչափ տարածք Թուրքահայաստանից»[1]:

Նույն նիստում ՀՅ դաշնակցության պատվիրակությունը ՌԿ(բ)Կ ներկայացուցիչներին հանձնեց նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարությանն ուղղված մի փաստաթուղթ, որով կոչ էր արվում գտնելու համագործակցության եզրեր, մշակելու ընդհանուր քաղաքական ծրագիր և միասնաբար գործելու հանուն հայ ժողովրդի ընդհանրական շահերի: Դաշնակցությունը առաջարկում էր այդ ծրագրի հիմքում դնել սոցիալական, քաղաքական և վարչական բնույթի մի շարք սկզբունքներ: Մասնավորապես առաջարկվում էր Հայաստանում անցկացվելիք սոցիալական բնույթի միջոցառումները հարմարեցնել երկրի յուրահատուկ պայմաններին, պաշտպանության տակ վերցնել ոչ միայն չքավոր, այլև միջակ գյուղացիությանը, հայտարարել մանր առևտրի ազատություն, առանց խտրության քաղաքացիական ազատություններ ընձեռել հանրապետության բոլոր բնակիչներին, ապահովել նրանց մասնակցությունը իշխանության մարմինների աշխատանքներին, հայտարարել և իրականացնել կուսակցությունների գործունեության, ժողովների, բանավոր և գրավոր քարոզչության լիակատար ազատություն, ջանքեր գործադրել շտկելու Խորհրդային Հայաստանի սահմանները, մասնավորապես՝ դիվանագիտական ակտիվ աշխատանք ծավալել՝ նրան միացնելու բացառապես հայերով բնակեցված Լոռվա և Ախալքալաքի գավառները: Նաև առաջարկվում էր Հայաստանի ժողկոմխորհուրդը կազմավորել կոալիցիոն սկզբունքներով՝ ՀՅԴ մասնակցությամբ:

Դաշնակցության կողմից առաջարկված երկու փաստաթղթերը դրվեցին քննարկման, որը, սակայն, որևէ դրական արդյունք չտվեց: Դաշնակցության պատվիրակությունը ստիպված եղավ ետ վերցնել իր առաջարկությունները: Հուլիսի 13-ին ՌԿ(բ)Կ պատվիրակության ղեկավար Ա. Իոֆֆեն հայտարարեց, որ իր կուսակցության կենտկոմը մտադիր է միջնորդի դեր ստանձնելու Հայաստանի կոմկուսի ղեկավարության և ՀՅԴ կենտրոնի միջև: Նա նշեց, որ

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 8:

Հայաստանի կոմունիստական կուսակցությանը առաջարկ կարվի Հայաստանում լեգալացնել ՀՅԴ-ն և պայմաններ ստեղծել համատեղ աշխատանքի համար:

Հուլիսի 16-ին ՌԿ(բ)Կ կենտկոմը և ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը Երևանից ստացան Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինի հեռագիրն այն մասին, որ Զանգեզուրն ամբողջովին գրավված է Կարմիր բանակի զորքերի կողմից, ուստի ավելորդ էր դաշնակցականների հետ բանակցությունների հետագա շարունակումը:

Հեռագիրն ստանալուն պես խորհրդային ղեկավարությունը Ռիգայի իր պատվիրակությանը ցուցում տվեց բանակցություններն անմիջապես դադարեցնելու մասին: Բանակցությունները դադարեցրին: ՀՅ դաշնակցության պատվիրակությունը վերադարձավ Բուխարեստ՝ Ռիգայի հանդիպման արդյունքների մասին հաղորդում տալու կուսակցության Գերագույն մարմնին:

* * *

1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական բարեկամության պայմանագրով Հայաստանի Նախիջևանի երկրամասը և Շարուր-Դարալագյազի գավառի Շարուր գավառակը միացվել էին Խորհրդային Ադրբեջանին, իսկ իր հերոսական գոյամարտով Զանգեզուրը փրկվել էր Ադրբեջանի ճանկերից: Ինչ վերաբերում է մյուս «վիճելի» տարածքին՝ ամբողջովին հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղին, ապա նրա պատկանելության հարցը դեռ մնացել էր առկախ մինչև 1921 թ. կեսերը: Ադրբեջանի ղեկավարները, սակայն, կարողացան նոր ուղիներ գտնել և այդ երկրամասը նույնպես, նրա բնակչության կամքին հակառակ, ներառել իրենց հանրապետության կազմի մեջ:

Զանգեզուրում դեռ շարունակվում էին ռազմական գործողությունները, դեռ Ռիգայի բանակցությունները չէին ավարտվել, երբ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի նիստը, որը վարում էր կոմիտեի քարտուղար Ս. Օրջոնիկիձեն, և որին ներկա էր նաև Ի. Ստալինը, 1921 թ. հուլիսի 5-ին բանաձև ընդունեց՝ հայկական Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու մասին: Այս բանաձևն ընդունեց ոչ թե իրավասու օրենսդրական մի մարմին, որն իրավունք ուներ վճռելու պետությունների միջև սահմանների հարցը, այլ կուսակցական (այն էլ ոչ ամենավերին) մի մարմին՝ մի քանի անձերի կամայական որոշմամբ:

Հայ ժողովրդի առջև ծառացավ մի նոր մարտահրավեր:

Զանգեզուրը խորհրդայնացնելուց հետո էլ Ղարաբաղում շարունակում էին գործել հայկական պարտիզանական ջոկատներ, որոնք խորհրդային պատմագիտության մեջ միանշանակ ստացել էին «թևանական բանդիտներ» անվանումը: Բայց իրականում այդ ջոկատներում հիմնականում ընդգրկված էին արցախյան զինված գյուղացիներ, որոնք չէին հաշտվում այն մտքի հետ,

որ իրենց կամքին հակառակ՝ ենթարկվելու են թուրք-ազերիներին: Նրանց հետ շարունակում էին կռվել նաև տասնյակ զանգեզուրցի մարտիկներ, որոնք չէին հեռացել Պարսկաստան: Նրանց մի մասը Զանգեզուրում խուլ դիմադրություն էր ցույց տալիս նոր իշխանություններին՝ քաղաքացիական անհնազանդության ձևով, մյուս մասը գերադասում էր կռիվը շարունակել Ղարաբաղում:

Ղարաբաղցիների և խորհրդային զորամասերի ընդհարումները արյունալի բնույթ էին կրում հատկապես այն վայրերում, որտեղ 11-րդ Կարմիր բանակի Կովկասյան 1-ին կորպուսի զորամասերի կազմում Թևանի ջոկատների դեմ կռվում էին նաև Ադրբեջանի թուրքերը: Վերջիններիս թիվը մեծ էր հատկապես կորպուսի մեջ մտնող 82-րդ հրաձգային բրիգադի կազմում, մասնավորապես՝ բրիգադի 246-րդ հրաձգային գնդում:

Այսպես, օրինակ, Հադրութի շրջանում 1921 թ. ամռանը տեղի կոմունիստական ջոկատը, որը գլխավորում էին Մամեդխան Մամեդխանովը և Շմավոն Դավիդովը, մի ընդհարման ժամանակ տվեց մեծաթիվ զոհեր, զոհվեց նաև հրամանատար Դավիդովը: Զաբրայիլի շրջանում աշնանը ծավալված կռիվներում կոմունիստական միայն մի ջոկատից սպանվեց 75 մարդ: Ինչ խոսք, մեծ էին նաև ղարաբաղցի ապստամբների կորուստները:

1921 թ. դեկտեմբերին Կարմիր բանակի զորամասերը Դիզակի (Հադրութի) կոմունիստական ջոկատի հետ պարտության մատնեցին ղարաբաղցի պարտիզաններին: Անկարող լինելով այլևս շարունակել կռիվները՝ նրանց մի մասը ցրվեց գյուղերում, իսկ մյուս մասը հեռացավ Զանգեզուր՝ իրենց բնակավայրերը:

Զանգեզուրը Կարմիր բանակի զորքերի կողմից գրավվելուց անմիջապես հետո Խորհրդային Հայաստանի կառավարությունը 9 մարդուց բաղկացած մի հանձնախումբ ուղարկեց այնտեղ՝ կացությանը մոտիկից ծանոթանալու համար: Վերադառնալով Երևան՝ հանձնախումբը զեկուցագիր ներկայացրեց կառավարությանը, որի մեջ շեշտված էր, որ Զանգեզուրը ապրում է պարենավորման ծանր ճգնաժամ:

«Խիստ սակավ է հացը, որին փոխարինում է առատ թութը, և որը կազմում է ազգաբնակչության միակ սնունդը: 10 օրից հետո կսկսվի հունձը, որը ընդհանրապես աննշան է՝ իբրև հետևանք տնական կռիվների: Եղած հունձը կազմում է Զանգեզուրի ազգաբնակչության ընդհանուր պահանջի հազիվ 40%-ը. կնշանակի՝ մնացած 60%-ի մասին պետք է լուրջ մտածել և հերթական խնդիրների շարքը դասել: ...Զանգեզուրի ժողովուրդը գրեթե մերկ է, որովհետև համաշխարհային պատերազմի սկզբներից մինչև օրս գործվածք չի մտել այդ լեռնաշխարհը»[1]:

1921 թ. նոյեմբերի 2-ին Զանգեզուրի գավառային հեղկոմի նախագահը և

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 12, գ. 16, թ. 6:

ՀՍԽՀ պարենավորման ժողկոմի տեղակալը նամակ ուղարկեցին Ա. Մյասնիկյանին՝ գավառի տնտեսական ծանր վիճակի նկարագրությամբ:

Նրանք գրում էին, որ Զանգեզուրում աշնանացանի մասսայական աշխատանքները ձախողվել են: Նախատեսվել էր սերմացու տրամադրել 28 ամենաաղքատ գյուղերին, որոնց մեծ մասը լիովին քայքայվել էր պատերազմների հետևանքով: Սակայն բաժանվել էր ընդամենը 30 փութ սերմացու: Սերմացուի բացակայության պատճառով ցանքսերի 40%-ը չէր ցանվել: Բայց ամենատագնապալին այն էր, որ հույս չկար, թե գոնե առաջիկա գարնանացանը կկատարվի, քանի որ ձմեռվա անխուսափելի սովի պատճառով գյուղացիները ստիպված կլինեն ուտել սերմացուն: Զանգեզուրի պարենային խնդրի լուծումը տեղի ուժերով համարելով անհնարին՝ նրանք նշում էին, որ բնակչությունը բոլոր հույսերը կապել է կառավարության հետ, և եթե այդ հույսերը ի դերև ելնեն, ապա Զանգեզուրից ծայր կառնի զանգվածային գաղթը այլ երկրներ, ու երկրամասը կհայաթափվի: Վիճակը հրամայաբար պահանջում էր գավառին տրամադրել առնվազն 50.000 փութ սերմացու գալիք գարնանացանի, նույնքան էլ՝ բնակչությունը սովից փրկելու համար[1]:

Նույնքան ծանր վիճակ էր անասնապահության բնագավառում: Սովը գյուղացիներին ստիպում էր հարևան ադրբեջանական տարածքներում ծախծխել անասունները՝ փոխարենը ցորեն ձեռք բերելու համար:

Վաղուց զանգեզուրցին մոռացել էր նավթի մասին, իսկ աղ ունենալը հրաշքի էր նման:

Գավառի իշխանություններին մեծ անհանգստություն էին պատճառել այն լուրերը, որ Զանգեզուր են գալու Հայաստանի Կարմիր բանակի նոր զորամասեր և զինակոչիկներ: Այդ կապակցությամբ նույն նամակում ասվում էր. «Դա համարում ենք կործանարար ինչպես իրենց իսկ զորամասերի, այնպես էլ բնակչության համար: Ընդհակառակը, թախանձագին խնդրում ենք՝ այստեղից այլ վայրեր տանել տեղացի զինակոչիկներին, որոնց երեք օրից ավելի հնարավոր չէ պահել գավառում, քանի որ ոչինչ չկա նրանց կերակրելու համար»: Նրանք տեղեկացնում էին, որ գավառում տեղակայված հայկական Կարմիր բանակի 4-րդ գունդը լիովին կրում էր այնտեղ ծայր առած պարենային ճգնաժամի բոլոր արհավիրքները, ուստի նպատակահարմար էր գունդը տանել Զանգեզուրից[2]:

Նամակի վերջում նրա հեղինակները գրում էին. «Այդ ամենը Ձեզ ի գիտություն հայտնելով՝ մեր պարտքն ենք համարում հայտարարել, որ եթե ՀՍԽՀ ժողկոմխորհուրդը օգնության չգա Զանգեզուրի սովյալներին, շտապ չուղարկի պահանջված հացամթերքի գոնե կեսը, առանց որի Զանգեզուրը ֆիզիկապես գոյություն ունենալ ի վիճակի չէ, այդ դեպքում երկրամասի ղե-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 27:

[2] Տե՛ս նույն տեղում:

կավար աշխատողները իրենցից վար են դնում հետևանքների պատասխանատվությունը, միաժամանակ շարունակելով աշխատել չթուլացող էներգիայով և նվիրվածությամբ»[1]:

Վիճակը բարդանում էր նրանով, որ Զանգեզուրի սահմանային գյուղերի վրա հարձակումներ էին կատարում Ադրբեջանի տարածքում գործող ավազակային խմբերը, որոնք ղեկավարվում էին Սուլթանովի նախկին սպաների կողմից, սակայն Ադրբեջանի իշխանությունները ոչ մի միջոց չէին ձեռնարկում: Ավազակախմբերից ամենամարդաշատը մշտապես գործում էր Մինքենդի շրջանում, և այն ղեկավարում էր ջաղազուրցի Աղա Մահմեդը: Նրա հրոսակախումբը բաղկացած էր մինչև ատամները զինված 60 մարդուց, ուներ երկու գնդացիր: Մինքենդից հրոսակախումբն իր հարվածները հասցնում էր հատկապես Գորիսի շրջանի հյուսիսարևելյան գյուղերի վրա՝ դրանով իսկ առաջ բերելով ազգամիջյան նոր բարդություններ[2]:

Հոկտեմբերի 31-ին Զանգեզուրի հեղկոմի նախագահ Գ. Օհանջանյանը և անդամ-քարտուղար Գ. Սաֆրազբեկյանը ՀՍԽՀ ժողկոմխորհրդին գրում էին, որ տնտեսական քայքայման և ընթացիկ տարվա անբերրիության հետևանքով Զանգեզուրում ստեղծվել է ծանր վիճակ: Դրությունն ավելի էր բարդանում գործուն և հմուտ ուժերի բացակայության պատճառով: Նրանք նշում էին. «Գյուղական հեղկոմների մեջ նստած են անհուսալի տարրեր... Մարդ չկա նրանց փոխարինելու: Շրջհեղկոմների անդամները պատրաստված ուժեր չեն: Ժողովրդական դատավորները և քննիչները դեռ չեն կարողացել ըմբռնել նոր դատարանի էությունը: Դատավարությունը տարվում է շատ տեղեր հին սովորություններով, որն առաջ է գալիս թե՛ խորհրդային դատավորների և թե՛ դատական դեկրետների բացակայությունից»[3]:

Այնուհետև, անդրադառնալով հողային հարցին, նրանք գրում էին. «Հողային հարցը մեզ մոտ սուր կերպարանք է ստացել. բնակչությունը գրավել է թուրք լքված գյուղերը: Վերջերս թուրքերը վերադառնում և պահանջում են հայերից թողնել այդ գյուղերը: Իշխանությունը անկարող է այս հարցում բռնել հայ կամ թուրք ազգաբնակչության կողմը: Թողնել իրեն, ազգաբնակչության, լուծելու այդ կնճիռները, վտանգավոր է»[4]:

Նկատենք, որ Զանգեզուրի հեղկոմը այդ հարցում կարողացավ վարել շատ ճկուն քաղաքականություն, այն է՝ հայտարարելով Զանգեզուրը քաղցած երկրամաս, հրաժարվեց ընդունել այնտեղից հեռացած թուրք գաղթականներին:

Բայց լքված գյուղերը գրավում էին տնտեսապես ուժեղ գյուղացիները,

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 26-ի շրջերես:

[2] Տե՛ս նույն տեղում, ց. 3, գ. 33, թ. 87:

[3] Նույն տեղում, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 22:

[4] Նույն տեղում:

իսկ խեղճերն ու անօգնականները մնում էին իրենց նեղ ու հողազուրկ սահմաններում: Այդ էր պատճառը, որ գյուղացիները, չսպասելով հողային դեկրետների, իրենք էին որոշում իրենց բախտը, այն է՝ համայնքի բոլոր հողերը բաժանում էին ըստ շնչի՝ առանց Երևանից եկած ցուցումների: Բացի այդ՝ որոշել էին գյուղից բացակայողներին հաշվել համայնքի անդամ մինչև գալիք տարվա մայիսի 1-ը, իսկ եթե շարունակեին բացակայել նաև դրանից հետո, ապա նրանց հողը անցնում էր գյուղի հասարակությանը: Գավառային հեղկոմը, կանգնելով փաստի առջև, ստիպված եղավ հաստատել գյուղական համայնքների վճիռները:

Կնճռոտ էր նաև անտառի հարցը: Գորիս քաղաքի և բուն Զանգեզուրի վառելափայտի կարիքները կարող էր բավարարել միակ՝ Շուռնուխի անտառը, որը գտնվում էր Կուբաթլիի գործադիր կոմիտեի իրավասության տակ: Սա մեծ վեճերի պատճառ էր դարձել Գորիսի և Կուբաթլիի միջև[1]:

Չնայած այդ ամենին՝ կյանքը Զանգեզուրում աստիճանաբար մտնում էր հունի մեջ: Խորհրդային Հայաստանի կառավարությունը հսկայական ջանքերի գնով կանխեց սովը լեռնավայրում: Ձեռք էին բերվում առաջին խրախուսելի արդյունքները: Զանգեզուրի ղեկավար գործիչների կողմից տենդագին աշխատանք էր տարվում՝ ապրանքային ֆոնդ ստեղծելու, որ կարելի լիներ պարեն հավաքել տեղական կարիքների համար: 1921 թ. վերջում պետական կառույցն իր բոլոր գործառույթներով արդեն կարգավորվել էր տեղական ու Երևանից եկած գործիչների ջանքերով: Զանգեզուրի արտակարգ լիազոր Դրաստամատ Տեր-Սիմոնյանի ջանքերով Գորիսում կարգի էր բերված տպագրական գործը, և արդեն լույս էր տեսնում «Կարմիր Զանգեզուր» օրաթերթը, որի համարները ձեռքից ձեռք էին անցնում և տեղնուտեղը սպառվում: Վերանորոգվել էր Գորիս քաղաքի էլեկտրակայանը: Ձեռք էին առնվում բոլոր միջոցները՝ կարճ ժամանակամիջոցում կարգի բերելու ճանապարհները, որոնք ավերվել և փչացել էին նախորդ տարիներին: Մի խոսքով, Զանգեզուրում կյանքը հետզհետե մտնում էր իր բնական հունի մեջ[2]: Այդ ամենին նպաստում էր պետական-վարչական եռանդուն շինարարությունը:

1921 թ. օգոստոսի 31-ին ՀՍԽՀ ժողկոմխորհուրդը, ի կատարումն ժողկոմխորհրդի 1921 թ. հուլիսի 20-ի՝ Հայաստանի վարչական վերաբաժանման դեկրետի, որոշեց. «Զանգեզուրի՝ ՀՍԽՀ հանրապետությանը կցած մասից կազմել առանձին Զանգեզուրի գավառ (կենտրոնը՝ Գորիս), բաղկացած հետևյալ գավառակներից՝ Գորիսի, Տեղի, Տաթևի, Սիսիանի (կենտրոնը՝ Բռնակոթ), Ղափանի (կենտրոնը՝ Ղաթարի գործարաններ) և Մեղրու»[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 23:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 12, գ. 16, թ. 6:

[3] Տե՛ս նույն տեղում, ց. 38, գ. 2, թ. 8:

Զանգեզուրում Հայաստանի ժողկոմխորհրդի արտակարգ լիազոր Դրաստամատ Տեր-Սիմոնյանը 1921 թ. սեպտեմբերի 11-ին հրապարակեց Զանգեզուրի հեղափոխական կոմիտեի նոր կազմը (նախագահ՝ Գրիգոր Օհանջանյան, փոխնախագահ՝ Աշոտ Շահմուրադյան, անդամներ՝ Բագրատ Տեր-Հարությունյան, Սահակ Տեր-Հայրապետյան, Գևորգ Փիրգուլյան, Հայկ Պետրոսյան, Նիկիտա Թորոսյան)[1]:

1921 թ. երկրորդ կեսին Զանգեզուրում գործում էին գյուղական մոտ 100 և 5 շրջանային հեղկոմներ[2]:

Խորհրդային Հայաստանն իր ճանապարհը սկսել էր շինարարական պաթոսով: Բոլշևիկյան խանդավառ կարգախոսների ներքո ժողովուրդը լծվել էր երկրի վերանորոգման ստեղծագործ ծանր աշխատանքին: Կյանքը բնականոն ընթացքի մեջ էր մտնում նաև Զանգեզուրում:

Զանգեզուրի գոյամարտի՝ աշխարհի տարբեր հորիզոններում ապաստան գտած մարտիկների մտքերն ու մտածումները շարունակում էին մնալ ըմբոստ ու հերոսական լեռնաշխարհի հետ: Հայրենիքից ավելի ու ավելի հաճախ էին գալիս ուրախալի, հուսադրող լուրեր: Խորհրդային Հայաստանում, այդ թվում՝ նրա անբաժան մասը կազմող Զանգեզուրում, տեղի ունեցող ամեն մի իրադարձություն արձագանք էր գտնում սփյուռքահայ զանգվածների մեջ, որոնք ոգևորվում էին հայրենիքի ձեռք բերած հաջողություններով, միաժամանակ խոր ցավ ապրում կրած անհաջողությունների համար:

1922 թ. մայիսի 30-ին Վենետիկից Սիմոն Վրացյանին գրած նամակում Ա. Իսահակյանը նշել է. «Հիմա ամենալավ լուծումն է, որ եղավ: Միայն բոլշևիկ Հայաստանը կարող է, իր բացասական կողմերով հանդերձ, պահել հայի գոյությունը: ...Ելքը սա է. թողնել թշնամական ընթացքը բոլշևիկների դեմ, աջակցել, ձուլվել, միանալ, աշխատել Ռուսիայի վերանորոգման: Մեր գոյությունը հիմա կախված է միայն Ռուսիայի գոյությունից: Այլևս ուշ է և աննպատակ հաշտվել Թուրքիայի հետ, անօգուտ է հույս դնել նենգ վրացիների և ֆանատիկ թաթարների վրա, ոճիր է նորեն հավատալ Անտանտին: Հայկական հարցը լուծված է հայի բնաջնջման հետ, որ եղավ ողջ Եվրոպայի սրտովը: Այլասերված է վաղուց Հայ[կական] հարցը. այն եղել է եվրոպացիների համար հասույթի, կոնցեսիաների աղբյուր: Սա է դառը ճշմարտությունը...»*:

Դժվարին տքնությամբ, նաև աշխատանքային հերոսապատումներով էր սկսել հյուսվել Խորհրդային Հայաստանի պատմությունը: Առջևում նէպի կարճատև տնտեսական վերելքն էր, որին հետևելու էին համատարած կոլեկտիվացման, սոցիալիստական հնգամյակների և ստալինյան բռնություն-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 428, թ. 9:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 22:

* Նամակի ձեռագիրը պահպանվում է Ա. Իսահակյանի ընտանեկան արխիվում:

ների տարիները: Առջևում սպասվում էին նաև Հայաստանի տնտեսության, գիտության և մշակույթի աննախադեպ վերելքի ժամանակներ:

Թե՛ տարագրության երկար տարիներին, թե՛ բանտերում և Սիբիրի աքսորներում Գարեգին Նժդեհը մինչև կյանքի վերջը մտովի անբաժան մնաց իր պաշտելի Սյունիքից, նրա հերոս ժողովրդից: Դա նաև Նժդեհի երախտագիտության տուրքն էր լեռնաշխարհի ազատատենչ ժողովրդին, որն անսահման հավատ էր տածել դեպի քաջազուն հրամանատարը, նվիրվել նրա գաղափարներին, աներեր գնացել նրա ետևից:

1923 թ. մարտին Նժդեհը գրել է. «...Հայրենի լեռներից հաղթական կրծքերն ու զենքերը դեպի թշնամին դարձրած, մի օր հացով, մյուս օրը արմտիքով ապրող Լեռնահայաստանի վաշտերի ցույց տված հերոսական խոյանքները պիտի մնան գալոց սերունդների համար որպես հայրենասիրության ու անձնվիրության դասական օրինակներ: Հպարտ՝ այդ օրերի պատմական գործերով, անսահման թախիծով և քաղցրությամբ վերհիշելով մեր լեռնաշխարհի բարձունքներում ու ձորերում հերոսի մահով ընկած իմ ընկեր զինվորներին, մտքովս ծնրադրում եմ նրանց խնկելի հողաթմբերի առջև և ծաղկեպսակի փոխարեն Սյունիքի բովանդակ փառքը դնում նրանց գերեզմանների վրա»[1]:

[1] **Գ. Նժդեհ**, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 82:

ՎԵՐՋԱԲԱՆ

1917-1921 թթ. Զանգեզուրի գոյամարտը հայ ժողովրդի հազարամյակների պատմության ամենափայլուն էջերից, նրա աննկուն կամքի գերագույն արտահայտություններից մեկն է:

Իր հերոսական դրվագներով այն հայության՝ 1918 թ. մայիսյան հերոսամարտերի շարունակությունն էր, մի նոր Սարդարապատ: Եթե 1918-ի մայիսյան օրերին Օսմանյան Թուրքիայի զավթիչ բանակների դեմ մղած արյունալի կռիվներում վճռվում էր հայ ժողովրդի լինել-չլինելու, Արևելահայաստանի գոյության հարցը, ապա Զանգեզուրյան գոյամարտի ժամանակ դրված էր այն հարցը, թե հայկական այդ լեռնավայրը մնալո՞ւ է արդյոք հայրենիքի անբաժան մաս, թե՞ կուլ է գնալու թուրքական Ադրբեջանի հերթական զավթողական նկրտումներին՝ անդարմանելի հետևանքներ ունենալով Հայաստանի համար:

1918 թ. մայիսին Ադրբեջանի կողքին կանգնած էր Օսմանյան Թուրքիան, 1920-1921 թթ.՝ նաև բոլշևիկյան Ռուսաստանը: Խորհրդային Ադրբեջանը փորձում էր Զանգեզուրի պատկանելության հարցը լուծել Ռուսաստանի ձեռքով, իսկ բոլշևիկյան կառավարությունը դրան գնում էր գիտակցված, գնում էր՝ հագուրդ տալու քեմալական և ադրբեջանական թուրքերի անհագ ձգտումներին՝ քաղաքական կարճատեսությամբ համաշխարհային հեղափոխության սին գաղափարին զոհաբերելով հայ ժողովրդի ազգային շահերը: Թուրքիայի և Ադրբեջանի թուրքերի հոգսը բնավ «համաշխարհային հեղափոխությունը» չէր, այլ այդ լոզունգով քողարկվելով՝ նոր զավթումներ կատարելը, այդ թվում նաև՝ Զանգեզուրը կլանելը:

Զանգեզուրցին որոշեց մեռնել, բայց հայրենիքը չհանձնել թշնամուն: Նա փոքրաթիվ էր, հոգնած ու հյուծված նախորդ երկու տարիների անընդհատ կռիվներից: Բայց նա ուներ հզոր զենք՝ անսահման հայրենասիրություն և անկոտրում կամք, նա իր առաջնորդի՝ Գարեգին Նժդեհի գլխավորությամբ բոլոր ուժերը ի սպաս դրեց հայրենի երկրի փրկությանը, անվախ ու վճռական կանգնեց բոլշևիկների և թուրքերի միացյալ բազմահազարանոց զորքերի դեմ, ավելի քան մեկ տարի (1920 թ. մայիս - 1921 թ. հուլիս) մղեց արյունահեղ կռիվներ, թշնամուն հասցրեց հզոր հարվածներ: Եվ որպես այդ բոլորի հատուցում՝ Զանգեզուրը միացավ մայր երկրին:

Զանգեզուրի 1920-1921 թթ. գոյամարտը թողել է նաև ուսանելի դասեր:

Հայրենի երկրում ապրող հայությունը գտնվում էր աշխարհաքաղաքական բարդ ու վտանգավոր տարածքում. մի բան, որ Հայաստանի Հանրապե-

տության իշխանություններին և քաղաքական ուժերին պարտադրում էր վարել այդ իրողությունից բխող, բազմակողմանի հիմնավորված ներքին ու արտաքին քաղաքականություն:

Երկրի *ներքին* քաղաքականության մեջ կարևորվում են մի շարք հանգամանքներ.

1. Հասարակական բոլոր արժեքներից (ազգ, դասակարգ, կուսակցություն) ամենամնայունը ազգն է, որի՝ որպես անկյունաքարի վրա պետք է խարսխված լինեն հայոց պետության նպատակներն ու իդեալները, որոնց իրականացմանը պետք է ձգտի ամբողջ ազգը: Ուստի հայ ազգային գաղափարի և նրանում ձևակերպված նպատակների լայն քարոզչությունը ազգային քաղաքական ու հասարակական կազմակերպությունների, գիտության, կրթության, գրականության, մշակույթի բնագավառների գործիչների և, իհարկե, հայ պատմաբանների առաջնահերթ խնդիրներից մեկն է:
2. Հայաստանը պետք է ունենա տնտեսական այնպիսի համակարգ, որը նպաստի երկրի բոլոր մասերի հզորացմանը: Հատկապես առանձնահատուկ ուշադրություն են պահանջում հանրապետության այն շրջանները, որոնք սահմանակից են Թուրքիային և Ադրբեջանին: Այդ շրջանների թվում, բնականաբար, առանձնանում է Զանգեզուրը՝ Հայաստանի համար կարևորագույն ռազմավարական նշանակությամբ: Չպետք է մոռանալ, որ դեռ պատմության գիրկը չի անցել պանթուրքիզմը, որի նպատակը մնում է նույնը՝ Թուրքիայի գլխավորությամբ պետական մի միության մեջ ներգրավել թուրքաբնակ բոլոր տարածքները: Եթե ներկա դարի սկզբին թուրքական զավթիչներն այդ նպատակին հասնելու ճանապարհի հիմնական խոչընդոտը համարում էին Հայաստանը, ապա 1915 թ. նրանց իրականացրած հայերի ցեղասպանությունից և «եղբայրների միջև ընկած անիծյալ սեպի»՝ Արևմտահայաստանի բռնազավթումից հետո թուրքական աշխարհի երկու թևերի՝ Թուրքական Հանրապետության և Մեծ Թուրանի միջև եղած խոչընդոտը Զանգեզուրն է՝ իր աշխարհաքաղաքական անգնահատելի նշանակությամբ և Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման կարևորությամբ: Զանգեզուրը Հայաստանի համար պետք է դառնա նախընտրելի բնակության վայր՝ բազմամարդ բնակչությամբ, և պաշտպանական հզոր հնարավորություններ ունեցող անընկճելի միավոր:
3. Հայերը մշտապես պետք է հիշեն, որ իրենց երկրի, իրենց քաղաքակրթության գոյության հիմնական երաշխավորը և ժողովրդի անվտանգության գլխավոր պայմանը ուժեղ բանակ ունենալն է, որը ցանկացած պահի ի վիճակի կլինի պաշտպանելու հայրենիքի ամբողջականությունը: Դրա հետ միասին խիստ կարևորվում է թույլատ-

ռելի տարիք ունեցող քաղաքացիական բնակչության ռազմական պատրաստության կազմակերպումը հանրապետությունում՝ առանձնահատուկ նշանակություն տալով այդ գործի ճիշտ կազմակերպմանը Զանգեզուրում:

4. Զանգեզուրի 1920-1921 թթ. իրադարձությունները եկան ապացուցելու այն ճշմարտությունը, որ պատերազմում «հաղթությո՞ւն, թե՞ պարտություն» հարցադրումը պայմանավորված չէ միայն կռվող կողմերի զինվորների թվով, ռազմական տեխնիկայով, տնտեսական հնարավորություններով: Զանգեզուրյան գոյամարտը ցույց տվեց, որ պակաս կարևոր չէ, եթե ոչ հիմնականը, կռվողների բարոյական ոգին, նրանց հայրենասիրությունը, անհուն նվիրվածությունն իրենց հայրենիքին ու ժողովրդին: Զանգեզուրյան մարտիկները, որոնց թիվը քանիցս զիջում էր բազմաքանակ հակառակորդին, կենաց ու մահու կռիվներում կարողանում էին երկար ժամանակ պաշտպանել լեռնաշխարհի սահմաններն ու ժողովրդի անվտանգությունը: Եվ դա այն պատճառով, որ անսահման բարձր էր ինչպես Զանգեզուրի զինված ուժերի, այնպես էլ, մեծից փոքր, ողջ բնակչության բարոյաքաղաքական ոգին, անկոտրում էին հայրենի եզերքը պաշտպանելու նրանց կամքն ու վճռականությունը:

5. Հայ ժողովուրդը թանկ է գնահատում իր ձեռք բերած ազգային անկախ պետականությունը, որի համար նա անհաշիվ զոհեր է տվել: Ազգային պետականության վերականգնման համար վերջին հարյուրամյակում ժողովրդի համառ պայքարն անցել է տարբեր հանգրվաններով՝ դրսևորելով անկախ պետականության գոյության հինգ իրողություններ՝ ա) 1915 թ. գարնանը Արամ Մանուկյանի գլխավորած Վանի նահանգի հայերի կարճատև անկախությունը՝ հայոց ազգային պետականության վերականգնման առաջին փորձը, բ) 1918 թ. մայիսին Հայաստանի առաջին Հանրապետության հաստատումը՝ 600 տարի առաջ կորցրած հայոց անկախ պետականության վերականգնումը, գ) 1921 թ. գարնանը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Լեռնահայաստանի Հանրապետության ազդարարումը, որն արձանագրեց հայերի ազգային պետականության կարճատև գոյությունը պատմական Հայաստանի մի սահմանափակ տարածքում՝ Սյունիքում, դ) 1988 թ. սկսած Ղարաբաղյան հզոր շարժման ընդերքում ծնունդ առած Հայաստանի երրորդ Հանրապետությունը, ե) նույն շարժման անմիջական արգասիքը հանդիսացող Ղարաբաղի անկախ Հանրապետությունը:

Ազգային անկախ հինգ պետական կազմավորումներից բացի՝ վերջին հարյուրամյակում հայ ժողովուրդն ունեցավ նաև կիսանկախ պետականություն՝ հանձին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-

թյան (1920-1991 թթ.), որը միասնական ԽՍՀՄ պետության մի մասն էր:

Զանգեզուրյան հերոսամարտի դասերը խիստ կարևոր են նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համար: Այդ դասերը հուշում են, որ.

1. Հարևան ադրբեջանական պետության հետ հարաբերվելիս հայկական դիվանագիտությունը հաշվի է առնելու այն հանգամանքը, որ այդ երկիրը, ինչպիսի քաղաքական կարգեր էլ իշխեն այնտեղ՝ սոցիալիստական թե կապիտալիստական, ազատական թե բռնապետական, միևնույնն է, առաջին հերթին Զանգեզուրի, ինչպես և Հայաստանի այլ տարածքների նկատմամբ հանդես է գալու հավակնություններով և նվաճողական ձգտումներով:
2. Թուրքիան, ելնելով թուրք ժողովրդի ցեղային հատկանիշներից, Այսրկովկասում միշտ լինելու է Ադրբեջանի կողքին՝ ընդդեմ Հայաստանի: Ուստի զուր են լինելու Ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Թուրքիային չեզոքության դիրքեր մղելու հայկական կողմի բոլոր ջանքերը: Թուրքիայի հետ Հայաստանի բնականոն հարաբերությունների ստեղծումը պայմանավորված է այնպիսի բարդ խնդիրների նկատմամբ թուրքական կողմի վերաբերմունքով, ինչպիսիք են Հայոց ցեղասպանությունը և Հայ դատը, որոնք անբաժան են հայոց պատմությունից: Ուստի միանգամայն ողջունելի է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու ուղղությամբ Հայաստանի ներկա իշխանությունների հետևողական քաղաքականությունը:
3. Իրանի հետ Հայաստանի հարաբերություններն առաջնային են: Պարսիկ և հայ ժողովուրդները միմյանց հետ կապված են հազարամյակների պատմությամբ, մշակութային նմանություններով: Այդ իրողությունները նպաստավոր հող են ստեղծում երկու ժողովուրդների միջև ամենասերտ հարաբերությունների ստեղծման համար: Հայ-պարսկական հետագա մերձեցման գործընթացին, անշուշտ, կարող է նպաստել Զանգեզուրյան գոյամարտի օրերին Սյունիքի պաշտպանների և պարսկական իշխանությունների միջև ստեղծված ջերմ հարաբերությունների ու փոխադարձ աջակցության պատմության լայն քարոզչությունը:
4. 1918-1921 թթ. իրադարձություններն Այսրկովկասում մեկ անգամ ևս փորձաքար եղան հայ-վրացական հարաբերությունների համար: Պարզ դարձավ, որ անկասկած է Հայաստանի համեմատությամբ Ադրբեջանի հետ Վրաստանի հարաբերությունների գերակայությունը: Հայաստանի համար ծանր օրերին Վրաստանը կարող է չեզոք մնալ, չմասնակցել նրա դեմ ուղղված ագրեսիվ գործողություններին, բայց նաև երբեք բացահայտ աջակից չլինել նրա ազգային ձգտում-

ներին: Հայ-վրացական հարաբերությունները միշտ մնալու են երկու ժողովուրդների դարավոր եղբայրության մասին հավաստիացումների ու խոստումների, ընդամենը՝ բարիդրացիական հարաբերությունների շրջանակում:

5. Զանգեզուրի 1920-1921 թթ. կռիվներում ագրեսիվ կողմը ռուս-բոլշևիկյանն էր: Զանգեզուրցին պաշտպանում էր իր երկիրը, խորհրդային բանակը ձգտում էր գրավել լեռնաշխարհը և այն հանձնել Ադրբեջանին, մի բան, որը վերջացավ ձախողումով:

Բայց Հայաստանի արդի ժամանակաշրջանի և ապագայի շահերը շատ կողմերով միահյուսված են Ռուսաստանի շահերին, ավելին՝ Ռուսաստանը եղել է, կա և մնալու է Հայաստանի գլխավոր ռազմավարական դաշնակիցը:

Զանգեզուրյան գոյամարտը կրկին հաստատեց այն ճշմարտությունը, որ ազգային շահերի գերակայությունը բացարձակ է բոլոր ժողովուրդների ու պետությունների համար: Այն գերակա է նաև հայ ժողովրդի և հայկական պետականության համար:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ա. Ա. – 34
Ա. Ն. տե՛ս Նուրիջանյան Արշակ
Ա. Ս. տե՛ս Սիմոնյան Արամ
Աբաշիձե Կ. – 46
Աբասկուլի (Աբաս Կուլի) – 385, 823, 827
Աբգարյան Թադևոս – 790
Աբգարյան Սահակ – 668
Աբդուլ Ազիմով Կուլի – 788
Աբդուլաև Հուսեին - 788
Աբեղյան Ա. (Աբեղեան Ա.) – 47, 49
Աբրահամյան Ա. –21
Աբրահամյան Արշակ – 790-791
Աբրահամյան Հրանտ – 46, 78, 160, 171, 176, 179-181, 256-257, 260, 263, 717, 852-853
Աբրահամյան Մարտիրոս (Բաշգառնեցի Մարտիրոս) – 815, 820, 822-823, 831, 833, 855, 1002, 1016, 1044
Աբրահամյան Սոփի – 790
Ադո (Ադօ) – 833, 890-891
Ադոնց Թովմաս – 509
Ազամի Մուշարուլ – 1045
Ազատ (վաշտապետ) – 987
Ազատյան Ա. – 214
Ազատյան Հ. – 73
Աթաբեկյան (Աթաբեկով) – 792, 794-796, 803, 890
Աթաբեկյան Լևոն – 488
Աթայան Կոստյա – 440, 1002
Աթայան Սամսոն – 321, 407, 1002
Աթաջանյան Գերասիմ – 50, 320-321, 379, 440, 537, 605, 608, 633, 648, 650, 654, 958, 969-970, 987, 998, 1002
Աթաջանյան Միքայել – 379
Աթարբեկյան Ավիս - 917
Աթարբեկյան Գևորգ – 792, 794, 803, 810, 826, 843
Աթոյան Հ. – 827
Աժդահա փաշա տե՛ս Գարեգին Նժդեհ
Ալավերդյան Մ. – 85
Ալավերդյան Ս. – 580
Ալբիոն – 405
Ալեքսանյան Ալեքսան – 113
Ալեքսան բիձա – 193
Ալեքսեև-Մեսխին Շ. – 50-51
Ալիբեկով – 929
Ալիխանյան Սամվել – 510
Ալիշան Ղևոնդ- 16
Ալշիբայա Գրիգորի – 338, 400, 402, 438
Ալիև – 624
Ալիև Մուրթուզ – 955
Ալում (վաշտապետ) – 1002
Ախվերդով Ա. –337
Ակնունի տե՛ս Մալումյան Խաչատուր
Ահարոնյան Ավետիս (Ահարոնեան Ա.) – 47, 575, 825
Ահարոնյան Վարդգես – 72, 250
Աղաբաբաև – 438
Աղաբեկ – 946, 961, 987
Աղաբեկ (գյուղացի) – 407, 987
Աղաբեկ (խմբապետ) – 321, 830, 946
Աղաբեկ (պորուչիկ) – 987
Աղալո (խմբապետ) – 1002
Աղախանյան Նիկոլայ – 321, 4078
Աղախանով Դ. –106
Աղախանով Եփրեմ բեկ – 33
Աղամամեդ Քերբալայ – 669, 875
Աղամելյան Ավագ – 790
Աղամյան Միքայել – 558, 559, 1002
Աղայան Գարեգին – 58
Աղայան Գուրգեն – 1003
Աղասի – 173
Աղասյան Արսեն – 790-791
Աղասյան Սուքիաս – 790
Աղասյան Վ. – 933
Աղաև Ահմեդ – 453, 515
Աղաև Հասան – 398, 469
Աղբալյան Նիկոլ – 561, 722, 809, 822, 847, 860
Աճեմով – 864
Ամատունի Նապոլեոն – 35
Ամի տե՛ս Մուղդուսունց Ղազար ապեր
Ամիրասլանով Ալի – 788
Ամիրխանյան Գարեգին (կապիտան) – 507, 1003,
Ամիրխանյան Շավարշ – 915, 971
Ամիրյան Սերգեյ – 916
Ամիրջանյան Գարեգին – 424, 807, 852, 1003,
Ամուրյան Ա. (Ամուրեան Ա.) – 74
Այդինյան Սարգիս –511
Այվազյան Ա. – 23
Այվազյան Հովհաննես – 72, 75-76, 96-98, 100-101, 107-109, 179-180, 182, 190, 792
Այվազյան Մ. – 124
Այվատյան (արքեպիսկոպոս) – 1038
Անանուն Դավիթ – 49, 67, 287, 802, 883, 885-888, 890-891
Անգորսկի Ուպման –581
Անդերսոն Չարլզ Ալեքսանդր – 167
Անդրանիկ (Օզանյան Անդրանիկ) – 5, 63, 65, 72-88, 90-93, 95-114, 117-119, 120, 125-145, 147-164, 168, 170-186, 189-193, 195-216, 218-223, 226-228, 230-235, 237-242, 245-247, 249-253, 279, 292, 303, 307, 358, 364, 393, 451, 587, 602, 698, 825-826, 846, 897, 1003-1004
Անտոնյան Ա. – 864
Անտոնյան Եգոր – 58, 321, 379
Անտոնյան Թադևոս –1003
Անուշյան – 325
Աշխատունի Զ. – 801, 905, 908
Աշոտ տե՛ս Մելիք-Մուսյան Աշոտ
Ապրյան Անդրեաս –789
Առանշահիկներ – 21
Առաքել (Փառնակեցի) –1014
Առաքելյան Առաքել –1003
Առաքելյան Արամ –469
Առաքելյան Արշակ – 321, 407
Առաքելյան Բարսեղ –790-791
Առաքելյան Գ. – 31, 47-48
Առաքելյան Դանիել – 121-122
Առաքելյան Հ. – 16
Առաքելյան Վարազ –371, 373, 391, 395, 397, 409, 417, 421, 425-426

Առուշանյան Աստվածատուր – 187
Առուշանյան Բախշի – 507-508, 790
Առուշանյան Հայրապետ – 57, 152, 507
Առուստամյան (պորուչիկ) – 539, 1003
Առուստամյան Լևոն – 507, 530, 559
Ասագ –1003
Ասատրյան Գրիգոր – 813
Ասատրյան Խնկո – 816, 822, 946, 960, 998, 1016, 1044
Ասատրյան Հայկ – 469, 620, 822, 824, 1048
Ասատրյան Մաթևոս – 507, 789
Ասատուրյան Ավետիս – 254
Ասլան (Վանեցի) –1016
Ասլան (խմբապետ) –1044
Ասծատուրյան Մաթևոս –790
Աստվածատրյան Ասատուր – 1003
Աստվածատրյան Արշալույս – 823
Աստուածատրեան Ա. – 46-47, 52-53, 64, 75, 224-226, 231, 241, 254, 256-257, 259, 269, 275, 370-371, 995
Ասքիեր խան – 427
Ավալյան – 488
Ավանեսյան Խաչատուր – 130
Ավետ (Բաշգառնեցի) – 1043
Ավետիսյան Խ. – 16
Ավետիսյան Հրանտ –51
Ավետիսյան Մուշեղ (Սասունցի Մուշեղ) – 821, 958, 967, 1003
Ավիս տե՛ս Նուրիջանյան Ավիս
Ավշարյան – 864
Ավո (Աւօ) – 323, 386, 724
Ատամանյան Կոնստանդին - 469
Արամ – 140
Արարատյան (գեներալ) – 387, 834
Արարատյան Սարգիս – 489, 762
Արարատյան Քրիստափոր – 187, 360
Արզանով Ռուբեն – 396
Արզանյան Մակիչ – 789
Արզումանյան (կապիտան) – 1003
Արզումանյան Անուշավան – 583
Արզումանյան Միքայել – 260-261, 263-266, 268, 276-277, 282
Արզումանյան Նիկոլայ – 504, 509, 530, 623
Արծրունի Աշոտ –608, 863, 998
Արծրունի Վահե – 823, 846
Արծրունի Վաչե – 1044
Արղության Հովսեփ (իշխան Հովսեփ Արղության) – 267-270, 274-275, 278, 282, 268-270, 274-275, 277-278, 282, 365, 930, 1023-1024
Արմենակ (վաշտապետ)– 1003
Արմենուհի – 559
Արշադ Ամիր – 871, 929-931, 995, 1017, 1045
Արշակ – 987
Արշակունի Ա. – 898, 929
Արտաշես տե՛ս Կարինյան Արտաշես
Ափունց Լևոն – 559
Աֆունտ Ալի – 514

Բ

Բաբաբեկով Գուլիբեկ Հուսեին – 929
Բաբալյան Արտաշես (Բաբալեան Ա.) – 169, 179, 254, 258, 275, 570, 1044
Բաբայան Աղալո – 1003
Բաբայան Արսեն – 302, 428, 1003
Բաբայան Հովսեփ – 1003
Բաբայան Ներսես – 1003
Բաբայան Նիկոլայ – 1003
Բաբայան Պատվական – 538, 605, 651
Բաբայան Փառանձեմ – 605, 651
Բաբայան Սահակ – 57
Բաբաջանյան Նիկոլայ – 559
Բաբան Մինաս – 497
Բաբան Օրուջ – 788
Բաբաօղլի Քեմանդ – 929
Բագիրով (ռազմական ատաշե) – 581
Բագրատունի Յակով (Հակոբ) – 167, 185-186, 215, 219-221, 231, 241
Բագրատունիներ – 19
Բաղալյան Արմեն – 320-321
Բաղալյան Հ. – 484
Բաղալյան Հակոբ – 113
Բաղիրյան Բագրատ – 1003
Բալայան Ալեքսան (Ալեքսան Դայի, Ելեքսան Դայի) –121, 158, 163,
Բալայան Գերասիմ – 240-241, 254, 481, 502, 572, 680
Բալասանյան Գևորգ – 1003
Բալաչյան Միքայել (Բալաչիխյան Միխայիլ) – 57, 153
Բալյան Արշակ – 788-790
Բալյան Գարեգին – 557, 1003
Բալյան Ստեփան – 696, 1003
Բալույան Գրիգոր – 790
Բախուզ – 806
Բակունց Արսեն – 136
Բակունց Երեմիա – 56, 196, 254, 270, 504, 559, 601, 616, 673, 790
Բահաեդդին բեյ – 838-839
Բաղաց իշխաններ – 321, 371
Բաղիրյան Սերգեյ – 136
Բաղդատյան Ս. – 765
Բաղդասարյան (հրամանատար) – 841
Բաղդասարյան Ալեքսանդր – 789
Բաղդասարյան Բագրատ – 1003
Բաղդասարյան Հայկ – 949
Բաղդասարյան Սերգեյ – 790
Բաղդասարով (գեներալ) – 563
Բաղրամյան (դատավոր) – 196,
Բաղրամյան (պոդպորուչիկ) – 152
Բաղրամով (գեներալ) – 810
Բաշգառնեցի Մարտիրոս տե՛ս Աբրահամյան Մարտիրոս
Բարխուդարյան Ա. – 214
Բարխուդարյան Թովմաս – 320-321, 1004
Բարխուդարյան Ս. – 16, 790
Բարսեղյան Խիկար – 22,
Բարսեղյան Վահան – 206,
Բարսեղյան Վարդուհի – 790
Բաուեր – 725
Բեգլարյան – 431
Բեգյան-Մելիք-Ղարագյոզյան Բագրատ – 1004
Բեգյան-Մելիք-Քարամյանց Բագրատ – 1004
Բեգնազար-Յուզբաշյան Տիգրան –738
Բելոբորոդով – 498
Բեկզադյան Ա. -765, 915, 939
Բեկզադյան Տիգրան – 365, 400-401, 410, 453, 538-539, 542, 555, 559, 575, 792
Բեհբութով Լյութվալի բեկ – 121
Բեհչետին Բախլուլ էֆենդի – 875
Բեյ-Մամիկոնյան (գեներալ) – 810

Բեջանյան Հակոբ (Կամարի) – 504-507, 530, 559, 616, 788
Բերեժկո Ռ. – 597-598, 725, 727, 730-732
Բեքիր Սամի բեյ – 545
Բլլև (զինկոմ) – 725
Բժշկյանց Հայկ – 34
Բիչ Վիլյամ – 167
Բիչերախով Լազար – 215, 216, 220-221, 227
Բյուզանդ Էլլեն տե՛ս Ստամբոլցյան Եղսո
Բոզունց Նաբի (Կիզիրի Նաբի) – 1004
Բոնապարտյան Հայկ – 76, 90, 144
Բոնչ-Բրուևիչ Վ. Դ. – 551
Բորյան Բագրատ – 811, 892
Բորոյան Սմբատ – 87-88, 102-103, 164, 177, 189-190, 204-206, 826, 855, 859, 935, 958, 1034
Բորտ (Յակով Ռոմանովիչ) – 100, 103, 127-128, 184
Բուդաղյան Արմենակ – 846, 864
Բուդաղյան Հովակիմ – 481, 483
Բուխարին – 1021
Բունիաթյան Առուստամ – 1004
Բունիաթյան Ավագ – 1004
Բունիաթյան Միսակ – 1004
Բուշտունց Իսակ – 1004

Գ

Գաբբայի Մելկիադե – 433
Գագյան Արսեն – 987
Գալամքերյան Գնել եպսկ. – 18
Գալկին Նիկոլայ – 552
Գալոյան Գալուստ – 46, 51, 253, 256, 259
Գալստյան Վահան –1004
Գալստյան Լևոն – 668, 740
Գալուստ – 118
Գամազով (գեներալ-լեյտենանտ) – 810
Գամբաշիձե Դավիթ – 361
Գասպարյան Գասպար (Մանուչարյան Արամայիս) – 74, 341, 351, 1004
Գասպարյան Ղազար-790
Գասֆիլդ Նիկոլաս – 180
Գարիբալդի – 503
Գեգեչկորի Եվգենի – 50-51, 338-340, 346, 361, 363, 432-433, 452-453
Գեղամ (Բաշգառնեցի) – 1043
Գեղամյան (կոմիսար) – 558
Գերասիմ – 971, 1016
Գիբոն Վիլյամ Դաֆ – 188-189, 190-194, 219, 221, 228, 232, 251
Գիլավյան Աստվածատուր – 539, 1004
Գիլբրաս – 1037
Գիլման Վեբ – 167
Գինոս – 321
(Գյուքի) Գիւքի – 67
Գյուլխանդանյան Աբրահամ (Գիւլխանդանեան Ա.) – 45, 49, 51, 386, 447, 489, 500, 762
Գյուլնազարյան Հարություն – 789
Գյուլնազարյան Մովսես –305, 323, 1004
Գյուլնազարյան Շուշանիկ – 790
Գյուրջյան Գարեգին – 790, 927-928
Գորկովենկո – 667
Գրանդ Թոմաս Էդվարդ Միլլիգան – 402
Գրեյս (կապիտան) – 547-548
Գրիգոր (քահանա) – 787
Գրիգորյան Ա. – 42-43
Գրիգորյան Աբգար – 57
Գրիգորյան Արմենակ – 698, 1004
Գրիգորյան Գարսևան – 1004
Գրիգորյան Գրիգոր – 16, 51, 57, 254, 1004
Գրիգորյան Գևորգ – 152
Գրիգորյան Կարապետ – 639
Գրիգորյան Հայկ (Անդրեաս) – 105, 135, 152-153
Գրիգորյան Հարություն – 321, 407, 654, 1004
Գրիգորյան Հովհաննես – 639
Գրիգորյան Միքայել – 509
Գրիգորյան Սիրակ – 854-855, 934, 1028-1029
Գրիգորյան Ռ. – 30
Գրոսման – 666
Գուլոյան Ավետիք (Սեյրի) – 616, 740
Գումեդին տե՛ս Մելիք-Դադայան Գուրգեն
Գուսակով (հրամանատար) – 665
Գևորգ (Մշեցի) –1043
Գևորգյան (Աշտարակցի) – 864-865
Գևորգյան Աստվածատուր – 132-133
Գևորգյան Գարեգին-606, 846
Գևորգյան Գևորգ – 784
Գևորգյան Թորգոմ – 205
Գևորգյան Համլետ – 77-78, 190, 284, 302, 348, 387, 397, 412, 439
Գևորգյան Զ. (Գէորգեան Զ.) – 444
Գևորգյան Վարդան (Գէորգեան Վ.) – 305, 322, 325-326, 328-331, 351-354, 357-358, 372-374, 376-380, 392, 395, 397, 407, 416-423, 425-426, 427-428, 441-444, 448, 465, 686, 737, 740, 772

Դ

Դադայան Ալեքսանդր – 506
Դալի Ղազար (Բաղալքյոխյան Միքայել) – 430, 435-437, 439, 450
Դալի Ղազո տե՛ս Թարխանյան Ղազար
Դալի Մարմա – 163
Դանիելյան Խաչատուր (Դանիելյան Խաչիկ) – 58, 254, 777, 987, 1005
Դանիելյան Հովհաննես – 58, 1005
Դանիելյան Հովսեփ –813
Դավթյան Ասատուր –1005
Դավթյան Արմենակ (Դավիդյան Արմենակ) – 320-321, 647-648, 650, 654, 987, 1005
Դավթյան Դավիթ (Դավիդյան Դավիթ) – 320-321, 777, 1005
Դավթյան Եփրեմ – 303
Դավթյան Տիգրան – 628
Դավիդով Շմավոն –1053
Դավիթ (Իսրայելի թագավոր) –609
Դավիթ Բեկ – 16, 22-23, 150, 152, 324, 376-377, 395, 407, 503, 597, 654
Դարասամխո տե՛ս Մխո (դերասան)
Դարբինյան Ռուբեն (Դարբինեան Ռ.) տե՛ս Չիլինգարյան Արտաշես
Դարմանյան –1044
Դեմերջանյան Կարո – 1043
Դենիկին Անտոն – 339, 390, 458-459, 465, 498, 681, 685, 695
Դենստերվիլ Լ. Չ. – 166-167
Դէոյեանց Տիգրան – 190, 370
Դիլանչիյան Գարեգին – 790

Դիլիս – 530
Դ Մարտել (կոմիսար) – 575
Դոնդարով Նիկոլայ – 345, 398, 520, 1005
Դոնսկոյ Դ. – 51
Դովլաթյան Իսահակ – 751, 765, 857
Դորին – 882
Դորունց Նիկոլայ (Նիկողայոս) – 56, 246, 526, 778, 783, 1005
Դրացենկո Դ. Պ. – 456-457, 459
Դրո (Դրաստամատ Կանայան) – 146, 287, 298, 340, 348, 372, 386-387, 391-392, 395-397, 412, 461-464, 478, 496-499, 500-503, 505-508, 527-528, 531, 550-552, 556, 558-560, 564-565, 571-572, 595, 656, 672, 682, 742, 755-756, 758, 766-767, 772, 774, 791-795, 799-802, 809
Դուբրովին Ֆ. Ֆ. – 195-196
Դուման Նիկոլ – 331
Դումբաձե Գ. –893
Դև Էդմոն – 295

Ե

Ե. Ս. – 32
Եգանյան Ալեքսան – 159
Եզեկյան (վաշտապետ) – 987
Եղիազարյան Սմբատ – 823, 876, 924, 969, 976, 1044
Եղիկեան Գ. – 623, 625
Ենգիբարյան Գարեգին – 168, 177
Ենոք (վաշտապետ) – 620, 1005
Ենոքյան – 972-973
Եպիսկոպոսյան Համազասպ – 330
Եսայան Աղասի – 575, 631, 839
Եսայան Դ. – 270
Եսայան Մելիքսեթ (Քյոսա Մելիքսեթ) – 56, 1005
Եվանգուլով Լևոն (Եվանգուլյան) – 187, 330, 339, 361, 380, 401
Երզնկյան Արամայիս – 464, 915
Երզնկյան Ե. – 765, 1038, 1041
Երմոլենկո (հրամանատար) –821
Երվանդ (Մշեցի) –1043
Եփրեմ (Քուրդ Եփրեմ) –628

Զ

Զախար – 715
Զախարյան Խաչատուր – 57
Զավալ փաշա – 688
Զավարյան Սիմոն – 38, 488
Զարայելյան Խաչատուր – 583
Զարաֆյան Լևոն տե՛ս Զարիֆյան Լևոն
Զարիֆյան Լևոն – 240-241, 511-512, 659, 1015
Զարնիցկի Ս. Վ, -835
Զաքարյան Մուշեղ – 56, 136, 244-254, 279, 291, 501, 541
Զաքարյաններ – 20
Զաքո – 343
Զելիմխանյան (հրամանատար) –946
Զելինսկի Ս. Պ. – 29
Զեյնալով (գնդապետ) – 496, 514, 516
Զիաթխանով Իսմայիլ խան – 124
Զինովև Գրիգորի – 622-626, 1021
Զիլֆուղարյան Ս. – 18
Զոհրաբյան Էդիկ – 189-190, 295, 322, 370, 372, 385, 409, 416-417, 426, 443, 455, 464, 582, 628
Զոհրաբյան Մ. – 864
Զորավար տե՛ս Անդրանիկ
Զորունց Բեգլար – 602
Զորունց Խաչատուր – 668

Է

Էդիֆ բեյ – 90, 305, 353, 355, 358, 384-385, 409, 420, 524, 637, 678
Էլիավա Շալվա – 581, 631, 850-851
Էլչիբեկյան Միքայել – 58, 321, 1005
Էյվազբեկով – 875
Էնվեր փաշա – 164, 255, 469, 477, 495, 561, 623-626
Էտքիբարյան Իսկանդար – 506-508

Թ

Թադևոսյան – 423
Թադևոսյան Սամսոն (Սամսոն խան) – 303, 1041
Թաթարյան Հարություն – 507, 534
Թաթարյան Սոնա – 790
Թաիրով Աբասկուլի բեկ – 384
Թալեաթ փաշա – 561
Թաղի (խան) – 1017
Թաղիանոսյան Տաճատ – 864
Թաղին Ղուլամ – 514, 808
Թամարա – 559
Թամանյան Ալեքսանդր – 847, 872, 1037
Թայիրով Իսա – 955
Թանգյան Ներսես – 412, 929-930, 1035
Թարխանյան Ղազար (Դալի Ղազո) – 822, 869, 1016, 1044
Թարխանով Նիկոլայ – 396, 807
Թարխանյան Սուրեն (Կուռո) – 816, 820, 822-823, 840-841, 860, 867-869, 876, 908, 919-920, 935, 938, 954, 960, 970, 975-976, 1016, 1024, 1041, 1044
Թարվերդյան Ա. – 436-437, 440, 449
Թաունզենդ Ա. Ֆ. – 275
Թելունց Թադևոս –790
Թելունց Մալիկ – 23
Թեկինսկի Մահմեդ խան – 281
Թերզյան Հովհաննես – 1005
Թյունիև Սամսոն – 793, 795
Թոմսոն Վիլյամ Մոնտգոմերի – 167, 180-181, 183, 185, 188, 192, 194, 198, 211, 219, 221-222, 224, 228, 231, 240, 247, 252-253, 263-264, 282
Թովմասյան Լևոն – 530
Թովմասյան Հարություն –530, 602, 606, 740, 790
Թորոս (հրամանատար) –946
Թորոս իշխան – 376, 395, 443, 597
Թորոսյան Նիկիտա – 1057
Թորոսեան Ռ. – 302
Թորոսյան Սմբատ (կապիտան) – 291, 771, 946, 1005
Թորոսյան Սահակ – 58, 480-481
Թոփչի Սիմոն տե՛ս Տեր-Հարությունյան Սիմոն
Թումանյան Արիստակես – 1005
Թումանյան Լևոն – 481-483
Թումանյան Խեչան – 654, 1005
Թումանյան Հովհաննես – 288
Թումանով – 476
Թումյան Հարություն – 124-125, 255, 440
Թևան տե՛ս Ստեփանյան Թևան

Ժ

Ժամկոչյան Արսեն – 826

Ժամհարյան Փանոս – 822
Ժուկով Ֆեոդոր – 552, 926

Ի

Իբրահիմբեկով – 335-336
Իզեթ փաշա – 164
Իզզահ բեյ – 98-99
Իլդրիմ Ի. – 473
Իլյասով Կարա – 788
Իշխանյան Բախշի (Իշխանեան Բ.) – 119, 809, 1048
Իշխանյան Եղիշե (Իշխանեան Ե.) – 31, 47, 68, 72, 77-78, 116-117, 124, 172, 180, 182, 207, 216, 233-234, 238, 254, 256-258, 260, 267, 289, 439, 499, 558, 857, 953, 1044
Իռանիսյան Ա. – 124
Իռանիսյան Հակոբ – 792-793
Իոֆֆե Ա. Ա. – 945, 1051
Իսագուլյան Աղալո – 559, 657
Իսախանյան Ն. – 124
Իսահակյան Ավետիք (Իսահակեան Ա.) – 415-416, 825, 1057
Իսահակյան Արշակ տե՛ս Ջամալյան Արշակ
Իսահակյան Նորայր – 872
Իսկանդարյան Եգոր – 152
Իսկանդարյան Եղիա – 255
Իսկանդարյան Եղո – 508
Իսկենդերով Քերիմ – 788
Իսրաֆիլ բեկ – 808
Իսունց Խաչատուր – 1006
Իվանբեկ (պրիստավ) – 321
Իվանով (զորամասի պետ) – 534-535
Իրազեկ Հակոբ տե՛ս Տեր-Հակոբյան Հակոբ

Լ

Լազարև եղբայրներ – 35
Լազյան Գ. (Լազեան Գ.) – 253, 308, 366-368
Լազյան Հովսեփ – 792
Լազր (վաշտապետ) – 1006
Լազրյան – 893
Լալայան Արտեմ – 121, 158-159, 160-163, 174, 261
Լալայան Ե. (Լալայեան Ե.) – 16, 25, 34, 48
Լալայան Մուշեղ – 302, 304, 813
Լաուտոն Ֆրեդերիկ Իստլենդ – 228-259
Լեգրան Բորիս – 542, 562, 568-570, 578-582, 614, 631, 655, 657-661, 676-749, 755, 760, 809-810, 907, 944
Լենին Վլադիմիր – 89, 148, 473-474, 478, 493-494, 517, 520, 547, 571, 631, 658, 752, 756, 791, 893-896, 1021
Լենկ Թեմուր – 21
Լեո – 54, 65, 181, 224, 242, 275, 281
Լեոնիդաս (Սպարտայի թագավոր) – 522
Լինև (կոմիսար) –725
Լիսիցյան Ս. – 16
Լիտվինենկո Վ. – 549, 663-665, 722, 725
Լյապով Գուրին – 303
Լորդկիպանիձե Գ. – 453
Լուկաշին տե՛ս Սրապիոնյան Սարգիս
Լուկին (ռազմիեղկոմի անդամ) – 517, 550
Լուկկ (կոմիսար) – 547, 549, 575, 577
Լուննիչ – 515
Լևանդովսկի Միխայիլ Կ. – 466, 468, 475, 499, 520
Լևոն (Զրվեժցի) – 865

Խ

Խալիլ բեյ (փաշա) – 89-91, 98, 106, 148, 150-151, 165, 295, 314, 410, 455, 466, 495, 524, 545-546, 550, 560, 590, 597, 652, 669, 678, 749
Խանզադյան Արտեմ – 397, 502, 521, 558, 720, 1006
Խանզադյան Սերո – 341
Խանզադյան Վանո –720, 1006
Խան-Խոյսկի Ֆաթալի – 50, 61, 148, 175, 185, 198, 366, 398, 402, 410, 414-415, 450-451, 453, 455, 460, 464-465
Խանոյան Սարգիս –915
Խաչատրյան Անդրանիկ – 602
Խաչատրյան Բագրատ – 602
Խաչատրյան Գասպար –784
Խաչատրյան Գինոս – 639
Խաչատրյան Ս. – 16
Խաչատրյան Սմբատ – 453
Խաչատուր տե՛ս Արշակ
Խաչատուրեան Յրթ. Յ. – 171, 224, 275, 278
Խաչիկյան Արշակ – 915
Խաչյան Խ. – 846, 865
Խասմամեդով Խալիլ-բեկ – 50, 350, 366
Խատիսյան Ալեքսանդր (Խատիսեան Ա.) – 60, 210, 212, 230, 253, 263-264, 267, 301, 316, 318, 337-338, 340, 345-346, 348, 360-363, 365, 368-370, 381-382, 385-386, 388-399, 401, 403, 410, 412, 414-415, 433-434, 447, 452-453, 487, 489
Խատիսյան Գևորգ – 177
Խարազյան Երվանդ (Երո) – 177
Խարլամով Վ. – 46
Խեչո – 331
Խիկկի (մայոր) – 266
Խլղաթյան Գրիգոր – 824
Խնկո տե՛ս Ասատրյան Խնկո
Խոյլունց Արսեն – 505, 508, 668
Խոնդկարյան Արշամ – 287, 481-482, 861, 924
Խոջաբաղյան Սմբատ – 130
Խոջաբեկով Սմբատ – 787
Խոջաբեկյան Վ. – 34
Խոջա-Էյնաթեանց Յ. – 27, 28, 31
Խոջամիրյան Կարապետ – 35
Խոջամիրյան Հովհաննես – 35
Խոջայան Ի. – 289
Խոսունց Ծատուր – 500
Խորենի Վահան – 287, 481, 483, 502, 523, 531, 557-561, 564 , 722, 736, 740, 781, 797, 921, 1006
Խուդա-Բաղիշ Սուլթան – 33
Խուդադով Ռ. – 251, 252
Խուդավերդյան Բաբկեն – 583, 602
Խուտզարյան – 865
Խուրդիդյան Դավիթ – 502
Խուրշուդյան Ասատուր –668, 740, 790
Խուրշուդյան Արշակ –740
Խուրշուդյան Դավիթ –132-133, 1006
Խուրշուդյան Երեմ (Երեմիա) – 616, 651, 740, 1006

Ծ

Ծատուրյան Արտաշես –1006
Ծատուրյան Ալեքսանդր Ռուբենի – 120, 438
Ծատուրյան Սահակ – 710
Ծերուն (խմբապետ) – 864

Կ

Կամարի Հակոբ տե՛ս Բեջանյան Հակոբ
Կամենև – 1021
Կամինսկի –529
Կամսար Լեռ –847

Կասիմով – 437
Կասմինին Անդրեյ – 926
Կասմինին Գրիգոր – 926
Կասմինին Ռոդիոն – 101, 110, 112, 153, 552, 926
Կասյան Սարգիս – 751-752, 756-757, 759, 765, 774, 802-803, 812, 819, 843, 851, 857, 881, 890, 908
Կարաբեկով Կ. – 289
Կարաբեքիր Քյազիմ – 486, 510, 517
Կարախան Լևոն – 512
Կարակոզով տե՛ս Ղարագյոզյան Արմենակ
Կարապետ (վաշտապետ) – 674-675
Կարապետյան Երեմ – 605
Կարապետյան Կարապետ – 846
Կարապետեան Յ. –35, 37
Կարապետյան Համբարձում – 72, 75-76, 91, 96-97, 111, 180, 189, 201, 208
Կարապետյան Շամիր – 671
Կարապետյան Սողոմոն – 505, 668
Կարաև Ասադ – 591-593
Կարինյան Արտաշես – 850, 882-892, 898, 900-902, 904-906, 908, 912-913, 915, 928, 936, 939, 948, 951, 962
Կարճիկյան Խ. – 50
Կարո (Մորուք Կարո) – 821
Կերենսկի Ա. – 56
Կելենյան Համբարձում (Համաստեղ) – 306
Կիզիրի Նաբի տե՛ս Բոզունց Նաբի
Կիրով Սերգեյ Մ. – 466, 475, 498, 539, 542, 550, 555, 560, 569, 631, 919
Կիշիմբեկով – 460
Կլատերբակ Սեսիլ Հ. – 289
Կոզլով (հրամանատար) – 812, 844
Կոլմակով Ալեքսեյ Գրիգորևիչ – 184, 266, 274
Կոլչակ – 220, 681, 685
Կոկոսյան Հայկ տե՛ս Կոսոյան Հայկակ
Կոնդուրով (Ա. և Գ. Կոնդուրով եղբայրներ) – 35, 38
Կոնդուրով Խարլամպի (Ուստա Ալավերդի) – 34
Կոչարլինսկի – 437
Կոչետկով Ա. – 534
Կոսոյան Հայկակ – 824, 861, 935
Կոստանյան Ռ. – 41
Կորբել (գնդապետ) – 577
Կորի Ջորջ Նորտոն – 283, 287, 337, 360, 362
Կրասովսկի Ս. Ա. –841
Կրեմլև (հրամանատար) – 725
Կրիվիչ (հրամանատար) – 702
Կրիկորով Գևորգ – 152
Կրիչինսկի Օլգերբեյ – 453
Կրիվոնոսով – 516
Կրմենանց Նիկոլայ – 502, 1006
Կրուպեննիկով, Կրուպենին (Կարմիր բանակի օղակի հրամանատար) –667, 725-726
Կուզմինսկի Ալեքսանդր – 32
Կուզնեցով – 341, 734, 503
Կուզնեցով (սանմասի պետ) – 725
Կուլեշով – 686, 691, 699
Կուրիշկո Պյոտր Վասիլևիչ (Կուռիչկին) – 515, 685-688, 691-695, 699-700, 729, 734
Կուռո տե՛ս Թարխանյան Սուրեն
Կուն Բելա –622-623

Հ

Հախվերդյան (Հախվերդով, գեներալ-լեյտենանտ) – 305, 810
Հախվերդյան Ս. – 16, 51, 57, 254
Հախվերդով (Ախվերդով Աբդուռահիմ բեկ) – 317
Հակոբ (հրամանատար) –946
Հակոբյան -1019
Հակոբյան (բժիշկ) –530
Հակոբյան Արշավիր –822
Հակոբյան Գրիգոր – 738
Հակոբյան Սաթենիկ (Յակոբեան Սաթո) – 817
Հակոբյան Սերգեյ – 321, 1006
Հակոբյան Սիմոն – 415
Համադանցի Աստվածատուր Ա – 23
Համազասպ – 822
Համաստեղ տե՛ս Կելենյան Համբարձում
Համբարձում (Շնաթաղցի) – 1010
Համբարձումյան Համբարձում – 616, 651
Համբարձումյան Ռաֆայել – 302, 322, 324, 329-330, 386, 421-422, 426, 442-443
Համբարձումյան Սահակ –790
Համբարձումյան Սաքո – 792-793, 915
Համբարձումյան Սողոմոն – 58
Համբարյան Ա. – 33, 35-36, 39
Համիդ Աբդուլ – 311
Համզաբեկով Ասադուլաբեկ– 929
Հայպետ Ե. – 67
Հայր Աբրահամ տե՛ս Սահակյան Ավետիս
Հայրապետյան Ա. – 35
Հայրապետյան Գինոս – 639, 864, 933, 964
Հայրապետյան Գևորգ – 964-965
Հայրապետյան Ե. (Հայրապետեան Ե.)–833
Հայրապետյան Հովհաննես – 509, 559, 864
Հայրապետյան Շ. – 587
Հայրյան Նիկոլայ – 955-956
Հաննիբալ – 685
Հաջինսկի – 738
Հաջինսկի Մամեդ Հասան – 366
Հաջիև – 183
Հասան Բասրի բեյ – 123
Հասանբեկով Աբդուլլա բեկ – 189
Հասան-Ջալալյան Մելիք – 499
Հասկել Վիլյամ Նեֆյու – 316-318, 337, 347-348, 355, 359-360, 368-369, 381-382, 405-406
Հասրաթով – 671
Հարություն – 140, 987
Հարությունյան Արզուման (Արզո) –813
Հարությունյան Բագրատ – 553, 538, 600-601, 605-606, 615, 650-651, 788
Հարությունյան Եզոր – 668, 683, 778, 813
Հարությունյան Հովսեփ – 530
Հարությունյան Լևոն – 57
Հարությունյան Մարտիրոս – 365, 425, 432-434, 436, 450, 455-457, 465, 495, 540, 562-563, 624-625, 661, 666, 738-739
Հարությունյան Նիկոլայ – 504, 668
Հարությունյան Պատվական – 668
Հարությունյան Ս. –1020
Հարությունյան Սամսոն – 639

Հարությունյան Սիմոն տե՛ս Տեր-Հարությունյան Սիմոն
Հաուելս – 250
Հեկկեր Ա. Ի. – 724, 759, 794, 799, 802-804, 815, 820, 850, 916, 918-919, 954, 964, 1001
Հեյդար բեկ – 292
Հեյդարով Նազար – 42, 788-789
Հիդայաթ խան -930
Հիսուս Քրիստոս – 609
Հիքքի (մայոր) – 269
Հովհաննես Վարժապետ – 502
Հովհաննես (Շնաթաղցի) – 1010
Հովհաննիսյան Աշոտ – 657, 915
Հովհաննիսյան Արշակ – 481, 483, 823, 868, 924, 928, 946-947, 962, 975-976, 1044
Հովհաննիսյան Արտաշես – 793-795
Հովհաննիսյան Բախշի – 602
Հովհաննիսյան Լևոն –639
Հովհաննիսյան Հ. – 487
Հովհաննիսյան Հովհաննես – 639
Հովհաննիսյան Մ. – 102
Հովհաննիսյան Սաշա – 790
Հովհաննիսյան Սեդրակ – 639
Հովհաննիսյան Սողոմոն – 1006
Հովհաննիսյան Ռ. – 224, 241, 267, 282, 290, 310
Հովհաննիսյան Վարժապետ-1006
Հովսեփյան Բ. – 156
Հովսեփյան Դանիել – 57
Հովսեփյան Նիկոլայ – 56-57, 137, 156, 163, 174, 181, 215, 266, 274, 275, 342-343, 345, 417, 502, 531, 1014
Հսո (հայդուկ) – 1006
Հրաչյա (խմբապետ) – 1044
Հուսամեդդին բեյ – 968
Հուսեինով Մ. Դ. – 472-473, 477, 493-494
Հուսեյինյան Մ. – 254

Ղ

Ղազախեցյան Վլադիմիր – 30
Ղազանչյան Բագրատ – 121, 158
Ղազանչյան Ռեմ – 518
Ղազար – 621
Ղազարյան Բագրատ – 88
Ղազարյան Գառնիկ –505
Ղազարյան Գևորգ –1006
Ղազարյան Եղիա (Եղո) –788, 790, 955-956
Ղազարյան Կարապետ –813
Ղազարյան Հ. – 1033, 1035
Ղազարյան Լևոն – 45
Ղազարյան Նիկոլայ (Ղազարով) – 372-373, 386-387, 391-393, 395, 398, 416, 419, 421, 443, 447-449, 462-463, 520, 1006
Ղազարյան Պատվական – 530
Ղազարյան Սաթի –927
Ղազարյան Ստեփան – 1006
Ղազարյան Վաղարշակ – 502
Ղազարյան Տիգրան – 654, 1007
Ղազո (Քյուրդ Ղազո) – 958, 1016, 1044
Ղահրամանով Ահարոն – 671
Ղաջար – 442
Ղավալյան Աբել – 505, 507, 530
Ղարագյոզյան Արմենակ – 508, 528-529, 559, 592, 594, 505, 507, 539, 685, 703, 788
Ղարագյոզյան Բագրատ –1004
Ղարագյոզյան Գ. – 122
Ղարագյոզյան Մելիք – 709
Ղարագյոզյան Մկրտիչ – 508
Ղարագյոզյան Ս. – 623
Ղարախանյան Միքայել – 57
Ղարիբյան Ա. – 412, 428
Ղարիբջանյան Բ. – 580
Ղուբլարյան Արամ – 738
Ղուլյան Յ. – 224, 279, 367-368, 383, 453-454

Մ

Մադաթ (սպա) – 1007
Մաժոնց Ս. – 529
Մալինցյան Ազատ – 558, 1007
Մալինցյան Ավանես – 671
Մալինցյան Գալուստ – 1007
Մալինցյան Խաչատուր – 254, 341, 345, 1007
Մալխասյան – 864
Մալյան Հակոբ – 594
Մալչանով Ա. – 599
Մալունց Ղազար – 76, 345, 1007
Մախարաձե Գ. Ֆ. – 338, 453, 476
Մական Ա. Գ. – 334
Մակեդոնին – 822
Մակինցյան Պողոս – 884, 889, 892, 915, 936, 939, 952, 974
Մահմեդ – 1055
Մահմեդ օղլի – 929
Մահմուդ բեկ – 434
Մաղաքյան (կապիտան) – 539, 1007
Մամալիք Մուշավերոլ – 1045
Մամեդխանով Մամեդխան – 1053
Մամիկոնյան Ստեփան – 453, 476
Մամունցև (գնդապետ) – 806
Մայեր (զինկոմ) – 874
Մայիլյան Գարեգին – 505, 530
Մայսուրյան Արսեն – 505, 507
Մայսուրյան Տիգրան – 651
Մանանդյան Հ. – 289
Մանսումյան –559
Մանուկ – 94, 102, 134
Մանուկյան Արամ – 196, 230, 1061
Մանուչարյան – 196
Մանուչարյան Արամայիս տե՛ս Գասպարյան Գասպար
Մանուչարյան Մ. – 616
Մաշուրյան Գալուստ – 1007
Մաշուրյան Հակոբ – 1007
Մաշուրյան Մկրտիչ (Մակիչ) –504, 530, 558-559, 616, 623, 693, 710, 788
Մաշուրյան Սամվել – 778, 783, 799-800, 1007
Մառ Նիկողայոս –304
Մատակյան – 425
Մատրյոշկիններ – 927
Մատուշև – 623
Մարգարյան – 972
Մարգարյան Արամ – 1044
Մարջանյան Օննիկ – 997
Մարտիել դե Դամիեն – 547
Մարտիրոս (Բաշգառնեցի) տե՛ս Աբրահամյան Մարտիրոս
Մարտիրոսյան Արշակ –1007
Մարտիրոսյան Եփրեմ – 1007
Մարտիրոսյան Մամիկոն – 606
Մարտիրոսյան Յաշա – 505, 789
Մարտիրոսյան Սամսոն –654, 1007
Մարտիրոսյան Սաշա – 1007
Մարքս Կարլ – 488
Մաքսապետյան Արմենակ – 824, 861, 870
Մաքսիմովիչ (սպա)– 285
Մդիվանի – 466, 498
Մելիք-Ադամով (գնդապետ) – 810
Մելիք-Ազարյանց Ալեքսանդր – 35, 38, 76

Մելիք-Ալավերդյան Ասո – 1007
Մելիք-Ալավերդյան Միքայել – 1007
Մելիք-Ասլանով Խուդադաթ բեկ – 50, 289-290, 398
Մելիք-Դադայան Ալեքսանդր – 530, 602, 606, 616
Մելիք-Դադայան Գուրգեն – 582
Մելիք-Եգանյանց Պողոս – 738
Մելիք-Թանգյան Ներսես – 654, 833, 871, 1017, 1023, 1033
Մելիք-Թանգյան Սիմոն բեկ – 871, 1007
Մելիք-Հարությունյան Սիմոն (Թոփչի Սիմոն) – 343
Մելիք-Հյուսեինյան Բոգդան – 1008
Մելիք- Հուսեինյան Տիգրան – 778, 783
Մելիք-Հուսեինյան Մանուչար բեկ – 25
Մելիք-Հուսեինյաններ – 25
Մելիք-Հովսեփյան Աշոտ – 121, 269, 269
Մելիք-Հովսեփյան Սերգեյ – 539, 811, 971
Մելիք-Հուսեյնով Բողդան – 178
Մելիք-Կարակոզով Մ. բեկ – 35
Մելիք-Մուսյանց (Մելիք-Մուսյան) Աշոտ – 131, 150, 304-305, 384, 417-418, 527, 531, 541, 608-610, 617, 620-621, 634-636, 653, 740-742, 921, 1008
Մելիք-Յոլչյան Շամիր – 153, 929
Մելիք-Յոլչյան Սերգեյ (Մելիք-Եոլչեան Ս.) – 47, 64, 256, 258, 270, 275, 278-279, 291, 345, 372, 379, 386, 388, 412, 414, 426, 435, 446-449, 451, 462, 500-502, 513, 644, 860, 868, 873, 876, 919, 924, 975, 986, 1008, 1044
Մելիք-Նամազալիև – 118
Մելիք-Շահնազար – 174
Մելիք-Շահնազարյան Գ. – 122
Մելիք-Շահնազարյան Հայկ – 559
Մելիք-Շահնազարյան Միքայել բեկ – 77-78, 79, 92, 93, 99, 103-104, 115-116, 121, 127, 134, 136, 139-140, 151, 155, 163
Մելիք-Շահնազարյան Սոկրատ բեկ – 121, 156-157, 162-163, 172-174, 181, 232, 234-235, 241
Մելիք-Շահնազարյան Տիգրան – 71, 701
Մելիք-Շահնազարով (գնդապետ) – 810
Մելիք-Ստեփանյան Սմբատ բեկ – 58, 75, 143-144, 151, 186, 197, 217, 254, 270, 272-273, 320-321, 379, 535-536, 538, 738, 913, 1008
Մելիք-Փարսադանյան Արշակ – 1008
Մելիք-Փարսադանյան Իսրայել –783
Մելիք-Փարսադանյան Սամսոն բեկ – 58, 633, 649, 986-987, 1008
Մելիք-Փարսադանյան Փարսադան –1008
Մելիք-Փարսադանով (գնդապետ) – 810
Մելիք-Քարամյան Արսեն –117
Մելիք-Քարամյան Գարեգին – 1008
Մելիք-Քարամյան Իվան բեկ (Իվանբեկ) –58, 151, 320-321, 532
Մելիք-Քարամյանց Բագրատ – 654, 1008
Մելիք-Քարամյան Փարամազ – 1008
Մելիք-Օհանյան Գարեգին – 1008
Մելիք-Օհանյան Ռուբեն – 1008
Մելիք-Օհանջանյան Միքայել (Միխայիլ) – 345, 1009
Մելիքեան Յ. – 45
Մելիքյան Հ. –883, 890-891
Մելիքյան Վ. – 45, 46
Մելնիկով Վասիլի – 883-891, 898, 900, 902-906, 908, 928, 939
Մելքոնյան Խաչիկ – 1009
Մելքոնյան Մելիտոս – 639
Մեխանոշին – 475
Մեհթի խան – 634
Մեհմանդարով (Մեհմանդարով) Սամեդբեկ (գեներալ) – 234, 398, 421, 437, 433, 440, 459-460, 491, 589
Մեսիա - 609
Մեսյան (գնդապետ) – 500
Մեսյան Զախար – 439-440
Մեսրոպ (խմբապետ) – 812, 830
Մենթի խան – 871
Միանսարյան Ա. – 432
Միզյարիկով (հրամանատար) – 726
Միլերան – 624
Միխայլով – 724, 759
Միկիչյան Մ. – 846, 864
Միկոյան Ա. – 465, 625
Միհրանյան Ա. (Միհրանեան Ա.) -826
Մինախորյան Վահան (Մինախորեան Վ.) – 28, 49, 481-483, 802, 854, 861, 882, 893, 924, 930-931, 999, 1034-1035, 1037, 1040, 1044, 1049
Մինասյան Լևոն – 86
Մինասյան Մինաս – 783, 879, 898, 901, 906-907, 924, 1009
Մինասյան Մուշեղ –583
Մինկո (հրամանատար) – 691
Միրաքյան Ալեքսանդր – 671
Միրաքյան Ե. – 680
Միրզաբեկյան Իշխան – 240
Միրզաբեկյան Վազգեն (Վանբեկ) – 502-503, 1009
Միրզան Բեգլար բեկ – 35
Միրզոյան Նիկոլայ – 790
Միրիմանյան (Կարմիր բանակի հրամանատար) – 826-827, 972
Միրիմանյան Վալենտին (շտաբս կապիտան) – 396, 478
Միրիմանով – 822, 1001
Միրումյան – 25
Միքայել (Բռնակոթցի) – 558
Միքայելյան Արսեն (Միքայէլեան Ա.) – 73, 76, 109, 179, 397-399, 406, 415, 439
Միքայելյան Լևոն – 178, 903-904, 906
Միքայելյան Քրիստափոր – 488
Մխիթար Սպարապետ – 23
Մխո (դերասան) – 1047
Մկրտիչ (վաշտապետ) – 987
Մկրտչյան Բալասան – 57
Մկրտչյան Հարություն – 668
Մկրտչյան Ղուկաս – 790
Մկրտչյան Մարտիրոս – 509
Մկրտչյան Մուշեղ – 506, 530, 559
Մկրտչյան Յաշա – 602, 606, 740
Մկրտչյան Պ. – 864

Մկրտչյան Քրիստափոր – 504-505, 530, 616, 623, 657, 740, 788
Մկրտումյան Հակոբ – 743
Մկրտումյան Մկրտիչ –509, 813
Մղումյան Տիգրան –927
Մյասնիկյան Ալեքսանդր (Մարտունի) – 6, 11, 892-898, 908, 916-919, 925, 932, 936, 938, 948-951, 954-955, 959-961, 964, 985-986, 999-1000, 1022-1023, 1037, 1047, 1054
Մնացականյան Արամ –555, 1009
Մնացականյան Ս. –16
Մոլկաչանով Մ. Վ. – 792, 814, 820, 1001
Մորոզով (գեներալ) – 467
Մորոզովներ – 927
Մոհբաթյանց Համբարձում – 130
Մոնք-Մեյսոն Գոդֆրի Նոել Գրեյ – 240-241, 261, 265, 278
Մռավյան Ասքանազ – 751, 774, 792, 795, 802, 857, 881, 884, 889, 892, 914-915, 925, 932, 950, 1021, 1033, 1035-1036, 1044
Մութալիբ (Մութալիմ) խան – 871, 930
Մուխբիր-Սալթանե – 930
Մուկուչ (խմբապետ) – 960
Մուղդուսունց Ղազար ապեր – 1009
Մուշեղ (Սասունցի) – 93-94, 134, 855, 1016, 1043
Մուշտունց Իսահակ – 1009
Մուսայելյան Արամ – 558-559, 740
Մուսայելյան Գարեգին – 147
Մուսայելյան Հ. – 121-122
Մուսայելյան Սարգիս – 32, 33, 580
Մուսան Օջախկուլի – 439, 955
Մուրադխանյան Ասլան (Ասլանիկ) – 121, 160
Մուրադխանյան Արիստակես – 396
Մուրադյան Դ. – 33, 35-36, 39
Մուրադյան Հ. – 864-865
Մուրադով Սուլթանբեկ – 727-728
Մուրադ (Սեբաստացի) – 303

Յ

Յաղիգարով Իսրաֆիլ բեյ – 347
Յանիշևսկի Ն. – 529, 841
Յապոն տե՛ս Պարոնյան Հովհաննես
Յապոնացի Սաքո տե՛ս Սարգիսջանյան Համբարձում
Յավեր փաշա – 126
Յոլյան Զաքար – 345, 462, 471, 502, 513, 531
Յոլչյան Ղազար -1009
Յովակիմյան Բ. – 302
Յուդենիչ –681
Յուզբաշյան (բժիշկ) – 495
Յուզբաշյան Ավան – 429
Յուզբաշյան Ղուկաս – 506, 790
Յուզբաշյան Ռ. – 438
Յունին Միխայիլ – 552
Յուրին Իվան – 926

Ն

Նաբի – 31
Նազարբեկյանց Թովմաս – 572, 614, 653, 676, 810
Նազարբեկյանց (Նազարբեկով) Խաչատուր – 35, 38
Նազարեթյան –498, 892
Նազի –67
Նաթալի Շահան – 1028
Նախիջևանսկի Հուսեին խան – 345, 491, 589
Նաջարյան Ճապո –1043
Նասիբյան Ներսես – 240
Նավասարդյան (ձիավոր դիվիզիոնի հրամանատար) – 946
Նավասարդյան Վահան – 481, 484, 809, 943, 985
Նավասարդյան Օհանես – 864
Նարիմանով Նարիման – 469, 471, 483, 499, 562-563, 589, 625-626, 701, 738-739, 753-754, 756, 759-760, 918, 928, 1009
Նարինյան Ռուբեն – 342, 345, 427, 709, 870, 926, 1009, 1039
Նարինյան Վաղարշակ –1009
Նեկրիտով (շտաբի պետ) –686
Նեյբաթյան Ներսես – 160
Նեստերովսկի Ն. – 468, 597, 538, 602, 663, 667, 670-672, 682, 691, 703, 722, 725, 728, 730-732, 734
Ներսես – 1009
Ներսես Սրբազան տե՛ս Մելիք-Թանգյան Ներսես
Ներսիսյան Գ. – 846
Ներուչև Ա. – 51
Նժդեհ Գարեգին (Սպարապետ, Սյունյաց Սպարապետ) – 5, 9, 10-12, 302-306, 313, 320-332, 350-359, 370-380, 384, 386, 388, 391-397, 403, 407, 409, 416-423, 425-428, 441-445, 448-449, 451, 499, 462-463, 476, 478, 499, 501-503, 520-524, 527, 529, 531-538, 541, 552, 555-556, 562, 565-566, 571-574, 589-593, 595-598, 600-621, 628, 633-656, 663-664, 667, 670-672, 674-680, 682-686, 688, 691, 693, 700-701, 704-705, 707-710, 713-721, 723, 727, 730, 733-734, 736-737, 740-749, 761, 766-767, 770-772, 774, 776-778, 780, 782-783, 785-808, 811-813, 815, 828-832, 839, 842-845, 852-853, 855-857, 859-864, 866-879, 882-883, 897, 900, 904-905, 912-914, 918-927, 929, 931-934, 937-938, 946-948, 950, 954-956, 958, 960-961, 963-965, 967-972, 976-979, 982, 984-993, 995-999, 1002-1005, 1007, 1009-1010, 1012, 1017-1018, 1020, 1024, 1029-1032, 1042, 1044, 1048-1049, 1058-1059, 1061
Նիկիտին (հրամանատար) – 550, 599
Նիկոլայ Երկրորդ – 43, 45
Նիկոլով Դմիտրի տե՛ս Գարեգին Նժդեհ
Նիկողոսյան Նիկոլայ – 1009, 1044
Նոնանկուրի դե Շ.-Մ. – 433
Նովրուզով Թեյմուր բեյ (գեներալ) – 410-411
Նուրի փաշա –61-62, 83, 122, 126, 165, 181, 410-411, 414, 421, 428, 442, 459, 466, 479, 495, 514-517, 597, 749
Նուրիջանյան Ավիս – 625, 751, 772, 774, 792, 802-803, 810, 840, 848, 857, 951, 985
Նուրիջանյան Արշակ – 58
Նուրիջանյան Կարապետ – 649, 654, 1009
Նուրով Նիկոլայ – 396

Շ

Շաթիրյան – 860
Շալունց Համբարձում – 671
Շահ Աբաս – 21
Շահգելդյան Ա. – 673, 1009
Շահզադյան Լևոն – 1009
Շահթախտինսկի Իբրահիմ – 553
Շահինյան Գառնիկ – 830, 898, 928, 947, 961-962, 973-976
Շահխաթունի Ա. – 487
Շահմազյան Արսեն (Շահմազեան Արսէն) – 5, 229-231, 238, 242-243, 254, 261, 263-264, 266-268, 270-271, 275-276, 278, 293, 298-299, 301, 305-306, 315, 317, 319, 334-335, 341-343, 345, 352, 371-372, 972
Շահմուրադով Ալի – 788
Շահնազարյան Ասլան – 160-162, 191, 192, 193
Շահնազարյան Թևոս – 790
Շահնազարյան Լևոն – 193
Շահնազարյան Հայկ – 241
Շահնազարյան Շմավոն –504
Շահվարան – 514
Շահվերդյան Ալեքսանդր – 915
Շահումյան Ստեփան – 63, 89, 488, 950
Շանթ Լևոն – 346, 464, 511-512, 553, 568, 631, 657, 659, 809, 822, 847, 870, 1048
Շավարշ (Ալաշկերտցի) – 484, 1016
Շավարշ (խմբապետ) – 1043-1045
Շատլվորթ Դիգբի Ինգլիզ – 5, 253-254, 256-257, 263, 265-278, 280, 282-283, 289, 291
Շարդինյի Պիեռ-Օգյուստ – 282, 336
Շաքիր Վաղարդին – 625
Շաֆիև Լյաթիֆ – 788
Շելկովնիկյան (Շելկովնիկով) Գրիգոր Հարությունի (գեներալ) –223, 295, 810
Շեյխուլ օղլի Իսմայիլ – 929
Շեյման Ա. –749
Շիխլինսկի Ալի-Աղա (գենեբալ) – 335, 338, 491, 589
Շիրինյան Արշակ (Շիրին) – 5, 56, 74, 111, 113-114, 119, 146-147, 153-157, 159, 161, 163, 174, 177, 181, 215, 254, 266, 270-271, 274, 275, 279, 299-301, 305-306, 319, 345, 481, 483, 502, 523, 531, 557-561, 564, 722, 736, 740, 781, 797, 910, 921, 1009
Շիրինյան Շիրին – 784
Շիրինյան Պատվական – 1010
Շիրինով Սավալան – 788, 955
Շիրվանսկի (խան) – 514
Շտեյգեր (հրամանատար) – 468, 499, 515, 520, 527
Շուդլյակ –725
Շուշինսկի Ֆ. – 124, 182
Շնքեթ Մեմդու – 968

Ռ

Ռսկանյան Մարգար – 639
Ռսկանյան Մուշեղ – 654, 784, 1010
Ռսկանյան Ռ. – 765
Ռսկանյան Վոլոդյա – 539, 1010

Չ

Չալաբյան (Չալաբով) – 983
Չալիևա – 559
Չալյան Միքայել (Միշա) – 530, 602, 606, 616
Չելեպյան Անդրանիկ – 72, 76, 91, 96, 111, 177, 179
Չերնով – 844
Չիլինգարյան Արշավիր – 1021
Չիլինգարյան Արտաշես (Ռուբեն Դարբինյան) – 54, 64, 189, 402, 701, 762-763, 766, 809, 833, 847, 1020, 1044
Չիչերին Գեորգի – 473, 493-494, 512, 518, 520, 541-543, 547, 554, 562, 564, 571, 580, 582, 631, 655, 690-692, 749, 760, 766, 799-800, 835, 1045, 1052
Չխեիձե Ն. – 59
Չխենկելի Ա. – 46, 50
Չոլո – 94, 821
Չոլով Ն. –955
Չոփուռ Գրիգոր տե՛ս Գրիգորյան Գրիգոր
Չուբարյան Գրիգոր – 952, 972
Չուբարյան Պ. – 289
Չուրսին Գ. – 24

Պ

Պանդուխտ – 76, 87
Պանիրյան –1019
Պապաջանով Մ. – 46
Պապովյան –438, 495
Պավլովսկի (գեներալ) –810
Պատկանյան Ռ. –380
Պարոնյան Արմենակ – 539, 1010
Պարոնյան Հովհաննես (Յապոն) (Պարոնեան Յ., Եապօն)– 77-78, 146, 190, 336, 345, 390-392, 396-397, 407-408, 502, 520, 812, 827, 831, 841, 861, 867, 884-885, 888-892, 920, 935, 938, 946-947, 962, 972, 1010, 1016, 1044, 1048-1049
Պարոնյան Միքայել (Միշա) – 56-57, 76, 79, 130, 132-134, 137, 140, 202, 204-207, 342, 345, 528, 1010
Պետլյուրա (գեներալ) – 844
Պետրոսյան Արտեմ – 160, 787, 1010
Պետրոսյան Հայկ –1057
Պետրոսյան Վարդազար – 1010
Պետրոսյան Ք. – 16
Պիոնյան – 1019
Պոլուլյան Յան – 498
Պողոսյան Ավագիմ (Հովակիմ) – 671, 813
Պողոսյան Գրիգոր – 654, 1010
Պողոսյան Ռ. – 846, 864-865
Պողոսյան Սիմոն – 671
Պոռշյաններ – 20
Պսուրյան Լևոն վարդապետ – 122
Պուադեբար Ա. – 405
Պուգաչով (շտաբի պետ) – 690-691
Պուպսիկ (սպա) – 1010
Պֆելլեր – 25

Ջ

Ջաղեթյան Գրիգոր – 1016
Ջամալյան Արշակ – 212, 481, 488, 489, 570, 762, 943
Ջանունց Ավագ –530
Ջանունց Արտեմ –740
Ջավալ փաշա-721
Ջաֆարով Մ. – 46, 50, 317, 348, 365, 381
Ջեբեջի Սարգիս – 76, 90, 144
Ջեմիլ Ջահիդ բեյ – 120-124
Ջիվանշիր – 470, 589
Ջևադ բեյ – 544

Ռ

Ռադեկ – 622, 624, 626
Ռասուլզադե Մահմեդ (Ռասուլ Զադէ) – 62, 310
Ռատնեկ Կարլ – 525-527, 632

Ռեզնիկով (հրամանատար) – 649
Ռեկլիվ Էլիզե (Ռեկլիւ Էլիզէ) – 48
Ռեմեզով (շտաբի պետ) –724
Ռեյ Ջեյմս – 336-337, 359-363, 369, 382
Ռոբերտս տե՛ս Չիլինգարյան Արշավիր
Ռոզով Յակով – 34
Ռոստոմ (Զորյան Ստեփան) – 147, 331, 420, 488, 524
Ռոտշտեյն Ֆ. Ա. – 1023-1024, 1038, 1041, 1044
Ռուբեն – 146
Ռուբեն փաշա – 1044
Ռուստամբեկով Շ. – 289-290
Ռուստամով Աբդուլազիմ – 98

Ս

Սաբլին (հրամանատար) – 725
Սադովնիչի Վ. – 458
Սազանդարյան Տիգրան – 56, 155, 202, 784, 799-800, 873, 1010
Սալիմով (Սելիմով) – 553
Սալտանե Մուխտար – 1047
Սախարով (ոստիկանապետ) – 1011
Սահակ – 321
Սահակյան Ավետիք – 561
Սահակյան Տ. – 16
Սահրադ Մութալիմ – 634
Սահրանգ խան – 871
Սամսոն Խան տե՛ս Թադևոսյան Սամսոն
Սամոյլենկո – 458
Սայիլյան Գարեգին – 507
Սառիկյան Հակոբ – 511
Սասունի Արմեն – 110, 153
Սասունի Կարո – 189, 809, 821, 823, 1044
Սասունցի Մուշեղ տե՛ս Ավետիսյան Մուշեղ
Սավադյան Ավանես – 57
Սավենկով (գեներալ) – 844
Սարատիկյան Մեսրոպ բեկ – 51, 1010
Սարան (կոմիսար) – 667, 670, 725
Սարաֆով Բորիս – 303
Սարգիս (Ալաշկերտցի) –1043
Սարգիս (Անգեղակոթցի) – 715, 1010
Սարգիս (Քեռի) – 1044
Սարգիսբեկյան Գարեգին – 816, 823
Սարգիսջանյան Համբարձում (Յապոնացի Սաքո) – 100, 342, 502, 525, 671, 921, 1011
Սարգսյան (հրամանատար) – 819
Սարգսյան (շտաբսկապիտան) – 539, 1011
Սարգսյան Ա. Ա. – 280
Սարգսյան Արտեմ – 654, 1010
Սարգսյան Արշակ – 321, 407
Սարգսյան Ա. – 280, 317-318
Սարգսյան Բախշի – 671
Սարգսյան Գարեգին – 358
Սարգսյան Եփրեմ (Սարգսեան Ե.) – 49, 64, 822-823, 847, 861-862, 872, 946-947
Սարգսյան Լևոն (Սարգսեան Լ.) – 47-48, 1038, 1045-1046
Սարգսյան Հ. – 823
Սարգսյան Սեդրակ – 668
Սարգսյան Ստեփան – 147
Սարգսյան Տիգրան – 505
Սարոյան Վ. – 846, 864
Սարուխանյան Ա. – 865
Սարուր (Քիրս Սարոտ) – 76-79, 107, 116-117, 171-172, 179-180, 182, 206, 236, 240-241, 256-257, 259
Սաքո – 502, 921
Սաֆրազբեկյան – 152
Սաֆրազբեկյան Աստղիկ – 1011
Սաֆրազբեկյան Գ. – 1055
Սաֆրազբեկյան Միշա – 1011
Սեբաստացի Մուրադ – 303, 1044
Սեբաստացի Ղուկաս – 23
Սեդրակ (Բաշգառնեցի) –1043
Սելիմով Հաբիբ – 437-438, 455, 460, 514, 553
Սեկոյան –865
Սեմյոնով Գ. –565, 599, 616, 663-665, 667, 723, 725-726, 744-745, 747-748, 803-804, 955
Սեյրի տե՛ս Գուլոյան Ավետիք
Սեպուհ (խմբապետ) – 481-483, 490
Սերգեև Ա. Ի. – 456
Սերգեև Ա. Ն. – 835
Սերգեև Պավել – 926
Սիգմա – 286, 307, 310
Սիլանյան Հայկ – 504, 506-507, 530
Սիլիկյան Մովսես (Սիլիկով) – 146, 189, 334, 443, 462, 519, 810
Սիլին (կոմիսար) – 660, 756, 758, 766
Սիմենս եղբայրներ – 36
Սիմոն – 1011
Սիմոն (Վանեցի) – 1016
Սիմոնյան Արամ – 9, 33, 35-36, 39, 48, 52, 83, 89, 94, 102, 111, 114, 118, 131-132, 135, 142, 148, 172-173, 177, 183, 189, 192, 197, 201, 204, 206, 212-213, 219-220, 221, 252, 265-266, 302, 311, 316, 322, 337-338, 349, 362-364, 366-367, 380, 382, 402, 410, 423-424, 433, 449, 451, 464, 479, 500, 537, 551, 554, 566, 592, 627, 636-637, 684, 710, 739, 740-741, 745, 750, 752, 754-755, 769, 792, 805, 807, 814, 817, 819, 839, 848, 866, 868-869, 885-886, 890, 895, 901-902, 916, 923-924, 934, 938, 941, 952, 972, 998, 1028, 1041
Սիմոնյան Հրաչիկ – 3, 32, 63, 72-79, 82, 91-92, 95-98, 100-102, 105-109, 111-113, 116-118, 123-124, 128, 130, 132-133, 135-136, 144, 146, 155, 160, 164, 169, 171-172, 177-182, 189-190, 194, 196-197, 199-200, 203, 205-208, 215-217, 221, 223-224, 231, 236, 240-241, 250
Սիմոնյան Ռ. –65, 72, 76
Սկաչկո – 623
Սմբատ (Ագարակից) – 148, 191, 321
Սմբատ (Մշեցի) – 824
Սմբատ Բ թագավոր – 20
Սմբատ գահերեց (Օրբելյան) – 20
Սմբատյան Արտակ եպիսկոպոս – 18
Սմիլգա –466
Սմիռնով (հրամանատար) – 638
Սմկո Իսմայիլ աղա – 1041-1042, 1045-1046
Սյուրմելյան Արտավազդ վրդ. – 17
Սոկոլով (կոմիսար) – 725
Սողոմոնյան Մ. – 46, 53
Սողոմոնյան Ս. – 45, 955-959, 961, 965, 989
Սողոմոնյան Սուրեն – 602, 638-639, 668
Սորոկոումով Աֆանասի – 926

Սվիրիդով Իվան – 955, 978, 981, 993, 999
Ստալին Իոսիֆ –520, 547, 660-662, 759, 1052
Ստամբոլցյան Եղսո (Էլլեն Բյուզանդ) – 817
Ստարիցկի – 25
Ստեմել – 16, 25, 72, 74-76, 78, 98, 102, 109, 111, 117, 130, 136-138, 176, 178-179, 200-202, 261, 263, 271, 275-276, 278, 352, 371, 373, 378-379, 421-422, 426-427, 441, 443
Ստեփանեան Յ. (Ստեփանյան Հովակիմ (Հովակ)) – 53, 72-80, 91-92, 94, 96-99, 101, 103, 105-113, 115-116, 134, 153-154, 156, 163, 171, 176-180, 182, 190, 205-207, 209, 439, 444, 445
Ստեփանյան (զնդապետ) – 810
Ստեփանյան Ասլան (Ասլանեան Ս.) – 810, 816, 820, 822-824
Ստեփանյան Թևան – 565, 717, 806-809, 852-853, 987, 1044, 1048, 1053
Ստեփանյան Լևոն – 605
Ստեփանյան Համազասպ – 320-321, 1011
Ստեփանյան Հովսեփ – 246
Ստոուքս Կլոդ Բեյֆիլդ – 402
Սրապիոնյան Սարգիս (Լուկաշին) – 892, 915, 939, 955, 1037, 1052
Սուբիի Մուստաֆա –689
Սութխայ բեյ – 132
Սուլթանով Իլդրիմ բեկ – 314
Սուլթանով Խոսրով բեկ (Խոսրովբեկ) – 117, 224-225, 236, 239-241, 243-244, 253-254, 256-257, 260-261, 263, 265-266, 269, 276- 278, 281, 284-286, 288-291, 294, 298, 307-309, 311, 314, 334, 341, 350, 362, 381, 399-400, 406, 411-412, 429-431, 438-439, 475, 477-478, 483, 495, 805, 1055
Սուլթանով Ջալիլ բեկ – 52, 444
Սուլթանով Համիդ – 472
Սուլթանով Սուլթանբեկ – 117, 286, 298, 314, 527, 805-806
Սուլթանովներ – 224, 477-478
Սուլկևիչ Վ. – 297, 311-312
Սուրենյան Գ. (Սուրենեան Գ.) – 147
Սուրենյան (հրամանատար) – 946
Սուրխայ բեկ – 118
Սքուայր Ջ. Ֆ. – 180, 189
Սկյան Գաբրիել –505
Սկյան Մատթեոս – 57

Վ

Վահան եպիսկոպոս – 438
Վայցեխովսկի տե՛ս Վոլցեխովսկի
Վանբեկ տե՛ս Միրզաբեկյան Վազգեն
Վանեսյան Հակոբ – 671
Վանեսյան Հարություն – 57
Վաչյան Դավիթ –987
Վառլամյան Գևորգ –1044
Վասիլենկո (հրամանատար) –517, 545, 550, 559
Վասիլև (գեներալ) – 810
Վարդազարյան Բալասան – 57
Վարդան (Ջրվեժցի) –864
Վարդան (Տաթևցի) – 846, 1011
Վարդանյան (կոմիսար) –637
Վարդանյան Աղասի –882
Վարդանյան Գեղեցիկ –1043
Վարդանյան Գրիգոր –793, 795-799, 801, 933, 935, 1033-1038
Վարդանյան Եփրեմ –380
Վարդանյան Լևոն – 124, 927
Վարդանյան Հայրապետ – 1011
Վարդանյան Սերգո – 927
Վարդանյան Վարդան –639
Վարդապետյան Վ. – 873
Վարշամյան –1039
Վեզիրով Ջամիլ – 522
Վելիբեկով Բահաթուր – 522-553, 769
Վելիկանով Մ. – 468, 889-890, 956, 959-960, 964, 1001
Վերմիշև Քրիստափոր – 253
Վեքիլով (զնդապետ) –834, 837
Վեքիլով Մամեդ Ռիզա բեկ – 361, 380, 438, 453
Վեքիլով Մուստաֆա բեկ – 450, 455
Վեքիլով Ռահիմ բեկ Ալի օղլի –366
Վիզերդյան Նահապետ – 1011
Վիլհելմ – 149
Վիլսոն – 149, 624
Վոդոպյանով (հրամանատար) – 468
Վոլկով Ի. – 458
Վոյցեխովսկի (հրամանատար) – 638, 725-726, 803-804
Վորոնով (հրամանատար) – 692
Վորոնցով-Դաշկով Իլարիոն Իվանովիչ – 32
Վրանգել – 681, 745, 751
Վրացյան Սիմոն (Վրացեան Ս.) – 44-45, 51-53, 55, 64, 68, 77-78, 89, 120, 188, 225, 240, 253, 245, 256-258, 262-263, 297, 308, 324, 341, 344, 361, 363, 369-373, 373, 382, 384-387, 395, 488-490, 511, 526, 545, 586, 596, 645, 669, 755-756, 762-763, 774-775, 778-782, 802-803, 823, 828, 830-831, 833-834, 838-840, 842, 846-848, 860-863, 865-866, 869-870, 872, 876-878, 886, 898, 902, 904, 907, 911, 919, 921-926, 931, 934-935, 944, 949, 963, 965-966, 968, 986, 994-995, 997, 1016-1017, 1022, 1024-1027, 1029, 1044-1045, 1048-1049, 1055

Տ

Տաբատաբային –930-931
Տանին Հակոբ – 927
Տատյան Հայրապետ – 530, 671, 788, 790
Տեպկին Վասիլի – 926
Տեպկին Ֆեոդոր – 552
Տեր-Անանյան – 431
Տեր-Գաբրիելյան Կոլյա – 846
Տեր-Գաբրիելյան Սահակ Մ. – 499, 515, 520, 657, 751, 889, 945
Տեր Գրիգոր -1011
Տեր-Գրիգորյան Հովհաննես – 345, 1011
Տեր-Գրիգորյան Պատվական – 654, 1011
Տեր-Գրիգորյան Սարգիս – 1012
Տեր-Գևորգյան Մ. – 865
Տեր-Դանիելյան Միսակ (Արամայիս) – 221, 242, 257, 280, 281, 284, 290
Տեր-Դավթյան Զաքար (Զախար) – 345, 502, 531, 1012
Տեր-Դավթյան Պողոս (Քաջ Պողոս – 254-255, 305, 343-345, 375, 396, 520, 656, 675, 679, 683-684, 713-715, 771, 1005, 1012

Տեր-Զաքարյան Հակոբ – 935
Տեր-Իսրայելյան Ս. – 122
Տեր-Կարապետյան Վաղարշակ – 1012
Տեր-Հակոբյան Ա. – 333, 337
Տեր-Հակոբյան Հակոբ (Իրազեկ) – 822-823, 849, 856, 860, 862, 869, 876, 924, 1016, 1027, 1044, 1049
Տեր-Հայրապետյան Սահակ – 56, 156, 254, 559, 1057
Տեր-Հարությունյան Անդրեաս – 321, 407, 654, 1012
Տեր-Հարությունյան Արամ – 864, 961, 974-975
Տեր-Հարությունյան Արարատ -604
Տեր-Հարությունյան Բագրատ – 1057
Տեր-Հարությունյան Գարեգին – 303, 386
Տեր-Հարությունյան Սիմոն (Թոփչի Սիմոն) – 345, 1012
Տեր-Հովհաննիսյան Բագրատ – 1012
Տեր-Հովհաննիսյան Համբարձում – 530
Տեր-Հովհաննիսյան Օ. – 1033
Տեր-Ղազարյան Արշամ – 530
Տեր-Ղազարյան Գ. – 50
Տեր-Ղազարյան Երվանդ – 153, 154
Տեր-Ղազարյան Զաքար (Զախար) – 59, 85, 92, 100-101, 104-105, 111, 113, 148, 151-154, 156, 305, 342, 1003, 1012
Տեր-Ղազարյան Ղ. – 50
Տեր-Ղազարյան Շմավոն – 539, 1012
Տեր-Ղազարյան Պատվական – 509, 530
Տեր-Ղազարյան Վահան – 813
Տեր-Մարգարյան Աստուր – 1013
Տեր-Մարգարով Գասպար (Գասպար Իվանովիչ)– 52
Տեր-Մարտիրոսյան Արտաշես – 439, 615
Տեր-Մեսրոպ – 634
Տեր-Մինասյան Ալեքսանդր – 1020
Տեր-Մինասյան Գեղեոն – 52, 58, 111, 132, 140, 156, 176, 198, 213-214, 242, 320-321, 345, 502, 536, 608, 634, 654, 778, 783, 796, 799-800, 828, 873, 898-907, 913, 924, 1013
Տեր-Մինասյան Գեղամ – 526
Տեր-Մինասյան Գրիգոր – 1013
Տեր-Մինասյան Ռուբեն – 70, 316, 486, 488-489, 500, 762, 815, 830-831, 860-861, 872-873, 995, 1042
Տեր-Միրաքյան Ներսես – 1013
Տեր-Միքայելյան Արսեն – 191
Տեր-Մկրտչյան Ալեքսանդր – 671
Տեր-Մկրտչյան Գասպար – 558, 1013
Տեր-Մկրտչյան Դավիթ – 101, 109, 111, 151, 153, 558, 1013
Տեր-Մկրտչյան Մկրտիչ – 783
Տեր-Մկրտչյան Քրիստափոր – 89, 768, 843-845
Տեր-Մովսիսյան Բագրատ – 321
Տեր-Մովսիսյան Բոգդան – 407, 1013
Տեր-Ներսեսով (զնդապետ) – 810
Տեր-Պետրոսյան (հրամանատար) – 675, 795, 852
Տեր-Պետրոսյան Աստվածատուր – 654, 1013
Տեր-Պետրոսյան Հ. – 58, 254, 654
Տեր-Պետրոսյան Վարդազար – 321
Տեր-Պողոսյան Հովհաննես – 1013
Տեր-Սարգսյան (զնդապետ) – 425, 1013
Տեր-Սարգսյան Միրզա – 117
Տեր-Սիմոնյան Դրաստամատ – 915, 952, 993, 1056
Տեր-Ստեփանյան Սուրեն – 813
Տեր-Վահանյան Վ. Ա. – 945
Տեր-Օհանյան Լ. – 277
Տերեխով (հրամանատար) – 549-550, 553, 599
Տերտերյան Համբարձում – 511-512, 659, 755, 809, 823, 861, 886, 924, 986, 1044
Տերունի Հակոբ (Տերունի Յ.) – 113, 190, 254, 345, 391, 938, 946-947, 502, 1014, 1049
Տիգրան (վաշտապետ) –1014
Տիգրանյան Սիրական – 225, 226, 247, 253, 259, 840
Տիմչենկո Նիկոլայ – 333
Տիրացույան Ն. – 214
Տոդորսկի Ա. –955, 978, 981, 984, 993, 1001
Տոկարև Վասիլի – 926
Տոռոզյան Գրիգոր – 539, 1014
Տոռոզյան Մկրտիչ – 539
Տոռոզյան Նիկոլայ – 57
Տրոցկի – 571, 791
Տուխաչևսկի Միխայիլ – 467
Տևեճյան Հովհաննես – 924
Տոնյան Ա. (Տոնեան Ա.) – 54-55

Ու

Ուլուբաբյան Բագրատ – 73, 77, 79, 172, 179, 254-257, 261, 265
Ումառյան Ս. – 16
Ուորդրոպ Ջ. Օլիվեր – 336-339, 359, 368, 382, 390-391, 400-406, 433
Ուսուբով Ի. – 491
Ուսուբբեկով Նասիբ-բեկ – 347, 350, 361-363, 365, 381, 398, 401-402, 412, 429, 430, 432, 453, 460

Փ

Փանիլյան – 196
Փանյան – 204
Փարամազ տե՛ս Սարգսյան Մատթեոս
Փարսադանյան Վ. – 536
Փարսադանով (հրամանատար) – 638
Փարսյան Պողոս – 558, 1014
Փափազյան Վահան – 365, 943-944
Փիլիպոսյան Հովնան – 152
Փիրգուլյան Գևորգ – 1057
Փիրումյան Ալեքս բեկ – 160
Փիրումյան Մ. – 139
Փիրումյան Սիմոն – 464
Փիրումյան Սիմոնիկ – 882, 932
Փիրումով բեկ – 338
Փոլադով Խոսրով բեկ – 159

Ք

Քազիմ փաշա – 165
Քալանթար Անուշ – 28, 31, 33
Քալանթարյան Լևոն -1014
Քալանթարով Շահսուվար-բեկ –875
Քալանթարովներ – 33
Քամալյան Ա. – 121
Քաջազնունի Հովհաննես – 146, 169, 809, 822, 846, 857, 861-862, 868
Քաջունի Եղիշե –72, 110, 111, 141, 178, 208, 209
Քեմալ բեյ Յուսուֆ –835

Քեմալ Մուստաֆա – 415, 477, 495, 510, 512, 548-549, 576, 581, 669, 689, 748-750, 781, 796, 798-799, 907
Քեռի – 331
Քերբալայ խան – 295, 669, 875
Քերզոն – 390, 402, 487
Քյազիմ բեյ – 756
Քյարիմ բեյ – 294
Քյարունց Արսեն –788, 790
Քյարունց Գարեգին – 790
Քյոսա Մելիքսեթ տե՛ս Եսայան Մելիքսեթ
Քյուրդ Ղազո տե՛ս Ղազո
Քոթանջյան Սերյոժա –823
Քոչարյան Ավագ –539, 1014
Քոչարյան Ղազար (Քաչալ Ղազար) – 302, 354, 356, 384, 427, 967, 1014, 1048
Քոչարյան Շմավոն –793-795
Քոչարով –787
Քսերքսես –522
Քրիստափոր –331, 420, 524
Քրիստափոր տե՛ս Միքայելյան Քրիստափոր
Քրիստոու (հյուպատոս) –1018
Քուրդ տե՛ս Եփրեմ

Օ

Օգանեզով Գրիգոր –827
Օգանեսյան Բախշի – 530
Օլթեցյան Նիկոլայ – 846, 864
Օլիվեր Ջոն -399
Օհանյան Վ. (Օհանեան Վ.) – 302
Օհանյան Աղաջան – 1014
Օհանյան Գարեգին – 539, 1014
Օհանյան Տրդատ – 539, 1014
Օհանջանյան (զնդապետ)-987
Օհանջանյան Ա. – 587, 865-866, 876
Օհանջանյան Ավետիս – 628, 823, 846, 866, 924
Օհանջանյան Գրիգոր – 1055, 1057
Օհանջանյան Հակոբ – 1016
Օհանջանյան Համո – 50, 453, 473-474, 476, 478-480, 486, 489, 494-495, 500, 512, 526, 542-543, 547-549, 554, 557, 559, 561, 569, 577-579, 581, 809, 822, 830-832, 861, 865-866, 1019, 1048
Օհանջանյան Պ. – 1033
Օսիպով Նիկոլայ տե՛ս Հովսեփյան Ն.
Օսման փաշա –626
Օվայտ – 402
Օրախելաշվիլի – 893
Օրբելյան Արմենակ – 793, 795, 801
Օրբելյան Խուդա-Բաղիշ Սուլթան – 33
Օրբելյան Միշա – 1014
Օրբելյան Նիկիտա – 1014
Օրբելյան Սամսոն բեկ – 33, 674
Օրբելյան Ստեփանոս – 16, 20
Օրբելյաններ – 16, 20, 33
Օրի Իսրայել – 22, 149
Օրջոնիկիձե Գեորգի (Սերգո) –148, 466-467, 481, 498-499, 515, 517, 519-521, 547, 553, 571, 580, 582, 655, 658, 662, 667, 690, 728, 731, 753, 755-756, 759-760, 791, 814, 841, 848-851, 893, 978, 1000, 1052

Ֆ

Ֆեթվաճյան Արամ – 76
Ֆիշիլևիչ (հրամանատար) – 820, 826, 841
Ֆրոլով (շտաբի պետ) – 667, 686, 691
Ֆրումկին – 498
Ֆորդ Ժ. Հ. – 2963
Ֆորեստյե-Ուոկեր Ջորջ Թաունզենդ – 228, 277
Ֆուադ Ալի փաշա – 968

Гейдаров Н. – 29, 33-34, 42, 44, 48, 504, 789-791
Григорян Г. – 16
Заварян С. – 28, 30-31, 35, 38
Зелинский С. – 29, 33, 47, 48
Зограбян Э. А. – 296
Кадишев А. – 468, 516
Карапетян О. – 35-36, 730, 820
Каспарова И. – 35
Кемаль М. – 510
Мартиросян Г. – 810
Махмурян Г. Г. – 274
Микаелян В. А. – 64
Орджоникидзе Г. – 148, 467, 755
Саркисян Г. – 23
Сеф С. – 45-46, 54
Таирян И.- 571
Туманян М. – 45, 118, 224-225, 237, 241-241, 253, 257, 259, 263-264, 274, 282, 284, 308, 318-319, 368-369
Худадов В. – 47, 54, 64, 66, 311
Чурсин Г. – 23, 52-53
Шихлинский А. – 491
Шостак М. – 35-37, 39
Шушинский Ф. – 124, 182
Эльде – 51, 54, 65
Banyo’ Pe’ter – 23
Burdett Anita L. P. – 44
Bak Ja’nos M. – 23
Ovanisian R. – 386

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբդալար (Ավդալար, Լաչին) տե՛ս Քաշաթաղ
Աբդալարի ձոր – 723
Ագարա գետ տե՛ս Հագարի
Ագարա ձոր տե՛ս Հագարի
Ագարակ գյուղ – 33, 68, 90, 261, 291-292, 314, 321, 329, 407, 427-428, 441, 612, 707, 712-713, 875, 989, 1005-1008, 1012
Ագուլիս (Ներքին, Վերին)– 260, 368, 383-386, 404, 419-420, 422-425
Ադանա – 410
Ադրբեջան (Ադրբեջանի Հանրապետություն) – 3-7, 9-10, 33, 46-47, 60-65, 68-72, 75, 81, 83, 89-90, 95, 98-100, 111, 118-119, 121-123, 125, 128, 130, 143, 148-149, 157, 165-172, 174-175, 179-183, 186-187, 191-194, 198, 201, 212, 215, 217-228, 231-242, 244, 246-247, 250-258, 260-284, 286-290, 292-295, 297-298, 300-301, 307-312, 314-320, 322, 333-341, 345-350, 352-353, 356-370, 372-374, 380-383, 385, 390-392, 394, 398-406, 408-416, 421, 423, 427, 429, 430-439, 444, 446-447, 450-461, 463-482, 484-486, 490-499, 503-508, 508-520, 521-523, 525-529, 532, 538, 541, 543, 545-549, 553, 444-556, 559, 562-565, 570-573, 577-578, 586-596, 600-604, 610, 612-613, 622, 624-627, 630-632, 634-635, 640, 652, 659-661, 663, 666, 671-672, 678, 681-682, 686, 688-689, 692, 701, 712, 720-721, 723-725, 729-730, 738-740, 744-750, 752-762, 764, 766, 769-770, 773-774, 778-779, 785-791, 794, 799-801, 807-809, 832, 838, 875, 890-894, 896, 899, 902-903, 907, 910, 914, 918, 921, 927-928, 934, 939-941, 956, 964, 968, 972, 979, 980-981, 983, 988-989, 991-992, 996-999, 1012, 1031-1032, 1035, 1041, 1043, 1047, 1052-1053, 1055, 1059-1060, 1062-1063
Ադրբեջանի Հանրապետություն տե՛ս Ադրբեջան
Ազա (Այզա) – 385, 423-424
Ազա-Գայա բարձունք – 375
Ազատ (Սուլուկ)– 335, 434, 987
Աթկիզ – 358
Ալազան – 729
Ալահ (Ալահի) – 370, 425, 713
Ալանգյազ – 14, 612, 617, 640, 642, 644, 967
Ալաջա – 304
Ալաշկերտ– 60
Ալավերդի – 39-40
Ալդարա – 996
Ալելու (Ալիլու) – 58, 106
Ալեքսանդրապոլ – 54, 304, 405, 488, 490, 548, 561, 749, 762-763, 765, 768-769, 770, 781, 801, 815, 838-839, 849, 855, 894-895, 902, 944, 952, 1003
Ալթայ –218, 236, 1010
Ալթըն թախտ (Ալթունթախտ) - 496
Ալիանլու – 159, 192
Ալիդարա (Ալդարա) – 28, 183
Ալիլյար – 33
Ալիլու –106
Ալիկումուշաղի (Ալիկուլիուշաղ)– 712
Ալիոուլի – 395, 583
Ալիոուլիշեն– 57, 446, 504-505, 509, 586-587, 628
Ալիոուլիուշաղի (Ալի-Ղուլի-Ուշաղի)– 395, 406, 428, 446
Ալի-Ջանդր – 354
Ալմալու – 706, 708-709
Այլաթ – 218, 236, 486
Այլակ – 1038
Ախալցխա – 62
Ախալքալաք – 60, 62, 1051
Ախլաթյան – 42, 58, 66, 106, 505, 508, 927, 970
Ախտա – 809, 830, 837, 839, 841, 845
Ախուրյան -164
Ահրար – 427
Աղա – 304
Աղահուրդ տե՛ս Եղվարդ
Աղավյուրդ – 712
Աղավնաձոր (Այնաձոր) –947, 957
Աղբաբա – 406
Աղբաշ – 820, 827, 841, 854, 1004
Աղբիս – 292
Աղդամ – 120-125, 162, 173, 199, 223, 236, 240, 242, 265, 281, 295, 338, 411, 423, 429, 435, 446, 496, 516, 521, 732, 802, 807, 852, 955
Աղզիբիր– 77
Աղկայա – 77
Աղջաղալա – 827
Աղջաքենդ–852
Աղստաֆա – 496, 568-569
Աղսուչայ -723
Աղվանի – 675
Աղվանստան տե՛ս Աֆղանըստան
Աղվանք -67
Աղրի – 424-425
Աղուդի – 95-96, 108, 134-135, 154, 342, 656-657, 700, 715
Աղքենդ տե՛ս Աշոտավան
Աղոոլան – 726
Ամաղու – 190, 960
Ամերիկա (ԱՄՆ)– 326-327, 360, 368, 465, 498, 576, 825, 898, 1021
Ամիրանլար – 66
Ային– 395, 397
Այիչանգլ – 597
Այնաձոր տե՛ս Աղավնաձոր
Այինդաղ (Ային-Տաղ) – 395, 407, 428, 446
Այյաղ – 397
Այսրկովկաս (Անդրկովկաս, Արևելյան Այսրկովկաս) – 4-6, 23-32, 36, 45-49, 51, 54, 56, 59-62, 64-65, 70-81, 164-180, 188, 195, 209, 224, 228, 235, 251-252, 256-258, 271, 275, 281-282, 318, 336-340, 346-347, 355, 359-362, 364, 368, 370-371, 382, 390, 399, 402-404, 433, 452-453, 456, 459, 464-467, 470-471, 477, 479, 482-483, 498, 509, 512, 517-518, 522, 547-548, 551,

568, 575-576, 631, 655, 749, 752, 754, 758, 760-761, 768, 773-735, 752, 775-796, 804-805, 834, 845, 874, 894-895, 899, 905, 908, 910, 920, 952, 978-998, 982, 1020, 1062
Այրարատ – 18
Այրիչայ – 572, 604
Այրիվանք – 77
Այրում – 372
Անատոլիա – 471, 492, 510, 689, 968
Անգեղակոթ – 42, 58, 92, 98, 100, 102-106, 110, 129-130, 132, 152, 250, 508-509, 546, 550-552, 570, 599, 663, 665, 679, 690, 692, 700, 730, 740, 743, 864, 970, 1010
Անգլիա տե՛ս Մեծ Բրիտանիա
Անգորա – 510, 581
Անդրկասպյան երկիր – 61
Անդրկովկաս տե՛ս Այսրկովկաս
Անզր (Վերին, Ներքին, Միջին) – 394
Անի – 304
Անկարա – 466, 471, 517, 547, 581, 968
Անտառաշատ (Տորթնի) – 989
Աշոտավան (Աղքենդ) – 58, 152, 508, 970
Աշտարակ – 809, 821, 824, 830, 841, 845
Աչաջուր – 692
Ապարան – 841
Ապկեզ – 639, 777
Աջանան – 139
Աջարիա – 62
Աջիբաջ – 375-376, 379, 653
Աջիշլու – 374
Առաջաձոր – 66, 193, 321, 533, 535-536, 538, 604, 738, 989, 1006
Առաջավոր Ասիա – 48, 469, 838
Ասկերան –123, 163, 173, 191, 218, 221, 222-223, 242, 255, 286, 311, 411, 429, 430, 435-437, 447-450, 455, 459, 717, 726
Ասկյուլում –442, 674
Աստազուր տե՛ս Շվանիձոր
Աստարա գետ – 310
Աստապատ – 1014
Ավան – 820
Ավարայր – 47, 445
Ավդալար տե՛ս Աբդալար
Ավշար – 820, 823
Ավստրո-Հունգարիա – 164
Ատրպատական – 7, 412, 634, 870-871, 990, 995, 1015, 1017, 1019, 1023, 1037-1038, 1045-1047
Արագած լեռ – 13, 819-821, 824, 847
Արալրխ – 358
Արան – 552
Արավսա – 394
Արավուս –57, 107-108, 1002, 1008-1009
Արարատ (կայարան) – 827, 836
Արարատյան դաշտ – 28, 48, 54, 60, 74, 131,191, 250, 280, 314, 455, 544, 596, 636, 815, 831, 842, 845, 854-856, 863, 874, 937, 950, 992, 996
Արարատյան Հանրապետություն տե՛ս նաև Հայաստանի Հանրապետություն, Երևանի Հայկական Հանրապետություն
Արաքյուլ – 717
Արաքս գետ – 7, 13, 15, 48, 89, 149, 183, 206, 252, 271, 280, 296, 303, 310, 319, 385, 423-424, 426, 445, 486, 514, 516, 524, 549, 612-613, 615, 617, 634, 636, 648, 652, 664, 678, 748, 827, 856, 859-861, 870-872, 874, 878-879, 881, 883, 929-930, 931, 957, 963, 979, 995, 997-999, 1002-1003, 1015, 1024, 1031
Արաքսի հովիտ (Արաքսի կիրճ) տե՛ս Արարատյան դաշտ
Արդահան – 60, 294, 1032
Արեշ – 48, 119, 148, 187, 495
Արխալրդ – 646
Արխաշանի բարձրավանդակ– 715
Արծվանիկ – 42, 139, 704-706, 708-711, 725, 731, 747, 987, 989
Արծվանիկի բերդ – 42, 606, 665, 674-675, 678, 691-692
Արիկլի – 265
Արճեշ – 65
Արշակունյաց թագավորություն – 18
Արտավան (Ջուլ)– 68, 187, 359, 394, 406, 550, 656, 965
Արտաշատ (Ղամարլու)– 231, 316, 809, 813, 820-823, 826-827, 830-831, 836-837, 841, 966
Արցախ տե՛ս նաև Ղարաբաղ – 4-5, 13-14, 17, 21-23, 25, 46-47, 62, 65, 69-70, 76-78, 81, 83, 100, 103, 110-111, 113-120, 122, 124-125, 127-128, 133-134, 144, 147, 152, 155-159, 161-162, 164-165, 169-172, 174-176, 178, 180-181, 183, 186, 194, 215-218, 220-221, 223-229, 231-242, 244-246, 249, 251, 253-256, 258-261, 263-266, 268-269, 277-284, 286-291, 296-297, 307-311, 350, 358, 383, 391, 403, 412, 416, 429-431, 434-440, 442, 447-451, 454, 456, 459, 466, 501, 565, 669, 716-717, 754, 757, 773-774, 787, 837, 840-842, 852
Արցախի լեռնաշղթա – 13
Արփա (Արփաչայ) գետ –304, 937, 946-947
Արփա գյուղ – 949, 960
Արփա-Գյադուկ – 159
Արևելյան Այսրկովկաս տե՛ս Այսրկովկաս
Արևելյան Հայաստան (Արևելահայաստան, Ռուսահայաստան, Ռուսական Հայաստան)– 21, 33, 42, 64, 70, 180, 226, 228, 239, 245, 303, 403, 405, 457, 1040, 1059
Արևելք – 409, 476, 517, 588, 622-625, 627-628, 652, 681, 689
Արևիք տե՛ս Մեղրի
Արևմտյան Հայաստան (Արևմտահայաստան, Թուրքահայաստան) –180, 228, 239, 245, 303, 403, 415, 458, 481, 555, 575-576, 826, 838, 979, 1040, 1050, 1060
Արևմուտք – 476, 541, 546
Ափկիս գյուղ – 353
Աֆանդի գյուղ – 77
Աֆղանստան – 61, 920
Աֆրիկա (Ափրիկէ) - 60

Բ

Բաբելոն – 9
Բաբերդ – 60
Բազարչայ գյուղ – 42, 58, 88, 101, 105-106, 134, 152, 250, 265, 390, 550-552, 555-557, 599, 665, 862, 864, 868, 876,

923, 926-927, 937, 965-966, 969
Բազարչայ գետ տե՛ս Որոտան
Բաթում – 60-61, 64, 70, 75, 82, 122, 164, 314, 404-405, 453, 456, 660, 1027
Բալախանի – 34, 470
Բալաք – 58
Բալդրղան – 678
Բալկաններ (Պալկաններ)– 60, 303, 748, 1021
Բաղաբերդ –16, 19-20, 75, 321, 352, 375, 379, 407, 420, 593, 595-596, 607, 612-615 , 619-620, 644, 653, 656, 674, 682
Բաղաբուրջ տե՛ս Պաղավերջ
Բաղաբեր-358
Բաղակու քար – 19
Բաղամար – 424
Բաղաց թագավորություն տե՛ս Սյունիքի թագավորություն
Բաղդադ – 1034
Բաղք – 13
Բայազետ տե՛ս Նոր Բայազետ
Բայահմատ – 425
Բայանդուր – 57, 140, 342, 344, 583, 586, 958, 984
Բանանց – 434
Բաշ-Ապարան – 61, 820, 830
Բաշ-Գառնի – 815, 819-820, 824, 842, 846-847, 854-855, 863, 865
Բաշ-Նորաշեն – 260, 295, 827, 962, 972
Բաշուշեն – 286
Բաշքենդ տե՛ս Վերնաշեն
Բասարգեչար – 64, 446, 829
Բարաբաթում տե՛ս Պառավաթումբ
Բարահաջի – 638
Բարգուշատ (Բարգյուշատ) – 342, 379, 384, 397, 403, 441, 447, 599, 603-604, 704, 947, 969
Բարգուշատ գետ տե՛ս Որոտան գետ
Բարգուշատ լեռնաշղթա – 988
Բարդա – 496, 514, 521, 686, 732
Բարթազ – 618, 639, 640, 647, 996
Բարթազ լեռ – 352, 422, 444
Բարձրավան տե՛ս Երիցաթումբ
Բաքու (Պաքու) – 5, 32-35, 47, 49, 52, 54, 56, 60, 62-65, 70-72, 81, 89, 98, 100, 115, 118-119, 122, 128, 147-148, 167, 175, 179, 180-181, 183-185, 188-189, 193-194, 198, 214-216, 219, 221-223, 225-227, 231-233, 236, 240-243, 253-256, 258, 265, 268, 270-271, 274, 278-280, 283-284, 286, 289, 290, 294-295, 298, 307-308, 314-315, 317, 320, 334-335, 337-339, 347, 349-350, 352-353, 357, 363, 365-367, 371, 382-383, 385, 391, 399-400, 402, 404-405, 460, 466, 473, 476-478, 483-484, 490, 493-496, 501, 508-509, 512-519, 527, 529, 538-540, 545, 550, 561, 564, 569, 571, 580, 586, 605, 620, 622-628, 639, 652, 655, 660-662, 666-668, 681-682, 686, 688-690, 692, 716, 724, 731, 733, 738-740, 748, 752-753, 755-756, 761, 788-792, 794-796, 800-802, 805, 810, 814, 836, 844-845, 849, 852, 890, 913-914, 918, 929, 943, 968, 987, 1011, 1013, 1040
Բեթլեհեմ (Բեթղեհեմ) – 609
Բելաջարի – 218
Բելգիա – 418, 907
Բեխ – 647, 649, 692, 987, 993, 1008
Բեյրութ (Պեյրութ) – 60, 323, 487, 1015
Բեյուտ – 305
Բեռլին – 943-945
Բերդաձոր-115, 126
Բերդիկ – 707-709
Բիթլիս – 575
Բիլան – 305
Բիչանակ գյուղ – 100, 549, 552, 956, 966, 970, 974
Բիչանակ (լեռ) – 692, 966, 970
Բիստ – 74, 88, 357, 370, 422, 425, 713
Բոլու – 77
Բնունիս – 58, 106, 152, 505
Բոլորաբերդ (Ղուրդուղուլաղ) – 397, 960
Բոյուք Վեդի – 823, 827, 841
Բոստոն (Պոստոն) – 12, 74, 111, 215, 250, 483
Բորիսովկա – 58, 551-552, 926, 1010
Բորսանլու – 516
Բոնակոթ – 30, 42-43, 58, 66, 92-93, 152, 255, 291, 505, 508-509, 743, 927, 1002, 1004, 1006-1007, 1012
Բրեստ – 126
Բրեստ-Լիտովսկ – 164, 660, 835
Բուզումլու – 827
Բուլղարիա – 70, 147, 164, 303, 1048
Բուխարեստ – 1049, 1052
Բուռուն – 57, 483, 628, 720, 958

Գ

Գանձա – 424-425
Գանձակ (Ելիզավետպոլ) – 24, 31, 33, 44, 48, 60-62, 68, 70-71, 77, 81, 83, 87, 102, 117, 119-120, 136, 142, 148, 154, 181, 193, 223, 335, 338, 341, 364, 431-436, 438, 457, 495, 501, 517, 533-538, 541, 564-567, 577-578, 595, 597, 599-600, 603-604, 607, 739, 755, 844, 960-961
Գանձասար – 17
Գառնակ լիճ (Ղազի գյոլ, Ղազիգյոլ) – 342, 344
Գառնի – 302
Գեղանուշ (Գյուտկում) – 42, 321, 428, 598, 647-650, 986, 993, 1002
Գեղարքունիք – 19
Գեղի – 296, 355, 371, 374, 393
Գեղվա բարձունք -395
Գեղվա բերդ – 16
Գեղվա գետակ –75
Գեղվաձոր (Գեղվա ձոր, Գեղվաձոր, Գեղի ձոր) – 27, 74, 265, 319, 321, 351-355, 357, 370-377, 378-382, 386, 389, 391, 395, 407, 614, 650, 1009
Գենվազ տե՛ս Մեղրի
Գեորու – 57
Գեչուլու – 355
Գետաթաղ – 27, 30, 58, 653, 674
Գետափ (Ղոյթուր)– 860-861, 961
Գետաշեն (Չայքենդ) – 32, 434
Գերեզնուր տե՛ս Կոռնիձոր
Գերմանիա – 164, 379, 390, 622, 907, 1008-1009
Գերու – 586, 594
Գժաձոր (Գիժաձոր) – 98, 106, 144, 152, 209, 213, 297, 355
Գիլաթաղ – 358

Գիլան (Գիլյան) – 265, 930
Գիլանսար – 813
Գիկալդաղ – 659
Գլաձոր (Օրթաքենդ) –961
Գյազբել տե՛ս Կազբել
Գյալ-304
Գերարա գյուղ (Վերին, Ներքին) – 375
Գյանջա տե՛ս Ելիզավետապոլ
Գյոզալդարա – 15
Գյոթկում տե՛ս Գեղանուշ
Գյոմուր (Գյամրի, Գյումրի) – 98, 106, 144, 149, 152, 209, 213, 265, 297
Գյոյալի – 397
Գյոյ մզկիթ-839
Գյուլիստան –24, 71, 335, 411, 434, 464, 511
Գյուլու-Գուրդին լեռնապար – 638
Գյուտկում տե՛ս Գեղանուշ
Գյուրջուլու – 790
Գնդեվազ – 150, 857, 862-864, 868, 884-892, 928, 933, 938-939, 946, 961-962, 972
Գողթան (Գողթ) – 54, 74, 89, 131, 150-151, 214, 260, 297, 304-306, 319-323, 331, 348, 350-358, 367- 368, 370, 374-375, 377, 383-384, 389, 392-395, 400, 409, 415-427, 441, 444, 448, 495, 523-524, 556-566, 572, 593, 595-597, 607, 614, 617, 620, 636-637, 676-679, 711, 713, 727, 768, 778, 842-845, 879, 991, 1004, 1008-1009, 1011, 1014
Գորի – 32
Գորիս (Զագեձոր, Կյորես, Շեն) – 6-7, 13-16, 22-27, 30-33-34, 40-45, 52-53, 55-58, 76-80, 83-87, 92-96, 98, 100, 103, 108, 110, 112-113, 115-117, 126-127, 129-141, 143-145, 147-148, 151, 153-156, 164, 171-173, 175-179, 182, 185, 189-190, 191-210, 212-215, 219, 228, 230-233, 241-242, 244, 247, 249, 251, 254-255, 261, 265-267, 269-270, 273-279, 285, 287, 291-293, 296-298, 302, 305, 311, 313-315, 320-321, 330, 333, 335-336, 338, 341-344, 348, 349, 351, 353-354, 364, 368-369, 370-373, 380, 384, 386-393, 395, 397, 399, 406-407, 410, 414, 416-419, 421, 428, 432, 435-436, 441, 444, 446, 448-449, 451, 458, 461-462, 471, 484, 499-502, 504-505, 507-509, 520, 523, 525-533, 538-539, 541, 544, 546-551, 557-562, 564-567, 578, 583, 586, 590, 592-595, 598-603, 606-607, 616, 628, 637, 639, 646, 650, 653, 656-657, 665-669, 671-673, 675, 677, 679-685, 687-697, 699-700, 703-705, 710-712, 714-723, 728, 731-732, 736-737, 740-745, 747, 770, 772, 780, 785-789, 790-791, 795, 797, 800-803, 806-807, 813, 828, 842, 853, 859-862, 867-868, 870, 875, 877, 879, 885-892, 899, 900, 904-905, 908-910, 912, 920-929, 934, 935, 937, 941-942, 945, 947-948, 954-958, 960, 962, 966-967, 969-978, 982, 983-985, 992-993, 999, 1002-1012, 1014, 1016, 1019, 1023, 1033, 1055-1056
Գորիս գետ -723
Գորիսի ձոր, հովիտ -721-723
Գրոզնի – 927
Գուդեմնիս – 90, 612, 616, 987

Դ

Դահրավ – 123
Դաղստան (Տաղստան) – 33, 54, 60, 62, 64, 459, 466-467, 483, 509, 518, 662, 668, 748, 769, 844, 894, 896
Դամասկոս – 147
Դաշբաշ – 397
Դաշթափա – 697, 700, 703
Դաշտային Արցախ (Դաշտային Ղարաբաղ, Հյուսիսային Արցախ) – 61, 64, 77, 119, 152, 435
Դաշտուն – 620-621
Դաշքենդ գյուղ– 723
Դաստա (Դաստակ) – 424-425
Դավալու – 251, 259, 304, 820
Դարաբաս (Դարբաս, Ղուլերծ) – 14, 58, 95, 101, 109, 111, 151, 371, 375, 443, 462, 479 668, 694, 718-719, 772, 784, 969, 776, 977, 984, 1013
Դարաբասի (Դարբասի) ձոր – 151, 371, 718, 784, 979
Դարալագյազ տե՛ս Վայոց ձոր
Դարաքյանդ – 958
Դարդանել – 164
Դափ-Ցաղդ – 434, 494
Դեմիրչի (Դամիրչի) – 186, 989
Դեմիրչիլար – 33, 444, 446
Դեր – 304
Դերբենտ – 467
Դիզա (Դիզի, Տիզեն) – 424-425
Դիզակ տե՛ս Հաղրութ
Դիլիջան – 74, 77, 304, 488, 490, 548, 752, 756, 820-821, 826, 836-837, 849, 953
Դիսար – 425
Դոլանլար- 261
Դոյլու – 442, 444, 446
Դոն – 390, 844
Դոնդարլու – 33, 52, 98, 118, 186, 292-293, 875, 989
Դովուս – 989
Դրախտիկ – 806
Դոնավազ – 440
Դոնիս – 424-425
Դուզալ – 871
Դևեդերեսի ձոր – 790

Ե

Ելենենդորֆ – 435
Ելենովկա (Սևան) – 77, 752, 820, 829, 831, 837, 841
Ելիզավետպոլ տե՛ս Գանձակ
Ելփին տե՛ս Էլփին
Եղեգիս տե՛ս Վայոց ձոր
Եղեգնաձոր – 960
Եղվարդ – 31, 291-293, 314, 407, 428, 989, 1004
Եղվարդի բերդ – 16
Ենգիջա – 841, 960
Եռաբլրի սարահարթ – 342-343, 715, 717-719, 977-978, 982, 984
Եռաբլուր (Ուչ-Թափա, Ուչթափա) – 97, 191, 343, 566, 697, 700, 703, 719, 721, 830
Եվլախ – 40-41, 119-120, 165, 194, 232, 235-236, 247, 267, 271, 277, 286, 307, 309, 334, 344, 411, 435, 460, 472, 496, 732, 792
Եվրոպա – 147, 184, 227, 391, 400, 482, 492, 587-588, 622-623, 793, 1048, 1057
Երանոս – 946
Երզնկա – 60, 292
Երիցաթումբ (Բարձրավան) – 57, 292, 336, 601, 668, 970, 985, 1011
Երիցվանք (Երիցավանք, Արծվանիկ) – 16, 18, 1004
Երնջակ – 19

Երուսաղեմ – 609
Երևան – 6, 9-10, 16, 18, 21-23, 31-35, 45-46, 49, 51, 53, 62-65, 68, 70, 73, 75-78, 82, 87-89, 91, 93, 102-103, 113-115, 117, 119, 128, 146-148, 153, 156, 160, 164, 167, 169, 170, 172, 174, 176-179, 187, 189, 190-191, 202, 210, 215-216, 220, 223-229, 231, 237, 240, 247, 249, 251, 253, 256-259, 261-262, 264-265, 267, 269, 274-277, 282-284, 287-289, 295-297, 299, 301-305, 307, 313-314, 316, 318-319, 322-326, 329-331, 333, 335, 337-338, 343, 348, 351-355, 357-358, 361, 363-364, 368-373, 376-380, 382-384, 386-387, 389-397, 402-403, 405-407, 409, 412, 415-428, 432, 435, 440-444, 446, 449, 451, 453, 455-458, 464, 472, 476, 479, 488, 490, 492-494, 496-497, 499-502, 508-513, 522-524, 526, 531, 540, 542, 547, 557, 561-562, 564, 566, 568-571, 577, 580-581, 590-591, 594, 596-597, 601, 608-609, 618, 635-637, 644-645, 653, 655, 657-658, 660, 677, 680, 707, 714, 717, 740-743, 748-749, 752, 755-757, 759, 762, 767, 768, 773-774, 786, 791-792, 795, 800-802, 809-811, 813-814, 816-817, 819-823, 826-835, 837, 838-851, 854-855, 857, 859-860, 863-865, 867, 869-870, 872, 878, 882-884, 886-887, 889-892, 894, 897-898, 901-904, 906, 908-910, 912-915, 918, 920, 923, 933-939, 942, 945-947, 949-950, 953, 957, 961, 963, 965, 973-974, 982, 987, 988, 990, 998-1000, 1006, 1011, 1018, 1021, 1023, 1027-1028, 1030, 1032-1041, 1043, 1045, 1047, 1052, 1056
Երևանի նահանգ – 259
Երևանի Հայկական Հանրապետություն (Արարատյան Հանրապետություն) տե՛ս Հայաստան

Զ

Զաբուղ – 118, 132, 134, 153-154, 178-179, 181, 234-235, 255, 336, 341, 343-344, 368, 369, 406, 446, 451, 520, 527-528, 559-560, 564, 566, 683-684, 720, 743-744, 746-748, 852
Զաբուղ գետ – 15, 115-116, 175, 207, 240, 275, 298, 341, 344, 346
Զաբուղի հովիտ, Զաբուղի կիրճ, Զաբուղի ձոր – 153, 182, 186, 222, 234, 251, 277, 311, 334-335, 338, 344, 723, 725, 1012
Զալինգյոլ (Զալին գյոլ)– 354, 602
Զանգեզուր տե՛ս նաև Լեռնահայաստան – 1-7, 9-18, 21-22, 24-50, 52-60, 62, 64-92, 94-95, 98-104, 106, 109-111, 113-120, 125-130, 132-133, 135-136, 137-144, 146-150, 152-153, 155, 157, 159, 161-165, 168-172, 174-187, 189, 191-192, 199, 202, 204-217, 220-231, 235-237, 238-239, 242-247, 249-256, 258-259, 260-280, 283-284, 287, 291-302, 304-307, 309, 311-320, 322-323, 325, 328, 330, 332-355, 357- 379, 381- 428, 432-437, 440- 448, 450-456, 458-463, 466, 468-474, 476, 478, 480, 484, 486, 490-493, 496-510, 512-513, 517-533, 535-536, 538-539, 541-545, 548, 551-553, 555- 561, 563-574, 577-579, 583-587, 590-597, 599, 601-602, 607-618, 620, 622-623, 627-631, 633-635, 639, 644-652, 655-659, 661, 663, 666-674, 676-677, 679-692, 698, 705, 710, 713-717, 720, 723-725, 727-729, 730-738, 740-751, 753-762, 766, 771-815, 817, 828-832, 842-843, 846-847, 850-854, 856-857, 859-865, 867, 869-871, 875, 880-892, 896-907, 909-913, 915-923, 925-926, 928-932, 934-935, 937-946, 948, 950-960, 963-983, 985-986, 988, 991-994, 996, 998-1003, 1005-1014, 1016-1019, 1023-1024, 1026-1027, 1030-1033, 1036, 1044, 1046-1047, 1049-1050, 1052-1057, 1059-1063:
Զանգեզուրի լեռնաշղթա – 13, 24, 655
Զանգելան (Զանգիլան) տե՛ս Կովսական
Զանգիբասար – 64, 403, 455, 483, 493, 830
Զանգու – 822
Զանջան – 930
Զավե – 497
Զարսլու – 7, 207
Զարուշատ (Զարիշատ)– 406, 493
Զաքաթալա – 218, 334, 341, 514, 729
Զեյթուն – 75
Զեյվա (Դավիթ Բեկ) – 49-51, 68, 178, 703-707, 709-710, 747, 989-990, 989, 1006, 1010, 1013
Զեյվա բերդ – 16, 75, 292, 297, 321, 328, 407, 428, 441, 603-604
Զնաբերդ – 571, 599
Զոր – 397
Զորաց քար – 16

Է

Էլար – 820
Էլզաս-Լոթարինգիա – 70
Էլփին (Ելփին) – 960
Էմանլու – 292
Էյվազլար (Էյվազլու) – 198, 391, 393, 395-397, 539, 790, 984, 998-990
Էնզելի -167, 456-457
Էջմիածին (Վաղարշապատ) – 23, 48-49, 64, 240, 251, 287, 453, 493, 809, 816, 820-821, 830, 841, 845, 1043
Էրզրում – 60, 292, 304, 486, 512, 575, 834
Էրնաձուր – 183
Էրքեջ – 431

Ը

Ըրկենաց (Ըրկենանց, Ընկենանց) – 604, 706, 708
Ըրջաթ – 721

Թ

Թազագյուղ – 58, 106, 152
Թաթտարա – 178
Թալին – 816, 820, 830
Թալիշ – 430-431, 434, 808
Թաղավարդ – 464
Թաղլար – 717, 852
Թաղլի – 692
Թայթան – 823
Թանգու – 16

Թաս – 984-985
Թավրիզ – 9, 62, 70, 128, 296, 303, 403-404, 426-427, 444, 634, 654, 764, 785, 805, 833, 865, 870-871, 883, 898, 921-923, 929-931, 934-936, 963-964, 995, 997, 999, 1006, 1008, 1012, 1016-1025, 1027-1029, 1033-1049
Թարավլու – 397
Թարթառ (ավան) – 338, 430-431
Թարթառ գետ – 515-516
Թեզխարաբ – 159
Թեհրան – 45, 51-53, 55, 64, 68, 89, 120, 188, 225, 240, 253-254, 262-263, 308, 341, 344, 363, 365, 373, 384-385, 444, 995, 1003-1004, 1006, 1009, 1014, 1023, 1026, 1048
Թեյվաս (Թեյվազ) – 394
Թերեք – 62, 662, 844
Թթու ջուր (Լիսագորսկ) – 115, 172, 717
Թիլլաք – 355
Թիֆլիս –21, 25, 34, 41, 45, 47-48, 50-51, 54-55, 62, 73-74, 76-77, 87-88, 117, 119, 122, 135, 171, 176-177, 184, 187, 214, 228, 223-232, 252-253, 256-257, 264, 277, 282-283, 288, 298, 302, 304, 314-316, 333, 336-338, 359-361, 363, 365-368, 370, 382, 399, 401-402, 405, 415, 432-434, 452, 464-466, 492-493, 538-539, 549-550, 559-560, 569, 575, 578, 581, 626, 657, 660, 749, 755, 797, 814, 821, 836-837, 841, 844, 848, 851, 893-894, 916, 968, 1005-1006, 1012, 1027, 1040
Թովմա առաքյալի վանք – 16
Թոփ – 357
Թումասլու – 666
Թուրքահայաստան, Թրքայահաստան տե՛ս Արևմտյան Հայաստան
Թուրքեստան (Թուրքիստան) – 60-61, 624, 920
Թուրքիա տե՛ս Օսմանյան կայսրություն

Ժ

Ժնև -415

Ի

Իգդիր – 1032
Իզզեթ – 186
Իմանշալու – 827
Ինջա – 431
Ինջաբել – 355, 566, 604, 653, 657, 663, 674-676, 679, 988-990, 1013
Ինքնավար Սյունիք տե՛ս Սյունիք
Իջևան – 488, 548, 578-579, 630, 751
Իշխանասար – 296
Իսկենդերբեյլի – 875
Իսրայել – 609
Իտալիա – 415, 465, 825, 882
Իրան տե՛ս Պարսկաստան
Իրանական Ադրբեջան տե՛ս Հարավային Ադրբեջան

Լ

Լաչին տե՛ս Քաշաթաղ
Լատվիա – 945
Լեռնահայաստան (Լեռնային Հայաստան) տե՛ս նաև Զանգեզուր – 9-10, 12, 16, 322, 326, 329-330, 347, 373, 376, 392-393, 416-418, 421-423, 425-428, 441-443, 589, 610-613, 617-618, 634, 645, 647-651, 674, 676, 682, 688, 691, 743, 749, 786, 812, 828-829, 832, 842-843, 844, 854-855, 859-860, 863-865, 867-868, 870, 872-873, 875-879, 883, 897-914, 916, 918-920, 922-926, 928-934, 937-939, 941, 943, 949, 954, 958, 961-962, 965, 966-967, 969, 972-973, 975-976, 978, 982, 984-985, 990-995, 997-999, 1002, 1008, 1010, 1015-1018, 1029-1032, 1042-1043, 1047, 1058, 1061
Լեհաստան – 9, 625, 751, 920
Լեհվազ – 28, 183
Լեմբերան – 516
Լենքորան –514, 807-808, 810
Լեոնիդասյան կիրճ –522
Լեռնաձոր (Քյուրդիքենդ) –619
Լեռնային Արցախ (Լեռնային Ղարաբաղ, Ղարաբաղի Հանրապետություն, ԼՂՀ) – 7, 31, 46-47, 53, 64, 68, 72, 77, 117, 120, 123, 152, 217, 226, 229, 243, 267, 275, 280, 298, 308, 317-318, 412-413, 717, 753-754, 756, 759-762, 766-767, 786, 796, 807-808, 829, 832, 875, 899, 902, 905, 937, 951, 955, 1052, 1061
Լիբանան – 805
Լիզին (Լծեն) – 33, 864
Լիլավա – 1015
Լիճք (Լիչե) – 28, 90, 330, 621, 777
Լծեն – 27, 58
Լյաքաթաղ (Լաքաթաղ) – 394
Լոնդոն – 247, 385, 391, 401, 834
Լոռի – 189, 798, 830, 1001, 1051
Լոս Անջելես – 322
Լոր – 30, 33, 58

Խ

Խալաջ – 397, 665
Խալֆալու – 285
Խաղդափ – 292
Խանաբադ – 123, 286
Խանագա բարձունք (Խանակա) –395, 407, 446
Խանաղա – 428
Խանլավա – 397
Խանլրդ – 604, 666, 948
Խանլուխլար – 404
Խանձաձոր – 192
Խանքենդ (Խանքենդի) տե՛ս նաև Ստեփանակերտ, Վարարակն – 122, 192, 221-222, 234-235, 239, 240, 242, 255, 286, 292, 311, 334, 411, 429-431, 438, 717, 807-808
Խաչեն – 71, 121, 158-159, 163, 173, 181, 192, 231, 237, 239, 244, 286, 308, 411, 429, 435, 464, 565, 829
Խաչին աղբյուր – 721
Խաչմաս – 444, 468
Խարաբագիլան բերդ – 423, 425
Խարխապուտ – 431
Խարկով – 844
Խդրան – 321
Խդրանաց (Խդրանց, Խընդրանց) – 989, 1002
Խեչուաբեր -331
Խլաթաղ – 52, 321, 553, 989, 1010
Խծաբերդ–159, 161, 193, 237, 413, 437, 447, 449, 852
Խնածախ – 42, 57, 84, 127, 132-133, 140, 162, 192, 297, 583, 586, 958, 982-984, 1009-1010
Խնդրանց – 1004, 1007, 1013
Խնձորեսկ – 16, 31, 34, 42-43, 57, 80, 84, 130, 132, 152, 193, 207, 342, 505-509, 528, 530,

578, 583, 586, 593-594, 628, 683, 721, 787, 789-790, 983, 1003, 1004, 1007, 1009-1010
Խնուս – 68
Խոզաբյուրտ -717
Խոզնավար –57, 127, 132-133, 140, 278, 292-293, 299, 342-344, 349, 586, 958, 982-984
Խոժոռաբերդ – 22, 24
Խոկ – 571, 599
Խոյ – 126, 1034
Խոջալու– 242
Խոջախան (Խոջահան) – 397, 442, 692, 707, 712-713, 790, 875
Խոջևան – 666
Խոտ – 14, 57, 198, 509, 668, 682-683, 695-696, 712, 718, 720, 1010
Խոտանան (Ներքին, Վերին) – 255, 278, 533-535, 537-538, 602, 604, 606, 656, 678-679, 691-692, 703, 707, 714-715, 913, 989, 1009, 1012-1013
Խորամա – 875
Խորհրդային Ադրբեջան – տե՛ս Ադրբեջան
Խորհրդային Հայաստան – տե՛ս Հայաստան
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ)– 4, 811, 1062
Խոսրով – 813
Խոր Վիրապ – 823, 827, 835, 841
Խրամորթ – 123
Խուդափիրին (Խուդոֆերին, Խուդափերինի կիրճ, Խուդափերինի կամուրջ) – 13, 516, 955
Խութիս – 718-719
Խուստուփ լեռ (Խուստուպ) – 13-14, 597, 608, 610, 612, 614-615, 617, 619, 633, 645-649, 674, 863, 876, 987, 990, 993, 993
Խուրս – 355

Ծ

«Ծակեր» – 558, 984, 1007
Ծարա երկիր – 15
Ծավ – 505, 600, 608, 617
Ծիծեռնավանք – 16
Ծղուկ – 13-14, 18

Կ

Կազան – 545
Կազբել (Գյազբել) լեռնագագաթ – 14, 604, 988
Կալադարասի տե՛ս Ղարաղշլաղ
Կալեր – 28, 609-610, 987, 992
Կազբելի լեռներ – 665
Կազի-Գուլյակբաշի – 723
Կազիկուր – 723
Կաթնառատ (Փիրմազա) – 357, 993, 1014
Կալադարասի տե՛ս Ղարաղշլաղ (Բերդաձոր)
Կալեր – 28
Կահիրե (Գահիրէ) – 169, 253, 825
Կաղնուտ – 989
Կապան (Հանքեր) – 7, 13-14, 16-20, 23-27, 30-31, 35-38, 40-45, 49-50, 52-53, 56, 58, 66, 74-76, 79, 89-90, 98, 108, 112, 137-139, 142-144, 149-150, 154, 171-172, 182-183, 186-187, 195, 197-199, 203, 206, 208-209, 213-214, 217-218, 223, 242, 254-255, 261, 272, 278-279, 291-293, 296-297, 299, 306, 314, 319-323, 325-331, 335, 345, 350-355, 357, 359, 368, 370, 372-374, 378-380, 384, 391-393, 395-398, 406-407, 375-377, 379-380, 389, 391-393, 397, 406-407, 418-423, 426-428, 441, 444, 446, 448-449, 463, 501, 503-506, 520, 523-524, 527, 531-538, 541, 564-567, 571-573, 577-578, 592-593, 595-617, 620, 633, 635, 637, 639, 642, 644-654, 656-657, 663-672, 674-683, 691-695, 702-704, 707-708, 710-711, 713, 716, 719, 727, 738, 740, 742, 747, 768, 770-772, 777, 780, 783-786, 807, 829, 869, 875, 882, 889, 899, 905, 913, 920, 923-924, 926, 931, 937, 946-948, 955-956, 958, 969-970, 980, 982, 984-990, 992-993, 995-997, 1002-1015, 1033
Կապանի թագավորություն տե՛ս Սյունիքի թագավորություն
Կապանի հանքեր//պղնձահանքեր – 38-39, 40-41, 45, 427, 572, 601-602, 605-606, 611, 633, 644, 647-652, 674-677, 680, 683, 692-693
Կապարգողթ (Կապ[ան]+Արլ[նիք]+ Գողթ[ն]) – 306, 320-321, 323, 327-329, 331, 333, 351-352, 354, 356, 358-359, 370-371, 373, 379-380, 391-392, 397, 407, 417-418, 421-423, 425, 428, 441, 444-445, 448, 553, 536-538, 565, 572-573, 595-597, 600, 602-603, 622, 637, 676, 677-678, 708, 742, 770, 986-987, 998, 1003, 1004, 1005, 1008-1009, 1013, 1027
Կապուտջուղ – 13, 75, 319, 351, 354, 416-418, 422, 597, 620, 678, 768, 1014
Կասպից ծով – 15, 228, 467
Կավարտ – 66, 533, 595-596, 598, 993, 1010
Կատար – 598, 958, 987
Կատար (լեռնագագաթ) – 26, 397, 706-707, 730, 785
Կարաբեկլյար – 841
Կարաբեքիր – 756
Կարաբուլաղ (Կարյագին, Կարյագինո) – 351, 688, 717, 727, 749
Կարագանլու – 519
Կարագյոլ – 692
Կարակիշլար լեռնանցք – 496
Կարաղաջ – 397
Կարաչինար – 335, 431
Կարճևան – 90, 318, 352, 424, 426, 612-613, 634-637, 652, 777, 1005
Կարմալինովկա (Կարմանիլովկա) – 546, 550, 552, 570, 599, 970
Կարմրակուճ (Կեմրակուճ) – 160
Կարմրաքար – 604, 653, 657, 674, 988-989
Կարյագին (Կարյագինո) – 66, 160, 242, 255, 287, 291, 314, 421, 429, 441, 852
Կարս – 60, 64, 165, 268, 277, 304, 317, 403-404, 488, 490, 493, 497, 548, 561, 749, 755, 761, 815, 838, 855, 902, 1032
Կաքավաբերդ – 612, 652, 996
Կեդաբեկի հանքեր – 36
Կեմանց (Կիմանց)– 600, 608, 617
Կենտրոնական Ռուսաստան – 920
Կեչուտ (Ղուզչի) – 965
Կետանիդու – 813
Կեռլյար – 428, 446
Կըզըլ-Հաջիլ – 516

Կըսր սար – 578-579, 599
Կիզիլ-Ղայա – 375
Կիլիկիա – 228
Կիլիտ – 183
Կիմազլու – 357
Կյախալի – 692
Կյորու տե՛ս Գերու
Կյուրատի գյուղ – 703
Կոզլով – 844
Կողբ – 304, 317
Կոմբախ – 14, 374, 378
Կոնդ – 822
Կոռնիձոր (Գերենզուր) – 57, 84, 118, 127, 132-134, 140, 159, 261, 341-342, 344, 349, 449, 505, 507, 528, 583, 586, 671, 722, 744, 787, 790, 800, 958, 982-983, 1005, 1008, 1011
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս, Պոլիս) – 18, 66, 73, 76, 122, 147-149, 189, 200, 207-209, 335, 351, 382, 416, 575, 826, 968, 1029, 1048
Կովկաս – 13, 35, 37, 45, 47, 51, 61-63, 65, 83, 148-149, 158, 180, 184, 222, 226-227, 271, 276, 281, 287-288, 303-304, 309, 459, 465, 493, 498, 564, 631, 664, 685, 815, 845, 894, 920, 930, 941, 953
Կովսական (Զանգեզան) – 13, 15, 22, 24, 30, 52, 72, 90, 234, 320-321, 351-352, 549, 618, 875
Կովկասյան ճակատ // ռազմաճակատ – 59-60, 466-467, 473, 475-478, 490, 520, 522, 545, 560, 565, 569, 728, 759, 791
Կոտայք – 820, 830, 882, 933, 952, 1043
Կոաթաղի բերդ – 16
Կոաթաղի գետակ – 75
Կրկժան – 286
Կրոնշտադտ – 834, 844
Կուբաթլի (Կուբաթլու) – 22, 24, 42, 44, 47-48, 52, 72, 444, 446, 788-790, 852, 875, 955, 989, 1056
Կուբան – 844
Կուդերբելյակ, Կուշչիբիլակ տե՛ս Ղուշչի Բիլագ
Կուտեմնիս տե՛ս Գուդեմնիս
Կուրաթ գետ – 507
Կուրիս – 90, 612
Կնարանի հանքեր – 34

Հ

Հաբանդ – 13, 15
Հագարակ տե՛ս Ագարակ
Հագարի (Աղավնո) գետ – 15, 22, 68, 115-116, 175, 179, 181, 207, 234, 397, 447, 548, 560, 604, 725-726, 955, 981
Հագարի (Աղավնո) ձոր – 15, 118, 163, 182
Հագարու գետ տե՛ս Հագարի
Հագարու ձոր տե՛ս Հագարի
Հաղբութ (Դիզակ) – 71, 121, 158-162, 172-174, 181, 183, 191-193, 228, 231, 237, 239, 244, 261, 308, 399, 406, 411, 414, 429, 439, 451, 463-465, 717, 806-808, 829, 852-853, 1053
Հալաջ – 66
Հալեպ – 18
Հալիձոր գյուղ – 23, 35, 57, 75, 374, 502, 530, 583, 602, 668, 675, 682-683, 691, 693, 695-696, 698, 702, 715-719, 722, 984, 1010, 1012
Հալիձորի բերդ – 16, 22-23, 375
Հալիձորի կիրճ – 14
Համադան – 930, 1005, 1034
Համամլու – 841
Հայաստան (Հայաստանի Հանրապետություն) –3-4, 6, 8-13, 15, 18-19, 21-23, 25, 28, 32, 34, 42, 45-47, 49, 51-55, 60-61, 63-64, 82, 89, 102, 108, 110, 113, 120, 128, 146, 148, 157, 164, 168-170, 175, 179, 185, 187-191, 194-195, 202, 206, 209-212, 215, 217, 219-220, 223-231, 233, 236-247, 251-260, 262-265, 267-270, 272-274, 276-277, 279-283, 286-290, 294-295, 297-299, 301, 304-311, 313-319, 322-324, 333-341, 344-348, 359-373, 376, 380-391, 393, 396, 398-408, 410-412, 414-418, 429-430, 432-433, 436, 440, 447, 450-453, 455-465, 468-495, 497-499, 501-504, 508-513, 515, 518-523, 526, 529, 538-549, 554-564, 568, 568-582, 587-589, 591, 594-597, 600-601, 608, 610, 614, 617, 620, 622, 624-632, 634-635, 637-639, 644-645, 653, 655-662, 666, 669, 671-672, 676-677, 680-681, 690-691, 722, 734, 738-743, 746, 749-775, 777, 779-782, 785-787, 790-804, 807, 809-830, 832-855, 857-859, 862, 864, 866, 869-870, 872-873, 875, 877-878, 880-887, 889-897, 900-902, 904-919, 921-926, 928-936, 938, 940, 942-943, 945, 948-952, 959-960, 962-968, 971-976, 981-982, 985, 988, 990-995, 998-1017, 1019-1026, 1031-1047, 1050-1063
Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՀԽՍՀ)// Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (ՀՍԽՀ) (Հայաստանի Խորհրդային Հանրապետություն, Սովետական Հայաստան Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՀԽՍՀ)// Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (ՀՍԽՀ), Հայաստանի Խորհրդային Հանրապետություն, Սովետական Հայաստան) տե՛ս Հայաստան
Հայկական Արարատյան Հանրապետություն (Հայկական Հանրապետություն, Արարատյան Հանրապետություն, Արարատյան Հայաստան, Երևանի Հայկական Հանրապետություն) տե՛ս Հայաստան
Հայկական լեռնաշխարհ – 13, 417, 1032
Հանան – 425
Հանդ (Վերին Հանդ) – 27, 319, 355, 619, 993
Հանքեր տե՛ս Կապան
Հաջիբու – 358
Հաջիլու – 397
Հաջի Էյլաս – 827
Հաջի-Ղուրբանլար – 292
Հաջի-Սամլու (Հաջիսամլու) – 68, 117, 178, 224, 278, 296-297, 321, 371, 394, 556, 666, 684, 720, 744, 967
Հաջի-Քերիմբեկլու – 66
Հասանքենդ տե՛ս Շատին
Հարամի Դյուզ – 68
Հարանց անապատ –16
Հարավային Ադրբեջան (Պարսկական, Իրանական Ադրբեջան) – 33, 383, 514,

1041, 1047
Հարավային Ղարաբաղ- 159
Հարար – 48, 439, 455
Հարթիզ – 395, 397, 428, 441
Հարթիզի բարձունք – 407
Հաքարու գետ տե՛ս Հագարի գետ
Հաքյարի գետ տե՛ս Հագարի գետ
Հաքյար ձոր տե՛ս Հագարի ձոր
Հերհեր – 884-889, 937, 961-962, 973
Հին Գորիս տե՛ս Վերիշեն
Հին Թաղեր – 192
Հին Նախիջևան –302-303
Հյուսիսային Կովկաս – 34, 54, 64-65, 409, 456, 466-467, 511, 548, 585, 702, 748, 769, 927, 1040, 1043
Հյուսիսային Պարսկաստան (Իրան) –167, 769, 832, 929-930
Հնդկաստան – 61, 65, 534, 624
Հրազդան – 752
Հովվի բլուր – 342-343
Հուդա – 609
Հունաստան – 149, 303, 522
Հունգարիա – 622

Ձ

Ձեգամ – 739
Ձորաստան – 604
Ձորք – 13

Ղ

Ղազախ – 33, 60, 252, 333, 437, 453, 495-496, 513, 543, 561, 563, 571, 578-579, 593, 755, 821, 830, 1003
Ղազիգյոլ – 342
Ղազանչի – 106, 385
Ղազվին – 930, 1041
Ղաթար – 26, 35, 39, 1056
Ղաթարի (պղնձա)հանքեր – 26, 34, 39, 186
Ղալա – 1015, 1029
Ղալադարասի – 156
Ղալան – 265
Ղալաջուղ – 58, 889-892, 897-898, 904, 906, 908-909, 913-916, 918, 943, 945, 962, 976
Ղամարլու տե՛ս Արտաշատ
Ղայբալիշեն (Ղայբալիքենդ) – 285-286
Ղաջար – 160
Ղարաբաբա – 265, 291
Ղարաբաղ (Հայկական Ղարաբաղ) տե՛ս նաև Արցախ – 5, 7, 24, 31, 39, 46-47, 52, 54, 55, 60-61, 68, 71, 73, 76-79, 81, 83, 92, 107, 109, 111, 114-115, 117, 120-121, 126, 129, 143-144, 148-149, 152, 155-157, 159-168, 170-173, 175-185, 191-193, 206-207, 211, 216, 219-220, 222-225, 228-230, 231, 233-234, 236, 238-247, 252-258, 260, 264-268, 270-271, 274-280, 282-283, 286-288, 290-291, 293-294, 298-299, 301, 305-311, 314-319, 322-336, 344-345, 348, 350, 362, 364, 381, 385, 387, 392, 395, 397, 398-400, 401, 403, 406, 409-415, 429-430, 432-433, 435-439, 441-442, 444, 446-449-456, 459-466, 468-478, 480, 484, 486, 490-493, 495-506, 508, 511-520, 522-525, 527-529, 535, 539, 542-543, 545, 548-549, 552-553, 556, 558-561, 563-565, 560, 563-564, 574, 577-579, 590-591, 593, 595, 620, 627, 630-631, 658-659, 663, 668-670, 672, 677, 682, 685, 688-689, 691, 716-717, 728, 730, 738, 745, 750, 753-754, 756-757, 759-762, 766-767, 773-774, 786-788, 793-794, 796, 801-802, 804-809, 829, 832, 852-853, 875, 899-900, 902, 905, 921, 939, 944, 951-952, 955, 958-959, 978, 984, 991, 993, 1002, 1004-1007, 1009-1010, 1052-1053, 1061
Ղարաբաղի լեռնաշղթա – 115, 560
Ղարաբուլաղ – 462, , 666, 807
Ղարադաղ – 13, 427, 443, 498, 634, 871, 995, 1017, 1034, 1036, 1046, 1048
Ղարադաղի լեռներ – 13
Ղարաղաջ-Բուլաղի – 397
Ղարաղշլաղ (Բերդաձոր, Կալադարասի) – 42, 115-118, 120, 127, 131-132, 134, 154, 158-159, 161, 163, 173, 175, 207, 209, 213, 397, 558, 687
Ղարանլուխ (Ներքին Ղարանլուխ) տե՛ս Մարտունի
Ղարաքիլիսա (Ղարաքիլիսե) – 42, 58, 61, 77, 95, 98, 105-106, 135, 145-146, 148, 152, 177, 189, 208, 211, 250, 265, 302, 304, 333, 335, 396, 505, 508, 531, 548, 558, 566, 656, 663, 665, 679, 680, 692, 699, 700, 714, 718, 826, 837, 862, 864, 866, 927, 952, 970, 975-976, 1004, 1011-1012
Ղարս տե՛ս Կարս
Ղափա – 424
Ղափան տե՛ս Կապան
Ղափանի հանքեր տե՛ս Կապանի հանքեր
Ղափգենգողթ տե՛ս Կապարգողթ
Ղափուջուղ լեռնագագաթ տե՛ս Կապուտջուղ
Ղզլդաշ տե՛ս Կարմրաքար
Ղզլջան – 178
Ղզլջուղ – 95
Ղլիջբաղ – 123
Ղոյթուր տե՛ս Գետափ
Ղոչազ – 496
Ղորդարա – 292
Ղրիմ – 65, 457, 545, 551, 689
Ղրխբուլաղ – 407, 946
Ղուբա – 435, 467
Ղուշչի տե՛ս Կեչուտ
Ղուշչիբաբա – 807
Ղուշչի-Բիլագ (Ղուշչիբիլակ, Կուդերբելյակ, Կուշչիբիլակ) – 297, 390, 550, 556-567, 579
Ղուշչիլար – 358
Ղուռուչայ սար –721
Ղուսար – 467, 545
Ղուրդուղուլաղ տե՛ս Բոլորաբերդ
Ղուրթղալա – 395

Ճ

Ճակատեն – 321, 647, 649, 674, 987, 1005, 1009
Ճարտար – 237, 807, 1010

Մ

Մազրթնի – 395
Մազրտտի – 397
Մազմազակի սարահարթ – 984-985
Մազրա – 58, 88, 144, 297, 391, 397, 607, 743, 790
Մալդաշ – 375, 603, 675, 679, 691, 699, 702-703, 985
Մալեպ – 90
Մալիշկա – 862, 889-890, 961
Մալն – 353, 639
Մակեդոնիա – 70
Մակու – 7, 581
Մահմուտլու – 397

Մաղանջուղ – 57, 127, 583, 586, 983
Մաղավուզ – 278, 296-297
Մայմեխ – 304
Մանաշիդ (Մանաշեն) – 335, 431
Մանաչարի ժայռեր – 531
Մասիս – 597
Մարաղա – 430-431
Մարանդ (Մարանդա) – 62, 451
Մարգարայի կամուրջ – 839, 847
Մարգուշավան – 429, 431
Մարտակերտ – 158, 429, 464
Մարտիրոս գյուղ – 85, 965
Մարտունի (Արցախ) – 808
Մարտունի (Ղարանլուխ)- 830, 947, 957, 961
Մարքիզ (Մարկիզ) – 163, 178, 720
Մեդան – 26
Մելիք-Ահմեդլի – 875
Մեծ Բրիտանիա (Բրիտանիա) –83, 166, 168-169, 226-227, 259, 263, 271-272, 273, 282, 287, 294, 385, 409, 412, 415, 459, 465, 476, 498, 510, 541, 556, 576-577, 592, 624-626
Մեծ Թաղլար – 852
Մեծ Թուրան – 1060
Մեծ Հայք – 18
Մեծ Վեղի – 714
Մեղրի (Արևիք, Գենվազ) – 7, 13-14, 19, 24, 26-28, 30, 40-42, 44, 52-53, 56, 58, 68, 70, 89-90, 142, 144, 182-183, 186, 195, 197, 203, 206, 208, 214, 223, 280, 297, 305-306, 318-323, 325, 327-328, 330-331, 335, 350-355, 357, 371-372, 374-377, 380, 389, 393, 375-377, 419-421, 423-444, 449, 501, 523, 527, 534-535, 549, 552, 578, 593, 595-597, 600, 602, 607-620, 633-642, 644-647, 651-654, 656, 663-664, 674-678, 681-682, 704, 708, 713, 727, 747, 776-778, 783-784, 829, 848, 861, 864, 867, 871-872, 878, 881, 905, 916, 923, 931-932, 937, 947, 957-958, 962, 967, 969, 973, 986-988, 990, 992-999, 1003-1005, 1008-1009, 1011, 1014, 1017, 1027, 1035-1036, 1039, 1056
Մեղրի գետ – 14, 28, 615
Մեղրու լեռներ –19, 24
Մեղրու հովիտ (Մեղրու կիրճ) – 13-14, 89
Մեսրոպավան – 713
Մերձավոր Արևելք – 459, 775, 899
Մեքքա – 764
Միլլի ձոր – 842, 854
Միլխալև– 726
Միհրալու –397
Մինջևան (Մնջվան) – 351
Մինքենդ (Մնի) – 15, 18, 109, 152, 163, 386, 406, 428, 446, 449, 556, 806, 929, 1055
Միջագետք – 73, 1040
Միջերկրական ծով – 228
Միջին Ասիա – 34, 65, 518, 769
Միսիթան – 397
Միրիշալու – 123
Մշո վանք – 126
Մյուլիքաչան (Մյուլկաչա)– 710
Մոլլա Ահմեդլի – 163
Մողես գյուղ – 261, 292, 297, 329, 407, 428, 708
Մոսկվա – 10, 21, 464, 471, 473, 481, 511-513, 517-518, 520, 540, 544-545, 548, 553, 555, 560, 562-564, 568-571, 580-582, 590, 622, 626, 627, 655, 657-661, 690-692, 752, 760-761, 767, 791-794, 804-805, 835-837, 840, 844, 851, 849, 853, 881, 889, 932, 943-944, 982, 1006, 1023, 1043, 1045, 1047
Մորատ – 726
Մորշանսկ – 551
Մսմնա – 159-160, 162
Մսմնայի ձոր – 160-161
Մուդրոս – 164-165
Մուժամբար – 634, 871, 1010, 1017, 1036, 1038, 1048
Մուխուրթուրյան (Մուխութուրյան) – 58, 152, 296, 967-968
Մուղան (Մուղանի անապատներ, Մուղանի դաշտ) – 89, 119, 160
Մուղանլու – 66
Մուսալլամ (Մուսալյամ) – 358, 374
Մուսուլմանլար – 68, 161, 172, 265
Մուսուլմանլու – 192

Ց

Յամալա կայարան – 467
Յայջի գյուղ – 58, 95, 296, 396, 423, 426, 656, 668, 679, 682-683, 692, 694-700, 702-703, 715-719, 722, 747, 797, 976-977, 984,1004, 1010
Յայջիի լեռներ – 190
Յոթնաղբյուր – 715

Ն

Նախիջևան – 7, 18-19, 23, 25-26, 31, 60, 64, 69, 73-75, 78, 80-81, 86-87, 89-91, 93-94, 98, 100, 106-109, 128, 133, 144, 147, 149, 155, 168, 176-177, 193, 185, 187, 189-190, 193, 208-209, 214, 223, 228, 231, 251-253, 255, 259-261, 263-265, 268, 271, 277, 279-280, 294-297, 299, 301-302, 305, 307, 309-310, 314-316, 318, 320-321, 337, 341, 343, 345, 348, 350, 352, 354-355, 357-358, 366-372, 374-375, 379, 381, 384, 386, 389-390, 394, 396, 398, 400, 403-404, 406-407, 409-415, 416, 420, 423, 426-427, 453, 466, 470, 490-491, 493, 499, 509-513, 517-521, 523-524, 534, 543-547, 549-553, 556-557, 559, 563, 569, 570-574, 578, 582, 587, 589, 590, 597, 599-600, 613, 615-618, 630-631, 635-636, 644, 656, 658-659, 661, 664, 670, 672, 676, 678-679, 685, 689-692, 695, 700, 704, 711, 713-714, 730, 741, 753-756, 759, 760-764, 766-770, 773-774, 780, 794, 821, 823, 832-833, 838, 842-843, 902-903, 907, 912, 941-942, 956-957, 964-966, 969, 970, 974-975, 979, 995-998, 1010, 1012-1013, 1035, 1037-1039, 1054
Նախիջևանիկ – 123-124
Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն (Ինքնավար Նախիջևան) տե՛ս Նախիջևան
Նախկրայ – 1037
Նաջիքենդ ամառանոց – 434
Նեջիլու – 819
Նասրվազ (Նասիրվազ) – 357, 370, 425
Նավլու – 391, 397
Նեհրամ – 296

Ներքին Ագուլիս – 415
Ներքին Ախտա – 820, 837
Ներքին Խոտանան տե՛ս Խոտանան
Ներքին Ղարանլուխ տե՛ս Մարտունի
Ներքին Կապան տե՛ս Կապան
Ներքին Շեն – 432
Ներքին Շենգավիթ – 827
Նյուվադի (Նուվադի) – 42, 183, 618, 647, 663-664, 678
Նովատուրուխանսկ – 1009
Նովրուզլու – 178
Նորավանք – 20
Նոր Բայազետ – 77, 311, 407, 446, 462, 488, 490, 493, 561, 659, 690, 809, 829-831, 839, 844-845, 882, 933, 946-947, 952
Նոր Ջուղա –1003
Նոր Նախիջևան – 390
Նորաշեն – 889-890, 947, 961, 1007
Նորաշենիկ – 604, 606, 989, 1006, 1013
Նորս –98, 106, 144, 149, 152, 209, 213, 297, 300, 355
Նորս Մազրա – 98, 106, 209, 213
Նորք – 820, 822
Նուխի (Նուխվա գավառ)– 32, 88, 119, 148, 495
Նուռնուս – 424, 426
Նուվադի –128
Նուրգութ – 355

Շ

Շաբադին – 358
Շահբազյուրդ– 319, 351, 638, 640
Շահթախտ – 544, 549, 570-571, 582, 599, 763-764, 770
Շահվերդլար – 295, 393, 703-705, 790
Շաղաթ – 16, 18, 42, 58, 556, 715, 743, 970, 974
Շաղախ – 508, 852
Շամախի – 495
Շամասազ (Շամսազ)– 395
Շամխոր – 148, 739
Շամխոր կայարան – 516
Շատին (Հասանքենդ) – 830, 957, 961
Շարսու– 726
Շարուր – 64, 168, 176, 189, 190, 259-260, 295-296, 305, 315-316, 318, 348, 366-367, 404, 419, 544, 763, 770, 794, 801, 838, 841, 958, 979, 1052
Շարուր-Դարալագյազ – 64, 315, 493, 517, 544, 661, 1052
Շարուր-Նախիջևան – 314, 317, 369, 661, 764, 842, 902, 912
Շաքի – 42, 95, 98, 265, 334, 341, 550
Շիկահող – 42, 139, 505, 533, 538, 600, 606, 608, 615-617, 639, 647, 653, 1003, 1011
Շինաթաղ (Շնաթաղ) – 42
Շինուհայր – 14, 22, 31, 42, 57, 95, 198, 505, 509, 531, 557-558, 668, 682-683, 695-699, 703, 716-718, 720, 740, 789-790, 1003, 1009-1010, 1012
Շիշկերտ – 607, 647-648, 1011-1012
Շիվանիձոր – 618, 637
Շիրազ – 1008
Շիրազլու – 823, 827
Շիրակ – 894
Շիրակալա – 819
Շիլար – 107-108, 321, 354, 371, 393, 1010
Շիլարի ձոր (Շիխլարի կիրճ) – 108, 355, 394
Շյուքար – 692
Շնաթաղ–58, 66
Շնհեր տե՛ս Շինուհայր
Շհարջիկ գյուղ –75, 374, 378, 692
Շհարջիկի (Քաղաքիկ) բերդ – 16, 692
Շոշ –290, 307, 411-412
Շորագյալ – 493
Շորբուլաղ – 820
Շոր-ջուր – 425
Շվանիձոր (Աստազուր) – 42, 90, 318, 352-353, 610, 615-618, 635-640, 644, 647-648, 747, 987, 996
Շվեյցարիա (Զվիցերիա) -70
Շրվենանց – 52, 604, 989
Շուշի – 5, 25-26, 33, 40-41, 43, 45-46, 53-55, 66, 71, 73, 75-81, 83, 92-94, 96-103, 105-106, 109-112, 115-117, 120-124, 126, 128, 131-134, 136-137, 140, 143, 145, 148, 151-155, 158-160, 162-163, 165, 172-183, 188, 191-194, 198-199, 207, 209, 218, 222-223, 226-228, 231-236, 238-241, 252, 254-265, 258, 260-261, 263-267, 269-270, 274-278, 281-282, 284-290, 292-293, 298, 307-308, 311, 314, 330, 333-334, 338, 344, 362, 381, 406, 410-412, 415, 429-433, 435-436, 438-439, 446-447, 450-451, 459, 455, 461-463, 478, 496-499, 501, 504, 514, 516, 519-520, 522, 527-528, 549, 553, 558, 591-592, 597, 663-664, 666, 682, 686-687, 703, 710, 716-717, 719-723, 726, 728, 744-745, 759, 790, 792-795, 802-803, 806-807, 955, 1006-1007, 1011, 1013
Շուշիքենդ – 687
Շուռնուխ – 41, 214, 391-393, 395-396, 398-400, 403, 409, 564, 599, 703, 705-707, 875, 1056
Շուռութ – 304, 385
Շուքար – 1044
Շուքյուրդարասի բարձունք – 443

Ռ

Ողջի (Օխչի) գետ – 14, 19, 22-23, 354, 605-606, 650, 663, 691-692
Ողջի (Օխչի) գյուղ – 358, 374, 380, 389, 993
Ողջիի կիրճ (Օխչի ձոր, Օխչիձոր) – 15, 296, 319, 321, 351-355, 356-360, 371-372, 374, 393, 426, 620, 665, 780
Որոտան գետ – 14-16, 22, 25, 58, 391-392, 395-396, 409, 420, 441, 551, 442, 668, 681-683, 694-695, 697-698, 702-703, 712, 718, 891, 927, 947, 955, 984, 987, 989
Որոտանի ձոր (Որոտանի կիրճ) – 15, 23, 97, 342, 668, 780, 977
Որոտնաբերդ –16
Որոտնավանք – 16

Չ

Չաթալջա – 149, 164
Չալբուռուն – 983
Չայզամի (Չայ-Զամ) – 41, 984-985
Չայլու – 430-431
Չանախ-Բուլաղ – 187
Չանախչի – 172-173, 830, 844
Չավնդուր – 443
Չարալու – 397
Չարբախ – 827
Չարդախլու – 397, 434

Չարտազ-Գյունեյ – 497
Չափնի գյուղ – 604, 706, 708-709
Չեչենա-Ինգուշական Ինքնավար Հանրապետություն – 927
Չեչնիա – 64
Չեռնոզորիա (Չերնակորիա)– 70, 303, 612
Չիմա–374
Չըլդր – 493
Չըոչըռ սար – 603
Չիբիկլու – 397
Չիմանքենդ (Չիմքենդ) – 714, 813, 831, 844
Չիչաքլի սար – 659
Չիվա – 960
Չիրիշ – 378, 375

Պ

Պաղավերջ (Բաղաբուրջ) – 321, 647, 649, 993, 1003
Պաղեստին – 147, 609
Պառավաթումբ (Բարաբաթում) – 604, 647, 649-651, 665, 988, 993, 1007
Պատպատ – 977
Պարիս – 335, 431
Պարսկական Ադրբեջան տե՛ս Հարավային Ադրբեջան
Պարսկաստան (Իրան) – 3, 6-7, 13, 21-24, 37, 39, 54, 60, 73-74, 148, 166-167, 183, 206, 221, 294-296, 303, 328, 352, 365, 390, 444, 463, 516, 534, 595, 612, 615, 618-620, 624-625, 634-635, 655, 665, 797, 748, 764, 778, 785, 797, 805, 810, 832-833, 843, 848, 852-853, 856, 859, 870-871, 874-875, 879, 881, 883, 917, 921-922, 929-932, 951, 955, 957, 963-964, 967, 976, 987, 993, 995, 999, 1002-1005, 1008-1010, 1012-1013, 1015-1016, 1019-1024, 1026-1027, 1031, 1038, 1040-1042, 1044-1049, 1053, 1062
Պետերբուրգ (Պետրոգրադ) – 45, 303, 844, 748
Պետրոսաշեն – 159
Պետրովսկ – 456, 467, 514
Պիչանիս – 806
Պողոս-Պետրոս վանք – 18
Պովոլժիե – 65
Պսկով – 844

Ջ

Ջաբրայիլ (Ջիբրայիլ) – 8, 33, 72, 218, 223, 254, 365, 308, 314, 314, 320-321, 406, 412, 421, 428-429, 440-441, 446, 495, 516, 546, 597, 604, 717, 748, 808, 875
Ջահրի – 578, 599
Ջամիլլի – 516
Ջամիլլու – 286
Ջաֆարաբադ տե՛ս Հարար
Ջիվանշիր (Ջևանշիր) – 33, 48, 163, 181, 192-193, 231, 244, 287, 308, 341, 411, 413-414, 429, 431, 447, 451, 455, 479, 515, 805
Ջիտաթաղ – 20
Ջոմարդլու (Ջոմաթլու) – 107-108
Ջրաբերդ – 71, 121, 158, 182, 237, 308, 429, 464
Ջրախոր – 75
Ջրվեժ – 820
Ջուլ տե՛ս Արտավան
Ջուլֆա (Ջուղա) – 54, 86, 149, 167, 259, 265, 295-296, 303, 368, 415, 426, 486, 499, 511, 519, 521, 534-535, 544, 582, 764, 933, 935, 963-964, 1033, 1035-1037, 1041
Ջուլֆայի կամուրջ – 310
Ջևադ – 66, 514
Ջևանշիր (Ջիվանշիր) – 33, 223, 239, 254

Ռ

Ռազիդարա – 357
Ռամիս –357, 370
Ռեշտ – 620
Ռիզա – 945, 1050, 1052
Ռինդ – 949
Ռյազան – 810, 844
Ռոստոմաբերդ –331
Ռոստով – 390
Ռումինիա – 681, 1049
Ռումիս – 150
Ռուսահայաստան, Ռուսական Հայաստան տե՛ս Արևելյան Հայաստան
Ռուսաստան (Ռուսական կայսրություն, Խորհրդային Ռուսաստան, Խորհրդային Ռուսիա) – 4, 7-8, 22, 24, 28, 36-38, 40-42, 45-46, 54, 59, 62, 90, 148, 166, 168, 196, 233, 244, 280, 361, 390, 402, 457-459, 465-466, 470, 492, 498, 532, 572, 601, 604, 620, 622, 625, 627, 629-631, 655, 657, 704, 734, 743, 745-746, 749, 751, 755-756, 760, 762, 766, 773-775, 793, 752, 759, 796-797, 799-800, 810, 814-815, 824, 826, 832, 834-835, 844-845, 849, 851, 881, 892-896, 902-903, 909, 917, 920, 930, 943, 952, 968, 998, 1018, 1020, 1024, 1032, 1038, 1041-1043, 1050-1051, 1057, 1059, 1063
Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ՌՍՖԽՀ) -464-466, 470, 472, 474-484, 486, 488, 491, 497, 502, 510-512, 516-518, 539, 541-543, 545-546, 548, 551, 554-555, 557, 563-564, 568-571, 573-575, 577, 580-581, 583-585, 588, 591, 593-594, 596, 599, 613, 623, 629-631, 655, 658-660, 669, 672, 681, 689, 742, 744-746, 749, 752, 755, 760-761, 770, 791, 796-797, 799-800, 809, 835, 837, 894-895, 944-945, 1000-1001, 1023, 1037-1038, 1044-1045, 1050-1052

Ս

Սադարակ – 64, 827
Սալ – 424
Սալասուզ – 93
Սալդաշ – 397
Սալլի– 960-961
Սալմաստ – 303, 1034, 1041
Սալյան – 66
Սալվարդ– 13, 966, 970
Սամուրի կամուրջ – 310
Սանջարախլու – 378
Սառնակունք – 16
Սասուն – 68, 75, 92-94, 102-103, 126, 134, 219, 1003
Սատանի կամուրջ – 14, 698, 702-703
Սարալու – 292
Սարդարապատ –61, 176, 698, 920, 1059
Սարիղամիշ – 304, 435, 488, 490, 549, 561, 628-629, 1032
Սարովի շրջան – 516
Սարուշեն – 429, 462, 806
Սաֆյան – 955
Սեիդլի – 516
Սելիմի լեռնանցք – 77, 830, 957, 961

Սեմյոնովկայի լեռնանցք – 821
Սերբիա – 303
Սերս – 345, 1012
Սեֆյան Պարսկաստան տե՛ս Պարսկաստան
Սիբիր – 220, 545, 1005, 1009, 1011, 1058
Սիզնակ (Ներքին, Վերին) – 687
Սիսական տե՛ս
Սիսիան – 7, 13, 14, 16, 18, 22, 24, 26-27, 30, 41-44, 47, 52-53, 56-59, 65-66, 68, 74-79, 85, 88, 91-113, 126, 129, 131-136, 140-141, 143-145, 148-149, 151-156, 171-172, 177, 183, 187, 190-191, 195, 203, 207-211, 213, 223, 244, 249-250, 254-255, 265, 291, 296-297, 299, 305, 314-315, 335, 341-343, 345, 355, 364, 370-371, 373-374, 381, 386, 389-390, 393-394, 397-398, 407, 458, 501- 502, 505-506, 508-509, 520, 530-532, 534, 536, 538, 541, 549, 550-553, 555-559, 564-567, 572-573, 578, 583, 591, 593-595, 597, 600, 607, 637-639, 644-645, 653, 656-657, 664, 668-670, 675, 679-681, 683-684, 689, 692-695, 700-701, 714-715, 717-720, 722, 727, 740, 742-745, 770-772, 784, 789, 797, 812-813, 829, 831, 860, 867-868, 880, 891, 897-898, 905, 908, 927, 931, 937, 954, 956, 958, 965-967, 969-971, 974-978, 982, 984, 1002, 1004-1008, 1010-1014, 1056
Սիսիանի մահալ տե՛ս Սիսիան
Սիրիա – 147, 805
Սյունի վանք – 16
Սյունիք (Սյունյաց աշխարհ) – 9-11, 13-14, 16, 18-25, 41, 46-47, 56, 70, 73, 74-76, 78-79, 79, 96-98, 100, 105-109, 111-112, 150, 152, 171, 176-180, 182, 190, 205-207, 306, 320, 322, 324-325, 373, 392, 416, 445, 471, 476, 507, 522, 607, 609-610, 619, 640, 655, 716-718, 736, 742-743, 749, 766, 776, 778, 781-787, 793, 795-797, 799-801, 803-805, 808, 811-813, 828-831, 842, 853, 856, 859, 867, 868-879, 882-883, 904-905, 913, 920-922, 924, 927, 934, 946-948, 954, 969, 975-977, 982, 985, 987-988, 992-993, 998, 1001, 1005-1007, 1010, 1012-1014, 1018, 1032, 1047,1050, 1058, 1061-1062
Սյունիքի (Սյունյաց) թագավորություն – 19-22
Սյունյաց աշխարհ տե՛ս Սյունիք
Սյունյաց (Սիւնեաց) երկիր տե՛ս Սյունիք
Սյունյաց լեռներ տե՛ս Զանգեզուրի լեռնաշղթա
Սոբի – 357
Սոյուխդաղ (Սոյուխ սար) – 636, 995-996
Սոչի – 467
Սոտք – 19
Սոֆիա – 148, 303, 329, 469, 874
Սպարտա – 522, 787
Սպիտակաշեն – 159
Սվազ – 292
Սվարանց – 33
Ստավրոպոլ – 551
Ստեփանակերտ տե՛ս Խանքենդ, Վարարակն
Սրաշեն (Սարուշեն) – 319
Սուզ – 806
Սուլթանաքենդ – 983
Սուլթանբեկ – 190, 345, 571, 599
Սուխոյ Ֆոնտան – 841
Սուլուկ տե՛ս Ազատ
Սումուքլու – 178
Սուսանի բարձունք – 441
Սուրմալու – 64, 164, 168, 317-318, 493, 755, 838
Սուրունլար – 163
Սև լիճ – 982
Սև ծով – 689
Սևան, Սևանա լիճ (Գեղամա լիճ) – 19, 54, 333, 493, 829, 830-831
Սևանի ավազան – 54
Սևարանց – 397, 628, 675, 927, 977, 985
Սևաքար – 604-605, 648, 653
Սևր – 575-576, 582
Սևքար – 983, 988

Վ

Վալավեր – 424-425
Վահանավանք – 16
Վահրավար – 90, 321, 612, 620
Վաղարշապատ տե՛ս նաև Էջմիածին
Վաղուդի – 95-97, 108, 110, 134-135, 154, 342, 656, 657, 692, 699, 976-977
Վաղուդու ձոր -110
Վայոց ձոր (Դարալագյազ, Եղեգիս) – 7, 13, 18-19, 54, 64, 68, 77-79, 94, 102-103, 108, 112, 156, 189, 191, 202, 206, 208, 250-251, 255, 296-297, 301, 314-316, 336, 341, 345, 359, 367, 390, 394, 403, 407, 443, 462, 493, 517, 519, 531-532, 544, 550, 555-557, 567, 571-573, 579, 597, 637-638, 644-645, 656, 659, 680, 742, 789, 812-815, 819-820, 827-831, 837, 839, 842, 852-857, 859-864, 866-868, 875, 880, 882, 884, 889, 890, 912, 919, 928, 931-935, 937-939, 945-948, 950, 953-954, 956-962, 964-967, 970, 972-973, 975, 991-992, 996, 1010, 1012, 1024, 1031, 1043, 1052
Վան –575, 1004, 1061
Վանանդ – 424, 425
Վանք գյուղ – 709-710
Վաչագան (Վաչական) –58, 321, 598, 600, 649, 987, 993, 1009, 1011
Վաշինգտոն – 348
Վասպուրական – 18-19, 823-824
Վարազաբույն – 123
Վարանդա – 71, 121, 158, 160-162, 172, 174, 181-182, 191-192, 231-232, 237, 239, 244, 258, 290, 308, 399, 411, 414, 429, 435, 449, 461, 463-465, 808, 829
Վարարակ գետ – 25, 712, 721, 983-984
Վարարակն տե՛ս նաև Խանքենդ, Ստեփանակերտ – 165, 286
Վարդանազուր – 183
Վեղի – 191, 304, 826, 956
Վեղիբասար – 64, 305, 455, 486, 823
Վենետիկ – 16, 23, 1057
Վերինգետ – 424
Վերին Խաթունարխ – 1043
Վերին Խոտանան տե՛ս Խոտանան
Վերին Կապան տե՛ս Կապան
Վերին Տանձիկ –960

Վերիշեն (Հին Գորիս) – 24, 57, 203, 628, 719-721, 723, 958
Վերնաշեն (Բաշքենդ)– 333, 961
Վիեննա – 23
Վլադիկավկազ – 810
Վորոնեժ – 844
Վրաստան (Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն) –3, 14, 37, 61, 70, 117, 165, 168, 187, 212, 220, 226, 228, 252, 294, 297, 316, 337-340, 346, 361, 367-368, 380, 383-384, 390, 400-401, 404-405, 432, 439, 452-453, 456, 458, 467-468, 470-472, 476, 492, 519, 538-540, 542, 555, 626, 631, 681, 729, 752, 760, 796, 798-799, 810-811, 821, 833, 836-837, 850, 892, 894, 896, 941, 964, 1025-1026, 1043, 1062

Տ

Տաթև – 14, 18, 33, 42-43, 58, 86, 94, 156, 315, 371, 374-375, 396, 531, 536, 566, 602, 604, 628, 665, 668, 674-675, 679, 682-683, 691, 693-695, 698-700, 702-703, 705, 707, 717-720, 740, 776-778, 786, 796, 864-865, 869-870, 876, 921-924, 926-927, 969-970, 976-977, 982, 984-985, 1011, 1014, 1056
Տաթևի ձոր – 702, 783
Տաթևի վանք – 14, 16, 18-19, 76, 293, 345, 786, 873, 976, 1011
Տաճկաստան տե՛ս Օսմանյան կայսրություն
Տամբով – 551
Տայշետ – 10
Տանակերտ – 305, 423
Տանձավեր – 602, 604, 663, 678, 691, 703, 707, 989
Տանձատափ – 58, 675, 977, 985, 1006, 1012
Տաշալտի– 807
Տաշտոն (Տաշտուն) – 28, 90, 615, 777
Տափասար – 674-675
Տեղ (Դիզ, Դըզ) – 41-42, 57, 84, 115-116, 127, 130, 132, 140, 152-153, 156, 176, 178, 207, 266, 269, 270, 272, 278, 336, 341-342, 344, 349, 350, 504-505, 507, 509, 528, 531, 559, 565, 578, 586, 664-665, 681, 687, 722-723, 795, 800, 807, 958, 982-983, 1004, 1006-1009, 1056
Տոլորս – 970
Տորթնի տե՛ս Անտառաշատ
Տրապիզոն – 228, 575
Տրտու գետ տե՛ս Թարթառ
Տումի – 159, 565
Տունուս – 374

Ց

Ցարսկիե Կոլոդցի –729
Ցաքուտ –683, 702
Ցոնա – 150, 358, 384, 425

Ու

Ուզուրչայ – 159, 1005
Ուզուրչայ գետ – 35, 58, 152
Ուզ գյուղ – 656-657, 714, 718, 976
Ուժանիս – 139, 217, 261, 291-292, 314, 321, 407, 428, 706, 989
Ուլիա-Նորաշեն – 190
Ուլու-Դաղ (Ուլուդաղ) – 695
Ուլուխանլու – 979, 822
Ուխտասար լեռնագագաթ – 16
Ուկրաինա – 844-845, 920
Ունուս – 424
Ուչթափա (Ուչթափալար) տե՛ս Եռաբլուր
Ուչթուբին-1017
Ուշաղի – 395
Ուվա-չայ –259
Ուտիք – 767
Ուրմիա-1034, 1041
Ուրմիա լիճ – 48
Ուրուտ – 95, 109
Ուֆա – 545

Փ

Փահլուլ – 286
Փաշալու – 345, 964
Փառակա – 150, 304
Փարաքար -821
Փարիզ – 21, 169, 170, 180, 188, 198, 217, 220, 223-224, 226, 228, 239, 244-245, 255, 262, 264, 267, 277, 286, 288, 308-309, 338, 348, 363, 368, 390-391, 401-402, 405, 575, 825-826, 920, 1002
Փարիջան – 397
Փիրալլու (Փիրիլլու) – 374, 377
Փիրդովդան – 358
Փիրզամալ (Փիրջամալ) – 123-124
Փիրմազա տե՛ս Կաթնառատ
Փիրմազրա – 619
Փիրմատան լեռնաշղթա – 374
Փխրուտ (Փուխրուտ) – 619, 993
Փոթի – 457
Փոյլի – 496
Փորադաշտ – 385
Փոքր Ասիա – 554
Փոքր Կովկաս – 252
Փրչևան տե՛ս Զանգելան
Փուշկագ – 90

Ք

Քալանթար – 423, 425
Քանաքեռ – 820-821, 841
Քաշաթաղ (Լաչին, Աբդալար, Ավդալար) – 15, 22, 24, 44, 47, 48, 52, 72– 22, 178, 179-180, 335-336, 343, 349, 461, 496, 666, 723, 725-727, 743-744, 774, 795, 852, 875
Քաշունիք – 15
Քաչալ դաղ (Ճաղատ սար, Ճաղատասար, Լիսագոր) – 15, 342-343, 368, 726, 728, 744, 982, 1007, 1012
Քաջարան – 19, 418, 422, 607, 615, 619-620, 644, 993
Քարագլուխ – 123
Քարահունջ – 25, 42-43, 57, 396, 505, 509, 531, 583, 710, 719, 797, 984, 1003, 1006
Քարաշեն – 41-42, 57, 207, 342, 509, 528, 583, 586, 955, 983
Քարինտակ – 174
Քարվաճառ տե՛ս Քելբաջար
Քարվանսարա – 513, 751
Քեափազ -395
Քելբաջար (Քարվաճառ, Շար) – 22, 109
Քեյֆաշեն – 376
Քեշիշքենդ – 79, 251, 311, 390, 496-497, 601, 687, 773, 806-807, 813, 828, 861-864, 937, 947, 949, 960-961
Քիլիսալու – 394
Քիրալու – 831
Քիրս լեռ, ձոր (Մեծ, Փոքր)– 159, 375, 378, 496
Քյաթուկ – 123
Քյամբիլ տե՛ս Քոչբեկ
Քյոմուրլու – 960
Քյուչուկ Վեդի – 823, 827, 835
Քյուրդիքենդ (Քրդիքենդ) տե՛ս Լեռնաձոր

Քյուրդլար -33
Քյոլլու – 357
Քյոռջալանլու (Վերին և Ներքին) – 397
Քյուրաթաղ – 237
Քյուրդ-Խալաջ – 397
Քոմուրլու – 831
Քոչբեկ – 665
Քոսա մեչիդ լեռ – 15
Քրիստափորաբերդ -85
Քյուքի – 571, 599
Քուրդիստան – 48, 120, 527, 576, 727, 767, 929, 955, 967-968, 978, 983
Քուրի (Քուռ, Կուր) հովիտ – 60
Քևդադիք (Գավդաղլը, Կևդադիխ, Քևտատիկ) – 15

Օ

Օխչի գյուղ տե՛ս Ողջի
Օխչի ձոր (Օխչիձոր) տե՛ս Ողջիի կիրճ
Օղլան-Նիժա – 375
Օսմանյան կայսրություն (Տաճկաստան, Օսմանյան Թուրքիա, Թուրքիա, Թուրքական Հանրապետություն) – 21, 59-62, 64, 73, 127, 147, 149, 164-165, 167-168, 170, 175, 181, 184, 215, 245, 252, 257, 280, 287, 294, 303-304, 335, 361, 368, 383, 390, 404-405, 423, 451, 455, 457, 460, 465-466, 471-472, 476-477, 484, 491, 498, 510-511, 513, 517-518, 521, 545-547, 551, 556-557, 559, 575-576, 581, 592, 610, 622, 624-626, 629, 631, 636, 658-660, 688-690, 737, 749, 756, 761-766, 769, 785, 793, 797, 805, 832-835, 837-838, 840, 894, 902-903, 968, 979, 1021, 1032, 1041, 1050-1051, 1057, 1059-1062
Օրդուբադ – 41, 68, 89, 90, 150, 127, 183, 214, 271, 280, 318, 320, 351-354, 357-358, 366, 370, 384-386, 393, 395, 409, 415, 417, 419, 422, 424-428, 444, 447, 453, 499, 511, 521, 535, 544, 546, 549, 553, 612, 615, 618, 620, 634-637, 639, 642, 652-653, 676-677, 679, 704, 713, 727, 957-958, 962, 967, 995-997
Օրյոլ – 844, 1009
Օրթաքենդ տե՛ս Գլաձոր
Օրթաքյուզ – 107, 108, 109
Օքյուզարաթ – 14, 988

Ֆ

Ֆրայբուրգ – 1008
Ֆրանսիա – 70, 281, 415, 418, 465, 577
Ֆրեզնո – 207, 251, 1008

Азербайджан – 54, 64, 311, 473, 476
Армения (Республика Армения) – 35, 45, 274, 811
Баку – 28, 29, 44, 124, 185, 207, 473, 491, 590, 626, 814
Варшава – 35
Великобритания – 274
Восточная Армения – 24
Елизаветпольская губерния (Елисаветпольская губерния) – 29, 35, 48
Ереван – 16, 24, 35, 45, 64, 274, 296
Закавказье (Закавказский край) – 29, 45, 51, 66, 274
Зангезур (Зангезурский уезд) – 24, 29, 52-53
Кавказ – 35, 36, 48
Ленинград (Санкт-Петербург, Л., СПб.) – 27, 35-36, 47-48, 66,
Москва (М.) – 35, 47, 54, 66, 148, 467, 510, 518
Нагорный Карабах (Карабаг) – 28, 64, 283, 473, 476, 518-519, 571
Российская империя – 35
Россия – 51
Ростов на Дону – 51
СССР – 66, 811, 838
Сюник – 16
Тифлис (Тбилиси) – 24, 29, 35, 45, 48, 51-53, 59, 296, 515, 866
Турция –510
Шамхор – 54
Шарур-Нахичеван – 269
Шуша – 124
America –23
Armenia – 44, 386
Budapest – 23
Caucasus – 23
Eastern Europe – 23
Iran – 23
Karabakh – 23
Lim Island – 23
London – 44
Medieval Central Europe – 23
Paris – 44
Republic of Armenia – 386
République arménienne – 44
Tehran – 23
Yerevan – 23

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Զանգեզուրի պատմության համառոտ ուրվագիծ 13
Զանգեզուրը 1917 թ. քաղաքական զարգացումներում 45
Զանգեզուրը 1918 թ. առաջին կեսին՝ մինչև թուրք զավթիչների ներխուժումն Այսրկովկաս ... 54
Օսմանյան զորքերի ներխուժումը Այսրկովկաս և Զանգեզուրի համար Ադրբեջանի կողմից ահագնացող վտանգի ստեղծումը 60
Զորավար Անդրանիկի զորամասի և Շուշվա գնդի մուտքը Զանգեզուր: Գավառի ինքնապաշտպանական ներուժը 73
Անդրանիկի գլխավորությամբ Զանգեզուրի ինքնապաշտպանության ամրապնդումը և առաջին ընդհարումները թշնամու հետ 1918 թ. ամռանը 81
Զորավար Անդրանիկի ղեկավարությամբ Սիսիանում մղած կռիվները օսմանյան զավթիչների և մուսավաթական հրոսակախմբերի դեմ (1918 թ. օգոստոս–սեպտեմբեր) 91
Ղարաղշլաղի ավերումը: Բաքվի անկումը. Օսմանյան զորամասի մուտքը Շուշի 115
Գորիսի շրջանը թշնամու ներխուժման վտանգին դեմ հանդիման: Անդրանիկի վերադարձը Սիսիանից 126
Անգլիացիների մուտքը Ադրբեջան և նրանց հայավնաս կողմնորոշումը 166
Զանգեզուրից Արցախին օգնության գնացող հայկական ռազմուժերի արշավանքի խափանումը անգլիացիների կողմից (1918 թ. նոյեմբեր) 175
1918 թ. վերջավորության անորոշությունները 188
Զանգեզուրում Զորավար Անդրանիկի օրենսդրական գործունեության պատմությունից (համառոտ ակնարկ) 195
Զանգեզուրում հայտնված գաղթականության հոծ զանգվածին և զինվորականությանը սովից փրկելու ուղղությամբ ձեռնարկած ճիգերը 200
Անգլիական օկուպացիայի պայմաններում Ադրբեջանի թուրքերի առաջին խոշորածավալ հարձակումները Զանգեզուրի և Արցախի դեմ: ՀՀ կառավարության քաղաքականության փոփոխությունը հայկական զույգ երկրամասերի նկատմամբ (1919 թ. հունվար - փետրվար) 217
Արցախն ու Զանգեզուրը նվաճելու անգլո-ադրբեջանական գործողությունները 1919 թ. գարնանը 249
Գեներալ Շատլվորթի առաքելությունը Զանգեզուր և երկրամասի՝ որպես Հայաստանի անբաժան տարածք լինելու փաստացի ճանաչումը անգլիացիների կողմից 267
Ադրբեջանի սանձազերծած արյունալի նոր կռիվները 1919 թ. ամռանը՝ Արցախը և Զանգեզուրը ռազմակալելու համար 284
Ղարաբաղի՝ ժամանակավորապես Ադրբեջանի կառավարմանն անցնելը: Զանգեզուրը միայնակ՝ մուսավաթական ագրեսիային դեմ հանդիման 307
Կրավորական ժամանակաշրջանի հոգսերը: Սեպտեմբերյան կռիվները 313
Վճռական կռիվների նախապատրաստություն 320
1919 թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում 333
Ազատագրական կռվի նժդեհյան մարտավարության առաջին կիրարկումը Զանգեզուրում: Օխչիձորի ռազմական գործողությունը 351
Զանգեզուրը հայ-ադրբեջանական դիվանագիտական պայքարի ոլորտներում (1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) 359

Գեղի ձորի ռազմական գործողությունը և դրա արձագանքները 370
Զանգեզուրը 1920 թ. սկզբին, Գարեգին Նժդեհի շուռնուխյան ռազմական գործողությունը և դրա արձագանքները 388
Գարեգին Նժդեհի Գողթանի արշավանքը 409
Կատաղի կռիվներ Արցախում: Հայկական Շուշիի և Ասկերանի բերդի անկումը 429
Կապարգողթի վաշտերի հարձակողական նոր գործողությունները 441
Մարտեր Գորիսի շրջանում 446
Դիվանագիտական նոր առճակատումներ 450
Անսպասելի շրջադարձ 455
1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագիրը և նրա հետևանքները Զանգեզուրի համար 568
Հեղկոմների առաջին միջոցառումները ժամանակավոր խորհրդայնացված Գորիսի և Սիսիանի շրջաններում: Զանգեզուրը ադրբեջանական ազգայնամոլների թիրախ 583
Խորհրդային զորքերի նոր հարձակումը Կապարգողթի վրա: Կապանի գրավումը 595
Գենվազցիների մաքառումը և հաղթանակը 608
Արևելքի ժողովուրդների համագումարի և Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման նկատմամբ զանգեզուրցիների դիրքորոշումը 622
Հակաբոլշևիկյան ապստամբությունը Զանգեզուրում և խորհրդային զորքերի նահանջը գավառից. Մարտերը Գենվազում 633
Ապստամբությունը Կապանում և խորհրդային զորքերի նահանջը 644
Խորհրդային զորքերի նոր հարձակումը և պարտությունը 663
Զանգեզուրյան հարվածող խմբավորման պարտությունը 685
Սյունիքի ներքին կյանքի պետահիրավական կանոնավորման և պաշտպանության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները հարաբերական դադարի օրերին (1920 թ. դեկտեմբեր-1921 թ. ապրիլ) 736
Հայաստանի խորհրդայնացումը և Զանգեզուրի ապստամբների դիրքորոշումը 751
Սյունիքի ինքնավարության ազդարարումը 776
Իրադարձությունների զարգացումը 1921 թ. հունվար-փետրվարին 788
1921 թ. Փետրվարյան ապստամբությունը: Քաղաքացիական կռիվների սաստկացումը, ապստամբների պարտությունը և գաղթը դեպի Զանգեզուր 817
Գոյամարտի վերջին փուլը գաղթի տառապալից ճանապարհին 853
Լեռնահայաստանի անկախության ազդարարումը 873
Զանգեզուրը խաղաղ միջոցներով խորհրդայնացնելու՝ Երևանի նոր ջանքերը: Սիսիանի բանակցությունները 880
Առճակատման նոր փուլը 915
Վայոց ձորի նոր ռազմակալումը Լեռնահայաստանի զինված ուժերի կողմից: Զանգեզուրի վրա խորհրդային զորքերի վճռական հարձակման նախապատրաստությունը 937
Երևանյան և Ղարաբաղ - Զանգեզուրյան խմբավորումների ռազմական գործողությունները: Զանգեզուրի գրավումը 959
Օտար ափերում 1015
Նոր կյանքի շեմին 1050
Վերջաբան 1059
Անձնանունների ցանկ 1064
Տեղանունների ցանկ 1078

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1917-1921 ԹԹ.

Գլխ. տեխ. խմբագիր՝ **Մերի Հովհաննիսյան**
Տեխ. խմբագիրներ՝ **Լևոն Ավետիսյան, Արմինե Ասատրյան,**
Սրբագրիչ՝ **Վահանդուխտ Դերձյան**
Համ. ձևավորումը՝ **Աննա Աղուզումցյանի**

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպագր. 68.5 մամուլ: Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1